

ՄՈՐՄՈՆԻ ԳԻՐՔԸ

ԵՎ ՄԵԿ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ ՀԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ՄԱՍԻՆ

ՀԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ

ՍՐԲԵՐԻ ԵԿԵՂԵՑՈՒ

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

ԵՎ

ՈՒԽՏԵՐԸ

ԹԱՆԿԱԳԻՆ

ՄԱՐԳԱՐԻՏ

Հրատարակված է

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու կողմից

Սուրբ Լեյք Սիթի, Յուտա, ԱՄՆ

©2006 Intellectual Reserve, Inc.

Բոլոր իրավունքները վերապահված են

Printed in Germany 4/2006

19932005

Translation of the Book of Mormon, Doctrine and
Covenants, and Pearl of Great Price
Armenian (East)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Մորմոնի Գիրքը

Վարդապետություն և Ուխտեր

Թանկագին Մարգարիտ

Սուրբ Գրքերի Ուղեցույց

Նախաբան

Թեմաների այբբենական ցանկ

Աստվածաշնչի Ջոզեֆ Սմիթի թարգմանության ընտրանի

Եկեղեցու պատմության ժամանակագրություն, քարտեզներ և լուսանկարներ

Աստվածաշնչյան քարտեզներ և լուսանկարներ

ՈՒՂԵՑՈՒՅՑՈՒՄ ՍՈՒՐԲԵ ԳՐՔԵՐԻ ՀԱՄԱՐ ՕԳՏԱԳՈՐԾՎԵԼ ԵՆ ՀԵՏԵՎՅԱԼ ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հին Կտակարան

Ծն. Գիրք Ծննդոց
 Ել. Գիրք Ելից
 Ղև. Գիրք Ղևտացոց
 Թվ. Գիրք Թվոց
 Բ Օր. Գիրք Երկրորդ Օրինաց
 Հես. Գիրք Հեսուի
 Դատ. Գիրք Դատավորաց
 Հռութ Գիրք Հռութի
 Ա Թագ. Գիրք Ա. Թագավորաց
 Բ Թագ. Գիրք Բ. Թագավորաց
 Գ Թագ. Գիրք Գ. Թագավորաց
 Դ Թագ. Գիրք Դ. Թագավորաց
 Ա Մն. Գիրք Ա. Մնացորդաց
 Բ Մն. Գիրք Բ. Մնացորդաց
 Եզր. Գիրք Եզրասի
 Նեեմ. Գիրք Նեեմիայի
 Եսթ. Գիրք Եսեթի
 Հոբ. Գիրք Հոբի
 Սաղ. Գիրք Սաղմոսաց
 Առակ. Գիրք Առակաց
 Ժող. Գիրք Ժողովող
 Երգ. Գիրք Երգ Երգոց
 Ես. Եսայիայի Մարգարեությունը
 Երեմ. Երեմիայի Մարգարեությունը
 Ողբ. Երեմիայի Ողբերը
 Եզեկ. Եզեկիելի Մարգարեությունը
 Դան. Դանիելի Մարգարեությունը
 Ովսես Ովսեսի Մարգարեությունը
 Հովել Հովելի Մարգարեությունը
 Ամովս Ամովսի Մարգարեությունը
 Աբդիա Աբդիայի Մարգարեությունը
 Հովնա Հովնանի Մարգարեությունը
 Միքիա Միքիայի Մարգարեությունը
 Նաում Նաումի Մարգարեությունը
 Ամբ. Ամբակումի Մարգարեությունը
 Սոփ. Սոփոնիայի Մարգարեությունը
 Անգե Անգեի Մարգարեությունը
 Չաք. Չաքարիայի Մարգարեությունը
 Մաղ. Մաղաբիայի Մարգարեությունը

Նոր Կտակարան

Մատ. Ավետարան ըստ Մատթեոսի
 Մար. Ավետարան ըստ Մարկոսի
 Դուկ. Ավետարան ըստ Դուկասի
 Հովի. Ավետարան ըստ Հովհաննեսի
 Գործ. Գործք Առաքելոց
 Հռովմ. Թուղթ Պողոսի առ Հռովմայեցիս
 Ա Կոր. Թուղթ Պողոսի առ Կորնթացիս Ա.
 Բ Կոր. Թուղթ Պողոսի առ Կորնթացիս Բ.

Գաղ. Թուղթ Պողոսի առ Գաղատացիս
 Եփես. Թուղթ Պողոսի առ Եփեսացիս
 Փիլ. Թուղթ Պողոսի առ Փիլիպպեցիս
 Կող. Թուղթ Պողոսի առ Կողոսացիս
 Ա Թես. Թուղթ Պողոսի առ Թեսալոնիկեցիս Ա.
 Բ Թես. Թուղթ Պողոսի առ Թեսալոնիկեցիս Բ.
 Ա Տիմ. Թուղթ Պողոսի առ Տիմոթեոս Ա.
 Բ Տիմ. Թուղթ Պողոսի առ Տիմոթեոս Բ.
 Տիտոս Թուղթ Պողոսի առ Տիտոս
 Փիլիմ. Թուղթ Պողոսի առ Փիլիմոն
 Եբր. Թուղթ Պողոսի առ Եբրայեցիս
 Հակ. Հակոբոսի Թուղթը
 Ա Պետ. Պետրոսի Ա. Թուղթը
 Բ Պետ. Պետրոսի Բ. Թուղթը
 Ա Հովի. Հովհաննեսի Ա. Թուղթը
 Բ Հովի. Հովհաննեսի Բ. Թուղթը
 Գ Հովի. Հովհաննեսի Գ. Թուղթը
 Հուդա Հուդա Առաքյալի Թուղթը
 Հայտ. Հովհաննես Առաքյալի Հայտնությունը

Մորմոնի Գիրքը

1 Նեփի	1 Նեփի
2 Նեփի	2 Նեփի
Հակոբ	Հակոբ
Եմովս	Եմովս
Հարոմ	Հարոմ
Օմնի	Օմնի
Մե	Մորմոնի Խոսքերը
Մոսիա	Մոսիա
Ալմա	Ալմա
Հել.	Հելաման
3 Նեփի	3 Նեփի
4 Նեփի	4 Նեփի
Մորմ.	Մորմոն
Եթեր	Եթեր
Մոր.	Մորմոնի

Վարդապետություն և Ուխտեր

ՎևՈՒ	Վարդապետություն և Ուխտեր
ՊՀ-1	Պաշտոնական Հայտարարություն-1
ՊՀ-2	Պաշտոնական Հայտարարություն-2

Թանկահին Մարգարիս

Մովսես	Մովսես
Աբր.	Աբրահամ
ՉՍ-Մ	Չոզեֆ Սմիթ-Մատթեոս
ՉՍ-Պ	Չոզեֆ Սմիթ-Պատմություն
ՀՀ	Հավատո Հանգանակ
ՉՍԹ	Չոզեֆ Սմիթի Թարգմանություն
ՍՈՒ	Սուրբ Գրքերի ուղեցույց

Եբր. Թարգմանության տարբերակ եբրայերենից:
 նշ. Խոսվածքների և դժվար դարձվածների նշանակությունը:
 կամ Նշանակում է, որ լրացուցիչ բառերն օգտագործված են հինացած արտահայտությունները պարզաբանելու համար:

ՄՈՐՄՈՆԻ ԳԻՐՔԸ

ԵՎԱ ՄԵԿ

ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀԻՍՈՒՄ ԶՐԻՍՏՈՍԻ

ՄԱՍԻՆ

ՄՈՐՄՈՆԻ ԳԻՐՔԸ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԳՐՎԱԾ

ՄՈՐՄՈՆԻ ՉԵՌՔՈՎ

ԹԻԹԵՂՆԵՐԻ ՎՐԱ

ՎԵՐՅՎԱԾ ՆԵՓԻԻ ԹԻԹԵՂՆԵՐԻՑ

Ուստի, այն Նեփիի ժողովրդի և նաև Լամանացիների հիշատակարանի մի կրճատում է, – գրված Լամանացիներին, որոնք Իսրայելի տան մի մնացորդ են. և նաև հրեային ու հեթանոսին, – գրված՝ պատվիրանի ձևով և նաև մարգարեության ու հայտնության ոգով, – գրված և կնքված և պահ տրված Տիրոջը, որպեսզի չոչնչացվի, – ի հայտ պիտի գա Աստծո զորությամբ ու պարգևով թարգմանվելով, – կնքված Մորոնիի ձեռքով և պահ տրված Տիրոջը, որպեսզի ի հայտ գա ուրույն ժամանակին՝ հեթանոսի միջոցով: Դրա թարգմանությունը՝ Աստծո պարգևով:

Նաև մի կրճատում, Եթերի Գրքից վերցված, որը Հարեդի ժողովրդի հիշատակարանն է, որոնք ցրվել էին այն ժամանակ, երբ Տերը խառնեց ժողովրդի լեզուն, երբ նրանք կառուցում էին աշտարակ՝ երկնքին հասնելու համար, – որը պետք է ցույց տա Իսրայելի տան մնացորդին, թե ինչպիսի մեծ բաներ է Տերն արել նրանց հայրերի համար. և որպեսզի նրանք կարողանան իմանալ Տիրոջ ուխտերը, որ նրանք վտարված չեն հավիտյան, – և նաև, որպեսզի համոզի հրեային և հեթանոսին, որ ՀԻՍՈՒՍԸ ՔՐԻՍՏՈՍԸ Է՝ ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ԱՍՏՎԱԾԸ, որն իրեն հայտնում է բոլոր ազգերին: Եվ արդ, եթե կան թերություններ, դրանք մարդկանց սխալներն են. ուստի, մի դատապարտեք Աստծո բաները, որպեսզի դուք կարողանաք անբիժ համարվել Քրիստոսի ատյանի առաջ:

Բնագիր թարգմանությունը, քիբեղներից անգլերեն,
Չոզեֆ Սմիթ կրտսերի կողմից
Առաջին անգլերեն հրատարակությունը լույս է ընծայվել
Պալմիրայում, Նյու-Յորք, ԱՄՆ, 1830-ին

Մորմոնի Գիրքը Աստվածաշնչի նման սուրբ գրքի մի հատոր է: Այն մի հիշատակարան է Ամերիկյան աշխարհամասի հնագույն բնակիչների հետ Աստծո գործերի մասին և պարունակում է հավիտենական ավետարանի լրիվությունը:

Գիրքը գրվել է հնագույն շատ մարգարեների կողմից՝ մարգարեության և հայտնության ոգով: Նրանց խոսքերը, գրված ոսկյա թիթեղների վրա, մեջբերված ու կրճատված են Մորմոն անունով մի մարգարե-պատմագրի կողմից: Հիշատակարանը տալիս է երկու մեծ քաղաքակրթությունների պատմությունը: Մեկը եկել էր Երուսաղեմից՝ Քրիստոսի ծննդից 600 տարի առաջ և հետագայում բաժանվել երկու ազգերի՝ հայտնի որպես Նեփիացիներ ու Լամանացիներ: Մյուսը եկել էր շատ ավելի վաղ, երբ Տերը խառնեց լեզուները Բաբելոնի աշտարակի մոտ: Այս խումբը հայտնի է որպես Հարեղացիներ: Հազարավոր տարիներ հետո բոլորը կործանվեցին, բացի Լամանացիներից, և նրանք են Ամերիկյան Հնդկացիների հիմնական նախահայրերը:

Գլխավոր իրադարձությունը, որն արձանագրված է Մորմոնի Գրքում, Տեր Հիսուս Քրիստոսի անձնական ծառայությունն է Նեփիացիների մեջ՝ նրա հարությունից ոչ շատ անց: Այն մեկնում է ավետարանի վարդապետությունները, ուրվագծում է փրկության ծրագիրը և ասում է մարդկանց, թե ինչ պետք է անեն, որպեսզի ձեռք բերեն խաղաղություն այս կյանքում և հավերժական փրկություն՝ գալիք կյանքում:

Մորմոնը, իր գրառումներն ավարտելուց հետո, տվեց պատմությունն իր որդի Մորմոնին, որն ավելացրեց մի քանի խոսք՝ իր կողմից և քաքրեց թիթեղները Կումորա բլրում: 1823 թվականի սեպտեմբերի 21-ին, նույն Մորմոնին, արդեն փառքի արժանացած և հարություն առած էակ, հայտնվեց Մարգարե Ջոզեֆ Սմիթին և տեղեկացրեց նրան հնադարյան հիշատակարանի և այն անգլերեն լեզվով թարգմանելու կանխորոշվածության վերաբերյալ:

Պատշաճ ժամանակին թիթեղները հանձնվեցին Ջոզեֆ Սմիթին, որը թարգմանեց դրանք՝ Աստծո գործությամբ ու պարզևով: Հիշատակարանն այժմ հրատարակված է շատ լեզուներով, որպես նոր և հավելյալ վկայություն, որ Հիսուս Քրիստոսը կենդանի Աստծո Որդին է, և որ բոլորը, ովքեր կզան նրա մոտ և կհնազանդվեն նրա ավետարանի օրենքներին ու արարողություններին, կարող են փրկվել:

Այս հիշատակարանի վերաբերյալ Մարգարե Ջոզեֆ Սմիթն ասել է. «Ես ասացի եղբայրներին, որ Մորմոնի Գիրքն ամենաճիշտն է երկրի վրա եղած բոլոր գրքերից և մեր կրոնի պորտաքարն է, և ապրելով ըստ դրա ցուցումների, մարդ ավելի շատ կմոտենա Աստծուն, քան ըստ որևէ այլ գրքի ցուցումների»:

Բացի Ջոզեֆ Սմիթից, Տերը հնարավորություն ընձեռեց՝ տասնմեկ ուրիշների ևս տեսնել իրենց համար ոսկյա թիթեղները և լինել հատուկ վկաներ՝ Մորմոնի Գրքի ճշմարտացիության ու աստվածայնության վերաբերյալ: Նրանց գրավոր վկայությունները ընդգրկված են այստեղ,

որպես «Երեք Վկաների Վկայությունը» և «Ութ Վկաների Վկայությունը»:

Մենք հրավիրում ենք բոլոր մարդկանց, ամենուրեք, կարդալ Մորմոնի Գիրքը, խորհել իրենց սրտում պատգամի մասին, որը պարունակում է այն և ապա հարցնել Աստծուն՝ Հավերժական Հորը, Քրիստոսի անունով, թե արդյոք գիրքը ճշմարիտ է: Նրանք, ովքեր հետևում են այս գործելակերպին և հարցնում են հավատքով, Սուրբ Հոգու զորությամբ վկայություն կստանան նրա ճշմարտացիության և աստվածայնության վերաբերյալ: (Տե՛ս Մորմոնի 10.3–5):

Նրանք, ովքեր ձեռք են բերում այս աստվածային վկայությունը Սուրբ Հոգուց, կգան մահ իմացության, նույն զորությամբ, որ Հիսուս Քրիստոսն աշխարհի Փրկիչն է, որ Ջոզեֆ Սմիթը նրա հայտնողն ու մարգարեն է այս վերջին օրերում, և որ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին կրկին վերահաստատված Տիրոջ թագավորությունն է երկրի վրա՝ ի նախապատրաստություն Մեսիայի երկրորդ գալստյան:

ԵՐԵՔ ՎԿԱՆԵՐԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

ԹՈՂ ՀԱՅՏՆԻ ԼԻՆԻ բոլոր ազգերին, ցեղերին, լեզուներին և ժողովուրդներին, որոնց կհասնի այս աշխատությունը, որ մենք Հայր Աստծո և մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհով տեսանք թիթեղները, որոնք պարունակում են այս հիշատակարանը, որը Նեփիի ժողովրդի մի հիշատակարան է, և մաս Լամանացիների՝ նրանց եղբայրների, և մաս Հարեղի ժողովրդի, որը եկել էր աշտարակից, որի մասին խոսվել է: Եվ մենք մաս գիտենք, որ դրանք թարգմանվել են Աստծո զորությամբ ու պարզևով, քանի որ նրա ձայնը հայտնեց մեզ դա. ուստի մենք հաստատ գիտենք, որ աշխատությունը ճշմարիտ է: Եվ մենք մաս վկայում ենք, որ մենք տեսել ենք փորագրությունները, որոնք թիթեղների վրա են. և դրանք ցույց տրվեցին մեզ Աստծո զորությամբ և ոչ թե՛ մարդու: Եվ մենք հայտարարում ենք զգաստամիտ խոսքերով, որ Աստծո մի հրեշտակ երկնքից իջավ ներքև, և նա բերեց ու դրեց մեր աչքերի առջև, որ մենք նայեցինք ու տեսանք թիթեղները և դրանց վրայի փորագրությունները. և մենք գիտենք, որ դա Հայր Աստծո և Տեր Հիսուս Քրիստոսի շնորհով է, որ մենք տեսանք և արձանագրում ենք, որ այս բաները ճշմարիտ են: Եվ մեր աչքում այս ամենը սքանչելի է: Այնուամենայնիվ, Տիրոջ ձայնը պատվիրեց մեզ, որ մենք պետք է արձանագրություն կատարենք այդ մասին. ուստի, Աստծո պատվիրաններին հնազանդ լինելով, մենք տալիս ենք վկայություն այս բաների վերաբերյալ: Եվ մենք գիտենք, որ եթե մենք հավատարիմ լինենք Քրիստոսում, մենք կմաքրենք մեր հանդերձները՝ բոլոր մարդկանց արյունից և կհամարվենք անբիծ՝ Քրիստոսի ատյանի առջև և հավիտյան կապրենք նրա հետ երկինքներում: Եվ թող փառքը լինի Հորը, և Որդուն, և Սուրբ Հոգուն, որը մեկ Աստված է: Ամեն:

ՕԼԻՎԵՐ ՔԱՌԻԳԵՐԻ
ԴԵՅՎԻԴ ՈՒԻԹՄԵՐ
ՄԱՐՏԻՆ ՀԱՐԲՍ

ՈՒԹ ՎԿԱՆԵՐԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

ԹՈՂ ՀԱՅՏՆԻ ԼԻՆԻ բոլոր ազգերին, ցեղերին, լեզուներին և ժողովուրդներին, որոնց կհասնի այս աշխատությունը. որ Ջոզեֆ Սմիթ կրտսերը՝ այս աշխատության թարգմանիչը, մեզ ցույց տվեց թիթեղները, որոնց մասին խոսվել է, որոնք ունեն ոսկու տեսք. և այնքան թերթեր, որքան վերոհիշյալ Սմիթը թարգմանել էր, մենք վերցրեցինք մեր ձեռքերով. և նաև տեսանք դրանց վրայի փորագրությունները, որոնք բոլորը զարմանալի վարպետության և հնադարյան ձեռագործի տեսք ունեն: Եվ սա մենք արձանագրում ենք լրջմիտ խոսքերով, որ վերոհիշյալ Սմիթը մեզ ցույց է տվել, որ մենք տեսել և ձեռքով ծանրութեթև ենք արել և հաստատ գիտենք, որ վերոհիշյալ Սմիթն ունի թիթեղները, որոնց մասին մենք խոսեցինք: Եվ մենք հայտնում ենք մեր անուններն աշխարհին, վկայելով աշխարհին այն մասին, ինչ մենք տեսանք: Եվ մենք չենք ստում. Աստված վկա է դրան:

ԶՐԻՍՏԻԱՆ ՈՒԻԹՄԵՐ
ՋԵՅԿՈՔ ՈՒԻԹՄԵՐ
ՊԻՏԵՐ ՈՒԻԹՄԵՐ ԿՐՏՄԵՐ
ՋՈՆ ՈՒԻԹՄԵՐ

ՀԱՅՐԱՄ ՓԵՅՋ
ՋՈՋԵՖ ՄՄԻԹ ԱՎԱԳ
ՀԱՅՐՈՒՄ ՄՄԻԹ
ՄԵՄՅՈՒԵԼ Հ. ՄՄԻԹ

ՄԱՐԳԱՐԵ ԶՈՉԵՖ ՍՄԻԹԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Մարգարե Զոզեֆ Սմիթի սեփական խոսքերը, Մորմոնի Գրքի ի հայտ գալու վերաբերյալ, հետևյալն են.

«Սեպտեմբերի քաանմեկի [1823] երեկոյան... ես աղոթքով ու աղաչանքով դիմեցի Ամենագոր Աստծուն...»

Մինչ այդպես առ Աստված էի կանչում, ես նկատեցի իմ սենյակը քափանցող մի լույս, որը շարունակում էր պայծառանալ, մինչև որ սենյակը դարձավ կեսօրից էլ լուսավոր, երբ անմիջապես մի անձնավորություն հայտնվեց մահճակալիս կողքին, օդի մեջ կանգնած, քանզի նրա ոտքերը չէին դիպչում հատակին:

Նա շլացուցիչ ճերմակության մի լայն պարեգոտ ուներ իր հագին: Դա մի ճերմակություն էր՝ երկրային ամեն բանից վեր, որ ես երբևիցե տեսել էի. ոչ էլ հավատում եմ, որ որևէ երկրային բան կարելի էր դարձնել այդքան արտասովոր ճերմակ ու փայլուն: Նրա ձեռքերը մերկ էին, և նրա արմուկները նույնպես՝ դաստակներից քիչ վեր. նմանապես մերկ էին նրա ոտնաթաթերը. ինչպես նաև ոտքերը՝ կոճերից քիչ վեր: Նրա գլուխը և պարանոցը նույնպես մերկ էին: Ես նկատեցի, որ բացի այդ պարեգոտից, նա ուրիշ այլ հագուստ չուներ իր վրա, քանի որ այն բաց էր, այնպես որ նրա կրծքավանդակը երևում էր:

Ոչ միայն նրա պարեգոտն էր չափազանց ճերմակ, այլ ողջ նրա անձն աննկարագրելի փառահեղ էր, և նրա դեմքը՝ ճիշտ ինչպես կայծակ: Սենյակը չափազանց լուսավոր էր, բայց ոչ այնքան պայծառ, որքան անմիջապես նրա անձի շուրջը: Երբ առաջին անգամ նայեցի նրան, ես վախեցա. բայց շուտով վախս անցավ:

Նա դիմեց ինձ անունով և ասաց, որ ինքը սուրհանդակ է, Աստծո ներկայությունից ինձ մոտ ուղարկված, և որ նրա անունը Մորմոնի է. որ Աստված աշխատանք ունի ինձ համար՝ կատարելու. և որ իմ անունը՝ որպես բարի և չար, կիմացվի բոլոր ազգերի, ցեղերի և լեզուների մեջ, կամ, որ բոլոր ժողովուրդների մեջ իմ մասին կխոսվի և՛ բարի, և՛ չար:

Նա ասաց, որ ոսկե քիթեղների վրա գրված մի գիրք կա պահված, որը տալիս է այս մայրցամաքի նախկին բնակիչների պատմությունը և նրանց ծագման սկզբնաղբյուրը: Նա ասաց նաև, որ այն պարունակում է հավիտենական Ավետարանի լրիվությունը, ինչպես որ այն Փրկչի կողմից հանձնվել է հնագույն բնակիչներին.

Ինչպես նաև, որ կան երկու քարեր՝ արծաթե աղեղների մեջ, – և այդ քարերը, լանջապանակին ամրացված, կազմում են, այսպես կոչված Ուրիմն ու Թումիմը, – պահված քիթեղների հետ. և հին կամ վաղեմի ժամանակներում այդ քարերն ունեցողներն ու օգտագործողներն էին կոչվում *Տեսանողներ*. և որ Աստված դրանք պատրաստել է գիրքը քարզմանելու նպատակով»:

* * * * *

«Բացի այդ, նա ասաց ինձ, որ երբ ստանամ այն քիթեղները, որոնց մասին նա խոսել էր, քանզի դրանց ստանալու ժամանակը դեռ չէր

լրացել, ես դրանք չպետք է ցույց տամ որևէ մեկին. ոչ էլ լանջապանակը՝ Ուրիմի ու Թումիմի հետ. միայն նրանց, ում ինձ կպատվիրվեր ցույց տալ դրանք. հակառակ դեպքում, ես կկործանվեմ: Մինչ նա ինձ հետ խոսում էր թիթեղների մասին, մի տեսիլք բացվեց իմ մտքում, որպեսզի ես կարողանայի տեսնել վայրը, որտեղ թիթեղները պահված էին, և դա այնքան հստակ ու որոշակի էր, որ վայրն այցելելուն պես, ես դարձյալ ճանաչեցի այն:

Այս հաղորդակցությունից հետո ես տեսա, թե ինչպես սենյակի լույսն անմիջապես սկսեց հավաքվել այդ անձնավորության շուրջը՝ նրա, ով խոսում էր ինձ հետ, և դա շարունակվեց այնքան, մինչև սենյակը կրկին մթնեց, բացառությամբ միայն նրա շուրջը, երբ հանկարծ ես տեսա՝ կարծես մի անցուղի բացվեց ուղիղ վեր՝ դեպի երկինք, և նա համբարձվեց, մինչև ամբողջովին անհետացավ, և սենյակը մնաց՝ ինչպես որ եղել էր նախքան այս երկնային լույսի հայտնվելը:

Ես պառկած խորհրդածում էի այս տեսարանի եզակիության մասին, մեծապես զարմանալով այդ արտասովոր սուրհանդակի կողմից ինձ ասված բաների վրա. երբ, իմ մտորումների մեջ, հանկարծ զգացի, որ սենյակս նորից սկսում է լուսավորվել, և կարծես թե մի ակնթարթից նույն երկնային սուրհանդակը կրկին մահճակալիս կողքին էր:

Նա սկսեց և նորից պատմեց ճիշտ նույն բաները, որոնք ասել էր իր առաջին այցելության ժամանակ, առանց չնչին իսկ փոփոխության. որից հետո նա տեղեկացրեց ինձ մեծ դատաստանների մասին, որոնք գալիս էին երկրի վրա մեծ ամայացումներով՝ սովով, սրով և ժանտախտով. և որ այս դառնադետ դատաստանները գալու էին երկրի վրա այս սերնդի ժամանակ: Այս բաները պատմելուց հետո նա կրկին համբարձվեց, ինչպես նախորդ անգամ:

Այդ ընթացքում մտքիս վրա թողած տպավորություններն այնքան խորն էին, որ քունը փախել էր աչքերիցս, և ես պառկել էի՝ ցնցված ու ապշած այն ամենից, ինչ տեսել էի ու լսել: Բայց ինչպիսին էր իմ զարմանքը, երբ կրկին տեսա նույն սուրհանդակին, մահճակալիս կողքին, և մեկ անգամ ևս լսեցի, թե ինչպես նա վերապատմեց, կամ կրկնեց ինձ նույն բաները, ինչ նախկինում. և ավելացրեց ինձ մի նախազգուշացում, ասելով, որ Սատանան կփորձի գայթակղել ինձ (հորս ընտանիքի թշվառ պայմանների հետևանքով) վերցնել թիթեղները հարստանալու նպատակով: Նա ինձ արգելեց այդ անել, ասելով, որ թիթեղները վերցնելու դեպքում ես չպետք է ունենամ ոչ մի ուրիշ դիտավորություն, բացի Աստծուն փառաբանելուց, և չպետք է ազդվեմ որևէ այլ դրդապատճառից, բացի նրա թագավորությունը կառուցելուց. հակառակ դեպքում, ես չեի կարող վերցնել դրանք:

Այս երրորդ այցելությունից հետո նա կրկին համբարձվեց երկինք, ինչպես առաջ, ինձ նորից թողնելով՝ խորհելու հենց նոր ունեցած փորձառության արտասովորության վրա. երբ, երկնային սուրհանդակի երրորդ անգամ իմ մոտից համբարձվելուց շատ չանցած, աքաղաղը

կանչեց, և ես տեսա, որ լուսաբացը մտտեմունք է, այնպես որ մեր գրույցները պետք է որ զբաղեցրած լինեին ողջ այդ գիշերը:

Քիչ անց ես վեր կացա մահճակալից և, սովորականի պես, անցա օրվա անհրաժեշտ գործերին. բայց փորձելով աշխատել, ինչպես ուրիշ անգամներ, ես զգացի, որ այնքան ուժասպառ եմ, որ լիովին անկարող եմ դարձել: Հայրս, որն աշխատում էր ինձ հետ, նկատեց որ ինձ հետ ինչ-որ բան է պատահել և պատվիրեց ինձ տուն գնալ: Ես ճամփա ընկա՝ տուն գնալու մտադրությամբ. բայց փորձելով անցնել դաշտեզրի ցանկապատի վրայով, որտեղ մենք էինք, ուժերս ամբողջովին լքեցին ինձ, և ես անօգնական գետնին փռվեցի և որոշ ժամանակ բոլորովին ոչինչ չէի գիտակցում:

Առաջին բանը, որ կարող եմ մտաբերել, դա մի ձայն էր, որ խոսում էր ինձ հետ՝ տալով անունս: Ես վեր նայեցի և տեսա նույն սուրհանդակին՝ իմ գլխավերևում կանգնած, լույսով շրջապատված, ինչպես առաջ: Ապա նա կրկին պատմեց ինձ այն ամենը, ինչ պատմել էր նախորդ գիշեր, և կարգադրեց ինձ գնալ հորս մոտ և պատմել նրան տեսիլքի ու պատվիրանների մասին, որոնք ես ստացել էի:

Ես հնազանդվեցի. վերադարձա դաշտ՝ հորս մոտ, և պատմեցի նրան ողջ պատահածը: Նա պատասխանեց ինձ, որ դա Աստծուց է եղել, և պատվիրեց ինձ գնալ և անել, ինչպես կարգադրել էր սուրհանդակը: Ես թողեցի դաշտը և գնացի այն վայրը, որտեղ, սուրհանդակի ասելով, պահ էին տրված թիթեղները. և տեսիլքի հստակության շնորհիվ, որ ունեցել էի դրա վերաբերյալ, տեղ հասնելուն պես, ես անմիջապես ճանաչեցի վայրը:

Նյու Յորքի Օնտարիո գավառի Մանչեստր գյուղից ոչ հեռու բավականին մեծ մի բլուր կա՝ ամենաբարձրադիրն այդ շրջակայքում: Բլրի արևմտյան կողմում, գագաթից ոչ հեռու, մի բավական մեծ քարի տակ էին դրված թիթեղները՝ քարե արկղում պահված: Այդ քարը հաստ էր և վերևի մասի մեջտեղում՝ կլոր, իսկ եզրերը՝ ավելի բարակ, այնպես որ գետնից բարձր երևում էր նրա մեջտեղի մասը, իսկ եզրերը բոլոր կողմերից ծածկված էին հողով:

Հեռացնելով հողը՝ ես վերցրեցի մի լծակ, որը հարմարեցրի քարի եզրի տակ և, մի փոքր ճիգ գործադրելով, բարձրացրեցի այն: Ես ներս նայեցի և այնտեղ, իսկապես, տեսա թիթեղները, Ուրիմն ու Թումիմը և լանջապանակը, ինչպես հաղորդել էր սուրհանդակը: Արկղը, որի մեջ դրանք դրված էին, շինված էր միմյանց ինչ-որ շաղախով ամրացված քարերից: Արկղի հատակին երկու քարեր էին դրված, արկղին խաչաձև, և այդ քարերի վրա դրված էին թիթեղները և դրանց հետ՝ մյուս բաները:

Ես փորձեցի հանել դրանք, բայց սուրհանդակն արգելեց և կրկին տեղեկացրեց, որ դրանք ի հայտ բերելու ժամանակը դեռ չի եկել, և կգա այդ ժամանակից չորս տարի անց. բայց նա ասաց ինձ, որ ես պետք է գամ այդ վայրը՝ այդ ժամանակից ուղիղ մեկ տարի անց, և որ նա

կհանդիպի ինձ այնտեղ, և որ ես պետք է շարունակեմ նույնն անել, մինչև որ գա թիթեղները ստանալու ժամանակը:

Այսպիսով, ինչպես որ ինձ պատվիրվել էր, ես ամեն տարին լրանալիս գնում էի և ամեն անգամ այնտեղ գտնում էի նույն սուրհանդակին, և մեր յուրաքանչյուր գրույցի ժամանակ ես ցուցումներ ու գիտելիք էի ստանում նրանից այն մասին, թե ինչ էր պատրաստվում անել Տերը, և թե ինչպես ու ինչ ձևով էր նրա թագավորությունը կառավարվելու վերջին օրերում»:

* * * * *

«Վերջապես եկավ թիթեղները, Ուրիմն ու Թումիմը և լանջապանակը ստանալու ժամանակը: Հազար ութ հարյուր քսանյոթ թվականի սեպտեմբերի քսաներկուսին, սովորականի պես, այդ տարվա վերջին ևս գնալով այն վայրը, որտեղ դրանք պահված էին, նույն երկնային սուրհանդակը հանձնեց ինձ դրանք՝ հետևյալ հանձնարարությամբ. որ ես պետք է պատասխանատու լինեմ դրանց համար. որ, եթե ես անգոգուշության կամ իմ անփութության պատճառով ձեռքիցս բաց թողնեմ դրանք, ես կկտրվեմ Տիրոջից. իսկ եթե բոլոր ջանքերս գործադրեմ՝ դրանք պահպանելու համար, մինչև նա՝ սուրհանդակը, գա դրանց ետևից, դրանք կպահպանվեն:

Շուտով ես հասկացա պատճառը, թե ինչու դրանք ապահով պահելու համար այդպիսի խիստ հանձնարարականներ ստացա և թե ինչու սուրհանդակն ասաց, որ երբ ես արած լինեմ այն, ինչ պահանջվում էր ինձանից, ինքը կգա դրանց ետևից: Քանզի հազիվ էր իմացվել, որ դրանք ինձ մոտ են, երբ ամենաեռանդուն ջանքերը գործադրվեցին՝ դրանք ինձանից վերցնելու համար: Ամեն մի հնարք, որ հնարավոր էր հորինել, օգտագործվեց՝ այդ նպատակի համար: Հալածանքը դարձավ ավելի անողորմ ու դաժան, քան առաջ, և ամբոխն աշալուրջ սպասում էր, որ հնարավորության դեպքում խլի դրանք ինձանից: Բայց Աստծո իմաստությամբ, դրանք իմ ձեռքում ապահով մնացին, մինչև որ ես դրանցով կատարեցի այն, ինչ պահանջվում էր իմ ձեռքից: Երբ, համաձայն պայմանավորվածության, սուրհանդակը եկավ դրանց ետևից, ես դրանք հանձնեցի նրան. և դրանք նրա հսկողության տակ են մինչ այսօր՝ հազար ութ հարյուր երեսունութ թվականի մայիսի երկրորդ օրը»:

Ամբողջական պատմությունը տե՛ս «Ջոզեֆ Սմիթ—Պատմություն»-ը, «Թանկագին Մարգարիտ» գրքում, և *History of The Church of Jesus Christ of Latter-day Saints* («Հիսուս Բրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Պատմություն»), հատոր 1, գլուխ 1–6:

Հնադարյան ձեռագիրը, այսպես ի հայտ բերված հողից, որպես փոշու միջից խոսող մարդկանց ձայն և թարգմանված ժամանակակից լեզվով՝ Աստծո գորությամբ ու պարզևով, որը վավերացվեց Աստվածային հաստատումով, աշխարհում առաջին անգամ հրատարակվեց անգլերեն, 1830 թվականին, որպես «THE BOOK OF MORMON»:

ՄՈՐՄՈՆԻ ԳՐՔԻ

ՄԱՍԻՆ ՀԱՄԱՌՈՏ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ

Մորմոնի Գիրքը մի սուրբ հիշատակարան է հնադարյան Ամերիկայի ժողովուրդների մասին և փորագրված է եղել մետաղյա թերթերի վրա: Գրքում ինքնին խոսվում է չորս տեսակի մետաղյա թիթեղների մասին.

1. *Նեփիի Թիթեղները*, որոնք երկու տեսակի էին՝ Փոքր Թիթեղներ և Մեծ Թիթեղներ: Առաջիններն ավելի շատ նվիրված էին հոգևոր հարցերին ու մարգարեների ծառայություններին և ուսմունքներին, մինչդեռ վերջիններս հիմնականում զբաղեցվել էին՝ առնչվելով ժողովուրդների աշխարհիկ պատմությանը (1 Նեփի 9.2–4): Մոսիայի ժամանակից սկսած, այնուամենայնիվ, մեծ թիթեղները նույնպես ընդգրկում են հոգևոր մեծ նշանակություն ունեցող հարցեր:
2. *Մորմոնի Թիթեղները*, որոնք պարունակում են Նեփիի Մեծ Թիթեղների Մորմոնի կրճատումը՝ բազմաթիվ մեկնաբանություններով: Այս թիթեղներն ընդգրկում էին նաև Մորմոնի պատմության շարունակությունը և հավելումներ նրա որդու՝ Մորմոնի կողմից:
3. *Եթերի Թիթեղները*, որոնք ներկայացնում են Հարեդացիների մասին մի պատմություն: Այս հիշատակարանը կրճատվել է Մորմոնի կողմից, որը գետնեղել է իր սեփական մեկնաբանությունները և միացրել հիշատակարանը ընդհանուր պատմության հետ՝ «Եթերի Գիրք» անվանումով:
4. *Արույրե թիթեղները*՝ բերված Լեքիի ժողովրդի կողմից Երուսաղեմից, 600 տարի Զ.Ժ.ա.: Սրանք պարունակում էին «Մովսեսի հինգ գրքերը.... և նաև հրեաների մի հիշատակարան, սկսած սկզբից.... մինչև Հուդայի թագավոր Մեդեկիայի թագավորության սկիզբը: Եվ նաև սուրբ մարգարեների մարգարեությունները» (1 Նեփի 5.11–13): Շատ քաղվածքներ՝ այս թիթեղներից, մեջբերելով Եսայիային և ուրիշ աստվածաշնչյան և ոչ աստվածաշնչյան մարգարեների, հայտնվում են Մորմոնի Գրքում:

Մորմոնի Գիրքը պարունակում է տասնհինգ գլխավոր մասեր կամ բաժիններ՝ հայտնի որպես գրքեր, բացառությամբ մեկի, յուրաքանչյուրն իր հիմնական հեղինակի անունով անվանված: Առաջին մասը (առաջին վեց գրքերը՝ վերջանալով Օմնիով) թարգմանություն է Նեփիի Փոքր Թիթեղներից: Օմնիի և Մոսիայի գրքերի միջև մի ներդիր է, որը կոչվում է Մորմոնի Խոսքեր: Այս ներդիրը Փոքր Թիթեղների վրա փորագրված հիշատակարանը կապում է Մեծ Թիթեղների Մորմոնի կրճատման հետ:

Ամենաերկար մասը, սկսած Մոսիայից, մինչև Մորմոն, գլուխ 7-ը ներառյալ, Նեփիի Մեծ Թիթեղների՝ Մորմոնի կրճատման թարգմանությունն է: Եզրափակիչ մասը, սկսած Մորմոն, գլուխ 8-ից մինչև գրքի վերջը, փորագրվել էր Մորմոնի որդի Մորմոնի կողմից, որը, իր հոր կյանքի հիշատակարանն ավարտելուց հետո, կատարեց Հարեդացիների

հիշատակարանի կրճատումը (որպես՝ «Եթերի Գիրքը») և հետագայում ավելացրեց այն մասերը, որոնք հայտնի են որպես «Մորոնիի Գիրքը»:

Վերջին Նեփիազի մարգարե-պատմագիրը՝ Մորոնին, մոտավորապես Ք.ծ.հ. 421 թվականին կնքեց սուրբ հիշատակարանը և այն պահ տվեց Տիրոջը, որպեսզի ի հայտ բերվի վերջին օրերին, ինչպես կանխագուշակվել էր Աստծո ձայնով՝ իր հնագույն մարգարեների միջոցով: Ք.ծ.հ. 1823 թվականին, այս նույն Մորոնին, արդեն հարություն առած անձնավորություն, այցելեց Մարգարե Ջոզեֆ Սմիթին, իսկ ավելի ուշ, հանձնեց նրան փորագրված թիթեղները:

ՄՈՐՄՈՆԻ ԳՐՔՈՒՄ

<i>Անուն</i>	<i>Էջ</i>
Նեփիի Առաջին Գիրք	1
Նեփիի Երկրորդ Գիրք	63
Հակոբի Գիրք	140
Ենովսի Գիրք	162
Հարոմի Գիրք	166
Օմնիի Գիրք	168
Մորմոնի Խոսքերը	171
Մոսիայի Գիրք	173
Ալմայի Գիրք	252
Հելամանի Գիրք	460
Երրորդ Նեփի	510
Չորրորդ Նեփի	581
Մորմոնի Գիրք	586
Եթերի Գիրք	609
Մորմոնիի Գիրք	647

ՆԵՓԻԻ ԱՌԱՋԻՆ ԳԻՐՔԸ

ՆՐԱ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Պատմությունը Լեքիի ու նրա կին Սարիայի, և նրա չորս որդիների՝ Անվանակոչված լինելով (սկսած մեծից) Լաման, Լեմուել, Մամ և Նեփի: Տերը նախագուշացնում է Լեքիին՝ հեռանալ Երուսաղեմի հողից, որովհետև նա մարգարեանում է ժողովրդին նրանց անօրինությունների վերաբերյալ, և նրանք ջանում են կործանել նրա կյանքը: Նա ձեռնարկում է երեք օրվա ճամփորդություն դեպի անապատ՝ իր ընտանիքի հետ: Նեփին վերցնում է իր եղբայրներին և վերադառնում Երուսաղեմի հողը՝ հրեաների հիշատակարանի հետևից: Նրանց տառապանքների պատմությունը: Նրանք կնության են վերցնում Իսմայելի դուստրերին: Նրանք վերցնում են իրենց ընտանիքները և հեռանում անապատ: Նրանց տառապանքները և չարչարանքներն անապատում: Նրանց ճամփորդությունների ուղին: Նրանք հասնում են մեծ ջրերին: Նեփիի եղբայրներն ապստամբում են նրա դեմ: Նա կարկանդակում է նրանց և մի նավ կառուցում: Այդ տեղի անունը նրանք կոչում են Լիառատ: Նրանք անցնում են մեծ ջրերը՝ դեպի խոստացված երկիր, և այդպես շարունակ: Սա համապատասխանում է Նեփիի պատմությանը. կամ, այլ խոսքով ասած, ես՝ Նեփիս, գրեցի այս հիշատակարանը:

ԳԼՈՒԽ 1

Նեփին սկսում է իր ժողովրդի հիշատակարանը – Լեքին տեսիլքում կրակի պյուն է տեսնում և կարդում է մարգարեության գրքից – Նա փառաբանում է Աստծուն, կանխագուշակում է Մեսիայի գալուստը և մարգարեանում Երուսաղեմի կործանման մասին – Նա հալածվում է հրեաների կողմից: Մոտ 600թ. Բ.ժ.ա.:

ԵՄ՝ Նեփիս, ծնված լինելով Եթովպիայի թագավորներից, հետևաբար, ինչ-որ չափով զսովորեցվել էի հորս բոլոր գիտելիքներից. և տե-

սած լինելով շատ չարչարանքներ իմ օրերի ընթացքում, այնուամենայնիվ, մեծապես հովանավորված լինելով Տիրոջ կողմից իմ բոլոր օրերում. այո, մեծ գիտելիքներ ունենալով Աստծո բարության և Պարտիսիանի մասին, հետևաբար, գրում եմ գործերիս՝ հիշատակարանն իմ օրերում:

2 Այո, ես գրում եմ հիշատակարան՝ իմ հոր լեզվով, որը բաղկացած է հրեաների դպրությունից և Եգիպտացիների լեզվից:

3 Եվ ես գիտեմ, որ հիշատակարանը, որ գրում եմ, ճիշտ է. և ես գրում եմ այն իմ սեփական

[1 Նեփի]

11ա սուր Նեփի՝ Լեքիի որդի:
բ Առակ. ԻԲ.1:
գ ՎեՌԻ 68.25, 28:
սուր Ծնողներ:
դ Ենովս 1.1,

Մոսիա 1.2–3:
սուր Ուսուցանել,
Ուսուցիչ:

ե սուր Չախորդություն:
զ սուր Աստծո
խորհուրդները:
է սուր Մուրբ գրքեր:

2ա Մոսիա 1.2–4,
Մորմ. 9.32–33:
3ա 1 Նեփի 14.30,
Մոսիա 1.6,
Եթեր 5.1–3,
ՎեՌԻ 17.6:

ձեռքով. և ես գրում եմ այն՝ իմ գիտելիքների համաձայն:

4 Եվ եղավ այնպես, որ Հուդայի թագավոր՝ Սեղեկիայի թագավորության ղառաջին տարվա սկզբին (իմ հայրը՝ Լեթին, ապրած լինելով իր բոլոր օրերը՝ Գերուսաղեմում). և այդ նույն տարում շատ մարգարեներ եկան՝ մարգարեանալով ժողովրդին, որ նրանք պետք է ապաշխարեն, եթե ոչ՝ մեծ քաղաք Գերուսաղեմը պիտի կործանվի:

5 Այդ պատճառով եղավ այնպես, որ իմ հայրը՝ Լեթին, հեռու գնալով աղոթեց Տիրոջը, այո, ուղղակի իր ամբողջ սրտով, իր ժողովրդի համար:

6 Եվ եղավ այնպես, որ, երբ նա աղոթում էր Տիրոջը, մի կրակի սայուն եկավ և մնաց իր առջև՝ ժայռի վրա. և նա տեսավ ու լսեց շատ բաներ. և իր տեսածի ու լսածի պատճառով նա ուժեղ ցնցվեց ու դողաց:

7 Եվ եղավ այնպես, որ նա վերադարձավ Երուսաղեմ՝ իր սեփական տունը. և իրեն գցեց անկողին, մոժասպառ եղած Հոգուց և այն բաներից, որ տեսել էր:

8 Եվ այսպես, ուժասպառ եղած Հոգուց, նա տարվել էր հեռու՝ տեսիլքում, նույնիսկ այնպես, որ նա տեսավ թերկինքները բաց և մտածեց, որ տեսավ Աստծուն՝ նստած

իր զահի վրա, շրջապատված հրեշտակների անհամար բազմությամբ՝ գրառված իրենց Աստծուն գովերգելով ու փառաբանելով:

9 Եվ եղավ այնպես, որ նա տեսավ Սեկին, որն իջնում էր երկնքի միջից, և նա նկատեց, որ նրա փայլն ավելին էր, քան արևինը կեսօրին:

10 Եվ նա տեսավ նաև՝ տասներկու ուրիշների, որոնք հետևում էին նրան, և նրանց պաշտառությունը գերազանցում էր աստղերինը՝ երկնականարում:

11 Եվ նրանք վայր իջան ու առաջ գնացին երկրի երեսին. և առաջինը եկավ ու կանգնեց հորս առջև, և տվեց նրան մի՝ զգիրք, և պատվիրեց նրան, որ կարդա:

12 Եվ եղավ այնպես, որ երբ կարդաց, նա լցվեց Տիրոջ՝ Հոգով:

13 Եվ նա կարդաց՝ ասելով. Վա՛յ, վա՛յ Երուսաղեմին, քանզի ես տեսա քո պղծությունները: Այո, և շատ բաներ հայրս կարդաց թերուսաղեմի վերաբերյալ, որ այն պիտի կործանվի, և այնտեղի բնակիչներն էլ. շատերը պիտի սրից կտտորվեն և շատերը պիտի գերի օտարվեն Բաբելոն:

14 Եվ եղավ այնպես, որ երբ հայրս կարդաց և տեսավ շատ մեծ ու զարմանալի բաներ, նա բացականչեց առ Տերը, ասելով

4աբ Մն. Լ.Ձ.10, Երեմ. ԾԲ.3–5, Օմնի 1.15:
 բ սոր Ժամանակագրություն – 598 Ջ.ժ.ա.
 գ Ա Մն. Թ.3:
 դ Դ Թագ. ԺԷ.13–15, Բ Մն. Լ.Ձ.15–16, Երեմ. Է.25–26: սոր Մարգարե: Ե Երեմ. Ի.Ձ.18, 2 Նեփի 1.4, Հել. 8.20:
 5ա սոր Լեթի՝ Նեփիի հայր:

բ Հակ. Ե.16:
 6ա Ել. ԺԳ.21, Հել. 5.24, 43, ՎևոՒ 29.12, ՋՍ–Պ 1.16:
 7ա Գան. Ժ.8, 1 Նեփի 17.47, Մովսես 1.9–10, ՋՍ–Պ 1.20:
 8ա 1 Նեփի 5.4: սոր Տեսիլք: բ Եզեկ. Ա.1, Գոր. Է.55, 1 Նեփի 11.14, Հել. 5.45–49,

ՎևոՒ 1371:
 9ա ՋՍ–Պ 1.16–17:
 10ա սոր Առաքյալ:
 11ա Եզեկ. Բ.9:
 12ա ՎևոՒ 6.15:
 13ա Գ Թագ. ԻԳ.18–20, Բ Մն. Լ.Ձ.14: բ Դ Թագ. ԻԳ.27, ԻԳ.2, Երեմ. ԺԳ.13–14, 2 Նեփի 1.4:
 գ Դ Թագ. Ի.17–18, 2 Նեփի 25.10, Օմնի 1.15:

շատ բաներ՝ ինչպես. Մեծ և զարմանալի են քո գործերը, ո՛վ Տեր Աստված Ամենագոր: Քո գահը բարձր է երկնքում, և քո զորությունը, բարությունը և ողորմությունը երկրի բոլոր բնակիչների վրա են. և քանի որ դու ողորմած ես՝ դու քույլ չես տա, որ ովքեր՝ զալիս են դեպի քեզ, որ նրանք կորչեն:

15 Եվ այս ձևով էր իմ հոր խոսքը՝ իր Աստծուն փառաբանելիս. քանզի նրա հոգին հրճվում էր և ամբողջ սիրտը լցված էր՝ այն բաների պատճառով, որ նա տեսել էր, այո, որոնք Տերը ցույց էր տվել նրան:

16 Եվ այժմ, ես՝ Նեփիս, չեմ անում լրիվ պատմությունն այն բաների, որոնք հայրս գրել է, քանի որ նա գրել է շատ բաներ, որոնք տեսել էր տեսիլքներում և երազներում. և նա նաև գրել է շատ բաներ, որոնց մասին ՚մարգարեացել էր և ասել իր զավակներին, որոնց լրիվ պատմությունը ես չեմ անի:

17 Բայց ես կգրեմ իմ գործերի պատմությունն իմ օրերում: Ահա, ես ՚համառոտագրում եմ հորս ՚հիշատակարանը թիթեղների վրա, որոնք ես պատրաստել եմ իմ սեփական ձեռքերով. ուստի, հորս հիշատակարանը կրճատելուց հետո, ես կգրեմ իմ սեփական կյանքի պատմությունը:

18 Հետևաբար, ես կցանկանայի, որ դուք իմանաք, որ հետո, երբ Տերն այդքան շատ զարմանալի բաներ էր ցույց տվել հորս՝ Լեթինին, այո, Երուսաղեմի՝ ՚կործանման վերաբերյալ, ահա, նա դուրս եկավ

ժողովրդի մեջ և սկսեց ՚մարգարեանալ և հայտարարել նրանց այն բաների վերաբերյալ, որոնք ինքը և՛ տեսել էր, և՛ լսել:

19 Եվ եղավ այնպես, որ հրեաները ՚ծաղրեցին նրան՝ այն բաների պատճառով, որ նա վկայեց նրանց մասին. քանի որ նա իսկապես վկայեց նրանց ամբարշտության և նրանց պղծությունների մասին. և նա վկայեց, որ այն բաները, որ նա տեսել էր ու լսել, և նաև այն բաները, որ նա կարդացել էր գրքում, հստակորեն հայտնում էին մի ՚Մեսիայի գալստյան և նաև աշխարհի փրկագնման մասին:

20 Եվ, երբ հրեաները լսեցին այս բաները, նրանք բարկացան նրա վրա. այո, ճիշտ ինչպես հին մարգարեների վրա, որոնց դուրս ՚գցեցին և քարկոծեցին, և սպանեցին. և նրանք նաև ջանում էին զրկել նրան կյանքից: Բայց ահա, ես՝ Նեփիս, ցույց կտամ ձեզ, որ Տիրոջ գորովագութ ՚ողորմությունները բոլոր նրանց վրա են, ում նա ընտրել է, նրանց հավատքի շնորհիվ, դարձնելու նրանց հզոր՝ մինչև իսկ ի գործությունն ազատվելու:

ԳԼՈՒԽ 2

Լեթին իր ընտանիքը տանում է անապատ՝ Կարմիր ծովի մոտ – Նրանք թողնում են իրենց ունեցվածքը – Լեթին գոհ է մատուցում Տիրոջը և սովորեցնում իր որդիներին պահել պատվիրանները – Լամանը և Լե-

14ա Ալմա 5.33–36,
3 Նեփի 9.14:
16ա 1 Նեփի 7.1:
17ա 1 Նեփի 9.2–5:
բ 1 Նեփի 6.1–3, 19.1–6,
2 Նեփի 5.29–33,
ՎևՈՒ 10.38–46:

18ա 2 Նեփի 25.9–10,
ՎևՈՒ 5.20:
բ սո՛Ւ Մարգարեություն,
Մարգարեանալ:
19ա Բ Մն. Լ.Ձ.15–16,
Երեմ. ԻԵ.4,
1 Նեփի 2.13, 7.14:

բ սո՛Ւ Մեսիա:
20ա Հել. 13.24–26:
բ Ալմա 34.38,
ՎևՈՒ 46.15:
սո՛Ւ Ողորմած,
Ողորմություն:

մոտելը տրտնջում են իրենց հոր դեմ – Նեփին հնազանդ է և աղոթում է հավատքով. Տերը խոսում է նրա հետ, և նա ընտրվում է կառավարելու իր եղբայրներին: Մոտ 600թ. Ք.ծ.ա.:

ՔԱՆՁԻ ահա, եղավ այնպես, որ Տերը, այո, ուղղակի երազում խոսեց հորս հետ և ասաց նրան. Օրհնված ես դու, Լե՛քի, այն բաների համար, որ դու արել ես. և քանզի դու հավատարիմ եղար ու հայտնեցիր այս ժողովրդին այն բաները, որոնք ես պատվիրեցի քեզ, ահա, նրանք ջանում են Պրկել քեզ կյանքից:

2 Եվ եղավ այնպես, որ Տերը Պատվիրեց հորս, ուղղակի Պերազում, որ նա պետք է Պերցներ իր ընտանիքը և հեռանար անապատ:

3 Եվ եղավ այնպես, որ նա Պհնազանդ էր Տիրոջ խոսքին, այդ պատճառով արեց, ինչպես որ Տերը պատվիրեց նրան:

4 Եվ եղավ այնպես, որ նա հեռացավ անապատ: Եվ նա թողեց իր տունը և իր ժառանգության հողը և իր ոսկին և իր արծաթը և իր թանկարժեք իրերը, և իր հետ ոչինչ չվերցրեց, բացի իր ընտանիքից և պարենից և վրաններից, ու Պհեռացավ անապատ:

5 Եվ նա իջավ ՊԿարմիր ծովի ափի մոտի եզերքով. և նա ճամփորդում էր անապատում՝ այն եզերքով, որն ավելի մոտ էր Կար-

միր ծովին. և նա ճամփորդում էր անապատում իր ընտանիքի հետ, որը բաղկացած էր իմ մայր Սարիայից ու ավագ եղբայրներիցս, որոնք էին՝ ՊԼամանը, Լեմուելը և Սամը:

6 Եվ եղավ այնպես, որ, երբ նա երեք օր ճամփորդել էր անապատում, նա խփեց իր վրանը մի Պհովտում, ջրի գետի ափին:

7 Եվ եղավ այնպես, որ նա կառուցեց մի Պգոհասեդան Պքարերից, և ընծա մատուցեց Տիրոջը, և Պգոհուրթյուն հայտնեց Տիրոջը՝ մեր Աստծուն:

8 Եվ եղավ այնպես, որ նա կոչեց գետի անունը Լաման, և այն թափվում էր Կարմիր ծովը. իսկ հովիտը գետաբերանի եզրին մոտ էր:

9 Եվ, երբ հայրս տեսավ, որ գետի ջրերը թափվում էին Կարմիր ծովի ակունքը, նա դիմեց Լամանին՝ ասելով. Երանի՛ թե դու կարողանայիր նմանվել այս գետին՝ անընդհատ վազող դեպի բոլոր արդարության ակունքը:

10 Եվ նա նաև ասաց Լեմուելին. Երանի՛ թե դու կարողանայիր նմանվել այս հովտին՝ կայուն ու հաստատուն, անխախտ՝ Տիրոջ պատվիրանները պահելիս:

11 Եվ այս նա ասաց Լամանի և Լեմուելի խստապարանոցության պատճառով. քանզի ահա, նրանք Պտրտնջում էին շատ բաների վերաբերյալ իրենց Պհոր դեմ, քանի որ նա Պտեսիլատես մարդ էր և

2 1ա 1 Նեփի 7.14:
2ա 1 Նեփի 5.8, 17.44:
բ սուր Երազ:
գ Ծճ. ԺԲ.1,
2 Նեփի 10.20,
Եթեր 1.42,
Աբր. 2.3:
3ա սուր Հնազանդություն,
Հնազանդ, Հնազանդվել:

4ա 1 Նեփի 10.4, 19.8:
5ա 1 Նեփի 16.14,
ՎևոՒ 17.1:
բ սուր Լաման:
6ա 1 Նեփի 9.1:
7ա Ծճ. ԺԲ.7–8,
Ել. ԻԳ.4,
Աբր. 2.17:
բ Ել. Ի.25,

Բ Օր. ԻԷ.5–6:
գ սուր Շնորհակալ,
Շնորհակալություն,
Գոհաբանություն:
11ա 1 Նեփի 17.17:
սուր Տրտնջալ:
բ Առակ. Ի.20:
գ 1 Նեփի 5.2–4:

դուրս էր բերել նրանց Երուսաղեմի հողից՝ թողնելով իրենց ժառանգության հողը և իրենց ոսկին և իրենց արծաթը և իրենց թանկարժեք բաները, որ մեռնի անապատում: Եվ սա, ասում էին նրանք, նա արել էր իր սրտի խենթ երևակայությունների պատճառով:

12 Եվ այսպես Լամանը և Լեմուելը, լինելով ավագները, տրտնջում էին իրենց հոր դեմ: Եվ նրանք տրտնջում էին, որովհետև «չգիտեին գործերն այն Աստծո, որը ստեղծել էր իրենց:

13 Նրանք ոչ էլ հավատում էին, որ Երուսաղեմը, այդ մեծ քաղաքը, կարող է «կործանվել՝ համաձայն մարգարեների խոսքերի: Եվ նրանք նման էին այն հրեաներին, որոնք Երուսաղեմում էին, որոնք ջանում էին գրկել հորս կյանքից:

14 Եվ եղավ այնպես, որ հայրս, լցված լինելով Հոգով, խոսեց նրանց հետ Լեմուելի հովտում, «գորությանք, այնպես որ նրանց մարմինները ^բդողացին նրա առջև: Եվ նա այնպես կարկամեցրեց նրանց, որ նրանք չհամարձակվեցին խոսել նրա դեմ. ուստի, արեցին, ինչպես նա պատվիրեց:

15 Եվ իմ հայրը բնակվում էր վրանում:

16 Եվ եղավ այնպես, որ ես՝ Նեփիս, լինելով չափազանց երիտասարդ, այնուամենայնիվ, լինելով հաղթանդամ կազմված-

քով, և նաև ունենալով մեծ իղձեր՝ իմանալու Աստծո «խորհուրդները, ուստի, ես կանչեցի առ Տերը. և ահա, նա ^բայցելեց ինձ և այնպես «փափկացրեց իմ սիրտը, որ ես ^բհավատացի բոլոր այն խոսքերին, որոնք ասվել էին ^բհորս կողմից. այդ պատճառով ես չապատամբեցի նրա դեմ՝ իմ եղբայրների նման:

17 Եվ ես խոսեցի Սամի հետ, իմաց տալով նրան այն բաները, որոնք Տերը հայտնել էր ինձ իր Սուրբ Հոգու միջոցով: Եվ եղավ այնպես, որ նա հավատաց իմ խոսքերին:

18 Բայց, ահա, Լամանը և Լեմուելը չկամեցան ակնց դնել իմ խոսքերին. և «վշտացած լինելով նրանց սրտերի կարծրության պատճառով, ես կանչեցի առ Տերը նրանց համար:

19 Եվ եղավ այնպես, որ Տերը խոսեց ինձ հետ՝ ասելով. Օրհնըված ես դու, Նեփի, քո «հավատքի համար, քանի որ դու փնտրեցիր ինձ ջանասիրաբար՝ սրտի խոնարհությամբ:

20 Եվ որքան որ դուք կպահեք իմ պատվիրանները, դուք «կբարգավաճեք և կառաջնորդվեք խոստումի ^բերկիր. այո, այսինքն՝ մի երկիր, որը ես պատրաստել եմ ձեզ համար. այո, մի երկիր, որն ընտիր է բոլոր մյուս երկրներից առավել:

21 Եվ որքան որ քո եղբայրները

12ա Մովսես 4.6:
 13ա Երեմ. ԺԳ.14,
 1 Նեփի 1.13:
 14ա սուր Զորություն:
 բ 1 Նեփի 17.45:
 16ա սուր Աստծո
 խորհուրդները:
 բ Սաղ. Ը.4, Ալմա 17.10,
 Վևոթ 5.16:

սուր Հայտնություն:
 գ Գ. Թագ. ԺԸ.37,
 Ալմա 5.7:
 դ 1 Նեփի 11.5:
 ե սուր Հայր
 մահկանացու,
 Մարգարե:
 18ա Ալմա 31.24,
 3 Նեփի 7.16:

19ա 1 Նեփի 7.12, 15.11:
 20ա Հես. Ա.7,
 1 Նեփի 4.14,
 Մոսիս 1.7:
 բ Բ.Օր. Լ.Գ.13–16,
 1 Նեփի 5.5, 7.13,
 Մովսես 7.17–18:
 սուր Խոստացված
 երկիր:

կապատամբեն քո դեմ, նրանք
"կկտրվեն Տիրոջ ներկայությունից:

22 Եվ որքան որ դու կպահես իմ
պատվիրանները, դու կդարձվես
"դեկավար և ուսուցիչ քո եղբայր-
ների վրա:

23 Քանզի ահա, այն օրը, երբ
նրանք կապատամբեն իմ դեմ, ես
"կանիծեմ նրանց, նույնիսկ դառն
անեծքով, և նրանք իշխանություն
չեն ունենա քո սերնդի վրա, քանի
դեռ նրանք էլ չեն ապատամբել իմ
դեմ:

24 Եվ եթե լինի այնպես, որ նրանք
ապատամբեն իմ դեմ, նրանք "խա-
րազան կլինեն քո սերնդի համար`
բզարթնեցնելու նրանց մեջ հիշելու
սովորությամբ:

ԳԼՈՒԽ 3

*Լեբիի որդիները վերադառնում են
Երուսաղեմ ձեռք բերելու արույրե
թիթեղները – Լաբանը մերժում է
տալ թիթեղները – Նեփին հորդո-
րում է և քաջալերում իր եղբայրնե-
րին – Լաբանը զողանում է նրանց
ունեցվածքը և փորձում սպանել
նրանց – Լամանն ու Լենուելը ծե-
ծում են Նեփիին ու Սամին և հան-
դիմանվում են հրեշտակի կողմից:
Մոտ 600–592թթ. Ք.ծ.ա.:*

Եվ եղավ այնպես, որ ես` Նեփիս,
Տիրոջ հետ խոսելուց հետո, վերա-
դարձա հորս վրանը:

2 Եվ եղավ այնպես, որ նա խո-

սեց ինձ հետ` ասելով. Ահա, ես
մի "երազ երազեցի, որով Տերը
պատվիրեց ինձ, որ դու և քո եղ-
բայրները պետք է վերադառնաք
Երուսաղեմ:

3 Քանզի ահա, Լաբանն ունի
հրեաների հիշատակարանը և նաև
իմ նախահայրերի "տոհմաբանու-
թյունը, և դրանք փորագրված են
արույրե թիթեղների վրա:

4 Ուստի, Տերը հրամայեց ինձ,
որ դու և քո եղբայրները պետք է
զնաք Լաբանի տունը, գտնեք հի-
շատակարանները և բերեք դրանք
այստեղ` անապատ:

5 Եվ այժմ, ահա քո եղբայրները
տրտնջում են` ասելով, որ այն, ինչ
պահանջում են նրանցից, դժվար
բան է. բայց ահա, ես չեմ պահան-
ջում դա նրանցից, այլ դա պատ-
վիրան է Տիրոջից:

6 Հետևաբար, զնա՛, որդիս, և դու
կաջակցվես Տիրոջ կողմից, որով-
հետև դու "չարտնջացիր:

7 Եվ եղավ այնպես, որ ես` Նե-
փիս, ասացի հորս. Ես "կզնամ ու
կանեմ այն բաները, որոնք Տերը
պատվիրել է, քանզի գիտեմ, որ
Տերը բպատվիրաններ չի տալիս
մարդկանց զավակներին` առանց
ուղի Գպատրաստելու նրանց հա-
մար, որպեսզի նրանք կարողանան
իրագործել այն, ինչ նա պատվի-
րել է իրենց:

8 Եվ եղավ այնպես, որ, երբ
հայրս լսեց այս խոսքերը, նա չա-
փազանց ուրախացավ, քանի որ

21ա2 Նեփի 5.20-24,
Ալմա 9.13-15, 38.1:
22աԾն. ԼԷ.8-11,
1 Նեփի 3.29:
23աԲ Օր. ԺԱ.28,
1 Նեփի 12.22-23,
ՎևոՒ 41.1:
24աՀես. ԻԳ.13,
Գատ. Բ.22-23:

բ 2 Նեփի 5.25:
3 2ա սու՛ Երազ:
3ա1 Նեփի 5.14:
6ա սու՛ Եկեղեցու
դեկավարներից
հաստատելը:
7ա Ա Թագ. ԺԷ.32,
Գ Թագ. ԺԷ.11-15:
սու՛ Հավատք.

Հնագանդություն,
Հնագանդ, Հնագանդվե:
բ սու՛ Պատվիրաններն
Աստծո:
գ Ծն. ԺԸ.14,
Փիլ. Գ.13,
1 Նեփի 17.3, 50,
ՎևոՒ 5.34:

ինացավ, որ ես օրհնված էի Տիրոջ կողմից:

9 Եվ ես՝ Նեփիա, ու եղբայրներս մեր վրաններով ճանապարհ ընկանք անապատով, գնալով վեր՝ դեպի Երուսաղեմի հողը:

10 Եվ եղավ այնպես, որ, երբ մենք հասանք Երուսաղեմի հողը, ես և եղբայրներս խորհրդակցեցինք միմյանց հետ:

11 Եվ մենք՝ վիճակ գցեցինք, թե մեզանից ով պետք է գնար ներս՝ Լաբանի տունը: Եվ եղավ այնպես, որ վիճակն ընկավ Լամանին. և Լամանը ներս գնաց Լաբանի տունը և խոսեց նրա հետ, երբ նա նստած էր իր տանը:

12 Եվ նա Լաբանից ուզեց հիշատակարանները, որոնք փորագրված էին արույրե թիթեղների վրա, որոնք պարունակում էին հորս՝ տոհմաբանությունը:

13 Եվ ահա, եղավ այնպես, որ Լաբանը զայրացավ և դուրս շարտեց նրան իր մտոյից. և չկամեցավ, որ նա ունենա հիշատակարանները: Ուստի, նա ասաց նրան. Ահա, դու ավազակ ես, և ես կապանեմ քեզ:

14 Բայց Լամանը փախավ նրա մտոյից և պատմեց մեզ այն բաները, որ Լաբանն արել էր: Եվ մենք սկսեցինք չափազանց վշտանալ, և եղբայրներս պատրաստվում էին վերադառնալ հորս մոտ՝ անապատ:

15 Բայց ահա, ես ասացի նրանց, որ. Ինչպես կենդանի է Տերը, և ինչպես կենդանի ենք մենք, մենք ետ չենք գնա անապատ՝ մեր հոր

մոտ, մինչև չիրագործենք այն, ինչ Տերը պատվիրել է մեզ:

16 Ուստի, եկեք հավատարիմ լինենք Տիրոջ պատվիրանները պահելիս. հետևաբար, եկեք գնանք մեր հոր՝ ժառանգության հողը, քանզի ահա, նա թողել է ոսկի և արծաթ և ամեն տեսակի հարըստություններ: Եվ այս բոլորը նա արել է հանուն Տիրոջ՝ պատվիրանների:

17 Քանզի նա զիտեր, որ Երուսաղեմը պետք է՝ կործանվի՝ մարդկանց ամբարշտության պատճառով:

18 Քանզի ահա, նրանք՝ մերժեցին մարգարեների խոսքերը: Ուստի, եթե հայրս մնար այդ հողում, այն բանից հետո, երբ նրան՝ պատվիրվել էր փախչել այդ հողից, ահա, նա նույնպես կկորչեր: Ուստի, անպայման պետք էր, որ նա փախչեր այդ հողից:

19 Եվ ահա, Աստծո իմաստությանը է, որ մենք պետք է ձեռք բերենք այս՝ հիշատակարանները, որպեսզի մենք կարողանանք պահպանել մեր զավակների համար մեր հայրերի լեզուն.

20 Եվ նաև, որպեսզի կարողանանք՝ պահպանել նրանց համար այն խոսքերը, որոնք ասվել են բոլոր սուրբ մարգարեների բերանով, որոնք տրվել են նրանց Աստծո Հոգով և զորությամբ, աշխարհի սկզբից ի վեր, նույնիսկ ընդհուպ մինչև այս ներկա ժամանակը:

21 Եվ եղավ այնպես, որ այս խոսելածևով ես համոզեցի իմ եղբայրներին, որ նրանք հավատա-

11ա Նեեմ. Ժ. 34,
Գոր. Ա. 26:

12ա 1 Նեփի 3.3, 5.14:

16ա 1 Նեփի 2.4:

բ 1 Նեփի 2.2, 4.34:

17ա Բ Մն. ԼՁ. 16–20,
Երեմ. ԼԹ. 1–9,

1 Նեփի 1.13:

18ա սուր Ապստամբություն:

բ 1 Նեփի 16.8:

19ա Օմնի 1.17,
Մոսիա 1.2–6:

20ա սուր Սուրբ գրքեր –
Սուրբ գրքերը պետք է
պահպանվեն:

քիմ լինեն Աստծո պատվիրանները պահելիս:

22 Եվ եղավ այնպես, որ մենք գնացինք մեր ժառանգության հողը, և մենք ի մի հավաքեցինք մեր "նսկին և մեր արծաթը և մեր թանկարժեք իրերը:

23 Եվ այս բաներն ի մի հավաքելուց հետո, մենք նորից գնացինք Լաբանի տուն:

24 Եվ եղավ այնպես, որ մենք մտանք ներս՝ Լաբանի մոտ և ուզեցինք նրանից, որ նա մեզ տար հիշատակարանները, որոնք փորագրված էին արույրե "թիթեղների վրա, որի համար մենք նրան կտայինք մեր ոսկին և մեր արծաթը և մեր բոլոր թանկարժեք իրերը:

25 Եվ եղավ այնպես, որ, երբ Լաբանը տեսավ մեր ունեցվածքը, և որ այն չափազանց մեծ էր, նա "փափազեց այն՝ այնպես, որ մեզ դուրս շարտեց և ուղարկեց իր ծառաներին՝ սպանելու մեզ, որպեսզի կարողանար տիրանալ մեր ունեցվածքին:

26 Եվ եղավ այնպես, որ մենք փախուստի դիմեցինք Լաբանի ծառաներից, և ստիպված էինք թողնել այնտեղ մեր ունեցվածքը, և այն ընկավ Լաբանի ձեռքը:

27 Եվ եղավ այնպես, որ մենք փախանք անապատ, և Լաբանի ծառաները չհասան մեր ետևից, և մենք թաքնվեցինք մի ժայռի խոռոչում:

28 Եվ եղավ այնպես, որ Լամանը բարկացած էր ինձ վրա և նաև իմ հոր վրա. և Լեմուելը՝ նույնպես, քանի որ նա ականջ էր դնում Լամանի խոսքերին: Այդ պատճառով

Լամանը և Լեմուելն սասցին մեզ՝ իրենց փոքր եղբայրներին, շատ "ծանր խոսքեր և ուղղակի ճիպտով ծեծեցին:

29 Եվ եղավ այնպես, որ, երբ նրանք ճիպտով ծեծում էին մեզ, ահա, Տիրոջ մի "հրեշտակ եկավ ու կանգնեց նրանց առջև և նա խոսեց նրանց հետ՝ ասելով. Ինչո՞ւ եք ճիպտով ծեծում ձեր փոքր եղբորը: Չգիտե՞ք, որ Տերը նրան ^բղեկավար է ընտրել ձեզ վրա, և դա՛ ձեր անօրինությունների պատճառով: Ահա, դուք պետք է նորից գնաք Երուսաղեմ, և Տերը կհանձնի Լաբանին ձեր ձեռքը:

30 Եվ "հրեշտակը, մեզ հետ խոսելուց հետո, հեռացավ:

31 Եվ հրեշտակի հեռանալուց հետո Լամանը և Լեմուելը նորից սկսեցին "տրտնջալ, ասելով. Ի՞նչպես է դա հնարավոր, որ Տերը Լաբանին հանձնի մեր ձեռքը: Ահա, նա մի գորեղ մարդ է, և նա կարող է հրամայել հիսունի, այո, նա մինչև անգամ կարող է սպանել հիսունի և, ուրեմն, ինչո՞ւ՝ ոչ մեզ:

ԳԼՈՒԽ 4

Նեփին սպանում է Լաբանին Տիրոջ հրամանով և հետո ճարպկությանը ձեռք բերում արույրե թիթեղները – Չորամը նախընտրում է միանալ Լեքիի ընտանիքին անապատում: Մոտ 600-592թթ. Ք.ծ.ա.:

Եվ եղավ այնպես, որ ես խոսեցի եղբայրներիս հետ՝ ասելով. Եկեք նորից գնանք վեր՝ Երուսաղեմ, և եկեք "հավատարիմ լինենք Տիրոջ

22ա 1 Նեփի 2.4:
24ա 1 Նեփի 3.3:
25ա սուր Ագահ լինել:
28ա 1 Նեփի 17.17-18:

29ա 1 Նեփի 4.3, 7.10:
սուր Հրեշտակներ:
բ 1 Նեփի 2.22:
30ա 1 Նեփի 16.38:

31ա սուր Տրտնջալ:
4 1ա սուր Քաջություն,
Քաջարի. Հավատք:

պատվիրանները պահելիս, քանզի ահա, նա ավելի գորեղ է, քան ողջ աշխարհը, ուրեմն՝ ինչո՞ւ ոչ ավելի ^բգորեղ, քան Լաբանը և նրա հիսունը, այո, կամ մինչև անգամ նրա տասնյակ հազարավորները:

2 Հետևաբար, եկեք վերադառնանք. եկեք ^աուժեղ լինենք, ինչպես ^բՄովսեսը. քանի որ նա իսկապես հրամայեց Կարմիր ^գծովի ջրերին, և դրանք բաժանվեցին այս ու այն կողմ, և մեր հայրերը դուրս եկան գերությունից նրա միջով՝ չոր գետնի վրայով, իսկ Փարավոնի բանակները հետևեցին նրանց և խեղդվեցին Կարմիր ծովի ջրերում:

3 Արդ, ահա դուք գիտեք, որ սա ճիշտ է. և դուք գիտեք նաև, որ մի ^ահրեշտակ խոսել է ձեզ հետ. ուստի, կարո՞ղ եք դուք կասկածել: Եկե՛ք վերադառնանք. Տերը կարող է ազատել մեզ, ճիշտ ինչպես մեր հայրերին, և կործանել Լաբանին, ճիշտ ինչպես Եգիպտացիներին:

4 Արդ, երբ ես ասացի այս խոսքերը, նրանք դեռ զայրացած էին և դեռ շարունակում էին տրտմջալ. այնուամենայնիվ, նրանք հետևեցին ինձ, մինչև մենք հասանք Երուսաղեմի պատերի մոտ:

5 Եվ դա գիշերով էր. և ես կարգադրեցի, որ նրանք թաքնվեն պատերից դուրս: Եվ նրանց թաքնվելուց հետո, ես՝ Նեփիս, սողոսկեցի քաղաք և առաջ գնացի դեպի Լաբանի տունը:

6 Եվ ես ^աառաջնորդվում էի Հոգու կողմից՝ նախապես ^բչիմանալով բաները, որոնք պետք է անել:

7 Այնուամենայնիվ, ես առաջ գնացի, և երբ մոտ եկա Լաբանի տանը, նկատեցի մի մարդու, և նա ընկած էր գետնին՝ իմ առջև, քանի որ գինուց հարբած էր:

8 Եվ երբ ես մոտեցա նրան, գլխի ընկա, որ դա Լաբանն էր:

9 Եվ ես նկատեցի նրա ^ատուրը և դուրս քաշեցի այն իր պատյանից. և դրա բռնակը մաքուր ոսկուց էր, իսկ աշխատանքը դրա՝ չափազանց մուրք, և ես տեսա, որ շեղբը դրա ամենաընտիր պողպատից էր:

10 Եվ եղավ այնպես, որ ես Հոգու կողմից ^ապարտադրվեցի, որ սպանեմ Լաբանին. բայց ես ասացի սրտումս. Երբե՛ք և ո՛չ մի անգամ մարդու արյուն ես չեմ թափել: Եվ ես ընկրկեցի ու չցանկացա նրան սպանել:

11 Եվ Հոգին կրկին ասաց ինձ. Ահա, ^աՏերը հանձնել է նրան քո ձեռքը: Այո, և ես գիտեի նաև, որ նա ջանում էր գրկել ինձ իմ սեփական կյանքից. այո, և նա չէր ցանկանում ականջ դնել Տիրոջ պատվիրաններին. և նա նաև ^բհափշտակել էր մեր ունեցվածքը:

12 Եվ եղավ այնպես, որ Հոգին կրկին ասաց ինձ. Սպանի՛ր նրան, քանի որ Տերը հանձնել է նրան քո ձեռքը.

13 Ահա, Տերը ^ասպանում է ^բամբարիշտին, որպեսզի իրագործի իր արդար նպատակները: Ավելի ^գլավ է մեկ մարդ կորչի, քան մի ազգ անհավատության մեջ ընկնի ու կորչի:

14 Եվ այժմ, երբ ես՝ Նեփիս, լսեցի

<p>1բ 1 Նեփի 7.11-12: 2աբ Օր. ԺԱ.8: բ սո՛ւ Մովսես: գ Ել. ԺԳ.21, 1 Նեփի 17.26, Մոսիա 7.19: 3ա 1 Նեփի 3.29-31, 7.10:</p>	<p>6ա սո՛ւ Մուրք Հոգի. Ոգեշնչում, Ոգեշնչել: բ Եբր. ԺԱ.8: 9ա 2 Նեփի 5.14, ՎևՈՒ 17.1: 10ա Ալմա 14.11: 11ա Ա Թագ. ԺԷ.41-49:</p>	<p>բ 1 Նեփի 3.26: 13ա 1 Նեփի 17.33-38, ՎևՈՒ 98.31-32: բ սո՛ւ Ամբարիշտ, Ամբարշտություն: գ Ալմա 30.47:</p>
--	--	--

այս խոսքերը, ես հիշեցի Տիրոջ խոսքերը, որոնք նա ասել էր ինձ անապատում՝ ասելով, որ. ^աՈրքան որ քո սերունդը կպահի իմ ^բպատվիրանները, նա ^գկբարգավաճի խոստումի ^դԵրկրում:

15 Այո, և մտածեցի նաև, որ նրանք չէին կարող պահել Տիրոջ պատվիրաններն ըստ Մովսեսի օրենքի, մինչև նրանք չունենային օրենքը:

16 Եվ ես գիտեի նաև, որ ^աօրենքը փորագրված էր արույրե քիթեղների վրա:

17 Եվ բացի այդ, ես գիտեի, որ այս պատճառով էր Տերը հանձնել Լաբանին իմ ձեռքը, որ ես կարողանայի ձեռք բերել հիշատակարանները՝ համաձայն իր պատվիրանների:

18 Հետևաբար, ես հնազանդվեցի Հոգու ձայնին և բռնեցի Լաբանին գլխի մագերից և կտրեցի նրա գլուխը՝ իր իսկ ^ասրով:

19 Եվ նրա գլուխն իր իսկ սրով կտրելուց հետո, ես վերցրեցի Լաբանի հանդերձներն ու հագա իմ մարմնի վրա. այո, մինչև անգամ՝ բոլոր մանրուքներով. և նրա զենքերը կապեցի մեջքիս:

20 Եվ այս անելուց հետո, ես առաջ գնացի դեպի Լաբանի գանձարանը: Եվ, երբ ես առաջ էի գնում դեպի Լաբանի գանձարանը, ահա, ես տեսա Լաբանի ^ածառայից, որն ուներ գանձարանի բանալիները: Եվ ես հրամայեցի նրան Լաբանի ձայնով, որ նա գար ինձ հետ՝ գանձարան:

21 Եվ նա կարծեց, թե ես իր տերը՝ Լաբանն եմ, քանի որ տեսավ

հանդերձները և նաև իմ մեջքին կապած սուրը:

22 Եվ նա խոսեց ինձ հետ հրեաների ծերերի մասին, գիտեմալով, որ իր տեր Լաբանը զիջերը նրանց հետ էր եղել դրսում:

23 Եվ ես խոսեցի նրա հետ, իբրև թե Լաբանն եմ:

24 Եվ ես նաև ասացի նրան, որ պետք է տանեմ փորագրությունները, որոնք արույրե ^աքիթեղների վրա են, իմ ավագ եղբայրներին, որոնք պատերից դուրս են:

25 Եվ ես նաև հրամայեցի նրան, որ նա հետևի ինձ:

26 Եվ նա կարծելով, որ ես խոսում եմ եկեղեցու եղբայրների մասին, և որ ես իրոք այն Լաբանն եմ, որին ես սպանել էի, ուստի, նա հետևեց ինձ:

27 Եվ նա խոսեց ինձ հետ հրեաների ծերերի մասին շատ անգամ, մինչ ես առաջ էի գնում՝ դեպի իմ եղբայրները, որոնք գտնվում էին պատերից դուրս:

28 Եվ եղավ այնպես, որ երբ Լամանը տեսավ ինձ, նա չափազանց վախեցավ, և Լեմուելն ու Սամը նույնպես: Եվ նրանք փախան իմ ներկայությունից. քանի որ կարծեցին, որ դա Լաբանն է, և որ նա սպանել էր ինձ և ջանում էր նրանց նույնպես զրկել կյանքից:

29 Եվ եղավ այնպես, որ ես կանչեցի նրանց ետևից և նրանք լսեցին ինձ. այդ պատճառով դադարեցին փախչել իմ ներկայությունից:

30 Եվ եղավ այնպես, որ, երբ Լաբանի ծառան տեսավ եղբայրներին, նա սկսեց դողալ և քիչ էր

14ա Օմնի 1.6, Մոսիա 2.22, Եթեր 2.7-12:
բ ՍՈՒ Պատվիրաններն Աստծո:

գ 1 Նեփի 2.20:
դ 1 Նեփի 17.13-14,
Հակոբ 2.12:
16ա ՍՈՒ Մովսեսի օրենք:

18ա Ա Թագ. ԺԷ.51:
20ա 2 Նեփի 1.30:
24ա 1 Նեփի 3.12, 19-24,
5.10-22:

մնում փախչեր իմ առջևից և վերադառնար քաղաք՝ Երուսաղեմ:

31 Եվ ես՝ Նեփիք, լինելով հաղթանդամ կազմվածքով մի մարդ, և նաև ստացած լինելով մեծ ՝ ուժ Տիրոջից, հետևաբար, բռնեցի Լաբանի ծառային և պահեցի, որպեսզի չկարողանար փախչել:

32 Եվ եղավ այնպես, որ, երբ ես խոսեցի նրա հետ, որ, եթե նա ականջ դնե՞ր իմ խոսքերին. Ինչպես կենդանի է Տերը, և ինչպես կենդանի եմ ես, և դա հենց այդպես է, եթե միայն նա ականջ դնե՞ր մեր խոսքերին, մենք կխնայեինք նրա կյանքը:

33 Եվ ես խոսեցի նրա հետ, նույնիսկ ՝ երդումով, որ նա կարիք չունե՞ր վախենալու. որ նա մեզ նման ազատ մարդ կլինե՞ր, եթե նա զարմե՞զ հետ անապատ:

34 Եվ ես նորից խոսեցի նրա հետ՝ ասելով. Անկասկած, Տերը ՝ պատվիրել է մեզ անել այս բանը, և մի՞թե մենք չպետք է ջանասեր լինենք Տիրոջ պատվիրանները պահելիս: Հետևաբար, եթե դու զաս անապատ՝ հորս մոտ, դու տեղ կունենաս մեզ մոտ:

35 Եվ եղավ այնպես, որ ՝ Չորամը համարձակությամբ լցվեց այն խոսքերից, որ ես ասացի: Արդ, Չորամ էր ծառայի անուրը. և նա խոստացավ, որ կգար անապատ՝ մեր հոր մոտ: Այո, և նա նաև երդում տվեց մեզ, որ նա կմնար մեզ հետ՝ այդ ժամանակից ի վեր:

36 Արդ, մենք ցանկանում էինք, որ նա մնար մեզ հետ այն պատճառով, որ հրեաները չկարողանային իմանալ դեպի անապատ

մեր փախուստի մասին, հակառակ դեպքում նրանք կհետապնդեին ու կսպանեին մեզ:

37 Եվ եղավ այնպես, որ, երբ Չորամը ՝ երդում տվեց մեզ, նրա վերաբերյալ մեր մտավախությունները փարատվեցին:

38 Եվ եղավ այնպես, որ մենք վերցրեցինք արույրե թիթեղներն ու Լաբանի ծառային, և հեռացանք անապատ՝ ուղևորվելով դեպի մեր հոր վրանը:

ԳԼՈՒԽ 5

Սարիան դժգոհում է Լեքիի դեմ – Երկուն էլ ուրախանում են իրենց որդիների վերադարձի վրա – Նրանք զոհեր են մատուցում – Արույրե թիթեղները պարունակում են Մովսեսի և մարգարեների գրվածքները – Թիթեղները հաստատում են Լեքիի ինքնությունը՝ որպես Հովսեփի հետնորդ – Լեքին մարգարեանում է իր սերնդի և թիթեղների պահպանման վերաբերյալ: Մոտ 600–592թթ. Ք.ծ.ա.:

Եւ եղավ այնպես, որ հետո, երբ մենք վերադարձանք անապատ՝ մեր հոր մոտ, ահա, նա լցվեց ուրախությամբ և իմ մայրը՝ ՝ Սարիան, նույնպես չափազանց ուրախացավ, քանի որ մեր պատճառով, իսկապես, սուզ էր արել:

2 Քանի որ նա ենթադրել էր, որ մենք մահացել էինք անապատում. և նաև դժգոհել էր իմ հոր դեմ, ասելով նրան, որ նա տեսիլատես մարդ էր, ասելով. Ահա, դու դուրս ես բերել մեզ մեր ժառանգության

31ա Մոսիա 9.17, Ալմա 56.56:
33ա սո՛ւ Երդում:
34ա 1 Նեփիի 2.2, 3.16:

35ա 1 Նեփիի 16.7, 2 Նեփիի 5.5–6:
սո՛ւ Չորամ,
Չորամացիներ:

37ա Հես. Թ.1–21, Ժող. Ե.4:
սո՛ւ Երդում:
5 1ա սո՛ւ Սարիա:

հողից, և իմ որդիներն այլևս չկան, և մենք մեռնում ենք անապատում:

3 Եվ այս խոսելածևով էր մայրս դժգոհել հորս դեմ:

4 Եվ եղել էր այնպես, որ հայրս խոսել էր նրա հետ՝ ասելով. Ես գիտեմ, որ ես ՞տեսիլատես մարդ եմ. քանի որ, եթե ես տեսած չլինեի Աստծո բաները ՞տեսիլքում, ես իմացած չէի լինի Աստծո բարությունը, այլ մնացած կլինեի Երուսաղեմում և կմեռնեի եղբայրներիս հետ:

5 Բայց ահա, ես ձեռք եմ բերել խոստումի ՞երկիր, բաներ, որոնցով ցնծում եմ. այո, և ես ՞գիտեմ, որ Տերը կազատի իմ որդիներին Լաբանի ձեռքից և ետ կրերի կրկին մեզ մոտ՝ անապատ:

6 Եվ այս խոսելածևով էր իմ հայրը՝ Լեքին, հանգստացրել իմ մորը՝ Սարիային, մեր վերաբերյալ, մինչ մենք ճամփորդում էինք անապատով դեպի Երուսաղեմի հողը՝ ձեռք բերելու հրեաների հիշատակարանը:

7 Եվ երբ մենք վերադարձանք իմ հոր վրանը, ահա, նրանց ուրախությունը լիակատար էր, և մայրս սփռվեց:

8 Եվ նա խոսեց՝ ասելով. Հիմա ես անկասկած գիտեմ, որ Տերն է ՞պատվիրել ամուսնուս փախչել անապատ. այո, և ես անկասկած գիտեմ նաև, որ Տերն է պահպանել իմ որդիներին ու ազատել նրանց

Լաբանի ձեռքից և տվել նրանց գորություն, որի միջոցով նրանք կարողացան ՞իրագործել այն, ինչ Տերը պատվիրել էր նրանց: Եվ այս խոսելածևով խոսեց նա:

9 Եվ եղավ այնպես, որ նրանք չափազանց ուրախացան, և ՞գոհ ու ողջակեզներ մատուցեցին Տիրոջը. և ՞գոհություն հայտնեցին Իսրայելի Աստծուն:

10 Եվ Իսրայելի Աստծուն գոհություն հայտնելուց հետո, իմ հայրը՝ Լեքին, վերցրեց հիշատակարանները, որոնք փորագրված էին արույրե ՞թիթեղների վրա և ուսումնասիրեց դրանք սկզբից սկսած:

11 Եվ նա տեսավ, որ դրանք պարունակում էին Մովսեսի հինգ ՞գրքերը, որոնք տալիս էին աշխարհի ստեղծման պատմությունը, ինչպես նաև Ադամի ու Եվայի, որոնք մեր առաջին ծնողներն էին.

12 Եվ նաև հրեաների մի ՞հիշատակարան, սկսած սկզբից ընդհուպ մինչև Հնուդայի թագավոր Սեղեկիայի թագավորության սկիզբը.

13 Եվ նաև սուրբ մարգարեների մարգարեությունները, սկսած սկզբից ընդհուպ մինչև ՞Մեղեկիայի թագավորության սկիզբը. և նաև շատ մարգարեություններ, որոնք խոսվել էին ՞Երեմիայի բերանով:

14 Եվ եղավ այնպես, որ իմ հայրը՝ Լեքին, արույրե ՞թիթեղների վրա գտավ նաև իր հայրերի տոհմա-

4ա1 Նեփի 2.11:
բ 1 Նեփի 1.8-13:
սուր Տեսիլք:
5ա1 Նեփի 2.20, 18.8,
22-23:
սուր Խոստացված
երկիր:
բ սուր Հավաարք:
8ա1 Նեփի 2.2:
բ 1 Նեփի 3.7:
9ա Մոսիա 2.3,

3 Նեփի 9.19-20:
սուր Մովսեսի օրենք:
բ սուր Ընորհակալ,
Ընորհակալություն,
Գոհաբանություն:
10ա1 Նեփի 4.24, 38, 13.23:
սուր Արույրե
Թիթեղներ:
11ա1 Նեփի 19.23:
սուր Հնգամատյան:
12ա Ա Մն. Թ. 1:

սուր Սուրբ գրքեր:
13ա Գ. Թագ. ԻԳ. 18,
Երեմ. ԼԷ. 1:
բ Եզր. Ա. 1,
Երեմ. ԼԶ. 17-32,
1 Նեփի 7.14,
Հել. 8.20:
14ա1 Նեփի 3.3, 12:
սուր Արույրե
Թիթեղներ:

բանությունը. ուստի, նա իմացավ, որ ինքը Քձովսեփի հետնորդն էր. այո, այսինքն, այն Հովսեփի, որը Պակոբի որդին էր, որը Պլաճառվել էր Եգիպտոս, և որը Տիրոջ ձեռքով Պահպանվել էր, որպեսզի կարողանար իր հորը՝ Հակոբին և նրա ողջ գերդաստանը պահել սովից ոչնչանալուց:

15 Եվ նրանք նույնպես դուրս էին բերվել գերությունից և Եգիպտոսի երկրից, այն նույն Աստծո կողմից, որը պահպանել էր նրանց:

16 Եվ այսպիսով, իմ հայրը՝ Լեքին, հայտնաբերեց իր հայրերի տոհմաբանությունը: Եվ Լաբանը նույնպես Քձովսեփի հետնորդն էր, այդ պատճառով, նա և նրա հայրերը պահել էին հիշատակաբանները:

17 Եվ արդ, երբ հայրս տեսավ բոլոր այս բաները, նա լցվեց Հոգով և սկսեց մարգարեանալ իր սերնդի վերաբերյալ,

18 Որ այս արույրե թիթեղները կհասնեն բոլոր այն ազգերին, ցեղերին, լեզուներին և ժողովուրդներին, որոնք իր սերնդից են:

19 Ուստի, նա ասաց, որ այս արույրե թիթեղները Մերբեք չեն ոչնչանա. ոչ էլ այլևս կխամրեն ժամանակից: Եվ նա մարգարեացավ շատ բաներ իր սերնդի վերաբերյալ:

20 Եվ եղավ այնպես, որ առ այժմ ես և հայրս պահել էինք այն պատվիրանները, որոնք Տերը պատվիրել էր մեզ:

21 Եվ մենք ձեռք էինք բերել այն հիշատակարանները, որոնք Տերը պատվիրել էր մեզ, և ուսումնասիրել ու գտել, որ դրանք բաղձալի էին. այո, նույնիսկ շատ մեծ Մարժեքի էին մեզ համար, այնպես որ մենք կկարողանայինք Պահպանել Տիրոջ պատվիրանները մեր զավակների համար:

22 Ուստի, Տիրոջ իմաստությամբ էր, որ մենք պետք է տանեինք դրանք մեզ հետ, երբ ճամփորդում էինք անապատով դեպի խոստումի երկիր:

ԳԼՈՒԽ 6

Նեփին գրում է Աստծո բաների մասին – Նեփիի նպատակը մարդկանց համոզելն է՝ զալ դեպի Աբրահամի Աստվածը և փրկվել: Մոտ 600–592թթ. Ք.ծ.ա.:

ԵՎ ես՝ Նեփիս, չեմ տալիս իմ հայրերի տոհմաբանությունը հիշատակարանիս Մայս մասում. ոչ էլ հետագայում, որևէ անգամ կտամ այն՝ այս թիթեղների վրա, որ ես գրում եմ. քանի որ դա տրված է այն հիշատակարանում, որը պահվում է Պոքս կողմից. ուստի, ես դա չեմ գրում այս աշխատության մեջ:

2 Քանի որ ինձ բավարարում է ասելը, որ մենք Քձովսեփի հետնորդներն ենք:

3 Ինձ համար կարևոր չէ, որ ես բժախնդիր լինեմ՝ հորս բոլոր բաների մասին լրիվ պատմությունը

14բ 2 Նեփի 3.4, Ալմա 10.3: սո՛ւ Հովսեփ՝ Հակոբի որդի: q սո՛ւ Հակոբ՝ Իսահակի որդի: η ԾՆ. ԼԷ.29–36: և ԾՆ. ԽԵ.4–5:

15ա Ել. ԺԳ.17–18, Անուս Գ.1–2, 1 Նեփի 17.23–31, ՎևՈՒ 103.16–18, 136.22: 16ա 1 Նեփի 6.2: 19ա Ալմա 37.4–5: 21ա սո՛ւ Սուրբ գրքեր –

Սուրբ գրքերի արժեքը: p 2 Նեփի 25.26: 6 1ա 2 Նեփի 4.14–15: p 1 Նեփի 9.2: q 1 Նեփի 1.16–17, 19.1–6: 2ա 1 Նեփի 5.14–16:

տալիս, քանի որ դրանք չեն կարող գրվել՝ այս թիթեղների վրա, որովհետև ինձ տեղ է հարկավոր, որպեսզի կարողանամ գրել Աստծո բաների մասին:

4 Քանզի իմ ողջ նպատակն է, որ ես կարողանամ՝ համոզել մարդկանց՝ զալ դեպի Աբրահամի Աստվածը և Իսահակի Աստվածը և Հակոբի Աստվածը, և փրկվել:

5 Ուստի, ես չեմ գրում բաները, որոնք հաճելի են աշխարհին, այլ այն բաները, որոնք հաճելի են Աստծուն և նրանց, ովքեր այս աշխարհից չեն:

6 Ուստի, ես պատվիրան եմ տալու իմ սերնդին, որ նրանք չզբաղեցնեն այս թիթեղներն այնպիսի բաներով, որոնք արժեքավոր չեն մարդկանց զավակների համար:

ԳԼՈՒԽ 7

Լեքիի որդիները վերադառնում են Երուսաղեմ և հրավիրում Իսմայելին ու նրա գերդաստանին՝ միանալ իրենց ճամփորդությանը – Լամանը և մյուսներն ապստամբում են – Նեփին հորդորում է իր եղբայրներին հավատք ունենալ Տիրոջ հանդեպ – Նրանք պարաններով կտալում են նրան և ծրագրում նրա կործանումը – Նա ազատվում է հավատքի գործությամբ – Նրա եղբայրները ներում են խնդրում – Լեքին և նրա ընկերակիցները զոհ և ողջակեզներ են մատուցում: Մոտ 600–592թթ. Ք.ծ.ա.:

Ե՛վ այժմ ես կկամենայի, որ դուք

իմանայիք, որ երբ իմ հայրը՝ Լեքին, իր սերնդի վերաբերյալ՝ մարգարեանալը վերջացրեց, եղավ այնպես, որ Տերը խոսեց նրա հետ կրկին, ասելով, որ նրա՝ Լեքիի համար, լավ չէ, որ նա մեռնակ տանի իր ընտանիքն անապատ. այլ, որ նրա որդիները պետք է թաղջիկներ Գլնության վերցնեն, որպեսզի նրանք սերունդ աճեցնեն Տիրոջ համար խոստումի երկրում:

2 Ե՛վ եղավ այնպես, որ Տերը՝ պատվիրեց նրան, որ ես՝ Նեփիս, և եղբայրներս, պետք է նորից վերադառնայինք Երուսաղեմի հողը և բերեինք Իսմայելին և նրա ընտանիքին անապատ:

3 Ե՛վ եղավ այնպես, որ ես՝ Նեփիս, եղբայրներիս հետ՝ մորից գնացի առաջ անապատով՝ վերադառնալու Երուսաղեմ:

4 Ե՛վ եղավ այնպես, որ մենք հասանք Իսմայելի տունը և այնքան շնորհի գտանք Իսմայելի աչքում, որ հայտնեցինք նրան Տիրոջ խոսքերը:

5 Ե՛վ եղավ այնպես, որ Տերը փափկացրեց Իսմայելի սիրտը և նաև նրա գերդաստանինը, այնպես որ նրանք ճանապարհ ընկան մեզ հետ՝ դեպի անապատ, դեպի մեր հոր վրանը:

6 Ե՛վ եղավ այնպես, որ անապատով ճամփորդելիս, ահա, Լամանը և Լեմուելը և Իսմայելի դուստրերից երկուսը և Իսմայելի երկու «որդիները և նրանց ընտանիքներն ապստամբեցին մեր դեմ. այո, իմ՝ Նեփիի, և Սամի և իրենց հոր՝ Իս-

<p>3ա Հակոբ 7.27, Հարոմ 1.2, 14, Օմնի 1.30: 4ա Հովհ. Ի.30–31: Տե՛ս Մորմոնի Գրքի</p>	<p>տիտղոսաթերթը: բ 2 Նեփի 9.41, 45, 51: 5ա Ա Թեւ. Բ.4, ՄԻ 1.4: 7 1ա 1 Նեփի 5.17–19: բ 1 Նեփի 16.7:</p>	<p>գ սո՛ւ Ամուսնություն, Ամուսնանալ: 2ա 1 Նեփի 16.7–8: 3ա 1 Նեփի 3.2–3: 6ա 2 Նեփի 4.10:</p>
---	--	---

մայելի, և նրա կնոջ և նրա երեք մյուս դուստրերի դեմ:

7 Եվ եղավ այնպես, որ այդ ապստամբության ժամանակ նրանք ցանկանում էին վերադառնալ Երուսաղեմի հողը:

8 Եվ ես՝ Նեփիս, ^ավշտացած լինելով նրանց սրտերի կարծրությունից, հետևաբար, խոսեցի նրանց հետ՝ ասելով, այո, հենց՝ Լամանին և Լեմուելին. Ահա, դուք իմ մեծ եղբայրներն եք, և ի՞նչպես է, որ դուք այդքան կարծր եք սրտով և այդքան կույր՝ մտքով, որ դուք կարիք ունեք, որ ես՝ ձեր փոքր եղբայրը, պետք է խոսեմ ձեզ վրա, այո, և օրինակ ծառայեմ ձեզ:

9 Ի՞նչպես է, որ դուք ականջ չեք դնում Տիրոջ խոսքին:

10 Ի՞նչպես է, որ դուք ^ամոռացաք, որ տեսաք Տիրոջ հրեշտակին:

11 Այո, և ի՞նչպես է, որ դուք մոռացաք, թե ինչ մեծ բաներ Տերն արեց մեզ համար՝ ^աազատելով մեզ Լաբանի ձեռքից, և նաև երբ մենք պետք է ձեռք բերեինք հիշատակարանը:

12 Այո, և ի՞նչպես է, որ դուք մոռացաք, որ Տերը՝ ըստ իր կամքի, ամեն ^աբան կարող է անել մարդկանց զավակների համար, եթե այնպես լինի, որ նրանք ^ահավատք գործադրեն նրա հանդեպ: Ուստի, եկե՛ք հավատարիմ լինենք նրան:

13 Եվ եթե այնպես լինի, որ մենք հավատարիմ լինենք նրան, մենք ձեռք կբերենք խոստումի ^աերկիրը. և դուք կիմանաք ապագայում, ինչ-որ մի ժամանակ, որ Տիրոջ

խոսքը կիրագործվի Երուսաղեմի ^ակործանման վերաբերյալ. քանի որ բոլոր բաները, որոնք Տերը խոսել է Երուսաղեմի կործանման վերաբերյալ, պետք է իրագործվեն:

14 Քանզի ահա, Տիրոջ Հոգին կղաղարի ճգնել նրանց հետ. քանզի ահա, նրանք ^ամերժեցին մարգարեներին և ^աԵրեմիային բանազցեցին: Եվ նրանք այնքան ջանացին խլել հորս ^ակյանքը, որ տեղահան արեցին նրան այդ հողից:

15 Արդ ահա, ես ասում եմ ձեզ, որ, եթե դուք կամենաք վերադառնալ Երուսաղեմ, դուք նույնպես կկորչեք նրանց հետ: Եվ, եթե դուք ընտրություն ունեք, վերադարձե՛ք այդ երկիրը և հիշե՛ք խոսքերը, որ ես ասում եմ ձեզ, որ եթե դուք գնաք, դուք նույնպես կկորչեք. քանզի այսպես է Տիրոջ Հոգին պարտադրում ինձ, որ ես խոսեմ:

16 Եվ եղավ այնպես, որ երբ ես՝ Նեփիս, ասացի այս խոսքերն իմ եղբայրներին, նրանք բարկացան ինձ վրա: Եվ եղավ այնպես, որ նրանք ձեռք բարձրացրեցին ինձ վրա, քանզի ահա, նրանք չափազանց զայրացած էին, և ^ակապեցին ինձ պարաններով, քանի որ ջանում էին զրկել ինձ կյանքից, թողնել ինձ անապատում՝ հոշոտվելու վայրի զազաններից:

17 Բայց եղավ այնպես, որ ես աղոթեցի Տիրոջը՝ ասելով. Ո՛վ Տեր, համաձայն իմ հավատքի, որը քո հանդեպ է, ազատի՛ր ինձ իմ եղբայրների ձեռքից. այո, տո՛ւր ինձ այնքան ուժ, որ կարողանամ

8ա Ավմա 31.2, Մովսես 74:1
10ա Բ Օր. Դ.9, 1 Նեփի 3.29, 4.3:
11ա 1 Նեփի 4:
12ա 1 Նեփի 17.50, Ավմա 26.12:

բ 1 Նեփի 3.7, 15.11:
13ա 1 Նեփի 2.20:
սո՛ւ Խոստացված երկիր:
բ Դ Թագ. ԻԵ.1-21, 2 Նեփի 6.8, 25.10, Օմնի 1.15,

Հեյ. 8.20-21:
14ա Եզեկ. Ե.6, 1 Նեփի 1.18-20, 2.13:
սո՛ւ Ապստամբություն:
բ Երեմ. ԼԷ.15-21:
գ 1 Նեփի 2.1:
16ա 1 Նեփի 18.11-15:

«կտրել այս կապերը, որոնցով ես կապված եմ:

18 Եվ եղավ այնպես, որ երբ ես ասացի այս խոսքերը, ահա, կապերն արձակվեցին ձեռքերիս և ոտքերիս վրայից, և ես կանգնեցի իմ եղբայրների առջև ու կրկին խոսեցի նրանց հետ:

19 Եվ եղավ այնպես, որ նրանք նորից բարկացան ինձ վրա և ջանում էին ձեռք բարձրացնել ինձ վրա. բայց ահա, Իսմայելի՝ Պուստրերից մեկը, այո, և նաև նրա մայրը, և Իսմայելի որդիներից մեկն այնքան աղաչեցին եղբայրներիս, որ փափկացրեցին նրանց սրտերը. և նրանք դադարեցին ջանալ զրկել ինձ կյանքից:

20 Եվ եղավ այնպես, որ նրանք այնքան վշտացած էին իրենց ամբարշտության պատճառով, որ խոնարհվեցին իմ առջև և աղաչեցին ինձ, որ ես ներեմ նրանց՝ այն բանի համար, որ նրանք արել են իմ դեմ:

21 Եվ եղավ այնպես, որ ես անկեղծորեն «ներեցի նրանց այն բոլորը, ինչ որ արել էին, և ես հորդորեցի նրանց, որ աղոթեն Տիրոջը՝ իրենց Աստծուն, ներման համար: Եվ եղավ այնպես, որ նրանք այդպես արեցին: Եվ Տիրոջն աղոթելուց հետո մենք նորից շարունակեցինք մեր ճամփորդությունը դեպի մեր հոր վրանը:

22 Եվ եղավ այնպես, որ մենք եկանք-հասանք մեր հոր վրանը: Եվ երբ ես, եղբայրներս և Իսմայելի ողջ տունը հորս վրանը հասանք, նրանք «գոհություն հայտնեցին

Տիրոջը՝ իրենց Աստծուն. և նրանք ^բգոհ ու ողջակեզներ մատուցեցին նրան:

ԳԼՈՒԽ 8

Լեքին տեսնում է կենաց ծառի տեսիլքը – Նա ճաշակում է դրա պտղից և ցանկանում, որ իր ընտանիքն էլ անի նույնը – Նա տեսնում է երկաթյա մի ձող, նեղ ու անձուկ մի արահետ և խավարի մշուշներ, որոնք պատում են մարդկանց – Սարիան, Նեփին և Սամը ճաշակում են պտղից, բայց Լամանը և Լեմուելը հրաժարվում են: Մոտ 600–592թթ. Ք.ծ.ա.:

Եվ եղավ այնպես, որ մենք ի մի էինք հավաքել բոլոր ձևի, ամեն տեսակի սերմեր, ինչպես ամեն տեսակի հատիկներ, այնպես էլ ամեն տեսակի մրգերի սերմեր:

2 Եվ եղավ այնպես, որ մինչ հայրս մնում էր անապատում, նա խոսեց մեզ հետ՝ ասելով. Ահա, ես մի երազ «երագեցի. կամ, այլ խոսքով, ես մի ^բտեսիլք տեսա:

3 Եվ, ահա, այն բանի պատճառով, որ ես տեսա, ես հիմք ունեմ Տիրոջով ուրախանալու՝ Նեփիի ու նաև Սամի համար. քանի որ հիմք ունեմ ենթադրելու, որ նրանք և նրանց սերնդից շատերը կփրկվեն:

4 Բայց ահա, «Լաման և Լեմուել, ես չափազանց վախենում եմ ձեզ համար. քանզի ահա, երագումս ինձ թվաց ես տեսա մի մութ ու մռայլ անապատ:

5 Եվ եղավ այնպես, որ ես տեսա մի մարդու, և նա հազել էր սպի-

17ա Ալմա 14.26–28:
19ա 1 Նեփի 16.7:
21ա սուր Ներել:
22ա սուր Ընորհակալ,
Ընորհակալություն,

Գոհաբանություն:
բ 1 Նեփի 5.9:
8 2ա սուր Երազ,
Հայտնություն:
բ 1 Նեփի 10.17:

սուր Տեսիլք:
3ա 1 Նեփի 8.14–18:
4ա 1 Նեփի 8.35–36:

տակ ^ապարեգոտ. և նա եկավ ու կանգնեց իմ առջև:

6 Եվ եղավ այնպես, որ նա խոսեց ինձ հետ և առաջարկեց հետևել իրեն:

7 Եվ եղավ այնպես, որ ես, հետևելով նրան, տեսա ինձ, որ ես մի մութ ու մռայլ վայրում էի:

8 Եվ շատ ժամերի ընթացքում մթության մեջ ճամփորդելուց հետո, ես սկսեցի աղոթել Տիրոջը, որ նա ^աողորմություն ունենար իմ հանդեպ՝ համաձայն իր բազմաթիվ գորովագութ ^աողորմությունների:

9 Եվ եղավ այնպես, որ Տիրոջն աղոթելուց հետո, ես տեսա մի մեծ ու ընդարձակ ^ադաշտ:

10 Եվ եղավ այնպես, որ ես տեսա մի ^ածառ, որի ^բպտուղը բաղձալի էր՝ մարդուն երջանիկ դարձնելու համար:

11 Եվ եղավ այնպես, որ ես առաջ գնացի և ճաշակեցի դրա ^ապտղից. և տեսա, որ այն ամենաքաղցրն էր բոլորից, որ ես նախկինում երբևիցե փորձել էի: Այո, և ես նկատեցի, որ դրա պտուղը ճերմակ է՝ գերազանցելով ամեն ^բճերմակություն, որ ես երբևէ տեսել էի:

12 Եվ, երբ ես ճաշակեցի դրա պտղից, այն լցրեց իմ հոգին չափազանց մեծ ^աուրախությամբ. ուստի, ես սկսեցի ^բփափազել, որ իմ ընտանիքն էլ ճաշակի դրանից. քանի որ գիտեի, որ այն ^գբաղձալի է բոլոր մյուս պտուղներից ավելի:

13 Եվ, երբ աչք ածեցի շուրջբոլորս, որ գուցե կարողանայի գտնել

ընտանիքիս նույնպես, ես տեսա ջրի մի ^ագետ. և այն հոսում էր ծառի մոտով, որից ես պտուղ էի ճաշակում:

14 Եվ ես նայեցի որոշելու համար, թե որտեղից էր գալիս. և մի փոքր հեռու տեսա ակունքը. և նրա ակունքի մոտ ես տեսա ձեր մայր Սարիային, և Սամին, և Նեփիին. և նրանք կանգնած էին, կարծես թե չիմանալով, թե ուր պիտի գնան:

15 Եվ եղավ այնպես, որ ես ձեռքով նշան արեցի նրանց. և նաև կանչեցի նրանց բարձր ձայնով, որ նրանք գան ինձ մոտ և ճաշակեն պտղից, որը բաղձալի էր բոլոր մյուս պտուղներից ավելի:

16 Եվ եղավ այնպես, որ նրանք եկան ինձ մոտ և նույնպես ճաշակեցին պտղից:

17 Եվ եղավ այնպես, որ ես ցանկացա, որ Լամանն ու Լեմուելը գան և նույնպես ճաշակեն պտղից. ուստի, ես աչք ածեցի դեպի գետի ակունքը, որ գուցե կարողանայի տեսնել նրանց:

18 Եվ եղավ այնպես, որ ես տեսա նրանց, բայց նրանք ^աչկամեցան՝ գալ ինձ մոտ և ճաշակել պտղից:

19 Եվ ես տեսա երկաթյա մի ^աձող, և այն ձգվում էր գետի ավիի երկայնքով և առաջնորդում դեպի այն ծառը, որի մոտ ես կանգնած էի:

20 Եվ ես տեսա նաև ^ամեղ ու անձուկ մի արահետ, որը ձգվում էր երկաթյա ձողի երկայնքով, նույնիսկ մինչև ծառը, որի մոտ ես կանգնած էի. և այն նույնպես

5աՁՄ-Պ 1.30-32:
8աՍՈՒ Ողորմած, Ողորմություն:
9աՄատ. ԺԳ.38:
10աԾն. Բ.9, Հայտ. Բ.7, ԻԲ.2, 1 Նեփի 11.4, 8-25:
սուր Կյանքի ծառ:

բ Ալմա 32.41-43:
11ա Ալմա 5.34:
բ 1 Նեփի 11.8:
12աՍՈՒ Ուրախություն:
բ Ալմա 36.24:
գ 1 Նեփի 15.36:
13ա 1 Նեփի 12.16-18, 15.26-29:

18ա 2 Նեփի 5.20-25:
19աՍաղ. Բ.9, Հայտ. ԺԲ.5, ՁՄԹ, Հայտ. ԺԹ.15, 1 Նեփի 8.30, 11.25, 15.23-24:
20աՄատ. Է.14, 2 Նեփի 31.17-20:

առաջնորդում էր ջրի ակունքի մոտով՝ դեպի մի մեծ ու ընդարձակ Դաշտ, կարծես թե դա մի աշխարհ լիներ:

21 Եվ ես տեսա մարդկանց անհամար բազմություններ, որոնցից շատերն առաջ էին մղվում, որպեսզի կարողանային հասնել արահետին, որը տանում էր դեպի ծառը, որի մոտ ես կանգնած էի:

22 Եվ եղավ այնպես, որ նրանք առաջ եկան և սկսեցին քայլել արահետով, որը տանում էր դեպի ծառը:

23 Եվ եղավ այնպես, որ խավարի մեզ բարձրացավ. այո, խկապես, խավարի չափազանց մեծ մեզ, որի հետևանքով նրանք, ովքեր սկսել էին քայլել արահետով, կորցրեցին իրենց ճանապարհը, հետևաբար, հեռու թափառելով կորան:

24 Եվ եղավ այնպես, որ ես տեսա ուրիշներին՝ առաջ մղվելիս, և նրանք առաջ եկան և բռնեցին երկաթյա ձողի ծայրից. և նրանք առաջ մղվեցին խավարի մեզի միջով՝ կառչելով երկաթյա ձողից, այնքան, մինչև որ առաջ եկան և ճաշակեցին ծառի փտից:

25 Եվ, ծառի պտղից ճաշակելուց հետո, նրանք աչք ածեցին շուրջը շուրջը, կարծես թե ամաչում էին:

26 Եվ ես նույնպես աչք ածեցի շուրջը շուրջը և տեսա, ջրի գետի մյուս կողմում, մեծ ու ընդարձակ մի շենք. և այն, կարծես թե, տեղադրված էր օդում, գետնից վերև՝ բարձրում:

27 Եվ այն լի էր մարդկանցով՝ թե՛

ծեր, թե՛ երիտասարդ, թե՛ այր, թե՛ կին. և նրանց հագուստների ձևը չափազանց պճնագեղ էր. և նրանք զբաղված էին ծաղրելով և մատով ցույց տալով դեպի նրանց, ովքեր հասել և ճաշակում էին պտղից:

28 Եվ պտղից փամտես անելուց հետո նրանք ամաչեցին, նրանց պատճառով, ովքեր ծաղրի էին ենթարկում իրենց. և նրանք հեռացան դեպի արգելված ուղիներ և կորան:

29 Եվ ես՝ Նեփիս, չեմ ասում հորս քույր խոսքերը:

30 Բայց, որպեսզի համառոտ լինեմ գրելիս, ահա, նա տեսավ ուրիշ բազմություններ՝ առաջ մղվելիս. և նրանք եկան ու բռնեցին երկաթյա ձողի ծայրից. և առաջ մղվեցին իրենց ճանապարհով, անընդհատ ամուր բռնած երկաթյա ձողից, մինչև առաջ եկան ու երեսնիվայր ընկան և ճաշակեցին ծառի պտղից:

31 Եվ նա տեսավ նաև ուրիշ փազմություններ՝ իրենց ուղին խարխափելիս դեպի այն մեծ ու ընդարձակ շենքը:

32 Եվ եղավ այնպես, որ շատերը խեղդվեցին ակունքի խորքերում. և շատերը կորան նրա տեսադաշտից՝ թափառելով անծանոթ ճանապարհներով:

33 Եվ մեծ էր բազմությունը, որ մտավ այն արտասովոր շենքը: Եվ այն շենքը մտնելուց հետո, նրանք ուղղեցին արհամարհանքի մատը դեպի ինձ և նրանց, ովքեր նույնպես ճաշակում էին պտղից. բայց

20բ Մատ. ԺԳ.38:
21ա սո՛ւ Ճանապարհ:
23ա 1 Նեփի 12.17, 15.24:
24ա 1 Նեփի 8.10-12:
25ա Հռովմ. Ա.16,
Բ Տիմ. Ա.8, Ալմա 46.21,
Մորմ. 8.38:

26ա 1 Նեփի 11.35-36,
12.18:
27ա սո՛ւ Հպարտություն:
28ա Բ Պետ. Բ.19-22:
բ Մար. Դ.14-20, Ը .38,
Ղուկ. Ը.11-15,
Հովհ. ԺԲ.42-43:

գ սո՛ւ Ուրացություն:
29ա 1 Նեփի 1.16-17:
30ա 1 Նեփի 15.23-24:
31ա Մատ. Է.13:
32ա 1 Նեփի 15.26-29:
33ա սո՛ւ Հալածել,
Հալածանք:

մենք ուշադրություն չդարձրեցինք նրանց վրա:

34 Սրանք են իմ հոր խոսքերը. Քանզի բոլոր նրանք, ովքեր ^աուշք դարձրեցին նրանց, հեռացան:

35 Եվ ^աԼամանն ու Լեմուելը չճաշակեցին պտղից, ասաց հայրս:

36 Եվ եղավ այնպես, որ հայրս, իր երագի կամ տեսիլքի բոլոր խոսքերն ասելուց հետո, որոնք շատ էին, ասաց մեզ, որ այն բաների պատճառով, որ ինքը տեսել էր տեսիլքում, նա չափազանց վախենում էր Լամանի ու Լեմուելի համար. այո, վախենում էր, որ նրանք կվտարվեն Տիրոջ ներկայությունից:

37 Եվ նա այն ժամանակ հորդորեց նրանց սիրող ^աժնողի ողջ զգացումով, որ նրանք ականջ դնեն իր խոսքերին, որ, գուցե, Տերը ողորմած կլինի նրանց հանդեպ և չի վտարի նրանց. այո, հայրս քարոզեց նրանց:

38 Եվ նրանց քարոզելուց և նաև նրանց շատ բաների մասին մարգարեսանալուց հետո, նա պահանջեց նրանցից՝ պահել Տիրոջ պատվիրանները. և ավարտեց նրանց հետ խոսելը:

ԳԼՈՒԽ 9

Նեփին ստեղծում է երկու կարգի հիշատակարաններ – Յուրաքանչյուրը կոչվում է Նեփիի թիթեղներ – Մեծ թիթեղները պարունակում են աշխարհիկ պատմությունը, փոքրերը հիմնականում վերաբերում են

սրբազան բաներին: Մոտ 600–592թթ. Ք.ծ.ա.:

Եւ բոլոր այս բաները հայրս տեսավ, և լսեց, և խոսեց, երբ նա բնակվում էր վրանում Լեմուելի ^ահովտում, և նաև շատ մեծ այլ բաներ, որոնք չեն կարող գրվել այս թիթեղների վրա:

2 Եվ այժմ, ինչպես ես ասացի այս թիթեղների վերաբերյալ, ահա, դրանք այն թիթեղները չեն, որոնց վրա ես տալիս եմ իմ ժողովրդի պատմության լրիվ արձանագրությունը. որովհետև ^աթիթեղներին, որոնց վրա ես գրում եմ իմ ժողովրդի լրիվ պատմությունը, ես տվել եմ Նեփի անունը. ուստի, դրանք կոչվում են Նեփիի թիթեղներ՝ իմ իսկ անունով. և այս թիթեղները նույնպես կոչվում են Նեփիի թիթեղներ:

3 Սակայն ես պատվիրան եմ ստացել Տիրոջից, որ ես պետք է պատրաստեմ այս թիթեղները, այն հատուկ ^անպատակով, որպեսզի այնտեղ փորագրվի իմ ժողովրդի ^աժառանգության պատմությունը:

4 Մյուս թիթեղների վրա պետք է փորագրվի թագավորների թագավորության պատմությունը և իմ ժողովրդի պատերազմներն ու հակառակությունները. ուստի, այս թիթեղները, մեծ մասամբ, ժառանգության մասին են. իսկ ^ամյուս թիթեղները, մեծ մասամբ, թագավորների թագավորության և իմ ժողովրդի պատերազմների ու հակառակությունների մասին:

5 Ուստի, Տերը պատվիրել է ինձ պատրաստել այս թիթեղները՝ իր

34ա Ել. ԻԳ.2:
35ա 1 Նեփի 8.17–18,
2 Նեփի 5.19–24:
37ա սուր Ընտանիք,
Ծնողներ:

9 1ա 1 Նեփի 2.4–6, 8,
14–15, 16.6:
2ա 1 Նեփի 19.2, 4,
Հակոբ 3.13–14,
ՄԽ 1.2–11,

ՎևՈՒ 10.38–40:
սուր Թիթեղներ:
3ա ՎևՈՒ 3.19:
բ 1 Նեփի 6.3:
4ա Հակոբ 1.2–4, ՄԽ 1.10:

“Իմաստուն նպատակի համար, թե ինչ նպատակի՝ ես չգիտեմ:

6 Բայց Տերը “գիտի բոլոր բաները՝ ի սկզբանե. ուստի, նա պատրաստում է ուղի՝ կատարելու իր բոլոր գործերը մարդկանց զավակների մեջ. քանզի, ահա, նա ունի ողջ ⁹գորությունը՝ ի կատարումն իր բոլոր խոսքերի: Եվ դա այդպես է: Ամեն:

ԳԼՈՒԽ 10

Լեքին կանխագուշակում է, որ հրեաները գերի կտարվեն Բաբելոնացիների կողմից – Նա պատմում է հրեաների մեջ մի Մեսիայի, մի Փրկչի, մի Քավչի գալստյան մասին – Լեքին պատմում է նաև այն մեկի գալստյան մասին, որը պետք է մկրտի Աստծո Գառին – Լեքին պատմում է Մեսիայի մահվան և հարության մասին – Նա համեմատում է Իսրայելի ցրվելը և հավաքվելը ձիթենու հետ – Նեփին խոսում է Աստծո Որդու, Սուրբ Հոգու պարզի և նաև արդարակեցության անհրաժեշտության մասին: Մոտ 600–592թթ. Ք.ծ.ա.:

Եվ այժմ ես՝ Նեփիս, շարունակում եմ տալ “այս թիթեղների վրա իմ գործերի և իմ թագավորության ու ծառայության պատմությունը. ուստի, որպեսզի շարունակեմ իմ պատմությունը, ես

որոշ բաներ պետք է խոսեմ իմ հոր գործերի մասին և նաև իմ եղբայրների մասին:

2 Քանի որ, ահա, եղավ այնպես, որ հայրս իր “Երազի խոսքերի պատմելուն վերջ դնելուց հետո, և նաև, հորդորելով նրանց մեծագույն ջանասիրության, նա խոսեց նրանց հետ հրեաների վերաբերյալ,

3 Որ հետագայում, երբ նրանք կործանվեին, մույմիսկ, այն մեծ քաղաք “Երուսաղեմը, և շատերը գերի ⁸տարվեին ⁹Բաբելոն, Տիրոջ հարմար և ուրույն ժամանակին, նրանք նորից ⁹կվերադառնան, այո, այսինքն՝ ետ կբերվեն գերությունից. և գերությունից ետ բերվելուց հետո, նրանք նորից կտիրանան իրենց ժառանգության հողին:

4 Այո, այսինքն՝ Երուսաղեմից իմ հոր հեռանալու ժամանակից “վեց հարյուր տարի անց, մի ⁸մարգարեի Տեր Աստված կբարձրացնի հրեաների միջից, իսկապես, մի ⁹Մեսիայի, կամ, այլ խոսքով, աշխարհի մի Փրկչի:

5 Եվ նա խոսեց նաև մարգարեների վերաբերյալ, թե որքան շատերն էին “վկայել այս բաների մասին՝ այս Մեսիայի, կամ աշխարհի այս Քավչի վերաբերյալ, որի մասին նա խոսել էր:

6 Ուստի, ողջ մարդկությունը կորած և “ընկած վիճակում էր և

5ա1 Նեփի 19.3, ՄԽ 1.7, Ալմա 37.2, 12, 14:
6ա2 Նեփի 9.20, ՎԼՈՒ 38.2, Մովսես 1.6, 35: սո՛ւ Ամենագետ:
բ Մառ. ԻԸ.18:
10 1ա 1 Նեփի 9.1–5, 19.1–6, Հակոբ 1.1–4:
2ա1 Նեփի 8:

3ա Եսթ. Բ.6, 2 Նեփի 6.8, Հել. 8.20–21:
բ 2 Նեփի 25.10: սո՛ւ Ժամանակագրություն – 587 Ք.ծ.ա.:
գ Եզեկ. ԻԳ.2, 1 Նեփի 1.13, Օմնի 1.15:
դ Երեմ. ԻԹ.10, 2 Նեփի 6.8–9:

4ա 1 Նեփի 19.8, 2 Նեփի 25.19, 3 Նեփի 1.1:
բ 1 Նեփի 22.20–21:
գ սո՛ւ Մեսիա:
5ա Հակոբ 7.11, Մոսիա 13.33, Հել. 8.19–24, 3 Նեփի 20.23–24:
6ա սո՛ւ Ադամի և Եվայի անկումը:

ընդմիջտ կմնա, եթե չապավինի այս Քավչին:

7 Եվ նա խոսեց նաև մի ^ամարգարեի մասին, որը պիտի գա Մեսիայից առաջ՝ պատրաստելու Տիրոջ ճանապարհը,–

8 Այո, մինչև անգամ նա կզնա առաջ և կկանչի անապատում. ^աՊատրաստ արեք Տիրոջ ճանապարհը և ուղիղ արեք նրա շավիղները. քանի որ ձեր միջև կանգնած է մեկը, որին դուք չգիտեք. և նա ավելի հզոր է, քան ես, ում կոշիկի կապն արձակելու արժանի չեմ: Եվ շատ խոսեց հայրս այս բանի վերաբերյալ:

9 Եվ հայրս ասաց, որ նա պիտի մկրտի ^աԲեթաբարայում՝ Հորդանանի կողմերում. և նա նաև ասաց, որ նա պիտի ^բմկրտի ջրով. որ, նա նույնիսկ Մեսիային պիտի մկրտի ջրով:

10 Եվ, Մեսիային ջրով մկրտելուց հետո, նա պիտի ճանաչի ու վկայի, որ նա մկրտել է Աստծո ^աԳառնին, որը վեր պիտի առնի աշխարհի մեղքերը:

11 Եվ եղավ այնպես, որ իմ հայրն այս խոսքերն ասելուց հետո, խոսեց իմ եղբայրների հետ ավետարանի վերաբերյալ, որը պիտի քարոզվի հրեաների մեջ, և նաև հրեաների ^աանհավատության մեջ ^բընկնելու մասին: Եվ նրանք Մեսիային ^գսպանելուց հետո, որը պիտի գա, և հետո, երբ նա սպան-

վի, նա պիտի ^դբարձրանա մեռելներից և ^եՍուրբ Հոգու միջոցով իրեն հայտնի դարձնի հեթանոսներին:

12 Այո, հայրս իսկապես շատ խոսեց հեթանոսների վերաբերյալ և նաև Իսրայելի տան վերաբերյալ, որ նրանց կարելի է նմանեցնել ^աձիթենու, որի ճյուղերը կկտրվեն և ^բկցրվեն ողջ երկրի երեսով:

13 Ուստի, ասաց նա, անհրաժեշտ է, որ մենք բոլորս միաբան առաջնորդվենք դեպի խոստումի ^աերկիր, ի կատարումն Տիրոջ խոսքի, որ մենք պետք է ցրվենք ողջ երկրի երեսով:

14 Եվ Իսրայելի տան ցրվելուց հետո նրանք նորից ^ակհավաքվեն. կամ, ի վերջո, ^բհեթանոսները Ավետարանի լրիվությունը ստանալուց հետո, ^գձիթենու բնական ճյուղերը, կամ Իսրայելի տան մնացորդը, կպատվաստվի կամ կգա ճշմարիտ Մեսիայի՝ իրենց Տիրոջ և իրենց Քավչի իմացությամբ:

15 Եվ այս խոսելաձևով հայրս մարգարեացավ ու խոսեց եղբայրներիս հետ և էլ ավելի շատ բաներ, որոնք ես չեմ գրում այս գրքում. քանի որ գրել եմ դրանց մասին իմ ^ամյուս գրքում՝ այնքան, որքան նպատակահարմար էր ինձ:

16 Եվ բոլոր այս բաները, որոնց մասին ես խոսեցի, կատարվեցին,

7ա1 Նեփի 11.27,
2 Նեփի 31.4:
8աԵս. Խ.3, Մատ. Գ.1–3:
9ա Հովհ. Ա.28:
բ սուր Հովհաննես Մկրտիչ:
10ա սուր Աստծո Գառը:
11ա Մորմ. 5.14:
բ Հակոբ 4.14–18:
գ սուր Հիսուս Քրիստոս. Խաչելություն:

դ սուր Հարություն:
ե սուր Սուրբ Հոգի:
12ա Ծն. ԽԹ.22–26,
1 Նեփի 15.12,
2 Նեփի 3.4–5,
Հակոբ 5, 6.1–7:
սուր Չիթենի, Տիրոջ այգին:
բ 1 Նեփի 22.3–8:
սուր Իսրայել – Իսրայելի ցրվելը:

13ա 1 Նեփի 2.20:
սուր Խոստացված երկիր:
14ա սուր Իսրայել – Իսրայելի ցրվելը:
բ 1 Նեփի 13.42,
ՎեոՒ 14.10:
գ Հակոբ 5.8, 52, 54, 60, 68:
15ա 1 Նեփի 1.16–17:

երբ հայրս բնակվում էր վրանում, Լենուելի հովտում:

17 Եվ եղավ այնպես, որ ես՝ Նեփիս, լսած լինելով իմ հոր բոլոր խոսքերն այն բաների մասին, որոնք նա տեսել էր Պտեհիլքում, և նաև այն բաները, որ նա խոսել էր՝ Սուրբ Հոգու գործությամբ, այն գործությամբ, որը նա ստացել էր Աստծո Որդու հանդեպ ունեցած հավատքի միջոցով, – և Աստծո Որդին Պտեհիան էր, որը պիտի գար, – ես՝ Նեփիս, նույնպես փափագեցի, որ տեսնեի և լսեի, և իմանալի այս բաների մասին Սուրբ Հոգու գործությամբ, որն Աստծո Պարզևն է բոլոր նրանց, ովքեր ջանասիրաբար փնտրում են իրեն, ինչպես ժամանակներում Պիմ, այնպես էլ այն ժամանակ, երբ նա իրեն հայտնի կդարձնի մարդկանց զավակներին:

18 Քանզի նա Պույնն է՝ երեկ, այսօր և հավիտյան. և ուղիմ պատրաստված է բոլոր մարդկանց համար՝ աշխարհի հիմնադրումից ի վեր, եթե այնպես լինի, որ նրանք ապաշխարեն և զան դեպի նա:

19 Քանզի նա, ով ջանասիրաբար փնտրում է, կգտնի. և Աստծո խորհուրդները հայտնի կդառնան նրանց՝ Պսուրբ Հոգու գործությամբ, ինչպես այս ժամանակներում, այնպես էլ ժամանակներում հին, և ինչպես ժամանակներում հին, այնպես էլ ժամանակներում զալիք.

ուստի, Տիրոջ զընթացքը մեկ հավերժական շրջան է:

20 Հետևաբար, հիշիր, ո՛վ մարդ, քո բոլոր արածների համար դու կբերվես Պատաստանի:

21 Ուստի, եթե դուք ջանացել եք գործել ամբարշտորեն ձեր Պիորձության օրերում, ուրեմն, դուք կհամարվեք Քանմաքուր՝ Աստծո ատյանի առջև. և ո՛չ մի անմաքուր բան չի կարող բնակվել Աստծո հետ. ուստի, դուք պետք է վտարվեք հավիտյան:

22 Եվ Սուրբ Հոգին տալիս է ինձ իրավունք, որ ես պետք է ասեմ այս բաները և չուրանամ:

ԳԼՈՒԽ 11

Նեփին տեսնում է Տիրոջ Հոգին և տեսիլքում ցույց է տրվում կենաց ծառը – Նա տեսնում է Աստծո Որդու մորը և իմանում Աստծո բարեհաճության մասին – Նա տեսնում է Աստծո Գառի մկրտությունը, ծառայությունը և խաչելությունը – Նա տեսնում է նաև Գառի Տասներկու Առաքյալների կանչվելը և ծառայությունը: Մոտ 600–592թթ. Ք.ծ.ա.:

ՔԱՆԶԻ եղավ այնպես, հետո, երբ ես փափագեցի իմանալ այն բաները, որ հայրս տեսել էր, և հավատալով, որ Տերը կարող էր դրանք հայտնի դարձնել ինձ, երբ նստած խորհում էի սրտումս, ես Տիրոջ Հոգով Պտարվեցի հեռու, այո,

17ա Ենուկ 1.3, Այն 36.17:
բ 1 Նեփի 8.2:
գ սո՛ր Մեսիա:
դ սո՛ր Սուրբ Հոգի:
է Մոր. 10.4–5, 7, 19:
զ Վևո՛Ւ 20.26:
18ա Եբր. ԺԳ.8, Մորմ. 9.9, Վևո՛Ւ 20.12:
սո՛ր Աստված,
Աստվածագլուխ:

19ա սո՛ր Աստծո խորհուրդները:
բ սո՛ր Սուրբ Հոգի:
գ Այն 7.20,
Վևո՛Ւ 3.2, 35.1:
20ա Ժող. ԺԲ.14,
2 Նեփի 9.46:
սո՛ր Վերջին դատաստան:
21ա Այն 34.32–35:

բ Ա Կոր. 2.9–10,
3 Նեփի 27.19,
Վևո՛Ւ 76.50–62,
Մովսես 6.57:
11 ա Վևո՛Ւ 76.19:
սո՛ր Խորհել:
բ Բ Կոր. ԺԲ.1–4,
Հայտ. ԻԱ.10,
2 Նեփի 4.25,
Մովսես 1.1:

մի չափազանց բարձր զլեռ, որը ես նախկինում երբեք չէի տեսել, և որի վրա երբեք չէի դրել:

2 Եվ Հոգին ասաց ինձ. Ահա՛, ի՞նչ ես փափագում դու:

3 Եվ ես ասացի. Ես փափագում եմ տեսնել այն բաները, որոնք տեսել է հայրս:

4 Եվ Հոգին ասաց ինձ. Հավատո՞ւմ ես, որ հայրդ տեսել է ծառը, որի մասին նա պատմել է:

5 Եվ ես ասացի. Այո, դու գիտես, որ ես ՚հավատում եմ իմ հոր բոլոր խոսքերին:

6 Եվ երբ ես ասացի այս խոսքերը, Հոգին բացականչեց բարձր ձայնով՝ ասելով. Ովսա՛ննա Տիրոջը՝ բարձրյալ Աստծուն. քանզի նա է Աստված ողջ՝ ՚երկրի վրա, այո, իսկապես՝ ամենի վրա: Եվ օրհնրված ես դու, Նեփի, որովհետև դու ՚հավատում ես ամենաբարձրյալ Աստծո Որդուն. ուստի, դու կտեսնես բաները, որոնք դու փափագեցիր:

7 Եվ ահա այս բանը կտրվի քեզ՝ իբրև ՚նշան, որ ծառը տեսնելուց հետո, որը կրում էր պտուղը, որը քո հայրը ճաշակել էր, դու կտեսնես նաև մի մարդու՝ երկնքից իջնելիս. և դու նրա ականատեսը կլինես. և ականատես լինելուց հետո, դու պիտի ՚արձանագրես, որ նա Աստծո Որդին է:

8 Եվ եղավ այնպես, որ Հոգին ասաց ինձ՝ Նայիր: Եվ ես նայեցի ու տեսա մի ծառ. և դա նման էր այն ծառին, որը տեսել էր հայրս.

և նրա գեղեցկությունն անհամեմատ վեր էր. այո, գերազանցելով ամեն գեղեցկություն, և նրա ՚ճերմակությունը գերազանցում էր սփռված ձյան ճերմակությամբ:

9 Եվ եղավ այնպես, որ ծառը տեսնելուց հետո, ես ասացի Հոգուն. Ես տեսնում եմ, որ դու ինձ ցույց տվեցիր ծառը, որը բոլորից ՚արժեքավորն է:

10 Եվ նա ասաց ինձ. Ի՞նչ ես փափագում դու:

11 Եվ ես ասացի նրան. Իմանալ դրա ՚մեկնաբանությունը,՝ քանզի ես խոսում էի նրա հետ, ինչպես մարդն է խոսում. քանզի ես տեսա, որ նա մարդու ՚տեսք ուներ. բայց, այնուամենայնիվ, ես գիտեի, որ դա Տիրոջ Հոգին էր, և նա խոսում էր ինձ հետ, ինչպես մի մարդ խոսում է մեկ ուրիշի հետ:

12 Եվ եղավ այնպես, որ նա ասաց ինձ՝ Նայիր: Եվ ես նայեցի, որ տեսնեի նրան. բայց չտեսա, քանզի նա հեռացել էր իմ ներկայությունից:

13 Եվ եղավ այնպես, որ ես նայեցի ու տեսա մեծ քաղաք Երուսաղեմը և նաև ուրիշ քաղաքներ: Եվ ես տեսա Նազարեթ քաղաքը. և ՚Նազարեթ քաղաքում ես մի ՚կույս տեսա և նա չափազանց գեղեցիկ էր ու սպիտակ:

14 Եվ եղավ այնպես, որ ես տեսա ՚երկինքները բաց. և մի հրեշտակ իջավ ներքև ու կանգնեց իմ առջև. և նա ասաց ինձ. Նեփի, ի՞նչ ես տեսնում դու:

<p>1q Բ Օր. Ժ.1, Եթեր 3.1: 3ա1 Նեփի 8.2-34: 4ա1 Նեփի 8.10-12, 15.21-22: 5ա1 Նեփի 2.16: 6ա Ել. Թ.29, 2 Նեփի 29.7,</p>	<p>3 Նեփի 11.14, Մովսես 6.44: բ սուր Հավատ, Հավատալ: 7ա սուր Նշան: բ սուր Վկայություն: 8ա1 Նեփի 8.10: բ 1 Նեփի 8.11: 9ա1 Նեփի 11.22-25:</p>	<p>11աԾն. Խ.8: բ Եթեր 3.15-16: 13ա Մատ. Բ.23: բ Ղուկ. Ա.26-27, Ալմա 7.10: սուր Մարիամ՝ Հիսուսի մայրը: 14ա Եգեկ. Ա.1, 1 Նեփի 1.8:</p>
--	---	--

15 Եվ ես ասացի նրան. Մի կույս՝ մնացած բոլոր կույսերից գեղեցկագույն ու մաքուր:

16 Եվ նա ասաց ինձ. Գիտե՞ս դու Աստծո բարեհաճության մասին:

17 Եվ ես ասացի նրան. Ես գիտեմ, որ նա սիրում է իր զավակներին. սակայն ես չգիտեմ բոլոր բաների իմաստը:

18 Եվ նա ասաց ինձ. Նայի՛ր, կույսը, որին դու տեսնում ես, Աստծո Որդու ^բմայրն է՝ մարմնական ձևով:

19 Եվ եղավ այնպես, որ ես տեսա, որ նա Հոգով տարվեց հեռու. և նա որոշ ժամանակի ընթացքում ^աՀոգով հեռու տարվելուց հետո, հրեշտակը խոսեց ինձ հետ, ասելով՝ Նայի՛ր:

20 Եվ ես նայեցի ու կրկին տեսա կույսին՝ մի ^աերեխա գրկած իր ձեռքերում:

21 Եվ հրեշտակն ասաց ինձ. Ահա Աստծո ^աԳառը, այո, հիրավի, Հավերժական ^բՀոր ^գՈրդին: Իմացա՞ր իմաստը ^դծառի, որ հայրդ տեսել էր:

22 Եվ ես պատասխանեցի նրան՝ ասելով. Այո, դա Աստծո ^ասերն է, որը տարածվում է ամենուր՝ մարդկանց զավակների սրտերում. հետևաբար, ամենաբաղձալին է բոլոր բաներից ավելի:

23 Եվ նա խոսեց ինձ հետ՝ ասելով. Այո, և հոգու համար ^աամենաբերկրալին:

24 Եվ այս խոսքերն ասելուց հետո, նա ասաց ինձ՝ Նայի՛ր: Եվ ես նայեցի ու տեսա Աստծո Որդուն՝ մարդկանց զավակների միջով առաջ ^ագնալիս. և ես տեսա շատերին՝ նրա ոտքերն ընկնելիս և նրան երկրպագելիս:

25 Եվ եղավ այնպես, որ ես հասկացա, որ երկաթյա ^աձողը, որը տեսել էր հայրս, Աստծո խոսքն էր, որը տանում էր դեպի ^բկենաց ջրերի ակունքը կամ դեպի կենաց ^գծառը. որ ջրերը Աստծո սիրո պատկերումն են. և ես հասկացա նաև, որ կենաց ծառը Աստծո սիրո մի պատկերում էր:

26 Եվ հրեշտակն ասաց ինձ կրկին. Նայի՛ր և տես Աստծո ^աբարեհաճությունը:

27 Եվ ես նայեցի ու ^ատեսա աշխարհի Քավչին, որի մասին խոսել էր հայրս, և ես նաև տեսա ^բմարգարեին, որը պետք է պատրաստեր ճանապարհը նրա առջև: Եվ Աստծո Գառը գնաց առաջ և ^գմկրտվեց նրա կողմից, և նրա մկրտվելուց հետո ես տեսա երկինքները բաց, և Սուրբ Հոգին վայր իջավ երկնքից՝ ^աաղավճու տեսքով ու մնաց նրա վրա:

28 Եվ ես տեսա, որ նա առաջ գնաց՝ ծառայելով ժողովրդին՝ ^ագործությամբ ու մեծ փառքով. և բազմություններ էին հավաքվել ի մի՝ լսելու նրան. և ես տեսա, որ նրանք դուրս գեցին նրան իրենց միջից:

18ա Ես. Է.14,
Ղուկ. Ա.34-35:
բ Մոսիա 3.8:
19ա Մատ. Ա.20:
20ա Ղուկ. Բ.16:
21ա սո՛ւ Աստծո Գառը:
բ սո՛ւ Աստված,
Աստվածագույլիս –
Աստված Հայրը:
գ սո՛ւ Հիսուս Քրիստոս:

դ 1 Նեփի 8.10,
Ալմա 5.62:
սո՛ւ Կյանքի ծառ:
22ա սո՛ւ Մեր:
23ա սո՛ւ Ուրախություն:
24ա Ղուկ. Գ.14-21:
25ա 1 Նեփի 8.19:
բ սո՛ւ Կենդանի ջուր:
գ ԾՆ. Բ.9,
Ալմա 32.40-41,

Մովսես 4.28, 31:
26ա 1 Նեփի 11.16-33:
27ա 2 Նեփի 25.13:
բ Մատ. ԺԱ.10,
1 Նեփի 10.7-10,
2 Նեփի 31.4:
գ սո՛ւ Մկրտություն,
Մկրտել:
դ սո՛ւ Աղավճու նշանը:
28ա ՎևոՒԲ 138.25-26:

29 Եվ ես տեսա նաև ՝ տասներկու ուրիշների՝ նրան հետևելիս: Եվ եղավ այնպես, որ նրանք իմ երեսի առաջից հեռու տարվեցին Հոգով, և ես նրանց չտեսա:

30 Եվ եղավ այնպես, որ հրեշտակը խոսեց ինձ հետ կրկին՝ ասելով՝ Նայի՛ր: Եվ ես նայեցի ու տեսա կրկին երկինքները բաց, և տեսա ՝ հրեշտակներ իջնելիս մարդկանց զավակների վրա. և նրանք ծառայում էին նրանց:

31 Եվ նա կրկին խոսեց ինձ հետ՝ ասելով՝ Նայի՛ր: Եվ ես նայեցի ու տեսա Աստծո Գառի՛ն՝ մարդկանց զավակների միջով առաջ գնալիս: Եվ ես տեսա մարդկանց բազմություններ, որոնք հիվանդ էին և որոնք չարչարված էին ամեն ձևի հիվանդություններից, և ՝ ուղերից ու ֆայիղծ ոգիներից. և հրեշտակը խոսեց և ցույց տվեց ինձ բոլոր այս բաները: Եվ նրանք ֆուրսվեցին՝ Աստծո Գառի գործընթացը. իսկ դևերն ու պիղծ ոգիները դուրս գցվեցին:

32 Եվ եղավ այնպես, որ հրեշտակը նորից խոսեց ինձ հետ՝ ասելով՝ Նայի՛ր: Եվ ես նայեցի ու տեսա Աստծո Գառի՛ն, որ նա բռնվեց մարդկանց կողմից. այո, հավիտենական Աստծո Որդին ՝ դատվեց աշխարհի կողմից. և ես տեսա ու արձանագրում եմ:

33 Եվ ես՝ Նեփիս տեսա, որ նա ՝ լսաչ բարձրացվեց և ֆսպանվեց աշխարհի մեղքերի համար:

34 Եվ նրա սպանվելուց հետո ես տեսա երկրի բազմությունները, որ դրանք ի մի հավաքվեցին՝ կովելու

Գառի առաքյալների դեմ. քանզի այդպես անվանվեցին տասներկուսը՝ Տիրոջ հրեշտակի կողմից:

35 Եվ երկրի բազմությունն ի մի հավաքվեց. և ես տեսա, որ նրանք մի մեծ ու ընդարձակ ՝ շենքում էին, մման այն շենքին, որ տեսել էր հայրս: Եվ Տիրոջ հրեշտակը նորից խոսեց ինձ հետ՝ ասելով. Ահա՛ աշխարհը և դրա իմաստությունը. այո, ահա Իսրայելի տունն ի մի է հավաքվել՝ կովելու Գառի տասներկու առաքյալների դեմ:

36 Եվ եղավ այնպես, որ ես տեսա և արձանագրում եմ, որ մեծ ու ընդարձակ շենքն աշխարհի ՝ հպարտությունն էր. և այն ընկավ և նրա անկումը չափազանց մեծ էր: Եվ Տիրոջ հրեշտակը նորից խոսեց ինձ հետ՝ ասելով. Այսպիսին կլինի բոլոր ազգերի, ցեղերի, լեզուների ու ժողովուրդների կործանումը, որոնք կկռվեն Գառի տասներկու առաքյալների դեմ:

ԳԼՈՒԽ 12

Նեփին տեսիլքում տեսնում է խոստումի երկիրը. դրա բնակիչների արդարությունը, անօրինությունը և անկումը. Աստծո Գառի զարուստը նրանց մեջ. ինչպես են Տասներկու Աշակերտները և Տասներկու Առաքյալները դատելու Իսրայելը. և անհավատության մեջ ընկածների նողկալի ու կեղտոտ վիճակը: Մոտ 600–592թթ. Ք.ծ.ա.:

Եվ եղավ այնպես, որ հրեշտակն ասաց ինձ. Նայի՛ր, և տես՛ս քո սե-

29ա ստ՝ Առաքյալ:
30ա ստ՝ Հրեշտակներ:
31ա Մար. Ե.15–20,
Մոսիա 3.5–7:
ստ՝ Գե.:

բ ստ՝ Ոգի – Չար ոգիներ:
գ ստ՝ Բժշկել, Բժշկումներ:
32ա Մար. ԺԵ.17–20:
33ա Հովհ. ԺԹ.16–19,
Մոսիա 3.9–10,

3 Նեփի 27.14:
ստ՝ Խաչ:
բ ստ՝ Քավել, Քավություն:
35ա 1 Նեփի 8.26, 12.18:
36ա ստ՝ Հպարտություն:

բունդը և նաև քո եղբայրների սերունդը: Եվ ես նայեցի ու տեսա խոստումի մերկիրը. և ես տեսա մարդկանց բազմություններ, այո, իսկապես, կարծես թվով այնքան շատ էին, որքան ծովի ավազը:

2 Եվ եղավ այնպես, որ ես տեսա բազմություններ ի մի հավաքված՝ ճակատամարտելու մեկը մյուսի դեմ. և ես տեսա մպատերազմներ, և պատերազմների համբավներ, և իմ ժողովրդի մեջ մեծ կոտորածներ՝ սրից:

3 Եվ եղավ այնպես, որ ես տեսա շատ սերունդներ անցան պատերազմների և կռիվների մեջ՝ երկրում. և ես տեսա շատ քաղաքներ, այո, նույնիսկ այնքան, որ չհաշվեցի դրանք:

4 Եվ եղավ այնպես, որ ես տեսա միսավարի մեզ խոստումի երկրի երեսին. և տեսա կայծակներ և լսեցի որոտներ և երկրաշարժեր և ամեն ձևի աղմկոտ ձայներ. և տեսա գետիներ և ժայռերը, որ դրանք ճեղքվեցին. և ես տեսա վայր ընկնող և կտորների վերածվող լեռներ. և տեսա երկրի հարթավայրերը, որ դրանք ճեղքված էին. և տեսա շատ քաղաքներ, որ դրանք զխորտակված էին. և տեսա շատերը՝ այրված կրակից. ու տեսա, որ շատերը հողին հավասարվեցին երկրաշարժի պատճառով:

5 Եվ եղավ այնպես, որ այս բաները տեսնելուց հետո, ես տեսա

խավարի մեզ, որ այն անցավ երկրի երեսից. և ահա, ես տեսա բազմություններ, որոնք չէին ընկել Տիրոջ մեծ ու ահեղ դատաստանների հետևանքով:

6 Եվ ես տեսա երկինքները բաց և Աստծո մԳառնի երկնքից իջնելիս. և նա իջավ ներքև ու իրեն ցույց տվեց նրանց:

7 Եվ ես նաև տեսա ու արձանագրում եմ, որ Սուրբ Հոգին իջավ մտասներկու ուրիշների վրա. և նրանք Աստծո կողմից կարգված էին ու ընտրված:

8 Եվ հրեշտակը խոսեց ինձ հետ՝ ասելով. Տես, Գառնի տասներկու աշակերտները, որոնք ընտրվել են ծառայելու քո սերնդին:

9 Եվ նա ասաց ինձ. Գու հիշո՞ւմ ես Գառնի մտասներկու առաքյալների: Ահա, այդ նրանք են, որ պետք է դատեն Իսրայելի տասներկու ցեղերը. ուստի, քո սերնդի տասներկու ծառաները պետք է դատվեն նրանց կողմից. քանի որ դուք Իսրայելի տնից եք:

10 Եվ այս մտասներկու ծառաները, որոնց դու տեսնում ես, պետք է դատեն քո սերնդին: Եվ տես, նրանք արդար են հավիտյան. քանզի Աստծո Գառնի հանդեպ իրենց հավատքի շնորհիվ նրանց միանդերձները դարձվել են ճերմակ նրա արյունով:

11 Եվ հրեշտակն ասաց ինձ՝ Նախիր: Եվ ես նայեցի ու տեսա, որ մերեք սերունդ անցավ արդարու-

12 1ա սոՒ Խոստացված երկիր:
2ա Ենովս 1.24,
Մորմ. 8.7-8:
սոՒ Պատերազմ:
4ա 1 Նեփի 19.10:
բ Հել. 14.20-28:
գ 3 Նեփի 8.14:
5ա 3 Նեփի 8.20, 10.9:

6ա 2 Նեփի 26.1, 9,
3 Նեփի 11.3-17:
7ա 3 Նեփի 12.1,
19.12-13:
9ա Գուկ. 2.13:
բ Մատ. ԺԹ.28,
ՎևոՒ 29.12:
սոՒ Վերջին
դատաստան:

10ա 3 Նեփի 27.27,
Մորմ. 3.18-19:
բ Հայտ. Է.14,
Ալմա 5.21-27,
13.11-13,
3 Նեփի 27.19-20:
11ա 2 Նեփի 26.9-10,
3 Նեփի 27.30-32:

քյան մեջ. և նրանց հանդերձները ճերմակ էին, ճիշտ ինչպես Աստծո Գառիւնը: Եվ հրեշտակն ասաց ինձ. Սրանք ճերմակ են դարձվել Գառի արյունով՝ նրա հանդեպ իրենց հավատքի շնորհիվ:

12 Եվ ես՝ Նեփիս, տեսա նաև շատերին՝ չորբորոզ սերնդից, որոնք անցան արդարության մեջ:

13 Եվ եղավ այնպես, որ ես տեսա երկրի բազմությունները՝ ի մի հավաքված:

14 Եվ հրեշտակն ասաց ինձ. Ահա քո սերունդը և նաև քո եղբայրների սերունդը:

15 Եվ եղավ այնպես, որ ես նայեցի ու տեսա իմ սերնդի ժողովրդին, ի մի հավաքված բազմություններով, իմ եղբոր սերնդի՝ Պեմ. և նրանք ի մի էին հավաքվել՝ ճակատամարտելու:

16 Եվ հրեշտակը խոսեց ինձ հետ՝ ասելով. Տես՝ ափետոս ջրերի ակունքը, որ տեսել էր հայրդ. այո, այսինքն՝ թզետը, որի մասին նա խոսել էր. և որի խորքերը Պոթոխքի խորություններն են:

17 Եվ խավարի՝ մշուշները դևի գայթակղություններն են, որոնք թկուրացնում են աչքերը, և կարծրացնում սրտերը մարդկանց զավակների, և տանում նրանց հեռու՝ դեպի Պլայն ճանապարհներ, որպեսզի նրանք մահանան ու կորչեն:

18 Իսկ մեծ ու ընդարձակ շենքը,

որը տեսել էր հայրդ, մարդկանց զավակների սին թերևակայություններն ու Պպարտությունն է: Եվ մի մեծ ու զարհուրելի Պանդունդ է բաժանում նրանց. այո, այսինքն՝ Պարդարադատության խոսքը Հավերժական Աստծո և Մեսիայի, որը Աստծո Գառն է, որի մասին Սուրբ Հոգին վկայում է, աշխարհի սկզբից մինչև այս ժամանակը, և այս ժամանակից՝ այսուհետև և հավիտյան:

19 Եվ մինչդեռ հրեշտակն ասում էր այս խոսքերը, ես նայեցի ու տեսա, որ իմ եղբայրների սերունդը կռվում էր իմ սերնդի դեմ՝ համաձայն հրեշտակի խոսքերի. և իմ սերնդի հպարտության և դևի Պգայթակղությունների պատճառով ես տեսա, որ իմ եղբայրների սերունդը թհաղթեց իմ սերնդի ժողովրդին:

20 Եվ եղավ այնպես, որ ես նայեցի և տեսա իմ եղբոր սերնդի ժողովրդին, որ նրանք հաղթել էին իմ սերնդին. և նրանք առաջ գնացին բազմություններով երկրի երեսի վրայով:

21 Եվ ես տեսա նրանց՝ ի մի հավաքված բազմություններով. և ես տեսա Պպատերազմներ ու պատերազմների համբավներ. և պատերազմների ու պատերազմների համբավների մեջ ես տեսա շատ սերունդներ անց կացան:

22 Եվ հրեշտակն ասաց ինձ.

12ա Ալմա 45.10–12, Հել. 13.5, 9–10, 3 Նեփի 27.32, 4 Նեփի 1.14–27:
15ա Մորմ. 6:
16ա սուր Կեղտ, Կեղտոտություն: թ 1 Նեփի 8.13, 15.26–29:
գ սուր Գժոխք:

17ա 1 Նեփի 8.23, 15.24, ՎևոՒ 10.20–32:
բ սուր Ուրացություն:
գ Մատ. Է.13–14:
18ա 1 Նեփի 8.26, 11.35–36:
բ Երեմ. Է.24:
գ սուր Հպարտություն:
դ Դուկ. ԺՁ.26,
1 Նեփի 15.28–30:

ե սուր Արդարադատություն:
19ա սուր Գայթակղել, Գայթակղություն:
բ Հարոմ 1.10, ՄԽ 1.1–2:
21ա Մորմ. 8.8, Մոր. 1.2:
սուր Պատերազմ:

Ահա՛, սրանք անհավատության մեջ ^ակրնկնեն:

23 Եվ եղավ այնպես, որ ես տեսա, նրանց անհավատության մեջ ընկնելուց հետո, նրանք դարձան մի ^աթուփ և նողկալի և ^բկեղտոտ ժողովուրդ՝ ^գծուլությամբ ու ամեն ձևի պղծություններով լի:

ԳԼՈՒԽ 13

Նեփին տեսիլքում տեսնում է դևի եկեղեցին հաստատված հեթանոսների մեջ, Ամերիկայի հայտնագործույնը և գաղութացումը, Աստվածաշնչի բազմաթիվ պարզ և արժեքավոր մասերի կորուստը, որպես դրա արդյունք՝ հեթանոսների ուրացության վիճակը, ավետարանի վերականգնումը, վերջին օրերի սուրբ գրքերի ի հայտ գալը, և Միոնի կառուցումը: Մոտ 600–592թթ. Բ.ծ.ա.:

Եվ եղավ այնպես, որ հրեշտակը խոսեց ինձ հետ, ասելով՝ Նայի՛ր: Եվ ես տեսա շատ ազգեր ու թագավորություններ:

2 Եվ հրեշտակն ասաց ինձ. Ի՞նչ ես տեսնում դու: Եվ ես ասացի. Ես տեսնում եմ շատ ազգեր ու թագավորություններ:

3 Եվ նա ասաց ինձ. Մրանք են հեթանոսների ազգերը և թագավորությունները:

4 Եվ եղավ այնպես, որ ես տեսա ^ահեթանոսների ազգերի մեջ մի ^բմեծ եկեղեցու ստեղծումը:

5 Եվ հրեշտակն ասաց ինձ. Ահա՛ մի եկեղեցու ստեղծումը, որն ամեն

նապիղծն է բոլոր մյուս եկեղեցիներից ավելի, որը ^ասպանում է Աստծո սրբերին, այո, և տանջում է նրանց, և նրանց շղթայակապ անում, և լծում է նրանց երկաթե ^բլծով, և տանում է նրանց գերության:

6 Եվ եղավ այնպես, որ ես տեսա այդ ^ամեծ և պիղծ եկեղեցին. և ես տեսա ^բդևին, որ նա էր դրա հիմնադիրը:

7 Եվ ես տեսա նաև ^աուսկի և արծաթ և մետաքսներ և կարմիր և նրբահյուս բեհեզ և ամեն տեսակի թանկարժեք հագուստներ. և տեսա շատ պռոնիկներ:

8 Եվ հրեշտակը խոսեց ինձ հետ՝ ասելով. Ահա՛ ոսկին և արծաթը և մետաքսը և կարմիրը և նրբահյուս բեհեզը և թանկարժեք հագուստները և պռոնիկներն այս մեծ և պիղծ եկեղեցու ^ացանկություններն են:

9 Եվ նաև աշխարհի գովասանքի համար նրանք ^ակործանում են Աստծո սրբերին և տանում են նրանց գերության:

10 Եվ եղավ այնպես, որ ես նայեցի ու տեսա շատ ջրեր. և դրանք բաժանում էին հեթանոսներին իմ եղբոր սերնդից:

11 Եվ եղավ այնպես, որ հրեշտակն ասաց ինձ. Ահա՛ Աստծո ցասումը քո եղբայրների սերնդի վրա է:

12 Եվ ես նայեցի ու տեսա մի մարդու հեթանոսների մեջ, որը բաժանված էր իմ եղբայրների սերնդից շատ ջրերով. և տեսա Աստծո ^աճոզին, որ վայր իջավ ու

22ա1 Նեփի 15.13,
2 Նեփի 26.15:
23ա2 Նեփի 26.33:
բ 2 Նեփի 5.20–25:
գ սուր Ծույլ, Ծուլություն:
13 4ա սուր Հեթանոսներ:
բ 1 Նեփի 13.26, 34,

14.3, 9–17:
5ա Հայտ. ԺԷ.3–6,
1 Նեփի 14.13:
բ Երեմ. ԻԸ.10–14:
6ա ՎևոՒԲ 88.94:
սուր Դև – Դևի
եկեղեցին:

բ 1 Նեփի 22.22–23:
7ա Մորմ. 8.36–38:
8ա Հայտ. ԺԸ.10–24,
Մորմ. 8.35–38:
9ա Հայտ. ԺԳ.4–7:
12ա սուր Ոգեշնչում,
Ոգեշնչել:

ներգործեց այդ մարդու վրա, և նա առաջ գնաց շատ ջրերի վրայով. նույնիսկ մինչև իմ եղբայրների սերունդը, որոնք խոստացված երկրում էին:

13 Եվ եղավ այնպես, որ ես տեսա Աստծո չնոգին, որ այն ներգործեց ուրիշ հեթանոսների վրա էլ. և նրանք դուրս եկան գերությունից շատ ջրերի վրայով:

14 Եվ եղավ այնպես, որ ես տեսա հեթանոսների շատ ^աբազմություններ խոստումի ^բերկրում. և տեսա Աստծո ցասումը, որ այն եղբորս սերնդի վրա էր. և նրանք ^գցրվեցին հեթանոսների առջև և ջախջախվեցին:

15 Եվ ես տեսա Տիրոջ չնոգին, որ այն հեթանոսների վրա էր, և նրանք բարգավաճեցին և ձեռք բերեցին ^ահողը՝ որպես իրենց ժառանգություն. և ես տեսա, որ նրանք սպիտակ էին, և չափազանց գրավիչ ու ^բզեղեցիկ, նման իմ ժողովրդին՝ մինչև նրանց ^գկոտորվելը:

16 Եվ եղավ այնպես, որ ես՝ Նեփիս, տեսա, որ հեթանոսները, որոնք դուրս էին եկել գերությունից, իրենց խոնարհեցրին Տիրոջ առջև. և Տիրոջ զորությունը նրանց ^ահետ էր:

17 Եվ ես տեսա, որ նրանց արյունակից հեթանոսներն ի մի էին հավաքվել ջրերի վրա և նաև ցամաքի վրա՝ ճակատամարտելու նրանց դեմ:

18 Եվ ես տեսա, որ Աստծո զորությունը նրանց հետ էր և նաև, որ Աստծո ցասումը բոլոր նրանց վրա

էր, որոնք ի մի էին հավաքվել՝ ճակատամարտելու նրանց դեմ:

19 Եվ ես՝ Նեփիս, տեսա, որ հեթանոսները, որոնք դուրս էին եկել գերությունից, ^աազատվել էին, Աստծո զորությամբ, բոլոր մյուս ազգերի ձեռքից:

20 Եվ եղավ այնպես, որ ես՝ Նեփիս, տեսա, որ նրանք բարգավաճեցին երկրում. և տեսա մի ^ագիրք նրանց մեջ, և դա նրանք կրում էին իրենց հետ:

21 Եվ հրեշտակն ասաց ինձ. Գիտե՞ս գրքի նշանակությունը:

22 Եվ ես ասացի նրան՝ Չգիտեմ:

23 Եվ նա ասաց. Տե՛ս, այն դուրս է եկել հրեայի բերանից: Եվ ես՝ Նեփիս, տեսա այն. և նա ինձ ասաց. ^աԳիրքը, որ դու տեսնում ես, ^բհրեաների մի ^գհիշատակարան է, որը պարունակում է Տիրոջ ուխտերը, որոնք նա արել է Իսրայելի տան հետ. և այն պարունակում է նաև սուրբ մարգարեների մարգարեություններից շատերը. և դա մի հիշատակարան է, նման այն փորագրություններին, որոնք արույրեն ^գքիթեղների վրա են, միայն թե դրանք այնքան շատ չեն. այնուամենայնիվ, դրանք պարունակում են Տիրոջ ուխտերը, որոնք նա կապել է Իսրայելի տան հետ. ուստի, դրանք մեծ արժեք ունեն հեթանոսների համար:

24 Եվ Տիրոջ հրեշտակն ասաց ինձ. Դու տեսար, որ գիրքը դուրս է եկել հրեայի բերանից. և երբ այն դուրս եկավ հրեայի բերանից, այն պարունակում էր Տիրոջ

14ա2 Նեփի 1.11, Մորմ. 5.19–20:
բ սո՛ւ Խոստացված երկիր:
գ 1 Նեփի 22.7–8:
սո՛ւ Իսրայել – Իսրայելի ցրվելը:

15ա2 Նեփի 10.19:
բ 2 Նեփի 5.21:
գ Մորմ. 6.17–22:
16ա Վևո՛ւ 101.80:
19ա2 Նեփի 10.10–14,
3 Նեփի 21.4,
Եթեր 2.12:

20ա 1 Նեփի 14.23:
23ա 1 Նեփի 13.38,
2 Նեփի 29.4–12:
բ 2 Նեփի 3.12:
գ սո՛ւ Սուրբ գրքեր:
դ 1 Նեփի 5.10–13:

ավետարանի լրիվությունը, որի մասին տասներկու առաքյալները վկայում են. և նրանք վկայում են՝ ճշմարտության համաձայն, որն Աստծո Գառի մեջ է:

25 Ուստի, այս բաները ^ահրեաներից ^բհեթանոսներին են փոխանցվում անաղարտ՝ համաձայն այն ճշմարտությանը, որն Աստծո մեջ է:

26 Եվ դրանք Գառի տասներկու առաքյալների ձեռքով հրեաներից ^ահեթանոսներին անցնելուց հետո, դու տեսնում ես այն ^բմեծ և պիղծ ^գեկեղեցու ստեղծումը, որն ամենապիղծն է՝ բոլոր մյուս եկեղեցիներից ավելի. քանզի ահա, նրանք Գառի ավետարանից ^ահանել են շատ մասեր, որոնք ^բպարզ ու ամենաարժեքավորն են. և նրանք հանել են նաև Տիրոջ բազմաթիվ ուխտեր:

27 Եվ այս բոլորը նրանք արել են, որպեսզի կարողանան խեղաթյուրել Տիրոջ ճշմարիտ ուղիները, որպեսզի կարողանան կուրացնել աչքերը և կարծրացնեն սրտերը մարդկանց զավակների:

28 Ուստի, դու տեսնում ես, որ զիրքը մեծ և պիղծ եկեղեցու ձեռքով անցնելուց հետո, կան շատ պարզ ու արժեքավոր բաներ՝ հանված գրքից, որն Աստծո Գառի զիրքն է:

29 Եվ այս պարզ ու արժեքավոր բաները հանվելուց հետո, այն անցնում է հեթանոսների բոլոր ազգերին. և հեթանոսների բոլոր ազգերին անցնելուց հետո, այո,

մինչև անգամ՝ շատ ջրերից այն կողմ գտնվող հեթանոսներին, որոնց դու տեսար, որոնք դուրս էին եկել գերությունից, դու տեսնում ես, – շատ պարզ և արժեքավոր բաների պատճառով, որոնք հանվել էին գրքից, որոնք պարզ էին մարդկանց զավակների հասկացողությանը, համաձայն պարզության, որն Աստծո Գառի մեջ է, – այդ բաների պատճառով, որոնք հանվել են Գառի ավետարանից, շատ-շատերը սայթաքում են, այո, այնպես որ Սատանան մեծ զորություն ունի նրանց վրա:

30 Այնուամենայնիվ, դու տեսնում ես, որ հեթանոսները, որոնք դուրս են եկել գերությունից և Աստծո զորությամբ բարձրացվել են բոլոր մյուս ազգերից վեր՝ մի երկրի երեսին, որն ընտիր է բոլոր մյուս երկրներից ավելի, որն այն երկիրն է, որ Տեր Աստված ուխտեց քո հոր հետ, որ նրա սերունդն ունենա որպես ժառանգության ^ահող. ուստի, դու տեսնում ես, որ Տեր Աստված չի հանդուրժի, որ հեթանոսները կատարելապես ոչընչացնեն քո սերնդի ^բխառնուրդը, որոնք քո եղբայրների մեջ են:

31 Ոչ էլ նա կհանդուրժի, որ հեթանոսները ^աոչնչացնեն քո եղբայրների սերունդը:

32 Ոչ էլ Տեր Աստված կհանդուրժի, որ հեթանոսները հավիտյան մնան կուրության այդ ահավոր վիճակում, որի մեջ դու տեսնում ես նրանց՝ Գառի ավետարանի

25ա 2 Նեփի 29.4–6, վ.և.ՌԻ 3.16:
սու՝ Հրեաներ:
բ սու՝ Հեթանոսներ:
26ա Մատ. ԻԱ.43:
բ 1 Նեփի 13.4–6, 14.3, 9–17:
գ սու՝ Ուրացություն –

Վաղ Քրիստոնեական
Եկեղեցու
ուրացությունը:
դ Մորմ. 8.33,
Մովսես 1.41:
ե 1 Նեփի 14.20–26,
ՀՀ 1.8:
30ա սու՝ Խոստացված

երկիր:
բ Այմա 45.10–14:
31ա 2 Նեփի 4.7, 10.18–19,
Հակոբ 3.5–9,
Հել. 15.12,
3 Նեփի 16.8–9,
Մորմ. 5.20–21:

պարզ ու ամենաարժեքավոր մասերի պատճառով, որոնք ետ էին պահվել այն ^ապիղծ եկեղեցու կողմից, որի ստեղծումը դու տեսար:

33 Ուստի, ասում է Աստծո Գառը, ես ողորմած կլինեմ հեթանոսների հանդեպ՝ այցելելով մեծ դատաստանով Իսրայելի տան մնացորդին:

34 Եվ եղավ այնպես, որ Տիրոջ հրեշտակը խոսեց ինձ հետ՝ ասելով. Ահա՛, ասում է Աստծո Գառը, Իսրայելի տան ^ամնացորդին այցելելուց հետո, – և այս մնացորդը, որի մասին ես խոսում եմ, քո հոր սերունդն է, – ուստի, նրանց դատաստանով այցելելուց և հեթանոսների ձեռքով նրանց զարկելուց հետո, և այնուհետև, երբ հեթանոսները չափից ավելի ^բսայթաքեն Գառի ^գավետարանի ամենապարզ և արժեքավոր մասերի պատճառով, որոնք ետ են պահվել այն պիղծ եկեղեցու կողմից, որը պռոնիկների մայրն է, ասում է Գառը, – այն օրը ես ողորմած կլինեմ հեթանոսների հանդեպ՝ այնքան, որ ի հայտ ^դկբերեմ նրանց համար, իմ սեփական զորությանը, իմ ավետարանի մեծ մասը, որը կլինի պարզ ու արժեքավոր, ասում է Գառը:

35 Քանզի, ահա, ասում է Գառը. Ես կհայտնվեմ քո սերնդին, որպեսզի նրանք գրեն շատ բաներ,

որոնք ես կսովորեցնեմ նրանց, որոնք կլինեն պարզ և արժեքավոր. և հետո, երբ քո սերունդը կործանվի և ամհավատության մեջ ընկնի, ինչպես նաև քո եղբայրների սերունդը, ահա, ^աայս բաները կթաքցվեն, հեթանոսներին ի հայտ գալու համար, Գառի պարզևով ու զորությամբ:

36 Եվ նրանց մեջ կգրվի իմ ^աավետարանը, ասում է Գառը, և իմ ^բվեմն ու իմ փրկությունը:

37 Եվ ^աօրհնված են նրանք, ովքեր կջանան հաստատել իմ ^բՍիոնն այդ օրը, քանզի նրանք կունենան Սուրբ Հոգու ^գպարգևն ու զորությունը. և եթե ^դհամբերեն մինչև վերջ, նրանք կբարձրացվեն վերջին օրը, և կփրկվեն Գառի հավիտենական ^եարքայությունում. և ովքեր որ ^զկիրատարակեն խաղաղություն, այո, մեծ ուրախության ավետիք, որքա՛ն գեղեցիկ կլինեն նրանք լեռների վրա:

38 Եվ եղավ այնպես, որ ես տեսա իմ եղբայրների սերնդի մնացորդին և նաև Աստծո Գառի ^ազիրքը, որը դուրս էր եկել հրեայի բերանից, որ այն անցավ հեթանոսներից իմ եղբայրների սերնդի ^բմնացորդին:

39 Եվ դա՛ նրանց անցնելուց հետո, ես տեսա ուրիշ ^գգրքեր, որոնք ի հայտ եկան Գառի զորությամբ, հեթանոսների կողմից, նրանց համար՝ ^դհամոզելու հե-

32ա սուր Գև – Գևի եկեղեցին:
34ա սուր Հովսեփ՝ Հակոբի որդի:
բ 1 Նեփիի 14.1–3, 2 Նեփիի 26.20:
գ սուր Ավետարան:
դ ՎևոՒ 10.62:
սուր Ավետարանի վերականգնումը:
35ա 2 Նեփիի 27.6, 29.1–2:
սուր Մորմոնի Գիրքը:

36ա 3 Նեփիի 27.13–21:
բ Հել. 5.12, 3 Նեփիի 11.38–39:
սուր Վեմ:
37ա ՎևոՒ 21.9:
բ սուր Սիոն:
գ սուր Սուրբ Հոգու պարգև:
դ 3 Նեփիի 27.16:
սուր Համբերել:
ե սուր Սելեստիալ փառք:

գ Ես. ԾԲ.7, Մոսիա 15.14–18, 3 Նեփիի 20.40:
38ա 1 Նեփիի 13.23, 2 Նեփիի 29.4–6:
բ Մորմ. 5.15:
39ա սուր Սուրբ գրքեր – Սուրբ գրքերի ի հայտ գալու մարգարեություններ:
բ Եզեկ. ԼԷ.15–20, 2 Նեփիի 3.11–12:

քանոսներին և իմ եղբայրների սերնդի մնացորդին, և նաև հրեաներին, որոնք ցրված էին ողջ երկրի երեսին, որ մարգարեների և Գառի տասներկու առաքյալների հիշատակարանները՝ ճշմարիտ են:

40 Եվ հրեշտակը խոսեց ինձ հետ՝ ասելով. Այս՝ վերջին հիշատակարանները, որոնք դու տեսար հեթանոսների մոտ, ^բկհաստատեն ^գառաջինի ճշմարտացիությունը, որոնք Գառի տասներկու առաքյալներին են, հայտնի կդարձնեն պարզ ու արժեքավոր բաներ, որոնք հանվել էին դրանցից. և հայտնի կդարձնեն բոլոր ցեղերին, լեզուներին ու ժողովուրդներին, որ Աստծո Գառը՝ Հավերժական Հոր Որդին է և աշխարհի՝ ^ՔՓրկիչը. և որ բոլոր մարդիկ պետք է զանդեպի նա, այլապես նրանք չեն կարող փրկվել:

41 Եվ դրանք պիտի զան՝ համաձայն այն խոսքերի, որոնք կհաստատվեն Գառի բերանով. և Գառի խոսքերը հայտնի կդարձվեն քո սերնդի հիշատակարաններում, ինչպես նաև Գառի տասներկու առաքյալների հիշատակարաններում. ուստի, այդ երկուսը կհաստատվեն՝ որպես ^ամեկ. քանզի կա ^բմեկ Աստված և մեկ ^գՀովիվ ողջ աշխարհի վրա:

42 Եվ կգա ժամանակը, որ նա հայտնի կդարձնի իրեն բոլոր ազգերին՝ ^ահրեաներին, և նաև

հեթանոսներին. և հրեաներին ու նաև հեթանոսներին իրեն հայտնի դարձնելուց հետո, այնուհետև նա իրեն հայտնի կդարձնի հեթանոսներին և նաև հրեաներին, և ^բվերջինը կլինի առաջին, իսկ ^գառաջինը կլինի վերջին:

ԳԼՈՒԽ 14

Մի հրեշտակ պատմում է Նեփիին այն օրհնությունների ու անեծքների մասին, որ կթափվեն հեթանոսների վրա – Կան միայն երկու եկեղեցիներ՝ Աստծո Գառի Եկեղեցին և դևի եկեղեցին – Աստծո Սրբերը բոլոր ազգերի մեջ հալածվում են մեծ և պիղծ եկեղեցու կողմից – Հովհաննես Առաքյալը կգրի աշխարհի վերջի վերաբերյալ: Մոտ 600–592թթ. Ք.ծ.ա.:

Եվ կլինի այնպես, որ եթե ^ահեթանոսներն ականջ դնեն Աստծո Գառին, այն օրը, երբ նա հայտնի կդարձնի իրեն՝ խոսքով և նաև ^բգործությամբ, հենց գործով՝ վերացնելու նրանց ^գզայրակողության քարերը,–

2 Եվ չկարծրացնեն իրենց սրտերը Աստծո Գառի դեմ, նրանք կհամարվեն քո հոր սերնդի թվում. այո, նրանք ^ակհամարվեն Իսրայելի տան թվում. և նրանք մի ^բօրհնված ժողովուրդ կլինեն խոստացված երկրի վրա հավիտյան. նրանք այ-

39գ 1 Նեփի 14.30:
40ա 2 Նեփի 26.16–17,
29.12:
սու՝ Մորմոնի Գիրքը:
բ Մորմ. 7.8–9:
գ սու՝ Աստվածաշունչ:
դ Տե՛ս Մորմոնի Գրքի տիտղոսաթերթը:
Մովսես 1.6:
41ա Եզեկ. 1.Է.17:
բ Բ Օր. 2.4,

Հովհ. ԺԷ.21–23,
2 Նեփի 31.21:
գ սու՝ Բարի հովիվ:
42ա Վև.ՈՒ 90.8–9, 107.33,
112.4:
բ Հակոբ 5.63:
գ Ղուկ. ԺԳ.30,
1 Նեփի 15.13–20:
14 1ա 3 Նեփի 16.6–13:
սու՝ Հեթանոսներ:
բ Ա Թե՛ս. Ա.5,

1 Նեփի 14.14,
Հակոբ 6.2–3:
գ Ես. ԾԷ.14,
1 Նեփի 13.29, 34,
2 Նեփի 26.20:
2ա Գաղ. Գ.7, 29,
2 Նեփի 10.18–19,
3 Նեփի 16.13, 21.6,
22, Աբբ. 2.9–11:
բ 2 Նեփի 6.12, 10.8–14,
3 Նեփի 16.6–7, 20.27:

լև չեն տարվի գերության. և Իսրայելի տունն այլևս չի ձուլվի:

3 Եվ այն մեծ ^ահորը, որը փորվել էր նրանց համար այն մեծ և պիղծ եկեղեցու կողմից, որը հիմնադրվել էր դևի և նրա զավակների կողմից, որպեսզի կարողանա քարշ տալ մարդկանց հոգիները վար՝ դեպի դժոխք,– այո, այն մեծ հորը, որը փորվել էր մարդկանց կործանման համար, կլցվի իրենցով, ովքեր փորեցին այն՝ ի լիակատար կործանումն իրենց, ասում է Աստծո Գառը. ոչ ի կործանումն հոգու, եթե միայն դա չզցվի այն ^բդժոխքը, որը վերջ չունի:

4 Քանզի ահա, դա համաձայն դևի գերության է, և նաև համաձայն Աստծո արդարադատության բռլոր նրանց համար, ովքեր կգործեն ամբարշտություն ու պղծություն նրա առջև:

5 Եվ եղավ այնպես, որ հրեշտակը խոսեց ինձ՝ Նեփիիս հետ՝ ասելով. Դու տեսար, որ եթե հեթանոսներն ապաշխարեն, դա նրանց համար լավ կլինի. և դու նաև գիտես Իսրայելի տան հետ Տիրոջ ուխտերի մասին. և դու նաև լսել ես, որ նա, ով ^աչապաշխարի, պիտի կորչի:

6 Հետևաբար, ^ավա՛յ այն հեթանոսներին, եթե լինի այնպես, որ նրանք կարծրացնեն իրենց սրտերն Աստծո Գառի դեմ:

7 Քանզի, զալիս է ժամանակը, ասում է Աստծո Գառը, որ ես

կգործեմ մի մեծ ու ^ազարմանալի գործ մարդկանց զավակների մեջ. մի գործ, որը կլինի հավիտենական՝ թե՛ մի կողմից և թե՛ մյուս կողմից. կա՛մ համոզելով նրանց խաղաղության և հավերժական ^բկյանքի համար, կա՛մ բողոքելով իրենց սրտերի կարծրությանը և իրենց մտքերի կուրությանը և նրանց տարվելուն գերության և նաև կործանման՝ և՛ մարմնական, և՛ հոգևոր, համաձայն դևի ^գգերության, որի մասին ես խոսեցի:

8 Եվ եղավ այնպես, որ երբ հրեշտակը խոսեց այս խոսքերը, նա ասաց ինձ. Հիշո՛ւմ ես Հոր ^աուխտերը Իսրայելի տան հետ: Ես ասացի նրան՝ Այո՛:

9 Եվ եղավ այնպես, որ նա ասաց ինձ. Նայի՛ր և տես այն մեծ և պիղծ եկեղեցին, որը պղծությունների մայրն է, որի հիմնադիրը ^ադևն է:

10 Եվ նա ասաց ինձ. Ահա՛, կան լոկ ^աերկու եկեղեցիներ միայն, մեկը՝ Աստծո Գառի եկեղեցին է, իսկ ^բմյուսը՝ դևի եկեղեցին. ուստի, ով որ չի պատկանում Աստծո Գառի եկեղեցուն, պատկանում է այն մեծ եկեղեցուն, որը պղծությունների մայրն է. և որը ողջ աշխարհի ^գպռռնիկն է:

11 Եվ եղավ այնպես, որ ես մայեցի ու տեսա ողջ աշխարհի պռռնիկին, և նա նստած էր շատ ^աջրերի վրա. և ^բնա գերիշխանություն

3ա1 Նեփի 22.14, ՎևՈՒ 109.25:
բ սուր Նզովք. Դժոխք:
5ա սուր Ապաշխարել, Ապաշխարություն:
6ա2 Նեփի 28.32:
7ա Ես. ԻԹ.14, 1 Նեփի 22.8, 2 Նեփի 27.26, 29.1–2, ՎևՈՒ 4.1:

սուր Ավետարանի վերականգնումը:
բ սուր Հավերժական կյանք:
գ 2 Նեփի 2.26–29, Ալմա 12.9–11:
8ա սուր Աբրահամի ուխտը:
9ա1 Նեփի 15.35, ՎևՈՒ 1.35:

սուր Գև:
10ա1 Նեփի 22.23:
բ 1 Նեփի 13.4–6, 26:
գ Հայտ. ԺԷ.5, 15, 2 Նեփի 10.16:
11ա Երեմ. ԾԱ.13, Հայտ. ԺԷ.15:
բ ՎևՈՒ 35.11:

ուներ ողջ աշխարհի վրա՝ բոլոր ազգերի, ցեղերի, լեզուների և ժողովուրդների մեջ:

12 Եվ եղավ այնպես, որ ես տեսա Աստծո Գառի եկեղեցին և այն թվով ^ափոքր էր՝ պոռնիկի պոռնությունների և ամբարշտությունների պատճառով, որը նստած էր շատ ջրերի վրա. այնուամենայնիվ, ես տեսա, որ Գառի եկեղեցին, որոնք Աստծո սրբերն էին, նույնպես ^բողջ երկրի երեսի վրա էր. և նրա տիրապետությունները երկրի երեսի վրա փոքր էին՝ մեծ պոռնիկի ամբարշտության պատճառով, որին ես տեսա:

13 Եվ եղավ այնպես, որ ես տեսա, որ պոռնությունների մեծ մայրը բազմություններ հավաքեց ողջ երկրի երեսին, հեթանոսների բոլոր ազգերի մեջ, որ ^ակռվի Աստծո Գառի դեմ:

14 Եվ եղավ այնպես, որ ես՝ Նեփիս, տեսա Աստծո Գառի գորությունը, որ այն իջավ Գառի եկեղեցու սրբերի վրա և Տիրոջ ուխտայալ ժողովրդի վրա, որոնք ցրված էին ողջ երկրի երեսին. և նրանք զինված էին արդարությամբ և Աստծո ^ագորության մեծ փառքով:

15 Եվ եղավ այնպես, որ ես տեսա, որ Աստծո ցատունը ^աթափվեց այն մեծ և պիղծ եկեղեցու վրա, այնպես որ երկրի բոլոր ^աազգերի և ցեղերի մեջ եղան պատերազմներ և պատերազմների համբավներ:

16 Եվ երբ սկսեցին լինել ^ապատերազմներ և պատերազմների համբավներ բոլոր ազգերի մեջ, որոնք պատկանում էին պոռնությունների մորը, հրեշտակը խոսեց ինձ հետ՝ ասելով. Տես, Աստծո ցատունը պոռնիկների մոր վրա է. և ահա, դու տեսնում ես բոլոր այս բաները,–

17 Եվ երբ ^աօրը գա, երբ Աստծո ^բցատունը դուրս կթափվի պոռնիկների մոր վրա, որը ողջ աշխարհի մեծ և պիղծ եկեղեցին է, որի հիմնադիրը դևն է, այն ժամանակ՝ այդ օրը, Հոր ^գգործը կսկսվի՝ պատրաստելով ճանապարհ իր ^դուխտերի իրագործման համար, որոնք նա արել է իր ժողովրդի հետ, որոնք Իսրայելի տնից են:

18 Եվ եղավ այնպես, որ հրեշտակը խոսեց ինձ հետ՝ ասելով՝ Նայիր:

19 Եվ ես նայեցի ու տեսա մի մարդու, և նա իր հագին ճերմակ պարեգոտ ուներ:

20 Եվ հրեշտակն ասաց ինձ. Ահա Գառի տասներկու առաքյալներից ^ամեկը:

21 Ահա, նա կտեսնի և կգրի այս բաների մնացածը. այո, և նաև շատ բաներ, որոնք եղել են:

22 Եվ նա կգրի նաև աշխարհի վերջի մասին:

23 Ուստի, այն բաները, որ նա կգրի, արդար են և ճշմարիտ. և ահա, դրանք գրված են այն ^ագրքում, որը դու տեսար, որ

12ա Մատ. Է.14,
3 Նեփի 14.14,
վևՈՒ 138.26:
բ վևՈՒ 90.11:
13ա Հայտ. ԺԷ.1-6,
ԺԸ.24, 1 Նեփի 13.5,
վևՈՒ 123.7-8:
14ա Հակոբ 6.2,
վևՈՒ 38.32-38:

15ա վևՈՒ 1.13-14:
բ Մար. 13.8,
վևՈՒ 87.6:
16ա 1 Նեփի 22.13-14,
Մորմ. 8.30:
17ա սոՒ Վերջին օրեր,
Եսիկն օրեր:
բ 1 Նեփի 22.15-16:
գ 3 Նեփի 21.7, 20-29:

սոՒ Ավետարանի
վերականգնումը:
դ Մորմ. 8.21, 41:
սոՒ Աբրահամի
ուխտը:
20ա Հայտ. Ա.1-3,
1 Նեփի 14.27:
23ա 1 Նեփի 13.20-24,
Մորմ. 8.33:

հրեայի բերանից դուրս եկավ. և այն ժամանակ, երբ դրանք դուրս եկան հրեայի բերանից, կամ այն ժամանակ, երբ գիրքը դուրս եկավ հրեայի բերանից, այն բաները, որոնք գրված էին՝ պարզ էին և անաղարտ, և ամենից Քարժեքավոր, և դյուրին բոլոր մարդկանց հասկացողության համար:

24 Եվ ահա, այն բաները, որոնք Գառի այս առաքյալը կգրի, շատ բաներ են, որոնք դու տեսար. և ահա, մնացածը դու կտեսնես:

25 Բայց բաները, որոնք դու կտեսնես այսուհետև, դու չպետք է գրես. քանի որ Տեր Աստված կարգել է Աստծո Գառի առաքյալին, որ նա պետք է՝ կգրի դրանք:

26 Եվ մաս ուրիշների, ովքեր եղել են, նրանց էլ է ցույց տվել նա բոլոր բաները, և նրանք գրել են դրանք. և դրանք՝ կնքված են, որպեսզի իրենց անաղարտությամբ, համաձայն այն ճշմարտության, որը Գառի մեջ է, Տիրոջն իսկ հարմար ժամանակ ի հայտ գան Իսրայելի տան համար:

27 Եվ ես՝ Նեփիս, լսեցի ու արձանագրում եմ, որ Գառի առաքյալի անունը՝ կնփհաննես է՝ համաձայն հրեշտակի խոսքի:

28 Եվ ահա, ինձ՝ Նեփիսիս, արգելվեց, որ գրեմ այն բաների մնացածը, որոնք ես տեսա ու լսեցի. ուստի, այն բաները, որոնք ես գրել եմ, բավարարում է ինձ. և ես գրել եմ, բայց՝ միայն մի փոքր մասն այն բաների, որոնք ես տեսա:

29 Եվ ես արձանագրում եմ, որ

ես տեսա այն բաները, որոնք տեսել էր՝ առաքյալ, և Տիրոջ հրեշտակը դրանք հայտնի դարձրեց ինձ:

30 Եվ այժմ, ես վերջ եմ դնում խոսելուն այն բաների վերաբերյալ, որոնք ես տեսա, մինչ ես հեռու էի տարվել հոգով. և չնայած բոլոր բաները, որոնք ես տեսա, չեն գրվել, այն բաները, որոնք ես գրել եմ, աճմարիտ են: Եվ դա այդպես է: Ամեն:

ԳԼՈՒԽ 15

Լեքիի սերունդը պետք է ստանա ավետարանը հեթանոսներից վերջին օրերում – Իսրայելի հավաքվելը նմանեցվում է ձիթենու, որի բնական ճյուղերը նորից կպատվաստվեն – Նեփիին մեկնաբանում է կենաց ծառի տեսիլքը և խոսում է Աստծո արդարության մասին՝ ամբարիշտների արդարներից բաժանելու վերաբերյալ: Մոտ 600–592թթ. Ք.ծ.ա.:

Եվ եղավ այնպես, որ ես՝ Նեփիս, հոգով հեռուն տարվելուց և այս բոլոր բաները տեսնելուց հետո, վերադարձա հորս վրանը:

2 Եվ եղավ այնպես, որ ես տեսա եղբայրներիս, և նրանք վիճում էին միմյանց հետ այն բաների վերաբերյալ, որ հայրս խոսել էր նրանց հետ:

3 Քանի որ նա իսկապես բազում մեծ բաներ էր խոսել նրանց հետ, որոնք ղժվար էին՝ առաքյալում մինչև մարդ չհարցնեի Տիրոջը. և նրանք՝ լինելով կարծր իրենց սրտերում, հետևաբար, չէին

23բ 1 Նեփի 13.28–32:
24ա Եթեր 4.16:
25ա Հովհ. Ի.30–31,
Հայտ. Ա.19:
26ա 2 Նեփի 27.6–23,

Եթեր 3.21–27, 4.4–7,
Վևո 35.18,
ՋՄ–Պ 1.65:
27ա Հայտ. Ա.1–3:
29ա 1 Նեփի 8:

30ա 2 Նեփի 33.10–14:
15 3ա Ա Կոր. Բ.10–12,
Ալմա 12.9–11:

նայում առ Տերը, ինչպես որ պարտավոր էին:

4 Եվ այժմ ես՝ Նեփիս, վշտացած էի նրանց սրտերի կարծրության պատճառով և նաև այն բաների պատճառով, որ տեսել էի ու գիտեի, որ դրանք պետք է անխուսափելիորեն իրականանային՝ մարդկանց զավակների մեծ ամբարշտության պատճառով:

5 Եվ եղավ այնպես, որ ես ուժասպառ էի եղել իմ չարչարանքների պատճառով, քանզի համարում էի, որ իմ՝ չարչարանքները բոլորից ավելի մեծ էին՝ իմ ժողովրդի՝ Կործանման պատճառով, քանի որ ես տեսել էի նրանց անկումը:

6 Եվ եղավ այնպես, որ ես, ՝ ուժ ստանալուց հետո, խոսեցի եղբայրներիս հետ՝ ցանկանալով իմանալ նրանցից իրենց վիճաբանությունների պատճառը:

7 Եվ նրանք ասացին. Ահա, մենք չենք կարողանում հասկանալ խոսքերը, որ մեր հայրն ասաց ձեռքնու բնական ճյուղերի վերաբերյալ և նաև հեթանոսների վերաբերյալ:

8 Եվ ես ասացի նրանց. Գուրք՝ հարցրե՛՛ղ եք Տիրոջը:

9 Եվ նրանք ասացին ինձ. Ո՛չ, չենք հարցրել. քանի որ Տերն այդպիսի բան մեզ հայտնի չի դարձնում:

10 Ահա, ասացի ես նրանց. Ի՞նչպես է, որ դուք չեք պահում Տիրոջ

պատվիրանները, ի՞նչպես է, որ դուք պիտի կորչեք ձեր սրտերի ՝ կարծրության պատճառով:

11 Գուրք չե՞ք հիշում այն բաները, որ Տերն ասել է. Եթե դուք չկարծրացնեք ձեր սրտերը և ՝ խնդրեք ինձ հավատքով, հավատալով որ կստանաք, ջանասիրությամբ պահելով իմ պատվիրանները, իհարկե, այս բաները հայտնի կդարձվեն ձեզ:

12 Ահա, ես ասում եմ ձեզ, որ Իսրայելի տունը համեմատվել էր ձիթենու հետ, Տիրոջ Հոգով, որը մեր հոր մեջ էր. և ահա, արդյոք մենք Իսրայելի տնից չե՞նք պոկված, մի՞թե մենք Իսրայելի տան մի ՝ ճյուղը չենք:

13 Եվ այժմ, այն բանը, որը մեր հայրն ի նկատի ուներ, բնական ճյուղերի պատվաստման վերաբերյալ, հեթանոսների լրիվության միջոցով, այն է, որ վերջին օրերում, երբ մեր սերունդը՝ ղրնկած կլինի անհավատության մեջ, այո, շատ տարիների ընթացքում, և ՝ Մեսիան մարմնում մարդկանց զավակներին հայտնվելուց շատ դարեր անց, այն ժամանակ Մեսիայի Պավետարանի լրիվությունը կտրվի հեթանոսներից, իսկ ՝ հեթանոսներից՝ մեր սերունդի մնացորդին, -

14 Եվ այն օրը մեր ՝ սերնդի մնացորդը կիմանա, որ իրենք Իսրայելի տնից են, և որ իրենք Տիրոջ

<p>5ա սուր Զախորդություն: բ Ենովս 1.13, Մորմ. 6.1: 6ա Մովսես 1.10, ՋՍ-Պ 1.20, 48: 8ա Մոսիա 26.13, Ալմա 40.3: սուր Ադոքբ: 10ա սուր Ուրացություն: 11ա Հակ. Ա.5-6,</p>	<p>Ենովս 1.15, Մոր. 7.26, ՎևՈՒ 18.18: սուր Խնդրել: 12ա Ծն. ԽԹ. 22-26, 1 Նեփի 10.12-14, 19.24: սուր Լեթի՝ Նեփիի հայր: 13ա 1 Նեփի 12.22-23,</p>	<p>2 Նեփի 26.15: բ սուր Մեսիա: գ սուր Ավետարան: դ 1 Նեփի 13.42, 22.5-10, ՎևՈՒ 14.10: սուր Հեթանոսներ: 14ա 2 Նեփի 10.2, 3 Նեփի 5.21-26, 21.4-7:</p>
---	---	--

Պուխտի ժողովուրդն են. և այն ժամանակ նրանք կիմանան և կզան իրենց նախահայրերի Գիմացությանը, և նաև Քավչի ավետարանի իմացությանը, որը տրվել էր իրենց հայրերին նրա կողմից. ուստի, նրանք կզան իրենց Քավչի և նրա վարդապետության ամեն մի կետի իմացությանը, որպեսզի նրանք կարողանան իմանալ ինչպես գան դեպի նա և փրկվեն:

15 Եվ այդ ժամանակ՝ այն օրը, մի՞թե նրանք չեն հրճվի և փառք տա իրենց հավերժական Աստծուն՝ իրենց ^ավեմին և իրենց փրկությանը: Այո, այդ օրը մի՞թե նրանք չեն ստանա ուժ և սնուցում ճշմարիտ ^բորթից: Այո, մի՞թե նրանք չեն գա Աստծո իսկական փարախը:

16 Ահա, ես ասում եմ ձեզ՝ Այո՛. նրանք կրկին կհիշատակվեն Իսրայելի տան թվում. նրանք ^ակպատվաստվեն իսկական ձիթենուն՝ լինելով ձիթենու բնական ճյուղ:

17 Եվ սա է այն, ինչ մեր հայրն ի նկատի ուներ. և նա ի նկատի ուներ, որ դա տեղի չի ունենա, մինչև նրանք հեթանոսների կողմից չցրվեն. և նա ի նկատի ուներ, որ դա կզա հեթանոսների միջոցով, որպեսզի Տերը կարողանա ցույց տալ իր գործությունը հեթանոսներին, հենց այն պատճառով, որ նա ^ակմերժվի հրեաների կողմից, կամ Իսրայելի տան կողմից:

18 Ուստի, մեր հայրը միայն մեր սերնդի վերաբերյալ չի խոսել, այլ

նաև ողջ Իսրայելի տան, նշելով ուխտը, որ պետք է իրականանա վերջին օրերում. այն ուխտը, որ Տերն արեց մեր հայր Աբրահամին՝ ասելով. ^աՔո ^ասերնդով երկրի բոլոր ցեղերը կօրհնվեն:

19 Եվ եղավ այնպես, որ ես՝ Նեփիս, շատ խոսեցի նրանց հետ այս բաների մասին. այո, ես խոսեցի նրանց հետ վերջին օրերում հրեաների ^ավերականգնման մասին:

20 Եվ ես կրկնեցի նրանց համար ^աԵսայիայի խոսքերը, որը խոսել էր հրեաների կամ Իսրայելի տան վերականգնման վերաբերյալ. և նրանց վերականգնումից հետո նրանք այլևս չպետք է ձուլվեն, ոչ էլ պետք է նորից ցրվեն: Եվ եղավ այնպես, որ ես ասացի շատ խոսքեր եղբայրներին, այնպես որ նրանք խաղաղվեցին և իրենց ^բխոնարհեցրին Տիրոջ առջև:

21 Եվ եղավ այնպես, որ նրանք կրկին խոսեցին ինձ հետ՝ ասելով. Ի՞նչ է նշանակում այդ բանը, որ մեր հայրը տեսել է երազում: Ի՞նչ է նշանակում ^ածառը, որը նա տեսել է:

22 Եվ ես ասացի նրանց. Դա կենաց ^ածառի պատկերումն էր:

23 Եվ նրանք ասացին ինձ. Ի՞նչ է նշանակում երկաթյա ^աձողը, որը տեսել էր մեր հայրը, որը տանում էր դեպի ծառը:

24 Եվ ես ասացի նրանց, որ դա Աստծո ^ախոսքն է, և նրանք, ովքեր ականջ կդնեն Աստծո խոսքին և ամուր ^բկրքնեն դրանից, երբեք չեն

14բ սուր Աբրահամի ուխտը:
 գ 2 Նեփիի 3.12, 30.5,
 Մորմ. 7.1, 9–10,
 Վևոմ 3.16–20: Տես նաև Մորմոնի Գորքի տիտղոսաբերբը:
 15ա սուր Վեմ:
 բ Ծն. ԽԹ.11, Հովի. ԺԵ.1:

16ա Հակոբ 5.60–68:
 17ա սուր Խաչելություն:
 18ա Ծն. ԺԲ.1–3,
 Աբր. 2.6–11:
 19ա 1 Նեփիի 19.15:
 սուր Իսրայել – Իսրայելի ցրվելը:
 20ա 1 Նեփիի 19.23:

բ 1 Նեփիի 16.5, 24, 39:
 21ա 1 Նեփիի 8.10–12:
 22ա 1 Նեփիի 11.4, 25,
 Մովսես 3.9:
 23ա 1 Նեփիի 8.19–24:
 24ա սուր Աստծո խոսքը:
 բ 1 Նեփիի 8.30,
 2 Նեփիի 31.20:

կորչի. ոչ էլ ⁹գայթակորությունները և ⁸հակառակորդի կրակոտ ⁶նետերը կարող են հաղթել նրանց՝ կուրացնելով, տանելով նրանց դեպի կործանում:

25 Ուստի, ես՝ Նեփիս, հորդորեցի նրանց՝ ուշք դարձնել Տիրոջ խոսքին. այո, ես հորդորեցի նրանց՝ իմ հոգու ողջ կորովով ու ողջ ունակությամբ, որ ես ունեի, որ նրանք ուշք դարձնեն Աստծո խոսքին և հիշեն՝ միշտ պահել նրա պատվիրանները բոլոր բաներում:

26 Եվ նրանք ասացին ինձ. Ի՞նչ է նշանակում ջրի ³զետը, որը տեսել է մեր հայրը:

27 Եվ ես ասացի նրանց, որ ⁷ջուրը, որ տեսել էր հայրս, ⁵կեղտոտություն էր. և նրա միտքն այնքան շատ էր կլանված ուրիշ բաներով, որ նա չէր նկատել ջրի կեղտոտությունը:

28 Եվ ես ասացի նրանց, որ դա մի ահավոր ²անդունդ էր, որը բաժանում էր ամբարիշտների կենաց ծառից և նաև Աստծո սրբերից:

29 Եվ ես ասացի նրանց, որ դա պատկերումն էր այն ահավոր ⁴դժոխքի, որը, հրեշտակն ասաց ինձ, պատրաստված էր ամբարիշտների համար:

30 Եվ ես ասացի նրանց, որ մեր հայրը տեսել էր նաև, որ Աստծո ¹արդարադատությունը նույնպես

ամբարիշտներին բաժանում է արդարներից. և դրա պայծառությունը նման է բոցավառ կրակի պայծառությանը, որը վեր է բարձրանում դեպի Աստված՝ հավիտյանս հավիտենից և չունի վերջ:

31 Եվ նրանք ասացին ինձ. Այս բանը նշանակում է մարմնի տանջանքը ¹փորձության օրերի՞ն, թե՞ այն նշանակում է հոգու վերջնական վիճակը՝ մահկանացու մարմնի ²մահից հետո, թե՞ այն խոսում է այն բաների մասին, որոնք աշխարհիկ են:

32 Եվ եղավ այնպես, որ ես ասացի նրանց, որ դա և՛ աշխարհիկ, և՛ հոգևոր բաների պատկերումն է. քանզի կգա օրը, երբ նրանք պիտի դատվեն՝ ըստ իրենց ³գործերի, այո, այսինքն՝ այն գործերի, որոնք իրենց փորձության օրերին արվել են մահկանացու մարմնի կողմից:

33 Ուստի, եթե նրանք ⁴մեռնեն իրենց ամբարշտության մեջ, նրանք պիտի նույնպես ⁵վտարված լինեն, ինչ վերաբերում է բաներին, որոնք հոգևոր են, որոնք պատկանում են արդարությանը. ուստի, նրանք պիտի բերվեն կանգնելու Աստծո առջև, ⁶դատվելու ըստ իրենց ⁷գործերի. և եթե նրանց գործերը կեղտոտություն են եղել, նրանք անպայման պիտի ⁸կեղտոտ լինեն. և եթե նրանք կեղտոտ լինեն, նրանք անպայման չպիտի կարո-

24q 1 Նեփի 8.23:
սուր Գայթակղել,
Գայթակղություն:
դ սուր Գև:
ե Եփես. 2.16,
ՎևոՒ 3.8, 27.17:
25ա ՎևոՒ 11.2, 32.4,
84.43–44:
26ա 1 Նեփի 8.13:
27ա 1 Նեփի 12.16:

բ սուր Կեղտ,
Կեղտոտություն:
28ա Ղուկ. ԺՁ.26,
1 Նեփի 12.18,
2 Նեփի 1.13:
29ա սուր Դժոխք:
30ա սուր Արդարադատու-
թյուն:
31ա Ալմա 12.24, 42.10,
Հել. 13.38:

բ Ալմա 40.6, 11–14:
32ա սուր Գործեր:
33ա Մոսիա 15.26,
Մոր. 10.26:
բ Ալմա 12.12–16, 40.26:
գ սուր Վերջին
դատաստան:
դ 3 Նեփի 27.23–27:
ե 2 Նեփի 9.16,
ՎևոՒ 88.35:

դանան Գապրել Աստծո արքայության մեջ. եթե այդպես լիներ, Աստծո արքայությունը նույնպես պիտի կեղտոտ լիներ:

34 Բայց ահա, ես ասում եմ ձեզ. Աստծո արքայությունը պեղտոտ չէ, և ոչ մի անմաքուր բան չի կարող մտնել Աստծո արքայությունը. ուստի, անպայման պետք է լինի կեղտոտության մի տեղ, պատրաստված նրա համար, ինչը կեղտոտ է:

35 Եվ կա պատրաստված մի տեղ, այո, հենց այն ահավոր «դժոխքը, որի մասին ես խոսեցի, և Պղևն է դրա պատրաստողը. ուստի, մարդկանց հոգիների վերջնական վիճակը՝ ապրելն է Աստծո արքայությունում, կամ դուրս գցված լինելն այն Գարդարադատության պատճառով, որի մասին ես խոսեցի:

36 Այդ պատճառով ամբարիշտները մերժվում են արդարից և նաև այն կենաց Պժառից, որի պտուղն ամենաբաժանկն ու Քամենաբաղձալին է բոլոր այլ պտուղներից ավելի. այո, և դա Գամենամեծն է Աստծո բոլոր Պպարզևներից: Եվ ես այսպես խոսեցի եղբայրներիս հետ: Ամեն:

ԳԼՈՒԽ 16

Ամբարիշտները կարծում են, որ

ճշմարտությունը խիստ է – Լեքիի որդիներն ամուսնանում են Իսմայելի դուստրերի հետ – Լիահոնան առաջնորդում է նրանց երթոտլին անասատում – Ժամանակ առ ժամանակ, Տիրոջ կողմից պատգամները գրվում են Լիահոնայի վրա – Իսմայելը մահանում է. նրա ընտանիքը տրտնջում է չարչարանքների պատճառով: Մոտ 600–592թթ. Ք.ծ.ա.:

ԵՎ արդ, եղավ այնպես, որ ես՝ Նեփիս, եղբայրներիս հետ իմ խոսելուն վերջ դնելուց հետո, ահա նրանք ասացին ինձ. Դու մեզ խիստ բաներ քարոզեցիր, ավելին, քան մենք ի վիճակի ենք տանել:

2 Եվ եղավ այնպես, որ ես ասացի նրանց, որ գիտեմ, որ խիստ բաներ են ասել ամբարիշտների դեմ՝ ճշմարտության համաձայն. իսկ արդարներին ես արդարացրել եմ ու վկայել, որ նրանք պետք է բարձրացվեն վերջին օրը. ուստի, «մեղավորները կարծում են՝ ճշմարտությունը խիստ է, քանի որ այն Գխոցում է նրանց հենց կենտրոնից:

3 Եվ արդ, իմ եղբայրներ՛ր, եթե դուք արդար լինեիք և կամենայիք ականջ դնել ճշմարտությանը և ուշք դարձնել դրան, որպեսզի կարողանայիք ուղիղ քայլել Աստծո առջև, այդ դեպքում դուք չէիք տրտնջա ճշմարտության պատ-

33գ Սաղ. ԺԵ.1–5, ԻԳ.3–4, Ալմա 11.37, ՎևոՒԽ 76.50–70, Մովսես 6.57:
34ա սոՒ Կեղտ, Կեղտոտություն:
35ա 2 Նեփի 9.19, Մոսիա 26.27: սոՒ Դժոխք: ք 1 Նեփի 14.9, ՎևոՒԽ 1.35:

գ սոՒ Արդարադատություն:
36ա ԾՆ. Բ.9, 2 Նեփի 2.15: ք 1 Նեփի 8.10–12, Ալմա 32.42: գ ՎևոՒԽ 6.13: դ ՎևոՒԽ 14.7: սոՒ Հավերժական կյանք: 16 2ա Հովհ. Գ.20,

2 Նեփի 33.5, Ենովա 1.23, Հել. 14.10: սոՒ Մեղավորություն: ք Առակ. ԺԵ.10, 2 Նեփի 1.26, 9.40, Հել. 13.24–26: գ Գոր. Ե.33, Մոսիա 13.7: 3ա ՎևոՒԽ 5.21: սոՒ Քայլել, Քայլել Աստծո հետ:

ճառով և ասի. Գու խիստ բաներ են ասում մեր դեմ:

4 Եվ եղավ այնպես, որ ես՝ Նեփիս, ողջ ջանասիրությամբ հորդորեցի եղբայրներիս՝ պահել Տիրոջ պատվիրանները:

5 Եվ եղավ այնպես, որ նրանք իրենց «խոնարհեցրին Տիրոջ առաջ. այնպես որ ես ուրախությամբ և մեծ հույսեր ունեցա նրանց համար, որ նրանք կքայլեին արդարության շավիղներում:

6 Արդ, բոլոր այս բաներն ասվեցին և արվեցին, երբ հայրս բնակվում էր վրանում՝ մի հովտում, որը նա կոչեց Լեմուել:

7 Եվ եղավ այնպես, որ ես՝ Նեփիս, «կնության վերցրի Իսմայելի՝ Դուստրերից մեկին. և եղբայրներս նույնպես կնության վերցրին Իսմայելի դուստրերից. և «Չորսմը ևս Իսմայելի ավագ դստերը վերցրեց կնության:

8 Եվ այսպիսով հայրս կատարում էր Տիրոջ բոլոր պատվիրանները, որոնք տրվել էին նրան: Եվ ես՝ Նեփիս, նույնպես Տիրոջ կողմից չափազանց օրհնված էի:

9 Եվ եղավ այնպես, որ Տիրոջ ձայնը խոսեց հորս հետ գիշերով և հրամայեց նրան, որ այգաբացին նա պետք է ճանապարհ ընկնի դեպի անապատ:

10 Եվ եղավ այնպես, որ երբ հայրս առավոտյան վեր կացավ և առաջ զնաց դեպի վրանի դուռը, ի մեծ զարմանս իրեն, նա տեսավ զետնի վրա զարմանալի վարպետության մի կլոր «գունդ. և այն ընտիր արույրից էր: Եվ զնդի ներսում կային երկու սլաքներ. և մեկը ցույց էր տալիս ճանապարհը, թե

ուր մենք պետք է գնայինք անապատում:

11 Եվ եղավ այնպես, որ մենք ի մի հավաքեցինք այն բոլոր բաները, որ մենք պետք է տանեինք անապատ և ամբողջ մնացած մեր պարենը, որը Տերը տվել էր մեզ. և մենք վերցրեցինք ամեն տեսակի սերմեր, որ կարող էինք տանել անապատ:

12 Եվ եղավ այնպես, որ մենք վերցրեցինք մեր վրանները և հեռացանք անապատ՝ Լաման գետի մյուս կողմը:

13 Եվ եղավ այնպես, որ մենք ճամփորդեցինք, չորս օրվա ընթացքում, մոտավորապես, հարավ-հարավարևելյան ուղղությամբ, և մենք նորից խփեցինք մեր վրանները. և մենք այդ վայրի անունը կոչեցինք Սազեր:

14 Եվ եղավ այնպես, որ մենք վերցրեցինք մեր աղեղներն ու մեր նետերը և առաջ զնացինք անապատում՝ որսալու ուտելու բան մեր ընտանիքների համար. և մեր ընտանիքների համար ուտելու բան որսալուց հետո, մենք նորից վերադարձանք անապատ՝ մեր ընտանիքների մոտ՝ Սազեր վայրը: Եվ մենք նորից առաջացանք անապատով՝ հետևելով նույն ուղղությանը, մնալով անապատի ամենապտղաբեր մասերում, որոնք «Կարմիր ծովի մոտակա սահմաններում էին:

15 Եվ եղավ այնպես, որ մենք ճամփորդեցինք շատ օրերի ընթացքում՝ ճանապարհին ուտելու բան որսալով մեր աղեղներով և մեր նետերով և մեր քարերով և մեր պարսատիկներով:

5ա1 Նեփի 16.24, 39, 18.4:
7ա1 Նեփի 7.1:
բ սո՛ւ Ամուսնություն,

Ամուսնանալ:
գ 1 Նեփի 4.35,
2 Նեփի 5.5-6:

10ա Ալմա 37.38-46:
սո՛ւ Լիսիոն:
14ա Վևո՛ւ 17.1:

16 Եվ մենք հետևում էինք գնդի «ուղղություններին, որոնք մեզ առաջնորդում էին դեպի անապատի ավելի բերրի մասերը:

17 Եվ շատ օրերի ընթացքում ճամփորդելուց հետո, մի որոշ ժամանակով մենք խփեցինք մեր վրանները, որպեսզի կարողանալինք նորից հանգստանալ և ձեռք բերել ուտելիք մեր ընտանիքների համար:

18 Եվ եղավ այնպես, որ երբ ես՝ Նեփիս, առաջ գնացի՝ ուտելու բան սպանելու, ահա, ես կտորեցի աղեղս, որը պատրաստված էր ընտիր «պողպատից. և աղեղս ջարդելուց հետո, ահա, եղբայրներս բարկացան ինձ վրա՝ իմ աղեղի կորստի պատճառով, քանի որ մենք ուտելիք չհայթայթեցինք:

19 Եվ եղավ այնպես, որ մենք վերադարձանք մեր ընտանիքներն առանց ուտելիքի, և շատ հոգնած լինելով՝ իրենց ճամփորդելու պատճառով, նրանք շատ էին տանջվում ուտելիքի բացակայությունից:

20 Եվ եղավ այնպես, որ Լամանը և Լեմուելը և Իսմայելի որդիները սկսեցին չափազանց տրտնջալ՝ անասպատում իրենց տառապանքների ու չարչարանքների պատճառով. և հայրս նույնպես սկսեց տրտնջալ Տիրոջ՝ իր Աստծո դեմ. այո, և նրանք բոլորը չափազանց վշտացած էին, այնքան, որ տրտնջացին Տիրոջ դեմ:

21 Արդ, եղավ այնպես, որ ես՝ Նեփիս, աղեղս կորցնելու պատճառով չարչարված լինելով՝ եղբայրներիս հետ, իսկ նրանց

աղեղները կորցրած լինելով իրենց ճկունությունը, սկսեց չափազանց դժվար լինել, այո, այնքան, որ մենք չէինք կարողանում ուտելիք հայթայթել:

22 Եվ եղավ այնպես, որ ես՝ Նեփիս, շատ խոսեցի եղբայրներիս հետ, որովհետև նրանք նորից կարծրացրել էին իրենց սրտերը, մինչև իսկ «դժգոհելով Տիրոջից՝ իրենց Աստծուց:

23 Եվ եղավ այնպես, որ ես՝ Նեփիս, փայտից մի աղեղ սարքեցի և մի ուղիղ փայտածողից՝ մի նետ. ուստի, զինվեցի աղեղով ու նետով, պարսատիկով ու քարերով: Եվ ես ասացի «հորս. Ո՛ր գնամ ուտելիք հայթայթելու:

24 Եվ եղավ այնպես, որ նա «հարցրեց Տիրոջից, քանի որ նրանք խոնարհեցրել էին իրենց՝ իմ խոսքերի պատճառով. քանզի ես շատ բաներ էի ասել նրանց՝ իմ հոգու ողջ կորովով:

25 Եվ եղավ այնպես, որ Տիրոջ ձայնը եկավ հորս. և նա ճշմարտապես «խրատվեց, Տիրոջ դեմ տրտնջալու պատճառով, այնքան, որ ընկավ խորը վշտի մեջ:

26 Եվ եղավ այնպես, որ Տիրոջ ձայնն ասաց նրան. Նայի՛ր գնդի վրա և տես այն բաները, որ գրված են:

27 Եվ եղավ այնպես, որ երբ հայրս տեսավ այն բաները, որոնք գրված էին գնդի վրա, նա չափազանց վախեցավ ու դողաց, ինչպես և եղբայրներս և Իսմայելի որդիները և մեր կանայք:

28 Եվ եղավ այնպես, որ ես՝ Նեփիս, տեսա ցուցիչները, որոնք

16ա1 Նեփի 16.10, 16, 26, 18.12, Ալմա 37.38–46: 18աԲ Թագ. ԻԲ.35:

22ա Ել. ԺՁ.8, Թվ. ԺԱ.1: 23ա Ել. Ի.12, Մոսիա 13.20:

24ա սու՛ Աղոթք: 25ա Եթեր 2.14: սու՛ Խրատել, Խրատելը:

զնդի մեջ էին, որ դրանք աշխատում էին համաձայն այն ^ահավատքի և ջանասիրության և ուշադրության, որ մենք հատկացնում էինք դրանց:

29 Եվ դրանց վրա նաև մի նոր գրություն կար գրված, որը պարզ կարդացվում էր, որը մեզ տալիս էր ^ահասկացողություն Տիրոջ ճանապարհների վերաբերյալ. և այն գրվում էր և փոխվում, ժամանակ առ ժամանակ՝ համաձայն այն հավատքի ու ջանասիրության, որ մենք հատկացնում էինք դրան: Եվ այսպիսով, մենք տեսնում ենք, որ ^բփոքր միջոցներով Տերը կարող է առաջ բերել մեծ բաներ:

30 Եվ եղավ այնպես, որ ես՝ Նեփիս, առաջ գնացի վեր՝ դեպի լեռան գագաթը, ըստ այն ուղղությունների, որոնք տրված էին զնդի վրա:

31 Եվ եղավ այնպես, որ ես սպանեցի վայրի կենդանիներ, այնպես որ ձեռք բերեցի ուտելիք մեր ընտանիքների համար:

32 Եվ եղավ այնպես, որ ես վերադարձա մեր վրանները՝ բերելով կենդանիներ, որոնց ես սպանել էի. և արդ, երբ նրանք տեսան, որ ես ուտելիք էի հայթայթել, որքան մեծ եղավ նրանց ուրախությունը: Եվ եղավ այնպես, որ նրանք իրենց խոնարհեցրին Տիրոջ առջև և գոհություն հայտնեցին նրան:

33 Եվ եղավ այնպես, որ մենք կրկին ճանապարհ ընկանք՝ ճամփորդելով գրեթե նույն ուղղությամբ, ինչպես սկզբում. և շատ օրերի ընթացքում ճամփորդելուց

հետո, մենք կրկին խփեցինք մեր վրանները՝ մի որոշ ժամանակի ընթացքում մնալու համար:

34 Եվ եղավ այնպես, որ ^աԻսմայելը մահացավ և թաղվեց մի վայրում, որը կոչվում էր Նաոմ:

35 Եվ եղավ այնպես, որ Իսմայելի դուստրերը խորապես ողբացին իրենց հոր կորստյան համար, և անապատում իրենց ^աչարչարանքների համար, և նրանք տրտնջացին հորս դեմ, քանի որ նա դուրս էր բերել նրանց Երուսաղեմի հողից՝ ասելով. Մեր հայրը մահացավ. այո, և մենք շատ ենք թափառել անապատում և տարել ենք շատ չարչարանքներ, քաղց, ծարավ, և հոգնածություն. և այս բոլոր տառապանքներից հետո մենք պետք է սովից մահանանք անապատում:

36 Եվ այսպես նրանք տրտնջացին հորս դեմ և նաև իմ դեմ. և նրանք ցանկանում էին նորից վերադառնալ Երուսաղեմ:

37 Եվ Լամանն ասաց Լեմուելին և նաև Իսմայելի որդիներին. Ահա, եկեք ^ասպանենք մեր հորը և նաև մեր եղբայր Նեփիին, որն իր վրա է վերցրել մեզ ^բկառավարիչ ու ուսուցիչ լինելը, մեզ, որ իր ավագ եղբայրներն ենք:

38 Արդ, նա ասում է, որ Տերը խոսել է իր հետ և նաև, որ ^աիրեշտակներ են սպասավորել իրեն: Բայց, սա, մենք գիտենք, որ նա մեզ ստում է. և նա ասում է այս բաները և գործում է շատ բաներ՝ իր նեղ խորամանկություններով, որ կարողանա մեր աչքը խաբել՝ մտածելով, որ միգուցե կարողա-

28ա Ալմա 37.40:
սուր Հավատք:
29ա սուր Հասկանալ:
բ Դ.Թագ. Ե.13,
Հակ. Գ.4,

Ալմա 37.6–7, 41,
ՎևոՒ 123.16:
34ա 1 Նեփի 7.2–6:
35ա սուր Չախորդություն:
37ա 1 Նեփի 17.44:

սուր Սպանություն:
բ Ծճ. Լ.Է.9–11,
1 Նեփի 2.22, 18.10:
38ա 1 Նեփի 3.30–31, 4.3:

նա տանել մեզ հեռու մի օտար անապատ. և մեզ հեռուն տանելուց հետո, նա մտածել է իրեն թագավոր ու կառավարիչ դարձնել մեզ վրա, որպեսզի կարողանա վարվել մեզ հետ՝ ըստ իր կամքի ու հաճույքի: Եվ այս ձևով իմ եղբայր Լամանը նրանց սրտերը դրդեց բարկության:

39 Եվ եղավ այնպես, որ Տերը մեզ հետ էր, այո, իսկապես Տիրոջ ձայնը եկավ և շատ խոսքեր ասաց նրանց և խիստ Մխրատեց նրանց. և Տիրոջ ձայնից խրատվելուց հետո, նրանք ետ դարձրեցին իրենց բարկությունը և ապաշխարեցին իրենց մեղքերից, այնպես որ Տերը կրկին օրհնեց մեզ ուտելիքով, որպեսզի մենք չմահանանք:

ԳԼՈՒԽ 17

Նեփիին պատվիրվում է մի նավ կառուցել – Նրա եղբայրները հակառակվում են նրան – Նա հորդորում է նրանց՝ շարադրելով Իսրայելի հետ Աստծո գործերի պատմությունը – Նեփին լցվում է Աստծո գործքամբ – Նրա եղբայրներին արգելվում է ձեռք տալ նրան, այլապես նրանք կչորանան չորացած եղեգի պես: Մոտ 592–591թթ. Ք.ծ.ա.:

Եվ եղավ այնպես, որ մենք կրկին ճամփա ընկանք անապատում. և այդ ժամանակից ի վեր մենք ճամփորդում էինք մոտավորապես արևելյան ուղղությամբ: Եվ մենք ճամփորդում էինք անապատում՝ անցնելով շատ չարչարանքների միջով. և մեր կանայք երեխաներ էին ծնել անապատում:

2 Եվ այնքան մեծ էին Տիրոջ օրհնությունները մեզ վրա, որ մինչ մենք անապատում ապրում էինք՝ Պիլոն մտավ, մեր կանայք առատ կործք էին տալիս իրենց երեխաներին և ուժեղ էին, այո, ճիշտ տղամարդկանց պես. և նրանք սկսեցին տանել իրենց ճամփորդություններն առանց տրտունջների:

3 Եվ այսպիսով, մենք տեսնում ենք, որ Աստծո պատվիրանները պետք է կատարվեն: Եվ եթե լինում է այնպես, որ մարդկանց զավակները Մպահում են Աստծո պատվիրանները, նա կերակրում է նրանց և ուժեղացնում է նրանց, և ապահովում միջոցներ, որոնցով նրանք կարող են իրագործել այն, ինչ նա պատվիրել է նրանց. ուստի, նա մեզ համար միջոցներ էր Քապահովում, մինչ մենք դեզգերում էինք անապատում:

4 Եվ մենք դեզգերում էինք անապատում շատ տարիների ընթացքում, այո, այսինքն՝ ութ տարի անապատում:

5 Եվ մենք հասանք մի երկիր, որը մենք անվանեցինք Լիառատ՝ նրա առատ մրգի և մալ վայրի մեղրի պատճառով. և այս բոլոր բաները պատրաստվել էին Տիրոջ կողմից, որպեսզի մենք չկորչեինք: Եվ մենք տեսանք ծովը, որը մենք կոչեցինք Իրրեանթում, որը թարգմանվում է՝ շատ ջրեր:

6 Եվ եղավ այնպես, որ մենք խփեցինք մեր վրանները ծովի ափին. և չնայած մենք տարել էինք շատ Մչարչարանքներ և շատ դժվարություն, այո, նույնիսկ այնքան շատ, որ չենք կարող դրանք

39ա սոՒ Խրատել, Խրատելը: 17 2ա 1 Նեփի 17.12:

3ա Մոսիա 2.41, Ալմա 26.12: սոՒ Հնազանդություն,

Հնազանդ, Հնազանդվել: p 1 Նեփի 3.7: 6ա 2 Նեփի 4.20:

բոլորը գրել, մենք չափազանց հրճվում էինք, երբ հասանք ծովափ. և մենք կոչեցինք վայրը Լիառատ՝ դրա առատ մրգի պատճառով:

7 Եվ եղավ այնպես, որ ես՝ Նեփիս, Լիառատ երկրում շատ օրերի ընթացքում լինելուց հետո, Տիրոջ ձայնը եկավ ինձ՝ ասելով. Վեր կաց և բարձրացի՛ր սարը: Եվ եղավ այնպես, որ ես վեր կացա ու վեր ելա սարը, և կանչեցի առ Տերը:

8 Եվ եղավ այնպես, որ Տերը խոսեց ինձ հետ՝ ասելով. Դու պետք է մի նավ կառուցես՝ այն ^աձևով, որ ես ցույց կտամ քեզ, որ ես կարողանամ տանել քո ժողովրդին այս ջրերի մյուս կողմը:

9 Եվ ես ասացի. Տեր, ո՞ր պետք է գնամ, որ կարողանամ գտնել հանքանյութ, որ հալեմ, որպեսզի կարողանամ գործիքներ սարքել՝ նավը կառուցելու համար, այն ձևով, որ դու ցույց տվեցիր ինձ:

10 Եվ եղավ այնպես, որ Տերն ասաց ինձ, թե ուր պետք է գնամ հանքանյութ գտնելու, որ կարողանամ գործիքներ պատրաստել:

11 Եվ եղավ այնպես, որ ես՝ Նեփիս, կենդանիների կաշվից փուքս սարքեցի՝ դրանով կրակը փչելու համար. և փուքս սարքելուց հետո, որպեսզի կարողանայի ունենալ ինչով փչել կրակը, ես երկու քար իրար հարվածեցի, որ կարողանայի կրակ ստանալ:

12 Քանի որ Տերն առաջմ թույլ չէր տվել, որ մենք շատ կրակ անեինք, երբ ճամփորդում էինք անապատում. քանի որ նա ասել

էր. Ես կդարձնեմ ձեր ուտելիքը համեղ, որպեսզի դուք այն ^աչեփեք:

13 Եվ ես կլինեմ նաև ձեր լույսն անապատում. և ^ակպատրաստեմ ձեր առջև ճանապարհը, եթե լինի այնպես, որ դուք պահեք իմ պատվիրանները. ուստի, որքան որ դուք կպահեք իմ պատվիրանները, դուք կառաջնորդվեք դեպի ^բխոստացված երկիր. և դուք ^գկլինանաք, որ իմ կողմից է, որ դուք առաջնորդվում եք:

14 Այո, և Տերը նաև ասել էր, որ. Դուք խոստացված երկիր հասնելուց հետո, ^ակլինանաք, որ ես՝ Տերս եմ ^բԱստված. և որ ես՝ Տերս, ազատեցի ձեզ կործանումից. այո, որ ես դուրս բերեցի ձեզ Երուսաղեմի հողից:

15 Այդ պատճառով ես՝ Նեփիս, ձգտում էի պահել Տիրոջ պատվիրանները և հորդորում էի եղբայրներիս՝ հավատարմության ու ջանասիրության:

16 Եվ եղավ այնպես, որ ես գործիքներ սարքեցի այն հանքանյութից, որը ես հալել էի ապարից:

17 Եվ երբ եղբայրներս տեսան, որ ես պատրաստվում էի նավ ^ակառուցել, նրանք սկսեցին տրտնջալ իմ դեմ՝ ասելով. Մեր եղբայրը հիմար է, քանի որ կարծում է, թե կարող է նավ կառուցել. այո, և նաև կարծում է, թե կարող է անցնել այս մեծ ջրերը:

18 Եվ այսպես, եղբայրներս բողոքում էին իմ դեմ և ցանկանում, որ իրենք չաշխատեին, քանի որ չէին հավատում, որ ես կարող էի

8ա 1 Նեփի 18.2:
12ա 1 Նեփի 17.2:
13ա Ավա 37.38-39:
բ 1 Նեփի 2.20,

Հակոբ 2.12:
գ Ել. 2.7:
14ա 2 Նեփի 1.4:
սո՛ւ Վկայություն:

բ ՎևոՒ 5.2:
17ա 1 Նեփի 18.1-6:

նալ կառուցել. ոչ էլ կամենում էին հավատալ, որ ես ուսուցանվում էի Տիրոջ կողմից:

19 Եվ եղավ այնպես, որ ես՝ Նեփիս, չափազանց վշտացած էի նրանց սրտերի կարծրության պատճառով. և երբ նրանք տեսան, որ ես սկսեցի վշտանալ, նրանք իրենց սրտերում ուրախացան, այնքան, որ ^ածիծաղեցին իմ վրա՝ ասելով. Մենք գիտեինք, որ դու չես կարող նալ կառուցել, քանի որ գիտեինք, որ քո մոտ բացակայում է ողջամտությունը. ուստի, դու չես կարող իրագործել այդպիսի մի մեծ գործ:

20 Եվ դու մնան ես մեր հորը՝ խտորված իր սրտի հիմար ^աերևակայություններով. այո, նա մեզ դուրս է բերել Երուսաղեմի հողից, և մենք թափառում ենք անապատում այսքան երկար տարիներ. և մեր կանայք տքնել են՝ երեխայով լինելով. և նրանք երեխաներ են ծնել անապատում և տարել են ամեն ինչ, բացի մահից. և ավելի լավ կլիներ, որ նրանք մահացած լինեին Երուսաղեմից դուրս գալուց առաջ, քան կրեին այս չարչարանքները:

21 Ահա, այսքան շատ տարիներ մենք տառապում ենք անապատում, այն ժամանակ, երբ մենք կարող էինք վայելել մեր ունեցվածքը և մեր ժառանգության հողը. այո, և մենք կարող էինք երջանիկ լինել:

22 Եվ մենք գիտենք, որ ժողովուրդը, որ Երուսաղեմի հողում էր, արդար ժողովուրդ էր. քանի

որ նրանք պահում էին Տիրոջ կանոններն ու դատաստանները, և նրա բոլոր պատվիրաններն ըստ Մովսեսի օրենքի. ուստի, մենք գիտենք, որ նրանք ^աարդար ժողովուրդ են. իսկ մեր հայրը դատապարտեց նրանց և մեզ առաջնորդեց հեռում, որովհետև մենք ականջ դրեցինք նրա խոսքերին. այո, և մեր եղբայրը մնան է նրան: Եվ խոսքի այս ձևով եղբայրներս տրտնջացին ու բողոքեցին մեր դեմ:

23 Եվ եղավ այնպես, որ ես՝ Նեփիս, խոսեցի նրանց հետ՝ ասելով. Գուրբ հավատո՞ւմ եք, որ մեր հայրերը, որոնք Իսրայելի զավակներն էին, Եգիպտացիների ձեռքից դուրս առաջնորդված կլինեին, եթե նրանք ականջ չդնեին Տիրոջ խոսքերին:

24 Այո, մի՞թե դուք կարծում եք, որ նրանք դուրս կառաջնորդվեին ճորտությունից, եթե Տերը հրամայած չլիներ Մովսեսին, որ նա պետք է նրանց դուրս ^աառաջնորդեր ճորտությունից:

25 Արդ, դուք գիտեք, որ Իսրայելի զավակները ^աճորտության մեջ էին. և գիտեք, որ նրանք բեռնվում էին ^բաշխատանքներով, որոնց դիմանալը տանջալից էր. ուստի, դուք գիտեք, որ դա անպայման պետք է լավ բան լիներ նրանց համար, որ նրանք դուրս բերվեին գերությունից:

26 Արդ, դուք գիտեք, որ Տիրոջ կողմից էր պատվիրված ^աՄովսեսին՝ անել այդ մեծ աշխատանքը. և դուք գիտեք, որ նրա ^բխոսքով

<p>19ա ստե՝ Հավածել, Հավածանք: 20ա 1 Նեփի 2.11: 22ա 1 Նեփի 1.13: 24ա Ել. 9.2–10,</p>	<p>1 Նեփի 19.10, 2 Նեփի 3.9, 25.20: 25ա Ծն. ԺԵ.13–14: Բ Ել. Ա.11, Բ.11: 26ա Գոր. Է.22–39:</p>	<p>Բ Ել. ԺԳ.21–31, 1 Նեփի 4.2, Մոսիա 7.19, Հել. 8.11, ՎևոՒ 8.3, Մովսես 1.25:</p>
---	---	--

Կարմիր ծովի ջրերը բաժանվեցին այս ու այն կողմ, և նրանք անցան միջով՝ չոր գետնի վրայով:

27 Բայց դուք գիտեք, որ Եգիպտացիները, որոնք Փարավոնի զորքերն էին, խեղդվեցին Կարմիր ծովում:

28 Եվ դուք գիտեք նաև, որ նրանք անապատում կերակրվում էին մանանայով:

29 Այո, և դուք գիտեք նաև, որ Մովսեսը, իր խոսքով, համաձայն Աստծո զորության, որն իր մեջ էր, հարվածեց ժայռին, և այնտեղից ջուր դուրս եկավ, որպեսզի Իսրայելի զավակները հագեցնեին իրենց ծարավը:

30 Եվ թեև նրանք առաջնորդվում էին, Տերը՝ նրանց Աստվածը՝ նրանց Քավիչը գնալով նրանց առջևից, առաջնորդելով նրանց ցերեկով և նրանց լույս տալով գիշերով, և նրանց համար անելով ամեն բան, ինչ մնալատակահարմար էր մարդու համար ընդունել, նրանք կարծրացրեցին իրենց սրտերն ու կուրացրեցին իրենց մտքերը և թագախոսեցին Մովսեսի դեմ և ճշմարիտ ու կենդանի Աստծո դեմ:

31 Եվ եղավ այնպես, որ համաձայն իր խոսքի, նա համարձայն իր խոսքի, նա համաձայն իր խոսքի, նա արեց բոլոր բաները նրանց համար. և չկար

որևէ բան արված, որ նրա խոսքով չլիներ:

32 Եվ Հորդանան գետն անցնելուց հետո, նա դարձրեց նրանց հզոր՝ այդ երկրի զավակներին դուրս աքշելու, այո, ցրելու նրանց՝ ի կործանում:

33 Եվ այժմ, դուք կարծում եք, թե այս երկրի զավակները, որոնք խոստումի երկրում էին, որոնք դուրս քշվեցին մեր հայրերի կողմից, դուք կարծում եք, որ նրանք արդարակյա՞ց էին: Ահա, ես ասում եմ ձեզ՝ Ո՛չ:

34 Դուք ի՞նչ եք կարծում, որ մեր հայրերն ավելի ընտրյալ կլինեին, քան նրանք, եթե նրանք արդարակյաց լինեին: Ես ասում եմ ձեզ՝ Ո՛չ:

35 Ահա, Տերն ամեն մարմին մեկ է համարում. նա, ով թարդար է, օրհնվում է Աստծուց: Բայց ահա, այդ ժողովուրդը մերժել էր Աստծո ամեն մի խոսքը և հասունացել էր անօրինության մեջ. և Աստծո լիակատար ցասումը նրա վրա էր. և Տերն անիծեց երկիրը նրանց համար և օրհնեց այն մեր հայրերի համար. այո, նա անիծեց այն նրանց համար՝ ի կործանումն նրանց, և օրհնեց այն մեր հայրերի համար, որ իշխանություն ձեռք բերեն նրա վրա:

36 Ահա, Տերը ստեղծել է Քերկիրը, որ այն օրնակեցվի. և նա ստեղծել է իր զավակներին, որ նրանք տիրեն այն:

28ա Ել. ԺՁ.4, 14–15, 35, Թվ. ԺԱ.7–8, Բ Օր. Ը.3, Մոսիա 7.19:
29ա Ել. ԺԷ.6, Թվ. Ի.11, Բ Օր. Ը.15, 1 Նեփի 20.21:
30ա ՎևոՒ 18.18, 88.64–65: Բ Ել. ԼԲ.8, Թվ. ԺԳ.2–3, Եգեկ. Ի.13–16, ՎևոՒ 84.23–25:

31ա Թվ. ԻՁ.65: Բ 1 Նեփի 5.15, ՎևոՒ 103.16–18:
32ա Թվ. ԼԳ.52–53, չես. ԻԳ.8:
35ա Գոր. Ժ.15, 34, չռովմ. Բ.11, 2 Նեփի 26.23–33: Բ Սաղ. ԾԵ.22, 1 Նեփի 22.17:

գ Ա Թագ. Բ.30, Սաղ. ԳԷ.10, ՃԽԵ.20, Ալմա 13.4, ՎևոՒ 82.10:
36ա սոՒ Ստեղծել, Ստեղծում: Բ սոՒ Երկիր: գ Ես. ԽԵ.18, Աբբ. 3.24–25:

37 Եվ նա «բարձրացնում է մի արդար ազգ և կործանում ամբարիշտների ազգերը:

38 Եվ նա դուրս է առաջնորդում արդարներին՝ դեպի ընտիր «երկրներ, իսկ ամբարիշտներին նա ^բկործանում է և անհիծում երկիրը նրանց համար՝ իրենց իսկ պատճառով:

39 Նա իշխում է բարձր երկինքներում, քանի որ այն իր գահն է, իսկ այս երկիրը՝ նրա ոտքերի «պատվանդանը:

40 Եվ նա սիրում է նրանց, ովքեր ցանկանում են, որ նա լինի իրենց Աստվածը: Ահա, նա սիրում էր մեր հայրերին, և նա ^{ու}ոխտեց նրանց հետ, այո, հենց Աբրահամի, ^ԲԻսահակի և ^ՀՀակոբի. և նա հիշում էր ուխտերը, որ նա արել էր. այդ պատճառով, նա դուրս բերեց նրանց ^ԵԵգիպտոսի երկրից:

41 Եվ նա անապատում նեղում էր նրանց գավազանով. քանզի նրանք ^կկարծրացնում էին իրենց սրտերը, ճիշտ ինչպես դուք. և Տերը նեղում էր նրանց իրենց անօրինությունների պատճառով: Նա ուղարկեց թևավոր կիզող ^Օօձեր նրանց մեջ. և նրանց խայթվելուց հետո նա ուղի պատրաստեց, որ կարողանային ^Գգրծվել. և գործը, որ նրանք պետք է կատարեին՝ նայելն էր. և միջոցի ^Կպարզության կամ հեշտության

պատճառով՝ եղան շատերը, որ կործանվեցին:

42 Եվ նրանք կարծրացնում էին իրենց սրտերը, ժամանակ առ ժամանակ, և ^Քքազրախոսում ^ՄՄովսեսի դեմ, և նաև Աստծո դեմ. այնուամենայնիվ, դուք գիտեք, որ նրանք առաջնորդվեցին առաջ, նրա անգուգական զորությամբ, դեպի խոստումի երկիրը:

43 Եվ այժմ, այս բոլոր բաներից հետո, եկել է ժամանակը, երբ նրանք դարձել են ամբարիշտ, այո, գրեթե հասունացած են. և ես գիտեմ, որ, հավանաբար, նրանք այսօր կործանման եզրին են. քանզի գիտեմ, որ օրը հաստատ պետք է գա, որ նրանք պետք է կործանվեն, բացի միայն մի քանիսից, որոնք կտարվեն գերության:

44 Այդ պատճառով Տերը ^Կպատվիրեց հորս, որ նա հեռանա անապատ. և հրեաները նույնպես ջանում էին զրկել նրան կյանքից. այո, և ^Պդուք նույնպես ջանացիք զրկել նրան կյանքից. ուստի, դուք մարդասպաններ եք ձեր սրտում և մեան եք նրանց:

45 Դուք ^Սսրընթաց եք անօրինություն գործելիս, բայց դանդաղ եք Տիրոջը՝ ձեր Աստծուն հիշելիս: Դուք տեսաք ^Պհրեշտակի, և նա խոսեց ձեզ հետ. այո, դուք լսել եք նրա ձայնը, ժամանակ առ ժամանակ. և նա խոսել է ձեզ հետ՝ մեղմ, հանդարտ ձայնով, բայց

37ա Առակ. ԺԳ.34,
1 Նեփի 4.13,
Եթեր 2.10,
ՎևոՒ 117.6:
38ա սոՒ Խոստացված
երկիր:
բ Գև. Ի.22:
39ա Ես. 4Ձ.1,
ՎևոՒ 38.17,
Աբր. 2.7:

40ա սոՒ Աբրահամի ուխտը:
բ Ծն. ԻԱ.12, ՎևոՒ 27.10:
գ Ծն. ԻԸ.1-5:
դ Բ Օր. Գ.37:
41ա Գ Թագ. ԺԷ.7-23:
բ Թվ. ԻԱ.4-9,
Բ Օր. Ը.15,
Ալմա 33.18-22:
գ Հովհ. Գ.13-15,
2 Նեփի 25.20:

դ Ալմա 37.44-47,
Հել. 8.15:
42ա Թվ. ԺԳ.1-12:
սոՒ Ապտամբություն:
բ ՎևոՒ 84.23-24:
44ա 1 Նեփի 2.1-2:
բ 1 Նեփի 16.37:
45ա Մոսիա 13.29:
բ 1 Նեփի 4.3:

դուք Գանգալացած էիք, որպեսզի կարողանայիք զգալ նրա խոսքերը. ուստի, նա խոսեց ձեզ հետ որոտի ձայնով, որը գետինը ցնցեց այնպես, կարծես թե պետք է մասերի բաժանվեր:

46 Եվ դուք գիտեք նաև, որ իր ամենագոր խոսքի «ուժով նա կարող է ստիպել երկրին, որ այն անհետանա. այո, և դուք գիտեք, որ իր խոսքով նա կարող է ստիպել, որ անհարթ տեղերը դարձվեն հարթ, իսկ հարթ տեղերը լինեն մասնատված: Օ՛, ուրեմն, ի՞նչպես է, որ դուք կարողանում եք լինել այդքան կարծր ձեր սրտերում:

47 Ահա, հոգիս պատռվում է տվայտանքից ձեր պատճառով, և սիրտս՝ ցավում. ես վախենում եմ, չլինի թե դուք վտարվեք հավիտյան: Ահա, ես «լցված եմ Աստծո Հոգով այնքան, որ մարմինս ուժ թշուրհի:

48 Եվ եղավ այնպես, որ երբ ես ասացի այս խոսքերը, նրանք բարկացան ինձ վրա և ցանկացան ցգել ինձ ծովի խորքերը. և երբ նրանք առաջ եկան՝ ձեռք բարձրացնելու ինձ վրա, ես խոսեցի նրանց հետ՝ ասելով. Ամենագոր Աստծո անունով հրամայում եմ, որ «շիպչեք ինձ, քանզի, ես լցված եմ Աստծո թողությունս՝ այն աստիճան, որ մարմինս այրվում է. և ով որ ձեռք բարձրացնի ինձ վրա, «կչորանա, ճիշտ ինչպես չորացած եղեգ. և նա կդառնա ոչինչ Աստծո զորության առջև, քանի որ Աստված կզարկի նրան:

49 Եվ եղավ այնպես, որ ես՝ Նեփիս, ասացի նրանց, որ նրանք

այլևս չպետք է տրտնջան իրենց հոր դեմ. ոչ էլ հրաժարվեն աշխատել ինձ հետ, քանի որ Աստված էր պատվիրել ինձ, որ ես նաև կառուցեի:

50 Եվ ես ասացի նրանց. «Եթե Աստված պատվիրեր ինձ՝ անել բոլոր բաները, ես կկարողանայի անել դրանք: Եթե նա պատվիրեր ինձ, որ ես ասեի այս ջրին՝ հո՛ղ դարձիր, այն կլիներ հող. և եթե ես ասեի դա, այն կկատարվեր:

51 Եվ եթե Տերն ունի այսպիսի մեծ զորություն և գործել է այդքան շատ հրաշքներ մարդկանց զավակների մեջ, ի՞նչպես է որ նա չի կարող «ուսուցանել ինձ, որ ես նաև կառուցեմ:

52 Եվ եղավ այնպես, որ ես՝ Նեփիս, ասացի շատ բաներ եղբայրներիս, այնպես որ նրանք կարկամեցին և չկարողացան վիճել ինձ հետ. ոչ էլ համարձակվեցին ձեռք բարձրացնել ինձ վրա կամ մատով դիպչել ինձ, նույնիսկ շատ օրերի ընթացքում: Եվ նրանք չհամարձակվեցին անել այս, որպեսզի չլինեի թե նրանք չորանային իմ առաջ, այնքան գորեղ էր Աստծո «Հոգին. և այսպես էր այն ներգործել նրանց վրա:

53 Եվ եղավ այնպես, որ Տերն ասաց ինձ. Նորից առաջ մեկնի՛ր ձեռքդ դեպի եղբայրներդ և նրանք չեն չորանա քո առջև, բայց ես կցնցեմ նրանց, ասաց Տերը, և դա ես կանեմ, որ նրանք իմանան, որ ես եմ Տերը՝ իրենց Աստվածը:

54 Եվ եղավ այնպես, որ ես առաջ մեկնեցի ձեռքս դեպի եղբայրներս, և նրանք չչորացան իմ առջև. բայց

45գ Եփես. Գ.19:
46ա Հել. 12.6–18:
47ա Միքիա Գ.8:
բ 1 Նեփի 19.20:

48ա Մոսիա 13.3:
բ 2 Նեփի 1.26–27:
սու՛ Չորություն:
գ Գ Թագ. ԺԳ.4–7:

50ա Փիլ. Գ.13, 1 Նեփի 3.7:
51ա Ծն. Զ.14–16,
1 Նեփի 18.1:
52ա սու՛ Սուրբ Հոգի:

Տերը ցնցեց նրանց՝ հենց այն խոսքի համաձայն, որ նա խոսել էր:

55 Եվ նրանք ասացին. Մենք գիտենք անկասկած, որ Տերը քեզ հետ է, քանզի գիտենք, որ Տիրոջ զորությունն էր, որ ցնցեց մեզ: Եվ նրանք ընկան իմ առջև և քիչ էր մնում ինձ ^աերկրպագեիմ, բայց ես թույլ չտվեցի նրանց՝ ասելով. Ես ձեր եղբայրն եմ, այո, նույնիսկ ձեր փոքր եղբայրը. ուստի, երկրպագեք Տիրոջը՝ ձեր Աստծուն, և պատվեք ձեր հորը և ձեր մորը, որ ձեր ^բօրերը երկար լինեն այն երկրում, որը Տերը՝ ձեր Աստվածը, կտա ձեզ:

ԳԼՈՒԽ 18

Նավն ավարտված է – Հիշատակվում է Հակոբի ու Հովսեփի ծննդի մասին – Խումբը նավարկում է դեպի խոստացված երկիր – Իսմայելի որդիները և նրանց կանայք միանում են խրախճանքին և խոսվությանը – Նեփին կապված է, և նավը ետ է մղվում սարսափելի փոթորիկից – Նեփին ազատ է արձակվում, և նրա աղոթքով մորիկը դադարում է – Մարդիկ հասնում են խոստացված երկիրը: Մոտ 591–589թթ. Ք.ծ.ա.:

Եւ եղավ այնպես, որ նրանք երկրպագեցին Տիրոջը և աշխատակցեցին ինձ. և մենք զարմանալի վարպետությամբ մշակեցինք հեծանները: Եվ Տերը ցույց էր տալիս ինձ, ժամանակ առ ժամանակ, թե ինչ ձևով ես պետք է մշակեի նավի հեծանները:

2 Արդ, ես՝ Նեփիս, հեծանները

մարդկանցից սովորած ձևով չէի մշակում, ոչ էլ նավն էի կառուցում՝ ըստ մարդկանց իմացած ձևի. այլ ես կառուցում էի դա այն ձևով, որը Տերը ցույց էր տալիս ինձ. ուստի, այն չէր համապատասխանում մարդկանց իմացած ձևին:

3 Եվ ես՝ Նեփիս, հաճախ էի սարգնում և հաճախ ^աաղոթում Տիրոջը. այդ պատճառով Տերը մեծ բաներ ^բցույց տվեց ինձ:

4 Եվ եղավ այնպես, որ Տիրոջ խոսքի համաձայն նավը վերջացնելուց հետո, եղբայրներս տեսան, որ այն լավն էր, և որ նրա շինվածքը չափազանց ընտիր էր. ուստի, նրանք իրենց կրկին ^ախոնարհեցրին Տիրոջ առաջ:

5 Եվ եղավ այնպես, որ Տիրոջ ձայնը եկավ հորս, որ մենք պետք է վեր կենայինք և մտնեինք նավը:

6 Եվ եղավ այնպես, որ այգաբացին, երբ մենք նախապատրաստել էինք բոլոր բաները՝ շատ մրգեր և ^ամիս անապատից, և առատ մեղր, և պարեն՝ համաձայն նրա, ինչ Տերը պատվիրել էր մեզ, մենք մտանք նավ մեր ողջ բեռով և մեր սերմերով, և ինչ բաներ, որ մենք բերել էինք մեզ հետ՝ ամեն մեկն իր տարիքին համապատասխան. ուստի, մենք բոլորս մտանք նավ՝ մեր կանանց ու երեխաների հետ:

7 Եվ այժմ, հայրս երկու որդի էր ունեցել անապատում. ավագն անվանվել էր ^աՀակոբ, իսկ կրտսերը՝ ^բՀովսեփ:

8 Եվ եղավ այնպես, որ բոլորս նավ մտնելուց հետո, վերցնելով մեր պարենը և այն բաները, որ

55ա Գոր. ԺԳ.11–15:
բ Ել. Ի.12,
Մոսիա 13.20:

18 3ա սուր Աղոթք:
բ սուր Հայտնություն:
4ա 1 Նեփի 16.5:

6ա 1 Նեփի 17.2:
7ա 2 Նեփի 2.1:
բ 2 Նեփի 3.1:

մեզ պատվիրված էր, մենք դուրս եկանք ՝ ծով և քամին մեզ առաջ քշեց դեպի ՝ Դսոստացված երկիրը:

9 Եվ շատ օրերի ընթացքում քամուց առաջ քշվելուց հետո, ահա, եղբայրներս և Իսմայելի որդիները և նաև նրանց կանայք սկսեցին զվարճանալ, այնպես որ սկսեցին պարել և երգել և խոսել շատ գռեհկորեն, այո, մինչև որ մոռացան, թե ինչ զորությամբ էին բերվել այդտեղ. այո, նրանք հասել էին ծայրահեղ գռեհկություն:

10 Եվ ես՝ Նեփիս, սկսեցի չափազանց վախենալ, որ չլինի թե Տերը զայրանա մեզ վրա և զարկի մեզ՝ մեր անօրինության պատճառով, որ մենք կուլ գնանք ծովի խորքերին. ուստի, ես՝ Նեփիս, սկսեցի խոսել նրանց հետ շատ լրջորեն. բայց ահա, նրանք ՝ բարկացան ինձ վրա՝ ասելով. Մենք չենք կամենում, որ մեր փոքր եղբայրը ՝ կառավարիչ լինի մեզ վրա:

11 Եվ եղավ այնպես, որ Լամանն ու Լեմուելը բռնեցին ինձ ու պարաններով կապեցին, և շատ անողորմ վարվեցին ինձ հետ. սակայն Տերը ՝ հանդուրժեց դա, որպեսզի ցույց տա իր զորությունը՝ ի կատարումն իր խոսքի, որը նա խոսել էր ամբարիշտների վերաբերյալ:

12 Եվ եղավ այնպես, որ երբ նրանք կապեցին ինձ՝ այնպես, որ չէի կարողանում շարժվել, ՝ կողմնացույցը, որը պատրաստված էր

Տիրոջ կողմից, դադարեց աշխատել:

13 Այդ պատճառով, նրանք չգիտեին, թե ուր ուղղեին նավը, այնպես որ մի մեծ մրրիկ բարձրացավ, այո, մի մեծ ու սարսափելի փոթորիկ, և մենք ջրերի վրայով ետ ՝ քշվեցինք երեք օրվա ընթացքում. և նրանք սկսեցին խիստ վախենալ, որ չլինի թե խեղդվեին ծովում. այնուամենայնիվ, նրանք ինձ չարձակեցին:

14 Եվ չորրորդ օրը, երբ մենք ետ էինք քշվում, փոթորիկը սկսեց խիստ սաստկանալ:

15 Եվ եղավ այնպես, որ մենք քիչ էր մնում կուլ գնայինք ծովի խորքերին: Եվ ջրերի վրայով չորս օրերի ընթացքում ետ քշվելուց հետո, եղբայրներս սկսեցին ՝ տեսնել, որ Աստծո դատաստանները նրանց վրա են, և որ նրանք կորչելու են, եթե չապաշխարեն իրենց անօրինությունների համար, այդ պատճառով նրանք եկան ինձ մոտ և արձակեցին կապերը, որոնք դատակներին վրա էին, և ահա, դրանք չափազանց ուռել էին. և նաև ոտքերին կոճերն էին շատ ուռել և սաստիկ էր դրանց ցավը:

16 Այնուամենայնիվ, իմ Աստծուն էի նայում ես և ողջ օրը ՝ գովք էի անում նրան. և չէի տրտնջում Տիրոջ դեմ՝ իմ չարչարանքների պատճառով:

17 Արդ, իմ հայրը՝ Լեթին, շատ բաներ էր ասել նրանց և նաև ՝ Իսմայելի որդիներին. բայց, ահա, նրանք շատ սպառնալիքներ էին

8ա2 Նեփի 10.20:
բ 1 Նեփի 2.20:
սուր Խոստացված երկիր:
10ա1 Նեփի 17.17–55:
բ Ծն. ԼԷ.9–11,

1 Նեփի 16.37–38,
2 Նեփի 1.25–27:
11ա Ալմա 14.11:
12ա1 Նեփի 16.10, 16, 26,
2 Նեփի 5.12,
Ալմա 37.38–47,

ՎևոՒ 17.1:
13ա Մոսիա 1.17:
15ա Հել. 12.3:
16ա Ալմա 36.28:
17ա1 Նեփի 7.4–20:

քափում ամեն մեկի դեմ, ով խոսում էր ի նպաստ ինձ. և ծնողներս, կքված լինելով տարիներից և շատ վիշտ տանելով իրենց զավակների պատճառով, կոտորվել էին, այո, մինչև անգամ անկողին էին ընկել:

18 Նրանց վշտի, և շատ դառնությունների, և եղբայրներիս անօրինությունների պատճառով, նրանք համարյա հասցվել էին այս ժամանակից դուրս բերվելուն՝ հանդիպելու իրենց Աստծուն. այո, նրանց սպիտակ մազերը մոտ էին ներքև բերվելու՝ հողի մեջ պառկելու. այո, նրանք վշտից քիչ էր մնացել նույնիսկ ջրի գերեզմանը գցվեին:

19 Եվ Հակոբն ու Հովսեփը նույնպես, լինելով փոքր, կարիք ունենալով լավ սնուցման, վշտացած էին իրենց մոր չարչարանքների պատճառով. և նաև՝ «Կինս, իր արցունքներով ու աղոթքներով, և նաև երեխաներս չփափկացրին եղբայրներիս սրտերը, որպեսզի նրանք արձակեին ինձ:

20 Եվ չկար ոչինչ, որ կարողանար փափկացնել նրանց սրտերը, բացի Աստծո գործությունից, որը սպառնաց նրանց կործանմամբ. ուստի, երբ նրանք տեսան, որ մոտ են ծովի խորքերին կուլ գնալուն, ապաշխարեցին այն բանի համար, որ արել էին, այնպես որ արձակեցին ինձ:

21 Եվ եղավ այնպես, որ երբ նրանք արձակեցին ինձ, ահա, ես վերցրեցի կողմնացույցը, և այն աշխատեց, ինչպես որ ես էի ուզում: Եվ եղավ այնպես, որ ես աղոթեցի Տիրոջը. և իմ աղոթելուց հետո քամիները դադարեցին, և

մրրիկը դադարեց և մեծ հանդարտություն տիրեց:

22 Եվ եղավ այնպես, որ ես՝ Նեփիս, վարեցի նավը, որպեսզի մենք կրկին նավարկեինք դեպի խոստացված երկիրը:

23 Եվ եղավ այնպես, որ շատ օրերի ընթացքում նավարկելուց հետո, մենք հասանք խոստացված երկիր. և առաջ գնացինք երկրով և խփեցինք մեր վրանները. և կոչեցինք այն՝ «խոստացված երկիր»:

24 Եվ եղավ այնպես, որ մենք սկսեցինք հերկել հողը և սկսեցինք սերմեր ցանել. այո, մենք դրեցինք հողի մեջ մեր բոլոր սերմերը, որոնք բերել էինք Երուսաղեմի հողից: Եվ եղավ այնպես, որ դրանք շատ լավ աճեցին. ուստի, մենք առատորեն օրհնվեցինք:

25 Եվ եղավ այնպես, որ մենք գտանք խոստումի երկրում, մինչ մենք ճամփորդում էինք անապատով, որ անտառներում կային ամեն տեսակի վայրի կենդանիների՝ և՛ կով, և՛ եզ, և՛ էշ, և՛ ձի, և՛ այծ, և՛ քարայծ, և՛ ամեն տեսակի վայրի կենդանիներ, որոնք մարդու օգտագործման համար էին: Եվ մենք գտանք ամեն ձևի հանքանյութ՝ և՛ ոսկու, և՛ արծաթի, և՛ պղնձի:

ԳԼՈՒԽ 19

Նեփին հանքանյութից փոխելներ է պատրաստում և արձանագրում է իր ժողովրդի պատմությունը – Իսրայելի Աստվածը կգա՝ Լեքիի Երուսաղեմը թողնելու ժամանակից 600 տարի հետո – Նեփին պատմում է

Նրա տառապանքների և խաչելության մասին – Հրեաները կարհամարհվեն և կցրվեն մինչև վերջին օրերը, երբ նրանք կվերադառնան դեպի Տերը: Մոտ 588-570թթ. Ք.ժ.ա.:

Եւ եղավ այնպես, որ Տերը հրամայեց ինձ, ուստի ես հանքանյութից քիթեղներ պատրաստեցի, որպեսզի կարողանայի փորագրել դրանց վրա իմ ժողովրդի հիշատակարանը: Եվ այն քիթեղների վրա, որ ես պատրաստեցի, ես փորագրեցի ^Բհորս հիշատակարանը, և նաև մեր ճամփորդություններն անապատում, և հորս մարգարեությունները. և նաև իմ սեփական մարգարեություններից շատերը ես փորագրել եմ դրանց վրա:

2 Եվ ես չգիտեի այն ժամանակ, երբ ես պատրաստեցի դրանք, որ պետք է պատվիրվեի Տիրոջ կողմից պատրաստել ^Մայս քիթեղները. ուստի, հորս հիշատակարանը, և նրա հայրերի տոհմաբանությունը, և անապատում մեր բոլոր գործերի առավել մեծ մասը փորագրված են այն առաջին քիթեղների վրա, որոնց մասին ես խոսել եմ. ուստի, այն բաները, որոնք տեղի էին ունեցել մինչև իմ ^Մայս քիթեղների պատրաստելը, անշուշտ, ավելի մանրամասնորեն հիշատակվում են առաջին քիթեղների վրա:

3 Եվ այս քիթեղներն ըստ պատվիրանի պատրաստելուց հետո, ես՝ Նեփիս, պատվիրան ստացա, որ ծառայությունը և մարգարեու-

թյունները, դրանց առավել պարզ և արժեքավոր մասերը, պիտի գրվեն ^Մայս քիթեղների վրա. և որ այն բաները, որոնք գրված են, պիտի պահվեն իմ ժողովրդի ուսուցման համար, որը պիտի տիրի երկրին և նաև ուրիշ ^Բիմաստուն նպատակների համար, այն նպատակների, որոնք հայտնի են Տիրոջը:

4 Ուստի, ես՝ Նեփիս, մյուս քիթեղների վրա մի հիշատակարան գրեցի, որը տալիս է մի պատմություն, կամ, որը տալիս է իմ ժողովրդի պատերազմների և կռիվների և ավերումների ավելի մանրամասն պատմությունը: Եվ այս ես արել եմ և պատվիրել իմ ժողովրդին, թե ինչ պետք է անեն իմ գնալուց հետո. և որ այս քիթեղները պետք է փոխանցվեն մի սերնդից մյուսին, կամ մի մարգարեից մյուսին, մինչև Տիրոջ հետագա պատվիրանները:

5 Եվ իմ այս քիթեղները ^Մպատրաստելու մասին մի պատմություն կտրվի ապագայում. և հետո, ահա, ես շարունակում եմ՝ համաձայն նրա, ինչ ես ասացի. և այս ես անում եմ, որ առավել սրբազան բաները ^Մպահվեն իմ ժողովրդի իմացության համար:

6 Այնուամենայնիվ, ես չեմ գրում որևէ բան քիթեղների վրա, բացի նրանցից, որոնք կարծում եմ՝ ^Մսրբազան են: Եվ եթե ես սխալվում եմ, հնում նույնպես սխալվում էին. ես կկամենայի արդարացնել ինձ, ոչ թե ուրիշ մարդկանց պատճառով, այլ ես կկամենայի արդարացնել ինձ այն ^Բթուլությունների

19 1ա սուր քիթեղներ:
բ 1 Նեփի 1.16-17, 6.1-3:
2ա 2 Նեփի 5.30:
բ 1 Նեփի 9.1-5:
3ա Հակոբ 1.1-4, 3.13-14, 4.1-4:

բ 1 Նեփի 9.4-5, Մե 1.7, ՎևՌԲ 3.19-20, 10.1-51:
5ա 2 Նեփի 5.28-33:
բ սուր Սուրբ գրքեր – Սուրբ գրքերը պետք է պահպանվեն:

6ա Տե՛ս Մորմոնի Գ-րքի տխողոսաթերթը: սուր Սուրբ: բ Մորմ. 8.13-17, Եթեր 12.23-28:

համար, որոնք ինձանում են՝ ըստ մարմնի:

7 Քանի որ այն բաները, որոնք որոշ մարդիկ գնահատում են շատ արժեքավոր՝ և՛ մարմնի, և՛ հոգու համար, մյուսները ^աոչինչ են համարում և ոտնակոխ են անում: Այո, նույնիսկ, հենց Իսրայելի Աստծուն են մարդիկ ^բոտնակոխ անում. ես ասում եմ կոխ են տալիս իրենց ոտքերով, բայց ես կցանկանայի ասել այլ խոսքերով՝ նրանք ոչինչ են համարում նրան և ականջ չեն դնում նրա խորհուրդների ձայնին:

8 Եվ ահա, նա ^ագալու է, համաձայն հրեշտակի խոսքերի, Երուսաղեմն իմ հոր թողնելու ժամանակից ^բվեց հարյուր տարի անց:

9 Եվ աշխարհը, իր անօրինությունների պատճառով, կդատի նրան՝ որպես ոչ պիտանի մի բանի. ուստի, նրանք կխարազանեն նրան, և նա կտանի դա. և նրանք կգարկեն նրան, և նա կտանի դա: Այո, նրանք ^ակքքեն նրա վրա, և նա դա կտանի՝ մարդկանց զավակների հանդեպ իր ողորմության և երկայնամտության պատճառով:

10 Եվ մեր հայրերի ^աԱստվածը,

որի կողմից նրանք դուրս էին ^բբերվել Եգիպտոսից՝ ճորտությունից, և նաև պահպանվել անպատում, այո, Աբրահամի և Իսահակի ^գԱստվածը, և Հակոբի Աստվածը, համաձայն հրեշտակի խոսքերի, որպես մարդ ինքն իրեն ^դհանձնում է ամբարիշտ մարդկանց ձեռքը՝ ^եբարձրացվելու, ըստ ^զՉեմոքի խոսքերի, և ^էխաչվելու՝ ըստ Նեոմի խոսքերի, և ^զգերեզմանում թաղվելու՝ ըստ ^ըՋենոսի խոսքերի, որը նա ասել է երեքօրյա ^թխավարի կապակցությամբ, որը պետք է նշան լինի՝ տրված նրա մահվան մասին նրանց, ովքեր բնակվելու են ծովի կղզիներում, ավելի շուտ, հատկապես, տրված նրանց, ովքեր Իսրայելի ^իտնից են:

11 Քանզի, այսպես է խոսել մարգարեն. Տեք Աստված այդ օրը, անշուշտ, ^ակայցելի Իսրայելի ողջ տունը, ոմանց՝ իր ձայնով, նրանց արդարության պատճառով, ի մեծ ուրախություն և ի փրկություն իրենց, իսկ մյուսներին՝ իր գորության ^բորոտներով ու կայծակներով, փոթորկով, կրակով և ծխով և ^գխավարի մեզով և ^դգետնի

7ա2 Նեփի 33.2,
Հակոբ 4.14:
բ սո՛ւ Ապստամբություն:
8ա սո՛ւ Հիսուս Քրիստոս –
Մարգարեություններ
Հիսուս Քրիստոսի
ծննդի և մահվան
մասին:
բ 1 Նեփի 10.4,
2 Նեփի 25.19:
9ա Ես. Ծ.5-6,
Մատ. ԻԷ.30:
10ա 2 Նեփի 26.12,
Մոսիա 7.27, 27.30-31,
Ալմա 11.38-39,
3 Նեփի 11.14-15:
բ Ել. 9.2-10, 2.6,

1 Նեփի 5.15,
ՎևոՒ 136.22:
գ ԾՆ. ԼԲ.9, Մոսիա 7.19,
ՎևոՒ 136.21:
սո՛ւ Եհովա:
դ սո՛ւ Քավել,
Քավություն:
ե 3 Նեփի 27.14:
զ Ալմա 33.15, 34.7,
Հել. 8.19-20,
3 Նեփի 10.15-16:
սո՛ւ Մուրբ գրքեր –
Կորած սուրբ գրքեր.
Չեմոք:
է 2 Նեփի 6.9,
Մոսիա 3.9:
սո՛ւ Խաչելություն:

ը Մատ. ԻԷ.60,
Ղուկ. ԻԳ.53,
2 Նեփի 25.13:
բ Հակոբ 6.1, Հել. 15.11:
սո՛ւ Չեմոս:
ժ 1 Նեփի 12.4-5,
Հել. 14.20, 27,
3 Նեփի 8.3, 19-23,
10.9:
ի 3 Նեփի 16.1-4:
11ա 3 Նեփի 9.1-22,
ՀևոՒ 5.16:
բ Հել. 14.20-27,
3 Նեփի 8.5-23:
գ Ղուկ. ԻԳ.44-45,
3 Նեփի 8.19-20:
դ 2 Նեփի 26.5:

ճեղքվելով և ⁴լեռներով, որոնք վեր կբարձրացվեն:

12 Եվ ^աբոլոր այս բաները, անկասկած, պիտի գան, ասում է մարգարե ^ՔՋենոսը: Եվ երկրի ^Գժայռերը պիտի ծվատվեն. և երկրի հառաչանքների պատճառով, ծովի կղզիների թագավորներից շատերը Աստծո չոգուց կներգործվեն՝ բացականչելու. Բնության Աստվածը տառապում է:

13 Իսկ ինչ վերաբերում է նրանց, ովքեր Երուսաղեմում են, ասում է մարգարեն, նրանք ^ակխարազանվեն բոլոր ժողովուրդների կողմից, որովհետև նրանք ^բկխաչեն Իսրայելի Աստծուն և կխոտորեն իրենց սրտերը՝ ժխտելով նշաններն ու հրաշքները, և Իսրայելի Աստծո գորությունն ու փառքը:

14 Եվ որովհետև նրանք խոտորում են իրենց սրտերը, ասում է մարգարեն, և ^աարհամարհում են Սուրբին Իսրայելի, նրանք մարմնում կթափառեն ու կմեռեն, և կդառնան ^բսուլոցի ու ^Գասացվածքի առարկա, և կատվեն բոլոր ազգերի մեջ:

15 Այնուամենայնիվ, երբ այն օրը գա, ասում է մարգարեն, երբ նրանք ^աայլևս չեն խոտորի իրենց սրտերն ընդդեմ Սուրբն Իսրայելի, այն ժամանակ, կհիշի նա այն ^բուխտերը, որոնք նա արել էր նրանց հայրերին:

16 Այո, այն ժամանակ կհիշի նա ծովի ^ակղզիները. այո, և բոլոր

մարդկանց, ովքեր Իսրայելի տնից են, աշխարհի չորս կողմերից ես ^բկժողովեմ, ասում է Տերը, ըստ մարգարե Ջենոսի խոսքերի:

17 Այո, և ողջ աշխարհը ^ակտեսնի Տիրոջ փրկությունը, ասում է մարգարեն. ամեն մի ազգ, ցեղ, լեզու և ժողովուրդ կօրհնվի:

18 Եվ ես՝ Նեփիս, գրել եմ այս բաներն իմ ժողովրդին, որ միգուցե կարողանամ համոզել նրանց, որ նրանք հիշեն Տիրոջը՝ իրենց Քավչին:

19 Ուստի, ես խոսում եմ ողջ Իսրայելի տան համար, եթե լինի այնպես, որ ^աայս բաները նրանք ձեռք բերեն:

20 Քանի որ, ահա, ես հոգևոր ուժեղ ապրումներ ունեմ, որոնք ինձ հոգեմեջնում են այնքան, որ բոլոր հողերս թույլ են նրանց համար, ովքեր Երուսաղեմում են. քանզի եթե Տերը ողորմած չլինե՛ր՝ ցույց տալու ինձ նրանց վերաբերյալ, ճիշտ ինչպես որ հին մարգարեներին էր արել, ես նույնպես պետք է մեռած լինեի:

21 Եվ նա, անշուշտ, ցույց էր տվել ինձ ^ամարգարեներին բոլոր բաները նրանց ^բվերաբերյալ. և նա ցույց էր տվել շատերին նաև մեր վերաբերյալ. ուստի, անպայման պետք է, որ մենք իմանանք նրանց վերաբերյալ, քանի որ դրանք գրված են արույրե թիթեղների վրա:

22 Արդ, եղավ այնպես, որ ես՝

11ե 3 Նեփի 8.10:
12ա չեղ. 14.20–28:
բ չակոր 5.1:
գ Մատ. ԻԷ.51:
13ա Ղուկ. ԻԳ.27–30:
բ 2 Նեփի 10.3:
14ա Ես. ԾԳ.3–6,
Մոսիա 14.3–6:
բ սուր չրեաներ:

գ Բ Օր. ԻԸ.37,
Գ Թագ. Թ.7,
3 Նեփի 16.9:
15ա 1 Նեփի 22.11–12:
բ սուր Աբրահամի ուխտը:
16ա 1 Նեփի 22.4,
2 Նեփի 10.21:
բ Ես. ԽԹ.20–22:

սուր Իսրայել –
Իսրայելի ցրվելը:
17ա Ես. Խ.4–5:
19ա Ենոկս 1.16,
Մորմ. 5.12, 7.9–10:
21ա Գ. Թագ. ԺԷ.13,
Անոկս Գ.7:
սուր Մարգարե:
բ 3 Նեփի 10.16–17:

Նեփիս, սովորեցրեցի եղբայրներիս այս բաները. և եղավ այնպես, որ ես նրանց կարողացի շատ բաներ, որոնք փորագրված էին արույրե «թիթեղների վրա, որ նրանք կարողանային իմանալ Տիրոջ գործերի մասին ուրիշ երկրներում՝ հնադարյան մարդկանց մեջ:

23 Եվ ես կարողացի նրանց համար շատ բաներ, որոնք գրված էին Մովսեսի գրքերում. բայց, որպեսզի ես կարողանայի ավելի լիովին համոզել նրանց՝ հավատալու Տիրոջը՝ իրենց Քավչին, ես կարողացի նրանց համար այն, ինչը գրված էր ^բԵսայիա մարգարեի կողմից. քանի որ ես բոլոր սուրբ գրությունները ^գնմանեցնում էի մեզ, որպեսզի դա լիներ մեր ^դօգտի և ուսման համար:

24 Այդ պատճառով ես խոսեցի նրանց հետ՝ ասելով. Լսեք մարգարեի խոսքերը, դո՛ւք, որ Իսրայելի տան մի մնացորդ եք, մի ^աճյուղ, որ կտրվել էք. լսեք մարգարեի խոսքերը, որոնք գրվել են Իսրայելի ողջ տան համար, և դրանք ձեզ նմանեցրեք, որ դուք նույնպես կարողանաք հույս ունենալ, ինչպես ձեր եղբայրները, որոնցից դուք կտրվել եք. քանզի այս ձևով է մարգարեն գրել:

ԳԼՈՒԽ 20

Տերը հայտնում է իր նպատակները

Իսրայելին – Իսրայելն ընտրվել է չարչարանքի հնոցում և պետք է դուրս գա Բաբելոնից – Համեմատեք Եսայիա ԽԸ: Մոտ 588–570թթ. Զ.ծ.ա.:

ԱԿՆՋ դրեք ու լսեք սա, ո՛վ Հակոբի տուն, որ կոչվում եք Իսրայելի անունով և դուրս եք եկել Հուդայի ջրերից կամ ^ամկրտության ջրերից, որ երզվում եք Տիրոջ անունով և հիշատակում Իսրայելի Աստծուն, սակայն նրանք չեն երզվում ո՛չ ճշմարտությամբ, ո՛չ էլ արդարությամբ:

2 Այնուամենայնիվ, նրանք իրենց ^բսուրբ քաղաքից են կոչում, բայց չեն ^գապավինում Իսրայելի Աստծուն, որը Չորաց Տերն է. այո՛, Չորաց Տեր է նրա անունը:

3 Ահա, ես ^աառաջվա բաները սկզբից էի հայտարարել. և դրանք դուրս էին եկել իմ բերանից, և ես ցույց տվեցի դրանք: Ես ցույց տվեցի դրանք հանկարծակի:

4 Եվ ես դա արեցի, որովհետև գիտեի, որ ^բդու համառ ես, և քո պարանոցը երկաթե ջլերից է, իսկ ճակատդ՝ արույրից.

5 Եվ ես հենց սկզբից էի հայտարարել քեզ. մինչև այն իրականաբար, ես դրանք ցույց տվեցի քեզ, և ես դրանք ցույց տվեցի վախից, որ չլիներ թե ասեիր. – Իմ ^ակոռքն արեց դրանք, և իմ քանդակած արձանը, և իմ ձուլած արձանը հրամայեց դա:

6 Դու տեսար ու լսեցիր այս

22ա 1 Նեփի 22.1:
 23ա Ել. ԺԷ.14,
 1 Նեփի 5.11,
 Մովսես 1.40–41:
 բ 1 Նեփի 15.20,
 2 Նեփի 25.4–6,
 3 Նեփի 23.1:
 գ սո՛ր Սուրբ գրքեր –

Սուրբ գրքերի արժեքը:
 դ 2 Նեփի 4.15:
 24ա Ծն. ԽԹ.22–26,
 1 Նեփի 15.12,
 2 Նեփի 3.4–5:
 20 1ա սո՛ր Սկրտություն,
 Սկրտել:

2ա Ես. ԾԲ.1:
 սո՛ր Երուսաղեմ:
 բ նշ. ապավինել:
 3ա Ես. ԽԶ.9–10:
 4ա նշ. Իսրայել:
 5ա սո՛ր Կռապաշտություն:

բոլորը. և դուք չե՞ք հայտարարելու դրանք: Եվ որ ես ցույց եմ տվել քեզ նոր բաներ այս ժամանակից, նույնիսկ ծածուկ բաներ, և դու չգիտեիր դրանք:

7 Դրանք ստեղծվել են այժմ, և ոչ թե սկզբից, նույնիսկ այն օրվանից առաջ, երբ դու չէիր լսել դրանք, դրանք հայտարարվեցին քեզ, որ չլինի թե դու ասեիր.— Ահա, ես գիտեի դրանք:

8 Այո, և դու չես լսում. այո, ոչ էլ գիտես. այո, այդ ժամանակից քո ականջը բացված չէր. քանզի ես գիտեի, որ դու նենգաբար կվարվեիր, և «օրինազանց էիր կոչվում» արգանդից:

9 Այնուամենայնիվ, հանուն իմ «անվան, ես ետ կպահեմ իմ գայրույթը, և իմ փառքի համար, ես պիտի ետ պահեմ ինձ քեզանից, որպեսզի չբնաջնջեմ քեզ:

10 Քանի որ, ահա, ես գտել եմ քեզ, ես ընտրել եմ քեզ «չարչարանքի հնոցում:

11 Հանուն իմ սեփական օգտի, այո, հանուն իմ սեփական օգտի կանեմ ես այս, քանզի ես չեմ հանդուրժի, որ իմ «անունը կեղտոտվի, և ես թչեմ տա իմ փառքն ուրիշի:

12 Ականջ դիր ինձ, ո՛վ Հակոբ, և իմ անվանած Իսրայել, քանզի ես եմ նա. ես «առաջինն եմ, և ես նաև վերջինն եմ:

13 Իմ ձեռքն է «դրել նաև երկրի հիմքը, և իմ աջ ձեռքը՝ տարածել երկինքները: Ես կանչում եմ

նրանց, և նրանք միասին ոտքի են կանգնում:

14 Դ՛ո՛ւք, բոլո՛րդ, ժողովվեք և լսեք. նրանց միջից ո՞վ է հայտարարել այս բաներն իրենց: Տերը սիրեց նրան. այո, և նա «կկատարի իր խոսքը, որ նա հայտարարել է նրանց միջոցով. և նա կկատարի իր կամքը Քաբելոնի վրա, և նրա բազուկը պետք է գա Քաղդեացիների վրա:

15 Տերը նաև ասում է. Ես՝ Տերս, այո, ես եմ խոսել. այո, ես կանչել եմ նրան՝ հայտարարելու, ես բերել եմ նրան, և նա հաջողակ պիտի դարձնի իր ճանապարհը:

16 Եկեք ինձ մոտ. ես «գաղտնի չեմ խոսել. սկսած սկզբից, այն ժամանակից ի վեր, երբ այն հայտարարվեց, խոսել եմ ես. և Տեր Աստված ու նրա Հոգին է ուղարկել ինձ:

17 Եվ այսպես է ասում Տերը՝ քո «Քավիչը՝ Սուրբն Իսրայելի. Ես եմ ուղարկել նրան, Տերս՝ քո Աստվածը, որը սովորեցնում է քեզ օգտակարը, որն «առաջնորդում է քեզ այն ճանապարհով, որ դու պետք է գնաս. ե՛ս եմ արել դա:

18 Երանի՛ թե ականջ դրած լինեիր իմ «պատվիրաններին,— այդ դեպքում քո խաղաղությունը կլիներ գետի պես և քո արդարությունը՝ ծովի ալիքների պես:

19 Բո «սերունդը նույնպես ավազի պես կլիներ. քո որովայնի զավակունքը՝ այնտեղի խիճի պես.

8ա Սաղ. ԾԸ.3:
9ա Ա Թագ. ԺԲ.22,
Սաղ. ԻԳ.3, Ա
Հովհ. Բ.12:
10ա սո՛ւ Չախորդություն:
11ա Երեմ. ԽԴ.26:
բ Ես. ԽԲ.8,
Մովսես 4.1-4:
12ա Հայտ. Ա.17, ԻԲ.13:

սո՛ւ Ալֆա և Օմեգա.
Առաջնել:
13ա Սաղ. ԴԲ.25:
սո՛ւ Ստեղծել,
Ստեղծում:
14ա Գ Թագ. Ը.56,
ՎևոՒԲ 64.31, 76.3:
բ սո՛ւ Բաբելոն:

17ա սո՛ւ Քավիչ:
բ սո՛ւ Ոգեշնչում,
Ոգեշնչել.
Հայտնություն:
18ա Ժող. Ը.5:
19ա Ծն. ԻԲ.15-19,
Ովսե Ա.10:

նրա անունը չէր կտրվի, ոչ էլ կործանվի իմ առաջից:

20 ^աԴուրս եկեք Բաբելոնից, փախեք Քաղդեացիներից, գովերգող ձայնով հայտարարեք դուք, պատմեք սա, արտասանեք մինչև աշխարհի ծայրը. ասացեք՝ Տերը քավել է իր ^բժառառ Հակոբին:

21 Եվ նրանք ^աչժարավեցին. նա առաջնորդեց նրանց անապատներով. նա ^բժայռից ջուր դուրս հոսեցրեց նրանց համար. նա ժայռն էլ ճեղքեց, և ջրերը դուրս բխեցին:

22 Եվ չնայած նա արեց այս բոլորը և ավելի մեծ բաներ նույնպես, չկա ^ախաղաղություն ամբարիշտի համար, ասում է Տերը:

ԳԼՈՒԽ 21

Մեխան լույս է լինելու հեթանոսների համար և ազատելու է գերյալներին – Իսրայելը կժողովվի զորությանը վերջին օրերում – Թագավորները կլինեն նրանց խնամող հայրերը – Համեմատեք Եսայիայի ԽԹ: Մոտ 588–570թթ. Ք.ծ.ա.:

Եւ կրկին. Ականջ դրեք, ո՛վ Իսրայելի տուն, դո՛ւք, բոլորդ, ովքեր կտրված եք և դուրս եք քշված իմ ժողովրդի հովիվների ամբարշտության պատճառով. այո, դո՛ւք, բոլորդ, որ կտրված եք, ցրված եք ամենուրեք, ովքեր իմ ժողովրդից եք, ով Իսրայելի տուն: Լսեք ինձ, ո՛վ ^ակղզիներ, և ականջ դրեք, դո՛ւք, ժողովուրդներ ^բհեռվի. Տերը կանչել է ինձ արգանդից. իմ մոր

որովայնից նա հիշատակել է իմ անունը:

2 Եվ իմ բերանը սրած թրի պես է արել. իր ձեռքի հովանիի տակ է բաբրել ինձ և ինձ մի փայլուն նետ է շինել, իր կապարճում բաբրել ինձ.

3 Եվ ասել է ինձ. Դու իմ ^աժառանգես, ո՛վ Իսրայել, որով ես կփառավորվեմ:

4 Այն ժամանակ ես ասացի. Ես գուր աշխատեցի, ես դատարկ և գուր ծախսեցի ուժս. անշուշտ, իմ դատաստանը Տիրոջ մոտ է, և իմ վարձքն իմ Աստծո մոտ է:

5 Եվ այժմ, ասում է Տերը,– որն արգանդից ^աստեղծեց ինձ, որ ես լինեի իր ծառան Հակոբին կրկին իր մոտ բերելիս,– չնայած Իսրայելը դեռ չի հավաքվել, սակայն ես մեծարված կլինեմ Տիրոջ աչքում, և իմ Աստվածը կլինի իմ ուժը:

6 Եվ նա ասաց. Դա թեթև բան է, որ դու պետք է իմ ծառան լինես՝ Հակոբի ^ացեղերը բարձրացնելու և Իսրայելի պահպանվածներին վերադարձնելու համար: Ես քեզ նաև տալու եմ որպես ^բլույս՝ ^գհեթանոսների համար, որպեսզի դու լինես իմ փրկությունն աշխարհի ծայրերի համար:

7 Այսպես է ասում Տերը՝ Իսրայելի Քավիչը՝ նրա Սուրբը, նրան, ում մարդն արհամարհում է, նրան, ում ատում են ազգերը, իշխողների ծառային. Թագավորները կտեսնեն և վեր կկենան, իշխանները նույնպես պիտի երկրպագեն՝ Տիրոջ համար, որը հավատարիմ է:

20ա Երեմ. ԾԱ.6, վ՛կ.ՈՒԹ 133.5–14:
բ Ես. ԽԴ.1–2, 21:
21ա Ես. ԽԱ.17–20:
բ Ել. ԺԷ.6, Թվ. Ի.11, 1 Նեփի 17.29, 2 Նեփի 25.20:

22ա սո՛ւ Խաղաղություն:
21 1ա 1 Նեփի 22.4, 2 Նեփի 10.20–22:
բ վ՛կ.ՈՒԹ 1.1:
3ա Գլ. ԻԵ.55, Ես. ԽԱ.8, վ՛կ.ՈՒԹ 93.45–46:

5ա Ես. ԽԳ.24:
6ա սո՛ւ Իսրայել – Իսրայելի տասներկու ցեղերը:
բ վ՛կ.ՈՒԹ 103.8–10, Աբր. 2.10–11:
գ 3 Նեփի 21.11:

8 Այսպես է ասում Տերը. Բարեներ-
պաստ ժամանակ քեզ լսեցի, ո՛վ
ծովի կղզիներ, և փրկության օրը
քեզ օգնեցի. և ես կպահպանեմ քեզ
և կտամ քեզ՝ իմ ծառային, որպես
ուխտ ժողովրդի համար, հաստա-
տելու երկիրը, ժառանգեցնելու
ավերակված ժառանգությունները.

9 Որպեսզի դու ասես ՚բանտում
գտնվողներին. Դուրս եկեք. նրանց,
ովքեր նստած են ՚խավարում.
Յույց տվեք ձեզ: Նրանք կարածեն
ճանապարհներին, և նրանց Գարո-
տավայրերը կլինեն բոլոր բարձր
տեղերում:

10 Նրանք չեն սովի, ոչ էլ ծա-
րավի, ո՛չ շոգը, ո՛չ էլ արևը
կգարկի նրանց. քանզի նա, ով
ողորմություն ունի նրանց հան-
դեպ, պետք է առաջնորդի նրանց,
հենց ջրի աղբյուրներով կառաջ-
նորդի նրանց:

11 Եվ իմ բոլոր սարերը ճանա-
պարհ կշինեն, և իմ բոլոր ՚մայ-
րուղիները պիտի բարձրացվեն:

12 Եվ այն ժամանակ, ո՛վ
Իսրայելի տուն, ահա, ՚սրանք
կգան հեռվից. և ահա, սրանք՝ հյու-
սիսից ու արևմուտքից. և սրանք՝
Սինայի երկրից:

13 ՚Երգեք, ո՛վ երկիքներ. և
ցնձա, ո՛վ երկիր. քանզի նրանց
ոտքը, ովքեր արևելքում են, պիտի
հաստատվի. և պոռթկացեք երգով,
ո՛վ սարեր. քանզի նրանք այլևս
չեն ջախջախվի. քանզի, Տերը
մխիթարել է իր ժողովրդին և
կունենա ողորմություն իր չար-
չարվածների վրա:

14 Բայց, ահա, Սիոնն ասաց.
Տերը լքել է ինձ, և իմ Տերը մոռացել
է ինձ, բայց նա ցույց կտա, որ չի
մոռացել:

15 Քանզի կարո՞ղ է ՚կիրն մոռա-
նալ իր ծծկեր մանկանը, որ կա-
րեկցանք չունենա իր արգանդի
որդուն: Այո՛, նրանք կարող է
Բոռանան, սակայն ես քեզ չեմ
մոռանա, ո՛վ Իսրայելի տուն:

16 Ահա, ես փորագրել եմ քեզ
իմ ձեռքերի ՚ապիերի վրա. քո
պարիսպները մշտապես իմ առ-
ջևում են:

17 Քո զավակները կշտապեն քեզ
ավերողների դեմ. և նրանք, ովքեր
՚ավերեցին քեզ, դուրս պիտի գան
քեզանից:

18 Աչքերդ բարձրացրու շուրջ-
բոլորդ և տե՛ս. սրանք բոլորը
՚ժողովվում են միասին, և նրանք
պիտի գան քեզ մոտ: Եվ ինչպես
կենդանի եմ ես, ասում է Տերը, դու,
անշուշտ, պիտի հագնես նրանց
բոլորին՝ որպես զարդ, և նրանցով
գոտևորվես, ճիշտ ինչպես հարս:

19 Որովհետև քո ավերակները
և քո ամայի վայրերը, և քո փլա-
տակների երկիրը պետք է այժմ
նույնիսկ նեղ լինի բնակիչների
պատճառով. և նրանք, ովքեր
կլանել էին քեզ, կլինեն հեռվում:

20 Որդիքը, որ դու կունենաս,
առաջիններին կորցնելուց հետո,
նորից քո ականջին կասեն. Տեղը
շատ ՚նեղ է ինձ համար. տեղ տուր
ինձ, որ բնակվեմ:

21 Այդ ժամանակ ՚դու կասես
քո սրտում. Սրանց ո՞վ ծնեց ինձ

8ա2 Նեփի 3.6–15,
3 Նեփի 21.8–11,
Մորմ. 8.16, 25:
9ա սուր Փրկության
մահացածների համար:
բ 2 Նեփի 3.5:
գ Եզեկ. Լ.Գ.14:

11ա Ես. ԿԲ.10,
ՎևոՒ 133.23–32:
12ա Ես. ԽԳ.5–6:
13ա Ես. ԽԳ.23:
15ա սուր Կին, Կամայք:
բ Ես. ԽԱ.17, Ալմա 46.8,
ՎևոՒ 61.36:

16ա Չաք. ԺԳ.6:
17ա 3 Նեփի 21.12–20:
18ա Միքիա Գ.11–13:
20ա ԿԵՄ նեղ, ճնշող:
21ա ճշ. Սիոն:

ԳԼՈՒԽ 22

համար, տեսնելով, որ ես կորցրել եմ իմ զավակներին և Քամուլ եմ, գերյալ ու դեսուդեն թափառող: Եվ ո՞վ է մեծացրել սրանց: Ահա, ես մնացել էի մեմակ. սրա՛նք, որսե՞ղ էին նրանք:

22 Այսպես է ասում Տեր Աստված. Ահա, ես կբարձրացնեմ իմ ձեռքը դեպի ՝հեթանոսները և վեր կհանեմ իմ ՝դրոշը ժողովրդի համար. և նրանք իրենց ճճեռքերի վրա կբերեն քո որդիներին, և քո դուստրերին կտանեն իրենց ուսերին:

23 Եվ ՝թագավորները կլինեն քո ՝խնամող հայրերը, և նրանց թագուհիները՝ քո ստնտու մայրերը. նրանք երեսնիվայր մինչև գետին կխոնարհվեն քեզ և կլիգեն քո ոտքերի փոշին. և դու կիմանաս, որ ես եմ Տերը. քանզի նրանք, ովքեր Պսպասում են ինձ, ամոթով չեն մնա:

24 Քանզի մի՞թե հզորից կառնվի ավարը, կամ արդյոք ՝օրինական գերյալները կազատվե՞ն:

25 Բայց այսպես է ասում Տերը. Նույնիսկ հզորի գերիները կառնվեն և զարհուրելիի ավարը կազատվի. քանզի ես կկռվեմ նրա հետ, ով կռվում է քեզ հետ, և ես կփրկեմ քո զավակներին:

26 Եվ ես ՝կկերակրեմ նրանց, ովքեր քեզ ճնշում են, իրենց իսկ մտով. նրանք կհարբեն իրենց իսկ արյունով, ինչպես քաղցր գինով. և ամեն մարմին ՝կիմանա, որ ես՝ Տերս եմ քո Փրկիչը և քո Քավիչը՝ չակորի ճճզորը:

Իսրայելը կցրվի ողջ երկրի երեսով – Հեթանոսներն ավետարանով կկերակրեն ու կանուցեն Իսրայելին վերջին օրերում – Իսրայելը կհավաքվի և կփրկվի, իսկ ամբարիշտները հարդի պես կայրվեն – Դևի թագավորությունը կկործանվի և Սատանան կկապվի: Մոտ 588–570թթ. Ք.ծ.ա.:

ԵՎ եղավ այնպես, որ երբ ես՝ Նեփիս, կարդացի այս բաները, որոնք գրված էին արույրե ՝թիթեղների վրա, եղբայրներս եկան ինձ մոտ և ասացին ինձ. Ի՞նչ են նշանակում այդ բաները, որոնք դու կարդացիր: Ահա, դրանք պիտի հասկացվեն համաձայն այն բաների, որոնք հոգևո՞ր են, որ պիտի իրականանան համաձայն հոգու և ոչ թե մարմնի:

2 Եվ ես՝ Նեփիս, ասացի նրանց. Ահա, դրանք ՝հայտնի էին դարձել մարգարեին ՝Հոգու ձայնով. քանզի Հոգու միջոցով են բոլոր բաները հայտնի դարձվում ճմարգարեներին, ինչեր պիտի գան մարդկանց զավակների վրա՝ համաձայն մարմնի:

3 Ուստի, այն բաները, որոնց մասին ես կարդացի, բաներ են, որոնք վերաբերում են և՛ ՝մահկանացու, և՛ հոգևոր բաներին. քանզի երևում է, որ Իսրայելի տունը վաղ թե ուշ ՝կցրվի ողջ երկրի երեսով, և նաև բոլոր ազգերի մեջ:

21բ Ես. ԾԳ.1, Գաղ. Գ.27:
22ա Ես. ԿԶ.18–20:
բ Ես. ԺԱ.12, ԺԸ.3:
գ 1 Նեփի 22.8,
2 Նեփի 10.8–9:
23ա Ես. Կ.16:
բ 1 Նեփի 22.6:
գ 2 Նեփի 6.13,

ՎևՈՒ 98.2, 133.10–11,
45:
24ա 1 Նեփի 21.25:
26ա 1 Նեփի 22.13–14:
բ Մոսիա 11.22:
գ սո՛ր Եհովա:
22 1ա 1 Նեփի 19.22,
2 Նեփի 4.2:
2աԲ Պեա. Ա.19–21:

բ սո՛ր Մուրբ Հոգի:
գ սո՛ր Մարգարեություն,
Մարգարեանալ:
3ա ՎևՈՒ 29.31–34:
բ 1 Նեփի 10.12–14,
2 Նեփի 25.14–16:
սո՛ր Իսրայել –
Իսրայելի ցրվելը:

4 Եվ ահա, կան շատերը, որոնք արդեն կորել են նրանց իմացությունից, ովքեր Երուսաղեմում են: Այո՛, բոլոր ^ացեղերի մեծ մասը հեռու են ^բտարվել. և նրանք ցրված են դեսուդեն՝ ծովի ^գկղզիների վրա. և ուր են նրանք, մեզանից ոչ մեկը չգիտի, բացի այն, որ մենք գիտենք, որ նրանք հեռու են քշվել:

5 Եվ, որովհետև, նրանք հեռու են տարվել, այս բաները մարգարեացել են նրանց վերաբերյալ և նաև բոլոր նրանց վերաբերյալ, որոնք այսուհետև կցրվեն ու կձուլվեն՝ Իսրայելի Սուրբի պատճառով. քանզի նրա դեմ նրանք կկարծրացնեն իրենց սրտերը. այդ պատճառով նրանք պետք է ցրվեն բոլոր ազգերի մեջ և պետք է ^ատուվեն բոլոր մարդկանց կողմից:

6 Այնուամենայնիվ, երբ նրանք ^ասնուցվեն ^բհեթանոսների կողմից, և Տերը բարձրացնի իր ձեռքը հեթանոսների վրա և վեր հանի նրանց՝ որպես դրոշ, և նրանց ^գզավակները տարվեն նրանց ձեռքերին, և նրանց դուստրերը տարվեն նրանց ուսերին, ահա, այս բաները, որոնց մասին խոսվեց, իրական են. քանզի այսպիսին են Տիրոջ ուխտերը մեր հայրերի հետ, և դա վերաբերում է մեզ, և նաև բոլոր մեր եղբայրներին, մեր

զալիք օրերում, ովքեր Իսրայելի տնից են:

7 Եվ դա նշանակում է, որ գալիս է ժամանակը, որ Իսրայելի ողջ տունը ցրվելուց և ձուլվելուց հետո, որ Տեր Աստված մի հզոր ազգ կբարձրացնի ^ահեթանոսների միջից, այո, հենց այս երկրի երեսին. և նրանց կողմից մեր սերունդը պիտի ^բցրվի:

8 Եվ մեր սերնդի ցրվելուց հետո, Տեր Աստված կշարունակի մի ^ազարմանալի գործ անել ^բհեթանոսների մեջ, որը մեր սերնդի համար մեծ ^գարժեք կունենա. այդ պատճառով այն համեմատվում է հեթանոսների կողմից նրանց սնուցվելուն և ուսերի վրա տարվելուն:

9 Եվ այն մեծ ^աարժեք կունենա նաև հեթանոսների համար. և ոչ միայն հեթանոսների համար, այլ ^բողջ Իսրայելի ^գտան համար՝ հայտնի դարձնելու երկնքի Հոր ^դուխտերն Աբրահամի հետ՝ ասելով. Քո ^եսերնդով ^զկօրհնվեն երկրի բոլոր ցեղերը:

10 Եվ ես կցանկանայի, իմ եղբայրներ՛, որ դուք իմանայիք, որ երկրի բոլոր ցեղերը չեն կարող օրհնվել, մինչև նա ^աչմերկացնի իր բազուկն ազգերի աչքերի առջև:

11 Ուստի, Տեր Աստված կշարունակի մերկացնել իր բազուկը բոլոր ազգերի աչքերի առջև՝ իրա-

<p>4ա սուր Իսրայել – Իսրայելի տասը կորած ցեղերը: բ 2 Նեփի 10.22: գ 1 Նեփի 21.1, 2 Նեփի 10.8, 20: 5ա 1 Նեփի 19.14: 6ա 1 Նեփի 21.23: բ սուր Հեթանոսներ: գ 1 Նեփի 15.13: 7ա 3 Նեփի 20.27:</p>	<p>բ 1 Նեփի 13.12-14, 2 Նեփի 1.11: 8ա Ես. ԻԹ.14, 1 Նեփի 14.7, 2 Նեփի 27.26: սուր Ավետարանի վերականգնումը: բ 2 Նեփի 10.10-11, 3 Նեփի 16.4-7, Մորմ. 5.19: գ 1 Նեփի 15.13-18,</p>	<p>3 Նեփի 5.21-26, 21.7: 9ա 1 Նեփի 14.1-5: բ 2 Նեփի 30.1-7: գ 2 Նեփի 29.13-14: դ Բ Օր. Գ.31: ե սուր Աբրահամի ուխտը: զ Ծն. ԺԲ.2-3, 3 Նեփի 20.27, Աբր. 2.9-11: 10ա Ես. ԾԲ.10:</p>
--	--	---

գործելով իր ուխտերը և իր ավետարանը նրանց համար, ովքեր Իսրայելի տնից են:

12 Այդ պատճառով նա նրանց կրկին դուրս կբերի գերությունից, և նրանք պիտի ^ահավաքվեն իրենց ժառանգության հողերում, և նրանք դուրս կբերվեն մթությունից և ^բխավարից. և նրանք կիմանան, որ ^գՏերն է իրենց ^դՓրկիչը և իրենց ^եՔավիչը՝ ^զՀզորն Իսրայելի:

13 Եվ այն մեծ և ^ապիղծ եկեղեցու արյունը, որը ողջ աշխարհի պռոնիկն է, պիտի շրջվի իրենց իսկ գլխին. քանզի նրանք ^բկատերազմեն իրար միջև և իրենց ^գիսկ ձեռքերի սրերը կընկնեն իրենց իսկ գլխին, և նրանք պիտի հարբեն իրենց իսկ արյամբ:

14 Եվ ամեն ^աազգ, որը կպատերազմի քո դեմ, ո՛վ Իսրայելի տուն, պիտի դարձվեն մեկը մյուսի դեմ, և նրանք պիտի ^բընկնեն այն փոսը, որը փորել էին՝ Տիրոջ ժողովրդին որոգայթելու համար: Եվ բոլորը, ովքեր ^գկեղվեն Սիոնի դեմ, պիտի կործանվեն, և այն մեծ պռոնիկը, որը խեղաթյուրել է Տիրոջ ճշմարիտ ուղիները, այո, այն մեծ և պիղծ եկեղեցին ^դփռշուրն կհավասարվի, և մեծ կլինի նրա անկուրծ:

15 Քանզի անհա, ասում է մարգարեն՝ ժամանակն արագ մոտենում է, երբ Սասանան այլևս գորություն չի ունենա մարդկանց

զավակների սրտերի վրա. քանզի շուտով գալիս է օրը, երբ բոլոր հպարտները և նրանք, ովքեր գործում են ամբարշտորեն, ^ահարդի պես կլինեն. և գալիս է օրը, երբ նրանք պիտի ^բայրվեն:

16 Քանզի, ժամանակը շուտով գալիս է, երբ Աստծո լիակատար ^ացասումը դուրս կթափվի բոլոր մարդկանց զավակների վրա. քանզի նա չի հանդուրժի, որ ամբարիշտը կործանի արդարին:

17 Ուստի, նա ^ակպահպանի ^բարդարներին իր գորությանբ, նույնիսկ եթե այնպես լինի, որ նրա լիակատար ցասումը գա, և արդարները կպահպանվեն, մինչև իսկ նրանց թշնամիները կկործանվեն՝ կրակով: Ուստի, արդարը վախենալու կարիք չունի. քանզի, այսպես է ասում մարգարեն, նրանք պիտի փրկվեն, նույնիսկ, եթե դա լինի կրակով:

18 Ահա, իմ եղբայրներ՝, ես ասում եմ ձեզ, որ այս բաները պիտի շուտով գան. այո, նույնիսկ, արյուն և կրակ և ծխի մեզ պիտի գա. և դա պիտի անպայման լինի այս երկրի երեսին. և դա գալիս է մարդկանց վրա, ըստ մարմնի, եթե լինի այնպես, որ նրանք կարծրացնեն իրենց սրտերը՝ ընդդեմ Սուրբն Իսրայելի:

19 Քանզի անհա, արդարը չափի կորչի. քանի որ հաստատ պիտի գա ժամանակը, որ բոլոր

12ա սոս Իսրայել – Իսրայելի ցրվելը:
բ սոս Հոզեոյի խավար:
գ 2 Նեփի 6.10–11:
դ սոս Փրկիչ:
ե սոս Եհովա:
13ա սոս Գև – Գևի եկեղեցին:
բ 1 Նեփի 14.3, 15–17:
գ 1 Նեփի 21.26:

14ա Ղուկ. ԻԱ.10:
բ Ես. Կ.12, 1 Նեփի 14.3, ՎևոՒ 109.25:
գ 2 Նեփի 10.13, 27.3:
դ Ես. ԻԵ.12:
15ա Ես. Ե.23–24, Նաում Ա.10, Մաղ. Գ.1, 2 Նեփի 15.24, 26.4–6, ՎևոՒ 64.23–24, 133.64:

բ Մաղ. ԻԱ.9, 3 Նեփի 25.1, ՎևոՒ 29.9:
սոս Երկիր – Երկրի մաքրագործումը:
16ա 1 Նեփի 14.17:
17ա 2 Նեփի 30.10, Մովսես 7.61:
բ 1 Նեփի 17.33–40:

նրանք, ովքեր մարտնչում են Միոնի դեմ, պիտի արտաքսվեն:

20 Եվ Տերը, անշուշտ, կպատարաստի ճանապարհ իր ժողովրդի համար, ի կատարումն Մովսեսի խոսքերի, որ նա խոսել էր՝ ասելով. Տերը՝ ձեր Աստվածը, ինձ նման մի մարգարե կբարձրացնի ձեզ համար. նրան դուք պետք է լսեք բոլոր բաներում, ինչ նա ձեզ կասի: Եվ կլինի այնպես, որ բոլոր նրանք, ովքեր չեն լսի այդ մարգարեին, ^բկկտրվեն մարդկանց միջից:

21 Եվ այժմ ես՝ Նեփիս, հայտարարում եմ ձեզ, որ այս մարգարեն, ում մասին Մովսեսը խոսել էր, Սուրբն է Իսրայելի. ուստի, նա ^բդատաստան կանի արդարությամբ:

22 Եվ արդարները վախենալու կարիք չունեն, քանի որ, այդ նրանք են, որոնք չեն կործանվի: Այլ դա դևի թագավորությունն է, որ պետք է կառուցվի մարդկանց զավակների մեջ, թագավորություն, որը հաստատված է նրանց մեջ, որոնք մարմնում են,–

23 Քանզի ժամանակն արագ կգա, երբ բոլոր ^աեկեղեցիները, որոնք կառուցվել են շահ ստանալու համար, և բոլոր նրանք, որոնք կառուցվել են մարմինների վրա իշխելու համար, և նրանք, որոնք կառուցվել են՝ աշխարհի աչքում ^բհանրաճանաչ դառնալու համար, և նրանք, որոնք ձգտում են մարմնի տոփանքների և աշխարհի

բաների և ամեն տեսակի անօրինությունն անելու. այո, վերջապես, բոլոր նրանք, ովքեր պատկանում են դևի թագավորությանը, նրանք է, որ պետք է վախենան և դողան և ^գսարսռեն. այդ նրանք է, որ պետք է փոշուն հավասարեցվեն. նրանք է, որ պետք է հարդի պես ^աայրվեն, և դա՝ համաձայն մարգարեի խոսքերի:

24 Եվ ժամանակն արագ գալիս է, երբ արդարները կառաջնորդվեն զոմի ^ահորթերի պես, և Սուրբն Իսրայելի կթագավորի գերիշխանությամբ և հզորությամբ և զորությամբ և մեծ փառքով:

25 Եվ նա ^ահավաքում է իր զավակներին աշխարհի չորս կողմերից. և նա հաշվում է իր ոչխարներին, և նրանք գիտեն նրան. և պիտի լինի մեկ հոտ և մեկ ^բհովիվ. և նա պիտի կերակրի իր ոչխարներին, և նրանում նրանք ^գարոտ կզտեն:

26 Եվ նրա ժողովրդի արդարության շնորհիվ ^աՄատանան զորություն չունի. այդ պատճառով նա չի կարող արձակվել ^բշատ տարիների ընթացքում. քանի որ զորություն չունի մարդկանց սրտերի վրա, քանզի նրանք բնակվում են արդարության մեջ և Իսրայելի Սուրբն է ^գթագավորում:

27 Եվ այժմ, ահա, ես՝ Նեփիս, ասում եմ ձեզ, որ բոլոր այս բաները պետք է զան՝ համաձայն մարմնի:

20ա Հովհ. Գ.19, Է.40:
բ ՎևոՒ 133.63:
21ա Բ Օր. ԺԸ.15, 18,
Գոր. Գ.20–23,
1 Նեփի 10.4,
3 Նեփի 20.23:
բ Սաղ. ԴԸ.9,
Մովսես 6.57:
23ա 1 Նեփի 14.10,

2 Նեփի 26.20:
սոՒ Քահանանեճուր-
բյում:
բ Դուկ. Զ.26, Ալմա 1.3:
գ 2 Նեփի 28.19:
դ 2 Նեփի 26.6:
24ա Անովս Զ.4, Մաղ. Գ.2,
3 Նեփի 25.2:
25ա սոՒ Իսրայել –

Իսրայելի ցրվելը:
բ սոՒ Բարի հովիվ:
գ Սաղ. ԻԳ:
26ա Հայտ. Ի.2, Ալմա 48.17,
ՎևոՒ 43.31, 45.55,
88.110, 101.28:
սոՒ Դև:
բ Հակոբ 5.76:
գ սոՒ Հազարամյակ:

28 Բայց, ահա, բոլոր ազգերը, ցեղերը, լեզուները և ժողովուրդները պիտի բնակվեն ապահով Սուրբովն Իսրայելի, եթե այնպես լինի, որ նրանք ^աապաշխարեն:

29 Եվ այժմ, ես՝ Նեփիս, վերջացնում եմ. քանի որ այլևս չեմ համարձակվում խոսել ավելին այս բաների վերաբերյալ:

30 Ուստի, իմ եղբայրներ՝, ես կկամենայի, որ դուք հաշվի առնեք, որ այն բաները, որոնք գրված

են արույրե ^աթիբեդների վրա, ճշմարիտ են. և դրանք վկայում են, որ մարդ պետք է հնազանդ լինի Աստծո պատվիրաններին:

31 Ուստի, դուք չպետք է ենթադրեք, որ ես և հայրս միակն ենք, որ վկայել ենք և մաս սովորեցրել դրանք: Հետևաբար, եթե դուք հնազանդ լինեք ^ապատվիրաններին և համբերեք մինչև վերջ, դուք կփրկվեք վերջին օրը: Եվ դա այդպես է: Ամեն:

ՆԵՓԻ ԵՐԿՐՈՐԴ ԳԻՐՔԸ

Լեքիի մահվան պատմությունը: Նեփիի եղբայրներն ապստամբում են նրա դեմ: Տերը նախազգուշացնում է Նեփիին՝ հեռանալ անապատ: Նրա ճամփորդություններն անապատում և այլն:

ԳԼՈՒԽ 1

Լեքին մարգարեանում է ազատության մի երկրի վերաբերյալ – Նրա սերունդը կցրվի և կզարկվի, եթե նրանք մերժեն Սուրբին Իսրայելի – Նա հորդորում է իր որդիներին հազմել արդարության զենքերը: Մոտ 588–570թթ. Ք.ծ.ա.:

Եվ եղավ այնպես, որ երբ ես՝ Նեփիս, վերջ դրեցի իմ եղբայրներին սովորեցնելուն, մեր ^ահայրը՝ Լեքին, մույնպես շատ բաներ խոսեց նրանց հետ և կրկնեց նրանց, թե ինչ մեծ բաներ էր արել Տերը նրանց համար, դուրս բերելով նրանց Երուսաղեմի հողից:

2 Եվ նա խոսեց նրանց հետ ջրերի վրա իրենց ^աապստամբությունների և Աստծո ողորմությունների մասին, որը նրանց կյանքը խնայում էր, որպեսզի կույ չգնային ծովին:

3 Եվ նա խոսեց նրանց հետ մաս խոստումի երկրի մասին, որը նրանք ձեռք էին բերել, որքան ողորմած էր Տերը եղել՝ նախազգուշացնելով մեզ, որ մենք պետք է դուրս փախչեինք Երուսաղեմի հողից:

4 Քանզի, ահա, ասաց նա, ես ^ատեսիլք եմ տեսել, որով ես գիտեմ, որ ^բԵրուսաղեմը կործանվել է. և եթե մենք մնացած լինեինք Երուսաղեմում, մենք մույնպես ^գկորած կլինեինք:

28ա սուր Ապաշխարել, Ապաշխարություն. Ներել:
30ա2 Նեփի 4.2:
31ա Մատ. ԺԹ.17:
սուր Պատվիրաններն

Աստծո: [2 Նեփի]
11ա սուր Հայրապետ, Հայրապետական:
2ա1 Նեփի 18.9–20:
4ա սուր Տեսիլք:

բ Գ.Թագ. ԻԳ.14–15, Երեմ. ԽԳ.2,
1 Նեփի 1.4,
Հել. 8.20:
գ Ալմա 9.22:

5 Բայց, ասաց նա, չնայած մեր չարչարանքներին, մենք ձեռք ենք բերել խոստումի՝ ^աերկիր, երկիր, որը բոլոր մյուս երկրներից ավելի ^բընտիր է. երկիր, որը Տեր Աստված ուխտել է ինձ հետ՝ լինելու մի երկիր իմ սերնդի ժառանգության համար: Այո, Տերը հավիտյան ^գուխտել է այս երկիրն ինձ և իմ զավակներին, և նաև բոլոր նրանց, ովքեր դուրս կառաջնորդվեն ուրիշ երկրներից Տիրոջ ձեռքով:

6 Ուստի, ես՝ Լեքիս, մարգարեանում եմ, համաձայն Հոգու ներգործումների, որն ինձանում է, որ ոչ ոք ^աչի գա այս երկիրը, եթե նա չբերվի Տիրոջ ձեռքով:

7 Ուստի, այս ^աերկիրը նվիրագործված է նրա համար, ում նա կբերի: Եվ եթե լինի այնպես, որ նրանք ծառայեն նրան, ըստ այն պատվիրանների, որոնք նա տվել է, այն կլինի ^բազատության երկիր նրանց համար. ուստի, նրանք երբեք չեն տարվի գերության. եթե այդպես լինի, դա կլինի անօրինության պատճառով. քանզի եթե անօրինությունը շատանա, երկիրը նրանց համար ^գանիծված կլինի, իսկ արդարների համար այն օրհնված կլինի հավիտյան:

8 Եվ, ահա, դա իմաստություն է, որ այս երկիրը դեռ պետք է պահվի մյուս ազգերի իմացությունից. քանզի ահա, բազմաթիվ ազգեր կհեղեղեին երկիրը, այնպես որ ժառանգության համար տեղ չէր լինի:

9 Ուստի, ես՝ Լեքիս, ձեռք եմ

բերել խոստում, որ ^աորքան որ նրանք, ում Տեր Աստված դուրս կբերի Երուսաղեմի հողից, կպահեն նրա պատվիրանները, նրանք ^բկբարգավաճեն այս երկրի երեսին. և նրանք կպահվեն բոլոր մյուս ազգերից, որ կարողանան տիրել այս երկրին՝ իրենց համար: Եվ եթե լինի այնպես, որ նրանք ^գպահեն նրա պատվիրանները, նրանք կօրհնվեն այս երկրի երեսին և չի լինի մեկը, որ նեղություն պատճառի նրանց, ոչ էլ խլի նրանց ժառանգության հողը. և նրանք ապահով կբնակվեն հավիտյան:

10 Բայց ահա, երբ գա ժամանակը, որ նրանք անհավատության մեջ ընկնեն, Տիրոջ ձեռքից այնպիսի մեծ օրհնություններ ստանալուց հետո, գիտելիք ունենալով երկրի և բոլոր մարդկանց ստեղծման մասին, իմանալով Տիրոջ մեծ ու զարմանալի գործերն աշխարհի արարումից ի վեր. իրենց տրված զորություն ունենալով անելու բոլոր բաները հավատքով. սկզբից ի վեր ունենալով բոլոր պատվիրանները և նրա անասհման բարությանը բերված լինելով այս ընտիր երկիրը խոստումի, ահա, ես ասում եմ, եթե գա այն օրը, որ նրանք մերժեն Սուրբին Իսրայելի՝ ճշմարիտ ^աՄեսիային՝ իրենց Քավչին և իրենց Աստծուն, ահա, դատաստանները նրա, ով արդար է, կհանգչեն նրանց վրա:

11 Այո, նա ^աուրիշ ազգեր կբերի նրանց մոտ, և զորություն կտա նրանց, և կվերցնի նրանցից

5ա սոս Խոստացված երկիր:
բ Եթեր 2.9–10:
գ սոս Ուխտ:
6ա 2 Նեփի 10.22:
7ա Սոսիա 29.32, Ալմա 46.10, 20:

բ 2 Նեփի 10.11:
սոս Անկախություն:
գ Ալմա 45.10–14, 16, Մորմ. 1.17, Եթեր 2.8–12:
9ա 2 Նեփի 4.4, Ալմա 9.13:

բ Բ Օր. ԻԹ.9:
գ սոս Հնազանդություն, Հնազանդ, Հնազանդվել:
10ա սոս Մեսիա:
11ա 1 Նեփի 13.12–20, Մորմ. 5.19–20:

իրենց տոհմական հողերը և այնպես կանի, որ նրանք թցրվեն ու զարկվեն:

12 Այո, երբ մի սերունդը փոխվի մյուսով, կլինեն «արյունահեղություններ և մեծ այցելություններ նրանց մեջ. ուստի, իմ որդիներ, ես կկամենայի, որ դուք հիշեք. այո՛, ես կկամենայի, որ դուք ականջ դնեք իմ խոսքերին:

13 Ա՛խ, երանի թե դուք արթնանաք. արթնանաք խորը քնից, այո, այսինքն՝ «դժոխքի քնից և թոթափեք ահավոր շղթաները, որոնցով դուք կապված եք, որոնք այն շղթաներն են, որ կապում են մարդկանց զավակներին, որպեսզի նրանք տարվեն գերության՝ ներքև, դեպի թշվառության ու վայի հավերժական գանդունդը:

14 Չարքներ և բարձրացեք փոշուց և լսեք խոսքերը դողահար ծնողի, որի ձեռքն ու ոտքը դուք շուտով պետք է սառը և լուռ թգերեզմանը դնեք, որտեղից ոչ մի ճամփորդ չի կարող վերադառնալ. ևս մի քանի օր, և ես գնալու եմ երկրի ողջ ճճանապարհը:

15 Բայց ահա, Տերը՝ փրկագնել է իմ հոգին դժոխքից, և ես տեսել եմ նրա փառքը և ես հավերժորեն օղակված եմ նրա թսիրո թբազուկների մեջ:

16 Եվ ես փափագում եմ, որ դուք հիշեք պահել Տիրոջ՝ կանոններն ու դատաստանները. ահա, սա է

եղել իմ հոգու անհանգստությունը՝ սկզբից ի վեր:

17 Իմ սիրտը վշտից ծանրացած է եղել, ժամանակ առ ժամանակ, քանզի ես սարսափել եմ, որ չլինի թե ձեր սրտերի կարծրության համար Տերը՝ ձեր Աստվածը, դուրս գա ձեզ վրա իր լիակատար՝ «ցասման մեջ, այնպես որ դուք թկտրվեք և կործանվեք հավիտյան.

18 Կամ, որ մի անեծք գա ձեզ վրա՝ շատ սերունդների ընթացքում. և ձեզ այցելեն սրով ու սովով, և ատեն և առաջնորդեն համաձայն թղևի կամքի ու գերության:

19 Ո՛վ իմ որդիներ, երանի այս բաները չգան ձեզ վրա, այլ որ դուք լինեք Տիրոջ ընտրյալ և «արտոնյալ մի ժողովուրդ: Բայց, ահա, թող նրա կամքը կատարվի. քանզի նրա ճճանապարհներն արդարություն են հավիտյան:

20 Եվ նա ասել է որ. «Որքան որ դուք կպահեք իմ պատվիրանները, դուք՝ կբարգավաճեք երկրի վրա. բայց որքան որ դուք չեք պահի իմ պատվիրանները, դուք կկտրվեք իմ ներկայությունից:

21 Եվ այժմ, որպեսզի իմ հոգին կարողանա ուրախություն ունենալ ձեզանում, և որպեսզի իմ սիրտը կարողանա ուրախությամբ թողնել այս աշխարհը շնորհիվ ձեզ, որպեսզի ես վայր չիջեցվեմ գերեզման կսկիծով ու վշտով, ելեք փոշուց, իմ որդիներ, և՛ տղամարդ

11թ 1 Նեփի 22.7:
12ա Մորմ. 1.11-19, 4.11:
13ա սո՛ւ Գժոխք:
բ Ալմա 12.9-11:
գ 1 Նեփի 15.28-30, չեղ. 3.29-30:
14ա սո՛ւ Ծնողներ:
բ սո՛ւ Մահ ֆիզիկական:
գ չես. ԻԳ. 14:
15ա Ալմա 36.28:
սո՛ւ Բավել, Թավոթյուն:

բ Հռովմ. Ը.39:
սո՛ւ Սեր:
գ Հակոբ 6.5, Ալմա 5.33, 3 Նեփի 9.14:
16ա Բ Օր. Դ.5-8,
2 Նեփի 5.10-11:
17ա 2 Նեփի 5.21-24, Ալմա 3.6-19:
բ Մոսիա 12.8:
18ա 1 Նեփի 12.20-23:
բ սո՛ւ Դև:

19ա սո՛ւ Ընտրյալ:
բ Ովև ԺԴ.9:
20ա Հարոմ 1.9, Մոսիա 1.6-7, Ալմա 9.13-14:
բ Ղև. ԻԶ.3-14, Հովելի Բ.23-26:
գ Սաղ. ԿԷ.6, Մոսիա 2.21-25:
21ա Ա Թագ. Դ.9, Գ Թագ. Բ.2:

եղէք, և եղէք վճռական, մտքով ^բմեկ և սրտով մեկ՝ բոլոր բաներում միաբանված, որպէսզի դուք չզնաք ներքև՝ գերութեան.

22 Որպէսզի դուք չանհիծվէք դառն անեծքով. և նաև, որպէսզի դուք ձեզ վրա չհրավիրէք ^աարդար Աստծո ղժգոհութիւնը՝ ի կործանումն, այո, երկուստեք՝ հոգու և մարմնի հավերժական կործանումը:

23 Չարթներք, իմ որդիներ. հագեք արդարութեան ^ազենքերը: Թոթափեք շղթաները, որոնցով դուք կապված եք, և դուրս եկէք մթութեան միջից, և վեր ելէք փշուց:

24 Այլևս մի ապստամբէք ձեր եղբոր դէմ, որի տեսիլքները փառավոր են, և որը պահել է պատվիրանները՝ այն ժամանակից ի վեր, որ մենք թողեցինք Երուսաղէմը. և որը Աստծո ձեռքում եղել է գործիք՝ բերելով մեզ առաջ, դէպի խստումի երկիրը. քանզի եթէ չլինէր նա, մենք անապատում ^ասովից մեռած կլինեինք. սակայն դուք ջանում էիք ^բխլել նրա կյանքը. այո, և նա շատ վիշտ տարավ ձեր պատճառով:

25 Եվ ես չափազանց վախենում և դողդողում եմ ձեզ համար, որ չլինի թե նա նորից տառապի. քանզի, ահա, դուք մեղադրում եք նրան, որ նա ձեզ վրա իշխանություն և ^աիրավունք է փնտրում. բայց ես գիտեմ, որ նա չի փնտրել ո՛չ իշխանություն, ո՛չ էլ իրավունք ձեզ վրա, այլ փնտրել է Աստծո փառքը և ձեր սեփական հավերժական բարօրությունը:

26 Եվ դուք տրտնջացել եք, որովհետև նա շիտակ է եղել ձեր հանդէպ: Դուք ասում եք, որ նա ^ախատություն է գործադրել. դուք ասում եք, որ նա բարկացել է ձեզ վրա. բայց ահա, նրա խստութիւնը Աստծո խոսքի գորութեան խստութիւնն էր, որը նրա մեջ էր. և այն, ինչը դուք կոչում եք բարկություն, ճշմարտութիւնն էր, համաձայն նրա, ինչը Աստծո մեջ է, որը նա չէր կարող զսպել՝ համարձակորեն բացահայտելով ձեր անօրինությունները:

27 Եվ դա անպայման պետք է լինի, որպէսզի Աստծո ^ագորութիւնը լինի նրա հետ, մինչև իսկ պատվիրելու ձեզ, որպէսզի դուք հնազանդվէք: Բայց ահա, այդ նա չէր, այլ Տիրոջ ^բՀոգին էր, որը նրա մեջ էր, որը ^բբացեց նրա բերանը խոսելու համար, որ նա չկարողացավ փակել այն:

28 Եվ այժմ, որդի՛ս, Լաման, և նաև Լեմուել ու Սամ, և նաև իմ որդիներ, որ Իսմայելի որդիներն եք, ահա, եթէ դուք ականջ դնէք Նեփիի ձայնին, դուք չեք կորչի: Եվ եթէ դուք կամենաք ականջ դնել նրան, ես ձեզ թողնում եմ ^աօրհնություն, այո, նույնիսկ իմ առաջին օրհնությունը:

29 Բայց, եթէ դուք չկամենաք ականջ դնել նրան, ես վերցնում եմ իմ ^աառաջին օրհնությունը, այո, այսինքն՝ իմ օրհնությունը, և այն կհանգչի նրա վրա:

30 Եվ այժմ, Չորամ, ես խոսում եմ քեզ հետ: Ահա, դու Լաբանի ^ածառան ես. սակայն դու դուրս ես

21բ Մովսէս 7.18:
22ա ՎևոՒ 3.4:
23ա Եփես. 2.11-17:
24ա 1 Նեփի 16.32:
բ 1 Նեփի 16.37:
25ա Ծն. ԼԷ.9-11:

26ա Առակ. ԺԵ.10,
1 Նեփի 16.2,
Մոր. 9.4,
ՎևոՒ 121.41-43:
27ա 1 Նեփի 17.48:
բ ՎևոՒ 121.43:

գ ՎևոՒ 33.8:
28ա սուր Անդրանիկություն:
29ա Աբր. 1.3:
30ա 1 Նեփի 4.20, 35:

բերվել Երուսաղեմի հողից, և ես գիտեմ, որ դու ճշմարիտ ընկեր ես՝ իմ որդի Նեփիի համար հավիտյան:

31 Ուստի, քանի որ դու հավատարիմ ես եղել, քո սերունդը կօրհնվի նրա սերնդի «հետ, որ նրանք երկար բնակվեն այս երկրի երեսին բարեկեցության մեջ. և ոչինչ, բացի անօրինությունից նրանց մեջ, չի վնասի, կամ խանգարի նրանց բարեկեցությանը, այս երկրի երեսին, հավիտյան:

32 Ուստի, եթե դու պահես Տիրոջ պատվիրանները, Տերը նվիրագործել է այս երկիրը, քո սերնդի ապահովության համար, իմ որդու սերնդի հետ:

ԳԼՈՒԽ 2

Փրկագնումը գալիս է Սուրբ Մեսիայի միջոցով – Ընտրության ազատությունը (ազատ կամքը) էական է գոյության և առաջընթացի համար – Աղանձ ընկավ, որպեսզի մարդկությունը լինի – Մարդիկ ազատ են ընտրել ազատություն և հավերժական կյանք: Մոտ 588–570թթ. Բ.ծ.ա.:

Ես այժմ, Հակոբ՝ ես խոսում եմ քեզ հետ. Անապատում, իմ նեղության օրերում, իմ «առաջնեկն ես դու: Եվ, ահա, քո մանկության տարիներին դու տարել ես չարչարանքներ և շատ վիշտ՝ քո եղբայրների կոպտության պատճառով:

2 Այնուամենայնիվ, Հակոբ, անապատում իմ առաջնեկ, դու գիտես Աստծո մեծությունը. և նա կնվիրագործի քո չարչարանքները քո օգտի համար:

3 Ուստի, քո հոգին կօրհնվի և դու ապահով կբնակվես քո եղբոր՝ Նեփիի հետ. և օրերդ կանցնեն քո Աստծո ծառայության մեջ: Ուստի, ես գիտեմ, որ դու փրկագնված ես քո Բավչի արդարության շնորհիվ. քանզի դու տեսել ես, որ ժամանակի լրիվության մեջ նա գալիս է՝ փրկություն բերելու մարդկությանը:

4 Եվ դու «տեսել ես նրա փառքը քո երիտասարդության տարիներին. ուստի, դու օրհնված ես հենց նրանց պես, որոնց նա կժառայի՝ մարմնում. քանզի, Հոգին նույնն է՝ երեկ, այսօր և հավիտյան: Եվ ուղին պատրաստված է՝ մարդու անկումից ի վեր և փրկությունն Բանհատույց է:

5 Եվ մարդիկ բավականին ուսուցանված են, որ բարին «տարբերեն չարից: Եվ օրենքը տրված է մարդկանց: Եվ օրենքով ոչ մի մարմին չի Բարդարացվում. կամ օրենքով՝ մարդիկ կտրված են: Այո, մարմնական օրենքով նրանք Գկտրված էին. և հոգևոր օրենքով նույնպես, նրանք մահանում են բարի բաների նկատմամբ և դառնում հավիտյան թշվառ:

6 Ուստի, «փրկագնումը Սուրբ Մեսիայի մեջ է և նրա միջոցով. քանզի նա լի է Գնորհով և ճշմարտությամբ:

31ա2 Նեփի 5.6:
2 1ա 1 Նեփի 18.7:
4ա2 Նեփի 11.3,
Հակոբ 7.5:
բ սու՝ Ընտրի:
5աՍոր. 7.16:
բ Հռովմ. Գ.20,
2 Նեփի 25.23,

Ալմա 42.12–16:
սու՝ Արդարացում,
Արդարացնել:
գ 1 Նեփի 10.6,
2 Նեփի 9.6–38,
Ալմա 11.40–45, 12.16,
24, 42.6–11,
Հել. 14.15–18:

6ա 1 Նեփի 10.6,
2 Նեփի 25.20,
Ալմա 12.22–25:
սու՝ Փրկագնման
ծրագիր:
բ սու՝ Մեսիա:
գ Հովհ. Ա.14, 17,
Մովսես 1.6:

7 Ահա, նա իրեն ^ազոհ է մատուցում մեղքի համար՝ բավարարելու օրենքի պահանջները, բոլոր նրանց համար, ովքեր ունեն կոտրված սիրտ ու փշրված հոգի. և ուրիշ ոչ մեկի համար օրենքի ^բպահանջները չեն կարող բավարարվել:

8 Ուստի, որքան մեծ է այս բաները հայտնի դարձնելու կարևորությունը երկրի բնակիչներին, որպեսզի նրանք իմանան, որ չկա մարմին, որ կարող է բնակվել Աստծո ներկայության մեջ, ^աբացի դա լինի Սուրբ Մեսիայի արժանիքների, ողորմության և շնորհի միջոցով, որը վայր է դնում իր կյանքը՝ ըստ մարմնի, և կրկին վերցնում է այն, Հոգու գործածությամբ, որպեսզի կարողանա իրագործել մեռելների ^բհարությունը՝ լինելով առաջինը, որ պիտի հարություն առնի:

9 Ուստի, նա առաջնապատուղ է Աստծո համար, այնպես որ նա ^ակբարեխոսի բոլոր մարդկանց զավակների համար. և ովքեր հավատում են նրան, կփրկվեն:

10 Եվ ^աբոլորի համար բարեխոսության շնորհիվ, բոլոր մարդիկ գալիս են Աստծո մոտ. ուստի, նրանք կանգնում են նրա ներկայության մեջ, ^բդատվելու նրա կողմից, համաձայն այն ճշմարտության և ^գսրբության, որը նրանում է: Ուստի, օրենքի պահանջները,

որոնք Սուրբը տվել է՝ պատժի ենթարկելու, որը սահմանված է, այդ սահմանված պատիժը հակադրության մեջ է այն երջանկության հետ, որը սահմանված է՝ ^բբավության պահանջները բավարարելու համար,

11 Քանզի, անպայման պետք է, որ ^ահակադրություն լինի բոլոր բաներում: Եթե այդպես չլիներ, անապատում իմ առաջնեկ, արդարությունը չէր կարող իրագործվել, ոչ էլ ամբարշտությունը, ո՛չ սրբությունը, ո՛չ էլ թշվառությունը, ո՛չ լավը, ո՛չ էլ վատը: Ուստի, բոլոր բաները պետք է որ բաղադրված լինեին մեկում. ուստի, եթե լիներ մեկ մարմին, այն անպայման պետք է մնար մեռած՝ ունենալով ո՛չ կյանք, ո՛չ էլ մահ, ո՛չ ապականություն, ո՛չ էլ անապականություն, ո՛չ երջանկություն, ո՛չ էլ թշվառություն, ո՛չ զգայունություն, ո՛չ էլ անզգայունություն:

12 Ուստի, դա անպայման պետք է ստեղծված լիներ, որպես ոչինչ մի բան. հետևաբար, դրա ստեղծման վերջում ոչ մի ^անպատակ չէր լինի: Ուստի, այս բանն անպայման պիտի կործաներ Աստծո իմաստությունը և նրա հավերժական նպատակները, և նաև Աստծո գործությունը և ողորմությունը և ^բարդարադատությունը:

13 Եվ եթե դու ասես՝ ^աչկա օրենք, դու կասես նաև չկա մեղք: Եթե դու

<p>7ա սուբ Քավել, Քավություն: <i>բ</i> Հռովմ. Ժ.4: 8ա2 Նեփի 25.20, 31.21, Մոսիա 4.8, 5.8, Ալմա 38.9: <i>բ</i> Ա Կոր. ԺԵ.20, Ալմա 7.12, 12.24-25, 42.23: սուբ Հարություն:</p>	<p>9ա Ես. ԾԳ.1-12, Մոսիա 14.12, 15.8-9: 10ա սուբ Քավիչ: <i>բ</i> սուբ Վերջին դատաստան: <i>գ</i> սուբ Սրբություն: <i>դ</i> 2 Նեփի 9.7, 21-22, 26, Ալմա 22.14, 33.22, 34.9:</p>	<p>11ա Վևո 29.39, 122.5-9: սուբ Զախորություն: 12ա Վևո 88.25-26: սուբ Երկիր - Մարդկանց համար ստեղծված: <i>բ</i> սուբ Արդարադատություն: 13ա2 Նեփի 9.25:</p>
--	---	---

ասես՝ չկա մեղք, դու նաև կասես՝ չկա արդարություն: Եվ եթե չլինի արդարություն, չի լինի երջանկություն: Եվ եթե չլինի արդարություն, ոչ էլ երջանկություն, չի լինի ոչ պատիժ, ոչ էլ թշվառություն: Եվ եթե այս բաները չկան, ^բչկա Աստված: Եվ եթե չկա Աստված, չկանք մենք, ոչ էլ երկիրը, քանզի չէր կարող եղած լինել բաների արարում, ոչ ներգործելու, ոչ էլ ներգործվելու. ուստի, բոլոր բաները պիտի վերացած լինեին:

14 Եվ այժմ, իմ որդիներ, ես խոսում եմ այս բաները ձեզ հետ՝ ձեր օգտի և ուսման համար. քանզի, կա Աստված, և նա է ^աստեղծել բոլոր բաները՝ և՛ երկինքները, և՛ երկիրը, և՛ բոլոր բաները, որ դրանց մեջ են՝ թե՛ ներգործող բաները և թե՛ ^բներգործվող բաները:

15 Եվ իր հավերժական ^անպատակներն իրագործելու համար, մինչև մարդու վախճանը, այն բանից հետո, երբ նա արարել էր մեր առաջին ծնողներին և դաշտի զազաններին և օդի թռչուններին և, ի վերջո, բոլոր բաները, որոնք ստեղծվել են, անպայման պետք է որ լինեին հակադրություն. այսինքն՝ ^բարգելված ^գպտուղն ի հակադրություն կենաց ^դծառի՝ մեկը լինելով քաղցր, իսկ մյուսը՝ դառը:

16 Ուստի, Տեր Աստված տվեց

մարդուն, որ նա ^ագործի ինքնուրույն: Ուստի, մարդը չէր կարող գործել ինքնուրույն, մինչև որ ^բչհրապուրվեր մեկի կամ մյուսի կողմից:

17 Եվ ես՝ Լեթիս, ըստ այն բաների, որ ես կարդացել եմ, անշուշտ պետք է ենթադրեմ, որ Աստծո մի ^ահրեշտակ, համաձայն այն բանի, ինչ գրված է, ^բընկել է երկնքից. այդ պատճառով, նա դարձել է ^գդև՝ փնտրելով այն, ինչը չար է Աստծո առաջ:

18 Եվ, քանի որ նա ընկել էր երկնքից և հավիտյան թշվառ էր դարձել, նա ^ափնտրում էր նաև ողջ մարդկության թշվառությունը: Այդ պատճառով, նա ասաց ^բԵվային, այո, նույն այն հին օձը, որը դևն է, որը բոլոր ստերի ^գհայրն է, այդ պատճառով, նա ասաց. ^դՃաշակիր արգելված պտղից, և դու չես մեռնի, այլ դու կլինես, ինչպես Աստված՝ ^եհիմանալով բարին և չարը:

19 Եվ Ադամն ու Եվան, արգելված պտղից ^աճաշակելուց հետո, դուրս քվեցին ^բԵդեմի պարտեզից՝ մշակելու հողը:

20 Եվ նրանք բերեցին երեխաներ. այո, այսինքն՝ ողջ երկրագնդի ^աընտանիքը:

21 Եվ ^ամարդկանց զավակների օրերը երկարացվեցին ըստ Աստծո կամքի, որպեսզի նրանք

13բ Ալմա 42.13:
 14ա սո՛ր Ստեղծել, Ստեղծում:
 բ Վևո՛Ւ 93.30:
 15ա Ես. ԽԵ.18, Ալմա 42.26, Մովսես 1.31, 39:
 բ Ծն. Բ.16–17, Մովսես 3.17:
 գ Ծն. Գ.6, Ալմա 12.21–23:
 դ Ծն. Բ.9, 1 Նեփի 15.22, 36, Ալմա 32.40:

16ա 2 Նեփի 10.23, Ալմա 12.31:
 սո՛ր Կամքի ազատություն:
 բ Վևո՛Ւ 29.39–40:
 17ա սո՛ր Գև:
 բ Ես. ԺԴ.12, 2 Նեփի 9.8, Մովսես 4.3–4, Աբր. 3.27–28:
 գ սո՛ր Գև:
 18ա 2 Նեփի 28.19–23, 3 Նեփի 18.18,

Վևո՛Ւ 10.22–27:
 բ սո՛ր Եվա:
 գ 2 Նեփի 28.8, Մովսես 4.4:
 դ Ծն. Գ.5, Ալմա 29.5, Մոր. 7.15–19:
 19ա Ալմա 12.31:
 սո՛ր Ադամի և Եվայի անկումը:
 բ սո՛ր Եդեմ:
 20ա Վևո՛Ւ 138.38–39:
 21ա Ալմա 12.24, Մովսես 4.23–25:

կարողանան Բապաշխարել, մինչ մարմնում են. ուստի, նրանց վիճակը դարձավ Գիործության մի վիճակ և նրանց ժամանակը երկարածովեց՝ ըստ այն պատվիրանների, որոնք Տեր Աստված տվեց մարդկանց զավակներին: Քանզի նա տվեց պատվիրան, որ բոլոր մարդիկ պետք է ապաշխարեն. քանզի նա ցույց տվեց բոլոր մարդկանց, որ նրանք Կորած են՝ իրենց ծնողների օրինազանցության պատճառով:

22 Եվ, ահա, եթե Ադամն օրինազանցություն չաներ, նա չէր ընկնի, այլ կմնար Եդեմի պարտեզում: Եվ բոլոր բաները, որոնք արարվել էին, պետք է մնացած լինեին նույն վիճակում, որում եղել էին արարվելուց հետո. և նրանք պետք է հավիտյան մնային և չունենային վերջ:

23 Եվ նրանք Մերեխաներ չէին ունենա. ուստի, նրանք մնացած կլինեին անմեղության վիճակում, չունենալով ուրախություն, քանզի չգիտեին թշվառություն. չանելով բարիք, քանզի նրանք չգիտեին մեղքը:

24 Բայց, ահա, բոլոր բաներն արվել են նրա իմաստությամբ, ով Գիտի բոլոր բաները:

25 ՄԱդամն ընկավ, որպեսզի մարդիկ լինեն. և մարդիկ Գլան, որպեսզի ունենան Դուրախություն:

26 Եվ Մեսիան գալիս է ժամա-

նակի լրիվության մեջ, որպեսզի մարդկանց զավակներին Բիրկագնի անկումից: Եվ որովհետև նրանք փրկագնված են անկումից, նրանք դարձել են Գազատ հավիտյան՝ տարբերելով բարին չարից. գործելու ինքնուրույն և չներգործվելու, բացի դա լինի Դորենքի պատժով՝ այն մեծ և վերջին օրը, համաձայն այն պատվիրանների, որոնք Աստված տվել է:

27 Ուստի, մարդիկ Մազատ են՝ ըստ մարմնի. և բոլոր բաները, որոնք անհրաժեշտ են մարդկանց, տրված են նրանց: Եվ նրանք ազատ են՝ ընտրելու ազատություն և Գավերժական կյանք, բոլոր մարդկանց մեծ Միջնորդի միջոցով, կամ ընտրելու գերություն և մահ, ըստ դևի գերության և գործության. քանզի նա ջանում է, որ բոլոր մարդիկ լինեն թշվառ, ինչպես ինքը:

28 Եվ այժմ, իմ որդիներ, ես կկամենայի, որ դուք նայեք մեծ Միջնորդին և ակնաջ դնեք նրա մեծ պատվիրաններին. և լինեք հավատարիմ նրա խոսքերին և ընտրեք հավերժական կյանք՝ համաձայն նրա Սուրբ Հոգու կամքի.

29 Եվ չընտրեք հավերժական մահ՝ համաձայն մարմնի կամքի ու չարության, որը նրանում է, որը դևի ոգուն գործություն է տալիս Գերելու՝ Բիժոխք իջեցնելու,

21բ Ալմա 34.32:
 սուր Ապաշխարել,
 Ապաշխարություն:
 գ սուր Մահկանացու,
 Մահկանացություն:
 դ Հակոբ 7.12:
 23ա Մովսես 5.11:
 24ա սուր Աստված,
 Աստվածազուլխ:
 25ա սուր Ադամ:
 բ Մովսես 6.48:

սուր Ադամի և Եվայի
 անկումը:
 գ սուր Մահկանացու,
 Մահկանացություն:
 դ Մովսես 5.10:
 սուր Ուրախություն.
 Մարդ, Մարդիկ:
 26ա սուր Մեսիա:
 բ սուր Փրկագնման
 ծրագիր:
 գ Ալմա 42.27, Հել. 14.30:

դ սուր Օրենք:
 27ա Գաղ. Ե.1,
 Մովսես 6.56:
 բ սուր Կամքի
 ազատություն:
 գ սուր Հավերժական
 կյանք:
 28ա սուր Միջնորդ:
 29ա Հռովմ. 2.16-18,
 Ալմա 12.11:
 բ սուր Դժոխք:

որպեսզի նա իշխի ձեր վրա իր սեփական թագավորությունում:

30 Ես ասացի այս մի քանի խոսքերը ձեզ բոլորիդ, իմ որդիներ, իմ փորձության վերջին օրերին. և ես ընտրեցի բարի բաժինը՝ ըստ մարգարեի խոսքերի: Եվ ես չունեմ ոչ մի ուրիշ նպատակ, բացի ձեր հոգիների հավիտենական բարօրությունից: Ամեն:

ԳԼՈՒԽ 3

Հովսեփը Եգիպտոսում տեսել էր Նեփիազիներին տեսիլքում – Նա մարգարեացել էր Ջոզեֆ Սմիթի՝ վերջին օրերի տեսանողի վերաբերյալ: Մովսեսի վերաբերյալ, որն ազատելու էր Իսրայելը. և Մորմոնի Գրքի ի հայտ գալու վերաբերյալ: Մոտ 588–570թթ. Ք.ծ.ա.:

Եվ այժմ, ես խոսում եմ քեզ հետ, Հովսեփ, իմ ՝վերջնածին: Դու ծնվեցիր իմ չարչարանքների անապատում. այո, իմ մեծագույն վշտի օրերին քո մայրը ծնեց քեզ:

2 Եվ թող Տերը նվիրագործի այս ՝երկիրը քեզ համար նույնպես, որն ընտրագույն մի երկիր է՝ քո ժառանգության և քո սերնդի ժառանգության համար, քո եղբայրների հետ, քո ապահովության համար՝ հավիտյան, եթե լինի այնպես, որ դու պահես Իսրայելի Սուրբի պատվիրանները:

3 Եվ, այժմ, Հովսեփ, իմ վերջնածին, ում ես դուրս եմ բերել

իմ չարչարանքների անապատից, թող Տերն օրհնի քեզ հավիտյան, քանզի քո սերունդը չի ՝կործանվի լիովին:

4 Քանզի, ահա, դու իմ երանքի պտուղն ես. իսկ ես ՝Հովսեփի ժառանգն եմ, որը ^բգերության էր տարվել Եգիպտոս: Եվ մեծ էին Տիրոջ ուխտերը, որ նա արեց Հովսեփի հետ:

5 Այդ պատճառով, Հովսեփը, արդարև, ՝տեսավ մեր օրը: Եվ նա ձեռք բերեց Տիրոջից մի խոստում, որ իր երանքի պտղից Տեր Աստված մի՞արդար ^գճյուղ կբարձրացնի Իսրայելի տան համար. ոչ թե Մեսիային, այլ մի ճյուղ, որը պետք է կտրվի, սակայն, հիշվի Տիրոջ ուխտերում, որ ^աՄեսիան հայտնի պիտի դարձվի նրանց՝ վերջին օրերին, գորության ոգով, դուրս բերելու նրանց ^բխավարից դեպի լույս,– այո, ծածուկ խավարից դուրս, և գերությունից դուրս՝ դեպի ազատություն:

6 Քանզի, Հովսեփն իսկապես վկայեց՝ ասելով. Տերը՝ իմ Աստվածը, մի ՝տեսանող կբարձրացնի, որը կլինի մի ընտրյալ տեսանող՝ իմ ^բերանքի պտղի համար:

7 Այո, Հովսեփն իսկապես ասել է. Այսպես է Տերն ինձ ասում. Մի ընտրյալ ՝տեսանող կբարձրացնեմ ես քո երանքի պտղից. և նա բարձր կգնահատվի քո երանքի պտղի մեջ: Եվ նրան կտամ ես պատվիրան, որ նա անի այն գործը, քո երանքի պտղի՝ իր

3 1ա 1 Նեփի 18.7:
2ա 1 Նեփի 2.20:
սու Խոստացված երկիր:
3ա 2 Նեփի 9.53:
4ա Ծն. ԼԹ.1–2, ԽԵ.4, ԽԹ.22–26,
1 Նեփի 5.14–16:

բ Ծն. ԼԷ.29–36:
5ա 2ՍԹ Ծն. 50.24–38,
2 Նեփի 4.1–2:
բ Հակոբ 2.25:
գ Ծն. ԽԹ.22–26,
1 Նեփի 15.12, 19.24:
սու Տիրոջ այգին:
դ 2 Նեփի 6.14,

ՎԼՈՒՅ 3.16–20:
ե Ես. ԽԲ.16:
6ա 3 Նեփի 21.8–11,
Մորմ. 8.16:
սու Տեսանող:
բ ՎԼՈՒՅ 132.30:
7ա սու Սմիթ Ջոզեֆ կրտսեր

եղբայրների համար, որը կլինի մեծ արժեքի նրանց համար, մինչև իսկ բերելով նրանց այն ուխտերի իմացությանը, որոնք ես արել եմ քո հայրերի հետ:

8 Եվ ես կտամ նրան պատվիրան, որ նա ^անչ մի ուրիշ գործ չանի, բացի այն գործից, որը ես կպատվիրեմ նրան: Եվ ես կդարձնեմ նրան մեծ իմ աչքում. քանզի նա կկատարի իմ գործը:

9 Եվ նա կլինի մեծ, ինչպես ^ՄՍովսեսը, ում ես ասել եմ, որ կբարձրացնեմ ձեզ համար ^Բազատելու իմ ժողովրդին, ո՛վ Իսրայելի տուն:

10 Եվ Մովսեսին կբարձրացնեմ ես՝ ազատելու քո ժողովրդին Եգիպտոսի երկրից:

11 Բայց մի տեսանող կբարձրացնեմ ես քո երանքի պտղից և նրան կտամ ես ^Պգործություն՝ առաջ բերելու իմ խոսքը քո երանքի սերնդին, և ոչ միայն իմ խոսքն առաջ բերելու, ասում է Տերը, բայց համոզելու նրանց իմ խոսքի վերաբերյալ, որն արդեն առաջ գնացած կլինի նրանց մեջ:

12 Ուստի, քո երանքի պտուղը պիտի ^Պգրի. և ^ԲՀուդայի երանքի պտուղը պիտի ^Պգրի և այն, ինչը պիտի գրվի քո երանքի պտղի կողմից և նաև այն, ինչը պիտի գրվի Հուդայի երանքի պտղի կողմից, պիտի սերտաճեն՝ ի ^Պհերքումն կեղծ վարդապետությունների, դադարեցնելով հակառակությունները, և հաստատելով խաղաղություն քո երանքի պտղի միջև, և ^Բերելով նրանց իրենց

հայրերի ^Պիմացությանը, վերջին օրերին, և նաև իմ ուխտերի իմացությանը, ասում է Տերը:

13 Եվ տկարությունից նա կդարձվի ուժեղ այն օրը, երբ իմ գործը կսկսվի իմ ողջ ժողովրդի մեջ, ի վերականգնումն քեզ, ո՛վ Իսրայելի տուն, ասում է Տերը:

14 Եվ այսպես մարգարեացավ Հովսեփը՝ ասելով. Ահա, այդ տեսանողին կօրհնի Տերը. և նրանք, ովքեր կփնտրեն կործանել նրան, կկործանվեն. քանզի, այս խոստումը, որը ես ստացել եմ Տիրոջից, իմ երանքի պտղի վերաբերյալ, կիրականանա: Ահա, ես վստահ եմ այս խոստման իրականացման վերաբերյալ.

15 Եվ նա ^Պկկոչվի իմ անվամբ. և դա կլինի իր հոր ^Բանվամբ: Եվ նա կլինի ինձ մման. քանզի այն բանը, որ Տերն առաջ կբերի նրա ձեռքով, Տիրոջ գործությամբ, կբերի իմ ժողովրդին փրկության:

16 Այո, այսպես մարգարեացավ Հովսեփը. Ես համոզված եմ այս բանում, ճիշտ այնպես, ինչպես որ համոզված եմ Մովսեսի խոստման մեջ. քանզի Տերն ասել է ինձ. Ես ^Պկպահպանեմ քո սերունդը հավիտյան:

17 Եվ Տերն ասել է. Ես կբարձրացնեմ մի Մովսեսի. և կտամ նրան գործություն՝ զավազանի մեջ. և ես կտամ նրան դատողություն՝ գրելու: Սակայն ես չեմ արձակի նրա լեզուն, որ նա շատ խոսի, քանզի ես նրան գորեղ չեմ դարձնի խոսելիս: Այլ իմ իսկ ձեռքի

8ա Վև.ՈՒ 24.7, 9: 9ա Մովսես 1.41: Բ Ել. 9.7-10, 1 Նեփի 17.24: 11ա Վև.ՈՒ 5.3-4: 12ա սոս Մորմոնի Գիրքը:

բ 1 Նեփի 13.23-29: գ սոս Աստվածաշունչ: դ Եզեկ. ԼԷ.15-20, 1 Նեփի 13.38-41, 2 Նեփի 29.8, 33.10-11: ե Մոր. 1.4:

զ 1 Նեփի 15.14, 2 Նեփի 30.5, Մորմ. 7.1, 5, 9-10: 15ա Վև.ՈՒ 18.8: Բ ՁՄ-Պ 1.3: 16ա Ծն. ԽԵ.1-8:

մատով ¹⁷կգրեմ նրա համար իմ օրենքը. և ես ¹⁸խոսնակ կպատրաստեմ նրա համար:

18 Եվ Տերն ինձ ասաց նաև. Ես քո երանքի պտղի համար կբարձրացնեմ. և ես նրա համար մի խոսող կպատրաստեմ: Եվ ես, ահա, կտամ նրան, որ նա գրի քո երանքի պտղի գրվածքները՝ քո երանքի պտղի համար. և խոսողը՝ քո երանքի, կհայտարարի դա:

19 Եվ խոսքերը, որ նա կգրի, կլինեն այն խոսքերը, որոնք նպատակահարմար են, իմ իմաստությամբ, առաջ գնալու քո երանքի ¹⁹պտղին: Եվ կլինի այնպես, կարծես քո երանքի պտուղը նրանց կանչել էր փոշու ²⁰միջից. քանզի ես գիտեմ նրանց հավատքը:

20 Եվ նրանք ²¹կկանչեն փոշու միջից. այո, այսինքն՝ ապաշխարություն իրենց եղբայրներին, նույնիսկ նրանցից շատ սերունդներ անցնելուց հետո: Եվ կլինի այնպես, որ նրանց կանչը կլսվի, նույնիսկ համաձայն իրենց խոսքերի պարզությամբ:

21 Նրանց հավատքի պատճառով, նրանց ²²խոսքերն առաջ կգնան իմ բերանից, իրենց եղբայրներին, որոնք քո երանքի պտուղն են. և նրանց խոսքերի թուլությունը ես կդարձնեմ ուժեղ իրենց հավատքով՝ հիշելու համար իմ ուխտը, որը ես արել եմ քո հայրերի հետ:

22 Եվ արդ, ահա, որդի՛ս, Հովսեփ, այս ձևով էր իմ նախահայրը ²³մարգարեացել:

23 Ուստի, այս ուխտի պատճա-

ռով, դու օրհնված ես. քանզի քո սերունդը չի կործանվի, քանզի նրանք ականջ կդնեն գրքի խոսքերին:

24 Եվ նրանց միջից կբարձրանա մի հզոր մեկը, որը շատ բարիք կանի՝ և՛ խոսքով, և՛ գործով, լինելով մի գործիք Աստծո ձեռքին, խիստ մեծ հավատքով, գործելու հզոր հրաշքներ և անելու այն բանը, որը մեծ է Աստծո աչքում, Իսրայելի տան համար և քո եղբայրների սերնդի համար՝ իրականացնելու մեծ վերականգնում:

25 Եվ այժմ, օրհնված ես դու, Հովսեփ: Ահա, դու փոքր ես. ուստի, ականջ դիր քո եղբայր Նեփիի խոսքերին և քեզ համար կարվի ճիշտ այն խոսքերի համաձայն, որոնք ես խոսել եմ: Հիշի՛ր քո մեռնող հոր խոսքերը: Ամեն:

ԳԼՈՒԽ 4

Լեքին խրատում է և օրհնում իր ժառանգներին – Նա մահանում է և քաղվում – Նեփին հրճվում է Աստծո բարությունը – Նեփին իր վատաստությունը հավիտյան դնում է Տիրոջ վրա: Մոտ 588–570թթ. Ք.ծ.ա.:

Եվ այժմ, ես՝ Նեփիս, խոսում եմ մարգարեությունների վերաբերյալ, որոնց մասին խոսել է հայրս՝ ¹Հովսեփի առնչությամբ, որը տարվել էր Եգիպտոս:

2 Քանզի ահա, նա, արդարև, մարգարեացավ իր ողջ սերնդի վերաբերյալ: Եվ չկան ավելի մեծ ³մարգարեություններ, քան նրա գրածները: Եվ նա մարգարեացավ

17աԲ Օր. Ժ.2, 4,

Մովսես 2.1:

բ Ել. Գ.16:

19աՎևՈՒ 28.8:

բ Ես. ԻԹ.4,

2 Նեփի 27.13, 33.13,

Մորմ. 9.30,

Մոր. 10.27:

20ա2 Նեփի 26.16,

Մորմ. 8.23:

21ա2 Նեփի 29.2:

22ա2 Նեփի 3.5:

4 1ա Ծն. ԼԹ.1–2:

2ա2 Նեփի 3.5:

մեր և մեր ապագա սերունդների վերաբերյալ. և դրանք գրված են արույրե թիթեղների վրա:

3 Ուստի, Հովսեփի մարգարեությունների վերաբերյալ խոսելուն վերջ դնելուց հետո, հայրս կանչեց Լամանի զավակներին՝ նրա որդիներին և նրա դուստրերին, և ասաց նրանց. Ահա, իմ որդիներ և իմ դուստրեր, որ իմ ^{առաջնեկի} որդիներն ու դուստրերն էք, ես կցանկանայի, որ դուք ականջ դնեք իմ խոսքերին:

4 Քանզի Տեր Աստված ասել է, որ. ^ՄՈրքան որ կպահեք իմ պատվիրանները, դուք կբարգավաճեք երկրի վրա. և որքան որ դուք չեք պահի իմ պատվիրանները, դուք կտրված կլինեք իմ ներկայությունից:

5 Բայց, ահա, իմ որդիներ և իմ դուստրեր, ես չեմ կարող վայր իջնել գերեզմանն իմ, մինչև չթողնեմ մի ^{օրհնություն} ձեզ վրա. քանզի, ահա, ես գիտեմ, որ եթե դուք դաստիարակվեք այն ^{հողի} որ դուք պետք է գնաք, դուք չեք հեռանա դրանից:

6 Ուստի, եթե դուք անիծվեք, ահա, ես ձեզ վրա եմ թողնում իմ օրհնությունը, որ անեծքը վերցվի ձեր վրայից և դրվի ձեր ծնողների ^{կլխին}:

7 Ուստի, իմ օրհնության շնորհիվ Տեր Աստված ^{չի} հանդուրժի, որ դուք բնաջնջվեք. ուստի, նա ^{հողորմ} ամառն է կլինի ձեր հանդեպ և ձեր սերնդի հանդեպ հավիտյան:

8 Եվ եղավ այնպես, որ Լամանի որդիների և դուստրերի հետ

խոսելուն վերջ դնելուց հետո, նա բերել տվեց Լեմուելի որդիներին ու դուստրերին իր աջ:

9 Եվ նա խոսեց նրանց հետ՝ ասելով. Ահա, իմ որդիներ և իմ դուստրեր, որ իմ երկրորդ որդու որդիներն ու դուստրերն էք. ահա, ես թողնում եմ ձեզ նույն օրհնությունը, որը ես թողեցի Լամանի որդիներին և դուստրերին. ուստի, դուք լիովին չեք կործանվի. այլ, ի վերջո, ձեր սերունդը կօրհնվի:

10 Եվ եղավ այնպես, որ երբ հայրս նրանց հետ խոսելուն վերջ դրեց, ահա, նա խոսեց ^{Իսմայելի} որդիների հետ, այո, և նույնիսկ նրա ողջ գերդաստանի:

11 Եվ նրանց հետ խոսելուն վերջ դնելուց հետո, նա խոսեց Սամի հետ՝ ասելով. Օրհնված ես դու և քո սերունդը. քանզի դու կծառանգես երկիրը քո եղբայր Նեփիի ման: Եվ քո սերունդը կհամարվի նրա սերնդի հետ. և դու կլինես ճիշտ քո եղբոր պես, և քո սերունդը՝ նրա սերնդի պես. և դու օրհնված կլինես քո բոլոր օրերում:

12 Եվ եղավ այնպես, հետո, երբ իմ հայրը՝ Լեքին, խոսել էր իր ողջ գերդաստանի հետ, իր սրտի զգացմունքների և Տիրոջ Հոգու համաձայն, որը նրա մեջ էր, նա ծերացավ: Եվ եղավ այնպես, որ նա մահացավ և թաղվեց:

13 Եվ եղավ այնպես, որ նրա մահից ոչ շատ օրեր անց, Լամանը և Լեմուելը, և Իսմայելի որդիները, Տիրոջ խրատների պատճառով, բարկացան ինձ վրա:

14 Քանզի ես՝ Նեփիս, պար-

<p>3ա ստԻ Առաջնեկ: 4ա 2 Նեփի 1.9: 5ա ստԻ Հայրապետական օրհնություն: բ Առակ. ԻԲ.6:</p>	<p>6ա ՎևՈՒ 68.25-29: 7ա 2 Նեփի 30.3-6, ՎևՈՒ 3.17-18: բ 1 Նեփի 13.31, 2 Նեփի 10.18-19,</p>	<p>Հակոբ 3.5-9, Հել. 15.12-13: 10ա 1 Նեփի 7.6:</p>
---	---	--

տադրվեցի խոսել նրանց հետ՝ համաձայն նրա խոսքի. քանզի ես շատ բաներ էի խոսել նրանց հետ, և նաև հայրս, իր մահից առաջ. որի ասածներից շատերը գրված են իմ ^Մնյուս թիթեղների վրա. քանզի առավել պատմական մասը գրված է իմ մյուս թիթեղների վրա:

15 Իսկ ^Մսրանց վրա ես գրում եմ իմ հոգու բաները և սուրբ գրություններից շատերը, որոնք փորագրված են արույրե թիթեղների վրա: Քանի որ հոգիս հրճվում է սուրբ գրություններով և սիրտս ^Քխորհում է դրանք, և ես գրում եմ իմ զավակների ^Գուսման և օգտի համար:

16 Ահա, ^Մհոգիս հրճվում է Տիրոջ բաներով. և ^Քսիրտս շարունակ խորհում է այն բաների շուրջ, որոնք տեսել եմ ու լսել:

17 Մակայն, չնայած Տիրոջ մեծ ^Քբարությանը՝ իր մեծ և զարմանալի գործերն ինձ ցույց տալիս, սիրտս բացականչում է. Ո՛վ ^Քթշվառ մարդ, որ ես եմ: Այո, սիրտս վշտանում է՝ մարմնիս պատճառով, հոգիս մորմոքվում՝ իմ անօրինությունների պատճառով:

18 Ես պարփակված եմ գայթակհությունների և մեղքերի պատճառով, որոնք, իրավ, այնքան հեշտությամբ ^Մնեղում են ինձ:

19 Եվ երբ ես ցանկանում եմ ուրախանալ, սիրտս հառաչում է՝ իմ մեղքերի պատճառով. այնուամենայնիվ, ես գիտեմ՝ ում եմ ապավինել:

20 Իմ Աստվածն է եղել իմ ապավենը. նա իմ չարչարանքների միջով առաջնորդել է ինձ անպատում. և նա պահպանել է ինձ մեծ անդունդի ջրերի վրա:

21 Նա լցրել է ինձ իր ^Մսիրով՝ այն աստիճան, որ մարմնիս այրվում է:

22 Նա ամաչեցրել է իմ ^Քջնամիներին՝ ստիպելով նրանց դողալ իմ առջև:

23 Ահա, ցերեկով նա լսել է իմ կանչը, իսկ գիշերը գիտելիք է տվել ինձ ^Մտեսիլքներով:

24 Եվ ցերեկով ես համարձակ եմ դարձել հզոր ^Մաղոթքով նրա առաջ. այո, իմ ձայնը ես հղել եմ վեր՝ դեպի երկինք. և հրեշտակներ են իջել և սպասավորել ինձ:

25 Եվ նրա Հոգու թևերի վրա իմ մարմինը ^Մտարվել է հեռու՝ չափազանց բարձր լեռների վրա: Եվ իմ աչքերը տեսել են մեծ բաներ. այո, նույնիսկ, շատ մեծ՝ մարդու համար, այդ պատճառով ինձ պատվիրվել էր, որ չպետք է գրեի դրանք:

26 Օ՛, այդ դեպքում, եթե ես տեսել եմ այդքան մեծ բաներ, եթե Տերը, մարդկանց զավակների հանդեպ իր բարեհաճությամբ, այցելել է մարդկանց այդքան մեծ ողորմածությամբ, ^Մինչո՞ւ պիտի սիրտս լաց լինի և հոգիս քարշ գա վշտի հովտում և մարմինս հյուծվի և ուժս հատնի՝ իմ չարչարանքների պատճառով:

27 Եվ ինչո՞ւ պիտի ես ^Մանձնատուր լինեմ մեղքին իմ մարմնի

14ա 1 Նեփի 1.16–17, 9.4:
 15ա 1 Նեփի 6.4–6:
 Ք սո՛ւ Խորհել. Սուրբ գրքեր:
 գ 1 Նեփի 19.23:
 16ա սո՛ւ Շնորհակալ, Շնորհակալություն, Գոհաբանություն:

Ք սո՛ւ Սիրտ:
 17ա 2 Նեփի 9.10, Վևո՛Ւ 86.11:
 Ք Հոովմ. Է.24:
 18ա Հոովմ. Է.21–23, Եբր. ԺԲ.1, Ալմա 7.15:
 21ա սո՛ւ Սեր:

22ա 1 Նեփի 17.52:
 23ա սո՛ւ Տեսիլք:
 24ա Նակ. Ե.16, 1 Նեփի 2.16:
 25ա 1 Նեփի 11.1, Մովսես 1.1–2:
 26ա Մաղ. ԽԳ.5:
 27ա Հոովմ. Զ.13:

պատճառով: Այո, ինչո՞ւ պիտի ես տեղի տամ ^բգայթակորություններին, որպեսզի չարը տեղ ունենա իմ սրտում՝ կործանելու իմ ^գխաղաղությունը և չարչարելու հոգիս: Ինչո՞ւ եմ ես բարկացած՝ իմ թշնամու պատճառով:

28 Չարթնի՛ր, իմ հոգի: Այլևս մի՛ վհատվիր մեղքի պատճառով: Ուրախացի՛ր, ո՛վ իմ սիրտ, և այլևս տեղ մի՛ տուր իմ հոգու ^աթշնամուն:

29 Մի՛ բարկացիր նորից՝ իմ թշնամիների պատճառով: Մի՛ հատնիր, իմ ուժ՝ իմ չարչարանքների պատճառով:

30 Ուրախացի՛ր, ո՛վ իմ սիրտ, և կանչի՛ր առ Տերը և ասա. Ո՛վ Տեր, ես կզովաբանեմ քեզ հավիտյան. այո, հոգիս կիրճվի քեզանով, իմ Աստված և իմ փրկության ^ավեմ:

31 Ո՛վ Տեր, կփրկագնե՞ս դու իմ հոգին: Կազատե՞ս դու ինձ իմ թշնամիների ձեռքից: Կդարձնե՞ս ինձ այնպիսին, որ կարողանամ ցնցվել ^ամեղքի տեսքից:

32 Թո՛ղ դժոխքի դռները շարունակ փակ լինեն իմ առջև, քանզի իմ ^ասիրտը կտորված է և հոգիս՝ փշրված: Ո՛վ Տեր, մի՛ փակիր քո արդարության դռներն իմ առաջ, որպեսզի ես կարողանամ ^բքայլել ցածր հովտի արահետով, որպեսզի ես կարողանամ անհողողող լինել հարթ ճանապարհին:

33 Ո՛վ Տեր, շրջապատի՛ր ինձ շուրջանակի քո արդարության պարեգոտով: Ո՛վ Տեր, ե՛լք պատրաստիր փախուստիս համար

ին թշնամիների առաջից: Ուղի՛ղ արա իմ արահետը՝ իմ առջև: Գայթակորության քար մի՛ դիր իմ ճանապարհին, այլ մաքրիր իմ ճանապարհն իմ առջև և մի՛ խոչընդոտիր իմ ճանապարհը, այլ ճանապարհներն իմ թշնամու:

34 Ո՛վ Տեր, ես քեզ եմ ապավինել, և ես քեզ եմ ^աապավինելու հավիտյան: Ես իմ ^բվստահությունը չեմ դնի մարմնի բազկի վրա. քանզի գիտեմ, որ անիծված է նա, ով մարմնի բազկին է ^գապավինում: Այո, անիծված է նա, որ դնում է իր վստահությունը մարդու վրա կամ մարմինն իրեն բազուկ է սարքում:

35 Այո՛, ես գիտեմ, որ Աստված ^աառատորեն կտա նրան, ով խնդրում է: Այո՛, իմ Աստված կտա ինձ, եթե ես ^բանտեղի ^գչխնդրեմ. հետևաբար, ես կբարձրացնեմ իմ ձայնն առ քեզ. այո՛, ես կկանչեմ առ քեզ, իմ Աստված, իմ արդարության ^գվեմ: Ահա, իմ ձայնը հավիտյան կբարձրանա առ քեզ, իմ վե՛մ և իմ հավիտենական Աստված: Ամեն:

ԳԼՈՒԽ 5

Նեպիիացիներն իրենց առանձնացնում են Լամանացիներից, պահում են Մովսեսի օրենքը և տաճար կառուցում – Իրենց անհավատության հետևանքով Լամանացիները կտրվում են Տիրոջ ներկայությունից, անիծվում և դառնում են խարազան

27բ սո՛ր Գայթակղել, Գայթակորություն:
գ սո՛ր Խաղաղություն:
28ա սո՛ր Գև:
30ա Ա Կոր. Գ.11:
սո՛ր Վեմ:
31ա Հռովմ. ԺԲ.9,

Ալմա 13.12:
32ա սո՛ր Կտորված սիրտ:
բ սո՛ր Քայլել, Քայլել
Աստժո հետ:
34ա սո՛ր Ապավինել:
բ Սաղ. ԽԳ.6–8:
գ Երեմ. ԺԷ.5,

Մորմ. 3.9, 4.8:
35ա Հակ. Ա.5:
բ Հել. 10.5:
գ սո՛ր Աղոթք:
դ Բ Օր. ԼԲ.4:

Նեփիսացիների համար: Մոտ 588-559թթ. Ք.ծ.ա.:

Աչս, եղավ այնպես, որ ես՝ Նեփիս, եղբայրներիս քարկուռության պատճառով, շատ կանչեցի առ Տերը՝ իմ Աստվածը:

2 Բայց, ահա, նրանց բարկությունն ուժեղանում էր իմ դեմ՝ այնքան, որ նրանք ջանում էին խլել իմ կյանքը:

3 Այո, նրանք տրտնջում էին իմ դեմ՝ ասելով. Մեր փոքր եղբայրը մտածում է իշխել մեզ վրա. և մենք շատ փորձանքներ ունեցանք նրա պատճառով. ուստի, եկե՛ք սպանենք նրան, որպեսզի այլևս չչարչարվենք նրա խոսքերի պատճառով: Քանզի, ահա, մենք չենք հանդուրժի, որ նա լինի մեր դեկավարը. քանզի, որպես ավագ եղբայրներ, դա մեզ է պատկանում՝ իշխել այս ժողովրդի վրա:

4 Այժմ ես չեմ գրում այս թիթեղների վրա բոլոր խոսքերը, որոնք նրանք տրտնջացին իմ դեմ: Բայց ինձ բավարարում է ասելը, որ նրանք ջանում էին խլել իմ կյանքը:

5 Եվ եղավ այնպես, որ Տերը՝ Մախազգուշացրեց ինձ, որ ես՝ Նեփիս, պիտի հեռանամ նրանցից և փախչեմ անապատ, և բոլոր նրանք, ովքեր կկամենան գալ ինձ հետ:

6 Ուստի, եղավ այնպես, որ ես՝ Նեփիս, վերցրեցի իմ ընտանիքը, և նաև՝ Չորամին և նրա ընտանիքը, և Սամին՝ իմ ավագ եղբորը և նրա ընտանիքը, և Հակոբին ու

Հովսեփին՝ իմ կրտսեր եղբայրներին, և նաև իմ քույրերին, և բոլոր նրանց, ովքեր կամեցան գալ ինձ հետ: Եվ բոլոր նրանք, ովքեր կամեցան գալ ինձ հետ, նրանք էին, ովքեր հավատում էին Աստծո՝ Մախազգուշացումներին և հայտնություններին. այդ պատճառով նրանք ականջ դրեցին իմ խոսքերին:

7 Եվ մենք վերցրեցինք մեր վրանները և ամեն բան, ինչ հնարավոր էր մեզ համար և ճամփորդեցինք անապատում, շատ օրերի ընթացքում: Եվ շատ օրերի ընթացքում ճամփորդելուց հետո, մենք խփեցինք մեր վրանները:

8 Եվ իմ ժողովուրդը ցանկացավ, որ մենք տեղի ամուրը կոչենք Նեփի. ուստի, մենք այն կոչեցինք Նեփի:

9 Եվ բոլոր նրանք, ովքեր ինձ հետ էին, իրենց վրա վերցրեցին՝ կոչելու իրենց Նեփիի՝ ժողովուրդ:

10 Եվ մենք պահում-պահպանում էինք Տիրոջ դատաստաններն ու կանոնները, և պատվիրանները բոլոր բաներում՝ ըստ Մովսեսի՝ օրենքի:

11 Եվ Տերը մեզ հետ էր. և մենք չափազանց բարգավաճեցինք. քանզի մենք սերմ ցանեցինք և դարձյալ առատորեն հնձեցինք: Եվ մենք սկսեցինք բազմացնել հոտեր և մախիթներ և ամեն տեսակի կենդանիներ:

12 Եվ ես՝ Նեփիս, բերել էի նաև իհիշատակարանները, որոնք փորագրված էին արույրե թիթեղների

5 1ա 2 Նեփի 4.13-14:
3ա 1 Նեփի 16.37-38,
Մոսիա 10.14-15:
5ա սու՝ Ոգեշնչում,
Ոգեշնչել:
բ Մոսիա 10.13:

6ա 1 Նեփի 4.35, 16.7,
2 Նեփի 1.30-32:
բ սու՝ Չգուշացնել,
Չգուշացում:
8ա Օմնի 1.12, 27,
Մոսիա 9.1-4, 28.1:

9ա Հակոբ 1.13-14:
10ա 2 Նեփի 11.4:
սու՝ Մովսեսի օրենք:
12ա Մոսիա 1.3-4:
սու՝ Թիթեղներ:

վրա. և նաև Բգունդը, կամ Գուղե-
ցույցը, որը պատրաստվել էր իմ
հոր համար Տիրոջ ձեռքով՝ հա-
մաձայն նրա, ինչ գրված է:

13 Եվ եղավ այնպես, որ մենք
սկսեցինք չափազանց բարգա-
վաճել և բազմանալ երկրում:

14 Եվ ես՝ Նեփիս, վերցրեցի
Լաբանի սուրը և նույն ձևով
պատրաստեցի բազմաթիվ սրեր,
որպեսզի չլինե՞ր թե այն ժողովուր-
դը, որն այժմ կոչվում էր ԲԼամա-
նացիներ, որևէ ձևով գար մեզ վրա
և կործանե՞ր մեզ. քանզի ես գիտեի
նրանց ատելությունը՝ հանդեպ ինձ
ու իմ զավակները, և նրանց, ովքեր
կոչվում էին իմ ժողովուրդ:

15 Եվ ես սովորեցրեցի իմ
ժողովրդին շենքեր շինել և մշակել
ամեն ձևի փայտ և տերկաթ և
պղինձ և արույր և պողպատ և
ոսկի և արծաթ և ընտիր հանքա-
նյութեր, որոնք շատ առատ էին:

16 Եվ ես՝ Նեփիս, տաճար
կառուցեցի. և ես այն կառուցեցի
Սողոմոնի Բտաճարի ձևով, միայն
թե դա կառուցված չէր այնքան
շատ Գթանկարժեք բաներից.
քանզի դրանք չէին ճարվում այս
երկրում, ուստի այն չէր կարող
կառուցվել Սողոմոնի տաճարի
ման: Բայց կառուցվածքի ձևը
նման էր Սողոմոնի տաճարին. և
դրա ոճը չափազանց գեղեցիկ էր:

17 Եվ եղավ այնպես, որ ես՝
Նեփիս, սովորեցրի իմ ժողովրդին
աշխատասեր լինել և աշխատել
իրենց ձեռքերով:

18 Եվ եղավ այնպես, որ նրանք
կամեցան, որ ես լինեմ իրենց
Քազավորը: Բայց ես՝ Նեփիս,
ցանկանում էի, որ նրանք թագա-
վոր չունենան. այնուամենայնիվ,
ես անում էի նրանց համար՝
համաձայն նրա, ինչ իմ կարողու-
թյունն էր:

19 Եվ, ահա, Տիրոջ խոսքերն
իրագործվեցին իմ եղբայրների
համար, որ նա խոսել էր նրանց
վերաբերյալ, որ ես պետք է լինեի
նրանց Պղեկավարը և նրանց
Ռուսուցիչը: Ուստի, ես եղա նրանց
ղեկավարը և նրանց ռուսուցիչը՝
ըստ Տիրոջ պատվիրանների, մին-
չև այն ժամանակը, երբ նրանք
ջանացին խլել իմ կյանքը:

20 Ուստի, Տիրոջ խոսքն իրա-
գործվեց, որը նա խոսել էր ինձ
հետ՝ ասելով. Որքան որ նրանք
ականջ չեն դնի քո խոսքերին,
նրանք կտրված կլինեն Տիրոջ
ներկայությունից: Եվ, ահա, նրանք
Բկտրված էին նրա ներկայու-
թյունից:

21 Եվ նա արեց այնպես, որ մի
սանեծք գար նրանց վրա, այո,
նույնիսկ, դառն անեծք՝ նրանց
անօրինության պատճառով: Քան-
զի, ահա, նրանք կարծրացրել էին
իրենց սրտերը նրա դեմ, այնպես
որ դարձել էին կայծքարի պես,
ուստի, քանի որ նրանք սպիտակ
էին և չափազանց գեղեցիկ ու
Բհմայիչ, որպեսզի նրանք չկարո-
ղանային հրապուրիչ լինել իմ
ժողովրդի համար, Տեր Աստված

12բ Մոսիա 1.16:
գ 1 Նեփի 16.10, 16, 26,
18.12, 21,
Ալմա 37.38-47,
ՎևոՒ 17.1:
14ա 1 Նեփի 4.9,
Հակոբ 1.10,
Մո 1.13:

բ սոՒ Լամանացիներ:
15ա Եթեր 10.23:
16ա սոՒ Տաճար՝ Տիրոջ
տուն:
բ Գ Թագ. Զ Բ Մ Լ Գ:
գ ՎևոՒ 124.26-27:
17ա ԾՆ. Գ.19,
ՎևոՒ 42.42:

18ա Հակոբ 1.9, 11:
19ա 1 Նեփի 2.22:
բ սոՒ Ուսուցանել,
Ուսուցիչ:
20ա 2 Նեփի 2.21:
բ Ալմա 9.14:
21ա սոՒ Անեծք, Անեծքներ:
բ 4 Նեփի 1.10:

արեց այնպես, որ Գսևամաշկութիւն գար նրանց վրա:

22 Եվ այսպես է ասում Տեր Աստված. Ես այնպես կանեմ, որ նրանք ^{ազգվելի կլինեն} քո ժողովրդի համար, մինչև որ նրանք չապաշխարեն իրենց անօրինություններից:

23 Եվ անհիծված կլինի սերունդը նրա, ով ^{կխառնվի} նրանց սերունդին. քանզի նրանք կանիծվեն, հենց նույն անեծքով: Եվ Տերը խոսեց սա, և այն կատարվեց:

24 Եվ նրանց անեծքի պատճառով, որն իրենց վրա էր, նրանք դարձան մի ^{ծույլ ժողովուրդ՝ լի} չարությամբ ու նենգությամբ, և նրանք անապատում փնտրում էին որսի գազաններ:

25 Եվ Տեր Աստված ասաց ինձ. Նրանք կլինեն խարազան քո սերնդի համար՝ գարթնեցնելու նրանց հիշելու իմ մասին. և որքան որ նրանք չեն հիշի ինձ և ականջ չեն դնի իմ խոսքերին, նրանք կխարազանվեն, մինչև իսկ ի կործանումն իրենց:

26 Եվ եղավ այնպես, որ ես՝ Նեփիս, ^{անվիրաբերեցի} Հակոբին ու Հովսեփին, որ նրանք լինեին քահանաներ և ուսուցիչներ իմ երկրի ժողովրդի վրա:

27 Եվ եղավ այնպես, որ մենք ապրեցինք երջանիկ:

28 Եվ երեսուն տարի էր անցել այն ժամանակից, երբ մենք թողեցինք Երուսաղեմը:

29 Եվ ես՝ Նեփիս, մինչև այժմ արել էի իմ ժողովրդի մասին արձանագրությունները՝ թիթեղների վրա, որոնք ես էի պատրաստել:

30 Եվ եղավ այնպես, որ Տեր Աստված ասաց ինձ. Պատրաստիր ^{ուրիշ թիթեղներ}. և դու կփորագրես ուրիշ շատ բաներ դրանց վրա, որոնք բարի են իմ աչքում, քո ժողովրդի օգտի համար:

31 Ուստի, ես՝ Նեփիս, հնազանդ լինելով Տիրոջ պատվիրաններին, գնացի և պատրաստեցի ^{այս} թիթեղները, որոնց վրա ես փորագրեցի այս բաները:

32 Եվ ես փորագրեցի այն, ինչը հաճո է Աստծուն: Եվ եթե իմ ժողովուրդը գոհ լինի Աստծո բաներից, նրանք գոհ կլինեն իմ փորագրություններից, որոնք այս թիթեղների վրա են:

33 Եվ եթե իմ ժողովուրդը ցանկանա իմանալ ժողովրդիս պատմության մանրամասնությունները, նրանք պետք է ուսումնասիրեն իմ մյուս թիթեղները:

34 Եվ ինձ բավարարում է ասելը, որ քառասուն տարիներ անցել էին, և մենք արդեն ունեցել էինք պատերազմներ և հակառակություններ մեր եղբայրների հետ:

ԳԼՈՒԽ 6

Հակոբը շարադրում է հրեական պատմությունը՝ Բաբելոնյան գերությունը և վերադարձը. Բարայեյի Սուրբի ծառայությունը և խաչելությունը. հեթանոսների կողմից ստացված օգնությունը. և հրեաների վերականգնումը վերջին օրերին, երբ նրանք կհավատան Մեսիային: Մոտ 559–545թթ. Ք.ծ.ա.:

ԽՈՍԹԵՐԸ Հակոբի՝ Նեփիի եղբոր,

21գ 2 Նեփի 26.33,
3 Նեփի 2.14–16:
22ա 1 Նեփի 12.23:
23ա ստ՝ Ամուսնություն,

Ամուսնանալ –
Միջհավատքային
ամուսնություն:
24ա ստ՝ Ծույլ, Ծուլություն:

26ա Հակոբ 1.18–19,
Մոսիա 23.17:
30ա 1 Նեփի 19.1–6:
31ա ստ՝ Թիթեղներ:

որոնք նա ասաց Նեփիի ժողովրդին:

2 Ահա, իմ սիրելի՛ եղբայրներ, ես՝ Հակոբս, կանչված լինելով Աստծուց և կարգված, ըստ նրա սուրբ կարգի, և նվիրաբերված լինելով իմ եղբայր Նեփիի կողմից, որին դուք նայում եք՝ որպես "թագավորի կամ պաշտպանի, և որին դուք ապավինում եք՝ անվտանգության համար, ահա, դուք գիտեք, որ ես ասել եմ ձեզ չափազանց շատ բաներ:

3 Այնուամենայնիվ, ես կրկին խոսում եմ ձեզ հետ. քանզի ես փափագում եմ ձեր հոգիների բարօրությունը: Այո, մեծ է իմ անհանգստությունը ձեզ համար. և դուք ինքներդ գիտեք, որ այն մշտապես եղել է: Քանզի ես հորդորել եմ ձեզ ողջ ջանասիրությամբ. և ես սովորեցրել եմ ձեզ իմ հոր խոսքերը. և ես խոսել եմ ձեզ հետ բոլոր բաների վերաբերյալ, որոնք գրված են աշխարհի արարումից ի վեր:

4 Եվ այժմ, ահա, ես կկանենայի խոսել ձեզ հետ բաների վերաբերյալ, որոնք կան, և որոնք պիտի գան. ուստի, ես կկարդամ "Եսայիայի խոսքերը: Եվ դրանք այն խոսքերն են, որոնք եղբայրս ցանկացել է, որ ես խոսեմ ձեզ հետ: Եվ ես խոսում եմ ձեզ հետ ձեր օգտի համար, որպեսզի դուք կարողանաք սովորել և փառաբանել ձեր Աստծո անունը:

5 Եվ արդ, խոսքերը, որոնք ես կկարդամ, այն խոսքերն են, որոնք Եսայիան ասել է ամբողջ Իսրա-

յելի տան վերաբերյալ. ուստի, դրանք կարելի է վերագրել ձեզ, քանզի դուք Իսրայելի տնից եք: Եվ կան շատ բաներ, որոնք ասվել են Եսայիայի կողմից, որոնք կարելի է վերագրել ձեզ, որովհետև դուք Իսրայելի տնից եք:

6 Եվ արդ, սրանք են խոսքերը. "Այսպես է ասում Տեր Աստված. Ահա, ես կբարձրացնեմ իմ ձեռքը դեպի հեթանոսները և վեր կհանեմ իմ ²դրոշը ժողովրդի համար. և նրանք իրենց ձեռքերի վրա կբերեն քո որդիներին, և քո դուստրերին կտանեն իրենց ուսերին:

7 Եվ թագավորները կլինեն քո խնամող հայրերը, և նրանց թագուհիները՝ քո ստնտու մայրերը. նրանք երեսնիվայր մինչև գետին կխոնարհվեն քեզ և կլիզեն քո ոտքերի փոշին. և դու կիմանաս, որ ես եմ Տերը. քանզի նրանք, ովքեր "սպասում են ինձ, ամոթով չեն մնա:

8 Եվ այժմ, ես՝ Հակոբս, կկանենայի խոսել որոշ բան այս խոսքերի վերաբերյալ: Քանզի, ահա, Տերը ցույց է տվել ինձ, որ նրանք, ովքեր "Երուսաղեմում էին, որտեղից մենք եկանք, սպանվել են ու ²տարվել գերության:

9 Սակայն Տերը ցույց է տվել ինձ, որ նրանք կրկին "կվերադառնան: Եվ նա նաև ցույց է տվել ինձ, որ Տեր Աստված՝ Սուրբն Իսրայելի, ինքը մարմնում կհայտնվի նրանց. և ապա, երբ նա ինքը հայտնվի նրանց, նրանք կխաբազանեն նրան և ²կխաչեն նրան, ըստ հրեշտակի խոսքերի, որն ասաց ինձ այդ:

6 2ա Հակոբ 1.9, 11:
4ա3 Նեփի 23.1:
6ա Ես. ԽԹ.22-23:
բ սու Դրոշ:
7ա Մովսես 1.6,
վևՈՒ 133.45:

8ա Եսբ. Բ.6, 1 Նեփի 7.13,
2 Նեփի 25.10,
Օմնի 1.15, Հել. 8.20-21:
բ Դ Թագ. ԻԴ.10-16,
ԻԵ.1-12:
սու Իսրայել -

Իսրայելի ցրվելը:
9ա 1 Նեփի 10.3:
բ 1 Նեփի 19.10, 13,
Մոսիա 3.9,
3 Նեփի 11.14-15:
սու Խաչելություն:

10 Եվ Իսրայելի Սուրբի դեմ իրենց սրտերը կարծրացնելուց և պարանոցները խստացնելուց հետո, ահա, Իսրայելի Սուրբի ^ադատաստանները պիտի զան նրանց վրա: Եվ գալիս է օրը, որ նրանք պիտի լինեն ծեծված և չարչարված:

11 Ուստի, նրանք այստեղ-այնտեղ քշվելուց հետո, քանզի այսպես է ասում հրեշտակը. Շատերը չարչարված կլինեն մարմնում, բայց հավատարիմների աղոթքների շնորհիվ կորստի չեն ենթարկվի. նրանք ցրված և ծեծված և ատված կլինեն. այնուամենայնիվ, Տերը ողորմած կլինի նրանց հանդեպ, այնպես որ, ^աերբ նրանք զան իրենց Քավչի ^բիմացությանը, նրանք կրկին ^գկժողովվեն միասին՝ իրենց ժառանգության հողերում:

12 Եվ օրինված են ^ահեթանոսները, նրանք, ում մասին գրել է մարգարեն. քանզի, ահա, եթե լինի այնպես, որ նրանք ապաշխարեն, և չկռվեն Սիոնի դեմ, և չմիանան այն մեծ և ^բպիղծ եկեղեցուն, նրանք կփրկվեն, քանզի Տեր Աստված կիրագործի իր ^գուխտերը, որոնք նա արել է իր զավակների հետ. և այդ պատճառով մարգարեն գրել է այս բաները:

13 Ուստի, նրանք, ովքեր կռվում են Սիոնի դեմ և Տիրոջ ուխտյալ ժողովրդի, կլիզեն նրանց ոտքերի

փոշին. և Տիրոջ ժողովուրդը չպիտի մնա ^աամոթով: Քանզի Տիրոջ ժողովուրդը նրանք են, ովքեր ^բսպասում են նրան. քանզի նրանք դեռ սպասում են Մեսիայի գալուստին:

14 Եվ ահա, ըստ մարգարեի խոսքերի, Մեսիան ինքը կսկսի կրկին, ^աերկրորդ անգամ դարձի բերել նրանց. ուստի, նա իրեն ^բհայտնի կդարձնի նրանց, գորությամբ և մեծ փառքով, ի ^գկործանումն նրանց թշնամիների, երբ գա այն օրը, երբ նրանք կհավատան նրան. և ոչ մեկին նա չի կործանի, ով կհավատա իրեն:

15 Եվ նրանք, ովքեր չեն հավատա նրան, ^ակկործանվեն՝ և՛ ^բկրակով, և՛ փոթորկով, և՛ երկրաշարժերով, և՛ արյունահեղություններով, և՛ ^գժանտախտով, և՛ սովով: Եվ նրանք կիմանան, որ Տերն է Աստված՝ Սուրբն Իսրայելի:

16 ^աՔանզի մի՞թե հզորից կառնվի ավարը, կամ արդյոք ^բօրինական գերյալները կազատվե՞ն:

17 Բայց այսպես է ասում Տերը. Նույնիսկ հզորի ^ագերիները կառնվեն և զարհուրելիի ավարը կազատվի. քանզի ^բՀզոր Աստված ^գկազատի իր ուխտյալ ժողովրդին: Քանզի այսպես է ասում Տերը. Ես կկռվեմ նրանց հետ, ովքեր կռվում են քեզ հետ,

18 Եվ ես կկերակրեմ նրանց,

10ա Մատ. ԻԷ.24–25:
 11ա1 Նեփի 22.11–12,
 2 Նեփի 9.2:
 բ Ովսե Գ.5:
 գ սուր Իսրայել –
 Իսրայելի ցրվելը:
 12ա1 Նեփի 14.1–2,
 2 Նեփի 10.9–10:
 բ սուր Դև – Դևի
 եկեղեցին:
 գ սուր Աբրահամի ուխտը:

13ա3 Նեփի 22.4:
 բ Ես. Խ.31,
 1 Նեփի 21.23,
 Վև.ՈՒԹ 133.45:
 14ա Ես. ԺԱ.11,
 2 Նեփի 25.17, 29.1:
 բ 2 Նեփի 3.5:
 գ 1 Նեփի 22.13–14:
 15ա2 Նեփի 10.16, 28.15,
 3 Նեփի 16.8:
 սուր Վերջին օրեր,

Ետին օրեր:
 բ Հակոբ 6.3:
 գ Վև.ՈՒԹ 97.22–26:
 16ա Ես. ԽԹ.24–26:
 բ նշ. Տիրոջ ուխտյալ
 ժողովուրդը, ինչպես
 հիշատակված է 17-րդ
 հատվածում:
 17ա1 Նեփի 21.25:
 բ սուր Եհովա:
 գ Դ.Թագ. ԺԷ.39:

ովքեր քեզ ճնշում են, իրենց իսկ ստով. և նրանք կհարբեն իրենց իսկ արյունով, ինչպես քաղցր գինով. և ամեն մարմին կիմանա, որ ես՝ Տերս եմ քո Փրկիչը և քո ^աՔավիչը՝ Հակոբի ^բՀզորը:

ԳԼՈՒԽ 7

Եսայիան խոսում է Մեսիայի պես – Մեսիան կունենա ուսումնավարժ լեզու – Նա կտա իր թիկունքը զարկողներին – Նա ամոթապարտ չի լինի – Համեմատեք Եսայիայի Ծ: Մոտ 559–545թթ. Ք.ծ.ա.:

ԱՅո, քանզի այսպես է ասում Տերը. Ե՞ս եմ արձակել քեզ կամ ե՞ս եմ վտարել քեզ հավիտյան: Քանզի այսպես է ասում Տերը. Ո՞ւր է ձեր մոր ապահարզանի թուղթը: Ո՞ւմ համար եմ արձակել ես ձեզ, կամ իմ պարտապաններից որի՞ն եմ ծախել ձեզ: Այո, ո՞ւմ եմ ես ծախել ձեզ: Ահա, ձեր անօրինությունների համար եք դուք ձեզ ^ածախել և ձեր օրինազանցությունների համար է ձեր մայրն արձակվել:

2 Ուստի, երբ ես եկա, ոչ մի մարդ չկար. երբ ես ^ականչեցի, այո՛, պատասխանող չկար: Ո՞վ Իսրայելի տուն, մի՞թե իմ ձեռքը խիստ կարճացել է, որ այն չի կարող փրկագնել կամ մի՞թե ես զորություն չունեմ՝ ազատելու: Ահա, իմ կշտամբանքով ես չորացնում եմ ^բծովերը, ես դարձնում եմ նրանց ^գգետերն անապատ և նրանց ^դձկները՝ հոտած, որովհետև ջրերը

ցամաքել են, և նրանք ծարավից սատկում են:

3 Ես երկինքները ^ախավար եմ հագցնում և ^բքուրձը նրանց ծածկոց դարձնում:

4 Տեր Աստված տվել է ինձ ուսումնավարժ ^ալեզու, որպեսզի ես իմանամ, թե ինչպես մի խոսք խոսեմ քեզ հետ ճիշտ ժամանակին, ո՞վ Իսրայելի տուն: Երբ դուք հոգնած եք, նա արթնացնում է՝ առավոտից առավոտ: Նա արթնացնում է իմ ականջը՝ լսելու ուսումնավարժների պես:

5 Տեր Աստված բացել է իմ ^աականջը, և ես ապստամբ չեի, ոչ էլ մեջքս շրջեցի:

6 Ես տվեցի թիկունքս ^ազարկողին և այտերս նրանց, ովքեր փետեցին մազերս: Ես չքաքցրեցի երեսս նախատինքից և թքից:

7 Քանզի Տեր Աստված կօզմի ինձ, հետևաբար, ես ամոթապարտ չեմ լինի: Ուստի, ես դարձրեցի երեսս կայծքարի նման, և ես գիտեմ, որ չեմ ամաչելու:

8 Եվ Տերը մոտ է, և նա արդարացնում է ինձ: Ո՞վ կհակառակվի ինձ: Եկեք միասին կանգնենք: Ո՞վ է իմ հակառակորդը: Թո՛ղ մոտ գա ինձ, և ես կզարկեմ նրան իմ քերանի ուժով:

9 Քանզի Տեր Աստված կօզմի ինձ: Եվ բոլոր նրանք, ովքեր ^ակդատապարտեն ինձ, ահա, նրանք բոլորը պիտի մաշվեն, ինչպես հանդերձը, և ցեցը պիտի ամբողջովին ուտի նրանց:

10 Ո՞վ է ձեր միջից, որ վախենում է Տիրոջից, որ հնազանդվում է նրա

18ա սուր. Քավիչ:
բ Ծն. ԽԹ.24,
Ես. 4.16:

7 1ա սուր Ուրացություն:
2ա Առակ. Ա.24–25,
Ես. Կե.12, Ալմա 5.37:

բ Ել. ԺԳ.21,
Սաղ. ԾԶ.9,
ՎևՈՒ 133.68–69:

գ Հես. Գ.15–16:
դ Ել. է.21:
3ա Ել. Ժ.21:

բ Հայտ. Զ.12:
4ա Գուկ. Բ.46–47:
5ա ՎևՈՒ 58.1:
6ա Սառ. ԲԷ.26,
2 Նեփի 9.5:
9ա Հոռով. Բ.31:

ծառայի ՝ձայնին, որը քայլում է խավարում և լույս չունի:

11 Ահա, դո՛ւք, ամենքդ, որ կրակ եք վառում և ինքներդ ձեզ կայծերով շուրջանակի շրջապատում, քայլեք ՝ձեր կրակի լույսով և կայծերով, որոնք դուք եք վառել: Սա կունենաք դուք իմ ձեռքից՝ դուք կպառնկեք վշտի մեջ:

ԳԼՈՒԽ 8

Վերջին օրերին Տերը կմխիթարի Միոնը և կհավաքի Իսրայելը – Փրկագնվածները, մեծ ուրախությամբ, կզան Միոն – Համեմատեք Եսայիայի ԾԱ և ԾԲ.1–2: Մոտ 559–545թթ. Զ.ծ.ա.:

ԼՍԵՔ ինձ, դո՛ւք, որ հետամուտ եք արդարության: Նայեք ՝վեմին, որից դուք պոկված եք և հորի անցքին, որից դուք փորված եք:

2 Նայեք Աբրահամին՝ ձեր ՝հորը, և ՝Սարրային՝ նրան, որ բերել է ձեզ. քանզի ես միայն նրան կանչեցի և օրհնեցի նրան:

3 Քանզի Տերը կմխիթարի ՝Միոնը, նա կմխիթարի նրա բոլոր լքված տեղերը. և նա կդարձնի նրա ՝անապատը Եղեմի նման, և նրա ամայի վայրերը՝ Տիրոջ պարտեզի նման: Յնծությունն ու բերկրանքը կտիրի այնտեղ, գոհաբանությունն ու մեղեղու ձայնը:

4 Լսիր ինձ, իմ ժողովուրդ և ականջ դիր ինձ, ո՛վ իմ ազգ. քանզի ՝օրենք է դուրս գալու ին-

ձանից, և ես կանեմ այնպես, որ իմ դատաստանը դրվի իբրև մի ՝լույս մարդկանց համար:

5 Իմ արդարությունը մոտ է. իմ ՝փրկությունը՝ առաջ գնացած, և իմ բազուկը կդատի մարդկանց: ՝Կղզիները կսպասեն ինձ և իմ բազկին կապավինեն:

6 Բարձրացրեք ձեր աչքերը դեպի երկինքները, և նայեք երկրի վրա՝ դեպի ցած. քանզի ՝երկինքները ՝կանհետանան, ինչպես ծուխ, և երկիրը ՝կմաշվի, ինչպես հանդերձը. և նրանք, ովքեր բնակվում են նրա մեջ, կմեռնեն մույն ձևով: Բայց իմ փրկությունը կլինի հավիտյան, և իմ արդարությունը չի վերանա:

7 Լսեք ինձ, դո՛ւք, որ գիտեք արդարություն, մարդիկ, որոնց սրտում ես գրել եմ իմ օրենքը, մի ՝վախեցեք մարդկանց նախատինքից, ոչ էլ վախեցեք նրանց հայհոյանքներից:

8 Քանզի ցեցը կուտի նրանց, ինչպես հանդերձը, և որդը կուտի նրանց, ինչպես բուրդը: Բայց իմ արդարությունը կլինի հավիտյան, և իմ փրկությունը՝ սերնդե-սերունդ:

9 Չարթնիր, զարթնիր: ՝Չորություն հագիր, ո՛վ Տիրոջ բազուկ. զարթնիր, ինչպես հնադարյան օրերում: Մի՞թե դու նա չես, որ կտոր-կտոր արեցիր Ռ-ահաբին և խոցեցիր վիշապին:

10 Մի՞թե դու նա չես, որ ցամաքեցրիր ծովը՝ մեծ անդունդի ջրերը. որ ծովի խորքերը ՝ճանա-

10ա ՎևՈՒ 1.38:
11ա Դ.առ. ԺԷ.6:
8 1ա սուր Վեմ:
2ա Ծն. ԺԷ.1–8,
ՎևՈՒ 132.49:
բ Ծն. ԻԴ.36:
3ա սուր Միոն:
բ Ես. ԼԵ.1–2, 6–7:

4ա ԿԱՄ ուսմունք,
վարդապետություն:
Ես. Բ.3:
սուր Ավետարան:
բ սուր Լույս, Քրիստոսի
լույս:
5ա սուր Փրկություն:
բ 2 Նեփի 10.20:

6ա Բ Պետ. Գ.10:
բ եբր. կցրվեմ:
Սաղ. ԾԲ.25–27:
գ եբր. կքայքայվի:
7ա Սաղ. ԾՁ.4, 11,
ՎևՈՒ 122.9:
9ա ՎևՈՒ 113.7–8:
10ա Ես. ԼԵ.8:

պարհ շինեցիր՝ փրկվածների անցնելու համար:

11 Հետևաբար, Տիրոջ ^ափրկագրքով անցնելը կվերադառնան և ^բերգելով կգան Սիոն. և հավիտեանական ուրախություն ու սրբություն կլինի նրանց գլուխների վրա. և նրանք ձեռք կբերեն բերկրանք և ուրախություն. վիշտը և ^գսուգը հեռու կլիախչեն:

12 ^ԴԵս նա եմ. այո՛, ես նա եմ, որ մխիթարում է ձեզ: Ահա, ո՞վ ես դու, որ ^ավախենում ես մարդուց, որը պիտի մեռնի, և մարդու որդուց, որը պիտի դառնա ^բխոտի պես:

13 Եվ ^ամոռանում ես Տիրոջը՝ քո արարչին, որ տարածել է երկինքները, և դրել է երկրի հիմքերը, և ամեն օր, շարունակ վախենում ես բռնակալի կատաղությունից, կարծես թե նա պատրաստ էր՝ կործանելու: Եվ ո՞ր է բռնակալի կատաղությունը:

14 Գերի արքայալը շտապում է, որպեսզի կարողանա արձակվել, և որպեսզի չմեռնի հորում, ոչ էլ որպեսզի նրա հացը պակասի:

15 Բայց ես եմ Տերը՝ քո Աստվածը, որի ^ալիքները շառաչում են. Չորաց Տեր է իմ անունը:

16 Եվ ես դրել եմ իմ խոսքերը քո բերանում, և ծածկել եմ քեզ իմ ձեռքի ստվերում, որպեսզի կարողանամ տնկել երկինքները և դնել երկրի հիմքերը, և ասել Սիոնին. Ահա, դո՛ւ ես իմ ^աժողովուրդը:

17 Չարթնիր, զարթնիր, վեր կաց, ո՛վ Երուսաղեմ, որ խմել ես Տիրոջ

ձեռքից նրա ^աբարկության ^բբաժակը, դու խմել ես, պարպելով մրուրը դողացնող բաժակի,

18 Եվ չունի ոչ մեկը, իր բերած որդիների միջից, առաջնորդելու իրեն. ոչ էլ, որպեսզի բռնի նրա ձեռքը, բոլոր որդիներից, որ նա մեծացրել է:

19 Այս երկու ^աորդիներն են քեզ մոտ եկած, որոնք կխղճան քեզ՝ քո լքվածությանը և ավերվածությանը և սովին և սրին, և ո՞ւմ ձեռքով ես պետք է մխիթարեմ քեզ:

20 Քո որդիները նվաղել են, բացի այս երկուսից. նրանք պառկած են բոլոր փողոցների գլխին. ինչպես վայրի ցուլը ցանցի մեջ, նրանք լի են Տիրոջ կատաղությանը, քո Աստծո կշտամբանքով:

21 Ուրեմն, լսիր այժմ սա, ո՛վ չարչարված և ^ահարբած, բայց ոչ թե գինով.

22 Այսպես է ասում քո Տերը. Տերը և քո Աստվածը ^ապաշտպանում է իր ժողովրդի դատը. ահա, ես քո ձեռքից վերցրել եմ դողացնող բաժակը, իմ կատաղության բաժակի մրուրը. դու այլևս չպիտի խմես այն նորից:

23 Այլ ^աես կդնեմ այն նրանց ձեռքում, ովքեր չարչարում են քեզ, ովքեր ասում էին քո հոգուն. Վա՛ր կռացիր, որ մենք կարողանանք անցնել վրայովդ, և դու քո մարմինը դրեցիր, որպես գետին և որպես փողոց, նրանց համար, որոնք անցան վրայովդ:

24 ^աՉարթնիր, զարթնիր, հագիր

11ա սուր Փրկագնել, Փրկագնված, Փրկագնում:
բ Ես. ԼԵ.10:
գ Հայտ. ԻԱ.4:
12ա ՎևՈՒ 133.47, 136.22:
բ Երեմ. Ա.8:

գ Ես. Խ.6-8, Ա Պետ. Ա.24:
13ա Երեմ. ԻԳ.27:
15ա 1 Նեփի 4.2:
16ա 2 Նեփի 3.9, 29.14:
17ա Գուկ. ԻԱ.24:
բ Ես. ԻԹ.9,

Երեմ. ԻԵ.15:
19ա Հայտ. ԺԱ.3:
21ա 2 Նեփի 27.4:
22ա Երեմ. Ծ.34:
23ա Չաք. ԺԲ.9:
24ա Ես. ԾԲ.1-2:

Քորությունը, ո՛վ Պիոն, հագիր գեղեցիկ հանդերձներդ, ո՛վ Երուսաղեմ, սո՛րբ քաղաք. քանզի այսուհետև Պայլև քո մեջ չի մտնի ամթլպատը և անմաքուրը:

25 Թափ տուր փոշին քեզանից. ՞եղիք, նստիք, ո՛վ Երուսաղեմ. արձակիր պարանոցիդ Քլապերը, ո՛վ Սիոնի գերի աղջիկ:

ԳԼՈՒԽ 9

Հրեաները կժողովվեն բոլոր իրենց խոստումի երկրներում – Քափությունն ազատագնում է մարդուն Անկումից – Մեռելների մարմինները դուրս կգան գերեզմանից, իսկ նրանց հոգիները՝ դժոխքից և դրախտից – Նրանք կդատվեն – Քափությունը փրկում է մահից, դժոխքից, դևից և անվերջ տանջանքից – Արդարները փրկվում են Աստծո արքայությունում – Մեղքերի համար տույժեր են սահմանվում – Իսրայելի Սուրբը դռան պահապանն է: Մոտ 559–545թթ. Ք.ծ.ա.:

ԵՎ այժմ, իմ սիրելի՛ եղբայրներ, ես կարդացի այս բաները, որպեսզի դուք իմանաք Տիրոջ ՞ուխտերի մասին, որ նա ուխտել է ողջ Իսրայելի տան հետ,

2 Որոնք նա խոսել է հրեաներին, իր սուրբ մարգարեների բերանով, նույնիսկ սկզբից ի վեր, սերնդեսերունդ, մինչև զա ժամանակը, երբ նրանք ետ ՞կբերվեն դեպի

ճշմարիտ եկեղեցին, և Աստծո հոտը. երբ նրանք Քկտողովվեն տուն՝ դեպի իրենց ժառանգության Պողոտը և կհաստատվեն բոլոր իրենց խոստումի երկրներում:

3 Ահա, իմ սիրելի՛ եղբայրներ, ես խոսում եմ ձեզ հետ այս բաները, որպեսզի դուք կարողանաք ուրախանալ և ՞բարձրացնել ձեր գլուխները հավիտյան, այն օրհնությունների շնորհիվ, որոնք Տեր Աստված կպարգևի ձեր զավակներին:

4 Քանզի ես գիտեմ, որ դուք՝ ձեզանից շատերը, շատ եք պրպտել՝ իմանալու գալիք բաների մասին. ուստի, ես գիտեմ, որ դուք իմանում եք, որ մեր մարմինը պետք է հալումաշ լինի ու մեռնի. այնուամենայնիվ, մեր ՞մարմիններում մենք կտեսնենք Աստծուն:

5 Այո, ես գիտեմ, որ դուք իմանում եք, որ մարմնում նա իրեն ցույց կտա նրանց՝ Երուսաղեմում, որտեղից մենք եկել ենք. քանզի հարկ է, որ դա տեղի ունենա նրանց մեջ. քանզի դա պետք է մեծ ՞Ստեղծողին, որ նա՝ մարմնում, հանդուրժում է, որ ինքը ենթակա դառնա մարդուն և մեռնի Քբոլոր մարդկանց համար, որպեսզի բոլոր մարդիկ կարողանան ենթակա դառնալ իրեն:

6 Քանզի ինչպես մահն անցավ բոլոր մարդկանց վրա՝ իրագործելու մեծ Ստեղծողի ողորմած

24բ ՎևուՒ 113.7–8:
գ սո՛ւ Սիոն:
դ Հովել Գ.17:
25ա նշ. Եղիք փոշու միջից և արժանապատվությամբ նստիք՝ ի վերջո փրկագնվելով:
բ ՎևուՒ 113.9–10:
9 1ա սո՛ւ Աբրահամի ուխտը:

2ա2 Նեփի 6.11:
սո՛ւ Ավետարանի վերականգնումը:
բ սո՛ւ Իսրայել – Իսրայելի ցրվելը:
գ 2 Նեփի 10.7–8:
սո՛ւ Խոստացված երկիր:
3ա ՋՍԹ, Սաղ. 24.7–10:

4ա Հոբ ԺԹ.26,
Ալմա 11.41–45, 42.23,
Հել. 14.15,
Մորմ. 9.13:
5ա սո՛ւ Ստեղծել, Ստեղծում:
բ Հովի. ԺԲ.32,
2 Նեփի 26.24,
3 Նեփի 27.14–15:

«ծրագիրը, պետք է անպայման լինի ^բհարության մի զորություն և հարությունը պիտի անպայման գա մարդուն՝ ^գանկումի պատճառով, և անկումը եկավ օրինազանցության հետևանքով, և որովհետև մարդիկ դարձան ընկած, նրանք ^դկտրվեցին Տիրոջ ներկայությունից:

7 Ուստի, պետք է անպայման լինի մի ^աանսահման ^բքավություն, մինչև չլինի մի անսահման քավություն, այս ապականությունը չի կարող հազնել անապականություն: Ուստի, ^գառաջին դատաստանը, որը եկավ մարդու վրա, պետք է անպայման ^դմնացած լիներ մի անվերջ ժամանակաընթացքի համար: Եվ եթե այդպես լիներ, այս մարմինը պետք է վայր դրվեր՝ փտելու և քայքայվելու իր մայր հողում՝ այլևս չբարձրանալու:

8 Օ՛հ, ^աիմաստությունն Աստծո, նրա ^բողորմությունը և ^գշնորհը: Քանզի, ահա, եթե ^դմարմինն այլևս չբարձրանա, մեր հոգիները պետք է դառնան ենթակա այն հրեշտակին, որն ^եընկել էր Հավերժական Աստծո ներկայությունից և դարձել ^զդև՝ այլևս չբարձրանալու:

9 Եվ մեր հոգիները պետք է որ դարձած լինեին նրա նման, և

մենք՝ դևեր դարձած, դևի համար ^ահրեշտակներ, ^բգրկված լինելով մեր Աստծո ներկայությունից՝ ^գստերի հոր հետ մնալու, թշվառության մեջ, ինչպես ինքը. այո, այն էակի, որը ^դխաբեց մեր առաջին ծնողներին, որը ^եվիոխակերպվում է՝ իբրև լույսի ^զհրեշտակ, և դրդում մարդկանց զավակներին՝ սպանության ^էգաղտնի խմբակցությունների և խավարի ամեն տեսակի գաղտնի գործերի:

10 Օ՛հ, որքան մեծ է բարությունը մեր Աստծո, որն այս սարսափելի հրեշի ճանկից, մեր փախուստի համար, ուղի է պատրաստում. այո, այն հրեշի ^ամահի ու ^բդժոխքի, որը ես կոչում եմ մահը մարմնի, և նաև մահը հոգու:

11 Եվ մեր Աստծո՝ Իսրայելի Սուրբի ^աազատության ուղու պատճառով, այս ^բմահը, որի մասին ես խոսել եմ, որը ժամանակավոր է, կազատի իր մեռելներին. մահ, որը գերեզմանն է:

12 Եվ այս ^ամահը, որի մասին ես խոսեցի, որը հոգևոր մահն է, կազատի իր մեռելներին. հոգևոր մահը, որը ^բդժոխքն է. ուստի, մահը և դժոխքը պիտի ազատեն իրենց մեռելներին, և դժոխքը պիտի ազատի իր գերյալ ոգիներին, և գերեզմանը պիտի ազատի

<p>6ա սո՛ր Փրկագնման ծրագիր:</p> <p>բ սո՛ր Հարություն:</p> <p>գ սո՛ր Ադամի և Եվայի անկումը:</p> <p>դ 2 Նեփի 2.5:</p> <p>7ա Ալմա 34.10:</p> <p>բ սո՛ր Քավել, Քավություն:</p> <p>գ Մոսիա 16.4-5, Ալմա 42.6, 9, 14:</p> <p>դ Մոսիա 15.19:</p> <p>8ա Հոր ժԲ.13, Աբր. 3.21:</p> <p>սո՛ր Իմաստություն:</p>	<p>բ սո՛ր Ողորմած, Ողորմություն:</p> <p>գ սո՛ր Շնորհ:</p> <p>դ ՎևՈՒ 93.33-34:</p> <p>ե Ես. ԺԴ.12, 2 Նեփի 2.17-18, Մովսես 4.3-4, Աբր. 3.27-28:</p> <p>զ սո՛ր Դև:</p> <p>9ա Հակոբ 3.11, Ալմա 5.25, 39:</p> <p>բ Հայտ. ԺԲ.7-9:</p> <p>գ սո՛ր Ստել:</p> <p>դ ԾՆ. Գ.1-13,</p>	<p>Մոսիա 16.3, Մովսես 4.5-19:</p> <p>ե Բ Կոր. ԺԱ.14, Ալմա 30.53:</p> <p>զ ՎևՈՒ 129.8:</p> <p>է սո՛ր Գաղտնի խմբակցություններ:</p> <p>10ա Մոսիա 16.7-8, Ալմա 42.6-15:</p> <p>բ սո՛ր Դժոխք:</p> <p>11ա սո՛ր Ազատիչ:</p> <p>բ սո՛ր Մահ ֆիզիկական:</p> <p>12ա սո՛ր Մահ հոգևոր:</p> <p>բ ՎևՈՒ 76.81-85:</p>
--	--	---

իր գերյալ մարմիններին, և մարդկանց մարմիններն ու ճոզիները Պկվերականգնվեն մեկը մյուսի հետ. և դա՝ Իսրայելի Սուրբի հարության գործությամբ է:

13 Օ՛հ, որքան մեծ է մեր Աստծո ծրագիրը: Քանզի մյուս կողմից Աստծո Քրիստոսը պիտի ազատի արդարների ոգիները, և գերեզմանը՝ ազատի արդարի մարմինը. և ոգին ու մարմինը կրկին Պկվերականգնվի միմյանց հետ, և բոլոր մարդիկ դառնան անապական և Պանմահ, և նրանք ապրող հոգիներ են՝ ունենալով մեզ պես կատարյալ Պգիտակցություն մարմնում, միայն թե մեր գիտելիքը կլինի կատարյալ:

14 Ուստի, մենք կունենանք կատարյալ Պգիտելիք մեր ողջ Քհանցանքի և մեր անմաքրության և մեր Վներկության մասին. իսկ արդարները կունենան կատարյալ իմացություն իրենց վայելքի և իրենց Պարդարության, իհանդերձավորված լինելով Վմաքրությամբ, այո, նույնիսկ արդարության Վպարեզոտով:

15 Եվ կլինի այնպես, որ երբ բոլոր մարդիկ անցած կլինեն այս առաջին մահից դեպի կյանք, այնպես որ նրանք դարձած կլինեն անմահ, նրանք պիտի հայտնվեն

Իսրայելի Սուրբի Պատյանի առաջ. և հետո գալիս է Քրատաստանը, և հետո պետք է նրանք դատվեն՝ ըստ Աստծո սուրբ դատաստանի:

16 Եվ, անկասկած, ինչպես կենդանի է Տերը, քանզի Տեր Աստված է խոսել այս, և սա նրա հավերժական Պխոսքն է, որը չի կարող Քանցնել, որ նրանք, ովքեր արդար են, արդար էլ կլինեն, և նրանք, ովքեր Պկեղտոտ են, Պկեղտոտ էլ կլինեն. ուստի, նրանք, ովքեր կեղտոտ են, ինչևն ու նրա հրեշտակներն են, և նրանք կգնան նրանց համար պատրաստված Պհավիտենական կրակի մեջ. և նրանց տանջանքը կրակի և ծծմբի չլճի պես է, որի բոցը բարձրանում է վեր հավիտյանս հավիտենից և չունի վերջ:

17 Օ՛, մեծությունն ու Պարդարադատությունը մեր Աստծո: Քանզի նա իրագործում է բոլոր իր խոսքերը, և դրանք դուրս են եկել նրա բերանից, և նրա օրենքը պետք է կատարվի:

18 Բայց, ահա, արդարները՝ Պսրբերն Իսրայելի Սուրբի, նրանք, ովքեր հավատացել են Իսրայելի Սուրբին, նրանք, ովքեր դիմացել են աշխարհի Քխաչերին, և արհամարհել դրա ամոթը, նրանք Պկժառանգեն Աստծո Պարքայությունը,

12զ սո՛ւ Ոգի:
դ սո՛ւ Հարություն:
13ա սո՛ւ Փրկագնման ծրագիր:
բ ՎևՈՒ 138.14–19:
սո՛ւ Գրախոս:
գ Ալմա 11.43:
դ սո՛ւ Անմահ, Անմահություն:
ե սո՛ւ Կատարյալ:
զ ՎևՈՒ 130.18–19:
14ա Մոսիա 3.25, Ալմա 5.18:
բ սո՛ւ Մեղավորություն:
գ Մորմ. 9.5:

դ սո՛ւ Արդար, Արդարություն:
ե Առակ. ԼԱ.25:
զ սո՛ւ Անարատ, Անարատություն:
է ՎևՈՒ 109.76:
15ա սո՛ւ Վերջին դատաստան:
բ Մաղ. ԺԹ.9, 2 Նեփի 30.9:
16ա գ Թագ. Ը.56, ՎևՈՒ 1.38, Մովսես 1.4:
բ ՎևՈՒ 56.11:
գ սո՛ւ Կեղտ,

Կեղտություն:
դ 1 Նեփի 15.33–35, Ալմա 721, Մորմ. 9.14, ՎևՈՒ 88.35:
ե սո՛ւ Դև:
գ Մոսիա 27.28:
է Հայտ. ԻԱ.8, 2 Նեփի 28.23, ՎևՈՒ 63.17:
17ա սո՛ւ Արդարադատություն:
18ա սո՛ւ Սուրբ:
բ Դուկ. ԺԳ.27:
գ ՎևՈՒ 45.58, 84.38:
դ սո՛ւ Վեհացում:

որը պատրաստված էր նրանց համար, աշխարհի ^bհիմնադրումից ի վեր, և նրանց ուրախությունը լիակատար կլինի ^aհավիտյան:

19 Օ՛, մեր Աստծո՛ւ Իսրայելի Սուրբի ողորմության մեծությունը: Քանզի նա ^aազատում է իր սրբերին այդ ^aսարսափելի հրեշից՝ դևից և մահից և ^aդժոխքից, և այդ կրակի ու ծծմբի լճից, որն անվերջ տանջանք է:

20 Օ՛, որքան մեծ է ^aսրբությունը մեր Աստծո: Քանզի նա ^aզիտի բոլոր բաները, և չկա որևէ բան, որ նա չհիմանա:

21 Եվ նա գալիս է աշխարհ, որպեսզի ^aփրկի բոլոր մարդկանց, եթե նրանք ականջ դնեն նրա ձայնին. քանզի ահա, նա տանում է բոլոր մարդկանց ^aցավերը, այո, ամեն մի ապրող արարածի ցավերը՝ և՛ տղամարդկանց, և՛ կանանց, և՛ երեխաների, որոնք պատկանում են ^aԱդամի ընտանիքին:

22 Եվ նա տանում է այս, որպեսզի հարությունը կարողանա անցնել բոլոր մարդկանց վրա, որպեսզի բոլորը կարողանան կանգնել նրա առջև այն մեծ և դատաստանի օրը:

23 Եվ նա պատվիրում է բոլոր մարդկանց, որ նրանք պետք է ^aապաշխարեն և ^aմկրտվեն իր

անունով՝ ունենալով կատարյալ հավատք առ Իսրայելի Սուրբը, այլապես նրանք չեն կարող փրկվել Աստծո արքայության մեջ:

24 Եվ եթե նրանք չապաշխարեն և չհավատան նրա ^aանունին, և չմկրտվեն նրա անունով, և ^aչհամբերեն մինչև վերջ, նրանք պետք է ^aճգովվեն. քանզի Տեր Աստված՝ Իսրայելի Սուրբն է խոսել սա:

25 Այդ պատճառով, նա տվել է ^aօրենք. և որտեղ ^aչկա տրված օրենք, չկա և պատիժ. և որտեղ չկա պատիժ, չկա դատապարտություն. և որտեղ չկա դատապարտություն, Իսրայելի Սուրբի ողորմություններն օրինական պահանջ ունեն նրանց վրա՝ քավության պատճառով. քանզի նրանք ազատվում են նրա գործությամբ:

26 Քանզի ^aքավությունը բավարարում է նրա ^aարդարադատության պահանջները բոլոր նրանց համար, ովքեր ^aչունեն իրենց տրված ^aօրենք, այնպես որ նրանք ազատվում են այն սարսափելի հրեշից՝ մահից ու դժոխքից, և դևից և կրակի ու ծծմբի լճից, որն անվերջ տանջանք է. և նրանք վերականգնվում են այն Աստծո մոտ, որը նրանց ^bշունչ է տվել, որը Սուրբն է Իսրայելի:

27 Բայց վա՛յ նրան, ում ^aօրենքը

18և Ավնա 13.3:
q սո՛ւ Հավերժական կյանք:
19ա Վևո՛Ւ 108.8:
p 1 Նեփի 15.35:
q սո՛ւ Դժոխք:
20ա սո՛ւ Սրբություն:
p Ավնա 26.35, Վևո՛Ւ 38.2:
21ա սո՛ւ Փրկություն:
p Վևո՛Ւ 18.11, 19.18:
q սո՛ւ Ադամ:
23ա սո՛ւ Ապաշխարել, Ապաշխարություն:

p սո՛ւ Մկրտություն, Մկրտել:
24ա սո՛ւ Հիսուս Քրիստոս – Հիսուս Քրիստոսի անունը մեզ վրա վերցնելը:
p սո՛ւ Համբերել:
q սո՛ւ Նզովք:
25ա Հակ. Գ.17: սո՛ւ Օրենք:
p Հռովմ. Գ.15, 2 Նեփի 2.13, Ավնա 42.12–24: սո՛ւ Հաշիվ, Պատաս-

խանատու, Պատասխանատվություն:
26ա 2 Նեփի 2.10, Ավնա 34.15–16: սո՛ւ Քավել, Քավություն:
p սո՛ւ Արդարադատություն:
q Մոսիա 3.11: η Մոսիա 15.24, Վևո՛Ւ 137.7: ե Ծճ. Բ.7, Վևո՛Ւ 93.33, Աբբ. 5.7:
27ա Գուլ. ԺԲ.47–48:

տրված է, այո, որն ունի Աստծո բոլոր պատվիրանները, մեզ մնան, և որը զանց է անում դրանք, և որը վատնում է իր փորձության օրերը, քանզի սոսկալի է նրա վիճակը:

28 Ա՛խ, այդ խորամանկ ծժրագիրը այն չար մեկի: Ա՛խ, ՚սնափառությունը, անկայունությունը և հիմարությունը մարդու: Երբ նրանք Գույալ են, նրանք կարծում են, թե Դիմաստուն են, և նրանք չեն լսում Աստծո Խորհուրդը, քանզի նրանք այն մի կողմ են դնում՝ ենթադրելով, որ իրենք իմանում են ինքնուրույն, ուստի նրանց իմաստությունը հիմարություն է, և այն նրանց օգուտ չի բերում: Եվ նրանք կկորչեն:

29 Բայց ույալ լինելը լավ է, եթե նրանք ապականջ են դնում Աստծո Խորհուրդներին:

30 Բայց վա՛յ հարուստներին, ովքեր հարուստ են, ինչ աշխարհի բաներին է վերաբերում: Քանզի, որովհետև նրանք հարուստ են, նրանք արհամարհում են ՚աղքատներին և հալածում են հեզերին, և նրանց սրտերն իրենց զանձերի վրա են. ուստի, նրանց զանձն իրենց աստվածն է: Եվ, ահա, նրանց զանձը նույնպես կոչնչանա իրենց հետ:

31 Եվ վա՛յ խուլերին, որոնք չեն

կամենում ալել. քանզի նրանք կկորչեն:

32 Վա՛յ կույրերին, որոնք չեն կամենում տեսնել. քանզի նրանք նույնպես կկորչեն:

33 Վա՛յ սրտով չթլփատվածներին, քանզի իրենց անօրինությունների գիտակցությունը պիտի ջախջախի նրանց վերջին օրը:

34 Վա՛յ ատախոսին, քանզի նա վայր պիտի գցվի ՚դժոխք:

35 Վա՛յ մարդասպանին, որը ապանում է միտումնավոր, քանզի նա ՚կմեռնի:

36 Վա՛յ նրանց, ովքեր ապոռնկություն են անում, քանզի նրանք վար պիտի գցվեն դժոխք:

37 Այո, վա՛յ նրանց, ովքեր ապաշտում են կուռքերի, քանզի բոլոր դեերի դեը զմայլվում է նրանցով:

38 Եվ, ի վերջո, վա՛յ բոլոր նրանց, ովքեր մեռնում են իրենց մեղքերի մեջ. քանզի նրանք պիտի ալերադառնան Աստծո մոտ, և տեսնեն նրա երեսը, և մնան իրենց մեղքերի մեջ:

39 Ո՛վ իմ սիրելի եղբայրներ, հիշեք այն Սուրբ Աստծո դեմ օրինազանցելու սարսափելիությունը և նաև այն ախորամանկ մեկի հորդորներին անձնատուր լինելու սարսափելիությունը: Հիշեք,

28ա Ալմա 28.13:
բ սո՛ր Ունայն, Ունայնություն:
գ Ղուկ. ԺԶ.15,
2 Նեփի 26.20, 28.4, 15:
դ Առակ. ԺԳ.6,
Երեմ. Ը.8–9,
Հռովմ. Ա.22:
սո՛ր Հպարտություն.
Իմաստություն:
ե Ալմա 37.12:
սո՛ր Խորհուրդ:
29ա 2 Նեփի 28.26:

բ Հակոբ 4.10:
30ա Ղուկ. ԺԲ.34,
Ա Տիմ. Զ.10,
ՎևՈՒ 56.16:
բ սո՛ր Աղքատ:
31ա Եզեկ. ԼԳ.30–33,
Մատ. ԺԱ.15,
Մոսիա 26.28,
ՎևՈՒ 1.2, 11, 14,
Մովսես 6.27:
34ա Առակ. ԺԹ.9:
սո՛ր Ազնիվ, Ազնվություն. Ստել:

բ սո՛ր Գժոխք:
35ա Ել. Ի.13,
Մոսիա 13.21:
բ սո՛ր Գերագույն պատիժ:
36ա 3 Նեփի 12.27–29:
սո՛ր Մաքրաբարոյություն:
37ա սո՛ր Կռապաշտություն:
38ա Ալմա 40.11, 13:
39ա 2 Նեփի 28.20–22, 32.8,
Մոսիա 2.32, 4.14,
Ալմա 30.53:

Քնարմնական մտածելակերպով լինելը՝ Գմահ է, իսկ հոգևոր մտածելակերպով լինելը Պկյանք Կավերժական:

40 Ո՛վ իմ սիրելի եղբայրներ, ականջ դրեք իմ խոսքերին, հիշեք Իսրայելի Սուրբի մեծությունը: Մի՛ ասեք, թե ես ծանր բաներ խսեցի ձեր դեմ. քանզի եթե անեք, դուք կհայհոյեք ճշմարտության դեմ. քանզի, ես խոսել եմ ձեր Արարչի խոսքերը: Ես գիտեմ, որ ճշմարտության խոսքերը Քիսիստ են ամեն անսարքության դեմ. բայց արդարները չեն վախենում դրանցից, քանզի նրանք սիրում են ճշմարտությունը և չեն ասանվում:

41 Օ՛հ, ուրեմն, իմ սիրելի՛ եղբայրներ, Մեկեք դեպի Տերը՝ դեպի Սուրբը: Հիշեք, որ նրա շավիղներն արդար են: Ահա, ճանապարհը մարդու համար Գնեղ է, բայց այն ձգվում է ուղիղ հունով նրա առջև, և Պդան պահապանը Սուրբն է Իսրայելի. և այնտեղ նա չի պահում ոչ մի ծառա. և չկա ուրիշ ոչ մի ճանապարհ, բացի այդ դռնից. քանզի նա չի կարող խաբվել, քանզի Տեր Աստված է նրա անունը:

42 Եվ ով որ թակի, նրա համար կբացի նա. և Միմաստունները և ուսյալները և նրանք, որ հարուստ են, ովքեր Քիքված են իրենց ուսումի և իրենց իմաստության և իրենց հարստության պատճառով, այո,

այդ նրանք են, ում նա արհամարհում է. և մինչև նրանք դեն չնետեն այս բաները և իրենք իրենց Գիմար չհամարեն Աստծո առաջ և վայր չիջնեն Պհամեստության խորքերը, նա չի բացի նրանց համար:

43 Սակայն բաներն իմաստունի և խոհեմի Մկթաքցվեն նրանցից հավիտյան, - այո՛, այն երջանկությունը, որը պատրաստված է սրբերի համար:

44 Օ՛, իմ սիրելի՛ եղբայրներ, հիշեք իմ խոսքերը: Ահա, ես հանում եմ իմ հանդերձները և թափ տալիս ձեր առաջ. ես աղոթում եմ իմ փրկության Աստծուն, որ նա նայի ինձ իր Մամենաստես աչքով. ուստի, դուք կիմանաք վերջին օրը, երբ բոլոր մարդիկ կդատվեն իրենց գործերի համար, որ Իսրայելի Աստվածը վկա էր, որ ես Քթթափեցի ձեր անօրինություններն իմ հոգուց, և որ ես նրա առաջ կանգնած եմ պայծառությամբ և Գզերժ եմ ձեր արյունից:

45 Օ՛, իմ սիրելի՛ եղբայրներ, ես դարձեք ձեր մեղքերից. թոթափեք նրա Մղթաները, ով կամենում է կապել ձեզ ամուր. եկեք դեպի այն Աստվածը, որը ձեր փրկության Քվեմն է:

46 Պատրաստեք ձեր հոգիներն այն փառավոր օրվա համար, երբ արդարին Մարդարադատություն

39բ Հռովմ. Ը.6:
սուր Մարմնական:
գ սուր Մահ հոգևոր:
դ Առակ. ԺԱ.19:
ե սուր Հավերժական կյանք:
40ա սուր Ճշմարտություն:
բ 1 Նեփի 16.2,
2 Նեփի 28.28, 33.5:
41ա 1 Նեփի 6.4, Հակոբ 1.7,
Օմնի 1.26,
Մոր. 10.30-32:

բ 2 Նեփի 31.17-21,
Ալմա 37.46,
ՎևոՒ 132.22, 25:
գ Ղուկ. ԺԳ.24,
2 Նեփի 33.9,
Հել. 3.29-30:
դ 2 Նեփի 31.9, 17-18,
3 Նեփի 14.13-14,
ՎևոՒ 43.7, 137.2:
42ա Մատ. ԺԱ.25:
բ սուր Հպարտություն:
գ Ա Կոր. Գ.18-21:

դ սուր Խոնարի, Խոնար-
հություն:
43ա Ա Կոր. Բ.9-16:
44ա Հակոբ 2.10:
բ Հակոբ 1.19:
գ Հակոբ 2.2,
Մոսիս 2.28:
45ա 2 Նեփի 28.22,
Ալմա 36.18:
բ սուր Վեմ:
46ա սուր Արդարադատու-
թյուն:

կարվի, այսինքն՝ դատաստանի օրը, որպեսզի դուք չընկրկեք սոսկալի վախից. որպեսզի դուք չհիշեք ձեր սոսկալի «հանցանքը կատարելությանը և պարտադրվեք բացականչել. Սու՛րբ, սու՛րբ են քո դատաստանները, ո՛վ Տեր Աստված՝ Ամենագոր, – բայց ես գիտեմ իմ հանցանքը. ես զանց եմ արել քո օրենքը, և իմ օրինազանցություններն իմն են. և դևը տիրացել է ինձ, այնպես որ ես զոհ եմ նրա սարսափելի թշվառությանը:

47 Բայց ահա, իմ եղբայրներ, արդյոք անհրաժե՞շտ է, որ ես արթնացնեմ ձեզ այս բաների սարսափելի իրականության համար: Տակնուվրա կանեի՞ ես ձեր հոգիները, եթե ձեր մտքերը մաքուր լինեին: Կլինեի՞ պարզ ձեզ հետ, համաձայն ճշմարտության պարզության, եթե դուք ազատված լինեիք մեղքից:

48 Ահա, եթե դուք լինեիք սուրբ, ես կխոսեի ձեզ հետ սրբության մասին. բայց քանի որ դուք սուրբ չեք, և դուք ինձ վրա նայում եք՝ որպես ուսուցիչ, անպայման անհրաժեշտ է, որ ես՝ սովորեցնեմ ձեզ ՝մեղքի հետևանքները:

49 Ահա, իմ հոգին նողկում է մեղքից, և իմ սիրտը հրճվում է արդարությանը. և ես՝ կզովերգեմ իմ Աստծո սուրբ անունը:

50 Եկեք, իմ եղբայրներ, ամեն ոք, ով ծարավ է, եկեք դեպի՝ օջուրը. և նա, ով փող չունի, եկեք առեք և կերեք. այո՛, եկեք առեք գինի ու կաթ, առանց ՝փողի և առանց գնի:

51 Ուստի, փող մի ծախսեք այն բանի համար, ինչն արժեք չունի, ոչ էլ ձեր՝ աշխատանքն այն բանի համար, որ չի կարող բավարարել: Լսեք ինձ ջանասիրաբար և հիշեք խոսքերը, որոնք ես խոսել եմ. և եկեք դեպի Սուրբն Իսրայելի, ՝ճաշակեք այն, ինչը չի ոչնչանում, ոչ էլ կարող է ապականվել, և թող ձեր հոգին զվարճանա պարարտությունով:

52 Ահա, իմ սիրելի՛ եղբայրներ, հիշեք ձեր Աստծո խոսքերը. շարունակ աղոթե՛ք նրան ցերեկով, և՝ գոհություն հայտնեք նրա սուրբ անվանը գիշերով: Թող ձեր սրտերը հրճվեն:

53 Եվ՛ ահա, որքա՛ն մեծ են Տիրոջ՝ ուխտերը և որքան մեծ՝ նրա բարեհաճությունները մարդկանց զավակների հանդեպ. և նրա մեծության, նրա շնորհի ու ՝ողորմության շնորհիվ, նա խոստացել է մեզ, որ մեր սերունդները լիովին չեն կործանվի՝ ըստ մարմնի, այլ որ նա կպահպանի նրանց, և ապագա դարերում նրանք մի արդար ՝ճյուղ կդառնան Իսրայելի տան համար:

54 Եվ այժմ, իմ եղբայրներ, ես կխոսեի ավելին, բայց վաղը կհայտարարեմ ես ձեզ մնացածն իմ խոսքերի: Ամեն:

ԳԼՈՒԽ 10

Հրեաները կխաչեն իրենց Աստծուն – Նրանք կցրվեն, մինչև որ սկսեն հավատալ նրան – Ամերիկյան կլինի

46բ սուր Վերջին դատաստան:
 գ Մոսիա 3.25:
 դ 1 Նեփի 1.14,
 Մովսես 2.1:
 48ա Ավմա 37.32:
 բ սուր Մեղք:

49ա 1 Նեփի 18.16:
 50ա սուր Կենդանի ջուր:
 բ Ավմա 42.27:
 51ա Ես. ԾԵ.1-2:
 բ 2 Նեփի 31.20, 32.3,
 3 Նեփի 12.6:
 52ա սուր Ընդհակալ,

Ընդհակալություն,
 Գոհաբանություն:
 53ա սուր Ուխտ:
 բ սուր Ողորմած, Ողորմություն:
 գ սուր Տիրոջ այգին:

ազատութեան երկիր, որտեղ ոչ մի թագավոր չի իշխի - Հաշտվեք Աստծո հետ և ձեռք բերեք փրկութիւն նրա շնորհի միջոցով: Մոտ 559-545թթ. Զ.ծ.ա.:

Եւ, այժմ, ես՝ Հակոբս, կրկին խոսում եմ ձեզ հետ, իմ սիրելի՛ եղբայրներ, այս արդար՝ ճշուղի վերաբերյալ, որի մասին ես խոսել եմ:

2 Քանզի, ահա, խոստումները, որոնք մենք ստացել ենք, խոստումներ են տրված մեզ՝ ըստ մարմնի, ուստի, չնայած ինձ ցույց է տրվել, որ մեր զավակներից շատերն անհավատության պատճառով մարմնով կկորչեն. այնուամենայնիվ, Աստված ողորմած կլինի շատերի հանդեպ. և մեր զավակները կվերականգնվեն, որպեսզի նրանք կարողանան գալ այն բանին, ինչը կտա նրանց՝ իրենց Քավչի մասին ճշմարիտ իմացությունը:

3 Ուստի, ինչպես ես ասացի ձեզ, անպայման անհրաժեշտ պիտի լինի, որ Քրիստոսը, - քանզի անցած գիշեր Միքելտակն ասաց ինձ, որ դա պետք է լինի նրա անունը, - պիտի թգա հրեաների մեջ, նրանց մեջ, որոնք աշխարհի առավել ամբարիշտ մասն են. և նրանք Պկիսաչեն նրան, - քանզի այսպես է պետք մեր Աստծուն, և

չկա ոչ մի ուրիշ ազգ երկրագնդի վրա, որը Պկիսաչեր իր ՊԱստծուն:

4 Քանզի, եթե այդ գորավոր Միրաչքները գործվեին ուրիշ ազգերի մեջ, նրանք կապաշխարեին և կիմանային, որ նա է իրենց Աստվածը:

5 Բայց Մքահանանեցոյքյան և անօրինությունների պատճառով, նրանք Երուսաղեմում կխստացնեն իրենց պարանոցները նրա դեմ, այնպես որ նրան կխաչեն:

6 Ուստի, նրանց անօրինությունների պատճառով, ավերումներ, սովեր, ժամառախտներ և արյունահեղություն կգա նրանց վրա. և նրանք, ովքեր չեն կործանվի, կցրվեն բոլոր ազգերի մեջ:

7 Բայց, ահա, այսպես է ասում ՄՏեր Աստված. Քերք գա օրը, որ նրանք հավատան ինձ, որ ես եմ Քրիստոսը, ապա ես ուխտել եմ նրանց հայրերի հետ, որ նրանք կվերականգնվեն մարմնում, երկրի վրա, իրենց ժառանգության հողերում:

8 Եվ պիտի լինի այնպես, որ նրանք պիտի Մժողովվեն իրենց երկարատև ցրումից՝ Ծովի կղզիներից, և աշխարհի չորս մասերից. և հեթանոսների ազգերը մեծ կլինեն իմ աչքում, ասում է Աստված, նրանց դեպի իրենց ժառանգության հողերը Քբերելիս:

9 ՄԱյո, հեթանոսների թագավոր-

10 1ա 1 Նեփի 15.12-16,
2 Նեփի 3.5,
Հակոբ 5.43-45:
2ա 1 Նեփի 22.8,
3 Նեփի 5.21-26,
21.4-7:
3ա 2 Նեփի 25.19,
Հակոբ 7.5,
Մոր. 7.22:
բ սո՛ Հիսուս Քրիստոս -
Մարգարեություններ
Հիսուս Քրիստոսի

ծննդի և մահվան
մասին:
գ 1 Նեփի 11.33,
Մոսիա 3.9,
Վևո՛ 45.52-53:
դ Դուկ. ԻԳ.20-24:
ե 1 Նեփի 19.10:
4ա սո՛ Հրաչք:
5ա Դուկ. ԻԲ.2:
սո՛ Քահանանեցոյ-
քում:
6ա 1 Նեփի 19.13-14:

սո՛ Իսրայել -
Իսրայելի ցրվելը:
7ա սո՛ Տեր:
բ 2 Նեփի 25.16-17:
8ա սո՛ Իսրայել -
Իսրայելի ցրվելը:
բ 1 Նեփի 22.4,
2 Նեփի 10.20-22,
Վևո՛ 133.8:
գ 1 Նեփի 22.8:
9ա Ես. ԽԹ.22-23:

ները կլինեն խնամող հայրեր նրանց համար, և նրանց թագուհիները կդառնան ստնտու մայրեր. ուստի, Տիրոջ թխտատուները մեծ են հեթանոսներին, քանզի նա խոսել է դա, և ո՞վ կարող է վիճել:

10 Բայց, ահա, այս երկիրը, ասում է Աստված, կլինի քեզ ժառանգության հող, և ՝հեթանոսները կօրհնվեն այս երկրի վրա:

11 Եվ այս երկիրը հեթանոսների համար կլինի ՝ազատության երկիր, և երկրի վրա չեն լինի ՝թագավորներ, ովքեր կիշխեն հեթանոսներին:

12 Եվ ես կամրացնեմ այս երկիրը՝ բոլոր մյուս ազգերի դեմ:

13 Եվ նա, ով ՝կռվում է Սիոնի դեմ, ՝կկործանվի, ասում է Աստված:

14 Քանզի նա, ով թագավոր բարձրացնի իմ դեմ, կկործանվի, քանզի ես՝ Տերս, երկնքի ՝թագավորս, կլինեմ նրանց թագավորը, և ես հավիտյան ՝լույս կլինեմ նրանց համար, ովքեր լսում են իմ խոսքերը:

15 Ուստի, այս պատճառով, որպեսզի իմ ՝ուխտերը կարողանան իրագործվել, որոնք ես արել եմ մարդկանց զավակների հետ, որոնք ես անելու եմ նրանց համար, մինչ նրանք մարմնում են, ես անպայման պետք է կործանեմ ՝խա-

վարի և սպանությունների և պղծությունների Պաղտանի գործերը:

16 Ուստի նա, ով կռվում է ՝Սիոնի դեմ՝ քե՛ հրեա, քե՛ հեթանոս, քե՛ սարուկ, քե՛ ազատ, քե՛ այր, քե՛ կին, կկործանվի. քանզի այդ ՝նրանք են, ովքեր ողջ աշխարհի պոռնիկն են. քանզի Պրանք, ովքեր իմ կողմից ՝չեն, ՝դեմ են ինձ, ասում է մեր Աստվածը:

17 Քանզի ես ՝կիրագործեմ իմ խոստումները, որոնք ես արել եմ մարդկանց զավակներին, դրանք ես կանեմ նրանց համար, մինչ նրանք մարմնում են,

18 Ուստի, իմ սիրելի՛ եղբայրներ, այսպես է ասում Աստվածը մեր. Ես կչարաչարեմ քո սերնդին՝ հեթանոսների ձեռքով. այնուամենայնիվ, ես կփափկացնեմ ՝հեթանոսների սրտերը, այնպես որ նրանք կլինեն հոր պես նրանց համար. ուստի, հեթանոսները ՝կօրհնվեն և Պկհամարվեն Իսրայելի տան թվում:

19 Ուստի, ես ՝կնվիրաբերեմ այս երկիրը քո սերնդին, և նրանց, ովքեր կհամարվեն քո սերնդի թվում հավիտյան, որպես նրանց ժառանգության հողը. քանզի այն ընտիր երկիր է, ասում է ինձ Աստված, առավել քան բոլոր մյուս երկրները, ուստի, ես կամեմում եմ, որ բոլոր մարդիկ, որոնք բնակվում

9բ 1 Նեփի 22.8-9,
 ՎևՈՒ 3.19-20:
 10ա 2 Նեփի 6.12:
 11ա սո՛ւ Ազատ,
 Ազատության:
 բ Մոսիա 29.31-32:
 13ա 1 Նեփի 22.14, 19:
 բ Ես. 4.12:
 14ա Ալմա 5.50,
 ՎևՈՒ 38.21-22,
 128.22-23,
 Մովսես 7.53:
 բ սո՛ւ Լույս, Քրիստոսի

լույս:
 15ա սո՛ւ Ուխտ:
 բ սո՛ւ Հոգևոր խավար:
 գ Հել. 3.23:
 սո՛ւ Գաղտնի
 խմբակցություններ:
 16ա սո՛ւ Սիոն:
 բ 1 Նեփի 13.4-5:
 գ 1 Նեփի 14.10:
 դ 1 Նեփի 22.13-23,
 2 Նեփի 28.15-32,
 3 Նեփի 16.8-15,
 Եթեր 2.9:

ե Մառ. ԺԲ.30:
 17ա ՎևՈՒ 1.38:
 18ա Գուլ. ԺԳ.28-30,
 ՎևՈՒ 45.7-30:
 բ Եփես. Գ.6:
 գ Գաղ. Գ.7, 29,
 1 Նեփի 14.1-2,
 3 Նեփի 16.13, 21.6,
 22, 30.2,
 Աբր. 2.9-11:
 19ա 2 Նեփի 3.2:

են դրա վրա, որ նրանք երկրպագեն ինձ, ասում է Աստված:

20 Եվ այժմ, իմ սիրելի՛ եղբայրներ, տեսնելով, որ մեր ողորմած Աստված այսպիսի մեծ գիտություն է տվել մեզ այս բաների վերաբերյալ, եկեք հիշենք նրան և մի կողմ դնենք մեր մեղքերը և չկախենք մեր գլուխը, քանզի մենք մերժված չենք. թեև մենք դուրս ենք քշվել մեր ժառանգության հողից. բայց մենք առաջնորդվել ենք դեպի ավելի ¹լավ երկիր, քանզի Տերը դարձրեց ծովը մեր ²ճանապարհը, և մենք ծովի ³կղզու վրա ենք:

21 Բայց մեծ են Տիրոջ խոստումները նրանց համար, ովքեր ծովի ⁴կղզիների վրա են. ուստի, քանի որ ասվում է կղզիներ, պետք է անպայման լինեն ավելին, քան սա, և դրանք նույնպես բնակեցված են մեր եղբայրներով:

22 Քանզի ահա, Տեր Աստված, ժամանակ առ ժամանակ, Իսրայելի տնից ⁵տարել է՝ ըստ իր կամքի և հաճության: Եվ այժմ ահա, Տերը հիշում է բոլոր նրանց, ովքեր կտրված են, ուստի նա հիշում է նաև մեզ:

23 Հետևաբար, ուրախացրեք ձեր սրտերը, և հիշեք, որ դուք ⁶ազատ եք՝ ինքնուրույն ⁷գործելու՝ ⁸ընտրելու հավիտենական մահվան ճանապարհը կամ հավերժական կյանքի ճանապարհը:

24 Ուստի, իմ սիրելի՛ եղբայրներ, հաշտվեք Աստծո կամքի և ոչ թե դևի ու մարմնի կամքի հետ. և

հիշեք, հետո, երբ դուք հաշտվեք Աստծո հետ, որ դա միայն Աստծո ⁹շնորհով և շնորհիվ է, որ դուք ¹⁰փրկվում եք:

25 Ուստի, թող Աստված բարձրացնի ձեզ մահից, հարության գործյամբ, և նաև հավիտենական մահից, ¹¹քավության գործյամբ, որպեսզի դուք կարողանաք ընդունվել Աստծո հավերժական արքայությունում, որպեսզի դուք կարողանաք գովաբանել նրան աստվածային շնորհով: Ամեն:

ԳԼՈՒԽ 11

Հակոբը տեսել էր իր Քավչին – Մովսեսի օրենքը խորհրդանշում է Քրիստոսին և ապացուցում, որ նա գալու է: Մոտ 559–545թթ. Ք.ծ.ա.:

ԱՐԳ, ¹Հակոբն այն ժամանակ շատ ու շատ բաներ խոսեց իմ ժողովրդի հետ. սակայն միայն այս բաները ես ²գրել տվեցի, քանզի բաները, որոնք ես գրել եմ, բավական են ինձ համար:

2 Եվ այժմ, ես՝ Նեփիս, գրում եմ ավելի շատ խոսքեր ³Եսայիայից, քանզի հոգիս հրճվում է նրա խոսքերից: Քանզի նրա խոսքերը ես վերագրում եմ իմ ժողովրդին, և ես կփոխանցեմ դրանք իմ բոլոր զավակներին, քանզի նա իսկպպես տեսել է իմ ⁴Քավչին, ճիշտ ինչպես ես եմ տեսել նրան:

3 Եվ իմ եղբայրը՝ Հակոբը, նույնպես ⁵տեսել է նրան, ինչպես ես եմ տեսել նրան. ուստի, ես նրանց

20ա1 Նեփի 2.1–4:
բ 1 Նեփի 2.20:
տո Խոստացված երկիր:
գ 1 Նեփի 18.5–23:
դ Ես. ԺԱ.10–12:
21ա1 Նեփի 19.15–16, 22.4:

22ա1 Նեփի 22.4:
23ա սո՛ւ Կամքի ազատություն:
բ 2 Նեփի 2.16:
գ Բ Օր. Լ.19:
24ա սո՛ւ Շնորհ:
բ սո՛ւ Փրկություն:

25ա սո՛ւ Քավել, Քավություն:
11 1ա 2 Նեփի 6.1–10:
բ 2 Նեփի 31.1:
2ա3 Նեփի 23.1:
բ սո՛ւ Քավիչ:
3ա2 Նեփի 2.3,
Հակոբ 7.5:

խոսքերը կփոխանցեն իմ զավակներին՝ նրանց ապացուցելու համար, որ իմ խոսքերը ճշմարիտ են: Ուստի, ^բերեքի խոսքերով, ասել է Աստված, ես կհաստատեմ իմ խոսքը: Այնուամենայնիվ, Աստված ուղարկում է ավելի շատ վկաներ և ապացուցում բոլոր իր խոսքերը:

4 Ահա, հոգիս հրճվում է՝ ^աապացուցելով իմ ժողովրդին Քրիստոսի ^բզալստյան ճշմարտությունը. քանզի այս վախճանի համար է տրված Մովսեսի ^գօրենքը. և բոլոր բաները, որոնք աշխարհի սկզբից ի վեր, Աստծո կողմից, տրված են մարդուն, խորհրդանշումն են նրա:

5 Եվ հոգիս հրճվում է Տիրոջ ^աուխտերով, որոնք նա արել է մեր հայրերի հետ. այո, հոգիս հրճվում է նրա շնորհով և նրա արդարությանը և զորությանը և ողորմությանը՝ մահից ազատման մեծ և հավերժական ծրագրում:

6 Եվ հոգիս հրճվում է՝ իմ ժողովրդին ապացուցելիս, որ ^աեթե Քրիստոսը չգա, բոլոր մարդիկ պիտի կորչեն:

7 Քանզի, եթե ^աչլինի Քրիստոս, չի լինի Աստված. և եթե չլինի Աստված, չկանք և մենք, քանզի չէր կարող լինել ոչ մի ^բարարում:

Բայց կա Աստված, և նա է Քրիստոսը, և նա զայիս է իր ուրույն ժամանակի լրիվության մեջ:

8 Եվ այժմ, ես գրում եմ մի քանի խոսքեր Եսայիայից, որպեսզի իմ ժողովրդից նրանք, ովքեր տեսնեն այս խոսքերը, կարողանան բարձրացնել իրենց սրտերը և ուրախանալ բոլոր մարդկանց համար: Ահա, սրանք են խոսքերը, և դուք կարող եք դրանք վերաբերել ձեզ և բոլոր մարդկանց:

ԳԼՈՒԽ 12

Եսայիան տեսնում է վերջին օրերի տաճարը, Իսրայելի հավաքվելը, և հազարամյա դատաստանն ու խաղաղությունը – Հպարտները և ամբարիշտները կցածրացվեն Երկրորդ Գալստյան ժամանակ – Համեմատեք Եսայիայի Բ: Մոտ 559–545թթ. Զ.ծ.ա.:

ԽՈՍՔԸ, որ ^աԵսայիան՝ Ամոզի որդին, ^բտեսավ Հուդայի և Երուսաղեմի վերաբերյալ.

2 Եվ կլինի այնպես, վերջին օրերին, երբ Տիրոջ ^ատան ^բսարը կհաստատվի ^գսարերի գագաթին և վեր կխոյանա բլուրներից, և բոլոր ազգերը կհոսեն դեպի այն:

3 Եվ շատ մարդիկ կգնան ու

3բ 2 Նեփի 27.12,
Եթեր 5.2–4,
Վև.ՈՒ 5.11:
4ա 2 Նեփի 31.2:
բ Հակոբ 4.5,
Հարոմ 1.11,
Ալմա 25.15–16,
Եթեր 12.19:
գ 2 Նեփի 5.10:
5ա սո՛ւ Աբրահամի ուխտը:
6ա Մոսիա 3.15:
7ա 2 Նեփի 2.13:

բ սո՛ւ Ստեղծել,
Ստեղծում:
12 1ա 2 Նեփի 12–24-ում Նեփին մեջբերում է արել Եսայիայի Բ–ԺԴ գլուխները արույրե քիթեղներից. տեքստի մեջ որոշ տարբերություններ կան, որոնք պետք է նկատի ունենալ:
բ երբ. *khazah*, «տեսիլք ունենալ»

նշանակությամբ:
Նշանակում է, որ Եսայան այս պատգամը Տիրոջից ստացավ տեսիլքի միջոցով:
2ա սո՛ւ Տաճար՝ Տիրոջ տուն:
բ Հովել Գ.17:
սո՛ւ Սիոն:
գ Վև.ՈՒ 49.25:

կասեն. Եկե՛ք, եկեք վեր գնանք դեպի Տիրոջ սարը՝ Հակոբի Աստծոն տունը. և նա կտվորեցնի մեզ իր ուղիների մասին, և մենք՝ Կրայլենք նրա շավիղներում. քանզի Սիոնից առաջ կգնա Քօրենքը, և Տիրոջ խոսքը՝ Երուսաղեմից:

4 Եվ նա՝ Կողատի ազգերի մեջ և կաստի շատ մարդկանց, և նրանք կձուլեն իրենց արերը՝ խոփերի, և իրենց նիզակները՝ մանգաղների, ազգ ազգի վրա սուր չի բարձրացնի, ոչ էլ նրանք պատերազմել կտվորեն այլևս:

5 Ո՛վ Հակոբի տուն, եկե՛ք, եկեք քայլենք Տիրոջ լույսով. այո՛, եկեք, քանզի դուք բոլորդ՝ մոլորվել եք՝ ամեն ոք դեպի իր ամբարիշտ ճանապարհները:

6 Այդ պատճառով, ո՛վ Տեր, դու լքել ես քո ժողովրդին՝ Հակոբի տունը, որովհետև նրանք՝ Խի են արևելքցիությամբ և լսում են հմայողներին՝ Քօղշուացիների պես, և զգոհանում են օտարների զավակներով:

7 Նրանց երկիրը նաև լի է արծաթով ու ոսկով, ոչ էլ որևէ վերջ կա նրանց գանձերին. նրանց երկիրը լի է նաև ձիերով, ոչ էլ որևէ վերջ կա նրանց կառքերին:

8 Նրանց երկիրը լի է նաև՝ Կլուրքերով, նրանք իրենց իսկ ձեռքի գործին են երկրպագում, նրան

ինչն իրենց իսկ մատներն են պատրաստել:

9 Եվ ուամիկ մարդը ցած՝ չի կռանում, և անվանի մարդն իրեն չի խոնարհեցնում, հետևաբար, մի ներիր նրան:

10 Ո՛վ ամբարիշտներ, մտեք ժայռի մեջ և Քթաքնվեք փոշու մեջ, քանզի Տիրոջ երկյուղը, և նրա վեհափառության փառքը կգարկի ձեզ:

11 Եվ կլինի այնպես, որ մարդու ամբարտավան հայացքները կխոնարհեցվեն, և մարդկանց մեծամարտությունը ցած կհակվի, և Տերը միայն կբարձրացվի այդ օրը:

12 Քանզի Չորաց Տիրոջ՝ Խօրը շուտով գալիս է բոլոր ազգերի վրա, այո, ամեն մեկի վրա. այո, Քիպարտի և ամբարտավանի վրա, և ամեն մեկի վրա, որը բարձրամտացած է, և նա կցածրացվի:

13 Այո, և Տիրոջ օրը կգա Լիբանանի բոլոր մայրիների վրա, քանզի նրանք բարձր են և վեր խոյացած. և Բասանի բոլոր կաղնիների վրա.

14 Եվ բոլոր բարձր լեռների վրա, և բոլոր բլուրների վրա, և բոլոր ազգերի վրա, որոնք բարձրամտացած են, և ամեն մի ժողովրդի վրա.

15 Եվ ամեն բարձր աշտարակի վրա, և ամեն ցանկապատված պատի վրա.

<p>3ա սո՛ւ Քայլել, Քայլել Աստծոն հետ: <i>բ</i> երբ. ուսմունք կամ վարդապետություն: սո՛ւ Ավետարան: 4ա2 Նեփի 21.2-9: 5ա2 Նեփի 28.14, Մոսիա 14.6, Ալմա 5.37:</p>	<p>6ա նշ. բավարարվում, ապահովվում են ուսմունքներով՝ օտար հավատալիքներով: Մաղ. ԾՁ.35: <i>բ</i> սո՛ւ Փղշուացիներ: <i>գ</i> երբ. ձեռք են խփում, կամ ուխտ են անում նրանց հետ: 8ա սո՛ւ Կռապաշտություն:</p>	<p>9ա նշ. Աստծոն առաջ. փոխարենը՝ նա երկրպագում է կլուրքերին: 10ա Ալմա 12.14: 12ա սո՛ւ Հիսուս Քրիստոսի երկրորդ գալուստը: <i>բ</i> Մաղ. Դ.1, 2 Նեփի 23.11, Վևո՛ւ 64.24:</p>
--	---	--

16 Եվ ՝ծովի բոլոր նավերի վրա, և Թարսիսի բոլոր նավերի վրա, և բոլոր հաճելի տեսարանների վրա:

17 Եվ մարդու ամբարտավանությունը կխոնարհեցվի, և մարդու մեծամտությունը կցածրացվի. և Տերը միայն կբարձրացվի ՝այդ օրը:

18 Եվ կուռքերին նա ամբողջովին կվերացնի:

19 Եվ նրանք կմտնեն ժայռերի խողովների մեջ և երկրի քարանձավների մեջ, քանզի Տիրոջ երկյուղը կգա նրանց վրա, և նրա վեհափառության փառքը կջախջախի նրանց, երբ նա բարձրանա՝ սարսափելի ցնցելու երկիրը:

20 Այդ օրը մարդը խլուրդներին և չղջիկներին ՝կնետի իր արծաթե կուռքերը և իր ոսկե կուռքերը, որոնք նա պատրաստել էր իր համար, որ երկրպագի.

21 Մտնելու համար ապառաժների ճեղքերը և պատառոտված վեմերի ծերպերը, քանզի Տիրոջ երկյուղը կգա նրանց վրա, և նրա վեհափառության փառքը կջախջախի նրանց, երբ նա բարձրանա՝ սարսափելի ցնցելու երկիրը:

22 Չեռք քաշեք ՝մարդուց, որի շունչը նրա ռնգերում է. քանզի ի՞նչով պետք է նա գնահատվի:

իրենց անհնազանդության համար – Տերը բարեխոսում է և դատում իր ժողովրդին – Սիոնի դուստրերն անիծված են և տանջված իրենց աշխարհիկության համար – Համեմատեք Եսայիայի Գ: Մոտ 559–545թթ. Զ.ծ.ա.:

ՔԱՆՁԻ, ահա, Տերը՝ Չորաց Տերը, վերցնելու է Երուսաղեմից և Հուդայից հենարանն ու նեցուկը, ողջ նեցուկը՝ հացի և ողջ հենարանը՝ ջրի,

2 Հզոր մարդուն և պատերազմի մարդուն, դատավորին և իմաստունին, մարգարեին և ծերին.

3 Հիսնապետերին և պատվավոր մարդուն և խորհրդականին և վարպետ արհեստավորին և պերճախոս հռետորին:

4 Եվ ես կտամ երեխաներին լինելու նրանց համար իշխաններ, և մանուկները կկառավարեն նրանց վրա:

5 Եվ մարդիկ կլինեն ճնշված՝ ամեն մեկը մյուսից, և ամեն ոք՝ իր հարևանից. երեխան իրեն հպարտ կպահի ծերերի դեմ, և անարզը՝ պատվավորի դեմ:

6 Երբ մի մարդ կբռնի իր եղբորն իր հոր տան մեջ և կսաի. Դու հազուստ ունես, մեր վրա ղեկավար եղիր և մի թող այս ՝ավերածությունը գա քո ձեռքի տակ,

7 Այդ օրը նա կերդվի՝ ասելով. Ես չեմ կամենում ՝բժշկող լինել.

ԳԼՈՒԽ 13

Հուդան և Երուսաղեմը կպատժվեն

<p>16ա Հունարեն (Մեպտագենո) տարբերակը մի արտահայտություն ունի, որը չկա եբրայերենի մեջ, իսկ եբրայերենը մի արտահայտություն ունի, որը չկա հունարենի մեջ.</p>	<p>սակայն 2 Նեփի 12.16-ում երկուսն էլ կան: Սաղ. ԽԸ.7, Եգեկ. ԻԷ.25: 17ա նշ. Տիրոջ փառքով գալու օրը: 20ա եբր. դեն կնետի: 22ա նշ. Դադարեք ապավինել</p>	<p>մահկանացու մարդուն. նրա ուժը չնչին է Աստծո համեմատ: Մովսես 1.10: 13 6ա Ես. Գ.6: 7ա եբր. վիրակապ (վերքի վրա). այսինքն՝ չեմ կարող լուծել քո խնդիրները:</p>
---	---	---

քանզի իմ տանը ո՛չ հաց կա, ո՛չ հագուստ. ինձ ժողովրդի ղեկավար մի՛ դարձրու:

8 Քանզի Երուսաղեմն ՝ավերված է, և Հուդան՝ ՝ընկած, որովհետև նրանց խոսելածն և նրանց արարքները դեմ են եղել Տիրոջը՝ զայրացնելով նրա փառաց աչքերը:

9 Նրանց դեմքի արտահայտությունը վկայում է իրենց դեմ և հայտարարում նրանց մեղքի գոյությունը, ճիշտ ինչպես ՝Սողոմը, և նրանք չեն կարող թաքցնել այն: Վա՛յ նրանց հոգիներին, քանզի նրանք իրենք իրենց չարիքով են հատուցել:

10 Ասեք արդարներին, որ նրանց համար ՝լավ է. քանզի նրանք կճաշակեն իրենց արարքների պտուղը:

11 Վա՛յ ամբարիշտներին, քանզի նրանք կկորչեն. քանզի հատուցումը նրանց ձեռքերի կլինի նրանց վրա:

12 Եվ իմ ժողովուրդ, երեխաներն են նրանց բռնացողները, և կանայք են իշխում նրանց վրա: Ո՛վ իմ ժողովուրդ, նրանք ովքեր ՝առաջնորդում են քեզ, մղում են քեզ սխալի և կործանում քո շավիղների ճանապարհը:

13 Տերը ոտքի է կանգնում՝ ՝բարեխոսելու, և կանգնում է՝ դատելու ժողովրդին:

14 Տերը դատի մեջ կմտնի իր ժողովրդի ծերերի և նրա ՝իշխանների հետ. քանզի դուք ՝խժռել եք Գայգին և ՝աղբատից ՝կողոպտածը ձեր տներում է:

15 Ի՞նչ նկատի ունեք դուք: Դուք մասնատում եք իմ ժողովրդին և ջարդում աղբատների երեսը, ասում է Ջորաց Տեր Աստվածը:

16 Դեռ ավելին, Տերն ասում է. Որովհետև Սիոնի դուստրերը գոռոզ են և քայլում են առաջ ձգված պարանոցներով և ցանկասեր աչքերով՝ քայլելով և ՝կաքավելով, երբ գնում են և զնգզնգոց հանում իրենց ոտքերով,

17 Հետևաբար, Տերը կզարկի Սիոնի դուստրերի գլխի գագաթը՝ քոսով, և Տերը ՝կմերկացնի նրանց զաղտնի մասերը:

18 Այն օրը Տերը կվերացնի նրանց զնգզնգացող զարդերի ճոխությունը և ՝քողերը և լուսնածև ՝մահիկները.

19 Շղթաները, ապարանջանները և ՝վզնոցները.

20 Գլխադիրները և ոտքերի զարդերը, ապարոշները, բուրալից տուփերը և ականջօղերը.

21 Մատանիները և քթի զարդերը.

22 Հագուստի փոփոխվող ՝տեսակները և թիկնոցները, գլխաշորերը և զանգրացնող հերակալները.

8ա Երեմ. Թ.11:
բ Ողբ. Ա.3:
9ա Ծն. ԺԹ.1, 4–7, 24–25:
սոս Համասեռամուրություն:
10ա Բ Օր. ԺԲ.28:
12ա Ես. Թ.16:
13ա Եբր. վիճելու:
Միքիա 2.2,
Վև.ՈՒ 45.3–5:
14ա Եբր. ղեկավարների,
կամ առաջնորդների:
բ Եբր. փչացրել,

կամ այրել:
գ Ես. Ե.7:
դ 2 Նեփի 28.12–13:
ե նշ. շորթած վաստակը:
16ա նշ. մանր արագ
քայլերով՝ նագանքով
քայլելը:
17ա Եբր. ցույց կտա.
դարձված, որը
նշանակում է
«կամաչեցնի»:
18ա Հավանաբար,
ցանցավոր գլխաշոր:

Հեղինակավոր
արդյույրները ոչ միշտ
են համաձայնվում
18–23 հատվածների
կանացի զարդարանք-
ների հետ:
բ նշ. եղջերածև
կիսալուսնի տեսքով
զարդեր:
19ա Եբր. քողերը:
22ա Եբր. շքեղ
հագուստները:

23 ^աՀայելիները և բեհեզները, խույրերը և շղարշները:

24 Եվ պիտի լինի այնպես, որ հաճելի հոտի փոխարեն պիտի լինի գարշահոտություն. և գոտիի փոխարեն՝ ^ապատովածք. և լավ հարդարված մազերի փոխարեն՝ ճաղատություն. և լանջագեղ ^բկամարի փոխարեն՝ քրճե գոտի. գեղեցկության փոխարեն՝ ^գայրվածք:

25 Քո տղամարդիկ պիտի ընկնեն սրից, և քո հզորները՝ պատերազմում:

26 Եվ նրա դռները պիտի ողբան և սգան. և նա լքված պիտի լինի և պիտի մատի գետնին:

ԳԼՈՒԽ 14

Սիոնը և նրա դուստրերը կիրկազնվեն և կնաքրվեն հազարամյակի օրը – Համեմատեք Եսայիայի Գ: Մոտ 559–545թթ. Ք.ծ.ա.:

Եւ այն օրը յօթը կին կբռնեն մեկ մարդու՝ ասելով. Մենք կուտենք մեր սեփական հացը և կհագնենք մեր սեփական հագուստը. միայն թույլ տուր մեզ կոչվելու քո անունով՝ վերացնելու համար մեր ^անախատիմքը:

2 Այն օրը Տիրոջ ^աշառավիղը կլինի գեղեցիկ և փառավոր. երկրի միրգը՝ գերազանց և դուրեկան նրանց համար, որոնք Իսրայելի փրկվածներից են:

3 Եվ կլինի այնպես, որ նրանք,

ովքեր թողնվել են Սիոնում և մնացել Երուսաղեմում, կկոչվեն սուրբ, ամեն ոք, որ գրված է ապրողների թվում՝ Երուսաղեմում,

4 ^աԵրբ Տերը ^բլվացած կլինի Սիոնի դուստրերի կեղտը և գտած կլինի Երուսաղեմի արյունը նրանց միջից՝ դատաստանի ոգով և ^գկիզման ոգով:

5 Եվ Տերը Սիոն սարի ամեն մի բնակատեղի և նրա ժողովների վրա կստեղծի մի ^աամպ և մեզ ցերեկով, և բոցավառ կրակի փայլ գիշերով. քանզի Սիոնի ողջ փառքի վրա պաշտպանություն կլինի:

6 Եվ կլինի տաղավար՝ որպես հովանի ցերեկվա շոգից, և ^աապաստարանի տեղ և ծածկ՝ մրրիկից ու անձրևից:

ԳԼՈՒԽ 15

Տիրոջ այգին (Իսրայելը) կդառնա ամայի և նրա ժողովուրդը կցրվի – Վայեր կզան նրանց վրա իրենց ուրացած և ցրված վիճակում – Տերը դրոշակ կբարձրացնի և կժողովի Իսրայելը – Համեմատեք Եսայիայի Ե: Մոտ 559–545թթ. Ք.ծ.ա.:

Եւ ապա կերգեն ես իմ սիրելիի համար սիրեկանիս ^աԵրզը նրա այգու մասին: Իմ սիրելին մի այգի ունի մի շատ մրգառատ բրբի վրա:

2 Եվ նա ցանկապատեց այն և դուրս թափեց այնտեղի քարերը և տնկեց այն ամենաընտիր

23ա ԿԱՍ Թափանցիկ հագուստները:
24ա Երբ. ցնցոտիներ:
բ ԿԱՍ պատմունք:
գ ԿԱՍ խարան (սարկոսթյան նշան):
14 1ա նշ. ամուսին և երեխա չունենալու դրոշմ:

2ա Ես. Կ.21, 2 Նեփի 3.5, Հակոբ 2.25:
4ա նշ. Երբ Տերը մաքրած կլինի երկիրը:
բ ՍՈՒ Լվացվել, Լվացված, Լվացումներ:
գ Մաղ. Գ.2–3, 4.1:
5ա Ել. ԺԳ.21:
6ա Ես. ԻԵ.4, ՎևոՒ 115.6:

15 1ա նշ. Մարգարեն մի երգ կամ բանաստեղծական առակ է ստեղծագործում այգու մասին՝ ցույց տալով Աստծո ողորմածությունը և Իսրայելի անպատասխանատվությունը:

«որթատունկերով. և կառուցեց մի աշտարակ նրա մեջտեղում, և նաև հնձան սարքեց նրանում, և սպասեց, որ այն խաղող պիտի առաջ բերեր, և այն առաջ բերեց վայրի խաղող:

3 Եվ արդ, ո՛վ Երուսաղեմի բնակիչներ և Հուդայի մարդիկ, ես աղաչում եմ՝ դատ արեք իմ և իմ այգու միջև:

4 Էլ ի՞նչ պետք է արված լիներ իմ այգում, որ ես չեմ արել նրա մեջ: Ուստի, երբ ես սպասում էի, որ այն առաջ բերեր խաղող, այն առաջ բերեց վայրի խաղող:

5 Եվ արդ, այժմ ես պատմեմ ձեզ, թե ինչ կանեմ իմ այգու հետ, – ես «կհանեմ նրա ցանկապատը և այն պիտի ուտվի ամբողջովին. և ես կքանդեմ նրա պատը և այն ոտնակոխ կարվի:

6 Եվ ես այն խոսքն կթողնեմ. այն չի էտվի, ոչ էլ կփորվի. և այնտեղ «ցախ ու փուշ կբուսնի. ես նաև հրամայելու եմ ամպերին, որ անձրևներ թափեն նրա վրա:

7 Բանգի Չորաց Տիրոջ «այգին Իսրայելի տունն է և Հուդայի մարդիկ՝ նրա հիանալի տնկիները. և նա սպասում էր թափարտանի, և ահա՝ ճնշում. արդարության, բայց, ահա՝ մի աղաղակ:

8 Վա՛յ նրանց, ովքեր տունը «տան են կցում, մինչև որ տեղ չլինի, որպեսզի նրանք կարողանան թմենակ տեղավորվել երկրում:

9 Իմ ականջին, ասաց Չորաց Տերը, անշուշտ, շատ տներ ամայի

կլինեն և մեծ ու գեղեցիկ քաղաքներ՝ առանց բնակչի:

10 Այո, տաս ակր այգին մեկ «մար կտա, և մեկ քոռ սերմը մեկ արդու կտա:

11 Վա՛յ նրանց, որ վեր են կենում վաղ առավոտյան, որպեսզի կարողանան թունդ խմիչքի «հետևից գնալ, որ շարունակում են մինչև գիշեր, և թգինին բորբոքում է նրանց:

12 Եվ քնար ու տավիղ, և թմբուկ ու սրինգ, և գինի կա նրանց խնջույքներում. բայց նրանք «հաշվի չեն առնում Տիրոջ գործը, ոչ էլ գնահատում են նրա ձեռքի աշխատանքը:

13 Այդ պատճառով է իմ ժողովուրդը գերության գնացել, որովհետև նրանք «հասկացողություն չունեն. և նրանց պատվավոր մարդիկ սովասանջ են և նրանց բազմությունը՝ ծարավից տոչորված:

14 Այդ պատճառով, դժոխքը լայնացրել է իրեն և բացել իր երախն անչափ. և նրանց փառքը ու նրանց բազմությունը, նրանց շքեղությունը և նա, որ հրճվում է, իջնելու են դրա մեջ:

15 Եվ ռամիկ մարդը ցած կբերվի, և հզոր մարդը կխոնարհեցվի, և ամբարտապանի աչքերը կխոնարհեցվեն:

16 Բայց Չորաց Տերը կբարձրանա «դատաստանով, և Աստված, որ սուրբ է, կսրբագործվի արդարությունով:

17 Այն ժամանակ ոչխարները

<p>2ա Երեմ. Բ.21: 5ա Սաղ. 2.12: 6ա Ես. Է.23, 32.13: բ Երեմ. Գ.3: 7ա ՍՈՒ Տիրոջ այգին: բ ՎՍԾ արդարադատություն: 8ա Մլրքիա Բ.1-2:</p>	<p>բ նշ. թողնել մենակ ապրելու: Հարուստ հողատերերը կլանում են աղքատների փոքր ազարակները: 10ա Եգեկ. ԽԵ.10-11: 11ա Առակ. ԻԳ.30-32:</p>	<p>բ ՍՈՒ Իմաստության Խոսք: 12ա Սաղ. ԻԸ.5: 13ա Ովսե Դ.6: ՍՈՒ Գիտություն: 16ա ՍՈՒ Հիսուս Քրիստոս – Դատավոր:</p>
---	---	---

կարածեն իրենց ձևով և պարարտների ամայի վայրերն օտարները պիտի ուտեն:

18 Վա՛յ նրանց, որ քաշում են անօրինությունն ՝ ունայնության պարաններով, և մեղքը՝ ՝ կարծես սայլի թոկերով:

19 Որ ասում են. Թող նա ՝ արագացնի, շտապեցնի իր գործը, որ մենք կարողանանք ՝ տեսնել այն. և թող Իսրայելի Սուրբի խորհուրդը մոտենա և գա, որպեսզի մենք կարողանանք իմանալ այն:

20 Վա՛յ նրանց, որ չարք բարի են ՝ կոչում և բարին՝ չար, որ ՝ խավարը դնում են լույսի տեղ, և լույսը՝ ՝ խավարի տեղ, որ դառը դնում են քաղցրի տեղ և քաղցրը՝ դառի:

21 Վա՛յ իրենց աչքում ՝ ՝ իմաստունին և իրենց իսկ կարծիքով ՝ իսկամիտին:

22 Վա՛յ գինի խմելում գորեղին և մարդկանց, որ ուժեղ են թունդ խմիչք խառնելում:

23 Ովքեր արդարացնում են ամբարիշտին պարզևի համար և ՝ հեռացնում են արդարի արդարությունը նրանից:

24 Հետևաբար, ինչպես ՝ կրակը լավում է ՝ հարդը, և բոցը խժռում է ՝ մղեղը, նրանց արմատը կլինի փտածություն, և նրանց ծաղիկները փոշու պես վեր կգան. որովհետև նրանք դեն նետեցին Չորաց

Տիրոջ օրենքը և ՝ արհամարհեցին Իսրայելի Սուրբի խոսքը:

25 Այդ պատճառով է բռնկվել Տիրոջ ՝ բարկությունն իր ժողովրդի դեմ, և նա մեկնել է իր ձեռքը նրանց դեմ և գարկել է նրանց. և բլուրները դողում էին, և նրանց դիակները բզկտված էին փողոցների մեջտեղում: Այս բոլորի պատճառով նրա բարկությունը չի անցել, բայց նրա ձեռքը դեռ մեկնված է:

26 Եվ նա ՝ դրոշակ կբարձրացնի հեռու ազգերին, և նա կսուլի նրանց երկրի ՝ ծայրից. և ահա, նրանք պիտի ՝ գան սրընթաց արագությամբ՝ ոչ ոք չի հոգնի, ոչ էլ կսայթաքի նրանց միջից:

27 Ոչ մեկը չի մնջի կամ քնի, ոչ էլ նրանց մեջքի գոտին կարձակվի, ոչ էլ կոչիկների կապը կկտրվի:

28 Որոնց նետերը սուր կլինեն, և բոլոր նրանց աղեղները սրած, և նրանց ձիերի սմբակները կհամարվեն կայծքարի պես, և նրանց անիվները՝ ՝ ինչպես մրրիկ, նրանց մոնչյունը՝ առյուծի պես:

29 Նրանք կմռնչան ՝ կորյունների պես. այո, նրանք կմռնչան և կհափշտակեն գոհին և հեռու կտանեն ապահով, և ոչ ոք չի ազատի:

30 Եվ այն օրը նրանք կմռնչան նրանց դեմ, ինչպես ծովի շառաչը:

18ա սո՛ւ Ունայն, Ունայնություն:
 բ նշ. նրանք կապված են իրենց մեղքերին, ինչպես անասունն իր բեռին:
 19ա Երեմ. ԺԷ.15:
 բ նշ. Նրանք Մեսիային չեն հավատա, մինչև որ չտեսնեն նրան:
 20ա Մոր. 7.14, 18, ՎևՈՒ 64.16, 121.16:
 բ Ա չովհ. Ա.6:

21ա Առակ. Գ.5–7, 2 Նեփի 28.15:
 23ա նշ. նրան գրկում են իր օրինական իրավունքներից:
 24ա Աբդիա Ա.18, Մաղ. Դ.1–2, 2 Նեփի 20.17:
 բ չովկ Բ.5, 1 Նեփի 22.15, 23, 2 Նեփի 26.4, 6, ՎևՈՒ 64.23–24, 133.64:

գ Ղուկ. Գ.17, Մոսիա 7.29–31:
 դ Բ Թագ. ԺԲ.7–9:
 25ա ՎևՈՒ 63.32, Մովսես 6.27:
 26ա սո՛ւ Դրոջ:
 բ ԿԵՍ շվացնել. այսինքն՝ հավաքման ազդանշան տալ:
 Ես. 7.18, 2 Նեփի 29.2:
 գ սո՛ւ Իսրայել – Իսրայելի ցրվելը:
 29ա3 Նեփի 21.12–13:

և եթե նրանք նայեն երկրին, կտեսնեն խավար և կսկիծ, և լույսը խավարած է նրա երկինքներում:

ԳԼՈՒԽ 16

Եսայիան տեսնում է Տիրոջը – Եսայիայի մեղքերը ներվում են – Նա կանչվում է մարգարեանալու – Նա մարգարեանում է հրեաների կողմից Քրիստոսի վարդապետությունների մերժման մասին – Մի մնացորդ պիտի վերադառնա – Համեմատեք Եսայիայի 2: Մոտ 559-545թթ. Ջ.ժ.ա.:

ԱՅս ¹տարին, որ Ոգիա թագավորը մեռավ, ես տեսա նաև Տիրոջը՝ նստած գահի վրա, բարձր և վեհացած, և նրա ²քղանցքը լցրել էր տաճարը:

² Դրա վերևում կանգնած էին ³սերովբեները, ամեն մեկն ուներ վեց թև. երկուսով նա ծածկում էր իր երեսը, և երկուսով ծածկում էր իր ոտքերը, և երկուսով նա թռչում էր:

³ Եվ մեկը կանչում էր մյուսին և ասում. Սու՛րբ, սու՛րբ, սու՛րբ է Չորաց Տերը, ողջ երկիրը լցված է նրա փառքով:

⁴ Եվ դրանդիքի ⁴այուները շարժվեցին նրա ձայնից, որ գոչեց, և տունը լցվեց ծխով:

⁵ Ապա ասացի ես. Վա՛յ ինձ, քանզի ես ⁵կործանված եմ. որովհետև ես անմաքուր շրթունքներով մի մարդ եմ. և ես բնակվում եմ անմաքուր շրթունքներով մարդկանց մեջ. քանզի իմ աչքերը

տեսան Թագավորին՝ Չորաց Տիրոջը:

⁶ Հետո սերովբեներից մեկը թռավ դեպի ինձ՝ իր ձեռքին ունենալով բոցավառվող ⁶ածուխ, որը նա ունեւիով վերցրել էր գոհասեղանի վրայից.

⁷ Եվ նա դրեց այն իմ բերանի վրա և ասաց. Ահա, սա դիպել է քո շրթունքներին. և ⁷քո անօրինությունը վերցված է քեզանից, և քո մեղքը՝ մաքրված:

⁸ Նաև ես լսեցի Տիրոջ ձայնը՝ ասելիս. Ո՛ւմ ուղարկեմ, և ո՞վ կգնա մեզ համար: Ապա ես ասացի՝ Ահա ես. ինձ ուղարկիր:

⁹ Եվ նա ասաց. Գնա և ասա այս ժողովրդին. Դե, լսե՛ք, բայց նրանք չհասկացան. և Դե, տեսե՛ք, բայց նրանք չըմբռնեցին:

¹⁰ Թանձրացրու այս ժողովրդի սիրտը և ծանրացրու նրանց ականջները և փակիր նրանց աչքերը, – չլինի թե նրանք տեսնեն իրենց աչքերով և ¹⁰լսեն իրենց ականջներով, և հասկանան իրենց սրտով, և դարձի գան ու բժշկվեն:

¹¹ Ապա ասացի ես. Տե՛ր, մինչև ե՞րբ: Եվ նա ասաց. Մինչև քաղաքներն ամառացվեն՝ առանց բնակչի և տներն՝ առանց մարդու և երկիրը լիովին ամայի լինի.

¹² Եվ Տերը ¹²տանի մարդկանց հեռու, քանզի մի մեծ լքվածություն պիտի լինի երկրի մեջ:

¹³ Բայց դեռ կլինի մեկ տասներորդը, և նրանք կվերադառնան և կուսվեն, ինչպես բևեկնին, և ինչպես կաղնին, որոնց բնանյութն իրենց մեջ է, երբ նրանք թափում են

16 1ա նշ. Ջ.ժ.ա. մոտ 750թ. Բ նշ. նրա հանդերձի ներքևի եզրը, կամ փեղջը: 2ա սուր. Զերովբեներ: 4ա երբ. դռան շեմքի

հիմքը ցնցվեց: 5ա երբ. կորած, այսինքն՝ նա ճնշված էր իր անճանական և իր ժողովրդի մեղքերի գիտակցումից:

6ա նշ. մաքրագործման խորհրդանիշ: 7ա սուր. Մեղքերի թողություն: 10ա Մատ. ԺԳ.14-15: 12ա Գ. Թագ. ԺԷ.18, 20:

իրենց տերևները. այսպիսով, սուրբ սերունդը կլինի նրա քննանյութը:

ԳԼՈՒԽ 17

Եփրեմը և Ասորիքը պատերազմ են սնդում Հուդայի դեմ – Զրիստոսը կծնվի կույսից – Համեմատեք Եսայիայի է: Մոտ 559-545թթ. Ք.ծ.ա.:

ԵՎ եղավ այնպես, Հուդայի թագավոր՝ Ոգիայի որդի, Հովաթամի որդի Աքազի օրերում, որ Ռասինը՝ Ասորիքի թագավորը և Փակենն՝ Ռովմելայի որդին, Իսրայելի թագավորը, եկան դեպի Երուսաղեմ՝ պատերազմելու նրա դեմ, բայց չկարողացան հաղթել նրան:

2 Եվ լուր տրվեց Դավթի տանը՝ ասելով. Ասորիքը դաշնակից է Եփրեմի հետ: Եվ դողաց նրա սիրտը և նրա ժողովրդի սիրտը, ինչպես անտառի ծառերը դողում են քամուց:

3 Հետո Տերն ասաց Եսայիային. Առաջ գնա այժմ դիմավորելու Աքազին, դու և քո որդին՝ Սեարյասուրը, վերին ավազանի ջրախողովակի վերջում, թափիչի դաշտի ճանապարհին:

4 Եվ ասա նրան. Չգույշ եղիր և հանգիստ կաց. մի վախեցիր և ոչ էլ եղիր թուլասիրտ, այս երկու ծայրը ծխացող խանձողներից՝ Ռասինի ու Ասորիքի կատաղի բարկությունից և Ռովմելայի որդուց:

5 Որովհետև Ասորիքը, Եփրեմը և Ռովմելայի որդին չար խորհուրդ են արել քո դեմ՝ ասելով.

6 Եկեք գնանք Հուդայի դեմ և ահաբեկենք նրան, և եկեք ճեղք բացենք նրա մեջ մեզ համար և թագավոր դնենք նրա մեջ, այո, Տաբեելի որդուն:

7 Այսպես է ասում Տեր Աստված. Դա չի հաստատվի, ոչ էլ կլինի դա:

8 Քանզի Ասորիքի գլուխը Դամասկոսն է և Դամասկոսի գլուխը՝ Ռասինը. և ոչ ուշ, քան վաթսուցն հինգ տարում Եփրեմը կջարդվի այնպես, որ այն ժողովուրդ չի լինի:

9 Եվ Եփրեմի գլուխը Սամարիան է, և Սամարիայի գլուխը Ռովմելայի որդին: Եթե դուք չհավատաք, դուք, անշուշտ, չեք հաստատվի:

10 Դեռ ավելին, Տերը դարձյալ խոսեց Աքազի հետ՝ ասելով.

11 Խնդրիր մի՛ նշան Տիրոջից՝ քո Աստծուց. խնդրիր այն կամ խորը՝ խորքերում, կամ վերը՝ բարձրերում:

12 Բայց Աքազն ասաց. Ես չեմ խնդրի, ոչ էլ կփորձեմ Տիրոջը:

13 Եվ նա ասաց. Հիմա լսեք, ո՛վ Դավթի տուն. ձեզ համար քի՞չ է հոգնեցնել մարդկանց, բայց իմ Աստծուն է՞լ եք ուզում հոգնեցնել:

14 Հետևաբար, Տերն ինքը կտա ձեզ նշան, – Ահա, մի՛ կույս կողիանա և կծնի որդի և կկոչի նրա անունը՝ Էմմանուել:

15 Կարագ ու մեղր նա կուտի,

13ա նշ. Ծառի նման, չնայած տերևները թափվում են, կյանքը և սերն տալու ներուժը դեռ մնում է նրանում:
17 2ա նշ. Ողջ հյուսիսային Իսրայելը կոչվում էր Եփրեմի անունով, որը հյուսիսի առաջնորդ

ցեղն էր:
3ա եբր. մնացորդը կվերադառնա:
4ա նշ. Խուճայի մի մատնվիր հարձակումից. այդ երկու թագավորներին մի փոքր կրակ է մնացել:
6ա եբր. բաժանենք այն:

9ա Բ Մճ. Ի.20:
11ա սուր՝ Նշան:
12ա նշ. փորձության ենթարկել կամ ստուգել:
14ա սուր՝ Կույս:
բ եբր. Աստված մեզ հետ է:
սուր՝ Էմմանուել:

որպեսզի կարողանա գիտենալ՝ մերժել չարը և ընտրել բարին:

16 Քանզի մինչև ^աերեխան գիտենա մերժել չարը և ընտրել բարին, երկիրը, որ դուք ատում էք, լքված կլինի իր ^բերկու թագավորներից:

17 Տերը քո վրա, և քո ժողովրդի վրա, և քո հոր տան վրա պիտի ^բբերի Ասորեստանի թագավորին, օրեր, որ չէին եկել այն օրից, որ ^բԵփրեմը բաժանվեց Հուդայից:

18 Եվ կլինի այնպես, այն օրը, որ Տերը ^ակուտի ճանճին, որը Եգիպտոսի ամենահեռավոր մասում է, և մեղվին, որ Ասորեստանի հողում է:

19 Եվ նրանք կգան ու կհանգչեն ամենքն ամայի դաշտավայրերում և ժայռերի խոռոչներում, և բոլոր փշերի, և բոլոր թփերի վրա:

20 Նույն օրը, Տերն ածելիով, որը վարձված է, նրանց միջոցով՝ զետի այն կողմից, Ասորեստանի ^աթագավորի միջոցով, ^բկապիրի գլուխը և ոտքերի մազը. և նա կվերացնի նաև մորուքը:

21 Եվ կլինի այնպես, այն օրը, որ մի մարդ ^ակպահի մի երինջ և երկու ոչխար.

22 Եվ կլինի այնպես, որ կաթի առատությունից, որ կտան նրանք, նա կուտի կարագ. քանզի կարագ ու մեղր կուտի ամեն ոք, որ մնացել է երկրում:

23 Եվ կլինի այնպես, այն օրը, որ ամեն տեղ, որտեղ կային հազար որթ, հազար ^աարծաթի, դրանք կլինեն ցախեր և տատասկավիշեր:

24 Նետերով և աղեղներով կգան մարդիկ այդտեղ, որովհետև ողջ երկիրը ցախ և փուշ կդառնա:

25 Եվ բոլոր սարերը, որ կփորվեն բրիչով, այդտեղ չի գա ցախի և փշի վախը. այլ դրանք կլինեն արջառներին արոտի ուղարկելու և ^ամանր անասունների կոխկրրաման համար:

ԳԼՈՒԽ 18

Քրիստոսը կլինի՝ որպես գայթակրողության քար և զլորման վեճ – Որոնք թ Տիրոջը, ոչ թե քրթմնջացող կախարդներին – Դիմե՛ք օրենքին և վկայությանը՝ առաջնորդության համար – Համեմատե՛ք Եսայիայի Ը: Մոտ 559–545թթ. Ք.ծ.ա.:

ԲԱՅԻ այդ, Տիրոջ խոսքն ասաց ինձ. Վերցրու մի մեծ փաթեթ և գրիր նրա մեջ մարդու գրիչով ^աՄահեր-շալալ-հաշ-բագի մասին:

2 Եվ ես վերցրեցի ինձ հետ հավատարիմ ^ավկաներ արձանագրելու համար՝ Ուրիա քահանային և Չաքարիային՝ Բարաքիայի որդուն:

3 Եվ ես մտա ^ամարգարեուհու մոտ. և նա հղիացավ ու ծնեց մի որդի: Հետո Տերն ասաց ինձ. Կոչի՛ր նրա անունը Մահեր-շալալ-հաշ-բագ:

4 Քանզի, ահա, ^աերեխան գիտություն ^բչի ունենա կանչելու. հա՛յր իմ, և մա՛յր իմ, նախքան այդ Դամասկոսի հարստությունները

16ա2 Նեփի 18.4:
բ Գ. Թագ. ԺԵ.30, ԺԶ.9:
17աԲ Մն. ԻԸ.19–21:
բ Գ. Թագ. ԺԲ.16–19:
18ա ԿԱՄ շվացնել, այսինքն՝ նշան տալ, կանչել: Ես. Ե.26:
20ա Գ. Թագ. ԺԶ.5–9:

բ նշ. Երկիրը կամայացվի օտար գավթիչների կողմից:
21ա նշ. Միայն իրենց ապահովող մի քանի փրկվածներ կմնան:
23ա ԿԱՄ արծաթի կտորներ:

25ա երբ. ոչխարներ կամ այծեր:
18 1ա նշ. կործանումը մոտ է:
2ա սո՛ւ Վկա:
3ա նշ. նրա կինը:
4ա2 Նեփի 17.16:
բ Ես. Ը.4:

և Սամարիայի Գավարը կտարվի Ասորեստանի թագավորի առաջը: 5 Տերը նաև խոսեց ինձ հետ՝ կրկին ասելով:

6 Նկատի ունենալով, որ այս ժողովուրդն արհամարհում է Միլովայի ջրերը, որոնք հոսում են հանդարտ և ուրախանում է Ռ-ասինով և Ռ-ովնելայի որդով:

7 Այժմ, ուրեմն, ահա, Տերը բերում է Մնրա վրա ուժեղ ու առատ ջրերը գետի, այսինքն՝ Ասորեստանի թագավորին և ողջ նրա փառքը. և նա դուրս կհորդի իր ողջ հունից և կհեղեղի իր բոլոր ավերը:

8 Եվ նա Մկանցնի Հուդայի միջով. կհեղեղի և կորոդի, նա կհասնի նույնիսկ մինչև պարանոցը. և նրա թևերի տարածությունը լցնելու է քո երկրի լայնությունը, ո՛վ Բ՛ւնմանուել:

9 ՄԻավորվեք, ո՛վ ժողովուրդ, և դուք ջարդուփշուր կլինեք. և ականջ դրեք, բոլորդ հեռու երկրներից. պատրաստվեք և ջարդուփշուր կլինեք. պատրաստվեք, և ջարդուփշուր կլինեք:

10 Խորհուրդ արեք միասին, և այն կդառնա ի չիք. խոսեք խոսքը և այն չի հաստատվի. Մքանգի Աստված մեզ հետ է:

11 Քանգի Տերն այդպես խոսեց

ինձ հետ, իր հզոր ձեռքով, և կարգադրեց, որ ես չպետք է քայլեմ այս ժողովրդի ճանապարհով՝ ասելով:

12 Մի ասեք ՄԳաշնակցություն այն բոլորին, որին այս ժողովուրդը Դաշնակցություն է ասում. ո՛չ վախեցեք նրանց վախով, ո՛չ էլ երկյուղեք:

13 Սրբացրեք նրան՝ Ջորաց Տիրոջը, և թող նա լինի ձեր Մվախը, և թող նա լինի ձեր սարսափը:

14 Եվ նա կլինի՝ որպես Մսրբարան. բայց գայթակղության Բքար և գլորման վեմ՝ Իսրայելի երկու տների համար, որպես թակարդ և որոգայթ՝ Երուսաղեմի բնակիչների համար:

15 Եվ նրանց միջից շատերը Մկսայթաքեն և կրնկնեն, կջարդվեն և կորոգայթվեն և կբռնվեն:

16 Կասիր վկայությունը, կնքիր Մօրենքն իմ աշակերտների մեջ:

17 Եվ ես կսպասեմ Տիրոջը, որը Մթաքցնում է իր երեսը Հակոբի տնից, և ես կակնկալեմ նրան:

18 Ահա, ես և այն զավակները, որոնց Տերը տվել է ինձ, Մնշանների ու հրաշքների համար ենք Իսրայելում, Ջորաց Տիրոջ կողմից, որը բնակվում է Սիոն սարում:

19 Եվ երբ նրանք ասեն քեզ. Հարցրեք նրանց, ովքեր Մմեռելա-

4q Դ.Թագ. ԺԵ.29:
6աԾն. ԽԹ.10,
ՋՍԹ, Ծն. 50.24:
բ Ես. Է.1:
7աՆշ. առաջինը՝
հյուսիսային
Իսրայելի վրա:
8աՆշ. Ասորեստանը մուտք
կգործի նաև Հուդա:
բ սո՛ւ Էմմանուել:
9աՆշ. Դաշինք կազմեք:
10աՆշ. Հուդան
(Էմմանուելի հողը)
կպահպանվի:

Սաղ. ԽՁ.7:
12աՆշ. Հուդան իր
ապահովության
համար չպետք է
ապավինի դավակից
հարևաններին:
13աՆշ. Երկյուղած և
խոնարհ եղեք Աստծո
առաջ:
14ա Եզեկ. ԺԱ.15–21:
բ Ա Պետ. Բ.4–8,
Հակոբ 4.14–15:
15ա Մատ. ԻԱ.42–44:
16ա եբբ. ուսմունքներ

կամ վարդապետու-
թյուն:
սո՛ւ Ավետարան:
17ա Ես. ԾԴ.8:
18աՆշ. Եսայիայի և նրա
որդիների անունները,
համապատասխանա-
բար, նշանակում են՝
«Եհովան փրկում է».
«Նա շտապեցնում է
զոհը». և «Մնացորդը
կվերադառնա»:
2 Նեփի 17.3, 18.3:
19ա Ղև. Ի.6:

հարցուկներ են, և ^բկախարդներին, որ փափսում են և քրթմնջում, – ^գչէ՞ որ ժողովուրդը պետք է իր Աստծուն հարցնի, կենդանիների համար ^դմեռածների՞ց լսի:

20 Օրենքին ու վկայությանը. և եթե նրանք չեն ^ախոսում՝ համաձայն այս խոսքի, դա այն պատճառով է, որ չկա լույս նրանց մեջ:

21 Եվ ^անրանք կանցնեն նրա միջով՝ նեղված դժվարություններից և սոված. և կլինի այնպես, որ երբ սոված լինեն, իրենք իրենց կուտեն և կանիծեն իրենց թագավորին ու իրենց Աստծուն, և կնայեն դեպի վեր:

22 Եվ նրանք կնայեն երկրին և կտեսնեն նեղություն ու խավար, տառապանքի մշուշ, և կքշվեն դեպի խավարը:

ԳԼՈՒԽ 19

Եսայիան խոսում է Մեսիայի պես – Մարդիկ խավարի մեջ կտեսնեն մի մեծ լույս – Մեզ համար մի երեխա է ծնվել – Նա կլինի Խաղաղության Իշխանը և կթագավորի Դավթի գահակալության վրա – Համեմատեք Եսայիայի Թ: Մոտ 559–545թթ. Զ.ծ.ա.:

ԱՅՆՈՒԱՄԵՆԱՅՆԻՎ, մշուշը չի լինի այնպիսին, ինչպես նրա նեղության ժամանակ էր, երբ սկզբում նա թեթևակի չարչարեց Չաբբողոնի ^աերկիրն ու Նեփթաղիմի երկիր-

ըր, և հետո ավելի դառնաղետորեն չարչարեց Կարմիր ծովի ճանապարհին՝ Հորդանանի մյուս կողմում, հեթանոսների Գալիլեայում:

2 Ժողովուրդը, որ քայլում էր ^ախավարում, տեսել է մի մեծ լույս, նրանք ովքեր բնակվում էին մահվան սովերների երկրում, նրանց վրա փայլել է լույսը:

3 Դու բազմացրել ես ազգը և ^ամեծացրել ուրախությունը, – նրանք ուրախանում են քո առաջ նույն ձևով, ինչպես ուրախանում են բերքահավաքով, և ինչպես մարդիկ զվարճանում են, երբ նրանք բաժանում են ավարը:

4 Քանզի դու ջարդեցիր նրա բեռի լուծը և ուտերի ծանրությունը, նրա բռնացողի ցուպը:

5 Քանզի ռազմիկի ամեն մի ճակատամարտը խառնիճաղանճ աղմուկով է, և հանդերձները՝ արյունաթաթախ. բայց այն բոցավառվելով և հրի ճարակով կլինի:

6 Քանզի մեզ համար մի ^աերեխա է ծնվել, մեզ մի որդի է տրվել. և ^բիշխանությունը կլինի նրա ուսի վրա. և նրա անունը կկոչվի Սքանչելի, Խորհրդական, ^գՀզոր Աստված, ^դՀավիտենական Հայր, ^եԽաղաղության Իշխան:

7 ^աԻշխանության մեծացմանը և խաղաղությանը վերջ ^բչկա Դավթի գահի վրա, և նրա թագավորության վրա՝ կարգավորելու այն և հաստատելու այն դատաստանով և արդարությամբ այսուհետև, նույ-

19բ նշ. հմայողներ, գուշակներ:
գ Ա Թագ. ԻԸ.6–20:
դ ԿԵՄ մեռելների փոխարեն:
20ա նշ. ոգեղեն հաղորդակցություն ունեցողները (նաև 21–22 հատվածներում):

21ա նշ. Իսրայելը գերության կտարվի, որովհետև չի լսում:
19 1ա Մատ. Գ.12–16:
2ա «Մշուշը» և «խավարը» ուրացությունն է և գերությունը. «մեծ լույսը» Քրիստոսն է:
3ա Ես. Թ.3:

6ա Ես. Է.14,
Ղուկ. Բ.11:
բ Մատ. ԻԸ.18:
գ Տիտոս Բ.13–14:
դ Ալվմա 11.38–39, 44:
ե Հովի. ԺԳ.27:
7ա սոս՝ Կառավարություն:
բ Դան. Բ.44:

նիսկ հավիտյան: Չորաց Տիրոջ մեծ եռանդը կիրազործի այս:

8 Տերը ուղարկեց իր խոսքը Հակոբին, և այն իջավ Խարայելի վրա:

9 Եվ բոլոր մարդիկ կիմանան, նույնիսկ Եփրեմը և Սամարիայի բնակիչները, ովքեր ասում են հպարտությամբ և սրտի ամբարտավանությամբ:

10 Աղյուսները վայր են ընկած, բայց մենք կսարքենք սրբատաշ քարերով: Քիսկիները կտրված են, բայց մենք կփոխենք դրանք եղևնիներով:

11 Հեռևաբար, Տերը կբարձրացնի Դավիթի հակառակորդներին նրա դեմ և կմիավորի նրա թշնամիներին միմյանց հետ:

12 Ասորիներն առջևից և Փղշտացիները ետևից. և նրանք պետք է խժռեն Իսրայելը՝ բացած բերանով: Այս բոլորի պատճառով նրա թրակությունը չի անցել, բայց նրա ձեռքը դեռ մեկնված է:

13 Քանզի մարդիկ չեն ղառնում դեպի նա, ով զարկում է իրենց, ոչ էլ նրանք փնտրում են Չորաց Տիրոջը:

14 Հեռևաբար, Տերը կկտրի Իսրայելից գլուխն ու ազին, ճյուղն ու եղեգը մեկ օրում:

15 Ծերը՝ նա է գլուխը. և մարգարեն, որ սովորեցնում է ստեր՝ նա է ազին:

16 Քանզի այս ժողովրդի առաջնորդները նրանց սխալվելու պատճառն են դառնում. և նրանք, ովքեր առաջնորդվում են նրանց կողմից, կործանվում են:

17 Այդ պատճառով Տերը չի ունենա ուրախություն նրանց երիտասարդներում, ոչ էլ կունենա ռոբորմություն նրանց հայրազուրկների և որբևայրիների հանդեպ. քանզի նրանցից ամեն մեկը կեղծավոր է ու չարագործ, և ամեն մի բերան խոսում է թիմարաբար: Այս բոլորի պատճառով նրա բարկությունը չի անցել, բայց նրա ձեռքը դեռ մեկնված է:

18 Քանզի ամբարշտությունը վառվում է կրակի պես. այն կլափի ցախերը և փշերը, և կբռնկի անտառի ծմակները, և վեր կբարձրանա, ինչպես ծուխն է բարձրանում:

19 Չորաց Տիրոջ ցասումից երկիրը մթնել է, և մարդիկ կլինեն հրի ճարակի պես. ռոբորմություն չի խնայի իր եղբորը:

20 Եվ նա կհափշտակի աջ կողմից և կլինի սոված. և նա կլուտի ձախ կողմից և նրանք չեն կշտանա. նրանք կուտեն՝ ամեն մարդ իր սեփական բազկի միսը,

21 Մամասեն՝ Եփրեմին. և Եփրեմը՝ Մամասեին. նրանք միասին կլինեն ճուղայի դեմ: Այս բոլորի պատճառով նրա բարկությունը չի անցել, բայց նրա ձեռքը դեռ մեկնված է:

ԳԼՈՒԽ 20

Ասորեստանի կործանումը՝ ամբարիշտների կործանման մի մարմնավորում է Երկրորդ Գալատյան

8աւնշ. Հետևող մարգարեական պատգամները (8–21 հատվածները) զգուշացում էին Իսրայել կոչվող հյուսիսային ցեղերին:

11ա Գ Թագ. ԺՁ.5–9:
12ա Գ Թագ. ԺԷ.6, 18:
բ Ես. Ե.25, Ժ.4:
13ա Ամովս Գ.6–12:
17ա սոՒ Ողորմած, Ողորմություն:
բ 2 Նեփի 9.28–29:

գ Հակոբ 5.47, 6.4:
19ա Միքիս Է.2–6:
20ա Բ Օր. ԻԸ.53–57:
21ա սոՒ Մամասեն:
բ սոՒ Եփրեմ:
գ սոՒ Հուդա:

ժամանակ – Քիչ մարդիկ կմնան Տիրոջ կրկին գալուց հետո – Հակոբի մնացորդը կվերադառնա այն օրը – Համեմատեք Եսայիայի Ժ: Մոտ 559-545թթ. Բ.ծ.ա.:

ՎԱՅ նրանց, ովքեր հրամանագրում են անարդար հրամանագրեր և գրում են անիրավություն, որ իրենք են սահմանել,

2 Մերժելու համար կարիքավորին ^ադատաստանից, խլելու իրավունքն իմ ժողովրդի աղքատից, որպեսզի ^բորբևայրիները լինեն իրենց գոհը, և որպեսզի նրանք կարողանան թալանել հայրագուրկներին:

3 Եվ ի՞նչ եք անելու ^աայցելության օրը և աղետի մեջ, որը կգա հեռվից. ո՞ւմ մոտ եք դուք փախչելու օգնության համար. և որտե՞ղ եք թողնելու դուք ձեր փառքը:

4 Առանց ինձ նրանք վայր կխոնարհվեն գերիների մեջ, և նրանք կընկնեն սպանվածների տակ: Այս բոլորի պատճառով նրա բարկությունը չի անցել, բայց նրա ձեռքը դեռևս մեկնված է:

5 Ո՛վ Ասորիք՝ գավազանն իմ բարկության, և ցուպը նրանց ձեռքում՝ իրենց ^ագայրույթն է:

6 Ես կուղարկեմ նրան մի կեղծավոր ազգի ^ադեմ, և իմ ցասման ժողովրդի դեմ ես կտամ հրաման՝ վերցնելու ավարը և վերցնելու թալանը և ոտնակոխ անելու նրանց, ինչպես փողոցների ցեխը:

7 Այնուամենայնիվ, նա նկատի ունի ո՛չ այդ, ո՛չ էլ սիրտն է խորհում այդպես. այլ նրա սրտում

կործանելն է և ոչ քիչ ազգեր բնաջնջելը:

8 Քանզի նա ասում է. Մի՞թե իմ իշխանները բոլորն էլ թագավորներ չեն:

9 Մի՞թե Քաղանեն Քարքամիսի պես չէ: Մի՞թե Եմաթը Արփաղի պես չէ: Մի՞թե Սամարիան Դամակոսի պես չէ:

10 Ինչպես որ ^աիմ ձեռքը հիմնադրել է կուռքերի թագավորությունները, և որոնց քանդակած արձանները գերազանցում էին Երուսաղեմինը և Սամարիայինը.

11 Մի՞թե չպիտի անեմ այնպես, ինչպես արեցի Սամարիային և նրա կուռքերին, մմանապես անեմ Երուսաղեմին և նրա կուռքերին:

12 Ուստի, կլինի այնպես, որ երբ Տերը կատարած կլինի իր ողջ գործը Սիոն սարի վրա և Երուսաղեմի վրա. Ես կպատժեմ ^աԱսորեստանի թագավորի համառ սրտի ^բպտուղը և նրա բարձրամիտ նայվածքի փառքը:

13 Քանզի ^անա ասում է. Իմ ձեռքի ուժով և իմ իմաստությամբ եմ արել այս բաները. քանզի ես խելամիտ եմ. և տեղաշարժել եմ ժողովուրդների սահմանները և հափշտակել եմ նրանց գանձերը, և ես հպատակեցրել եմ բնակիչներին մի զորավոր մարդու պես.

14 Եվ իմ ձեռքը գտել է ժողովրդի հարստությունները. ինչպես մի բույն, և ինչպես մեկը, որ հավաքում է ձվերը, որոնք թողնված են, ես էլ հավաքեցի ողջ երկիրը. և չկար մեկը, որ շարժեր թևը, կամ բացեր բերանը, կամ ծվար:

<p>20 2ա ԿԵՏ արդարադատությունից: բ սուր Այրի: 3ա նշ. պատիժ: 5ա Ես. Ժ:5:</p>	<p>6ա նշ. Իսրայելի դեմ: 10ա նշ. Ասորեստանի թագավորի ձեռքը (10-11 հատվածները): 12ա Սոփ. Բ.13:</p>	<p>բ նշ. գողոզամիտ պարծենկոտությունը: 13ա նշ. Ասորեստանի թագավորը (13-14 հատվածները):</p>
---	--	---

15 Մի՞թե Քաղցինը կարծենա իրենով՝ նրա դեմ, ով կարում է իրենով: Մի՞թե սողը կմեծարի իրեն՝ նրա դեմ, ով քաշում է իրեն: Կարծես թե զավագանն ինքն իրեն պիտի թափահարեր նրանց դեմ, ովքեր բարձրացնում են այն, կամ կարծես թե ցուպն ինքն իրեն պիտի բարձրանար, կարծես թե փայտ չէր:

16 Հետևաբար, Տերը՝ Չորաց Տերը, նրա պարարտների մեջ նիհարություն պիտի ուղարկի. և նրա փառքի տակ նա կրակ պիտի վառի՝ հրդեհի կրակի պես:

17 Եվ Իսրայելի լույսը կլիճի կրակի պես, և նրա Սուրբը՝ բոցի պես, և կայրի ու կլափի նրա փշերն ու նրա ցախերը մեկ օրում.

18 Եվ կոչնչացնի նրա անտառի և նրա մրգառատ դաշտի փառքը՝ և՛ հողգին, և՛ մարմինը. և նրանք կլիճեն այնպես, ինչպես երբ դրոշակակիրը թուլանում է:

19 Եվ նրա անտառի ծառերի մնացածը կլիճի քիչ, այնքան որ երեխան կարող է դրանք գրի առնել:

20 Եվ այն օրը կլիճի այնպես, որ Իսրայելի մնացորդը, Հակոբի թոնից նրանք, ովքեր ազատվել են, այլևս կրկին չեն Պլոնի նրա վրա, ով զարկել էր իրենց, այլ

կապավինեն Տիրոջը՝ Իսրայելի Սուրբին, ճշմարտությամբ:

21 Մնացորդը, այո, այսինքն՝ Հակոբի մնացորդը, կվերադառնա դեպի հօրը Աստվածը:

22 Քանզի, չնայած քո ժողովուրդը, Իսրայել, լինի ծովի ավազի չափ էլ, սակայն նրանցից մի մնացորդ կվերադառնա. «ավերումը, հռչակված, Քիհորդի արդարությամբ»:

23 Քանզի Չորաց Տեր Աստվածը կանի մի «ավերում, նույնիսկ որոշված է ողջ երկրի մեջ»:

24 Հետևաբար, այսպես է ասում Չորաց Տեր Աստվածը. Ո՛վ իմ ժողովուրդ, որ բնակվում ես Սիոնում, մի՛ վախեցիր Ասորիքից. նա կզարկի քեզ զավագանով և կբարձրացնի ցուպը քո դեմ՝ Եգիպտոսի պես:

25 Քանզի դեռ մի քիչ ժամանակ անց, և զայրույթը կհանդարտվի, և իմ բարկությունը՝ նրանց կործանումով:

26 Եվ Չորաց Տերը մի մտրակ կարքի նրա համար՝ Օրեբ լեռան մոտ Մադիամի ջարդի պես. և հենց այնպես, ինչպես նրա զավագանը ծովի վրա էր, նա նույն ձևով վեր կբարձրացնի այն, ինչպես Եգիպտոսի վրա:

27 Եվ կլիճի այնպես, այն օրը, որ

15ա Այս հատվածի բոլոր փոխաբերությունները միևնույն հարցն են տալիս. Կարո՞ղ է մարդը (օրինակ՝ Ասորեստանի թագավորը) Աստծո դեմ հաղթանակել:
 p նշ. մարգարեն թագավորին համեմատում է գործիքի հետ:
 16ա նշ. Ասորեստանի թագավորը

(նաև 17–19 հատվածներում):
 18ա նշ. Ասորեստանը կատարելապես կբնաջնջվի:
 19ա նշ. Ասորեստանի բանակի մնացորդները:
 20ա նշ. վերջին օրերին:
 p Ամովս Թ. 8–9:
 q նշ. հույսը դնել:
 21ա Ես. ԺԱ. 11–12:
 22ա ՎևոՒԲ 63.34:
 սուր Աշխարհ – Աշխարհի վերջը:

p նշ. Նույնիսկ երբ պատիժ է գալիս, ողորմածությունն առկա է:
 23ա նշ. որոշված կործանումը կիրականացնի:
 24ա նշ. ինչպես Եգիպտացիներն էին արել նախքան այդ: Ել. Ա. 13–14:
 26ա ԾՆ. ԻԵ. 1–2, Գառ. Է. 25:

նրա շքեղ կվերցվի քո ուսի վրայից, և նրա լուծը՝ քո վզից, և լուծը կկործանվի՝ քօծման պատճառով:

28 Մա եկել է Անգե, նա անցել է Մագրոնը, Մաքմասում է նա տեղավորել իր կառքերը:

29 Նրանք անցնում են լեռնանցքով, նրանք օթևան են վերցրել Գաբայում. Ռաման վախեցած է. Սավուդի Գաբասն փախած է:

30 Բարձրացրու ձայնդ, ո՛վ Գաղղիմի դուստր. լսել տուր այն Լայիսի համար, ո՛վ խեղճ Անաթովք:

31 Մաղմնան տարագրված է. Գերիմի բնակիչները հավաքվում են՝ փախչելու:

32 Քանի դեռ նա կմնա Նոբում այն օրը. նա իր ձեռքը թափ կտա Սիոնի դստեր սարի՝ Երուսաղեմի բլրի դեմ:

33 Ահա, Տերը՝ Չորաց Տերը, կխուզի ճյուղերը՝ սարսափով. և հասակով՝ բարձրերը գետնահար կարվեն. և գոռոզները կխոնարհեցվեն:

34 Եվ նա կկտրի անտառի ծնակները երկաթով, և Լիբանանը կընկնի մի հզոր մեկից:

ԳԼՈՒԽ 21

Հեսսեի ցողունը (Քրիստոսը) կդատի արդարությամբ – Գիտելիքը Աստծո մասին, կպատի երկիրը Հապարամյակի ժամանակ – Տերը մի

դրոշակ կբարձրացնի և կծողովի Իսրայելը – Համեմատեք Եսայիայի ԺԱ: Մոտ 559–545թթ. Ք.ծ.ա.:

Եւ մի շշտաովիդ պիտի դուրս գա ՔՀեսսեի ցողունից, և մի ընձյուղ պիտի աճի նրա արմատներից:

2 Եվ Տիրոջ շՀոզին կհանգչի նրա վրա՝ իմաստության և բանականության ոգին, խորհրդի և զորության ոգին, գիտության և Տիրոջ երկյուղի ոգին.

3 Եվ կդարձնի նրան արագ ըմբռնմամբ՝ Տիրոջ երկյուղով, և նա չի Պատի ըստ իր աչքերի տեսածի, ոչ էլ կհանդիմանի ըստ իր ականջների լսածի:

4 Այլ Մարդարությամբ կդատի աղքատին և անաչառությամբ՝ կհանդիմանի երկրի Գեզերի համար. և նա կզարկի երկիրն իր բերանի գավազանով և իր շրթունքների շնչով կսպանի ամբարիշտներին:

5 Եվ արդարությունը կլինի նրա մեջքի գոտին և հավատարմությունը՝ ներանքի գոտին:

6 Գայլը նույնպես կբնակվի գառի հետ, և ընձառյուծը կպառկի ուլի հետ, և հորթը, կորյունը և պարարտ զվարակը՝ միասին. և մի փոքր երեխա կառաջնորդի նրանց:

7 Եվ կովն ու արջը կարածեն. նրանց ձագերը կպատկեն միասին. և առյուծը ծղոտ կուտի, ինչպես արջառը:

27ա Ես. ԺԳ.25:

բ սո՛ւ Օծյալը:

28ա նշ. Նկարագրում է Ասորեստանի գորքերի առաջընթացը դեպի Երուսաղեմ. իսկ հետո (33–34 հատվածներում) փոխաբերաբար նկարագրվում է Տիրոջ

քայլերը նրանց դեմ:

33ա Հել. 4.12–13:

21 1ա Վևո՛ւ 113.3–4:

բ Հեսսեն Գավթի հայրն էր. հղում է արվում դեպի Գավթի թագավորական տոհմաբանական գիծը, որից, ի վերջո, ծնվել է Հիսուսը:

Միքիա Ե.2, Եբր. Է.14:

սո՛ւ Հեսսե:

գ Վևո՛ւ 113.1–2:

2ա Ես. ԿԱ.1–3:

3ա Հովի. Է.24:

4ա Սաղ. ՀԲ.2–4,

Մոսիա 29.12:

բ Եբր. որոշում կընդունի:

գ սո՛ւ Հեզ, Հեզուբյուն:

5ա ԿԵՄ գոտկատեղ:

8 Եվ ծծկեր երեխան կխաղա
"իժի անցքի վրա, և կաթից
կտրված երեխան ձեռքը ^բքարքի
բնի վրա կդնի:

9 Նրանք ^աչեն վնասի կամ ավերի
իմ ողջ սուրբ սարում, քանզի եր-
կիրը Տիրոջ ^բգիտությունով լցված
կլինի, ինչպես ջրերն են ծածկում
ծովը:

10 Եվ ^աայն օրը կլինի Հեսեսի մի
^բարմատ, որը կկանգնի որպես
դրոշ ժողովրդի համար. ^գդեպի
նրան կձգտեն ^դհեթանոսները. և
նրա հանգիստը փառահեղ կլինի:

11 Եվ կլինի, այն օրը, որ Տերն իր
ձեռքը կրկին կպարզի, ^աերկրորդ
անգամ ետ բերելու իր ժողովրդի
մնացորդին, որոնք մնացած
կլինեն Ասորեստանից և Եգիպտոսից,
Պաթուրեսից և Քուչից, Եղա-
մից և Սենաարից, Եմաթից և
ծովի կղզիներից:

12 Եվ նա ^ադրոշ կբարձրացնի
ազգերի համար և կժողովի Իսրա-
յելի ^բտարագիրներին և ^գկհավաքի
Հուդայի ցրվածներին՝ աշխարհի
չորս անկյուններից:

13 Եփրեմի ^անախանձը նույնպես
կվերանա և Հուդայի հակառա-
կորդները կբնաջնջվեն. Եփրեմը չի
^բնախանձի ^գՀուդային, և Հուդան
չի նեղի Եփրեմին:

14 Այլ նրանք Փղշտացիների

ուսերի վրայով ^ակթռչեն դեպի
արևմուտք, նրանք միասին կթա-
լանեն նրանց՝ արևելքում. կդնեն
իրենց ձեռքը Եդովմի և Մովաբի
վրա. և Ամմոնի զավակները կհնա-
զանդվեն նրանց:

15 Եվ Տերը լիովին ^ակկործանի
Եգիպտական ծովի լեզվակը. և իր
հզոր քամիով նա իր ձեռքը կշարժի
գետի վրա և կգարկի այն յոթ
վտակների, և անցնել կտա մարդ-
կանց չոր կոշիկով:

16 Եվ մի ^ամայրուղի կլինի իր ժո-
ղովրդի մնացորդի համար, որոնք
մնացած կլինեն Ասորեստանից,
ինչպես որ եղավ Իսրայելի համար
այն օրը, երբ նա դուրս եկավ
Եգիպտոսի երկրից:

ԳԼՈՒԽ 22

*Հազարամյակի օրոք բողոք մարդիկ
կգովաբանեն Տիրոջը – Նա կբնակ-
վի նրանց մեջ – Համեմատեք
Եսայիայի ԺԲ: Մոտ 559–545թթ.
Ք.ծ.ա.:*

ԵՎ այն օրը դու կասես. Ո՛վ Տեր,
ես կգովաբանեմ քեզ. թեև դու
բարկացած էիր ինձ վրա, քո
բարկությունը մեկդի դարձավ, և
դու մխիթարում ես ինձ:

2 Ահա, Աստված իմ փրկությունն

8ա փոքր թունավոր օձ
Եգիպտոսում:
^բ մեկ այլ թունավոր օձ:
9ա Ես. Բ.4:
սու- Հազարամյակ:
^բ ՎևոՒ 101.32–33, 130.9:
10ա նշ. վերջին օրերը:
ՉՄ–Պ 1.40:
^բ Հռովմ. ԺԵ.12,
ՎևոՒ 113.5–6:
^գ ԿԵՄ դեպի նա:
^դ ՎևոՒ 45.9–10:
11ա 2 Նեփի 6.14, 25.17,
29.1:

12ա սու- Դրոշ:
^բ 3 Նեփի 15.15, 16.1–4:
^գ Նեեմ. Ա.9,
1 Նեփի 22.10–12,
ՎևոՒ 45.24–25:
սու- Իսրայել –
Իսրայելի ցրվելը:
13ա Եբեմ. Գ.18:
^բ Հուդայի և Եփրեմի
առաջնորդած ցեղերը
պատմականորեն
ախտյաններ են եղել
(Գ. Թագ. ԺԲ.16–20-ի
իրադարձություննե-

րից հետո): Վերջին
օրերին այս թշնա-
մանքը կբուժվի:
Եգեկ. ԼԷ.16–22:
սու- Նախանձել:
^գ սու- Հուդա:
14ա նշ. կհարձակվեն
արևմտյան լանջերի
վրա, որոնք
Փղշտացիների
տարածքներն էին:
15ա Չաք. Ժ.11:
16ա Ես. ԼԵ.8,
ՎևոՒ 133.27:

է. ես ՝կապավինեմ և չեմ վախենա. քանզի Տեր ՝Եհովան է իմ ուժը և իմ երգը. նա նաև դարձել է իմ փրկությունը:

3 Ուստի, ուրախությամբ դուք ՝ջուր դուրս կքաշեք փրկության ջրհորներից:

4 Եվ այն օրը դուք կասեք. ՝Գովք ասեք Տիրոջը, կանչեք նրա անունը, հայտարարեք նրա գործերը ժողովրդի մեջ, հիշեք, որ նրա անունը մեծարված է:

5 ՝Օրհներգեք Տիրոջը. քանզի նա արել է մեծամեծ բաներ. սա հայտնի է ողջ աշխարհում:

6 ՝Աղաղակեք և ցնծացեք, Սիոնի՛ բնակիչներ. քանզի մեծ է Իսրայելի Սուրբը քո մեջ:

ԳԼՈՒԽ 23

Բարեւոյնի կործանումը Երկրորդ Գալստյան ժամանակ կործանման մի մարմնավորում է – Այն կլինի ցասման և վրեժխնդրության մի օր – Բարեւոյնը (աշխարհը) կընկնի հավիտյան – Համեմատեք Եսայիայի ԺԳ: Մոտ 559–545թթ. Բ.ծ.ա.:

՝ԲԱԲԵԼՈՆԻ Քննությունը, որը տեսավ Եսայիան՝ Ամոզի որդին:

2 ՝Դրոշ բարձրացրեք դուք բարձր սարի վրա, բարձրացրեք ձեր ձայնն առ նրանք, ձեռք ՝երեբացրեք, որ նրանք կարողանան

զնալ ազնվականների դռների միջով:

3 Ես պատվիրել եմ իմ ՝սրբվածներին, և ես կանչել եմ նաև իմ հզորներին, քանզի իմ բարկությունը նրանց վրա չէ, որ ցնծում են իմ վեհափառությամբ:

4 Բազմության ձայնը լեռներում մեծ ժողովրդի մնանությամբ է, ազգերի ՝քազավորությունների աղմկոտ ձայնը՝ ՝հավաքված ազգերի մման՝ Չորաց Տերը գորահավաք է անում ճակատամարտի գորքերին:

5 Նրանք գալիս են մի հեռավոր երկրից՝ երկնքի ծայրից, այո, Տերը և նրա բարկության զենքերը՝ կործանելու ողջ երկիրը:

6 Ողբացե՛ք դուք, քանզի Տիրոջ օրը մոտ է. այն կգա որպես մի կործանում Ամենագորից:

7 Այդ պատճառով կլինեն թուլացած բոլոր ձեռքերը, ամեն մարդու սիրտ կհալվի.

8 Եվ նրանք կսոսկան. խայթոցը և տառապանքները կբռնեն նրանց. նրանք ապշած կլինեն մեկը մյուսի վրա. նրանց երեսները կլինեն, ինչպես բոցեր:

9 Ահա, գալիս է Տիրոջ օրը դաժան՝ և՛ ցամամբ, և՛ կատաղի բարկությամբ, դարձնելու երկիրն ամայի. և նա ՝կկործանի դրա մեղսագործներին նրա միջից:

10 Քանզի երկնքի աստղերը և

22 2ա Մոսիա 4.6, Հել. 12.1:
բ Ել. ԺԵ.2, Սաղ. 2Գ.18:
սո՛ր Եհովա:
3ա սո՛ր Կենդանի ջուր:
4ա սո՛ր Ընդհակալ, Ընդհակալություն, Գոհաբանություն:
5ա Վև. 136.28:
6ա Ես. ԾԴ.1, Սոփ. Գ.14:

23 1ա Ամբարիշտ Բարեւոյնի պատմական կործանումը, որի մասին մարգարեություն է արվել Ես. ԺԳ և ԺԴ գլուխներում, ողջ ամբարիշտ աշխարհի վերջնական կործանման մնանությունն է: Վև. 133.5, 7, 14:
սո՛ր Բարեւոյն:

բ նշ. կործանման պատգամը:
2ա ԿԵՄ Դրոշակ: սո՛ր Դրոշ:
բ նշ. ձեռքը թափահարել՝ ազդանշան տալ:
3ա նշ. Սրբերին:
4ա Չաք. ԺԴ.2–3:
բ Չաք. ԺԲ.3:
9ա սո՛ր Երկիր – Երկրի մաքրագործումը:

որա համաստեղությունները չեն տա իրենց լույսը. և արևը կմթնեցվի իր առաջ շարժվելիս, և լուսինը չի ցուլացնի իր լույսը:

11 Եվ ես կպատժեմ աշխարհը չարի համար և ամբարիշտներին իրենց անօրինության համար. ես կդադարեցնեմ Քաղաքների գոռոզությունը և վայր կտապալեմ սոսկալիների ամբարտապանությունը:

12 Ես կդարձնեմ մարդուն ավելի թանկարժեք, քան ընտիր ոսկին. նույնիսկ մարդուն ավելի, քան Ոփիրի ոսկու գանձը:

13 Հետևաբար, ես կցնցեմ երկինքը, և երկիրը կշարժվի իր տեղից Չորաց Տիրոջ ցասման և նրա կատաղի բարկության օրը:

14 Եվ այն կլիճի, ինչպես «հետապնդվող այծյամ և ինչպես ոչխարներ, որ ոչ մի մարդ չի հավաքում, և նրանք՝ ամեն մարդ, կվերադառնա դեպի իր սեփական ժողովուրդը, և կփախչի ամեն ոք իր սեփական երկիրը:

15 Ամեն ոք, որ հպարտ է, կխոցվի միջով. այո, և ամեն ոք, որ միացել է ամբարիշտներին, կընկնի սրով:

16 Նրանց երեխաները նույնպես ջարդուխուրդ կարվեն իրենց աչքերի առաջ. նրանց տները պիտի թալանվեն, և նրանց կանայք բռնաբարվեն:

17 Ահա, ես նրանց դեմ կդրդեմ Մարերին, որոնք հաշվի չեն առնի արծաթ և ոսկի, և ոչ էլ դրանով կզմայլվեն:

18 Նրանց աղեղները նաև ջարդուխուրդ կանեն երիտասարդներին. և նրանք չեն ունենա գութ արգանդի պողի վրա. և նրանց աչքերը չեն խնայի երեխաներին:

19 Եվ Բաբելոնը՝ թագավորությունների փառքը, Քաղղեացիների գերազանցության «գեղեցկությունը, Աստծո Մողոմը և Գոմորը խորտակելու պես կլիճի:

20 Այն երբեք չի շենանա, ոչ էլ կրնակեցվի սերնդե-սերունդ, ոչ էլ Արաբացին պիտի վրան խփի այնտեղ. ոչ էլ պիտի հովիվներն իրենց փարախը շինեն այնտեղ:

21 Այլ անապատի վայրի գազանները կպառկեն այնտեղ. և նրանց տները լի կլինեն մելամաղձոտ էակներով. և բվերը կընակվեն այնտեղ, և վայրի թայծերը պարկզան այնտեղ:

22 Եվ կղզիների վայրի գազանները կռռնան նրանց ամայի տներում, և թվիշապները՝ նրանց հաճելի պալատներում. և նրա ժամանակը գալու մոտ է, և նրա օրը չի երկարաձգվի: Քանզի, ես սրընթաց կկործանեմ նրան. այո, քանզի ես ողորմած կլինեմ իմ ժողովրդի հանդեպ, բայց ամբարիշտները կկորչեն:

ԳԼՈՒԽ 24

Իսրայելը կհավաքվի և կվայելի հազարամյա հանգիստ – Լյուցիֆերը դուրս էր շարտվել երկնքից ապստամբության պատճառով –

10ա սուր Աշխարհ – Աշխարհի վերջը:
11ա Մաղ. Գ. 1:
բ Վև.ՈՒ 64.24:
12ա Ես. Գ. 1–4:
13ա սուր Երկիր – Երկրի վերջնական վիճակը:

14ա ՎԵՄ որավող եղնիկ:
19ա նշ. ունայնությունը:
բ Ծն. ԺԹ. 24–25,
Բ Օր. ԻԹ. 23,
2 Նեփի 13.9:
20ա Երեմ. Ծ. 3, 39–40:
21ա Ես. Լ. Գ. 14–15:

բ երբ. արու այծեր, կամ հուշկապարիկներ:
22ա երբ. պալատներում:
բ երբ. (հավանաբար) շնագայլերը, կամ վայրի շները:

Իսրայելը կհաղթի Բաբելոնին (աշխարհին) – Համեմատեք Եսայիայի ԺԳ: Մոտ 559–545թթ. Ք.ծ.ա.:

ՔԱՆՁԻ Տերը ողորմություն կունենա Հակոբի վրա, և դեռ ^ակընտրի Իսրայելին, և կհաստատի նրանց իրենց սեփական երկրում. և ^բօտարականները կմիավորվեն նրանց հետ և կհարեն Հակոբի տանը:

2 Եվ ^գժողովուրդները կվերցնեն ու կբերեն նրանց իրենց տեղը. այո, հեռվից՝ աշխարհի ծայրերից. և նրանք կվերադառնան իրենց ^դերկրները խոստումի: Եվ Իսրայելի Տունը կտիրի դրանց, և Տիրոջ երկիրը կլինի ^եձառաների ու աղախիմների համար. և նրանք գերի կվերցնեն նրանց, որոնց իրենք էին գերի. և նրանք կիշխեսն իրենց բռնացողների վրա:

3 Եվ կլինի այնպես, այն օրը, որ Տերը քեզ ^զհանգիստ կտա քո վշտերից և քո երկյուղից և ծանր ճորտությունից, որով քեզ ստիպել էին ծառայել:

4 Եվ կլինի այնպես, այն օրը, որ դու այս առակը կբերես ^աԲաբելոնի թագավորի դեմ և կասես. Ինչպե՛ս է դադարել բռնակալը, ոսկե քաղաքը դադարեց:

5 Տերը կտորել է ամբարիշտների գավազանը, իշխանավորների գայիսոնները:

6 Նա, ով զարկում էր ժողովրդին

ցամամբ՝ մի անդադար հարվածով, նա, ով իշխում էր ազգերին բարկությունով, հալածվում է, և ոչ ոք չի արգելում:

7 Ողջ երկիրը հանգիստ է և խաղաղ. նրանք սկսում են հանկարծ ^բերգել:

8 Այո, ^գեղևնիները ցնծում են քո վրա, և նաև Լիբանանի մայրիները՝ ասելով. Այն ժամանակից, որ դու վայր ես ^դտապալվել, ոչ մի ^եփայտահատ չի գալիս մեր վրա:

9 ^զԴժոխքը տակից դողդաց քեզ համար՝ դիմավորելու քեզ քո գալստյան ժամանակ. այն վեր է հանում ^էմեռածներին քեզ համար, նույնիսկ աշխարհի բոլոր գլխավորների. այն վեր կանգնեցրեց ազգերի բոլոր թագավորներին իրենց գահերից:

10 Բոլոր նրանք կխոսեն և կասեն քեզ. Դու է՞լ ես տկարացել, ինչպես մենք: Դու է՞լ ես դարձել մեզ նման:

11 Քո շքեղությունը վայր բերվեց գերեզման. քո տավիղների հնչյունները չեն լսվում. որդն է տարածված քո տակ, և որդերն են ծածկում քեզ:

12 ^աԻնչպե՛ս դու ընկար երկնքից, ո՛վ ^բԼյուցիֆեր, արշալույսի՝ որդի: Վայր ես տապալված գետնին, դու, որ խեղճացնում էիր ազգերին:

13 Քանզի դու ասացիր քո սրտում. ^գԵս կելնե՛մ երկինք, ես կբարձրացնե՛մ իմ գահը Աստծո

24 1ա Չաք. Ա.17:
բ Ես. Կ.3–5, 10:
2ա նշ. Ուրիշ ազգեր կօգնեն Իսրայելին:
բ սոռ Խոստացված երկիր:
գ Ես. Կ.14:
3ա չես. Ա.13,
ՎևՈՒ 84.24:
4ա սոռ Բաբելոն:

7ա Ես. ԾԵ.12:
8ա երբ. նոճի:
բ նշ. մահացել:
գ երբ. (ծառ) կտրող չի եկել մեր դեմ:
9ա սոռ Դժոխք:
բ նշ. մարմնից անջատված հոգիներից:
12ա ՎևՈՒ 76.26:

բ երբ. առավոտյան ասող՝ Արուսյակ:
Ամբարիշտ աշխարհի թագավորը (Բաբելոնը) համեմատվում է Լյուցիֆերի՝ բոլոր ամբարշտության թագավորի հետ:
սոռ Դև. Լյուցիֆեր:
13ա Մովսես 4.1–4:

աստղերից վեր. ես կնստեմ նաև ժողովի սարի վրա՝ քիչուսիսային կողմում.

14 Ես կբարձրանամ ամպերի բարձունքներից վեր. ես կլինեմ Բարձրալի նման:

15 Մինչդեռ դու պիտի վայր բերվես դժոխք՝ գուրբի խորխորատները:

16 Նրանք, որ կտեսնեն քեզ, մոտիկից կզննեն քեզ և կտնտնեն քեզ, և կասեն. Սա՞ է այն մարդը, որ ստիպում էր դողալ աշխարհին, որ ցնցում էր թագավորությունները:

17 Եվ դարձրեց աշխարհն անպատի պես, և կործանեց նրա քաղաքները, և չբացեց իր բանտարկյալների տունը:

18 Ազգերի բոլոր թագավորները, այո, նրանք՝ բոլորը, պատկած են փառքով, նրանցից ամեն մեկն իր սեփական տանը:

19 Բայց դու դուրս ես գցված քո գերեզմանից՝ զգվելի ճյուղի և նրանց մնացորդի պես, որոնք սպանված են՝ սրով խոցված, որոնք գնում են ցած դեպի գուրբի քարերը. ոտնակոխ դիակի պես:

20 Դու թաղումով չես միացվելու նրանց, որովհետև դու կործանել ես քո երկիրը և սպանել քո ժողովրդին. չարագործների քսերունդը երբեք չպիտի փառաբանվի:

21 Կոտորած պատրաստեք նրա

զավակների համար, նրանց հայրերի մանօրինությունների պատճառով, որպեսզի նրանք չբարձրանան, ո՛չ էլ տիրեն երկրին, ո՛չ էլ լցնեն աշխարհի երեսը քաղաքներով:

22 Քանզի ես վեր կելնեմ նրանց դեմ, ասում է Չորաց Տերը և կկտրեմ Բաբելոնից՝ մանունը և մնացորդը, որդուն և քեղբորդուն, ասում է Տերը:

23 Ես այն նաև կդարձնեմ մեծփականություն ձկնկուլների համար, և ջրի լճակներ. և ես կավլեմ այն կործանման ավելով, ասում է Չորաց Տերը:

24 Չորաց Տերը երդվել է՝ ասելով. Անշուշտ, ինչպես մտածել եմ, այնպես էլ կլինի. և ինչպես նպատակադրվել եմ, այնպես էլ կկատարվի,

25 Որ ես կբերեմ մատրեստանցուն իմ երկիրը և իմ սարերի վրա ոտնակոխ կանեմ նրան. այն ժամանակ նրա գլուծը կհեռանա նրանց վրայից և նրա բեռը կհեռանա նրանց ուտերի վրայից:

26 Սա է նպատակը, որ նպատակադրված է ողջ աշխարհի վրա. և սա է այն ձեռքը, որ մեկնված է բոլոր ազգերի վրա:

27 Քանզի Չորաց Տերն է նպատակադրել, և ո՞վ է խափանելու: Եվ նրա ձեռքը մեկնված է, և ո՞վ է ետ դարձնելու:

13բ նշ. աստվածների բնակավայրը՝ համաձայն Բաբելոնյան հավատքի: Մադ. ԽԸ.2:
15ա1 Նեփի 14.3:
16ա եբբ. շլացած կնայեն քեզ և կմտածեն քո մասին:
18ա նշ. իր ընտանեկան գերեզմանում:
19ա նշ. մերժված ճյուղ,

կտրված և դեմ գցված:
բ նշ. ամենացածր տեղը:
20ա սուր. Ամբարիշտ, Ամբարշտություն:
բ Մադ. ԻԱ.10–11, ԼԷ.28:
21ա Ել. Ի.5:
22ա Առակ. Ժ.7:
բ Հոր ԺԸ.19:
23ա Ես. ԼԳ.11–15:
25ա Սա վերաբերում է Ատրեստանի

հարձակմանն ու անկմանը Հուդայում, Ք.ծ.ա. 701թ. (24–27 հատվածներ):
Գ.Թագ. ԺԹ.32–37, Ես. ԼԷ.33–38:
բ նշ. Հուդայի և Իսրայելի սարերը:
գ Ես. Ժ.27:
26ա նշ. Ի վերջո, բոլոր աշխարհիկ ազգերն այսպես կկործանվեն:

28 Այն ^ատարում, որ թագավոր ^բԱքազը մեռավ, եղավ այս պատգամը:

29 Մի ուրախացիր, ողջ Փղշտացիների երկիր, որովհետև նրա գավազանը, որը զարկում էր քեզ, կտրված է. քանզի օձի արմատից քարք է դուրս գալու և նրա պտուղը՝ թռչող, կիզող օձ է լինելու:

30 Եվ աղքատի առաջները կկերակրվի, և կարիքավորը կպատկի ապահովության մեջ. իսկ ես կսպանեմ քո արմատը սովով, և նա կկոտորի քո մնացորդին:

31 Ողբա, ո՛վ դուռ. աղաղակիր, ո՛վ քաղաք. դո՛ւ, ողջ Փղշտացիների երկիր, քայքայված ես. քանզի հյուսիսից մի ծուխ կգա, և ոչ ոք մենակ չի լինի նրա նշած ժամին:

32 Ի՞նչ կպատասխանեն այն ժամանակ ազգերի սուրհանդակները: Որ Տերը հիմնադրել է ^աՄիոնը, և նրա ժողովրդի ^բաղքատը պիտի ^գապավինի նրան:

հավատում Քրիստոսին, որը Սուրբն է Իսրայելի: Մոտ 559–545թթ. Ք.ծ.ա.:

ԱՅՅԾ, ես՝ Նեփիս, խոսում եմ որոշ բան այն խոսքերի մասին, որոնք ես գրել եմ, որոնք ասվել են Եսայիայի բերանով: Քանզի, ահա, Եսայիան խոսել է շատ բաներ, որոնք իմ ժողովրդից շատերի համար ^աղվար էր հասկանալ. քանզի նրանք չգիտեն մարգարեանալու ձևի մասին հրեաների մեջ:

2 Քանզի ես՝ Նեփիս, չեմ սովորեցրել նրանց շատ բաներ հրեաների վարքագծի վերաբերյալ. քանզի նրանց ^ագործերը խավարի գործեր էին, և նրանց արարքները պղծության արարքներ էին:

3 Ուստի, ես գրում եմ իմ ժողովրդին, բոլոր նրանց, ովքեր այսուհետև կստանան այս բաները, որոնք ես գրում եմ, որ նրանք կարողանան իմանալ Աստծո դատաստանները, որ դրանք գալիս են բոլոր ազգերի վրա, համաձայն այն խոսքի, որը նա խոսել է:

4 Ուստի լսեք, ո՛վ իմ ժողովուրդ, ովքեր Իսրայելի տնից եք, և սկանջ դրեք իմ խոսքերին. քանզի չնայած Եսայիայի խոսքերը պարզ չեն ձեզ համար, սակայն դրանք պարզ են բոլոր նրանց համար, որոնք լցված են ^ամարգարեության ^բոգով: Բայց ես տալիս եմ ձեզ մի մարգարեություն, ըստ այն ոգու, որն իմ մեջ է, ուստի ես կմարգարեանամ՝ համաձայն այն ^գպարզության, որը եղել է ինձ հետ

ԳԼՈՒԽ 25

Նեփին հրճվում է պարզությանը – Եսայիայի մարգարեությունները կհասկացվեն վերջին օրերում – Հրեաները կվերադարձվեն Բաբելոնից, կհաչեն Մեսիային, և կցրվեն ու կխարազանվեն – Նրանք կվերադարձվեն, երբ կհավատան Մեսիային – Նա առաջին անգամ կգա Լեքիի Երուսաղեմը թողնելուց վեց հարյուր տարի անց – Նեփիացիները պահում են Մովսեսի օրենքը և

28ա նշ. Ք.ծ.ա. մոտ 720թ. Այս պատգամի, այսինքն՝ կործանման պատգամի մարգարեությունն արվել էր Փղշտացիների մասին, մինչդեռ Հուդան

ապահով պիտի մնար:
բ Դ Թագ. ԺՁ.20:
32ա սոս Միոն:
բ Սոփ. Գ.12:
գ ԿԵԿ ապաստան փնտրի նրանում:
25 1ա 2 Նեփի 25.5–6:

2ա Գ Թագ. ԺԷ.13–20:
4ա սոս Մարգարեություն, Մարգարեանալ:
բ սոս Սուրբ Հոգի:
գ 2 Նեփի 31.3, 33.5–6, Հակոբ 4.13:

այն ժամանակից ի վեր, երբ ես դուրս եկա Երուսաղեմից իմ հոր հետ. քանզի ահա, իմ հոգին հրճվում է պարզաբանելով իմ ժողովրդին, որպեսզի նրանք կարողանան սովորել:

5 Այո, և իմ հոգին հրճվում է Եսայիայի խոսքերից, քանզի ես դուրս եմ եկել Երուսաղեմից, և իմ աչքերը տեսել են Բիբլաների արածները, և ես գիտեմ, որ հրեաներն, իրոք, հասկանում են մարգարեների խոսքերը, և չկա մի այլ ժողովուրդ, որ նրանց նման հասկանա այն բաները, որոնք խոսվել են հրեաների համար, եթե նրանք սովորեցված չլինեն հրեաների սովորույթների համաձայն:

6 Բայց, ահա, ես՝ Նեփիս, չեմ սովորեցրել իմ զավակներին հրեաների ձևով. բայց, ահա, ես ինքս ապրել եմ Երուսաղեմում, ուստի ես գիտեմ մոտակա շրջանների մասին. և ես իմ զավակներին հիշատակել եմ Աստծո դատաստանների վերաբերյալ, որոնք տեղի էին ունեցել հրեաների մեջ, իմ զավակների համար, համաձայն այն ամենի, ինչ Եսայիան խոսել է, և ես չեմ գրում դրանք:

7 Այլ ահա, ես շարունակում եմ իմ սեփական մարգարեությունը, համաձայն իմ պարզության. ըստ որի, ես գիտեմ, որ ոչ մի մարդ չի կարող սխալվել. այնուամենայնիվ, այն օրերում, երբ Եսայիայի մարգարեությունները կիրականանան, այն ժամանակներում

մարդիկ հաստատ կիմանան, երբ դրանք տեղի ունենան:

8 Ուստի, դրանք՝ արժեքավոր են մարդկանց զավակների համար, իսկ նա, ով կարծում է թե այդպես չէ, նրանց հետ ես մասնավորապես կխոսեմ և կսահմանափակեմ խոսքերն առ իմ Սեփական ժողովուրդը. քանզի գիտեմ, որ դրանք նրանց համար մեծ արժեք կունենան Գվերջին օրերում. քանզի այն օրը նրանք կհասկանան դրանք. ուստի, նրանց բարիքի համար եմ ես գրել դրանք:

9 Եվ ինչպես մի սերունդը՝ կործանվեց հրեաների միջից անօրինության պատճառով, ճիշտ մեծնապես, սերնդե-սերունդ նրանք կործանվել են՝ համաձայն իրենց անօրինությունների. և երբեք նրանցից որևէ մեկը չի կործանվել, մինչև այն չի Քյանխագուշակվել Տիրոջ մարգարեների կողմից:

10 Ուստի, նրանց ասվել է կործանման վերաբերյալ, որ պետք է զար նրանց վրա, անմիջապես հետո, երբ հայրս հեռացավ Երուսաղեմից. այնուամենայնիվ, նրանք կարծրացրեցին իրենց սրտերը. և իմ մարգարեության համաձայն՝ նրանք՝ կործանվել են, բացի նրանցից, որոնք գերության էին Ստարվել Բաբելոն:

11 Եվ այժմ այս ես խոսում եմ ոգու շնորհիվ, որն իմ մեջ է: Եվ չնայած նրանք հեռու են տարվել, նրանք նորից պիտի վերադառնան և տիրեն Երուսաղեմի հողին. ուս-

5ա 1 Նեփի 19.23, 3 Նեփի 23.1:
բ սո՛ւ Հրեաներ:
6ա 2 Նեփի 6.8, Հել. 8.20–21:
7ա 2 Նեփի 32.7, Ալմա 13.23:
8ա սո՛ւ Սուրբ գրքեր –

Սուրբ գրքերի արժեքը:
բ Ենովս 1.13–16, Մորմ. 5.12–15, Վևո՛Բ 3.16–20:
գ սո՛ւ Վերջին օրեր, Ետին օրեր:
9ա Երեմ. ԼԹ.4–10, Մառ. ԻԳ.37–38:

բ Անովս Գ.7, 1 Նեփի 1.13:
10ա 1 Նեփի 7.13, 2 Նեփի 6.8, Օմնի 1.15, Հել. 8.20–21:
բ Գ.Թագ. ԻԳ.14, Երեմ. ԾԲ.3–16:

տի, նրանք ^ակվերադառնան նորից իրենց ժառանգության հողը:

12 Բայց, ահա, նրանք կունենան պատերազմներ և պատերազմների համբավներ. և երբ օրը գա, որ չոր ^աՄիաժինը, այո, հենց երկրի և երկնքի Հայրը՝ ինքը մարմնում կհայտնվի նրանց, ահա, նրանք կմերժեն նրան իրենց անօրինությունների, և իրենց սրտերի կարծրության, և իրենց պարանոցների խստության պատճառով:

13 Ահա, նրանք ^ակխաչեն նրան. և ^բերեք օրվա ընթացքում ^գգերեզմանում դրվելուց հետո, նա մեռելներից ^դհարություն պիտի առնի՝ իր քեռի մեջ ունենալով բժշկություն. և բոլոր նրանք, ովքեր կհավատան նրա անվանը, կիրկվեն Աստծո արքայությունում: Այդ պատճառով, հոգիս հրճվում է նրա վերաբերյալ մարգարեանալով, քանզի ես ^ետեսել եմ նրա օրը, և սիրտս, իսկապես, մեծարում է նրա սուրբ անունը:

14 Եվ ահա, կլինի այնպես, որ ^աՄեսիան մեռելներից հարություն առնելուց, և ինքը՝ իր ժողովրդին հայտնվելուց հետո, և բոլոր նրանց, ովքեր կհավատան իր անունին, ահա, Երուսաղեմը կրկին ^բկավերվի. քանզի վա՛յ նրանց, որոնք կռվում են Աստծո և նրա եկեղեցու ժողովրդի դեմ:

15 Ուստի, ^ահրեաները ^բկցրվեն բոլոր ազգերի մեջ, այո, և նաև

^գԲաբելոնը կավերվի. ուստի, հրեաները կցրվեն ուրիշ ազգերի կողմից:

16 Եվ նրանց ցրվելուց, և Տեր Աստծո կողմից շատ սերունդների ընթացքում ուրիշ ազգերի միջոցով նրանց խարազանելուց հետո, այո, նույնիսկ սերնդե-սերունդ, մինչև որ նրանք համոզվեն ^ահավատալ Քրիստոսին՝ Աստծո Որդուն, և քալությանը, որն անսահման է ողջ մարդկության համար, և երբ կգա այն օրը, երբ նրանք կհավատան Քրիստոսին և կերկրպագեն Հորը՝ նրա անունով, անկեղծ սրտով և մաքուր ձեռքերով, և այլևս չեն սպասի մեկ ուրիշ Մեսիայի, սպա, այն ժամանակ, կգա այն օրը, որ անպայման անհրաժեշտ պիտի լինի, որ նրանք այս քաներին հավատան:

17 Եվ Տերը կպարզի իր ձեռքը կրկին, երկրորդ անգամ, ^ավերականգնելու իր ժողովրդին իրենց կորած և ընկած վիճակից: Ուստի, նա կսկսի ^բգարմանալի և սքանչելի մի գործ անել մարդկանց զավակների մեջ:

18 Ուստի, նա ի հայտ կբերի իր ^ախոսքերը նրանց համար, խոսքեր, որոնք ^բկդատեն նրանց վերջին օրը, քանզի դրանք կտրվեն նրանց նպատակի համար՝ ^գհամոզելու նրանց ճշմարիտ Մեսիայի մասին, որը մերժվել էր նրանց կողմից. և նրանց համոզե-

11ա Եզր. Ա.1-4, Երեմ. ԻԳ.5-7:
12ա սո՛ւ Միաժին:
13ա Ղուկ. ԻԳ.33:
բ Ղուկ. ԻԳ.6-7, Մոսիա 3.10:
գ Հովհ. ԺԺ.41-42, 1 Նեփի 19.10:
դ սո՛ւ Հարություն:
ե 1 Նեփի 11.13-34:

14ա սո՛ւ Մեսիա:
բ Ղուկ. ԻԱ.24, ՋՍ-Մ 1.1-18:
15ա սո՛ւ Հրեաներ:
բ Նեեմ. Ա.8-9, 2 Նեփի 10.6:
գ սո՛ւ Բաբելոն:
16ա 2 Նեփի 10.6-9, 30.7, Մորմ. 5.14:
17ա 2 Նեփի 21.11-12, 29.1:

սո՛ւ Ավետարանի վերականգնումը:
բ Ես. ԻԹ.14, 2 Նեփի 27.26, 3 Նեփի 28.31-33:
18ա 2 Նեփի 29.11-12, 33.11, 14-15:
բ սո՛ւ Վերջին դատաստան:
գ 2 Նեփի 26.12-13:

լու համար, որ նրանք այլևս կարիք չունեն սպասելու որևէ Մեսիայի գալույն, քանզի որևէ մեկը չպետք է գա, մինչև դա չլինի մի ¹⁸կեղծ Մեսիա, որը պիտի խաբի ժողովրդին. քանզի կա միայն մեկ Մեսիա մարգարեների կողմից խոսված և դա այն Մեսիան է, որը պետք է մերժվի հրեաների կողմից:

19 Քանզի համաձայն մարգարեների խոսքերի, ¹⁹Մեսիան գալու է ²⁰վեց հարյուր տարի հետո, այն ժամանակից սկսած, երբ հայրս թողեց Երուսաղեմը. և համաձայն մարգարեների խոսքերի և նաև Աստծո ²¹հրեշտակի խոսքի, նրա անունը կլինի Հիսուս Քրիստոս, Աստծո Որդի:

20 Եվ այժմ, իմ եղբայրներ, ես խոսեցի հստակորեն, այնպես որ դուք չեք կարող սխալվել: Եվ ինչպես Տեր Աստված ապրում է, որը դուրս ²²բերեց Իսրայելին Եգիպտոսի երկրից և տվեց Մովսեսին զորություն, որ նա ²³բուժեր ազգերին՝ թունավոր օձերից խայթվելուց հետո, եթե նրանք իրենց աչքերը ձգեին ²⁴օձի վրա, որը նա բարձրացրեց նրանց առջև, և նաև տվել էր նրան զորություն, որ նա զարկեր ²⁵ժառիկն և ջուր դուրս գար. այո, ահա, ես ասում եմ ձեզ, ինչպես որ այս բաները ճիշտ են, և

ինչպես կենդանի է Տեր Աստված, չկա ոչ մի ուրիշ ²⁶անուն երկնքի տակ տրված, բացի այս Հիսուս Քրիստոսից, որի մասին ես խոսեցի, որի միջոցով մարդ կարող է փրկվել:

21 Ուստի, այս պատճառով է Տեր Աստված խոստացել ինձ, որ այս բաները, որոնք ես ²⁷գրում եմ, պիտի պահվեն ու պահպանվեն, և փոխանցվեն իմ հետնորդներին, սերնդե-սերունդ, որպեսզի խոստումը կարողանա իրականանալ Հովսեփին, որ նրա սերունդը երբեք չի ²⁸կորչի, քանի դեռ երկիրը կանգուն կլինի:

22 Ուստի, այս բաները պիտի գնան սերնդե-սերունդ, քանի դեռ երկիրը կանգուն կլինի. և դրանք պիտի գնան համաձայն Աստծո կամքի և հաճության. և ազգերը, որոնք կունենան դրանք, պետք է ²⁹դատվեն դրանցով, համաձայն այն խոսքերի, որոնք գրված են:

23 Քանզի, մենք աշխատում ենք ջանասիրաբար՝ գրելու և ³⁰համոզելու մեր զավակներին, և նաև մեր եղբայրներին, հավատալու Քրիստոսին և հաշտվելու Աստծո հետ. քանզի մենք գիտենք, որ ³¹շնորհի միջոցով է, որ մենք փրկվում ենք՝ այն ամենից հետո, ինչ մենք կարող ենք ³²գանել:

18*դ* սուր Հակաքրիստոս:
 19*ա* սուր Հիսուս Քրիստոս – Մարգարեություններ Հիսուս Քրիստոսի ծննդի և մահվան մասին:
բ 1 Նեփի 10.4, 3 Նեփի 1.1, 13:
գ 2 Նեփի 10.3:
 20*ա* Ել. 4.7–10,
 1 Նեփի 17.24, 31, 19.10:
բ Հովի. 4.14,
 1 Նեփի 17.41:
գ Թվ. ԻԱ.8–9,

Ալմա 33.19, Հել. 8.14–15:
դ Ել. ԺԷ.6, Թվ. Ի.11,
 1 Նեփի 17.29, 20.21:
ե Ովսե ԺԳ.4, Գոր. Դ.10–12, Մոսիա 5.8, Մովսես 6.52:
 սուր Փրկիչ:
 21*ա* 2 Նեփի 27.6–14:
բ Ամովս Ե.15,
 2 Նեփի 3.16, Ալմա 46.24–27:

22*ա* 2 Նեփի 29.11, 33.10–15,
 3 Նեփի 27.23–27:
 23*ա* սուր Երեխա, Երեխաներ:
բ Հռովմ. Գ.23–24,
 2 Նեփի 2.4–10, Մոսիա 13.32, Ալմա 42.12–16, ՎևոԻ 138.4:
 սուր Շնորհ:
գ Հակ. Բ.14–26:
 սուր Գործեր:

24 Եվ չնայած մենք հավատում ենք Քրիստոսին, մենք ^ապահում ենք Մովսեսի օրենքը, և հաստատամտությամբ սպասում Քրիստոսին, մինչև օրենքը կկատարվի:

25 Քանզի, այս նպատակի համար էր տրված ^աօրենքը. ուստի օրենքը դարձել է ^բմեռած մեզ համար, և մենք դարձվել ենք կենդանի՝ Քրիստոսով, մեր հավատքի շնորհիվ. սակայն մենք պահում ենք օրենքը՝ պատվիրանների պատճառով:

26 Եվ մենք ^ախոսում ենք Քրիստոսի մասին, մենք հրճվում ենք Քրիստոսով, մենք քարոզում ենք Քրիստոսի մասին, մենք ^բմարգարեանում ենք Քրիստոսի մասին, և մենք գրում ենք մեր մարգարեությունների համաձայն, որ մեր ^գզավակները կարողանան իմանալ, թե ինչ աղբյուրի նրանք կարող են ապավինել իրենց մեղքերի ^դթողության համար:

27 Ուստի, մենք խոսում ենք օրենքի վերաբերյալ, որ մեր զավակները կարողանան իմանալ օրենքի մեռածությունը. և նրանք, իմանալով օրենքի մեռած լինելը, կարողանան սպասել այն կյանքին, որը Քրիստոսում է և իմանան, թե ինչ նպատակով էր տրված օրենքը: Եվ օրենքը Քրիստոսում կատարվելուց հետո, որ նրանք կարիք չունենան՝ կարծրացնելու իրենց սրտերը նրա դեմ, երբ օրենքը պետք է դադարեցվի:

28 Եվ այժմ, ահա, իմ ժողովուրդ, դուք ^ախատապարանոց ժողովուրդ եք. ուստի, ես խոսեցի հստակորեն

ձեզ հետ, որպեսզի դուք չլինի թե սխալ հասկանաք: Եվ խոսքերը, որոնք ես խոսեցի, պիտի կանգնեն որպես ^բվկայություն ձեր դեմ. քանզի դրանք բավարար են ^գսովորեցնելու ամեն մի մարդու ճիշտ ճանապարհը. քանզի ճիշտ ճանապարհը Քրիստոսին հավատալն է և նրան չուրանալը. քանզի ուրանալով նրան, դուք ուրանում եք նաև մարգարեներին և օրենքը:

29 Եվ այժմ, ահա, ես ասում եմ ձեզ, որ ճիշտ ճանապարհը Քրիստոսին հավատալն է և նրան չուրանալը. և Քրիստոսը Սուրբն է Իսրայելի. ուստի, դուք պետք է վար խոնարհվեք նրա առաջ և երկրպագեք նրան ձեր ողջ ^ագորությամբ, մտքով, և ուժով, և ողջ ձեր հոգով. և եթե դուք անեք այդ, դուք ոչ մի ձևով դուրս չեք գցվի:

30 Եվ որչափ որ անհրաժեշտ կլինի, դուք պետք է պահեք Աստծո ձիսակատարություններն ու ^աարարողությունները, մինչև որ օրենքը, որը տրված էր Մովսեսին, իրագործվի:

ԳԼՈՒԽ 26

Քրիստոսը կծառայի Նեփիազիներին – Նեփին կանխատեսում է իր ժողովրդի կործանումը – Նրանք կխոսեն փոշու միջից – հեթանոսները կկառուցեն կեղծ եկեղեցիներ և գաղտնի խմբակցություններ – Տերն արգելում է մարդկանց զբաղվել քահանանեղություններ: Մոտ 559–545թթ. Զ.ծ.ա.:

24ա Հակոբ 4.4–5:
25ա սո՛ւ Մովսեսի օրենք:
բ Հռովմ. է.4–6:
26ա Հակոբ 4.12,
Հարոմ 1.11,
Մոսիա 3.13:

բ Ղուկ. Ժ.23–24:
գ սո՛ւ Երեխա,
Երեխաներ:
դ սո՛ւ Մեղքերի
թողություն:
28ա Մոսիա 3.14:

բ սո՛ւ Վկայություն:
գ 2 Նեփի 33.10:
29ա Բ Օր. 2.5,
Մար. ԺԲ.29–31:
30ա սո՛ւ Արարողություններ:

Եւ հետո, երբ Քրիստոսը մեռելէն-
 րից ^ահարութիւն կառնի, նա իրեն
^բցույց կտա ձեզ, իմ զավակներ՝ և
 իմ սիրելի՛ եղբայրներ. և խոսքերը,
 որոնք նա կասի ձեզ, կլինի այն
^գօրէնքը, որը դուք պետք է անէք:

2 Քանզի, ահա, ես ասում եմ ձեզ,
 որ շատ սերունդներ կանցնեն և
 կլինեն մեծ պատերազմներ ու
 հակառակութիւններ իմ ժողովրդի
 մէջ:

3 Եվ Մեսիայի գալուց հետո
^անշաններ կլինեն տրված իմ ժո-
 ղովորդին՝ նրա ^բծննդյան վերա-
 բերյալ և նաև նրա մահվան և հա-
 րութեան. և մեծ ու ահալոր կլինի
 այն օրն ամբարիշտների համար,
 քանզի նրանք կկորչեն. և նրանք
 կորչում են, որովհետև նրանք
 դուրս են գցում մարգարէներին ու
 սրբերին, և քարկոծում են նրանց,
 և սպանում նրանց. այդ պատճա-
 ռով սրբերի ^գարյան աղաղակը
 կբարձրանա գետնից վեր՝ դեպի
 Աստված, ընդդէմ նրանց:

4 Ուստի, բոլոր նրանք, ովքեր
 հպարտ են և գործում են ամ-
 բարշտորեն, այն օրը, որ գալիս է,
^ակայրի նրանց, ասում է Չորաց
 Տերը, այսինքն՝ նրանք հարդի պես
 կլինեն:

5 Եվ նրանք, ովքեր սպանում են
 մարգարէներին և սրբերին, երկրի
 խորքերը ^ակուլ կտան նրանց,
 ասում է Չորաց Տերը. և ^բլեռները

կծածկեն նրանց, և պտուտահող-
 մերը կքշեն նրանց հեռու, և շինու-
 քունները կփլվեն նրանց վրա ու
 ջարդուփշուր կանեն նրանց, և
 կփշրեն նրանց՝ դարձնելով փոշի:

6 Եվ նրանց կայցելեն որոտները
 և կայծակները, երկրաշարժերը
 և ամեն ձևի ավերումները, քան-
 զի Տիրոջ բարկութեան կրակը
 կբռնկվի նրանց դէմ, և նրանք
 կլինեն հարդի պես, և օրը, որ
 գալիս է, կայրի նրանց, ասում է
 Չորաց Տերը:

7 Ա՛խ, իմ հոգու տվայտանքը և
 ցավն իմ ժողովրդի սպանվածների
 կորստի համար: Քանզի ես՝ Նե-
 փիս, տեսա դա, և այն գրեթէ սպա-
 ռում է ինձ Տիրոջ ներկայութեան
 առջև. բայց ես պիտի կանչեմ առ
 իմ Աստված. Քո ճանապարհներն
^աարդար են:

8 Բայց, ահա, արդարները,
 որոնք լսում են մարգարէների
 խոսքերը և չեն կործանում նրանց,
 այլ չնայած բոլոր ^ահալածանքնե-
 րին, հաստատամտութեամբ սպա-
 սում են Քրիստոսին՝ նշանների
 համար, որոնք տրվել են, – ահա,
 այդ նրանք են, որ ^բչեն մեռնի:

9 Այլ, Արդարութեան Որդին
^ակհայտնվի նրանց, և նա ^բկբժշկի
 նրանց. և նրանք կունենան ^գխա-
 ղաղութիւն նրա հետ, մինչև որ
^դերեք սերունդներ անցած կլի-
 նեն, և շատերը ^եչորրորդ սերնդից

26 1ա 3 Նեփի 11.1-12:
 բ 1 Նեփի 11.7, 12.6:
 գ 3 Նեփի 15.2-10:
 3ա1 Նեփի 12.4-6:
 սո՛ւ Նշան:
 բ սո՛ւ Հիսուս Քրիստոս –
 Մարգարէութիւններ
 Հիսուս Քրիստոսի
 ծննդի և մահվան
 մասին:

գ Ծն. Գ.10,
 2 Նեփի 28.10,
 Մորմ. 8.27:
 4ա3 Նեփի 8.14-24, 9.3, 9:
 5ա1 Նեփի 19.11,
 3 Նեփի 10.14:
 բ 3 Նեփի 8.10, 9.5-8:
 7ա սո՛ւ Արդարադատու-
 քուն:
 8ա սո՛ւ Հալածել,

Հալածանք:
 բ 3 Նեփի 10.12-13:
 9ա3 Նեփի 11.8-15:
 բ 3 Նեփի 17.7-9:
 գ 4 Նեփի 1.1-4:
 դ 1 Նեփի 12.11-12,
 3 Նեփի 27.30-32:
 ե Ալմա 45.10-12,
 Հել. 13.9-10:

անցած կլինեն արդարակեցութեան մեջ:

10 Եվ երբ այս բաներն անցած կլինեն, մի սրընթաց ^ակործանում է գալու դեպի իմ ժողովուրդը. քանզի չնայած իմ հոգու ցավերին, ես տեսա այդ. ուստի, ես գիտեմ, որ դա տեղի կունենա. և նրանք ծախում են իրենց՝ ոչնչի համար. քանզի որպէս իրենց հպարտութեան և հիմարութեան վարձք, նրանք կհնձեն կործանում. քանզի, որովհետև նրանք ենթարկվում են դէկին և ընտրում են ավելի շուտ խավարի գործերը, քան լույսը, հեռակաբար, նրանք պետք է վար գնան՝ դեպի ^բդժոխք:

11 Քանզի Տիրոջ Հոգին միշտ չի ^գճգնի մարդու հետ: Եվ երբ Հոգին դադարում է մարդու հետ ճգնելը, այն ժամանակ գալիս է սրընթաց կործանում, և սա վշտացնում է իմ հոգին:

12 Եվ ինչպես ես խոսեցի ^ահրեաներին ^բհամոզելու վերաբերյալ, որ Հիսուսը ^գհենց Քրիստոսն է, անպայման պետք է, որ հեթանոսները նույնպէս համոզվեն, որ Հիսուսը Քրիստոսն է՝ Հավերժական Աստվածը.

13 Եվ որ նա ինքը հայտնվում է բոլոր նրանց, ովքեր հավատում են իրեն, ^աՍուրբ Հոգու գործությամբ. այո՛, ամեն ազգի, ցեղի, լեզվի և ժողովրդի, գործելով հզոր հրաշքներ, նշաններ և զարմանալիքներ մարդկանց որդիների մեջ, ըստ նրանց հավատքի:

14 Բայց, ահա, ես մարգարեանում եմ ձեզ ^ավերջին օրերի

վերաբերյալ. այն օրերի վերաբերյալ, երբ Տեր Աստված ի հայտ ^բկրբերի այս բաները մարդկանց զավակներին:

15 Նրանից հետո, երբ իմ սերունդը և իմ եղբայրների սերունդն ընկած կլինեն անհավատության մեջ և զարկված կլինեն հեթանոսների կողմից. այո, հետո, երբ Տեր Աստված ճամբար դրած կլինի նրանց դեմ շուրջբոլորը, և սարով պաշարում դրած կլինի նրանց դեմ, և ամրոցներ բարձրացրած կլինի նրանց դեմ. և հետո, երբ նրանք վար բերված կլինեն, փոշուն հավասարված, նույնիսկ այնպէս, որ նրանք չեն լինի, այնուամենայնիվ, արդարների խոսքերը կգրվեն, և հավատարիմների աղոթքները կլսվեն, և բոլոր նրանք, ովքեր ընկել են անհավատության մեջ, մոռացված չեն լինի:

16 Քանզի նրանք, ովքեր կործանված կլինեն, ^ակյտոսեն նրանց հետ հողի միջից, և նրանց խոսքը կլինի ցածր, փոշու միջից, և նրանց ձայնը նման կլինի մեկին, որն ունի ծանոթ ոգի. քանզի Տեր Աստված կտա նրան գործություն, որ նա կարողանա շշնջալ նրանց մասին, նույնիսկ կարծես դա հողի միջից էր. և նրանց խոսքը կշշնջա փոշու միջից:

17 Քանզի այսպէս է ասում Տեր Աստված. Նրանք ^ակզրեն այն բաները, որոնք կկատարվեն իրենց մեջ, և դրանք կգրվեն ու կկնքվեն մի գրքում, և նրանք, ովքեր ընկել են անհավատության մեջ, չեն

10ա Ալմա 45.9-14, Մորմ. 8.1-9:
բ սուր Գժոխք:
11ա Եթեր 2.15:
12ա 2 Նեփի 30.7, Մորմ. 5.14:

սուր Հրեաներ:
բ 2 Նեփի 25.18:
գ Մորմ. 3.21:
13ա սուր Սուրբ Հոգի:
14ա սուր Վերջին օրեր, Ետին օրեր:

բ սուր Ավետարանի վերականգնումը:
16ա Ես. ԻԺ.4, Մոր. 10.27, Մովսես 7.62:
սուր Մորմոնի Գիրքը:
17ա 2 Նեփի 29.12:

ունենա դրանք, քանզի նրանք ^բջանում են կործանել Աստծո քաները:

18 Ուստի, ինչպես նրանք, ովքեր կործանվեցին, կործանվեցին սրընթաց. և նրանց զարհուրելիների բազմությունը կլինի, ինչպես ^ամղեղը, որ կորչում է, – այո, այսպես է ասում Տեր Աստված. ^բԻս կլինի մի վայրկյանում, հանկարծակի, –

19 Եվ կլինի այնպես, որ նրանք, ովքեր անհավատության մեջ են ընկել, ^ակզարկվեն հեթանոսների ձեռքով:

20 Եվ հեթանոսները՝ իրենց աչքում ^ահպարտությունից բարձրամտացած, ^բգայթեցին՝ իրենց ^գգայթակորության քարի մեծության պատճառով, այնպես որ նրանք կառուցել են բազմաթիվ ^աեկեղեցիներ. այնուամենայնիվ, նրանք վայր են դնում Աստծո գորությունն ու հրաշքները և իրենք իրենց քարոզում են իրենց իսկ իմաստությունը և իրենց իսկ ^ասովորածը, որպեսզի շահ ստանան և ^գփշրեն աղքատների երեսին:

21 Եվ շատ եկեղեցիներ կան կառուցված, որոնք առաջացնում են ^անախանձություններ և կռիվներ և դիս:

22 Եվ կան նաև ^ագաղտնի խմբակցություններ, հենց հին ժամանակների պես, ըստ դևի խմբակցությունների, քանզի նա է հիմնադիրը բոլոր այս բաների. այո, սպա-

նության հիմնադիրը, և խավարի գործերի. այո, և նա առաջնորդում է նրանց վուշե պարանով՝ վզից, մինչև նա կապում է նրանց իր ամուր պարաններով, հավիտյան:

23 Քանզի, ահա, իմ սիրելի՛ եղբայրներ, ես ասում եմ ձեզ, որ Տեր Աստված չի գործում խավարում:

24 Նա չի անում որևէ բան, բացի դա լինի ի օգուտ աշխարհի. քանզի նա ^ասիրում է աշխարհն այնքան, որ նա վայր է դնում իր սեփական կյանքը, որպեսզի կարողանա ձգել ^բբոլոր մարդկանց իր մոտ: Ուստի, նա ոչ ոքի չի պատվիրում, որ նրանք չճաշակեն իր փրկությունից:

25 Ահա, կանչո՞ւմ է նա որևէ մեկին՝ ասելով. Հեռացեք ինձանից: Ահա, ես ասում եմ ձեզ Ո՛չ. այլ նա ասում է. ^աԵկեք ինձ մոտ, բոլո՛րդ, աշխարհի՛ ծայրեր, ^բառեք կաթ ու մեղր առանց փողի և առանց գնի:

26 Ահա, պատվիրե՞լ է նա որևէ մեկին, որ նրանք հեռանան ժողովարաններից կամ պաշտամունքի տներից: Ահա, ես ասում եմ ձեզ՝ Ո՛չ:

27 Պատվիրե՞լ է նա որևէ մեկին, որ նրանք չպետք է ճաշակեն նրա ^ափրկությունից: Ահա, ես ասում եմ ձեզ՝ Ո՛չ. այլ նա ^բսովել է այն ձրի, բոլոր մարդկանց համար. և նա պատվիրել է իր ժողովրդին, որ նրանք պետք է բոլոր մարդկանց համոզեն ^գապաշխարել:

28 Ահա, պատվիրե՞լ է Տերը որևէ

17բ Ենովս 1.14:
18ա Մորմ. 5.16–18:
19ա3 Նեփի 16.8–9,
20.27–28:
20ա սո՛ւ Հպարտություն:
բ 1 Նեփի 13.29, 34:
սո՛ւ Ուրացություն:
գ Եզեկ. ԺԴ.4:
դ 1 Նեփի 14.10, 22.23,

Մորմ. 8.28:
ե Մորմ. 9.7–8,
2 Նեփի 9.28:
գ Ես. Գ.15,
2 Նեփի 13.15:
21ա սո՛ւ Նախանձել:
22ա սո՛ւ Գաղտնի
խմբակցություններ:
24ա Հովհ. Գ.16:

բ 3 Նեփի 27.14–15:
25ա Ալմա 5.33–35,
3 Նեփի 9.13–14:
բ Ես. ԾԵ.1–2:
27ա սո՛ւ Փրկություն:
բ Եփես. Բ.8,
2 Նեփի 25.23:
գ սո՛ւ Ապաշխարել,
Ապաշխարություն:

մեկին, որ նրանք չպետք է ճաշակեն իր բարությունից: Ահա, ես ասում եմ ձեզ՝ Ո՛չ. այլ ^աբոլոր մարդիկ արտոնյալ են, մեկը մյուսի նման, և ոչ ոքի արգելված չէ:

29 Նա պատվիրել է, որ չպետք է լինի ^աքահանանեցություն. քանզի, ահա, քահանանեցություն է այն, երբ մարդիկ քարոզում են և իրենք իրենց բարձր են դնում՝ իբրև մի լույս աշխարհի համար, որ կարողանան շահ և ^բգովասանք ստանալ աշխարհից. սակայն նրանք չեն փնտրում Սիոնի բարօրությունը:

30 Ահա, Տերն արգելել է այս քանը. ուստի, Տեր Աստված տվել է պատվիրան, որ բոլոր մարդիկ պետք է գթություն ունենան, ^ագթություն, որը ^բսեր է: Եվ եթե նրանք չունենան գթություն, նրանք կլինեն ոչինչ: Ուստի, եթե նրանք ունենան գթություն, նրանք չեն հանդուրժի, որ Սիոնում աշխատավորը կորչի:

31 Բայց աշխատավորը ^աՍիոնում պետք է աշխատի Սիոնի համար. քանզի, եթե նրանք աշխատեն ^բփողի համար, նրանք պետք է ոչնչանան:

32 Եվ կրկին, Տեր Աստված ^ապատվիրել է, որ մարդիկ չպետք է սպանեն. որ նրանք չպետք է ստեն. որ նրանք չպետք է գողանան. որ նրանք չպետք է ^բգոր հիշատակեն Տեր Աստծո անունը. որ նրանք չպետք է նախանձեն. որ նրանք չպետք է ոխ ունենան. որ նրանք չպետք է վիճեն մեկը մյուսի հետ. որ նրանք չպետք է գործեն պոռնկություններ. և որ նրանք այս

քաներից ոչ մեկը չպետք է անեն. քանզի ովքեր անում են, նրանք կկորչեն:

33 Քանզի այս անօրինություններից ոչ մեկը չի գալիս Տիրոջից. քանզի նա անում է մարդկանց զավակների մեջ այն, ինչը բարի է. և նա չի անում ոչինչ, եթե դա պարզ չէ մարդկանց զավակների համար. և նա հրավիրում է նրանց բոլորին՝ գալ իր մոտ և ճաշակել իր բարությունից. և նա չի ^ամերժում ոչ մեկին, որ գալիս են դեպի իրեն, սև թե սպիտակ, սարուկ թե ազատ, այր թե կին. և նա հիշում է ^բհեթանոսներին. և ^գբոլորը նույնն են Աստծո համար՝ թե՛ հրեան, թե՛ հեթանոսը:

ԳԼՈՒԽ 27

Խավարը և ուրացությունը կպատի երկիրը վերջին օրերին – Մորմոնի Գիրքն ի հայտ կգա – Երեք վկաներ կվկայեն զքրի մասին – Ուայալ մարդը կասի, որ նա չի կարող կարդալ կնքված գիրքը – Տերը զարմանալի և սքանչելի մի գործ կանի – Համեմատեք Եսայիայի ԻԹ: Մոտ 559–545թթ. Զ.ծ.ա.:

ԲԱՅՅ, ահա, ^ավերջին օրերին, կամ հեթանոսների օրերին,– այո, ահա, հեթանոսների բոլոր ազգերը և նաև հրեաները, և նրանք, ովքեր կզան այս երկիր, և նրանք, ովքեր կլինեն ուրիշ երկրներում, այո, նույնիսկ երկրագնդի բոլոր երկրներում, ահա, նրանք հարբած

28ա Հռովմ. Բ.11,
1 Նեփի 17.33–35:
29ա սոտ Քահանանեցություն:
բ ՎևՈՒ 121.34–37:
30ա Մոր. 7.47–48:
սոտ Գթություն:

բ սոտ Սեր:
31ա սոտ Սիոն:
բ Հակոբ 2.17–19,
ՎևՈՒ 11.7, 38.39:
32ա սոտ Պատվիրաններն Աստծո:
բ սոտ Անարգանք:

33ա Գոր. Ժ.9–35, 44–45:
բ Ալմա 26.37:
գ Հռովմ. Բ.11,
1 Նեփի 17.35:
27 1ա սոտ Վերջին օրեր,
Եսին օրեր:

կլիներն անօրինությանը և ամեն ձևի պղծություններով,–

2 Եվ երբ այն օրը գա, նրանց կայցելի Ջորաց Տերը՝ որոտով և երկրաշարժով և մի մեծ աղմուկով, մրրիկով և փոթորկով և լափող կրակի տրոփով:

3 Եվ բոլոր տառապանքները, որոնք թշուառներն են Սիոնի դեմ, և որոնք ճնշում են նրան, կլիներն, ինչպես գիշերային տեսիլքի մի երազ. այո, նրանց համար կլինի հենց այնպես, ինչպես սոված մարդու հետ, որը երազում է, և ահա, նա ուտում է, բայց արթնանում է և իր հոգին դատարկ է. կամ մաման ծարավ մարդուն, որը երազում է, և, ահա, նա խմում է, բայց արթնանում է, և նա, ահա, մվաղած է, և նրա հոգին պապակվում է. այո, հենց այդպես կլինի բազմությունը բոլոր ազգերի, որ կռվում են Սիոն սարի դեմ:

4 Քանզի, ահա, դուք բոլորդ, որ անօրինություն եք անում, կանգ առեք և զարմացե՛ք, քանզի դուք կաղաղակեք և կլացեք. այո, դուք կլինեք հարբած, բայց ոչ գինուց, դուք կօրորվեք, բայց ոչ թունդ խմիչքից:

5 Քանզի, ահա, Տերը ձեր վրա է թափել խորը քնի ոգին: Քանզի ահա, դուք փակել եք ձեր աչքերը և դուք մերժել եք մարգարեներին. և ձեր ղեկավարներին ու տեսանողներին է նա քողարկել՝ ձեր անօրինության պատճառով:

6 Եվ կլինի այնպես, որ Տեր Աստված ի հայտ կբերի տձեզ հա-

մար խոսքերը մի զորքի, և դրանք կլինեն խոսքերը նրանց, որոնք ննջել են:

7 Եվ, ահա, գիրքը տկնքված կլինի. և գրքում կլինի Աստծո կողմից մի իրադրություն աշխարհի սկզբից մինչև նրա վերջը:

8 Ուստի, այն բաների պատճառով, որոնք տկնքված են, այն բաները, որոնք կնքված են, չեն հանձնվի ժողովրդի ամբարշտության և պղծությունների օրը: Ուստի, գիրքը կպահվի նրանցից:

9 Բայց գիրքը կհանձնվի մի մարդու, և նա կհանձնի գրքի խոսքերը, որոնք նրանց խոսքերն են, ովքեր ննջել են փոշու մեջ, և նա կհանձնի այս խոսքերը մեկ իրիչին.

10 Բայց խոսքերը, որոնք կնքված են, նա չի հանձնի, ոչ էլ նա կհանձնի գիրքը: Քանզի գիրքը կնքված կլինի Աստծո գործյամբ, և հայտնությունը, որը կնքված էր, կպահվի գրքում մինչև Տիրոջ հարմար ժամանակը, որպեսզի դրանք կարողանան ի հայտ գալ. քանզի ահա, դրանք բացահայտում են բոլոր բաները՝ աշխարհի հիմնադրումից մինչև նրա վերջը:

11 Եվ գալիս է օրը, երբ գրքի խոսքերը, որոնք կնքված էին, կկարդացվեն տների կտորների վրա. և դրանք կկարդացվեն Քրիստոսի գործյամբ. և բոլոր բաները տկնքահայտվեն մարդկանց զավակներին, որոնք երբևէ եղել

2ա Ես. ԻԳ.6, ԿԶ.15–16, Հակոբ 6.3, 3 Նեփի 25.1: 3ա Ես. ԻԹ.7–8: Բ 1 Նեփի 22.14: 6ա Հարոմ 1.2, Մորմ. 5.12–13:

Բ 2 Նեփի 26.16–17, 29.12: սուր Մորմոնի Գիրքը: 7ա Ես. ԻԹ.11–12, Եթեր 3.25–27, 4.4–7: Բ Մոսիա 8.19: Գ Եթեր 13.1–12: 8ա Եթեր 5.1:

Բ 3 Նեփի 26.9–12, Եթեր 4.5–6: 9ա Վևոհ 17.5–6: Բ ՋՍ–Պ 1.64–65: 11ա Ղուկ. ԺԲ.3, Մորմ. 5.8, Վևոհ 121.26–31:

են մարդկանց զավակների մեջ, և որոնք երբևէ կլինեն, նույնիսկ մինչև աշխարհի վերջը:

12 Ուստի, այն օրը, երբ գիրքը կհանձնվի մարդուն, որի մասին ես խոսեցի, գիրքը կթաքցվի աշխարհի աչքից, որ ոչ մեկի աչքերը չտեսնեն այն, բացառությամբ ^աերեք ^բականատեսների, որ կտեսնեն այն՝ Աստծո գործությամբ, բացի նրանից, ում կհանձնվի գիրքը. և նրանք կվկայեն գրքի և նրա միջի բաների ճշմարտացիության մասին:

13 Եվ չկա մեկ ուրիշը, որը կտեսնի այն, բացի մի քանիսից, Աստծո կամքի համաձայն՝ վկայություն բերելու համար մարդկանց զավակներին, նրա խոսքի վերաբերյալ. քանզի Տեր Աստված ասել է, որ հավատարիմների խոսքերը կխոսվեն, կարծես թե դրանք ^ամեռածների կողմից լինեն:

14 Ուստի, Տեր Աստված կսկսի առաջ բերել գրքի խոսքերը. և նա կհաստատաի իր խոսքն այնքան շատ վկաների բերանով, որքան նրան բարի կթվա. և վա՛յ լինի նրան, որ ^ամերժում է Աստծո խոսքը:

15 Բայց ահա, կլինի այնպես, որ Տեր Աստված կասի նրան, ում նա կհանձնի գիրքը. Վերցրու այս խոսքերը, որոնք կնքված չեն և հանձնի՛ր դրանք մեկ ուրիշին, որպեսզի նա կարողանա ցույց տալ դրանք ուսյալին՝ ասելով. ^աԿարդա այս, աղաչում եմ քեզ: Եվ ուսյալը կասի. Բեր այստեղ գիրքը և ես կկարդամ դրանք:

16 Եվ արդ, աշխարհի փառքի և

^աշահ ստանալու համար կասեն նրանք այս, և ոչ թե Աստծո փառքի համար:

17 Եվ մարդը կասի. Ես չեմ կարող բերել գիրքը, քանզի այն կնքված է:

18 Այն ժամանակ ուսյալը կասի. Ես չեմ կարող կարդալ այն:

19 Ուստի, կլինի այնպես, որ Տեր Աստված կհանձնի նորից գիրքը և դրա խոսքերը նրան, ով ուսյալ չէ. և մարդը, որն ուսյալ չէ, կասի. Ես ուսյալ չեմ:

20 Այն ժամանակ Տեր Աստված կասի նրան. Ուսյալները չեն կարդա, քանի որ մերժել են դրանք, և ես ի վիճակի եմ անելու իմ սեփական գործը. ուստի, դու կկարդաս խոսքերը, որոնք ես կտամ քեզ:

21 ^աՁեռք մի տուր այն բաներին, որոնք կնքված են, քանզի ես դրանք ի հայտ կբերեմ ինձ իսկ հարմար ժամանակ. քանզի ես ցույց կտամ մարդկանց զավակներին, որ ես ի վիճակի եմ անել իմ սեփական գործը:

22 Ուստի, երբ դու կարդացած կլինես խոսքերը, որոնք ես պատվիրել եմ քեզ և ձեռք կբերես ^ավկաներ, որոնք ես խոստացել եմ քեզ, ապա դու պետք է կնքես գիրքը դարձյալ և թաքցնես այն ինձ համար, որպեսզի ես կարողանամ պահպանել խոսքերը, որոնք դու չես կարդացել, մինչև ես իմ իսկ իմաստությամբ հարմար կտեսնեմ բացահայտել բոլոր բաները մարդկանց զավակներին:

23 Քանզի ահա, ես եմ Աստված. և ես ^աիրաշքների Աստված եմ. և

12ա2 Նեփի 11.3,
Եթեր 5.2-4,
ՎևոՒ 5.11, 15, 17.1:
^բ Բ Օր. ԺԹ.15:
13ա2 Նեփի 3.19-20,
33.13-15,

Մոր. 10.27:
14ա2 Նեփի 28.29-30,
Եթեր 4.8:
15ա Ես. ԻԹ.11-12,
ՋՍ-Պ 1.65:
16ա ՍՈՒ Քահանաններու-

թյուն:
21ա Եթեր 5.1:
22ա ՍՈՒ Մորմոնի Գրքի
վկաները:
23ա ՍՈՒ Հրաշք:

ես ցույց կտամ աշխարհին, որ ես Քնույնն եմ՝ երեկ, այսօր և հավիտյան. և ես չեմ գործում մարդկանց զավակների մեջ, բացի դա լինի իրենց հավատքի փհամածայն:

24 Եվ ապա կլինի այնպես, որ Տերը կասի նրան, ով կկարդա խոսքերը, որոնք կհանձնվեն իրեն:

25 ՄՔանի որ այս ժողովուրդը մոտ է գալիս ինձ իրենց բերանով, և իրենց շուրթերով են Քպատվում ինձ, բայց իրենց սրտերը հեռացրել են ինձանից և նրանց երկյուղն իմ հանդեպ սովորեցվել է մարդկանց ցուցմունքներով,–

26 Հետևաբար, ես կսկսեմ մի զարմանալի գործ անել այս ժողովրդի մեջ, այո՛, զարմանալիք և զարմանք, քանզի նրանց իմաստունների և ուսյալների իմաստությունը կոչնչանա և նրանց խելամիտների հասկացողությունը կխափանվի:

27 Եվ Վա՛յ նրանց, ովքեր ջանում են խորը թաքցնել իրենց խորհուրդը Տիրոջից: Եվ նրանց գործերը խավարում են, և նրանք ասում են. Ո՞վ է տեսնում մեզ, և ո՞վ գիտի մեզ: Եվ նրանք նաև ասում են. Անշուշտ բաների տակն ու վրա քո շուռ տալը կհամարվի, ինչպես Քրոտացգործի կավը: Բայց, ահա, ես ցույց կտամ նրանց, ասում է Չորաց Տերը, որ ես գիտեմ նրանց բոլոր գործերը: Քանզի մի՞թե գործը կասի նրան, ով արել է այն՝ նա՛՛ չի արել ինձ: Կամ մի՞թե ստեղծված բանը կասի նրա մա-

սին, ով ստեղծել է այն՝ նա հասկացողություն չուներ:

28 Բայց, ահա, ասում է Չորաց Տերը. Ես ցույց կտամ մարդկանց զավակներին, որ դեռ փոքր-ինչ անց, և Լիբանանը կվերածվի մրգառատ դաշտի. և մրգառատ դաշտը կհամարվի, ինչպես անտառը:

29 ՄԵվ այն օրը խուլերը կլսեն գրքի խոսքերը, և կույրերի աչքերը կտեսնեն մթությունից և խավարից:

30 Եվ Մեզերը նույնպես կավելանան, և նրանց Քուրախությունը կլինի Տիրոջով, և աղքատը, մարդկանց միջից, կհրճվի Իսրայելի Սուրբով:

31 Քանզի, հաստատ, ինչպես կենդանի է Տերը, նրանք կտեսնեն, որ զարհուրելիք դարձվել է ոչինչ և ծաղրողն այրվում է, և բոլորը, ովքեր աչալուրջ են անօրինություն անելու, կկտրվեն.

32 Եվ նրանք, որոնք մարդուն Մհանցավոր են դարձնում մի բառի համար և որոգայթ են դնում նրա համար, ով հանդիմանում է Քդռան մոտ, և դատարկ բանի համար երես են Քթեքում արդարից:

33 Հետևաբար, Տերը, որ փրկագնեց Աբրահամին, այսպես է ասում Հակոբի տան մասին. Հակոբն այժմ չի անաչելու, ոչ էլ նրա երեսն է գունատվելու:

34 Բայց երբ նա Մտեսնի իր զավակներին, իմ ձեռքի գործը նրա մեջ, նրանք կսրբացնեն իմ

23բ Եբր. ԺԳ.8:
գ Եբր. ԺԱ,
Եբրե 12.7–22:
25ա Ես. ԻԹ.13:
բ Մատ. ԺԵ.8:
գ 2 Նեփի 28.31:
26ա 1 Նեփի 22.8,
2 Նեփի 29.1–2:

սո՛ւ Ավետարանի
վերականգնումը:
բ Ես. ԻԹ.14,
2 Նեփի 25.17:
27ա Ես. ԻԹ.15:
բ Եբեմ. ԺԸ.6:
29ա Ես. ԻԹ.18:
30ա սո՛ւ Հեզ, Հեզուբյուն:

բ Վևո՛Ւ 101.36:
31ա Ես. ԻԹ.20:
32ա Ղուկ. ԺԱ.54:
բ Ամոս Ե.10:
գ 2 Նեփի 28.16:
34ա Ես. ԻԹ.23–24:

անունը, և կարբացնեն Սուրբին Հակոբի, և կվախենան Իսրայելի Աստծուց:

35 Նրանք, նույնպես, որ Մսխավել էին հոգով, կգան հասկացողության, և նրանք, ովքեր տրտնջում էին, քննվորեն վարդապետություն:

ԳԼՈՒԽ 28

Շատ կեղծ եկեղեցիներ կստեղծվեն վերջին օրերում – Դրանք կսովորեցնեն կեղծ, սին և հիմար վարդապետություններ – Ուրացությունը կշատանա կեղծ ուսուցիչների պատճառով – Դևը կմոլեզմի մարդկանց սրտերում – Նա կսովորեցնի ամեն տեսակի կեղծ վարդապետություններ: Մոտ 559–545թթ. Ք.ծ.ա.:

ԵՎ այժմ, ահա, իմ եղբայրներ, ես խոսեցի ձեզ հետ, համաձայն նրա, ինչ Հոգին պարտադրեց ինձ. ուստի, ես գիտեմ, որ դրանք անշուշտ պետք է կատարվեն:

2 Եվ բաները, որոնք դուրս կգրվեն Պրոֆետից, մեծ քարտեք կունենան մարդկանց զավակների համար, և հատկապես մեր սերնդի համար, որն Իսրայելի տան մի մնացորդ է:

3 Քանզի կլինի այնպես, այն օրը, որ Մեկեղեցիները, որոնք ստեղծված են, բայց ոչ Տիրոջ համար, երբ մեկը կասի մյուսին. Ահա, ե՛ս, ե՛ս եմ Տիրոջինը, և մյուսները կասեն. Ե՛ս, ե՛ս եմ Տիրոջինը. և այսպես կասի ամեն մեկը, որը

ստեղծել է եկեղեցիներ, և ոչ թե Տիրոջ համար,

4 Եվ նրանք կվիճեն մեկը մյուսի հետ. և նրանց քահանաները կվիճեն մեկը մյուսի հետ, և նրանք պիտի սովորեցնեն իրենց Միմաստությամբ և ժխտեն Սուրբ Հոգին, որը խոսել է տալիս:

5 Եվ նրանք ժխտում են Աստծո Քորությունը, Սուրբին Իսրայելի. և նրանք ասում են ժողովրդին. Լսե՛ք մեզ և լսե՛ք մեր ցուցումը. քանզի ահա, այսօր Աստված Գլա, քանզի Տերը և Քավիչն արել է իր գործը, և նա տվել է իր գործությունը մարդկանց:

6 Ահա, լսե՛ք իմ ցուցումը. եթե նրանք ասեն. Հրաշք կա գործված Տիրոջ ձեռքով, մի՛ հավատացեք. քանզի այսօր նա Միքալքների Աստված չէ. նա արել է իր գործը:

7 Այո, և կլինեն շատերը, որոնք կասեն. ՄԿերեք, խմեք և զվարճացեք, քանզի վաղը մենք մեռնելու ենք. և մեզ համար լավ է լինելու:

8 Եվ կլինեն նաև շատերը, որոնք կասեն. Կերեք, խմեք և զվարճացեք. այնուամենայնիվ, վախեցեք Աստծուց,– նա Մկարդարացնի մի փոքր մեղք գործելը. այո՛, քստեք մի քիչ, օգուտ քաղեք մեկից իր խոսքերի պատճառով, Գիոս փորեք ձեր հարևանի համար. սրանում ոչ մի վնաս չկա. և արեք այս բոլոր բաները, քանզի վաղը մեռնելու ենք. և եթե լինի այնպես, որ մենք մեղավոր լինենք, Աստված կծեծի մեզ մի քանի մտրակահար-

35ա2 Նեփի 28.14, վ.և.ՈՒ 33.4:
բ Դան. ԺԲ.4:
28ա սու՛ Մորմոնի Գիրքը:
բ 1 Նեփի 13.34–42, 22.9, 3 Նեփի 21.6:
3ա Ա Կոր. Ա.10–13, 1 Նեփի 22.23,

4 Նեփի 1.25–29, Մորմ. 8.28, 32–38:
4ա2 Նեփի 9.28:
5ա2 Նեփի 26.20:
բ Բ Տիմ. Գ.5:
գ Ալմա 30.28:
6ա Մորմ. 8.26, 9.15–26:
7ա Ա Կոր. ԺԵ.32,

Ալմա 30.17–18:
8ա Մորմ. 8.31:
բ ՎևՈՒ 10.25, Մովսես 4.4:
սու՛ Ստեյ:
գ Առակ. ԻԶ.27, 1 Նեփի 14.3:

վածով, և ի վերջո, մենք կփրկվենք Աստծո արքայությունում:

9 Այո, և կլինեն շատերը, որոնք կսովորեցնեն այս ձևով՝ կեղծ, սին և Խիմար Քարոզապետություններ, և փքված կլինեն իրենց սրտերում, և կջանան իրենց խորհուրդները խորը թաքցնել Տիրոջից. և նրանց գործերը խավարում կլինեն:

10 Եվ սրբերի Մարյունը գետնից կաղաղակի նրանց դեմ:

11 Այո, նրանք բոլորը դուրս են եկել Ծանապարհից. նրանք դարձել են Քապականված:

12 ՄՀպարտության պատճառով, և կեղծ ուսուցիչների և սուտ վարդապետությունների պատճառով, նրանց եկեղեցիները դարձել են ապականված, և նրանց եկեղեցիները բարձրանտացած են. հպարտության պատճառով նրանք փքված են:

13 Նրանք կողոպտում են Քաղբատներին իրենց գեղեցիկ սրբարանների համար. նրանք կողոպտում են աղբատներին իրենց գեղեցիկ հանդերձների համար. և նրանք հալածում են հեզերին և սրտով խեղճերին, որովհետև փքված են իրենց Կապարտությամբ:

14 Նրանք կրում են Մխիտ պարանոցներ և բարձր գլուխներ. այո, և հպարտության ու ամբարշտության, պղծությունների և պռնկությունների պատճառով նրանք բոլորը ճանապարհից Քշեղվել են, բացի մի քանիսից, որոնք Քրիս-

տոսի խոնարհ հետևորդներն են. այնուամենայնիվ, նրանք առաջնորդվում են, այնպես որ շատ դեպքերում նրանք իրոք սխալվում են, որովհետև սովորեցվում են մարդկանց ցուցումներով:

15 Ա՛խ, Խիմաստունները, ուսյալները և հարուստները, որոնք փքված են իրենց սրտերի Քհպարտությամբ, և բոլոր նրանք, ովքեր քարոզում են կեղծ վարդապետություններ, և բոլոր նրանք, ովքեր գործում են պռնկություններ և խեղաթյուրում են Տիրոջ ճշմարիտ ճանապարհը, Վա՛յ, վա՛յ, վա՛յ լինի նրանց, ասում է Ամենագոր Տեր Աստված, քանզի նրանք վայր պիտի գցվեն դժոխք:

16 Վա՛յ նրանց, որ դատարկ բանի համար երես են Քթեքում արդարից և հայիոյում են ընդդեմ նրա, ինչը բարի է և ասում, որ դա արժեք չունի: Քանզի պիտի գա օրը, որ Տեր Աստված սրընթաց կայցելի երկրի բնակիչներին. և այն օրը, երբ նրանք Քլիովին հասունացած կլինեն անօրինության մեջ, նրանք կկորչեն:

17 Բայց, ահա, եթե երկրի բնակիչներն ապաշխարեն իրենց ամբարշտությունից և պղծություններից, նրանք չեն կործանվի, ասում է Չորաց Տերը:

18 Բայց, ահա, այն մեծ և պիղծ եկեղեցին՝ ողջ աշխարհի Մպռնիկը, պետք է հողին Քհավասարվի, և մեծ պիտի լինի նրա անկումը:

19 Քանզի դևի թագավորությունը

9ա Եզեկ. ԺԳ.3, Հել. 13.29:
բ Մատ. ԺԵ.9:
10ա Հայտ. 2.9–11, 2 Նեփի 26.3, Մորմ. 8.27, Եթեր 8.22–24, ՎևոՒ 87.7:

11ա Հել. 6.31:
բ Մորմ. 8.28–41, ՎևոՒ 33.4:
12ա Առակ. ԻԸ.25:
13ա Եզեկ. ԼԳ.8:
բ Հել. 4.12:
գ Ալմա 5.53:
14ա Առակ. ԻԱ.4:

բ Ես. ԾԳ.6:
15ա Առակ. Գ.5–7:
բ սո՛ր Հպարտություն: գ 3 Նեփի 29.5:
16ա Ես. ԻԹ.21:
բ Եթեր 2.9–10:
18ա Հայտ. ԺԹ.2:
բ 1 Նեփի 14.3, 17:

պետք է օգնել, և նրանք, ովքեր պատկանում են դրան, անպայման պետք է արթնացվեն ապաշխարության համար, այլապես Պղը կհափշտակի նրանց իր հավիտենական Պղթաներով, և նրանք կդրդվեն բարկության ու կկորչեն.

20 Քանզի, ահա, այն օրը նա կկոտորվի մարդկանց զավակների սրտերում և կդրդի նրանց բարկության ընդդեմ նրա, ինչը բարի է:

21 Իսկ մյուսներին կխաղաղեցնի և կհանդարտեցնի՝ տանելով դեպի մարմնական ապահովություն, այնպես որ նրանք կասեն. Ամեն ինչ լավ է Սիոնում. այո՛, Սիոնը բարգավաճում է, ամեն ինչ լավ է, և այդպես Պղը խաբում է նրանց հոգիները և զգուշորեն հեռացնում նրանց՝ իջեցնելով դժոխք:

22 Եվ ահա, մյուսներին նա շողորթոթում է, հեռու տանելով, և ասում է նրանց, որ «դժոխք չկա, և ասում է նրանց. Ես դև չեմ, քանզի այդպիսին չկա. և այսպես նա շջնջում է նրանց ականջին, մինչև նա հափշտակում է նրանց իր սարսափելի Պղթաներով, որտեղից չկա ազատում:

23 Այո, նրանք հափշտակվում են մահով և դժոխքով. և մահը, դժոխքը, դևը և բոլորը, ովքեր կապված են դրանցով, պետք է կանգնեն Աստծո գահի առաջ և «դատվեն ըստ իրենց գործերի, որտեղից նրանք պիտի գնան իրենց համար պատրաստված տեղը, այսինքն՝

կրակի և ծծմբի մի Քլիճ, որն անվերջ տանջանք է:

24 Հեռաբար, վա՛յ լինի նրան, ով անհոգ է Սիոնում:

25 Վա՛յ լինի նրան, ով աղաղակում է. Ամեն ինչ լավ է:

26 Այո, վա՛յ լինի նրան, ով «լսում է մարդկանց ցուցումներին և ժխտում Աստծո գործությունը և Սուրբ Հոգու պարզևր:

27 Այո, վա՛յ լինի նրան, ով ասում է. Մենք ստացել ենք, և մենք այլևս «կարիք չունենք:

28 Եվ ի վերջո, վա՛յ բոլոր նրանց, ովքեր դողում են և «բարկացած են Աստծո ճշմարտության պատճառով: Քանզի, ահա, նա, ով կառուցված է Քվեմի վրա, ստանում է այն ուրախությամբ. և նա, ով կառուցված է ավազե հիմքի վրա, դողում է, չլինի թե ընկնի:

29 Վա՛յ լինի նրան, որ կասի. Մենք ստացել ենք Աստծո խոսքը և «այլևս Քկարիք չունենք Աստծո խոսքի, քանզի մենք բավականաչափ ունենք:

30 Քանզի, ահա, այսպես է ասում Տեր Աստված. Ես կտամ մարդկանց զավակներին՝ տող առ տող, ցուցում առ «ցուցում, մի քիչ այստեղ և մի քիչ այնտեղ. և օրհնված են նրանք, ովքեր ականջ են դնում իմ ցուցումներին և ունկդրում իմ խորհրդին, քանզի նրանք Քիմաստություն կստանան. քանզի նրան, ով Պղնդում է, ես կտամ Պավելին. և նրանցից, ովքեր կասեն. Մենք

19ա1 Նեփի 22.23:
բ Ալմա 34.35:
գ Ալմա 12.11:
20ա ՎևՌԻ 10.20–27:
21ա Մորմ. 8.31:
բ 2 Նեփի 9.39:
22ա սո՛ւ Գժոխք:
բ Ալմա 36.18:
23ա սո՛ւ Հիսուս Քրիստոս –

Գատավոր. Վերջին դատաստան:
բ 2 Նեփի 9.16, 19, 26:
26ա2 Նեփի 9.29:
27ա Ալմա 12.10–11:
28ա2 Նեփի 9.40, 33.5:
սո՛ւ Ապստամբություն:
բ Մատ. է.24–27:
սո՛ւ Վեմ:

29ա2 Նեփի 27.14,
Եթեր 4.8:
բ 2 Նեփի 29.3–10:
30ա Ես. ԻԸ.9–13,
ՎևՌԻ 98.12:
բ սո՛ւ Իմաստություն:
գ Ղուկ. Ը.18:
դ Ալմա 12.10,
ՎևՌԻ 50.24:

բավականաչափ ունենք, նրանցից կվերցվի, նույնիսկ այն, ինչ նրանք ունեն:

31 Անիծված է նա, որ իր ^ահույսը մարդու վրա է դնում, կամ մարմինն իրեն բազուկ սարքում, կամ, որ ականջ է դնում մարդկանց ցուցումներին, եթե նրանց ցուցումները չեն տրվում Սուրբ Հոգու գորուքյամբ:

32 ^աՎա՛յ լինի հեթանոսներին, ասում է Չորաց Տեր Աստվածը. Քանզի չնայած ես կերկարացնեմ իմ բազուկը դեպի նրանց օր օրի, նրանք կուրանան ինձ. այնուամենայնիվ, ես ողորմած կլինեմ նրանց հանդեպ, ասում է Տեր Աստված, եթե նրանք ապաշխարեն և գան ինձ մոտ. քանզի իմ ^բբազուկը երկարացված է ողջ օրվա ընթացքում, ասում է Չորաց Տեր Աստվածը:

ԳԼՈՒԽ 29

Շատ հեթանոսներ կենթեն Մորմոնի Գիրքը – Նրանք կասեն. Մենք մեկ այլ Աստվածաշնչի կարիք չունենք – Տերը խոսում է շատ ազգերի հետ – Նա կդատի աշխարհը՝ ելնելով այն գրքերից, որոնք կգրվեն: Մոտ 559–545թթ. Ք.ծ.ա.:

ԲԱՅՅ ահա, կլինեն շատերը, այն օրը, երբ ես կսկսեմ մի ^ագարմանալի գործ անել նրանց մեջ, որպեսզի կարողանամ հիշել իմ

^բուխտերը, որոնք ես արել եմ մարդկանց զավակների հետ, որպեսզի ես կարողանամ կրկին պարզել իմ ձեռքը՝ ^գերկրորդ անգամ ետ բերելու իմ ժողովրդին, որոնք Իսրայելի տնից են.

2 Եվ նաև, որպեսզի ես կարողանամ հիշել խոստումները, որոնք ես տվել եմ քե՛զ, Նեփի, և նաև քո հորը, որ ես կհիշեմ քո սերնդին. և որ քո սերնդի ^ախոսքերը դուրս կգան իմ բերանից դեպի քո սերունդը. և իմ խոսքերն առաջ ^բկալանան մինչև աշխարհի ծայրերը՝ որպես ^գդրոշ իմ ժողովրդի համար, որոնք Իսրայելի տնից են.

3 Եվ որովհետև իմ խոսքերը կսլանան առաջ, շատերը հեթանոսներից կասեն. ^աԱստվածաշու՛նչ, Աստվածաշու՛նչ: Մենք ունենք Աստվածաշունչ և չի կարող լինել որևէ այլ Աստվածաշունչ:

4 Բայց այսպես է ասում Տեր Աստված. Ո՛վ հիմարներ, նրանք կունենան Աստվածաշունչ. և այն դուրս կգա ^ահրեաներից՝ իմ հին ուխտի ժողովրդից: Եվ ի՞նչպես են շնորհակալություն հայտնում նրանք ^բհրեաներին ^գԱստվածաշնչի համար, որը նրանք ստացել են նրանցից: Այո, ի՞նչ ի նկատի ունեն հեթանոսները: Հիշո՞ւմ են նրանք հրեաների չարքաշությունները, ճիգերը և ցավերը, և նրանց ջանասիրությունը հանդեպ ինձ, հեթանոսներին փրկություն բերելիս:

31ա Վևու 1.19–20:
32ա 1 Նեփի 14.6:
բ Հակոբ 5.47, 6.4:
29 1ա 2 Նեփի 27.26:
սո՛ւ Ավետարանի վերականգնումը:
բ սո՛ւ Աբրահամի ուխտը:
գ 2 Նեփի 6.14,

21.11–12, 25.17:
սո՛ւ Իսրայել – Իսրայելի ցրվելը:
2ա 2 Նեփի 3.18–21:
բ Ես. Ե.26,
2 Նեփի 15.26,
Մոր. 10.28:
գ 1 Նեփի 21.22:
սո՛ւ Դրոշ:

3ա 1 Նեփի 13.23–25:
սո՛ւ Աստվածաշունչ.
Մորմոնի Գիրքը:
4ա Վևու 3.16:
բ սո՛ւ Հրեաներ:
գ սո՛ւ Հուդա – Հուդայի փայտը:

5 Ո՛վ դուք, հեթանոսներ, դուք հիշե՛լ եք հրեաներին՝ իմ հին ուխտի ժողովրդին: Ո՛չ. այլ դուք անիծել եք նրանց, և Պատել եք նրանց, և չե՛ք ջանացել ետ վերադարձնել նրանց: Բայց ահա, ես կվերադարձնեմ բոլոր այս բաները ձեր իսկ գլխին. քանզի ես՝ Տերս, չեմ մոռացել իմ ժողովրդին:

6 Դ՛ո՛ւ, անմի՛տ, որ կասես. «Աստվածաշունչ, մենք ունենք Աստվածաշունչ, և մենք կարիք չունենք մեկ այլ Աստվածաշնչի: Մի՞թե դուք ձեռք բերած կլինեիք Աստվածաշունչ, եթե դա չլիներ հրեաների միջոցով:

7 Չգիտե՞ք դուք, որ կան մեկից ավելի ազգեր: Չգիտե՞ք, որ ես՝ Տերս, ձեր Աստվածը, Պատեղծել եմ բոլոր մարդկանց, և որ ես հիշում եմ նրանց, ովքեր ծովի՝ Բելգիների վրա եմ. և որ ես իշխում եմ վերը՝ երկինքներում, և ներքևում՝ երկրի վրա. և ես հայտնի եմ դարձնում իմ խոսքը մարդկանց զավակներին, այո, այսինքն՝ երկրագնդի բոլոր ազգերին:

8 Ինչի՞ համար եք տրտնջում դուք, մի՞թե այն պատճառով, որ ստանալու եք ավելի շատ իմ խոսքերից: Չգիտե՞ք դուք, որ Պերկու ազգերի Պվկայությունն ապացույց է ձեզ, որ ես եմ Աստված, որ ես հիշում եմ մեկ ազգին, ինչպես մյուսին: Ուստի, ես խոսում եմ նույն խոսքերն ինչպես մեկ ազգին, այնպես էլ մյուսին: Եվ երբ երկու

Պազգերը միավորվեն, երկու ազգերի վկայությունները նույնպես կմիավորվեն:

9 Եվ ես անում եմ այս, որպեսզի կարողանամ ապացուցել շատերին, որ ես Պնույնն եմ՝ երեկ, այսօր և հավիտյան. և որ ես խոսում եմ իմ խոսքերը՝ ըստ իմ սեփական կամքի: Եվ այն պատճառով, որ ես խոսել եմ մի Պխոսք, դուք չպետք է ենթադրեք, որ ես չեմ կարող խոսել մեկ ուրիշը. քանզի իմ գործը դեռ չի ավարտվել. ոչ էլ այն կավարտվի, մինչև մարդու վախճանը, ոչ էլ այդ ժամանակից՝ այնուհետև և հավիտյան:

10 Ուստի, քանի որ դուք ունեք Աստվածաշունչ, դուք կարիք չունեք ենթադրելու, որ այն պարունակում է բոլոր իմ Պխոսքերը. ոչ էլ կարիք ունեք ենթադրելու, որ ես գրել չեմ տվել ավելին:

11 Քանզի ես պատվիրում եմ Պբոլոր մարդկանց՝ և՛ արևելքում, և՛ արևմուտքում, և՛ հյուսիսում, և՛ հարավում, և՛ ծովի կղզիներում, որ նրանք պետք է Պգրեն խոսքերը, որոնք ես խոսում եմ նրանց համար, քանզի այն Պգրքերից ելնելով, որոնք կգրվեն, ես Պկդատեմ աշխարհը, ամեն մարդու՝ համաձայն իր գործերի, համաձայն նրա, ինչ գրված է:

12 Քանզի ահա, ես կխոսեմ Պհրեաների համար, և նրանք կգրեն այն. և ես կխոսեմ նաև Նեփիացիների համար, և նրանք Պկգրեն այն.

5ա3 Նեփի 29.8:
6ա1 Նեփի 13.38:
7ա սոս Ստեղծել, Ստեղծում:
բ 1 Նեփի 22.4:
8ա Եզեկ. Լ.Է.15-20,
1 Նեփի 13.38-41,
2 Նեփի 3.12:
բ Մատ. ԺԸ.16:

սոս Վկայություն:
գ Ովսե Ա.11:
9ա Եբր. ԺԳ.8:
բ սոս Հայտնություն:
10ա սոս Սուրբ գրքեր - Սուրբ գրքերի ի հայտ գալու մարգարեություններ:
11ա Ալմա 29.8:

բ Բ Տիմ. Գ.16:
գ սոս Կյանքի գիրք:
դ 2 Նեփի 25.22, 33.11, 14-15:
սոս Վերջին դատաստան:
12ա 1 Նեփի 13.23-29:
բ 1 Նեփի 13.38-42,
2 Նեփի 26.17:

և ես կխոսեմ Իսրայելի տան մյուս ցեղերի համար, որոնց ես հեռուն եմ առաջնորդել. և նրանք կգրեն այն. և ես կխոսեմ նաև երկրագնդի Գբուլոր ազգերի համար, և նրանք կգրեն այն:

13 Եվ կլինի այնպես, որ Խրեաները կունենան Նեփիացիների խոսքերը, և Նեփիացիները կունենան հրեաների խոսքերը. և Նեփիացիներն ու հրեաները կունենան Իսրայելի թկորած ցեղերի խոսքերը. և Իսրայելի կորած ցեղերը կունենան Նեփիացիների ու հրեաների խոսքերը:

14 Եվ կլինի այնպես, որ իմ ժողովուրդը, որոնք Իսրայելի Խոնից են, կհավաքվեն տուն՝ իրենց տոհմական հողերի վրա. և իմ խոսքը նույնպես թմեկտեղ կհավաքվի: Եվ ես ցույց կտամ նրանց, որ կռվում են իմ խոսքի դեմ և իմ ժողովրդի դեմ, ովքեր Իսրայելի Գտնից են, որ ես եմ Աստված, և որ ես Դուխտել եմ Աբրահամի հետ, որ ես հիշելու եմ նրա Կսերնդին Գհավիտյան:

ԳԼՈՒԽ 30

Դարձի եկած հեթանոսները կհամարվեն ուխտի ժողովրդի հետ – Շատ Լամանացիներ և հրեաներ կհավատան խոսքին և կդառնան հրաշալի – Իսրայելը կվերականգնվի և անբարիչները կկործանվեն: Մոտ 559-545թթ. Ք.ծ.ա.:

ԵՎ այժմ, ահա, իմ սիրելի՛ եղբայր-

ներ, ես կկամենայի խոսել ձեզ հետ. քանզի ես՝ Նեփիս, չի համարուժի, որ դուք ենթադրեք, թե դուք ավելի արդար եք, քան կլինեն հեթանոսները: Քանզի ահա, եթե դուք չպահեք Աստծո պատվիրանները, դուք բոլորդ նմանապես կկորչեք. և այն խոսքերի պատճառով, որոնք խոսվել են, դուք կարիք չունեք ենթադրելու, որ հեթանոսները լիովին կործանվելու են:

2 Քանզի ահա, ես ասում եմ ձեզ, որ հեթանոսներից բոլոր նրանք, որ կապաշխարեն, Տիրոջ Դուխտյալ ժողովուրդը կլինեն. և Խրեաներից բոլոր նրանք, որ չեն ապաշխարի, դուրս կգցվեն. քանզի Տերը չի ուխտում որևէ մեկի հետ, բացի դա լինի նրանց հետ, ովքեր Գապաշխարում են և հավատում նրա Որդուն, որը Սուրբն է Իսրայելի:

3 Եվ այժմ, ես կկամենայի դարձյալ մարգարեանալ որոշ բան ևս հրեաների և հեթանոսների վերաբերյալ: Քանզի հետո, երբ գիրքը, որի մասին ես խոսել եմ, ի հայտ կգա և կգրվի հեթանոսներին, և դարձյալ կկնքվի Տիրոջ համար, կլինեն շատերը, ովքեր Կհավատան խոսքերին, որոնք գրված են. և թրանք կխոխանցեն դրանք մեր սերնդի մնացորդին:

4 Եվ այն ժամանակ մեր սերնդի մնացորդը կիմանա մեր մասին, թե ինչպես մենք դուրս եկանք Երուսաղեմից, և որ նրանք հրեաների հետնորդներն են:

12q 2 Նեփի 26.33:
13ա Մորմ. 5.12-14:
բ սո՛ւ Իսրայել –
Իսրայելի տասը
կորած ցեղերը:
14ա Երեմ. Գ.17-18:
բ Եզեկ. ԼԷ.16-17:
գ 1 Նեփի 22.8-9:

դ Ծն. ԺԲ.1-3,
1 Նեփի 17.40,
3 Նեփի 20.27,
Աբր. 2.9:
սո՛ւ Աբրահամի
ուխտը:
ե Վևո՛ւ 132.30:
զ Ծն. ԺԷ.7:

30 2ա Գաղ. Գ.26-29:
բ Մատ. Ը.10-13:
սո՛ւ Հրեաներ:
գ սո՛ւ Ապաշխարել,
Ապաշխարություն:
3ա 3 Նեփի 16.6-7:
բ 1 Նեփի 22.8-9:

5 Եվ Հիսուս Քրիստոսի ավետարանը կիրառարակվի՝ ^անրանց մեջ, ուստի ^ննրանք ետ կբերվեն իրենց հայրերի մասին՝ ^գիմացությանը և նաև Հիսուս Քրիստոսի իմացությանը, որը եղել էր իրենց հայրերի մեջ:

6 Եվ այն ժամանակ նրանք կհրճվեն, քանզի նրանք կիմանան, որ դա օրհնություն է իրենց համար՝ Աստծո ձեռքից. և նրանց խավարի թեփուկները կսկսեն ընկնել իրենց աչքերից. և շատ սերունդներ չեն անցնի նրանց մեջ, մինչև որ նրանք կլինեն մի անարատ ու ^ասքանչելի ժողովուրդ:

7 Եվ կլինի այնպես, որ ^ահրեաները, որոնք ցրված են, նույնպես կսկսեն ^հավատալ Քրիստոսին. և նրանք կսկսեն ի մի հավաքվել երկրի երեսի վրա. և բոլոր նրանք, ովքեր կհավատան Քրիստոսին, նույնպես կդառնան սքանչելի ժողովուրդ:

8 Եվ կլինի այնպես, որ Տեր Աստված կսկսի իր գործը բոլոր ազգերի, ցեղերի, լեզուների, և ժողովուրդների մեջ՝ իրագործելու իր ժողովրդի վերականգնումը երկրի վրա:

9 Եվ արդարությամբ ^աՏեր Աստված ^կդատի աղքատներին և կհանդիմանի անաչառությամբ, երկրի ^գհեզերի համար: Եվ նա կզարկի երկիրն իր բերանի գավազանով. և իր շրթունքների շնչով նա կսպանի ամբարիշտներին:

10 Քանզի սրընթաց մոտենում է ^աժամանակը, երբ Տեր Աստված մեծ ^բբաժանում կառաջացնի ժողովրդի մեջ. և ամբարիշտներին նա կկործանի. և նա ^գկխնայի իր ժողովրդին, այո՛, նույնիսկ, եթե այնպես լինի, որ նա պետք է ^կործանի ամբարիշտներին կրակով:

11 Եվ ^աարդարությունը կլինի նրա մեջքի գոտին և հավատարմությունը՝ իրանի գոտին:

12 Եվ այն ժամանակ գայլը ^ակբնակվի գառի հետ. և ընձառյուծը կպառկի ուլի հետ, և հորթը, և կորյունը, և պարարտ զվարակը՝ միասին. և մի փոքր երեխա կառաջմորդի նրանց:

13 Եվ կովն ու արջը կարածեն. նրանց ձագերը կպառկեն միասին. և առյուծը ծղոտ կուտի, ինչպես արջառը:

14 Եվ ծծկեր երեխան կխաղա իժի անցքի վրա, և կաթից կտրված երեխան ձեռքը քարբի բնի վրա կդնի:

15 Նրանք չեն վնասի կամ ավերի իմ ողջ սուրբ սարում. քանզի երկիրը Տիրոջ գիտությունով լցված կլինի, ինչպես ջրերն են ծածկում ծովը:

16 Ուստի, ^աբոլոր ազգերի գործերը հայտնի կդարձվեն. այո՛, բոլոր բաները ^բհայտնի կդարձվեն մարդկանց զավակներին:

17 Չկա ոչինչ, որը գաղտնի է, որ ^աչբացահայտվի. չկա ոչ մի խավարի գործ, որը ցույց չտրվի լույսի

5ա3 Նեփի 21.3-7, 24-26:
բ ՎևոՒ 3.20:
գ 1 Նեփի 15.14,
2 Նեփի 3.12,
Մորմ. 7.1, 9-10:
6ա ՎևոՒ 49.24, 109.65:
7ա2 Նեփի 29.13-14:
բ 2 Նեփի 25.16-17:
9ա Ես. ԺԱ.4-9:

բ 2 Նեփի 9.15:
գ սուր Հեզ, Հեզոբյուն:
10ա սուր Վերջին օրեր,
Եսին օրեր:
բ ՎևոՒ 63.53-54:
գ Մովսես 7.61:
դ 1 Նեփի 22.15-17, 23:
սուր Երկիր - Երկրի
մաքրագործումը:

11ա Ես. ԺԱ.5-9:
12ա Ես. ԿԵ.25:
սուր Հազարամյակ:
16ա ՎևոՒ 101.32-35,
121.28-29:
բ Եթեր 4.6-7:
17ա ՎևոՒ 1.2-3:

մեջ. և չկա ոչինչ, որը կնքված է երկրի վրա, որ չարձակվի:

18 Ուստի, բոլոր բաները, որոնք բացահայտվել են մարդկանց գավակներին, այն օրը կբացահայտվեն. և Սատանան ^Մայլևս գորություն չի ունենա մարդկանց գավակների սրտերի վրա երկար ժամանակի ընթացքում: Եվ այժմ, իմ սիրելի՛ եղբայրներ, ես վերջ եմ դնում իմ խոսելուն:

ԳԼՈՒԽ 31

Նեփին պատմում է, թե ինչու Քրիստոսը մկրտվեց – Մարդիկ պետք է հետևեն Քրիստոսին, մկրտվեն, ստանան Սուրբ Հոգին և մինչև վերջ համբերեն՝ փրկվելու համար – Ապաշխարությունը և մկրտությունը դուռն են անձուկ և նեղ արահետի – Հավերժական կյանքը տրվում է նրանց, ովքեր մկրտությունից հետո պահում են պատվիրանները: Մոտ 559–545թթ. Զ.ծ.ա.:

Եվ այժմ ես՝ Նեփիս, վերջացնում եմ ձեզ համար իմ ^Մմարգարեանալը, իմ սիրելի՛ եղբայրներ: Եվ ես չեմ կարող գրել, բացի մի քանի քաներից, որոնք ես գիտեմ պետք է հաստատ կատարվեն. ոչ էլ ես կարող եմ գրել, բացի իմ եղբայր Հակոբի խոսքերից մի քանիսը:

2 Ուստի բաները, որոնք ես գրել եմ, բավարարում է ինձ, բացի մի քանի խոսքերից, որոնք ես պետք է խոսեմ Քրիստոսի ^Մվարդապետության վերաբերյալ. ուստի ես

կխոսեմ ձեզ հետ պարզ՝ համաձայն իմ մարգարեանալու պարզությամբ:

3 Քանզի իմ հոգին հրճվում է պարզությամբ, քանզի Տեր Աստված այս ձևով է գործում մարդկանց գավակների մեջ: Քանզի Տեր Աստված տալիս է ^Մլույս հասկացողությանը. քանզի նա խոսում է մարդկանց հետ ըստ իրենց ^Դլեզվի՝ իրենց հասկացողության համար:

4 Ուստի, ես կկանենայի, որ դուք հիշեիք, որ ես խոսել եմ ձեզ հետ այն ^Մմարգարեի վերաբերյալ, որին Տերը ցույց տվեց ինձ, որը պետք է մկրտեր Աստծո ^Գառին, որը պետք է վեր առներ աշխարհի մեղքերը:

5 Եվ ահա, եթե Աստծո Գառը, լինելով սուրբ, պիտի կարիք ունենար ^Մմկրտվել ջրով՝ կատարելու ամեն արդարություն, Օ՛, ուրեմն՝ լինելով անսուրբ, որքա՛ն ավելի շատ կարիք ունենք մենք՝ մկրտվելու, այո՛, հենց ջրով:

6 Եվ այժմ ես կկանենայի հարցնել ձեզ, իմ սիրելի՛ եղբայրներ, ի՞նչպես Աստծո Գառը կատարեց ամեն արդարություն՝ մկրտվելով ջրով:

7 Չգիտե՞ք, որ նա սուրբ էր: Բայց չնայած իր սուրբ լինելուն, նա ցույց է տալիս մարդկանց գավակներին, որ ըստ մարմնի նա իրեն խոնարհեցնում է Հոր առաջ, և վկայում է Հորը, որ նա ^Մհնազանդ կլինի նրան՝ նրա պատվիրանները պահելիս:

8 Ուստի, նրա ջրով մկրտվելուց

18ա Հայտ. Բ.1–3, Եթեր 8.26:
31 1ա 2 Նեփի 25.1–4:
2ա 2 Նեփի 11.6–7:
3ա սուր Լույս, Քրիստոսի լույս:

բ ՎՈՒԽ 1.24:
4ա 1 Նեփի 10.7, 11.27:
սուր Հովհաննես Սկրտիչ:
բ սուր Աստծո Գառը:
5ա Մատ. Գ.11–17:

սուր Մկրտություն, Մկրտել:
7ա Հովհ. Ե.30:
սուր Հնազանդություն, Հնազանդ, Հնազանդվել:

հետո, Սուրբ Հոգին իջավ նրա վրա՝ աղավնու ^բտեսքով:

9 Եվ կրկին դա ցույց է տալիս մարդկանց գավակներին արահետի անձկությունը և ^ադռան նեղությունը, որով նրանք պետք է մտնեն, ինքն օրինակ լինելով նրանց առաջ:

10 Եվ նա ասել է մարդկանց գավակներին. ^աՀետևի՛ր ինձ: Ուստի, իմ սիրելի՛ եղբայրներ, կարո՞ղ ենք մենք ^բհետևել Հիսուսին, եթե մենք հոժար չլինենք՝ պահելու Հոր պատվիրանները:

11 Եվ Հայրն ասել է. Ապաշխարեք, ապաշխարեք և մկրտվեք, իմ Սիրելի Որդու անունով:

12 Եվ նաև, Որդու ձայնը եկավ ինձ՝ ասելով. Նա, ով մկրտվում է իմ անունով, նրան Հայրը ^ակպարգևի Սուրբ Հոգին, ինչպես ինձ. ուստի, ^բհետևեք ինձ և արեք այն բաները, որոնք դուք տեսաք ինձ՝ անելիս:

13 Ուստի, իմ սիրելի՛ եղբայրներ, ես գիտեմ, որ եթե դուք հետևեք Որդուն սրտի ողջ նվիրվածությամբ, չգործելով ոչ կեղծավորություն, ոչ էլ խաբեություն Աստծո առաջ, այլ իսկական վճռակալությամբ, ապաշխարելով ձեր մեղքերից, վկայելով Հորը, որ դուք կամենում եք վերցնել ձեզ վրա Քրիստոսի անունը՝ ^ամկրտությամբ, – այո, հետևելով ձեր Տիրոջը և ձեր Փրկչին, մտնելով ջուրը, համաձայն նրա խոսքի,

ահա, այն ժամանակ, դուք կստանաք Սուրբ Հոգին. այո, այն ժամանակ կգա կրակով և Սուրբ Հոգով ^բմկրտությունը. և, այն ժամանակ, դուք կարող եք խոսել հրեշտակների ^գլեզվով և գովք բացականչել Սուրբին Իսրայելի:

14 Բայց ահա, իմ սիրելի՛ եղբայրներ, այսպես եկավ Որդու ձայնն ինձ՝ ասելով. Նրանից հետո, երբ դուք ապաշխարել եք ձեր մեղքերից և վկայել Հորը, որ դուք հոժար եք պահել իմ պատվիրանները, մկրտվելով ջրով, և ստացել եք կրակով և Սուրբ Հոգով մկրտությունը, և կարողանում եք խոսել նոր լեզվով, այո, այսինքն՝ հրեշտակների լեզվով, և հետո դուք պիտի ^աուրանաք ինձ, ավելի ^բլավ կլինեք, որ դուք իմացած չլինեիք ինձ:

15 Եվ ես մի ձայն լսեցի Հորից, ասելիս. Այո՛, իմ Սիրելիի խոսքերը ճշմարիտ են և հավատարիմ: Ով որ համբերում է մինչև վերջ, նա կփրկվի:

16 Եվ արդ, իմ սիրելի՛ եղբայրներ, այսպիսով ես գիտեմ, որ մինչև մարդ ^աչհամբերի մինչև վերջ, հետևելով կենդանի Աստծո Որդու ^բօրինակին, նա չի կարող փրկվել:

17 Ուստի, արեք այն բաները, որոնք ես ասել եմ ձեզ, որ ես տեսել եմ, որ ձեր Տերը և ձեր Քավիչն է անելու. քանզի այս պատճառով եմ դրանք ցույց տրվել ինձ, որպեսզի դուք կարողանայիք իմանալ

8ա սո՛ւ Աղավնու նշանը:
բ 1 Նեփի 11.27:
9ա 2 Նեփի 9.41,
3 Նեփի 14.13-14,
վևՈՒ 22.4:
10ա Մատ. Գ.19,
Ը.22, Թ.9:
բ Սոր. 7.11,
վևՈՒ 56.2:

12ա սո՛ւ Սուրբ Հոգու պարգև:
բ Դուկ. Թ.57-62,
Հովհ. ԺԲ.26:
13ա Գաղ. Գ.26-27:
բ սո՛ւ Սուրբ Հոգու պարգև, Կրակ:
գ 2 Նեփի 32.2-3:
14ա Մատ. Ժ.32-33,

Ալմն 24.30,
վևՈՒ 101.1-5:
սո՛ւ Աններելի մեղք:
բ Բ Պետ. Բ.21:
16ա Ալմն 5.13, 38.2,
վևՈՒ 20.29:
բ սո՛ւ Հիսուս Քրիստոս –
Հիսուս Քրիստոսի
օրինակը:

դուռը, որով դուք պիտի մտնեք: Քանզի դուռը, որով դուք պիտի մտնեք, ապաշխարությունը և ջրով ^ամկրտությունն է. և ապա գալիս է ձեր մեղքերի ^բթողությունը՝ կրակով և Սուրբ Հոգով:

18 Եվ այն ժամանակ դուք այս ^անեղ և անծուկ ^բարահետի վրա եք, որը տանում է դեպի հավերժական կյանք. այո՛, դուք ներս եք մտել դռնով. դուք արել եք ըստ Հոր և Որդու պատվիրանների. և դուք ստացել եք Սուրբ Հոգին, որը ^գվկայում է Հոր և Որդու մասին՝ ի կատարումն խոստումի, որը նա արել է, որ, եթե դուք ներս մտնեք այդ ճանապարհով, դուք պիտի ստանաք:

19 Եվ այժմ, իմ սիրելի՛ եղբայրներ, հետո, երբ դուք ներս եք մտել այս նեղ և անծուկ արահետը, ես կհարցնեի, թե արդյո՞ք ամեն ինչ ^աարված է: Ահա, ես ասում եմ ձեզ՝ ո՛չ. քանզի դուք չէիք գա այսքան հեռու, եթե դա չլիներ Քրիստոսի խոսքով և անխախտ ^բհավատքով նրա հանդեպ, ամբողջովին ^գապավինելով նրա արժանիքներին, որը հզոր է փրկելիս:

20 Ուստի, դուք պետք է առաջ ^ամղվեք Քրիստոսի հանդեպ հաստատամտությամբ, ունենալով ^բհույսի կատարյալ պայծառություն, և ^գսեր՝ Աստծո հանդեպ և բոլոր մարդկանց հանդեպ: Ուստի,

եթե դուք առաջ մղվեք, սնվելով Քրիստոսի խոսքով, և ^ահամբերեք մինչև վերջ, ահա, այսպես է ասում Հայրը. ^բԴուք կունենաք հավերժական կյանք:

21 Եվ արդ, ահա, իմ սիրելի՛ եղբայրներ, սա է ^աճանապարհը. և չկա ^բոչ մի այլ ճանապարհ, ոչ էլ ^գանուն՝ երկնքի տակ տրված, որով մարդ կարողանա փրկվել Աստծո արքայությունում: Եվ այժմ, ահա, սա է Քրիստոսի ^գվարդապետությունը՝ միակ և ճշմարիտ վարդապետությունը ^աՀոր և Որդու և Սուրբ Հոգու, որը ^գմեկ Աստված է՝ առանց վերջի: Ամեն:

ԳԼՈՒԽ 32

Հրեշտակները խոսում են Սուրբ Հոգու զորությամբ – Մարդիկ պետք է աղոթեն և իրենց համար զիտելիք ձեռք բերեն Սուրբ Հոգուց: Մոտ 559–545թթ. Ջ.ժ.ա.:

Եւ այժմ ահա, իմ սիրելի՛ եղբայրներ, ես կարծում եմ, որ դուք ինչ-որ բան եք խորհում ձեր սրտերում այն մասին, թե ինչ դուք պետք է անեք այդ ճանապարհը մտնելուց հետո: Բայց ահա, ինչո՞ւ եք դուք խորհում այս բաները ձեր սրտերում:

2 ^ԳԴուք չե՞ք հիշում, որ ես ասացի ձեզ, որ Սուրբ Հոգին ^աստանալուց հետո, դուք կարող եք խոսել

17ա Մոսիա 18.10:
սու՝ Մկրտություն,
Մկրտել:
բ սու՝ Մեղքերի
թողություն:
18ա 1 Նեփի 8.20:
բ Առակ. Գ.18:
սու՝ ճանապարհ:
գ Գոր. Ե.29–32:
19ա Մոսիա 4.10:
բ սու՝ Հավատք:

գ ՎևոՒԽ 3.20:
20ա սու՝ Քայլել, Քայլել
Աստծո հետ:
բ սու՝ Հույս:
գ սու՝ Սեր:
դ սու՝ Համբերել:
21ա Գոր. Գ.10–12,
2 Նեփի 9.41,
Ալմա 37.46,
ՎևոՒԽ 132.22, 25:
բ Մոսիա 3.17:

գ սու՝ Հիսուս Քրիստոս –
Հիսուս Քրիստոսի
անունը մեզ վրա
վերցնելը:
դ Մատ. Ե.28,
Հովի. Ե.16–17:
ե սու՝ Աստված,
Աստվածագուլիս:
գ 3 Նեփի 11.27, 35–36:
սու՝ Միություն:
32ա 2 Նեփի 9.20:

հրեշտակների ^բլեզվով: Եվ արդ, ի^օնչպես կարող էիք դուք խոսել հրեշտակների լեզվով, եթե դա չլիներ Սուրբ Հոգու միջոցով:

3 ^աՀրեշտակները խոսում են Սուրբ Հոգու գործությամբ. ուստի, նրանք խոսում են Քրիստոսի խոսքերը: Այդ պատճառով, ես ասացի ձեզ, ^բսնվեք Քրիստոսի խոսքերով. քանզի ահա, Քրիստոսի խոսքերը կասեն ձեզ բոլոր բաները, որ դուք պետք է անեք:

4 Ուստի այժմ, երբ ես խոսել եմ այս խոսքերը, եթե դուք չեք կարողանում հասկանալ դրանք, դա կլինի, որովհետև դուք չեք ^ախնդրում, ոչ էլ թակում եք. ուստի, դուք չեք բերվում դեպի լույսը, այլ պիտի կորչեք խավարում:

5 Քանզի ահա, ես կրկին ասում եմ ձեզ, որ եթե դուք մտնեք այդ ճանապարհով և ստանաք Սուրբ Հոգին, այն ձեզ ցույց կտա բոլոր բաները, որ դուք պետք է անեք:

6 Ահա, սա է Քրիստոսի վարդապետությունը, և չի տրվի ոչ մի այլ վարդապետություն, մինչև հետո, երբ նա ինքը ^ակհայտնվի ձեզ՝ մարմնում: Եվ երբ նա ինքը հայտնվի ձեզ մարմնում, այն բաները, որոնք նա կասի ձեզ, հետևեք, որ դուք կատարեք:

7 Եվ այժմ, ես՝ Նեփիս, չեմ կարող խոսել ավելին. Հոգին արգելում է ինձ արտահայտվել, և ես թողնված եմ՝ սզալու մարդկանց ^աանհավատության, ամբարշտության, տգիտության և խստապարանոցության պատճառով. քանզի նրանք չեն կամենում փնտրել

գիտություն, ոչ էլ կհասկանան մեծ գիտություն, երբ այն տրվի նրանց ^բպարզությամբ, նույնիսկ այնքան պարզ, ինչպես կարող է լինել խոսքը:

8 Եվ այժմ, իմ սիրելի՛ եղբայրներ, ես զգում եմ, որ դուք դեռ խորհում եք ձեր սրտերում. և ինձ վշտացնում է, որ ես պետք է խոսեմ այս բանի վերաբերյալ: Քանզի եթե դուք լսեք Հոգուն, որը սովորեցնում է մարդուն ^աաղոթել, դուք կիմանայիք, որ դուք պետք է աղոթեք. քանզի ^բչար ոգին չի սովորեցնում մարդուն աղոթել, այլ սովորեցնում է նրան, որ նա չպետք է աղոթի:

9 Բայց ահա, ես ասում եմ ձեզ, որ դուք պետք է միշտ ^աաղոթեք և չթուլանաք. որ դուք չպետք է կատարեք որևէ բան Տիրոջ համար, մինչև առաջին հերթին չաղոթեք Հորը, Քրիստոսի ^բանունով, որ նա նվիրագործի ձեր կատարումը ձեր համար, որպեսզի ձեր կատարումը լինի ձեր հոգու ^գբարօրության համար:

ԳԼՈՒԽ 33

Նեփիի խոսքերը ճշմարիտ են – Դրանք վկայում են Քրիստոսի մասին – Նրանք, ովքեր հավատում են Քրիստոսին, կհավատան Նեփիի խոսքերին, որոնք կկանգնեն որպես վկայություն արդարադատության դատարանի առջև: Մոտ 559–545թթ. Զ.Ժ.ա.:

Եվ այժմ ես՝ Նեփիս, չեմ կարող

2բ 2 Նեփի 31.13:
3ա սո՛ւ Հրեշտակներ:
բ Երեմ. ԺԵ.16:
4ա սո՛ւ Խնդրել:
6ա 3 Նեփի 11.8:

7ա սո՛ւ Անհավատություն:
բ 2 Նեփի 31.2–3,
Հակոբ 4.13:
8ա սո՛ւ Աղոթք:
բ Մոսիա 4.14:

սո՛ւ ԳԼ:
9ա 3 Նեփի 20.1,
Վևո՛ւ 75.11:
բ Մովսես 5.8:
գ Ալմա 34.27:

գրել բոլոր բաները, որոնք ուսուցանվում էին իմ ժողովրդի մեջ. ոչ էլ ես այնպես ^ագորեղ եմ գրելում, ինչպես խոսելում. քանզի, երբ մարդ ^բխոսում է Սուրբ Հոգու զորությամբ, Սուրբ Հոգու զորությունը տանում է այն, մինչև մարդկանց զավակների սրտերը:

2 Բայց ահա, կան շատերը, որ ^ակարծրացնում են իրենց սրտերը Սուրբ Հոգու դեմ, այնպես որ այն տեղ չի ունենում այնտեղ. ուստի, նրանք դեմ են նետում շատ բաներ, որոնք գրված են և համարում դրանք՝ որպես դատարկ բաներ:

3 Բայց ես՝ Նեփիս, գրել եմ, ինչ որ գրել եմ, և ես համարում եմ դա մեծ ^աարժեքի և հատկապես իմ ժողովրդի համար: Քանզի ես անընդհատ ^բաղոթում եմ նրանց համար ցերեկով, և իմ աչքերը քացացնում են իմ բարձր զիջերով՝ նրանց համար. և ես կանչում եմ առ իմ Աստված հավատքով, և ես զիտեմ, որ նա կլսի իմ աղաղակը:

4 Եվ ես զիտեմ, որ Տեր Աստված կնվիրագործի իմ աղոթքներն իմ ժողովրդի օգտի համար: Եվ խոսքերը, որոնք ես գրել եմ տկարության մեջ, ^աուժեղ կդարձվեն նրանց համար. քանզի այն նրանց ^բհամոզում է բարիք անել. այն նրանց հայտնի է դարձնում իրենց հայրերի մասին. և այն խոսում է Հիսուսի մասին և համոզում է նրանց հավատար նրան և համբե-

րել մինչև վերջ, որը կյանք է ^գհավերժական:

5 Եվ այն ^ախիստ է խոսում ընդդեմ մեղքի՝ համաձայն ճմարտության ^բպարզության. ուստի, ոչ մի մարդ չի բարկանա խոսքերի վրա, որոնք ես գրել եմ, եթե նա չլինի դևի ոգով:

6 Ես հրճվում եմ պարզությամբ. ես հրճվում եմ ճմարտությամբ. ես հրճվում եմ իմ Հիսուսով, քանզի նա ^ափրկագնել է իմ հոգին դժոխքից:

7 Ես ^ագթություն ունեմ իմ ժողովրդի հանդեպ և մեծ հավատք՝ Քրիստոսում, որ ես կհանդիպեմ շատ անբիժ հոգիների նրա ատյանում:

8 Ես գթություն ունեմ ^ահրեայի հանդեպ,– ես ասում եմ հրեա, որովհետև ի նկատի ունեմ նրանց, որտեղից ես եկել եմ:

9 Ես գթություն ունեմ նաև ^ահեթանոսների հանդեպ: Բայց ահա, սրանցից ոչ մեկի համար չեմ կարող հուսալ, մինչև նրանք ^բչիաշտվեն Քրիստոսի հետ, և չմտնեն ^գնեղ դռնով, և ^դչքայլեն ^եանձուկ արահետով, որ տանում է դեպի կյանք, և չշարունակեն արահետով մինչև փորձության օրվա վերջը:

10 Եվ այժմ, իմ սիրելի՛ եղբայրներ և նաև հրեաներ, և բոլոր աշխարհի ծայրեր, լսեք այս խոսքերը և ^ահավատացեք Քրիստո-

33 1ա Եթեր 12.23–24:
 բ ՎևոՒ 100.7–8:
 2ա Հել. 6.35–36:
 3ա սոՒ Սուրբ գրքեր –
 Սուրբ գրքերի արժեքը:
 բ Ենովս 1.9–12, ՄԽ 1.8:
 4ա Եթեր 12.26–27:
 բ Մոր. 7.13:
 գ սոՒ Հավերժական կյանք:

5ա 1 Նեփի 16.1–3,
 2 Նեփի 9.40:
 բ 2 Նեփի 31.3,
 Հակոբ 4.13:
 6ա սոՒ Փրկագնել,
 Փրկագնված,
 Փրկագնում:
 7ա սոՒ Գթություն:
 8ա սոՒ Հրեաներ:
 9ա սոՒ Հեթանոսներ:

բ սոՒ Քավել,
 Քավություն:
 գ 2 Նեփի 9.41:
 դ սոՒ Քայլել, Քայլել
 Ասածո հետ:
 ե Հել. 3.29–30,
 ՎևոՒ 132.22:
 10ա սոՒ Հավատ,
 Հավատալ:

սին. և եթե դուք չեք հավատում այս խոսքերին, հավատացեք Քրիստոսին: Եվ եթե դուք հավատաք Քրիստոսին, դուք կհավատաք այս Մխոսքերին, քանզի դրանք Քրիստոսի Պխոսքերն են, և նա է դրանք տվել ինձ. և դրանք Պտվորեցնում են բոլոր մարդկանց, որ նրանք պետք է բարիք անեն:

11 Եվ եթե դրանք Քրիստոսի խոսքերը չեն, ինքներդ դատեք, քանզի վերջին օրը Քրիստոսը ցույց կտա ձեզ, Պգորությամբ և մեծ փառքով, որ դրանք իր խոսքերն են. և ես և դուք կկանգնենք երես առ երես նրա Պդատարանի առաջ, և դուք կիմանաք, որ չնայած իմ տկարությանը, ինձ պատվիրվել է, նրա կողմից, գրել այս քաները:

12 Եվ ես աղոթում եմ Հորը, Քրիստոսի անունով, որ մեզանից շատերը, եթե ոչ բոլորը, կարողա-

նան փրկվել նրա Պարքայությունում այն մեծ և վերջին օրը:

13 Եվ այժմ, իմ սիրելի՛ եղբայրներ, բոլոր նրանք, ովքեր Իսրայելի տնից են, և դուք, բոլոր աշխարհի ծայրեր, ես խոսում եմ ձեզ հետ ինչպես ձայնը մեկի, որն Պաղաղակում է փոշու միջից. Մնաք բարով, մինչև այն մեծ օրվա գալը:

14 Եվ դուք, որ չեք ճաշակի Աստծո բարիքից և չեք հարգի հրեաների Պխոսքերը և նաև իմ Մխոսքերը, և այն խոսքերը, որոնք դուրս կգան Աստծո Գառի բերանից, ահա, ես հղում եմ ձեզ հավիտենական մնաք բարով, քանզի այս խոսքերը Պկդատապարտեն ձեզ վերջին օրը:

15 Քանզի, ինչ ես կնքում եմ երկրի վրա, կրեքվի ձեր դեմ Պդատաստանի արժոյի առաջ. քանզի այսպես է պատվիրել ինձ Տերը, և ես պետք է հնազանդվեմ: Ամեն:

ՆԵՓԻԻ ԵՂԲՈՐ

ՀԱԿՈՒԲԻ ԳԻՐՔԸ

Նրա քարոզի խոսքերն իր եղբայրներին: Նա կարկամեցնում է մի մարդու, որը ջանում է տապալել Քրիստոսի վարդապետությունը: Մի քանի խոսք Նեփիի ժողովրդի պատմության վերաբերյալ:

ԳԼՈՒԽ 1

Հակոբը և Հովսեփը ջանում են համոզել մարդկանց՝ հավատալ Քրիստոսին և պահել նրա պատվիրանները – Նեփին մահանում է – Ամբարշտությունը գերակշռում է

Նեփիացիների մեջ: Մոտ 544–421թթ. Ք.ծ.ա.:

ՔԱՆՁԻ եղավ այնպես, որ Բիսունևիկն գտարի էր անցել այն ժամանակից, երբ Լեքին թողեց Երուսաղեմը. ուստի, Նեփին

10բ սո՛ւ Մորմոնի Գիրքը:
գ Մոր. 10.27–29:
դ 2 Նեփի 25.28:
11ա Եթեր 5.4,
Մոր. 7.35:

բ Հայտ. Ի.12,
Մոր. 10.34:
12ա սո՛ւ Սելեստիալ փառք:
13ա Ես. ԻԹ.4,
2 Նեփի 26.16:

14ա սո՛ւ Աստվածաշունչ:
բ սո՛ւ Մորմոնի Գիրքը:
գ 2 Նեփի 29.11,
Եթեր 4.8–10:
15ա ՄԻ 1.11:

ինձ՝ Հակոբիս, մի թպատվիրան տվեց Գփոքր թիթեղների վերաբերյալ, որոնց վրա այս բաները փորագրված են:

2 Եվ նա ինձ՝ Հակոբիս, պատվիրան տվեց, որ ես պետք է գրեմ այս թիթեղների վրա մի քանիսն այն բաներից, որոնք ես համարում էի ամենաարժեքավորը. որ ես, թեկուզև թեթևակի, չպետք է անդրադառնայի այս ժողովրդի պատմությանը, որը կոչվում է Նեփիի ժողովուրդ:

3 Քանզի նա սասց, որ իր ժողովրդի պատմությունը պետք է փորագրվի իր մյուս թիթեղների վրա, և որ ես պետք է պահպանեի այս թիթեղները և իմ հետնորդներին փոխանցեի՝ սերնդե-սերունդ:

4 Եվ, եթե լիներ քարոզչություն, որը սրբազան էր, կամ հայտնություն, որը մեծ էր, կամ մարգարեություն, որ ես պիտի փորագրեի դրանց՝ Գլուխներն այս թիթեղների վրա, և անդրադառնայի դրանց, որքան հնարավոր է շատ, ի սեր Քրիստոսի և ի սեր մեր ժողովրդի:

5 Քանզի հավատքի և մեծ անհանգստության պատճառով, մեզ, իսկապես, հայտնի էր դարձվել մեր ժողովրդի վերաբերյալ, թե ինչեր պետք է՝ պատահեին նրանց հետ:

6 Եվ մենք ունեինք մաև բազմաթիվ հայտնություններ և շատ մարգարեության ոգի. ուստի, մենք

գիտեինք Քրիստոսի մասին, և նրա արքայության, որը պիտի գար:

7 Ուստի, մենք աշխատում էինք ջանասիրաբար մեր ժողովրդի մեջ, որպեսզի կարողանայինք համոզել նրանց՝ զալ Քրիստոսի մոտ և ճաշակել Աստծո բարությունից, որպեսզի նրանք կարողանային մտնել նրա թիթեղատը, որպեսզի չլիներ թե ինչ-որ ձևով նա երդվեր իր ցասման մեջ, որ նրանք չպետք է մտնեին ներս, ինչպես Պաղարանքի ժամանակ, փորձության օրերին, մինչ Իսրայելի զավակներն անապատում էին:

8 Ուստի, մենք կամենում էինք Աստծուց, որ կարողանայինք համոզել բոլոր մարդկանց՝ չապստամբել Աստծո դեմ, ղրդելով նրան բարկության, այլ որ բոլոր մարդիկ հավատային Քրիստոսին և ըմբռնեին նրա մահը, և կրեին նրա Գլխաչը, և տանեին աշխարհի ծաղրը. ուստի, ես՝ Հակոբս, վերցնում եմ ինձ վրա՝ կատարելու իմ եղբայր Նեփիի պատվիրանները:

9 Եվ Նեփին սկսեց ծերանալ, և նա տեսավ, որ շուտով պիտի մահանար. ուստի, նա թօեց մի մարդու՝ այնուհետև լինելու թագավոր և կառավարիչ իր ժողովրդի վրա, համաձայն Գթագավորների քաղաքապետների:

10 Ժողովուրդը, չափազանց սիրելով Նեփիին, նա լինելով մեծ

[ՀԱՎՈՒՔ]

- 1ա սուր Հակոբ' Լեթիի որդի:
- բ Հակոբ 7:27:
- գ 2 Նեփի 5.28-33, Հակոբ 3.13-14: սուր Թիթեղներ:
- 4ա նշ. գլխավոր, կարևոր հարցերը:
- 5ա 1 Նեփի 12:

- 6ա 1 Նեփի 10.4-11, 19.8-14:
- 7ա 2 Նեփի 9.41, Օմնի 1.26, Մոր. 10.32: բ սուր Հանգիստ:
- գ Թվ. ԺԳ.23, Բ Օր. Ա.35-37, ՎևՈԲ 84.23-25:
- դ Եբր. Գ.8:
- ե Թվ. ԻԶ.65,

- 1 Նեփի 17.23-31:
- 8ա սուր Ապստամբություն:
- բ 1 Նեփի 17.30, Ալմա 12.36-37, Հել. 7.18:
- գ ՋՄԹ, Մատ. 16.25-26, Գուլ. ԺԳ.27:
- 9ա 2 Նեփի 1.14:
- բ սուր Օծել:
- գ 2 Նեփի 6.2, Հարոմ 1.7:

պաշտպան նրանց համար, տիրապետելով Լաբանի՝ Մարին՝ նրանց պաշտպանության համար, և իր բոլոր օրերում աշխատած լինելով նրանց բարօրության համար,-

11 Ուստի, ժողովուրդը փափագում էր հիշողության մեջ պահպանել նրա անունը: Եվ ով որ թագավորներ նրա տեղը, ժողովրդի կողմից պիտի կոչվեր երկրորդ Նեփի, երրորդ Նեփի, և այսպես շարունակ, համաձայն թագավորների թագավորումների. և այսպես էին նրանք կոչվում ժողովրդի կողմից, ինչ անուն էլ որ նրանք ունենային:

12 Եվ եղավ այնպես, որ Նեփին մահացավ:

13 Արդ, ժողովուրդը, որոնք ՄԼամանացիներ չէին, ՄՆեփիացիներ էին. այնուամենայնիվ, նրանք կոչվում էին Նեփիացիներ, Հակոբացիներ, Հովսեփացիներ, Չորամացիներ, Լամանացիներ, Լեմուելացիներ և Իսմայելացիներ:

14 Բայց ես՝ Հակոբս, այսուհետ չեմ տարբերակի նրանց այդ անուններով, այլ ես՝ կկոչեմ նրանց Լամանացիներ, որոնք ջանում են կործանել Նեփիի ժողովրդին, և նրանք, ովքեր բարյացակամ են Նեփիի հանդեպ, ես կկոչեմ ՄՆեփիացիներ կամ Նեփիի ժողովուրդ՝ համաձայն թագավորների թագավորումների:

15 Եվ այժմ եղավ այնպես, որ

Նեփիի ժողովուրդը երկրորդ թագավորի թագավորության ներքո սկսեցին իրենց սրտերում կարծրանալ և իրենց թույլ տվեցին որոշ չափով ամբարիշտ արարքներ, մնան Դավթին հնում, և Սողոմոնին՝ նրա որդուն, ցանկանալով բազմաթիվ կանայք ու հարճեր:

16 Այո, և նրանք նաև սկսեցին փնտրել շատ ոսկի և արծաթ, և սկսեցին ինչ-որ չափով բարձրամտանալ հպարտությունից:

17 Ուստի ես՝ Հակոբս, տվեցի նրանց այս խոսքերը, երբ ես սովորեցնում էի նրանց՝ տաճարում, սկզբում ստացած լինելով իմ Քհանճնարարությունը Տիրոջից:

18 Քանզի ես՝ Հակոբս, և իմ եղբայր Հովսեփը, Նեփիի ձեռքով՝ մովիբաբերվել էինք այս ժողովրդի քահանաներ և ուսուցիչներ:

19 Եվ մենք մեծարեցինք մեր Մպաշտոնը Տիրոջ համար, վերցնելով մեր վրա Քպատասխանատվությունը, որ մարդկանց մեղքերը մեր գլխին դրվեն, եթե մենք չսովորեցնենք նրանց Աստծո խոսքը ողջ ջանասիրությամբ. ուստի, աշխատելով մեր զորությամբ, նրանց Պարյունը չէր կարող գալ մեր հանդերձների վրա. հակառակ դեպքում նրանց արյունը կգար մեր հանդերձների վրա, և մենք անբիժ չէինք համարվի վերջին օրը:

10ա1 Նեփի 4.9,
2 Նեփի 5.14,
ՄԽ 1.13,
Մոսիա 1.16,
ՎևՈՒ 17.1:
13ա Ենովս 1.13,
ՎևՈՒ 3.18:
բ սուր Նեփիացիներ:
գ 1 Նեփի 4.35,

4 Նեփի 1.36-37:
14ա Մոսիա 25.12,
Ալմա 2.11:
բ 2 Նեփի 4.11:
գ 2 Նեփի 5.9:
15ա ՎևՈՒ 132.38-39:
17ա2 Նեփի 5.16:
սուր Տաճար՝ Տիրոջ
տուն:

բ սուր Կանչ, Աստծո
կողմից կանչված,
Կոչում:
18ա2 Նեփի 5.26:
19ա սուր Պաշտոն,
Պաշտոնյա:
բ ՎևՈՒ 107.99-100:
սուր Տնտես:
գ 2 Նեփի 9.44:

ԳԼՈՒԽ 2

Հակոբը պախարակում է սերը դեպի հարստությունները, հպարտությունը և անմաքրությունը – Մարդիկ կարող են փնտրել հարստություններ՝ օգնելու իրենց մերձավորներին – Հակոբը դատապարտում է չքույլատրված բազմակնության կիրառումը – Տերը հիանում է կանանց մաքրաբարոյությամբ: Մոտ 544–421թթ. Ք.ծ.ա.:

ԽՈՍՔԵՐԸ, որոնք Հակոբը՝ Նեփիի եղբայրը, խոսեց Նեփիի ժողովրդի համար, Նեփիի մահից հետո.

2 Արդ, իմ սիրելի՛ եղբայրներ, ես՝ Հակոբս, համաձայն այն պատասխանատվության, որի ներքո եմ ես Աստծո հանդեպ՝ լրջմտությամբ փառավոր անելու իմ պաշտոնը, և որ ես կարողանամ ազատել իմ հանդերձները ձեր մեղքերից, այս օրը ես եկա վեր՝ տաճար, որպեսզի կարողանամ հայտարարել ձեզ Աստծո խոսքը:

3 Եվ դուք ինքներդ գիտեք, որ առ այսօր ես ջանասեր եմ եղել իմ կոչման պաշտոնում. բայց այսօր ես նեղված եմ ձեր հոգիների բարօրության համար, շատ ավելի մեծ ցանկությամբ և մտահոգությամբ, քան մինչև այժմ եղել եմ:

4 Քանզի ահա, առ այժմ դուք հնազանդ եք եղել Տիրոջ խոսքին, որը ես տվել եմ ձեզ:

5 Բայց ահա, լսեք ինձ և իմացեք, որ երկնքի և երկրի ամենագոր Ստեղծողի օգնությամբ ես կարող եմ ասել ձեզ ձեր՝ մտքերի վերաբերյալ, թե ինչպես եք դուք սկսում գործել մեղքի մեջ, մեղք, որը շատ

պիղծ է թվում ինձ համար, այո, և պիղծ՝ Աստծո համար:

6 Այո, դա վշտացնում է իմ հոգին և ստիպում է ինձ ընկրկել ամոթով իմ Արարչի ներկայության առջև, որ ես պետք է վկայեմ ձեզ՝ ձեր սրտերի ամբարշտության վերաբերյալ:

7 Եվ նաև վշտացնում է ինձ, որ ես պետք է գործածեմ խոսքի այսքան շատ՝ խստություն ձեր հանդեպ՝ ձեր կանանց և ձեր երեխաների առջև, որոնցից շատերի զգացմունքները չափազանց քնքուշ են, և՛ մաքրաբարո ու նուրբ՝ Աստծո առջև, բան, որը հաճո է Աստծուն.

8 Եվ ես կարծում եմ, որ նրանք եկել են այստեղ՝ լսելու Աստծո հաճելի խոսքը, այո, խոսքը, որն ամոքում է վիրավոր հոգին:

9 Ուստի, դա ճնշում է իմ հոգին, որ ես պետք է պարտադրվեմ, այն խիստ պատվիրանի պատճառով, որը ես ստացել եմ Աստծուց, խրատելու ձեզ ձեր հանցանքների համաձայն, մեծացնելու վերքերը նրանց, ովքեր արդեն վիրավոր են, նրանց վերքերն ամոքելու և բժշկելու փոխարեն. և նրանք, ովքեր վիրավորված չեն, Աստծո հաճելի խոսքը վայելելու փոխարեն դաշույններ ունեն դրված՝ խոցելու նրանց հոգիները և վիրավորելու նրանց նրբազգաց միտքը:

10 Բայց, չնայած հանձնարարության մեծությանը, ես պետք է անեմ Աստծո խիստ՝ հրամանների համաձայն և ասեմ ձեզ ձեր ամբարշտության ու պղծությունների վերաբերյալ, սրտով մաքուրների և սրտով կոտրվածների ներկայու-

2 5ա Ալմա 12.3, ՎևոՒ 6.16: սոՒ Աստված,

Աստվածազուլիս: 7ա ՎևոՒ 121.43: p սոՒ Առաքինություն:

8ա Ալմա 31.5: 10ա սոՒ Պատվիրաններն Աստծո:

քյանք, և Ամենագոր Աստծո ^բսրա-
թափանց աչքի հայացքի ներքո:

11 Ուստի, ես պետք է ասեմ
ձեզ ճշմարտությունը՝ համաձայն
Աստծո խոսքի ^ապարզության:
Քանզի ահա, երբ ես հարցրեցի
Տիրոջը, այսպես եկավ ինձ խոսքը՝
ասելով. Հակոբ, վեր գնա տաճար
էզուց և հայտարարի՛ր խոսքը,
որը ես կտամ քեզ այս ժողովրդի
համար:

12 Եվ այժմ ահա, իմ եղբայր-
նե՛ր, այս է խոսքը, որը ես
հայտարարում եմ ձեզ, որ ձեզա-
նից շատերը սկսել են որոնել ոս-
կի, և արծաթ, և ամեն ձևի արժե-
քավոր ^ահանքանյութեր, որոնցով
այս երկիրը, որը խոստումի
^բերկիր է ձեզ համար և ձեր սերըն-
դի համար, առավել առատորեն
հարուստ է:

13 Եվ նախախնամության ձեռքն
ամենաբարյացակամորեն ժպտա-
ցել է ձեզ, այնպես, որ դուք ձեռք
եք բերել մեծ հարստություններ.
Ի քանի որ ձեզանից ոմանք ձեռք
են բերել ավելի առատորեն, քան
ձեր եղբայրները, դուք ^աբարձրա-
մըտացել եք ձեր սրտերի հպար-
տությունից, և ձեր հանդերձների
քանկարժեքության պատճառով
կրում եք խիստ պարանոցներ և
բարձր գլուխներ, և հալածում
եք ձեր եղբայրներին, որովհետև
կարծում եք, որ դուք ավելի լավն
եք, քան նրանք:

14 Եվ այժմ, իմ եղբայրնե՛ր, դուք
կարծում եք, թե Աստված արդա-
րացնո՞ւմ է ձեզ այս բանում: Ահա,

ես ասում եմ ձեզ՝ Ո՛չ: Այլ նա
դատապարտում է ձեզ, և եթե
դուք շարունակեք համառել այս
բաներում, նրա դատաստանները
սրընթաց պիտի գան ձեզ վրա:

15 Ա՛խ, երանի՛ թե նա ցույց
տար ձեզ, որ կարող է խոցել
ձեզ, և իր աչքի մի հայացքով կա-
րող է ջախջախել ձեզ՝ փոշույն
հավասար:

16 Ա՛խ, երանի՛ նա ազատեր ձեզ
այս անօրինությունից և պղծու-
թյունից: Եվ ա՛խ, երանի՛ թե դուք
լսեիք նրա հրամանների խոսքին
և թույլ չտայիք ձեր սրտերի այս
^ահպարտությանը՝ կործանելու ձեր
հոգիները:

17 Մտածեք ձեր եղբայրների
մասին, ինչպես ինքներդ ձեր մա-
սին և բարյացակամ եղեք բոլորի
հանդեպ և առատաձեռն՝ ձեր
^աունեցվածքով, որ ^բնրանք կարո-
ղանան լինել հարուստ, ինչպես
դուք:

18 Բայց նախքան ^ահարստու-
թյուններ փնտրելը, փնտրեք Աստ-
ծո ^բարքայությունը:

19 Եվ նրանից հետո, երբ դուք
հույս ձեռք բերեք Քրիստոսում,
դուք ձեռք կբերեք հարստություն-
ներ, եթե փնտրեք. և դուք պետք
է փնտրեք դրանք բարիք ^աանելու
մտադրությամբ՝ հազցնելու մեր-
կերին, կերակրելու սովածներին,
ազատելու գերյալներին և սփո-
փելու հիվանդներին ու չարչար-
վածներին:

20 Եվ այժմ, իմ եղբայրնե՛ր, ես
խոսեցի ձեզ հետ հպարտության

10բ 2 Նեփի 9.44:
11ա 2 Նեփի 25.4, 31.2–3:
12ա 1 Նեփի 18.25,
Հել. 6.9–11,
Եթեր 10.23:
բ 1 Նեփի 2.20:
սուր Խոստացված

երկիր:
13ա Մորմ. 8.35–39:
16ա սուր Հպարտություն:
17ա սուր Ողորմություններ,
Ողորմություններ
տալը. Բարօրություն:
բ 4 Նեփի 1.3:

18ա Գ Թագ. Գ.11–13,
Մար. Ժ.17–27,
2 Նեփի 26.31,
ՎևՈՒ 6.7:
սուր Հպարտություններ:
բ Գուլ. ԺԲ.22–31:
19ա Մոսիա 4.26:

վերաբերյալ. և ձեզանից նրանք, ովքեր չարչարել են իրենց հարևանին և հալածել են նրան, որովհետև ձեր սրտում դուք հպարտ էիք այն բաներով, որոնք Աստված տվել է ձեզ, ի՞նչ կասեք այդ մասին:

21 Դուք չե՞ք կարծում, որ այդպիսի բաները պիղծ են նրա համար, ով ստեղծել է բոլոր մարմինները: Եվ մի արարածը նույնքան թանկ է նրա աչքում, որքան մյուսը: Եվ բոլոր մարմինները փոշուց են. և միևնույն նպատակի համար է նա ստեղծել նրանց, որպեսզի նրանք պահեն նրա ՝պատվիրանները և հավիտյան փառավորեն նրան:

22 Եվ այժմ, ես վերջ եմ տալիս այս հպարտության վերաբերյալ ձեզ հետ խոսելուն: Եվ եթե ես ստիպված չլինեի խոսել ձեզ հետ ավելի վատթար հանցանքի մասին, իմ սիրտը չափազանց կհրճվեր ձեզ համար:

23 Բայց Աստծո խոսքը ճնշում է ինձ՝ ձեր ավելի վատթար հանցանքների պատճառով: Քանզի ահա, այսպես է ասում Տերը. Այս ժողովուրդը սկսում է աճել անօրինության մեջ. նրանք չեն հասկանում սուրբ գրքերը, քանզի ձգտում են արդարացնել իրենց պոռնկություններ անելը, այն բաների պատճառով, որոնք գրվել էին Դավթի և նրա որդու՝ Սողոմոնի վերաբերյալ:

24 Ահա, Դավիթն ու ՝Սողոմոնը, իսկապես, շատ Քանայք և հար-

ճեր ունեին, որը պիղծ էր իմ առաջ, ասում է Տերը:

25 Ուստի, այսպես է ասում Տերը, ես առաջնորդել եմ այս ժողովրդին առաջ՝ Երուսաղեմի հողից դուրս, իմ բազկի զորությամբ, որ ես կարողանայի ինձ համար մի ՝արդար ճյուղ աճեցնել Հովսեփի երանքի պտղից:

26 Ուստի, ես՝ Տեր Աստված, չեմ հանդուրժի, որ այս ժողովուրդն անի, ինչպես հնում էին անում:

27 Ուստի, իմ եղբայրներ, լսեք ինձ և ականջ դրեք Տիրոջ խոսքին: Քանզի չպետք է ձեր մեջ որևէ մարդ ունենա ՝մեկ կնոջից ավելի. և հարճեր նա չպետք է ունենա՝ ոչ մի հատ.

28 Քանզի ես՝ Տեր Աստվածս, հիանում եմ կանանց ՝մաքրաբարոյությամբ: Եվ պոռնկությունները պղծություն են իմ առաջ. այսպես է ասում Չորաց Տերը:

29 Ուստի, այս ժողովուրդը պետք է պահի իմ պատվիրանները, ասում է Չորաց Տերը, այլապես ՝անհիծված կլինի երկիրը նրանց համար:

30 Քանզի, եթե ես կամենամ, ասում է Չորաց Տերը, ՝սերունդ աճեցնել ինձ համար, ես կպատվիրեմ իմ ժողովրդին. այլապես նրանք պետք է հնազանդվեն այս խոսքերին:

31 Քանզի ահա, ես՝ Տերս, տեսա վիշտը և լսեցի իմ ժողովրդի դուստրերի ողբը Երուսաղեմի հողում, այո, և բոլոր երկրներում իմ ժողովրդի, իրենց ամուսինների

21ա Վև.11.20, Աբբ. 3.25–26:
24ա Գ. Թագ. ԺԱ.1, Նենմ. ԺԳ.25–27:
բ Գ. Թագ. ԺԱ.1–3, Եգր. Թ.1–2, Վև.11 132.38–39:

25ա Ծն. ԽԹ.22–26, Ամովս Ե.15, 2 Նեփի 3.5, Ալմա 26.36:
սու՝ Լեքի՝ Նեփիի հայր:
27ա Վև.11 42.22, 49.16:

սու՝ Ամուսնություն, Ամուսնանալ:
28ա սու՝ Մաքրաբարոյություն:
29ա Եթեր 2.8–12:
30ա Մաղ. Բ.15, Վև.11 132.61–66:

ԳԼՈՒԽ 3

ամբարշտության և պղծությունների պատճառով:

32 Եվ ես չեմ հանդուրժի, ասում է Չորաց Տերը, որ աղաղակներն այս ժողովրդի ազնվագեղ դուստրերի, որոնց ես դուրս եմ առաջնորդել Երուսաղեմի հողից, հասնեն ինձ՝ իմ ժողովրդի տղամարդկանց դեմ, ասում է Չորաց Տերը:

33 Քանզի նրանք չպետք է գերի տանեն իմ ժողովրդի դուստրերին՝ նրանց հեզության պատճառով, հակառակ դեպքում ես կայցելեմ նրանց դառն անեծքով, մինչև իսկ ի կործանում. քանզի նրանք չպետք է «պռռնկություն անեն, ինչպես հնում էին անում, ասում է Չորաց Տերը:

34 Եվ այժմ ահա, իմ եղբայրներ՝, դուք գիտեք, որ այս պատվիրանները տրվել էին մեր հայր Լեքիին. ուստի, դուք գիտե՛իք դրանք անցյալում. և դուք արժանացել եք մեծ դատապարտման. քանզի դուք արել եք այս բաները, որոնք դուք չպետք է արած լինեիք:

35 Ահա, դուք արել եք ավելի «մեծ անօրինություններ, քան Լամանացիները՝ մեր եղբայրները: Դուք կոտրել եք ձեր քնքուշ կանանց սրտերը և կորցրել եք ձեր զավակների վստահությունը, նրանց առաջ ձեր վատ օրինակի պատճառով, և նրանց սրտերի հեկեկոցը բարձրանում է վեր՝ առ Աստված, ձեր դեմ: Եվ Աստծո խոսքի խստության պատճառով, որը վայր է իջնում ձեր դեմ, շատ սրտեր մեռան՝ խոցված խորը վերքերով:

Սրտով մաքուրներն ընդունում են Աստծո հաճելի խոսքը – Լամանացիների արդարությունը գերազանցում է Նեփիացիների արդարությանը – Հակոբը նախագուշացնում է պռռնկության, հեշտասիրության և ամեն մեղքի համար: Մոտ 544–421թթ. Ք.ծ.ա.:

ԲԱՅՅ, ահա, ես՝ Հակոբս, ցանկանում եմ խոսել ձեզ հետ, որ մաքուր եք սրտով: Նայեք առ Աստված մտքի կայունությամբ, և աղոթեք նրան խիստ մեծ հավատքով, և նա կսփոփի ձեզ ձեր չարչարանքների մեջ, և կպաշտպանի ձեր դատը, և դատաստան կուղարկի նրանց վրա, ովքեր փնտրում են ձեր կործանումը:

2 Ո՛վ դուք, բուրդ, որ մաքուր եք սրտով, բարձրացրեք ձեր գլուխները և ընդունեք Աստծո հաճելի խոսքը և վայելեք նրա սերը. քանզի ձեզ թույլ է տրված, եթե ձեր մտքերը «կայուն են հավիտյան:

3 Բայց վա՛յ, վա՛յ ձեզ, որ մաքուր չեք սրտով, որ «կեղտոտ եք այսօր Աստծո առաջ, քանզի մինչև դուք չապաշխարեք, երկիրն անիծված է ձեզ համար. և Լամանացիները, որոնք կեղտոտ չեն ձեզ նման, այնուամենայնիվ, նրանք ^բանիծված են դառն անեծքով, կխարազանեն ձեզ, մինչև իսկ ձեր կործանումը:

4 Եվ սրընթաց գալիս է ժամանակը, որ եթե դուք չապաշխարեք, նրանք կտիրեն ձեր ժառանգության հողին, և Տեր Աստված

33ա սո՛ւ Ջգայական, Ջգայականություն. Սեռական

անբարոյականություն: 35ա Հակոբ 3.5–7: 3 2ա Ալմա 57.26–27:

3ա սո՛ւ Կեղտ, Կեղտություն: p 1 Նեփի 12.23:

«Կառաջնորդի արդարներին հենու՝ ձեր միջից դուրս:

5 Ահա, Լամանացիները՝ ձեր եղբայրները, որոնց դուք ստում եք իրենց կեղտոտության և անեծքի պատճառով, որը եկել է նրանց մաշկի վրա, ավելի արդար են, քան դուք. քանզի նրանք չեն մոռացել Տիրոջ պատվիրանը, որը տրվել էր մեր հորը, որ նրանք պետք է ունենային միայն մեկ կին և ոչ մի հարձակված է ունենային, և պոռնկություններ չպետք է արվեին նրանց մեջ:

6 Եվ այժմ, այս պատվիրանը նրանք ջանում են, որ պահեն. ուստի, այս պատվիրանը կատարելու այդ ջանքերի համար, Տեր Աստված չի կործանի նրանց, այլ «ողորմած կլինի նրանց հանդեպ. և մի օր նրանք կդառնան օրհնված ժողովուրդ:

7 Ահա, նրանց ամուսինները «սիրում են իրենց կանանց, և նրանց կանայք սիրում են իրենց ամուսիններին. և նրանց ամուսիններն ու նրանց կանայք սիրում են իրենց երեխաներին. և նրանց անհավատությունն ու ատելությունը ձեր հանդեպ՝ իրենց հայրերի անօրինության պատճառով է. ուստի, որքանով եք դուք ավելի լավը, քան նրանք, ձեր մեծ Ստեղծողի աչքում:

8 Ո՛վ իմ եղբայրներ, ես վախենում եմ, որ եթե դուք չապաշխարեք ձեր մեղքերից, նրանց մաշկն ավելի սպիտակ կլինի, քան ձերը, երբ դուք բերվեք նրանց հետ Աստծո գահի առաջ:

9 Ուստի, մի պատվիրան եմ ես տալիս ձեզ, որն Աստծո խոսքն է, որ դուք այլևս չգազրախոսեք նրանց դեմ՝ նրանց մաշկի մգուքյան պատճառով. ոչ էլ դուք պետք է գազրախոսեք նրանց դեմ՝ նրանց կեղտոտության պատճառով. այլ դուք պետք է հիշեք ձեր սեփական կեղտոտությունը և հիշեք, որ նրանց կեղտոտությունը եկել է իրենց հայրերի պատճառով:

10 Ուստի, դուք պետք է հիշեք ձեր «զավակներին, ինչպես է որ դուք վշտացրել եք նրանց սրտերն այն օրինակի պատճառով, որ դուք տվել եք նրանց առջև. և նաև հիշեք, որ ձեր կեղտոտության պատճառով դուք կարող եք կործանման բերել ձեր զավակներին, և նրանց մեղքերը կդիպվեն ձեր գլխին վերջին օրը:

11 Ո՛վ իմ եղբայրներ, ականջ դրեք իմ խոսքերին. արթնացրեք ձեր հոգիների ունակությունները. սթափվեք, որ կարողանաք «գարթնել մահվան մի բիցից. և ազատեք ձեզ ղոժոխքի ցավերից, որ չլինի թե դառնաք դևի զիրեշտակներ՝ գցվելու այն ծծմբի և կրակի լիճը, որը երկրորդ մահն է:

12 Եվ արդ, ես՝ Հակոբս, Նեփիի ժողովրդի հետ խոսեցի ավելի շատ բաներ՝ նախագուշացնելով նրանց պոռնկության և ղեշտասիրության, ու ամեն տեսակի մեղքի դեմ՝ նրանց ասելով դրանց սուսկալի հետևանքները:

13 Եվ գործերի մեկ հարյուրերորդ մասն այս ժողովրդի, որոնք այժմ դարձել էին բազմաքանակ,

4ա Օմնի 1.5–7, 12–13:
5ա Հակոբ 2.35:
6ա 2 Նեփի 4.3, 6–7,
Հել. 15.10–13:
7ա սոս Ընտանիք. Սեր:

10ա սոս Երեխա,
Երեխաներ:
11ա Ալմա 5.6–9:
բ սոս Գժոխք:
գ 2 Նեփի 9.8–9:

դ սոս Մահ հոգևոր:
12ա սոս Պոռնկություն:
բ սոս Ցանկանալ,
Ամբարիշտ,
Ամբարշտություն:

չեն կարող գրվել ^աայս թիթեղների վրա. բայց նրանց գործերից շատերը գրված են ավելի մեծ թիթեղների վրա, և նրանց պատերազանները, և նրանց հակառակությունները, և նրանց թագավորների թագավորումը:

14 Այս թիթեղները կոչվում են Հակոբի թիթեղներ, և դրանք պատրաստված էին Նեփիի ձեռքով: Եվ ես վերջ եմ դնում այս խոսքերը խոսելուն:

ԳԼՈՒԽ 4

Բոլոր մարգարեները պաշտում էին Հորը՝ Քրիստոսի անունով – Աբրահամի կողմից Իսահակի մատուցումը՝ նմանությունն էր Աստծո ու նրա Միածնի – Մարդիկ պետք է հաշտեցնեն իրենց Աստծո հետ՝ Քավոթյան միջոցով – Հրեաները կներժեն հիմնաքարը: Մոտ 544–421թթ. Ք.ծ.ա.:

Եվ ահա եղավ այնպես, որ ես՝ Հակոբս, շատ ծառայած լինելով իմ ժողովրդին՝ խոսքով (և ես չեմ կարող գրել, բացի իմ մի քանի խոսքերից, թիթեղների վրա մեր խոսքերը փորագրելու դժվարության պատճառով), և մենք գիտենք, որ այն բաները, որոնք մենք գրում ենք թիթեղների վրա, պիտի մնան.

2 Բայց ինչ բաներ էլ որ մենք գրենք որևէ քանի վրա, բացի թիթեղներից, պիտի ոչնչանան ու անհետանան. բայց մենք կարող ենք գրել մի քանի խոսքեր թի-

թեղների վրա, որոնք կտան մեր զավակներին, և նաև մեր սիրելի եղբայրներին գիտելիքի մի փոքր աստիճան մեր մասին, կամ իրենց հայրերի մասին,

3 Եվ այս բանում մենք, իսկապես, հրճվում ենք, և մենք տքնում ենք ջանասիրաբար, փորագրելով այս խոսքերը թիթեղների վրա, հուսալով, որ մեր սիրելի եղբայրները և մեր զավակները կստանան դրանք երախտապարտ սրտով, և կկարդան դրանք, որ կարողանան իմանալ իրենց առաջին ծնողների մասին ուրախությամբ, և ոչ թե տխրությամբ, կամ էլ արհամարհանքով:

4 Քանզի, այս միտումով ենք մենք գրել այս բաները, որպեսզի նրանք կարողանան իմանալ, որ մենք ^ագիտեինք Քրիստոսի մասին, և մենք ունեինք նրա փառքի մի հույս՝ նրա զալստից շատ հարյուրավոր տարիներ առաջ. և ոչ միայն մենք ինքներս ունեինք նրա փառքի մի հույս, այլ նաև բոլոր սուրբ ^ամարգարեները, որոնք մեզանից առաջ էին:

5 Ահա, նրանք հավատում էին Քրիստոսին և ^աերկրպագում էին Հորը՝ նրա անունով, և մենք նույնպես երկրպագում ենք Հորը՝ նրա անունով: Եվ այս նպատակով ենք մենք պահում Մովսեսի ^աօրենքը, որն ^աուղղում է մեր հոգիները դեպի նա. և այս պատճառով դա արդարությունն է համարվում մեզ համար, ճիշտ այնպես, ինչպես համարվեց Աբրահամին՝ անապատում, Աստծո հրամաններին հնազանդ

13ա1 Նեփի 19.1–4, Հակոբ 1.1–4:
4 4ա սուր Հիսուս Քրիստոս: Բ Դուկ. ԻԴ.25–27, Հակոբ 7.11,

Մոսիա 13.33–35, ՎևոՒ 20.26:
5ա Մովսես 5.8: Բ 2 Նեփի 25.24, Հարոմ 1.11,

Մոսիա 13.27, 30, Ալմա 25.15–16: սուր Մովսեսի օրենք: Գ Գաղ. Գ.24:

լինելու համար, իր որդի Իսահակին մատուցում անելիս, որը նմանությունն է Աստծո և նրա Պիածին Որդու:

6 Ուստի, մենք ուսումնասիրում ենք մարգարեներին, և մենք ունենք շատ հայտնություններ և «մարգարեության ոգի. և ունենալով բոլոր այս Քվկայությունները՝ մենք ձեռք ենք բերում հույս, և մեր հավատքը դառնում է անսասան, այնքան, որ մենք, իրոք, կարող ենք Գիրամայել Հիսուսի Դանունով և անգամ ծառերը հնազանդվում են մեզ, թե՛ լեռները, թե՛ ծովի ալիքները:

7 Այնուամենայնիվ, Տեր Աստված մեզ ցույց է տալիս մեր «թուլությունը, որ մենք կարողանանք իմանալ, որ նրա շնորհով և մարդկանց զավակների հանդեպ նրա մեծ բարեհաճություններով է, որ մենք զորություն ունենք անելու այս բաները:

8 Ահա, մեծ և զարմանալի են Տիրոջ գործերը: Որքա՛ն «անքրննելի են նրա Պարբուրդների խորքերը. և անհնարին է, որ մարդ իմանա նրա բոլոր ուղիները: Եվ ոչ մի մարդ չզգիտի նրա Պողիների մասին, մինչև այն հայտնի չդարձվի նրան. ուստի, եղբայրներ, մի՛ արհամարհեք Աստծո հայտնությունները:

9 Քանզի ահա, նրա խոսքի

«զորությամբ Քմարդը եկավ երկրի երեսի վրա, երկիր, որն արարվել էր նրա խոսքի զորությամբ: Ուստի, եթե Աստված ի զորու եղավ խոսել և աշխարհը եղավ, և խոսել, և մարդը ստեղծվեց, Օ՛հ, ուրեմն ինչո՞ւ ի զորու չէ հրամայելու Գերկրագնդին, կամ իր ձեռքերի ստեղծագործությանը երկրի երեսի վրա, ըստ իր կամքի և հաճության:

10 Ուստի, եղբայրներ, մի՛ փնտրեք Պարբուրդ տալ Տիրոջը, այլ խորհուրդ վերցնել նրա ձեռքից: Քանզի, ահա, դուք ինքներդ գիտեք, որ նա խրատում է Քիմաստությամբ, և արդարությամբ, և մեծ ողորմածությամբ իր բոլոր գործերի վրա:

11 Ուստի, սիրելի՛ եղբայրներ, հաշտվեք նրա հետ, նրա Պիածին Որդու՝ Քրիստոսի Քավությանը, և դուք կարող եք ձեռք բերել Գիարություն, համաձայն հարության զորության, որը Քրիստոսի մեջ է, և ներկայացեք որպես Քրիստոսի Պառաջնապտուղներ Աստծո համար, ունենալով հավատք, և փառքի բարի հույս ձեռք բերած նրանում, նախքան նա իրեն հայտնի կդարձնի մարմնում:

12 Եվ այժմ, սիրելիներ՛, մի զարմացեք, որ ես ասում եմ ձեզ այս բաները. քանզի ինչո՞ւ «չխոսել Քրիստոսի քավության մասին, և չհասնել նրա մասին կատարյալ

<p>5դ Ծն. ԻԲ.1-14, Հովհ. Գ.16-18: սո՛ր Պիածին: 6ա սո՛ր Մարգարեություն, Մարգարեանալ: բ սո՛ր Վկայություն: գ սո՛ր Չորություն: դ Գոր. Գ.6-16, 3 Նեփի 8.1: 7ա Եթեր 12.27: 8ա Հռովմ. ԺԱ.33-36: բ Վևո՛ր 19.10, 76.114:</p>	<p>սո՛ր Աստծո խորհուրդները: գ Ա Կոր. Բ.9-16, Ալմա 26.21-22: սո՛ր Գիտություն: դ Ես. ԾԵ.8-9: 9ա Մորմ. 9.17, Մովսես 1.32: բ սո՛ր Ստեղծել, Ստեղծում. Մարդ, Մարդիկ: գ Հել. 12.8-17:</p>	<p>10ա 2 Նեփի 9.28-29, Ալմա 37.12, 37, Վևո՛ր 3.4, 13: բ սո՛ր Ամենագետ. Իմաստություն: 11ա Եթր. Ե.9: բ սո՛ր Քավել, Քավություն: գ սո՛ր Հարություն: դ Մոսիա 15.21-23, 18.9, Ալմա 40.16-21: 12ա 2 Նեփի 25.26:</p>
---	--	--

գիտության, ինչպես նաև չհասնել գիտությանը՝ հարության և գալիք աշխարհի:

13 Ահա, իմ եղբայրներ, նա ով մարգարեանում է, թող մարգարեանա մարդկանց հասկացողության համար. քանզի “ձոզից խոսում է ճշմարտությունը և չի ստում: Ուստի, այն խոսում է բաների մասին, ինչպես դրանք իրականում ^բկան, բաների մասին, ինչպես դրանք իրականում լինելու են. ուստի, այս բաները մեզ հայտնի են դարձվում ^գհատակորեն՝ մեր հոգիների փրկության համար: Բայց, ահա, մենք այս բաների միակ վկաները չենք. քանզի Աստված դրանք խոսել էր նաև մարգարեների հետ հնում:

14 Բայց ահա, հրեաները մի “խստապարանոց ժողովուրդ էին. և նրանք ^բարհամարհեցին պարզության խոսքերը, և սպանեցին մարգարեներին, և փնտրեցին բաներ, որոնք չէին կարող հասկանալ: Ուստի, նրանց ^գկուրության պատճառով, կուրություն, որը եկել էր նշանակետից այն կողմ նայելուց, նրանք պիտի անպայման ընկնեին. քանզի Աստված վերցրել է նրանցից իր պարզությունը և հանձնել նրանց շատ բաներ, որոնք նրանք չեն ^դկարող հասկանալ, քանի որ նրանք ցանկանում էին դա: Եվ քանի որ նրանք ցանկանում էին այդ, Աստված արեց այնպես, որ նրանք կարողանան սայթաքել:

15 Եվ այժմ, ես՝ Հակոբս, շարու-

նակում եմ Հոգուց առաջնորդվել՝ մարգարեանալու. քանզի ես կանխագգում եմ Հոգու ներգործումներով, որն իմ մեջ է, որ հրեաների “սայթաքելու պատճառով, նրանք ^բկմերժեն ^գքարը, որի վրա նրանք կկարողանային կառուցել և ունենալ ապահով հիմք:

16 Բայց ահա, ըստ սուրբ գրքերի, այս “քարը կդառնա այն մեծ և վերջին և միակ հաստատուն ^բհիմքը, որի վրա հրեաները կարող են կառուցել:

17 Եվ այժմ, իմ սիրելիներ, հնարավո՞ր է արդյոք, որ սրանք հաստատուն հիմքը մերժելուց հետո, “երբևէ կարողանան կառուցել դրա վրա, որպեսզի այն կարողանա դառնալ նրանց անկյունի գլուխը:

18 Ահա, իմ սիրելի՛ եղբայրներ, ես հայտնի կդարձնեմ այս խորհուրդը ձեզ. եթե ես ինչ-որ ձևով չսասանվեմ իմ կայունությունից Հոգու մեջ և չսայթաքեմ, ձեզ համար իմ չափից ավելի անհանգրստության պատճառով:

ԳԼՈՒԽ 5

Հակոբը մեջ է բերում Ձենոսի այլաբանությունը՝ ընտանի և վայրի ձիթենիների վերաբերյալ – Դրանք նմանեցվում են Իսրայելին ու հեթանոսներին – Իսրայելի ցրտոնը և հավաքումը կանխորոշված է – Ակնարկություններ են արվում Նեփիացիների և Լամանացիների

13ա սոս. Սուրբ Հոգի.
Ճշմարտություն:
բ Վև.ՈՒ 93.24:
գ Ալմա 13.23:
14ա Մատ. ԻԳ.37–38,
2 Նեփի 25.2:
բ Բ Կոր. ԺԱ.3,

1 Նեփի 19.7,
2 Նեփի 33.2:
գ Ես. ԽԴ.18,
Հռովմ. ԺԱ.25:
դ 2 Նեփի 25.1–2:
15ա Ես. Ը.13–15,
Ա Կոր. Ա.23,

2 Նեփի 18.13–15:
բ 1 Նեփի 10.11:
գ սոս Անկյունաքար. Վեմ:
16ա Սաղ. ՃԺԸ.22–23:
բ Ես. ԻԸ.16, Հել. 5.12:
17ա Մատ. ԺԹ.30,
Վև.ՈՒ 29.30:

և Իսրայելի ողջ տան մասին – Հեթանոսները կպատվաստվեն Իսրայելին – Վերջ ի վերջո այգին կայրվի: Մտո 544-421թթ. Ք.ծ.ա.:

ԱՀԱ, իմ եղբայրներ, դուք չե՞ք հիշում, որ կարդացել եք մարգարե Պաղատի խոսքերը, որոնք նա խոսել էր Իսրայելի տան մասին՝ ասելով.

2 Ականջ արա, ո՛վ Իսրայելի տուն, և լսի՛ր խոսքերն իմ՝ Տիրոջ մի մարգարեի:

3 Քանզի ահա, այսպես է ասում Տերը. Ես կհամենատեմ քեզ, ո՛վ Իսրայելի տուն, մի ընտանի ծիսականու հետ, որը մի մարդ վերցրեց և խնամեց իր զայգում. և այն աճեց, և ծերացավ, և սկսեց փստել:

4 Եվ եղավ այնպես, որ այգու տերն առաջ գնաց, և նա տեսավ, որ իր ծիսականին սկսել էր փստել. և նա ասաց. Ես կէտեմ այն, և կփորեմ նրա շուրջը, և կսնուցեմ այն, որ միգուցե այն կարողանա մատուցել և նուրբ ընծայողներ արձակել և չչորանա:

5 Եվ եղավ այնպես, որ նա էտեց այն, և փորեց նրա շուրջը, և խնամեց այն՝ համաձայն իր խոսքի:

6 Եվ եղավ այնպես, որ շատ օրեր անց, այն սկսեց մի քանի փոքր մատուցել ու նուրբ ճյուղեր արձակել. բայց ահա, նրա հիմնական կատարը սկսեց չորանալ:

7 Եվ եղավ այնպես, որ այգու տերը տեսավ այդ, և նա ասաց իր ծառային. Ինձ վշտացնում է, որ ես պետք է կորցնեմ այս ծառը. ուստի, գնա և պոկիր Մվայրի ծիսականու ճյուղերից և բեր դրանք այստեղ՝

ինձ մոտ. և մենք կպոկենք այն հիմնական ճյուղերը, որոնք սկսում են չորանալ, և մենք կզցենք դրանք կրակը, որ դրանք այրվեն:

8 Եվ, ահա, ասում է այգու Տերը. Ես հեռացնում եմ այս մատուցել և նուրբ ճյուղերից շատերը, և ես կպատվաստեմ դրանք որտեղ որ կամենամ. և նշանակություն չունի՝ եթե լինի այնպես, որ այս ծառի արմատը չչորանա, ես կարող եմ պահպանել դրա պտուղն ինձ համար, ուստի ես կվերցնեմ այս մատուցել և նուրբ ճյուղերը և կպատվաստեմ դրանք որտեղ որ կամենամ:

9 Վերցրու դու վայրի ծիսականու ճյուղերը և պատվաստիր դրանք նրանց տեղում. և սրանք, որոնք ես պոկել եմ, ես կզցեմ կրակը և կայրեմ, որպեսզի դրանք չբարեցնեն իմ այգու տարածքը:

10 Եվ եղավ այնպես, որ այգու Տիրոջ ծառան արեց այգու Տիրոջ խոսքի համաձայն, և պատվաստեց Մվայրի ծիսականու ճյուղերը:

11 Եվ այգու Տերը դրա շուրջը փորել տվեց, և էտեց, և սնուցեց՝ ասելով իր ծառային. Ինձ վշտացնում է, որ ես պետք է կորցնեմ այս ծառը. այն պատճառով, որ միգուցե ես կարողանայի պահպանել դրա արմատները, որ դրանք չչորանային, որպեսզի ես կարողանայի պահպանել դրանք ինձ համար, ես արեցի այս բանը:

12 Ուստի, գնա՛ քո ճանապարհով, հետևի՛ր ծառին և սնուցի՛ր այն՝ իմ խոսքերի համաձայն:

13 Իսկ սրանք ես՝ կղնեմ իմ այգու ամենաստորին մասում,

5 1ա սուր Զեննու:
3ա Եզեկ. ԼԶ.8:
սուր Իսրայել:
բ Հռովմ. ԺԱ.17-24:

սուր Զիթենի:
զ ՎևոՒԲ 101.44:
սուր Տիրոջ այգին:
դ սուր Ուրացություն:

7ա Հռովմ. ԺԱ.17, 24:
9ա Հռովմ. Ա.13:
10ա սուր Հեթանոսներ:
13ա 1 Եսեփի 10.12:

որտեղ որ կամենամ, դա քեզ համար նշանակություն չունի. և ես դա անում եմ, որպեսզի ես կարողանամ պահպանել ինձ համար ծառի բնական ճյուղերը. և նաև, որպեսզի ես ինձ համար կարողանամ ամբարել դրա պտուղը՝ եկող ժամանակի համար. քանզի ինձ վշտացնում է, որ ես պետք է կորցրեմ այս ծառը և դրա պտուղը:

14 Եվ եղավ այնպես, որ այգու Տերը գնաց իր ճանապարհով և քաքքրեց ընտանի ձիթենու բնական ճյուղերն այգու ամենաստորին մասերում՝ մի մասը մեկում և մի մասը մյուսում, ըստ իր կամքի ու հաճության:

15 Եվ եղավ այնպես, որ մի երկար ժամանակ անցավ և այգու Տերն ասաց իր ծառային. Արի՛, եկ գնանք ներքև՝ այգի, որպեսզի կարողանանք աշխատել այգում:

16 Եվ եղավ այնպես, որ այգու Տերը և նաև ծառան գնացին ներքև՝ այգում աշխատելու: Եվ եղավ այնպես, որ ծառան ասաց իր Տիրոջը. Ահա, նայի՛ր այստեղ. տե՛ս ծառը:

17 Եվ եղավ այնպես, որ այգու Տերը նայեց ու տեսավ ծառը, որին պատվաստվել էին վայրի ձիթենու ճյուղերը. և այն շիվեր էր արձակել և սկսել էր «պտուղ տալ»: Եվ նա տեսավ, որ այն բարի էր. և դրա պտուղը նման էր բնական պտղին:

18 Եվ նա ասաց ծառային. Տե՛ս, վայրի ծառի ճյուղերն իրենց են վերցրել դրա արմատի խոնավությունը, այնպես որ նրա արմատը տվել է մեծ ուժ. և դրա արմատի մեծ ուժի պատճառով վայրի ճյուղերն առաջ են բերել ընտանի

պտուղ: Եվ, եթե մենք պատվաստած չլինեինք այս ճյուղերը, դրա ծառը չորացած կլիներ: Եվ այժմ, ահա, ես կամբարեմ շատ պտուղ, որը դրա ծառն է տվել. և նրա պտուղը ես կամբարեմ եկող ժամանակի համար, իմ սեփական անձի համար:

19 Եվ եղավ այնպես, որ այգու Տերն ասաց ծառային. Արի՛ գնանք այգու ամենաստորին մասը և տեսնենք, թե ծառի բնական ճյուղերն արդյոք չե՞ն տվել շատ պտուղ նույնպես, որպեսզի ես կարողանամ ամբարել դրա պտուղը եկող ժամանակի համար, իմ սեփական անձի համար:

20 Եվ եղավ այնպես, որ նրանք առաջ գնացին՝ ուր Տերը քաքքրել էր ծառի բնական ճյուղերը, և նա ասաց ծառային՝ Տե՛ս սրանք. և նա տեսավ «առաջինը, որ այն շատ պտուղ էր տվել. և նա տեսավ նաև, որ այն բարի էր: Եվ նա ասաց ծառային. Վերցրու դրա պտղից և հավաքիր եկող ժամանակի համար, որպեսզի ես կարողանամ ամբարել այն իմ սեփական անձի համար. քանզի ահա, ասաց նա, այսքան երկար ժամանակ ես խնամում եմ այն, և այն շատ պտուղ է տվել:

21 Եվ եղավ այնպես, որ ծառան ասաց իր տիրոջը. Ի՞նչպես եկար դու այստեղ՝ տնկելու այս ծառը, կամ այս ծառի ճյուղը: Քանզի ահա, սա քո ողջ այգու տարածքում ամենաանբերրի տեղն էր:

22 Եվ այգու Տերն ասաց նրան. Խորհուրդ մի՛ տուր ինձ. ես գիտեի, որ դա հողի անբերրի տեղն է. ուստի ես ասացի քեզ, ես խնամել եմ այն այսքան երկար ժամանակ,

և դու տեսնում ես, որ այն շատ պտուղ է առաջ բերել:

23 Եվ եղավ այնպես, որ այգու Տերն ասաց իր ծառայիին. Նայիր այստեղ. ահա, ես տնկել եմ ծառի մեկ այլ ճյուղ նույնպես, և դու գիտես, որ այս տեղի հողն ավելի անբերրի է, քան առաջինը: Բայց ահա, ծառը: Ես խնամել եմ այն այսքան երկար ժամանակ, և այն շատ պտուղ է տվել. հետևաբար, հավաքիր այն և ամբարի՛ր եկող ժամանակի համար, որ ես կարողանամ պահպանել այն՝ իմ սեփական անձի համար:

24 Եվ եղավ այնպես, որ այգու Տերն ասաց կրկին իր ծառայիին. Նայիր այստեղ և տես մեկ այլ ճյուղ ևս, որը ես եմ տնկել. տես, որ ես այն նույնպես խնամել եմ, և այն պտուղ է առաջ բերել:

25 Եվ նա ասաց ծառայիին. Նայիր այստեղ և տես վերջինը: Ահա, այս ես տնկել եմ՝ լավ հողակտորի վրա. և այսքան երկար ժամանակ ես խնամում եմ այն, և միայն ծառի մի մասն է առաջ բերել ընտանի պտուղ, և ծառի ^բմյուս մասն առաջ է բերել վայրի պտուղ. ահա, ես խնամել եմ այս ծառը մյուսների պես:

26 Եվ եղավ այնպես, որ այգու Տերն ասաց ծառայիին. Պոկիր ճյուղերը, որոնք բարի ^ապտուղներ չեն տվել և գցիր դրանք կրակի մեջ:

27 Բայց ահա, ծառան ասաց նրան. Եկ էտենք այն և փորենք շուրջը, և սնուցենք այն մի քիչ ավելի երկար, որպեսզի միգուցե այն կարողանա բարի պտուղ

առաջ բերել քեզ համար, որպեսզի դու կարողանաս ամբարել այն՝ եկող ժամանակի համար:

28 Եվ եղավ այնպես, որ այգու Տերը և այգու Տիրոջ ծառան խնամեցին այգու ողջ պտուղը:

29 Եվ եղավ այնպես, որ մի երկար ժամանակ էր անցել, և այգու Տերն ասաց իր ^ածառայիին. Արի՛, եկ իջնենք այգի, որ կարողանանք այգում նորից աշխատել: Քանզի, ահա, ^բժամանակը մոտենում է, և ^գվերջը շուտով գալիս է. ուստի, ես պետք է պտուղ ամբարենմ եկող ժամանակի համար, իմ սեփական անձի համար:

30 Եվ եղավ այնպես, որ այգու Տերը և ծառան գնացին ներքև՝ այգի. և նրանք եկան դեպի ծառը, որի բնական ճյուղերը կտրել էին, և վայրի ճյուղեր էին պատվաստել. և ահա, ամեն ^ատեսակի պտուղ ծանրաբեռնել էր ծառը:

31 Եվ եղավ այնպես, որ այգու Տերը ճաշակեց պտղից՝ ամեն տեսակից իր քանակին համապատասխան: Եվ այգու Տերն ասաց. Ահա, այսքան երկար ժամանակ մենք խնամել ենք այս ծառը, և ես ամբարել եմ ինձ համար շատ պտուղ՝ եկող ժամանակի համար:

32 Բայց, ահա, այս անգամ այն շատ պտուղ է առաջ բերել, և չկա ^ամեկը, որ բարի լինի: Եվ ահա, կա ամեն տեսակի վատ պտուղ. և դա ինձ ոչ մի օգուտ չի բերում, չնայած մեր ողջ աշխատանքին. և այժմ ինձ վշտացնում է, որ ես պետք է կորցնեմ այս ծառը:

33 Եվ այգու Տերն ասաց ծառա-

24ա Եզեկ. ԺԷ.22–24,
Ալմա 16.17,
3 Նեփի 15.21–24:
25ա 1 Նեփի 2.20:
բ 3 Նեփի 10.12–13:

26ա Մատ. Է.15–20,
Ալմա 5.36, ՎևոՒ 977:
29ա ՎևոՒ 101.55, 103.21:
բ սոՒ Վերջին օրեր,
Ետին օրեր:

գ 2 Նեփի 30.10,
Հակոբ 6.2:
30ա սոՒ Ուրացություն:
32ա ՋՍ–Պ 1.19:

յին. Ի՞նչ անենք ծառի համար, որ ես նորից լավ պտուղ պահպանեմ՝ իմ սեփական անձի համար:

34 Եվ ծառան ասաց իր տիրոջը. Ահա, քանի որ դու պատվաստեցիր վայրի ձիթենու ճյուղերը, դրանք սնուցեցին արմատները, այնպես որ դրանք կենդանի են, և դրանք չեն չորացել. ուստի, դու տեսնում ես, որ դրանք դեռ լավն են:

35 Եվ եղավ այնպես, որ այգու Տերն ասաց իր ծառային. Ծառը ոչ մի օգուտ չի բերում ինձ, և դրա արմատները ոչ մի օգուտ չեն բերում ինձ, քանի դեռ այն չար պտուղ պիտի առաջ բերի:

36 Այնուամենայնիվ, ես գիտեմ, որ արմատները բարի են, և իմ անձնական նպատակի համար եմ ես պահպանել դրանք. և դրանց մեծ ուժի պատճառով նրանք առայժմ վայրի ճյուղերից առաջ են բերել լավ պտուղ:

37 Բայց, ահա, վայրի ճյուղերն աճել են և ՝խեղդել նրա արմատները. և որովհետև վայրի ճյուղերն ընկճել են նրա արմատները, այն առաջ է բերել շատ չար պտուղ. և քանի որ այն առաջ է բերել այդքան շատ չար պտուղ, դու տեսնում ես, որ այն սկսում է փչանալ. և այն շուտով հասունացած կլիմի, այնպես որ կարող է կրակը զգվել, եթե մենք ինչ-որ բան չանենք դրա հետ՝ այն պահպանելու համար:

38 Եվ եղավ այնպես, որ այգու Տերն ասաց իր ծառային. Եկ գնանք ներքև՝ այգու ամենաստորին մասերը և տեսնենք, թե արդյո՞ք բնական ճյուղերը նույնպես չար պտուղ են առաջ բերել:

39 Եվ եղավ այնպես, որ նրանք գնացին ներքև՝ այգու ամենաստորին մասերը: Եվ եղավ այնպես, որ նրանք տեսան, որ բնական ճյուղերի պտուղը նույնպես դարձել էր ոչ պիտանի. այո, ՝առաջինը և երկրորդը, և նաև վերջինը. և բոլորը դարձել էին անպետք:

40 Եվ վերջինիս ՝վայրի պտուղը հաղթել էր ծառի այն մասին, որն առաջ էր բերել բարի պտուղ, մինչև իսկ ճյուղը չորացել էր և մահացել:

41 Եվ եղավ այնպես, որ այգու Տերը լաց եղավ և ասաց ծառային. Էլ ՝ի՞նչ կարող էի ես անել իմ այգու համար:

42 Ահա, ես գիտեի, որ այգու ողջ պտուղը, բացի սրանցից, դարձել էր ոչ պիտանի: Եվ այժմ սրանք, որոնք մի ժամանակ տվել էին բարի պտուղ, նույնպես դարձան անպետք. և այժմ իմ այգու բոլոր ծառերը ոչ մի բանի պիտանի չեն, բացի կտրվելուց և կրակը զգվելուց:

43 Եվ տես՛ս, այս վերջինը, որի ճյուղը չորացել է, ես տնկել էի հողի ՝լավ տեղում. այո, այսինքն՝ այնտեղ, որն ընտիր էր ինձ համար՝ իմ այգու հողի բոլոր մասերից առավել:

44 Եվ դու տեսնում ես, որ ես նաև կտրեցի այն, ինչը ՝զբաղեցնում էր հողի այս տեղը, որ ես կարողանայի դրա փոխարեն տնկել այս ծառը:

45 Եվ դու տեսնում ես, որ դրա մի մասն առաջ էր բերել լավ պտուղ, իսկ դրա մյուս մասն առաջ էր բերել վայրի պտուղ. և քանի որ ես չպոկեցի դրա ճյուղերը և չզցեցի դրանք կրակի մեջ, ահա, դրանք

37ա Վև.Ու 45.28–30:
39ա Հակոբ 5.20, 23, 25:

40ա Մորմ. 6.6–18:
41ա 2 Նեփի 26.24:

43ա 2 Նեփի 1.5:
44ա Եթեր 13.20–21:

հաղթել են լավ ճյուղերին, այնպես որ այն չորացել է:

46 Եվ այժմ, ահա, չնայած ողջ խնամքին, որը մենք տարել ենք իմ այգուն, դրա ծառերը դարձել են ոչ պիտանի, այնպես որ դրանք լավ պտուղ չեն տալիս. և սրանք ես հույս ունեի պահպանել, որ եկող ժամանակի համար ամբարեի դրա պտուղն՝ իմ սեփական անձի համար: Բայց ահա, դրանք դարձան վայրի ձիթենու պես, և դրանք ոչ մի արժեք չունեն, բացի ^Մկտրվելուց և կրակը գցվելուց. և դա վտացնում է ինձ, որ ես պետք է կորցնեմ դրանք:

47 Բայց էլ ի՞նչ կարող էի անել ես իմ այգում: Մի՞թե ես թուլացրել եմ իմ ձեռքն այնպես, որ չեմ խնամել այն: Ո՛չ, ես խնամել եմ այն, և փորել եմ դրա շուրջը, և էտել եմ այն, և գոմադրել եմ այն. և ես ^Մառաջ եմ մեկնել իմ ձեռքը, համարյա ողջ օրվա ընթացքում, և ^Քվերջը մոտենում է: Եվ ինձ վտացնում է, որ ես պետք է կտրեմ իմ այգու բոլոր ծառերը և գցեմ դրանք կրակը, որ դրանք այրվեն: Ի՞նչն էր, որ փչացրեց իմ այգին:

48 Եվ եղավ այնպես, որ ծառան ասաց իր տիրոջը. Արդյոք քո այգու ամբարտավանությունը չէ՞ պատճառը, դրա ճյուղերը չե՞ն, որ հաղթեցին արմատներին, որոնք լավն են: Եվ քանի որ ճյուղերը հաղթել են դրա արմատներին, ահա, դրանք աճեցին ավելի արագ, քան արմատների ուժն էր՝ վերցնելով ուժն իրենց: Ահա, ես ասում եմ, արդյոք սա՞ չէր պատճառը, որ այգու ծառերը դարձան ոչ պիտանի:

49 Եվ եղավ այնպես, որ այգու

Տերն ասաց ծառային. Եկ գնանք և կտրենք այգու ծառերը և գցենք դրանք կրակի մեջ, որպեսզի դրանք չգրադեցնեն իմ այգու տարածքը, քանզի ես արեցի ամեն ինչ: Ե՛լ ինչ կարող էի ես անել իմ այգու համար:

50 Բայց, ահա, ծառան ասաց այգու Տիրոջը. Խնայիր այն ^Մևս մի քիչ:

51 Եվ Տերն ասաց. Այո՛, ես կխնայեմ նրան մի քիչ էլ, քանզի ինձ վտացնում է, որ ես պիտի կորցնեմ իմ այգու ծառերը:

52 Ուստի, եկ վերցնենք սրանց ^Մճյուղերը, որոնք ես տնկել եմ իմ այգու ամենաստորին մասում և եկ պատվաստենք դրանք ծառին, որից դրանք աճել էին. և եկ պոկենք ծառից այն ճյուղերը, որոնց պտուղն ամենադառն է և ծառի բնական ճյուղերը պատվաստենք դրանց տեղում:

53 Եվ այս ես կանեմ, որպեսզի ծառը չչորանա, որ միգուցե ես կարողանամ պահպանել ինձ համար դրա արմատները՝ իմ անձնական նպատակի համար:

54 Եվ, ահա, ծառի բնական ճյուղերի արմատները, որոնք ես տնկել եմ որտեղ կամեցել եմ, դեռ կենդանի են. ուստի, որպեսզի ես կարողանամ պահպանել դրանք նաև իմ սեփական նպատակի համար, ես կվերցնեմ այս ծառի ճյուղերից, և ես դրանք ^Մկպատվաստեմ դրանց: Այո, ես կպատվաստեմ դրանց վրա իրենց մայր ծառի ճյուղերը, որպեսզի ես կարողանամ պահպանել արմատները մույնպես՝ իմ սեփական անձի համար, որպեսզի երբ դրանք բա-

46ա3 Նեփի 27.11:
47ա2 Նեփի 28.32,
Հակոբ 6.4:

բ սո՛ւ Աշխարհ –
Աշխարհի վերջը:
50ա Հակոբ 5.27:

52ա սո՛ւ Իսրայել –
Իսրայելի ցրվելը:
54ա1 Նեփի 15.12–16:

վականաչափ ուժեղ լինեն, միգուցե ինձ համար լավ պտուղ առաջ բերեն, և ես դեռ կարողանամ իմ այգու պտղով փառք ունենալ:

55 Եվ եղավ այնպես, որ նրանք վերցրեցին բնական ծառից, որը դարձել էր վայրի, և պատվաստեցին բնական ծառերին, որոնք նույնպես դարձել էին վայրի:

56 Եվ նրանք նաև վերցրեցին բնական ծառերից, որոնք դարձել էին վայրի և պատվաստեցին իրենց մայր ծառի վրա:

57 Եվ այգու Տերն ասաց ծառային. Մի՛ պոկեք վայրի ճյուղերը ծառերից, բացի նրանցից, որոնք ամենադառն են. և դրանց վրա դուք պիտի պատվաստեք՝ համաձայն նրա, ինչ որ ես ասացի:

58 Եվ մենք նորից կխնամենք այգու ծառերը, և մենք կէտենք դրանց ճյուղերը. և մենք կպոկենք ծառերից այն ճյուղերը, որոնք հասունացած են, որոնք պետք է չորանան, և կզցենք դրանք կրակի մեջ:

59 Եվ այս ես անում եմ, որ, միգուցե, դրանց արմատները կարողանան իրենց անխաթարության շնորհիվ վերցնել ուժ. և որ ճյուղերի փոփոխության շնորհիվ, բարին կարողանա հաղթել չարին:

60 Եվ այն պատճառով, որ ես պահպանել եմ բնական ճյուղերը և դրանց արմատները, և որ բնական ճյուղերը նորից պատվաստել եմ իրենց մայր ծառին, և պահպանել եմ իրենց մայր ծառի արմատները, որ, միգուցե, իմ այգու ծառերը կարողանան նորից լավ «պտուղ առաջ բերել. և միգուցե ես կարողանամ ուրախություն ունենալ իմ այգու պտղով, և որպեսզի

ես կարողանամ անչափ հրճվել, որ ես պահպանել եմ առաջին պտղի արմատներն ու ճյուղերը,

61 Ուստի, առաջ գնա և «ծառաներ կանչիր, որ մենք կարողանանք ջանասիրաբար քաշխատել այգում՝ մեր ողջ գորուքյամբ, որ մենք կարողանանք ուղի պատրաստել, որ ես կարողանամ բնական պտուղ առաջ բերել նորից, բնական պտուղ, որը բարի է և ամենաարժեքավորը՝ մյուս բոլոր պտուղներից առավել:

62 Ուստի, եկեք գնանք և աշխատենք մեր ողջ կարողությամբ այս վերջին անգամ, քանզի, ահա, վերջը մոտենում է, և այս վերջին անգամն է, որ ես կէտեմ իմ այգին:

63 Պատվաստեք ճյուղերը. սկսեք «վերջիններից, որ նրանք կարողանան լինել առաջինը, և որ առաջինները կարողանան լինել վերջինը, և փորեք ծառերի շուրջը՝ և՛ ծերի, և՛ երիտասարդի, և՛ առաջինի, և՛ վերջինի. և՛ վերջինի, և՛ առաջինի, որ բոլորը կարողանան սնվել ևս մեկ անգամ՝ վերջին անգամ:

64 Ուստի, փորեք դրանց շուրջը և էտեք դրանք, և մեկ անգամ ևս զոնադրեք դրանք, վերջին անգամ, քանզի վերջը մոտենում է: Եվ եթե լինի այնպես, որ այս վերջին պատվաստներն աճեն և առաջ բերեն բնական պտուղը, այն ժամանակ դուք պետք է ճանապարհ պատրաստեք դրանց համար, որպեսզի դրանք կարողանան աճել:

65 Եվ երբ դրանք սկսեն աճել, դուք պետք է մաքրեք այն ճյուղերը, որոնք առաջ են բերում դառը պտուղ՝ լավերի ուժին և դրանց չափին համապատասխան. և դուք

60ա Ես. Ի. է. 6:
61ա Հակոբ 6.2,

Վ. և Ռ. 24.19:
բ Վ. և Ռ. 39.11, 13, 17:

63ա 1 Նեփի 13.42,
Եթեր 13.10–12:

չպետք է ^ամաքրեք դրանց վատը բոլորը միանգամից, որ չլինի թե դրանց արմատները պատվաստի համար շատ ուժեղ լինեն և պատվաստը չորանա, և ես կորցնեմ իմ այգու ծառերը:

66 Քանզի ինձ վշտացնում է, որ ես պետք է կորցնեմ իմ այգու ծառերը. ուստի, դուք պետք է մաքրեք վատը՝ լավի աճելու հետ մեկտեղ, որ արմատները և կատարը կարողանան լինել հավասար ուժով, մինչև լավը հաղթի վատին, և վատը կտրվի և զգվի կրակի մեջ, որ դրանք չզբաղեցնեն իմ այգու տարածքը. և այսպես ես վատն իմ այգուց կվերացնեմ:

67 Եվ բնական ծառի ճյուղերը կրկին բնական ծառին կպատվաստեմ.

68 Եվ բնական ծառի ճյուղերը կպատվաստեմ ծառի բնական ճյուղերին. և, այսպիսով, դրանք նորից ի մի կբերեմ, որ դրանք առաջ բերեն բնական պտուղ, և դրանք կլինեն մեկ:

69 Եվ վատը դեմ ^ակզգվի, այո, նույնիսկ այգու ողջ հողից. քանզի ահա, միայն այս մեկ անգամ ես կէտեմ իմ այգին:

70 Եվ եղավ այնպես, որ այգու Տերն ուղարկեց իր ^ածառային. և ծառան գնաց և արեց, ինչպես Տերը պատվիրել էր նրան և բերեց ուրիշ ծառաներ. և նրանք ^բքիչ էին:

71 Եվ այգու Տերն ասաց նրանց. Գնացեք և ^աաշխատեք այգում ձեր զորությամբ: Քանզի ահա, սա ^բվերջին անգամն է, որ ես պետք է խնամեմ իմ այգին. քանզի վերջը մոտ է՝ առ ձեռն, և ժամանակը

սրընթաց գալիս է. և եթե դուք ինձ հետ աշխատեք ձեր զորությամբ, դուք ^գուրախություն կունենաք պտղով, որը ես ինձ համար կամբարեմ եկող ժամանակի համար, որը շուտով կգա:

72 Եվ եղավ այնպես, որ ծառաները գնացին և աշխատեցին իրենց զորությամբ. և այգու Տերը նույնպես աշխատում էր նրանց հետ. և նրանք բոլոր բաներում հնազանդվում էին այգու Տիրոջ պատվիրաններին:

73 Եվ այգուն սկսեց կրկին բնական պտուղ լինել. և բնական ճյուղերը սկսեցին աճել ու բուռն փթթել. և վայրի ճյուղերը սկսեցին պոկել ու դեն գցել. և նրանք պահում էին դրա արմատը և կատարը հավասար՝ դրա ուժին համապատասխան:

74 Եվ այսպես նրանք աշխատեցին, ամենայն փութաջանությամբ, համաձայն այգու Տիրոջ պատվիրանների, մինչև որ վատը դուրս զգվեց այգուց, և Տերը պահպանեց իր համար ծառերը, որոնք նորից դարձան բնական պտղով. և դրանք դարձան ^ամեկ մարմնի պես. և պտուղները հավասար էին. և այգու Տերը պահպանել էր իր համար բնական պտուղը, որն ամենաարժեքավորն էր նրա համար՝ սկզբից ի վեր:

75 Եվ եղավ այնպես, որ երբ այգու Տերը տեսավ, որ իր պտուղը լավն էր, և որ իր այգին այլևս ապականված չէր, նա մոտ կանչեց իր ծառաներին և ասաց նրանց. Ահա, այս վերջին անգամ մենք խնամեցինք իմ այգին. և դուք

65ա Վև.ՈՒ 86.6-7:
69ա 1 Նեփի 22.15-17, 23,
2 Նեփի 30.9-10:
70ա Վև.ՈՒ 101.55, 103.21:

բ 1 Նեփի 14.12:
71ա Մատ. ԲԱ.28,
Հակոբ 6.2-3,
Վև.ՈՒ 33.3-4:

բ Վև.ՈՒ 39.17, 43.28-30:
գ Վև.ՈՒ 18.10-16:
74ա Վև.ՈՒ 38.27:

տեսնում եք, որ ես արեցի՝ ըստ իմ կամքի. և ես պահպանեցի բնական պտուղը, որ այն լավն է, նույնիսկ, ճիշտ ինչպես սկզբում էր: Եվ «օրհնված եք դուք. քանզի դուք ջանասեր եղաք՝ ինձ հետ այգում աշխատելիս, և պահեցիք իմ պատվիրանները, և ինձ համար նորից բերեցիք ^բբնական պտուղը, այնպես որ իմ այգին այլևս ապականված չէ, և վատը դեմ է զգված, ահա, դուք պետք է ինձ հետ իմ այգու պտղի համար ուրախություն ունենաք:

76 Քանզի ահա, ^աերկար ժամանակ, իմ սեփական անձի համար ես կամբարեմ իմ այգու պտուղն այն ժամանակի համար, որը սրընթաց գալիս է. և վերջին անգամ եմ ես խնամել իմ այգին, և էտել այն, և փորել դրա շուրջը, և զոմադրել այն. ուստի, ես կամբարեմ պտուղն իմ իսկ անձի համար երկար ժամանակ՝ համաձայն նրա, ինչ ես խոսեցի:

77 Եվ երբ ժամանակը գա, երբ չար պտուղը նորից գա իմ այգին, այն ժամանակ ես հավաքել կտամ լավը և վատը. և լավը ես կպահեմ ինձ համար, իսկ վատը դեմ կզցեմ իր ուրույն տեղը: Եվ ապա կգա ^աժամանակը և վերջը. և ես ^բայրել կտամ իմ այգին կրակով:

ԳԼՈՒԽ 6

Վերջին օրերին Տերը ետ կբերի

Իսրայելը – Աշխարհը կայրվի կրակով – Մարդիկ պետք է հետևեն Քրիստոսին ծծմբի և կրակի լճից խուսափելու համար: Մոտ 544–421թթ. Է.ծ.ա.:

Եվ այժմ ահա, իմ եղբայրներ, ինչպես ես ասացի ձեզ, որ ես մարգարեանալու էի, ահա, սա է իմ մարգարեությունը, որ բաները, որոնք այս մարգարե ^աՉեմոսը խոսել է Իսրայելի տան վերաբերյալ, որում նա նմանեցնում է նրանց ընտանի ձիթենու, պետք է հաստատ կատարվեն:

2 Եվ օրը, երբ նա կրկին կմեկնի իր ձեռքը՝ երկրորդ անգամ ես ^աբերելու իր ժողովրդին, այն օրն է, այո՛, այսինքն՝ վերջին անգամը, որ Տիրոջ ^բժառանգներն առաջ կգնան նրա ^գզորությունը՝ ^դսնուցելու և էտելու նրա ^եայգին. և դրանից հետո ^զվերջը շուտով գալիս է:

3 Եվ որքան ^աօրհնված են նրանք, ովքեր ջանասիրաբար աշխատել են նրա այգում. և որքան ^բանիծված են նրանք, ովքեր դուրս կզգվեն իրենց ուրույն տեղը: Եվ աշխարհը ^գկայրվի կրակով:

4 Եվ որքան ^աողորմած է մեր Աստված հանդեպ մեզ, քանզի նա հիշում է ^բԻսրայելի տունը՝ և՛ արմատները, և՛ ճյուղերը. և նա առաջ է մեկնում իր ^գձեռքը դեպի նրանց, ողջ օրվա ընթացքում. և նրանք ^դխստապարանոց ու հակառակվող ժողովուրդ են. բայց բոլոր նրանք, ովքեր չեն կարծրացնի

75ա1 Նեփի 13.37:
բ սուր Իսրայել:
76ա1 Նեփի 22.24–26:
սուր Հազարամյակ:
77ա Հայտ. Բ.2–10,
Վե.ՈՒԹ 29.22–24,
43.29–33, 88.110–116:
բ սուր Աշխարհ –
Աշխարհի վերջը:

6 1ա Հակոբ 5.1
2ա1 Նեփի 22.10–12,
Վե.ՈՒԹ 110.11:
սուր Ավետարանի
վերականգնումը:
բ Հակոբ 5.61:
գ 1 Նեփի 14.14:
դ Հակոբ 5.71:
ե սուր Տիրոջ այգին:

գ 2 Նեփի 30.10:
3ա2 Նեփի 27.2,
Հակոբ 5.77,
3 Նեփի 25.1:
4աԲ Թագ. Է.24:
բ Հակոբ 5.47:
գ Մոսիա 13.29:

իրենց սրտերը, կփրկվեն Աստծո արքայությունում:

5 Ուստի, իմ սիրելի՛ եղբայրներ, ես աղաչում եմ ձեզ լրջմտության խոսքերով, որ դուք ապաշխարեք և գաք սրտի ողջ նվիրվածությամբ և "հարեք Աստծուն, ինչպես նա է հարում ձեզ: Եվ մինչ նրա ողորմության "բազուկը մեկնված է դեպի ձեզ՝ օրվա լույսի մեջ, մի կարծրացրեք ձեր սրտերը:

6 Այո, այսօր, եթե դուք կամենում եք լսել նրա ձայնը, մի կարծրացրեք ձեր սրտերը, քանզի ինչո՞ւ "մեռնեք:

7 Քանզի ահա, ողջ օրվա ընթացքում Աստծո բարի խոսքով սնվելուց հետո, մի՞թե դուք առաջ կբերեք չար պտուղ, որ անխուսափելիորեն "կտրվեք և կրակի մեջ գցվեք:

8 Ահա, մի՞թե դուք ժխտելու եք այս խոսքերը: Մի՞թե դուք ժխտելու եք մարգարեների խոսքերը. և մի՞թե դուք ժխտելու եք բոլոր խոսքերը, որոնք խոսվել են Քրիստոսի վերաբերյալ, նրա մասին այդքան շատերի խոսելուց հետո. և ուրանալու եք Քրիստոսի բարի խոսքը, և Աստծո զորությունը, և Սուրբ Հոգու "պարզևը, և հանգցրնելու եք Սուրբ Հոգին, և մի ծաղր եք սարքելու փրկագնման մեծ ծրագրից, որը դրվել է ձեզ համար:

9 Չգիտե՞ք դուք, որ եթե դուք անեք այս բաները, որ փրկագրնման և հարության զորությունը, որը Քրիստոսում է, կբերի ձեզ կանգնելու ամոթով և սոսկալի

"հանցանքով Աստծո "դատարանի առաջ:

10 Եվ համաձայն "արդարադատության զորության, քանզի արդարադատությունը չի կարող մերժվել, դուք պետք է գնաք այն կրակի և ծծմբի "լիճը, որի բոցերն անմար են, և որի ծուխը բարձրանում է վեր, հավիտյանս հավիտենից, կրակի և ծծմբի լիճ, որն "անվերջ "տանջանք է:

11 Օ՛ ուրեմն, իմ սիրելի՛ եղբայրներ, ապաշխարեք և ներս մտեք "նեղ դռնով, և շարունակեք այն անձուկ ճանապարհով, մինչև որ ձեռք բերեք հավերժական կյանք:

12 Օ՛, եղեք "իմաստուն. ի՞նչ կարող եմ ասել ավելին:

13 Ի վերջո, ես հղում եմ ձեզ մնաք բարով, մինչև ես կհանդիպեմ ձեզ Աստծո հաճելի դատարանի առջև, դատարան, որը "սոսկալի ահ ու վախ է ներշնչում ամբարիշտներին: Ամեն:

ԳԼՈՒԽ 7

Սերեմն ուրանում է Քրիստոսին, վիճում է Հակոբի հետ, նշան է պահանջում և զարկվում է Աստծուց – Բոլոր մարգարեները խոսել են Քրիստոսի և նրա քավության մասին – Նեփիացիներն իրենց օրերն անցկացրեցին, որպես քափառականներ՝ ծնված նեղության մեջ և ստված Լամանացիների կողմից: Մոտ 544–421թթ. Ք.ծ.ա.:

ԵՎ արդ եղավ այնպես, մի քանի

5ա սուր Միություն:
բ Ալմա 5.33–34,
3 Նեփի 9.14:
6ա Եգեկ. ԺԸ.21–23:
7ա Ալմա 5.51–52,
3 Նեփի 27.11–12:
8ա սուր Սուրբ Հոգու

պարզև:
9ա Մոսիա 15.26:
սուր Մեղավորություն:
բ սուր Վերջին
դատաստան:
10ա սուր Արդարադատություն:

բ 2 Նեփի 28.23:
սուր Դժոխք:
գ Վևուի 19.10–12:
դ սուր Նզովք:
11ա 2 Նեփի 9.41:
12ա Մորմ. 9.28:
13ա Ալմա 40.14:

տարի անցնելուց հետո, մի մարդ եկավ Նեփիի ժողովրդի մեջ, որի անունը Սերեմ էր:

2 Եվ եղավ այնպես, որ նա սկսեց քարոզել ժողովրդի մեջ և հայտարարել նրանց, որ չի լինելու ոչ մի Քրիստոս: Եվ նա քարոզում էր շատ բաներ, որոնք շողորթթում էին ժողովրդին. և նա այդ անում էր, որպեսզի կարողանար տապալել Քրիստոսի վարդապետությունը:

3 Եվ նա գործում էր ջանասիրաբար, որ կարողանար մոլորեցնել մարդկանց սրտերը, այնպես որ նա մոլորեցրել էր շատերի սրտերը, և իմանալով, որ ես՝ Հակոբս, ունեի հավատք Քրիստոսում, որը պիտի գար, նա շատ էր հնարավորություն փնտրում, որ կարողանար գալ ինձ մոտ:

4 Եվ նա ուսյալ էր, այնպես, որ նա ուներ ժողովրդի լեզվի կատարյալ իմացություն. ուստի, կարողանում էր օգտագործել անչափ շողորթթություն և խոսքի մեծ գորություն՝ ըստ դևի գորություն:

5 Նա հույս ուներ՝ սասանել ինձ իմ հավատքից, չնայած բազմաթիվ Միայնություններին և շատ բաներին, որոնք ես տեսել էի այս բաների վերաբերյալ. քանզի ես, իրոք, տեսել էի հրեշտակներ, և նրանք սպասավորել էին ինձ: Եվ նաև լսել էի Տիրոջ ձայնն ինձ հետ բառերով խոսելիս, ժամանակ առ ժամանակ. ուստի, ես չէի կարող սասանվել:

6 Եվ եղավ այնպես, որ նա եկավ ինձ մոտ, և այս կերպ խոսեց ինձ հետ՝ ասելով. Եղբայր Հակոբ, ես

շատ առիթներ եմ փնտրել, որ կարողանայի խոսել քեզ հետ. քանզի ես լսել եմ և նաև գիտեմ, որ դու շատ ես շրջում՝ քարոզելով այն, ինչը դուք կոչում եք ավետարան, կամ Քրիստոսի վարդապետություն:

7 Եվ դու այս ժողովրդից շատերին ես մոլորեցրել, այնպես որ նրանք խեղաթյուրում են Աստծո ճշմարիտ ճանապարհը և չեն ՝ պահում Մովսեսի օրենքը, որը ճշմարիտ ուղին է. և փոխում են Մովսեսի օրենքը պաշտամունքով մի էակի, որը դու ասում ես պետք է զա շատ հարյուրավոր տարիներ հետո: Եվ այժմ, ահա, ես՝ Սերեմս, հայտարարում եմ քեզ, որ դա հայիոյանք է. քանզի ոչ մի մարդ չգիտի այսպիսի բաների մասին, քանզի նա ՝ չի կարող ասել եկող բաների մասին: Եվ այս ձևով Սերեմը վիճեց ինձ հետ:

8 Բայց ահա, Տեր Աստված իմ հոգին լցրեց իր ՝ Հոգով, այնպես որ ես կարկամեցրի նրան իր բոլոր խոսքերում:

9 Եվ ես ասացի նրան. Ուրանո՞ւմ ես Քրիստոսին, որը պիտի գա, և նա ասաց. Եթե լիներ ինչ-որ մի Քրիստոս, ես չէի ուրանա նրան, բայց ես գիտեմ, որ ոչ մի Քրիստոս չկա, ո՛չ եղել է, ո՛չ էլ երբևէ կլինի:

10 Եվ ես ասացի նրան. Հավատո՞ւմ ես դու սուրբ գրքերին, և նա ասաց՝ Այո՛:

11 Եվ ես ասացի նրան. Ուրեմն, դու չես հասկանում դրանք, քանզի դրանք, իրոք, վկայում են Քրիստոսի մասին: Ահա, ես ասում եմ քեզ, որ մարգարեներից ոչ մեկը

7 5ա 2 Նեփի 11.3,
Հակոբ 2.11:

7ա Հակոբ 4.5:
բ Ալմա 30.13:

8ա սուր Ռգեշնչում,
Ռգեշնչել:

չի գրել, ոչ էլ «մարգարեացել է՝ առանց այս Քրիստոսի մասին խոսելու:

12 Եվ աս բոլորը չէ. ինձ հայտնի է դարձվել, քանզի ես լսել եմ ու տեսել, և դա ինձ հայտնի է դարձվել նաև Սուրբ Հոգու «գորությանը. ուստի, ես գիտեմ՝ եթե չարվի քավություն, ողջ մարդկությունը պիտի ^բկորչի:

13 Եվ եղավ այնպես, որ նա ասաց ինձ. Յույց տուր ինձ մի «նշան այդ Սուրբ Հոգու գորությանը, որի միջոցով դու այդքան շատ գիտես:

14 Եվ ես ասացի նրան. Ի՞նչ եմ ես, որ փորձեմ Աստծուն, ցույց տալու քեզ մի նշան այն բանի վերաբերյալ, որը դու գիտես, որ «ճշմարիտ է: Մակայն դու կուրանաս այն, որովհետև դու ^բղկից ես: Այնուամենայնիվ, իմ կամքը թող չկատարվի. բայց եթե Աստված զարկի քեզ, թող դա լինի մի նշան քեզ համար, որ նա ունի գորություն, և՛ երկնքում, և՛ երկրի վրա. և նաև, որ Քրիստոսը պետք է գա: Եվ քո կամքը կատարվի, ո՞վ Տեր, և ոչ թե իմը:

15 Եվ եղավ այնպես, որ երբ ես՝ Հակոբս, խոսեցի այս խոսքերը, Տիրոջ գորությունը եկավ նրա վրա, այնպես որ նա ընկավ գետնին: Եվ եղավ այնպես, որ նրան կերակրեցին շատ օրերի ընթացքում:

16 Եվ եղավ այնպես, որ նա ասաց ժողովրդին. Էգուց միասին հավաքվեք, քանի որ ես մեռնելու

եմ. ուստի, ես ուզում եմ խոսել ժողովրդի հետ, մինչև իմ մեռնելը:

17 Եվ եղավ այնպես, որ հաջորդ օրը բազմությունը հավաքվեց միասին, և նա խոսեց հատակորեն նրանց հետ և ուրացավ այն բաները, որոնք նա սովորեցրել էր նրանց, և դավանեց Քրիստոսին, և Սուրբ Հոգու գորությանը և հրեշտակների սպասավորությանը:

18 Եվ նա հատակորեն խոսեց նրանց հետ, որ նա «խաբված էր եղել ^բղևի գորությամբ: Եվ նա խոսեց դժոխքի, և հավերժության, և հավերժական պատժի մասին:

19 Եվ նա ասաց. Ես վախենում եմ, որ միգուցե ես գործել եմ «աններելի մեղք, քանզի ես ստել եմ Աստծուն. քանզի ես ուրանում էի Քրիստոսին և ասում էի, որ հավատում էի սուրբ գրքերին. և դրանք իրոք վկայում են նրա մասին: Եվ քանի որ ես այսպես ստել եմ Աստծուն, ես մեծապես վախեցնում եմ, չլինի թե իմ դրությունը ^բսոսկալի լինի. բայց ես խոստովանում եմ Աստծուն:

20 Եվ եղավ այնպես, որ երբ նա ասաց այս խոսքերը, նա չկարողացավ ասել ավելին, և նա հոգին «տվեց:

21 Եվ երբ բազմությունը վկա եղավ, որ նա խոսեց այս բաները, երբ նա հոգին տալու վրա էր, նրանք անչափ ապշեցին. այնքան, որ Աստծո գորությունն իջավ նրանց վրա, և նրանք «ուժասպառ եղան, այնպես որ ընկան գետնին:

11ա Հայտ. ԺԹ.10,
1 Նեփի 10.5,
Հակոբ 4.4,
Մոսիա 13.33-35,
ՎևոՒ 20.26:
սու՝ Հիսուս Քրիստոս:
12ա սու՝ Աստված,
Աստվածազուլու –

Աստված Սուրբ Հոգին.
Սուրբ Հոգի:
բ 2 Նեփի 2.21:
13ա Մատ. ԺԶ.1-4,
Ալմա 30.43-60:
սու՝ Նշան:
14ա Ալմա 30.41-42:
բ Ալմա 30.53:

18ա Ալմա 30.53:
սու՝ Խաբկանք,
Խաբել, Խաբեություն:
բ սու՝ Դև:
19ա սու՝ Աններելի մեղք:
բ Մոսիա 15.26:
20ա Երեմ. ԻԸ.15-17:
21ա Ալմա 19.6:

22 Եվ այս բանը հաճելի էր ինձ՝ Հակոբիս համար, քանզի ես խնդրել էի դա իմ Հորից, որը երկնքում էր. քանզի նա լսել էր իմ աղաղակը և պատասխանել իմ աղոթքին:

23 Եվ եղավ այնպես, որ Աստծո խաղաղությունը և սերը վերականգնվեց կրկին ժողովրդի մեջ. և նրանք շքնում էին սուրբ գրքերը և այլևս չէին լսում այս ամբարիշտ մարդու խոսքերին:

24 Եվ եղավ այնպես, որ շատ միջոցներ հնարվեցին՝ Լամանացիներին չուղղելու և վերադարձնելու ճշմարտության իմացությանը, բայց այդ բոլորը թուր էր, քանզի նրանք հրճվում էին Գլատերազմներով և Պարյունահեղությանը, և նրանք հավերժական Կատելություն ունեին մեր՝ իրենց եղբայրների հանդեպ: Եվ նրանք շարունակ ջանում էին կործանել մեզ իրենց բազկի ուժով:

25 Ուստի, Նեփիի ժողովուրդն ամրացնում էր իրեն, նրանց դեմ, զենքերով և ողջ զորությամբ՝ ապավինելով Աստծուն և իր փրկության Վեմին. ուստի, նրանք առ այժմ դառնում էին իրենց թշնամիներին հաղթողներ:

26 Եվ եղավ այնպես, որ ես՝ Հակոբս, սկսեցի ծերանալ. և այս ժո-

ղովրդի հիշատակարանը լինելով պահված Նեփիի Մնյուս թիթեղների վրա, ուստի ես եզրափակում եմ այս հիշատակարանը՝ հայտարարելով, որ ես գրել եմ իմ իմացության գերագույնին համապատասխան՝ ասելով, որ ժամանակն անցավ մեզ հետ, և նաև մեր թկյանքն անցավ, կարծես երազ լիներ մեզ համար, մենք լինելով միայնակ և մռայլ մի ժողովուրդ՝ քափառականներ, դուրս գցված Երուսաղեմից, ծնված նեղությունների մեջ, անապատում, և ատված մեր եղբայրների կողմից, որոնք պատերազմներ և հակառակություններ էին առաջացնում. ուստի, մենք սզացինք մեր բոլոր օրերում:

27 Եվ ես՝ Հակոբս, տեսա, որ ես պետք է շուտով վար իջնեի իմ գերեզմանը. ուստի, ես ասացի իմ որդուն՝ Մեմուսին. Վերցրո՛ւ այս թիթեղները: Եվ ես ասացի նրան այն բաները, որոնք իմ եղբայր Նեփիի թպատվիրել էր ինձ, և նա խոստացավ հնազանդություն հրամաններին: Եվ ես վերջ եմ դնում այս թիթեղների վրա իմ գրելուն, գրություն, որը փոքր եղավ. իսկ ընթերցողին ես հղում եմ մնա բարով, հուսալով, որ իմ եղբայրներից շատերը կկարդան իմ խոսքերը: Եղբայրներ, մնաք բարով:

ԵՆՈՎՍԻ ԳԻՐՔԸ

Ենովսն աղոթում է զորությամբ և ձեռք է բերում մեղքերի թողություն –

Տիրոջ ձայնը գալիս է նրա մտքի մեջ՝ խոստանալով փրկություն

23ա Ալմա 17.2:
24ա Ենովս 1.20:
բ Ենովս 1.14:
գ Մոսիա 10.11–18:
դ Հարոմ 1.6,

Ալմա 26.23–25:
ե 2 Նեփի 5.1–3,
Մոսիա 28.2:
25ա սո՛ւ Վեմ:
26ա 1 Նեփի 19.1–6,

Հարոմ 1.14–15:
սո՛ւ Թիթեղներ:
բ Հակ. Գ.14:
27ա Ենովս 1.1:
բ Հակոբ 1.1–4:

Լամանացիների համար, մի օր՝ ապագայում – Նեփիացիները ջանում էին դարձի բերել Լամանացիներին – Ենովսը հրճվում է իր Քավիչով: Մոտ 420թ. Ք.ծ.ա.:

ԱՀԱ, եղավ այնպես, որ ես՝ Ենովսս, գիտենալով իմ հորը, որ ^բնա արդար մարդ էր, – քանզի նա ինձ ^գսովորեցրել էր իր լեզվով և նաև Տիրոջ ^դխրատով ու ուսմունքով, – և օրհնված լինի իմ Աստծո անունը դրա համար, – 2 Եվ ես կպատմեմ ձեզ ^եգոտեմարտի մասին, որը ես ունեցա Աստծո առաջ մինչև մեղքերի ^զթողություն ստացա:

3 Ահա, ես գնացել էի գազաններ որսալու անտառներում, և խոսքերը, որոնք ես հաճախ լսել էի իմ հորն ասելիս, հավերժական կյանքի և սրբերի ^աուրախության մասին, խորը ^բընկղմվել էին իմ սրտում:

4 Եվ իմ հոգին ^գքաղցում էր. և ես ^դծնկի իջա իմ Արարչի առջև, և ես աղաղակեցի առ նա՝ զորեղ ^եաղոթքով և աղաչանքով իմ սեփական հոգու համար. և ողջ օրվա ընթացքում ես աղաղակեցի առ նա, այո, և երբ եկավ գիշերը ես դեռ բարձրացնում էի իմ ձայնը վեր, այնպես որ այն հասավ երկինքներին:

5 Եվ մի ^զձայն եկավ ինձ՝ ասելով.

Ենովս, քո մեղքերը ներված են քեզ, և դու պիտի օրհնվես:

6 Եվ ես՝ Ենովսս, գիտեի, որ Աստված չէր կարող ստել. ուստի, իմ հանցանքը սրբվեց:

7 Եվ ես ասացի. Տե՛ր, ի՞նչպես եղավ դա:

8 Եվ նա ասաց ինձ. Քրիստոսի հանդեպ քո ^ահավատքի շնորհիվ, որին դու երբեք նախկինում ո՛չ լսել ես, ո՛չ տեսել: Եվ շատ տարիներ կանցնեն նախքան նա իրեն հայտնի կդարձնի մարմնում. ուստի, գնա՛, քո հավատքը քեզ ^բողջ դարձրեց:

9 Արդ, եղավ այնպես, որ երբ ես լսեցի այս խոսքերը, ես սկսեցի ^գցանկություն զգալ իմ եղբայրների՝ Նեփիացիների բարօրության համար. ուստի, ես ^դդուրս թափեցի իմ ողջ հոգին առ Աստված, նրանց համար:

10 Եվ մինչ ես այսպես պայքարում էի հոգում, ահա, Տիրոջ ձայնը կրկին եկավ իմ ^ամտքի մեջ՝ ասելով. Ես կայցելեմ քո եղբայրներին՝ իմ պատվիրանները պահելու մեջ իրենց ջանասիրության համաձայն: Ես ^բտվել եմ նրանց այս երկիրը, և այն սուրբ երկիր է. և ես չեմ ^գանհիծում այն, բացի դա լինի անօրինության պատճառով. ուստի, ես կայցելեմ քո եղբայրներին, ինչպես ես եմ ասել, և նրանց օրինազանցությունները

[ԵՆՈՎՍ]

1ա ստե Ենովս՝ Հակոբի որդի:
բ 2Նեփի 2.2-4:
գ 1Նեփի 1.1-2:
դ Եփես. 2.4:
2ա Ծն. ԼԲ.24-32, Ալմա 8.10:
ստե Ապաշխարել, Ապաշխարություն:
բ ստե Մեղքերի

թողություն:
3ա ստե Ուրախություն:
բ 1Նեփի 10.17-19, Ալմա 36.17-21:
4ա 2Նեփի 9.51, 3Նեփի 12.6:
բ ստե Պատկառանք:
գ ստե Աղոթք:
5ա ստե Հայտնություն:
8ա Եթեր 3.12-13:
ստե Հավատք:

բ Մառ. Թ.22:
9ա 1Նեփի 8.12, Ալմա 36.24:
բ 2Նեփի 33.3, ՄԽ 1.8, Ալմա 34.26-27:
10ա ստե Ոգեշնչում, Ոգեշնչել. Միսք:
բ 1Նեփի 2.20:
գ Եթեր 2.7-12:

ես վար կրերեմ ցավով՝ իրենց իսկ գլխին:

11 Եվ ես՝ Ենովաս, այս խոսքերը լսելուց հետո, իմ հավատքով անսասան եղա Տիրոջ հանդէպ. և ես աղոթեցի առ նա՝ շատ մեծ ճիգեր քափելով իմ եղբայրների՝ Լամանացիների համար:

12 Եվ եղավ այնպես, որ երբ ես՝ աղոթեցի և տքնեցի ողջ ջանասիրությամբ, Տերն ասաց ինձ. Ես կտամ քեզ, քո ^բցանկությունների համաձայն, քո հավատքի շնորհիվ:

13 Եվ այժմ ահա, այս էր այն ցանկությունը, որ ես ցանկացա նրանից,– որ եթէ լինէր այնպես, որ իմ ժողովուրդը՝ Նեփիացիները, ընկնէին օրինազանցության մեջ և ինչ-որ ձևով՝ կործանվէին, իսկ Լամանացիները չկործանվէին, որ Տեր Աստված ^բպահպաներ իմ ժողովրդի՝ Նեփիացիների մի հիշատակարան. նույնիսկ եթէ դա լինէր իր սուրբ բազկի զորությամբ, որ մի օր, ապագայում, այն ի հայտ ^բբերվէր Լամանացիների համար, որ գուցէ նրանք կարողանային ^բբերվել փրկության,–

14 Քանզի ներկայումս, նրանց ճշմարիտ հավատքի վերադարձնելու մեր ճիգերը ^ազուր էին: Եվ նրանք երդվել էին իրենց ցասման մեջ, որ, եթէ դա հնարավոր լիներ, նրանք ^բկործանելու էին մեր հիշատակարանները և մեզ, և նաև մեր հայրերի բոլոր ավանդությունները:

15 Ուստի, իմանալով, որ Տեր

Աստված ի գորու է՝ ^ապահպանելու մեր հիշատակարանները, ես շարունակ կանչում էի առ նա, քանզի նա ասել էր ինձ. Ինչ բան, որ դու խնդրես հավատքով, հավատալով, որ դու պիտի ստանաս Քրիստոսի անունով, դու կստանաս այն:

16 Եվ ես ունեի հավատք և կանչում էի առ Աստված, որ նա ^ապահպանի ^բհիշատակարանները. և նա ուխտեց ինձ հետ, որ նա առաջ ^գկրբի դրանք Լամանացիների համար՝ իրեն իսկ հարմար ժամանակ:

17 Եվ ես՝ Ենովաս, գիտեի, դա կլինէր համաձայն այն ուխտի, որը նա արել էր. ուստի, իմ հոգին հանգստացավ:

18 Եվ Տերն ասաց ինձ. Քո հայրերը նույնպես ինձանից խնդրել էին այս բանը. և դա պետք է արվի նրանց համար՝ համաձայն իրենց հավատքի. քանզի նրանց հավատքը նման էր քոնին:

19 Եվ եղավ այնպես, որ ես՝ Ենովաս, շրջեցի Նեփիի ժողովրդի մեջ՝ մարգարեանալով գալիք բաների մասին, և վկայելով այն բաների մասին, որոնք ես լսել էի ու տեսել:

20 Եվ ես արձանագրում եմ, որ Նեփիի ժողովուրդը ջանասիրաբար ձգտում էր վերադարձնել Լամանացիներին Աստծո ճշմարիտ հավատքին: Բայց մեր ^աջանքերը զուր էին. նրանց ատելությունը սևեռում էր, և նրանք առաջնորդվում էին իրենց չար էությանբ, այնպես որ նրանք դարձել էին

12ա Մորմ. 5.21, 9.36:

^բ Սաղ. 1է.4,
1 Նեփիի 7.12,
Հել. 10.5:

13ա Մորմ. 6.1, 6:

^բ ՄԵՆ 1.6–11,
Ալմա 37.2:

^գ Ալմա 37.19, Եթեր 12.22,

ՎեՌԻ 3.18:

^դ Ալմա 9.17:

14ա Հակոբ 7.24:

^բ Մորմ. 6.6:

15ա սո՛ւ Սուրբ գրքեր –
Սուրբ գրքերը պետք է

պահպանվեն:

16ա 3 Նեփի 5.13–15,

ՎեՌԻ 3.19–20,

10.46–50:

^բ սո՛ւ Մորմոնի Գիրքը:

^գ 2 Նեփի 27.6:

20ա Մոր. 9.6:

վայրի, կատաղի և Պարյունարբու ժողովուրդ՝ Գեռապաշտությամբ և կեղտոտությամբ լցված. սնվելով գիշատիչ գազաններով. ապրելով վրաններում և թափառելով անապատում, մի կարճ մորթուց գոտի իրենց կոնքերին և իրենց գլուխներն ածիլած, և նրանց վարպետությունն Պաղեղի մեջ էր, և սրի մեջ, և կացնի: Եվ նրանցից շատերը ոչինչ չէին ուտում, բացի հում մսից, և նրանք շարունակ ձգտում էին կործանել մեզ:

21 Եվ եղավ այնպես, որ Նեփիի ժողովուրդը հող էր վարում և անճեցնում ամեն տեսակի հատիկ և միրգ, նախիրների հոտեր և ամեն տեսակի ու ձկն անասունների հոտեր, այծեր և վայրի այծեր, և նաև շատ ձիեր:

22 Եվ մեր մեջ չափազանց շատ մարգարեներ կային: Եվ ժողովուրդը Պստապարանոց ժողովուրդ էր, դժվար հասկացող:

23 Եվ չկար ոչինչ, բացի չափից դուրս Մստությունից, Քարոզելուց և պատերազմների, հակառակությունների և ավերումների մասին մարգարեանալուց, մահվան մասին և հավերժության տևողականության և Աստծո դատաստանների ու զորության մասին նրանց շարունակ Գիլեցնելուց, – և բոլոր այս բաները՝ նրանց շարունակ սթափեցնելու, Տիրոջ երկյուղի մեջ նրանց պահելու համար: Ես ասում եմ, չկար ոչինչ,

բացի այս բաներից, և խոսքի անչափ մեծ պարզությունից, որ պահեր նրանց դեպի կործանում սրբնաթաց վար գնալուց: Եվ այս ձևով եմ ես գրում նրանց վերաբերյալ:

24 Եվ իմ օրերի ընթացքում, ես տեսա պատերազմներ Նեփիացիների և Լամանացիների միջև:

25 Եվ եղավ այնպես, որ ես սկսեցի ծերանալ և հարյուր յոթանասուննևինը տարիներ անցել էին այն ժամանակից ի վեր, երբ մեր հայր Լեքին Թրուսաղեմը:

26 Եվ ես տեսա, որ ես շուտով պիտի վար իջնեի իմ գերեզմանը՝ ներգործված լինելով Աստծո զորությամբ, որ ես պետք է քարոզեի և մարգարեանայի այս ժողովրդի համար և հայտարարեի խոսքը՝ համաձայն ճշմարտության, որը Քրիստոսում է: Եվ ես հայտարարել եմ այն իմ բոլոր օրերում և հրճվել եմ դրանում առավել, քան այն, ինչ աշխարհիկ է:

27 Եվ շուտով ես գնում եմ իմ հանգստի տեղը, որն իմ Քավչի հետ է. քանզի ես գիտեմ, որ նրանում ես կհանգստանամ: Եվ ես հրճվում եմ այն օրով, երբ իմ մահկանացուն կհազնի Գանմահություն և կկանգնի նրա առջև. այն ժամանակ կտեսնեմ ես նրա երեսը հաճույքով, և նա կասի ինձ. Արի ինձ մոտ, դու՛ր, օրհնված, քեզ համար իմ Հոր Պապարանքներում տեղ կա պատրաստված: Ամեն:

<p>20բ Հարոմ 1.6: <i>գ</i> Մոսիա 9.12: սո՛ւ Կռապաշտություն: <i>դ</i> Մոսիա 10.8: 21ա Մոսիա 9.9: 22ա ՄԽ 1.16–18: <i>բ</i> Հարոմ 1.3: 23ա1 Նեփի 16.2,</p>	<p>2 Նեփի 33.5: <i>բ</i> սո՛ւ Քարոզել: <i>գ</i> Հել. 12.3: <i>դ</i> Հարոմ 1.12, Ալմա 31.5: 25ա1 Նեփի 2.2–4: 27ա սո՛ւ Հանգիստ: <i>բ</i> սո՛ւ Մահկանացու,</p>	<p>Մահկանացություն: <i>գ</i> սո՛ւ Ամմահ, Ամմահություն: <i>դ</i> Հովհ. ԺԳ. 2–3, Եթեր 12.32–34, Վևո՛ր 72.4, 98.18:</p>
--	--	---

ՀԱՐՈՄԻ ԳԻՐՔԸ

Նեփիացիները պահում են Մովսեսի օրենքը, սպասում Քրիստոսի գալուստին և բարգավաճում են երկրում – Շատ մարգարեներ աշխատում են պահել ժողովրդին ճշմարտության ուղու վրա: Մոտ 399–361թթ. Ք.ծ.ա.:

ԵՎ ահա, ես՝ Հարոմս, գրում եմ մի քանի խոսքեր իմ հոր՝ Ենովսի պատվիրանների համաձայն, որպեսզի մեր ^ատոհմաբանությունը պահպանվի:

2 Եվ քանի որ ^այս թիթեղները ^բփոքր են, և քանի որ այս բաները ^գգրվում են ի շահ մեր եղբայրների՝ ^դԼամանացիների, ուստի, անպայման պետք է, որ ես գրեմ մի քիչ բայց ես չեմ գրի բաներն իմ մարգարեանալու, ոչ էլ իմ հայտնությունները: Քանզի ի՞նչ կարող էի ես գրել ավելի, քան իմ հայրերն են գրել: Քանզի չե՞ն բացահայտել նրանք փրկության ծրագիրը: Ես ասում եմ ձեզ՝ Այո՛. և սա բավական է ինձ:

3 Ահա, անհրաժեշտ է, որ այս ժողովրդի մեջ շատ բան արվի, նրանց սրտերի կարծրության, և նրանց ականջների խլության, և նրանց մտքերի կորուսության, և նրանց պարանոցների ^ախստության պատճառով. այնուամենայնիվ, Աստված չափազանց ողորմած է նրանց հանդեպ և դեռ նրանց չի ^բսրբել երկրի երեսից:

4 Եվ կան շատերը մեր մեջ, ովքեր բազմաթիվ ^ահայտնություններ ունեն, քանզի նրանք բոլորը չեն խստապարանոց: Եվ բոլոր նրանք, ովքեր խստապարանոց չեն և ունեն հավատք, ^բհաղորդակցություն ունեն Սուրբ Հոգու հետ, որը հայտնվում է մարդկանց զավակներին՝ ըստ իրենց հավատքի:

5 Եվ արդ, ահա, երկու հարյուր տարիներ անցել էին, և Նեփիի ժողովուրդը զորացել էր երկրում: Նրանք ^ապահում-պահպանում էին Մովսեսի օրենքը և ^բհանգստության օրը սուրբ՝ Տիրոջ համար: Եվ նրանք չէին ^գսրբապղծում. ոչ էլ նրանք ^դհայիոյում էին: Եվ երկրի օրենքները չափազանց խիստ էին:

6 Եվ նրանք ցրված էին երկրի երեսի մեծ մասի վրա և Լամանացիները՝ նույնպես: Եվ նրանք շատ ավելի մեծաքանակ էին, քան Նեփիացիները. և նրանք սիրում էին ^ասպանություն և խմում էին զազանների արյունը:

7 Եվ եղավ այնպես, որ նրանք շատ անգամներ եկան մեր՝ Նեփիացիների դեմ ճակատամարտելու: Բայց մեր ^աբազավորները և մեր առաջնորդները զորեղ մարդիկ էին՝ Տիրոջ հավատքում. և նրանք սովորեցնում էին ժողովրդին Տիրոջ ուղիները. ուստի, մենք դիմադրեցինք Լամանացիներին

[ՀԱՐՈՄ]

1 *ա* 1 Նեփի 3.12, 5.14:

2 *ա* Հակոբ 3.14,

Օմնի 1.1:

բ 1 Նեփի 6.1–6:

գ սուր Սուրբ գրքեր –

Սուրբ գրքերի արժեքը:

դ 2 Նեփի 27.6,

Մորմ. 5.12:

3 *ա* Ենովս 1.22–23:

բ Եթեր 2.8–10:

4 *ա* Ալմա 26.22,

Հել. 11.23,

ՎևոՒ 107.18–19:

սուր Հայտնություն:

բ սուր Սուրբ Հոգի:

5 *ա* 2 Նեփի 25.24,

Ալմա 34.13–14:

բ Ել. 1.6.2:

սուր Հանգստության օր:

գ սուր Անարգանք:

դ սուր Հայիոյել,

Հայիոյանք:

6 *ա* Հակոբ 7.24,

Ենովս 1.20:

7 *ա* Հակոբ 1.9, 11, 15:

և քչեցինք նրանց ^բմեր հողերից և սկսեցինք ամրացնել մեր քաղաքները, կամ մեր ժառանգության ամեն մի վայր:

8 Եվ մենք շատ բազմացանք և տարածվեցինք երկրի երեսին և դարձանք անչափ հարուստ՝ ոսկով և արծաթով, քանկարժեք բաներով և փայտի նրբագեղ աշխատանքով, շենքերով և սարքավորումներով և նաև երկաթով ու պղնձով, արույրով ու պողպատով, պատրաստելով հողը հերկելու տարբեր ձևերի՝ ամեն տեսակի գործիքներ և պատերազմի ^ազենքեր, – այո՛, սրածայր նետեր, կապարճներ, միզակներ, տեգեր և ամեն տեսակի նախապատրաստություններ պատերազմի համար:

9 Եվ այսպես, նախապատրաստված լինելով հանդիպելու Լամանացիներին, նրանք հաջողություն չունեցան մեր դեմ: Բայց Տիրոջ խոսքը հաստատվեց, որը նա հայտնել էր մեր հայրերին՝ ասելով, որ. Որքան որ դուք կպահեք իմ պատվիրանները, դուք կբարգավաճեք երկրում:

10 Եվ եղավ այնպես, որ Տիրոջ մարգարեները սպառնացին Նեփիի ժողովրդին, ըստ Աստծո խոսքի, որ՝ եթե նրանք չպահեին պատվիրանները, այլ ընկնեին օրինազանցության մեջ, նրանք ^ակկորչեին երկրի երեսից:

11 Ուստի, մարգարեները, քահանաները և ուսուցիչները ջանասիրաբար տքնում էին՝ ողջ

երկայնամտությամբ ջանասիրությամբ հորդորելով ժողովրդին. սովորեցնելով Մովսեսի ^աօրենքը և նպատակը, ինչի համար որ այն տրվել էր. համոզելով նրանց ^բսպասելու Մեսիային և հավատալու նրա գալույն այնպես, ^գկարծես թե նա արդեն եկել էր: Եվ այս ձևով էին նրանք սովորեցնում նրանց:

12 Եվ եղավ այնպես, որ այսպես անելով, նրանք պահում էին նրանց երկրի երեսից ^ակործանվելուց. քանզի նրանք խոսքով ^բխայթում էին նրանց սրտերը՝ շարունակ սթափեցնելով նրանց ապաշխարելու համար:

13 Եվ եղավ այնպես, որ երկու հարյուր և երեսունևուր տարի էր անցել, – այդ ժամանակահատվածի մեծ մասը՝ պատերազմներով և հակառակություններով և երկպառակություններով:

14 Եվ ես՝ Հարոմս, չեմ գրում ավելին, քանզի թիթեղները փոքր են: Բայց ահա, իմ եղբայրներ, դուք կարող եք դիմել Նեփիի ^ամյուս թիթեղներին. քանզի, ահա, դրանց վրա մեր պատերազմների հիշատակարաններն են փորագրված՝ ըստ թագավորների գրածների, կամ նրանց, ում նրանք գրել էին տվել:

15 Եվ ես հանձնում եմ այս թիթեղներն իմ որդի Օմնիի ձեռքը, որպեսզի դրանք կարողանան պահվել՝ ըստ իմ հայրերի ^ապատվիրանների:

7բ ՄԽ 1.14:

8ա Մոսիա 10.8:

10ա1 Նեփի 12.19–20,

Օմնի 1.5:

11ա Հակոբ 4.5,

Ալմա 25.15–16:

բ 2 Նեփի 11.4,

Եթեր 12.18–19:

գ 2 Նեփի 25.24–27,

Մոսիա 3.13, 16.6:

12ա Եթեր 2.10:

բ Ալմա 31.5:

14ա1 Նեփի 9.2–4:

15ա Հակոբ 1.1–4:

Օմնին, Ամարոնը, Քեմիսը, Աքինադոնը և Ամադեկին, յորաքանչյորը՝ հերթով, պահում են հիշատակարանները – Մոսիան հայտնաբերում է Չարահեմլայի ժողովրդին, որոնք Սեդեկիայի օրոք էին եկել Երուսաղեմից – Մոսիան թագավոր է կարգվում նրանց վրա – Մոդեբի հետնորդները Չարահեմլայում հայտնաբերել էին Կորիանթոմբին Հարեդացիներից վերջինին – Բեմիանին թագավորը հաջորդում է Մոսիային – Մարդիկ պետք է մատուցեն իրենց հոգիները՝ որպես ընծա Քրիստոսին: Մոտ 323–130թթ. Ք.ծ.ա.:

ԱՀԱ, եղավ այնպես, որ ես՝ Օմնիս, պատվիրված լինելով իմ հայր՝ Հարոմի կողմից, որ ինչոր բան գրեի այս թիթեղների վրա՝ պահպանելու համար մեր տոհմաբանությունը,

2 Ուստի, իմ օրերում, ես կկամեմայի, որ դուք իմանայիք, որ ես շատ եմ կովել սրով՝ պահպանելու իմ ժողովրդին՝ Նեփիացիներին, իրենց թշնամիների՝ Լամանացիների ձեռքն ընկնելուց: Բայց ահա, ես ինքս մի ամբարիշտ մարդ եմ, և ես չեմ պահել Տիրոջ կանոններն ու պատվիրանները, ինչպես պարտավոր էի անել:

3 Եվ եղավ այնպես, որ երկու հարյուր յոթանասունևկես տարի անցել էր, և մենք ունեցել էինք խաղաղության շատ ժամանակներ. և մենք ունեցել էինք ծանր պատերազմի և արյունահեղության շատ ժամանակներ: Այո, և ի վերջո, երկու հարյուր ութանասուներկու

տարիներ անցել էին, և ես պահել էի այս թիթեղները՝ համաձայն իմ հայրերի՝ պատվիրանների. և ես վստահեցի դրանք իմ որդի Ամարոնին: Եվ ես ավարտում եմ:

4 Եվ այժմ ես՝ Ամարոնս, այն, ինչ գրում եմ, որոնք քիչ են, գրում եմ հորս գրքում:

5 Ահա, եղավ այնպես, որ երեք հարյուր քսան տարիներ անցել էին, և Նեփիացիների առավել ամբարիշտ մասը՝ կործանվել էր:

6 Քանզի Տերը չէր հանդուրժի, հետո, երբ նա դուրս էր առաջնորդել նրանց Երուսաղեմի հողից և պահել ու պահպանել էր նրանց իրենց թշնամիների ձեռքն ընկնելուց, այո, նա չէր հանդուրժի, որ խոսքերը չհաստատվեին, որոնք նա խոսել էր մեր հայրերի համար՝ ասելով, որ. Որքան որ դուք չէք պահի իմ պատվիրանները, դուք չէք բարգավաճի երկրում:

7 Ուստի, Տերն այցելեց նրանց մեծ դատաստանով. սակայն, նա խնայեց արդարներից, որպեսզի նրանք չկորչեն, այլ ազատեց նրանց իրենց թշնամիների ձեռքից:

8 Եվ եղավ այնպես, որ ես հանձնեցի թիթեղներն իմ եղբայր Քեմիսին:

9 Այժմ ես՝ Քեմիսս, ինչ սակավաթիվ բաներ, որ գրում եմ, գրում եմ նույն գրքում՝ իմ եղբոր հետ. քանզի ահա, ես տեսա վերջը, որը նա գրեց, որ նա դա գրեց իր իսկ ձեռքով. և նա գրեց դա այն օրը, երբ նա հանձնեց դրանք ինձ: Եվ այս ձևով եմք մենք պահում հիշատակարանները, քանզի դա մեր հայ-

րերի պատվիրանների համաձայն է: Եվ ես ավարտում եմ:

10 Ահա, ես Աբիմադոնն եմ՝ Քեմիսի որդին: Ահա, եղավ այնպես, որ ես շատ պատերազմներ ու հակառակություններ տեսա իմ ժողովրդի՝ Նեփիացիների և Լամանացիների միջև. և ես, իմ իսկ սրով խլել եմ Լամանացիներից շատերի կյանքը՝ պաշտպանելով իմ եղբայներին:

11 Եվ, ահա, այս ժողովրդի հիշատակարանը փորագրված է քիթեղների վրա, որն ըստ սերունդների պահվել է թագավորների կողմից. և ես չգիտեմ ոչ մի հայտնության, ոչ էլ մարգարեության մասին, բացի այն, ինչ գրվել է. ուստի, այն ինչը գրված է, բավական է: Եվ ես ավարտում եմ:

12 Ահա, ես Ամադեկին եմ՝ Աբիմադոնի որդին: Ահա, ես որոշ բան կխոսեմ ձեզ հետ Մոսիայի վերաբերյալ, որը թագավոր էր կարգվել Չարահեմլա երկրի վրա. քանզի, ահա, նա, լինելով նախագուշացված Տիրոջից, որ պետք է դուրս փախչեր Նեփիի՝ տրկրից, և բոլոր նրանք, ովքեր ականջ կդնեին Տիրոջ ձայնին, նույնպես նրա հետ պետք է՝ հեռանային երկրից դուրս՝ դեպի անապատ, –

13 Եվ եղավ այնպես, որ նա արեց համաձայն նրա, ինչպես Տերն էր պատվիրել նրան: Եվ նրանք հեռացան երկրից դուրս՝ անապատ, բոլոր նրանք, ովքեր ականջ դրեցին Տիրոջ ձայնին. և նրանք առաջնորդվում էին մեծաքանակ քարոզումներով և մարգարեացումներով: Եվ նրանք շարունակ խրատվում էին Աստծո խոսքով. և

նրանք առաջնորդվում էին անապատի միջով նրա բազկի գորությանը, մինչև որ նրանք եկան ներքև և մտան երկիրը, որը կոչվում է Չարահեմլայի երկիր:

14 Եվ նրանք հայտնաբերեցին մի ժողովուրդ, որը կոչվում էր՝ Չարահեմլայի ժողովուրդ: Այսպիսով, Չարահեմլայի ժողովրդի մեջ մեծ ցնծություն էր. և Չարահեմլան նույնպես անչափ ցնծում էր, որովհետև Տերն ուղարկել էր Մոսիայի ժողովրդին արույրե՝ թիթեղների հետ, որոնք պարունակում էին հրեաների հիշատակարանը:

15 Ահա, եղավ այնպես, որ Մոսիան հայտնաբերեց, որ Չարահեմլայի ժողովուրդը դուրս էր եկել Երուսաղեմից այն ժամանակ, երբ Պետեկիան՝ Հուդայի թագավորը, գերության էր տարվել Բաբելոն:

16 Եվ նրանք ճանապարհորդել էին անապատում և Տիրոջ ձեռքով բերվել էին մեծ ջրերի վրայով դեպի այն երկիրը, որտեղ Մոսիան հայտնաբերեց նրանց. և նրանք այն ժամանակից ի վեր բնակվել էին այնտեղ:

17 Եվ այն ժամանակ, երբ Մոսիան հայտնաբերեց նրանց, նրանք դարձել էին շատ մեծաթիվ: Այնուամենայնիվ, նրանք ունեցել էին շատ պատերազմներ և լուրջ հակառակություններ, և ժամանակ առ ժամանակ ընկել էին սրից. և նրանց լեզուն դարձել էր ապականված. և նրանք՝ հիշատակարաններ չէին բերել իրենց հետ. և նրանք ուրացել էին իրենց Ստեղծողի գոյությունը. և ո՛չ Մոսիան,

12ա2 Նեփի 5.6–9:

բ Հակոբ 3.4:

14ա սոս Չարահեմլա:

բ 1 Նեփի 3.3, 19–20,

5.10–22:

15ա Մոսիա 25.2:

բ Երեմ. ԼԹ.1–10,

Հել. 8.21:

17ա Մոսիա 1.2–6:

ո՛չ էլ Մոսիայի ժողովուրդը չէին կարողանում հասկանալ նրանց:

18 Բայց եղավ այնպես, որ Մոսիան կարգադրեց, որ նրանց սովորեցնեին իր լեզուն: Եվ եղավ այնպես, որ երբ նրանց սովորեցրեցին Մոսիայի լեզուն, Ջարահեմյան տվեց իր հայրերի տոհմաբանությունը՝ ըստ իր հիշողության. և դրանք գրված են, բայց ոչ այս քիթեղներում:

19 Եվ եղավ այնպես, որ Ջարահեմյանի և Մոսիայի ժողովուրդները՝ միացան իրար. և Պոսիան նշանակվեց նրանց թագավոր:

20 Եվ եղավ այնպես, որ Մոսիայի օրերում նրա մոտ մի մեծ քար կար բերված՝ վրան փորագրություններով. և նա Աստծո զորությամբ և շնորհով՝ թարգմանեց փորագրությունները:

21 Եվ դրանք տալիս էին ոմն Կորիանթումրի և նրա ժողովրդի սպանվածների պատմությունը: Եվ Կորիանթումրը հայտնաբերվել էր Ջարահեմյանի ժողովրդի կողմից. և նա բնակվել էր նրանց հետ ինը լուսնամիսների ընթացքում:

22 Այնտեղ խոսվում էր մի քանի խոսք նրա հայրերի մասին: Եվ նրա առաջին ծնողները դուրս էին եկել՝ աշտարակից այն ժամանակ, երբ Տերը թխտնեց ժողովրդի լեզուն. և Տիրոջ խստությունն իջավ նրանց վրա՝ համաձայն նրա դատաստանների, որոնք արդար են. և նրանց գոսկորներն ընկած են ցաքուցրիվ երկրումը՝ դեպի հյուսիս:

23 Ահա, ես՝ Ամադեկիս, ծնվել եմ Մոսիայի օրոք. և ես ապրել եմ՝ տեսնելով նրա մահը. և՝ Բենիամինը՝ նրա որդին, թագավորեց նրա փոխարեն:

24 Եվ ահա, ես, Բենիամին թագավորի օրոք, տեսել եմ մի ծանր պատերազմ և շատ արյունահեղություն Նեփիացիների ու Լամանացիների միջև: Բայց ահա, Նեփիացիները մեծ առավելություն ձեռք բերեցին նրանց վրա. այո, այնպես, որ Բենիամին թագավորը դուրս քշեց նրանց Ջարահեմյանի երկրից:

25 Եվ եղավ այնպես, որ ես սկսեցի ձերբանալ. և չունենալով սերունդ, և ճանաչելով՝ Բենիամին թագավորին, որպես արդար մարդ Տիրոջ առաջ, ուստի, ես Քիհանձնեմ այս քիթեղները նրան, հորդորելով բոլոր մարդկանց՝ գալ դեպի Աստված՝ Մուրբն Իսրայելի, և հավատալ մարգարեանալուն, հայտնություններին, հրեշտակների սպասավորությանը, լեզուներով խոսելու պարգևին, լեզուների թարգմանության պարգևին և բոլոր բաներին, որոնք գրառվել են. քանզի չկա ոչինչ, որը բարի է, եթե չի գալիս Տիրոջից. և այն, ինչ չար է, գալիս է դևից:

26 Եվ արդ, իմ սիրելի՛ եղբայրներ, ես կկամենայի, որ դուք՝ զաք Քրիստոսի մոտ, որը Մուրբն է Իսրայելի, և ճաշակեք նրա փրկությունից և նրա փրկագնման գործությունից: Այո՛, եկեք նրա մոտ և Պատուցեք ձեր ողջ հոգիները

19ա Մոսիա 25.13:

բ Օմնի 1.12:

20ա Մոսիա 8.13–19:

սո՛ր Տեսանող:

21ա Եթեր 12.1:

սո՛ր Կորիանթումր:

22ա Եթեր 1.1–5:

բ Ծն. ԺԱ.6–9,

Մոսիա 28.17,

Եթեր 1.33:

գ Մոսիա 8.8:

23ա ՄԽ 1.3:

25ա ՄԽ 1.17–18,

Մոսիա 29.13:

բ ՄԽ 1.10:

գ Ալմա 5.40, Եթեր 4.12,

Մոր. 7.15–17:

26ա Հակոբ 1.7, Ալմա 29.2,

Մոր. 10.32:

բ սո՛ր Ջոհաբերություն:

նրան՝ որպես Գընձա, և շարունակեք ²ծոնով ու աղոթքով, և համբերեք մինչև վերջ, և ինչպես կենդանի է Տերը, դուք կփրկվեք:

27 Եվ այժմ, ես կկամենայի փոքր-ինչ խոսել մի որոշակի խմբի մասին, որոնք գնացին դեպի անապատ՝ վերադառնալու Նեփիի երկիրը. քանզի կար մի մեծ խումբ, որը ցանկանում էր տիրել իրենց ժառանգության հողին:

28 Ուստի, նրանք գնացին դեպի անապատ: Եվ նրանց առաջնորդը լինելով մի ուժեղ և զորեղ մարդ, և խստապարանոց մարդ, ուստի նա հակառակություն առաջացրեց

նրանց մեջ. և նրանք բոլորը ³սպանվեցին անապատում, բացի հիսունից, և նրանք կրկին վերադարձան Ջարահեմլայի երկիրը:

29 Եվ եղավ այնպես, որ նրանք նաև վերցրեցին մի զգալի թվով ուրիշների և կրկին ձեռնարկեցին իրենց ճանապարհորդությունը դեպի անապատ:

30 Եվ ես՝ Ամադեկիս, ունեի եղբայր, որը նույնպես գնացել էր նրանց հետ. և ես տեղյակ չեմ նրանց մասին այդ ժամանակից ի վեր: Եվ ես մոտ եմ իմ գերեզմանում պառկելուն. և ⁴այս քիթեղները լրացել են: Եվ ես վերջ եմ դնում իմ խոսելուն:

ՄՈՐՄՈՒԻ ԽՈՍՔԵՐԸ

Մորմունը կրճատում է Նեփիի մեծ քիթեղները – Նա դնում է փոքր քիթեղները մյուս քիթեղների հետ – Բենիամին թագավորը երկրում խաղաղություն է հաստատում: Մոտ 385թ. Ք.ծ.հ.:

Եվ այժմ ես՝ ¹Մորմոնս, մոտ լինելով իմ որդի Մորմոնիի ձեռքը հիշատակարանը հանձնելուն, որը ես եմ պատրաստել, ահա, ես վկա եղա իմ ժողովրդի՝ Նեփիացիների համարյա լիակատար կործանմանը:

2 Եվ սա ²չառ հարյուրավոր տարիներ Քրիստոսի գալստից հետո է, որ ես հանձնում եմ այս

հիշատակարաններն իմ որդու ձեռքը. և ինձ թվում է, որ նա վկա կլինի իմ ժողովրդի լիակատար կործանմանը: Բայց թող Աստված տա, որ նա կարողանա նրանցից երկար ապրել, որպեսզի նա կարողանա որոշ բան գրել նրանց մասին և որոշ բան Քրիստոսի մասին, որ միգուցե մի օր այն ³օգտակար լինի նրանց:

3 Եվ այժմ ես խոսում եմ որոշ բան այն մասին, ինչը ես գրել եմ. քանզի Նեփիի ⁴քիթեղներից մի ⁵կրճատում անելուց հետո, ընդհուպ մինչև այս Բենիամին թագավորի թագավորումը, որի մասին խոսել էր Ամադեկին, ես

26q 3 Նեփի 9.20:
դ սոբ ծոն,
Ծոնապահություն:
28a Մոսիա 9.1–4:
30a1 Նեփի 6.1–6:

[ՄՈՐՄՈՒԻ ԽՈՍՔԵՐԸ]
1 1a 3 Նեփի 5.9–12,
Մորմ. 1.1–4, 8.1, 4–5:
սոբ Մորմոն՝ Նեփիացի
մարգարե:

2a Մորմ. 6.5–6:
բ վևոՒԲ 3.16–20:
3ա վևոՒԲ 10.38–40:
բ վևոՒԲ 10.44:

փնտրեցի՝ Գիշատակարանների մեջ, որոնք հանձնվել էին իմ ձեռքը, և գտա այս թիթեղները, որոնք պարունակում էին մարգարեների այս փոքր պատմությունը, սկսած Հակոբից ընդհուպ մինչև այս Բենիամին թագավորի թագավորումը, և նաև Նեփիի խոսքերից շատերը:

4 Եվ բաները, որոնք այս թիթեղների վրա են, Խաճելի են ինձ՝ Քրիստոսի գալստյան մարգարեությունների համար. և իմ հայրերն իմանալով, որ դրանցից շատերն իրականացել են. այո՛, և ես նույնպես գիտեմ, որ բոլոր բաները, որոնք մարգարեացել էին մեր վերաբերյալ՝ ընդհուպ մինչև այս օրը, իրականացել են, և այն ամենը, որ վերաբերում են այս օրից հետայսու, պետք է հաստատ իրականանան,–

5 Ուստի, ես ընտրեցի ՝այս բաները, որ ավարտեմ իմ հիշատակարանը դրանց վրա, որի մնացածն իմ հիշատակարանի ես կվերցնեմ Նեփիի թիթեղներից. և ես չեմ կարող գրել իմ ժողովրդի գործերի Գարայուրերորդ մասն անգամ:

6 Բայց ահա, ես պիտի վերցնեմ այս թիթեղները, որոնք պարունակում են այս մարգարեացումներն ու հայտնությունները, և դրանք կդնեմ իմ հիշատակարանի մնացածի հետ, քանզի դրանք ընտիր են ինձ համար. և ես գիտեմ՝ դրանք ընտիր կլինեն իմ եղբայրների համար:

7 Եվ ես անում եմ սա ՝իմաստուն նպատակի համար. քանզի ըստ Տիրոջ Հոգու ներգործումների, որն իմ մեջ է, այսպես է այն շջջում ինձ: Եվ այժմ ես չգիտեմ բոլոր բաները. բայց Տերը ՝գիտի բոլոր բաները, որոնք պետք է գան. ուստի, նա ներգործում է իմ մեջ՝ անել ըստ իր կամքի:

8 Եվ իմ ՝աղոթքն առ Աստված վերաբերում է իմ եղբայրերին, որպեսզի նրանք կարողանան դարձյալ գալ Աստծո իմացությանը, այո՛, Քրիստոսի փրկագնամանը. որ նրանք կարողանան դարձյալ լինել մի ՝հրաշալի ժողովուրդ:

9 Եվ այժմ ես՝ Մորմոնս, սկսում եմ իմ հիշատակարանն ավարտել, որը ես վերցնում եմ Նեփիի թիթեղներից. և ես անում եմ դա համաձայն այն իմացության ու հասկացողության, որ Աստված տվել է ինձ:

10 Ուստի եղավ այնպես, որ երբ Ամաղեկին այս թիթեղները ՝հանձնեց Բենիամին թագավորի ձեռքը, նա վերցրեց դրանք և դրեց ՝մյուս թիթեղների հետ, որոնք պարունակում էին հիշատակարանները, որոնք փոխանցվել էին Գթագավորների կողմից սերնդեսերունդ՝ մինչև Բենիամին թագավորի օրերը:

11 Եվ դրանք փոխանցվել էին Բենիամին թագավորից սկսած, սերնդեսերունդ, մինչև դրանք ընկան ՝իմ ձեռքը: Եվ ես՝ Մորմոնս, աղոթում եմ Աստծուն, որ դրանք կարողանան պահպանվել

3գ Մոսիա 1.6, Հել. 3.13-15, Մորմ. 4.23:
 դ Օմնի 1.23:
 4ա1 Նեփի 6.5:
 5ա նշ. 4-րդ հատվածում նշված բաները, որոնք հաճելի են նրան:

բ 1 Նեփի 9.2:
 գ 3 Նեփի 5.8-11, 26.6-12:
 7ա1 Նեփի 9.5, 19.3, ՎևոՒ 3.12-20, 10.1-19, 30-47:
 բ սուր Ամենագետ:
 8ա2 Նեփի 33.3-4,

Ենովս 1.11-12:
 բ 2 Նեփի 30.6:
 10ա Օմնի 1.25, 30:
 բ 1 Նեփի 9.4:
 գ Հարոմ 1.14:
 11ա3 Նեփի 5.8-12, Մորմ. 1.1-5:

այս ժամանակից ի վեր: Եվ ես գիտեմ, որ դրանք կպահպանվեն. քանզի դրանց վրա կարևոր բաներ կան գրված, ըստ որոնց՝ իմ ժողովուրդը և նրանց եղբայրները՝ Քրիստով են այն մեծ և վերջին օրը, ըստ Աստծո խոսքի, որը գրված է:

12 Եվ այժմ՝ ինչ վերաբերում է այս Բենիամին թագավորին, նա ինչ-որ հակառակություններ ուներ իր սեփական ժողովրդի մեջ:

13 Եվ եղավ այնպես նաև, որ Լամանացիների բանակները վայր եկան Նեփիի՝ Մերկրից՝ ճակատամարտելու նրա ժողովրդի դեմ: Բայց ահա, Բենիամին թագավորն ի մի հավաքեց իր բանակները, և նա կանգնեց նրանց դեմ. և նա կռվեց իր սեփական բազկի ուժով, Լաբանի Քսրով:

14 Եվ Տիրոջ ուժով նրանք կռվեցին իրենց թշնամիների դեմ, մինչև նրանք սպանեցին Լամանացիներից շատ հազարավորների: Եվ եղավ այնպես, որ նրանք կռվեցին Լամանացիների դեմ, մինչև դուրս քշեցին նրանց իրենց բոլոր ժառանգության հողերից:

15 Եվ եղավ այնպես, որ կեղծ ՄՔրիստոսներ լինելուց հետո, նրանց բերանները փակվեցին, և

նրանք պատժվեցին՝ համաձայն իրենց հանցանքների.

16 Եվ ժողովրդի մեջ կեղծ մարգարեներ, և կեղծ քարոզիչներ, և ուսուցիչներ լինելուց և սրանք բոլորն իրենց հանցանքների համաձայն պատժվելուց հետո. և Լամանացիների հետ շարունակ շատ հակառակություններ և երկպառակություններ ունենալուց հետո, ահա, եղավ այնպես, որ Բենիամին թագավորը, սուրբ Մարգարեների աջակցությամբ, որոնք ժողովրդի միջից էին, -

17 Քանզի ահա, Բենիամին թագավորը մի՛ սուրբ մարդ էր, և նա թագավորում էր իր ժողովրդի վրա արդարությամբ. և երկրում կային շատ սուրբ մարդիկ, և նրանք խոսում էին Աստծո խոսքը՝ Քզորությամբ և իշխանությամբ. և նրանք գործածում էին շատ Պիստություն ժողովրդի խստապարանոցության պատճառով, -

18 Ուստի, նրանց օգնությամբ, Բենիամին թագավորը, տքնելով իր մարմնի ողջ գործությամբ և իր հոգու ողջ ունակությամբ, և մարգարեները նույնպես, դարձյալ խաղաղություն հաստատեց երկրում:

ՄՈՍԻԱՅԻ ԳԻՐՔԸ

ԳԼՈՒԽ 1

Բենիամին թագավորը սովորեցնում է իր որդիներին իրենց հայրերի

լեզուն և մարգարեությունները - Նրանց կրոնը և քաղաքակրթությունը պահպանվել է հիշատակարանների շնորհիվ պահված զանազան

11բ 2 Նեփի 25.18, 29.11, 33.11-15,
3 Նեփի 27.23-27:
13ա Օմնի 1.12:
բ 1 Նեփի 4.9,

2 Նեփի 5.14,
Հակոբ 1.10,
Մոսիա 1.16,
ՎևոՒ 17.1:
15ա ՍՈՒ Հակաքրիստոս:

16ա Ենովս 1.22:
17ա Ալմա 13.26:
բ Ալմա 17.2-3:
գ Մոր. 9.4,
ՎևոՒ 121.41-43:

թիթեղների վրա – Մոսիան ընտրովում է որպես թագավոր, և նրան է տրվում հիշատակարանների պահպանությունը և սյուս բաները: Մոս 130-124թթ. Զ.ծ.ս.:

Եվ այժմ այլևս ոչ մի հակառակություն չկար ողջ Ջարահենլայի տերկրում, բոլոր ժողովրդի մեջ, ովքեր պատկանում էին Բենիամին թագավորին, այնպես որ Բենիամին թագավորն անընդհատ խաղաղություն ունեցավ բոլոր մնացած իր օրերում:

2 Եվ եղավ այնպես, որ նա ունեցավ երեք որդի. և նա կոչեց նրանց անունները Մոսիա և Հելորում և Հելաման: Եվ կարգադրեց, որ նրանց տվորեցնեին իր հայրերի ողջ տեղում, որ այդպիսով նրանք դառնային խելամիտ մարդիկ. և որպեսզի նրանք իմանային մարգարեությունների մասին, որոնք խտավել էին իրենց հայրերի բերանով, որոնք իրենց էին հանձնվել Տիրոջ ձեռքով:

3 Եվ նա նաև տվորեցրեց նրանց հիշատակարանների վերաբերյալ, որոնք փորագրված էին արույրե թիթեղների վրա՝ ասելով. Իմ որդիներ, ես կկամենայի, որ դուք հիշեք, որ եթե չլինեին տայս թիթեղները, որոնք պարունակում են այս հիշատակարանները և այս պատվիրանները, մենք պիտի տառապեինք անգիտության մեջ, նույնիսկ այս ներկա ժամանակ, չիմանալով Աստծո խորհուրդները:

4 Քանզի հնարավոր չէր լինի, որ մեր հայր Լեթին կարողանար

հիշել բոլոր այս բաները՝ սովորեցնելով դրանք իր զավակներին, եթե չլիներ այս թիթեղների օգնությունը, քանզի նա սովորեցված լինելով Եզիպտացիների տեղով, հետևաբար կարող էր կարողալ այս փորագրությունները և սովորեցնել դրանք իր զավակներին, որպեսզի դրանց միջոցով նրանք կարողանային սովորեցնել դրանք իրենց զավակներին, և այսպես կատարելով Աստծո պատվիրանները, ընդհուպ մինչև այս ներկա ժամանակը:

5 Ես ասում եմ ձեզ, իմ որդիներ, եթե չլինեին այս բաները, որոնք պահվել և պահպանվել են Աստծո ձեռքով, որպեսզի մենք կարողանայինք կարողալ և հասկանալ նրա գիտրհուրդների վերաբերյալ և միշտ ունենայինք նրա պատվիրանները մեր աչքի առաջ, որ նույնիսկ մեր հայրերը կընկնեին անհավատության մեջ, և մենք պիտի մամանվեինք մեր եղբայրներին՝ Լամանացիներին, ովքեր ոչինչ չգիտեն այս բաների մասին, կամ նույնիսկ չեն հավատում դրանց, երբ դրանք ուսուցանվում են նրանց, իրենց հայրերի տավանդությունների պատճառով, որոնք ճիշտ չեն:

6 Ով իմ որդիներ, ես կկամենայի, որ դուք հիշեիք, որ այս խոսքերը ճշմարիտ են. և որ այս հիշատակարանները ևս ճշմարիտ են: Եվ ասա, Նեփիի թիթեղները նույնպես, որոնք պարունակում են հիշատակարանները և մեր հայրերի խոսքերը, նրանց՝ Երուսաղեմը

[ՄՈՍԻԱ]
1 1ա Օմնի 1.13:
2ա Մոսիա 4.14-15,
ՎևՌՖ 68.25, 28:
բ Մորմ. 9.32:
3ա սոս Թիթեղներ:

բ Ալմա 37.8-9:
4ա ՋՍ-Պ 1.64:
5ա սոս Մուրբ գրքեր –
Մուրբ գրքերը պետք է
պահպանվեն:
բ Բ Օր. 2.6-8:

գ սոս Աստծո
խորհուրդները:
դ Մոսիա 10.11-17:
6ա 1 Նեփի 1.3,
2 Նեփի 33.10-11,
Մոր. 10.27:

թողնելու ժամանակից ի վեր, մինչև այժմ. և դրանք ճշմարիտ են, և մենք կարող ենք իմանալ դրանց հավաստիության վերաբերյալ, որովհետև մենք ունենք դրանք մեր աչքի առաջ:

7 Եվ այժմ, իմ որդիներ՝, ես կկամենայի, որ դուք հիշեիք ջանասիրաբար՝ քննել դրանք, որպեսզի դուք կարողանաք դրանց շնորհիվ օգուտ քաղել. և ես կկամենայի, որ դուք՝ պահեիք Աստծո պատվիրանները, որպեսզի դուք կարողանալիք՝ քարգավաճել երկրում՝ համաձայն այն Պսոստումների, որոնք Տերն արել էր մեր հայրերին:

8 Եվ ուրիշ շատ բաներ սովորեցրեց Բենիամին թագավորն իր որդիներին, որոնք գրված չեն այս գրքում:

9 Եվ եղավ այնպես, որ երբ Բենիամին թագավորը վերջ դրեց իր որդիներին սովորեցնելուն, երբ նա ծերացավ, և տեսավ, որ շատ շուտով գնալու է երկրի ողջ ճանապարհը. հետևաբար, նա անհրաժեշտ համարեց թագավորությունը շնորհել իր որդիներից մեկին:

10 Հետևաբար, նա բերել տվեց Մոսիային իր առաջ. և սրանք են խոսքերը, որոնք նա խոսեց նրա հետ՝ ասելով. Որդի՛ս, ես կկամենայի, որ դու մի հրովարտակ ուղարկես բոլոր այս երկրով մեկ՝ բոլոր այս ժողովրդի մեջ, կամ Չարահեմլայի՝ ժողովրդի և Մոսիայի ժողովրդի, ովքեր ապրում են այս երկրում, որ այդպիսով նրանք կարողանան ի մի հավաքվել. բանգի էգուց ես

հայտարարելու եմ իմ այս ժողովրդին, իմ իսկ բերանով, որ դու՝ թագավոր ես և կառավարիչ այս ժողովրդի վրա, որոնց Տեր Աստված տվել է մեզ:

11 Եվ բացի այդ, ես տալու եմ այս ժողովրդին մի՝ անուն, որ դրանով նրանք կարողանան տարբերվել բոլոր այն ժողովուրդներից, որոնց Տեր Աստված դուրս է բերել Երուսաղեմի հողից. և այս ես անում եմ, որովհետև նրանք ջանասեր ժողովուրդ են եղել Տիրոջ պատվիրանները պահելիս:

12 Եվ ես տալիս եմ նրանց մի անուն, որը երբեք չի ջնջվի, բացի դա լինի՝ օրինազանցության միջոցով:

13 Այո, և դեռ ավելին եմ ասում ձեզ, որ եթե Տիրոջ այս մեծապես արտոնյալ ժողովուրդն ընկնի օրինազանցության մեջ, և դառնա մի ամբարիշտ ու շնացող ժողովուրդ, ապա Տերը կթողնի նրանց, որ դրա հետևանքով նրանք դառնան՝ թույլ՝ իրենց եղբայրների պես. և նա այլևս չի պահպանի նրանց իր անգուգական և սքանչելի գործությամբ, ինչպես նա պահպանել է մեր հայրերին մինչև այժմ:

14 Քանզի ես ասում եմ ձեզ, որ եթե նա տարածած չլիներ իր բազուկն՝ ի պաշտպանություն մեր հայրերի, նրանք պիտի ընկած լինեին Լամանացիների ձեռքը և դարձած լինեին նրանց ատելության գոհերը:

15 Եվ եղավ այնպես, որ երբ Բենիամին թագավորն ավարտեց իր որդու հետ այս խոսքերը խոսելը,

7աՄՈՒ Մուրբ գրքեր:

p Մոսիա 2.22,
Ալմա 50.20-22:
q Սաղ. ճԻԲ.6,
1 Նեփի 2.20:

η Ալմա 9.12-14:

10աՕմնի 1.14:
p Մոսիա 2.30:
11աՄոսիա 5.8-12:
12աՄՈՒ Մեղք:

13աԵբր. 2.4-6:

p Հել. 4.24-26:
q ՎևոՒ 103.8-10:

ԳԼՈՒԽ 2

նա տվեց նրան թագավորության բոլոր գործերի պատասխանատվությունը:

16 Եվ բացի դրանից, նա տվեց նրան նաև պատասխանատվություն այն հիշատակարանների համար, որոնք փորագրված էին արույրե «թիթեղների վրա. և նաև Նեփիի թիթեղների. և նաև Լաբանի^բ սրի ու ^գզնդի կամ ուղեցույցի, որն առաջնորդեց մեր հայրերին անապատի միջով, որը պատրաստված էր Տիրոջ ձեռքով, որ դրա միջոցով նրանք առաջնորդվեին՝ ամեն մեկը, համաձայն այն ուշադրության և ջանասիրության, որ ցուցաբերում էին նրա հանդեպ:

17 Հետևաբար, երբ նրանք անհավատարիմ էին, նրանք չէին բարգավաճում, ոչ էլ առաջադիմում իրենց ճանապարհորդության մեջ, այլ ետ էին «մղվում և իրենց վրա հրավիրում Աստծո դժգոհությունը. և հետևաբար, նրանք զարկվում էին սովով և դառը չարչարանքներով՝ զարթնեցնելու նրանց ի հիշեցումն իրենց պարտականությունների:

18 Եվ այժմ եղավ այնպես, որ Մոսիան գնաց և արեց, ինչպես իր հայրն էր կարգադրել նրան, և հայտարարեց ողջ ժողովրդին, ովքեր Չարահեմլայի երկրում էին, որ այդպիսով նրանք կարողանային ի մի հավաքվել՝ զնալու վեր՝ դեպի տաճար, լսելու խոսքերը, որոնք նրա հայրը պիտի խոսեր նրանց համար:

Բենիամին թագավորը դիմում է իր ժողովրդին – Նա շարադրում է իր թագավորման անաչառությունը, ազնվությունն ու հոգևորությունը – Նա խորհուրդ է տալիս նրանց՝ ծառայել իրենց Երկնային Թագավորին – Նրանք, ովքեր ապստամբում են Աստծո դեմ, կտանեն տվայտանք՝ նման անմար կրակի: Մոտ 124թ. Ք.ծ.ա.:

ԵՎ եղավ այնպես, որ հետո, երբ Մոսիան արեց, ինչպես իր հայրը պատվիրել էր իրեն և հրովարտակ ուղարկեց ողջ երկրով մեկ, որ ժողովուրդն ի մի հավաքվեր բոլոր երկրով մեկ, որպեսզի զնարվեր՝ տաճարի մոտ՝ լսելու այն խոսքերը, որոնք Բենիամին թագավորը պիտի ասեր նրանց:

2 Եվ կային մեծ թվով մարդիկ, նույնիսկ այնքան շատ, որ նրանք չհաշվեցին նրանց. քանի որ նրանք չափազանց բազմացել էին և մեծաթիվ դարձել երկրում:

3 Եվ նրանք նաև վերցրել էին իրենց հոտերի «անդրանիկներից, որ ^բզոհ և ^գողջակեզ մատուցեին՝ ^դհամաձայն Մովսեսի օրենքի.

4 Եվ նաև, որպեսզի նրանք գոհություն հայտնեին Տիրոջը՝ իրենց Աստծուն, որը դուրս էր բերել նրանց Երուսաղեմի երկրից, և որը նրանց ազատել էր իրենց թշնամիների ձեռքից, և «նշանակել էր արդար մարդկանց՝ լինելու իրենց ^բուսուցիչներ, և նաև մի արդար

16ա Մոսիա 1.3:
բ 1 Նեփի 4.8–19,
ՄԽ 1.13,
ՎԼՈՒ 17.1:
գ 1 Նեփի 16.10:
17ա 1 Նեփի 18.12–13:

2 Յա Ծն. Դ.4:
բ սո՛ւ Չոհաբերություն:
գ 1 Նեփի 5.9:
դ 2 Նեփի 25.24,
Ալմա 30.3, 34.13–14:
4ա սո՛ւ Կանչ, Աստծո

կողմից կանչված,
Կոչում:
բ Մոսիա 18.18–22:
սո՛ւ Ուսուցանել,
Ուսուցիչ:

մարդու՝ լինելու իրենց թագավոր, որը հաստատել էր խաղաղություն Չարահեմլայի ⁹երկրում, և որը սովորեցրել էր նրանց՝ ⁹պահել Աստծո պատվիրանները, որ նրանք ուրախանային և ⁶սիրով լցվեին Աստծո և բոլոր մարդկանց հանդեպ:

5 Եվ եղավ այնպես, որ հասնելով տաճար, նրանք խփեցին իրենց վրանները շուրջբոլորը, ամեն մարդ ըստ իր ⁷ընտանիքի, բաղկացած լինելով իր կնոջից և իր որդիներից ու դուստրերից, և նրանց որդիներից ու դուստրերից, ամենամեծից մինչև ամենափոքրը, ամեն ընտանիք լինելով մեկը մյուսից առանձին:

6 Եվ նրանք իրենց վրանները խփեցին տաճարի շուրջբոլորը, ամեն մարդ խփելով իր ⁴վրանը՝ դուռը դեպի տաճարը, որ այդպիսով նրանք կարողանային մնալ իրենց վրաններում և լսել խոսքերը, որոնք Բենիամին թագավորը պիտի խոսեր նրանց համար:

7 Քանզի բազմությունը լինելով այնքան մեծ, որ Բենիամին թագավորը չկարողացավ ուսուցանել նրանց բոլորին տաճարի պատերի ներսում, ուստի նա մի աշտարակ կառուցել տվեց, որ դրա շնորհիվ իր ժողովուրդը կարողանար լսել խոսքերը, որոնք նա պիտի խոսեր նրանց համար:

8 Եվ եղավ այնպես, որ նա սկսեց խոսել իր ժողովրդի համար աշտարակից. և նրանք չկարողացան բոլորը լսել նրա խոսքերը բազմության մեծության պատճառով:

հետևաբար, նա կարգադրեց, որ խոսքերը, որոնք նա խոսեց, գրվեին և առաջ ուղարկվեին նրանց մեջ, որոնք իր ձայնի լսելության սահմաններում չէին, որպեսզի նրանք մույնպես կարողանային ստանալ իր խոսքերը:

9 Եվ սրանք են խոսքերը, որ նա ¹խոսեց և գրել տվեց՝ ասելով. Իմ եղբայրներ, դուք բոլորդ, որ հավաքվել եք միասին, դուք, որ կարող եք լսել իմ խոսքերը, որոնք ես կխոսեմ ձեզ համար այս օրը. քանզի ես չեմ պատվիրել ձեզ հասնել այստեղ՝ ²կատակաբանելու այն խոսքերով, որոնք ես կխոսեմ, այլ որ դուք ³ականջ դնեք ինձ և բացեք ձեր ականջները, որ կարողանաք լսել, և ձեր ⁴սրտերը, որ կարողանաք հասկանալ, և ձեր ⁵մտքերը, որ Աստծո ⁶խորհուրդները բացվեն ձեր ըմբռնման համար:

10 Ես չեմ պատվիրել ձեզ հասնել այստեղ, որ դուք ¹վախենաք ինձանից, կամ, որ դուք մտածեք, որ ես ինքս ավելին եմ, քան մի մահկանացու մարդ:

11 Այլ ես ձեզ պես ենթակա եմ ամեն ձևի թուլությունների՝ ի մարմնո և ի մտքո. սակայն ես ընտրվել եմ այս ժողովրդի կողմից, և նվիրաբերվել եմ իմ հոր կողմից, և թույլատրվել, Տիրոջ ձեռքով, որ կառավարիչ ու թագավոր լինեմ այս ժողովրդի վրա. և ես պահվել ու պահպանվել եմ նրա անզուգական զորությամբ՝ ծառայելու ձեզ ողջ զորությամբ, մտքով և ուժով, որը Տերը շնորհել է ինձ:

<p>4q Օմնի 1.12–15: ⁷ Հովհ. ԺԵ.10: ⁶ սուր Սեր: 5w սուր Ընտանիք: 6w Ել. Լ.9.8–10:</p>	<p>9w Մոսիա 8.3: ⁹ վ.ՈՒԹ 6.12: ⁴ սուր Ականջ դնել: ⁷ Մոսիա 12.27, 3 Նեփի 19.33:</p>	<p>⁶ սուր Միքո: ⁴ սուր Աստծո խորհուրդները: 10w սուր Վախ:</p>
--	---	---

12 Ես ասում եմ ձեզ, որ ինձ թույլատրված է եղել անցկացնելու իմ օրերը ձեզ ծառայելով, նույնիսկ մինչև այս ժամանակը, և ես չեմ փնտրել ոչ "ոսկի, ոչ արծաթ, ոչ էլ որևէ ձևի հարստություններ ձեզանից.

13 Ոչ էլ հանդուրժել եմ, որ գամվեք գուրերում, ոչ էլ, որ դուք ստրուկներ դարձնեք մեկը մյուսին, ոչ էլ, որ սպանեք կամ կողոպտեք կամ գողանաք կամ շնություն անեք. ոչ էլ անգամ հանդուրժել եմ, որ դուք գործեք որևէ ձևի ամբարշտություն, այլ սովորեցրել եմ ձեզ, որ դուք պետք է պահեք Տիրոջ պատվիրանները բոլոր բաներում, որ նա պատվիրել է ձեզ, –

14 Եվ անգամ ես՝ ինքս, "տքնել եմ իմ սեփական ձեռքերով, որ կարողանայի ծառայել ձեզ, և որպեսզի դուք չբեռնվեք հարկերով, և որպեսզի ոչինչ չգար ձեզ վրա, որին դժվար կլիներ դիմանալ, – և այս բոլոր բաների մասին, որ ես խոսեցի, դուք ինքներդ վկաներ եք այս օրը:

15 Սակայն, իմ եղբայրներ, ես չեմ արել այս բաները, որ պարծենամ, ոչ էլ ասում եմ այս բաները, որ դրանց շնորհիվ մեղադրեմ ձեզ. այլ ասում եմ ձեզ այս բոլորը, որ դուք կարողանաք իմանալ, որ ես կարող եմ մաքուր "խղճմտանքով պատասխանել Աստծո առաջ այս օրը:

16 Ահա, ես ասում եմ ձեզ՝ քանի որ ես ասացի, որ ես անցկացրել եմ իմ օրերը ձեզ ծառայելով, ես

չեմ ցանկանում պարծենալ, քանզի ես միայն եղել եմ Աստծո ծառայության մեջ:

17 Եվ ահա, ես ասում եմ ձեզ այս բաները, որ դուք կարողանաք "իմաստություն սովորել. որ դուք կարողանաք սովորել, որ երբ դուք ձեր "մերձավորների "ծառայության մեջ եք, դուք սուկ ձեր Աստծո ծառայության մեջ եք:

18 Ահա, դուք կոչում եք ինձ ձեր թագավոր, և եթե ես, որին դուք կոչում եք ձեր թագավոր, տքնում եմ "ծառայելու ձեզ, ուրեմն պարտավոր չե՞ք արդյոք դուք տքնել՝ ծառայելու մեկը մյուսին:

19 Եվ ահա նաև, եթե ես, որին դուք կոչում եք ձեր թագավոր, որն անցկացրել է իր օրերը ձեր ծառայության մեջ, և սակայն եղել է Աստծո ծառայության մեջ, արժանի է շնորհակալության ձեր կողմից, Օ՛, որքան պետք է դուք "շնորհակալություն հայտնեք ձեր երկնային Թագավորին:

20 Ես ասում եմ ձեզ, իմ եղբայրներ, որ եթե դուք մատուցեիք բոլոր գոհությունները և "գովքը, որը ձեր ողջ հոգին ի գորու է ունենալու առ այն "Աստված, որը ստեղծել է ձեզ, և պահել ու պահպանել է ձեզ, և ուրախություն է պատճառել ձեզ, և շնորհել է, որ դուք խաղաղությամբ ապրեք մեկը մյուսի հետ, –

21 Ես ասում եմ ձեզ, որ եթե դուք ծառայեք նրան, ով ստեղծել է ձեզ ի սկզբանե, և պահպանում է ձեզ օրեցօր, շունչ տալով ձեզ, որ

12աԳոր. Բ.33–34:
14աԱ Կոր. Թ.18:
15աՍՈՒ Խղճմտանք:
17աՍՈՒ Իմաստություն:
բ ՍՈՒ Եղբայրներ,
Եղբայր. Քույր:

գ Մատ. ԲԵ.40,
Հակ. Ա.27,
ՎԱՌԻ 42.29–31:
սՈՒ Ծառայություն:
18աՄատ. Բ.26–27:
19աՍՈՒ Ընդհակալ,

Ընդհակալություն,
Գոհաբանություն:
20ա1 Նեփի 18.16:
բ ՍՈՒ Աստված,
Աստվածազուլիս:

դուք կարողանաք ապրել և շարժվել և գործել, ձեր իսկ ^ակամքի համաձայն, և մինչև իսկ աջակցում է ձեզ մի պահից մյուսը, ես ասում եմ,— եթե դուք ծառայեք նրան ձեր հոգու ողջ նվիրվածությամբ, այնուամենայնիվ, դուք կլինեք ^բանպիտան ծառաներ:

22 Եվ ահա, այն ամենը, ինչ նա պահանջում է ձեզանից՝ իր ^ապատվիրանները ^բպահելն է. և նա խոստացել է ձեզ, որ եթե դուք պահեք նրա պատվիրանները, դուք կբարգավաճեք երկրում. և նա երբեք չի ^գշեղվում նրանից, ինչ նա ասել է. հետևաբար, եթե դուք ^դպահում եք նրա պատվիրանները, նա, իրոք, օրհնում և բարգավաճեցնում է ձեզ:

23 Եվ այժմ, նախ և առաջ, նա ստեղծել է ձեզ և շնորհել է ձեզ ձեր կյանքը, որի համար դուք պարտական եք նրան:

24 Եվ երկրորդը՝ նա պահանջում է, որ դուք անեք, ինչպես նա է պատվիրել ձեզ. որի համար, եթե դուք անում եք, նա անմիջապես ^աօրհնում է ձեզ. և ուստի, նա վճարել է ձեզ: Եվ դուք դեռ պարտական եք նրան, և եղել էք ու կլինեք հավիտյանս հավիտենից. ուստի, ինչո՞վ պետք է դուք պարծենաք:

25 Եվ այժմ, ես հարցնում եմ, կարո՞ղ եք ասել որևէ բան ձեզ համար: Ես պատասխանում եմ ձեզ՝ Ո՛չ: Դուք չեք կարող ասել, որ դուք անգամ հողի փոշու չափ եք. թեև դուք ^աստեղծվել եք հողի

^բփոշուց. բայց ահա այն պատկանում է նրան, ով ստեղծել է ձեզ:

26 Եվ ես, հենց ես, ում դուք համարում եք ձեր թագավորը, ավելի լավը չեմ, քան դուք ինքնեդդ եք. քանզի ես նույնպես փոշուց եմ: Եվ դուք տեսնում եք, որ ես ձեր եմ և մոտ եմ այս մահկանացու մարմինն իր մայր հողին հանձնելուն:

27 Հետևաբար, ինչպես ասացի ձեզ, որ ծառայել եմ ձեզ, Աստծո առաջ ^աքայլելով մաքուր խղճմտանքով, ճիշտ այդպես՝ այս պահին, ես ի մի եմ հավաքել ձեզ, որպեսզի կարողանամ անմեղ համարվել, և որպեսզի ձեր ^բարյունը չգա ինձ վրա, երբ ես կկանգնեմ Աստծու առաջ՝ դատվելու այն բաների համար, որոնք նա պատվիրել է ինձ ձեր վերաբերյալ:

28 Ես ասում եմ ձեզ, որ ես ձեզ ի մի եմ հավաքել, որ կարողանամ ^աազատել իմ հանդերձները ձեր արյունից, այս ժամանակահատվածում, երբ ես մոտ եմ իմ գերեզմանը վայր իջնելուն, որպեսզի ես կարողանամ վայր իջնել խաղաղությամբ, և իմ անմահ ^բհոգին կարողանա միանալ ^գերգչախումբերին վերևում՝ երգելու գովքն արդարադատ Աստծո:

29 Եվ բացի դրանից, ես ասում եմ ձեզ, որ ես ի մի եմ հավաքել ձեզ, որ կարողանամ հայտարարել ձեզ, որ ես այլևս չեմ կարող լինել ձեր ուսուցիչը, ոչ էլ ձեր թագավորը.

30 Քանզի հենց այս պահին իմ ամբողջ մարմինը սաստիկ դողում է, մինչ փորձում եմ խոսել ձեզ

<p>21ա սուր Կամքի ազատություն: բ Գուլ. ԺԷ.7–10:</p>	<p>գ ՎևոՒ 3.1–2: դ ՎևոՒ 14.7, 58.2–3:</p>	<p>27ա սուր Քայլել, Քայլել Աստծո հետ: բ Հակոբ 1.19:</p>
<p>22ա սուր Պատվիրաններն Աստծո: բ Դև. ԻԵ.18–19, 2Նեփի 1.9:</p>	<p>24ա սուր Օրհնել, Օրհնված, Օրհնություն: 25ա սուր Ստեղծել, Ստեղծում: բ Ծն. Գ.19, Հակոբ 2.21:</p>	<p>28ա Հակոբ 2.2: բ սուր Ոգի: գ Մորմ. 7.7:</p>

հետ. բայց Տեր Աստված, իրոք, գորավիզ է ինձ և թույլ է տվել ինձ, որ ես խոսեմ ձեզ հետ և պատվիրել է ինձ, որ ես հայտարարեմ ձեզ այս օրը, որ իմ որդի Մոսիան է քազավոր և կառավարիչ ձեզ վրա:

31 Եվ այժմ, իմ եղբայրներ, ես կկամենայի, որ դուք անեիք, ինչպես արել եք մինչև այժմ: Ինչպես դուք պահել եք իմ պատվիրանները, և նաև իմ հոր պատվիրանները, և բարգավաճել եք ու պահվել ձեր թշնամիների ձեռքն ընկնելուց, ճիշտ նույնպես, եթե դուք պահեք իմ որդու պատվիրանները, կամ պատվիրաններն Աստծո, որոնք կտրվեն ձեզ նրա կողմից, դուք կբարգավաճեք այս երկրում, և ձեր թշնամիները չպիտի գործուքյուն ունենան ձեզ վրա:

32 Բայց, ո՛վ իմ ժողովուրդ, զգուշացե՛ք, չլինի թե ձեր մեջ «հակառակություններ բարձրանան, և դուք կամենաք հնազանդվել չար ոգուն, որի մասին խոսվել է իմ հայր Մոսիայի կողմից:

33 Քանզի, ահա, մի վայ կա հայտարարված նրա վրա, ով կամենում է հնազանդվել այդ ոգուն. քանզի եթե նա կամենում է հնազանդվել նրան, և մնում ու մեռնում է իր մեղքերի մեջ, նույնը խմում է «նզովք իր իսկ հոգու համար. քանզի նա ստանում է մի Բիսպիտեանական պատիժ՝ որպես իրեն վարձք, զանց արած լինելով Աստծո օրենքը՝ հակառակ իր սեփական իմացությանը:

34 Ես ասում եմ ձեզ, որ չկա որևէ մեկը ձեր մեջ, բացի ձեր փոքր երեխաներից, որ ուսուցանված չլինի այս բաների

վերաբերյալ, բայց ո՞վ չզիտի, որ դուք հավերժ պարտական եք ձեր երկնային Հորը՝ մատուցելու նրան բոլորը, ինչ դուք ունեք և եք. և նաև ուսուցանված եք եղել հիշատակարանների վերաբերյալ, որոնք պարունակում են մարգարեությունները, որոնք խոսվել են սուրբ մարգարեների կողմից, նույնիսկ ընդհուպ մինչև այն ժամանակը, երբ մեր հայր Լեքին թողեց Երուսաղեմը.

35 Եվ նաև բոլորը, ինչ խոսվել է մեր հայրերի կողմից մինչև այժմ: Եվ, ահա, նրանք խոսեցին նաև այն, ինչ պատվիրվեց նրանց Տիրոջ կողմից. հետևաբար, դրանք արդար են և ճշմարիտ:

36 Եվ այժմ ես ասում եմ ձեզ, իմ եղբայրներ, որ այս բոլոր բաները ձեր իմանալուց և ուսուցանվելուց հետո, եթե զանց անեք և զնաք հակառակ նրան, ինչ խոսվել է, ապա դուք ինքներդ ձեզ ետ կքաշեք Տիրոջ Հոգուց, այնպես որ այն չի կարող տեղ ունենալ ձեզանում՝ առաջնորդելու ձեզ իմաստության ուղիներով, որ դուք կարողանաք լինել օրհնված, բարգավաճ և պահպանված,

37 Ես ասում եմ ձեզ, որ այն մարդը, որն անում է այս, նույնը դուրս է գալիս բաց «ապստամբության» Աստծո դեմ. հետևաբար, նա կամենում է հնազանդվել չար ոգուն և դառնում է մի թշնամի՝ ամենայն արդարության. հետևաբար, Տերը տեղ չունի նրանում, քանզի նա չի բնակվում Բանսուրբ տաճարներում:

38 Հետևաբար, եթե այդ մարդը չի «ապաշխարում և մնում ու

32ա3 Նեփի 11.29–30:
33ա սո՛ւ Նզովք:
բ Վևո՛ւ 19.6, 10–12:

37ա Մոսիա 3.12,
Հել. 8.24–25:
սո՛ւ Ապստամբոյթյուն:

բ Ալմա 7.21:
38ա սո՛ւ Ապաշխարել,
Ապաշխարոյթյուն:

մեռնում է Աստծուն թշնամի, աստվածային Քարդարադատության պահանջները զարթնեցնում են նրա անմահ հոգին իր իսկ Գնեղավորության վառ զգացման, որն, իրոք, ստիպում է նրան ընկրկել Տիրոջ ներկայությունից և լցնում է նրա կուրծքը մեղավորությամբ և ցավով և տվայտանքով, որը նման է մի անմար կրակի, որի բոցը բարձրանում է վեր հավիտյանս հավիտենից:

39 Եվ արդ, ես ասում եմ ձեզ, որ Պողոթնությունն ուժ չունի այդ մարդու վրա. հետևաբար, նրա վերջնական ճակատագիրը երբեք չվերջացող մի տանջանք տանելն է:

40 Ո՛վ դուք, բոլորդ՝ ծերեր, և նաև դո՛ւք, երիտասարդներ, և դո՛ւք, փոքր երեխաներ, ովքեր կարող եք հասկանալ իմ խոսքերը, քանզի ես պարզ խոսեցի ձեզ համար, որպեսզի դուք կարողանաք հասկանալ. ես աղոթում եմ, որ դուք զարթնեք՝ հիշելու սուկայի դրությունը նրանց, որ ընկել են օրինազանցության մեջ:

41 Եվ բացի դրանից, ես կցանկանայի, որ դուք խորհեք օրհնված և Պերջանիկ վիճակի վրա նրանց, ովքեր պահում են Աստծո պատվիրանները: Քանզի, ահա, նրանք Օրհնված են բոլոր բաներում՝ և՛ աշխարհիկ, և՛ հոգևոր. և եթե նրանք Պհավատարիմ համբերում են մինչև վերջ, նրանք ընդունվում են Պերկնքում, որի շնորհիվ նրանք կարողանում են բնակվել Աստծո հետ երբեք չվերջացող երջանկության վիճակում: Օ՛ հիշե՛ք, հիշե՛ք,

որ այս բաները ճշմարիտ են. քանզի Տեր Աստված է ասել դրանք:

ԳԼՈՒԽ 3

Բենիամին թագավորը շարունակում է իր խոսքը – Ամենակարող Տերը կծառայի մարդկանց մեջ կավե տաղավարում – Արյուն կգա յուրաքանչյուր ծակտոփից, մինչև նա կքալի աշխարհի մեղքերը – Նրանն է միակ անունը, որով փրկություն է գալիս – Մարդիկ կարող են հանել իրենց միջից բնական մարդուն և դառնալ Սրբեր՝ Քավության միջոցով – Ամբարիշտների տանջանքը կլինի կրակի և ծծմբի լճի պես: Մոտ 124թ. Ք.ծ.ա.:

Եւ կրկին, իմ եղբայրներ, ես կկամենայի հրավիրել ձեր ուշադրությունը, քանզի ես էլի ինչ-որ բան ունեմ ձեզ ասելու. քանզի ահա, ես ասելու բաներ ունեմ ձեզ նրա վերաբերյալ, ինչ պետք է գա:

2 Եվ բաները, որոնք ես կասեմ ձեզ, հայտնի են դարձվել ինձ Աստծո Պրեշտակի կողմից: Եվ նա ասաց ինձ. Արթնացի՛ր. և ես արթնացա, և, ահա, նա կանգնած էր իմ առջև:

3 Եվ նա ասաց ինձ. Չարթնի՛ր և լսի՛ր այն խոսքերը, որոնք ես կասեմ քեզ. քանզի ահա, ես եկել եմ՝ հայտնելու քեզ մեծ Պուրախության ավետիքը:

4 Քանզի Տերը լսել է քո աղոթքները և գնահատել է քո արդարությունը, և ուղարկել է ինձ հայտնելու քեզ, որ դու կարող ես

38թ սուր Արդարադատություն:
 q սուր Մեղավորություն:
 39ա Ավմա 34.8–9, 15–16:
 սուր Ողորմած,

Ողորմություն:
 40ա Ավմա 5.18:
 41ա4 Նեփի 1.15–18:
 սուր Ուրախություն:
 p սուր Օրհնել, Օրհնված,

Օրհնություն:
 q Վևու 6.13:
 η սուր Երկինք:
 3 2ա սուր Հրեշտակներ:
 3ա Գուկ. Բ.10–11:

ուրախանալ, և որ դու կարող ես հայտարարել քո ժողովրդին, որ նրանք նույնպես կարողանան լցվել ուրախությամբ:

5 Քանզի ահա, ժամանակը գալիս է և հեռու հեռվում չէ, երբ Ամենակարող Մերը, որն իշխում է գործքամբ, որն էր, և է, ողջ հավերժությունից ողջ հավերժություն, կիջնի ներքև երկնքից՝ մարդկանց զավակների մեջ և կբնակվի կավե թտաղավարում, և առաջ կգնա մարդկանց մեջ, գործելով հզոր հրաշքներ, ինչպես՝ բժշկելով հիվանդներին, բարձրացնելով մեռածներին, իրականացնելով կաղերի քայլելը, կույրերին շնորհելով իրենց տեսողությունը, խուլերին՝ լսելը, և բուժելով ամեն ձևի հիվանդություններ:

6 Եվ նա՝ Պևեր կամ չար ոգիներ դուրս կգցի, որոնք բնակվում են մարդկանց զավակների սրտերում:

7 Եվ ահա, նա կտանի ՝ փորձություններ և մարմնի ցավ, թքաղց, ծարավ և հոգնածություն, նույնիսկ ավելին, քան մարդ կարող է տանել և չմահանալ. քանզի ահա, Պարյուն կգա յուրաքանչյուր ծակոտից, այնքան մեծ կլինի նրա ՝ սովայտանքն իր ժողովրդի ամ-

բարշտության և պղծությունների համար:

8 Եվ նա կկոչվի ՝ Հիսուս Քրիստոս, Աստծո ՝ Որդի, երկնքի և երկրի ՝ Հայր, բոլոր բաների Ստեղծողի սկզբանե. և նրա ՝ մայրը կկոչվի ՝ Մարիամ:

9 Եվ ահա, նա գալիս է յուրայինների մոտ, որպեսզի ՝ փրկություն գա մարդկանց զավակներին, միայն առ նրա անունը ՝ հավատքի միջոցով. և նույնիսկ այս բոլորից հետո, նրանք մարդ կհամարեն նրան և կասեն, որ նա ՝ դև ունի և ՝ կխարազանեն ու ՝ կխաչեն նրան:

10 Եվ ՝ երրորդ օրը նա պիտի ՝ հարություն առնի մեռելներից. և ահա, նա կանգնում է՝ Պատելու աշխարհը. և ահա, բոլոր այս բաներն արվում են, որպեսզի մի արդար դատաստան գա մարդկանց զավակների վրա:

11 Քանզի, ահա, նրա ՝ արյունը ՝ քավում է նաև նրանց մեղքերը, որոնք ՝ ընկել են Ադամի օրինազանցության պատճառով, որոնք մահացել են՝ չիմանալով Աստծո կամքն իրենց վերաբերյալ, կամ ովքեր ՝ անզիտակցորեն են մեղք գործել:

12 Բայց, վա՛, վա՛ յ նրան, ով գիտի, որ ՝ ապստամբում է Աստ-

5ա սՈՒ Եհովա:
 p Մոսիա 7,27,
 Ալմա 7,9–13:
 q Մատ. Գ.23–24,
 Գոր. Բ.22,
 1 Նեփի 11.31:
 սՈՒ Հրաշք:
 6ա Մար. Ա.32–34:
 7ա սՈՒ Գայթակղել,
 Գայթակղություն:
 p Մատ. Գ.1–2:
 q Վևո 19.15–18:
 դ Ղուկ. ԻԲ.44:
 ե Ես. ԾԳ.4–5:
 8ա սՈՒ Աստված,
 Աստվածագլուխ –

Աստված Որդին:
 p Ալմա 7.10:
 q Հել. 14.12,
 3 Նեփի 9.15:
 դ Մատ. Ա.16,
 1 Նեփի 11.14–21:
 ե սՈՒ Մարիամ Հիսուսի
 մայրը:
 9ա սՈՒ Փրկություն:
 p սՈՒ Հավատք:
 q Հովի. Ը.48:
 դ Մար. ԺԵ.15:
 ե Ղուկ. ԺԸ.33,
 1 Նեփի 19.10,
 2 Նեփի 10.3:
 սՈՒ Խաչելություն:

10ա սՈՒ Հարություն:
 p Մատ. ԺԳ.21,
 2 Նեփի 25.13,
 Հել. 14.20–27:
 q սՈՒ Դատել,
 Դատաստան:
 11ա սՈՒ Արյուն:
 p սՈՒ Քավել,
 Քավություն:
 q սՈՒ Ադամի և Եվայի
 անկումը:
 դ 2 Նեփի 9.25–26:
 12ա Մոսիա 2.36–38,
 Հել. 8.25:
 սՈՒ Ապստամբություն:

ծո դեմ: Քանզի փրկությունն այդպիսիներից ոչ մեկին չի գա, բացի դա լինի ապաշխարհության և առ ՊՏեր Հիսուս Քրիստոսը հավատքի միջոցով:

13 Եվ Տեր Աստված ուղարկել է իր սուրբ մարգարեներին բոլոր մարդկանց մեջ, հայտարարելու այս բաներն ամեն ցեղի, ազգի և լեզվի, որ այդպիսով, ով որ հավատա, որ Քրիստոսը պիտի գա, նույնը կարողանա ստանալ իր մեղքերին քողություն և անչափ մեծ ուրախությամբ հրճվի, նույնիսկ այնպես, թե կարծես նա արդեն եկել էր իրենց մեջ:

14 Մակայն Տեր Աստված տեսավ, որ իր ժողովուրդը մի խստապարանոց ժողովուրդ էր, և նա նշանակեց նրանց համար մի օրենք, հենց Մովսեսի օրենքը:

15 Եվ նա ցույց տվեց նրանց շատ նշաններ, հրաշքներ, խորհրդանիշներ և նմանություններ իր գալըստի վերաբերյալ. և նաև սուրբ մարգարեներ խոսեցին նրանց հետ՝ նրա գալստի վերաբերյալ. և այնուամենայնիվ, նրանք կարծրացրեցին իրենց սրտերն ու չհասկացան, որ Մովսեսի օրենքը ոչ մի բանի պիտանի չէ, բացի դա լինել նրա արյան քավության միջոցով:

16 Եվ նույնիսկ, եթե դա հնարավոր լիներ, որ փոքր տերեխաները կարողանային մեղանշել, նրանք չէին կարողանա փրկվել. բայց ես

ասում եմ ձեզ, նրանք թօրհնված են. քանզի ահա, ինչպես Ադամով կամ բնությամբ նրանք ընկնում են, ճիշտ նույնպես Քրիստոսի արյունը քավում է նրանց մեղքերը:

17 Եվ դեռ ավելին, ես ասում եմ ձեզ, որ տրված չի լինի ո՛րիշ անուն, ո՛չ ուրիշ ճանապարհ, ո՛չ էլ միջոց, որի շնորհիվ կարող է թօրհնություն գալ մարդկանց զավակներին. միայն Քրիստոսի՝ Ամենակարող Տիրոջ անունով և միջոցով:

18 Քանզի ահա, նա դատում է, և նրա դատաստանն արդար է. և մանուկը, որ մահանում է իր մանկության մեջ, չի կորչում. բայց մարդիկ նզովք են խնում իրենց սեփական հոգիների համար, եթե չեն խոնարհեցնում իրենց ու չեն դառնում փոքր երեխաների պես, և չեն հավատում, որ փրկությունը եղել է և կա ու պիտի լինի Քրիստոսի՝ Ամենակարող Տիրոջ թքավիչ արյամբ և միջոցով:

19 Քանզի բնական մարդն Աստծո մի թշնամի է, և եղել է Ադամի թանկումից ի վեր և կլինի հավիտյանս հավիտենից, մինչև նա զչենթարկվի Սուրբ Հոգու հորդորներին և հանի բնական մարդուն ու դառնա սուրբ, Տեր Քրիստոսի քավությամբ, և դառնա ինչպես մի տերեխա՝ ենթարկվող, հեզ, խոնարհ, համբերատար, սիրով լի, հոժար՝ ենթարկվելու բոլոր

12բ սուր Տեր:
13ա սուր Մեղքերի քողություն:
բ 2 Նեփի 25.24–27, Հառոմ 1.11:
14ա սուր Մովսեսի օրենք:
15ա սուր Հիսուս Քրիստոս – Քրիստոսին մարմնավորող խորհրդանիշները:
բ Մոսիա 13.27–32:

16ա սուր Երեխա, Երեխաներ:
բ Մոր. 8.8–9:
17ա Գոր. Դ.10–12, 2 Նեփի 31.21:
բ սուր Փրկություն:
գ սուր Հիսուս Քրիստոս – Հիսուս Քրիստոսի անունը մեզ վրա վերցնելը:
18ա Մատ. ԺԸ.3:

բ Մոսիա 4.2, Հել. 5.9:
19ա Ա Կոր. Բ.11–14, Մոսիա 16.2–3:
սուր Բնական մարդ:
բ սուր Ադամի և Եվայի անկումը:
գ Բ Մն. Լ.8:
դ Մոր. 10.4–5:
սուր Սուրբ Հոգի:
ե սուր Սուրբ:
զ 3 Նեփի 9.22:

բաներին, որոնք Տերը հարմար է տեսնում բերել նրա վրա, ճիշտ ինչպես երեխան է ենթարկվում իր հորը:

20 Եվ դեռ ավելին, ես ասում եմ ձեզ, որ պիտի գա ժամանակը, երբ մի Փրկչի մասին՝ Պիտեիլիքը պիտի տարածվի ամենուր՝ Քամեն ազգի, ցեղի, լեզվի և ժողովրդի մեջ:

21 Եվ, ահա, երբ գա այդ ժամանակը, փոքր երեխաներից բացի ոչ ոք չի անմեղ չի համարվի Աստծո առաջ, բացառությամբ ասպաշխարության և հավատքի միջոցով՝ առ անունն Ամենակարող Տեր Աստծո:

22 Եվ նույնիսկ այն ժամանակ, երբ դու սովորեցրած կլինես քո ժողովրդին այն բաները, որոնք Տերը՝ քո Աստվածը, պատվիրել է քեզ, նույնիսկ այդ ժամանակ էլ նրանք չեն համարվի անմեղ՝ Տիրոջ աչքում, միայն համաձայն այն խոսքերի, որոնք ես ասացի ձեզ:

23 Եվ այժմ ես ասացի այն խոսքերը, որոնք Տեր Աստված պատվիրել է ինձ:

24 Եվ այսպես է ասում Տերը. Դրանք պիտի կանգնեն որպես մի վառ վկայություն այս ժողովրդի դեմ, դատաստանի օրը. որոնց համար նրանք պիտի դատվեն, յուրաքանչյուր մարդ՝ համաձայն իր գործերի, լինեն դրանք բարի, թե լինեն դրանք չար:

25 Եվ եթե դրանք լինեն չար, նրանք հանձնվում են իրենց սեփական չիանցանքի և պղծությունների մի ահավոր ընթրմման, որը ստիպում է նրանց ընկրկել

Տիրոջ ներկայությունից դեպի Քրիստոսության և անվերջ տանջանքի մի վիճակի, որտեղից նրանք չեն կարող այլևս վերադառնալ. հետևաբար, նրանք խմել են նզովք առ իրենց սեփական հոգիները:

26 Հետևաբար, նրանք խմել են Աստծո ցասման գավաթից, որի արդարադատությունը չէր կարող այլևս չեղյալ հայտարարվել նրանց համար, ինչպես չէր կարող չեղյալ հայտարարվել այն, որ ՄԱդամը պետք է ընկներ՝ արգելված Քպտղից ճաշակելու պատճառով. ուստի, Պողոթնությունն այլևս չէր կարող պահանջ ունենալ նրանց վրա հավիտյան:

27 Եվ նրանց՝ տանջանքը կրակի և ծծմբի Քլճի պես է, որի բոցերն անմար են, և որի ծուխը բարձրանում է հավիտյանս հավիտենից: Այսպես է Տերը պատվիրել ինձ: Ամեն:

ԳԼՈՒԽ 4

Բենիամին թագավորը շարունակում է իր խոսքը – Փրկությունը գալիս է Քավության շնորհիվ – Հավատացե՛ք Աստծուն, որպեսզի փրկվեք – Պահե՛ք ձեր մեղքերի մի թողություն հավատարմության միջոցով – Բաժի՛ն հանե՛ք ձեր ստացվացքից աղբատներին – Արե՛ք բոլոր բաներն իմաստությամբ ու կարգով: Մոտ 124թ. Ք.ծ.ա.:

ԵՎ այժմ եղավ այնպես, որ երբ Բենիամին թագավորը վերջ դրեց այն խոսքերը խոսելուն, որոնք

20ա ՎԼՈՒՄ 3.16:
բ սո՛ւ Միսիոնեբական աշխատանք:
21ա սո՛ւ Հաշիվ, Պատասխանատու, Պատասխանատվություն:

25ա Ալմա 5.18, 12.14–15:
բ Մորմ. 8.38:
26ա Մորմ. 9.12:
բ Ծն. Գ.1–12,
2 Նեփի 2.15–19,
Ալմա 12.21–23:

գ սո՛ւ Ողորմած, Ողորմություն:
27ա սո՛ւ Մեղավորություն:
բ 2 Նեփի 9.16,
Հակոբ 6.10,
ՎԼՈՒՄ 76.36:

Տիրոջ հրեշտակի կողմից հանձնըվել էին նրան, որ նա աչք ամեց շուրջբոլորը՝ բազմության վրա, և ահա, նրանք ընկել էին գետնին, քանզի Տիրոջ ^Մերկյուղը եկել էր նրանց վրա:

2 Եվ նրանք տեսել էին իրենց՝ իրենց իսկ ^Մնարմնական վիճակում, նույնիսկ ավելի ^Քչնչին, քան հողի փոշին: Եվ նրանք բոլորն աղաղակեցին բարձրածայն՝ միածայն ասելով. Օ՛, ողորմություն ունեցիր և գործի դիր Քրիստոսի ^Քբավիչ արյունը, որպեսզի մենք կարողանանք ներում ստանալ մեր մեղքերից, և մեր սրտերը կարողանան մաքրվել. քանզի մենք հավատում ենք Հիսուս Քրիստոսին՝ Աստծո Որդուն, որը ^Մստեղծել է երկինքն ու երկիրը, և բոլոր բաները. որը պիտի իջնի մարդկանց զավակների մեջ:

3 Եվ եղավ այնպես, որ հետո, երբ նրանք ասացին այս խոսքերը, Տիրոջ Հոգին եկավ նրանց վրա և նրանք լցվեցին ուրախությամբ, ստացած լինելով իրենց մեղքերին ^Մթողություն, և ունենալով ^Քխղճմտանքի խաղաղություն այն արտասովոր ^Քհավատքի շնորհիվ, որ նրանք ունեին Հիսուս Քրիստոսում, որը պիտի գար՝ համաձայն այն խոսքերի, որոնք Բենիամին քազավորն ասել էր նրանց:

4 Եվ Բենիամին քազավորը կրկին բացեց իր բերանը և սկսեց խոսել նրանց հետ՝ ասելով. Իմ ընկերներ՝ և իմ եղբայրներ, իմ

ցեղ և իմ ժողովուրդ, ես կրկին կկամենայի ձեր ուշադրությունը հրավիրել, որ դուք կարողանաք լսել և հասկանալ մնացյալ իմ խոսքերը, որ ես պիտի ասեմ ձեզ:

5 Քանզի ահա, եթե ^ՄԱստծո բարության իմացությունն այս պահին արթնացրել է ձեզ՝ ի զգացումն ձեր ոչնչության, և ձեր արժեզուրկ և ձեր ընկած վիճակի,

6 Ես ասում եմ ձեզ, եթե դուք եկել եք ^Միմացության՝ մարդկանց զավակների հանդեպ Աստծո բարության և նրա անզուգական գործության, նրա իմաստության, նրա համբերության և նրա երկայնամտության մասին. և նաև ^Քբավության, որը պատրաստվել է աշխարհի ^Քհիմնադրումից ի վեր, որ այդպիսով փրկություն կարողանա գալ նրան, ով կդնի իր ^Քվստահությունը Տիրոջ վրա և ջանասեր կլինի նրա պատվիրանները պահելիս, և կշարունակի հավատքով, մինչև իսկ իր կյանքի վերջը՝ ես ի նկատի ունեմ մահկանացու մարմնի կյանքը,

7 Ես ասում եմ, որ սա է այն մարդը, որը ստանում է փրկություն քավության միջոցով, որը պատրաստված էր ողջ մարդկության համար աշխարհի հիմնադրումից սկսած, որոնք երբևէ եղել են Ադամի ^Մանկումից ի վեր, կամ որոնք կան, կամ որոնք երբևէ կլինեն, նույնիսկ մինչև աշխարհի վերջը,

8 Եվ սա է այն միջոցը, որով փրկություն է գալիս: Եվ ^Մչկա մեկ

4 1ա սու՝ Վախ:
 2ա սու՝ Մարմնական:
 բ Վել. 12.7-8:
 գ Մոսիա 3.18, Վել. 5.9:
 դ սու՝ Ստեղծել, Ստեղծում:
 3ա սու՝ Մեղքերի բողոքություն:

բ սու՝ Խղճմտանք:
 գ սու՝ Հավատք:
 5ա Մովսես 1.10:
 6ա սու՝ Աստված, Աստվածագլուխ:
 բ սու՝ Քավել, Քավություն:
 գ Մոսիա 15.19:

դ Սաղ. Լ.9,7,
 2 Նեփի 22.2, Վել. 12.1:
 սու՝ Ապավինել:
 7ա սու՝ Ադամի և Եվայի անկումը:
 8ա Գոր. Դ.12,
 2 Նեփի 31.21,
 Մոսիա 3.17:

այլ փրկություն, բացի սրանից, որի մասին խոսվել է. ոչ էլ կան այլ պայմաններ, որոնցով մարդ կկարողանա փրկվել, բացի այն պայմաններից, որոնք ես ասացի ձեզ:

9 Հավատացե՛ք Աստծուն. հավատացե՛ք, որ նա կա, և որ նա ստեղծել է բոլոր բաները՝ և՛ երկրնքում, և՛ երկրի վրա. հավատացե՛ք, որ նա ունի բոլոր ^աիմաստությունը և բոլոր գործությունը՝ և՛ երկնքում, և՛ երկրի վրա. հավատացե՛ք, որ մարդ չի ^բըմբռնում այն բոլոր բաները, որոնք Տերը կարող է ըմբռնել:

10 Եվ դարձյալ, հավատացե՛ք, որ դուք պետք է ^աապաշխարեք ձեր մեղքերից և թողնեք դրանք և խոնարհեցնեք ձեզ՝ Աստծո առաջ. և սրտի անկեղծությամբ խնդրեք, որ նա ^բների ձեզ. և այժմ, եթե դուք ^գհավատում եք բոլոր այս բաներին, տեսեք, որ դուք ^աանեք դրանք:

11 Եվ դարձյալ ես ասում եմ ձեզ, ինչպես առաջ եմ ասել, որ եթե դուք եկել եք Աստծո փառքի գիտությանը, կամ, եթե դուք քաջատեղյակ եք նրա բարությանը և ^աճաշակել եք նրա սիրուց, և ստացել եք մեղքերի ^բթողություն, որն այդպիսի անչափ մեծ ուրախություն է պատճառում ձեր հոգիներին, նմանապես ես կկամենայի, որ դուք հիշեք և միշտ պահեք ձեր հիշողության մեջ Աստծո մեծությունը և ձեր սեփական

Պնդությունը և նրա ^աբարությունն ու երկայնամտությունը ձեր՝ անարժան արարածների հանդեպ, և խոնարհեցնեք ձեզ, մինչև իսկ ^ահամեստության խորքերը, ^գկանչելով Տիրոջ անունն ամեն օր և անասան կանգնելով նրա հավատքում, որը պիտի գա, ինչը խոսվել է հրեշտակի բերանով:

12 Եվ, ահա, ես ասում եմ ձեզ, որ, եթե դուք անեք այս, դուք միշտ կիրճվեք և լցված կլինեք Աստծո ^ասիրով և միշտ ^բկպահպանեք ձեր մեղքերին թողություն. և դուք կաճեք նրա փառքի գիտության մեջ, ով ստեղծել է ձեզ, կամ այն գիտության մեջ, ինչն արդար է և ճշմարիտ:

13 Եվ դուք մեկը մյուսին վնասելու միտք չեք ունենա, այլ ^ախաղաղությամբ ապրելու և հատուցելու ամեն մարդու՝ ըստ նրա, ինչն իր հասանելիքն է:

14 Եվ դուք չեք հանդուրժի, որ ձեր ^ազավակները քաղցած կամ մերկ շրջեն. ոչ էլ կհանդուրժեք, որ նրանք զանց անեն Աստծո օրենքները, և ^բկրվեն ու վիճեն միմյանց հետ, և ծառայեն դևին, որը մեղքի վարպետն է կամ չար ոգին, որի մասին խոսվել է մեր հայրերի կողմից, որ նա թշնամի է ամենայն արդարության:

15 Բայց դուք ^ակտվորեցնեք նրանց՝ ^բքայլել ճշմարտության և լրջմտության ուղիներով. դուք կտ-

9ա Հռովմ. ԺԱ.33–34, Հակոբ 4.8–13:
բ Ես. Ծե.9:
10ա ՍՈՒ Ապաշխարել, Ապաշխարություն:
բ ՎևՈՒ 61.2:
գ Մատ. Է.24–27:
դ 2 Նեփի 31.19–21:
11ա Ալմա 36.24–26:
բ սոՒ Մեղքերի

թողություն:
գ Մովսես 1.10:
դ Ել. Լ.Գ.6, Մոր. 8.3:
ե սոՒ Խոնարհ, Խոնարհություն:
զ սոՒ Աղոթք:
12ա սոՒ Սեր:
բ Մոսիա 4.26, Ալմա 4.13–14, 5.26–35, ՎևՈՒ 20.31–34:

13ա սոՒ Խաղաղարար:
14ա Ա Տիմ. Ե.8, ՎևՈՒ 83.4:
բ սոՒ Հակառակություն:
15ա ՎևՈՒ 68.25–28, Մովսես 6.58:
սոՒ Ուսուցանել, Ուսուցիչ:
բ սոՒ Քայլել, Քայլել Աստծո հետ:

վորեցնէք նրանց՝ Գսիրել միմյանց և ծառայել մեկմեկու:

16 Եվ նաև դուք ինքներդ՝ Կաստարեք նրանց, ովքեր ձեր սատար կանգնելու կարիքն ունեն. դուք կտաք ձեր ստացվածքից նրան, ով կարիք ունի, և դուք չեք հանդուրժի, որ ՚մուրացկանն իզուր դիմի ձեզ խնդրանքով, և դուրս չեք վռնդի, որ նա մեռնի:

17 Գուցե դուք՝ ասեք. Մարդն ինքն է իր վրա բերել իր թշվառութիւնը. հետևաբար, ես ետ կպահեմ իմ ձեռքը և չեմ տա նրան իմ ուտելիքից, ոչ էլ իմ ստացվածքից նրան բաժին կհանեմ, որ նա չտանջվի, քանզի նրա պատիժներն արդար են,

18 Բայց ես ասում եմ քեզ, ո՛վ մարդ, ով որ անում է այս, մույնը մեծ պատճառ ունի ապաշխարելու. և եթե չի ապաշխարում նրա համար, ինչ արել է, նա կորչում է հավիտյան և բաժին չունի Աստծո արքայութեան մեջ:

19 Զանգի ահա, մի՞թե մենք բռլորս մուրացկաններ չենք: Մի՞թե մենք բոլորս կախում չունենք մույն Էակից, այսինքն՝ Աստծուց, բոլոր ստացվածքի համար, որ մենք ունենք, թե՛ ուտելիքի և հագուստի համար, թե՛ ոսկու և արծաթի համար և թե՛ բոլոր հարստությունների համար, որ մենք ունենք ամեն տեսակի:

20 Եվ, ահա, հենց այժմ դուք կանչում էիք նրա անունը և մուրում ձեր մեղքերին թողություն: Իսկ նա թույլ տվե՞ց, որ դուք իզուր մուրաք՝ Ո՛չ. նա դուրս թափեց իր Հոգին

ձեզ վրա և ՝ուրախությամբ լցրեց ձեր սրտերը և այնպես արեց, որ ձեր բերանները փակվեն, այնպես որ դուք ասելիք չէիք գտնում, այնքան անսահման մեծ էր ձեր ուրախությունը:

21 Եվ արդ, եթե Աստված, որը ստեղծել է ձեզ, որից կախված էք ձեր կյանքի համար և ամենի համար, որ դուք ունեք և կաք, շնորհում է ձեզ ինչ որ խնդրում եք, որը ճիշտ է, հավատքով հավատալով, որ դուք պիտի ստանաք, օ՛հ, ուրեմն որքան պարտավոր եք դուք՝ բաժին հանել մեկդ մյուսին այն ստացվածքից, որ ունեք:

22 Եվ եթե դուք՝ դատում եք մարդուն, որը ստացվածքի համար խնդրանքով դիմում է ձեզ, որ չմեռնի, և դատապարտում եք նրան, որքան շատ ավելի արդար կլինի ձեզ դատապարտել՝ ձեր ստացվածքը ետ ՚պահելու համար, որն իրականում ձեզ չի պատկանում, այլ Աստծուն, որին պատկանում է նաև ձեր կյանքը. և այնուամենայնիվ, դուք ոչ մի խնդրանքով չեք դիմում, ոչ էլ ապաշխարում եք այն բանի համար, որ արել եք:

23 Ես ասում եմ ձեզ, վա՛յ լինի այդ մարդուն, քանզի նրա ստացվածքն իր հետ պիտի կորչի. և արդ, այս բաները ես ասում եմ նրանց, ովքեր ՝հարուստ են, ինչ վերաբերում է այս աշխարհին պատկանող բաներին:

24 Եվ բացի այդ, ես ասում եմ աղքատներին, դո՛ւք, ովքեր չունեք, և սակայն ունեք բավարար, որ կենաք օրեցօր. ես ի նկատի ունեմ

15գ Մոսիա 18.21:
16ա սո՛ւ Գթություն.
Ծառայություն:
բ Բ Օր. ԺԵ.7-11,
Առակ. ԻԱ.13,

Ես. Ժ.1-2:
17ա Առակ. ԺԵ.5:
20ա սո՛ւ Ուրախություն:
21ա սո՛ւ Ծառայություն.
Բարօրություն:

22ա Մատ. Է.1-2,
Հովի. Է.24:
բ Ա Հովի. Գ.17:
23ա Վևո՛ւ 56.16:

բոլորիդ, որ մերժում եք մուրացկանին, որովհետև չունեք, ես կկամենայի, որ դուք ձեր սրտում ասեիք, որ՝ ես չեմ տալիս, որովհետև չունեմ, բայց եթե ունենայի, ^ակտայի:

25 Եվ այժմ, եթե դուք ասեք այս ձեր սրտում, դուք կմնաք անմեղ, այլապես դուք ^ադատապարտված եք. և ձեր դատապարտումն արդար է, քանզի դուք ցանկանում եք այն, ինչը չեք ստացել:

26 Եվ այժմ, հանուն այս բաների, որոնք ես խոսեցի ձեզ համար, – այսինքն՝ հանուն ձեր մեղքերի թողության օրեցօր պահպանման, որպեսզի դուք կարողանաք անմեղ ^աքայլել Աստծո առաջ, – ես կկամենայի, որ դուք ^բբաժին հանեք ձեր ստացվածքից ^գհաղթատներին, ամեն մարդ ըստ նրա, ինչ ինքն ունի, ինչպես օրինակ՝ ^դկերակրելով քաղցածին, հագցնելով մերկին, այցելելով հիվանդին և ծառայելով ի սիրտից նրանց և՛ հոգևորով, և՛ աշխարհիկով՝ նրանց պահանջների համեմատ:

27 Եվ տեսեք, որ բոլոր այս բաներն արվեն իմաստությամբ և կարգով. քանզի հարկավոր չէ, որ մարդ վազի ավելի ^աարագ, քան ինքն ուժ ունի: Եվ բացի այդ, անհրաժեշտ է, որ նա ջանասեր լինի, որ այդպիսով նա կարողանա նվաճել մրցանակը. ուստի, բոլոր բաները պիտի արվեն կարգով:

28 Եվ ես կկամենայի, որ դուք հիշեիք, որ ձեր միջից ով որ պարտք է վերցնում իր հարևանից, պետք է վերադարձնի այն, ինչը

պարտք է վերցրել, ինչպես որ նա համաձայնվել է, այլապես դուք մեղք կգործեք. և միգուցե դուք կստիպեք ձեր հարևանին էլ մեղք գործել:

29 Եվ, ի վերջո, ես չեմ կարող ասել ձեզ բոլոր բաները, որոնցով դուք կարող եք մեղք գործել. քանզի կան զանազան ուղիներ և միջոցներ, նույնիսկ այնքան շատ, որ ես չեմ կարող թվել դրանք:

30 Բայց այսքանը ես կարող եմ ասել ձեզ, եթե դուք ^աչհետևեք ինքներդ ձեզ, և ձեր ^բմտքերին, և ձեր ^գխոսքերին, և ձեր արարքներին, և չկատարեք Աստծո պատվիրանները, և չշարունակեք հավատքով առ այն, ինչ լսեցիք մեր Տիրոջ զալստի վերաբերյալ, նույնիսկ մինչև ձեր կյանքի վերջը, դուք պիտի կորչեք: Եվ այժմ, ո՛վ մարդ, հիշիր և մի կորչիր:

ԳԼՈՒԽ 5

Սրբերը դառնում են Քրիստոսի որդիներն ու դուստրերը՝ հավատքի միջոցով – Այդ դեպքում նրանք կոչվում են Քրիստոսի անունով – Բենիամին թագավորը հորդորում է նրանց լինել հաստատուն և անխախտ բարի գործերում: Մոտ 124թ. Ք.ժ.ա.:

Ես այժմ եղավ այնպես, որ երբ Բենիամին թագավորն այսպես խոսեց իր ժողովրդի հետ, նա ուղարկեց նրանց մեջ՝ ցանկանալով իմանալ իր ժողովրդից, թե արդյոք նրանք հավատացել էին այն

24ա Մար. ԺԲ.44:
25ա ՎևոՒ 56.17:
26ա ՍՈՒ Քայլել, Քայլել
Աստծո հետ:
բ Հակոբ 2.17–19:
գ Չաք. է.10, Ալմա 1.27:

սՈՒ Ողորմություններ, Ողորմություններ տալը:
դ Ես. ԾԸ.10–11, ՎևոՒ 104.17–18:
27ա ՎևոՒ 10.4:

30ա Ալմա 12.14:
սՈՒ Արթուն լինել:
բ Մար. Է.18–23:
սՈՒ Մտքեր:
գ Մատ. ԺԵ.18–20:
սՈՒ Անարգանք:

խոսքերին, որոնք նա խոսել էր նրանց համար:

2 Եվ նրանք բոլորը միաձայն աղաղակեցին՝ ասելով. Այո՛, մենք հավատում ենք բոլոր խոսքերին, որոնք դու ասել ես մեզ. և նաև, մենք գիտենք դրանց հավաստիության և ճշմարտացիության մասին՝ Ամենակարող Տիրոջ Հոգու շնորհիվ, որը մեր մեջ կամ մեր սրտերում մի գորեղ ^ափոփոխություն է առաջացրել, այնպես որ մենք այլևս հակված չենք գործելու ^բչարիք, այլ շարունակ գործելու բարիք:

3 Եվ մենք ինքներս, նույնպես Աստծո անսահման բարության և նրա Հոգու դրսևորումների միջոցով մեծ պատկերացումներ ունենք այն մասին, ինչը պիտի գա. և եթե անհրաժեշտ լիներ, մենք կկարողանայինք մարգարեանալ բոլոր բաների վերաբերյալ:

4 Եվ դա հավատքն է, որը մենք ունեցանք այն բաների հանդեպ, որոնք մեր թագավորն ասաց մեզ, որ բերել է մեզ այս մեծ գիտելիքին, որի շնորհիվ մենք հրճվում ենք այսպիսի անսահման մեծ ուրախությամբ:

5 Եվ մենք հոժար ենք մտնել ^աուխտի մեջ մեր Աստծո հետ՝ կատարելու նրա կամքը և բոլոր բաներում հնազանդ լինելու նրա պատվիրաններին, որ նա կպատվիրի մնացած մեր բոլոր օրերում, որ մենք չլինի թե մեզ վրա բերենք ^բերբեք չվերջացող մի տանջանք,

ինչպես խոսվել է ^գհրեշտակի կողմից, որպեսզի չլինի թե մենք խմենք Աստծո ցասման գավաթից:

6 Եվ այժմ, սրանք են խոսքերը, որոնք Բենիամին թագավորը փափագում էր նրանցից. և հետևաբար, նա ասաց նրանց. Դուք ասացիք այն խոսքերը, որ ես փափագում էի. և ուխտը, որը դուք արել եք, արդար ուխտ է:

7 Եվ այժմ, ուխտի շնորհիվ, որ դուք արել եք, դուք կկոչվեք Քրիստոսի ^ագավակներ՝ նրա որդիներն ու նրա դուստրերը, քանզի ահա, այս օրը նա հոգով ^բծնեց ձեզ. քանզի դուք ասում եք, որ ձեր ^գսրտերը փոխվել են նրա անվան հանդեպ հավատքի միջոցով. հետևաբար, դուք ^դծնվել եք նրանից և դարձել եք նրա ^եորդիներն ու նրա դուստրերը:

8 Եվ այս անվան ներքո դուք դարձվում եք ^աազատ, և ^բչկա մեկ այլ անուն, որով դուք կարողանաք դարձվել ազատ: Չկա տրված մեկ այլ ^գանուն, որով փրկություն է գալիս. հետևաբար, ես կկամենայի, որ դուք ձեզ վրա ^դվերցնեք Քրիստոսի անունը, դո՛ւք, բոլորդ, որ մտել եք ուխտի մեջ Աստծո հետ, որ լինեք միևն ձեր կյանքի վերջը հնազանդ:

9 Եվ կլինի այնպես, որ ով որ անի այս, կգտնվի Աստծո աջ կողմում, քանզի նա կիմանա անունը, որով նա կոչվում է. քանզի նա կկոչվի Քրիստոսի անունով:

10 Եվ այժմ կլինի այնպես, որ ով

5 2ա Ալմա 5.14:
ստ՝ Վերստին ծնված,
Աստծուց ծնված:
բ Ալմա 19.33:
5ա Մոսիա 18.10:
բ Մոսիա 3.25-27:
գ Մոսիա 3.2:
7ա Մոսիա 27.24-26,

Մովսես 6.64-68:
ստ՝ Աստծո որդիներն
ու դուստրերը:
բ ստ՝ Ծնված:
գ ստ՝ Սիրտ:
դ Մոսիա 15.10-11:
ստ՝ Վերստին ծնված,
Աստծուց ծնված:

ե ՎևոՒ 11.30:
8ա Հռովմ. 9.18, Գաղ. Ե.1,
Հել. 14.30:
բ Գոր. Դ.10, 12,
Ալմա 21.9:
գ Մոսիա 26.18:
դ Գոր. ԺԱ.26,
Ալմա 46.15:

որ չի վերցնի իր վրա Քրիստոսի անունը, պետք է կոչվի մեկ «այլ անունով. հետևաբար, նա կգտնի իրեն Աստծո Քաջ կողմում»:

11 Եվ ես կկամենայի, որ դուք հիշեք նաև, որ այս է «անունը, որ ես ասացի պիտի տամ ձեզ, որը երբեք չպիտի ջնջվի, բացի դա լինի օրինազանցության միջոցով. հետևաբար, զգո՛ւյ՜ջ եղեք, որ չօրինազանցեք, որ այդ անունը չջնջվի ձեր սրտերից:

12 Ես ասում եմ ձեզ, ես կկամենայի, որ դուք հիշեք «պահել այդ անունը միշտ գրված ձեր սրտերում, որպեսզի դուք չզտնվեք Աստծո ձախ կողմում, այլ որ դուք լսեք և իմանաք ձայնը, որով դուք պիտի կանչվեք, և նաև անունը, որով նա պիտի կանչի ձեզ:

13 Քանզի ի՞նչպես է մարդ «ճանաչում իր տիրոջը, որին նա չի ծառայել, և որն օտար է նրան և հեռու է նրա սրտի մտքերից և խորհուրդներից:

14 Եվ կրկին, մի՞թե մարդ վերցնում է էջը, որը պատկանում է իր հարևանին, և պահում այն: Ես ասում եմ ձեզ՝ Ո՛չ. նա նույնիսկ չի հանդուրժի, որ նա արածի իր հոտերի մեջ, այլ նրան կքշի հեռու և դուրս կգցի: Ես ասում եմ ձեզ, որ նույն կերպ պիտի լինի ձեր մեջ, եթե դուք չիմանաք անունը, որով դուք կոչվում եք:

15 Հետևաբար, ես կկամենայի, որ դուք լինեք հաստատուն և անխախտ, միշտ հարուստ լինելով բարի գործերով, որպեսզի Քրիստոսը՝ Ամենակարող Տեր Աստվա-

ծը, կարողանա «կնքել ձեզ որպես իրենը, որպեսզի դուք կարողանաք բերվել երկինք, որպեսզի դուք կարողանաք ունենալ հավիտենական փրկություն ու հավերժական կյանք, նրա իմաստության և գորության, արդարության և ողորմության միջոցով, որը՝ Քստեղծել է բոլոր բաները երկնքում և երկրում, որն Աստված է՝ բոլորից բարձր: Ամեն:

ԳԼՈՒԽ 6

Բենիամին թագավորն արձանագրում է մարդկանց անունները և նրանց ուսուցանելու համար նշանակում քահանաներ – Մոսիսն թագավորում է՝ որպես արդար թագավոր: Մոտ 124–121թթ. Ք.ծ.ա.:

Եվ այժմ, Բենիամին թագավորը մտածեց, որ ժողովրդի հետ խոսելն ավարտելուց հետո անհրաժեշտ էր, որ նա «վերցնեք բոլոր նրանց անունները, ովքեր ուխտի մեջ էին մտել Աստծո հետ՝ պահելու նրա պատվիրանները:

2 Եվ եղավ այնպես, որ չկար ոչ մի հոգի, բացի փոքր երեխաներից, որ չմտնեք ուխտի մեջ և չվերցնեք իր վրա Քրիստոսի անունը:

3 Եվ դարձյալ, եղավ այնպես, որ երբ Բենիամինը բոլոր այս բաներին վերջ էր դրել, և նվիրաբերել էր իր զավակ «Մոսիային՝ կառավարիչ և թագավոր լինելու իր ժողովրդի վրա, և նրան էր տվել թագավորության հետ կապված

10ա Ավնա 5.38–39:

բ Մատ. ԻԵ.33:

11ա Մոսիա 1.11–12:

ստ՝ Հիսուս Քրիստոս – Հիսուս Քրիստոսի անունը մեզ վրա

վերցնելը:

12ա ՎևՈՒ 18.23–25:

13ա Մոսիա 26.24–27:

15ա ստ՝ Կոչում և ընտրություն. Սրբագործում:

բ Կող. Ա.16,

Մոսիա 4.2,

Ավնա 11.39:

6 1ա ՎևՈՒ 128.8:

3ա Մոսիա 1.10, 2.30:

բոլոր պարտականությունները և նաև ²նշանակել էր քահանաներ, – ³սովորեցնելու ժողովրդին, որ այդպիսով նրանք կարողանային լսել և իմանալ Աստծո պատվիրանները, – և զարթնեցնելու նրանց, որ հիշեն իրենց տված ⁴երդումը, նա արձակեց բազմությունը, և նրանք վերադարձան իրենց սեփական տները՝ ամեն ոք ըստ իր ընտանիքի:

4 Եվ ⁵Մոսիան սկսեց թագավորել իր հոր փոխարեն: Եվ նա սկսեց թագավորել իր տարիքի երեսուներորդ տարում՝ բոլորելով ընդամենը մոտ չորս հարյուր և յոթանասունևվեց տարիներ այն ⁶ժամանակից, որ Լեքին թողել էր Երուսաղեմը:

5 Եվ Բենիամին թագավորն ապրեց երեք տարի ու մահացավ:

6 Եվ եղավ այնպես, որ թագավոր Մոսիան քայլում էր Տիրոջ ուղիներով և կատարում էր նրա դատաստաններն ու նրա կանոնները. և պահում էր նրա պատվիրանները՝ բոլոր բաներում, ինչ որ նա պատվիրել էր նրան:

7 Եվ թագավոր Մոսիան իր ժողովրդին մշակել էր տալիս հողը: Եվ ինքը նույնպես մշակում էր հողը, որ այսպիսով նա իր ժողովրդի համար բեռ ⁸չդառնար, որ բոլոր բաներում նա կարողանար անել համաձայն նրա, ինչ նրա հայրն էր արել: Եվ երեք տարիների ընթացքում նրա ողջ ժողովրդի մեջ հակառակություն չկար:

ԳԼՈՒԽ 7

Ամմոնը գտնում է Լեքի-Նեփիի

երկիրը, որտեղ Լիմփին է թագավոր – Լիմփիի ժողովուրդը ճորտության մեջ է Լամանացիներից – Լիմփին շարադրում է իրենց պատմությունը – Մի մարգարե (Արհմադին) վկայել էր, որ Քրիստոսն Աստվածն է և Հայրը բոլոր բաների – Նրանք, ովքեր ցանում են կեղտոտություն, հնձում են սրբիկ, և նրանք, ովքեր իրենց վստահությունը դնում են Տիրոջ վրա, կազատվեն: Մոտ 121թ. Ք.ծ.ա.:

Եւ այժմ եղավ այնպես, որ թագավոր Մոսիան, երեք տարիների ընթացքում անընդհատ խաղաղություն ունենալուց հետո, ցանկանում էր իմանալ այն ժողովրդի մասին, որը ²զմաց՝ ապրելու Լեքի-Նեփիի երկրում, կամ Լեքի-Նեփիի քաղաքում. քանզի նրա ժողովուրդը ոչինչ չէր լսել նրանց մասին այն ժամանակից ի վեր, որ նրանք թողել էին ³Չարահեմլայի երկիրը. հետևաբար, նրանք հոգնեցնում էին նրան՝ իրենց հարցումներով:

2 Եվ եղավ այնպես, որ թագավոր Մոսիան թույլ տվեց, որ նրանց ուժեղ տղամարդկանցից տասըվեցը գնան մինչև Լեքի-Նեփիի երկիրը՝ տեղեկանալու իրենց եղբայրների մասին:

3 Եվ եղավ այնպես, որ հաջորդ օրը նրանք ճանապարհ ընկան՝ իրենց հետ ունենալով մի ինչ-որ Ամմոնի, նա լինելով մի ուժեղ և զորեղ մարդ, և Չարահեմլայի հետևորդ. և նա նաև նրանց առաջնորդն էր:

4 Եվ այժմ նրանք չգիտեին ուղղությունը, որով իրենք պիտի ճամփորդեին անապատում՝ հասնելու Լեքի-Նեփիի երկիրը. հետևաբար,

3բ սուր Կարգել, Կարգում: q Ալմա 4.7: η Մոսիա 5.5–7:

4ա սուր Մոսիա՝ Բենիամինի որդի: p 1 Նեփի 1.4:

7ա Բ Կոր. ԺԱ.9: 7 1ա Օմնի 1.27–30: p Օմնի 1.13:

նրանք շատ օրեր թափառեցին անապատում, մինչև իսկ քառասուն օր նրանք թափառեցին:

5 Եվ քառասուն օր թափառելուց հետո, նրանք հասան մի բլրի, որը «Սիլոն երկրից հյուսիս է, և այնտեղ նրանք խփեցին իրենց վրանները:

6 Եվ Ամնոնը վերցրեց իր եղբայրներից երեքին, և նրանց անուններն էին՝ Ամադեկի, Հելեմ և Հեմ, և նրանք իջան ներքև՝ դեպի «Նեփիի երկիրը:

7 Եվ ահա նրանք հանդիպեցին այն ժողովրդի թագավորին, որը Նեփիի երկրում էր և Սիլոնի երկրում. և նրանք շրջապատվեցին թագավորի պահակախմբի կողմից և վերցվեցին, և կապվեցին, և բանտ զգվեցին:

8 Եվ եղավ այնպես, երբ երկու օր նրանք բանտում էին, նրանք նորից բերվեցին թագավորի առաջ, և նրանց կապերն արձակվեցին. և նրանք կանգնեցին թագավորի առաջ և թույլ տրվեց, կամ ավելի շուտ հրամայվեց, որ պատասխանեն հարցերին, որոնք նա պետք է տար նրանց:

9 Եվ նա ասաց նրանց. Ահա, ես «Լիմքին եմ՝ Նոյի որդին, որը Չենիֆի որդին էր, որը եկել էր Չարահեմլայի երկրից ժառանգելու այս երկիրը, որն իրենց հայրերի երկիրն էր, որը ժողովրդի ձայնով թագավոր կարգվեց:

10 Եվ այժմ, ես ցանկանում եմ իմանալ պատճառը, թե ինչո՞ւ էիք դուք այնքան հանդուգն, որ եկաք քաղաքի պատերին մոտիկ, երբ ես ինքս իմ պահակախմբի հետ դարպասից դուրս էի:

11 Եվ այժմ այս պատճառով

եմ ես հանդուրժել, որ դուք պահպանվեիք, որ ես կարողանայի տեղեկություն իմանալ ձեզանից, այլապես ես հրամայած կլինեի, որ իմ պահակախումբը մահվան դատապարտեր ձեզ: Չեզ թույլատրվում է խոսել:

12 Եվ այժմ, երբ Ամնոնը տեսավ, որ իրեն թույլատրված էր խոսել, նա առաջ գնաց և խոնարհվեց թագավորի առաջ. և կրկին բարձրանալով, նա ասաց. Ո՛վ թագավոր, ես շատ շնորհակալ եմ Աստծո առաջ՝ այս օրը, որ ես դեռ կենդանի եմ, ինձ թույլ է տրվել խոսել. և ես կջանամ համարձակորեն խոսել.

13 Քանզի ես հավատացած եմ, որ եթե դու ճանաչեիր ինձ, չէիր հանդուրժի, որ ես այս կապանքներով կապվեի: Քանզի ես Ամնոնն եմ, և ես «Չարահեմլայի մի հետնորդ եմ, և դուրս եմ եկել Չարահեմլայի երկրից՝ տեղեկանալու մեր եղբայրների մասին, որոնց Չենիֆը դուրս հանեց այդ երկրից:

14 Եվ այժմ եղավ այնպես, որ Լիմքին, Ամնոնի խոսքերը լսելուց հետո, անչափ ուրախացավ և ասաց. Հիմա ես գիտեմ անկասկած, որ իմ եղբայրները, որոնք Չարահեմլայի երկրում էին, դեռ կենդանի են: Եվ այժմ ես հրճվում եմ. և էգուց ես այնպես կանեմ, որ իմ ժողովուրդը նույնպես հրճվի:

15 Քանզի ահա, մենք ճորտության մեջ ենք Լամանացիներից, և «հարկվում ենք մի հարկով, որին դիմանալը ծանր է: Եվ այժմ, ահա, մեր եղբայրները մեզ կազատեն մեր ճորտությունից, կամ Լամանացիների ձեռքից, և մենք կլինենք նրանց ստրուկները. քանզի ավելի լավ է, որ մենք Նեփիացիների

ստրուկները լինենք, քան տուրք վճարենք Լամանացիների թագավորին:

16 Եվ այսպիսով, թագավոր Լիմբին հրամայեց իր պահակախմբին, որ նրանք այլևս չկապեն Ամնոնին, ոչ էլ նրա եղբայրներին, այլ կարգադրեց, որ նրանք գնան բլուրը, որը Սիլոմի հյուսիսում էր և բերեն իրենց եղբայրներին քաղաք, որ այդպիսով նրանք կարողանան ուտել, և խմել, և իրենց հանգիստ տալ իրենց ճամփորդության լարվածությունից. քանզի նրանք տարել էին շատ բաներ. նրանք տարել էին քաղց, ծարավ և հոգնածություն:

17 Եվ այժմ եղավ այնպես, որ հաջորդ օրը թագավոր Լիմբին իր ողջ ժողովրդի մեջ ուղարկեց մի հրովարտակ, որ այդպիսով նրանք կարողանային ի մի հավաքվել “տաճարում” լսելու խոսքերը, որոնք նա խոսելու էր նրանց համար:

18 Եվ եղավ այնպես, որ երբ նրանք ի մի էին հավաքվել, նա խոսեց նրանց հետ այս կերպ՝ ասելով. Ո՛վ դուք, իմ ժողովուրդ, բարձրացրեք ձեր գլուխները և մխիթարվեք. քանզի ահա ժամանակը մոտ է, կամ հեռու հեռվում չէ, երբ մենք այլևս մեր թշնամիների հպատակության տակ չենք լինի, չնայած մեր բազմաթիվ կռիվներին, որոնք գուր էին. այնուամենայնիվ, ես վստահ եմ, մնում է մի արգասավոր կռիվ անել:

19 Հետևաբար, բարձրացրե՛ք ձեր գլուխները և ուրախացե՛ք, և ապավինեք “Աստծուն, այն

Աստծուն, որն Աստվածն էր Աբրահամի և Իսահակի և Հակոբի. և նաև, այն Աստծուն, որը Եգիպտոսի երկրից դուրս ^բբերեց Իսրայելի զավակներին և այնպես արեց, որ նրանք քայլեցին Կարմիր ծովի միջով, չոր գետնի վրայով, և կերակրեց նրանց ^գմանանայով, որպեսզի նրանք չմեռնեին անապատում. և շատ ավելին նա արեց նրանց համար:

20 Եվ բացի դրանից, այդ նույն Աստվածն է մեր հայրերին “դուրս բերել Երուսաղեմի հողից և պահել ու պահպանել իր ժողովրդին, նույնիսկ մինչև հիմա. և ահա դա մեր անօրինությունների ու պղծությունների պատճառով է, որ նա բերել է մեզ ճորտության:

21 Եվ դուք բոլորդ վկաներ եք այս օրը, որ Չենիֆը, որը թագավոր էր դարձվել ժողովրդի վրա, նա լինելով չափից ավելի “գերեռանդ” ժառանգելու իր հայրերի երկիրը, հետևաբար, խաբված լինելով թագավոր Լամանի խորամանկությամբ և նենգությամբ, որը պայմանագրի մեջ մտած լինելով թագավոր Չենիֆի հետ, և հանձնած լինելով նրա ձեռքը երկրի մի մասի տիրակալությունը, կամ, նույնիսկ Լեքի-Նեփիի քաղաքը և Սիլոմ քաղաքը. և շրջակա հողը,–

22 Եվ այս բոլորը նա արեց այս ժողովրդին հպատակության կամ ճորտության “բերելու միակ նպատակով: Եվ ահա մենք այս պահին Լամանացիների թագավորին տուրք ենք վճարում մեր եգիպտացորենի կեսի չափով, և մեր գարու, և նույնիսկ ամեն տեսակի ողջ մեր

17ա2 Նեփի 5.16:
19աԵլ. 4.6,
1 Նեփի 19.10:
բ Ել. ԺԲ.40–41,

Ալմա 36.28:
գ Ել. ԺԶ.15, 35,
Թվ. ԺԱ.7–8,
Հես. Ե.12:

20ա1 Նեփի 2.1–4:
21աՄոսիա 9.1–3:
22աՄոսիա 10.18:

հատիկի և մեր հոտերի և մեր նախիրների աճի կեսը. և Լամանացիների թագավորը բռնազանձում է մեզանից նույնիսկ այն ամենի կեսը, ինչ ունենք, կամ տեր ենք, կամ պահանջում է մեր կյանքը:

23 Եվ արդ, մի՞թե սրան դիմանալը ծանր չէ: Եվ մի՞թե այս մեր չարչարանքը մեծ չէ: Արդ, ահա թե մենք ինչպիսի մեծ պատճառ ունենք ողբալու:

24 Այո, ես ասում եմ ձեզ, մեծ են պատճառները, որոնք մենք ունենք սգալու համար. քանզի ահա մեր եղբայրներից որքան շատերը սպանվեցին, և նրանց արյունն իզուր թափվեց, և այս բոլորը՝ անօրինության պատճառով:

25 Քանզի, եթե այս ժողովուրդն ընկած չլիներ օրինազանցության մեջ, Տերը չէր հանդուրժի, որ այս մեծ չարիքը գար նրանց վրա: Բայց ահա նրանք ականջ չէին դնում նրա խոսքերին, այլ նրանց մեջ հակառակություններ էին բարձրանում. նույնիսկ այնքան շատ, որ նրանք իրենց մեջ արյուն էին թափում:

26 Եվ Տիրոջ մի՞ մարգարեի են նրանք սպանել. այո, Աստծո մի ընտրյալ մարդու, որն ասաց իրենց ամբարշտության և պղծությունների մասին, և մարգարեացավ շատ բաների մասին, որոնք պետք է գան, այո, նույնիսկ Քրիստոսի գալստի մասին:

27 Եվ քանի որ նա ասաց նրանց, որ Քրիստոսն ՝ Աստված է՝ Հայրը բոլոր բաների, և ասաց, որ նա պետք է վերցնի իր վրա մարդու

՝ պատկերը, և դա պետք է լինի պատկերը, ըստ որի մարդը ստեղծվել է ի սկզբանե, կամ, այլ խոսքով, նա ասաց, որ մարդը ստեղծվել է ՝ Աստծո պատկերով, և որ Աստված պետք է վայր իջնի մարդկանց զավակների մեջ և վերցնի իր վրա միս ու արյուն, և առաջ գնա երկրի երեսի վրայով,՝

28 Եվ արդ, քանի որ նա ասաց այս, նրանք մահվան դատապարտեցին նրան. և շատ ավելի շատ բաներ նրանք արեցին, ինչը վայր բերեց Աստծո ցասումը նրանց վրա: Հետևաբար, ո՞վ է զարմանում, որ նրանք ճորտության մեջ են, և որ նրանք զարկվում են դառը չարչարանքներով:

29 Քանզի, ահա Տերն ասել է. Ես չեմ ՝ սատարի իմ ժողովրդին իրենց օրինազանցության օրվա մեջ. այլ ես կխոչընդոտեմ նրանց ճանապարհները, որ նրանք չբարգավաճեն. և նրանց արարքները զայթաղության քար կլինեն իրենց առաջ:

30 Եվ բացի այդ նա ասում է. Եթե իմ ժողովուրդը ցանի ՝ կեղտոտություն, նա ՝ կինձի դրա մղեղը մրբիկում. և դրա արդյունքը մահաթույն է:

31 Եվ բացի այդ նա ասում է. Եթե իմ ժողովուրդը ցանի կեղտոտություն, նա կինձի ՝ խորշակ, որն անհապաղ կործանում է բերում:

32 Եվ այժմ ահա, Տիրոջ խոստումը կատարվել է, և դուք զարկված եք ու չարչարված:

33 Բայց, եթե դուք սրտի ողջ մկրիվածությամբ ՝ դառնաք դեպի

26ա Մոսիա 17.12–20:
27ա սո՛ւ Աստված,
Աստվածագլուխ:
բ Ծն. Ա.26–28,
Եթեր 3.14–17,
Վևո՛ւ 20.17–18:

գ Մոսիա 13.33–34,
15.1–4:
29ա Ա.Թագ. ԺԲ.15,
Բ Մն. ԻԳ.20:
30ա սո՛ւ Կեղտ,
Կեղտոտություն:

բ Գաղ. 2.7–8,
Վևո՛ւ 6.33:
սո՛ւ Հունձը:
31ա Երեմ. ԺԸ.17,
Մոսիա 12.6:
33ա Մորմ. 9.6:

Տերը և ապավինեք նրան ու մտքի ողջ ջանասիրությամբ ծառայեք նրան, – եթե դուք անեք այդ, նա կազատի ձեզ ճորտությունից՝ իր իսկ կամքի և հաճության համաձայն:

ԳԼՈՒԽ 8

Ամմոնն ուսուցանում է Լիմքիի ժողովրդին – Նա իմանում է քասնչորս Հարեդակյան թիթեղների մասին – Հնադարյան հիշատակարանները կարող են թարգմանվել տեսանողների կողմից – Ոչ մի պարզև ավելի մեծ չէ, քան տեսանող լինելը: Մոտ 121թ. Ք.ծ.ա.:

Եվ եղավ այնպես, որ թագավոր Լիմքին իր ժողովրդի հետ խոսելն ավարտելուց հետո, քանզի նա շատ բաներ խոսեց նրանց հետ և միայն մի քանիսն էմ դրանցից ես գրել այս գրքում, ասաց իր ժողովրդին բոլոր բաները՝ իրենց եղբայրների վերաբերյալ, որոնք Չարահեմլայի երկրում էին:

2 Եվ նա ստիպեց Ամմոնին, որ նա կանգնի բազմության առջև և պատմի նրանց բոլորը, ինչ պատահել էր իրենց եղբայրներին, այն ժամանակից ի վեր, ինչ Չենիֆը դուրս էր եկել երկրից, նույնիսկ մինչև այն ժամանակը, երբ նա ինքը դուրս եկավ երկրից:

3 Եվ նա նաև վերապատմեց նրանց վերջին խոսքերը, որոնք Բենիամին թագավորը սովորեցրել էր, և բացատրեց դրանք թագավոր Լիմքիի ժողովրդին, այնպես որ նրանք կարողանային հասկանալ բոլոր խոսքերը, որ նա խոսեց:

4 Եվ եղավ այնպես, որ այս բոլորն անելուց հետո, թագավոր Լիմքին արձակեց բազմությունը և կարգադրեց, որ նրանք վերադառնան ամեն ոք իր սեփական տունը:

5 Եվ եղավ այնպես, որ նա կարգադրեց, որ թիթեղները, որոնք պարունակում էին իր ժողովրդի «հիշատակարանն այն ժամանակից, որ նրանք թողել էին Չարահեմլայի երկիրը, բերվեին Ամմոնի առաջ, որ նա կարողանար կարդալ դրանք:

6 Արդ, երբ որ Ամմոնը կարդաց հիշատակարանը, թագավորը տեղեկացավ նրանից՝ իմանալու արդյոք նա կարող էր թարգմանել լեզուներ, և Ամմոնն ասաց նրան, որ նա չէր կարող:

7 Եվ թագավորն ասաց նրան. Վշտացած լինելով իմ ժողովրդի չարչարանքների համար, ես կարգադրեցի, որ քառասուններեքն իմ ժողովրդից ձեռնարկեին մի ճամփորդություն դեպի անապատ, որ այդպիսով նրանք կարողանային գտնել Չարահեմլայի երկիրը, որպեսզի դիմեինք մեր եղբայրներին ազատելու մեզ մեր ճորտությունից:

8 Եվ նրանք շատ օրերի ընթացքում կորել էին անապատում, չնայած նրանք ջանասեր էին և չգտան Չարահեմլայի երկիրը, բայց վերադարձան այս երկիրը, ճամփորդելով մի երկրում, շատ ջրերի միջև, հայտնաբերելով մի երկիր, որը պատված էր մարդկանց և գազանների ոսկորներով, և նաև պատված էր ամեն տեսակի շիմությունների ավերակներով, հայտնաբերելով մի երկիր, որը բնակեցված էր եղել մի ժողովրդով, որոնք

այնքան մեծաթիվ էին եղել, որքան Իսրայելի բազմությունները:

9 Եվ որպես ապացույց, որ բաները, որ նրանք ասել էին՝ ճիշտ են, նրանք բերել են «քսանչորս քիթեղներ, որոնք լցված են փորագրություններով, և դրանք մաքուր ոսկուց են:

10 Եվ ահա, նրանք բերել են նաև «լանջապանակներ, որոնք մեծ են, և դրանք քարայրից ու պղնձից են, և կատարելապես անխաթար:

11 Եվ բացի դրանից, նրանք բերել են սրեր՝ դրանց բռնակները ոչնչացել էին, իսկ դրանց շեղբերը ժանգից քայքայված էին. և չկա ոչ մեկը երկրում, որ ի վիճակի լինի քարգմանել քիթեղների վրայի փորագրությունները: Այդ պատճառով ես ասացի քեզ. Դու կարողանում ես քարգմանել:

12 Եվ ես կրկին ասում եմ քեզ. Գիտե՞ս դու որևէ մեկին, որ կարող է քարգմանել: Քանզի ես ցանկանում եմ, որ այս հիշատակարանները քարգմանվեն մեր լեզվով. քանզի միգուցե, դրանք մեզ մի տեղեկություն կտան ժողովրդի մի մնացորդի մասին, որը կործանվել է, որտեղից այս հիշատակարանները եկել են. կամ միգուցե դրանք մեզ մի տեղեկություն կտան հենց այս ժողովրդի մասին, որը կործանվել է. և ես փափագում եմ իմանալ նրանց կործանման պատճառը:

13 Եվ Ամմոնն ասաց նրան. Ես կարող եմ վստահորեն ասել քեզ, ո՛վ քագավոր, մի մարդու մասին, որ կարող է «քարգմանել հիշատակարանները. քանզի նա ունի այն, ինչով որ նա կարող է նայել և քարգմանել բոլոր հիշատակա-

րանները, որ հին թվով են. և դա պարզև է Աստծուց: Եվ այդ բաները կոչվում են ՚մեկնիչներ, և ոչ մի մարդ չի կարող նայել դրանց մեջ, մինչև որ պատվիրված չլինի, որ չլինի քե նա նայի, ինչը նա չպետք է նայի, և մեռնի: Եվ ում որ պատվիրվում է նայել դրանց մեջ, նա կոչվում է Գտեսանող:

14 Եվ ահա, քագավորն այն ժողովրդի, որը Չարահեմլայի երկրում է, այն մարդն է, որին պատվիրված է անել այս բաները, և որն ունի Աստծուց այս բարձր պարզևը:

15 Եվ քագավորն ասաց, որ տեսանողն ավելի մեծ է, քան մարգարեն:

16 Եվ Ամմոնն ասաց, որ տեսանողը հայտնող է և մարգարե նույնպես. և մի պարզև, որից ավելի մեծ չի կարող ոչ մի մարդ ունենալ, մինչև նա չունենա Աստծո գործությունը, որը ոչ մի մարդ չի կարող. այնուամենայնիվ, մարդ կարող է Աստծո կողմից իրեն տրված մեծ գործություն ունենալ:

17 Բայց տեսանողը կարող է իմանալ բաների մասին, որոնք անցյալ են և նաև բաների մասին, որոնք պետք է գան, և նրանց միջոցով բոլոր բաները պետք է բացահայտվեն, կամ, ավելի շուտ, գաղտնի բաներ պիտի հայտնի դարձվեն, և թաքնված բաներ պետք է ի լույս գան, և բաներ, որոնք չեն իմացվել, պիտի իմացվեն նրանց միջոցով, և նաև նրանց միջոցով պիտի իմացվեն բաներ, որոնք այլ կերպ չէին կարող իմացվել:

18 Այսպես, Աստված ապահովել է մի միջոց, որ մարդ հավատքի

միջոցով կարողանա հզոր հրաշք-ներ գործել. հետևաբար, նա իր մերձավորների համար դառնում է մեծ բարիք:

19 Եվ այսպես, երբ Ամնոնն այս խոսքերը խոսելուն վերջ դրեց, քազավորն անչափ ուրախացավ և գոհությոն հայտնեց Աստծուն՝ ասելով. Անկասկած, մի «մեծ խորհուրդ է պարունակվում այս քիթեղների մեջ, և այս մեկնիչները, անկասկած, պատրաստված էին՝ այսպիսի բոլոր խորհուրդները մարդկանց զավակներին բացահայտելու նպատակով:

20 Օ՛, որքա՛ն զարմանալի են Տիրոջ գործերը, և որքա՛ն երկար է նա համբերում իր ժողովրդի հետ. այո, և որքա՛ն կույր և անընկալունակ է մարդկանց զավակների հասկացողությունը. քանզի նրանք չեն կամենում իմաստություն փնտրել, ոչ էլ ցանկանում են, որ նա կառավարի իրենց:

21 Այո, նրանք նման են մի վայրի հոտի, որը փախչում է իր հովվից, և ցրվում և քշվում և հոշոտվում է անտառի գազանների կողմից:

ՉԵՆԻՖԻ ԱՐԶԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ – Նրա ժողովրդի մի պատմություն, այն ժամանակից ի վեր, երբ նրանք թողեցին Չարահեմլայի երկիրը, մինչև այն ժամանակը, երբ նրանք ազատվեցին Լամանացիների ձեռքից:

*Ընդգրկելով 9–22 գլուխները
ներառյալ:*

ԳԼՈՒԽ 9

Չենիֆը Չարահեմլայից առաջ-

նորդում է մի խմբի՝ տիրելու Լեփի-Նեփիի երկիրը – Լամանացիների քազավորը թույլ է տալիս նրանց՝ ժառանգելու երկիրը – Լամանացիների և Չենիֆի ժողովրդի միջև պատերազմ է: Մոտ 200–187թթ. Ք.ծ.ա.:

ԵՍ՝ Չենիֆս, սովորեցված լինելով Նեփիացիների բոլոր լեզուները և գիտելիք ունենալով Նեփիի «երկրի մասին, կամ մեր հայրերի առաջին ժառանգության երկրի մասին, և որպես լրտես ուղարկված լինելով Լամանացիների մեջ, որպեսզի լրտեսի նրանց ուժերը, որ մեր բանակը գար նրանց վրա և կործանեք նրանց, բայց երբ ես տեսա այն լավը, ինչ նրանց մեջ էր, ցանկացա, որ նրանք չկործանվեն:

2 Հետևաբար, ես վիճեցի իմ եղբայրների հետ անապատում, քանզի ես կամենում էի, որ մեր դեկավարը նրանց հետ պայմանագիր կնքեր. բայց նա, լինելով դաժան և արյունոտ մի մարդ, հրամայեց, որ ինձ սպանեն. բայց ես, շատ արյուն թափելով, ազատվեցի. քանզի հայրը կռվում էր հոր դեմ, և եղբայրը կռվում էր եղբոր դեմ, մինչև մեր բանակի մեծ մասն անապատում կործանվեց. և մեզանից նրանք, ովքեր խնայվել էին, վերադարձան դեպի Չարահեմլայի երկիրը, այդ պատմությունը պատմելու նրանց կանանց ու երեխաներին:

3 Եվ ես, դեռևս լինելով չափից ավելի գերեռանդ՝ ժառանգելու մեր հայրերի երկիրը, հավաքեցի բոլոր նրանց, ովքեր ցանկանում էին գնալ վեր՝ տիրելու երկրին, և սկսեցինք մեր ճամփորդությունը դեպի անապատ՝ գնալու վեր դեպի

այդ երկիրը. բայց մենք սովով ու դառը չարչարանքներով զարկվեցինք. քանզի մենք դանդաղ էինք Տիրոջը՝ մեր Աստծուն հիշելիս:

4 Այնուամենայնիվ, սուսպատում շատ օրեր թափառելուց հետո, մենք մեր վրանները խփեցինք այն տեղում, որտեղ սպանվել էին մեր եղբայրները, որը մոտ էր մեր հայրերի երկրին:

5 Եվ եղավ այնպես, որ ես կրկին իմ մարդկանցից չորսի հետ գնացի քաղաք՝ թագավորի մոտ, որպեսզի իմանայի թագավորի վերաբերմունքի մասին, և որպեսզի իմանայի՝ արդյո՞ք ես կարող էի իմ ժողովրդի հետ ներս գնալ և խաղաղությամբ տիրել երկրին:

6 Եվ ես գնացի ներս՝ թագավորի մոտ, և նա ուխտեց ինձ հետ, որ ես կարող էի տիրել Լեքի-Նեփիի երկրին ու Սիլոմի երկրին:

7 Եվ նա հրամայեց նաև, որ իր ժողովուրդը հեռանար երկրից, և ես ու իմ ժողովուրդը մտանք երկիրը, որպեսզի տիրեինք դրան:

8 Եվ մենք սկսեցինք շենքեր կառուցել, վերանորոգել քաղաքի պատերը, այո, այսինքն՝ Լեքի-Նեփիի քաղաքի պատերը, և Սիլոմի քաղաքը:

9 Եվ մենք սկսեցինք ցանել հողում, այո, այսինքն՝ բոլոր ձևի սերմեր՝ եգիպտացորենի և ցորենի, գարու և նեուսի և շեումի սերմեր, և բոլոր ձևի մրգերի սերմեր. և մենք սկսեցինք երկրում բազմանալ ու բարգավաճել:

10 Արդ, դա թագավոր Լամանի խորամանկությունն ու նենգությունն էր՝ իմ ժողովրդին ճորտության տեսքով, որ նա զիջեց երկիրը, որպեսզի մենք տիրենք դրան:

11 Հետևաբար, եղավ այնպես, որ մենք տասներկու տարիների ընթացքում երկրում բնակվելուց հետո, թագավոր Լամանը սկսեց անհանգստանալ, որ չլիներ թե ինչ-որ ձևով իմ ժողովուրդը գորանար երկրում, և որ իրենք չկարողանային հաղթել նրանց ու բերեին նրանց ճորտության:

12 Այժմ նրանք մի ծուլլ և «կռապաշտ ժողովուրդ էին. հետևաբար, նրանք ուզում էին բերել մեզ ճորտության, որ կարողանային իրենց հազեցնել մեր ձեռքերի աշխատանքով. այո, որ նրանք կարողանային խրախճանալ մեր դաշտերի հոտերով:

13 Հետևաբար, եղավ այնպես, որ թագավոր Լամանը սկսեց դողել իր ժողովրդին, որ նրանք կովեին իմ ժողովրդի հետ. ուստի, երկրում պատերազմներ ու կռիվներ սկսվեցին:

14 Այլ խոսքով ասած, Նեփիի երկրում, իմ թագավորման տասներեքերորդ տարում, Սիլոմ երկրի հեռավոր հարավում, երբ իմ ժողովուրդը ջրում էր և արածեցնում իր հոտերը, և մշակում իր հողերը, Լամանացիների մի սովար գորք եկավ նրանց վրա և սկսեց նրանց սպանել, և հափշտակել նրանց հոտերը, և նրանց դաշտերի եգիպտացորենը:

15 Այո, և եղավ այնպես, որ բոլոր նրանք, ովքեր չէին բռնվել, փախան մինչև Նեփիի քաղաքը և պաշտպանություն խնդրեցին ինձանից:

16 Եվ եղավ այնպես, որ ես զինեցի նրանց աղեղներով ու նետերով, սրերով ու թրերով, և մահակներով ու պարսատիկներով, և բոլոր ձևի

զենքերով, որոնք մենք կարող էինք հնարել, և ես ու իմ ժողովուրդն առաջ գնացինք՝ ճակատամարտելու Լամանացիների դեմ:

17 Այո, Տիրոջ ուժով մենք առաջ գնացինք՝ ճակատամարտելու Լամանացիների դեմ. քանզի ես և իմ ժողովուրդն ուժգնորեն աղաղակեցինք առ Տերը, որ նա ազատեր մեզ մեր թշնամիների ձեռքից, քանզի մենք սթափվեցինք հիշելու մեր հայրերի ազատման մասին:

18 Եվ Աստված՝ լսեց մեր աղաղակներն ու պատասխանեց մեր աղոթքներին. և մենք նրա գորուքյամբ առաջ գնացինք. այո, մենք առաջ գնացինք Լամանացիների դեմ, և մեկ օրում և մի գիշերում կոտորեցինք երեք հազար և քառասուներեքի. մենք կոտորեցինք նրանց այնքան, մինչև որ դուրս թշեցինք նրանց մեր երկրից:

19 Եվ ես ինքս՝ իմ իսկ ձեռքերով օգնեցի թաղել նրանց մեռելներին: Եվ ահա, ի մեծ վիշտ և սուգ մեզ՝ մեր եղբայրներից երկու հարյուր և յոթանասունինը սպանվել էին:

ԳԼՈՒԽ 10

Թագավոր Լամանը մահանում է – Նրա ժողովուրդը վայրի ու կատաղի է և հավատում է կեղծ ավանդությունների – Չենիֆը և նրա ժողովուրդը հաղթանակ են տանում նրանց դեմ: Մոտ 187–160թթ. Ք.ծ.ա.:

Եվ եղավ այնպես, որ մենք կրկին սկսեցինք թագավորությունը հաստատել, և մենք կրկին սկսեցինք խաղաղությամբ տիրել երկրին: Եվ

ես կարգադրեցի, որ ամեն տեսակի պատերազմի զենքեր սարքվեին, որ այդպիսով ես կարողանայի իմ ժողովրդի համար զենքեր ունենալ՝ ընդդեմ այն ժամանակի, երբ Լամանացիները կգային կրկին՝ պատերազմելու իմ ժողովրդի դեմ:

2 Եվ ես երկրի շուրջբոլորը պահակախմբեր դրեցի, որ Լամանացիներն անսպասելիորեն կրկին չգային մեզ վրա և կործանեին մեզ. և այսպես, ես հսկում էի իմ ժողովրդին ու իմ հոտերը, և պաշտպանում նրանց՝ մեր թշնամիների ձեռքն ընկնելուց:

3 Եվ եղավ այնպես, որ մենք ժառանգեցինք մեր հայրերի երկիրը շատ տարիների ընթացքում, այո, քսան և երկու տարիների ընթացքում:

4 Եվ ես կարգադրեցի, որ տղամարդիկ մշակեին հողը և ամեն ձևի՝ հատիկ և ամեն ձևի, ամեն տեսակի միրգ աճեցնեին:

5 Եվ ես կարգադրեցի, որ կանայք մանեն, և տքնեն, և աշխատեն, և գործեն ամեն ձևի նուրբ՝ քաթան, այո, և ամեն տեսակի գործվածք, որ մենք կարողանայինք ծածկել մեր մերկությունը. և այսպիսով, մենք բարգավաճեցինք երկրում, և այսպիսով մենք քսան և երկու տարիների ընթացքում երկրում անընդհատ խաղաղություն ունեցանք:

6 Եվ եղավ այնպես, որ թագավոր՝ Լամանը մահացավ, և նրա որդին սկսեց թագավորել նրա փոխարեն: Եվ նա սկսեց իր ժողովրդին ապստամբության դրդել իմ ժողովրդի դեմ. հետևաբար, նրանք սկսեցին պատերազմի պատրաստվել, և

18ա Մոսիա 29.20:
10 4ա Մոսիա 9.9:

5ա Ալմա 1.29:
6ա Մոսիա 9.10–11, 24.3:

եկան՝ ճակատամարտելու իմ ժողովրդի դեմ:

7 Բայց ես դուրս էի ուղարկել իմ լրտեսներին՝ ՄՍենյունի երկրի շուրջբոլորը, որ կարողանայի հայտնաբերել նրանց պատրաստությունները, որ կարողանայի պաշտպանվել նրանց դեմ, որ նրանք չկարողանային գալ իմ ժողովրդի վրա և կործանել նրանց:

8 Եվ եղավ այնպես, որ նրանք իրենց ստվար գորքերով մոտ եկան Սիլունի երկրի հյուսիսին, տղամարդիկ՝ զվճարած քաղեղներով և նետերով, սրերով և թրերով, քարերով և պարսատիկներով. և նրանք ածիլել էին իրենց գլուխներն այնպես, որ դրանք լերկ էին. և նրանք՝ իրենց կոնքերի շուրջը, գոտևորված էին կաշվե մի գոտիով:

9 Եվ եղավ այնպես, որ ես կարգադրեցի, որ իմ ժողովրդի կանայք և երեխաները թաքցվեն անապատում. և նաև կարգադրեցի, որ բոլոր իմ ծերերը, որոնք կարող էին կրել զենքեր, և նաև բոլոր իմ երիտասարդները, որոնք ի վիճակի էին զենք կրել, ի մի հավաքվեն, որ զան՝ ճակատամարտելու Լամանացիների դեմ. և ես նրանց դասավորեցի ըստ իրենց դիրքերի՝ ամեն մարդ ըստ իր տարիքի:

10 Եվ եղավ այնպես, որ մենք զնացինք ճակատամարտելու Լամանացիների դեմ. և ես, նույնիսկ ես, իմ ծեր տարիքում, զնացի ճակատամարտելու Լամանացիների դեմ: Եվ եղավ այնպես, որ մենք Տիրոջ՝ ուժով վեր ելանք՝ ճակատամարտելու:

11 Արդ, Լամանացիները ոչինչ չգիտեին Տիրոջ մասին, ոչ էլ Տիրոջ ուժի, հետևաբար, նրանք ապավինում էին իրենց սեփական ուժին: Այնուամենայնիվ, նրանք ուժեղ ժողովուրդ էին, ինչ վերաբերում է մարդկային ուժին:

12 Նրանք՝ վայրի և կատաղի և արյունոտ մի ժողովուրդ էին՝ հավատալով իրենց հայրերի քավանդություններին, որն այս է՝ հավատալով, որ նրանք դուրս էին քշվել Երուսաղեմի հողից իրենց հայրերի անօրինությունների պատճառով, և որ նրանց հանդեպ անապատում իրենց եղբայրներն անարդար էին վարվել, և նրանց հանդեպ անարդար էին վարվել նաև ծովն անցնելիս.

13 Եվ բացի դրանից, որ նրանց հանդեպ այն ժամանակ անարդար էին վարվել, իրենց՝ առաջին ժառանգության հողում, ծովն անցնելուց հետո. և այս ամենն այն պատճառով, որ Նեփին Տիրոջ պատվիրանները պահելիս ավելի հավատարիմ էր, հետևաբար, նա քոփանավորվում էր Տիրոջ կողմից, քանզի Տերը լսում էր նրա աղոթքներն ու պատասխանում դրանց, և անապատում ստանձնեց նրանց ճանապարհորդության դեկավարությունը:

14 Եվ նրա եղբայրները զայրացած էին նրա վրա, քանի որ նրանք չէին հասկանում Տիրոջ գործերը. նրանք նրա վրա քաջայրացած էին նաև ջրերի վրա, քանի որ նրանք կարծրացրել էին իրենց սրտերը Տիրոջ դեմ:

15 Եվ բացի դրանից, նրանք զայ-

7ա Մոսիա 11.12:
8ա Հարոմ 1.8:
բ Ալմա 3.4–5:
10ա սոս Ապավինել:

12ա Ալմա 17.14:
բ 2 Նեփի 5.1–3:
13ա 1 Նեփի 18.23:
բ 1 Նեփի 17.35:

14ա 1 Նեփի 15.7–11:
բ 1 Նեփի 18.10–11:

բացած էին նրա վրա, երբ նրանք հասել էին խոստացված երկիրը, որովհետև ասացին, որ նա վերցրել էր ժողովրդի՝ «կառավարումն իրենց ձեռքից. և նրանք ջանում էին սպանել նրան:

16 Եվ բացի դրանից, նրանք գայրացած էին նրա վրա, որովհետև նա հեռացավ անապատ, ինչպես Տերը՝ «պատվիրել էր նրան, և վերցրեց հիշատակարանները, որոնք փորագրված էին արույրե թիթեղների վրա, ուստի նրանք ասում էին, որ նա՝ կողոպտել է իրենց:

17 Եվ այսպիսով, նրանք սովորեցրել էին իրենց երեխաներին, որ նրանք ատեն նրանց, և որ սպանեն նրանց, և որ կողոպտեն ու թալանեն նրանց, և անեն այն ամենը, ինչ կարող են՝ նրանց կործանելու համար. այդ պատճառով, նրանք Նեփիի գավակների հանդեպ մի հավերժական ատելություն ունեն:

18 Հենց այս պատճառով թագավոր Լամանն իր խորամանկությամբ ու կեղծ նենգությամբ, և իր գրավիչ խոստումներով խաբեց ինձ, այնպես որ ես բերել եմ իմ այս ժողովրդին այս երկիրը, որ նրանք կործանեին նրանց. այո, և մենք այսքան բազում տարիներ տառապել ենք այս երկրում:

19 Եվ այժմ, ես՝ Չենիֆա, Լամանացիների վերաբերյալ բոլոր այս բաներն իմ ժողովրդին ասելուց հետո, խրախուսեցի նրանց՝ գնալ ճակատամարտելու իրենց գորությամբ՝ դնելով իրենց վստահությունը Տիրոջ վրա. հետևաբար, մենք կռվեցինք նրանց հետ դեմ առ դեմ:

20 Եվ եղավ այնպես, որ մենք կրկին դուրս քշեցինք նրանց մեր երկրից. և մենք մի մեծ կոտորածով կոտորեցինք նրանց, նույնիսկ այնքան շատերի, որ մենք չհաշվեցինք նրանց:

21 Եվ եղավ այնպես, որ մենք կրկին վերադարձանք մեր սեփական երկիրը, և իմ ժողովուրդը նորից սկսեց խնամել իր հոտերը և մշակել իր հողը:

22 Եվ այժմ ես, լինելով ծեր, թագավորությունը շնորհեցի իմ որդիներից մեկին. հետևաբար, ես այլևս ասելիք չունեմ: Եվ թող Տերն օրհնի իմ ժողովրդին: Ամեն:

ԳԼՈՒԽ 11

Թագավոր Նոյը կառավարում է ամբարշտությամբ – Նա հաճույք է ստանում զեխ սարեյակերայից՝ իր կանանց և հարճերի հետ – Արինադին մարգարեանում է, որ ժողովուրդը կտարվի ճորտության – Թագավոր Նոյը փնտրում է նրա կյանքը: Մոտ 160–150թթ. Ք.ծ.ա.:

Ես այժմ եղավ այնպես, որ Չենիֆը շնորհեց թագավորությունը Նոյին՝ իր որդիներից մեկին. հետևաբար, Նոյը սկսեց թագավորել նրա փոխարեն. և նա չբայլեց իր հոր ուղիներով:

2 Քանզի ահա, նա չէր պահում Աստծո պատվիրանները, այլ քայլում էր իր սեփական սրտի ցանկությունների համաձայն: Եվ նա շատ կանայք և՛ հարճեր ուներ: Եվ նա՝ պատճառ էր դառնում, որ իր ժողովուրդը մեղք գործեր ու աներ այն, ինչը պիղծ էր Տիրոջ

15ա2 Նեփի 5.3:
16ա2 Նեփի 5.12:

բ Ալմա 20.10, 13:
11ա Հակոբ 3.5:

բ Գ Թագ. ԺԳ.15–16,
Մոսիա 29.31:

աչքում: Այո, նրանք Գպոռնկոթյուններ էին անում, և ամեն ձևի ամբարշտություն:

3 Եվ նա հարկ էր դրել նրանց վրա ամբողջ ունեցվածքի մեկ հինգերորդ մասով, նրանց ոսկու և նրանց արծաթի մեկ հինգերորդ մասը, և նրանց քվիֆի մեկ հինգերորդ մասը, և նրանց պղնձի, և նրանց արույրի, և նրանց երկաթի. և նրանց պարարտների մեկ հինգերորդ մասը. և նաև ողջ նրանց հատիկի մեկ հինգերորդ մասը:

4 Եվ այս բոլորը նա վերցնում էր իրեն և իր կանանց ու իր հարճերին. և նաև իր քահանաներին, և նրանց կանանց ու նրանց հարճերին պահելու համար. այսպիսով, նա փոխել էր թագավորության գործերը:

5 Քանզի նա հեռացրել էր բոլոր քահանաներին, որոնք նվիրաբերվել էին իր հոր կողմից, և նրանց փոխարեն նվիրաբերել էր նորերի, այնպիսիների, որոնք բարձրամտացած էին իրենց սրտերի հպարտությունից:

6 Այո, և այսպիսով նրանք քաջալերվում էին իրենց ծուլության մեջ և իրենց կռապաշտության ու իրենց պոռնկոթյունների մեջ, հարկերով, որոնք Նոյ թագավորը դրել էր իր ժողովրդի վրա. այսպիսով ժողովուրդը չափազանց տքնում էր անօրինությանն օժանդակելու համար:

7 Այո, և նրանք մույնպես դարձան կռապաշտ, քանի որ նրանք խաբված էին թագավորի ու քահանաների սին ու շողոքորթ խոսքերից. քանզի նրանք ասում էին նրանց շողոքորթող բաներ:

8 Եվ եղավ այնպես, որ թագա-

վոր Նոյը կառուցեց բազմաթիվ պերճաշուք ու լայնարձակ շենքեր. և նա զարդարեց դրանք փայտի մուրր պշխատանքով և ամեն ձևի թանկարժեք բաներով՝ ոսկով և արծաթով, երկաթով և արույրով, զիֆով և պղնձով.

9 Եվ նա իր համար կառուցեց նաև մի լայնարձակ պալատ, և մի գահ՝ դրա մեջտեղում, որոնք բոլորն ընտիր փայտից էին և զարդարված ոսկով ու արծաթով և թանկարժեք բաներով:

10 Եվ նա նաև կարգադրեց, որ իր աշխատողներն ամեն ձևի հոյակապ գործեր գործեն տաճարի պատերի ներսում՝ ընտիր փայտից և պղնձից և արույրից:

11 Եվ նստատեղերը, որոնք նախատեսված էին քահանայապետերի համար, որոնք բոլոր մյուս նստատեղերից բարձր էին, նա զարդարեց մաքուր ոսկով. և նա կարգադրեց, որ բազրիք կառուցվեր նրանց առջևում, որպեսզի նրանք կարողանային իրենց մարմինները և իրենց բազուկները հենել վրան, մինչ նրանք կխոսեին կեղծավոր և սին խոսքեր՝ իր ժողովրդին:

12 Եվ եղավ այնպես, որ նա տաճարի մոտ մի «աշտարակ կառուցեց. այո, մի շատ բարձր աշտարակ, մույնիսկ այնքան բարձր, որ կարող էր կանգնել դրա գագաթին և վերևից նայել Սիլոմի երկրին, և նաև Մեմլոնի երկրին, որը պատկանում էր Լամանացիներին. և նա կարող էր մույնիսկ վերևից նայել շրջակա ողջ երկրին:

13 Եվ եղավ այնպես, որ նա կարգադրեց, որ Սիլոմի երկրում բազմաթիվ շենքեր կառուցվեին. և

2q 2 Նեփի 28.15:
3աբբ. հոմանիշ բառեր

են՝ «փայլող»,
ածական. «պատել,

օծել մետաղը», բայ:
12ա Մոսիա 19.5–6:

նա ստիպեց, որ մի մեծ աշտարակ կառուցվեր բլրի վրա՝ Սիլոն երկրից հյուսիս, որը եղել էր ապաստան Նեփիի զավակների համար, այն ժամանակ, երբ նրանք դուրս փախան երկրից. և այսպես էր նա վարվում այն հարստությունների հետ, որոնք նա հարկման միջոցով ձեռք էր բերում իր ժողովրդից:

14 Եվ եղավ այնպես, որ նա իր սիրտը դրել էր իր հարստությունների վրա, և նա անցկացնում էր իր ժամանակը զեխ ապրելակերպով՝ իր կանանց ու իր հարճերի հետ. և այսպես էին իրենց ժամանակն անցկացնում նաև նրա քահանաները՝ պռոնիկների հետ:

15 Եվ եղավ այնպես, որ նա տնկեց շուրջբոլորը խաղողի այգիներ երկրում. և նա կառուցեց հնձան և առատությամբ գինի էր սարքում. և այդ պատճառով նա դարձավ «գինեմուլ, և իր ժողովուրդը՝ նույնպես:

16 Եվ եղավ այնպես, որ Լամանացիները սկսեցին գալ իր ժողովրդի վրա՝ փոքր խմբերի վրա, և սպանել նրանց՝ իրենց դաշտերում, մինչ նրանք խնամում էին իրենց հոտերը:

17 Եվ թագավոր Նոյը երկրի շուրջբոլորը պահակախմբեր ուղարկեց՝ նրանց հեռու պահելու համար. բայց նա չէր ուղարկում բավականաչափ թվով, և Լամանացիները գալիս էին նրանց վրա, և սպանում էին նրանց, և երկրից դուրս էին քշում նրանց հոտերից շատերը. այսպիսով, Լամանացիները սկսեցին կոտորել նրանց և գործի դնել իրենց ատելությունը նրանց վրա:

18 Եվ եղավ այնպես, որ թագավոր Նոյն ուղարկեց իր զորքերը նրանց դեմ, և նրանք ետ մղվեցին, կամ նրանք ետ մղեցին նրանց մի որոշ ժամանակով. հետևաբար, նրանք վերադարձան՝ հրճվելով իրենց ավարով:

19 Եվ այժմ, այս մեծ հաղթանակի պատճառով նրանք բարձրամրտացան իրենց սրտերի հպարտությունից. նրանք «պարծենում էին իրենց սեփական ուժով, ասելով, որ իրենց հիսունը կարող էր կանգնել հազարավոր Լամանացիների դեմ. և այսպես նրանք պարծենում էին, և հիանում էին արյամբ ու իրենց եղբայրների արյունը թափելով, և դա՛ իրենց թագավորի և քահանաների ամբարշտության պատճառով:

20 Եվ եղավ այնպես, որ նրանց մեջ կար մի մարդ, որի անունն «Աբինադի էր. և նա առաջ գնաց նրանց մեջ, և սկսեց մարգարեանալ՝ ասելով. Ահա, այսպես է ատում Տերը, և այսպես է նա պատվիրել ինձ՝ ասելով. Գնա առաջ, և ասա այս ժողովրդին, այսպես է ատում Տերը. Վա՛յ լինի այս ժողովրդին, քանզի ես տեսա նրանց պղծությունները և նրանց ամբարշտությունը. և նրանց պռոնկությունները. և եթե նրանք չապաշխարեն, ես կայցելեմ նրանց իմ բարկության մեջ:

21 Եվ եթե նրանք չապաշխարեն և չդառնան դեպի Տերը՝ իրենց Աստվածը, ահա, ես կհանձնեմ նրանց իրենց թշնամիների ձեռքը. այո, և նրանք «ճորտության կրեվեն. և նրանք կչարչարվեն իրենց թշնամիների ձեռքով:

15ա ՄՈՒ Իմաստության Խոսք:
19ա ՎևՈՒ 3.4:

ՄՈՒ Հպարտություն:
20ա ՄՈՒ Աբինադի:
21ա Մոսիա 12.2, 20.21,

21.13–15, 23.21–23:

22 Եվ կլինի այնպես, որ նրանք կհնանան, որ ես եմ Տերը՝ իրենց Աստվածը, և ես ՝Մախանձոտ Աստված եմ՝ իմ ժողովրդի անօրինությունները պատժող:

23 Եվ կլինի այնպես, որ եթե այս ժողովուրդը չապաշխարի և չդառնա դեպի Տերը՝ իրենց Աստվածը, նրանք կբերվեն ճորտության. և ոչ մեկը չպիտի ազատի նրանց, բացի Տիրոջից՝ Ամենագոր Աստծուց:

24 Այո, և կլինի այնպես, որ երբ նրանք աղաղակեն առ ինձ, ես կլինեմ ՝Պանդաղ նրանց աղաղակները լսելիս. այո, և ես կհանդուրժեմ, որ նրանք զարկվեն իրենց թշնամիների կողմից:

25 Եվ մինչև նրանք չապաշխարեն քրճով ու մոխրով, և ուժգնորեն չաղաղակեն առ Տերը՝ իրենց Աստվածը, ես չեմ ՝լսելու նրանց աղոթքները, ոչ էլ ազատելու եմ նրանց իրենց չարչարանքներից. և այսպես է ասում Տերը, և այսպես է պատվիրել նա ինձ:

26 Եվ եղավ այնպես, որ երբ Աբինադին այս խոսքերն ասաց նրանց, նրանք զայրացան նրա վրա, և ջանացին խլել նրա կյանքը, բայց Տերը նրան ազատեց նրանց ձեռքից:

27 Եվ երբ թագավոր Նոյը լսեց այն խոսքերի մասին, որոնք Աբինադին ասել էր ժողովրդին, նա նույնպես զայրացավ ու ասաց. Ո՞վ է Աբինադին, որ ես ու իմ ժողովուրդը պիտի դատվենք նրա կողմից, կամ ՝՛ո՞վ է Տերը, որ իմ ժողովրդի վրա այդպիսի մեծ չարչարանք պիտի բերի:

28 Ես հրամայում եմ ձեզ՝ բերել

Աբինադիին այստեղ, որ ես սպանեմ նրան, քանզի նա ասել է այս բաները, որ իմ ժողովրդին բարկության դրդի մեկը մյուսի հանդեպ և հակառակություններ բարձրացնի իմ ժողովրդի մեջ. հետևաբար, ես կսպանեմ նրան:

29 Արդ ժողովրդի աչքերը ՝կուրացված էին. հետևաբար, նրանք ՝կարծրացրեցին իրենց սրտերն Աբինադիի խոսքերի դեմ. և նրանք, այդ ժամանակից ի վեր, ջանում էին բռնել նրան: Եվ թագավոր Նոյը կարծրացրեց իր սիրտը Տիրոջ խոսքի դեմ, և նա չապաշխարեց իր չար արարքներից:

ԳԼՈՒԽ 12

Աբինադին բանտարկվում է ժողովրդի կործանման և թագավոր Նոյի մահվան մասին մարգարեանալու համար – Կեղծ քահանաները վկայակոչում են սուրբ գրքերը և ձևացնում, որ պահում են Մովսեսի օրենքը – Աբինադին սկսում է նրանց սովորեցնել Տասը Պատվիրանները: Մոտ 148թ. Ք.ծ.ա.:

Եվ եղավ այնպես, որ երկու տարվա ժամանակահատվածից հետո, Աբինադին ծպտված եկավ նրանց մեջ, որ չճանաչեին իրեն, և սկսեց մարգարեանալ նրանց մեջ՝ ասելով. Այսպես է Տերը պատվիրել ինձ՝ ասելով. Աբինադի՛, գնա և մարգարեացիր իմ այս ժողովրդին, քանզի նրանք կարծրացրել են իրենց սրտերն իմ խոսքերի դեմ. և չեն ապաշխարել նրանք իրենց չար արարքներից.ուստի, ես ՝կայցելեմ

22ա Ել. Ի.5, Բ Օր. 2.15, Մոսիա 13.13:
24ա Միքիա 9.4, Մոսիա 21.15:

25ա Ես. 1.15, 59.2:
27ա Ել. Ե.2, Մոսիա 12.13:
29ա Մովսես 4.4:

բ Ալմա 33.20, Եթեր 11.13:
12 1ա Ես. ԿԵ.6:

նրանց իմ բարկության մեջ, այո, իմ կատաղի բարկությամբ ես կայցելեմ նրանց՝ իրենց անօրինությունների ու պղծությունների մեջ:

2 Այո, վա՛յ լինի այս սերնդին: Եվ Տերն ասաց ինձ. Առաջ մեկնիր ձեռքդ ու մարգարեացիր՝ ասելով. Այսպես է ասում Տերը՝ կլինի այնպես, որ այս սերունդն իր անօրինությունների պատճառով պիտի բերվի Մճորտության, և պիտի զարկվի Քայտին. այո, և պիտի քշվի մարդկանց կողմից, և պիտի սպանվի. և օդի ուրուրները, և շները, այո, և վայրի զագանները պիտի հռչոտեն նրանց միսը:

3 Եվ կլինի այնպես, որ թագավոր Նոյի Մկյանքը պիտի գնահատվի ոչ ավել, քան մի հանդերձ՝ թեժ Քինցում. քանզի նա պիտի իմանա, որ ե՛ս եմ Տերը:

4 Եվ պիտի լինի այնպես, որ ես դառը չարչարանքներով կզարկեմ իմ այս ժողովրդին, այո, սովով ու Մժանտախտով. և ես կստիպեմ, որ նրանք Քողբան բոլոր օրերի ընթացքում:

5 Այո, և ես կստիպեմ, որ նրանք ունենան Մբեռներ կապված իրենց մեջքերին. և նրանք անխոս էլի պես պիտի քշվեն առաջ:

6 Եվ պիտի լինի այնպես, որ ես նրանց մեջ կարկուտ կուղարկեմ, և այն պիտի զարկի նրանց. և նրանք նաև պիտի զարկվեն Մխորշակով. և Քմիջատները պիտի վնասեն նրանց երկիրը նույնպես և խժռեն նրանց հատիկը:

7 Եվ նրանք պիտի զարկվեն մեծ ժանտախտով, և այս բոլորը

ես կանեմ նրանց Մանօրինությունների ու պղծությունների պատճառով:

8 Եվ պիտի լինի այնպես, որ եթե նրանք չապաշխարեն, ես նրանց ամբողջովին Մկոչնչացնեմ երկրի երեսից. սակայն նրանք մի Քիշատակարան պիտի թողնեն իրենցից հետո, և ես կպահպանեմ դրանք այլ ազգերի համար, որոնք պիտի տիրեն երկրին. այո, նույնիսկ դա կանեմ ես, որ կարողանամ մյուս ազգերին հայտնի դարձնել այս ժողովրդի պղծությունները: Եվ շատ բաներ Աբինադին մարգարեացավ այս ժողովրդի դեմ:

9 Եվ եղավ այնպես, որ նրանք բարկացան նրա վրա. և նրանք բռնեցին նրան ու կապած տարան թագավորի առաջ, և ասացին թագավորին. Ահա՛, մենք մի մարդ ենք բերել քո առջև, որը չարիք է մարգարեացել քո ժողովրդի վերաբերյալ, և ասում է, որ Աստված կկործանի նրանց:

10 Եվ նա չարիք է մարգարեանում նաև քո կյանքի վերաբերյալ և ասում է, որ քո կյանքը պիտի լինի, ինչպես մի հանդերձ՝ կրակի հնոցում:

11 Եվ բացի դրանից, նա ասում է, որ դու պիտի լինես, ինչպես մի ցողուն, անգամ ինչպես դաշտի մի չոր ցողուն, որը տրորվել է գազանների կողմից և կոխկրտվել ոտքի տակ:

12 Եվ բացի դրանից, նա ասում է՝ դու պիտի լինես, ինչպես տատակափշի ծաղիկները, որոնք երբ լիովին հասունանում են, եթե

2աՄոսիա 11.21, 20.21, 21.13–15, 23.21–23:
բ Մոսիա 21.3–4:
3աՄոսիա 12.10:
բ Մոսիա 19.20:

4աՎևոՒ 97.26:
բ Մոսիա 21.9–10:
5աՄոսիա 21.3:
6աԵրեմ. ԺԸ.17,
Մոսիա 7.31:

բ Ել. Ժ.1–12:
7աՎևոՒ 3.18:
8աԱլմն 45.9–14:
բ Մորմ. 8.14–16:

քամին փչում է, դրանք առաջ են քշվում երկրի երեսով: Եվ նա ձևացնում է, թե Տերն է խոսել այդ: Եվ ասում է՝ այս բոլորը պիտի գա քեզ վրա, եթե դու չապաշխարես, և դա՝ քո անօրինությունների պատճառով:

13 Եվ արդ, ո՛վ թագավոր, ի՞նչ մեծ չարիք ես դու արել, կամ ի՞նչ մեծ մեղքեր է քո ժողովուրդը գործել, որ մենք պիտի դատապարտվենք Աստծո կողմից կամ դատվենք այս մարդու կողմից:

14 Եվ արդ, ո՛վ թագավոր, ահա մենք անմեղ ենք, և դո՛ւ, ո՛վ թագավոր, չես մեղանչել. ուստի, այս մարդը ստել է քո վերաբերյալ, և նա զուր է մարգարեացել:

15 Եվ ահա մենք ուժեղ ենք, և մենք չենք բերվի ճորտության կամ մեր թշնամիների կողմից գերի չենք վերցվի. այո, և դու բարգավաճել ես երկրում, և դու նաև պիտի բարգավաճես:

16 Ահա, այստեղ է այդ մարդը, մենք հանձնում ենք նրան քո ձեռքը, դու կարող ես վարվել նրա հետ, ինչպես քեզ հարմար է թվում:

17 Եվ եղավ այնպես, որ թագավոր Նոյը կարգադրեց, որ Աբինադին բանտ գցվի. և նա հրամայեց, որ ՝քահանաներն ի մի հավաքվեին, որ նա կարողանար խորհուրդ անցկացնել նրանց հետ, թե ինչ պիտի անի նրա հետ:

18 Եվ եղավ այնպես, որ նրանք ասացին թագավորին. Բեր նրան այստեղ, որ մենք հարցաքննենք նրան. և թագավորը հրամայեց, որ նա բերվի նրանց առաջ:

19 Եվ նրանք սկսեցին հարցաքննել նրան, որ կարողանային

ստիպել նրան՝ ինքն իրեն հակասել, որ դրա միջոցով նրանք ունենային այն, որով կմեղադրեին նրան. բայց նա նրանց համարձակորեն պատասխանեց, և դիմացավ բոլոր նրանց հարցերին, այո, ի զարմանս նրանց. քանզի նա ՝դիմակայեց նրանց՝ իրենց բոլոր հարցերին, և կարկամեցրեց նրանց իրենց բոլոր խոսքերում:

20 Եվ եղավ այնպես, որ նրանցից մեկն ասաց նրան. Ի՞նչ են նշանակում խոսքերը, որոնք գրված են և սովորեցվել են մեր հայրերի կողմից, ասելով.

21 ՝Որքա՛ն գեղեցիկ են սարերի վրա ոտքերը նրա, որ բերում է ավետիք. որ հրատարակում է խաղաղություն. որ բերում է բարի ավետիք. որ հրատարակում է փրկություն. որ ասում է Սիոնին՝ Զո Աստվածն է թագավորում.

22 Զո պահապանները պիտի բարձրացնեն ձայնը. միաձայն նրանք պիտի երգեն. քանզի նրանք դեմ հանդիման կտեսնեն, երբ Տերը կրկին կբերի Սիոնը.

23 Պոռթկացե՛ք ուրախությամբ. երգե՛ք միասին, դո՛ւք, Երուսաղեմի ամայացած վայրեր. քանզի Տերը մխիթարել է իր ժողովրդին, նա փրկագնել է Երուսաղեմը.

24 Տերը մերկացրել է իր սուրբ ՝բազուկը բոլոր ազգերի աչքի առաջ, և աշխարհի բոլոր ծայրերը պիտի տեսնեն մեր Աստծո փրկությունը:

25 Եվ Աբինադին ասաց նրանց. Մի՞թե դուք ՝քահանաներ եք, և ձևացնում եք, թե ուսուցանում եք այս ժողովրդին, և հասկանում մարգարեության ոգին, և այնուամենայնիվ, ցանկանում եք իմանալ

ինձանից, թե ի՞նչ են նշանակում այս բաները:

26 Ես ասում եմ ձեզ, վա՛յ լինի ձեզ՝ Տիրոջ ուղիները խեղաթյուրելու համար: Քանզի, եթե դուք հասկանում եք այս բաները, դուք չեք սովորեցրել դրանք. հետևաբար, դուք խեղաթյուրել եք Տիրոջ ուղիները:

27 Դուք ձեր սրտերը չեք նվիրել «հասկանալուն. հետևաբար, դուք իմաստուն չեք եղել: Հետևաբար, ի՞նչ եք դուք սովորեցնում այս ժողովրդին:

28 Եվ նրանք ասացին. Մենք սովորեցնում ենք Մովսեսի օրենքը:

29 Եվ ի պատասխան՝ նա ասաց նրանց. Եթե դուք սովորեցնում եք Մովսեսի «օրենքը, ինչո՞ւ դուք չեք պահում այն: Ինչո՞ւ եք դուք ձեր սրտերը դնում հարստությունների վրա: Ինչո՞ւ եք թառնկություններ անում և պոռնիկների հետ վատնում ձեր ուժը, այո, և ստիպում այս ժողովրդին մեղք գործել, այնպես որ Տերը պատճառ ունի ուղարկելու ինձ՝ մարգարեանալու այս ժողովրդի դեմ, այո, նույնիսկ մեծ չարիք այս ժողովրդի դեմ:

30 Չգիտե՞ք արդյոք, որ ես ճշմարտությունն եմ խոսում: Այո, դուք գիտեք, որ ես ճշմարտությունն եմ խոսում. և դուք պարտավոր եք դողալ Աստծո առաջ:

31 Եվ պիտի լինի այնպես, որ դուք պիտի զարկվեք ձեր անօրինությունների համար, քանզի դուք ասացիք, որ դուք սովորեցնում եք Մովսեսի օրենքը: Իսկ ի՞նչ գիտեք դուք Մովսեսի օրենքի

մասին: «Արդյո՞ք փրկությունը գալիս է Մովսեսի օրենքի միջոցով: Ի՞նչ կասեիք դուք:

32 Եվ նրանք պատասխանեցին և ասացին, որ փրկությունը գալիս է Մովսեսի օրենքի միջոցով:

33 Բայց այդ ժամանակ Աբիմադին ասաց նրանց. Ես գիտեմ, եթե դուք պահեք Աստծո պատվիրանները, դուք պիտի փրկվեք. այո, եթե դուք պահեք պատվիրանները, որոնք Տերը տվել էր Մովսեսին «Սինայ սարի վրա՝ ասելով.

34 «Ես եմ Տերը՝ քո Աստվածը, որը դուրս թերեց քեզ Եգիպտոսի երկրից՝ ճորտության տնից:

35 Բացի ինձանից «ուրիշ Աստված չպիտի ունենաս:

36 Քեզ համար չպիտի շինես քանդակած պատկեր կամ նմանություն որևէ բանի, որը վերը՝ երկնքում է, կամ բաների, որոնք ցածր՝ երկրում են:

37 Եվ Աբիմադին ասաց նրանց. Դուք արե՞լ եք արդյոք այս ամենը: Ես ասում եմ ձեզ՝ Ո՛չ, դուք չե՛ք արել: Եվ «սովորեցրե՞լ եք դուք այս ժողովրդին, որ նրանք պետք է անեն բոլոր այս բաները: Ես ասում եմ ձեզ՝ Ո՛չ, դուք չեք սովորեցրել:

ԳԼՈՒԽ 13

Աբիմադին պաշտպանված է աստվածային զորությանը – Նա սովորեցնում է Տասը Պատվիրանները – Փրկությունը չի գալիս միայն Մովսեսի օրենքի միջոցով – Աստված

27ա ստ՝ Հասկանալ:
29ա ստ՝ Մովսեսի օրենք:
բ ստ՝ Ընություն:
31ա Մոսիա 3.15, 13.27–32,
Ավսա 25.16:

33ա Ել. ԺԹ.9, 16–20,
Մոսիա 13.5:
34ա Ել. Ի.2–4:
բ Ել. ԺԲ.51,
1 Նեփի 17.40,

Մոսիա 7.19:
35ա Ովսե ԺԳ.4:
ստ՝ Կռապաշտություն:
37ա Մոսիա 13.25–26:

ինքը քավութիւն կանի և կիրկազնի իր ժողովրդին: Մոտ 148թ. Ք.ծ.ա.:

Եւ երբ թագավորը լսեց այս խոսքերը, նա ասաց իր քահանաներին. Հեռացրէ՛ք այս մարդուն, և սպանէ՛ք նրան. քանզի ի՞նչ ունենք մենք նրա հետ անելու, քանի որ նա խելագար է:

2 Եվ նրանք առաջ կանգնեցին և փորձեցին ձեռք ձգել նրա վրա. բայց նա ընդդիմացավ և ասաց նրանց.

3 Մի՛ դիպչէք ինձ, քանզի Աստված կզարկի ձեզ, եթե դուք ձեռք ձգէք ինձ վրա, քանզի ես չեմ հանձնել պատգամը, որը Տերն ուղարկել է ինձ հանձնելու. ոչ էլ ասացի ձեզ այն, ինչ դուք՝ «հարցրեցիք, որ ես ասեմ. ուստի, Աստված չի հանդուրժի, որ ես կործանվեմ այս պահին:

4 Բայց ես պետք է կատարեմ պատվիրանները, որոնցով Աստված պատվիրել է ինձ. և քանի որ ես ասացի ձեզ ճշմարտությունը, դուք բարկացած եք ինձ վրա: Եվ բացի այդ, քանի որ ես խոսեցի Աստծո խոսքը, դուք դատապարտեցիք ինձ, որ ես խելագար եմ:

5 Այժմ եղավ այնպես, հետո, երբ Արինադին ասաց այս խոսքերը, թագավոր Նոյի մարդիկ չհամարձակվեցին ձեռք ձգել նրա վրա, քանզի Տիրոջ Հոգին նրա վրա էր. և նրա դեմքը՝ շողում էր արտասովոր փայլով, ճիշտ ինչպես Մովսեսիին էր այն ժամանակ, երբ Մինայ սարում էր, Տիրոջ հետ խոսելիս:

6 Եվ նա խոսեց Աստծո կողմից՝ «գորությամբ և իշխանությամբ.

և նա շարունակեց իր խոսքերն՝ ասելով.

7 Դուք տեսնում եք, որ գորություն չունեք՝ սպանելու ինձ, ուստի ես վերջացնում եմ իմ պատգամը: Այո՛, և ես զգում եմ, որ այն «խոցում է ձեզ, մինչև սիրտը, որովհետև ես ասում եմ ձեզ ճշմարտությունը ձեր անօրինությունների վերաբերյալ:

8 Այո՛, և իմ խոսքերը լցնում են ձեզ զարմանքով ու ապշանքով և բարկությամբ:

9 Բայց ես վերջացնում եմ իմ պատգամը. և հետո դա նշանակություն չունի, թե ուր ես կգնամ, եթե այնպես լինի, որ ես փրկվեմ:

10 Բայց այսքանն էմ ես ասում ձեզ՝ ինչ դուք անեք ինձ հետ, սրանից հետո, որպես «օրինակ և նմուշ պիտի լինեն այն բաների, որոնք պիտի գան:

11 Եվ այժմ ես կարդում եմ ձեզ Աստծո մնացած՝ «պատվիրանները, քանզի ես զգում եմ, որ դրանք գրված չեն ձեր սրտերում. ես զգում եմ, որ ձեր կյանքի մեծ մասը դուք սովորել եք և սովորեցրել եք անօրինություն:

12 Եվ այժմ, դուք հիշում եք, որ ես ասացի ձեզ. «Զեզ համար չպետք է շինես քանդակած պատկեր կամ մմանություն բաների, որոնք վերը՝ երկնքում են, կամ որոնք ցածր՝ երկրի վրա են, կամ որոնք երկրի տակ՝ ջրի մեջ են:

13 Եվ բացի այդ. Դու չպետք է վար խոնարհվես դրանց, ոչ էլ ծառայես դրանց. քանզի ես՝ Տերս, քո Աստվածը, նախանձոտ Աստված եմ, հայրերի անօրինությունները զավակների վրա պատժող,

13 3ա Մոսիա 12.20-24:
5ա Ել. 1.Գ.29-35:
6ա սոս՝ Ջորություն:

7ա 1 Նեփի 16.2:
10ա Մոսիա 17.13-19,
Ալմա 25.10:

11ա Ել. Ի.1-17:

մինչև նրանց երրորդ և չորրորդ սերունդը, որ ասում են ինձ.

14 Եվ ողորմություն ցուցաբերող հազարավորների հանդես, որ սիրում են ինձ և պահում իմ պատվիրանները:

15 Դու չպետք է գործածես Տիրոջ՝ քո Աստծո անունն իզուր. քանզի Տերն անմեղ չի համարի նրան, որ իզուր է գործածում իր անունը:

16 Հիշիր՝ հանգստության օրը՝ սուրբ պահելով այն:

17 Վեց օր աշխատիր և արա քո բոլոր գործերը.

18 Բայց յոթերորդ օրը, Տիրոջ՝ քո Աստծո հանգստության օրը, դու որևէ գործ չպետք է անես, ո՛չ դու, ո՛չ քո որդին, ո՛չ քո դուստրը, ո՛չ քո ծառան, ո՛չ էլ քո աղախինը, ո՛չ քո անասունը, ո՛չ էլ քո դռան միջի օտարականը.

19 Քանզի ՝վեց օրում Տերն արարեց երկինքը և երկիրը և ծովը և բոլորը, ինչ դրանցում է. ուստի, Տերն օրհնեց հանգստության օրը և սրբագործեց այն:

20 Պատվիր քո հորը և քո մորը, որ քո օրերը երկար լինեն այն երկրի վրա, որ Տերը՝ քո Աստվածը, ալիս է քեզ:

21 Մի՛ սպանիր:

22 Շնություն մի արա: Քո ողորություն մի արա:

23 Դու քո դրացու դեմ ՝սուտ վկայություն մի տուր:

24 Մի՛ ցանկացիր քո դրացու

տունը, ոչ էլ ցանկացիր քո դրացու կնոջը, ո՛չ նրա ծառային, ո՛չ նրա աղախինին, ո՛չ նրա եզը, ո՛չ նրա էջը, ո՛չ էլ որևէ բան, որ քո դրացունն է:

25 Եվ եղավ այնպես, որ երբ Արինատին վերջ դրեց այս խոսքերին, նա ասաց նրանց. Մովորեցրե՞լ եք արդյոք այս ժողովրդին, որ նրանք հետևեն, որպեսզի կատարեն բոլոր այս բաները, որպեսզի պահեն այս պատվիրանները:

26 Ես ասում եմ ձեզ՝ Ո՛չ. քանզի, եթե դուք անեիք, Տերն ինձ չէր ստիպի առաջ գալ և շարիք մարգարեանալ այս ժողովրդի վերաբերյալ:

27 Եվ այժմ դուք ասացիք, որ փրկությունը գալիս է Մովսեսի ՝օրենքի միջոցով: Ես ասում եմ ձեզ, որ անհրաժեշտ է, որ դուք առայժմ պահեք Մովսեսի օրենքը. բայց ես ասում եմ ձեզ, որ պիտի գա ժամանակը, երբ Քայլես անհրաժեշտ չի լինի պահել Մովսեսի օրենքը:

28 Եվ դեռ ավելին, ես ասում եմ ձեզ, որ ՝փրկությունը չի գալիս միայն Քօրենքով. և եթե չլինեք Քրիստոսի, որն Աստված ինքը պիտի անի՝ իր ժողովրդի մեղքերի և անօրինությունների համար, ապա նրանք պետք է անխուսափելիորեն կորչեն, չնայած Մովսեսի օրենքին:

29 Արդ, ես ասում եմ ձեզ, որ անհրաժեշտ էր, որ լինեք մի օրենք,

16ա սո՛ւ Հանգստության օր: 19ա Ծն. Ա.31: 20ա Մար. Է.10: 21ա Մատ. Ե.21–22, Վևո՛ւ 42.18: սո՛ւ Սպանություն: 22ա սո՛ւ Ծնություն: ք սո՛ւ Գողություն, Գողանալ:

23ա Առակ. ԻԳ.28: սո՛ւ Ստել: 24ա սո՛ւ Ագահ լինել: 27ա սո՛ւ Մովսեսի օրենք: ք 3 Նեփի 9.19–20, 15.4–5: 28ա Գաղ. Բ.16: սո՛ւ Փրկագնել, Փրկագնված,

Փրկագնում. Փրկություն: ք Գաղ. Բ.21, Մոսիա 3.14–15, Ալմա 25.15–16: գ սո՛ւ Քավել, Քավություն:

տրված Իսրայելի զավակներին, այո, նույնիսկ մի շատ ^ախիստ օրենք. քանզի նրանք խստապարանոց ժողովուրդ էին՝ ^բարագ անօրինություն գործելիս և դանդաղ Տիրոջը՝ իրենց Աստծուն հիշելիս.

30 Հետևաբար, ^աօրենք կար նրանց տրված, այո, մի օրենք՝ ծիսակատարությունների և ^բարարողությունների, օրենք, որը նրանք պետք է օրեցօր պահեին խստորեն՝ ^գպահպանելու դրանք ի հիշողություն Աստծո և նրա հանդեպ իրենց պարտականությունների:

31 Քայց ահա, ես ասում եմ ձեզ, որ այս բոլոր բաները գալիք բաների ^ախորհրդանիշներն էին:

32 Եվ արդ, նրանք հասկանում էին օրենքը: Ես ասում եմ ձեզ՝ Ո՛չ, նրանք բոլորն էլ չէին հասկանում օրենքը. և դա՝ նրանց սրտերի կարծրության պատճառով. քանզի նրանք չէին հասկանում, որ որևէ մարդ չի կարող փրկվել, ^ամինչև դա չլինի Աստծո քավության միջոցով:

33 Քանզի ահա, մի՞թե Մովսեսը նրանց չէր մարգարեացել Մեսիայի գալստյան վերաբերյալ, և որ Աստված պետք է փրկագներ իր ժողովրդին: Այո, և նույնիսկ ^աբոլոր մարգարեները, որոնք երբևէ մարգարեացել են, նույնիսկ աշխարհի արարումից ի վեր, մի՞թե նրանք չեն խոսել շատ կամ քիչ այս բաների վերաբերյալ:

34 Մի՞թե նրանք չեն ասել, որ ^աԱստված ինքը պիտի գա ներքև՝

մարդկանց զավակների մեջ, և մարդու կերպարանք վերցնի իր վրա, և առաջ գնա մեծ գործյամք երկրի երեսին:

35 Այո, և մի՞թե նրանք չեն ասել նաև, որ նա պիտի իրագործի մենելների ^ահարությունը, և որ նա ինքը պիտի ճնշվի ու չարչարվի:

ԳԼՈՒԽ 14

Եսայիան խոսում է Մեսիայի պես – Նշվում են Մեսիայի նվաստացումները և տառապանքները – Նա իր հոգին պատարագ է մատուցում մեղքի համար և օրինազանգների համար բարեխոսություն անում – Համեմատեք Եսայիա ԾԳ: Մոտ 148թ. Ք.ծ.ա.:

ԱՅո, իրավ մի՞թե Եսայիան չի ասել. Ո՞վ հավատաց մեր լուրին, և ո՞ւմ հայտնվեց Տիրոջ բազուկը:

2 Քանզի նա պիտի աճի նրա առաջին, ինչպես մի մատղաշ բույս, և ինչպես մի արմատ՝ չոր հողից. նա չունի ո՛չ տեպ, ո՛չ էլ գրավյունություն. և երբ մենք տեսնենք նրան, չի լինի գեղեցկություն, որ մենք հավանենք նրան:

3 Նա մարդկանց կողմից արհամարհված է և մերժված. վշտերի մի մարդ, և ցավերի հետ ծանոթ. և մենք կարծես ծածկեցինք մեր երեսները նրանից, նա արհամարհված էր, և մենք չգնահատեցինք նրան:

4 Հիբրավի, նա ^ակրեց մեր ^բցավերը, և տարավ մեր վշտերը.

29ա Հես. Ա.7–8:
բ Ալմա 46.8:
30ա Ել. Ի:
բ սուր Արարողություններ:
գ Հակոբ 4.5:
31ա Մոսիա 16.14,
Ալմա 25.15:

սուր Խորհրդանշակություն:
32ա 2 Նեփի 25.23–25:
33ա 1 Նեփի 10.5,
Հակոբ 4.4, 7.11:
34ա Մոսիա 7.27, 15.1–3:
սուր Աստված,

Աստվածագլուխ:
35ա Ես. ԻԶ.19,
2 Նեփի 2.8:
14 ա Ալմա 7.11–12:
բ Մատ. Ը.17:

ասկայն մենք համարեցինք նրան պատուհասված, Աստծո կողմից զարկված և չարչարված:

5 Բայց նա խոցուտվեց մեր "օրինազանցությունների համար, խոշտանգվեց մեր անօրինությունների համար. մեր խաղաղության պատիժը նրա վրա էր. և նրա վերքերով ենք մենք բժշկված:

6 Մենք բոլորս "ոչխարների նման մոլորվեցինք. մենք՝ յուրաքանչյուրս դարձանք դեպի մեր սեփական ճանապարհը. և Տերը նրա վրա դրեց մեր բոլորի անօրինությունները:

7 Նա ճնշվեց, և նա չարչարվեց, ասկայն "նա իր բերանը չբացեց. նա, ինչպես մի քառ, մորթվելու է բերվում, և ինչպես մի ոչխար իր խուզողների առաջին է անմռունչ, նույնպես էլ նա չբացեց իր բերանը:

8 Նա վեր առնվեց բանտից և դատաստանից. և ո՞վ կհռչակվի նրա սերունդ: Քանզի նա կտրվեց կենդանեաց երկրից. իմ ժողովրդի օրինազանցությունների համար նա զարկվեց:

9 Եվ նա ամբարիշտների հետ սարքեց իր գերեզմանը, և իր մահը՝ "հարուստների հետ. քանի որ նա բնաբն չէր արել, ոչ էլ որևէ խաբեություն կար նրա բերանում:

10 Բայց Տերը հաճեց խոշտանգել նրան. նրան ցամփ մատնեց. երբ դու նրա հոգին մեղքի համար պատարագ մատուցես, նա կտեսնի

իր "սերունդը, նա պիտի երկարացնի նրա օրերը, և Տիրոջ հաճությամբ պիտի հաջողվի նրա ձեռքով:

11 Նա պիտի տեսնի իր հոգու երկունքը և պիտի գոհ լինի. իր գիտությամբ իմ արդար ծառան պիտի արդարացնի շատերին. քանզի նա պիտի "կրի նրանց անօրինությունները:

12 Ուստի, ես նրան բաժին եմ տալու մեծերի հետ, և նա հզորների հետ կբաժանի ավարը. քանի որ նա դուրս թափեց իր հոգին՝ ի մահ. և նա համարվեց օրինազանցների հետ. և նա շատերի մեղքերը կրեց, և օրինազանցների համար "բարեխոսություն արեց:

ԳԼՈՒԽ 15

Ինչպես է Քրիստոսը և՛ Հայրը, և՛ Որդին – Նա բարեխոսություն կանի և կկրի իր ժողովրդի օրինազանցությունները – Նրանք և բոլոր սուրբ մարգարեները նրա սերունդն են – Նա է իրագործում Հարությունը – Փոքր երեխաներն ունեն հավերժական կյանք: Մոտ 148թ. Ք.ծ.ա.:

Ես Աբիմադիմ ասաց նրանց. Ես կուզենայի, որ դուք հասկանայիք, որ "Աստված ինքը պիտի գա ներքև՝ մարդկանց զավակների մեջ և պիտի բիրկազնի իր ժողովրդին:

2 Եվ քանի որ նա "բնակվում է

5ա Մոսիա 15.9,
Ալմա 11.40:
բ Ա Պետ. Բ.24–25:
6ա Մատ. Թ.36,
2 Նեփի 28.14,
Ալմա 5.37:
7ա Մար. ԺԵ.3:
սո՛ւ Հիսուս Քրիստոս:
բ սո՛ւ Աստծո Գառը,
Չատիկ:

9ա Մատ. ԻԷ.57–60,
Մար. ԺԵ.27, 43–46:
սո՛ւ Հովսեփ
Արիմաթիացի:
բ Հովհ. ԺԹ.4:
10ա Մոսիա 15.10–13:
11ա Ղև. ԺԶ.21–22,
Ա Պետ. Գ.18,
Վևո՛ւ 19.16–19:
12ա 2 Նեփի 2.9,

Մոսիա 15.8,
Մոր. 7.27–28:
15 1ա Ա Տիմ. Գ.16,
Մոսիա 13.33–34:
սո՛ւ Հիսուս Քրիստոս:
բ սո՛ւ Փրկագնել,
Փրկագնված,
Փրկագնում:
2ա Մոսիա 3.5, 7.27,
Ալմա 7.9–13:

մարմնում, նա կկոչվի Աստծո Որդի, և մարմինը ենթարկած լինելով ^բՀոր կամքին՝ լինելով Հայր և Որդին,

3 Հայրը, ^աորովհետև նա ^բողիացվել էր Աստծո զորությամբ. և Որդին՝ մարմնի պատճառով, այսպիսով դառնալով Հայրը և Որդի,

4 Եվ նրանք ^ամեկ Աստված են, այո, երկնքի և երկրի ճշմարիտ ^բՀավերժական ^գՀայրը:

5 Եվ այսպիսով, մարմինը ենթակա դառնալով Հոգուն, կամ Որդին՝ Հորը, լինելով մեկ Աստված, տանում է փորձություն, և անձնատուր չի լինում ^ափորձությանը, այլ հանդուրժում է ծաղրվելու և ^բխարազանվելու և դուրս գցվելու և իր ժողովրդի կողմից ^գչճանաչվելու:

6 Եվ այս բոլորից հետո մարդկանց զավակների մեջ բազմաթիվ զորեղ հրաշքներ գործելուց հետո, նա պիտի տարվի, այո, ճիշտ ^աինչպես Եսայիան է ասել՝ ինչպես մի ոչխար խուզողի առաջին է անմուննչ, այնպես էլ նա ^բչբացեց իր բերանը:

7 Այո, և նույն ձևով նա պիտի տարվի, ^ախաչվի, և սպանվի՝ մարմինը ենթարկելով մինչև իսկ մահվան, Որդու ^բկամքը կուլ գնացած լինելով Հոր կամքին:

8 Եվ այսպես Աստված ջարդում

է մահվան ^ակապանքները՝ ^բհաղթանակ տանելով մահվան դեմ. Որդուն զորություն տալով՝ ^գբարեխոսելու մարդկանց զավակների համար,

9 Համբարձված լինելով երկինք, ունենալով զբարտություն. լցված լինելով կարեկցանքով մարդկանց զավակների հանդեպ. կանգնելով նրանց և արդարադատության միջև. ջարդած լինելով մահվան կապանքները, ^աիր վրա վերցրած լինելով նրանց անօրինությունը և նրանց օրինազանցությունները, փրկագնած լինելով նրանց և ^բբավարարած լինելով արդարադատության պահանջները:

10 Եվ այժմ ես ասում եմ ձեզ, ո՞վ կհռչակվի նրա սերունդ: Ահա, ես ասում եմ ձեզ, որ երբ նրա հոգին մեղքի համար պատարագ մատուցվի, նա պիտի տեսնի իր ^ասերունդը: Եվ այժմ, ի՞նչ կասեք դուք: Եվ ո՞վ պիտի լինի նրա սերունդը:

11 Ահա, ես ասում եմ ձեզ, ովքեր որ լսել են ^ամարգարեների խոսքերը, այո, բոլոր սուրբ մարգարեների, ովքեր մարգարեացել են Տիրոջ գալստի վերաբերյալ, ես ասում եմ ձեզ, որ բոլոր նրանք, ովքեր ականջ են դրել նրանց խոսքերին, և հավատացել, որ Տերը

2բ Ես. ԿԳ.8, Հովհ. Ժ.30, ԺԳ.8–10, Մոսիա 5.7, Ալմա 11.38–39, Եբեր 3.14:
3ա ՎևոՒ 93.4:
բ Դուկ. Ա.31–33, Մոսիա 3.8–9, Ալմա 7.10, 3 Նեփի 1.14:
4ա Բ Օր. 2.4, Հովհ. ԺԷ.20–23: սո՛ւ Աստված, Աստվածագլուխ:
բ Ալմա 11.39:
գ Մոսիա 3.8, Հել. 14.12,

3 Նեփի 9.15, Եբեր 4.7:
5ա Դուկ. Դ.2, Եբր. Դ.14–15:
բ Հովհ. ԺԹ.1:
գ Մար. Ը.31, Դուկ. ԺԷ.25:
6ա Ես. ԾԳ.7:
բ Դուկ. ԻԳ.9, Հովհ. ԺԹ.9, Մոսիա 14.7:
7ա սո՛ւ Խաչելություն:
բ Դուկ. ԻԲ.42, Հովհ. 2.38,

3 Նեփի 11.11:
8ա Մոսիա 16.7, Ալմա 22.14:
բ Ովսե ԺԳ.14, Ա Կոր. ԺԵ.55–57:
գ 2 Նեփի 2.9:
9ա Ես. ԾԳ, Մոսիա 14.5–12:
բ սո՛ւ Քավել, Քավություն:
10ա Ես. ԾԳ.10, Մոսիա 5.7, 27.25, Մոր. 7.19:
11ա ՎևոՒ 84.36–38:

փրկագնելու էր իր ժողովրդին, և իրենց մեղքերի թողության համար սպասել են այդ օրվան, ես ասում եմ ձեզ, որ սրանք են նրա սերունդը, կամ նրանք են Աստծո՝ Բարքայության ժառանգները:

12 Քանզի այդ նրանք են, որոնց մեղքերը ^անա կրեց. այդ նրանք են, որոնց համար նա մեռավ՝ փրկագնելու նրանց իրենց օրինազանցություններից: Եվ այժմ, մի՞թե նրանք նրա սերունդը չեն:

13 Այո, և մի՞թե մարգարեները չեն՝ ամեն մեկը, որ բացել է իր բերանը՝ մարգարեանալու, որ չի ընկել օրինազանցության մեջ, ես ի նկատի ունեմ բոլոր սուրբ մարգարեներին՝ այն ժամանակից ի վեր, երբ աշխարհը եղավ: Ես ասում եմ ձեզ, որ նրանք են նրա սերունդը:

14 Եվ այդ նրանք են, ովքեր ^ահրատարակել են խաղաղություն, ովքեր բերել են բարի ավետիք, ովքեր հրատարակել են փրկություն. և ասել են Սիոնին՝ Քո Աստվածն է թագավորում:

15 Եվ, Օ՛հ, որքան գեղեցիկ էին սարերի վրա նրանց ոտքերը:

16 Եվ դարձյալ, որքան գեղեցիկ են սարերի վրա ոտքերը նրանց, որոնք դեռ հրատարակում են խաղաղություն:

17 Եվ դարձյալ, որքան գեղեցիկ են սարերի վրա ոտքերը նրանց, ովքեր ապագայում պիտի հրատարակեն խաղաղություն, այո, այս ժամանակից՝ այսուհետև և հավիտյան:

18 Եվ ահա, ես ասում եմ ձեզ, սա բոլորը չէ: Քանզի որքան գեղեցիկ են սարերի վրա ^աոտքերը նրա, որ բերում է ավետիք, որը հիմնադիրն է ^ախաղաղության, այո, այսինքն՝ Տերը, որը փրկագրեց է իր ժողովրդին. այո, նրա, որն իր ժողովրդին փրկություն է շնորհել:

19 Քանզի, եթե չլինեք փրկագնումը, որը նա արել է իր ժողովրդի համար, որը պատրաստված էր աշխարհի ^ահիմնադրումից ի վեր, ես ասում եմ ձեզ, եթե չլինեք այս, ողջ մարդկությունը պիտի ^ակորչեր:

20 Բայց ահա մահվան կապանքները պիտի ջարդվեն, և Որդին թագավորում է և մեռելների վրա զորություն ունի. հետևաբար, նա իրագործում է հարությունը մեռելներին:

21 Եվ գալիս է մի հարություն, այսինքն՝ մի ^առաջին հարություն. այո, այսինքն՝ հարությունը նրանց, ովքեր եղել են, ովքեր կան և ովքեր կլինեն, նույնիսկ մինչև հարությունը Քրիստոսի, քանզի այսպես պիտի նա կոչվի:

22 Եվ արդ, հարությունը բոլոր մարգարեների և բոլոր նրանց, ովքեր հավատացել են նրանց խոսքերին, կամ բոլոր նրանք, ովքեր պահել են Աստծո պատվիրանները, պիտի դուրս գան առաջին հարության ժամանակ. հետևաբար, նրանք առաջին հարությունն են:

23 Նրանք բարձրացվել են՝ ^աապրելու Աստծո հետ, որը

11բ սուր Աստծո արքայություն կամ Երկնքի արքայություն. Փրկություն:
 12ա Մոսիա 14.12, Ալմա 7.13, 11.40-41:
 14ա Ես. ԾԲ.7, Հովվ. Ժ.15,

1 Նեփի 13.37, Մոսիա 12.21-24: սուր Միսիոներական աշխատանք:
 18ա 3 Նեփի 20.40, ՎևոՒ 128.19:
 բ Հովհ. Ժ2.33:
 սուր Խաղաղություն:

19ա Մոսիա 4.6:
 բ 2 Նեփի 9.6-13:
 21ա Ալմա 40.16-21:
 23ա Սաղ. ԻԳ.3-4,
 1 Նեփի 15.33-36,
 ՎևոՒ 76.50-70:

փրկագնել է նրանց. այսպիսով, նրանք ունեն հավերժական կյանք Քրիստոսի միջոցով, որը ^բջարդել է մահվան կապանքները:

24 Եվ այդ նրանք են, ովքեր բաժին ունեն առաջին հարության մեջ. և այդ նրանք են, ովքեր մահացել են մինչև Քրիստոսի գալը, իրենց անգիտության մեջ, ^ափրկությունը հայտարարված չլինելով իրենց: Եվ այսպես է Տերն իրականացնում նրանց վերականգնումը. և նրանք բաժին ունեն առաջին հարության մեջ, կամ հավերժական կյանք ունեն՝ փրկագնված լինելով Տիրոջ կողմից:

25 Եվ փոքր ^աերեխաները նույնպես ունեն հավերժական կյանք:

26 Բայց տեսե՛ք, և ^ավախեցե՛ք, և դողացե՛ք Աստծո առաջ, քանզի դուք պարտավոր եք դողալ. քանզի Տերը փրկագնում է ո՛չ թե այնպիսիներին, ովքեր ^աապստամբում են նրա դեմ և ^ամահանում իրենց մեղքերի մեջ. այո, այսինքն՝ բոլոր նրանք, ովքեր մեռել են իրենց մեղքերի մեջ աշխարհի սկզբից ի վեր, որոնք հոժարական ապստամբեցին Աստծո դեմ, որոնք իմացել են Աստծո պատվիրանները և չեն կամեցել պահել դրանք. ^աայդ նրանք են, որ բաժին ^աչունեն առաջին հարության մեջ:

27 Հետևաբար, մի՞ ^թե դուք պարտավոր չեք դողալ: Քանզի ոչ մի այդպիսիին փրկություն չի գալիս. քանզի Տերը ոչ մի այդպիսիին չի փրկագնել. այո, ոչ էլ կարող է Տերը փրկագնել այդպիսիին. քանզի նա չի կարող հակասել

ինքն իրեն. քանզի նա չի կարող մերժել ^աարդարադատությունը, երբ այն իր հայրը ներկայացնի:

28 Եվ այժմ, ես ասում եմ ձեզ, որ ժամանակը պիտի գա, որ Տիրոջ փրկությունը պիտի ^ահայտարարվի ամեն ազգի, ցեղի, լեզվի և ժողովրդի:

29 Այո՛, Տե՛ր, քո ^ապահապանները պիտի բարձրացնեն իրենց ձայնը. միասնական ձայնով պիտի նրանք երգեն. քանզի նրանք դեմ հանդիման կտեսնեն, երբ Տերը կրկին կբերի Սիոնը:

30 Պոռթկացեք ուրախությամբ, երգեք միասին, դո՛ւք Երուսաղեմի ամայացած վայրեր. քանզի Տերը մխիթարել է իր ժողովրդին, նա փրկագնել է Երուսաղեմը:

31 Տերը բոլոր ազգերի աչքերի առաջ մերկացրել է իր սուրբ բազուկը. և աշխարհի բոլոր ծայրերը պիտի տեսնեն մեր Աստծո փրկությունը:

ԳԼՈՒԽ 16

Աստված փրկագնում է մարդկանց իրենց կորած և ընկած վիճակից – Նրանք, ովքեր մարմնական են, մնում են այնպես, կարծես ոչ մի փրկագնում չէր եղել – Քրիստոսն իրագործում է մի հարությունը դեպի անվերջ կյանք կամ դեպի անվերջ նզովք: Մոտ 148թ. Ք.ծ.ա.:

Եվ այժմ եղավ այնպես, որ հետո, երբ Աբիմադին խոսեց այս խոսքերը, նա առաջ մեկնեց իր ձեռքը և ասաց. Ժամանակը պիտի գա,

23բ սուր Մահ ֆիզիկական:
24ա2 Նեփի 9.25–26, ՎևոՒ 137.7:
25ա ՎևոՒ 29.46, 137.10:
սուր Փրկություն – Երեխաների

փրկությունը:
26աԲ Օր. Ե.29, Հակոբ 6.9:
բ 1 Նեփի 2.21–24:
գ Եգեկ. ԺԸ.26,
1 Նեփի 15.32–33,
Մոր. 10.26:

դ Ալմա 40.19:
ե ՎևոՒ 76.81–86:
27ա Ալմա 34.15–16, 42.1:
28ա սուր Միսիոներական աշխատանք:
29ա սուր Արթուն լինել:

երբ բոլորը պիտի տեսնեն Տիրոջ «փրկությունը. երբ ամեն ազգ, ցեղ, լեզու և ժողովուրդ պիտի դեն հանդիման տեսնի և պիտի ՚խոստովանի Աստծո առաջ, որ նրա դատաստաններն արդար են:

2 Եվ այն ժամանակ ամբարիշտները պիտի դուրս «գցվեն, և նրանք պատճառ կունենան ոռնայու և ՚ողբալու և կաղկանձելու և կրճտացնելու իրենց ատամները. և դա՛ այն պատճառով, որ նրանք չկամեցան ականջ դնել Տիրոջ ձայնին. հետևաբար, Տերը նրանց չի փրկագնում:

3 Քանզի նրանք «մարմնական են ու դիվային, և ՚դևն իշխանություն ունի նրանց վրա. այո, հենց այն հին օձը, որը ՚խաբեց մեր առաջին ճնողներին, որը նրանց ՚անկման պատճառն էր. որը բոլոր մարդկության մարմնական, զգայական, դիվական դառնալու, չարը բարուց «տարբերելու, դևին հպատակվելու պատճառն էր:

4 Այսպիսով, ողջ մարդկությունը «կորած էր, և ահա, նրանք անդառնալիորեն կորած կլինեին, եթե Աստված չփրկագներ իր ժողովրդին նրանց կորած և ընկած վիճակից:

5 Բայց հիշե՛ք, որ նա, ով համառում է իր սեփական «մարմնական էությանը և շարունակում մեղքի և

ապստամբության ճանապարհներով՝ ընդդեմ Աստծո, մնում է իր ընկած վիճակում, և դևը նրա վրա լիակատար իշխանություն ունի: Հետևաբար, նա մի վիճակում է, կարծես ոչ մի ՚փրկագնում չէր արվել՝ թշնամի լինելով Աստծուն. և դևը նույնպես թշնամի է Աստծուն:

6 Եվ ահա, եթե Քրիստոսը եկած չլիներ աշխարհ, խոսելով գալիք բաների մասին, «կարծես դրանք արդեն եկել են, չէր կարող լինել փրկագնում:

7 Եվ եթե Քրիստոսը բարձրացած չլիներ մեռելներից կամ ջարդած չլիներ մահվան կապանքները, որպեսզի գերեզմանը չունենար հաղթանակ, և որպեսզի մահը չունենար «խայթ, չէր կարող լինել հարություն:

8 Բայց կա «հարություն, հետևաբար գերեզմանը հաղթանակ չունի, և ՚մահվան խայթը կուլ է զնացել Քրիստոսում:

9 Նա է «լույսն ու կյանքն աշխարհի. այո, լույս, որն անվերջ է, որը երբեք չի կարող խավարեցվել. այո, և նա և կյանք, որն անվերջ է, այնպես որ այլևս չի կարող լինել մահ:

10 Նույնիսկ այս մահկանացուն պիտի հագնի «անմահություն, և այս ապականությունը պիտի հագնի անապականություն և պիտի

16 1ա սուր Փրկություն:
բ Մոսիա 27.31:
2ա ՎևոՒ 63.53-54:
բ Մառ. ԺԳ.41-42,
Դուկ. ԺԳ.28,
Ալմա 40.13:
3ա Գաղ. Ե.16-25,
Մոսիա 3.19:
սուր Բնական մարդ:
բ 2 Նեփի 9.8-9:
սուր Դև:
գ Ծն. Գ.1-13,
Մովսես 4.5-19:

դ սուր Ադամի և Եվայի
անկումը:
ե 2 Նեփի 2.17-18,
22-26:
4ա Ալմա 42.6-14:
5ա Ալմա 41.11:
սուր Մարմնական:
բ սուր Փրկագնել,
Փրկագնված,
Փրկագնում:
6ա Մոսիա 3.13:
7ա Ովսե ԺԳ.14,
Մոսիա 15.8, 20:

8ա Ալմա 42.15:
սուր Հարություն:
բ Ես. ԻԵ.8,
Ա Կոր. ԺԵ.54-55,
Մորմ. 7.5:
9ա ՎևոՒ 88.5-13:
սուր Լույս, Քրիստոսի
լույս:
10ա Ալմա 40.2:
սուր Անմահ,
Անմահություն:

բերվի՝ Բկանգնելու Աստծո դատարանի առջև, որ Գդատվի նրա կողմից, համաձայն իր գործերի՝ լինեն դրանք բարի, թե լինեն դրանք չար,

11 Եթե դրանք լինեն բարի՝ դեպի հարությունն անվերջ կյանքի և երջանկության. և եթե դրանք լինեն չար՝ դեպի հարությունն Բանվերջ նգովքի, հանձնված լինելով դևին, որը հպատակեցրել է նրանց, որը նգովք է,–

12 Գնացած լինելով ըստ իրենց սեփական մարմնական կամքի և ցանկությունների. երբեք կանչած չլինելով առ Տերը, քանի դեռ ողորմության բազուկները մեկնված էին դեպի իրենց. քանզի Խողորմության բազուկները մեկնված էին դեպի իրենց, իսկ նրանք չկամեցան. նրանց նախազուշացվել էր իրենց անօրինությունների մասին, և սակայն, նրանք չկամեցան ետ կանգնել դրանցից. և նրանց պատվիրվել էր ապաշխարել, և սակայն, նրանք չկամեցան ապաշխարել:

13 Եվ այժմ մի՞թե դուք պարտավոր չեք դողալ և ապաշխարել ձեր մեղքերից և հիշել, որ Քրիստոսի մեջ և միջոցով դուք կարող եք փրկվել:

14 Հետևաբար, եթե դուք սովորեցնում եք Մովսեսի Խօրենքը, սովորեցրեք նաև, որ այն մի նմուշ է այն բաների, որոնք պետք է գան,

15 Մովորեցրեք նրանց, որ փրկագնումը գալիս է Տեր Քրիստոսի միջոցով, որը հենց ԽՀավերժական Հայրն է: Ամեն:

ԳԼՈՒԽ 17

Ալման հավատում և գրում է Արինադիի խոսքերը – Արինադիին կրակով մահվան է ենթարկվում – Նա հիվանդություն և կրակով մահ է մարգարեանում իրեն սպանողներին: Մոտ 148թ. Ք.ծ.ա.:

Ես եղավ այնպես, որ երբ Արինադիին վերջացրեց այս խոսքերը, թագավորը հրամայեց, որ քահանաները տանեն նրան և կարգադրեն, որ նրան մահվան դատապարտեն:

2 Բայց նրանց մեջ կար մեկը, որի անունն ԽԱլմա էր, նա ևս լինելով Նեփիի մի հետնորդ: Եվ նա մի երիտասարդ տղամարդ էր, և նա Խհավատաց խոսքերին, որոնք Արինադին խոսեց, քանի որ նա զիտեր այն անօրինության մասին, որն Արինադին վկայեց նրանց դեմ. հետևաբար, նա սկսեց աղերսել թագավորին, որ նա չբարկանա Արինադիի վրա, այլ թույլ տա, որ նա հեռանա խաղաղությամբ:

3 Բայց թագավորն ավելի գայրացավ և կարգադրեց, որ Ալման դուրս գցվեր իրենց միջից, և իր ծառաներին ուղարկեց նրա ետևից, որ նրանք սպանեն նրան:

4 Բայց նա փախավ նրանց մոտից և թաքնվեց այնպես, որ նրանք չգտան նրան: Եվ նա, շատ օրերի ընթացքում թաքնված լինելով, Խգրեց բոլոր խոսքերը, որոնք Արինադին խոսել էր:

<p>10թ սո՛ւ Վերջին դատաստան: q Ալմա 41.3–6: 11ա սո՛ւ Հավերժական կյանք: p սո՛ւ Նգովք:</p>	<p>12ա սո՛ւ Ողորմած, Ողորմություն: 14ա սո՛ւ Մովսեսի օրենք: 15ա Մոսիա 3.8, 5.7, Եթեր 3.14: 17 1ա Մոսիա 11.1, 5–6:</p>	<p>2ա Մոսիա 23.6, 9–10: սո՛ւ Ալմա ավագր: p Մոսիա 26.15: 4ա սո՛ւ Սուրբ գրքեր:</p>
--	--	--

5 Եվ եղավ այնպես, որ թագավորը կարգադրեց, որ իր պահակախումբը շրջապատի Արիմադիին և բռնի նրան. և նրանք կապեցին նրան և նետեցին նրան բանո:

6 Եվ երեք օր անց, խորհուրդ անելով իր քահանաների հետ, նա կարգադրեց, որ նա նորից բերվի իր առաջ:

7 Եվ նա ասաց նրան. Արիմադի՛, մենք մի մեղադրանք ենք գտել քո դեմ, և դու արժանի ես մահվան:

8 Քանզի դու ասել ես, որ «Աստված ինքը պիտի գա ներքև՝ մարդկանց զավակների մեջ. և այժմ, այս պատճառով դու պիտի մահվան դատապարտվես, եթե ետ չվերցնես բոլոր խոսքերը, որոնք դու խոսել ես չարիք՝ իմ և իմ ժողովրդի համար:

9 Եվ Արիմադիին ասաց նրան. Ես ասում եմ ձե՛զ, ես ետ չեմ վերցնի խոսքերը, որոնք ես ասել եմ ձեզ այս ժողովրդի վերաբերյալ, քանզի դրանք ճշմարիտ են. և որպեսզի դուք իմանաք դրանց հավաստիության մասին, ես հանդուրժել եմ, որ ընկնեմ ձեր ձեռքը:

10 Այո՛, և ես կտանեմ մինչև իսկ մահ, և ես ետ չեմ վերցնի իմ խոսքերը. և դրանք պիտի կանգնեն որպես վկայություն ձեր դեմ: Եվ եթե դուք սպանեք ինձ, դուք «անմեղ արյուն կթափեք, վերջին օրը սա նույնպես պիտի կանգնի որպես մի վկայություն ձեր դեմ:

11 Եվ այժմ, թագավոր Նոյը քիչ էր մնում բաց թողնել նրան, քանի որ նա վախեցավ նրա խոսքերից. որովհետև նա վախեցնում էր, որ Աստծո դատաստանները կգային իր վրա:

12 Բայց քահանաները բարձրացրեցին իրենց ձայները նրա դեմ և սկսեցին մեղադրել նրան՝ ասելով. Նա անարգեց թագավորին: Հետևաբար, թագավորը բարկության դրդվեց նրա դեմ, և նա հանձնեց նրան, որ սպանեն:

13 Եվ եղավ այնպես, որ նրանք վերցրեցին նրան և կապեցին և խարազանեցին նրա մաշկը ցախի կապուկով, այո, նույնիսկ ի մահ:

14 Եվ ահա, երբ բոցերը սկսեցին այրել նրան, նա աղաղակեց նրանց՝ ասելով.

15 Տեսե՛ք, ճիշտ ինչպես դուք վարվեցիք ինձ հետ, այնպես էլ պիտի լինի, որ ձեր սերունդը պատճառ կդառնա, որ շատերը տանեն այն ցավերը, որոնք ես եմ տանում, նույնիսկ ցավերը կրակով՝ «մահվան. և դա՛ այն պատճառով, որ նրանք հավատում են Տիրոջ՝ իրենց Աստծո փրկությանը:

16 Եվ կլինի այնպես, որ դուք ձեր անօրինությունների պատճառով պիտի չարչարվեք ամեն ձևի հիվանդություններով:

17 Այո, և դուք պիտի «գարկվեք ամեն կողմից, և պիտի թշվեք ու ցրվեք այս ու այն կողմ, ճիշտ ինչպես մի վայրի հոտ է թշվում վայրի ու կատաղի զագաններից:

18 Եվ այդ օրը դուք պիտի հետապնդվեք, և դուք պիտի բռնվեք ձեր թշնամիների ձեռքով, և այն ժամանակ, դուք պիտի տանեք կրակով՝ «մահվան ցավերը, ինչպես ես եմ տանում:

19 Այսպես է Աստված «վրեժ-խընդիր լինում նրանց, ովքեր կործանում են իր ժողովրդին: Ո՛վ Աստված, ընդունիր իմ հոգին:

8աՄոսիա 13.25, 33-34:
10աԱլմա 60.13:
15աՄոսիա 13.9-10,

Ալմա 25.4-12:
17աՄոսիա 21.1-5, 13:
18աՄոսիա 19.18-20:

19ա սու֊ Վրեժխնդություն:

20 Եվ այժմ, երբ Աբինադիմ ասաց այս խոսքերը, նա ընկավ, տանելով մահ կրակով. այո, դատապարտված լինելով մահվան, քանի որ նա չկամեցավ ուրանալ Աստծո պատվիրանները՝ կնքելով իր խոսքերի ճշմարտացիությունն իր մահով:

ԳԼՈՒԽ 18

Ալման քարոզում է գաղտնի – Նա քացատրում է մկրտության ուխտը և մկրտում է Մորմոնի ջրերում – Նա կազմակերպում է Քրիստոսի Եկեղեցին և ձեռնադրում քահանաներ – Նրանք պահում են իրենց և սովորեցնում են ժողովրդին – Ալման և իր ժողովուրդը Թագավոր Նոյից փախչում են դեպի անապատ: Մոտ 147–145թթ. Զ.ծ.ա.:

Եվ արդ եղավ այնպես, որ Ալման, որը փախել էր թագավոր Նոյի ծառաներից, ^ապաշխարեց իր մեղքերից ու անօրինություններից, և գաղտնի շրջեց ժողովրդի մեջ, և սկսեց սովորեցնել Աբինադիի խոսքերը, –

2 Այո, այն բանի վերաբերյալ, ինչ պիտի գար, և նաև մեռելների հարության և մարդկանց ^ափրկագրման վերաբերյալ, որը պետք է իրականացվեր Քրիստոսի ^բգործության և տառապանքների և մահվան, և նրա հարության և դեպի երկինք համբարձման միջոցով:

3 Եվ նա սովորեցնում էր բոլոր նրանց, ովքեր կամենում էին լսել նրա խոսքը: Եվ նա սովորեցնում էր նրանց գաղտնի, որ այն չհաս-

ներ թագավորի իմացությանը: Եվ շատերը հավատացին նրա խոսքերին:

4 Եվ եղավ այնպես, որ բոլոր նրանք, ովքեր հավատացին նրան, գնացին հեռու՝ դեպի մի ^ավայր, որը կոչվում էր Մորմոն, ստանալով այդ անունը թագավորից, լինելով երկրի ծայրամասում, լցվելով ժամանակ առ ժամանակ, կամ մերթ ընդ մերթ վայրի գազաններով:

5 Եվ Մորմոնում կար մաքուր ջրի մի աղբյուր, և Ալման գնաց այնտեղ՝ ջրին մոտիկ, այնտեղ կար փոքր ծառերի մի ծմակ, որտեղ նա ցերեկով թաքնվում էր թագավորի որոնումներից:

6 Եվ եղավ այնպես, որ բոլոր նրանք, ովքեր հավատացին նրան, գնացին այնտեղ լսելու նրա խոսքը:

7 Եվ եղավ այնպես, որ շատ օրեր հետո, մի զգալի մեծ խումբ ի մի հավաքվեց Մորմոն վայրում՝ լսելու Ալմայի խոսքերը: Այո, բոլորը, ովքեր հավատացել էին նրա խոսքին, ի մի էին հավաքվել՝ լսելու նրան: Եվ նա ^ասովորեցրեց նրանց և քարոզեց ապաշխարություն և փրկագնում և հավատք առ Տերը:

8 Եվ եղավ այնպես, որ նա ասաց նրանց. Նայե՛ք, ահա Մորմոնի ջրերը, (քանզի այդպես էին նրանք կոչվում) և արդ, քանի որ դուք ^ափափագում եք գալ Աստծո ^բհոտը և կոչվել նրա ժողովուրդը, և ^գհոժար եք կրելու մեկդ մյուսի բեռը, որ դրանք թեթև լինեն,

9 Այո, և հոժար եք սգալու նրանց հետ, ովքեր սգում են. այո, և մխի-

18 1ա Մոսիա 23.9–10:
2ա սուտ Փրկագնել,
Փրկագնված,
Փրկագնում:

բ սուտ Զավել,
Զավություն:
4ա Ալմա 5.3:
7ա Ալմա 5.11–13:

8ա Վևու 20.37:
բ սուտ Հիսուս Քրիստոսի
Եկեղեցի:
գ սուտ Կարեկցանք:

քարել նրանց, ովքեր կարիք ունեն մխիթարության, և կանգնելու որպես Աստծո ՝ վկաներ բոլոր ժամանակներում, և բոլոր բաներում, և բոլոր տեղերում, որ դուք կարող է լինեք, նույնիսկ մինչև մահ, որպեսզի դուք կարողանաք փրկագնվել Աստծո կողմից և համարվեք նրանց հետ, ովքեր պատկանում են Բառաջին հարությանը, որպեսզի դուք կարողանաք Գիսկերթական կյանք ունենալ, –

10 Արդ, ես ասում եմ ձեզ, եթե սա է ձեր սրտի իղձը, ի՞նչ ունեք դուք դեմ Տիրոջ անունով ՝ մկրտվելուն՝ որպես մի վկայություն նրա առաջ, որ դուք մտել եք նրա հետ Բուխտի մեջ, որ կծառայեք նրան և կպահեք նրա պատվիրանները, որպեսզի նա իր Հոգին ավելի առատորեն դուրս թափի ձեր վրա:

11 Եվ այժմ, երբ ժողովուրդը լսեց այս խոսքերը, նրանք ուրախությունից ծափ տվեցին, և բացականչեցին. Այս է մեր սրտի իղձը:

12 Եվ արդ եղավ այնպես, որ Ալման վերցրեց Էլամին՝ նա լինելով առաջիններից մեկը, և գնաց ու կանգնեց ջրի մեջ և կանչեց՝ ասելով. Ո՛վ Տեր, դուրս թափիր քո Հոգին ծառայիդ վրա, որ նա կարողանա սրտի սրբությամբ անել այս գործը:

13 Եվ երբ նա ասաց այս խոսքերը, Տիրոջ ՝ Հոգին նրա վրա էր, և նա ասաց. Էլամ, Բիշխանություն

ունենալով Ամենագոր Աստծուց, ես Գմկրտում եմ քեզ՝ որպես վկայություն, որ դու մտել ես ուխտի մեջ՝ ծառայելու նրան, մինչև մեռնելը, ինչ վերաբերում է մահկանացու մարմնին. և թող Տիրոջ Հոգին դուրս թափվի քեզ վրա. և թող նա Քրիստոսի Դիակագնման միջոցով քեզ հավերժական կյանք շնորհի, ում նա պատրաստել է աշխարհի Կիմնադրումից ի վեր:

14 Եվ հետո, երբ Ալման այս խոսքերն ասաց, երկուսն էլ Ալման ու Էլամը ՝ թաղվեցին ջրի մեջ. և նրանք բարձրացան և առաջ եկան ջրից դուրս՝ ցնծալով, լցված լինելով Հոգով:

15 Եվ դարձյալ, Ալման վերցրեց մեկ ուրիշին և հեռու գնաց՝ ջրի մեջ երկրորդ անգամ, և մկրտեց նրան առաջինի պես, միայն, նա ինքը նորից չթաղվեց ջրի մեջ:

16 Եվ այս ձևով նա մկրտեց յուրաքանչյուրին, որ եկել էր հեռու՝ դեպի Մորմոնի վայրը. և նրանք թվով մոտավորապես երկու հարյուր և չորս հոգի էին. այո, և նրանք ՝ մկրտվեցին Մորմոնի ջրերում, և լցվեցին Աստծո Բնորհով:

17 Եվ նրանք կոչվեցին Աստծո եկեղեցի, կամ Քրիստոսի ՝ եկեղեցի, այդ ժամանակից ի վեր: Եվ եղավ այնպես, որ ով որ մկրտված էր Աստծո գործյամբ և իշխանությամբ, միացավ նրա եկեղեցուն:

18 Եվ եղավ այնպես, որ Ալման,

<p>9ա սոս Միսիոներական աշխատանք. Վկայել. Վկա: բ Մոսիա 15.21–26: գ սոս Հավերժական կյանք: 10ա2 Նեփի 31.17: սոս Մկրտություն, Մկրտել:</p>	<p>բ սոս Ուխտ: 13ա սոս Սուրբ Հոգի: բ ՀՀ 1.5: սոս Քահանայություն: գ 3 Նեփի 11.23–26, ՎևՈՒ 20.72–74: դ սոս Փրկագնել, Փրկագնված, Փրկագնում:</p>	<p>ե Մովսես 4.2, 5.9: 14ա սոս Մկրտություն, Մկրտել – Ընկղմման մկրտություն: 16ա Մոսիա 25.18: բ սոս Ծնորի: 17ա3 Նեփի 26.21, 27.3–8: սոս Հիսուս Քրիստոսի եկեղեցի:</p>
---	--	---

«իշխանություն ունենալով Աստծուց, կարգեց քահանաներ. այսինքն՝ թվաքանակով, յուրաքանչյուր հիսուսին մեկ քահանա կարգեց՝ քարոզելու նրանց և Բսովորեցնելու Աստծո առքայության հետ կապված բաների վերաբերյալ:

19 Եվ նա պատվիրեց նրանց, որ նրանք չսովորեցնեին ոչինչ, բացի այն բաներից, որոնք ինքն էր սովորեցրել, և որոնք խոսվել էին սուրբ մարգարեների բերանով:

20 Այո՛, այսինքն՝ նա պատվիրեց նրանց, որ նրանք՝ չքարոզեն ոչինչ, բացի ապաշխարությունից և հավատքից առ Տերը, որը փրկագնել էր իր ժողովրդին:

21 Եվ նա պատվիրեց նրանց, որ չպետք է լինի ոչ մի՝ «հակառակություն մեկը մյուսի հետ, այլ որ նրանք պետք է նայեն դեպի ապագան՝ մեկ աչքով, ունենալով մեկ հավատք և մեկ մկրտություն, միավորելով իրենց սրտերը՝ միությանմբ ու սիրով մեկը մյուսի հանդեպ:

22 Եվ այսպես նա պատվիրեց նրանց քարոզել: Եվ այսպես նրանք դարձան Աստծո՝ զավակները:

23 Եվ նա պատվիրեց նրանց, որ նրանք հարգեն՝ «հանգստության օրը և սուրբ պահեն այն, և նաև ամեն օր նրանք պիտի գոհություն հայտնեն Տիրոջը՝ իրենց Աստծուն:

24 Եվ նա նաև հրամայեց նրանց, որ քահանաները, որոնց

նա կարգել էր, պիտի՝ «աշխատեն իրենց սեփական ձեռքերով՝ իրենց պահելու համար:

25 Եվ ամեն շաբաթվա մեջ կար մեկ օր, որը նշանակված էր, որ նրանք ժողովվեն միասին՝ սովորեցնելու ժողովրդին և՛ «Երկրպագելու Տիրոջը՝ իրենց Աստծուն, և նաև հավաքվեն միասին այնքան հաճախ, որքան ի գորու էին:

26 Եվ քահանաներն իրենց պահելու համար չպետք է կախված լինեին ժողովրդից. այլ իրենց աշխատանքի դիմաց նրանք պետք է ստանային Աստծո՝ շնորհը, որ զորանային չոգով՝ ունենալով Աստծո Բզիտությունը, որ նրանք կարողանային սովորեցնել՝ Աստծո գորությանմբ և իշխանությամբ:

27 Եվ բացի դրանից Ալման պատվիրեց, որ եկեղեցու ժողովուրդը բաժին հանի իր ստացվածքից,՝ «ամեն ոք ըստ իր ունեցածի. եթե նա ուներ ավելի առատորեն, նա պետք է բաժին հաներ ավելի առատորեն. իսկ նրանից, որ ուներ՝ բայց քիչ, պետք է պահանջվեր՝ բայց քիչ. իսկ նրան, ով չուներ, պետք է տրվեր:

28 Եվ այսպիսով, նրանք պետք է բաժին հանեին իրենց ստացվածքից իրենց սեփական ազատ կամքով և բարի ցանկություններով առ Աստված, և այն քահանաների համար, որոնք կարիքի մեջ էին, այո, և ամեն կարիքավոր, մերկ անձի համար:

29 Եվ նա ասաց դա նրանց, պատվիրված լինելով Աստծո կող-

18ա սո՛ւ Քահանայություն:
բ սո՛ւ Ուսուցանել,
Ուսուցիչ:
20ա Վևո՛ւ 15.6, 18.14–16:
21ա 3 Նեփի՛ 11.28–30:
սո՛ւ Հակառակություն:
բ Մատ. 2.22,

Վևո՛ւ 88.67–68:
գ սո՛ւ Միություն:
22ա Մոսիա 5.5–7,
Մովսես 6.64–68:
23ա Մոսիա 13.16–19,
Վևո՛ւ 59.9–12:
24ա Գոր. Ի.33–35,

Մոսիա 27.3–5,
Ալմա 1.26:
25ա սո՛ւ Երկրպագել:
26ա սո՛ւ Շնորհ:
բ սո՛ւ Գիտություն:
27ա Գոր. Բ.44–45,
4 Նեփի 1.3:

մից, և նրանք ուղիղ էին «բայլում Աստծո առաջ, մեկմեկու շքածին հանելով՝ և՛ աշխարհիկով, և՛ հոգևորով՝ համաձայն իրենց կարիքների ու պահանջների:

30 Եվ եղավ այնպես, որ այս բոլորն արվեց Մորմնում, այո, Մորմնի «ջրերի մոտ՝ անտառում, որը Մորմնի ջրերի մոտ էր. այո, Մորմն վայրը, Մորմնի ջրերը, Մորմնի անտառը, որքան գեղեցիկ են դրանք նրանց աչքում, ովքեր այնտեղ եկան իրենց Քավչի իմացությանը. այո, և որքան օրհնված են նրանք, քանզի նրանք պիտի երգեն, ի գովք նրա, հավիտյան:

31 Եվ այս բաներն արվեցին երկրի «ծայրամասում, որ դրանք չհասնեին թագավորի իմացությանը:

32 Բայց ահա, եղավ այնպես, որ թագավորը, ժողովրդի մեջ հայտնաբերելով մի շարժում, ուղարկեց իր ծառաներին՝ հետևելու նրանց: Հետևաբար, այն օրը, որ նրանք հավաքվել էին՝ միասին լսելու Տիրոջ խոսքը, նրանք հայտնաբերվեցին թագավորի համար:

33 Եվ այժմ թագավորն ասաց, որ Ալման ժողովրդին ասպտամբությամբ է դրդում իր դեմ. հետևաբար, նա ուղարկեց իր գորքը՝ կործանելու նրանց:

34 Եվ եղավ այնպես, որ Ալման ու Տիրոջ ժողովուրդը՝ տեղեկացվեցին թագավորի գորքի գալու մասին. հետևաբար, նրանք վերցրեցին իրենց վրանները և իրենց ընտանիքները, և հեռացան անապատ:

35 Եվ նրանք թվով մոտավորա-

պես չորս հարյուր և հիսուն հոգի էին:

ԳԼՈՒԽ 19

Գեղեոնը ջանում է սպանել Թագավոր Նոյին – Լամանացիները ներխուժում են երկիր – Թագավոր Նոյը կրակով մահվան է ենթարկվում – Լիմքին կառավարում է՝ որպես հարկատու միասյետ: Մոտ 145–121թթ. Ք.ծ.ա.:

Եվ եղավ այնպես, որ թագավորի գորքը վերադարձավ՝ իզուր որոնած լինելով Տիրոջ ժողովրդին:

2 Եվ այժմ ահա, թագավորի ուժերը՝ նվազած լինելով, փոքր էին և մնացած ժողովրդի մեջ սկսվեց մի բաժանում տեղի ունենալ:

3 Եվ առավել փոքր մասը սկսեց սպառնալիքներ թափել թագավորի դեմ, և այնտեղ սկսվեց մի մեծ հակառակություն նրանց մեջ:

4 Եվ արդ նրանց մեջ կար մի մարդ, որի անունը Գեղեոն էր, և նա, լինելով ուժեղ և թագավորին թշնամի մի մարդ. հետևաբար, նա քաշեց իր սուրը և իր ցասման մեջ երդվեց, որ սպանելու է թագավորին:

5 Եվ եղավ այնպես, որ նա կովեց թագավորի հետ. և երբ թագավորը տեսավ, որ նա քիչ էր մնում իրեն հաղթեր, փախավ, և վազեց ու բարձրացավ՝ աշտարակի վրա, որը մոտ էր տաճարին:

6 Եվ Գեղեոնը հետապնդեց նրան և քիչ էր մնում աշտարակի վրա հասներ, սպաներ թագավորին, և թագավորն աչք ածեց շուրջբոլորը՝ դեպի Սեմլոնի երկիրը, և

29ա սուր Բայլել, Բայլել
Աստծո հետ:
բ սուր Բարօրություն:

30ա Մոսիա 26.15:
31ա Մոսիա 18.4:
34ա Մոսիա 23.1:

19 5ա Մոսիա 11.12:

ահա, Լամանացիների զորքերը երկրի սահմանների ներսում էին:

7 Եվ արդ, թագավորը գոռաց իր հոգու տվայտանքի մեջ՝ ասելով. Գեդեոն, խնայի՛ր ինձ, քանզի Լամանացիները եկել են մեզ վրա, և նրանք կկործանեն մեզ. այո, նրանք կկործանեն իմ ժողովրդին:

8 Եվ արդ, թագավորն այնքան մտահոգված չէր իր ժողովրդի համար, որքան իր սեփական կյանքի համար. այնուամենայնիվ, Գեդեոնը խնայեց նրա կյանքը:

9 Եվ թագավորը հրամայեց ժողովրդին, որ նրանք փախչեն Լամանացիների առաջից, և նա ինքը գնաց նրանց առջևից, և նրանք իրենց կանանց ու երեխաների հետ փախան անապատ:

10 Եվ եղավ այնպես, որ Լամանացիները հետապնդեցին, և հասան նրանց, և սկսեցին սպանել նրանց:

11 Արդ, եղավ այնպես, որ թագավորը հրամայեց նրանց, որ բոլոր տղամարդիկ թողնեն իրենց կանանց ու երեխաներին, և փախչեն Լամանացիների առաջից:

12 Արդ, կային շատերը, որոնք չկամեցան թողնել նրանց, այլ նախընտրեցին մնալ ու մեռնել նրանց հետ: Իսկ մնացածը թողեցին իրենց կանանց ու երեխաներին, և փախան:

13 Եվ եղավ այնպես, որ նրանք, ովքեր մնացին իրենց կանանց ու երեխաների հետ, ստիպեցին, որ իրենց գեղեցիկ դուստրերն առաջ կանգնեն և աղաչեն Լամանացիներին, որ նրանք չսպանեն իրենց:

14 Եվ եղավ այնպես, որ Լամանացիները կարեկցանք ունեցան նրանց վրա, քանի որ նրանք

հնայվեցին նրանց կանանց գեղեցկությամբ:

15 Հետևաբար, Լամանացիները խնայեցին նրանց կյանքը և նրանց գերի վերցրեցին ու ետ տարան Նեփիի երկիրը, և շնորհ արեցին նրանց, որ նրանք տիրեին երկրին այն պայմանով, որ նրանք հանձնեին թագավոր Նոյին Լամանացիների ձեռքը, և հանձնեին իրենց ունեցվածքը, մինչև անգամ բոլոր իրենց ունեցածի կեսը՝ իրենց ոսկու կեսը, իրենց արծաթի կեսը և բոլոր իրենց թանկարժեք բաները, և այսպիսով, նրանք տարեցտարի տուրք պետք է վճարեին Լամանացիների թագավորին:

16 Եվ արդ, կար թագավորի որդիներից մեկը նրանց մեջ, որոնց գերի էին վերցրել, որի անունը՝ Լիմքի էր:

17 Եվ արդ, Լիմքին չէր ուզում, որ իր հայրը կործանվի. այնուամենայնիվ, Լիմքին՝ ինքը լինելով մի արդար մարդ, անտեղյակ չէր իր հոր անօրինություններին:

18 Եվ եղավ այնպես, որ Գեդեոնը մարդիկ ուղարկեց անապատ՝ գաղտնի, փնտրելու թագավորին ու նրանց, ովքեր նրա հետ էին: Եվ եղավ այնպես, որ նրանք անապատում հանդիպեցին բոլոր այդ մարդկանց, բացի թագավորից ու նրա քահանաներից:

19 Արդ, նրանք երդվել էին իրենց սրտերում, որ նրանք վերադառնալու են Նեփիի երկիրը, և եթե իրենց կանայք ու երեխաները, և նաև նրանք, ովքեր մնացել էին նրանց հետ, սպանված լինեին, որ նրանք ձգտելու էին վրեժ լուծել, և նույնպես մեռնել նրանց հետ:

20 Եվ թագավորը հրամայել էր

նրանց, որ չվերադառնան. և նրանք բարկացել էին թագավորի վրա և տառապանքի ենթարկել նրան, նույնիսկ կրակով ^ամահվան:

21 Եվ նրանք քիչ էր մնացել քահանաներին էլ բռնեին ու մահվան դատապարտեին, սակայն նրանք փախել էին նրանց մոտից:

22 Եվ եղավ այնպես, որ նրանք պատրաստվում էին Նեփիի երկիրը վերադառնալ, և հանդիպեցին Գեդեոնի մարդկանց: Եվ Գեդեոնի մարդիկ պատմեցին նրանց այն ամենի մասին, որ պատահել էր նրանց կանանց ու երեխաների հետ. և որ Լամանացիները շնորհ էին արել նրանց, որ նրանք տիրեն երկրին՝ իրենց ունեցվածքի կիսով չափ տուրք վճարելով Լամանացիներին:

23 Եվ ժողովուրդն ասաց Գեդեոնի մարդկանց, որ նրանք սպանել են թագավորին, իսկ նրա քահանաները փախել են նրանցից՝ դեպի հեռավոր անապատ:

24 Եվ եղավ այնպես, որ այդ իրադարձության ավարտից հետո, նրանք վերադարձան Նեփիի երկիրը, ուրախանալով, որովհետև իրենց կանայք ու երեխաները չէին սպանվել. և նրանք պատմեցին Գեդեոնին, թե ինչ էին արել թագավորի հետ:

25 Եվ եղավ այնպես, որ Լամանացիների թագավորը ^աերդում տվեց նրանց, որ իր ժողովուրդը չի սպանի նրանց:

26 Եվ մաս Լիմքին, լինելով թագավորի որդին, թագավորությունն իրեն շնորհված լինելով ժողովրդի ^ակողմից, երդում տվեց Լամանացիների թագավորին, որ իր ժողովուրդը պիտի տուրք վճարի

նրան, մինչև իսկ իրենց ունեցվածքի կեսը:

27 Եվ եղավ այնպես, որ Լիմքին սկսեց հաստատել թագավորությունը և հաստատել խաղաղություն իր ժողովրդի մեջ:

28 Եվ Լամանացիների թագավորը պահակախմբեր դրեց երկրի շուրջըրդը, որ կարողանար պահել Լիմքիի ժողովրդին երկրում, որ նրանք չկարողանային հեռանալ անապատ. և մա պահում էր իր պահակախմբերն այն տուրքով, որը մա ստանում էր Նեփիացիներից:

29 Եվ այսպիսով, թագավոր Լիմքին երկու տարիների ընթացքում իր թագավորության մեջ անընդհատ խաղաղություն ունեցավ, այնպես որ Լամանացիները նեղություն չտվեցին նրանց, ոչ էլ ջանացին կործանել նրանց:

ԳԼՈՒԽ 20

Մի քանի Լամանացի աղջիկներ սռևանցվում են Նոյի քահանաների կողմից – Լամանացիները պատերազմ են մղում Լիմքիի ու նրա ժողովրդի դեմ – Լամանական զորքերը ետ են մղվում և խաղաղեցվում: Մոտ 145–123թթ. Ջ.ժ.ա.:

ԱՐԴ, Սեմյոնում մի տեղ կար, որտեղ Լամանացիների դուստրերը հավաքվում էին՝ միասին երգելու և պարելու և զվարճանալու:

2 Եվ եղավ այնպես, որ մի օր նրանցից մի փոքր խումբ հավաքվել էր՝ միասին երգելու ու պարելու:

3 Եվ արդ, Նոյ թագավորի քահանաները, ամաչելով վերադառնալ Նեփիի քաղաքը, այո, և մաս

20ա Մոսիա 17.13–19, Ալմա 25.11:

25ա Մոսիա 21.3: 26ա Մոսիա 7.9:

վախենալով, որ ժողովուրդը կապանի իրենց, հետևաբար նրանք չէին համարձակվում վերադառնալ իրենց կանանց ու իրենց երեխաների մոտ:

4 Եվ մնալով անապատում ու հայտնաբերելով Լամանացիների դուստրերին, նրանք դարանակալեցին ու հետևեցին նրանց:

5 Եվ երբ նրանցից միայն մի քանիսը հավաքվել էին՝ միասին պարելու, նրանք դուրս եկան իրենց քաքստոցներից և բռնեցին նրանց ու տարան անապատ: Այո, Լամանացիների դուստրերից քսանչորսին նրանք տարան անապատ:

6 Եվ եղավ այնպես, որ երբ Լամանացիները հայտնաբերեցին, որ իրենց դուստրերը բացակայում են, նրանք բարկացան Լիմքիի ժողովրդի վրա, քանի որ կարծեցին, թե դա Լիմքիի ժողովուրդն էր:

7 Հետևաբար, նրանք իրենց գորքերն առաջ ուղարկեցին: Այո, նույնիսկ թագավորն ինքը գնաց իր ժողովրդի առջևից: և նրանք վեր գնացին դեպի Նեփիի երկիրը՝ կործանելու Լիմքիի ժողովրդին:

8 Եվ արդ, Լիմքին նրանց հայտնաբերել էր աշտարակից, այսինքն՝ նա հայտնաբերել էր պատերազմի համար նրանց բոլոր նախապատրաստությունները: հետևաբար, նա ի մի հավաքեց իր ժողովրդին և նրանց դարանակալեց դաշտերում ու անտառներում:

9 Եվ եղավ այնպես, որ երբ Լամանացիները մոտեցան, Լիմքիի ժողովուրդը սկսեց հարձակվել նրանց վրա իրենց դարաններից և սկսեց սպանել նրանց:

10 Եվ եղավ այնպես, որ ճակատամարտը խիստ սաստկացավ,

քանզի նրանք կռվում էին, ինչպես առյուծները՝ իրենց որսի համար:

11 Եվ եղավ այնպես, որ Լիմքիի ժողովուրդը սկսեց քշել Լամանացիներին իրենց առաջից: չնայած, նրանք քանակով Լամանացիների կեսն էլ չկային: Բայց նրանք՝ կռվում էին իրենց կյանքի համար, և իրենց կանանց համար, և իրենց երեխաների համար: հետևաբար, նրանք լարեցին իրենց ուժերը և վիշապների պես էին կռվում:

12 Եվ եղավ այնպես, որ նրանք Լամանացիների թագավորին գտան նրանց մեռածների թվում: բայց նա մեռած չէր, այլ վիրավորված ու թողնված գետնի վրա, այնքան սրընթաց էր եղել նրա ժողովրդի փախուստը:

13 Եվ նրանք վերցրեցին նրան և կապեցին նրա վերքերն ու բերեցին Լիմքիի առաջ, և ասացին: Ահա, Լամանացիների թագավորն այստեղ է: նա, վերք ստացած լինելով, ընկել է նրանց մեռածների մեջ, և նրանք թողել են նրան: և ահա մենք բերել ենք նրան քո առաջ: և արդ, թույլ տուր սպանենք նրան:

14 Բայց Լիմքին ասաց նրանց: Դուք չպետք է սպանեք նրան, այլ բերեք նրան այստեղ, որ ես կարողանամ տեսնել նրան: Եվ նրանք բերեցին նրան: Եվ Լիմքին ասաց նրան: Ի՞նչ պատճառ ունեք դուք գալու պատերազմելու իմ ժողովրդի դեմ: Ահա իմ ժողովուրդը չի կոտրել՝ տերղումը, որ ես արել եմ ձեզ: հետևաբար, ինչո՞ւ պիտի դուք կոտրեիք երդումը, որն արել էիք իմ ժողովրդին:

15 Եվ արդ, թագավորն ասաց: Ես կոտրեցի երդումը, որովհետև

քո ժողովուրդն առևանգել է իմ ժողովրդի դուստրերին. հետևաբար, իմ բարկության մեջ ես կարգադրեցի իմ ժողովրդին՝ գալ պատերազմելու քո ժողովրդի դեմ:

16 Եվ արդ, Լիմքին ոչինչ չէր լսել այս հարցի վերաբերյալ. հետևաբար, նա ասաց. Ես կխուզարկեմ իմ ժողովրդի մեջ, և ով որ արած լինի այս բանը, պիտի մեռնի: Հետևաբար, նա կարգադրեց, որ մի խուզարկություն արվեր իր ժողովրդի մեջ:

17 Արդ, երբ ^աԳեդեոնը լսեց այս բաները, լինելով թագավորի գորապետը, նա առաջ գնաց և ասաց թագավորին. Ես աղաչում եմ քեզ, ետ կանգնիր և մի խուզարկիր այս ժողովրդին, և նրանց մի մեղադրիր այս բանի համար:

18 Քանզի դու արդյոք չե՞ս հիշում քո հոր քահանաներին, որոնց այս ժողովուրդը ջանում էր կործանել: Եվ արդյոք նրանք անապատում չե՞ն: Եվ արդյոք այդ նրա՞նք չեն, որ առևանգել են Լամանացիների դուստրերին:

19 Եվ արդ ահա, և պատմի՛ր թագավորին այս բաների մասին, որ նա պատմի իր ժողովրդին, որ նրանք խաղաղվեն մեր հանդեպ. քանզի ահա, նրանք արդեն պատրաստվում են գալ մեր դեմ. և ահա նաև, մեզանից մնացել են միայն մի քանիսը:

20 Եվ ահա, նրանք գալիս են իրենց ստվար զորքերով. և եթե թագավորը չխաղաղեցնի նրանց մեր հանդեպ, մենք պիտի կորչենք:

21 Քանզի արդյոք չե՞ն ^աիրականանում Աբինադիի խոսքերը, որոնք նա մարգարեացավ մեր

դեմ. և այս բոլորն այն պատճառով, որ մենք չկամեցանք ականջ դնել Տիրոջ խոսքերին և դարձի գալ մեր անօրինություններից:

22 Եվ արդ, եկե՛ք խաղաղեցնենք թագավորին և կատարենք երդումը, որը մենք արել ենք նրան. քանզի ավելի լավ է, որ մենք լինենք ճորտության մեջ, քան, որ մենք կորցնենք մեր կյանքը. հետևաբար, եկեք վերջ դնենք այսքան շատ արյուն թափելուն:

23 Եվ այժմ, Լիմքին պատմեց թագավորին բոլոր բաներն իր հոր և ^աքահանաների մասին, որ փախել էին անապատ, և նրանց դուստրերի առևանգումը վերագրեց նրանց:

24 Եվ եղավ այնպես, որ թագավորը խաղաղվեց նրա ժողովրդի հանդեպ, և նա ասաց նրանց. Եկեք առանց զենքերի գնանք առաջ՝ դիմավորելու իմ ժողովրդին. և ես երդվում եմ ձեզ երդումով, որ իմ ժողովուրդը չի սպանի քո ժողովրդին:

25 Եվ եղավ այնպես, որ նրանք հետևեցին թագավորին և առանց զենքերի առաջ գնացին՝ դիմավորելու Լամանացիներին: Եվ եղավ այնպես, որ նրանք ընդառաջ գնացին Լամանացիներին. և Լամանացիների թագավորը վար խոնարհվեց նրանց առաջ և աղերսեց Լիմքիի ժողովրդի համար:

26 Եվ երբ Լամանացիները տեսան Լիմքիի ժողովրդին, որ առանց զենքերի են, նրանք ^ակարեկցանք ունեցան նրանց նկատմամբ ու նրանց հանդեպ խաղաղվեցին, և իրենց թագավորի հետ խաղաղությամբ վերադարձան իրենց սեփական երկիրը:

ԳԼՈՒԽ 21

Լիմքիի ժողովուրդը զարկվում է և պարտվում Լամանացիներին – Լիմքիի ժողովուրդը հանդիպում է Ամմոնին և դարձի գալիս – Նրանք Ամմոնին պատմում են քսանչորս Հարեդական թիթեղների մասին: Մտտ 122–121թթ. Ք.ծ.ա.:

Եւ եղավ այնպես, որ Լիմքին և իր ժողովուրդը վերադարձան Նեփի քաղաքը, և կրկին սկսեցին խաղաղությամբ բնակվել երկրում:

2 Եվ եղավ այնպես, որ շատ օրեր հետո, Լամանացիները սկսեցին կրկին բարկության դրոպվել ընդդէմ Նեփիացիների, և նրանք սկսեցին ներխուժել երկրի շրջակա սահմաններից ներս:

3 Այժմ նրանք չէին համարձակվում սպանել նրանց՝ այն երդման պատճառով, որը նրանց թագավորն արել էր Լիմքիին. բայց նրանք զարկում էին նրանց՝ «այտերին և իշխանություն գործադրում նրանց վրա. և նրանք սկսեցին ծանր թեռներ դնել նրանց մեջքին և քշել նրանց, ինչպես կանեին մի անխոս էշի,

4 Այո, այս բոլորը կատարվում էր, որպեսզի Տիրոջ խոսքն իրականանար:

5 Եվ այժմ, Նեփիացիների չարչարանքները մեծ էին, և չկար ոչ մի միջոց, որ նրանք կարողանային ազատվել նրանց ձեռքից, քանզի Լամանացիներն ամեն կողմից շրջապատել էին նրանց:

6 Եվ եղավ այնպես, որ ժողովուրդը սկսեց տրտմնջալ թագավորին իրենց չարչարանքների համար. և նրանք սկսեցին փափագել՝ գնալ

ճակատամարտելու նրանց դէմ: Եվ նրանք շատ էին չարչարում թագավորին իրենց բողոքներով. հետևաբար, նա թույլ տվեց նրանց, որ նրանք վարվեին ըստ իրենց ցանկությունների:

7 Եվ նրանք ի մի հավաքվեցին կրկին, և հագան իրենց զենք ու զրահը, և գնացին առաջ՝ Լամանացիների դէմ՝ քշելու նրանց իրենց երկրից դուրս:

8 Եվ եղավ այնպես, որ Լամանացիները ջարդեցին նրանց, և ետ մղեցին նրանց և սպանեցին նրանցից շատերին:

9 Եվ արդ, մեծ «սուգ ու շիվան կար Լիմքիի ժողովրդի մեջ, այրին սգում էր իր ամուսնու համար, որդին ու դուստրը սգում էին իրենց հոր համար, և եղբայրները՝ իրենց եղբայրների համար:

10 Արդ, մեծ թվով այրիներ կային երկրում, և նրանք օրեցօր սաստիկ ողբում էին, քանզի Լամանացիներից մի մեծ վախ էր եկել նրանց վրա:

11 Եվ եղավ այնպես, որ նրանց անընդհատ ողբերը Լիմքիի ժողովրդի մնացածին բարկության դրոպեցին Լամանացիների դէմ. և նրանք նորից գնացին ճակատամարտելու, բայց կրկին ետ քշվեցին՝ տալով մեծ կորուստներ:

12 Այո, նրանք կրկին գնացին, նույնիսկ երրորդ անգամ և տուժեցին նույն ձևով. և նրանք, ովքեր չէին սպանվել, նորից վերադարձան Նեփիի քաղաքը:

13 Եվ նրանք խոնարհեցրին իրենց, նույնիսկ մինչև փոշին, հպատակվելով ճորտության լծին, ամճմատուր լինելով իրենց թշնամիների քմահաճույքներին՝ զարկ-

վելու և այս ու այն կողմ քշվելու և բռնվելու:

14 Եվ նրանք Մխոնարհեցրին իրենց, մինչև իսկ համեստության խորքերը. և նրանք ուժգին կանչում էին առ Աստված. այո, մինչև իսկ ողջ օրվա ընթացքում նրանք կանչում էին առ իրենց Աստված, որ նա ազատի նրանց իրենց չարաչարանքներից:

15 Եվ արդ, Տերը՝ Պանդաղ էր նրանց աղաղակը լսելիս՝ նրանց անօրինությունների պատճառով. այնուամենայնիվ, Տերը լսեց նրանց աղաղակները և սկսեց փափկացնել Լամանացիների սրտերը, այնպես որ նրանք սկսեցին թեթևացնել նրանց բռնները. սակայն Տերը հարմար չէր տեսնում ազատել նրանց ճորտությունից:

16 Եվ եղավ այնպես, որ նրանք սկսեցին աստիճանաբար բարգավաճել երկրում և սկսեցին ավելի առատորեն հատիկ աճեցնել, և հոտեր, և նախիրներ, որ չտանջվեին քաղցից:

17 Արդ, կային մեծ թվով կանայք՝ ավելի շատ, քան տղամարդիկ. հետևաբար, թագավոր Լիմբին պատվիրեց, որ ամեն մարդ ՞բաժին հաներ ի օժանդակություն ՞այրիների ու նրանց զավակների, որ նրանք չմեռնեին քաղցից. և այս նրանք արեցին նրանց թվի մեծության պատճառով, ովքեր սպանվել էին:

18 Արդ, Լիմբիի ժողովուրդը մնում էր այնքան համախմբված, որքան դա հնարավոր էր և ապահովում էր իրենց հատիկի և իրենց հոտերի անվտանգությունը.

19 Եվ թագավորն իրեն թույլ չէր տալիս լինել քաղաքի պատերից դուրս, մինչև նա չվերցնեի իր պահակախումբն իր հետ՝ վախեցնելով, որ ինչ-որ ձևով նա կարող է ընկնել Լամանացիների ձեռքը:

20 Եվ նա կարգադրեց, որ իր ժողովուրդը հսկի շրջակա երկիրը, որ պեստի ինչ-որ ձևով նրանք կարողանային վերցնել այն քահանաներին, որոնք փախել էին անապատ, որոնք առևանգել էին Լամանացիների Պուստրերին, և որոնք պատճառ էին դարձել, որ այդպիսի մեծ ավերում գար իրենց վրա:

21 Քանզի նրանք ուզում էին բռնել նրանց, որ պատժեն. քանի որ նրանք գիշերով եկել էին Նեփիի երկիրն ու տարել նրանց հատիկը և նրանց արժեքավոր բաներից շատերը. հետևաբար, նրանք դարան էին դրել նրանց համար:

22 Եվ եղավ այնպես, որ այլևս որևէ խռովություն չկար Լամանացիների ու Լիմբիի ժողովրդի միջև, նույնիսկ մինչև այն ժամանակը, երբ Մամոնն ու նրա եղբայրները եկան այդ երկիրը:

23 Եվ թագավորը, իր պահակախմբի հետ լինելով քաղաքի պատերից դուրս, հայտնաբերեց Ամոնին ու նրա եղբայրներին. և կարծելով, թե նրանք Նոյի քահանաներն են, ուստի կարգադրեց, որ նրանց բռնեն և կապեն ու ՞բանան զցեն: Եվ եթե նրանք Նոյի քահանաները լինեին, նա կկարգադրեր, որ նրանք մահվան դատապարտվեին:

24 Բայց երբ նա պարզեց, որ այդ

14ա Մոսիա 29.20:
սու Խոնարհ,
Խոնարհություն:

Մոսիա 11.23–25,
ՎևոՒ 101.7–9:
17ա Մոսիա 4.16, 26:
բ սու Այրի:

20ա Մոսիա 20.5:
22ա Մոսիա 7.6–13:
23ա չևել. 5.21:

նրանք չեն, այլ, որ նրանք իր եղբայրներն են և եկել են Չարահեմլայի երկրից, նա լցվեց անչափ մեծ ուրախությամբ:

25 Արդ, թագավոր Լիմքին, նախքան Ամմոնի գալը, ուղարկել էր «փոքր թվով մարդկանց՝ փնտրելու Չարահեմլայի երկիրը. բայց նրանք չէին կարողացել գտնել այն, և նրանք անապատում կորել էին:

26 Այնուամենայնիվ, նրանք գտել էին մի երկիր, որը բնակեցված էր եղել. այո, մի երկիր, որը ծածկված էր չոր «ոսկորներով. այո, մի երկիր, որը բնակեցված էր եղել և որը կործանվել էր. և նրանք ենթադրած լինելով, որ այն Չարահեմլայի երկիրն է, վերադարձել էին Նեփիի երկիրը, հասնելով երկրի սահմաններին՝ Ամմոնի գալուց ոչ շատ օրեր առաջ:

27 Եվ նրանք իրենց հետ բերել էին մի հիշատակարան, այսինքն՝ այն ժողովրդի հիշատակարանը, որոնց ոսկորները նրանք գտել էին. և դա փորագրված էր մետաղյա թիթեղների վրա:

28 Եվ այժմ, Լիմքին կրկին ուրախությամբ լցվեց՝ իմանալով Ամմոնի բերանից, որ թագավոր Մոսիան Աստծուց «պարզ ունեք, որով նա կարող էր թարգմանել այդպիսի փորագրություններ. այո, և Ամմոնը նույնպես ուրախացավ:

29 Սակայն Ամմոնն ու նրա եղբայրները լցված էին վշտով, որովհետև նրանց եղբայրներից այնքան շատերը սպանվել էին.

30 Եվ նաև, որ թագավոր Նոյն ու նրա քահանաները պատճառ

էին դարձել, որ ժողովուրդն այդքան շատ մեղքեր ու անօրինություններ գործեր Աստծո դեմ. և նրանք նաև սգում էին Աբիհադիի «մահվան համար. և նաև Ալմայի ու ժողովրդի քեռանալու համար, որոնք գնացել էին նրա հետ, որոնք հիմնել էին Աստծո եկեղեցին Աստծո ուժով ու զորությամբ, և հավատքով այն խոսքերի հանդեպ, որոնք խոսվել էին Աբիհադիի կողմից:

31 Այո, նրանք սգում էին նրանց հեռանալու համար, քանզի նրանք չգիտեին, թե ուր էին նրանք փախել: Այժմ, նրանք ուրախությամբ կմիանային նրանց, քանզի նրանք իրենք էին ուխտի մեջ մտել Աստծո հետ՝ ծառայելու նրան և պահելու նրա պատվիրանները:

32 Եվ այսպիսով, Ամմոնի գալուց ի վեր թագավոր Լիմքին ևս ուխտի մեջ էր մտել Աստծո հետ, և նաև նրա ժողովրդից շատերը, որ կծառային նրան և կպահին նրա պատվիրանները:

33 Եվ եղավ այնպես, որ թագավոր Լիմքին ու նրա ժողովրդից շատերը ցանկանում էին մկրտվել. բայց չկար ոչ մեկը երկրում, որ Աստծուց «իշխանություն ունենար: Եվ Ամմոնը հրաժարվեց այս բանն անել՝ իրեն համարելով մի անարժան ծառա:

34 Հետևաբար, նրանք այդ ժամանակ որպես եկեղեցի չկազմավորվեցին՝ սպասելով Տիրոջ Հոգուն: Այժմ նրանք ցանկանում էին դառնալ ճիշտ ինչպես Ալման ու նրա եղբայրները, որոնք փախել էին անապատ:

35 Նրանք ուզում էին մկրտվել՝

25ա Մոսիա 8.7:
բ Մոսիա 7.14:
26ա Մոսիա 8.8:

28ա Օմնի 1.20–22,
Մոսիա 28.11–16:
30ա Մոսիա 17.12–20:

բ Մոսիա 18.34–35:
33ա Մոսիա Իշխանություն:

որպես ապացույց և վկայություն, որ նրանք հոժար են ծառայել Աստծուն իրենց ողջ սրտով. սակայն, նրանք հետաձգեցին ժամանակը. և նրանց մկրտության մի պատմություն ^ակտրվի հետագայում:

36 Եվ այժմ Ամնոնի ու իր մարդկանց, և թագավոր Լիմբիի ու նրա ժողովրդի ողջ մտահոգությունը Լամանացիների ձեռքից և ճորտությունից ազատվելն էր:

ԳԼՈՒԽ 22

Ծրագրեր են կազմվում ժողովրդի համար՝ փախչելու Լամանական ճորտությունից – Լամանացիներին հարբեցնում են – Ժողովուրդը փախչում է, վերադառնում է Չարահենլա և հպատակ դառնում թագավոր Մոսիային: Մոտ 121–120թթ. Բ.ծ.ա.:

Եւ այժմ, եղավ այնպես, որ Ամնոնը և թագավոր Լիմբին սկսեցին խորհրդակցել ժողովրդի հետ, ինչպես իրենք ազատվեն ճորտությունից. և նույնիսկ նրանք կարգադրեցին, որ ողջ ժողովուրդն ի մի հավաքվի, և այս նրանք արեցին, որ այդ հարցի առնչությամբ ունենան ժողովրդի ձայնը:

2 Եվ եղավ այնպես, որ նրանք չկարողացան ճորտությունից ազատվելու ելք գտնել, բացի դա լինել՝ իրենց կանանց ու երեխաներին, և իրենց հոտերն ու իրենց նախիրները, և իրենց վրանները վերցնելը և հեռանալն անապատ. քանզի Լամանացիները, լինելով այդքան բազմաքանակ, անհնարին էր Լիմբիի ժողովրդի համար

կռվել նրանց դեմ՝ մտածելով ճորտությունից ազատվել սրի միջոցով:

3 Արդ, եղավ այնպես, որ Գեդեոնն առաջ գնաց ու կանգնեց թագավորի առաջ, և ասաց նրան. Արդ, ո՞վ թագավոր, դու առ այժմ շատ անգամներ ականջ ես դրել իմ խոսքերին, երբ մենք կռվում էինք մեր եղբայրների՝ Լամանացիների հետ:

4 Եվ այժմ, ո՞վ թագավոր, եթե դու չես գտնում, որ ես մի անալիտան ծառա եմ, կամ եթե դու առ այժմ լսել ես իմ խոսքերը՝ ինչ-որ չափով, և դրանք եղել են ի օգուտ քեզ, նմանապես, ես ուզում եմ, որ դու լսեիր իմ խոսքերն այս անգամ էլ, և ես կլինեմ քո ծառան և այս ժողովրդին կազատեմ ճորտությունից:

5 Եվ թագավորը շնորհ արեց նրան, որ նա խոսի: Եվ Գեդեոնն ասաց նրան.

6 Տե՛ս, ետևի անցումը, ետևի պատի միջով՝ քաղաքի ետևի կողմում: Լամանացիները, կամ Լամանացիների պահակախումբը, գիշերը հարբած են. հետևաբար, եկեք մի հրովարտակ ուղարկենք ողջ այս ժողովրդի մեջ, որ նրանք ի մի հավաքեն իրենց հոտերն ու նախիրները, որպեսզի գիշերով քշեն դրանք անապատ:

7 Եվ ես համաձայն քո հրամանի կգնամ ու կվճարեմ Լամանացիներին գինու վերջին տուրքը, և նրանք խմած կլինեն. և երբ նրանք հարբած ու քնած կլինեն, մենք նրանց ճամբարի ձախ կողմով, կանցնենք գաղտնի անցուղու միջով:

8 Այսպես, մեր կանանց ու

երեխաների, մեր հոտերի ու մեր նախորդների հետ մենք կհեռանանք անապատ. և մենք կշրջանցենք Սիլոմ երկիրը:

9 Եվ եղավ այնպես, որ թագավորն ականջ դրեց Գեդեոնի խոսքերին:

10 Եվ թագավոր Լիմփին կարգադրեց, որ իր ժողովուրդն ի մի հավաքի իրենց հոտերը. և նա Լամանացիներին ուղարկեց գինու տուրքը. և նա նաև ուղարկեց ավելի շատ գինի, որպես նրանց նվեր. և նրանք առատորեն խմեցին այն գինուց, որ թագավոր Լիմփին ուղարկել էր նրանց:

11 Եվ եղավ այնպես, որ թագավոր Լիմփիի ժողովուրդը՝ իրենց հոտերով, և իրենց նախորդներով, գիշերով հեռացավ անապատ, և նրանք շրջանցեցին Սիլոմ երկիրն անապատով և թեքեցին իրենց ուղղությունը դեպի Չարահեմլայի երկիրը՝ առաջնորդվելով Ամմոնի ու նրա եղբայրների կողմից:

12 Եվ նրանք վերցրել էին բոլոր իրենց ոսկին և արծաթը և իրենց արժեքավոր բաները, որոնք կարող էին տանել, և նաև իրենց պարենը, իրենց հետ՝ անապատ. և նրանք շարունակեցին իրենց ճամփորդությունը:

13 Եվ շատ օրեր անապատում լինելուց հետո, նրանք հասան Չարահեմլայի երկիրը, և միացան Մոսիայի ժողովրդին ու դարձան նրա հպատակները:

14 Եվ եղավ այնպես, որ Մոսիան նրանց ուրախությամբ ընդունեց. և նա ստացավ նաև նրանց ^ահիշատակարանները և նաև այն ^բհիշատակարանները, որոնք գտնվել էին Լիմփիի ժողովրդի կողմից:

15 Եվ արդ եղավ այնպես, երբ Լամանացիները հայտնաբերեցին, որ Լիմփիի ժողովուրդը հեռացել էր երկրից գիշերով, նրանք մի գորբ ուղարկեցին անապատ՝ հետապնդելու նրանց.

16 Եվ նրանք, երկու օր նրանց հետապնդելուց հետո, չկարողացան այլևս հետևել նրանց հետքերին. հետևաբար, նրանք կորան անապատում:

Պատմությունը Ալմայի և Տիրոջ ժողովրդի, ովքեր թագավոր Նոյի ժողովրդի կողմից բռնվել էին անապատ:

Ընդգրկելով 23 և 24 գլուխները:

ԳԼՈՒԽ 23

Ալման հրաժարվում է թագավոր լինել – Նա ծառայում է որպես քահանայապետ – Տերը պատժում է իր ժողովրդին, և Լամանացիները նվաճում են Էլամի երկիրը – Ամուդոնը՝ Թագավոր Նոյի ամբարիշտ քահանաների առաջնորդը, կտաժվարում է՝ լինելով Լամանացի միապետի հպատակը: Մոտ 145–121թթ. Զ.ծ.ա.:

Առ, Ալման, նախազգուշացված լինելով Տիրոջից, որ թագավոր Նոյի զորքերը գալու են իրենց վրա, և դա հայտնի դարձրած լինելով իր ժողովրդին, հետևաբար, նրանք ի մի հավաքեցին իրենց հոտերը և վերցրեցին իրենց հատիկը, և հեռացան անապատ թագավոր Նոյի զորքերից առաջ:

2 Եվ Տերն ուժեղացրեց նրանց, որ թագավոր Նոյի ժողովուրդը

չկարողանա հասնի նրանց և կործանի նրանց:

3 Եվ անապատում նրանք ութ օրվա ճանապարհ անցան:

4 Եվ նրանք հասան մի երկիր, այո, նույնիսկ մի շատ գեղեցիկ և հաճելի երկիր, մաքուր ջրի մի երկիր:

5 Եվ նրանք իրենց վրանները խփեցին, և սկսեցին մշակել հողը, և սկսեցին շենքեր կառուցել. այո, նրանք աշխատասեր էին, և տքնում էին չափից դուրս:

6 Եվ ժողովուրդն ուզում էր, որ Ալման լինի իրենց թագավոր, քանզի նա սիրված էր իր ժողովրդի կողմից:

7 Բայց նա ասաց նրանց. Ահա, հարկավոր չէ, որ մենք թագավոր ունենանք. քանզի, այսպես է ասում Տերը. Դուք մի մարմին ^աչպիտի բարձր համարեք մեկ ուրիշից, կամ մարդ չպիտի իրեն բարձր համարի մեկ ուրիշից. հետևաբար, ես ասում եմ ձեզ՝ հարկավոր չէ, որ դուք թագավոր ունենաք:

8 Այնուամենայնիվ, եթե հնարավոր լիներ, որ դուք կարողանայիք միշտ ունենալ արդար մարդիկ՝ լինելու ձեզ թագավորներ, ձեզ համար լավ կլիներ ունենալ թագավոր:

9 Բայց հիշե՛ք թագավոր Նոյի և նրա քահանաների ^աանօրինությունը. և ես՝ ինքս էի ^բծուղակն ընկել և շատ բաներ արեցի, որոնք պիղծ էին Տիրոջ աչքում, որոնք դառն ապաշխարության պատճառ դարձան.

10 Այնուամենայնիվ, շատ ^անեղու-

թյուններից հետո, Տերը լսեց իմ աղաղակներն ու պատասխանեց իմ աղոթքներին, և ինձ՝ իր ձեռքում, մի գործիք է դարձրել՝ բերելով ձեզանից ^բայսքան շատերին իր ճշմարտության մի իմացության:

11 Սակայն սրանով ես չեմ պարծենում, քանզի ես անարժան եմ ինձանով պարծենալ:

12 Եվ արդ, ես ասում եմ ձեզ, դուք ճնշվել եք թագավոր Նոյի կողմից և եղել եք ճորտության մեջ նրանից ու նրա քահանաներից, և բերվել եք անօրինության՝ նրանց կողմից. այդ պատճառով, դուք կապված էիք անօրինության ^ակապանքներով:

13 Եվ արդ, այնպես ինչպես Աստծո զորությամբ դուք ազատվել եք այս կապանքներից. այո, այսինքն՝ թագավոր Նոյի ու նրա ժողովրդի ձեռքից, և մաև անօրինության կապանքներից, ճիշտ նույնպես ես ուզում եմ, որ դուք հաստատուն ^ականգնեք այս ^բազատության մեջ, որով դուք ազատ եք դարձվել, և որ դուք ^գոչ մի մարդու չվստահեք՝ թագավոր լինելու ձեզ վրա:

14 Եվ մաև մի՛ վստահեք ոչ մեկին՝ ձեր ^աուսուցիչը լինելու, ոչ էլ ձեր սպասավորը, եթե նա Աստծո մարդ չէ՝ նրա ուղիներում քայլող ու նրա պատվիրանները պահող:

15 Այսպես էր Ալման սովորեցնում իր ժողովրդին, որ ամեն մարդ պետք է ^ասիրի իր մերձավորին, ինչպես ինքն իրեն, որ չպետք է նրանց մեջ ^բհակառակություն լինի:

23 7ա Մոսիա 27.3–5:
9ա Առակ. ԺԶ.12,
Մոսիա 11.1–15:
բ Մոսիա 17.1–4:
10ա Վև.ՌԷ 58.4:

բ Մոսիա 18.35:
12ա 2 Նեփի 28.19–22:
13ա Գաղ. Ե.1:
բ սո՛ւ Անկախություն:
գ Մոսիա 29.13:

14ա Մոսիա 18.18–22:
15ա սո՛ւ Սեր:
բ 3 Նեփի 11.28–29:

16 Եվ արդ, Ալման նրանց քահանայապետն էր, ինքը՝ լինելով իրենց եկեղեցու հիմնադիրը:

17 Եվ եղավ այնպես, որ ոչ ոք քարոզելու կամ սովորեցնելու չիրավունք չէր ստանում, եթե դա չլիներ նրա միջոցով՝ Աստծո կողմից: Հետևաբար, նա նվիրաբերեց բոլոր իրենց քահանաներին և բոլոր իրենց ուսուցիչներին. և ոչ ոքի չէին նվիրաբերում, մինչև նրանք չլինեին արդար մարդիկ:

18 Հետևաբար, նրանք հսկում էին իրենց ժողովրդի վրա և սնուցում էին նրանց արդարությամբ պատկանող բաներով:

19 Եվ եղավ այնպես, որ նրանք սկսեցին չափազանց բարգավաճել երկրում. և նրանք երկիրը կոչեցին Էլամ:

20 Եվ եղավ այնպես, որ նրանք Էլամի երկրում բազմացան ու չափազանց բարգավաճեցին. և նրանք կառուցեցին մի քաղաք, որը նրանք կոչեցին Էլամի քաղաք:

21 Այնուամենայնիվ, Տերը հարմար է գտնում Մխրատել իր ժողովրդին. այո, նա փորձում է նրանց համբերությունն ու նրանց հավատքը:

22 Սակայն ով որ իր սվատահույությունը դնում է նրա վրա, նույնը պիտի հարձրացվի վերջին օրը: Այո, և այսպես դա եղավ այս ժողովրդի հետ:

23 Քանզի ահա, ես ցույց կտամ ձեզ, որ նրանք ճորտության բերվեցին, և ոչ մեկն ի գորու չեղավ նրանց ազատել, բացի Տիրոջից՝ իրենց Աստծուց, այո՛, հենց

Աբրահամի և Իսահակի և Հակոբի Աստծուց:

24 Եվ եղավ այնպես, որ նա ազատեց նրանց, և նա նրանց ցույց տվեց իր հզոր գորությունը, և նրանց ցնծությունը մեծ էր:

25 Քանզի ահա, եղավ այնպես, որ մինչ նրանք Էլամի երկրում էին, այո, Էլամի քաղաքում, մինչ մշակում էին շրջակա հողը, ահա, Լամանացիների մի գորք երկրի սահմանների ներսում էր:

26 Արդ եղավ այնպես, որ Ալմայի եղբայրները փախան իրենց դաշտերից, և ի մի հավաքվեցին Էլամի քաղաքում. և նրանք ահաբեկված էին Լամանացիների հայտնվելու պատճառով:

27 Բայց Ալման առաջ գնաց ու կանգնեց նրանց մեջ, և հորդորեց նրանց, որ նրանք չպետք է վախենան, այլ որ նրանք պետք է հիշեն Տիրոջը՝ իրենց Աստծուն, և նա կազատի նրանց:

28 Հետևաբար, նրանք զսպեցին իրենց վախը և սկսեցին աղաղակել առ Տերը, որ նա փափկացնի Լամանացիների սրտերը, որ նրանք խնայեն իրենց և իրենց կանանց և իրենց երեխաներին:

29 Եվ եղավ այնպես, որ Տերը փափկացրեց Լամանացիների սրտերը: Եվ Ալման ու նրա եղբայրները գնացին առաջ և հանձնվեցին նրանց ձեռքը. և Լամանացիները տեղ դարձան Էլամի երկրին:

30 Արդ, Լամանացիների գորքերը, որոնք գնացել էին թագավոր Լիմբիի ժողովրդի ետևից, շատ օրերի ընթացքում կորել էին անապատում:

16ա Մոսիա 26.7:
17ա սուր Իշխանություն.
Քահանայություն:
18ա Ա Տիմ. 4.6:

21ա Հել. 12.3,
ՎևՌՖ 98.21:
սուր Խրատել,
Խրատելը:

բ սուր Համբերություն:
22ա սուր Ապավինել:
բ 1 Նեփի 13.37:

31 Եվ ահա նրանք գտան թագավոր Նոյի այն քահանաներին մի վայրում, որը նրանք կոչել էին Ամուղոն. և նրանք սկսել էին տիրել Ամուղոնի երկրին և սկսել էին մշակել հողը:

32 Արդ, այդ քահանաների առաջնորդի անունը Ամուղոն էր:

33 Եվ եղավ այնպես, որ Ամուղոնն աղերսեց Լամանացիներին. և նա նաև առաջ ուղարկեց իրենց կանանց, որոնք Լամանացիների «դուստրերն էին՝ աղերսելու իրենց եղբայրներին, որ նրանք չկործանեն իրենց ամուսիններին:

34 Եվ Լամանացիները «կարեկցանք ունեցան Ամուղոնի ու նրա եղբայրների հանդեպ, և նրանց կանանց շնորհիվ չկործանեցին նրանց:

35 Եվ Ամուղոնն ու նրա եղբայրները միացան Լամանացիներին, և նրանք ճամփորդեցին անապատում՝ որոնելով Նեփիի երկիրը, երբ նրանք հայտնաբերեցին Էլամի երկիրը, որին տիրացել էին Ալման ու նրա եղբայրները:

36 Եվ եղավ այնպես, որ Լամանացիները խոստացան Ալմային ու նրա եղբայրներին, որ եթե նրանք ցույց տան ճանապարհը, որը տանում է դեպի Նեփիի երկիրը, ապա նրանք կշնորհեն նրանց իրենց կյանքն ու իրենց ազատությունը:

37 Բայց հետո, երբ Ալման ցույց տվեց նրանց ճանապարհը, որը տանում էր դեպի Նեփիի երկիրը, Լամանացիները չպահեցին իրենց խոստումը. այլ, նրանք «պահակախումբ դրեցին Էլամ երկրի շուրջը շուրջը, Ալմայի ու նրա եղբայրների վրա:

38 Եվ նրանցից մնացածը գնա-

ցին Նեփիի երկիրը. և նրանց մի մասը վերադարձավ Էլամի երկիրը, և նաև իրենց հետ բերեցին պահակների կանանց ու երեխաներին, որոնց թողել էին երկրում:

39 Եվ Լամանացիների թագավորը շնորհեց Ամուղոնին, որ նա լիներ թագավոր ու կառավարիչ իր ժողովրդի վրա, որոնք Էլամի երկրում էին. սակայն նա չպետք է ունենար իշխանություն՝ անելու որևէ բան Լամանացիների թագավորի կամքին հակառակ:

ԳԼՈՒԽ 24

Ամուղոնը հալածում է Ալմային ու նրա ժողովրդին – Նրանք պետք է մահվան ենթարկվեն, եթե աղոթեն – Նրանց բռնեցրը Տերը դարձնում է թեթև քվացող – Նա ազատում է նրանց ճորտությունից, և նրանք վերադառնում են Չարահեմլա: Մոտ 145–120թթ. Ք.ծ.ա.:

Եւ եղավ այնպես, որ Ամուղոնը շնորհ գտավ Լամանացիների թագավորի աչքում. հետևաբար, Լամանացիների թագավորը թույլ տվեց նրան և նրա եղբայրներին, որ նրանք նշանակվեին ուսուցիչներ իր ժողովրդի վրա, այո, նույնիսկ այն ժողովրդի վրա, ովքեր Մեմլոնի երկրում էին, և Սիլոմի երկրում, և Ամուղոնի երկրում:

2 Քանզի Լամանացիները վերցրել էին այս բոլոր երկրների տիրապետությունը. հետևաբար, Լամանացիների թագավորը բոլոր այս երկրների վրա նշանակել էր թագավորներ:

3 Եվ արդ, Լամանացիների թագավորի անունը Լաման էր՝

կոչված լինելով իր հոր անունով. և ուստի, նա կոչվում էր թագավոր Լաման: Եվ նա թագավոր էր մի բազմաբանակ ժողովրդի վրա:

4 Եվ Ամուղոնի եղբայրներից նա ուսուցիչներ նշանակեց ամեն երկրում, որը սեփականացվել էր իր ժողովրդի կողմից. և այսպիսով, Նեփիի լեզուն սկսվեց ուսուցանվել Լամանացիների ողջ ժողովրդի մեջ:

5 Եվ նրանք մի ժողովուրդ էին՝ մեկը մյուսի հանդեպ բարյացակամ. թեև նրանք չգիտեին Աստծուն. ոչ էլ Ամուղոնի եղբայրներն էին նրանց որևէ բան սովորեցրել Տիրոջ՝ իրենց Աստծո մասին, կամ Մովսեսի օրենքի. ոչ էլ Աբինադիի խոսքերն էին նրանք սովորեցրել նրանց.

6 Բայց նրանք սովորեցնում էին նրանց, որ նրանք պահեն իրենց հիշատակարանը, և որ նրանք կարողանան գրել մեկը մյուսին:

7 Եվ այսպիսով, Լամանացիները սկսեցին հարստություններ դիզել, և սկսեցին առևտուր անել մեկը մյուսի հետ ու հզորանալ, և դարձան մի խորամանկ և իմաստուն մի ժողովուրդ, ինչ վերաբերում էր աշխարհիկ իմաստությանը, այո՛, մի շատ խորամանկ ժողովուրդ՝ հրճվելով ամեն ձևի ամբարշտությանը ու կողոպուտով, բացառությամբ իրենց սեփական եղբայրների նկատմամբ:

8 Եվ արդ, եղավ այնպես, որ Ամուղոնը սկսեց իշխանություն գործադրել Ալմայի ու նրա եղբայրների վրա, և սկսեց հալածել նրան, և կարգադրեց, որ իր գավակները հալածեն նրանց գավակներին:

9 Քանզի Ամուղոնը գիտեր Ալ-

մային, որ նա եղել էր թագավորի քահանաներից՝ մեկը, և որ այդ նա էր, որ հավատաց Աբինադիի խոսքերին և դուրս վոճոճվեց թագավորի առջևից, և հետևաբար, նա զայրացած էր նրա վրա. չնայած ինքը հպատակ էր թագավոր Լամանին, այնուամենայնիվ, նա իշխանություն էր գործադրում նրանց վրա, և իհանձնարարություններ դնում նրանց վրա, և վերակացուներ դնում նրանց վրա:

10 Եվ եղավ այնպես, որ այնքան մեծ էին նրանց չարչարանքները, որ նրանք սկսեցին ուժգնորեն աղաղակել առ Աստված:

11 Եվ Ամուղոնը հրամայեց նրանց, որ նրանք դադարեցնեն իրենց աղաղակները. և նա պահակներ դրեց նրանց վրա՝ հսկելու նրանց, որ ում գտնեին առ Աստված կանչելիս, մահվան դատապարտեին:

12 Եվ Ալման ու նրա ժողովուրդը չէին բարձրացնում իրենց ձայնն առ Տերը՝ իրենց Աստվածը, բայց իրենց սիրտը դուրս էին թափում նրան. և նա գիտեր մտքերը նրանց սրտերի:

13 Եվ եղավ այնպես, որ Տիրոջ ձայնը եկավ նրանց իրենց չարչարանքների մեջ՝ ասելով. Բարձրացրեք ձեր գլուխները և հանգիստ եղեք, քանզի ես գիտեմ ուխտի մասին, որը դուք արել եք ինձ հետ. և ես կուխտեմ իմ ժողովրդի հետ ու կազատեմ նրանց ճորտությունից:

14 Եվ ես նաև կթեթևացնեմ բեռները, որոնք դրվել են ձեր ուսերին, որպեսզի դուք մինչև անգամ չզգաք դրանք ձեր մեջքին, նույնիսկ մինչ դուք ճորտության մեջ

եք. և սա ես կանեմ, որպեսզի հետագայում դուք կարողանաք կանգնել որպես ՝վկաներ ինձ համար, և որպեսզի դուք կարողանաք հաստատ իմանալ, որ ես՝ Տեր Աստվածս, այցելում եմ իմ ժողովրդին իրենց ՝չարչարանքների մեջ:

15 Եվ արդ, եղավ այնպես, որ բեռները, որոնք դրվել էին Ալմայի ու նրա եղբայրների վրա, թեթևացան. այո՛, Տերն ՝ուժեղացրեց նրանց, որ նրանք կարողանային իրենց ՝բեռները հեշտությամբ տանել, և նրանք զվարթությամբ ու Գհամբերությամբ հնազանդվեցին Տիրոջ ողջ կամքին:

16 Եվ եղավ այնպես, որ այնքան մեծ էր նրանց հավատքն ու նրանց համբերությունը, որ Տիրոջ ձայնը կրկին եկավ նրանց՝ ասելով. Հանգիստ եղեք, քանզի էգուց ես ազատելու եմ ձեզ ճորտությունից:

17 Եվ նա ասաց Ալմային. Դու կզնաս այս ժողովրդի առաջից, և ես կզնամ քեզ հետ ու այս ժողովրդին կազատեմ ՝ճորտությունից:

18 Արդ եղավ այնպես, որ Ալման ու նրա ժողովուրդը գիշերվա ընթացքում ի մի հավաքեցին իրենց հոտերը, և նաև իրենց հատիկը. այո՛, նույնիսկ ամբողջ գիշերվա ընթացքում նրանք ի մի էին հավաքում իրենց հոտերը:

19 Եվ առավոտյան Տերը մի ՝խորը քուն բերեց Լամանացիների վրա, այո, և բոլոր նրանց վերակացուները խորը քնի մեջ էին:

20 Եվ Ալման ու նրա ժողովուրդը հեռացան անապատ. և երբ նրանք ճամփորդել էին ամբողջ օրը,

նրանք խփեցին իրենց վրանները մի հովտում, և նրանք կոչեցին հովիտը Ալմա, որովհետև նա էր առաջնորդում իրենց ճանապարհն անապատում:

21 Այո, և Ալմայի հովտում նրանք դուրս թափեցին իրենց ՝գոհուքյունն առ Աստված, որովհետև նա ողորմած էր եղել իրենց հանդեպ, և թեթևացրել էր իրենց բեռները, և ազատել էր իրենց ճորտությունից, քանզի իրենք ճորտության մեջ էին, և ոչ ոք չէր կարող ազատել իրենց, բացի, Տիրոջից՝ իրենց Աստծուց:

22 Եվ նրանք գոհություն հայտնեցին Աստծուն, այո՛, բոլոր նրանց տղամարդիկ և բոլոր նրանց կանայք ու բոլոր նրանց զավակները, որոնք կարող էին խոսել, բարձրացրեցին իրենց ձայները զովքերում իրենց Աստծո:

23 Եվ արդ Տերն ասաց Ալմային. Աճապարիք և քեզ ու այս ժողովրդին հանիր այս երկրից դուրս, քանզի Լամանացիներն արթնացել են և հետապնդում են քեզ. հետևաբար, քեզ այս երկրից դուրս հանիր, և ես կկանգնեցնեմ Լամանացիներին այս հովտում, որպեսզի նրանք ավելի հեռու չգան՝ այս ժողովրդին հետամուտ:

24 Եվ եղավ այնպես, որ նրանք հեռացան հովտից, և ձեռնարկեցին իրենց ճամփորդությունը դեպի անապատ:

25 Եվ նրանք անապատում տասներկու օր լինելուց հետո հասան Չարահեմլայի երկիրը. և թագավոր Մոսիան նրանց նույնպես ընդունեց ուրախությամբ:

14ա սոՒ Վկա:
բ սոՒ Չախորդություն:
15ա Մատ. ԺԱ.28–30:
բ Ալմա 31.38, 33.23:

գ ՎևոՒ 54.10:
սոՒ Համբերություն:
17ա սոՒ Գերություն:
19ա Ա Թագ. ԻԶ.12:

21ա սոՒ Շնորհակալ,
Շնորհակալություն,
Գոհաբանություն:

ԳԼՈՒԽ 25

Մոլորեքի հետնորդները Չարահեմ-լայում դատնում են Նեփիացիներ – Նրանք իմանում են Ալմայի ու Ձեմիֆի մասին – Ալման մկրտում է Լիմքիին և ողջ նրա ժողովրդին – Մոսիան լիազորում է Ալմային՝ կազմակերպել Աստծո Եկեղեցին: Մոտ 120թ. Ք.ծ.ա.:

Եւ արդ, թագավոր Մոսիան կարգադրեց, որ ողջ ժողովուրդն ի մի հավաքվի:

2 Արդ, Նեփիի գավակներից այնքան շատ չկային, կամ այնքան շատ նրանցից, ովքեր Նեփիի հետնորդներ էին, որքան կային Չարահեմլայի ժողովրդից, որը Մոլորեքի մի հետնորդ էր, և նրանցից, ովքեր եկել էին նրա հետ անապատ:

3 Եվ չկային այնքան շատ Նեփիի ժողովրդից, և Չարահեմլայի ժողովրդից, որքան կային Լամանացիներից. այո՛, նրանք քանակով նրանց կեսն էլ չէին:

4 Եվ արդ, Նեփիի ողջ ժողովուրդն ի մի հավաքվեց, և նաև Չարահեմլայի ողջ ժողովուրդը, և նրանք ի մի հավաքվեցին երկու խմբերով:

5 Եվ եղավ այնպես, որ Մոսիան կարդաց և կարգադրեց, որ իր ժողովրդի համար կարդային Ձեմիֆի հիշատակարանները. այո՛, նա կարդաց Ձեմիֆի ժողովրդի հիշատակարաններն այն ժամանակից ի վեր, ինչ նրանք թողել էին Չարահեմլայի երկիրը, մինչև նրանց կրկին վերադառնալը:

6 Եվ նա նաև կարդաց Ալմայի ու

նրա եղբայրների պատմությունը, և բոլոր նրանց չարչարանքներն՝ այն ժամանակից ի վեր, ինչ նրանք թողել էին Չարահեմլայի երկիրը, մինչև այն ժամանակը, երբ նրանք կրկին վերադարձան:

7 Եվ արդ, երբ Մոսիան վերջացրեց հիշատակարանների կարդալը, նրա ժողովուրդը, ովքեր մնացել էին երկրում, ցնցված էին զարմանքից ու ապշանքից:

8 Քանզի նրանք չգիտեին՝ ինչ մտածեն. քանի որ, երբ նրանք տեսան նրանց, որոնք ազատվել էին Մճորտությունից, լցվեցին անչափ մեծ ուրախությամբ:

9 Եվ բացի այդ, երբ նրանք մտածում էին իրենց եղբայրների մասին, որոնք սպանվել էին Լամանացիների կողմից, նրանք լցվում էին տխրությամբ, և նույնիսկ տխրության շատ արցունքներ թափեցին:

10 Եվ բացի դրանից, երբ նրանք մտածում էին Աստծո անմիջական բարության և նրա զորության մասին՝ Ալմային ու նրա եղբայրներին Լամանացիների ձեռքից և ճորտությունից ազատելիս, նրանք բարձրացնում էին իրենց ձայնն ու զոհություն հայտնում Աստծուն:

11 Եվ բացի այդ, երբ նրանք մտածում էին Լամանացիների մասին, որոնք իրենց եղբայրներն էին, նրանց մեղավոր ու աղտոտված վիճակի մասին, լցվում էին ճգով ու տվայտանքով՝ նրանց ճողովների բարօրության համար:

12 Եվ եղավ այնպես, որ նրանք, ովքեր Ամուղոնի ու նրա եղբայրների գավակներն էին, ովքեր կնության էին վերցրել Լամանացիների

25 2ա Օմնի 1.13–19:
բ Հեկ. 6.10:
ստ՝ Մոլորեկ:

8ա Մոսիա 22.11–13:
11ա Մոսիա 28.3–4,
Ալմա 13.27:

բ ստ՝ Հոզի – Հոզու
արժեքը:

դուստրերին, դժգոհ էին իրենց հայրերի վարքից, և նրանք չկամեցան այլևս կոչվել իրենց հայրերի անուններով, ուստի նրանք իրենց վրա վերցրեցին Նեփիի անունը, որպեսզի նրանք կարողանային կոչվել Նեփիի զավակներ ու համարվել նրանց թվում, ովքեր կոչվում էին Նեփիացիներ:

13 Եվ արդ, Չարահեմլայի ողջ ժողովուրդը՝ համարվում էր Նեփիացիների հետ, և դա՝ այն պատճառով, որ թագավորությունը չէր շնորհվել ոչ մեկին, բացի նրանցից, ովքեր Նեփիի հետնորդներ էին:

14 Եվ արդ, եղավ այնպես, որ երբ Մոսիան վերջ դրեց ժողովրդի համար խոսելն ու կարդալը, նա ցանկացավ, որ Ալման նույնպես խոսի ժողովրդի հետ:

15 Եվ Ալման խոսեց նրանց հետ, երբ նրանք ի մի էին հավաքվել մեծ խմբերով, և նա գնաց մի խմբից մյուսը, քարոզելով ժողովրդին ապաշխարություն և հավատք առ Տերը:

16 Եվ նա հորդորում էր Լիմքիի ժողովրդին ու իր եղբայրներին, բոլոր նրանց, ովքեր ազատվել էին ճորտությունից, որ նրանք հիշեն, որ դա Տերն էր, որ ազատել էր նրանց:

17 Եվ եղավ այնպես, որ հետո, երբ Ալման ժողովրդին շատ բաներ սովորեցրեց և նրանց հետ խոսելն ավարտեց, թագավոր Լիմքին ցանկացավ, որ ինքը մկրտվի. և ողջ նրա ժողովուրդը ցանկացավ, որ իրենք նույնպես մկրտվեն:

18 Հետևաբար, Ալման ջրի մեջ գնաց և՛ մկրտեց նրանց. այո, նա մկրտեց նրանց այն ձևով, ինչպես

նա մկրտել էր իր եղբայրներին Մորմոնի Զջրերում. այո՛, և բոլոր նրանք, ում նա մկրտեց, սկսեցին պատկանել Աստծո եկեղեցուն. և դա՝ Ալմայի խոսքերի հանդեպ նրանց հավատքի շնորհիվ:

19 Եվ եղավ այնպես, որ թագավոր Մոսիան թույլ տվեց Ալմային, որ նա Չարահեմլայի ամբողջ երկրով մեկ եկեղեցիներ հիմնադրի. և տվեց նրան՝ իշխանություն՝ կարգելու քահանաներ և ուսուցիչներ յուրաքանչյուր եկեղեցու վրա:

20 Արդ, այս արվեց, քանի որ այնքան շատ մարդիկ կային, որ բոլոր նրանք չէին կարող ղեկավարվել մեկ ուսուցչի կողմից. ոչ էլ կարող էին նրանք՝ բոլորը լսել Աստծո խոսքը մեկ հավաքում.

21 Հետևաբար, նրանք տարբեր խմբերով ի մի հավաքվեցին՝ կոչվելով եկեղեցիներ. յուրաքանչյուր եկեղեցի ունենալով իր քահանաներն ու իր ուսուցիչները, և ամեն մի քահանա քարոզելով խոսքն ըստ նրա, ինչպես այն հաղորդվում էր նրան Ալմայի բերանով:

22 Եվ այսպես, չնայած այնտեղ շատ եկեղեցիների առկայությանը, դրանք բոլորը մեկ՝ եկեղեցի էին, այո, այսիմբն՝ Աստծո եկեղեցին. քանզի բոլոր եկեղեցիներում ոչինչ չէր քարոզվում, բացի դա լինելը ապաշխարություն և հավատք առ Աստված:

23 Եվ այժմ, Չարահեմլայի երկրում կային յոթ եկեղեցիներ: Եվ եղավ այնպես, որ ովքեր որ ցանկանում էին վերցնել իրենց վրա՝ անունը Քրիստոսի, կամ Աստծո, նրանք միանում էին Աստծո եկեղեցիներին.

13ա Օմնի 1.19:
18ա Մոսիա 21.35:
բ Մոսիա 18.8–17:

19ա ՄՈՒ Քահանայություն:
22ա Մոսիա 18.17:
23ա ՄՈՒ Հիսուս Քրիստոս –

Հիսուս Քրիստոսի անունը մեզ վրա վերցնելը:

24 Եվ նրանք կոչվեցին Աստծո ժողովուրդ: Եվ Տերը դուրս թափեց իր Հոգին նրանց վրա, և նրանք օրհնվեցին, և բարգավաճեցին երկրում:

ԳԼՈՒԽ 26

Եկեղեցու շատ անդամներ անհավատների պատճառով ընկնում են մեղքի մեջ – Ալմային խոստացվում է հավերժական կյանք – Նրանք, ովքեր ապաշխարում են ու մկրտվում, ձեռք են բերում ներում – Եկեղեցու մեղք գործած անդամները, ովքեր ապաշխարում են և խոստովանում Ալմային ու Տիրոջը, կենդանան. այլապես, նրանք չեն համարվի Եկեղեցու ժողովրդի քվում: Մոտ 120–100թթ. Ք.ծ.ա.:

Արդ, եղավ այնպես, որ աճող սերնդից կային շատերը, ովքեր չէին կարողանում հասկանալ Բենիամին թագավորի խոսքերը՝ լինելով փոքր երեխաներ այն ժամանակ, երբ նա խոսել էր իր ժողովրդի հետ. և նրանք չէին հավատում իրենց հայրերի ավանդությանը:

2 Նրանք չէին հավատում, ինչ ասվել էր մեռելների հարության վերաբերյալ, ոչ էլ նրանք հավատում էին Քրիստոսի գալստին:

3 Եվ արդ, իրենց անհավատության պատճառով, նրանք չէին հասկանում Աստծո խոսքը. և նրանց սրտերը կարծրացած էին:

4 Եվ նրանք չէին կամենում մկրտվել. ոչ էլ կամենում էին միանալ եկեղեցուն: Եվ նրանք առանձին ժողովուրդ էին, ինչ

վերաբերում էր նրանց հավատքին, և այդ ժամանակից ի վեր մնացել էին այդպիսին, այսինքն՝ իրենց մարմնական ու մեղավոր վիճակում. բանգի նրանք չէին կամենում կանչել առ Տերը՝ իրենց Աստվածը:

5 Եվ արդ, Մոսիայի թագավորության ժամանակ նրանք Աստծո ժողովրդի կեսի չափ չկային. բայց եղբայրների միջև՝ Երկպառակությունների պատճառով, նրանք դարձան ավելի բազմաթիվ:

6 Քանզի եղավ այնպես, որ նրանք իրենց շողոքոք խոսքերով խաբեցին շատերին, ովքեր եկեղեցում էին և ստիպեցին նրանց շատ մեղքեր գործել. հետևաբար, անհրաժեշտ դարձավ, որ նրանք, ովքեր մեղք էին գործում, ովքեր եկեղեցում էին, պետք է խրատվեին եկեղեցու կողմից:

7 Եվ եղավ այնպես, որ նրանք բերվեցին քահանաների առաջ, և ուսուցիչների կողմից հանձնվեցին քահանաներին. և քահանաները բերեցին նրանց Ալմայի առաջ, որը՝ քահանայապետն էր:

8 Արդ, թագավոր Մոսիան Ալմային տվել էր իշխանություն եկեղեցու վրա:

9 Եվ եղավ այնպես, որ Ալման չզիտեր նրանց մասին. բայց նրանց դեմ կային շատ վկաներ. այդ, մարդիկ կանգնում և տալիս էին բազում վկայություններ նրանց անօրինությունների մասին:

10 Արդ, որևէ այդպիսի բան նախկինում չէր պատահել եկեղեցում. հետևաբար, Ալման իր հոգում խռովվեց և կարգադրեց, որ նրանք բերվեին թագավորի առաջ:

11 Եվ նա ասաց թագավորին.

24ա սու՛ Ուխտ:
26 3ա սու՛ Հասկանալ:
4ա սու՛ Բնական մարդ:

5ա սու՛ Ուրացություն.
Հակառակություն:
6ա Ալմա 5.57–58, 6.3:

սու՛ Զգուշացնել,
Զգուշացում:
7ա Մոսիա 29.42:

Ահա, այստեղ են շատերը, որոնց մենք բերել ենք քո առաջ, ովքեր մեղադրվում են իրենց եղբայրների կողմից. այո՛, և նրանք բռնվել են տարբեր անօրինությունների մեջ: Եվ նրանք չեն ապաշխարում իրենց անօրինություններից. հետևաբար, մենք բերել ենք նրանց քո առաջ, որպեսզի դու դատես նրանց՝ ըստ իրենց հանցանքների:

12 Բայց թագավոր Մոսիան ասաց Ալմային. Ահա, ես նրանց չեմ դատում. ուստի, ես ^ահանձնում եմ նրանց քո ձեռքը՝ դատվելու:

13 Եվ արդ, Ալմայի հոգին կրկին խռովվեց. և նա գնաց ու հարցրեց Տիրոջը, թե ի՞նչ պիտի աներ ինքն այս հարցի վերաբերյալ, քանզի նա վախենում էր, որ սխալ վարվեր Աստծո աչքում:

14 Եվ եղավ այնպես, որ իր ողջ հոգին Աստծուն դուրս թափելուց հետո, Տիրոջ ձայնը եկավ նրան՝ ասելով.

15 Օրհնված ես դու, Ալմա՛, և օրհնված եմ նրանք, ովքեր մկրտվեցին Մորմոնի ^աջրերում: Դու օրհնված ես՝ իմ ծառա Աբի-նադիի սուկ խոսքերի հանդեպ քո խիստ մեծ ^ահավատքի պատճառով:

16 Եվ օրհնված են նրանք իրենց խիստ մեծ հավատքի պատճառով՝ սուկ առ այն խոսքերը, որոնք դու խոսել ես նրանց համար:

17 Եվ օրհնված ես դու, որովհետև դու այս ժողովրդի մեջ ^աեկեղեցի հիմնեցիր. և նրանք

պիտի հաստատվեն, և նրանք պիտի լինեն իմ ժողովուրդը:

18 Այո՛, օրհնված է այս ժողովուրդը, որոնք հոժար են կրել իմ ^աանունը, քանզի իմ անունով պիտի նրանք կոչվեն. և նրանք իմն են:

19 Եվ քանի որ դու հարցրեցիր ինձ օրինազանցի վերաբերյալ, օրհնվա՛ծ ես դու:

20 Դու իմ ծառան ես. և ես ուխտում եմ քեզ հետ, որ դու կունենաս ^ահավերժական կյանք. և դու պիտի ծառայես ինձ և առաջ գնաս իմ անունով, և պիտի ի մի հավաքես իմ ոչխարներին:

21 Եվ նա, ով կլսի իմ ձայնը, պիտի լինի իմ ^աոչխարը. և նրան դու պիտի ընդունես եկեղեցի, և նրան ես նույնպես կընդունեմ:

22 Քանզի, ահա, այս իմ եկեղեցին է. ով որ ^ամկրտվի, պիտի մկրտվի ապաշխարության համար: Եվ ում, որ դու ընդունես, պիտի հավատա իմ անունին. և նրան ես մեծահոգաբար ^ակններեմ:

23 Քանզի այդ ես եմ, որ ^ավերցրնում է իր վրա աշխարհի մեղքերը. քանզի այդ ես եմ, որ ^աստեղծել եմ նրանց. և այդ ես եմ, որ շնորհում եմ մի տեղ՝ իմ աջ կողմում, նրան, ով հավատում է միևնու վերջ:

24 Քանզի, ահա, իմ անունով են նրանք կոչվում. և եթե նրանք ^աճանաչեն ինձ, նրանք պիտի առաջ գան, և հավերժ մի տեղ պիտի ունենան իմ աջ կողմում:

25 Եվ պիտի լինի այնպես, որ երբ ^աերկրորդ փողը հնչի, այն

12ա Վև.ՈՒ 42.78–93:
 15ա Մոսիա 18.30:
 բ Մոսիա 17.2:
 սուր Հավատք:
 17ա Մոսիա 25.19–24:
 18ա Մոսիա 1.11, 5.8:
 սուր Հիսուս Քրիստոս –
 Հիսուս Քրիստոսի

անունը մեզ վրա
 վերցնելը:
 20ա սուր Ընտրյալ.
 Ընտրություն.
 Հավերժական կյանք:
 21ա սուր Բարի հովիվ:
 22ա 2 Նեփի 9.23:
 սուր Մկրտություն,

Մկրտել:
 բ սուր Ներել. Մեղքերի
 թողություն:
 23ա սուր Քավիչ:
 բ սուր Ստեղծել,
 Ստեղծում:
 24ա Հովի. ԺԷ.3:
 25ա Վև.ՈՒ 88.99, 109:

ժամանակ նրանք, որ երբեք չեն ^բճանաչել ինձ, պիտի առաջ զան և կանգնեն իմ առջև:

26 Եվ այն ժամանակ պիտի նրանք իմանան, որ ե՛ս եմ Տերը, իրենց Աստվածը, որ ե՛ս եմ իրենց Քավիչը. բայց նրանք չեն կամենա փրկագնվել:

27 Եվ այն ժամանակ ես նրանց կհայտարարեմ, որ ես երբեք չեմ ^աճանաչել նրանց. և նրանք պիտի ^բհեռանան դեպի դևի ու նրա հրեշտակների համար պատրաստված ^գհավիտենական կրակը:

28 Հետևաբար, ես ասում եմ ձեզ, որ ով չի կամենա ^ալսել իմ ձայնը, նրան դուք չպե՛տք է ընդունեք իմ եկեղեցին, քանզի նրան ես չեմ կամենա ընդունել վերջին օրը:

29 Հետևաբար, ես ասում եմ քեզ՝ Գնա՛. և ով որ օրինագանցի իմ դեմ, նրան դու պիտի ^ադատես ^բըստ այն մեղքերի, որոնք նա գործել է. և եթե նա ^գխոստովանի իր մեղքերն իմ և քո առաջ, և ^դապաշխարի իր սրտի անկեղծությամբ, նրա՛ն պիտի դու ^եններես, և ես կներեմ նրան նույնպես:

30 Այո՛, և ^աորքան հաճախ որ իմ ժողովուրդն ^բապաշխարի, ես կներեմ նրանց, իրենց զանցանքները՝ իմ դեմ:

31 Եվ դուք նույնպես պետք է ^աներեք մեկը մյուսին ձեր զանցանքները, քանզի, ճշմարիտ եմ ասում ձեզ՝ նա, որ չի ներում իր

մերձավորի զանցանքները, երբ նա ասում է, որ ինքն ապաշխարում է, նույնը դատապարտության տակ է բերում իրեն:

32 Արդ, ես ասում եմ քեզ՝ Գնա՛. և ով որ չի կամենա իր մեղքերից ապաշխարել, նույնը չպիտի համարվի իմ ժողովրդի թվում. և սա պիտի կատարվի այս ժամանակից ի վեր:

33 Եվ եղավ այնպես, երբ Ալման լսեց այս խոսքերը, նա գրի առավ դրանք, որ ունենար դրանք, և որ նա կարողանար դատել այդ եկեղեցու ժողովրդին՝ ըստ Աստծո պատվիրանների:

34 Եվ եղավ այնպես, որ Ալման գնաց ու համաձայն Տիրոջ խոսքի դատեց նրանց, որոնք բռնվել էին անօրինության մեջ:

35 Եվ ովքեր որ ապաշխարեցին իրենց մեղքերից ու ^ախոստովանեցին դրանք, նրանց նա համարեց եկեղեցու ժողովրդի թվում.

36 Իսկ նրանք, ովքեր չկամեցան խոստովանել իրենց մեղքերը և ապաշխարել իրենց անօրինությունից, նրանք չհամարվեցին եկեղեցու ժողովրդի թվում, և նրանց անունները ^աջնջվեցին:

37 Եվ եղավ այնպես, որ Ալման կարգավորեց եկեղեցու բոլոր գործերը. և նրանք սկսեցին նորից խաղաղություն ունենալ ու չափազանց բարգավաճել եկեղեցու գործերում, զգուշորեն քայլելով

25բ ՎևոՒ 76.81–86:
27ա Մատ. Է.21–23:
բ Ղուկ. ԺԳ.27:
գ ՎևոՒ 76.43–44:
28ա2 Նեփի 9.31,
ՎևոՒ 1.14:
29ա սոՒ Դատել,
Դատաստան:
բ սոՒ Հաշիվ, Պատասխանատու, Պատասխանատու,

խանատվություն:
գ 3 Նեփի 1.25:
սոՒ Խոստովանել,
Խոստովանություն:
դ սոՒ Ապաշխարել,
Ապաշխարություն:
ե սոՒ Ներել:
30ա Մոր. 6.8:
բ Եզեկ. ԼԳ.11, 15–16,
Գոր. Գ.19–20,

Մոսիա 29.19–20:
31ա3 Նեփի 13.14–15,
ՎևոՒ 64.9–10:
35ա սոՒ Խոստովանել,
Խոստովանություն:
36ա Ել. ԼԲ.33,
Ալմա 1.24:
սոՒ Կյանքի գիրք.
Հեռացում:

Աստծո առաջ, ընդունելով շատերին և մկրտելով շատերին:

38 Եվ արդ, Ալման ու նրա գործակիցները, ովքեր եկեղեցու վրա էին, արեցին բոլոր այս բաները, քայլելով ողջ ջանասիրությամբ, Աստծո խոսքը սովորեցնելով բոլոր բաներում, տանելով ամեն ձևի չարչարանքներ, լինելով հալածված բոլոր նրանց կողմից, ովքեր չէին պատկանում Աստծո եկեղեցուն:

39 Եվ նրանք խրատում էին իրենց եղբայրներին. և իրենք նույնպես ՝ խրատվում էին, ամեն մեկը՝ Աստծո խոսքով, ըստ իր մեղքերի, կամ այն մեղքերի, որ նա գործել էր, լինելով պատվիրված Աստծո կողմից՝ առանց դադարելու ^բաղոթել և ^գգոհություն հայտնել բոլոր բաներում:

ԳԼՈՒԽ 27

Մոսիան արգելում է հալածանքը և հավասարություն հայտարարում – Ալմա կրտսերը և Մոսիայի չորս որդիները ջանում են կործանել Եկեղեցին – Մի հրեշտակ է հայտնվում և հրամայում նրանց դադարեցնել իրենց չար ուղին – Ալման պապանծվում է – Ողջ մարդկությունը պետք է վերստին ծնվի, որպեսզի փրկություն ձեռք բերի – Ալման և Մոսիայի որդիները հայտարարում են ավետիք: Մոտ 100–92թթ. Ք.ծ.ա.:

Եվ արդ, եղավ այնպես, որ հալածանքները, որոնց ենթարկվում էր եկեղեցին անհավատների կողմից,

դարձան այնքան մեծ, որ եկեղեցին սկսեց տրուցալ և բողոքել իրենց առաջնորդներին այդ հարցի առնչությամբ. և նրանք բողոքեցին Ալմային: Եվ Ալման հարցը դրեց իրենց թագավոր Մոսիայի առջև: Եվ Մոսիան խորհրդակցեց իր քահանաների հետ:

2 Եվ եղավ այնպես, որ թագավոր Մոսիան մի հրովարտակ ուղարկեց շրջակա երկրով մեկ, որ չպետք է որևէ անհավատ ^ահալածեր նրանցից որևէ մեկին, ով պատկանում է Աստծո եկեղեցուն:

3 Եվ ամենուրեք մի խիստ հրաման կար՝ բոլոր եկեղեցիներին, որ նրանց մեջ չպետք է լիներ ոչ մի հալածանք, որ պետք է լիներ ^ահավասարություն բոլոր մարդկանց միջև.

4 Որ նրանք չպիտի թույլ տային ոչ մի հպարտություն, ոչ էլ մեծամտություն խռովել իրենց ^աանդորրը. որ ամեն մարդ պիտի ^բգնահատեր իր մերձավորին, ինչպես ինքն իրեն՝ տքնելով իր սեփական ձեռքերով իրեն պահելու համար:

5 Այո՛, և բոլոր նրանց քահանաները և ուսուցիչները պիտի ^ատքնեին իրենց սեփական ձեռքերով, իրենց պահելու համար, բոլոր դեպքերում, եթե դա հիվանդության, կամ մեծ չքավորության ժամանակ չէր. և անելով այս բաները, նրանք առատացան Աստծո ^բշնորհի մեջ:

6 Եվ երկրում կրկին սկսեց լինել մեծ խաղաղություն. և ժողովուրդը սկսեց դառնալ խիստ մեծաթիվ և

39ա սուր Զգուշացնել, Զգուշացում:
բ 2 Նեփի 32.8–9:
գ սուր Ընորհակալ, Ընորհակալություն,

Գոհաբանություն:
27 2ա սուր Հալածել, Հալածանք:
3ա Մոսիա 23.7, 29.32:
4ա սուր Խաղաղություն:

բ սուր Գնահատել:
5ա Մոսիա 18.24, 26:
բ սուր Ընորի:

սկսեց տարածվել ամենուրեք՝ երկրի երեսին, այո՛, դեպի հյուսիս և դեպի հարավ, դեպի արևելք և դեպի արևմուտք՝ կառուցելով մեծ քաղաքներ ու գյուղեր երկրի բոլոր կողմերում:

7 Եվ Տերն այցելում էր նրանց ու բարգավաճեցնում նրանց, և նրանք դարձան մի մեծ ու հարուստ ժողովուրդ:

8 Արդ, Մոսիայի որդիները համարվում էին անհավատների թվում. և նաև Ալմայի՝ Պորդիներից մեկը համարվում էր նրանց թվում, ինքը կոչված լինելով Ալմա, ինչպես իր հայրը. սակայն նա դարձավ շատ ամբարիշտ ու թուապաշտ մի մարդ: Եվ նա մի պերճախոս մարդ էր, և նա շատ էր շողոքորթում ժողովրդին. հետևաբար, նա առաջնորդեց ժողովրդից շատերին գործել իր անօրինությունների համաձայն:

9 Եվ նա Աստծո եկեղեցու բարգավաճման գործում դարձավ մի մեծ խոչընդոտ՝ աղոթանալով ժողովրդի սրտերը, առաջացնելով մեծ երկպառակություններ ժողովրդի մեջ, Աստծո թշնամուն հնարավորություն տալով գործադրել իր իշխանությունը նրանց վրա:

10 Եվ արդ, եղավ այնպես, որ մինչ նա շրջում էր ամենուր, որպեսզի կործանի Աստծո եկեղեցին, քանզի նա Մոսիայի որդիների հետ գաղտնի շրջում էր ամենուր՝ ջանալով կործանել եկեղեցին ու մոլորեցնել Տիրոջ ժողովրդին, հակառակ Աստծո պատվիրանների, կամ նույնիսկ թագավորի,

11 Եվ ինչպես ես ասացի ձեզ, մինչ նրանք շրջում էին ամենուր՝ ապաստամբելով Աստծո դեմ, ահա, Տիրոջ թիռերով հայտնվեց նրանց. և նա իջավ, կարծես թե ամպի մեջ. և նա խոսեց, կարծես թե որոտի ձայնով, որից գետինը ցնցվեց, որի վրա նրանք կանգնած էին.

12 Եվ այնքան մեծ էր նրանց զարմանքը, որ նրանք ընկան գետնին, և չհասկացան խոսքերը, որոնք նա ասաց նրանց:

13 Սակայն նա կրկին գոչեց՝ ասելով. Ալմա, բարձրացի՛ր և առաջ կանգնիր, ուրեմն, ինչո՞ւ ես դու հալածում Աստծո եկեղեցին: Քանզի Տերն ասել է. «Սա իմ եկեղեցին է, և ես կհաստատեմ այն. և ոչ մի բան չի տապալի այն, բացի իմ ժողովրդի օրինազանցությունից:

14 Եվ բացի այդ, հրեշտակն ասաց. Ահա, Տերը լսել է իր ժողովրդի՝ աղոթքները և նաև իր ծառա Ալմայի աղոթքները, որը քո հայրն է. քանզի նա աղոթել է մեծ հավատքով՝ քեզ համար, որ դու կարողանաս բերվել ճշմարտության իմացությանը. հետևաբար, այս նպատակով եմ ես եկել հանդելու քեզ Աստծո գորության և իշխանության վերաբերյալ, որպեսզի կար ծառաների՝ աղոթքները նրա բողոքման պատասխանվել՝ համաձայն իրենց հավատքի:

15 Եվ արդ, ահա կարո՞ղ ես դու վիճարկել Աստծո գորությունը: Քանզի, ահա, մի՞թե իմ ձայնը չի ցնցում գետինը: Եվ մի՞թե դուք չեք կարողանում նաև տեսնել ինձ

<p>8ա սո՛ւ Ալմա՝ Ալմայի որդի: բ սո՛ւ Կռապաշտություն: 9ա Բ Թագ. ԺԵ.1-6:</p>	<p>11ա սո՛ւ Ապաստամբություն: բ սո՛ւ Հրեշտակներ: գ Գոր. Թ.1-9, Ալմա 8.15:</p>	<p>13ա սո՛ւ Հիսուս Քրիստոս – Եկեղեցու գլուխ: 14ա Ալմա 10.22: բ Մորմ. 9.36-37:</p>
--	--	---

ծեր առջև: Եվ ես ուղարկված եմ Աստծուց:

16 Արդ, ես ասում եմ քեզ. Գնա՛ր և հիշիր քո հայրերի գերությունը Էլամի երկրում և Նեփիի երկրում. և հիշի՛ր որքան մեծ բաներ նա արեց նրանց համար. քանզի նրանք ճորտության մեջ էին, և նա՝ «ազատեց նրանց: Եվ այժմ, ես ասում եմ քեզ, Ա՛լմա, գնա՛ քո ճանապարհով, և այլևս մի՛ ջանա կործանել եկեղեցին, որ նրանց աղոթքները կարողանան պատասխանվել, և արա՛ այս, եթե նույնիսկ դու կամենում ես ինքդ վտարվել:

17 Եվ արդ եղավ այնպես, որ սրանք վերջին խոսքերն էին, որոնք հրեշտակն ասաց Ալմային, և նա հեռացավ:

18 Եվ արդ, Ալման և նրանք, ովքեր նրա հետ էին, նորից ընկան գետնին, քանզի մեծ էր նրանց զարմանքը. քանզի իրենց իսկ աչքերով նրանք տեսան Տիրոջ հրեշտակի. և նրա ձայնը որոտի պես էր, որը ցնցեց գետինը. և նրանք գիտեին, որ չկար ոչինչ, բացի Աստծո գործությունից, որ կարողանար ցնցել գետինը և ստիպել այն դողալ, կարծես թե մասերի էր բաժանվելու:

19 Եվ արդ, Ալմայի զարմանքն այնքան մեծ էր, որ նա պապանձվեց, այնպես որ չկարողացավ բացել իր բերանը. այո, և նա այնքան թուլացավ, որ չէր կարողանում շարժել իր ձեռքերը. հետևաբար, նրանք, որ նրա հետ էին, վերցրեցին նրան ու տարան՝ անօգնական, մինչև որ դրեցին իր հոր առջև:

20 Եվ նրանք պատմեցին նրա հորն այն բոլորը, ինչ պատահել էր նրանց հետ. և նրա հայրն ուրախացավ, քանզի նա գիտեր, որ դա Աստծո գործությունն էր:

21 Եվ նա կարգադրեց, որ բազմությունն ի մի հավաքվեր, որ նրանք կարողանային վկա լինել, ինչ որ Տերն արել էր իր որդու համար, և նաև նրանց համար, որոնք նրա հետ էին:

22 Եվ նա կարգադրեց, որ քահանաներն ի մի հավաքվեին. և նրանք սկսեցին ծոմ պահել ու աղոթել Տիրոջը՝ իրենց Աստծուն, որ նա բացեր Ալմայի բերանը, որ նա կարողանար խոսել, և նաև, որ նրա մարմինը ստանար իր ուժը, որ ժողովրդի աչքերը կարողանային բացվել՝ տեսնելու և իմանալու Աստծո բարության ու փառքի մասին:

23 Եվ եղավ այնպես, որ նրանց երկու օրվա և երկու գիշերվա ընթացքում ծոմ պահելուց ու աղոթելուց հետո, Ալմայի մարմինը ստացավ իր ուժը, և նա կանգնեց ու սկսեց խոսել նրանց հետ՝ խնդրելով նրանց լինել հանգիստ:

24 Քանզի, ասաց նա. Ես ասալախարել եմ իմ մեղքերից և «փրկագնվել Տիրոջ կողմից. ահա, ես ծնվել եմ Հոգուց:

25 Եվ Տերն ասաց ինձ. Մի զարմացիր, որ ողջ մարդկությունը, այո՛, տղամարդիկ ու կանայք, բոլոր ազգերը, ցեղերը, լեզուները և ժողովուրդները պիտի վերստին ՞ծնվեն. այո՛, Աստծո՛ւց ծնվեն, իրենց ^բմարմնական ու ընկած վիճակից ^գփոխված դեպի արդարու-

16ա Մոսիա 23.1–4:
24ա2 Նեփի 2.6–7:
սո՛ր Փրկագնել,
Փրկագնված,

Փրկագնում:
25ա Հռովմ. 9.3–11,
Մոսիա 5.7, Ալմա 5.14,
Մովսես 6.59:

սո՛ր Վերստին ծնված,
Աստծուց ծնված:
^բ սո՛ր Մարմնական:
^գ Մոսիա 3.19, 16.3:

քյան մի վիճակի, փրկագնվելով Աստծո կողմից, դառնալով նրա որդիներն ու դուստրերը.

26 Եվ այսպես, նրանք դառնում են նոր արարածներ. և մինչև նրանք չանեն այս, նրանք ^աոչ մի կերպ չեն կարող ժառանգել Աստծո արքայությունը:

27 Ես ասում եմ ձեզ, եթե այդպես չլինի, նրանք պետք է վտարվեն, և այս ես գիտեմ, քանի որ ես համարյա վտարված էի:

28 Այնուամենայնիվ, շատ նեղություններով անցնելուց հետո, ապաշխարելով մինչև մահվան եզրը, Տերը ողորմածությամբ հարմար տեսավ դուրս կորզել ինձ մի ^ահավիտենական այրումից, և ես ծնվել եմ Աստծուց:

29 Իմ հոգին դառը մաղձից ու անօրինության կապանքներից փրկագնվել է: Ես անենախավար վիհի մեջ էի. բայց այժմ ես տեսնում եմ հրաշալի լույսն Աստծո: Իմ հոգին ^ապրկվել էր հավերժական տանջանքից. բայց ես դուրս կորզվեցի, և իմ հոգին այլևս չի ցավում:

30 Ես ուրացել էի իմ Քավչին ու հերքել այն, ինչի մասին խոսվել էր իմ հայրերի կողմից. բայց այժմ, որպեսզի նրանք կարողանան կանխատեսել, որ նա գալու է, և որ նա հիշում է իր արարչագործության ամեն արարածի, նա իրեն հայտնի կդարձնի բոլորին:

31 Այո, նրա առաջ ^աամեն ծունկ պիտի ծավլի և ամեն լեզու խոստովանի: Այո, արդարև, վերջին օրը, երբ բոլոր մարդիկ պիտի

կանգնեն՝ ^ադատվելու նրանից, այն ժամանակ նրանք պիտի խոստովանեն, որ նա՝ է Աստված. այն ժամանակ նրանք, ովքեր ^առանց Աստծո են ապրում աշխարհում, պիտի խոստովանեն, որ հավիտենական պատժի դատաստանն արդար է նրանց վրա. և նրանք պիտի ցնցվեն ու դողան և ընկրկեն նրա ^աամենատես աչքի հայացքի ներքո:

32 Եվ արդ, եղավ այնպես, որ Ալման ու նրանք, ովքեր այն ժամանակ Ալմայի հետ էին, երբ հրեշտակը հայտնվեց նրանց, սկսեցին այդ ժամանակից սովորեցնել ժողովրդին՝ ճամփորդելով շրջակա ողջ երկրով մեկ, հրատարակելով բոլոր մարդկանց այն բաները, որոնք նրանք լսել էին ու տեսել, և քարոզելով Աստծո խոսքը շատ նեղությունների մեջ, լինելով խիստ հավածված նրանց կողմից, ովքեր անհավատներ էին, լինելով ծեծված նրանցից շատերի կողմից:

33 Բայց չնայած այս բոլորին, նրանք մեծ սփոփանք տվեցին եկեղեցուն՝ ամրապնդելով նրանց հավատքը, և երկայնամտությամբ ու շատ չարարանքով հորդորելով նրանց պահել Աստծո պատվիրանները:

34 Եվ նրանցից չորսը Մոսիայի ^աորդիներն էին. և նրանց անուններն էին Ամնոն, Ահարոն, Օմներ և Հիմնի. սրանք էին Մոսիայի որդիների անունները:

35 Եվ նրանք ճամփորդում էին ողջ Չարահեմլայի երկրով մեկ, և

26ա Հովհ. 9.5:
28ա2 Նեփի 9.16:
29ա Մոսիա 2.38:
31ա Փիլ. Բ.9–11,
Մոսիա 16.1–2,

ՎևՈՒ 88.104:
p սոՒ Հիսուս Քրիստոս –
Դատավոր:
q Ալմա 41.11:
η սոՒ Աստված,

Աստվածազուլիս:
34ա սոՒ Ամնոն՝ Մոսիայի
որդի:

ողջ ժողովրդի մեջ, ովքեր քազավոր Մոսիայի իշխանության տակ էին, եռանդուն ձգտելով փոխհատուցել բոլոր վնասները, որոնք նրանք հասցրել էին եկեղեցուն, խոստովանելով բոլոր իրենց մեղքերը, և հրատարակելով բոլոր բաները, որոնք նրանք տեսել էին, և բացատրելով մարգարեություններն ու սուրբ գրքերը բոլոր նրանց, ովքեր ուզում էին լսել նրանց:

36 Եվ այսպիսով, նրանք գործիքներ էին Աստծո ձեռքում՝ շատերին ճշմարտության իմացությանը բերելիս, այո, իրենց Քավչի իմացությանը:

37 Եվ որքան օրհնված են նրանք: Քանզի նրանք խաղաղություն ^ահրատարակեցին. նրանք հրատարակեցին ավետիք ^բբարիքի. և նրանք հայտարարեցին ժողովրդին, որ Տերն է քազավորում:

ԳԼՈՒԽ 28

Մոսիայի որդիները գնում են քարոզելու Լամանացիներին – Օգտագործելով տեսանողի երկու քարերը՝ Մոսիան քարզանում է Հարեղական թիթեղները: Մոտ 92բ. Ք.ծ.ա.:

Արդ եղավ այնպես, որ հետո, երբ Մոսիայի ^աորդիներն արեցին բոլոր այս բաները, նրանք իրենց հետ մի փոքր խումբ վերցրեցին և վերադարձան իրենց հոր՝ քազավորի մոտ ու խնդրեցին նրան, որ թույլ տար իրենց՝ գնալ նրանց հետ, ում ընտրել էին, դեպի ^բՆեփիի

երկիրը, որ քարոզեին այն բաները, որոնք նրանք լսել էին, և որ նրանք կարողանային Աստծո խոսքը հաղորդել իրենց եղբայրներին Լամանացիներին,

2 Որ միգուցե կարողանային նրանց բերել Տիրոջ՝ իրենց Աստծո իմացությանը, և ապացուցել նրանց իրենց հայրերի անօրինության մասին. և որ միգուցե կարողանային բուժել նրանց իրենց ^աատելությունից հանդեպ Նեփիացիները, որ նրանք նույնպես կարողանային բերվել՝ ուրախանալու Տիրոջով՝ իրենց Աստծով, որ նրանք կարողանային դառնալ բարյացակամ մեկը մյուսի հանդեպ, և որ այլևս չլինեին հակառակություններ ողջ երկրում, որը Տերը՝ իրենց Աստվածը, տվել էր իրենց:

3 Արդ, նրանք ուզում էին, որ փրկությունը հայտարարվեր ամեն մի արարածի, քանզի նրանք չէին կարող ^ատանել, որ որևէ մարդկային ^բհոգի պիտի կորչեր. այո, նույնիսկ սոսկ այն միտքը, որ որևէ հոգի պիտի տաներ ^գանվերջ տանջանք, ստիպում էր նրանց ցնցվել ու դողալ:

4 Եվ այսպես Տիրոջ Հոգին ներգործեց նրանց վրա, քանզի նրանք մեղսավորներից հենց ^աամենանողկալին էին: Եվ Տերը հարմար տեսավ իր անսահման ^բողորմությանը խնայել նրանց. սակայն իրենց անօրինությունների պատճառով նրանք տարան հոգու մեծ տվայտանք՝ շատ տառապելով

37ա Ես. ԾԲ.7,
Մոսիա 15.14–17:
ստ՝ Քարոզել:
բ ստ՝ Ավետարան:
28 1ա Մոսիա 27.34:
բ Օմնի 1.12–13,

Մոսիա 9.1:
2ա Հակոբ 7.24:
3ա Ալմա 13.27,
3 Նեփի 17.14,
Մովսես 7.41:
բ ստ՝ Հոգի – Հոգու

արժեքը:
գ Հակոբ 6.10,
ՎՆՈՒ 19.10–12:
4ա Մոսիա 27.10:
բ ստ՝ Ողորմած,
Ողորմություն:

ու վախենալով, որ կվտարվեին հավիտյան:

5 Եվ եղավ այնպես, որ նրանք աղաչեցին իրենց հորը շատ օրեր, որ կարողանային գնալ վեր՝ դեպի Նեփիի երկիրը:

6 Եվ թագավոր Մոսիան գնաց ու հարցրեց Տիրոջը, թե նա արդյոք պե՞տք է թույլ տար իր որդիներին՝ գնալ Լամանացիների մեջ՝ քարոզելու խոսքը:

7 Եվ Տերն ասաց Մոսիային. Թույլ տուր գնան, քանզի շատերը կհավատան նրանց խոսքերին, և նրանք հավերժական կյանք կունենան. և ես չկազատեմ քո որդիներին Լամանացիների ձեռքից:

8 Եվ եղավ այնպես, որ Մոսիան թույլ տվեց, որ նրանք գնան ու ամեն ըստ իրենց խնդրանքի:

9 Եվ նրանք ՝ձեռնարկեցին իրենց ճամփորդությունն անպատով՝ գնալու վեր, քարոզելու խոսքը Լամանացիների մեջ. և ես կտամ նրանց գործերի մասին մի ՝պատմություն հետագայում:

10 Արդ, թագավոր Մոսիան չուներ մեկը, որին շնորհեր թագավորությունը, քանզի չկար իր որդիներից որևէ մեկը, որ կամենար ընդունել թագավորությունը:

11 Հետևաբար, նա վերցրեց հիշատակարանները, որոնք փորագրված էին արույրե ՝քիթեղների վրա, և նաև Նեփիի քիթեղները, և բոլոր բաները, որոնք նա պահել ու պահպանել էր Աստծո պատվիրանների համաձայն, հետո, երբ թարգմանեց ու գրել տվեց այն հիշատակարանները, որ գտել էր Լիմքիի ժողովուրդը, որոնք

ուսկե ՝քիթեղների վրա էին, որոնք նրան էին հանձնվել Լիմքիի ձեռքով.

12 Եվ այս նա արեց՝ իր ժողովրդի մեծ փափագի պատճառով. քանզի նրանք շատ էին փափագում իմանալ այն ժողովրդի մասին, որոնք կործանվել էին:

13 Եվ արդ, նա թարգմանեց դրանք այն երկու ՝քարերի միջոցով, որոնք ամրացված էին աղեղի երկու օղերին:

14 Արդ, այս բաները պատրաստված էին ի սկզբանե և սերնդե-սերունդ փոխանցվում էին՝ լեզուներ թարգմանելու նպատակով.

15 Եվ դրանք Տիրոջ ձեռքով պահված ու պահպանված են եղել, որպեսզի նա բացահայտեր ամեն մի արարածի, որը կտիրեր երկրին, իր ժողովրդի անօրինություններն ու պղծությունները.

16 Եվ ով որ ունի այս բաները, կոչվում է ՝տեսանող, ինչպես հին ժամանակներում:

17 Արդ հետո, երբ Մոսիան ավարտեց այս հիշատակարանները թարգմանելը, ահա, այն տալիս էր այն ժողովրդի պատմությունը, որը ՝կործանվել էր, նրանց կործանման ժամանակից ետ՝ դեպի ՝մեծ աշտարակի կառուցումը, այն ժամանակը, երբ Տերը ՝խառնեց ժողովրդի լեզուն, և նրանք ցրվեցին ամենուր՝ ողջ երկրի երեսով, այո՛, և նույնիսկ այդ ժամանակից ետ, մինչև Ադամի ստեղծումը:

18 Արդ, այս պատմությունն անչափ սգալու պատճառ դարձավ Մոսիայի ժողովրդի համար, այո, նրանք լցված էին վշտով.

<p>7ա Ավմա 19.22-23: 9ա Ավմա 17.6-9: բ Ավմա 17-26: 11ա սու՝ Արույրե</p>	<p>Թիթեղներ: բ սու՝ Ոսկե քիթեղներ: 13ա սու՝ Ուրիմ ու Թումիմ: 16ա Մոսիա 8.13-18:</p>	<p>սու՝ Տեսանող: 17ա Մոսիա 8.7-12: բ Եթեր 1.1-5: գ Ծն. ԺԱ.6-9:</p>
--	--	---

այնուամենայնիվ այն տվեց նրանց շատ գիտելիք, որով նրանք ուրախացան:

19 Եվ այս պատմությունը կգրվի հետագայում. քանզի ահա, անհրաժեշտ է, որ ողջ ժողովուրդն իմանա այն բաները, որոնք գրված են այս պատմության մեջ:

20 Եվ արդ, ինչպես ես ասացի ձեզ, թագավոր Մոսիան, այս բաներն անելուց հետո, վերցրեց արույրե թիթեղները, և բոլոր բաները, որոնք պահել էր, և տվեց դրանք Ալմային, որն Ալմայի որդին էր. այո՛, բոլոր հիշատակարաններն ու նաև շմեկնիչները, և տվեց դրանք նրան ու հրամայեց նրան, որ նա պահի ու Գլախպանի դրանք, և նաև պահի ժողովրդի մի հիշատակարան՝ փոխանցելով դրանք սերնդե-սերունդ, ճիշտ ինչպես դրանք փոխանցվել էին այն ժամանակից ի վեր, ինչ Լեքին թողել էր Երուսաղեմը:

ԳԼՈՒԽ 29

Մոսիան ատաջարկում է, որ թագավորի փոխարեն դատավորներ ընտրվեն – Անարդար թագավորները մեղքի մեջ են գցում իրենց ժողովրդին – Ալմա կրտսերը, ժողովրդի ձայնով, ընտրվում է գլխավոր դատավոր – Նա նաև քահանայապետն է Եկեղեցու վրա – Ալմա Ավագը և Մոսիան մահանում են: Մոտ 92–91թթ. Ք.ծ.ա.:

Աւգ, երբ Մոսիան արել էր այս, նա ուղարկեց ամբողջ երկրով մեկ, ողջ ժողովրդի մեջ՝ ցանկանալով իմանալ նրանց կամքն այն բանի

վերաբերյալ, թե ով պիտի լինի իրենց թագավորը:

2 Եվ եղավ այնպես, որ ժողովրդի ձայնը եկավ՝ ասելով. Մենք ցանկանում ենք, որ Ահարոնը՝ քո որդին, լինի մեր թագավորն ու մեր կառավարիչը:

3 Արդ, Ահարոնը գնացել էր Նեփիի երկիրը, այդ պատճառով թագավորը չէր կարող նրան շնորհել թագավորությունը. ոչ էլ Ահարոնը կկամենար թագավորությունը վերցնել իր վրա. ոչ էլ Մոսիայի որդիներին որևէ մեկը կամեցավ վերցնել թագավորությունն իր վրա:

4 Հետևաբար, թագավոր Մոսիան ուղարկեց նորից ժողովրդի մեջ. այո, այսինքն՝ մի գրավոր խոսք ուղարկեց նա ժողովրդի մեջ: Եվ սրանք էին խոսքերը, որ գրված էին՝ ասելով.

5 Ահա, ո՛վ դուք, իմ ժողովուրդ, կամ իմ եղբայրներ, քանզի ես ձեզ համարում եմ որպես այդպիսիք, ես ուզում եմ, որ դուք խորհրդածեք այն հարցի շուրջ, որ դուք կանչված եք խորհրդածելու, քանի որ դուք ցանկանում եք ունենալ թագավոր:

6 Արդ, ես հայտարարում եմ ձեզ, որ նա, որին արդարացիորեն պատկանում է թագավորությունը, հրաժարվել է, և չի կամենում իր վրա վերցնել թագավորությունը:

7 Եվ արդ, եթե մեկ ուրիշը լինի նշանակված նրա տեղում, ահա, ես վախենում եմ ձեր մեջ հակառակություններ բարձրանան: Եվ ով գիտի, միգուցե իմ որդին, որին պատկանում է թագավորությունը, փոխվի, բարկանա ու իր ետևից

20ա Ալմա 37.3–10:
բ սո՛ւ Ուրիմ ու Թումիմ:
գ սո՛ւ Սուրբ գրքեր –

Սուրբ գրքերը պետք է պահպանվեն:
29 3ա Մոսիա 27.34:

5ա Ա Թագ. Ը.9–19:

հեռու տանի այս ժողովրդի մի մասին, որը պատերազմներ ու հակառակություններ կառաջացնի ձեր մեջ, որը շատ արյուն թափելու և Տիրջ ճանապարհը խեղաթյուրելու պատճառ կլինի, այո, և կկործանի շատ մարդկանց հոգիները:

8 Արդ, ես ասում եմ ձեզ, եկեք լինենք իմաստուն ու խորհրդածենք այս բաները, քանզի մենք իրավունք չունենք կործանել իմ որդուն, ոչ էլ որևէ իրավունք ունենք կործանել մեկ ուրիշին, եթե նա՝ նշանակվի նրա տեղում:

9 Եվ եթե իմ որդին նորից դառնա դեպի իր հպարտությունն ու սին բաները, նա ետ կվերցնի այն, ինչ նա ասել է և կպահանջի իր իրավունքը թագավորության վրա, որը կստիպի նրան, և այս ժողովրդին ևս, շատ մեղքեր գործել:

10 Եվ արդ, եկեք լինենք իմաստուն ու հաշվի առնենք այս բաները, և անենք այն, ինչը կապահովի այս ժողովրդի խաղաղությունը:

11 Հետևաբար, ես կլինեմ ձեր թագավորը մնացած իմ օրերում. այնուամենայնիվ, եկեք՝ դատավորներ՝ նշանակենք՝ դատելու այս ժողովրդին ըստ մեր օրենքի. և մենք նորովի կկարգավորենք այս ժողովրդի գործերը, քանզի մենք կնշանակենք իմաստուն մարդկանց՝ լինելու դատավորներ, որոնք կդատեն այս ժողովրդին՝ Աստծո պատվիրանների համաձայն:

12 Արդ, ավելի լավ է, որ մարդ դատվի Աստծո կողմից, քան մարդու կողմից, քանզի Աստծո դատաստանները միշտ արդար են, իսկ մարդու դատաստանները միշտ չեն արդար:

13 Հետևաբար, եթե հնարավոր լիներ, որ դուք կարողանայիք ունենալ ձեզ թագավորներ արդար՝ մարդկանց, ովքեր կհաստատեին Աստծո օրենքները, և կդատեին այս ժողովրդին՝ համաձայն նրա պատվիրանների, այո, եթե դուք կարողանայիք ունենալ ձեզ թագավորներ այնպիսի մարդկանց, ովքեր կանեին, ճիշտ ինչպես իմ հայր Քենիամինն արեց այս ժողովրդի համար, ես ասում եմ ձեզ՝ եթե միշտ այդպես լիներ հանգամանքը, այդ դեպքում անհրաժեշտ կլիներ, որ դուք միշտ ունենայիք թագավորներ՝ կառավարելու ձեզ վրա:

14 Եվ, իրականում, ես ինքս տքնել եմ ողջ գործությամբ և ունակությամբ, որով ես օժտված եմ եղել սովորեցնելու ձեզ Աստծո պատվիրանները և հաստատելու խաղաղություն երկրով մեկ, որ չլինեին ո՛չ պատերազմներ, ո՛չ հակառակություններ, ո՛չ զոհություն, ո՛չ կողոպուտ, ո՛չ սպանություն, ո՛չ էլ որևէ ձևի անօրինություն:

15 Եվ ով որ անօրինություն է գործել, նրան ես՝ պատժել եմ՝ համաձայն այն հանցանքի, որը նա գործել է, համաձայն այն օրենքի, որը տրվել է մեզ մեր հայրերի կողմից:

16 Արդ, ես ասում եմ ձեզ, որ քանի որ բոլոր մարդիկ չեն արդար, հարկավոր չէ, որ դուք ունենաք թագավոր կամ թագավորներ՝ կառավարելու ձեզ վրա:

17 Քանզի ահա, որքա՛ն շատ՝ անօրինություն կատարվելու պատճառ է դառնում մի Քամբա-

11աԵլ. ԺԸ.13–24:
բ Մոսիա 29.25–27:
13աՄոսիա 23.8, 13–14:

բ ՄԽ 1.17–18:
15աԱլմա 1.32–33:
17աԱլմա 46.9–10:

բ Մոսիա 23.7–9:

րիշտ թագավոր, այո, և ինչպիսի մեծ կործանման:

18 Այո՛, հիշե՛ք թագավոր Նոյին, նրա ^աամբարշտությունը, և նրա պղծությունները, և նաև ամբարշտությունն ու պղծությունները նրա ժողովրդի: Տեսե՛ք, ինչ մեծ կործանում եկավ նրանց վրա. և նաև, իրենց անօրինության պատճառով՝ նրանք բերվեցին ^բճորտության:

19 Եվ, չլիներ նրանց ամենագեղ Ստեղծողի միջամտությունը, և սա՛ նրանց անկեղծ ապաշխարության շնորհիվ, նրանք պետք է անխուսափելիորեն մնային ճորտության մեջ մինչև այժմ:

20 Բայց ահա, նա ազատեց նրանց, որովհետև նրանք իրենց ^ախոնարհեցրին նրա առաջ. և որովհետև նրանք ուժգին ^բաղաղակեցին առ նա, նա նրանց ազատեց ճորտությունից. և այսպես է Տերը գործում իր գործյամք, բոլոր դեպքերում, մարդկանց գավակների մեջ՝ մեկնելով ^գողորմության բազուկը դեպի նրանց, ովքեր դնում են իրենց ^դվստահությունը նրա վրա:

21 Եվ ահա, այժմ ես ասում եմ ձեզ՝ դուք չեք կարող գահազրկել մի անօրեն թագավորի, եթե դա չլինի մեծ կովի և շատ արյուն թափելու միջոցով:

22 Քանզի ահա, նա իր ^աընկերներն ունի անօրինության մեջ, և նա պահում է իր պահակախումբն իրեն մոտիկ. և նա պատռում է օրենքները նրանց, ովքեր թագավորել են արդարությամբ իրենից

առաջ. և նա կոխկրտում է Աստծո պատվիրաններն իր ոտքերի տակ:

23 Եվ նա ասանում է օրենքներ, և ուղարկում դրանք առաջ՝ ժողովրդի մեջ, այո, օրենքներ՝ իր սեփական ^աամբարշտության համաձայն. և նա կարգադրում է կործանել նրան, ով չի հնազանդվում իր օրենքներին. և ով որ ապստամբում է նրա դեմ, նա կուղարկի իր զորքերը նրանց դեմ՝ պատերազմելու, և եթե նա կարող է, նա կկործանի նրանց. և այսպես մի անարդար թագավոր խեղաթյուրում է բոլոր արդարության ուղիները:

24 Եվ արդ, ահա ես ասում եմ ձեզ, հարկավոր չէ, որ այսպիսի պղծություններ գան ձեզ վրա:

25 Հետևաբար, ընտրե՛ք դատավորներ ժողովրդի ձայնով, որ դուք կարողանաք դատվել այն օրենքների համաձայն, որոնք տրվել են ձեզ մեր հայրերի կողմից, որոնք ճիշտ են, և որոնք տրվել են նրանց՝ Տիրոջ ձեռքով:

26 Արդ, ընդունված չէ, որ ժողովրդի ձայնը ցանկանա որևէ բան հակառակ նրա, ինչը ճշմարիտ է. բայց ընդունված է, որ ժողովրդի ավելի քիչ մասը ցանկանա այն, ինչը ճշմարիտ չէ. հետևաբար, դուք այս պետք է պահեք ու դարձնեք այն ձեր օրենքը՝ կատարել ձեր գործը ժողովրդի ձայնով:

27 Եվ ^աեթե ժամանակը գալիս է, երբ ժողովրդի ձայնն ընտրում է անօրինություն, ուրեմն ժամանակն է, որ Աստծո դատաստան-

18ա Մոսիա 11.1–15:
բ Ա Թագ. Ը.10–18,
Մոսիա 12.1–8,
Եթեր 6.22–23:
20ա Մոսիա 21.13–15:

բ Ել. Բ.23–25,
Ալմա 43.49–50:
գ Եզեկ. ԼԳ.11, 15–16,
Մոսիա 26.30:
դ սո՛ւ Ապավինել:

22ա Գ Թագ. ԺԲ.8–14:
23ա սո՛ւ Ամբարիշտ,
Ամբարշտություն:
27ա Ալմա 10.19:

ները զան ձեր վրա. այո, ուրեմն ժամանակն է, որ նա այցելի ձեզ մեծ ավերումով, ճիշտ ինչպես նա մինչև այժմ այցելել է այս երկիրը:

28 Եվ արդ, եթե դուք ունեք դատավորներ, և նրանք չեն դատում ձեզ համաձայն այն օրենքի, որը տրված է, դուք կարող եք պահանջել, որ նրանք դատվեն մի վերադաս դատավորից:

29 Եթե ձեր վերադաս դատավորները չեն դատում արդար դատաստաններ, դուք պետք է պահանջեք, որ ձեր ստորադաս դատավորների մի փոքր խումբ ի մի հավաքվի, և նրանք պետք է դատեն ձեր վերադաս դատավորներին՝ համաձայն ժողովրդի ձայնի:

30 Եվ ես հրամայում եմ ձեզ անել այս բաները Տիրոջ հանդեպ երկյուղով. և ես պատվիրում եմ ձեզ անել այս բաները, և որ դուք չունենաք ոչ մի թագավոր. որ եթե այս ժողովուրդը գործի մեղքեր ու անօրինություններ, դրանք պիտի դրվեն իրենց իսկ գլխին:

31 Քանզի ասի, ես ասում եմ ձեզ, շատ մարդկանց մեղքերի պատճառը եղել են իրենց թագավորների անօրինությունները. հետևաբար, նրանց անօրինությունները կդրվեն իրենց թագավորների գլխին:

32 Եվ արդ, ես ուզում եմ, որ այս «անհավասարությունն այլևս չլինի այս երկրում, հատկապես՝ իմ այս ժողովրդի մեջ. այլ ես ուզում եմ, որ այս երկիրը լինի ՚ազատության մի երկիր, և ՚ամեն մարդ կարողանա օգտվել իր իրավունքներից ու արտոնություններից նույն ձևով՝ այնքան, որքան Տերը

հարմար է տեսնում, որ մենք ապրենք ու ժառանգենք երկիրը, այո, մինչև իսկ այնքան, որքան մեր ժառանգներից որևէ մեկը կմնա այս երկրի երեսին:

33 Եվ շատ ու շատ բաներ էր թագավոր Մոսիան գրել նրանց՝ բացատրելով նրանց արդար թագավորի բոլոր փորձություններն ու փորձանքները, այո, հոգու բոլոր երկունքներն իրենց ժողովրդի համար, և նաև ժողովրդի բոլոր տրտունջները դեպի իրենց թագավորը. և նա բացատրեց նրանց այդ բոլորը:

34 Եվ նա ասաց նրանց, որ այս բաները չպետք է լինեն. այլ որ բեռը պիտի լինի ողջ ժողովրդի վրա, որ ամեն մարդ կարողանա կրել իր բաժինը:

35 Եվ նա բացատրեց նրանց նաև բոլոր դժվարությունները, որոնց ներքո նրանք կտառապեին՝ իրենց վրա կառավարող ունենալով մի անարդար թագավորի:

36 Այո, բոլոր նրա անօրինությունները, ու պղծությունները, բոլոր պատերազմները և հակառակությունները և արյունահեղությունը, գողությունը և կողոպուտը, պողոկություններ անելը և ամեն ձևի անօրինությունները, որոնք չեն կարող թվարկվել, ասելով նրանց, որ այս բաները չպետք է լինեն, որ դրանք, հատկապես, հակասում են Աստծո պատվիրաններին:

37 Եվ արդ եղավ այնպես, հետո, երբ թագավոր Մոսիան ուղարկեց այս բաները ժողովրդի մեջ, նրանք համոզվեցին նրա խոսքերի ճշմարտացիության մեջ:

38 Հետևաբար, նրանք հրաժար-

վեցին թագավորի համար իրենց ցանկություններից, և դարձան չափազանց մտահոգ, որ ամեն մարդ պիտի ունենա հավասար հնարավորություն ամբողջ երկրով մեկ. այո, և ամեն մարդ պատրաստակամություն հայտնեց պատասխան տալ իր անձնական մեղքերի համար:

39 Հետևաբար, եղավ այնպես, որ նրանք խմբերով ի մի հավաքվեցին ողջ երկրում՝ տալու իրենց ձայնն այն բանի վերաբերյալ, թե ովքեր պետք է լինեին իրենց դատավորները՝ դատելու իրենց համաձայն այն ³⁹օրենքի, որը տրված էր նրանց. և նրանք չափազանց ուրախ էին ⁴⁰ազատության համար, որը շնորհվել էր իրենց:

40 Եվ նրանց սերն ուժեղացավ հանդեպ Մոսիան. այո, նրանք զնահատում էին նրան ավելի շատ, քան որևէ այլ մարդու. քանզի նրանք չէին նայում նրա վրա որպես բռնակալի, որն օգուտ էր փնտրում, այո, այն շահը, որն ապականում է հոգին. քանզի նա չէր բռնազանձել նրանց հարստությունները, ոչ էլ արյուն թափելով հաճույք ստացել. այլ նա հաստատել էր ⁴¹խաղաղություն երկրում, և նա շնորհել էր իր ժողովրդին, որ նրանք ազատված լինեին ամեն ձևի ճորտությունից. ուստի, նրանք զնահատում էին նրան, այո, անչափ՝ չափից դուրս:

41 Եվ եղավ այնպես, որ նրանք նշանակեցին ⁴²դատավորներ՝ կառավարելու իրենց վրա, կամ դատելու իրենց՝ ըստ օրենքի. և այս

նրանք արեցին ամբողջ երկրով մեկ:

42 Եվ եղավ այնպես, որ Ալման նշանակվեց՝ լինելու առաջին գլխավոր դատավորը, նա լինելով նաև քահանայապետը, նրա հայրը՝ պաշտոնը շնորհած լինելով նրան, և տված լինելով նրան պարտականությունները եկեղեցու բոլոր գործերի վերաբերյալ:

43 Եվ այսպիսով, եղավ այնպես, որ Ալման ⁴³քայլում էր Տիրոջ ուղիներում և պահում էր նրա պատվիրանները, և նա դատում էր արդար դատավճիռներ. և երկրով մեկ տիրում էր անընդմեջ խաղաղություն:

44 Եվ այսպես սկսվեց դատավորների կառավարումն ամբողջ Չարահեմլայի երկրով մեկ, ողջ ժողովրդի մեջ, ովքեր կոչվում էին Նեփիացիներ. և Ալման առաջին և գլխավոր դատավորն էր:

45 Եվ այժմ եղավ այնպես, որ նրա հայրը մահացավ՝ լինելով ութսուններկու տարեկան, ապրած լինելով՝ կատարելու Աստծո պատվիրանները:

46 Եվ եղավ այնպես, որ Մոսիան նույնպես մահացավ, իր թագավորման երեսուներեքերորդ տարում՝ լինելով ⁴⁶վաթսուններեք տարեկան. լրացնելով ընդամենը հինգ հարյուրևինը տարիներ այն ժամանակից, երբ Լեքին թողեց Երուսաղեմը:

47 Եվ այսպես վերջացավ Նեփիի ժողովրդի վրա թագավորների թագավորումը. և այսպես վերջացան Ալմայի օրերը, որը նրանց եկեղեցու հիմնադիրն էր:

39ա Ալմա 1.14:
բ սո՛ւ Անկախություն:
40ա սո՛ւ Խաղաղարար:

41ա Մոսիա 29.11:
43ա սո՛ւ Քայլել, Քայլել
Աստծո հետ:

46ա Մոսիա 6.4:

ԱԼՄԱՅԻ ԳԻՐԸ

Պատմությունն Ալմայի, որն Ալմայի որդին էր՝ առաջին և գլխավոր Պատավորը Նեփիի ժողովրդի վրա, և նաև քահանայապետը Եկեղեցու վրա: Մի պատմություն դատավորների կառավարման, և ժողովրդի մեջ պատերազմների ու հակառակությունների մասին: Եվ նաև մի պատմություն պատերազմի մասին. Նեփիացիների և Լամանացիների միջև, համաձայն Ալմայի՝ առաջին և գլխավոր դատավորի հիշատակարանի:

ԳԼՈՒԽ 1

Ներոն ուսուցանում է կեղծ վարդապետություններ, հիմնադրում է եկեղեցի, քահանաներգություն է անում և սպանում Գեղեոնին – Ներոն իր հանցագործությունների համար մահվան է դատապարտվում – Քահանաներգություններ ու հալածանքներ են տարածվում ժողովրդի մեջ – Քահանաները պահում են իրենք իրենց, ժողովուրդը հոգ է տանում աղքատների համար, և Եկեղեցին քարգավաճում է: Մոտ 91–88թթ. Ք.ժ.ա.:

Արդ եղավ այնպես, որ Նեփիի ժողովրդի վրա դատավորների կառավարման առաջին տարում, այս ժամանակից հետո, թագավոր Մոսիան «գնացել էր երկրի ողջ ճանապարհը, պատերազմած լինելով լավ պատերազմ, քայլելով ուղիղ՝ Աստծո առաջ, չթողնելով որևէ մեկին թագավորելու իր փոխարեն. այնուամենայնիվ, նա հաստատել էր օրենքներ, և դրանք ընդունվել էին ժողովրդի վրդմից. հետևաբար, նրանք պարտադրված էին հետևել թորենքներին, որոնք նա ստեղծել էր:

2 Եվ եղավ այնպես, որ առաջինում Ալմայի կառավարման առաջին տարում, մի «մարդ էր բերվել նրա առաջ՝ դատվելու, մի մարդ, որը հաղթանդամ էր ու ճանաչված իր մեծ ուժի պատճառով:

3 Եվ նա շրջել էր ժողովրդի մեջ՝ քարոզելով նրանց այն, ինչ նա «անվանում էր Աստծո խոսք՝¹ հակադրվելով եկեղեցուն. հայտարարելով ժողովրդին, որ ամեն մի քահանա և ուսուցիչ պետք է դառնար «հանրաճանաչ. և նրանք² չպետք է աշխատեին իրենց ձեռքերով, այլ որ նրանք պետք է պահվեին ժողովրդի կողմից:

4 Եվ նա նաև վկայեց ժողովրդին, որ ողջ մարդկությունը կփրկվի վերջին օրը, և որ նրանք չպետք է վախենան կամ դողան, այլ որ նրանք կարող են բարձրացնել իրենց գլուխները և ցնծալ. քանզի Տերն է ստեղծել բոլոր մարդկանց, և նաև փրկագնել է բոլոր մարդկանց. և վերջում բոլոր մարդիկ պետք է ունենան հավերժական կյանք:

5 Եվ եղավ այնպես, որ նա այնքան սովորեցրեց այս բաները, որ շատերը հավատացին նրա խոսքերին, նույնիսկ այնքան շա-

[Ա.Մ.]
1 1ա Մոսիա 29.46:
բ Հարոմ 1.5,
Ալմա 4.16,

Հել. 4.22:
2ա Ալմա 1.15:
3ա Եգեկ. ԺԳ.3:
բ սոՒ Հակաքրիստոս:

գ Ղուկ. 2.26,
1 Նեփի 22.23:
դ Մոսիա 18.24, 26, 275:

տերը, որ նրանք սկսեցին պահել նրան և փող տալ նրան:

6 Եվ նա սկսեց բարձրամտանալ իր սրտի հպարտությունից, և կրել շատ քանկարժեք հանդերձներ, այո, և նույնիսկ սկսեց իր քարոզչությանը համապատասխան մի "եկեղեցի հիմնել:

7 Եվ եղավ այնպես, երբ նա պատրաստվում էր քարոզել նրանց, ովքեր հավատում էին նրա խոսքերին, նա հանդիպեց մի մարդու, որը պատկանում էր Աստծո եկեղեցուն, այո, այսինքն՝ նրանց ուսուցիչներից մեկին. և նա սկսեց սաստիկ վիճել նրա հետ, որպեսզի կարողանար եկեղեցու ժողովրդին մոլորեցնել. բայց այդ մարդն ընդդիմացավ նրան՝ խրատելով նրան Աստծո "խոսքերով:

8 Արդ այդ մարդու անունը "Գեղեոն էր. և այդ նա էր, որ գործիք եղավ Աստծո ձեռքում Լիմքիի ժողովրդին ճորտությունից ազատելիս:

9 Արդ, որովհետև Գեղեոնն Աստծո խոսքով ընդդիմացավ նրան, նա զայրացավ Գեղեոնի վրա և քաշեց իր սուրն ու սկսեց զարկել նրան: Արդ, Գեղեոնը, կքված լինելով շատ տարիներից, հետևաբար ի վիճակի չեղավ ընդդիմանալ նրա հարվածներին, հետևաբար նա "սպանվեց սրով:

10 Եվ մարդը, որը սպանեց նրան, վերցվեց եկեղեցու ժողովրդի կողմից և բերվեց Ալմայի առջև՝ "դատվելու ըստ այն հանցագործությունների, որոնք նա գործել էր:

11 Եվ եղավ այնպես, որ նա կանգ-

նեց Ալմայի առջև և մեծ հանդրգնությամբ պաշտպանեց իրեն:

12 Բայց Ալման ասաց նրան. Ահա, այս առաջին անգամն է, որ "քահանանեցում է մտցվել այս ժողովրդի մեջ: Եվ ահա, դու մեղավոր ես ոչ միայն քահանանեցության համար, այլ փորձել ես սրի միջոցով հարկադրել այն. և եթե քահանանեցություն հարկադրվի այս ժողովրդի մեջ, դա լիակատար կործանման կհասցնի նրանց:

13 Եվ դու թափել ես մի արդար մարդու արյունը, այո՛, մի մարդու, որն այս ժողովրդի մեջ շատ բարիք է արել. և եթե մենք խնայենք քեզ, նրա արյունը կգա մեզ վրա "վրեժխնդրության համար:

14 Հետևաբար, դու դատապարտվում ես մահվան, համաձայն այն օրենքի, որը տրվել է մեզ Մոսիայի՝ մեր վերջին թագավորի կողմից. և այն ընդունվել է այս ժողովրդի կողմից. հետևաբար, այս ժողովուրդը պետք է "հետևի օրենքին:

15 Եվ եղավ այնպես, որ նրանք վերցրեցին նրան, և նրա անունը "Նեոր էր, և նրանք տարան նրան Մանթի բլրի գագաթը, և այնտեղ նրան ստիպեցին, կամ ավելի ճիշտ նա ընդունեց, երկնքի ու երկրի միջև, որ այն, ինչ նա սովորեցրել էր ժողովրդին, հակասում էր Աստծո խոսքին. և այնտեղ նա խայտառակ "մահ տարավ:

16 Մակայն, այս վերջ չորեք երկրով մեկ քահանանեցության տարածմանը. քանզի կային շատերը, ովքեր սիրում էին աշխար-

<p>6ա1 Նեփի 14.10: 7ա սո՛ր Աստծո խոսքը: 8ա Մոսիա 20.17, 22.3: 9ա Ալմա 6.7:</p>	<p>10ա Մոսիա 29.42: 12ա 2 Նեփի 26.29: սո՛ր Քահանանեցու- րդին: 13ա սո՛ր Վրեժխնդրույուն:</p>	<p>14ա սո՛ր Գերագույն պատիժ: 15ա Ալմա 1.2: p Բ Օր. ԺԳ.1–9:</p>
--	--	---

հի ունայն բաները, և նրանք առաջ գնացին՝ քարոզելով կեղծ վարդապետություններ. և այս նրանք արեցին հանուն ^ահարստությունների ու փառքի:

17 Սակայն նրանք օրենքից վախի պատճառով չէին համարձակվում ^աստել, չլիներ թե դա իմացվեր, քանզի ստախոսները պատժվում էին. հետևաբար, նրանք ձևացնում էին, թե քարոզում էին համաձայն իրենց հավատքի. և արդ, օրենքը ոչ մի իշխանություն չէր կարող ունենալ որևէ մարդու վրա ^բիր հավատքի համար:

18 Եվ նրանք օրենքից վախի պատճառով չէին համարձակվում ^գգողանալ, քանզի այդպիսիները պատժվում էին. ոչ համարձակվում էին նրանք կողոպտել, ոչ էլ սպանել, քանզի նա, ով ^բսպանում էր, պատժվում էր ^գմահվամբ:

19 Բայց եղավ այնպես, որ նրանք, ովքեր չէին պատկանում Աստծո եկեղեցուն, սկսեցին հալածել նրան, որոնք պատկանում էին Աստծո եկեղեցուն, և իրենց վրա էին վերցրել ^Քրիստոսի անունը:

20 Այո, նրանք հալածում էին նրանց և վիրավորում նրանց ամեն ձևի խոսքերով, և այս, նրանց խոնարհության պատճառով. որովհետև նրանք իրենց սեփական աչքում հպարտ չէին, և որովհետև նրանք հաղորդում էին Աստծո խոսքը մեկը մյուսին առանց ^ափողի ու առանց գնի:

21 Այժմ եկեղեցու ժողովրդի մեջ կար մի խիստ օրենք, որ եկեղե-

ցուն պատկանող որևէ մարդ չպետք է վեր կենար ու ^ահալածեր նրանց, ովքեր չէին պատկանում եկեղեցուն, և որ միմյանց միջև չպետք է լիներ որևէ հալածանք:

22 Սակայն նրանց մեջ կային շատերը, ովքեր սկսեցին հպարտանալ և սկսեցին տաքացած վիճել իրենց հակառակորդների հետ, նույնիսկ մինչև ծեծկոտուք. այո, նրանք բռունցքներով ծեծում էին մեկը մյուսին:

23 Արդ, դա Ալմայի կառավարման երկրորդ տարում էր, և այն մեծ չարչարանքների պատճառ էր եկեղեցու համար. այո, դա մեծ փորձության պատճառ էր եկեղեցու համար:

24 Քանզի շատերի սրտերը կարծրացած էին, և նրանց անունները ^զմեջվեցին, այնպես որ նրանք այլևս չէին հիշվում Աստծո ժողովրդի մեջ: Եվ նաև շատերը ետ ^բքաշվեցին նրանց միջից:

25 Արդ, այս մի մեծ փորձություն էր նրանց համար, ովքեր ամուր էին կանգնած հավատքի մեջ, այնուամենայնիվ, նրանք հաստատուն էին և անխախտ Աստծո պատվիրանները պահելիս, և նրանք ^ահամբերությամբ տանում էին իրենց վրա դիզված հալածանքը:

26 Եվ երբ Աստծո խոսքը ժողովրդին հաղորդելու համար քահանաները թողնում էին իրենց ^աաշխատանքը, ժողովուրդը նույնպես թողնում էր իր գործերը՝ լսելու Աստծո խոսքը: Եվ երբ քահանան

16ա սուր Հարստություններ. Ունայն, Ունայնություն:
17ա սուր Ազնիվ, Ազնվություն. Ստել:
^բ Ալմա 30.7–12, ՀՀ 1.11:
18ա սուր Գողություն, Գողանալ:

^բ սուր Սպանություն:
^գ սուր Գերագույն պատիժ:
20ա Ես. ԾԵ.1–2:
21ա սուր Հալածել, Հալածանք:
24ա Ել. ԼԲ.33, Մոսիա 26.36,

Ալմա 6.3:
սուր Հեռացում:
^բ Ալմա 46.7:
սուր Ուրացություն:
25ա սուր Համբերություն:
26ա Մոսիա 18.24, 26, 27.3–5:

հաղորդում էր նրանց Աստծո խոսքը, նրանք կրկին բոլորը ջանասիրաբար վերադառնում էին իրենց գործերին. և քահանան, իրեն վեր չգնահատելով իր ունկրնդիրներից, քանզի քարոզիչն ավելի լավը չէր, քան ունկնդիրը. ոչ էլ ուսուցիչն էր ինչ-որ չափով ավելի լավը, քան սովորողը, և այսպիսով նրանք բոլորը հավասար էին, և բոլորն աշխատում էին՝ յուրաքանչյուրն իր ուժի ^բհամաձայն:

27 Եվ նրանք իրենց ստացվածքից ^աբաժին էին հանում ^բաղքատին և կարիքավորին, հիվանդին և չարչարվածին՝ ամեն մարդ համաձայն նրա, ինչ ուներ. և նրանք չէին կրում թանկարժեք հանդերձներ, սակայն նրանք կոկիկ էին ու սիրունատես:

28 Եվ այսպես նրանք հաստատեցին եկեղեցու գործերը, և այսպես նրանք սկսեցին նորից անընդհատ խաղաղություն ունենալ, չնայած բոլոր իրենց հալածանքներին:

29 Եվ արդ, եկեղեցու կայունության պատճառով նրանք սկսեցին չափազանց ^ահարստանալ, ունենալով առատություն բոլոր բաների, ինչի կարիք որ ունեին՝ առատություն հոտերի ու մախիրների և ամեն տեսակի պարարտների, և նաև առատություն հատիկի և ոսկու և արծաթի և թանկարժեք բաների, և առատություն ^բմետաքսի և նրբահյուս բեհեզի և ամեն ձևի լավ, տնական գործվածքի:

30 Եվ այսպիսով, իրենց ^աբարեկեցիկ պայմաններում նրանք դուրս չէին քշում որևէ մեկին, ով ^բմերկ էր, կամ, որ քաղցած էր, կամ, որ պապակ էր, կամ, որ հիվանդ էր, կամ, որ կերակրված չէր. և նրանք չէին դնում իրենց սիրտը հարստության վրա. հետևաբար, նրանք բոլորի հանդեպ առատաձեռն էին՝ ինչպես ծերի, այնպես էլ երիտասարդի, ինչպես ճորտի, այնպես էլ ազատի, ինչպես տղամարդու, այնպես էլ կնոջ, ինչպես եկեղեցուց դուրս, այնպես էլ եկեղեցում, չունենալով ^գկողմնապահություն հանդեպ անձանց, ինչ վերաբերում էր նրանց, ովքեր գտնվում էին կարիքի մեջ:

31 Եվ այսպիսով, նրանք բարգավաճեցին և դարձան շատ ավելի ունևոր, քան նրանք, ովքեր չէին պատկանում իրենց եկեղեցուն:

32 Քանզի նրանք, ովքեր չէին պատկանում նրանց եկեղեցուն, իրենց տվել էին կախարդությունների և ^ակռապաշտության կամ ^բանգործության, ^գդատարկաբանությունների, ^դմախամությունների և կովի. կրելով թանկարժեք հանդերձներ, հպարտությունից ^եբարձրացած լինելով սեփական աչքում. հալածելով, ստելով, գողանալով, կողոպտելով, պոռնկություններ անելով և սպանելով, և ամեն ձևի ամբարշտություն. այնուամենայնիվ, օրեցօր ուժի մեջ էր դրվում բոլոր նրանց վրա, ով-

26բ Մոսիա 4.27, վ.և.ՌԷ 10.4:
 27ա սո՛ւ Ողորմություններ, Ողորմություններ տալը:
 բ Ղուկ. ԺԼ.22, Մոսիա 4.26, վ.և.ՌԷ 42.29–31:

29ա սո՛ւ Հարստություններ:
 բ Ալմա 4.6:
 30ա Հակոբ 2.17–19:
 բ սո՛ւ Աղքատ:
 գ Ալմա 16.14, վ.և.ՌԷ 1.35:
 32ա սո՛ւ Կռապաշտություն:
 բ սո՛ւ Ծույլ, Ծուլություն:

գ սո՛ւ Չարախտություն:
 դ սո՛ւ Նախանձել:
 ե Հակոբ 2.13, Ալմա 31.25, Մորմ. 8.28:
 սո՛ւ Հպարտություն:

քեր զանցառում էին այն, այնքանով, որքանով դա հնարավոր էր:

33 Եվ եղավ այնպես, որ այսպիսով գործադրելով օրենքը նրանց վրա՝ ամեն մարդ ստանալով պատիժ համաձայն նրա, ինչ նա արել էր, նրանք դարձան ավելի հանգիստ, և չէին համարձակվում որևէ ամբարշտություն գործել, չլինի թե իմացվեր. հետևաբար, Նեփիի ժողովրդի մեջ մեծ խաղաղություն եղավ մինչև դատավորների կառավարման հինգերորդ տարին:

ԳԼՈՒԽ 2

Ամդիկին ջանում է թագավոր լինել և մերժվում է ժողովրդի ձայնով – Նրա հետևորդները նրան թագավոր են դարձնում – Ամդիկիացիները պատերազմում են Նեփիացիների հետ և պարտվում են – Լամանացիներն ու Ամդիկիացիները միավորում են ուժերը և պարտվում – Ալման սպանում է Ամդիկիին: Մոտ 87թ. Ք.ծ.ա.:

Եւ եղավ այնպես՝ նրանց կառավարման հինգերորդ տարվա սկզբում ժողովրդի մեջ սկսեց լինել հակառակություն. քանի որ ոմն մի մարդ, կոչված լինելով Ամդիկի, նա լինելով մի շատ խորամանկ մարդ, այդ մի իմաստուն մարդ, ինչ վերաբերում է աշխարհի իմաստությամբ, նա լինելով ըստ այն մարդու կարգի, որ սպանեց ^աԳեդեոնի սրով, որը մահվան դատապարտվեց օրենքի համաձայն,

2 Արդ, այս Ամդիկին իր խորամանկությամբ հեռու էր տարել շատ մարդկանց իր ետևից. նույնիսկ այնքան շատ, որ նրանք սկսեցին

լինել շատ հզոր. և նրանք սկսեցին ջանք թափել հաստատելու Ամդիկիին թագավոր լինելու ժողովրդի վրա:

3 Եվ այս տագնապալի էր եկեղեցու ժողովրդի համար, և նաև բոլոր նրանց համար, որոնք հեռու չէին տարվել Ամդիկիի հանդուժմունքների ետևից. քանզի նրանք գիտեին, որ համաձայն իրենց օրենքի, այսպիսի բաները պետք է հաստատվեին ժողովրդի ^աձայնով:

4 Հետևաբար, եթե հնարավոր լիներ, որ Ամդիկին ձեռք բերեր ժողովրդի ձայնը, նա, լինելով մի ամբարիշտ մարդ, ^ակզրկեր նրանց իրենց իրավունքներից և եկեղեցու արտոնություններից. քանզի դա էր նրա մտադրությունը՝ կործանել Աստծո եկեղեցին:

5 Եվ եղավ այնպես, որ ժողովուրդն ի մի հավաքվեց բոլոր երկրով մեկ, ամեն մարդ ըստ իր մտքի՝ լինելով Ամդիկիին կողմ, թե դեմ, առանձին խմբերով, ունենալով մեծ վիճաբանություններ ու սաշչեցուցիչ ^ահակառակություններ մեկը մյուսի հետ:

6 Եվ այսպես, նրանք ի մի հավաքվեցին՝ տալու իրենց ձայներն այդ հարցի վերաբերյալ. և դրանք դրվեցին դատավորների առջև:

7 Եվ եղավ այնպես, որ ժողովրդի ձայնը եկավ Ամդիկիի դեմ, այնպես որ նա չդարձավ թագավոր ժողովրդի վրա:

8 Արդ, դա մեծ ուրախություն առաջացրեց նրանց սրտերում, ովքեր նրա դեմ էին. բայց Ամդիկին բարկության դրդեց նրանց, ովքեր իր կողմից էին, նրանց դեմ, ովքեր իր կողմից չէին:

9 Եվ եղավ այնպես, որ նրանք

2 1ա Ալմա 1.8:
3ա Մոսիա 29.25–27,

Ալմա 4.16:
4ա Ալմա 10.19, Հել. 5.2:

5ա 3 Նեփի 11.29:

ի մի հավաքվեցին և Ամոհկիլիմ նվիրաբերեցին՝ լինելու իրենց թագավոր:

10 Արդ, երբ Ամոհկիլին թագավոր դարձավ նրանց վրա, նա հրամայեց, որ նրանք զենք վերցնեին իրենց եղբայրների դեմ. և նա արեց դա, որպեսզի կարողանար նրանց իրեն ենթարկել:

11 Այժմ Ամոհկիլի ժողովուրդը զանազանվում էր Ամոհկիլի անունով՝ կոչված լինելով Մամոհկիացիներ. և մնացածը կոչվում էին Մեփիացիներ, կամ Աստծո ժողովուրդ:

12 Հետևաբար, Նեփիացիները տեղյակ էին Ամոհկիացիների մտադրության մասին, և այդ պատճառով նրանք պատրաստվեցին հանդիպելու նրանց. այո, նրանք զինվեցին սրերով և թրերով, աղեղներով և նետերով, քարերով և պարաստիկներով և բոլոր ձևի, ամեն տեսակի պատերազմի զենքերով:

13 Եվ այսպես, նրանք պատրաստ էին հանդիպելու Ամոհկիացիներին նրանց գալու ժամանակ: Եվ նրանց թվաքանակին համապատասխան նշանակվել էին գորպայետեր, և ավելի բարձր գորպայետեր, և գլխավոր գորպայետեր:

14 Եվ եղավ այնպես, որ Ամոհկիլին զինեց իր մարդկանց բոլոր ձևի, ամեն տեսակի պատերազմի զենքերով. և իր ժողովրդի վրա նա նաև նշանակեց կառավարիչներ ու ղեկավարներ առաջնորդելու նրանց՝ պատերազմելու իրենց եղբայրների դեմ:

15 Եվ եղավ այնպես, որ Ամոհկիացիները հասան Ամնիհու

բլրին, որը Սիդոն զգեսից դեպի արևելք էր, որը հոսում էր Ջարահեմլայի Քերկրով, և այնտեղ նրանք սկսեցին պատերազմել Նեփիացիների հետ:

16 Այժմ Ալման լինելով Նեփիի ժողովրդի զլխավոր դատավորը և կառավարիչը, ուստի նա վերգնաց իր ժողովրդի հետ, այո, իր գորպայետերի ու գլխավոր գորպայետերի հետ, այո, իր գորքերի գլուխն անցած՝ ճակատամարտելու Ամոհկիացիների դեմ:

17 Եվ նրանք սկսեցին կոտորել Ամոհկիացիներին բլրի վրա՝ Սիդոնի արևելքում: Եվ Ամոհկիացիները կռվում էին Նեփիացիների դեմ մեծ ուժով, այնպես որ Նեփիացիներից շատերն ընկան Ամոհկիացիների առաջ:

18 Սակայն Տերը գորացրեց Նեփիացիների ձեռքը, այնպես որ նրանք կոտորեցին Ամոհկիացիներին մեծ կոտորածով, այնպես որ նրանք սկսեցին փախչել նրանց առաջից:

19 Եվ եղավ այնպես, որ Նեփիացիները հետապնդեցին Ամոհկիացիներին ամբողջ այդ օրը և կոտորեցին նրանց մեծ կոտորածով՝ այնչափ, որ Ամոհկիացիներից կային տասներկու հազար հինգ հարյուր երեսուններկու հոգի սպանված. իսկ Նեփիացիներից կային վեց հազար հինգ հարյուր վաթսուներկու հոգի սպանված:

20 Եվ եղավ այնպես, որ երբ Ալման այլևս չկարողացավ հետապնդել Ամոհկիացիներին, նա կարգադրեց, որ իր մարդիկ խփեին իրենց վրանները Գեդեոնի

11ա Ալմա 3.4:
բ Հակոբ 1.13–14,
Մոսիա 25.12,

Ալմա 3.11:
12ա Մոսիա 10.8, Հել. 1.14:
15ա Ալմա 3.3:

բ Օմնի 1.13–15:
16ա Մոսիա 29.42:
19ա Ալմա 3.1–2, 26, 4.2:

“հովտում, հովիտը կոչված լինելով այն Գեղեճնի անունով, որը սպանվել էր սրով՝ Մեդրի ձեռքով. և այս հովտում Նեփիացիները խփեցին իրենց վրանները՝ գիշերվա համար:

21 Եվ Ալման լրտեսներ ուղարկեց՝ հետևելու Ամոլիկիացիներից մնացածին, որպեսզի կարողանար իմանալ նրանց ծրագրերի ու նրանց դավադրությունների մասին, որի միջոցով կկարողանար պաշտպանվել նրանց դեմ, որպեսզի կարողանար իր ժողովրդին պահպանել կործանվելուց:

22 Այսպիսով նրանք, ում նա դուրս էր ուղարկել հետևելու Ամոլիկիացիների ճամբարին, կոչվում էին Չերամ, և Ամնոր, և Մանթի, և Լիմեր. այդ նրանք էին, ովքեր դուրս գնացին իրենց մարդկանցով՝ հետևելու Ամոլիկիացիների ճամբարին:

23 Եվ եղավ այնպես, որ հաջորդ օրը նրանք շատ հապճեպորեն վերադարձան Նեփիացիների ճամբարը, լինելով մեծապես ապշած, և ցնցված՝ սաստիկ վախից, ասելով.

24 Ահա, մենք հետևում էինք ՄԱՄՈՒԿԻ ԿԻՍՏԻՆՈՍԻ ԿԵՐԿՐՈՒՄԻ ՉԱՐԱԿԵՆՎԱՅԻ ԵՐԿՐԻ ՎԵՐԼՈՒՄԻ, ՄԵՓԻԻ ԵՐԿՐԻ ՈՒՂՈՒՔՅԱՄՔ, մենք տեսանք ԼԱՄԱՆԱԳԻՆԵՐԻ մի ստվար գորք. և ահա, ԱՄՈՒԿԻ ԿԻՍՏԻՆՈՍԻ միացան նրանց.

25 Եվ նրանք մեր եղբայրների վրա են հասել այն երկրում. և նրանք փախչում են նրանց առջևից իրենց հոտերով և իրենց կանանցով և իրենց երեխաներով դեպի մեր քաղաքը. և եթե մենք

չաճապարենք, նրանք տեր կդառնան մեր քաղաքին և կկոտորեն մեր հայրերին, մեր կանանց ու մեր երեխաներին:

26 Եվ եղավ այնպես, որ Նեփիի ժողովուրդը վերցրեց իր վրանները, և հեռացավ Գեղեճնի հովտից՝ դեպի իրենց քաղաքը, որը ՉԱՐԱԿԵՆՎԱՅԻ ԿԱՂԱՔՐԻ էր:

27 Եվ ահա, երբ նրանք անցնում էին Սիդոն գետը, ԼԱՄԱՆԱԳԻՆԵՐԸ, և ԱՄՈՒԿԻ ԿԻՍՏԻՆՈՍԸ, լինելով գրեթե այնքան «մեծաթիվ, ինչպես ծովի ավազը, եկան նրանց վրա՝ կործանելու նրանց:

28 Սակայն Նեփիացիները, զորեղացված լինելով Տիրոջ ձեռքով, աղոթած լինելով գործությամբ առ նա, որ նա իրենց ազատեր իրենց թշնամիների ձեռքից, հետևաբար Տերը լսեց նրանց աղաղակները և գորեղացրեց նրանց, և ԼԱՄԱՆԱԳԻՆԵՐՆ ՈՒ ԱՄՈՒԿԻ ԿԻՍՏԻՆՈՍԸ ընկան նրանց առաջ:

29 Եվ եղավ այնպես, որ Ալման կովեց Ամոլիկիի հետ սրով՝ դեմ առ դեմ. և նրանք կռվում էին ուժգնորեն մեկը մյուսի հետ:

30 Եվ եղավ այնպես, որ Ալման, լինելով Աստծո մի մարդ՝ մղված լինելով մեծ «հավատքով, գոչեց՝ ասելով. Ո՛վ Տեր, ողորմություն ունեցիր և խնայիր իմ կյանքը, որպեսզի ես մի գործիք լինեմ քո ձեռքում՝ փրկելու և պահպանելու այս ժողովրդին:

31 Այժմ, երբ Ալման ասաց այս խոսքերը, նա կրկին կովեց Ամոլիկիի հետ. և նա ուժեղացվեց, այնպես որ սրով սպանեց Ամոլիկիին:

32 Եվ նա նաև կովեց ԼԱՄԱՆԱԳԻՆԵՐԻ թագավորի հետ, բայց

20ա Ալմա 6.7:
բ Ալմա 1.7–15, 14.16:
24ա Ալմա 3.4, 13–18:

բ 2 Նեփի 5.8:
26ա Օմնի 1.14, 18:
27ա Հարոմ 1.6:

28ա Բ Օր. ԼԱ.6:
30ա ՍՈՒ Հավատք:

Լամանացիների թագավորը Ալմայի առաջից ետ փախավ և ուղարկեց իր պահապաններին՝ կռվելու Ալմայի հետ:

33 Իսկ Ալման, իր պահապաններով հանդերձ, կռվեց Լամանացիների թագավորի պահապանների հետ, մինչև սպանեց ու ետ քշեց նրանց:

34 Եվ այսպիսով, նա մաքրեց տարածքը կամ ավելի ճիշտ ավրը, որը Սիդոն գետի արևմուտքում էր՝ Սիդոնի ջրերի մեջ գցելով Լամանացիների մարմինները, ովքեր սպանվել էին, որ այդպիսով նրա ժողովուրդը կարողանար տեղ ունենալ՝ անցնելու և կռվելու Լամանացիների ու Ամոհիկիացիների հետ Սիդոն գետի արևմտյան կողմում:

35 Եվ եղավ այնպես, որ երբ նրանք բոլորն անցել էին Սիդոն գետը, Լամանացիներն ու Ամոհիկիացիները սկսեցին նրանց առաջից փախչել, չնայած նրանք այնքան մեծաթիվ էին, որ նրանք չէին կարող հաշվվել:

36 Եվ նրանք փախան Նեփիացիների առաջից՝ դեպի անապատ, որը հյուսիս և արևմուտք էր, և հեռու՝ երկրի սահմաններից այն կողմ. և Նեփիացիները հետապրնդեցին նրանց իրենց գործությամբ և սպանեցին նրանց:

37 Այո, նրանց դիմավորում էին ամեն կողմից, և սպանում, և քշում, մինչև նրանք ցրվեցին դեպի արևմուտք, և դեպի հյուսիս, մինչև նրանք հասան անապատին, որը կոչվում էր Հերմատուսթս. և դա այն անապատի մասն էր, որը լցված էր վայրի ու անկշտում գազաններով:

38 Եվ եղավ այնպես, որ շատերն

իրենց վերքերից մեռան անապատում, և լափվեցին այդ գազանների ու նաև օդի անգղների կողմից. և նրանց ոսկորները գտան ու դիզեցին հողի վրա:

ԳԼՈՒԽ 3

Ամոհիկիացիները, մարգարեական խոսքի համաձայն, իրենց վրա նշան էին արել – Լամանացիներն անհիժվել էին իրենց ապստամբության համար – Մարդիկ իրենք են բերում իրենց սեփական անեծքներն իրենց վրա – Նեփիացիները հաղթում են ևս մեկ Լամանական քանակի: Մոտ 87–86թթ. Զ.ծ.ա.:

Եվ եղավ այնպես, որ այն Նեփիացիները, որոնք չէին սպանվել պատերազմի զենքերով, թաղելով նրանց, ովքեր սպանվել էին, – արդ, սպանվածների հաշիվն անհաշվելի էր, նրանց հաշվի մեծության պատճառով, – հետո, երբ նրանք վերջացրել էին իրենց մեռելներին թաղելը, նրանք բոլորը վերադարձան դեպի իրենց հողերը, և իրենց տները, և իրենց կանայք, և իրենց երեխաները:

2 Արդ, բազում կանայք ու երեխաներ էին սրով կոտորվել, և նաև նրանց հոտերի ու նրանց նախիրների մեծ մասը. և նաև ավերվել էր նրանց հատիկի դաշտերի մեծ մասը, քանի որ դրանք ոտնակոխ էին արվել մարդկանց բազմությունների կողմից:

3 Եվ արդ, Լամանացիներից ու Ամոհիկիացիներից բոլոր նրանք, ովքեր սպանվել էին Սիդոն գետի ափին, գցվել էին Սիդոն գետի ջրերի մեջ. և ահա, նրանց ոսկոր-

ները ^բծովի խորքերում են, և դրանք բազում են:

4 Եվ ^աԱնդիկիացիները տարբերվում էին ^նՆեփիացիներից, քանզի նրանք, Լամանացիների ձևով, իրենց վրա՝ ճակատներին, կարմիրով ^ննշան էին արել. սակայն նրանք չէին ածիլել իրենց գլուխները Լամանացիների պես:

5 Արդ, Լամանացիների գլուխներն ածիլված էին. և նրանք ^ամերկ էին, բացի մորթուց, որը գոտևորում էր նրանց կոնքերի շուրջը, և նաև նրանց զենք ու զրահից, որը գոտևորված էր նրանց շուրջը, նրանց աղեղներից և նրանց նետերից, նրանց քարերից և նրանց պարսատիկներից և այլն:

6 Եվ Լամանացիների մաշկը մուգ էր, համաձայն այն նշանի, որը դրված էր նրանց հայրերի վրա, որն ^աանեծք էր նրանց վրա՝ իրենց օրինազանցության և իրենց եղբայրների դեմ ապստամբության պատճառով, որոնք բաղկացած էին ^նՆեփիից, ^նՀակոբից, և ^նՀովսեփից, և Սամից, որոնք արդար ու սուրբ մարդիկ էին:

7 Եվ նրանց եղբայրները ջանում էին կործանել նրանց, այդ պատճառով նրանք անիծված էին. և Տեր Աստված մի ^անշան դրեց նրանց վրա, այո, Լամանի ու Լեմուելի, և նաև Իսմայելի զավակների, և Իսմայելացի կանանց վրա:

8 Եվ այս արվեց, որպեսզի նրանց սերունդը կարողանար տարբերվել իրենց եղբայրների սերնդից, որպեսզի դրա միջոցով Տեր Աստ-

ված կարողանար պահպանել իր ժողովրդին, որ նրանք չկարողանային ^ախառնվել և հավատալ թյուր ^բավանդություններին, որոնք նրանց կործանման կհասցնեին:

9 Եվ եղավ այնպես, որ ով որ խառնում էր իր սերունդը Լամանացիների սերնդի հետ, բերում էր նույն անեծքն իր սերնդի վրա:

10 Հետևաբար, ով որ թույլ էր տալիս իրեն՝ մոլորեցվելու Լամանացիների կողմից, դասվում էր այդ անվան տակ, և մի նշան էր դրվում նրա վրա:

11 Եվ եղավ այնպես, որ ովքեր չէին հավատում Լամանացիների ^աավանդությանը, այլ հավատում էին այն հիշատակարաններին, որոնք դուրս էին բերվել Երուսաղեմի հողից, և նաև իրենց հայրերի ավանդությանը, որոնք ճիշտ էին, ովքեր հավատում էին Աստծո պատվիրաններին և պահում էին դրանք, կոչվում էին ^նՆեփիացիներ կամ ^նՆեփիի ժողովուրդ, այդ ժամանակից ի վեր,

12 Եվ այդ նրանք են, ովքեր պահել են հիշատակարաններն իրենց ժողովրդի մասին, որոնք ^աճշմարիտ են, և նաև Լամանացի ժողովրդի մասին:

13 Այժմ մենք կվերադառնանք կրկին Անդիկիացիներին, քանզի նրանք նույնպես մի ^անշան էին դրել իրենց վրա. այո, նրանք նշան էին դրել իրենց վրա, այո, այսինքն՝ կարմիրով մի նշան՝ իրենց ճակատների վրա:

14 Այսպիսով, Աստծո խոսքը

3բ Ալմա 44.22:
4ա Ալմա 2.11:
բ Ալմա 3.13–19:
5ա Ենոկս 1.20,
Մոսիա 10.8,
Ալմա 42.18–21:
6ա2 Նեփի 5.21, 26.33:

սո՛ւ Անեծք, Անեծքներ:
7ա1 Նեփի 12.23:
8ա սո՛ւ Ամուսնություն,
Ամուսնանալ –
Միջհավատքային
ամուսնություն:
բ Մոսիա 10.11–18,

Ալմա 9.16:
11ա Ալմա 17.9–11:
12ա Մոսիա 1.6,
Եթեր 4.6–11:
13ա Ալմա 3.4:

կատարվում է, քանզի սրանք են այն խոսքերը, որոնք նա ասաց Նեփիին. Ահա, ես անիծել եմ Լամանացիներին, և ես մի նշան կդնեմ նրանց վրա, որպեսզի նրանք և նրանց սերունդը կարողանան առանձնացվել քեզանից և քո սերունդից, այս ժամանակից այսուհետև և հավիտյան, մինչև նրանք չապաշխարեն իրենց ամբարշտությունից և «դառնան դեպի ինձ, որպեսզի ես կարողանամ ողորմություն ունենալ նրանց վրա:

15 Եվ բացի դրանից. Ես մի նշան կդնեմ նրա վրա, ով խառնում է իր սերունդը քո եղբայրների հետ, որպեսզի նրանք անիծված լինեն նույնպես:

16 Եվ բացի դրանից. Ես մի նշան կդնեմ նրա վրա, ով կռվում է ընդդեմ քեզ և քո սերունդի:

17 Եվ բացի դրանից, ես ասում եմ. նա, ով հեռանում է քեզանից, այլևս չպետք է կոչվի քո սերունդը. և ես կօրհնեմ քեզ, և նրանց, ովքեր կկոչվեն քո սերունդ, այսուհետև և հավիտյան. և սրանք էին Տիրոջ խոստումները Նեփիին ու նրա սերնդին:

18 Արդ, Անդիկիացիները չգիտեին, որ նրանք իրականացնում էին Աստծո խոսքերը, երբ նրանք սկսեցին իրենց վրա նշան անել՝ իրենց ճակատներին. այնուամենայնիվ, նրանք դուրս էին եկել բացահայտ «ապստամբության ընդդեմ Աստծո. այդ պատճառով անհրաժեշտ էր, որ անեծքն ընկներ նրանց վրա:

19 Այժմ ես կկամենայի, որ դուք հասկանայիք, որ նրանք իրենք բերեցին իրենց վրա անեծքը. և հենց

այդպես, ամեն մարդ, որ «անիծվում է, ինքն է բերում իր սեփական դատապարտությունն իր վրա:

20 Արդ եղավ այնպես, որ ոչ շատ օրեր անց այն ճակատամարտից, որը մղվել էր Լամանացիների ու Անդիկիացիների կողմից՝ Չարահենլայի երկրում, որ Լամանացիների մեկ այլ բանակ կար, որ եկավ Նեփիի ժողովրդի վրա այդ «նույն տեղում, որտեղ առաջին բանակը հանդիպել էր Անդիկիացիներին:

21 Եվ եղավ այնպես, որ մի բանակ կար ուղարկված՝ դուրս քշելու նրանց իրենց երկրից:

22 Արդ, Ալման ինքը, «վերքից չարչարված լինելով, չգնաց վեր այս անգամ՝ ճակատամարտելու Լամանացիների դեմ.

23 Բայց նա ուղարկեց մի մեծաթիվ բանակ նրանց դեմ. և նրանք գնացին ու կոտորեցին Լամանացիներից շատերին ու քշեցին նրանցից մնացածին իրենց երկրի սահմաններից դուրս:

24 Եվ հետո նրանք կրկին վերադարձան և սկսեցին խաղաղություն հաստատել երկրում այլևս չամահանգատացվելով իրենց թշնամիներից մի առ ժամանակ:

25 Արդ, բոլոր այս բաներն արվեցին, այո, բոլոր այս պատերազմներն ու կռիվները սկսվեցին ու ավարտվեցին դատավորների կառավարման հինգերորդ տարում:

26 Եվ մեկ տարում հազարավոր ու տասնյակ հազարավոր հոգիներ ուղարկվեցին հավերժական աշխարհ, որպեսզի նրանք կարողանային հնձել իրենց «վարձքը՝ համաձայն իրենց գործերի,

14ա2 Նեփի 30.4–6:

18ա4 Նեփի 1.38:

սուր Ապստամբություն:

19ա2 Նեփի 5.21–25,

Ալմա 17.15:

20ա Ալմա 2.24:

22ա Ալմա 2.29–33:

26ա սուր Գործեր:

լինեին դրանք լավ, կամ լինեին դրանք վատ, հնձելու հավերժական երջանկություն կամ հավերժական թշվառություն, համաձայն այն ոգու, որին նրանք կամեցել էին հնազանդվել, լիներ դա լավ ոգի կամ վատը:

27 Քանզի ամեն մարդ ստանում է “վարձք նրանից, ում նա կամեցել է քննազանդվել, և դա՝ մարգարեության ոգու խոսքերի համաձայն. հետևաբար, թող դա լինի ճշմարտության համաձայն: Եվ այսպես վերջանում է դատավորների կառավարման հինգերորդ տարին:

ԳԼՈՒԽ 4

Ալման մկրտում է հազարավոր նորադարձների – Անօրինությունը մտնում է Եկեղեցին, և եկեղեցու առաջընթացը կասեցվում է – Նեփիան նշանակվում է գլխավոր դատավոր – Ալման որպես քահանայապետ, իրեն նվիրում է ծառայության: Մոտ 86–83թթ. Ք.ծ.ա.:

Արդ եղավ այնպես, Նեփիի ժողովրդի վրա դատավորների կառավարման վեցերորդ տարում չկային ո՛չ կռիվներ, ո՛չ էլ պատերազմներ Չարահեմլայի “երկրում.

2 Բայց ժողովուրդը չարչարված էր, այո, իրենց եղբայրների “կորստի համար՝ մեծապես չարչարված, և նաև իրենց հոտերի ու նախիրների կորստի համար, և նաև իրենց հատիկի արտերի կորստի համար, որոնք ոտքի

տակ կոխկրտվել էին ու ավերվել Լամանացիների կողմից:

3 Եվ այնքան մեծ էին նրանց չարչարանքները, որ ամեն հոգի սգալու պատճառ ուներ. և նրանք հավատում էին, որ դրանք Աստծո դատաստաններն էին ուղարկված նրանց վրա՝ իրենց ամբարշտության և իրենց պղծությունների պատճառով. հետևաբար, նրանք զարթնեցվեցին ի հիշողություն իրենց պարտականությունների:

4 Եվ նրանք ավելի լիովին սկսեցին հաստատել եկեղեցին. այո, և շատերը “մկրտվեցին Սիդոնի ջրերում և միավորվեցին Աստծո եկեղեցուն. այո, նրանք մկրտվեցին Ալմայի ձեռքով, որն իր հայր Ալմայի ձեռքով նվիրաբերվել էր, որպես քահանայապետ եկեղեցու ժողովրդի վրա:

5 Եվ եղավ այնպես, դատավորների կառավարման յոթերորդ տարում կային մոտավորապես երեք հազար հինգ հարյուր հոգի, որոնք միացան Աստծո “եկեղեցուն ու մկրտվեցին: Եվ այսպես ավարտվեց Նեփիի ժողովրդի վրա դատավորների կառավարման յոթերորդ տարին, և անընդհատ խաղաղություն եղավ այդ ողջ ժամանակաընթացքում:

6 Եվ եղավ այնպես, դատավորների կառավարման ութերորդ տարում, որ եկեղեցու ժողովուրդը սկսեց հպարտանալ իրենց անչափ մեծ “հարստությունների պատճառով, և իրենց քննիչ մետաքսների, իրենց նրբահյուս բեհեզի և իրենց բազում հոտերի ու

27ա Մոսիա 2.31–33, Ալմա 5.41–42:
բ Հռովմ. 9.16, Հել. 14.29–31:
սո՛ր Հնազանդություն,

Հնազանդ, Հնազանդվել:
4 1ա Օմնի 1.12–19:
2ա Ալմա 2.19, 3.1–2, 26:
4ա Մոսիա 18.10–17:

բ Մոսիա 29.42:
5ա Մոսիա 25.18–23,
3 Նեփի 26.21:
6ա սո՛ր Հարստություններ:
բ Ալմա 1.29:

նախիրներին պատճառով, և իրենց նսկու ու իրենց արծաթի, և ամեն ձևի թանկարժեք բաների, որոնք նրանք ձեռք էին բերել իրենց աշխատասիրության միջոցով. և բոլոր այս բաների համար նրանք հպարտությունից բարձրացել էին իրենց աչքում, քանզի սկսել էին կրել շատ թանկարժեք հանդերձներ:

7 Արդ, դա Ալմայի համար խիստ չարչարանքի պատճառ էր, այո, և ժողովրդից շատերի համար, որոնց Ալման [՝]նվիրաբերել էր՝ լինելու ուսուցիչներ և քահանաներ և երեցներ եկեղեցու վրա. այո, նրանցից շատերը դառնորեն վշտացած էին այն ամբարշտության համար, որը նրանք տեսնում էին՝ սկսել էր լինել իրենց ժողովրդի մեջ:

8 Քանզի նրանք տեսնում էին և մեծ դառնությամբ նկատում, որ եկեղեցու ժողովուրդը [՝]հպարտությունից սկսել էր բարձրանալ իր աչքում, և դնել իր սիրտը հարըստությունների վրա ու աշխարհի ունայն բաների վրա, որ նրանք սկսել էին դառնալ արհամարհական մեկը մյուսի հանդեպ, և նրանք սկսել էին հալածել նրանց, ովքեր [՝]չէին հավատում ըստ իրենց սեփական կամքի ու քմահաճույքի:

9 Եվ այսպես, դատավորների կառավարման այս ութերորդ տարում սկսեց լինել մեծ [՝]հակառակություններ եկեղեցու ժողովրդի մեջ. այո, կային [՝]նախանձություններ և պայքար և ոխ, հալածանքներ և հպարտություն, նույնիսկ

գերազանցելով հպարտությանը նրանց, ովքեր չէին պատկանում Աստծո եկեղեցուն:

10 Եվ այսպես, ավարտվեց դատավորների կառավարման ութերորդ տարին, և եկեղեցու ամբարշտությունը մեծ գայթակության քար էր նրանց համար, ովքեր չէին պատկանում եկեղեցուն. և այսպես եկեղեցին սկսեց թերանալ իր առաջընթացի մեջ:

11 Եվ եղավ այնպես, իններորդ տարվա սկզբին, Ալման տեսավ եկեղեցու ամբարշտությունը, և նա տեսավ նաև, որ եկեղեցու [՝]օրինակը սկսեց առաջնորդել նրանց, ովքեր անհավատներ էին մի անօրեն արարքից դեպի մյուսը, այսպիսով, առաջ բերելով ժողովրդի կործանումը:

12 Այո, նա տեսավ մեծ անհավասարություն ժողովրդի մեջ, ոմանք՝ իրենց վեր բարձրացնելով իրենց հպարտությամբ, արհամարհելով մյուսներին, շրջելով իրենց մեջքը դեպի [՝]կարիքավորն ու մերկը, և նրանց, ովքեր [՝]քաղցած էին, և նրանց, ովքեր պապակ էին, և նրանց, ովքեր հիվանդ էին ու չարչարված:

13 Այսպիսով, սա ողբերի մեծ առիթ էր ժողովրդի մեջ, մինչդեռ մյուսները խոնարհեցնում էին իրենց՝ աստարելով նրանց, ովքեր իրենց աստարի կարիքն ունեին, ինչպես օրինակ, [՝]բաժին հանելով իրենց ստացվածքից աղքատին և կարիքավորին, կերակրելով սովածներին և տանելով ամեն ձևի [՝]չարչարանքներ [՝]հանուն

<p>7ա ստե Իշխանություն: 8ա ստե Հպարտություն. Ունայն, Ունայնություն: բ Ալմա 1.21: 9ա ստե Հակառակություն:</p>	<p>բ ստե Նախանձել: 11ա Բ Թագ. ԺԲ.14, Ալմա 39.11: 12ա Ես. Գ.14, Հակոբ 2.17: բ Մոսիա 4.26:</p>	<p>13ա ստե Ողորմություններ, Ողորմություններ տալը: բ ստե Չախորդություն: գ Բ Կոր. ԺԲ.10:</p>
---	--	--

Քրիստոսի, որը գալու էր՝ համաձայն մարգարեության ոգու.

14 Ակնկալելով այդ օրվան, այսպիսով՝ պահպանելով իրենց մեղքերի մի թողություն. լցված լինելով մեծ յուրախությամբ՝ մեռելների հարության պատճառով, համաձայն Հիսուս Քրիստոսի կամքի ու զորության, և մահվան կապանքներից ազատման:

15 Եվ արդ եղավ այնպես, որ Ալման, տեսնելով Աստծո խոնարհի հետևորդների չարչարանքները և հալածանքները, որոնք կուտակվել էին նրանց վրա իր ժողովրդի մնացածի կողմից, և տեսնելով բոլոր նրանց՝ անհավասարությունը, սկսեց շատ դառնանալ. այնուամենայնիվ, Տիրոջ Հոգին չլքեց նրան:

16 Եվ նա ընտրեց մի իմաստուն մարդու, որը եկեղեցու երեցներից էր, և ըստ ժողովրդի՝ «ձայնի, տվեց նրան իշխանություն, որ նա կարողանար ունենալ իշխանություն հաստատելու օրենքներ, համաձայն այն յօրենքների, որոնք տրվել էին, և դնել դրանք ուժի մեջ՝ համաձայն մարդկանց ամբարշտության ու հանցանքների:

17 Արդ, այս մարդու անունը Նեփիա էր, և նա նշանակվեց «գլխավոր դատավոր. և նա նստում էր դատավորի աթոռին՝ դատելու ու կառավարելու ժողովրդին:

18 Արդ, Ալման եկեղեցու վրա քահանայապետ լինելու պաշտոնը չհնորհեց նրան, այլ նա իրեն

պահեց քահանայապետի պաշտոնը. բայց դատավորի աթոռը նա հանձնեց Նեփիային:

19 Եվ այս նա արեց, որ Պիքն անձամբ կարողանար առաջ գնալ իր ժողովրդի մեջ, կամ Նեփիի ժողովրդի մեջ, որպեսզի կարողանար քարոզել նրանց Աստծո Քիստսը՝ զգարթնեցնելու նրանց ի Պիշողություն իրենց պարտականությունների, և որպեսզի նա կարողանար տապալել Աստծո խոսքով ողջ հպարտությունն ու նենգությունը, և բոլոր հակառակությունները, որոնք կային իր ժողովրդի մեջ՝ չտեսնելով որևէ ճանապարհ, որով նա կարող էր ուղղել նրանց, բացի պարզ վկայությամբ հակադրվելով ընդդեմ նրանց:

20 Եվ այսպես, Նեփիի ժողովրդի վրա դատավորների կառավարման իններորդ տարվա սկզբում, Ալման հանձնեց դատավորի աթոռը՝ Նեփիային, և ամբողջությամբ սահմանափակվեց Աստծո սուրբ կարգի Քարծրագույն քահանայությամբ, խոսքի վկայությամբ, համաձայն հայտնության և մարգարեության ոգու:

Խոսքերը, որոնք Ալման՝ Քահանայապետն ըստ Աստծո սուրբ կարգի, հաղորդեց ժողովրդին իրենց քաղաքներում ու գյուղերում, ողջ երկրով մեկ:

Ընդգրկելով գլուխ 5–ը:

14ա Մոսիա 4.12,
Ալմա 5.26–35:
սո՛ւ Արդարացում,
Արդարացնել:
բ սո՛ւ Ուրախություն:
15ա Վևո՛ւ 38.27, 49.20:
16ա Ալմա 2.3–7:

բ Ալմա 1.1, 14, 18:
17ա Ալմա 50.37:
19ա Ալմա 7.1:
բ Ալմա 31.5,
Վևո՛ւ 11.21–22:
գ Ենովս 1.23:
դ Մոսիա 1.17,

Հել. 12.3:
ե սո՛ւ Վկայություն:
20ա Ալմա 8.12:
բ Մոսիա 29.42,
Ալմա 5.3, 44, 49:

ԳԼՈՒԽ 5

Փրկություն ձեռք բերելու համար, մարդիկ պետք է ապաշխարեն ու պահեն պատվիրանները, վերստին ծնվեն, Զրիստոսի արյան միջոցով սրբեն իրենց հանդերձները, լինեն խոնարհ, հանեն իրենցից հպարտությունն ու նախանձությունը, և կատարեն արդարության գործեր – Բարի Հովիվը կանչում է իր ժողովրդին – Նրանք, ովքեր անում են չար գործեր, դևի զավակներն են – Ալման վկայում է իր վարդապետության ճշմարտացիության վերաբերյալ և պատվիրում մարդկանց ապաշխարել – Արդարների անունները կգրվեն կյանքի գրքում: Մոտ 83բ. Բ.ծ.ա.:

Արգ եղավ այնպես, որ Ալման սկսեց ⁵հաղորդել ⁶Աստծո խոսքը ժողովրդին, առաջինը՝ Չարահեմլայի երկրում, և այնտեղից՝ ողջ երկրով մեկ:

2 Եվ սրանք են այն խոսքերը, որոնք նա ասաց ժողովրդին՝ եկեղեցում, որը հիմնադրված էր Չարահեմլայի քաղաքում, ըստ իր սեփական հիշատակարանի՝ ասելով.

3 Ես՝ Ալմաս, ⁷մովիրաբերված լինելով իմ հոր՝ Ալմայի կողմից, ⁸քահանայապետ լինելու Աստծո եկեղեցու վրա, նա զորություն և ⁹իշխանություն ունենալով Աստծուց՝ անելու այս բաները, ահա, ես ասում եմ ձեզ, որ նա սկսեց եկեղեցի հիմնադրել այն ¹⁰երկրում, որը Նեփիի սահմաններում էր. այո, այն երկրում, որը կոչվում

էր Մորմոնի երկիր. այո, և նա մկրտեց իր եղբայրներին Մորմոնի ջրերում:

4 Եվ ահա, ես ասում եմ ձեզ, նրանք Աստծո ողորմությամբ ու զորությամբ ¹¹ազատվեցին բազավոր Նոյի մարդկանց ձեռքից:

5 Եվ ահա, դրանից հետո, նրանք բերվեցին ¹²ճորտության Լամանացիների ձեռքով՝ անապատում. այո, ես ասում եմ ձեզ, նրանք գերության մեջ էին, և Տերը կրկին ազատեց նրանց ¹³ճորտությունից՝ իր խոսքի զորությամբ. և մենք բերվեցինք այս երկիրը, և այստեղ մենք սկսեցինք հիմնադրել Աստծո եկեղեցին՝ այս երկրով մեկ նույնպես:

6 Եվ այժմ, ահա ես ասում եմ ձեզ, իմ եղբայրներ՝, դո՛ւք, որ պատկանում եք այս եկեղեցուն, արդյոք դուք հիշողության մեջ բավականաչափ պահպանե՞լ եք ձեր հայրերի գերությունը: Այո, և արդյոք դուք հիշողության մեջ բավականաչափ պահպանե՞լ եք նրա ողորմությունն ու երկայնամտությունը նրանց հանդեպ: Եվ բացի այդ, արդյոք դուք բավականաչափ պահպանե՞լ եք հիշողության մեջ, որ նա ազատել է նրանց հոգիները դժոխքից:

7 Ահա, նա փոխեց նրանց սրտերը. այո, նա զարթնեցրեց նրանց խորը քնից, և նրանք զարթնեցին առ Աստված: Ահա, նրանք խավարի մեջ էին. սակայն նրանց հոգիները լուսավորվեցին հավիտենական խոսքի լույսով. այո, նրանք օղակված էին մահվան

5 1ա Ալմա 4.19:
բ Ալմա 5.61:
3ա ՍՈՒ Կարգել, Կարգում:
բ Ալմա 4.4, 18, 20:

գ Մոսիա 18.13,
3 Նեփի 11.25:
դ Մոսիա 18.4,
3 Նեփի 5.12:

4ա Մոսիա 23.1-3:
5ա Մոսիա 23.37-39,
24.8-15:
բ Մոսիա 24.17:

«կապանքներով և դժոխքի շղթաներով, և մի հավիտենական կործանում էր սպասում նրանց:

8 Եվ արդ, ես հարցնում եմ ձեզ, իմ եղբայրներ՝, կործանվեցի՞ն նրանք: Ահա, ես ասում եմ ձեզ՝ Ո՛չ, նրանք չկործանվեցին:

9 Եվ դարձյալ ես հարցնում եմ՝ ջարդվեցի՞ն մահվան կապանքները, և դժոխքի շղթաները, որոնք օղակել էին նրանց, արձակվեցի՞ն դրանք: Ես ասում եմ ձեզ՝ Այո՛, դրանք արձակվեցին և նրանց հոգիները բացվեցին, և նրանք գովեցեցին քավիչ սերը: Եվ ես ասում եմ ձեզ, որ նրանք փրկված են:

10 Եվ արդ ես հարցնում եմ ձեզ՝ ի՞նչ պայմաններով են նրանք փրկվել: Այո, ի՞նչ հիմքեր ունեին նրանք հուսալու փրկության համար: Ի՞նչն է նրանց արձակված լինելու պատճառը մահվան կապանքներից, այո, և նաև դժոխքի շղթաներից:

11 Ահա ես կարող եմ ասել ձեզ՝ մի՞թե իմ հայր Ալման չհավատաց խոսքերին, որոնք հաղորդվեցին ՄԱՐԻՆԱՊԻԻ քերանով: Եվ մի՞թե նա մի սուրբ մարգարե չէր: Մի՞թե նա չէր խոսում Աստծո խոսքերը, և իմ հայր Ալման հավատաց դրանց:

12 Եվ համաձայն իր հավատքի՝ մի հզոր ՄՓՈՒՄԻՍՅՈՒՆ գործվեց նրա սրտում: Ահա ես ասում եմ ձեզ, որ այս բոլորը ճշմարիտ է:

13 Եվ ահա, նա ՄՔԱՐՈՂԵԳ խոսքը

ձեր հայրերին, և մի հզոր փոփոխություն գործվեց նրանց սրտերում ևս, և նրանք խոնարհեցրին իրենց և դրեցին իրենց ՄՍՏԱՍԽՈՒՅՈՒՆՆ ԸՆՄԱՐԻՍ ու ՊԵՆԵՂԱՆԻ Աստծո վրա: Եվ ահա, նրանք հավատարիմ էին մինչև ՊԵՐՉ: այդ պատճառով նրանք փրկվեցին:

14 Եվ արդ ահա, ես հարցնում եմ ձեզ, եկեղեցու իմ եղբայրներ, ՄԾՎԵ՛՛՛՛՛ էք դուք Աստծուց հոգևորապես: ԸՆՊՈՆԵ՛՛՛՛՛ էք դուք նրա պատկերը ձեր դեմքին: Զգացե՛՛՛՛՛ էք դուք այս հզոր ՄՓՈՒՄԻՍՅՈՒՆՆ ձեր սրտերում:

15 Արդյոք դուք գործադրո՞ւմ եք հավատք նրա փրկագնման նկատմամբ, ով ՄՍՏԵՂԾԵ՛՛՛՛ է ձեզ: Արդյոք ակնկալո՞ւմ եք դուք հավատքի աչքով և պատկերացնում այս մահկանացու մարմինն անմահության բարձրացված, և այս ապականությունն անապականության ՔԱՐԴՐԱԳՎԱԾ՝ կանգնելու Աստծո առաջ, ՊԱՏՎԵԼՈՒ համաձայն այն գործերի, որոնք արվել են մահկանացու մարմնում:

16 Ես ասում եմ ձեզ, կարո՞ղ եք դուք պատկերացնել ինքներդ ձեզ, որ դուք լսում եք Տիրոջ ձայնը ձեզ ասելիս այն օրը. Եկեք ինձ մոտ, դո՛ւք, ՄՕՐԻՆՎԱԾՆԵՐ, քանզի ահա ձեր գործերն արդարության գործեր են եղել երկրի երեսին:

17 Թե՞՞՞՞՞ պատկերացնում եք ինքներդ ձեզ, որ կարող եք ստել

7աՄոսիա 15.8:
բ Ալմա 12.11,
վևՈՒ 138.23:
10աՍՈՒ Փրկություն,
Փրկագնման ծրագիր:
11աՄոսիա 17.1–4:
12աՍՈՒ Դարձի գալ,
Նորադարձ:
13աՄոսիա 18.7:
բ ՍՈՒ Ապավինել:

գ Մորմ. 9.28,
վևՈՒ 20.19:
դ ՍՈՒ Համբերել:
14աՄոսիա 27.24–27,
Ալմա 22.15:
սՈՒ Վերստին ծնված,
Աստծուց ծնված:
բ Հռովմ. Ը.11–17,
Մոսիա 5.2,
Մովսես 6.65:

սՈՒ Դարձի գալ,
Նորադարձ:
15աՍՈՒ Ստեղծել,
Ստեղծում:
բ ՍՈՒ Հարություն:
գ ՍՈՒ Վերջին
դատաստան:
16աՄատ. ԻԵ.31–46:

Տիրոջն այն օրը և Մասել,– Տե՛ր, մեր գործերը եղել են արդար գործեր երկրի երեսին,– և որ նա կփրկի ձեզ:

18 Կամ այլ կերպ, կարո՞ղ եք պատկերացնել ձեզ Աստծո դատարանի առջև բերված, ձեր հոգիները մեղավորությամբ ու խղճի խայթով լցված, հիշողություն ունենալով ձեր բոլոր մեղավորության մասին, այո, կատարյալ Միջնորդություն ձեր բոլոր ամբարշտության, այո, հիշողություն, որ դուք արհամարհել եք Աստծո պատվիրանները:

19 Ես ասում եմ ձեզ. կարո՞ղ եք այդ օրը վեր նայել Աստծուն անարատ սրտով ու մաքուր ձեռքերով: Ես ասում եմ ձեզ, կարո՞ղ եք դուք վեր նայել Աստծո Մպատկերը փորագրված ձեր դեմքին:

20 Ես ասում եմ ձեզ, կարո՞ղ եք մտածել փրկված լինելու մասին, երբ դուք հնազանդվել եք՝ դառնալու Մհպատակներ դեհին:

21 Ես ասում եմ ձեզ, դուք կիմանաք այդ օրը, որ դուք չեք կարող փրկվել, քանզի չի կարող ոչ մի մարդ Մփրկված լինել մինչև նրա Մհանդերձները լվացված չլինեն ճերմակ. այո, նրա հանդերձները պիտի Գսրբվեն, մինչև դրանք մաքրվեն բոլոր բծերից, նրա արյամբ, ում մասին խոսվել է մեր հայրերի կողմից, որը պիտի գա փրկագնելու իր ժողովրդին իրենց մեղքերից:

22 Եվ արդ, ես հարցնում եմ ձեզ,

իմ եղբայրներ՛ր, ի՞նչպես կզգա ձեզանից որևէ մեկը, եթե կանգնի Աստծո դատարանի առջև՝ իր հանդերձները Մարյամբ ու ամեն ձևի Մկեղտոտությամբ բծոտված: Ահա, ի՞նչ կվկայեն այս բաները ձեր դեմ:

23 Ահա, մի՞թե դրանք չեն Մվկայի, որ դուք մարդասպաններ եք, այո, և նաև, որ դուք մեղավոր եք ամեն ձևի ամբարշտության մեջ:

24 Ահա, իմ եղբայրներ, մի՞թե դուք ենթադրում եք, որ այդպիսի մեկը կարող է մի տեղ ունենալ՝ նստելու Աստծո արքայության մեջ՝ ՄԱբրահամի հետ, Իսահակի հետ և Հակոբի հետ, և նաև բոլոր սուրբ մարգարեների, որոնց հանդերձները սրբված են ու անբիծ՝ մաքուր ու ճերմակ:

25 Ես ասում եմ ձեզ. Ո՛չ. մինչև դուք չդարձնեք մեր Ստեղծողին ստախտս ի սկզբանե, կամ ենթադրեք, որ նա մի ստախտս է ի սկզբանե, դուք չեք կարող ենթադրել, որ նման բան կարող է տեղի ունենալ երկնքի արքայությունում. այլ նրանք պետք է դուրս գզվեն, քանզի նրանք դեի թագավորության Մզավակներն են:

26 Եվ արդ, ահա ես ասում եմ ձեզ, իմ եղբայրներ՛ր, եթե դուք զգացել եք սրտի մի Մփոփոխություն, և եթե դուք տրամադրված եք եղել երգելու քավիչ սիրո Մերզը, ես կկամենայի հարցնել, այժմ դուք Գունե՞ք այդպիսի զգացում:

17ա3 Նեփի 14.21–23:
18աԵգեկ. Ի.43,
2 Նեփի 9.14,
Մոսիա 3.25,
Ալմա 11.43:
19աԱ Հռվի. Գ.1–3:
20աՄոսիա 2.32:
21աՍՈՒ Փրկություն:

բ 1 Նեփի 12.10,
Ալմա 13.11–13,
3 Նեփի 27.19–20:
գ ՍՈՒ Անարատ,
Անարատություն:
22աԵս. ԾԹ.3:
բ ՍՈՒ Կեղտ,
Կեղտություն:

23աԵս. ԾԹ.12:
24աՂուկ. ԺԳ.28:
25ա2 Նեփի 9.9:
26աՍՈՒ Դարձի գալ,
Նորադարձ:
բ Ալմա 26.13:
գ Մոսիա 4.12,
ՎևոՒ 20.31–34:

27 Քայլե՞լ եք դուք՝ ձեզ անաբատ պահելով Աստծո առաջ: Կկարողանայի՞ք դուք ասել ձեր մեջ, եթե դուք այս պահին կանչվեիք մեռնելու, որ եղել եք բավականին ՚Խոնարհ: Որ ձեր հանդերձները մաքրված և ճերմակ են դարձված Քրիստոսի արյան միջոցով, որը կզա՞փրկկազնելու իր ժողովրդին իրենց մեղքերից:

28 Ահա, արդյոք դուք զե՞րծ եք հպարտությունից: Ես ասում եմ ձեզ՝ եթե ոչ, դուք պատրաստ չեք հանդիպելու Աստծուն: Ահա դուք պետք է պատրաստվեք արագ. քանզի երկնքի արքայությունը շուտով մոտենում է, և այդպիսի մեկը չունի հավերժական կյանք:

29 Ահա ես ասում եմ, կա՞ ձեր մեջ մեկը, որը զերծ չէ անախանձությունից: Ես ասում եմ ձեզ, որ այդպիսի մեկը պատրաստ չէ. և ես կկամենայի, որ նա արագ պատրաստվեր, քանզի ժամը մոտ է՝ առ ձեռն, և նա չգիտի ժամանակը երբ կզա. քանզի այդպիսի մեկը չի համարվի անմեղ:

30 Եվ դարձյալ ես ասում եմ ձեզ՝ կա՞ ձեր մեջ մեկը, որ ՞ծաղր է անում իր եղբորը կամ որ հալածանքներ է դիզում նրա վրա:

31 Վա՛յ այդպիսի մեկին, քանզի նա պատրաստ չէ, և ժամանակը մոտ է, որ նա պետք է ապաշխարի, այլապես նա չի կարող փրկվել:

32 Այո, այսինքն՝ վա՛յ ձեզ բոլո-

րիդ, անօրինություն հարձողներ. ապաշխարե՛ք, ապաշխարե՛ք, քանզի Տեր Աստված է խոսել այս:

33 Ահա նա ուղարկում է մի հրավեր ՞բոլոր մարդկանց, քանզի ողորմության ՚բազուկները մեկնված են դեպի նրանց, և նա ասում է. Ապաշխարե՛ք, և ես կընդունեմ ձեզ:

34 Այո, նա ասում է. ՞Եկե՛ք ինձ մոտ, և դուք կճաշակեք կենաց ծառի ՚պտղից. այո՛, դուք կուտեք և կխմեք կյանքի ՚հացից ու ջրից ՚անհատույց.

35 Այո՛, եկե՛ք ինձ մոտ և առաջ բերեք արդարության գործեր, և դուք չեք կտրվի ու կրակի մեջ զգվի,

36 Քանզի, ահա, ժամանակը մոտ է, որ ով որ ՞առաջ է բերում ոչ բարի պտուղ, կամ ով որ չի անում արդարության գործեր, նույնը պատճառ ունի ոռնալու ու ողբալու:

37 Ո՛վ դուք, անօրինություն գործողներ. դո՛ւք, որ փքված եք աշխարհի ՞ուռնայն բաներով, դո՛ւք, որ ձևացրել եք, թե գիտեք արդարության ուղիները, այնուամենայնիվ, ՚մոլորվել եք՝ ինչպես հովիվ չունեցող ղոչխարներ, չնայած մի հովիվ ՚կանչել է ձեր ետևից ու դեռ կանչում է ձեր ետևից, բայց դուք չե՛ք կամենում ՚ականջ դնել նրա ձայնին:

38 Ահա, ես ասում եմ ձեզ, որ

27ա սո՛ւ Արդարացում, Արդարացնել:
p սո՛ւ Խոնարհ, Խոնարհություն:
q սո՛ւ Փրկագնել, Փրկագնված, Փրկագնում:
 28ա սո՛ւ Հպարտություն:
 29ա սո՛ւ Նախանձել:
 30ա սո՛ւ Չարախոսություն:
 32ա Սաղ. Ե.5:

33ա Ալմա 19.36,
 3 Նեփի 18.25:
p Հակոբ 6.5,
 3 Նեփի 9.14:
 34ա 2 Նեփի 26.24-28,
 3 Նեփի 9.13-14:
p 1 Նեփի 8.11, 15.36:
q սո՛ւ Կյանքի հացը:
 ղ 2 Նեփի 9.50-51,
 Ալմա 42.27:
 36ա Մատ. Գ.10, Է.15-20,

3 Նեփի 14.19,
 Վևո՛Բ 97.7:
 37ա սո՛ւ Ուռնայն, Ուռնայնություն:
p 2 Նեփի 12.5, 28.14,
 Մոսիա 14.6:
q Մատ. Թ.36:
 ղ Առակ. Ա.24-27,
 Ես. ԿԵ.12:
 Ե Երեմ. ԻԶ.4-5,
 Ալմա 10.6:

բարի ^ահովիվը կանչում է ձեզ. այո, և իր իսկ անունով է նա կանչում ձեզ, որն անունն է Քրիստոսի. և եթե դուք չեք կանենում ^բականջ դնել ^գբարի հովվի ձայնին՝ այն ^դանվանը, որով դուք կանչվում եք, ահա, դուք բարի հովվի ոչխարները չեք:

39 Եվ արդ, եթե դուք բարի հովվի ոչխարները չեք, ո՞ր ^ափարախից եք դուք: Ահա, ես ասում եմ ձեզ, որ ^բղնն է ձեր հովիվը, և դուք նրա փարախից եք. և այժմ ո՞վ կարող է ժխտել այս: Ահա, ես ասում եմ ձեզ, ով որ ժխտում է այս, ^գստախտս է ու դևի ^դզավակ:

40 Քանզի ես ասում եմ ձեզ, որ ինչ որ ^աբարի է, գալիս է Աստծուց, և ինչ որ չար է, գալիս է դևից:

41 Հետևաբար, եթե մարդ առաջ է բերում ^աբարի գործեր, նա ականջ է դնում բարի հովվի ձայնին, և նա հետևում է նրան. բայց ով, որ առաջ է բերում չար գործեր, նույնը դառնում է դևի ^բզավակ, քանզի նա ականջ է դնում նրա ձայնին ու հետևում նրան:

42 Եվ ով որ անում է այս, պետք է ստանա իր ^ավարձքը նրանից. հետևաբար, որպես իր ^բվարձք, նա ստանում է ^գմահ, ինչ վերաբերում է արդարությանը պատկանող բաներին, լինելով մեռած բոլոր բարի գործերի համար:

43 Եվ արդ, իմ եղբայրներ՝, ես կկանենայի, որ դուք լսեիք ինձ,

քանի որ ես խոսում եմ իմ հոգու կորովով. քանզի ահա, ես խոսել եմ ձեզ հետ հստակորեն, որպեսզի դուք չկարողանաք սխալվել, կամ խոսել եմ Աստծո պատվիրանների համաձայն:

44 Քանզի ես կանչված եմ խոսելու այս ձևով համաձայն Աստծո ^ասուրբ կարգի, որը Քրիստոս Հիսուսի մեջ է. այո, ինձ պատվիրված է կանգնել ու վկայել այս ժողովրդին այն բաները, որոնք խոսվել են մեր հայրերի կողմից, այն բաների վերաբերյալ, որոնք պիտի գան:

45 Եվ այս բոլորը չէ: Մի՞թե դուք կարծում եք, որ այս բաների մասին ես ինքս գիտեմ: Ահա, վկայում եմ ձեզ, որ ես ^ագիտեմ, որ այս բաները, որոնց մասին խոսել եմ, ճշմարիտ են: Եվ ի՞նչ եք դուք կարծում, ի՞նչպես ես գիտեմ դրանց հավաստիության մասին:

46 Ահա ես ասում եմ ձեզ՝ դրանք ^ահայտնի են դարձվել ինձ Աստծո Սուրբ Հոգու կողմից: Ահա, ես ^բծոմ եմ պահել ու աղոթել շատ օրեր, որ ես ինքս կարողանայի իմանալ այս բաները: Եվ այժմ, ես ինքս գիտեմ, որ դրանք ճշմարիտ են. քանզի Տեր Աստված դրանք հայտնի դարձրեց ինձ Սուրբ Հոգու միջոցով. և դա ^գհայտնությանն ոգին է, որն իմ մեջ է:

47 Եվ ավելին, ես ասում եմ ձեզ, որ դա այսպես է բացահայտվել

38ա սոս Բարի հովիվ:
 բ Ղև. ԻՁ.14-20,
 ՎևոՒ 101.7:
 գ 3 Նեփի 15.24, 18.31:
 դ Մոսիա 5.8,
 Ալմա 34.38:
 39ա Մառ. 2.24,
 Ղուկ. ԺՁ.13:
 բ Մոսիա 5.10:
 սոս Դև:

գ Ա Հովի. Բ.22:
 դ 2 Նեփի 9.9:
 40ա Օմնի 1.25, Եթեր 4.12,
 Մոր. 7.12, 15-17:
 41ա 3 Նեփի 14.16-20:
 սոս Գործեր:
 բ Մոսիա 16.3-5,
 Ալմա 11.23:
 42ա Ալմա 3.26-27,
 ՎևոՒ 29.45:

բ Հռովմ. 2.23:
 գ Հել. 14.16-18:
 սոս Մահ հոգևոր:
 44ա Ալմա 13.6:
 45ա սոս Վկայություն:
 46ա Ա Կոր. Բ.9-16:
 բ սոս Ծոմ,
 Ծոմապահություն:
 գ սոս Հայտնություն:

ինձ, որ խոսքերը, որոնք ասվել են մեր հայրերի կողմից, ճշմարիտ են, այսպես իսկ, համաձայն մարգարեության ոգու, որն իմ մեջ է, որը նույնպես Աստծո Հոգու դրսևորմամբ է:

48 Ես ասում եմ ձեզ, որ ես ինքս գիտեմ, որ ինչը որ ես պիտի ասեմ ձեզ նրա վերաբերյալ, ինչը պիտի գա, ճշմարիտ է. և ես ասում եմ ձեզ, որ ես գիտեմ, որ Հիսուս Քրիստոսը պիտի գա, այո, Որդին՝ Հոր Միածինը, լի շնորհով, և ողորմությամբ, և ճշմարտությամբ: Եվ ահա այդ նա է, որ գալիս է վեր առնելու աշխարհի մեղքերը, այո, յուրաքանչյուր մարդու մեղքերը, որը հաստատակամորեն հավատում է նրա անվանը:

49 Եվ արդ, ես ասում եմ ձեզ, որ սա է՝ Կարգը, ըստ որի ես կանչված եմ, այո, քարոզելու իմ սիրելի եղբայրներին, այո, և ամեն մեկին, որ բնակվում է այս երկրում. այո, քարոզելու բոլորին՝ և՛ ծերին, և՛ երիտասարդին, և՛ ճորտին, և՛ ազատին. այո, ես ասում եմ ձեզ՝ տարեցներին, և նաև միջահասակներին և աճող սերնդին. այո՛, աղաղակելով նրանց, որ նրանք պետք է ապաշխարեն և վերստին թճնվեն:

50 Այո, այսպես է ասում Հոգին. Ապաշխարեք, դո՛ւք, բոլոր աշխարհի ծայրեր, քանզի երկնքի արքայությունը շուտով մոտենում

է. այո, Աստծո Որդին գալու է իր Պփառքով, իր գործությամբ, վեհափառությամբ, հզորությամբ և տիրապետությամբ: Այո, իմ սիրելի՛ եղբայրներ, ես ասում եմ ձեզ, որ Հոգին ասում է. Ահա, ողջ երկրքի թագավորի փառքը. և նաև երկրքի թագավորի, պիտի շատ շուտով դուք շողա բոլոր մարդկանց զավակների մեջ:

51 Եվ նաև Հոգին ասում է ինձ, այո, զորեղ ձայնով աղաղակում է ինձ՝ ասելով. Առաջ գնա և ասա այս ժողովորդին. Ապաշխարեք, քանզի մինչև դուք չապաշխարեք, ոչ մի ձևով չեք կարող ժառանգել Երկնքի արքայությունը:

52 Եվ դարձյալ ես ասում եմ ձեզ, Հոգին ասում է. Ահա, Կացինը դրված է ծառի արմատին. հետևաբար, ամեն ծառ, որ առաջ չի բերում բարի պտուղ, պիտի կտրվի ու գցվի կրակը, այո, մի կրակ, որը չի կարող սպառվել, այսինքն՝ մի անմար կրակ: Ահա, և հիշե՛ք, Սուրբն է ասել այս:

53 Եվ արդ, իմ սիրելի՛ եղբայրներ, ես ասում եմ ձեզ, կարո՞ղ եք դուք դեմ կանգնել այս ասածներին. այո՛, կարո՞ղ եք մի կողմ դնել այս բաները, և Պոտնակոխ անել Սուրբին. այո՛, կարո՞ղ եք ձեր սրտերի Պապարտությամբ փրվել. այո, մի՞թե դուք կշարունակեք Քանկարծեք հանդերձներ կրել և ձեր սրտերը դնել աշխարհի

49ա սո՛ւ Կանչ, Աստծո կողմից կանչված, Կոչում.
Քահանայություն:
բ սո՛ւ Վերստին ծնված, Աստծուց ծնված:
50ա սո՛ւ Փառք. Հիսուս Քրիստոսի երկրորդ գալուստը:
բ Սաղ. ԻԴ,

Մատ. Բ.2, Դուկ. ԻԳ.2, 2 Նեփի 10.14, ՎևոՒ 38.21–22, 128.22–23, Մովսես 7.53:
սո՛ւ Հիսուս Քրիստոս, Աստծո արքայություն կամ Երկնքի արքայություն:

51ա սո՛ւ Երկինք:
52ա Դուկ. Գ.9, ՎևոՒ 97.7:
բ Հակոբ 5.46, 6.7, 3 Նեփի 27.11–12:
53ա 1 Նեփի 19.7:
բ սո՛ւ Հպարտություն:
գ 2 Նեփի 28.11–14, Մորմ. 8.36–39:

ունայն բաների վրա՝ ձեր ²հարըստությունների վրա:

54 Այո, մի՞թե դուք կշարունակեք ենթադրել, որ դուք ավելի լավն եք, քան մեկ ուրիշը. այո՛, մի՞թե դուք կշարունակեք հալածանքը ձեր եղբայրների, ովքեր խոնարհեցնում են իրենց ու քայլում ըստ Աստծո սուրբ կարգի, որով նրանք բերվել են այս եկեղեցին՝ ³սրբագործված լինելով Սուրբ Հոգով, և նրանք առաջ են բերում գործեր, որոնք ապաշխարությանը վայել են,

55 Այո, և մի՞թե դուք կշարունակեք ձեր մեջքը դարձնել դեպի ⁴աղքատը և կարիքավորը, և ետ պահել ձեր ստացվածքը նրանցից:

56 Եվ ի վերջո, դուք բոլո՛րդ, որ կշարունակեք ձեր ամբարշտության մեջ, ես ասում եմ ձեզ, որ այդ նրանք են, որոնք պիտի կտրվեն ու զգվեն կրակը, եթե նրանք արագ չապաշխարեն:

57 Եվ արդ, ես ասում եմ ձեզ, ձե՛զ բոլորիդ, որ ցանկանում եք հետևել ⁵բարի հովիի ձայնին, դու՛րս եկեք ամբարիշտների միջից և ⁶գա՛տ եղեք, և մի՛ դիպչեք նրանց անմաքուր բաներին. և ահա, նրանց անունները պիտի ⁷զնջվեն, որպեսզի ամբարիշտների անունները չհամրվեն արդարների անունների հետ, որպեսզի Աստծո խոսքը կարողանա իրագործվել, որն ասում է. Ամբարիշտների անունները չպետք է խառնվեն իմ ժողովրդի անունների հետ.

58 Քանզի, արդարների անուննե-

րը պիտի գրվեն կյանքի ⁸գրքում, և նրանց ես կշնորհեմ ժառանգություն՝ իմ աջ կողմում: Եվ այժմ, իմ եղբայրներ, ի՞նչ ունեք դուք սրա դեմ ասելու: Ես ասում եմ ձեզ, եթե դուք խոսեք սրա դեմ, դա նշանակություն չունի, քանզի Աստծո խոսքը պետք է իրագործվի:

59 Քանզի, ո՞ր հովիվը ձեր միջից ունենալով շատ ոչխարներ, չի հսկում նրանց վրա, որպեսզի գայլեր չմտնեն ու չհոշոտեն իր հոտը: Եվ, ահա, եթե գայլ է մտնում նրա հոտը, մի՞թե նա դուրս չի քշում դրան: Այո, և ի վերջո, եթե նա կարողանա, կկործանի նրան:

60 Եվ արդ, ես ասում եմ ձեզ, որ բարի հովիվը կանչում է ձեր ետևից, և եթե դուք ականջ դնեք նրա ձայնին, նա կբերի ձեզ իր փարախը, և դուք նրա ոչխարներն եք. և նա պատվիրում է ձեզ, որ դուք թույլ չտաք ոչ մի գիշատիչ գայլի՝ մտնելու ձեր մեջ, որպեսզի դուք չկործանվեք:

61 Եվ արդ, ես՝ Ալմաս, պատվիրում եմ ձեզ, լեզվով ⁹նրա, ով պատվիրել է ինձ, որ դուք հետևեք, որ կատարեք այն խոսքերը, որոնք ես ասել եմ ձեզ:

62 Ես խոսում եմ հրամանի ձևով ձեզ հետ, որ պատկանում եք եկեղեցուն. իսկ նրանց հետ, ովքեր չեն պատկանում եկեղեցուն, խոսում եմ հրավերի ձևով՝ ասելով. Եկե՛ք և մկրտվե՛ք ապաշխարության համար, որպեսզի դուք նույնպես կարողանաք լինել ճաշակողներ կենաց ¹⁰ծառի պտղից:

53դ Սաղ. ԿԲ.10, ՎևոՒ 56.16–18:
54ա սո՛ւ Սրբագործում:
55ա Սաղ. ԳԹ.15–16, Հակոբ 2.17, Հել. 6.39–40:

57ա սո՛ւ Բարի հովիվ:
բ Եզր. 2.21, Թ.1, Նեեմ. Թ.2, Բ Թեա. Գ.6, ՎևոՒ 133.5, 14:
գ Բ Օր. ԻԹ.20,

Սոբ. 6.7, ՎևոՒ 20.8:
58ա սո՛ւ Կյանքի գիրք:
61ա Ալմա 5.44:
62ա Մ Նեպի 8.10, 11.21–23:

ԳԼՈՒԽ 6

Զարահեմլայի Եկեղեցին մաքրվում է և կարգավորվում – Ալման գնում է Գեղեճն՝ քարոզելու: Մոտ 83թ. Ք.ծ.ա.:

Եւ արդ, եղավ այնպես, որ հետո, երբ Ալման վերջ դրեց խոսելուն եկեղեցու ժողովրդի համար, որը հիմնադրված էր Զարահեմլայի քաղաքում, նա քահանաներ ու "երեցներ" կարգեց, զձեռնադրելով ըստ Աստծո կարգի, որ նախագահեն և "հսկեն եկեղեցու վրա:

2 Եվ եղավ այնպես, որ ովքեր չէին պատկանում եկեղեցուն, որոնք ապաշխարեցին իրենց մեղքերից, "մկրտվեցին ապաշխարության համար և ընդունվեցին եկեղեցի:

3 Եվ նաև եղավ այնպես, որ ովքեր որ պատկանում էին եկեղեցուն, որոնք չէին "ապաշխարում իրենց ամբարշտությունից և խոնարհեցնում իրենց Աստծո առաջ, ես նկատի ունեն նրանց, ովքեր բարձրամտացած էին իրենց սրտերի "հպարտությունից, այդպիսիները մերժվեցին, և նրանց անունները զնջվեցին, որպեսզի նրանց անունները չհամարվեին արդարների թվում:

4 Եվ այսպես նրանք սկսեցին հաստատել եկեղեցու կարգը Զարահեմլա քաղաքում:

5 Արդ, ես կկամենայի, որ դուք հասկանայիք, որ Աստծո խոսքն ազատ էր բոլորի համար, այնպես որ ոչ ոք գրված չէր արտոնություն-

նից ժողովելու միասին՝ լսելու Աստծո խոսքը:

6 Այնուամենայնիվ, Աստծո գավակներին պատվիրված էր, որ նրանք հավաքվեին միասին հաճախ, և միանային "ծոնով ու գորավոր աղոթքով, այն հոգիների քարօրոյքյան համար, ովքեր չգիտեին Աստծուն:

7 Եվ արդ եղավ այնպես, որ երբ Ալման արեց այս կանոնակարգումները, նա հեռացավ նրանցից, այո, եկեղեցուց, որը Զարահեմլա քաղաքում էր, և Սիդոն գետի վրայով անցավ արևելյան կողմը՝ դեպի Գեղեճնի "հովիտը, այնտեղ լինելով կառուցված մի քաղաք, որը կոչվում էր Գեղեճնի քաղաք, որը մի դաշտավայրում էր, որը կոչվում էր Գեղեճն, կոչված լինելով այն մարդու անունով, որը "սպանվել էր Նեորի ձեռքով՝ սրով:

8 Եվ Ալման գնաց և սկսեց հայտարարել Աստծո խոսքը եկեղեցում, որը հիմնադրված էր Գեղեճնի հովտում, համաձայն ճշմարտության խոսքի հայտնության, որը խոսվել էր իր հայրերի կողմից, և համաձայն մարգարեության ոգու, որը նրա մեջ էր, համաձայն Հիսուս Քրիստոսի՝ Աստծո Որդու "վկայության, որը պիտի գար փրկագնելու իր ժողովրդին իրենց մեղքերից, և սուրբ կարգի, որով նա կանչված էր: Եվ այսպես է այդ գրված: Ամեն:

Ալմայի խոսքերը, որոնք նա հաղորդեց Գեղեճնի ժողովրդին՝

6 1ա սուր Երեց:
բ սուր Կարգել, Կարգում:
գ սուր Չեռնադրություն:
դ ՎևՈՒ 52.39:
2ա սուր Մկրտություն,
Մկրտել:

3ա Մոսիա 26.6:
բ սուր Հպարտություն:
գ Ել. ԼԲ.33,
Մոսիա 26.36,
Ալմա 1.24, 5.57–58:
սուր Հեռացում:

6ա սուր Ծոն, Ծոնապահություն:
7ա Ալմա 2.20:
բ Ալմա 1.9:
8ա Հայտ. ԺԹ.10:

համաձայն իր սեփական հիշատակարանի:

Ընդգրկելով զլուխ 7-ը:

ԳԼՈՒԽ 7

Քրիստոսը կծնվի Մարիամից – Նա կարճակի մահվան կապանքները և վեր կառնի իր ժողովրդի մեղքերը – Նրանք, ովքեր սպաշխարում են, մկրտվում և պահում են պատվիրանները, կունենան հավերժական կյանք – Կեղտոտությունը չի կարող ժառանգել Աստծո արքայությունը – Համեստություն, հավատք, հույս և գթություն է պահանջվում: Մոտ 83թ. Ք.ծ.ա.:

ԱՀԱ, իմ սիրելի՛ եղբայրներ, տեսնելով, որ ինձ թույլ տրվեց գալ ձեզ մոտ, հետևաբար ես փորձում եմ ^ադիմել ձեզ իմ լեզվով. այո, իմ իսկ բերանով՝ տեսնելով, որ սա առաջին անգամն է, որ ես խոսում եմ իմ բերանի խոսքերով, ես ամբողջովին զամված լինելով ^բդատավորի աթոռին, ունեցած լինելով շատ գործեր, այնպես որ ես չէի կարողանում գալ ձեզ մոտ:

2 Եվ նույնիսկ ես չէի կարողանա գալ այժմ՝ այս անգամ, եթե չլիներ այնպես, որ դատավորի աթոռը ^ատրվեր մեկ ուրիշի, կառավարելու իմ փոխարեն. և Տերը մեծ ողորմությամբ շնորհեց, որ ես գայի ձեզ մոտ:

3 Եվ, ահա ես եկել եմ, ունենալով մեծ հույսեր և սաստիկ ցանկություն, որ ես գտնեի, որ դուք խոնարհեցրել էիք ձեզ Աստծո առաջ, և որ դուք շարունակել էիք աղաչելը նրա շնորհի համար, որ ես

գտնեի, որ դուք անարատ էիք նրա առաջ, որ ես գտնեի, որ դուք այն սուկալի երկրնտրանքի մեջ չէիք, որում մեր եղբայրներն էին Չարահեմլայում:

4 Բայց օրհնված լինի Աստծո անունը, որ նա տվել է ինձ իմանալու, այո, տվել է ինձ անչափ մեծ ուրախություն իմանալու, որ նրանք կրկին հաստատված են նրա արդարության ուղու վրա:

5 Եվ ես հուսով եմ, համաձայն Աստծո Հոգու, որն իմ մեջ է, որ ես պետք է նաև ունենամ ուրախություն ձեզ համար. սակայն ես չեմ ցանկանում, որ իմ ուրախությունը ձեզ համար գա այսքան շատ չարչարանքների ու տառապանքի միջոցով, որ ես ունեցել եմ այդ եղբայրների համար Չարահեմլայում, քանզի ահա, իմ ուրախությունը նրանց համար եկավ շատ չարչարանքի ու տառապանքի միջով անցնելուց հետո:

6 Բայց ահա, ես հուսով եմ, որ դուք այնքան մեծ անհավատության մի վիճակում չէք, որքան ձեր եղբայրներն էին. ես հուսով եմ, որ դուք բարձրամտացած չեք ձեր սրտերի հպարտությունից. այո, ես հուսով եմ, որ դուք ձեր սրտերը չեք դրել հարստությունների ու աշխարհի ունայն բաների վրա. այո, ես հուսով եմ, որ դուք չեք երկրպագում ^ակուռքերի, այլ որ դուք երկրպագում եք ճշմարիտ ու ^բկենդանի Աստծուն, և որ դուք, հավիտենական հավատքով, ակննկալում եք ձեր մեղքերի թողությունը, որը պիտի գա:

7 Քանզի, ահա ես ասում եմ ձեզ, կան շատ բաներ, որ պետք է գան. և ահա կա մի բան, որն ավելի մեծ

7 1ա Ալմա 4.19:
բ Մոսիա 29.42:

2ա Ալմա 4.16-18:
6ա2 Նեփի 9.37, Հել. 6.31:

բ Գան. 2.26:

կարևորության է, քան մնացած բոլորը, քանզի ահա, ^աժամանակը հեռու հեռվում չէ, երբ Քավիչը կգա ու կապրի իր ժողովրդի մեջ:

8 Ահա ես չեմ ասում, որ նա կգա մեր մեջ իր մահկանացու տաղավարում բնակվելու ժամանակ. քանզի, ահա Հոգին չի ասել ինձ, որ դա այդպես պիտի լինի: Այժմ, ինչ վերաբերում է այս բանին, ես չգիտեմ. բայց այսքանը ես գիտեմ, որ Տեր Աստված ունի գործություն՝ անելու բոլոր բաները, որոնք իր խոսքի համաձայն են:

9 Բայց ահա, Հոգին ասել է ինձ այսքանը՝ ասելով. Աղաղակիր առ այս ժողովուրդը՝ ասելով. ^աԱպաշխարե՛ք և պատրաստե՛ք Տիրոջ ճանապարհը, և քայլե՛ք նրա շավիղներում, որոնք ուղիղ են. քանզի, ահա երկնքի արքայությունը մոտ է, և Աստծո Որդին ^բգալիս է երկրի երեսի վրա:

10 Եվ ահա, նա պետք է ^ածնվի ^բՄարիամից, Երուսաղեմի մոտ, որը մեր նախահայրերի ^գերկիրն է, նա լինելով ^դկույս, արժանավոր և ընտրյալ անոթ, որը պիտի լինի հովանիով ծածկված, և ^եհղիանա Սուրբ Հոգու գործությամբ, և բերի մի որդի, այո, այսինքն՝ Աստծո Որդուն:

11 Եվ նա պիտի գնա առաջ՝ տանելով ցավեր և ^զչարչարանքներ, և փորձություններ ամեն տեսակի. և դա՝ որպեսզի խոսքը կարողանա

իրագործվել, որն ասում է. նա վեր կառնի իր վրա իր ժողովրդի ցավերն ու հիվանդությունները:

12 Եվ նա իր վրա վեր կառնի ^ամահ, որ կարողանա արձակել մահվան կապանքները, որոնք կապում են իր ժողովրդին. և նա իր վրա վեր կառնի նրանց թուլությունները, որպեսզի նրա սիրտը լցվի ողորմությամբ, ըստ մարմնի, որպեսզի նա կարողանա իմանալ, ըստ մարմնի, ինչպես ^բսատարել իր ժողովրդին՝ ըստ նրանց թուլությունների:

13 Արդ, Հոգին ^ագիտի բոլոր բաները. այնուամենայնիվ, Աստծո Որդին տառապում է ըստ մարմնի, որպեսզի վեր ^բառնի իր վրա իր ժողովրդի մեղքերը, որ նա կարողանա ջնջել նրանց օրինազանցությունները՝ համաձայն իր ազատման գործության. և այժմ, ահա սա է վկայությունը, որն իմ մեջ է:

14 Արդ, ես ասում եմ ձեզ, որ դուք պետք է ապաշխարեք և վերստին ^ածնվեք, քանզի Հոգին ասում է՝ եթե դուք չծնվեք վերստին, դուք չեք կարող ժառանգել երկնքի արքայությունը. հետևաբար, եկեք և մկրտվեք ապաշխարության համար, որպեսզի կարողանաք լվացված լինել ձեր մեղքերից, որպեսզի կարողանաք ունենալ հավատք առ Աստծո Գառը, որը վեր է առնում աշխարհի մեղքը, որը հզոր է

7ա Ալմա 9.26:
9ա Մատ. 9.2-4,
Ալմա 9.25:
բ Մոսիա 3.5, 7.27,
15.1-2:
10ա Ես. Է.14,
Ղուկ. Ա.27:
բ Մոսիա 3.8:
սո՛ւ Մարիամ՝ Հիսուսի մայրը:

գ Ա Մն. Թ.3, Բ Մն. ԺԵ.9,
1 Նեփի 1.4,
3 Նեփի 20.29:
դ 1 Նեփի 11.13-21:
ե Մատ. Ա.20,
Մոսիա 15.3:
11ա Ես. ԾԳ.3-5,
Մոսիա 14.3-5:
12ա 2 Նեփի 2.8,
Ալմա 12.24-25:

սո՛ւ Խաչելություն:
բ Եբր. Բ.18, 4.15,
Վևո՛ւ 62.1:
13ա սո՛ւ Աստված,
Աստվածագլուխ:
բ Մոսիա 15.12:
սո՛ւ Քավել,
Քավություն:
14ա սո՛ւ Վերստին ծնված,
Աստծուց ծնված:

փրկելու ու ամեն անարդարությունից արբելու:

15 Այո, ես ասում եմ ձեզ՝ եկեք և մի վախեցեք, և մի կողմ դրեք ամեն մեղք, որը հեշտորեն «պաշարում է ձեզ, որը կապում է ձեզ, որ կործանի, այո, եկեք ու գնացեք առաջ, և ցույց տվեք ձեր Աստծուն, որ դուք հոժար եք ապաշխարել ձեր մեղքերից և մտնել ուխտի մեջ նրա հետ՝ պահելու նրա պատվիրանները, և ապացուցեք դա նրան այս օրը՝ մտնելով մկրտության ջրերը:

16 Եվ ով որ անի այս, և այնուհետև պահի Աստծո պատվիրանները, նույնը կհիշի, որ ես ասում եմ նրան, այո, նա կհիշի, որ ես ասել եմ նրան՝ նա պիտի ունենա հավերժական կյանք, ըստ Մուրք Հոգու վկայության, որը վկայում է իմ մեջ:

17 Եվ արդ, իմ սիրելի՛ եղբայրներ, հավատո՞ւմ եք դուք այս բաներին: Ահա ես ասում եմ ձեզ, այո, ես գիտեմ, որ դուք հավատում եք դրանց. և ուղին, որով ես գիտեմ, որ դուք հավատում եք դրանց, Հոգու դրսևորման միջոցով է, որն իմ մեջ է: Եվ այժմ, որովհետև ձեր հավատքն ուժեղ է դրանց վերաբերյալ, այո, այն բաների վերաբերյալ, որոնք ես խոսել եմ, մեծ է իմ ուրախությունը:

18 Քանզի ես ասացի ձեզ սկզբում, որ ունեի մեծ ցանկություն, որ դուք չլինեիք երկրմտրանքի վիճակում, ինչպես ձեր եղբայրները, նմանապես ես գտա, որ իմ իղձերը բավարարված են:

19 Քանզի ես զգում եմ, որ դուք արդարության շավիղներում եք. ես զգում եմ, որ դուք այն շավիղում եք, որը տանում է դեպի Աստծո արքայություն. այո, ես զգում եմ, որ դուք ուղիղ եք անում նրա «շավիղները»:

20 Ես զգում եմ, որ դա հայտնի է դարձվել ձեզ նրա խոսքի վկայությամբ, որ նա չի կարող «քայլել ծուռ շավիղներում. ոչ էլ նա շեղվում է նրանից, ինչ նա ասել է. ոչ էլ նա դարձումի շուք իսկ ունի աջից դեպի ձախ, կամ նրանից, ինչը ճիշտ է, դեպի այն, ինչը սխալ է. հետևաբար, նրա ընթացքը մի հավերժական շրջան է:

21 Եվ նա չի բնակվում «անսուրբ տաճարներում. ոչ էլ կարող է կեղտոտությունը կամ որևէ բան, որն անմաքուր է, ընդունվել Աստծո արքայությունում. հետևաբար ես ասում եմ ձեզ՝ ժամանակը պիտի գա, այո, և դա պիտի լինի վերջին օրը, որ նա, ով թկեղտոտ է, պիտի մնա իր կեղտոտության մեջ:

22 Եվ արդ, իմ սիրելի՛ եղբայրներ, ես ասացի այս բաները ձեզ, որ ես կարողանալի զարթնեցնել ձեզ ի զգացումն ձեր պարտականության առ Աստված, որպեսզի դուք կարողանաք քայլել անարատ նրա առաջ, որպեսզի դուք կարողանաք քայլել Աստծո սուրբ կարգին համապատասխան, ըստ որի դուք ընդունվել եք:

23 Եվ արդ, ես կկամենայի, որ դուք լինեիք «խոնարհ, և լինեիք հլու ու մեղմ. մատչելի աղերսելու համար. լի համբերությամբ ու

15ա2 Նեփի 4.18:
19ա Մատ. Գ.3:
20ա1 Նեփի 10.19,
Ալմա 37.12,
ՎևոՒ 3.2:

21ա Ա Կոր. Գ.16–17, Զ.19,
Մոսիա 2.37,
Ալմա 34.36:
բ 1 Նեփի 15.33–35,
2 Նեփի 9.16,

Մորմ. 9.14,
ՎևոՒ 88.35:
23ա սուՒ Խոնարհ,
Խոնարհություն:

ԳԼՈՒԽ 8

երկայնամտությամբ՝ լինելով ժուժկալ բոլոր բաներում. լինելով ջանասեր Աստծո պատվիրանները պահելիս բոլոր դեպքերում. խնդրելով ինչ բաների կարիք որ դուք ունեք՝ և՛ հոգևոր և՛ աշխարհիկ. միշտ վերադարձնելով գոհությոն Աստծուն, ինչ բաների համար որ դուք ստանում եք:

24 Եվ տեսեք, որ դուք ունենաք [»]հավատք, հույս և գթություն, և այն ժամանակ դուք միշտ կհարըստանաք բարի գործերով:

25 Եվ թող Տերն օրհնի ձեզ և անբիծ պահի ձեր հանդերձները, որպեսզի վերջում դուք բերվեք նստելու Աբրահամի, Իսահակի և Հակոբի հետ, և սուրբ մարգարեների հետ, որոնք եղել են այն ժամանակից ի վեր, երբ աշխարհը եղավ, ձեր հանդերձներն [»]անբիծ, ճիշտ ինչպես նրանց հանդերձներն են անբիծ, երկնքի արքայությունում, որ այլևս դուրս չգնաք:

26 Եվ արդ, իմ սիրելի՛ եղբայրներ, ես խոսեցի այս խոսքերը ձեզ համար համաձայն Հոգու, որը վկայում է իմ մեջ. և իմ հոգին անչափ ցնծում է, խիստ մեծ ջանասիրության և ուշադրության համար, որ դուք դարձրեցիք իմ խոսքին:

27 Եվ արդ, թող Աստծո [»]խաղաղությունը հանգչի ձեզ վրա, և ձեր տների ու հողերի վրա, և ձեր հոտերի ու նախիրների, և այն ամենի, ինչ դուք ունեք, ձեր կանանց ու ձեր երեխաների վրա, համաձայն ձեր հավատքի և բարի գործերի, այս ժամանակից այսուհետև և հավիտյան: Եվ այսպես են ես խոսել: Ամեն:

Ալման քարոզում է և մկրտում Մելեքում – Նա մերժվում է Ամնոնիայում ու հեռանում է – Հրեշտակը պատվիրում է նրան վերադառնալ և ասպաշխարություն աղաղակել ժողովրդին – Նա ընդունվում է Ամոնիայի կողմից և նրանք երկուսով քարոզում են Ամնոնիայում: Մոտ 82թ. Ք.ծ.ա.:

ԵՎ արդ, եղավ այնպես, որ Ալման վերադարձավ Գեդեոնի [»]երկրից, Գեդեոնի ժողովրդին շատ բաներ սովորեցնելուց հետո, որոնք չեն կարող գրվել, հաստատած լինելով եկեղեցու կարգը, ինչպես որ նա արել էր մինչ այդ Չարահեմլայի երկրում, այո, նա վերադարձավ իր սեփական տունը Չարահեմլայում՝ հանգստանալու այն գործերից, որոնք նա կատարել էր:

2 Եվ այսպես վերջացավ Նեփիի ժողովրդի վրա դատավորների կառավարման իններորդ տարին:

3 Եվ եղավ այնպես, Նեփիի ժողովրդի վրա դատավորների կառավարման տասներորդ տարվա սկզբում, Ալման հեռացավ այնտեղից և կրկին ձեռնարկեց իր ճամփորդությունը դեպի Մելեքի հողը՝ Սիդոն [»]գետի արևմտյան ափը, դեպի արևմուտք՝ անապատի սահմաններին մոտիկ:

4 Եվ նա սկսեց սովորեցնել ժողովրդին Մելեքի երկրում, համաձայն Աստծո [»]սուրբ կարգի, որով նա կանչված էր. և նա սկսեց սովորեցնել ժողովրդին ամենուրեք՝ Մելեքի ողջ երկրում:

24ա Ա Կոր. ԺԳ.1–13, Եբեր 12.30–35, Մոր. 7.33–48:
25ա Բ Պետ. Գ.14:

27ա սու՛ Խաղաղություն:
8 1ա Ալման 2.20, 6.7:
3ա Ալման 16.6–7:
4ա ՎևՈՒ 107.2–4:

սու՛ Մելքիսեդեկյան քահանայություն:

5 Եվ եղավ այնպես, որ ժողովուրդը եկավ նրա մոտ ամեն կողմից՝ երկրի բոլոր սահմաններից, որը մոտ էր անապատի կողմին: Եվ նրանք մկրտվեցին ողջ երկրով մեկ:

6 Այնպես որ, երբ նա վերջացրեց իր աշխատանքը Մեկեքում, նա հեռացավ այնտեղից, և ճանապարհորդեց երեք օրվա ճանապարհ Մեկեքի երկրից դեպի հյուսիս. և նա եկավ մի քաղաք, որը կոչվում էր Ամմոնիա:

7 Արդ, Նեփիի ժողովրդի սովորույթն էր կոչել իրենց երկրները, և իրենց քաղաքները, և իրենց գյուղերը, այո, նույնիսկ բոլոր իրենց փոքր գյուղերը նրա անունով, որն առաջինն էր տիրացել դրանց. և դա այդպես էր Ամմոնիա երկրի հետ:

8 Եվ եղավ այնպես, որ երբ Ալման եկավ Ամմոնիա քաղաքը, նա սկսեց նրանց քարոզել Աստծո խոսքը:

9 Արդ, Սատանան մեծ ազդեցություն էր ձեռք բերել Ամմոնիա քաղաքի ժողովրդի սրտերի վրա. հետևաբար, նրանք չէին կամենում ականջ դնել Ալմայի խոսքերին:

10 Այնուամենայնիվ, Ալման շատ առօրեց հոգով, ^բգոտեմարտելով Աստծո հետ ^գհզոր աղոթքում, որպեսզի նա դուրս բափի իր Հոգին ժողովրդի վրա, ովքեր քաղաքում էին. որպեսզի նա նաև թույլ տա, որ նա կարողանա մկրտել նրանց ապաշխարության համար:

11 Սակայն նրանք կարծրացրեցին իրենց սրտերը՝ ասելով նրան. Ահա, մենք գիտենք, որ դու Ալման

ես. և մենք գիտենք, որ դու քահանայապետ ես եկեղեցու վրա, որը դու հիմնադրել ես երկրի շատ մասերում, ըստ քո ավանդության. և մենք քո եկեղեցուց չենք ու չենք հավատում այդպիսի հիմար ավանդությունների:

12 Եվ արդ, մենք գիտենք, որ քանի որ մենք քո եկեղեցուց չենք, մենք գիտենք, որ դու իշխանություն չունես մեզ վրա. և դու հանձնել ես դատավորի աթոռը՝ Նեփիային. հետևաբար, դու՛ չես գլխավոր դատավորը մեզ վրա:

13 Արդ, երբ ժողովուրդն ասաց այս, և դեմ կանգնեց բոլոր նրա խոսքերին, և անարգեց նրան, և թքեց նրա վրա, և ստիպեց, որ նա դուրս գցվի իրենց քաղաքից, նա հեռացավ այնտեղից ու ձեռնարկեց իր ճամփորդությունը դեպի քաղաքը, որը կոչվում էր Ահարոն:

14 Եվ եղավ այնպես, որ մինչ նա ճամփորդում էր դեպի այդ տեղը, կրկամ լինելով վշտից, անցնելով շատ ^անեղությունների ու հոգու տվաշտանքի միջով՝ ժողովրդի ամբարշտության պատճառով, ովքեր Ամմոնիա քաղաքում էին, եղավ այնպես, մինչ Ալման այսպես տառապանքից կրկամ էր, ահա, Տիրոջ ^բհրեշտակը հայտնվեց նրան՝ ասելով:

15 Օրհնված ես դու, Ալմա. հետևաբար, բարձրացրու գլուխդ և ուրախացիր, քանզի դու մեծ պատճառ ունես ուրախանալու. քանի որ դու հավատարիմ եղար Աստծո պատվիրանները պահելիս այն ժամանակից ի վեր, երբ դու ստացար քո առաջին պատ-

<p>9ա2 Նեփի 28.19–22, ՎևոՒ 10.20: 10ա Ալմա 17.5: բ Ենովա 1.1–12:</p>	<p>գ 3 Նեփի 27.1: սոՒ Աղոթք: 12ա Ալմա 4.20: 14ա սոՒ Չախորդություն:</p>	<p>բ Ալմա 10.7–10, 20: սոՒ Հրեշտակներ:</p>
--	--	--

զամը նրանից: Ահա ես նա եմ, որ
 «հանձնեց դա քեզ:

16 Եվ, ահա ես ուղարկված եմ՝
 պատվիրելու քեզ, որ դու վերա-
 դառնաս Ամմոնիա քաղաքը և նո-
 րից քարոզես քաղաքի ժողովրդին:
 այո, քարոզի՛ր նրանց: Այո, ասա
 նրանց՝ եթե նրանք չապաշխարեն,
 Տեր Աստված՝ «կկործանի նրանց:

17 Քանզի, ահա նրանք ջանում
 են այս պահին, որ կարողանան
 կործանել քո ժողովրդի ազատու-
 թյունը (քանզի այսպես է ասում
 Տերը), որը հակառակ է այն կա-
 նոններին և դատաստաններին, և
 պատվիրաններին, որոնք նա տվել
 է այս ժողովրդին:

18 Արդ, եղավ այնպես, որ հետո,
 երբ Ալման ստացավ իր պատգա-
 մը Տիրոջ հրեշտակի կողմից, նա
 շտապ վերադարձավ Ամմոնիա
 երկիրը: Եվ նա մտավ քաղաք մեկ
 այլ ճանապարհով, այո, ճանա-
 պարհով, որն Ամմոնիա քաղաքի
 հարավում է:

19 Եվ երբ նա մտավ քաղաք, նա
 անոթի էր, և նա ասաց մի մարդու:
 Կտա՞ս Աստծո խոնարհ ծառային
 որևէ բան ուտելու:

20 Եվ մարդն ասաց նրան. Ես
 Նեփիացի եմ, և ես գիտեմ, որ դու
 Աստծո մի սուրբ մարգարե ես,
 քանի որ դու ես այն մարդը, ում
 մասին «հրեշտակն ասաց տեսիլ-
 քում. Դու պետք է ընդունես:
 Հետևաբար, զնանք ինձ հետ իմ
 տուն, և ես քեզ բաժին կհանեմ իմ
 ուտելիքից. և ես գիտեմ, որ դու
 օրհնություն կլինես իմ և իմ տան
 համար:

21 Եվ եղավ այնպես, որ մարդն

ընդունեց նրան իր տանը. և մար-
 դուն կոչում էին «Ամուղեկ, և նա
 դուրս բերեց հաց ու միս և դրեց
 Ալմայի առջև:

22 Եվ եղավ այնպես, որ Ալման
 հաց կերավ ու կշտացավ. և նա
 «օրհնեց Ամուղեկին ու նրա տունը
 և գոհությամբ հայտնեց Աստծուն:

23 Եվ հետո, երբ նա կերել էր ու
 կշտացել, նա ասաց Ամուղեկին. Ես
 Ալման եմ և «քահանայապետն եմ
 Աստծո եկեղեցու վրա ողջ երկրում:

24 Եվ ահա, ես կանչվել եմ՝ քա-
 րոզելու Աստծո խոսքը բոլոր այս
 ժողովրդի մեջ, համաձայն հայտ-
 նություն և մարգարեության ոգու. և
 ես այս երկրում էի, և նրանք չկա-
 մեցան ընդունել ինձ, այլ նրանք
 դուրս «զցեցին ինձ, և ես մոտ էի
 մեջքս դարձնելուն դեպի այս եր-
 կիրը, հավիտյան:

25 Բայց, ահա ինձ պատվիրվել է,
 որ ես կրկին ետ դառնամ և մար-
 ցարեանամ այս ժողովրդին, այո,
 և վկայեմ նրանց դեմ՝ իրենց անօ-
 րինությունների վերաբերյալ:

26 Եվ արդ, Ամուղեկ, քանի որ
 դու կերակրեցիր ինձ ու մերս
 առար, դու օրհնված ես. քանզի ես
 անոթի էի, քանի որ ծոմ էի պահել
 շատ օրեր:

27 Եվ Ալման մնաց շատ օրեր
 Ամուղեկի հետ մինչև նա սկսեց
 քարոզել ժողովրդին:

28 Եվ եղավ այնպես, որ մարդիկ
 դարձան ավելի ծայրահեղ իրենց
 անօրինություններում:

29 Եվ խոսքը եկավ Ալմային՝
 ասելով. Գնա. և ասա նաև իմ
 ծառա Ամուղեկին. առաջ գնա և
 մարգարեացիր այս ժողովրդին՝

15աՄոսիա 27.11–16:
 16աԱլմա 9.12, 18, 24:
 20աԱլմա 10.7–9:

21աՍՈՒ Ամուղեկ:
 22աԱլմա 10.11:
 23աԱլմա 5.3, 44, 49,

13.1–20:
 24աԱլմա 8.13:

ասելով. «Ապաշխարեք, քանզի այսպես է ասում Տերը, եթե դուք չապաշխարեք, ես կայցելեմ այս ժողովրդին իմ բարկության մեջ. այո, և ես մեկդի չեմ դարձնի իմ կատաղի բարկությունը:

30 Եվ Ալման գնաց առաջ, և Ամուղեկը նույնպես, ժողովրդի մեջ, հայտարարելու Աստծո խոսքը նրանց. և նրանք լցված էին Սուրբ Հոգով:

31 Եվ նրանք ունեին «գորություն» տրված իրենց, այնպես որ նրանք չէին կարող բանտարկվել գուրերում. ոչ էլ հնարավոր էր, որ որևէ մարդ կարողանար սպանել նրանց. սակայն նրանք չէին գործածում իրենց ^բգորությունը, մինչև նրանք կապվեցին կապերով և զգվեցին բանտ: Արդ այս արվեց, որ Տերը կարողանար ի ցույց դնել իր գորությունը նրանց մեջ:

32 Եվ եղավ այնպես, որ նրանք առաջ գնացին, և սկսեցին քարոզել, և մարգարեանալ ժողովրդին՝ համաձայն ոգու ու գորության, որ Տերը տվել էր նրանց:



Ալմայի խոսքերը, և նաև խոսքերն Ամուղեկի, որոնք հայտարարվեցին ժողովրդին, որոնք Ամմոնիա երկրում էին: Եվ նաև նրանք զգվում են բանտ ու ազատվում Աստծո հրաշագործ գորությամբ, որը նրանց մեջ էր, համաձայն Ալմայի հիշատակարանի:

Ընդգրկելով 9–14 գլուխները ներառյալ:

ԳԼՈՒԽ 9

Ալման պատվիրում է Ամմոնիայի ժողովրդին ապաշխարել – Տերը ողորմած կլինի Լամանացիների հանդեպ վերջին օրերում – Եթե Նեպիհացիները քեն լույսը, նրանք կկործանվեն Լամանացիների կողմից – Աստծո Որդին կգա շուտով – Նա կփրկագնի նրանց, ովքեր ապաշխարում են, մկրտվում են և ունեն հավատք առ նրա անունը: Մոտ 82բ. Բ.ծ.ա.:

Եւ բացի դրանից, ես՝ Ալմաս, պատվիրված լինելով Աստծուց, որ ես պետք է վերցնեի Ամուղեկին և գնայի առաջ ու քարոզեի նորից այս ժողովրդին, կամ այն ժողովրդին, ովքեր Ամմոնիա քաղաքում էին, եղավ այնպես, երբ ես սկսեցի քարոզել նրանց, նրանք սկսեցին վիճել ինձ հետ՝ ասելով.

2 Ո՞վ ես դու: Կարծում ես, որ մենք կհավատա՞նք «մեկ մարդու վկայությանը, թեև նա մեզ քարոզի, որ երկիրը պիտի անցնի:

3 Արդ, նրանք չէին հասկանում խոսքերը, որ նրանք խոսում էին, քանզի նրանք չգիտեին, որ երկիրը պիտի անցներ:

4 Եվ նրանք ասացին նաև. Մենք չենք հավատա քո խոսքերին, թեև դու մարգարեանաս էլ, որ այս մեծ քաղաքն իբրև թե պիտի կործանվի «մեկ օրում:

5 Արդ, նրանք չգիտեին, որ Աստված կարող էր անել այդպիսի զարմանալի գործեր, քանզի նրանք մի կարծրասիրտ ու խստապարանոց ժողովուրդ էին:

29ա Ալմա 9.12, 18: սո՛ւ Ապաշխարել, Ապաշխարություն:	31ա 1 Նեփի 1.20: բ Ալմա 14.17–29: 9 2ա Բ Օր. ԺԷ6:	4ա Ալմա 16.9–10:
---	---	------------------

6 Եվ նրանք ասացին. “Ո՞վ է Աստված, որ ուղարկում է Քոչ ավելի հեղինակություն, քան մեկ մարդ այս ժողովրդի մեջ, հայտարարելու նրանց ճշմարտությունն այդպիսի մեծ ու զարմանալի բաների մասին:

7 Եվ նրանք առաջ կանգնեցին ձեռք բարձրացնելու ինձ վրա. բայց ահա նրանք չարեցին: Եվ ես կանգնեցի՝ համարձակությամբ հայտարարելու նրանց, այո, ես համարձակորեն վկայեցի նրանց՝ ասելով:

8 Ահա, ո՛վ դուք, ամբարիշտ ու խտորյալ “սերունդ, ի՞նչպես մոռացաք ձեր հայրերի ավանդությունը. այո, որքա՛ն շուտ դուք մոռացաք Աստծո պատվիրանները:

9 Չե՞ք հիշում դուք, որ մեր հայր Լեքին դուրս էր բերվել Երուսաղեմից՝ Աստծո “ձեռքով: Չե՞ք հիշում դուք, որ նրանք բոլորն առաջնորդվում էին նրա կողմից անպատի միջով:

10 Եվ մի՞թե դուք մոռացել եք այդքան շուտ, թե քանի՛-քանի անգամ է նա ազատել մեր հայրերին իրենց թշնամիների ձեռքից, և պահպանել նրանց կործանվելուց, նույնիսկ իրենց սեփական եղբայրների ձեռքից:

11 Այո, և եթե չլինեիր նրա անգուժական զորությունը, և նրա երկայնամտությունը մեր հանդեպ, մենք պետք է անխուսափելիորեն ջնջված լինեինք երկրի երեսից այս ժամանակից շատ առաջ, և գուցե

հանձնված լինեիր “անվերջ թշնամության ու վայի մի վիճակի:

12 Ահա, այժմ ես ասում եմ ձեզ, որ նա հրամայում է ձեզ ապաշխարել, և մինչև դուք չապաշխարեք, դուք ոչ մի կերպ չեք կարող ժառանգել Աստծո արքայությունը: Բայց ահա, սա բոլորը չէ, նա պատվիրել է ձեզ ապաշխարել, այլապես նա լիովին “կբնաջնջի ձեզ երկրի երեսից. այո, նա կայցելի ձեզ իր բարկության մեջ, և իր Քրիստոսի բարկությունը մեկդի չի դարձնի:

13 Ահա, դուք չե՞ք հիշում խոսքերը, որ նա խոսեց Լեքիի հետ՝ ասելով, որ. “Որքան որ դուք կպահեք իմ պատվիրանները, դուք կբարգավաճեք երկրում: Եվ բացի այդ ասվել է, որ. Որքան որ դուք չեք պահի իմ պատվիրանները, դուք կկտրվեք Տիրոջ ներկայությունից:

14 Արդ, ես կկամենայի, որ դուք հիշեիք, որ որքան որ Լամանացիները չեն պահել Աստծո պատվիրանները, նրանք “կտրված են եղել Տիրոջ ներկայությունից: Արդ, մենք տեսնում ենք, որ Տիրոջ խոսքը հաստատվել է այս բանում, և Լամանացիները կտրված են եղել նրա ներկայությունից, երկրում իրենց օրինազանցությունների սկզբից ի վեր:

15 Սակայն ես ասում եմ ձեզ, որ նրանց համար ավելի “տանելի կլինի դատաստանի օրը, քան ձեզ համար, եթե դուք մնաք ձեր մեղքերի մեջ, այո, և նույնիսկ ավելի տանելի նրանց համար այս կյան-

<p>6աԵլ. Ե.2, Մոսիա 11.27, Մովսես 5.16: բ Ալմա 10.12: 8աԱլմա 10.17-25:</p>	<p>9ա1 Նեփի 2.1-7: 11աՄոսիա 16.11: 12աԱլմա 8.16, 10.19, 23, 27: բ Ալմա 8.29:</p>	<p>13ա2 Նեփի 1.20, Մոսիա 1.7, Ալմա 37.13: 14ա2 Նեփի 5.20-24, Ալմա 38.1: 15աՄատ. ԺԱ.22, 24:</p>
--	--	--

քում, քան ձեզ համար, եթե դուք չապաշխարեք:

16 Քանզի կան շատ խոստումներ, որոնք «տարածվում են Լամանացիների վրա. քանզի դա իրենց հայրերի Քավանդությունների պատճառով է, որը նրանց ստիպեց մնալ իրենց Գանգիտության վիճակում. հետևաբար Տերը ողորմած կլինի նրանց հանդեպ և «կերկարացնի նրանց գոյությունը երկրում:

17 Եվ ինչ-որ մի ժամանակի ընթացքում, նրանք «կբերվեն հավատալու նրա խոսքին, և իմանալու իրենց հայրերի ավանդությունների անճշտության մասին. և նրանցից շատերը կփրկվեն, քանզի Տերը ողորմած կլինի բոլորի հանդեպ, ովքեր Քկանչում են նրա անունը:

18 Բայց ահա ես ասում եմ ձեզ, որ եթե դուք շարունակեք ձեր անբարշտության մեջ, որ ձեր օրերը չեն երկարացվի երկրում, քանզի «Լամանացիները կուղարկվեն ձեզ վրա. և եթե դուք չապաշխարեք, նրանք կգան այնպիսի մի ժամանակ, երբ դուք չգիտեք, և ձեզ կայցելեն Քիակատար կործանումով. և դա կլինի համաձայն Տիրոջ կատաղի Գարկության:

19 Քանզի նա թույլ չի տա ձեզ, որ դուք ապրեք ձեր անօրինությունների մեջ՝ կործանելու իր ժողովրդին: Ես ասում եմ ձեզ՝ Ո՛չ, ավելի շուտ նա թույլ կտար, որ Լամանացիները «կործանեին բոլոր իր ժողովրդին, ովքեր կոչվում են Նեփիի ժողովուրդ, եթե պա-

տահեր այնպես, որ նրանք Քընկնեին մեղքերի և օրինազանցությունների մեջ, Տիրոջից՝ իրենց Աստծուց, այդքան շատ լույս և այդքան շատ գիտելիք նրանց տրվելուց հետո.

20 Այո՛, Տիրոջ այդպիսի մեծապես արտոնյալ ժողովուրդ լինելուց հետո. այո, յուրաքանչյուր ուրիշ ազգից, ցեղից, լեզվից կամ ժողովրդից առավել հովանավորված լինելուց հետո. բոլոր բաներն իրենց հայտնի «դարձված լինելուց հետո, ըստ իրենց իղձերի և իրենց հավատքի և աղոթքների, այն մասին, ինչ եղել է, ինչ կա և ինչ պիտի գա.

21 Աստծո Հոգին այցելած լինելով. հրեշտակների հետ գրուցած լինելով և Տիրոջ ձայնը նրանց հետ խոսացած լինելով. ունենալով մարգարեության ոգին և հայտնության ոգին, և նաև շատ պարզևներ՝ լեզուներով խոսելու պարզևր և քարոզելու պարզևր, Սուրբ Հոգու պարզևր և «Քարգմանելու պարզևր.

22 Այո, և Աստծո կողմից «ազատված լինելուց հետո՝ Երուսաղեմի հողից դուրս, Տիրոջ ձեռքով. փրկված լինելով սովից, և տկարությունից, և ամեն ձևի ամեն տեսակի հիվանդություններից. և նրանք, ճակատամարտում դարձած լինելով ուժեղ, որպեսզի չկործանվեին, դուրս բերված լինելով Քճորտությունից ժամանակ առ ժամանակ, և պահված ու պահպանված լինելով մինչև այժմ. և նրանք բարգավաճել են, մինչև որ նրանք հարուստ են բոլոր ձևի բաներով,

16ա Ալմա 17.15:
բ Մոսիա 18.11–17:
գ Մոսիա 3.11:
դ Հել. 15.10–12:
17ա Ենոկս 1.13:
բ Ալմա 38.5, Վևո 3.8:

18ա Ալմա 16.2–3:
բ Ալմա 16.9:
գ Ալմա 8.29:
19ա 1 Նեփի 12.15, 19–20,
Ալմա 45.10–14:
բ Ալմա 24.30:

20ա սո՛ւ Հայտնություն:
21ա Օմնի 1.20,
Մոսիա 8.13–19,
28.11–17:
22ա 2 Նեփի 1.4:
բ Մոսիա 27.16:

23 Եվ արդ, ահա ես ասում եմ ձեզ, որ եթե այս ժողովուրդը, որը ստացել է այսքան շատ օրհնություններ Տիրոջ ձեռքից, օրհնագանգի այն լույսի ու գիտության դեմ, որ նա ունի, ես ասում եմ ձեզ, եթե այնպես լինի, որ նա ընկնի օրհնագանցության մեջ, ապա ավելի ^ահեշտ կլինի Լամանացիների համար, քան նրանց համար:

24 Քանզի ահա, Տիրոջ ^ախոստումները տարածվում են Լամանացիների վրա, բայց դրանք ձեզ համար չեն, եթե դուք օրհնագանցում եք. քանզի արդյոք Տերը չխոստացա՞վ որոշակիորեն ու հրատարակեց վճռականորեն, որ եթե դուք ապատամբեք նրա դեմ, պիտի լիովին բնաջնջվեք երկրի երեսից:

25 Եվ արդ, այս պատճառով, որպեսզի դուք չլինի թե կործանվեիք, Տերն ուղարկել է իր հրեշտակին, այցելելու իր ժողովրդից շատերին, հայտարարելով նրանց, որ նրանք պետք է առաջ գնան և ուժգնորեն աղաղակեն այս ժողովրդին՝ ասելով. ^աԱպաշխարե՛ք, քանզի երկնքի արքայությունը մոտ է՝ առ ձեռն.

26 Եվ այս ժամանակից ^աոչ շատ օրեր հետո, Աստծո Որդին պիտի գա իր փառքով. և նրա փառքը պիտի լինի փառքը Հոր ^բՄիածնի, որը լի է ^գշնորհով, անաչառությամբ ու ճշմարտությամբ, որը լի է համբերությամբ, ^դողորմությամբ ու երկայնամտությամբ, որն արագ է իր ժողովրդի աղաղակները

^ելսելիս և նրանց աղոթքներին պատասխանելիս:

27 Եվ, ահա նա գալիս է ^ափրկագրներու նրանց, ովքեր ^բկնկրավեն ապաշխարության համար, նրա անվան հանդեպ հավատքի միջոցով:

28 Հետևաբար, պատրաստեք Տիրոջ ճանապարհը, քանզի ժամանակը մոտենում է, որ բոլոր մարդիկ պիտի հնձեն իրենց ^ագործերի մի վարձք՝ համաձայն նրա, ինչ նրանք եղել են, եթե նրանք եղել են արդար, նրանք ^բկինձեն փրկությունն իրենց հոգիների, համաձայն Հիսուս Քրիստոսի գործության ու ազատման. իսկ եթե նրանք եղել են չար, նրանք պիտի հնձեն ^գդատապարտությունն իրենց հոգիների, համաձայն դևի գործության ու գերության:

29 Այժմ, ահա այս է ձայնը հրեշտակի՝ աղաղակելով առ ժողովուրդը:

30 Եվ արդ, իմ ^ասիրելի՛ եղբայրներ, քանզի դուք իմ եղբայրներն եք, և դուք պարտավոր եք սիրված լինել, և պարտավոր եք առաջ բերել գործեր, որոնք վայել են ապաշխարությանը՝ տեսնելով, որ ձեր սրտերը ծայրաստիճան կարծրացած են Աստծո խոսքի հանդեպ, և տեսնելով, որ դուք մի ^բկորած ու մի ընկած ժողովուրդ եք:

31 Արդ եղավ այնպես, որ երբ ես՝ Ալմաս, խոսեցի այս խոսքերը, ահա, ժողովուրդը զայրացավ ինձ

23ա Մատ. ԺԱ.22–24:
 24ա 2 Նեփի 30.4–6,
 ՎևոՒ 3.20:
 25ա Ալմա 7.9,
 Հել. 5.32:
 26ա Ալմա 7.7:
 բ սո՛ւ Միածին:

գ սո՛ւ Շնորհ:
 դ սո՛ւ Ողորմած,
 Ողորմություն:
 ե Բ Օր. ԻՁ.7:
 27ա սո՛ւ Փրկագնել,
 Փրկագնված,
 Փրկագնում:

բ սո՛ւ Մկրտություն,
 Մկրտել:
 28ա ՎևոՒ 1.10, 6.33:
 բ Սաղ. Է.16:
 գ սո՛ւ Նգովք:
 30ա Ա Հովհ. Գ.11:
 բ Ալմա 12.22:

վրա, որովհետև ես ասացի նրանց, որ նրանք մի կարծրասիրտ ու «խատապարանոց ժողովուրդ էին:

32 Եվ նաև, որովհետև ես ասացի նրանց, որ նրանք մի կորած ու ընկած ժողովուրդ էին, նրանք զայրացան ինձ վրա և շանացին ձեռք բարձրացնել ինձ վրա, որ կարողանան ինձ բանտ գցել:

33 Բայց եղավ այնպես, որ Տերը քույլ չտվեց նրանց, որ նրանք վերցնեին ինձ այդ ժամանակ ու բանտ գցեին:

34 Եվ եղավ այնպես, որ Ամուղեկը գնաց ու առաջ կանգնեց, և նույնպես սկսեց քարոզել նրանց: Եվ այժմ Ամուղեկի բոլոր «խոսքերը գրված չեն, այնուամենայնիվ, մի մասը նրա խոսքերի գրված են այս գրքում:

ԳԼՈՒԽ 10

Լեքին սերվել էր Մանասեից – Ամուղեկը պատմում է հրեշտակի պատվերը, որ նա հոգ տաներ Ալմային – Ժողովրդի խնայվելու պատճառն արդարների աղոթքներն են – Անարդար օրինագետներն ու դատավորները դնում են ժողովրդի կործանման հիմքը: Մոտ 82թ. Բ.ծ.ա.:

ԱՐԳ, սրանք էին «խոսքերը, որոնք ^բԱմուղեկը քարոզեց ժողովրդին, ովքեր Ամմոնիա երկրում էին՝ ասելով:

2 Ես Ամուղեկն եմ. ես Գեղոնայի որդին եմ, որը Իսմայելի որդին էր, որը Ամինադիի հետնորդ էր.

և այդ նույն Ամինադին էր, որը քարգմանեց գրվածքը, որը տաճարի պատի վրա էր, որը գրված էր Աստծո մատով:

3 Եվ Ամինադին Նեփիի մի հետնորդ էր, որը Լեքիի որդին էր, որը դուրս էր եկել Երուսաղեմի հողից, որը ^աՄանասեի մի հետնորդ էր, որը ^բՀովսեփի որդին էր, որը ^գձախվել էր Եգիպտոս՝ իր եղբայրների ձեռքով:

4 Եվ ահա, ես նույնպես մի մարդ եմ, ոչ փոքր համբավով բոլոր նրանց մեջ, ովքեր գիտեն ինձ. այո, և ահա ես ունեմ շատ ազգականներ ու ^աընկերներ, և ես նաև ձեռք եմ բերել մեծ հարատույուններ իմ ձեռքի աշխատանքով:

5 Այնուամենայնիվ, այս բոլորից հետո, ես երբեք շատ չեմ իմացել Տիրոջ ճանապարհների, և նրա «խորհուրդների ու սքանչելի գործքայն մասին: Ես ասացի, ես երբեք չեմ իմացել շատ՝ այս բաների մասին. բայց, ահա ես սխալվում եմ, քանզի ես շատ եմ տեսել նրա խորհուրդներն ու նրա սքանչելի գործքայնը. այո, մինչև իսկ այս ժողովրդի կյանքի պահպանման մեջ:

6 Այնուամենայնիվ, ես կարծրացրել էի իմ սիրտը, քանզի ես ^ականչվել եմ շատ անգամ, և ես չեմ կանցել ^բլսել. հետևաբար, ես գիտի այս բաների վերաբերյալ, բայց ես չէի կամենում իմանալ. հետևաբար, ես շարունակում էի ապստամբել Աստծո դեմ իմ սրտի ամբարշտությամբ, նույնիսկ մինչև այս յոթերորդ ամսվա չոր-

31ա2 Նեփի 25.28, Մոսիա 3.14:
34ա Ալմա 10:
10 1ա Ալմա 9.34:
բ Ալմա 8.21–29:

3ա Ծճ. ԽԱ.51, Ա Մճ. Թ.3:
բ սուր Հովսեփ՝ Հակոբի որդի:
գ Ծճ. ԼԷ.29–36:

4ա Ալմա 15.16:
5ա սուր Աստծո խորհուրդները:
6ա Ալմա 5.37:
բ ՎևոՒ 39.9:

որո՞ղ օրը, որը դատավորների կառավարման տասներորդ տարում է:

7 Երբ ես ճամփորդում էի՝ տեսնելու մի մոտիկ ազգականի, ահա Տիրոջ ^ահրեշտակը հայտնվեց ինձ և ասաց. Ամուղեկ, վերադարձի՛ր քո սեփական տունը, քանզի դու պետք է կերակրես Տիրոջ մի մարգարեի. այո, մի սուրբ մարդու, որը Աստծո մի ընտրյալ մարդ է. քանզի նա ^բծոմ է պահել շատ օրեր, այս ժողովրդի մեղքերի համար, և նա անոթի է, և դու պիտի ^գընդունես նրան քո տունը և կերակրես նրան, և նա պիտի օրհնի քեզ և քո տունը. և Տիրոջ օրհնությունը պիտի հանգչի քո և քո տան վրա:

8 Եվ եղավ այնպես, որ ես հնազանդվեցի հրեշտակի ձայնին և վերադարձա դեպի իմ տուն: Եվ երբ ես գնում էի այնտեղ, ես գտա ^ամարդուն, ում համար հրեշտակն ասաց ինձ. Դու պիտի քո տունն ընդունես, և ահա սա այն նույն մարդն էր, որը խոսում էր ձեզ հետ Աստծո բաների վերաբերյալ:

9 Եվ հրեշտակն ասաց ինձ, նա մի ^ասուրբ մարդ է. ուստի, ես գիտեմ, նա մի սուրբ մարդ է, որովհետև դա ասվեց Աստծո հրեշտակի կողմից:

10 Եվ բացի այդ, ես գիտեմ, որ բաները, որոնց մասին նա վկայեց, ճշմարիտ են. քանզի ահա, ես ասում եմ ձեզ, որ ինչպես կենդանի է Տերը, ճիշտ նույնպես նա ուղարկեց իր ^ահրեշտակին՝ այս բաները հայտնի դարձնելու ինձ. և նա արեց դա մինչ այս Ալման ^բբնակվում էր իմ տանը:

11 Քանզի, ահա նա ^աօրհնեց իմ տունը, նա օրհնեց ինձ և իմ կանանց և իմ երեխաներին, իմ հորը և իմ ազգակիցներին. այո, իրավ, բոլոր իմ ազգականներին է նա օրհնել և Տիրոջ օրհնությունը հանգչել է մեզ վրա, համաձայն այն խոսքերի, որոնք նա խոսեց:

12 Եվ արդ, երբ Ամուղեկը խոսեց այս բաները, ժողովուրդը սկսեց ապշել, տեսնելով, որ կար ^աավելի քան մեկ վկա, որը վկայեց այն բաների մասին, որոնց համար իրենք մեղադրվում էին, և նաև այն բաների մասին, որոնք պիտի գային, համաձայն մարգարեության ոգու, որը նրանց մեջ էր:

13 Այնուամենայնիվ, կային ոմանք նրանց մեջ, ովքեր մտածեցին հարցաքննել նրանց, որպեսզի իրենց խորամանկ ^ահնարքներով բռնացնեն նրանց իրենց խոսքերում, որ կարողանային ապացույց գտնել նրանց դեմ, որ կարողանային հանձնել նրանց իրենց դատավորներին, որպեսզի նրանք դատվեին օրենքի համաձայն, և որպեսզի նրանք սպանվեին կամ բանտ գցվեին ըստ հանցանքի, որը նրանք կկարողանային թվալ տալ կամ վկայել նրանց դեմ:

14 Արդ, դա այն մարդիկ էին, ովքեր ջանում էին կործանել նրանց, ովքեր ^աօրինագետներ էին, ովքեր վարձված էին, կամ նշանակված ժողովրդի կողմից, գործադրելու օրենքն իրենց դատերի ժամանակ, կամ ժողովրդի հանցագործությունների դատերում՝ դատավորների առաջ:

7ա Ալմա 8.20:
բ Ալմա 5.46, 6.6:
սո՛ւ Ծոմ,
Ծոմապահություն:
գ Գոր. Ժ.30–35:

8ա Ալմա 8.19–21:
9ա սո՛ւ Սուրբ:
10ա Ալմա 11.30–31:
բ Ալմա 8.27:
11ա Ալմա 8.22:

12ա Ալմա 9.6:
13ա Ալմա 11.21:
14ա Ալմա 10.24,
11.20–21, 14.18:

15 Արդ, այս օրինագետները ժողովրդի բոլոր խաբէությունների ու խորամանկության մեջ բանիմաց էին. և այս պետք էր՝ ի գորու դարձնելու նրանց, որպէսզի նրանք կարողանային հմուտ լինել իրենց գործում:

16 Եվ եղավ այնպես, որ նրանք սկսեցին հարցաքննել Ամուղեկին, որ դրա միջոցով նրանք կարողանային ստիպել նրան բացասել իր խոսքերը, կամ հակասել այն խոսքերին, որ նա կխոսեր:

17 Արդ, նրանք չգիտեին, որ Ամուղեկը կարող էր իմանալ նրանց դիտավորությունների մասին: Բայց եղավ այնպես, երբ նրանք սկսեցին հարցաքննել նրան, նա՝ կռահեց նրանց մտքերը, և նա ասաց նրանց. Ո՛վ դուք, ամբարիշտ ու խոտորյալ Քսերունդ, դո՛ւք, օրինագետներ ու կեղծավորներ, քանզի դուք դնում եք դէկ հիմքերը. քանզի դուք դնում եք Պակարդներ ու ծուղակներ՝ բռնելու Աստծո սրբերին:

18 Դուք ծրագրեր եք դնում՝ խեղաթյուրելու արդարների ուղիները, և վար բերելու Աստծո ցասումը ձեր գլխին, մինչև իսկ լիակատար կործանումն այս ժողովրդի:

19 Այո, հիրավի ճիշտ էր ասել Մոսիան, որը մեր վերջին թագավորն էր, երբ նա մոտ էր թագավորությունը հանձնելուն՝ չունենալով ոչ մէկը շնորհելու այն, կարգադրելով, որ այս ժողովուրդը պիտի կառավարվեր իրենց սեփական ձայների միջոցով, այո, հիրավի ճիշտ է ասել նա, որ՝ եթե ժամանա-

կը գա, որ այս ժողովրդի ձայնը ՝ ընտրի անօրինություն, այն է՝ եթե ժամանակը գա, որ այս ժողովուրդն ընկնի օրինազանցության մեջ, նրանք հասուն կլինեն կործանման համար:

20 Եվ արդ, ես ասում եմ ձեզ, որ ճիշտ է դատում Տերը ձեր անօրինությունների վերաբերյալ. ճիշտ է աղաղակում նա այս ժողովրդին իր ՝ հրեշտակների ձայնով. Ապաշխարե՛ք, ապաշխարե՛ք, քանզի երկնքի արքայությունը մոտ է:

21 Այո, ճիշտ է աղաղակում նա իր հրեշտակների ձայնով, որ. ՝ Ես վար կգամ իմ ժողովրդի մեջ՝ անաչառություն ու արդարադատություն իմ ձեռքում:

22 Այո, և ես ասում եմ ձեզ, որ եթե չլինեն արդարների ՝ աղոթքները, ովքեր այժմ երկրում են, որ ձեզ հենց հիմա լիակատար կործանում կայցելի. սակայն դա չի լինի Պրիեղեղով, ինչպես ժողովուրդին Նոյի օրերում, այլ դա կլինի սովով և ժանտախտով և սրով:

23 Սակայն արդարների ՝ աղոթքներով է, որ դուք խնայվում էք. արդ, հետևաբար, եթե դուք դուրս գցեք արդարներին ձեր միջից, այն ժամանակ Տերը ետ չի պահի իր ձեռքը. այլ իր կատաղի բարկությամբ նա դուրս կգա ձեր դեմ. այն ժամանակ դուք կզարկվեք սովով և ժանտախտով և սրով. և Քժամանակը շուտով մոտենում է, եթե դուք չապաշխարեք:

24 Եվ արդ եղավ այնպես, որ ժողովուրդն ավելի զայրացավ Ամուղեկի վրա, և նրանք գոչեցին՝ ասե-

17ա Ալմա 12.3, 20.18, 32, վևՌԲ 6.16:
բ Մատ. 9.7, Ալմա 9.8:
գ վևՌԲ 10.21–27:
18ա Գոր. ԺԳ.10:

19ա Մոսիա 29.27, Ալմա 2.3–7, Հել. 5.2:
20ա Ալմա 8.14–16, 13.22:
21ա Մոսիա 13.34:
22ա Հակ. Ե.16,
Մոսիա 27.14–16:

բ Ծն. Ը.21, 3 Նեփի 22.8–10:
սո՛ւ Նոյի ժամանակի ջրհեղեղը:
23ա սո՛ւ Աղոթք:
բ Ալմա 34.32–35:

լով. Այս մարդը զագրախոսում է մեր օրենքների դեմ, որոնք արդար են, և մեր իմաստուն օրինագետների դեմ, որոնց մենք ենք ընտրել:

25 Բայց Ամուղեկն առաջ մեկնեց իր ձեռքը և ավելի ուժգին գոչեց դեպի նրանց՝ ասելով. Ո՛վ դուք, ամբարիշտ ու խոտորյալ սերունդ, ինչո՞ւ է Մատանան այդպիսի մեծ ազդեցություն ձեռք բերել ձեր սրտերի վրա: Ինչո՞ւ եք կամենում ենթարկվել նրան, որ նա գործություն ունենա ձեզ վրա՝ *«կուրացնելու ձեր աչքերը, որպեսզի դուք չհասկանաք խոսքերը, որոնք խոսվում են, համաձայն դրանց ճշմարտացիության:*

26 Քանզի ահա, մի՞թե ես վկայեցի ձեր օրենքի դեմ: Դուք չեք հասկանում. դուք ասում եք, որ ես խոսել եմ ձեր օրենքի դեմ. բայց ոչ, այլ ես խոսել եմ հօգուտ ձեր օրենքի՝ ի դատապարտումն ձեզ:

27 Եվ արդ, ահա ես ասում եմ ձեզ, որ այս ժողովրդի կործանման հիմքը սկսվում է դրվել ձեր *«օրինագետների ու ձեր դատավորների անարդարության միջոցով:*

28 Եվ արդ եղավ այնպես, որ երբ Ամուղեկը խոսեց այս խոսքերը, ժողովուրդը բացականչեց ընդդեմ նրա՝ ասելով. Այժմ մենք գիտենք, որ այս մարդը դևի զավակ է, քանի որ նա *«ստեց մեզ. քանի որ նա խոսել է մեր օրենքի դեմ: Եվ այժմ նա ասում է, որ նա չի խոսել դրա դեմ:*

29 Եվ բացի այդ, նա զագրախոսել է մեր օրինագետների և մեր դատավորների դեմ:

30 Եվ եղավ այնպես, որ օրինագետները դրեցին այդ իրենց

սրտերում, որ նրանք հիշեին այդ բաները նրա դեմ:

31 Եվ կար մեկը նրանց մեջ, որի անունը Ջիզրոմ էր: Արդ, նա ամենագլխավորն էր Ամուղեկին ու Ալմային *«մեղադրելիս, ինքը լինելով ամենագիտակը նրանց մեջ, շատ զործ ունենալով՝ անելու ժողովրդի մեջ:*

32 Արդ, այս օրինագետների խնդիրն էր շահ ստանալը. և նրանք ստանում էին շահ՝ իրենց ծառայության համաձայն:

ԳԼՈՒԽ 11

Նկարագրվում է Նեփիական դրամական համակարգը – Ամուղեկը վիճում է Ջիզրոմի հետ – Քրիստոսը չի փրկի ժողովրդին իրենց մեղքերի մեջ – Միայն նրանք են փրկվում, ովքեր ժառանգում են երկնքի արքայությունը – Բոլոր մարդիկ հարություն կանեն անմահության մեջ – Հարությունից հետո մահ չկա: Մոտ 82թ. Ք.ծ.ա.:

Արդ, դա Մոսիայի օրենքում էր, որ ամեն մարդ, որն օրենքի մի դատավոր էր կամ նրանք, ովքեր նշանակված էին լինելու դատավորներ, պետք է ստանային աշխատավարձեր՝ ըստ այն ժամանակի, որը նրանք աշխատում էին՝ դատելու նրանց, ովքեր բերվում էին իրենց առաջ՝ դատվելու:

2 Արդ, եթե մի մարդ պարտք էր մեկ ուրիշին, և նա չէր կամենում վճարել այն, ինչը նա պարտք էր, նրանից բողոքում էին դատավորին. և դատավորը գործադրում էր իշխանություն և ուղարկում պաշտոնյաներ, որպեսզի մարդը

25աԲ Կոր. Դ.4, Ալմա 14.6:

27ա Գուկ. ԺԱ.45–52: 28ա Ալմա 14.2:

31ա Ալմա 11.20–36:

բերվեր նրա առաջ. և նա դատում էր մարդուն ըստ օրենքի ու փաստերի, որոնք բերվում էին նրա դեմ, և այսպես մարդուն հարկադրում էին վճարել այն, ինչ նա պարտք էր, կամ բռնագրավում էին, կամ դուրս գցում մարդկանց միջից, որպես գող ու ավազակ:

3 Եվ դատավորը ստանում էր որպես իր աշխատավարձ, ըստ իր ժամանակի՝ մի ոսկու սենիին մեկ օրվա համար, կամ մի արծաթի սենում, որը համարժեք է ոսկու մեկ սենիին. և սա՝ ըստ այն օրենքի, որը տրված էր:

4 Արդ, սրանք են անունները նրանց զանազան ոսկու դրամների, և նրանց արծաթի, ըստ դրանց արժեքի: Եվ անունները տրվել են Նեփիացիների կողմից, քանզի նրանք չէին հաշվում ըստ հրեաների ձևի, ովքեր Երուսաղեմում էին. ոչ էլ նրանք չափում էին ըստ հրեաների ձևի. այլ նրանք փոխել էին իրենց հաշիվը և իրենց չափը, համաձայն ժողովրդի մտածելակերպի ու պայմանների, ամեն մի սերնդի մեջ, մինչև դատավորների կառավարումը, դրանք՝ «հաստատված լինելով թագավոր Մոսիայի կողմից:

5 Այսպիսով, հաշվումն այսպիսին է՝ ոսկու սենիին, ոսկու սեան, ոսկու շում, և ոսկու լիմնա:

6 Արծաթի սենում, արծաթի ամնոր, արծաթի էգրում, և արծաթի օթի:

7 Արծաթի մի սենումը համարժեք էր ոսկու մի սենիին, և կամ մի չափ գարու, և նաև մի չափ ամեն տեսակի հատիկի:

8 Արդ, ոսկու մի սեանի քանակը մի սենիին կրկնակի արժեքն էր:

9 Եվ ոսկու մի շումը կրկնակի արժեքն էր մի սեանի:

10 Եվ ոսկու մի լիմնան դրանց բոլորի արժեքն էր:

11 Եվ արծաթի մի ամնորն այնքան էր, որքան երկու սենումը:

12 Եվ արծաթի մի էգրումն այնքան էր, որքան չորս սենումը:

13 Եվ մի օթին այնքան էր, որքան դրանք բոլորը:

14 Արդ, սա է ավելի փոքր թվերի նրանց հաշվի արժեքը,

15 Մի շիբլանը մի սենումի կեսն է. հետևաբար, մի շիբլանը կես չափ գարու համար:

16 Եվ մի շիբլումը մի շիբլանի կեսն է:

17 Եվ մի լեուն մի շիբլումի կեսն է:

18 Արդ, այս է նրանց թվակարգը, ըստ նրանց հաշվի:

19 Արդ, ոսկու մի անթեան հավասար է երեք շիբլանի:

20 Արդ, սա էր միակ նպատակը՝ շահ ստանալ, որովհետև նրանք ստանում էին իրենց աշխատավարձն ըստ իրենց ծառայության, հետևաբար, նրանք դրդում էին ժողովրդին անկարգությունների և ամեն ձևի խռովությունների և ամբարշտության, որպեսզի «ավելի շատ ծառայություն ունենային, որ կարողանային փող վաստակել ըստ հայցերի, որոնք բերվում էին նրանց առաջ. հետևաբար, նրանք դրդեցին ժողովրդին Ալմայի ու Ամոդեկի դեմ:

21 Եվ այս Ջիգրոմը սկսեց հարցաքննել Ամոդեկին՝ ասելով. Կպատասխանե՞ք իմ մի քանի հարցերին, որոնք ես կհարցնեմ ձեզ: Արդ, Ջիգրոմը մի մարդ էր, որը գիտակ էր դևի՝ «հնարքներին, որպեսզի կարողանար կործանել

այն, ինչը բարի է, հետևաբար, նա ասաց Ամուղեկին. Կպատասխանե՞ք հարցերին, որոնք ես կտամ ձեզ:

22 Եվ Ամուղեկն ասաց նրան. Այո, եթե դա լինի համաձայն Տիրոջ՝ Հոգու, որն իմ մեջ է. քանզի ես չեմ ասի ոչինչ, ինչը Տիրոջ Հոգուն հակառակ է: Եվ Ջիզրոմն ասաց նրան. Ահա, այստեղ կա արծաթի վեց օնթի, և այս բոլորը ես կտամ քեզ, եթե դու ժխտես Գերագույն Էակի գոյությունը:

23 Արդ Ամուղեկն ասաց. Ո՛վ դու, դժոխքի ՝ գավակ, ինչո՞ւ ես ՝ գայթակղում ինձ: Զգիտե՞ս, որ արդարները տեղի չեն տալիս ոչ մի այդպիսի գայթակղումների:

24 Հավատո՞ւմ ես դու, որ չկա Աստված: Ես ասում եմ քեզ՝ Ո՛չ, դու գիտես, որ կա Աստված, բայց դու սիրում ես այդ ՝ շահն ավելի, քան նրան:

25 Եվ այժմ դու ստեցիր ինձ՝ Աստծո առաջ: Դու ասացիր ինձ. Ահա, այս վեց օնթին, որոնք մեծ արծեքի են, ես կտամ քեզ, երբ դու ունեիր քո սրտում՝ պահելու դրանք ինձանից. և քո միակ ցանկությունն էր, որ ես ժխտեի ճշմարիտ ու կենդանի Աստծուն, որպեսզի դու պատճառ ունենայիր՝ կործանելու ինձ: Եվ հիմա, ահա այս մեծ չարիքի համար, դու կստանաս քո հատուցումը:

26 Եվ Ջիզրոմն ասաց նրան. Դու ասում ես կա ճշմարիտ ու կենդանի Աստված՝:

27 Եվ Ամուղեկն ասաց. Այո՛, կա մի ճշմարիտ ու կենդանի Աստված:

28 Արդ, Ջիզրոմն ասաց. Կա՞ ավելի քան մեկ Աստված:

29 Եվ նա պատասխանեց՝ Ո՛չ:

30 Այժմ Ջիզրոմը կրկին ասաց նրան ի պատասխան. Ի՞նչպես ես դու իմանում այս բաները:

31 Եվ նա ասաց. Մի ՝ հրեշտակ հայտնի դարձրեց դրանք ինձ:

32 Եվ Ջիզրոմն ի պատասխան ասաց. Ո՞վ է նա, որ պետք է գա: Դա Աստծո Որդի՞ն է:

33 Եվ նա ասաց նրան՝ Այո՛:

34 Եվ Ջիզրոմը կրկին ասաց. Կփրկի՞ նա իր ժողովրդին իրենց մեղքերի ՝ մեջ: Եվ Ամուղեկը պատասխանեց ու ասաց նրան. Ես ասում եմ քեզ, նա չի՝ փրկի, քանզի անհնարին է նրա համար դրժել իր խոսքը:

35 Արդ, Ջիզրոմն ասաց ժողովրդին. Տեսե՛ք, որ դուք հիշեք այս բաները. քանզի նա ասաց՝ կա միայն մեկ Աստված. սակայն նա ասաց, որ Աստծո Որդին պիտի գա, բայց չպիտի փրկի իր ժողովրդին, կարծես նա ուներ իշխանություն՝ հրամայելու Աստծուն:

36 Արդ, Ամուղեկն ասաց նրան ի պատասխան. Ահա դու ստեցիր, քանզի դու ասում ես, որ ես խոսեցի, կարծես թե իշխանություն ունեի՝ հրամայելու Աստծուն, որովհետև ես ասացի՝ նա չպետք է փրկի իր ժողովրդին իրենց մեղքերի մեջ:

37 Եվ ես դարձյալ ասում եմ ձեզ, որ նա չի կարող փրկել նրանց իրենց ՝ մեղքերի մեջ. քանի որ ես չեմ կարող դրժել նրա խոսքը, և նա ասել է, որ ՝ ոչ մի անմաքուր բան չի

22ա սուր Սուրբ Հոգի:
23ա Ալմա 5.41:
բ սուր Գայթակղել,
Գայթակղություն:
24ա Ա Տմ 2.10,

Տիտու Ա.11:
31ա Ալմա 10.7-10:
34ա Հէլ. 5.10-11:
37ա Ա Կոր. 2.9-10:
բ 1 Նեփի 15.33,

Ալմա 40.26,
3 Նեփի 27.19:
սուր Անաստվածային:

կարող ժառանգել երկնքի Գարբայությունը. հետևաբար, ի՞նչպես կարող եք դուք փրկվել, մինչև չժառանգեք երկնքի արքայությունը: Հետևաբար, դուք չեք կարող փրկվել, ձեր մեղքերի մեջ:

38 Այժմ Ձիզրոմն ասաց նրան ի պատասխան. Աստծո Որդին նույն Հավերժական Հա՞յրն է:

39 Եվ Ամուղեկն ասաց նրան. Այո՛, նա է նույն ՝ Հավերժական Հայրը երկնքի ու երկրի, և Քրիստոս քաների, որոնք նրա մեջ են. նա՛ է սկիզբը և վերջը, առաջինը և վերջինը.

40 Եվ նա կգա ՝ աշխարհ՝ ֆիրկագնելու իր ժողովրդին. և նա վեր Գլամնի իր վրա օրինական-ցությունները նրանց, ովքեր հավատում են նրա անունին. և այդ նրանք են, ովքեր կունենան հավերժական կյանք, և փրկություն ուրիշ ոչ մեկին չի գալիս:

41 Հետևաբար, ամբարիշտները մնում են, կարծես ոչ մի ֆիրկագր-նում չէր արվել, բացի արձակելը մահվան կապանքներից. քանզի, ահա գալիս է օրը, որ Քրիստոս պիտի մեռելներից հարություն առնեն ու կանգնեն Աստծո առաջ, և Գղատվեն ըստ իրենց գործերի:

42 Արդ, կա մահ, որը կոչվում է ժամանակավոր մահ. և Քրիստոսի մահը պիտի ՝ արձակի այս ժամանակավոր մահվան կապանք-

ները, այնպես որ բոլորը պիտի բարձրացվեն այս ժամանակավոր մահից:

43 Ոգին ու մարմինը կրկին պիտի ՝ վերամիավորվեն՝ կատարյալ տեսքով. և վերջավորություն ու հող պիտի վերականգնվեն իրենց բնական կառուցվածքով, ճիշտ ինչպես մենք հիմա ենք՝ այս պահին. և մենք պիտի բերվենք կանգնելու Աստծո առաջ, գիտենալով, ճիշտ ինչպես մենք հիմա գիտենք, և ունենալով մի վառ Քվերհուշ մեր բոլոր Գհանցանքի:

44 Արդ, այս վերականգնումը պիտի գա բոլորին, ծերին ու երիտասարդին, ճորտին ու ազատին, տղամարդուն ու կնոջը, ամբարիշտին ու արդարին. և նույնիսկ մի մազ իսկ նրանց գլխից չի կորչի. այլ ամեն ինչ պիտի ՝ վերականգնվի իր կատարյալ կառուցվածքով, ինչպես հիմա է, կամ մարմնում, և պիտի բերվեն ու դատի ներկայացվեն Քրիստոս Որդու, ՔՀայր Աստծո, և Սուրբ Հոգու դատարանի առաջ, որը Գմեկ Հավերժական Աստված է՝ Պատվելու համաձայն իրենց գործերի, լինեն դրանք բարի, թե լինեն դրանք չար:

45 Արդ ահա, ես խոսեցի ձեզ հետ մահկանացու մարմնի մահվան վերաբերյալ և նաև մահկանացու մարմնի ՝ հարության վերաբերյալ: Ես ասում եմ ձեզ, որ

37q սո՛ւ Աստծո արքայություն կամ երկնքի արքայություն: 39a Ես. Թ.6: p Կող. Ա.16, Մոսիա 4.2: 40a սո՛ւ Աշխարհ: p Հռովմ. ԺԱ.26–27: q Ել. ԼԳ.6–7, Ես. ԾԳ.5, Ա Հովի. Բ.2, Մոսիա 14.5, 15.12, Վևո՛ւ 19.16–19:

41a Ալմա 12.18, Վևո՛ւ 88.33: p Հայտ. Ի.12–13, Ալմա 42.23: q սո՛ւ Վերջին դատաստան: 42a Ալմա 12.16: 43a 2 Նեփի 9.13, Ալմա 40.23: p 2 Նեփի 9.14, Մոսիա 3.25, Ալմա 5.18:

q սո՛ւ Մեղավորություն: 44a Ալմա 41.12–15: p սո՛ւ Աստված, Աստվածագլուխ – Աստված Հայրը: q 3 Նեփի 11.27, 36: սո՛ւ Աստված, Աստվածագլուխ: η Հայտ. Ի.12–13: 45a Ալմա 40.23, Վևո՛ւ 88.16:

այս մահկանացու մարմինը մահից ^բբարձրացվելու է դեպի կյանք, այսինքն՝ առաջին մահից, դառնալով մի ^աանմահ մարմին, այնպես որ նրանք ^աայլևս չեն կարող մեռնել. ոգին միավորվելով մարմնի հետ, որ երբեք չբաժանվի. այսպիսով, ամբողջը դառնալով ^հհոգևոր ու անմահ, այնպես որ այլևս չեն կարող տեսնել ապականություն:

46 Այժմ, երբ Ամուղեկը վերջացրեց այս խոսքերը, ժողովուրդը կրկին ապշեց, և Ջիզրոմը ևս սկսեց դողալ: Եվ այսպես ավարտվեց Ամուղեկի խոսքերը, կամ այս է բոլորը, որ ես գրեցի:

ԳԼՈՒԽ 12

Ալման վիճաբանում է Ջիզրոմի հետ – Աստծո խորհուրդները կարող են տրվել միայն հավատարիմներին – Մարդիկ դատվում են ըստ իրենց մտքերի, հավատքների, խոսքերի ու գործերի – Ամբարիշտները կտանեն հոգևոր մահ – Այս մահկանացու կյանքը մի փորձնական վիճակ է – Փրկագնման ծրագիրն իրականացնում է Հարությունը և հավատքի միջոցով մեղքերի թողությունը – Ապաշխարողներն ունեն ողորմության իրավունք Միածին Որդու միջոցով: Մոտ 82թ. Ք.ծ.ա.:

ԱԼԳ, Ալման, տեսնելով, որ Ամուղեկի խոսքերը լռեցրին Ջիզրոմին, քանզի նա տեսավ, որ Ամուղեկը բռնացրեց նրան ^սստախոսելիս և խաբելիս, որ իրեն կործանի, և տեսնելով, որ նա սկսեց դողալ իր մեղքի ^գգիտակցությունից, նա

բացեց իր բերանն ու սկսեց խոսել նրա հետ և հաստատել Ամուղեկի խոսքերը և ավելի շատ բացատրել այդ բաները, կամ ավելի շատ լուսաբանել սուրբ գրքերը, քան Ամուղեկն էր արել:

2 Արդ, խոսքերը, որ Ալման խոսեց Ջիզրոմի հետ, լսվեցին շրջակայքի ժողովրդի կողմից. քանզի բազմությունը մեծ էր, և նա խոսեց այս ձևով.

3 Այժմ Ջիզրոմ, տեսնելով, որ դու բռնվեցիր քո ստախոսության ու նենգության մեջ, քանզի դու ստեցիր ոչ միայն մարդկանց, այլ դու ստեցիր Աստծուն. քանզի ահա, նա գիտի քո բոլոր ^մմտքերը, և դու տեսնում ես, որ քո մտքերը մեզ հայտնի են դարձվում նրա Հոգու միջոցով,

4 Եվ դու տեսնում ես, որ մենք գիտենք, որ քո ծրագիրը մի շատ նեղ ծրագիր էր, ինչպես դևի նենգությունը՝ ստելու ու խաբելու այս ժողովրդին, որ կարողանայիր տրամադրել նրանց մեր դեմ՝ մեզ անարգելու և մեզ դուրս գցելու համար,

5 Արդ, սա քո ^հհակառակորդի ծրագիրն էր, և նա գործադրեց իր գորությունը քո մեջ: Այժմ ես կկամենայի, որ դու հիշես, որ ինչ ես ասում եմ քեզ, ես ասում եմ բոլորին:

6 Եվ, ահա ես ասում եմ ձեզ բոլորիդ, որ սա հակառակորդի ծուղակն էր, որը նա դրել է՝ բռնելու այս ժողովրդին, որ կարողանա հպատակության բերել ձեզ առ իրեն, որ կարողանա շրջանակի օղակել ձեզ իր ^շշղթաներով,

45բ սուր Հարություն:
 գ սուր Անմահ,
 Անմահություն:
 դ Հայտ. ԲԱ.4,

ՎԼՈՒԽ 63.49, 88.116:
 ե Ա Կոր. ԺԵ.44:
 12 1ա Ալմա 11.20–38:
 բ սուր Խղճմտանք:

3ա Հակոբ 2.5, Ալմա 10.17,
 ՎԼՈՒԽ 6.16:
 5ա սուր ԳԼ:
 6ա Ալմա 5.7–10:

որպեսզի նա շղթայի ձեզ՝ տանելով հավիտենական կործանման, ըստ նրա գերեվարման գործության:

7 Արդ, երբ Ալման խոսեց այս խոսքերը, Ջիզրոնը սկսեց ավելի ուժգին դողալ, քանզի նա ավելի ու ավելի համոզվեց Աստծո գործության մեջ. և նա նաև համոզվեց, որ Ալման ու Ամուղեկն իմացություն ունեին իր մասին, քանզի նա համոզվեց, որ նրանք գիտեին իր սրտի մտքերն ու խորհուրդները. քանի որ գործություն էր տրված նրանց, որ նրանք կարողանային իմանալ այս բաների մասին՝ համաձայն մարգարեության ոգու:

8 Եվ Ջիզրոնը սկսեց հարցաքննել նրանց ջանասիրաբար, որպեսզի կարողանար իմանալ ավելի Աստծո արքայության վերաբերյալ: Եվ նա ասաց Ալմային. Ի՞նչ է նշանակում այն, ինչ Ամուղեկը խոսեց մեռելների հարության մասին, որ բոլորը պետք է մեռելներից հարություն առնեն, թե՛ արդարները, թե՛ անարդարները, և բերվեն կանգնելու Աստծո առաջ՝ դատվելու ըստ իրենց գործերի:

9 Եվ արդ, Ալման սկսեց մեկնաբանել այս բաները նրանց համար՝ ասելով. Շատերին է տրված իմանալ Աստծո խորհուրդները. սակայն դրանք դրված են խիստ հրամանի ներքո, որ նրանք չպետք է հաղորդեն, ^բբացառությամբ իր խոսքի այն բաժնի, որը նա շնորհում է մարդկանց գավակներին,

այն ուշադրության ու ջանասիրության համաձայն, որը նրանք ցուցաբերում են նրա հանդեպ:

10 Եվ հետևաբար, ով ^ակարծրացնի իր սիրտը, նա կստանա խոսքի ^բնվազագույն բաժինը. իսկ ով ^գչի կարծրացնի իր սիրտը, նրան ^դտրվում է խոսքի ավելի մեծ բաժինը, մինչև որ նրան տրվում է իմանալու Աստծո խորհուրդները՝ մինչև որ նա իմանա դրանք լիովին:

11 Եվ նրանք, ովքեր կկարծրացնեն իրենց սրտերը, նրանց տրվում է խոսքի նվազագույն ^աբաժինը, մինչև որ նրանք ոչինչ չեն ^բիմանում նրա խորհուրդների մասին. և հետո նրանք գերի են վերցվում դևի կողմից և տարվում նրա կամքով վար՝ դեպի կործանում: Արդ սա է, որ նշանակում է ^գդժոխքի ^դշղթաներ:

12 Եվ Ամուղեկը խոսեց հատակորեն ^ամահվան մասին և այս մահկանացուից դեպի անմահության մի վիճակի բարձրացված լինելու մասին, և բերված լինելու՝ Աստծո դատարանի առջև, ^բդատվելու ըստ մեր գործերի:

13 Հետևաբար, եթե մեր սրտերը կարծրացած են եղել, այո, եթե մենք կարծրացրել ենք մեր սրտերն ընդդեմ խոսքի՝ այնքան, որ այն չի գտնվել մեր մեջ, այն ժամանակ է լինելու մեր վիճակը սուսկալի, քանզի այն ժամանակ մենք կդատապարտվենք:

9ա Ալմա 26.22:
սո՛ւ Աստծո
խորհուրդները:
բ Հովհ. ԺՁ.12,
Ալմա 29.8,
3 Նեփի 26.8–11,
Եթեր 4.7:
10ա 2 Նեփի 28.27,

Եթեր 4.8:
բ ՎևոՒ 93.39:
գ սո՛ւ Խոնարի,
Խոնարիություն:
դ 2 Նեփի 28.30,
ՎևոՒ 50.24:
11ա Մատ. ԻԵ.29:
բ սո՛ւ Ուրացություն:

գ Առակ. Թ.18,
2 Նեփի 2.29:
սո՛ւ Դժոխք:
դ Հովհ. Ը.34,
2 Նեփի 28.19:
12ա Ալմա 11.41–45:
բ սո՛ւ Վերջին
դատաստան:

14 Քանզի մեր Մխոսքերը կդատապարտեն մեզ, այո, բոլոր մեր գործերը կդատապարտեն մեզ. մենք չենք համարվի անբիծ. և մեր մտքերը նույնպես կդատապարտեն մեզ. և այս սոսկալի վիճակում մենք չենք համարձակվի նայել վեր՝ առ Աստված. և մենք միանգամայն ուրախ կլինենք, եթե կարողանայինք հրամայել ժայռերին ու թլեռներին զընկնել մեզ վրա՝ թաքցնելու մեզ նրա ներկայությունից:

15 Բայց դա չի լինի. մենք պետք է առաջ գանք և կանգնենք նրա առաջ՝ նրա փառքի և նրա իշխանության մեջ, նրա զորության, վեհափառության և տիրապետության մեջ, և ընդունենք ի հավիտենական Մամոթս մեզ, որ բոլոր նրա Պատաստաններն արդար են. որ նա արդար է իր բոլոր գործերում, և որ նա ողորմած է հանդեպ մարդկանց զավակները, և որ նա ունի ողջ զորությունը փրկելու ամեն մի մարդու, ով հավատում է նրա անունին ու առաջ բերում ապաշխարությանը վայել պտուղ:

16 Եվ այսպիսով, ահա ես ասում եմ ձեզ, այնուհետև զայլա է մի մահ, այսինքն՝ մի երկրորդ՝ մահ, որը հոգևոր մահ է. այնժամ է պահը, որ ով որ մեռնում է իր մեղքերի մեջ, ինչ վերաբերում է ժամանակավոր մահվանը, պիտի մահանա նաև մի հոգևոր մահով. այո, նա պիտի մահանա արդա-

րությանը պատկանող բաների նկատմամբ:

17 Այնժամ է պահը, երբ նրանց տանջանքները պիտի լինեն կրակի և ծծմբի լճի՝ Մպես, որի բոցը բարձրանում է վեր հավիտյանս հավիտենից. և այնժամ է պահը, երբ նրանք պիտի շղթայվեն վար՝ դեպի հավիտենական կործանում, համաձայն Սատանայի զորության ու զերության, նա՝ հպատակեցրած լինելով նրանց ըստ իր կամքի:

18 Հետևաբար, ես ասում եմ ձեզ, նրանք պիտի լինեն այնպես, կարծես թե Մփրկագնում արված չէր եղել. քանզի նրանք չեն կարող փրկագնվել Աստծո արդարատության համաձայն. և նրանք չեն կարող մեռնել, նկատի ունենալով, որ չկա այլևս ապականություն:

19 Արդ եղավ այնպես, որ երբ Ալման վերջ դրեց այս խոսքերը խոսելուն, ժողովուրդը սկսեց ավելի ապշել.

20 Բայց կար մի ինչ-որ Անթիոնա, որը գլխավոր կառավարիչ էր նրանց մեջ, որն առաջ եկավ ու ասաց նրան. Ի՞նչ է այս, որ դու ասացիր, որ մարդը պետք է հարություն առնի մեռելներից ու փոխվի այս մահկանացուից մի՞ անմահ վիճակի, որ հոգին չի կարող երբեք մեռնել:

21 Ի՞նչ նկատի ունի սուրբ գիրքը, որն ասում է, որ Աստված դրեց Մքերովբեներին և մի բոցեղեն սուր

14ա Մատ. ԺԲ.36,
 Հակ. Գ.6,
 Մոսիս 4.29–30:
 բ Ովսե Ժ.8,
 2 Նեփի 26.5:
 գ Հոր ԼԳ.22,
 2 Նեփի 12.10:
 15ա Մոսիս 3.25:
 բ Բ Պետ. Բ.9:

սո՛ւ Արդարադատու-
 րյուն:
 16ա սո՛ւ Մահ հոգևոր:
 բ Ալմա 11.40–45:
 գ 1 Նեփի 15.33,
 Ալմա 40.26:
 17ա Հայտ. ԺԹ.20, ԻԱ.8,
 Մոսիս 3.27:
 18ա Ալմա 11.41:

բ Հայտ. ԻԱ.4,
 Ալմա 11.45,
 ՎեՌԻ 63.49:
 20ա սո՛ւ Անմահ,
 Անմահություն:
 21ա Ծն. Գ.24,
 Ալմա 42.2,
 Մովսես 4.31:
 սո՛ւ Քերովբեներ:

Քեղեմի պարտեզի արևելյան կողմում, որպեսզի չլինի թե մեր առաջին ծնողները մտնեին և ճաշակեին կենաց ծառի պտղից և ապրեին հավիտյան: Եվ այսպես, մենք տեսնում ենք, որ չկար հնարավոր հավանականություն, որ նրանք ապրեին հավիտյան:

22 Արդ Ալման ասաց նրան. Սա այն բանն էր, որ ես պատրաստվում էի բացատրել: Արդ մենք տեսնում ենք, որ Ադամն՝ ՞ընկավ՝ ճաշակելով արգելված ՞պտղից, ըստ Աստծո խոսքի. և այսպես մենք տեսնում ենք, որ նրա անկունով ողջ մարդկությունը դարձավ մի ՞կորած ու ընկած ժողովուրդ:

23 Եվ արդ, ահա ես ասում եմ ձեզ, որ եթե հնարավոր եղած լիներ Ադամի համար ՞ճաշակել կենաց ծառից այդ ժամանակ, մահ եղած չէր լինի, և խոսքը եղած կլիներ դատարկ՝ դարձնելով Աստծուն մի ստախոս, քանզի նա ասել էր. ՞Եթե դու ուտես, դու պիտի անշուշտ մեռնես:

24 Եվ մենք տեսնում ենք, որ ՞մահ է գալիս մարդկության վրա, այո, մահը, որի մասին խոսեց Ամուղեկը, որը ժամանակավոր մահն է. այնուամենայնիվ, կար մի ժամանակահատված՝ շնորհված ՞մարդուն, որի ընթացքում նա կարողանար ապաշխարել. հետևաբար, այս կյանքը դարձավ մի փորձնական վիճակ. մի ժամանակ՝ ՞պատրաստվելու համար

հանդիպելու Աստծուն. մի ժամանակ՝ պատրաստվելու այն անվերջ վիճակին, որի մասին խոսեցինք մենք, որը մեռելների հարությունից հետո է:

25 Արդ, եթե չլիներ փրկագնման ՞ծրագիրը, որը հաստատվել էր աշխարհի հիմնադրումից ի վեր, չէր կարող լինել մեռելների ՞հարություն. սակայն փրկագնման ծրագիրը հաստատվել էր, որը պիտի իրագործի հարությունը մեռելների, որի մասին խոսվեց:

26 Եվ այժմ, ահա եթե հնարավոր լիներ, որ մեր առաջին ծնողները կարողանային առաջ գնալ և ճաշակել կենաց ՞ծառից, նրանք կլինեին թշվառ հավիտյան՝ չունենալով նախապատրաստական վիճակ. և այսպիսով, փրկագնման ՞ծրագիրը խափանված կլիներ, և Աստծո խոսքը եղած կլիներ դատարկ՝ չտալով ոչ մի արդյունք:

27 Բայց ահա, դա այդպես չէր. այլ ՞նշանակված էր մարդկանց համար, որ նրանք պետք է մեռնեն. և մահից հետո, նրանք պետք է գան ՞դատաստանի, այսինքն՝ այն նույն դատաստանին, որի մասին մենք խոսել ենք, որը վերջն է:

28 Եվ հետո, երբ Աստված որոշեց, որ այս բաները պետք է գան մարդուն, ահա, այն ժամանակ նա տեսավ, որ անհրաժեշտ է, որ մարդն իմանա այս բաների վերաբերյալ, որոնք նա որոշել է նրանց համար.

21բ սուր Եղեմ:
22ա սուր Ադամի և Եվայի անկումը:
բ Ծն. Գ.6,
2 Նեփի 2.15–19,
Մոսիա 3.26:
գ Մոսիա 16.4–5:
23ա Ալմա 42.2–9:
բ Ծն. Բ.17:

24ա սուր Մահ ֆիզիկական:
բ 2 Նեփի 2.21,
Մովսես 5.8–12:
գ Ալմա 34.32–35:
25ա սուր Փրկագնման ծրագիր:
բ 2 Նեփի 2.8,
Ալմա 7.12, 42.23:
26ա Ծն. Բ.9,

1 Նեփի 15.36,
Ալմա 32.40:
բ Ալմա 34.8–16, 42.6–28,
Մովսես 6.59–62:
27ա Հոր է.1,
Եբր. Թ.27,
ՎևոՒԲ 42.48:
բ սուր Վերջին դատաստան:

29 Հետևաբար, նա ուղարկեց «հրեշտակներ՝ խոսելու նրանց հետ, որոնք մարդկանց տեսնել տվեցին նրա փառքից:

30 Եվ նրանք այդ ժամանակից ի վեր սկսեցին կանչել նրա անունը, հետևաբար, Աստված խոսեց նրանց հետ և «հայտնի դարձրեց նրանց փրկագնման Քրիստոսը, որը պատրաստված էր աշխարհի «հիմնադրումից. և սա նա հայտնի դարձրեց նրանց՝ համաձայն իրենց հավատքի և ապաշխարության և նրանց սուրբ գործերի:

31 Ուստի, նա «պատվիրաններ տվեց մարդկանց, նրանք զանց արած լինելով Քառօրյան պատվիրանները, ինչ վերաբերում է բաներին, որոնք ժամանակավոր էին, և դառնալով ինչպես աստվածներ, «տարբերելով բարին չարից, դնելով իրենց մի վիճակում՝ «գործելու, կամ, դրված լինելով մի վիճակում՝ գործելու ըստ իրենց կամքի ու ցանկությունների՝ անել չարիք կամ անել բարիք,

32 Հետևաբար, Աստված տվեց նրանց պատվիրաններ փրկագրման ծրագիրը նրանց «հայտնի դարձնելուց հետո, որպեսզի նրանք չանեին չարիք, դրա տույժը լինելով մի երկրորդ Քմահ, որը մի հավիտենական մահ էր, ինչ վերաբերում է արդարությանը պատկանող բաներին. քանզի այդպիսիների վրա փրկագնման ծրագիրը չէր

կարող ունենալ գորություն, քանզի «արդարադատության գործերը չէին կարող կործանվել՝ համաձայն Աստծո գերագույն բարության:

33 Բայց Աստված կոչ արեց մարդկանց իր Որդու անունով (այս էր փրկագնման ծրագիրը, որը հաստատված էր), ասելով. Եթե դուք կամենաք ապաշխարել և չկարծրացնեք ձեր սրտերը, ապա ես ողորմություն կունենամ ձեզ վրա իմ Միածին Որդու միջոցով.

34 Հետևաբար, ով որ ապաշխարում է և չի կարծրացնում իր սիրտը, նա «ողորմության իրավունք պիտի ունենա իմ Միածին Որդու միջոցով, մինչև իսկ իր մեղքերի մի Քթողության. և այդպիսիները պիտի մտնեն իմ «հանգիստը:

35 Եվ ով որ կկարծրացնի իր սիրտը և կանի անօրինություն, ահա, ես երդվում եմ իմ ցասման մեջ, որ նա չպիտի մտնի իմ հանգիստը:

36 Եվ արդ, իմ եղբայրներ, ահա, ես ասում եմ ձեզ, որ եթե դուք կամենաք կարծրացնել ձեր սրտերը, դուք չպետք է մտնեք Տիրոջ հանգիստը. հետևաբար, ձեր անօրինությունը դրդում է նրան, որ նա վար ուղարկի իր ցասումը ձեզ վրա, ինչպես այն «առաջին սաղրանքի ժամանակ, այո, համաձայն իր խոսքի, ինչպես վերջին սաղրանքի ժամանակ, ճիշտ այնպես էլ առաջինի, ի հավիտենական

29ա Մոր. 7.25, 31, ՎևՈՒ 29.42:
30ա Մովսես 5.4–5, 6.51:
բ սուր Փրկագնման ծրագիր:
գ Մոսիա 18.13, Ալմա 13.3, 5, 7–8:
31ա սուր Պատվիրաններն Աստծո:

բ Ծն. Բ.16–17, 2 Նեփի 2.18–19:
գ Ծն. Գ.22–23, Մովսես 4.11:
դ 2 Նեփի 2.16:
սուր Կամքի ազատություն:
32ա Մովսես 5.4–9:
բ սուր Մահ հոգևոր:

գ Մոսիա 15.27, Ալմա 34.15–16, 42.15:
34ա սուր Ողորմած, Ողորմություն:
բ սուր Մեղքերի թողություն:
գ սուր Հանգիստ:
36ա Հակոբ 1.7–8, Ալմա 42.6, 9, 14:

Քործանումն ձեր հոգիների. հետևաբար, համաձայն իր խոսքի, դեպի վերջին մահը, այնպես ինչպես առաջինը:

37 Եվ արդ, իմ եղբայրներ, նկատի առնելով, որ մենք գիտենք այս բաները, և դրանք ճշմարիտ են, եկեք սպաշխարենք, և չկարծրացնենք մեր սրտերը, որպեսզի մենք չդրդենք Տիրոջը՝ մեր Աստծուն, վար բերել իր ցասումը մեզ վրա իր այս երկրորդ պատվիրաններում, որոնք նա տվել է մեզ, այլ եկեք մտնենք Աստծո թիկնապստը, որը պատրաստված է՝ համաձայն իր խոսքի:

ԳԼՈՒԽ 13

Մարդիկ կանչվում են, որպես քահանաներ, իրենց խիստ մեծ հավատքի ու բարի գործերի շնորհիվ – Նրանք պետք է սովորեցնեն պատվիրանները – Արդարակեցության միջոցով նրանք սրբագործվում են ու մտնում Տիրոջ թիկնապստը – Մերքիսեդեկը նրանցից մեկն էր – Հրեշտակները հայտարարում են ավետիք ամբողջ երկրում – Նրանք կհայտնեն Քրիստոսի իրական գալուստը: Մոտ 82թ. Ք.ձ.ա.:

Եւ բացի այդ, իմ եղբայրներ, ես կկամենայի ուղղել ձեր մտքերն առաջ՝ դեպի այն ժամանակը, երբ Տեր Աստված տվեց այս պատվիրաններն իր զավակներին. և ես կկամենայի, որ դուք հիշեք, որ Տեր

Աստված քահանաներ՝ կարգեց՝ ըստ իր սուրբ կարգի, որն ըստ իր Որդու կարգի էր, սովորեցնելու համար այս բաները ժողովուրդին:

2 Եվ այդ քահանաները կարգվեցին՝ ըստ իր Որդու՝ կարգի, մի թճնով, որի միջոցով ժողովուրդը կարողանար իմանալ, թե ինչ ձևով սպասեր նրա Որդուն՝ փրկագրման համար:

3 Եվ այս է ձևը, ըստ որի նրանք կարգվեցին՝ լինելով՝ կանչված ու թատրաստված աշխարհի զհիմնադրումից ի վեր, համաձայն Աստծո թիկնապստության, իրենց խիստ մեծ հավատքի ու բարի գործերի շնորհիվ. սկզբում թողնված լինելով՝ շնորհելու բարին կամ չարը. հետևաբար, նրանք ընտրված լինելով բարին, և գործադրելով անչափ մեծ հավատք, կանչվում են մի սուրբ կոչումով, այո, այն սուրբ կոչումով, որը պատրաստված էր այդպիսիների համար՝ մի նախապատրաստված փրկագրմամբ և դրա համաձայն:

4 Եվ այսպես, նրանք կանչված են եղել այս սուրբ կոչմանն իրենց հավատքի շնորհիվ, մինչդեռ մյուսները մերժում էին Աստծո ճշգրիտ իրենց սրտերի կարծրության և իրենց մտքերի կուրության պատճառով, մինչդեռ եթե դա եղած չլիներ այդպես, նրանք կկարողանային ունենալ այնպիսի մեծ թարտոնություն, ինչպես իրենց եղբայրները:

36թ սու՝ Նզովք:
37ա 1 Նեփի 17.30,
Հակոբ 1.8, Հել. 7.18:
բ Ալմա 13.6–9:
13 1ա Աբր. 2.9, 11:
2ա Վևո 107.2–4:
բ Ալմա 13.16:
3ա Վևո 127.2:

սու՝ Ընտրություն.
Նախակարգում:
բ Վևո 138.55–56:
գ Ալմա 12.25, 30:
սու՝ Նախամահկանացու կյանք:
դ Վևո 38.2:
ե սու՝ Կամքի

ազատություն:
գ սու՝ Հավատք:
է սու՝ Կանչ, Աստծո
կողմից կանչված,
Կոչում.
Քահանայություն:
4ա Եթեր 12.10:
բ 1 Նեփի 17.32–35:

5 Կամ ի վերջո, սկզբում նրանք ^անույն դիրքի վրա էին իրենց եղբայրների հետ. այսպիսով, այս սուրբ կոչումը, նախապատրաստված լինելով աշխարհի հիմնադրումից ի վեր այնպիսիների համար, ովքեր չէին կարծրացնի իրենց սրտերը, որը Միածին Որդու քավության մեջ և միջոցով էր, ով նախապատրաստվել էր,–

6 Եվ այսպես, այս սուրբ կոչումով կանչված և Աստծո սուրբ կարգի բարձրագույն քահանայությանը կարգված՝ սովորեցնելու նրա պատվիրանները մարդկանց զավակներին, որպեսզի նրանք նույնպես կարողանան մտնել նրա ^ահանգիստը,–

7 Այս բարձրագույն քահանայությունը, լինելով ըստ իր Որդու կարգի, կարգ, որը կար աշխարհի հիմնադրումից ի վեր. կամ, այլ խոսքով, լինելով ^առանց օրերի սկզբի կամ տարիների վերջի, նախապատրաստված լինելով հավերժությունից մինչև ողջ հավերժություն, համաձայն բոլոր բաների վերաբերյալ ^բնրա կանխագիտության,–

8 Արդ, նրանք ^ակարգվում էին ըստ այս ձևի,– կանչվելով մի սուրբ կոչումով, և ձեռնադրվելով մի սուրբ արարողությանը, և իրենց վրա վերցնելով սուրբ կարգի բարձրագույն քահանայությունը, կոչում և արարողություն և

բարձրագույն քահանայություն, որն առանց սկզբի է կամ վերջի,–

9 Այսպիսով, նրանք դառնում են ^աքահանայակետեր հավիտյան, ըստ Որդու կարգի՝ Հոր Միածնի, որն առանց օրերի սկզբի է կամ տարիների վերջի, որը լի է ^բշնորհով, անաչառությամբ և ճշմարտությամբ: Եվ դա այդպես է: Ամեն:

10 Արդ, ինչպես ես ասացի սուրբ կարգի կամ այս ^աբարձրագույն քահանայության վերաբերյալ, կային շատերը, որոնք կարգվեցին ու դարձան Աստծո քահանայակետեր. և դա Աստծո առջև նրանց խիստ մեծ հավատքի ու ^բապաշխարության և նրանց արդարության շնորհիվ էր, նրանք՝ նախընտրելով ավելի շուտ ապաշխարել ու գործել արդար, քան կործանվել,

11 Հետևաբար, նրանք կանչվեցին ըստ այս սուրբ կարգի և ^ասրբագործվեցին, և նրանց ^բհանդերձները լվացվեցին ճերմակ՝ Գառան արյան միջոցով:

12 Արդ, նրանք, ^աՍուրբ Հոգով ^բսրբագործված, իրենց հանդերձները ճերմակ դարձած, ^գանարատ ու անբիծ լինելով Աստծո առաջ, չէին կարողանում նայել ^դմեղքի վրա, բացի միայն ^եզզվանքով. և կային շատերը, չափից դուրս հսկայական քանակությամբ, ովքեր դարձել էին անարատ և մտել Աստծո՝ իրենց Տիրոջ հանգիստը:

13 Եվ արդ, իմ եղբայրներ, ես

<p>5ա2 Նեփի 26.28: 6ա Ալմա 12.37, 16.17: սուր Հանգիստ: 7ա Եբր. Է.3: <i>բ</i> սուր Աստված, Աստվածագլուխ: 8ա Վևո 84.33–42: սուր Մեքսիկեյան քահանայություն: 9ա սուր Քահանայակետ:</p>	<p><i>բ</i> 2 Նեփի 2.6: սուր Շնորհ: 10ա Վևո 84.18–22: <i>բ</i> սուր Ապաշխարել, Ապաշխարություն: 11ա Մովսես 6.59–60: <i>բ</i> 1 Նեփի 12.10, Ալմա 5.21–27, 3 Նեփի 27.19–20: 12ա սուր Սուրբ Հոգի:</p>	<p><i>բ</i> Հռովմ. Ը.1–9: սուր Սրբագործում: <i>գ</i> սուր Անարատ, Անարատություն: <i>դ</i> Մոսիա 5.2, Ալմա 19.33: <i>ե</i> Առակ. Ը.13, Ալմա 37.29:</p>
---	---	---

կկամենայի, որ դուք ձեզ խոնարհեցնեք Աստծո առաջ և սպաշխարությանը վայել [՝]պտուղ բերեք, որպեսզի դուք նույնպես կարողանաք մտնել այդ հանգիստը:

14 Այո, խոնարհեցրե՛ք ձեզ, նույնիսկ ինչպես ժողովուրդը [՝]Մեքիստեղեկի օրերում, որը նույնպես քահանայապետ էր՝ ըստ այս նույն կարգի, որի մասին ես խոսել եմ, որը նույնպես վերցրեց իր վրա բարձրագույն քահանայությունը հավիտյան:

15 Եվ դա այն նույն Մեքիստեղեկն էր, որին [՝]Աբրահամը [՝]տասանորդ վճարեց. այո, նույնիսկ մեր հայր Աբրահամը վճարեց տասնորդ՝ մեկ տասներորդ մասն իր ողջ ունեցածի:

16 Արդ, այս [՝]արարողությունները տրվում էին ըստ այս ձևի, որպեսզի դրա միջոցով ժողովուրդը կարողանար սպասել Աստծո Որդուն, այն լինելով մի [՝]մարմնավորում նրա կարգի, կամ այն լինելով նրա կարգը, և դա՝ որպեսզի նրանք կարողանային սպասել նրան իրենց մեղքերի թողության համար, որպեսզի նրանք կարողանային մտնել Տիրոջ հանգիստը:

17 Արդ, այս Մեքիստեղեկը թագավոր էր Սաղեմի երկրի վրա. և նրա ժողովուրդը դարձել էր ուժեղ անօրինության ու պղծության մեջ. այո, նրանք բոլորը մոլորվել էին. նրանք լի էին ամեն ձևի ամբարշտությանմբ.

18 Բայց Մեքիստեղեկը, գործադ-

րած լինելով գորեղ հավատք, և ստացած լինելով բարձրագույն քահանայության պաշտոնը, ըստ Աստծո [՝]սուրբ կարգի, քարոզեց սպաշխարություն իր ժողովրդին: Եվ, ահա նրանք սպաշխարեցին. և Մեքիստեղեկն իր օրերում հաստատեց խաղաղություն երկրում. այդ պատճառով նա կոչվեց խաղաղության իշխան, քանզի նա Սաղեմի թագավորն էր. և թագավորում էր իր հոր ներքո:

19 Արդ, կային [՝]շատերը նրանից առաջ, և նաև կային շատերը՝ հետո, բայց [՝]ոչ մեկն ավելի մեծ չէր. այդ պատճառով, նրա մասին նրանք ավելի մանրամասնորեն են հիշատակել:

20 Արդ, կարիք չկա, որ ես վերապատմեմ նյութը. ինչ ես ասացի երևի բավական է: Ահա [՝]սուրբ գրքերը ձեր առջև են. եթե դուք կամենաք [՝]աղավաղել դրանք, դա պիտի լինի ի սեփական կործանումն ձեզ:

21 Եվ արդ, եղավ այնպես, որ երբ Ալման ասաց այս խոսքերը նրանց, նա առաջ մեկնեց իր ձեռքը դեպի նրանց ու գոչեց գորեղ ձայնով՝ ասելով. Հիմա՝ է ժամն [՝]ապաշխարելու, քանզի փրկության օրը մոտենում է,

22 Այո, և Տիրոջ ձայնը հրեշտակների [՝]բերանով հայտարարում է այդ՝ բոլոր ազգերին, այո՛, հայտարարում է այդ, որպեսզի նրանք կարողանան ունենալ ավետիք մեծ ուրախության. այո, և

13ա Ղուկ. 9:8:
14ա ՎևոՒ 84.14: ՁՄԹ, ԾՆ. 14.25–40:
սուր Մեքիստեղեկ:
15ա սուր Աբրահամ:
բ ԾՆ. ԺԴ.18–20,
Մաղ. 9:8–10:
սուր Տասանորդ,

Տասանորդել:
16ա սուր Արարողություններ:
բ սուր Խորհրդանշակա-
նություն:
18ա սուր Մեքիստեղեկյան
քահանայություն:
19ա Հել. 8.18,
ՎևոՒ 84.6–16,

107.40–55:
բ ՎևոՒ 107.1–4:
20ա սուր Սուրբ գրքեր:
բ Բ Պետ. 9.16,
Ալմա 41.1:
21ա սուր Ապաշխարել,
Ապաշխարություն:
22ա Ալմա 10.20:

նա հնչեցնում է այս ավետիքն իր ողջ ժողովրդի մեջ, այո, այսինքն՝ նրանց, որ սփռված են ամենուրեք երկրի երեսին. այդ պատճառով նրանք եկել են մեզ մոտ:

23 Եվ դրանք հայտնի են դարձվել մեզ՝ պարզ արտահայտություններով, որպեսզի մենք կարողանանք հասկանալ, որ մենք չկարողանանք սխալվել. և այս մի օտար երկրում մեր Քրիստոսականներ լինելու պատճառով. հետևաբար, մենք այսպես մեծապես առանձնաշնորհված ենք, քանզի մենք ունենք այս ավետիքը՝ հայտարարված մեզ, մեր այգու բոլոր մասերում:

24 Քանզի, ահա Միքելանջոյի հայտարարում են դա շատերին այս ժամանակարևոցում, մեր երկրում. և դա մարդկանց գավակների սրտերը պատրաստելու նպատակով է, որպեսզի իր փառքով նրա գալստյան ժամանակ ընդունեն նրա խոսքը:

25 Եվ արդ, մենք միայն սպասում ենք լսելու ուրախ լուրեր նրա գալստյան մասին՝ հայտարարված մեզ հրեշտակների բերանով. քանզի մենք՝ չգիտենք որքան շուտ է գալու այդ ժամանակը: Աստված անի, որ դա լինի իմ օրում. բայց լինի դա շուտ, թե ուշ, դրանում ես կցնձամ:

26 Եվ դա պիտի հայտնի դարձվի՝ արդար ու սուրբ մարդկանց, հրեշտակների բերանով, նրա գալստյան ժամանակ, որպեսզի

մեր հայրերի խոսքերը կարողանան իրագործվել, ըստ դրա, ինչ նրանք խոսել են նրա վերաբերյալ, որը մարգարեության ոգու համաձայն էր, որը նրանց մեջ էր:

27 Եվ արդ, իմ եղբայրներ, ես ճանկանում եմ իմ սրտի ամենախորքից, այո, մեծ տագնապով, մինչև անգամ՝ ցավով, որ դուք ականջ դնեք իմ խոսքերին, և դեմ ձգեք ձեր մեղքերն ու չհետաձգեք ձեր ապաշխարության օրը.

28 Այլ, որ դուք խոնարհեցնեք ձեզ Տիրոջ առաջ, և կանչեք նրա սուրբ անունը, և Մարթուն կենաք ու շարունակ աղոթեք, որպեսզի դուք չլինի թե՛ փորձվեք ավելի, քան դուք կարող եք դիմանալ, և այսպես առաջնորդվեք Սուրբ Հոգուց՝ դառնալով խոնարհ, զիեզ, հլու, համբերատար, սիրով և ողջ երկայնամտությամբ լի.

29 Մունենալով հավատք առ Տերը. ունենալով մի հույս, որ դուք պիտի ստանաք հավերժական կյանք. ունենալով Աստծո՞ սերը միշտ ձեր սրտերում, որպեսզի դուք կարողանաք բարձրացվել վերջին օրը և մտնել նրա Գիանգիստը:

30 Եվ թող Տերը շնորհի ձեզ ապաշխարություն, որ դուք վայր չբերեք նրա ցասումը ձեզ վրա, որ դուք չկապվեք Պոպիսի շղթաներով, որ դուք չտանեք երկրորդ մահը:

31 Եվ Ալման խոսեց էլ ավելի շատ խոսքեր ժողովրդի համար, որոնք գրված չեն այս գրքում:

23ա2 Նեփի 25.7–8, 31.3, 32.7, Հակոբ 4.13, Եթեր 12.39: p Հակոբ 7.26: 24ա Ալմա 10.10, 39.19: 25ա1 Նեփի 10.4, 3 Նեփի 1.13:

26ա Ամովս 9.7, Դուկ. Բ.8–11: 27ա Մոսիա 28.3: 28ա սո՞ւ Աղոթք, Արթուն լինել: p Ա Կոր. Ժ.13: q սո՞ւ Հեզ, Հեզոբյուն.

Համբերություն: 29ա Ալմա 7.24: p Վևո՞ւ 20.31, 76.116: սո՞ւ Գթոպյուն: q Վևո՞ւ 84.24: 30ա սո՞ւ Նզովք, Գժոխք: p սո՞ւ Մահ հոգևոր:

ԳԼՈՒԽ 14

Ալման ու Ամուղեկը բանտարկվում են և ծեծվում – Հավատացյալները և նրանց սուրբ գրքերն այրվում են կրակով – Այս նահատակներն ընդունվում են Տիրոջ կողմից փառքի մեջ – Բանտի պատերը ճեղքվում են և փլվում – Ալման և Ամուղեկն ազատվում են, իսկ նրանց հարածողները՝ սպանվում: Մոտ 82–81թթ. Ք.ծ.ա.:

ԵՎ եղավ այնպես, հետո, երբ նա վերջ դրեց ժողովրդի հետ խոսելուն, նրանցից շատերը հավատացին նրա խոսքերին և սկսեցին ապաշխարել ու քննել ^ասուրբ գրքերը:

2 Բայց, նրանցից ավելի մեծ մասը փափագում էր, որ կործաներ Ալմային ու Ամուղեկին. քանզի նրանք գայրացած էին Ալմայի վրա, Ջիզրոմի հանդեպ նրա խոսքերի ^ապարզության պատճառով. և նրանք նաև ասացին, որ Ամուղեկը ^բստել էր իրենց, և զագրախոսել էր իրենց օրենքի դեմ, և նաև իրենց օրինագետների ու դատավորների դեմ:

3 Եվ նրանք նաև գայրացած էին Ալմայի ու Ամուղեկի վրա. և որովհետև նրանք այնքան պարզորեն վկայել էին իրենց ամբարշտության դեմ, նրանք ջանում էին ծածուկ վերացնել նրանց:

4 Բայց եղավ այնպես, որ նրանք չարեցին այդ, այլ նրանք բռնեցին նրանց ու կապեցին ամուր պարաններով, և տարան երկրի գլխավոր դատավորի առաջ:

5 Եվ ժողովուրդն առաջ գնաց ու

վկայեց նրանց դեմ՝ հայտարարելով, որ նրանք զագրախոսել էին օրենքի, և իրենց երկրի օրինագետների ու դատավորների, և նաև բոլոր ժողովրդի դեմ, որոնք երկրում էին. և նաև վկայել էին, որ կար միայն մեկ Աստված, և որ նա պիտի ուղարկեր իր Որդուն ժողովրդի մեջ, բայց նա չպիտի փրկեր նրանց. և շատ այսպիսի բաներ ժողովուրդը վկայեց Ալմայի ու Ամուղեկի դեմ: Արդ, այս արվեց երկրի գլխավոր դատավորի առջև:

6 Եվ եղավ այնպես, որ Ջիզրոմն ապշած մնաց այն խոսքերից, որոնք խոսվել էին. և նա իմացավ նաև մտքերի կուրուքյան մասին, որն ինքն առաջացրել էր ժողովրդի մեջ իր սուտ խոսքերով. և նրա հոգին սկսեց ^ատակնուվրա լինել իր սեփական հանցանքի ^բգիտակցումից. այդ, նա սկսեց գալարվել դժոխքի ցավերով:

7 Եվ եղավ այնպես, որ նա սկսեց աղաղակել դեպի ժողովուրդը՝ ասելով. Ահա, ես ^ահանցավոր եմ, և այս մարդիկ անբիծ են Աստծո առաջ: Եվ նա սկսեց բարեխոսել նրանց համար այդ ժամանակից ի վեր. բայց նրանք անարգեցին նրան՝ ասելով. Մի՞թե քեզ էլ է տիրել դևը: Եվ նրանք քեցին նրա վրա և դուրս ^բզցեցին իրենց միջից, և նաև բոլոր նրանց, ովքեր հավատացել էին այն խոսքերին, որոնք խոսվել էին Ալմայի ու Ամուղեկի կողմից. և նրանք դուրս զցեցին նրանց և ուղարկեցին մարդկանց՝ քարկոծելու նրանց:

8 Եվ նրանք բերեցին նրանց կանանց ու երեխաներին միասին,

14 1ա Դ.Թագ. ԻԲ.8–13:
սուր Սուրբ գրքեր:
2ա Ալմա 12.3–7:

բ Ալմա 10.27:
6ա Ալմա 15.5:
բ սուր Խղճմտանք:

7ա Ալմա 11.21–37:
բ Ալմա 15.1:

և նրանք, ովքեր հավատացել էին կամ սովորեցվել էին՝ հավատալու Աստծո խոսքին, կարգադրեցին, որ նրանք զգեին կրակի մեջ. և նրանք նաև բերեցին նրանց հիշատակարանները, որոնք պարունակում էին սուրբ գրությունները, և դրանք նույնպես զգեցին կրակի մեջ, որպեսզի դրանք վառվեին ու ոչնչանային կրակով:

9 Եվ եղավ այնպես, որ նրանք վերցրեցին Ալմային ու Ամուղեկին, և տարան նրանց առաջ՝ դեպի նահատակության վայրը, որ ակնատես լինեին նրանց կործանմանը, ովքեր կլանվեցին կրակից:

10 Եվ, երբ Ամուղեկը տեսավ կանանց և երեխաների ցավերը, որոնք այրվում էին կրակի մեջ, նա նույնպես ցավեց. և նա ասաց Ալմային. Ի՞նչպես կարող ենք մենք ակնատես լինել այս սարսափելի տեսարանին: Հետևաբար, եկ առաջ մեկնենք մեր ձեռքը, և գործի դնենք Աստծո՝ ազրությանը, որը մեր մեջ է, և փրկենք նրանց բոցերից:

11 Բայց Ալման ասաց նրան. Հոգին պարտադրում է ինձ, որ ես չպետք է առաջ մեկնեմ իմ ձեռքը. քանզի ահա, Տերն ընդունում է նրանց վեր՝ իր մոտ,՝ փառքի մեջ. և նա հանդուրժում է, որ նրանք կարողանան անել այս բանը, կամ որ ժողովուրդը կարողանա անել այս բանը նրանց հետ, համաձայն նրանց սրտերի կարծրության, որպեսզի ղառաստանները, որոնք նա գործի պիտի դնի նրանց վրա իր ցասման մեջ, կարողանան լինել արդար. և զանմեղների՝ աբրյունը

պիտի կանգնի, որպես վկայություն ընդդեմ նրանց, այո, և ուժգնորեն աղաղակի նրանց դեմ վերջին օրը:

12 Արդ, Ամուղեկն ասաց Ալմային. Ահա, գուցե նրանք մեզ էլ այրեն:

13 Եվ Ալման ասաց. Թող լինի համաձայն Տիրոջ կամքի: Բայց, ահա մեր գործը չի ավարտվել, հետևաբար նրանք չեն այրի մեզ:

14 Արդ, եղավ այնպես, որ երբ մարմինները նրանց, ովքեր զգվել էին կրակը, ոչնչացան, և նաև հիշատակարանները, որոնք զգվել էին նրանց հետ, երկրի գլխավոր դատավորը եկավ և կանգնեց Ալմայի ու Ամուղեկի առջև, մինչդեռ նրանք կապկաված էին. և նա ձեռքով զարկեց նրանց այտերին, և ասաց նրանց. Դրանից հետո ինչ տեսաք, էլի կքարոզե՞ք այս ժողովրդին, որ նրանք պիտի զգվեն կրակի ու ծծմբի՝ լիճը:

15 Ահա, դուք տեսնում եք, որ դուք չունեիք զորություն՝ փրկելու նրանց, ովքեր զգվել էին կրակի մեջ. ոչ էլ Աստված փրկեց նրանց, որովհետև նրանք քո հավատքից էին: Եվ դատավորն ապտակեց նորից նրանց այտերին և հարցրեց. Ի՞նչ կասեք դուք ձեզ համար:

16 Արդ, այս դատավորն ըստ Ստեռի կարգի ու հավատքի էր, որը սպանել էր Գեղեռնին:

17 Եվ եղավ այնպես, որ Ալման ու Ամուղեկը ոչինչ չպատասխանեցին. և նա կրկին ապտակեց նրանց, և հանձնեց նրանց պաշտոնյաներին, որ բանտ զգեին:

18 Եվ երբ նրանք երեք օր բանտ

10ա Ալմա 8.30-31:
 11ա սո՛ւ Փառք:
 բ Սաղ. ԼԷ:8-13,
 Ալմա 60.13,

ՎԼՈՒ 103.3:
 սո՛ւ Արդարադատու-
 քյուն:
 գ Մոսիա 17.10:

դ սո՛ւ Նահատակ,
 Նահատակություն:
 14ա Ալմա 12.17:
 16ա Ալմա 1.7-15:

էին գգված, այնտեղ եկան շատ «օրինագետներ, և դատավորներ, և քահանաներ, և ուսուցիչներ, որոնք Նեորի դավանանքից էին. և նրանք գալիս էին բանտ՝ տեսնելու նրանց, և նրանք հարցաքննում էին նրանց, շատ խոսքերի վերաբերյալ. բայց նրանք ոչինչ չէին պատասխանում նրանց:

19 Եվ եղավ այնպես, որ դատավորը կանգնեց նրանց առջև ու ասաց. Ինչո՞ւ չեք պատասխանում այս մարդկանց հարցերին: Չգիտե՞ք, որ ես իշխանություն ունեմ՝ հանձնելու ձեզ բոցերին: Եվ նա հրամայեց նրանց խոսել. բայց նրանք ոչինչ չպատասխանեցին:

20 Եվ եղավ այնպես, որ նրանք հեռացան ու գնացին իրենց ճանապարհներով, բայց հաջորդ օրը եկան կրկին. և դատավորը ևս կրկին զարկեց նրանց այտերին: Եվ շատերն առաջ եկան նույնպես և զարկեցին նրանց՝ ասելով. Էլի կկանգնե՞ք ու կդատեք այս ժողովրդին, և կդատապարտե՞ք մեր օրենքը: Եթե այդպիսի մեծ գորություն ունեք, ինչո՞ւ դուք ձեզ չեք «ազատում:

21 Եվ շատ այսպիսի բաներ նրանք ասացին նրանց՝ կրճատացնելով իրենց ատամները նրանց վրա, և թքելով նրանց վրա, և ասելով. Ինչպիսի՞ տեսք կունենանք մենք, երբ դատապարտվենք:

22 Եվ շատ այսպիսի բաներ, այո, ամեն ձևի այսպիսի բաներ ասացին նրանց. և այսպես ծաղրում էին նրանց շատ օրերի ընթացքում: Եվ նրանք պահում էին ուտելիքը նրանցից, որպեսզի քաղցեին, և ջուրը, որպեսզի

ծարավեին. և նաև վերցնում էին նրանցից իրենց շորերը, որպեսզի նրանք մերկ մնային. և այսպես, նրանք կապված էին ուժեղ պարաններով ու փակված բանտում:

23 Եվ եղավ այնպես, որ նրանք այսպես շատ օրերի ընթացքում տանջվելուց հետո (և դա Նեփիի ժողովրդի վրա դատավորների կառավարման տասներորդ տարվա, տասներորդ ամսվա, տասներկուերորդ օրն էր), որ Ամոնիա երկրի գլխավոր դատավորը և նրանց ուսուցիչներից ու օրինագետներից շատերը ներս գնացին բանտ, որտեղ Ալման ու Ամոլեկը կապված էին պարաններով:

24 Եվ գլխավոր դատավորը կանգնեց նրանց առջև, և կրկին զարկեց նրանց և ասաց նրանց. Եթե դուք ունեք Աստծո գորությունը, ազատեք ինքներդ ձեզ այս կապանքներից, և այդ դեպքում մենք կհավատանք, որ Տերը կկործանի այս ժողովրդին՝ ըստ ձեր խոսքերի:

25 Եվ եղավ այնպես, որ նրանք բոլորն առաջ գնացին ու զարկեցին նրանց՝ ասելով նույն խոսքերը, նույնիսկ մինչև վերջինը. և երբ վերջինը խոսեց նրանց հետ, Աստծո «գորությունն Ալմայի ու Ամոլեկի վրա էր, և նրանք բարձրացան ու ոտքի կանգնեցին:

26 Եվ Ալման գոչեց՝ ասելով. Որքա՞ն պիտի մենք տանենք այս մեծ «չարչարանքները, ո՞վ Տեր: Ո՞վ Տեր, տուր մեզ ուժ ըստ մեր հավատքի, որը Քրիստոսում է, մինչև իսկ ի ազատում: Եվ նրանք կտրեցին պարանները, որոնցով նրանք կապված էին. և

18ա Ալմա 10.14, 11.20:
20ա Մատ. ԻԷ.39–43:

25ա Ալմա 8.31:
26ա Հակ. Ե.10–11,

Մոսիա 17.10–20,
ՎևոԻ 121.7–8:

երբ մարդիկ տեսան այս, նրանք սկսեցին փախչել, քանզի կործանման վախը եկել էր նրանց վրա:

27 Եվ եղավ այնպես, որ այնքան մեծ էր նրանց վախը, որ նրանք ընկան գետնին, և չհասան Պրանտի դրսի դռանը. և գետինը ցնցվեց ուժգին, և բանտի պատերը ճեղքվեցին երկու մասի, այնպես որ դրանք փլվեցին գետնին. և գլխավոր դատավորը, և օրինագետները, և քահանաները, և ուսուցիչները, ովքեր զարկում էին Ալմային ու Ամուղեկին, սպանվեցին դրանց փլուզումից:

28 Եվ Ալման ու Ամուղեկը բանտից դուրս եկան, և նրանք վնասված չէին. քանզի Տերը շնորհել էր նրանց զորություն, ըստ նրանց հավատքի, որը Քրիստոսում էր: Եվ նրանք անմիջապես բանտից դուրս եկան. և նրանք՝ աբճակվեցին իրենց կապանքներից. իսկ բանտը փլված էր գետնին, և ամեն ոք, դրա պատերից ներս, բացի Ալմայից ու Ամուղեկից, սպանվեցին. և նրանք անմիջապես առաջ գնացին դեպի քաղաքը:

29 Արդ, ժողովուրդը, լսելով մեծ աղմուկ, եկավ բազմություններով, վազելով միասին, իմանալու դրա պատճառը. և երբ նրանք տեսան Ալմային ու Ամուղեկին բանտից դուրս գալիս, և նրա պատերը՝ փլված գետնին, նրանք ցնցվեցին մեծ վախով, և փախան Ալմայի ու Ամուղեկի ներկայությունից, ճիշտ ինչպես այժմ է փախչում իր ձագի հետ երկու առյուծներից. և այսպես նրանք փախան Ալմայի ու Ամուղեկի ներկայությունից:

ԳԼՈՒԽ 15

Ալման ու Ամուղեկը գնում են Սիդոն և հիմնում եկեղեցի – Ալման բժշկում է Ջիզրոմին, որը միանում է եկեղեցուն – Շատերը մկրտվում են, և եկեղեցին բարգավաճում է – Ալման ու Ամուղեկը գնում են Ջարահեմլա: Մոտ 81բ. Ք.ծ.ա.:

Եւ եղավ այնպես, որ Ալման ու Ամուղեկը պատվիրվեցին հեռանալ այդ քաղաքից. և նրանք հեռացան և դուրս եկան, նույնիսկ մինչև Սիդոնի երկիրը. և ահա, այնտեղ նրանք գտան ողջ ժողովրդին, ովքեր հեռացել էին՝ Ամմոնիա երկրից, ովքեր դուրս էին՝ Գզվել ու քարկոծվել, որովհետև նրանք հավատացել էին Ալմայի խոսքերին:

2 Եվ նրանք պատմեցին նրանց այն ամենը, որ պատահել էր իրենց՝ կանանց ու երեխաների հետ, և նաև իրենց ու իրենց ազատման՝ զորության մասին:

3 Եվ Ջիզրոմը ևս պառկած էր հիվանդ՝ Սիդոնում, սաստիկ ջերմով, որն առաջացել էր նրա խիստ մտատանջություններից՝ իր՝ ամբարշտության պատճառով, քանզի նա ենթադրել էր, որ Ալման ու Ամուղեկն այլևս չկային. և նա ենթադրել էր, որ նրանք սպանվել էին իր անօրինության պատճառով: Եվ այս մեծ մեղքը և նրա բազմաթիվ ուրիշ մեղքերը տակնուվրա էին անում նրա միտքը, մինչև որ այն դարձավ չափազանց ցավազին՝ չունենալով ազատում. այդ պատճառով նա սկսեց այրվել սաստիկ ջերմությունից:

27ա Գոր. ԺՁ.26, Եբեր 12.13:
28ա Հակոբ 4.6, 3 Նեփի 28.19–22:

15 1ա Ալմա 16.2–3, 9, 11:
բ Ալմա 14.7:
2ա Ալմա 14.8–14:

բ Ալմա 14.28:
3ա Ալմա 14.6–7:

4 Արդ, երբ նա լսեց, որ Ալման ու Ամուղեկը Սիդոմի երկրում էին, նրա սիրտը սկսեց համարձակություն ցուցնել լցվել. և նա անմիջապես լուր ուղարկեց նրանց՝ ցանկանալով, որ նրանք գալին իր մոտ:

5 Եվ եղավ այնպես, որ նրանք անմիջապես գնացին՝ հնազանդվելով լուրին, որը նա ուղարկել էր նրանց. և նրանք ներս գնացին տուն՝ Ջիզրոմի մոտ. և նրանք գտան նրան իր մահճակալի վրա, հիվանդ լինելով շատ թույլ աստիկ ջերմից. և նրա միտքը նույնպես խիստ ցավատանջ էր իր անօրինությունների պատճառով. և երբ նա տեսավ նրանց, նա առաջ մեկնեց իր ձեռքը, և աղերսեց նրանց, որ նրանք բժշկեն իրեն:

6 Եվ եղավ այնպես, որ Ալման ասաց նրան՝ վերցնելով նրա ձեռքը. «Հավատո՞ւմ ես դու Քրիստոսի գործյանը՝ ի փրկություն:

7 Եվ նա պատասխանեց ու ասաց. Այո, ես հավատում եմ բոլոր խոսքերին, որ դու սովորեցրեցիր:

8 Եվ Ալման ասաց. Եթե դու հավատում ես Քրիստոսի փրկագրմանը, դու կարող ես՝ բժշկվել:

9 Եվ նա ասաց. Այո, ես հավատում եմ՝ համաձայն քո խոսքերի:

10 Եվ ապա Ալման աղաղակեց առ Տերը՝ ասելով. Ո՛վ Տեր, մեր Աստված, ողորմություն ունեցիր այս մարդու վրա, և՞ բժշկիր նրան, համաձայն իր հավատքի, որը Քրիստոսում է:

11 Եվ երբ Ալման ասաց այս խոսքերը, Ջիզրոմը՝ ցատկեց ոտքի, և սկսեց քայլել. և այս արվեց՝ ի մեծ զարմանս ողջ ժողովրդի. և

արա մասին տեղեկությունն առաջ գնաց՝ ողջ Սիդոմի երկրով մեկ:

12 Եվ Ալման մկրտեց Ջիզրոմին առ Տերը. և նա սկսեց այդ ժամանակից ի վեր քարոզել ժողովրդին:

13 Եվ Ալման եկեղեցի հիմնեց Սիդոմի երկրում, և քահանաներ ու ուսուցիչներ նվիրաբերեց այդ երկրում, որպեսզի առ Տերը մկրտեն նրանց, ովքեր փափագում էին մկրտվել:

14 Եվ եղավ այնպես, որ նրանք շատ էին. քանզի նրանք հավաքվում էին Սիդոմի շրջակա ողջ տարածքից ու մկրտվում էին:

15 Բայց ինչ վերաբերում էր ժողովրդին, որոնք Ամմոնիա երկրում էին, նրանք դեռևս մնում էին կարծրասիրտ ու խատապարանոց մի ժողովուրդ, և նրանք չապաշխարեցին իրենց մեղքերից՝ վերագրելով Ալմայի ու Ամուղեկի ողջ գործությունը դեհին. քանզի նրանք՝ Մեթրի դավանանքից էին, և չէին հավատում իրենց մեղքերից ապաշխարությանը:

16 Եվ եղավ այնպես, որ Ալման ու Ամուղեկը, Ամուղեկը՝ թողնելով բոլոր իր ոսկին, և արծաթը, և իր արժեքավոր բաները, որոնք Ամմոնիա երկրում էին, հանուն Աստծո խոսքի, նա՝ ^բմերժված լինելով նրանցից, ովքեր մի ժամանակ նրա ընկերներն էին, և նաև իր հոր ու իր ազգականների կողմից,

17 Հեռաբար, Ալման Սիդոմում եկեղեցի հիմնելուց հետո, տեսնելով մեծ՝ զսպվածություն, այո, տեսնելով, որ ժողովուրդը զսպված էր՝ ինչ վերաբերում էր իրենց սրտերի հպարտությանը, և նրանք

<p>6աՄար. Թ.23: 8ա սո՛ւ Բժշկել, Բժշկումներ: 10աՄար. Բ.1-12:</p>	<p>11ա Գոր. Գ.1-11: 15ա Ալմա 1.2-15: 16ա Ղուկ. ԺԳ.33, Ալմա 10.4:</p>	<p>բ սո՛ւ Հալածել, Հալածանք: 17ա Ալմա 16.21:</p>
---	--	--

սկսել էին իրենց Քրիստոսի հետևորդներին Աստուծոյ առաջ, և սկսել էին հավաքվել միասին իրենց սրբարաններում՝ Գերկրապագելու Աստուծոյ զոհասեղանի առաջ, Պարթուն կենալով ու անընդհատ աղոթելով, որպէսզի կարողանային ազատվել Սատանայից և մահից ու կործանումից,

18 Արդ, ինչպէս ես ասացի, Ալման, տեսնելով բոլոր այս բաները, ուստի նա վերցրեց Ամոնոնիան ու եկավ դեպի Չարահեմլայի երկիրը, և տարավ նրան իր սեփական տունը, և օժանդակեց նրան իր նեղություններում, և զորացրեց նրան Տերումը:

19 Եվ այսպէս ավարտվեց Նեփիի ժողովրդի վրա դատավորների կառավարման տասներորդ տարին:

ԳԼՈՒԽ 16

Լամանացիները կործանում են Ամմոնիայի ժողովրդին – Չորամն առաջնորդում է Նեփիացիներին հաղթանակի Լամանացիների վրա – Ալման ու Ամոնոնը և շատ ուրիշներ քարոզում են խոսքը – Նրանք սովորեցնում են, որ իր հարությունից հետո Քրիստոսը կհայտնվի Նեփիացիներին: Մոտ 81–77թթ. Ք.ծ.ա.:

Եվ եղավ այնպէս, Նեփիի ժողովրդի վրա դատավորների կառավարման տասնմեկերորդ տարում, երկրորդ ամսվա հինգերորդ օրը, Չարահեմլայի երկրում լինելով մեծ խաղաղություն, չլինելով ոչ պատերազմներ, ոչ հակառա-

կություններ մի որոշակի թվով տարիների ընթացքում, մինչև որ տասնմեկերորդ տարվա երկրորդ ամսվա հինգերորդ օրը մի պատերազմի կոչ լավեց ամբողջ երկրում:

2 Քանզի ահա, Լամանացիների զորքերը ներս էին եկել անապատի կողմից, երկրի սահմաններից ներս, մինչև իսկ Ամմոնիա քաղաքը, և սկսել սպանել ժողովրդին ու ավերել քաղաքը:

3 Եվ արդ, եղավ այնպէս, նախքան Նեփիացիները կկարողանային մի բավականաչափ զորք համել՝ բշտելու նրանց երկրից դուրս, նրանք Մկոտորեցին ժողովրդին, ովքեր Ամմոնիա քաղաքում էին, և նաև ոմանց Նոյի սահմանների շրջակայքում և մյուսներին գերի տարան անապատ:

4 Արդ, եղավ այնպէս, որ Նեփիացիները փափագում էին հասնել նրանց, ովքեր հեռու էին տարվել գերության՝ դեպի անապատ:

5 Հետևաբար, նա, ով նշանակված էր գլխավոր զորապետ Նեփիացիների զորքերի վրա (և նրա անունն էր Չորամ, և նա ուներ երկու որդի՝ Լեքի և Աքա), արդ, Չորամն ու նրա երկու որդիները, իմանալով, որ Ալման քահանայապետն էր եկեղեցու վրա, և լսած լինելով, որ նա ուներ մարգարեության ոգին, հետևաբար նրանք գնացին նրա մոտ և ուզեցին նրանից իմանալ, թե արդյոք Տերը կամենո՞ւմ էր, որ նրանք գնային անապատ՝ փնտրելու իրենց եղբայրներին, որոնք գերի էին վերցվել Լամանացիների կողմից:

6 Եվ եղավ այնպէս, որ Ալման Ստեղծակցավ Տիրոջից այդ հարցի

17բ ստե Խոնարի, Խոնարիություն: գ ստե Երկրպագել:

դ ստե Աղոթք, Արթուն լինել: է ստե Մահ հոգևոր:

16 2ա Ալմա 15.1, 15–16: 3ա Ալմա 9.18: 6ա Ալմա 43.23–24:

վերաբերյալ: Եվ Ալման վերադարձավ ու ասաց նրանց. Ահա, Լամանացիները կանցնեն Սիդոն գետն անապատի հարավում՝ հեռու, դեպի վեր, Մանթիի երկրի սահմաններից այն կողմ: Եվ ահա, այնտեղ պիտի դուք հանդիպեք նրանց, Սիդոն գետի արևելյան կողմում, և այնտեղ Տերը ձեզ կհանձնի ձեր եղբայրներին, որոնք գերի են վերցվել Լամանացիների կողմից:

7 Եվ եղավ այնպես, որ Ջորամն ու նրա որդիներն անցան Սիդոն գետի վրայով, իրենց գորքերով, և շարժվեցին հեռու՝ Մանթիի սահմաններից այն կողմ, դեպի անապատի հարավը, որը Սիդոն գետի արևելյան ափին էր:

8 Եվ նրանք վրա հասան Լամանացիների գորքերին, և Լամանացիները ցրվեցին ու քշվեցին դեպի անապատի խորքը. և նրանք վերցրեցին իրենց եղբայրներին, որոնք գերի էին վերցվել Լամանացիների կողմից, և նրանցից ոչ մի հոգի չէր կորել, որ գերի էին վերցվել: Եվ նրանք բերվեցին իրենց եղբայրների կողմից՝ տիրություն անելու իրենց սեփական հողերին:

9 Եվ այսպես, վերջացավ դատավորների տասնմեկերորդ տարին, Լամանացիները դուրս քշված լինելով երկրից, և Ամմոնիայի ժողովուրդը՝ կործանված էր. այո, Ամմոնիացիների յուրաքանչյուր ապրող հոգի՝ կործանվեց. և նաև նրանց մեծ քաղաքը, որը նրանք ասում էին, թե Աստված չէր կարող կործանել դրա մեծության պատճառով:

10 Բայց ահա, Մնեկ օրում այն թողվեց ամայի. և դիակները հոշոտվեցին շների ու անապատի վայրի զազանների կողմից:

11 Այնուամենայնիվ, շատ օրեր անց նրանց մեռած մարմինները դիզվեցին երկրի երեսի վրա, և դրանք ծածկվեցին բարակ ծածկույթով: Եվ արդ, այնքան ուժեղ էր դրանց հոտը, որ շատ տարիների ընթացքում ժողովուրդը չգնաց՝ տիրելու Ամմոնիա երկրին: Եվ այն կոչվեց Նեորականների Ավերակներ, քանզի նրանք՝ Նեորի դավանանքից էին, ովքեր սպանվեցին. և նրանց հողերը մնացին ամայի:

12 Եվ Լամանացիները չեկան՝ նորից պատերազմելու Նեփիացիների դեմ մինչև Նեփիի ժողովրդի վրա դատավորների կառավարման տասնչորսերորդ տարին: Եվ այսպես երեք տարվա ընթացքում Նեփիի ժողովուրդն ունեցավ անընդհատ խաղաղություն ողջ երկրում:

13 Եվ Ալման ու Ամուդեկն առաջ գնացին՝ քարոզելով ժողովրդին ապաշխարություն իրենց՝ տաճարներում, և իրենց սրբարաններում, և նաև ժողովարաններում, որոնք կառուցված էին ըստ հրեաների ձևի:

14 Եվ բոլոր նրանց, ովքեր կամենում էին լսել իրենց խոսքերը, նրանք անընդհատ հաղորդում էին Աստծո խոսքը, մարդկանց հանդեպ առանց որևէ Մաշառության:

15 Եվ այսպես, Ալման ու Ամուդեկը գնացին առաջ, և նաև շատ շատերը, ովքեր ընտրված էին աշխատանքի համար, քարոզելու խոսքը ողջ երկրով մեկ: Եվ

9ա Ալման 8.16, 9.18–24, Մորմ. 6.15–22: Բ Ալման 25.1–2:

10ա Ալման 9.4: 11ա Ալման 1.15, 24.28–30: 13ա2 Նեփի 5.16:

Բ Ալման 21.4–6, 20: 14ա Ալման 1.30:

եկեղեցու հաստատումը դարձավ համընդհանուր երկրով մեկ, շրջակա ողջ տարածքում, Նեփիացիների ողջ ժողովրդի մեջ:

16 Եվ ^աչկար անհավասարություն նրանց մեջ. Տերը դուրս թափեց իր Հոգին ողջ երկրի երեսին՝ պատրաստելու մարդկանց գավակների միտքը, կամ պատրաստելու նրանց ^բսրտերն ընդունելու խոսքը, որը պետք է սովորեցվեր նրանց մեջ, նրա գալու ժամանակ,

17 Որպեսզի նրանք չկարծրանային խոսքի դեմ, որպեսզի նրանք չլինեին անհավատ, և չգնային շարունակ դեպի կործանում, այլ որպեսզի ընդունեին խոսքն ուրախությամբ, և որպես մի ^աճյուղ պատվաստվեին ճմարիտ ^բորթին, որպեսզի նրանք մտնեին Տիրոջ՝ իրենց Աստծո ^գհանգիստը:

18 Արդ, այն ^աքահանաները, ովքեր առաջ էին գնացել ժողովրդի մեջ, քարոզում էին ամեն ստախտությունների և ^բխաբեությունների, ^գանախանձությունների և կռիվների, ռիսերի և կայիոյանքների, գողությունների, կողոպուտի, թալանի, սպանության, շնություն անելու և ամեն ձևի հեշտասիրության դեմ, հայտարարելով, որ այս բաները չպետք է այդպես լինեն, –

19 Հրապարակելով բաները, որոնք պետք է շուտով գային, այո, հրապարակելով Աստծո Որդու ^ագալուստը, նրա տառապանքները և մահը, և նաև մեռելներից հարությունը:

20 Եվ ժողովրդից շատերը հարցնում էին տեղի վերաբերյալ, թե որտեղ էր գալու Աստծո Որդին, և նրանց սովորեցնում էին, որ նա ^ահայտնվելու էր նրանց իր հարությունից ^բհետո. և ժողովուրդը մեծ ցնծությամբ ու բերկրանքով լսեց այս:

21 Եվ արդ, եկեղեցին հաստատված լինելով ողջ երկրով մեկ՝ ^ահաղթանակ տանելով դևի վրա, և Աստծո խոսքը քարոզվելով իր անադարտությամբ ամբողջ երկրում, և Տերը, դուրս թափելով իր օրհնությունները ժողովրդի վրա, – այսպես վերջացավ Նեփիի ժողովրդի վրա դատավորների կառավարման տասնչորսերորդ տարին:

Պատմություն Մոսիայի որդիների մասին, ովքեր հրաժարվեցին թագավորության իրենց իրավունքներից՝ Աստծո խոսքի համար, և գնացին Նեփիի երկիրը՝ քարոզելու Լամանացիներին. նրանց տառապանքներն ու ազատվելը, – ըստ Ալմայի հիշատակարանի:

*Ընդգրկելով 17–27 գլուխները
ներառյալ:*

ԳԼՈՒԽ 17

Մոսիայի որդիներն ունեն մարգարեության ու հայտնության ոգին – Նրանք գնում են իրենց առանձին ճանապարհներով հայտարարելու

16ա Մոսիա 18.19–29,
4 Նեփի 1.3:
բ սուր Կոտրված սիրտ:
17ա Հակոբ 5.24:
բ սուր Տիրոջ այգին:
գ Ալմա 12.37,
13.10–13:

18ա Ալմա 15.13:
բ սուր Խաբկանք,
Խաբել, Խաբեություն:
գ սուր Նախանձել:
19ա սուր Հիսուս Քրիստոս –
Մարգարեություններ
Հիսուս Քրիստոսի

ճննդի և մահվան
մասին:
20ա 2 Նեփի 26.9,
3 Նեփի 11.7–14:
բ 1 Նեփի 12.4–6:
21ա Ալմա 15.17:

խոսքը Լամանացիներին – Ամնոնը զնում է Իսմայելի երկիրը և դառնում թագավոր Լամոնիի ծառան – Ամնոնը վրկում է թագավորի հոտերն ու սպանում նրա թշնամիներին Սեբուսի ջրերի մոտ: Հատվածներ 1-3՝ մոտ 77թ. Ք.ծ.ա., հատված 4՝ մոտ 91-77թթ. Ք.ծ.ա., հատվածներ 5-39՝ մոտ 91թ. Ք.ծ.ա.:

Եւ եղավ այնպես, որ երբ Ալման ճամփորդում էր Գեդեոնի երկրից հարավ, հեռու՝ դեպի Մանթիի երկիրը, ահա, ի զարմանս իրեն, նա՝ «հանդիպեց Մոսիայի Քորդիներին՝ դեպի Չարահեմլայի երկիրը ճամփորդելիս:

2 Արդ, Մոսիայի այս որդիները, Ալմայի հետ էին այն ժամանակ, երբ հրեշտակն «առաջին անգամ հայտնվեց նրան. հետևաբար, Ալման չափազանց ուրախացավ՝ տեսնելով իր եղբայրներին. և ինչը նրա ուրախությունն էլ ավելի ավելացրեց՝ նրանք դեռ իր եղբայրներն էին Տերում. այո, և նրանք դարձել էին ուժեղ ճշմարտության իմացության մեջ. քանզի նրանք առողջ դատողությամբ մարդիկ էին, և նրանք ջանասիրաբար թքնել էին սուրբ գրքերը, որ կարողանային իմանալ Աստծո խոսքը:

3 Բայց դա բոլորը չէ. նրանք նվիրվել էին շատ աղոթքի ու «ծոմի. այդ պատճառով նրանք ունեին մարգարեության ոգին ու հայտնության ոգին, և երբ նրանք Քուսուցանում էին, նրանք ուսուցանում էին Աստծո զորությամբ ու իշխանությամբ:

4 Եվ նրանք սովորեցրել էին Աստծո խոսքը Լամանացիների մեջ տանկնչորս տարիների ընթացքում, ունենալով մեծ «հաջողություն, Քերելով շատերին ճշմարտության իմացությանը. այո, նրանց խոսքերի զորությամբ շատերը բերվեցին Աստծո գոհասեղանի առջև, կանչելու նրա անունը. և Պոստովանելու իրենց մեղքերը նրա առջև:

5 Արդ, սրանք էին հանգամանքները, որոնք ուղեկցում էին նրանց իրենց ճամփորդություններում, քանզի նրանք շատ չարչարանքներ էին ունեցել. նրանք շատ էին տառապել և՛ մարմնով, և՛ մտքով, ինչպես օրինակ՝ քաղց, ծարավ և հոգնածություն, և նաև շատ հոգեկան «սպրումներ:

6 Այսպիսով, սրանք էին նրանց ճամփորդությունները. «չբաժեշտ տալով իրենց հայր Մոսիային, դատավորների առաջին տարում. Քիրաժարվելով թագավորությունից, որը նրանց հայրը փափագում էր շնորհել նրանց, և այս նաև ժողովրդի մտադրությունն էր.

7 Այնուամենայնիվ, նրանք հեռացան Չարահեմլայի երկրից, և վերցրեցին իրենց սրերը և իրենց նիզակները, իրենց աղեղները և իրենց նետերը և իրենց պարաստիկները. և դա նրանք արեցին, որպեսզի իրենց համար ուտելիք սպահովելին մինչ անապատում էին:

8 Եվ այսպես, նրանք հեռացան անապատի խորքն իրենց խմբի հետ, որոնց իրենք էին ընտրել,

17 1ա Ալմա 27.16:
բ Մոսիա 27.34:
2ա Մոսիա 27.11-17:
բ սո՛ւ Սուրբ գրքեր:
3ա սո՛ւ Ծոմ,
Ծոմապահություն.

Աղոթք:
բ սո՛ւ Ուսուցանել,
Ուսուցիչ – Հոգով
ուսուցանելը:
4ա Ալմա 29.14:
բ սո՛ւ Միսիոներական

աշխատանք:
գ սո՛ւ Խոստովանել,
Խոստովանություն:
5ա Ալմա 8.10:
6ա Մոսիա 28.1, 5-9:
բ Մոսիա 29.3:

զնալու վեր՝ դեպի Նեփիի երկիրը, Լամանացիներին քարոզելու Աստծո խոսքը:

9 Եվ եղավ այնպես, որ նրանք ճամփորդեցին շատ օրեր անապատում, և նրանք շատ ^աաղոթեցին, և շատ ծոռ պահեցին, որպեսզի Տերը շնորհեր նրանց իր Հոգուց մի մաս՝ զնալու իրենց հետ ու մնալու իրենց հետ, որպեսզի նրանք կարողանային լինել մի ^բգործիք Աստծո ձեռքում՝ բերելու, եթե դա հնարավոր էր, իրենց եղբայրներին՝ Լամանացիներին, ճշմարտության իմացությանը, իրենց հայրերի ^գավանդությունների բարոյագրկության իմացությանը, որոնք ճիշտ չէին:

10 Եվ եղավ այնպես, որ Տերն ^աայցելեց նրանց իր ^բՀոգով և ասաց նրանց. ^գՀանգի՛ստ եղեք: Եվ նրանք հանգստացան:

11 Եվ նաև Տերն ասաց նրանց. Առաջ զնացեք Լամանացիների՝ ձեր եղբայրների մեջ, և հաստատեք իմ խոսքը. սակայն դուք պիտի լինեք ^ահամբերատար երկայնամտության ու չարչարանքների մեջ, որպեսզի նրանց համար դուք կարողանաք ցույց տալ լավ օրինակ ինձանում, և ես կդարձնեմ ձեզ մի գործիք իմ ձեռքում՝ ի փրկություն շատ հոգիների:

12 Եվ եղավ այնպես, որ Մոսիայի որդիների սրտերը, և նաև նրանց, ովքեր նրանց հետ էին, քաջությամբ լցվեցին՝ զնալու առաջ Լամանացիների մոտ, հայտարարելու նրանց Աստծո խոսքը:

13 Եվ եղավ այնպես, երբ նրանք հասան Լամանացիների երկրի սահմաններին, նրանք ^աառանձնացան իրարից ու հեռացան մեկը մյուսից՝ վստահելով Տիրոջը, որ նրանք կրկին պիտի հանդիպեին իրենց ^բհունձքի վերջում. քանզի նրանք ենթադրում էին, որ հսկայական էր գործը, որը նրանք հանձն էին առել:

14 Եվ անշուշտ այն հսկայական էր, քանզի նրանք հանձն էին առել Աստծո խոսքը քարոզել ^ավայրի և կարծրացած ու կատաղի մի ժողովրդի. ժողովուրդ, որը հրճվում էր Նեփիացիներին սպանելով, և նրանց կողոպտելով ու թալանելով. և նրանց սրտերը դրված էին հարստությունների վրա, կամ ոսկու ու արծաթի վրա, և թանկարժեք քարերի. սակայն նրանք ջանում էին ձեռք բերել այս բաները՝ սպանելով ու թալանելով, որպեսզի նրանք չտքնեին դրանց համար իրենց սեփական ձեռքերով:

15 Այսպիսով, նրանք շատ ծույլ ժողովուրդ էին, որոնցից շատերը երկրպագում էին կուռքերի, և Աստծո ^աանեծքն ընկել էր նրանց վրա իրենց հայրերի ^բավանդությունների պատճառով. բայց և այնպես Տիրոջ խոստումները տարածվում էին նրանց վրա ապաշխարության պայմանով:

16 Հետևաբար, այս էր ^ապատճառը, որի համար Մոսիայի որդիները հանձն էին առել այդ աշխատանքը, որ գուցե նրանք կարողանային բերել նրանց ապաշխարության. որ, գուցե նրանք կարողանային

9ա Ալմա 25.17:
սուր Ադոք:
բ Մոսիա 23.10,
Ալմա 26.3:
գ Ալմա 3.10-12:
10ա Վևո 5.16:

բ սուր Մուրբ Հոգի:
գ Ալմա 26.27:
11ա Ալմա 20.29:
սուր Համբերություն:
13ա Ալմա 21.1:
բ Մատ. Թ.37:

14ա Մոսիա 10.12:
15ա Ալմա 3.6-19,
3 Նեփի 2.15-16:
բ Ալմա 9.16-24, 18.5:
16ա Մոսիա 28.1-3:

բերել նրանց՝ իմանալու փրկագրման ծրագրի մասին:

17 Այդ պատճառով նրանք առանձնացան մեկը մյուսից, և առաջ գնացին նրանց մեջ, յուրաքանչյուր մարդ մեմակ, համաձայն Աստծո խոսքի ու զորության, որը տրված էր նրան:

18 Արդ, Ամնոնը, լինելով նրանց մեջ դեկավարը, կամ, ավելի շուտ, նա ծառայում էր նրանց, և նա հեռացավ նրանցից՝ համաձայն իրենց տարբեր կոչումների նրանց՝ «օրհնելուց հետո, նրանց հաղորդած լինելով Աստծո խոսքը, կամ ծառայած լինելով նրանց իր մեկնումից առաջ. և այսպես, նրանք բռնեցին իրենց տարբեր ճանապարհները ողջ երկրով:

19 Եվ Ամնոնը գնաց դեպի Իսմայելի երկիրը, երկիրը կոչված լինելով «Իսմայելի որդիների անունով, ովքեր նույնպես դարձել էին Լամանացիներ:

20 Եվ երբ Ամնոնը մտավ Իսմայելի երկիրը, Լամանացիները բռնեցին ու կապկպեցին նրան, ինչպես նրանց սովորույթն էր՝ կապել բոլոր Նեփիացիներին, ովքեր ընկնում էին իրենց ձեռքը, և տանել նրանց թագավորի առաջ. և այսպես, թողնվում էր թագավորի քմահաճույքին սպանել նրանց, կամ պահել գերության մեջ, կամ զցել նրանց բանտ, կամ դուրս զցել իր երկրից՝ ըստ իր կամքի ու քմահաճույքի:

21 Եվ այսպես, Ամնոնը տարվեց թագավորի առջև, որը Իսմայելի երկրի վրա էր. և նրա անունը Լամոնի էր. և նա Իսմայելի մի հետնորդ էր:

22 Եվ թագավորը տեղեկացավ

Ամնոնից, թե արդյոք նա ցանկանում էր բնակվել երկրում՝ Լամանացիների մեջ, թե՛ իր ժողովրդի մեջ:

23 Եվ Ամնոնն ասաց նրան. Այո, ես ցանկանում եմ բնակվել այս ժողովրդի մեջ մի որոշ ժամանակ. այո, և գուցե մինչև մեռնելու օրը:

24 Եվ եղավ այնպես, որ թագավոր Լամոնին շատ գոհ մնաց Ամնոնից, և կարգադրեց, որ նրա կապանքներն արձակվեին. և նա կամեցավ, որ Ամնոնն իր դուստրերից մեկին վերցնեք կնության:

25 Բայց Ամնոնն ասաց նրան. Ո՛չ, բայց ես կլինեմ քո ծառան: Հետևաբար, Ամնոնը դարձավ թագավոր Լամոնիի ծառան: Եվ եղավ այնպես, որ նա դրվեց մյուս ծառաների հետ, հսկելու Լամոնիի հոտերը, ըստ Լամանացիների սովորույթի:

26 Եվ նա երեք օր թագավորի ծառայության մեջ լինելուց հետո, երբ նա Լամանացի ծառաների հետ առաջ էր գնում իրենց հոտերով՝ դեպի ջրի տեղը, որը կոչվում էր Սեբուսի ջուր, և բոլոր Լամանացիները քշում էին իրենց հոտերն այստեղ, որպեսզի կարողանային ջուր ունենալ,

27 Հետևաբար, երբ Ամնոնը և թագավորի ծառաները քշում էին իրենց հոտերն այս ջրի վայրը, ահա, որոշ թվով Լամանացիներ, ովքեր իրենց հոտերի հետ էին ջրի մոտ, կանգնեցին ու ցրեցին Ամնոնի և թագավորի ծառաների հոտերը, և նրանք ցրեցին դրանց այնպես, որ նրանք փախան զանազան ուղղություներով:

28 Արդ, թագավորի ծառաները սկսեցին տրտնջալ՝ ասելով. Հիմա

թագավորը կապանի մեզ, ինչպես նա արեց մեր եղբայրներին, որով հետև նրանց հոտերը ցրիվ էին եկել այս մարդկանց ամբարշտության պատճառով: Եվ նրանք սկսեցին աղեկաուր լաց լինել՝ ասելով. Ահա, մեր հոտերն արդեն ցրված են:

29 Արդ, նրանք լալիս էին սպանվելու վախի պատճառով: Արդ, երբ Ամնոնը տեսավ այս, նրա սիրտն ուրախությունից ուռչեց իր ներսում. քանզի ասաց նա. Ես ի ցույց կդնեմ իմ գորությունն այս իմ ընկեր ծառաներին, կամ գորությունը, որն իմ մեջ է վերադարձնելով այս հոտերը թագավորին, որպեսզի ես կարողանամ նվաճել իմ այս ընկեր ծառաների սրտերը, որպեսզի ես կարողանամ առաջնորդել նրանց՝ հավատալու իմ խոսքերին:

30 Եվ արդ, սրանք էին Ամնոնի մտքերը, երբ նա տեսավ չարչարանքները նրանց, ում իր եղբայրներն էր անվանում:

31 Եվ եղավ այնպես, որ նա քաջալերեց նրանց իր խոսքերով՝ ասելով. Իմ եղբայրներ, քաջ եղեք, և եկեք գնանք փնտրելու հոտերը, և մենք կհավաքենք դրանց և ետ կբերենք ջրի վայրը. և այսպես մենք կպահպանենք հոտերը թագավորի համար, և նա չի սպանի մեզ:

32 Եվ եղավ այնպես, որ նրանք գնացին՝ փնտրելու հոտերը, և նրանք հետևեցին Ամնոնին, և նրանք առաջ մետվեցին մեծ արագությամբ, և թագավորի հոտերի գլուխն անցան, և կրկին ի մի հավաքեցին դրանց դեպի ջրի տեղը:

33 Եվ այն մարդիկ նորից

կանգնեցին՝ ցրելու նրանց հոտերը, բայց Ամնոնն ասաց իր եղբայրներին. Օղակե՛ք հոտերի շուրջ բոլորը, որ դրանք չփախչեն. և ես գնում եմ ու կովեմ այդ մարդկանց հետ, ովքեր ցրում են մեր հոտերը:

34 Հետևաբար, նրանք արեցին, ինչպես Ամնոնը հրամայեց նրանց, և նա առաջ գնաց և կանգնեց կովելու նրանց հետ, ովքեր կանգնած էին Սեբուսի ջրերի մոտ. և նրանք թվով քիչ չէին:

35 Հետևաբար, նրանք չվախեցան Ամնոնից, քանզի նրանք ենթադրեցին, որ իրենց մարդկանցից մեկը կարող էր սպանել նրան, ըստ իրենց քմահաճույքի, քանզի նրանք չգիտեին, որ Տերը խոստացել էր Մոսիային, որ նա՝ ^ակազատեր իր որդիներին նրանց ձեռքից. ոչ էլ նրանք որևէ բան գիտեին Տիրոջ մասին. հետևաբար, նրանք հրճվում էին իրենց եղբայրների կործանմամբ. և այդ պատճառով նրանք կանգնեցին՝ ցրելու թագավորի հոտերը:

36 Բայց ^աԱմնոնն առաջ կանգնեց ու սկսեց քարեր նետել նրանց վրա իր պարսատիկով. այո, գորեղ ուժով էր նա քարեր նետում նրանց մեջ. և այսպես նա սպանեց նրանցից մի ^բքանիսին, այնպես, որ նրանք սկսեցին ապշած մնալ նրա ուժի վրա. սակայն նրանք բարկացած էին իրենց եղբայրների սպանության պատճառով, և նրանք վճռել էին, որ նա պետք է ընկներ. հետևաբար, տեսնելով, որ նրանք չէին ^գկարողանում խփել նրան իրենց քարերով, նրանք առաջ եկան՝ մահակներով սպանելու նրան:

37 Բայց, ահա ամեն մարդուն,

35ա Մոսիա 28.7,
Ալմա 19.22–23:

36ա Եթեր 12.15:
բ Ալմա 18.16:

գ Ալմա 18.3:

որ բարձրացնում էր իր մահակը զարկելու Ամմոնին, նա հատում էր նրանց բազուկներն իր սրով, քանզի նա ետ էր մղում նրանց հարվածները՝ զարկելով նրանց բազուկներին իր սրի սայրով, այնպես որ նրանք սկսեցին ապշած մնալ, և սկսեցին փախչել նրա առաջից. այո, և նրանք թվով քիչ չէին. և նա ստիպեց նրանց փախչել իր բազկի ուժով:

38 Արդ, նրանցից վեցն ընկել էին պարսատիկից, բայց իր սրով նա ոչ մեկին չէր սպանել, բացի նրանց ղեկավարից. և նա հատել էր այնքան նրանց բազուկներից, որքան բարձրացվել էին նրա դեմ, և դրանք քիչ չէին:

39 Եվ երբ նա քչեց նրանց հեռու, նա վերադարձավ, և նրանք ջուր տվեցին իրենց հոտերին ու վերադարձրին նրանց դեպի թագավորի արոտավայրը, և ապա գնացին ներս թագավորի մոտ՝ տանելով բազուկները, որոնք հատվել էին Ամմոնի սրով նրանցից, ովքեր ջանում էին սպանել նրան. և դրանք տարան ներս՝ թագավորի մոտ, որպես մի վկայություն այն բաների, որ նրանք արել էին:

ԳԼՈՒԽ 18

Թագավոր Լամոնին ենթադրում է, որ Ամմոնը Մեծ Հոգին է – Ամմոնը սովորեցնում է թագավորին Ստեղծման մասին, մարդկանց հետ Աստծո գործերի մասին, և փրկագնման մասին, որ գալիս է Քրիստոսի միջոցով – Լամոնին հավատում է և ընկնում գետնին, կարծես թե մեռած: Մոտ 90թ. Ք.ծ.ա.:

Եւ եղավ այնպես, որ թագավոր Լամոնին կարգադրեց, որ իր ծառաներն առաջանան ու վկայեն այն բոլոր բաների մասին, որոնք նրանք տեսել էին այդ դեպքի առնչությամբ:

2 Եվ երբ բոլորը վկայեցին այն բաների մասին, որոնք իրենք տեսել էին, և նա իմացավ իր հոտերը պահպանելիս Ամմոնի հավատարմության մասին, և նաև կովելիս նրա մեծ գործության մասին նրանց դեմ, ովքեր ջանում էին սպանել նրան, նա անչափ զարմացավ ու ասաց. Անշուշտ, սա ավելին է, քան մի մարդ: Ահա, արդյոք նա այն Մեծ Հոգի՞ն չէ, որն այսպիսի մեծ պատիժներ է ուղարկում այս ժողովրդի վրա, իրենց սպանությունների պատճառով:

3 Եվ նրանք պատասխանեցին թագավորին ու ասացին. Արդյոք նա Մեծ Հոգին է, թե մարդ է, մենք չգիտենք. բայց այսքանը մենք գիտենք, որ թագավորի թշնամիներն ի գորու “չեն սպանելու նրան. ոչ էլ նրանք ի գորու են ցրել թագավորի հոտերը, երբ նա մեզ հետ է՝ նրա վարպետության և մեծ ուժի պատճառով. հետևաբար, մենք գիտենք, որ նա բարեկամ է թագավորին: Եվ, այժմ, ո՛վ թագավոր, մենք չենք հավատում, որ մարդ ունենա այսպիսի մեծ գործություն, քանզի մենք գիտենք, որ նրան հնարավոր չէ սպանել:

4 Եվ այժմ, երբ թագավորը լսեց այս խոսքերը, նա ասաց նրանց. Հիմա ես գիտեմ, որ դա Մեծ Հոգին է. և նա այս անգամ իջել է ներքև՝ պահպանելու ձեր կյանքը, որպեսզի ես “չսպանեի ձեզ, ինչպես ես արեցի ձեր եղբայրներին: Եվ սա

Մեծ Հոգին է, որի մասին խոսել են մեր հայրերը:

5 Արդ, սա Լամոնիի ավանդուքունն էր, որը նա ստացել էր իր հորից, որ կա մի Մեծ Հոգի: Չնայած նրանք հավատում էին Մեծ Հոգուն, նրանք կարծում էին, որ ինչ որ իրենք անում են, ճիշտ է. սակայն Լամոնին սկսեց անչափ վախենալ մի վախով, որ չլինի թե սխալ էր արել՝ սպանելով իր ծառաներին.

6 Քանզի նա սպանել էր նրանցից շատերին, որովհետև նրանց եղբայրները ցրել էին հոտերը ջրի վայրում. և այսպես, որովհետև նրանք թույլ էին տվել իրենց հոտերին ցրվել, նրանք սպանվել էին:

7 Արդ, այս Լամանացիների գործելակերպն էր, կանգնել Սեբուսի ջրերի մոտ՝ ցրելու ժողովրդի հոտերը, որպեսզի դրա միջոցով նրանք կարողանային հեռու քշել շատերին, որոնք ցրվում էին, դեպի իրենց սեփական երկիրը, դա լինելով նրանց մեջ թալանելու մի գործելակերպ:

8 Եվ եղավ այնպես, որ թագավոր Լամոնին տեղեկացավ իր ծառաներից՝ ասելով. Ո՞ր է այդ մարդը, որն ունի այսպիսի մեծ գորություն:

9 Եվ նրանք ասացին նրան. Ահա, նա կերակրում է քո ձիերին: Արդ թագավորը հրամայել էր իր ծառաներին իրենց հոտերը ջրելուց առաջ, որ նրանք պատրաստեն իր ձիերն ու կառքերը, և տանեն նրան հեռու՝ դեպի Նեփիի երկիրը. քանզի կար մի մեծ խնջույք նշանակված Նեփիի երկրում, Լամոնիի հոր կողմից, որը թագավոր էր ողջ երկրի վրա:

10 Արդ, երբ թագավոր Լամոնին

լսեց, որ Ամոնը պատրաստում էր իր ձիերն ու իր կառքերը, Ամոնի հավատարմության պատճառով նա ավելի ապշեց՝ ասելով. Անկասկած, իմ բոլոր ծառաների միջից չի եղել որևէ ծառա, որ լիներ այսքան հավատարիմ, ինչպես այս մարդը. քանզի մինչև անգամ նա հիշում է բոլոր իմ հրամանները՝ կատարելու դրանք:

11 Հիմա ես անկասկած գիտեմ, որ սա Մեծ Հոգին է, և ես կցանկանայի, որ նա ներս գա՝ ինձ մոտ, քայց չեմ համարձակվում:

12 Եվ եղավ այնպես, որ երբ Ամոնը պատրաստել էր ձիերն ու կառքերը թագավորի ու նրա ծառաների համար, նա ներս գնաց թագավորի մոտ, և նա տեսավ, որ թագավորի դեմքը փոխված էր. հետևաբար, նա փչ էր մնում հետ գնար՝ նրա ներկայությունից դուրս:

13 Եվ թագավորի ծառաներից մեկն ասաց նրան՝ Ռաբբա՛նա, որը թարգմանվում է հզոր կամ մեծ թագավոր՝ համարելով իրենց թագավորներին հզոր. և այսպիսով, նա ասաց նրան. Ռաբբա՛նա, թագավորը ցանկանում է, որ դու մնաս:

14 Հետևաբար, Ամոնը շրջվեց դեպի թագավորն ու ասաց նրան. Ի՞նչ կկամենաս, որ ես անեմ քեզ համար, ո՛վ թագավոր: Եվ թագավորը չպատասխանեց նրան մեկ ժամվա ընթացքում, ըստ իրենց ժամանակի, քանզի նա չգիտեր, թե ինչ պետք է ասեր նրան:

15 Եվ եղավ այնպես, որ Ամոնն ասաց նրան կրկին. Ի՞նչ ես փափագում դու ինձանից: Բայց թագավորը չպատասխանեց:

16 Եվ եղավ այնպես, որ Ամոն-

նը, լինելով լցված Աստծո չոզով, հետևաբար նա կռահեց թագավորի «մտքերը: Եվ նա ասաց նրան. Մի՞թե դա այն պատճառով է, որ դու լսել ես, որ ես պաշտպանեցի քո ծառաներին ու քո հոտերը, և սպանեցի նրանց եղբայրներից յոթին, պարսատիկով ու սրով, և հատեցի մյուսների բազուկները, որպեսզի պաշտպանեի քո հոտերն ու ծառաներին. ահա, ա՛յս է, որ առաջացնում է քո զարմանքը:

17 Ես ասում եմ քեզ, ի՞նչ է դա, որ քո զարմանքն այդքան մեծ է: Ահա, ես մարդ եմ, և քո ծառան եմ. հետևաբար, ինչ որ դու ցանկանաս, որը ճիշտ է, այն ես կանեն:

18 Արդ, երբ թագավորը լսեց այս խոսքերը, նա կրկին զարմացավ, քանզի նա տեսավ, որ Ամնոնը կարողացավ «կռահել իր մտքերը. բայց չնայած սրան, թագավոր Լամոնիին բացեց իր բերանը, և ասաց նրան. Ո՞վ ես դու: Դու այն Մեծ Հոգի՞ն ես, որը ՚՞գիտի բոլոր բաները:

19 Ամնոնը պատասխանեց և ասաց նրան՝ Ե՛ս չեմ:

20 Եվ թագավորն ասաց. Ի՞նչպես դու իմացար իմ սրտի մտքերը: Դու կարող ես խոսել համարձակորեն, և պատմել ինձ այս բաների վերաբերյալ, և պատմիր ինձ նաև ի՞նչ գործյամբ դու սպանեցիր ու հատեցիր իմ եղբայրների բազուկները, որոնք ցրեցին իմ հոտերը,

21 Եվ այժմ, եթե դու պատմես ինձ այս բաների վերաբերյալ, ինչ որ դու ցանկանաս ես կտամ քեզ. և եթե կարիք լինի, ես կպաշտպանեմ քեզ իմ զորքերով. բայց ես գիտեմ, որ դու ավելի հզոր ես, քան նրանք բոլորը. այնուամենայնիվ, ինչ որ

դու ցանկանաս ինձանից, ես դա կշնորհեմ քեզ:

22 Արդ, Ամնոնը՝ լինելով իմաստուն, սակայն անվնաս, նա ասաց Լամոնիին. Ականջ կդնե՞ս իմ խոսքերին, եթե ես ասեմ քեզ՝ ինչ գործյամբ եմ ես անում այս բաները: Եվ սա է այն բանը, որ ես փափագում եմ քեզանից:

23 Եվ թագավորը պատասխանեց նրան և ասաց. Այո՛, ես կհավատամ բոլոր քո խոսքերին: Եվ այսպես նա բռնվեց վարպետությամբ:

24 Եվ Ամնոնը սկսեց խոսել նրա հետ «համարձակությամբ ու ասաց նրան. Հավատո՞ւմ ես դու, որ կա Աստված:

25 Եվ նա պատասխանեց ու ասաց նրան. Ես չգիտեմ ինչ է դա նշանակում:

26 Եվ այդ ժամանակ Ամնոնն ասաց. Հավատո՞ւմ ես դու, որ կա Մեծ Հոգի:

27 Եվ նա ասաց՝ Այո՛:

28 Եվ Ամնոնն ասաց. Դա՛ է Աստվածը: Եվ Ամնոնն ասաց նրան կրկին. Հավատո՞ւմ ես դու, որ այս Մեծ Հոգին, որը Աստված է, ստեղծել է բոլոր բաները, որոնք երկնքում են և երկրում:

29 Եվ նա ասաց. Այո՛, ես հավատում եմ, որ նա՛ է ստեղծել բոլոր բաները, որոնք երկրում են. բայց ես չգիտեմ երկինքը:

30 Եվ Ամնոնն ասաց նրան. Երկինքը մի տեղ է, որտեղ Աստվածն է բնակվում և բոլոր նրա սուրբ հրեշտակները:

31 Եվ թագավոր Լամոնիին ասաց. Դա երկրի վերևում է:

32 Եվ Ամնոնն ասաց. Այո՛, և նա նայում է վար՝ բոլոր մարդկանց

16ա Ալմա 12.3:
18ա սո՛ւ Ջանազանելու

պարզև:
բ սո՛ւ Աստված,

Աստվածալուիս:
24ա Ալմա 38.12:

զավակների վրա. և նա գիտի արտի բոլոր ^ամտքերն ու խորհուրդները. քանզի նրա ձեռքով են նրանք բոլորը ստեղծվել ի սկզբանե:

33 Եվ թագավոր Լամոնին ասաց. Ես հավատում եմ բոլոր այս բաներին, որոնք դու խոսեցիր: Դու ուղարկված ես Աստծո՞ կողմից:

34 Ամոնն ասաց նրան. Ես մարդ եմ. և ^ամարդն ի սկզբանե ստեղծվեց Աստծո պատկերով, և ես կանչվել եմ նրա Սուրբ Հոգու կողմից՝ ^բուսուցանելու այս բաները ժողովրդին, որպեսզի նրանք կարողանան բերվել իմացությանը նրա, ինչն արդար է և ճշմարիտ.

35 Եվ այդ ^աՀոգուց մի մաս բնակվում է իմ մեջ, որը տալիս է ինձ ^բգիտելիք, և նաև գործություն՝ ըստ իմ հավատքի ու ցանկությունների, որոնք Աստծուց են:

36 Այժմ, երբ Ամոնն ասաց այս խոսքերը, նա սկսեց աշխարհի ստեղծումից, և նաև Ադամի ստեղծումից, և պատմեց նրան բոլոր բաները մարդու անկման վերաբերյալ, և ^ապատմեց և դրեց նրա առաջ այդ ժողովրդի հիշատակարանները և ^բսուրբ գրքերը, որոնք խոսվել էին ^գմարգարեների կողմից, նույնիսկ ընդհուպ մինչև այն ժամանակը, երբ նրանց հայրը՝ Լեքին, թողեց Երուսաղեմը:

37 Եվ նա նաև պատմեց նրանց (քանզի դա թագավորի և նրա ծառաների համար էր) իրենց հայրերի բոլոր ճամփորդություններն անապատում, և բոլոր նրանց տառապանքները՝ քաղցից

ու ծարավից, և նրանց չարչարանքը, և այլն:

38 Եվ նա նաև պատմեց նրանց Լամանի ու Լեմուելի ապստամբությունների մասին, և Իսմայելի որդիների, այո, բոլոր նրանց ապստամբությունները պատմեց նրանց. և մեկնաբանեց նրանց համար բոլոր հիշատակարաններն ու սուրբ գրքերն այն ժամանակից ի վեր, երբ Լեքին թողեց Երուսաղեմը՝ ընդհուպ մինչև ներկա ժամանակը:

39 Բայց սա բոլորը չէր. քանզի նա մեկնաբանեց նրանց համար փրկագնման ^ածրագիրը, որը պատրաստված էր աշխարհի հիմնադրումից ի վեր. և նա նաև հայտնի դարձրեց նրանց Քրիստոսի գալստյան վերաբերյալ, և նրանց հայտնի դարձրեց Տիրոջ բոլոր գործերը:

40 Եվ եղավ այնպես, որ հետո, երբ նա ասաց բոլոր այս բաները, և մեկնաբանեց դրանք թագավորին, թագավորը հավատաց նրա բոլոր խոսքերին:

41 Եվ նա սկսեց աղաղակել առ Տերն՝ ասելով. Ո՛վ Տեր, ողորմություն ունեցիր. համաձայն քո առատ ^աողորմության, որ դու ունեցել ես Նեփիի ժողովրդի վրա, ողորմություն ունեցիր նաև իմ և իմ ժողովրդի վրա:

42 Եվ արդ, երբ նա ասաց այս, նա ընկավ գետնին, կարծես մեռած լիներ:

43 Եվ եղավ այնպես, որ նրա ծառաները վերցրեցին նրան ու

32ա Ամոն 4.13,
3 Նեփի 28.6,
ՎևոՒ 6.16:
34ա Մոսիա 7.27,
Եթեր 3.13–16:
բ սու՛ Ուսուցանել,
Ուսուցիչ – Հոգով

ուսուցանելը:
35ա սու՛ Ոգեշնչում,
Ոգեշնչել:
բ սու՛ Գիտություն:
36ա Մոսիա 1.4,
Ալմա 22.12, 37.9:
բ սու՛ Սուրբ գրքեր:

գ Գոր. Գ.18–21:
39ա սու՛ Փրկագնման
ծրագիր:
41ա սու՛ Ողորմած,
Ողորմություն:

տարան նրան իր կնոջ մոտ, և դրեցին նրան մահճակալի վրա. և նա պառկած էր երկու օրվա և երկու գիշերվա ընթացքում, կարծես մեռած լիներ. և նրա կինը, և նրա որդիները, և նրա դուստրերը սգում էին նրա վրա Լամանացիների ձևով, մեծապես ողբալով նրա կորուստը:

ԳԼՈՒԽ 19

Լամոնին ստանում է հավիտենական կյանքի լույսը և տեսնում է Քավչին – Նրա գերդաստանը մտքի հափըշտակության մեջ է ընկնում և շատերը տեսնում են հրեշտակներ – Ամմոնը պահպանվում է հրաշքով – Նա մկրտում է շատերին և նրանց մեջ եկեղեցի հիմնում: Մոտ 90թ. Ք.ծ.ա.:

ԵՎ եղավ այնպես, որ երկու օր և երկու գիշեր հետո նրանք քիչ էր մնում վերցնելին նրա մարմինը և դնելն գերեզմանի մեջ, որը նրանք սարքել էին իրենց մեռելներին թաղելու նպատակով:

2 Արդ, թագուհին լսած լինելով Ամմոնի համբավի մասին, հետևաբար նա ուղարկեց և ցանկացավ, որ նա գար իր մոտ:

3 Եվ եղավ այնպես, որ Ամմոնն արեց, ինչպես իրեն հրամայված էր, և գնաց ներս՝ թագուհու մոտ, և ցանկացավ իմանալ, թե նա ինչ էր կամենում, որ ինքն աներ:

4 Եվ նա ասաց նրան. Իմ ամուսնու ծառաները հայտնի են դարձրել ինձ, որ դու Սուրբ Աստծո մարգարե ես, և որ դու ունես զորություն անելու շատ զորավոր զործեր նրա անունով.

5 Հետևաբար, եթե դա այդպես է, ես կկամենայի, որ դու ներս գնայիր ու տեսնեիր իմ ամուսնուն, քանզի նա պառկած է իր մահճակալին երկու օրվա և երկու գիշերվա ընթացքում. և ոմանք ասում են, որ նա մեռած չէ, բայց մյուսներն ասում են, որ նա մեռած է, և որ նրանից զարշահոտություն է գալիս, և որ նա պետք է դրվի գերեզմանի մեջ. բայց ինչ վերաբերում է ինձ, ըստ ինձ նրանից զարշահոտություն չի գալիս:

6 Արդ, սա այն էր, ինչ Ամմոնը ցանկանում էր, քանզի նա գիտեր, որ թագավոր Լամոնին Աստծո զորության ներքո էր. նա գիտեր, որ անհավատության խավար «վարագույրը հեռացվում էր նրա մտքից, և Քլույսը, որը լուսավորում էր նրա միտքը, որն Աստծո փառքի լույսն էր, որը նրա բարության սքանչելի լույսն էր, այո, այո լույսը նրա հոգուն այնպիսի ուրախություն էր ներշնչել, որ ցրել էր խավարի ամպը, և որ հավիտենական կյանքի լույսն էր վառվել նրա հոգուն, այո, նա գիտեր, որ այն հաղթել էր նրա բնական կառուցվածքը, և նա տարված էր Աստծով,

7 Հետևաբար, ինչ որ թագուհին ցանկացավ նրանից, նրա միակ ցանկությունն էր: Այդ պատճառով նա ներս գնաց տեսնելու թագավորին, համաձայն նրա, ինչպես թագուհին էր ցանկացել նրանից. և նա տեսավ թագավորին, և նա գիտեր, որ նա մեռած չէր:

8 Եվ նա ասաց թագուհուն. Նա մեռած չէ, այլ քնած է Աստծով, և էզուց նա պիտի նորից վեր կենա. հետևաբար, մի՛ թաղեք նրան:

19 4ա սո՛ւ Մարգարե: 6աԲ Կոր. Գ.3-4:

սո՛ւ Վարագույր: ք սո՛ւ Լույս,

Քրիստոսի լույս:

9 Եվ Ամնոնն ասաց նրան. Հավատո՞ւմ ես դու սրան: Եվ նա ասաց նրան. Ես չեմ ունեցել ոչ մի վկայություն, բացի քո խոսքից, և մեր ծառաների խոսքից. այնուամենայնիվ, ես հավատում եմ, որ դա պիտի լինի համաձայն նրա, ինչպես դու ասացիր:

10 Եվ Ամնոնն ասաց նրան. Օրհնվա՛ծ ես դու, քո արտասովոր հավատքի պատճառով. ես ասում եմ քեզ, կի՛ն, այսպիսի մեծ ^ահավատք չի եղել Նեփիացիների ողջ ժողովրդի մեջ:

11 Եվ եղավ այնպես, որ նա հսկեց իր ամուսնու մահճակալի մոտ, այդ ժամանակից ի վեր, նույնիսկ մինչև հաջող օրվա այն պահը, որը Ամնոնը նշանակել էր, որ նա պետք է վեր կենար:

12 Եվ եղավ այնպես, որ նա վեր կացավ, համաձայն Ամնոնի խոսքերի. և երբ նա վեր կացավ, նա առաջ մեկնեց իր ձեռքը դեպի կինը և ասաց. Օրհնվա՛ծ ես դու:

13 Քանզի այնպես հաստատ, ինչպես դու ես ապրում, ահա, ես տեսա իմ Քավչին. և նա առաջ պիտի գա, և ^ածնվի մի ^բկնոջից, և նա պիտի փրկագնի բոլոր մարդկությանը, ովքեր կհավատան նրա անունին: Այժմ, երբ նա ասաց այս խոսքերը, նրա սիրտը լցվել էր իր ներսում, և նա կրկին ընկավ ուրախությունից. և թագուհին նույնպես վայր ընկավ՝ Հոզուց հաղթված:

14 Արդ, Ամնոնը, տեսնելով, որ Տիրոջ Հոզին է դուրս թափվում ըստ իր ^աաղոթքների, Լամանա-

ցիների՝ իր եղբայրների վրա, ովքեր այնքան շատ սգի պատճառ էին եղել Նեփիացիների մեջ կամ Աստո՛ռ բոլոր ժողովրդի մեջ՝ իրենց անօրինությունների ու իրենց ^ավանդությունների պատճառով, նա ծնկի իջավ և սկսեց դուրս թափել իր հոգին, աղոթելով և գոհություն հայտնելով Աստծուն այն բանի համար, ինչ նա արել էր իր եղբայրների հետ. և նա նույնպես ընկավ ^գուրախությունից. և այսպես նրանք բոլորը՝ երեքով, ^բընկել էին գետնին:

15 Այժմ, երբ թագավորի ծառաները տեսան, որ նրանք ընկել էին, նրանք նույնպես սկսեցին աղաղակել առ Աստված, քանզի Տիրոջ վախը եկել էր նրանց վրա նույնպես, քանզի այդ ^անրանք էին, որ կանգնել էին թագավորի առաջ և վկայել էին նրան Ամնոնի մեծ զորության մասին:

16 Եվ եղավ այնպես, որ նրանք իրենց զորությամբ կանչեցին առ Տիրոջ անունը, մինչև որ նրանք բոլորն ընկան գետնին, բացի մի Լամանացի կնոջից, որի անունը Աբիս էր, նա դարձի եկած լինելով առ Տերը, արդեն շատ տարիներ՝ իր հոր մի նշանավոր տեսիլքի պատճառով,–

17 Այսպիսով, դարձի եկած լինելով առ Տերը, և երբեք դա հայտնի դարձրած չլինելով, հետևաբար, երբ նա տեսավ, որ բոլոր Լամոնիի ծառաներն ընկել էին գետնին, և նաև իր տիրուհուն՝ թագուհուն, և թագավորին և Ամնոնին պառկած՝ գետնի վրա փռված,

<p>10ա Ղուկ. Է.9: սու՛ Հավատք: 13ա սու՛ Հիսուս Քրիստոս – Մարգարետություններ Հիսուս Քրիստոսի</p>	<p>ծննդի և մահվան մասին: բ 1 Նեփի 11.13–21: 14ա Վե՛.ՈՒ՛ 42.14: բ Մոսիա 1.5:</p>	<p>գ սու՛ Ուրախություն: դ Ալմա 27.17: 15ա Ալմա 18.1–2:</p>
---	---	--

նա գիտեր, որ դա Աստծո զորութիւնն էր. և ենթադրելով, որ այս առիթը, ժողովրդին հայտնի դարձնելու միջոցով, ինչ պատահել էր նրանց հետ, որ տեսնելով այս տեսարանը, դա «կատիպեր նրանց հավատալ Աստծո զորութեանը, ուստի նա առաջ վազեց տնից տուն՝ հայտնի դարձնելով դա ժողովրդին:

18 Եվ նրանք սկսեցին ի մի հավաքվել թագավորի տան մոտ: Եվ այնտեղ մի բազմութիւն եկավ, և ի զարմանս իրենց, նրանք տեսան թագավորին և թագուհուն, և նրանց ծառաներին՝ փռված գետնի վրա, և նրանք բոլորը պառկած էին այնտեղ, կարծես թէ մեռած լինէին. և նրանք նաև տեսան Ամմոնին, և ահա, նա մի Նեփիացի էր:

19 Եվ արդ, ժողովուրդը սկսեց տրտնջալ իրենց մեջ. ոմանք ասելով, որ դա մեծ չարիք էր, որ եկել էր նրանց վրա, կամ թագավորի և իր տան վրա, որովհետև նա հանդուրժել էր, որ Նեփիացին «մնար երկրում:

20 Բայց մյուսները սաստեցին նրանց՝ ասելով. Թագավորը բերել է այս չարիքն իր տան վրա, որովհետև նա սպանեց իր ծառաներին, որոնք թույլ էին տվել իրենց հոտերը ցրվել Սեբուսի «ջրերի մոտ:

21 Եվ նրանք էլ սաստվեցին այն մարդկանց կողմից, որոնք կանգնել էին Սեբուսի ջրերի մոտ և «ցրել էին հոտերը, որոնք պատկանում էին թագավորին, քանզի նրանք բարկացած էին Ամմոնի վրա, Սեբուսի ջրերի մոտ իրենց եղբայրներից այն թվի պատճա-

ռով, որ նա սպանել էր, մինչ պաշտպանում էր թագավորի հոտերը:

22 Արդ նրանցից մեկը, որի եղբայրը «սպանվել էր Ամմոնի սրից, անչափ բարկացած լինելով Ամմոնի վրա, բաշեց իր սուրը և առաջ գնաց, որ վար իջեցնի Ամմոնի վրա՝ սպանելու նրան. և երբ նա բարձրացրեց սուրը, որ զարկի նրան, ահա, նա ընկավ մեռած:

23 Արդ մենք տեսնում ենք, որ Ամմոնին հնարավոր չէր սպանել, քանզի «Տերն ասել էր Մոսիային՝ նրա հորը. Ես կխնայեմ նրան, և դա կլինի համաձայն քո հավատքի,– հետևաբար, Մոսիան նրան «վատահել էր Տիրոջը:

24 Եվ եղավ այնպես, որ երբ բազմությունը տեսավ, որ մարդը, որը բարձրացրեց սուրը՝ սպանելու Ամմոնին, ընկել էր մեռած, նրանց բոլորի վրա վախ իջավ, և նրանք չհամարձակվեցին առաջ մեկնել իրենց ձեռքը՝ դիպչելու նրան կամ որևէ մեկին, որն ընկել էր. և նրանք նորից սկսեցին զարմանալ իրենց մեջ, թէ ինչը կարող էր լինել այս մեծ զորութեան պատճառը, կամ ինչ կարող էր նշանակել բոլոր այս բաները:

25 Եվ եղավ այնպես, որ նրանց մեջ կային շատերը, ովքեր ասացին, որ Ամմոնը «Մեծ Հոգին է, և մյուսներն ասացին՝ նա ուղարկված է Մեծ Հոգու կողմից.

26 Բայց մյուսները սաստեցին սրանց բոլորին՝ ասելով, որ նա մի հրե է, որն ուղարկվել է Նեփիացիների կողմից՝ տանջելու իրենց:

27 Եվ կային ոմանք, ովքեր ասացին, որ Ամմոնն ուղարկված է Մեծ Հոգու կողմից՝ իրենց չարչա-

17ա Մոսիա 27.14:
19ա Ալմա 17.22–23:
20ա Ալմա 17.26, 18.7:

21ա Ալմա 17.27, 18.3:
22ա Ալմա 17.38:
23ա Մոսիա 28.7,

Ալմա 17.35:
բ սո՛ւ Ապակինել:
25ա Ալմա 18.2–5:

րելու, իրենց անօրինությունների պատճառով. և որ դա Մեծ Հոգին է, որ միշտ հոգ է տանում Նեփիացիներին, որը միշտ ազատում էր նրանց իրենց ձեռքից. և նրանք սասցին, որ դա այդ Մեծ Հոգին է, որ կործանել է իրենց եղբայրներից՝ Լամանացիներից այնքան շատերին:

28 Եվ այսպես վեճը նրանց մեջ սկսեց սաստիկ սրվել: Եվ մինչ նրանք այսպես վիճում էին, «կին ծառան, որը պատճառն էր եղել բազմության ի մի հավաքվելու, եկավ, ու երբ նա տեսավ վեճը, որը բազմության մեջ էր, նա անչափ վշտացավ, մինչև իսկ արտասվեց:

29 Եվ եղավ այնպես, որ նա գնաց ու բռնեց թագուհու ձեռքը, որպեսզի գուցե կարողանար բարձրացնել նրան գետնից. և հենց որ նա դիպավ նրա ձեռքին, նա բարձրացավ ու կանգնեց ոտքի և բարձր ձայնով աղաղակեց՝ ասելով. Ով օրհնյա՛լ Հիսուս, որ ինձ փրկել ես «սարսափելի դժոխքից: Ով օրհնյա՛լ Աստված, թողորմություն ունեցիր այս ժողովրդի վրա:

30 Եվ երբ նա ասաց այս, նա խփեց ձեռքերը՝ լցված լինելով ուրախությամբ, և ասելով շատ խոսքեր, որոնք չէին հասկացվում. և երբ նա արեց այս, նա բռնեց թագավոր Լամոնիի ձեռքը, և ահա, նա բարձրացավ ու կանգնեց ոտքի:

31 Եվ նա, անմիջապես տեսնելով վեճն իր ժողովրդի մեջ, առաջ գնաց ու սկսեց սաստել նրանց, և

սովորեցնել նրանց այն «խոսքերը, որոնք նա լսել էր Ամմոնի բերանից. և բոլոր նրանք, ովքեր լսեցին նրա խոսքերը, հավատացին և դարձի եկան առ Տերը:

32 Բայց կային նրանց մեջ շատերը, ովքեր չկամեցան լսել նրա խոսքերը. հետևաբար, նրանք գնացին իրենց ճանապարհով:

33 Եվ եղավ այնպես, որ երբ Ամմոնը բարձրացավ, նա նույնպես սպասավորեց նրանց, և նմանապես վարվեցին Լամոնիի բոլոր ծառաները. և նրանք բոլորը հայտարարեցին ժողովրդին ճիշտ նույն բանը, որ նրանց սրտերը «փոխվել էին. որ նրանք այլևս չչարիք անելու ցանկություն չունեին:

34 Եվ, ահա շատերը հայտարարեցին ժողովրդին, որ նրանք տեսել էին «իրեշտակներ ու զրուցել նրանց հետ. և այսպես նրանք պատմեցին նրանց Աստծո բաներն ու նրա արդարության մասին:

35 Եվ եղավ այնպես, որ կային շատերը, որ հավատացին նրանց խոսքերին. և բոլոր նրանք, ովքեր հավատացին, «մկրտվեցին. և նրանք դարձան արդարակյաց ժողովուրդ, և նրանք իրենց մեջ եկեղեցի հիմնեցին:

36 Եվ այսպես Տիրոջ գործը սկսվեց Լամանացիների մեջ. այսպես է Տերը սկսեց դուրս թափել իր Հոգին նրանց վրա. և մենք տեսնում ենք, որ նրա բազուկը մեկնված է դեպի «բոլոր մարդիկ, ովքեր կապաշխարեն ու կհավատան նրա անունին:

<p>28ա Ալմա 19.16: 29ա 1 Նեփի 14.3: բ սո՛ր Ողորմած, Ողորմություն: 31ա Ալմա 18.36–39:</p>	<p>33ա սո՛ր Վերստին ծնված, Աստծուց ծնված: բ Մոսիա 5.2, Ալմա 13.12: 34ա սո՛ր Հրեշտակներ:</p>	<p>35ա սո՛ր Մկրտություն, Մկրտել: 36ա 2 Նեփի 26.33, Ալմա 5.33:</p>
--	---	--

ԳԼՈՒԽ 20

Տերն ուղարկում է Ամնոնին Միդդոնի՝ ազատելու իր բանտարկված եղբայրներին – Ամնոնն ու Լամոնին հանդիպում են Լամոնիի հորը, որը թագավոր է ողջ երկրի վրա – Ամնոնը ստիպում է ծեր թագավորին հավանություն տալ իր եղբայրների ազատմանը: Մոտ 90թ. Ք.ծ.ա.:

ԵՎ եղավ այնպես, որ երբ նրանք հիմնեցին եկեղեցի այդ երկրում, որ թագավոր Լամոնին ցանկացավ, որ Ամնոնը գնար իր հետ Նեփիի երկիրը, որպեսզի նա կարողանար ցույց տալ նրան իր հորը:

2 Եվ Տիրոջ ձայնը եկավ Ամնոնին՝ ասելով. Դու չպետք է գնաս վեր՝ դեպի Նեփիի երկիրը, քանզի, ահա թագավորը կփնտրի քո կյանքը. այլ դու պետք է գնաս Միդդոնիի երկիրը. քանզի ահա, քո եղբայր Ահարոնը, և նաև Մուդոքին ու Ամմանը բանտում են:

3 Արդ, եղավ այնպես, որ երբ Ամնոնը լսեց այս, նա ասաց Լամոնիին. Ահա, իմ եղբայրն ու եղբայրակիցները բանտում են՝ Միդդոնիում, և ես գնում եմ, որ գուցե ազատեմ նրանց:

4 Արդ, Լամոնին ասաց Ամնոնին. Ես գիտեմ, Տիրոջ ^աուժով դու կարող ես անել բոլոր բաները: Բայց, ահա, ես կգամ քեզ հետ Միդդոնիի երկիրը. քանզի Միդդոնիի երկրի թագավորը, որի անունը Անթիոմնոն է, ընկեր է ինձ. հետևաբար, ես գնում եմ Միդդոնիի երկիրը, որպեսզի կարողանամ բարեխոսել երկրի թագավորին, և նա դուրս կհանի քո եղբայրներին ^բբանտից: Արդ, Լամոնին ասաց.

Ո՞վ ասաց քեզ, որ քո եղբայրները բանտում են:

5 Եվ Ամնոնն ասաց նրան. Ոչ որ չի ասել ինձ, բացի դա լինի Ասածուց, և նա ասաց ինձ. Գնա՛ և ազատի՛ր քո եղբայրներին, քանի որ նրանք բանտում են Միդդոնիի երկրում:

6 Արդ, երբ Լամոնին լսեց այս, նա կարգադրեց, որ իր ծառաները պատրաստեն իր ^ածիերն ու կառքերը:

7 Եվ նա ասաց Ամնոնին. Ե՛կ, ես կգամ քեզ հետ Միդդոնիի երկիրը, և այնտեղ ես կխնդրեմ թագավորից, որ նա դուրս հանի քո եղբայրներին բանտից:

8 Եվ եղավ այնպես, որ երբ Ամնոնն ու Լամոնին ճամփորդում էին դեպի այդ վայրը, նրանք հանդիպեցին Լամոնիի հորը, որը թագավոր էր ողջ երկրի ^ավրա:

9 Եվ ահա, Լամոնիի հայրն ասաց նրան. Ինչո՞ւ դու չեկար այն ^ախնջույքին, այն հրաշալի օրը, երբ ես խնջույք արեցի իմ որդիների և իմ ժողովրդի համար:

10 Եվ նա նաև ասաց. Ո՞ր ես դու գնում այս Նեփիացու հետ, որը ^աստախոսի զավակներից մեկն է:

11 Եվ եղավ այնպես, որ Լամոնին տեղեկացրեց նրան, թե ուր էր նա գնում, քանզի նա վախենում էր վիրավորել նրան:

12 Եվ նա նաև ասաց նրան իր սեփական թագավորությունում մնալու ողջ պատճառը, թե ինչու նա չէր գնացել իր հոր խնջույքին, որը նա պատրաստել էր:

13 Եվ արդ, երբ Լամոնին տեղեկացրեց նրան բոլոր այս բաները, ահա, ի զարմանս իրեն, նրա հայրը բարկացավ նրա վրա և ասաց.

20 ⁴ա Ալմա 26.12:
^բ Ալմա 20.28–30:

6ա Ալմա 18.9–10:
8ա Ալմա 22.1:

9ա Ալմա 18.9:
10ա Մոսիա 10.12–17:

Լամոնի՛, դու պատրաստվում ես ազատել այս Նեփիացիներին, ովքեր ստախոսի որդիներ են: Ահա, նա կողոպտեց մեր հայրերին. և այժմ, նրա զավակները նույնպես եկել են մեր մեջ, որ կարողանան իրենց խորամանկությամբ և իրենց ստերով խաբել մեզ, որպեսզի նորից կողոպտեն մեզ մեր ունեցվածքից:

14 Արդ, Լամոնիի հայրը հրամայեց նրան, որ նա սրով սպաներ Ամմոնին: Եվ նա նաև հրամայեց նրան, որ նա չզննար Միդդոնիի երկիրը, այլ, որ նա վերադառնար իր հետ Խսմայելի երկիրը:

15 Բայց Լամոնին սասց նրան. Ես չեմ սպանի Ամմոնին, ոչ էլ ես կվերադառնամ Խսմայելի երկիրը, այլ ես գնում եմ Միդդոնիի երկիրը, որպեսզի ես կարողանամ ազատել Ամմոնի եղբայրներին, քանզի ես գիտեմ, որ նրանք արդար մարդիկ են և ճշմարիտ Աստծո սուրբ մարգարեներ:

16 Այժմ, երբ նրա հայրը լսեց այս խոսքերը, նա բարկացավ նրա վրա, և քաշեց իր սուրը, որ զարկեր նրան՝ գետնահար:

17 Բայց Ամմոնն առաջ կանգնեց ու սասց նրան. Ահա, դու չպետք է սպանես քո որդուն. սակայն, ավելի ՚լավ կլիներ, որ նա ընկներ, քան դու, քանզի ահա, նա ՚ապաշխարել է իր մեղքերից. բայց եթե դու ընկնիր այս պահին, քո բարկության մեջ, քո հոգին չէր կարող փրկվել:

18 Եվ բացի այդ, հարկ է, որ դու զպես քեզ. քանզի, եթե դու ՚սպանես քո որդուն, նա, լինելով անմեղ մարդ, նրա արյունը կաղաղակեր գետնից առ Տերը՝ նրա

Աստվածը, որ վրեժխնդրություն գար քեզ վրա. և գուցե դու կորցնեիր քո ՚հոգին:

19 Այժմ, երբ Ամմոնն սասց այս խոսքերը նրան, նա պատասխանեց նրան՝ ասելով. Ես գիտեմ, որ եթե ես սպանեի իմ որդուն, որ ես անմեղ արյուն կթափեի. քանզի այդ դո՛ւ ես, որ ջանացել ես կործանել նրան:

20 Եվ նա մեկնեց իր ձեռքը սպանելու Ամմոնին: Բայց Ամմոնը դիմակայեց նրա հարվածներին, և նաև զարկեց նրա բազկին, այնպես որ նա չկարողացավ գործածել այն:

21 Այժմ, երբ թագավորը տեսավ, որ Ամմոնը կարող էր սպանել իրեն, նա սկսեց աղաչել Ամմոնին, որ նա խնայի իր կյանքը:

22 Բայց Ամմոնը բարձրացրեց իր սուրն ու սասց նրան. Ահա՛, ես կզարկեմ քեզ, եթե դու շնորհ չանես ինձ, որ իմ եղբայրները կարողանան դուրս հանվել բանտից:

23 Արդ, թագավորը, կախենալով, թե ինքը պիտի կորցնի իր կյանքը, սասց. Եթե դու խնայես ինձ, ես կշնորհեմ քեզ, ինչ որ դու խնդրես, մինչև իսկ թագավորության կեսը:

24 Այժմ, երբ Ամմոնը տեսավ, որ ինքն ազդել էր ծեր թագավորի վրա՝ ըստ իր ցանկության, նա սասց նրան. Եթե դու շնորհ անես, որ իմ եղբայրները դուրս հանվեն բանտից, և նաև, որ Լամոնիին թույլ տրվի պահել իր թագավորությունը, և որ դու դժգոհ չլինես նրանից, այլ շնորհ անես, որ նա կարողանա անել՝ ըստ իր սեփական ցանկությունների, ՚ինչ բան որ նա մտածում է, այդ դեպքում ես

կխնայեմ քեզ. հակառակ դեպքում, ես կզարկեմ քեզ՝ գետնահար:

25 Այժմ, երբ Ամնոնն ասաց այս խոսքերը, թագավորը սկսեց ուրախանալ իր կյանքի համար:

26 Եվ երբ նա տեսավ, որ Ամնոնը ցանկություն չուներ կործանելու նրան, և երբ նա տեսավ նաև այն մեծ սերը, որ նա ուներ իր որդի Լամոնիի հանդեպ, նա անչափ զարմացած մնաց և ասաց. Քանի որ այս է բոլորը, ինչ դու ցանկացար, որ ես ազատ արձակեմ քո եղբայրներին, և թույլ տամ, որ իմ որդի Լամոնիին պահպանի իր թագավորությունը, ահա, ես կշնորհեմ քեզ, որ իմ որդին պահպանի իր թագավորությունն այս ժամանակից ի վեր և հավիտյան. և ես այլևս չեմ իշխի նրա վրա,

27 Եվ ես նաև շնորհ կանեմ քեզ, որ քո եղբայրները դուրս հանվեն բանտից, և դու ու քո եղբայրները կարող եք գալ ինձ մոտ՝ իմ թագավորությունը. քանզի ես շատ կցանկանայի տեսնել ձեզ: Քանի որ թագավորը շատ ապշած էր այն խոսքերի վրա, որոնք նա խոսել էր, և նաև այն խոսքերի վրա, որոնք խոսվել էին իր որդի Լամոնիի կողմից, ուստի նա՝ փափագում էր իմանալ դրանք:

28 Եվ եղավ այնպես, որ Ամնոնն ու Լամոնիին շարունակեցին իրենց ճամփորդությունը դեպի Միդդոնիի երկիրը: Եվ Լամոնիին շնորհ գտավ երկրի թագավորի աչքում. հետևաբար, Ամնոնի եղբայրները դուրս բերվեցին բանտից:

29 Եվ երբ Ամնոնը հանդիպեց նրանց, նա անչափ վշտացած էր, քանզի ահա, նրանք մերկ էին, և

նրանց մաշկը խիստ պոկված էր՝ ամուր պարաններով կապված լինելու պատճառով: Եվ նրանք նաև տարել էին քաղց, ծարավ և ամեն տեսակի չարչարանքներ. սակայն նրանք՝ համբերատար էին իրենց բոլոր տառապանքներում:

30 Եվ ինչ որ պատահեց, դա նրանց բախտն էր՝ ընկած լինել ավելի կարծրացած ու ավելի խստապարանոց ժողովրդի ձեռքը. որի պատճառով նրանք չցանկացան ականջ դնել նրանց խոսքերին, և նրանք դուրս էին գցել նրանց, և ծեծել էին, և քշել էին նրանց տնից տուն, և տեղից տեղ, մույնիսկ մինչև նրանք հասել էին Միդդոնիի երկիրը. և այնտեղ նրանք վերցվել էին ու բանտ գցվել, և կապվել ՝ ամուր պարաններով, ու պահվել էին բանտում շատ օրերի ընթացքում և ազատվել Լամոնիի և Ամնոնի կողմից:

Ահարոնի, և Մուդոքիի, և նրանց եղբայրների կողմից Լամանացիներին քարոզելու մի պատմություն:

*Ընդգրկելով 21–26 գլուխները
ներառյալ:*

ԳԼՈՒԽ 21

Ահարոնը սովորեցնում է Ամադեկացիներին Քրիստոսի և նրա քաղության մասին – Ահարոնն ու նրա եղբայրները բանտարկվում են Միդդոնիում – Իրենց ազատվելուց հետո նրանք սովորեցնում են ժողովարաններում ու դարձի բերում շատերին – Լամոնիին կրոնական ազատություն է շնորհում ժողովրդին

27ա սուր խոնարհ, խոնարհություն:

29ա Ալմա 17.11:
30ա Ալմա 26.29:

*Իսմայելի երկրում: Մոտ 90-77թթ.
Ք.ծ.ա.:*

Արֆ, երբ Ամոնն ու իր եղբայրներն ՝ առանձնացան մեկմեկուց Լամանացիների երկրի սահմաններում, ահա, Ահարոնը ճանապարհի ընկավ դեպի երկիրը, որը կոչվում էր Լամանացիների կողմից Երուսաղեմ՝ կոչած լինելով այն իրենց հայրերի ծննդավայրի անունով. և դա հեռու էր՝ միանավորվ Մորմոնի սահմաններին:

2 Արդ, Լամանացիներն ու Ամադեկացիները և ՝ Ամուղոնի ժողովուրդը կառուցեցին մի մեծ քաղաք, որը կոչեցին Երուսաղեմ:

3 Արդ, Լամանացիներն ինքնուրաքան բավականաչափ կարծրացած էին, բայց Ամադեկացիներն ու Ամուղոնացիներն առավել կարծր էին. հետևաբար, նրանք ստիպեցին Լամանացիներին, որ նրանք կարծրացնեին իրենց սրտերը, որ նրանք խստանային ամբարշտության մեջ և իրենց պղծություններում:

4 Եվ եղավ այնպես, որ Ահարոնը եկավ Երուսաղեմ քաղաքը, և առաջինը սկսեց քարոզել Ամադեկացիներին: Եվ նա սկսեց քարոզել նրանց իրենց ժողովարաններում, քանզի նրանք սարքել էին ժողովարաններ՝ ըստ Նեոբյանների ՝ կարգի. քանզի Ամադեկացիներից ու Ամուղոնացիներից շատերն ըստ Նեոբյանների կարգի էին:

5 Հետևաբար, երբ Ահարոնը մտավ նրանց ժողովարաններից մեկը քարոզելու ժողովուրդին, և երբ նա խոսում էր նրանց հետ, ահա, բարձրացավ մի Ամադեկացի ու

սկսեց վիճել նրա հետ՝ ասելով. Ի՞նչ է դա, որ դու վկայեցիր: Դու տեսե՞լ ես ՝ հրեշտակ: Ինչո՞ւ չեն հրեշտակները հայտնվում մեզ: Ահա, մի՞թե այս ժողովուրդն այնքան լավը չէ, ինչպես քո ժողովուրդը:

6 Դու նաև ասում ես, որ եթե չապաշխարենք, մենք կկորչենք: Որտեղի՞ց դու գիտես միտքն ու խորհուրդները մեր սրտերի: Որտեղի՞ց գիտես, որ մենք պատճառ ունենք ապաշխարելու: Որտեղի՞ց գիտես, որ մենք արդարակյաց մարդիկ չենք: Ահա, մենք սարքել ենք սրբարաններ, և մենք հավաքվում ենք միասին՝ երկրպագելու Աստծուն: Մենք հավատում ենք, որ Աստված կփրկի բոլոր մարդկանց:

7 Արդ, Ահարոնն ասաց նրան. Հավատո՞ւմ ես դու, որ Աստծո Որդին պիտի գա՝ փրկագնելու մարդկությանն իրենց մեղքերից:

8 Եվ մարդն ասաց նրան. Մենք չենք հավատում, որ դու գիտես որևէ այդպիսի բան: Մենք չենք հավատում այս հիմար ավանդություններին: Մենք չենք հավատում, որ դու գիտես գալիք ՝ բաների մասին, ոչ էլ մենք հավատում ենք, որ քո հայրերը գիտեին, և նաև, որ մեր հայրերը գիտեին այն բաների վերաբերյալ, որ իրենք խոսել էին՝ այն բանի մասին, ինչ պիտի գա:

9 Արդ, Ահարոնը սկսեց բացել նրանց համար սուրբ գրքերը Քրիստոսի գալստի վերաբերյալ, և նաև մեռելիների հարության վերաբերյալ, և որ ՝ ոչ մի փրկագնում չէր կարող լինել մարդկության համար, եթե դա չլիներ Քրիստոսի

21 1ա Ալմա 17.13, 17:
2ա Մոսիա 24.1,
Ալմա 25.4-9:

4ա Ալմա 1.2-15:
5ա Մոսիա 27.11-15:
8ա Հակոբ 7.1-8:

9ա Մոսիա 5.8,
Ալմա 38.9:

մահվան ու տառապանքների և նրա արյան քափուքյան միջոցով:

10 Եվ եղավ այնպես, երբ նա սկսեց մեկնաբանել այս բաները նրանց, նրանք բարկացան նրա վրա, և սկսեցին ծաղրել նրան. և նրանք չկամեցան լսել խոսքերը, որոնք նա խոսեց:

11 Հետևաբար, երբ նա տեսավ, որ նրանք չէին կամենում լսել իր խոսքերը, նա հեռացավ նրանց ժողովարանից ու եկավ մի գյուղ, որը կոչվում էր Անի-Անթի, և այնտեղ նա գտավ Մուղոբիին՝ խոսքը նրանց քարոզելիս. և նաև Ամմային ու իր եղբայրներին: Եվ նրանք վիճում էին շատերի հետ խոսքի մասին:

12 Եվ եղավ այնպես, որ նրանք տեսան, որ ժողովուրդը կկարծրացնեին իրենց սրտերը, հետևաբար նրանք հեռացան ու անցան Միդդոնիի երկիրը: Եվ նրանք քարոզեցին խոսքը շատերին, և քչերը հավատացին խոսքերին, որոնք նրանք սովորեցրին:

13 Այնուամենայնիվ, Ահարոնն ու նրա եղբայրներից մի քանիսը վերցվեցին ու բանտ գցվեցին, և նրանցից մնացածը փախան Միդդոնիի երկրից դեպի շրջակա շրջանները:

14 Եվ նրանք, ովքեր բանտ էին գցվել, տարան շատ բաներ, և նրանք ազատվեցին Լամոնիի ու Ամմոնի ձեռքով, և նրանց կերակրեցին և հագցրեցին:

15 Եվ նրանք առաջ գնացին կրկին հայտարարելու խոսքը, և այսպես նրանք առաջին անգամ ազատվեցին բանտից. և այսպես էին նրանք տառապել:

16 Եվ նրանք առաջ գնացին, ուր որ առաջնորդվեցին Տիրոջ «Հոգու կողմից» քարոզելով Աստծո խոսքը Ամադեկացիների ամեն մի ժողովարանում, կամ Լամանացիների ամեն մի ժողովում, որտեղ նրանց անբա կթողնեին:

17 Եվ եղավ այնպես, որ Տերը սկսեց օրհնել նրանց, այնպես որ նրանք բերեցին շատերին ճշմարտության իմացությանը. այո, նրանք շատերին «համոզեցին իրենց մեղքերի և իրենց հայրերի ավանդությունների վերաբերյալ, որոնք ճիշտ չէին:

18 Եվ եղավ այնպես, որ Ամմոնն ու Լամոնին Միդդոնիի երկրից վերադարձան Իսմայելի երկիրը, որը նրանց ժառանգության հողն էր:

19 Եվ թագավոր Լամոնին չկամեցավ թույլ տալ, որ Ամմոնը ծառայի իրեն, կամ լինի իր ծառան:

20 Այլ նա կարգադրեց, որ ժողովարաններ կառուցվեն Իսմայելի երկրում. և նա կարգադրեց, որ իր ժողովուրդը, կամ այն ժողովուրդը, որն իր իշխանության տակ էր, հավաքվի միասին:

21 Եվ նա ուրախացավ նրանցով և շատ բաներ սովորեցրեց նրանց: Եվ նա նաև հայտարարեց նրանց, որ նրանք մի ժողովուրդ էին իր ներքո, և որ նրանք մի ազատ ժողովուրդ էին, որ նրանք ազատ էին թագավորի՝ իր հոր բռնություններից. քանի որ նրա հայրը շնորհ էր արել նրան, որ նա կարող էր թագավորել ժողովրդի վրա, ովքեր Իսմայելի երկրում էին և բոլոր շրջակա երկրում:

22 Եվ նա նաև հայտարարեց նրանց, որ նրանք կարող էին

“ազատություն ունենալ՝ պաշտելու Տիրոջը, իրենց Աստծուն, ըստ իրենց ցանկությունների, որտեղ էլ որ լինեին, եթե դա այն երկրում էր, որը թագավոր Լամոնիի իշխանության ներքո էր:

23 Եվ Ամոնը քարոզում էր թագավոր Լամոնիի ժողովրդին, և եղավ այնպես, որ նա սովորեցրեց նրանց ամենը, ինչ վերաբերում է արդարությանը պատկանող բաներին: Եվ նա հորդորում էր նրանց ամեն օր, ողջ ջանասիրությամբ, և նրանք ուշք էին դնում նրա խոսքին, և նրանք փութաջան էին Աստծո պատվիրանները պահելիս:

ԳԼՈՒԽ 22

Ահարոնը սովորեցնում է Լամոնիի հորը Ստեղծման, Ադամի անկման, և Քրիստոսի միջոցով փրկագնման ծրագրի մասին – Թագավորն ու նրա ողջ զերդաստանը դարձի են գալիս – Բացատրվում է երկրի բաժանումը Նեփիազիների ու Լամանազիների միջև: Մոտ 90–77թթ. Ք.ծ.ա.:

Արօ, մինչ Ամոնն այսպես շարունակ սովորեցնում էր Լամոնիի ժողովրդին, մենք կվերադառնանք Ահարոնի ու նրա եղբայրների պատմությանը. քանզի հետո, երբ նա հեռացավ Միդդոնիի երկրից, նա Հոգու կողմից՝ առաջնորդվեց դեպի Նեփիի երկիրը, մինչև իսկ տունը թագավորի, որը բոլոր երկրի վրա էր, ^բբացի Իսմայելի երկրից. և նա Լամոնիի հայրն էր:

2 Եվ եղավ այնպես, որ նա, իր

եղբայրների հետ, ներս գնաց թագավորի պալատը և խոնարհվեց թագավորի առաջ ու ասաց նրան. Ահա, ո՛վ թագավոր, մենք Ամոնի եղբայրներն ենք, որոնց դու՝ “ազատեցիր բանտից:

3 Եվ այժմ, ո՛վ թագավոր, եթե դու խնայես մեր կյանքը, մենք կլինենք քո ծառաները: Եվ թագավորն ասաց նրանց. Բարձրացե՛ք, քանզի ես շնորհելու եմ ձեզ ձեր կյանքը, և ես թույլ չեմ տա, որ դուք իմ ծառաները լինեք. այլ ես պահանջում եմ, որ դուք սատարեք ինձ. քանզի ես ինչ-որ անհանգիստ եմ մտքով՝ ձեր եղբայր Ամոնի խոսքերի անշահախնդրության ու մեծության պատճառով. և ես ուզում եմ իմանալ պատճառը, ինչո՞ւ նա ձեզ հետ չի եկել Միդդոնիից:

4 Եվ Ահարոնն ասաց թագավորին. Ահա, Տիրոջ Հոգին կանչեց նրան մեկ այլ ճանապարհով. նա գնաց Իսմայելի երկիրը՝ սովորեցնելու Լամոնիի ժողովրդին:

5 Արդ, թագավորն ասաց նրան. Ահա, ի՞նչ է այն, որ դուք ասացիք Տիրոջ Հոգու վերաբերյալ: Ահա, դա է այն բանը, որ անհանգստացնում է ինձ:

6 Եվ նաև, ի՞նչ է այս, որ Ամոնն ասաց. “Եթե ապաշխարես, դու կփրկվես, և եթե չապաշխարես, դու կվտարվես վերջին օրը:

7 Եվ Ահարոնը պատասխանեց ու ասաց նրան. Հավատո՞ւմ ես դու, որ կա Աստված: Եվ թագավորն ասաց. Ես գիտեմ, որ Ամադեկացիներն ասում են, որ կա Աստված, և ես նրանց թույլ եմ տվել, որ կառուցեն սրբարաններ, որ կարողանան հավաքվել միասին՝

22ա ՎԼՈՒԽ 134.1–4, չՀ 1.11: ստ՝ Անկախություն:

22 1ա Ալմա 21.16–17: բ Ալմա 21.21–22: 2ա Ալմա 20.26:

6ա Ալմա 20.17–18:

երկրպագելու նրան: Եվ եթե հիմա դու ասում ես՝ կա Աստված, ահա, ես կամենում եմ՝ հավատալ:

8 Եվ այժմ, երբ Ահարոնը լսեց այս, նրա սիրտը սկսեց հրճվել, և նա ասաց. Ահա, անկասկած, ինչպես դու ասքրում ես, ո՛վ թագավոր, կա՛ Աստված:

9 Եվ թագավորն ասաց. Արդյո՞ք Աստված այն ՝Մեծ Հոգին է, որ դուրս բերեց մեր հայրերին Երուսաղեմի հողից:

10 Եվ Ահարոնն ասաց նրան. Այո՛, նա այն Մեծ Հոգին է, և նա է՝ ստեղծել բոլոր բաները՝ և՛ երկրնքում, և՛ երկրի վրա: Հավատո՞ւմ ես դու դրան:

11 Եվ նա ասաց. Այո, ես հավատում եմ, որ Մեծ Հոգին է ստեղծել բոլոր բաները, և ես ուզում եմ, որ դու պատմես ինձ այս բոլոր բաների մասին, և ես ՝կհավատամ քո խոսքերին:

12 Եվ եղավ այնպես, որ երբ Ահարոնը տեսավ, որ թագավորը կամենում էր հավատալ իր խոսքերին, նա սկսեց Ադամի ստեղծումից՝ կարդալով սուրբ գրքերը թագավորին, թե ինչպես Աստված ստեղծեց մարդուն՝ ըստ իր սեփական պատկերի, և որ Աստված ավեց նրան պատվիրաններ, և որ օրինազանցության պատճառով մարդն ընկավ:

13 Եվ Ահարոնը մեկնաբանեց նրան սուրբ գրքերը, Ադամի ՝ստեղծումից սկսած, ներկայացնելով նրան մարդու անկումը, և

նրանց մարմնական վիճակը, և նաև փրկագնման ՝ծրագիրը, որը նախապատրաստված էր աշխարհի հիմնադրումից Պի վեր, Քրիստոսի միջոցով, բոլորի համար, ովքեր կհավատային նրա անունին:

14 Եվ քանի որ մարդն ՝ընկել էր, նա չէր կարող ինքը որևէ բանի ՝արժանի լինել, այլ Քրիստոսի տառապանքներն ու մահն են ՝քավում նրանց մեղքերը՝ հավատքի ու ապաշխարության միջոցով, և այսպես շարունակ. և որ նա ջարդում է մահվան կապանքները, որպեսզի ՝գերեզմանը հաղթանակ չունենա, և որպեսզի մահվան խայթը կուլ գնա փառքի հույսերին. և Ահարոնը բոլոր այս բաները բացատրեց թագավորին:

15 Եվ եղավ այնպես, որ հետո, երբ Ահարոնը մեկնաբանեց այս բաները նրան, թագավորն ասաց. ՝Ի՞նչ պիտի ես անեմ, որ կարողանամ ունենալ այդ հավերժական կյանքը, որի մասին դու խոսեցիր: Այո, ի՞նչ պիտի ես անեմ, որ կարողանամ ՝ծնվել Աստծուց, այս ամբարիշտ հոգին արմատախիլ անելով իմ կրծքից, և ստանամ նրա Հոգին, որպեսզի կարողանամ լցվել ուրախությամբ, որպեսզի ես չվտարվեմ վերջին օրը: Ահա, ասաց նա, ես կիրառարվեմ ՝բոլոր բաներից, ինչ ես ունեմ, այո՛, ես կթողնեմ իմ թագավորությունը, որպեսզի կարողանամ ստանալ այդ մեծ ուրախությունը:

16 Բայց Ահարոնն ասաց նրան.

<p>7ա Վև.ՈՒ 46.13–14: 9ա Ալմա 18.18–28: 10ա սուր Ստեղծել, Ստեղծում: 11ա սուր Հավատ, Հավատալ: 12ա 1 Նեփի 5.10–18, Ալմա 37.9:</p>	<p>13ա Ծն. Ա.26–28: բ սուր Փրկագնման ծրագիր: գ 2 Նեփի 9.18: 14ա սուր Ադամի և Եվայի անկումը: բ 2 Նեփի 25.23, Ալմա 42.10–25:</p>	<p>գ Ալմա 34.8–16: սուր Քավել, Քավություն: դ Ես. ԻԵ.8, Ա Կոր. ԺԵ.55: 15ա Գոր. Բ.37: բ Ալմա 5.14, 49: գ Մատ. ԺԳ.44–46, ԺԹ.16–22:</p>
---	--	---

Եթե դու ^ացանկանաս այս բանը, եթե դու խոնարհվես Աստծո առաջ, այո, եթե դու ապաշխարես քո բոլոր մեղքերից, և խոնարհվես Աստծո առաջ, և հավատարով կանչես առ նրա անունը, հավատարով, որ դու պիտի ստանաս, այդ դեպքում դու կստանաս ^բհույսը, որ դու ցանկանում ես:

17 Եվ եղավ այնպես, որ երբ Ահարոնն ասաց այս խոսքերը, թագավորը ^ախոնարհվեց Տիրոջ առաջ՝ իր ծնկների վրա. այո, մինչև իսկ երեսն ի վայր ընկավ գետնին, և ^բգոչեց ուժգին՝ ասելով.

18 Ո՛վ Աստված, Ահարոնն ասաց ինձ, որ կա Աստված. և եթե կա՝ Աստված, և եթե դու Աստված ես, դու քեզ հայտնի չէի՞ր դարձնի ինձ, և ես կիրաժարվեմ իմ բոլոր մեղքերից՝ քեզ գիտենալու համար, և որպեսզի ես կարողանամ բարձրանալ մեռելներից և փրկվել վերջին օրը: Եվ այժմ, երբ թագավորն ասաց այս խոսքերը, նա զարկվեց, կարծես թե մեռած լիներ:

19 Եվ եղավ այնպես, որ նրա ծառաները վազեցին և ասացին թագուհուն բոլորը, ինչ պատահել էր թագավորին: Եվ նա ներս եկավ թագավորի մոտ. և երբ նա տեսավ նրան պառկած, կարծես թե մեռած լիներ, և նաև Ահարոնին ու նրա եղբայրներին՝ կանգնած, կարծես թե նրանք էին եղել նրա ընկնելու պատճառը, նա բարկացավ նրանց վրա և հրամայեց, որ իր ծառաները, կամ թագավորի ծառաները բռնեն նրանց և սպանեն:

20 Արդ, ծառաները տեսած լինելով թագավորի ընկնելու

պատճառը, հետևաբար, նրանք չհամարձակվեցին իրենց ձեռքը բարձրացնել Ահարոնի և նրա եղբայրների վրա. և նրանք աղաչեցին թագուհուն՝ ասելով. Ինչո՞ւ ես դու հրամայում, որ մենք սպանենք այս մարդկանց, երբ, ահա, նրանցից մեկն ավելի ^ազորեղ է, քան մենք բոլորս, ուստի մենք կընկնենք նրանց առաջ:

21 Այժմ, երբ թագուհին տեսավ ծառաների վախը, նա նույնպես սկսեց խիստ վախենալ, որ չլիներ թե ինչ-որ չարիք գար իր վրա: Եվ նա հրամայեց իր ծառաներին, որ նրանք գնան և կանչեն մարդկանց, որպեսզի նրանք սպանեն Ահարոնին և նրա եղբայրներին:

22 Այժմ, երբ Ահարոնը տեսավ թագուհու վճռականությունը, նա, նաև իմանալով ժողովրդի սրտերի կարծրությունը, վախեցավ, որ չլիներ թե մի բազմություն հավաքվեր միասին, և մեծ կռիվ ու խռովություն լիներ նրանց մեջ. հետևաբար, նա առաջ մեկնեց իր ձեռքը և բարձրացրեց թագավորին գետնից, և ասաց նրան՝ Կանգնի՛ր: Եվ նա ոտքի կանգնեց՝ ստանալով իր ուժը:

23 Արդ, այս արվեց թագուհու և ծառաներից շատերի ներկայությամբ: Եվ երբ նրանք տեսան դա, նրանք մեծապես զարմացան ու սկսեցին վախենալ: Եվ թագավորն առաջ կանգնեց ու սկսեց ^ատվորեցնել նրանց: Եվ նա տվորեցրեց նրանց այնքան, որ նրա ողջ գերդաստանը ^բդարձի եկավ առ Տերը:

24 Արդ, մի մեծ բազմություն ի մի հավաքվեց, թագուհու հրամա-

16ա սո՛ւ Դարձի գալ,
Նորադարձ:
բ Եթեր 12.4:
17ա վևո՛ւ 5.24:

բ սո՛ւ Ադոթթ:
20ա Ալմա 18.1-3:
23ա սո՛ւ Ծառայել.
Քարոզել. Ուսուցանել,

Ուսուցիչ:
բ սո՛ւ Դարձի գալ,
Նորադարձ:

նով, և մեծ տրտնջոցներ սկսվեցին նրանց մեջ՝ Ահարոնի և նրա եղբայրների պատճառով:

25 Բայց թագավորն առաջ կանգնեց նրանց մեջ և սատարեց նրանց: Եվ նրանք խաղաղվեցին Ահարոնի և նրանց հանդեպ, ովքեր նրա հետ էին:

26 Եվ եղավ այնպես, որ երբ թագավորը տեսավ, որ ժողովուրդը խաղաղված էր, նա կարգադրեց, որ Ահարոնը և իր եղբայրներն առաջ կանգնեն բազմության մեջտեղում, և որ նրանք քարոզեն խոսքը նրանց:

27 Եվ եղավ այնպես, որ թագավորը մի «հրովարտակ ուղարկեց ողջ երկրով մեկ, իր ողջ ժողովրդի մեջ, ովքեր իր ողջ երկրում էին, ովքեր բոլոր շրջակա տարածքում էին, որը ձգվում էր ընդհուպ մինչև ծովը, արևելքում և արևմուտքում, և որը բաժանված էր ^ԲՉարահեմլայի երկրից անապատի մի նեղ շերտով, որը ձգվում էր արևելքի ծովից մինչև իսկ արևմուտքի ծովը և ծովափի շրջակա սահմանները, և անապատի սահմանները, որը Չարահեմլայի երկրի մերձակա հյուսիսում էին, Մանթիի սահմանների ուղղությամբ, Սիդոն գետի ակունքի մոտով, ձգվելով արևելքից դեպի արևմուտք, և այսպես էին Լամանացիները և Նեփիացիները բաժանված:

28 Այսպիսով, Լամանացիների ավելի «ծույլ մասն ապրում էր անապատում, և բնակվում էր վրաններում. և նրանք Նեփիի երկրում տարածվել էին անապատով՝ դեպի արևմուտք. այո, և նաև Չարահեմլայի երկրի արևմտյան կողմում, ծովափին մոտիկ սահմաններում, և Նեփիի երկրի արևմտյան կողմում՝ իրենց հայրերի առաջին ժառանգության վայրում, և այսպես սահմանակցելով ծովափի երկայնքով:

29 Եվ նաև շատ Լամանացիներ կային ծովափի արևելյան կողմում, ուր Նեփիացիները քշել էին նրանց: Եվ այսպես, Նեփիացիները համարյա շրջապատված էին Լամանացիներով. սակայն Նեփիացիները վերցրել էին անապատին սահմանակից երկրի բոլոր հյուսիսային մասերի տիրապետությունը՝ Սիդոն գետի ակունքի մոտ, արևելքից մինչև արևմուտք, անապատի կողմի շրջակայքով. դեպի հյուսիս, մինչև իսկ նրանք հասել էին երկիրը, որը նրանք կոչել էին «Լիառատ»:

30 Եվ այն սահմանակից էր այն երկրին, որը նրանք կոչում էին «Ավերակներ, այն լինելով այնքան հեռու՝ հյուսիսում, որ հասնում էր այն երկրին, որը բնակեցված էր եղել և կործանվել, որոնց ^Բոսկորների մասին մենք խոսել ենք, որոնք հայտնաբերվել էին Չարահեմլայի ժողովրդի կողմից, այն լինելով նրանց ^Գառաջին ավիհանման վայրը:

31 Եվ նրանք եկան այնտեղից դեպի հարավի անապատը: Այսպիսով, երկիրը հյուսիսային կողմում կոչվում էր «Ավերակներ, և երկիրը հարավային կողմում կոչվում էր Լիառատ, այն լինելով անապատ, որը լցված է ամեն ձևի,

27ա Ալմա 23.1–4:
բ Օմնի 1.13–17:
28ա 2 Նեփի 5.22–25:
29ա Ալմա 52.9, 63.5:

30ա Ալմա 50.34,
Մորմ. 4.1–3:
բ Մոսիա 8.7–12,
28.11–19:

գ Հել. 6.10:
31ա Հել. 3.5–6:

ամեն տեսակի վայրի կենդանիներով, որոնց մի մասը կերի համար եկել էր հյուսիսային կողմի երկրից:

32 Եվ այսպիսով, Նեփիացու համար դա մեկ և կես օրվա ճամփորդության [»]հեռավորություն էր, Լիառատ և Ավերակներ երկրի գծի վրա, արևելքից դեպի արևմուտյան ծովը. և այսպես, Նեփիացիների երկիրը և Ջարահեմլայի երկիրը գրեթե շրջապատված էին ջրով, այնտեղ լինելով հողի մի նեղ [»]պարանոց՝ հյուսիսային երկրի և հարավային երկրի միջև:

33 Եվ եղավ այնպես, որ Նեփիացիները բնակեցրել էին Լիառատ երկիրը, մույնիսկ արևելքից մինչև արևմտյան ծովը, և այսպես, Նեփիացիներն իրենց իմաստությամբ, իրենց պահակախմբերով և իրենց զորքերով արգելափակել էին Լամանացիներին հարավում, որ այսպիսով նրանք այլևս չունենային իշխանություն հյուսիսում, որ նրանք չկարողանային հեղեղել երկիրը դեպի հյուսիս:

34 Հետևաբար, Լամանացիներն այլևս չէին կարող իշխանություն ունենալ Նեփիի երկրում և շրջակա անապատում: Արդ, սա էր Նեփիացիների իմաստությունը, քանի որ Լամանացիները թշնամի էին նրանց, իրենք չէին ենթարկվի ամեն կողմից չարչարանքների, և նաև, որպեսզի նրանք կարողանային ունենալ մի երկիր, ուր կփախչեին ցանկության դեպքում:

35 Եվ այժմ, այս ասելուց հետո, ես կրկին վերադառնում եմ Ամոնի ու Ահարոնի, Օմների ու Հիմնիի և նրանց եղբայրների պատմությանը:

ԳԼՈՒԽ 23

Հայտարարվում է կրոնական ազատություն – Լամանացիները յոթ երկրներում և քաղաքներում դարձի են գալիս – Նրանք իրենց կոչում են Անթի-Նեփի-Լեքի և ազատվում անեծքից – Ամադեկացիներն ու Ամուդոնացիները ժխտում են ճշմարտությունը: Մոտ 90–77թթ. Բ.ծ.ա.:

Աչս, այսպիսով, եղավ այնպես, որ Լամանացիների թագավորը [»]հրովարտակ ուղարկեց իր ողջ ժողովրդի մեջ, որ նրանք ձեռք չբարձրացնեն ո՛չ Ամոնի, ո՛չ Ահարոնի, ո՛չ Օմների, ո՛չ Հիմնիի, ո՛չ էլ նրանց եղբայրներից որևէ մեկի վրա, որոնք պիտի առաջ գնային՝ քարոզելով Աստծո խոսքը, որտեղ էլ, իրենց երկրի որ մասում էլ որ նրանք լինեին:

2 Այո, նա մի հրամանագիր ուղարկեց նրանց մեջ, որ նրանք չպետք է ձեռք բարձրացնեին նրանց վրա, կապեին նրանց կամ զցեին բանտ. ո՛չ էլ պետք է քթեին նրանց վրա, ո՛չ էլ ծեծեին նրանց, ո՛չ էլ դուրս զցեին նրանց իրենց ժողովարաններից, ո՛չ էլ խարազանեին նրանց. ո՛չ էլ պետք է քարեր նետեին նրանց վրա, այլ որ նրանք պետք է ազատ մուտք ունենային նրանց տները, և նաև նրանց տաճարները, և նրանց սրբարանները:

3 Եվ այսպես, նրանք կարող էին առաջ գնալ և քարոզել խոսքը՝ ըստ իրենց ցանկության, քանզի թագավորը, և նրա ողջ գերդաստանը դարձի էին եկել առ Տերը. հետևաբար, նա ուղարկեց իր

հրովարտակը երկրով մեկ՝ իր ժողովրդին, որպեսզի Աստծո խոսքը ոչ մի արգելք չունենար, այլ որ այն կարողանար առաջ գնալ ողջ երկրով մեկ, որպեսզի իր ժողովուրդը կարողանար հավաստիանալ իր հայրերի ամբարիշտ «ավանդությունների վերաբերյալ, և որպեսզի նրանք կարողանային հավաստիանալ, որ իրենք բոլորը եղբայրներ էին, և որ նրանք չպետք է սպանեին, ո՛չ էլ թալանեին, ո՛չ էլ գողանային, ո՛չ էլ շնութուն անեին, ո՛չ էլ գործեին որևէ ձևի ամբարշտություն:

4 Եվ այժմ եղավ այնպես, որ երբ թագավորն ուղարկեց այս հրովարտակը, Ահարոնը և իր եղբայրները զնացին առաջ, քաղաքից քաղաք, և պաշտամունքի մի տնից մյուսը, հիմնելով եկեղեցիներ, և երկրով մեկ՝ Լամանացիների մեջ նվիրաբերելով քահանաներ և ուսուցիչներ՝ Աստծո խոսքը նրանց մեջ քարոզելու և սովորեցնելու համար. և այդպես, նրանք սկսեցին մեծ հաջողություն ունենալ:

5 Եվ հազարավորներ բերվեցին Տիրոջ մասին իմացությանը, այո, հազարավորներ բերվեցին՝ հավատալու Նեփիացիների՝ «ավանդություններին. և նրանց սովորեցնում էին՝ ^բհիշատակարանները և մարգարեությունները, որոնք փոխանցվել էին՝ միմյան և մյուսին ժամանակը:

6 Եվ հաստատ, ինչպես կենդանի է Տերը, նույնքան հաստատ է, որ բոլոր նրանք, ովքեր հավատացին, կամ բոլոր նրանք, ովքեր

բերվեցին ճշմարտության իմացությանը՝ Ամմոնի և նրա եղբայրների քարոզելու միջոցով, համաձայն հայտնության և մարգարեության ոգու և Աստծո գործության, գործելով հրաշքներ նրանց մեջ, այո, ես ասում եմ ձեզ, ինչպես կենդանի է Տերը, Լամանացիներից բոլոր նրանք, որ հավատացին նրանց քարոզելուն և ^բդարձի եկան առ Տերը, ^բերբեք չհեռացան:

7 Քանզի նրանք դարձան մի արդար ժողովուրդ. նրանք վայր դրեցին իրենց ապստամբության զենքերը, այնպես որ այլևս չկովեցին Աստծո դեմ, ոչ էլ իրենց եղբայրներից որևէ մեկի դեմ:

8 Արդ, ահա ^բնրանք, ովքեր դարձի բերվեցին առ Տերը՝

9 Լամանացի ժողովուրդը, որն Իսմայելի երկրում էր.

10 Եվ նաև Լամանացի ժողովրդից, որոնք Միդդոնի երկրում էին.

11 Եվ նաև Լամանացի ժողովրդից, որոնք Նեփիի քաղաքում էին.

12 Եվ նաև Լամանացի ժողովրդից, որոնք ^բՍիլոմի երկրում էին, և որոնք Սեմունի երկրում էին և Լեմուելի քաղաքում և Սիմնիլոմ քաղաքում:

13 Եվ սրանք են Լամանացիների քաղաքների անունները, որոնք ^բդարձի եկան առ Տերը. և այդ նրանք են, որ վայր դրեցին իրենց ապստամբության զենքերը, այո, բոլոր իրենց պատերազմի զենքերը, և նրանք բոլորը Լամանացիներ էին:

14 Եվ Ամադեկացիները ^բդարձի չեկան, բացի միայն մեկից. ոչ էլ ^բԱմուդոնացիներից որևէ մեկը.

<p>3ա Ալմա 26.24: 5ա Ալմա 37.19: բ Ալմա 63.12: սո՛ր Սուրբ գրքեր:</p>	<p>6ա ՍՈՒ Դարձի գալ, Նորադարձ: բ Ալմա 27.27: 8ա Ալմա 26.3, 31:</p>	<p>12ա Մոսիա 22.8, 11: 13ա Ալմա 53.10: 14ա Ալմա 24.29: բ Մոսիա 23.31–39:</p>
---	---	---

այլ նրանք կարծրացրեցին իրենց սրտերը, և նաև Լամանացիների սրտերը, երկրի այն մասում, որտեղ նրանք բնակվում էին, այո, և բոլոր նրանց գլխովերում և բոլոր նրանց քաղաքներում:

15 Ուստի, մենք հիշատակեցինք բոլոր Լամանացիների քաղաքները, որոնցում նրանք ապաշխարեցին և եկան ճշմարտության իմացությանը, և դարձի բերվեցին:

16 Եվ այժմ եղավ այնպես, որ թագավորը և նրանք, ովքեր դարձի էին բերվել, փափագում էին, որ ունենային մի անուն, որպեսզի դրանով կարողանային զանազանվել իրենց եղբայրներից. հետևաբար, թագավորը խորհրդակցեց Ահարոնի և նրանց քահանաներից շատերի հետ, այն անվան վերաբերյալ, որ նրանք պիտի վերցնեին իրենց վրա, որպեսզի կարողանային զանազանվել:

17 Եվ եղավ այնպես, որ նրանք կոչեցին իրենց անունները՝ *ՄԱՅԹԻ-ՆԵՓԻ-ԼԵՔԻՆԵՐ*. և նրանք կոչվեցին այս անունով և այլևս չէին կոչվում Լամանացիներ:

18 Եվ նրանք սկսեցին դառնալ մի շատ ջանասեր ժողովուրդ. այո, և նրանք բարեկամական էին Նեփիացիների հետ. հետևաբար, նրանք հարաբերություններ հաստատեցին նրանց հետ և Աստծո *՝անեծքն այլևս չէր հետապնդում նրանց:*

ԳԼՈՒԽ 24

Լամանացիները գալիս են Աստծո ժողովրդի դեմ – Անթի-Նեփի-

Լեքիները ցնծում են Քրիստոսով, և հրեշտակներ են այցելում նրանց – Նրանք նախընտրում են ավելի շատ ենթարկվել մահվան, քան պաշտպանվել – Ավելի շատ Լամանացիներ են դարձի գալիս: Մոտ 90–77թթ. Ք.ծ.ա.:

Եվ եղավ այնպես, որ Ամադեկացիները, Ամուդոնացիները և Լամանացիները, ովքեր Ամուդոնի երկրում էին, և նաև Հելամի երկրում, և ովքեր *՝Յրուսադեմի* երկրում էին, և, ի վերջո, շրջակա ողջ երկրում, ովքեր դարձի չէին եկել, և չէին վերցրել իրենց վրա *՝Անթի-Նեփի-Լեքի* անունը, Ամադեկացիների ու Ամուդոնացիների կողմից բարկության դրդվեցին իրենց եղբայրների դեմ:

2 Եվ նրանց ատելությունը խիստ սաստկացավ նրանց դեմ, նույնիսկ այնքան, որ նրանք սկսեցին ապստամբել իրենց թագավորի դեմ, այնքան, որ նրանք չկամեցան, որ նա իրենց թագավոր լինի. հետևաբար, նրանք վեր առան զենքեր *Անթի-Նեփի-Լեքի* ժողովրդի դեմ:

3 Արդ, թագավորը շնորհեց թագավորությունն իր որդուն, և նա կոչեց նրա անունը *Անթի-Նեփի-Լեքի*:

4 Եվ թագավորը մահացավ ճիշտ նույն տարում, երբ Լամանացիները սկսեցին պատերազմի պատրաստություններ տեսնել Աստծո ժողովրդի դեմ:

5 Այժմ, երբ Ամնոնը և իր եղբայրները և բոլոր նրանք, ովքեր եկել էին նրա հետ, տեսան Լամանացիների պատրաստությունները՝

17ա սու՝ Անթի-Նեփի-Լեքիներ:
18ա 1 Նեփի 2.23,

2 Նեփի 30.5–6,
3 Նեփի 2.14–16:
24 1ա Ալմա 21.1:

p Ալմա 25.1, 13:

կործանելու իրենց եղբայրներին, նրանք եկան առաջ՝ դեպի Մադիանի երկիրը, և այնտեղ Ամնոնը հանդիպեց իր բոլոր եղբայրներին. և այնտեղից նրանք եկան Իսմայելի երկիրը, որպեսզի յխորհուրդ անեին Լամոնիի հետ, և նաև նրա եղբայր Անթի-Նեփի-Լեքիի հետ, թե ինչ պիտի անեին իրենք, Լամանացիներից պաշտպանվելու համար:

6 Արդ, ողջ ժողովրդի մեջ չկար մեկը, որ դարձի եկած լիներ դեպի Տերը, որ կամենար զենք վերցնել իր եղբայրների դեմ. ո՛չ, նրանք նույնիսկ չկամեցան որևէ պատրաստություններ տեսնել պատերազմի համար. այո, և նրանց թագավորը նույնպես հրամայեց նրանց, որ նրանք չպետք է անեն այդ:

7 Արդ, սրանք են այն խոսքերը, որոնք նա ասաց ժողովրդին այդ հարցի վերաբերյալ. Ես շնորհակալ եմ իմ Աստծուն, իմ սիրելի՛ ժողովուրդ, որ մեր մեծ Աստված բարությանը ուղարկել է այս մեր եղբայրներին՝ Նեփիացիներին մեզ մոտ՝ քարոզելու մեզ, և համոզելու մեզ՝ մեր ամբարիշտ հայրերի՝ Կավանդությունների մասին:

8 Եվ ահա, ես շնորհակալ եմ իմ մեծ Աստծուն, որ նա տվել է մեզ իր Հոգուց մի մաս՝ փափկացնելու մեր սրտերը, որ մենք հարաբերություններ ենք հաստատել այս եղբայրների՝ Նեփիացիների հետ:

9 Եվ ահա, ես նաև շնորհակալ եմ իմ Աստծուն, որ այս հարաբերությունները հաստատելով, մենք համոզվեցինք մեր մեղքերի մեջ

և բազմաթիվ սպանությունների, որոնք մենք գործել ենք:

10 Եվ ես նաև շնորհակալ եմ իմ Աստծուն, այո, իմ մեծ Աստծուն, որ նա շնորհ է արել մեզ, որ մենք կարողանանք ապաշխարել այս բաներից, և նաև, որ նա մերել է մեզ այն մեր բազում մեղքերն ու սպանությունները, որոնք մենք գործել ենք, և վերցրել է ՝ հանցանքը մեր սրտերից, իր Որդու արժանիքների միջոցով:

11 Եվ այժմ ահա, իմ եղբայրներ՛ր, քանի որ այն ամենը, ինչ մենք կարող էինք անել (որովհետև մենք ամենակորածն էինք ողջ մարդկությունից)՝ ապաշխարել բոլոր մեր մեղքերից և բազմաթիվ սպանություններից, որոնք մենք գործել ենք, և համոզել Աստծուն՝ վերցնել դրանք մեր սրտերից, քանզի այն ամենը, ինչ մենք կարող էինք անել՝ բավականաչափ ապաշխարել Աստծո առաջ, որպեսզի նա վերացնի մեր արատը,

12 Արդ, իմ ամենասիրելի՛ եղբայրներ, քանի որ Աստված վերացրել է մեր արատները, և մեր սրերը դարձել են փայլուն, եկեք այլևս չարատավորենք մեր սրերը մեր եղբայրների արյունով:

13 Ահա, ես ասում եմ ձեզ. Ո՛չ, եկեք պահենք մեր սրերը, որպեսզի դրանք չարատավորվեն մեր եղբայրների արյունով. քանզի գուցե, եթե մենք նորից արատավորենք մեր սրերը, դրանք այլևս չեն կարողանա ՝ լվացվել փայլուն՝ մեր մեծ Աստծո Որդու արյան միջոցով, որը պիտի թափվի՝ մեր մեղքերի քավության համար:

14 Եվ մեծ Աստված ողորմու-

<p>5ա Ալմա 27.4-13: 7ա Մոսիա 1.5: 9ա Վևո 18.44:</p>	<p>10ա Գալ. Թ.9: բ սուր Մեղավորություն: 11ա Ես. ԾԳ.4-6:</p>	<p>13ա Հայտ. Ա.5:</p>
---	---	-----------------------

քյուն ունեցավ մեր հանդեպ, և հայտնի դարձրեց այս բաները մեզ, որպեսզի մենք չկորչենք. այո, և նա նախօրոք հայտնի է դարձրել այս բաները մեզ, որովհետև նա սիրում է մեր ^ահոգիները, ճիշտ այնպես, ինչպես նա սիրում է մեր զավակներին. հետևաբար, իր ողորմությամբ նա այցելում է մեզ իր հրեշտակների միջոցով, որպեսզի փրկության ^բծրագիրը հայտնի դարձվի մեզ, ինչպես նաև ապագա սերունդներին:

15 Օ՛հ, որքան ողորմած է մեր Աստվածը: Եվ այժմ ահա, քանզի մենք արել ենք այն ամենը, ինչ կարող էինք՝ մեր արատները մեզանից վերացնելու համար, և մեր սրերը դարձվել են փայլուն, եկեք թաքցնենք դրանք, որպեսզի դրանք պահվեն փայլուն, որպես մի վկայություն մեր Աստծուն վերջին օրը կամ այն օրը, երբ մենք պիտի բերվենք՝ կանգնելու նրա առջև դատվելու, որ մենք չենք արատավորել մեր սրերը մեր եղբայրների արյունով, այն ժամանակից ի վեր, երբ նա հաղորդեց իր խոսքը մեզ և դարձրեց մեզ մաքուր դրա միջոցով:

16 Եվ այժմ, իմ եղբայրներ՛ր, եթե մեր եղբայրները ջանում են կործանել մեզ, ահա, մենք հեռու կթաքցնենք մեր սրերը, այո, նույնիսկ կթաղենք դրանք խորը՝ հողի մեջ, որպեսզի դրանք պահվեն փայլուն, որպես մի վկայություն վերջին օրը. որ մենք երբեք չենք գործածել դրանք. և եթե մեր եղբայրները կործանեն մեզ, ահա,

մենք ^ակգնանք մեր Աստծո մոտ և կփրկվենք:

17 Եվ այժմ, եղավ այնպես, որ երբ թագավորը վերջ դրեց այս խոսքերին և ողջ ժողովուրդն ի մի հավաքվեց, նրանք վերցրեցին իրենց սրերը, և բոլոր զենքերը, որոնք գործածվում էին մարդու արյուն թափելու համար, և նրանք ^աթաղեցին դրանք հողի խորքում:

18 Եվ այս նրանք արեցին, դա՛ նրանց տեսակետից լինելով մի վկայություն Աստծուն, և նաև մարդկանց, որ նրանք այլևս ^աերբեք զենքեր չէին գործածելու՝ մարդու արյուն թափելու համար. և այս նրանք արեցին, հաստատելով և ^բուխտելով Աստծո հետ, որ նրանք ավելի շուտ ^գկտային իրենց սեփական կյանքը, քան կթափեին իրենց եղբայրների արյունը. և նրանք ավելի շուտ կտային, քան կվերցնեին եղբորից. և ավելի շուտ, նրանք կտքնեին առատորեն իրենց ձեռքերով, քան կանցկացնեին իրենց օրերն անգործության մեջ:

19 Եվ այսպիսով, մենք տեսնում ենք, որ երբ այս Լամանացիները բերվեցին՝ հավատալու և իմանալու ճշմարտությունը, նրանք ^աանսասան էին, և կտանեին մինչև իսկ մահ, քան կգործեին մեղք. և այսպիսով, մենք տեսնում ենք, որ նրանք թաղեցին իրենց խաղաղության զենքերը, այսինքն՝ թաղեցին պատերազմի զենքերը խաղաղության համար:

20 Եվ եղավ այնպես, որ նրանց եղբայրները՝ Լամանացիները, պատերազմի պատրաստություններ տեսան և եկան Նեփիի

14ա սո՛ւ Հոգի – Հոգու արժեքը:
բ սո՛ւ Փրկագնման ծրագիր:

16ա Ալմա 40.11–15:
17ա Հել. 15.9:
18ա Ալմա 53.11:
բ սո՛ւ Ուխտ:

գ սո՛ւ Չոհաբերություն:
19ա սո՛ւ Հավատք:

երկիրը, թագավորին կործանելու նպատակով, և դնելու մեկ ուրիշին նրա փոխարեն, և նաև, այդ երկրից բնաջնջելու Անթի-Նեփի-Լեթիի ժողովրդին:

21 Այժմ, երբ ժողովուրդը տեսավ, որ նրանք գալիս էին իրենց դեմ, նրանք դուրս եկան դիմավորելու նրանց և երեսն ի վար ՞ընկան զետնին, նրանց առաջ, ու սկսեցին կանչել Տիրոջ անունը. և այսպես, այս վիճակում էին նրանք գտնվում, երբ Լամանացիները սկսեցին հարձակվել նրանց վրա, և սկսեցին սրով սպանել նրանց:

22 Եվ այսպես, չհանդիպելով որևէ դիմադրության, նրանք սպանեցին նրանցից հազարևիիցդին. և մենք գիտենք, որ նրանք օրհնրված են, քանզի նրանք գնացին իրենց Աստծո հետ բնակվելու:

23 Արդ, երբ Լամանացիները տեսան, որ իրենց եղբայրները չէին փախչում սրից, ոչ էլ շրջվում էին մի կողմ՝ աջ կամ ձախ, այլ որ նրանք պառկում էին և ՞մեռնում, և զովաբանում էին Աստծուն, մինչև իսկ հենց սրի տակ մեռնելիս, –

24 Արդ, երբ Լամանացիները տեսան այս, նրանք իրենց ՞գապեցին նրանց սպանելուց. և եղան շատերը, որոնց սրտերը ՞լցվեցին, իրենց եղբայրներից նրանց համար, ովքեր ընկել էին սրի տակ, քանզի նրանք ապաշխարեցին այն բաների համար, որ արել էին:

25 Եվ եղավ այնպես, որ նրանք վայր գցեցին իրենց պատերազմի զենքերը, և նրանք չկամեցան կրկին վերցնել դրանք, քանզի նրանք խղճի խայթ զգացին այն

սպանությունների համար, որոնք նրանք գործել էին. և նրանք վայր ընկան, ճիշտ ինչպես իրենց եղբայրները, ապավինելով նրանց ողորմություններին, ում բազուկները բարձրացվում էին սպանելու իրենց:

26 Եվ եղավ այնպես, որ այն օրն Աստծո ժողովրդին միացան ավելի շատերը, քան այն թվաքանակը, որ սպանվել էին. և նրանք, ովքեր սպանվել էին, արդար մարդիկ էին, հետևաբար, մենք պատճառ չունենք կասկածելու, որ նրանք ՞փրկված են:

27 Եվ սպանվածների մեջ չկար ոչ մի ամբարիշտ մարդ. բայց կային ավելի քան հազարը՝ բերված ճշմարտության իմացությամբ. այսպիսով, մենք տեսնում ենք, որ Տերը գործում է բազում ՞ուղիներով իր ժողովրդի փրկության համար:

28 Այսպիսով, Լամանացիներից առավելագույն մասը, նրանք, ովքեր սպանեցին իրենց եղբայրներից այդքան շատերին՝ Ամադեկացիներ ու Ամուդոնացիներ էին, որոնց մեծ մասն ըստ ՞Նեորի ՞կարգի էին:

29 Այսպիսով, նրանց թվում, ովքեր միացան Տիրոջ ժողովրդին, ՞չկար մեկը, որ լիներ Ամադեկացի կամ Ամուդոնացի, կամ որը լիներ Նեորի կարգից, այլ նրանք Լամանի ու Լեմուելի իսկական հետնորդներն էին:

30 Եվ այսպիսով, մենք կարող ենք հստակորեն տարբերել, որ հետո, երբ մի ժողովուրդ մի ժամանակ ՞լուսավորված է եղել Աստծո

21ա Ալմա 27:3:
23ա Ալմա 26:32:
24ա Ալմա 25:1:
բ սո՛ւ Կարեկցանք:

26ա Հայտ. ԺԳ.13:
27ա Ես. ԾԵ.8–9,
Ալմա 37.6–7:
28ա Ալմա 1.15, 2.1, 20:

բ Ալմա 21.4:
29ա Ալմա 23.14:
30ա Մատ. ԺԲ.45:

Հոգով, և ունեցել է մեծ Բզիտու-
թյուն՝ արդարությանը պատկանող
բաների վերաբերյալ, և հետո
Պեռացել է՝ ընկնելով մեղքի և
օրինազանցության մեջ, նրանք
դառնում են ավելի կարծրացած, և
այսպես, նրանց վիճակը դառնում
է Գավելի վատ, քան, եթե նրանք
երբեք իմացած չլինեին այս
բաները:

ԳԼՈՒԽ 25

*Լամանացիների հարձակումները
ծավալվում են – Նոյի քահանաների
սերունդը ոչնչանում է ինչպես մար-
գարեացել էր Աբիմադին – Շատ
Լամանացիներ դարձի են բերվում
և միանում են Անթի-Նեփի-Լեքիի
ժողովրդին – Նրանք հավատում են
Քրիստոսին և պահում Մովսեսի
օրենքը: Մոտ 90–77թթ. Ք.ծ.ա.:*

Եւ այժմ ահա, եղավ այնպես,
որ այն Լամանացիներն ավելի
բարկացան, որովհետև նրանք
սպանել էին իրենց եղբայրներին.
հետևաբար, նրանք երդվեցին
վրեժ լուծել Նեփիացիներից. և
այդ ժամանակ այլևս փորձ չարե-
ցին սպանել ԳԱնթի-Նեփի-Լեքիի
ժողովրդին:

2 Այլ նրանք վերցրեցին իրենց
գորքերը և անցան Չարահեմլայի
երկրի սահմանների վրայով, և
հարձակվեցին ժողովրդի վրա,
ովքեր Ամմոնիա երկրում էին և
Կործանեցին նրանց:

3 Եվ դրանից հետո, նրանք ու-
նեցան շատ ճակատամարտեր

Նեփիացիների հետ, որոնց ըն-
թացքում բլվեցին ու սպանվեցին:

4 Եվ Լամանացիների մեջ, ովքեր
սպանվել էին, համարյա ողջ Ամու-
ղոնի և նրա եղբայրների բոլոր
Մսերունդն էր, ովքեր Նոյի քահա-
նաներն էին, և նրանք սպանվեցին
Նեփիացիների ձեռքով.

5 Եվ մնացածը, փախած լինելով
դեպի արևելյան անապատը, և
զավթած լինելով իշխանությունը և
իրավունքը Լամանացիների վրա,
կարգադրեցին, որ Լամանացինե-
րից շատերը Մսպանվեին կրակով՝
իրենց հավատքի համար,

6 Քանզի Մնրանցից շատերը, մեծ
կորուստ և այդքան բազում չար-
չարանքներ կրելուց հետո, սկսե-
ցին զարթնեցվել՝ ի հիշողություն
այն Դիտսբերի, որոնք Ահարոնն
ու նրա եղբայրները քարոզել էին
նրանց իրենց երկրում. հետևա-
բար, նրանք սկսեցին չհավատալ
իրենց հայրերի Գավանդություննե-
րին, և հավատացին Տիրոջը, և որ
նա տվել էր մեծ գործություն Նե-
փիացիներին. և այսպիսով, կային
նրանցից շատերը, որ դարձի էին
եկել անապատում:

7 Եվ եղավ այնպես, որ այն
կառավարիչները, ովքեր մնա-
ցորդն էին ՄԱմուղոնի զավակնե-
րի, կարգադրեցին, որ նրանք
Մմահվան դատապարտվեն, այո,
բոլոր նրանք, ովքեր հավատում
էին այս բաներին:

8 Այսպիսով, այս նահատակու-
թյունը պատճառ եղավ, որ նրանց
եղբայրներից շատերը բարկության
դրդվեցին. և անապատում հակա-

30թ Երբ. Ժ.26,
Ալմա 47:36:
q 2 Նեփի 31.14,
Ալմա 9.19:
սուր Ուրացություն:
η Բ Պետ. Բ.20–21:

25 1ա սուր Անթի-Նեփի-
Լեքիներ:
2ա Ալմա 8.16, 16.9:
4ա Մոսիա 23.35:
5ա Մոսիա 17.15:
6ա նշ. Լամանացիներից:

p Ալմա 21.9:
q Ալմա 26.24:
7ա Ալմա 21.3, 24.1, 28–30:
p սուր Նահատակ,
Նահատակություն:

ռակութիւն առաջացավ, և Լամանացիները սկսեցին ^ահետապնդել Ամուղոնի սերնդին ու նրա եղբայրներին և սկսեցին սպանել նրանք. և նրանք փախան դեպի արևելքի անապատը:

9 Եվ ահա, Լամանացիները նրանց հետապնդում են այս օրը: Այսպիսով, Աբինադիի խոսքերն իրականացան, որոնք նա ասել էր քահանաների սերնդի վերաբերյալ, ովքեր կարգադրեցին, որ նա ենթարկվեր կրակով մահվան:

10 Քանզի նա ասել էր նրանց. Ինչ որ դուք ^աանեք ինձ, պիտի լինի գալիք բաների մի օրինակ:

11 Եվ արդ, Աբինադիին առաջինն էր, որ, առ Աստված իր հավատքի համար կրակով ^ամահվան ենթարկվեց. արդ սա այն է, ինչ ի նկատի ունեւր նա, որ շատերը կրակով պիտի ենթարկվեին մահվան, ճիշտ, ինչպես ինքը ենթարկվեց:

12 Եվ նա ասաց Նոյի քահանաներին, որ նրանց սերունդը պիտի կարգադրի շատերին դատապարտելու մահվան, նույն ձևով, ինչպես ինքն էր դատապարտվել, և որ նրանք պիտի ցրվեն ամենուր և սպանվեն, ճիշտ ինչպես հովիվ չունեցող մի ոչխար վայրի գազաններից քշվում է ու սպանվում. և այժմ ահա, այս խոսքերը հաստատվեցին, քանզի նրանք քշվում էին Լամանացիների կողմից և հետապնդվում ու զարկվում էին նրանց կողմից:

13 Եվ եղավ այնպես, որ երբ Լամանացիները տեսան, որ իրենք

չէին կարող հաղթել Նեփիացիներին, նրանք նորից վերադարձան իրենց սեփական երկիրը. և նրանցից շատերը եկան բնակվելու Իսմայելի երկրում, և Նեփիի երկրում, և միացան Աստծո ժողովրդին, որը ^աԱնթի-Նեփի-Լեքիի ժողովուրդն էր:

14 Եվ նրանք նույնպես ^աթաղեցին իրենց պատերազմի զենքերը, ճիշտ ինչպես իրենց եղբայրներն էին արել, և նրանք սկսեցին լինել մի արդարակյաց ժողովուրդ. և նրանք քայլեցին Տիրոջ ուղիներում և պահում-պահպանում էին նրա պատվիրաններն ու նրա կանոնները:

15 Այո, և նրանք պահում էին Մովսեսի օրենքը. քանզի անհրաժեշտ էր, որ նրանք պահեին Մովսեսի օրենքն առայժմ, քանզի այն ամբողջովին չէր իրագործվել: Բայց չնայած Մովսեսի ^աօրենքին, նրանք սպասում էին Քրիստոսի գալստին՝ համարելով, որ Մովսեսի օրենքը նրա գալստյան մի ^բնմուշ էր, և հավատալով, որ իրենք պիտի պահեն այն ^գարտաքին ծիսակատարությունները, մինչև այն ժամանակը, երբ նա հայտնվեր իրենց:

16 Արդ, նրանք չէին կարծում, որ ^ափրկությունը գալիս էր Մովսեսի ^բօրենքի միջոցով. բայց Մովսեսի օրենքը ծառայում էր՝ զորացնելու նրանց հավատքն առ Քրիստոս. և այսպես, նրանք հավատքի միջոցով ^գհույս էին տածում հավերժական փրկության համար, վստահելով մարգարեության ոգուն, որը

<p>8աՄոսիա 17.18: 10աՄոսիա 13.10: 11աՄոսիա 17.13: 13աԱլմա 23.16–17: 14աԱլմա 24.15, 26.32:</p>	<p>15ա Հակոբ 4.5, Հարոմ 1.11: սուր Մովսեսի օրենք: բ Մոսիա 3.14–15, 16.14: գ Մոսիա 13.29–32:</p>	<p>16աՄոսիա 12.31–37, 13.27–33: բ 2 Նեփի 11.4: գ Ա Թեա. Ե.8–9:</p>
---	---	---

խոսում էր այն բաների մասին, որ գալու են:

17 Եվ այժմ, ահա Ամմոնը և Ահարոնը և Օմները և Հիմնին և նրանց եղբայրներն անչափ ցնծում էին այն հաջողության համար, որ նրանք ունեցել էին Լամանացիների մեջ, տեսնելով, որ Տերը, շնորհել էր նրանց՝ համաձայն իրենց *“աղոթքների, և որ նա նաև ամենայն մանրամասնությամբ հաստատել էր իր խոսքը նրանց համար:*

ԳԼՈՒԽ 26

Ամմոնը հրճվում է Տիրոջով – Հավատարիմները գորացվում են Տիրոջ կողմից, և գիտություն է տրվում նրանց – Հավատքով մարդիկ կարող են հազարավոր հոգիների ապաշխարության բերել – Աստված ունի ողջ գործությունը և հասկանում է բոլոր բաները: Մոտ 90–77թթ. Ք.ծ.ա.:

ԵՎ այժմ, սրանք են Ամմոնի խոսքերն իր եղբայրներին, որոնք այսպես են ասում. Իմ եղբայրներ և իմ եղբայրակիցներ, ահա, ես ասում եմ ձեզ, թե ինչպիսի մեծ պատճառ ունենք մենք ցնծալու. քանզի կարո՞ղ էինք մենք ենթադրել, երբ մենք *“*դուրս եկանք Չարահեմլայի երկրից, որ Աստված այսպիսի մեծ օրհնություններ էր մեզ շնորհելու:

2 Եվ այժմ, ես հարցնում եմ, ի՞նչ մեծ օրհնություններ է նա պարգևել մեզ: Կարո՞ղ եք ասել:

3 Ահա, ես պատասխանում եմ ձեր փոխարեն. քանզի մեր եղբայրները՝ Լամանացիները խավարում էին, այո, այսինքն՝ ամենախավար վիհի մեջ, բայց, ահա, *“*նրանցից քանիսն են բերված՝ տեսնելու Աստծո սքանչելի լույսը: Եվ այս է օրհնությունը, որը պարգևեց մեզ, որ մենք Աստծո ձեռքում *Ք*գործիքներ դարձվեցինք՝ իրականացնելու այս մեծ աշխատանքը:

4 Ահա, նրանցից *“*հազարավորները ցնծում են և բերվել են Աստծո փարախը:

5 Ահա, *“*դաշտը հասուն էր, և օրհնված էք դուք, քանզի դուք *Ք*մանգաղը գցեցիք և ձեր գործությամբ հնձեցիք, այո, ողջ օրվա ընթացքում դուք տքնեցիք. և ահա ձեր *Պ*րաների թիվը: Եվ դրանք կհավաքվեն շտեմարանները, որպեսզի չվատնվեն:

6 Այո, վերջին օրը դրանք չեն ծեծկվի մրրիկից, այո՛, ոչ էլ դրանք կցրվեն պտուտահողմերից. բայց երբ *“*մրրիկը գա, դրանք ի մի կհավաքվեն իրենց տեղում, որպեսզի մրրիկը չկարողանա ներթափանցել նրանց մեջ. այո, ոչ էլ դրանք կքշվեն կատաղի քամիներից, որտեղ որ թշնամին է ցանկանում տանել դրանց:

7 Բայց ահա, դրանք *“*բերքահավաքի Տիրոջ ձեռքում են, և դրանք նրանն են, և նա *Ք*կբարձրացնի նրանց վերջին օրը:

8 Օրհնված լինի անունը մեր Աստծո. եկե՛ք *“*գովք երգենք նրան,

17ա Ալմա 17.9:
26 1ա Մոսիա 28.9,
Ալմա 17.6–11:
3ա Ալմա 23.8–13:
բ Բ Կոր. Գ.5,
Մոսիա 23.10:

4ա Ալմա 23.5:
5ա Հովհ. Գ.35–37,
ՎևոՒ 4.4:
բ Հովել Գ.13:
գ ՎևոՒ 33.7–11, 75.2, 5:
6ա Հել. 5.12,

3 Նեփի 14.24–27:
7ա սոՒ Հունձք:
բ Մոսիա 23.22,
Ալմա 36.28:
8ա ՎևոՒ 25.12:

այո, եկե՛ք՝ գոհություն հայտնենք նրա սուրբ անվանը, քանզի նա արդարություն է գործում հավիտյան:

9 Քանզի, եթե մենք դուրս եկած չլինեինք Չարահեմլայի երկրից, այս մեր շատ սիրելի եղբայրները, որոնք այնքան շատ սիրեցին մեզ, դեռ կտանջվեին մեր դեմ՝ ասելությունից, այո, և նրանք կլինեին նաև օտարականներ առ Աստված:

10 Եվ եղավ այնպես, որ երբ Ամնոնն ասաց այս խոսքերը, նրա եղբայր Ահարոնը կշտամբեց նրան՝ ասելով. Ամնոն, ես վախենում եմ, որ ուրախությունդ քեզ տանում է դեպի պարծենկոտություն:

11 Բայց Ամնոնն ասաց նրան. Ես չեմ պարծենում իմ սեփական ուժով, ո՛չ էլ իմ սեփական իմաստությամբ. բայց ահա, իմ ղուրախությունը լիակատար է, այո, իմ սիրտը մինչև պռունկը լցված է ուրախությամբ, և ես կցնծամ իմ Աստծով:

12 Այո՛, ես գիտեմ, որ ես ոչինչ եմ. ինչ վերաբերում է իմ ուժին, ես թույլ եմ. հետևաբար, ես չեմ պարծենա ինձանով, բայց ես կպարծենամ իմ Աստծով, քանզի նրա ղուժով ես կարող եմ անել բոլոր բաները. այո, ահա, մենք բազում հզոր հրաշքներ գործեցինք այս երկրում, որի համար կոզվաբանենք նրա անունը հավիտյան:

13 Ահա, մեր եղբայրներից քանի՛-քանի հազարների նա արձակեց՝ զժողովի ցավերից. և

նրանք բերվել են՝ երգելու քավիչ սերը, և դա՛ նրա խոսքի զորության պատճառով, որը մեր մեջ է, հետևաբար, մի՞թե մենք մեծ պատճառ չունենք ցնծալու:

14 Այո, մենք նրան հավիտյան գովաբանելու պատճառ ունենք, քանզի նա Բարձրյալ Աստվածն է, և արձակել է մեր եղբայրներին դժոխքի՝ շղթաներից:

15 Այո, նրանք շուրջանակի օղակված էին հավիտենական խավարով և կործանմամբ. բայց ահա, նա բերել է նրանց դեպի իր հավիտենական լույսը, այո, դեպի հավիտենական փրկություն. և նրանք շուրջանակի օղակված են նրա սիրո անզուգական առատությամբ. այո, մենք եղել ենք գործիքներ նրա ձեռքում՝ այս մեծ ու զարմանալի գործն անելիս:

16 Հետևաբար, եկեք՝ հրճվենք, այո, մենք՝ կիրճվենք Տիրոջով. քանզի մեր ուրախությունը լիակատար է, այո, մենք կգովաբանենք մեր Աստծուն հավիտյան: Ահա, ո՞վ կարող է անչափ շատ հրճվել Տիրոջով: Այո, ո՞վ կարող է անչափ շատ խոսել նրա մեծ զորության մասին և մարդկանց գավակների հանդեպ նրա զորորմության և նրա երկայնամտության մասին: Ահա, ես ասում եմ ձեզ, ես չեմ կարող արտահայտել փոքրագույն մասն իսկ նրա, ինչ զգում եմ:

17 Ո՞վ կարող էր ենթադրել, որ մեր Աստվածը կլիներ այնքան ողորմած, որ մեզ դուրս կկորզեր

8բ սուր Ընորհակալ, Ընորհակալություն, Գոհաբանություն:
9ա Մոսիս 28.1–2:
11ա Բ Կոր. Է.14:
բ ՎևոՒ 18.14–16:
սուր Ուրախություն:

12ա Երեմ. Թ.24, Ալմա 29.9:
բ Սաղ. ԺԸ.32–40, Փիլ. Գ.13, 1Նեփի 17.3:
13ա սուր Դժոխք:
բ Ալմա 5.26:
14ա Ալմա 12.11:

15ա սուր Լույս, Քրիստոսի լույս:
16ա Հռովմ. ԺԵ.17, Ա Կոր. Ա.31:
բ Բ Կոր. Ժ.15–18, ՎևոՒ 76.61:
գ Սաղ. ԼԶ.5–6:

մեր սուկալի, մեղսավոր և աղտոտված վիճակից:

18 Ահա, մենք առաջ գնացինք, նույնիսկ ցամամք, գորեղ սպառնալիքներով՝ ^ակործանելու նրա եկեղեցին:

19 Օ՛հ, ուրեմն ինչո՞ւ նա չմատնեց մեզ սարսափելի կործանման, այո, ինչո՞ւ նա թույլ չտվեց, որ իր արդարադատության սուրն ընկնի մեզ վրա, և չդատապարտեց մեզ հավերժական հուսահատության:

20 Օ՛հ, իմ հոգին այդ մտքից գրեթե կարծես ճախրում է: Ահա, նա չգործադրեց իր արդարադատությունը մեզ վրա, այլ իր մեծ ողորմածությամբ բերել է մեզ մահվան ու թշվառության այն հավիտենական ^աանդունդի վրայով, մինչև իսկ դեպի փրկությունը մեր հոգիներին:

21 Եվ այժմ ահա, իմ եղբայրներ, ո՞ր ^բբնական մարդն է, որ գիտի այս բաները: Ահա, ես ասում եմ ձեզ, չկա մեկը, որ ^գգիտենա այս բաները, բացի զղջացողից:

22 Այո՛, ով որ ^աապաշխարում է, և ^բհավատք գործադրում, և առաջ է բերում բարի գործեր, և առանց դադարի շարունակ աղոթում է, – այդպիսիներին է տրվում իմանալու Աստծո ^դխորհուրդները. այո, այդպիսիներին կտրվի՝ հայտնելու բաներ, որոնք երբեք չեն հայտնըվել. այո, և այդպիսիներին կտրվի՝ ապաշխարության բերելու հազարավոր հոգիների, ճիշտ ինչպես մեզ տրվեց, որ ապաշխարության բերենք մեր այս եղբայրներին:

23 Արդ, դուք հիշո՞ւմ եք, իմ

եղբայրներ՛ր, երբ Ջարահեմլայի երկրում մենք ասացինք մեր եղբայրներին, որ գնում ենք Նեփիի երկիրը, քարոզելու մեր եղբայրներին՝ Լամանացիներին, և նրանք ծաղրանքով ծիծաղեցին մեզ վրա:

24 Քանզի նրանք ասացին մեզ. Մի՞թե դուք կարծում եք, որ կարող եք Լամանացիներին բերել ճշմարտության իմացությանը: Մի՞թե կարծում եք, որ կարող եք համոզել Լամանացիներին իրենց հայրերի ^աավանդությունների անճշտության մասին, այնպիսի ^բխստապարանոց մի ժողովրդի, ինչպիսին նրանք են. որոնց սրտերը հրճվում են արյուն թափելիս. որոնց օրերն անցել են մեծագույն անօրինության մեջ. որոնց ուղիները սկզբից ի վեր եղել են օրինազանցի ուղիներ: Արդ, իմ եղբայրներ, դուք հիշում եք, որ այսպիսին էր նրանց խոսքը:

25 Եվ դեռ ավելին, նրանք ասացին. Եկե՛ք գեներ վերցնենք նրանց դեմ, որպեսզի երկրից բնաջնջենք նրանց և նրանց անօրինությունը, որ չլինի թե նրանք ասպատակեն և կործանեն մեզ:

26 Բայց ահա, իմ սիրելի՛ եղբայրներ, մենք եկանք անապատ, ոչ թե մեր եղբայրներին կործանելու մտադրությամբ, այլ մտադրությամբ, որ գուցե մենք կարողանանք փրկել նրանցից մի քանիսի հոգիները:

27 Այսպիսով, երբ մեր սրտերն ընկճված էին, և մենք քիչ էր մնում ետ դառնայինք, ահա, Տերը ^ահանգստացրեց մեզ, և ասաց.

18ա Մոսիա 27.8–10:
20ա 2 Նեփի 1.13,
չէլ. 3.29–30:
21ա սու՛ Բնական մարդ:
բ Ա Կոր. Բ.9–16,

Հակոբ 4.8:
22ա Ալմա 36.4–5:
սու՛ Ապաշխարել,
Ապաշխարություն:
բ սու՛ Հավատք:

գ սու՛ Աստծո
խորհուրդները:
24ա Մոսիա 10.11–17:
բ Մոսիա 13.29:
27ա Ալմա 17.9–11:

Գնացե՛ք ձեր եղբայրների՝ Լամանացիների մեջ, և Քհամբերությամբ տարեք ձեր Չարչարանքները, և ես ձեզ հաջողություն կտամ:

28 Եվ այժմ ահա, մենք եկանք, և եղանք նրանց մեջ. և մենք եղանք համբերատար մեր տառապանքներում, և մենք տարանք ամեն զրկանք. այո, մենք ճանապարհորդել ենք տնից տուն՝ ապավինելով աշխարհի ողորմություններին, ոչ միայն աշխարհի ողորմություններին, այլ Աստծո ողորմություններին:

29 Եվ մենք մտել ենք նրանց տները և սովորեցրել նրանց, և մենք սովորեցրել ենք նրանց իրենց փողոցներում. այո, և մենք սովորեցրել ենք նրանց իրենց բլուրների վրա. և մենք նաև մտել ենք նրանց տաճարներն ու նրանց ժողովարանները, և սովորեցրել նրանց. և մեզ դուրս են գցել ու ծաղրել և թքել են ու ապտակել մեր այտերին. և մեզ քարկոծել են և բռնել և կապել ամուր պարաններով, և բանտ գցել. և Աստծո զորության և իմաստության միջոցով մենք կրկին ազատվել ենք:

30 Եվ մենք տարել ենք ամեն ձևի չարչարանքներ, և այս բոլորը, որպեսզի, միգուցե, մենք կարողանայինք լինել որոշ հոգիների փրկելու միջոց. և մենք կարծում էինք, որ մեր Պուրախությունը լիակատար կլիներ, եթե միայն մենք կարողանայինք լինել ոմանց փրկելու միջոցը:

31 Արդ ահա, մենք կարող ենք նայել ու տեսնել մեր գործերի պտուղները. և մի՞թե դրանք քիչ

են: Ես ասում եմ ձեզ՝ Ո՛չ, դրանք չափազանց են, այո, և մենք կարող ենք ակամատես լինել նրանց անկեղծությանը, իրենց սիրո պատճառով՝ հանդեպ իրենց եղբայրները և նաև հանդեպ մեզ:

32 Քանզի ահա, նրանք գերադասեցին ավելի շուտ Պոհաբերել իրենց կյանքը, քան վերցնել նույնիսկ իրենց թշնամու կյանքը. և նրանք Քթաղել են իրենց պատերազմի գեները խորը՝ հողի մեջ, իրենց եղբայրների հանդեպ իրենց սիրո պատճառով:

33 Եվ այժմ, ահա ես ասում եմ ձեզ, եղե՛ք է այդպիսի մեծ սերբոլոր երկրում: Ահա, ես ասում եմ ձեզ. Ո՛չ, չի՛ եղել, նույնիսկ Նեփիացիների մեջ:

34 Քանզի ահա, նրանք կարող էին գենք բարձրացնել իրենց եղբայրների դեմ. նրանք չէին հանդուրժի սպանվել: Բայց ահա, սրանցից քանիսը վայր դրեցին իրենց կյանքը. և մենք գիտենք, որ նրանք գնացել են իրենց Աստծո մոտ, իրենց սիրո և մեղքի հանդեպ իրենց ատելության պատճառով:

35 Արդ, մի՞թե մենք պատճառ չունենք ցնծալու: Այո, ես ասում եմ ձեզ, այն ժամանակից ի վեր, երբ աշխարհը եղավ, երբեք չեն եղել մարդիկ, որ ցնծալու այնպիսի մեծ պատճառ ունենային, ինչպես մենք. այո, և իմ ուրախությունը վերածվել է մինչև իսկ պարծենկոտության՝ իմ Աստծով. քանզի նա ունի ողջ Պորությունը, ողջ իմաստությունը և ողջ հասկացողությունը. նա Քըմբնում է բոլոր բաները, և նա Գողորմած Էակ է,

27բ սուր Համբերություն:
գ Ալմա 20.29–30:
սուր Զախորդություն:
30ա Վևու 18.15–16:

31ա Ալմա 23.8–13:
32ա Ալմա 24.20–24:
բ Ալմա 24.15:
35ա սուր Զորություն:

բ Վևու 88.41:
գ սուր Ողորմած,
Ողորմություն:

մինչև իսկ ի փրկություն նրանց, ովքեր կապաշխարեն ու կհավատան նրա անունին:

36 Արդ, եթե այս պարծենկոտություն է, միևնույն է, կպարծենամ ես. քանզի սա է իմ կյանքը և իմ լույսը, իմ ուրախությունը և իմ փրկությունը, և իմ փրկագնումը հավիտենական վայից: Այո՛, օրհնված է անունն իմ Աստծո, որը հիշում է այս ժողովրդին, որը Իսրայելի ծառի մի ^աճյուղն է և կորել է նրա մարմնից մի օտար երկրում. այո, ես ասում եմ՝ թող օրհնվի անունն իմ Աստծո, որը հիշում է մեզ՝ ^բթափառականներիս, մի օտար երկրում:

37 Արդ, իմ եղբայրներ՛, մենք տեսնում ենք, որ Աստված հիշում է ամեն ^աժողովրդի, ինչ երկրում էլ որ նրանք լինեն. այո, նա հաշվում է իր ժողովրդին, և նրա գթասրբությունը ողջ երկրի վրա է: Այսպիսով, սա է իմ մեծ ուրախությունը, և իմ մեծ գոհությունը, այո, և ես գոհություն կհայտնեմ իմ Աստծուն հավիտյան: Ամեն:

ԳԼՈՒԽ 27

Տերը պատվիրում է Ամմոնի առաջնորդել Անթի-Նեփի-Լեքիի ժողովրդին դեպի անվտանգություն – Հանդիպելով Ալմային, Ամմոնն ուրախությունից ուժասպառ է լինում – Նեփիացիները տալիս են Երսունի երկիրը Անթի-Նեփի-Լեքիներին – Նրանք կոչվում են Ամմոնի ժողովուրդ: Մոտ 90–77թթ. Ք.ծ.ս.:

Արդ, եղավ այնպես, որ երբ այն

Լամանացիները, ովքեր գնացել էին պատերազմելու Նեփիացիների դեմ՝ կործանելու նրանց, իրենց բազում ջանքերից հետո պարզեցին, որ գուր էին ձգտել նրանց կործանմանը, նրանք կրկին վերադարձան Նեփիի երկիրը:

2 Եվ եղավ այնպես, որ Ամադեկացիներն իրենց կորուստների պատճառով անշափ զայրացած էին: Եվ երբ նրանք տեսան, որ չէին կարող վրեժ հանել Նեփիացիներից, նրանք ժողովրդին սկսեցին բարկության դրդել իրենց ^աեղբայրների՝ ^բԱնթի-Նեփի-Լեքիի ժողովրդի դեմ. հետևաբար, նրանք սկսեցին նորից կործանել նրանց:

3 Այսպիսով, այս ժողովուրդը ^ակրկին հրաժարվեց վերցնել իրենց զենքերը, և նրանք թույլ էին տալիս սպանվել՝ ըստ իրենց թշնամիների ցանկության:

4 Այժմ, երբ Ամմոնը և նրա եղբայրները տեսան այս կործանման գործը նրանց մեջ, ում նրանք այնքան շատ սիրում էին, և նրանց մեջ, ովքեր այնքան շատ սիրում էին իրենց, քանզի նրանց հետ վերաբերվում էին այնպես, կարծես թե նրանք հրեշտակներ լինեին՝ ուղարկված Աստծո կողմից, փրկելու նրանց հավիտենական կործանումից, հետևաբար, երբ Ամմոնը և նրա եղբայրները տեսան այս մեծ կործանման գործը, նրանց գուրը շարժվեց, և նրանք ^աասացին թագավորին.

5 Եկե՛ք ի մի հավաքենք Տիրոջ այս ժողովրդին, և եկե՛ք վարզմանը դեպի Չարահեմվայի երկիրը, մեր եղբայրների՝ Նեփիացի-

36աԾն. ԽԹ.22–26, Հակոբ 2.25, 5.25:
բ Հակոբ 7.26:
37աԳոր. Ժ.34–35,

2 Նեփի 26.33:
27 ա Ալմա 43.11:
բ Ալմա 25.1:
սու Անթի-Նեփի-

Լեքիներ:
3ա Ալմա 24.21–26:
4ա Ալմա 24.5:

ների մոտ, և դուրս փախչենք մեր քշնամիների ձեռքից, որպեսզի մենք չկործանվենք:

6 Բայց թագավորն ասաց նրանց. Ահա, Նեփիացիները կկործանեն մեզ, այն բազում սպանությունների և մեղքերի համար, որ մենք գործել ենք նրանց դեմ:

7 Եվ Ամմոնն ասաց. Ես կզնամ և կտեղեկանամ Տիրոջից, և եթե նա ասի մեզ, որ գնանք վար՝ մեր եղբայրների մոտ, արդյոք դուք կզնամ^ք:

8 Եվ թագավորն ասաց նրան. Այո՛, եթե Տերն ասի մեզ՝ գնացե՛ք, մենք կզնամք վար՝ մեր եղբայրների մոտ, և մենք կլինենք նրանց ստրուկները, մինչև որ փոխհատուցենք նրանց այն բազում սպանությունների և մեղքերի համար, որոնք մենք գործել ենք նրանց դեմ:

9 Բայց Ամմոնն ասաց նրան. Սա մեր եղբայրների օրենքին դեմ է, որը հաստատվել էր իմ հոր կողմից, որ ^աստրուկներ լինեն իրենց մեջ. հետևաբար, եկեք գնանք վար և ասավիճենք մեր եղբայրների ողորմությանը:

10 Բայց թագավորն ասաց նրան. Տեղեկացեք Տիրոջից, և եթե նա մեզ ասի՝ գնացե՛ք, մենք կզնամք. հակառակ դեպքում, մենք կմեռնենք այս երկրում:

11 Եվ եղավ այնպես, որ Ամմոնը գնաց և տեղեկացավ Տիրոջից, և Տերն ասաց նրան.

12 Այս ժողովրդին դուրս հանիր այս երկրից, որպեսզի նրանք չմեռնեն. քանզի Սատանան մեծ ազդեցություն ունի Ամադեկացիների սրտերի վրա, ովքեր Լամանացիներին բարկության են դրդում իրենց եղբայրների դեմ՝

նրանց սպանելու համար. հետևաբար, դուրս եկեք այս երկրից. և օրհնված է այս ժողովուրդն այս սերնդում, քանզի ես կպահպանեմ նրանց:

13 Եվ այժմ, եղավ այնպես, որ Ամմոնը գնաց և ասաց թագավորին բոլոր խոսքերը, որոնք Տերն ասել էր նրան:

14 Եվ նրանք ի մի հավաքեցին իրենց ողջ ժողովրդին, այո, Տիրոջ ողջ ժողովրդին, և ի մի հավաքեցին բոլոր իրենց հոտերն ու նախիրները, և հեռացան երկրից դուրս, և եկան դեպի անապատը, որը Նեփիի երկիրը բաժանում էր Չարահեմլայի երկրից, և հասան երկրի սահմանների մոտ:

15 Եվ եղավ այնպես, որ Ամմոնն ասաց նրանց. Ահա, ես և իմ եղբայրները կզնամք առաջ՝ Չարահեմլայի երկիրը, և դուք պետք է մնաք այստեղ, մինչև մենք վերադառնանք. և մենք կփորձենք մեր եղբայրների սրտերը, թե արդյո՞ք նրանք կկամենան, որ դուք մտնեք նրանց երկիրը:

16 Եվ եղավ այնպես, որ երբ Ամմոնն առաջ էր գնում դեպի երկրի խորքը, նա և իր եղբայրները հանդիպեցին Ալմային այն ^ավայրով անցնելիս, որի մասին խոսվել է. և ահա, սա մի ուրախ հանդիպում էր:

17 Արդ, Ամմոնի ^աուրախությունն այնքան մեծ էր, որ ուղղակի լիովի էր. այո, նա կուլ էր գնացել ուրախությանն իր Աստծո, մինչև իսկ իր ^բուժասպառ լինելը. և նա ^գնորից ընկավ գետնին:

18 Արդ, մի՞թե սա անասհման ուրախություն չէր: Ահա, սա ուրախություն է, որը ոչ ոք չի ստանում,

9ա Մոսիա 2.13, 29.32,
38, 40:

16ա Ալմա 17.1–4:
17ա ՍՈՒ Ուրախություն:

բ 1 Նեփի 1.7:
գ Ալմա 19.14:

բացի ճշմարիտ զոջացողից և երջանկության խոնարհ որոնողից:

19 Արդ, Ալմայի ուրախությունը, իր եղբայրներին հանդիպելիս, իսկապես, մեծ էր, և նաև Ահարոնի, Օմների և Հիմնիի ուրախությունը. բայց ահա, նրանց ուրախությունն այնպիսին չէր, որ գերազանցեր իրենց ուժը:

20 Եվ այժմ, եղավ այնպես, որ Ալման առաջնորդեց իր եղբայրներին ետ՝ դեպի Ջարահեմլայի երկիրը. այսինքն՝ դեպի իր սեփական տունը: Եվ նրանք գնացին և՞ «գլխավոր դատավորին պատմեցին այն բոլորը, ինչ Նեփիի երկրում պատահել էր նրանց հետ, իրենց եղբայրների՝ Լամանացիների մեջ:

21 Եվ եղավ այնպես, որ գլխավոր դատավորն ուղարկեց մի հրովարտակ, ողջ երկրով մեկ, փափագելով ժողովրդի ձայնն իրենց եղբայրներին ընդունելու վերաբերյալ, որոնք Անթի-Նեփի-Լեքիի ժողովուրդն էին:

22 Եվ եղավ այնպես, որ ժողովրդի ձայնը եկավ՝ ասելով. Ահա, մենք կհանձնենք Երսոնի երկիրը, որն արևելքում է՝ ծովին մոտ, որը միանում է Լիառատ երկրին, որը Լիառատ երկրից դեպի հարավ է. և այս Երսոն երկիրն այն երկիրն է, որը մենք կտանք մեր եղբայրներին՝ որպես ժառանգություն:

23 Եվ ահա, մենք կդնենք մեր զորքերը Երսոնի երկրի և Նեփիի երկրի միջև, որպեսզի մենք կարողանանք պաշտպանել մեր եղբայրներին Երսոնի երկրում. և այս մենք անում ենք մեր եղբայրների համար՝ իրենց եղբայրների դեմ գեներ վերցնելու նրանց վախի

պատճառով, որ չլինի թե իրենք մեղք գործեն. և այս նրանց մեծ վախը եկել է իրենց դառն ապաշխարության պատճառով, որ նրանք ունեցել են իրենց բազում սպանությունների և իրենց սուկալի ամբարշտության պատճառով:

24 Եվ այժմ, ահա, այս մենք կանենք մեր եղբայրների համար, որպեսզի նրանք կարողանան ժառանգել Երսոնի երկիրը. և մենք մեր զորքերով կպաշտպանենք նրանց իրենց թշնամիներից, պայմանով, որ նրանք մեզ բաժին տան իրենց ստացվածքից, օժանդակելու մեզ, որպեսզի մենք կարողանանք կերակրել մեր զորքերին:

25 Արդ, եղավ այնպես, որ երբ Ամմոնը լսեց այս, նա վերադարձավ Անթի-Նեփի-Լեքիի ժողովրդի մոտ. և Ալման և՞ նրա հետ, դեպի անապատ, որտեղ նրանք խփել էին իրենց վրանները, և նրանք հայտնի դարձրեցին նրանց բոլոր այս բաները: Եվ Ալման նաև պատմեց նրանց՝ իր, Ամմոնի, և Ահարոնի, և իր եղբայրների հետ միասին՝ «դարձի գալու մասին:

26 Եվ եղավ այնպես, որ դա մեծ ուրախություն առաջացրեց նրանց մեջ: Եվ նրանք գնացին վար՝ դեպի Երսոնի երկիրը, և վերցրեցին Երսոնի երկրի տիրապետությունը. և նրանք Նեփիացիների կողմից կոչվեցին Ամմոնի ժողովուրդ. հետևաբար, նրանք տարբերվում էին այդ անվամբ այն ժամանակից ի վեր:

27 Եվ նրանք Նեփիի ժողովրդի հետ էին, և նաև համարվում էին այն ժողովրդի հետ, ովքեր Աստծո եկեղեցուց էին: Եվ նրանք նաև տարբերվում էին իրենց ջերմե-

ռանդությամբ առ Աստված և նաև հանդեպ մարդկանց. քանզի նրանք կատարելապես ՝ազնիվ և ուղղամիտ էին բոլոր բաներում. և նրանք ՝հաստատուն էին Քրիստոսի հավատքում, նույնիսկ մինչև վերջ:

28 Եվ նրանք նայում էին իրենց եղբայրների արյուն թափելու վրա մեծ նողկանքով. և նրանց երբեք հնարավոր չէր համոզել՝ զենք վերցնել իրենց եղբայրների դեմ. և նրանք երբեք չէին նայում մահվան վրա սարսափի որևէ աստիճանով, իրենց հույսի և Քրիստոսի մասին պատկերացումների ու հարության պատճառով. հետևաբար, նրանց համար մահը կուլ էր գնացել Քրիստոսի հաղթանակով:

29 Հետևաբար, նրանք ավելի շուտ ՝մահ կտանեին ամենադաժան և տանջալից ձևով, որը կարող էր հասցվել իրենց եղբայրների կողմից, քան սուր կամ թուր կվերցնեին՝ զարկելու նրանց:

30 Եվ այսպիսով, նրանք մի ջերմեռանդ և սիրված ժողովուրդ էին, Տիրոջ մեծապես արտոնյալ մի ժողովուրդ:

ԳԼՈՒԽ 28

Լամանացիները պարտվում են մի զարհուրելի ճակատամարտում – Տասնյակ հազարավորներ սպանվում են – Ամբարիշտները մատնրվում են անվերջ վայի մի վիճակի. արդարները ձեռք են բերում երբեք չվերջացող երջանկություն: Մոտ 77–76թթ. Ք.ծ.ա.:

ԵՎ այժմ, եղավ այնպես, որ հետո,

երբ Ամնոնի ժողովուրդը հաստատվել էր ՝Երսոնի երկրում, և նաև մի եկեղեցի հաստատել Երսոնի երկրում, և Նեփիացիների զորքերը տեղաբաշխված էին Երսոնի երկրի շուրջըլորը, այո, բոլոր սահմաններում՝ Չարահեմլայի երկրի շուրջըլորը. ահա, Լամանացիների զորքերը հետապնդել էին իրենց եղբայրներին անպատում:

2 Եվ այսպես, տեղի ունեցավ մի զարհուրելի ճակատամարտ. այո, նույնիսկ այնպիսին, որ երբեք չէր իմացվել երկրում՝ բոլոր ժողովրդի մեջ, այն ժամանակից ի վեր, ինչ Լեքին թողել էր Երուսաղեմը. այո, և տասնյակ հազարավոր Լամանացիներ սպանվեցին և ցրվեցին ամենուրեք:

3 Այո, և Նեփիի ժողովրդի մեջ նույնպես տեղի ունեցավ մի զարհուրելի կոտորած. այնուամենայնիվ, Լամանացիները ՝քվեցին ու ցրվեցին, և Նեփիի ժողովուրդը կրկին վերադարձավ իր երկիրը:

4 Եվ այժմ, սա մի ժամանակ էր, երբ ամբողջ երկրով մեկ Նեփիի ողջ ժողովրդի մեջ, լսվում էր մի մեծ սուգ ու շիվան,

5 Այո, այրիների լացը՝ սզալով իրենց ամուսինների համար, և նաև հայրերինը, որ սզում էին իրենց որդիների համար, և դուստրերինը՝ եղբայրների համար, այո, եղբայրը՝ հոր համար. և այսպես, սզի լացը լսվում էր նրանց բոլորի մեջ, սզալով իրենց ազգականների համար, ովքեր սպանվել էին:

6 Եվ այժմ, իհարկե, սա մի տրտում օր էր. այո, լրջախոսության մի ժամանակ, և շատ

27ա սուր Ազնիվ, Ազնվություն:

բ Ալմա 23.6: 29ա Ալմա 24.20–23:

28 1ա Ալմա 27.22, 30.1, 19: 3ա Ալմա 30.1:

«ծոնապահության ու աղոթքի մի ժամանակ:

7 Եվ այսպես է վերջանում դատավորների կառավարման տասնհինգերորդ տարին Նեփիի ժողովրդի վրա:

8 Եվ սա է Ամնոնի և նրա եղբայրների պատմությունը, նրանց ճանփորդությունները Նեփիի երկրում, նրանց տառապանքները երկրում, նրանց վշտերը և նրանց չարչարանքները, և նրանց «անըմբռնելի ուրախությունը, և Երսոնի երկրում իրենց եղբայրների ընդունումը և անվտանգությունը: Եվ արդ, թող Տերը՝ բոլոր մարդկանց Քավիչը, օրհնի նրանց հոգիները հավիտյան:

9 Եվ այս է պատերազմների և հակառակությունների պատմությունը Նեփիի ժողովրդի մեջ, և նաև պատերազմները Նեփիացիների և Լամանացիների միջև. և ավարտվեց դատավորների կառավարման տասնհինգերորդ տարին:

10 Եվ առաջինից մինչև տասնըհինգերորդ տարիները շատ հազարավոր կյանքերի կործանում բերեցին. այո, տեղի ունեցավ արյունահեղության մի սուսկալի տեսարան:

11 Եվ շատ հազարավորների մարմինները վայր են դրվում հողի մեջ, մինչդեռ շատ հազարավորների մարմինները «փառում են կույտերով երկրի երեսին. այո, և շատ հազարավորներ ^բսգում են իրենց ազգականների կորուստը, որովհետև նրանք պատճառ ունեին վախենալու, համաձայն Տիրոջ

խոստումների, որ նրանք մատնրված են անվերջ վայի մի վիճակի:

12 Մինչդեռ շատ հազարավոր ուրիշներ սգում են իրենց ազգականների կորուստը, սակայն նրանք ցնծում են և հրճվում հույսով, և նույնիսկ գիտեն, Տիրոջ «խոստումների համաձայն, որ նրանք բարձրացվել են՝ ապրելու Աստծո աջ կողմում, երբեք չվերջացող երջանկության մի վիճակում:

13 Եվ այսպիսով, մենք տեսնում ենք, թե որքան մեծ է մարդկանց «անհավասարությունը՝ մեղքի և օրինազանցության պատճառով, և դևի զորության, որը գալիս է խորամանկ ^բծրագրերով, որոնք նա հորինել է՝ թակարդելու մարդկանց սրտերը:

14 Եվ այսպես, մենք տեսնում ենք մեծ կոչ մարդկանց՝ ջանասիրությամբ տքնել Տիրոջ «այգիներում. և այսպես, մենք տեսնում ենք վշտի մեծ պատճառ, և նաև ցնծության, վիշտ՝ մահվան և մարդկանց մեջ կործանման պատճառով, և ուրախություն ի կյանք՝ Քրիստոսի ^բլույսի պատճառով:

ԳԼՈՒԽ 29

Ալման հրեշտակային ջերմեռանդությամբ ցանկանում է ապաշխարություն աղաղակել – Տերն ուսուցիչներ է շնորհում բոլոր ազգերին – Ալման հրճվում է Տիրոջ գործով և Ամնոնի ու նրա եղբայրների հաջողությամբ: Մոտ 76թ. Ք.ծ.ա.:

Ա՛յ, երանի ես մի հրեշտակ լինեի,

6ա Ալմա 30.2:
8ա Ալմա 27.16–19:
11ա Ալմա 16.11:
բ Ալմա 48.23,

ՎԼՈՒ 42.45–46:
12ա Ալմա 11.41:
13ա 1 Նեփի 17.35:
բ 2 Նեփի 9.28:

14ա սո՛ւ Տիրոջ այգին:
բ սո՛ւ Լույս, Քրիստոսի լույս:

և կարողանայի ունենալ իմ սրտի իղձը, որ ես առաջ գնայի և խոսեի Աստծո փողով, երկիրը ցնցելու ձայնով, և ապաշխարություն աղաղակեի ամեն ժողովրդի:

2 Այո, ես ամեն հոգու կհայտարարեի, որոտի ձայնի պես, ապաշխարություն և փրկագնման ծրագիրը, որպեսզի նրանք ապաշխարեին և ^ագային դեպի մեր Աստվածը, որպեսզի ողջ երկրի երեսին այլևս վիշտ չլիներ:

3 Բայց ահա, ես մարդ եմ և մեղանչում եմ իմ իղձում. քանզի ես պետք է գոհ լինեմ այն բաների համար, որոնք Տերը բաշխել է ինձ:

4 Ես չպետք է իմ ցանկություններով տակնուվրա անեմ անխախտ հրամանն արդար Աստծո, քանզի ես գիտեմ, որ նա մարդկանց շնորհում է ըստ իրենց ^ացանկության, լինի դա ի մահ, թե ի կյանք. այո, ես գիտեմ, որ նա մարդկանց բաժին է տալիս, այո, նրանց համար հրամանագրեր է հրամանագրում, որոնք անփոփոխելի են, ըստ նրանց ^բկամքի, լինեն դրանք ի փրկություն, թե ի կործանում:

5 Այո, ես գիտեմ, որ բարին ու չարը եկել են բոլոր մարդկանց առաջ. նա, որ բարին չի զանազանում չարից, անմեղ է. բայց նա, որ բարին ^ազանազանում է չարից, նրան տրվում է՝ համաձայն իր ցանկությունների, արդյոք նա ցանկանում է բարի, թե չար, կյանք, թե մահ, ուրախություն, թե ^բխղճի խայթ:

6 Արդ, տեսնելով, որ ես գիտեմ այս բաները, ինչո՞ւ պետք է ես

ցանկանամ ավելին, քան այն գործը կատարելը, որին կանչված եմ:

7 Ինչո՞ւ պետք է ես ցանկանամ հրեշտակ լինել, որպեսզի կարողանամ խոսել աշխարհի բոլոր ծայրերի համար:

8 Քանզի, ահա, Տերը շնորհում է ^աբոլոր ազգերին, իրենց սեփական ազգից և ^բլեզվից, սովորեցնելու իր խոսքը, այո, իմաստությամբ, այն բոլորը, որ նա հարմար է ^գտեսնում, որ նրանք ունենան. հետևաբար, մենք տեսնում ենք, որ Տերը խրատում է իմաստությամբ, համաձայն նրա, ինչ արդար է ու ճշմարիտ:

9 Ես գիտեմ այն, ինչ Տերը պատվիրել է ինձ, և հրճվում եմ դրանով: Ես չեմ ^ահրճվում ինձանով, այլ հրճվում եմ նրանով, ինչ Տերը պատվիրել է ինձ. այո, և սա է իմ հրճվանքը, որ գուցե կարողանամ Աստծո ձեռքում գործիք լինել, որ ինչ-որ մի հոգու ապաշխարության բերեմ. և այս է իմ ուրախությունը:

10 Եվ ահա, երբ ես տեսնում եմ իմ եղբայրներից շատերին՝ իսկապես զղջացող, և եկող դեպի Տերը՝ իրենց Աստվածը, այդ ժամանակ է իմ հոգին լցվում ուրախությամբ. այդ ժամանակ եմ ես հիշում, թե ^աինչ է Տերն արել ինձ համար, այո, հենց այն, որ նա լսել է իմ աղոթքը. այո, այդ ժամանակ ես հիշում եմ նրա ողորմած բազուկը, որը նա մեկնեց դեպի ինձ:

11 Այո, և ես նաև հիշում եմ իմ հայրերի գերությունը. քանզի ես հաստատ գիտեմ, որ ^աՏերն ազատեց նրանց՝ ճորտությունից և սրա-

29 *ա* Օմնի 1.26,
3 Նեփի 21.20:
4 *ա* Սաղ. 1է.4:
բ սո՛ւ Կամբի
ազատություն:
5 *ա* 2 Նեփի 2.18, 26,

Մոր. 7.15-19:
սո՛ւ Ջանագանելու
պարգև:
բ սո՛ւ Խղճմտանք:
8 *ա* 2 Նեփի 29.12:
բ Վևո՛ւ 90.11:

գ Ալմա 12.9-11:
9 *ա* Ալմա 26.12:
10 *ա* Մոսիա 27.11-31:
11 *ա* Մոսիա 24.16-21,
Ալմա 5.3-5:

նով հիմնեց իր եկեղեցին. այո, Տեր Աստվածը՝ Աբրահամի Աստվածը Իսահակի Աստվածը և Հակոբի Աստվածը, ազատեց նրանց ճորտությունից:

12 Այո, ես միշտ հիշել եմ իմ հայրերի գերությունը. և այն նույն Աստվածը, որն ազատել էր նրանց Եգիպտացիների ձեռքից, ազատեց նրանց ճորտությունից:

13 Այո, և այդ նույն Աստվածն է ստեղծել իր եկեղեցին նրանց մեջ. այո, և այդ նույն Աստվածն է սուրբ կոչումով կանչել ինձ՝ իր ժողովրդին քարոզելու խոսքը, և տվել է ինձ մեծ հաջողություն, որում իմ նորախոսությունը լիուլի է:

14 Բայց ես չեմ ուրախանում իմ սեփական հաջողությամբ միայն, այլ իմ ուրախությունն ավելի լիուլի է իմ եղբայրների հաջողության պատճառով, ովքեր եղել են Նեփիի երկրում:

15 Ահա, նրանք չափից դուրս տքնեցին, և առաջ բերեցին շատ պտուղ. և որքան մեծ կլինի նրանց վարձքը:

16 Այժմ, երբ ես մտածում եմ իմ այս եղբայրների հաջողության մասին, իմ հոգին տարվում է հեռուն, մինչև իսկ կարծես թե անջատվելն իմ մարմնից, այնքան մեծ է իմ ուրախությունը:

17 Եվ այժմ, թող Աստված տա իմ այս եղբայրներին, որ նրանք կարողանան նստել Աստծո արքայությունում. այո, և նաև բոլոր նրանց, ովքեր նրանց ջանքերի պտուղն են, որ նրանք այլևս դուրս չգնան, այլ որ նրանք կարողանան գովք անել նրան հավիտյան: Եվ թող Աստված տա, որ դա արվի՝

համաձայն իմ խոսքերի, ճիշտ ինչպես ես խոսեցի: Ամեն:

ԳԼՈՒԽ 30

Կորիհորը՝ հակաքրիստոսը, ծաղրում է Քրիստոսին, Քալուսությունը, և մարգարետության ոգին – Նա սովորեցնում է, որ չկա Աստված, չկա մարդու անկում, չկա մեղքի համար տույժ, և չկա Քրիստոս – Ալման վկայում է, որ Քրիստոսը կգա, և որ բոլոր բաները մատնանշում են, որ կա Աստված – Կորիհորը պահանջում է մի նշան և զարկվում է համբուսությամբ – Դևը հայտնվել էր Կորիհորին, որպես հրեշտակ, և սովորեցրել նրան ինչ ասել – Կորիհորը ոտնակոխ է արվում և մեռնում: Մոտ 76–74թթ. Ք.ծ.ա.:

ԱՀԱ, այժմ եղավ այնպես, որ Ամնոնի ժողովուրդը Երսոնի երկրում հաստատվելուց հետո, այո, և նաև Լամանացիներին երկրից դուրս քշելուց, և երկրի ժողովուրդը նրանց մեռելներին քաղելուց հետո,

2 Արդ, նրանց մեռելներին չէին հաշվում՝ նրանց թվի մեծության պատճառով. ոչ էլ հաշվում էին Նեփիացիների մեռելներին, բայց եղավ այնպես, իրենց մեռելներին քաղելուց հետո, և նաև ծոմապահության, և սգի, և աղոթքի օրերից հետո (և դա Նեփիի ժողովրդի վրա դատավորների կառավարման տասնհինգերորդ տարում էր), սկսվեց մի անընդհատ խաղաղություն ողջ երկրով մեկ:

3 Այո, և ժողովուրդը պահում-պահպանում էր Տիրոջ պատվի-

12աԵլ. ԺԳ.30–31:
13աՎևոՒ 18.14–16:
14աԱլմա 17.1–4:

30 1ա Ալմա 27.25–26:
սու՝ Անթի-Նեփի-
Լեքիներ:

բ Ալմա 28.1–3:

բանները. և նրանք խիստ էին Աստծո՝ արարողություններին հետևելիս՝ ըստ Մովսեսի օրենքի. քանզի նրանց սովորեցվում էր ԲԿԿԿՆԵՆԻ Մովսեսի օրենքը, մինչև որ այն իրագործվեր:

4 Եվ այսպիսով, ժողովուրդը չունեցավ ոչ մի խռովություն Նեփիի ժողովրդի վրա դատավորների կառավարման ողջ տասնըվեցերորդ տարում:

5 Եվ եղավ այնպես, որ դատավորների կառավարման տասնյոթերորդ տարվա սկզբում տիրում էր անընդհատ խաղաղություն:

6 Բայց եղավ այնպես, տասնյոթերորդ տարվա ուշ վերջին, մի մարդ եկավ Չարահեմլայի երկիրը, և նա՝ հակաքրիստոս էր, քանզի նա սկսեց քարոզել ժողովրդին մարգարեությունների դեմ, որոնք խոսվել էին մարգարեների կողմից՝ Քրիստոսի գալստի վերաբերյալ:

7 Արդ, մարդու՝ հավատքի դեմ ոչ մի օրենք չկար, քանզի դա խստորեն հակասում էր Աստծո հրամաններին, որ լինել օրենք, որը կբերեր մարդկանց անհավասար դիրքերի:

8 Քանզի այսպես է ասում սուրբ գիրքը. «Ընտրեք այսօր, թե ո՞ւմ եք դուք ծառայելու:

9 Արդ, եթե մարդը ցանկանում էր ծառայել Աստծուն, դա նրա արտոնությունն էր. կամ ավելի շուտ, եթե նա հավատում էր Աստծուն, դա նրա արտոնությունն էր ծառայել նրան. բայց, եթե նա չէր հավատում նրան, չկար օրենք նրան պատժելու համար:

10 Բայց եթե նա սպանում էր, նա պատժվում էր՝ մահով. և եթե նա կողոպտում էր, նույնպես պատրժվում էր. և եթե նա գողանում էր, նույնպես պատժվում էր. և եթե նա շնություն էր անում, նույնպես պատժվում էր. այո, այս բոլոր ամբարշտության համար նրանք պատժվում էին:

11 Քանզի կար մի օրենք, որ մարդիկ պետք է դատվեին՝ համաձայն իրենց հանցագործությունների: Սակայն չկար օրենք մարդու հավատքի դեմ. հետևաբար, մարդը պատժվում էր միայն այն հանցանքների համար, որ նա արել էր. ուստի, բոլոր մարդիկ՝ հավասար դիրքերի վրա էին:

12 Եվ այս հակաքրիստոսը, որի անունը Կորիհոր էր, (և օրենքն ուժ չէր կարող ունենալ նրա վրա), սկսեց քարոզել ժողովրդին, որ չպիտի լինի ոչ մի Քրիստոս: Եվ այս ձևով էր նա քարոզում ասելով.

13 Ո՛վ դուք, որ կապված եք մի հիմար և ունայն հույսով, ինչո՞ւ եք լծում ինքներդ ձեզ այսպիսի հիմար բաներով: Ինչո՞ւ եք դուք սպասում մի Քրիստոսի: Քանզի ոչ մի մարդ չի կարող իմանալ որևէ բանի վերաբերյալ, որը պետք է գա:

14 Ահա, այս բաները, որ դուք կոչում եք մարգարեություններ, որոնք դուք ասում եք փոխանցվել են սուրբ մարգարեների կողմից, ահա, դրանք ձեր հայրերի հիմար ավանդություններն են:

15 Ի՞նչպես եք դուք իմանում դրանց ճշմարտացիության մասին: Ահա, դուք չեք կարող իմանալ բաների մասին, որոնք դուք չեք

<p>3ա սո՛ւ Մովսեսի օրենք: բ 2 Նեփիի 25.24–27, Ալմա 25.15: 6ա սո՛ւ Հակաքրիստոս:</p>	<p>7ա Ալմա 1.17: 8ա Հես. ԻԳ.15: սո՛ւ Կամքի ազատություն:</p>	<p>10ա սո՛ւ Գերագույն պատիժ: 11ա Մոսիա 29.32:</p>
--	---	---

«տեսնում. հետևաբար, դուք չէք կարող իմանալ, որ պիտի լինի ինչ-որ մի Քրիստոս:

16 Դուք սպասում եք և ասում, որ դուք տեսնում եք ձեր մեղքերի մի թողություն: Բայց ահա, դա մոլագար մտքի արդյունք է, և ձեր մտքերի խանգարվածությունը գալիս է ձեր հայրերի ավանդությունների պատճառով, որը տանում է ձեզ հեռու՝ դեպի հավատքը բաների, որոնք այդպես չեն:

17 Եվ նա ասաց նրանց ուրիշ շատ այսպիսի բաներ՝ ասելով նրանց, որ չէր կարող կատարված լինել քավություն մարդկանց մեղքերի համար, բայց ամեն մարդ ընթանում էր այս կյանքում՝ ըստ անձնական ինքնակառավարման. հետևաբար, ամեն մարդ առաջադիմել է՝ համաձայն իր հանճարի, և որ ամեն մարդ հաղթել է համաձայն իր ուժի. և ինչ որ մարդ արել է, հանցագործություն չէ:

18 Եվ այսպես, նա քարոզում էր նրանց, մոլորեցնելով շատերի սրտերը, պատճառ լինելով, որ նրանք բարձրացնեն իրենց գլուխներն իրենց ամբարշտության մեջ, այո, մոլորեցնելով շատ կանանց և նաև տղամարդկանց, գործելու պոռնկություններ, – ասելով նրանց, որ, երբ մի մարդ մեռնում է, դա նրա վերջն է:

19 Արդ, այս մարդն անցավ նաև Երսուհի երկիրը՝ այս բաները քարոզելու Ամմոնի ժողովրդի մեջ, որը մի ժամանակ Լամանացի ժողովուրդ էր:

20 Բայց ահա, նրանք ավելի իմաստուն էին, քան Նեփիացիներից շատերը. քանզի նրանք բռնեցին նրան ու կապեցին և տարան

Ամմոնի առաջ, որը քահանայապետ էր այդ ժողովրդի վրա:

21 Եվ եղավ այնպես, որ նա կարգադրեց, որ նա դուրս տարվեր երկրից: Եվ նա անցավ Գեդեոնի երկիրը, և սկսեց քարոզել նրանց մուլյակես. և այստեղ նա չունեցավ մեծ հաջողություն, քանզի նրան բռնեցին, կապեցին և տարան քահանայապետի առաջ, և նաև այդ երկրի գլխավոր դատավորի:

22 Եվ եղավ այնպես, որ քահանայապետն ասաց նրան. Ինչո՞ւ ես դու շրջում ամենուր՝ խեղաթյուրելով Տիրոջ ուղիները: Ինչո՞ւ ես դու սովորեցնում այս ժողովրդին, որ ոչ մի Քրիստոս չի լինելու՝ նրանց ցնծությունը խանգարելու համար: Ինչո՞ւ ես դու խոսում սուրբ մարգարեների բոլոր մարգարեությունների դեմ:

23 Արդ, քահանայապետի անունը Գեդեոնն էր: Եվ Կորիիորն ասաց նրան. Որովհետև ես չեմ սովորեցնում ձեր հայրերի հիմար ավանդությունները, և որովհետև ես չեմ սովորեցնում այս ժողովրդին՝ կապելով նրանց հիմար արարողություններով և ծխակատարություններով, որոնք հիմնադրված են հնադարյան քահանաների կողմից, զավթելու գործություն և իշխանություն նրանց վրա, նրանց տգիտության մեջ պահելու համար, որ նրանք չկարողանան բարձրացնել իրենց գլուխները, այլ հպատակեցնելու, համաձայն քո խոսքերի:

24 Դուք ասում եք, որ այս ժողովուրդն ազատ ժողովուրդ է: Ահա, ես ասում եմ, նրանք ճորտության մեջ են: Դուք ասում եք, որ այդ հնադարյան մարգարեություններ-

որ ճշմարիտ են: Ահա, ես ասում եմ, որ դուք չգիտեք, որ դրանք ճշմարիտ են:

25 Գուք ասում եք, որ այս ժողովուրդը հանցավոր և ընկած ժողովուրդ է՝ ծնողի օրինազանցության պատճառով: Ահա, ես ասում եմ, որ երեխան հանցավոր չէ իր ծնողների պատճառով:

26 Եվ դուք նաև ասում եք, որ Քրիստոսը գալու է: Բայց ահա, ես ասում եմ, որ դուք չգիտեք, որ լինելու է Քրիստոս: Եվ դուք ասում եք նաև, որ նա պիտի սպանվի աշխարհի մեղքերի համար,

27 Եվ այսպես, դուք մոլորեցնում եք այս ժողովրդին՝ ըստ ձեր հայրերի հիմար ավանդությունների, և ըստ ձեր սեփական ցանկությունների. և դուք պահում եք նրանց հնազանդության մեջ, ճիշտ կարծես ճորտության մեջ, որպեսզի դուք կարողանաք հագեցնել ձեզ նրանց ձեռքերի աշխատանքով, որպեսզի նրանք չհամարձակվեն վեր մայել համարձակությամբ, և որպեսզի նրանք չհամարձակվեն վայելել իրենց իրավունքներն ու արտոնությունները:

28 Այո, նրանք չեն համարձակվում օգտվել նրանից, ինչն իրենց սեփականն է, որ չլինի թե վիրավորեն իրենց քահանաներին, որոնք լծում են նրանց, ըստ իրենց ցանկությունների, և բերում են նրանց հավատալու, ըստ իրենց ավանդությունների և իրենց երազների, իրենց քմահաճույքների, իրենց տեսիլքների և իրենց շինծու խորհուրդների, որ նրանք, էթե չանեն, ըստ իրենց խոսքերի, կվիրավորեն ինչ-որ անհայտ էակի, որին նրանք ասում են Աստված, մի էակ, որին

երբեք չեն տեսել կամ իմացել, որը երբեք չի եղել, ոչ էլ երբևէ կլինի:

29 Այժմ, երբ քահանայապետը և գլխավոր դատավորը տեսան նրա սրտի կարծրությունը, այո, երբ նրանք տեսան, որ նա կզազրախուսեր մինչև իսկ Աստծո դեմ, նրանք չկամեցան որևէ պատասխան տալ նրա խոսքերին. այլ նրանք կարգադրեցին, որ նա կապվի. և հանձնեցին նրան պաշտոնյաների ձեռքը և ուղարկեցին Չարահեմլայի երկիրը, որպեսզի նա բերվի Ալմայի առջև և գլխավոր դատավորի, որը կառավարիչն էր ողջ երկրի վրա:

30 Եվ եղավ այնպես, որ, երբ նա բերվեց Ալմայի առջև և գլխավոր դատավորի, նա շարունակեց նույն ձևով, ինչպես արել էր Գեդեոնի երկրում. այո, նա շարունակեց «անարգել Աստծուն:

31 Եվ նա ոտքի կանգնեց մեծ «փքուն խոսքերով Ալմայի առջև, և զազրախուսեց քահանաների և ուսուցիչների դեմ, մեղադրելով նրանց ժողովրդին մոլորեցնելում ըստ իրենց հայրերի անհեթեթ ավանդությունների, ժողովրդի աշխատանքի միջոցով հագեցնալու համար:

32 Արդ, Ալման ասաց նրան. Գու գիտես, որ մենք չենք հագեցնում մեզ այս ժողովրդի աշխատանքի միջոցով. քանզի ահա, ես տքնել եմ հենց դատավորների կառավարման սկզբից մինչև հիմա, իմ իսկ ձեռքերով ինձ կերակրելու համար, չնայած ողջ երկրով մեկ իմ բազում ճամփորդություններին՝ հայտարարելու Աստծո խոսքն իմ ժողովրդին:

33 Եվ չնայած այն շատ գործե-

րին, որոնք ես կատարել եմ եկեղեցում, ես երբեք չեմ ստացել մինչև անգամ մեկ ³³սենին իմ աշխատանքի համար. ոչ էլ իմ եղբայրներից որևէ մեկը, բացի դա լիներ դատավորի պաշտոնում. և այն ժամանակ մենք ստացել ենք միայն՝ ըստ օրենքի, մեր ժամանակի համար:

34 Եվ այժմ, եթե մենք չենք ստանում որևէ բան եկեղեցում մեր աշխատանքի համար, ի՞նչ օգուտ է մեզ եկեղեցում աշխատել, բացի ճշմարտությունը հայտարարելուց, որպեսզի մենք կարողանանք ունենալ ցնծություն մեր եղբայրների ³⁴ուրախությամբ:

35 Ուրեմն, ինչ³⁵ ու ես դու ասում, որ մենք քարոզում ենք այս ժողովրդին շահ ստանալու համար, երբ դու, ինքդ գիտես, որ մենք շահ չենք ստանում: Եվ այժմ, հավատո՞ւմ ես դու, որ մենք խաբում ենք այս ժողովրդին, որով այդպիսի ուրախություն ենք առաջացնում նրանց սրտերում:

36 Եվ Կորինորը պատասխանեց նրան՝ Այո՛:

37 Եվ ապա Ալման ասաց նրան. Հավատո՞ւմ ես դու, որ կա Աստված:

38 Եվ նա պատասխանեց՝ Ո՛չ:

39 Արդ, Ալման ասաց նրան. Դու կրկին ժխտո՞ւմ ես, որ կա Աստված, և նաև ժխտո՞ւմ ես Քրիստոսին: Քանզի ահա, ես ասում եմ քեզ, ես գիտեմ, որ կա՝ Աստված, և նաև, որ Քրիստոսը գալու է:

40 Եվ այժմ ի՞նչ ապացույց ունես դու, որ չկա ³⁶Աստված կամ, որ

Քրիստոսը չի գալու: Ես ասում եմ քեզ, որ դու չունես ոչ մի ապացույց, բացի դա լինի քո խոսքը միայն:

41 Բայց ահա, ես ունեմ բոլոր բաները՝ որպես մի ³⁷վկայություն, որ այս բաները ճշմարիտ են. և դու նույնպես ունես բոլոր բաները՝ որպես մի վկայություն քեզ համար, որ դրանք ճշմարիտ են. և մի՞թե դու կժխտես դրանք: Հավատո՞ւմ ես դու, որ այս բաները ճշմարիտ են:

42 Ահա, ես գիտեմ, որ դու հավատում ես, բայց դու բռնված ես ստոթյան ոգով, և դու քո միջից հանել ես Աստծո Հոգին, այնպես որ այն տեղ չունենա քեզանում. բայց դևն ունի զորություն քեզ վրա, և նա քեզ ման է ածում՝ գործելով հնարքներ, որ կարողանա կործանել Աստծո զավակներին:

43 Եվ այժմ Կորինորն ասաց Ալմային. Եթե դու ցույց տաս ինձ մի ³⁸նշան, որպեսզի ես կարողանամ համոզվել, որ կա Աստված, այո, ցույց տուր ինձ, որ նա ունի զորություն, և այդ դեպքում ես կհամոզվեմ քո խոսքերի ճշմարտացիության վերաբերյալ:

44 Բայց Ալման ասաց նրան. Դու ունեցել ես բավականաչափ նշաններ, մի՞թե դու փորձում ես քո Աստծուն: Մի՞թե դու կասես՝ ցույց տուր ինձ մի նշան, երբ դու ունես վկայությունը ³⁹բոլոր այս քո եղբայրների և նաև բոլոր սուրբ մարգարեների: Սուրբ գրքերը դրված են քո առջև, այո, և ⁴⁰բոլոր բաները մատնանշում են, որ կա՝ Աստված. այո, նույնիսկ ⁴¹երկիրը և բոլոր

33ա Ալմա 11.3:
34ա սուր ուրախություն:
40ա Սաղ. ԺԳ.1:
41ա սուր վկայություն:

43ա Հակոբ 7.13–21,
ՎեՌԻ 46.8–9:
սուր Նշան:
44ա Մոսիա 13.33–34:

բ Սաղ. ԺԹ.1,
ՎեՌԻ 88.47:
գ Հոբ ԺԲ.7–10:

բաները, որ նրա երեսին են, այո, և նրա Չարժուճը, այո, և բոլոր Կնոյրակները, որոնք շարժվում են իրենց կանոնավոր ձևով, վկայում են, որ կա մի Գերագույն Ստեղծող:

45 Եվ դեռ դու շրջում ես՝ մոլորեցնելով այս ժողովրդի սրտերը, վկայելով նրանց, որ չկա՞ Աստված: Եվ մի՞թե դու դեռ կամենում ես ժխտել բոլոր այս վկաներին: Եվ նա ասաց. Այո, ես կժխտեմ, մինչև որ դու ցույց չտաս ինձ մի նշան:

46 Եվ այժմ եղավ այնպես, որ Ալման ասաց նրան. Ահա, ես վշտացած եմ քո սրտի կարծրության պատճառով, այո, որ դու դեռ հակառակելու ես ճշմարտության ոգուն, որպեսզի քո հոգին կործանվի:

47 Բայց ահա, ասվելի լավ է, որ քո հոգին կորչի, քան քո ստախտությամբ և քո շողոքորթ խոսքերով միջոց լինես՝ բազում հոգիներ վար բերելու կործանման. հետևաբար, եթե դու կրկին ժխտես, ահա, Աստված պիտի զարկի քեզ, որ դու դառնաս համր, որպեսզի դու այլևս երբեք չբացես քո բերանը, որպեսզի դու այլևս չխաբես այս ժողովրդին:

48 Արդ, Կորիհորն ասաց նրան. Ես չեմ ժխտում Աստծո գործությունը, բայց ես չեմ հավատում, որ կա Աստված. և ես նաև ասում եմ, որ դու չգիտես, որ կա Աստված. և մինչև դու ցույց չտաս ինձ մի նշան, ես չեմ հավատա:

49 Արդ, Ալման ասաց նրան. Այս ես կտամ քեզ որպես նշան, որ դու

«զարկվես համրությամբ, համաձայն իմ խոսքերի. և ես ասում եմ, որ Աստծո անունով, դու պետք է զարկվես համրությամբ, որպեսզի դու այլևս չկարողանաս խոսել:

50 Այժմ, երբ Ալման ասաց այս խոսքերը, Կորիհորը զարկվեց համրությամբ, այնպես, որ նա չկարողացավ խոսել՝ համաձայն Ալմայի խոսքերի:

51 Եվ այժմ, երբ գլխավոր դատավորը տեսավ այս, նա առաջ տարավ ձեռքը և գրեց Կորիհորի համար՝ ասելով. Դու համոզվեցի՞ր Աստծո գործության մեջ: Ո՞ւմ վրա էիր ուզում, որ Ալման ցույց տար նրա նշանը: Կամենում էիր, որ նա ուրիշների՞ն չարչարեր, քեզ մի նշան ցույց տալու համար: Ահա, նա ցույց է տվել քեզ մի նշան. և այժմ դու էլի՞ կվիճես:

52 Եվ Կորիհորն առաջ տարավ իր ձեռքը և գրեց՝ ասելով. Ես գիտեմ, որ ես համր եմ, քանզի ես չեմ կարողանում խոսել. և ես գիտեմ, որ Աստծո գործությունից բացի ոչ մի բան չէր կարող բերել այս ինձ վրա. այո, և ես միշտ «գիտեի, որ կա Աստված:

53 Բայց ահա, դևը խաբել է ինձ. քանզի նա Դիալոգվեց ինձ հրեշտակի տեսքով, և ասաց ինձ. Գնա՛ և ուղղի՛ր այս ժողովրդին, քանզի նրանք բոլորը շեղվել են՝ գնալով մի անձանոթ Աստծո ետևից: Եվ նա ասաց ինձ. «Չկա Աստված. այո, և նա սովորեցրեց ինձ այն, ինչ ես պետք է ասեի: Եվ ես սովորեցրել եմ նրա խոսքերը. և ես սովորեցրեցի դրանք, որովհետև դրանք հաճելի էին Դմարմ-

44դ չեղ. 12.11-15:
ե Մովսես 6.63:
47ա1 Նեփի 4.13:
49աԲ Մն. ԺԳ.20:

52ա Ալմա 30.42:
53ա չակոր 7.14:
բ Բ Կոր. ԺԱ.14,
2 Նեփի 9.9:

գ Սաղ. Ժ.4:
դ սո՛ւ Մարմնակա՛ն:

նական մտածողության համար. և ես դրանք սովորեցրեցի, նույնիսկ մինչև մեծ հաջողություն ունեցա՝ այնքան, որ ես իսկապես հավատացի, որ դրանք ճշմարիտ են. և այս պատճառով ես դեմ կանգնեցի ճշմարտությանը, նույնիսկ մինչև ես բերեցի այս մեծ անեծքն ինձ վրա:

54 Այժմ, երբ նա ասաց այս, նա աղաչեց, որ Ալման աղոթի Աստծուն, որպեսզի անեծքը վերցվի նրանից:

55 Բայց Ալման ասաց նրան. Եթե այս անեծքը վերցվի քեզանից, դու կրկին կմոլորեցնես այս ժողովրդի սրտերը. հետևաբար, քեզ համար պետք է լինի ճիշտ ինչպես Տերը կկամենա:

56 Եվ եղավ այնպես, որ անեծքը չվերցվեց Կորիհորից, այլ նա դուրս գցվեց և շրջում էր տնից տուն՝ ուտելիք մուրալով:

57 Այսպիսով, տեղեկությունն այն մասին, ինչ պատահել էր Կորիհորին, անմիջապես հրատարակվեց ողջ երկրով մեկ. այո, հայտարարությունն ուղարկվեց գլխավոր դատավորի կողմից երկրի ողջ ժողովրդին՝ հայտարարելով նրանց, ովքեր հավատացել էին Կորիհորի խոսքերին, որ նրանք պետք է արագ ապաշխարեն, որ չլինի թե նույն դատաստանները գան նրանց վրա:

58 Եվ եղավ այնպես, որ նրանք բոլորը համոզվեցին Կորիհորի ամբարշտության մեջ. հետևաբար, նրանք բոլորը կրկին դարձի բերվեցին առ Տերը. և սա վերջ դրեց անօրինությանը՝ ըստ Կորիհորի: Եվ Կորիհորը շրջում էր տնից

տուն՝ մուրալով ուտելիք իրեն պահելու համար:

59 Եվ եղավ այնպես, որ երբ նա շրջում էր ժողովրդի մեջ, այո, մի ժողովրդի մեջ, որն առանձնացել էր Նեփիացիներից և իրեն կոչել Չորամացիներ՝ լինելով առաջնորդված մի մարդուց, որի անունը Չորամ էր, և երբ նա առաջ գնաց նրանց մեջ, ահա, նա տրորվեց և կոխտվեց, մինչև որ նա մեռավ:

60 Եվ այսպես, մենք տեսնում ենք վերջը նրա, ով խեղաթյուրում է Տիրոջ ուղիները. և այսպես, մենք տեսնում ենք, որ ^ադևը չի ^բաջակցի իր զավակներին վերջին օրը, այլ արագ քարշ կտա նրանց ներքև՝ դեպի ^գդժոխք:

ԳԼՈՒԽ 31

Ալման գլխավորում է մի առաքելություն ուղղելու ուրացած Չորամացիներին – Չորամացիներն ուրանում են Քրիստոսին, հավատում են ընտրյալության կեղծ գաղափարին, և երկրպագում են սահմանված աղոթքներով – Քարոզիչները լցվում են Սուրբ Հոգով – Նրանց չարչարանքները կոչ են գնում ուրախությանը Քրիստոսի: Մոտ 74թ. Ք.ձ.ս.:

Առ, եղավ այնպես, որ Կորիհորի վախճանից հետո, Ալման՝ ստացած լինելով լուրեր, որ Չորամացիները խեղաթյուրում էին Տիրոջ ճանապարհները, և որ Չորամը, որը նրանց առաջնորդն էր, ժողովրդի սրտերը մոլորեցնում էր՝ ^ավար խոնարհվելու համը ^բկուռքերին, նրա սիրտը կրկին սկսեց

60ա ստե Գ-կ: Բ Ալմա 3.26–27, 5.41–42, ՎԼՈՒ 29.45:

գ ստե Գ-ժոխք: 31 1ա Ել. Ի.5, Մոսիա 13.13:

բ 2 Նեփի 9.37: ստե Կոսապաշտություն:

Պետեղվել ժողովրդի անօրինության պատճառով:

2 Քանզի, դա Ալմայի համար մեծ Վշտի պատճառ էր՝ իմանալ անօրինության մասին իր ժողովրդի մեջ. հետևաբար, նրա սիրտը սաստիկ վշտացած էր Նեփիացիներից Չորամացիների առանձնաճակով պատճառով:

3 Արդ, Չորամացիներն ի մի էին հավաքվել մի երկրում, որը նրանք կոչեցին Անթոնում, որը Չարահենլայի երկրի արևելքում էր, որը գրեթե սահմանակցում էր ծովափին, որը Երսունի երկրի հարավում էր, որը նաև սահմանակցում էր անապատին՝ հարավում, անապատ, որը լիքն էր Լամանացիներով:

4 Արդ, Նեփիացիները շատ էին վախենում, որ Չորամացիները հաղորդակցության մեջ կմտնեին Լամանացիների հետ, և որ դա մեծ կորստի միջոց կլիներ Նեփիացիների համար:

5 Եվ արդ, քանի որ Մխոսքի Քարոզելն ուներ մեծ միտում՝ Պառաջնորդել ժողովրդին անելու այն, ինչն արդար էր, այո, այն ունենում էր ավելի զորավոր ազդեցություն մարդկանց մտքերի վրա, քան սուրը, կամ որևէ այլ բան, որ պատահել էր նրանց. հետևաբար, Ալման մտածեց, որ հարկ էր, որ նրանք փորձեին Աստծո խոսքի ուժը:

6 Հետևաբար, նա վերցրեց Ամմոնին և Ահարոնին և Օմներին. իսկ Հիմնիին նա թողեց եկեղեցում՝ Չարահենլայում. բայց երեք նա-

խորդներին նա վերցրեց իր հետ, և նաև Ամուղեկին և Չիզրոնին, որոնք Մելեքում էին. և նաև վերցրեց իր որդիներից երկուսին:

7 Արդ, իր որդիներից ամենամեծին նա Վլերցրեց իր հետ, և նրա անունը Վելաման էր. բայց անունները նրանց, ում նա վերցրեց իր հետ, Սիրլոն և Կորիանթոն էին. և սրանք են անունները նրանց, ովքեր գնացին նրա հետ Չորամացիների մեջ՝ խոսքը նրանց քարոզելու:

8 Արդ, Չորամացիները Մառակտվածներ էին Նեփիացիներից. հետևաբար, Աստծո խոսքը քարոզված էր եղել նրանց:

9 Բայց նրանք ղրկվել էին մեծ սխալների մեջ, քանզի նրանք չէին հետևում, որ պահեն Աստծո պատվիրաններն ու կանոններն ըստ Մովսեսի օրենքի:

10 Ոչ էլ նրանք կամենում էին պահել եկեղեցու ծիսակատարությունները, ամեն օր շարունակել աղոթքով և աղաչանքով առ Տերը, որպեսզի չմտնեին փորձության մեջ:

11 Այո, ի վերջո, նրանք խեղաթյուրել էին Տիրոջ ուղիները շատ դեպքերում. հետևաբար, այս պատճառով Ալման և իր եղբայրները գնացին այդ երկիրը՝ քարոզելու խոսքը նրանց:

12 Արդ, երբ նրանք եկան այդ երկիրը, ահա, ի զարմանա իրենց, նրանք գտան, որ Չորամացիները կառուցել էին ժողովարաններ, և որ նրանք հավաքվում էին միասին՝ շարաթվա մեկ օրը, օր, որը նրանք

1q Ալմա 35.15:
2ա Մոսայ 28.3,
3 Նեփի 17.14,
Մովսես 7.41:
5ա Եբր. Գ.12, Հակոբ 2.8,

Ալմա 36.26:
p Ենովս 1.23, Ալմա 4.19:
սուր Քարոզել:
q Հարոմ 1.11-12,
ՎևոՒ 11.2:

7ա սուր Հելաման՝ Ալմայի որդի:
p Ալմա 30.59:
8ա Ալմա 24.30:
9ա սուր Ուրացություն:

կոչում էին Տիրոջ օր. և նրանք երկրպագում էին մի ձևով, որն Ալման և նրա եղբայրները երբեք չէին տեսել.

13 Քանզի նրանք մի տեղ էին կառուցել իրենց ժողովարանի կենտրոնում, մի տեղ՝ կանգնելու համար, որը վեր՝ գլխից բարձր էր. և դրա վերևում միայն մեկ անձ կարող էր տեղավորվել:

14 Հետևաբար, ով որ ցանկանում էր ^աերկրպագել, պետք է առաջ գնար և կանգներ դրա վերևում և առաջ մեկներ իր ձեռքերը դեպի երկինք, և գոչեր բարձր ձայնով՝ ասելով:

15 Սու՛րբ, սու՛րբ Աստված. մենք հավատում ենք, որ դու Աստված ես, և մենք հավատում ենք, որ դու սուրբ ես, և որ դու ոգի էիր, և որ դու ոգի ես, և որ դու կլինես ոգի հավիտյան:

16 Սու՛րբ Աստված, մենք հավատում ենք, որ դու առանձնացրել ես մեզ մեր եղբայրներից. և մենք չենք հավատում մեր եղբայրների ավանդությանը, որը նրանց է փոխանցվել՝ իրենց հայրերի մանկամտության պատճառով. բայց մենք հավատում ենք, որ դու ^աընտրել ես մեզ՝ լինելու քո ^բսուրբ զավակները. և նաև դու հայտնի ես դարձրել մեզ, որ ոչ մի Քրիստոս չպետք է լինի:

17 Բայց դու նույնն ես՝ երեկ, այսօր, և հավիտյան. և դու ^աընտրել ես մեզ, որ մենք փրկվենք, մինչդեռ բոլորը, մեր շուրջը, ընտրված են՝ քո ցասմամբ վար գցվելու դեպի դժոխք. և այս սրբության համար, ո՛վ Աստված, մենք շնորհակալ ենք քեզ. և մենք նաև շնորհակալ ենք քեզ, որ դու ընտրել ես մեզ, որ

մենք չնվորվենք մեր եղբայրների անհեթեթ ավանդությունների ետևից, որոնք կապում են նրանց առ Քրիստոս մի հավատքով, որն առաջնորդում է նրանց սրտերը՝ քափառելու հեռու քեզանից՝ մեր Աստծուց:

18 Եվ դարձյալ, մենք շնորհակալ ենք քեզ, ո՛վ Աստված, որ մենք մի ընտրված և մի սուրբ ժողովուրդ ենք: Ամեն:

19 Արդ, եղավ այնպես, որ հետո, երբ Ալման, և նրա եղբայրները, և նրա որդիները լսեցին այս աղոթքները, նրանք չափազանց ապշած մնացին:

20 Քանզի ահա, ամեն մարդ առաջ էր գնում և վեր հղում այս նույն աղոթքը:

21 Արդ, այդ տեղը նրանց կողմից կոչվել էր Ռամեումփթոմ, որը նշանակում է՝ սուրբ հարթակ:

22 Արդ, այս հարթակից նրանք՝ ամեն մարդ, վեր էր հղում հենց նույն աղոթքն առ Աստված՝ գոհություն հայտնելով իրենց Աստծուն, որ նրանք ընտրված էին նրա կողմից, և որ նա չէր մոլորեցնում նրանց իրենց եղբայրների ավանդության ետևից, և որ նրանց սրտերը հափշտակված չէին՝ հավատալու զալիք բաներին, որոնց մասին նրանք ոչինչ չգիտեին:

23 Արդ, երբ ժողովուրդը վեր էր հղում գոհությունն այս ձևով, նրանք վերադառնում էին իրենց տները՝ այլևս ^աերբեք չխոսելով կրկին իրենց Աստծո մասին, մինչև սուրբ հարթակի մոտ իրենց կրկին ի մի հավաքվելը՝ վեր հղելու գոհություն իրենց ձևով:

24 Այժմ, երբ Ալման տեսավ այս,

14ա Մատ. 2.1-7:
16ա Ալմա 38.13-14:

բ Ես. ԿԵ.3, 5:
17ա ՍՈՒ Ունայն,

Ունայնություն:
23ա Հակ. Ա.21-25:

նրա սիրտը "վշտացավ. քանզի նա տեսավ, որ նրանք մի ամբարիշտ և խոտորյալ ժողովուրդ էին. այո, նա տեսավ, որ նրանց սրտերը դրված էին ոսկու վրա, և արծաթի վրա, և ամեն ձևի ընտիր իրերի վրա:

25 Այո, և նա նաև տեսավ, որ նրանց սրտերը "բարձրամտացած էին մինչև մեծ պարծենկոտություն՝ իրենց հպարտությունից:

26 Եվ նա բարձրացրեց իր ձայնը դեպի երկինք և "գոչեց՝ ասելով. Օ՛հ, որքա՞ն էս դու հանդուրժելու, ո՛վ Տեր, որ քո ծառաներն ապրեն այստեղ՝ ներքևում, մարմնի մեջ, տեսնելու այսպիսի մեծ ամբարշտություն մարդկանց գավակների մեջ:

27 Ահա, ո՛վ Աստված, նրանք "աղաղակում են առ քեզ, և սակայն, նրանց սրտերը կլանված են իրենց հպարտությամբ: Ահա, ո՛վ Աստված, նրանք աղաղակում են առ քեզ իրենց բերաններով, մինչդեռ նրանք ^բփքված են մինչև իսկ մեծամտության աստիճանի, աշխարհի ունայն բաներով:

28 Տես՛ւ, ո՛վ իմ Աստված, նրանց թանկարժեք հանդերձները, և նրանց մատանյակները, և նրանց "ապարանջանները, և նրանց ոսկե զարդերը, և բոլոր նրանց արժեքավոր բաները, որոնցով նրանք զարդարված են. և ահա, նրանց սրտերը դրված են դրանց վրա, և դեռ նրանք աղաղակում են առ քեզ և ասում. Մենք շնորհակալ ենք քեզ, ո՛վ Աստված, քանզի մենք ընտրյալ ժողովուրդ ենք քեզ հա-

մար, մինչդեռ մյուսները պիտի կորչեն:

29 Այո, և նրանք ասում են, որ դու հայտնի ես դարձրել նրանց, որ ոչ մի Քրիստոս չի լինելու:

30 Ո՛վ Տեր Աստված, որքա՞ն էս դու հանդուրժելու, որ այսպիսի ամբարշտություն և անհավատարմություն լինի այս ժողովրդի մեջ: Ո՛վ Տեր, խնդրում եմ, տուր ինձ ուժ, որ ես կարողանամ կրել իմ տկարությունները: Քանզի ես տկար եմ, և այսպիսի ամբարշտությունն այս ժողովրդի մեջ իրավ ցավ է պատճառում իմ հոգուն:

31 Ո՛վ Տեր, իմ սիրտը խիստ վշտացած է. խնդրում եմ մխիթարի իմ հոգին "Քրիստոսով: Ո՛վ Տեր, խնդրում եմ շնորհիք ինձ, որ ես կարողանամ ուժ ունենալ, որ ես կարողանամ համբերությամբ տանել այս չարչարանքները, որոնք պիտի գան ինձ վրա, այս ժողովրդի անօրինության պատճառով:

32 Ո՛վ Տեր, խնդրում եմ մխիթարիք իմ հոգին, և հաջողություն տուր ինձ և նաև իմ գործակիցներին, որոնք ինձ հետ են, այո՛, Ամմոնիև և Ահարոնիև և Օմեերիև, և նաև Ամուղեկիև և Չիզրոմիև, և նաև իմ "երկու որդիներին, այո, այսինքն՝ նրանց բոլորին խնդրում եմ մխիթարիք, ո՛վ Տեր: Այո, մխիթարիք նրանց հոգիները Քրիստոսով:

33 Խնդրում եմ, շնորհիք նրանց, որ նրանք կարողանան ուժ ունենալ, որ նրանք կարողանան կրել իրենց չարչարանքները, որոնք պիտի գան նրանց վրա՝ այս ժողովրդի անօրինությունների պատճառով:

24աԾն. 2.5–6:
25ա Հակոբ 2.13,
Ավմա 1.32:

26ա Մովսես 7.41–58:
27ա Ես. ԻԹ.13:
բ սո՛ւ Հպարտություն:

28ա Ես. Գ.16–24:
31ա Հովհ. ԺԶ.33:
32ա Ավմա 31.7:

34 Ո՛վ Տեր, խնդրում եմ ^աշնորհիր մեզ, որ մենք կարողանանք հաջողություն ունենալ՝ նրանց կրկին Քրիստոսով դեպի քեզ բերելու:

35 Ահա, ո՛վ Տեր, նրանց ^ահոգիներն արժեքավոր են, և նրանցից շատերը մեր եղբայրներն են. հետևաբար, ո՛վ Տեր, տուր մեզ զորություն և իմաստություն, որ կարողանանք մեր այս եղբայրներին կրկին բերել քեզ մոտ:

36 Արդ, եղավ այնպես, որ երբ Ալման ասաց այս խոսքերը, նա ^աղբեց իր ^բձեռքերը բոլոր նրանց վրա, ովքեր իր հետ էին: Եվ ահա, երբ նա դրեց իր ձեռքերը նրանց վրա, նրանք լցվեցին Սուրբ Հոգով:

37 Եվ դրանից հետո նրանք առանձնացան մեկմեկուց՝ ^ահոգս չանելով իրենց համար, թե ինչ իրենք պիտի ուտեն, կամ ինչ պիտի խմեն, կամ ինչ պիտի հագնեն:

38 Եվ Տերն ապահովեց նրանց համար, որ նրանք չբաղցեն, ոչ էլ ծարավեն. այո, նա նաև ուժ տվեց նրանց, որ նրանք չտանելին ոչ մի ձևի ^աչարչարանքներ, այլ, որ դրանք կուլ գնային Քրիստոսի ուրախության մեջ: Արդ, դա եղավ Ալմայի աղոթքի համաձայն. և դա եղավ, որովհետև նա աղոթեց ^բհավատքով:

ԳԼՈՒԽ 32

Ալման սովորեցնում է աղբատներից, որոնց չարչարանքները խոնարհեցրել էին նրանց – Հավատքը մի հույս է առ այն, ինչը տեսանելի չէ,

ինչը ճշմարիտ է – Ալման վկայում է, որ հրեշտակները սպասավորում են տղամարդկանց, կանանց և երեխաներին – Ալման համեմատում է խոսքը սերմի հետ – Այն պետք է ցանվի և սնուցվի – Ապա այն աճում է դառնալով մի ծառ, որից հավերժական կյանքի պտուղն է քաղվում: Մոտ 74թ. Ք.ծ.ա.:

Եվ եղավ այնպես, որ նրանք գնացին առաջ և սկսեցին քարոզել Աստծո խոսքը ժողովրդին՝ մտնելով նրանց ժողովարանները և նրանց տները. այո, և մույնիսկ նրանք քարոզեցին խոսքը նրանց՝ փողոցներում:

2 Եվ եղավ այնպես, որ նրանց մեջ շատ աշխատանքից հետո, նրանք սկսեցին հաջողություն ունենալ ժողովրդի ^աաղբատ դասի մեջ. քանզի ահա, նրանք դուրս էին գցվել ժողովարաններից՝ իրենց խղճուկ հանդերձների պատճառով,

3 Հետևաբար, նրանց չէին թույլատրում մտնել իրենց ժողովարանները՝ պաշտելու Աստծուն, համարելով նրանց որպես աղտոտություն. այդ պատճառով նրանք աղբատ էին. այո, նրանք գնահատվում էին իրենց եղբայրների կողմից, որպես թափթփուկ. այդ պատճառով նրանք ^աաղբատ էին, ինչ վերաբերում էր աշխարհի բաներին. և նրանք աղբատ էին նաև սրտով:

4 Արդ, երբ Ալման սովորեցնում էր և խոսում ժողովրդի համար Օնիդա բլրի վրա, նրա մոտ եկավ մի մեծ բազմություն, այդ նրանք էին, որոնց մասին մենք խոսե-

34ա2 Նեփի 26.33:
35ա սոՒ Հոգի – Հոգու արժեքը:
36ա3 Նեփի 18.36–37:
բ սոՒ Չեղնադրություն:

37ա Մատ. 2.25–34,
3 Նեփի 13.25–34:
38ա Մատ. Ե.10–12,
Մոսիա 24.13–15,
Ալմա 33.23:

բ սոՒ Հավատք:
32ա սոՒ Աղբատ:
3ա Ալմա 34.40:

ցինք, որոնք սրտով ^աաղբատ էին, իրենց աղբատության պատճառով, ինչ վերաբերում էր աշխարհի բաներին:

5 Եվ նրանք եկան Ալմայի մոտ. և մեկը, որը նրանցից ամենագլխավորն էր, ասաց նրան. Ահա, ^իհ^ոնչ կարող են անել իմ այս եղբայրները, քանզի նրանք արհամարհված են բոլոր մարդկանց կողմից՝ իրենց աղբատության պատճառով, այո, և հատկապես, ավելի շատ, մեր քահանաների կողմից. քանզի նրանք մեզ դուրս են ^բզցել մեր ժողովարաններից, որոնք մենք կառուցել ենք՝ տքնելով առատորեն մեր սեփական ձեռքերով. և նրանք մեզ դուրս են զցել մեր խիստ աղբատության պատճառով. և մենք տեղ չունենք՝ երկրպագելու մեր Աստծուն. և ահա, ^իհ^ոնչ անենք մենք:

6 Եվ այժմ, երբ Ալման լսեց այս, նա շրջվեց, իր դեմքով ուղիղ դեպի նա, և նայեց մեծ ուրախությամբ. քանզի նա հասկացավ, որ նրանց ^աչարչարանքներն իսկապես ^իխոնարհեցրել էին նրանց, և որ նրանք ^պպատրաստ էին լսելու խոսքը:

7 Հետևաբար, նա այլևս ոչինչ չասաց մնացած բազմությանը. այլ նա մեկնեց առաջ իր ձեռքը, և գոչեց դեպի նրանց, որոնց նա տեսավ, որ իսկապես զղջացող էին ու ասաց նրանց.

8 Ես տեսնում եմ, որ դուք սրտով ^իխոնարհ եք. և եթե այդպես է, օրհնված եք դուք:

9 Ահա, քո եղբայրն ասաց. Ի^ոնչ պիտի անենք մենք, քանզի մենք

դուրս ենք զցված մեր ժողովարաններից, այնպես որ մենք չենք կարող երկրպագել մեր Աստծուն:

10 Ահա, ես ասում եմ ձեզ, մի^թե դուք կարծում եք, որ դուք չեք կարող ^եերկրպագել Աստծուն, բացառությամբ դա լինի միայն ձեր ժողովարաններում:

11 Եվ դեռ ավելին, ես կկամենայի հարցնել, մի^թե դուք կարծում եք, որ միայն շաբաթը մեկ անգամ դուք պիտի երկրպագեք Աստծուն:

12 Ես ասում եմ ձեզ, դա լավ է, որ դուք դուրս եք զցված ձեր ժողովարաններից, որպեսզի դուք խոնարհ լինեք, և որպեսզի դուք կարողանաք ^իմասստություն սովորել. քանզի անհրաժեշտ է, որ դուք սովորեք իմաստություն. քանզի այդ պատճառով է, որ դուք դուրս եք զցված, որ դուք արհամարհված եք ձեր եղբայրների կողմից՝ ձեր խիստ ^աաղբատության պատճառով, որպեսզի դուք բերվեիք սրտի խոնարհության. քանզի դուք ստիպողաբար եք բերվել խոնարհ լինելու:

13 Եվ այժմ, քանի որ դուք հարկադրված եք լինել խոնարհ, օրհնված եք դուք. քանզի մարդ երբեմն, եթե նա հարկադրված է լինել խոնարհ, փնտրում է ապաշխարություն. և այժմ, անկասկած, ով որ ապաշխարում է, պիտի գտնի ողորմություն. և նա, ով գտնում է ողորմություն և ^ահամբերում է մինչև վերջ, կփրկվի:

14 Եվ այժմ, ինչպես ես ասացի ձեզ, որ, քանի որ դուք հարկադրվեցիք լինել խոնարհ, դուք

<p>4ա ստ՝ Աղբատ – Հոգով աղբատ: 5ա Առակ. ԺԸ.23: բ Ալմա 33.10: գ Գոր. Բ.37–38:</p>	<p>6ա ստ՝ Չախորդություն: բ ստ՝ Խոնարհ, Խոնարհություն: գ Ալմա 16.16–17, վևՈՒ 101.8:</p>	<p>8ա Մատ. Ե.3–5: 10ա ստ՝ Երկրպագել: 12ա Ժող. Դ.13: բ Առակ. ԺՁ.8: 13ա Ալմա 38.2:</p>
---	---	--

օրհնված եք, արդյոք դուք չե՞ք կարծում, որ ավելի օրհնված են նրանք, ովքեր իսկապես խոնարհեցնում են իրենց՝ խոսքի պատճառով:

15 Այո, նա, ով իսկապես խոնարհեցնում է իրեն, և ապաշխարում է իր մեղքերից և համբերում մինչև վերջ, նա պիտի օրհնվի, այո, շատ ավելի օրհնվի, քան նրանք, ովքեր հարկադրված են լինել խոնարհ՝ իրենց ծայրահեղ աղքատության պատճառով:

16 Հետևաբար, օրհնված են նրանք, ովքեր ՝խոնարհեցնում են իրենց, առանց հարկադրված լինելու՝ լինել խոնարհ. կամ ավելի շուտ, այլ խոսքով, օրհնված է նա, ով հավատում է Աստծո խոսքին, և մկրտվում է առանց սրտի համառության, այո, առանց ստիպողաբար բերվելու՝ իմանալ խոսքը, կամ նույնիսկ հարկադրվելու՝ իմանալ, նախքան նրանք կհավատան:

17 Այո, կան շատերը, ովքեր ասում են. Եթե դու ցույց տաս մեզ մի ՝նշան երկնքից, այդ դեպքում, մենք կիմանանք անկասկած. այդ դեպքում մենք կհավատանք:

18 Այժմ, ես հարցնում եմ՝ մի՞թե սա հավատք է: Ահա, ես ասում եմ ձեզ՝ Ո՛չ. քանզի եթե մարդ իմանում է ինչ-որ բան, նա պատճառ չունի ՝հավատալու, քանզի նա գիտի այդ:

19 Եվ այժմ, որքան ավելի է անիծված նա, ով ՝գիտի Աստծո կամքը և չի անում այն, քան նա, որ միայն հավատում է, կամ միայն՝

ունի պատճառ հավատալու, և ընկնում է օրինազանցության մեջ:

20 Այժմ, այս բանի վերաբերյալ դուք պետք է դատեք: Ահա, ես ասում եմ ձեզ, որ ինչպես դա մի կողմից է, ճիշտ նույնպես դա մյուս կողմից է. և ամեն մարդու համար պիտի լինի համաձայն իր գործի:

21 Եվ այժմ, ինչպես ես ասացի հավատքի վերաբերյալ՝ ՝հավատքը բաների մասին կատարյալ գիտելիք ունենալը չէ. հետևաբար, եթե դուք ունեք հավատք, դուք ՝հույս ունեք բաների համար, որոնք տեսանելի չեն, որոնք ճշմարիտ են:

22 Եվ այժմ, ահա, ես ասում եմ ձեզ, և ես կկամենայի, որ դուք հիշեիք, որ Աստված ողորմած է բոլոր նրանց հանդեպ, ովքեր հավատում են նրա անունին. հետևաբար, նա ցանկանում է, առաջին հերթին, որ դուք հավատաք, այո, այսինքն՝ իր խոսքին:

23 Եվ այժմ, նա հաղորդում է մարդկանց իր խոսքը հրեշտակների միջոցով, այո, ՝ոչ միայն տղամարդկանց, այլ կանանց նույնպես: Արդ, դա բոլորը չէ. փոքր ՝երեխաներին, շատ անգամ, խոսքեր են տրվում, որոնք շփոթեցնում են իմաստուններին և ուսյալներին:

24 Եվ այժմ, իմ սիրելի՝ եղբայրներ, քանի որ դուք ցանկացաք իմանալ ինձանից, ինչ պիտի անեք դուք, որովհետև չարչարված եք և դուրս գցված,– արդե՞ս չեմ ցանկանում, որ դուք կարծեք, որ ես նկատի ունեմ դատել ձեզ միայն համաձայն նրա, ինչ ճշմարիտ է,–

16ա սուր Խոնարհ, Խոնարհություն:
17ա սուր Նշան:
18ա Եթեր 12.12, 18:
19ա Հովի. ԺԵ.22–24:

21ա Հովի. Ի.29, Եբր. ԺԱ:
բ սուր Հույս:
գ Եթեր 12.6:
23ա Հովի Բ.28–29:

բ Մատ. ԺԱ.25, Գուկ. Ժ.21,
3 Նեփի 26.14–16,
ՎևոՒԲ 128.18:

25 Քանզի ես ի նկատի չունենմ, որ դուք՝ ձեզանից բոլորդ, հարկադրված եք եղել խոնարհեցնել ձեզ. քանզի ես անշուշտ հավատում եմ, որ կան ձեր մեջ ոմանք, ովքեր կխոնարհեցնեին իրենց, ինչ հանգամանքներում էլ որ նրանք լինեին:

26 Այժմ, ինչպես ես ասացի հավատքի վերաբերյալ, – որ այն կատարյալ գիտելիք չէ, – դա ճիշտ այդպես է իմ խոսքերի վերաբերյալ: Դուք չեք կարող իմանալ դրանց ճշմարտացիության մասին սկզբում, կատարելության աստիճանի, քանի որ հավատքը կատարյալ գիտելիք չէ:

27 Բայց ահա, եթե դուք արթնացնեք և զարթնեցնեք ձեր ունակությունները, մինչև անգամ իմ խոսքերի վրա մի փորձարկվածք, և գործադրեք հավատքի մի մասնիկ, այո, նույնիսկ եթե դուք չեք կարող ավելին, քան “ցանկանալ հավատալ, թույլ տվեք, որ այդ ցանկությունը գործի ձեր մեջ, մինչև որ դուք հավատաք, այնպես որ դուք կարողանաք տեղ տալ իմ խոսքերի մի մասին:

28 Այժմ, մենք կհամենատենք խոսքը “սերմի հետ: Այսպիսով, եթե դուք տեղ տաք, որ մի ^բսերմ սերմանվի ձեր ^գսրտում, ահա, եթե այն լինի մի ճշմարիտ սերմ կամ մի լավ սերմ, եթե դուք դուրս չզգեք այն ձեր ^աանհավատությանը, չդիմադրելով Տիրոջ Հոգուն, ահա, այն կսկսի ուռչել ձեր կրծքում. և երբ դուք զգաք այդ ուռչելու շարժումները, դուք կսկսեք ասել ինքներդ ձեր մեջ. Պետք է որ անպայման սա լավ սերմ լինի կամ

խոսքը լավն է, քանզի այն սկսում է մեծացնել իմ հոգին. այո, այն սկսում է լուսավորել իմ ^հհասկացողությունը, այո, այն սկսում է հրաշալի լինել ինձ համար:

29 Արդ, ահա, մի՞թե սա չի մեծացնի ձեր հավատքը: Ես ասում եմ ձեզ՝ Այո՛. այնուամենայնիվ, այն չի աճել մինչև մի կատարյալ գիտելիքի:

30 Բայց ահա, երբ սերմը ուռչի, և ծլի, և սկսի աճել, այն ժամանակ դուք պիտի անպայման ասեք, որ սերմը լավն է. քանզի ահա, այն ուռչում է, և ծլում, և սկսում աճել: Եվ այժմ, ահա, մի՞թե այս չի զորացնի ձեր հավատքը: Այո, այն կզորացնի ձեր հավատքը. քանզի դուք կասեք՝ Ես գիտեմ, որ սա լավ սերմ է. քանզի ահա, այն ծլում է և սկսում աճել:

31 Եվ այժմ, ահա, դուք համոզված եք, որ սա լավ սերմ է: Ես ասում եմ ձեզ՝ Այո՛. քանզի ամեն սերմ առաջ է բերում իր իսկ ^ամնանին:

32 Հետևաբար, եթե մի սերմ աճում է, այն լավն է, բայց եթե այն չի աճում, ահա, այն լավը չէ, ուստի այն դեմ է զգվում:

33 Եվ այժմ, ահա, որովհետև դուք կատարեցիք փորձը, և ցանեցիք սերմը, և այն ուռչում է և ծլում, և սկսում է աճել, դուք անպայման պետք է իմանաք, որ սերմը լավն է:

34 Եվ այժմ, ձեր ^ագիտելիքը կատարյալ է: Այո, ձեր գիտելիքը կատարյալ է այդ քանում, և ձեր ^բհավատքը ննջում է. և դա՛ որովհետև դուք գիտեք, քանզի դուք գիտեք, որ խոսքը ուռչել է ձեր հոգիներում, և դուք նաև գիտեք, որ

27ա Մար. ԺԱ.24:
28ա Ալմա 33.1:
բ Ղուկ. Ը.11:

գ սո՛Ւ Սիրտ:
դ Մատ. ԺԷ.19:
ե սո՛Ւ Հասկանալ:

31ա Ծն. Ա.11–12:
34ա սո՛Ւ Գիտություն:
բ Եթեր 3.19:

այն ծլել է, որ ձեր հասկացողությունը սկսում է լուսավորվել, և ձեր Գմիտքը սկսում է ընդարձակվել:

35 Օ՛, ուրեմն, մի՞թե սա իրական չէ: Ես ասում եմ ձեզ՝ Այո՛, որովհետև դա Մլույս է. և այն, ինչ լույս է, բարի է, որովհետև տեսանելի է, հետևաբար, դուք պետք է իմանաք, որ այն բարի է. և այժմ ահա, այս լույսը ճաշակելուց հետո, ձեր գիտելիքը կատարյալ է:

36 Ահա, ես ասում եմ ձեզ՝ Ո՛չ. ոչ էլ դուք պետք է մի կողմ դնեք ձեր հավատքը, քանզի դուք գործադրեցիք ձեր հավատքը միայն սերմը ցանելու համար, որ դուք կարողանայիք կատարել փորձը, իմանալու, թե արդյոք սերմը լավն էր:

37 Եվ ահա, երբ ծառը սկսի աճել, դուք կասեք. Եկեք սնուցենք այն մեծ խնամքով, որպեսզի այն արմատ գցի, որպեսզի այն կարողանա աճել և պտուղ բերել մեզ համար: Եվ արդ, ահա, եթե դուք այն սնուցեք մեծ խնամքով, այն արմատ կգցի և կաճի և պտուղ կբերի:

38 Բայց, եթե դուք ՝անտեսեք ծառը, և չնտածեք այն սնուցելու մասին, ահա, այն արմատ չի գցի. և երբ արևի տապը գա և խանձի այն, քանի որ այն արմատ չունի՝ այն կչորանա, և դուք կպոկեք այն ու դուրս կգցեք:

39 Այսպիսով, սա այն պատճառով չէ, որ սերմը լավը չէր, ոչ էլ այն պատճառով է, որ պտուղը ցանկալի չէր լինի. այլ սա այն պատճառով է, որ ձեր ՝հողն է անբերրի, և դուք չեք կամենում

սնուցել ծառը, հետևաբար, դուք չեք կարող ունենալ դրա պտուղը:

40 Եվ այսպիսով, եթե դուք չկամենաք սնուցել խոսքը՝ հավատքի աչքով սպասելով դրա պտղին, դուք երբեք չեք կարող քաղել կենաց ՝ծառի պտղից:

41 Բայց, եթե դուք կամենաք սնուցել խոսքը, այո, սնուցել ծառը, երբ այն սկսում է աճել, ձեր հավատքով, մեծ ջանասիրությամբ և ՝համբերությամբ, սպասելով դրա պտղին, որ այն արմատ կգցի. և ահա այն կլինի դեպի հավիտենական կյանք ՝վեր խոյացող մի ծառ:

42 Եվ ձեր ՝ջանասիրության, ձեր հավատքի և ձեր համբերության շնորհիվ, խոսքի հանդեպ, այն սնուցելիս, որ այն կարողանա արմատ գցել ձեր մեջ, ահա, շուտով դուք կքաղեք դրա ՝պտուղը, որն ամենաթանկարժեքն է, որը քաղցր է այն ամենից, ինչ քաղցր է, և որը ճերմակ է այն ամենից, ինչ ճերմակ է, այո, և մաքուր է այն ամենից, ինչ մաքուր է. և դուք կսնվեք այդ պտղով մինչև որ կհագնաք, այնպես որ չեք քաղցի, ոչ էլ կծարավեք:

43 Այն ժամանակ, իմ եղբայրներ՛ր, դուք պիտի հնձեք ձեր հավատքի, ձեր ջանասիրության և համբերության և երկայնամտության վարձքը, սպասելով ծառին, որ պտուղ տա ձեզ համար:

ԳԼՈՒԽ 33

Ձեռնար սովորեցրել է, որ մարդիկ պետք է աղոթեն և երկրպագեն բոլոր

34գ սուր Միսք:
35ա Հովհ. Գ.18-21:
սուր Լույս, Քրիստոսի լույս:

38ա սուր Ուրացություն:
39ա Մատ. ԺԳ.5:
40ա Ծն. Բ.9, 1 Նեփի 15.36:
41ա սուր Համբերություն:

բ Ալմա 33.23,
Վևուր 63.23:
42ա սուր Ջանասիրություն:
բ 1 Նեփի 8.10-12:

տեղերում, և որ դատաստանները մեկդի են դարձվում Որդու շնորհիվ – Չենթը սովորեցրել է, որ ողորմությունը պարզվում է Որդու շնորհիվ – Մովսեսն Աստծո Որդու մի նախատիպ էր բարձրացրել անպատում: Մոտ 74բ. Բ.ժ.ա.:

Արդ, հետո, երբ Ալման խոսել էր այս խոսքերը, նրանք ուղարկեցին առաջ՝ նրա մոտ, ցանկանալով իմանալ, թե արդյո՞ք նրանք պիտի հավատալին ^ամեկ Աստծո, որպեսզի կարողանային ձեռք բերել այս պտուղը, որի մասին նա խոսել էր, կամ ինչպես նրանք պետք է ցանեին ^բսերմը, կամ խոսքը, որի մասին նա խոսել էր, որը նա ասաց՝ պետք է սերմանվի իրենց սրտերում. կամ ինչ ձևով նրանք պետք է սկսեին գործադրել իրենց հավատքը:

2 Եվ Ալման ասաց նրանց. Ահա, դուք ասացիք, որ չեք կարող երկրրպագել ձեր Աստծուն, որովհետև դուք դուրս եք գցվել ձեր ժողովարաններից: Բայց ահա, ես ասում եմ ձեզ, եթե դուք կարծում եք, որ դուք ^աչեք կարող երկրպագել Աստծուն, մեծապես սխալվում եք, և դուք պարտավոր եք քննել ^բսուրբ գրքերը. եթե կարծում եք, որ դրանք սովորեցրել են ձեզ այս, ասպա դուք չեք հասկանում դրանք:

3 Դուք հիշո՞ւմ եք, որ կարդացած լինեք, թե ինչ է ասել ^աՉենոսը՝ հնադարյան մարգարեն, աղոթքի կամ ^բերկրպագության վերաբերյալ:

4 Քանզի նա ասել է. Դու ողորմած ես, ո՞վ Աստված, քանզի դու լսեցիր իմ աղոթքը, նույնիսկ երբ ես անպատում էի. այո, դու ողորմած էիր, երբ ես աղոթեցի նրանց համար, ովքեր իմ ^աթշնամիներն էին, և դու դարձրեցիր նրանց դեպի ինձ:

5 Այո, ո՞վ Աստված, և դու ողորմած էիր իմ հանդեպ, երբ ես աղաղակեցի առ քեզ իմ ^ադաշտում. երբ ես աղաղակեցի առ քեզ իմ աղոթքով, և դու լսեցիր ինձ:

6 Եվ այնուհետև, ո՞վ Աստված, երբ ես դարձա իմ տուն, դու լսեցիր ինձ իմ աղոթքում:

7 Երբ ես դարձա իմ ^ասենյակը, ո՞վ Տեր, և աղոթեցի քեզ, դու լսեցիր ինձ:

8 Այո, դու ողորմած ես դեպի քո զավակները, երբ նրանք աղաղակում են առ քեզ, լավելու քո կողմից, և ոչ թե մարդկանց, և դու կամենում ես լսել նրանց:

9 Այո, ո՞վ Տեր, դու ողորմած ես եղել իմ հանդեպ, և լսել ես իմ աղաղակները քո ժողովներում:

10 Այո, և դու լսել ես ինձ նաև, երբ ես դուրս էի ^ագցված և արհամարհված էի իմ թշնամիների կողմից. այո, դու լսում էիր իմ աղաղակները, և զայրացած էիր իմ թշնամիների վրա, և դու այցելեցիր նրանց՝ քո բարկության մեջ, սրընթաց կործանմամբ:

11 Եվ դու լսեցիր ինձ՝ իմ չարչարանքների և իմ անկեղծության պատճառով. և դա քո Որդու շնորհիվ էր, որ դու եղար այսպես ողորմած դեպի ինձ, ուստի, ես կաղաղակեմ առ քեզ իմ բոլոր

33 1ա 2 Նեփի 31.21, Մոսիա 15.2–4:
բ Ալմա 32.28–43:
2ա Ալմա 32.5:
բ Ալմա 37.3–10:

3ա սո՛ւ Մուրբ գրքեր – Կորած սուրբ գրքեր, Չենոս:
բ սո՛ւ Երկրպագել:
4ա Մատ. Ե.44:

5ա Ալմա 34.20–25:
7ա Մատ. 2.5–6, Ալմա 34.26:
10ա Ալմա 32.5:

չարչարանքների մեջ, քանզի քո մեջ է իմ ուրախությունը. քանզի դու մեկդի ես դարձրել քո դատաստաններն ինձանից, քո Որդու շնորհիվ:

12 Եվ այժմ Ալման ասաց նրանց. Հավատո՞ւմ եք դուք այն սուրբ գրքերին, որոնք գրվել են նրանց կողմից՝ անցյալում:

13 Ահա, եթե դուք հավատում եք, դուք պիտի հավատաք, թե ինչ է ասել Պենոսը. քանզի ահա, նա ասել է. Դու մեկդի ես դարձրել քո դատաստանները՝ քո Որդու շնորհիվ:

14 Այժմ ահա, իմ եղբայրնե՛ր, ես կկամենայի հարցնել, թե արդյոք դուք կարդացե՞լ եք սուրբ գրքերը: Եթե դուք կարդացել եք, ի՞նչպես կարող եք դուք չհավատալ Աստծո Որդուն:

15 Քանզի գրված է՝, որ միայն Չենոսն է խոսել այս բաների մասին, այլ Պենոսը նույնպես խոսել է այս բաների մասին,

16 Քանզի, ահա, նա ասել է. Դու բարկացած ես, ո՛վ Տեր, այս ժողովրդի վրա, որովհետև նրանք չեն կամենում հասկանալ քո ողորմությունները, որոնք դու պարզևել ես նրանց քո Որդու շնորհիվ:

17 Եվ այժմ, իմ եղբայրնե՛ր, դուք տեսնում եք, որ մի երկրորդ հնադարյան մարգարե է վկայել Աստծո Որդու վերաբերյալ, և քանի որ ժողովուրդը չկամեցավ հասկանալ նրա խոսքերը, նրանք պարկոծեցին նրան՝ ի մահ:

18 Բայց ահա, սա բոլորը չէ.

միայն նրանք չեն, որ խոսել են Աստծո Որդու վերաբերյալ:

19 Ահա, նրա մասին խոսվել է Սովսեսի կողմից. այո, և ահա, մի ճանախառիվ էր Գարձրացվել անապատում, որ ով որ նայեր դրա վրա՝ կկարողանար ապրել: Եվ շատերը նայեցին ու ապրեցին:

20 Բայց քչերը հասկացան այդ բաների իմաստը, և դա՛ իրենց սրտերի կարծրության պատճառով: Բայց կային շատերը, ովքեր այնպես էին կարծրացած, որ նրանք հրաժարվեցին նայել, այդ պատճառով նրանք մեռան: Արդ, պատճառը, որ նրանք հրաժարվեցին նայել, սա է՝ որովհետև նրանք չէին հավատում, որ դա կապաքիններ իրենց:

21 Ո՛վ իմ եղբայրներ, եթե ձեզ հնարավոր լիներ ապաքինվել, սոսկ աչք ածելով շուրջը, որպեսզի դուք կարողանայիք ապաքինվել, մի՞թե դուք կհրաժարվեիք նայել արագ, թե՞ դուք կկամենայիք ավելի շուտ կարծրացնել ձեր սրտերն անհավատությամբ և լի՛նել ալարկոտ, այնպես որ կհրաժարվեիք աչք ածել շուրջը, որպեսզի մեռնեիք:

22 Եթե այդպես է, վա՛յ պիտի գա ձեզ վրա. բայց եթե այդպես չէ, ուրեմն աչք ածեք շուրջը և սկսեք հավատալ Աստծո Որդուն, որ նա գալու է՝ փրկագնելու իր ժողովրդին, և որ նա պիտի տառապի ու մեռնի՝ նրանց մեղքերը թքավելու համար. և որ նա պիտի Գարձրանա մեռելներից, որը կիրականաց-

12ա ստ՝ Սուրբ գրքեր:
13ա Ալմա 34.7:
15ա Հակոբ 4.4:
բ 1 Նեփի 19.10,
Ալմա 34.7:
17ա ստ՝ Նահատակ,

Նահատակություն:
19ա Բ Օր. ԺԸ.15, 18,
Ալմա 34.7:
բ Թվ. ԻԱ.9,
2 Նեփի 25.20,
Մոսիա 3.15:

գ Հովհ. Գ.14,
Հել. 8.14–15:
20ա 1 Նեփի 17.40–41:
22ա Ալմա 32.27–28:
բ Ալմա 22.14, 34.8–9:
գ ստ՝ Հարություն:

նի Դարութիւնը, այնպէս որ բոլոր մարդիկ կկանգնեն նրա առաջ՝ դատվելու վերջին ու դատաստանի օրը՝ համաձայն իրենց Դարձերի:

23 Եվ այժմ, իմ եղբայրներ, ես ուզում եմ, որ դուք ստերմանէք այս խոսքը ձեր սրտերում, և երբ այն սկսի ուղչել՝ սնուցէք այն հենց այսպէս, ձեր հավատքով: Եվ ահա, այն կդառնա մի ծառ, վեր Դարձայնալով ձեր մեջ դեպի հավիտենական կյանք: Եվ այն ժամանակ թող Աստված շնորհի ձեզ, որ ձեր Գրեմները թեթև լինեն՝ նրա Որդու ուրախության միջոցով: Եվ, հիւրավի, այս բոլորը դուք կարող եք անել, եթե կամենաք: Ամեն:

ԳԼՈՒԽ 34

Ամուղեկը վկայում է, որ խոսքը Քրիստոսում է՝ ի փրկություն – Եթե չարվի մի քափություն, ողջ մարդկությունը պիտի ոչնչանա – Մովսեսի ողջ օրենքը մատնանշում է Աստծո Որդու գոհաբերությունը – Փրկագրւման հավերժական ծրագիրը հիմնված է հավատքի և ապաշխարության վրա – Աղոթեք՝ աշխարհիկ և հոգևոր օրհնությունների համար – Այս կյանքը մարդկանց համար մի ժամանակ է նախապատրաստվելու՝ հանդիպելու Աստծուն – Երկյուղով գործեք ձեր փրկությունը Աստծո առջև: Մոտ 74թ. Ք.ծ.ա.:

Եւ արդ, եղավ այնպէս, որ հետո, երբ Ալման խոսեց այս խոսքերը նրանց համար, նա նստեց գետնին, և Դմուղեկը վեր կացավ և սկսեց սովորեցնել նրանց՝ ասելով.

2 Իմ եղբայրներ, ես կարծում եմ, որ անհնարին է, որ դուք անտեղյակ լինեք այս բաներին, որոնք խոսվեցին Քրիստոսի գալստի վերաբերյալ, որի մասին մենք սովորեցնում ենք, որ Աստծո Որդին է. այո, ես գիտեմ, որ Դայս բաները սովորեցվել են ձեզ առատորեն, մինչև մեր միջոց ձեր երկպառակվելը:

3 Եվ քանի որ դուք ցանկացաք իմ սիրելի եղբորից, որ նա հայտնի դարձնի ձեզ, թե դուք ինչ պիտի անեք, ձեր չարչարանքների պատճառով, և նա ասաց ձեզ որոշ բան, ձեր մտքերը նախապատրաստելու համար. այո, և նա հորդորեց ձեզ՝ ի հավատք և ի համբերություն,

4 Այո, մինչև անգամ որ դուք ունենաք այնքան հավատք, որ ստերմանէք խոսքը ձեր սրտերում, որպեսզի դուք կարողանաք կատարել փորձը դրա բարության վերաբերյալ:

5 Եվ մենք տեսանք, որ մեծ հարցը, որը ձեր մտքերում է, այն է. արդյո՞ք խոսքն Աստծո Որդու մեջ է, կամ արդյո՞ք ոչ մի Քրիստոս չպիտի լինի:

6 Եվ դուք նույնպէս տեսաք, որ իմ եղբայրն ապացուցեց ձեզ շատ օրինակներով, որ Դխոսքը Քրիստոսում է՝ ի փրկություն:

7 Իմ եղբայրը վկայակոչեց Ձեռնոսի խոսքերը, որ փրկագնումը գալիս է Աստծո Որդու միջոցով, և նաև Ձեռնոքի խոսքերը. և նաև, նա հիշատակեց Մովսեսին, ապացուցելու, որ այս բաները ճշմարիտ են:

8 Եվ այժմ ահա, ես կվկայեմ

22դ Ալմա 11.44:
ե սո՛ր Գործեր:
23ա Ալմա 33.1, 34.4:
բ Ալմա 32.41,

ՎևՈՒ 63.23:
գ Ալմա 31.38:
34 1ա Ալմա 8.21:
2ա Ալմա 16.13–21:

4ա Ալմա 33.23:
6ա Հովհ. Ա.1, 14:
8ա սո՛ր Վկայել:

ձեզ իմ կողմից, որ այս բաները ճշմարիտ են: Ահա, ես ասում եմ ձեզ, որ ես իրոք գիտեմ, որ Քրիստոսը պիտի գա մարդկանց գավակների մեջ, իր վրա վերցնելու իր ժողովրդի օրինազանցությունները, և որ նա պիտի ^բքավի աշխարհի մեղքերը. քանզի Տեր Աստված է ասել այս:

9 Քանզի անհրաժեշտ է, որ մի ^աքավություն արվի. քանզի Հավերժական Աստծո մեծ ^բծրագրի համաձայն, պետք է մի քավություն արվի, այլապես, ողջ մարդկությունն անխուսափելիորեն պիտի կորչի. այո, բոլորը կարծրացած են. այո, բոլորն ^գընկած են և կորած, և պիտի կորչեն, եթե չլինի քավությունը, որն անհրաժեշտորեն պետք է արվի:

10 Քանզի անհրաժեշտ է, որ լինի մի մեծ և վերջին ^ագոհաբերություն. այո, ոչ մարդու գոհաբերություն, ոչ էլ կենդանու, ոչ էլ որևէ ձևի թռչունի. քանզի դա չպետք է լինի մի մարդկային գոհաբերություն. այլ դա պիտի լինի մի ^բանսահման և հավերժական ^գգոհաբերություն:

11 Այսպիսով, չկա որևէ մարդ, որ կարողանա գոհաբերել իր սեփական արյունը, որը կքավի մեկ ուրիշի մեղքերը: Արդ, եթե մի մարդ սպանում է, ահա, մեր օրենքը, որն ^աարդար է, կվերցնի^բ նրա եղբոր կյանքը: Ես ասում եմ ձեզ՝ Ոչ:

12 Մակայն օրենքը պահանջում է նրա կյանքը, ով ^ասպանել է. հետևաբար, մի անսահման քավու-

թյունից զատ ոչ մի բան չի կարող լինել, որ բավարարի աշխարհի մեղքերի համար:

13 Հետևաբար, անհրաժեշտ է, որ լինի մի մեծ և վերջին գոհաբերություն. և այն ժամանակ կլինի, կամ անհրաժեշտ է, որ լինի ^ադարեցում արյուն թափելուն. այն ժամանակ Մովսեսի ^բօրենքը կկատարվի. այո, այն պիտի ամբողջովին կատարվի՝ ամեն կետ և գիծ, և ոչ մեկը չպիտի անցնի:

14 Եվ ահա, այս է ողջ ^աիմաստը ^բօրենքի՝ ամեն մասնիկ մատնանը շելով դեպի այն մեծ և վերջին ^գգոհաբերությունը. և այն մեծ և վերջին գոհաբերությունը լինելու է Աստծո Որդին, այո, անսահման և հավերժական:

15 Եվ այսպիսով, նա պիտի բերի ^ափրկություն բոլոր նրանց, ովքեր կհավատան նրա անունին. սա լինելով նպատակն այդ վերջին գոհաբերության, առաջ բերելու գթասրտությունը, որը հաղթում է արդարադատությանը և առաջ բերում միջոցներ մարդկանց համար, որ նրանք կարողանան ունենալ հավատք ի ապաշխարություն:

16 Եվ այսպես ^աողորմությունը կարող է բավարարել ^բարդարադատության պահանջները, և օղակում է նրանց ապահովության բազուկների մեջ, մինչդեռ նա, ով չի գործադրում հավատք ի ապաշխարություն, ենթակա է ^գարդարադատության պահանջների ամբողջ օրենքին. հետևաբար, միայն

<p>8բ սո՛ւ Քավել, Քավություն: 9ա Ալմա 33.22: բ Ալմա 12.22–33, Մովսես 6.62: գ սո՛ւ Ադամի և Եվայի անկումը: 10ա Մովսես 5.6–7: բ 2 Նեփի 9.7:</p>	<p>գ սո՛ւ Չոհաբերություն: 11ա Բ Օր. ԻՊ.16, Մոսիա 29.25: 12ա սո՛ւ Գերագույն պատիժ. Սպանություն: 13ա 3 Նեփի 9.17, 19–20: բ 3 Նեփի 15.5: 14ա Ալմա 30.3:</p>	<p>բ սո՛ւ Մովսեսի օրենք: գ ՎևոՒ 138.35: 15ա սո՛ւ Փրկություն: 16ա սո՛ւ Ողորմած, Ողորմություն: բ սո՛ւ Արդարադատու- թյուն: գ Ալմա 12.32:</p>
--	--	---

նրա համար, ով ունի հավատք ապաշխարության համար, իրագործվում է փրկագնման մեծ և հավերժական Պժրագիրը:

17 Հետևաբար, թող Աստված շնորհի ձեզ, իմ եղբայրներ, որ դուք կարողանաք գործադրել ձեր «հավատքն ապաշխարության համար, որ դուք սկսեք Քանչև առ նրա սուրբ անունը, որպեսզի նա ողորմություն ունենա ձեր վրա,

18 Այո, կանչեք առ նա ողորմության համար. քանզի նա հզոր է փրկելիս:

19 Այո, խոնարհեցրեք ձեզ, և շարունակեք աղոթքի մեջ առ նա:

20 Կանչեք առ նա, երբ դուք ձեր դաշտերում եք, այո, բոլոր ձեր հոտերի համար:

21 «Կանչեք առ նա ձեր տներում, այո, ողջ ձեր գերդաստանի համար՝ և՛ առավոտյան, և՛ կեսօրին, և՛ երեկոյան:

22 Այո, կանչեք առ նա ձեր թշնամիների գորության դեմ:

23 Այո, «կանչեք առ նա Պղևի դեմ, որը թշնամի է ամենայն Գարդարության:

24 Կանչեք առ նա ձեր դաշտերի բերքի համար, որպեսզի դուք կարողանաք բարգավաճել դրանով:

25 Կանչեք ձեր դաշտերի հոտերի համար, որպեսզի դրանք կարողանան ավելանալ:

26 Բայց այս բոլորը չէ. դուք պիտի դուրս թափեք ձեր հոգիները ձեր «սենյակներում և ձեր գաղտնի տեղերում և ձեր անապատում:

27 Այո, և երբ դուք չեք կանչում առ Տերը, թող ձեր «սրտերը Քլցված լինեն՝ ուղղված նրան, շարունակ աղոթքով՝ ձեր բարօրության համար և նաև նրանց բարօրության համար, ովքեր ձեր շրջապատում են:

28 Եվ այժմ, ահա, իմ սիրելի՛ եղբայրներ, ես ասում եմ ձեզ, մի կարծեք, որ սա բոլորն է. քանզի, այս բոլոր բաներն անելուց հետո, եթե դուք երես դարձնեք «կարիքավորից ու մերկից, և չայցելեք հիվանդին ու չարչարվածին, և Քբաժին չհանեք ձեր ստացվածքից, եթե դուք ունեք, նրանց համար, ովքեր կարիքի մեջ են,– ես ասում եմ ձեզ, եթե դուք այս բաներից որևէ մեկը չեք անում, ահա, ձեր Գաղոթքը Գուր է, և ձեզ ոչնչով օգտակար չէ, և դուք նման եք կեղծավորների, ովքեր ուրանում են հավատքը:

29 Հետևաբար, եթե դուք չեք հիշում «գթառատ լինել, դուք նման եք թափթփուկի, որը գտողները դուրս են գցում (քանի որ այն որևէ արժեք չունի), և մարդկանց կողմից ոտնակոխ է արվում:

30 Եվ այժմ, իմ եղբայրներ, ես կկամենայի, որ դուք, այսքան ապացույցներ ստանալուց հետո, տեսնելով, որ սուրբ գրքերը վկայում են այս բաների մասին, դուք գործի անցնեք և ապաշխարությանը վայել «պտուղ բերեք:

31 Այո, ես կկամենայի, որ դուք գործի անցնեք և չկարծրացնեք

16դ սու֊ Փրկագնման ծրագիր:
17ա սու֊ Հավատք:
բ սու֊ Աղոթք:
21ա Մաղ. Ե.1–3,
3 Նեփի 18.21:
23ա 3 Նեփի 18.15, 18:
բ սու֊ Գև.:

գ սու֊ Արդար, Արդարություն:
26ա Մատ. 2.5–6:
27ա սու֊ Սիրտ:
բ սու֊ Խորհել:
28ա սու֊ Աղքատ:
բ սու֊ Ողորմություններ, Ողորմություններ

տալը:
գ Մատ. ԺԵ.7–8:
դ Մոր. 7.6–8:
29ա սու֊ Գթություն:
30ա Մատ. Գ.8,
Ալմա 13.13:

ծեր սրտերն այլևս. քանզի ահա, հինա է ժամանակը և ձեր փրկութեան օրը. և հետևաբար, եթե դուք կամենաք ապաշխարել և չկարծրացնէք ձեր սրտերը, փրկագրեման մեծ ծրագիրն անհապաղ պիտի իրագործվի ձեզ համար:

32 Քանզի ահա, մարդկանց համար այս կյանքն է ժամանակը՝ նախապատրաստվելու՝ հանդիպելու Աստծուն. այո, ահա, մարդկանց համար այս կյանքի օրն է իրենց գործերը կատարելու օրը:

33 Եվ այժմ, ինչպես ես առաջ եմ ասել ձեզ, քանի որ դուք ունեցել եք այսքան շատ ապացույցներ, հետևաբար, ես աղերսում եմ ձեզ, որ դուք՝ չհետաձգեք ձեր՝ Բապաշխարության օրը մինչև վերջ. քանզի կյանքի այս օրից հետո, որը տրված է մեզ, որ նախապատրաստվենք հավերժության համար, ահա, եթե մենք ճիշտ չենք օգտագործում մեր ժամանակն այս կյանքում, հետո գալիս է Գիսավարի՝ Գիշերը, որի ժամանակ ոչ մի գործ չի կարող կատարվել:

34 Դուք չեք կարող ասել, երբ դուք կբերվեք այն սոսկալի՝ ճգնաժամին, որ՝ ես կապաշխարեմ, որ՝ ես կվերադառնամ իմ Աստծո մոտ: Ո՛չ, դուք չե՛ք կարող ասել այս. քանզի այն նույն ոգին, որը տիրել է ձեր մարմիններին այն պահին, երբ դուք դուրս եք գալիս այս կյանքից, այդ նույն ոգին կունենա գորություն՝ տիրելու

ձեր մարմնին այն հավերժական աշխարհում:

35 Քանզի ահա, եթե դուք հետաձգել եք ձեր ապաշխարության օրը, նույնիսկ մինչև մահ, ահա, դուք՝ ենթակա եք դարձել դևի ոգուն, և նա՝ կկրում է ձեզ՝ իրենը. հետևաբար, Տիրոջ Հոգին հեռանում է ձեզանից, և ձեզանում տեղ չունի, և դևն ունի ողջ գորությունը ձեզ վրա. և սա է ամբարիշտի վերջնական վիճակը:

36 Եվ այս ես գիտեմ, որովհետև Տերն ասել է՝ նա չի բնակվում՝ անսուրբ տաճարներում, այլ՝ արդարների սրտերում է նա բնակվում. այո, և նա նաև ասել է, որ արդարները պիտի նստեն նրա արքայությունում՝ այլևս դուրս չգնալու. և նրանց հանդերձները ճերմակ պիտի դարձվեն Գառի արյան միջոցով:

37 Եվ այժմ, իմ սիրելի՛ եղբայրներ, ես ցանկանում եմ, որ դուք հիշեք այս բաները, և որ դուք երկյուղով՝ ագործեք ձեր փրկությունն Աստծո առջև, և որ այլևս չժխտեք Քրիստոսի գալուստը.

38 Որ դուք այլևս՝ չհակառակվեք ընդդեմ Սուրբ Հոգուն, այլ որ դուք ընդունեք այն և վերցնեք ձեզ վրա Քրիստոսի՝ Բանունը. որ դուք խոնարհեցնեք ինքներդ ձեզ՝ մինչև փոշին, և՝ Գերկրյազգեք Աստծուն, որտեղ էլ որ լինեք, հոգով և ճշմարտությամբ, և որ դուք ապրեք,՝ Գոհություն հայտնելով ամեն

31ա Հռովմ. ԺԳ.11–12:
32ա2 Նեփի 2.21,
Ալմա 12.24, 42.4–6:
33ա Հել. 13.38,
ՎևոՒ 45.2:
բ սուր Ապաշխարել,
Ապաշխարություն:
գ սուր Հոգևոր խավար,
Մահ հոգևոր:

դ Հովհ. Թ.4,
ՎևոՒ 45.17:
34ա Ալմա 40.13–14:
35ա2 Նեփի 28.19–23:
բ 2 Նեփի 9.9:
36ա Մոսիա 2.37,
Ալմա 7.21, Հել. 4.24:
բ սուր Արդար,
Արդարություն:

37ա Փիլ. Բ.12:
38ա սուր Հակառակություն:
բ Մոսիա 5.8, Ալմա 5.38:
գ սուր Երկրպագել:
դ Սաղ. ԿԹ.30,
ՎևոՒ 59.7:
սուր Ծնորհակալ,
Ծնորհակալություն,
Գոհաբանություն:

օր, այն բազում ողորմությունների և օրհնությունների համար, որոնք նա շնորհում է ձեզ:

39 Այո, և ես նաև հորդորում եմ ձեզ, իմ եղբայրներ, որ դուք շարունակ «արթուն լինեք աղոթքում, որպեսզի դուք չմոլորեցվեք դևի թգայթակողություններով, որպեսզի նա չկարողանա հաղթել ձեզ, որպեսզի դուք վերջին օրը չդառնաք նրա հպատակները. քանզի ահա, նա հատուցում է ձեզ՝ ոչ լավ բանով:

40 Եվ այժմ, իմ սիրելի՛ եղբայրներ, ես կկամենայի հորդորել ձեզ ունենալ «համբերություն, և որ դուք տանեք բոլոր ձևի չարչարանքները. որ դուք չզգազրախոսեք նրանց դեմ, ովքեր ձեզ դուրս են գցում ձեր ծայրահեղ աղքատության պատճառով, որ չլինի թե՛ դուք նրանց պես մեղսագործներ դառնաք,

41 Այլ որ դուք ունենաք համբերություն և կրեք այդ չարչարանքները՝ անխախտ հույսով, որ դուք պիտի մի օր հանգստանաք բոլոր ձեր չարչարանքներից:

ԳԼՈՒԽ 35

Խոսքի քարոզելը կործանում է Չորամացիների նենգությունը – Նրանք վտարում են նորադարձներին, որոնք հետազայում միանում են Ամմոնի ժողովրդին Երսոնում – Ալման վշտանում է ժողովրդի ամբարշտության պատճառով: Մոտ 74թ. Ք.ծ.ա.:

ԱՐԳ, եղավ այնպես, որ հետո, երբ Ամոնեկը վերջ դրեց այս խոսքե-

րին, նրանք ետ քաշվեցին բազմությունից և եկան Երսոնի երկիրը:

2 Այո, մնացած եղբայրները, Չորամացիներին խոսքը քարոզելուց հետո, նույնպես եկան Երսոնի երկիրը:

3 Եվ եղավ այնպես, որ հետո, երբ Չորամացիների առավել հանրաճանաչ մասը խորհրդակցեց միասին այն խոսքերի վերաբերյալ, որոնք քարոզվել էին իրենց, նրանք զայրացան խոսքի պատճառով, քանզի այն կործանում էր նրանց «նենգությունը. հետևաբար, նրանք չկամեցան ականջ դնել խոսքերին:

4 Եվ նրանք ուղարկեցին և ի մի հավաքեցին ողջ ժողովրդին՝ ամբողջ երկրով մեկ, և խորհրդակցեցին նրանց հետ այն խոսքերի վերաբերյալ, որոնք ասվել էին:

5 Արդ, նրանց կառավարիչները և նրանց քահանաները և նրանց ուսուցիչները թույլ չտվեցին ժողովրդին իմանալ իրենց ցանկությունների մասին. հետևաբար, նրանք գաղտնի պարզեցին բոլոր մարդկանց մտքերը:

6 Եվ եղավ այնպես, որ հետո, երբ նրանք պարզեցին բոլոր մարդկանց մտքերը, նրանք, ովքեր կողմ էին խոսքերին, որոնք խոսվել էին Ալմայի կողմից և նրա եղբայրների, դուրս գցվեցին երկրից. և նրանք շատ էին. և նրանք նույնպես եկան Երսոնի երկիրը:

7 Եվ եղավ այնպես, որ Ալման ու նրա եղբայրներն օգնեցին նրանց:

8 Արդ, Չորամացիները բարկացած էին Ամմոնի ժողովրդի վրա, ովքեր Երսոնում էին, և Չորամացիների գլխավոր կառավարիչը լինելով մի շատ ամբարիշտ մարդ,

39ա սուր Արթուն լինել: Բ սուր Գայթակղել, Գայթակղություն:

գ Ալմա 30.60: 40ա սուր Համբերություն: Բ Վևոխ 31.9:

35 3ա սուր Քահանանենգություն:

Ամմոնի ժողովրդի մոտ ուղարկեց՝ կամենալով, որ նրանք դուրս գցեին իրենց երկրից բոլոր նրանց, ովքեր իրենց մոտից անցել էին նրանց երկիրը:

9 Եվ նա շատ սպառնալիքներ քափեց նրանց դեմ: Եվ այժմ Ամմոնի ժողովուրդը չէր վախենում նրանց խոսքերից. հետևաբար, նրանք դուրս չգցեցին նրանց, այլ ընդունեցին Չորամացիների բոլոր աղքատներին, ովքեր անցել էին իրենց մոտ. և նրանք՝ «կերակրեցին նրանց, և հագրեցին նրանց, և տվեցին նրանց հողեր՝ ժառանգության համար. և նրանք օժանդակեցին նրանց՝ ըստ նրանց պահանջների:

10 Արդ, դա բարկության դրդեց Չորամացիներին՝ Ամմոնի ժողովրդի դեմ, և նրանք սկսեցին շփվել Լամանացիների հետ և նրանց ևս դրդել բարկության՝ ընդդեմ նրանց:

11 Եվ այսպիսով, Չորամացիներն ու Լամանացիները սկսեցին պատրաստություններ տեսնել պատերազմի համար Ամմոնի ժողովրդի դեմ, և նաև Նեփիացիների դեմ:

12 Եվ այսպես ավարտվեց Նեփիի ժողովրդի վրա դատավորների կառավարման տասնյոթերորդ տարին:

13 Եվ Ամմոնի ժողովուրդը հեռացավ Երսոնի երկրից, և եկավ հասավ Մելեքի երկիրը, և տեղ տվեց Երսոնի երկրում Նեփիացիների գորքերին, որպեսզի նրանք կարողանային կռվել Լամանացիների գորքերի և Չորամացիների գորքերի դեմ. և այսպես, սկսվեց մի պատերազմ Լամանացիների

ու Նեփիացիների միջև, դատավորների կառավարման տասնյոթերորդ տարում. և նրանց պատերազմների մի «պատմություն կտրվի հետագայում:

14 Եվ Ալման և Ամմոնը և նրանց եղբայրները, և նաև Ալմայի երկու որդիները, Չորամացիներից՝ «շատերին ապաշխարության բերելիս Աստծո ձեռքին գործիքներ լինելուց հետո, վերադարձան Չարահեմլայի երկիրը. և բոլոր նրանք, ովքեր բերվեցին ապաշխարության, դուրս քշվեցին իրենց երկրից, բայց նրանք ունեցան հողեր իրենց ժառանգության համար Երսոնի երկրում, և նրանք վերցրեցին զենքեր՝ պաշտպանելու իրենց և իրենց կանանց ու երեխաներին և իրենց հողերը:

15 Արդ, Ալման, վշտացած լինելով իր ժողովրդի անօրինության համար, այո, պատերազմների համար և արյունահեղությունների և հակառակությունների, որ նրանց մեջ էին. և հայտարարած լինելով խոսքը, կամ ուղարկելով խոսքը՝ հայտարարելու բոլոր ժողովրդի մեջ, ամեն քաղաքում. և տեսնելով, որ մարդկանց սրտերը սկսում էին կարծրանալ, և որ նրանք սկսում էին «վիրավորվել խոսքի խստության պատճառով, նրա սիրտն անչափ վշտացավ:

16 Հետևաբար, նա կարգադրեց, որ իր որդիները հավաքվեին միասին, որպեսզի նա կարողանար նրանցից ամեն մեկին առանձին տալ իր «հանձնարարությունը, արդարությանը պատկանող բաների վերաբերյալ: Եվ մենք ունենք մի պատմություն՝ նրա պատվիրանների, որոնք նա տվեց նրանց՝

ըստ իր սեփական հիշատակարանի:

Ալմայի պատվիրաններն իր որդի Հելամանին:

Ընդգրկելով 36 և 37 գլուխները:

ԳԼՈՒԽ 36

Արման վկայում է Հելամանին հրեշտակ տեսնելուց հետո իր դարձի մասին – Նա տարել էր անիծված հոգու ցավերը, նա կանչել էր Հիսուսի անունը, և հետո ծնվել Աստծուց – Քաղցր ուրախությունը ւրել էր նրա հոգին – Նա տեսել էր հրեշտակների բազմություններ՝ Աստծուն զովարանելիս – Բազմաթիվ նորադարձներ ճաշակել են ու տեսել, ինչպես նա է ճաշակել ու տեսել: Մոտ 74թ. Ք.ծ.ա.:

«ՈՐԴԻՍ, ականջ դիր իմ խոսքերին. քանզի ես երդվում եմ քեզ, որ որքան որ դու կպահես Աստծո պատվիրանները, դու կբարգավաճես երկրում:

2 Ես կկամենայի, որ դու անեիր, ինչպես ես եմ արել՝ հիշելով մեր հայրերի գերությունը. քանզի նրանք՝ «ճորտության մեջ էին, և ոչ ոք չէր կարող ազատել նրանց, բացի դա լիներ Աբրահամի՝ Մասովածը և Իսահակի Ասովածը և Հակոբի Ասովածը, և նա իսկապես ազատեց նրանց իրենց չարարանքներից:

3 Եվ այժմ, ո՛վ իմ որդի Հելաման,

ահա, դու քո երիտասարդությունում ես և հետևաբար, ես աղաչում եմ քեզ, որ դու լսես իմ խոսքերը և սովորես ինձանից. քանզի ես իսկապես գիտեմ, որ ովքեր որ դնեն իրենց վստահությունն Աստծո վրա, պիտի սատարվեն իրենց «կործանքների, և իրենց տագնապների, և իրենց չարարանքների մեջ, և պիտի՝ քարձրացվեն վերջին օրը:

4 Եվ ես չէի ուզեմ, որ դու կարծես, որ ես ինքնուրույն «գիտեմ, գիտեմ ոչ թե մահկանացուով, այլ հոգևորով, ոչ թե՝ մարմնական մտքով, այլ Աստծով:

5 Արդ, ահա, ես ասում եմ ձեզ, եթե ես՝ չձմվելի Աստծուց, ես իմացած՝ չէի լինի այս բաները. բայց Ասոված, սուրբ հրեշտակի բերանով, հայտնի դարձրեց ինձ այս բաները՝ ո՛չ իմ «արժանիության պատճառով.

6 Զանգի ես շրջում էի Մոսիայի որդիների հետ՝ ջանալով «կործանել Աստծո եկեղեցին. բայց ահա, Ասոված ուղարկեց իր սուրբ հրեշտակին՝ կասեցնելու մեզ այդ ճանապարհին:

7 Եվ ահա, նա խոսեց մեզ հետ, կարծես որոտի ձայնով, և ողջ հողը՝ «ցնցվեց մեր ոտքերի տակ. և մենք բոլորս ընկանք գետնին, քանզի Տիրոջ՝ Քերկյուղը պատել էր մեզ:

8 Բայց ահա, ձայնն ասաց ինձ՝ Բարձրացի՛ր: Եվ ես բարձրացա ու կանգնեցի, և տեսա հրեշտակին:

9 Եվ նա ասաց ինձ. Եթե դու կամենում ես ինքդ կործանվել,

36 1ա Հել. 5.9–14:
2ա Մոսիա 23.23, 24.17–21:
բ Ել. 9.6, Ալմա 29.11:
3ա Հռովմ. Ը.28:
բ Մոսիա 23.21–22:
4ա Ա Կոր. Բ.11,

Ալմա 5.45–46:
սո՛ր Գիտություն:
բ սո՛ր Մարմնական:
5ա սո՛ր Վերստին ծնված,
Աստծուց ծնված:
բ Ալմա 26.21–22:

գ սո՛ր Արժանի,
Արժանավորություն:
6ա Մոսիա 27.10:
7ա Մոսիա 27.18:
բ սո՛ր Վախ –
Ասովածավախություն:

այլևս մի ջանա կործանել Աստծո եկեղեցին:

10 Եվ եղավ այնպես, որ ես ընկա գետնին. և «Երեք օրվա և երեք գիշերվա ընթացքում ես չկարողացա բանալ իմ բերանը, ոչ էլ շարժել իմ մարմինը:

11 Եվ հրեշտակն ավելի շատ բաներ խոսեց ինձ հետ, որոնք լավեցին իմ եղբայրների կողմից, բայց ես չլսեցի դրանք. քանզի երբ ես լսեցի խոսքերը. Եթե դու կամենում ես ինքդ կործանվել, այլևս մի ջանա կործանել Աստծո եկեղեցին, ես ցնցվեցի այնպիսի մեծ վախով ու զարմանքով, որ չլինի թե ես կործանվեի, որ ես ընկա գետնին և այլևս չլսեցի:

12 Բայց ես պրկված էի «հավերժական տանջանքից, քանզի իմ հոգին ծայրաստիճան տակնուվրա էր եղել և պրկվել բոլոր իմ մեղքերից:

13 Այո, ես հիշեցի բոլոր իմ մեղքերը և անօրինությունները, որոնց համար ես «տանջվում էի դժոխքի ցավերով. այո, ես տեսա, որ ես ապստամբել էի Աստծո դեմ, և որ ես չէի պահել նրա սուրբ պատվիրանները:

14 Այո, և ես սպանել էի նրա ավակներից շատերին, կամ, ավելի շուտ, տարել էի նրանց դեպի կործանում. այո, և ի վերջո, այնքան մեծ էին իմ անօրինությունները, որ միայն Աստծո ներկայության մեջ գալու միտքը պրկում էր իմ հոգին՝ աննկարագրելի սոսկումով:

15 Ա՛խ, մտածում էի ես, երանի՛թե ես «կարողանայի արտաքսվել

ու բնաջինջ լինել թե՛ հոգով, թե՛ մարմնով, որ չբերվեի՝ կանգնելու իմ Աստծո ներկայության մեջ՝ դատվելու ըստ իմ ^բգործերի:

16 Եվ արդ, երեք օրվա և երեք գիշերվա ընթացքում պրկված էի ես, նույնիսկ ցավերով «անիծված հոգու:

17 Եվ եղավ այնպես, որ երբ ես այսպես պրկված էի տանջանքից, մինչ ես «տակնուվրա էի եղած իմ բազում մեղքերի հիշողությունից, ահա, ես հիշեցի նաև լսած լինելս՝ իմ հոր մարգարեանալը ժողովրդին, մի Հիսուս Քրիստոսի, մի Աստծո Որդու գալստյան վերաբերյալ քավելու համար աշխարհի մեղքերը:

18 Արդ, երբ դատողությունս որսաց այս միտքը, ես գոչեցի իմ սրտում. Ո՛վ Հիսուս, դո՛ւ, Աստծո՛ Որդի, ողորմություն ունեցիր իմ հանդեպ, որ դառը մաղձի՝ «մեջ եմ, և օղակված եմ մահվան հավիտենական ^բշղթաներով:

19 Եվ արդ, ահա, երբ ես մտածեցի այս, ես այլևս չկարողացա հիշել իմ ցավերը. այո, ես այլևս «տակնուվրա չէի լինում իմ մեղքերի հիշողությունից:

20 Եվ, Օ՛հ, ինչպիսի «ուրախություն, և ինչ սքանչելի լույս ես տեսա. այո, իմ հոգին լցվեց ուրախությամբ՝ նույնքան սաստիկ, ինչպիսին իմ ցավն էր:

21 Այո, ես ասում եմ քեզ, որդի՛ս, որ չէր կարող լինել ոչինչ, այնպես ուժգին և այնպես անողոր, ինչպես իմ ցավերն էին: Այո, և դարձյալ ես ասում եմ քեզ, որդի՛ս, որ մյուս

10ա Մոսիա 27.19–23:
12ա Վե՛նի 19.11–15:
13ա սո՛ւ Մեղավորություն:
15ա Հայտ. 2.15–17,
Ալմա 12.14:
բ Ալմա 41.3,

Վե՛նի 1.9–10:
16ա սո՛ւ Նզովք:
17ա Բ Կոր. Է.10:
18ա նշ. ծայրագույն
զղջման մեջ:
բ 2 Նեփի 9.45, 28.22,

Ալմա 12.11,
Մովսես 7.26:
19ա սո՛ւ Մեղավորություն:
20ա սո՛ւ Ուրախություն:

կողմից, չէր կարող լինել ոչինչ այնպես ուժգին և քաղցր, ինչպիսին իմ ուրախությունն էր:

22 Այո, ինձ թվաց՝ ես տեսա, ճիշտ ինչպես մեր հայր՝ «Լեքին էր տեսել, Աստծուն՝ նստած իր գահի վրա, շրջապատված հրեշտակների անթիվ բազմություններով, զբաղված՝ իրենց Աստծուն զովերգելով և փառաբանելով. այո, և իմ հոգին տենչում էր լինել այնտեղ:

23 Բայց, ահա, իմ ձեռքն ու ոտքը կրկին վերստացան իրենց՝ ուժը, և ես կանգնեցի ոտքի և հայտնեցի ժողովրդին, որ ես թճմվել էի Աստծուց:

24 Այո, և այդ ժամանակից ի վեր՝ մինչև այժմ, ես տքնել եմ առանց դադարելու, որ ես կարողանամ ապաշխարության բերել հոգիներ. որ ես կարողանամ բերել նրանց՝ ճաշակելու այն սաստիկ ուրախությունից, որից ես ճաշակեցի. որ նրանք նույնպես կարողանան ծնվել Աստծուց և ՚լցվել Սուրբ Հոգով:

25 Այո, և այժմ, ահա, Օ՛, որդի՛ս, Տերը տալիս է ինձ անչափ մեծ ուրախություն՝ իմ աշխատանքի պտղի մեջ.

26 Քանզի, խոսքի շնորհիվ, որ նա հաղորդել էր ինձ, ահա, շատերն են ծնվել Աստծուց և ճաշակել, ինչպես ես եմ ճաշակել, և տեսել՝ դեմ հանդիման, ինչպես ես եմ տեսել. հետևաբար, նրանք գիտեն այս բաների մասին, որոնց վերաբերյալ ես խոսեցի, քանի որ

ես իրոք գիտեմ. և գիտելիքը, որը ես ունեմ, Աստծուց է:

27 Եվ ես սատարվել եմ ամեն տեսակի փորձանքների և տագնապների ներքո, այո, և ամեն ձևի չարչարանքների մեջ. այո, Աստված ազատել է ինձ բանտից և կապանքներից, և մահից. այո, և ես դնում եմ իմ վստահությունը նրա վրա, և նա դեռ՝ կազատի ինձ:

28 Եվ ես գիտեմ, որ նա՝ կրթարձրացնի ինձ վերջին օրը՝ ապրելու իր հետ, Քիառքի մեջ. այո, և ես կզովաբանեմ նրան հավիտյան, քանզի նա դուրս քերեց մեր հայրերին Եգիպտոսից, և նա կուլ տվեց Քեփպտացիներին Կարմիր ծովում. և նա առաջնորդեց նրանց իր գործությամբ՝ դեպի խոստացված երկիրը. այո, և նա, ժամանակ առ ժամանակ, ազատեց նրանց ճորտությունից և գերությունից:

29 Այո, և նա նաև դուրս բերեց մեր հայրերին Երուսաղեմի հողից. և նա նաև իր հավիտենական գործությամբ, ժամանակ առ ժամանակ, ազատեց նրանց՝ ճորտությունից և գերությունից, մինչև իսկ ընդհուպ այս ներկա օրը. և ես միշտ պահել եմ հիշողությանս մեջ նրանց գերությունը. այո, և դուք նույնպես պարտավոր եք պահել հիշողության մեջ նրանց գերությունը, ինչպես ես եմ արել:

30 Բայց ահա, որդի՛ս, սա բոլորը չէ. քանզի դուք պարտավոր եք իմանալ, ինչպես ես գիտեմ, որ՝ որքան որ դուք կպահեք Աստծո պատվիրանները, դուք կբարգա-

22ա1 Նեփի 1.8:
23ա Մովսես 1.10:
բ Ալմա 5.14:
սու՝ Վերստին ծնված, Աստծուց ծնված:
24ա1 Նեփի 8.12,
Մոսիա 4.11:

բ 2 Նեփի 32.5,
3 Նեփի 9.20:
սու՝ Սուրբ Հոգի:
26ա Ալմա 31.5:
27ա Մաղ. ԼԳ.17:
28ա3 Նեփի 15.1:
բ սու՝ Փառք:

գ Ել. ԺԲ.51:
դ Ել. ԺԳ.26-27:
29ա Մոսիա 24.17, 27.16,
Ալմա 5.5-6:
30ա2 Նեփի 1.9-11,
Ալմա 50.19-22:

վաճեք երկրում. և դուք պարտավոր եք նաև իմանալ, որ որքան որ դուք չեք պահի Աստծո պատվիրանները, դուք կտրված կլինեք նրա ներկայությունից: Արդ, սա նրա խոսքի համաձայն է:

ԳԼՈՒԽ 37

Արույրե քիթեղները և մյուս սուրբ գրքերը պահպանվում են հոգիներին փրկության բերելու համար – Հարեդացիները կործանվեցին իրենց ամբարշտության պատճառով – Նրանց գաղտնի երդումներն ու ուխտերը պետք է պահվեն ժողովրդից – Խորհրդակցեք Տիրոջ հետ ձեր բոլոր գործերում – Ինչպես Լիառնան դեկավարում էր Նեփիացիներին, այնպես էլ Քրիստոսի խոսքն առաջնորդում է մարդկանց դեպի հավերժական կյանք: Մոտ 74թ. Ք.ծ.ա.:

Եւ այժմ, որդի՛ս, Հելաման, ես պատվիրում եմ քեզ, որ դու վերցնես ^ահիշատակարանները, որոնք ^բվստահված էին ինձ.

2 Եվ ես նաև պատվիրում եմ քեզ, որ դու պահես այս ժողովրդի մասին մի հիշատակարան՝ համաձայն նրա, ինչպես ես եմ արել Նեփիի քիթեղների վրա, և պահես բոլոր այս բաները սրբորեն, որոնք ես եմ պահել. ճիշտ, ինչպես ես եմ պահել դրանք, քանզի ^աիմաստուն նպատակի համար է, որ դրանք պահվում են:

3 Եվ այս արույրե ^աքիթեղները, որոնք պարունակում են այս փո-

րագրությունները, որոնք իրենց վրա պարունակում են սուրբ գրքերի հիշատակարանները, որոնք ունեն մեր նախահայրերի տոհմաբանությունը, նույնիսկ սկզբից ի վեր,

4 Ահա, դա մեր հայրերի կողմից է մարգարեություն արվել, որ դրանք պետք է պահվեն և փոխանցվեն մի սերնդից մյուսին, և պահվեն ու պահպանվեն Տիրոջ ձեռքով, մինչև դրանք հայտնի դառնան ամեն ազգի, ցեղի, լեզվի, և ժողովրդի, որ նրանք իմանան դրանցում պարունակվող ^ախորհուրդների մասին:

5 Եվ արդ, ահա, եթե դրանք պահվեն, դրանք պիտի պահպանեն իրենց պայծառությունը. այո, և դրանք կպահպանեն իրենց պայծառությունը. այո, և նմանապես՝ բոլոր քիթեղները, որոնք պարունակում են այն, ինչը սուրբ գիր է:

6 Արդ, դու գուցե ենթադրես, որ սա ^ահիմարություն է իմ կողմից. բայց, ահա, ես ասում եմ քեզ, որ ^բփոքր և հասարակ բաներով են իրականացվում մեծ բաները. և փոքր միջոցները շատ դեպքերում շփոթեցնում են իմաստունին:

7 Եվ Տեր Աստված գործում է այս ^ամիջոցներով, որպեսզի իրականացնի իր մեծ և հավերժական նպատակները. և խիստ ^բփոքր միջոցներով Տերը շփոթեցնում է իմաստուններին և իրականացնում բազում հոգիների փրկությունը:

8 Եվ արդ, մինչ այժմ դա եղել է Աստծո իմաստությանը, որ այս բաները պահպանվեին. քանզի

37 1ա Ալմա 45.2-8:
բ Մոսիա 28.20:
2ա Ենոկս 1.13-18,
ՄԽ 1.6-11,
Ալմա 37.9-12:
3ա 1 Նեփի 5.10-19:

սու՝ Արույրե
Թիթեղներ:
4ա սու՝ Աստծո
խորհուրդները:
6ա Ա Կոր. Բ.14:
բ 1 Նեփի 16.28-29,

ՎԼՈՒԽ 64.33,
123.15-17:
7ա Ես. ԾԵ.8-9:
բ Դ Թագ. Ե.1-14:

ահա, դրանք ՞ընդլայնել են այս ժողովրդի հիշողությունը, այո, համոզել շատերին իրենց ուղիների սխալմունքների վերաբերյալ, և նրանց բերել իրենց Աստծո իմացությանը՝ ի փրկություն իրենց հոգիների:

9 Այո, ես ասում եմ ձեզ, եթե ՞չլինեին այս բաները, որ այս հիշատակարանները պարունակում են, որոնք այս թիթեղների վրա են, Ամնոնը և նրա եղբայրները չէին կարողանա ՞համոզել Լամանացիներից այսքան բազում հազարավորների՝ նրանց հայրերի թյուր ավանդության վերաբերյալ. այո, այս հիշատակարանները և դրանց ՞խոսքերը բերեցին նրանց ապաշխարության. այսինքն՝ դրանք բերեցին նրանց Տիրոջ՝ իրենց Աստծո իմացությանը, և ցնծալու Հիսուս Քրիստոսով՝ իրենց Քավիչով:

10 Եվ ո՞վ գիտե, միգուցե դրանք միջոց կլինեն՝ իրենց Քավիչի իմացությանը բերելու նրանցից բազում հազարավորների, այո, և նաև մեր խստապարանոց եղբայրներից՝ Նեփիացիներից բազում հազարավորների, ովքեր այժմ կարծրացնում են իրենց սրտերը մեղքի ու անօրինությունների մեջ:

11 Արդ, այս խորհուրդները դեռ լիովին հայտնի չեն դարձվել ինձ. հետևաբար, ես պիտի զսպեմ ինձ:

12 Եվ, հավանաբար, բավական է, եթե ես միայն ասեմ, որ դրանք պահպանված են մի իմաստուն նպատակի համար, նպատակ, որը հայտնի է Աստծուն. քանզի նա, իմաստությամբ ՞խորհուրդ է տա-

լիս բոլոր իր ստեղծածներին, և նրա շավիղներն ուղիղ են և նրա ընթացքը ՞մի հավերժական շրջան է:

13 Օ՛, հիշի՛ր, հիշի՛ր, որդի՛ս, Հելաման, որքան ՞խիստ են Աստծո պատվիրանները: Եվ նա ասել է. ՞Եթե դուք պահեք իմ պատվիրանները, դուք պիտի ՞բարգավաճեք երկրում, բայց եթե դուք չպահեք նրա պատվիրանները, դուք պիտի կտրվեք նրա ներկայությունից:

14 Եվ այժմ, հիշի՛ր, որդի՛ս, որ Աստված ՞վստահել է քեզ այս բաները, որոնք ՞սրբազան են, որոնք նա պահել է սրբորեն, և նաև, որոնք նա կպահի ու կպահպանի իր ՞իմաստուն նպատակի համար, որպեսզի նա ցույց տա իր գործությունն ապագա սերունդներին:

15 Եվ այժմ ահա, ես ասում եմ քեզ, մարգարեության ոգով, որ եթե դու զանց անես Աստծո պատվիրանները, ահա, այս բաները, որոնք սրբազան են, պիտի վերցվեն քեզանից Աստծո գործությամբ, և դու պիտի համձնվես Սատանային, որ նա կարողանա մաղել քեզ, ինչպես մղեղը քամու առաջ:

16 Բայց, եթե դու պահպանես Աստծո պատվիրանները և վարվես այս բաների հետ, որոնք սրբազան են, համաձայն նրա, ինչ Տերը կպատվիրի քեզ (քանզի, դու պիտի դիմես Տիրոջը բոլոր բաների վերաբերյալ, ինչ որ դու պիտի անես դրանց հետ), ահա, ոչ մի գործություն երկրի կամ դժոխքի չի կարող ՞վերցնել դրանք քեզանից, քանզի Աստված գորավոր է բոլոր իր խոսքերն իրագործելիս:

<p>8աԲ Տիմ. Գ.15–17, Մոսիա 1.3–5: 9աՄոսիա 1.5: բ Ալմա 18.36, 22.12: գ սո՛ւ Ավետարան: 12ա2 Նեփի 9.28,</p>	<p>Հակոբ 4.10: բ 1 Նեփի 10.19, Ալմա 7.20: 13ա2 Նեփի 9.41: բ Ալմա 9.13, 3 Նեփի 5.22:</p>	<p>գ Մոսիա 1.7, Ալմա 50.20: 14ա Վևո՛Ւ 3.5: բ սո՛ւ Մուրք: գ 1 Նեփի 9.3–6: 16ա ՋՄ–Պ 1.59:</p>
--	---	---

17 Քանզի նա կկատարի բոլոր իր խոստումները, որոնք նա կտա քեզ, քանզի նա կատարել է իր խոստումները, որոնք նա տվել էր մեր հայրերին:

18 Քանզի նա խոստացել էր նրանց, որ նա «կպահպանի այս բաներն իր մի իմաստուն նպատակի համար, որպեսզի նա կարողանա ցույց տալ իր գործությունն ապագա սերունդներին:

19 Եվ այժմ, ահա, մեկ նպատակ իրագործել է նա, այսինքն՝ Լամանացիներից «բազում հազարավորների վերադարձնելով ճշմարտության իմացությանը. և նա ցույց է տվել իր գործությունն այդ բաների միջոցով, և նա դեռևս ցույց կտա իր գործությունը՝ դրանց միջոցով, թագազա սերունդներին. հետևաբար, դրանք պիտի պահպանվեն:

20 Հետևաբար, ես պատվիրում եմ քեզ, որդի՛ս, Հելյաման, որ դու ջանասեր լինես իմ բոլոր խոսքերը կատարելիս, և դու ջանասեր լինես Աստծո պատվիրանները պահելիս, ինչպես որ դրանք գրված են:

21 Եվ այժմ, ես կխոսեմ քեզ հետ այն «քսանչորս թիթեղների վերաբերյալ, որպեսզի դու պահես դրանք, որ գաղտնիքները, և խավարի գործերը, և նրանց՝ գաղտնի գործերը, կամ գաղտնի գործերն այն ժողովրդի, որոնք կործանվել են, կարողանան ցույց տրվել այս ժողովրդին. այո, նրանց բոլոր սպանությունները, կողոպուտները, և նրանց թալանները, և նրանց ողջ ամբարշտությունն ու պղծությունները ցույց տրվեն այս ժո-

ղովրդին. այո, և որ դու պահպանես այս «մեկնիչները:

22 Քանզի, ահա, Տերը տեսավ, որ իր ժողովուրդը սկսեց գործել խավարի մեջ, այո, գործել գաղտնի սպանություններ և պղծություններ. հետևաբար, Տերն ասաց՝ եթե նրանք չապաշխարեն, նրանք պիտի կործանվեն այս երկրի երեսից:

23 Եվ Տերն ասաց. Ես կպատրաստեմ իմ ծառա Գազեղեմի համար մի «քար, որը պիտի դուրս շողա մթությունից ի լույս, որ ես կարողանամ հայտնի դարձնել իմ ժողովրդի համար, ովքեր ծառայում են ինձ, որ ես կարող եմ նրանց համար հայտնի դարձնել իրենց եղբայրների գործերը, այո, նրանց գաղտնի գործերը, նրանց խավարի գործերը, և նրանց ամբարշտությունն ու պղծությունները:

24 Եվ այժմ, որդի՛ս, այս մեկնիչները պատրաստված էին, որպեսզի իրագործվեր Աստծո խոսքը, որը նա խոսել էր՝ ասելով.

25 Ես խավարից դուրս «կբերեմ, բոլոր նրանց գաղտնի գործերը, և նրանց պղծությունները. և եթե նրանք չապաշխարեն, ես՝ կկործանեմ նրանց երկրի երեսից. և ես ի լույս կբերեմ բոլոր նրանց գաղտնիքներն ու պղծություններն ամեն ազգի, որն այտուիետև տիրելու է երկրին:

26 Եվ այժմ, որդի՛ս, մենք տեսնում ենք, որ նրանք չապաշխարեցին, ուստի նրանք կործանվեցին, և առ այժմ Աստծո խոսքն իրագործվել է. այո, նրանց գաղտնի

18ա Վև.ՈՒ 5.9:
19ա Ալմա 23.5:
բ Ենովս 1.13,
Մորմ. 7.8–10:

21ա Եթեր 1.1–5:
բ սոՒ Գաղտնի
խմբակցություններ:
գ սոՒ Ուրիմ ու Թումիմ:

23ա Մոսիա 8.13:
25ա Վև.ՈՒ 88.108–110:
բ Մոսիա 21.26:

պղծությունները դուրս են բերվել խավարից և հայտնի դարձվել մեզ:

27 Եվ այժմ, որդի՛ս, ես պատվիրում եմ քեզ, որ դու պահես բոլոր նրանց երդումները, և նրանց ուխտերը, և նրանց գաղտնի պղծություններում իրենց համաձայնությունները. այո, և բոլոր նրանց՝ մշանները, և նրանց զարմանալիքները դու պիտի պահես այս ժողովրդից, որ նրանք չիմանան դրանք, որ չլինի թե, պատահաբար, նրանք նույնպես ընկնեն խավարի մեջ ու կործանվեն:

28 Քանզի ահա, «անեծք կա ողջ երկրի վրա, որ կործանում պիտի գա այն բոլոր խավարի գործիչների վրա՝ համաձայն Աստծո գործության, երբ նրանք լիովին հասունանան. հետևաբար, ես ցանկանում եմ, որ այս ժողովուրդը չկործանվի:

29 Հետևաբար, դու պիտի պահես նրանց՝ «երդումների և նրանց ուխտերի այս գաղտնի ծրագրերն այս ժողովրդից, և միայն նրանց ամբարշտությունը, և նրանց սպանությունները, և նրանց պղծությունները դու պիտի հայտնի դարձնես նրանց. և դու պիտի սովորեցնես նրանց՝ թատել այդպիսի ամբարշտությունը, և պղծությունները, և սպանությունները. և դու պիտի մաս սովորեցնես նրանց, որ այդ ժողովուրդը կործանվեց՝ իրենց ամբարշտության ու պղծությունների և իրենց սպանությունների պատճառով:

30 Քանզի ահա, նրանք սպանեցին Տիրոջ բոլոր մարգարեներին,

ովքեր եկան նրանց մեջ՝ հայտարարելու նրանց իրենց անօրինությունների վերաբերյալ. և արյունը նրանց, ում նրանք սպանեցին, աղաղակում էր առ Տերը՝ իրենց Աստվածը, վրեժխնդրության համար՝ նրանց վրա, ովքեր իրենց սպանողներն էին. և այսպես Աստծո դատաստանները եկան այս խավարի ու գաղտնի խմբակցությունների գործիչների վրա:

31 Այո, և անիծված լինի երկիրը՝ հավիտյանս հավիտենից, խավարի ու գաղտնի խմբակցությունների այն գործիչների համար, նույնիսկ ի կործանում, եթե նախքան լիովին հասունանալը, նրանք չապաշխարեն:

32 Եվ այժմ, որդի՛ս, հիշի՛ր խոսքերը, որ ես խոսեցի քեզ հետ. մի վտահիր այդ գաղտնի ծրագրերն այս ժողովրդին, այլ սովորեցրու նրանց մի հավիտենական «ատելություն՝ մեղքի և անօրինության հանդեպ:

33 «Քարոզիր նրանց ապաշխարություն և հավատք առ Տեր Հիսուս Քրիստոս. սովորեցրու նրանց խոնարհեցնել իրենց և լինել թեզ ու խոնարհ սրտով. սովորեցրու նրանց դիմակայել դևի ամեն զայթակողության՝ իրենց հավատքով առ Տեր Հիսուս Քրիստոսը:

34 Սովորեցրու նրանց երբեք չձանձրանալ բարի գործերից, այլ լինել հեզ և սրտով խոնարհ, քանզի այդպիսիները՝ «հանգստություն կգտնեն իրենց հոգիների համար:

35 Օ՜, հիշի՛ր, որդի՛ս, և սովորիր «իմաստություն քո երիտասար-

27ա Հել. 6.22:
28ա Ալմա 45.16,
Եթեր 2.7–12:
29ա Հել. 6.25:
բ Ալմա 13.12:

32ա 2 Նեփի 4.31:
33ա սուր՝ Քարոզել:
բ սուր՝ Հեզ, Հեզություն:
գ սուր՝ Գայթակղել,
Գայթակղություն:

34ա Սաղ. ԼԷ.4–7,
Մատ. ԺԱ.28–30:
35ա սուր՝ Իմաստություն:

դուքյան տարիներին. այո, քո երիտասարդության տարիներին սովորիր պահել Աստծո պատվիրանները:

36 Այո, և ^ականչիր առ Աստված քո բոլոր գոյամիջոցների համար. այո, թող բոլոր քո արարքները լինեն ի Տերը, և ուր էլ որ գնաս, թող դա լինի Տիրոջով, այո, թող քո բոլոր մտքերն ուղղված լինեն առ Տերը. այո, թող քո սրտի գործվանքը դրված լինի Տիրոջ վրա հավիտյան:

37 ^աԽորհուրդ արա Տիրոջ հետ քո բոլոր գործերում, և նա ուղղություն ցույց կտա քեզ բարու համար. այո, երբ դու պառկես գիշերը, պառկիր ի Տերը, որ նա կարողանա հսկել քեզ, քնիդ մեջ. և երբ դու վեր կենաս առավոտյան, թող քո սիրտը լի լինի ^բգոհությամբ առ Աստված. և եթե դու անես այս բաները, դու պիտի բարձրացվես վերջին օրը:

38 Եվ այժմ, որդի՛ս, ես որոշ բան ունեմ ասելու այն բանի վերաբերյալ, որը մեր հայրերը կոչում էին գունդ, կամ ուղեցույց, կամ մեր հայրերը կոչում էին այն ^աԼիափոնա, որը թարգմանվում է՝ կողմնացույց. և Տերն էր պատրաստել այն:

39 Եվ, ահա, որևէ մարդ չի կարող ստեղծել այդպիսի զարմանալի վարպետության մի կերտվածք: Եվ ահա, այն պատրաստված էր՝ ցույց տալու ուղին մեր հայրերին, որով նրանք պիտի ճանապարհորդեին անապատում:

40 Եվ այն աշխատում էր նրանց համար՝ Աստծո հանդեպ իրենց ^ահավատքի համաձայն. հետևաբար, եթե նրանք ունենում էին

հավատք՝ հավատալու, որ Աստված կարող էր անել այնպես, որ այն սլաքները ցույց տային ճանապարհը, որով նրանք պետք է գնային, ահա, դա արվում էր. ուստի, նրանք ունենում էին այս հրաշքը, և նաև շատ ուրիշ հրաշքներ, օրեցօր գործված Աստծո գործյամբ:

41 Չնայած այդ հրաշքները գործվում էին ^ափոքր միջոցներով՝ այն նրանց ցույց էր տալիս զարմանալի գործեր: Նրանք ալարկոտ էին, և մոռանում էին գործադրել իրենց հավատքը և ջանասիրությունը, և դրա հետևանքով այն զարմանալի գործերը դադարում էին, և նրանք չէին առաջադիմում իրենց ճամփորդության մեջ.

42 Հետևաբար, նրանք հապաղում էին անապատում, կամ չէին ճամփորդում ճիշտ ուղով, և չարչարվում էին քաղցից ու ծարավից՝ իրենց օրինազանցությունների պատճառով:

43 Եվ այժմ, որդի՛ս, ես կկամենայի, որ դու հասկանայիր, որ այս բաներն առանց մանություն չեն. քանզի երբ մեր հայրերն ալարում էին ուշադրություն դարձնել այս կողմնացույցին (արդ, այս բաները ժամանակավոր էին), նրանք չէին բարգավաճում. դա ճիշտ այդպես է այն բաների վերաբերյալ, որոնք հոգևոր են:

44 Քանզի ահա, հեշտ է ուշք դարձնել Քրիստոսի ^ալուսփին, որը ցույց կտա ձեզ մի ուղիղ ճանապարհի դեպի հավերժական երանություն, ինչպես դա մեր հայրերի համար էր՝ ուշք դարձնել այս կողմնացույցին, որը ցույց կտար

36ս սո՛ւ Աղոթք:
37ա Հակոբ 4.10,
Վևո՛ւ 3.4:
բ Վևո՛ւ 46.32:

38ա 1 Նեփի 16.10, 18.12,
Վևո՛ւ 17.1:
40ա 1 Նեփի 16.28:
41ա Ալմա 37.6-7:

44ա Սաղ. ԾԺԹ.105,
1 Նեփի 11.25,
Հե՛լ. 3.29-30:

նրանց մի ուղիղ ճամփա դեպի խոստացված երկիրը:

45 Եվ այժմ, ես ասում եմ, մի՞թե այս քանում չկա մի օրինակ: Քանզի հենց այնպես հաստատ, ինչպես այս ուղեցույցը բերեց մեր հայրերին, հետևելով դրա ուղուն, դեպի խոստացված երկիր, Քրիստոսի խոսքերը, եթե մենք հետևենք դրանց ուղուն, պիտի տանեն մեզ այս վշտի հովտից դեպի մի շատ ավելի լավ խոստումի երկիր:

46 Օ՛, որդիս, եկ՝ ալարկոտ չլինենք՝ թճամապարհի հեշտության պատճառով. քանզի դա այդպես էր մեր հայրերի հետ. քանզի այնպես էր դա պատրաստված նրանց համար, որ եթե նրանք նայեին, կկարողանային Գապրել, դա ճիշտ այդպես է մեզ հետ: Ճամապարհը պատրաստված է, և եթե մենք կամենանք նայել, մենք կարող ենք սալրել հավիտյան:

47 Եվ արդ, որդի՛ս, տես որ հոգ տանես այս սրբազան քաների համար, այո, տես որ նայես առ Աստված և ապրես: Գնա այս ժողովրդի մոտ և հայտարարիր խոսքը, և եղիր լրջմիտ: Մնաս բարով, որդի՛ս:

Այնպիսի պատվիրաններն իր որդի Սիբլունին:

Ընդգրկելով գլուխ 38-ը:

ԳԼՈՒԽ 38

Սիբլունը հալածված էր արդարության համար – Փրկությունը Քրիստոսի:

տոսում է, որն աշխարհի կյանքն է ու լույսը – Սանձեք ձեր բոլոր կրքերը: Մոտ 74թ. Ք.ծ.ա.:

ՈՐԴԻ՛Ս, ականջ դիր իմ խոսքերին, քանզի ես ասում եմ քեզ, ճիշտ ինչպես ես ասացի Հելամանին, որ որքան որ դու կպահես Աստծո պատվիրանները, դու կբարգավաճես երկրում. և որքան որ դու չես պահի Աստծո պատվիրանները, դու կկտրվես նրա ներկայությունից:

2 Եվ այժմ, որդի՛ս, ես վստահ եմ, որ մեծ ուրախություն պիտի ունենամ քեզ համար՝ Աստծո հանդեպ քո հաստատունության և քո հավատարմության համար. քանզի ինչպես դու սկսել ես քո երիտասարդության տարիներին նայել առ Տերը՝ քո Աստվածը, ճիշտ նույնպես ես հուսով եմ, որ դու՝ կշարունակես պահել նրա պատվիրանները. քանզի օրինված է նա, ով թիմարում է մինչև վերջ:

3 Ես ասում եմ քեզ, որդի՛ս, որ ես արդեն ունեցել եմ մեծ ուրախություն քեզ համար՝ Պորամացիների մեջ քո հավատարմության ու քո ջանասիրության, և քո համբերության ու քո երկայնամտության պատճառով:

4 Քանզի ես գիտեմ, որ դու կպանքների մեջ էիր. և ես նաև գիտեմ, որ դու քարկոծվեցիր հանուն խոսքի. և դու կրեցիր բոլոր այս քաները՝ համբերությամբ, որով հետև Տերը քեզ թիմար էր. և այժմ, դու գիտես, որ Տերն ազատեց քեզ:

5 Եվ այժմ, որդի՛ս, Սիբլուն, ես կկամենայի, որ դու հիշեիր, որ

46ա1 Նեփի 17.40–41:
բ Հովհ. ԺԳ.5–6,
2 Նեփի 9.41, 31.17–21,
ՎԼՈՒ 132.22, 25:
գ Հովհ. ԺԱ.25, Հեյ. 8.15,

3 Նեփի 15.9:
38 2ա Այն 63.1–2:
բ 2 Նեփի 31.15–20,
3 Նեփի 15.9, 27.6,
16–17:

3ա Այն 31.7:
4ա սո՛ւ Համբերություն:
բ Հռովմ. Ը.35–39:

որքան շատ որ դու Մապափինես Աստծուն, այնքան շատ դու Քազատվես քո փորձանքներից, քո Գտագնապներից ու քո շարչարանքներից, և դու կբարձրացվես վերջին օրը:

6 Արդ, որդի՛ս, ես չեմ կամենում, որ դու մտածես, որ ես գիտեմ այս բաներն ինքնուրույն, այլ դա Աստծո Հոգին է, որն իմ մեջ է, որը դարձնում է այս բաները հայտնի ինձ համար. քանզի, եթե ես ՞ծնված չլիների Աստծուց, ես չէի իմանա այս բաները:

7 Բայց ահա, Տերն իր մեծ ողորմությամբ ուղարկեց իր Միրեշտակին հայտարարելու ինձ, որ ես պետք է դադարեցնեմ Քկործանման գործն իր ժողովրդի մեջ. այո, և ես տեսա մի հրեշտակի, երես առ երես, և նա խոսեց ինձ հետ, և նրա ձայնը որոտի պես էր, և այն ցնցեց ողջ գետինը:

8 Եվ եղավ այնպես, որ ես, երեք օր և երեք գիշեր, հոգու ամենադառը ցավի ու տվայտանքի մեջ էի. և ոչ մի դեպքում ես չստացա մեղքերի ՞թողություն, մինչև ես չաղաղակեցի առ Տերը՝ Հիսուս Քրիստոսը, ողորմության համար: Բայց ահա, ես աղաղակեցի առ նա, և ես գտա խաղաղություն իմ հոգուն:

9 Եվ այժմ, որդի՛ս, ես այս պատմեցի քեզ, որ դու սովորես իմաստություն, որ դու սովորես ինձանից, որ ՞չկա ոչ մի ուրիշ ճանապարհ կամ միջոց, որով մարդ կարողանա փրկվել՝ միայն Քրիստոսի մեջ է և նրա միջոցով:

Ահա, նա է կյանքն ու Քլույսն աշխարհի: Ահա, նա է խոսքը ճշմարտության և արդարության:

10 Եվ արդ, ինչպես դու սկսել ես սովորեցնել խոսքը, ճիշտ նույնպես ես կկամենայի, որ դու շարունակեիր սովորեցնել. և ես կկամենայի, որ դու լինեիր ջանասեր և ժուժկալ բոլոր բաներում:

11 Տես որ դու չբարձրամտանաս մինչև հպարտություն. այո, տե՛ս որ դու ՞չպարծենաս քո սեփական իմաստությամբ, ոչ էլ քո շատ ուժով:

12 Գործածի՛ր համարձակություն, բայց ոչ բռնադատություն. և նաև տե՛ս որ դու սանձես բոլոր քո կրքերը, որ դու լցվես սիրով. տե՛ս որ դու զերծ մնաս անգործությունից:

13 Մի աղոթիր ինչպես Չորանացիները, քանզի դու տեսար, որ նրանք աղոթում են, որպեսզի լավեն մարդկանց կողմից և գովաբանվեն իրենց իմաստության համար:

14 Մի ասա. Ո՛վ Աստված, ես շնորհակալ եմ քեզ, որ մենք ՞ավելի լավն ենք, քան մեր եղբայրները, այլ ավելի շուտ ասա. Ո՛վ Տեր, ներիր իմ ՞անարժանությունը, և հիշի՛ր իմ եղբայրներից ողորմությամբ, այո, ընդունի՛ր քո անարժանությունը Աստծո առաջ բոլոր դեպքերում:

15 Եվ թող Տերն օրհնի քո հոգին և ընդունի քեզ վերջին օրն իր արքայության մեջ՝ նստելու խաղաղությամբ: Այժմ գնա, որդի՛ս, և սովորեցրու խոսքն այս ժո-

5ա Ալմա 36.27:
սո՛ւ Ապափինել:
բ Մատ. ԺԱ.28–30:
գ Վևո՛ւ 3.8, 121.7–8:
6ա Ալմա 36.26, Վևո՛ւ 5.16:
սո՛ւ Վերստին ծնված,

Աստծուց ծնված:
7ա Մոսիա 27.11–17:
բ Ալմա 26.17–18,
36.6–11:
8ա սո՛ւ Մեղքերի
բողություն:

9ա Հել. 5.9:
բ Մոսիա 16.9:
11ա սո՛ւ Հպարտություն:
14ա Ալմա 31.16:
բ Գուլ. ԺԼ.10–14:

դովորդին: Եղիբ լրջմիտ: Որդի՛ս, մնաս բարով:

Ալմայի պատվիրանները՝ իր որդի Կորիանթոնին:

Ընդգրկելով 39-42 գլուխները ներառյալ:

ԳԼՈՒԽ 39

Սեռական մեղքը պղծություն է – Կորիանթոնի մեղքերը խանգարեցին Չորամացիներին ընդունել խոսքը – Քրիստոսի փրկագնումը հետադարձաբար փրկում է հավատարիմներին, ովքեր նախորդել էին դրան: Մոտ 74թ. Ք.ծ.ս.:

Ես այժմ, որդի՛ս, ես քեզ ավելի շատ բան ունեմ ասելու, քան այն, ինչ ասացի քո եղբորը. քանզի ահա, մի՞թե դու չնկատեցիր քո եղբոր կայունությունը, նրա հավատարմությունը, և նրա ջանասիրությունն Աստծո պատվիրանները պահելիս: Ահա, մի՞թե նա լավ օրինակ չի հանդիսացել քեզ համար:

2 Քանզի դու շատ ուշադրություն չդարձրեցիր իմ խոսքերին, ինչպես ուշադիր էր քո եղբայրը՝ Չորամացիների մեջ: Այժմ սա է այն, ինչ ես ունեմ քո դեմ. դու շարունակեցիր քո ուժով և քո իմաստությամբ պարծենալ:

3 Եվ դա բոլորը չէ, որդի՛ս: Դու արեցիր այն, ինչ ցավալի էր ինձ համար, քանզի դու լքեցիր ծառայությունը, և գնացիր անցար

Սիրոնի երկիրը՝ Լամանացիների սահմաններից ներս, ՝պռռնիկ Իզաբելի ետևից:

4 Այո, նա շատերի սրտերը ՝գողացավ, բայց դա արդարացում չէր քեզ համար, որդի՛ս: Դու պիտի հոգ տանեիր ծառայության համար, որ վստահվել էր քեզ:

5 Չզիտե՞ս, որդիս, որ ՝այս բաները պղծություն են Տիրոջ աչքում. այո, ամենապիղծը՝ բոլոր մեղքերից, բացի դա լինի անմեղ արյուն քափելը կամ Սուրբ Հոգին ուրանալը:

6 Քանզի ահա, եթե դու ՝ուրանաս Սուրբ Հոգին, երբ այն մի ժամանակ տեղ է ունեցել քո մեջ, և դու իմանաս, որ ուրանում ես այն, ահա, դա մեղք է, որն ՝անմեղելի է. այո, և ով որ սպանում է Աստծո լույսի և գիտելիքի դեմ, նրա համար ճերմում ստանալը հեշտ չէ, այո, ես ասում եմ քեզ, որդի՛ս, որ հեշտ չէ նրա համար ներում ստանալը:

7 Եվ այժմ, որդի՛ս, ես կամենում եմ Աստծուց, որ դու ՝մեղավոր չլինես այսպիսի մեծ հանցանքի մեջ: Ես կանգ չէի առնի քո հանցանքների վրա՝ տակնուվրա անելու քո հոգին, եթե դա չլիներ քո օգտի համար:

8 Բայց ահա, դու չես կարող քաքցնել քո հանցանքներն Աստծուց. և եթե դու չապաշխարես, դրանք կկանգնեն, որպես վկայություն քո դեմ վերջին օրը:

9 Այժմ որդի՛ս, ես կկամենայի, որ դու ապաշխարեիր և թողնեիր քո մեղքերը և այլևս չգնայիր քո աչքերի ՝տենչանքների ետևից,

39 2ա Ալմա 38.3:
3ա սո՛ւ Չգայական,
Չգայականություն:
4ա Առակ. Է.6-27:

5ա սո՛ւ Սեռական
անբարոյականություն:
6ա Վև.ՈՒ 76.35-36:
բ սո՛ւ Աններիկի մեղք:

գ Վև.ՈՒ 64.10:
սո՛ւ Ներել:
7ա սո՛ւ Մեղավորություն:
9ա սո՛ւ Մարմնական:

այլ ՚խաչ քաշէիր բոլոր այդ բաների վրա. քանզի եթէ դու չանես այս, դու չես կարող ոչ մի կերպ ժառանգել Աստծո արքայությունը: Օ՛հ, հիշի՛ր, և հանձն առ, և խաչ քաշիր այս բաների վրա:

10 Եվ ես պատվիրում եմ քեզ, որ դու հանձն առնես խորհրդակցել քո ավագ եղբայրների հետ քո ձեռնարկումներում. քանզի ահա, դու քո երիտասարդության մեջ ես, և դու կարիք ունես սնուցվելու քո եղբայրների կողմից: Եվ ո՛ւշք դարձրու նրանց խորհրդին:

11 Քեզ թույլ մի տուր տարվել որևէ ունայն կամ հիմար բանով. թույլ մի տուր դևին կրկին մոլորեցնել քո սիրտն այն ամբարիշտ պոռնիկների ետևից: Ահա, Օ՛, որդիս, ինչպիսի մեծ անօրինություն դու բերեցիր ՝ Չորամացիների վրա. քանզի երբ նրանք տեսան քո ՚վարքը, նրանք չկամեցան հավատալ իմ խոսքերին:

12 Եվ այժմ Տիրոջ Հոգին ասում է ինձ. ՝ Պատվիրիր քո զավակներին բարիք անել, որպեսզի նրանք չմոլորեցնեն բազում մարդկանց սրտերն ի կործանում. հետևաբար, ես պատվիրում եմ քեզ, որդի՛ս, Աստծո երկյուղով, որ դու ետ կանգնես քո անօրինություններից.

13 Որպեսզի դու դառնաս դեպի Տերը քո բոլոր մտքով, կարողությամբ և ուժով. որպեսզի դու այլևս սրտեր չմոլորեցնես՝ ամբարշտություն գործելու. այլ, ավելի շուտ, վերադարձիր նրանց մոտ և ՝ ընդունիր քո սխալները և այն անիրավությունը, որ դու արել ես:

14 Մի ՝ փնտրիր հարստություններ, ոչ էլ աշխարհի ունայն բաները. քանզի, ահա, դու չես կարող տանել դրանք քեզ հետ:

15 Եվ այժմ, որդի՛ս, ես կկամենայի քեզ որոշ բան ասել Քրիստոսի զալստի վերաբերյալ: Ահա, ես ասում եմ քեզ, որ այդ նա է, որ հաստատ պիտի գա՝ վեր առնելու աշխարհի մեղքերը, այո, նա գալիս է՝ իր ժողովրդին փրկության ավետիք հայտարարելու:

16 Եվ արդ, որդի՛ս, այս էր ծառայությունը, որին դու կանչվել էիր՝ հայտարարելու այս ավետիքն այս ժողովրդին, պատրաստելու նրանց միտքը. կամ, ավելի շուտ, որպեսզի փրկություն կարողանա գալ նրանց, որպեսզի նրանք կարողանան պատրաստել իրենց ՝ զավակների մտքերը՝ լսելու խոսքը նրա զալստյան ժամանակ:

17 Եվ այժմ, ես փոքր-ինչ կհանգստացնեմ քո միտքն այս հարցի կապակցությամբ: Ահա, դու զարմանում ես, թե ինչո՞ւ այս բաները պետք է իմացվեն այդքան շատ առաջ: Ահա, ես ասում եմ քեզ, մի՞թե մի հոգին այնքան արժեքավոր չէ Աստծո համար այս ժամանակ, ինչքան կլինի մի հոգին նրա զալստյան ժամանակ:

18 Մի՞թե այս ժողովրդին փրկագնաման ծրագիրը հայտնի դարձնելը նույնքան անհրաժեշտ չէ, որքան նրանց զավակներին:

19 Մի՞թե այս ժամանակ, Տիրոջ համար իր հրեշտակին ուղարկելը՝ այս ավետիքը հայտարարելու մեզ, նույնքան հեշտ չէ, որքան մեր

<p>9բ 3 Նեփի 12.30: 11ա Ալմա 35.2-14: բ Հռովմ. Բ.21-23, 14.13, Ալմա 4.11: 12ա սո՛ւ Պատվիրաններն</p>	<p>Աստծո. Ուսուցանել, Ուսուցիչ: 13ա Մոսիա 27.34-35: 14ա Մատ. 2.25-34, Հակոբ 2.18-19,</p>	<p>Վևո՛ւ 6.6-7, 68.31-32: 16ա սո՛ւ Ընտանիք - Ծնողների պարտականությունները:</p>
---	--	--

զավակներին, կամ որքան նրա զալստի ժամանակից հետո:

ԳԼՈՒԽ 40

Քրիստոսն իրագործում է բոլոր մարդկանց հարությունը – Արդար մեռելները զնում են դրախտ, իսկ ամբարիշտները՝ դրսի խավարը, սպասելու իրենց հարության օրվան – Հարության ժամանակ բոլոր բաները կվերականգնվեն իրենց ճիշտ և կատարյալ կառուցվածքով: Մոտ 74թ. Ք.ծ.ա.:

ԱՐԴ, որդի՛ս, ահավասիկ ես կկամենայի որոշ բան էլ ասել քեզ. քանզի ես զգում եմ, որ քո միտքը խռովված է մեռելների հարության վերաբերյալ:

2 Ահա, ես ասում եմ քեզ, որ չկա հարություն, կամ, ես կասեի այլ խոսքերով, որ այս մահկանացուն չի հազնում ^աանմահություն, այս ապականությունը չի ^բհազնում անապականություն, ^գմինչև Քրիստոսի գալուստը:

3 Ահա, նա իրականացնում է մեռելների ^ահարությունը: Բայց ահա, որդիս, դեռ հարությունը չէ: Արդ, ես բացահայտում եմ քեզ մի խորհուրդ. սակայն, կան շատ ^բխորհուրդներ, որոնք ^գպահվում են, որ ոչ ոք չիմանա դրանք, բացի իրենից՝ Աստծուց: Բայց ես ցույց եմ տալիս քեզ մի բան, որը ես ջանասիրաբար հարցրել եմ Աստծուց, որ ես կարողանայի իմանալ, դա հարության վերաբերյալ է:

4 Ահա, կա մի նշանակված

ժամանակ, որ բոլորը պիտի դուրս ^ագան մեռած տեղից: Արդ, երբ է զալու այս ժամանակը, ոչ ոք չգիտի, բայց Աստված գիտի ժամանակը, որը նշանակված է:

5 Արդ, դա կլինի առաջին անգամ, թե ^աերկրորդ անգամ, թե երրորդ անգամ, որ մարդիկ դուրս կգան մեռած տեղից, դա նշանակություն չունի. քանզի Աստված ^բգիտի բոլոր այս բաները. և ինձ բավական է գիտեմալ, որ դա այդպես է, որ կա նշանակված ժամանակ, երբ բոլորը պիտի հարություն առնեն մեռելներից:

6 Արդ, պետք է անպայման լինի մի ժամանակահատված՝ մահվան ժամանակի և հարության ժամանակի միջև:

7 Եվ այժմ, ես կկամենայի հարցնել, ի՞նչ է պատահում մարդկանց ^ահոգիների հետ մահվան այս ժամանակից մինչև հարության համար նշանակված ժամանակը:

8 Արդ, արդյո՞ք կա ավելի, քան մեկ ժամանակ, նշանակված՝ մարդկանց հարություն առնելու համար, դա նշանակություն չունի. քանզի բոլորը միանգամից չեն մեռնում, և դա նշանակություն չունի. Աստծո համար բոլորը մեկ օրվա պես է, և ժամանակը չափվում է միայն մարդու համար:

9 Հետևաբար, կա մի ժամանակ նշանակված՝ մարդկանց համար, որ նրանք պիտի հարություն առնեն մեռելներից. և կա մի ժամանակահատված մահվան ժամանակի և հարության ժամանակի միջև: Եվ այժմ, այս ժամանակա-

40 2ա Մոսիս 16.10-13:
սո՛ւ Ամնահ,
Ամնահություն:
բ Ա Կոր. ԺԵ.53-54:
գ Ա Կոր. ԺԵ.20:
3ա սո՛ւ Հարություն:

բ սո՛ւ Աստծո
խորհուրդները:
գ Վևո՛ւ 25.4, 124.41:
4ա Հովհ. Ե.28-29:
5ա Մոսիս 26.24-25,
Վևո՛ւ 43.18, 76.85:

բ սո՛ւ Աստված,
Աստվածագլուխ:
7ա Ալմն 40.21,
Վևո՛ւ 138:
սո՛ւ Հոգի:

հատվածի վերաբերյալ, թե ինչ է պատահում մարդկանց հոգիների հետ, դա այն է, որը ես ջանասիրաբար հարցրել եմ Տիրոջից՝ իմանալու համար. և դա այն բանն է, որի մասին ես գիտեմ:

10 Եվ երբ գա ժամանակը, երբ բոլորը հարության առնեն, այն ժամանակ նրանք կիմանան, որ Աստված գիտի բոլոր [»]ժամանակները, որոնք նշանակված են մարդու համար:

11 Այժմ, հոգու վիճակի վերաբերյալ [»]մահվան և հարության միջև: Ահա, ինձ համար հայտնի դարձվեց հրեշտակի կողմից, որ բոլոր մարդկանց հոգիները, հենց որ նրանք հեռանում են այս մահկանացու մարմնից, այո, բոլոր մարդկանց հոգիները՝ լինեն նրանք բարի, թե չար, տարվում են [»]տուն՝ այն Աստծո մոտ, որը նրանց կյանք էր տվել:

12 Եվ հետո պիտի լինի այնպես, որ նրանց հոգիները, ովքեր արդար են, ընդունվում են [»]երջանկության մի վիճակի մեջ, որը կոչվում է [»]դրախտ՝ [»]հանգստության մի վիճակ, [»]խաղաղության մի վիճակ, որտեղ նրանք պիտի հանգստանան բոլոր իրենց տազնապներից և բոլոր մտահոգություններից, և վշտից:

13 Եվ հետո, պիտի լինի այնպես, որ հոգիներն ամբարիշտների, այո, ովքեր չար են, քանզի, ահա, նրանք չունեն մաս կամ բաժին՝ Տիրոջ Հոգուց, քանզի ահա, նրանք ընտրեցին, ավելի շուտ, չար գոր-

ծեր, քան բարի. հետևաբար, դևի ոգին մտավ նրանց մեջ, և տիրեց նրանց տանը, և սրանք դուրս պիտի գզվեն դրսի [»]խավարը, այնտեղ պիտի լինի [»]լացն ու կոծը, և ատամների կրճտոցը, և այս, իրենց իսկ անօրինության պատճառով, լինելով տարված գերի՝ դևի կամքով:

14 Արդ, սա է վիճակն [»]ամբարիշտների հոգիների, այո, խավարում և զարհուրելի մի վիճակում՝ [»]երկյուղով սպասելով իրենց վրա Աստծո ցասման բոցավառ զայրույթին. այսպիսով, նրանք մնում են այս [»]վիճակում, ինչպես որ արդարները՝ դրախտում, մինչև իրենց հարության ժամանակը:

15 Արդ, կան ոմանք, ովքեր հասկացել են, որ հոգու այս վիճակը երջանկության և այս վիճակը թշվառության, նախքան հարությունը, մի առաջին հարություն էր: Այո, ես ընդունում եմ, դա կարող է կոչվել մի հարություն՝ ոգու կամ հոգու բարձրանալը, և նրանց հանձնումը երջանկության կամ թշվառության, համաձայն այն խոսքերի, որոնք խոսվել են:

16 Եվ ահա, բացի այդ, ասվել է, որ կա մի [»]առաջին [»]հարություն, մի հարություն բոլոր նրանց, ովքեր եղել են, կամ ովքեր կան, կամ ովքեր կլինեն, ընդհուպ մինչև Քրիստոսի հարությունը մեռելներից:

17 Արդ, մենք չենք կարծում, որ այս առաջին հարությունը, որի

10ա Գոր. ԺԷ.26:
11ա Դուկ. ԺԶ.22-26,
Ա Պետ. Գ.18-19, 4.6,
ՎևՈՒ 76.71-74, 138:
բ Ժող. ԺԲ.7,
2 Նեփի 9.38:
12ա սոս՝ Ուրախություն:

բ սոս՝ Գրախտ:
գ սոս՝ Հանգիստ:
դ ՎևՈՒ 45.46:
սոս՝ Խաղաղություն:
13ա սոս՝ Գժոխք:
բ Մատ. Ը.12,
Մոսիա 16.2:

14ա ՎևՈՒ 138.20:
բ Հակոբ 6.13,
Մովսես 7.1:
գ Ալմա 34.34:
16ա Հակոբ 4.11,
Մոսիա 15.21-23:
բ սոս՝ Հարություն:

մասին խոսվեց այս ձևով, կարող է լինել հոգիների հարությունը և նրանց ^ահանձնումը երջանկության կամ թշվառության: Դու չես կարող կարծել, որ սա այն է, ինչ դա նշանակում է:

18 Ահա, ես ասում եմ քեզ՝ Ո՛չ, այլ դա նշանակում է նրանց հոգու վերամիավորումը մարմնի հետ, Ադամի օրերից ի վեր, ընդհուպ մինչև Քրիստոսի ^ահարությունը:

19 Արդ, արդյոք հոգիները և մարմինները նրանց, որոնց մասին խոսվեց, պիտի բոլորը վերամիավորվեն միանգամից՝ ամբարիշտները, ինչպես նաև արդարները, ես չեմ ասում. թող բավարարի այն, որ ես ասում եմ, որ նրանք բոլորը դուրս են գալու, կամ, այլ խոսքով, նրանց հարությունն իրականացվում է ^ամինչև հարությունը նրանց, ովքեր կմեռնեն Քրիստոսի հարությունից հետո:

20 Արդ, որդի՛ս, ես չեմ ասում, որ նրանց հարությունը գալիս է Քրիստոսի հարության պահին. այլ, ահա, ես տալիս եմ դա, որպես իմ կարծիքը, որ արդարների հոգիները և մարմինները վերամիավորվում են Քրիստոսի հարության և դեպի երկինք նրա ^ահամբարձման ժամանակ:

21 Բայց արդյոք դա կլինի նրա հարության պահին, թե հետո, ես չեմ ասում. բայց այսքանը ես ասում եմ, որ կա մի ^աժամանակահատված, մահվան և մարմնի հարության միջև, և հոգու մի վիճակ՝ ^բերջանկության մեջ կամ

^գթշվառության մեջ, մինչև այն ժամանակը, որը նշանակված է Աստծո կողմից, որ մեռելները պիտի դուրս գան և վերամիավորվեն՝ և՛ հոգին, և՛ մարմինը, և ^բբերվեն՝ կանգնելու Աստծո առաջ և դատվելու ըստ իրենց գործերի:

22 Այո, սա իրականացնում է վերականգնումն այն բաների, որոնց մասին խոսվել է մարգարեների բերանով:

23 ^աՀոգին պիտի ^բվերականգնվի ^գմարմնի հետ, և մարմինը՝ հոգու հետ, այո, և ամեն վերջավորություն և հող պիտի վերականգնվի իր մարմնի հետ. այո, նույնիսկ գլխի մի մագ չպիտի կորչի. այլ բոլոր բաները պիտի վերականգնվեն իրենց ճիշտ և կատարյալ կառուցվածքով:

24 Եվ այժմ, որդի՛ս, այս է վերականգնումը, որի մասին ^ախոսվել է մարգարեների բերանով,

25 Եվ այն ժամանակ արդարները պիտի դուրս շողան Աստծո արքայության մեջ:

26 Բայց ահա, մի սուկալի ^ամահ է գալիս ամբարիշտների վրա. քանզի նրանք մեռնում են արդարությանը վերաբերող բաների նկատմամբ. քանզի նրանք անմաքուր են, և ոչ մի ^բանմաքուր բան չի կարող ժառանգել Աստծո արքայությունը. այլ նրանք դուրս են գցվում ու մատնվում՝ ճաշակելու իրենց աշխատանքների, կամ իրենց գործերի պտուղները, որոնք չար են եղել, և նրանք խմում են դառը գավաթի նրուրը:

17ա ՎևոՒ 76.17, 32, 50–51:
18ա Մատ. ԻԷ. 52–53:
19ա Մոսիա 15.26:
20ա սոՒ Համբարձում:
21ա Ղուկ. ԻԳ. 39–43:
բ սոՒ Գրախա:

գ սոՒ Գժոխք:
դ Ալմա 42.23:
23ա նշ. Ոգին:
վևոՒ 88.15–17:
սոՒ Հոգի:
բ 2 Նեփի 9.12–13,

Ալմա 11.40–45:
գ սոՒ Մարմին:
24ա Ես. ԻԶ. 19:
26ա 1 Նեփի 15.33,
Ալմա 12.16:
բ Ալմա 11.37:

ԳԼՈՒԽ 41

Հարության ժամանակ մարդիկ դուրս են գալիս դեպի անվերջ երջանկության կամ անվերջ թշվառության մի վիճակ – Ամբարշտությունը երբեք երջանկություն չի եղել – Մարմնական մարդիկ առանց Աստծո են մաշխարհում – Ամեն մարդ, վերականգնման ժամանակ, կրկին ստանում է մահկանացու վիճակում ձեռք բերված բնորոշ գծերն ու յուրահատկությունները: Մոտ 74թ. Ք.ծ.ա.:

ԵՎ այժմ, որդի՛ս, ես որոշ բան ունեմ ասելու վերականգնման վերաբերյալ, որի մասին խոսվել է, քանզի, ահա, ոմանք Մաղավադել են սուրբ գրքերը, և Բնուրովել են այս բանի պատճառով: Եվ ես զգում եմ, որ քո միտքը նույնպես խռովված է այս բանի վերաբերյալ: Բայց ահա, ես քեզ կբացատրեմ դա:

2 Ես ասում եմ քեզ, որդի՛ս, որ վերականգնման ծրագիրը հարկավոր է՝ համաձայն Աստծո արդարադատության. քանզի հարկավոր է, որ բոլոր բաները վերականգնվեն իրենց ճիշտ կարգով: Ահա, դա հարկավոր է և արդար՝ համաձայն Քրիստոսի գործության և հարության, որ մարդու հոգին վերականգնվի իր մարմնի հետ, և որ մարմնի ամեն Մնաս վերականգնվի:

3 Եվ դա հարկավոր է՝ ըստ Աստծո Մարդարադատության, որ

մարդիկ Բնատվեն՝ համաձայն իրենց Գործերի. և եթե նրանց գործերը բարի են եղել այս կյանքում, և նրանց սրտերի ցանկությունները բարի են եղել, ապա վերջին օրը նրանք ևս պիտի Գվերականգնվեն դեպի այն, ինչը բարի է:

4 Իսկ եթե նրանց գործերը չար են, դրանք պիտի Մվերականգնվեն նրանց՝ չարի համար: Հետևաբար, բոլոր բաները պիտի վերականգնվեն իրենց ճիշտ կարգով, ամեն բան իր բնական կառուցվածքով՝ Բնահկանացուն բարձրացված անմահության, Գապականությունը՝ անապականության, բարձրացվելու՝ Պանվերջ երջանկության, ժառանգելու Աստծո արքայությունը, կամ անվերջ թշվառության, ժառանգելու դևի թագավորությունը, մեկը՝ մի կողմից, մյուսը՝ մյուս կողմից,

5 Մեկը՝ բարձրացված դեպի երջանկություն, երջանկության համար՝ իր ցանկությունների համաձայն, կամ բարիք, բարու համար՝ իր ցանկությունների համաձայն. իսկ մյուսը՝ դեպի չարը, չարի համար՝ իր ցանկությունների համաձայն. քանզի, ինչպես նա ցանկացել է գործել չարիք՝ ամբողջ օրվա ընթացքում, ճիշտ նույնպես նա պիտի ունենա իր հատուցումը չարով, երբ զիջերը գա:

6 Եվ դա նույնն է մյուս կողմից: Եթե նա ապաշխարել է իր մեղքերից, և ցանկացել արդարություն՝ մինչև իր օրերի վերջը, մնանապես

41 1ա Բ Պետ. Ա.20, Գ.16, Ալմա 13.20:
 բ սո՛ւ Ուրացություն:
 2ա Ալմա 40.23:
 3ա սո՛ւ Արդարադատություն:
 բ սո՛ւ Հաշիվ, Պատաս-

խանատու, Պատասխանատվություն.
 Դատել,
 Գատաստան:
 գ սո՛ւ Գործեր:
 դ Հել. 14.31:
 4ա Ալմա 42.28:

բ 2 Նեփի 9.12–13, ՎևոՒ 138.17:
 սո՛ւ Հարություն:
 գ Ա Կոր. ԺԵ.51–55:
 դ սո՛ւ Հավերժական կյանք:

նրան պիտի հատուցվի արդարությունը:

7 ^աԱյդ նրանք են, որ փրկագնվել են Տիրոջ կողմից. այո, այդ նրանք են, որոնք դուրս են բերվել, որոնք ազատվել են այն անվերջ խավարի գիշերից. և այսպես, նրանք կանգնում են կամ ընկնում. քանզի ահա, նրանք իրենց ^սսեփական դատավորներն են, արդյոք գործեն բարիք, թե գործեն չարիք:

8 Արդ, Աստծո հրամանագրերն ^աանփոփոխելի են. հետևաբար, ուղին պատրաստված է, որ ով որ կամենա, կարող է քայլել դրանով և փրկվել:

9 Եվ այժմ ահա, որդի՛ս, մի հանդգնիր քո Աստծո դեմ ևս ^ամեկ վիրավորանք՝ վարդապետության այն կետերի վերաբերյալ, որոնցում դու առ այժմ հանդգնել ես մեղք գործել:

10 Մի՛ կարծիր թե, եթե խոսվել է վերականգնման վերաբերյալ, որ դու պիտի վերականգնվես մեղքից՝ դեպի երջանկություն: Ահա, ես ասում եմ քեզ, ^աամբարշտությունը երբեք երջանկություն չի եղել:

11 Եվ այժմ, որդի՛ս, բոլոր մարդիկ, որ ^բբնական վիճակում են, կամ ես կասեի՝ ^մմարմնական վիճակում, դառը մաղձի և անօրինության կապանքների մեջ են. նրանք ^գառանց Աստծո են աշխարհում, և նրանք հակառակ են գնացել Աստծո էությանը. հետևաբար, նրանք երջանկության էությանը հակառակ մի վիճակում են:

12 Եվ այժմ ահա, մի՞ թե վերականգնում բառի իմաստն է՝ վերցնել մի բան, բնական վիճակում, և դնել այն՝ մի անբնական վիճակում, կամ դնել այն՝ իր էությանը հակադիր մի վիճակում:

13 Օ՛, որդիս, դա այդպես չէ, այլ վերականգնում բառի իմաստն է՝ ետ բերել նորից չարը չարի համար, կամ մարմնականը՝ մարմնականի համար, կամ դիվայինը՝ դիվայինի համար, բարին՝ նրա համար, ինչ բարի է. արդարակյացը՝ նրա համար, ինչ արդարակյաց է. արդարը՝ նրա համար, ինչ արդար է. ողորմածը՝ նրա համար, ինչ ողորմած է:

14 Հետևաբար, որդի՛ս, տես որ դու ողորմած լինես հանդեպ քո եղբայրները. վարվիր ^աազնվորեն, դատիր ^բարդարացի և շարունակ ^գբարիք գործիր. և եթե դու անես բոլոր այս բաները, այն ժամանակ դու պիտի ստանաս քո վարձքը. այո, ^դողորմությունը կրկին կվերադարձվի քեզ. արդարադատությունը կրկին կվերադարձվի քեզ. արդար դատաստանը կրկին կվերադարձվի քեզ. և բարին կրկին կհատուցվի քեզ:

15 Քանզի այն, ինչ դու դուրս ես ուղարկում, պիտի կրկին վերադառնա քեզ և վերականգնվի. հետևաբար, վերականգնում բառն ավելի լիովին է դատապարտում մեղսագործին և ամենևին չի արդարացնում նրան:

<p>7ա Վև.ՈՒ 76.50–70: <i>բ</i> 2 Նեփի 2.26, Ալմա 42.27, Հել. 14.30: սո՛ւ Կամբի ազատություն: 8ա Վև.ՈՒ 1.38: 9ա Վև.ՈՒ 42.23–28:</p>	<p>10ա Սաղ. ԼԲ.10, Ես. ԾԷ.20–21, Հել. 13.38: 11ա Մոսիա 3.19: սո՛ւ Բնական մարդ: <i>բ</i> սո՛ւ Մարմնական: <i>գ</i> Եփես. Բ.12: 14ա սո՛ւ Ազնիվ,</p>	<p>Ազնվություն: <i>բ</i> Հովհ. Է.24, Վև.ՈՒ 11.12: <i>գ</i> Վև.ՈՒ 6.13, 58.27–28: <i>դ</i> սո՛ւ Ողորմած, Ողորմություն:</p>
--	---	--

ԳԼՈՒԽ 42

Մահկանացու վիճակը մի փորձնական ժամանակ է՝ հնարավորություն տալու մարդուն ապաշխարել և ծառայել Աստծուն – Անկումը ողջ մարդկության վրա բերեց մարմնական ու հոգևոր մահ – Փրկագնումը գալիս է ապաշխարության միջոցով – Աստված ինքն է քավում աշխարհի մեղքերի համար – Ողորմությունը նրանց համար է, ովքեր ապաշխարում են – Մնացած բոլորը ենթակա են Աստծո արդարատուությանը – Ողորմությունը գալիս է Քավության շնորհիվ – Միայն ճշմարիտ գոջացողներն են փրկվում: Մոտ 74թ. Ք.ժ.ա.:

ԵՎ այժմ, որդի՛ս, ես զգում եմ, որոշ բան էլ կա, որը հուզում է քո միտքը, որը դու չես կարողանում հասկանալ, որը վերաբերում է մեղսագործին պատժելիս Աստծո [՝]արդարադատությանը. բանգի դու փորձում ես ենթադրել, որ դա անարդարություն է, որ մեղսագործը պիտի մատնվի թշվառության մի վիճակի:

2 Արդ, ահա, որդի՛ս, ես կբացատրեմ այս բանը քեզ: Քանզի ահա, հետո, երբ Տեր Աստված մեր առաջին ծնողներին [՝]Տեղեմի պարտեզից դուրս [՝]հանեց՝ հողը մշակելու, որտեղից նրանք վերցված էին, այո, նա արտաքսեց մարդուն, և նա տեղադրեց Եդեմի պարտեզի արևելյան ծայրում [՝]քերովբեների, և մի բոցեղեն սուր, որը

պտտվում էր ամեն կողմ՝ կենաց [՝]ծառը պահպանելու համար,

3 Արդ, մենք տեսնում ենք, որ մարդը դարձել էր Աստծո նման՝ տարբերելով բարին ու չարը. և որպեսզի չլիներ, թե նա առաջ մեկներ իր ձեռքը, և վերցներ նաև կենաց ծառից և ուտեր ու ապրեր հավիտյան, Տեր Աստված դրեց քերովբեներ և բոցեղեն սուր, որպեսզի նա չճաշակեր պտղից,

4 Եվ այսպիսով մենք տեսնում ենք, որ կար մի ժամանակահատված շնորհված մարդուն ապաշխարելու համար, այո, մի [՝]փորձնական ժամանակ, մի ժամանակ՝ ապաշխարելու և ծառայելու Աստծուն:

5 Քանզի ահա, եթե Ադամն անմիջապես առաջ մեկներ իր ձեռքը, և ճաշակեր կենաց ծառից, նա կապրեր հավիտյան՝ համաձայն Աստծո խոսքի, չունենալով ժամանակահատված ապաշխարության համար. այո, և նաև Աստծո խոսքը զուր եղած կլիներ, և փրկության մեծ ծրագիրը՝ խափանված:

6 Բայց ահա, մարդու համար նշանակված էր [՝]մեռնել, հետևաբար, ինչպես նրանք կտրված էին կենաց ծառից, նրանք կտրված պիտի լինեին երկրի երեսից, և մարդը դարձավ կորած հավիտյան, այո, նրանք դարձան [՝]ընկած մարդ:

7 Եվ այժմ, դու տեսնում ես սրանով, որ մեր առաջին ծնողները Տիրոջ ներկայությունից [՝]կտրված էին՝ և՛ մարմնապես, և՛ հոգեպես. և մենք տեսնում ենք, նրանք դար-

42 1ա 2 Նեփի 26.7, Մոսիա 15.26–27: սուր Արդարադատություն: 2ա սուր Եդեմ: ք Մճ. Գ. 23–24,

Մովսես 4.28–31: Գ սուր Քերովբեներ: դ Մճ. Բ. 9: 4ա Ալմա 34.32–33: 6ա սուր Մահ ֆիզիկական: ք Մոսիա 16.3–5:

սուր Ադամի և Եվայի անկումը: 7ա 2 Նեփի 2.5, 9.6, Հել. 14.16: սուր Մահ հոգևոր:

ծան ենթակա՝ հետևելու իրենց սեփական թկանքին:

8 Այժմ ահա, անհրաժեշտ չէր, որ մարդը ձերբազատվեր այս ժամանակավոր մահից, քանզի դա կկործաներ երջանկության մեծ ծրագիրը:

9 Հետևաբար, քանի որ հոգին չէր կարող երբեք մեռնել, և չանկունը բերել էր ողջ մարդկության վրա մի հոգևոր, ինչպես նաև, մի մարմնական մահ, այսինքն, նրանք կտրված էին Տիրոջ ներկայությունից, անհրաժեշտ էր, որ մարդկությունը ձերբազատվեր այս հոգևոր մահից:

10 Հետևաբար, քանի որ չէր քայքայվում նրանք դարձել էին մարմնական, զգայական և դիվային, այս փորձնական վիճակը դարձավ նրանց համար՝ պատրաստվելու մի վիճակ. այն դարձավ մի նախապատրաստական վիճակ:

11 Եվ այժմ հիշիր, որդիս, եթե չլիներ փրկագնման ծրագիրը, (դնելով այն մի կողմ) հենց որ նրանք մեռնեին, նրանց հոգիները կլինեին թշվառ՝ կտրված լինելով Տիրոջ ներկայությունից:

12 Եվ այսպիսով, չկար ոչ մի միջոց մարդկանց ձերբազատելու այս ընկած վիճակից, որը մարդը բերել էր իր վրա՝ իր իսկ անհնազանդության պատճառով:

13 Հետևաբար, ըստ արդարադատության, փրկագնման ծրագիրն այս փորձնական վիճակում

չէր կարող իրականացվել միայն մարդկանց թափառաբարության պայմանով, այո, այս նախապատրաստական վիճակում. եթե չլինեին այս պայմանները, ողորմությունը չէր կարող ուժի մեջ մտնել առանց արդարադատության գործը կործանելու: Այսպիսով, արդարադատության գործը չէր կարող կործանվել. եթե այդպես լիներ, Աստված զկոհարարեր Աստված լինել:

14 Եվ այսպիսով, մենք տեսնում ենք, որ ողջ մարդկությունը ընկած էր, և նրանք թափառադատության ճանկում էին. այո, Աստուծո արդարադատության, որը մատնում էր նրանց հավիտյան՝ կտրված լինելու իր ներկայությունից:

15 Եվ այժմ, ողորմության ծրագիրը չէր կարող իրականացվել, մինչև մի քավություն չարվեր. հետևաբար, Աստված ինքն է թավում աշխարհի մեղքերը՝ իրականացնելով ողորմության ծրագիրը, քավարարելով թափառադատության պահանջները, որպեսզի Աստված լինի զկատարյալ, արդար Աստված և նաև ողորմած Աստված:

16 Արդ, ապաշխարությունը չէր կարող գալ մարդկանց, եթե չլիներ մի պատիժ, որը չհավերժական էր, ինչպես հոգու կյանքը պիտի լինի՝ սահմանված ի հակադրություն երջանկության ծրագրին,

<p>7բ սուր Կամբի ազատություն:</p> <p>8ա Ալմա 34.9, Մովսես 6.62:</p> <p>9ա սուր Ադամի և Եվայի անկումը:</p> <p>10ա սուր Բնական մարդ: ք սուր Մարմնական: գ սուր Մահկանացու,</p>	<p>Մահկանացություն:</p> <p>11ա 2 Նեփի 9.7-9:</p> <p>13ա սուր Փրկագնման ծրագիր:</p> <p>ք սուր Ապաշխարել, Ապաշխարություն:</p> <p>գ 2 Նեփի 2.13-14:</p> <p>14ա Ալմա 22.13-14:</p> <p>ք 2 Նեփի 2.5:</p>	<p>15ա 2 Նեփի 9.7-10, Մոսիա 16.7-8: սուր Քավել, Քավություն:</p> <p>ք սուր Ողորմած, Ողորմություն:</p> <p>գ սուր Արդարադատություն:</p> <p>դ 3 Նեփի 12.48:</p> <p>16ա ՎևոՒ 19.10-12:</p>
---	---	---

որը հավերժական էր, ինչպես հոգու կյանքը:

17 Արդ, ի՞նչպես կարող էր մարդ ապաշխարել, մինչև նա ^աճնդանչեր: Ի՞նչպես կարող էր նա մեղանչել, եթե չլիներ ^բօրենք: Ի՞նչպես կարող էր լինել օրենք, եթե չլիներ պատիժ:

18 Արդ, կար մի պատիժ սահմանված, և մի արդար օրենք տրված, որը մարդկանց բերում էր ^ախղճի խայթ:

19 Այժմ, եթե տրված չլիներ օրենք՝ եթե մարդ ^ասպանում է, նա պետք է մեռնի, նա կվախենա՞ր, որ ինքը կմեռնի, եթե սպանի:

20 Եվ նաև, եթե մեղքի դեմ օրենք չլիներ տրված, մարդիկ չէին վախենա մեղանչելուց:

21 Եվ եթե օրենք տրված ^աչլիներ, երբ մարդիկ մեղանչեին, ի՞նչ կարող էր անել արդարադատությունը կամ թե ողորմությունը, քանզի նրանք պահանջ չէին ունենա արարածի վրա:

22 Բայց օրենքը տրված է, և պատիժը կցված, և ^աապաշխարությունը շնորհված. ապաշխարություն, որը ողորմություն է հայցում, այլապես, արդարադատությունը հայց է ներկայացնում արարածին և գործադրում օրենքը, և օրենքը՝ ենթարկում պատժի. եթե այդպես չլիներ, արդարադատության գործերը կկործանվեին և Աստված կդադարեր Աստված լինել:

23 Բայց Աստված չի դադարում Աստված լինել, և ^աողորմությունը հայց է ներկայացնում զոջացողի համար, և ողորմությունը գալիս է ^բքավության շնորհիվ. և քավությունն իրագործում է մեռելների ^գհարությունը. և մեռելների հարությունը մարդկանց ^դես է բերում Աստծո ներկայությունը. և այսպիսով, նրանք վերականգվում են նրա ներկայության մեջ՝ ^եդատվելով համաձայն իրենց գործերի՝ ըստ օրենքի և արդարադատության:

24 Քանզի, ահա, արդարադատությունը ներկայացնում է իր բոլոր պահանջները, և նաև ողորմությունն է հայցում այն բոլորը, ինչն իր սեփականն է. և այսպես, բացի անկեղծորեն զոջացողից, ո՛չ մեկը չի փրկվում:

25 Դու ի՞նչ ես կարծում, ողորմությունը կարող է կողպատե՞լ ^աարդարադատությանը: Ես ասում եմ քեզ՝ Ո՛չ. ամենևին: Եթե այդպես լիներ, Աստված կդադարեր Աստված լինել:

26 Եվ այսպես է Աստված իրականացնում իր մեծ ու հավերժական ^անպատակները, որոնք նախապատրաստված էին աշխարհի հիմնադրումից ^բի վեր: Եվ այսպես է տեղի ունենում փրկությունը և մարդկանց փրկագնումը, և նաև նրանց կործանումն ու թշվառությունը:

27 Հետևաբար, Օ՛, որդի՛ս, ^աով

17ա սո՛ւ Մեղք:
բ Հռովմ. Գ.15:
18ա սո՛ւ Խղճմտանք:
19ա սո՛ւ Սպանություն:
21ա 2 Նեփի 9.25-26,
Մոսիս 3.11:
22ա սո՛ւ Ապաշխարել,
Ապաշխարություն:
23ա սո՛ւ Ողորմած,
Ողորմություն:

բ սո՛ւ Քավել,
Քավություն:
գ 2 Նեփի 2.8, 9.4,
Ալմա 7.12, 11.41-45,
12.24-25,
Հել. 14.15-18,
Մորմ. 9.13:
դ Ալմա 40.21-24:
ե սո՛ւ Վերջին
դատաստան:

25ա սո՛ւ Արդարադատու-
թյուն:
26ա 2 Նեփի 2.14-30,
Մովսես 1.39:
բ Ալմա 13.3,
3 Նեփի 1.14:
27ա Ալմա 5.34,
Հել. 14.30:
սո՛ւ Կամքի
ազատություն:

որ կամենում է գալ, կարող է գալ և ճաշակել կյանքի ջրերից ազատորեն. և ով որ չի կամենում գալ, նրան չի պարտադրվի գալ. բայց վերջին օրը դա պիտի ՚վերականգնվի նրան՝ համաձայն իր Գարարքների:

28 Եթե նա փափագել է գործել ՝ չարիք, և չի ապաշխարել իր օրերում, ահա, չարիք պիտի արվի նրա հանդեպ՝ համաձայն Աստծո վերականգման:

29 Եվ այժմ, որդի՛ս, ես փափագում եմ, որ դու այլևս չթողնես, որ այս բաները խռովեն քեզ, և թող միայն քո մեղքերը խռովեն քեզ այնպիսի մի խռովքով, որը կբերի քեզ վար՝ դեպի ապաշխարություն:

30 Օ՛, որդի՛ս, ես փափագում եմ, որ դու այլևս չժխտես Աստծո արդարադատությունը: Մի՛ ձգտիր արդարացնել ինքդ քեզ՝ նվազագույն իսկ չափով, քո մեղքերի համար, ժխտելով Աստծո արդարադատությունը. այլ թույլ տուր Աստծո արդարադատությունը, և նրա ողորմությունը, և նրա երկայնամտությունը լիակատար ազդեցություն ունենա քո սրտում, և թող դա քեզ վար բերի միևնչև փոշին ՝ ՝խոնարհության մեջ:

31 Եվ այժմ, Օ՛, որդիս, դու կանչված ես Աստծուց՝ քարոզելու խոսքն այս ժողովրդին: Եվ այժմ, որդի՛ս, գնա՛ քո ճանապարհով, հայտարարիր խոսքը ճշմարտությանը և լրջմտությամբ, որպեսզի դու կարողանաս հոգիներ բերել ապաշխարության, որպեսզի ողորմածության մեծ ծրագիրը կարողանա հայց ներկայացնել նրանց վրա: Եվ թո՛ղ Աստված շնորհի

քեզ՝ ճիշտ իմ խոսքերի համաձայն: Ամեն:

ԳԼՈՒԽ 43

Ալման ու նրա որդիները քարոզում են խոսքը – Ջորամացիներն ու մյուս Նեփիացի պառակտվածները դառնում են Լամանացիներ – Լամանացիները զայիս են Նեփիացիների դեմ պատերազմով – Մորոնին զինում է Նեփիացիներին պաշտպանական զենքերով – Տերը հայտնում է Ալմային Լամանացիների ռազմավարությունը – Նեփիացիները պաշտպանում են իրենց տները, ազատությունը, ընտանիքները և կրոնը – Մորոնիի և Լեբիի գորքերը շրջապատում են Լամանացիներին: Մոտ 74թ. Ք.ժ.ս.:

Եվ այժմ եղավ այնպես, որ Ալմայի որդիներն առաջ գնացին ժողովրդի մեջ՝ հայտարարելու խոսքը նրանց: Եվ Ալման՝ ինքը, նույնպես, չկարողացավ հանգիստ առնել, և նա նույնպես առաջ գնաց:

2 Այժմ մենք այլևս չենք խոսի նրանց քարոզելու վերաբերյալ, բացի այն, որ նրանք քարոզեցին խոսքն ու ճշմարտությունը՝ համաձայն մարգարեության և հայտնության ոգու. և նրանք քարոզեցին ըստ Աստծո ՝սուրբ կարգի, որով նրանք կանչված էին:

3 Եվ այժմ, ես վերադառնում եմ պատերազմների մասին մի պատմության՝ Նեփիացիների ու Լամանացիների միջև, դատավորների կառավարման տասնութերորդ տարում:

4 Քանզի ահա, եղավ այնպես, որ

27թ Ալմա 41.15:
գ Ես. ԾԹ.18,
Հայտ. Բ.12:

28ա Ալմա 41.2–5:
30ա սո՛ւ Խոնարհ,
Խոնարհություն:

43 2ա սո՛ւ Մելքիսեղեկյան
քահանայություն:

«Չորամացիները դարձան Լամանացիներ. հետևաբար, տասներորդ տարվա սկզբում, Նեփիացի ժողովուրդը տեսավ, որ Լամանացիները գալիս էին իրենց վրա. ուստի, նրանք պատրաստություններ տեսան պատերազմի համար. այո՛, նրանք ի մի հավաքեցին իրենց զորքերը Երսոնի երկրում:

5 Եվ եղավ այնպես, որ Լամանացիները եկան իրենց հազարներով. և նրանք եկան Անթիոնումի երկիրը, որը Չորամացիների երկիրն է. և մի մարդ, Չերահեմնա անունով, նրանց ղեկավարն էր:

6 Եվ այժմ, քանի որ Ամադեկացիները էությանբ ավելի ամբարիշտ և արյունարբու էին, քան իրենք՝ Լամանացիները, հետևաբար Չերահեմնան նշանակեց գլխավոր զորապետեր Լամանացիների վրա, և նրանք բոլորը Ամադեկացիներ ու Չորամացիներ էին:

7 Արդ, այս նա արեց, որ կարողանար պահպանել նրանց ատելությունը դեպի Նեփիացիները, որպեսզի նա կարողանար նրանց քերել հպատակության՝ իրագործելու իր ծրագրերը:

8 Քանզի ահա, նրա ծրագրերն էին՝ Լամանացիներին բարկության դրդել ընդդեմ Նեփիացիների. այս նա արեց, որպեսզի կարողանար զավթել մեծ իշխանություն նրանց վրա, և նաև որպեսզի կարողանար հասնել իշխանության Նեփիացիների վրա՝ նրանց ճորտության քերելու միջոցով:

9 Եվ արդ, Նեփիացիներին ծրագրին էր՝ պաշտպանել իրենց հողերը և իրենց տները, իրենց

«կանանց և իրենց երեխաներին, որպեսզի նրանք կարողանային պահպանել նրանց իրենց թշնամիների ձեռքից. և նաև, որ նրանք կարողանային պահպանել իրենց իրավունքներն ու արտոնությունները, այո, և նաև իրենց թագաւորությունը, որպեսզի նրանք կարողանային երկրպագել Աստծուն՝ ըստ իրենց ցանկության:

10 Քանզի նրանք գիտեին, որ եթե իրենք ընկնեին Լամանացիների ձեռքը, որ ով որ՝ «երկրպագեր Աստծուն՝ թողով և ճշմարտությանբ, ճշմարիտ և կենդանի Աստծուն, Լամանացիները կկործանեին:

11 Այո, և նրանք գիտեին նաև Լամանացիների ծայրահեղ ատելությունը հանդեպ իրենց՝ «եղբայրները, որն Անթի-Նեփի-Լեքիի ժողովուրդն էր, ովքեր կոչվում էին Ամնոնի ժողովուրդ, և նրանք չէին կամենում զենք վերցնել, այո՛, նրանք մտել էին ուխտի մեջ, և նրանք չէին կամենում դրժել այն, հետևաբար, եթե նրանք ընկնեին Լամանացիների ձեռքը, նրանք կկործանվեին:

12 Եվ Նեփիացիները չէին կամենում թույլ տալ, որ նրանք կործանվեին. ուստի, նրանք տվեցին նրանց հողեր՝ իրենց ժառանգության համար:

13 Եվ Ամնոնի ժողովուրդը տվեց Նեփիացիներին իրենց ստացվածքից մի մեծ բաժին՝ պահելու իրենց զորքերին. և այսպես, Նեփիացիները, միայնակ, հարկադրված էին դեմ կանգնել Լամանացիներին, որոնք մի խառնուրդ էին Լամանի ու Լեմուելի, և Իսմայելի որդիների,

4ա Ալմա 35.2-14, 52.33:

9ա Ալմա 44.5, 46.12:

բ սոս Անկախություն:

10ա սոս Երկրպագել:

բ Հովհ. Գ.23-24:

11ա Ալմա 24.1-3, 5, 20,

25.1, 13, 27.2, 21-26:

և բոլոր նրանց, ովքեր պառակտվել էին Նեփիացիներից, ովքեր Ամադեկացիներն ու Ջորամացիներն էին, և Նոյի քահանաների՝¹ «հետնորդներ:

14 Արդ, այդ հետնորդներն այնքան մեծաթիվ էին, գրեթե, որքան Նեփիացիներն էին. և այսպես Նեփիացիները ստիպված էին կռվել իրենց եղբայրների հետ՝ ընդհուպ մինչև արյունահեղություն:

15 Եվ եղավ այնպես, քանի որ Լամանացիների զորքերը հավաքվել էին ի մի Անթոնումի երկրում, ահա, Նեփիացիների զորքերը պատրաստ էին հանդիպելու նրանց Երսոնի երկրում:

16 Արդ, Նեփիացիների առաջնորդը, կամ այն մարդը, որը նշանակվել էր՝ լինելու գլխավոր զորապետ Նեփիացիների վրա, այժմ այդ գլխավոր զորապետն էր վերցնում Նեփիացիների բոլոր զորքերի հրամանատարությունը, և նրա անունը Մորոնի էր.

17 Եվ Մորոնին վերցրեց ողջ հրամանատարությունը, և ղեկավարություն իրենց պատերազմների: Եվ նա ընդամենը քսանհինգ տարեկան էր, երբ նա գլխավոր զորապետ նշանակվեց Նեփիացիների զորքերի վրա:

18 Եվ եղավ այնպես, որ նա հանդիպեց Լամանացիներին Երսոնի սահմաններում, և նրա մարդիկ զինված էին սրերով, և թրերով, և պատերազմի բոլոր ձևի զենքերով:

19 Եվ երբ Լամանացիների զորքերը տեսան, որ Նեփիի ժողովուրդը, կամ, որ Մորոնին պատրաստել էր իր ժողովրդին լանջապանակներով և բազպաններով, այո՛, և նաև իրենց գլուխները պաշտ-

պանելու վահաններով, և նաև նրանք հագել էին հաստ հագուստներ,–

20 Արդ, Ջերահեմնայի զորքը պատրաստված չէր որևէ այսպիսի բանով. նրանք ունեին միայն իրենց սրերն ու իրենց թրերը, իրենց աղեղներն ու իրենց նետերը, իրենց քարերն ու իրենց պարաստիկները. և նրանք՝² «մերկ էին, բացի մի մորթուց, որը գոտևորում էր նրանց կոնքերի շուրջը. այո, բոլորը մերկ էին, բացի Ջորամացիներից և Ամադեկացիներից.

21 Բայց նրանք զինված չէին լանջապանակներով, ոչ էլ վահաններով,– հետևաբար, նրանք չափազանց վախեցան Նեփիացիների զորքերից, նրանց սպառազինության պատճառով, չնայած նրանց թիվը շատ ավելի մեծ էր, քան Նեփիացիներինը:

22 Ահա, այժմ եղավ այնպես, որ նրանք չհամարձակվեցին գալ Նեփիացիների դեմ Երսոնի սահմաններում. ուստի, նրանք հեռացան Անթոնումի երկրից դեպի անապատ, և ճանապարհ ընկան՝ շրջանցում կատարելով անապատում, հեռու՝ Միդոն գետի ակունքով, որպեսզի նրանք կարողանային գալ Մանթիի երկիրը և վերցնել երկրի տիրապետությունը. քանզի նրանք չէին կարծում, որ Մորոնիի զորքերը կիմանային, թե ուր էին իրենք գնացել:

23 Բայց եղավ այնպես, հենց որ նրանք հեռացան անապատ, Մորոնին լրտեսներ ուղարկեց անապատ՝ հետևելու նրանց բանակին. և Մորոնին ևս իմանալով Ալմայի մարգարեությունների մասին, ուղարկեց որոշ մարդկանց նրա մոտ,

փափագելով նրանից, որ նա տեղեկանար Տիրոջից, թե «ուր պիտի գնային Նեփիացիների գորքերը՝ Լամանացիներից պաշտպանվելու համար:

24 Եվ եղավ այնպես, որ Տիրոջ խոսքը եկավ Ալմային, և Ալման հաղորդեց Մորոնի սուրհանդակներին, որ Լամանացիների գորքերն ընթանում էին՝ շրջանցում կատարելով անապատում, որպեսզի նրանք կարողանային անցնել Մանթիի երկիրը, որպեսզի կարողանային սկսել մի հարձակում՝ ժողովրդի առավել թույլ մասի վրա: Եվ այդ սուրհանդակները գնացին և հանձնեցին լուրը Մորոնիին:

25 Արդ Մորոնին, թողնելով իր գորքի մի մասը Երսոնի երկրում, որպեսզի չլիներ թե ինչ-որ ձևով Լամանացիների մի մասը գար այդ երկիրը և տիրապետության տակ վերցնեք քաղաքը, վերցրեց մնացած մասն իր գորքերի և արշավեց անցավ Մանթիի երկիրը:

26 Եվ նա կարգադրեց, որ այդ մասի ողջ ժողովուրդն ի մի հավաքվե՝ ճակատամարտելու Լամանացիների դեմ, «պաշտպանելու իրենց հողերը և իրենց երկիրը, իրենց իրավունքները և իրենց ազատությունը. հետևաբար, նրանք նախապատրաստված էին Լամանացիների գալու ժամանակի դեմ:

27 Եվ եղավ այնպես, որ Մորոնին կարգադրեց, որ իր գորքը թաքնվե՛ր հովտում, որը Սիդոն գետի ափին մոտ էր, որը Սիդոն գետից դեպի արևմուտք էր՝ անապատում:

28 Եվ Մորոնին դրեց լրտեսներ շուրջբոլորը, որ ինքը կարողանար իմանալ, թե երբ էր Լամանացիների բանակը գալու:

29 Եվ արդ, քանի որ Մորոնին գիտեր Լամանացիների մտադրությունը, որ նրանց մտադրությունն էր՝ կործանել իրենց եղբայրներին կամ նրանակեցնել նրանց և բերել կարգի ճորտության, որ նրանք կարողանային հիմնադրել մի թագավորություն, իրենց համար, բոլոր երկրով մեկ.

30 Եվ նա՝ իմանալով նաև, որ Նեփիացիների միակ ցանկությունն իրենց հողերի, և իրենց «ազատության և իրենց եկեղեցու պահպանումն էր, ուստի նա մտածեց՝ դա մեղք չէր, որ նա պաշտպաներ իրենց՝ մի հնարքով. ուստի, նա պարզեց իր լրտեսների միջոցով, թե որ ուղղությամբ պիտի շարժվեին Լամանացիները:

31 Հետևաբար, նա բաժանեց իր գորքը և բերեց մի մասը դեպի հովիտը, և քողարկեց նրանց Ռիփլա բլրի արևելյան կողմում և հարավային կողմում.

32 Իսկ մնացածին նա քողարկեց արևմտյան հովտում՝ Սիդոն գետի արևմտյան կողմում, և այսպես ներքև՝ մինչև Մանթիի երկրի սահմանները:

33 Եվ այսպես տեղադրած լինելով իր գորքն ըստ իր ցանկության, նա պատրաստ էր հանդիպելու նրանց:

34 Եվ եղավ այնպես, որ Լամանացիները մոտեցան բլրի հյուսիսային կողմից, որտեղ քողարկված էր Մորոնիի գորքի մի մասը:

35 Եվ երբ Լամանացիներն անցան Ռիփլա բլուրը, և մտան հովիտը, և սկսեցին անցնել Սիդոն գետը, գորքը, որը քողարկված էր բլրի հարավային կողմում, որն առաջնորդվում էր մի մարդու կող-

մից, որի անունը «Լեքի էր, և նա տարավ իր գորքն առաջ ու շրջապատեց Լամանացիներին նրանց թիկունքից՝ արևելյան կողմում:

36 Եվ եղավ այնպես, որ Լամանացիները, երբ տեսան Նեփիացիներին իրենց վրա գալիս իրենց թիկունքից, շրջվեցին ետ և սկսեցին կռվել Լեքիի գորքի հետ:

37 Եվ մահվան գործը սկսվեց երկու կողմից, բայց այն առավել սուկալի էր Լամանացիների կողմում, քանզի նրանց «մերկությունն անպաշտպան էր Նեփիացիների ծանր հարվածների դեմ՝ նրանց սրերով և նրանց թրերով, որոնք բերում էին մահ գրեթե ամեն մի հարվածից:

38 Մինչդեռ, մյուս կողմից, լինում էր, ժամանակ առ ժամանակ, մի մարդ էր ընկնում Նեփիացիների միջից, նրանց սրերից, և արյան կորստից, իրենք՝ պաշտպանված լինելով մարմնի առավել կարևոր մասերից, կամ ավելի շուտ, մարմնի առավել կարևոր մասերը պաշտպանած լինելով Լամանացիների հարվածներից, իրենց «լանջապանակներով, և իրենց բազպաններով, և իրենց սաղավարտներով. և այսպես, Նեփիացիները շարունակում էին մահվան գործը Լամանացիների մեջ:

39 Եվ եղավ այնպես, որ Լամանացիները վախեցան, իրենց մեջ այդ մեծ կոտորածի պատճառով, նույնիսկ այնքան, որ սկսեցին փախչել դեպի Սիդոն գետը:

40 Եվ նրանք հետապնդվում էին Լեքիի և նրա մարդկանց կողմից. և նրանք թշվեցին Լեքիի կողմից դեպի Սիդոնի ջրերը, և նրանք անցան Սիդոնի ջրերը: Եվ Լեքին

պահեց իր գորքերը Սիդոն գետի ափին, որ նրանք չանցնեին:

41 Եվ եղավ այնպես, որ Մորոնին և նրա գորքը դիմավորեցին Լամանացիներին՝ հովառում, Սիդոն գետի մյուս ափին, և թափվեցին նրանց վրա ու սկսեցին սպանել նրանց:

42 Եվ Լամանացիները փախան նորից նրանց առաջից դեպի Մանթիի երկիրը. և նրանց կրկին դիմավորեցին Մորոնիի գորքերը:

43 Արդ, այս իրավիճակում Լամանացիները կռվեցին արտակարգ. այո, երբեք Լամանացիները հայտնի չէին եղել այդպիսի արտասովոր մեծ ուժով և քաջությամբ կռվող, ո՛չ, ոչ նույնիսկ ի սկզբանե:

44 Եվ նրանք ոգեշնչված էին «Չորամացիների ու Ամադեկացիների կողմից, ովքեր նրանց գլխավոր գորապետերն ու ղեկավարներն էին, և Ջերահեմնայի կողմից, որը նրանց գլխավոր գորապետն էր, կամ նրանց գլխավոր ղեկավարն ու հրամանատարը. այո, նրանք կռվում էին վիշապների պես, և Նեփիացիներից շատերը սպանվեցին նրանց ձեռքով, այո, քանզի նրանք ջարդում էին նրանց սաղավարտներից շատերը երկու մասի, և նրանք խոցում էին նրանց լանջապանակներից շատերը, և նրանք կտրում էին նրանցից շատերի բազուկները. և այսպես, Լամանացիները ջախջախում էին իրենց կատաղի բարկության մեջ:

45 Այնուամենայնիվ, Նեփիացիները ոգեշնչված էին ավելի արդար դրդապատճառից, քանզի նրանք չէին «կռվում միապետության, ոչ էլ իշխանության համար,

այլ նրանք կռվում էին իրենց տներին և իրենց Քաղաքության, իրենց կանանց և իրենց երեխաների և իրենց ամեն ինչի համար, այո, իրենց պաշտամունքի ծեսերի և իրենց եկեղեցու համար:

46 Եվ նրանք անում էին այն, ինչը զգում էին իրենց Մպարտքն էր, որը նրանք պարտական էին իրենց Աստծուն. քանզի Տերն ասել էր նրանց, և նաև իրենց հայրերին, որ. Քեկատի ունենալով, որ դուք մեղավոր չեք Պառաջին վիրավորանքի համար, ոչ էլ երկրորդ, դուք չպետք է թույլ տաք ձեզ սպանվել ձեր թշնամիների ձեռքով:

47 Եվ բացի այդ, Տերն ասել է, որ. Դուք պետք է Մպաշտպանեք ձեր ընտանիքներն ընդհուպ մինչև արյունահեղություն: Հետևաբար, այս պատճառով էին Նեփիացիները կռվում Լամանացիների հետ՝ պաշտպանելու իրենց, և իրենց ընտանիքները և իրենց հողերը, իրենց երկիրը, և իրենց իրավունքները, և իրենց կրոնը:

48 Եվ եղավ այնպես, որ երբ Մորոնիի մարդիկ տեսան Լամանացիների կատաղությունը և գայրույթը, նրանք քիչ էր մնում ընկերակցին և փախչելին նրանցից: Եվ Մորոնին, կռահելով նրանց մտադրությունը, առաջ ուղարկեց և ռզեշնչեց նրանց սրտերն այս մտքերով, այո, իրենց հողերի, իրենց անկախության, այո, ճորտությունից իրենց ազատվելու մտքերով:

49 Եվ եղավ այնպես, որ նրանք շրջվեցին Լամանացիների վրա, և նրանք միաձայն Մաղաղակեցին առ Տերը՝ իրենց Աստված, իրենց

անկախության և ճորտությունից իրենց ազատության համար:

50 Եվ նրանք սկսեցին կանգնել Լամանացիների դեմ զորությամբ. և այդ նույն ժամին, որ նրանք աղաղակեցին առ Տերը՝ իրենց ազատության համար, Լամանացիները սկսեցին փախչել նրանց առջևից. և նրանք փախան մինչև Սիդոնի ջրերը:

51 Արդ, Լամանացիներն ավելի մեծաթիվ էին, այո, ավելի քան Նեփիացիների թվի կրկնապատիկը. այնուամենայնիվ, նրանք քվեցին այնքան, որ ի մի հավաքվեցին մի խմբով, Սիդոն գետի մոտ՝ հովտում:

52 Հետևաբար, Մորոնիի զորքերն օղակեցին նրանց շուրջանակի, այո, այսինքն՝ գետի երկու կողմերից, քանզի, ահա, արևելյան կողմում Լեքիի մարդիկ էին:

53 Ուստի, երբ Ջերահեմնան տեսավ Լեքիի մարդկանց Սիդոն գետի արևելյան կողմում, իսկ Մորոնիի զորքերը Սիդոն գետի արևմտյան կողմում, որ իրենք օղակված էին շուրջանակի Նեփիացիների կողմից, նրանք ցնցվեցին սարսափից:

54 Արդ, Մորոնին, երբ տեսավ նրանց սարսափը, հրամայեց իր մարդկանց, որ նրանք դադարեն թափել նրանց արյունը:

ԳԼՈՒԽ 44

Մորոնին հրամայում է Լամանացիներին խաղաղության ուխտ անել, այլապես կկործանվեն – Ջերահեմնան մերժում է առաջարկը և ճակա-

45բ սուր Անկախություն:
46ա սուր Պարտականություն:
բ Ավմա 48.14,

ՎՆՈՒ 98.33–36:
գ 3 Նեփի 3.21,
ՎՆՈՒ 98.23–24:

47ա ՎՆՈՒ 134.11:
49ա Ել. Բ.23–25,
Մոսիա 29.20:

տամարտը վերսկսվում է – Մորոնիի գորբերը պարտության են մատնում Լամանազիներին: Մոտ 74–73թթ. Բ.ժ.ա.:

ԵՎ եղավ այնպես, որ նրանք կանգ առան և ետ քաշվեցին մի քայլ նրանցից: Եվ Մորոնին ասաց Չերահեմնային. Տե՛ս, Չերահեմնա, որ մենք չչենք փափագում լինել արյունահեղ մարդիկ: Դուք գիտեք, որ մեր ձեռքում եք, սակայն մենք չենք կամենում սպանել ձեզ:

2 Ահա, մենք դուրս չենք եկել՝ ճակատամարտելու ձեր դեմ, որպեսզի թափենք ձեր արյունն իշխանության համար. ոչ էլ մենք փափագում ենք բերել որևէ մեկին ճորտության լծի: Բայց դա հենց այն պատճառն է, որի համար դուք եկել եք մեր դեմ. այո, և դուք բարկացած եք մեզ վրա մեր կրոնի պատճառով:

3 Բայց այժմ դուք տեսնում եք, որ Տերը մեզ հետ է. և դուք տեսնում եք, որ նա մատնել է ձեզ մեր ձեռքը: Եվ այժմ ես կկամենայի, որ դուք հասկանայիք, որ այս արվում է մեզ համար՝ մեր կրոնի և Քրիստոսի հանդեպ մեր հավատքի պատճառով: Եվ այժմ, դուք տեսնում եք, որ դուք չեք կարող կործանել այս մեր հավատքը:

4 Արդ, դուք տեսնում եք, որ այս է ճշմարիտ հավատքն առ Աստված. այո, դուք տեսնում եք, որ Աստված կաջակցի և կպահի ու կպահպանի մեզ այնքան ժամանակ, քանի դեռ մենք հավատարիմ ենք նրան և մեր հավատքին և մեր կրոնին. և երբեք Տերը թույլ չի տա, որ մենք կործանվենք, եթե մենք

չընկնենք օրինազանցության մեջ և չուրանանք մեր հավատքը:

5 Եվ այժմ, Չերահեմնա, ես հրամայում եմ քեզ, այն ամենագոր Աստծո անունով, որը գորացրել է մեր բազուկները, որ մենք ձեռք ենք բերել իշխանություն ձեզ վրա, մեր հավատքով, մեր կրոնով, և մեր պաշտամունքի ծեսերով, և մեր եկեղեցով, և սրբազան աջակցությամբ, որի համար մենք պարտական ենք մեր կանանց և մեր երեխաներին, այն թագաւորությամբ, որը կապում է մեզ մեր հողերին և մեր երկրին. այո, և նաև Աստծո սրբազան խոսքի պահպանումով, որին մենք պարտական ենք ողջ մեր երջանկության համար. և այն ամենով, ինչն ամենաթանկն է մեզ համար,

6 Այո, և այս բոլորը չէ. ես հրամայում եմ ձեզ, հանուն այն բոլոր իղծերի, որ դուք ունեք կյանքի համար, որպեսզի դուք մեզ հանձնեք ձեր պատերազմի զենքերը, և մենք չենք փնտրի ձեր արյունը, այլ կխմայենք ձեր կյանքը, եթե դուք զնաք ձեր ճանապարհով և նորից չզաք պատերազմելու մեր դեմ:

7 Եվ այժմ, եթե դուք չանեք այս, ահա, դուք մեր ձեռքում եք, և ես կհրամայեմ իմ մարդկանց, որ նրանք հարձակվեն ձեզ վրա, և մահացու վերքեր հասցնեն ձեր մարմիններին, որպեսզի դուք բնաջինջ դառնաք. և այն ժամանակ մենք կտեսնենք, թե ով կունենա իշխանություն այս ժողովրդի վրա. այո, մենք կտեսնենք, թե ով կբերվի ճորտության:

8 Եվ այժմ, եղավ այնպես, որ երբ Չերահեմնան լսեց այս ասածները, նա առաջ եկավ և հանձնեց

իր սուրը և իր թուրը, և իր աղեղը՝ Մորոնիի ձեռքը, և ասաց նրան. Տես, ահա մեր պատերազմի զենքերը. մենք կհանձնենք դրանք քեզ, բայց մենք թույլ չենք տա մեզ՝ երդում տալ քեզ, որը մենք գիտենք, որ պիտի դրժենք, և մեր զավակները նույնպես. բայց վերցրո՛ւ մեր պատերազմի զենքերը, և թույլ տուր, որ մենք հեռանանք անապատ. հակառակ դեպքում մենք կպահենք մեր սրերը, և մենք կմեռնենք կամ կհաղթենք:

9 Ահա, մենք ձեր հավատքից չենք. մենք չենք հավատում, որ դա Աստված է, որ հանձնել է մեզ ձեր ձեռքը. այլ մենք հավատում ենք, որ դա ձեր խորամանկությունն է, որ պահպանել է ձեզ մեր սրերից: Ահա, դա ձեր լիցքապանակներն են և ձեր վահանները, որ պահպանեցին ձեզ:

10 Եվ այժմ, երբ Չերահեմնան վերջ դրեց այս խոսքերը խոսելուն, Մորոնիին վերադարձրեց Չերահեմնային սուրը և պատերազմի զենքերը, որ նա ստացել էր՝ ասելով. Ահա, մենք կվերջացնենք պայքարը:

11 Այժմ, ես չեմ կարող ետ վերցնել խոսքերը, որոնք ես ասացի, հետևաբար, ինչպես կենդանի է Տերը, դուք չեք հեռանա, եթե դուք չհեռանաք երդումով, որ դուք չեք վերադառնա կրկին՝ մեր դեմ պատերազմելու: Այժմ, քանի որ դուք մեր ձեռքում եք, մենք կթափենք ձեր արյունը գետնին, կամ դուք պետք է ենթարկվեք այն պայմաններին, որոնք ես առաջարկեցի:

12 Եվ այժմ, երբ Մորոնիին ասաց այս խոսքերը, Չերահեմնան պահեց իր սուրը, և նա զայրացած էր

Մորոնիի վրա, և նա առաջ նետվեց, որ սպաներ Մորոնիին. բայց երբ նա բարձրացրեց իր սուրը, ահա, Մորոնիի զինվորներից մեկն ուղղակի գետնին զարկեց այն, և այն ջարդվեց բռնակից. և նա զարկեց նաև Չերահեմնային՝ այնպես, որ հանեց նրա գանգամաշկը, և այն ընկավ գետնին: Եվ Չերահեմնան ետ քաշվեց նրանց առջևից դեպի իր զինվորների մեջ:

13 Եվ եղավ այնպես, որ զինվորը, որը կանգնած էր մոտիկ, որը հանեց Չերահեմնայի գանգամաշկը, վերցրեց գանգամաշկը մազերից՝ գետնի վրայից, և դրեց այն իր սրի ծայրին, և մեկնեց այն առաջ դեպի նրանց՝ ասելով նրանց բարձր ձայնով.

14 Ծիշտ ինչպես այս գանգամաշկն ընկավ գետնին, որը ձեր առաջնորդի գանգամաշկն է, այնպես էլ դուք պիտի ընկնեք գետնին, եթե դուք չհանձնեք ձեր պատերազմի զենքերը և չհեռանաք խաղաղության մի ուխտով:

15 Արդ, կային շատերը, ովքեր ցնցվեցին վախից, երբ նրանք լսեցին այս խոսքերը և տեսան գանգամաշկը, որը սրի վրա էր. և շատերն առաջ եկան և վայր գցեցին իրենց պատերազմի զենքերը Մորոնիի ոտքերի մոտ, և մտան խաղաղության ուխտի մեջ: Եվ բոլոր նրանք, ովքեր մտան ուխտի մեջ, նրանց թույլ տրվեց հեռանալ անապատ:

16 Արդ, եղավ այնպես, որ Չերահեմնան խիստ զայրացավ, և նա իր զինվորներից մնացածին բարկության դրդեց՝ ավելի ուժգնորեն կռվելու Նեփիազցիների դեմ:

17 Եվ այժմ, Մորոնիին բարկա-

ցավ Լամանացիների կամակորոթյան պատճառով. հետևաբար, նա հրամայեց իր մարդկանց, որ նրանք հարձակվեն նրանց վրա և սպանեն նրանց: Եվ եղավ այնպես, որ նրանք սկսեցին սպանել նրանց. այո, և Լամանացիները կոչվում էին իրենց սրերով և իրենց գորությամբ:

18 Բայց ահա, նրանց մերկ մաշկը և նրանց լերկ գլուխները բաց էին Նեփիացիների սուր սրերի դեմ. այո, ահա, նրանք խոցվում էին ու զարկվում, այո, և ընկնում էին խիստ արագ Նեփիացիների սրերի առաջ. և նրանք սկսեցին վայր տապալվել, ճիշտ ինչպես Մորոնիի զինվորն էր մարգարեացել:

19 Արդ, Չերահեմնան, երբ տեսավ, որ իրենք բոլորը քիչ էր մնում կործանվելին, ուժգնորեն աղաղակեց Մորոնիին՝ խոստանալով, որ նա կուխտեր և նաև իր ժողովուրդը՝ իրենց հետ, եթե նրանք խնայեին մնացածի կյանքը, որ իրենք՝ տերբեք չէին գա կրկին՝ պատերազմելու նրանց դեմ:

20 Եվ եղավ այնպես, որ Մորոնին կարգադրեց, որ մահվան գործը նորից դադարեր ժողովրդի մեջ: Եվ նա վերցրեց պատերազմի զենքերը Լամանացիներից. և հետո, երբ նրանք մտել էին խաղաղության՝ ուխտի մեջ նրա հետ, նրանց թույլ տրվեց հեռանալ անապատ:

21 Արդ, հաշիվը, նրանց զոհվածների, չհաշվվեց, թվի մեծության պատճառով. այո, զոհվածների թիվը խիստ մեծ էր՝ թե՛ Նեփիացիներից, թե՛ Լամանացիներից:

22 Եվ եղավ այնպես, որ նրանք

զցեցին իրենց մեռելներին Սիդոնի ջրերը, և դրանք հեռու գնացին և թաղված են ծովի խորքերում:

23 Եվ Նեփիացիների կամ Մորոնիի զորքերը վերադարձան և եկան իրենց տներն ու իրենց հողերը:

24 Եվ այսպես ավարտվեց Նեփիի ժողովրդի վրա դատավորների կառավարման տասնութերորդ տարին: Եվ այսպես ավարտվեց Ալմայի հիշատակարանը, որը գրված էր Նեփիի թիթեղների վրա:

Նեփիի ժողովրդի պատմությունը և նրանց պատերազմներն ու երկպառակությունները Հելամանի օրոք, համաձայն Հելամանի հիշատակարանի, որը նա պահել էր իր օրոք:

*Ընդգրկելով 45–62 գլուխները
ներառյալ:*

ԳԼՈՒԽ 45

Հելամանը հավատում է Ալմայի խոսքերին – Ալման մարգարեանում է Նեփիացիների կործանումը – Նա օրհնում է և անիծում երկիրը – Գիշտ ինչպես Մովսեսը, Ալման հնարավոր է վերցված լինի Հոգու կողմից – Եկեղեցում աճում է երկպառակությունը: Մոտ 73թ. Բ.ժ.ա.:

ԱՀԱ, այժմ եղավ այնպես, որ Նեփիի ժողովրդի ցնծությանը չափ չկար, որովհետև Տերը նորից ազատել էր նրանց իրենց թշնամիների ձեռքից. այդ պատճառով նրանք գոհություն հայտնեցին Տիրոջը՝ իրենց Աստծուն. այո, և նրանք շատ՝ մծոն պահեցին և

19ա Ալմա 47:6:
20ա Ալմա 62.16–17:

45 1ա սոՒ Ծոմ,
Ծոմապահություն:

աղոթեցին շատ, և նրանք երկըրպագեցին Աստծուն անչափ մեծ ուրախությամբ:

2 Եվ եղավ այնպես, Նեփիի ժողովրդի վրա դատավորների կառավարման տասնիններորդ տարում, որ Ալման եկավ իր որդի Հելամանի մոտ և ասաց նրան. Հավատո՞ւմ ես դու խոսքերին, որ ես ասացի քեզ այս ^ահիշատակարանների վերաբերյալ, որոնք պահվել են:

3 Եվ Հելամանն ասաց նրան. Այո, ես հավատում եմ:

4 Եվ Ալման ասաց նրան կրկին. Հավատո՞ւմ ես դու Հիսուս Քրիստոսին, որը պիտի գա:

5 Եվ նա ասաց նրան. Այո, ես հավատում եմ բոլոր խոսքերին, որ դու խոսել ես:

6 Եվ Ալման ասաց նրան կրկին. ^աԿապահե՞ս դու իմ պատվիրանները:

7 Եվ նա ասաց. Այո, ես կպահեմ քո պատվիրաններն իմ ողջ սրտով:

8 Այն ժամանակ Ալման ասաց նրան. Օրհնվա՞ծ ես դու. և Տերը պիտի ^աբարգավաճեցնի քեզ այս երկրում:

9 Բայց ահա, ես ունեմ որոշ բան ^ամարգարեանալու քեզ. բայց ինչ ես մարգարեանամ քեզ, դու չպետք է հայտնի դարձնես. այո, ինչ ես մարգարեանամ քեզ, չպիտի հայտնի դարձվի, ընդհուպ մինչև մարգարեությունն իրագործվի. հետևաբար, գրի՛ր խոսքերը, որոնք ես պիտի ասեմ:

10 Եվ սրանք են այդ խոսքերը. Ահա, ես կանխագու՞մ եմ, համա-

ձայն հայտնության ոգու, որն իմ մեջ է, որ հենց այս ժողովուրդը՝ Նեփիացիները, ^աչորս հարյուր տարի անց, այն ժամանակից, երբ Հիսուս Քրիստոսն իրեն հայտնի կդարձնի նրանց, ^բանհավատության մեջ կընկնեն:

11 Այո, և այն ժամանակ նրանք կտեսնեն պատերազմներ ու համաճարակներ, այո, սովեր ու արյունահեղություն, մինչև որ Նեփիի ժողովուրդը ^աբնաջնջվի,

12 Այո, և դա՛ որովհետև նրանք կընկնեն անհավատության մեջ և կընկնեն խավարի գործերի և ^ահեշտասիրության և բոլոր ձևի անօրինությունների մեջ. այո, ես ասում եմ քեզ, որ քանի որ նրանք կմեղանչեն այդպիսի մեծ լույսի ու գիտելիքի դեմ, այո, ես ասում եմ քեզ, որ այդ օրից նույնիսկ չորրորդ սերունդը չի անցնի, նախքան այդ մեծ անօրինությունը կգա:

13 Եվ երբ այն մեծ օրը գա, ահա, շատ շուտով գալիս է ժամանակը, որ նրանք, ովքեր կան այժմ, կամ սերունդը նրանց, ովքեր այժմ համարվում են Նեփիի ժողովրդի թվում, ^աայլև չեն համարվի Նեփիի ժողովրդի թվում:

14 Բայց նրանք, ովքեր կմնան և չեն կործանվի այն մեծ ու ահեղ օրը, ^ակհամարվեն Լամանացիների թվում և կդառնան նրանց մման, բոլորը, բացի մի քանիսից, ովքեր կկոչվեն Տիրոջ աշակերտներ. և նրանց Լամանացիները կհալածեն, այնքան, ^բմինչև որ նրանք կբնաջնջվեն: Եվ արդ, անօրինու-

<p>2ա Ալմա 37.1-5, 50.38: 6ա սո՛ր Պատվիրաններն Աստծո. Հնազանդություն, Հնազանդ, Հնազանդվել: 8ա 1 Նեփի 4.14, Ալմա 48.15-16, 25:</p>	<p>9ա սո՛ր Մարգարեություն, Մարգարեանալ: 10ա 1 Նեփի 12.10-15, Հել. 13.9, Մորմ. 8.6-7: բ սո՛ր Ուրացություն, Անհավատություն:</p>	<p>11ա Հարոմ 1.10, Մորմ. 8.2-3, 6-7: 12ա սո՛ր Յանկանալ: 13ա Հել. 3.16: 14ա Մոր. 9.24: բ Մոր. 1.1-3:</p>
---	---	---

քյան պատճառով, այս մարգարեությունը պիտի իրագործվի:

15 Եվ այժմ, եղավ այնպես, որ Ալման, այս բաները Հելամանին ասելուց հետո, նա օրհնեց նրան, և նա իր մյուս որդիներին. և նա նաև օրհնեց հողը՝ արդարների համար:

16 Եվ նա ասաց. Այսպես է ասում Տեր Աստված. «Անիծված պիտի լինի հողը, այո, այս հողը, ամեն ազգի, ցեղի, լեզվի և ժողովրդի համար, ի կործանումն նրանց, ովքեր գործում են ամբարշտորեն, երբ նրանք լիովին հասունանան. և ինչպես ես ասացի, այդպես էլ կլինի. քանզի սա Աստծո անեծքը և Պօրհնությունն է այս հողի վրա, քանզի Տերը չի կարող մեղքը անվագագույն իսկ աստիճանով բույլատրելի համարել:

17 Եվ այժմ, երբ Ալման ասաց այս խոսքերը, նա օրհնեց՝ «Եկեղեցին, այո, բոլոր նրանց, ովքեր կկանգնեն անասան հավատքում, այդ ժամանակից ի վեր:

18 Եվ երբ Ալման արեց այս, նա հեռացավ Չարահեմլայի երկրից, կարծես թե՝ գնալու Մելեքի երկիրը: Եվ եղավ այնպես, որ նրա մասին այլևս երբեք չլսեցին. ինչ վերաբերում է նրա մահվանը և թաղվելուն, մենք այդ մասին չգիտենք:

19 Ահա, սա մենք գիտենք, որ նա մի արդար մարդ էր. և խոսքը տարածվեց ամենուր՝ եկեղեցում, որ նա վերցվել է Հոգու կողմից, կամ՝ թաղվել Տիրոջ ձեռքով, ճիշտ ինչպես Մովսեսը: Բայց, ահա, սուրբ գրքերն ասում են՝ Տերը վերցրեց Մովսեսին իր մոտ. և մենք

կարծում ենք, որ նա իր մոտ է ընդունել նաև Ալմային՝ հոգու մեջ. հետևաբար, այս պատճառով մենք ոչինչ չգիտենք նրա մահվան ու թաղվելու մասին:

20 Եվ այժմ, եղավ այնպես, Նեփիի ժողովրդի վրա դատավորների կառավարման տասնիններորդ տարվա սկզբում, որ Հելամանն առաջ գնաց ժողովրդի մեջ՝ հայտարարելու խոսքը նրանց:

21 Քանզի ահա, Լամանացիների հետ նրանց պատերազմների և բազում փոքր երկպառակությունների ու խռովությունների պատճառով, որոնք եղել էին ժողովրդի մեջ, դարձավ անհրաժեշտ, որ Աստծո խոսքը հայտարարվեր նրանց մեջ, այո, և որ մի կանոնակարգում արվեր եկեղեցով մեկ:

22 Հետևաբար, Հելամանը և նրա եղբայրներն առաջ գնացին՝ կրկին հաստատելու եկեղեցին ողջ երկրում, այո, ամեն քաղաքում՝ բոլոր երկրով մեկ, որը պատկանում էր Նեփիի ժողովրդին: Եվ եղավ այնպես, որ նրանք նշանակեցին քահանաներ և ուսուցիչներ բոլոր երկրով մեկ, բոլոր եկեղեցիների վրա:

23 Եվ այժմ, եղավ այնպես, որ հետո, երբ Հելամանը և նրա եղբայրները նշանակեցին քահանաներ և ուսուցիչներ եկեղեցիների վրա, նրանց մեջ բարձրացավ մի՝ «երկպառակություն, և նրանք չէին կամենում ուշք դարձնել Հելամանի և նրա եղբայրների խոսքերին.

24 Այլ նրանք հպարտացան, բարձրամտացած լինելով իրենց սրտերում, իրենց խիստ մեծ

15ա Ալմա 46.10, 62.40:
16ա2 Նեփի 1.7,
Ալմա 37.31,
Եբեր 2.8–12:

p ՎևոՒ 130.21:
q ՎևոՒ 1.31:
17ա սոՒ Հիսուս Քրիստոսի
Եկեղեցի:

19ա սոՒ Փոխակերպված
Էակներ:
21ա Ալմա 31.5:
23ա3 Նեփի 11.28–29:

“հարստությունների պատճառով հետևաբար, նրանք դարձել էին հարուստ՝ իրենց Քսեփական աչքում և չէին կամենում ուշք դարձնել նրանց խոսքերին՝ քայլել ուղիղ Աստծո առաջ:

ԳԼՈՒԽ 46

Ամադիկիան դավադրություն է կազմակերպում թագավոր լինելու համար – Մորոնին բարձրացնում է ազատության դրոշը – Նա միավորում է ժողովրդին պաշտպանելու իրենց կրոնը – Ճշմարիտ հավատացյալները կոչվում են Քրիստոնյաներ – Հովսեփի մի մնացորդ կպահպանվի – Ամադիկիան և պառակտիչները փախչում են Նեփիի երկիրը – Նրանք, ովքեր չեն կամենում աջակցել ազատության գործին, դատապարտվում են մահվան: Մոտ 73–72թթ. Ք.ծ.ա.:

ԵՎ եղավ այնպես, որ բոլոր նրանք, ովքեր չկամեցան լսել Հելամանի և նրա եղբայրների խոսքերը, ի մի հավաքվեցին ընդդեմ իրենց եղբայրների:

2 Եվ այժմ ահա, նրանք խիստ զայրացած էին՝ այնքան, որ նրանք վճռել էին սպանել նրանց:

3 Արդ, առաջնորդը նրանց, ովքեր զայրացած էին իրենց եղբայրների վրա, մի հաղթանդամ ու ուժեղ մարդ էր. և նրա անունը Ամադիկիա էր:

4 Եվ Ամադիկիան փափագում էր թագավոր լինել. և այն մարդիկ, ովքեր զայրացած էին, նույնպես փափագում էին, որ նա լիներ իրենց թագավորը. և նրանք, առավել մեծ մասը նրանցից, երկրի

“ստորադաս դատավորներն էին, և նրանք ձգտում էին իշխանության:

5 Եվ նրանք առաջնորդվում էին Ամադիկիայի շողոքորթություններով, որ էթե նրանք աջակցեին իրեն և հաստատեին իրեն՝ լինելու իրենց թագավոր, որ նա կդարձներ նրանց կառավարիչներ ժողովրդի վրա:

6 Այսպիսով, նրանք երկպառակությունների էին դրդվում Ամադիկիայի կողմից, չնայած Հելամանի և նրա եղբայրների քարոզելուն, այո, չնայած նրանց խիստ մեծ հոգատարությանը եկեղեցու վրա, քանզի նրանք քահանայապետեր էին եկեղեցու վրա:

7 Եվ եկեղեցում կային շատերը, ովքեր հավատացին Ամադիկիայի շողոքորթող խոսքերին, հետևաբար, նրանք նույնիսկ պառակտվեցին եկեղեցուց. և այսպիսին էին Նեփիի ժողովրդի գործերը՝ տագնապալի ու վտանգավոր, չնայած իրենց մեծ “հաղթանակին, որ նրանք ունեցել էին Լամանացիների վրա և իրենց մեծ ցնծություններից, որ նրանք ունեցել էին Տիրոջ ձեռքով իրենց ազատագրման համար:

8 Այսպիսով, մենք տեսնում ենք, թե որքան “արագ են մարդկանց զավակները մոռանում Տիրոջը՝ իրենց Աստծուն, այո, որքան արագ անօրինություն անում, և նուրբեցվում այն չար մեկի կողմից:

9 Այո, և մենք նաև տեսնում ենք այն մեծ “ամբարշտությունը, որ մի շատ ամբարիշտ մարդ կարող է առաջացնել մարդկանց զավակների մեջ:

10 Այո, մենք տեսնում ենք, որ Ամադիկիան, քանի որ նա մի

24ա սոՒ Հարստություններ: p սոՒ Հպարտություն:

46 4ա Մոսիա 29.11, 28–29: 7ա Ալմա 44.19–20:

8ա Հել. 12.2, 4–5: 9ա Մոսիա 29.17–18:

մարդ էր խորամանկ հնարքով, և մի մարդ՝ բազում շողոքորթող խոսքերով, որ նա մոլորեցրեց շատ մարդկանց արտերը՝ գործելու ամբարշտորեն. այո, և ձգտելու կործանել Աստծո եկեղեցին, և կործանելու՝ «ազատության հիմքը, որն Աստված շնորհել էր նրանց, կամ այն օրհնությունը, որն Աստված ուղարկել էր երկրի երեսի վրա՝ ի սեր՝ Բարդարների:

11 Եվ արդ, եղավ այնպես, որ երբ Մորոնին, որը՝ «գլխավոր հրամանատարն էր Նեփիացիների գորքերի, լսեց այս երկպառակությունների մասին, նա զայրացավ Ամադիկիայի վրա:

12 Եվ եղավ այնպես, որ նա պատռեց իր պատմութանը. և նա վերցրեց դրանից մի կտոր և գրեց վրան. «Ի հիշեցումն մեր Աստծո, մեր կրոնի և ազատության, և մեր խաղաղության, մեր կանանց և մեր երեխաների, և նա ամրացրեց այն մի ձողի ծայրին:

13 Եվ նա ամրացրեց իր սաղավարտը, և իր լանջապանակը, և իր վահանները, և ամրացրեց իր զենքերն իր գոտկատեղի շուրջը. և նա վերցրեց ձողը, որն ուներ իր ծայրին նրա պատրված պատմութանը (և նա կոչեց այն ազատության դրոշ), և նա գետին խոնարհվեց ու աղոթեց գորությանք առ իր Աստված, ազատության օրհնություններն իր եղբայրների վրա մնալու համար, քանի դեռ Քրիստոնյաների մի խումբ կմնար տիրելու երկրին,

14 Քանզի այսպես էին կոչվում

Քրիստոսի բոլոր ճշմարիտ հավատացյալները, ովքեր պատկանում էին Աստծո եկեղեցուն, նրանց կողմից, ովքեր չէին պատկանում եկեղեցուն:

15 Եվ նրանք, ովքեր պատկանում էին եկեղեցուն, հավատարիմ էին. այո, բոլոր նրանք, ովքեր ճշմարիտ հավատացյալներ էին Քրիստոսում, ուրախությամբ իրենց վրա վերցրեցին Քրիստոսի, կամ՝ Քրիստոնյաներ Բանունը, ինչպես նրանց կոչեցին՝ իրենց հավատքի համար Քրիստոսում, որը պիտի գար:

16 Եվ հետևաբար, այդ պահին, Մորոնին աղոթեց, որ Քրիստոնյաների և երկրի ազատության գործը հովանավորվեր:

17 Եվ եղավ այնպես, որ երբ նա դուրս էր թափել իր հոգին առ Աստված, բոլոր երկիրը, որն «Ավերակներ երկրի հարավում էր, այո, և ի վեջո բոլոր երկիրը՝ թե՛ հյուսիսում և թե՛ հարավում, նա անվանեց՝ Ընտրյալ երկիր, և ազատության երկիր:

18 Եվ նա ասաց. Անշուշտ Աստված չի՛ հանդուրժի, որ մենք, որ արհամարհված ենք, որովհետև մենք վերցնում ենք մեզ վրա Քրիստոսի անունը, ոտնատակ լինենք և կործանվենք, եթե մենք չբերենք դա մեզ վրա՝ մեր իսկ օրինազանցություններով:

19 Եվ երբ Մորոնին ասաց այս խոսքերը, նա առաջ գնաց ժողովրդի մեջ՝ ծածանելով իր՝ «հանդերձի պատռած մասն օդում, որպեսզի բոլորը կարողանային տեսնել գրությունը, որը նա գրել էր

10ա2 Նեփի 1.7,
Մոսիա 29.32:
բ 2 Նեփի 1.7:
11ա Ալմա 43.16–17:

12ա Նեեմ. Գ.14,
Ալմա 44.5:
15ա Գոր. ԺԱ.26,
Ա Պետ. Գ.16:

բ Մոսիա 5.7–9:
17ա Ալմա 22.30–31:
19ա Մոմ Դորոշ:

պատուված մասի վրա, և գոչելով քարձր ձայնով՝ ասելով.

20 Ահա, ովքեր որ կպաշտպանեն այս դրոշը երկրի վրա, թող նրանք առաջ գան Տիրոջ ուժով, և մտնեն ուխտի մեջ, որ նրանք կպաշտպանեն իրենց իրավունքները, և իրենց կրոնը, որպեսզի Տեր Աստված կարողանա օրհնել նրանց:

21 Եվ եղավ այնպես, որ երբ Մորոնին հռչակեց այս խոսքերը, ահա, ժողովուրդը եկավ, վազելով միասին, իրենց զենքերն ամրացրած իրենց գոտկատեղի շուրջը, պատռելով իրենց հանդերձները՝ որպես խորհրդանիշ, կամ որպես ուխտ, որ նրանք չէին լքի Տիրոջը՝ իրենց Աստծուն. կամ, այլ խոսքով, եթե նրանք զանց անեին Աստծո պատվիրանները, կամ ընկնեին օրինազանցության մեջ և “ամաչեին իրենց վրա վերցնել Քրիստոսի անունը, Տերը պիտի պատռեր նրանց, ճիշտ ինչպես նրանք պատռեցին իրենց հանդերձները:

22 Արդ սա էր ուխտը, որը նրանք արեցին, և նրանք զգեցին իրենց հանդերձները Մորոնիի ոտքերի մոտ՝ ասելով. Մենք ուխտում ենք մեր Աստծո հետ, որ մենք պիտի կործանվենք, ճիշտ ինչպես մեր եղբայրները հյուսիսային կողմի երկրում, եթե մենք պիտի ընկնենք օրինազանցության մեջ. այո, թող նա գցի մեզ մեր թշնամիների ոտքերը, ճիշտ ինչպես մենք ենք զգել մեր հանդերձները քո ոտքերի մոտ, կոխկրավելու ոտքի տակ, եթե մենք ընկնենք օրինազանցության մեջ:

23 Մորոնին ասաց նրանց. Ահա,

մենք Հակոբի սերնդի մի մնացորդ ենք. այո, մենք “Հովսեփի Քսերնդի մի մնացորդ ենք, որի ⁹պատմունճանը պատռվեց շատ կտորների իր եղբայրների կողմից. այո, և այժմ ահա, եկեք հիշենք պահել Աստծո պատվիրանները, այլապես մեր հանդերձները կպատռվեն մեր եղբայրների կողմից, և մենք կզգվենք բանտ կամ կծախվենք կամ կսպանվենք:

24 Այո, եկեք պահպանենք մեր ազատությունը՝ որպես Հովսեփի մի ¹⁰մնացորդ. այո, եկեք հիշենք Հակոբի խոսքերն իր մահվանից առաջ, քանզի ահա, նա տեսավ, որ Հովսեփի պատմունճանի մնացորդի մի մաս պահպանվել էր և չէր քայքայվել: Եվ նա ասաց. Ճիշտ այնպես, ինչպես իմ որդու հանդերձի այս մնացորդն է պահպանվել, այնպես էլ պիտի իմ որդու սերնդի մի ¹¹մնացորդ պահպանվի Աստծո ձեռքով, և վերցվի իր մոտ, մինչդեռ Հովսեփի սերնդի մնացածը պիտի կորչի, ճիշտ ինչպես նրա հանդերձի մնացորդը:

25 Այժմ ահա, այս վիշտ է պատճառում իմ հոգուն. այնուամենայնիվ, իմ հոգին ուրախություն ունի իմ որդով, նրա սերնդի այն մասի համար, որոնք պիտի վերցվեն Աստծո մոտ:

26 Արդ ահա, այս էր Հակոբի խոսքը:

27 Եվ արդ, ո՞վ գիտի, գուցե, Հովսեփի սերնդի մնացորդը, որը պիտի կորչի, ինչպես իր հանդերձը, նրանք են, ովքեր պառակտվել են մեզանից: Այո, և նույնիսկ դա պիտի լինենք ինքներս, եթե մենք

21ա 1 Նեփի 8.25–28, Մորմ. 8.38:
23ա սուր Հովսեփի՝ Հակոբի որդի:

բ Ծն. ԽԹ. 22–26, 1 Նեփի 5.14–15:
գ Ծն. ԼԷ.3, 31–36:
24ա Անովս Ե.15,

3 Նեփի 5.21–24, 10.17:
բ 2 Նեփի 3.5–24, Եթեր 13.6–7:

հաստատուն չկանգնենք Քրիստոսի հավատքում:

28 Եվ արդ, եղավ այնպես, որ երբ Մորոնին ասաց այս խոսքերը, նա առաջ գնաց, և նաև ուղարկեց առաջ՝ դեպի երկրի բոլոր մասերը, որտեղ կային երկպառակություններ, և ի մի հավաքեց բոլոր ժողովրդին, ովքեր փափագում էին պաշտպանել իրենց ազատությունը, կանգնել Ամադիկիայի և նրանց դեմ, ովքեր պառակտվել էին, ովքեր կոչվում էին Ամադիկիացիներ:

29 Եվ եղավ այնպես, որ երբ Ամադիկիան տեսավ, որ Մորոնիի մարդիկ ավելի բազմաքանակ էին, քան Ամադիկիացիները, և նա տեսավ նաև, որ իր ժողովուրդը կասկածում էր այն գործի արդարության վերաբերյալ, որ իրենք ձեռնարկել էին, հետևաբար, վախենալով, որ ինքը չէր հասնի նպատակին, նա վերցրեց իր մարդկանցից նրանց, ովքեր կամեցան, և հեռացավ Նեփիի երկիրը:

30 Այժմ Մորոնին մտածեց, որ նպատակահարմար չէր, որ Լամանացիներն ունենային էլ ավելի շատ ուժ. հետևաբար, նա մտածեց կանգնեցնել Ամադիկիայի մարդկանց, կամ վերցնել նրանց ու ետ բերել, և Ամադիկիային մահվան ենթարկել. այդ, քանզի նա գիտեր, որ նա Լամանացիներին բարկության կդրդեր իրենց դեմ, և առիթ կտար նրանց՝ գալ ճակատամարտելու իրենց դեմ. և այս նա գիտեր, որ Ամադիկիան կաներ այդ, որպեսզի կարողանար հասնել իր նպատակներին:

31 Հետևաբար, Մորոնին մտածեց, որ նպատակահարմար էր, որ

նա վերցներ իր գորքերը, որոնք ի մի էին հավաքվել, և զինվել էին ու մտել ուխտի մեջ՝ պահպանելու խաղաղությունը, և եղավ այնպես, որ նա վերցրեց իր գորքը և արշավեց դուրս իր վրաններով, դեպի անապատ, կտրելու Ամադիկիայի ճանապարհն անապատում:

32 Եվ եղավ այնպես, որ նա արեց ըստ իր ցանկությունների, և արշավեց առաջ անապատում ու կասեցրեց Ամադիկիայի գորքերը:

33 Եվ եղավ այնպես, որ Ամադիկիան փախավ իր մարդկանց մի փոքր խմբի հետ, իսկ մնացածը հանձնվեցին Մորոնիի ձեռքը և ետ տարվեցին Չարահենալայի երկիրը:

34 Արդ, Մորոնին՝ լինելով մի մարդ, որը ^անշանակվել էր գլխավոր դատավորների կողմից և ժողովրդի ձայնով, հետևաբար նա ուներ գորություն ըստ իր կամքի՝ Նեփիացիների գորքերի հետ, հաստատել և գործադրել իշխանություն նրանց վրա:

35 Եվ եղավ այնպես, որ Ամադիկիացիներից, ովքեր որ չկամեցան մտնել ուխտի մեջ՝ աջակցելու ազատության գործին, որպեսզի նրանք կարողանային պահպանել ազատ կառավարումը, նա հրամայեց մահվան ենթարկել. և կային, բայց՝ քիչ, ովքեր մերժեցին ազատության ուխտը:

36 Եվ նաև եղավ այնպես, որ նա հրամայեց, որ ազատության դրոշը բարձրացվեր յուրաքանչյուր աշտարակի վրա, որ կարող էր կրում, որին տիրում էին Նեփիացիները. և այսպես Մորոնին կանգնեցրեց ազատության դրոշը Նեփիացիների մեջ:

37 Եվ նրանք կրկին սկսեցին

խաղաղություն ունենալ երկրում. և այսպես նրանք խաղաղություն պահպանեցին երկրում, մինչև գրեթե դատավորների կառավարման տասնիմներորդ տարվա վերջը:

38 Եվ Հելամանն ու ՞քահանայապետերը նույնպես պահպանեցին կարգ ու կանոն եկեղեցում. այո, նույնիսկ չորս տարիների ընթացքում նրանք ունեցան շատ խաղաղություն և ցնծություն եկեղեցում:

39 Եվ եղավ այնպես, որ կային շատերը, ովքեր մահացան, հաստատ ՞հավատալով, որ իրենց հոգիները փրկագնված էին Տեր Հիսուս Քրիստոսի կողմից. այսպիսով, նրանք հեռացան աշխարհից ցնծությամբ:

40 Եվ եղան ոմանք, ովքեր մահացան տենդերից, որոնք տարվա որոշ եղանակներին շատ հաճախ էին երկրում, բայց ոչ այնքան շատ՝ տենդերից. բազմաթիվ ՞բույսերի ու արմատների գերազանց հատկությունների շնորհիվ, որոնք Աստված պատրաստել էր հիվանդությունների պատճառը վերացնելու համար, որոնց մարդիկ ենթակա էին կլիմայի բնույթից ելնելով,

41 Մակայն կային շատերը, ովքեր մահացան ծեր հասակում. և նրանք, ովքեր մահացան Քրիստոսի հավատքում, ՞երջանիկ են նրանով, ինչպես մենք անպայման պիտի ենթադրենք:

ԳԼՈՒԽ 47

Ամադիկիսան գործի է դնում դավա-

ճանություն, սպանություն և խարդավանք Լամանացիների թագավորը դառնալու համար – Նեփիացի պառակտիչներն ավելի ամբարիշտ են ու կատաղի, քան Լամանացիները: Մոտ 72թ. Ք.ծ.ա.:

ԱՅԺԾ մեր հիշատակարանում մենք կվերադառնանք Ամադիկիային և նրանց, ովքեր նրա հետ ՞փախել էին անապատ. քանզի ահա, նա վերցրել էր իր հետ նրանց, ովքեր գնացել էին նրա հետ և հասել էին Նեփիի ՞երկիրը՝ Լամանացիների մեջ և Լամանացիներին բարկության էին դրդել Նեփիի ժողովրդի դեմ, այնպես որ Լամանացիների թագավորն ուղարկեց մի հրովարտակ իր ողջ երկրով մեկ, իր ողջ ժողովրդի մեջ, որ նրանք ի մի հավաքվեն՝ կրկին գնալու, ճակատամարտելու Նեփիացիների դեմ:

2 Եվ եղավ այնպես, որ երբ հրովարտակն առաջ գնաց նրանց մեջ, նրանք խիստ վախեցան. այո, նրանք երկյուղում էին թագավորին զայրացնել, և նրանք նաև երկյուղում էին գնալ ճակատամարտելու Նեփիացիների դեմ, որ չլիներ թե կորցնեին իրենց կյանքը: Եվ եղավ այնպես, որ նրանք չկամեցան, կամ նրանցից մեծ մասը չկամեցավ հնազանդվել թագավորի պատվիրաններին:

3 Եվ այժմ, եղավ այնպես, որ թագավորը զայրացավ նրանց անհնազանդության պատճառով. ուստի, նա տվեց Ամադիկիային իր բանակի այն մասի հրամանատարությունը, որը հնազանդ էր իր հրամաններին, և հրամայեց նրան,

38ա Ալմա 46.6:
39ա Մոր. 7.3, 41:
40ա Վև. 89.10:

41ա Հայտ. ԺԳ.13:
47 1ա Ալմա 46.33:
p 2 Նեփի 5.5–8,

Օմնի 1.12–13:

որ նա գնար առաջ և հրամայեր նրանց՝ ի գեմ:

4 Արդ, ահա, այս էր Ամադիկիայի փափազը. քանզի նա՝ լինելով չարիք անելու մի շատ ճարպիկ մարդ, հետևաբար, նա իր սրտում ծրագիր դրեց՝ գահազրկել Լամանացիների թագավորին:

5 Եվ այժմ նա ստացել էր հրամանատարությունը Լամանացիների այն մասերի, ովքեր համակրում էին թագավորին. և նա ձգտեց ձեռք բերել համակրանքը նրանց, ովքեր հնազանդ չէին. հետևաբար, նա գնաց առաջ դեպի այն տեղը, որը կոչվում էր ^աՕնիդա, քանզի այստեղ էին փախել բոլոր Լամանացիները. քանզի նրանք հայտնաբերել էին զորքերի գալը, և կարծելով, որ նրանք գալիս էին կործանելու իրենց, հետևաբար, նրանք փախել էին Օնիդա՝ դեպի զինանոցը:

6 Եվ նրանք նշանակել էին մի մարդու՝ լինելու թագավոր և ղեկավար իրենց վրա, որոշած լինելով իրենց մտքում մի հաստատուն վճռականությամբ, որ նրանք չէին ենթարկվելու՝ գնալ ընդդեմ Նեփիացիների:

7 Եվ եղավ այնպես, որ նրանք ի մի էին համախմբվել լեռան գագաթին, որը կոչվում էր Անթիփաս, պատրաստվելով ճակատամարտելու:

8 Արդ Ամադիկիայի մտադրությունը նրանց ճակատամարտ տալը չէր՝ ըստ թագավորի պատվիրանքի. բայց ահա, նրա մտադրությունն էր՝ շահել Լամանացիների զորքերի համակրանքը, որ նա կարողանար նրանց գլուխն անցնել և գահազրկել թագավորին

և վերցնել թագավորության տիրապետությունը:

9 Եվ ահա, եղավ այնպես, որ նա հրամայեց իր զորքին խփել իրենց վրանները հովտում, որն Անթիփաս լեռան մոտ էր:

10 Եվ եղավ այնպես, որ երբ գիշեր էր, նա ուղարկեց մի գաղտնի դեսպանություն դեպի Անթիփաս լեռը, կամենալով, որ ղեկավարը նրանց, ովքեր լեռան վրա էին, որի անունը Լեքոնտի էր, որ նա վար իջներ լեռան ստորոտը, քանզի նա ցանկանում էր խոսել նրա հետ:

11 Եվ եղավ այնպես, որ երբ Լեքոնտին ստացավ լուրը, նա չհամարձակվեց վար իջնել լեռան ստորոտը: Եվ եղավ այնպես, որ Ամադիկիան ուղարկեց երկրորդ անգամ՝ ցանկանալով, որ նա իջներ ներքև: Եվ եղավ այնպես, որ Լեքոնտին չկամեցավ. և նա ուղարկեց նորից՝ երրորդ անգամ:

12 Եվ եղավ այնպես, որ երբ Ամադիկիան տեսավ, որ նա չէր կարող ստիպել Լեքոնտիին ներքև իջնել լեռից, նա բարձրացավ լեռը, գրեթե Լեքոնտիի ճամբարին մոտ. և նա կրկին՝ չորրորդ անգամ ուղարկեց իր լուրը՝ Լեքոնտիին, ցանկանալով, որ նա ներքև գա, և որ նա բերի իր պահակախումբն իր հետ:

13 Եվ եղավ այնպես, որ երբ Լեքոնտին եկավ ներքև իր պահակախմբի հետ Ամադիկիայի մոտ, Ամադիկիան ցանկացավ, որ նա զար ներքև իր զորքի հետ գիշերվա ժամին, և շրջապատեր այն մարդկանց, իրենց ճամբարներում, որոնց վրա թագավորն իրեն էր տվել հրամանատարությունը, և որ նա կհանձներ նրանց Լեքոնտիի

ձեռքը, եթե նա դարձներ նրան (Ամադիկիային) երկրորդ առաջնորդ ամբողջ բանակի վրա:

14 Եվ եղավ այնպես, որ Լեքոնտին եկավ ներքև իր մարդկանց հետ, և շրջապատեց Ամադիկիայի մարդկանց, այնպես որ օրվա լուսաբացին՝ նախքան նրանց արթնանալը, նրանք շրջապատված էին Լեքոնտիի զորքերի կողմից:

15 Եվ եղավ այնպես, որ երբ նրանք տեսան, որ իրենք շրջապատված էին, նրանք աղերսեցին Ամադիկիային, որ նա թույլ տար իրենց միանալ իրենց եղբայրների հետ, որ չկործանվեն: Արդ այս հենց այն էր, ինչ ցանկանում էր Ամադիկիան:

16 Եվ եղավ այնպես, որ նա հանձնեց իր մարդկանց, “հակառակ թագավորի հրամաններին: Արդ, այս այն էր, ինչ Ամադիկիան ցանկանում էր, որ նա կարողանար իրագործել թագավորին գահազրկելու իր ծրագրերը:

17 Արդ, Լամանացիների մեջ սովորույթ էր, եթե իրենց գլխավոր առաջնորդը սպանվում էր, նշանակել երկրորդ առաջնորդին՝ լինելու իրենց գլխավոր առաջնորդը:

18 Եվ եղավ այնպես, որ Ամադիկիան կարգադրեց, որ իր ծառաներից մեկն աստիճանաբար թույն տար Լեքոնտիին, որպեսզի նա մեռներ:

19 Արդ, երբ Լեքոնտին մեռավ, Լամանացիները նշանակեցին Ամադիկիային՝ լինելու իրենց առաջնորդը և իրենց գլխավոր հրամանատարը:

20 Եվ եղավ այնպես, որ Ամադիկիան արշավեց իր զորքերի հետ (քանզի նա հասել էր իր իղձերին)

դեպի Նեփիի երկիրը, դեպի Նեփիի քաղաքը, որը գլխավոր քաղաքն էր:

21 Եվ թագավորը դուրս եկավ դիմավորելու նրանց իր պահակախմբի հետ, քանզի նա ենթադրեց, որ Ամադիկիան կատարել էր իր հրամանները, և որ Ամադիկիան ի մի էր հավաքել այդպիսի մեծ մի բանակ՝ գնալու Նեփիացիների դեմ ճակատամարտելու:

22 Բայց ահա, երբ թագավորը դուրս եկավ՝ դիմավորելու նրան, Ամադիկիան կարգադրեց, որ իր ծառաներն առաջ գնան՝ դիմավորելու թագավորին: Եվ նրանք գնացին և խոնարհվեցին թագավորի առաջ, իբր թե մեծարելու նրան՝ իր մեծության համար:

23 Եվ եղավ այնպես, որ թագավորն առաջ պարզեց իր ձեռքը՝ բարձրացնելու նրանց, ինչպես սովորույթն էր Լամանացիների մեջ, ի նշան խաղաղության, սովորույթ, որը նրանք վերցրել էին Նեփիացիներից:

24 Եվ եղավ այնպես, որ երբ նա բարձրացրեց առաջինին գետնից, ահա, նա դանակահարեց թագավորին՝ մինչև սիրտը. և նա ընկավ գետնին:

25 Արդ, թագավորի ծառաները փախան. և Ամադիկիայի ծառաները մի աղաղակ բարձրացրեցին՝ ասելով.

26 Տեսեք, թագավորի ծառաները դանակահարել են նրան՝ մինչև սիրտը, և նա ընկել է, և նրանք փախան. ահա, եկեք ու տեսեք:

27 Եվ եղավ այնպես, որ Ամադիկիան հրամայեց, որ իր զորքերն արշավեն առաջ և տեսնեն, թե ինչ է պատահել թագավորին. և երբ

նրանք եկան այդ տեղը, և գտան քազավորին՝ պառկած իր արյան մեջ, Ամադիկիան ձևացրեց, թե գայրացած էր և ասաց. Ով որ սիրում է քազավորին, թող նա առաջ գա, և հետապնդի նրա ծառաներին, որ նրանք սպանվեն:

28 Եվ եղավ այնպես, որ բոլոր նրանք, ովքեր սիրում էին քազավորին, երբ նրանք լսեցին այս խոսքերը, առաջ եկան և հետապնդեցին քազավորի ծառաներին:

29 Այժմ, երբ քազավորի ծառաները տեսան իրենց ետևից՝ հետապնդող մի գործք, նրանք կրկին վախեցան, և փախան անապատ, և եկան Չարահեմվայի երկիրն ու միացան Ամնոնի՝ ժողովրդին:

30 Եվ գորքը, որը նրանց ետևից հետապնդում էր, վերադարձավ նրանց ետևից գուր հետապնդած լինելով. և այսպիսով Ամադիկիան, իր խարդախությամբ, շահեց մարդկանց սրտերը:

31 Եվ եղավ այնպես, որ հաջորդ օրը նա մտավ Նեփիի քաղաքն իր գորքերի հետ, և վերցրեց քաղաքի տիրապետությունը:

32 Եվ այժմ եղավ այնպես, որ թագուհին, երբ լսեց, որ քազավորը սպանված էր. քանզի Ամադիկիան մի դեսպանություն էր ուղարկել թագուհու մոտ՝ տեղեկացնելով նրան, որ քազավորը սպանվել էր իր ծառաների կողմից, որ նա հետապնդել էր նրանց իր գորքի հետ, բայց դա գուր էր եղել, և նրանք հաջողել էին իրենց փախուստը,

33 Հետևաբար, երբ թագուհին ստացավ այս լուրը, նա ուղարկեց Ամադիկիայի մոտ՝ կամենալով, որ

նա խնայեր քաղաքի ժողովրդին. և նա նաև կամեցավ, որ նա ներկայանար իրեն. և նա նաև կամեցավ, որ նա բերեր իր հետ ակամատեաներ՝ վկայելու քազավորի մահվան վերաբերյալ:

34 Եվ եղավ այնպես, որ Ամադիկիան վերցրեց նույն ծառային, որ սպանել էր քազավորին, և բոլոր նրանց, ովքեր եղել էին նրա հետ, և զմաց ներս՝ թագուհու մոտ, այն տեղը, որտեղ նա նստում էր. և նրանք բոլորը վկայեցին նրան, որ քազավորը սպանվել էր իր իսկ ծառաների կողմից. և նրանք ասացին նաև. Նրանք փախել են. մի՞թե սա չի վկայում նրանց դեմ: Եվ այսպիսով, նրանք բավարարեցին թագուհուն՝ քազավորի մահվան վերաբերյալ:

35 Եվ եղավ այնպես, որ Ամադիկիան ձեռք բերեց թագուհու համակրանքը, և նրան վերցրեց իրեն կնություն. և այսպիսով, իր խաբեությամբ և իր խորամանկ ծառաների աջակցությամբ, նա ձեռք բերեց քազավորությունը. այո, նա ճանաչվեց քազավոր ողջ երկրով մեկ՝ Լամանացիների ողջ ժողովրդի մեջ, որոնք՝ քաղկացած էին Լամանացիներից և Լեմուելացիներից, Իսմայելացիներից և Նեփիացի բոլոր պառակտիչներից, Նեփիի քազավորումից սկսած՝ ընդհուպ մինչև ներկա ժամանակը:

36 Արդ, այս՝ պառակտիչները, ունենալով Նեփիացիների նույն ուսուցումը և նույն իրազեկությունը, այո, սովորեցված լինելով նույն Քիտելիքով Տիրոջ մասին, այնուամենայնիվ, տարօրինակ է ասել, որ իրենց երկպառակու-

29ա Ալմա 43.11–12:
սու՝ Ամթի-Նեփի-
Լեփիներ:

35ա Հակոբ 1.13–14:
36ա սու՝ Ուրացություն:
բ Եբր. Ժ.26–27,

Ալմա 24.30:

քյուններից ոչ շատ անց նրանք դարձան ավելի կարծրացած և զչզոջացող, և ավելի վայրի, ամբարիշտ և կատաղի, քան Լամանացիները, արբեմալով Լամանացիների ավանդություններով. անճնատուր լինելով ծուլության, և ամեն ձևի հեշտասիրության. այո, լիովին մոռանալով Տիրոջը՝ իրենց Աստծուն:

ԳԼՈՒԽ 48

Ամադիկիան հրահրում է Լամանացիներին Նեփիացիների դեմ – Մորոնին պատրաստում է իր ժողովրդին պաշտպանելու Քրիստոնյաների գործը – Նա ցնծում է անկախությանը ու ազատությանը և Աստծո մի գորեղ մարդ է: Մոռ 72թ. Ք.ծ.ա.:

Ես այժմ, եղավ այնպես, որ հենց որ Ամադիկիան ձեռք բերեց թագավորությունը, նա սկսեց ոգեշնչել Լամանացիների սրտերը Նեփիի ժողովրդի դեմ. այո, նա նշանակեց մարդկանց խոսելու իրենց աշտարակներից Լամանացիների հետ՝ Նեփիացիների դեմ:

2 Եվ այսպես, նա ոգեշնչեց նրանց սրտերը Նեփիացիների դեմ, այնպես որ դատավորների կառավարման տասնիններորդ տարվա վերջում, նա՝ իրագործած լինելով իր ծրագրերն այդքանով, այո, դարձած լինելով թագավոր Լամանացիների վրա, նա ձգտում էր նաև թագավորել ողջ երկրի վրա, այո, և ողջ ժողովրդի, ովքեր երկրում էին, ինչպես Նեփիացիների, այնպես էլ Լամանացիների:

3 Հետևաբար, նա իրագործել էր

իր ծրագրերը, քանզի նա կարծրացրել էր Լամանացիների սրտերը և կուրացրել էր նրանց մտքերը, և դրդել էր նրանց բարկության, այնպես որ նա ի մի էր հավաքել մի սովոր գորք՝ գնալու ճակատամարտելու Նեփիացիների դեմ:

4 Եվ նա վճռական էր, իր ժողովրդի թվի մեծության պատճառով, հաղթել Նեփիացիներին և բերել նրանց ճորտության:

5 Եվ այսպես, նա՝ գլխավոր գորապետեր նշանակեց Չորամացիներից, նրանք՝ լինելով առավել ծանոթ Նեփիացիների ուժին և նրանց պաշտպանական վայրերին, և նրանց քաղաքների ամենաթույլ մասերին. հետևաբար, նա նշանակեց նրանց՝ լինելու գլխավոր գորապետեր իր գորքերի վրա:

6 Եվ եղավ այնպես, որ նրանք վերցրեցին իրենց ճամբարը, և առաջ շարժվեցին անապատով՝ Չարահեմլայի երկրի ուղղությամբ:

7 Արդ, եղավ այնպես, որ մինչ Ամադիկիան այսպես ձեռք էր բերում իշխանություն խաբեության ու ստի միջոցով, մյուս կողմից Մորոնին՝ պատրաստում էր ժողովրդի միաքը՝ հավատարիմ լինելու Տիրոջը՝ իրենց Աստծուն:

8 Այո, նա ուժեղացնում էր Նեփիացիների գորքերը և բարձրացնում փոքր ամրոցներ, կամ պաշտպանական վայրեր՝ հողապատնեշներ գցելով իր գորքերի շուրջը շուրջը, շրջապատելու համար, և նաև կառուցելով քարե պատեր, օղակելու համար նրանց շուրջը, իրենց քաղաքների շուրջը շուրջը, իրենց երկրամասերի սահմանները. այո, երկրի շուրջը շուրջը:

9 Եվ իրենց ամենաքույլ ամրոցներում նա դրեց մարդկանց ավելի մեծ թիվ. և այսպես նա ամրացրեց ու ուժեղացրեց երկիրը, որը պատկանում էր Նեփիացիներին:

10 Եվ այսպես, նա նախապատրաստվում էր ^ապաշտպանել իրենց ազատությունը, իրենց հողերը, իրենց կանանց և իրենց երեխաներին, և իրենց խաղաղությունը, և որ նրանք կարողանային ապրել Տիրոջ՝ իրենց Աստծո համար, և որ նրանք կարողանային պահպանել այն, ինչը նրանց թշնամիների կողմից կոչվում էր Քրիստոնյաների գործ:

11 Եվ Մորոնին մի ուժեղ և գորեղ մարդ էր. նա կատարյալ ^ահասկացողության տեր մարդ էր. այո, մարդ, որը չէր հրճվում արյունահեղությամբ. մարդ, որի հոգին ցնձում էր իր երկրի և իր եղբայրների անկախության ու ազատության համար, և իր եղբայրների ճորտությունից ու ստրկությունից դուրս գալու համար:

12 Այո, մարդ, որի սիրտը լցվում էր գոհությամբ առ իր Աստված, այն բազում արտոնությունների և օրհնությունների համար, որոնք նա պարգևում էր իր ժողովրդին. մարդ, որը տքնում էր չափից դուրս՝ իր ժողովրդի ^աբարօրության ու ապահովության համար:

13 Այո, և նա մի մարդ էր, որը հաստատուն էր Քրիստոսի հավատքում, և նա երդումով ^աերդվել էր պաշտպանել իր ժողովրդին, նրա իրավունքները և նրա երկիրը և նրա կրոնը՝ մինչև իսկ իր արյան գնով:

14 Արդ, Նեփիացիներն ուսուցանվում էին պաշտպանվել իրենց թշնամիներից՝ մինչև և անգամ արյուն թափելով, եթե դա անհրաժեշտ էր. այո, և նրանց նաև սովորեցվում էր ^աերբեք վիրավորանք չհասցնել, այո, և երբեք չբարձրացնել սուրը, բացառությամբ թշնամու դեմ, բացառությամբ իրենց կյանքը պահպանելու համար:

15 Եվ սա էր նրանց հավատքը, որ այսպես վարվելու միջոցով Աստված կբարգավաճեցներ նրանց այդ երկրում, կամ, այլ խոսքով, եթե նրանք հավատարիմ լինեին Աստծո պատվիրանները պահելիս, որ նա նրանց կբարգավաճեցներ երկրում. այո՞, կնախագուշացներ նրանց փախչել, կամ նախապատրաստվել պատերազմի՝ համաձայն իրենց սպասվող վտանգի.

16 Եվ նաև, որ Աստված հայտնի կդարձներ նրանց, թե ուր պիտի իրենք գնային իրենց թշնամիներից պաշտպանվելու համար, և այդպես անելով, Տերը կազատեր նրանց. և սա Մորոնիի հավատքն էր, և նրա սիրտը հրճվում էր դրանով. ^աոչ թե արյուն թափելով, այլ բարին անելով՝ իր ժողովրդին պահպանելով, այո, Աստծո պատվիրանները պահելով, այո, և անօրինությանը դիմակայելով:

17 Այո, ճշմարիտ, ճշմարիտ են ասում ձեզ, եթե բոլոր մարդիկ եղած լինեին, և մնային, և երբևէ լինեին Մորոնիի մասն, ահա, նույնիսկ դժոխքի գորությունները հավիտյան կսասանվեին. այո, ^ադևը

10ա Ալմա 46.12–13:
11ա սո՛ւ Հասկանալ:
12ա սո՛ւ Բարօրություն:
13ա Ալմա 46.20–22:

14ա Ալմա 43.46–47,
3 Նեփի 3.20–21,
Մորմ. 3.10–11,
ՎևոՒ 98.16:

16ա Ալմա 55.19:
17ա 1 Նեփի 22.26,
3 Նեփի 6.15:

երբեք զորութիւն չէր ունենա մարդկանց զավակների սրտերի վրա:

18 Ահա, նա մի մարդ էր նման Ամոնին՝ Մոսիայի որդուն, այո, և նույնիսկ Մոսիայի մյուս որդիներին, այո, և նաև Ալմային և նրա որդիներին, քանզի նրանք բոլորն Աստծո մարդիկ էին:

19 Եվ ահա, Հելամանը և նրա եղբայրները ոչ պակաս պիտանի էին ժողովրդի համար, քան Մորոնին էր. քանզի նրանք քարոզում էին Աստծո խոսքը, և նրանք մկրտում էին ապաշխարութեան համար բոլոր մարդկանց, ովքեր կամենում էին ականջ դնել իրենց խոսքերին:

20 Եվ այսպես, նրանք առաջ գնացին, և ժողովուրդն իրեն ախնարհեցրեց նրանց խոսքերի շնորհիվ, այնպես որ նրանք մեծապես շնորհակալուրդում էին Տիրոջից, և այսպես, նրանք զերծ էին պատերազմներից ու հակառակութիւններից իրենց մեջ, այո, նույնիսկ չորս տարիների ընթացքում:

21 Բայց ինչպես ես ասացի, տասնիններորդ տարվա ուշ վերջին, այո, չնայած խաղաղութեան իրենց միջև, նրանք պարտադրվեցին կռուելու, դժկամութեամբ, իրենց եղբայրների՝ Լամանացիների հետ:

22 Այո, և ի վերջո, շատ տարիների ընթացքում, չնայած նրանց մեծ դժկամութեանը, նրանց պատերազմները Լամանացիների հետ երբեք չդադարեցին:

23 Այժմ նրանք սցավում էին՝ Լամանացիների դեմ զենք վերցնելու համար, որովհետև նրանք չէին հրճվում արյուն քափելուով. այո, և

այս բոլորը չէր, նրանք ցավում էին իրենց եղբայրներից այնքան շատերին այս աշխարհից դուրս՝ հավերժական աշխարհ ուղարկելու, իրենց Աստծուն անպատրաստ հանդիպելու միջոցը լինելու համար:

24 Այնուամենայնիվ, նրանք չէին կարող թույլ տալ վայր դնել իրենց կյանքը, այնպես որ իրենց պակասք, և իրենց զավակները կոտորվեին վայրագ դաժանութեամբ նրանց, ովքեր մի ժամանակ իրենց եղբայրներն էին, այո, և Վառակտվել էին իրենց եկեղեցուց և լքել էին իրենց, և գնացել էին կործանելու իրենց՝ միանալով Լամանացիներին:

25 Այո, նրանք չէին կարող հանդուրժել, որ իրենց եղբայրները հրճվեին Նեփիացիների արյամբ, քանի դեռ կար մեկը, որը կպահեր Աստծո պատվիրանները, քանզի Տիրոջ խոստումն էր՝ եթե նրանք պահեին իր պատվիրանները, նրանք պիտի բարգավաճեին երկրում:

ԳԼՈՒԽ 49

Ներխուժող Լամանացիներն անկարող են վերցնել ամրացված Ամոնիա և Նոյ քաղաքները – Ամադիկիան անիծում է Աստծուն և երդվում է խնել Մորոնիի արյունը – Հելամանը և նրա եղբայրները շարունակում են զորացնել եկեղեցին: Մոտ 72թ. Ք.ծ.ա.:

ԵՎ այժմ, եղավ այնպես, տասնիններորդ տարվա տասնմեկերորդ ամսում, ամսի տասներորդ օրը, Լամանացիների զորքերը նշմար-

20ա սո՛Ւ Խոնարի, Խոնարիություն:

բ 1 Նեփի 17.35: 23ա Վև.ՈՒ 42.45:

24ա Ալմա 46.12: բ սո՛Ւ Ուրացություն:

վեցին Ամմոնիա երկրին մոտեցնալիս:

2 Եվ ահա, քաղաքը վերակառուցվել էր, և Մորոնին տեղադրել էր մի գորք քաղաքի սահմանների մոտ, և նրանք հող էին հանել շուրջ բոլորը՝ Լամանացիների նետերից ու քարերից իրենց պաշտպանելու համար. քանզի ահա, նրանք կոչվում էին քարերով ու նետերով:

3 Ահա, ես ասացի, որ՝ «Ամմոնիա քաղաքը վերակառուցվել էր: Ես ասում եմ ձեզ, այո, որ այն մասամբ էր վերակառուցվել. և քանի որ Լամանացիներն ավերել էին այն մի անգամ, ժողովրդի անօրինության պատճառով, նրանք կարծում էին, որ այն նորից կդառնար մի հեշտ ավար իրենց համար:

4 Բայց ահա, որքա՛ն մեծ էր նրանց հիասթափությունը. քանզի ահա, Նեփիացիները փորել հանել էին մի հողե եզրապատ, իրենց շուրջ բոլորը, որն այնքան բարձր էր, որ Լամանացիները չէին կարողանում նետել իրենց քարերը և իրենց նետերը նրանց վրա, որ նրանք կարողանային արդյունքի հասնել, ոչ էլ նրանք կարողանում էին գալ նրանց վրա, բացի նրանց մուտքի մասից:

5 Արդ, այս անգամ Լամանացիների գլխավոր զորապետերն անչափ ապշած էին մնացել իրենց համար պաշտպանության տեղեր պատրաստելու Նեփիացիների իմաստության պատճառով:

6 Արդ, Լամանացիների առաջնորդները ենթադրել էին, իրենց թվի մեծության հետևանքով, այո, նրանք ենթադրել էին, որ իրենք առավելություն պիտի ունենային գալով նրանց վրա, ինչպես նրանք

արել էին մինչ այդ. այո, և նրանք նաև նախապատրաստվել էին վահաններով, և լանջապանակներով. և նրանք նաև նախապատրաստվել էին կաշվե հանդերձներով, այո, շատ հաստ հանդերձներով՝ ծածկելու իրենց մերկությունը:

7 Եվ լինելով այսպես նախապատրաստված՝ նրանք կարծում էին, որ իրենք պիտի հեշտորեն հաղթեին ու ենթարկեին իրենց եղբայրներին ճորտության լծին, կամ սպանեին ու կոտորեին նրանց՝ ըստ իրենց հաճույքի:

8 Բայց ահա, ի մեծագույն զարմանս իրենց, նրանք՝ «նախապատրաստված էին իրենց համար, մի ձևով, որը երբեք հայտնի չէր եղել Լեքիի զավակների մեջ: Արդ նրանք նախապատրաստվել էին, Լամանացիների դեմ ճակատամարտելու, ըստ Մորոնիի ցուցմունքների:

9 Եվ եղավ այնպես, որ Լամանացիները կամ Ամադիկիացիները, անչափ ապշած էին պատերազմի համար նրանց նախապատրաստության ձևի վրա:

10 Արդ, եթե թագավոր Ամադիկիան՝ իր գորքի գլուխն անցած, վար եկած լիներ Նեփիի՝ «երկրից, միզուցե նա կարգադրեր Լամանացիներին՝ հարձակվել Նեփիացիների վրա Ամմոնիա քաղաքում. քանզի ահա, նա չէր մտահոգվում իր ժողովրդի արյան համար:

11 Բայց ահա, Ամադիկիան ինքը վար չէր եկել ճակատամարտելու: Եվ ահա, նրա գլխավոր զորապետերը չհամարձակվեցին Նեփիացիների վրա հարձակվել՝ Ամմոնիա քաղաքում, քանզի Մորոնին վերափոխել էր գործերի վարումը

Նեփիացիների մեջ, այնպես որ Լամանացիները հուսախափված էին նրանց ապաստարանների պատճառով, և նրանք չէին կարողանում գալ նրանց վրա:

12 Հետևաբար, նրանք նահանջեցին դեպի անապատի խորքը, և վերցրեցին իրենց ճամբարն ու արշավեցին դեպի Նոյի երկիրը՝ կարծելով, դա էր մյուս լավագույն տեղն իրենց համար՝ գալու Նեփիացիների դեմ:

13 Քանզի նրանք չգիտեին, որ Մորոնիին ամրացրել էր կամ կառուցել էր ^ապաշտպանական ամրոցներ, ամեն քաղաքի համար՝ շրջակա ողջ երկրով. հետևաբար, նրանք արշավեցին առաջ՝ դեպի Նոյի երկիրը, մի հաստատ վճռականությամբ. այո, նրանց գլխավոր զորապետերն առաջ եկան և երդում տվեցին, որ իրենք կոչընչացնեն այդ քաղաքի ժողովրդին:

14 Բայց ահա, ի զարմանս իրենց, Նոյի քաղաքը, որը մինչ այդ եղել էր մի թույլ վայր, այժմ, Մորոնիի միջոցով, դարձել էր ուժեղ, այո, նույնիսկ գերազանցելով Ամմոնիա քաղաքի ուժը:

15 Եվ այժմ, ահա, այս Մորոնիի իմաստությանը էր. քանզի նա կռահել էր, որ նրանք կվախենալին Ամմոնիա քաղաքից. և քանի որ Նոյի քաղաքը մինչ այդ եղել էր երկրի ամենաթույլ մասը, հետևաբար նրանք կարշավեին այնտեղ ճակատամարտելու. և այսպես, դա ըստ նրա ցանկության էր:

16 Եվ ահա, Մորոնիին նշանակել էր Լեքիին՝ լինելու գլխավոր զորապետ այդ քաղաքի մարդկանց վրա. և դա այն ^անույն Լեքին էր, որը կռվել էր Լամանացիների հետ

Սիդոն գետի արևելյան կողմի հովտում:

17 Եվ այժմ ահա, եղավ այնպես, որ երբ Լամանացիները պարզեցին, որ Լեքին էր հրամանատարություն անում քաղաքում, նրանք կրկին հուսախաբվեցին, քանզի նրանք սաստիկ վախենում էին Լեքիից. այնուամենայնիվ, նրանց գլխավոր զորապետերը երդվել էին՝ երդումով գրոհել քաղաքը. հետևաբար, նրանք մոտ բերեցին իրենց զորքերը:

18 Այժմ ահա, Լամանացիները չէին կարողանում մտնել նրանց պաշտպանական ամրոցները որևէ այլ ճանապարհով, բացի մուտքից, հողապատնեշի բարձրության պատճառով, որը բարձրացվել էր, և խանդակի խորության, որը փորվել էր շուրջ բոլորը, բացի մուտքից:

19 Եվ այսպես էին Նեփիացիները պատրաստվել՝ ոչնչացնելու բոլոր նրանց, ովքեր կփորձեին մագլցել վեր՝ մտնելու ամրոցը որևէ այլ ճանապարհով՝ քարեր և նետեր զցելով նրանց վրա:

20 Այսպես էին նրանք նախապատրաստվել, այո, նրանց ամենաուժեղ մարդկանցից մի խումբ, իրենց սրերով և իրենց պարսատիկներով՝ վայր զարկելու բոլորին, որ կփորձեին գալ ներս՝ իրենց պաշտպանության տեղը, մուտքի մասով. և այսպես էին նրանք պատրաստվել՝ Լամանացիներից պաշտպանվելու համար:

21 Եվ եղավ այնպես, որ Լամանացիների զորապետերը մոտ բերեցին իրենց զորքերը մուտքի մասի առջև, և սկսեցին կռվել Նեփիացիների հետ՝ մտնելու նրանց

պաշտպանության վայրը. բայց, ահա, նրանք ետ մղվեցին ժամանակ առ ժամանակ, այնպես որ նրանք կոտորվեցին մի առեւի կոտորածով:

22 Այժմ, երբ նրանք պարզեցին, որ իրենք չէին կարող ձեռք բերել իշխանություն Նեփիացիների վրա անցումի միջով, նրանք սկսեցին փորել նրանց հողապատնեշները, որ կարողանային ձեռք բերել մի անցուղի՝ դեպի նրանց գորքերը, որ ունենային հավասար հնարավորություն կռվելու. բայց ահա, այս փորձերի ընթացքում նրանք ոչնչացվեցին քարերով ու նետերով, որոնք գցվում էին նրանց վրա. և նրանց խանդակները, փոխանակ լցվելու քանդվող հողապատնեշներով, որոշ չափով դրանք լցվեցին նրանց մեռած կամ վիրավոր մարմիններով:

23 Այսպիսով, Նեփիացիներն ունեին ողջ իշխանությունն իրենց թշնամիների վրա. և այսպես Լամանացիները փորձեցին կործանել Նեփիացիներին, մինչև որ նրանց գլխավոր զորապետերից բոլորը սպանվեցին. այո, և Լամանացիներից ավելի քան հազարը սպանվեցին. մինչդեռ, մյուս կողմից Նեփիացիներից ոչ մի հոգի չկար, որ սպանված լիներ:

24 Կային մոտ հիսունը, ովքեր վիրավոր էին, ովքեր եղել էին Լամանացիների նետերի տակ՝ անցումի միջով, բայց նրանք պաշտպանված էին իրենց վահաններով և իրենց լանջապանակներով և իրենց սաղավարտներով, այնպես որ նրանց վերքերն իրենց ոտքերի վրա էին, որոնց մեծ մասը շատ ծանր էին:

25 Եվ եղավ այնպես, որ երբ Լամանացիները տեսան, որ իրենց գլխավոր զորապետերը բոլորը սպանված էին, նրանք փախան անապատ: Եվ եղավ այնպես, որ նրանք վերադարձան Նեփիի երկիրը՝ իրենց մեծ կորստի մասին տեղեկացնելու իրենց թագավոր Ամադիկիային, որը ծագումով Նեփիացի էր:

26 Եվ եղավ այնպես, որ նա սաստիկ բարկացավ իր մարդկանց վրա, որովհետև նա չէր հասել իր իղձին՝ Նեփիացիների վրա. նա չէր ենթարկել նրանց ճորտության լծին:

27 Այո, նա խիստ զայրացած էր, և նա «անհիծում էր Աստծուն և նաև Մորոնիին, ՚երդումով երդվելով, որ խմելու է նրա արյունը. և դա՝ որովհետև Մորոնին պահել էր Աստծո պատվիրանները, նախապատրաստվելով իր ժողովրդի անվտանգության համար:

28 Եվ եղավ այնպես, որ մյուս կողմից Նեփիի ժողովուրդը «գոհություն էր հայտնում Տիրոջը՝ իրենց Աստծուն, իրենց թշնամիների ձեռքից իրենց ազատելում նրա անգուզական գործության համար:

29 Եվ այսպես, ավարտվեց Նեփիի ժողովրդի վրա դատավորների կառավարման տասնիններորդ տարին:

30 Այո, և նրանց մեջ տիրում էր անընդհատ խաղաղություն, իսկ եկեղեցում՝ շատ մեծ բարգավաճում, իրենց ուշադրության և ջանասիրության հետևանքով, որը նրանք ցուցաբերում էին Աստծո խոսքի հանդեպ, որը հայտարարվում էր նրանց՝ Հելամանի, և Սիրլոնի, և Կորիանթոնի, և Ամմոնի ու

27ա սուր Հայհոյել, Հայհոյանք:

բ Գոր. ԻԳ.12: 28ա սուր Շնորհակալ,

Շնորհակալություն, Գոհաբանություն:

նրա եղբայրների կողմից, այո, և բոլոր նրանց կողմից, ովքեր կարգվել էին Աստծո Մսուրբ կարգով՝ մկրտված լինելով ապաշխարության համար, և ուղարկված առաջ՝ քարոզելու ժողովրդի մեջ:

ԳԼՈՒԽ 50

Մորոնիմ ամրացնում է Նեփիացիների հողերը – Նրանք կառուցում են շատ նոր քաղաքներ – Պատերազմներ և ավերումներ են տեղի ունենում Նեփիացիների հետ իրենց ամբարշտության և պղծությունների օրերում – Մորիանթոնը և նրա պառակտիչները պարտվում են Թեանկումի կողմից – Նեփիան մեռնում է, և նրա որդին Պատրանը, զբաղեցնում է դատավորական արժույթը: Մոտ 72–67թթ. Ք.ծ.ա.:

Ես այժմ, եղավ այնպես, որ Մորոնիմ չդադարեց պատերազմի համար նախապատրաստություններ տեսնելը, կամ իր ժողովրդին պաշտպանելն ընդդեմ Լամանացիների. քանզի նա կարգադրեց, որ իր զորքերը սկսեն, դատավորների կառավարման քսաներորդ տարվա սկզբին, որ նրանք սկսեն փորել-հանել հողակույտեր՝ բոլոր քաղաքների շուրջբոլորը ողջ երկրով մեկ, որը պատկանում էր Նեփիացիներին:

2 Եվ այս հողե եզրաթմբերի գազաթին, նա կարգադրեց, որ հեծաններ լինեն, այո, հեծաններից մարդու հասակի բարձրության կառույցներ սարքվեն քաղաքների շուրջբոլորը:

3 Եվ նա կարգադրեց, որ հեծաններից այդ կառույցների վրա, մի

ցցաշարք կառուցված լինի՝ հեծանների շուրջբոլորը. և դրանք ամուր էին ու բարձր:

4 Եվ նա կարգադրեց, որ աշտարակներ կանգնեցվեն, որոնք կխոյանան ցցաշարի կառույցներից վեր, և նա կարգադրեց, որ պաշտպանական տեղեր կառուցվեն այդ աշտարակների վրա, որ Լամանացիների քարերն ու նետերը չկարողանան վնասել իրենց:

5 Եվ նրանք նախապատրաստված էին, որ կարողանային քարեր նետել դրանց գագաթից, ըստ իրենց ցանկության և իրենց ուժի, և սպանեն նրան, ով կփորձեր մոտենալ քաղաքի պատերին մոտիկ:

6 Այսպես, Մորոնիմ բերդեր պատրաստեց իրենց թշնամիների գալու դեմ՝ ամեն մի քաղաքի շուրջ բոլորը, ողջ երկրում:

7 Եվ եղավ այնպես, որ Մորոնիմ կարգադրեց, որ իր զորքերն առաջ գան դեպի արևելյան անապատը. այո, և նրանք առաջ գնացին և թշեցին բոլոր Լամանացիներին, ովքեր արևելյան անապատում էին՝ դեպի իրենց սեփական հողերը, որոնք Չարահեմլայի երկրից հարավ էին:

8 Եվ Նեփիի երկիրը ձգվում էր ուղիղ գծով արևելյան ծովից մինչև արևմտյանը:

9 Եվ եղավ այնպես, որ երբ Մորոնիմ դուրս թշեց բոլոր Լամանացիներին արևելյան անապատից, որը նրանց սեփական տիրապետության հողերից հյուսիս էր, նա կարգադրեց, որ բնակիչները, ովքեր Չարահեմլայի հողում էին և շրջակա երկրում, առաջ գնան դեպի արևելյան անապատը, նույ-

նիսկ մինչև ծովափին մոտ սահմանները, և տիրեն երկրին:

10 Եվ նա նաև գորքեր դրեց հարավում, իրենց տիրույթների սահմանների վրա, և կարգադրեց նրանց կառուցել «ամրություններ, որ իրենք կարողանան պաշտպանել իրենց գորքերը և իրենց ժողովրդին, իրենց թշնամիների ձեռքից:

11 Եվ այսպես, նա վերացրեց Լամանացիների բոլոր բերդերն արևելյան անապատում, այո, և նաև արևմուտքում, ամրացնելով զիծը Նեփիացիների ու Լամանացիների միջև, Չարահեմլայի երկրի և Նեփիի երկրի միջև, արևմուտյան ծովից տարածվելով Սիդոն գետի ակունքով, Նեփիացիները տիրելով ըստ իրենց ցանկության հյուսիսային կողմի ողջ երկրին, այո, նույնիսկ ողջ երկրին, որը Լիառատ երկրից հյուսիս էր:

12 Այսպիսով Մորոնին, իր գորքերի հետ, որոնք օրեցօր ավելանում էին՝ պաշտպանվածության վստահության պատճառով, որն առաջ էին բերում նրա գործերը՝ իրենց համար, ջանում էր վերացնել Լամանացիների ուժն ու իշխանությունն իրենց տիրապետության հողերից, որ նրանք իշխանություն չունենային իրենց տիրապետության հողերի վրա:

13 Եվ եղավ այնպես, որ Նեփիացիները սկսեցին մի քաղաքի հիմնադրումը, և նրանք կոչեցին քաղաքի անունը Մորոնի. և այն արևելյան ծովի մոտ էր. և այն հարավում էր՝ մոտիկ Լամանացիների տիրույթների գծին:

14 Եվ նրանք նաև սկսեցին հիմնադրումը մի քաղաքի՝ Մորոնիի

քաղաքի ու Ահարոնի քաղաքի միջև, միացնելով Ահարոնի ու Մորոնիի սահմանները. և նրանք կոչեցին քաղաքի, կամ երկրի անունը Նեփիա:

15 Եվ նրանք նաև սկսեցին նույն տարում կառուցել բազմաթիվ քաղաքներ հյուսիսում, դրանցից մեկը մի առանձնահատուկ ձևով, որը նրանք կոչեցին Լեքի, որը հյուսիսում էր՝ ծովափի սահմաններին մոտ:

16 Եվ այսպես ավարտվեց քանդակարտ տարին:

17 Եվ այս բարգավաճ պայմաններում էր Նեփիի ժողովուրդը, Նեփիի ժողովրդի վրա դատավորների կառավարման քսանամեկերորդ տարվա սկզբին:

18 Եվ նրանք անչափ բարգավաճեցին, և նրանք դարձան չափազանց հարուստ. այո, և նրանք բազմացան ու գորացան երկրում:

19 Եվ այսպես, մենք տեսնում ենք, թե որքան ողորմած ու արդար են Տիրոջ բոլոր գործերը՝ ի իրագործումն բոլոր իր խոսքերի, մարդկանց զավակների համար. այո, մենք կարող ենք տեսնել՝ հենց այս պահին, որ հաստատվում են նրա խոսքերը, որոնք նա խոսել էր Լեքիի հետ՝ ասելով.

20 Օրհնված ես դու և քո զավակները. և նրանք պիտի օրհնվեն, որքան որ նրանք կպահեն իմ պատվիրանները, նրանք կբարգավաճեն երկրում: Բայց հիշիր, որքան որ նրանք չեն պահի իմ պատվիրանները, նրանք «կկտրվեն Տիրոջ ներկայությունից:

21 Եվ մենք տեսնում ենք, որ այս խոստումները հաստատվեցին՝ Նեփիի ժողովրդի համար. քանզի

դա նրանց վիճաբանություններն ու հակառակություններն էին, այո, նրանց սպանությունները և նրանց թալանները, նրանց կռապաշտությունը, նրանց պոռնկությունները և նրանց պղծությունները, որոնք կային նրանց մեջ, որ բերում էին նրանց վրա իրենց պատերազմներն ու իրենց կործանումները:

22 Եվ նրանք, ովքեր հավատարիմ պահում էին Տիրոջ պատվիրանները, ազատվում էին բոլոր ժամանակներում, մինչդեռ նրանց ամբարիշտ եղբայրներից հազարավորները դատապարտվում էին ճորտության, կամ սրից կոտորվելու, կամ անհավատության մեջ ընկնելու, և խառնվում էին Լամանացիներին:

23 Բայց ահա, երբեք չէր եղել ավելի՛ «երջանիկ ժամանակ Նեփիի ժողովրդի մեջ՝ սկսած Նեփիի օրերից, քան Մորոնիի օրոք, այո, հենց այդ ժամանակ՝ դատավորների կառավարման քսանհինգերորդ տարում:

24 Եվ եղավ այնպես, որ դատավորների կառավարման քսանհինգերորդ տարին նույնպես ավարտվեց խաղաղության մեջ. այո, և նմանապես՝ քսանհինգերորդ տարին:

25 Եվ եղավ այնպես, որ դատավորների կառավարման քսանհինգերորդ տարվա սկզբին, նույնպես կլինեք խաղաղություն Նեփիի ժողովրդի մեջ, եթե չլինեք մի՛ «կռիվ, որը տեղի ունեցավ նրանց միջև՝ Լեքիի երկրի առնչությամբ, և Մորիանթոնի երկրի, որը միանում էր Լեքիի սահմաններին. որոնք երկուսն էլ սահմանակից էին ծովափին:

26 Քանզի ահա, ժողովուրդը, որը տիրում էր Մորիանթոնի երկրին, պահանջեց Լեքիի երկրի մի մասը. հետևաբար, սկսվեց մի թեժ կռիվ նրանց միջև, այնպես որ Մորիանթոնի մարդիկ զենք վերցրեցին իրենց եղբայրների դեմ, և նրանք վճռել էին սրով սպանել նրանց:

27 Բայց ահա, ժողովուրդը, որը տիրում էր Լեքիի երկրին, փախավ Մորոնիի ճամբարը և դիմեց նրան՝ օգնության համար. քանզի, ահա, նրանք սխալ չէին:

28 Եվ եղավ այնպես, որ երբ Մորիանթոնի մարդիկ, որոնք առաջնորդվում էին մի մարդու կողմից, որի անունը Մորիանթոն էր, իմացան, որ Լեքիի ժողովուրդը փախել էր Մորոնիի ճամբարը, նրանք սաստիկ վախեցան, չլինեք թե Մորոնիի բանակը գար իրենց վրա ու կործաներ իրենց:

29 Հետևաբար, Մորիանթոնը դրեց նրանց սրտերում, որ նրանք փախչեն այն երկիրը, որը դեպի հյուսիս էր, որը ծածկված էր ջրի մեծ զանգվածներով, և վերցնեն այն երկրի տիրապետությունը, որը դեպի հյուսիս էր:

30 Եվ ահա, նրանք կհասնեին այս ծրագիրն իրագործման (որը ողբալի հետևանք կունենար), բայց ահա, Մորիանթոնը լինելով մի շատ կատաղի մարդ, հետևաբար, բարկացավ իր սպասուհիներից մեկի վրա, և հարձակվեց նրա վրա ու նրան շատ ծեծեց:

31 Եվ եղավ այնպես, որ նա փախավ և եկավ Մորոնիի ճամբարը, և պատմեց Մորոնիին ամեն ինչ այդ գործի վերաբերյալ, և նաև հյուսիսային կողմի երկիրը փախ-

չելու նրանց մտադրությունների վերաբերյալ:

32 Այժմ ահա, ժողովուրդը, որը գտնվում էր Լիառատ երկրում կամ, ավելի շուտ, Մորոնիս, վախենում էր, որ նրանք ականջ կդնեին Մորիանթոնի խոսքերին և կմիանային նրա մարդկանց, և այսպիսով նա ձեռք կբերեր տիրապետությունը երկրի այն մասերի, որը հիմք կդներ Նեփիի ժողովրդի մեջ լուրջ հետևանքների համար, այո, հետևանքներ, որոնք կբերեին իրենց "ազատության խորտակմանը:

33 Հետևաբար, Մորոնիս ուղարկեց մի զորք՝ իրենց ճամբարով, կասեցնելու Մորիանթոնի մարդկանց, կանգնեցնելու նրանց փախուստը՝ դեպի հյուսիսային կողմի երկիրը:

34 Եվ եղավ այնպես, որ նրանք չկասեցրին նրանց, մինչև նրանք հասան "Ավերակներ երկրի սահմանին. և այնտեղ նրանք կասեցրին նրանց, նեղ անցումի մոտ, որը տանում էր ծովի մոտով՝ հյուսիսային կողմի երկիրը, այո, արևմուտյան և արևելյան ծովի մոտով:

35 Եվ եղավ այնպես, որ զորքը, որն ուղարկվել էր Մորոնիի կողմից, որն առաջնորդվում էր մի մարդու կողմից, որի անունը Թեանկում էր, հանդիպեց Մորիանթոնի մարդկանց. և այնքան համառ էին Մորիանթոնի մարդիկ (իննելով ոգեշնչված նրա ամբարըտությամբ և նրա շողոքորթող խոսքերով), որ մի ճակատամարտ սկսվեց նրանց միջև, որի ժամանակ Թեանկումը սպանեց Մորիանթոնին, և հաղթեց նրա զորքին, և վերցրեց նրանց գերի, և վե-

րադարձավ Մորոնիի ճամբարը: Եվ այսպես, ավարտվեց Նեփիի ժողովրդի վրա դատավորների կառավարման քսանհորսերորդ տարին:

36 Եվ այսպես էին Մորիանթոնի մարդիկ ետ բերվել: Եվ հենց որ նրանք ուխտեցին պահել խաղաղությունը, նրանց վերադարձվեց Մորիանթոնի երկիրը, և մի համերաշխություն հաստատվեց նրանց և Լեքիի ժողովրդի միջև. և նրանց վերադարձվեցին նաև իրենց հողերը:

37 Եվ եղավ այնպես, որ նույն տարում, երբ Նեփիի ժողովուրդն ունեցավ խաղաղությունը վերականգնված իրենց համար, որ Նեփիան՝ երկրորդ գլխավոր դատավորը, մահացավ, զբաղեցրած լինելով դատավորական աթոռը կատարյալ արդարությամբ՝ Աստծո առաջ:

38 Այնուամենայնիվ, նա մերժել էր Ալմային տիրություն անել այն հիշատակարաններին և այն բաներին, որոնք համարվում էին Ալմայի և նրա հայրերի կողմից ամենասրբազանը. ուստի, Ալման տվել էր դրանք իր որդի Հելամանին:

39 Ահա, եղավ այնպես, որ Նեփիայի որդին նշանակվեց՝ զբաղեցնելու դատավորական աթոռը, իր հոր տեղը. այո, նա նշանակվել էր գլխավոր դատավոր և կառավարիչ ժողովրդի վրա՝ երդումով և սրբազան արարողությամբ, դատելու արդարությամբ, և պահպանելու խաղաղությունն ու ազատությունը ժողովրդի, և տալու նրանց իրենց սրբազան արտոնությունները՝ պաշտելու Տիրոջը, իրենց Աստծուն, այո, աջակցելու

և պաշտպանելու Աստծո գործը՝ իր բոլոր օրերում, և բերելու ամբարիշտներին արդարադատության՝ ըստ իրենց հանցանքի:

40 Արդ, ահա, նրա ամունը Պառան էր: Եվ Պառանը զբաղեցրեց իր հոր տեղը, և սկսեց իր կառավարումը Նեփիի ժողովրդի վրա քսանհորսերորդ տարվա վերջում:

ԳԼՈՒԽ 51

Թագավորասերները ջանում են փոխել օրենքը և թագավոր դնել – Պառանը և ազատասերներն աջակցվում են ժողովրդի ձայնով – Մորոնին հարկադրում է թագավորասերներին պաշտպանել իրենց երկիրը, այլապես նրանք մահվան կղատապարտվեն – Ամադիկիան և Լամանացիները գրավում են բազմաթիվ ամրացված քաղաքներ – Թեանկունը ետ է մղում Լամանացիների արշավանքը և սպանում է Ամադիկիային նրա վրանում: Մոտ 67–66թթ. Ք.ծ.ա.:

Եւ արդ, եղավ այնպես, Նեփիի ժողովրդի վրա դատավորների կառավարման քսանհինգերորդ տարվա սկզբին, նրանք՝ հաստատած լինելով խաղաղություն Լեքիի ժողովրդի և Մորիանթոնի ժողովրդի միջև, իրենց հողերի կապակցությամբ, և սկսած լինելով քսանհինգերորդ տարին խաղաղության մեջ.

2 Այնուամենայնիվ, նրանք երկար չպահպանեցին լիակատար խաղաղություն այդ երկրում, քանզի գլխավոր դատավոր Պառանի հետ կապված սկսվեցին հակառակություններ ժողովրդի մեջ. քանզի ահա, ժողովրդի մեջ կար մի մաս, ովքեր ցանկանում էին, որ

օրենքի մի քանի առանձին կետեր փոխվեն:

3 Բայց ահա, Պառանը չէր կամենում փոխել, կամ թույլ տալ օրենքը փոխվեր. հետևաբար, նա սկանջ չարեց նրանց, ովքեր ուղարկել էին իրենց ձայները՝ իրենց խնդրագրերի հետ, օրենքի փոփոխության վերաբերյալ:

4 Հետևաբար, նրանք, ովքեր ցանկանում էին, որ օրենքը փոխվեր, բարկացած էին նրա վրա, և ցանկանում էին, որ նա այլևս գլխավոր դատավոր չլիներ երկրի վրա. հետևաբար, մի թեժ վեճ բարձրացավ այդ հարցի կապակցությամբ, բայց ոչ մինչև արյունահեղություն:

5 Եվ եղավ այնպես, որ նրանք, ովքեր ցանկանում էին, որ Պառանը պաշտոնանկ արվեր դատավորական աթոռից, կոչվեցին թագավորասերներ, քանզի նրանք ցանկանում էին, որ օրենքը փոխվեր այնպես, որ ազատ կառավարումը տապալվեր ու թագավոր հաստատվեր երկրի վրա:

6 Իսկ նրանք, ովքեր ցանկանում էին, որ Պառանը գլխավոր դատավոր մնար երկրի վրա, իրենց վրա վերցրեցին ազատասերներ անունը. և այսպիսին էր բաժանումը նրանց միջև, քանզի ազատասերները երդվել էին, կամ ուխտել՝ պահպանել իրենց իրավունքներն ու իրենց կրոնի արտոնությունները՝ ազատ կառավարման միջոցով:

7 Եվ եղավ այնպես, որ նրանց վիճաբանության այս հարցը կարգավորվեց ժողովրդի ձայնի միջոցով: Եվ եղավ այնպես, որ ժողովրդի ձայնը եկավ ի օգուտ ազատասերների, և Պառանը պահեց դատավորական աթոռը, որն առաջացրեց մեծ ցնծություն

Պատրանի եղբայրների ու նաև ազատության կողմնակիցներից շատերի մեջ, ովքեր նաև լռեցրեցին թագավորասերներին, այնպես որ նրանք չհամարձակվեցին հակառակվել, այլ ստիպված էին պաշտպանել ազատության գործը:

8 Արդ նրանք, ովքեր թագավորների էին կողմնակից, «բարձր ծագում ունեցողներն էին, և նրանք ջանում էին լինել թագավորներ. և նրանք աջակցվում էին նրանց կողմից, ովքեր իշխանություն և իրավունք էին փնտրում ժողովրդի վրա:

9 Բայց ահա, սա մի ճգնաժամային պահ էր Նեփիի ժողովրդի մեջ, այսպիսի հակառակություններ լինելու համար. քանզի ահա, Ամադիկիան նորից դրդել էր Լամանացի ժողովրդի սրտերը Նեփիացի ժողովրդի դեմ, և նա իր երկրի բոլոր մասերից զինվորներ էր հավաքում, և զինում էր նրանց ու պատրաստում պատերազմի՝ ողջ ջանասիրությամբ. քանզի նա «երդվել էր խմել Մորոնիի արյունը:

10 Բայց ահա, մենք կտեսնենք, որ նրա խոստումը, որը նա արել էր՝ անխոհեմ էր. այնուամենայնիվ, նա նախապատրաստում էր իրեն ու իր գորքերը՝ գալու Նեփիացիների դեմ ճակատամարտելու:

11 Արդ, նրա գորքերն այնքան մեծ չէին, որքան դրանք եղել էին մինչև այդ, այն բազում հազարավորների պատճառով, ովքեր սպանվել էին Նեփիացիների ձեռքով. բայց չնայած իրենց մեծ կորստին, Ամադիկիան ի մի էր հավաքել մի զարմանալի մեծության բանակ, այնպես որ, նա չէր

վախենում գալ վար՝ Ջարահեմ-լայի երկիրը:

12 Այո, նույնիսկ Ամադիկիան՝ ինքը, Լամանացիների գլուխն անցած՝ վար եկավ: Եվ դա տավորների կառավարման քսանհինգերորդ տարում էր. և դա այն նույն պահին էր, երբ նրանք սկսել էին կարգավորել գլխավոր դատավոր Պատրանի հետ կապված իրենց վիճաբանության գործերը:

13 Եվ եղավ այնպես, որ երբ մարդիկ, որոնք կոչվում էին թագավորասերներ, լսեցին, որ Լամանացիները գալիս էին ներքև՝ ճակատամարտելու իրենց դեմ, նրանք ուրախացան իրենց սրտերում. և նրանք հրաժարվեցին զենք վերցնել, քանզի նրանք այնքան զայրացած էին գլխավոր դատավորի վրա, և նաև ազատության կողմնակից «ժողովրդի վրա, որ նրանք չկամեցան զենք վերցնել՝ պաշտպանելու իրենց երկիրը:

14 Եվ եղավ այնպես, որ երբ Մորոնին տեսավ այս, և տեսավ նաև, որ Լամանացիները մտնում էին երկրի սահմաններից ներս, նա սաստիկ զայրացավ այդ ժողովրդի համառության պատճառով, որին նա այնպիսի մեծ ջանասիրությամբ տքնել էր պաշտպանել. այո, նա սաստիկ զայրացած էր. նրա հոգին լցված էր բարկությամբ նրանց դեմ:

15 Եվ եղավ այնպես, որ նա մի խնդրագիր ուղարկեց ժողովրդի ձայնով, երկրի կառավարչին՝ կամենալով, որ նա կարդար այն, և տար նրան (Մորոնիին) իշխանություն՝ հարկադրելու այդ պառակտիչներին պաշտպանել իրենց

երկիրը, այլապես դատապարտել նրանց մահվան:

16 Քանզի դա նրա առաջին հոգև էր՝ վերջ դնել նման հակառակություններին ու երկպառակություններին ժողովրդի մեջ. քանզի ահա, մինչ այդ դա էր եղել բոլոր նրանց կործանումների պատճառը: Եվ եղավ այնպես, որ դա շնորհվեց՝ համաձայն ժողովրդի ձայնի:

17 Եվ եղավ այնպես, որ Մորոնին հրամայեց, որ իր բանակը զնար այդ թագավորասերների դեմ՝ խորտակելու նրանց հպարտությունն ու նրանց ազնվագարմությունը և հավասարեցներ նրանց հողին, կամ էլ նրանք պետք է զենք վերցրնեին և աջակցեին ազատության գործին:

18 Եվ եղավ այնպես, որ գորքերն առաջ արշավեցին նրանց դեմ. և նրանք խորտակեցին նրանց հպարտությունն ու նրանց ազնվագարմությունը, այնպես որ, երբ նրանք բարձրացնում էին իրենց պատերազմի զենքերը՝ կռվելու Մորոնիի մարդկանց դեմ, նրանց կտորում էին ու հավասարեցնում հողին:

19 Եվ եղավ այնպես, որ կային այն «պառակտիչներից չորս հազարը, ովքեր կտորվեցին սրով. և նրանց առաջնորդներից նրանք, ովքեր չսպանվեցին ճակատամարտում, վերցվեցին ու բանտ զգվեցին, քանզի այդ ժամանակաընթացքում նրանց դատավարությունների համար ժամանակ չկար:

20 Եվ այն պառակտիչներից մնացածը, փոխարեն սրով զենքիմ գարկվելու, ենթարկվեցին ազատության դրոշին, և հարկադրված

էին բարձրացնել ազատության «դրոշը՝ իրենց աշտարակների վրա և իրենց քաղաքների վրա, և զենք վերցնել՝ ի պաշտպանություն իրենց երկրի:

21 Եվ այսպես, Մորոնին վերջ դրեց այն թագավորասերներին, այնպես որ չկար որևէ մեկը՝ հայտնի թագավորասեր անվանումով. և այսպես նա վերջ դրեց այն մարդկանց համառությանն ու հպարտությանը, ովքեր հորջոջվում էին ազնվական արյամբ. սակայն նրանք վայր բերվեցին՝ իրենց խոնարհեցնելու իրենց եղբայրների պես, և կռվելու քաջարի՝ ճորտությունից իրենց ազատության համար:

22 Ահա, եղավ այնպես, որ մինչ «Մորոնին այսպես դադարեցնում էր պատերազմներն ու հակառակություններն իր սեփական ժողովրդի մեջ, և հպատակեցնում նրանց խաղաղության ու քաղաքակրթության, և կանոնակարգումներ անում՝ Լամանացիների դեմ պատերազմին նախապատրաստվելու, ահա, Լամանացիները եկան Մորոնիի երկիրը, որը ծովափին մոտ սահմաններում էր:

23 Եվ եղավ այնպես, որ Նեփիացիները բավականաչափ ուժեղ չէին Մորոնիի քաղաքում. հետևաբար, Ամադիկիան քչեց նրանց՝ սպանելով շատերին: Եվ եղավ այնպես, որ Ամադիկիան վերցրեց քաղաքի տիրապետությունը, այո, տիրապետությունը բոլոր նրանց ամբոթյուններին:

24 Եվ նրանք, ովքեր դուրս փախան Մորոնիի քաղաքից, եկան Նեփիայի քաղաքը. և նաև Լեքիի քաղաքի ժողովուրդն ի մի հա-

վաքվեց, և պատրաստություններ տեսան ու պատրաստ էին ընդունել Լամանացիներին՝ ճակատամարտելու:

25 Բայց եղավ այնպես, որ Ամադիկիան չկամեցավ թույլ տալ Լամանացիներին գնալ Նեփիայի քաղաքի դեմ՝ ճակատամարտելու, այլ պահեց նրանց ներքևում՝ ծովափին մոտ, մարդիկ թողնելով ամեն քաղաքում, դրանք պահելու և պաշտպանելու համար:

26 Եվ այսպես, նա գնաց առաջ, վերցնելով շատ քաղաքների տիրապետությունը, Նեփիայի քաղաքի և Լեքիի քաղաքի, Մորիանթոնի քաղաքի և Օմների քաղաքի, Գեդի քաղաքի և Մուդեկի քաղաքի, որոնք բոլորը ծովափի արևելյան սահմանների վրա էին:

27 Եվ այսպես, Ամադիկիայի խորամանկությամբ Լամանացիներն իրենց անթիվ գորքերով ձեռք էին բերել այսքան շատ քաղաքներ, որոնք բոլորն ուժեղ ամրացված էին ըստ Մորոնիի՝ սամբույթունների ձևի. որոնք բոլորը բերդեր դարձան Լամանացիների համար:

28 Եվ եղավ այնպես, որ նրանք արշավեցին դեպի Լիառատ երկրի սահմանները՝ քշելով Նեփիացիներին իրենց առաջից և սպանելով շատերին:

29 Բայց եղավ այնպես, որ նրանց դիմավորեց Թեանկումը, որն իր փախուստի ժամանակ՝ սպանել էր Մորիանթոնին և կատեցրել նրա մարդկանց:

30 Եվ եղավ այնպես, որ նա կատեցրեց նաև Ամադիկիային, երբ նա արշավում էր առաջ, իր սովոր գորքով, որպեսզի վերցնի Լիառատ երկրի տիրապետու-

թյունը և նաև հյուսիսային կողմի երկիրը:

31 Բայց ահա, նա հանդիպեց հուսախաբության, ետ մղվելով Թեանկումի և նրա մարդկանց կողմից, քանզի նրանք մեծ ռազմիկներ էին. քանզի Թեանկումի ամեն մի մարդը գերազանցում էր Լամանացիներին՝ իրենց ուժով և պատերազմելու իրենց վարպետությամբ, այնպես որ նրանք առավելություն ձեռք բերեցին Լամանացիների վրա:

32 Եվ եղավ այնպես, որ նրանք ուժասպառ արեցին նրանց այնքան, որ սպանեցին նրանց, նույնիսկ մինչև մութն ընկնելը: Եվ եղավ այնպես, որ Թեանկումը և նրա մարդիկ խփեցին իրենց վրամները Լիառատ երկրի սահմաններում. իսկ Ամադիկիան խփեց իր վրանները ծովեզրին մոտ՝ ափի սահմաններում, և այս ձևով էին նրանք քշվել:

33 Եվ եղավ այնպես, որ երբ եկավ գիշերը, Թեանկումն ու իր ծառան սողակեցին առաջ և դուրս եկան գիշերով ու գնացին Ամադիկիայի ճամբարը. և ահա, քունը հաղթել էր նրանց իրենց շատ հոգնածության պատճառով, որն առաջացել էր այդ օրվա թափած ճիգերից ու շոգից:

34 Եվ եղավ այնպես, որ Թեանկումը գաղտագողի սողակեց թագավորի վրանը և տեգը խրեց նրա սիրտը. և թագավորին անմիջապես մահ պատճառեց, այնպես որ նա չգարթնեցրեց իր ծառաներին:

35 Եվ նա ծածուկ վերադարձավ կրկին իր սեփական ճամբարը, և ահա, նրա մարդիկ քնած էին, և նա արթնացրեց նրանց և պատմեց

նրանց բոլորին այն բաները, որ ինքն արել էր:

36 Եվ նա կարգադրեց, որ իր գորքերը կանգնեն պատրաստ, որ չլինեն թե Լամանացիներն արթնանան ու գան իրենց վրա:

37 Եվ այսպես է ավարտվում Նեփիի ժողովրդի վրա դատավորների կառավարման քսանևհինգերորդ տարին. և այսպես են վերջանում Ամադիկիայի օրերը:

ԳԼՈՒԽ 52

Ամնորոնը հաջորդում է Ամադիկիային, որպես Լամանացիների թագավոր – Մորոնին, Թեանկումը և Լեթին առաջնորդում են Նեփիացիներին ընդդեմ Լամանացիների՝ մի հաղթական պատերազմում – Մուղեկի քաղաքը ետ է վերցվում, և Հակոբ Չորամացին սպանվում է: Մոտ 66–64թթ. Ք.ծ.ա.:

Եւ արդ, եղավ այնպես, Նեփիի ժողովրդի վրա դատավորների կառավարման քսանևվեցերորդ տարում, ահա, երբ Լամանացիներն արթնացան առաջին ամսվա առաջին օրը, ահա, նրանք Ամադիկիային մեռած գտան իր սեփական վրանում. և նրանք նաև տեսան, որ Թեանկումը պատրաստ էր իրենց ճակատամարտ տալու՝ այդ օրը:

2 Եվ այժմ, երբ Լամանացիները տեսան այս, նրանք վախեցան. և նրանք հրաժարվեցին հյուսիսային կողմի երկիրն արշավելու իրենց ծրագրից, և բոլոր իրենց բանակով նահանջեցին Մուղեկի քաղաքը, և պաշտպանություն փնտրեցին իրենց ամրություններում:

3 Եվ եղավ այնպես, որ Ամադիկիայի եղբայրը թագավոր նշանակվեց ժողովրդի վրա. և նրա անունն Ամնորոն էր. այսպիսով, թագավոր Ամնորոնը՝ թագավոր Ամադիկիայի եղբայրը, նշանակվեց թագավորելու նրա փոխարեն:

4 Եվ եղավ այնպես, որ նա հրամայեց, որ իր ժողովուրդը պահպանի այն քաղաքները, որոնք վերցվել էին արյուն թափելով. քանզի նրանք չէին վերցրել որևէ քաղաք, մինչև որ չէին կորցրել շատ արյուն:

5 Եվ այժմ, Թեանկումը տեսավ, որ Լամանացիները վճռել էին պահել այն քաղաքները, որոնք իրենք վերցրել էին, և երկրի այն մասերը, որոնց տիրապետությունը ձեռք էին բերել. և նաև տեսնելով նրանց թվի վիթխարիությունը, Թեանկումը մտածեց, որ պետք չէր, որ նա փորձեր հարձակվել նրանց վրա՝ իրենց ամրոցներում:

6 Բայց նա պահում էր իր մարդկանց շրջակայքում, իբրև թե պատրաստություններ էր տեսնում պատերազմի համար. այո, և իրոք նա պատրաստվում էր պաշտպանվել նրանցից՝ «վեր խոյացնելով պատեր շուրջբոլորը և պատրաստելով պաշտպանական վայրեր:

7 Եվ եղավ այնպես, որ նա շարունակեց պատերազմի համար այսպես պատրաստվելը, մինչև Մորոնին ուղարկեց մեծ թվով մարդկանց՝ ուժեղացնելու նրա բանակը:

8 Եվ Մորոնին նաև հրամաններ ուղարկեց նրան, որ նա պահեր բոլոր գերիներին, ովքեր ընկել էին նրա ձեռքը. որովհետև, քանի որ

Լամանացիները վերցրել էին շատ գերիներ, որ նա պետք է պահեր Լամանացիների բոլոր գերիներին՝ որպես փրկանք նրանց համար, ում վերցրել էին Լամանացիները:

9 Եվ նա նաև ուղարկեց հրամաններ նրան, որ նա ամրացներ Լիառատ երկիրը, և ապահովեր «նեղ անցումը, որը տանում էր հյուսիսային կողմի երկիրը, որ չլիներ թե Լամանացիները ձեռք բերեին այդ մասը և իշխանություն ունենային նեղելու իրենց ամեն կողմից:

10 Եվ Մորոնին նաև ուղարկեց նրա մոտ, փափագելով, որ նա լիներ հավատարիմ՝ երկրի այդ մասը պաշտպանելիս, և որ այդ մասում նա կփնտրեր ամեն մի առիթ՝ խարազանելու Լամանացիներին, այնքան, որքան նա ի գորու էր, որ գուցե նա՝ հնարագիտությամբ կամ որևէ այլ ձևով, կարողանար նորից վերցնել այն քաղաքները, որոնք վերցվել էին իրենց ձեռքից. և որ նա նաև ամրացներ ու ուժեղացներ շրջակա քաղաքները, որոնք չէին ընկել Լամանացիների ձեռքը:

11 Եվ նա նաև ասաց նրան. Ես կկամենայի գալ ձեզ մոտ, բայց ահա, Լամանացիները մեր վրա են գալիս արևմտյան ծովին մոտիկ երկրի սահմաններում. և ահա, ես գնում եմ նրանց դեմ, այդ պատճառով ես չեմ կարող գալ ձեզ մոտ:

12 Արդ, թագավորը (Ամմորոնը) հեռացել էր Չարահենլայի երկրից, և հայտնի դարձրել թագուհուն իր եղբոր մահվան մասին, և ի մի էր հավաքել մեծ թվով մարդկանց, և արշավել առաջ՝ Նեփիա-

ցիների դեմ, արևմտյան ծովին մոտիկ սահմանների վրա:

13 Եվ այսպես նա ձգտում էր նեղել Նեփիացիներին, և հեռու քաշել նրանց ուժերի մի մասին դեպի երկրի այդ մասը, մինչդեռ նա հրամայել էր նրանց, որոնց նա թողել էր տիրելու այն քաղաքներին, որոնք ինքը վերցրել էր, որ նրանք նույնպես նեղեին Նեփիացիներին արևելյան ծովին մոտիկ սահմանների վրա, և վերցնեին նրանց հողերի տիրապետությունը, այնքան, որքան նրանք ի գորու էին՝ իրենց գորքերի ուժի համաձայն:

14 Եվ այսպես, Նեփիի ժողովրդի վրա դատավորների կառավարման քսանվեցերորդ տարվա վերջում, այսպիսի վտանգավոր պայմաններում էին Նեփիացիները:

15 Բայց ահա, եղավ այնպես, դատավորների կառավարման քսանյոթերորդ տարում, որ Թեանկումը, Մորոնիի հրամանով, որը տեղավորել էր գորքեր՝ պաշտպանելու երկրի հարավային ու արևմտյան սահմանները, և սկսել էր իր արշավանքը դեպի Լիառատ երկիրը, որ կարողանար իր մարդկանցով օգնել Թեանկումին՝ ետ վերցնելու քաղաքները, որոնք իրենք կորցրել էին,

16 Եվ եղավ այնպես, որ Թեանկումը կարգադրություններ էր ստացել՝ հարձակում գործել Մուդեկի քաղաքի վրա, և ետ վերցնել այն, եթե դա հնարավոր լիներ:

17 Եվ եղավ այնպես, որ Թեանկումը պատրաստություններ տեսավ՝ հարձակում գործելու Մուդեկի քաղաքի վրա, և արշավելու առաջ՝ իր գորքի հետ, Լամանացիների դեմ. բայց նա տեսավ, որ

դա անհնարին էր, որ ինքը հաղթեր նրանց, մինչ նրանք իրենց ամբողջություններում էին. ուստի, նա հրաժարվեց իր ծրագրերից և կրկին վերադարձավ Լիառատ քաղաքը՝ սպասելու Մորոնիի գալույն, որպեսզի նա կարողանար ուժ ստանալ իր բանակի համար:

18 Եվ եղավ այնպես, որ Մորոնիին հասավ իր բանակի հետ Լիառատ երկիրը, Նեփիի ժողովրդի վրա դատավորների կառավարման քսանևյոթերորդ տարվա ուշ վերջին:

19 Եվ քսանևոթերորդ տարվա սկզբին Մորոնիին, և Թեանկումը, և գլխավոր հրամանատարներից շատերը մի ռազմական խորհուրդ անցկացրեցին, թե ինչ պիտի իրենք անեն՝ Լամանացիներին ստիպելու դուրս գալ իրենց դեմ ճակատամարտելու. կամ, որպեսզի նրանք կարողանային ինչ-որ միջոցներով հրապուրել նրանց իրենց բերդերից դուրս, որպեսզի իրենք կարողանային հասնել առավելություն նրանց վրա և նորից վերցնելին Մուղեկի քաղաքը:

20 Եվ եղավ այնպես, նրանք դեսպանություն ուղարկեցին Լամանացիների բանակը, որը պաշտպանում էր Մուղեկի քաղաքը՝ նրանց ղեկավարի մոտ, որի անունը Հակոբ էր՝ կամենալով, որ նա դուրս գար իր զորքերի հետ իրենց հանդիպելու՝ հարթավայրի վրա, երկու քաղաքների միջև: Բայց ահա, Հակոբը, որը Չորամացի էր, չկամեցավ դուրս գալ իր զորքի հետ՝ հանդիպելու նրանց հարթավայրի վրա:

21 Եվ եղավ այնպես, որ Մորոնիին, չունենալով ոչ մի հույս՝ հանդիպելու նրանց ազնիվ հիմքերի վրա, հետևաբար, նա որոշում ըն-

դունեց մի ծրագրի վերաբերյալ, որ նա կարողանար Լամանացիներին հրապուրել իրենց բերդերից դուրս:

22 Հետևաբար, նա կարգադրեց, որ Թեանկումը վերցնելու մարդկանց մի փոքր խումբ և քայլեր ներքև՝ ծովափի մոտով. և Մորոնիին ու նրա զորքը քայլեցին գիշերով անապատում, դեպի Մուղեկ քաղաքի արևմտյան կողմը. և այսպես, հաջորդ օրը, երբ Լամանացիների պահակները հայտնաբերեցին Թեանկումին, նրանք վազեցին ու ասացին այդ՝ Հակոբին, իրենց ղեկավարին:

23 Եվ եղավ այնպես, որ Լամանացիների զորքերն արշավեցին առաջ՝ Թեանկումի դեմ, ենթադրելով իրենց թվաքանակով հաղթել Թեանկումին՝ իր թվաքանակի փոքրության պատճառով: Եվ երբ Թեանկումը տեսավ Լամանացիների զորքերը՝ իր դեմ դուրս գալիս, նա սկսեց նահանջել ծովեզրով՝ դեպի հյուսիս:

24 Եվ եղավ այնպես, որ երբ Լամանացիները տեսան, որ նա սկսեց փախչել, նրանք քաջալերվեցին և հետապնդեցին նրանց՝ եռանդով: Եվ մինչ Թեանկումն այսպես հեռու էր առաջնորդում Լամանացիներին, որոնք զուր էին հետապնդում նրանց, ահա, Մորոնիին հրամայեց, որ իր բանակի մի մասը, ովքեր իր հետ էին, արշավեն առաջ՝ դեպի քաղաքը, և վերցնեն նրա տիրապետությունը:

25 Եվ նրանք այդպես արեցին ու սպանեցին բոլոր նրանց, ովքեր թողնվել էին՝ պաշտպանելու քաղաքը, այո, բոլոր նրանց, ովքեր չկամեցան հանձնել իրենց պատերազմի զենքերը:

26 Եվ այսպես, Մորոնիին ձեռք

բերեց Մուղեկ քաղաքի տիրապետությունն իր բանակի մի մասով, մինչ նա արշավում էր մնացածի հետ՝ դիմավորելու Լամանացիներին, երբ նրանք վերադառնալիս Թեանկումին հետապնդելուց:

27 Եվ եղավ այնպես, որ Լամանացիները հետապնդեցին Թեանկումին, մինչև նրանք մոտ եկան Լիառատ քաղաքին, և այդ ժամանակ նրանց դիմավորեցին Լեքին և մի փոքր բանակ, որը թողնվել էր՝ պաշտպանելու Լիառատ քաղաքը:

28 Եվ այժմ ահա, երբ Լամանացիների գլխավոր զորապետերը տեսան Լեքինին իր զորքի հետ՝ զախս իրենց դեմ, նրանք փախան մեծ խառնաշփոթությամբ՝ վախենալով, որ գուցե նրանք չհասնեին Մուղեկ քաղաքը, մինչ Լեքին կհասներ իրենց ետևից. քանզի նրանք հոգնած էին իրենց արշավի պատճառով, իսկ Լեքիի մարդիկ թարմ էին:

29 Արդ, Լամանացիները չգիտեին, որ Մորոնին իրենց թիկունքում էր՝ իր զորքի հետ. և նրանց ողջ երկյուղը Լեքին էր ու նրա մարդիկ:

30 Այժմ Լեքին չէր ուզում նրանց ետևից հասնել, մինչև նրանք չհանդիպեին Մորոնիին ու նրա զորքին:

31 Եվ եղավ այնպես, որ նախքան Լամանացիների հեռու մահանջելը, նրանք շրջապատվեցին Նեփիացիների կողմից, Մորոնիի մարդկանցով՝ մի կողմից, և Լեքիի մարդկանցով՝ մյուս կողմից, որոնք բոլորը թարմ էին և ուժով լի. իսկ Լամանացիները հոգնած էին՝ իրենց երկար արշավանքի պատճառով:

32 Եվ Մորոնին հրամայեց իր մարդկանց, որ նրանք հարձակվեն նրանց վրա, մինչև որ նրանք հրաժարվեին իրենց պատերազմի զենքերից:

33 Եվ եղավ այնպես, որ Հակոբը՝ լինելով նրանց առաջնորդը, լինելով նաև՝ «Չորամացի, և ունենալով անպարտ ոգի, նա առաջնորդեց Լամանացիներին առաջ՝ Մորոնիի դեմ, ճակատամարտելու սաստիկ կատաղությամբ:

34 Մորոնին՝ լինելով նրանց արշավանքի ճանապարհին, ուստի, Հակոբը վճռել էր սպանել նրանց և կտրել անցնել իր ճանապարհը՝ դեպի Մուղեկի քաղաքը: Բայց ահա, Մորոնին ու նրա մարդիկ ավելի հզոր էին. հետևաբար, նրանք տեղի չտվեցին Լամանացիների առաջ:

35 Եվ եղավ այնպես, որ նրանք երկու կողմից էլ կռվեցին՝ սաստիկ կատաղությամբ. և կային շատ սպանվածներ՝ երկու կողմից էլ. այո, Մորոնին ևս վիրավորվեց, իսկ Հակոբը՝ սպանվեց:

36 Եվ Լեքին իր ուժեղ մարդկանց հետ նրանց թիկունքից ճնշում էր այնպիսի կատաղությամբ, որ թիկունքում Լամանացիները հանձնեցին իրենց պատերազմի զենքերը. իսկ նրանցից մնացածը՝ լինելով շատ շփոթված, չգիտեին ուր գնալ, կամ կռվել:

37 Արդ, Մորոնին, տեսնելով նրանց խառնաշփոթությունը, նա սասց նրանց. Եթե դուք բերեք առաջ ձեր պատերազմի զենքերը և հանձնեք դրանք, ահա, մենք կդադարենք ձեր արյունը թափելը:

38 Եվ եղավ այնպես, որ երբ Լամանացիները լսեցին այս

խոսքերը, նրանց գլխավոր հրամանատարները, բոլոր նրանք, ովքեր չէին սպանվել, եկան առաջ ու գցեցին իրենց պատերազմի զենքերը՝ Մորոնիի ոտքերի մոտ, և նաև հրամայեցին իրենց մարդկանց, որ նրանք էլ անեն նույնը:

39 Բայց ահա, կային շատերը, որոնք չկամեցան. և նրանք, ովքեր չկամեցան հանձնել իրենց սրերը, վերցվեցին ու կապվեցին, և նրանց պատերազմի զենքերը վերցվեցին նրանցից, և նրանք հարկադրված էին քայլել առաջ՝ իրենց եղբայրների հետ, դեպի Լիառատ երկիրը:

40 Եվ այժմ գերիների քանակը, ովքեր վերցվել էին, գերազանցում էր նրանց թվաքանակին, ովքեր սպանվել էին, այո, ավելի էին, քան նրանք, ովքեր սպանվել էին երկու կողմից էլ:

ԳԼՈՒԽ 53

Լամանացի գերիներն օգտագործվում են՝ ամրացնելու Լիառատ քաղաքը – Երկպառակությունները՝ Նեփիացիների մեջ, պատճառ են դառնում Լամանացիների հաղթանակներին – Հելամանը վերցնում է Ամմոնի ժողովրդի երկու հազար դեռահաս որդիների հրամանատարությունը: Մոտ 64–63թթ. Բ.ծ.ա.:

Եվ եղավ այնպես, որ նրանք պահակներ դրեցին Լամանացիների գերիների վրա, և հարկադրեցին նրանց գնալ առաջ և թաղել իրենց մեռելներին, այո, և նաև Նեփիացիների մեռելներին, որոնք սպանվել էին. և Մորոնին դրեց մարդիկ նրանց վրա՝ հսկելու նրանց, մինչ

նրանք պետք է կատարեին իրենց աշխատանքները:

2 Եվ Մորոնին Լեքիի հետ, գնաց Մուդեկի քաղաքը և վերցրեց քաղաքի հրամանատարությունն ու տվեց այն Լեքիին: Արդ ահա, այս Լեքին մի մարդ էր, որը եղել էր Մորոնիի հետ նրա բոլոր ճակատամարտերից մեծ մասում. և նա մի մարդ էր՝ «նման Մորոնիին, և նրանք ուրախանում էին միմյանց ապահովությամբ. այո, նրանք սիրված էին մեկը մյուսի կողմից և նաև սիրված էին Նեփիի ողջ ժողովրդի կողմից:

3 Եվ եղավ այնպես, որ հետո, երբ Լամանացիները վերջացրել էին իրենց մեռելներին, և նաև, Նեփիացիների մեռելներին թաղելը, նրանց քայլել տվեցին ետ՝ դեպի Լիառատ երկիրը. և Թեանկումը, ըստ Մորոնիի կարգադրությունների, ստիպեց, որ նրանք սկսեն աշխատել՝ փորելով մի խանդակ Լիառատ երկրի կամ քաղաքի շուրջը բոլորը:

4 Եվ նա կարգադրեց, որ նրանք հեծաններից մի «ցցապատ շինեն՝ խանդակի ներսի թմբի վրա. և նրանք խանդակից ցեխ էին դուրս գցում, հեծաններից՝ ցցապատին. և այսպես նրանք ստիպում էին Լամանացիներին տքնել, մինչև որ նրանք օղակեցին Լիառատ քաղաքի շուրջը բոլորը չափազանց մեծ բարձրության հեծաններով ու հողե մի ամուր պատով:

5 Եվ այս քաղաքը դարձավ չափազանց ամուր մի բերդ՝ այդ ժամանակից ի վեր, և այս քաղաքում էին նրանք հսկում Լամանացիների գերիներին. այո, հենց պատի ներսում, որը նրանք ստիպել էին

նրանց կառուցել իրենց սեփական ձեռքերով: Արդ, Մորոնին հարկադրված էր Լամանացիներին ստիպել աշխատել, որովհետև նրանց հեշտ էր հսկել մինչ նրանք աշխատում էին. իսկ նա ցանկանում էր ունենալ բոլոր իր ուժերը, երբ նա պետք է հարձակում գործեր Լամանացիների վրա:

6 Եվ եղավ այնպես, որ Մորոնին այսպես հաղթանակի հասավ Լամանացիների ամենամեծ զորքերից մեկի վրա, և նա ձեռք բերեց Մուղեկի քաղաքի տիրապետությունը, որը Նեփիի երկրում Լամանացիների ամենաուժեղ բերդերից մեկն էր. և այսպիսով, նա կառուցեց նաև մի բերդ՝ պահելու իր գերիներին:

7 Եվ եղավ այնպես, որ այդ տարի նա այլևս փորձ չարեց ճակատամարտել Լամանացիների հետ, բայց նա ծառայեցրեց իր մարդկանց՝ պատերազմի մախապատրաստվելու համար, այո, և սարքելով ամրություններ՝ Լամանացիներից պաշտպանվելու համար, այո, և նաև ազատելով իրենց կամանց և իրենց երեխաներին սովից ու չարչարանքից, և ուտելիք ապահովելով իրենց զորքերի համար:

8 Եվ այժմ եղավ այնպես, որ Լամանացիների զորքերն արևմուտյան ծովի մոտ՝ հարավում, Մորոնիի բացակայության ընթացքում, ինչ-որ խարդավանքի հետևանքով՝ Նեփիացիների մեջ, ինչը երկպառակությունների պատճառ էր դարձել նրանց մեջ, Նեփիացիների վրա որոշ առավելությունների հասան, այո, այնքան, որ երկրի այդ մասում ձեռք բերեցին նրանց

որոշ թվով քաղաքների տիրապետությունը:

9 Եվ այսպես, իրենց միջի անօրինության պատճառով, այո, իրենց միջի երկպառակությունների ու խարդավանքի պատճառով, նրանք հայտնվել էին ամենավրտանգավոր պայմաններում:

10 Եվ այժմ, ահա, ես որոշ բան ունեն ասելու Ամմոնի Մոողվորդի մասին, ովքեր, սկզբում, Լամանացիներ էին. բայց Ամմոնի և իր եղբայրների միջոցով, կամ ավելի շուտ՝ Աստծո զորության և խոսքի միջոցով, նրանք Պարծի բերվեցին դեպի Տերը. և նրանք բերվել էին Չարահեմլայի երկիրը, և այդ ժամանակից ի վեր պաշտպանվում էին Նեփիացիների կողմից:

11 Եվ իրենց երդման պատճառով, նրանց արգելվել էր գենք վերցնել իրենց եղբայրների դեմ. քանզի նրանք երդում էին տվել, որ էլ Մերեք արյուն չէին թափելու. և համաձայն իրենց երդման՝ նրանք կորած կլինեին. այո, նրանք իրենց թույլ տված կլինեին ընկնել իրենց եղբայրների ձեռքը, եթե չլինեք խղճահարությունը և անչափ մեծ սերը, որ Ամմոնը և նրա եղբայրները տածում էին նրանց հանդեպ:

12 Եվ այս պատճառով էին նրանք վար բերվել Չարահեմլայի երկիրը. և նրանք միշտ Պաշտպանվում էին Նեփիացիների կողմից:

13 Բայց եղավ այնպես, որ երբ նրանք տեսան վտանգը և բազում չարչարանքներն ու նեղությունները, որ Նեփիացիները կրում էին իրենց համար, նրանց գուրջ շարժվեց և նրանք Պաշտպանվեցին գենք

վերցնել՝ պաշտպանելու իրենց երկիրը:

14 Բայց ահա, երբ նրանք պատարաստվում էին վերցնել իրենց պատերազմի զենքերը, նրանք ենթարկվեցին Հելամանի ու նրա եղբայրների հորդորներին, քանզի նրանք մոտ էին Պերդուարը՝ որն իրենք էին արել:

15 Եվ Հելամանը վախենում էր, որ չլիներ թե այդպես անելով, նրանք կորցնեին իրենց հոգիները. հետևաբար, բոլոր նրանք, ովքեր մտել էին այս ուխտի մեջ, ստիպված էին, այս անգամ իրենց վտանգավոր պայմաններում, մայել, թե ինչպես են իրենց եղբայրները չարչարանքներ հաղթահարում:

16 Բայց ահա, եղավ այնպես, նրանք ունեին շատ որդիներ, ովքեր չէին մտել ուխտի մեջ, որ իրենք չէին վերցնելու պատերազմի զենքեր՝ պաշտպանվելու իրենց թշնամիներից. ուստի, նրանք ի մի հավաքվեցին այդ ժամանակ, բոլոր նրանք, ովքեր ի վիճակի էին զենք վերցնել, և նրանք կոչեցին իրենց Նեփիացիներ:

17 Եվ նրանք ուխտի մեջ մտան՝ կռվելու Նեփիացիների ազատության համար, այո, պաշտպանել հողը մինչև իսկ վայր դնելով իրենց կյանքը. այո, նրանք նույնիսկ ուխտեցին, որ իրենք երբեք չէին տալու իրենց Պազատությունը, այլ կռվելու էին բոլոր դեպքերում Նեփիացիներին ու իրենց ճորտությունից պաշտպանելու համար:

18 Արդ ահա, կային երկու հազարն այդ պատանիներից, ովքեր մտան այդ ուխտի մեջ և վերցրե-

ցին իրենց պատերազմի զենքերը՝ պաշտպանելու իրենց երկիրը:

19 Եվ այժմ ահա, քանի որ մինչ այդ նրանք երբեք բեռ չէին եղել Նեփիացիների համար, այժմ՝ այս ժամանակահատվածում, նրանք դարձան նաև մեծ ապավեն. քանզի նրանք վերցրեցին իրենց պատերազմի զենքերը, և նրանք կամեցան, որ Հելամանը լիներ իրենց առաջնորդը:

20 Եվ նրանք բոլորը պատանիներ էին, և նրանք անսահման անվեհեր էին Միսիզախության մեջ, և նաև ուժի և զործունեության մեջ. բայց ահա, դա բոլորը չէր, նրանք տղաներ էին, որոնք Պիսիստաբիս էին բոլոր դեպքերում, ինչ էլ որ նրանց վստահվում էր:

21 Այո, նրանք ճշմարտության և լրջմտության տղաներ էին, քանզի նրանց սովորեցրել էին պահել Աստծո պատվիրանները և՛ «բայելի ուղիղ» նրա առաջ:

22 Եվ այժմ, եղավ այնպես, որ Հելամանն արշավեց իր Պերկու հազար պատանի զինվորների գլուխն անցած՝ ի օժանդակություն երկրի հարավում, արևմտյան ծովին մոտ՝ սահմանամերձ ժողովրդին:

23 Եվ այսպես, ավարտվեց Նեփիի ժողովրդի վրա դատավորների կառավարման քսանութերորդ տարին:

ԳԼՈՒԽ 54

Ամմորոնը և Մորոնին քանակցում են զերինների փոխանակման համար

14ա սուր Երդում:
բ Թվ. Լ.2:

17ա Ալմա 56.47:
սուր Անկախություն:

20ա սուր Քաջություն,
Քաջարի:

բ սուր Շիտակություն:
21ա սուր Քայլել, Քայլել

Աստծո հետ:
22ա Ալմա 56.3–5:

– Մորոնին պահանջում է, որ Լամանացիները ետ քաշվեն և դադարեցնեն իրենց վայրագ հարձակումները – Ամմորոնը պահանջում է, որ Նեփիացիները վայր դնեն իրենց զենքերը և հպատակ դառնան Լամանացիներին: Մոտ 63թ. Ք.ծ.ա.:

Եվ արդ, եղավ այնպես, դատավորների քսանհիններորդ տարվա սկզբին, որ Մամմորոնը Մորոնիի մոտ ուղարկեց՝ ցանկանալով, որ նա փոխանակեր գերիներին:

2 Եվ եղավ այնպես, որ Մորոնիին այս խնդրանքի վրա անսահման ուրախության զգացում ունեցավ, քանզի նա կարիքն ուներ այն պարենի, որը բաժին էր հանվում Լամանացի գերիներին պահելու համար, իր սեփական ժողովրդին պահելու համար. և նա նաև իր սեփական ժողովրդի կարիքն ուներ՝ իր բանակն ուժեղացնելու համար:

3 Արդ, Լամանացիները վերցրել էին շատ կանանց ու երեխաների, իսկ Մորոնիի բոլոր գերիների մեջ, կամ գերիների, որոնց վերցրել էր Մորոնին, չկար ոչ մի կին կամ երեխա. ուստի Մորոնին որոշում ընդունեց մի հնարքի վերաբերյալ՝ ստանալ այնքան շատ Նեփիացի գերիներ՝ Լամանացիներից, որքան դա հնարավոր էր:

4 Հետևաբար, նա մի թուղթ գրեց և ուղարկեց այն՝ Ամմորոնի ծառայի միջոցով, այն նույնի, որը բերել էր նամակ Մորոնիին: Արդ, սրանք են այն խոսքերը, որ նա գրեց Ամմորոնին՝ ասելով.

5 Ահա, Ամմորոն, ես գրել եմ քեզ որոշ բան այս պատերազմի վերաբերյալ, որը դուք մղել եք իմ

ժողովրդի դեմ, կամ ավելի շուտ, որը քո Մեղբայրն է մղել նրանց դեմ, և որը դուք դեռ մտադիր եք շարունակել՝ նրա մահից հետո:

6 Ահա, ես կկամենայի ձեզ որոշ բան ասել Աստծո Մարդարադատության և նրա ամենագոր ցասման սրի մասին, որը կախված է ձեզ վրա, եթե դուք չապաշխարեք և ձեր գորքերը ետ չքաշեք ձեր սեփական հողերը, կամ ձեր տիրապետության հողերը, որը Նեփիի երկիրն է:

7 Այո, ես կկամենայի ասել այս բաները, եթե դուք ընդունակ լինեիք ականջ անելու դրանց. այո, ես կկամենայի ասել ձեզ այն սուկալի Պոփոփսի մասին, որ սպասում է ընդունելու այնպիսի մարդասպանների, ինչպիսին դու և քո եղբայրն եք, եթե դուք չապաշխարեք և չնահանջեք ձեր ոճրամիտ նպատակներից, և վերադառնաք ձեր գորքերի հետ ձեր սեփական հողերը:

8 Բայց քանի որ դուք մի անգամ մերժել եք այս բաները և կովել Տիրոջ ժողովրդի դեմ, մմանապես ես կարող եմ սպասել՝ դուք կանեք այդ կրկին:

9 Եվ այժմ ահա, մենք պատրաստված ենք ընդունել ձեզ. այո, և եթե դուք չապաշխարեք ձեր նպատակներից, ահա, դուք վար կբերեք ձեզ վրա այն Աստծո ցասումը, որին դուք ուրացել եք, մինչև իսկ ի լիակատար կործանումն ձեզ:

10 Սակայն, ինչպես կենդանի է Տերը, մեր գորքերը կգան ձեր վրա, եթե դուք ետ չքաշվեք, և շուտով դուք կայցելվեք մահով, քանզի

54 1ա Ալմա 52.3:
5ա Ալմա 48.1:
6ա սու՛ Արդարադատու-

բյուն:
7ա սու՛ Դժոխք:
բ Ալմա 47.18, 22–24:

սու՛ Սպանություն:

մենք կպահպանենք մեր քաղաքներն ու մեր հողերը. այո, և մենք կպաշտպանենք մեր կրոնն ու մեր Աստծո գործը:

11 Բայց ահա, ինձ թվում է, որ ես իզուր եմ խոսում քեզ հետ այս բաների մասին. կամ ինձ թվում է, որ դու “դժոխքի մի զավակ ես. հետևաբար, ես ավարտում եմ իմ նամակն ասելով, որ ես չեմ փոխանակի գերիներ, բացի դա լինի մի պայմանով, որ դուք հանձնեք մեկ մարդու, և իր կնոջը, և իր զավակներին՝ մի գերու համար. եթե լինի այնպես, որ դուք անեք այդ, ես կփոխանակեմ:

12 Եվ ահա, եթե դուք չանեք այս, ես ձեր դեմ կգամ իմ զորքերի հետ. այո, ես կզինեմ նույնիսկ իմ կանանց ու իմ երեխաներին, և ես կգամ ձեր դեմ և կհետապնդեմ ձեզ՝ մինչև ձեր սեփական երկիրը, որը “մեր առաջին ժառանգության երկիրն է. այո, և կլինի արյուն՝ արյան համար, այո, կյանք՝ կյանքի համար. և ես կտամ ձեզ ճակատամարտ, նույնիսկ մինչև դուք բնաջնջվեք երկրի երեսից:

13 Ահա, ես իմ գայրույթի մեջ եմ, և նաև իմ ժողովուրդը. դուք ջանացել եք սպանել մեզ, իսկ մենք ջանացել ենք միայն պաշտպանվել: Բայց ահա, եթե դուք ջանաք կործանել մեզ կրկին, մենք կջանանք կործանել ձեզ. այո, և մենք կձգտենք մեր հողին՝ մեր առաջին ժառանգության հողին:

14 Այժմ ես ավարտում եմ իմ նամակը: Ես Մորոնիին եմ. ես Նեփիի ժողովրդի առաջնորդն եմ:

15 Արդ, եղավ այնպես, որ Ամնորոնը, երբ ստացավ այս նամակը, գայրացավ. և նա գրեց մեկ ուրիշ

նամակ Մորոնիին, և սրանք եմ այն խոսքերը, որոնք նա գրեց՝ ասելով.

16 Ես Ամնորոնն եմ՝ Լամանացիների թագավորը. ես Ամադիկիայի եղբայրն եմ, որին դուք “սպանել եք: Ահա, ես նրա արյան վրեժը կառնեմ ձեզանից, այո, և ես կգամ ձեզ վրա իմ զորքերով, քանզի ես չեմ վախենում ձեր սպառնալիքներից:

17 Քանզի ահա, ձեր հայրերն անիրավություն արեցին իրենց եղբայրներին, քանի որ նրանք խլեցին նրանցից կառավարման իրենց “իրավունքը, երբ այն արդարացիորեն պատկանում էր նրանց:

18 Եվ արդ ահա, եթե դուք վայր դնեք ձեր զենքերը և հպատակվեք՝ կառավարվելու նրանց կողմից, ում արդարացիորեն պատկանում է կառավարման իրավունքը, այդ դեպքում ես կկարգադրեմ, որ իմ ժողովուրդը վայր դնի իրենց զենքերը և այլևս չպիտի լինի պատերազմի մեջ:

19 Ահա, դու թափել ես շատ սպառնալիքներ իմ և իմ ժողովրդի դեմ. բայց ահա, մենք չենք վախենում քո սպառնալիքներից:

20 Այնուամենայնիվ, ես ուրախությամբ շնորհ կանեմ փոխանակել գերիներին՝ ըստ քո առաջարկի, որ ես իմ պարենը կարողանամ պահել իմ ռազմիկների համար. և մենք կմղենք մի պատերազմ, որը պիտի լինի հավերժական, կամ հպատակեցնելու Նեփիացիներին մեր իշխանությանը, կամ մինչև նրանց հավերժական բնաջնջումը:

21 Իսկ ինչ վերաբերում է այն Աստծուն, որին, դու ասում ես, մենք ուրացել ենք, ահա, մենք չգիտենք այդպիսի էակի. ոչ էլ դուք.

բայց եթե դա այդպես է, որ կա այդպիսի մի էակ, մենք չզհետենք, բայց երևի նա արարել է մեզ նույնպես, ինչպես ձեզ:

22 Եվ եթե լինի այնպես, որ կա դև ու դժոխք, ահա, մի՞թե նա չի ուղարկի քեզ այնտեղ՝ բնակվելու իմ եղբոր հետ, որին դուք սպանել եք, որի մասին դու ակնարկել ես, որ նա գնացել է այդպիսի մի տեղ: Բայց ահա, այս բաները կարևոր չեն:

23 Ես Ամմորոնն եմ և մի ժառանգ եմ Պորամի, որին քո հայրերը հարկադրեցին և դուրս բերեցին Երուսաղեմից:

24 Եվ ահա, այժմ ես մի քաջ Լամանացի եմ. ահա, այս պատերազմը մղվել է՝ նրանց անիրավությունների վրեժն առնելու, և պաշտպանելու ու ձեռք բերելու նրանց կառավարման իրավունքը. և ես ավարտում եմ իմ նամակը Մորոնիին:

ԳԼՈՒԽ 55

Մորոնին հրաժարվում է գերիներ փոխանակել – Լամանացի պահակներին խաբելով հարբեցնում են և Նեփիացի գերիներն ազատվում են – Գեղ քաղաքը վերցվում է առանց արյունահեղության: Մոտ 63–62թթ. Ք.ծ.ա.:

Արդ եղավ այնպես, որ, երբ Մորոնին ստացավ այս նամակը, նա ավելի բարկացավ, որովհետև նա գիտեր, որ Ամմորոնն ուներ կատարյալ իմացություն իր Մխարդախության մասին. այո, նա գիտեր, որ Ամմորոնը գիտեր, որ դա արդար պատճառ չէր, որ դրդել

էր նրան պատերազմ մղել Նեփիի ժողովրդի դեմ:

2 Եվ նա ասաց. Ահա, ես գերիներ չեմ փոխանակի Ամմորոնի հետ, եթե նա ձեռք չբաշի իր նպատակից, ինչպես որ ես հայտարարել էի իմ նամակում. քանզի ես չեմ թույլ տա նրան, որ նա ունենա ինչ-որ չափով ավելի շատ իշխանություն, քան այն, ինչ նա ունի:

3 Ահա, ես գիտեմ տեղը, որտեղ Լամանացիները հսկում են իմ ժողովրդին, որոնց նրանք գերի են վերցրել. և քանի որ Ամմորոնը չկամեցավ շնորհ անել ինձ այն, ինչ խնդրել էի իմ նամակում, ահա, ես կվարվեմ նրա հետ՝ համաձայն իմ խոսքերի. այո, ես կփնտրեմ մահ՝ նրանց համար, մինչև որ նրանք խաղաղություն աղերսեն:

4 Եվ արդ եղավ այնպես, որ երբ Մորոնին ասաց այս խոսքերը, նա կարգադրեց, որ իր մարդկանց մեջ որոնում կատարվեր, որ գուցե ինքը կարողանար նրանց մեջ գտնել մի մարդու, որը լիներ Լամանի մի հետնորդ:

5 Եվ եղավ այնպես, որ նրանք գտան մեկին, որի անունը Լաման էր. և նա այն թագավորի ծառաներից՝ մեկն էր, որը սպանվել էր Ամադիկիայի կողմից:

6 Արդ Մորոնին կարգադրեց, որ Լամանը և իր մարդկանցից մի փոքր խումբ գնան առաջ՝ պահակների մոտ, ովքեր հսկում էին Նեփիացիներին:

7 Արդ Նեփիացիներին հսկում էին Գեղ քաղաքում. հետևաբար, Մորոնին նշանակեց Լամանին և կարգադրեց, որ մարդկանց մի փոքր խումբ գնա նրա հետ:

8 Եվ երբ երեկո էր, Լամանը

զնաց պահակների մոտ, ովքեր Նեփիացիներին հսկում էին, և ահա, նրանք տեսան նրան՝ գալիս, և նրանք ձայն տվեցին նրան. բայց նա ասաց նրանց. Մի՛ վախեցեք, ահա, ես Լամանացի եմ: Ահա, մենք փախել ենք Նեփիացիներից, և նրանք քնած են. և ահա, մենք վերցրել ենք նրանց գինուց և բերել ենք մեզ հետ:

9 Արդ, երբ Լամանացիները լսեցին այս խոսքերը, նրանք ընդունեցին նրան ուրախությամբ. և նրանք ասացին նրան. Տո՛ւր մեզ քո զինուց, որ խմենք. մենք ուրախ ենք, որ այսպիսով դուք զինի եք վերցրել ձեզ հետ, քանզի մենք հոգնած ենք:

10 Բայց Լամանն ասաց նրանց. Եկե՛ք պահենք մեր զինուց, մինչև մենք գնանք՝ ճակատամարտելու Նեփիացիների դեմ: Բայց այս ասածը միայն դարձրեց նրանց ավելի ծարավի՝ խմելու այդ զինուց:

11 Քանզի նրանք ասացին. Մենք հոգնած ենք, հետևաբար եկեք վերցնենք զինուց, և ոչ շատ անց, մենք պիտի մեր օրաբաժին զինին ստանանք, որը կգորացնի մեզ՝ զնալու Նեփիացիների դեմ:

12 Եվ Լամանն ասաց նրանց. Դուք կարող եք անել ըստ ձեր ցանկության:

13 Եվ եղավ այնպես, որ նրանք խմեցին զինուց ազատորեն. և դա հաճելի էր նրանց քիմքին, այդ պատճառով նրանք խմեցին ավելի ազատորեն. և այն թունդ էր՝ պատրաստված լինելով իր թնդությամբ:

14 Եվ եղավ այնպես, նրանք խմեցին և ուրախացան, և շատ

չանցած, նրանք բոլորը հարբած էին:

15 Եվ այժմ, երբ Լամանը և իր մարդիկ տեսան, որ նրանք բոլորը հարբած էին, և խորը քնի մեջ էին, նրանք վերադարձան Մորոնիի մոտ ու պատմեցին նրան բոլոր բաները, որ պատահել էր:

16 Եվ արդ, սա Մորոնիի ծրագրի համաձայն էր: Եվ Մորոնին նախապատրաստել էր իր մարդկանց պատերազմի զենքերով. և նա զնաց Գեդ քաղաքը, մինչ Լամանացիները խորը քնի մեջ էին ու հարբած, և զցեցին ներս պատերազմի զենքեր՝ գերիներին, այնպես որ նրանք բոլորը զինվեցին.

17 Այո, երբ Մորոնին զինեց բոլոր այդ գերիներին, նույնիսկ նրանց կանանց, և բոլոր նրանց երեխաներին, բոլոր նրանց, ովքեր ի վիճակի էին պատերազմի զենք կրել. և բոլոր այդ բաներն արվեցին խորը լռության մեջ:

18 Բայց, եթե նրանք արթնացնեին Լամանացիներին, ահա, նրանք հարբած էին, և Նեփիացիները կարող էին սպանել նրանց:

19 Բայց ահա, սա չէր Մորոնիի ցանկությունը. նա չէր հրճվում սպանությամբ կամ «արյունահեղությամբ, այլ նա հրճվում էր՝ փրկելով իր ժողովրդին կործանումից. և այդ պատճառով, որպեսզի անարդարություն չբերի իր վրա, նա չէր կամենում հարձակվել Լամանացիների վրա և կործանել նրանց իրենց հարբած վիճակում:

20 Բայց նա հասել էր իր իղձերին. քանզի նա զինել էր այն Նեփիացի գերիներին, ովքեր քաղաքի պատերի ներսում էին, և տվել էր նրանց ուժ՝ ձեռք բերելու

այն մասերի վերահսկողությունը, որոնք պատերի ներսում էին:

21 Եվ ապա նա կարգադրեց այն մարդկանց, ովքեր իր հետ էին, մի քայլ ետ քաշվել նրանցից, և շրջապատել Լամանացիների զորքերը:

22 Արդ ահա, այս արվեց գիշեր ժամանակ, այնպես որ, երբ Լամանացիներն առավոտյան արթնացան, նրանք տեսան, որ իրենք շրջապատված էին Նեփիացիների կողմից՝ դրսից, և որ իրենց գերիները զինված էին՝ ներսից:

23 Եվ այսպես նրանք տեսան, որ Նեփիացիները զորություն ունեն իրենց վրա. և այս հանգամանքներում նրանք գտան, որ նպատակահարմար չէր, որ իրենք կռվեն Նեփիացիների հետ. հետևաբար, նրանց զլխավոր զորապետերը պահանջեցին նրանց պատերազմի զենքերը, և նրանք առաջ բերեցին դրանք ու զցեցին դրանք Նեփիացիների ոտքերի մոտ, ողորմություն աղերսելով:

24 Արդ ահա, այս էր Մորոնիի իղծը: Նա վերցրեց նրանց ռազմագերի, և վերցրեց քաղաքի տիրապետությունը և կարգադրեց, որ բոլոր գերիները, ովքեր Նեփիացի էին, ազատվեն. և նրանք միացան Մորոնիի բանակին և մեծ ուժ էին նրա բանակի համար:

25 Եվ եղավ այնպես, որ նա կարգադրեց Լամանացիներին, որոնց նա գերի էր վերցրել, որ նրանք սկսեն ամրությունների ուժեղացման մի՝ «աշխատանք»՝ Գեդ քաղաքի շուրջբոլորը:

26 Եվ եղավ այնպես, որ երբ նա ամրացրեց Գեդ քաղաքը՝ ըստ իր իղծերի, նա կարգադրեց, որ իր գերիները տարվեն Լիառատ

քաղաքը. և նա հսկում էր նաև այդ քաղաքը՝ չափազանց հզոր ուժով:

27 Եվ եղավ այնպես, որ նրանք, չնայած բոլոր Լամանացիների խարդավանքներին, պահեցին ու պաշտպանեցին բոլոր գերիներին, ում նրանք վերցրել էին, և նաև պահպանեցին ողջ տարածքն ու դիրքերը, որոնք իրենք էտ էին նվաճել:

28 Եվ եղավ այնպես, որ Նեփիացիները կրկին սկսեցին լինել հաղթական, և վերականգնել իրենց իրավունքներն ու իրենց արտոնությունները:

29 Շատ անգամներ Լամանացիները փորձեցին շրջապատել նրանց գիշերով, բայց այս փորձերի ժամանակ նրանք կորցրեցին շատերին, որպես գերիներ:

30 Եվ շատ անգամներ նրանք փորձեցին սպասավորել իրենց զինուց Նեփիացիներին, որ կարողանային կործանել նրանց՝ թույնով կամ հարբեցնելով:

31 Բայց ահա, Նեփիացիները դանդաղ չէին Տիրոջը՝ իրենց Աստծուն՝ «հիշելիս, իրենց այս չարչարանքի ժամանակ: Նրանց հնարավոր չէր զգել իրենց ծուղակները. այդ, նրանք չէին ճաշակում նրանց զինուց, մինչև առաջինը Լամանացի գերիներից ոմանց չէին տալիս:

32 Եվ նրանք այսպես զգույշ էին, որ ոչ մի թույն չտրվեր իրենց մեջ. քանզի եթե նրանց զինին թունավորեր մի Լամանացու, այն կթունավորեր նաև մի Նեփիացու. և այսպես նրանք փորձում էին բոլոր նրանց խմիչքները:

33 Եվ այժմ եղավ այնպես, որ Մորոնիին անհրաժեշտ էր նախապատրաստություններ տեսնել՝

Մորիանթոն քաղաքի վրա հարձակվելու համար. քանզի ահա, Լամանացիներն իրենց աշխատանքներով, ամրացրել էին Մորիանթոն քաղաքը, մինչև որ այն դարձել էր մի չափազանց ամուր քերդ:

34 Եվ նրանք շարունակ նորանոր ուժեր էին բերում այդ քաղաքը, և նաև նորանոր պարենի պաշարներ:

35 Եվ այսպես ավարտվեց Նեփիի ժողովրդի վրա դատավորների կառավարման քսանեփներորդ տարին:

ԳԼՈՒԽ 56

Հելամանը մի նամակ է ուղարկում Մորոնիին, շարադրելով պատերազմի վիճակը Լամանացիների հետ – Անթիպոսը և Հելամանը հասնում են մեծ հաղթանակի Լամանացիների հանդեպ – Հելամանի երկու հազար դեռահաս որդիները կռվում են հրաշագործ գորությամբ, և նրանցից ոչ մեկը չի սպանվում: Հատված 1 մոտ 62թ. Ք.ծ.ա., հատվածներ 2–19՝ մոտ 66թ. Ք.ծ.ա., և հատվածներ 20–57՝ մոտ 65–64թթ. Ք.ծ.ա.:

Եվ արդ եղավ այնպես, դատավորների կառավարման երեսուներորդ տարվա սկզբին, առաջին ամսի երկրորդ օրը, Մորոնիին, երկրի այդ մասում ժողովրդի գործերի մասին հաղորդող մի նամակ ստացավ Հելամանից:

2 Եվ սրանք են այն խոսքերը, որ նա գրել էր՝ ասելով. Իմ շատ սիրելի եղբայր Մորոնի, ինչպես Տերում, այնպես էլ մեր պատերազմի նեղություններում. ահա, իմ

սիրելի՛ եղբայր, ես որոշ բան ունեմ ասելու քեզ, մեր պատերազմի վերաբերյալ՝ երկրի այս մասում:

3 Ահա, Մերկու հազարն այն մարդկանց որդիներից, որոնց Ամունը վար բերեց Նեփիի երկրից դուրս, – արդ դուք գիտեք, որ սրանք հետնորդներն էին Լամանի, որը մեր հայր Լեֆիի ամենավազ որդին էր.

4 Արդ կարիք չկա, որ ես կրկնեմ քեզ նրանց ավանդությունների կամ նրանց անհավատության մասին, քանզի դու գիտես բոլոր այդ բաների մասին, –

5 Հետևաբար, ինձ բավարարում է, որ ասեմ քեզ, որ այս պատանիներից երկու հազարը վերցրել են իրենց պատերազմի զենքերը, և կամեցել, որ ես լինեմ իրենց առաջնորդը. և մենք առաջ ենք եկել՝ մեր երկիրը պաշտպանելու համար:

6 Եվ արդ, դու նաև գիտես Մուխտի մասին, որը նրանց հայրերն արել էին, որ նրանք չէին վերցնելու իրենց պատերազմի զենքերն իրենց եղբայրների դեմ՝ արյուն քափելու համար:

7 Բայց քսանվեցերորդ տարում, երբ նրանք տեսան իրենց համար մեր չարչարանքներն ու մեր նեղությունները, նրանք մոտ էին ուխտը Պրոֆետին, որն իրենք արել էին, և վերցնելու իրենց պատերազմի զենքերը՝ ի պաշտպանություն մեզ:

8 Բայց ես թույլ չտվեցի նրանց, որ նրանք դրժեն այդ ուխտը, որ նրանք արել էին՝ ենթադրելով, որ Աստված կգորացնի մեզ այնքան, որ մենք այլևս չենք տառապի՝ երդման կատարման պատճառով, որ նրանք արել էին:

9 Բայց ահա, այստեղ կա մի քան, որում մենք կարող ենք ունենալ մեծ ուրախություն: Քանզի ահա, քանակվեցերորդ տարում, ես՝ Հելամանս, քայլեցի այս երկու հազար պատանիների գլուխն անցած դեպի Հուդայի քաղաքը՝ օգնելու Անթիփուսին, որին դու առաջնորդ էիր նշանակել երկրի այդ մասի ժողովրդի վրա:

10 Եվ ես միացրի իմ երկու հազար որդիներին (քանզի նրանք արժանի են կոչվելու որդիներ) Անթիփուսի բանակին, որի ուժով Անթիփուսն անչափ ուրախացավ. քանզի ահա, նրա զորքը կրճատվել էր Լամանացիների կողմից, որովհետև նրանց ուժերը սպանել էին մեր մարդկանցից մի հսկայական թիվ, որի պատճառով մենք առիթ ունենք սզալու:

11 Այնուամենայնիվ, մենք կարող ենք մխիթարել մեզ նրանով, որ նրանք մահացել են իրենց երկրի և իրենց Աստծո գործի համար, այո, և նրանք՝ տրջանիկ են:

12 Եվ Լամանացիները մահ կախել են շատ գերիներ, որոնցից բոլորը գլխավոր զորապետեր են, քանզի ուրիշ ոչ մեկի նրանք չեն թողել կենդանի: Եվ մենք ենթադրում ենք, որ նրանք հիմա, այս պահին, Նեփիի երկրում են. դա այդպես է, եթե նրանք չեն սպանվել:

13 Եվ արդ, սրանք են այն քաղաքները, որոնց տիրապետությունը վերցրել են Լամանացիները՝ թափելով արյունն այնքան բազում մեր քաջարի մարդկանց.

14 Մանթիի երկիրը, կամ Մանթիի քաղաքը և Ջիզրոմի քաղաքը,

Կումենիի քաղաքը և Անթիփայի քաղաքը:

15 Եվ սրանք են այն քաղաքները, որոնց նրանք տիրացել էին, երբ ես հասա Հուդայի քաղաքը. և ես գտա Անթիփուսին և նրա մարդկանց իրենց կարողությամբ տքնելիս՝ քաղաքն ամրացնելու համար:

16 Այո, և նրանք խոնջացած էին մարմնով, ինչպես մահ հոգով, քանզի նրանք քաջաբար կռվել էին ցերեկով և տքնել՝ գիշերով, իրենց քաղաքները պաշտպանելու համար. և այսպես, նրանք տարել էին ամեն տեսակի մեծ չարչարանքներ:

17 Եվ արդ, նրանք վճռական էին հաղթել այս տեղում կամ մեռնել. հետևաբար, դու կարող ես լավ պատկերացնել, որ այս փոքր ուժը, որը ես բերել էի ինձ հետ, այո, իմ այն որդիները, տվեցին նրանց մեծ հույսեր և շատ ուրախություն:

18 Եվ արդ եղավ այնպես, որ երբ Լամանացիները տեսան, որ Անթիփուսը ստացել էր մի ավելի մեծ ուժ՝ իր բանակի համար, նրանք հարկադրվեցին Ամնորոնի կարգադրություններով չգալ Հուդայի քաղաքի դեմ, կամ մեր դեմ՝ ճակատամարտելու:

19 Եվ այսպես էինք մենք հովանավորված Տիրոջ կողմից. քանզի եկած լինեին նրանք մեզ վրա՝ մեր այս թուլության մեջ, նրանք միզուցե կկործանեին մեր փոքր բանակը. բայց այսպես մենք պահպանվեցինք:

20 Նրանց հրամայված էր Ամնորոնի կողմից պահել այն քաղաքները, որոնք իրենք վերցրել էին: Եվ այսպես ավարտվեց քսանվեցերորդ տարին: Եվ քանակյո-

քերորդ տարվա սկզբում մենք նախապատրաստել էինք մեր քաղաքը և մեզ՝ պաշտպանության համար:

21 Արդ, մենք փափագում էինք, որ Լամանացիները գալին մեզ վրա. քանզի մենք չէինք փափագում հարձակում գործել նրանց վրա իրենց բերդերում:

22 Եվ եղավ այնպես, որ մենք լրտեսներ էինք պահում դրսի շրջակայքում՝ հետևելու Լամանացիների շարժումներին, որ նրանք չկարողանային անցնել մեր մոտով՝ գիշերով, ոչ էլ ցերեկով հարձակում գործեին մեր մյուս քաղաքների վրա, որոնք դեպի հյուսիս էին:

23 Քանզի մենք գիտեինք, որ այն քաղաքներում նրանք բավականաչափ ուժեղ չէին՝ դիմավորելու նրանց. հետևաբար, մենք փափագում էինք, եթե նրանք անցնեին մեր մոտով, հարձակվել նրանց վրա թիկունքից, և այսպես շրջափակել նրանց թիկունքից, միևնույն ժամանակ դիմավորել նրանց ճակատից: Մենք կարծում էինք, որ մենք կարող էինք հաղթել նրանց, բայց ահա, մենք հուսախաբվեցինք մեր այս իղձում:

24 Նրանք չէին համարձակվում անցնել մեր մոտով՝ իրենց ամբողջ բանակով, ոչ էլ համարձակվում էին մի մասի հետ, որ չլիներ թե իրենք բավականաչափ ուժեղ չլինեին և պարտվեին:

25 Ոչ էլ համարձակվում էին ընթանալ ներքև՝ Չարահեմլայի քաղաքի դեմ. ոչ էլ համարձակվում էին անցնել Սիդոնի ակունքի վրայով՝ դեպի Նեփիայի քաղաքը:

26 Եվ այսպես, իրենց ուժերով, նրանք վճռական էին պահպանել

այն քաղաքները, որոնք իրենք վերցրել էին:

27 Եվ արդ, եղավ այնպես, այս տարվա երկրորդ ամսում, մեզ համար բերվեց շատ պարեն՝ այն իմ երկու հազար որդիների հայրերի կողմից:

28 Եվ նաև մեզ մոտ ուղարկեցին երկու հազար մարդ՝ Չարահեմլայի երկրից: Եվ այսպես, մենք նախապատրաստված էինք տասը հազար մարդկանցով և պարենով՝ նրանց համար, և նաև նրանց կանանց ու նրանց երեխաների համար:

29 Եվ Լամանացիները՝ տեսնելով մեր ուժերի օրեցօր այսպես մեծանալը և պարենի ժամանելը՝ մեր օժանդակության համար, նրանք սկսեցին զարհուրել և սկսեցին արտազրոհի ելնել, եթե հնարավոր լիներ՝ կասեցնելու մեր պարենի և ուժերի ստացումը:

30 Արդ, երբ մենք տեսանք, որ Լամանացիները սկսեցին անհանգստանալ այս ձևով, մենք ցանկացանք մի հնարք գործի դնել նրանց վրա. հետևաբար, Անթիփուսը կարգադրեց, որ ես քայլեի առաջ, իմ փոքր որդիների հետ՝ դեպի հարևան քաղաքը, իբրև թե մենք պարեն էինք տանում հարևան քաղաքը:

31 Եվ մենք պիտի շարժվեինք Անթիփարա քաղաքի մոտով, իբրև թե մենք գնում էիք ծովերի սահմաններին մոտիկ հեռավոր քաղաքը:

32 Եվ եղավ այնպես, որ մենք շարժվեցինք առաջ, իբրև թե մեր պարենով գնալու դեպի այդ քաղաքը:

33 Եվ եղավ այնպես, որ Անթիփուսը շարժվեց առաջ՝ իր գորքի մի մասի հետ, թողնելով մնացա-

ծին՝ պաշտպանելու քաղաքը: Բայց նա առաջ չընթացավ, մինչև ես առաջ գնացի իմ փոքր զորքով և եկա մոտիկ Անթիփարա քաղաքին:

34 Եվ արդ, Անթիփարա քաղաքում տեղադրված էին Լամանացիների ամենաուժեղ զորքերը. այո, ամենամեծաթիվը:

35 Եվ եղավ այնպես, որ երբ նրանք տեղեկացվեցին իրենց լրտեսների կողմից, նրանք առաջ եկան իրենց զորքով և շարժվեցին մեր դեմ:

36 Եվ եղավ այնպես, որ մենք փախանք նրանց առջևից դեպի հյուսիս: Եվ այսպես, Լամանացիների ամենահզոր բանակը մենք առաջնորդեցինք հեռու.

37 Այո, նույնիսկ զգալի տարածություն, այնպես որ, երբ նրանք տեսան Անթիփուսի բանակը՝ իր ողջ զորությամբ իրենց հետապնդելիս, նրանք չթեքվեցին ոչ աջ, ոչ էլ ձախ, այլ շարունակեցին իրենց արշավն ուղիղ ընթացքով՝ մեր ետևից. և ինչպես մենք ենք ենթադրում, նրանց մտադրությունն էր սպանել մեզ, նախքան Անթիփուսը կհասներ իրենց ետևից, և այդ, որպեսզի իրենք չկարողանային շրջափակվել մեր մարդկանց կողմից:

38 Եվ արդ, Անթիփուսը, տեսնելով մեր վտանգը, արագացրեց իր զորքի երթը: Բայց ահա, գիշեր էր. հետևաբար, նրանք չհասան մեզ, ոչ էլ Անթիփուսը հասավ նրանց. ուստի, մենք ճամբար դրեցինք գիշերվա համար:

39 Եվ եղավ այնպես, որ մինչև առավոտյան լուսաբացը, ահա, Լամանացիները հետապնդել էին մեզ: Այժմ մենք բավականաչափ ուժեղ չէինք՝ կռվելու նրանց հետ.

այո, ես չէի կամենում թույլ տալ, որ իմ փոքր որդիներն ընկնեին նրանց ձեռքը. հետևաբար, մենք շարունակեցինք մեր երթը, և մենք ուղղեցինք մեր երթը՝ դեպի անապատ:

40 Այժմ նրանք չէին համարձակվում շրջվել աջ կամ ձախ, որ չլիներ թե իրենք շրջապատվեին. ոչ էլ ես էի կամենում շրջվել աջ կամ ձախ, որ չլիներ թե նրանք հասնեին ինձ, և մենք չէինք կարող կանգնել նրանց դեմ, այլ կսպանվեինք, և նրանք փախուստի կդիմեին. և այսպես, մենք փախչում էինք ամբողջ այդ օրը դեպի անապատի խորքը, նույնիսկ մինչև մթնելը:

41 Եվ եղավ այնպես, որ կրկին, երբ առավոտյան լույսը բացվեց, մենք տեսանք Լամանացիներին մեզ վրա գալիս, և մենք փախանք նրանց առջևից:

42 Բայց եղավ այնպես, որ նրանք մեզ չհետապնդեցին հեռու, մինչև իրենց կանգ առնելը. և դա յոթերորդ ամսի երրորդ օրվա առավոտյան էր:

43 Եվ արդ, արդյոք Անթիփուսի կողմից էին նրանք հանկարծակիի բերվել, մենք չգիտեինք, բայց ես ասացի իմ մարդկանց. Ահա, մենք չգիտենք, բայց նրանք երևի կանգ են առել այն նպատակով, որ մենք զանք իրենց դեմ, որ նրանք կարողանան բռնել մեզ իրենց ծուղակում.

44 Հետևաբար, ի՞նչ եք ասում դուք, իմ որդիներ, կզնա՞ք նրանց դեմ ճակատամարտելու:

45 Եվ արդ, ես ասում եմ քեզ, իմ սիրելի՛ եղբայր Մորոնի, որ ես երբեք չէի տեսել այդպիսի մեծ «արիություն, ո՛չ, ոչ էլ բոլոր Նեփիացիների մեջ:

46 Քանզի ինչպես ես էի միշտ նրանց կոչում իմ որդիներ (քանզի նրանք՝ նրանցից բոլորը, շատ երիտասարդ էին), ճիշտ նույնպես նրանք ասացին ինձ. Հայր, ահա, մեր Աստված մեզ հետ է, և նա թույլ չի տա, որ մենք ընկնենք. ուրեմն եկեք առաջ գնանք. մենք չէինք սպանի մեր եղբայրներին, եթե նրանք մեզ հանգիստ թողնեին. հետևաբար, եկեք գնանք, որ չլինի թե նրանք հաղթեն Անթիփուսի գործին:

47 Արդ, նրանք երբեք չէին կռվել, սակայն նրանք չէին վախենում մահից. և նրանք ավելի շատ մտածում էին իրենց հայրերի «ազատության մասին, քան իրենց կյանքի մասին. այո նրանք սովորեցվել էին իրենց ղմայրերի կողմից, որ եթե նրանք չկասկածեին, Աստված կազատեր նրանց:

48 Եվ նրանք կրկնեցին ինձ իրենց մայրերի խոսքերն՝ ասելով. Մենք չենք կասկածում, մեր մայրերը գիտեին դա:

49 Եվ եղավ այնպես, որ ես իմ երկու հազարով վերադարձա այն Լամանացիների դեմ, ովքեր հետապնդել էին մեզ: Եվ այժմ ահա, Անթիփուսի գործերը հասել էին նրանց, և մի սուկալի ճակատամարտ էր սկսվել:

50 Անթիփուսի բանակը, այդպիսի կարճ ժամանակահատվածում՝ իրենց երկար արշավանքի պատճառով, լինելով հոգնած, քիչ էր մնում ընկնեին Լամանացիների ձեռքը. և վերադարձած չլինելի ես, իմ երկու հազարի հետ, նրանք կհասնեին իրենց նպատակին:

51 Քանզի Անթիփուսն ընկել էր սրից, և նրա առաջնորդներից

շատերը՝ իրենց հոգնածության պատճառով, որն առաջացել էր իրենց արշավանքի արագությունից. ուստի, Անթիփուսի մարդիկ, լինելով խառնված իրենց առաջնորդների ընկնելուց, սկսեցին նահանջել Լամանացիների առջև:

52 Եվ եղավ այնպես, որ Լամանացիները համարձակություն ստացան և սկսեցին հետապնդել նրանց. և այսպես, Լամանացիները հետապնդում էին նրանց՝ մեծ եռանդով, երբ Հելամանը եկավ նրանց թիկունքից իր երկու հազարի հետ և սկսեց սաստիկ կոտորել նրանց՝ այնքան, որ Լամանացիների ամբողջ բանակը կանգ առավ և շուտ եկավ դեպի Հելամանը:

53 Այժմ, երբ Անթիփուսի մարդիկ տեսան, որ Լամանացիները շրջվել էին հակառակ կողմը, նրանք ի մի հավաքեցին իրենց մարդկանց և եկան կրկին Լամանացիների թիկունքի վրա:

54 Եվ այժմ, եղավ այնպես որ մենք՝ Նեփիի ժողովուրդը, Անթիփուսի մարդիկ և ես՝ իմ երկու հազարով, շրջապատեցինք Լամանացիներին և կոտորեցինք նրանց. այո, այնպես որ նրանք հարկադրված էին հանձնել իրենց պատերազմի զենքերը, և նաև իրենք իրենց, որպես ռազմագերիներ:

55 Եվ արդ եղավ այնպես, որ երբ նրանք անձնատուր եղան մեզ, ահա, ես հաշվեցի այն պատանիներին, որոնք կռվել էին ինձ հետ, վախենալով, որ չլինեթե նրանցից շատերը սպանված լինեին:

56 Բայց ահա, ի մեծ ուրախություն ինձ, նրանցից «ոչ մի հոգի չէր ընկել գետնին. այո, և նրանք կռվել էին, կարծես Աստծո ուժով.

այո, երբեք հայտնի չէին եղել մարդիկ, որ կռված լինեին այդպիսի զարմանահրաշ ուժով. և այնպիսի հզոր զորությամբ էին նրանք հարձակվում Լամանացիների վրա, որ նրանք զարհուրեցնում էին նրանց. և այս պատճառով Լամանացիները հանձնվեցին՝ որպես ռազմագերիներ:

57 Եվ քանի որ մենք տեղ չունեինք մեր գերիների համար, որ մենք կարողանայինք հսկել նրանց՝ պահելու նրանց Լամանացիների զորքերից, հետևաբար, մենք ուղարկեցինք նրանց Չարահեմլայի երկիրը, և նրանց հետ՝ Անթիփուսի այն մարդկանցից մի մասին, որոնք չէին սպանվել. իսկ մնացածին ես վերցրեցի և միավորեցի նրանց իմ դեռահաս «Ամնոնացիներին, և մենք երթի ելանք ետ՝ դեպի Հուդայի քաղաքը:

ԳԼՈՒԽ 57

Չելամանը շարադրում է Անթիփարայի գրավումը, և Կումենիի հանձնումն ու ավելի ուշ՝ պաշտպանությունը – Նրա Ամնոնացի պատանիները կռվում են քաջաբար. բոլորը վիրավորվում են, բայց ոչ մեկը չի սպանվում – Գեղը հաղորդում է Լամանացի գերիների սպանվելը և փախուստը: Մոտ 63բ. Զ.ծ.ա.:

Եվ արդ, եղավ այնպես, որ ես ստացա մի նամակ Ամնորոնից՝ քազավորից, հաղորդելով, որ եթե ես հանձնեի այն ռազմագերիներին, որոնց մենք վերցրել էինք, որ նա մեզ կհանձներ Անթիփարայի քաղաքը:

2 Բայց ես ուղարկեցի մի նամակ

քազավորին, որ մենք վստահ էինք, մեր ուժերը բավարար էին՝ վերցնելու Անթիփարայի քաղաքը մեր ուժով. և հանձնելով գերիներին, այդ քաղաքի համար, մենք պիտի մեզ ամմիտ համարեինք. և որ մենք կհանձնեինք մեր գերիներին միայն փոխանակմամբ:

3 Եվ Ամնորոնը մերժեց իմ նամակը, քանզի նա չկամեցավ փոխանակել գերիներ. ուստի, մենք սկսեցինք պատրաստություններ տեսնել՝ զնալու Անթիփարայի քաղաքի դեմ:

4 Բայց Անթիփարայի ժողովուրդը թողեց քաղաքը, և փախավ դեպի իրենց մյուս քաղաքները, որոնց նրանք տիրացել էին՝ ամրացնելու դրանք. և այսպես Անթիփարայի քաղաքն ընկավ մեր ձեռքը:

5 Եվ այսպես ավարտվեց դատավորների կառավարման քաանությունը տարին:

6 Եվ եղավ այնպես, որ քսանևիններորդ տարվա սկզբին մենք ստացանք պարենի պաշար, և նաև համալրում մեր բանակին, Չարահեմլայի երկրից, և շրջակա երկրից, թվով վեց հազար մարդ, բացի Ամնոնացիների վաթսուն «որդիներից, ովքեր եկել էին՝ միանալու իրենց եղբայրներին, իմ երկու հազարանոց փոքր խմբին: Եվ այժմ ահա, մենք ուժեղ էինք, այո, և մենք ունեինք նաև առատ պարեն՝ բերված մեզ համար:

7 Եվ եղավ այնպես, որ մեր փափագն էր՝ ճակատամարտ մղել այն բանակի հետ, որը տեղադրված էր՝ պաշտպանելու Կումենի քաղաքը:

8 Եվ այժմ ահա, ես ցույց կտամ

ձեզ, որ շուտով մենք իրականացրեցինք մեր փափագը. այո, մեր գորեղ ուժով կամ մեր գորեղ ուժի մի մասով, մենք գիշերով շրջապատեցինք Կուսմենի քաղաքը, մի քիչ ավելի շուտ, քան նրանք կատանային պարենի պաշար:

9 Եվ եղավ այնպես, որ մենք ճամբար էինք դրել քաղաքի շուրջը շատ գիշերների ընթացքում. սակայն մենք քնում էինք մեր սրերի վրա և պահում պահակներ, որպեսզի Լամանացիները չկարողանային գալ մեզ վրա գիշերով և սպանեին մեզ, որը նրանք փորձեցին շատ անգամներ. բայց քանի անգամ որ նրանք փորձեցին այս, նրանց արյունը թափվեց:

10 Վերջապես նրանց պարենը եկավ, և նրանք քիչ էր մնում քաղաք մտնելն գիշերով: Եվ մենք, Լամանացի լինելու փոխարեն, Նեփիացի էինք. հետևաբար, մենք վերցրեցինք նրանց և նրանց պարենը:

11 Եվ չնայած Լամանացիներն այս ձևով կտրված լինելով իրենց օժանդակությունից, նրանք դեռ վճռական էին՝ պահել քաղաքը. հետևաբար, անհրաժեշտ դարձավ, որ մենք վերցնեինք այդ պարենը և ուղարկեինք Հուդա, իսկ մեր գերիներին՝ Չարահեմլայի երկիրը:

12 Եվ եղավ այնպես, որ շատ օրեր չէին անցել, մինչև Լամանացիները սկսեցին կորցնել օգնության բոլոր հույսերը. հետևաբար, նրանք հանձնեցին քաղաքը մեր ձեռքը. և այսպես, մենք իրականացրեցինք Կուսմենի քաղաքը ձեռք բերելու հետ կապված մեր ծրագիրը:

13 Բայց եղավ այնպես, որ մեր գերիներն այնքան մեծաթիվ էին, որ չնայած մեր թվի վիթխարիու-

թյանը, մենք ստիպված էինք գործադրել մեր ամբողջ ուժը՝ պահելու նրանց, այլապես նրանց մահվան դատապարտել:

14 Քանզի ահա, նրանք դուրս էին ճեղքում մեծ թվաքանակով, և կռվում էին քարերով, և մահակներով, կամ ինչ բան որ ընկնում էր նրանց ձեռքը, այնքան, որ մենք սպանեցինք նրանցից ավելի քան երկու հազարին՝ նրանց գերի հանձնվելուց հետո:

15 Հետևաբար, դարձավ անհրաժեշտ մեզ համար, որ մենք վերջ դնեինք նրանց կյանքին, կամ հսկեինք նրանց սուրը ձեռքներիս, ընդհուպ մինչև Չարահեմլայի երկիրը. և նաև մեր պարենը հազիվ էր բավարարում մեր սեփական ժողովրդին, չնայած նրան, ինչ մենք խել էինք Լամանացիներից:

16 Եվ այժմ, այդ օրհասական պայմաններում դարձավ շատ լուրջ խնդիր վճռել ռազմագերիների հետ կապված հարցը. այնուամենայնիվ, մենք որոշեցինք ուղարկել նրանց ներքև՝ դեպի Չարահեմլայի երկիրը. հետևաբար, մենք ընտրեցինք մեր մարդկանցից մի մասին, և տվեցինք նրանց հսկողությունը մեր գերիների վրա՝ գնալու ներքև՝ դեպի Չարահեմլայի երկիրը:

17 Բայց եղավ այնպես, որ հաջորդ օրը նրանք վերադարձան: Եվ այժմ ահա, մենք նրանց չհարցրեցինք գերիների մասին. քանզի, ահա, Լամանացիները մեզ վրա էին եկել, և նրանք ժամանակին վերադարձան՝ փրկելու մեզ նրանց ձեռքն ընկնելուց: Քանզի, ահա, Ամմորոնն ուղարկել էր պարենի նոր պաշար՝ օժանդակելու նրանց, և նաև տղամարդկանց մի ստվար զորք:

18 Եվ եղավ այնպես, որ այն մարդիկ, որոնց մենք ուղարկել էինք գերիների հետ, ժամանակին հասան՝ կասեցնելու նրանց, երբ նրանք քիչ էր մնում հաղթեին մեզ:

19 Բայց ահա, իմ երկու հազար և վաթսուանոց փոքր ջոկատը կոչում էր առավելագույն մոլեգնությամբ. այո, նրանք անսասան էին Լամանացիների առջև, և մատակարարում էին մահ բոլոր նրանց, ովքեր դիմադրում էին իրենց:

20 Եվ այն ժամանակ, երբ մեր զորքի մնացածը քիչ էր մնում տեղի տար Լամանացիների առջև, ահա այն երկու հազար և վաթսուան անսասան էին ու անվեհեր:

21 Այո, և նրանք հնազանդվում և ձգտում էին ճշգրիտ կատարել հրամանի ամեն մի բառը. այո, և ճիշտ իրենց հավատքի համաձայն կատարվեց նրանց համար. և ես հիշեցի խոսքերը, որ նրանք ասացին ինձ, որ իրենց մայրերը սովորեցրել էին իրենց:

22 Եվ այժմ ահա, դա իմ այս որդիներն էին և այն մարդիկ, ովքեր ընտրվել էին՝ փոխադրելու գերիներին, ում մենք պարտական ենք այս մեծ հաղթանակի համար. քանզի այդ նրանք էին, ովքեր պարտության մատնեցին Լամանացիներին. հետևաբար, նրանք ետ քշվեցին դեպի Մանթիի քաղաքը:

23 Եվ մենք պահեցինք մեր քաղաք Կումենին, և բոլորս չկոտորվեցինք սրից. սակայն մենք կրել էինք մեծ կորուստ:

24 Եվ եղավ այնպես, որ Լամանացիների փախչելուց հետո, ես անմիջապես կարգադրություններ

արեցի, որ իմ տղամարդիկ, ովքեր վիրավորվել էին, վերցվեն մեռածների միջից, և կարգադրեցի, որ նրանց վերքերը կապվեն:

25 Եվ եղավ այնպես, որ երկու հազար և վաթսուևից կային երկու հարյուրը, որոնք ուշաքափվել էին՝ արյան կորստի պատճառով. այնուամենայնիվ, համաձայն Աստծո բարության և ի մեծ զարմանս մեզ, և նաև ի ուրախություն մեր ողջ բանակի, չկար նրանցից մեկ հոգի, որ մեռած լիներ. այո, և ոչ էլ կար մի հոգի նրանց մեջ, որ ստացած չլիներ շատ վերքեր:

26 Եվ այժմ, նրանց պահպանումն ապշեցուցիչ էր մեր ողջ բանակի համար, այո, որ նրանք պետք է խնայվեին, մինչ կային մեր եղբայրներից հազարը, ովքեր սպանվել էին: Եվ մենք արդարացիորեն վերագրում ենք դա Աստծո հրաշագործ՝ գործությանը, շնորհիվ նրանց արտասովոր հավատքի առ այն, ինչին նրանք սովորեցվել էին հավատալ, որ կա արդար Աստված, և նրանք, ովքեր չեն կասկածում, որ նրանք պետք է պահպանվեն նրա սքանչելի գործությամբ:

27 Արդ, այս էր հավատքը նրանց, որոնց մասին ես խոսեցի. նրանք երիտասարդ են, և նրանց միտքն անսասան է, և նրանք շարունակ դնում են իրենց վստահությունը՝ Աստծո վրա:

28 Եվ եղավ այնպես, որ այսպես մեր վիրավոր մարդկանց հոգ տանելուց, և մեր մեռելներին և նաև Լամանացիների մեռելներին քաղելուց հետո, որոնք շատ էին, ահա, մենք հարցրեցինք Գեդից գերիների վերաբերյալ, որոնց

հետ նրանք ճանապարհ էին ընկել զնալու ներքև՝ դեպի Ջարահեմ-լայի երկիրը:

29 Այժմ Գեղը գլխավոր գորապետն էր ջոկատի, որը նշանակված էր հսկելու նրանց՝ ընդհուպ մինչև այդ երկիրը:

30 Եվ արդ, սրանք են այն խոսքերը, որոնք Գեղն ասաց ինձ. Ահա, մենք ճանապարհ ընկանք՝ զնալու Ջարահեմ-լայի երկիրը, մեր գերիների հետ: Եվ եղավ այնպես, որ մենք հանդիպեցինք մեր զորքերի լրտեսներին, որոնք դուրս էին ուղարկվել՝ հետևելու Լամանացիների ճամբարին:

31 Եվ նրանք աղաղակեցին դեպի մեզ՝ ասելով. Ահա, Լամանացիների զորքերն արշավում են դեպի Կումենի քաղաքը. և ահա, նրանք հարձակվելու են նրանց վրա, այո, և կոտորելու են մեր ժողովրդին:

32 Եվ եղավ այնպես, որ մեր գերիները լսեցին նրանց աղաղակները, որը ստիպեց նրանց համարձակություն ստանալ. և նրանք ապստամբություն բարձրացրեցին մեր դեմ:

33 Եվ եղավ այնպես, նրանց ապստամբության պատճառով, մենք ստիպված էինք մեր սրերը բերել նրանց վրա: Եվ եղավ այնպես, որ նրանք խմբով վազեցին մեր սրերի վրա, որի ընթացքում նրանցից մեծ թվով սպանվեցին. իսկ նրանցից մնացածը դուրս ճեղքեցին և փախան մեզանից:

34 Եվ ահա, երբ նրանք փախել էին, և մենք չկարողացանք բռնել նրանց, մենք արշավի ելանք արագորեն՝ դեպի Կումենի քաղաքը. և ահա, մենք հասանք ժամանակին, որպեսզի կարողանայինք օգնել

մեր եղբայրներին քաղաքը պահպանելում:

35 Եվ ահա, մենք կրկին ազատված ենք մեր թշնամիների ձեռքից: Եվ օրինյալ է Աստծո անունը. քանզի ահա, այդ նա է, որ ազատեց մեզ. այո, որ արեց այս մեծ բանը մեզ համար:

36 Արդ, եղավ այնպես, որ ես՝ Հելամանս, երբ լսեցի Գեղի այս խոսքերը, ես լցվեցի մեծ ուրախությամբ՝ մեզ պահպանելիս Աստծո բարության պատճառով, որ մենք բոլորս չմեռանք. այո, և ես վստահ եմ, որ նրանց հոգիները, ովքեր սպանվել են, ^ամտել են իրենց Աստծո հանգիստը:

ԳԼՈՒԽ 58

Հելամանը, Գեղը և Թեոմները մի հնարքով վերցնում են Մանթի քաղաքը – Լամանացիները նահանջում են – Ամմոնի ժողովրդի որդիները պահպանվում են, քանի որ նրանք հաստատուն են կանգնած իրենց ազատության և հավատքի պաշտպանությունում: Մոտ 63–62թթ. Ք.ծ.ա.:

ԵՎ ահա, այժմ եղավ այնպես, որ մեր հաջորդ նպատակն էր ձեռք բերել Մանթիի քաղաքը. բայց ահա, չկար ոչ մի ձև, որ մենք կարողանայինք նրանց դուրս բերել քաղաքից՝ մեր փոքր ջոկատներով: Քանզի ահա, նրանք հիշում էին այն, ինչ մինչև այժմ մենք արել էինք. հետևաբար, մենք չէինք կարող ^ահրապուրել նրանց՝ իրենց բերդերից դուրս:

2 Եվ նրանք շատ ավելի մեծաթիվ էին, քան մեր բանակը, այնպես որ

մենք չէինք համարձակվում առաջ գնալ և հարձակվել նրանց վրա՝ իրենց բերդերում:

3 Այո, և դարձավ անհրաժեշտ, որ մենք օգտագործենք մեր մարդկանց՝ պահպանելու երկրի այն մասերը, որոնք մենք մեր տիրապետությանն էինք վերադարձրել. հետևաբար, նպատակահարմար դարձավ, որ մենք սպասեինք, որպեսզի Ջարահենմլայի երկրից ավելի շատ ուժ ստանայինք, և նաև պարենի նոր պաշար:

4 Եվ եղավ այնպես, որ ես, այսպիսով, մեր երկրի կառավարչի մոտ ուղարկեցի մի դեսպանություն՝ ծանոթացնելու նրան մեր ժողովրդի գործերի վերաբերյալ: Եվ եղավ այնպես, որ մենք սպասում էինք պարեն և ուժ ստանալ Ջարահենմլայի երկրից:

5 Բայց ահա, այս օգուտ բերեց մեզ, բայց քիչ. քանզի Լամանացիները նույնպես օրեցօր մեծ ուժ էին ստանում, և նաև շատ պարեն. և այսպիսին էր մեր դրությունն այս ժամանակահատվածում:

6 Եվ Լամանացիներն արտագրոհի էին ելնում մեր դեմ ժամանակ առ ժամանակ՝ վճռելով մի հնարքով կործանել մեզ. սակայն մենք չէինք կարող գալ՝ ճակատամարտելու նրանց հետ, նրանց ապաստարանների և նրանց բերդերի պատճառով:

7 Եվ եղավ այնպես, որ մենք սպասում էինք այս դժվարին պայմաններում, շատ ամիսների ընթացքում, նույնիսկ մինչև մենք քիչ էր մնում մեռնեինք ուտելիքի պակասությունից:

8 Բայց եղավ այնպես, որ մենք ստացանք ուտելիք, որն ուղեկց-

վել էր մեզ մոտ երկու հազար հոգիանոց զորքի կողմից՝ ի օժանդակություն մեզ. և այս է բոլոր օգնությունը, որ մենք ստացանք՝ պաշտպանելու մեզ և մեր երկիրը, մեր թշնամիների ձեռքն ընկնելուց, այո, կռվելու համար մի թշնամու հետ, որն անհամար էր:

9 Եվ այժմ, մեր այս դժվարությունների պատճառը, կամ պատճառը, թե ինչու նրանք մեզ չէին ուղարկում ավելի մեծ ուժ, մենք չգիտենք. դրա համար մենք վշտացած էինք, և նաև լցված վախով, որ չլիներ թե որևէ ձևով Աստծո ղատաստանները գային մեր երկրի վրա՝ ի խորտակումն և լիակատար կործանումն մեզ:

10 Հետևաբար, մենք դուրս թափեցինք մեր հոգիներն աղոթքով առ Աստված, որ նա ուժեղացներ մեզ և ազատեր մեզ մեր թշնամիների ձեռքից, այո, և նաև տար մեզ ուժ, որ մենք կարողանայինք պահպանել մեր քաղաքները և մեր հողերը և մեր ունեցվածքը մեր ժողովրդի ապրուստի համար:

11 Այո, և եղավ այնպես, որ Տերը՝ մեր Աստվածը, այցելեց մեզ հավաստիացումներով, որ նա կազատի մեզ. այո, այնպես որ նա խաղաղություն խոսեց մեր հոգիներին, և մեծ հավատք շնորհեց մեզ, և այնպես արեց, որ մենք հուսացինք մեր ազատմանը նրանով:

12 Եվ մենք արիացանք մեր փոքր ուժով, որը ստացել էինք, և վճռականությամբ լցվեցինք, որ կհաղթենք մեր թշնամիներին և՝ կպահպանենք մեր հողերն ու մեր ունեցվածքը, մեր կանանց, մեր երեխաներին և մեր՝^աազատության գործը:

13 Եվ այսպես, մենք առաջ գնացինք որչ մեր զորությամբ՝ Լամանացիների դեմ, որոնք Մանթիի քաղաքում էին. և մենք խփեցինք մեր վրաններն անապատի եզրի մոտ, որը մոտ էր քաղաքին:

14 Եվ եղավ այնպես, որ հաջորդ օրը, երբ Լամանացիները տեսան, որ մենք անապատին մոտիկ սահմաններում էինք, որը քաղաքին մոտ էր, նրանք դուրս ուղարկեցին իրենց լրտեսներին՝ մեր շրջակայքը, որպեսզի կարողանային պարզել մեր բանակի թիվն ու ուժը:

15 Եվ եղավ այնպես, որ երբ նրանք տեսան, որ մենք ուժեղ չէինք՝ ըստ մեր թվաքանակի, և վախենալով, որ մենք նրանց կկտրեինք իրենց օգնության միջոցներից, եթե իրենք դուրս չգային, ճակատամարտելու մեր դեմ, և չսպանեին մեզ, և նաև ենթադրելով, որ իրենք կկարողանային իրենց մեծաքանակ զորքերով հեշտորեն ոչնչացնել մեզ, հետևաբար, նրանք սկսեցին պատրաստություններ տեսնել՝ դուրս գալու մեր դեմ՝ ճակատամարտելու:

16 Եվ երբ մենք տեսանք, որ նրանք պատրաստություններ էին տեսնում՝ դուրս գալու մեր դեմ, ահա, ես կարգադրեցի, որ Գեդը, մարդկանց մի փոքր խմբով, քողարկվեր անապատում, և նաև, որ Թեոմները և մարդկանց մի փոքր խումբ ևս՝ քողարկվեին անապատում:

17 Արդ, Գեդը և իր մարդիկ այ կողմում էին, իսկ մյուսները՝ ձախ կողմում. և երբ նրանք այսպես քողարկվեցին, ահա, ես մնացի իմ զորքի մնացածի հետ այն մույն տեղում, որտեղ մենք սկզբում խփել էինք մեր վրանները՝ պատրաստվելով այն ժամանակի հա-

մար, երբ Լամանացիները պիտի դուրս գային՝ ճակատամարտելու:

18 Եվ եղավ այնպես, որ Լամանացիները դուրս եկան մեր դեմ իրենց սավար բանակով: Եվ երբ նրանք եկան ու քիչ էր մնում սրերով հարձակվեին մեզ վրա, ես կարգադրեցի, որ իմ մարդիկ, նրանք, ովքեր ինձ հետ էին, նահանջեն անապատի խորքը:

19 Եվ եղավ այնպես, որ Լամանացիները հետապնդեցին մեզ մեծ արագությամբ, քանզի նրանք սաստիկ փափագում էին հասնել մեզ, որպեսզի կարողանային սպանել մեզ. հետևաբար, նրանք մեզ հետապնդեցին մինչև անապատի խորքը. և մենք անցանք Գեդի և Թեոմների մեջտեղով, այնպես որ նրանք չհայտնաբերվեցին Լամանացիների կողմից:

20 Եվ եղավ այնպես, որ երբ Լամանացիներն անցել էին, կամ երբ բանակն անցել էր, Գեդը և Թեոմները բարձրացան իրենց գաղտնի տեղերից, և կասեցրեցին Լամանացիների լրտեսներին, որպեսզի նրանք չվերադառնային քաղաք:

21 Եվ եղավ այնպես, որ երբ նրանք կասեցրել էին նրանց, նրանք վազեցին դեպի քաղաք և հարձակվեցին պահակախմբի վրա, որոնց թողել էին՝ հսկելու քաղաքը, այնպես որ նրանք կոտորեցին նրանց, և վերցրեցին քաղաքի տիրապետությունը:

22 Արդ, այս արվեց, որովհետև Լամանացիները թույլ էին տվել իրենց որչ բանակը, բացի միայն մի քանի պահակներից, առաջնորդվելու դեպի անապատի խորքը:

23 Եվ եղավ այնպես, որ Գեդը և Թեոմներն այս ձևով ձեռք բերեցին տիրապետությունը նրանց բերդերի: Եվ եղավ այնպես, որ մենք

անապատում շատ ճամփորդելուց հետո վերցրեցինք մեր ուղղությամբ դեպի Ջարահեմլայի երկիրը:

24 Եվ երբ Լամանացիները տեսան, որ նրանք քայլում էին դեպի Ջարահեմլայի երկիրը, նրանք սաստիկ վախեցան, չլինեց թե մի ծրագիր էր դրված՝ տանելու իրենց կործանման. հետևաբար, նրանք սկսեցին կրկին նահանջել դեպի անապատի խորքը, այդ ճիշտ նույն ուղով ետ, որով իրենք եկել էին:

25 Եվ ահա գիշեր էր և նրանք խփեցին իրենց վրանները, քանզի Լամանացիների գլխավոր գորապետերը ենթադրել էին, որ Նեփիացիները հոգնել էին իրենց արշավի պատճառով. և ենթադրելով, որ նրանք քշել էին իրենց ամբողջ բանակը, հետևաբար, նրանք միտք չարեցին Մանթիի քաղաքի մասին:

26 Արդ եղավ այնպես, որ երբ գիշեր էր, ես կարգադրեցի, որ իմ մարդիկ չքնեն, այլ որ նրանք արշավեն առաջ՝ մեկ այլ ճանապարհով, դեպի Մանթիի երկիրը:

27 Եվ գիշերով կատարած մեր այս արշավանքի պատճառով, ահա, հաջորդ օրը մենք Լամանացիներից անցել էինք, այնպես որ մենք տեղ հասանք Մանթիի քաղաքը՝ նրանցից առաջ:

28 Եվ այսպիսով եղավ այնպես, որ այս հնարքի միջոցով մենք վերցրեցինք Մանթի քաղաքի տիրապետությունը՝ առանց արյուն թափելու:

29 Եվ եղավ այնպես, որ երբ Լամանացիների գորքերը հասան քաղաքի մոտ, և տեսան, որ մենք նախապատրաստված էինք՝ հանդիպելու նրանց, նրանք սաստիկ

ապշեցին և ցնցվեցին մեծ վախով, այնպես որ նրանք փախան անապատ:

30 Այդ, և եղավ այնպես, որ Լամանացիների գորքերը դուրս փախան երկրի բոլոր մասերից: Բայց ահա, նրանք իրենց հետ շատ կանանց ու երեխաների են տարել երկրից դուրս:

31 Եվ «այն քաղաքները, որոնք վերցվել էին Լամանացիների կողմից, դրանցից բոլորն այս ժամանակահատվածում մեր տիրապետության տակ են. և մեր հայրերը և մեր կանայք և մեր զավակները վերադառնում են իրենց տները, բոլորը, բացի նրանցից, ովքեր գերի են վերցվել ու տարվել Լամանացիների կողմից:

32 Բայց ահա, մեր գորքերը փոքր են՝ պահպանելու համար այսքան մեծ թվով քաղաքներ և այսքան մեծ տիրույթներ:

33 Բայց ահա, մենք ապավինում ենք մեր Աստծուն, որը տվել է մեզ հաղթանակ՝ այդ հողերի վրա, այնպես որ մենք ձեռք ենք բերել այն քաղաքները և այն հողերը, որոնք մեր սեփականն էին:

34 Այժմ մենք չգիտենք պատճառը, որ կառավարությունը չի տալիս մեզ ավելի շատ ուժ. ոչ էլ այն մարդիկ գիտեն, ովքեր եկան մեզ մոտ, թե ինչու մենք չենք ստացել ավելի մեծ ուժ:

35 Ահա, մենք չգիտենք, բայց միգուցե դուք անհաջողության մեջ եք, և դուք տարել եք ուժերը՝ երկրի այդ մասը. եթե այդպես է, մենք չենք ուզում տրտնջալ:

36 Իսկ եթե դա այդպես չէ, ահա, մենք վախենում ենք, որ կառավարությունում ինչ-որ «տարածայնու-

քյուն կա, որ նրանք չեն ուղարկում ավելի շատ մարդիկ՝ մեզ օգնության. քանզի մենք գիտենք, որ նրանք ավելի մեծաքանակ են, քան այն, ինչ նրանք ուղարկել են:

37 Բայց ահա, դա նշանակություն չունի, մենք վստահ ենք՝ Աստված՝ կազատի մեզ, չնայած մեր զորքերի թուլությանը, այո, և կազատի մեզ՝ մեր թշնամիների ձեռքից:

38 Ահա, այս քսանհիններորդ տարին է՝ ուշ վերջը, և մենք տիրում ենք մեր հողերին. իսկ Լամանացիները փախել են դեպի Նեփիի երկիրը:

39 Եվ Ամնոնի ժողովրդի այն որդիները, որոնց մասին ես այնքան բարեհաճորեն խոսեցի, ինձ հետ են՝ Մանթիի բաղաքում. և Տերն օգնել է նրանց, այո, և պահել է նրանց՝ սրից ընկնելուց, այնպես որ նույնիսկ՝ մեկ հոգի չի սպանվել:

40 Բայց ահա, նրանք ստացել են շատ վերքեր. այնուամենայնիվ, նրանք կանգնած են հաստատուն այն՝ մազատուռայան մեջ, որով Աստված դարձրել է նրանց ազատ. և նրանք ճշգրիտ են Տիրոջը՝ իրենց Աստծուն օրեցօր հիշելիս. այո, նրանք շարունակ պահում-պահպանում են նրա կանոնները և նրա դատաստանները և նրա պատվիրանները, և նրանց հավատքը մարգարեությունների հանդեպ՝ նրա մասին, ինչ պիտի գա, ամուր է:

41 Եվ այժմ, իմ սիրելի՛ եղբայր Մորոնի, թող Տերը՝ մեր Աստվածը, որը փրկագնել է մեզ և դարձրել ազատ, պահի քեզ շարունակ իր ներկայության մեջ. այո, և թող հովանավորի այս ժողովրդին, այնքան, որ դուք ունենաք հաջո-

ղություն ձեռք բերելու միակամությունը՝ այն ամենի, որ Լամանացիները խլել են մեզանից, որը մեր ապրուստի համար էր: Եվ այժմ ահա, ես վերջացնում եմ իմ նամակը: Ես Հելամանն եմ՝ Ալմայի որդին:

ԳԼՈՒԽ 59

Մորոնին խնդրում է Պառանհին գորացնել Հելամանի ուժերը – Լամանացիները վերցնում են Նեփիայի բաղաքը – Մորոնին բարկանում է կառավարության վրա: Մոտ 62թ. Բ.ժ.ա.:

ԱՐԴ եղավ այնպես, Նեփիի ժողովրդի վրա դատավորների կառավարման երեսուներորդ տարում, Մորոնին, Հելամանի՝ մանակը ստանալուց և կարդալուց հետո, անչափ ուրախացավ այն բարօրության համար, այո, այն մեծ հաջողության, որը Հելամանն ունեցել էր՝ ձեռք բերելով այն հողերը, որոնք կորցրել էին:

2 Այո, և նա դա հայտնի դարձրեց իր ողջ ժողովրդին՝ շրջակա ողջ երկրում, այն մասում, որտեղ ինքն էր, որ նրանք նույնպես ուրախանային:

3 Եվ եղավ այնպես, որ նա անմիջապես՝ մի նամակ ուղարկեց Պառանհին, փափագելով, որ նա կարգադրեր մարդկանց ի մի հավաքվել՝ գորացնելու Հելամանին, կամ Հելամանի զորքերը, այնպես որ նա կարողանար հեշտությամբ պահպանել երկրի այդ մասը, որը նրան այնպիսի հրաշագործությամբ հաջողվել էր վերադարձնել:

4 Եվ եղավ այնպես, հետո, երբ

37ա Գ Թագ. ԺԷ.38–39:
39ա Ալմա 56.56:

40ա սո՛ւ Անկախություն:
59 1ա Ալմա 56.1:

3ա Ալմա 60.1–3:
բ Ալմա 50.40:

Մորոնիին ուղարկել էր այս ցամա-
կը Ջարահեմլայի երկիրը, նա նո-
րից սկսեց մի ծրագիր կազմել,
որպեսզի ինքը կարողանար ձեռք
բերել այն հողերի և քաղաքների
մնացածը, որոնք Լամանացիները
վերցրել էին իրենցից:

5 Եվ եղավ այնպես, որ մինչդեռ
Մորոնիին այսպես պատրաստու-
թյուններ էր տեսնում՝ գնալու
Լամանացիների դեմ ճակատա-
մարտելու, ահա, Նեփիայի ժողո-
վուրդը, ովքեր ի մի էին հավաքվել
Մորոնիի քաղաքից, և Լեքիի
քաղաքից, և Մորիանթոնի քաղա-
քից, հարձակման ենթարկվեցին
Լամանացիների կողմից:

6 Այո, այսինքն՝ նրանք, ովքեր
հարկադրված էին եղել փախչել
Մանթիի երկրից, և շրջակա երկ-
րից, եկել էին ու միացել Լամա-
նացիներին երկրի այս մասում:

7 Եվ այսպես, լինելով չափա-
զանց մեծաթիվ, այո, և ստանալով
ուժ՝ օրեցօր, Ամմորոնիի հրամա-
նով, նրանք առաջ եկան Նեփիայի
ժողովրդի դեմ, և նրանք սկսեցին
կոտորել նրանց մի չափազանց
մեծ կոտորածով:

8 Եվ նրանց գորքերն այնքան
մեծաթիվ էին, որ Նեփիայի ժո-
ղովրդի մնացածը ստիպված էր
փախչել՝ նրանց առջևից. և նրանք
իրականում եկան ու միացան
Մորոնիի բանակին:

9 Եվ այժմ, քանի որ Մորոնիին
կարծում էր, որ պետք է մարդիկ
ուղարկված լինեին Նեփիայի քա-
ղաքը՝ ժողովրդին օգնության, պա-
հելու այդ քաղաքը, և իմանալով,
որ ավելի հեշտ էր պաշտպանել
քաղաքը՝ Լամանացիների ձեռքն
ընկնելուց, քան ետ վերցնել այն

նրանցից, նա կարծում էր, որ
նրանք հեշտությամբ կպահեին
այդ քաղաքը:

10 Հետևաբար, նա պահեց բո-
լոր իր ուժերը՝ պաշտպանելու այն
վայրերը, որոնք նա ետ էր վերցրել:

11 Եվ այժմ, երբ Մորոնիին տե-
սավ, որ Նեփիայի քաղաքը կորց-
րեցին, նա խիստ վշտացավ, և
սկսեց տարակուսել, ժողովրդի
ամբարշտության պատճառով, թե
արդյոք նրանք չէին ընկնելու
իրենց եղբայրների ձեռքը:

12 Արդ, այսպիսին էր վիճակը
նրա բոլոր գլխավոր զորավետե-
րի: Նրանք տարակուսում էին և
նաև զարմանում ժողովրդի ամ-
բարշտության համար, և դա՝
իրենց վրա Լամանացիների հա-
ջողության պատճառով:

13 Եվ եղավ այնպես, որ Մորոնիին
բարկացավ կառավարության վրա,
իրենց երկրի ազատության նկատ-
մամբ նրանց՝ անտարբերության
պատճառով:

ԳԼՈՒԽ 60

*Մորոնիին բողոքում է Պատրանին
գորքերի հանդեպ կառավարության
անուշադրության համար – Տերը
հանդուրժում է արդարների սպան-
վելը – Նեփիացիները պետք է օգ-
տագործեն բոլոր իրենց գործույ-
նը և միջոցները՝ ազատվելու իրենց
թշնամիներից – Մորոնիին սպառ-
նում է կռվել կառավարության դեմ,
եթե օգնություն չմատակարարվի իր
գորքերին: Մոտ 62թ. Ք.ժ.ա.:*

Եվ եղավ այնպես, որ նա նորից
գրեց երկրի կառավարչին, որը
Պատրանն էր, և սրանք են խոսքե-

րը, որ նա գրեց՝ ասելով. Ահա, ես ուղղում եմ իմ նամակը Պատրանին, Չարահեմլայի քաղաքում, որը՝ Պալսավոր դատավորն ու կառավարիչն է երկրի վրա, և նաև բոլոր նրանց, ովքեր ընտրվել են այս ժողովրդի կողմից՝ կառավարելու և ղեկավարելու այս պատերազմի գործերը:

2 Քանզի ահա, ես որոշ բան ունեմ ասելու նրանց՝ դատապարտության ձևով. քանզի ահա, դուք ինքներդ գիտեք, որ դուք նշանակվել եք՝ ի մի հավաքելու մարդկանց, և նրանց զինելու սրերով և թրերով, և բոլոր ձևի, ամեն տեսակի պատերազմի զենքերով, և ուղարկելու առաջ՝ Լամանացիների դեմ, որ կողմից էլ որ նրանք գան մեր երկիրը:

3 Եվ այժմ ահա, ես ասում եմ ձեզ, որ ինքս, և նաև իմ մարդիկ, և նաև, Հելամանն ու նրա մարդիկ, կրել ենք խիստ մեծ տառապանքներ. այո, նույնիսկ քաղց, ծարավ, և հոգնածություն, և բոլոր ձևի ու ամեն տեսակի չարչարանքներ:

4 Բայց ահա, եթե սա լինեք այն ամենը, ինչ մենք կրեցինք, մենք չէինք տրտնջա կամ բողոքի:

5 Սակայն ահա, մեծ եղավ կոտորածը մեր ժողովրդի մեջ. այո, հազարավորներ ընկան սրից, մինչդեռ կարող էր այլ կերպ լինել, եթե դուք տված լինեիք մեր գորքերին բավականաչափ ուժ և օգնություն նրանց համար: Այո, մեծ է եղել ձեր անփութությունը մեր հանդեպ:

6 Եվ այժմ ահա, մենք փափագում ենք իմանալ այս խիստ մեծ անփութության պատճառը. այո,

մենք փափագում ենք իմանալ ձեր անհոգ վիճակի պատճառը:

7 Մի՞թե դուք մտածում եք, որ կարող եք նստել ձեր գահերի վրա անմիտ ընդարմության մի վիճակում, մինչդեռ ձեր թշնամիները տարածում են մահվան գործը ձեր շուրջը: Այո, մինչդեռ նրանք սպանում են ձեր եղբայրներից հազարավորներին,

8 Այո, նույնիսկ նրանք, ովքեր դրել են հույսը ձեզ վրա՝ պաշտպանության համար, այո, դրել են ձեզ մի պաշտոնում, որպեսզի դուք կարողանալիք սատարել նրանց, այո, դուք կարող էիք գորքեր ուղարկել նրանց, գորացրած լինելով նրանց, և փրկած լինելով նրանցից հազարավորներին՝ սրով ընկնելուց:

9 Բայց ահա, դա բոլորը չէ, դուք նրանցից ետ եք պահել ձեր պարենը, այնպես որ շատերն են կովել և իրենց կյանքը, մինչև արյան վերջին կաթիլը, տվել հանուն իրենց մեծ իղծերի, որոնք նրանք ունեին այս ժողովրդի բարօրության համար. այո, և այս նրանք արել են, երբ նրանք քիչ էր մնում «մեռնելիս քաղցից, նրանց հանդեպ ձեր չափազանց մեծ անփութության պատճառով:

10 Եվ այժմ, իմ սիրելի՛ եղբայրներ, քանզի դուք պարտավոր եք սիրված լինել. այո, դուք պարտավոր էիք շարժվել ավելի ջանասիրաբար՝ այս ժողովրդի բարօրության և ազատության համար. բայց ահա, դուք անտեսել եք նրանց, այնպես որ հազարավորների արյունը պիտի գա ձեր գլուխների վրա վրեժխնդրության համար. այո, քանզի Աստծուն

հայտնի էին բոլոր նրանց աղա-
դակները, և բոլոր նրանց տառա-
պանքները,

11 Ահա, մի՞թե դուք կարող էիք
կարծել, որ դուք կարող էիք նստել
ձեր գահերի վրա և Աստծո չափա-
զանց բարության պատճառով կա-
րող էիք ոչինչ չանել, և նա կազա-
տեր ձեզ: Ահա, եթե դուք կարծել
եք այդպես, դուք իզուր եք կարծել:

12 Մի՞թե դուք «կարծում եք,
որովհետև ձեր եղբայրներից այդ-
քան շատերը սպանվել են, դա
նրանց ամբարշտության պատճա-
ռով է: Ես ասում եմ ձեզ՝ եթե դուք
կարծում եք այդպես, դուք իզուր
եք կարծում. քանզի ես ասում եմ
ձեզ՝ կան շատերը, որոնք ընկել
են սրից, և ահա, դա ձեր դատա-
պարտության համար է.

13 Քանզի Տերը հանդուրժում է
«արդարների սպանվելը, որպեսզի
իր արդարադատությունը և դա-
տաստանը գա ամբարշտների
վրա. հետևաբար, դուք չպետք է
կարծեք, որ արդարները կորչում
են, քանի որ նրանք սպանվում են.
այլ ահա, նրանք մտնում են Տիրոջ՝
իրենց Աստծո հանգիստը:

14 Եվ արդ ահա, ես ասում եմ
ձեզ, ես սաստիկ վախենում եմ,
որ Աստծո դատաստանները գա-
լու են այս ժողովրդի վրա, իրենց
խիստ ծուլության պատճառով,
այո, հենց մեր կառավարության
ծուլության, և նրանց խիստ մեծ
անփութության՝ դեպի իրենց եղ-
բայրները, այո, դեպի նրանց, ով-
քեր սպանվել են:

15 Քանզի եթե չլինեք «ամբարշտ-
տության պատճառով, որն առա-
ջինը սկսվեց մեր հրամանատա-
րությունից, մենք կկարողանայինք

դիմադրել մեր թշնամիներին, որ
նրանք չկարողանային իշխանու-
թյուն ձեռք բերել մեզ վրա:

16 Այո, եղած չլինեք «պատե-
րազան, որը բռնկվեց մեր մեջ. այո,
չլինեին այն թագավորասերները,
որոնք պատճառ դարձան այդքան
շատ արյունահեղության մեր մեջ.
այո, այն ժամանակ, երբ մենք
կոպում էինք մեր մեջ, եթե մենք
միավորած լինեինք մեր ուժը, ինչ-
պես մենք արել էինք մինչև այժմ.
այո, եղած չլինեք ուժի և իշխանու-
թյան տենչը մեզ վրա, որն ունեին
այն թագավորասերները. նվիր-
ված լինեին նրանք մեր ազատու-
թյան գործին, և միավորված մեզ
հետ, և զնային առաջ՝ մեր թշնամի-
ների դեմ, մեր դեմ սրեր վերցնելու
փոխարեն, որը պատճառն էր մեր
մեջ այսքան շատ արյունահեղու-
թյան. այո, եթե մենք առաջ գնա-
ցած լինեինք նրանց դեմ՝ Տիրոջ
ուժով, մենք ցիրուցան արած կլի-
նեինք մեր թշնամիներին, քանզի
դա արված կլինեք, համաձայն
նրա խոսքի կատարման:

17 Բայց ահա, այժմ Լամանա-
ցիները գալիս են մեզ վրա, վերց-
նելով մեր հողերի տիրապետու-
թյունը, և նրանք սպանում են մեր
ժողովրդին սրով, այո, մեր կա-
նանց և մեր երեխաներին, և նաև
տանում են նրանց գերության,
պատճառ դառնալով, որ նրանք
ամեն ձևի չարչարանքներ կրեն,
և սա՝ այն մեծ ամբարշտության
պատճառով նրանց, ովքեր ձգտում
են ուժի և իշխանության, այո, այ-
սինքն՝ այն թագավորասերների:

18 Բայց ինչո՞ւ ես պիտի շատ
խոսեմ այս հարցի մասին: Քանզի
մենք չգիտենք, բայց միզուց դուք

12ա Ղուկ. ԺԳ.1-5:
13ա Ալմա 14.10-11,

Վ.ՈՒ 42.46-47:
15ա Ալմա 51.9, 13:

16ա Ալմա 51.16-19:
բ Ալմա 51.5, 8:

ինքներդ եք ձգտում իշխանության: Մենք չզիտենք, բայց միգուցե դուք նույնպես ձեր հայրենիքի դավաճաններն եք:

19 Կամ մի՞թե դուք անտեսել եք մեզ, որովհետև դուք մեր երկրի սրտում եք, և անվտանգությամբ եք շրջապատված, որ դուք չեք կարգադրում՝ ուտելիք ուղարկվի մեզ, և նաև, մարդկանց՝ գորացնելու մեր գորքերը:

20 Մի՞թե դուք մոռացել եք Տիրոջ՝ ձեր Աստծո պատվիրանները: Այո, մի՞թե դուք մոռացել եք մեր հայրերի գերությունը: Մի՞թե դուք մոռացել եք այն բազում դեպքերը, որ մենք ազատվել ենք մեր թշնամիների ձեռքից:

21 Կամ մի՞թե դուք կարծում եք, որ Տերը դեռ կազատի մեզ, մինչ մենք նստած ենք մեր գահերին և չենք օգտագործում այն միջոցները, որոնք Տերն ապահովել է մեզ համար:

22 Այո, մի՞թե դուք նստելու եք անգործության մեջ, մինչ դուք շրջապատված եք հազարավոր այնպիսիներով, այո՛, բյուրավորներով, ովքեր նույնպես նստած են անգործության մեջ, մինչդեռ կան երկրի շրջակա սահմաններում հազարավորներ, ովքեր ընկնում են սրից, այո, վիրավոր ու արյունաքամ:

23 Մի՞թե դուք կարծում եք, որ Աստված ձեզ կհամարի անմեղ, մինչ դուք նստած եք հանգիստ և նայում եք այս բաներին: Ահա, ես ասում եմ ձեզ՝ Ո՛չ: Արդ, ես կամենում եմ, որ դուք հիշեք, որ Աստված ասել է, որ նախ անոթի՝ «ներսը պիտի մաքրվի, և ապա մաքրվի նաև անոթի դուրսը:

24 Եվ արդ, եթե դուք չապաշխարեք դրանցից, ինչ դուք արել եք, և չսկսեք ոտքի ելնել ու գործել, և ուտելիք ու մարդիկ չուղարկվեք մեզ, և նաև Հեղամանին, որպեսզի նա կարողանա պահել երկրի այն մասերը, որոնք նա ետ է վերցրել, և որ մենք նույնպես կարողանանք վերադարձնել մեր տիրույթների մնացածը՝ այս մասերում, ահա, հարկ կլինի, որ մենք այլևս չկովենք Լամանացիների հետ, մինչև մենք նախ չմաքրենք մեր անոթի ներսը, այո՛ հենց մեր կառավարության մեծ գլուխը:

25 Եվ եթե դուք չհամաձայնվեք իմ նամակի հետ, և չդրսևորեք և ցույց չտաք ինձ ազատության ճշմարիտ «ոգի, և չջանաք գորացնել ու ամրացնել մեր գորքերը, և չտաք նրանց ուտելիք՝ իրենց պահելու համար, ահա, ես կթողնեմ իմ ազատասերների մի մասին՝ պահպանելու մեր հողի այս մասը, և ես կթողնեմ Աստծո ուժն ու օրհնությունները նրանց վրա, որ ոչ մի ուրիշ ուժ չկարողանա գործել նրանց դեմ,

26 Եվ դա՛ նրանց խիստ մեծ հավատքի և իրենց նեղությունների մեջ նրանց համբերության պատճառով,

27 Եվ ես կզամ ձեզ մոտ, և եթե ձեր մեջ լինի որևէ մեկը, որն ունի ազատության տենչ, այո, եթե լինի ազատության անզամ մի կայծ մնացած, ահա, ես խռովություններ կառաջացնեմ ձեր մեջ, նույնիսկ մինչև նրանք, ովքեր իղձեր ունեն զավթելու ուժ և իշխանություն, բնաջինջ դառնան:

28 Այո, ահա, ես չեմ վախենում ձեր ուժից, ոչ էլ իշխանությունից,

այլ դա իմ՝ Աստծուց է, որ ես վախենում եմ. և դա ըստ նրա պատվիրանների է, որ ես վերցնում եմ իմ սուրը պաշտպանելու իմ երկրի գործը, և դա ձեր անօրինության պատճառով է, որ մենք կրել ենք այսքան մեծ կորուստ:

29 Ահա, ժամանակն է, այո, ժամանակը հիմա մոտ է, որ եթե դուք ջանք չգործադրեք ձեր երկրի և ձեր փոքրիկների պաշտպանության համար, արդարության «սուրը կախված է ձեր վրա. այո, և այն կրկնի՞ ձեր վրա և կայցելի ձեզ, նույնիսկ ի լիակատար կործանումն ձեզ:

30 Ահա, ես ձեզանից օգնություն եմ սպասում. և եթե դուք մեզ օժանդակություն չնատակարարեք, ահա, ես կգամ ձեզ մոտ՝ հենց Չարահեմլայի երկիրը և կզարկեմ ձեզ սրով, այնպես որ դուք այլևս ուժ չեք ունենա՝ խոչընդոտելու այս ժողովրդի առաջընթացը՝ մեր ազատության գործում:

31 Քանզի ահա, Տերը թույլ չի տա, որ դուք ապրեք ու գորանաք ձեր անօրինությունների մեջ՝ կործանելու իր արդար մարդկանց:

32 Ահա, մի՞թե կարող եք դուք կարծել, որ Տերը կխնայի ձեզ և դուրս կգա դատաստանով Լամանացիների դեմ, երբ դա նրանց հայրերի ավանդությունն է, որ առաջացրել է իրենց ատելությունը, այո, և այն կրկնապատկվել է նրանց կողմից, որոնք պառակտվել են մեզանից, մինչդեռ ձեր անօրինությունը՝ փառքի և աշխարհի ունայն բաների հանդեպ ձեր սիրո պատճառով է:

33 Դուք գիտեք, որ զանց եք անում Աստծո օրենքները, և դուք

գիտեք, որ դուք ոտնակոխ եք անում դրանք: Ահա Տերն ասում է ինձ. Եթե նրանք, ում դուք նշանակել եք ձեզ կառավարիչներ, չապաշխարեն իրենց մեղքերից և անօրինություններից, դուք պետք է վեր գնաք՝ ճակատամարտելու նրանց դեմ:

34 Եվ այժմ, ահա, ես՝ Մորոնիս, հարկադրված եմ, համաձայն այն ուխտի, որ ես արել եմ, պահել իմ Աստծո պատվիրանները. հետևաբար, ես կամենում եմ, որ դուք ենթարկվեք Աստծո խոսքին, և շտապ ուղարկեք ձեր պարենից և ձեր մարդկանցից՝ ինձ և նաև Հելամանին:

35 Եվ ահա, եթե դուք չանեք այդ, ես գալիս եմ շտապ ձեզ մոտ. քանզի ահա, Աստված թույլ չի տա, որ մենք սովից մեռնենք. հետևաբար, նա կտա մեզ ձեր ուտելիքից, եթե նույնիսկ դա լինի սրի միջոցով: Արդ, տեսեք, որ դուք կատարեք Աստծո խոսքը:

36 Ահա, ես Մորոնին եմ՝ ձեր գլխավոր գորապետը: Ես չեմ «փնտրում իշխանություն, այլ տապալել այն: Ես չեմ փնտրում աշխարհի հարգանքը, այլ իմ Աստծո փառքը, և իմ երկրի ազատությունն ու բարօրությունը: Եվ այսպես, ես ավարտում եմ իմ նամակը:

ԳԼՈՒԽ 61

Պատրանը պատմում է Մորոնիին կառավարության դեմ խռովության ու սպստամբության մասին – Թագավորասերները վերցնում են Չարահեմլան և դաշնակից են

Լամանացիներին – Պատրանը խնդրում է ռազմական օգնությունն ապստամբների դեմ: Մոտ 62թ. Ք.ծ.ա.:

Աչս, արդ եղավ այնպես, որ շուտով, Մորոնին իր նամակը գլխավոր կառավարչին ուղարկելուց հետո, նա Պատրանից գլխավոր կառավարչից, մի նամակ ստացավ: Եվ սրանք են այն խոսքերը, որ նա ստացավ.

2 Ես՝ Պատրանս, որ գլխավոր կառավարիչն եմ այս երկրի, ուղարկում եմ այս խոսքերը Մորոնիին՝ բանակի վրա գլխավոր գործապետին: Ահա, ես ասում եմ քեզ, Մորոնի՛, որ ես չեմ ուրախանում քո մեծ չարչարանքներով, այո, դա վշտացնում է իմ հոգին:

3 Բայց ահա, կան ոմանք, ովքեր ուրախանում են քո չարչարանքներով, այո, այնպես որ նրանք ապստամբություն են բարձրացրել իմ դեմ և նաև իմ մարդկանցից նրանց, ովքեր Պազատասերներ են, այո, և նրանք, ովքեր բարձրացրել են, խիստ մեծաթիվ են:

4 Եվ այդ նրանք են, ովքեր ջանացել են խլել ինձանից դատավորական աթոռը, որոնք եղել են պատճառն այս մեծ անօրինության. քանզի նրանք կիրառել են մեծ շողոքորթություն և բազում մարդկանց սրտեր են մոլորեցրել, որը մեր մեջ դառը չարչարանքի պատճառ է լինելու. նրանք ետ են պահել մեր պարենը և ահաբեկել մեր ազատասերներին, այնպես որ նրանք չեկան ձեզ մոտ:

5 Եվ ահա, նրանք դուրս են վռնդել ինձ իրենց մոտից, և ես փախել եմ Գեդեոնի երկիրը,

այնքան մարդկանց հետ, որքան որ հնարավոր եղավ հավաքել:

6 Եվ ահա, ես ուղարկել եմ մի հրովարտակ՝ երկրի այս մասով մեկ. և ահա, նրանք օրեցօր հավաքվում են մեզ մոտ՝ զինվելու, որ պաշտպանեն իրենց երկիրը և իրենց Պազատությունը, և որ վրեժ առնեն մեր հանդեպ անիրավությունների համար:

7 Եվ նրանք եկել են մեզ մոտ, այնպես որ նրանք, ովքեր ապստամբության են բարձրացել մեր դեմ, արհամարհանքի են արժանացել, այո, այնպես որ նրանք վախենում են մեզանից և չեն համարձակվում գալ՝ մեր դեմ ճակատամարտելու:

8 Նրանք վերցրել են Չարահեմլա երկրի կամ քաղաքի տիրապետությունը. նրանք թագավոր են նշանակել իրենց վրա, և նա գրել է Լամանացիների թագավորին, որով նա միաբանվել է նրա հետ մի դաշինքով. դաշինք, որով նա համաձայնվել է պահպանել Չարահեմլա քաղաքը, պահպանում, որը նա կարծում է ի վիճակի կդարձնի Լամանացիներին՝ նվաճելու երկրի մնացածը, և նա պիտի դրվի թագավոր այս ժողովրդի վրա, երբ նրանք կնվաճվեն Լամանացիների կողմից:

9 Եվ արդ, քո նամակում դու կշտամբել ես ինձ, բայց դա նշանակություն չունի. ես բարկացած չեմ, այլ հրճվում եմ քո սրտի մեծությամբ: Ես՝ Պատրանս, չեմ փնտրում իշխանություն, բացի միայն իմ դատավորական աթոռը պահելուց, որպեսզի ես կարողանամ պաշտպանել իմ ժողովրդի իրավունքներն ու ազատությունը:

61 1ա Ալմա 50.39-40:
2ա Ալմա 60.3-9:

3ա Ալմա 51.6-7:
6ա ՍՈՒ Ազատ,

Ազատություն,
Անկախություն:

Իմ հոգին այդ ազատության մեջ հաստատուն է կանգնած, որով Աստված դարձրել է մեզ ^աազատ:

10 Եվ այժմ, ահա, մենք կոչվում ենք ամբարշտությանը, նույնիսկ մինչև արյունահեղություն: Մենք չէինք թափի Լամանացիների արյունը, եթե նրանք մնային իրենց սեփական երկրում:

11 Մենք չէինք թափի մեր եղբայրների արյունը, եթե նրանք ապստամբություն չբարձրացնեին և սուր չվերցնեին մեր դեմ:

12 Մենք կենթարկվեինք ճորտության լծին, եթե դա պահանջվեր Աստծո արդարությամբ, կամ եթե նա պատվիրեր մեզ այդպես անել:

13 Բայց ահա, նա չի պատվիրում մեզ, որ մենք ենթարկվենք մեր քնամիներին, այլ որ մենք պետք է մեր ^ավատահոբությունը դնենք նրա վրա, և նա կազատի մեզ:

14 Հետևաբար, իմ սիրելի՛ եղբայր Մորոնի, եկե՛ք ընդդիմանա՞նք չարին, և ինչ չարիքի որ մենք չենք կարող ընդդիմանալ մեր խոսքերով, այո, ինչպիսիք են ապստամբություններն ու երկպառակությունները, եկե՛ք մեր սրերով ^աընդդիմանա՞նք դրանց, որպեսզի մենք կարողանանք պահպանել մեր ազատությունը, որպեսզի մենք կարողանանք ցնձալ մեր եկեղեցու մեծ արտոնությամբ, և մեր Քավչի ու մեր Աստծո գործով:

15 Հետևաբար, շտապ արի՛ ինձ մոտ, քո մարդկանցից մի քանիսի հետ, և մնացածին թող Լեքիի ու Թեանկումի հսկողությանը. նրանց իշխանությունն տուր՝ վարելու

պատերազմը երկրի այդ մասում, համաձայն Աստծո ^աՀոգու, որը նաև ազատության ոգին է, որը նրանց մեջ է:

16 Ահա, ես ուղարկել եմ մի քիչ պարեն նրանց համար, որ նրանք չմեռնեն, մինչև դու կարողանաս գալ ինձ մոտ:

17 Ի մի հավաքիր ինչ ուժ որ դու կարող ես, քո արշավանքի ընթացքում դեպի այստեղ, և մենք կշտապենք այդ պառակտիչների դեմ մեր Աստծո ուժով, մեր հավատքի համաձայն, որը մեր մեջ է:

18 Եվ մենք կվերցնենք Ջարահեմլա քաղաքի տիրապետությունը, որպեսզի կարողանանք ավելի շատ ուտելիք ձեռք բերել՝ ուղարկելու Լեքիին ու Թեանկումին. այո, մենք Տիրոջ ուժով կզնանք առաջ՝ նրանց դեմ, և մենք վերջ կդնենք այս մեծ անօրինությանը:

19 Եվ այժմ, Մորոնի՛, ես իրավ ուրախ եմ քո նամակը ստանալու համար, քանզի ես որոշ չափով անհանգստացած էի, թե մենք ինչ պետք է անեինք, թե արդյո՞ք արդար կլիներ մեզ համար՝ գնալ մեր եղբայրների դեմ:

20 Բայց դու ասել ես՝ եթե նրանք չապաշխարեն, Տերը պատվիրել է քեզ, որ դու գնաս նրանց դեմ:

21 Տե՛ս, որ դու ^ագորացնես Լեքիին ու Թեանկումին՝ Տիրոջով. պատվիրիր նրանց չվախենալ, քանզի Աստված կազատի նրանց, այո, և նաև բոլոր նրանց, ովքեր կանգնած են հաստատուն այն ազատության մեջ, որով Տերը դարձրել է մեզ ազատ: Եվ այժմ ես ավարտում եմ իմ նամակը՝ առ իմ սիրելի եղբայր Մորոնին:

<p>9ա Հովհ. Ը.31-36, ՎևՈՒ 88.86: 13ա սուր Հավաքք,</p>	<p>Ապավինել: 14ա Ալմա 43.47: 15ա Բ Կոր. Գ.17:</p>	<p>սուր Սուրբ Հոգի: 21ա Ջաք. Ժ.12:</p>
---	---	--

ԳԼՈՒԽ 62

Մորոնին արշավում է Պատրանին օգնության՝ Գեդեոնի երկրում – Թագավորասերները, որոնք հրաժարվում են պաշտպանել իրենց երկիրը, մահվան են դատապարտվում – Պատրանը և Մորոնին ետ են վերցնում Նեփիան – Բազմաթիվ Լամանացիներ միանում են Ամմոնի ժողովրդին – Թեանկումը սպանում է Ամմորոնին և իր հերթին սպանվում – Լամանացիները քշվում են երկրից, և խաղաղություն է հաստատվում – Հելամանը վերադառնում է ծառայության և կառուցում Եկեղեցին: Մոտ 62-57թթ. Ք.ծ.ա.:

ԵՎ այժմ, եղավ այնպես, որ երբ Մորոնին ստացավ այս նամակը, նրա սիրտը լցվեց համարձակությամբ, և լցվեց անչափ մեծ ուրախությամբ՝ Պատրանի հավատարմության համար, որ նա նույնպես ^ադավաճան չէր ազատությանը և իր երկրի գործին:

2 Բայց նա նաև սաստիկ սգաց, նրանց անօրինության համար, ովքեր վռնդել էին Պատրանին դատավորական աթոռից, այո, ի վերջո՝ նրանց համար, ովքեր ապստամբել էին իրենց երկրի և նաև իրենց Աստծո դեմ:

3 Եվ եղավ այնպես, որ Մորոնին վերցրեց փոքր թվով մարդկանց, Պատրանի ցանկության համաձայն, և տվեց հրամանատարությունը Լեթիին ու Թեանկումին իր մնացած բանակի վրա, և ուղղեց իր երթը դեպի Գեդեոնի երկիրը:

4 Եվ նա բարձրացրեց ^աազատության ^բդրոշը, ինչ տեղ էլ որ

նա մտավ և ձեռք բերեց ինչ ուժ որ կարող էր ամբողջ իր երթի ընթացքում՝ դեպի Գեդեոնի երկիրը:

5 Եվ եղավ այնպես, որ հազարավորներ հավաքվեցին նրա դրոշի ներքո և վերցրեցին իրենց սրերն ի պաշտպանություն իրենց ազատության, որպեսզի իրենք չբերվեին ճորտության:

6 Եվ այսպիսով, երբ Մորոնին ի մի էր հավաքել այնքան մարդ, որքան կարողացել էր, իր ողջ երթի ընթացքում, նա եկավ Գեդեոնի երկիրը. և միավորելով իր ուժերը Պատրանի հետ, նրանք դարձան չափազանց ուժեղ, նույնիսկ ավելի ուժեղ, քան Պաքուսի մարդիկ, որն այն պատակտիչների ^աթագավորն էր, ովքեր ^բազատասերներին դուրս էին քշել Չարահեմլայի երկրից և վերցրել էին երկրի տիրապետությունը:

7 Եվ եղավ այնպես, որ Մորոնին ու Պատրանը վար եկան իրենց զորքերի հետ Չարահեմլայի երկիրը և առաջ գնացին քաղաքի դեմ, և հանդիպեցին Պաքուսի մարդկանց, այնպես որ նրանք եկան պատերազմելու:

8 Եվ ահա, Պաքուսը սպանվեց, և նրա մարդիկ գեթի վերցվեցին, և Պատրանը վերականգնվեց իր դատավորական աթոռում:

9 Եվ Պաքուսի մարդիկ ստացան իրենց դատը՝ համաձայն օրենքի, և նաև, այն թագավորասերները, ովքեր վերցվել ու բանտ էին գցվել. և նրանք ^ամահապատժի ենթարկվեցին՝ օրենքի համաձայն. այո, Պաքուսի այն մարդիկ և այն թագավորասերները, ովքեր չկամեցան զենքեր վերցնել՝ ի պաշտ-

62 1ա Ալմա 60.18:
4ա սուր Անկախություն:
բ Ալմա 46.12-13, 36:

սուր Գերոշ:
6ա Ալմա 61.4-8:
բ Ալմա 51.5-7:

9ա սուր Գերազույն
պատիժ:

պանություն իրենց երկրի, այլ կամեցան կռվել դրա դեմ, մահվան դատապարտվեցին:

10 Եվ այսպես դարձավ անհրաժեշտ, որ այս օրենքը խստորեն պահպանվեր՝ իրենց երկրի անվտանգության համար. այո, և ում որ գտնում էին իրենց ազատությունն ուրանալիս՝ անհապաղ մահապատժի էին ենթարկում, օրենքի համաձայն:

11 Եվ այսպես ավարտվեց Նեփիի ժողովրդի վրա դատավորների կառավարման երեսուներորդ տարին. Մորոնին ու Պատրանը, վերահաստատած լինելով խաղաղություն Չարահեմլայի երկրում՝ իրենց սեփական ժողովրդի մեջ, մահվան ենթարկած լինելով բոլոր նրանց, ովքեր հավատարիմ չէին ազատության գործին:

12 Եվ եղավ այնպես, Նեփիի ժողովրդի վրա դատավորների կառավարման երեսունմեկերորդ տարվա սկզբին, Մորոնին անմիջապես կարգադրեց, որ պարեն ուղարկվեր, և նաև մի գորք՝ վեց հազար մարդուց, ուղարկվեր Հելամանին, օգնելու նրան երկրի այդ մասը պահպանելիս:

13 Եվ նա նաև կարգադրեց, որ վեց հազար մարդուց մի գորք, բավականաչափ քանակությամբ ուտելիքի հետ, ուղարկվեր Լեքիի ու Թեանկումի գորքերին: Եվ եղավ այնպես, որ այս արվեց՝ ամրացնելու երկիրը Լամանացիների դեմ:

14 Եվ եղավ այնպես, որ Մորոնին և Պատրանը մարդկանց մի մեծ խումբ թողնելով Չարահեմլայի երկրում, ուղղեցին իրենց արշավանքը, մարդկանց մի մեծ խմբի հետ, դեպի Նեփիայի երկիրը, վճռած լինելով ոչնչացնել Լամանացիներին այդ քաղաքում:

15 Եվ եղավ այնպես, որ երբ նրանք արշավում էին դեպի այդ երկիրը, նրանք բռնեցին Լամանացիների մարդկանց մի մեծ խումբ և սպանեցին նրանցից շատերին, և խլեցին նրանց պարենը և նրանց պատերազմի զենքերը:

16 Եվ եղավ այնպես, նրանց բռնելուց հետո, նրանք ստիպեցին նրանց մտնել ուխտի մեջ, որ իրենք այլևս չէին վերցնի իրենց պատերազմի զենքերը՝ Նեփիացիների դեմ:

17 Եվ երբ նրանք այդ ուխտի մեջ էին մտել, նրանց ուղարկեցին՝ բնակվելու Ամոնի ժողովրդի հետ, և նրանք թվով մոտ չորս հազար էին, ովքեր չէին սպանվել:

18 Եվ եղավ այնպես, որ երբ նրանց ուղարկեցին, նրանք շարունակեցին իրենց արշավանքը դեպի Նեփիայի երկիրը: Եվ եղավ այնպես, որ երբ նրանք եկան Նեփիայի քաղաքը, խփեցին իրենց վրամները Նեփիայի հարթավայրերում, որը Նեփիա քաղաքին մոտիկ էր:

19 Արդ, Մորոնին փափագում էր, որ Լամանացիները դուրս գային ճակատամարտելու իրենց դեմ՝ հարթավայրերի վրա. բայց Լամանացիները, իմանալով նրանց շատ մեծ քաջությունը, և տեսնելով նրանց թվի մեծությունը, հետևաբար, չհամարձակվեցին դուրս գալ նրանց դեմ. հետևաբար, նրանք չեկան ճակատամարտելու այդ օրը:

20 Եվ երբ գիշերն ընկավ, Մորոնին առաջ գնաց՝ գիշերվա խավարում, և բարձրացավ պատի վերևը՝ լրտեսելու, թե քաղաքի որ մասում էին Լամանացիները ճամբար դրել իրենց գորքով:

21 Եվ եղավ այնպես, որ նրանք արևելյան կողմում էին՝ մուտքին

մոտիկ, և նրանք բոլորը քնած էին: Եվ արդ Մորոնին վերադարձավ իր բանակը, և կարգադրեց, որ նրանք շտապ պատրաստեն ամուր պարաններ ու սանդուղքներ՝ ներքև իջնելու պատի վերևից՝ դեպի պատի ներսի կողմը:

22 Եվ եղավ այնպես, որ Մորոնին կարգադրեց, որ իր մարդիկ առաջ ընթանան, և բարձրանան պատի վերևը, և իջնեն ներքև՝ քաղաքի այդ մասը, այո, այսինքն՝ արևմտյան կողմը, որտեղ Լամանացիները ճամբար չէին դրել իրենց զորքերի հետ:

23 Եվ եղավ այնպես, որ նրանք բոլորին իջեցրեցին ներքև՝ քաղաքի մեջ գիշերով, իրենց ամուր պարանների ու իրենց ամուր սանդուղքների օգնությամբ. այսպիսով, երբ առավոտը եկավ, նրանք բոլորը քաղաքի պատերի ներսում էին:

24 Եվ այժմ, երբ Լամանացիներն արթնացան ու տեսան, որ Մորոնիի զորքերը պատերի ներսում էին, նրանք սաստիկ վախեցան, այնպես որ նրանք դուրս փախան մուտքով:

25 Եվ այժմ, երբ Մորոնին տեսավ, որ նրանք փախչում էին իր առջևից, նա կարգադրեց, որ իր մարդիկ արշավեն առաջ՝ նրանց դեմ, և սպանեց շատերին, և շրջապատեց շատ ուրիշների, և վերցրեց նրանց գերի. իսկ նրանցից մնացածը փախավ Մորոնիի երկիրը, որը ծովեզրին մոտիկ սահմաններում էր:

26 Այսպես ձեռք բերեցին Մորոնին ու Պատրանը Նեփիա քաղաքի տիրապետությունը՝ առանց մեկ հոգու կորստի. և կային շատերը

Լամանացիներից, ովքեր սպանվեցին:

27 Արդ եղավ այնպես, որ Լամանացիներից շատերը, որոնք գերի էին, փափագում էին միանալ Ամմոնի Մոլոկոլոյին և դառնալ ազատ ժողովուրդ:

28 Եվ եղավ այնպես, որ բոլոր նրանք, ովքեր փափագում էին այդ, նրանց շնորհվեց՝ ըստ իրենց իղձերի:

29 Հետևաբար, Լամանացի բոլոր գերիները միացան Ամմոնի ժողովուրդին, և սկսեցին շատ աշխատել՝ մշակելով հողը, աճեցնելով ամեն ձևի հատիկ, և ամեն տեսակի հոտեր ու նախիրներ. և այսպես ազատվեցին Նեփիացիները մի մեծ բեռից. այո, այնպես որ նրանք ազատվեցին բոլոր Լամանացի գերիներից:

30 Այժմ եղավ այնպես, որ Մորոնին, Նեփիա քաղաքի տիրապետությունը ձեռք բերելուց հետո, վերցրած լինելով բազում գերիներ, որը խիստ կրճատեց Լամանացիների զորքերը, և վերադարձրած լինելով Նեփիացիներից շատերին, ովքեր գերի էին վերցվել, որը խիստ գորացրեց Մորոնիի բանակը. հետևաբար, Մորոնին առաջ գնաց՝ Նեփիայի երկրից դեպի Լեքիի երկիրը:

31 Եվ եղավ այնպես, որ երբ Լամանացիները տեսան, որ Մորոնին գալիս էր իրենց դեմ, նրանք կրկին վախեցան ու փախան Մորոնիի բանակի առաջից:

32 Եվ եղավ այնպես, որ Մորոնին ու իր բանակը հետապնդեցին նրանց՝ քաղաքից քաղաք, մինչև նրանց դիմավորեցին Լեքին ու Թեանկումը. և Լամանացիները

փախան Լեքիից ու Թեանկումից՝ ընդհուպ մինչև ծովեզրին մոտիկ սահմանները, մինչև որ նրանք եկան Մորոնիի երկիրը:

33 Եվ Լամանացիների գորքերը բոլորն ի մի էին հավաքվել, այնպես որ նրանք բոլորը միախումբ էին Մորոնիի երկրում: Արդ Ամմորոնը՝ Լամանացիների թագավորը նույնպես նրանց հետ էր:

34 Եվ եղավ այնպես, որ Մորոնին, և Լեքին, և Թեանկումը, Մորոնիի երկրի սահմանների շուրջ բոլորն իրենց գորքերով ճամբար դրեցին, այնպես որ Լամանացիները շրջափակված էին հարավից՝ անապատին մոտիկ սահմաններում, և արևելքից՝ անապատին մոտիկ սահմաններում:

35 Եվ այսպես նրանք ճամբար դրեցին գիշերվա համար: Քանզի, ահա, Նեփիացիները և Լամանացիները ևս հոգնած էին՝ արշավանքի լարվածության պատճառով. հետևաբար, նրանք գիշերը ոչ մի որոշում չընդունեցին ռազմական որևէ հնարքի վերաբերյալ, բացի Թեանկումից. քանզի նա խիստ զայրացած էր Ամմորոնի վրա, այնպես որ նա համարում էր, որ Ամմորոնը և Ամադիկիան՝ նրա եղբայրն էին եղել՝ «պատճառը՝ իրենց ու Լամանացիների միջև այս մեծ և երկարատև պատերազմի, որը պատճառ էր եղել այնքան շատ պատերազմի ու արյունահեղության, այո, և այնքան մեծ սովի:

36 Եվ եղավ այնպես, որ Թեանկումն իր բարկության մեջ գնաց առաջ՝ Լամանացիների ճամբարը, և քաղաքի պատերի վրայով իջավ ցած: Եվ նա առաջ գնաց պարանով տեղից տեղ, այնքան,

մինչև որ նա գտավ թագավորին. և նա «նետեց տեզը նրա վրա, որը խոցեց նրան՝ սրտին մոտիկ: Բայց ահա, թագավորն արթնացրեց իր ծառաներին՝ մինչև իր մեռնելը, այնպես որ նրանք հետապնդեցին Թեանկումին և սպանեցին նրան:

37 Այժմ եղավ այնպես, որ երբ Լեքին ու Մորոնին իմացան, որ Թեանկումը մեռած էր, նրանք սաստիկ վշտացան. քանզի ահա, նա մի մարդ էր, որը կռվել էր խիզախորեն իր երկրի համար, այո, ազատության մի հավատարիմ պաշտպան. և նա տարել էր անչափ շատ, խիստ դառը չարչարանքներ: Բայց ահա, նա մեռավ և գնաց երկրի ողջ ճամապարհը:

38 Արդ եղավ այնպես, որ Մորոնին արշավեց առաջ՝ հաջորդ օրը, և եկավ Լամանացիների վրա, այնպես որ նրանք կոտորեցին նրանց՝ մեծ կոտորածով. և նրանք քշեցին նրանց երկրից դուրս. և նրանք փախան, այնպես որ չվերադարձան այդ ժամանակ Նեփիացիների դեմ:

39 Եվ այսպես ավարտվեց Նեփիի ժողովրդի վրա դատավորների կառավարման երեսունևմեկերորդ տարին. և այսպես նրանք պատերազմներ և արյունահեղություններ և սով և չարչարանք ունեցան շատ տարիների ընթացքում:

40 Եվ եղել էին սպանություններ և հակառակություններ, երկպառակություններ և ամեն ձևի անօրինություն՝ Նեփիի ժողովրդի մեջ. այնուամենայնիվ, հանուն «արդարների, այո, արդարների աղոթքների շնորհիվ, նրանք խնայվեցին:

41 Բայց ահա, Նեփիացիների ու

Լամանացիների միջև պատերազմի չափազանց երկարատևության պատճառով շատերը դարձել էին կարծրացած՝ պատերազմի չափազանց երկարատևության պատճառով. շատերն էլ փափկել էին՝ իրենց «չարչարանքների պատճառով, այնպես որ նրանք իրենց խոնարհեցրել էին Աստծո առաջ, մինչև իսկ համեստության խորքերը:

42 Եվ եղավ այնպես, որ հետո, երբ Մորոնին ամրացրել էր երկրի այն մասերը, որոնք առավել անպաշտպան էին Լամանացիների դեմ, մինչև որ դրանք բավականաչափ ամուր էին, նա վերադարձավ Չարահեմլա քաղաքը. և Հելամանը նույնպես վերադարձավ իր ժառանգության վայրը. և մեկ անգամ ևս խաղաղություն հաստատվեց Նեփիի ժողովրդի մեջ:

43 Եվ Մորոնին հանձնեց իր զորքերի հրամանատարությունն իր որդու ձեռքը, որի անունը Մորոնիա էր. և նա հեռացավ իր սեփական տունը, որ կարողանար անցկացնել իր մնացած օրերը խաղաղության մեջ:

44 Եվ Պատրանը վերադարձավ իր դատավորական աթոռին. իսկ Հելամանը կրկին իր վրա վերցրեց ժողովրդին Աստծո խոսքը քարոզելը. քանզի, այդքան շատ պատերազմների ու հակառակությունների պատճառով, անիրաժեշտ էր դարձել, որ կրկին մի կանոնակարգում արվեր եկեղեցուն:

45 Ուստի, Հելամանն ու իր եղբայրները գնացին առաջ և հայտարարեցին Աստծո խոսքը մեծ զորությամբ՝ «համոզելով շատ մարդկանց իրենց ամբարշտության վերաբերյալ, որը ստիպում

էր նրանց ապաշխարել իրենց մեղքերից և մկրտվել առ Տերը՝ իրենց Աստվածը:

46 Եվ եղավ այնպես, որ նրանք կրկին հաստատեցին Աստծո եկեղեցին՝ ողջ երկրով մեկ:

47 Այո, և կանոնակարգումներ արվեցին օրենքի վերաբերյալ: Եվ նրանց «դատավորներ ու նրանց գլխավոր դատավորներ ընտրվեցին:

48 Եվ Նեփիի ժողովուրդը սկսեց կրկին «բարգավաճել երկրում, և սկսեցին կրկին բազմանալ և չափազանց զորանալ երկրում: Եվ նրանք սկսեցին շատ հարստանալ:

49 Բայց, չնայած իրենց հարստություններին, կամ իրենց ուժին, կամ իրենց բարգավաճմանը, նրանք բարձր չէին իրենց աչքում՝ հպարտությունից. ոչ էլ դանդաղ էին Տիրոջը՝ իրենց Աստծուն հիշելիս. այլ նրանք անչափ խոնարհեցնում էին իրենց՝ նրա առաջ:

50 Այո, նրանք հիշում էին, թե ինչպիսի մեծ բաներ էր Տերն արել իրենց համար, որ նա իրենց ազատել էր մահից և կապանքներից և բանտերից և ամեն ձևի չարչարանքներից, և նա ազատել էր իրենց թշնամիների ձեռքից:

51 Եվ նրանք անդադար աղոթում էին Տիրոջը՝ իրենց Աստծուն, այնպես որ Տերն օրհնում էր նրանց, համաձայն իր խոսքի, դրա համար նրանք զորանում ու բարգավաճում էին երկրում:

52 Եվ եղավ այնպես, որ այս բոլոր բաները կատարվեցին: Եվ Հելամանը մահացավ Նեփիի ժողովրդի վրա դատավորների

կառավարման երեսունևհինգերորդ տարում:

ԳԼՈՒԽ 63

Սիրլոնը, իսկ ավելի ուշ՝ Հելամանը, վերցնում են սրբազան հիշատակարանների պահպանությունը – Շատ Նեփիացիներ ճանապարհորդում են դեպի հյուսիսային կողմի երկիրը – Հագաթը կառուցում է նավեր, որոնք նավարկում են առաջ արևմտյան ծովով – Մորոնիան ճակատամարտում պարտության է մատնում Լամանացիներին: Մոտ 56-52թթ. Բ.ծ.ա.:

Եւ եղավ այնպես, Նեփիի ժողովրդի վրա դատավորների կառավարման երեսունևվեցերորդ տարվա սկզբին, որ Սիրլոնը վերցրեց պահպանությունն այն սրբազան բաների, որոնք հանձնվել էին Հելամանին Ալմայի կողմից:

2 Եվ նա արդար մարդ էր, և նա քայլում էր ուղիղ Աստծո առաջ. և նա ձգտում էր շարունակ բարիք անել, պահել Տիրոջ՝ իր Աստծո պատվիրանները. և նույնն անում էր նրա եղբայրը:

3 Եվ եղավ այնպես, որ Մորոնին նույնպես մահացավ: Եվ այսպես ավարտվեց դատավորների կառավարման երեսունևվեցերորդ տարին:

4 Եվ եղավ այնպես, որ դատավորների կառավարման երեսունևյոթերորդ տարում, մարդկանց մի մեծ խումբ, քանակով նույնիսկ հինգ հազար և չորս հարյուր տղամարդ, իրենց կանանց և իրենց երեխաների հետ, հեռացավ Չա-

րահեմլայի երկրից դեպի երկիրը, որը ՝ հյուսիսային կողմում էր:

5 Եվ եղավ այնպես, որ Հագաթը, լինելով մի չափազանց հետաքրքրասեր մարդ, հետևաբար նա առաջ գնաց և մի շատ մեծ նավ կառուցեց իր համար, Լիառատ երկրի սահմանների մոտ՝ Ավերակներ երկրին մոտիկ, և այն իջեցրեց արևմտյան ծովը, ՝ նեղ պարանոցին մոտիկ, որը տանում էր հյուսիսային կողմի երկիրը:

6 Եվ ահա, կային Նեփիացիներից շատերը, ովքեր մտան դրա մեջ և նավարկեցին առաջ, շատ պարենով, և նաև շատ կանանց ու երեխաների հետ. և նրանք վերցրեցին իրենց ուղղությունը դեպի հյուսիս: Եվ այսպես ավարտվեց երեսունևյոթերորդ տարին:

7 Եվ երեսունութերորդ տարում, այս մարդը կառուցեց ուրիշ նավեր: Եվ առաջին նավը նույնպես վերադարձավ, և ավելի շատ մարդիկ մտան դրա մեջ. և նրանք նույնպես վերցրեցին շատ պարեն, և նորից ճանապարհ ընկան դեպի հյուսիսային կողմի երկիրը:

8 Եվ եղավ այնպես, որ նրանց մասին այլևս երբեք չլսեցին: Եվ մենք կարծում ենք, որ նրանք խեղդվեցին ծովի խորքերում: Եվ եղավ այնպես, որ մեկ ուրիշ նավ նույնպես լողաց առաջ. և թե ուր գնաց այն, մենք չգիտենք:

9 Եվ եղավ այնպես, որ այս տարում կային շատ մարդիկ, ովքեր առաջ գնացին դեպի ՝ հյուսիսային կողմի երկիրը: Եվ այսպես ավարտվեց երեսունևութերորդ տարին:

10 Եվ եղավ այնպես դատավորների կառավարման երեսունևին-

63 1ա Ալմա 38.1-2:
բ Ալմա 37.1-12:
սո՛ւ Սուրբ:

4ա Ալմա 22.31:
5ա Ալմա 22.32,
Եթեր 10.20:

9ա Հել. 3.11-12:

ներորդ տարում Սիրլոնը նույնպես մահացավ, իսկ Կորիանթոնը գնացել էր հեռու հյուսիսային կողմի երկիրը, նավով՝ պարեն տանելու ժողովրդին, ովքեր գնացել էին այդ երկիրը:

11 Հեռաբար, Սիրլոնի համար անհրաժեշտ դարձավ, իր մահից առաջ, այդ սրբազան բաները տալ «Հելամանի որդուն, որի անունը Հելաման էր՝ կոչված լինելով իր հոր անունով:

12 Արդ, ահա, բոլոր այդ «փոքրագրությունները, որոնք Հելամանի տնօրինության տակ էին, գրվեցին և ուղարկվեցին առաջ՝ մարդկանց զավակների մեջ, ողջ երկրով մեկ, բացի այն հատվածներից, որոնք Ալմայի կողմից պատվիրվել էր հայտնի թշրարձնել:

13 Այնուամենայնիվ, այս բաները պետք է սրբազան պահվեին և «փոխանցվեին մի սերնդից մյուսին. հետևաբար, այս տարում

դրանք տրվեցին Հելամանին, նախքան Սիրլոնի մահը:

14 Եվ եղավ այնպես, որ այս տարում ևս եղան որոշ պառակտիչներ, ովքեր գնացել էին Լամանացիների մոտ. և նրանց կրկին բարկության էին դրդել Նեփիացիների դեմ:

15 Եվ նաև, այս նույն տարում, նրանք վար եկան մի ստվար զորքով՝ պատերազմելու «Մորոնիայի ժողովրդի դեմ, կամ Մորոնիայի բանակի դեմ, որի ժամանակ նրանք ջարդվեցին և ետ քվեցին կրկին՝ դեպի իրենց սեփական հողերը, կրելով մեծ կորուստ:

16 Եվ այսպես ավարտվեց Նեփիի ժողովրդի վրա դատավորների կառավարման երեսունևիններորդ տարին:

17 Եվ այսպես ավարտվեց պատմությունն Ալմայի, և նրա որդու՝ Հելամանի, և նաև Սիրլոնի, որը նրա որդին էր:

ՀԵԼԱՄԱՆԻ ԳԻՐՔԸ

Նեփիացիների մի պատմություն: Նրանց պատերազմներն ու հակառակությունները և նրանց երկպառակությունները: Եվ նաև բազմաթիվ սուրբ մարգարեների մարգարեությունները, մինչև Քրիստոսի գալուստը՝ համաձայն Հելամանի հիշատակարանների, որը Հելամանի որդին էր, և նաև համաձայն նրա որդիների հիշատակարանների, նույնիսկ ընդհուպ մինչև Քրիստոսի գալուստը: Եվ նաև Լամանացիներից շատերը դարձի են գալիս: Նրանց դարձի մի պատմություն: Լամանացիների արդարակեցության և Նեփիացիների ամբարշտության ու պղծությունների մի պատմություն, համաձայն Հելամանի ու նրա որդիների հիշատակարանի, նույնիսկ ընդհուպ մինչև Քրիստոսի գալուստը, որը կոչվում է Հելամանի գիրք, և այդպես շարունակ:

ԳԼՈՒԽ 1

Պատրան երկրորդը գլխավոր դատավոր է դառնում և սպանվում Կիսկունենի կողմից – Պակունենին զբաղեցնում է դատավորական աթոռը – Կորիանթումն առաջնորդում է Լամանական գործերը, վերցնում է Չարահենյան և սպանում է Պակունենին – Մորոնիան պարտության է մատնում Լամանացիներին և ետ է վերցնում Չարահենյան, իսկ Կորիանթումը սպանվում է: Մոտ 52-50թթ. Ք.ծ.ա.:

Եվ այժմ ահա, եղավ այնպես, որ Նեփիի ժողովրդի վրա դատավորների կառավարման քառասուներորդ տարվա սկզբին, մի լուրջ դժվարություն սկսվեց Նեփիացիների մեջ:

2 Քանզի ահա, Պատրանը մահացել էր և գնացել երկրի ողջ ճանապարհը. հետևաբար, սկսվեց մի լուրջ հակառակություն այն բանի վերաբերյալ, թե եղբայրներից ով պիտի տիրեր դատավորական աթոռին, ովքեր Պատրանի որդիներն էին:

3 Արդ, սրանք են նրանց անունները, ովքեր կռվում էին դատավորական աթոռի համար, ովքեր նաև ժողովրդի կռվելու պատճառ էին դառնում՝ Պատրան, Պասանքի և Պակունենի:

4 Արդ, սրանք Պատրանի բոլոր որդիները չէին (քանզի նա շատ ուներ), բայց այդ նրանք են, ովքեր կռվում էին դատավորական աթոռի համար. ուստի, նրանք երեք բաժանումներ առաջացրեցին ժողովրդի մեջ:

5 Այնուամենայնիվ, եղավ այն-

պես, որ Պատրանը, ժողովրդի ճայնով, նշանակվեց գլխավոր դատավոր ու կառավարիչ Նեփիի ժողովրդի վրա:

6 Եվ եղավ այնպես, որ երբ Պակունենին տեսավ, որ ինքը չէր կարող ձեռք բերել դատավորական աթոռը, նա միացավ ժողովրդի ձայնին:

7 Բայց ահա, Պասանքին և ժողովրդի այն մասը, որ փափագում էին, որ նա դառնար իրենց կառավարիչը, սաստիկ զայրացած էին. հետևաբար, նա քիչ էր մնում շողոքորթեր այդ մարդկանց՝ ապստամբություն բարձրացնելու իրենց եղբայրների դեմ:

8 Եվ եղավ այնպես, երբ նա քիչ էր մնում աներ այս, ահա, նա բռնվեց ու դատվեց՝ ըստ ժողովրդի ձայնի, և դատապարտվեց մահվան. քանզի նա ապստամբություն էր բարձրացրել և ջանում էր կործանել ժողովրդի Պապատությունը:

9 Արդ, երբ այն մարդիկ, ովքեր փափագում էին, որ նա լիներ իրենց կառավարիչը, տեսան, որ նա դատապարտվեց մահվան, այդ պատճառով նրանք բարկացան, և ահա, նրանք առաջ ուղարկեցին մի ինչ-որ Կիսկունենի, մինչև իսկ Պատրանի դատավորական աթոռը, և սպանեցին Պատրանին, երբ նա նստած էր դատավորական աթոռին:

10 Եվ նա հետապնդվեց Պատրանի ծառաների կողմից. բայց ահա, այնքան արագ էր Կիսկունենի փախուստը, որ ոչ մի մարդ չկարողացավ հասնել նրան:

11 Եվ նա գնաց նրանց մոտ, ովքեր ուղարկել էին իրեն, և նրանք բոլորը մտան ուխտի մեջ,

[ՀԵՆՐԻՔ] 12ա Ալմա 50.40:

5ա Մոսիա 29.26-29: 8ա ՍՈՒ Անկախություն:

այո, երդվելով իրենց հավիտեանական Արարչով, որ իրենք չեն պատմի ոչ ոքի, որ Կիսկումենն է սպանել Պատրանին:

12 Հետևաբար, Կիսկումենը չճանաչվեց Նեփիի ժողովրդի մեջ, որովհետև նա ծայոված էր այն ժամանակ, երբ սպանեց Պատրանին: Եվ Կիսկումենը և նրա հրոսակախումբը, որն ուխտել էր նրա հետ, խառնվեցին ժողովրդի մեջ այնպես, որ նրանց բոլորին չկարողանային հայտնաբերել. բայց բոլոր նրանք, ովքեր հայտնաբերվեցին, դատապարտվեցին «մահվան»:

13 Եվ այժմ, ահա, համաձայն ժողովրդի ձայնի, Պակումենին նշանակվեց, լինելու գլխավոր դատավոր ու կառավարիչ ժողովրդի վրա, կառավարելու իր եղբայր Պատրանի փոխարեն, և դա իր իրավունքի համաձայն էր: Եվ այս բոլորն արվեց դատավորների կառավարման քառասուներորդ տարում, և այն ավարտվեց:

14 Եվ եղավ այնպես, դատավորների կառավարման քառասուննեկերորդ տարում, որ Լամանացիներն ի մի հավաքեցին մարդկանց մի անհամար գործ, և նրանց զինեցին սրերով և թրերով, աղեղներով և նետերով, սաղավարտներով և լանջապանակներով, և ամեն ձևի, ամեն տեսակի վահաններով:

15 Եվ նրանք կրկին վար եկան, որ ճակատամարտ մղեն Նեփիացիների դեմ: Եվ նրանք առաջնորդվում էին մի մարդու կողմից, որի անունը Կորիանթունը էր. և նա Չարահեմլայի մի հետնորդ էր. և նա մի պառակտիչ էր Նեփիացի-

ների միջից. և նա խոշորակազմ ու գորեղ մի մարդ էր:

16 Հետևաբար, Լամանացիների քազավորը, որի անունը Տուբալոթ էր, որը «Ամմորոնի որդին էր, կարծելով, որ Կորիանթունը, լինելով մի գորեղ մարդ, կարող էր իր մեծ իմաստությամբ կանգնել Նեփիացիների դեմ, այնպես որ ուղարկելով նրան առաջ, նա ձեռք կբերեր իշխանություն Նեփիացիների վրա,

17 Հետևաբար, նա բարկության դրդեց նրանց, և ի մի հավաքեց իր գործերը, և նշանակեց Կորիանթունին՝ լինելու իրենց ղեկավար, և կարգադրեց, որ արշավեն վար, դեպի Չարահեմլայի երկիրը՝ Նեփիացիների դեմ ճակատամարտելու:

18 Եվ եղավ այնպես, որ կառավարությունում այսքան շատ հակառակության ու այսքան շատ դժվարության պատճառով, նրանք չէին պահել բավականաչափ պահակախմբեր Չարահեմլայի երկրում. քանզի նրանք ենթադրել էին, որ Լամանացիները չէին համարձակվի գալ իրենց հողերի սիրտը՝ գրոհելու այդ մեծ քաղաք Չարահեմլան:

19 Բայց եղավ այնպես, որ Կորիանթունը, իր ստվար գործի գլուխն անցած, արշավեց առաջ, և եկավ քաղաքի բնակիչների վրա, և նրանց արշավանքն այնպիսի չափազանց մեծ արագությամբ էր, որ Նեփիացիների համար ժամանակ չկար ի մի հավաքելու իրենց գործերը:

20 Հետևաբար, Կորիանթունը սրակտոր արեց պահակախմբին քաղաքի մուտքի մոտ և իր ամբողջ

բանակի հետ արշավեց առաջ՝ դեպի քաղաքը, և նրանք սպանեցին յուրաքանչյուրին, ով դիմադրեց իրենց, այնքան, մինչև որ նրանք վերցրեցին ամբողջ քաղաքի տիրապետությունը:

21 Եվ եղավ այնպես, որ Պակուսնին, որը գլխավոր դատավորն էր, փախավ Կորիանթոսից մինչև քաղաքի պարիսպները: Եվ եղավ այնպես, որ Կորիանթոսը զարկեց նրան պատին, այնպես որ նա մեռավ: Եվ այսպես ավարտվեցին Պակուսնիի օրերը:

22 Եվ արդ, երբ Կորիանթոսը տեսավ, որ նա տիրել էր Չարահեմլայի քաղաքին, և տեսավ, որ Նեփիացիները փախել էին իրենց առաջից, և սպանվել, բռնվել և բանտ էին գցվել, և որ նա ձեռք էր բերել ողջ երկրի ամենաուժեղ բերդի տիրապետությունը, նրա սիրտը համարձակությամբ լցվեց, այնպես, որ նա քիչ էր մնում առաջ գնալ ողջ երկրի դեմ:

23 Եվ արդ, նա չմնաց Չարահեմլայի երկրում, այլ նա, մի մեծ բանակի հետ, արշավեց առաջ՝ ուղիղ դեպի Լիառատ քաղաքը. քանզի նրա վճիռն էր՝ առաջ գնալ ու սրով բացել իր ճանապարհը, որպեսզի կարողանար ձեռք բերել երկրի հյուսիսային մասերը:

24 Եվ, կարծելով, որ նրանց ամենամեծ ուժը երկրի կենտրոնում է, ուստի նա արշավեց առաջ՝ չտալով նրանց ժամանակ ի մի հավաքվելու, բացի դա լինել փոքր խմբերից. և այս ձևով էին նրանք հարձակվում նրանց վրա և գետնին տապալում նրանց:

25 Բայց ահա, Կորիանթոսի այս արշավանքը երկրի կենտրոնով, Մորոնիային մեծ առավելու-

թյուն տվեց նրանց վրա, չնայած Նեփիացիների թվի մեծությանը, որոնք սպանվել էին:

26 Քանզի ահա, Մորոնիան ենթադրել էր, որ Լամանացիները չէին հանդգնի գալ երկրի կենտրոնը, այլ որ նրանք կգրոհեն քաղաքները՝ շրջակա սահմաններում, ինչպես մինչև այժմ էին արել. հետևաբար, Մորոնիան կարգադրել էր, որ իրենց ուժեղ զորքերը պահպանեն շրջակա սահմաններին մոտիկ այդ մասերը:

27 Բայց ահա, Լամանացիները չվախեցան, նրանց ցանկացածի պես, այլ նրանք եկան երկրի կենտրոնը և վերցրեցին մայրաքաղաքը, որը Չարահեմլայի քաղաքն էր, և արշավեցին երկրի կարևորագույն մասերով, մեծ կոտորածով կոտորելով ժողովրդին՝ թե՛ տղամարդկանց, թե՛ կանանց, թե՛ երեխաներին, վերցնելով բազմաթիվ քաղաքների ու բազմաթիվ բերդերի տիրապետությունը:

28 Բայց երբ Մորոնիան հայտնաբերեց այս, նա անմիջապես շրջանցիկ ուղով Լեքիին ուղարկեց մի զորքի հետ՝ կանխելու նրանց, մինչ նրանք կհասնեին Լիառատ երկիրը:

29 Եվ այսպես նա արեց, և նա կասեցրեց նրանց, մախքան նրանց Լիառատ երկիր հասնելը, և ճակատամարտ տվեց նրանց, այնպես որ նրանք սկսեցին ետ նահանջել՝ դեպի Չարահեմլայի երկիրը:

30 Եվ եղավ այնպես, որ Մորոնիան կասեցրեց նրանց իրենց նահանջում, և ճակատամարտ տվեց նրանց, այնպես որ այն վերածվեց մի չափազանց արյունոտ ճակատամարտի. այո, շատերը սպանվեցին և սպանվածների թվում գտան նաև՝ Կորիանթոսիին:

31 Եվ այժմ, ահա, Լամանացիները չէին կարող նահանջել այս կամ այն կողմ՝ ո՛չ դեպի հյուսիս, ո՛չ էլ դեպի հարավ, ո՛չ դեպի արևելք, ո՛չ էլ դեպի արևմուտք, քանզի նրանք ամեն կողմից շրջապատված էին Նեփիացիներով:

32 Եվ այսպես էր Կորիանթուսը Լամանացիներին զգել Նեփիացիների մեջտեղը, այնպես որ նրանք Նեփիացիների իշխանության տակ էին, և նա ինքը սպանվեց, և Լամանացիներն ընկան Նեփիացիների ձեռքը:

33 Եվ եղավ այնպես, որ Մորոնիան կրկին վերցրեց Չարահեմլայի քաղաքի տիրապետությունը և կարգադրեց, որ Լամանացիները, ովքեր վերցվել էին գերի, հեռանային երկրից խաղաղությամբ:

34 Եվ այսպես ավարտվեց դատավորների կառավարման քառասունևմեկերորդ տարին:

ԳԼՈՒԽ 2

Հելամանը՝ Հելամանի որդին, դառնում է գլխավոր դատավոր – Գադիանթոնն առաջնորդում է Կիսկումենի հրոսակախումբը – Հելամանի ծառան սպանում է Կիսկումենին, և Գադիանթոնի հրոսակախումբը փախչում է անապատ: Մոտ 50–49թթ. Ք.ծ.ա.:

Եվ եղավ այնպես, դատավորների կառավարման քառասունևերկուերորդ տարում, հետո, երբ Մորոնիան կրկին խաղաղություն հաստատեց Նեփիացիների ու Լամանացիների միջև, ահա, չկար մեկը, որ զբաղեցներ դատավորական աթոռը. հետևաբար, նորից

հակառակություն սկսվեց ժողովրդի մեջ այն բանի վերաբերյալ, թե ով պիտի զբաղեցներ դատավորական աթոռը:

2 Եվ եղավ այնպես, որ Հելամանը, որը Հելամանի որդին էր, ժողովրդի ձայնով նշանակվեց՝ զբաղեցնելու դատավորական աթոռը:

3 Բայց ահա, ^աԿիսկումենը, որը սպանել էր Պաորանին, դարանակալել էր՝ կործանելու Հելամանին ևս. և նա աջակցվում էր իր հրոսակախմբի կողմից, ովքեր մտել էին ուխտի մեջ, որ ոչ ոք չիմանար իր ամբարշտությունը:

4 Քանզի կար մի ինչ-որ ^աԳադիանթոն, որը մեծ գիտակ էր ճարտարախոսության մեջ, և նաև իր նենգության մեջ, դեկավարելու սպանության կողոպուտի գաղտնի գործը. ուստի, նա Կիսկումենի հրոսակախմբի առաջնորդը դարձավ:

5 Հետևաբար, նա շողոքորթեց նրանց, և նաև Կիսկումենին, որ եթե իրենք դնեին նրան դատավորական աթոռին, նա կշնորհեր նրանց, ովքեր պատկանում էին իր հրոսակախմբին, որ ժողովրդի մեջ նրանք դրվեին ուժի և իշխանության դիրքերում. այդ պատճառով էր Կիսկումենը ջանում կործանել Հելամանին:

6 Եվ եղավ այնպես, երբ նա առաջ էր գնում դեպի դատավորական աթոռը՝ կործանելու Հելամանին, ահա Հելամանի ծառաներից մեկը, գիշերը դրսում լինելով և ծպտված, տեղեկություն ձեռք բերելով այդ ծրագրերի մասին, որոնք կազմվել էին այս հրոսակախմբի կողմից՝ Հելամանին կործանելու համար,

7 Եվ եղավ այնպես, որ նա հանդիպեց Կիսկունենին, և նա նրան նշան տվեց. ուստի Կիսկունենը հայտնի դարձրեց նրան իր ցանկության նպատակը՝ կանենալով, որ նա ուղեկցի իրեն դեպի դատավորական աթոռը, որպեսզի կարողանա սպանել Հելամանին:

8 Եվ երբ Հելամանի ծառան իմացավ բոլորը, ինչ Կիսկունենի սրտում էր, և որ նրա նպատակն էր սպանել, և նաև, որ դա էր նպատակը բոլոր նրանց, ովքեր պատկանում էին նրա հրոսակախմբին՝ սպանել և կողոպտել և ձեռք բերել իշխանություն (և այդ էր նրանց «գաղտնի ծրագիրը և նրանց դավադրությունը»), Հելամանի ծառան ասաց Կիսկունենին. Արի առաջ գնանք դեպի դատավորական աթոռը:

9 Արդ, դա անչափ գոհացրեց Կիսկունենին, քանզի նա կարծեց, որ պիտի իրագործեր իր ծրագիրը. բայց ահա, Հելամանի ծառան, մինչ նրանք առաջ էին գնում դեպի դատավորական աթոռը, դանակահարեց Կիսկունենին մինչև սիրտը, այնպես որ նա ընկավ մեռած՝ առանց մի տնքոցի: Եվ նա վազեց և պատմեց Հելամանին բոլոր բաները, ինչ նա տեսել էր և լսել և արել:

10 Եվ եղավ այնպես, որ Հելամանն առաջ ուղարկեց՝ բռնելու կողոպտիչների ու գաղտնի մարդասպանների այդ հրոսակախումբը, որ նրանք մահվան դատապարտվեին՝ համաձայն օրենքի:

11 Բայց ահա, երբ Գաղիանոնը հայտնաբերեց, որ Կիսկունենը չէր վերադարձել, նա վախեցավ, որ չլինի թե ինքը կործանվի. ուստի նա կարգադրեց, որ իր հրոսակա-

խումբը հետևի իրեն: Եվ նրանք փախուստի դիմեցին երկրից դուրս՝ գաղտնի ճանապարհով՝ դեպի անապատը. և այսպիսով, երբ Հելամանն առաջ ուղարկեց՝ նրանց բռնելու, նրանց ոչ մի տեղ չկարողացան գտնել:

12 Եվ այս Գաղիանոնի մասին դեռ կխոսվի հետագայում: Եվ այսպես ավարտվեց Նեփիի ժողովրդի վրա դատավորների կառավարման քառասուններկուերորդ տարին:

13 Եվ ահա, այս գրքի վերջում, դուք կտեսնեք, որ այս «Գաղիանոնը Նեփիի ժողովրդին հասցրեց խորտակման, այո, գրեթե լիակատար կործանման:

14 Ահա, ես ի նկատի չունեմ Հելամանի գրքի վերջը, այլ ես ի նկատի ունեմ Նեփիի գրքի վերջը, որից ես վերցրել եմ ամբողջ պատմությունը, որը ես գրի եմ առել:

ԳԼՈՒԽ 3

Բազմաթիվ Նեփիացիներ գաղթում են դեպի հյուսիսային կողմի երկիրը – Նրանք կառուցում են ցեմենտից տներ ու պահում շատ հիշատակարաններ – Տասնյակ հազարավորներ դարձի են զալիս ու մկրտվում – Աստծո խոսքն առաջնորդում է մարդկանց դեպի փրկություն – Նեփին Հելամանի որդին, զբաղեցնում է դատավորական աթոռը: Մոտ 49-39թթ. Ք.ծ.ա.:

Եւ արդ, եղավ այնպես, դատավորների կառավարման քառասուններեքերորդ տարում, Նեփիի ժողովրդի մեջ հակառակություն չկար, բացի մի փոքր հպարտու-

8ա2 Նեփի 10.15:
սուր Գաղտնի

խմբակցություններ:
13ա Հել. 6.18, 4 Նեփի 1.42:

թյունից, որը եկեղեցում էր, որը որոշ չափով փոքր երկպառակու-թյունների պատճառ դարձավ ժողովրդի մեջ, գործեր, որոնք կարգավորվեցին քառասունևե-րեքերորդ տարվա վերջին:

2 Եվ քառասունևչորսերորդ տարում ժողովրդի մեջ ոչ մի հա-կառակություն չկար. ոչ էլ շատ հակառակություններ կար քառա-սունևհինգերորդ տարում:

3 Եվ եղավ այնպես, քառասու-նևվեցերորդում, այո, եղան շատ հակառակություններ ու շատ երկ-պառակություններ. որի ընթաց-քում եղան չափազանց մեծ թվով մարդիկ, ովքեր հեռացան Չարա-հեմլայի երկրից, և առաջ գնացին դեպի ^ահյուսիսային կողմի երկիրը՝ ժառանգելու հողը:

4 Եվ նրանք մի չափազանց մեծ տարածություն անցան, այնքան, մինչև որ հասան ջրի ^ամեծ զանգ-վածների ու շատ գետերի:

5 Այո, և նրանք տարածվեցին, նույնիսկ դեպի երկրի բոլոր մասե-րը, դեպի այն մասերը, որ ամայի ու ծառազուրկ չէին դարձվել բնա-կիչների շատության պատճառով, որոնք նախկինում ժառանգել էին հողը:

6 Եվ այժմ երկրի ոչ մի մաս ամայի չէր, բացի դա լինել ծառե-րից. բայց ժողովրդի ^ակործանման վիթխարիության պատճառով, որոնք նախկինում ժառանգել էին հողը, այն կոչվում էր ^բամայի:

7 Եվ այնտեղ կային, բայց քիչ ծառեր երկրի երեսին, այնուամե-նայնիվ, մարդիկ, ովքեր առաջ գնացին, չափազանց գիտակ դար-ձան ցեմենտով աշխատելիս. ու-

տի, նրանք ցեմենտից տներ կա-ռուցեցին, որոնցում բնակվեցին:

8 Եվ եղավ այնպես, որ նրանք բազմացան ու տարածվեցին, և առաջ գնացին հարավային կողմի երկրից դեպի հյուսիսային կողմի երկիրը, և տարածվեցին այնքան, որ նրանք սկսեցին ծածկել ամ-բողջ երկրի երեսը, հարավային ծովից մինչև հյուսիսային ծովը, ^աարևմտյան ծովից մինչև արևե-լյան ծովը:

9 Եվ ժողովուրդը, որոնք հյուսի-սային կողմի երկրում էին, բնակ-վում էին վրաններում և ցեմենտից տներում, և նրանք թույլ էին տա-լիս, որ ինչ ծառ էլ որ բուսներ երկ-րի երեսին, որ այն աճեր, որպեսզի ժամանակին իրենք փայտ ունե-նային՝ կառուցելու իրենց տները, այո, իրենց քաղաքները, իրենց տաճարները և իրենց ժողովա-րանները և իրենց սրբարանները, և բոլոր ձևի իրենց շենքերը:

10 Եվ եղավ այնպես, քանի որ փայտը չափազանց սակավ էր հյուսիսային կողմի երկրում, նրանք ^անավերով ուղարկեցին մեծ քա-նակությամբ:

11 Եվ այսպիսով, նրանք հնարա-վորություն ընձեռեցին ժողովրդին՝ հյուսիսային կողմի երկրում, որ կառուցեն շատ քաղաքներ՝ ինչպես փայտից, այնպես էլ ցեմենտից:

12 Եվ եղավ այնպես, որ Ամոնի ^աժողովրդից շատերը, ովքեր ծա-զումով Լամանացիներ էին, նույն-պես գնացին այս երկիրը:

13 Եվ այժմ, այս ժողովրդի գոր-ծերի մասին, այս ժողովրդից շա-տերի կողմից՝ իրենց վերաբերյալ, կան շատ հիշատակարաններ

<p>3 3ա Ալմա 63.4: 4ա Մոսիա 8.8, Մորմ. 6.4: 6ա Մոսիա 21.25-27:</p>	<p>բ Ալմա 22.31: 8ա Ալմա 22.27, 32: 10ա Ալմա 63.5-8:</p>	<p>12ա Ալմա 27.21-26:</p>
--	--	---------------------------

պահված, որոնք հանգամանալից են և շատ ծավալուն:

14 Քանզի ահա, այս ժողովրդի գործերի մեկ հարյուրերորդ մասը, այո, Լամանացիների ու Նեփիացիների պատմությունը և նրանց պատերազմները, հակառակությունները և երկպառակությունները, նրանց քարոզելը և նրանց մարգարեությունները, նրանց նավերով փոխադրումները և նրանց նավեր կառուցելը, նրանց ^ատաճարներ և ժողովարաններ ու սրբարաններ կառուցելը, նրանց արդարակեցությունը և նրանց ամբարշտությունը, նրանց սպանությունները և նրանց կողոպուտները, նրանց թալանները և բոլոր ձևի պղծություններն ու պոռնկությունները, հնարավոր չէ ընդգրկել այս աշխատության մեջ:

15 Բայց ահա, կան շատ գրքեր ու շատ հիշատակարաններ ամեն տեսակի, և դրանք հիմնականում պահվել են Նեփիացիների կողմից:

16 Եվ դրանք ^ափոխանցվել են Նեփիացիների կողմից՝ մի սերընդից մյուսին, մինչև որ նրանք ընկել են օրինազանցության մեջ և սպանվել են, թալանվել և հալածվել, քշվել հեռու և մոռթվել, ցրվել երկրի երեսով և ձուլվել Լամանացիների հետ, մինչև նրանք ^բայլևս չեն կոչվել Նեփիացիներ, դառնալով ամբարիշտ և վայրի և կատաղի, այո, մինչև անգամ դառնալով Լամանացիներ:

17 Եվ այժմ ես կրկին վերադառնում եմ իմ պատմությանը. հետևաբար, ինչ ես խոսել եմ Նեփիի ժողովրդի մեջ, տեղի էր ունեցել

մեծ հակառակություններից և խռովություններից, պատերազմներից և երկպառակություններից հետո:

18 Դատավորների կառավարման քառասունևվեցերորդ տարին ավարտվեց.

19 Եվ եղավ այնպես, որ դեռևս մեծ հակառակություն կար երկրում, այո, նույնիսկ քառասունևյոթերորդ տարում, և նաև քառասունևութերորդ տարում:

20 Այնուամենայնիվ, Հելամանը զբաղեցնում էր դատավորական աթոռը՝ արդարությամբ ու անաչառությամբ. այո, նա պահում-պահպանում էր Աստծո կանոնները և դատաստանները և պատվիրանները. և նա շարունակ անում էր այն, ինչը շիտակ էր Աստծո աչքում. և նա քայլում էր իր հոր ուղիներով, այնպես որ նա բարգավաճեց երկրում:

21 Եվ եղավ այնպես, որ նա ունեցավ երկու որդի: Նա տվեց ավագին ^աՆեփի անունը, իսկ կրտսերին՝ ^բԼեքի անունը: Եվ նրանք սկսեցին մեծանալ Տիրոջ համար:

22 Եվ եղավ այնպես, որ Նեփիացիների մեջ պատերազմներն ու հակառակությունները սկսեցին փոքր-ինչ դադարել, Նեփիի ժողովրդի վրա դատավորների կառավարման քառասունևութերորդ տարվա ուշ վերջին:

23 Եվ եղավ այնպես, դատավորների կառավարման քառասունևիններորդ տարում, երկրում հաստատվեց անընդհատ խաղաղություն, ամենուր, բացի դա լինելը գաղտնի խմբակցություններից,

14ա2 Նեփի 5.16, Հակոբ 1.17, 3 Նեփի 11.1: 16ա1 Նեփի 5.16–19,

Ալմա 37.4: ^բ Ալմա 45.12–14: 21ա սուր Նեփի՝ Հելամանի որդի:

^բ սուր Լեքի՝ Նեփիացի քարոզիչ:

որոնք ավազակ «Գաղիանքոնն էր հիմնել երկրի առավել բնակեցված մասերում, որոնք այդ ժամանակ հայտնի չէին նրանց, ովքեր կառավարության գլուխն էին անցել. ուստի նրանք չէին վերացվել երկրից:

24 Եվ եղավ այնպես, որ այս նույն տարում, մեծ բարգավաճում եղավ եկեղեցում, այնպես որ եղան հազարավորներ, ովքեր միացան եկեղեցուն ու մկրտվեցին ապաշխարության համար:

25 Եվ այնքան մեծ էր եկեղեցու բարգավաճումը, և այնքան շատ՝ օրհնությունները, որոնք դուրս քափվեցին ժողովրդի վրա, որ նույնիսկ քահանայապետերն ու ուսուցիչներն իրենք չափազանց ապշած էին:

26 Եվ եղավ այնպես, որ Տիրոջ գործը բարգավաճեց՝ մկրտելով և միավորելով Աստծո եկեղեցուն բազմաթիվ հոգիներ, այո, նույնիսկ տասնյակ հազարավորների:

27 Այսպիսով, մենք կարող ենք տեսնել, որ Տերը ողորմած է բոլորի հանդեպ, ովքեր իրենց սրտի անկեղծությամբ կկանչեն նրա սուրբ անունը:

28 Այո, այսպիսով մենք տեսնում ենք, որ երկնքի «դուռը բաց է՝ բոլորի համար, այսինքն՝ նրանց համար, ովքեր կհավատան Հիսուս Քրիստոսի անունին, որն Աստծո Որդին է:

29 Այո, մենք տեսնում ենք, որ ով որ կամենա, կարող է կառչած մնալ Աստծո «խոսքին, որը՝ Կենդանի է և հզոր, որը կտորկտոր է անում դևի ողջ խորամանկությունը և ծուղակները և խա-

բեությունները, և առաջնորդում է Քրիստոսի մարդուն մի անձուկ ու «նեղ ուղիով՝ այն հավիտենական թշվառության անդունդի վրայով, որը պատրաստված է՝ կլանելու ամբարիշտներին,–

30 Եվ նրանց հոգիները, այո, նրանց անմահ հոգիները հասցնում է Աստծո՝ «աջ կողմը՝ երկնքի արքայություն, որ նստեն Աբրահամի և Իսահակի և Հակոբի և մեր բոլոր սուրբ հայրերի հետ, և այլևս դուրս չգնան:

31 Եվ այս տարում անընդհատ ցնծություն եղավ Չարահեմլայի երկրում, և շրջակա բոլոր շրջաններում, նույնիսկ ողջ երկրում, որը պատկանում էր Նեփիացիներին:

32 Եվ եղավ այնպես, որ մնացած քառասունևհինգ տարում խաղաղություն և չափազանց մեծ ուրախություն եղավ. այո, և մահ անընդհատ խաղաղություն ու մեծ ուրախություն եղավ դատավորների կառավարման հիսուներորդ տարում:

33 Եվ դատավորների կառավարման հիսունևեկերորդ տարում նույնպես խաղաղություն եղավ, բացի միայն հպարտությունից, որը սկսեց մուտք գործել եկեղեցի, ոչ թե Աստծո եկեղեցի, այլ մարդկանց սրտերը, ովքեր ձևացնում էին, թե պատկանում են Աստծո եկեղեցուն,

34 Եվ նրանք բարձրամտացել էին՝ «հպարտությունից, մինչև իսկ իրենց եղբայրներից շատերին հալածելը: Արդ, սա մեծ չարիք էր, որը պատճառ էր դառնում ժողովրդի ավելի խոնարհ մասին տանել

23ա Հել. 2.4:
28ա2 Նեփի 31.9, 17:
բ Գոր. Ժ.28,
Հռովմ. Բ.10–11:

29ա սո՛ւ Աստծո խոսքը:
բ Եբր. Գ.12, ՎևՈՒ 11.2:
գ 2 Նեփի 9.41, 33.9:
դ 1 Նեփի 15.28–30:

30ա Մատ. ԻԵ.33–34:
34ա սո՛ւ Հպարտություն:

մեծ հալածանքներ և անցնել շատ չարչարանքների միջով:

35 Այնուամենայնիվ, նրանք հաճախ ^ածոմ էին պահում ու ^բաղոթում և դառնում էին ավելի ու ավելի ուժեղ իրենց ^գխոնարհության մեջ, և ավելի ու ավելի կայուն՝ Քրիստոսի հավատքում, որը նրանց հոգիները լցնում էր ուրախությամբ ու սփռփանքով, այո, նույնիսկ մինչև իսկ ^դմաքքում ու ^եսրբագործում էր նրանց սրտերը, սրբագործում, որը զայիս էր իրենց սրտերն Աստծուն ^զենթարկելուց:

36 Եվ եղավ այնպես, որ հիսուններկուերորդ տարին նույնպես ավարտվեց խաղաղությանը, բացի միայն չափազանց մեծ հպարտության, որը մտել էր մարդկանց սրտերը. և դա նրանց անչափ մեծ ^ահարստությունների և երկրում նրանց բարգավաճման պատճառով էր. և այն օրեցօր իշխում էր նրանց վրա:

37 Եվ եղավ այնպես, դատավորների կառավարման հիսուններեքերորդ տարում Հելամանը մահացավ, և նրա ավագ որդին՝ Նեփիացի սկսեց կառավարել նրա փոխարեն: Եվ եղավ այնպես, որ նա արդարությամբ ու անաչառությամբ զբաղեցրեց դատավորական աթոռը. այո, նա պահում էր Աստծո պատվիրաններն ու քայլում իր հոր ուղիներով:

ԳԼՈՒԽ 4

Նեփիացի պառակտիչներն ու Լա-

մանացիները միացնում են ուժերը և վերցնում Չարահենյայի երկիրը – Նեփիացիների պարտությունները զայիս են իրենց ամբարշտության հետևանքով – Եկեղեցին նվազում է, և ժողովուրդը դառնում է Լամանացիների պես բույլ: Մոտ 38–30թթ. Ք.ծ.ա.:

Եւ եղավ այնպես, հիսունչորսերորդ տարում կային շատ պառակտիչներ եկեղեցում, և կար նաև ^ահակառակություն ժողովրդի մեջ, այնպես որ շատ արյունահեղություն եղավ:

2 Եվ ապտամբ մասը սպանվեց ու դուրս քշվեց երկրից, և նրանք անցան Լամանացիների թագավորի կողմը:

3 Եվ եղավ այնպես, որ նրանք ջանացին դրդել Լամանացիներին՝ պատերազմելու Նեփիացիների դեմ. բայց ահա, Լամանացիներն անչափ վախենում էին, այնպես որ նրանք չկամեցան ականջ անել այդ պառակտիչների խոսքերին:

4 Բայց եղավ այնպես, դատավորների կառավարման հիսունվեցերորդ տարում, եղան ^ապառակտիչներ, ովքեր գնացին Նեփիացիներից՝ Լամանացիների մոտ. և նրանք հաջողության հասան այն մյուսների հետ՝ նրանց դրդելով բարկության Նեփիացիների դեմ. և նրանք բոլորն այդ տարում նախապատրաստվում էին պատերազմի:

5 Եվ հիսունկյոթերորդ տարում նրանք վար եկան Նեփիացիների դեմ ճակատամարտելու, և նրանք

35ա սոՒ Ծոմ,
Ծոմապահություն:
բ սոՒ Աղոթք:
գ սոՒ Խոնարհ,
Խոնարհություն:

դ սոՒ Ամարատ,
Ամարատություն:
ե սոՒ Սրբագործում:
զ Բ Մն. Լ.8,
Մոսիա 3.19:

36ա սոՒ Հարստություններ:
4 1ա 3 Նեփի 11.29:
4ա Հել. 5.17:

սկսեցին մահվան գործը. այո, այնպես որ դատավորների կառավարման հիսունևութերորդ տարում նրանք հաջողության հասան Չարահեմվայի երկրի տիրապետությունը ձեռք բերելիս. այո, և նաև բոլոր հողերը, նույնիսկ, մինչև այն հողը, որը մոտ էր Լիառատ երկրին:

6 Եվ Նեփիացիներն ու Մորոնիայի գորքերը քվեցին, նույնիսկ մինչև Լիառատ երկիրը.

7 Եվ այնտեղ նրանք ամրացան Լամանացիների դեմ, արևմտյան ծովից նույնիսկ մինչև արևելյանը, դա Նեփիացու համար լինելով մեկ օրվա ճանապարհ, այն գծի վրա, որը նրանք ամրացրել էին ու տեղավորել իրենց գորքերը՝ իրենց երկրի հյուսիսը պաշտպանելու համար:

8 Եվ այսպիսով, Նեփիացիների այդ պառակտիչները, Լամանացիների սովար բանակի օգնությամբ, ձեռք էին բերել Նեփիացիների բոլոր տարածքները, որոնք երկրի հարավային կողմում էին: Եվ այս բոլորն արվեց դատավորների կառավարման հիսունևութերորդ և իններորդ տարիներին:

9 Եվ եղավ այնպես, դատավորների կառավարման վաթսուներորդ տարում, Մորոնիան իր գորքերով հաջողության հասավ՝ ձեռք բերելով երկրի շատ մասերը. այո, նրանք ետ վերցրեցին բազմաթիվ քաղաքներ, որոնք ընկել էին Լամանացիների ձեռքը:

10 Եվ եղավ այնպես, դատավորների կառավարման վաթսունևեկերորդ տարում, նրանք հաջողության հասան՝ ետ վերցնելով

նույնիսկ բոլոր իրենց տարածքների կեսը:

11 Արդ, Նեփիացիների այս մեծ կորուստը, և մեծ կոտորածը, որը եղավ նրանց մեջ, չէր պատահի, եթե չլիներ նրանց ամբարշտությունն ու նրանց պղծությունը, որը նրանց մեջ էր. այո, և դա նրանց մեջ էր, ովքեր ձևացնում էին, թե պատկանում են Աստծո եկեղեցուն:

12 Եվ դա նրանց սրտերի «հպարտության պատճառով էր, իրենց անչափ՝ հարստությունների պատճառով, այո, դա՞ աղքատին ճնշելու պատճառով էր, իրենց ուտելիքը սովածից պահելու, իրենց հագուստը մերկից պահելու, և իրենց խոնարհ եղբայրների այտերին խփելու, այն, ինչ սրբազան էր՝ ծաղր սարքելու, մարգարեության և հայտնության ոգին մերժելու, սպանելու, թալանելու, ստելու, զողանալու, շնություն անելու, մեծ հակառակություններ բարձրացնելու, և դեպի Նեփիի երկիրը՝ Լամանացիների մեջ հեռանալու պատճառով,

13 Եվ իրենց այս մեծ ամբարշտության ու իրենց սեփական ուժով՝ «պարծենալու պատճառով, նրանք թողնվեցին իրենց սեփական ուժին. ուստի նրանք չէին բարգավաճում, այլ չարչարվեցին ու զարկվեցին և քվեցին Լամանացիների կողմից, մինչև որ կորցրեցին գրեթե բոլոր իրենց հողերի տիրապետությունը:

14 Բայց ահա, Մորոնիան ժողովրդին շատ բաներ քարոզեց՝ նրանց անօրինության պատճառով, և նաև՝ «Նեփին ու Լեքին,

12ա Արդիս Ա.3-4, ՎևՈՒ 101.42: p Ա Տիմ. 2.17,

2 Նեփի 9.42: q ՎևՈՒ 42.30-31: 13ա ՍՈՒ Հպարտություն:

14ա Հեյ. 3.21:

որոնք Հելամանի որդիներն էին, ժողովրդին շատ բաներ քարոզեցին, այո, և շատ բաներ մարգարեացան նրանց՝ իրենց անօրինությունների վերաբերյալ, և ինչ պիտի պատահեր նրանց, եթե նրանք չապաշխարեին իրենց մեղքերից:

15 Եվ եղավ այնպես, որ նրանք ապաշխարեցին, և որքան նրանք ապաշխարեցին, այնքան սկսեցին քարգավաճել:

16 Քանզի, երբ Մորոնիան տեսավ, որ նրանք ապաշխարեցին, նա խիզախեց առաջնորդել նրանց առաջ՝ տեղից-տեղ, և քաղաքից-քաղաք, նույնիսկ, մինչև որ նրանք ետ վերցրեցին իրենց ունեցվածքի կեսը և իրենց բոլոր հողերի կեսը:

17 Եվ այսպես ավարտվեց դատավորների կառավարման վաթսուներկերորդ տարին:

18 Եվ եղավ այնպես, դատավորների կառավարման վաթսուներկուերորդ տարում, Մորոնիան չկարողացավ ձեռք բերել ավելի շատ տարածքներ Լամանացիներից:

19 Հետևաբար, նրանք հրաժարվեցին իրենց ծրագրերից՝ ձեռք բերել իրենց հողերի մնացածը, քանզի այնքան մեծաթիվ էին Լամանացիները, որ Նեփիացիների համար անհնար դարձավ ավելի մեծ իշխանություն ձեռք բերել նրանց վրա. այդ պատճառով Մորոնիան գործածում էր բոլոր իր զորքերը՝ պահպանելու այն մասերը, որոնք նա վերցրել էր:

20 Եվ եղավ այնպես, Լամանացիների թվի մեծության պատճառով, Նեփիացիները սաստիկ վախի մեջ էին, որ չլինի թե իրենք

պարտվեն և կոխկրտվեն և սպանվեն և կործանվեն:

21 Այո, նրանք սկսեցին հիշել Ալմայի մարգարեությունները և նաև Մոսիայի խոսքերը. և նրանք տեսան, որ իրենք մի խատապարանոց ժողովուրդ են, և որ իրենք ոչինչ են համարել Աստծո պատվիրանները.

22 Եվ որ իրենք փոխել էին ու ոտքի տակ գցել Մոսիայի "օրենքները, կամ այն, ինչ Տերը պատվիրել էր նրան տալ ժողովրդին. և նրանք տեսան, որ իրենց օրենքներն ապականվել էին, և որ իրենք դարձել էին մի ամբարիշտ ժողովուրդ, այնպես որ նրանք ամբարիշտ էին, նույնիսկ ինչպես Լամանացիները:

23 Եվ իրենց անօրինության պատճառով եկեղեցին սկսել էր "նվազել. և նրանք սկսել էին չհավատալ մարգարեության ոգուն ու հայտնության ոգուն. և Աստծո դատաստանները նրանց դեմքին հառեցին:

24 Եվ նրանք տեսան, որ իրենք դարձել են "թույլ իրենց եղբայրների՝ Լամանացիների պես, և որ Տիրոջ Հոգին այլևս չէր պահպանում իրենց. այո, այն ետ էր քաշվել նրանցից, որովհետև Տիրոջ "Հոգին չի բնակվում անսուրբ տաճարներում,

25 Հետևաբար, Տերը դադարեց պահպանել նրանց իր հրաշագործ և անգուգական զորությամբ, քանզի նրանք ընկել էին "անհավատության մի վիճակի և սոսկալի ամբարշտության մեջ. և նրանք տեսան, որ Լամանացիներն անհամեմատ ավելի մեծաթիվ են,

22ա Ալմա 1.1:
23ա սու՛ Ուրացություն:
24ա Մոսիա 1.13:

բ սու՛ Մուրբ Հոգի:
գ Մոսիա 2.37,
Ալմա 7.21, 34.36:

25ա սու՛ Անհավատություն:

քան իրենք, և եթե իրենք ՚հարեն Տիրոջը՝ իրենց Աստծուն, իրենք անխուսափելիորեն պիտի կորչեն:

26 Քանզի ահա, նրանք տեսան, որ Լամանացիների ուժն այնքան մեծ էր, որքան իրենց ուժը, նույնիսկ մարդ մարդու դեմ: Եվ այսպիսով, նրանք ընկել էին այս մեծ օրինազանցության մեջ. այո, այսպիսով, նրանք ՞ոչ շատ տարիների ընթացքում դարձել էին թույլ՝ իրենց օրինազանցության պատճառով:

ԳԼՈՒԽ 5

Նեփիհն ու Լեքին իրենց նվիրում են քարոզելուն – Նրանց անունները դրդում են նրանց ընդօրինակել իրենց կյանքում իրենց նախնիներին – Քրիստոսը փրկագնում է նրանց, ովքեր ապաշխարում են – Նեփիհն ու Լեքին շատերին դարձի են բերում և բանտարկվում են, և կրակն օղակում է նրանց – Խավարի մի ամպ ստվերում է երեք հարյուր մարդկանց – Երկիրը ցնցվում է, և մի ձայն պատվիրում է մարդկանց ապաշխարել – Նեփիհն ու Լեքին գրուցում են իրեշտակների հետ, և բազմությունն օղակվում է կրակով: Մոտ 30թ. Ք.ծ.ա.:

Եւ եղավ այնպես, որ այս նույն տարում, ահա ՞Նեփիհն հանձնեց դատավորական աթոռը մի մարդու, որի անունը Քեզորամ էր:

2 Քանի որ նրանց օրենքներն ու նրանց կառավարությունները հաստատվում էին ժողովրդի ՞ձայնով, և նրանք, ովքեր ՚ընտրում էին չարիք, ավելի մեծաթիվ

էին, քան նրանք, ովքեր ընտրում էին բարիք, հետևաբար, նրանք հասունանում էին կործանման համար, քանզի օրենքները դարձել էին ապականված:

3 Այո, և դա բոլորը չէր. նրանք մի խստապարանոց ժողովուրդ էին, այնպես որ չէին կարողանում կառավարվել օրենքով, ոչ էլ արդարադատությամբ, բացի դա լիներ ի կործանումն իրենց:

4 Եվ եղավ այնպես, որ Նեփիհն վիատվել էր նրանց անօրինություններին պատճառով. և նա ՞հրաժարվեց դատավորական աթոռից, և իր բոլոր մնացած օրերում իր վրա վերցրեց Աստծո խոսքը քարոզելը, և նրա եղբայր Լեքին նույնպես՝ իր բոլոր մնացած օրերում.

5 Քանզի նրանք հիշում էին խոսքերը, որոնք իրենց հայրը՝ Հելամանը, ասել էր իրենց: Եվ սրանք են այն խոսքերը, որոնք նա ասել էր.

6 Ահա, իմ որդիներ՛, ես փափագում եմ, որ դուք հիշեք պահել Աստծո պատվիրանները. և ես կկամենայի, որ դուք հայտարարեք այս խոսքերը ժողովրդին: Ահա, ես տվել եմ ձեզ մեր առաջին ՞ժնողների անունները, ովքեր դուրս էին եկել Երուսաղեմի հողից. և այս ես արել եմ, որ երբ դուք հիշեք ձեր անունները, դուք կարողանաք հիշել նրանց. և երբ դուք հիշեք նրանց, դուք կարողանաք հիշել նրանց գործերը. և երբ դուք հիշեք նրանց գործերը, դուք կարողանաք իմանալ, որ ասվել է, և նաև գրվել, որ դրանք ՚բարի էին:

7 Հետևաբար, իմ որդիներ՛, ես կկամենայի, որ դուք անեք այն, ինչ

25բ Հակոբ 6.5:
26ա Ալմա 46.8, Հել. 12.3-4:
5 1ա Հել. 3.37:

2ա Մոսիա 29.25-27:
բ Ալմա 10.19:
4ա Ալմա 4.15-20:

6ա 1 Նեփի 1.1, 5:
բ 2 Նեփի 33:

բարի է, որպեսզի ձեր մասին էլ ասվի, և նաև գրվի, ճիշտ ինչպես ասվել և գրվել է նրանց մասին:

8 Եվ այժմ, իմ որդիներ, ահա, ես որոշ բան էլ ունեմ փափագելու ձեզանից, փափագ, որ դուք չանեք այս բաները՝ ձեր պարծենալու համար, այլ որ դուք անեք այս բաները, որ ձեզ համար ^ագանձ դիզեք երկնքում, այո, որը հավերժական է, և որը չի փչանում. այո, որ դուք կարողանաք ունենալ հավերժական կյանքի այն ^բթանկարժեք պարգևը, որը մենք հիմք ունենք ենթադրելու, որ տրվել է մեր հայրերին:

9 Օ՛, հիշե՛ք, հիշե՛ք, իմ որդիներ, այն ^ախոսքերը, որոնք Բենիամին քազավորն ասաց իր ժողովրդին. այո, հիշե՛ք, որ չկա ուրիշ ճանապարհ կամ միջոց, որով մարդ կարողանա փրկվել, միայն ^բքավիչ արյանք Հիսուս Քրիստոսի, որը պիտի գա. այո, հիշե՛ք, որ նա գալիս է ^գփրկագնելու ^աշխարհը:

10 Եվ հիշեք նաև ^ախոսքերը, որոնք Ամուղեկն ասաց Ջիզրոմին Ամմոնիա քաղաքում. քանզի նա ասաց նրան, որ Տերն, անկասկած, պիտի գա՝ փրկագնելու իր ժողովրդին, սակայն որ նա չպիտի գա՝ փրկագնելու նրանց իրենց մեղքերի մեջ, այլ փրկագնելու նրանց իրենց մեղքերից:

11 Եվ նա Հոր կողմից գործություն ունի տրված, փրկագնելու նրանց իրենց մեղքերից՝ ապաշխարության շնորհիվ. այդ նպատակով

նա ^աուղարկել է իր հրեշտակներին՝ հայտարարելու ապաշխարության պայմանների ավետիքը, որը բերում է դեպի Քավչի գորությունը, դեպի իրենց հոգիների փրկությունը:

12 Եվ, այժմ, իմ որդիներ, հիշեք, հիշեք, որ դա մեր Քավչի ^ավեմի վրա է, որը Քրիստոսն է՝ Աստծո Որդին, որ դուք պիտի կառուցեք ձեր ^բհիմքը. որ, երբ դևն առաջ ուղարկի իր գորեղ քամիները, այո, իր նետերը պտտահողմում, այո, երբ նրա ողջ կարկուտը և գորեղ ^գփոթորիկը հարվածի ձեզ, այն գործություն չի ունենա ձեր վրա՝ քաշելու ձեզ վար՝ դեպի թշվառության ու անվերջ վայի անդունդը, այն վեմի շնորհիվ, որի վրա դուք կառուցված եք, որը հաստատուն հիմք է, հիմք, որի վրա, եթե մարդիկ կառուցեն, նրանք չեն ընկնի:

13 Եվ եղավ այնպես, որ սրանք էին այն խոսքերը, որոնք Հելամանը ^ատվորեցրեց իր որդիներին. այո, նա տվորեցրեց շատ բաներ, որոնք չեն գրվել, և նաև շատ բաներ, որոնք գրվել են:

14 Եվ նրանք հիշում էին նրա խոսքերը. և այդ պատճառով նրանք առաջ գնացին՝ պահելով Աստծո պատվիրանները՝ ուսուցանելու Աստծո խոսքը Նեփիի ողջ ժողովրդի մեջ, սկսած Լիառատ քաղաքից.

15 Եվ այնտեղից՝ առաջ, դեպի Գեդի քաղաքը. և Գեդի քաղաքից՝ դեպի Մուղեկի քաղաքը.

8ա3 Նեփի 13.19-21:
բ ՎևոՒ 14.7:
9ա Մոսիա 2.9:
բ Մոսիա 3.17-18:
սու՝ Քավել,
Քավություն:
գ սու՝ Փրկագնել,
Փրկագնված,

Փրկագնում:
դ սու՝ Աշխարի -
Մարդիկ, ովքեր չեն
հնազանդվում
պատվիրաններին:
10ա Ալմա 11.34:
11ա Ալմա 13.24-25:
12ա Մաու. Է.24-27,

ՎևոՒ 6.34,
Մովսես 7.53:
սու՝ Անկյունաքար.
Վեմ:
բ Ես. ԻԸ.16,
Հակոբ 4.16:
գ 3 Նեփի 14.25, 27:
13ա Մոսիա 1.4:

16 Եվ, նույնիսկ մի քաղաքից մյուսը, մինչև որ նրանք շրջեցին Նեփիի ողջ ժողովրդի մեջ, ովքեր երկրի հարավային կողմում էին. և այնտեղից՝ դեպի Չարահեմլայի երկիրը, Լամանացիների մեջ:

17 Եվ եղավ այնպես, որ նրանք քարոզեցին մեծ գործոթյամբ, այնպես որ նրանք ամաչեցրեցին այն՝ «պառակտիչներից շատերին, ովքեր գնացել էին Նեփիացիներից, այնպես որ նրանք առաջ եկան և խոստովանեցին իրենց մեղքերն ու մկրտվեցին ասպաշխարության համար, և անմիջապես վերադարձան Նեփիացիների մոտ, ջանալով ուղղել նրանց առաջ այն անիրավությունները, որոնք իրենք արել էին:

18 Եվ եղավ այնպես, որ Նեփին ու Լեֆին քարոզեցին Լամանացիներին այդպիսի մեծ գործոթյամբ ու իշխանությամբ, քանզի նրանք ունեին գործություն ու իշխանություն տրված իրենց, որ կարողանային ՝խոսել, և նրանք նաև իրենց տրված ունեին այն, ինչ իրենք պիտի խոսեին,

19 Հետևաբար, նրանք խոսեցին, ի մեծ զարմանա Լամանացիների, ՝համոզելով նրանց, այնպես, որ Լամանացիներից եղան ութ հազար, ովքեր Չարահեմլայի երկրում էին և շրջակայքում, մկրտված ասպաշխարության համար, և համոզվեցին իրենց հայրերի ավանդությունների ամբարշտության վերաբերյալ:

20 Եվ եղավ այնպես, որ Նեփին

ու Լեֆին այնտեղից շարունակեցին գնալ Նեփիի երկիրը:

21 Եվ եղավ այնպես, որ նրանք բռնվեցին Լամանացիների մի գործի կողմից ու գցվեցին ՝բանտ. այո, հենց այն նույն բանտը, ուր Ամմոնն ու նրա եղբայրներն էին գցվել Լիմքիի ծառաների կողմից:

22 Եվ նրանք շատ օրերի ընթացքում՝ առանց ուտելիքի, բանտ գցվելուց հետո, ահա, նրանք գնացին բանտ՝ վերցնելու նրանց, որ սպանեն նրանց:

23 Եվ եղավ այնպես, որ Նեփին ու Լեֆին կարծես ՝կրակով օղակված լինեին, նույնիսկ այնպես, որ նրանք չհամարձակվեցին ձեռք ձգել նրանց վրա՝ վախենալով, որ չլինի թե այրվեն: Այնուամենայնիվ, Նեփին ու Լեֆին չէին այրվում. և նրանք կարծես կանգնած էին կրակի մեջտեղում ու չէին այրվում:

24 Եվ երբ նրանք տեսան, որ իրենց շուրջըլուրն օղակված էր մի կրակե ՝այրուով, և որ այն չէր այրում իրենց, նրանց սիրտը լցվեց համարձակությամբ:

25 Քանզի նրանք տեսան, որ Լամանացիները չէին համարձակվում ձեռք բարձրացնել իրենց վրա. ոչ էլ համարձակվում էին մոտ գալ իրենց, այլ կանգնած էին, կարծես զարմանքից զարկված լինեին համրությանբ:

26 Եվ եղավ այնպես, որ Նեփին ու Լեֆին առաջ կանգնեցին ու սկսեցին խոսել նրանց հետ՝ ասելով. Մի վախեցեք, քանզի ահա, դա Աստված է, որ ցույց է տվել ձեզ

<p>17ա Հել. 4.4: 18ա ՎևոՒ 100.5–8: սոՒ Մարգարեություն, Մարգարեանալ: 19ա սոՒ Գարձի գալ,</p>	<p>Նորադարձ. Միսիոներական աշխատանք: 21ա Մոսիա 7.6–7, 21.23: 23ա Ել. Գ.2:</p>	<p>24ա Ել. ԺԳ.24, 1 Նեփի 1.6, ՎևոՒ 29.12, ՋՄ–Պ 1.16:</p>
--	--	---

այս զարմանալիքը, որով ցույց է տրվում ձեզ, որ դուք չէք կարող ձեռք բարձրացնել մեզ վրա՝ սպանելու մեզ:

27 Եվ ահա, երբ նրանք ասացին այս խոսքերը, գետինը սաստիկ ցնցվեց, և բանտի պատերը ցնցվեցին, կարծես դրանք գետնին փլվելու վրա էին. բայց ահա, դրանք չփլվեցին: Եվ ահա, նրանք, ովքեր բանտում էին, Լամանացիներ ու Նեփիացիներ էին, որոնք պառակտիչներ էին:

28 Եվ եղավ այնպես, որ նրանք ստվերված էին մի լսավարի ամպով, և մի սոսկալի մռայլ վախ պատեց նրանց:

29 Եվ եղավ այնպես, որ մի ժայն եկավ, կարծես այն խավարի ամպի վերևից էր՝ ասելով. Ապաշխարեք, ապաշխարեք, և այլևս մի ջանացեք կործանել իմ ծառաներին, որոնց ես ուղարկել եմ ձեզ մոտ՝ ավետիք հայտարարելու:

30 Եվ եղավ այնպես, երբ նրանք լսեցին այս ձայնն ու տեսան, որ դա մի որոտի ձայն չէր, ոչ էլ մի բարձր աղմկոտ ժխորի ձայն, այլ ահա, դա կատարյալ մեղմության մի ժանգարտ ձայն էր, կարծես մի շուկ, և այն թափանցեց մինչև հոգու խորքը, –

31 Եվ չնայած ձայնի մեղմությանը, ահա, գետինը սաստիկ ցնցվեց և բանտի պատերը կրկին դողացին, կարծես թե գետնին փլվելու վրա էին. և ահա խավարի ամպը, որը ստվերել էր նրանց, չէր ցրվում, –

32 Եվ ահա ձայնը կրկին եկավ՝ ասելով. Ապաշխարեք, ապաշխարեք, քանզի երկնքի արքայությունը մոտ է. և այլևս մի ջանացեք

կործանել իմ ծառաներին: Եվ եղավ այնպես, որ գետինը կրկին ցնցվեց և պատերը դողացին:

33 Եվ մահ երրորդ անգամ կրկին ձայնը եկավ և խոսեց նրանց հետ սքանչելի խոսքեր, որոնք չեն կարող արտաբերվել մարդու կողմից. և պատերը կրկին դողացին և գետինը ցնցվեց, կարծես քիչ էր մնում մասերի բաժանվելը:

34 Եվ եղավ այնպես, որ Լամանացիները չկարողացան փախչել խավարի ամպի պատճառով, որը ստվերել էր իրենց. այո, և նրանք մահ անշարժացել էին վախից, որը եկել էր իրենց վրա:

35 Արդ, այնտեղ՝ նրանց մեջ, կար ծագումով մի Նեփիացի, որը մի ժամանակ պատկանել էր Աստծո եկեղեցուն, բայց պառակտվել էր նրանցից:

36 Եվ եղավ այնպես, որ նա շրջվեց, և ահա, խավարի ամպի միջով նա տեսավ Նեփիի ու Լեքիի դեմքերը. և ահա, դրանք սաստիկ լսավարյուն էին, ճիշտ ինչպես հրեշտակների դեմքերը: Եվ նա տեսավ, որ նրանք բարձրացրել էին իրենց աչքերը դեպի երկինք. և նրանք կարծես զբաղված էին՝ խոսելով կամ իրենց ձայները բարձրացնելով դեպի ինչ-որ մի եակ, որին նրանք տեսնում էին:

37 Եվ եղավ այնպես, որ այս մարդն աղաղակեց դեպի բազմությունը, որպեսզի նրանք շրջվեն ու նայեն: Եվ ահա, զորություն կար տրված նրանց, որ նրանք շրջվեն ու նայեն. և նրանք տեսան Նեփիի ու Լեքիի դեմքերը:

38 Եվ նրանք ասացին այդ մարդուն. Ահա, ի՞նչ է նշանակում

բոլոր այս բաները, և ո՞վ է նա, որի հետ այս մարդիկ խոսում են:
 39 Արդ, այդ մարդու անունն Ամինադար էր: Եվ Ամինադարն ասաց նրանց. Նրանք խոսում են Աստծո հրեշտակների հետ:

40 Եվ եղավ այնպես, որ Լամանացիներն ասացին նրան. «Ի՞նչ պիտի անենք, որ այս խավարի ամպը հեռանա մեզ ստվերելուց:

41 Եվ Ամինադարն ասաց նրանց. Դուք պիտի ^ապաշխարեք և աղաղակեք առ ձայնը, նույնիսկ մինչև որ ^բհավատք ունենաք Քրիստոսի հանդեպ, ում մասին ուսուցանվել է ձեզ Ալմայի, Ամուդեկի և Զիզրոմի կողմից. և երբ դուք անեք այս, խավարի ամպը կհեռացվի ձեզ ստվերելուց:

42 Եվ եղավ այնպես, որ նրանք բոլորը սկսեցին աղաղակել առ ձայնը նրա, որը ցնցել էր գետինը. այո, նրանք աղաղակեցին, մինչև որ խավարի ամպը ցրվեց:

43 Եվ եղավ այնպես, որ երբ նրանք աչք ածեցին շուրջ բոլորը, և տեսան, որ խավարի ամպը ցրվել էր իրենց ստվերելուց, ահա, նրանք տեսան, որ իրենք ^աօղակված էին շուրջանակի, այո, ամեն հոգի՝ մի կրակի սյունով:

44 Եվ Նեփին ու Լեքին նրանց մեջտեղում էին. այո, նրանք օղակված էին շուրջանակի. այո, նրանք կարծես բոցավառ կրակի մեջ էին, սակայն այն չէր վնասում իրենց, ոչ էլ այն բռնկում էր բանտի պատերը. և նրանք լցված էին այն ^աուրախությամբ, որն անասելի է ու փառքով լի:

45 Եվ ահա, Աստծո ^աՍուրբ

Հոգին վար եկավ երկնքից և մտավ նրանց սրտերը, և նրանք կարծես լցվեցին կրակով, և նրանք կարողացան ^բխոսել սբանչելի խոսքեր:

46 Եվ եղավ այնպես, որ մի ձայն եկավ նրանց, այո, մի հաճելի ձայն, կարծես դա մի շշուկ էր՝ ասելով.

47 «Խաղաղություն, խաղաղություն լինի ձեզ, ձեր հավատքի համար իմ Շատ Սիրելիի հանդեպ, որը կար աշխարհի հիմնադրումից ի վեր:

48 Եվ արդ, երբ նրանք լսեցին այս, նրանք բարձրացրեցին իրենց աչքերը, կարծես տեսնելու՝ որտեղից էր գալիս ձայնը. և ահա, նրանք տեսան ^աերկինքները բաց. և հրեշտակներ վար եկան երկնքից ու սպասավորեցին նրանց:

49 Եվ կային մոտ երեք հարյուր հոգի, ովքեր տեսան ու լսեցին այս բաները, և նրանց պատվիրվեց առաջ գնալ ու չզարմանալ, ոչ էլ նրանք պիտի կասկածեին:

50 Եվ եղավ այնպես, որ նրանք գնացին առաջ, և սպասավորեցին ժողովրդին՝ շրջակայքի բոլոր շրջաններով մեկ՝ հայտարարելով բոլոր բաները, որոնք իրենք լսել էին ու տեսել, այնպես որ Լամանացիների մեծ մասը համոզվեց նրանց կողմից, բազում ապացույցների պատճառով, որոնք իրենք ստացել էին:

51 Եվ բոլոր նրանք, ովքեր ^ահամոզվեցին, վար դրեցին իրենց պատերազմի զենքերը, և մակ իրենց ատելությունը, և իրենց հայրերի ավանդությունը:

52 Եվ եղավ այնպես, որ նրանք

40ա Գոր. Բ.37–39:
 41ա սո՛ւ Ապաշխարել,
 Ապաշխարություն:
 բ սո՛ւ Հավաք:

43ա 3 Նեփի 17.24, 19.14:
 44ա սո՛ւ Ուրախություն:
 45ա 3 Նեփի 9.20,
 Եթեր 12.14:

բ սո՛ւ Հոգու պարզները:
 47ա սո՛ւ Խաղաղություն:
 48ա 1 Նեփի 1.8:
 51ա Ալմա 31.5:

Նեփիացիներին հանձնեցին նրանց պատկանող հողերը:

ԳԼՈՒԽ 6

Արդարակյաց Լամանացիները քարոզում են ամբարիշտ Նեփիացիներին – Երկու ժողովուրդներն էլ բարձրականոմ են խաղաղության ու առատության մի ժամանակահատվածի ընթացքում – Լյուցիֆերը՝ մեղքի հեղինակը, դրդում է ամբարիշտների սրտերը և Գաղիանթոնի ավազակներին սպանությունների ու ամբարշտության – Ավազակները վերցնում են Նեփիական կառավարության վերահսկողությունը: Մոտ 29-23բբ. Ք.ծ.ա.:

ԵՎ եղավ այնպես, որ երբ դատավորների կառավարման վաթսուներկուերորդ տարին ավարտվեց, բոլոր այս բաները տեղի էին ունեցել, և Լամանացիները՝ նրանցից մեծ մասը, դարձել էին մի արդարակյաց ժողովուրդ, այնպես որ նրանց արդարությունը գերազանցում էր Նեփիացիներինը՝ հավատքում իրենց կայունության ու հաստատունության պատճառով:

2 Քանզի ահա, կային Նեփիացիներից շատերը, ովքեր դարձել էին ակարծրացած ու չապաշխարող, և ծայրահեղ ամբարիշտ, այնքան, որ նրանք մերժում էին Աստծո խոսքը և բոլոր քարոզչությունն ու մարգարեացումները, որոնք գալիս էին նրանց մեջ:

3 Այնուամենայնիվ, եկեղեցու ժողովուրդը մեծ ուրախություն ունեցավ Լամանացիների դարձի գալու համար, այո, Աստծո եկե-

ղեցու համար, որը հաստատվել էր նրանց մեջ: Եվ նրանք քրնկերակցում էին մեկը մյուսին, և հրճվում մեկը մյուսով, և ունենում մեծ ուրախություն:

4 Եվ եղավ այնպես, որ Լամանացիներից շատերը վար եկան Ջարահեմլայի երկիրը և հայտարարեցին Նեփիացի ժողովրդին, թե ինչպես էին իրենք արձր եկել, և նրանց հավատքի ու ապաշխարության հորդորեցին:

5 Այո, և շատերը քարոզեցին խիստ մեծ գործությամբ ու իշխանությամբ՝ վար բերելով շատերին համեստության խորքերը՝ լինելու Աստծո ու Գառի խոնարհի հետևորդները:

6 Եվ եղավ այնպես, որ Լամանացիներից շատերը գնացին հյուսիսային կողմի քրնկիրը. և Նեփին ու Լեքին նույնպես գնացին հյուսիսային կողմի երկիրը՝ ժողովրդին քարոզելու: Եվ այսպես ավարտվեց վաթսուներեքերորդ տարին:

7 Եվ ահա, խաղաղություն եղավ բոլոր երկրում, այնպես որ Նեփիացիները գնացին երկրի որ մասը որ իրենք կամեցան, ինչպես Նեփիացիների, այնպես էլ Լամանացիների մեջ:

8 Եվ եղավ այնպես, որ Լամանացիները նույնպես գնում էին, ուր որ իրենք կամենում էին, լինե՞ր դա Լամանացիների, թե Նեփիացիների մեջ. և այսպես, նրանք ազատ շփում ունեին միմյանց հետ՝ զնելու ու վաճառելու, և շահ ստանալու՝ ըստ իրենց ցանկության:

9 Եվ եղավ այնպես, որ նրանք դարձան չափազանց հարուստ՝ և՛ Լամանացիները, և՛ Նեփիացիները:

6 1ա Հել. 13.1:
2ա Հռովմ. Ա.28-32:
3ա ստ. Ընկերակցել:

4ա ստ. Գարձի գալ,
Նորադարձ:
6ա Ավմա 63.4-9,

Հել. 3.11-12:

րը. և նրանք ունեին չափազանց շատ ոսկի և արծաթ և ամեն ձևի թանկարժեք մետաղներ, ինչպես հարավի երկրում, այնպես էլ հյուսիսի երկրում:

10 Արդ, հարավի երկիրը կոչվում էր Լեքի, և հյուսիսի երկիրը կոչվում էր Մուղեկ, որն անվանվել էր Սեղեկիայի որդու անունով. քանզի Տերը բերեց Մուղեկին հյուսիսի երկիրը, և Լեքիին՝ հարավի երկիրը:

11 Եվ ահա, այս երկու երկրներում կար ամեն ձևի ոսկի և արծաթ և ամեն տեսակի թանկարժեք հանքանյութ. և կային նաև հմուտ աշխատավորներ, ովքեր մշակում էին ամեն տեսակի հանքանյութ և զտում այն. և այսպես նրանք դարձան հարուստ:

12 Նրանք առատորեն հատիկ էին աճեցնում՝ և՛ հյուսիսում, և՛ հարավում. և նրանք չափազանց բարգավաճեցին և՛ հյուսիսում, և՛ հարավում: Եվ նրանք բազմացան ու չափազանց ուժեղացան երկրում: Եվ նրանք աճեցնում էին շատ հոտեր ու նախիրներ, այո, բազում պարարտներ:

13 Ահա, նրանց կանայք տքնում էին ու մանում, և պատրաստում ամեն ձևի կտորեղեն՝ նրբահյուս բեհեզ և ամեն տեսակի կտորեղեն՝ ծածկելու իրենց մերկությունը: Եվ այսպես վաթսունևչորսերորդ տարին անցավ խաղաղության մեջ:

14 Եվ վաթսունևհինգերորդ տարում նույնպես, նրանք մեծ ուրախություն ու խաղաղություն ունեցան, այո, շատ քարոզչություն ու բազմաթիվ մարգարեություններ՝ նրա վերաբերյալ, ինչ պիտի գար:

Եվ այսպես անցավ վաթսունևհինգերորդ տարին:

15 Եվ եղավ այնպես, որ դատավորների կառավարման վաթսունևվեցերորդ տարում, ահա, Քեզորամը սպանվեց մի անհայտ ձեռքով, մինչ նա նստած էր դատավորական աթոռին: Եվ եղավ այնպես, որ այդ նույն տարում, նրա որդին, որը ժողովրդի կողմից նշանակվել էր նրա փոխարեն, նույնպես սպանվեց: Եվ այսպես ավարտվեց վաթսունևվեցերորդ տարին:

16 Եվ վաթսունևյոթերորդ տարվա սկզբին ժողովուրդը սկսեց կրկին դառնալ չափազանց ամբարիշտ:

17 Քանզի ահա, Տերն այնքան երկար էր օրհնել նրանց աշխարհի հարստություններով, որ նրանք չէին դրդվել բարկության, պատերազմների, ոչ էլ արյունահեղության. ուստի, նրանք սկսեցին դնել իրենց սրտերն իրենց հարստությունների վրա. այո, նրանք սկսեցին ձգտել շահ ստանալ, որ կարողանային բարձրանալ մեկը մյուսից վեր. հետևաբար, նրանք սկսեցին գործել զաղտնի սպանություններ, և կողոպտել ու թալանել, որ կարողանային շահ ստանալ:

18 Եվ այժմ ահա, այդ մարդասպաններն ու թալանչիները մի հրոսակախումբ էին, որը կազմավորվել էր Կիսկումենի ու Պաղիանթոնի կողմից: Եվ արդ եղավ այնպես, որ կային շատերը, նույնիսկ Նեփիացիների մեջ, որ Պաղիանթոնի հրոսակախմբից էին: Բայց ահա, նրանք ավելի մեծաթիվ էին Լամանացիների առավել

10ա Մոսիա 25.2-4, չել. 8.21:

15ա Հել. 5.1: 17ա3 Նեփի 9.9:

18ա Հել. 2.4, 12-13:

ամբարիշտ մասի մեջ: Եվ նրանք կոչվում էին Գաղիանթոնի ավազակներ ու մարդասպաններ:

19 Եվ այդ նրանք էին, որ սպանեցին զլիսավոր դատավոր Քեզորամին, և նրա որդուն, երբ նրանք դատավորական աթոռին էին. և ահա, նրանց չգտան:

20 Եվ այժմ եղավ այնպես, որ երբ Լամանացիները պարզեցին, որ իրենց մեջ ավազակներ կան, նրանք չափազանց վշտացան. և նրանք ամեն հնարավոր միջոց գործադրեցին՝ բնաջնջելու նրանց երկրի երեսից:

21 Բայց ահա, Սատանան դրդեց Նեփիացիների մեծամասնության սրտերը՝ այնպես, որ նրանք միավորվեցին ավազակների այդ հրոսակախմբի հետ, և մտան նրանց ուխտերի ու երդումների մեջ, որ իրենք կպաշտպանեն ու կպահեն մեկը մյուսին, ինչ դժվարին հանգամանքների մեջ էլ որ ընկնեն, որպեսզի իրենք չտառապեն իրենց սպանությունների, իրենց թալանների և իրենց գողությունների համար:

22 Եվ եղավ այնպես, որ նրանք ունեին իրենց նշանները, այո, իրենց ՝ գաղտնի նշանները, և իրենց գաղտնի խոսքերը. և դա՝ որ նրանք կարողանային զանազանել եղբայրակցին, որն ուխտի մեջ էր մտել, որ ինչ ամբարշտություն էլ իր եղբայրակիցն աներ, նա չվնասվեր իր եղբոր կողմից, ոչ էլ նրանց կողմից, որոնք պատկանում էին նրա հրոսակախմբին, որը ստանձնել էր այս ուխտը:

23 Եվ այդպես, նրանք կարողա-

նում էին սպանել, թալանել, գողանալ և պռոնկություններ ու ամեն ձևի ամբարշտություն անել, հակառակ իրենց երկրի օրենքների և նաև իրենց Աստծո օրենքների:

24 Եվ նրանցից, ովքեր որ պատկանում էին իրենց հրոսակախմբին, եթե աշխարհին բացահայտեին իրենց ամբարշտությունների ու իրենց ՝ պղծությունների մասին, պիտի դատվեին ոչ թե համաձայն իրենց երկրի օրենքների, այլ համաձայն իրենց ամբարշտության օրենքների, որոնք տրվել էին Գաղիանթոնի ու Կիսկունենի կողմից:

25 Այժմ ահա, դրանք այս գաղտնի ՝ երդումներն ու ուխտերն են, որոնք Ալման պատվիրեց իր որդուն, որ չպիտի հայտնի դառնային աշխարհին, որ չլինի թե դրանք լինեին մի միջոց՝ վար բերելու մարդկանց կործանման:

26 Արդ ահա, այդ ՝ գաղտնի երդումներն ու ուխտերը Գաղիանթոնին հայտնի չէին դարձել հիշատակարաններից, որոնք հանձնվել էին Հելամանին. այլ ահա, դրանք դրվել էին Գաղիանթոնի սրտում այն ^բնույն էակի կողմից, որը հրապուրեց մեր առաջին ծնողներին՝ ճաշակելու արգելված պտղից,

27 Այո, այն նույն էակի, որը դավ նյութեց ՝ Կայենի հետ, որ եթե նա սպաներ իր եղբայր Աբելին, դա աշխարհին հայտնի չէր դառնա: Եվ նա դավադրում էր Կայենի ու նրա հետևորդների հետ այդ ժամանակից ի վեր:

28 Եվ այդ նաև այն նույն էակն է, որը մարդկանց սրտերում դրեց ՝ կառուցել մի բավականաչափ

22ա սուր Գաղտնի խմբակցություններ:
24ա սուր Ամբարիշտ, Ամբարշտություն:

25ա Ալմա 37.27–32:
26ա Մովսես 5.29, 49–52:
բ 3 Նեփի 6.28, Մովսես 4.6–12:

27ա Մովսես 5.18–33:
28ա Ծն. ԺԱ.1–4, Եթեր 1.3:

բարձր աշտարակ, որ իրենք կարողանային հասնել երկնքին: Եվ դա այն նույն էակն էր, որը մոլորեցրեց մարդկանց, ովքեր եկել էին այդ աշտարակից այս երկիրը. որը ողջ երկրի երեսին տարածեց խավարի գործերն ու պղծությունները, մինչև նա քարշ տվեց մարդկանց վար՝ դեպի ^բլիակատար կործանում, և դեպի հավիտենական դժոխք:

29 Այո, դա այն նույն էակն է, որը ^Գադիանթոնի սրտում դրեց՝ տակավին շարունակելու խավարի և գաղտնի սպանության գործը. և նա հայտնի դարձրեց դա մարդու սկզբից ի վեր՝ ընդհուպ մինչև այս ժամանակը:

30 Եվ ահա, դա նա է, որը բոլոր մեղքերի ^հեղինակն է: Եվ ահա, նա շարունակում է իր խավարի ու գաղտնի սպանության գործերը և փոխանցում է նրանց դավերը և նրանց երդումները, նրանց ուխտերը և նրանց սոսկալի ամբարշտության ծրագրերը սերնդե-սերունդ, որքանով որ ինքը կարողանում է ազդեցություն ձեռք բերել մարդկանց զավակների սրտերի վրա:

31 Եվ այժմ ահա, նա մեծ ազդեցություն էր ձեռք բերել Նեփիացիների սրտերի վրա. այո, այնպես որ նրանք դարձել էին չափազանց ամբարիշտ. այո, նրանց մեծ մասը դուրս էր եկել արդարության ճանապարհից, և ոտքերի տակ ^կոխկրտել Աստծո պատվիրանները, և դարձել դեպի իրենց սեփական ճանապարհները, և իրենց համար կուռքեր շինել՝ իրենց ոսկուց ու իրենց արծաթից:

32 Եվ եղավ այնպես, որ բոլոր այս անօրինությունները եկան նրանց վրա, ^{ոչ} շատ տարիների ընթացքում, այնպես որ դրանց մեծ մասը եկել էր նրանց վրա, Նեփիի ժողովրդի վրա դատավորների կառավարման վաթսուհինյոթերորդ տարում:

33 Եվ նրանք աճում էին իրենց անօրինություններում վաթսուհույսերորդ տարում նույնպես՝ ի մեծ վիշտ ու կսկիծ արդարների:

34 Եվ այսպես, մենք տեսնում ենք, որ Նեփիացիները սկսեցին անհավատության մեջ ընկնել, և աճել ամբարշտության ու պղծությունների մեջ, մինչդեռ Լամանացիները սկսեցին չափազանց աճել իրենց Աստծո գիտության մեջ. այո, նրանք սկսեցին պահել նրա կանոններն ու պատվիրանները և քայլել ճշմարտության և ուղղամտության մեջ:

35 Եվ այսպիսով, մենք տեսնում ենք, որ Տիրոջ Հոգին սկսեց ^{ես}տքաշվել Նեփիացիներից՝ իրենց սրտերի ամբարշտության ու կարծրության պատճառով:

36 Եվ այսպիսով, մենք տեսնում ենք, որ Տերը սկսեց դուրս թափել իր Հոգին Լամանացիների վրա՝ իր խոսքերին անառարկելիորեն և պատրաստակամորեն հավատալու պատճառով:

37 Եվ եղավ այնպես, որ Լամանացիները հետապնդեցին Գադիանթոնի ավազակների հրոսակախմբին. և նրանք քարոզեցին Աստծո խոսքը նրանց առավել ամբարիշտ մասին, այնպես որ այս ավազակների հրոսակախումբը

28բ Եթեր 8.9, 15–25:
29ա Հել. 2.4–13:
30ա Ալմա 5.39–42,

Մոր. 7.12, 17,
Մովսես 4.4:
31ա 1 Նեփի 19.7:

32ա Ալմա 46.8:
35ա Մոսիա 2.36,
ՎևոՒ 121.37:

լիովին վերացավ Լամանացիների միջից:

38 Իսկ մյուս կողմից եղավ այնպես, որ Նեփիացիները նրանց գորացրեցին ու աջակցեցին, սկսած նրանց առավել ամբարիշտ մասից, մինչև որ նրանք տարածվեցին Նեփիացիների ողջ երկրով, գայթակղելով արդարների մեծ մասին, մինչև որ նրանք ցածրացան՝ հավատալու նրանց գործերին ու ճաշակելու նրանց ավարից, և միաբանվելու նրանց հետ իրենց գաղտնի սպանություններում ու խմբակցություններում:

39 Եվ այսպես, նրանք ձեռք բերեցին կառավարության բացառիկ ղեկավարությունը, այնպես որ նրանք իրենց ոտքերի տակ կոխկրտեցին և զարկեցին և պատառոտեցին, շրջեցին իրենց մեջքն՝ աղքատներին ու հեզերին և Աստծո խոնարհ հետևորդներին:

40 Եվ այսպես մենք տեսնում ենք, որ նրանք մի սոսկալի վիճակում էին, և՛ հասունանում էին հավիտենական կործանման համար:

41 Եվ եղավ այնպես, որ այսպես ավարտվեց Նեփիի ժողովրդի վրա դատավորների կառավարման վաթսուներեորդ տարին:

Հելամանի Որդու՝ Նեփիի Մարգարեությունը – Աստված սպառնում է Նեփիի ժողովրդին, որ նա կայցելի նրանց իր բարկությանը՝ ի լիակատար կործանումն իրենց, եթե նրանք չապաշխարեն իրենց ամբարշտությունից: Աստված զարկում է Նեփիի ժողովրդին ժանտախտով. նրանք ապաշխարում են ու դառնում դեպի նա: Սամուելը՝ մի Լամանացի, մարգարեանում է Նեփիացիներին:

րում են ու դառնում դեպի նա: Սամուելը՝ մի Լամանացի, մարգարեանում է Նեփիացիներին:

*Ընդգրկելով 7–16 գլուխները
ներառյալ:*

ԳԼՈՒԽ 7

Նեփին մերժվում է հյուսիսում ու վերադառնում Չարահենլա – Նա ատրթում է իր պարտեզի աշտարակի վրա և հետո կոչ անում ժողովրդին՝ ապաշխարել, այլապես կոչնչանան: Մոտ 23–21բբ. Բ.ծ.ա.:

ԱՀԱ, արդ եղավ այնպես, որ Նեփիի ժողովրդի վրա դատավորների կառավարման վաթսուներեորդ տարում Նեփին՝ Հելամանի որդին, հյուսիսային կողմի երկրից՝ վերադարձավ Չարահենլայի երկիրը:

2 Քանզի նա եղել էր դրսում՝ ժողովրդի մեջ, որ հյուսիսային կողմի երկրում էին, և քարոզել էր Աստծո խոսքը նրանց և շատ բաներ մարգարեացել նրանց.

3 Եվ նրանք մերժել էին նրա բոլոր խոսքերը, այնպես որ նա չկարողացավ մնալ նրանց մեջ, այլ կրկին վերադարձավ իր ծննդավայրը:

4 Եվ տեսնելով ժողովրդին մի այսպիսի սոսկալի ամբարշտության վիճակում, և այդ Գադիանթոնի ավագակներին դատավորական աթոռները զբաղեցրած՝ զավթած լինելով երկրի գորությունն ու իշխանությունը. Աստծո պատվիրանները մի կողմ դնելով և նվագագույն իսկ չափով ճիշտ չլինելով նրա առջև. չանելով

39ա Սաղ. ԾԹ.16,
Ալմա 5.54–56,

Վ.ՈՒ 56.16:
40ա Հել. 5.2, 11.37,

Վ.ՈՒ 18.6:
7 1ա Հել. 6.6:

ոչ մի արդարություն մարդկանց զավակներին:

5 Դատապարտելով արդարներից իրենց արդարության համար. իրենց փողի համար թողնելով հանցավորին ու ամբարիշտին գնալու անպատիժ. և դեռ ավելին՝ պաշտոնում պահվելու, կառավարության գլխին՝ կառավարելու ու վարվելու ըստ իրենց կամքի, որպեսզի կարողանան ստանալ շահն ու փառքն «աշխարհի, և դեռ ավելին, որպեսզի կարողանան ավելի հեշտորեն շնություն անել և գողանալ և սպանել և անել ըստ իրենց սեփական կամքի,

6 Արդ, այս մեծ անօրինությունը եկել էր Նեփիացիների վրա ոչ շատ տարիների ընթացքում. և երբ Նեփին տեսավ այդ, նրա սիրտը լցվեց վշտով իր կրծքում. և նա բացականչեց իր հոգու տվայտանքի մեջ.

7 Ա՛խ, երանի՜ թե իմ իմ օրերը լինեին այն օրերին, երբ իմ հայր Նեփին առաջին անգամ դուրս եկավ Երուսաղեմի հողից, երանի՜ թե ես ուրախանայի նրա հետ խոստացված երկրում. այն ժամանակ նրա մարդիկ մատչելի էին աղերսելու համար, հաստատուն էին Աստծո պատվիրանները պահելիս, և դանդաղ էին անօրինության տարվելիս. և նրանք արագ էին Տիրոջ խոսքերին ականջ անելիս,

8 Այո, եթե իմ օրերը լինեին այդ օրերին, այն ժամանակ իմ հոգին ուրախություն կունենար իմ եղբայրների արդարությամբ:

9 Բայց ահա, ինձ նշանակված է, որ սրանք լինեն իմ օրերը, և որ իմ հոգին լցված պիտի լինի վշտով,

ին եղբայրների այս ամբարշտության պատճառով:

10 Եվ ահա, այժմ եղավ այնպես, որ դա մի աշտարակի վրա էր, որը Նեփիի պարտեզում էր, որը մոտ էր մայրուղուն, որը տանում էր դեպի գլխավոր շուկան, որը Չարահեմվայի քաղաքում էր. ուստի, Նեփին խոնարհվել էր աշտարակի վրա, որն իր պարտեզում էր, աշտարակ, որը մոտ էր նաև պարտեզի դռանը, որի մոտով անցնում էր մայրուղին:

11 Եվ եղավ այնպես, որ կային որոշ մարդիկ, մոտակայքով անցնելիս, և տեսան Նեփիին, երբ նա աշտարակի վրա դուրս էր թափում իր հոգին առ Աստված. և նրանք վազեցին ու պատմեցին մարդկանց, ինչ իրենք տեսել էին, և ժողովուրդը եկավ միասին բազմություններով, որ կարողանային իմանալ ժողովրդի ամբարշտության համար այդպիսի մեծ ողբի պատճառը:

12 Եվ այժմ, երբ Նեփին վեր կացավ, նա տեսավ մարդկանց բազմությունները, որոնք ի մի էին հավաքվել:

13 Եվ եղավ այնպես, որ նա բացեց իր բերանն ու ասաց նրանց. Ահա, «ինչո՞ւ եք դուք հավաքվել միասին: Որպեսզի ես ասեմ ձեզ ձեր անօրինությունների մասի՞ն:

14 Այո, որովհետև ես բարձրացել եմ աշտարակի վրա, որ կարողանամ հոգիս դուրս թափել իմ Աստծուն, իմ սրտի մեծ վշտի պատճառով, որը ձեր անօրինությունների պատճառով է:

15 Եվ իմ լաց ու կոծի պատճառով դուք հավաքվել եք միասին և

զարմանում եք. այո, և դուք զարմանալու մեծ պատճառ ունեք. այո, դուք պարտավոր եք զարմանալ, որովհետև դուք անձնատուր եք եղել, այնպես որ դևն այդքան մեծ իշխանություն ունի ձեր սրտերի վրա:

16 Այո, ի՞նչպես կարողացաք դուք անձնատուր լինել հորդորին նրա, որը ջանում է հեռու շարտել ձեր հոգիները վար՝ դեպի հավիտենական թշվառություն ու անվերջ վայ:

17 Օ՛հ, ապաշխարե՛ք, ապաշխարե՛ք: *ՄԻՆՆՈ՞՞՞ մեռնեք: Գարձե՛ք, դարձե՛ք դեպի Տերը՝ ձեր Աստվածը: Ինչո՞ւ է նա լքել ձեզ:*

18 Դա այն պատճառով է, որ դուք կարծրացրել եք ձեր սրտերը. այո, դուք չեք կամենում ականջ անել *Մբարի* հովվի ձայնին. այո, դուք նրան *Սաղրել* եք բարկության ձեր դեմ:

19 Եվ ահա, ձեզ *՝հավաքելու* փոխարեն, եթե դուք չկամենաք ապաշխարել, ահա, նա ձեզ հեռու կցրի, որ դուք դառնաք միս՝ շների ու վայրի գազանների համար:

20 Օ՛հ, ինչպես կարողացաք մոռանալ ձեր Աստծուն հենց այն օրը, որ նա ազատել է ձեզ:

21 Բայց ահա, դա շահ ստանալն է, մարդկանց կողմից գովաբանվելը, այո, և որ դուք կարողանաք ստանալ ոսկի ու արծաթ: Եվ դուք դրել եք ձեր սրտերը հարստությունների վրա և այս *՝աշխարհի* ունայն բաների վրա, որի համար դուք սպանում եք և թալանում և գողանում, *Սուտ* վկայություն եք

տալիս ձեր հարևանի դեմ և ամեն ձևի անօրինություն անում:

22 Եվ այս պատճառով վա՛յ պիտի գա ձեզ վրա, եթե դուք չապաշխարեք: Քանզի, եթե դուք չկամենաք ապաշխարել, ահա, այս մեծ քաղաքը, և նաև բոլոր այն մեծ քաղաքները, որոնք շրջակայքում են, որոնք մեր տիրապետության երկրում են, պիտի վերցվեն, այնպես որ դուք տեղ չպիտի ունենաք դրանցում. քանզի ահա, Տերը չի շնորհի ձեզ *՝ուժ*, ինչպես նա մինչև այժմ է արել՝ ընդդիմանալու ձեր թշնամիներին:

23 Քանզի ահա, այսպես է ասում Տերը. Ես ցույց չեմ տա իմ ուժն ամբարիշտներին՝ մեկին ավելի, քան մյուսին, բացի նրանցից, ովքեր կապաշխարեն իրենց մեղքերից և ականջ կանեն իմ խոսքերին: Այժմ այդ պատճառով, ես կկամենայի, որ դուք հասկանաք, իմ եղբայրներ՝ որ *՝ավելի* լավ կլինի Լամանացիների համար, քան ձեզ համար, եթե դուք չապաշխարեք:

24 Քանզի ահա, նրանք ավելի արդարակյաց են, քան դուք, քանզի նրանք չեն մեղանչել այս մեծ գիտության դեմ, որը դուք եք ստացել. այդ պատճառով Տերը ողորմած կլինի նրանց հանդեպ. այո, նա *՝կերկարացնի* նրանց օրերը և կշատացնի նրանց սերունդը, նույնիսկ, երբ դուք լիովին *՝կործանված* կլինեք, եթե դուք չապաշխարեք:

25 Այո, վա՛յ լինի ձեզ այն մեծ պղծության համար, որը եկել է ձեր մեջ. և դուք միացել եք դրան, այո,

17ա Եզեկ. ԺԸ.23, 31-32:
18ա Եզեկ. ԼԴ.12,
Հովի. Ժ.14-16,
Ալմա 5.38-41, 57-60:
սուր Բարի հովվի:

բ Հակոբ 1.8,
Ալմա 12.36-37:
19ա 3 Նեփի 10.4-7:
21ա սուր Աշխարհիկություն:
բ Ել. Ի.16,

Մատ. ԺԵ.19-20:
22ա Մոսիա 7.29:
23ա Հել. 15.11-15:
24ա Ալմա 9.16, ՎևոՒ 5.33:
բ Ալմա 9.19:

այն «գաղտնի հրոսակախմբին, որը հիմնադրվել է Գաղիանթոնի կողմից:

26 Այո, «վա՛յ պիտի գա ձեզ այն հպարտության պատճառով, որը դուք թույլ եք տվել մտնելու ձեր սրտերը, որը ձեր չափազանց մեծ Բարսառությունների պատճառով բարձրամտացրել է ձեզ այն բանից վեր, ինչը բարի է:

27 Այո, վա՛յ լինի ձեզ ձեր ամբարշտության ու պղծությունների համար:

28 Եվ եթե դուք չապաշխարեք, դուք պիտի կորչեք. այո, այսինքն՝ ձեր հողերը ձեզանից պիտի վերցվեն, և դուք պիտի բնաջնջվեք երկրի երեսից:

29 Ահա, այժմ ես ինքս ինձանից չեմ ասում, որ այս բաները պիտի լինեն, որովհետև դա ինքս ինձանից չէ, որ գիտեմ այս բաները. բայց ահա, ես «գիտեմ, որ այս բաները ճշմարիտ են, որովհետև Տեր Աստված է հայտնի դարձրել դրանք ինձ, ուստի, ես վկայում եմ, որ դրանք պիտի լինեն:

ԳԼՈՒԽ 8

Ապականված դատավորները ջանում են հրահրել ժողովրդին Նեփիի դեմ – Աբրահամը, Մովսեսը, Չենոսը, Չենոքը, Եգիսսը, Եսայիան, Երեմիան, Լեքին ու Նեփին բողոքը վկայել են Քրիստոսի մասին – Ոգեշնչմամբ՝ Նեփին հայտարարում է գլխավոր դատավորի սպանությունը: Մոտ 23–21թթ. Ք.ծ.ա.:

Եւ արդ, եղավ այնպես, որ երբ Նեփին ասաց այս խոսքերը, ահա, կային մարդիկ, ովքեր դատավոր-

ներ էին, որոնք նույնպես պատկանում էին Գաղիանթոնի գաղտնի հրոսակախմբին, և նրանք բարկացած էին, և նրանք պախարակեցին նրան՝ ասելով ժողովրդին. Ինչո՞ւ չեք բռնում այս մարդուն ու բերում առաջ, որ նա դատապարտվի՝ համաձայն այն հանցանքի, որ արել է:

2 Ինչո՞ւ եք նայում այս մարդուն և լսում նրա զագրախոսելն այս ժողովրդի դեմ ու մեր օրենքի դեմ:

3 Քանզի ահա, Նեփին ասել էր նրանց իրենց օրենքի ապականվածության մասին. այո, Նեփին շատ բաներ էր խոսել, որոնք չեն կարող գրվել. և նա ոչինչ չէր խոսել, որ հակառակ լիներ Աստծո պատվիրաններին:

4 Եվ այդ դատավորները բարկացած էին նրա վրա, որովհետև նա պարզորոշ «խոսեց նրանց հետ իրենց խավարի գործերի մասին. այնուամենայնիվ, նրանք չհամարձակվեցին իրենց ձեռքը բարձրացնել նրա վրա, քանզի նրանք վախենում էին ժողովրդից, որ չլինեք թե նրանք պախարակելին իրենց:

5 Եւտևաբար, նրանք գոչեցին դեպի ժողովուրդն, ասելով. Ինչո՞ւ եք հանդուրժում, որ այս մարդը զագրախոսի մեր դեմ: Քանզի ահա, նա դատապարտում է ողջ այս ժողովրդին, մինչև իսկ ի կործանում. այո, և նաև, որ մեր այս մեծ քաղաքները պիտի վերցվեն մեզանից, այնպես որ մենք տեղ պիտի չունենանք դրանցում:

6 Եվ այժմ մենք գիտենք, որ դա անհնարին է, քանզի ահա, մենք հզոր ենք, և մեր քաղաքները՝ մեծ, ուստի մեր թշնամիները չեն կարող իշխանություն ունենալ մեզ վրա:

7 Եվ եղավ այնպես, որ այսպես

25ա Հել. 3.23:
26ա Ես. Ե.8–25:

բ Հակոբ 2.13:
29ա Ալմա 5.45–46:

8 4ա 1 Նեփի 16.2–3:

նրանք ժողովորդին բարկության դրդեցին Նեփիի դեմ և հակառակություններ բարձրացրեցին նրանց մեջ. քանզի կային ոմանք, ովքեր գոչեցին. Հանգի՛ստ թողեք այս մարդուն, քանզի նա լավ մարդ է, և այն բաները, որ նա ասում է, անկասկած տեղի կունենան, եթե մենք չապաշխարենք.

8 Այո, ահա, բոլոր դատաստանները կգան մեզ վրա, որոնք նա վկայել է մեր դեմ. քանզի մենք գիտենք, որ նա մեզ ճիշտ է վկայել մեր անօրինությունների վերաբերյալ: Եվ ահա, դրանք շատ են, և նա “գիտի նաև բոլոր բաները, որոնք պիտի պատահեն մեզ, այնպես, ինչպես նա գիտի մեր անօրինությունների մասին.

9 Այո, և ահա, եթե նա մարգարե չլիներ, նա չէր կարող վկայել այդ բաների վերաբերյալ:

10 Եվ եղավ այնպես, որ այն մարդիկ, ովքեր ջանում էին կործանել Նեփիին, վախի պատճառով իրենց զսպեցին, այնպես որ չբարձրացրեցին իրենց ձեռքը նրա վրա. ուստի նա սկսեց կրկին խոսել նրանց հետ, տեսնելով որ ինքը շնորհ էր գտել ոմանց աչքում, այնքան, որ նրանց մնացածը վախենում էին:

11 Հետևաբար, նա պարտադրվեց էլի խոսել նրանց հետ, ասելով. Ահա, իմ եղբայրներ, չե՞ք կարդացել, որ Աստված գորություն տվեց մեկ մարդու, այսինքն՝ Մովսեսին, զարկել Կարմիր ծովի ջրերին, և դրանք բաժանվեցին այս ու այն կողմ,

այնպես որ Իսրայելացիները, որոնք մեր հայրերն էին, անցան միջովը՝ չոր գետնի վրայով, և ջրերը փակվեցին եգիպտական գորքերի վրա և կլանեցին նրանց:

12 Եվ այժմ ահա, եթե Աստված տվել էր այդ մարդուն այդպիսի գորություն, ուրեմն ինչո՞ւ դուք ձեր մեջ պիտի վիճեք, և ասեք, որ նա ինձ չի տվել ոչ մի գորություն, որով ես կարող եմ իմանալ այն դատաստանների մասին, որոնք պիտի գան ձեր վրա, եթե դուք չապաշխարեք:

13 Բայց ահա, դուք ոչ միայն ուրանում եք իմ խոսքերը, այլ նաև ուրանում եք բոլոր խոսքերը, որոնք խոսվել են մեր հայրերի կողմից, և նաև խոսքերը, որոնք խոսվել էին այդ մարդու՝ Մովսեսի կողմից, որն իրեն տրված այդպիսի մեծ գորություն ուներ, այո, այն խոսքերը, որոնք նա ասել է Մեսիայի զայստյան վերաբերյալ:

14 Այո, մի՞թե նա չի վկայել, որ Աստծո Որդին պետք է գա: Եվ ինչպես նա անապատում “բարձրացրեց բրոնզե օձը, ճիշտ նույնպես պիտի բարձրացվի նա, ով պիտի գա:

15 Եվ բոլոր նրանք, ովքեր նայեին այն օձին, պիտի “ապրեին, նմանապես բոլոր նրանք, ովքեր հավատքով կնայեն Աստծո Որդուն, ունենալով ապաշխարող հոգի, կարող են “ապրել, մինչև իսկ այն կյանքով, որը հավերժական է:

16 Եվ այժմ ահա, միայն Մովսեսը չվկայեց այս բաների մասին, այլ նաև “բոլոր սուրբ մարգարե-

8ա Հել. 7.29:
11ա Ել. ԺԳ.16,
1 Նեփի 17.26,
Մոսիա 7.19,
ՎևոՒ 8.2-3,
Մովսես 1.25:

14ա Թվ. ԻԱ.6-9,
2 Նեփի 25.20,
Ալմա 33.19-22:
սուր Հիսուս Քրիստոս –
Քրիստոսին
մարմնավորող

խորհրդանիշները:
15ա 1 Նեփի 17.41,
Ալմա 37.45-47,
3 Նեփի 15.9:
բ Հովհ. ԺԱ.25:
16ա Հակոբ 4.4-5, 7.11:

ները, սկսած նրա օրերից, նույնիսկ մինչև Աբրահամի օրերը:

17 Այո, ահա, ^աԱբրահամը տեսավ նրա գալուստը, և լցվեց ուրախությամբ ու հրճվեց:

18 Այո, և ահա ես ասում եմ ձեզ, որ ոչ միայն Աբրահամը գիտեր այդ բաների մասին, այլ կային ^աշատերը, մինչև Աբրահամի օրերը, ովքեր կանչված էին ըստ Աստծո ^ակարգի. այո, այսինքն՝ ըստ նրա Որդու կարգի. և այս, որպեսզի ցույց տրվեր մարդկանց, նրա գալստից շատ ու շատ հազարավոր տարիներ առաջ, որ նրանց փրկագնում պիտի գար:

19 Եվ արդ, ես կկամենայի, որ դուք իմանաք, որ նույնիսկ սկսած Աբրահամի օրերից եղել են շատ մարգարեներ, որ վկայել են այս բաները. այո, ահա, մարգարե ^աՉենոսը համարձակորեն վկայեց. որի համար նա սպանվեց:

20 Եվ ահա, նաև ^աՉենոքը, և նաև Եզրիսը, և նաև ^աՍասայիան և ^աԵրեմիան (Երեմիան լինելով այն նույն մարգարեն, որը վկայեց ^աԵրուսաղեմի կործանման վերաբերյալ), և այժմ մենք գիտենք, որ Երուսաղեմը կործանվեց՝ համաձայն Երեմիայի խոսքերի: Օ՛, ուրեմն ինչո՞ւ Աստծո Որդին չի գալու, նրա մարգարեության համաձայն:

21 Եվ արդ մի՞թե դուք կվիճեք, որ ^աԵրուսաղեմը կործանվեց: Մի՞թե

դուք կասեք, որ Սեղեկիայի ^աորդիները չէին սպանվել՝ բոլորը, բացի ^աՄուղեկից: Այո, և մի՞թե չեք տեսնում, որ Սեղեկիայի հետնորդները մեզ հետ են, և նրանք դուրս էին քշվել Երուսաղեմի հողից: Բայց ահա, դա բոլորը չէ,

22 Մեր հայր Լեքին դուրս էր քշվել Երուսաղեմից, որովհետև նա վկայեց այս բաների մասին: Նեփին նույնպես վկայեց այս բաների մասին, և նաև գրեթե բոլոր մեր հայրերը, նույնիսկ ընդհուպ մինչև այս ժամանակը. այո, նրանք վկայել են Քրիստոսի ^ագալստի մասին և սպասել ու հրճվել են նրա օրով, որը պիտի գա:

23 Եվ ահա, նա Աստված է, և նա նրանց հետ է, և նա հայտնվեց նրանց, որպեսզի նրանք փրկագրվեին իր կողմից. և նրանք փառք տվեցին նրան, այն բանի համար, ինչը պիտի գա:

24 Եվ այժմ, տեսնելով, որ դուք գիտեք այս բաները, և չեք կարող ուրանալ սրանք, մինչև որ չստեք. ուստի, սրանում դուք մեղանչել եք, քանզի դուք մերժել եք բոլոր այս բաները, չնայած այնքան բազմաթիվ ապացույցներին, որոնք դուք ստացել եք. այո, այսինքն՝ ձեզ տրվել են ^աբոլոր բաները՝ և՛ բաները, որ երկնքում են, և՛ բոլոր բաները, որոնք երկրի վրա են, որպես մի ապացույց, որ դրանք ճշմարիտ են:

<p>17ա Ծն. ԻԲ.8-14, Հովհ. Ը.56: 18ա Ալմա 13.19, ՎևՈՒ 84.6-16, 136.37: բ սո՛ւ Մեղքսեղեկյան բահանայություն: 19ա Ալմա 34.7: 20ա 1 Նեփի 19.10, 3 Նեփի 10.15-16:</p>	<p>սո՛ւ Մուրք գրքեր – Կորած սուրբ գրքեր: բ Ես. ԾԳ: գ 1 Նեփի 5.13, 7.14: դ Երեմ. ԻԶ.18, 1 Նեփի 1.4: 21ա 2 Նեփի 6.8, Օմնի 1.15: բ Դ Թագ. ԻԵ.7, Երեմ. ԼԹ.6, ԾԲ.10:</p>	<p>գ Եզեկ. ԺԷ.22-23, Հել. 6.10: 22ա սո՛ւ Հիսուս Քրիստոս – Մարգարեություններ Հիսուս Քրիստոսի ծննդի և մահվան մասին: 24ա Ալմա 30.44, Մովսես 6.63:</p>
---	---	--

25 Բայց ահա, դուք մերժել եք ճշմարտությունը, և Մապատամբել ձեր սուրբ Աստծո դեմ. և հենց այս պահին, փոխարեն՝ ձեզ համար ^բգանձեր դիզելու երկնքում, ուր ոչինչ չի ապականվում, և ուր ոչինչ չի կարող գալ, ինչն անմաքուր է, դուք կհտում եք ձեզ համար ցասում՝ ^գդատաստանի օրվա համար:

26 Այո՛, հենց այս պահին դուք հասունանում եք ձեր սպանությունների և ձեր ^ապոռնկությունների ու ամբարշտության պատճառով՝ հավիտենական կործանման համար. այո, և եթե դուք չապաշխարեք, այն շուտով մոտենում է ձեզ:

27 Այո՛, ահա, այն այժմ հենց ձեր դռների մոտ է. այո, նե՛րս գնացեք դատավորական աթոռը և ստուգե՛ք. և տեսե՛ք՝ ձեր դատավորը սպանված է, և նա ^ապառկած է իր արյան մեջ. և նա սպանվել է իր եղբոր ^բկողմից, որը ջանում է նստել դատավորական աթոռին:

28 Եվ ահա, նրանք երկուսն էլ պատկանում են ձեր գաղտնի հրոսակախմբին, որի ^ահեղինակը Գաղիանթոնն է և այն չար մեկը, որը ջանում է կործանել մարդկանց հոգիները:

ԳԼՈՒԽ 9

Լրաբերները գտնում են գլխավոր դատավորին՝ մեռած, դատավորական աթոռի մոտ – Նրանք բանտարկվում են, իսկ ավելի ուշ՝ արձակվում – Ոգեշնչմամբ՝ Նեփին հաստատում է Մեանթումի ինքնու-

թյունը, որպես մարդասպան – Նեփին ընդունվում է ոմանց կողմից որպես մարգարե: Մոտ 23–21թթ. Ք.ծ.ա.:

ԱՀԱ, այժմ եղավ այնպես, որ երբ Նեփին ասաց այս խոսքերը, որոշ մարդիկ, որոնք նրանց մեջ էին, վազեցին դեպի դատավորական աթոռը. այո, նույնիսկ կային հինգը, ովքեր գնացին և իրենց մեջ ասացին, երբ գնում էին.

2 Ահա, այժմ մենք կիմանանք անկասկած, թե արդյոք այս մարդը մարգարե է, և արդյոք Աստված է պատվիրել նրան մարգարեանալ մեզ այսպիսի զարմանալի բաներ: Ահա, մենք չենք հավատում, որ նա է պատվիրել. այո, մենք չենք հավատում, որ նա մարգարե է. այնուամենայնիվ, եթե այս բանը, որը նա ասել է գլխավոր դատավորի մասին, ճիշտ լինի, որ նա մեռած լինի, այդ դեպքում մենք կհավատանք, որ մյուս խոսքերը, որոնք նա ասել է, ճշմարիտ են:

3 Եվ եղավ այնպես, որ նրանք վազեցին իրենց ողջ գորությանը, և ներս մտան դատավորական աթոռը. և ահա, գլխավոր դատավորն ընկած էր գետնին և ^ապառկած էր իր արյան մեջ:

4 Եվ այժմ ահա, երբ նրանք տեսան այս, չափից դուրս ապշեցին, այնպես որ ընկան գետնին. քանզի նրանք չէին հավատացել այն խոսքերին, որ Նեփին ասել էր գլխավոր դատավորի մասին:

5 Բայց այժմ, երբ նրանք տեսան, հավատացին, և վախ եկավ նրանց վրա, որ չլինի թե բոլոր

25ա Մոսիա 2.36–38, 3.12:
բ Հել. 5.8,
3 Նեփի 13.19–21:
գ ՎևոՒ 10.20–23,

121.23–25:
26ա ՍՈՒ Պոռնկություն:
27ա Հել. 9.3, 15:
բ Հել. 9.6, 26–38:

28ա Հել. 6.26–30:
9 Յա Հել. 8.27:

դատաստանները, որոնք Նեփին ասել էր, պիտի գալին այս ժողովրդի վրա. այդ պատճառով նրանք դողացին և ընկան գետնին:

6 Այժմ, ամփոփապես հետո, երբ դատավորը սպանվեց՝ դանակահարված լինելով իր ծայտված եղբոր կողմից, և նա փախավ, իսկ ծառաները վազեցին ու պատմեցին մարդկանց՝ տարածելով նրանց մեջ սպանության բոթը.

7 Եվ ահա, ժողովուրդն ի մի հավաքվեց դատավորական աթոռի տեղում, և ահա, ի զարմանս իրենց, նրանք տեսան այն հինգ մարդկանց, ովքեր ընկել էին գետնին:

8 Եվ այժմ ահա, ժողովուրդը ոչինչ չգիտեր այն բազմության մասին, որն ի մի էր հավաքվել Նեփիի՝ պարտեզի մոտ. ուստի, նրանք ասացին իրենց մեջ. Այս մարդիկ նրանք են, ովքեր սպանել են դատավորին, և Աստված զարկել է նրանց այնպես, որ չեն կարողացել փախչել մեզանից:

9 Եվ եղավ այնպես, որ նրանք բռնեցին նրանց ու կապեցին, և բանտ գցեցին նրանց: Եվ մի հրովարտակ ուղարկվեց ամենուրեք, որ դատավորը սպանված է, և որ մարդասպանները բռնվել են ու բանտ գցվել:

10 Եվ եղավ այնպես, որ հաջորդ օրը ժողովուրդն ի մի հավաքվեց սզալու ու ծոմ պահելու գլխավոր դատավորի թաղմանը, որը սպանվել էր:

11 Եվ այսպիսով, այն դատավորները, ովքեր Նեփիի պարտեզի մոտ էին եղել, և լսել նրա խոսքերը, թաղմանը նույնպես ի մի հավաքվեցին:

12 Եվ եղավ այնպես, որ նրանք

հարցում արեցին ժողովրդի մեջ, ասելով. Ո՞ւր են այն հինգը, որոնք ուղարկվեցին՝ տեղեկանալու գլխավոր դատավորի մասին, թե արդյոք նա մեռած էր: Եվ նրանք պատասխանեցին և ասացին. Այդ հինգի մասին, ում դուք ասում եք, թե ուղարկել եք, մենք չգիտենք. բայց կան հինգը, որոնք մարդասպաններ են, որոնց մենք բանտ ենք գցել:

13 Եվ եղավ այնպես, որ դատավորները կամեցան, որ նրանք բերվեն. և նրանք բերվեցին, և ահա նրանք էին այն հինգը, ովքեր ուղարկվել էին. և ահա դատավորները տեղեկացան նրանցից՝ իմանալու համար այդ գործի վերաբերյալ, և նրանք պատմեցին նրանց այն բոլորը, որ նրանք արել էին, ասելով.

14 Մենք վազեցինք ու եկանք դատավորական աթոռի տեղը, և երբ մենք տեսանք բոլոր բաները, ճիշտ ինչպես Նեփին էր վկայել, մենք այնքան ապշեցինք, որ ընկանք գետնին. և երբ մենք ուշքի եկանք մեր ապշանքից, ահա նրանք մեզ բանտ գցեցին:

15 Այժմ, ինչ վերաբերում է այս մարդու սպանությանը, մենք չգիտենք՝ ով է դա արել. և միայն այսքանը մենք գիտենք՝ մենք վազեցինք ու եկանք, ինչպես որ դուք կամեցաք, և ահա, նա մեռած էր, համաձայն Նեփիի խոսքերի:

16 Եվ այժմ եղավ այնպես, որ դատավորները պատահածը բացատրեցին ժողովրդին, և պախարակեցին Նեփիին՝ ասելով. Ահա, մենք գիտենք, որ այս Նեփին պետք է որ պայմանավորված լիներ ինչ-որ մեկի հետ՝ սպանել

դատավորին, և ապա, հայտարարել դա մեզ, որպեսզի ինքը կարողանար դարձի բերել մեզ իր հավատքին, որ նա կարողանար բարձրացնել իրեն՝ լինելու մի մեծ մարդ, Աստծո կողմից ընտրված, և մի մարգարե:

17 Եվ այժմ ահա, մենք դիմակազերծ կանենք այս մարդուն, և նա կխոստովանի իր հանցանքն ու հայտնի կդարձնի մեզ այս դատավորի իսկական սպանողին:

18 Եվ եղավ այնպես, որ այն հինգն ազատվեցին թաղման օրը: Այնուամենայնիվ, նրանք սաստեցին դատավորներին՝ այն խոսքերի համար, որոնք նրանք ասացին Նեփիի դեմ, և վիճեցին նրանց հետ մեկ առ մեկ, այնպես որ նրանք կարկամեցրին նրանց:

19 Այնուամենայնիվ, նրանք կարգադրեցին, որ Նեփին բռնվեր ու կապվեր և բերվեր բազմության առջև, և նրանք սկսեցին զանազան ձևերով հարցաքննել նրան, որ կարողանային ստիպել նրան հակասել ինքն իրեն, որպեսզի մեղադրեին նրան ի մահ,

20 Ասելով նրան. Դու դավակից ես. ո՞վ է այն մարդը, որ արել է այս սպանությունը: Այժմ ասա մեզ և խոստովանիր քո հանցանքը, ասելով. Նայիր, ահա փող. և նաև մենք կշնորհենք քեզ քո կյանքը, եթե դու կամենաս պատմել մեզ և խոստովանել պայմանավորվածությունը, որը դու արել ես նրա հետ:

21 Բայց Նեփին ասաց նրանց. Ո՛վ դուք, ^ահիմարներ, դո՛ւք, սրտով չթյապատվածներ, դո՛ւք, կույրեր, և դո՛ւք, ^բխստապարանոց ժողովուրդ, արդյոք գիտե՞ք, թե Տերը՝ ձեր Աստվածը, որքան պիտի

թույլ տա ձեզ, որ դուք շարունակեք ձեր մեղքի այս ճանապարհը:

22 Ա՛խ, դուք պարտավոր եք սկսել ^աուղ ու շիվանը, այն մեծ կործանման պատճառով, որն այս պահին սպասում է ձեզ, եթե դուք չապաշխարեք:

23 Ահա, դուք ասում եք, որ ես պայմանավորվել եմ մի մարդու հետ, որ նա սպանի Սեզորամին՝ մեր գլխավոր դատավորին: Բայց ահա, ես ասում եմ ձեզ, որ դա այն պատճառով է, որ ես վկայել եմ ձեզ, որ դուք իմանաք այս բանի մասին. այո, նույնիսկ, որպես մի սպացույց ձեզ, որ ես գիտեի ամբարշտության ու պղծությունների մասին, որոնք ձեր մեջ են:

24 Եվ քանի որ ես արել եմ այս, դուք ասում եք, որ ես պայմանավորվել եմ մի մարդու հետ, որ նա աներ այս բանը. այո, որովհետև ես ցույց տվեցի ձեզ այս նշանը, դուք բարկացած եք ինձ վրա, և ջանում եք կործանել իմ կյանքը:

25 Եվ այժմ ահա, ես ցույց կտամ ձեզ և ու մեկ նշան, և կտեսնեմ, թե արդյոք դուք այս բանում կշանա՞ք կործանել ինձ:

26 Ահա, ես ասում եմ ձեզ. Գնացե՛ք Սեանթումի տունը, որը Սեզորամի ^աեղբայրն է, և ասեք նրան.

27 Արդյո՞ք Նեփին, այդ կեղծ մարգարեն, որն այս ժողովրդի վերաբերյալ այսքան շատ չարիք է մարգարեանում, պայմանավորվել է քեզ հետ, որի պատճառով դու սպանել ես Սեզորամին, որը քո եղբայրն է:

28 Եվ ահա, նա կասի ձեզ՝ Ո՛չ:

29 Եվ դուք կասեք նրան. Դո՞ւ ես սպանել քո եղբորը:

21ա Գոր. է.51:
բ սո՛ւ Ապստամբություն:

22ա Մոսիա 7.24:
26ա Հել. 8.27:

30 Եվ նա կկանգնի վախով, և չի իմանա՝ ինչ ասի: Եվ ահա, նա կհերքի ձեզ. և նա կձևացնի, թե իբր ինքն ապշած է. այնուամենայնիվ, նա կհայտարարի ձեզ, որ ինքն անմեղ է:

31 Բայց ահա, դուք կստուգեք նրան և արյուն կգտնեք նրա վերարկուի քղանցքներին:

32 Եվ երբ դուք տեսնեք այս, դուք կասեք. Որտեղի՞ց է այս արյունը: Մի՞թե մենք չգիտենք, որ դա քո եղբոր արյունն է:

33 Եվ այդ ժամանակ նա կողոպտի և կգունատվի, կարծես թե մահ էր եկել իր վրա:

34 Եվ այնուհետև դուք կասեք. Այս վախի և քո դեմքի վրա եկած այս գունատության պատճառով, ահա, մենք գիտենք, որ դու մեղավոր ես:

35 Եվ այնուհետև մի ավելի մեծ վախ կգա նրա վրա. և այնուհետև, նա կխոստովանի ձեզ և այլևս չի հերքի, որ ինքն է արել այս սպանությունը:

36 Եվ այնուհետև նա կասի ձեզ, որ ես՝ Նեփիս, ոչինչ չգիտեմ այս գործի վերաբերյալ, բացի դա տրված լինե՞ր ինձ Աստծո գորությանը: Եվ այդ ժամանակ դուք կիմանաք, որ ես ազնիվ մարդ եմ, և որ ես ուղարկված եմ ձեզ մոտ Աստծո կողմից:

37 Եվ եղավ այնպես, որ նրանք գնացին ու արեցին, ճիշտ ինչպես Նեփին էր ասել իրենց: Եվ ահա, այն խոսքերը, որ նա ասել էր, ճշմարիտ էին. քանզի համաձայն այդ խոսքերի՝ նա հերքեց. և նաև, համաձայն այդ խոսքերի, նա խոստովանեց:

38 Եվ նրան բերեցին՝ հաստատելու, որ նա՝ հենց ինքն էր սպանողը,

այնպես որ այն հինգն ազատ արձակվեցին, և Նեփին՝ մույնպես:

39 Եվ Նեփիսացիների մեջ եղան ոմանք, ովքեր հավատացին Նեփիի խոսքերին. և եղան նաև ոմանք, ովքեր հավատացին այն հինգի վկայության պատճառով, քանզի նրանք դարձի էին եկել, մինչ բանտում էին:

40 Եվ այժմ, ժողովրդի մեջ կային ոմանք, ովքեր ասում էին, որ Նեփին մարգարե է:

41 Եվ կային ուրիշները, ովքեր ասացին. Ահա, նա աստված է, քանզի եթե նա աստված չլիներ, նա չէր կարող իմանալ բոլոր բաների մասին: Քանզի ահա, նա ասել է մեզ մեր սրտի մտքերը, և նաև ասել է մեզ այլ բաներ. և նույնիսկ, մեզ հայտնի դարձրել մեր գլխավոր դատավորի իսկական սպանողին:

ԳԼՈՒԽ 10

Տերը Նեփիին տալիս է կնքելու գորություն – Նա լիազորվում է կապել և արձակել երկրի վրա և երկնքում – Նա պատվիրում է մարդկանց սպաշխարել, այլապես կոչնչանան – Հոգին տանում է նրան բազմությունից բազմություն: Մոտ 21–20բբ. Զ.ծ.ա.:

Եւ եղավ այնպես, որ մի բաժանում տեղի ունեցավ ժողովրդի մեջ, այնպես որ նրանք բաժանվեցին այս ու այն կողմ, և գնացին իրենց ճանապարհներով, թողնելով Նեփիին միայնակ, երբ նա կանգնած էր նրանց մեջտեղում:

2 Եվ եղավ այնպես, որ Նեփին գնաց իր ճանապարհով դեպի իր սեփական տունը, խորհելով այն

բաների վրա, ինչ Տերը ցույց էր տվել իրեն:

3 Եվ եղավ այնպես, երբ նա այսպես խորհում էր, – շատ ընկրճված լինելով Նեփիազիների ամբարշտության, նրանց խավարի գաղտնի գործերի և նրանց սպանությունների, նրանց թալանների և բոլոր ձևի անօրինությունների պատճառով, – և եղավ այնպես, մինչ նա այսպես խորհում էր իր սրտում, ահա, մի ձայն եկավ նրան՝ ասելով:

4 Օրհնված ես դու, Նեփի, այն բաների համար, որ դու արել ես. քանզի ես տեսել եմ, թե ինչպես ես դու՝ անխնայությամբ այս ժողովրդին հայտարարել խոսքը, որը ես տվել եմ քեզ: Եվ դու չես վախեցել նրանցից, չես փնտրել քո՝ սեփական կյանքը, այլ փնտրել ես իմ՝ Գլխմբը և իմ պատվիրանները պահելը:

5 Եվ այժմ, քանի որ դու արել ես դա այդպիսի անխնայությամբ, ահա, ես կօրհնեմ քեզ հավիտյան. և ես կդարձնեմ քեզ զորեղ խոսքում ու արարմունքում, հավատքում ու գործերում. այո, մինչև իսկ՝ քրոլոր բաները կարվեն քեզ՝ համաձայն քո՝ խոսքի, քանզի դու՝ Գլխա խնդրի այն, ինչը հակառակ է իմ կամքին:

6 Ահա, դու Նեփին ես, իսկ ես՝ Աստված: Ահա ես հայտարարում եմ քեզ իմ հրեշտակների ներկայությամբ, որ դու կունենաս զորություն այս ժողովրդի վրա, և կզարկես երկիրը՝ ստվով և ժանտախտով և կործանումով, համաձայն այս ժողովրդի ամբարշտության:

7 Ահա, ես տալիս եմ քեզ զորություն, որ ինչ որ դու՝ կնքես երկրի վրա, կկնքվի երկնքում. և ինչ որ դու արձակես երկրի վրա, կարձակվի երկնքում. և այսպես դու զորություն կունենաս այս ժողովրդի մեջ:

8 Եվ այսպես, եթե դու ասես այս տաճարին, որ այն պիտի ճեղքվի երկու մասի, դա կկատարվի:

9 Եվ եթե դու ասես այս՝ Լեռանը. Վա՛ր տապավլիք և դարձի՛ր հարթ, դա կկատարվի:

10 Եվ ահա, եթե դու ասես, որ Աստված պիտի զարկի այս ժողովրդին, դա տեղի կունենա:

11 Եվ այժմ ահա, ես պատվիրում եմ քեզ, որ դու գնաս ու հայտարարես այս ժողովրդին, որ այսպես է ասում Տեր Աստված, որն Ամենագորն է. Եթե դուք չապաշխարեք, դուք պիտի զարկվեք՝ մինչև իսկ ի՞նչ կործանում:

12 Եվ ահա, այժմ եղավ այնպես, որ երբ Տերն ասաց այս խոսքերը Նեփիին, նա կանգ առավ ու չզնաց իր սեփական տունը, այլ վերադարձավ բազմությունների մոտ, որոնք ցրված էին երկրի երեսով մեկ, և սկսեց հայտարարել նրանց Տիրոջ խոսքը, որն ասվել էր իրեն նրանց կործանման վերաբերյալ, եթե նրանք չապաշխարեին:

13 Արդ ահա, չնայած այն մեծ հրաշքին, որը Նեփին արել էր՝ ասելով նրանց գլխավոր դատավորի մահվան մասին, նրանք կարծրացրեցին իրենց սրտերն ու ականջ չարեցին Տիրոջ խոսքերին:

14 Հեռևաբար, Նեփին հայտա-

4ա սուր Զանափրություն:
բ սուր Զոհաբերություն:
գ 3 Նեփի 11.11:
5ա 3 Նեփի 18.20,
վևՈՒ 88.63-65:

բ Ենովա 1.12:
գ 2 Նեփի 4.35,
վևՈՒ 46.30:
6ա Հել. 11.4-18:
7ա Մատ. ԺԶ.19:

սուր Կնիք, Կնքում:
9ա Մատ. ԺԷ.19,
Հակոբ 4.6, Մորմ. 8.24,
Եթեր 12.30:
11ա Հել. 5.2:

բարեց նրանց Տիրոջ խոսքը՝ ասելով. Եթե դուք չապաշխարեք, այսպես է ասում Տերը, դուք պիտի զարկվեք՝ մինչև իսկ ի կործանում:

15 Եվ եղավ այնպես, որ երբ Նեփին նրանց հայտարարեց այդ խոսքը, ահա, նրանք, այնուամենայնիվ, կարծրացրեցին իրենց սրտերը, և չկամեցան ականջ անել նրա խոսքերին. ուստի, նրանք զազրախոսեցին նրա դեմ և ջանացին ձեռք բարձրացնել նրա վրա, որպեսզի կարողանային նրան բանտ գցել:

16 Բայց ահա, Աստծո գործությունը նրա հետ էր, և նրանք չկարողացան բռնել նրան՝ բանտ գցելու նրան, քանզի նա վերցվեց Հոգու կողմից և փոխադրվեց հեռու՝ նրանց միջից դուրս:

17 Եվ եղավ այնպես, որ այսպես նա գնաց առաջ՝ Հոգու մեջ, բազմությունից բազմություն, հայտարարելով Աստծո խոսքը, նույնիսկ մինչև նա հայտարարեց այն նրանց բոլորին, կամ տարածեց այն ամբողջ ժողովրդի մեջ:

18 Եվ եղավ այնպես, որ նրանք չկամեցան ականջ անել նրա խոսքերին. և այնտեղ սկսեցին հակառակություններ լինել, այնպես որ նրանք բաժանվեցին իրար դեմ և սկսեցին սրով միմյանց սպանել:

19 Եվ այսպես ավարտվեց Նեփիի ժողովրդի վրա դատավորների կառավարման յոթանասունևմեկերորդ տարին:

ԳԼՈՒԽ 11

Նեփին համոզում է Տիրոջը, որ պատերազմի փոխարեն սով լինի –

Շատ մարդիկ ոչնչանում են – Նրանք ապաշխարում են, և Նեփին աղաչում է Տիրոջը՝ անձրևի համար – Նեփին ու Լեքին շատ հայտնություններ են ստանում – Գաղիանթոնի ավազակներն ամրասնդվում են երկրում: Մոտ 20–6թթ. Ք.ծ.ա.:

Եւ այժմ եղավ այնպես, որ դատավորների կառավարման յոթանասունևերկուերորդ տարում հակառակություններն ընդլայնվեցին, այնպես որ պատերազմներ եղան ողջ երկրում՝ Նեփիի ամբողջ ժողովրդի մեջ:

2 Եվ այս ավազակների՝ զաղտնի հրոսակախումբն էր, որն առաջ էր տանում կործանման ու ամբարշտության այս գործը: Եվ այս պատերազմը տևեց այդ ամբողջ տարին. և այն նաև շարունակվեց յոթանասունևերեքերորդ տարում:

3 Եվ եղավ այնպես, որ այս տարում Նեփին աղաղակեց առ Տերը՝ ասելով.

4 Ո՛վ Տեր, թույլ մի տուր, որ այս ժողովուրդը կործանվի սրով. այլ, ո՛վ Տեր, ավելի լավ է թող «սով լինի երկրում՝ զարթնեցնելու նրանց հիշելու Տիրոջը՝ իրենց Աստծուն, և գուցե նրանք ապաշխարեն ու դառնան դեպի քեզ:

5 Եվ այդպես դա արվեց՝ համաձայն Նեփիի խոսքերի: Եվ մեծ սով եղավ երկրի վրա՝ ամբողջ Նեփիի ժողովրդի մեջ: Եվ այսպես, յոթանասունևչորսերորդ տարում սովը շարունակվեց, և սրով կործանման գործը դադարեց, բայց ծանր դարձավ՝ սովից:

6 Եվ կործանման այս գործը շարունակվեց նաև յոթանասունևինգերորդ տարում: Քանզի հողը

զարկվեց, այնպես որ չորացավ, և հատիկի ժամանակին հատիկ չէր տալիս. և ամբողջ հողը զարկվել էր, այսինքն՝ ինչպես Լամանացիների մեջ, այնպես էլ Նեփիացիների, հետևաբար, նրանք զարկվեցին այնպես, որ մեռնում էին հազարներով, երկրի առավել ամբարիշտ մասերում:

7 Եվ եղավ այնպես, որ մարդիկ տեսան, որ իրենք մոտ են սովից կոտորվելուն, և սկսեցին «հիշել Տիրոջը՝ իրենց Աստծուն. և նրանք սկսեցին հիշել Նեփիի խոսքերը:

8 Եվ մարդիկ սկսեցին աղաչել իրենց գլխավոր դատավորներին ու իրենց ղեկավարներին, որ նրանք ասեն Նեփիին. Ահա, մենք գիտենք, որ դու Աստծո մի մարդ ես, և հետևաբար, աղաղակիր առ Տերը՝ մեր Աստվածը, որ նա հեռացնի այս սովը մեզանից, որ չլինի թե բոլոր «խոսքերը, որոնք դու խոսել ես մեր կործանման վերաբերյալ, իրագործվեն:

9 Եվ եղավ այնպես, որ դատավորներն ասացին Նեփիին՝ համաձայն այն խոսքերի, որ կամեցել էին: Եվ եղավ այնպես, որ երբ Նեփին տեսավ, որ մարդիկ ապաշխարել էին ու իրենց խոնարհեցրել քրճով, նա կրկին աղաղակեց առ Տերը՝ ասելով.

10 Ո՛վ Տեր, ահա, այս ժողովուրդն ապաշխարում է. և նրանք հեռու են քշել Գադիանթոնի հրոսակախմբին իրենց միջից, այնպես որ նրանք բնաջինջ են եղել, և նրանք թաղել են իրենց գաղտնի ծրագրերը հողում:

11 Արդ, ո՛վ Տեր, նրանց այս խոնարհության համար դու մեկդի չէի՞ր դարձնի քո բարկությունը, և

քոդ քո բարկությունը մեղմանա այն ամբարիշտ մարդկանց կործանմամբ, որոնց դու արդեն կործանել ես:

12 Ո՛վ Տեր, մեկդի չէի՞ր դարձնի քո բարկությունը, այո, քո կատաղի-բարկությունը, և այնպես անէիր, որ այս սովը դադարեր այս երկրում:

13 Ո՛վ Տեր, ականջ չէի՞ր անի ինձ, և այնպես անէիր, որ կատարվի իմ խոսքերի համաձայն, և «անձրև ուղարկեիր հողի երեսին, որպեսզի այն առաջ բերեր իր պտուղը, և իր հատիկը՝ հատիկի ժամանակին:

14 Ո՛վ Տեր, դու ականջ արեցիր «իմ խոսքերին, երբ ես ասացի. Թող լինի սով, որպեսզի սրի համաճարակը դադարի. և ես գիտեմ, որ դու հենց այս պահին, ականջ կդնես իմ խոսքերին, քանզի դու ասացիր, որ. Եթե այս ժողովուրդն ապաշխարի, ես կխնայեմ նրանց:

15 Այո, ո՛վ Տեր, և դու տեսնում ես, որ նրանք ապաշխարել են սովի, և ժանտախտի, և կործանման պատճառով, որ նրանց վրա է եկել:

16 Եվ այժմ, ո՛վ Տեր, մեկդի չէի՞ր դարձնի քո բարկությունը, և փորձեիր կրկին, թե արդյոք նրանք կծառայեն քեզ: Եվ եթե այդպես լինի, ո՛վ Տեր, դու կարող ես օրհնել նրանց՝ համաձայն քո խոսքերի, որոնք դու ես ասել:

17 Եվ, եղավ այնպես, որ յոթանասունվեցերորդ տարում Տերը մեկդի դարձրեց իր բարկությունը ժողովրդից, և այնպես արեց, որ «անձրև տեղաց երկրի երեսին, այնպես որ այն առաջ բերեց իր պտուղը՝ իր պտղի ժամանակին: Եվ եղավ այնպես, որ այն առաջ

<p>7ա Հել. 12.3: 8ա Հել. 10.11-14:</p>	<p>13ա Գ. Թագ. ԺԸ.1, 41-46: 14ա Հել. 11.4:</p>	<p>17ա Բ. Օր. ԺԱ.13-17:</p>
--	--	-----------------------------

բերեց իր հատիկը՝ իր հատիկի ժամանակին:

18 Եվ ահա, ժողովուրդը հրճվեց ու փառաբանեց Աստծուն, և ողջ երկրի երեսը լի էր հրճվանքով. և նրանք այլևս չէին ջանում կործանել Նեփիին, այլ նրանք համարում էին նրան մի «մեծ մարգարե և Աստծո մի մարդ, որին մեծ գորություն ու իշխանություն էր տրվել Աստծուց:

19 Եվ ահա, Լեքին՝ նրա եղբայրը, «ամենևին հետ չէր մնում նրանից, ինչ վերաբերում է արդարությանը պատկանող բաներին:

20 Եվ այսպես, եղավ այնպես, որ Նեփիի ժողովուրդը սկսեց կրկին բարգավաճել երկրում, և սկսեցին կառուցել իրենց ամայի վայրերը, և սկսեցին բազմանալ ու տարածվել, մինչև որ նրանք ծածկեցին ամբողջ երկրի երեսը՝ ինչպես հյուսիսային կողմում, այնպես էլ հարավային կողմում, արևմուտքի ծովից մինչև արևելքի ծովը:

21 Եվ եղավ այնպես, որ յոթանասունվեցերորդ տարին ավարտվեց խաղաղությամբ: Եվ յոթանասունևյոթերորդ տարին սկսվեց խաղաղությամբ. և «եկեղեցին տարածվեց ողջ երկրի երեսով մեկ. և ժողովրդի մեծ մասը՝ և՛ Նեփիացիները, և՛ Լամանացիները պատկանում էին եկեղեցուն. և նրանք ունեցան չափազանց մեծ խաղաղություն երկրում. և այսպես ավարտվեց յոթանասունևյոթերորդ տարին:

22 Եվ նրանք խաղաղություն ունեցան յոթանասունութերորդ տարում նույնպես, բացի մի քանի հակառակություններից՝ վարդապետության այն կետերի վերա-

բերյալ, որոնք հիմնադրվել էին մարգարեների կողմից:

23 Եվ յոթանասունևիններորդ տարում, մեծ վեճ սկսվեց: Բայց եղավ այնպես, որ Նեփին ու Լեքին, և նրանց եղբայրներից շատերը, ովքեր գիտեին վարդապետության ճշմարիտ կետերի վերաբերյալ՝ ամեն օր բազմաթիվ «հայտնություններ ունենալով, հետևաբար, նրանք քարոզում էին ժողովրդին, այնպես որ նրանք վերջ դրեցին իրենց վեճին այդ նույն տարում:

24 Եվ եղավ այնպես, որ Նեփիի ժողովրդի վրա դատավորների կառավարման ութսուներորդ տարում, Նեփիի ժողովրդից եղան մի որոշ թվով պառակտիչներ, որոնք մի քանի տարի առաջ անցել էին Լամանացիների կողմը, և վերցրել էին իրենց վրա Լամանացի անունը, և նաև, նրանց մի որոշակի թիվ, ովքեր, Լամանացիների իսկական հետնորդներ էին՝ դրդված լինելով բարկության, նրանց կողմից, կամ այն պառակտիչների կողմից, ուստի նրանք սկսեցին մի պատերազմ իրենց եղբայրների հետ:

25 Եվ նրանք գործում էին սպանություն ու թալան. և հետո, նահանջում էին ետ՝ դեպի լեռները և անապատը և գաղտնի տեղերը, թաքնվելով, որ իրենց չկարողանային հայտնաբերել, իրենց թվին օրեկան մի հավելում ստանալով, քանի որ կային պառակտիչներ, որոնք հեռանում էին նրանց մոտ:

26 Եվ այսպես, ժամանակի ընթացքում, այո, նույնիսկ ոչ շատ տարիների ընթացքում, նրանք դարձան ավազակների չափազանց մեծ մի հրոսակախումբ. և նրանք հայտնաբերեցին

18ա Հել. 10.5–11:
19ա Հել. 5.36–44:

21ա ՍՈՒ Հիսուս Քրիստոսի
Եկեղեցի:

23ա Ալմա 26.22,
ՎևոՒ 107.19:

Գաղիանոսի բոլոր գաղտնի ծրագրերը. և այսպես նրանք դարձան Գաղիանոսի ավազակներ:

27 Արդ ահա, այս ավազակները մեծ վնաս էին հասցնում, այո, մինչև իսկ, մեծ կործանում՝ Նեփիի ժողովրդի մեջ, և նաև Լամանացիների մեջ:

28 Եվ եղավ այնպես, որ հարկ եղավ, որ կործանման այս գործին մի վերջ դրվեր. հետևաբար, նրանք ուժեղ տղամարդկանց մի զորք ուղարկեցին անապատ և լեռներ՝ գտնելու ավազակների այս հրոսակախմբին և բնաջնջելու նրանց:

29 Բայց ահա, եղավ այնպես, որ այդ նույն տարում, նրանք ետ մղվեցին, նույնիսկ մինչև իրենց սեփական հողերը: Եվ այսպես, ավարտվեց Նեփիի ժողովրդի վրա դատավորների կառավարման ութսուներորդ տարին:

30 Եվ եղավ այնպես՝ ութսունևեկերորդ տարվա սկզբին, նրանք կրկին առաջ գնացին, այս ավազակների հրոսակախմբի դեմ և կործանեցին շատերին. և իրենց նույնպես մեծ կործանում այցելեց:

31 Եվ նրանք կրկին հարկադրված էին վերադառնալ անապատից ու լեռներից դեպի իրենց սեփական հողերը, այդ ավազակների չափազանց մեծ թվի պատճառով, որոնք հեղեղել էին լեռներն ու անապատը:

32 Եվ եղավ այնպես, որ այսպես ավարտվեց այս տարին: Եվ ավազակները դեռևս ավելանում էին ու դառնում ուժեղ, այնպես որ նրանք ուշադրություն չէին դարձնում Նեփիացիների, և նաև Լամանացիների բոլոր զորքերին. և նրանց պատճառով մեծ սոսկում

եկավ ժողովրդի վրա ամբողջ երկրի երեսին:

33 Այո, քանզի նրանք այցելեցին երկրի շատ վայրեր և մեծ ավերում պատճառեցին նրանց. այո, սպանեցին շատերին, իսկ մյուսներին գերի տարան հեռու՝ անապատի խորքը, այո, և ավելի շատ, հատկապես, նրանց կանանց ու նրանց երեխաներին:

34 Այժմ այս մեծ չարիքը, որը եկավ ժողովրդի վրա իրենց անօրինության պատճառով, զարթնեցրեց նրանց կրկին՝ հիշելու Տիրոջը, իրենց Աստծուն:

35 Եվ այսպես ավարտվեց դատավորների կառավարման ութսունևեկերորդ տարին:

36 Եվ ութսունևերկուերորդ տարում, նրանք սկսեցին կրկին «մոռանալ Տիրոջը՝ իրենց Աստծուն: Եվ ութսունևերեքերորդ տարում նրանք սկսեցին խստամալ անօրինության մեջ: Եվ ութսունևչորսերորդ տարում նրանք չուղեցին իրենց ճանապարհները:

37 Եվ եղավ այնպես ութսունևհինգերորդ տարում նրանք ավելի ու ավելի խստացան իրենց հպարտության մեջ և իրենց ամբարշտության մեջ. և այսպես նրանք հասունանում էին կրկին կործանման համար:

38 Եվ այսպես ավարտվեց ութսունևհինգերորդ տարին:

ԳԼՈՒԽ 12

Մարդիկ անկայուն են ու հիմար, և արագ՝ չարիք անելիս – Տերը խրատում է իր ժողովրդին – Մարդկանց ոչնչությունը համեմատվում է Աստ-

ծո գորութեան հետ – Դատաստանի օրը մարդիկ ձեռք կրենեն հավիտեանական կյանք կամ հավիտենական նզովք: Մոտ 6թ. Ք.ծ.ա.:

Եւ այսպիսով, մենք կարող ենք տեսնել, թե որքան կեղծ և նաև անկայուն են մարդկանց զավակների սրտերը. այո, մենք կարող ենք տեսնել, որ Տերն իր անսահման մեծ բարությամբ օրհնում ու ՞բարգավաճեցնում է նրանց, ովքեր դնում են իրենց ՞վստահությունը նրա վրա:

2 Այո, և մենք կարող ենք տեսնել՝ հենց այն ժամանակ, երբ նա բարգավաճեցնում է իր ժողովրդին, այո, իրենց դաշտերի, իրենց հոտերի ու իրենց նախիրների, ոսկու և արծաթի և ամեն ձևի, ամեն տեսակի ու տիպի թանկարժեք բաների աճով. խնայելով նրանց կյանքը, և ազատելով նրանց իրենց թշնամիների ձեռքից. փափկացնելով նրանց թշնամիների սրտերը, որ նրանք չհայտարարեն պատերազմներ նրանց դեմ. այո, և ի վերջո, անելով բոլոր բաներն իր ժողովրդի բարօրության ու երջանկության համար. այո, այդ ժամանակ է, որ նրանք ՞կարծրացնում են իրենց սրտերը և մոռանում են Տիրոջը՝ իրենց Աստծուն, և իրենց ոտքերի տակ ՞կոխ են տալիս Սուրբին,– այո՛, և դա՛ իրենց բարեկեցության և իրենց

խիստ մեծ բարգավաճման պատճառով:

3 Եվ այսպիսով, մենք տեսնում ենք, որ մինչև Տերը չի ՞խրատում իր ժողովրդին շատ չարչարանքներով, այո, մինչև նա չի այցելում նրանց մահով ու սարսափով, և սովով, և ամեն ձևի ժանտախտով, նրանք չեն կամենում ՞հիշել նրան:

4 Ա՛խ, որքան հիմար և որքան ունայն, որքան չար և դիվային են մարդկանց զավակները, որքան ՞արագ են անօրինություն անելիս և որքան դանդաղ՝ բարիք անելիս. այո, որքան արագ՝ այն չար մեկի խոսքերին ականջ անելիս և իրենց ՞սրտերն աշխարհի ունայն բաների վրա դնելիս:

5 Այո, որքան արագ են նրանք ՞հպարտությունից բարձրանալիս. այո, որքան արագ՝ պարծենալիս և այն ամենն անելիս, ինչն անօրինություն է. և որքան դանդաղ են Տիրոջը՝ իրենց Աստծուն հիշելիս և նրա խորհուրդներին ականջ դնելիս, այո, որքան դանդաղ են իմաստության ուղիներում ՞բայլելիս:

6 Ահա, նրանք չեն ցանկանում, որ Տերը՝ իրենց Աստվածը, որը ՞ստեղծել է իրենց, ՞կառավարի ու քազավորի իրենց վրա. չնայած նրանց հանդեպ նրա մեծ բարությանն ու ողորմածությանը, նրանք ոչինչ են համարում նրա խորհուրդները և չեն կամենում, որ նա լինի իրենց առաջնորդը:

12 1ա Բ Մն. ԻՁ.5,
Սաղ. Ա.2-3:
բ Սաղ. ԼՁ.7-8,
2 Նեփի 22.2,
Մոսիա 4.6:
սո՛ւ Ապալիմել:
2ա սո՛ւ Ուրացություն:
բ Ալմա 5.53,

3 Նեփի 28.35:
3ա Մոսիա 23.21,
Վևո՛ւ 98.21, 101.8:
բ Ամովս Գ.6-11:
4ա Ել. ԼԲ.8:
բ Մատ. ԺԵ.19,
Եբր. Գ.12:
5ա Առակ. ԻԹ.23:

սո՛ւ Հպարտություն:
բ սո՛ւ Քայլել, Քայլել
Աստծո հետ:
6ա Ես. ԽԵ.9,
Վևո՛ւ 58.30,
Մովսես 7.32-33:
բ Վևո՛ւ 60.4:

7 Ա՛խ, որքան մեծ է ՝ուչնչությունը մարդկանց զավակներին. այո, նրանք նույնիսկ ավելի շնչին են, քան հողի փոշին:

8 Քանզի ահա, հողի փոշին շարժվում է այս ու այն կողմ, մասերի բաժանվելով մեր մեծ և հավիտենական Աստծո հրամանով:

9 Այո, ահա, նրա ձայնից բլուրներն ու լեռները դողում են ու ՝ցնցվում:

10 Եվ նրա ձայնի ՝ գորությունից դրանք փշրվում են, և դառնում հարթ, այո, ճիշտ ինչպես մի հովիտ:

11 Այո, նրա ձայնի գորությունից ՝ ամբողջ երկիրը ցնցվում է.

12 Այո, նրա ձայնի գորությունից հիմքերը շարժվում են, նույնիսկ մինչև հենց կենտրոնը:

13 Այո, և եթե նա ասում է երկրին՝ Շարժվիր, այն շարժվում է:

14 Այո, եթե նա ասում է ՝ երկրին, - Դու պետք է ետ ՝ գնաս, որ դա շատ ժամերով ՝ երկարացնի օրը, - դա կատարվում է.

15 Եվ այսպես, նրա խոսքի համաձայն երկիրը ետ է գնում, և մարդուն թվում է, թե արևը կանգնած է անշարժ. այո, և ահա, դա այդպես է. քանզի, անկասկած, այդ երկիրն է, որ շարժվում է, և ոչ թե արևը:

16 Եվ ահա, նա, եթե նա մեծ անդունդի ՝ ջրերին ասում է՝ Քամա՛ք, դա կատարվում է:

17 Ահա, եթե նա ասում է այս լեռանը, - Բարձրացիր, և ՝ արի ու ընկիր այս քաղաքի վրա, որ այն թաղվի, - ահա դա կատարվում է:

18 Եվ ահա, եթե մի մարդ ՝ զանձ է թաքցնում հողում, և Տերն ասում է, - Թող ՝ անհիծված լինի, նրա անօրինության պատճառով, ով թաքցրել է այն, - ահա, այն անհիծված կլինի:

19 Եվ եթե Տերն ասի, - Անհիծված եղիր, որ ոչ մի մարդ չգտնի քեզ, այս ժամանակից, այսուհետև և հավիտյան, - ահա, ոչ մի մարդ չի գտնի դա այսուհետև և հավիտյան:

20 Եվ ահա, եթե Տերն ասի որևէ մարդու, - Քո անօրինության համար, անհիծված պիտի լինես հավիտյան, - դա պիտի կատարվի:

21 Եվ եթե Տերն ասի, - Քո անօրինությունների համար, դու կտրված կլինես իմ ներկայությունից, - նա այնպես կանի, որ դա այդպես լինի:

22 Եվ վա՛յ նրան, ում նա կասի այս, քանզի դա կլինի նրան, ով կանի անօրինություն, և նա չի կարող փրկվել. հետևաբար, այս պատճառով ապաշխարություն հայտարարվեց, որպեսզի մարդիկ կարողանան փրկվել:

23 Հետևաբար, օրհնված են նրանք, ովքեր կապաշխարեն ու ականջ կանեն Տիրոջ՝ իրենց Աստծո ձայնին. քանզի այդ նրանք են, որ ՝ կփրկվեն:

24 Եվ թող Աստված՝ իր մեծ լիության մեջ շնորհ անի, որ մարդիկ կարողանան բերվել դեպի ապաշխարություն ու բարի գործեր, որպեսզի նրանք կարողանան ստանալ շնորհի ՝ շնորհի համար՝ համաձայն իրենց գործերի:

7ա Ես. Խ.15, 17,
Մոսիա 4.19,
Մովսես 1.10:
9ա 3 Նեփի 22.10:
10ա 1 Նեփի 17.46:
11ա Մորմ. 5.23, Եթեր 4.9:

14ա Հես. Ժ.12-14:
բ Ես. ԼԸ.7-8:
գ Դ Թագ. Ի.8-11:
16ա Մատ. Ը.27:
բ Ես. ԽԳ.27,
ԾԱ.10:

17ա 3 Նեփի 8.10:
18ա Մորմ. 1.18,
Եթեր 14.1:
բ Հել. 13.17:
23ա սո՛՛՛ Փրկություն:
24ա սո՛՛՛ Ընդոհ:

25 Եվ ես կկամենայի, որ բոլոր մարդիկ կարողանան փրկվել: Բայց մենք կարողում ենք, որ մեծ ու վերջին օրը կլինեն ոմանք, որոնք պիտի դուրս գցվեն, այո, ովքեր պիտի դեն գցվեն Տիրոջ ներկայությունից.

26 Այո, որոնք պիտի մատնվեն անվերջ թշվառության մի վիճակի, իրագործելով այն խոսքերը, որոնք ասում են. Նրանք, ովքեր արել են բարիք, կունենան անվիտենական կյանք. իսկ նրանք, ովքեր արել են չարիք, կունենան հավիտենական ^բնզովք: Եվ դա այդպես է: Ամեն:

Սամուել Լամանացու մարգարեությունը Նեփիազցիներին:

Ընդգրկելով 13–15 գլուխները ներառյալ:

ԳԼՈՒԽ 13

Սամուել Լամանացին մարգարեանում է Նեփիազցիների կործանումը, եթե նրանք չապաշխարեն – Նրանք և նրանց հարստություններն անիծված են – Նրանք մերժում ու քարկոծում են մարգարեներին, շրջապատված են չարքերով, և փնտրում են երջանկություն՝ անօրինություն անելու մեջ: Մոտ 6բ. Բ.ծ.ս.:

Եւ այժմ եղավ այնպես, ութսունևվեցերորդ տարում, Նեփիազցիները դեռ մնում էին ամբարշտության մեջ, այո՝ մեծ ամբարշտության, մինչդեռ ^աԼամանացիները խստո-

րեն պահում-պահպանում էին Աստծո պատվիրանները՝ համաձայն Մովսեսի օրենքի:

2 Եվ եղավ այնպես, որ այս տարում կար ոմն Սամուել՝ մի Լամանացի, որը եկել էր Չարահեմլայի երկիրը, և սկսել էր քարոզել ժողովրդին: Եվ եղավ այնպես, որ նա ապաշխարություն քարոզեց ժողովրդին շատ օրեր, և նրանք դուրս գցեցին նրան, և նա պատրաստվում էր վերադառնալ իր սեփական երկիրը:

3 Բայց ահա, Տիրոջ ձայնը եկավ նրան, որ ինքը պիտի կրկին վերադառնար, և մարգարեանար ժողովրդին՝ ինչ բաներ որ կգար նրա ^ասիրտը:

4 Եվ եղավ այնպես, որ նրանք թույլ չէին տալիս, որ նա մտներ քաղաքը. ուստի, նա գնաց ու բարձրացավ այնտեղի պատի վրա, և առաջ մեկնեց իր ձեռքն ու բարձր ձայնով գոչեց, և մարգարեացավ ժողովրդին՝ ինչ բաներ որ Տերը դրեց նրա սրտում:

5 Եվ նա ասաց նրանց. Ահա, ես՝ Սամուելս, մի Լամանացի, խոսում եմ Տիրոջ խոսքերը, որոնք նա դրել է իմ սրտում. և ահա, նա դրել է իմ սրտում՝ ասելու այս ժողովրդին, որ արդարադատության ^ասուրը կախված է այս ժողովրդի վրա. և չորս հարյուր տարի չի անցնի, բայց արդարադատության սուրն ընկնելու է այս ժողովրդի վրա:

6 Այո, ծանր ^ակործանում է սպասվում այս ժողովրդին, և այն, անկասկած, գալիս է այս ժողովրդին, և ոչինչ չի կարող փրկել այս ժողովրդին, բացի ապաշխարու-

26ա Մատ. ԻԵ.46, Հովհ. Ե.28–29, Հռովմ. 2.13: Բ սոս Նզովք:

13 1ա Հել. 15.4–5: 3ա ՎևոՒ 100.5: 5ա Ալմա 60.29, 3 Նեփի 2.19:

6ա Ալմա 45.10–14, Հել. 15.17:

թյունից և հավատքից առ Տեր Հիսուս Քրիստոսը, ով, անկասկած, պիտի գա աշխարհ, և պիտի տանի շատ բաներ ու պիտի սպանվի իր ժողովրդի համար:

7 Եվ ահա, Տիրոջ մի «հրեշտակ է հայտարարել դա ինձ, և նա «ավետիք բերեց իմ հոգուն: Եվ ահա, ես ուղարկվեցի ձեզ մոտ՝ հայտարարելու դա ձեզ նույնպես, որ դուք կարողանաք ունենալ ավետիք. բայց ահա դուք չկամեցաք ընդունել ինձ:

8 Հետևաբար, այսպես է ասում Տերը. Նեփիացի ժողովրդի սրտերի կարծրության պատճառով, եթե նրանք չապաշխարեն, ես կվերցնեմ իմ խոսքը նրանցից, և ես «ես կքաշեմ իմ Հոգին նրանցից, և ես այլևս չեմ հանդուրժի նրանց, և ես կդարձնեմ նրանց եղբայրների սրտերն իրենց դեմ:

9 Եվ «չորս հարյուր տարիներ չեն անցնի մինչև ես նրանց զարկել կտամ. այո, ես կայցելեմ նրանց սրով և սովով ու ժանտախտով:

10 Այո, ես կայցելեմ նրանց իմ կատաղի բարկության մեջ, և նրանք կլինեն «չորրորդ սերնդից, ովքեր պիտի ապրեն, ձեր թշնամիներից, տեսնելու ձեր լիակատար կործանումը. և դա, անկասկած, պիտի գա, եթե դուք չապաշխարեք, ասում է Տերը. և նրանք՝ չորրորդ սերնդից, պիտի այցելեն ձեզ կործանումով:

11 Բայց եթե դուք կամենաք ապաշխարել ու «վերադառնալ դեպի Տերը՝ ձեր Աստվածը, ես մեկդի կդարձնեմ իմ բարկությունը, ասում է Տերը. այո, այսպես է

ասում Տերը՝ օրհնված են նրանք, ովքեր կապաշխարեն ու կդառնան դեպի ինձ, բայց վա՛յ նրան, ով չի ապաշխարում:

12 Այո, «վա՛յ Ջարահեմլայի այս մեծ քաղաքին. քանզի ահա, դա արդարների շնորհիվ է, որ այն փրկվում է. այո, վա՛յ այս մեծ քաղաքին, քանզի ես զգում եմ, ասում է Տերը, որ կան շատերը, այո, նույնիսկ մեծ մասն այս մեծ քաղաքի, որ կկարծրացնեն իրենց սրտերն իմ դեմ, ասում է Տերը:

13 Բայց օրհնված են նրանք, ովքեր կապաշխարեն, քանզի նրանց ես կխնայեմ: Բայց ահա, եթե չլինեին արդարները, ովքեր այս մեծ քաղաքում են, ահա, ես կկարգադրեի, որ «կրակ թափվեր երկնքից ու կործաներ այն:

14 Բայց ահա, դա ի սեր արդարների է, որ այն խնայվում է: Բայց ահա, ժամանակը գալիս է, ասում է Տերը, որ երբ դուք դուրս գեք արդարներին ձեր միջից, այն ժամանակ դուք հասուն կլինեք կործանման համար. այո, վա՛յ լինի այս մեծ քաղաքին՝ այն ամբարշտության ու պղծությունների համար, որ նրանում են:

15 Այո, և վա՛յ լինի Գեդեոն քաղաքին, այն ամբարշտության ու պղծությունների համար, որ նրանում են:

16 Այո, և վա՛յ լինի բոլոր քաղաքներին, որոնք շրջակա երկրում են, որոնք պատկանում են Նեփիացիներին՝ այն ամբարշտության ու պղծությունների համար, որ դրանցում են:

<p>7ա Ալմա 13.26: բ Ես. ԾԲ.7: 8ա Հել. 6.35: 9ա Ալմա 45.10-12:</p>	<p>10ա 1 Նեփի 12.12, 2 Նեփի 26.9, 3 Նեփի 27.32: 11ա 3 Նեփի 10.5-7:</p>	<p>12ա 3 Նեփի 8.8, 24, 9.3: 13ա Ծն. ԺԹ.24, Գ.Թագ. Ա.9-16, 3 Նեփի 9.11:</p>
---	--	--

17 Եվ ահա, մի ^աանեծք պիտի գա երկրի վրա, ասում է Չորաց Տերը, ժողովրդի արարքների պատճառով, ովքեր երկրի վրա են, այո, նրանց ամբարշտության ու նրանց պղծությունների պատճառով:

18 Եվ կլիճի այնպես, ասում է Չորաց Տերը, այո, մեր մեծ ու ճշմարիտ Աստվածը, որ ովքեր որ գանձեր ^աթաքցնեն հողում, այլևս չպիտի գտնեն նորից, երկրի մեծ անեծքի պատճառով, եթե նա չլիճի մի արդար մարդ և չթաքցնի այն Տիրոջ համար:

19 Քանզի ես կամենում եմ, ասում է Տերը, որ նրանք թաքցնեն իրենց գանձերն ինձ համար. և անիծված լինեն նրանք, ովքեր չեն թաքցնում իրենց գանձերն ինձ համար. քանզի ոչ ոք չի թաքցնում իր գանձերն ինձ համար, բացի արդարից. և նա, ով չի թաքցնում իր գանձերն ինձ համար, անիծված է նա և նաև գանձը, և ոչ մեկը չի փրկի այն՝ երկրի անեծքի պատճառով:

20 Եվ օրը պիտի գա, երբ նրանք կթաքցնեն իրենց գանձերը, որովհետև նրանք դրել են իրենց սրտերը հարստությունների վրա. և որովհետև նրանք դրել են իրենց սրտերը հարստությունների վրա, և կթաքցնեն իրենց գանձերը, երբ իրենք փախչեն իրենց թշնամիների առաջից. քանի որ նրանք չեն կամենում թաքցնել դրանք ինձ համար՝ անիծված լինեն նրանք, և նաև նրանց գանձերը. և այն օրը նրանք պիտի զարկվեն, ասում է Տերը:

21 Տեսեք, դուք, այս մեծ քաղաքի

ժողովուրդ, և ^աականց արեք իմ խոսքերին. այո՛, ականց արեք խոսքերին, որոնք Տերն է ասում. քանզի ահա, նա ասում է, որ դուք անիծված եք ձեր հարստությունների պատճառով, և նաև ձեր հարստություններն են անիծված, որովհետև դուք դրել եք ձեր սրտերը դրանց վրա, և ականց չեք արել նրա խոսքերին, ով տվել է դրանք ձեզ:

22 Դուք չեք հիշում Տիրոջը՝ ձեր Աստծուն, այն բաների համար, որոնցով նա օրհնել է ձեզ, բայց դուք միշտ հիշում եք ձեր ^ահարստությունները, ոչ թե գոհություն հայտնելու Տիրոջը՝ ձեր Աստծուն, դրանց համար. այո, ձեր սրտերն ուղղված չեն առ Տերը, այլ դրանք փքվում են մեծ ^ահպարտությունից՝ ի պարծենկոտություն, և ի մեծ ամբարտավանություն, ^գնախանձություններ, կռիվներ, ռիս, հալածանքներ, և սպանություններ, և ամեն ձևի անօրինություններ:

23 Այս պատճառով է Տեր Աստված կարգադրել, որ մի անեծք գա երկրի վրա, և նաև ձեր հարստությունների վրա, և դա՛ ձեր անօրինությունների համար:

24 Այո, վա՛յ այս ժողովրդին, այս ժամանակի պատճառով, որը եկել է, և որ դուք ^ադուրս եք գցում մարգարեներին և ծաղրում եք նրանց, քարեր եք նետում նրանց վրա և սպանում եք նրանց, և անում եք ամեն ձևի անօրինություն նրանց հանդեպ, ճիշտ ինչպես հին ժամանակներում էին անում:

25 Եվ այժմ, երբ դուք խոսում եք, դուք ասում եք. Եթե մեր օրերը

17ա Հել. 12.18:
18ա Մորմ. 1.18,
Եբեր 14.1:
21ա սո՛՛ւ Ականց դնել:

22ա Դուկ. ԺԲ.34:
սո՛ւ Հարստություններ,
Աշխարհիկություն:
բ սո՛ւ Հպարտություն:

գ սո՛ւ Նախանձել:
24ա Բ Մն. ԼՁ.15-16,
1 Նեփի 1.20:

եղած լինեին հնում, մեր “հայրերի օրոք, մենք չէինք սպանի մարգարեներին. մենք չէինք քարկոծի նրանց և դուրս չէինք գցի նրանց:

26 Ահա, դուք ավելի վատն եք, քան նրանք. քանզի, ինչպես կենդանի է Տերը, եթե մի “մարգարե է գալիս ձեր մեջ ու հայտարարում ձեզ Տիրոջ խոսքը, որը վկայում է ձեր մեղքերի ու անօրինությունների մասին, դուք ^բբարկանում եք նրա վրա, և դուրս եք գցում նրան ու փնտրում ամեն ձևի ուղիներ՝ կործանելու նրան. այո, դուք կասեք, որ նա կեղծ “մարգարե է, և որ նա մեղսագործ է, և դեհից է, որովհետև նա ^բվկայում է, որ ձեր գործերը չար են:

27 Բայց ահա, եթե մի մարդ գա ձեր մեջ, և ասի. Արեք այս, և ոչ մի անօրինություն չկա. արեք այն և դուք չեք տառապի. այո՛, նա կասի. Քայլեք ձեր իսկ սրտերի հպարտության համաձայն. այո, քայլեք ձեր աչքերի հպարտության համաձայն, և արեք, ինչ որ ձեր սիրտն է փափագում. և եթե մի մարդ գա ձեր մեջ և ասի այս, դուք կընդունեք նրան, և կասեք, որ նա “մարգարե է:

28 Այո, դուք կբարձրացնեք նրան, և դուք կտաք նրան ձեր ստացվածքից. դուք կտաք նրան ձեր ոսկուց, և ձեր արծաթից, և դուք կհագցնեք նրան թանկարժեք հանդերձով. և քանի որ նա խոսում է “շողոքորթող խոսքեր ձեր համար, և նա ասում է, որ ամեն ինչ լավ է, այդ դեպքում հանցանք չեք գտնի նրանում:

29 Ո՛վ դո՛ւք, ամբարիշտ, և դո՛ւք, խոտորյալ սերունդ. դո՛ւք, կարծրացած, և դո՛ւք, խստապարանոց ժողովուրդ, որքա՞ն ժամանակ եք կարծելու, որ Տերը կհանդուրժի ձեզ: Այո՛, որքա՞ն ժամանակ եք թույլ տալու՝ առաջնորդվելու “հիմար ու ^բկույր առաջնորդների կողմից: Այո, որքա՞ն ժամանակ եք խավարն ավելի “նախընտրելու, քան ^բլույսը:

30 Այո, ահա, Տիրոջ բարկությունն արդեն բռնկվել է ձեր դեմ. ահա, նա անիծել է երկիրը ձեր անօրինության պատճառով:

31 Եվ ահա, ժամանակը գալիս է, որ նա անիծելու է ձեր հարստությունները, որ դրանք դառնան “սարդուն, որ դուք չկարողանաք բռնել դրանք. և ձեր աղքատության օրերին դուք չեք կարող պահել դրանք:

32 Եվ ձեր աղքատության օրերին, դուք կաղաղակեք առ Տերը. և իզուր պիտի աղաղակեք, քանզի ձեր աղետն արդեն եկել է ձեր վրա, և ձեր կործանումը դարձել է անտարակուսելի. և այդ ժամանակ դուք պիտի լացեք ու ոռնաք այն օրը, ասում է Չորաց Տերը: Եվ այն ժամանակ դուք կողբաք ու կասեք.

33 Ա՛խ, “երանի՛ թե ես ապաշխարեի, և չսպանեի մարգարեներին, և ^բչքարկոծեի նրանց, և դուրս չգցեի նրանց: Այո՛, այդ օրը դուք պիտի ասեք. Ա՛խ, երանի՛ մենք հիշեինք Տիրոջը, մեր Աստծուն, այն օրը, երբ նա տվեց մեզ մեր հարստությունները, և այդ դեպ-

25ա Գոր. է.51:
26ա Բ Մն. ԺԼ.7,
Ղուկ. ԺԶ.31:
բ Ես. Լ.9-10:
գ Մատ. ԺԳ.57:
դ Գաղ. Դ.16:

27ա Միքիա Բ.11:
սո՛ւ Քահանանեցու-
թյուն:
28ա Բ Տիմ. Գ.3-4:
29ա 2 Նեփի 28.9:
բ Մատ. ԺԵ.14:

գ Հովհ. Գ.19:
դ Հոբ ԻԳ.13:
31ա Մորմ. 1.17-18:
33ա Մորմ. 2.10-15:
բ Մատ. ԻԳ.37:

քում դրանք չէին դառնա սպրդուն, որ մենք կորցնեինք դրանք. քանզի ահա, մեր հարստությունները գնացել են մեզանից:

34 Ահա, մենք մի գործիք դնում ենք այստեղ և հաջորդ օրն այն չկա. և ահա, մեր սրերը վերցված են մեզանից այն օրը, երբ մենք փնտրում ենք դրանք ճակատամարտի համար:

35 Այո, մենք թաքցրել ենք մեր գանձերը, և դրանք հեռու են սպրդել մեզանից, երկրի անեծքի պատճառով:

36 Այս, երանի՜ մենք ապաշխարեինք այն օրը, երբ Տիրոջ խոսքը եկավ մեզ. քանզի ահա երկիրն անիծված է, և ամեն ինչ դարձել է սպրդուն, և մենք չենք կարող բռնել դրանք:

37 Ահա, մենք շրջապատված ենք չարքերով, այո, մենք օղակված ենք շուրջանակի հրեշտակներով նրա, ով ջանացել է կործանել մեր հոգիները: Ահա, մեր անօրինությունները մեծ են: Ո՛վ Տեր, քո բարկությունը մեկդի չէի՞ր դարձնի մեզանից: Եվ ա՛յս կլինի ձեր խոստովանումն այն օրերին:

38 Բայց ահա, ձեր փորձության «օրերն անցած են. դուք՝ ձգձգել եք ձեր փրկության օրը, մինչև դա առհավետ չափազանց ուշ է, և ձեր կործանումը դարձել է անտարակուսելի. այո, քանզի դուք փնտրել եք ձեր կյանքի բոլոր օրերում այն, ինչը դուք չէիք կարող ձեռք բերել. և դուք փնտրել եք Պերջանկություն անօրինություն անելու մեջ, մի բան, որը հակառակ է այն արդարության էությանը, որը մեր մեծ ու Հավերժական Գլխավորի մեջ է:

39 Օ՛հ, դո՛ւք, երկրի ժողովուրդ, երանի՜ թե կամենայիք լսել իմ խոսքերը: Եվ ես աղոթում եմ, որ Տիրոջ բարկությունը մեկդի դարձվի ձեզանից, և որ դուք կամենաք ապաշխարել ու փրկվել:

ԳԼՈՒԽ 14

Սամուելը կանխագուշակում է լույս՝ գիշերվա ընթացքում, և մի նոր աստղ՝ Քրիստոսի ծննդյան ժամանակ – Քրիստոսը փրկագնում է մարդկանց ժամանակավոր և հոգևոր մահից – Նրա մահվան նշանները ներառում են երեք օրվա խափար, ժայռերի ճեղքվելը, և բնության մեծ տեղաշարժեր: Մոտ 6թ. Ք.ծ.ա.:

Եվ այժմ եղավ այնպես, որ «Սամուել Լամանացին շատ ավելի մեծ բաներ մարգարեացավ, որոնք չեն կարող գրվել:

2 Եվ ահա, նա ասաց նրանց. Ահա, ես տալիս եմ ձեզ մի նշան. քանզի կանցնի ևս հինգ տարի, և ահա, հետո գալիս է Աստծո Որդին՝ փրկագնելու բոլոր նրանց, ովքեր կհավատան նրա անունին:

3 Եվ ահա, սա կտամ ես ձեզ որպես «նշան նրա գալստի ժամանակ. քանզի ահա, պիտի լինեն մեծ լույսեր երկնքում, այնպես որ չպիտի լինի խավար, այնպես որ մարդուն պիտի թվա, կարծես ցերեկ է:

4 Հետևաբար, պիտի լինի մեկ ցերեկ, և մի գիշեր ու մի ցերեկ, կարծես թե դա մեկ օր էր և գիշեր չէր եղել, և դա պիտի լինի ձեզ՝ որպես նշան. քանզի դուք կիմանաք արևի ծագելու և նաև նրա մայր մտնելու մասին. հետևաբար,

38ա Մորմ. 2.15:
բ Ալմա 34.33–34:

գ Ալմա 41.10–11:
14 1ա Հել. 13.2:

3ա3 Նեփի 1.15:

նրանք, անկասկած, կիմանան, որ կլինի երկու ցերեկ ու մի գիշեր. այնուամենայնիվ, գիշերը չի մթնեցվի. և դա կլինի՝ մնրա ծնվելու նախորդ գիշերը:

5 Եվ ահա, մի նոր՝ աստղ պիտի ծագի, այնպիսին, որ դուք երբեք չեք տեսել. և դա նույնպես նշան պիտի լինի ձեզ համար:

6 Եվ ահա, սա բոլորը չէ, պիտի լինեն շատ նշաններ ու հրաշքներ երկնքում:

7 Եվ կլինի այնպես, որ դուք բոլորդ կլինեք ապշած ու զարմացած, այնքան, որ դուք պիտի՝ ընկնեք գետնին:

8 Եվ պիտի լինի այնպես, որ ով որ՝ հավատա Աստծո Որդուն, նույնը պիտի ունենա հավիտե՝ նական կյանք:

9 Եվ ահա, այսպես է Տերը պատվիրել ինձ, իր հրեշտակների միջոցով, որ ես գամ ու ասեմ ձեզ այս բանը. այո, նա պատվիրել է, որ ես մարգարեանամ ձեզ այս բաները. այո, նա ասել է ինձ. Աղա՛ղակի՛ր այս ժողովրդին՝ ապաշխարե՛ք ու պատրաստե՛ք Աստծո ճանապարհը:

10 Եվ այժմ, քանի որ ես Լամանացի եմ և ասել եմ ձեզ այն խոսքերը, որոնք Տերն է պատվիրել ինձ, և քանի որ դրանք ծանր են ձեզ համար, դուք բարկացած եք ինձ վրա ու ջանում եք կործանել ինձ, և՛ դուրս եք գցել ինձ ձեր միջից:

11 Եվ դուք պիտի լսեք իմ խոսքերը, քանզի այս նպատակով եմ ես բարձրացել քաղաքի պատերի

վրա, որ դուք կարողանաք լսել ու իմանալ Աստծո դատաստանների մասին, որոնք սպասում են ձեզ, ձեր անօրինությունների պատճառով, և նաև, որպեսզի դուք կարողանաք իմանալ ապաշխարության պայմանները.

12 Եվ նաև, որպեսզի դուք կարողանաք իմանալ Հիսուս Քրիստոսի՝ Աստծո Որդու, երկնքի ու երկրի՝ չձոր, ի սկզբանե բոլոր բաների Ստեղծողի գալստի մասին. և որպեսզի դուք կարողանաք իմանալ նրա գալստի նշանները՝ այն նպատակով, որ դուք կարողանաք հավատալ նրա անունին:

13 Եվ եթե դուք՝ հավատաք նրա անունին, դուք կապաշխարեք ձեր բոլոր մեղքերից, որ այդպիսով, դուք կարողանաք ունենալ դրանց մի թողություն՝ նրա՝ Բարձանիքների միջոցով:

14 Եվ ահա, բացի դրանից, մեկ ուրիշ նշան եմ ես տալիս ձեզ, այո, նրա մահվան մի նշան:

15 Քանզի ահա, նա, անշուշտ, պիտի մահանա, որ՝ փրկություն կարողանա գալ. այո, դա հարկավոր է նրան, և դառնում է անհրաժեշտ, որ նա մեռնի՝ իրագործելու մեռելների՝ Բարությունը, որպեսզի դրա միջոցով մարդիկ կարողանան բերվել Տիրոջ ներկայության մեջ:

16 Այո, ահա, այս մահն իրագործում է հարությունը, և՛ փրկագնում է բոլոր մարդկությանն առաջին մահից՝ այն հոգևոր մահից. քանզի ողջ մարդկությունը, Աղա՛

<p>4ա ստ՝ Հիսուս Քրիստոս – Մարգարեություններ Հիսուս Քրիստոսի ծննդի և մահվան մասին: 5ա Մատ. Բ.1-2, 3 Նեփի 1.21:</p>	<p>7ա 3 Նեփի 1.16-17: 8ա Հովհ. Գ.16: 10ա Հել. 13.2: 12ա Մոսիս 3.8, 3 Նեփի 9.15, Եթեր 4.7: ստ՝ Հիսուս Քրիստոս:</p>	<p>13ա Գ.որ. ԺԶ.30-31: բ ՎևոԲ 19.16-20: 15ա ստ՝ Փրկիչ: բ Ալմա 42.23: ստ՝ Հարություն: 16ա ստ՝ Փրկագնման ծրագիր:</p>
--	---	--

մի ղանկումով զկտրված լինելով Տիրոջ ներկայությունից, համարվում է ղմեռած, ինչ վերաբերում է թե՛ աշխարհիկ, թե՛ հոգևոր բաներին:

17 Բայց ահա, Քրիստոսի հարությունը ՝ փրկագնում է մարդկությանը, այո, նույնիսկ ողջ մարդկությանը, և բերում նրանց ետ՝ դեպի Տիրոջ ներկայությունը:

18 Այո, և դա իրագործում է ապաշխարության պայմանը, որպեսզի ով որ ապաշխարի, նա չկտրվի և չզցվի կրակը. բայց ով որ չապաշխարի, կկտրվի և կզցվի կրակը. և գալիս է նրանց վրա կրկին մի հոգևոր մահ, այո, մի երկրորդ մահ, քանզի նրանք կրկին կտրված են, ինչ վերաբերում է արդարությանը պատկանող բաներին:

19 Հետևաբար, ապաշխարե՛ք, ապաշխարե՛ք, որ չլինի թե, իմանալով այս բաներն ու չանելով դրանք, դուք դատապարտության տակ ընկնեք, և վար բերվեք դեպի այս երկրորդ մահը:

20 Բայց ահա, ինչպես ես ասացի ձեզ մեկ այլ ՝ նշանի վերաբերյալ՝ նրա մահվան նշանի, ահա այն օրը, երբ նա մահվան կենթարկվի, արևը պիտի ղխավարեցվի և հրաժարվի իր լույսը տալ ձեզ. և նաև լուսինը և աստղերը. և լույս չպիտի լինի այս երկրի երեսին, ղերեք օրվա ընթացքում, այսինքն՝ այն ժամանակից սկսած, որ նա կտանի մահ, մինչև այն ժամանակը, որ նա կրկին կբարձրանա մեռելներից:

21 Այո, այն պահին, երբ նա հոգին կտա, շատ ժամերի ընթացքում կլինեն ՝ որոտներ ու կայծակներ, և հողը կցնցվի ու կողդա. և ժայռերը, որոնք այս երկրի երեսին են, որոնք, թե՛ հողի վրա են, թե՛ տակը, որոնք դուք գիտեք՝ այս պահին կարծր են, կամ դրա մեծ մասը մեկ կարծր զանգված է, պիտի ղջարդուփշուր լինեն.

22 Այո, դրանք պիտի ճեղքվեն մասերի, և հետո պիտի ընդմիշտ ՝ մնան ճաքած ու ճեղքված, և ջարդված բեկորներով՝ ողջ երկրի երեսին, այո, թե՛ հողի վրա, թե՛ տակը:

23 Եվ ահա, պիտի լինեն մեծ փոթորիկներ, և շատ լեռներ պիտի ցածրացվեն, ինչպես հովիտ, և պիտի լինեն շատ վայրեր, որոնք այժմ կոչվում են հովիտներ, որոնք պիտի դառնան լեռներ, որոնց բարձրությունը վիթխարի է:

24 Եվ շատ մայրուղիներ պիտի քանդվեն, և շատ ՝ քաղաքներ պիտի դառնան ամալ:

25 Եվ շատ ՝ գերեզմաններ պիտի բացվեն և դուրս հանեն իրենց մեռելներից շատերին. և շատ սրբեր պիտի հայտնվեն շատերին:

26 Եվ ահա, այսպես խոսեց ՝ հրեշտակն ինձ հետ. քանզի նա ասաց ինձ, որ պիտի լինեն որոտներ ու կայծակներ շատ ժամերի ընթացքում:

27 Եվ նա ասաց ինձ, որ մինչդեռ որոտն ու կայծակը, և փոթորիկը կշարունակվեն, որ այս բաները պիտի լինեն, և որ ՝ խավարը

16բ սու Ադամի և Եվայի անկումը:
գ Ալմա 42.6-9:
դ սու Մահ հոգևոր:
17ա սու Փրկագնել, Փրկագնված, Փրկագնում:

20ա3 Նեփի 8.5-25:
բ Ղուկ. ԻԳ.44:
գ Մոսիա 3.10:
21ա3 Նեփի 8.6:
բ 3 Նեփի 10.9:
22ա3 Նեփի 8.18:
24ա3 Նեփի 9.3-12:

25ա Մատ. ԻԷ.50-54,
3 Նեփի 23.9-11:
26ա Ալմա 13.26:
27ա 1 Նեփի 19.10,
3 Նեփի 8.3:

պիտի պատի ամբողջ երկրի երեսը երեք օրվա ընթացքում:

28 Եվ հրեշտակն ասաց ինձ, որ շատերը կտեսնեն ավելի մեծ բաներ, քան սրանք, այն նպատակով, որ նրանք կարողանան հավատալ, որ «այս նշաններն ու այս հրաշքները պիտի տեղի ունենան այս երկրի ողջ երեսին, այն նպատակով, որ անհավատության ոչ մի պատճառ չլինի մարդկանց գավակների մեջ,

29 Եվ դա՝ այն նպատակով, որ ով որ կամենա հավատալ, կարողանա փրկվել, և ով որ չկամենա հավատալ, մի արդար «դատաստան գա նրանց վրա. և նաև, եթե նրանք դատապարտվում են, իրենք են իրենց վրա բերում իրենց իսկ դատապարտությունը:

30 Եվ այժմ հիշեք, հիշեք, իմ եղբայրներ, որ ով կործանվում է, իր պատճառով է կործանվում, և ով անօրինություն է անում, իրեն է անում. քանզի ահա, դուք «ազատ եք. ձեզ թույլատրված է, որ գործեք ինքներդ ձեզ համար. քանզի ահա, Աստված տվել է ձեզ թգիտելիք և դարձրել է ձեզ ազատ:

31 Նա տվել է ձեզ, որ դուք կարողանաք բարին «տարբերել չարից, և նա տվել է ձեզ, որ դուք կարողանաք ղրմտրել կյանք կամ մահ. և դուք կարող եք բարին անել և Գվերականգնվել դեպի այն, ինչը բարի է, կամ բարին կվերադարձվի ձեզ, կամ կարող եք անել չարիք, և չարը կվերադարձվի ձեզ:

ԳԼՈՒԽ 15

Տերը խրատում էր Նեփիացիներին, որովհետև նա սիրում էր նրանց – Դարձի եկած Լամանացիները կայուն են և հաստատուն հավատքում – Վերջին օրերին Տերը ողորմած կլինի Լամանացիների հանդեպ: Մոտ 6թ. Ք.ծ.ա.:

ԵՎ այժմ, իմ սիրելի՛ եղբայրներ, ահա, ես հայտարարում եմ ձեզ, որ եթե դուք չապաշխարեք, ձեր տները պիտի «ավերված թողնվեն ձեզ:

2 Այո, եթե դուք չապաշխարեք, ձեր կանայք մեծ պատճառ պիտի ունենան սզալու այն օրը, երբ նրանք կուրծք կտան. քանզի դուք կփորձեք փախչել, և ապաստանի համար տեղ չի լինի. այո, և վա՛յ նրանց, ովքեր «հղի են, քանզի նրանք ծանր կլինեն և չեն կարող փախչել. ուստի, նրանք ոտնակոխ կարվեն և կթողվեն մեռնելու:

3 Այո, վա՛յ այս ժողովրդին, ովքեր կոչվում են Նեփիի ժողովուրդ, եթե նրանք չապաշխարեն, երբ նրանք կտեսնեն բոլոր այս նշաններն ու հրաշքները, որոնք ցույց կտրվեն նրանց. քանզի ահա, նրանք Տիրոջ մի ընտրյալ ժողովուրդ են եղել. այո, Նեփիի ժողովրդին սիրել է նա, և նաև նրանց «խրատել է նա. այո, նրանց անօրինությունների օրերին է նա խրատել նրանց, որովհետև նա սիրում է նրանց:

4 Բայց ահա, իմ եղբայրներ,

28ա1 Նեփի 12.4–5:
29ա սո՛ւ Վերջին դատաստան:
30ա2 Նեփի 2.26–29, Մոլմես 6.56:
սո՛ւ Կամքի

ազատություն:
բ սո՛ւ Գիտություն:
31ա Մոր. 7.16:
բ 2 Նեփի 2.28–29, Ալմա 3.26–27:
գ Ալմա 41.3–5:

15 1ա Մատ. ԻԳ.37–38:
2ա Մատ. ԻԳ.19:
3ա Առաջ. Գ.12, Եբր. ԺԲ.5–11, Վևո՛ւ 95.1:

Լամանացիներին ատել է նա, որովհետև նրանց գործերը շարունակ չար են եղել, և դա՛ նրանց հայրերի՝ Մավանդությունների անօրինության պատճառով: Բայց ահա, Նեփիազիների բարոզելու միջոցով փրկություն է եկել նրանց. և այդ նպատակով է Տերը՝ Երկարացրել նրանց օրերը:

5 Եվ ես կկամենայի, որ դուք տեսնեք, որ նրանցից՝ Մեծ մասն իրենց պարտականության ուղու վրա են, և նրանք քայլում են զգուշորեն Աստծո առջև և պահում պահպանում են նրա պատվիրանները և նրա կանոններն ու նրա դատաստաններն ըստ Մովսեսի օրենքի:

6 Այո, ես ասում եմ ձեզ, որ նրանց մեծ մասն անում է այս, և նրանք ձգտում են անխնջ ջանասիրությամբ, որ նրանք կարողանան բերել իրենց եղբայրների մնացածին ճշմարտության իմացությանը. հետևաբար, կան շատերը, ովքեր ավելանում են նրանց թվին ամեն օր:

7 Եվ ահա, դուք ինքներդ գիտեք, քանզի դուք ականատես եք եղել դրան, որ բոլոր նրանք, ովքեր բերվել են ճշմարտության իմացությանը, և գիտենալու իրենց հայրերի ամբարիշտ ու պիղծ ավանդությունների մասին, և առաջնորդվում են հավատալու սուրբ գրություններին, այո, սուրբ մարգարեների մարգարեություններին, որոնք գրված են, որոնք առաջնորդում են նրանց դեպի հավատքն առ Տերը, և ապաշխարություն. հավատք ու ապաշխարություն, որը

սրտի՝ Միոփոխություն է բերում նրանց համար,

8 Ուստի, բոլոր նրանք, ովքեր եկել են սրան, դուք ինքներդ գիտեք, Մկայուն ու հաստատուն են հավատքում, և այն բանում, որի միջոցով իրենք դարձել են ազատ:

9 Եվ դուք գիտեք նաև, որ նրանք՝ Քաղել են իրենց պատերազմի զենքերը և սոսկում են վերցնել դրանք, որ չլինի թե ինչ-որ ձևով իրենք մեղանչեն. այո, դուք կարող եք տեսնել, որ նրանք սոսկում են մեղանչել, քանզի ահա, նրանք թույլ կտան իրենց, որ իրենք ունակոխ լինեն ու սպանվեն իրենց թշնամիների կողմից, և չեն բարձրացնի իրենց սրերը նրանց դեմ, և դա՛ Քրիստոսում իրենց հավատքի շնորհիվ:

10 Եվ այժմ, իրենց հաստատունության շնորհիվ, երբ նրանք հավատում են այն բանին, ինչին հավատում են, քանզի իրենց կայունության շնորհիվ, երբ նրանք մեկ անգամ լուսավորվում են, ահա, Տերը կօրհնի նրանց և կերկարացնի նրանց օրերը, չնայած իրենց անօրինությանը,

11 Այո, նույնիսկ, եթե նրանք ընկնեն անհավատության մեջ, Տերը՝ կերկարացնի նրանց օրերը, մինչև որ կգա ժամանակը, որը խոսվել է մեր հայրերի կողմից, և նաև՝ Չենոս մարգարեի, և շատ ուրիշ մարգարեների կողմից, մեր եղբայրներին՝ Լամանացիներին, կրկին ճշմարտության իմացությանը՝ վերականգնելու վերաբերյալ,

12 Ահա, ես ասում եմ ձեզ, որ վերջին ժամանակներում Տիրոջ

4ա սուր Կանոնություններ:
բ Ավմա 9.16:
5ա Հել. 13.1:
7ա սուր Գարձի գալ,

Նորադարձ:
8ա Ավմա 23.6, 27.27,
3 Նեփի 6.14:
9ա Ավմա 24.17-19:

11ա Ավմա 9.16:
բ Հել. 8.19:
գ 2 Նեփի 30.5-8:

«խոստումները կհասնեն մեր եղբայրներին՝ Լամանացիներին. և չնայած բազում չարչարանքներին, որ նրանք կունենան, և չնայած նրանք Քրիստոսին այստեղ-այնտեղ՝ երկրի երեսին, և կհետապնդվեն և կզարկվեն ու կցրվեն ամենուրեք, չունենալով տեղ ապաստանի համար, Տերը Գողորմած կլինի նրանց հանդեպ:

13 Եվ դա՝ մարգարեության համաձայն է, որ նրանք պիտի կրկին տրվեն ճշմարիտ իմացությանը, որն իմացությունն է իրենց Քավչի, և իրենց մեծ ու ճշմարիտ Քրիստոսին, և համարվեն նրա ոչխարների թվում:

14 Այդ պատճառով ես ասում եմ ձեզ՝ ավելի լավ կլինի նրանց համար, քան ձեզ համար, եթե դուք չապաշխարեք:

15 Քանզի ահա, եթե այն գորեղ գործերը ցույց տրվեին նրանց, որոնք ցույց են տրվել ձեզ, այո, նրանց, ովքեր ընկել են անհավատության մեջ իրենց հայրերի ավանդությունների պատճառով, դուք ինքներդ կարող եք տեսնել, որ նրանք երբեք կրկին չէին ընկնի անհավատության մեջ:

16 Հետևաբար, ասում է Տերը. Ես լիովին չեմ կործանի նրանց, այլ ես կանեն այնպես, որ այն օրը, որ իմաստուն կհամարեմ, նրանք կրկին կվերադառնան դեպի ինձ, ասում է Տերը:

17 Եվ այժմ ահա, ասում է Տերը, Նեփիացիների վերաբերյալ. Եթե նրանք չապաշխարեն և չհետևեն կատարել իմ կամքը, ես լիովին կկործանեմ նրանց, ասում է Տերը,

իրենց անհավատության պատճառով, չնայած այն բազում գորեղ գործերին, որոնք ես արել եմ նրանց մեջ. և այնպես, անկասկած, ինչպես կենդանի է Տերը, այս բաները պիտի լինեն, ասում է Տերը:

ԳԼՈՒԽ 16

Նեփիացիները, որոնք հավատում են Սամուելին, մկրտվում են Նեփիի կողմից – Սամուելը չի կարող սպանվել չապաշխարող Նեփիացիների նետերով ու քարերով – Ոմանք կարծրացնում են իրենց սրտերը, իսկ մյուսները՝ տեսնում հրեշտակներ – Անհավատներն ասում են խելամիտ չէ հավատալ Քրիստոսին և նրա գալստին Երուսաղեմ: Մոտ 6–1թթ. Ք.ծ.ա.:

Ես այժմ եղավ այնպես, որ եղան շատերը, ովքեր լսեցին Սամուել Լամանացու խոսքերը, որոնք նա խոսեց քաղաքի պատերի վրա: Եվ բոլոր նրանք, ովքեր հավատացին նրա խոսքին, առաջ գնացին և փնտրեցին Նեփիին. և երբ նրանք առաջ եկան և գտան նրան, խոստովանեցին նրան իրենց մեղքերն ու չորացան՝ ցանկանալով, որ իրենք մկրտվեն առ Տերը:

2 Բայց եղածներից բոլոր նրանք, ովքեր չհավատացին Սամուելի խոսքերին, բարկացան նրա վրա. և նրանք քարեր չարտեցին նրա վրա՝ դեպի պատը, և նաև շատերը նետեր արձակեցին նրա վրա, մինչ նա կանգնած էր պատի վրա. բայց Տիրոջ Հոգին նրա հետ էր, այնպես որ նրանք չկարողացան

12ա Ենովս 1.12–13:
բ Մորմ. 5.15:
գ 1 Նեփի 13.31,
2 Նեփի 10.18–19,

Հակոբ 3.5–6:
13ա 3 Նեփի 16.12:
բ սո՛ւ Բարի հովիվ:
14ա Հել. 7.23:

15ա Մատ. ԺԱ.20–23:
17ա Հել. 13.6–10:

խփել նրան իրենց քարերով, ոչ էլ իրենց նետերով:

3 Այժմ, երբ նրանք տեսան, որ իրենք չէին կարողանում խփել նրան, եղան ավելի շատերը, ովքեր հավատացին նրա խոսքերին, այնպես որ նրանք գնացին Նեփիի մոտ՝ մկրտվելու:

4 Քանզի ահա, Նեփին մկրտում էր և մարգարեանում և քարոզում, ապաշխարություն աղաղակելով ժողովրդին, ցույց տալով նշաններ ու զարմանալիքներ, գործելով «հրաշքներ ժողովրդի մեջ, որպեսզի նրանք իմանային, որ Քրիստոսը՝ շուտով պիտի գար,

5 Ասելով նրանց այն բաների մասին, որոնք շուտով պիտի գային, որ դրանց գալու ժամանակ նրանք կարողանային իմանալ և հիշել, որ դրանք իրենց հայտնի էին դարձվել նախօրոք, այն նպատակով, որ նրանք հավատային. ուստի, բոլոր նրանք, ովքեր հավատացին Սամուելի խոսքերին, գնացին նրա մոտ՝ մկրտվելու, քանզի նրանք եկան՝ ապաշխարելով ու խոստովանելով իրենց մեղքերը:

6 Բայց նրանցից մեծ մասը չհավատաց Սամուելի խոսքերին. ուստի, երբ նրանք տեսան, որ չեն կարողանում խփել նրան իրենց քարերով ու իրենց նետերով, նրանք բղավեցին իրենց գորպպետերին՝ ասելով. Բռնե՛ք այս մարդուն ու կապե՛ք նրան, քանզի ահա նա դև ունի. և դևի գործության պատճառով, որը նրա մեջ է, մենք չենք կարողանում խփել նրան մեր քարերով ու մեր նետերով. ուստի, բռնե՛ք նրան ու կապե՛ք, և հեռո՛ւ տարե՛ք նրան:

7 Եվ երբ նրանք առաջ գնացին՝

ձեռք բարձրացնելու նրա վրա, ահա, նա իրեն ցած գցեց պատից և դուրս փախավ նրանց երկրից, այո, նույնիսկ մինչև իր սեփական երկիրը, և սկսեց քարոզել ու մարգարեանալ իր սեփական ժողովրդի մեջ:

8 Եվ ահա, նրա մասին երբեք այլևս չսպեց Նեփիացիների մեջ. և այսպիսին էին ժողովրդի գործերը:

9 Եվ այսպես ավարտվեց Նեփիի ժողովրդի վրա դատավորների կառավարման ութսունևվեցերորդ տարին:

10 Եվ այսպես ավարտվեց նաև դատավորների կառավարման ութսունևյոթերորդ տարին՝ ժողովրդի մեծ մասը մնալով իրենց հպարտության և ամբարշտության մեջ, և փոքրագույն մասը՝ զգուշորեն քայլելով Աստծո առաջ:

11 Եվ այսպիսին էին պայմանները նաև դատավորների կառավարման ութսունևութերորդ տարում:

12 Եվ կար, բայց՝ քիչ փոփոխություն ժողովրդի գործերում, բացի այն, որ ժողովուրդը սկսել էր լինել ավելի կարծրացած՝ անօրինության մեջ, և ավելի ու ավելի էր անում այն, ինչը հակառակ էր Աստծո պատվիրաններին, դատավորների կառավարման ութսունևիններորդ տարում:

13 Բայց եղավ այնպես, դատավորների կառավարման իննսուներորդ տարում տրվեցին «մեծ նշաններ ու հրաշքներ ժողովրդին. և մարգարեների խոսքերը՝ սկսեցին իրականանալ:

14 Եվ «հրեշտակներ հայտնվեցին մարդկանց՝ իմաստուն մարդկանց, և հայտարարեցին նրանց

մեծ ուրախության ավետիք. այսպիսով, այս տարում սուրբ գրքերը սկսեցին իրականանալ:

15 Այնուամենայնիվ, մարդիկ սկսեցին կարծրացնել իրենց սրտերը, բոլորը, բացի նրանց ամենահավատացող մասից, և Նեփիացիներից, և նաև Լամանացիներից, և սկսեցին ապավինել սեփական ուժին ու՝ սեփական իմաստությամբ՝ ասելով.

16 Այդքան շատերի մեջ որոշ բաներ նրանք հնարավոր է ճիշտ գուշակած լինեն. բայց ահա, մենք գիտենք, որ բոլոր այս մեծ ու զարմանալի գործերը չեն կարող տեղի ունենալ, որոնց մասին խոսվել է:

17 Եվ նրանք սկսեցին կշռադատել ու վիճել իրենց մեջ՝ ասելով.

18 Խելամիտ՝ չէ, որ այնպիսի մի էակ, ինչպիսին Քրիստոսն է, պիտի գա. եթե այդպես է, և նա լինի Աստծո Որդին՝ երկնքի ու երկրի Հայրը, ինչպես դա ասվել է, ինչո՞ւ նա իրեն չի ցույց տա մեզ նույնպես, ինչպես նրանց, ովքեր կլինեն Երուսաղեմում:

19 Այո, ինչո՞ւ նա իրեն չի ցույց տա այս երկրում նույնպես, ինչպես Երուսաղեմի հողում:

20 Բայց ահա, մենք գիտենք, որ սա մի ամբարիշտ՝ ավանդություն է, որը մեզ փոխանցվել է մեր հայրերի կողմից՝ ստիպելու համար, որ մենք հավատանք ինչ-որ մեծ ու զարմանալի մի բանի, որը պիտի տեղի ունենա, բայց ոչ մեր մեջ, այլ մի երկրում, որը հեռու հեռվում է, մի երկիր, որը մենք չգիտենք. ուստի, նրանք կարող են պահել մեզ անգիտության մեջ, քանզի մենք չենք կարող թակահարաբանաբար

լինել մեր սեփական աչքերով, որ դրանք ճշմարիտ են:

21 Եվ այն չար մեկի խորամանկությամբ ու խորհրդավոր խաբեբայություններով, նրանք կարբեն ինչ-որ մեծ զաղտնիք, որը մենք չենք կարող հասկանալ, որը կպահի մեզ ներքևում՝ ծառաներ լինելու նրանց խոսքերին, և նաև ծառաներ լինելու իրենց, քանզի մենք կապավինենք նրանց՝ սովորեցնելու մեզ խոսքը. և այսպիսով նրանք կպահեն մեզ անգիտության մեջ, եթե մենք կամենանք ենթարկվել նրանց մեր կյանքի բոլոր օրերում:

22 Եվ ավելի շատ բաներ մարդիկ պատկերացրեցին իրենց սրտերում, որոնք հիմար էին և՛ ունայն. և նրանք շատ անհանգստացած էին, քանզի Սատանան դրդում էր նրանց շարունակ անել անօրինություն. այո, նա շրջում էր՝ տարածելով համբավներ ու հակառակություններ ողջ երկրի երեսին, որպեսզի կարողանար կարծրացնել մարդկանց սրտերը նրա դեմ, ինչը բարի էր, և նրա դեմ, ինչը պիտի գար:

23 Եվ չնայած նշաններին ու հրաշքներին, որոնք գործվել էին Տիրոջ ժողովրդի մեջ, և այն բազում հրաշքներին, որոնք նրանք արեցին, Սատանան մեծ ազդեցություն էր ձեռք բերել մարդկանց սրտերի վրա ողջ երկրի երեսին:

24 Եվ այսպես ավարտվեց Նեփիի ժողովրդի վրա դատավորների կառավարման իմնաստեղծող տարին:

25 Եվ այսպես ավարտվեց Հելամանի գիրքը՝ համաձայն Հելամանի ու նրա որդիների հիշատակարանի:

ԵՐՐՈՐԴ ՆԵՓԻ ԳԻՐՔԸ ՆԵՓԻԻ

ՈՐԳԻՆ ՆԵՓԻԻ, ՈՐԸ ՀԵԼԱՄԱՆԻ ՈՐԳԻՆ ԷՐ

Եվ Հելամանը՝ Հելամանի որդին էր, որն Ալմայի որդին էր, որն Ալմայի որդին էր՝ լինելով Նեփիի մի հետնորդ, որը Լեքիի որդին էր, որը դուրս էր եկել Երուսաղեմից, Սեդեկիայի՝ Հուդայի թագավորի թագավորության առաջին տարում:

ԳԼՈՒԽ 1

Նեփին՝ Հելամանի որդին, մեկնում է երկրից, և նրա որդին՝ Նեփին, պահում է հիշատակարանները – Թեև նշաններն ու հրաշքները շատանում են, ամբարիշտները ծրագրում են սպանել արդարներից – Գալիս է Քրիստոսի ծննդյան գիշերը – Տրվում է նշանը, և մի նոր աստղ է հայտնվում – Ստերն ու խաբեություններն աճում են, և Գադիանթոնի ավազակները սպանում են շատերին: Մոտ 1–4թթ. Ք.ծ.հ.:

ԱՐԴ եղավ այնպես, որ իննսուներեկերորդ տարին անցավ և եղավ ՝ վեց հարյուր տարի այն ժամանակից, երբ Լեքին թողեց Երուսաղեմը. և դա այն տարում էր, երբ Լաքոնիուսը գլխավոր դատավորն էր ու կառավարիչը երկրի վրա:

2 Եվ Նեփին՝ Հելամանի որդին, մեկնեց Չարահեմլայի երկրից՝ հանձնարարություն տալով իր որդի ՝ Մեփիին, որը նրա ավագ որդին էր, արույրե ՝ քիթեղների և բոլոր այն հիշատակարանների վերաբերյալ, որոնք պահվել էին, և բոլոր այն բաների, որոնք պահվել

էին սրբորեն՝ Երուսաղեմից Լեքիի մեկնելուց ի վեր:

3 Այնուհետև նա հեռացավ երկրից, և թե ՝ ուր նա գնաց, ոչ ոք չգիտեր. և նրա որդի Նեփին պահում էր հիշատակարանները նրա փոխարեն, այո՝ այս ժողովրդի հիշատակարանը:

4 Եվ եղավ այնպես, իննսուներկուերորդ տարվա սկզբին, ահա, մարգարեների մարգարեությունները սկսեցին ավելի լիովին իրագործվել. քանզի սկսեցին ավելի մեծ նշաններ և ավելի մեծ հրաշքեր գործվել ժողովրդի մեջ:

5 Բայց եղան ոմանք, ովքեր սկսեցին ասել, որ ժամանակն անցած է խոսքերն իրագործվելու համար, որոնք ՝ ասվել էին Սամուել Լամանացու կողմից:

6 Եվ նրանք սկսեցին ծիծաղել իրենց եղբայրների վրա՝ ասելով. Ահա, ժամանակն անցել է և Սամուելի խոսքերը չիրագործվեցին. հետևաբար, ձեր հավատքն այս բանի վերաբերյալ գուր է:

7 Եվ եղավ այնպես, որ նրանք մեծ աղմուկ բարձրացրեցին ամբողջ երկրում. և այն մարդիկ, ովքեր հավատում էին, սկսեցին շատ տրտմել, որ չլինի թե ինչ-որ

[3 Նեփի]

1 1ա 2 Նեփի 25.19:

2ա սոտ Նեփի՝ Հելամանի

որդի Նեփիի որդի:

բ Ալմա 37.3–5:

3ա 3 Նեփի 2.9:

5ա Հել. 14.2–4:

պատճառով, այն բաները, որոնք ասվել էին, տեղի չունենալին:

8 Բայց ահա, նրանք աննկուն սպասում էին այն օրվան և այն գիշերվան ու այն օրվան, որը պետք է լիներ ինչպես մեկ օր, կարծես չկար գիշեր, որպեսզի նրանք իմանալին, որ իրենց հավատքը զուր չէր եղել:

9 Արդ եղավ այնպես, որ անհավատների կողմից նշանակվեց մի օր, որ բոլոր նրանք, ովքեր հավատում էին այդ ավանդություններին, պետք է մահվան ^ադատապարտվեին, եթե չլինեք նշանը, որը տրվել էր Սամուել մարգարեի կողմից:

10 Արդ եղավ այնպես, որ երբ Նեփին՝ որդին Նեփիի, տեսավ իր ժողովրդի այս ամբարշտությունը, նրա սիրտը խիստ տրտմեց:

11 Եվ եղավ այնպես, որ նա դուրս գնաց ու վար խոնարհվեց գետնին, և ուժգնորեն աղաղակեց առ Աստված իր ժողովրդի համար, այո, նրանց՝ ովքեր քիչ էր մնում կործանվելն իրենց հայրերի ավանդությունների հանդեպ իրենց հավատքի պատճառով:

12 Եվ եղավ այնպես, որ նա ուժգնորեն աղաղակեց առ Տերը՝ ^աամբողջ այդ օրը. և ահա, Տիրոջ ձայնը եկավ նրան՝ ասելով.

13 Բարձրացրու գլուխդ և ուրախացիր. քանզի ահա, ժամանակը մոտ է, և այս գիշեր նշանը պիտի տրվի, և ^աեզուց ես գալիս եմ աշխարհ՝ ցույց տալու աշխարհին, որ ես իրագործելու եմ այն բոլորը,

ինչ ես ^ախոսել եմ ավել սուրբ մարգարեների բերանով:

14 Ահա, ես ^ագալիս եմ յուրայինների մոտ, որպեսզի ^աիրագործեմ բոլոր բաները, որոնք ես հայտնի եմ դարձրել մարդկանց զավակներին աշխարհի ^ահիմնադրումից ի վեր, և կատարեմ կամքը ^աև՛ Հոր, և՛ Որդու, – Հորը՝ իմ պատճառով, և Որդունը՝ իմ մարմնի պատճառով: Եվ ահա, ժամանակը մոտ է, և այս գիշեր նշանը պիտի տրվի:

15 Եվ եղավ այնպես, որ այն խոսքերը, որ եկան Նեփիին, իրագործվեցին, ինչպես որ դրանք խոսվել էին. քանզի ահա, արևի մայր մտնելուց խավար ^աչեղավ. և մարդիկ սկսեցին ապշած մնալ, որովհետև խավար չեղավ, երբ գիշերը եկավ:

16 Եվ եղան շատերը, ովքեր չէին հավատացել մարգարեների խոսքերին, ^աընկան գետնին և կարծես մեռած լինեին, քանզի նրանք իմացան, որ կործանման մեծ ^ածրագիրը, որ նրանք դրել էին նրանց համար, ովքեր հավատում էին մարգարեների խոսքերին, խափանված էր. քանզի նշանը, որը տրվեց, արդեն առկա էր:

17 Եվ նրանք սկսեցին գիտենալ, որ Աստծո Որդին պետք է շուտով հայտնվի. այո, ի վերջո, բոլոր ժողովուրդը ողջ երկրի երեսին, արևմուտքից արևելք՝ և՛ հյուսիսային երկրում, և՛ հարավային կողմի երկրում, այնքան սաստիկ ապշած էին, որ նրանք ընկան գետնին:

18 Քանզի նրանք գիտեին, որ մարգարեները վկայել էին այս

9ա սուր Նահատակ, Նահատակություն: 12ա Ենովս 1.4, Ալմա 5.46: 13ա Ղուկ. Բ.10–11: p սուր Հիսուս Քրիստոս –

Մարգարեություններ Հիսուս Քրիստոսի ծննդի և մահվան մասին: 14ա Հովհ. Ա.11: p Մատ. Ե.17–18:

գ Ալմա 42.26: η վեոՒԲ 93.3–4: 15ա Չել. 14.3: 16ա Չել. 14.7: p 3 Նեփի 1.9:

բաների մասին շատ տարիների ընթացքում, և որ այն նշանը, որը տրվել է արդեն առկա է. և նրանք սկսեցին վախենալ, իրենց անօրինության պատճառով, և իրենց անհավատության:

19 Եվ եղավ այնպես, որ բոլոր այդ գիշերը խավար չեղավ, այլ այնպես լույս էր, կարծես կեսօր լիներ: Եվ եղավ այնպես, որ արևը կրկին ծագեց առավոտյան՝ ըստ իր ուրույն կարգի. և նրանք գիտեին, որ դա այն օրն էր, որ Տերը պիտի ՝ծնվեր, այն նշանի շնորհիվ, որը տրվել էր:

20 Եվ դա կատարվել էր, այո, բոլոր բաները, ամեն մասնիկ՝ մարգարեների խոսքերի համաձայն:

21 Եվ նաև եղավ այնպես, որ մի նոր ՝աստղ հայտնվեց խոսքի համաձայն:

22 Եվ եղավ այնպես, որ այս ժամանակից սկսած, սկսեցին ստեր ուղարկվել առաջ՝ մարդկանց մեջ, Սատանայի կողմից՝ կարծրացնելու նրանց սրտերը, այն նպատակով, որ նրանք չհավատային այն նշաններին ու հրաշքներին, որ իրենք տեսել էին. բայց չնայած այդ ստերին ու խաբեություններին, ժողովրդի մեծ մասը հավատաց և դարձի եկավ առ Տերը:

23 Եվ եղավ այնպես, որ Նեփին առաջ գնաց ժողովրդի մեջ, և նաև շատ ուրիշները, մկրտելով ապաշխարության համար, այդպիսով եղավ մեղքերի մեծ ՝թողություն: Եվ այսպիսով ժողովուրդը սկսեց կրկին խաղաղություն ունենալ երկրում:

24 Եվ հակառակություններ

չկային, բացի մի քանիսից, որոնք սկսեցին քարոզել՝ փորձելով համոզել սուրբ գրքերով, որ այլևս ՝անհրաժեշտ չէր հնազանդվել Մովսեսի օրենքին: Արդ, այս բանում նրանք սխալվում էին՝ հասկացած չլինելով սուրբ գրքերը:

25 Բայց եղավ այնպես, որ նրանք շուտով դարձի եկան և գիտակցեցին այն սխալը, որի մեջ էին իրենք, քանզի նրանց հայտնի դարձվեց, որ օրենքը դեռ չէր ՝կատարվել, և որ այն պետք է կատարվի՝ ամեն մասնիկ. այո, խոսքը եկավ նրանց, որ այն պետք է կատարվի. այո, ոչ մի կետ կամ գիծ չպիտի անցնի, մինչև որ բոլորը չկատարվի. հետևաբար, այս նույն տարում նրանք բերվեցին իրենց սխալի գիտակցմանը և ՝խոստովանեցին իրենց հանցանքները:

26 Եվ այսպես իննսուններկուերորդ տարին անցավ՝ ավետիք բերելով ժողովրդին, այն նշանների հետևանքով, որոնք իրականացան՝ բոլոր սուրբ մարգարեների մարգարեության խոսքերի համաձայն:

27 Եվ եղավ այնպես, որ իննսուններեքերորդ տարին նույնպես անցավ խաղաղությամբ, բացի դա լիներ ՝Գաղիանոնի ավազակների պատճառով, որոնք բնակվում էին սարերում, որոնք հեղեղել էին երկիրը. քանզի այնքան ուժեղ էին նրանց ամրոցներն ու նրանց թաքստոցները, որ ժողովուրդը չէր կարողանում հաղթել նրանց. հետևաբար, նրանք գործում էին բազմաթիվ սպանություններ, և մեծ կտորած սարքում ժողովրդի մեջ:

19ա Ղուկ. Բ.1–7:

21ա Մատ. Բ.1–2, Հել. 14.5:

23ա սու՝ Մեղքերի

թողություն:

24ա Ալմա 34.13:

25ա Մատ. Ե.17–18:

բ Մոսիա 26.29:

27ա սու՝ Գաղիանոնի ավազակներ:

28 Եվ եղավ այնպես, որ իննսու-
նկչորսերորդ տարում, նրանք
սկսեցին ավելանալ մեծ չափով,
որովհետև Նեփիացիներից կային
շատ պառակտիչներ, ովքեր փա-
խան նրանց մոտ, որը մեծ վիշտ
պատճառեց այն Նեփիացիներին,
ովքեր մնացել էին երկրում:

29 Եվ Լամանացիների մեջ նույն-
պես կար մեծ վշտի մի պատճառ.
քանզի ահա, նրանք ունեին շատ
երեխաներ, ովքեր մեծացել էին
և սկսել էին ուժեղ դառնալ տա-
րիների ընթացքում, այնպես որ
նրանք դարձել էին ինքնուրույն
և մոլորեցվել էին նրանց կող-
մից, ովքեր «Չորամացիներ էին,
նրանց ստերով և նրանց շողո-
քոք խոսքերով՝ միանալու այն
Գադիանթոնի ավազակներին:

30 Եվ այսպիսով, Լամանացի-
ները նույնպես չարչարված էին,
և սկսեցին թուլանալ՝ ինչ վերա-
բերում էր իրենց հավատքին
ու արդարակեցությանը՝ աճող
սերնդի ամբարշտության պատ-
ճառով:

ԳԼՈՒԽ 2

*Ամբարշտությունն ու պղծություն-
ներն աճում են ժողովրդի մեջ –
Նեփիացիներն ու Լամանացիները
միանում են պաշտպանվելու Գա-
դիանթոնի ավազակների դեմ –
Դարձի եկած Լամանացիները դառ-
նում են սպիտակամաշկ և կոչվում
են Նեփիացիներ: Մոտ 5–16թթ.
Ք.ժ.հ.:*

Եվ եղավ այնպես, որ այսպես
անցավ իննսունևհինգերորդ տա-
րին նույնպես, և մարդիկ սկսեցին

մոռանալ այն նշաններն ու հրաշք-
ները, որոնք նրանք լսել էին, և
սկսեցին ավելի ու ավելի քիչ ապ-
շել երկնքից նշանի կամ հրաշքի
վրա, այնպես որ նրանք սկսեցին
լինել կարծր՝ իրենց սրտերում, և
կույր՝ իրենց մտքերում, և սկսեցին
չհավատալ այն ամենին, ինչ լսել
էին ու տեսել,

2 Պատկերացնելով ինչ-որ ու-
նայն բան իրենց սրտերում, որ դա
մարդկանց կողմից և դևի գորու-
թյամբ էր գործվել՝ մոլորեցնելու
ու «խաբելու մարդկանց սրտերը. և
այսպես Սատանան կրկին տի-
րացավ մարդկանց սրտերին՝ այն-
պես, որ նա կուրացրեց նրանց
աչքերը և մոլորեցրեց նրանց՝ հա-
վատալու, որ Քրիստոսի վարդա-
պետությունը մի հիմար և ունայն
բան է:

3 Եվ եղավ այնպես, որ ժողովուր-
դը սկսեց ուժեղանալ ամբարըշ-
տության և պղծությունների մեջ.
և նրանք չէին հավատում, որ պի-
տի տրվեն որևէ ուրիշ նշաններ ու
հրաշքներ. և Սատանան «շրջում
էր այն ու այնտեղ՝ մոլորեցնելով
մարդկանց սրտերը, գայթակղե-
լով նրանց, և ստիպելով նրանց,
որ անեին մեծ ամբարշտություն
երկրում:

4 Եվ այսպես անցավ իննսունև-
վեցերորդ տարին, և նաև իննսու-
նկյոթերորդ տարին, և նաև ինը-
սունևնուրեքերորդ տարին, և նաև
իննսունևհինգերորդ տարին.

5 Եվ նաև, հարյուր տարի էր
անցել «Մոսիայի օրերից սկսած,
որը թագավոր էր Նեփիացի ժո-
ղովրդի վրա:

6 Եվ վեց հարյուր և ինը տարի-
ներ էին անցել այն ժամանակից ի

29ա Ալմա 30.59:
2 2ա սո՛ւ Խաբկյանք,

Խաբել, Խաբեություն:
3ա Վևո՛Ւ 10.27:

5ա Մոսիա 29.46–47:

վեր, երբ Լեքին թողեց Երուսաղէմը:

7 Եվ ինը տարիներ էին անցել այն ժամանակից, երբ նշանը տրվեց, որը խոսվել էր մարգարեների կողմից, որ Քրիստոսը պիտի գար աշխարհ:

8 Արդ, Նեփիացիները սկսեցին հաշվել իրենց ժամանակն այս ժամանակաշրջանից, երբ նշանը տրվեց, կամ Քրիստոսի գալստից. հետևաբար, ինը տարի էր անցել:

9 Եվ Նեփին, որը Նեփիի հայրն էր, որը հիշատակարանների համար պատասխանատվություն էր կրում, ^աչվերադարձավ Չարահեմլայի երկիրը, և ամբողջ երկրում ոչ մի տեղ նրան չկարողացան գտնել:

10 Եվ եղավ այնպես, որ ժողովուրդը դեռ մնում էր ամբարշտության մեջ, չնայած շատ քարոզելուն և մարգարեանալուն, որն ուղարկվում էր նրանց մեջ. և այսպես անցավ տասներորդ տարին ևս. և տասնմեկերորդ տարին ևս անցավ անօրինության մեջ:

11 Եվ եղավ այնպես, որ տասներեքերորդ տարում պատերազմներ ու հակառակություններ սկսեցին ամբողջ երկրով մեկ. քանզի Գաղիանոսի ավագակները դարձել էին այնքան բազմաթիվ, և կոտորել էին այնքան շատ մարդկանց, և ամայացրել էին այնքան շատ քաղաքներ, և սփռել էին այնքան շատ մահ ու կոտորած երկրով մեկ, որ անհրաժեշտ դարձավ, որ բոլոր ժողովուրդը՝ և՛ Նեփիացիները, և՛ Լամանացիները, զենք վերցնեին նրանց դեմ:

12 Հետևաբար, բոլոր Լամանացիները, ովքեր դարձի էին եկել

դեպի Տերը, միացան իրենց եղբայրներին՝ Նեփիացիներին, և ստիպված էին իրենց կյանքի և իրենց կամանց ու իրենց երեխաների ապահովության համար զենք վերցնել այդ Գաղիանոսի ավագակների դեմ, այո, և նաև պաշտպանել իրենց իրավունքները, և իրենց եկեղեցու ու իրենց պաշտամունքի արտոնությունները, և իրենց ^աազատությունն ու իրենց ^բանկախությունը:

13 Եվ եղավ այնպես, որ մինչև այս տասներեքերորդ տարվա անցնելը, Նեփիացիներին լիակատար կործանում էր սպառնում այս պատերազմի պատճառով, որը չափազանց սաստկացել էր:

14 Եվ եղավ այնպես, որ այն Լամանացիները, ովքեր միացել էին Նեփիացիներին, համարվում էին Նեփիացիների թվում.

15 Եվ նրանց ^աանեծքը վերցվել էր իրենց վրայից, և նրանց մաշկը դարձել էր Նեփիացիների պես ^բսպիտակ.

16 Եվ նրանց երիտասարդները և նրանց աղջիկները դարձել էին շատ գեղեցիկ, և նրանք համարվում էին Նեփիացիների թվում, և կոչվում էին Նեփիացիներ: Եվ այսպես ավարտվեց տասներեքերորդ տարին:

17 Եվ եղավ այնպես, որ տասնըջորսերորդ տարվա սկզբին, ավագակների ու Նեփիի ժողովրդի միջև պատերազմը շարունակվեց և չափազանց սաստկացավ. այնուամենայնիվ, Նեփիի ժողովուրդը որոշ առավելության հասավ ավագակների հանդեպ, այնպես որ նրանք թշեցին նրանց ետ՝ իրենց

9ա3 Նեփի 1.2-3:
12ա սո՛ւ Ազատ,
Ազատություն:

բ սո՛ւ Անկախություն:
15ա Ալմա 17.15, 23.18:
բ 2 Նեփի 5.21, 30.6,

Հակոբ 3.8:

հողերից դուրս, դեպի սարերն ու իրենց թաքստոցները:

18 Եվ այսպես ավարտվեց տասնըչորսերորդ տարին: Եվ տասնհինգերորդ տարում նրանք առաջ եկան Նեփիի ժողովրդի դեմ. և Նեփիի ժողովրդի ամբարշտության և նրանց բազմաթիվ հակառակությունների ու երկպառակությունների պատճառով, Գաղիանթոնի ավազակները մեծ առավելությունների հասան նրանց հանդեպ:

19 Եվ այսպես ավարտվեց տասնհինգերորդ տարին, և այսպես, ժողովուրդը շատ չարչարանքների մեջ էր. և կործանման սուրը կախված էր նրանց վրա, այնպես որ նրանք մոտ էին դրանից ջախջախվելուն, և դա՝ իրենց անօրինության պատճառով:

ԳԼՈՒԽ 3

Գեղդիանին Գաղիանթոնի առաջնորդը, պահանջում է, որ Լաքոնիուսը և Նեփիացիները հանձնեն իրենց հողերն ու անձնատուր լինեն – Լաքոնիուսը Գեղզեղոնիին նշանակում է բանակի գլխավոր զորապետ – Նեփիացիները հավաքվում են Ջարահենյայում ու Լիառատում պաշտպանվելու համար: Մոտ 16–18թթ. Ք.ծ.հ.:

Եւ այժմ եղավ այնպես, որ Քրիստոսի գալստից սկսած տասնվեցերորդ տարում, Լաքոնիուսը՝ երկրի կառավարիչը, նամակ ստացավ այս ավազակախմբի ղեկավարից ու առաջնորդից. և սրանք են այն խոսքերը, որոնք գրված էին՝ ասելով.

2 Լաքոնիուս, երկրի ազնվա-

զո՛ւյն և գլխավո՛ր կառավարիչ, ահա, ես գրում եմ այս նամակը քեզ, և հիրավի, տալիս եմ քեզ անսահման մեծ գովեստ՝ քո վճռականության համար, և նաև քո ժողովրդի վճռականության՝ պաշտպանելու այն, ինչ դուք կարծում եք ձեր իրավունքն է ու անկախությունը. այո, դուք լավ եք դիմանում, կարծես թե աջակցվում եք մի ինչ-որ աստծո ձեռքով՝ ձեր ազատության, և ձեր սեփականության, և ձեր երկրի պաշտպանության մեջ, կամ նրա, ինչ դուք այդպես եք կոչում:

3 Եվ ես պիտոսում եմ, ազնվազո՛ւյն Լաքոնիոս, որ դուք այդքան անմիտ և սնապարծ պիտի լինեք, որ կարծեք թե կարող եք կանգնել այսքան շատ քաջարի մարդկանց դեմ, որոնք իմ հրամանատարության ներքո են, որոնք այժմ՝ այս պահին կանգնած են իրենց զենքերով և մեծ անհամբերությամբ սպասում են այս խոսքին. Գնացե՛ք վար՝ Նեփիացիների վրա, և կործանե՛ք նրանց:

4 Եվ ես՝ իմանալով նրանց անպարտ ոգին, ստուգած լինելով նրանց ճակատամարտի դաշտում, և իմանալով նրանց հավիտենական ատելության մասին ձեր հանդեպ, այն բազում անիրավությունների պատճառով, որոնք դուք արել եք նրանց, ուստի, եթե նրանք վար գան ձեր դեմ, նրանք կայցելեն ձեզ լիակատար կործանումով:

5 Հետևաբար, ես գրում եմ այս նամակը՝ կնքելով այն իմ սեփական ձեռքով, մտահոգվելով ձեր բարօրության համար, ձեր վճռականության պատճառով նրանում,

ինչ դուք հավատում եք, որ ճիշտ է, և ճակատամարտի դաշտում ձեր ազնիվ ոգու:

6 Հետևաբար, ես գրում եմ ձեզ՝ փափագելով, որ դուք հանձնեք իմ այս մարդկանց ձեր քաղաքները, ձեր հողերը և ձեր ունեցվածքը, փոխանակ նրանք այցելեն ձեզ սրով, և որ կործանում գա ձեզ վրա:

7 Կամ, այլ խոսքով, անձնատուր եղեք մեզ, և միացեք մեզ ու ծանոթացեք մեր՝ Պաղտմի գործերին, և դարձեք մեր եղբայրները, որպեսզի լինեք մեզ նման՝ ոչ թե մեր ստրուկները, այլ մեր եղբայրներն ու փայտերերը մեր բոլոր ստացվածքի:

8 Եվ ահա, ես Մերովում եմ ձեզ մի երդումով՝ եթե դուք անեք այս, դուք չեք կործանվի. բայց եթե դուք չանեք այս, ես երդվում եմ ձեզ մի երդումով, որ հաջորդ ամիս, ես կհրամայեմ, որ իմ զորքերը զան վար՝ ձեր դեմ, և նրանք ետ չեն պահի իրենց ձեռքն ու չեն խնայի, այլ կսպանեն ձեզ, և կթողեն՝ սուրն ընկնի ձեզ վրա, նույնիսկ, մինչև որ դուք բնաջինջ լինեք:

9 Եվ ահա, ես Գեղդիանին եմ. և ես Գաղիանոսի այս Պաղտմի կազմակերպության առաջնորդն եմ. կազմակերպություն, որը, և որի գործերը ես գիտեմ, որ՝ բարի են. և դրանք Գինադարյան ժամանակներից են, և դրանք փոխանցվել են մեզ:

10 Եվ ես գրում եմ այս նամակը քեզ, Լաքոնիոս, և ես հուսով եմ, որ դուք կհանձնեք ձեր հողերը և ձեր ունեցվածքն առանց արյուն թափելու, այնպես որ այս իմ մար-

դիկ կարողանան վերականգնել իրենց իրավունքներն ու կառավարությունը, որոնք պառակտվել են ձեզանից, կառավարության իրենց իրավունքները, ձեր ամբարշտության պատճառով, իրենցից պահելու համար, և եթե դուք չանեք այս, ես վրեժ կլուծեմ՝ նրանց հանդեպ անիրավությունների համար: Ես Գեղդիանին եմ:

11 Եվ այժմ եղավ այնպես, երբ Լաքոնիոսը ստացավ այս նամակը, նա խիստ ապշեց Գեղդիանիի հանդգնության համար՝ Նեփիացիների հողերը պահանջելու, և նաև ժողովրդին սպառնալու, և անիրավությունների համար վրեժ լուծելու՝ նրանց, որոնց չէր հասցվել ոչ մի անիրավություն, բացառությամբ, որ իրենք էին իրենց Պաղտմիություն արել՝ հեռանալով այն ամբարիշտ ու պիղծ ավազակների մոտ:

12 Այդ, ահա այդ Լաքոնիոսը՝ կառավարիչը, մի արդար մարդ էր, և չէր կարող ահաբեկվել մի Պաղտմի պահանջներից ու սպառնալիքներից. ուստի նա ականջ չարեց ավազակապետ Գեղդիանիի նամակին, այլ կարգադրեց, որ իր ժողովուրդն աղաղակի առ Տերը՝ ուժի համար ընդդեմ այն ժամանակի, որ ավազակները պիտի վար գային իրենց դեմ:

13 Այդ, նա ուղարկեց մի հրովարտակ ողջ ժողովրդի մեջ, որ նրանք ի մի հավաքեին, մի տեղում, իրենց կանանց և իրենց երեխաներին, իրենց հոտերն ու իրենց նախիրները, և բոլոր իրենց ստացվածքը, բացի իրենց հողից:

3 7ա Հել. 6.22-26:
8ա Եթեր 8.13-14:
9ա սուր Գաղտմի
խմբակցություններ:

բ Ալմա 30.53:
գ Հել. 6.26-30,
Մովսես 5.29, 49-52:
11ա Հել. 14.30:

12ա Ալմա 54.5-11,
3 Նեփի 4.7-10:

14 Եվ նա կարգադրեց, որ ամբողջություններ կառուցվեին իրենց շուրջբոլորը, և դրանց ամբողջությունը պիտի անչափ մեծ լիներ: Եվ նա կարգադրեց, որ ինչպես Նեփիացիների, այնպես էլ Լամանացիների գորքերը, կամ բոլոր նրանք, ովքեր համարվում էին Նեփիացիների թվում, դրվեին որպես պահակներ շուրջբոլորը՝ հսկելու իրենց, և օր ու գիշեր ավազակներից պաշտպանելու իրենց:

15 Այո, նա ասաց նրանց. Ինչպես կենդանի է Տերը, եթե դուք չապաշխարեք ձեր բոլոր անօրինություններից և չաղաղակեք առ Տերը, դուք ոչ մի կերպ չեք ազատվի այդ Գաղիանոսի ավազակների ձեռքից:

16 Եվ այնքան մեծ ու զարմանալի էին Լաքոնիուսի խոսքերն ու մարգարեությունները, որ դրանք վախեցրին ողջ ժողովրդին. և նրանք լարեցին իրենց ուժերը, իրենց ողջ գործությամբ, ամելու համաձայն Լաքոնիուսի խոսքերի:

17 Եվ եղավ այնպես, որ Լաքոնիուսը Նեփիացիների բոլոր գորքերի վրա գլխավոր գորպայետեր նշանակեց՝ առաջնորդելու նրանց այն ժամանակ, երբ ավազակները վար կգային իրենց դեմ անապատից:

18 Արդ, նշանակվեց բոլոր գլխավոր գորպայետերի ամենագլխավորը և Նեփիացիների բոլոր գորքերի բարձրագույն հրամանատարը, և նրա անունն էր՝ Մուգեդեդոնի:

19 Արդ, բոլոր Նեփիացիների մեջ սովորույթ էր՝ նշանակել որպես իրենց գլխավոր գորպայետեր (բացի դա լիներ իրենց ամբարըշտության ժամանակներում) մեկին,

որն ուներ հայտնության և նաև՝ մարգարեության ոգին. ուստի, այս Գեդգեդոնին մի մեծ մարգարե էր նրանց մեջ, ճիշտ ինչպես գլխավոր դատավորը:

20 Արդ, ժողովուրդն ասաց Գեդգեդոնիին. Աղոթիք Տիրոջը, և եկեք գնանք վեր՝ դեպի լեռները և անապատը, որ մենք կարողանանք ավազակների վրա հարձակվել և կործանել նրանց՝ իրենց սեփական հողերում:

21 Բայց Գեդգեդոնին ասաց նրանց. Տերն ՝արգելում է. քանզի եթե մենք գնանք նրանց դեմ, Տերը ՝կհանձնի մեզ նրանց ձեռքը. ուստի մենք կնախապատրաստվենք մեր հողերի կենտրոնում, և մենք ի մի կհավաքենք բոլոր մեր գորքերը, և մենք չենք գնա նրանց դեմ, այլ մենք կսպասենք մինչև նրանք կգան մեր դեմ. ուստի ինչպես կենդանի է Տերը, եթե մենք անենք այս, նա կհանձնի նրանց մեր ձեռքը:

22 Եվ եղավ այնպես տասնյոթերորդ տարում՝ տարվա ուշ վերջին, Լաքոնիուսի հրովարտակը տարածվեց ամբողջ երկրի երեսով մեկ, և նրանք վերցրեցին իրենց ձիերը և իրենց սայլերը, իրենց անասունները և բոլոր իրենց հոտերը և իրենց նախիրները, իրենց հատիկը և բոլոր իրենց ստացվածքը, և առաջ ընթացան հազարներով ու տասնյակ հազարներով, մինչև նրանք բոլորն առաջ գնացին դեպի այն վայրը, որը նշանակված էր, որ իրենք ի մի հավաքվեին՝ պաշտպանվելու իրենց թշնամիներից:

23 Եվ երկիրը, որը նշանակված էր, Չարահեմլայի երկիրն էր և երկիրը, որը Չարահեմլայի երկրի ու

Լիառատ երկրի միջև էր, այո, մինչև սահմանը, որը Լիառատ երկրի և Ավերակներ երկրի միջև էր:

24 Եվ կային շատ հազարավոր մարդիկ, ովքեր կոչվում էին Նեփիացիներ, որոնք ի մի էին հավաքվել այս երկրում: Արդ, Լաքոնիուսը կարգադրեց, որ նրանք ի մի հավաքվեն հարավային կողմի երկրում, այն մեծ անեծքի պատճառով, որը հյուսիսային կողմի տերերի վրա էր:

25 Եվ նրանք ամրացան իրենց թշնամիների դեմ. և նրանք բնակվեցին մեկ երկրում, և միախմբված, և նրանք վախեցան այն խոսքերից, որոնք խոսվել էին Լաքոնիուսի կողմից, այնպես որ ապաշխարեցին բոլոր իրենց մեղքերից. և նրանք հղեցին իրենց աղոթքներն առ Տերը՝ իրենց Աստվածը, որ նա ՝ազատեր իրենց այն ժամանակ, երբ իրենց թշնամիները վար կգային իրենց դեմ ճակատամարտելու:

26 Եվ նրանք անչափ տրտում էին իրենց թշնամիների պատճառով: Եվ Գեղզեղոնին կարգադրեց, որ նրանք պատերազմի ՝ գեներ սարքեն ամեն տեսակի, և նրանք պետք է ամուր լինեին զրահով և վահաններով և ասպարներով, ինչպես նա կարգադրել էր:

ԳԼՈՒԽ 4

Նեփիացիների զորքերը պարտության են մատնում Գաղիանթոնի ավազակներին – Գեղզեղոնի սպանվում է, և նրա հաջորդին Չեմնարիային կախում են – Նեփիացիները փառաբանում են Տիրոջը՝ իրենց

հաղթանակների համար: Մոտ 19–22թթ. Ք.ծ.հ.:

Եւ եղավ այնպես, որ տասնութերորդ տարվա ուշ վերջին ավազակների զորքերը պատրաստվել էին ճակատամարտի և սկսեցին վար գալ ու առաջ նետվել բլուրներից և սարերից և անապատից, իրենց բերդերից և իրենց թաքստոցներից, և սկսեցին վերցնել հողերի տիրապետությունը՝ ինչպես հարավային կողմի երկրում, այնպես էլ հյուսիսային կողմի երկրում, և սկսել էին վերցնել բոլոր հողերի տիրապետությունը, որոնք ՝լքվել էին Նեփիացիների կողմից, և քաղաքների, որոնք թողնվել էին ամայի:

2 Բայց ահա, այդ հողերում, որոնք լքվել էին Նեփիացիների կողմից, չկային ոչ վայրի գազաններ, ոչ էլ որս, և ավազակների համար որս չկար, բացի դա լիներ անապատում:

3 Եվ ավազակները չէին կարողանում գոյատևել, բացի դա լիներ անապատում, ուտելիքի պակասության պատճառով. քանզի Նեփիացիները թողել էին իրենց հողերն ամայի, և հավաքել էին իրենց հոտերն ու իրենց նախիրները, և բոլոր իրենց ստացվածքը, և նրանք միախմբված էին:

4 Հետևաբար, ավազակների համար հնարավորություն չկար թալանելու և ձեռք բերելու ուտելիք, բացի Նեփիացիների դեմ բաց ճակատամարտի դուրս գալուց. և Նեփիացիները՝ լինելով միախմբված, և ունենալով այդպիսի մեծ թիվ, և իրենց համար ունենալով պահեստավորած պարեն և ձիեր և

24ա Ալմա 22.31:
25ա սո՛ւ Ապավիճել:

26ա 2 Նեփի 5.14:
4 1ա 3 Նեփի 3.13–14, 22:

անասուն և ամեն տեսակի հոտեր, որ նրանք կարողանային գոյություն պահպանել յոթ տարիների ընթացքում՝ այդ ժամանակարևաթացքում հույս ունենալով բնաջնջել ավազակներին երկրի երեսից. և այսպես անցավ տասնութերորդ տարին:

5 Եվ եղավ այնպես, որ տասնիններորդ տարում Գեղդիանին գտավ, որ անհրաժեշտ էր, որ նա գնար՝ ճակատամարտելու Նեփիացիների դեմ, քանզի չկար ոչ մի միջոց, որ նրանք կարողանային գոյություն պահպանել, բացի դա լինել թալանելը և կողոպտելը և սպանելը:

6 Եվ նրանք չհամարձակվեցին տարածվել երկրի երեսին, այնպես որ կարողանային հատիկ աճեցնել, որ չլինել թե Նեփիացիները գային իրենց վրա և սպանեին իրենց. ուստի Գեղդիանին հրաման տվեց իր զորքերին, որ այս տարում նրանք գնային վեր՝ ճակատամարտելու Նեփիացիների դեմ:

7 Եվ եղավ այնպես, որ նրանք եկան ճակատամարտելու. և դա վեցերորդ ամսում էր. և ահա, ահռելի ու սոսկալի էր այն օրը, որ նրանք եկան վեր՝ ճակատամարտելու. և նրանք գոտևորված էին ավազակների ձևով. և նրանք ունեին մի գառան մորթի իրենց կոնքերի շուրջը, և նրանք ներկված էին արյունով, և նրանց գլուխներն ածիլված էին, և նրանք ունեին սաղավարտներ իրենց վրա. և ահռելի ու սոսկալի էր Գեղդիանիի զորքերի տեսքը՝ նրանց զրահների պատճառով, և արյունով ներկված լինելու պատճառով:

8 Եվ եղավ այնպես, որ Նեփիա-

ցիների զորքերը, երբ տեսան Գեղդիանիի զորքի տեսքը, բոլորն ընկան գետնին, և բարձրացրեցին իրենց աղաղակներն առ Տերը՝ իրենց Աստվածը, որ նա խնայեր իրենց և ազատեր իրենց թշնամիների ձեռքից:

9 Եվ եղավ այնպես, որ երբ Գեղդիանիի զորքերը տեսան այս, նրանք ուրախությունից սկսեցին գոռալ բարձր ձայնով, քանզի նրանք կարծեցին, թե Նեփիացիները վախից էին ընկել իրենց զորքերից սարսափի պատճառով:

10 Բայց այս բանում նրանք հուսախաբվեցին, քանզի Նեփիացիները չէին վախենում նրանցից. այլ նրանք՝ վախենում էին իրենց Աստծուց և աղաչում էին նրան՝ պաշտպանության համար. հետևաբար, երբ Գեղդիանիի զորքերը նետվեցին նրանց վրա, նրանք պատրաստ էին հանդիպել նրանց. այո, Տիրոջ ուժով նրանք ընդունեցին նրանց:

11 Եվ ճակատամարտը սկսվեց այս վեցերորդ ամսում. և ահռելի ու սոսկալի էր նրանց ճակատամարտը, այո, ահռելի ու սոսկալի էր դրա կոտորածը, այնպես որ այդպիսի ահռելի մի կոտորած երբեք չէր իմացվել Լեքիի ողջ ժողովրդի մեջ՝ Երուսաղեմը թողնելուց ի վեր:

12 Եվ չնայած՝ սպառնալիքներին ու երդումներին, որոնք Գեղդիանին արել էր, ահա, Նեփիացիները ջարդեցին նրանց՝ այնպես, որ նրանք ետ ընկրկեցին նրանց առաջից:

13 Եվ եղավ այնպես, որ՝ Գեղգեդոնին հրամայեց, որ իր զորքերը հետապնդեն նրանց մինչև անա-

պատի սահմանները, և որ նրանք չպիտի խնայեն որևէ մեկին, որը կրկններ իրենց ձեռքը ճանապարհին. և այսպես, նրանք հետապնդեցին նրանց մինչև անապատի սահմանները և սպանեցին նրանց, մինչև որ նրանք կատարեցին Գեղգեղոնիի հրամանը:

14 Եվ եղավ այնպես, որ Գեղդիանին, որը կանգնել ու կովել էր համարձակորեն, հետապնդվեց, երբ փախչում էր. և հոգնած լինելով իր շատ կովելու պատճառով, նրան բռնեցին ու սպանեցին: Եվ այսպես եղավ ավազակ Գեղդիանիի վախճանը:

15 Եվ եղավ այնպես, որ Նեփիացիների գորքերը կրկին վերադարձան իրենց ապաստանավայրը: Եվ եղավ այնպես, որ այս տասնիններորդ տարին անցավ, և ավազակներն այլևս չեկան՝ կրկին ճակատամարտելու. ոչ էլ նրանք եկան կրկին քսաներորդ տարում:

16 Եվ քսանևմեկերորդ տարում նրանք չեկան ճակատամարտելու, բայց նրանք եկան բոլոր կողմերից՝ պաշարում դնելու Նեփիի ժողովրդի շուրջբոլորը. քանզի նրանք կարծում էին, որ եթե իրենք կտրեին Նեփիի ժողովրդին իրենց հողերից, և շրջափակեին ամեն կողմից, և եթե նրանք կտրեին նրանց բոլոր իրենց դրսում գործելու արտոնություններից, ապա նրանք կկարողանային ստիպել նրանց անձնատուր լինել՝ ըստ իրենց ցանկության:

17 Արդ, նրանք նշանակել էին իրենց համար մեկ այլ առաջնորդ, որի անունը Չեմնարիա էր. ուստի Չեմնարիան էր, որ կարգադրել էր, որ այս պաշարումը տեղի ունենար:

18 Բայց ահա, սա առավելություն էր Նեփիացիների համար. քանզի ավազակների համար անհրճաբար էր բավականաչափ երկար պաշարում դնել Նեփիացիների վրա՝ որևէ ազդեցություն ունենալու համար, նրանց մեծաքանակ մթերքի շնորհիվ, որը նրանք ունեին պաշարած՝ ամբարված,

19 Եվ ավազակների մթերքի սակավության պատճառով. քանզի ահա, նրանք չունեին ոչինչ, բացի մսից, իրենց գոյության համար, մսից, որը նրանք ձեռք էին բերում անապատում.

20 Եվ եղավ այնպես, որ Մվայրի որսը դարձավ սակավ անապատում, այնպես որ ավազակները մոտ էին սովից կոտորվելուն:

21 Եվ Նեփիացիներն անընդհատ արշավում էին դուրս, ցերեկով ու գիշերով, և հարձակվում նրանց գորքերի վրա, և կոտորում նրանց հազարներով ու տասնյակ հազարներով:

22 Եվ այսպիսով, Չեմնարիայի մարդկանց փափագը դարձավ՝ հրաժարվել իրենց ծրագրից, այն մեծ կործանման պատճառով, որը եկավ նրանց վրա, գիշերով ու ցերեկով:

23 Եվ եղավ այնպես, որ Չեմնարիան հրաման տվեց իր ժողովրդին, որ նրանք ետ քաշվեն պաշարումից, և ընթանան դեպի հյուսիսային կողմի երկրի ամենահեռավոր մասերը:

24 Եվ այժմ, Գեղգեղոնիին՝ տեղյակ լինելով նրանց ծրագրին, և իմանալով նրանց թուլությունը՝ ուտելիքի պակասության և մեծ կոտորածի պատճառով, որը եղել էր նրանց մեջ, ուստի նա գիշերով

դուրս ուղարկեց իր գորքերը, և կտրեց նրանց նահանջի ճանապարհը, և դրեց իր գորքերը նրանց նահանջի ճանապարհին:

25 Եվ այս նրանք արեցին գիշերով, և սկսեցին իրենց արշավանքը՝ անցնելով ավազակներից, այնպես որ հաջորդ առավոտ, երբ ավազակները սկսեցին իրենց արշավանքը, նրանց դիմափորեցին Նեփիացիների գորքերը՝ ինչպես ճակատից, այնպես էլ թիկունքից:

26 Եվ ավազակները, ովքեր հարավում էին, նույնպես կտրվեցին իրենց նահանջի տեղերում: Եվ բոլոր այս բաներն արվեցին Գեդգեդոնիի հրամանով:

27 Եվ կային բազում հազարավորներ, ովքեր գերի հանձնվեցին Նեփիացիներին, իսկ նրանցից մնացածը սպանվեցին:

28 Եվ նրանց առաջնորդին՝ Չեմնարիային վերցրեցին ու կախեցին մի ծառից, այո, այսինքն՝ դրա գազաթից, մինչև որ նա մեռավ: Եվ երբ նրանք կախեցին նրան, մինչև որ նա մեռավ, նրանք տապալեցին ծառը գետնին և բոլակեցին բարձր ձայնով՝ ասելով.

29 Թող Տերը պահպանի իր ժողովրդին արդարության մեջ և սրտի սրբության մեջ, որ նրանք կարողանան գետնին տապալել բոլորին, ովքեր կջանան սպանել նրանց՝ իշխանության ու գաղտնի խմբակցությունների պատճառով, ճիշտ ինչպես այս մարդն է տապալվել գետնին:

30 Եվ նրանք կրկին ցնծացին և զոչեցին միաձայն՝ ասելով. Թող Աբրահամի՝ Աստվածը և Իսահա-

կի Աստվածը և Հակոբի Աստվածը պաշտպանի այս ժողովրդին արդարության մեջ, քանի դեռ նրանք՝ կկանչեն իրենց Աստծո անունը՝ պաշտպանության համար:

31 Եվ եղավ այնպես, որ նրանք պտթկացին, միահամուռ, երգելով և՛ «գովաբանելով իրենց Աստծուն այն մեծ բանի համար, որ նա արել էր իրենց համար՝ պահպանելով նրանց իրենց թշնամիների ձեռքն ընկնելուց:

32 Այո, նրանք գոչում էին. «Ով սաննա Բարձրյալ Աստծուն: Եվ նրանք գոչում էին. Օրհնված լինի՞ ՚Ամենագոր Տեր Աստծո՞՝ Բարձրյալ Աստծո անունը:

33 Եվ նրանց սրտերը լցված էին ուրախությամբ՝ դուրս հեղելով առատ արցունքներ, իրենց թշնամիների ձեռքից իրենց ազատելիս՝ Աստծո մեծ բարության պատճառով. և նրանք գիտեին, որ դա իրենց ապաշխարության և իրենց համեստության շնորհիվ էր, որ նրանք ազատվեցին մի հավիտենական կործանումից:

ԳԼՈՒԽ 5

Նեփիացիներն ապաշխարում են և թողնում իրենց մեղքերը – Մորմոնը գրում է իր ժողովրդի պատմությունը և նրանց հայտարարում է հավիտենական խոսքը – Իսրայելը կհավաքվի երկարատև ցրումից: Մոտ 22–26թթ. Լ.ծ.հ.:

ԵՎ այժմ ահա, չկար ոչ մի կենդանի հոգի Նեփիացիների ողջ ժողովրդի մեջ, որ նվազագույն

30ա Ալմա 29.11:
բ Եթեր 4.15:
31ա Ալմա 26.8:
սու՝ Ընդհակալ,

Ընդհակալություն,
Գոհաբանություն:
32ա սու՝ Ովսաննա:
բ 1 Նեփի 1.14:

սու՝ Աստված,
Աստվածազուլիս:

չափով իսկ կասկածեր բոլոր սուրբ մարգարեների խոսքերին, ովքեր խոսել էին. բանգի նրանք գիտեին, որ դրանք անպայման պետք է որ կատարվեին:

2 Եվ նրանք գիտեին, որ անպայման պետք է որ Քրիստոսը եկած լիներ, այն բազում նշանների պատճառով, որոնք տրվել էին՝ համաձայն մարգարեների խոսքերի. և այն բաների պատճառով, որոնք արդեն կատարվել էին, նրանք գիտեին, որ բոլոր բաներն անպայման պետք է կատարվեն՝ համաձայն նրա, ինչ խոսվել է:

3 Հետևաբար, նրանք թողել էին բոլոր իրենց մեղքերը և իրենց պղծությունները և իրենց պոռնկությունները, և ողջ ջանասիրությամբ, օր ու գիշեր, ծառայում էին Աստծուն:

4 Եվ այժմ եղավ այնպես, որ երբ նրանք գերի վերցրեցին բոլոր ավազակներին, որոնք չէին սպանվել, այնպես որ ոչ մեկը չփախավ, նրանք իրենց գերիներին բանտ գցեցին ու կարգադրեցին, որ Աստծո խոսքը քարոզվի նրանց. և բոլոր նրանք, ովքեր կամեցան ապաշխարել իրենց մեղքերից և մտնել ուխտի մեջ, որ իրենք այլևս չեն սպանի, ^աազատ արձակվեցին:

5 Սակայն բոլոր նրանք, ովքեր չմտան ուխտի մեջ, և ովքեր դեռ շարունակում էին պահել այն գաղտնի սպանություններն իրենց սրտերում, այո, բոլոր նրանց, ում գտան իրենց եղբայրների դեմ սպառնալիքներ թափելիս, դատապարտեցին և պատժեցին օրենքի համաձայն:

6 Եվ այսպես, նրանք վերջ դրեցին բոլոր այն ամբարիշտ,

գաղտնի և պիղծ խմբակցություններին, որոնցում այնքան շատ ամբարշտություն և այնքան շատ սպանություններ կային գործված:

7 Եվ այսպես անցավ ^բքսաններկուերորդ տարին, և քսաներեքերորդ տարին նույնպես, և քսանչորսերորդը, և քսանհինգերորդը. և այսպես քսանհինգ տարիներ անցան:

8 Եվ շատ բաներ տեղի ունեցան, որոնք, մեծ և զարմանալի կլինեին ոմանց աչքում. այնուամենայնիվ, դրանք չեն կարող բոլորը գրվել այս գրքում. այո, այս գիրքը չի կարող պարունակել նույնիսկ մեկ ^գհարյուրերորդ մասը նրա, ինչ արվել էր այդքան շատ ժողովրդի մեջ քսանհինգ տարիների ընթացքում.

9 Բայց ահա կան ^դհիշատակարաններ, որոնք իսկապես պարունակում են այս ժողովրդի բոլոր գործերը. և մի կարճառոտ, բայց ճշմարտացի պատմություն տրվել է Նեփիի կողմից:

10 Հետևաբար, ես գրում եմ իմ հիշատակարանն այս բաների վերաբերյալ, համաձայն Նեփիի հիշատակարանի, որը փորագրված էր թիթեղների վրա, որոնք կոչվում էին Նեփիի թիթեղներ:

11 Եվ ահա, ես գրում եմ հիշատակարանը թիթեղների վրա, որոնք ես եմ սարքել՝ իմ սեփական ձեռքերով:

12 Եվ ահա, ինձ կոչում են ^եՄորմոն, կոչված լինելով Մորմոնի ^զերկրի անունով, երկիր, որտեղ Ալման ժողովրդի մեջ հիմնեց եկեղեցին, այո, առաջին եկեղեցին, որը հիմնվեց նրանց մեջ նրանց օրինազանցությունից հետո:

5 4ա սուբ Անկախություն:
7ա 3 Նեփի 2.8:

8ա 3 Նեփի 26.6-12:
9ա Հեղ. 3.13-15:

12ա Մորմ. 1.1-5:
բ Մոսիա 18.4, Ալմա 5.3:

13 Ահա, ես Հիսուս Քրիստոսի՝ Աստծո Որդու մի աշակերտն եմ: Ես կանչվել եմ նրա կողմից՝ հայտարարելու նրա խոսքն իր ժողովրդի մեջ, որ նրանք կարողանան հավիտենական կյանք ունենալ:

14 Եվ անհրաժեշտ է դարձել, համաձայն Աստծո կամքի, համաձայն նրանց հավատքի, ովքեր զնացել են, որոնք սրբեր էին, որպեսզի նրանց աղոթքները կատարվեն, որ ես մի ^ահիշատակարան գրեմ այն բաների մասին, որոնք տեղի են ունեցել,

15 Այո, մի փոքր հիշատակարան այն մասին, որը տեղի է ունեցել այն ժամանակից ի վեր, ինչ Լեքիմ թողեց Երուսաղեմը, նույնիսկ ընդհուպ մինչև ներկա ժամանակը:

16 Հետևաբար, ես գրում եմ իմ հիշատակարանն այն պատմություններից, որոնք տրվել են նրանց կողմից, ովքեր ինձանից առաջ են եղել, մինչև իմ օրերի սկիզբը.

17 Եվ հետո ես գրում եմ մի ^ահիշատակարան այն բաների մասին, որոնք ես եմ տեսել՝ իմ իսկ աչքով:

18 Եվ ես գիտեմ՝ հիշատակարանը, որը ես գրում եմ, ճշգրիտ և ճշմարտացի հիշատակարան է. այնուամենայնիվ, կան շատ բաներ, որոնք ըստ մեր լեզվի ի վիճակի չենք ^ագրել:

19 Եվ այժմ ես ավարտում եմ իմ մասին խոսելը և շարունակում եմ գրել իմ պատմությունն այն

բաների մասին, որոնք եղել են ինձանից առաջ:

20 Ես Մորմոնն եմ՝ Լեքիի մի զտարյուն հեռուորդ: Ես հիմք ունեմ օրհնելու իմ Աստծուն և իմ Փրկիչ Հիսուս Քրիստոսին, որ նա դուրս բերեց մեր հայրերին Երուսաղեմի հողից (և ^աոչ յիմացավ դա, բացի իրենից և նրանցից, որոնց նա դուրս բերեց այդ երկրից), և որ նա տվել է ինձ և իմ ժողովրդին այդքան շատ գիտելիք՝ մեր հոգիների փրկության համար:

21 Անշուշտ, նա օրհնել է ^աՀակոբի ^ատունը, և ^գողորմած է եղել Հովսեփի սերնդի հանդեպ:

22 Եվ ^աորքան որ Լեքիի զավակները պահել են նրա պատվիրանները, նա օրհնել է նրանց և բարգավաճեցրել նրանց՝ համաձայն իր խոսքի:

23 Այո, և անշուշտ, նա Հովսեփի սերնդի մի ^ամնացորդի կրկին պիտի բերի Տիրոջ իրենց Աստծո ^աիմացությանը:

24 Եվ այնպես անկասկած, ինչպես կենդանի է Տերը, նա աշխարհի չորս կողմերից ^ակհավաքի Հակոբի սերնդի բոլոր մնացորդը, ովքեր ցրված են ամենուր՝ ողջ աշխարհի երեսին:

25 Եվ քանի որ նա ուխտել է Հակոբի ողջ տան հետ, ուստի, ուխտը, որով նա ուխտել է Հակոբի տան հետ, պիտի կատարվի իրեն իսկ հարմար ժամանակ ^ավերադարձնելով ողջ Հակոբի տունն այն ուխտի իմացությանը, որ նա ուխտել է նրանց հետ:

26 Եվ այն ժամանակ նրանք

<p>14ա Ենոկս 1.13–18, ՎևոՒ 3.19–20: 17ա Մորմ. 1.1: 18ա Եթեր 12.25: 20ա 1 Նեփի 4.36:</p>	<p>21ա Ծն. ԼԲ.28: բ սոՒ Իսրայել: գ Բ Օր. ԼԳ.13–17: 22ա 2 Նեփի 1.20: 23ա Ամա 46.24:</p>	<p>բ 2 Նեփի 3.12: 24ա սոՒ Իսրայել – Իսրայելի ցրվելը: 25ա 3 Նեփի 16.5:</p>
---	--	---

«Կճանաչեն իրենց Քավչին, որը Հիսուս Քրիստոսն է՝ Աստծո Որդին. և այն ժամանակ նրանք կհավաքվեն աշխարհի չորս կողմերից՝ դեպի իրենց սեփական հողերը, որտեղից նրանք ցրվել են. այո, ինչպես կենդանի է Տերը, այդպես պիտի դա լինի: Ամեն:

ԳԼՈՒԽ 6

Նեփիացիները բարգավաճում են – Հայարտություն, հարստություն, և դասային տարբերություններ են առաջանում – Եկեղեցին մասնատվում է երկպառակություններից – Սատանան առաջնորդում է մարդկանց ապստամբության – Շատ մարգարեներ ապաշխարություն են աղաղակում և սպանվում – Նրանց սպանողները դավադրություն են կազմակերպում՝ զավթելու կառավարությունը: Մոտ 26–30թթ. Ք.ծ.հ.:

Եւ այժմ եղավ այնպես, որ քսանևվեցերորդ տարում Նեփիացիները բոլորը վերադարձան իրենց սեփական հողերը՝ ամեն մարդ իր ընտանիքի, իր հոտերի ու իր նախիրների, իր ձիերի ու իր անասունների, և բոլոր բաների հետ, ինչ պատկանում էր իրեն:

2 Եվ եղավ այնպես, որ նրանք չէին սպառել իրենց ողջ պարենը. ուստի նրանք վերցրեցին իրենց հետ այն ամենը, ինչ իրենք չէին գործածել՝ բոլոր իրենց հատիկն ամեն տեսակի, և իրենց ոսկին, իրենց արծաթը և բոլոր իրենց քանկարժեք բաները, և վերադարձան իրենց սեփական հողերն ու իրենց կավածքները՝ ինչպես հյուսիսում, այնպես էլ հարավում,

ինչպես հյուսիսային կողմի երկրում, այնպես էլ հարավային կողմի երկրում:

3 Եվ նրանք հողեր տվեցին այն ավազակներին՝ ըստ իրենց թվաքանակի, որոնք մտել էին ուխտի մեջ՝ պահելու երկրի խաղաղությունը, ովքեր ուզում էին մնալ Լամանացիներ, որպեսզի կարողանային իրենց աշխատանքով ունենալ այն, ինչով գոյություն կպահպանեին. և այսպես նրանք խաղաղություն հաստատեցին ողջ երկրում:

4 Եվ նրանք սկսեցին կրկին բարգավաճել և հզորանալ. և քսանևվեցերորդ և քսանևյոթերորդ տարիներն անցան, և երկրում մեծ կարգ ու կանոն կար. և նրանք ստեղծել էին իրենց օրենքները՝ անաչառության և արդարության համաձայն:

5 Եվ այժմ ողջ երկրում չկար ոչինչ, որ խանգարեր ժողովրդին անընդհատ բարգավաճելուց, եթե միայն նրանք չընկնեին օրինազանցության մեջ:

6 Եվ արդ, դա Գեղզեղոնին էր, և դատավոր Լաքոնիուսը, և նրանք, ովքեր նշանակվեցին ղեկավարներ, որ հաստատեցին այս մեծ խաղաղությունը երկրում:

7 Եվ եղավ այնպես, որ նորից կառուցվեցին շատ քաղաքներ և վերանորոգվեցին շատ հին քաղաքներ:

8 Եվ շատ մայրուղիներ գցվեցին և շատ ճանապարհներ սարքվեցին, որոնք տանում էին քաղաքից քաղաք, և երկրից երկիր, և տեղից տեղ:

9 Եվ այսպես անցավ քսանևուրբերորդ տարին, և ժողովուրդն

ունեցավ անընդմեջ խաղաղությամբ:

10 Քայց եղավ այնպես, քան ինններորդ տարում սկսեցին լինել որոշ վիճաբանություններ ժողովրդի մեջ. և ոմանք բարձրամտացել էին մինչև՝ «հպարտություն և պարծենկոտություններ՝ իրենց անչափ մեծ հարստությունների պատճառով, այո, նույնիսկ մինչև մեծ հալածանքներ.

11 Քանզի կային շատ վաճառականներ երկրում, և նաև շատ օրինագետներ, և շատ իշխանավորներ:

12 Եվ ժողովուրդը սկսեց տարբերվել դասերով՝ ըստ իրենց «հարստությունների և ըստ իրենց ուսման հնարավորությունների. այո, ոմանք տգետ էին՝ իրենց աղքատության պատճառով, մյուսները ստանում էին մեծ ուսում՝ իրենց հարստությունների շնորհիվ:

13 Ոմանք բարձրամտացած էին հպարտությունից, մյուսներն անչափ խոնարհ էին. ոմանք վերադարձնում էին չարախոսությունը չարախոսությամբ, մինչդեռ մյուսներն ընդունում էին չարախոսությունը և՝ հալածանքը և բոլոր ձևի չարչարանքները, և կրկին չէին շրջվում ու Քանարգում, այլ խոնարհ և զղջացող էին Աստծո առաջ:

14 Եվ այսպես, մեծ անհավասարություն առաջացավ ողջ երկրում, այնպես որ եկեղեցին սկսեց մասնատվել. այո, այնպես որ երեսուներորդ տարում եկեղեցին մասնատված էր ողջ երկրում, բացի մի քանի Լամանացիներից, ովքեր դարձի էին բերվել ճշմարիտ հա-

վատքի. և նրանք չկամեցան հեռանալ դրանից, քանզի նրանք կայուն էին և հաստատուն և անսասան՝ հոժար լինելով ողջ «ջանասիրությամբ պահելու Տիրոջ պատվիրանները:

15 Արդ ժողովրդի այս անօրինության պատճառն այս էր՝ Սատանան մեծ զորություն ուներ՝ դրդելով ժողովրդին անել ամեն ձևի անօրինություն, և դարձնելով նրանց փքված հպարտությունից, գայթակղելով նրանց՝ ձգտել զորության և իշխանության և հարքստությունների և աշխարհի ունայն քաների:

16 Եվ այսպես Սատանան մոլորեցրեց մարդկանց սրտերը՝ անելու ամեն ձևի անօրինություն. ուստի նրանք վայելեցին խաղաղություն, բայց միայն մի քանի տարի:

17 Եվ այսպես, երեսուներորդ տարվա սկզբին,– ժողովուրդը երկար ժամանակի ընթացքում թողնված լինելով տարվելու դևի՝ «գայթակղություններով, ուր որ նա փափագում էր տանել նրանց, և անել ինչ անօրինություն, որ նա փափագում էր, որ նրանք անեին,– և այսպես, այս երեսուներորդ տարվա սկզբին, նրանք ամբարշտության մի սուկալի վիճակում էին:

18 Արդ, նրանք չէին մեղանշում «անգիտակցորեն, քանզի նրանք գիտեին Աստծո կամքն իրենց վերաբերյալ, քանզի դա ուսուցանվել էր նրանց. ուստի նրանք՝ կանխամտածված Քապստամբում էին Աստծո դեմ:

19 Եվ այժմ դա Լաքոնիուսի

6 10ա սուր Հպարտություն:
12ա Ա Տիմ. 2.17–19,
Չել. 4.12:
13ա սուր Հավածել,
Հալածանք:

բ Մատ. Ե.39,
4 Նեփի 1.34,
ՎևՈՒ 98.23–25:
14ա սուր Չանասիրություն:
17ա սուր Գայթակղել,

Գայթակղություն:
18ա Մոսիա 3.11:
բ սուր Ապստամբություն:

որդու Լաքոնիուսի օրերին էր, քանզի Լաքոնիուսը զբաղեցրեց իր հոր աթոռը և կառավարեց ժողովրդին այդ տարի:

20 Եվ եղան մարդիկ, երկնքից "ոգեշնչված ու առաջ ուղարկված, ովքեր կանգնում էին ժողովրդի մեջ ողջ երկրում, քարոզում ու վկայում համարձակորեն ժողովրդի մեղքերի ու անօրինությունների մասին, և վկայում նրանց փրկագրքնման մասին, որը Տերն անելու էր իր ժողովրդի համար, կամ, այլ խոսքով ասած, Քրիստոսի հարության մասին. և նրանք համարձակորեն վկայում էին նրա ^Բմահվան ու տառապանքների մասին:

21 Արդ, ժողովրդից կային շատերը, որոնք խիստ բարկացած էին նրանց պատճառով, ովքեր վկայում էին այս բաների մասին. և նրանք, ովքեր բարկացած էին, հիմնականում գլխավոր դատավորներն էին, և նրանք, ովքեր քահանայապետեր և օրինագետներ ^Մէին եղել. այո, բոլոր նրանք, ովքեր օրինագետներ էին, բարկացած էին նրանց վրա, ովքեր վկայում էին այս բաների մասին:

22 Արդ, չկար օրինագետ, ո՛չ դատավոր, ո՛չ էլ քահանայապետ, որ լիազորություն ունենար՝ որևէ մեկին մահվան դատապարտելու, մինչև նրա դատապարտումը չստորագրվեր երկրի կառավարչի կողմից:

23 Արդ, կային նրանցից շատերը, ովքեր վկայեցին Քրիստոսին վերաբերող բաների մասին, ովքեր համարձակորեն վկայեցին, նրանք բռնվեցին ու զաղտնի մահվան են-

քարկվեցին դատավորների կողմից, որպեսզի նրանց մահվան մասին տեղեկությունը չհասներ երկրի կառավարչին, նախքան նրանց մահը:

24 Արդ, ահա, սա հակառակ էր երկրի օրենքներին, որ որևէ մարդ մահվան դատապարտվեր մինչև նրանք չունենային լիազորություն երկրի կառավարչի կողմից,

25 Հետևաբար, մի բողոք եկավ Չարահեմլայի երկիրը՝ երկրի կառավարչին, այս դատավորների դեմ, որոնք մահվան էին դատապարտել Տիրոջ մարգարեներին, ոչ ըստ օրենքի:

26 Արդ, եղավ այնպես, որ նրանք բռնվեցին և քերվեցին դատավորի առջև՝ դատվելու այն հանցագործության համար, որ նրանք արել էին, ըստ ^Մօրենքի, որը տրվել էր ժողովրդի կողմից:

27 Արդ, եղավ այնպես, որ այս դատավորներն ունեին շատ ընկերներ ու ազգականներ. և մնացածը, այո, այսինքն՝ գրեթե բոլոր օրինագետները և քահանայապետերն ի մի հավաքվեցին, և միացան ազգականներին այն դատավորների, որոնք պետք է դատվեին ըստ օրենքի:

28 Եվ նրանք մտան ուխտի մեջ՝ մեկը մյուսի հետ, այո, ճիշտ այն ^Մուխտի մեջ, որը տրվել էր հնուց, ուխտ, որը տրված էր ու սպասավորված ^Բղևի կողմից՝ միավորվելու ամենայն արդարության դեմ:

29 Հետևաբար, նրանք միավորվեցին Տիրոջ ժողովրդի դեմ, և մտան ուխտի մեջ՝ կործանելու նրանց, և ազատելու նրանց, ովքեր

20ա սուր Ոգեշնչում, Ոգեշնչել. Մարգարե: Բ սուր Բավել, Բավություն.

Խաչելություն: 21ա ՎևՈՒԻ 121.36-37: սուր Ուրացություն: 26ա Մոսիա 29.25,

Ալմա 1.14: 28ա սուր Գաղտնի խմբակցություններ: Բ Հել. 6.26-30:

հանցավոր էին սպանութեան մեջ, արդարադատութեան ճանկից, որը պատրաստվում էր գործադրվել ըստ օրենքի:

30 Եվ նրանք արհամարհում էին օրենքը և իրենց երկրի իրավունքները. և նրանք ուխտեցին միմյանց հետ կործանել կառավարչին և հաստատել "Քագավոր երկրի վրա, որպեսզի երկիրն այլևս չլիներ ազատ, այլ հպատակ լիներ թագավորներին:

ԳԼՈՒԽ 7

Գլխավոր դատավորը սպանվում է, կառավարությունը կործանվում է, և ժողովուրդը բաժանվում է տոհմերի – Հակոբը մի հակաքրիստոս, դառնում է թագավոր մի գաղտնի խմբակցության վրա – Նեփին քարոզում է սպաշխարություն և հավատք առ Քրիստոս – Հրեշտակներ են ծառայում նրան ամեն օր, և նա բարձրացնում է իր եղբորը մեռելներից – Շատերն սպաշխարում են և մկրտվում: Մոտ 30–33թթ. Ք.ծ.հ.:

ԱՅԺԾ ահա, ես ցույց կտամ ձեզ, որ նրանք չհաստատեցին թագավոր երկրի վրա. այլ այս նույն տարում, այո, երեսուներորդ տարում, նրանք դատավորական աթոռի վրա կործանեցին, այո, սպանեցին երկրի գլխավոր դատավորին:

2 Եվ ժողովուրդը բաժանվեց մեկը մյուսի դեմ. և նրանք մեկը մյուսից բաժանվեցին տոհմերով, ամեն մարդ ըստ իր ընտանիքի և իր ցեղի և ընկերների. և այսպես նրանք տապալեցին երկրի կառավարությունը:

3 Եվ ամեն տոհմ նշանակեց մի ղեկավար կամ առաջնորդ իր վրա. և այսպես, նրանք դարձան տոհմեր և տոհմերի առաջնորդներ:

4 Արդ ահա, չկար ոչ մի մարդ նրանց մեջ, որ չունենար մեծ ընտանիք, և շատ ցեղակիցներ ու ընկերներ. հետևաբար, նրանց տոհմերը դարձան չափազանց մեծ:

5 Արդ, այս բոլորը կատարվեց, և նրանց մեջ դեռևս պատերազմներ չկային. և բոլոր այս անօրինությունը եկել էր ժողովրդի վրա, որովհետև նրանք "անձնատուր էին եղել Սատանայի իշխանութեանը:

6 Եվ կառավարության կանոնակարգը կործանվեց, նրանց ընկերների ու ցեղակիցների "գաղտնի խմբակցության պատճառով, ովքեր սպանեցին մարգարեներին:

7 Եվ նրանք մեծ հակառակություն առաջացրեցին երկրում, այնպես որ ժողովրդի առավել արդարակյաց մասը՝ գրեթե բոլորը, դարձան ամբարիշտ. այո, նրանց մեջ կային արդար մարդիկ, բայց՝ քիչ:

8 Եվ այսպիսով վեց տարի չէր անցել, երբ ժողովրդի մեծ մասը շրջվեց իր արդարակեցությունից, ինչպես շունը դեպի իր "փախածը, կամ ինչպես խոզը դեպի իր թավալվելը ցեխի մեջ:

9 Այժմ այդ գաղտնի խմբակցությունը, որը բերել էր այսպիսի մեծ անօրինություն ժողովրդի վրա, ի մի հավաքվեց, և իրենց գլխավոր դրեց մի մարդու, որին նրանք կոչում էին Հակոբ:

10 Եվ նրանք կոչեցին նրան իրենց թագավոր. ուստի նա

30ա Ա Թագ. Ը.5–7,
Ալմա 51.5:
7 5ա Հռովմ. 2.13–16,

Ալմա 10.25:
6ա 2 Նեփի 9.9:
8ա Առակ. ԻԶ.11,

Բ Պետ. Բ.22:

դարձավ թագավոր այս ամբարիշտ ավազակախմբի վրա. և նա ամենազխավորներից մեկն էր, որը տվել էր իր ձայնը մարգարեների դեմ, որոնք վկայեցին Հիսուսի մասին:

11 Եվ եղավ այնպես, որ նրանք այնքան մեծ չէին թվով, ինչպես տոհմերն այն մարդկանց, որոնք միավորված էին միմյանց հետ, թեև իրենց առաջնորդները հաստատել էին իրենց օրենքները՝ ամեն մեկը համաձայն իր տոհմի. այնուամենայնիվ, նրանք թշնամիներ էին. չնայած արդարակյաց ժողովուրդ չէին, սակայն նրանք ատելությամբ էին միավորված հանդեպ նրանց, ովքեր մտել էին ուխտի մեջ՝ կործանելու կառավարությունը:

12 Հետևաբար, Հակոբը տեսնելով, որ իրենց թշնամիներն ավելի մեծաթիվ էին, քան իրենք, նա լինելով ավազակախմբի թագավորը, ուստի հրամայեց իր մարդկանց, որ նրանք փախուստի դիմեն դեպի երկրի ամենահյուսիսային մասը, և այնտեղ իրենց համար «թագավորություն ստեղծեն, մինչև որ նրանց կմիանան պառակտիչները (քանզի նա հուսադրեց նրանց, որ լինելու էին շատ պառակտիչներ), և նրանք կդառնան բավականաչափ ուժեղ՝ կռվելու մարդկանց տոհմերի հետ. և նրանք արեցին այդպես:

13 Եվ այնքան սրընթաց էր նրանց արշավը, որ հնարավոր չեղավ խափանել այն, նախքան ժողովրդից նրանց խույս տալը: Եվ այսպես ավարտվեց երեսուներորդ տարին. և այսպիսին էր Նեփիի ժողովրդի վիճակը:

14 Եվ եղավ այնպես երեսունմեկերորդ տարում, որ նրանք բաժանվեցին տոհմերի, ամեն մարդ ըստ իր ընտանիքի, ցեղի և ընկերների. այնուամենայնիվ, նրանք եկել էին մի համաձայնությամբ, որ չէին գնա պատերազմելու մեկը մյուսի դեմ. բայց նրանք միավորված չէին իրենց օրենքներով և իրենց կառավարման ձևով, քանզի դրանք հաստատվել էին ըստ նրանց խելքի, ովքեր իրենց գլխավորներն ու իրենց առաջնորդներն էին: Սակայն նրանք հաստատել էին շատ խիստ օրենքներ, որ մի տոհմ չպիտի ոտնձգություն աներ մյուսի դեմ, այնպես որ ինչ-որ չափով նրանք խաղաղություն ունեցան երկրում. այնուամենայնիվ, նրանց սրտերը շրջվել էին Տիրոջից՝ իրենց Աստծուց, և նրանք քարկոծում էին մարգարեներին և դուրս էին գցում նրանց իրենց միջից:

15 Եվ եղավ այնպես, որ «Նեփին,– նրան այցելած լինելով հրեշտակներ և նաև Տիրոջ ձայնը, ուստի, տեսնելով հրեշտակներ և ակնատես լինելով և իրեն տրված զորություն ունենալով, որ կարողանա իմանալ Քրիստոսի ծառայության մասին, և նաև ակնատես լինելով նրանց արագ վերադարձին արդարակեցությունից դեպի ամբարշտություն ու պղծություններ.

16 Ուստի, վշտացած լինելով նրանց սրտերի կարծրությունից և նրանց մտքերի կուրությունից,– նա առաջ գնաց նրանց մեջ այդ նույն տարում, և սկսեց համարձակորեն վկայել ասպաշարություն և մեղքերի թողություն՝ առ Տեր

12ա3 Նեփի 6.30:

15ա3 Նեփի 1.2:

Հիսուս Քրիստոսը հավատքի միջոցով:

17 Եվ նա շատ բաներ սովորեցրեց նրանց. և դրանցից բոլորը չեն կարող գրվել, և գրել դրանց մի մասը բավարար չէր լինի, ուստի դրանք չեն գրվել այս գրքում: Եվ Նեփին սովորեցնում էր “գորուքյամբ և մեծ իշխանությամբ:

18 Եվ եղավ այնպես, որ նրանք բարկացան նրա վրա, հատկապես այն պատճառով, որ նա ուներ ավելի մեծ գորություն, քան իրենք, քանզի “անհնարին էր, որ նրանք չհավատային նրա խոսքերին, քանզի այնքան մեծ էր նրա հավատքն առ Տեր Հիսուս Քրիստոսը, որ հրեշտակներ էին ծառայում նրան ամեն օր:

19 Եվ Հիսուսի անունով նա դուրս հանեց դևեր և “պիղծ ոգիներ. նույնիսկ իր եղբորը բարձրացրեց մեռելներից՝ մարդկանց կողմից նրա քարկոծվելուց և մահվան դատապարտվելուց հետո:

20 Եվ ժողովուրդը տեսավ դա, և վկան էր դրա, և բարկացավ նրա վրա՝ նրա գորության պատճառով. և Հիսուսի անունով նա արեց ժողովրդի աչքի առաջ ուրիշ “շատ հրաշքներ:

21 Եվ եղավ այնպես, որ երեսունևմեկերորդ տարին անցավ, և կային, բայց՝ քչերը, ովքեր դարձի եկան առ Տերը. բայց բոլոր նրանք, ովքեր դարձի եկան, իսկապես ցույց տվեցին ժողովրդին, որ իրենց այցելել էր Աստծո գորությունն ու Հոգին, որը Հիսուս Քրիստոսում էր, որին նրանք հավատում էին:

22 Եվ բոլոր նրանք, որոնցից դևեր դուրս հանվեցին, և որոնք բուժվեցին իրենց հիվանդություններից ու իրենց սկզբնականություններից, իսկապես հայտնեցին ժողովրդին, որ նրանք ներգործվել էին Աստծո Հոգուց, և բուժվել էին. և նրանք ցույց տվեցին նշաններ նույնպես, և արեցին մի քանի հրաշքներ ժողովրդի մեջ:

23 Այսպես անցավ երեսունևկուներորդ տարին ևս: Եվ Նեփին աղաղակում էր առ ժողովուրդը երեսունևերեքերորդ տարվա սկզբին. և նա քարոզում էր նրանց ապաշխարություն և մեղքերի թողություն:

24 Արդ, ես կկամենայի մաս հիշեցնել ձեզ, որ չկար մեկը, որ բերված լիներ ապաշխարության, որը “չմկրտվեր ջրով.

25 Հետևաբար, այս ծառայության համար կային Նեփիի կողմից կարգված տղամարդիկ, որպեսզի բոլոր նրանք ովքեր կգային նրանց մոտ, մկրտվեին ջրով, և դա՝ որպես մի ապացույց և մի վկայություն Աստծո առաջ և ժողովրդին, որ իրենք ապաշխարել էին և ստացել իրենց մեղքերին “թողություն:

26 Եվ եղան շատերն այս տարվա սկզբին, որ մկրտվեցին ապաշխարության համար. և այսպես անցավ տարվա մեծ մասը:

ԳԼՈՒԽ 8

Փոթորիկները, երկրաշարժերը, հրդեհները, պտուտահողմերը, և

17ա սու՛ Չորություն:
18ա2 Նեփի 33.1,
Ավմ 4.19:
19ա սու՛ Ոգի – Չար

ոգիներ:
20ա3 Նեփի 8.1:
24ա սու՛ Մկրտություն,
Մկրտել:

25ա Վևո՛ 20.37:
սու՛ Մեղքերի
թողություն:

բնության տեղաշարժերը հաստատում են Քրիստոսի խաչելությունը – Շատ մարդիկ են կործանվում – Խավարը պատում է երկիրը երեք օր – Նրանք, ովքեր կենդանի են մնում, ողբում են իրենց ճակատագիրը: Մոտ 33–34թթ. Ք.ծ.հ.:

Եւ այժմ եղավ այնպես, որ համաձայն մեր հիշատակարանի, և մենք գիտենք՝ մեր հիշատակարանը ճշմարիտ է, քանի որ ահա, դա մի արդար մարդ էր, որ պահում էր հիշատակարանը, – քանզի նա իսկպպես շատ հրաշքներ գործեց Հիսուսի Քանունով. և չկար որևէ մարդ, որ կարողանար Հիսուսի անունով հրաշք գործել, եթե նա լիովին մաքրված չլիներ իր անօրինությունից, –

2 Եվ այժմ եղավ այնպես, եթե մեր ժամանակը հաշվելիս այս մարդու կողմից ոչ մի սխալ չէր արվել, անցավ տերեսուներեքերորդ տարին.

3 Եվ ժողովուրդը սկսեց մեծ լռությամբ սպասել նշանին, որը տրվել էր մարգարե Սամուել Լամանացու կողմից, այո, այն ժամանակին, երբ երեք օրվա ընթացքում Մասվար պիտի լիներ երկրի երեսին:

4 Եվ սկսեցին լինել մեծ կասկածներ ու վեճեր ժողովրդի մեջ, չնայած այնքան շատ նշաններ էին տրվել:

5 Եվ եղավ այնպես՝ երեսունչորսերորդ տարում, առաջին ամսում, ամսվա չորրորդ օրը մի մեծ մրրիկ բարձրացավ, այնպիսին,

ինչպիսին երբեք չէր իմացվել ողջ երկրում:

6 Եվ նաև մի ահռելի ու զարհուրելի փոթորիկ եղավ. և եղավ մի զարհուրելի տորոտ, այնպես որ այն ցնցում էր ամբողջ երկիրը, կարծես քիչ էր մնում այն մասերի բաժաներ:

7 Եվ եղան չափազանց վառ կայծակներ, ինչպիսիք երբեք չէին իմացվել ողջ երկրում:

8 Եվ Ջարահեմլայի քաղաքը բռնկվեց կրակից:

9 Եվ Մորոնիի քաղաքը սուզվեց ծովի խորքերը, իսկ դրա բնակիչները խեղդվեցին:

10 Եվ հողը ծածկեց Մորոնիայի քաղաքը, այնպես որ քաղաքի տեղում մի հսկա լեռ առաջացավ:

11 Եվ մի ահռելի ու զարհուրելի կործանում եղավ հարավային կողմի երկրում:

12 Բայց ահա, մի ավելի ահռելի ու զարհուրելի կործանում եղավ հյուսիսային կողմի երկրում. քանզի ահա, երկրի ամբողջ երեսը փոխվել էր փոթորիկի ու պտուտահողմերի, որոտների ու կայծակների և ամբողջ երկրի անչափ մեծ ցնցման հետևանքով.

13 Եվ նայրուղիները քանդվել էին, և հարթ ճանապարհները փչացել էին, և շատ ուղիղ տեղեր դարձել էին խորդուբորդ:

14 Եվ բազմաթիվ մեծ ու նշանավոր քաղաքներ սուզվել էին, և շատերն այրվել էին, և շատերը՝ ցնցվել, մինչև այնտեղի շինությունները գետնին էին փլվել, և

8 1ա 3 Նեփի 7.19–20, Մորմ. 9.18–19:
բ Գոր. 4.6,
Հակոբ 4.6:
2ա 3 Նեփի 2.8:
3ա 1 Նեփի 19.10,

Հել. 14.20, 27,
3 Նեփի 10.9:
4ա սուր Խաչելություն:
6ա 1 Նեփի 19.11,
Հել. 14.21:
բ Մատ. ԲԷ.45, 50–51:

8ա 4 Նեփի 1.7–8:
13ա Հել. 14.24,
3 Նեփի 6.8:
14ա 1 Նեփի 12.4:

դրանց բնակիչները սպանվել էին, և այդ վայրերը մնացել էին ամայի:

15 Եվ կային որոշ քաղաքներ, որոնք մնացել էին. սակայն դրանց վնասվածքն անչափ մեծ էր, և դրանցում կային շատերը, ովքեր սպանվել էին:

16 Եվ կային ոմանք, ովքեր քշվել էին պտուտահողմից. և թե ուր էին նրանք գնացել, ոչ մի մարդ չգիտեր, բացի նրանից, որ գիտեին, որ նրանք քշվել էին:

17 Եվ այսպիսով, ամբողջ երկրի երեսը ձևափոխվել էր փոթորիկների և որոտների, կայծակների և գետնի ցնցման հետևանքով:

18 Եվ ահա, ՝ժայռերը ճեղքվել էին երկու մասի. դրանք ջարդուփշուր էին եղել ամբողջ երկրի երեսին, այնպես որ դրանք գտնվում էին ջարդված բեկորներով և ճաքերով և ճեղքերով ողջ երկրի երեսին:

19 Եվ եղավ այնպես, որ երբ որոտները և կայծակները, մրրիկը, փոթորիկը և գետնի ցնցումները դադարեցին, – քանզի ահա, դրանք տևեցին մոտ ՝երեք ժամ. և ոմանք ասում էին, որ ժամանակն ավելի երկար էր. այնուամենայնիվ, բոլոր այս ահռելի ու տուկալի բաները կատարվեցին մոտ երեք ժամվա ընթացքում, – և հետո, ահա, խավար եղավ երկրի երեսին:

20 Եվ եղավ այնպես, որ թանձր խավար էր ողջ երկրի երեսին, այնպես որ այնտեղի բնակիչները, ովքեր չէին գոհվել, կարող էին ՝զգալ ՝խավարի մեզը.

21 Եվ խավարի հետևանքով չէր կարող լինել ոչ մի լույս, ո՛չ սմուճեր, ո՛չ ջահեր. ո՛չ էլ հնարավոր էր

կրակ վառել՝ նրանց ընտիր և շատ չոր փայտով, այնպես որ չէր կարող լինել որևէ լույս ընդհանրապես.

22 Եվ չկար որևէ նշմարվող լույս՝ ո՛չ կրակ, ո՛չ կայծ, ո՛չ արևը, ո՛չ լուսինը, ո՛չ աստղերը, քանի որ այնքան մեծ էին խավարի մշուշները, որոնք երկրի երեսին էին:

23 Եվ եղավ այնպես, որ դա տևեց ՝երեք օրերի ընթացքում, երբ չկար ոչ մի նշմարվող լույս. և շարունակ մեծ սուգ էր և ողբ ու հեկեկոց ողջ ժողովրդի մեջ. այո, մեծ էին ժողովրդի տնքոցները, խավարի և ահռելի կործանման պատճառով, որ եկել էր նրանց վրա:

24 Եվ մի տեղում լավում էր լաց՝ ասելով. Ա՛խ, երանի մենք ապաշխարեինք այս ահռելի ու զարհուրելի օրից առաջ, և այդ դեպքում մեր եղբայրները կխնայվեին, և նրանք չէին այրվի այն մեծ քաղաք ՝Չարահեմլայում:

25 Եվ մեկ ուրիշ տեղում լավում էր նրանց լացը և սուգը՝ ասելով. Ա՛խ, երանի մենք ապաշխարած լինեինք մինչև այս ահռելի ու զարհուրելի օրը, և սպանած ու քարկոծած չլինեինք մարգարեներին, և չզցեինք նրանց դուրս. այդ դեպքում մեր մայրերն ու մեր գեղեցիկ դուստրերը, և մեր զավակները կխնայվեին, և չէին թաղվի այն մեծ քաղաք Մորոնիայում: Եվ այսպիսին էին ժողովրդի հեկեկոցները՝ ահռելի ու զարհուրելի:

ԳԼՈՒԽ 9

Խավարում, Քրիստոսի ձայնը հայտարարում է շատ մարդկանց

18ա Հել. 14.21–22:
19ա Ղուկ. ԻԳ.44:

20ա Ել. Ժ.21–22:
բ 1 Նեփի 12.5, 19.11:

23ա 1 Նեփի 19.10:
24ա Հել. 13.12:

ու քաղաքների կործանման մասին իրենց ամբարշտության պատճառով – Նա նաև հայտարարում է իր աստվածայնությունը, հայտնում, որ Մովսեսի օրենքը կատարված է, և հրավիրում է մարդկանց՝ գալ իր մոտ և փրկվել: Մոտ 34թ. Ք.ծ.հ.:

Եվ եղավ այնպես, որ մի ժայն լավեց երկրի բոլոր բնակիչների մեջ, ողջ այս երկրի երեսին՝ գոչելով.

2 Վա՛յ, վա՛յ, վա՛յ այս ժողովրդին. Վա՛յ ամբողջ աշխարհի բնակիչներին, եթե նրանք չապաշխարեն. քանզի դևը՝ Ժիծաղում է, և նրա հրեշտակները հրճվում են իմ ժողովրդի սպանված գեղեցիկ որդիների ու դուստրերի համար. և դա նրանց անօրինության ու պոծությունների պատճառով է, որ նրանք ընկան:

3 Ահա, այն մեծ քաղաք Չարահեմլան և այնտեղի բնակիչներին ես այրեցի կրակով:

4 Եվ ահա, այն մեծ քաղաք Մորոնին սուզեցի ծովի խորքերը, և այնտեղի բնակիչները խեղդվեցին:

5 Եվ ահա, այն մեծ քաղաք Մորոնիան և այնտեղի բնակիչներին ծածկեցի ես հողով՝ թաքցնելու նրանց անօրինություններն ու նրանց պոծություններն իմ երեսի առաջից, որպեսզի մարգարեների և սրբերի արյունն այլևս չհասնի ինձ՝ նրանց դեմ:

6 Եվ ահա, Գաղգաղա քաղաքը ես խորտակեցի և այնտեղի բնակիչները թաղվեցին հողի խորքերում.

7 Այո, և քաղաք Օնիան ու այնտեղի բնակիչներին, և Մոքում քաղաքն ու այնտեղի բնակիչներին, և քաղաք Երուսաղեմն ու այն-

տեղի բնակիչներին. և ես այնպես արեցի, որ շքեր գան դրանց տեղը՝ թաքցնելու նրանց ամբարշտությունն ու պոծություններն իմ երեսի առաջից, որպեսզի մարգարեների և սրբերի արյունն այլևս չհասնի ինձ՝ նրանց դեմ:

8 Եվ ահա, քաղաք Գադիանդին, և քաղաք Գադիոմման, և Հակոբի քաղաքը, և քաղաք Գիմզիմնոն, – սրանք բոլորը խորտակել տվեցի ես, և դրանց տեղը դարձրեցի թլուրներ ու հովիտներ. և այնտեղի բնակիչներին ես թաղել եմ հողի խորքերում, որ թաքցնեմ նրանց ամբարշտությունն ու պոծություններն իմ երեսի առաջից, որպեսզի մարգարեների ու սրբերի արյունն այլևս չհասնի ինձ՝ նրանց դեմ:

9 Եվ ահա, այն մեծ քաղաք Հակոբուգաքը, որը բնակեցված էր թագավոր Հակոբի ժողովրդի կողմից, ես այրեցի կրակով՝ իրենց մեղքերի ու իրենց ամբարշտության պատճառով, որը վեր էր ողջ աշխարհի բոլոր ամբարշտությունից՝ նրանց զաղտնի սպանությունների և խմբակցությունների պատճառով. քանզի այդ նրանք էին, որ կործանեցին իմ ժողովրդի խաղաղությունը, և երկրի կառավարությունը. ուստի, ես այրել տվեցի նրանց՝ կործանելու նրանց իմ երեսի առաջից, որպեսզի մարգարեների ու սրբերի արյունն այլևս չհասնի ինձ՝ նրանց դեմ:

10 Եվ ահա, Լամանի քաղաքը և Հոսի քաղաքը, Գադի քաղաքը և Կիսկումենի քաղաքը և այնտեղի բնակիչներին ես այրեցի կրակով՝ նրանց ամբարշտության, մարգարեներին դուրս գցելու պատճառով:

9 1ա 1 Նեփի 19.11,
3 Նեփի 11.10:
2ա Մատ. ԺԱ.20–21:

բ Մովսես 7.26:
7ա Եզեկ. Ի2.19:
8ա 1 Նեփի 19.11:

9ա Հել. 6.17–18, 21:
բ Մոսիս 12.8:

ռով, և նրանց քարկոծելու, որոնց ես ուղարկել էի, հայտարարելու նրանց, իրենց ամբարշտության ու իրենց պղծությունների վերաբերյալ:

11 Եվ քանի որ նրանք դուրս գեցին բոլոր նրանց, այնպես որ ոչ մի արդարակյաց չմնաց նրանց մեջ, ես վար ուղարկեցի ^ակրակ և կործանեցի նրանց, որպեսզի նրանց ամբարշտությունն ու պղծությունները թաքցվեն իմ երեսի առաջից, որպեսզի մարգարեների ու սրբերի արյունը, որոնց ես ուղարկել էի նրանց մեջ, ^բգետնից չաղաղակեն առ ինձ՝ նրանց դեմ:

12 Եվ ^աշատ մեծ ավերածություններ պատճառեցի ես՝ գալու այս երկրի վրա, և այս ժողովրդի վրա, իրենց ամբարշտության և իրենց պղծությունների պատճառով:

13 Ո՛վ դուք, բոլորդ, ովքեր ^ախնայվել եք, որովհետև դուք ավելի արդար էիք, քան նրանք, այժմ չե՞ք վերադառնա ինձ մոտ և ապաշխարեք ձեր մեղքերից, և դարձի չե՞ք գա, որպեսզի ես կարողանամ ^բբուժել ձեզ:

14 Այո, ճշմարիտ եմ ասում ձեզ, եթե դուք ^ագաք ինձ մոտ, դուք կունենաք ^բհավերժական կյանք: Ահա, իմ ողորմության ^գբազուկը մեկնված է դեպի ձեզ, և ով որ գա, նրան ես կընդունեմ.

և օրհնված եմ նրանք, ովքեր գալիս են ինձ մոտ:

15 Ահա, ես եմ Հիսուս Քրիստոսը՝ Աստծո Որդին: Ես ^աստեղծեցի երկինքները և երկիրը, և բոլոր բաները, որ դրանցում են: Ես Հոր հետ էի ի սկզբանե: ^բԵս Հոր մեջ եմ, և Հայրը՝ ինձանում. և ինձանում Հայրը փառավորեց իր անունը:

16 Ես եկա յուրայինների մոտ, և յուրայինները ^աչընդունեցին ինձ: Եվ սուրբ գրքերը, իմ գալստի վերաբերյալ, կատարվել են:

17 Եվ բոլոր նրանք, ովքեր ընդունել են ինձ, ես ^աշնորհել եմ նրանց դառնալ Աստծո որդիները. և ճիշտ այդպես կանեմ ես բոլոր նրանց, ովքեր կհավատան իմ անունին, քանզի ահա, ինձանով է գալիս ^բփրկագնումը, և ինձանում է Մովսեսի ^գօրենքը կատարվում:

18 Ես եմ ^ալույսը և կյանքն աշխարհի: Ես եմ ^բԱլֆան և Օմեգան, սկիզբը և վերջը:

19 Եվ դուք ^աայլևս ինձ չպետք է մատուցեք արյուն թափելը. այո, ձեր զոհերն ու ձեր ողջակեզները վերջ պիտի տրվեն, քանզի ես չեմ ընդունի ձեր զոհերից և ձեր ողջակեզներից ոչ մեկը:

20 Եվ որպես ^ազոհ դուք պիտի մատուցեք ինձ կոտորված սիրտ և փշրված հոգի: Եվ ով որ գալիս է ինձ մոտ կոտորված սրտով և

11ա Գ. Թագ. Ա.9-16, Հել. 13.13:
բ Ծն. Գ.10:
12ա3 Նեփի 8.8-10, 14:
13ա3 Նեփի 10.12:
բ Երեմ. Գ.22, 3 Նեփի 18.32:
14ա2 Նեփի 26.24-28, Ալմա 5.33-36:
բ Հովհ. Գ.16:
գ Ալմա 19.36:
15ա Հովհ. Ա.1-3, Կող. Ա.16, Հել. 14.12,

Եթեր 4.7, Վևոհ 14.9:
բ Հովհ. ԺԷ.20-22, 3 Նեփի 11.27, 19.23, 29:
16ա Հովհ. Ա.11, Վևոհ 6.21:
17ա Հովհ. Ա.12:
սու՝ Մարդ, Մարդիկ - Մարդ՝ Երկնային Հոր մնան դառնալու ներուժը, Աստծո որդիներն ու դուստրերը:

բ սու՝ Փրկագնել, Փրկագնված, Փրկագնում:
գ 3 Նեփի 12.19, 46-47, 15.2-9:
18ա սու՝ Լույս, Քրիստոսի լույս:
բ Հայտ. Ա.8:
սու՝ Ալֆա և Օմեգա:
19ա Ալմա 34.13:
20ա3 Նեփի 12.19, Վևոհ 20.37:

փշրված հոգով, նրան ես ^բկմկրտեմ կրակով և Սուրբ Հոգով, ճիշտ ինչպես Լամանացիները մկրտվեցին կրակով և Սուրբ Հոգով՝ առ ինձ իրենց հավատքի պատճառով, իրենց դարձի ժամանակ, և չիմացան դա:

21 Ահա, ես եկել եմ աշխարհ՝ փրկագնում բերելու աշխարհին, փրկելու աշխարհը մեղքից:

22 Հետևաբար, ով որ ^աապաշխարում է և գալիս ինձ մոտ, ինչպես մի փոքր ^բերեխա, նրան ես կընդունեմ, քանզի այդպիսիներինն է Աստծո արքայությունը: Ահա, այդպիսիների համար եմ ես իմ կյանքը ցած ^գդրել, և վերցրել այն կրկին. ուստի ապաշխարե՛ք և եկեք ինձ մոտ, դո՛ւք, աշխարհի՛ ծայրեր, և փրկվե՛ք:

ԳԼՈՒԽ 10

Երկրում լռություն է տիրում շատ ժամերի ընթացքում – Քրիստոսի ձայնը խոստանում է հավաքել իր ժողովրդին, ինչպես հավն է հավաքում իր ճտերին – Ժողովրդի առավել արդար մասը պահպանվել է: Մոտ 34–35թթ. Ք.ծ.հ.:

ԵՎ այժմ ահա եղավ այնպես, որ երկրի ողջ ժողովուրդը լսեց այս խոսքերը և ականատես եղավ դրան: Եվ այս խոսքերից հետո, շատ ժամերի ընթացքում, լռություն տիրեց.

2 Քանզի այնքան մեծ էր ժողովրդի ապշանքը, որ նրանք դադարեցրել էին լացն ու հեկեկոցը՝

իրենց ազգակիցների կորստի համար, ովքեր սպանվել էին. ուստի շատ ժամերի ընթացքում լռություն տիրեց ողջ երկրում:

3 Եվ եղավ այնպես, որ կրկին մի ձայն եկավ ժողովրդին, և ողջ ժողովուրդը լսեց, և ականատես եղավ դրան՝ ասելով.

4 Ո՛վ դուք, ժողովուրդ այս ^ամեծ քաղաքների, որ կործանվել են, ովքեր Հակոբի հետնորդներն եք, այո, ովքեր Իսրայելի տնից եք, որքան հաճախ եմ ես հավաքել ձեզ, ինչպես հավն է իր թևերի տակ հավաքում իր ճտերին, և ^բկերակրել ձեզ:

5 Եվ բացի այդ, ^աորքա՛ն հաճախ հավաքած կլինեի ես ձեզ, ինչպես հավն է իր թևերի տակ հավաքում իր ճտերին, այո, ո՛վ դուք, Իսրայելի տան ժողովուրդ, որ ընկել եք, այո, ո՛վ դուք, Իսրայելի տան ժողովուրդ, դո՛ւք, որ ապրում եք Երուսաղեմում, ինչպես նաև դո՛ւք, որ ընկել եք. այո, որքա՛ն հաճախ հավաքած կլինեի ես ձեզ, ինչպես հավն է հավաքում իր ճտերին, և դուք չկամեցաք:

6 Ո՛վ դուք, Իսրայելի՛ տուն, որին ես ^ախնայել եմ, որքա՛ն հաճախ ես ձեզ կհավաքեմ, ինչպես հավն է իր թևերի տակ հավաքում իր ճտերին, եթե դուք ^բսրտի ողջ նվիրվածությամբ ապաշխարեք և ^գվերադառնաք ինձ մոտ:

7 Բայց եթե ոչ, ո՛վ Իսրայելի տուն, ձեր բնակության վայրերը պիտի ամայի դառնան, մինչև ձեր հայրերի հետ արված ^աուխտի կատարման ժամանակը:

20բ 2 Նեփի 31.13–14:
22ա սո՛ւ Ապաշխարել,
Ապաշխարություն:
բ Մար. Ժ.15,
Մոսիս 3.19,
3 Նեփի 11.37–38:

գ Հովհ. Ժ.15–18:
10 4ա 3 Նեփի 8.14:
բ 1 Նեփի 17.3:
5ա Մատ. ԻԳ.37,
Վևո՛ւ 43.24–25:
6ա 3 Նեփի 9.13:

բ Եզեկ. Լ.2.26:
գ Ա Թագ. Է.3,
Հել. 13.11,
3 Նեփի 24.7:
7ա սո՛ւ Ուխտ:

8 Եվ այժմ եղավ այնպես, որ ժողովուրդն այս խոսքերը լսելուց հետո, ահա, նրանք կրկին սկսեցին լալ ու հեկեկալ՝ իրենց ազգականների ու ընկերների կորստի պատճառով:

9 Եվ եղավ այնպես, որ այսպես անցան երեք օրեր: Եվ դա առավոտյան էր, և Միսավարը ցրվեց երկրի երեսից, և գետինը դադարեց ցնցվել, ժայռերը դադարեցին ճեղքվել, և ահավոր տնքոցները դադարեցին, և բոլոր աղմկոտ ձայները մարեցին:

10 Եվ հողը կրկին իրար կպավ, այնպես որ այն մնաց հաստատուն. և ողբը և լացն ու կոծը մարդկանց, որոնք կենդանի էին մնացել, դադարեցին. և նրանց սուզը փոխվեց ուրախության, և նրանց լացը՝ գովքի ու գոհության առ Տեր Հիսուս Քրիստոսը՝ իրենց Քավիչը:

11 Եվ մինչ այժմ սուրբ գրությունները՝ կատարվում էին, որոնք խոսվել են մարգարեների կողմից:

12 Եվ դա ժողովրդի Մառավել արդարակյաց մասն էր, որ փրկվեց, և այդ նրանք էին, որոնք ընդունեցին մարգարեներին և չքարկոծեցին նրանց. և այդ նրանք էին, որ խնայվեցին, ովքեր չթափեցին սրբերի արյունը,

13 Եվ նրանք խնայվեցին և չխորտակվեցին ու չթաղվեցին հողում. և նրանք չխեղդվեցին ծովի խորքերում. և նրանք չայրվեցին կրակից, ոչ էլ որևէ բան նրանց վրա ընկավ ու ջարդուփշուր արեց՝ ի մահ. և նրանք չբռնվեցին պտուտա-

հողմի մեջ. ոչ էլ նրանք ընկնվեցին ծխի ու խավարի մեզից:

14 Եվ արդ, ով որ կարդում է, թող նա հասկանա. նա ով ունի սուրբ գրքերը, թող Մքննի դրանք, և նայի ու տեսնի թե բոլոր այս մահերն ու ավերածությունները կրակից և ծխից, փոթորիկներից և պտուտահողմերից, և գետնի ²բացվելը, որ ընդունի նրանց, և բոլոր այս իրադարձություններն արդյոք կատարո՞ւմը չեն շատ սուրբ մարգարեների մարգարեությունների:

15 Ահա, ես ասում եմ ձեզ՝ Այո՛, շատերն են վկայել Քրիստոսի գալստյան ժամանակի այս իրադարձությունների վերաբերյալ, և Մսպանվել, որովհետև նրանք վկայել էին այս բաների վերաբերյալ:

16 Այո, մարգարե ՄՁեմոսը վկայել է այս բաների մասին, և նաև Ձեմոքն է խոսել այս բաների վերաբերյալ, որովհետև նրանք վկայեցին, հատկապես, մեր վերաբերյալ, ովքեր իրենց սերնդի մնացորդն ենք:

17 Ահա, մեր հայր Հակոբն էլ վկայեց Հովսեփի սերնդի մի՝ մնացորդի վերաբերյալ: Եվ ահա մի՞թե մենք Հովսեփի սերնդի մի մնացորդ չենք: Եվ այս բաները, որոնք վկայում են մեր մասին, մի՞թե դրանք գրված չեն արույրե թիթեղների վրա, որոնք մեր հայր Լեթին դուրս բերեց Երուսաղեմից:

18 Եվ եղավ այնպես, որ երեսուներես չորսերորդ տարվա վերջին, ահա, ես ցույց կտամ ձեզ, որ Նեփիի ժողովուրդը, որը խնայվել էր, և նաև նրանք, ովքեր կոչվում

<p>9ա3 Նեփի 8.19: 11ա4-որ. 4.18–20: 12ա2 Նեփի 26.8, 3 Նեփի 9.13: 14ա սօր՝ Սուրբ գրքեր –</p>	<p>Սուրբ գրքերի արժեքը: p 1 Նեփի 19.11, 2 Նեփի 26.5: 15ա սօր՝ Նահատակ, Նահատակություն:</p>	<p>16ա Հել. 8.19–20: 17ա2 Նեփի 3.4–5, Ալմա 46.24, 3 Նեփի 5.23–24:</p>
---	--	--

էին Լամանացիներ, որոնք խնայվել էին, մեծ շնորհներ ունեցան՝ իրենց ցույց տրված, և մեծ օրհնություններ թափվեցին նրանց գլխին, այնպես որ շուտով Քրիստոսի երկինքը աստիճանաբար իջավ նրանց վրիճակից, և նրանք զարմանում ու հիանում էին միմյանց հետ, և ցույց էին տալիս մեկը մյուսին այն աստիճանով, որով նրանք իջան էին ցածրից բարձր, որով տեղի էր ունեցել:

19 Գույքի տալով իր մարմինը նրանց, և սովորեցնելով նրանց. և նրա ծառայության մի պատմություն կարվի հետագայում: Հետևաբար, այս պահին ես ավարտում եմ իմ խոսքը:

Հիսուս Քրիստոսը ցույց տվեց իրեն Նեփիի ժողովրդին, երբ բազմությունն ի մի էր հավաքվել Լիառատ երկրում, և սովորեցրեց նրանց, և այս կերպ նա իրեն ցույց տվեց նրանց:

Ընդգրկելով 11–26 գլուխները ներառյալ:

ԳԼՈՒԽ 11

Հայրը վկայում է իր Սիրելի Որդու մասին – Քրիստոսը հայտնվում է և հրապարակում իր քավությունը – Մարդիկ շոշափում են վերքի տեղերը նրա ձեռքերի մեջ, և ոտքերին, և կողին – Նրանք աղաղակում են Ովսամնա – Նա բացատրում է մկրտության եղանակն ու ձևը – Հակառակության ոգին դևից է – Քրիստոսի վարդապետությունն է, որ մարդիկ հավատան, և մկրտվեն, և ստանան Սուրբ Հոգին: Մոտ 34թ. Բ.ժ.հ.:

Եւ արդ եղավ այնպես, որ Նեփիի ժողովրդից մի մեծ բազմություն կար ի մի հավաքված տաճարի շուրջը լուրջ, որը Լիառատ երկրում էր. և նրանք զարմանում ու հիանում էին միմյանց հետ, և ցույց էին տալիս մեկը մյուսին այն աստիճանով, որով նրանք իջան էին ցածրից բարձր, որով տեղի էր ունեցել:

2 Եվ նրանք նաև խոսում էին այս Հիսուս Քրիստոսի մասին, որի մահվան վերաբերյալ տրվել էր աստիճանով:

3 Եվ եղավ այնպես, որ մինչ նրանք այսպես խոսում էին մեկը մյուսի հետ, նրանք լսեցին մի աստիճանով, կարծես այն երկնքից էր գալիս. և նրանք աչք ածեցին շուրջը լուրջ, քանզի նրանք չհասկացան ձայնը, որ իրենք լսեցին. և այն կոպիտ ձայն չէր, ոչ էլ այն բարձր ձայն էր. այնուամենայնիվ, և չնայած այն մի աստիճանով ձայն էր, այն ներթափանցեց նրանց մեջ՝ այնպես, որ լսեցին մինչև նրանց սրտի խորքը, այնպես որ չկար նրանց մարմնի ոչ մի մաս, որին այն չստիպեր դողալ. այո, այն ներթափանցեց մինչև նրանց հոգու խորքը, և բոցավառեց նրանց սրտերը:

4 Եվ եղավ այնպես, որ նրանք կրկին լսեցին ձայնը, և նրանք չհասկացան այն:

5 Եվ կրկին՝ երրորդ անգամ նրանք լսեցին ձայնը և բացեցին իրենց ականջները՝ լսելու այն. և նրանց աչքերը ձայնին էին ուղղված. և նրանք սևեռում նայում էին դեպի երկինքը, որտեղից գալիս էր ձայնը:

18աԳոր. Ա.9–11:
19ա3 Նեփի 11.12–15:
11 1ա 3 Նեփի 8.11–14:

2ա Հել. 14.20–27:
3ա Բ Օր. Գ.33–36,
Հել. 5.29–33:

Բ Գ Թագ. ԺԹ.11–13,
ՎևՈԻ 85.6:

6 Եվ ահա, երրորդ անգամ, նրանք հասկացան ձայնը, որ նրանք լսեցին. և այն ասաց նրանց.

7 Ահա իմ ^աՍիրելի Որդին, ^բորից ես շատ գոհ եմ, որով ես փառավորեցի իմ անունը, լսե՛ք նրան:

8 Եվ եղավ այնպես, երբ նրանք հասկացան, նրանք կրկին հառեցին իրենց աչքերը վեր՝ դեպի երկինք. և ահա, նրանք ^ատեսան մի Մարդու՝ երկնքից իջնելիս. և նրա հագին մի ճերմակ պարեգոտ կար. և նա իջավ ու կանգնեց նրանց մեջտեղում. և ողջ բազմության աչքերն ուղղված էին նրա վրա, և նրանք չէին համարձակվում բացել իրենց բերանները, նույնիսկ մեկը մյուսի հետ, և չգիտեին, թե ինչ էր դա նշանակում, քանզի նրանք կարծեցին, թե դա մի հրեշտակ էր, որը հայտնվել էր նրանց:

9 Եվ եղավ այնպես, որ նա առաջ մեկնեց իր ձեռքը և խոսեց ժողովրդի հետ՝ ասելով.

10 Ահա, ես եմ Հիսուս Քրիստոսը, ում մասին մարգարեները վկայել էին, որ պիտի գա աշխարհ:

11 Եվ ահա, ես եմ ^ալույսն ու կյանքն աշխարհի. և ես խմեցի այն դառը ^բբաժակից, որը Հայրը տվեց ինձ, և փառավորեցի Հորը՝ ^գվերցնելով ինձ վրա աշխարհի մեղքերը, որով ես ենթարկվեցի Հոր ^դկամօքին, բոլոր բաներում, ի սկզբանե:

12 Եվ եղավ այնպես, որ երբ Հիսուսը խոսեց այս խոսքերը, ամբողջ բազմությունն ընկավ գետ-

նին. քանզի նրանք հիշեցին, որ իրենց մեջ դա ^ամարգարեացել էին, որ Քրիստոսն իրեն պիտի ցույց տար նրանց՝ իր երկինք համարձակելուց հետո:

13 Եվ եղավ այնպես, որ Տերը խոսեց նրանց հետ՝ ասելով.

14 Բարձրացեք և առաջ եկեք ինձ մոտ, որ դուք կարողանաք ^ամտցնել ձեր ձեռքն իմ կողը, և նաև, որ դուք կարողանաք ^բշոշափել բևեռների նշաններն իմ ձեռքերի ու իմ ոտքերի վրա, որ դուք կարողանաք իմանալ, որ ես եմ Իսրայելի ^գԱստվածը, և ամբողջ ^դերկրագնդի Աստվածը, և սպանվել եմ աշխարհի մեղքերի համար:

15 Եվ եղավ այնպես, որ բազմությունն առաջ եկավ, և մտցրեց իրենց ձեռքերը նրա կողը, և շոշափեց բևեռների նշանները նրա ձեռքերի ու նրա ոտքերի վրա. և դա նրանք արեցին, առաջ գալով մեկ առ մեկ, մինչև որ նրանք բուլորն առաջ եկան և տեսան իրենց իսկ աչքով, և շոշափեցին իրենց ձեռքերով, և իմացան անկասկած ու վկայեցին, որ ^աայդ նա էր, որի մասին գրվել էր մարգարեների կողմից, որ պիտի գար:

16 Եվ երբ նրանք բոլորն առաջ եկան և իրենք ականատես եղան, նրանք միաձայն աղաղակեցին՝ ասելով.

17 Ովսա՛ննա: Օրհնվա՛ծ լինի Բարձրյալ Աստծո անունը: Եվ նրանք ընկան ցած՝ Հիսուսի ոտքերի մոտ և ^աԵրկրպագեցին նրան:

7ա Մատ. 9:17, ԺԷ.5, ԶՄ-Պ 1.17:
բ 3 Նեփի 9:15:
8ա1 Նեփի 12.6,
2 Նեփի 26.1:
11ա սո՛ւ Լույս, Քրիստոսի լույս:
բ Մատ. ԻԶ.39, 42:

գ Հովհ. Ա.29, ՎևՈՒ 19.18-19:
դ Մար. ԺԳ.36, Հովհ. Զ.38, ՎևՈՒ 19.2:
12ա Ալմա 16.20:
14ա Հովհ. Ի.27:
բ Ղուկ. ԻԳ.36-39, ՎևՈՒ 129.2:

գ Ես. ԽԵ.3, 3 Նեփի 15.5:
դ 1 Նեփի 11.6:
15ա սո՛ւ Հիսուս Քրիստոս - Քրիստոսի ետմահկանացու հայտնության դեպքերը:
17ա սո՛ւ Երկրպագել:

18 Եվ եղավ այնպես, որ նա դիմեց ^աՆեփիին (քանզի Նեփին բազմության մեջ էր) և նա պատվիրեց նրան, որ նա առաջ գա:

19 Եվ Նեփին բարձրացավ ու առաջ եկավ, և խոնարհվեց Տիրոջ առաջ և համբուրեց նրա ոտքերը:

20 Եվ Տերը պատվիրեց նրան, որ նա բարձրանա: Եվ նա բարձրացավ և կանգնեց նրա առջև:

21 Եվ Տերն ասաց նրան. Ես տալիս եմ քեզ ^ազորություն, որ դու ^բմկրտես այս ժողովրդին, երբ ես կրկին համբարձվեմ երկինք:

22 Եվ կրկին Տերը կանչեց ^աուրիշների և ասաց նրանց նույն ձևով. և նա նրանց մկրտելու զորություն տվեց: Եվ նա ասաց նրանց. Այս կերպ դուք պիտի մկրտեք. և ձեր մեջ ոչ մի ^բվիճաբանություններ չպիտի լինեն:

23 Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ ով որ ապաշխարի իր մեղքերից, ձեր ^ախոսքերի միջոցով, և ^բփափագի մկրտվել իմ անունով, այս կերպ պիտի դուք մկրտեք նրանց. Ահա դուք պիտի իջնեք և ^գկանգնեք ջրի մեջ, և իմ անունով պիտի դուք մկրտեք նրանց:

24 Եվ արդ ասա, սրանք են այն խոսքերը, որոնք դուք պիտի ասեք, կոչելով նրանց անունով՝ ասելով.

25 ^աԻշխանություն ունենալով Հիսուս Քրիստոսի կողմից տրված,

ես մկրտում եմ քեզ անունով ^բՀոր և Որդու և Սուրբ Հոգու: Ամեն:

26 Եվ հետո դուք պիտի ^աընկերդներ նրանց ջրի մեջ, և կրկին դուք բերեք ջրից:

27 Եվ այս ձևով դուք պիտի իմ անունով մկրտեք. քանզի ասա, ճշմարիտ եմ ասում ձեզ, որ Հայրը և Որդին և Սուրբ Հոգին ^ամեկ են. և ես Հոր մեջ եմ, և Հայրը՝ իմ մեջ, և Հայրը և ես մեկ ենք:

28 Եվ ինչպես որ ես պատվիրել եմ ձեզ, այդպես պիտի դուք մկրտեք: Եվ ձեր մեջ չպիտի լինեն ^ավիճաբանություններ, ինչպես մինչև այժմ է եղել. ոչ էլ պիտի վիճաբանություններ լինեն ձեր մեջ՝ իմ վարդապետության կետերի վերաբերյալ, ինչպես մինչև այժմ է եղել:

29 Քանզի ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, նա, որ ունի ^ահակառակության ոգին, ինձանից չէ, այլ ^բդևից է, որը հակառակության հայրն է, և նա դրդում է մարդկանց սրտերը՝ բարկությանը վիճելու մեկը մյուսի հետ:

30 Ահա, սա իմ վարդապետությունը չէ՝ բարկության դրդել մարդկանց սրտերը մեկմեկու դեմ. այլ այս է իմ վարդապետությունը, որ այդպիսի բաները պիտի վերացվեն:

31 Ահա, ճշմարիտ, ճշմարիտ եմ

18ա3 Նեփի 1.2, 10:
21ա սո՛ւ Չորություն:
բ սո՛ւ Մկրտություն,
Մկրտել:
22ա1 Նեփի 12.7,
3 Նեփի 12.1:
բ 3 Նեփի 18.34:
23ա3 Նեփի 12.2:
բ սո՛ւ Մկրտություն,
Մկրտել – Մկրտության
համար անհրաժեշտ
պայմանները:

գ 3 Նեփի 19.10-13:
25ա Մոսիա 18.13,
ՎևոՒ 20.73:
սո՛ւ Մկրտություն,
Մկրտել – Պատշաճ
իշխանությամբ:
բ սո՛ւ Աստված,
Աստվածագլուխ:
26ա սո՛ւ Մկրտություն,
Մկրտել – Ընկղմամբ
մկրտություն:
27ա Հովհ. ԺԷ.20-22,

3 Նեփի 28.10,
Մորմ. 7.7,
ՎևոՒ 20.28:
28ա Ա Վոր. Ա.10,
Եփես. Գ.11-14,
ՎևոՒ 38.27:
29ա Բ Տիմ. Բ.23-24,
Մոսիա 23.15:
սո՛ւ Հակառակություն:
բ ՉՄԹ, Եփես. 4.26,
Մոսիա 2.32-33:

ասում ձեզ, ես կիրապարակեմ ձեզ իմ Կարդապետությունը:

32 Եվ այս է իմ Կարդապետությունը, և դա այն վարդապետությունն է, որը Հայրը տվել է ինձ. և ես Վկայում եմ Հոր մասին, և Հայրը վկայում է իմ մասին, և Պուրբ Հոգին վկայում է Հոր և իմ մասին. և ես վկայում եմ, որ Հայրը պատվիրում է բոլոր մարդկանց, ամենուր, ապաշխարել և հավատալ ինձ:

33 Եվ, ով որ հավատում է ինձ և անկրտվում, նույնը պիտի Բիրկվի. այդ նրանք են, ովքեր պիտի ժառանգեն Աստծո արքայությունը:

34 Եվ ով որ չի հավատում ինձ և չի անկրտվում, նզովված պիտի լինի:

35 Շնամարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, որ այս է իմ վարդապետությունը, և ես վկայում եմ դրա մասին Հոր կողմից. և ով որ Կատարում է ինձ, հավատում է նաև Հորը. և նրան Հայրը կվկայի իմ մասին, քանզի նա կայցելի նրան Կրակով և Պուրբ Հոգով:

36 Եվ այսպես, Հայրը կվկայի իմ մասին, և Սուրբ Հոգին կվկայի նրան Հոր և իմ մասին. քանզի Հայրը և ես, և Սուրբ Հոգին, մեկ ենք:

37 Եվ կրկին ես ասում եմ ձեզ՝ դուք պետք է ապաշխարեք և Դառնաք ինչպես մի փոքր երեխա, և մկրտվեք իմ անունով, այլապես դուք ոչ մի կերպ չեք կարող ստանալ այս բաները:

38 Եվ կրկին ես ասում եմ ձեզ՝

դուք պետք է ապաշխարեք, և մկրտվեք իմ անունով, և դառնաք ինչպես մի փոքր երեխա, այլապես չեք կարող ոչ մի կերպ ժառանգել Աստծո արքայությունը:

39 Շնամարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, որ այս է իմ վարդապետությունը՝ ով որ Կառուցում է սրա վրա, կառուցում է իմ վեմի վրա, և դժոխքի դռները չպիտի հաղթեն նրանց:

40 Եվ ով որ կհայտարարի ավել կամ պակաս, քան այս, և հաստատի այն որպես իմ վարդապետություն, նույնը գալիս է չարից. և չի կառուցվում իմ վեմի վրա. այլ նա կառուցում է ավազե հիմքի վրա, և դժոխքի դռները բացված են՝ ընդունելու այդպիսիներին, երբ ջրհեղեղները գան և քամիները ծեծկեն նրանց:

41 Հետևաբար, առաջ գնացեք դեպի այս ժողովուրդը և հրապարակեք խոսքերը, որ ես խոսեցի, մինչև աշխարհի ծայրերը:

ԳԼՈՒԽ 12

Հիտար կանչում է և լիազորում Տասներկուսին – Նա մի խրատ է հարորդում Նեփիացիներին՝ նման Սարի վրայի քարոզին – Նա ասում է Երանելիները – Նրա ուսմունքները գերազանցում են և ավելի քարճր են, քան Մովսեսի օրերը – Մարդկանց պատվիրվում է լինել կատարյալ, ճիշտ ինչպես նա և իր Հայրն են

31ա2 Նեփի 31.2-21:
32ա սո՛ւ Քրիստոսի վարդապետությունը:
բ Ա Հովհ. Ե.7:
գ 3 Նեփի 28.11, Եթեր 5.4:
33ա Մար. Ժ.2.16:
սո՛ւ Մկրտություն,

Մկրտել – Էական է:
բ սո՛ւ Փրկություն:
գ սո՛ւ Մեկտիալ փառք:
35ա Եթեր 4.12:
բ 3 Նեփի 9.20, 12.2:
գ սո՛ւ Սուրբ Հոգի:
37ա Մար. Ժ.15,
Գուկ. ԺԸ.17,

Մոսիս 3.19,
3 Նեփի 9.22:
39ա Մատ. Է.24-29,
Հել. 5.12:
սո՛ւ Վեմ:
բ 3 Նեփի 18.12-13:
40ա 3 Նեփի 14.24-27:

կատարյալ – Համեմատեք Մատթեոս Ե: Մոտ 34թ. Բ.ծ.հ.:

Եւ եղավ այնպես, որ երբ Հիսուսն ասաց այս խոսքերը Նեփիիին, և նրանց, ովքեր կանչվել էին (արդ նրանց թիվը, ովքեր կանչվել էին և զորություն ու իշխանություն ստացել, տասներկուսն էին) և ահա, նա առաջ մեկնեց իր ձեռքը դեպի բազմությունը և աղաղակեց դեպի նրանց՝ ասելով. ^բԵրանելի եք դուք, եթե ուշք դարձնեք այս տասներկուսի խոսքերին, որոնց ես ^գընտրել եմ ձեր միջից՝ ծառայելու ձեզ և լինելու ձեր ծառաները. և նրանց ես տվել եմ իշխանություն, որ կարողանան մկրտել ձեզ ջրով. և հետո, երբ դուք մկրտվեք ջրով, ահա, ես կմկրտեմ ձեզ կրակով և Սուրբ Հոգով. ուստի երանելի եք դուք, եթե հավատաք ինձ և մկրտվեք այն բանից հետո, երբ դուք տեսաք ինձ և իմացաք, որ ես եմ:

2 Եվ բացի այդ, ավելի երանելի են նրանք, ովքեր ^ակհավատան ձեր խոսքերին, քանի որ դուք պիտի վկայեք, որ տեսել եք ինձ, և որ դուք գիտեք, որ ես եմ: Այո, երանելի են նրանք, ովքեր կհավատան ձեր խոսքերին, և ^բկիջնեն համեստության խորքերը և կմկրտվեն, քանզի նրանք կայցելվեն ^գկրակով և Սուրբ Հոգով, և թողություն կստանան իրենց մեղքերին:

3 Այո, երանելի են հոգով ^աաղքատները, ովքեր ^բգալիս են ինձ մոտ, քանզի նրանցն է երկնքի արքայությունը:

4 Եվ բացի այդ, երանելի են բոլոր նրանք, ովքեր սգում են, քանզի նրանք կմխիթարվեն:

5 Եվ երանելի են ^ահեզերը, քանզի նրանք կժառանգեն ^բերկիրը:

6 Եվ երանելի են բոլոր նրանք, ովքեր ^աքաղցած և ^բծարավ են ^գարդարության, քանզի նրանք կլցվեն Սուրբ Հոգով:

7 Եվ երանելի են ^աողորմածները, քանզի նրանք ողորմություն կգտնեն:

8 Եվ երանելի են բոլոր ^ասրտով մաքուրները, քանզի նրանք ^բկտեսնեն Աստծուն:

9 Եվ երանելի են բոլոր ^ախաղաղարարները, քանզի նրանք Աստծո ^բգավակներ կկոչվեն:

10 Եվ երանելի են բոլոր նրանք, ովքեր ^ահալածվում են հանուն իմ անվան, քանզի նրանցն է երկնքի արքայությունը:

11 Եվ երանելի եք դուք, երբ մարդիկ անարգեն ձեզ ու հալածեն, և խարդախորեն ամեն ձևի չար բան ասեն ձեր դեմ՝ իմ պատճառով.

12 Քանզի դուք կունենաք մեծ ցնծություն և կլինեք անչափ ուրախ, քանզի մեծ կլինի ձեր ^ավարձքը երկնքում. քանզի այդպես

12 1ա 3 Նեփի 13.25:
բ սո՛ր Օրինել, Օրինված, Օրինություն:
գ սո՛ր Կանչ, Աստծո կողմից կանչված, Կոչում:
2ա Վևո՛Ւ 46.13-14:
սո՛ր Հավատ, Հավատալ:
բ Եթե՛ր 4.13-15:
գ 3 Նեփի 11.35, 19.13:
3ա Վևո՛Ւ 56.17-18:

սո՛ր Խոնարհ, Խոնարհություն:
բ Մատ. ԺԱ.28-30:
5ա Հռովմ. ԺԲ.16, Մոսիա 3.19:
սո՛ր Հեզ, Հեզություն:
բ սո՛ր Երկիր:
6ա 2 Նեփի 9.51, Ենովս 1.4:
բ Երեմ. ԻԹ.13:
գ Առակ. ԻԱ.21:
7ա սո՛ր Ողորմած,

Ողորմություն:
8ա սո՛ր Անարատ, Անարատություն:
բ Վևո՛Ւ 93.1:
9ա սո՛ր Խաղաղարար:
բ սո՛ր Աստծո որդիներն ու դուստրերը:
10ա Վևո՛Ւ 122.5-9:
սո՛ր Հալածել, Հալածանք:
12ա Եթե՛ր 12.4:

հալածեցին մարգարեներին, ովքեր ձեզանից առաջ են եղել:

13 Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, ես տալիս եմ ձեզ՝ լինելու երկրի՝ Մաղը. սակայն եթե աղը կորցնի իր համը, ինչո՞վ պիտի երկիրն աղանվի: Աղը, այնուհետև, պետք չի լինի ոչնչի, այլ դուրս պիտի գցվի և մարդկանց ոտքերի տակ կոխկրտվի:

14 Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, ես տալիս եմ ձեզ՝ լինելու այս ժողովրդի լույսը: Մի քաղաք, որ գտնվում է սարի վրա, չի կարող քաքցվել:

15 Ահա, մի՞թե մարդիկ վառում են Մոմը և դնում այն գրվանի տակ: Ո՛չ, այլ մոմակալի վրա են դնում, և այն լույս է տալիս բոլորին, ովքեր տան մեջ են.

16 Հետևաբար, թող ձեր Մույսն այնպես շողա այս ժողովրդի առաջ, որ նրանք կարողանան տեսնել ձեր բարի գործերը և փառավորեն ձեր Հորը, որը երկնքում է:

17 Մի կարծեք, որ ես եկել եմ կործանելու օրենքը կամ մարգարեներին: Ես չեմ եկել կործանելու, այլ կատարելու.

18 Քանզի ճշմարիտ եմ ասում ձեզ՝ ոչ մի կետ կամ գիծ չի անցել Մօրենքից, այլ ինձանով այն ամբողջովին կատարվել է:

19 Եվ ասա, ես տվել եմ ձեզ օրենքը և իմ Հոր պատվիրանները, որպեսզի դուք հավատաք ինձ, և որպեսզի դուք ապաշխարեք ձեր մեղքերից, և զաք ինձ մոտ Մկտորված սրտով և փշրված հոգով: Ահա, դուք ունեք պատվիրանները

ձեր առաջ, և Մօրենքը կատարված է:

20 Ուստի, եկեք ինձ մոտ և փրկվեք. բանզի ճշմարիտ եմ ասում ձեզ, որ եթե դուք չպահեք իմ պատվիրանները, որոնք ես պատվիրել եմ ձեզ այս ժամանակ, դուք ոչ մի դեպքում չպիտի մտնեք երկնքի արքայությունը:

21 Դուք լսել եք, որ ասվել է նրանց կողմից, հին ժամանակ, և այն մասն գրված է ձեր մոտ, որ դուք չպետք է Մսպանեք, և ով որ սպանի, Աստծո դատաստանի վտանգի տակ կլինի.

22 Բայց ես ասում եմ ձեզ, որ ով որ բարկանա իր եղբոր վրա, դատաստանի վտանգի տակ կլինի: Եվ ով որ իր եղբորն ասի՝ հիմա՛ր, ատյանի վտանգի տակ կլինի. և ով որ իր եղբորն ասի՝ անմիտ, դժոխքի կրակի վտանգի տակ կլինի:

23 Հետևաբար, եթե դու գաս ինձ մոտ, կամ փափագես գալ ինձ մոտ, և հիշես, որ քո եղբայրը որևէ բան ունի քո դեմ,

24 Գնա քո ճանապարհով քո եղբոր մոտ, և առաջին հերթին Մհաշտվիր քո եղբոր հետ, և հետո եկ ինձ մոտ սրտի ողջ մկիրվածությամբ, և ես կընդունեմ քեզ:

25 Հաշտվիր քո հակառակորդի հետ արագ, մինչ դու նրա հետ ճանապարհիին ես, որ չլինի թե ինչ-որ ժամանակ նա քեզ բռնի, և բանտ գցի:

26 Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում քեզ, դու ոչ մի կերպ չես կարող դուրս գալ այնտեղից, մինչև չվճարես վերջին սենիներ: Եվ մինչդեռ դուք բանտում եք, կարո՞ղ եք վճա-

13ա Վև.ՌԻ 101.39–40:
սուր Աը:
15ա Դուկ. Ը.16:
16ա 3 Նեփի 18.24:

18ա սուր Մովսեսի օրենք:
19ա 3 Նեփի 9.20:
սուր Կտորված սիրտ:
բ 3 Նեփի 9.17:

21ա Ել. Ի.13,
Մոսիա 13.21,
Վև.ՌԻ 42.18:
24ա սուր Ներել:

րել նույնիսկ մի սեննին: Ճշմարիտ, ճշմարիտ են ասում ձեզ՝ ո՛չ:

27 Ահա, գրված է նրանց կողմից, հին ժամանակ, որ դուք չպետք է շնորթյուն անեք.

28 Բայց ես ասում եմ ձեզ, որ ով որ նայում է մի կնոջ վրա՝ ցանկանալով նրան, արդեն շնորթյուն է արել իր սրտում:

29 Ահա, ես տալիս եմ ձեզ պատվիրան, որ դուք թույլ չտաք այս բաներից ոչ մեկը մտնի ձեր սիրտը.

30 Քանզի ավելի լավ է, որ դուք զրկեք ձեզ այս բաներից, որով դուք կվերցնեք ձեր յաւաչը, քան որ դուք գցվեք դժոխք:

31 Գրված է, որ ով որ բաժանվի իր կնոջից, թող տա նրան սապահարզանի թուղթ:

32 Ճշմարիտ, ճշմարիտ են ասում ձեզ, որ ով որ բաժանվում է իր կնոջից, բացի Բաղնկայան պատճառից, ստիպում է նրան զնուրթյուն անել. և ով որ ամուսնանում է նրա հետ, ով արձակված է, շնորթյուն է անում:

33 Եվ բացի այդ, գրված է՝ դու չպետք է սուտ երդում անես, այլ պետք է կատարես Տիրոջ համար քո տերդրումները.

34 Բայց ճշմարիտ, ճշմարիտ ես ասում եմ ձեզ՝ մի տերդրվեք ընդհանրապես. ոչ երկնքով, քանզի այն Աստծո գահն է.

35 Ոչ երկրով, քանզի այն նրա ոտքերի պատվանդանն է.

36 Ոչ էլ երդվեք ձեր գլխով, որովհետև դուք չեք կարող ոչ մի մագ սև կամ սպիտակ դարձնել.

37 Այլ թող ձեր խոսքը լինի, Այո-ն՝ այո. Ոչ-ը՝ ոչ. քանզի ինչ որ գալիս է դրանից ավելի, չարից է:

38 Եվ ահա, գրված է՝ աչքի տեղ աչք, և ատամի տեղ ատամ.

39 Բայց ես ասում եմ ձեզ, որ դուք չպետք է հակառակվեք չարին, այլ ով որ ապտակի ձեզ ձեր աջ այտին, մյուսն էլ ղշրջեք նրան.

40 Եվ եթե որևէ մարդ կամենա քեզ դատի տալ օրենքով և վերցնել քո շապիկը, քո բաճկոնն էլ թող նրան.

41 Եվ ով որ հարկադրի քեզ մի մղոն գնալ, գնա նրա հետ երկուսը:

42 Տուր նրան, որ խնդրում է քեզանից, և նրանից, որ կամենում է քեզանից փոխ առնել, երես մի դարձնիր:

43 Եվ ահա, գրված է նաև, որ դուք սիրեք ձեր ընկերոջը և ասեք ձեր թշնամուն.

44 Բայց ահա ես ասում եմ ձեզ՝ սիրեք ձեր թշնամիներին, օրհնեք նրանց, ովքեր անիծում են ձեզ, բարին արեք նրանց, ովքեր ատում են ձեզ, և Բաղոթեք նրանց համար, ովքեր անխղճորեն շահագործում և հալածում են ձեզ.

45 Որպեսզի դուք կարողանաք լինել զավակները ձեր Հոր, որ երկնքում է. քանզի նա իր արեգակը ծագեցնում է շարերի վրա և բարիների վրա:

26ա Ալմա 11.3:
27ա 2 Նեփի 9.36,
ՎևոՒ 59.6:
28ա ՎևոՒ 42.23:
սու Յանկանալ:
29ա Գոր. Ը.22:
30ա Մատ. Ժ.38,
ԺՂ.24,
Ղուկ. Թ.23:

31ա սու Ամուսնալուծու-
թյուն:
32ա Մար. Ժ.11-12:
բ սու Պոռնկություն:
գ սու Ընուրթյուն:
33ա սու Երդում:
34ա սու Անարգանք:
38ա Ղև. ԻԳ.20:
39ա 3 Նեփի 6.13,

4 Նեփի 1.34,
ՎևոՒ 98.23-32:
բ սու Համբերություն:
42ա Հակոբ 2.17-19,
Մոսիա 4.22-26:
44ա Առակ. ԻԳ.17,
Ալմա 48.23:
բ Գոր. Է.58-59:

46 Հետևաբար, այն բաները, որոնք հին ժամանակից էին, որոնք օրենքի տակ էին, ինձանում բոլորը կատարվեցին:

47 ^աՀին բաներին վերջ տրվեց և բոլոր բաները դարձան նոր:

48 Հետևաբար, ես կամենում եմ, որ դուք լինեք ^ակատարյալ, ճիշտ ինչպես ես, կամ ձեր Հայրը, որ երկնքում է, կատարյալ է:

ԳԼՈՒԽ 13

Հիտար սովորեցնում է Նեփիացիներին Տիրոջ Աղոթքը – Նրանք պետք է դիզեն զանձեր երկնքում – Տասներկուսին իրենց ծառայության մեջ պատվիրվում է չնտահողվել աշխարհիկ բաներով – Համենատեք Մատթեոս 2: Մոտ 34թ. Ք.ծ.հ.:

ԵՇՄԱՐԻՑ, ճշմարիտ եմ ասում, որ ես կամենում եմ, որ դուք ^աողորմություն անեք աղքատներին. բայց ուշադիր եղեք, որ դուք չամենք ձեր ողորմությունները մարդկանց առաջ՝ նրանց կողմից նկատվելու համար. այլպես դուք վարձք չունեք ձեր Հորից, որը երկնքում է:

2 Հետևաբար, երբ դուք անեք ձեր ողորմությունները, ձեր առջև շեփոր մի հնչեցրեք, ինչպես կեղծավորներն են անում ժողովարաններում ու փողոցներում, որպեսզի իրենք կարողանան ^ափառք ունենալ մարդկանցից: Դճմարիտ եմ ասում ձեզ՝ նրանք ունեն իրենց վարձքը:

3 Բայց երբ դու ողորմություն ես

անում, թող քո ձախ ձեռքը չիմանա, թե ինչ է անում քո այ ձեռքը.

4 Որպեսզի քո ողորմությունը կարողանա ծածուկ լինել. և քո Հայրը, որը տեսնում է ծածկապես, ինքը կհատուցի քեզ հայտնապես:

5 Եվ երբ ^աաղոթում ես, դու չպետք է անես ինչպես կեղծավորները, քանզի նրանք սիրում են աղոթել՝ կանգնած ժողովարաններում և փողոցի անկյուններում, որ իրենք կարողանան նկատվել մարդկանցից: Դճմարիտ եմ ասում ձեզ, նրանք ունեն իրենց վարձքը:

6 Բայց դու, երբ աղոթում ես, մտիր քո սենյակը, և երբ փակես քո դուռը, աղոթիր քո Հորը, որը ծածուկում է. և քո Հայրը, որը տեսնում է ծածկապես, կհատուցի քեզ հայտնապես:

7 Բայց երբ դու աղոթում ես, մի գործածիր զուր կրկնություններ, ինչպես հեթանոսները, քանզի նրանք կարծում են, որ իրենք լսելի կլինեն իրենց շատ խոսելու համար:

8 Ուստի, մի եղեք նրանց նման, քանզի ձեր Հայրը ^ազիտի, թե ինչ բաների կարիք ունեք, նախքան դուք նրանից կխնդրեք:

9 Այս ^աձևով, հետևաբար, ^բաղոթեք դուք. ^գՀայր մեր, որ երկնքում ես, թող սուրբ լինի քո անունը:

10 Քո կամքը թող կատարվի երկրի վրա, ինչպես որ երկնքում է:

11 Եվ ներիր մեզ մեր պարտքերը, ինչպես մենք ենք ներում մեր պարտապաններին:

12 Եվ ^ամի տանիր մեզ փորձության, այլ ազատիր մեզ չարից:

47ա3 Նեփի 15.2, 7, ՎևոՒ 22.1:

48ա Մատ. Ե.48, 3 Նեփի 27.27: սուր Կատարյալ:

13 1ա սուր Ողորմություններ,

Ողորմություններ տալը: 2ա ՎևոՒ 121.34–35:

5ա սուր Աղոթք:

8ա ՎևոՒ 84.83:

9ա Մատ. 2.9–13:

բ սուր Աղոթք:

գ սուր Աստված, Աստվածագլուխ – Աստված Հայրը: 12ա ՉՍԹ, Մատ. 6.14:

13 Քանզի քոնն է արքայությունը և գորությունը և փառքը հավիտյան: Ամեն:

14 Քանզի, եթե դուք ^աներեք մարդկանց իրենց զանցանքները, ձեր երկնային Հայրն էլ ձեզ կների:

15 Բայց եթե դուք չներեք մարդկանց իրենց զանցանքները, ձեր Հայրն էլ ձեզ չի ների ձեր զանցանքները:

16 Դեռ ավելին, երբ դուք ^ածոմ եք պահում, մի եղեք կեղծավորների պես՝ տխուր դեմքով, քանզի նրանք այլափոխում են իրենց երեսները, որ երևան մարդկանց, թե ծոմ են պահում: Ելմարիտ են ասում ձեզ՝ նրանք ունեն իրենց վարձքը:

17 Բայց դու, երբ ծոմ պահես, օծիր քո գլուխը, և լվա քո երեսը:

18 Որպեսզի դու չերևաս մարդկանց ծոմ պահող, այլ քո Հորը, որը ^ածածուկումն է. և քո Հայրը, որը տեսնում է ծածկապես, կհատուցի քեզ հայտնապես:

19 Մի դիզեք ձեզ համար զանձեր երկրի վրա, որտեղ ցեցն ու ժանգն են ապականում, և գողերը ներս են խուժում ու գողանում:

20 Այլ ^ազանձեր դիզեք ձեզ համար երկնքում, որտեղ ո՛չ ցեցը, ո՛չ ժանգը չեն ապականում, և ուր գողերը ներս չեն թափանցում և չեն գողանում:

21 Քանզի որտեղ ձեր զանձերն են, այնտեղ կլինի և ձեր սիրտը:

22 Մարմնի ^ալույսն աչքն է. եթե, հետևաբար, քո աչքը պարզ լինի, քո ամբողջ մարմինը լցված կլինի լույսով:

23 Բայց եթե քո աչքը չար լինի, քո ամբողջ մարմինը լցված կլինի խավարով: Եթե, հետևաբար, լույսը, որ քո մեջ է, լինի խավար, որքա՞ն մեծ է այդ խավարը:

24 Ոչ մի մարդ չի կարող ^ածառայել երկու տիրոջ. քանզի նա կամ կատի մեկին և կսիրի մյուսին, կամ էլ նա կնվիրվի մեկին և կարհամարհի մյուսին: Դուք չեք կարող ծառայել Աստծուն և մամոնային:

25 Եվ արդեղավ այնպես, որ երբ Հիսուսն ասաց այս խոսքերը, նա նայեց տասներկուսի վրա, որոնց ընտրել էր, և ասաց նրանց. Հիշե՛ք խոսքերը, որ ես ասացի: Քանզի ահա, դուք նրանք եք, որոնց ես ընտրել եմ ^ածառայելու այս ժողովրդին: Հետևաբար, ես ասում եմ ձեզ՝ մի ^ամտահոգվեք ձեր կյանքի համար, թե ինչ պիտի ուտեք, կամ ինչ պիտի խմեք. ոչ էլ ձեր մարմնի համար, թե ինչ պիտի հագնեք: Մի՞թե կյանքն ավելի չէ, քան կերակուրը, և մարմինը՝ քան զգեստը:

26 Նայեք օդի թռչուններին, քանզի նրանք ոչ ցանում են, ոչ էլ հնձում կամ ժողովում ամբարների մեջ. սակայն ձեր երկնային Հայրը կերակրում է նրանց: Մի՞թե դուք շատ ավելի լավը չեք, քան նրանք:

27 Չեզանից ո՞վ մտահոգվելով կարող է ավելացնել իր հասակի վրա մեկ կանգնու:

28 Եվ ինչո՞ւ եք մտահոգվում հագուստի համար: Մտիկ տվեք դաշտի շուշաններին, ինչպես են դրանք աճում. դրանք չեն գործում, ոչ էլ մանում:

14ա Մոսիա 26.30–31, վ.և.ՌԻ 64.9: սուր Նեբել: 16ա Ես. ԾԸ.5–7:

սուր Ծոմ, Ծոմապահություն: 18ա վ.և.ՌԻ 38.7: 20ա Հել. 5.8, 8.25: 22ա վ.և.ՌԻ 88.67:

24ա Ա Թագ. Է.3: 25ա սուր Ծառայել: Բ Ալմա 31.37–38, վ.և.ՌԻ 84.79–85:

29 Եվ սակայն ես ասում եմ ձեզ, որ նույնիսկ Սողոմոնը բոլոր իր փառքի մեջ, դրանցից մեկի նման չգուզվեց:

30 Ուստի, եթե Աստված այսպես հազցնում է դաշտի խոտը, որն այսօր կա, և վաղը զգվում է փոփ մեջ, ճիշտ այդպես էլ կհազցնի նա ձեզ, եթե դուք փոքր հավատքով չեք:

31 Հետևաբար, մի մտահոգվեք, ասելով. Ի՞նչ պիտի մենք ուտենք, կամ ի՞նչ պիտի մենք խմենք, կամ ի՞նչ պիտի հագնենք:

32 Քանզի ձեր երկնային Հայրը գիտի, որ այս բոլոր բաները ձեզ պետք են:

33 Բայց փնտրեք, նախ, Աստծո «արքայությունը և նրա արդարությունը, և բոլոր այս բաները կարվեն ձեզ:

34 Մի մտահոգվեք, ուրեմն, էգուցվա համար, քանզի էգուցվա օրն ինքը կհոգա իր մասին: Բավական է օրվա համար իր նեղությունը:

ԳԼՈՒԽ 14

Հիսուսը պատվիրում է մի՛ դատեք. խնդրեք Աստծուց. զգուշացե՛ք կեղծ մարգարեներից – Նա փրկություն է խոստանում նրանց, ովքեր կատարում են Հոր կամքը – Համենատեք Մատթեոս Է: Մոտ 34բ. Ք.ծ.հ.:

Եվ այժմ եղավ այնպես, որ երբ Հիսուսը խոսեց այս խոսքերը նա կրկին շրջվեց դեպի բազմությունը, և կրկին բաց արեց իր բերանը նրանց համար՝ ասելով. Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ. Մի «դատեք, որ չդատվեք:

2 Քանզի «ինչ դատաստանով որ դուք դատեք, դո՛ւք պիտի դատվեք. և ինչ չափով, որ չափեք, դրանով կրկին պիտի չափվի ձեզ:

3 Եվ ինչո՞ւ եք տեսնում շյուղը, որը ձեր եղբոր աչքում է, բայց չեք նկատում գերանը, որ ձեր սեփական աչքում է:

4 Կամ ի՞նչպես կասես քո եղբորը. Թող որ հանեն շյուղը քո աչքից, – և ահա, մի գերան է քո սեփական աչքում:

5 Դո՛ւ, կեղծավոր, նախ հանիք «գերանը քո սեփական աչքից. և ապա հստակ կտեսնես շյուղը՝ քո եղբոր աչքից հանելու համար:

6 Մի տվեք այն, ինչ «սուրբ է, շներին, ոչ էլ ձեր մարգարիտները զցեք խոզերի առաջ, որ չլինի թե՛ նրանք կոխկրտեն դրանք իրենց ոտքերի տակ և շրջվեն ու պատառոտեն ձեզ:

7 «Խնդրեք, և ձեզ կտրվի. փնտրեք, և դուք կգտնեք. թակեք, և ձեզ համար կբացվի:

8 Քանզի ամեն մեկը, որ խնդրում է, ստանում է. և նա, ով փնտրում է, գտնում է, և նրան, որ թակում է, կբացվի:

9 Կամ ձեզանից ո՞ր մարդը, որից, իր որդին, եթե հաց ուզի, նրան քար կտա:

10 Կամ եթե նա ձուկ ուզի, մի՞ թե օձ կտա նրան:

11 Եթե ուրեմն դուք, չար լինելով, գիտեք թե ինչպես բարի պարզեցնել տաք ձեր զավակներին, որքան առավել ևս ձեր Հայրը, որը երկնքում է, բարիքներ կտա նրանց, որ խնդրում են իրենից:

12 Հետևաբար, բոլոր բաները, որ դուք կամենում եք, որ մարդիկ

33ա Գուլ. ԺԲ.31:
14 1ա ՋՍԹ, Մատ. է.1–2,
Հովհ. է.24:

2ա Մորմ. 8.19:
5ա Հովհ. Ը.3–11:
6ա ՍՈՒ Սուրբ:

7ա3 Նեփի 27.29:
սու՛ Աղոթք:

ամեն ձեզ, նույն ձևով ^ադուք արեք նրանց, քանզի այս է օրենքը և մարգարեները:

13 Մտեք ^անեղ դռնով. քանզի լայն է դուռը և ^բընդարձակ՝ ճանապարհը, որը տանում է դեպի կործանում, և շատերը կան, որ ներս են մտնում նրանով:

14 Որովհետև նեղ է ^ադուռը և ^բանձուկ է ճանապարհը, որը տանում է դեպի կյանք, և ^գքչերն է, որ գտնում են այն:

15 Ջգուշացեք ^ակեղծ մարգարեներից, ովքեր գալիս են ձեզ մոտ ոչխարների հանդերձներով, բայց ներսից նրանք հոշոտող գայլեր են:

16 Դուք պիտի ճանաչեք նրանց իրենց պտուղներից: Մի՞թե մարդիկ փշերից խաղող են հավաքում, կամ տատասկից՝ թուզ:

17 Գիշտ նույնպես ամեն բարի ծառ առաջ է բերում բարի պտուղ. բայց չար ծառն առաջ է բերում չար պտուղ:

18 Եվ բարի ծառը չի կարող առաջ բերել չար պտուղ, ոչ էլ չար ծառն առաջ կբերի բարի պտուղ:

19 Ամեն ծառ, որ առաջ չի ^աբերում բարի պտուղ, կտրվում է և կրակի մեջ զգվում:

20 Ուստի, իրենց ^ապտուղներից դուք պիտի ճանաչեք նրանց:

21 Ոչ ամեն ոք, ով ասում է ինձ՝ Տե՛ր, Տե՛ր, կմտնի երկնքի արքայությունը. այլ նա, որ անում է իմ ձոր կամքը, որը երկնքում է:

22 Շատերը ^ակասեն ինձ այն օրը. Տե՛ր, Տե՛ր, չէ՞ որ մենք քո

անունով ենք մարգարեացել, և քո անունով ենք դուրս գցել դևեր, և քո անունով արել ենք շատ հրաշագործություններ:

23 Եվ այն ժամանակ ես կհայտարարեմ նրանց. Ես ձեզ երբեք չեմ ^աիմացել. ^բհեռացե՛ք ինձանից, դո՛ւք, որ անօրինություն եք գործում:

24 Հետևաբար, ով որ լսում է իմ այս խոսքերը և կատարում դրանք, ես կմամանեցնեմ նրան մի իմաստուն մարդու, որն իր տունը կառուցեց ^ավեմի վրա,

25 Եվ ^աանձրևը տեղաց, և ջրհեղեղները եկան, և քամիները փչեցին ու զարկեցին այդ տանը. և այն ^բչրնկավ, քանզի վեմի վրա էր կառուցված:

26 Եվ ամեն մեկը, որ լսի իմ այս խոսքերը և չկատարի դրանք, կմամանեցվի մի հիմար մարդու, որն իր տունը կառուցեց ^աավազի վրա,

27 Եվ անձրևը տեղաց, և ջրհեղեղները եկան, և քամիները փչեցին ու զարկեցին այդ տանը. և այն ընկավ, և մեծ էր նրա անկումը:

ԳԼՈՒԽ 15

Հիտուրը հայտարարում է, որ Մովսեսի օրենքը կատարվել է իրենով – Նեփիացիներն ուրիշ ոչխարներն են, որոնց մասին նա խոսեց Երուսաղեմում – Անօրինության պատճառով, Տիրոջ ժողովուրդը Երուսաղեմում,

12ա սուր Կարեկցամբ:
13ա Դուկ. ԺԳ.24,
3 Նեփի 27.33:
բ ՎևՈՒ 132.25:
14ա 1 Նեփի 8.20:
բ 2 Նեփի 9.41, 31.9,
17-18,
վևՈՒ 22.1-4:

գ 1 Նեփի 14.12:
15ա Երեմ. ԲԳ.21-32,
2 Նեփի 28.9, 12, 15:
19ա Մատ. Գ.10,
Ալմա 5.36-41,
վևՈՒ 97.7:
20ա Դուկ. Զ.43-45,
Մոր. 7.5:

22ա Ալմա 5.17:
23ա Մոսիա 5.13, 26.24-27:
բ Դուկ. ԺԳ.27:
24ա սուր Վեմ:
25ա Ալմա 26.6,
Հել. 5.12:
բ Առակ. ԺԲ.7:
26ա 3 Նեփի 11.40:

չգիտի Իսրայելի ցոված ոչխարների մասին: Մտտ 34թ. Ք.ծ.հ.:

Եւ այժմ եղավ այնպես, որ երբ Հիսուսն ավարտեց այս խոսքերը, նա աչք ածեց շուրջըլորը բազմության վրա, և ասաց նրանց. Ահա՛ դուք լսեցիք այն բաները, որոնք ես սովորեցրեցի, մինչև իմ Հոր մոտ համբարձվելը. ուստի, ով որ հիշի իմ այս խոսքերը և ՝կատարի դրանք, նրան ես ՝կբարձրացնեմ վերջին օրը:

2 Եվ եղավ այնպես, որ երբ Հիսուսն ասաց այս խոսքերը, նա զգաց, որ նրանց մեջ կային ոմանք, ովքեր ապշած էին ու զարմացած, թե ինչ էր կամենում նա Մովսեսի ՝օրենքի առնչությամբ. քանզի նրանք չէին հասկացել այն խոսքը, թե հին բաներն անցել են, և որ բոլոր բաները դարձել են նոր:

3 Եվ նա ասաց նրանց. Մի՛ ապշեք, որ ես ասացի ձեզ, որ հին բաներն անցել են, և որ բոլոր բաները դարձել են նոր:

4 Ահա, ես ասում եմ ձեզ, որ ՝օրենքը կատարվել է, որը տրված էր Մովսեսին:

5 Ահա, ՝ես եմ նա, որ տվեց օրենքը, և ես եմ նա, որն ուխտեց իմ Իսրայել ժողովրդի հետ. ուստի օրենքն ինձանով կատարված է, քանզի ես եկել եմ՝ օրենքը ՝կատարելու. հետևաբար այն վերջանում է:

6 Ահա, ես ՝չեմ ջնջում մարգարեներիին, քանզի այն ամենն ինչ չի կատարվել ինձանում, ճշմա-

րիտ եմ ասում ձեզ, բոլորը պիտի կատարվի:

7 Եվ քանի որ ես ասացի ձեզ, որ հին բաներն անցել են, ես չեմ ջնջում այն, ինչ խոսվել է այն բաների վերաբերյալ, որոնք պիտի գան:

8 Քանզի ՝ուխտը, որը ես արել եմ իմ ժողովրդի հետ, ամբողջը չի կատարվել. բայց օրենքը, որը տրված էր Մովսեսին, վերջանում է ինձանում:

9 Ահա, ես եմ ՝օրենքը, և ՝լույսը: Նայեք ինձ, և համբերեք մինչև վերջ, և դուք ՝կապրեք. քանզի նրան, որ ՝համբերում է մինչև վերջ, ես հավերժական կյանք կտամ:

10 Ահա, ես տվել եմ ձեզ ՝պատվիրանները. ուստի, պահեք իմ պատվիրանները: Եվ այս է օրենքը և մարգարեները, քանզի նրանք ճշմարտացիորեն ՝վկայեցին իմ մասին:

11 Եվ այժմ եղավ այնպես, որ երբ Հիսուսը խոսեց այս խոսքերը, նա ասաց այն տասներկուսին, որոնց նա ընտրել էր.

12 Դուք իմ աշակերտներն եք. և դուք լույս եք այս ժողովրդի համար, ովքեր ՝Հովսեփի տան մի մնացորդ են:

13 Եվ ահա, այս է ձեր ժառանգության ՝հողը. և Հայրն է տվել դա ձեզ:

14 Եվ ոչ մի անգամ Հայրն ինձ չի տվել պատվիրան, որ ես դա ՝ասեի ձեր եղբայրներին Երուսաղեմում:

15 1ա Հակ. Ա.22:

բ 1 Նեփի 13.37,
ՎևոՒ 5.35:

2ա սո՛ Մովսեսի օրենք:

4ա Մոսիս 13.27-31,
3 Նեփի 9.17-20:

5ա Ա Կոր. Ժ.1-4,
3 Նեփի 11.14:

սո՛ Եհովա:

բ Ալմա 34.13:

6ա 3 Նեփի 23.1-5:

8ա 3 Նեփի 5.24-26:

9ա 2 Նեփի 26.1:

բ սո՛ Լույս, Քրիստոսի

լույս:

գ Հովհ. ԺԱ.25,

ՎևոՒ 84.44:

դ սո՛ Համբերել:

10ա 3 Նեփի 12.20:

բ Մոսիս 13.33:

12ա սո՛ Հովսեփ՝ Հակորի

որդի:

13ա 1 Նեփի 18.22-23:

14ա 3 Նեփի 5.20:

15 Ոչ էլ երբևէ Հայրը պատվիրան է տվել, որ ես ասեի նրանց Իսրայելի տան ՝ մյուս ցեղերի մասին, որոնց Հայրը տարել էր երկրից դուրս:

16 Այսբանն էր Հայրը պատվիրել ինձ, որ ես ասեի նրանց.

17 Որ ուրիշ ոչխարներ ունեմ, որոնք այս փարախից չեն. նրանց նույնպես ես պիտի բերեմ, և նրանք կլսեն իմ ձայնը. և կլինի մեկ հոտ և մեկ ՝ հովիվ:

18 Եվ արդ, խստապարանոցության և անհավատության պատճառով նրանք ՝ չհասկացան իմ խոսքը. ուստի Հոր կողմից ինձ պատվիրվեց այլևս նրանց ոչինչ չասել այս բանի վերաբերյալ:

19 Բայց, ճշմարիտ եմ ասում ձեզ, որ Հայրը պատվիրել է ինձ, և ես ասում եմ ձեզ, որ դուք առանձնացվել եք նրանց միջից՝ նրանց անօրինության պատճառով. հետևաբար, նրանց անօրինության պատճառով է, որ նրանք չգիտեն ձեր մասին:

20 Եվ ճշմարիտ եմ ասում ձեզ կրկին, որ մյուս ցեղերին Հայրն առանձնացրել է նրանցից. և դա նրանց անօրինության պատճառով է, որ իրենք չգիտեն նրանց մասին:

21 Եվ ճշմարիտ եմ ասում ձեզ, որ դուք եք նրանք, ում մասին ես ասացի. ՝ Ուրիշ ոչխարներ ունեմ, որոնք այս փարախից չեն. նրանց նույնպես ես պիտի բերեմ, և նրանք կլսեն իմ ձայնը. և կլինի մեկ հոտ և մեկ հովիվ:

22 Եվ նրանք չհասկացան ինձ, քանզի նրանք ենթադրեցին, որ դա ՝ հեթանոսներն էին. քանզի նրանք չհասկացան, որ հեթանոսները պետք է ՝ դարձի գային՝ նրանց քարոզելու միջոցով:

23 Եվ նրանք չհասկացան ինձ, երբ ես ասացի. նրանք կլսեն իմ ձայնը. և նրանք չհասկացան ինձ, որ ՝ հեթանոսները երբևէ չեն լսի իմ ձայնը, որ ես չպիտի ինքս հայտնվեմ նրանց, բացի դա լինի ՝ Սուրբ Հոգու միջոցով:

24 Բայց ահա, դուք և՛ լսեցիք ՝ իմ ձայնը, և՛ տեսաք ինձ. և դուք իմ ոչխարներն եք, և դուք համարվում եք նրանց թվում, որոնց Հայրը ՝ Խոսել է ինձ:

ԳԼՈՒԽ 16

Հիտար կայցելի Իսրայելի մյուս կորած ոչխարներին – Վերջին օրերին ավետարանը կտարածվի դեպի հեթանոսները և հետո դեպի Իսրայելի տունը – Տիրոջ ժողովուրդը կտեսնի դեմ հանդիման, երբ նա կրկին կբերի Սիոնը: Մոտ 34թ. Ք.ծ.հ.:

ԵՎ ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, որ ես ունեմ ՝ ուրիշ ոչխարներ, որոնք ոչ այս հողից են, ոչ Երուսաղեմի հողից, ոչ էլ այն շրջակա երկրի որևէ մասերից, որտեղ ես եղել եմ՝ ծառայելու համար:

2 Քանզի նրանք, որոնց մասին ես խոսում եմ, նրանք են, ովքեր դեռևս չեն լսել իմ ձայնը. ոչ էլ ես երբևէ հայտնվել եմ նրանց:

15ա3 Նեփի 16.1–4:
սու Իսրայել –
Իսրայելի տաար
կորած ցեղերը:
17ա սու Բայի հովիվ:
18ա Վևո 10.59:
21ա Հովի. Ժ.14–16:

22ա սու Հեթանոսներ:
բ Գոր. Ժ.34–48:
23ա Մաու. ԺԵ.24:
բ 1 Նեփի 10.11:
սու Սուրբ Հոգի:
24ա Ալմա 5.38,
3 Նեփի 16.1–5:

բ Հովի. 2.37,
Վևո 27.14:
16 1ա 3 Նեփի 15.15:
սու Իսրայել –
Իսրայելի տաար
կորած ցեղերը:

3 Բայց ես պատվիրան եմ ստացել Հորից, որ պետք է գնամ՝ նրանց մոտ, և որ նրանք պիտի լսեն իմ ձայնը, և պիտի համարվեն իմ ոչխարների թվում, որպեսզի լինի մեկ հոտ և մեկ հովիվ. ուստի ես գնում եմ՝ ցույց տալու ինձ նրանց:

4 Եվ ես պատվիրում եմ ձեզ, որ դուք գրեք այս՝ սասածները, իմ գնալուց հետո, որ եթե լինի այնպես, որ Երուսաղեմի իմ ժողովուրդը, նրանք, ովքեր տեսել են ինձ և եղել են ինձ հետ իմ ծառայության ընթացքում, չհարցնեն Հորը՝ իմ անունով, որպեսզի Սուրբ Հոգու միջոցով տեղեկություն ստանան ձեր մասին, և նաև մյուս ցեղերի մասին, որոնց մասին նրանք չգիտեն, որպեսզի այս սասածները, որ դուք կգրեք, պահվեն և հայտնի դարձվեն՝ հեթանոսներին, որպեսզի հեթանոսների լրիվության միջոցով, նրանց սերնդի մնացորդը, որն իրենց անհավատության պատճառով ցրված կլինի հեռու՝ աշխարհի երեսին, կարողանա ի մի բերվել, կամ կարողանա իմ իրենց Քավչի մասին մի՞ իմացության բերվել:

5 Եվ այդ ժամանակ՝ կհավաքեմ ես նրանց աշխարհի չորս կողմերից. և այդ ժամանակ կկատարեմ ես՝ Ռոխտը, որը Հայրն արել է Իսրայելի՝ Գտան ողջ ժողովրդի հետ:

6 Եվ օրհնված են՝ հեթանոսներն իմ հանդեպ իրենց հավատքի պատճառով, Սուրբ Հոգու միջո-

ցով, որը վկայում է նրանց իմ և Հոր մասին:

7 Ահա, իմ հանդեպ իրենց հավատքի պատճառով, և ձեր անհավատության պատճառով, ո՛վ Իսրայելի տուն, Վերջին օրերին ճշմարտությունը կհասնի հեթանոսներին, որպեսզի այս բաների լրիվությունը հայտնի դարձվի նրանց:

8 Բայց, վա՛յ հեթանոսների անհավատներին, ասում է Հայրը, — քանզի չնայած նրանք առաջ են եկել այս երկրի վրայով, և՞ ցրել են իմ ժողովուրդին, որոնք Իսրայելի տնից են. և իմ ժողովուրդը, ովքեր Իսրայելի տնից են, նրանց միջից դուրս է՝ Գցվել և նրանց կողմից ոտնակոխ է արվել.

9 Եվ հեթանոսների հանդեպ Հոր ողորմությունների, և նաև Հոր դատաստանների պատճառով իմ ժողովրդի վրա, որոնք Իսրայելի տնից են, ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, որ այս բոլորից հետո, և երբ ես, իմ ժողովուրդին, որոնք Իսրայելի տնից են, կգարկեմ և կչարչարեմ և՞ կմեռցնեմ և դուրս կգցեմ նրանց միջից, և նրանց կողմից ատելի կդարձնեմ, և սուլոցի ու սասցվածքի առարկա կդարձնեմ նրանց մեջ, —

10 Եվ այսպես է պատվիրում Հայրը, որ ես ասեմ ձեզ. Այն օրը, երբ հեթանոսները մեղանչեն իմ ավետարանի դեմ, և մերժեն իմ ավետարանի լրիվությունը, և բոլոր ազգերից ու ամբողջ աշխարհի

3ա3 Նեփի 17.4:
 4ա սո՛ւ Սուրբ գրքեր:
 ք 1 Նեփի 10.14,
 3 Նեփի 21.6:
 գ Եզեկ. Ի. 42–44,
 3 Նեփի 20.13:
 5ա սո՛ւ Իսրայել –
 Իսրայելի ցրվելը:

ք 3 Նեփի 5.24–26:
 գ 1 Նեփի 22.9,
 3 Նեփի 21.26–29:
 6ա 1 Նեփի 13.30–42,
 2 Նեփի 30.3:
 ք 2 Նեփի 32.5,
 3 Նեփի 11.32, 35–36:
 սո՛ւ Սուրբ Հոգի:

7ա սո՛ւ Ավետարանի
 վերականգնումը:
 8ա 1 Նեփի 13.14,
 Սոմ. 5.9, 15:
 ք 3 Նեփի 20.27–29:
 9ա Ամոս Թ. 1–4:

բոլոր ժողովուրդներից շատ ^աբարձրամտացած լինեն իրենց արտերի հպարտությունից, և լցված լինեն բոլոր ձևի ստերով և խաբեություններով, չարություններով և բոլոր ձևի կեղծավորությամբ, սպանություններով և ^բքահանանեցությամբ, պոռնկություններով և զաղտնի պղծություններով. և եթե նրանք անեն բոլոր այդ բաները և մերժեն իմ ավետարանի լրիվությունը, ահա, ասում է Հայրը, ես կվերցնեմ իմ ավետարանի լրիվությունը նրանց միջից:

11 Եվ այն ժամանակ ես ^ակհիշեմ իմ ուխտը, որը ես արել եմ իմ ժողովրդի հետ, ո՛վ Իսրայելի տուն, և կբերեմ իմ ավետարանը նրանց:

12 Եվ ես ցույց կտամ քեզ, ո՛վ Իսրայելի տուն, որ հեթանոսները զորություն չեն ունենա քեզ վրա. այլ ես կհիշեմ իմ ուխտը քեզ հետ, ո՛վ Իսրայելի տուն, և դուք կգաք իմ ավետարանի լրիվության ^աիմացությանը:

13 Բայց եթե հեթանոսներն ապաշխարեն և վերադառնան ինձ մոտ, ասում է Հայրը, ահա, նրանք կհամարվեն իմ ժողովրդի ^աթվում, ո՛վ Իսրայելի տուն:

14 Եվ ես թույլ չեմ տա իմ ժողովրդին, ովքեր Իսրայելի տնից են, որ անցնեն նրանց միջով, և ոտնակոխ անեն նրանց, ասում է Հայրը:

15 Բայց եթե նրանք չդառնան ինձ մոտ, և ականջ չանեն իմ ձայնին, ես թույլ կտամ նրանց, այո, ես թույլ կտամ իմ ժողովրդին, ո՛վ Իսրայելի տուն, որ նրանք անցնեն

նրանց միջով և ^աոտնակոխ անեն նրանց, և նրանք կլինեն աղի պես, որը կորցրել է իր համը, որն այսուհետև ոչ մի բանի պեսք չէ, բացի դուրս գցվելու և կոխկրավելու իմ ժողովրդի ոտքերի տակ, ո՛վ Իսրայելի տուն:

16 Եւմարիտ, Եւմարիտ եմ ասում ձեզ, այսպես է Հայրը պատվիրել ինձ, որ ես տամ այս ժողովրդին այս հողը՝ իրենց ժառանգության համար:

17 Եվ այն ժամանակ մարգարե Եսայիայի ^ախոսքերը կկատարվեն, որոնք ասում են.

18 ^աՔո ^բպահապանները պիտի բարձրացնեն ձայնը. միաձայն պիտի նրանք երգեն, քանզի նրանք դեմ հանդիման կտեսնեն, երբ Տերը կրկին կբերի Սիոնը:

19 Պոռթկացե՛ք ուրախությամբ, երգե՛ք միասին, դո՛ւք, Երուսաղեմի ամայացած վայրեր. քանզի Տերը մխիթարել է իր ժողովրդին, նա փրկագնել է Երուսաղեմը:

20 Տերը բոլոր ազգերի աչքի առաջ մերկացրել է իր սուրբ բազուկը. և աշխարհի բոլոր ծայրերը պիտի տեսնեն Աստծո փրկությունը:

ԳԼՈՒԽ 17

Հիսուսը պատվիրում է ժողովրդին խորհել իր խոսքերի մասին և աղոթել՝ հասկանալու համար – Նա բժշկում է նրանց հիվանդներին – Նա աղոթում է ժողովրդի համար՝ գործածելով մի լեզու, որը չի կարող

10ա Մորմ. 8.35–41:
բ 2 Նեփի 26.29:
11ա 3 Նեփի 21.1–11,
Մորմ. 5.20:
12ա Հել. 15.12–13:
13ա Գալ. Գ.7, 29,

1 Նեփի 15.13–17,
2 Նեփի 10.18,
3 Նեփի 30.2,
Աբր. 2.9–11:
15ա Միքիա Ե.8–15,
3 Նեփի 20.16–19,

21.12–21,
ՎևոՒ 87.5:
17ա 3 Նեփի 20.11–12:
18ա Ես. ԾԲ.8–10:
բ Եզեկ. Լ.Գ.1–7:
ստ՝ Արթուն լինել:

գրվել – Հրեշտակներ են սպասավորում և կրակն օղակում է նրանց փոքրիկներին: Մտտ 34բ. Ք.ծ.հ.:

Ասւ, արդ եղավ այնպես, որ երբ Հիսուսը խոսեց այս խոսքերը, նա կրկին նայեց շուրջբոլորը՝ բազմության վրա, և նա ասաց նրանց. Ահա, իմ ^աժամանակը մոտ է:

2 Ես զգում եմ, որ դուք թույլ եք, որ դուք չեք կարող ^ահասկանալ իմ բոլոր խոսքերը, որոնք ինձ պատվիրվել է Հորից՝ խոսել ձեզ համար այս պահին:

3 Ուստի, գնացեք ձեր տները, և ^ախորհեք այն բաների վրա, որոնք ես ասացի, և հարցրեք Հորը՝ իմ անունով, որպեսզի դուք կարողանաք հասկանալ, և ^բպատրաստել ձեր մտքերը ^գեզուցվա համար, և ես գալու եմ ձեզ մոտ կրկին:

4 Սակայն այժմ ես ^ագնում եմ Հոր մոտ, և նաև, որ ^բցույց տամ ինձ Իսրայելի ^գկորած ցեղերին, քանզի նրանք կորած չեն Հոր համար, քանզի նա գիտի, թե ուր է ինքը տարել նրանց:

5 Եվ եղավ այնպես, որ երբ Հիսուսն այսպես խոսեց, նա կրկին աչք ածեց շուրջբոլորը՝ բազմության վրա, և տեսավ՝ նրանք արտասվում էին, և նայում էին նրա վրա սևեռուն, կարծես կամենում էին խնդրել նրան՝ մի քիչ էլ մնալ իրենց հետ:

6 Եվ նա ասաց նրանց. Ահա, իմ սիրտը լցված է ^ակարեկցանքով հանդեպ ձեզ:

7 Ունե՞ք ձեր մեզ այնպիսիք, որ հիվանդ են: Բերե՛ք նրանց այստեղ: Ունե՞ք դուք կաղեր, կամ կույրեր, կամ խեղվածներ, կամ հաշմանդամներ, կամ բորոտներ, կամ որ չորացած են, կամ, որ խուլ են, կամ, որ չարչարված են ինչ-որ ձևով: Բերե՛ք նրանց այստեղ, և ես կբժշկեմ նրանց, քանզի ես կարեկցանք ունեմ ձեզ վրա. իմ սիրտը լցված է ողորմությամբ:

8 Քանզի ես զգում եմ, որ դուք փափագում եք, որ ես ցույց տամ ձեզ, թե ինչ եմ արել ձեր եղբայրների համար Երուսաղեմում, քանզի ես տեսնում եմ, որ ձեր ^ահավատքը ^բբավարար է, որ ես բժշկեմ ձեզ:

9 Եվ եղավ այնպես, որ երբ նա այսպես խոսեց, ողջ բազմությունը, միախմբված գնաց առաջ՝ իրենց հիվանդներով և իրենց չարչարվածներով, իրենց կաղերով և իրենց կույրերով և իրենց խուլերով, և բոլոր նրանց հետ, որոնք չարչարված էին ինչ-որ ձևով. և նա ^աբժշկեց նրանցից ամեն մեկին, երբ նրանք առաջ բերվեցին՝ նրա մոտ:

10 Եվ նրանք բոլորը՝ և՛ նրանք, ովքեր բժշկվել էին, և՛ նրանք, ովքեր առողջ էին, վար խոնարհվեցին նրա ոտքերի մոտ և երկըրպագեցին նրան. և բոլոր նրանք, ովքեր կարողացան գալ, քանզի բազմությունը ^ահամբուրում էր նրա ոտքերը, այնպես որ նրանք լվացին նրա ոտքերն իրենց արցունքներով:

11 Եվ եղավ այնպես, որ նա

17 1ա նշ. Հոր մոտ վերադառնալու: Տե՛ս 4-րդ հ.:
2ա Հովհ. ԺԶ.12, ՎևՈՒ 78.17–18:
3ա ՍՈՒ Խորհել: Բ ՎևՈՒ 132.3:

գ 3 Նեփի 19.2:
4ա 3 Նեփի 18.39:
բ 3 Նեփի 16.1–3:
գ ՍՈՒ Իսրայել – Իսրայելի տառը կորած ցեղերը:
6ա ՍՈՒ Կարեկցանք:

8ա Ղուկ. ԺԸ.42:
բ 2 Նեփի 27.23, Եթեր 12.12:
9ա Մոսիա 3.5, 3 Նեփի 26.15:
10ա Ղուկ. Է.38:

պատվիրեց, որ իրենց «փոքր երեխաներին բերեն:

12 Այսպիսով նրանք բերեցին իրենց փոքր երեխաներին և դրեցին նրանց ներքև՝ գետնի վրա, նրա շուրջը, և Հիսուսը կանգնեց մեջտեղում. և բազմությունը ճանապարհ տվեց, մինչև նրանք բոլորը բերվեցին նրա մոտ:

13 Եվ եղավ այնպես, որ երբ նրանք բոլորը բերվեցին, և Հիսուսը կանգնած էր մեջտեղում, նա պատվիրեց բազմությանը, որ նրանք «ծնկի իջնեն գետնի վրա:

14 Եվ եղավ այնպես, որ երբ նրանք ծնկի իջան գետնի վրա, Հիսուսն իր ներսում խռովվեց և ասաց. Հա՛յր, ես «անհանգստացած եմ Իսրայելի տան ժողովրդի ամբարշտության պատճառով:

15 Եվ երբ նա ասաց այս խոսքերը, նա ինքը և ծնկի իջավ գետնի վրա. և ահա նա աղոթեց Հորը, և այն բաները, որ նա աղոթեց, չեն կարող գրվել, և բազմությունը, որը լսեց նրան, վկայություն բերեց:

16 Եվ այս ձևով են նրանք վկայում. «Աչքը երբևէ չի տեսել, ոչ էլ ականջը լսել, նախկինում, այնպիսի մեծ և սքանչելի բաներ, ինչպիսիք մենք տեսանք ու լսեցինք Հիսուսին Հոր հետ խոսելիս.

17 Եվ ոչ մի «լեզու չի կարող խոսել, ոչ էլ կարող է գրվել որևէ մարդու կողմից, ոչ էլ կարող է մարդկանց սրտերը երևակայել այնպիսի մեծ և սքանչելի բաներ, ինչպիսիք մենք թե՛ տեսանք, թե՛ լսեցինք Հիսուսին խոսելիս. և ոչ մեկը չի կարող երևակայել այն ուրախությունը, որը լցրեց մեր

հոգիներն այն պահին, երբ մենք լսում էինք նրան՝ մեզ համար Հորն աղոթելիս:

18 Եվ եղավ այնպես, որ երբ Հիսուսը վերջ դրեց Հորն աղոթելուն, նա վեր կացավ. սակայն այնքան մեծ էր բազմության «ցնծությունը, որ նրանք ուժասպառ էին եղել:

19 Եվ եղավ այնպես, որ Հիսուսը խոսեց նրանց հետ և խնդրեց նրանց վեր կենալ:

20 Եվ նրանք վեր կացան գետնից, և նա ասաց նրանց. Օրհնվա՛ծ եք դուք ձեր հավատքի համար: Եվ այժմ, ահա, իմ ցնծությունը լիակատար է:

21 Եվ երբ նա ասաց այս խոսքերը, նա «արտասվեց, և բազմությունը վկայեց դա, և նա վերցրեց նրանց փոքր երեխաներին, մեկ առ մեկ, և՞ օրհնեց նրանց, և նրանց համար աղոթեց Հորը:

22 Եվ երբ նա արեց այս, նա կրկին արտասվեց.

23 Եվ նա խոսեց բազմության հետ, և ասաց նրանց. Նայե՛ք ձեր փոքրիկներին:

24 Եվ երբ նրանք նայեցին՝ տեսնելու համար, նրանք զցեցին իրենց աչքերը դեպի երկինք, և նրանք տեսան երկինքները բաց, և նրանք տեսան հրեշտակներ՝ իջնելիս երկնքից, կարծես թե կրակի մեջ էին. և նրանք իջան վար և «օղակեցին այն փոքրիկների շուրջը, և նրանք, շուրջանակի, օղակված էին կրակով, և հրեշտակները սպասավորում էին նրանց:

25 Եվ բազմությունը տեսավ և լսեց և վկայեց. և նրանք գիտեն, որ իրենց վկայությունը ճիշտ է,

11ա Մատ. ԺԹ.13–14,
3 Նեփի 26.14, 16:
13ա Ղուկ. ԻԲ.41,
Գոր. Ի.36:

14ա Մովսես 741:
16ա Ես. ԿԴ.4, Ա Կոր. Բ.9,
ՎևՈՒ 76.10, 114–119:
17ա Բ Կոր. ԺԲ.4:

18ա սուր Ուրախություն:
21ա Հովհ. ԺԱ.35:
բ Մար. Ժ.14–16:
24ա Հել. 5.23–24, 43–45:

քանզի նրանք՝ նրանցից բոլորը, տեսան և լսեցին, ամեն մարդ իր համար. և նրանք թվով մոտ երկու հազար և հինգ հարյուր հոգի էին. և նրանք բաղկացած էին տղամարդկանցից, կանանցից և երեխաներից:

ԳԼՈՒԽ 18

Հիսուսը Նեփիացիների մեջ հաստատում է հաղորդությունը – Նրանց պատվիրվում է միշտ աղոթել նրա անունով – Նրանք, ովքեր ուտում են նրա մարմինը և խմում են նրա արյունը անարժանորեն, նզովվում են – Աշակերտներին տրվում է զորություն՝ շնորհելու Սուրբ Հոգին: Մոտ 34թ. Ք.ժ.հ.:

Եվ եղավ այնպես, որ Հիսուսը պատվիրեց իր աշակերտներին, որ նրանք մի քիչ՝ հաց ու գինի բերեն իր համար:

2 Եվ մինչ նրանք գնացել էին հացի և գինու տոևից, նա պատվիրեց բազմությանը, որ նրանք նստեն գետնին:

3 Եվ երբ աշակերտները եկան՝ հացի և գինու հետ, նա վերցրեց հացից, և կտրեց ու օրհնեց այն. և նա տվեց աշակերտներին ու պատվիրեց, որ նրանք ուտեն:

4 Եվ երբ նրանք կերան և հագեցան, նա պատվիրեց, որ նրանք տան բազմությանը:

5 Եվ երբ բազմությունը կերավ և հագեցավ, նա ասաց աշակերտներին. Ահա, մեկը կարգված պիտի լինի ձեր մեջ, և ես կտամ նրան իշխանություն, որ նա՝ կտրի հացն ու օրհնի այն, և տա այն իմ եկեղեցու ժողովրդին՝ բոլոր նրանց,

ովքեր կհավատան և կմկրտվեն իմ անունով:

6 Եվ դուք միշտ պիտի հետևեք, որ անեք դա, ճիշտ ինչպես ես արեցի, ճիշտ ինչպես ես կտրեցի հացը և օրհնեցի այն, և տվեցի ձեզ:

7 Եվ այս պիտի դուք անեք՝ ի՞նչպես եմ տվել ձեզ: Եվ դա կլինի մի վկայություն Հորը, որ դուք միշտ հիշում եք ինձ: Եվ եթե դուք միշտ հիշեք ինձ, դուք իմ Հոգին կունենաք ձեզ հետ:

8 Եվ եղավ այնպես, որ երբ նա ասաց այս խոսքերը, նա պատվիրեց իր աշակերտներին, որ նրանք վերցնեն բաժակի գինուց և խմեն այն, և որ նրանք տան նաև բազմությանը, որ նրանք էլ խմեն այն:

9 Եվ եղավ այնպես, որ նրանք արեցին այդպես, և խմեցին այն ու հագեցան. և նրանք տվեցին բազմությանը, և նրանք խմեցին, և նրանք հագեցան:

10 Եվ երբ աշակերտներն արեցին այս, Հիսուսն ասաց նրանց. Օրհնված եք դուք, այս բանի համար, որ դուք արեցիք, քանզի այս է իմ պատվիրանների կատարումը, և այս վկայում է Հորը, որ դուք հոժար եք անել այն, ինչ ես պատվիրել եմ ձեզ:

11 Եվ այս պիտի դուք միշտ անեք նրանց համար, ովքեր ապաշխարում և մկրտվում են իմ անունով. և դուք պիտի դա անեք ի՞նչպես եմ արյան, որը ես հեղել եմ ձեզ համար, որ դուք կարողանաք վկայել Հորը, որ դուք միշտ հիշում եք ինձ: Եվ եթե դուք միշտ հիշում եք ինձ, դուք իմ Հոգին կունենաք ձեզ հետ:

12 Եվ ես տալիս եմ ձեզ մի

18 1ա Մատ. ԻԶ.26–28:
3ա ՍՈՒ Հաղորդություն:

5ա Մոր. 4:
7ա Մոր. 4.3:

պատվիրան, որ դուք պիտի անեք այն բաները: Եվ եթե դուք միշտ անեք այս բաները, օրհնված եք դուք, քանզի դուք կառուցված եք իմ ^ավեմի վրա:

13 Բայց ովքեր, որ ձեր մեջ անեն ավելի կամ պակաս, քան այս, կառուցված չեն իմ վեմի վրա, այլ կառուցված են ավազե հիմքի վրա. և երբ անձրևը տեղա, և ջրհեղեղները գան, և քամիները փչեն և զարկեն նրանց, նրանք ^ակընկնեն, և դժոխքի ^բդռները բաց են՝ պատրաստ ընդունելու նրանց:

14 Ուստի, օրհնված եք դուք, եթե դուք պահեք իմ պատվիրանները, որոնք Հայրը պատվիրել է ինձ, որ ես տամ ձեզ:

15 Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ՝ դուք պետք է արթուն լինեք և միշտ ^աաղոթեք, որ չլինի թե գայթակղվեք դևի կողմից ու գերության տարվեք նրա կողմից:

16 Եվ ինչպես ես աղոթեցի ձեր մեջ, ճիշտ նույնպես դուք պետք է աղոթեք իմ եկեղեցում՝ իմ ժողովրդի մեջ, ովքեր ասպաշխարում և մկրտվում են իմ անունով: Ահա, ե՛ս եմ ^ալույսը. ես ^բօրհնակ եմ ծառայում ձեզ համար:

17 Եվ եղավ այնպես, որ երբ Հիսուսն ասաց այս խոսքերն իր աշակերտներին, նա կրկին շրջվեց դեպի բազմությունը և ասաց նրանց.

18 Ահա, ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, դուք պետք է արթուն կենաք և միշտ աղոթեք, որ չլինի

թե մտնեք գայթակղության մեջ. քանզի ^աՍատանան փափագում է տիրել ձեզ, որ կարողանա ցորենի պես մաղել ձեզ:

19 Ուստի դուք պետք է միշտ աղոթեք Հորը՝ իմ անունով.

20 Եվ ^աինչ որ դուք խնդրեք Հորը, իմ անունով, ինչ որ ճիշտ է, հավատալով, որ դուք կստանաք, ահա այն կտրվի ձեզ:

21 ^աԱղոթեք Հորը ձեր ընտանիքներում, միշտ իմ անունով, որպեսզի ձեր կանայք և ձեր զավակները կարողանան օրհնվել:

22 Եվ ահա, դուք պիտի հաճախ հավաքվեք միասին. և չպիտի որևէ մարդու արգելեք ձեզ մոտ գալ, երբ միասին հավաքվեք, այլ թույլ տվեք նրանց, որ նրանք կարողանան գալ ձեզ մոտ, և մի արգելեք նրանց.

23 Բայց դուք պիտի ^աաղոթեք նրանց համար, և չպիտի դուրս գցեք նրանց. և եթե այնպես լինի, որ նրանք հաճախ ձեզ մոտ գան, դուք պետք է աղոթեք նրանց համար Հորը՝ իմ անունով:

24 Ուստի, բարձր պահեք ձեր ^ալույսը, որպեսզի այն լույս տա աշխարհին: Ահա, ե՛ս եմ ^բլույսը, որը դուք պետք է բարձր պահեք, ա՛յն, ինչ դուք տեսաք ինձ անելիս: Ահա, դուք տեսաք, որ ես աղոթեցի Հորը, և դուք բոլորդ ակամատես եղաք:

25 Եվ դուք տեսնում եք, որ ես պատվիրեցի, որ ^աձեզանից ոչ ոք հեռու չգնա, այլ ավելի ճիշտ պատվիրեցի, որ դուք գաք ինձ

<p>12ա սո՛ւ Վեմ: 13ա սո՛ւ Ուրացություն: բ 3 Նեփի 11.39: 15ա Ալմա 34.17–27: սո՛ւ Աղոթք: 16ա սո՛ւ Լույս, Քրիստոսի լույս:</p>	<p>բ սո՛ւ Հիսուս Քրիստոս – Հիսուս Քրիստոսի օրհնակը: 18ա Դուկ. ԻԲ.31, 2 Նեփի 2.17–18, ՎևՈԻ 10.22–27: 20ա Մատ. ԻԱ.22,</p>	<p>Հել. 10.5, Մոր. 7.26, ՎևՈԻ 88.63–65: 21ա Ալմա 34.21: 23ա 3 Նեփի 18.30: 24ա Մատ. Ե.16: բ Մոսիա 16.9: 25ա Ալմա 5.33:</p>
--	---	---

մոտ, որպեսզի կարողանաք շոշափել և տեսնել. ճիշտ նույնպես դուք պիտի անեք աշխարհին. և ով որ խախտում է այս պատվիրանը, թույլ է տալիս իրեն գայթակղության տարվելու:

26 Եվ այժմ եղավ այնպես, որ երբ Հիսուսն ասաց այս խոսքերը, նա կրկին ուղղեց իր աչքերն աշակերտների վրա, որոնց նա ընտրել էր, և ասաց նրանց.

27 Ահա, ճշմարիտ, ճշմարիտ են ասում ձեզ, ես տալիս եմ ձեզ ևս մեկ պատվիրան, և այնուհետև ես պետք է գնամ իմ՝ Հոր մոտ, որպեսզի ես կարողանամ կատարել մյուս պատվիրանները, որոնք նա տվել է ինձ:

28 Եվ այժմ ահա, այս է պատվիրանը, որը ես տալիս եմ ձեզ, որ դուք չպետք է թույլ տաք որևէ մեկին գիտակցաբար՝ անարժանորեն ճաշակել իմ մարմնից ու արյունից, երբ դուք սպասավորեք այն.

29 Քանզի ով որ ուտում և խմում է իմ մարմինն ու՝ արյունն՝ անարժանորեն, ուտում և խմում է նզովք իր հոգուն. ուստի, եթե դուք գիտեք, որ որևէ մարդ անարժան է՝ ուտելու և խմելու իմ մարմնից ու արյունից, դուք պետք է արգելեք նրան:

30 Այնուամենայնիվ, դուք չպետք է դուրս ազգեք նրան ձեր միջից, այլ դուք պետք է ծառայեք նրան, և պետք է աղոթեք նրա համար Հորը՝ իմ անունով. և եթե լինի այնպես, որ նա ապաշխարի ու

մկրտվի իմ անունով, այդ դեպքում դուք պիտի ընդունեք նրան, և սպասավորեք նրան իմ մարմնից ու արյունից:

31 Բայց եթե նա չի ապաշխարում, նա չպետք է համարվի իմ ժողովրդի թվում, որ նա չկարողանա կործանել իմ ժողովրդին, քանզի ահա ես գիտեմ՝ իմ ոչխարներին, և նրանք համրված են:

32 Այնուամենայնիվ, դուք չպետք է դուրս գցեք նրան ձեր ժողովարաններից, կամ ձեր պաշտամունքի վայրերից, քանզի այդպիսիներին դուք պետք է շարունակեք ծառայել. քանզի դուք չգիտեք, միգուցե նրանք վերադառնան ու ապաշխարեն, և զան ինձ մոտ սրտի ողջ նվիրվածությամբ, և ես՝ կրթչկեմ նրանց. և դուք կլինեք նրանց փրկության բերելու միջոցը:

33 Հետևաբար, պահեք այս խոսքերը, որոնք ես պատվիրել եմ ձեզ, որպեսզի դուք չգաք՝ դատապարտության տակ. քանզի վա՛յ նրան, ում Հայրը դատապարտում է:

34 Եվ ես տալիս եմ ձեզ այս պատվիրանները վիճաբանությունների պատճառով, որոնք եղել են ձեր մեջ: Եվ օրհնված եք դուք, եթե դուք՝ վիճաբանություններ չունեք ձեր մեջ:

35 Եվ այժմ ես գնում եմ Հոր մոտ, որովհետև անհրաժեշտ է, որ ես գնամ Հոր մոտ՝ հանուն ձեզ:

36 Եվ եղավ այնպես, որ երբ Հիսուսն ավարտեց այս խոսքերը, նա

բ 3 Նեփի 11.14–17:
27ա սո՛՛ Ըստված,
 Ըստվածազուլիս –
 Ըստված Հայրը:
բ 3 Նեփի 16.1–3:
28ա Մորմ. 9.29:
բ Ա Կոր. ԺԱ.27–30:
29ա սո՛՛ Արյուն.

Հաղորդություն:
բ ՎևՈՒ 46.4:
30ա ՎևՈՒ 46.3:
31ա Հովհ. Ժ.14,
 Ալմա 5.38,
 3 Նեփի 15.24:
32ա 3 Նեփի 9.13–14,
 ՎևՈՒ 112.13:

33ա սո՛՛ Դատապարտել,
 Դատապարտություն:
34ա 3 Նեփի 11.28–30:
35ա Ա Հովհ. Բ.1,
 2 Նեփի 2.9,
 Մոր. 7.27–28,
 ՎևՈՒ 29.5:

իր անտրով դիպավ քաշակերտուներին, որոնց ընտրել էր, մեկ առ մեկ, նույնիսկ մինչև դիպավ նրանց բոլորին, և նա խոսում էր նրանց հետ, երբ դիպչում էր նրանց:

37 Եվ բազմությունը չլսեց խոսքերը, որոնք նա խոսեց, ուստի նա չվկայեց. բայց աշակերտները վկայեցին, որ նա տվեց իրենց քորություն՝ շնորհելու Սուրբ Հոգին: Եվ ես ցույց կտամ ձեզ հետագայում, որ այս վկայությունը ճշմարիտ է:

38 Եվ եղավ այնպես, որ երբ Հիսուսը դիպավ նրանց բոլորին, մի անմա եկավ և սովերեց բազմությանը, այնպես որ նրանք չկարողացան տեսնել Հիսուսին:

39 Եվ մինչ նրանք սովերված էին, նա հեռացավ նրանցից և համբարձվեց երկինք: Եվ աշակերտները տեսան ու վկայեցին, որ նա կրկին համբարձվեց երկինք:

ԳԼՈՒԽ 19

Տասներկու աշակերտները ծառայում են ժողովրդին և աղոթում են Սուրբ Հոգին ստանալու համար – Աշակերտները մկրտվում են և ստանում Սուրբ Հոգին և հրեշտակների սպասավորումը – Հիսուսն աղոթում է՝ գործածելով խոսքեր, որ չեն կարող գրվել – Նա վկայություն է բերում այդ Նեփիսացիների անչափ մեծ հավատքի վերաբերյալ: Մոտ 34թ. Ք.ծ.հ.:

Եվ այժմ եղավ այնպես, որ երբ Հիսուսը համբարձվեց երկինք, բազմությունը ցրվեց, և ամեն մարդ վերցրեց իր կնոջն ու իր երեխանե-

րին, և վերադարձավ իր սեփական տունը:

2 Եվ, ամենուր, ժողովրդի մեջ անմիջապես լուր տարածվեց՝ դեռ մինչև մթնելը, որ բազմությունը տեսել է Հիսուսին, և որ նա ծառայել է նրանց, և որ նա կրկին՝ հաջորդ օրը, ցույց է տալու իրեն բազմությանը:

3 Այո, և նույնիսկ ողջ գիշեր, ամենուր լուր տարածվեց Հիսուսի մասին. և նրանք այնքան տարածեցին ժողովրդի մեջ, որ եղան շատերը, այո, մի չափազանց մեծ թիվ, որոնք անչափ տքնեցին ողջ այդ գիշեր, որպեսզի հաջորդ օրը նրանք կարողանային լինել այն տեղում, որտեղ Հիսուսը պետք է իրեն ցույց տար բազմությանը:

4 Եվ եղավ այնպես, որ հաջորդ օրը, երբ բազմությունն ի մի էր հավաքվել, ահա, Նեփին և նրա եղբայրը, որին նա բարձրացրել էր մեռելներից, որի անունը Տիմոթեոս էր, և նրա որդին Լս, որի անունը Հովման էր, և Մաթոնին Լս, և Մաթոնիան՝ նրա եղբայրը, և Կումենը, և Կումենոնին, և Երեմիան, և Սեմնոնը, և Հովմանը, և Մեղեկիան, և Եսայիան, արդ, սրանք էին աշակերտների անունները, որոնց Հիսուսն ընտրել էր, և եղավ այնպես, որ նրանք առաջ գնացին և կանգնեցին բազմության մեջտեղում:

5 Եվ ահա, բազմությունն այնքան մեծ էր, որ նրանք կարգադրեցին, որ այն բաժանվեր տասներկու խմբերի:

6 Եվ տասներկուսը սովորեցնում էին բազմությանը. և ահա, նրանք կարգադրեցին, որ բազմությունը

36ա սո՛ւ Չեռնաղբություն: ք 1 Նեփի 12.7, 3 Նեփի 19.4:

37ա սո՛ւ Չորություն: ք սո՛ւ Սուրբ Հոգու պարգև:

38ա Ել. ԺԹ.9, 16:

ծնկի իջնի՝ երկրի երեսին, և աղոթի Հորը՝ Հիսուսի անունով:

7 Եվ աշակերտները նույնպես աղոթում էին Հորը՝ Հիսուսի անունով: Եվ եղավ այնպես, որ նրանք վեր կացան և ծառայեցին ժողովրդին:

8 Եվ երբ նրանք սովորեցրեցին այն նույն խոսքերը, որոնք Հիսուսն էր խոսել, ոչինչ չփոխելով այն խոսքերից, որոնք Հիսուսն էր ասել, ահա, նրանք կրկին ծնկի իջան և աղոթեցին Հորը՝ Հիսուսի անունով:

9 Եվ նրանք աղոթեցին նրա համար, ինչն իրենք ամենաշատն էին փափագում. և նրանք փափագում էին, որ Սուրբ Հոգին շնորհվեր իրենց:

10 Եվ երբ նրանք այսպես աղոթեցին, նրանք վար գնացին դեպի ջրի եզրը, և բազմությունը հետևեց նրանց:

11 Եվ եղավ այնպես, որ Նեփին ընկղմվեց ջրի մեջ և մկրտվեց:

12 Եվ նա վեր բարձրացավ ջրից, և սկսեց մկրտել: Եվ նա մկրտեց բոլոր նրանց, ում Հիսուսն ընտրել էր:

13 Եվ եղավ այնպես, երբ նրանք բոլորը մկրտվել էին և դուրս եկել ջրից, Սուրբ Հոգին իջավ նրանց վրա, և նրանք լցվեցին Սուրբ Հոգով ու կրակով:

14 Եվ ահա, նրանք կարծես շուրջանակի՝ օղակված էին կրակով. և այն իջնում էր երկնքից, և բազմությունն ականատես եղավ դրան, և վկայեց. և հրեշտակներ վար եկան երկնքից և ծառայեցին նրանց:

15 Եվ եղավ այնպես, որ մինչ

հրեշտակները ծառայում էին աշակերտներին, ահա, Հիսուսը եկավ և կանգնեց մեջտեղում ու ծառայեց նրանց:

16 Եվ եղավ այնպես, որ նա խոսեց բազմության հետ և պատվիրեց նրանց, որ նրանք կրկին ծնկի իջնեն գետնի վրա, և որ իր աշակերտները նույնպես ծնկի իջնեն գետնի վրա:

17 Եվ եղավ այնպես, որ երբ նրանք բոլորը ծնկի էին իջել գետնի վրա, նա պատվիրեց իր աշակերտներին, որ աղոթեն:

18 Եվ ահա, նրանք սկսեցին աղոթել. և նրանք աղոթեցին առ Հիսուսը՝ կոչելով նրան իրենց Տեր և իրենց Աստված:

19 Եվ եղավ այնպես, որ Հիսուսը հեռացավ նրանց միջից, և գնաց մի քիչ հեռու նրանցից, և խոնարհվեց գետնին, և ասաց.

20 Հա՛յր, ես շնորհակալ եմ քեզ, որ դու տվել ես Սուրբ Հոգին նրանց, ում ես ընտրել եմ. և դա առ ինձ նրանց հավատքի շնորհիվ է, որ ես ընտրել եմ նրանց աշխարհից:

21 Հա՛յր, ես աղաչում եմ, որ դու Սուրբ Հոգին շնորհես բոլոր նրանց, ովքեր կհավատան նրանց խոսքերին:

22 Հա՛յր, դու շնորհել ես նրանց Սուրբ Հոգին, որովհետև նրանք հավատում են ինձ. և դու տեսնում ես, որ նրանք հավատում են ինձ, որովհետև դու լսում ես նրանց, և նրանք աղոթում են ինձ. և նրանք աղոթում են ինձ, որովհետև ես նրանց հետ եմ:

23 Եվ այժմ Հա՛յր, ես աղոթում եմ քեզ նրանց համար, և նաև

19 9ա 3 Նեփի 9.20:
11ա 3 Նեփի 11.23:
13ա սո՛ւ Մկրտություն,
Սկրտել:

բ 3 Նեփի 12.2,
Մորմ. 7.10:
սո՛ւ Սուրբ Հոգու
պարգև:

14ա Հել. 5.23–24, 43–45,
3 Նեփի 17.24:

բոլոր նրանց համար, ովքեր կհավատան նրանց խոսքերին, որպեսզի նրանք կարողանան հավատալ ինձ, որպեսզի ես կարողանամ լինել նրանց մեջ, ^աինչպես դու, Հայր, ինձանում ես, որպեսզի մենք կարողանանք լինել ^բմեկ:

24 Եվ եղավ այնպես, որ երբ Հիսուսն այսպես աղոթեց առ Հայրը, նա եկավ աշակերտների մոտ, և ահա, նրանք դեռ շարունակում էին, առանց դադարի, աղոթել նրան. և նրանք չէին ^աավելացնում շատ խոսքեր, քանզի իրենց տրված էր, թե ինչ պիտի ^բաղոթեն, և նրանք լցված էին փափագով:

25 Եվ եղավ այնպես, որ Հիսուսն օրհնեց նրանց, մինչ նրանք աղոթում էին իրեն. և նրա դեմքը ժպտում էր նրանց, և նրա ^ադեմքի լույսը շողում էր նրանց վրա, և ահա նրանք այնպես ^բճերմակ էին, ինչպես Հիսուսի դեմքը և նաև հանդերձները. և ահա նրանց ճերմակությունը գերազանցում էր ամեն ճերմակություն, այո, հիրավի երկրի վրա ոչինչ չէր կարող լինել այնպես ճերմակ, ինչպես նրանց ճերմակությունն էր:

26 Եվ Հիսուսն ասաց նրանց. Շարունակե՛ք աղոթել, չնայած նրանք չէին դադարել աղոթելը:

27 Եվ նա կրկին շրջվեց նրանցից, և գնաց մի փոքր հեռու և խոնարհվեց գետնին. և նա կրկին աղոթեց Հորը՝ ասելով.

28 Հայր, ես շնորհակալ եմ քեզ, որ դու ^ասրբագործել ես նրանց, որոնց ես ընտրել եմ՝ իրենց հավատքի պատճառով, և ես

աղոթում եմ նրանց համար, և նաև նրանց համար, ովքեր կհավատան նրանց խոսքերին, որպեսզի նրանք կարողանան սրբագործվել ինձանով, նրանց խոսքերի հանդեպ հավատքի միջոցով, ճիշտ ինչպես նրանք են սրբագործված ինձանով:

29 Հայր, ես չեմ աղոթում աշխարհի համար, այլ նրանց համար, ում դու տվել ես ինձ ^աաշխարհից՝ իրենց հավատքի պատճառով, որպեսզի նրանք կարողանան սրբագործվել ինձանով, որպեսզի ես կարողանամ լինել նրանցում, ինչպես դու, Հայր, ինձանում ես, որպեսզի մենք մեկ լինենք, որ ես կարողանամ փառավորվել նրանցով:

30 Եվ երբ Հիսուսն ասաց այս խոսքերը, նա կրկին եկավ իր աշակերտների մոտ. և ահա նրանք աղոթում էին սևեռուն, առանց դադարելու, առ նա. և նա ժպտաց նրանց կրկին. և ահա նրանք ^աճերմակ էին, ճիշտ ինչպես Հիսուսը:

31 Եվ եղավ այնպես, որ նա կրկին գնաց մի փոքր հեռու և աղոթեց Հորը.

32 Եվ լեզուն չի կարող խոսել բառերը, որ նա աղոթեց, ոչ էլ կարող են ^ագրվել մարդու կողմից բառերը, որոնք նա աղոթեց:

33 Եվ բազմությունը լսեց և վկայեց. և նրանց սրտերը բաց էին, և նրանք իրենց սրտերում հասկացան այն խոսքերը, որոնք նա աղոթեց:

34 Այնուամենայնիվ, այնքան մեծ և սքանչելի էին խոսքերը,

23ա3 Նեփի 9.15:
բ Հովհ. ԺԷ.21-23:
սուր Միություն:
24ա Մատ. 2.7:
բ ՎևոՒ 46.30:
25աԹվ. 2.23-27:

բ սուր Կերպարանափոխում - Կերպարանափոխված էակներ:
28ա Մոր. 7.48,
ՎևոՒ 50.28-29,
88.74-75:

սուր Անարատ,
Անարատություն:
29ա Հովհ. ԺԷ.6:
30ա Մատ. ԺԷ.2:
32ա ՎևոՒ 76.116:

որոնք նա աղոթեց, որ դրանք չեն կարող գրվել, ոչ էլ կարող են արտաբերվել մարդու կողմից:

35 Եվ եղավ այնպես, որ երբ Հիսուսն ավարտեց աղոթելը, նա կրկին եկավ իր աշակերտների մոտ, և ասաց նրանց. Այսպիսի մեծ Խաղաղություն ես երբեք չեմ տեսել բոլոր հրեաների մեջ. դրա համար ես չկարողացա ցույց տալ նրանց այսպիսի մեծ հրաշքներ՝ իրենց անհավատության պատճառով:

36 Ճշմարիտ եմ ասում ձեզ, չկա նրանցից ոչ մեկը, որ տեսած լինի այսպիսի մեծ բաներ, ինչպիսիք դուք տեսաք. ոչ էլ լսել են նրանք այնպիսի մեծ բաներ, ինչպիսիք դուք լսեցիք:

ԳԼՈՒԽ 20

Հիսուսը հրաշքով հաց ու գինի է մատակարարում և կրկին ժողովրդին սպասավորում հաղորդությունը – Հակոբի մնացորդը կգա Տիրոջ իրենց Աստծո խնացությանը և կժառանգի Ամերիկյան աշխարհամասը – Հիսուսը Մովսեսի պես մարգարե է, և Նեփիացիները մարգարեների զավակներ են – Տիրոջ ժողովրդի մնացածը կհավաքվի Երուսաղեմում: Մոտ 34թ. Ք.ծ.հ.:

Եվ եղավ այնպես, որ նա պատվիրեց բազմությանը և նաև իր աշակերտներին, որ նրանք դադարեն աղոթելը: Եվ նա պատվիրեց նրանց, որ չդադարեն աղոթել իրենց սրտերում:

2 Եվ նա պատվիրեց նրանց, որ

նրանք բարձրանան ու ոտքի կանգնեն: Եվ նրանք բարձրացան ու ոտքի կանգնեցին:

3 Եվ եղավ այնպես, որ նա կրկին կտրեց հացը և օրհնեց այն, և տվեց աշակերտներին, որ ուտեն:

4 Եվ երբ նրանք կերան, նա պատվիրեց նրանց, որ կտրեն հացը և տան բազմությանը:

5 Եվ երբ նրանք տվեցին բազմությանը, նա տվեց նրանց նաև գինի, որ խմեն, և պատվիրեց նրանց, որ նրանք տան բազմությանը:

6 Արդ, ո՛չ Խաց, ո՛չ էլ գինի կար բերված աշակերտների կողմից, ոչ էլ բազմության կողմից.

7 Բայց նա իրոք նրանց հաց տվեց, որ ուտեն, և նաև գինի, որ խմեն:

8 Եվ նա ասաց նրանց. Նա, ով ուտում է այս հացը, ուտում է իմ մարմնից՝ իր հոգու համար. և նա, ով խմում է այս գինուց, խմում է իմ արյունից՝ իր հոգու համար. և նրա հոգին երբեք չպիտի քաղցի, ոչ էլ ծարավի, այլ պիտի հագնա:

9 Արդ, երբ բազմությունը բոլորը, կերան և խմեցին, ահա, նրանք լցվեցին Հոգով. և նրանք բացական չեցին միաձայն, և փառք տվեցին Հիսուսին, որին նրանք և՛ տեսան, և՛ լսեցին:

10 Եվ եղավ այնպես, որ երբ նրանք բոլորը փառք տվեցին Հիսուսին, նա ասաց նրանց. Ահա, այժմ ես ավարտում եմ պատվիրանը, որը Հայրը պատվիրել է ինձ՝ այս ժողովրդի վերաբերյալ, որոնք Իսրայելի տան մի մնացորդ են:

11 Դուք հիշում եք, որ ես խոսեցի

34աԲ Կոր. ԺԲ.4,
3 Նեփի 17.17:
35ա սո՛ւ Հավաք:
բ Մատ. ԺԳ.58:

սո՛ւ Անհավատություն:
20 1ա 2 Նեփի 32.9,
Մոսիա 24.12:
6ա Մատ. ԺԳ.19–21:

7ա Հովհ. 2.9–14:
8ա Հովհ. 2.50–58,
3 Նեփի 18.7:
սո՛ւ Հաղորդություն:

ձեզ հետ և ասացի, որ երբ ^աԵսա-
յիայի ^բխոսքերը կատարվեն, ահա
դրանք գրված են, դուք ունեք
դրանք ձեր առջև, ուստի քննեք
դրանք,

12 Եվ ճշմարիտ, ճշմարիտ եմ
ասում ձեզ, որ երբ դրանք կատար-
վեն, ա՛յդ ժամանակ է իրականա-
ցումն ^աուխտի, որը Հայրն արել էր
իր ժողովրդի հետ, ո՛վ Իսրայելի
տուն:

13 Եվ այն ժամանակ ^ամնացած-
ները, որոնք ^բցրված կլինեն ամե-
նուրեք աշխարհի երեսին, պիտի
^գհավաքվեն արևելքից ու արև-
մուտքից, և հարավից ու հյուսի-
սից. և նրանք կբերվեն Տիրոջ՝
իրենց Աստծո ^դհիմացությամբ, որը
փրկագնել է նրանց:

14 Եվ Հայրը պատվիրել է ինձ,
որ ես տամ ձեզ այս ^աերկիրը՝ ձեր
ժառանգության համար:

15 Եվ ես ասում եմ ձեզ, որ
եթե հեթանոսները ^աչապաշխա-
րեն, այն օրհնությունից հետո, որ
նրանք կստանան իմ ժողովրդին
ցրելուց հետո,

16 Այն ժամանակ, դո՛ւք, որ Հա-
կոբի տան մի մնացորդ եք, առաջ
կզնաք նրանց մեջ. և դուք կլինեք
նրանց մեջ, ովքեր կլինեն բազ-
մաթիվ. և դուք կլինեք նրանց մեջ,
ինչպես ^աառյուծը անտառի գա-
զանների մեջ, և ինչպես կորյունը
ոչխարների հոտերի մեջ, որը,
եթե անցնում է նրանց միջով, և՛

^բոտնատակ է անում, և՛ պատառ-
պատառ է անում, և ոչ մեկը չի
կարող ազատել:

17 Քո ձեռքը պիտի բարձրացած
լինի քո հակառակորդների վրա,
և բոլոր քո թշնամիները պիտի
քնաջնջվեն:

18 Եվ ես ի մի ^ակհավաքեմ
իմ ժողովրդին, ինչպես մի մարդ
ժողովում է որաները կալի մեջ:

19 Զանգի ես կդարձնեմ իմ ժո-
ղովրդին, որի հետ Հայրը ուխտել
է, այո, ես քո ^աեղջյուրը կդարձնեմ
երկաթե և քո ամբակները կդարձ-
նեմ արույրե: Եվ դու շատ ժողո-
վուրդների ջարդուփշուր կանես. և
ես նրանց վաստակը կմվիրաբե-
րեմ Տիրոջը, և նրանց ստացվածքը՝
ամբողջ աշխարհի Տիրոջը: Եվ
ահա, ես եմ նա, ով անում է այդ:

20 Եվ կլինի այնպես, ասում է
Հայրը, որ իմ արդարադատու-
թյան ^ասուրը կկախվի նրանց վրա
այն օրը. և եթե նրանք չապաշ-
խարեն, այն կընկնի նրանց վրա,
ասում է Հայրը, այո, նույնիսկ հե-
թանոսների բոլոր ազգերի վրա:

21 Եվ կլինի այնպես, որ ես
կհաստատեմ իմ ^աժողովրդին, ո՛վ
Իսրայելի տուն:

22 Եվ ահա, այս ժողովրդին ես
կհաստատեմ այս երկրում՝ ի կա-
տարումն ^աուխտի, որը ես արել եմ
քո հոր՝ Հակոբի հետ. և այն պիտի
լինի ^բՆոր Երուսաղեմ: Եվ երկմքի
գորությունները պիտի լինեն այս

11ա2 Նեփի 25.1–5,
Մորմ. 8.23:
բ 3 Նեփի 16.17–20,
23.1–3:
12ա3 Նեփի 15.7–8:
13ա3 Նեփի 16.11–12,
21.2–7:
բ սո՛ւ Իսրայել –
Իսրայելի ցրվելը:
գ սո՛ւ Իսրայել –
Իսրայելի ցրվելը:

դ 3 Նեփի 16.4–5:
14ա սո՛ւ Խոստացված
երկիր:
15ա3 Նեփի 16.10–14:
16ա Մորմ. 5.24,
Վևո՛Բ 19.27:
բ Միքիա Ե.8–9,
3 Նեփի 16.14–15,
21.12:
18ա Միքիա Գ.12:
19ա Միքիա Գ.13:

20ա3 Նեփի 29.4:
21ա3 Նեփի 16.8–15:
22աՅՆ. ԽԹ. 22–26,
Վևո՛Բ 57.2–3:
բ Ես. Բ.2–5,
3 Նեփի 21.23–24,
Եթե՛ր 13.1–12,
Վևո՛Բ 84.2–4:
սո՛ւ Նոր Երուսաղեմ:

ժողովրդի մեջ. այո, հիրավի, ⁹ես կլինեմ ձեր մեջ:

23 Ահա, ես եմ նա, որի մասին Մովսեսը խոսեց՝ ասելով. Տերը՝ ձեր Աստվածը, ինձ նման մի ¹⁰մարգարե կբարձրացնի ձեզ համար՝ ձեր եղբայրներից. նրան պիտի դուք լսեք բոլոր բաներում, ինչ որ նա կասի ձեզ: Եվ կլինի այնպես, որ ամեն հոգի, որ չի լսի այդ մարգարեին՝ պիտի արտաքսվի մարդկանց միջից:

24 Ճշմարիտ եմ ասում ձեզ, այո, և ¹¹բոլոր մարգարեները, սկսած Սամուելից, և նրանք, որ հաջորդել են այնուհետև, բոլոր նրանք, ովքեր խոսել են, վկայել են իմ մասին:

25 Եվ ահա, դուք եք մարգարեների զավակները. և դուք Իսրայելի տնից եք. և դուք այն ¹²ուխտից եք, որ Հայրն արել էր ձեր հայրերի հետ՝ ասելով Աբրահամին. Եվ ¹³քո սերնդով երկրի բոլոր ցեղերը կօրհնվեն:

26 Հայրը նախ ինձ բարձրացնելով ձեզ համար և ուղարկելով՝ օրհնելու ձեզ, հեռու ¹⁴շրջելով ձեզանից ամեն մեկին իր անօրինություններից. և դա՝ որովհետև դուք ուխտի զավակներն եք,

27 Եվ նրանից հետո, երբ դուք օրհնվել եք, այն ժամանակ Հայրը կատարում է ուխտը, որը նա արել էր Աբրահամի հետ՝ ասելով. ¹⁵Քո սերնդով երկրի բոլոր ցեղերը

կօրհնվեն՝ դուրս թափելով հեթանոսների վրա Սուրբ Հոգին՝ իմ միջոցով, մի օրհնություն՝ ¹⁶հեթանոսների վրա, որը կդարձնի նրանք բոլորից ավելի գորեղ, մինչև իսկ իմ ժողովրդին ցրելը, ով Իսրայելի տուն:

28 Եվ նրանք ¹⁷Խաբազան պիտի լինեն այս երկրի ժողովրդի համար: Այնուամենայնիվ, երբ նրանք ստացած կլինեն իմ ավետարանի լրիվությունը, այնուհետև, եթե նրանք կարծրացնեն իրենց սրտերն իմ դեմ, ես կվերադարձնեմ նրանց անօրինություններն իրենց իսկ գլխին, ասում է Հայրը:

29 Եվ ես ¹⁸կհիշեմ ուխտը, որն արել եմ իմ ժողովրդի հետ. և ես ուխտել եմ նրանց հետ, որ ի մի եմ ¹⁹հավաքելու նրանց, ինձ իսկ հարմար ժամանակ, որ ես կրկին նրանց եմ տալու իրենց հայրերի ²⁰երկիրը՝ իրենց ժառանգության համար, որը ²¹Երուսաղեմի հողն է, որը նրանց խոստացված երկիրն է հավիտյան, ասում է Հայրը:

30 Եվ կլինի այնպես, որ ժամանակը կգա, երբ իմ ավետարանի լրիվությունը կքարոզվի նրանց.

31 Եվ նրանք ²²կհավատան ինձ, որ ես եմ Հիսուս Քրիստոսը՝ Աստծո Որդին, և կաղոթեն Հորը՝ իմ անունով:

32 Այն ժամանակ նրանց ²³պահապանները կբարձրացնեն իրենց

22q Ես. ԾԹ.20–21, Մաղ. Գ.1, 3 Նեփի 24.1:
23աԲ Օր. ԺԼ.15–19, Գոր. Գ.22–23, 1 Նեփի 22.20–21:
24աԳոր. Գ.24–26, 1 Նեփի 10.5, Հակոբ 7.11:
25աստ՝ Աբրահամի

ուխտը:
p Ծն. ԺԲ.1–3, ԻԲ.18:
26աԱռակ. ԺԶ.6:
27աԳաղ. Գ.8, 2 Նեփի 29.14, Աբր. 2.9:
p 3 Նեփի 16.6–7:
28ա3 Նեփի 16.8–9:
29աԵս. ԽԳ.21, 3 Նեփի 16.11–12:

p ստ՝ Իսրայել – Իսրայելի ցրվելը:
q Ամովս Թ.14–15:
η ստ՝ Երուսաղեմ:
31ա3 Նեփի 5.21–26, 21.26–29:
32աԵս. ԾԲ.8, 3 Նեփի 16.18–20:
ստ՝ Արթուր լինել:

ծայրն և միաձայն կերգեն. քանզի նրանք կտեսնեն դեմ հանդիման:

33 Այն ժամանակ Հայրը նրանց կրկին ի մի կհավաքի և կտա նրանց Երուսաղեմ՝ որպես իրենց ժառանգության հող:

34 Այն ժամանակ նրանք կպոռթկան ուրախությամբ. *Մերգեք միասին, դո՛ւք, Երուսաղեմի ամառացած վայրեր. քանզի Հայրը մխիթարել է իր ժողովրդին, նա փրկագնել է Երուսաղեմը:*

35 Հայրը բոլոր ազգերի աչքի առաջ մերկացրել է իր սուրբ բազուկը. և աշխարհի բոլոր ծայրերը պիտի տեսնեն Հոր փրկությունը. և Հայրը և ես մեկ ենք:

36 Եվ այն ժամանակ կիրակաճանա այն, ինչը գրված է. *Չարքնիր, զարթնիր կրկին, և հազիր զորությունդ, ո՛վ Սիոն. հազիր գեղեցիկ հանդերձներդ, ո՛վ Երուսաղեմ, տո՛ւրք քաղաք, քանզի այսուհետև այլևս քո մեջ չի մտնի անթլփատը և անմաքուրը:*

37 Թափ տուր փռշիկ քեզանից. ելիր, նստիր, ո՛վ Երուսաղեմ. արձակիր պարանոցիդ կապերը, ո՛վ Սիոնի գերի աղջիկ:

38 Քանզի այսպես է ասում Տերը. Դուք ոչնչի համար ծախվեցիք, և դուք պիտի փրկագնվեք առանց փողի:

39 Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, որ իմ ժողովուրդը պիտի իմանա իմ անունը. այո, այն օրը նրանք պիտի իմանան, որ ես եմ նա, որ խոսում է:

40 Եվ այն ժամանակ նրանք պիտի ասեն. *Որքա՛ն գեղեցիկ են*

սարերի վրա ոտքերը նրա, որ բերում է ավետիք նրանց, որ Քրիստոսարակում է խաղաղություն. որ բերում է նրանց ավետիք բարիքի, որ հրատարակում է փրկություն. որ ասում է Սիոնին՝ Քո Աստվածն է քազավորում:

41 Եվ այն ժամանակ մի աղաղակ կլսվի. *՛Հեռացե՛ք, հեռացե՛ք, դո՛ւրս եկե՛ք այնտեղից, մի դիպչե՛ք նրան, ինչն Քանմաքուր է. դո՛ւրս գնացե՛ք նրա միջից. եղե՛ք Պա՛քուր, դո՛ւք, որ կրում եք Տիրոջ սպասները:*

42 Քանզի դուք *՛չպիտի դուրս գնաք հապճեպ, ոչ էլ գնաք փախչելով. քանզի Տերը ձեր առաջից կգնա, և Իսրայելի Աստվածը պիտի լինի ձեր թիկնապահը:*

43 Ահա, իմ ծառան պիտի վարվի խելամտորեն. նա պիտի բարձրացվի և փառաբանվի, և լինի շատ բարձր:

44 Ինչպես որ շատերն ապշեցին քեզ վրա՝ նրա տեսքն այնպես խաթարված էր, ավելի շատ, քան որևէ մարդունը, և նրա կերպարանքը՝ ավելի շատ, քան մարդկանց որդիներինը,

45 Այսպես պիտի նա *՛ցողի շատ ազգերի. քազավորները պիտի փակեն իրենց բերանները նրա առջև, քանզի այն, ինչ չէր ասվել իրենց, նրանք պիտի տեսնեն. և այն, ինչ նրանք չէին լսել, նրանք պիտի հասկանան:*

46 Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, բոլոր այս բաները պիտի անկասկած գան, ճիշտ ինչպես Հայրը պատվիրել է ինձ: Այն

<p>34աԵս. ԾԲ.9: 36աԵս. ԾԲ.1-3, ՎևոՒ 113.7-10: սոՒ Սիոն: 40աԵս. ԾԲ.7, Նսում Ա.15,</p>	<p>Մոսիա 15.13-18, ՎևոՒ 128.19: p Մար. ԺԳ.10, 1 Նեփի 13.37: 41աԵս. ԾԲ.11-15:</p>	<p>p սոՒ Մաքուր և Անմաքուր: q ՎևոՒ 133.5: 42ա3 Նեփի 21.29: 45աԵս. ԾԲ.15:</p>
--	--	--

ժամանակ այս ուխտը, որը Հայրը ուխտել է իր ժողովրդի հետ, պիտի կատարվի. և այն ժամանակ Մերուսաղենը պիտի կրկին բնակեցվի իմ ժողովրդով, և այն պիտի լինի նրանց ժառանգության հողը:

ԳԼՈՒԽ 21

Իսրայելը կհավաքվի, երբ Մորմոնի Գիրքն ի հայտ գա – Հեթանոսները կհաստատվեն, որպես մի ազատ ժողովուրդ, Ամերիկայում – Նրանք կփրկվեն, եթե հավատան ու հնազանդվեն. այլապես, նրանք կարտաքսվեն և կկործանվեն – Իսրայելը կկառուցի Նոր Երուսաղենը, և կորած ցեղերը կվերադառնան: Մոտ 34թ. Ք.ծ.հ.:

Եվ ճշմարիտ են ասում ձեզ, ես տալիս եմ ձեզ մի նշան, որպեսզի դուք կարողանաք իմանալ այն ժամանակը, երբ այս բաները մոտ կլինեն կատարվելու, երբ ես իմ ժողովրդին կժողովման իրենց երկարատև ցրումից, ո՛վ Իսրայելի տուն, և կհաստատեմ կրկին նրանց մեջ իմ Սիոնը.

2 Եվ ահա, այս է այն, ինչը ես կտամ ձեզ որպես մի նշան, քանզի ճշմարիտ են ասում ձեզ, որ երբ այս բաները, որոնք ես հայտարարում եմ ձեզ, և որոնք ես ինքս կհայտարարեմ ձեզ այսուհետև, և Սուրբ Հոգու զորությամբ, որը կտրվի ձեզ՝ Հոր կողմից, հայտնի կդարձվեն հեթանոսներին, որպեսզի նրանք կարողանան իմա-

նալ այս ժողովրդի մասին, ովքեր Հակոբի տան մի մնացորդ են, և իմ այս ժողովրդի մասին, ովքեր կցրվեն նրանց կողմից.

3 Ճշմարիտ, ճշմարիտ են ասում ձեզ, երբ Մայս բաները նրանց հայտնի կդարձվեն Հոր կողմից, և առաջ կգան Հոր կողմից նրանցից ձեզ.

4 Քանզի դա Հոր իմաստությամբ է, որ նրանք պիտի հաստատվեն այս երկրում, և Հոր զորությամբ հիմնադրվեն, որպես մի Մազատ ժողովուրդ, որ այս բաները կարողանան առաջ գալ նրանցից՝ ձեր սերնդի մնացորդին, որ Հոր Քուխտը կարողանա կատարվել, որը նա ուխտել է իր ժողովրդի հետ, ո՛վ Իսրայելի տուն.

5 Հետևաբար, երբ այս գործերը և այն գործերը, որոնք կգործվեն ձեր մեջ այսուհետև, առաջ գան Մեթանոսներից՝ ձեր Քսերնդին, որոնք անօրինության պատճառով ընկած կլինեն անհավատության մեջ.

6 Քանզի, այսպես է անհրաժեշտ Հորը, որ դա առաջ գա Մեթանոսներից, որպեսզի նա կարողանա ցույց տալ իր զորությունը հեթանոսներին, այն նպատակով՝ որ հեթանոսները, եթե նրանք չկարծրացնեն իրենց սրտերը, որ նրանք ապաշխարեն և գան ինձ մոտ, և մկրտվեն իմ անունով, և իմանան իմ վարդապետության ճշմարիտ կետերը, որպեսզի նրանք կարողանան Քհամարվել իմ ժողովրդի թվում, ո՛վ Իսրայելի տուն.

46ա Եթեր 13.5, 11:
21 1ա սուր Վերջին օրեր, Եսին օրեր:
3ա Եթեր 4.17,
ՉՍ–Պ 1.34–36:
4ա 1 Նեփի 13.17–19,
ՎևոՒ 101.77–80:

բ Մորմ. 5.20:
սուր Աբրահամի ուխտը:
5ա 3 Նեփի 26.8:
բ 2 Նեփի 30.4–5,
Մորմ. 5.15,
ՎևոՒ 3.18–19:

6ա 1 Նեփի 10.14,
Հակոբ 5.54,
3 Նեփի 16.4–7:
բ Գաղ. Գ.7, 29,
3 Նեփի 16.13,
Աբբ. 2.9–11:

7 Եվ երբ այս բաները տեղի ունենան, այնպես որ քո "սերունդը սկսի իմանալ այս բաները, դա մի նշան կլինի նրանց համար, որպեսզի նրանք կարողանան իմանալ, որ Հոր գործն արդեն սկսվել է՝ ի կատարումն ուխտի, որը նա արել էր ժողովրդին, ովքեր Իսրայելի տնից են:

8 Եվ երբ այդ օրը գա, կլինի այնպես, որ թագավորները կփակեն իրենց բերանները. քանզի այն, ինչ չէր ասվել իրենց, նրանք պիտի տեսնեն. և այն, ինչ նրանք չէին լսել, նրանք պիտի հասկանան:

9 Քանզի այն օրը, Հայրը հանուն ինձ կգործի մի գործ, որը մեծ և "գարնանալի գործ կլինի նրանց մեջ. և նրանց մեջ կլինեն այնպիսիք, ովքեր չեն հավատա դրան, չնայած մի մարդ կհայտարարի դա նրանց:

10 Բայց ահա, իմ ծառայի կյանքը կլինի իմ ձեռքում. հետևաբար, նրանք չպիտի վնասեն նրան, թեև նա "խաթարված կլինի նրանց պատճառով: Սակայն ես կբժշկեմ նրան, քանզի ես ցույց կտամ նրանց, որ ՚իմ իմաստությունն ավելի մեծ է, քան դևի խորամանկությունը:

11 Հետևաբար, կլինի այնպես, որ ովքեր չեն հավատա իմ խոսքերին, որ՝ Հիսուս Քրիստոսն էմ, որոնք Հայրը կկարգադրի, որ "նա առաջ բերի հեթանոսների համար, և նրան գործություն կտա, որ նա այդ խոսքերն առաջ բերի հեթանոսների համար (կկատարվի ճիշտ

ինչպես Մովսեսն է ասել), նրանք ՚կկտրվեն ուխտի իմ ժողովրդից:

12 Եվ իմ ժողովուրդը, որը Հակոբի մի մնացորդ է, կլինի հեթանոսների մեջ, այո, նրանց մեջտեղում, ինչպես մի "առյուծ անտառի գազանների մեջ, ինչպես մի կորյուն ոչխարների հոտերի մեջ, որը, եթե անցնում է նրանց միջով, և՛ ՚ոտնատակ է անում, և՛ պատառ-պատառ անում, և ոչ մեկը չի կարող ազատել:

13 Նրա ձեռքը բարձրացված կլինի իր հակառակորդների վրա, և նրա բռնոր թշնամիները կբնաջնջվեն:

14 Այո, վա՛յ լինի հեթանոսներին, եթե նրանք "չապաշխարեն. քանզի այն օրը կլինի այնպես, ասում է Հայրը, որ ես բնաջինջ կանեմ քո միջից քո ձիերին, և կկործանեմ քո կառքերը.

15 Եվ ես բնաջինջ կանեմ քո երկրի քաղաքները և կխորտակեմ քո բոլոր բերդերը.

16 Եվ ես քո երկրից բնաջինջ կանեմ մոգությունը, և դու այլևս չես ունենա գուշակողներ.

17 Քո "քանդակած պատկերները ես նույնպես բնաջինջ կանեմ, և քո կանգուն արձանները՝ քո միջից, և դու այլևս չպիտի երկրպագես քո ձեռքերի գործերը.

18 Եվ քո միջից, ես արմատախիլ եմ անելու քո պուրակները. նմանապես ես կործանելու եմ քո քաղաքները:

19 Եվ կլինի այնպես, որ բոլոր "ստերը և խաբեությունները,

7ա3 Նեփի 5.21–26:
9ա Ես. ԻԹ. 13,
Գոր. ԺԳ. 41,
1 Նեփի 22.8:
սու Ավետարանի
վերականգնումը:
10ա ՎևոՒ 135.1–3:

բ ՎևոՒ 10.43:
11ա2 Նեփի 3.6–15,
Մորմ. 8.16, 25:
բ ՎևոՒ 1.14:
12ա Միքիա Ե.8–15,
3 Նեփի 20.16:
բ 3 Նեփի 16.13–15:

14ա2 Նեփի 10.18, 33.9:
17ա Ել. Ի.3–4,
Մոսիա 13.12–13,
ՎևոՒ 1.16:
սու Կռապաշտություն:
19ա3 Նեփի 30.2:

նախանձությունները և կռիվները, քահանանեգումները և պոռնկությունները պիտի վերացվեն:

20 Քանզի կլինի այնպես, ասում է Հայրը, որ այն օրը, ով որ չապաշխարի և չգա դեպի իմ Սիրելի Որդին, նրանց ես կարտաքսեմ իմ ժողովրդի միջից, ո՛վ Իսրայելի տուն.

21 Եվ ես իրագործելու եմ վրեժխնդրություն և կատաղություն նրանց վրա, ճիշտ ինչպես հեթանոսների վրա, այնպիսին, որ նրանք չեն լսել:

22 Բայց, եթե նրանք ապաշխարեն և ականջ անեն իմ խոսքերին, և չկարծրացնեն իրենց սրտերը, ես ՝կհիմնեմ իմ եկեղեցին նրանց մեջ, և նրանք կմտնեն ուխտի մեջ և ՝կհամարվեն Հակոբի այս մնացորդի թվում, որոնց ես տվել եմ այս երկիրը՝ իրենց ժառանգության համար.

23 Եվ նրանք կաջակցեն իմ ժողովրդին՝ Հակոբի մնացորդին, և նաև Իսրայելի տնից բոլոր նրանց, ովքեր կգան, որպեսզի նրանք կարողանան կառուցել մի քաղաք, որը կկոչվի ՝Նոր Երուսաղեմ:

24 Եվ այն ժամանակ նրանք կաջակցեն իմ ժողովրդին, որպեսզի նրանք կարողանան ժողովվել, ովքեր ցրված են ողջ երկրի երեսին, դեպի Նոր Երուսաղեմ:

25 Եվ այն ժամանակ, երկնքի ՝գորությունը պիտի իջնի նրանց մեջ. և ՝ես նույնպես կլինեմ նրանց մեջ:

26 Եվ այն ժամանակ, այն օրը

Հոր աշխատանքը կսկսվի, այսինքն՝ երբ այս ավետարանը կքարոզվի այս ժողովրդի մնացորդի մեջ: Ծշմարիտ եմ ասում ձեզ, այն օրը Հոր գործը ՝կսկսվի իմ ժողովրդի բոլոր ցրվածների մեջ, այո, այսինքն՝ այն ցեղերի, որոնք ՝կորել են, որոնց՝ Հայրը հեռու է տարել Երուսաղեմից:

27 Այո, գործը կսկսվի իմ ժողովրդի բոլոր ՝ցրվածների մեջ՝ Հոր մասնակցությամբ, պատրաստելու ճանապարհը, որով նրանք կարող են գալ ինձ մոտ, որպեսզի նրանք կարողանան կանչել առ Հայրը իմ անունով:

28 Այո, և այն ժամանակ գործը կսկսվի, Հոր մասնակցությամբ, բոլոր ազգերի մեջ, պատրաստելով ճանապարհը, որի միջոցով իր ժողովուրդը կարող է ՝ժողովվել տուն՝ դեպի իրենց ժառանգության հողը:

29 Եվ նրանք դուրս պիտի գան բոլոր ազգերից. և նրանք չպիտի դուրս գան ՝հապճեպ, ոչ էլ գնան փախչելով, քանզի ես կգնամ նրանց առջևից, ասում է Հայրը, և ես կլինեմ նրանց թիկնապահը:

ԳԼՈՒԽ 22

Վերջին օրերին Միոնը և նրա ցգերը կհաստատվեն, և Իսրայելը կհավաքվի՝ ողորմությամբ և քնքշությամբ – Նրանք կհաղթանակեն – Համեմատեք Եսայիա ԾԴ: Մոտ 34թ. Բ.ծ.հ.:

22ա սո՛Ւ Տնտեսություն:
բ 2 Նեփի 10.18–19,
3 Նեփի 16.13:
23ա 3 Նեփի 20.22,
Եթեր 13.1–12:
սո՛Ւ Նոր Երուսաղեմ:
25ա 1 Նեփի 13.37:

բ Ես. Բ.2–4,
3 Նեփի 24.1:
26ա 1 Նեփի 14.17,
3 Նեփի 21.6–7:
բ սո՛Ւ Իսրայել –
Իսրայելի տասը
կորած ցեղերը:

27ա 3 Նեփի 16.4–5:
28ա սո՛Ւ Իսրայել –
Իսրայելի ցովերը:
29ա Ես. ԾԲ.12,
3 Նեփի 20.42:

Եւ այն ժամանակ պիտի կատարվի այն, ինչը գրված է. Երգիր, ո՛վ ամուլ, դո՛ւ, որ չէիր ծնում. թնդա՛ տերգելով, և աղաղակիր բարձրա՛ծայն, դո՛ւ, որ զավակի երկունք չէիր քաշել. քանզի չբերի զավակներն ավելի շատ են, քան ամուսնացած կնոջ զավակները, ասում է Տերը:

2 Մեծացրու քո վրանի տեղը, և թող քո կացարանի վարագույրները նրանք հեռու տարածեն. մի խնայիր, երկարացրու պարաններդ, և ամրացրու՝ ցցերդ.

3 Քանզի դու պիտի դուրս խուժես դեպի աջ և դեպի ձախ, և քո սերունդը պիտի ժառանգի՝ հեթանոսներին և ամայի քաղաքները դարձնի բնակեցված:

4 Մի վախեցիր, քանզի դու չպիտի ամաչես. ոչ էլ նվաստանաս, քանզի դու չպիտի՝ խայտառակվես. քանզի դու պիտի մոռանաս քո երիտասարդության խայտառակությունը և չպիտի հիշես քո երիտասարդության նախատիները, և այլևս չպիտի հիշես քո այրիության նախատիները:

5 Քանզի քո արարիչը, քո ամուսինը, Չորաց Տեր է նրա անունը. և քո Քավիչը՝ Իսրայելի Սուրբը, ամբողջ երկրի Աստված պիտի նա կոչվի:

6 Քանզի Տերը կանչել է քեզ, որպես մի կին՝ հոգով լքված ու դառնացած, և երիտասարդ մի կին, երբ դու մերժված էիր, ասում է քո Աստվածը:

7 Մի կարճ պահ են ես լքել

քեզ, բայց մեծ ողորմություններով կժողովեմ ես քեզ:

8 Մի փոքր ցամաքմա՛ր ես թաքրեցի իմ երեսը քեզանից՝ մի պահ, բայց հավիտենական բարությանը ես՝ ողորմություն կունենամ քեզ վրա, ասում է Տերը՝ քո Քավիչը:

9 Քանզի՝ սա Նոյի՝ ջրերի պես է ինձ համար, քանզի ինչպես ես երդվեցի, որ Նոյի ջրերն այլևս չպիտի ծածկեն երկիրը, նմանապես երդվել են ես, որ ես չեմ զայրանալու քեզ վրա:

10 Քանզի՝ լեռները պիտի հեռանան և բլուրները վերանան, բայց իմ բարությունը չպիտի թեռանա քեզանից, ոչ էլ իմ խաղաղության ուխտը պիտի վերանա, ասում է Տերը, որը ողորմություն ունի քեզ վրա:

11 Ո՛վ դու, չարչարված, փոթորիկից վայր զգված և անմխիթար: Ահա ես կշարեմ քո՝ քարերը գեղեցիկ գույներով, և կդնեմ քո հիմքը չափյուղաներով:

12 Եվ ես կսարքեմ քո պատուհաններն ազատից և քո դռները՝ կարկեհանից, և բոլոր քո եզրապատերը՝ պատվական քարերից:

13 Եվ՝ բոլոր քո զավակները պիտի ուսուցանվեն Տիրոջ կողմից. և մեծ պիտի լինի քո զավակների խաղաղությունը:

14 ՍԱրդարությամբ պիտի դու հաստատվես. դու հեռու պիտի լինես բռնությունից, քանզի դու չպիտի վախենաս, և հեռու պիտի լինես սուկումից, քանզի այն չպիտի գա քեզ մոտիկ:

15 Ահա, անշուշտ, նրանք ի մի

22 1ա սուր Երգել:
2ա սուր Ցից:
3ա սուր Հեթանոսներ:
4ա 2 Նեփի 6.7, 13:
8ա սուր Ողորմած,
Ողորմություն:

9ա Ես. ԾԳ.9:
բ սուր Նոյի ժամանակի ջրհեղեղը:
10ա Ես. Խ.4:
բ Սաղ. ԴԳ.14,
ՎևՈՒ 35.25:

11ա Հայտ. ԻԱ.18-21:
13ա Երեմ. ԼԱ.33-34:
14ա սուր Արդար,
Արդարություն:

պիտի հավաքվեն քո դեմ՝ ոչ իմ կողմից. ովքեր որ ի մի հավաքվեն քո դեմ, կրնկեն հանուն քեզ:

16 Ահա, ես եմ ստեղծել դարբնին, որը փշուր է կրակի միջի ամուլաները, և որը գործիք է ստեղծում իր աշխատանքի համար. և ես եմ ստեղծել ավերողին, որ կործանի:

17 Ոչ մի գեներ, որ ստեղծվել է քո դեմ, չպիտի հաջողվի. և ամեն լեզու, որ կզագրախոսի քո դեմ՝ դատաստանով, դու պիտի դատապարտես: Այս է Տիրոջ ծառաների ծառանգությունը, և նրանց արդարությունն ինձանից է, ասում է Տերը:

ԳԼՈՒԽ 23

Հիտուը հաստատում է Եսայիայի խոսքերը – Նա պատվիրում է ժողովրդին ուսումնասիրել մարգարեներին – Սամուել Լամանացու խոսքերը, հարության մասին, ավելացվում են նրանց հիշատակարաններում: Մոտ 34բ. Բ.ժ.հ.:

ԵՎ այժմ, ահա, ես ասում եմ ձեզ, որ դուք պարտավոր եք՝ քննել այս բաները: Այո, մի պատվիրան եմ տալիս ձեզ, որ դուք ջանասիրաբար խորաքննեք այս բաները. քանզի մե՞ծ եմ՝ Եսայիայի խոսքերը:

2 Քանզի, անշուշտ, նա խոսել է բոլոր բաների առնչությամբ՝ իմ ժողովրդի վերաբերյալ, որոնք Իսրայելի տնից են. հետևաբար, անպայման պետք է որ նա խոսեր նաև հեթանոսների համար:

3 Եվ բոլոր բաները, որ նա խոսել է, եղե՛լ են և՛ «կլիներ, հենց այն խոսքերի համաձայն, որոնք նա խոսել է:

4 Հետևաբար, ուշք դարձրեք իմ խոսքերին. գրեք այն բաները, որոնք ես ասել եմ ձեզ. և համաձայն Հոր կամքի ու ժամանակի, դրանք կհայտարարվեն հեթանոսներին:

5 Եվ ով որ ականջ անի իմ խոսքերին, և ապաշխարի, և մկրտվի, նույնը պիտի փրկվի: Խորաքննեք՝ մարգարեներին, քանզի շատերը կան, որ վկայում են այս բաների մասին:

6 Եվ այժմ եղավ այնպես, որ երբ Հիտուն ասաց այս խոսքերը, նա կրկին ասաց նրանց, հետո, երբ նա մեկնաբանեց նրանց բոլոր սուրբ գրությունները, որոնք նրանք ստացել էին, նա ասաց նրանց. Ահա, այլ սուրբ գրություններ ես կկամենայի, որ դուք գրեք, որոնք դուք չունեք:

7 Եվ եղավ այնպես, որ նա ասաց Նեփիին. Առաջ բեր հիշատակարանը, որ դու պահել ես:

8 Եվ երբ Նեփին առաջ բերեց հիշատակարանները, և դրեց դրանք նրա առջև, նա աչք ածեց դրանք և ասաց.

9 Շշմարիտ եմ ասում ձեզ՝ ես պատվիրեցի իմ ծառա՝ Սամուել Լամանացուն, որ նա վկայի այս ժողովրդին, որ այն օրը, երբ Հայրը փառավորի իր անունն ինձանով, որ կլինեն շատ Գարբեր, որ՝ կրթարձրանան մեռելներից, և կհայտնվեն շատերին, և կծառա-

23 1ա սո՛Ւ Սուրբ գրքեր:
բ 2 Նեփի 25.1–5,
Մոմ. 8.23:
սո՛Ւ Եսայիա:

3ա3 Նեփի 20.11–12:
5ա Ղուկ. ԻԳ.25–27:
9ա Հեկ. 13.2:
բ Հեկ. 14.25:

գ սո՛Ւ Սուրբ:
դ Մատ. ԻԷ.52–53:
սո՛Ւ Հարություն:

յեն նրանց: Եվ նա հարցրեց նրանց. Մի՞թե դա այդպես չէր:

10 Եվ նրա աշակերտները պատասխանեցին նրան և ասացին. Այո՛, Տեր, Սամուելը մարգարեացավ, համաձայն քո խոսքերի, և դրանք բոլորը կատարվեցին:

11 Եվ Հիսուսն ասաց նրանց. Ի՞նչպես է, որ դուք չեք գրել այս բանը, որ շատ սրբեր բարձրացան և հայտնվեցին շատերին և ծառայեցին նրանց:

12 Եվ եղավ այնպես, որ Նեփին հիշեց, որ այս բանը գրի չէր առնվել:

13 Եվ եղավ այնպես, որ Հիսուսը պատվիրեց, որ դա գրվեր. ուստի այն գրվեց, ինչպես որ նա պատվիրեց:

14 Եվ այժմ եղավ այնպես, որ երբ Հիսուսը մեկնաբանեց բոլոր սուրբ գրությունները, որ նրանք գրել էին, որպես մեկ ամբողջություն, նա պատվիրեց նրանց, որ նրանք սովորեցնեն այն բաները, որոնք նա մեկնաբանել էր նրանց:

ԳԼՈՒԽ 24

Տիրոջ սուրհանդակը կատարաստի ճանապարհը Երկրորդ Գալստի համար – Քրիստոսը կնտի դատաստանի – Իսրայելին պատվիրվում է վճարել տասանորդներ ու ընծաներ – Մի հիշատակի գիրք է պահվում – Համեմատեք Մաղաքիա Գ: Մոտ 34բ. Բ.ծ.հ.:

Եվ եղավ այնպես, որ նա պատվիրեց նրանց, որ նրանք գրեն այն

խոսքերը, որոնք Հայրը տվել էր Մաղաքիային, որն ինքը պիտի ասեր նրանց: Եվ եղավ այնպես, որ հետո, երբ դրանք գրվեցին, նա մեկնաբանեց դրանք: Եվ սրանք են այն խոսքերը, որոնք նա հարորդեց նրանց՝ ասելով. Այսպես ասաց Հայրը Մաղաքիային. Ահա, ես կողարկեմ իմ՝ սուրհանդակին, և նա կպատրաստի ճանապարհն իմ առաջ, և Տերը, ում դուք փնտրում եք, հանկարծակի պիտի գա իր տաճարը, այսինքն՝ ուխտի սուրհանդակը, որով դուք հրճվում եք. ահա, նա պիտի գա, ասում է Չորաց Տերը:

2 Բայց ո՞վ կարող է ՝ղիմանալ նրա գալստյան օրվան, և ո՞վ պիտի կանգնի, երբ նա հայտնվի: Քանզի նա նման է՝ գտիչի կրակին, և նման թափիչի օճառին:

3 Եվ նա պիտի նստի, իբրև արծաթ գտող և մաքրող. և նա պիտի սրբի Դևիի ՝որդիներին և գտի նրանց ոսկու և արծաթի պես, որ նրանք կարողանան ընծա՝ մատուցել Տիրոջը՝ արդարության մեջ:

4 Այն ժամանակ Հուդայի և Երուսաղեմի ընծան հաճելի կլինի Տիրոջը, ինչպես հիմ օրերում, և ինչպես անցած տարիներում:

5 Եվ ես կգամ ձեզ մոտ՝ դատաստանի. և ես ժիր վկա կլինեմ հնայողների և շնացողների դեմ, և սուտ երդվողների դեմ, և նրանց դեմ, ովքեր հարստահարում են վարձկանին իր աշխատավարձում, որբեայրիին և ՝հայրագուրկին, և որ մի կողմ են շրջվում

14աՂուկ. ԻԳ.44–46:
24 1ա ՎևՈՒ 45.9:
2ա3 Նեփի 25.1:
բ Չաք. ԺԳ.9,
ՎևՈՒ 128.24:

սուր Երկիր – Երկրի մաքրագործումը.
Հիսուս Քրիստոսի երկրորդ գալուստը:
3աԲ Թ. Ժ.8,

ՎևՈՒ 84.31–34:
բ ՎևՈՒ 13.1:
5աՀակ. Ա.27:

օտարականից և չեն վախենում ինձանից, ասում է Չորաց Տերը:

6 Քանզի ես եմ Տերը՝ ես չեմ վախվում. հեռևաբար, դո՛ւք, չակոբի որդիներ, չեք այրվի:

7 Նույնիսկ ձեր հայրերի օրերից ի վեր, դուք հեռու եք Պանգեղի իմ արարողություններից, և չեք պահել դրանք: Բ՛տ դարձեք դեպի ինձ, և ես կդառնամ դեպի ձեզ, ասում է Չորաց Տերը: Բայց դուք ասում եք. Ի՞նչ բանում ետ դառնանք:

8 Մի՞թե մարդ կկողոպտի Աստծուն: Սակայն դուք կողոպտել եք ինձ: Բայց դուք ասում եք. Ի՞նչ բանում ենք մենք կողոպտել քեզ: Սասանորդներում և Քրիմա-ներում:

9 Դուք անիծված եք անեծքով, քանզի դուք կողոպտել եք ինձ, նույնիսկ այս ամբողջ ազգը:

10 Բերեք ձեր բոլոր Մասանորդները շտեմարան, որպեսզի իմ տանն ուտելիք լինի. և դրանով ստուգեք ինձ հիմա, ասում է Չորաց Տերը, թե արդյոք ձեր համար չե՞մ բացի երկնքի պատուհանները, և դուրս չե՞մ թափի ձեզ համար Քօրհնություն, այնպես որ բավականաչափ տեղ չլինի՝ ընդունելու այն:

11 Եվ ես կկշտամբեմ խժռողին՝ ձեզ համար, և նա չպիտի փչացնի ձեր հողի պտուղները. ոչ էլ ձեր որթը ժամանակից շուտ կզցի իր պտուղը դաշտերում, ասում է Չորաց Տերը:

12 Եվ բոլոր ազգերը ձեզ պիտի

կոչեն օրհնված, քանզի դուք պիտի լինեք մի սքանչելի երկիր, ասում է Չորաց Տերը:

13 Ձեր խոսքերը խիստ են եղել իմ դեմ, ասում է Տերը: Սակայն դուք ասում եք. Ի՞նչ ենք մենք խոսել քո դեմ:

14 Դուք ասել եք. Չուր է Աստծուն ծառայելը, և ի՞նչ օգուտ, որ մենք պահել ենք նրա արարողությունները, և որ մենք տրամորեն ենք քայլել Չորաց Տիրոջ առջև:

15 Եվ այժմ մենք կոչում ենք հպարտին՝ երջանիկ. այո, նրանք, որ գործում են ամբարշտություն, հաջողակ են. այո, նրանք, որ մինչև անգամ փորձում են Աստծուն, ազատվում են:

16 Այն ժամանակ, նրանք, որ երկյուղում էին Տիրոջից, հաճախ Մխոսեցին մեկը մյուսի հետ, և Տերն ականջ արեց ու լսեց. և հիշատակի՞ Քզիրը գրվեց նրա առաջ՝ նրանց համար, որ երկյուղում էին Տիրոջից, և որոնք պատկառում էին նրա անունից:

17 Եվ նրանք կլինեն իմը, ասում է Չորաց Տերը, այն օրը, երբ ես Մկհավաքեմ իմ գոհարները. և ես կխնայեմ նրանց, ինչպես մարդ խնայում է իր սեփական որդուն, որը ծառայում է նրան:

18 Այն ժամանակ, դուք ետ կդառնաք ու Մկզանազանեք արդարի և ամբարիշտի միջև, նրա միջև, որ ծառայում է Աստծուն, և նրա, որ չի ծառայում նրան:

<p>7ա ստ՝ Ուրացություն: բ Հել. 13.11, 3 Նեփի 10.6, Մոր. 9.22: 8ա ստ՝ Տասանորդ, Տասանորդել:</p>	<p>բ ստ՝ Ընծա: 10ա ՎևոՒ 64.23, 119.1-7: բ ստ՝ Օրհնել, Օրհնված, Օրհնություն: 16ա Մոր. 6.5: բ ՎևոՒ 85.9,</p>	<p>Մովսես 6.5: ստ՝ Պատվիրանների գիրք: 17ա ՎևոՒ 101.3: 18ա ստ՝ Չանազանելու պարգև:</p>
---	---	---

ԳԼՈՒԽ 25

Երկրորդ Գալստի ժամանակ, հպարտներն ու ամբարիշտները հարդի պես կայրվեն – Եղիան կվերադառնա մինչև այն մեծ և ահեղ օրը – Համեմատեք Մաղաքիա Դ: Մոտ 34թ. Ք.ծ.հ.:

ՔԱՆՁԻ ահա, օրը գալիս է, որը ^ակայրի թոնրի պես. և բոլոր ^բհպարտները, այո, և բոլորը, որ գործում են ամբարշտորեն, հարդի պես կլինեն. և օրը, որ գալիս է, պիտի այրի նրանց, ասում է Չորաց Տերը, այնպես որ այն չպիտի թողնի նրանց՝ ո՛չ արմատ, ո՛չ ճյուղ:

2 Բայց ձե՛զ համար, որ երկյուղում եք իմ անունից, պիտի Արդարության ^աՌոդին բարձրանա՝ իր թևերի մեջ ունենալով բժշկություն. և դուք պիտի առաջ գնաք ու ^բմեծանաք, ինչպես ^գհորթերը գոմում:

3 Եվ դուք պիտի ^աոտնատակ անեք ամբարիշտներին. քանզի նրանք մոխիր պիտի դառնան ձեր ոտքերի թաթերի տակ՝ այն օրը, երբ ես կանեն այդ, ասում է Չորաց Տերը:

4 Հիշեք իմ ծառայի՝ Մովսեսի օրենքը, որը ես պատվիրեցի նրան ^աՔորեբի վրա՝ ողջ Իսրայելի համար՝ կանոններով և դատաստաններով:

5 Ահա, ես կողարկեմ ձեզ ^աԵղիա մարգարեին, մինչև Տիրոջ այն մեծ ու ահեղ ^բօրվա գալը.

6 Եվ նա պիտի հայրերի սիրտը ^ադարձնի դեպի զավակները, և զավակների սիրտը՝ դեպի իրենց հայրերը, որ չլինի թե ես գամ և երկիրը զարկեմ անեծքով:

ԳԼՈՒԽ 26

Հիտուսը մեկնաբանում է բոլոր բաները՝ սկզբից մինչև վերջ – Մանուկներն ու երեխաներն արտաբերում են զարմանալի բաներ, որոնք չեն կարող գրվել – Քրիստոսի Եկեղեցուն նրանք ունեն բոլոր բաներն ընդհանուր իրենց մեջ: Մոտ 34թ. Ք.ծ.հ.:

ԵՎ այժմ եղավ այնպես, որ երբ Հիսուսն ասաց այս բաները, նա մեկնաբանեց դրանք բազմությամբ. և նա մեկնաբանեց նրանց բոլոր բաները՝ թե՛ մեծ և թե՛ փոքր:

2 Եվ նա ասաց. ^աԱյս սուրբ գրությունները, որ դուք չունեիք, Հայրը պատվիրեց, որ ես տամ ձեզ. քանզի դա նրա իմաստությամբ է, որպեսզի դրանք տրվեն ապագա սերունդներին:

3 Եվ նա մեկնաբանեց բոլոր բաները, նույնիսկ սկսած սկզբից, մինչև այն ժամանակը, երբ նա պիտի գա իր ^ափառքով. այո, նույնիսկ բոլոր բաները, որոնք պիտի գամ երկրի երեսին, և մինչև իսկ

25 1ա Ես. ԻԴ.6, 1 Նեփի 22.15, 3 Նեփի 24.2, Վև.ՈՒ 29.9, 64.23–24, 133.64, ՋՄ–Պ 1.37: սուր Երկիր – Երկրի մաքրագործումը: Բ 2 Նեփի 20.33: սուր Հպարտություն: 2ա Եթեր 9.22:

բ Վև.ՈՒ 45.58: գ Ամովս 2.4, 1 Նեփի 22.24: 3ա 3 Նեփի 21.12: 4ա Ել. Գ.1–6: 5ա Դ Թագ. Բ.1–2, Վև.ՈՒ 2.1, 110.13–16, 128.17–18: սուր Եղիա. Փրկություն մահացածների համար. Կնիք, Կնքում:

բ սուր Հիսուս Քրիստոսի երկրորդ գալուստը: 6ա Վև.ՈՒ 2.2: 26 2ա նշ. Մաղ. Գ և Դ գլուխները, որոնք մեջքերված են 3 Նեփի 24 և 25 գլուխներում: 3ա սուր Հիսուս Քրիստոս – Հիսուս Քրիստոսի փառքը:

^բտարբերը պիտի հավեն կիզող կրակով, և երկիրը պիտի ^գգալարվի մագաղաթի պես, և երկինքներն ու երկիրը պիտի անց կենան.

4 Եվ նույնիսկ մինչև այն ^ամեծ և վերջին օրը, երբ բոլոր ժողովուրդները, և բոլոր ցեղերը, և բոլոր ազգերն ու լեզուները պիտի ^բկանգնեն Աստծո առաջ՝ դատվելու ըստ իրենց գործերի, լինեն դրանք բարի, թե լինեն դրանք չար,

5 Եթե դրանք լինեն բարի՝ դեպի ^ահարությունը հավիտենական կյանքի. և եթե դրանք լինեն չար՝ դեպի հարությունը մգովքի. լինելով գուգահեռ, մեկը՝ մի կողմից, իսկ մյուսը՝ մյուս կողմից, համաձայն այն ողորմության և ^բարդարադատության և սրբության, որը Քրիստոսում է, որը կար ^գնախքան աշխարհը եղավ:

6 Եվ այժմ չի կարող գրվել այս գրքում նույնիսկ մեկ ^ահարյուրերորդ մասն այն բաների, որոնք Հիսուսն իրոք սովորեցրեց ժողովրդին.

7 Բայց ահա Նեփիի ^աթիթեղները մեծ մասամբ պարունակում են այն բաները, որոնք նա սովորեցրեց ժողովրդին:

8 Եվ ես գրում եմ այս բաները, որոնք փոքրագույն մասն են այն բաների, որոնք նա սովորեցրեց ժողովրդին. և ես գրել եմ դրանք այն մպատակով, որ դրանք ^ահեթանոսներից կրկին բերվեն

այս ժողովրդին, համաձայն այն խոսքերի, որոնք ասաց Հիսուսը:

9 Եվ երբ նրանք ստացած կլինեն սա, որն անհրաժեշտ է, որ նրանք ունենան, առաջինը՝ փորձելու նրանց հավատքը, և եթե դա լինի այնպես, որ նրանք հավատան այս բաներին, այն ժամանակ ^աավելի մեծ բաներ հայտնի կդարձվեն նրանց:

10 Եվ եթե լինի այնպես, որ նրանք չհավատան այս բաներին, այն ժամանակ ավելի մեծ բաները ետ ^ակպահվեն նրանցից՝ ի դատապարտումն իրենց:

11 Ահա, ես պատրաստվում էի գրել դրանք բոլորը, ինչ փորագրված էր Նեփիի թիթեղների վրա, բայց Տերն արգելեց դա՝ ասելով. Ես ^ակփորձեմ իմ ժողովրդի հավատքը:

12 Հետևաբար, ես՝ Մորմոնս, գրում եմ այն բաները, որոնք պատվիրվել է ինձ Տիրոջ կողմից: Եվ այժմ ես՝ Մորմոնս, ավարտում եմ խոսքս, և սկսում եմ գրել այն բաները, որոնք պատվիրվել են ինձ:

13 Հետևաբար, ես կկանենայի, որ դուք հասկանաք, որ Տերը, իրոք, երեք օրերի ընթացքում սովորեցրեց ժողովրդին. և դրանից հետո, նա իրեն հաճախ ^ացույց տվեց նրանց, և հաճախ կտրեց ^բհացը, և օրհնեց այն, և տվեց այն նրանց:

3բ Ամովս Թ.13,
Բ Պես. 9.10, 12,
Մորմ. 9.2:
սու՝ Երկիր – Երկրի
մաքրագործումը,
Աշխարհ – Աշխարհի
վերջը:
գ Մորմ. 5.23:
4ա Հել. 12.25,
3 Նեփի 28.31:
բ Մոսիա 16.10–11:

սու՝ Վերջին
դատաստան:
5ա Դան. ԺԲ.2,
Հովհ. Ե.29:
բ սու՝ Արդարադատու-
թյուն:
գ Եթեր 3.14:
սու՝ Հիսուս Քրիստոս –
Քրիստոսի
նախամահկանացու
գոյությունը:

6ա Հովհ. ԻԱ.25,
3 Նեփի 5.8:
7ա սու՝ Թիթեղներ:
8ա 3 Նեփի 21.5–6:
9ա Եթեր 4.4–10:
10ա Ալմա 12.9–11:
11ա Եթեր 12.6:
13ա Հովհ. ԻԱ.14:
բ 3 Նեփի 20.3–9:
սու՝ Հաղորդություն:

14 Եվ եղավ այնպես, որ նա սովորեցրեց և ծառայեց այն բազմութեան ^աԵրեխաներին, որոնց մասին խոսվել է, և նա ^բարձակեց նրանց լեզուները, և նրանք ասացին իրենց հայրերին մեծ ու զարմանալի բաներ, նույնիսկ ավելի մեծ, քան նա բացահայտել էր ժողովրդին. և նա արձակեց նրանց լեզուները, այնպես որ նրանք կարողացան խոսել:

15 Եվ եղավ այնպես, որ նրա երկինք համբարձվելուց հետո, երբ նա իրեն ցույց էր տվել նրանց երկրորդ անգամ, և գնացել Հոր մոտ, հետո, երբ ^աբժշկել էր բոլոր նրանց հիվանդներին, և նրանց կաղերքին, և բացել էր նրանց կույրերի աչքերը, և բացել խուլերի ականջները, և իրոք, արել էր ամեն ձևի բժշկություններ նրանց մեջ, և մեռելներից բարձրացրել մի մարդու, և նրանց ցույց տվել իր գորությունը, և համբարձվել Հոր մոտ,

16 Ահա, եղավ այնպես, հաջորդ օրը, որ բազմությունն ի մի հավաքվեց, և նրանք թե՛ տեսան, թե՛ լսեցին այդ երեխաներին. այո՛, նույնիսկ ^ամանկիկները բացեցին իրենց բերաններն ու արտաբերեցին զարմանալի բաներ. և այն բաները, որոնք նրանք արտաբերեցին, արգելվեցին, որ ոչ մի մարդ դրանք չպետք է գրեր:

17 Եվ եղավ այնպես, որ ^աաշակերտները, ում Հիսուսն ընտրել էր, սկսեցին այդ ժամանակից ի վեր ^բմկրտել և սովորեցնել բոլոր

նրանց, ովքեր եկան նրանց մոտ. և բոլոր նրանք, ովքեր մկրտվեցին Հիսուսի անունով, լցվեցին Սուրբ Հոգով:

18 Եվ նրանցից շատերը տեսան ու լսեցին անասելի բաներ, որոնք օրինական ^աչէ, որ գրվեն:

19 Եվ նրանք սովորեցնում էին և ծառայում մեկը մյուսին. և նրանց մեջ ^աբոլոր բաներն ^բընդհանուր էին՝ ամեն մարդ արդար վարվելով մեկը մյուսի հետ:

20 Եվ եղավ այնպես, որ նրանք անում էին բոլոր բաները, ճիշտ ինչպես Հիսուսն էր պատվիրել նրանց:

21 Եվ նրանք, ովքեր մկրտվեցին Հիսուսի անունով, կոչվեցին Քրիստոսի ^աեկեղեցի:

ԳԼՈՒԽ 27

Հիսուսը պատվիրում է նրանց Եկեղեցին կոչել իր անունով – Նրա առաքելությունը և քափիչ զոհաբերությունը կազմում են նրա ավետարանը – Մարդկանց պատվիրվում է ապաշխարել և մկրտվել, որպեսզի կարողանան սրբազործվել Սուրբ Հոգով – Նրանք պետք է լինեն, ճիշտ ինչպես Հիսուսն է: Մոտ 34–35թթ. Ք.ծ.հ.:

Եվ եղավ այնպես, որ մինչ Հիսուսի աշակերտները ճանապարհորդում էին և քարոզում այն բաները, որոնք նրանք և՛ լսել էին, և՛ տեսել, և մկրտում էին Հիսուսի անունով, եղավ այնպես, որ աշակերտները

14ա3 Նեփի 17.11–12:
բ Ալմա 32.23,
3 Նեփի 26.16:
15ա3 Նեփի 179:
սու Բժշկել,
Բժշկումներ. Հրաշք:

16ա Մատ. ԺԱ.25:
17ա3 Նեփի 19.4–13:
բ 4 Նեփի 1.1:
18ա3 Նեփի 26.11:
19ա4 Նեփի 1.3:
բ սու Նվիրաբերել,

Նվիրաբերման օրերը:
21ա Մոսիա 18.17:
սու Հիսուս Քրիստոսի
Եկեղեցի:

հավաքվեցին և ^ամիաբանվեցին հզոր աղոթքով ու ^բժոռով:

2 Եվ Հիսուսն իրեն կրկին ^ացույց տվեց նրանց, քանի որ նրանք աղոթում էին չորք՝ նրա անունով. և Հիսուսը եկավ ու կանգնեց նրանց մեջտեղում, և ասաց նրանց. Ի՞նչ եք կամենում, որ ես ձեզ տամ:

3 Եվ նրանք ասացին նրան. Տե՛ր, մենք կամենում ենք, որ դու ասես մեզ այն անունը, որով մենք պիտի կոչենք այս եկեղեցին. քանի որ ժողովրդի մեջ վիճաբանություններ կան այս հարցի առնչությամբ:

4 Եվ Տերն ասաց նրանց. Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, ինչն՞ պիտի ժողովուրդը տրտնջա և վիճի այս բանի պատճառով:

5 Մի՞թե դուք չեք կարդացել սուրբ գրքերը, որոնք ասում են՝ դուք պետք է վերցնեք ձեզ վրա Քրիստոսի ^աանունը, որն իմ անունն է: Քանզի այս անունով պիտի դուք կոչվեք վերջին օրը.

6 Եվ ով որ վերցնում է իր վրա իմ անունը և ^ահամբերում մինչև վերջ, նույնը պիտի փրկվի վերջին օրը:

7 Հետևաբար, ինչ որ դուք անեք, դուք դա պիտի անեք իմ անունով. հետևաբար, դուք պիտի կոչեք եկեղեցին իմ անունով. և դուք պիտի կանչեք առ Հայրն իմ անունով, որպեսզի նա օրհնի եկեղեցին՝ հանուն ինձ:

8 Եվ ի՞նչպես կլինի այն ^աիմ ^բեկեղեցին, եթե այն կոչված չլինի իմ անունով: Քանզի, եթե մի եկեղեցի կոչվի Մովսեսի անունով,

ուրեմն դա կլինի Մովսեսի եկեղեցին. կամ եթե այն կոչված լինի մարդու անունով, ուրեմն դա կլինի մարդու եկեղեցի. բայց եթե այն կոչված լինի իմ անունով, ուրեմն դա իմ եկեղեցին է, եթե այնպես լինի, որ նրանք կառուցված լինեն իմ ավետարանի վրա:

9 Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ դուք կառուցված եք իմ ավետարանի վրա. հետևաբար, ինչ բաներ որ կոչեք, դուք պիտի կոչեք իմ անունով. հետևաբար, եթե դուք կանչեք առ Հայրը՝ եկեղեցու համար, եթե դա լինի իմ անունով, Հայրը կլսի ձեզ.

10 Եվ եթե այնպես լինի, որ եկեղեցին կառուցված լինի իմ ավետարանի վրա, այն ժամանակ Հայրը ցույց կտա իր սեփական գործերը դրանում:

11 Բայց եթե դա կառուցված չլինի իմ ավետարանի վրա, և կառուցված լինի մարդկանց գործերի վրա, կամ դևի գործերի վրա, ճշմարիտ եմ ասում ձեզ, նրանք ուրախություն ունեն իրենց գործերում միառժամանակ, և շուտով գալիս է ^ավերջը, և նրանք կտրվում են, և զգվում կրակի մեջ, որտեղից չկա վերադարձ:

12 Քանզի նրանց գործերը ^ահետևում են նրանց, քանզի դա նրանց գործերի պատճառով է, որ նրանք կտրվում են. ուստի, հիշե՛ք այն բաները, որ ես ասացի ձեզ:

13 Ահա, ես տվել եմ ձեզ իմ ^աավետարանը, և այս է ավետա-

27 1ա ՎևոՒ 29.6:

բ Ալմա 6.6:
սո՛ր Օոմ,
Օոմապաիություն:

2ա3 Նեփի 26.13:

սո՛ր Հիսուս Քրիստոս –
Քրիստոսի ետմահ-
կանացու հայտնու-

թյան դեպքերը:

5ա սո՛ր Հիսուս Քրիստոս –
Հիսուս Քրիստոսի
անունը մեզ վրա
վերցնելը:

6ա3 Նեփի 15.9:

8ա ՎևոՒ 115.4:

բ սո՛ր Հիսուս Քրիստոս –

Եկեղեցու գլուխ:

11ա Ալմա 5.52:

12ա Հայտ. ԺԳ.13,

ՎևոՒ 59.2:

13ա ՎևոՒ 76.40–42:

սո՛ր Ավետարան:

բանը, որ ես տվել եմ ձեզ, որ ես եկա աշխարհ՝ կատարելու իմ Հոր ^բկամքը, որովհետև իմ Հայրն ուղարկեց ինձ:

14 Եվ իմ Հայրն ուղարկեց ինձ, որպեսզի ես խաչի վրա ^աբարձրացվեմ. իսկ հետո, երբ խաչի վրա էի բարձրացվել, որպեսզի ես կարողանայի բոլոր մարդկանց ^բձգել դեպի ինձ, որպեսզի ինչպես ես բարձրացվեցի մարդկանց կողմից, ճիշտ նույնպես մարդիկ բարձրացվեն Հոր կողմից՝ կանգնելու իմ առջև, ^գդատվելու ըստ իրենց գործերի՝ լինեն դրանք բարի, թե լինեն դրանք չար,

15 Եվ այս պատճառով եմ ես ^աբարձրացվել. հետևաբար, համաձայն Հոր գործության, ես բոլոր մարդկանց կձգեմ դեպի ինձ, որպեսզի նրանք կարողանան դատվել՝ համաձայն իրենց գործերի:

16 Եվ կլինի այնպես, որ ով որ ^աապաշխարի և ^բմկրտվի իմ անունով, նա կլցվի. և եթե նա ^գհամբերի մինչև վերջ, ահա, նրան ես անմեղ կհամարեմ իմ Հոր առաջ այն օրը, երբ ես կկանգնեմ՝ դատելու աշխարհը:

17 Եվ ով որ չի համբերի մինչև վերջ, այդ նա է, որ նույնպես կկտրվի և կզցվի կրակի մեջ, որտեղից այլևս հնարավոր չէ վերադառնալ՝ Հոր ^աարդարադատության պատճառով:

18 Եվ սա է այն խոսքը, որը նա

տվել է մարդկանց զավակներին: Եվ այս պատճառով նա կատարում է խոսքերը, որոնք տվել է, և չի ստում, այլ բոլոր իր խոսքերը կատարում է:

19 Եվ ^աոչ մի անմաքուր բան չի կարող մտնել նրա արքայությունը. ուստի, ոչինչ չի մտնում նրա ^բհանգիստը, բացի նրանցից, ովքեր ^գլվացել են իրենց հանդերձներն իմ արյունով՝ իրենց հավատքի, և բոլոր իրենց մեղքերից ապաշխարության, և մինչև վերջ իրենց հավատարմության շնորհիվ:

20 Արդ այս է պատվիրանը. ^աԱպաշխարեք, դո՛ւք, աշխարհի բոլոր ծայրեր, և եկեք ինձ մոտ ու ^բմկրտվեք իմ անունով, որպեսզի դուք կարողանաք ^գսրբագործվել՝ ընդունելով Սուրբ Հոգին, որպեսզի դուք կարողանաք կանգնել ^դանբիծ իմ առջև վերջին օրը:

21 Ե՛ջմարիտ, ճ՛ջմարիտ եմ ասում ձեզ, այս է իմ ավետարանը. և դուք գիտեք այն բաները, ինչ դուք պիտի անեք իմ եկեղեցում. քանզի այն գործերը, որոնք դուք տեսաք ինձ անելիս, դրանք պետք է նաև դո՛ւք անեք. քանզի այն, ինչ դուք տեսաք ինձ անելիս, հենց այդ պետք է դուք անեք.

22 Հետևաբար, եթե դուք անեք այդ բաները, օրհնված եք դուք, քանզի դուք պիտի բարձրացվեք վերջին օրը:

23 Գրեք այն բաները, որոնք դուք

13բ Հովհ. 9.38–39:
14ա 1 Նեփի 11.32–33, Մովսես 7.55:
բ Հովհ. 2.44,
2 Նեփի 9.5, ՎևոՒ 27.18:
գ սո՛ւ Հիսուս Քրիստոս – Դատավոր:
15ա սո՛ւ Քավել, Քավոթյուն:

16ա սո՛ւ Ապաշխարել, Ապաշխարություն:
բ սո՛ւ Մկրտություն, Մկրտել:
գ 1 Նեփի 13.37:
սո՛ւ Համբերել:
17ա սո՛ւ Արդարադատություն:
19ա Ալմա 11.37:
բ ՎևոՒ 84.24:

սո՛ւ Հանգիստ:
գ Հայտ. Ա.5, Է.14, Ալմա 5.21, 27, 13.11–13:
20ա Եթեր 4.18:
բ սո՛ւ Մկրտություն, Մկրտել – Էական է:
գ սո՛ւ Սրբագործում:
դ ՎևոՒ 4.2:

տեսաք և լսեցիք, բացի նրանցից, որոնք ^աարգելված են:

24 Գրեք այս ժողովրդի գործերը, որոնք պիտի լինեն, ճիշտ ինչպես որ գրվել է այն մասին, ինչ եղել է:

25 Քանզի ահա, այն գրքերից, որոնք գրվել են, և որոնք կգրվեն, այս ժողովուրդը պիտի ^ադատվի, քանզի դրանց միջոցով նրանց ^բգործերը պիտի հայտնի դարձվեն մարդկանց:

26 Եվ ահա, բոլոր բաները ^գգրվել են Հոր կողմից. հետևաբար, այն գրքերից, որոնք կգրվեն, պիտի դատվի աշխարհը:

27 Եվ իմացեք, որ ^դդուք պիտի լինեք դատավորներն այս ժողովրդի՝ համաձայն այն արդարադատության, որ ես կտամ ձեզ, որը կլինի արդար: Հետևաբար, ^եինչպիսի՞ մարդ եք դուք պարտավոր լինել: Դժմարիտ են ասում ձեզ՝ ճիշտ ^զինչպես ես եմ:

28 Եվ այժմ ես ^զգնում եմ Հոր մոտ: Եվ ճշմարիտ են ասում ձեզ՝ ինչ բաներ որ դուք խնդրեք Հորը, իմ անունով, կտրվի ձեզ:

29 Հետևաբար, ^էխնդրեք և դուք կստանաք. թակեք և կբացվի ձեզ. քանզի նա, ով խնդրում է, ստանում է. և նրա համար, ով թակում է, կբացվի:

30 Եվ այժմ ահա, իմ ուրախությունը մեծ է, մինչև իսկ լիակատար՝ ձեր և նաև այս սերնդի շնորհիվ. այո, նույնիսկ Հայրն է

ցնծում, և նաև, բոլոր սուրբ հրեշտակները՝ ձեր և այս սերնդի շնորհիվ. քանզի նրանցից ^աոչ մեկը չի կորչի:

31 Ահա, ես կկամենայի, որ դուք հասկանաք. քանզի ես ի նկատի ունեմ նրանց, ովքեր ^աայժմ ^բայս սերնդից կենդանի են. և նրանցից ոչ մեկը չի կորչի. և ես լիակատար ^գուրախություն ունեմ նրանցում:

32 Բայց ահա, ես վշտանում եմ այս սերնդից սկսած՝ ^դչորրորդ սերնդի պատճառով, քանզի նրանք գերության են տարվում նրա կողմից, ճիշտ ինչպես կորստի որդին. քանզի նրանք կծախեն ինձ՝ արծաթի ու ոսկու համար, և նրա համար, ինչը ^բցեցն ապականում է, և որը գողերը կարող են ներս խուժել և գողանալ: Եվ այն օրը ես կայցելեմ նրանց, այսինքն՝ շրջելով նրանց գործերն իրենց իսկ գլխին:

33 Եվ եղավ այնպես, որ երբ Հիսուսն ավարտեց այս խոսքերը, նա ասաց իր աշակերտներին. Ներս մտեք ^անեղ դռնով. քանզի նեղ է դուռը և անձուկ ճանապարհը, որ տանում է դեպի կյանք, և քչերն են, որ գտնում են այն. բայց լայն է դուռը և ընդարձակ՝ ճանապարհը, որ տանում է դեպի մահ, և շատերն են, որ ճանապարհվում են այնտեղով, մինչև որ գալիս է գիշերը, երբ ոչ մի մարդ չի կարող գործել:

<p>23ա3 Նեփի 26.16: 25ա2 Նեփի 33.10–15, ՄԽ 1.11: բ 1 Նեփի 15.32–33: 26ա3 Նեփի 24.16: սուր Կյանքի գիրք: 27ա1 Նեփի 12.9–10, Մորմ. 3.19: բ սուր Հիսուս Քրիստոս –</p>	<p>Հիսուս Քրիստոսի օրինակը: գ Մատ. Ե.48, 3 Նեփի 12.48: 28ա Հովհ. Բ.17: 29ա Մատ. Է.7, 3 Նեփի 14.7: 30ա Հովհ. ԺԷ.12: 31ա3 Նեփի 9.11–13, 10.12:</p>	<p>բ 3 Նեփի 28.23: գ սուր Ուրախություն: 32ա2 Նեփի 26.9–10, Ալմա 45.10, 12: բ Մատ. Զ.19–21, 3 Նեփի 13.19–21: 33ա Մատ. Է.13–14, 3 Նեփի 14.13–14, ՎևոՒԷ 22.1–4:</p>
---	---	--

ԳԼՈՒԽ 28

Տասներկուսից իննը փափագում են և նրանց խոստացվում է ժառանգություն՝ Բրիստոսի արքայությունում, երբ նրանք մեռնեն – Երեք Նեփիացիները փափագում են և նրանց տրվում է գորություն մահվան վրա, որպեսզի մնան երկրի վրա, մինչև Հիսուսը կրկին գա – Նրանք փոխվում են և տեսնում բաներ, ոչ օրինակա՞ն արտաբերելու, և նրանք այժմ ծառայում են մարդկանց մեջ: Մոտ 34–35թթ. Բ.ծ.հ.:

ԵՎ եղավ այնպես, երբ Հիսուսն ասաց այս խոսքերը, նա խոսեց իր աշակերտների հետ, մեկ առ մեկ, ասելով նրանց. Ի՞նչ եք փափագում դուք ինձանից, հետո, երբ ես գնամ Հոր մոտ:

2 Եվ նրանք բոլորը խոսեցին, բացի երեքից՝ ասելով. Մենք փափագում ենք, որ մարդկային տարիքն առնելուց հետո, երբ մեր ծառայությունը, որին դու կանչել ես մեզ, վերջանա, որպեսզի մենք կարողանանք շտապ գալ քեզ մոտ՝ քո արքայությունը:

3 Եվ նա ասաց նրանց. Օրհնված եք դուք, որովհետև դուք փափագեցիք այս բանն ինձանից. հետևաբար, յոթանասուներկու տարեկանից հետո, դուք կգաք ինձ մոտ՝ իմ արքայությունը. և ինձ հետ դուք կգտնեք ^ահանգստություն:

4 Եվ երբ նա խոսեց նրանց հետ, նա շրջվեց դեպի այն երեքը, և ասաց նրանց. Ի՞նչ եք կամենում

դուք, որ ես անեմ ձեզ համար, երբ ես գնամ Հոր մոտ:

5 Եվ նրանք տրամեցին իրենց սրտում, քանզի նրանք չհամարձակվեցին ասել նրան այն բանը, որ իրենք փափագում էին:

6 Եվ նա ասաց նրանց. Ահա, ես ^ագիտեմ ձեր մտքերը, և դուք փափագեցիք այն բանը, որը ^բՀովհաննեսը՝ իմ սիրելին, որն ինձ հետ էր իմ ծառայության ընթացքում, նախքան իմ բարձրացվելը հրեաների կողմից, փափագեց ինձանից:

7 Հետևաբար, ավելի օրհնված եք դուք, քանզի դուք ^աերբեք ^բմահ չեք ճաշակի. այլ կապրեք՝ տեսնելու Հոր բոլոր արածները մարդկանց զավակների համար, նույնիսկ մինչև բոլոր բաները կատարվեն, համաձայն Հոր կամքի, երբ ես կգամ իմ փառքով երկնքի ^գգորությունների հետ:

8 Եվ դուք երբեք չպիտի տանեք մահվան ցավերը. բայց երբ ես գամ իմ փառքով, դուք պիտի փոխվեք մի ակնբարթում ^ամահկանացությունից ^բանմահության. և այն ժամանակ, կօրհնվեք դուք իմ Հոր արքայությունում:

9 Եվ բացի այդ, դուք չպիտի ունենաք ցավ, մինչև դուք կբնակվեք մարմնում, ոչ էլ վիշտ, բացի դա լինի՝ աշխարհի մեղքերի համար. և այս բոլորը կանեն ես, այն բանի պատճառով, որ դուք փափագեցիք ինձանից, քանզի դուք փափագեցիք, որպեսզի դուք կարողանաք մարդկանց հոգիներ ^աբերել ինձ

28 3ա սու՛ Հանգիստ:
6ա Ամոն Դ.13,
Ալմա 18.32:
բ Հովհ. ԻԱ.21–23,
Վևո՛ 7.1–4:
7ա 4 Նեփի 1.14,

Մորմ. 8.10–11,
Եթեր 12.17:
բ սու՛ Փոխակերպված
Էակներ:
գ 3 Նեփի 20.22:
8ա 3 Նեփի 28.36–40:

սու՛ Մահկանացու,
Մահկանացություն:
բ սու՛ Անմահ,
Անմահություն:
9ա Փիլ. Ա.23–24,
Վևո՛ 7.5–6:

մոտ, մինչ աշխարհը կանգուն կլինի:

10 Եվ այս պատճառով, դուք պիտի ունենաք Միակատար ուրախություն. և դուք պիտի նստեք իմ Հոր արքայության մեջ. այո, ձեր ուրախությունը պիտի լիակատար լինի, ճիշտ ինչպես Հայրն է տվել ինձ լիակատար ուրախություն. և դուք կլինեք ճիշտ ինչպես ես եմ, և ես եմ, ճիշտ ինչպես Հայրը. և Հայրը և ես մեկ ենք:

11 Եվ Սուրբ Հոգին վկայում է Հոր և իմ մասին. և Հայրը շնորհում է Սուրբ Հոգին մարդկանց գավակներին՝ իմ պատճառով:

12 Եվ եղավ այնպես, որ երբ Հիսուսը խոսեց այս խոսքերը, նա, իր մատով, դիպավ նրանցից ամեն մեկին, բացի՝ երեքից, ովքեր պիտի մնային, և, այնուհետև, նա հեռացավ:

13 Եվ ահա, երկինքները բացվեցին, և նրանք հասփշտակվեցին երկինք, և տեսան, և լսեցին անասելի բաներ:

14 Եվ նրանց արգելվեց, որ նրանք արտաբերեն. ոչ էլ նրանց տրվեց գործություն, որ նրանք կարողանային արտաբերել այն բաները, որոնք նրանք տեսան ու լսեցին:

15 Եվ արդյոք նրանք մարմնում էին, թե մարմնից դուրս, նրանք չէին կարող ասել. քանզի նրանց թվաց, կարծես իրենք կերպարանափոխվեցին, որ իրենք փոխվեցին այս մտի մարմնից մի անմահ վիճակի, որ նրանք կարողանային տեսնել Աստծո բաները:

16 Բայց եղավ այնպես, որ նրանք կրկին ծառայեցին աշխարհի երեսին. սակայն նրանք չտվորեցրեցին այն բաների մասին, որոնք նրանք լսել էին ու տեսել, այն պատվիրանի պատճառով, որը նրանց տրվել էր երկնքում:

17 Եվ արդ, արդյոք նրանք մահկանացու էին, թե անմահ, իրենց կերպարանափոխության օրից ի վեր, ես չգիտեմ:

18 Բայց այսքանը ես գիտեմ համաձայն այն հիշատակարանի, որը տրվել է՝ նրանք առաջ գնացին երկրի երեսին, և ծառայեցին ողջ ժողովրդին՝ միացնելով եկեղեցուն բոլոր նրանց, ովքեր հավատացին իրենց քարոզին. մկրտելով նրանց, և բոլոր նրանք, ովքեր մկրտվեցին, ստացան Սուրբ Հոգին:

19 Եվ նրանք բանտ գցվեցին նրանց կողմից, ովքեր չէին պատկանում եկեղեցուն: Եվ բանտերն ի գործու չեղան պահել նրանց, քանզի դրանք ճեղքվեցին երկու մասի:

20 Եվ նրանք գցվեցին վիրապր. բայց նրանք զարկեցին հողը Աստծո խոսքով, այնպես որ նրա գործությամբ նրանք դուրս պրծան վիրապի խորքերից. և ուստի, նրանց պահելու համար նրանք համապատասխան հորեր չկարողացան փորել:

21 Եվ երեք անգամ նրանց գցեցին հինգը և ոչ մի վնաս չկրեցին:

22 Եվ երկու անգամ նրանք գցվեցին վայրի գազանների որջը. և ահա, նրանք խաղում էին գազանների հետ, ինչպես երե-

10ա Վև.ՈՒ 84.36–38:
բ Հովհ. ԺԷ.20–23:
11ա2 Նեփի 31.17–21,
3 Նեփի 11.32:
13աԲ Կոր. ԺԲ.2–4:
14ա Վև.ՈՒ 76.114–116:

15ա Մովսես 1.11:
ՍՈՒ Կերպարանափո-
խում:
19ա Գոր. ԺԶ.26,
Ալմա 14.26–28:
20ա Մորմ. 8.24:

21ա Գան. Գ.22–27,
4 Նեփի 1.32:
22ա Գան. Զ.16–23,
4 Նեփի 1.33:

խան՝ ծծկեր գառան հետ, և ոչ մի վնաս չկրեցին:

23 Եվ եղավ այնպես, նրանք առաջ գնացին Նեփիի ողջ ժողովրդի մեջ, և քարոզեցին Քրիստոսի ՝ ավետարանը ողջ ժողովրդին՝ երկրի երեսին. և նրանք դարձի եկան դեպի Տերը և միացվեցին Քրիստոսի եկեղեցուն, և այսպիսով, ՝ այդ սերնդի ժողովուրդն օրհնվեց՝ Հիսուսի խոսքի համաձայն:

24 Եվ այժմ ես՝ Մորմոնս, միառժամանակ ավարտում եմ խոսելն այս բաների վերաբերյալ:

25 Ահա, ես քիչ էր մնում գրեի նրանց ՝ անունները, ովքեր երբեք չպիտի մահ ճաշակեն, բայց Տերն արգելեց. ուստի, ես չեմ գրում դրանք, քանզի դրանք թաքցված են աշխարհից:

26 Բայց ահա, ես տեսել եմ նրանց, և նրանք ծառայել են ինձ:

27 Եվ ահա, նրանք կլինեն հեթանոսների մեջ, և հեթանոսները չեն ճանաչի նրանց:

28 Նրանք կլինեն մահ հրեաների մեջ, և հրեաները չեն ճանաչի նրանց:

29 Եվ կլինի այնպես, որ երբ Տերը հարմար տեսնի իր իմաստությամբ, նրանք կծառայեն Իսրայելի բոլոր ՝ ցրված ցեղերին, և բոլոր ազգերին, ցեղերին, լեզուներին և ժողովուրդներին, և դուրս կբերեն նրանցից բազում հոգիներ Հիսուսի համար, որպեսզի նրանց իղձը կատարվի, և մահ Աստծո համոզող գործության շնորհիվ, որը նրանց մեջ է:

30 Եվ նրանք Աստծո ՝ հրեշտակ-

ների պես են, և եթե նրանք աղոթեն Հորը՝ Հիսուսի անունով, նրանք կարող են ցույց տալ իրենց՝ ինչ մարդու որ իրենք հարմար կգտնեն:

31 Հետևաբար, ՝ մեծ ու զարմանալի գործեր պիտի գործվեն նրանց կողմից, նախքան մեծ և գալիք օրը, երբ բոլոր մարդիկ պիտի, անկասկած, կանգնեն Քրիստոսի ատյանի առջև.

32 Այո, նույնիսկ հեթանոսների մեջ մի ՝ մեծ ու զարմանալի գործ պիտի կատարվի նրանց կողմից, նախքան այդ դատաստանի օրը:

33 Եվ եթե դուք ունեցել եք սուրբ գրքերը, որոնք տալիս են Քրիստոսի բոլոր զարմանալի գործերի պատմությունը, դուք կիմանաք, համաձայն Քրիստոսի խոսքերի, որ այս բաները պետք է անկասկած գան:

34 Եվ վա՛յ լինի նրան, ով ՝ չի կամենա ականջ անել Հիսուսի խոսքերին, և մահ ՝ նրանց, ում մա ընտրել է և ուղարկել նրանց մեջ. քանզի ով որ չի ընդունում Հիսուսի խոսքերը և նրանց խոսքերը, ում մա ուղարկել է, չի ընդունում իրեն. և հետևաբար, մա չի ընդունի նրանց՝ վերջին օրը.

35 Եվ ավելի լավ կլինեք նրանց համար, եթե նրանք ծնված չլինեին: Քանզի մի՞թե դուք կարծում եք, որ կարող եք ազատվել վիրավորված Աստծո արդարադատությանից, որը ՝ կոխկրտվել է մարդկանց ոտքերի տակ, որպեսզի դրա միջոցով փրկություն կարողանա գալ:

23ա սո՛ւ Ավետարան:
բ 3 Նեփիի 27.30–31:
25ա 3 Նեփիի 19.4:
29ա սո՛ւ Իսրայել –
Իսրայելի ցրվելը.

Իսրայել – Իսրայելի
տասը կորած ցեղերը:
30ա սո՛ւ Հրեշտակներ:
31ա Հել. 12.25,
3 Նեփիի 26.4–5:

32ա 2 Նեփիի 25.17:
34ա Եթեր 4.8–12:
բ սո՛ւ Մարգարե:
35ա Հել. 12.2:

36 Եվ այժմ ահա, ինչպես ես խոսեցի նրանց վերաբերյալ, որոնց Տերն ընտրել է, այո, այսինքն՝ երեքի, ովքեր հափշտակվեցին երկինքների մեջ, այնպես որ ես չգիտեի, թե արդյոք նրանք մաքրվել էին մահկանացությունից դեպի անմահություն,

37 Բայց ահա, մինչ ես գրում էի, ես հարցրեցի Տիրոջը, և նա հայտնի դարձրեց ինձ, որ անպայման նրանց մարմինների վրա մի փոփոխություն պիտի գործվեր, այլապես նրանք անպայման պետք է որ մահ ճաշակեին:

38 Հետևաբար, որպեսզի նրանք մահ չճաշակեն, մի ^ափոփոխություն գործվեց նրանց մարմինների վրա, որպեսզի նրանք չկրեին ցավ, ոչ էլ վիշտ, բացի դա լինելը աշխարհի մեղքերի համար:

39 Արդ, այս փոփոխությունը հավասար չէր նրան, ինչը պիտի տեղի ունենա վերջին օրը. բայց նրանց վրա մի փոփոխություն էր գործվել, այնպես որ Սատանան չէր կարող գործություն ունենալ նրանց վրա, այնպես որ նա չէր կարող ^ագայթակղել նրանց. և նրանք ^բսրբագործված էին մարմնում, այնպես որ նրանք ^գսուրբ էին, և երկրի գործությունները չէին կարող պահել նրանց:

40 Եվ այս վիճակում նրանք պիտի մնան, մինչև Քրիստոսի դատաստանի օրը. և այդ օրը նրանք պիտի ստանան ավելի մեծ փոփոխություն, և ընդունվեն Հոր արքայության մեջ՝ այլևս դուրս չգալու, այլ Աստծո հետ հավերժորեն բնակվելու երկինքներում:

ԳԼՈՒԽ 29

Մորմնի Գրքի առաջ զայլ մի նշան է, որ Տերը սկսել է հավաքել Իսրայելը և կատարել իր ուխտերը – Նրանք, ովքեր կմերժեն նրա վերջին օրերի հայտնությունները և պարզևները, կանհիծվեն: Մոտ 34–35թթ. Բ.ծ.հ.:

Եվ այժմ ահա, ես ասում եմ ձեզ, որ երբ Տերը հարմար տեսնի, իր իմաստությամբ, որ այս ասածները ^ագան դեպի հեթանոսները՝ համաձայն իր խոսքի, այն ժամանակ դուք կարող եք իմանալ, որ այն ^բուխտը, որը Հայրն արել է Իսրայելի զավակների հետ դեպի իրենց ժառանգության հողերը նրանց վերադարձի կապակցությամբ, արդեն սկսվում է կատարվել:

2 Եվ դուք կարող եք իմանալ, որ Տիրոջ խոսքերը, որոնք խոսվել են սուրբ մարգարեների կողմից, պիտի բոլորը կատարվեն. և դուք չպետք է ասեք, որ Տերն ^աուշացնում է իր գալուստն Իսրայելի զավակների մոտ:

3 Եվ դուք չպետք է ձեր սրտերում պատկերացնեք, որ այն խոսքերը, որոնք գրվել են, զուր են, քանզի ահա, Տերը հիշելու է իր ուխտը, որը նա արել է Իսրայելի տան իր ժողովրդին:

4 Եվ երբ դուք տեսնեք այս ասածներն ի հայտ գալիս՝ ձեր մեջ, այն ժամանակ, դուք այլևս չպետք է արհամարհեք Տիրոջ արածները, քանզի նրա ^աարդարադատության ^բսուրբը նրա աջ

38ա սուր Փոխակերպված էակներ:
39ա սուր Գայթակղել, Գայթակղություն:

բ սուր Սրբագործում:
գ սուր Սրբություն:
29 1ա 2 Նեփի 30.3–8:
բ Մորմ. 5.14, 20:

2ա Ղուկ. ԺԲ.45–48:
4ա սուր Արդարադատություն:
բ 3 Նեփի 20.20:

ձեռքում է. և ահա, այդ օրը, եթե դուք արհամարհանքով մերժեք նրա արածները, նա շուտով կիջեցնի այն ձեզ վրա:

5 ^աՎա՛յ նրան, որ ^բարհամարհանքով մերժում է Տիրոջ արածները. այո, վա՛յ նրան, որ ^գկուրանա Քրիստոսին և նրա գործերը:

6 Այո, ^ավա՛յ նրան, որ կուրանա Տիրոջ հայտնությունները, և կասի՝ Տերն այլևս չի գործում հայտնությամբ, կամ մարգարեությամբ, կամ ^բպարզևեցեցողով, կամ լեզուներով, կամ բժշկություններով, կամ Սուրբ Հոգու գործությամբ:

7 Այո, և վա՛յ նրան, որ ^աշահ ստանալու համար կասի այն օրը, որ Հիսուս Քրիստոսի կողմից գործված ^բոչ մի հրաշք չի կարող լինել. քանզի նա, որ ասում է այս, կղառնա կորստի ^գորդու պես, որի համար չկար ողորմություն՝ Քրիստոսի խոսքի համաձայն:

8 Այո, և դուք չպետք է այլևս ^ասուլեք կամ ^բարհամարհանքով մերժեք, կամ ծաղր սարքեք ^գհրեաներին, կամ Իսրայելի տան որևէ մնացորդին. քանզի ահա, Տերը հիշում է իր ուխտը նրանց հետ, և նա կանի նրանց համար՝ համաձայն նրա, ինչպես որ նա երդվել է:

9 Հետևաբար, դուք չպետք է կարծեք, թե դուք կարող եք շրջել Տիրոջ աջ ձեռքը դեպի ձախ, որ նա չկարողանա դատաստան

գործի դնել՝ ի կատարումն ուխտի, որը նա արել է Իսրայելի տան հետ:

ԳԼՈՒԽ 30

Վերջին օրերի հեթանոսներին պատվիրվում է ապաշխարել, գալ Քրիստոսի մոտ, և համարվել Իսրայելի տան հետ: Մոտ 34–35թթ. Զ.ծ.հ.:

ԱԿԱՆՋ արեք, ով դո՛ւք, հեթանոսներ, և լսե՛ք Հիսուս Քրիստոսի՝ կենդանի Աստծո Որդու խոսքերը, որը նա ^ապատվիրել է ինձ, որ ես խոսեմ ձեր վերաբերյալ, քանզի ահա, նա պատվիրում է ինձ, որ ես գրեմ՝ ասելով.

2 Դարձե՛ք, դո՛ւք, բոլոր ^ահեթանոսներդ, ձեր ամբարիշտ ուղիներից. և ^բապաշխարե՛ք ձեր չար արարքներից, ձեր ստախոսություններից ու խաբեություններից, ձեր պռնկություններից և ձեր գաղտնի պղծություններից, ձեր կռապաշտություններից և ձեր սպանություններից, ձեր քահանանեղություններից և ձեր նախանձություններից, ձեր կռիվներից և բոլոր ձեր ամբարշտությունից ու պղծություններից, և եկեք ինձ մոտ և մկրտվեք իմ անունով, որպեսզի դուք կարողանաք ստանալ ձեր մեղքերին թողություն և լցվել Սուրբ Հոգով, որպեսզի դուք կարողանաք ^գհամարվել իմ ժողովրդի քվում, որոնք Իսրայելի տնից են:

5ա 2 Նեփի 28.15–16:
բ Մորմ. 8.17,
Եթեր 4.8–10:
գ Մատ. Ժ.32–33:
6ա Մորմ. 9.7–11, 15:
բ սուր Հոգու
պարզևեցեցող:
7ա սուր Քահանանեղություն

քյուն:
բ 2 Նեփի 28.4–6,
Մորմ. 9.15–26:
գ սուր Կորստի որդիներ:
8ա 1 Նեփի 19.14:
բ 2 Նեփի 29.4–5:
գ սուր Հրեաներ:
30 1ա 3 Նեփի 5.12–13:

2ա սուր Հեթանոսներ:
բ սուր Ապաշխարել,
Ապաշխարություն:
գ Գաղ. Գ.27–29,
2 Նեփի 10.18–19,
3 Նեփի 16.10–13,
21.22–25,
Աբր. 2.10:

ՉՈՐՐՈՐԴ ՆԵՓԻ ԳԻՐՔԸ ՆԵՓԻԻ

ՈՐԸ ՆԵՓԻԻ ՈՐԴԻՆ Է՝ ՀԻՍՈՒՍ ԶՐԻԱՏՈՍԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՑ ՄԵԿԸ

Նեփիի ժողովրդի մի պատմություն՝ ըստ նրա հիշատակարանի:

Նեփիացիները և Լամանացիները՝ բոլորը դարձի են գալիս առ Տերը – Նրանց բոլոր բաներն ընդհանուր են, գործում են հրաշքներ և բարգավաճում են երկրում – Երկու դար հետո առաջանում են բաժանումներ, չարիքներ, կեղծ եկեղեցիներ և հալածանքներ – Երեք հարյուր տարի հետո, ինչպես Նեփիացիները, այնպես էլ Լամանացիներն ամբարիշտ են – Ամմարոնը քաղցնում է սրբազան հիշատակարանները: Մոտ 35–321թթ. Ք.ծ.հ.:

ԵՎ եղավ այնպես, որ երեսուցնչորսերորդ տարին անցավ, և նաև երեսունևհինգերորդը, և ահա, շրջակա բոլոր երկրներում Հիսուսի աշակերտները Քրիստոսի մի եկեղեցի էին կազմավորել: Եվ բոլոր նրանք, ովքեր եկան նրանց մոտ և իսկապես ապաշխարեցին իրենց մեղքերից, մկրտվեցին Հիսուսի անունով. և նրանք նաև ստացան Սուրբ Հոգին:

2 Եվ եղավ այնպես երեսունևվեցերորդ տարում, ամբողջ ժողովուրդը դարձի էր եկել դեպի Տերը՝ ողջ երկրի երեսին, ինչպես Նեփիացիները, այնպես էլ Լամանացիները, և նրանց մեջ չկային հակառակություններ և վիճաբանություններ, և ամեն մարդ արդար էր վարվում մեկը մյուսի հետ:

3 Եվ նրանց մեջ բոլոր բաներն

ընդհանուր էին. հետևաբար, չկային հարուստ ու աղքատ, ճորտ ու ազատ, այլ նրանք բոլորը դարձվել էին ազատ, և երկնային պարզևի ճաշակողներ:

4 Եվ եղավ այնպես, որ երեսուցնչորսերորդ տարին նույնպես անցավ, և երկրում դեռ շարունակվում էր խաղաղություն տիրել:

5 Եվ մեծ ու զարմանալի գործեր էին գործվել Հիսուսի աշակերտների կողմից, այնպես որ նրանք ՞բժշկել էին հիվանդներին, և բարձրացրել մեռածներին, իրականացրել կաղերի քայլեր, և կույրերին շնորհել իրենց տեսողությունը, խուլերին՝ լսելը. և ամեն ձևի ՞հրաշքներ էին գործել մարդկանց զավակների մեջ. և ոչ մի բանում նրանք հրաշքներ չէին գործել, եթե չլիներ Հիսուսի անունով:

6 Եվ այսպես երեսուկութերորդ տարին անցավ, և նաև երեսունևհինգերորդը, և քառասունևմեկերորդը, քառասունևերկուերորդը, այո, նույնիսկ մինչև քառասունևհինը տարիներ անցան, և նաև հիսունևմեկերորդը, հիսունևերկուերորդը, այո, և նույնիսկ մինչև հիսունևհինը տարիներ անցան:

7 Եվ Տերը խիստ բարգավաճեցրեց նրանց երկրում. այո, այնպես որ նրանք կրկին կառուցեցին քաղաքներ, որտեղ քաղաքներ էին այրվել:

[4 Նեփի]
1 Յա Գոր. Գ.32,
3 Նեփի 26.19:

սուր Նվիրաբերել,
Նվիրաբերման օրենք:
5ա սուր Բժշկել,

Բժշկումներ:
բ չնվի. ԺԳ.12:
սուր Հրաշք:

8 Այո, նույնիսկ այն մեծ քաղաք Չարահեմլան նրանք կրկին կառուցել տվեցին:

9 Բայց կային շատ քաղաքներ, որոնք ասուվել էին, և ջրերը եկել էին դրանց տեղը. ուստի այս քաղաքները չկարողացան վերականգնվել:

10 Եվ այժմ ահա, եղավ այնպես, որ Նեփիի ժողովուրդը զորացավ, և շատ արագ բազմացավ, և դարձավ մի չափազանց ասեղեցիկ և հմայիչ ժողովուրդ:

11 Եվ նրանք ամուսնանում էին, և ամուսնացնում, և օրհնվում էին՝ ըստ այն մեծաքանակ խոստումների, որոնք Տերը տվել էր նրանց:

12 Եվ նրանք այլևս չէին քայլում ըստ Մովսեսի օրենքի թիսակատարությունների և արարողությունների. այլ նրանք քայլում էին՝ ըստ այն պատվիրանների, որոնք ստացել էին իրենց Տիրոջից և իրենց Աստծուց՝ շարունակելով զծոնապահությունով ու աղոթքով, և հաճախ հավաքվելով միասին, ինչպես աղոթելու, այնպես էլ լսելու Տիրոջ խոսքը:

13 Եվ եղավ այնպես, որ հակառակություն չեղավ ամբողջ ժողովրդի մեջ, ողջ երկրում, այլ եղան հզոր հրաշքներ՝ գործված Հիսուսի աշակերտների մեջ:

14 Եվ եղավ այնպես, որ յոթանասուններորդ տարին անցավ, և յոթանասուններկուերորդ տարին ևս, այո, և ի վերջո, մինչև յոթանասունևիններորդ տարին

անցավ. այո, նույնիսկ հարյուր տարի անցավ, և Հիսուսի աշակերտները, որոնց նա ընտրել էր, գնացել էին բոլորն Աստծո Պրախառը, բացի այն Քերեթից, որոնք պիտի մնային. և ուրիշ աշակերտներ կային նրանց փոխարեն՝ կարգված. և նաև այդ սերնդից շատերը մահացել էին:

15 Եվ եղավ այնպես, որ ասեղեցիկ ոչ մի հակառակություն երկրում Աստծո սիրո շնորհիվ, որը բնակվում էր մարդկանց սրտերում:

16 Եվ ասեղեցիկ նախանձություններ, ոչ էլ պայքարներ, ոչ էլ խլրտումներ, ոչ էլ պոռնկություններ, ոչ էլ ստախոսություններ, ոչ էլ սպանություններ, ոչ էլ որևէ ձևի թեշտասիրություն. և, անկասկած, ավելի զերջանիկ ժողովուրդ չէր կարող լինել այն բոլոր ժողովուրդների մեջ, որոնք ստեղծվել էին Աստծո ձեռքով:

17 Չկային ո՛չ ավազակներ, ո՛չ մարդասպաններ, ո՛չ էլ կային Լամանացիներ կամ որևէ այլ տեսակի -ացիներ. այլ նրանք մեկ էին՝ Քրիստոսի զավակները և Աստծո արքայության ժառանգները:

18 Եվ որքան օրհնված էին նրանք՝ Քանգի Տերն օրհնում էր նրանց բոլոր իրենց գործերում. այո, նրանք օրհնված էին ու բարգավաճում էին նույնիսկ մինչև հարյուր և տաս տարիներ անցնելը, և առաջին սերունդը՝ Քրիստոսից սկսած, անց էր կացել. և ողջ երկրում չկար ոչ մի հակառակություն:

8ա3 Նեփի 8.8:
9ա3 Նեփի 9.4, 7:
10ա Մորմ. 9.6:
12ա սո՛ր Մովսեսի օրենք:
բ 2 Նեփի 25.30,
3 Նեփի 15.2-8:
գ Մոր. 6.5,
վևՈՒ 88.76-77:

14ա սո՛ր Դրախտ:
բ 3 Նեփի 28.3-9:
սո՛ր Փոխակերպված
էակներ:
գ սո՛ր Աշակերտ:
դ սո՛ր Կարգել, Կարգում:
15ա սո՛ր Խաղաղություն:
16ա սո՛ր Միություն:

բ սո՛ր Ցանկանալ:
գ Մոսիա 2.41,
Ալմա 50.23:
սո՛ր Ուրախություն:
17ա Հովհ. ԺԷ.21:
սո՛ր Սիոն:

19 Եվ եղավ այնպես, որ Նեփին, նա, որը գրում էր այս վերջին հիշատակարանը (և նա գրում էր դա Նեփիի «թիթեղների վրա») մահացավ, և նրա որդին՝ Անովը գրեց այն նրա փոխարեն. և նա նույնպես գրեց այն Նեփիի թիթեղների վրա:

20 Եվ նա գրեց այն ութսունչորս տարիներ, և դեռ կար խաղաղությամբ երկրում, բացի ժողովրդի մի փոքր մասից, ովքեր ընդվզել էին եկեղեցու դեմ և վերցրել իրենց վրա Լամանացիներ անունը. հետևաբար, սկսեցին կրկին Լամանացիներ լինել երկրում:

21 Եվ եղավ այնպես, որ Անովը նույնպես մահացավ, (և դա հարյուր և իննսուներես տարի էր Քրիստոսի գալուց ի վեր), և նրա որդին՝ Անովը, գրեց հիշատակարանը նրա փոխարեն. և նա նույնպես գրեց այն Նեփիի թիթեղների վրա. և դա նույնպես գրվեց Նեփիի գրքում, որն այս գիրքն է:

22 Եվ եղավ այնպես, որ երկու հարյուր տարի էր անցել. և բոլոր երկրորդ սերունդն անցել էր, բացի մի քանիսից:

23 Եվ այժմ, ես՝ Մորմոն, կկամենայի, որ դուք իմանայիք, որ ժողովուրդն այնքան էր բազմացել, որ նրանք տարածվել էին ամբողջ երկրի երեսին, և որ նրանք դարձել էին անչափ հարուստ՝ Քրիստոսում իրենց բարգավաճման հետևանքով:

24 Եվ այժմ, այս երկու հարյուր և մեկերորդ տարում, նրանց մեջ

սկսեցին լինել այնպիսիք, ովքեր բարձրամտացած էին՝ «հպարտությունից, ինչպես օրինակ՝ կրելով թանկարժեք հանդերձներ և բոլոր տեսակի գեղեցիկ մարգարիտներ և աշխարհի գեղեցիկ բաներ:

25 Եվ այդ ժամանակից ի վեր նրանց ապրանքներն ու նրանց ստացվածքն այլևս «ընդհանուր չէր իրենց մեջ:

26 Եվ նրանք սկսեցին բաժանվել դասերի. և նրանք իրենց համար սկսեցին հիմնել «եկեղեցիներ՝ շահ ստանալու համար, և սկսեցին ուրանալ Քրիստոսի ճշմարիտ եկեղեցին:

27 Եվ եղավ այնպես, որ երբ երկու հարյուր և տասը տարի անցավ, եղան շատ եկեղեցիներ երկրում. այո, եղան շատ եկեղեցիներ, որոնք ձևացնում էին, թե գիտեին Քրիստոսին, և սակայն նրանք «ուրացել էին նրա ավետարանի շատ մասերը, այնպես որ նրանք ընդունեցին ամեն ձևի ամբարշտություն, և սպասավորեցին այն, ինչը սրբազան էր նրան, ում դա Քարգելված էր՝ անարժանավորության պատճառով:

28 Եվ այս «եկեղեցին չափազանց բազմացավ անօրինության պատճառով, և Սատանայի գործության պատճառով, որն ազդեցություն էր ձեռք բերել նրանց սրտերի վրա:

29 Եվ բացի դրանից, կար մեկ այլ եկեղեցի, որն ուրանում էր Քրիստոսին. և նրանք «հալածում էին Քրիստոսի ճշմարիտ եկեղեցին՝

19ա սուր Թիթեղներ:
 24ա սուր Հպարտություն:
 25ա 4 Նեփի 1.3:
 26ա 1 Նեփի 22.23,
 2 Նեփի 28.3,

Մորմ. 8.32–38:
 p ՎևոՒ 10.56:
 սուր Քահանաններու-
 թյուն:
 27ա սուր Ուրացություն:

p 3 Նեփի 18.28–29:
 28ա սուր Դև – Դևի
 եկեղեցին:
 29ա սուր Հալածել,
 Հալածանք:

նրանց համեստության և Քրիստոսում նրանց հավատքի պատճառով. և նրանք արհամարհում էին նրանց, այն շատ հրաշքների պատճառով, որոնք գործվել էին նրանց մեջ:

30 Հետևաբար, նրանք գորություն և իշխանություն էին գործադրում Հիսուսի աշակերտների վրա, որոնք մնացել էին իրենց հետ, և նրանք՝ քանտ էին գցում նրանց. բայց Աստծո խոսքի գորությամբ, որը նրանց մեջ էր, բանտերը երկու մասի էին ճեղքվում, և նրանք դուրս էին գալիս՝ հզոր հրաշքներ գործելով նրանց մեջ:

31 Այնուամենայնիվ, և չնայած բոլոր այս հրաշքներին, մարդիկ կարծրացրեցին իրենց սրտերը, և ջանացին սպանել նրանց, ճիշտ ինչպես հրեաները Երուսաղեմում ջանացին սպանել Հիսուսին՝ համաձայն նրա պատմածի:

32 Եվ նրանք գցեցին նրանց՝ կրակի քննությունները, և նրանք դուրս եկան՝ ոչ մի վնաս չկրելով:

33 Եվ նրանք նաև գցեցին նրանց վայրի գազանների՝ որջերը և նրանք խաղում էին վայրի գազանների հետ, ճիշտ ինչպես երեխան գառան հետ. և նրանք դուրս եկան նրանց միջից՝ չկրելով ոչ մի վնաս:

34 Սակայն, մարդիկ կարծրացրել էին իրենց սրտերը, քանզի նրանք առաջնորդվում էին շատ քահանաների և կեղծ մարգարեների կողմից՝ հիմնելու բազմաթիվ եկեղեցիներ և գործելու ամեն ձևի անօրինություն: Եվ նրանք՝ զարկում էին Հիսուսի

ժողովրդին. բայց Հիսուսի ժողովուրդը չէր զարկում ի պատասխան: Եվ այսպես, նրանք ընկան անհավատության և ամբարշտության մեջ՝ տարեց տարի, նույնիսկ մինչև երկու հարյուր և երեսուն տարիներ անցան:

35 Եվ այժմ եղավ այնպես, որ այս տարում, այո, երկու հարյուր և երեսունևմեկերորդ տարում, մարդկանց միջև բաժանում եղավ:

36 Եվ եղավ այնպես, որ այս տարում հայտնվեց մի ժողովուրդ, որոնք կոչվեցին Նեփիացիներ, և նրանք Քրիստոսի ճշմարիտ հավատացյալներ էին. և նրանց մեջ կային այնպիսիք, ովքեր Լամանացիների կողմից կոչվեցին Հակոբացիներ, և Հովսեփացիներ, և Չորամացիներ.

37 Հետևաբար, Քրիստոսի ճշմարիտ հավատացյալները, և Քրիստոսի ճշմարիտ երկրպագողները (որոնց մեջ էին Հիսուսի՝ տերք աշակերտները, ովքեր պիտի մնային) կոչվեցին Նեփիացիներ, և Հակոբացիներ, և Հովսեփացիներ, և Չորամացիներ:

38 Եվ եղավ այնպես, որ նրանք, ովքեր մերժեցին ավետարանը, կոչվեցին Լամանացիներ, և Լեմուելացիներ, և Իսմայելացիներ. և նրանք չէին ընկել անհավատության մեջ, ինչպես սկզբում իրենց հայրերն էին ընկել, այլ նրանք կանխամտածված՝ ապատամբել էին Քրիստոսի ավետարանի դեմ. և նրանք սովորեցնում էին իրենց զավակներին, որ նրանք չպետք է հավատան:

39 Եվ դա նրանց հայրերի ամբարշտության և պղծության պատ-

30ա3 Նեփի 28.19–20:
32ա Դան. Գ.26–27:
բ 3 Նեփի 28.21:

33ա3 Նեփի 28.22:
34ա3 Նեփի 12.39,
վևՈՒ 98.23–27:

37ա3 Նեփի 28.6–7,
Մորմ. 8.10–11:
38ա սոՒ Ապստամբություն:

ճառով էր, ճիշտ ինչպես ի սկզբանե էր: Եվ նրանց Խովորեցրել էին ասել Աստծո զավակներին, ճիշտ ինչպես Լամանացիներին էին սովորեցրել ասել Նեփիի զավակներին ի սկզբանե:

40 Եվ եղավ այնպես, որ երկու հարյուր և քառասունչորս տարիներ անցան, և այսպիսին էին ժողովրդի գործերը: Եվ ժողովրդի առավել ամբարիշտ մասն ուժեղացավ, և դարձավ շատ ավելի բազմաթիվ, քան Աստծո ժողովուրդն էր:

41 Եվ նրանք շարունակում էին իրենց համար հիմնել եկեղեցիներ, և զարդարել դրանք ամեն ձևի քանկարժեք բաներով: Եվ այսպես, երկու հարյուր և հիսուն տարիներ անցան, և երկու հարյուր և վաթսուն տարիներ և:

42 Եվ եղավ այնպես, որ ժողովրդի ամբարիշտ մասը սկսեց կրկին հիմնել Գաղիանթոնի գաղտնի երդումները և Խամբակցությունները:

43 Եվ նաև ժողովուրդը, որ կոչվում էր Նեփիի ժողովուրդ, սկսեց իր սրտում լինել հպարտ, իր մեծ հարստությունների պատճառով, և դարձավ սնապարծ, ինչպես իրենց եղբայրները՝ Լամանացիները:

44 Եվ այս ժամանակից սկսած, աշակերտները սկսեցին վշտանալ՝ աշխարհի անեղբերի համար:

45 Եվ եղավ այնպես, որ երբ երեք հարյուր տարիներ անցան, ինչպես Նեփիի ժողովուրդը, այն-

պես էլ Լամանացիները դարձան չափազանց ամբարիշտ՝ մեկը մյուսի նման:

46 Եվ եղավ այնպես, որ Գաղիանթոնի ավազակները տարածվեցին երկրի ողջ երեսին. և չկար ոչ մեկը, որ արդար լիներ, բացի Հիսուսի աշակերտներից: Եվ ոսկին ու արծաթը նրանք հավաքում էին՝ առատորեն կուտակում, և առ ու տուր էին անում առևտրի ամեն ձևով:

47 Եվ եղավ այնպես, որ երեք հարյուր և հինգ տարիներ անցնելուց հետո (և ժողովուրդը դեռ մնում էր ամբարշտության մեջ) Ամովսը մահացավ. և նրա եղբայր Ամնարոնը նրա փոխարեն պահեց հիշատակարանը:

48 Եվ եղավ այնպես, որ երբ երեք հարյուր և քսան տարիներ անցան, Ամնարոնը, պարտադրվելով Սուրբ Հոգու կողմից, թաքցրեց Խիշատակարանները, որոնք սրբազան էին, այո, նույնիսկ բոլոր սրբազան հիշատակարանները, որոնք փոխանցվել էին սերնդե-սերունդ, որոնք սրբազան էին, նույնիսկ մինչև Քրիստոսի գալստից սկսած երեք հարյուր և քսաներորդ տարին:

49 Եվ նա թաքցրեց դրանք Տիրոջ համար, որպեսզի դրանք կրկին Խայտնի դարձվեին Հակոբի տան մնացորդին, Տիրոջ մարգարեությունների ու խոստումների համաձայն: Եվ այսպիսին է Ամնարոնի հիշատակարանի վերջը:

39ա Մոսիա 10.17:
42ա սուր Գաղտնի

խամբակցություններ:
44ա 3 Նեփի 28.9:

48ա Հեղ. 3.13, 15–16:
49ա Ենոկս 1.13:

ՄՈՐՄՈՆԻ ԳԻՐՔԸ

ԳԼՈՒԽ 1

Ամմարոնը հրահանգում է Մորմոնին սրբազան հիշատակարանների վերաբերյալ – Պատերազմ է սկսվում Նեփիացիների ու Լամանացիների միջև – Երեք Նեփիացիները վերցվում են – Գերակշռում է ամբարշտությունը, անհավատությունը, կախարհությունները և մոգությունը: Մոտ 321–326թթ. Ք.ծ.հ.:

ԵՎ այժմ ես՝ Մորմոնս, մի Ք^{հիշատակարան} եմ գրում այն բաների վերաբերյալ, որոնք ես թե՛ տեսել եմ, թե՛ լսել, և կոչում եմ այն Մորմոնի Գիրք:

2 Եվ մոտավորապես այն ժամանակ, երբ Մամարոնը թաքցրեց հիշատակարանը Տիրոջ համար, նա եկավ ինձ մոտ (ես լինելով մոտ տասն տարեկան, և ես սկսել էի ինչ-որ չափով Քուսուցանվել ըստ իմ ժողովրդի գիտելիքի) և Ամմարոնն ասաց ինձ. Ես զգում եմ, որ դու լրջմիտ երեխա ես և արագ ես ընկալում:

3 Հետևաբար, երբ դու մոտ քսանևչորս տարեկան լինես, ես կկամենայի, որ դու հիշես այն բաները, որ դու նկատել ես այս ժողովրդի վերաբերյալ. և երբ դու այդ տարիքին լինես, գնա Ամթունի երկիրը, մի բլրի մոտ, որը կկոչվի ՄՍԻՄ. և այնտեղ եմ ես Տիրոջը պահ տվել բոլոր սրբազան փորագրություններն այս ժողովրդի վերաբերյալ:

4 Եվ ահա, դու պիտի վերցնես

Նեփիի Մթեղները քո մոտ, իսկ մնացածը դու պիտի թողնես այնտեղ, որտեղ դրանք են. և դու պիտի փորագրես Նեփիի թիթեղների վրա բոլոր բաները, ինչ նկատել ես այս ժողովրդի վերաբերյալ:

5 Եվ ես՝ Մորմոնս, լինելով Մեփիի մի հետնորդ (և իմ հոր անունը Մորմոն էր), հիշեցի այն բաները, որոնք Ամմարոնը պատվիրել էր ինձ:

6 Եվ եղավ այնպես, որ երբ ես տասնմեկ տարեկան էի, հայրս տարավ ինձ դեպի հարավային կողմի երկիրը, այսինքն՝ Չարահեմլայի երկիրը:

7 Երկրի ողջ երեսը ծածկված էր շինություններով և ժողովուրդը գրեթե այնքան մեծաթիվ էր, ինչպես ծովի ավազը:

8 Եվ եղավ այնպես, այս տարում սկսվեց մի պատերազմ Նեփիացիների միջև, որոնք բաղկացած էին Նեփիացիներից և Հակոբացիներից և Հովսեփացիներից և Չորամացիներից. և այս պատերազմը Նեփիացիների և Լամանացիների, Լեմուելացիների և Իսմայելացիների միջև էր:

9 Արդ, Լամանացիները, Լեմուելացիները և Իսմայելացիները կոչվում էին Լամանացիներ, և հակառակորդ կողմերն էին՝ Նեփիացիները և Լամանացիները:

10 Եվ եղավ այնպես, որ պատերազմը սկսվեց նրանց միջև Չարահեմլայի սահմաններում՝ Սիդոնի ջրերի մոտ:

11 Եվ եղավ այնպես, որ Նեփիա-

[ՄՈՐՄՈՆ]
 1 1ա սուր Մորմոն՝
 Նեփիացի մարգարե:
 ք 3 Նեփի 5.11–18:

2ա 4 Նեփի 1.47–49:
 ք Մոսիա 1.3–5:
 3ա Եթեր 9.3:
 4ա ՄԽ 1.1, 11:

սուր Թիթեղներ:
 5ա 3 Նեփի 5.12, 20:

ցիներն ի մի էին հավաքել մեծ թվով մարդկանց, նույնիսկ թվով երեսուն հազարից անց: Եվ եղավ այնպես, որ նրանք այս նույն տարում ունեցան մի շարք ճակատամարտեր, որոնցում Նեփիացիները ջարդեցին Լամանացիներին և կոտորեցին նրանցից շատերին:

12 Եվ եղավ այնպես, որ Լամանացիները հրաժարվեցին իրենց ծրագրից, և խաղաղություն հաստատվեց երկրում. և խաղաղությունը տևեց մոտ չորս տարիների ընթացքում, այնպես որ ոչ մի արյունահեղություն չեղավ:

13 Բայց ամբարշտությունը գերակշռում էր ողջ երկրի երեսին, այնպես որ Տերը վերցրեց իր «սիրելի աշակերտներին, և հրաշքների ու բժշկությունների գործը դադարեց՝ ժողովրդի անօրինության պատճառով:

14 Եվ չկային «պարզներ Տիրոջից, և Պուրբ Հոգին չէր գալիս որևէ մեկի վրա՝ նրանց ամբարշտության և Գանհավատության պատճառով:

15 Եվ ես՝ լինելով տասնհինգ տարեկան, և լինելով որոշ չափով լրջմիտ խելքով, ուստի Տերն այցելեց ինձ, և ես ճաշակեցի ու իմացա Հիսուսի բարության մասին:

16 Եվ ես փորձեցի քարոզել այս ժողովրդին, բայց իմ բերանը փակվեց, և ինձ արգելվեց, որ ես քարոզելի նրանց. քանզի ահա, նրանք կանխամտածված «ապստամբել էին իրենց Աստծո դեմ. և սիրելի աշակերտները ետ թվեցին երկրից՝ նրանց անօրինության պատճառով:

17 Բայց ես մնացի նրանց մեջ, սակայն ինձ արգելվեց քարոզել նրանց, նրանց սրտերի կարծրության պատճառով. և նրանց սրտերի կարծրության պատճառով երկիրն «անիծվեց նրանց համար:

18 Եվ այս Գաղիանթոնի ավագակները, որոնք Լամանացիների մեջ էին, հեղեղել էին երկիրը, այնպես որ այնտեղի բնակիչները սկսեցին թաքցնել իրենց «գանձերը հողում. և դրանք դարձան սպողում, որովհետև Տերն անիծել էր երկիրը, որպեսզի նրանք չկարողանային պահել դրանք, ոչ էլ կրկին պահպանել դրանք:

19 Եվ եղավ այնպես, որ կային կախարդություններ և մոգություններ և հմայություններ. և չարի գործությունը գործածվում էր երկրի ողջ երեսին՝ մինչև իսկ ի կատարումն Աբիմադիի և նաև Սամուել Լամանացու խոսքերի:

ԳԼՈՒԽ 2

Մորմոնն առաջնորդում է Նեփիական զորքերը – Երկիրը ողողվում է արյամբ ու կոտորածով – Նեփիացիները ողբում են ու սգում վշտով նզովվածների – Նրանց շնորհի օրն անցած է – Մորմոնը ձեռք է բերում Նեփիի թիթեղները – Պատերազմները շարունակվում են: Մոտ 327–350թթ. Զ.ծ.հ.:

Եվ եղավ այնպես, այդ նույն տարում կրկին մի պատերազմ սկսվեց Նեփիացիների ու Լամանացիների միջև: Եվ չնայած իմ երիտասարդ լինելուն, ես հաղթանդամ էի.

13ա3 Նեփի 28.2, 12:
14աՄոր. 10.8–18, 24:
բ սո՛ր Սուրբ Հոգի:
գ սո՛ր Անհավատություն:

16ա սո՛ւ Ապստամբություն:
բ Մորմ. 8.10:
17ա2 Նեփի 1.7,
Ալմա 45.10–14, 16:

18ա չե՛լ. 13.18–20,
Եթեր 14.1–2:

հետևաբար, Նեփիի ժողովուրդը նշանակեց ինձ, որ ես լինեի իրենց առաջնորդը, կամ իրենց գորքերի առաջնորդը:

2 Ուստի եղավ այնպես, որ իմ տասնվեցերորդ տարում ես առաջ գնացի Լամանացիների դեմ՝ Նեփիացիների բանակի գլուխն անցած. ուստի, երեք հարյուր և քսանվեց տարի էր անցել:

3 Եվ եղավ այնպես, որ երեք հարյուր և քսանյոթերորդ տարում Լամանացիները եկան մեզ վրա չափազանց մեծ ուժով, այնպես որ նրանք ահաբեկեցին իմ գորքերին. ուստի, նրանք չկամեցան կռվել, և նրանք սկսեցին նահանջել դեպի հյուսիսային երկիրը:

4 Եվ եղավ այնպես, որ մենք եկանք Անգոլա քաղաքը, և մենք վերցրեցինք քաղաքի տիրապետությունը, և պատրաստություններ տեսանք՝ պաշտպանվելու Լամանացիների դեմ: Եվ եղավ այնպես, որ մենք ամրացրեցինք քաղաքը մեր գորությունը. բայց չնայած բոլոր մեր ամրություններին, Լամանացիները եկան մեզ վրա և դուրս բռնեցին մեզ քաղաքից:

5 Եվ նրանք դուրս բռնեցին մեզ նաև Դավթի երկրից:

6 Եվ մենք արշավեցինք առաջ և եկանք Հեսուի երկիրը, որն արևմտյան սահմաններում էր՝ ծովեզրին մոտիկ:

7 Եվ եղավ այնպես, որ մենք ժողովեցինք մեր ժողովրդին այնքան արագ, որքան դա հնարավոր էր, որպեսզի ի մի հավաքեինք նրանց մեկ խմբով:

8 Բայց ահա, երկիրը լցված էր ավազակներով և Լամանացիներով. և չնայած այն մեծ կործանմանը, որը կախված էր իմ ժողովրդի վրա, նրանք չապաշխարեցին

իրենց շատ արարքներից. ուստի, արյուն և կոտորած էր սփռվել ողջ երկրի երեսով մեկ, ինչպես Նեփիացիների կողմում, այնպես էլ Լամանացիների կողմում. և դա մի կատարյալ հեղաշրջում էր ողջ երկրի երեսով մեկ:

9 Եվ այժմ Լամանացիներն ունեին թագավոր, և նրա անունն Ահարոն էր. և նա եկավ մեր դեմ, մի քառասունչորս հազարանոց բանակով: Եվ ահա, ես կանգնեցի նրա դեմ քառասուններկու հազարով: Եվ եղավ այնպես, որ ես ջարդեցի նրան իմ բանակով, այնպես որ նա փախավ իմ առաջից: Եվ ահա, այս բոլորն արվեց, և երեք հարյուր և երեսուն տարի էր անցել:

10 Եվ եղավ այնպես, որ Նեփիացիները սկսեցին ապաշխարել իրենց անօրինությունից և սկսեցին աղաղակել, ճիշտ ինչպես մարգարեացել էր Սամուել մարգարեն. քանզի ահա, ոչ մի մարդ չէր կարողանում պահել այն, ինչ իր սեփականն էր՝ գողերի և ավազակների և մարդասպանների, հմայության և մոգության պատճառով, որ կար երկրում:

11 Այսպիսով, լաց ու կոծ սկսվեց ողջ երկրում այս բաների պատճառով, և հատկապես՝ Նեփիի ժողովրդի մեջ:

12 Եվ եղավ այնպես, որ երբ ես՝ Մորմոնս, տեսա նրանց կոծն ու լացը, և նրանց վիշտը Տիրոջ առջև, սիրտս սկսեց հրճվել ներսումս, իմանալով Տիրոջ ողորմություններն ու երկայնամտությունը, հետևաբար, ենթադրելով, որ նա ողորմած կլինի նրանց հանդեպ, այնպես որ նրանք կրկին կդառնան մի արդարակյաց ժողովուրդ:

13 Բայց ահա, իմ այս ուրախու-

թյունը զուր էր, քանզի նրանց լվտանալն ի ապաշխարություն չէր, Աստծո բարության պատճառով. այլ դա ավելի շուտ վտանալն էր Բնգովվածների, որովհետև Տերը միշտ չէր հանդուրժելու նրանց, որ Գերջանկություն գտնեն մեղքի մեջ:

14 Եվ նրանք չէին գալիս դեպի Հիսուսը կոտրված ՝ սրտով և վշրված հոգով, այլ Բանիծում էին Աստծուն և ցանկանում մեռնել: Այնուամենայնիվ, նրանք սրով կովում էին իրենց կյանքի համար:

15 Եվ եղավ այնպես, որ իմ վիշտը վերադարձավ ինձ կրկին, և ես տեսա, որ նրանց համար ՝ շնորհի Բօրն Գանցել էր՝ թե՛ աշխարհիկով, թե՛ հոգևորով. քանզի ես տեսա նրանցից հազարավորների՝ վար տապալված իրենց Աստծո դեմ բաց ապստամբությունում, և դիզված գոմաղբի պես երկրի երեսին: Եվ այսպիսով, երեք հարյուր և քառասունչորս տարի էր անցել:

16 Եվ եղավ այնպես, որ երեք հարյուր և քառասունհինգերորդ տարում Նեփիացիները սկսեցին փախչել Լամանացիների առաջից. և նրանք հետապնդվեցին, մինչև որ նրանք եկան, նույնիսկ մինչև Հասոնի երկիրը, մախքան հնարավոր եղավ կանգնեցնել նրանց իրենց մահանջում:

17 Եվ արդ, Հասոնի քաղաքը մոտ էր այն ՝ երկրին, որտեղ Ամնարոնը պահ էր տվել հիշատակարանները Տիրոջը, որպեսզի դրանք չոչնչացվեին: Եվ ահա ես

զնացի, համաձայն Ամնարոնի խոսքի, և վերցրեցի Նեփիի թիթեղները, և մի հիշատակարան գրեցի՝ համաձայն Ամնարոնի խոսքերի:

18 Եվ Նեփիի թիթեղների վրա ես գրեցի բոլոր ամբարշտության և պղծությունների մի լրիվ պատմություն. բայց այս ՝ թիթեղների վրա ես խուսափեցի գրել նրանց ամբարշտության ու պղծությունների լրիվ պատմությունը, քանզի ահա, ամբարշտության և պղծությունների մի անընդմեջ տեսարան է եղել իմ աչքերի առաջ այն ժամանակից ի վեր, ինչ ես ձեռնհաս եղա տեսնել մարդկանց ուղիները:

19 Եվ վա՛յ ինձ, նրանց ամբարշտության պատճառով. քանզի իմ սիրտը բոլոր իմ օրերում լցված է եղել վշտով նրանց ամբարշտության պատճառով. այնուամենայնիվ, ես գիտեմ, որ ես պիտի ՝ բարձրացվեմ վերջին օրը:

20 Եվ եղավ այնպես, որ այս տարում Նեփիի ժողովուրդը կրկին հետապնդվում էր և քշվում: Եվ եղավ այնպես, որ մենք հասանք հյուսիսային կողմի երկիրը, որը կոչվում էր Սեմ:

21 Եվ եղավ այնպես, որ մենք ամբացրեցինք Սեմ քաղաքը, և մենք ներս հավաքեցինք այնքան շատ ժողովուրդ, որքան հնարավոր էր, որ միգուցե մենք կարողանայինք փրկել նրանց կործանումից:

22 Եվ եղավ այնպես, երեք հարյուր և քառասունվեցերորդ

<p>2 13ա Բ Կոր. Է.10, Ալմա 42.29: Բ սուր Նգովք: Գ Ալմա 41.10: 14ա սուր Կոտրված սիրտ:</p>	<p>Բ սուր Հայոյել, Հայոյանք: 15ա սուր Շնորհ: Բ Հել. 13.38: Գ Երեմ. Ը.20,</p>	<p>ՎևՈՒ 56.16: 17ա Մորմ. 1.1–4: 18ա սուր Թիթեղներ: 19ա Մոսիս 23.22, Երեբ 4.19:</p>
---	---	--

տարում նրանք սկսեցին կրկին զալ մեզ վրա:

23 Եվ եղավ այնպես, որ ես խոսեցի իմ ժողովրդի հետ, և նրանց հանդգեցի մեծ եռանդով, որ նրանք կանգնեին համարձակորեն Լամանացիների առջև և «կովեին իրենց կամանց և իրենց երեխաների, իրենց տների և իրենց օջախների համար:

24 Եվ իմ խոսքերը որոշ չափով բարձրացրեցին նրանց կորովը, այնպես որ նրանք չփախան Լամանացիների առաջից, այլ համարձակորեն կանգնեցին նրանց դեմ:

25 Եվ եղավ այնպես, որ մենք երեսուն հազարանոց բանակով կովեցինք ընդդեմ հիսուն հազարանոց բանակի: Եվ եղավ այնպես, որ մենք այնպիսի վճռականությամբ կանգնեցինք նրանց առաջ, որ նրանք փախան մեր առջևից:

26 Եվ եղավ այնպես, որ երբ նրանք փախան, մենք հետապնդեցինք նրանց մեր գորբերով, և նրանց դեմ եկանք կրկին և ջարդեցինք նրանց. սակայն Տիրոջ ուժը մեզ հետ չէր. այո, մենք թողնված էինք ինքներս մեզ, այնպես որ Տիրոջ Հոգին չէր մնում մեզ հետ. հետևաբար, մենք դարձել էինք մեր եղբայրների պես թույլ:

27 Եվ իմ սիրտը վշտանում էր իմ ժողովրդի մեծ դժբախտության պատճառով, նրանց ամբարշտության և նրանց պղծությունների պատճառով: Բայց ահա, մենք առաջ գնացինք Լամանացիների և Գադիանթոնի ավազակների դեմ, մինչև որ կրկին վերցրեցինք մեր ժառանգության հողերի տիրապետությունը:

28 Եվ անցել էր երեք հարյուր և քառասունհիններորդ տարին: Եվ երեք հարյուր և հիսուներորդ տարում մենք դաշինք կնքեցինք Լամանացիների և Գադիանթոնի ավազակների հետ, որով մենք հասանք մեր ժառանգության հողերի բաժանմանը:

29 Եվ Լամանացիները տվեցին մեզ հյուսիսային կողմի երկիրը, այո, նույնիսկ մինչև «նեղ անցումը, որը տանում էր դեպի հարավային կողմի երկիրը: Եվ մենք տվեցինք Լամանացիներին հարավային կողմի ողջ երկիրը:

ԳԼՈՒԽ 3

Մորմոնը Նեփիացիներին սպաշխարության է կանչում – Նրանք հասնում են մեծ հաղթանակի և փառքի իրենց սեփական ուժով – Մորմոնը հրաժարվում է առաջնորդել նրանց, և նրա աղոթքները նրանց համար առանց հավատքի են – Մորմոնի Գիրքը հրավիրում է Իսրայելի տասներկու ցեղերին հավատալ ավետարանին: Մոտ 360–362թթ. Ջ.ժ.հ.:

Եւ եղավ այնպես, որ Լամանացիները կրկին չեկան ճակատամարտելու, մինչև անցան տասը տարիներ ևս: Եվ ահա, ես գործի լծեցի իմ ժողովրդին՝ Նեփիացիներին, նախապատրաստելու իրենց հողերը և իրենց զենքերը՝ ճակատամարտի ժամանակի համար:

2 Եվ եղավ այնպես, որ Տերն ասաց ինձ. Ադադակի՛ր առ այս ժողովուրդը. Ապաշխարեք, և եկե՛ք ինձ մոտ, և մկրտվեք, և կրկին

հիմնեք իմ եկեղեցին, և դուք կխնայվեք:

3 Եվ ես աղաղակեցի առ այս ժողովուրդը, բայց դա զուր էր. և նրանք չգիտակցեցին, որ դա Տերն էր, որ խնայեց նրանց, և մի հնարավորություն շնորհեց նրանց՝ ապաշխարելու համար: Եվ ահա, նրանք կարծրացրեցին իրենց սրտերը Տիրոջ՝ իրենց Աստծո դեմ:

4 Եվ եղավ այնպես, որ այս տասը տարիներն անցնելուց հետո՝ Քրիստոսի գալստից սկսած՝ դառնալով ընդամենը երեք հարյուր և վաթսու տարի, Լամանացիների թագավորն ինձ մի ցամաք ուղարկեց, որն ինձ իմաց էր տալիս, որ նրանք կրկին նախապատրաստվում են զալ՝ ճակատամարտելու մեր դեմ:

5 Եվ եղավ այնպես, որ ես կարգադրեցի իմ ժողովրդին, որ նրանք ի մի հավաքվեն Ավերակներ երկրում, մի քաղաքում, որի սահմանները մտա էին նեղ անցումին, որը տանում էր դեպի հարավային կողմի երկիրը:

6 Եվ այնտեղ մենք դիրքավորեցինք մեր զորքերը, որ կարողանայինք կանգնեցնել Լամանացիների զորքերը, որ նրանք չկարողանային տիրապետություն ձեռք բերել մեր հողերից որևէ մեկի վրա. ուստի, մենք ամրացանք նրանց դեմ մեր ողջ ուժով:

7 Եվ եղավ այնպես, որ երեք հարյուր և վաթսուամեկերորդ տարում Լամանացիները վար եկան Ավերակներ քաղաքը՝ ճակատամարտելու մեր դեմ. և եղավ այնպես, որ այդ տարում մենք ջարդեցինք նրանց այնպես, որ նրանք

կրկին վերադարձան իրենց սեփական հողերը:

8 Եվ երեք հարյուր և վաթսուամեկերորդ տարում նրանք կրկին վար եկան՝ ճակատամարտելու: Եվ մենք կրկին ջարդեցինք նրանց, և կոտորեցինք նրանց մի մեծ թվաքանակով, և նրանց մեռելներին ծովը գցեցինք:

9 Եվ այժմ, այս մեծ բանի պատճառով, որ իմ ժողովուրդը՝ Նեփիացիներն արեցին, նրանք սկսեցին՝ «պարծենալ իրենց սեփական ուժով, և սկսեցին երդվել երկնքի առաջ, որ իրենք վրեժխնդիր կլինեն իրենց եղբայրների արյան համար, որոնք կոտորվել էին իրենց թշնամիների կողմից:

10 Եվ նրանք երդվեցին երկնքով, և նաև Աստծո գահով, որ իրենք «գնալու են ճակատամարտելու իրենց թշնամիների դեմ, և բնաջրնջելու են նրանց երկրի երեսից:

11 Եվ եղավ այնպես, որ ես՝ Մորմոն, բացարձակապես հրաժարվեցի այս ժամանակից ի վեր այս ժողովրդի հրամանատարն ու առաջնորդը լինել՝ նրանց ամբարշտության և պղծության պատճառով:

12 Ահա, ես առաջնորդել էի նրանց, չնայած իրենց ամբարշտությանը, ես շատ անգամ էի առաջնորդել նրանց՝ ճակատամարտելու, և սիրել էի նրանց իմ ողջ սրտով, համաձայն Աստծո «սիրո, որն իմ մեջ էր. և իմ հոգին ամբողջ օրը դուրս էր թափվել աղոթքում առ իմ Տերը՝ նրանց համար. այնուամենայնիվ, դա ^բառանց հավատքի էր՝ նրանց սրտերի կարծրության պատճառով:

13 Եվ երեք անգամ ես ազատել

եմ նրանց իրենց թշնամիների ձեռքից, և նրանք չապաշխարեցին իրենց մեղքերից:

14 Եվ երբ նրանք երդվեցին այն ամենով, որ իրենց ^աարգելված էր մեր Տիրոջ և Փրկիչ Հիսուս Քրիստոսի կողմից, որ նրանք գնալու էին իրենց թշնամիների հետ ճակատամարտելու, և վրեժխնդիր լինելու իրենց եղբայրների արյան համար, ահա, Տիրոջ ձայնը եկավ ինձ՝ ասելով.

15 ^աՎրեժն իմն է, և ես ^բկհատուցեմ. և քանի որ այս ժողովուրդը չապաշխարեց, երբ ես ազատեցի նրանց, ահա, նրանք պիտի բնաջնջվեն երկրի երեսից:

16 Եվ եղավ այնպես, որ ես կտրականապես հրաժարվեցի գնալ վեր՝ իմ թշնամիների դեմ. և ես արեցի, ճիշտ ինչպես Տերն էր պատվիրել ինձ. և ես կանգնեցի, որպես մի պարապ ականատես, հայտնելու աշխարհին այն բաները, որոնք ես տեսնում և լսում էի, չոգու դրսևորումների համաձայն, որը վկայել էր գալիք բաների մասին:

17 Հետևաբար, ես գրում եմ ^աձեզ, հեթանոսներ, և նաև ձեզ, Իսրայելի՛ տուն, երբ գործը սկսվի, որ դուք մոտ կլինեք ձեր ժառանգության հողը վերադառնալու համար նախապատրաստվելուն.

18 Այո, ահա, ես գրում եմ աշխարհի բոլոր ծայրերին. այո, ձե՛զ, Իսրայելի տասներկու ցեղեր, որ պիտի ^ադատվեք, համաձայն ձեր գործերի, տասներկուսի կողմից,

որոնց Հիսուսն ընտրեց՝ լինելու իր աշակերտները, Երուսաղեմի հողում:

19 Եվ ես գրում եմ նաև այս ժողովրդի մնացորդին, որոնք նույնպես պիտի դատվեն ^ատասներկուսի կողմից, որոնց Հիսուսն ընտրեց այս երկրում. և նրանք պիտի դատվեն մյուս տասներկուսի կողմից, որոնց Հիսուսն ընտրեց Երուսաղեմի հողում:

20 Եվ այս բաները Հոգին հայտնում է ինձ. հետևաբար, ես գրում եմ ձեզ բոլորիդ: Եվ այս պատճառով եմ ես գրում ձեզ, որպեսզի դուք կարողանաք իմանալ, որ դուք պետք է բոլորդ կանգնեք Քրիստոսի ^աատյանի առջև, այո, ամեն հոգի, որը պատկանում է Ադամի ողջ մարդկային ^բընտանիքին. և դուք պետք է կանգնեք՝ դատվելու ըստ ձեր գործերի, լինեն դրանք բարի, թե չար.

21 Եվ նաև, որպեսզի դուք կարողանաք ^ահավատալ Հիսուս Քրիստոսի ավետարանին, որը դուք կունենաք ձեր մեջ. և նաև, որպեսզի ^բհրեաները՝ Տիրոջ ուխտյալ ժողովուրդը, ունենան ևս մեկ ^գվկայություն, բացի նրանից, ում նրանք տեսան ու լսեցին, որ Հիսուսը, որին նրանք սպանեցին, ^դիրոք Քրիստոսն էր և իրոք՝ Աստված:

22 Եվ ես կկամենայի համոզել աշխարհի ^աբոլոր ծայրերին՝ ապաշխարել և պատրաստվել՝ կանգնելու Քրիստոսի ատյանի առջև:

14ա 3 Նեփի 12.34–37:
 15ա սոս՝ Վրեժխնդություն:
 բ ՎևՈՒ 82.23:
 17ա 2 Նեփի 30.3–8,
 3 Նեփի 29.1:
 18ա Մատ. ԺԹ.28,

Ղուկ. ԻԲ.29–30,
 ՎևՈՒ 29.12:
 19ա 1 Նեփի 12.9–10:
 20ա սոս՝ Վերջին
 դատաստան:
 բ ՎևՈՒ 27.11:

21ա ՎևՈՒ 3.20:
 բ սոս՝ Հրեաներ:
 գ 2 Նեփի 25.18:
 դ 2 Նեփի 26.12,
 Մոսիա 7.27:
 22ա Ալմա 29.1:

ԳԼՈՒԽ 4

Պատերազմն ու կոտորածը շարունակվում են – Ամբարիշտները պատժում են ամբարիշտներին – Գերակշռում է ավելի մեծ ամբարշտություն, քան երբևէ նախկինում բոլոր Իսրայելի մեջ – Կանայք ու երեխաներ են զոհաբերվում կոտրերին – Լամանացիները սկսում են քշել Նեփիացիներին իրենց առաջից: Մոտ 363–375թթ. Ք.ծ.հ.:

Եվ այժմ եղավ այնպես, որ երեք հարյուր և վաթսուներեքերորդ տարում Նեփիացիներն իրենց զորքերով գնացին վեր, Ավերակներ երկրից դուրս, ճակատամարտելու Լամանացիների դեմ:

2 Եվ եղավ այնպես, որ Նեփիացիների զորքերը կրկին ետ մղվեցին դեպի Ավերակներ երկիրը: Եվ մինչդեռ նրանք հոգնած էին, Լամանացիների մի թարմ զորք եկավ նրանց վրա. և նրանք մի ծանր ճակատամարտ ունեցան, այնպես որ Լամանացիները վերցրեցին Ավերակներ քաղաքի տիրապետությունը, և սպանեցին Նեփիացիներից շատերին, և շատ գերիներ վերցրեցին:

3 Իսկ մնացածը փախան ու միացան Թեանկում քաղաքի բնակիչներին: Արդ, Թեանկում քաղաքը գտնվում էր ծովեզրին մոտ սահմաններում. և այն նաև մոտ էր Ավերակներ քաղաքին:

4 Եվ դա եղավ, Պորովիետև Նեփիացիների զորքերը գնացին Լամանացիների վրա, այնպես որ նրանք սկսեցին ջախջախվել. քանզի, եթե դա չլիներ, Լամանա-

ցիները չէին կարող իշխանություն ունենալ նրանց վրա:

5 Բայց ահա, Աստծո դատաստանները վրա կհասնեն ամբարիշտներին. և դա ամբարիշտների միջոցով է, որ ամբարիշտները Պատժվում են. քանզի ամբարիշտներն են, որ մարդկանց զավակների սրտերը դրդում են արյունահեղության:

6 Եվ եղավ այնպես, որ Լամանացիները պատրաստություններ տեսան՝ գալու Թեանկում քաղաքիդեմ:

7 Եվ եղավ այնպես, երեք հարյուր և վաթսուներեսերորդ տարում, Լամանացիները եկան Թեանկում քաղաքի դեմ, որպեսզի վերցնեն նաև Թեանկում քաղաքի տիրապետությունը նույնպես:

8 Եվ եղավ այնպես, որ նրանք ետ մղվեցին և ետ քշվեցին Նեփիացիների կողմից: Եվ երբ Նեփիացիները տեսան, որ իրենք Լամանացիներին քշեցին, նորից պարծեցան իրենց սեփական ուժով. և նրանք գնացին առաջ՝ իրենց սեփական զորությամբ, և կրկին վերցրեցին Ավերակներ երկրի տիրապետությունը:

9 Եվ այժմ բոլոր այս բաներն արվեցին, և երկու կողմից էլ եղան հազարավոր սպանվածներ՝ ինչպես Նեփիացիներից, այնպես էլ Լամանացիներից:

10 Եվ եղավ այնպես, որ երեք հարյուր և վաթսուներեքերորդ տարին անցել էր, և Լամանացիները կրկին եկան Նեփիացիների վրա՝ ճակատամարտելու. և սակայն Նեփիացիները չէին ապաշխարել չարիքից, որ իրենք արել էին, այլ շարունակ համառու էին իրենց ամբարշտության մեջ:

11 Եվ անհնար է լեզվի համար նկարագրել, կամ մարդու համար գրել արյան ու կոտորածի այս զարհուրելի տեսարանի մի կատարյալ նկարագրություն, որը տեղի ունեցավ մարդկանց մեջ՝ ինչպես Նեփիացիների, այնպես էլ Լամանացիների. և ամեն սիրտ կարծրացած էր այնպես, որ նրանք հրճվում էին անընդհատ արյուն քափելով:

12 Եվ երբեք այսպիսի մեծ «ամբարշտություն չէր եղել Լեքիի բոլոր զավակների մեջ, ոչ էլ նույնիսկ ողջ Իսրայելի տան մեջ, ըստ Տիրոջ խոսքերի, ինչպիսին այս ժողովրդի մեջ էր:

13 Եվ եղավ այնպես, որ Լամանացիները վերցրեցին Ավերակներ քաղաքի տիրապետությունը, և այս եղավ, որովհետև նրանց «թիվը գերազանցում էր Նեփիացիների թվին:

14 Եվ նրանք մաս արշավեցին առաջ՝ Թեանկում քաղաքի դեմ, և դուրս բերեցին բնակիչներին այնտեղից, և վերցրեցին շատ գերիներ՝ թե՛ կանանց, թե՛ երեխաների, և նրանց որպես զոհ մատուցեցին իրենց «կուռք աստվածներին:

15 Եվ եղավ այնպես, որ երեք հարյուր և վաթսուներեքերորդ տարում, Նեփիացիները՝ բարկացած լինելով այն պատճառով, որ Լամանացիները զոհաբերել էին իրենց կանանց և իրենց երեխաներին, նրանք չափազանց մեծ բարկությամբ գնացին Լամանացիների դեմ, այնպես որ նրանք կրկին ջարդեցին Լամանացիներին և դուրս բերեցին նրանց իրենց հողերից:

16 Եվ Լամանացիները կրկին

չեկան Նեփիացիների դեմ, մինչև երեք հարյուր և յոթանասունևհինգերորդ տարին:

17 Եվ այս տարում նրանք վարեկան՝ Նեփիացիների դեմ, բոլոր իրենց ուժերով. և նրանց չհաշվեցին՝ իրենց թվի մեծության պատճառով:

18 Եվ այս «ժամանակից ի վեր Նեփիացիներն իշխանության չհասան Լամանացիների վրա, այլ սկսեցին ոչնչացվել նրանց կողմից, ճիշտ ինչպես ցողն արևի տակ:

19 Եվ եղավ այնպես, որ Լամանացիները վարեկան Ավերակներ քաղաքի դեմ. և շատ ծանր ճակատամարտ տվեցին Ավերակներ երկրում, որում նրանք ջարդեցին Նեփիացիներին:

20 Եվ նրանք կրկին փախուստի դիմեցին նրանց առաջից, և եկան Բոոս քաղաքը. և այնտեղ նրանք մեծ համարձակությամբ կանգնեցին Լամանացիների դեմ, այնպես որ Լամանացիները չջարդեցին նրանց, մինչև որ նրանք չեկան երկրորդ անգամ:

21 Եվ երբ նրանք եկան երկրորդ անգամ, Նեփիացիները բռնեցին և կոտորվեցին շատ մեծ կոտորածով. նրանց կանանց և նրանց երեխաներին կրկին զոհաբերեցին կուռքերին:

22 Եվ եղավ այնպես, որ Նեփիացիները կրկին փախուստի դիմեցին նրանց առջևից, իրենց հետ վերցնելով բոլոր բնակիչներին՝ ինչպես քաղաքներում, այնպես էլ գյուղերում:

23 Եվ այժմ, ես՝ Մորմոնս, տեսնելով, որ Լամանացիները մոտ էին երկիրը խորտակելուն, հետևաբար, ես գնացի «Միմ բլուրը և

12ա Ծն. 2.5, 3 Նեփի 9.9:
13ա Մորմ. 5.6:

14ա Մորմ. Կռապաշտություն:
18ա Մորմ. 3.3:

23ա Մորմ. 1.3:

վերցրեցի բոլոր հիշատակարանները, որոնք Ամմարոնը պահ էր տվել Տիրոջը:

ԳԼՈՒԽ 5

Մորմոնը կրկին առաջնորդում է Նեփիական զորքերն արյան ու կոտորածի ճակատամարտերում – Մորմոնի Գիրքն առաջ կգա՝ համոզելու բոլոր Իսրայելին, որ Հիսուսը Քրիստոսն է – Լամանացիները կցրվեն իրենց անհավատության պատճառով, և Հոզին կղաղարի ճգնել նրանց հետ – Նրանք կստանան ավետարանը հեթանոսներից վերջին օրերում: Մոտ 375–384թթ. Բ.ժ.հ.:

Եւ եղավ այնպես, որ ես գնացի առաջ՝ Նեփիացիների մեջ, և ապաշխարեցի այն տերդումից, որը ես արել էի, որ ես այլևս չէի օգնելու նրանց. և նրանք կրկին ինձ տվեցին իրենց զորքերի հրամանատարությունը, քանզի նրանք մայում էին ինձ վրա, կարծես թե ես կարող էի ազատել նրանց իրենց շարչարանքներից:

2 Բայց ահա, ես առանց հույսի էի, քանզի ես գիտեի Տիրոջ դատաստանները, որոնք պիտի գային նրանց վրա. քանզի նրանք չէին ապաշխարել իրենց անօրինություններից, այլ պայքարում էին իրենց կյանքի համար, առանց կանչելու առ այն Էակը, որը ստեղծել էր իրենց:

3 Եվ եղավ այնպես, որ Լամանացիները եկան մեր դեմ, երբ մենք փախել էինք Հորդանան. բայց ահա, նրանք ետ քշվեցին,

այնպես որ նրանք այդ ժամանակ չվերցրեցին քաղաքը:

4 Եվ եղավ այնպես, որ նրանք կրկին եկան մեր դեմ, և մենք պաշտպանեցինք քաղաքը: Եվ կային նաև ուրիշ քաղաքներ, որոնք պաշտպանվեցին Նեփիացիների կողմից, բերդեր, որոնք խոչընդոտեցին նրանց, այնպես որ նրանք չկարողացան մտնել երկիրը, որը տարածված էր մեր առջև՝ կործանելու մեր երկրի բնակիչներին:

5 Բայց եղավ այնպես, որ ինչ հողերի մոտով որ մենք անցանք, և դրանց բնակիչները չհամախմբվեցին, կործանվեցին Լամանացիների կողմից, և նրանց քաղաքները, գյուղերը և բերդաքաղաքներն այրվեցին կրակով. և այսպես անցան երեք հարյուր և յոթանասունևհինգ տարիներ:

6 Եվ եղավ այնպես, որ երեք հարյուր և ութսուներորդ տարում Լամանացիները կրկին եկան մեր դեմ՝ ճակատամարտելու, և մենք արիաբար կանգնեցինք նրանց դեմ. բայց այդ բոլորը զուր էր, քանզի այնքան մեծ էր նրանց թիվը, որ նրանք Նեփիացիներին ոտնակոխ արեցին:

7 Եվ եղավ այնպես, որ մենք կրկին փախուստի դիմեցինք, և նրանք, որոնց փախուստն ավելի արագ էր, քան Լամանացիներինը, ազատվեցին, և նրանք, որոնց փախուստը չէր գերազանցում Լամանացիներինը, վար տապալվեցին և բնաջնջվեցին:

8 Եվ այժմ ահա, ես՝ Մորմոնս, չեմ փափագում տակնուվրա անել մարդկանց հոգիները՝ նրանց նկարագրելով արյան ու կոտորածի այնպիսի մի սուկալի տեսարան,

ինչպիսիսն իմ աչքերի առջև էր փռված. բայց ես՝ գիտենալով, որ այս բաները պետք է անկասկած հայտնի դարձվեն, և որ բոլոր բաները, որոնք թաքցված են, պետք է ՝բացահայտվեն տների կտուրների վրա,–

9 Եվ նաև, որպեսզի այս բաների մասին մի տեղեկություն ՝հասնի այս ժողովրդի մնացորդին, և նաև հեթանոսներին, որոնք, Տերն ասել է, պիտի ՝ցրեն այս ժողովրդին, և այս ժողովուրդը կհամարվի ոչինչ նրանց մեջ,– ուստի ես մի Պիոքր համառոտագրում եմ անում, չհամարձակվելով տալ լրիվ պատմությունն այն բաների, որոնք ես տեսել եմ, այն պատվիրանի պատճառով, որը ես ստացել եմ, և նաև, որպեսզի դուք չունենաք խիստ մեծ վիշտ այս ժողովրդի ամբարշտության պատճառով:

10 Եվ այժմ ահա, ես ասում եմ այս նրանց սերնդին, և նաև հեթանոսներին, ովքեր մտահոգվում են Իսրայելի տան համար, ովքեր հասկանում են և գիտեն, թե որտեղից են գալիս իրենց օրհնությունները:

11 Քանզի ես գիտեմ, որ այդպիսիք կվշտանան Իսրայելի տան դժբախտության համար. այո, նրանք կվշտանան այս ժողովրդի կործանման համար. նրանք կվշտանան, որ այս ժողովուրդը չապաշխարեց, որպեսզի նրանք կարողանային գրկվել Հիսուսի բազուկներում:

12 Այժմ ՝այս բաները գրվում են Հակոբի տան ՝մնացորդի համար. և դրանք գրվում են այս ձևով, որովհետև դա հայտնի է Աստծուց, որ ամբարշտությունն ի հայտ չի բերի դրանք՝ նրանց համար. և դրանք պիտի Պպահ տրվեն Տիրոջը, որպեսզի դրանք առաջ զան նրան իսկ հարմար ժամանակ:

13 Եվ այս է պատվիրանը, որ ես ստացել եմ. և ահա, դրանք առաջ կգան, համաձայն Տիրոջ պատվիրանի, երբ նա հարմար կտեսնի, իր իմաստությամբ:

14 Եվ ահա, դրանք կգնան ՝հրեաների անհավատների մեջ. և այս նպատակով դրանք կգնան, որպեսզի նրանք կարողանան ՝համոզվել, որ Հիսուսը Քրիստոսն է՝ կենդանի Աստծո Որդին. որպեսզի Հայրը կարողանա իրագործել իր Ամենասիրելիի միջոցով, իր մեծ ու հավերժական նպատակը՝ վերադարձնելով հրեաներին, կամ բոլոր Իսրայելի տունն իրենց ժառանգության հողը, որը Տերը՝ իրենց Աստվածը տվել է նրանց, ի կատարումն իր Պուխտի.

15 Եվ նաև, որպեսզի ՝այս ժողովրդի սերունդն ավելի լիովին հավատա նրա ավտարանին, որը ՝կզա նրանց՝ հեթանոսներից. քանի որ այս ժողովուրդը ՝ցրված կլինի, և ՝կղառնա մի թուխ, և կեղտոտ, և մի նողկալի ժողովուրդ, նկարագրությունից վեր՝ նրա, ինչը երբևէ եղել է մեր մեջ, այո, նույնիսկ այն, ինչ եղել է Լամանա-

8ա Ղուկ. ԺԲ.2–3,
2 Նեփի 27.11,
ՎևՈՒ 1.3:
9ա 4 Նեփի 1.49:
բ 3 Նեփի 16.8:
գ Մորմ. 1.1:
12ա Ենովս 1.16,
Հել. 15.11–13:

սու՝ Մորմոնի Գիրքը:
բ ՎևՈՒ 3.16–20:
գ Մորմ. 8.4, 13–14,
Մոր. 10.1–2:
14ա 2 Նեփի 29.13, 30.7–8:
սու՝ Հրեաներ:
բ 2 Նեփի 25.16–17:
գ 3 Նեփի 29.1–3:

15ա 3 Նեփի 21.3–7, 24–26:
բ 1 Նեփի 13.20–29, 38,
Մորմ. 7.8–9:
գ 1 Նեփի 10.12–14,
3 Նեփի 16.8:
դ 2 Նեփի 26.33:

ցիների մեջ, և դա՛ նրանց անհավատության ու կռապաշտության պատճառով:

16 Քանզի ահա, Տիրոջ Հոգին արդեն ^ադադարել է ճիգ թափելուց նրանց հայրերի հետ. և նրանք առանց Քրիստոսի և Աստծո են աշխարհում. և նրանք քվում են այս ու այն կողմ, ինչպես ^բմղեղը քամու առաջ:

17 Նրանք մի ժամանակ հրաշալի ժողովուրդ էին, և նրանք ունեին Քրիստոսին որպես իրենց ^գհովիվ. այո, նրանք նույնիսկ առաջնորդվում էին Հայր Աստծո կողմից:

18 Բայց այժմ ահա, նրանք այս ու այն կողմ են ^դտարվում Սատանայի կողմից, ճիշտ ինչպես մղեղն է քվում քամու առաջ կամ ինչպես նավն է տարուբերվում ալիքների վրա, առանց առագաստի կամ խարսխի, կամ առանց որևէ վարելու բանի. և ճիշտ ինչպես դա է, այդպես էլ նրանք են:

19 Եվ ահա, Տերը պահել է նրանց օրհնությունները, որոնք նրանք կարող էին ստանալ երկրում ^եհեթանոսների համար, որոնք պիտի տիրեն երկրին:

20 Բայց ահա, կլինի այնպես, որ նրանք կքվեն ու կցրվեն հեթանոսների կողմից. և հետո, երբ նրանք հեթանոսների կողմից քված ու ցրված կլինեն, ահա, այն ժամանակ Տերը ^զկհիշի ^ըՌոխտը, որը նա արել է Աբրահամի և ամբողջ Իսրայելի տան հետ:

21 Եվ Տերը նաև կհիշի արդարների ^ըաղոթքները, որ նրանց համար հղվել են առ իրեն:

22 Եվ այն ժամանակ, ո՛վ հեթանոսներ, ի՞նչպես դուք կարող եք կանգնել Աստծո զորության առջև, եթե չապաշխարեք և չդառնաք ձեր չար ուղիներից:

23 Մի՞թե չգիտեք, որ դուք Աստծո ձեռքում եք: Մի՞թե չգիտեք, որ նա ունի ողջ զորությունը, և նրա մեծ ^ըհրամանով երկիրը մագաղաթի պես պիտի ^թզալարվի:

24 Հետևաբար, ապաշխարե՛ք և խոնարհվե՛ք նրա առաջ, որ չլինի թե նա դուրս գա արդարադատությանը ձեր դեմ, որ չլինի թե Հակոբի սերնդի մի մնացորդ առաջ գա ձեր մեջ ^կառյուծի պես, և պատառ-պատառ անի, և չլինի մեկը, որ ազատի:

ԳԼՈՒԽ 6

Նեփիացիները հավաքվում են Կոմորայի երկրում վերջնական ճակատամարտի – Մորմոնը թաքցնում է սրբազան հիշատակարանները Կոմորա բլրում – Լամանացիները հաղթում են, և Նեփիացի ազգը կործանվում է – Հարյուր հազարավորներ սպանվում են սրով: Մոտ 385թ. Ք.ծ.հ.:

Եւ այժմ ես ավարտում եմ հիշատակարանս իմ ժողովրդի՝ Նեփիացիների ^ակործանման մասին: Եվ եղավ այնպես, որ մենք արշավեցինք Լամանացիներին ընդառաջ:

2 Եվ ես՝ Մորմոնս, մի նամակ գրեցի Լամանացիների թագավորին, և խնդրեցի նրանից, որ նա

16ա Ծն. Զ.3, Եթեր 2.15:
բ Սաղ. Ա.4:
17ա սու՝ Բարի հովիվ:
18ա 2 Նեփի 28.21:
19ա 3 Նեփի 20.27–28:
20ա 3 Նեփի 16.8–12:

բ սու՝ Աբրահամի ուխտը:
21ա Ենովս 1.12–18, Մորմ. 9.36–37:
23ա Հել. 12.8–17:
բ 3 Նեփի 26.3:

24ա Միքիա Ե.8, 3 Նեփի 20.15–16:
6 1ա 1 Նեփի 12.19, Հարոմ 1.10, Ալմա 45.9–14, Հել. 13.5–11:

թույլ տար մեզ, որ մենք ի մի հավաքենք մեր ժողովրդին Կումորա ՝երկրում, մի բլրի մոտ, որը կոչվում էր Կումորա, և այնտեղ մենք կկարողանայինք ճակատամարտ տալ նրանց:

3 Եվ եղավ այնպես, որ Լամանացիների թագավորը թույլ տվեց ինձ այն, ինչ ես խնդրել էի:

4 Եվ եղավ այնպես, որ մենք արշավեցինք առաջ՝ դեպի Կումորայի երկիրը. և մենք խփեցինք մեր վրանները՝ Կումորա բլրի շուրջը շրջափակելով. և դա շատ ջրերի, գետերի, և աղբյուրների մի երկրում էր. և այստեղ մենք հույս ունեինք առավելության հասնել Լամանացիների նկատմամբ:

5 Եվ երբ երեք հարյուր և ութսուն և չորս տարի անց էր կացել, մենք ի մի հավաքեցինք մեր ժողովրդի բոլոր մնացածին Կումորայի երկրում:

6 Եվ եղավ այնպես, որ երբ մենք ի մի հավաքեցինք մեր ողջ ժողովրդին Կումորայի երկրում, ահա, ես՝ Մորմոնս, սկսեցի ծերանալ. և իմանալով, որ դա իմ ժողովրդի վերջին պայքարն է, և պատվիրված լինելով Տիրոջ կողմից, որ ես չպետք է թույլ տամ, որ հիշատակարանները, որոնք փոխանցվել են մեր հայրերի կողմից, որոնք սրբազան են, ընկնեն Լամանացիների ձեռքը (քանզի Լամանացիները կոչնչացնեին դրանք), ուստի ես կազմում եմ ՝այս հիշատակարանը Նեփիի թիթեղներից, և թաքցնում բոլոր հիշատակարանները Կումորա բլրում, որոնք վատահավել են ինձ Տիրոջ ձեռքով, բացի Պայս մի քանի թիթեղներից,

որոնք ես տվեցի իմ որդի ՝Մորմոնին:

7 Եվ եղավ այնպես, որ իմ ժողովուրդը, իրենց կանանց ու իրենց երեխաների հետ, տեսան Լամանացիների ՝գորքերին՝ իրենց ուղղությամբ արշավելիս. և մահվան այն սոսկալի վախով, որը լցնում է բոլոր ամբարիշտների կործքը, նրանք սպասում էին ընդունել նրանց:

8 Եվ եղավ այնպես, որ նրանք եկան՝ ճակատամարտելու մեր դեմ, և ամեն հոգի լցված էր սարսափով, նրանց թվի մեծության պատճառով:

9 Եվ եղավ այնպես, որ նրանք հարձակվեցին իմ ժողովրդի վրա սրով և աղեղով և նետով և կացնով, և բոլոր ձևի պատերազմի զենքերով:

10 Եվ եղավ այնպես, որ իմ մարդիկ վար տապալվեցին, այո, նույնիսկ իմ տասը հազարը, որոնք ինձ հետ էին, և ես վիրավոր ընկա նրանց մեջ. և նրանք անցան իմ կողքով, այնպես որ նրանք վերջ չտվեցին իմ կյանքին:

11 Եվ երբ նրանք անցան մեր միջով և վար տապալեցին ՝բոլոր իմ մարդկանց, բացի մեզանից քսանչորսին (որոնց մեջ էր իմ որդի Մորմոնին), և մենք, կենդանի մնալով մեր մարդկանց մահից հետո, հաջորդ օրը, երբ Լամանացիները վերադարձել էին իրենց ճամբարները, տեսանք Կումորա բլրի գագաթից, իմ գլխավորությամբ առաջնորդված, իմ մարդկանցից այն տասը հազարին, ովքեր վար էին տապալված:

12 Եվ մենք մահ տեսանք իմ

<p>2ա Եթեր 9.3: 6ա սուր Թիթեղներ: բ Եթեր 15.11:</p>	<p>գ ՄԽ 1.2: դ Մորմ. 8.1: 7ա 1 Նեփի 12.15:</p>	<p>11ա 1 Նեփի 12.19–20, Հեղ. 15.17:</p>
---	--	---

մարդկանցից տասը հազարին, ուվքեր առաջնորդվել էին իմ որդի Մորոնիի կողմից:

13 Եվ ահա, Գեղգեղոնայի տասը հազարն ընկած էին, և ինքը՝ նույնպես նրանց մեջ:

14 Եվ Լամահն էր ընկել իր տասը հազարով. և Գաղգաղան էր ընկել իր տասը հազարով. և Լիմհայն էր ընկել իր տասը հազարով. և Ենեուսն էր ընկել իր տասը հազարով. և Կուսենիան և Մորոնիան և Անթոնուսը և Սիբլոսը և Սեմը և Հոսը, – բոլորն ընկել էին՝ յուրաքանչյուրն իր տասը հազարով:

15 Եվ եղավ այնպես, որ կային ևս տասը, որոնք ընկել էին սրից, յուրաքանչյուրը՝ իրենց տասը հազարի հետ. այո, հիրավի՝ ողջ իմ ժողովուրդն ընկել էր, բացի այն քսանհորսից, որոնք ինձ հետ էին, և նաև մի քանիսից, որոնք փախել էին հարավային երկրներ, և մի քանիսից, ուվքեր դասալքել անցել էին Լամանացիների կողմը. և նրանց միսը և ոսկորները և արյունը փռված էին երկրի երեսին, թողնված լինելով նրանց ձեռքով, ուվքեր սպանել էին նրանց՝ փտելու գետնի վրա, և քայքայվելու ու վերադառնալու դեպի իրենց մայր հողը:

16 Եվ իմ հոգին պատռվում էր տվայտանքից, իմ ժողովրդի կոտորածի պատճառով, և ես աղաղակեցի.

17 Ա՛խ, դո՛ւք, սիրուններ, ինչպես կարողացաք հեռանալ Տիրոջ ուղիներից: Ա՛խ, դո՛ւք, սիրուններ, ինչպես կարողացաք ուրանալ այն Հիսուսին, որը կանգնած էր՝ գրկաբաց ընդունելու ձեզ:

18 Ահա, եթե դուք արած չլինեիք

այս, չէիք ընկնի: Բայց ահա, դուք ընկած եք, և ես ողբում եմ ձեր կորուստը:

19 Ա՛խ, դո՛ւք, սիրուն որդիներ և դուստրեր, դո՛ւք, հայրեր և մայրեր, դո՛ւք, ամուսիններ և կանայք, դո՛ւք, սիրուններ, ինչպես եղավ, որ դուք ընկաք:

20 Բայց ահա, դուք գնացիք, և իմ վիշտը չի կարող վերադարձնել ձեզ:

21 Եվ շուտով գալիս է օրը, որ ձեր մահկանացուն պիտի հագնի անմահություն, և այս մարմինները, որոնք այժմ փտում են ապականությանմբ, պետք է շուտով դառնան «անապական մարմիններ. և այն ժամանակ դուք պետք է կանգնեք Քրիստոսի ատյանի առջև՝ դատվելու ըստ ձեր գործերի. և եթե լինի այնպես, որ դուք արդար լինեք, այն ժամանակ դուք կօրհնվեք ձեր հայրերի հետ, որոնք հեռացել են ձեզանից առաջ:

22 Ա՛խ, եթե դուք ապաշխարեիք մինչև ձեզ վրա այս մեծ կործանման գալը: Բայց ահա, դուք գնացել եք, և Հայրը, այո, երկնքի Հավերժական Հայրը, գիտի ձեր վիճակը. և նա վարվում է ձեզ հետ՝ համաձայն իր «արդարադատության ու Բողոքմության»:

ԳԼՈՒԽ 7

Մորոնը հորդորում է վերջին օրերի Լամանացիներին հավատալ Քրիստոսին, ընդունել նրա ավետարանը և փրկվել – Բոլորը, ուվքեր հավատում են Աստվածաշնչին, կհավատան նաև Մորոնի Գրքին: Մոտ 385թ. Ք.ծ.հ.:

15ա Ավմա 9.24:
21ա Ա Կոր. ԺԵ.53–54:

22ա սո՛ւ Արդարադատու-
բյուն:

բ սո՛ւ Ողորմած,
Ողորմություն:

Եւ այժմ ահա, ես կկամենայի խոսել որոշ բան այս ժողովրդի մնացորդի համար, ովքեր խնայվել են, եթե լինի այնպես, որ Աստված իմ խոսքերը տա նրանց, որպեսզի նրանք կարողանան իմանալ իրենց հայրերի գործերը. այո, ես խոսում եմ ձեզ համար, դուք, Իսրայելի տան մնացորդ. և սրանք են խոսքերը, որ ես ասում եմ.

2 Իմացեք, որ դուք Իսրայելի ^ամնից եք:

3 Իմացեք, որ դուք պետք է գաք ապաշխարության, այլապես դուք չեք կարող փրկվել:

4 Իմացեք, որ դուք պետք է վար դնեք ձեր պատերազմի զենքերը, և այլևս չհրճվեք արյուն թափելով, և կրկին դրանք չվերցնեք, մինչև Աստված չպատվիրի ձեզ:

5 Իմացեք, որ դուք պետք է գաք ձեր հայրերի ^աիմացությանը, և ապաշխարեք ձեր բոլոր մեղքերից ու անօրինություններից, և ^բհավատաք Հիսուս Քրիստոսին, որ նա Աստծո Որդին է, և որ նա սպանվել է հրեաների կողմից, և Հոր գորությանը նա կրկին հարություն է առել, որով նա ^գհաղթանակ է ձեռք բերել գերեզմանի վրա. և նաև նրանում է մահվան խայթոցը կուլ գնացել:

6 Եվ նա իրականացնում է մենելների ^ահարությունը, որի միջոցով մարդը պետք է բարձրացվի՝ կանգնելու նրա ^բատյանի առջև:

7 Եվ նա իրականացրել է աշխարհի ^ափրկագնումը, որի միջոցով, նա, ով դատաստանի օրն ^բանմեղ կգտնվի նրա առջև, նրան թույլ կտրվի ^գբնակվել Աստծո ներկայության մեջ, իր արքայությունում, անդադար գովքեր գովերգելու ^դերգչախմբերի հետ վերևում՝ Հորը և Որդուն և Սուրբ Հոգուն, որոնք ^եմեկ Աստված են, ^զերջանկության մի վիճակում, որը վերջ չունի:

8 Հետևաբար, ապաշխարեք և մկրտվեք Հիսուսի անունով, և կառչած մնացեք Քրիստոսի ^աավետարանից, որը մատչելի կդարձվի ձեզ, ոչ միայն այս հիշատակարանում, հիշատակարան, որը պիտի գա ^բձեզ հեթանոսներից, այլ նաև այն ^գհիշատակարանում, որը պիտի գնա հեթանոսներին ^դհրեաներից:

9 Քանզի ահա, ^ասա գրվում է այն նպատակով, որ դուք ^բհավատաք դրան. և եթե դուք հավատաք դրան, դուք կհավատաք նաև սրան. և եթե դուք հավատաք սրան, դուք կիմանաք ձեր հայրերի մասին, և նաև այն զարմանալի գործերի մասին, որոնք գործվել են նրանց մեջ Աստծո գորությանը:

10 Եվ դուք կիմանաք նաև, որ դուք Հակոբի սերնդի մի մնացորդ եք. հետևաբար, դուք համարվում եք առաջին ուխտի ժողովրդի հետ.

7 1ա Հել. 15.11–13:
2ա Ալմա 10.3:
5ա 2 Նեփի 3.12:
բ սուր Հավատ,
Հավատալ, Հավատք:
գ Ես. ԻԵ.8,
Մոսիա 16.7–8:
6ա սուր Հարություն:
բ սուր Հիսուս Քրիստոս –
Դատավոր. Վերջին

դատաստան:
7ա սուր Փրկագնել,
Փրկագնված,
Փրկագնում:
բ սուր Արդարացում,
Արդարացնել:
գ 1 Նեփի 10.21,
Վև.ՈՒ 76.62,
Մովսես 6.57:
դ Մոսիա 2.28:

ե Վև.ՈՒ 20.28:
սուր Աստված,
Աստվածազուխ:
գ սուր Ուրախություն:
8ա սուր Ավետարան:
բ 1 Նեփի 13.38:
գ սուր Աստվածաշունչ:
դ 2 Նեփի 29.4–13:
9ա սուր Մորմոնի Գիրքը:
բ 1 Նեփի 13.38–41:

և եթե լինի այնպես, որ դուք հավատաք Քրիստոսին և մկրտվեք, նախ՝ ջրով, հետո՝ կրակով և Սուրբ Հոգով, հետևելով մեր Փրկչի՝ օրինակին, համաձայն նրա, ինչնա պատվիրել է մեզ, ձեզ համար լավ կլինի դատաստանի օրը: Ամեն:

ԳԼՈՒԽ 8

Լամանացիները հետապնդում են և կործանում Նեփիացիներին – Մորմոնի Գիրքն առաջ կգա Աստծո գործքամբ – Վայեր են ասվում նրանց վրա, ովքեր ցատում և պայքար են շնչում Տիրոջ գործի դեմ – Նեփիական հիշատակարաններն ի հայտ կգան ամբարշտության, այլասերվածության և ուրացության օրը: Մոտ 400-421թթ. Ք.ձ.հ.:

Աչս ես՝ Մորմոնիս, ավարտում եմ իմ հոր՝ Մորմոնի՝ հիշատակարանը: Ահա, ես որոշ բաներ էլ ունեմ գրելու, բաներ, որոնք ինձ պատվիրվել են իմ հոր կողմից:

2 Եվ այժմ եղավ այնպես, որ Կուսմորայի՝ մեծ և սուկալի ճակատամարտից հետո, ահա, Նեփիացիները, որոնք փախել էին հարավային կողմի երկիրը, հետապնդվեցին՝ Լամանացիների կողմից, մինչև որ նրանք բոլորը կործանվեցին:

3 Եվ իմ հայրը նույնպես սպանվեց նրանց կողմից, և ես հիրավի մնացել եմ՝ մենակ՝ գրելու իմ ժողովրդի կործանման տխուր պատմությունը: Բայց ահա, նրանք հեռացել են, և ես կատարում

եմ իմ հոր պատվիրանը: Եվ արդյոք նրանք կսպանեն ինձ, ես չգիտեմ:

4 Հետևաբար, ես կգրեմ և կթաքցնեմ հիշատակարանները հողում. և թե ուր կգնամ ես՝ դա կարևոր չէ:

5 Ահա, իմ հայրը կազմել է՝ այս հիշատակարանը, և նա գրել է դրանց նպատակը: Եվ ահա ես կգրեի դա նույնպես, եթե ես տեղ ունենայի՝ Քիթեդների վրա, բայց ես չունեմ. և ոչ էլ հանքանյութ ունեմ, քանզի ես մենակ եմ: Իմ հայրը և բոլոր իմ ազգականները սպանվել են ճակատամարտում, և ես չունեմ ո՛չ ընկերներ, ո՛չ էլ որևէ տեղ գնալու. և որքան ժամանակ Տերը թույլ կտա, որ ես ապրեմ, ես չգիտեմ:

6 Ահա, չորս ՝հարյուր տարիներ են անցել մեր Տիրոջ և Փրկչի գալստից ի վեր:

7 Եվ ահա, Լամանացիները հետապնդել են իմ ժողովրդին՝ Նեփիացիներին, քաղաքից քաղաք և տեղից տեղ, նույնիսկ մինչև որ նրանք այլևս չկան. և մեծ եղավ նրանց՝ անկումը. այո, մեծ և զարմանալի է իմ ժողովրդի՝ Նեփիացիների կործանումը:

8 Եվ ահա, այդ Տիրոջ ձեռքն է, որ արեց սա: Եվ նաև ահա Լամանացիները մեկը մյուսի հետ ՝պատերազմի մեջ են. և այս երկրի ամբողջ երեսը սպանության ու արյունահեղության մի անընդմեջ շրջան է. և ոչ ոք չգիտի պատերազմի վերջը:

9 Եվ այժմ ահա, ես այլևս չեմ խոսում նրանց մասին, քանզի,

10ա2 Նեփի 31.5-9:
8 1ա սուր Մորմոնի՝
Մորմոնի որդի:
բ սուր Թիթեղներ:

2ա Մորմ. 6.2-15:
բ Վևուխ 3.18:
3ա Մոր. 9.22:
5ա Մորմ. 2.17-18:

բ Մորմ. 6.6:
6ա Ալմա 45.10:
7ա 1 Նեփի 12.2-3:
8ա 1 Նեփի 12.20-23:

բացի Լամանացիներից և Կավազակներից, ոչ մեկը գոյություն չունի այս երկրի երեսին:

10 Եվ չկա ոչ մեկը, որ իմանա ճշմարիտ Աստծուն, բացի Հիսուսի Կառնուհիլիից, ովքեր մնացել էին երկրում, մինչև որ ժողովրդի ամբարշտությունն այնքան մեծ եղավ, որ Տերը թույլ չտվեց նրանց ^բմնալ ժողովրդի հետ. և արդյոք նրանք երկրի երեսին են, թե ոչ, ոչ մի մարդ չգիտի:

11 Բայց ահա, իմ Կառնուհիլի և ես տեսել ենք նրանց, և նրանք ծառայել են մեզ:

12 Եվ ովքեր, որ ընդունեն այս հիշատակարանը, և չդատապարտեն այն, թերությունների պատճառով, որոնք կան դրա մեջ, այդպիսիք կիմանան Կավելի մեծ բաներ, քան սրանք: Ահա, ես Մորոնին եմ. և լինեք դա հնարավոր, ես բոլոր բաները հայտնի կդարձնեի ձեզ:

13 Ահա, ես ավարտում եմ այս ժողովրդի մասին խոսելը: Ես Մորոնին որդին եմ, և իմ հայրը Նեփիի մի Կեռնորդ էր:

14 Եվ ես նա եմ, ով Կահ է տալիս այս հիշատակարանը Տիրոջ համար. դրա թիթեղները ոչ մի արժեք չունեն, Տիրոջ պատվիրանի պատճառով: Քանզի նա ճշմարիտ է ասում, որ ոչ մեկը չպիտի դրանք ունենա՝ ^բշահ ստանալու համար. բայց դրանց հիշատակարանը մեծ արժեքի է. և ով որ ի լույս բերի այն, նրան Տերը կօրհնի:

15 Քանզի ոչ ոք գորություն չի ունենա ի լույս բերելու այն, մինչև դա տրված չլինի Աստծո կողմից. քանզի Աստված կամենում է, որ դա արվի միմիայն իր փառքին ուղղված Կառնուհիլի, կամ ի բարություն հին և վաղուց սփռված Տիրոջ ուխտյալ ժողովրդի:

16 Եվ օրհնված լինի Կահ, որ ի լույս կբերի այս բանը. քանզի այն դուրս ^բկբերվի խավարից ի լույս, համաձայն Աստծո խոսքի. այո, այն դուրս կբերվի հողից, և այն դուրս կշողա խավարից, և կհասնի մարդկանց իմացությանը. և դա կարվի Աստծո գորությամբ:

17 Եվ եթե լինեն Կառնուհիլիներ, դրանք մարդկանց սխալներն են: Բայց ահա, մենք չգիտենք ոչ մի սխալ. այնուամենայնիվ, Աստված գիտի բոլոր բաները. հետևաբար, նա, ով ^բդատապարտում է, թող զգոն լինի, որ չլինի թե նա դժոխքի կրակի վտանգի տակ լինի:

18 Եվ նա, որ ասում է. Յույց տուր ինձ, թե չէ կգարկվես, թող նա զգուշանա, որ չլինի թե նա հրամայի այն, ինչ արգելված է Տիրոջ կողմից:

19 Քանզի ահա, նա, որ Կատում է հապճեպորեն, ինքը էլ կդատվի հապճեպորեն. քանզի համաձայն իր գործերի պիտի լինի իր վարձքը. հետևաբար, նա, որ զարկում է, ինքն էլ կգարկվի՝ Տիրոջ կողմից:

20 Տեսեք, թե ինչ է ասում սուրբ գիրքը՝ մարդ չպիտի զարկի, ոչ

9ա Մորմ. 2.8:
10ա3 Նեփի 28.7,
Եթեր 12.17:
տո՛ Երեք Նեփիացի
աշակերտները:
բ Մորմ. 1.16:
11ա3 Նեփի 28.24–26:
12ա3 Նեփի 26.6–11:

13ա3 Նեփի 5.20:
14ա Մոր. 10.1–2:
բ ՋՄ–Պ 1.46:
15ա ՎևոՒ 4.5:
16ա2 Նեփի 3.6–7, 11,
13–14:
բ Ես. ԻԹ.18,
2 Նեփի 27.29:

17ա Մորմ. 9.31, 33,
Եթեր 12.23–28:
բ 3 Նեփի 29.5,
Եթեր 4.8:
19ա ՋՄԹ, Մատ. 7.1–2,
3 Նեփի 14.1–2,
Մոր. 7.14:

էլ պիտի դատի. քանզի դատաստանն իմն է, ասում է Տերը, և վրեժխնդրությունը նույնպես իմն է, և ես կհատուցեմ:

21 Եվ ով որ ցատում և պայքար կշնչի Տիրոջ գործի դեմ և Տիրոջ ուխտայալ ժողովրդի դեմ, որոնք Իսրայելի տնից են, և կասի. Մենք կկործանենք Տիրոջ գործը, և Տերը չի հիշի իր ուխտը, որն արել է Իսրայելի տան հետ, նա կտրվելու և կրակի մեջ զգվելու վտանգի տակ կլինի:

22 Քանզի Տիրոջ հավերժական «նպատակները պիտի շարունակվեն, մինչև որ բոլոր նրա խոստումները կատարվեն:

23 Քննեք «Եսայիայի մարգարեությունները: Ահա, ես չեմ կարող գրել դրանք: Այո, ահա ես ասում եմ ձեզ, որ այն սրբերը, ովքեր գնացել են ինձանից առաջ, ովքեր տիրել են այս երկրին, պիտի ^բաղաղակեն, այո, նույնիսկ փոշուց կաղաղակեն նրանք առ Տերը. և ինչպես կենդանի է Տերը, նա կհիշի ուխտը, որն արել է նրանց հետ:

24 Եվ նա գիտի նրանց «աղոթքները, որ դրանք ի սեր իրենց եղբայրների էին: Եվ նա գիտի նրանց հավատքը, քանզի իր անունով նրանք կարողանում էին ^բսարեր տեղափոխել. և իր անունով նրանք կարողանում էին ստիպել գետնին ցնցվել. և իր խոսքի զորությամբ նրանք գետնին

տապալեցին ^գբանտերը. այո, նույնիսկ բոցավառ հնոցը չկարողացավ վնասել նրանց, ոչ էլ վայրի գազանները, ոչ էլ թունավոր օձերը, իր խոսքի զորության շնորհիվ:

25 Եվ ահա, նրանց «աղոթքները նույնպես ի սեր նրա էին, ում Տերը թույլ կտար ի հայտ բերելու այս բաները:

26 Եվ ոչ մեկը պետք չէ, որ ասի՝ դրանք չեն գալու, քանզի դրանք անկասկած պիտի գան, քանզի Տերն է խոսել դա. քանզի, հողից դրանք դուրս ^կկգան, Տիրոջ ձեռքով, և ոչ ոք չի կարող խանգարել. և դա կգա մի այնպիսի օր, երբ կսավի, որ ^բհրաշքները վերացել են. և այն կգա, ճիշտ կարծես մեկը կխոսի մեռած ^գտեղից:

27 Եվ դա կգա այն օրը, երբ սրբերի «արյունը կաղաղակի առ Տերը, ^բգաղտնի խմբակցությունների ու խավարի գործերի պատճառով:

28 Այո, դա կգա այն օրը, երբ Աստծո զորությունը կուրանան և «եկեղեցիները կդառնան պղծված և բարձրամտացած իրենց սրտերի հպարտությունից. այո, նույնիսկ այն օրը, երբ եկեղեցիների առաջնորդներն ու ուսուցիչները կբարձրանան իրենց սրտերի հպարտությունից, մինչև իսկ նախանձելով նրանց, ովքեր պատկանում են իրենց եկեղեցիներին:

29 Այո, դա կգա այն օրը, երբ

22ա ՎևոՒ 3.3:
23ա 3 Նեփի 20.11, 23.1:
բ Ես. ԻԹ. 4,
2 Նեփի 3.19–20,
26.16:
24ա Ենովս 1.12–18,
Մորմ. 9.36,
ՎևոՒ 10.46:
բ Հակոբ 4.6, Հել. 10.9:

գ Ալմա 14.27–29:
25ա Մորմ. 5.21:
26ա Ես. ԻԹ. 4,
2 Նեփի 33.13:
բ Մորմ. 9.15–26,
Մոր. 7.27–29, 33–37:
գ 2 Նեփի 26.15–16,
Մորմ. 9.30,
Մոր. 10.27:

27ա Եբեր 8.22–24,
ՎևոՒ 87.6–7:
բ սուր Գաղտնի
խմբակցություններ:
28ա Բ Տիմ. Գ. 1–7,
1 Նեփի 14.9–10,
2 Նեփի 28.3–32,
ՎևոՒ 33.4:

«կլավեն հրդեհների և փոթորիկների և ծխի ^բմեզերի մասին օտար երկրներում:

30 Եվ կլավեն նաև ^ապատերազմների, պատերազմների համբավների և զանազան տեղերում երկրաշարժերի մասին:

31 Այո, դա կգա այն օրը, երբ մեծ աղտոտվածություն կլինի երկրի երեսին. կլինեն մարդասպանություններ և ավազակություն, ստախոսություն և խաբեություններ, պոռնկություններ և ամեն ձևի պղծություններ. երբ կլինեն շատերը, ովքեր կասեն. Արա այս, կամ արա այն, և ^անշանակություն չունի, քանզի վերջին օրը Տերը ^բկաջակցի այդպես անողներին: Բայց վա՛յ այդպիսիներին, քանզի նրանք դառը ^գմաղձի և անօրինության կապանքների մեջ են:

32 Այո, դա կգա այն օրը, երբ եկեղեցիներ կլինեն հիմնված, որոնք կասեն. Եկեք ինձ մոտ, և ձեր փողի համար ձեզ կներվեն ձեր մեղքերը:

33 Ո՛վ դուք, ամբարիշտ և խտտորյալ և խստապարանոց ժողովուրդ, ինչո՞ւ եք դուք ձեզ համար եկեղեցիներ հիմնել, մի՞թե ^աշահ ստանալու համար: Ինչո՞ւ եք դուք ^բձևափոխել Աստծո սուրբ խոսքը, որպեսզի ^գնզո՞վք բերեք ձեր հոգիներին: Ահա, նայեք Աստծո հայտնություններին. քանզի ահա, գալիս է ժամանակը՝ այն օրը, երբ բոլոր այս բաները պիտի կատարվեն:

34 Ահա, Տերն ինձ ցույց է տվել մեծ և զարմանալի բաներ նրա վերաբերյալ, ինչ պետք է շուտով գա, այն օրը, երբ այս բաներն առաջ կգան ձեր մեջ:

35 Ահա, ես խոսում եմ ձեզ հետ, կարծես դուք ներկա լինեք, և սակայն դուք ներկա չեք: Բայց ահա, Հիսուս Քրիստոսը ձեզ ցույց է տվել ինձ, և ես գիտեմ ձեր արարքները:

36 Եվ ես գիտեմ, որ դուք ^աքայլում եք ձեր սրտերի հպարտությամբ. և չկա ոչ մեկը, բացի միայն մի քանիսից, որոնք իրենց չեն ^բբարձրացնում իրենց սրտերի հպարտությունից, մինչև իսկ ^գշատ ընտիր հանդերձներ կրելը, մինչև նախամձ և պայքար և ռիս, հալածանքներ և ամեն ձևի անօրինություններ. և ձեր եկեղեցիները, այո, նույնիսկ յուրաքանչյուրը դարձել է աղտոտված, ձեր սրտերի հպարտության պատճառով:

37 Քանզի ահա, դուք ավելի շատ սիրում եք ^ափողը և ձեր ստացվածքը, ձեր ընտիր հանդերձները և ձեր եկեղեցիները զարդարելը, քան սիրում եք աղքատին ու կարիքավորին, հիվանդին ու չարչարվածին:

38 Ո՛վ դուք, աղտոտվածներ, դո՛ւք կեղծավորներ, դո՛ւք ուսուցիչներ, ովքեր ծախում եք ձեզ նրա համար, ինչը քայքայվելու է, ինչո՞ւ եք դուք աղտոտել Աստծո սուրբ եկեղեցին: Ինչո՞ւ եք դուք ^աամաչում վերցնել ձեզ վրա Քրիստոսի

29ա Հովել Բ.28–32,
2 Նեփի 27.2–3:
բ 1 Նեփի 19.11,
վևՈՒ 45.39–42:
30ա Մատ. Ի.9.6,
1 Նեփի 14.15–17:
31ա 2 Նեփի 28.21–22:
բ 2 Նեփի 28.8:

գ Ալմա 41.11:
33ա սո՛ւ Քահանանեճուր-
թյուն:
բ 1 Նեփի 13.26–29:
գ սո՛ւ Նզովք:
36ա սո՛ւ Քայլել, Քայլել
Աստծո հետ:
բ Հակոբ 2.13:

գ Ալմա 5.53:
37ա 2 Նեփի 28.9–16:
38ա Հնովմ. Ա.16,
Բ Տիմ. Ա.8,
1 Նեփի 8.25–28,
Ալմա 46.21:

անուրբ: Ինչո՞ւ դուք չեք մտածում, որ անվերջ երջանկության արժեքն ավելի մեծ է, քան այն թշվառությանը, որը երբեք չի մեռնում, մի՞թե աշխարհի զովասանքի համար:

39 Ինչո՞ւ եք դուք զարդարում ձեզ նրանով, ինչը կյանք չունի, և սակայն թույլ տալիս, որ սովածը և կարիքավորը և մերկը և հիվանդը և չարչարվածն անցնի ձեր կողքով, և ուշք չեք դարձնում նրանց:

40 Այո, ինչո՞ւ եք դուք շահ ստանալու համար զաղտնի պղծություններ հիմնում և ստիպում, որ այրիները սզան Տիրոջ առջև, և նաև որբերը սզան Տիրոջ առջև, և նաև նրանց հայրերի ու նրանց ամուսինների արյունը գետնից աղաղակի առ Տերը վրեժխնդրության համար, ձեր գլխին:

41 Ահա, վրեժխնդրության սուրը կախված է ձեզ վրա. և ժամանակը շուտով գալիս է, որ նա սրբերի արյան համար ՝ վրեժ կլուծի ձեզանից, քանզի նա այլևս չի տանի նրանց աղաղակները:

ԳԼՈՒԽ 9

Մորոնին նրանց կոչ է անում ապաշխարել, ովքեր չեն հավատում Քրիստոսին – Նա հայտարարում է հրաշքների Աստծո մասին, որը տալիս է հայտնություններ և պարգևներ ու նշաններ է քափում հավատարիմների վրա – Հրաշքները դադարում են անհավատության պատճառով – Նշաններ են հետևում նրանց, ովքեր

հավատում են – Մարդկանց հորդորվում է լինել իմաստուն և պահել պատվիրանները: Մոտ 401–421թթ. Ք.ծ.հ.:

ԵՎ այժմ, ես խոսում եմ նաև նրանց վերաբերյալ, ովքեր չեն հավատում Քրիստոսին:

2 Ահա, կհավատա՞ք դուք ձեր այցելության օրը, ահա, երբ Տերը գա, այո, նույնիսկ այն ՝ մեծ օրը, երբ ՝ Երկիրը կգալարվի մագաղաթի պես, և տարրերը ՝ կհալվեն այրող տաքությունից, այո, այն մեծ օրը, երբ դուք կբերվեք՝ կանգնելու Աստծո Գառնի առաջ, այն ժամանակ մի՞թե դուք կասեք, որ Աստված չկա:

3 Այն ժամանակ մի՞թե դուք դեռ կուրանաք Քրիստոսին, կամ կարո՞ղ եք նայել Աստծո Գառնին: Մի՞թե դուք կարծում եք, որ դուք պիտի բնակվեք նրա հետ ձեր հանցանքի գիտակցության ներքո: Մի՞թե դուք կարծում եք, որ դուք կկարողանաք երջանիկ լինել, բնակվելով այն սուրբ Էսկի հետ, երբ ձեր հոգիները պրկված են հանցանքի գիտակցումից, որ դուք միշտ ոտնահարել եք նրա օրենքները:

4 Ահա, ես ասում եմ ձեզ, որ դուք կլինեք ավելի թշվառ՝ բնակվելով սուրբ և արդար Աստծո հետ, նրա առջև ձեր աղտոտվածության գիտակցության ներքո, քան դուք կլինեք՝ ապրելով ՝ մեղավոր հոգիների հետ ՝ դժոխքում:

5 Քանզի ահա, երբ դուք կբերվեք՝ տեսնելու ձեր ՝ մերկությունն

38բ Մոսիա 3.25:
գ 1 Նեփի 13.9:
40ա սուր Գաղտնի խմբակցություններ:
41ա 1 Նեփի 22.14:
9 2ա Մաղ. Գ.5,

3 Նեփի 28.31:
բ Մորմ. 5.23,
ՎևոՒ 63.20–21:
սուր Աշխարհի –
Աշխարհի վերջը:
գ Անովս Թ.13,

3 Նեփի 26.3:
4ա սուր Նգովք:
բ սուր Դժոխք:
5ա 2 Նեփի 9.14:

Աստծո առջև, և նաև Աստծո փառքը, և Հիսուս Քրիստոսի սրբությունը, դա անմար կրակի մի բոց կվառի ձեր մեջ:

6 Օ՛հ, ուրեմն, ^աանհավատներ, ^բդարձեք դեպի Տերը, ուժգին աղաղակեք առ Հայրը՝ Հիսուսի անունով, որ, միգուցե, այն մեծ և վերջին օրը, դուք կարողանաք անբիծ, ^գմաքուր, անարատ և ճերմակ համարվել՝ մաքրված լինելով ^դԳառան արյան միջոցով:

7 Եվ դարձյալ, ես խոսում եմ ձեզ հետ, որ ^աուրանում եք Աստծո հայտնությունները, և ասում, թե դրանք վերացել են, որ չկան ոչ մի հայտնություններ, ոչ էլ մարգարեություններ, ոչ պարզևներ, ոչ բժշկություններ, ոչ լեզուներով խոսել, ոչ էլ լեզուներով ^բթարգմանել:

8 Ահա, ես ասում եմ ձեզ՝ նա, ով ուրանում է այս բաները, չգիտի Քրիստոսի ^աավետարանը. այո, նա չի կարողացել սուրբ գրքերը. եթե կարողացել է, նա չի ^բհասկանում դրանք:

9 Քանզի մի՞թե մենք չենք կարդում, որ Աստված ^անույնն է՝ երեկ, այսօր, և հավիտյան, և նրա մեջ փոփոխություն չկա, ոչ էլ փոխվելու շուք:

10 Եվ այժմ, եթե դուք երևակայել եք մի աստված, որը փոփոխվում է, և որի մեջ կա փոխվելու շուք, այդ դեպքում դուք երևակայել եք

մի աստված, որը հրաշքների Աստված չէ:

11 Բայց ահա, ես ցույց կտամ ձեզ հրաշքների մի Աստված, այսինքն՝ Աբրահամի Աստվածը և Իսահակի Աստվածը և Հակոբի Աստվածը. և դա այն նույն ^աԱստվածն է, որը ստեղծեց երկինքները և երկիրը, և բոլոր բաները, որ դրանցում են:

12 Ահա, նա ստեղծեց Ադամին, և ^աԱդամի միջոցով եկավ մարդու ^բանկումը: Եվ մարդու անկման պատճառով եկավ Հիսուս Քրիստոսը, այսինքն՝ Հայրը և Որդին. և Հիսուս Քրիստոսի շնորհիվ եկավ մարդու ^գփրկագնումը:

13 Եվ մարդու փրկագնման շնորհիվ, որը Հիսուս Քրիստոսի միջոցով եկավ, նրանք ետ են բերվում Տիրոջ ներկայության մեջ. այո, այս ձևով են բոլոր մարդիկ փրկագրվում, որովհետև Քրիստոսի մահն իրականացնում է ^ահարությունը, որն իրականացնում է փրկագնում մի անվերջ ^բքնից, քուն, որից բոլոր մարդիկ պիտի արթնացվեն Աստծո գորությանը, երբ փողը հնչի. և նրանք դուրս կգան՝ թե՛ փոքր, թե՛ մեծ, և բոլորը կկանգնեն նրա դատարանի առջև՝ փրկագնված և արձակված լինելով մահվան այս հավերժական ^գկապանքից, մահ, որը ժամանակավոր մահ է:

14 Եվ այնուհետև, նրանց վրա գալիս է Սուրբի ^ադատաստանը.

<p>6ա սո՛ւ Անհավատություն: <i>բ</i> Եզեկ. ԺԸ.23, 32, ՎևՈՒ 98.47: <i>գ</i> սո՛ւ Անարատ, Անարատություն: <i>դ</i> սո՛ւ Աստծո Գառը: 7ա3 Նեփի 29.6-7: <i>բ</i> Ա Կոր. ԺԲ.7-10, ՀՀ 1.7: 8ա սո՛ւ Ավետարան:</p>	<p><i>բ</i> Մատ. ԻԲ.29: 9ա Եբր. ԺԳ.8, 1 Նեփի 10.18-19, Ալմա 7.20, Մոր. 8.18, ՎևՈՒ 20.12: 11ա Ծճ. Ա.1, Մոսիա 4.2, ՎևՈՒ 76.20-24: սո՛ւ Հիսուս Քրիստոս: 12ա Մոսիա 3.26:</p>	<p><i>բ</i> սո՛ւ Ադամի և Եվայի անկումը: <i>գ</i> սո՛ւ Փրկագնել, Փրկագնված, Փրկագնում: 13ա Հել. 14.15-18: <i>բ</i> ՎևՈՒ 43.18: <i>գ</i> ՎևՈՒ 138.16: 14ա սո՛ւ Վերջին դատաստան:</p>
--	---	--

և այնուհետև, գալիս է ժամանակը, որ նա, ով թկեղտոտ է, պիտի լինի տակավին կեղտոտ. և նա, ով արդար է, պիտի լինի տակավին արդար. նա, ով երջանիկ է, պիտի լինի տակավին երջանիկ. և նա, ով դժբախտ է, պիտի լինի տակավին դժբախտ:

15 Եվ այժմ, ո՛վ դուք, բոլո՛րդ, որ պատկերացրել եք ձեզ մի աստված, որը ^ահրաշքներ չի կարող անել, ես կկամենայի հարցնել ձեզ, արդյո՞ք այս բոլոր բաները տեղի են ունեցել, որոնց մասին ես խոսեցի: Վերջն արդեն եկե՛լ է: Ահա, ես ասում եմ ձեզ՝ Ո՛չ. և Աստված չի դադարել հրաշքների Աստված լինել:

16 Ահա, մի՞թե այն բաները, որ Աստված գործել է, զարմանալի չեն մեր աչքում: Այո, և ո՞վ կարող է ըմբռնել Աստծո զարմանալի ^ագործերը:

17 Ո՞վ կասի, թե հրաշք չէր, որ նրա ^ախոսքով երկինքը և երկիրը եղավ. և նրա խոսքի գորությանմբ մարդը ^աստեղծվեց հողի ^փփոշուց. և նրա խոսքի գորությանմբ հրաշքներ գործվեցին:

18 Եվ ո՞վ կասի, որ Հիսուս Քրիստոսը հզոր ^ահրաշքներ չգործեց: Եվ շատ գորավոր հրաշքներ եղան առաքյալների ձեռքով գործված:

19 Եվ եթե եղել են ^ահրաշքներ գործված այն ժամանակ, ինչն՞ է Աստված դադարել հրաշքների Աստված լինել, և այնուամենայ-

նիվ, անփոխոխ էակ է: Եվ ահա, ես ասում եմ ձեզ՝ նա չի փոխվում. եթե լիներ այդպես, նա կդադարեր Աստված լինել. իսկ նա չի դադարում Աստված լինել, և հրաշքների Աստված է:

20 Եվ պատճառը, թե ինչու է նա դադարում ^ահրաշքներ գործել մարդկանց զավակների մեջ, այն է, որ նրանք ընկնում են անհավատության մեջ, և հեռանում են ճիշտ ուղուց, և չեն ճանաչում Աստծուն, որին պետք է ^ապավիհեն:

21 Ահա, ես ասում եմ ձեզ. Ով որ ոչ մի բանի չկասկածելով հավատում է Քրիստոսին, ^աինչ էլ նա խնդրի Հորը՝ Քրիստոսի անունով, կտրվի նրան. և այս խոստումը բոլորի համար է, նույնիսկ աշխարհի ծայրերի համար:

22 Քանզի ահա, այսպես ասաց Հիսուս Քրիստոսը՝ Աստծո Որդին, իր աշակերտներին, որոնք պետք է մնային, այո, և նաև բոլոր իր աշակերտներին, բազմության ներկայությամբ. ^աԳնացե՛ք աշխարհով մեկ, և քարոզեք ավետարանն ամեն արարածի.

23 Եվ նա, ով կհավատա և կմկրտվի, կփրկվի, բայց նա, որ չի հավատա, ^ակնզովվի.

24 Եվ այս ^անշանները կհետևեն նրանց, ովքեր կհավատան՝ իմ անունով նրանք ^ադևեր դուրս կզգեն. նրանք կխոսեն նոր լեզուներով. օձեր վեր կառնեն. և եթե նրանք որևէ մահացու բան խմեն,

14բ Ալմա 7.21, Վև.ՈՒ 88.35:
 15ա Մոր. 7.35–37, Վև.ՈՒ 35.8:
 սուր Հրաշք:
 16ա Մադ. Խ.5, Վև.ՈՒ 76.114, Մովսես 1.3–5:
 17ա Հակոբ 4.9:

բ սուր Մտեղծել, Մտեղծում:
 գ Ծն. Բ.7, Մոսիա 2.25:
 18ա Հովհ. 2.14:
 19ա Վև.ՈՒ 63.7–10:
 20ա Գատ. 2.11–13, Եթեր 12.12–18, Մոր. 7.35–37:
 բ սուր Ապավիհել:

21ա Մատ. ԻԱ.22, 3 Նեփի 18.20:
 22ա Մար. ԺԶ.15–16:
 սուր Միսիոներական աշխատանք:
 23ա սուր Նզովք:
 24ա Մար. ԺԶ.17–18:
 սուր Նշան:
 բ Գոր. ԺԶ.16–18:

այն նրանց վնաս չի տա. նրանք կդնեն Գձեռքերը հիվանդի վրա, և նրանք կառողջանան.

25 Եվ ով որ կհավատա իմ անու-
նին՝ չկասկածելով ոչ մի բանի,
նրան ես ՝կհաստատեմ բոլոր իմ
խոսքերը, նույնիսկ մինչև աշխար-
հի ծայրերը:

26 Եվ այժմ ահա, ո՞վ կարող է
կանգնել Տիրոջ գործերի դեմ: ՝Ո՞վ
կարող է ուրանալ նրա ասածները:
Ո՞վ կբարձրանա Տիրոջ ամենա-
գոր ուժի դեմ: Ո՞վ կարհամարհի
Տիրոջ գործերը: Ո՞վ կարհամար-
հի Քրիստոսի զավակներին: Ահա,
դուք բոլորդ, ովքեր Տիրոջ գործե-
րի ՝արհամարհողներ եք, քանզի
դուք կզարմանաք և կկորչեք:

27 Օ՛հ, ուրեմն, մի արհամար-
հեք և մի զարմացեք, այլ ականջ
արեք Տիրոջ խոսքերին, և խնդրեք
Հորը, Հիսուսի անունով, ինչ բա-
ների կարիք որ դուք կունենաք:
Մի կասկածեք, այլ եղեք հավա-
տացող, և սկսեք ինչպես հին ժա-
նանակներում, և ՝եկեք Տիրոջ
մոտ ձեր ամբողջ ՝սրտով, և Գոր-
ծեք ձեր սեփական փրկությունը
երկյուղով և դողալով նրա առաջ:

28 Իմաստուն եղեք ձեր փոր-
ձության օրերին. հանեք ձեզանից
ամեն անմաքություն. մի խնդրեք,
որ վատնեք ձեր ՝ցանկությունների
վրա, այլ խնդրեք անասան հաս-
տատունությամբ, որ դուք չեն-
թարկվեք ոչ մի գայթակղության,

այլ որ դուք ծառայեք ճշմարիտ և
Գլենդանի Աստծուն:

29 Տեսեք, որ դուք ՝անարժանո-
րեն չմկրտվեք. տեսեք, որ ՝անար-
ժանորեն չճաշակեք Քրիստոսի
հաղորդությունից. այլ տեսեք, որ
դուք անեք բոլոր բաներն Գարժա-
նիորեն, և արեք դրանք Հիսուս
Քրիստոսի՝ կենդանի Աստծո Որ-
դու անունով. և եթե դուք անեք
այս, և համբերեք մինչև վերջ,
դուք ոչ մի կերպ դուրս չեք գցվի:

30 Ահա, ես ՝խոսում եմ ձեզ
հետ, կարծես թե խոսելի մեռած
տեղից. քանզի ես գիտեմ, որ դուք
կունենաք իմ խոսքերը:

31 Մի դատապարտեք ինձ իմ
՝թերությունների համար, ոչ էլ իմ
հորը նրա թերությունների համար,
ոչ էլ նրանց, ովքեր գրել են նրանից
առաջ. այլ, ավելի շուտ, գոհու-
թյուն հայտնեք Աստծուն, որ նա
հայտնի է դարձրել ձեզ մեր թերու-
թյունները, որպեսզի դուք սովորեք
լինել ավելի իմաստուն, քան մենք
ենք եղել:

32 Եվ այժմ ահա, մենք գրել ենք
այս հիշատակարանը՝ համաձայն
մեր զիտելիքի, գրերով, որոնք մեր
մեջ կոչվում են ՝փոխված եզիպ-
տերեն՝ փոխանցված և վերա-
փոխված լինելով մեր կողմից, ըստ
մեր խոսելիձևի:

33 Եվ եթե մեր թիթղները բա-
վականաչափ մեծ լինեին, մենք
կգրեինք եբրայերեն. բայց եբրա-

24q սո՛ւ Հիվանդների
սպասավորում:
25a սո՛ւ Հայտնություն.
Վկայություն:
26a 3 Նեփի 29.4–7:
բ Առակ. ԺԳ.13:
27a Մոր. 10.30–32:
բ Հես. ԻԲ.5,
ՎևՈՒ 64.22, 34:
սո՛ւ Սիրս:

q Փիլ. Բ.12:
28a Հակոբ 6.12:
բ սո՛ւ Ցանկանալ:
q Ալմա 5.13:
29a սո՛ւ Մկրտություն,
Մկրտել – Մկրտության
համար անհրաժեշտ
պայմանները:
բ Ա Կոր. ԺԱ.27–30,
3 Նեփի 18.28–32:

q սո՛ւ Արժանի,
Արժանավորություն:
30a Մորմ. 8.26,
Մոր. 10.27:
31a Մորմ. 8.17,
Եթեր 12.22–28, 35:
32a 1 Նեփի 1.2,
Մոսիա 1.4:

յերենը նույնպես վերափոխվել է մեր կողմից. և եթե մենք կարողանայինք գրել եբրայերեն, ահա, դուք ոչ մի թերություն չէիք ունենա մեր հիշատակարաններում:

34 Բայց Տերը գիտի այն բաները, որ մենք գրել ենք, և նաև, որ ոչ մի այլ ժողովուրդ չգիտի մեր լեզուն. և քանի որ ոչ մի այլ ժողովուրդ չգիտի մեր լեզուն, հետևաբար, նա՝ միջոց է պատրաստել դրանց թարգմանության համար:

35 Եվ այս բաները գրվել են, որպեսզի մենք կարողանանք մաքրել մեր հանդերձները մեր եղբայրների արյունից, որոնք ընկել են ՝ անհավատության մեջ:

36 Եվ ահա, այս բաները, որոնք մենք ՝ փափագել ենք մեր եղբայրների վերաբերյալ, այո, այսինքն՝ նրանց վերադարձնելը Քրիստոսի իմացությանը, բոլոր սրբերի աղոթքների համաձայն է, ովքեր բնակվել են երկրում:

37 Եվ թող Տեր Հիսուս Քրիստոսը շնորհի, որ նրանց աղոթքները կարողանան պատասխանվել՝ համաձայն իրենց հավատքի. և թող Հայր Աստվածը հիշի ուխտը, որը նա արել է Իսրայելի տան հետ. և թող նա օրհնի նրանց հավիտյան, առ Հիսուս Քրիստոսի անունը հավատքի միջոցով: Ամեն:

ԵԹԵՐԻ ԳԻՐՔԸ

Հարեդացիների հիշատակարանը, վերցված քսանչորս թիթեղներից, գտնված Լիմբիի ժողովրդի կողմից թագավոր Մոսիայի օրոք:

ԳԼՈՒԽ 1

Մորոնին կրճատում է Եթերի գրածները – Ներկայացվում է Եթերի տոհմաբանությունը – Հարեդացիների լեզուն չի խառնվում Բաբելոնի աշտարակի մոտ – Տերը խոստանում է առաջնորդել նրանց դեպի մի ընտիր երկիր և դարձնել նրանց մեծ ազգ:

Եվ այժմ ես՝ Մորոնիս, սկսում եմ տալ պատմությունն այն հնադարյան բնակիչների, ովքեր

կործանվել էին Տիրոջ ^բձեռքով այս հյուսիսային երկրի երեսին:

2 Եվ ես վերցնում եմ իմ պատմությունը ՝ քսանչորս թիթեղներից, որոնք գտնվել էին Լիմբիի ժողովրդի կողմից, որը կոչվում է Եթերի Գիրք:

3 Եվ քանի որ ես ենթադրում եմ, որ այս հիշատակարանի առաջին մասը, որը խոսում է աշխարհի ստեղծման մասին, և նաև Ադամի, և մի պատմություն այդ ժամանակից սկսած, նույնիսկ մինչև մեծ ՝ աշտարակը, և ինչ բաներ որ

34ա Մոսիա 8.13–18, Եթեր 3.23, 28, ՎևոՒ 17.1:
35ա2 Նեփի 26.15:
36ա Մորմ. 8.24–26, ՎևոՒ 10.46–49:

[ԵԹԵՐ]
1 1ա ՄՈՒ Մորոնի՝ Մորոնի որդի:
բ Մորմ. 5.23, ՎևոՒ 87.6–7:
2ա Ալմա 37.21,

Եթեր 15.33:
3ա Օմնի 1.22, Մոսիա 28.17, Հել. 6.28:

տեղի էին ունեցել մարդկանց զավակների մեջ, մինչև այդ ժամանակը, որ պահված էին հրեաների մոտ,

4 Հետևաբար, ես չեմ գրում այն բաները, որոնք տեղի էին ունեցել ՝Ադամի օրերից ի վեր մինչև այդ ժամանակը. բայց դրանք կան թիթեղների վրա. և ով որ գտնի դրանք, նույնը կունենա զորություն, որ ստանա լրիվ պատմությունը:

5 Բայց ահա, ես չեմ տալիս լրիվ պատմությունը, այլ տալիս եմ պատմության մի մասը՝ աշտարակից սկսած, ընդհուպ մինչև նրանց կործանվելը:

6 Եվ այս ձևով եմ ես տալիս պատմությունը: Նա, ով գրեց այս հիշատակարանը, ՝Եթերն էր, և նա Կորիանթոսի մի հետևորդ էր:

- 7 Կորիանթոսը Մորոնի որդին էր:
- 8 Եվ Մորոնը Եթեմի որդին էր:
- 9 Եվ Եթեմը Աքայի որդին էր:
- 10 Եվ Աքայը Սեթի որդին էր:
- 11 Եվ Սեթը Սիբլոնի որդին էր:
- 12 Եվ Սիբլոնը Կոմի որդին էր:
- 13 Եվ Կոմը Կորիանթոսի որդին էր:

14 Եվ Կորիանթոսը Ամնիգադայի որդին էր:

15 Եվ Ամնիգադան Ահարոնի որդին էր:

16 Եվ Ահարոնը Քետի հետևորդ էր, որը Հեարթոմի որդին էր:

- 17 Եվ Հեարթոնը Լիբի որդին էր:
- 18 Եվ Լիբը Կիսի որդին էր:
- 19 Եվ Կիսը Քորոմի որդին էր:
- 20 Եվ Քորոնը Ղևիի որդին էր:
- 21 Եվ Ղևին Կիմի որդին էր:
- 22 Եվ Կիմը Մորիանթոսի որդին էր:

23 Եվ Մորիանթոսը Ռիփլակիսի մի հետևորդ էր:

24 Եվ Ռիփլակիսը Սեզի որդին էր:

25 Եվ Սեզը Քետի որդին էր:

26 Եվ Քետը Կոմի որդին էր:

27 Եվ Կոմը Կորիանթոսի որդին էր:

28 Եվ Կորիանթոսը Եմերի որդին էր:

29 Եվ Եմերը Օմերի որդին էր:

30 Եվ Օմերը Սուլեի որդին էր:

31 Եվ Սուլեն Կիբի որդին էր:

32 Եվ Կիբը Օրիայի որդին էր, որը Հարեղի որդին էր.

33 Այն ՝Հարեղի, որը եկավ մեծ աշտարակից իր եղբոր և նրանց ընտանիքների հետ, մի քանի ուրիշների և նրանց ընտանիքների հետ, այն ժամանակ, երբ Տերը ՝խառնեց ժողովրդի լեզուն, և երգվեց իր ցասման մեջ, որ նրանք պետք է ցրվեն ողջ երկրի Պերեսին. և Տիրոջ խոսքի համաձայն, ժողովուրդը ցրվեց:

34 Եվ Հարեղի ՝եղբայրը, լինելով հաղթանդամ ու հզոր մի մարդ, և Տիրոջից մեծապես հովանավորված մարդ, Հարեղը՝ նրա եղբայրը, ասաց նրան. Աղաղակիիր առ Տերը, որ նա չխառնի մեզ այնպես, որ մենք չհասկանանք մեր խոսքերը:

35 Եվ եղավ այնպես, որ Հարեղի եղբայրն աղաղակեց առ Տերը, և Տերը զութ ունեցավ Հարեղի վրա. հետևաբար, նա չխառնեց Հարեղի լեզուն. և Հարեղն ու իր եղբայրը չխառնվեցին:

36 Այնուհետև Հարեղն ասաց իր եղբորը. Աղաղակիիր կրկին առ Տերը, և միգուցե նա մեկդի դարձնի

<p>4անշ. ընդգրկում է նույն ժամանակաշրջանը, ինչ ճննողոց Ա-Ժ</p>	<p>գլուխները: 6ա Եթեր 12.2, 15.34: 33ա սուր Հարեղ:</p>	<p>բ ճն. ԺԱ.6-9: գ Մոսիա 28.17: 34ա սուր Հարեղի եղբայր:</p>
--	--	---

իր բարկությունը նրանցից, ովքեր մեր ընկերներն են, որ նա չխառնի նրանց լեզուն:

37 Եվ եղավ այնպես, որ Հարեղի եղբայրն աղաղակեց առ Տերը, և Տերը գութ ունեցավ նրանց ընկերների և նրանց ընտանիքների վրա նույնպես, այնպես որ նրանք չխառնվեցին:

38 Եվ եղավ այնպես, որ Հարեղը կրկին խոսեց իր եղբոր հետ՝ ասելով. Գնա և տեղեկացիր Տիրոջից, թե արդյոք նա քշելու՞ է մեզ երկրից, և եթե նա քշելու է մեզ երկրից, աղաղակիր առ նա, թե ուր մենք պիտի գնանք: Եվ ով գիտի, գուցե Տերը տանի մեզ մի երկիր, որն «ամենաընտիրն է աշխարհում: Եվ եթե լինի այդպես, եկեք հավատարիմ լինենք Տիրոջը, որ կարողանանք ստանալ այն մեր ժառանգության համար:

39 Եվ եղավ այնպես, որ Հարեղի եղբայրն աղաղակեց առ Տերը՝ համաձայն նրա, ինչ խոսվել էր Հարեղի բերանով:

40 Եվ եղավ այնպես, որ Տերը լսեց Հարեղի եղբորը, և գութ ունեցավ նրա վրա, և ասաց նրան.

41 Գնա և ի մի հավաքիր քո հոտերը՝ թե՛ արու, թե՛ էգ, ամեն տեսակից. և նաև ամեն տեսակի երկրի սերմից. և քո «ընտանիքները. և նաև Հարեղի՝ քո եղբոր և նրա ընտանիքը. և նաև քո «ընկերներին ու նրանց ընտանիքները, և Հարեղի ընկերներին ու նրանց ընտանիքները:

42 Եվ երբ դու անես այս, դու նրանց գլուխն անցած պիտի «գնաս ներքև՝ դեպի հովիտը, որը հյուսիսային կողմում է: Եվ այնտեղ

ես կհանդիպեմ քեզ, և ես կգնամ քո «առջևից դեպի մի երկիր, որն «ամենաընտիրն է աշխարհի բոլոր երկրներից:

43 Եվ այնտեղ ես կօրհնեմ քեզ և քո սերնդին, և ինձ համար քո սերնդից, և քո եղբոր սերնդից, և նրանց, ովքեր կգնան քեզ հետ, մի մեծ ազգ կհարուցեմ: Եվ ողջ երկրի երեսին չի լինի ավելի մեծ, քան այն ազգը, որին ես կհարուցեմ ինձ համար քո սերնդից: Եվ այսպես, ես կանեմ քեզ համար, որովհետև այս երկար ժամանակաընթացքում դու աղաղակել ես առ ինձ:

ԳԼՈՒԽ 2

Հարեղացիները նախապատրաստվում են դեպի խոստացված երկիր իրենց ճամփորդության համար – Դա մի ընտիր երկիր է, որի վրա մարդիկ պետք է ծառայեն Քրիստոսին, այլապես կոչնչացվեն – Տերը երեք ժամ խոսում է Հարեղի եղբոր հետ – Հարեղացիները բեռնանավեր են կառուցում – Տերը հանձնարարում է Հարեղի եղբորն առաջարկել, թե ինչպես են լուսավորելու բեռնանավերը:

Եւ եղավ այնպես, որ Հարեղը և նրա եղբայրը, և նրանց ընտանիքները, և նաև Հարեղի և նրա եղբոր ընկերներն ու նրանց ընտանիքները, եկան վար՝ դեպի հովիտը, որը հյուսիսային կողմում էր (և հովտի անունը «Նեբրովթ էր, կոչված լինելով զորեղ որսորդի անունով), իրենց հոտերի հետ, որ նրանք ի մի էին հավաքել, արու և էգ, ամեն տեսակի:

38ա սո՛ւ Խոստացված երկիր: 41ա Եթեր 6.20:

բ Եթեր 6.16: 42ա 1 Նեփի 2.1–2, Աբր. 2.3: բ Վևո՛ւ 84.88:

գ 1 Նեփի 13.30: 2 1ա Ծճ. Ժ.8:

2 Եվ նրանք նաև ծուղակներ դրեցին և օղի թռչուններ բռնեցին. և նրանք նաև պատրաստեցին մի աման, որի մեջ նրանք իրենց հետ տանում էին ջրերի ձուկը:

3 Եվ նրանք իրենց հետ նաև տարան դեզուրեթ, որը քարզմանաբար՝ մեղրի մեղու է. և այսպիսով, նրանք իրենց հետ տանում էին մեղվապարսեր, և ամեն ձևի բաներ, ամեն տեսակի սերմեր, որ երկրի երեսին էին:

4 Եվ եղավ այնպես, որ երբ նրանք վար եկան Նեբրովթի հովիտը, Տերը վար եկավ և խոսեց Հարեղի եղբոր հետ. և նա՝ ամպի մեջ էր, և Հարեղի եղբայրը չտեսավ նրան:

5 Եվ եղավ այնպես, որ Տերը պատվիրեց նրանց, որ նրանք առաջ գնան անապատի խորքը, այո, այն մասը, որտեղ երբեք մարդ չէր եղել: Եվ եղավ այնպես, որ Տերը գնում էր նրանց առաջից և խոսում էր նրանց հետ, երբ նա կանգնած էր՝ ամպի մեջ, և հրահանգներ էր տալիս, թե ուր նրանք պիտի ճանապարհվեն:

6 Եվ եղավ այնպես, որ նրանք ճամփորդեցին անապատում, և կառուցեցին բեռնանավեր, որոնցով նրանք անցան շատ ջրեր՝ շարունակ հրահանգված լինելով Տիրոջ ձեռքով:

7 Եվ Տերը չկամեցավ թույլ տալ, որ նրանք կանգնեն ծովից այն կողմ՝ անապատում, այլ նա կամեցավ, որ նրանք առաջ գան՝ նույնիսկ մինչև խոստումի՝ Երկիրը, որն ընտիր էր բոլոր մյուս

երկրներից առավել, որը Տեր Աստված պահպանել էր մի արդարակյաց ժողովրդի համար:

8 Եվ նա իր ցամառն մեջ երդվել էր Հարեղի եղբորը, որ, ով տիրի այս խոստումի երկրին, այդ ժամանակից այնուհետև և հավիտյան, պիտի՝ ժառայի իրեն՝ ճշմարիտ և միակ Աստծուն, այլապես նրանք պիտի՝ Դոնչացվեն, երբ նրա լիակատար ցասումը գա նրանց վրա:

9 Եվ այժմ, մենք կարող ենք տեսնել Աստծո հրամաններն այս երկրի վերաբերյալ, որ այն խոստումի երկիր է. և ինչ ազգ որ տիրի դրան, պիտի ժառայի Աստծուն, այլապես նրանք պիտի ոչնչացվեն, երբ նրա լիակատար ցասումը գա նրանց վրա: Եվ նրա լիակատար ցասումը գալիս է նրանց վրա, երբ նրանք հասունացած են անօրինության մեջ:

10 Քանզի ահա, այս մի երկիր է, որն ընտիր է բոլոր մյուս երկրներից առավել. ուստի նա, ով կտիրի դրան, պիտի ժառայի Աստծուն, այլապես կոչնչացվի. քանզի դա Աստծո հավիտենական հրամանագիրն է: Եվ դա չի լինում, մինչև երկրի զավակների մեջ՝ լիակատար անօրինությունը, երբ նրանք Բվերացվում են:

11 Եվ այս գալու է ձեզ, ո՞վ դուք, Կեթանոսներ, որ դուք իմանաք Աստծո հրամանները, որ դուք ապաշխարեք, և շարունակեք ձեր անօրինությունների մեջ, մինչև որ լիակատար անօրինությունը գա, որպեսզի դուք վար չբերեք Աստծո լիակատար ցասումը ձեզ վրա,

<p>4աԹվ. ԺԱ.25, վևՈՒ 34.7–9, ՁՄ–Պ 1.68: 5աԵլ. ԺԳ.21–22: 7ա1 Նեփի 4.14:</p>	<p>ՍՈՒ Խոստացված երկիր: 8աԵթեր 13.2: բ Հարոմ 1.3, 10, Ալմա 37.28, Եթեր 9.20:</p>	<p>10ա2 Նեփի 28.16: բ 1 Նեփի 17.37–38: 11ա2 Նեփի 28.32:</p>
--	--	---

ինչպես երկրի բնակիչները մինչև այժմ են արել:

12 Ահա, սա մի ընտիր երկիր է, և ինչ ազգ որ տիրի նրան, ^աազատ կլինի ճորտությունից և գերությունից և երկնքի տակի բոլոր մյուս ազգերից, եթե միայն նրանք ^բժառայեն երկրի Աստծուն, որը Հիսուս Քրիստոսն է, որը հայտնի է դարձվել այն բաներով, որոնք մենք գրել ենք:

13 Եվ այժմ ես շարունակում եմ իմ հիշատակարանը. քանզի, ահա եղավ այնպես, որ Տերը բերեց Հարեդին և նրա եղբայրներին մինչև այն մեծ ծովը, որը բաժանում է երկրները: Եվ երբ հասան ծովին, նրանք խփեցին իրենց վրանները. և այդ վայրի անունը նրանք կոչեցին Մորիանկումեր. և նրանք բնակվում էին վրաններում, և չորս տարիների ընթացքում նրանք բնակվեցին վրաններում՝ ծովափին:

14 Եվ եղավ այնպես, չորրորդ տարվա վերջին, որ Տերը կրկին եկավ Հարեդի եղբոր մոտ, և կանգնեց ամպի մեջ ու խոսեց նրա հետ: Եվ երեք ժամվա ընթացքում Տերը խոսեց Հարեդի եղբոր հետ, և ^ախրատեց նրան, որովհետև նա չէր հիշել ^բկանչել Տիրոջ անունը:

15 Եվ Հարեդի եղբայրն ապաշխարեց այն չարից, որ ինքն արել էր, և կանչեց առ Տիրոջ անունը՝ իր եղբայրների համար, որոնք իր հետ էին: Եվ Տերն ասաց նրան. Ես կներեմ քեզ և քո եղբայրներին՝ իրենց մեղքերը. բայց դուք այլևս չպետք է մեղանչեք, քանզի դուք պետք է հիշեք, որ իմ ^աՀոգին միշտ

չի ^բճգնում մարդու հետ. ուստի, եթե դուք մեղանչեք, մինչև որ լիովին հասունանաք, դուք կկտրվեք Տիրոջ ներկայությունից: Եվ սրանք են իմ մտքերն այն երկրի վերաբերյալ, որը ես կտամ ձեզ՝ ձեր ժառանգության համար. քանզի այն կլինի մի ^գընտիր երկիր՝ բոլոր մյուս երկրներից առավել:

16 Եվ Տերն ասաց. Գնացեք, աշխատեք և կառուցեք բեռնանավեր այն ձևով, որ մինչև այժմ եք կառուցել: Եվ եղավ այնպես, որ Հարեդի եղբայրը գնաց աշխատելու, և նրա եղբայրները՝ նույնպես, և կառուցեցին բեռնանավեր այն ձևով, որ իրենք էին կառուցել՝ համաձայն Տիրոջ ^ահրահանգների: Եվ դրանք փոքր էին, և ջրի վրա դրանք թեթև էին, ճիշտ ջրի վրա թռչնի թեթևության պես:

17 Եվ դրանք կառուցված էին մի ձևով, որ լիովին ^աանջրանցիկ էին, այնպես որ դրանք ամանի պես պահում էին ջուրը. և դրանց հատակն ամանի պես անջրանցիկ էր. և դրանց կողքերն ամանի պես անջրանցիկ էին. և դրանց ծայրերը սրագազաթ էին. և դրանց վերնամասն ամանի պես անջրանցիկ էր. և դրանց լայնությունը ծառի լայնության էր. և դրանց դուռը, երբ այն փակ էր, ամանի պես անջրանցիկ էր:

18 Եվ եղավ այնպես, որ Հարեդի եղբայրն աղաղակեց առ Տերը՝ ասելով. Ո՛վ Տեր, ես կատարեցի գործը, որ դու պատվիրել էիր ինձ, և ես կառուցել եմ բեռնանավերը, ինչպես որ դու ես հրահանգել ինձ:

19 Եվ ահա, ո՛վ Տեր, դրանցում

12ա սուֆ Անկախություն:
բ Ես. Կ.12:
14ա սուֆ Խրատել, Խրատելը:
բ սուֆ Աղոթք:

15ա Եթեր 15.19:
բ Ծն. 23,
2 Նեփի 26.11,
Մորմ. 5.16:

գ Եթեր 9.20:
16ա 1 Նեփի 17.50–51:
17ա Եթեր 6.7:

լույս չկա. մենք ո՞ր պիտի ուղղություն վերցնենք: Եվ բացի այդ մենք կմեռնենք, քանզի դրանցում մենք չենք կարող շնչել, բացի այն օդից, որ դրանցում կա. ուստի մենք կմեռնենք:

20 Եվ Տերն ասաց Հարեղի եղբորը. Ահա, դու մի անցք կբացես վերին մասում, և նաև հատակին. և երբ դու օդի կարիք ունենաս, դու կբացես անցքը և օդ կստանաս: Եվ եթե լինի այնպես, որ ջուրը գա ձեզ վրա, ահա, դուք կփակեք անցքը, որպեսզի դուք չմեռնեք ջրհեղեղում:

21 Եվ եղավ այնպես, որ Հարեղի եղբայրն արեց այնպես, ինչպես որ Տերն էր պատվիրել:

22 Եվ նա կրկին աղաղակեց առ Տերը՝ ասելով. Ո՛վ Տեր, ահա ես արեցի, ճիշտ ինչպես դու պատվիրեցիր ինձ. և ես պատրաստել եմ նավերն իմ ժողովրդի համար և ահա դրանցում լույս չկա: Ահա, ո՛վ Տեր, մի՞թե դու թույլ կտաս, որ մենք անցնենք այս մեծ ջուրը խավարի մեջ:

23 Եվ Տերն ասաց Հարեղի եղբորը. Ի՞նչ կկամենաս, որ ես անեմ, որ դուք լույս ունենաք ձեր նավերում: Քանզի ահա, դուք չեք կարող պատուհաններ ունենալ, քանի որ դրանք ջարդուփշուր կլինեն. ոչ էլ դուք կրակ պիտի վերցնեք ձեզ հետ, քանզի դուք չպիտի գնաք կրակի լույսով:

24 Քանզի ահա, դուք կետի պես կլինեք ծովի մեջտեղում. քանզի ալիքների լեռներ պիտի հարվածեն ձեզ: Այնուամենայնիվ, ես կրկին վեր կբերեմ ձեզ ծովի խորքերից. քանզի ՞քամիներն իմ բերանից են դուրս եկել, և նաև

՞անձրևներն ու ջրհեղեղներն են ես ուղարկել:

25 Եվ ահա, ես նախապատրաստում եմ ձեզ այս բաների համար. քանի որ դուք չեք կարող անցնել այս մեծ ջրանդունդը, եթե ես չնախապատրաստեմ ձեզ ծովի ալիքների դեմ, և քամիների, որոնք առաջ գնացած կլինեն, և ջրհեղեղների, որոնք պիտի գան: Հետևաբար, ի՞նչ կկամենաք դուք, որ ես պատրաստեմ ձեզ համար, որ դուք կարողանաք լույս ունենալ, երբ դուք կուլ գնացած կլինեք ծովի խորքերին:

ԳԼՈՒԽ 3

Հարեղի եղբայրը տեսնում է Տիրոջ մատը, երբ նա դիպչում է տասնվեց քարերին – Քրիստոսը ցույց է տալիս իր հոգևոր մարմինը Հարեղի եղբորը – Նրանք, ովքեր ունեն կատարյալ իմացություն, չեն կարող պահվել վարագույրից ներս – Մեկնիչները նախատեսված են Հարեղական հիշատակարանը լույս բերելու համար:

Եւ եղավ այնպես, որ Հարեղի եղբայրը (այժմ նավերի թիվը, որոնք պատրաստված էին, ութն էին) առաջ գնաց դեպի սարը, որը նրանք կոչում էին Մելեմ, դրա շատ մեծ բարձրության պատճառով, և ապարից հալեց տասնվեց փոքր քարեր. և դրանք սպիտակ էին ու թափանցիկ, ճիշտ ապակու պես թափանցիկ. և նա տարավ դրանք իր ձեռքում սարի գագաթը և կրկին աղաղակեց առ Տերն՝ ասելով.

2 Ո՛վ Տեր, դու ասել ես, որ մենք պետք է շրջապատված լինենք

ջրհեղեղներով: Արդ, ահա, ո՛վ Տեր, և մի բարկացիր քո ծառայի վրա, քո առաջ նրա թուլության պատճառով. քանզի մենք գիտենք, որ դու սուրբ ես և մնակվում ես երկինքներում, և որ մենք քո առաջ անարժան ենք. ^աանկման պատճառով մեր ^բԼուսնունները շարունակ չար են դարձել. այնուամենայնիվ, ո՛վ Տեր, դու մեզ մի պատվիրան ես տվել, որ մենք պիտի կանչենք առ քեզ, որպեսզի քեզանից մենք կարողանանք ստանալ՝ ըստ մեր ցանկությունների:

3 Ահա, ո՛վ Տեր, դու զարկել ես մեզ մեր անօրինության պատճառով, և քչել ես մեզ առաջ, և այս բազում տարիների ընթացքում, մենք եղել ենք անապատում. այնուամենայնիվ, դու ^աողորմած ես եղել մեր հանդեպ: Ո՛վ Տեր, նայի՛ր ինձ խղճահարությամբ, և մեկդի դարձրու քո բարկությունն այս քո ժողովրդից, և թույլ մի՛ տուր, որ նրանք առաջ գնան այս մոլեգին ջրանդունդի վրայով խավարի մեջ. այլ տե՛ս այս բաները, որոնք ես հալել եմ ապարից:

4 Եվ ես գիտեմ, ո՛վ Տեր, որ դու ունես ամենայն ^ագորություն և կարող ես անել ինչ որ կամենաս՝ մարդկանց օգտի համար. ուստի, դիպչի՛ր այս քարերին, ո՛վ Տեր, քո մատով, և պատրաստի՛ր դրանք, որ դրանք կարողանան փայլել խավարում. և դրանք կփայլեն մեզ համար նավերի մեջ, որոնք մենք ենք պատրաստել, որ մենք կարողանանք լույս ունենալ, մինչ մենք կանցնենք ծովը:

5 Ահա, ո՛վ Տեր, դու կարող ես անել այս: Մենք գիտենք, որ դու ի վիճակի ես ցույց տալ մեծ գորություն, որը փոքր է ^աթվում մարդկանց հասկացողությամբ:

6 Եվ եղավ այնպես, որ երբ Հարեղի եղբայրն ասաց այս խոսքերը, ահա, ^աՏերն առաջ մեկնեց իր ձեռքը և իր մատով դիպավ քարերին՝ մեկ առ մեկ: Եվ ^բվարագույրը վերցվեց Հարեղի եղբոր աչքերից, և նա տեսավ Տիրոջ մատը. և դա մարդու մատի պես էր, նման մսից ու արյունից. և Հարեղի եղբայրը վայր ընկավ Տիրոջ առջև, քանզի նա վախից ցնցվեց:

7 Եվ Տերը տեսավ, որ Հարեղի եղբայրն ընկել էր գետնին. և Տերն ասաց նրան. Վե՛ր կաց, ինչո՞ւ ես ընկել:

8 Եվ նա ասաց Տիրոջը. Ես տեսա Տիրոջ մատը և վախեցա, որ չլինի թե նա զարկի ինձ. քանզի ես չգիտեի, որ Տերը միս ու արյուն ունի:

9 Եվ Տերն ասաց նրան. Քո հավատքի շնորհիվ դու տեսար, որ ես ինձ վրա եմ վերցնելու ^ամիս ու արյուն. և երբեք որևէ մարդ չի եկել իմ առջև այնպիսի մեծ հավատքով, ինչպես դու. քանզի, չլինե՛ր դա այդպես, դու չէիր կարող տեսնել իմ մատը: Տեսնո՞ւմ ես դու ավելին, քան այս:

10 Եվ նա պատասխանեց՝ Ո՛չ. Տե՛ր, ցույց տուր քեզ ինձ:

11 Եվ Տերն ասաց նրան. Հավատո՞ւմ ես դու այն խոսքերին, որոնք ես կխոսեմ:

12 Եվ նա պատասխանեց. Այո՛, Տե՛ր, ես գիտեմ, որ դու խոսում

<p>3 ^ա2ա սու՛ Ադամի և Եվայի անկումը: ^բ Մոսիա 3.19: 3ա Եթեր 1.34–43: 4ա սու՛ Ջորություն:</p>	<p>5ա Ես. ԾԵ.8–9, 1 Նեփի 16.29: 6ա սու՛ Հիսուս Քրիստոս: ^բ Եթեր 12.19, 21: 9ա սու՛ Միս. Հիսուս</p>	<p>Քրիստոս. Մահկանացու, Մահկանացություն:</p>
--	--	--

ես ճշմարտությունը, քանզի դու ճշմարտության Աստված ես և չես ^ակարող ստել:

13 Եվ երբ նա ասաց այս խոսքերը, ահա, Տերն իրեն ^ացույց տվեց նրան, և ասաց. ^բՔանի որ դու գիտես այս բաները, դու փրկագրված ես անկումից. ուստի, դու ես ես բերվել իմ ներկայության մեջ. ուստի, ես ինձ ^գցույց եմ տալիս քեզ:

14 Ահա, ես եմ նա, ով պատրաստված էր աշխարհի հիմնադրումից ի վեր՝ ^ափրկագնելու իմ ժողովրդին: Ահա, ես եմ Հիսուս Քրիստոսը: Ես եմ ^բՀայրը և Որդին: Ինձանով պիտի ողջ մարդկությունը ^գկյանք ունենա, և դա՝ հավերժորեն, այսինքն՝ նրանք, ովքեր կհավատան իմ անունին. և նրանք կդառնան իմ ^դորդիներն ու իմ դուստրերը:

15 Եվ ես երբեք ինձ ցույց չեմ տվել մարդուն, որին ես եմ ստեղծել, քանզի երբեք մարդ այդպես չի ^ահավատացել ինձ այնպես, ինչպես դու: Տեսնո՞ւմ ես, որ դուք ստեղծված եք ըստ իմ սեփական ^բպատկերի: Այո, հիրավի, ի սկզբանե բոլոր մարդիկ ստեղծվել էին ըստ իմ սեփական պատկերի:

16 Ահա, այս մարմինը, որը դու այժմ տեսնում ես, իմ ^ահոգու մարմինն է. և մարդուն ես ստեղծել եմ ըստ իմ հոգու մարմնի. և ճիշտ ինչպես ես հայտնվում եմ քեզ՝ լինելով հոգու մեջ, ես կհայտնվեմ իմ ժողովրդին մարմնի մեջ:

17 Եվ այժմ, ինչպես ես՝ Մորո-

նիս ասացի, ես չեմ կարող անել լրիվ պատմությունն այս բաների, որոնք գրված են, հետևաբար, բավական է ինձ ասել, որ Հիսուսը հոգու մեջ ցույց տվեց իրեն այս մարդուն, այսինքն՝ այն նույն մարմնի ձևով ու նմանությամբ, ճիշտ ինչպես իրեն ^ացույց տվեց Նեփիացիներին:

18 Եվ նա ծառայեց նրան, ճիշտ ինչպես նա ծառայեց Նեփիացիներին. և այս բոլորը, որպեսզի այս մարդը կարողանար իմանալ այն բազում մեծ գործերի շնորհիվ, որ Տերը ցույց էր տվել նրան, որ նա Աստված էր:

19 Եվ այս մարդու իմացության պատճառով, նա չէր կարող պահվել ^ավարագույրի միջով տեսնելուց. և նա տեսավ Հիսուսի մատը, որը, երբ տեսավ, նա վախից ընկավ. քանզի նա իմացավ, որ դա Տիրոջ մատն էր. և նա այլևս հավատք չուներ, քանզի նա գիտեր՝ չկասկածելով ոչ մի բանի:

20 Ուստի, ունենալով այս կատարյալ իմացությունն Աստծո մասին, նա ^աչէր կարող պահվել վարագույրից ներս. հետևաբար, նա տեսավ Հիսուսին. և նա ծառայեց նրան:

21 Եվ եղավ այնպես, որ Տերն ասաց Հարեդի եղբորը. Ահա՛, դու չպետք է թույլ տաս, որ այս բաները, որոնք դու տեսար և լսեցիր, տարածվեն աշխարհում, մինչև որ գա ^աժամանակը, երբ ես փառավորեմ իմ անունը մարմնի մեջ.

12ա Եբր. 2.18:
13ա ՎևՈՒԲ 67.10–11:
բ Ենովս 1.6–8:
գ սո՛ւ Հիսուս Քրիստոս – Քրիստոսի նախամահկանացու գոյությունը:
14ա սո՛ւ Փրկագնել,

Փրկագնված, Փրկագնում. Քավիչ:
բ Մոսիա 15.1–4:
գ Մոսիա 16.9:
դ սո՛ւ Աստծո որդիներն ու դուստրերը:
15ա սո՛ւ Հավատ, Հավատալ:

բ Ծն. Ա.26–27, Մոսիա 7.27, ՎևՈՒԲ 20.17–18:
16ա սո՛ւ Ոգի:
17ա 3 Նեփի 11.8–10:
19ա սո՛ւ Վարագույր:
20ա Եթեր 12.19–21:
21ա Եթեր 4.1:

ուստի, դու գանձի պես պիտի պահես այն բաները, որոնք դու տեսար ու լսեցիր, և ցույց չտաս ոչ մի մարդու:

22 Եվ ահա, երբ դու գաս ինձ մոտ, դու պիտի գրես դրանք և պիտի կնքես դրանք, որպեսզի ոչ մեկը չկարողանա թարգմանել դրանք. քանզի դու պիտի գրես դրանք այնպիսի մի լեզվով, որ դրանք չկարդացվեն:

23 Եվ ահա, այս տերկու քարերը կտամ ես քեզ, և դու դրանք նույնպես պիտի կնքես, այն բաների հետ, որոնք դու պիտի գրես:

24 Քանզի ահա, լեզուն, որով դու պիտի գրես, ես խառնել եմ. ուստի, ես, ինձ իսկ հարմար ժամանակ, այնպես կանեմ, որ այս քարերը կպարզեն մարդկանց աչքերին այն բաները, որոնք դու կգրես:

25 Եվ երբ Տերն ասաց այս խոսքերը, նա ցույց տվեց Հարեդի եղբորն աշխարհի տրոլոր բնակիչներին, որոնք եղել էին, և նա բոլորին, որ լինելու էին. և նա չսքողեց նրանց նրա տեսադաշտից, մինչև իսկ աշխարհի ծայրերը:

26 Քանզի նա ասել էր նրան, ժամանակներ առաջ, որ տեք նա թիսկատար իրեն, որ նա կարող էր ցույց տալ նրան տրոլոր բաները, դա պիտի ցույց տրվեր նրան. հետևաբար, Տերը չէր կարող որևէ բան սքողել նրանից, քանզի նա գիտեր, որ Տերը կարող էր իրեն ցույց տալ բոլոր բաները:

27 Եվ Տերն ասաց նրան. Գրի՛ր այս բաները և տե՛ր կնքի՛ր դրանք. և ես, ինձ իսկ հարմար ժամանակ,

ցույց կտամ դրանք մարդկանց զավակներին:

28 Եվ եղավ այնպես, որ Տերը պատվիրեց նրան, որ նա կնքի այն երկու տարերը, որոնք նա ստացավ, և ցույց չտա դրանք, մինչև որ Տերը ցույց կտա դրանք մարդկանց զավակներին:

ԳԼՈՒԽ 4

Մորոնիին պատվիրվում է կնքել Հարեդի եղբոր գրածները – Դրանք չեն բացահայտվի, մինչև որ մարդիկ Հարեդի եղբոր նման հավատք չունենան – Քրիստոսը պատվիրում է, որ մարդիկ հավատան իր խոսքերին և իր աշակերտների խոսքերին – Մարդկանց պատվիրվում է ապաշխարել, հավատալ ավետարանին և փրկվել:

Եվ Տերը պատվիրեց Հարեդի եղբորը՝ վար իջնել սարից՝ Տիրոջ ներկայությունից, և տգրել այն բաները, որոնք նա տեսել էր. և արգելեց դրանք հայտնի դարձնել մարդկանց զավակներին, թեև նա իսկ քարձրացվելը. այս պատճառով թագավոր Մոսիան պահեց դրանք, որպեսզի դրանք հայտնի չդարձվեն աշխարհին, նախքան Քրիստոսի իրեն ցույց տալն այս ժողովրդին:

2 Եվ հետո, երբ Քրիստոսը, հիրավի, իրեն ցույց տվեց իր ժողովրդին, նա պատվիրեց, որ դրանք ցույց տրվեն:

3 Եվ արդ, դրանից հետո նրանք բոլորն ընկան անհավատության մեջ. և նրանք ուրացան Քրիստոսի

23ա սու՛ Ուրիմ ու Թումիմ:
25ա Մովսես 1.8:
26ա Եթեր 3.11–13:
բ սու՛ Հավատ, Հավատալ:

գ Եթեր 4.4:
27ա 2 Նեփի 27.6–8:
28ա Վ.և.ՈՒ 17.1:
4 1ա Եթեր 12.24:

սու՛ Սուրբ գրքեր:
բ Եթեր 3.21:

ավետարանը, և չննաց ոչ մեկը, բացի Լամանացիներից. այդ պատճառով ինձ պատվիրվում է, որ ես կրկին ՞թաքցնեմ դրանք հողի մեջ:

4 Ահա, ես գրել եմ այս թիթեղների վրա հենց այն բաները, որոնք Հարեղի եղբայրը տեսավ. և երբեք չէին եղել ավելի մեծ բաներ ցույց տրված, քան դրանք, որոնք ցույց էին տրվել Հարեղի եղբորը:

5 Ուստի, Տերը պատվիրել է ինձ գրել դրանք. և ես գրել եմ դրանք: Եվ նա պատվիրել է ինձ, որ ես ՞կնքեմ դրանք. և նա նաև պատվիրել է, որ ես կնքեմ դրանց թարգմանությունը. ուստի, ես կնքել եմ ՞մեկնիչները՝ ըստ Տիրոջ պատվիրանի:

6 Քանզի Տերն ասաց ինձ. Դրանք չպիտի հասնեն հեթանոսներին, մինչև այն օրը, երբ նրանք կապաշխարեն իրենց անօրինությունից և կդառնան մաքուր Տիրոջ առջև:

7 Եվ այն օրը, երբ նրանք հավատք կգործադրեն առ ինձ, ասում է Տերը, ճիշտ ինչպես Հարեղի եղբայրն արեց, որպեսզի նրանք ՞սրբագործվեն ինձանով, այն ժամանակ ես ցույց կտամ նրանց այն բաները, որոնք տեսավ Հարեղի եղբայրը, մինչև իսկ բացելով նրանց բոլոր իմ հայտնությունները, ասում է Հիսուս Քրիստոսը՝ Աստծո Որդին, ՞Հայրը երկինքների և երկրի, և բոլոր բաների, որ դրանց մեջ են:

8 Եվ նա, ով ՞կհակառակի Տիրոջ խոսքին, թող անիծված լինի. և նա, ով ՞կուրանա այս բաները, թող անիծված լինի. քանզի նրանց ես ցույց չեմ ՞տա ավելի մեծ բաներ, ասում է Հիսուս Քրիստոսը. քանզի ես եմ նա, ով խոսում է:

9 Եվ իմ հրամանով երկինքները բացվում են և ՞փակվում. և իմ խոսքով ՞երկիրը կցնցվի. և իմ հրամանով դրա բնակիչները կանհետանան, ճիշտ ինչպես կրակից:

10 Եվ նա, ով չի հավատում իմ խոսքերին, չի հավատում իմ աշակերտներին. և եթե լինի այնպես, որ ես չխոսեմ, ինքներդ դատեք. քանզի ՞վերջին օրը դուք կիմանաք, որ այդ ես եմ, որ խոսում եմ:

11 Բայց նա, ով ՞հավատում է այս բաներին, որոնք ես խոսել եմ, նրան ես կայցելեմ իմ Հոգու դրսևորումներով, և նա կիմանա և կվկայի: Քանզի իմ Հոգու շնորհիվ նա ՞կիմանա, որ այս բաները ՞ճշմարիտ են. քանզի այն կհամոզի մարդկանց բարիք անել:

12 Եվ ինչ բան, որ համոզում է մարդկանց անել բարիք, ինձանից է. քանզի ՞բարին չի գալիս ոչ մեկից, բացի դա լինի ինձանից: Ես եմ նա, որ առաջնորդում է մարդկանց դեպի ամենայն բարին. նա, ով ՞չի հավատա իմ խոսքերին, չի հավատա ինձ, որ ես եմ. և նա, ով չի հավատա ինձ, չի հավատա Հորը, ով ուղարկել է ինձ: Քանզի ահա, ես եմ Հայրը, ես եմ

<p>3աՄորմ. 8.14: 5աԵթեր 5.1: <i>բ</i> ՎևոՒ 17.1, ՋՍ-Պ 1.52: սուր Ուրիմ ու Թումիմ: 7աՍուր Սրբագործում: <i>բ</i> Մոսիա 3.8: 8ա3 Նեփի 29.5–6, Մորմ. 8.17:</p>	<p><i>բ</i> 2 Նեփի 27.14, 28.29–30: <i>գ</i> Ալմա 12.10–11, 3 Նեփի 26.9–10: 9աԳ Թագ. Ը.35, ՎևոՒ 77.8: <i>բ</i> Հել. 12.8–18, Մորմ. 5.23: 10ա2 Նեփի 33.10–15:</p>	<p>11աՎևոՒ 5.16: <i>բ</i> սուր Վկայություն: <i>գ</i> Եթեր 5.3–4, Մոր. 10.4–5: 12աԱլմա 5.40, Մոր. 7.16–17: <i>բ</i> 3 Նեփի 28.34:</p>
---	---	--

Գլուխը և ^ակյանքը և ճշմարտությունն աշխարհի:

13 ^աԵկեք ինձ մոտ, ո՛վ դուք, հեթանոսներ, և ես ցույց կտամ ձեզ ավելի մեծ բաներ, գիտելիք, որը գաղտնի է պահվում՝ անհավատության պատճառով:

14 Եկեք ինձ մոտ, ո՛վ դուք, Իսրայելի՛ տուն, և ձեզ ^ացույց կտրվի, թե որքան մեծ բաներ է Հայրը պատրաստել ձեզ համար, աշխարհի հիմնադրումից ի վեր. և դրանք չեն հասել ձեզ՝ անհավատության պատճառով:

15 Ահա, երբ դուք պատռեք անհավատության այդ վարագույրը, որը ստիպում է ձեզ մնալ ամբարշտության և սրտի կարծրության և մտքի կուրության ձեր սոսկալի վիճակում, այն ժամանակ կլինեն մեծ և զարմանալի բաներ, որոնք աշխարհի հիմնադրումից ի վեր ^աքաքցվել են ձեզանից, այո, երբ դուք կանչեք առ Հայրն իմ անունով, կոտրված սրտով և փշրված հոգով, այն ժամանակ դուք կիմանաք, որ Հայրը հիշել է ուխտը, որը նա արել էր ձեր հայրերի հետ, ո՛վ Իսրայելի տուն:

16 Եվ այն ժամ անակ իմ ^ահայտնությունները, որոնք ես գրել եմ տվել իմ ծառա Հովհաննեսին, պիտի բացվեն բոլոր մարդկանց աչքերին: Հիշեք, երբ դուք տեսնեք այս բաները, դուք կիմանաք, որ ժամանակը մոտ է, որ դրանք ցույց պիտի տրվեն հենց գործով:

17 Հետևաբար, ^աերբ դուք ստանաք այս հիշատակարանը, դուք կարող եք իմանալ, որ Հոր գործը սկսել է երկրի ողջ երեսին:

18 Հետևաբար, ^աապաշխարե՛ք, դո՛ւք, աշխարհի բոլո՛ր ծայրեր, և եկեք ինձ մոտ, և հավատացե՛ք իմ ավետարանին, և ^ամկրտվե՛ք իմ անունով. քանզի նա, ով հավատում է և մկրտվում, կիրկվի. բայց նա, ով չի հավատում, կնզովվի. և ^անշաններ կհետևեն նրանց, որ հավատում են իմ անունին:

19 Եվ օրհնված է նա, որ ^ահավատարիմ կլինի իմ անունին վերջին օրը, քանզի նա կբարձրացվի՝ բնակվելու արքայությունում, պատրաստված իր համար աշխարհի ^ահիմնադրումից ի վեր: Եվ ահա, ե՛ս եմ, որ ասում է դա: Ամեն:

ԳԼՈՒԽ 5

Երեք վկաները և ինքը՝ գիրքը, կկանգնեն որպես վկայություն Մորմոնի Գրքի ճշմարտացիության մասին:

Եվ այժմ ես՝ Մորմոնիս, գրել եմ այն խոսքերը, որոնք ինձ պատվիրված են, ըստ իմ հիշողության. և ես պատմել եմ ձեզ այն բաները, որոնք ^ակնքել եմ. հետևաբար, ձեռք մի տվեք դրանց՝ թարգմանելու նպատակով. քանզի այդ բանն արգելված է ձեզ, բացի շուտով դա լինի Աստծո իմաստությամբ:

2 Եվ ահա, գուցե դուք արտոնվեք, որ կարողանաք ցույց տալ

12q սո՛ւ Լույս, Քրիստոսի լույս:
դ՝ Հովհ. Ը.12, Ալմա 38.9:
13ա3 Նեփի 12.2–3:
14ա Վևո՛Ւ 121.26–29:
15ա2 Նեփի 27.10:
16ա Հայտ. Ա.1,
1 Նեփի 14.18–27:

17ա3 Նեփի 21.1–9, 28:
18ա3 Նեփի 27.20,
Մոր. 7.34:
բ՝ Հովհ. Գ.3–5:
սո՛ւ Մկրտություն,
Մկրտել – Եական է:
գ սո՛ւ Հոգու պարզկները:
19ա Մոսիա 2.41,

Վևո՛Ւ 6.13:
սո՛ւ Հիսուս Քրիստոս –
Հիսուս Քրիստոսի
անունը մեզ վրա
վերցնելը:
բ՝ 2 Նեփի 9.18:
5 1ա 2 Նեփի 27.7–8, 21,
Եթեր 4.4–7:

թիթղները ^անրանց, ովքեր կա-
ջակցեն առաջ բերել այս գործը.

3 Եվ ^աերեք վկաների դրանք
ցույց կարվեն Աստծո գործոթյամբ.
ուստի, նրանք ^բկիմանան, անկաս-
կած, որ այս բաները ^գճշմարիտ են:

4 Եվ երեք ^ավկաների բերանով
այս բաները պիտի հաստատվեն.
և երեքի վկայությունը և այս գիր-
քը, որով ցույց պիտի տրվի Աստծո
գործությունը և նաև նրա խոսքը,
որի մասին Հայրը և Որդին և
Սուրբ Հոգին վկայում են, և վերջին
օրն այս բոլորը կկանգնեն որպես
վկայություն ընդդեմ աշխարհի:

5 Եվ եթե այնպես լինի, որ նրանք
սպաշխարեն և ^ազան դեպի Հայրը՝
Հիսուսի անունով, նրանք կընդուն-
վեն Աստծո արքայության մեջ:

6 Եվ այժմ, արդյոք ես ունեմ
իշխանություն այս բաների համար,
թե՛ ոչ, ինքներդ դատեք. քանզի
դուք կիմանաք, որ ես ունեմ իշխա-
նություն, երբ դուք տեսնեք ինձ, և
մենք պիտի կանգնենք Աստծո
առջև, վերջին օրը: Ամեն:

ԳԼՈՒԽ 6

*Հարեղական բեռնանավերը բշվում
են քամիներից դեպի խոստացված
երկիր – Ժողովուրդը գույք է անում
Տիրոջը նրա բարության համար –
Օրիան թագավոր է նշանակվում
նրանց վրա – Հարեղը և նրա եղբայ-
րը մահանում են:*

ԵՎ այժմ, ես՝ Մորոնիս, շարունա-
կում եմ գրել Հարեղի և նրա եղբոր
հիշատակարանը:

2 Քանզի եղավ այնպես, հետո,
երբ Տերը պատրաստեց ^աքարերը,
որոնք Հարեղի եղբայրը տարել
էր վեր՝ սարի վրա, Հարեղի եղբայ-
րը վար իջավ սարից և քարերը
դրեց նավերի մեջ, որոնք պատ-
րաստ էին, դրանցից ամեն մեկում
մեկ հատ. և ահա, դրանք լույս
տվեցին նավերին:

3 Եվ այսպես, Տերն արեց այնպես,
որ քարերը փայլեցին խավարում,
լույս տալով տղամարդկանց, կա-
մանց և երեխաներին, որպեսզի
նրանք մեծ ջրերը չանցնեին խա-
վարի մեջ:

4 Եվ եղավ այնպես, որ երբ
նրանք պատրաստել էին ամեն
ձևի ուտելիք, որպեսզի դրանցով
նրանք կարողանային սնվել ջրի
վրա, և նաև կեր՝ իրենց հոտերի
ու մախիբների համար, և ինչ
զազան, կամ կենդանի, կամ
թռչուն, որ պիտի տանեին իրենց
հետ, և եղավ այնպես, որ երբ
նրանք արեցին այս բոլորը, նրանք
նստեցին նավերը կամ բեռնա-
նավերը, և դուրս եկան ծով,
իրենց հանձնելով Տիրոջը՝ իրենց
Աստծուն:

5 Եվ եղավ այնպես, որ Տեր Աստ-
ված ստիպեց, որ մի ^ակատաղի
քամի փչի ջրերի երեսին՝ խոս-
տացված երկրի ուղղությամբ. և
այսպես, նրանք բշվում էին քամուց
ծովի ջրերի վրայով:

6 Եվ եղավ այնպես, որ նրանք
շատ անգամ թաղվեցին ծովի խոր-
քերում, ալիքների լեռների պատ-
ճառով, որոնք փլուզվում էին նրանց
վրա, և նաև ահռելի ու սուկալի

2ա2 Նեփի 27.12–14,
ՎևոՒ 5.9–15:
3ա2 Նեփի 11.3, 27.12:
բ ՎևոՒ 5.25:
գ Եթեր 4.11:
4ա Տե՛ս ՎևոՒ 17 բաժնի

ներածությունը և 1–3
հատվածները. տես
նաև «Երեք Վկաների
Վկայությունը»
Մորոնի Գ-քի
սկզբնական էջերում:

5ա Մորմ. 9.27,
Մոր. 10.30–32:
6 2ա Եթեր 3.3–6:
5ա Եթեր 2.24–25:

փոթորիկներից, որոնք առաջացել էին քամու կատաղությունից:

7 Եվ եղավ այնպես, որ երբ նրանք թաղվում էին ջրանդունդներում, ոչ մի ջուր չէր կարողանում վնասել նրանց, իրենց նավերը լինելով «անջրանցիկ ամանի պես, և դրանք անջրանցիկ էին նաև Նոյի» տապանի պես. ուստի, երբ նրանք շրջապատվում էին շատ ջրերով, նրանք աղաղակում էին առ Տերը, և նա կրկին դուրս էր բերում նրանց ջրերի գագաթների վրա:

8 Եվ եղավ այնպես, որ քամին երբեք չդադարեց փչել խոստացված երկրի ուղղությամբ, մինչ նրանք ջրերի վրա էին. և այսպես, նրանք առաջ էին քշվում քամուց:

9 Եվ նրանք գովք էին «երգում առ Տերը. այո, Հարեդի եղբայրը գովք էր երգում առ Տերը, և նա թգոհություն էր հայտնում և գովերգում Տիրոջն ամբողջ օրը. և երբ գալիս էր գիշերը, նրանք չէին դադարում գովերգել Տիրոջը:

10 Եվ այսպես նրանք առաջ էին քշվում. և ծովի ոչ մի հրեշ չէր կարող նրանց ջարդուփշուր անել, ոչ էլ կետ, որ կարողանար վնասել նրանց. և նրանք անընդհատ լույս ունեին՝ լինելը ջրի վրա, թե ջրի տակ:

11 Եվ այսպես ջրի վրա երեք հարյուր և քառասունևչորս օր, նրանք առաջ քշվեցին:

12 Եվ նրանք խոստացված երկրի ափն իջան: Եվ երբ նրանք իրենց ոտքը դրեցին խոստացված երկրի ափերին, նրանք վար կռացան երկրի երեսին, և իրենց խոնարհեցրին Տիրոջ առջև, և

ուրախությամբ արցունքներ թափեցին Տիրոջ առջև, իրենց վրա նրա բազում գորովագութ ողորմությունների համար:

13 Եվ եղավ այնպես, որ նրանք տարածվեցին երկրի երեսով մեկ և սկսեցին մշակել հողը:

14 Եվ Հարեդն ուներ չորս որդի. և նրանց կոչում էին Հակոմ և Գաղգա և Մահա և Օրիա:

15 Եվ Հարեդի եղբայրը նույնպես ծնեց որդիներ և դուստրեր:

16 Եվ Հարեդի և նրա եղբոր «ընկերները թվով մոտ քսաններկու հոգի էին. և նրանք նույնպես ծնեցին որդիներ ու դուստրեր, նախքան խոստացված երկիր իրենց գալը. և ուստի, նրանք սկսեցին շատանալ:

17 Եվ նրանց սովորեցնում էին խոնարհաբար «քայլել Տիրոջ առաջ. և նրանք թսովորեցվում էին նաև ի վերուստ:

18 Եվ եղավ այնպես, որ նրանք սկսեցին տարածվել երկրի երեսին և բազմանալ և մշակել հողը. և նրանք զորացան երկրում:

19 Եվ Հարեդի եղբայրը սկսեց ծերանալ, և տեսավ, որ ինքը պիտի շուտով գերեզման իջներ. ուստի, նա ասաց Հարեդին. Եկ ի մի հավաքենք մեր ժողովուրդին, որ կարողանանք նրանց հաշվել, որ կարողանանք իմանալ նրանցից, թե ինչ կցանկանան մեզանից, նախքան մեր գերեզման իջնելը:

20 Եվ հետևաբար, ժողովուրդն ի մի հավաքվեց: Արդ, Հարեդի եղբոր որդիների և դուստրերի թիվը քսաններկու հոգի էր. և Հարեդի որդիների ու դուստրերի

<p>7ա Եթեր 2.17: բ Ծն. 2.14, Մովսես 7.43: 9ա սոս Երգել:</p>	<p>բ Ա Մն. ԺՁ.7-9, Ալմա 37.37, Վև.ՈՒ 46.32: 16ա Եթեր 1.41:</p>	<p>17ա սոս Բայլել, Բայլել Ասածո հետ: բ սոս Հայտնություն:</p>
---	--	--

քիվը տասներկուսն էր, նա ունե-
նալով չորս որդի:

21 Եվ եղավ այնպես, որ նրանք
հաշվեցին իրենց ժողովրդին. և
հետո, երբ հաշվել էին նրանց,
նրանք ցանկացան իմանալ նրան-
ցից, թե նրանք ինչ կփափագեին,
որ իրենք անեին, նախքան իրենց
գերեզման իջնելը:

22 Եվ եղավ այնպես, որ ժողո-
վուրդը ցանկացավ նրանցից, որ
նրանք իրենց որդիներից մեկին
թագավոր «օժեն իրենց վրա:

23 Եվ ահա, դա ցավալի էր
նրանց համար: Եվ Հարեդի եղ-
բայրն ասաց նրանց. Այս բանը,
անկասկած, «տանում է գերության:

24 Բայց Հարեդն ասաց իր եղբո-
րը. Թույլ տուր, որ նրանք թագա-
վոր ունենան: Եվ ուստի, նա ասաց
նրանց. Ընտրեք մեր որդիների
միջից թագավոր, նույնիսկ ում որ
կամենաք:

25 Եվ եղավ այնպես, որ նրանք
ընտրեցին հենց Հարեդի եղբոր
առաջնեկին. և նրա անունը Պա-
գազ էր: Եվ եղավ այնպես, որ նա
հրաժարվեց և չկամեցավ նրանց
թագավոր լինել: Եվ ժողովուրդը
կամեցավ, որ նրա հայրը պար-
տադրի նրան, բայց նրա հայրը
չկամեցավ. և նա պատվիրեց նրանց,
որ ոչ մի մարդու չպետք է պար-
տադրեն լինել իրենց թագավոր:

26 Եվ եղավ այնպես, որ նրանք
ընտրեցին Պագազի բոլոր եղ-
բայրներին, և նրանք չկամեցան:

27 Եվ եղավ այնպես, որ ոչ էլ
Հարեդի որդիները կամեցան, նույ-
նիսկ բոլորը, բացի՝ մեկից. և
Օրիան թագավոր օժվեց ժողովրդի
վրա:

28 Եվ նա սկսեց թագավորել, և

ժողովուրդը սկսեց բարգավաճել.
և նրանք դարձան չափազանց
հարուստ:

29 Եվ եղավ այնպես, որ Հարեդը
մահացավ, և նրա եղբայրը՝ նույն-
պես:

30 Եվ եղավ այնպես, որ Օրիան
խոնարհաբար քայլում էր Տիրոջ
առաջ, և հիշում էր, թե ինչպիսի
մեծ բաներ էր Տերն արել իր հոր
համար, և նաև սովորեցնում էր իր
ժողովրդին, թե ինչպիսի մեծ բա-
ներ էր Տերն արել իրենց հայրերի
համար:

ԳԼՈՒԽ 7

*Օրիան արդարությամբ է թագավոր-
ում – Բռնազավթման և պայքարի
մեջ հիմնվում են Սուլեյի և Կոհորի
մրցակից թագավորությունները –
Մարգարեները դատապարտում են
ժողովրդի ամբարշտությունն ու
կռապաշտությունը, որոնք հետո
սպաշխարում են:*

Եւ եղավ այնպես, որ Օրիան, որի
օրերը չափազանց շատ եղան,
արդարությամբ էր դատաստան
անում երկրի վրա իր բոլոր
օրերում:

2 Եվ նա ծնեց որդիներ ու դուստ-
րեր. այո, նա ծնեց երեսունևմեկին,
որոնցից քսաններեքը որդիներ
էին:

3 Եվ եղավ այնպես, որ իր ծեր
հասակում նա ծնեց նաև Կիբին:
Եվ եղավ այնպես, որ Կիբը թա-
գավորեց նրա փոխարեն. և Կիբը
ծնեց Կորիհորին:

4 Եվ երբ Կորիհորը եղավ երե-
սունևերկու տարեկան, նա ապս-
տամբեց իր հոր դեմ և գնաց ու

բնակվեց Նեորի երկրում. և նա ծնեց որդիներ ու դուստրեր, և նրանք դարձան չափազանց գեղեցիկ. ուստի, Կորիհորն իր ետևից շատ մարդկանց տարավ:

5 Եվ երբ նա ի մի հավաքեց մի բանակ, նա եկավ Մորոնի երկիրը, որտեղ բնակվում էր թագավորը, և նրան գերի վերցրեց, որն իրակամացրեց Հարեդի եղբոր՝ ասածը, որ նրանք բերվելու էին գերության:

6 Արդ, Մորոնի երկիրը, որտեղ թագավորն էր բնակվում, մոտիկ էր երկրին, որը Նեփիաացիների կողմից կոչվում էր Ավերակներ:

7 Եվ եղավ այնպես, որ Կիբը և նրա ժողովուրդը բնակվեցին գերության մեջ, Կորիհորի՝ իր որդու ներքո, մինչև որ նա շատ ծերացավ. սակայն Կիբն իր ծեր հասակում ծնեց Սուլեին, մինչ գերության մեջ էր:

8 Եվ եղավ այնպես, որ Սուլեն բարկացավ իր եղբոր վրա. և Սուլեն դարձավ ուժեղ ու զորեղ՝ ինչ վերաբերում է մարդկային ուժին. և նա զորեղ էր նաև դատողությամբ:

9 Ուստի, նա եկավ Եփրեմի բլուրը, և բլրի հանքաքարից ձուլեց, և պողպատից սրեր սարքեց նրանց համար, ում նա իր հետ էր տարել. և նրանց սրերով զինելուց հետո, նա վերադարձավ Նեոր քաղաքը և ճակատամարտ տվեց իր եղբայր Կորիհորին, այդպիսով, նա ձեռք բերեց թագավորությունը և վերադարձրեց այն իր հորը՝ Կիբին:

10 Եվ այժմ այն բանի համար, որ արեց Սուլեն, նրա հայրը թագավորությունը շնորհեց նրան. հետևաբար, նա սկսեց թագավորել իր հոր փոխարեն:

11 Եվ եղավ այնպես, որ նա

արդարությամբ էր դատաստան անում. և նա տարածեց իր թագավորությունը ողջ երկրի երեսին, քանզի ժողովուրդը չափազանց մեծաթիվ էր դարձել:

12 Եվ եղավ այնպես, որ Սուլեն շատ որդիներ ու դուստրեր ծնեց:

13 Եվ Կորիհորն ապաշխարեց այն բազում չարիքից, որ ինքն արել էր. ուստի, Սուլեն իշխանություն տվեց նրան իր թագավորությունում:

14 Եվ եղավ այնպես, որ Կորիհորն ունեցավ շատ որդիներ ու դուստրեր: Եվ Կորիհորի որդիների մեջ կար մեկը, որի անունը Նոյ էր:

15 Եվ եղավ այնպես, որ Նոյն ապստամբեց Սուլեի՝ թագավորի դեմ, և նաև իր հոր՝ Կորիհորի, և հեռու տարավ Կոհորին՝ իր եղբորը և նաև իր բոլոր եղբայրներին և ժողովրդից շատերին:

16 Եվ նա ճակատամարտ տվեց Սուլեին՝ թագավորին, այդպիսով նա ձեռք բերեց իրենց առաջին ժառանգությունը. և երկրի այդ մասի վրա նա թագավոր դարձավ:

17 Եվ եղավ այնպես, որ նա ճակատամարտ տվեց Սուլեին՝ թագավորին. և նա վերցրեց Սուլեյին՝ թագավորին, և նրան գերության տարավ Մորոն:

18 Եվ եղավ այնպես, երբ քիչ էր մնում նրան մահվան ենթարկելը, Սուլեյի որդիները գիշերով ներս սողոսկեցին Նոյի տունը, և սպանեցին նրան, և ջարդեցին բանտի դուռը, և դուրս բերեցին իրենց հորը, և դրեցին նրան իր գահի վրա՝ իր սեփական թագավորության մեջ:

19 Ուստի, Նոյի որդին նրա փո-

խարեն հիմնեց իր թագավորութիւնը. սակայն նրանք այլևս իշխանութեան չհասան Սուլեյի՝ թագավորի վրա, և ժողովուրդը, որը Սուլեյի թագավորութեան ներքո էր, չափազանց բարգաւաճեց և դարձավ մեծ:

20 Եվ երկիրը բաժանված էր. և կային երկու թագավորություններ՝ Սուլեյի թագավորությունը և Կոհորի՝ Նոյի որդու թագավորությունը:

21 Եվ Կոհորը՝ Նոյի որդին, կարգադրեց, որ իր ժողովուրդը ճակատամարտ տա Սուլեյին, որի ժամանակ Սուլեյն ջարդեց նրանց և սպանեց Կոհորին:

22 Եվ այժմ Կոհորը մի որդի ուներ, որը կոչվում էր Նեբրովթ. և Նեբրովթը Սուլեյին հանձնեց Կոհորի թագավորությունը, և նա շնորհ ձեռք բերեց Սուլեյի աչքում. ուստի, Սուլեյն մեծ շնորհներ էր անում նրան, և նա վարվում էր Սուլեյի թագավորութեան մեջ՝ ըստ իր ցանկութեան:

23 Եվ նաև Սուլեյի թագավորութեան ժամանակ եկան մարգարեներ ժողովրդի մեջ, ովքեր ուղարկված էին Տիրոջ կողմից, մարգարեանալով, որ ժողովրդի ամբարշտությունն ու «կռապաշտությունն անե՞ծք էր բերում երկրի վրա, և նրանք պիտի կործանվեին, եթե չապաշխարեին:

24 Եվ եղավ այնպես, որ մարդիկ զազրախոսեցին մարգարեների դեմ և ծաղրեցին նրանց: Եվ եղավ այնպես, որ թագավոր Սուլեյն դատաստան արեց բոլոր նրանց դեմ, ովքեր զազրախոսեցին մարգարեների դեմ:

25 Եվ նա մի օրենք հաստատեց ողջ երկրով մեկ, որը տալիս էր

իշխանություն մարգարեներին, որ նրանք գնան, ուր որ կամենան. և դրա շնորհիվ ժողովուրդն ապաշխարութեան բերվեց:

26 Եվ քանի որ ժողովուրդն ապաշխարեց իր անօրինություններից և կռապաշտություններից, Տերը խնայեց նրանց, և նրանք սկսեցին կրկին բարգաւաճել երկրում: Եվ եղավ այնպես, որ իր ծեր հասակում Սուլեյն ծնեց որդիներ ու դուստրեր:

27 Եվ այլևս պատերազմներ չեղան Սուլեյի օրերում. և նա հիշում էր այն մեծ բաները, որ Տերն արել էր իր հայրերի համար, մեծ ջրանդունդի «վրայով բերելով նրանց խոստացված երկիրը. ուստի, նա արդարությամբ էր դատաստան անում բոլոր իր օրերում:

ԳԼՈՒԽ 8

Թագավորութեան համար պայքար է ու կռիվ – Աքիսը կազմում է մի երդմնապարտ գաղտնի խմբակցություն սպանելու թագավորին – Գաղտնի խմբակցությունները դևից են և ազգերին կործանման են հասցնում – Ժամանակակից հեթանոսներին նախազգուշացվում է այն գաղտնի խմբակցութեան դեմ, որը կջանախորտակել բոլոր երկրների, ազգերի և պետությունների ազատությունը:

Եվ եղավ այնպես, որ նա ծնեց Օմերին, և Օմերը թագավորեց նրա փոխարեն: Եվ Օմերը ծնեց Հարեդին. և Հարեդը ծնեց որդիներ ու դուստրեր:

2 Եվ Հարեդն ապատամբեց իր հոր դեմ, և եկավ ու բնակվեց Քեւտի երկրում: Եվ եղավ այնպես,

որ նա իր խորամանկ խոսքերի շնորհիվ շատ մարդկանց շողորթեց, մինչև որ իր կողմը գրավեց թագավորության կեսին:

3 Եվ երբ նա իր կողմը գրավեց թագավորության կեսին, նա ճակատամարտ տվեց իր հորը, և գերության տարավ իր հորը, և ստիպեց նրան ծառայել գերության մեջ:

4 Եվ այժմ, Օմերի թագավորության օրերին, իր օրերի կեսը նա գերության մեջ էր: Եվ եղավ այնպես, որ նա ծնեց որդիներ և դուստրեր, որոնց մեջ էին Եսրոմը և Կորիանթումբը:

5 Եվ նրանք չափազանց բարկացած էին Հարեղի՝ իրենց եղբոր արածների համար՝ այնքան, որ նրանք հավաքեցին մի բանակ և ճակատամարտ տվեցին Հարեղին: Եվ եղավ այնպես, որ նրանք ճակատամարտ տվեցին նրան զիջերով:

6 Եվ եղավ այնպես, որ երբ նրանք կոտորեցին Հարեղի զորքը, նրանք քիչ էր մնում նրան ևս սպանելին. և նա աղաչեց նրանց, որպեսզի իրեն չսպանեն, և ինքը կհանձնի թագավորությունն իր հորը: Եվ եղավ այնպես, որ նրանք նրան շնորհեցին իր կյանքը:

7 Եվ այժմ, Հարեղը դարձավ խիստ վշտաբեկ՝ թագավորության կորստի պատճառով, քանզի նա դրել էր իր սիրտը թագավորության վրա և աշխարհի փառքի վրա:

8 Արդ, Հարեղի դուստրը, լինելով չափազանց խորաթափանց, և տեսնելով իր հոր վշտերը, մտածեց մի ծրագիր հորինել, որով ինքը կարող էր վերադարձնել թագավորությունն իր հորը:

9 Արդ, Հարեղի դուստրը շատ գեղեցիկ էր: Եվ եղավ այնպես, որ նա խոսեց իր հոր հետ և ասաց նրան. Ինչի՞ց է, որ իմ հայրն այդքան վիշտ ունի: Մի՞թե նա չի կարողացել հիշատակարանը, որը մեր հայրերը բերել են մեծ ջրանդունդի վրայով: Ահա, մի՞թե այնտեղ չկա մի պատմություն նրանց վերաբերյալ՝ հնում, որ նրանք, իրենց «գաղտնի ծրագրերով, ձեռք էին բերում թագավորություններ և մեծ փառք:

10 Եվ այժմ, հետևաբար, թող իմ հայրն ուղարկի Աքիսի՝ Կիմնորի որդու ետևից. և ահա, ես գեղեցիկ եմ, և ես «կպարեմ նրա առաջ և նրան դուր կգամ, այնպես որ նա կցանկանա ինձ կնության վերցնել. ուստի, եթե նա ցանկանա քեզանից, որ դու ինձ կնության տաս նրան, այն ժամանակ դու կասես. Ես կտամ նրան, եթե դու բերես ինձ իմ հոր՝ թագավորի գլուխը:

11 Եվ արդ, Օմերը Աքիսի ընկերն էր. ուստի, երբ Հարեղն ուղարկեց Աքիսի ետևից, Հարեղի դուստրը պարեց նրա առջև, այնպես որ նա այնքան դուր եկավ նրան, որ նա ցանկացավ նրան կնության վերցնել: Եվ եղավ այնպես, որ նա ասաց Հարեղին. Տո՛ւր նրան ինձ կնության:

12 Եվ Հարեղն ասաց նրան. Ես կտամ նրան քեզ, եթե դու բերես ինձ իմ հոր՝ թագավորի գլուխը:

13 Եվ եղավ այնպես, որ Աքիսը հավաքեց բոլոր իր ազգականներին Հարեղի տանը և ասաց նրանց. Դուք կերդվե՞ք ինձ, որ հավատարիմ կլինեք ինձ՝ այն բանում, ինչ ես կցանկանամ ձեզանից:

14 Եվ եղավ այնպես, որ նրանք

բոլորը՝ Երդվեցին նրան երկնքի Աստծով, և նաև երկինքներով, և նաև երկրով, և իրենց գլխով, որ ով որ ետ կանգնի այն աջակցությունից, որն Աքիսը ցանկանում է, պիտի գրկվի իր գլխից. և ով որ հրապարակի, ինչ որ Աքիսը հայտնի էր դարձրել իրենց, նույնը պիտի գրկվի իր կյանքից:

15 Եվ եղավ այնպես, որ այսպիսով նրանք համաձայնվեցին Աքիսի հետ: Եվ Աքիսը երդվել տվեց նրանց՝ այն՝ Երդումներով, որոնք տրվել էին հնում՝ նրանց կողմից, ովքեր նույնպես ձգտում էին իշխանության, որոնք փոխանցվել էին մինչև իսկ Քւայենից, որը մարդասպան էր ի սկզբանե:

16 Եվ դրանք դևի զորությամբ պահպանվել էին՝ երդվել տալու այդ երդումներով ժողովրդին, նրանց խավարում պահելու համար, օգնելու այնպիսիներին, ովքեր իշխանության էին ձգտում՝ հասնելու իշխանության և սպանելու, թալանելու և ստելու և գործելու ամեն ձևի ամբարշտություն ու պոռնություններ:

17 Եվ Հարեդի դուստրն էր, որ նրա սրտում դրեց՝ փնտրել այս հին բաները. և Հարեդը դրեց դա Աքիսի սրտում. ուստի, Աքիսը երդվել տվեց դրանով իր ազգականներին և բարեկամներին, մոլորեցնելով նրանց սիրուն խոստումներով՝ անելու այն, ինչ որ ինքն էր ցանկանում:

18 Եվ եղավ այնպես, որ նրանք կազմեցին մի գաղտնի՝ խմբակցություն, ճիշտ ինչպես հնում էին անում. խմբակցություն, որն

Աստծո աչքում ամենապիղծն է և ամբարիշտը բոլորից առավել.

19 Քանզի Տերը չի գործում գաղտնի խմբակցություններով, ոչ էլ կամենում է նա, որ մարդ արյուն թափի, այլ արգելել է դա բոլոր բաներում, մարդու սկզբից ի վեր:

20 Եվ այժմ, ես՝ Մորոնիս, չեմ գրում նրանց երդումների և խմբակցությունների ձևը, քանզի ինձ հայտնի է դարձվել, որ դրանք եղել են բոլոր ժողովուրդների մեջ, և դրանք եղել են Լամանացիների մեջ:

21 Եվ դրանք են առաջացրել այս ժողովրդի՝ Կործանումը, որոնց մասին ես այժմ խոսում եմ, և նաև կործանումը Նեփիի ժողովրդի:

22 Եվ ինչ ազգ որ աջակցի այդպիսի գաղտնի խմբակցությունների՝ ձեռք բերելու և հասնելու իշխանության, մինչև որ դրանք տարածվեն ազգի վրա, ահա, նրանք կկործանվեն. քանզի Տերը չի հանդուրժի, որ իր սրբերի՝ արյունը, որը կթափվի նրանց կողմից, միշտ աղաղակի գետնից առ նա՝ նրանց վրա՝ վրեժխնդրության համար, և սակայն, նա նրանց վրեժը չլուծի:

23 Ուստի, ով դո՛ւք, հեթանոսներ, դա Աստծո իմաստությամբ է, որ այս բաները պիտի ցույց տրվեն ձեզ, որպեսզի դրա միջոցով դուք կարողանաք ապաշխարել ձեր մեղքերից, և չհանդուրժեք, որ այս ոճրագործ խմբակցությունները, որոնք հիմնվում են՝ իշխանություն և շահ ստանալու համար, ուժ ունենան ձեր վրա, և չհանդուրժեք, որ գործը, այո, այսինքն՝ կործանման

14ա սուր Հայիոյել, Հայիոյանք:
15ա սուր Երդում:
բ Ծն. Գ.7-8,

Մովսես 5.28-30:
18ա սուր Գաղտնի խմբակցություններ:
21ա Հել. 6.28:

22ա Մորմ. 8.27, 40-41:
բ սուր Վրեժխնդրություն:
23ա 1 Նեփիի 22.22-23,
Մովսես 6.15:

գործն իջնի ձեր վրա, այո, այսինքն՝ Հավերժական Աստծո արդարադատության սուրն ընկնի ձեզ վրա, ի խորտակումն և ի կործանումն ձեզ, եթե դուք հանդուրժեք, որ այս բաները լինեն:

24 Ուստի, Տերը պատվիրում է ձեզ, երբ դուք տեսնեք այս բաները ձեր մեջ առաջանալիս, որ դուք զարթնեք՝ ի զգացումն ձեր սուկալի դրության, այն գաղտնի խմբակցության պատճառով, որը կլինի ձեր մեջ. կամ վա՛յ լինի այդ խմբակցությանը նրանց արյան համար, ովքեր սպանվել են. քանզի նրանք փոշուց վրեժխնդրություն են աղաղակում նրանից, և նաև նրանցից, ովքեր հիմնել են այն:

25 Քանզի լինում է այնպես, որ ով հիմնում է դա, նա ջանում է խորտակել բոլոր երկրների, ազգերի և պետությունների՝ ազատությունը. և այն իրականացնում է բոլոր մարդկանց կործանումը, քանզի այն հիմնվում է դևի կողմից, որը բոլոր ստերի հայրն է. հենց այն նույն ստախոսը, որը թխաբեց մեր առաջին ծնողներին, այո, հենց այն նույն ստախոսը, որն ի սկզբանե ստիպեց մարդուն սպանություն գործել. որն ի սկզբանե կարծրացրեց մարդկանց սրտերն այնպես, որ նրանք սպանեցին մարգարեներին և քարկոծեցին նրանց և դուրս գեցին նրանց:

26 Ուստի, ինձ՝ Մորոնիիս, պատվիրվել է գրել այս բաները, որպեսզի չարիքը վերանա, և որպեսզի զա ժամանակը, երբ Սատանան

«իշխանություն չի ունենա մարդկանց զավակների սրտերի վրա, այլ որպեսզի նրանք թիմոզվեն բարիք անել շարունակ, որպեսզի զան դեպի բոլոր արդարության ակունքը և փրկվեն:

ԳԼՈՒԽ 9

Թագավորությունը, խարդավանքով և սպանությամբ, ժառանգաբար անցնում է մեկից մյուսին – Եմերը տեսել էր Արդարության Որդուն – Շատ մարգարեներ ապաշխարություն են աղաղակում – Սովը և թունավոր օձերը պատուհասում են ժողովրդին:

Ես այժմ ես՝ Մորոնիս, շարունակում եմ իմ հիշատակարանը: Հետևաբար, ահա եղավ այնպես, որ Աքիսի և նրա ընկերների՝ ազատնի խմբակցությունների պատճառով, ահա, նրանք խորտակեցին Օմերի թագավորությունը:

2 Այնուամենայնիվ, Տերը ողորմած էր Օմերի, և նաև նրա որդիների ու դուստրերի հանդեպ, ովքեր չէին փնտրել նրա կործանումը:

3 Եվ Տերը նախագոշացրեց Օմերին երազում, որ նա հեռանա երկրից. ուստի, Օմերը հեռացավ երկրից իր ընտանիքի հետ, և ճամփորդեց շատ օրեր, և եկավ ու անցավ Միմբ բլրի մոտով, և անցավ այն վայրով, որտեղ կործանվել էին Նեփիացիները, և այնտեղից՝ արևելյան ողողությամբ, և եկան մի վայր ծովափին մոտ, որը կոչվում էր Աբլոմ, և այնտեղ նա խփեց իր

25ա սուր Ազատ, Ազատություն: Բ Ծն. Գ.1–13, 2 Նեփի 9,9,

Մոսիա 16.3, Մովսես 4.5–19: 26ա 1 Նեփի 22.26: Բ 2 Նեփի 33.4,

Մոր. 7.12–17: 9 1ա Եթեր 8.13–17: 3ա Մորմ. 1.3, 4.23: Բ Մորմ. 6.1–15:

վրանը, և նաև իր որդիներն ու իր դուստրերը, և բոլոր իր գերդաստանը, բացի Հարեդից և նրա ընտանիքից:

4 Եվ եղավ այնպես, որ Հարեդն ամբարշտության ձեռքով թագավոր օծվեց ժողովրդի վրա. և նա իր դստերը կնության տվեց Աքիսին:

5 Եվ եղավ այնպես, որ Աքիսը փնտրեց իր աներոջ կյանքը. և նա դիմեց նրանց, որոնց ինքը երդվել տվեց երդումով հների, և նրանք ձեռք բերեցին նրա աներոջ գլուխը, երբ նա նստած էր իր գահին՝ ընդունելու իր ժողովրդին:

6 Քանզի այնքան մեծ էր եղել տարածումն այս ամբարիշտ և գաղտնի ընկերության, որ այն ապականել էր բոլոր մարդկանց սրտերը. հետևաբար, Հարեդը սպանվեց իր գահի վրա, և Աքիսը թագավորեց նրա փոխարեն:

7 Եվ եղավ այնպես, որ Աքիսը սկսեց նախանձել իր որդուն, ուստի, նա փակեց նրան բանտում, և պահեց նրան սակավ, կամ առանց ուտելիքի, մինչև որ նա մահացավ:

8 Եվ այժմ, եղբայրը նրա, ով մահվան էր ենթարկվել (և նրա անունը Նամրա էր) բարկացած էր իր հոր վրա նրա համար, ինչ որ հայրն արել էր իր եղբորը:

9 Եվ եղավ այնպես, որ Նամրան ի մի հավաքեց փոքր թվով մարդկանց, և փախավ երկրից, և եկավ ու բնակվեց Օմերի հետ:

10 Եվ եղավ այնպես, որ Աքիսը էլի որդիներ ծնեց, և նրանք նվաճեցին մարդկանց սրտերը, չնայած նրանք երդվել էին նրան անել ամեն ձևի անօրինություն՝ համաձայն նրա, ինչ նա ցանկանար:

11 Արդ, Աքիսի մարդիկ տենչում էին շահի, ճիշտ ինչպես Աքիսը

տենչում էր իշխանության. ուստի, Աքիսի որդիները նրանց փող առաջարկեցին, որի շնորհիվ նրանք իրենց ետևից տարան ժողովրդի մեծ մասին:

12 Եվ մի պատերազմ սկսվեց Աքիսի որդիների և Աքիսի միջև, որը տևեց շատ տարիների ընթացքում, այո, մինչև թագավորության գրեթե բոլոր մարդկանց կործանումը, այո, նույնիսկ բոլորի, բացի երեսուն հոգուց, և նրանց, ովքեր փախել էին Օմերի տան հետ:

13 Հետևաբար, Օմերը կրկին վերահաստատվեց իր ժառանգության հողում:

14 Եվ եղավ այնպես, որ Օմերը սկսեց ծերանալ. այնուամենայնիվ, իր ծեր հասակում, նա ծնեց Եմերին. և նա Եմերին օծեց թագավոր՝ իր փոխարեն թագավորելու:

15 Եվ հետո, երբ նա Եմերին օծել էր թագավոր, նա երկու տարիների ընթացքում խաղաղություն տեսավ երկրում, և նա մահացավ՝ տեսնելով չափազանց շատ երեք, որոնք լի էին վշտով: Եվ եղավ այնպես, որ Եմերը թագավորեց նրա փոխարեն և գնաց իր հոր հետքերով:

16 Եվ Տերը կրկին սկսեց վերցնել անեծքը երկրից, և Եմերի տունը խիստ բարգավաճեց Եմերի թագավորության ներքո. և վաթսուներկու տարիների ընթացքում նրանք դարձել էին չափազանց ուժեղ, այնպես որ նրանք դարձան շատ հարուստ,

17 Ունենալով ամեն ձևի միրգ և հատիկ, մետաքսներ և բեհեզներ, ոսկի և արծաթ և թանկարժեք բաներ.

18 Եվ նաև ամեն ձևի անասուն՝ եզներ և կովեր, ոչխարներ և խոզեր և այծեր, և նաև շատ ուրիշ տեսա-

կի կենդանիներ, որոնք օգտակար էին մարդու սննդի համար:

19 Եվ նրանք ունեին նաև «ծիեր և էշեր, և կալին փղեր և քուրուլմներ ու քունձմներ. որոնք բոլորն օգտակար էին մարդու համար, և ավելի շատ, հատկապես, փղերը և քուրուլմներն ու քունձմները:

20 Եվ այսպես, Տերը դուրս թափեց իր օրհնություններն այս երկրի վրա, որն «ընտիր էր մյուս բոլոր երկրներից առավել. և նա պատվիրեց, որ ով որ տիրեր երկրին, պետք է տիրեր այն Տիրոջ համար, այլապես նրանք պիտի թկործանվեին, երբ նրանք հասունացած լինեին անօրհնության մեջ. քանզի, այդպիսիների վրա, ասում է Տերը, ես դուրս կթափեմ իմ լիակատար ցասումը:

21 Եվ Եմերն արդարությամբ դատաստան արեց բոլոր իր օրերում, և նա ծնեց շատ որդիներ և դուստրեր. և նա ծնեց Կորիանթումին, և նա օձեց Կորիանթումին՝ թագավորելու իր փոխարեն:

22 Եվ հետո, երբ նա օձեց Կորիանթումին՝ թագավորելու իր փոխարեն, նա ապրեց չորս տարի, և նա տեսավ խաղաղություն երկրում. այո, և նա նույնիսկ տեսավ Արդարության «Որդուն, և ցնձաց ու հրճվեց նրա օրով. և նա մահացավ խաղաղությամբ:

23 Եվ եղավ այնպես, որ Կորիանթումը քայլեց իր հոր հետքերով, և կառուցեց բազում հզոր քաղաքներ, և իր բոլոր օրերում իր ժողովրդին տվեց այն, ինչը բարի էր: Եվ եղավ այնպես, որ նա զավակներ չունեցավ, նույնիսկ մինչև խոր ծերություն:

24 Եվ եղավ այնպես, որ նրա կի-

նը մահացավ լինելով հարյուրներկու տարեկան: Եվ եղավ այնպես, որ Կորիանթումը, իր ծեր տարիքում, կնոթյան վերցրեց մի ջահել աղջկա և ծնեց որդիներ ու դուստրեր. ուստի, նա ապրեց, մինչև եղավ հարյուր և քառասուններկու տարեկան:

25 Եվ եղավ այնպես, որ նա ծնեց Կոմին, և Կոմը թագավորեց նրա փոխարեն. և նա թագավորեց քառասունհինը տարի, և նա ծնեց Քետին. և նա ծնեց նաև ուրիշ որդիներ ու դուստրեր:

26 Եվ ժողովուրդը կրկին տարածվեց ողջ երկրի երեսին, և սկսեց կրկին մի չափազանց մեծ ամբարշտություն լինել երկրի երեսին, և Քետը սկսեց կրկին հարել զաղտնի ծրագրերին՝ հին, իր հորը կործանելու համար:

27 Եվ եղավ այնպես, որ նա գահազրկեց իր հորը, քանզի նա սպանեց նրան իր իսկ սրով. և նա թագավորեց նրա փոխարեն:

28 Եվ կրկին երկիր եկան մարգարեներն ապաշխարություն աղաղակելով նրանց, որ նրանք պիտի պատրաստեին Տիրոջ ճանապարհը, այլապես մի անեծք պիտի գար երկրի երեսին. այո, պիտի լինեի նույնիսկ մի մեծ սով, որից նրանք պիտի կործանվեին, եթե չապաշխարեին:

29 Բայց մարդիկ չհավատացին մարգարեների խոսքերին, այլ նրանց դուրս գցեցին. և նրանցից ոմանց նրանք գցեցին փոսերը և թողեցին, որ մեռնեն: Եվ եղավ այնպես, որ նրանք արեցին բոլոր այս բաները թագավորի՝ Քետի պատվիրանների համաձայն:

30 Եվ եղավ այնպես, որ մի մեծ -

երաշտ սկսվեց երկրում, և բնակիչները երաշտի պատճառով սկսեցին չափազանց արագ կոտորվել, քանզի ոչ մի անձրև չկար երկրի երեսին:

31 Եվ երկրի երեսին դուրս եկան նաև թունավոր օձեր և թունավորեցին շատ մարդկանց: Եվ եղավ այնպես, որ նրանց հոտերը սկսեցին փախչել թունավոր օձերի առջևից՝ հարավային երկրի ուղղությամբ, որը Նեփիացիները կոչում էին *Պարահեմլա*:

32 Եվ եղավ այնպես, որ եղան նրանցից շատերը, որոնք մեռան ճանապարհին. այնուամենայնիվ, եղան մի քանիսը, որոնք փախան հարավային կողմի երկիրը:

33 Եվ եղավ այնպես, որ Տերը ստիպեց օձերին, որ նրանք այլևս չհետապնդեին նրանց, այլ որ նրանք խոչընդոտեին ճանապարհը, որ ժողովուրդը չկարողանար անցնել, որպեսզի ով որ փորձեր անցնել, ընկներ թունավոր օձերից:

34 Եվ եղավ այնպես, որ մարդիկ հետևում էին գազանների ուղուն և խժռում էին դիակները նրանց, որոնք ընկել էին ճանապարհին, մինչև որ խժռեցին նրանց բոլորին: Այժմ, երբ մարդիկ տեսան, որ իրենք պետք է մեռնեին, նրանք սկսեցին *ապաշխարել իրենց* - անօրինություններից և աղաղակել առ Տերը:

35 Եվ եղավ այնպես, որ երբ նրանք իրենց բավականաչափ *խոնարհեցրին Տիրոջ առաջ*, նա անձրև ուղարկեց երկրի երեսին. և ժողովուրդը սկսեց կրկին ուշքի գալ, և սկսեց պտուղ լինել հյուսիսային երկրներում, և շրջակա բոլոր երկրներում: Եվ Տերը ցույց

տվեց նրանց իր գործությունը՝ պահպանելով նրանց սովից:

ԳԼՈՒԽ 10

Մի թագավորը հաջորդում է մյուսին – Թագավորներից ոմանք արդարակյաց են. մյուսները՝ ամբարիշտ – Երբ արդարությունը գերակշռում է, մարդիկ Տիրոջ կողմից օրհնվում են և բարգավաճում:

Եվ եղավ այնպես, որ Սեզը, որը Քետի մի հետնորդ էր, քանզի Քետը և ողջ նրա գերդաստանը, բացի Սեզից, մահացել էին սովից, հետևաբար, Սեզը սկսեց կրկին ամբացնել կոտրված ժողովրդին:

2 Եվ եղավ այնպես, որ Սեզը հիշում էր իր հայրերի կործանումը, և նա հիմնեց մի արդար թագավորություն. քանզի նա հիշում էր, թե ինչ էր արել Տերը՝ բերելով Հարեդին ու նրա եղբորը՝ *Չրանդունդի վրայով*. և նա քայլեց Տիրոջ ուղիներում. և նա ծնեց որդիներ ու դուստրեր:

3 Եվ նրա ավագ որդին, որի անունը Սեզ էր, ապստամբեց նրա դեմ. սակայն Սեզը զարկվեց մի ավագակի ձեռքով, իր շատ մեծ հարստությունների պատճառով, որը կրկին խաղաղություն բերեց նրա հորը:

4 Եվ եղավ այնպես, որ նրա հայրը կառուցեց շատ քաղաքներ երկրի երեսին, և ժողովուրդը կրկին սկսեց տարածվել ողջ երկրի երեսին: Եվ Սեզն ապրեց մինչև խոր ծերություն. և նա ծնեց Ռիփլակիսին: Եվ նա մեռավ, և Ռիփլակիսը թագավորեց նրա փոխարեն:

5 Եվ եղավ այնպես, որ Ռիփլա-

31ա Օմնի 1.13:
33ա Թվ. ԻԱ.6-9:

34ա Ալմա 34.34,
ՎևՈՒ 101.8:

35ա ՎևՈՒ 5.24:
10 2ա Եթեր 6.1-12:

կիսը չէր անում այն, ինչը ճիշտ էր Տիրոջ աչքում, քանզի նա ուներ շատ կանայք ու «հարճեր, և նա դնում էր մարդկանց ուսերին այն, ինչը ծանր էր տանել. այո, նա հարկում էր նրանց ծանր հարկերով. և այդ հարկերով նա շինում էր բազմաթիվ ընդարձակ շինություններ:

6 Եվ նա իր համար կառուցեց մի չափազանց գեղեցիկ գահ. և նա շատ բանտեր կառուցեց, և ովքեր որ չէին կամենում ենթարկվել հարկերին, նա բանտ էր գցում. և ով որ ի վիճակի չէր վճարել հարկերը, նա բանտ էր գցում. և նա ստիպում էր, որ նրանք անընդհատ աշխատեին՝ իրենց պահելու համար. և ով որ հրաժարվում էր աշխատել, նա կարգադրում էր մահվան դատապարտել նրանց:

7 Ուստի, նա ձեռք բերեց բոլոր իր նրբագեղ աշխատանքները, այո, նույնիսկ իր ընտիր ոսկին նա կարգադրում էր զտել բանտում. և նա կարգադրում էր, որ ամեն ձևի նրբագեղ աշխատանքներ արվեն բանտում: Եվ եղավ այնպես, որ նա իր պտռնկություններով ու պղծություններով չարչարեց ժողովրդին:

8 Եվ երբ նա թագավորեց քառասուններկու տարիներ, ժողովուրդն ապստամբություն բարձրացրեց նրա դեմ. և երկրում կրկին պատերազմ սկսվեց, այնպես որ Ռիփլակիսը սպանվեց, և նրա հետնորդները երկրից դուրս քշվեցին:

9 Եվ եղավ այնպես, շատ տարիների ժամանակահատվածից հետո, Մորիանթոնը (նա լինելով Ռիփլակիսի մի հետնորդ) տարագիրներից մի գորք ի մի հավաքեց, և գմաց առաջ ու ճակատամարտ

տվեց ժողովրդին. և նա իշխանություն ձեռք բերեց շատ քաղաքների վրա. և պատերազմը սաստիկ ծանրացավ, և տևեց շատ տարիներ. և նա իշխանություն ձեռք բերեց ողջ երկրի վրա, և իրեն թագավոր հաստատեց ողջ երկրի վրա:

10 Եվ հետո, երբ նա իրեն թագավոր հաստատեց, թեթևացրեց ժողովրդի բեռը, որով նա շնորհ ձեռք բերեց ժողովրդի աչքում, և նրանք օժեցին նրան իրենց թագավոր:

11 Եվ նա արդարություն էր անում ժողովրդին, բայց՝ ոչ իրեն, իր բազում պտռնկությունների պատճառով. ուստի, նա կտրված էր Տիրոջ ներկայությունից:

12 Եվ եղավ այնպես, որ Մորիանթոնը շատ քաղաքներ կառուցեց, և նրա թագավորության ներքո ժողովուրդը չափազանց հարստացավ, ինչպես շինություններով, այնպես էլ ոսկով ու արծաթով, հատիկ աճեցնելով, հոտերով և մախիրներով և այնպիսի բաներով, որոնք վերադարձվեցին նրանց:

13 Եվ Մորիանթոնն ապրեց մինչև խոր ծերություն, և հետո նա ծնեց Կիմին. և Կիմը թագավորեց իր հոր փոխարեն. և նա թագավորեց ութ տարի, և նրա հայրը մահացավ: Եվ եղավ այնպես, որ Կիմն արդարությամբ չթագավորեց, ուստի, նա չհովանավորվեց Տիրոջից:

14 Եվ նրա եղբայրն ապստամբություն բարձրացրեց նրա դեմ, որով բերեց նրան գերության. և նա իր բոլոր օրերում մնաց գերության մեջ. և գերության մեջ նա ծնեց որդիներ ու դուստրեր, և իր ծեր հասակում նա ծնեց Դևիին. և նա մահացավ:

15 Եվ եղավ այնպես, որ Ղևին, իր հոր մահից հետո, քառասուններկու տարիների ընթացքում, ծառայեց գերության մեջ: Եվ նա պատերազմ մղեց երկրի թագավորի դեմ, որի միջոցով նա ձեռք բերեց թագավորությունն իր համար:

16 Եվ հետո, երբ նա իր համար ձեռք բերեց թագավորությունը, նա արեց այն, ինչը ճիշտ էր Տիրոջ աչքում. և ժողովուրդը բարգավաճեց երկրում. և նա ապրեց մինչև բավականին ծեր հասակը, և ծնեց որդիներ ու դուստրեր. և նա նաև ծնեց Կորոմին, որին նա իր փոխարեն թագավոր օժեց:

17 Եվ եղավ այնպես, որ բոլոր իր օրերում Կորոմն արեց այն, ինչը բարի էր Տիրոջ աչքում. և նա ծնեց շատ որդիներ ու դուստրեր. և շատ օրեր տեսնելուց հետո, նա վախճանվեց, ճիշտ երկրի մնացածի պես. և Կիսը թագավորեց նրա փոխարեն:

18 Եվ եղավ այնպես, որ Կիսը նույնպես վախճանվեց, և Լիբը թագավորեց նրա փոխարեն:

19 Եվ եղավ այնպես, որ Լիբը նույնպես արեց այն, ինչը բարի էր Տիրոջ աչքում: Եվ Լիբի օրերում՝ «թունավոր օձերը ոչնչացվեցին: Ուստի, նրանք գնացին հարավային կողմի երկիրը՝ ուտելու բան որսալու երկրի ժողովրդի համար, քանզի երկիրը ծածկված էր անտառի կենդանիներով: Եվ Լիբը՝ ինքը նույնպես հմուտ որսորդ դարձավ:

20 Եվ նրանք ցամաքի նեղ պարանոցին մոտիկ մի մեծ քաղաք կառուցեցին, այն տեղին մոտիկ, որտեղ ծովը բաժանում է ցամաքը:

21 Եվ նրանք հարավային կողմի

երկիրը պահեցին որպես անապատ՝ որս անելու համար: Իսկ հյուսիսային կողմի երկրի ամբողջ երեսը ծածկված էր բնակիչներով:

22 Եվ նրանք շատ էշխատասեր էին, և նրանք գնում էին ու վաճառում, և առևտուր անում մեկը մյուսի հետ, որպեսզի շահ ստանային:

23 Եվ նրանք մշակում էին ամեն ձևի հանքանյութ, և ստանում էին ոսկի և արծաթ և «երկաթ և արույր և ամեն ձևի մետաղներ. և նրանք փորում-հանում էին դա հողից. ուստի, նրանք կիտում էին հողի առելի կույտեր՝ ոսկու և արծաթի, երկաթի և պղնձի հանքանյութ գտնելու համար: Եվ նրանք գործում էին ամեն ձևի նրբագեղ գործվածք:

24 Եվ նրանք ունեին մետաքսներ և նրբահյուս բեհեզ. և նրանք գործում էին ամեն ձևի գործվածք, որպեսզի ծածկելին իրենց մերկությունը:

25 Եվ նրանք պատրաստում էին ամեն ձևի գործիքներ հողը մշակելու համար՝ հերկելու և ցանելու, հնձելու և փխրեցնելու և նաև կալսելու համար:

26 Եվ նրանք պատրաստեցին ամեն ձևի գործիքներ, որոնցով նրանք բանեցնում էին իրենց անասուններին:

27 Եվ նրանք պատրաստեցին ամեն ձևի պատերազմի զենքեր: Եվ նրանք խիստ զարմանալի վարպետության ամեն ձևի գործեր գործեցին:

28 Եվ երբեք ոչ մի ժողովուրդ այդքան ավելի օրհնված չէր եղել, որքան նրանք էին, և ավելի բարգավաճած՝ Տիրոջ ձեռքով: Եվ նրանք մի երկրում էին, որն ընտիր

էր բոլոր երկրներից առավել, քանզի Տերն էր ասել դա:

29 Եվ եղավ այնպես, որ Լիբն ապրեց շատ տարիներ, և ծնեց որդիներ ու դուստրեր. և նա նաև ծնեց Հնարթոմին:

30 Եվ եղավ այնպես, որ Հնարթոմը թագավորեց իր հոր փոխարեն: Եվ երբ Հնարթոմը թագավորեց քսանհորս տարիներ, ահա, թագավորությունը վերցվեց նրանից: Եվ նա շատ տարիներ ծառայեց գերության մեջ, այո, նույնիսկ բոլոր իր օրերի մնացածը:

31 Եվ նա ծնեց Քետին, և Քետը բոլոր իր օրերն ապրեց գերության մեջ: Եվ Քետը ծնեց Ահարոնին, և Ահարոնը բոլոր իր օրերը բնակվեց գերության մեջ. և նա ծնեց Ամնիգադային, և Ամնիգադան նույնպես բոլոր իր օրերը բնակվեց գերության մեջ. և նա ծնեց Կորիանթոմին, և Կորիանթոմը բոլոր իր օրերը բնակվեց գերության մեջ. և նա ծնեց Կոմին:

32 Եվ եղավ այնպես, որ Կոմն իր կողմը գրավեց թագավորության կեսին: Եվ նա թագավորության կեսի վրա թագավորեց քառասուններկու տարիներ. և նա զնաց ճակատամարտելու թագավորի՝ Ամզիդի դեմ, և նրանք մարտնչեցին շատ տարիներ, այդ ժամանակի ընթացքում Կոմն իշխանություն ձեռք բերեց Ամզիդի վրա, և ձեռք բերեց իշխանություն թագավորության մնացածի վրա:

33 Եվ Կոմի օրերին երկրում սկսեցին ավազակներ հայտնվել. և նրանք որդեգրեցին հին ծրագրերը և՝ Խեղումներ տվեցին, ըստ նախնիների ձևի, և ջանացին կրկին կործանել թագավորությունը:

34 Արդ, Կոմը երկար մարտնչեց նրանց դեմ. սակայն, նա առավելուքյան չհասավ նրանց վրա:

ԳԼՈՒԽ 11

Պատերազմներ, երկպառակություններ և ամբարշտություն է տիրում Հարեղացիների կյանքում – Մարգարեները գուշակում են Հարեղացիների լիակատար կործանումը, եթե նրանք չապաշխարեն – Ժողովուրդը մերժում է մարգարեների խոսքերը:

Եվ Կոմի օրերին ևս շատ մարգարեներ եկան և մարգարեացան այդ մեծ ժողովրդի կործանման վերաբերյալ, եթե նա չապաշխարեր և չդառնար դեպի Տերը, և չթողներ իր սպանություններն ու ամբարշտությունը:

2 Եվ եղավ այնպես, որ մարգարեները մերժվեցին ժողովրդի կողմից, և նրանք փախան Կոմի մոտ պաշտպանության համար, քանզի ժողովուրդը ջանում էր կործանել նրանց:

3 Եվ նրանք Կոմին մարգարեացան շատ բաներ. և նա օրհնվեց իր մնացած բոլոր օրերում:

4 Եվ նա ապրեց մինչև խոր ծերություն և ծնեց Սիբլոմին. և Սիբլոմը թագավորեց նրա փոխարեն: Եվ Սիբլոմի եղբայրն ապստամբեց նրա դեմ, և մի դաժան պատերազմ սկսվեց ամբողջ երկրում:

5 Եվ եղավ այնպես, որ Սիբլոմի եղբայրը կարգադրեց, որ բոլոր մարգարեները, ովքեր մարգարեացել էին ժողովրդի կործանման վերաբերյալ, պետք է մահվան դատապարտվեին.

6 Եվ մեծ դժբախտություն էր ողջ երկրում, քանզի նրանք վկայել էին, որ մի մեծ անեծք պիտի գար երկրի վրա, և նաև ժողովրդի վրա, և որ մի մեծ կործանում պիտի լիներ նրանց մեջ, այնպիսին, ինչպիսին երբեք չէր եղել երկրի երեսին, և նրանց ոսկորները պիտի դառնային հողի՝ «կույտերի պես՝ երկրի երեսին, եթե նրանք չապաշխարեին իրենց ամբարշտությունից:

7 Եվ նրանք ականջ չարեցին Տիրոջ ձայնին իրենց ամբարիշտ խմբակցությունների պատճառով. ուստի, ողջ երկրում սկսվեցին պատերազմներ ու հակառակություններ, և նաև մեծ սով ու համաճարակ, այնպես որ մեծ կործանում եղավ, այնպիսին, ինչպիսին երբեք չէր իմացվել երկրի երեսին. և այս բոլորը տեղի ունեցավ Սիբլոմի օրերին:

8 Եվ ժողովուրդը սկսեց ապաշխարել իր անօրինությունից. և որքանով նրանք ապաշխարեցին, այնքանով Տերը՝ ողորմություն ունեցավ նրանց վրա:

9 Եվ եղավ այնպես, որ Սիբլոմը սպանվեց, և Սեթը գերության տարվեց, և գերության մեջ ապրեց բոլոր իր օրերը:

10 Եվ եղավ այնպես, որ Աքայը՝ նրա որդին, նվաճեց թագավորությունը. և նա թագավորեց ժողովրդի վրա բոլոր իր օրերում: Եվ նա արեց ամեն ձևի անօրինություն իր օրերում, որի պատճառով շատ արյուն թափվեց. և քիչ եղան նրա օրերը:

11 Եվ Եթեմը, լինելով Աքայի մի հետնորդ, ձեռք բերեց թագավորությունը. և իր օրերում, նա նույնպես արեց այն, ինչն ամբարիշտ էր:

12 Եվ եղավ այնպես, որ Եթեմի օրերում, եկան շատ մարգարեներ, և նորից մարգարեացան ժողովրդին. այո, նրանք մարգարեացան, որ Տերը նրանց լիովին բնաջնջելու էր երկրի երեսից, եթե նրանք չապաշխարեին իրենց անօրինություններից:

13 Եվ եղավ այնպես, որ ժողովուրդը կարծրացրեց իր սիրտը և չկամեցավ «ականջ դնել նրանց խոսքերին. և մարգարեները սգացին ու ետ քաշվեցին ժողովրդի միջից:

14 Եվ եղավ այնպես, որ Եթեմն ամբարշտությամբ դատաստան արեց բոլոր իր օրերում. և նա ծնեց Մորոնին: Եվ եղավ այնպես, որ Մորոնը թագավորեց նրա փոխարեն. և Մորոնն արեց այն, ինչն ամբարիշտ էր Տիրոջ առաջ:

15 Եվ եղավ այնպես, որ ժողովրդի մեջ՝ «ապստամբություն բարձրացավ այն գաղտնի խմբակցության հետևանքով, որը հիմնվել էր իշխանություն և շահ ձեռք բերելու համար. և անօրինության մեջ գորավոր մի մարդ բարձրացավ նրանց մեջ, և ճակատամարտ տվեց Մորոնին, որով նա տապալեց թագավորության կեսը. և նա շատ տարիներ պահեց թագավորության կեսը:

16 Եվ եղավ այնպես, որ Մորոնը տապալեց նրան և կրկին ձեռք բերեց թագավորությունը:

17 Եվ եղավ այնպես, որ մի ուրիշ գորավոր մարդ բարձրացավ. և նա Հարեդի եղբոր հետնորդն էր:

18 Եվ եղավ այնպես, որ նա տապալեց Մորոնին և ձեռք բերեց թագավորությունը. ուստի, Մորոնն իր մնացած բոլոր օրերն ապրեց

11 6ա Օմնի 1.22, Եթեր 14.21:

8ա ՍՈՒ Ողորմած, Ողորմություն:

13ա Մոսիա 16.2: 15ա ՍՈՒ Ապստամբություն:

գերության մեջ. և նա ծնեց Կորիանթորին:

19 Եվ եղավ այնպես, որ Կորիանթորն իր բոլոր օրերն ապրեց գերության մեջ:

20 Եվ Կորիանթորի օրերում ևս շատ մարգարեներ եկան, և մարգարեացան մեծ ու զարմանալի բաների վերաբերյալ, և ժողովրդին ապաշխարության կանչեցին, և եթե նրանք չապաշխարեին, Տեր Աստված ^ադատաստան էր անելու նրանց վրա՝ ի լիակատար կործանումն իրենց.

21 Եվ որ Տեր Աստված իր գործությամբ ուղարկելու էր կամ բերելու էր ^ամեկ ուրիշ ժողովրդի՝ տիրելու երկրին, այն ձևով, ինչպես նա բերեց իրենց հայրերին:

22 Եվ իրենց գաղտնի կազմակերպության և ամբարիշտ պղծությունների պատճառով, նրանք մերժեցին մարգարեների բոլոր խոսքերը:

23 Եվ եղավ այնպես, որ Կորիանթորը ծնեց ^աԵթերին և նա մեռավ իր բոլոր օրերն ապրելով գերության մեջ:

ԳԼՈՒԽ 12

Մարգարե Եթերը հորդորում է մարդկանց հավատալ Աստծուն – Մորոնին թվարկում է հավատքով արված զարմանալիքներն ու հրաշքները – Հավատքն ի զորու դարձրեց Հարեդի եղբորը տեսնելու Քրիստոսին – Տերը մարդկանց թուլություն է տալիս, որպեսզի նրանք լինեն խոնարհ – Հարեդի եղբայրը

հավատքով տեղափոխեց Չերին սարը – Հավատքը, հույսը և գթությունը կարևոր են փրկության համար – Մորոնին տեսավ Հիսուսին երես առ երես:

Եվ եղավ այնպես, որ Եթերի օրերը Կորիանթուսների օրերում էին. և ^աԿորիանթուսները թագավոր էր ողջ երկրի վրա:

2 Եվ ^աԵթերը Տիրոջ մի մարգարե էր. ուստի Եթերն առաջ եկավ Կորիանթուսների օրերում, և սկսեց մարգարեանալ ժողովրդին, քանզի նա չէր կարող ^բգալել իրեն՝ Տիրոջ Հոգու պատճառով, որը նրա մեջ էր:

3 Քանզի նա ^աաղաղակում էր առավոտից, նույնիսկ մինչև արևի մայր մտնելը, հորդորելով ժողովրդին հավատալ Աստծուն՝ ապաշխարելով, եթե ոչ, նրանք պիտի ^բկործանվեին, ասելով նրանց, որ ^գհավատքով են բոլոր բաները կատարվում,

4 Ուստի, ով որ հավատում է Աստծուն, կարող է անկասկած ^ահուսալ ավելի լավ աշխարհի համար, այո, նույնիսկ մի տեղի՝ Աստծո աջ կողմում, հույս, որը գալիս է հավատքից, դառնում է ^բխարիսխ մարդկանց հոգիների համար, ինչը դարձնում է նրանց կայուն և հաստատուն, միշտ հարստացնում ^գբարի գործերով, առաջնորդում ^դփառաբանելու Աստծուն:

5 Եվ եղավ այնպես, որ Եթերը ժողովրդին մեծ և զարմանալի բաներ մարգարեացավ, որոնց նրանք չհավատացին, որովհետև նրանք չէին տեսնում դրանք:

20ա սո՛ր Դատել, Դատաստան:
21ա Եթեր 13.20–21:
23ա Եթեր 1.6, 15.33–34:
12 1ա Եթեր 13.13–31:

2ա սո՛ր Եթեր:
բ Երեմ. Ի.9, Ենովյ 1.26, Ալմա 43.1:
3ա Վևո՛ր 112.5:
բ Եթեր 11.12, 20–22:

գ սո՛ր Հավատք:
4ա սո՛ր Հույս:
բ Եբր. Զ.19:
գ Ա Կոր. ԺԵ.58:
դ 3 Նեփի 12.16:

6 Եվ այժմ, ես՝ Մորոնիս, կկամենայի որոշ բան խոսել այս բաների վերաբերյալ. ես կկամենայի ցույց տալ աշխարհին, որ ^ահավատքը բաներ են, որոնց համար ^բհույս ունենք և ^գչենք տեսնում. ուստի, մի վիճեք, եթե դուք չեք տեսնում, քանզի նախքան ձեր հավատքի ^դփորձությունը, դուք վկայություն չեք ստանում:

7 Քանզի հավատքով էր, որ Քրիստոսն իրեն ցույց տվեց մեր հայրերին մեռելներից հարություն առնելուց հետո. և նա իրեն ցույց չտվեց նրանց, մինչև նրանք հավատք չունեցան առ նա. ուստի, անպայման անհրաժեշտ էր, որ ոմանք հավատք ունենային առ նա, քանի որ նա իրեն ցույց չէր տվել աշխարհին:

8 Բայց մարդկանց հավատքի պատճառով նա իրեն ցույց տվեց աշխարհին, և փառավորեց Հոր անունը, և պատրաստեց մի ուղի, որպեսզի դրա միջոցով մյուսները երկնային պարզևի ճաշակողներ լինեին, որպեսզի նրանք հուսային այն բաների համար, որոնք նրանք չէին տեսել:

9 Ուստի, դուք նույնպես կարող եք հույս ունենալ և այդ պարզևի ճաշակողներ լինել, եթե միայն հավատք ունենաք:

10 Ահա, հավատքով էր, որ հնում ^ականչվում էին ըստ Աստծո սուրբ կարգի:

11 Ուստի, հավատքով էր Մովսեսի օրենքը տրված: Բայց իր Որդու պարզևով Աստված պատրաստել է ավելի ^ազերպագանց ուղի. և հավատքով է, որ դա կատարվեց:

12 Քանզի, եթե ^ահավատք չլինի մարդկանց զավակների մեջ, Աստված չի կարող ^բհրաշք գործել նրանց մեջ. ուստի, նախքան նրանց հավատքը, նա ցույց չտվեց իրեն:

13 Ահա, Ալմայի և Ամուղեկի հավատքն էր, որ գետնին փլուզեց ^աբանոր:

14 Ահա, Նեփիի ու Լեքիի հավատքն էր, որ ^ափոփոխություն գործեց Լամանացիների մեջ, այնպես որ նրանք մկրտվեցին կրակով ու ^ՄՍուրբ Հոգով:

15 Ահա, ^աԱմմոնի և նրա եղբայրների հավատքն էր, որ Լամանացիների մեջ այնպիսի մեծ մի հրաշք ^բգործեց:

16 Այո, և նույնիսկ բոլոր նրանք, ովքեր գործեցին ^ահրաշքներ, ^բհավատքով գործեցին, նույնիսկ նրանք, ովքեր Քրիստոսից առաջ էին, և նաև նրանք, ովքեր հետո էին:

17 Եվ հավատքով էր, որ երեք աշակերտները խոստում ձեռք բերեցին, որ իրենք ^աչպետք է մահ ճաշակեն. և նախքան իրենց հավատքը, նրանք ձեռք չբերեցին խոստումը:

18 Եվ ոչ էլ երբևէ որևէ մեկը հրաշքներ է գործել, նախքան իր

6ա Եբր. ԺԱ.1:
բ Հռովմ. Ը.24–25:
գ Ալմա 32.21:
դ 3 Նեփի 26.11,
վևՈՒ 105.19, 121.7–8:
10ա Ալմա 13.3–4:
սոՒ Կանչ, Աստծո
կողմից կանչված,
Կոչում:

11ա Ա Կոր. ԺԲ.31:
12ա 2 Նեփի 27.23,
Մոսիա 8.18,
Մոր. 7.37,
վևՈՒ 35.8–11:
բ Մատ. ԺԳ.58,
Մորմ. 9.20:
13ա Ալմա 14.26–29:
14ա Հեղ. 5.50–52:

բ Հեղ. 5.45, 3 Նեփի 9.20:
15ա Ալմա 17.29–39:
բ Նշ. ինչպես ասվում է
Ալմայի 17–26
զրուխներում:
16ա սոՒ Հրաշք:
բ Եբր. ԺԱ.7–40:
17ա 3 Նեփի 28.7,
Մորմ. 8.10–12:

հավատքը. ուստի, նրանք առաջինը հավատացին Աստծո Որդուն:

19 Եվ եղան շատերը, որոնց հավատքն այնքան շատ ուժեղ էր, նույնիսկ ^ամինչև Քրիստոսի գալը, որ չէին կարող պահվել ^բվարագույրից ներս, այլ հիրավի իրենց աչքով տեսան այդ բաները, որոնք հավատքի աչքով նրանք տեսան, և նրանք ուրախ էին:

20 Եվ ահա, մենք այս հիշատակարանում տեսանք, որ դրանցից մեկը Հարեղի եղբայրն էր. քանզի այնքան մեծ էր նրա հավատքն առ Աստված, որ երբ Աստված առաջ մեկնեց իր ^ամատը, նա չկարողացավ քաքցնել այն Հարեղի եղբոր տեսողությունից, իր խոսքի պատճառով, որը նա ասել էր նրան, խոսք, որը նա ձեռք էր բերել հավատքով:

21 Եվ հետո, երբ Հարեղի եղբայրը տեսել էր Տիրոջ մատը, այն ^ախոստումի հեռանալով, որ Հարեղի եղբայրը ձեռք էր բերել հավատքով, Տերը չէր կարող նրա տեսողությունից որևէ բան ետ պահել. ուստի, նա ցույց տվեց նրան բոլոր բաները, քանզի նա այլևս չէր կարող ^բվարագույրից այն կողմ պահվել:

22 Եվ հավատքով է, որ իմ հայրերը ձեռք բերեցին ^ախոստումը, որ այս բաները հեթանոսների միջոցով պիտի գան իրենց եղբայրներից. հետևաբար, Տերը պատվիրել է ինձ, այո, այսինքն՝ Հիսուս Քրիստոսը:

23 Եվ ես ասացի նրան. Տե՛ր, գրելու մեջ մեր ^աթուլության պատճա-

ռով հեթանոսները կծիծաղեն այս բաների վրա. քանզի, Տե՛ր, դու մեզ գորավոր ես դարձրել խոսքի մեջ, հավատքի միջոցով, բայց դու մեզ ^բգորավոր չես դարձրել գրելու մեջ. քանզի դու այս ողջ ժողովրդին դարձրել ես այնպես, որ նրանք շատ կարողանան խոսել, Սուրբ Հոգու շնորհիվ, որը շնորհել ես նրանց.

24 Եվ դու մեզ դարձրել ես այնպես, որ մենք կարողանանք գրել, բայց քիչ, մեր ձեռքերի անճկունության պատճառով: Ահա, դու մեզ գորավոր չես դարձրել ^ագրելու Հարեղի եղբոր պես, քանզի դու դարձրել էիր նրան այնպես, որ այն բաները, որոնք նա գրեց, գորավոր էին, ճիշտ ինչպես դո՛ւ ես, մինչև իսկ դրդելու մարդուն կարողալ դրանք:

25 Դու նաև մեր խոսքերը գորավոր ու մեծ ես դարձրել՝ այնքան, որ մենք չենք կարողանում գրել դրանք. ուստի, երբ մենք գրում ենք, մենք տեսնում ենք մեր բուլությունը, և սայթաքում ենք՝ մեր խոսքերի տեղադրման պատճառով. և ես վախենում եմ, որ չլինի թե հեթանոսները ^ածիծաղեն մեր խոսքերի վրա:

26 Եվ երբ ես ասացի այս, Տերը խոսեց ինձ հետ՝ ասելով. Հիմարներն են ^ածիծաղում, բայց նրանք կսգան. և իմ շնորհը բավական է հեզերի համար, այնպես որ նրանք չեն չարաշահի ձեր թուլությունը.

27 Եվ եթե մարդիկ գան ինձ մոտ, ես նրանց ցույց կտամ իրենց ^աթուլությունը: Ես մարդկանց թու-

19ա2 Նեփի 11.1–4,
Հակոբ 4.4–5,
Հարոն 1.11,
Ալմա 25.15–16:
բ Եթեր 3.6:
սո՛ւ Վարագույր:

20ա Եթեր 3.4:
21ա Եթեր 3.25–26:
բ Եթեր 3.20,
ՎևոՒ 67.10–13:
22ա Ենովս 1.13:
23ա Մորմ. 8.17, 9.33:

բ 2 Նեփի 33.1:
24ա սո՛ւ Լեզու:
25ա Ա Վոր. Բ.14:
26ա Գաղ. 2.7:
27ա Հակոբ 4.7:

լուծյուն եմ ^բտալիս, որպեսզի նրանք խոնարհ լինեն. և իմ ^զՆոր-հը բավական է բոլոր մարդկանց համար, ովքեր իրենց ^ըխոնարհեցնում են իմ առջև. բանգի, եթե նրանք խոնարհեցնեն իրենց իմ առջև, և հավատք ունենան ինձանում, այն ժամանակ, նրանց ^բթույլ կողմերը ես կդարձնեմ ուժեղ:

28 Ահա, ես հեթանոսներին ցույց կտամ իրենց թուլությունը, և ես ցույց կտամ նրանց, որ ^ահավատքը, հույսը և գթությունը բերում են դեպի ինձ՝ դեպի ակունքն ամենայն արդարության:

29 Եվ ես՝ Մորոնիս, այս խոսքերը լսելով, հանգստացա և ասացի. Ո՛վ Տեր, քո արդար կամքը թող կատարվի, բանգի ես գիտեմ, որ դու գործում ես մարդկանց զավակների համար՝ համաձայն նրանց հավատքի.

30 Քանզի Հարեդի եղբայրն ասաց Ձերին սարին՝ ^աՏեղափոխվի՛ր, և այն տեղափոխվեց: Եվ եթե նա հավատք չունենար, այն չէր շարժվի. ուստի դու գործում ես հետո, երբ մարդիկ հավատք են ունենում:

31 Քանզի այսպե՛ս դու հայտնվեցիր քո աշակերտներին. բանգի, հետո, երբ նրանք ^ահավատք ունեցան, և խոսեցին քո անունով, դու մեծ գործությամբ քեզ ցույց տվեցիր նրանց:

32 Եվ ես նաև հիշում եմ, որ դու ասել ես, որ դու մարդկանց համար օթևան ես պատրաստել, այո, նույ-

նիսկ քո Հոր ^աապարանքներում, որով մարդ ավելի գերազանց ^բհույս կարող է ունենալ. ուստի մարդ պետք է հուսա, այլապես չի կարող ժառանգություն ստանալ այն տեղում, որ դու պատրաստել ես:

33 Եվ բացի դրանից, ես հիշում եմ, որ դու ասել ես, որ ^ասիրեցիր աշխարհը, մինչև իսկ աշխարհի համար վայր դնելով քո կյանքը, որ դու կարողանայիր կրկին վերցնել այն՝ մի տեղ պատրաստելու մարդկանց զավակների համար:

34 Եվ այժմ ես գիտեմ, որ ^ասերը, որ դու ունես մարդկանց զավակների համար, գթությունն է. ուստի, եթե մարդիկ գթություն չունենան, նրանք չեն կարող ժառանգել այն տեղը, որը դու պատրաստել ես քո Հոր ապարանքներում:

35 Ուստի, ես գիտեմ, այս բանի միջոցով, որ դու ասել ես, որ եթե հեթանոսները գթություն չունենան՝ մեր թուլության պատճառով, որ դու կապացուցես նրանց և կվերցնես նրանց ^աքանքարը, այո, նույնիսկ այն, ինչ նրանք ստացել են և կտաս նրանց, ովքեր ավելի առատորեն կունենան:

36 Եվ եղավ այնպես, որ ես աղոթեցի Տիրոջը, որ նա ^աՆորի տար հեթանոսներին, որ նրանք կարողանային գթություն ունենալ:

37 Եվ եղավ այնպես, որ Տերն ասաց ինձ. Եթե նրանք գթություն չունենան, դա քեզ համար նշանակություն չունի, դու եղել ես հավատարիմ. ուստի, քո հանդերձները

27բ Ել. Գ.11, Ա Կոր. Ա.27:
գ սուր Ընոթի:
դ Ղուկ. ԺԸ.10–14,
 ՎևոՒԻ 1.28:
 սուր Խոնարհ,
 Խոնարհություն:
ե Ղուկ. Թ.46–48,
 Բ Կոր. ԺԲ.9:

28ա Ա Կոր. ԺԳ.1–13,
 Մոր. 7.39–47:
 30ա Մատ. ԺԷ.19,
 Հակոբ 4.6, Հել. 10.6, 9:
 սուր Չորություն:
 31ա սուր Հավատք:
 32ա Հովի. ԺԳ.2,
 Ենովս 1.27,

ՎևոՒԻ 72.4, 98.18:
բ սուր Հույս:
 33ա Հովի. Գ.16–17:
 34ա Մոր. 7.47:
 սուր Գթություն. Մեր:
 35ա Մատ. ԻԵ.14–30:
 սուր Պարզև, Քանքար:
 36ա սուր Ընոթի:

՝մաքուր կդարձվեն: Եվ քանի որ դու տեսար քո Քթուլությունը, դու ուժեղ կդարձվես, մինչև իսկ նստելու այն տեղում, որը ես պատրաստել եմ իմ Հոր ապարանքներում:

38 Եվ այժմ ես՝ Մորոնիս, մնաք բարով եմ հղում հեթանոսներին, այո, և նաև իմ եղբայրներին, որոնց ես սիրում եմ, մինչև մենք կհանդիպենք Քրիստոսի ՝ատյանի առաջ, որտեղ բոլոր մարդիկ կիմանան, որ իմ Քհանդերձներն արատավորված չեն ձեր արյունով:

39 Եվ այն ժամանակ դուք կիմանաք, որ ես ՝տեսել եմ Հիսուսին, և որ նա խոսել է ինձ հետ՝ Քերես առ երես, և որ նա ասել է ինձ, պարզ համեսությամբ, ճիշտ ինչպես մարդ ասում է մեկ ուրիշին, իմ սեփական լեզվով՝ այս բաների վերաբերյալ.

40 Եվ գրելու իմ թուլության պատճառով ես միայն մի քանի բաներ եմ գրել:

41 Եվ այժմ ես կկամենայի հանձնարարել ձեզ՝ ՝փնտրել այս Հիսուսին, որի մասին գրել եմ մարգարեներն ու առաքյալները, որպեսզի շնորհը Հայր Աստծո և նաև Տեր Հիսուս Քրիստոսի, և Սուրբ Հոգու, որը Քվկայում է նրանց մասին, լինի և մնա ձեր մեջ հավիտյան: Ամեն:

ԳԼՈՒԽ 13

Եթերը խոսում է Նոր Երուսաղեմի

մասին, որը Հովսեփի սերնդի կողմից կառուցվելու է Ամերիկայում – Նա մարգարեանում է, դուրս է գցվում, գրում է Հարեդական պատմությունը և կանխագուշակում Հարեդացիների կործանումը – Պատերազմը մոլեգնում է ողջ երկրով մեկ:

Եվ այժմ ես՝ Մորոնիս, սկսում եմ վերջացնել իմ հիշատակարանն այն ժողովրդի կործանման վերաբերյալ, որի մասին ես գրում եմ:

2 Քանզի ահա, նրանք մերժեցին Եթերի բոլոր խոսքերը. քանի որ նա ճշմարտացիորեն ասաց նրանց բոլոր բաների մասին, մարդու սկզբից ի վեր. և որ հետո, երբ ջրերը ետ ՝քաշվեցին այս երկրի երեսից, այն դարձավ ընտիր երկիր՝ բոլոր մնացած երկրներից առավել, Տիրոջ մի ընտրյալ երկիր. ուստի, Տերը կամենում է, որ բոլոր մարդիկ, ովքեր բնակվում են դրա երեսին, Քծառայեն իրեն.

3 Եվ, որ այն ՝Նոր Երուսաղեմի տեղն է, որը պիտի Քվար գա երկնքից, և Տիրոջ սուրբ սրբարանը:

4 Ահա, Եթերը տեսավ Քրիստոսի օրերը, և նա խոսեց մի ՝Նոր Երուսաղեմի մասին այս երկրի վրա:

5 Եվ նա խոսեց նաև Իսրայելի տան վերաբերյալ, և ՝Երուսաղեմի, որտեղից ՔԼԵքին պիտի գար, որ հետո, երբ այն կործանվեր, այն պիտի կրկին կառուցվեր, մի ⁹սուրբ քաղաք՝ Տիրոջ համար. ուստի, այն չէր կարող լինել մի նոր Երու-

37ա Վև.ՈՒ 38.42, 88.74–75, 135.4–5:
բ Եթեր 12.27:
38ա սո՛ւ Հիսուս Քրիստոս – Դատավոր:
բ Հակոբ 1.19:
39ա սո՛ւ Հիսուս Քրիստոս – Քրիստոսի ետմահ-

կանացու հայտնության դեպքերը:
բ Ծն. ԼԲ.30, Ել. ԼԳ.11:
41ա Վև.ՈՒ 88.63, 101.38:
բ 3 Նեփի 11.32:
13 2ա Ծն. Է.11–24, 8.3:
բ Եթեր 2.8:

3ա 3Նեփի 20.22, 21.23–24:
սո՛ւ Նոր Երուսաղեմ:
բ Հայտ. Գ.12, ԻԱ.2:
4ա սո՛ւ Սիոն:
5ա սո՛ւ Երուսաղեմ:
բ 1 Նեփի 1.18–20:
գ Հայտ. ԻԱ.10, 3 Նեփի 20.29–36:

սաղեմ, քանի որ դա եղել էր հին ժամանակ. բայց այն պիտի կրկին կառուցվի և դառնա Տիրոջ մի սուրբ քաղաք. և այն պիտի կառուցվի Իսրայելի տան համար,

6 Եվ որ այս հողի վրա մի ^աՆոր Երուսաղեմ պիտի կառուցվի, ^բՀովսեփի սերնդի մնացորդի համար, բաներ, որոնց համար եղել է ^գօրինակ:

7 Քանզի, ինչպես Հովսեփն իր հորը բերեց ներքև՝ ^աԵգիպտոսի երկիրը, և այսպես, նա մահացավ այնտեղ. հետևաբար, Տերը Երուսաղեմի հողից դուրս բերեց Հովսեփի սերնդի մի մնացորդի, որպեսզի ինքը ողորմած լինի Հովսեփի սերնդի հանդեպ, որպեսզի նրանք ^բչկորչեն, ճիշտ ինչպես նա ողորմած եղավ Հովսեփի հոր հանդեպ, որ նա չկորչի:

8 Ուստի, Հովսեփի տան մնացորդը կհաստատվի այս ^աԵրկրի վրա. և այն կլինի նրանց ժառանգության հողը. և նրանք, հին Երուսաղեմի նման, Տիրոջ համար մի սուրբ քաղաք կկառուցեն. և նրանք այլևս ^բչեն ձուլվի, մինչև որ վերջը գա, երբ երկիրն անցնի:

9 Եվ կլինի մի ^աՆոր երկիրք և մի նոր երկիր. և նրանք նման կլինեն հնին, բացառությամբ, որ հիմն անցած կլինի, և բոլոր բաները դարձած կլինեն նոր:

10 Եվ հետո կգա Նոր Երուսաղեմը. և օրհնված են նրանք, ովքեր

կրնակվեն այնտեղ, քանզի այդ նրանք են, որոնց հանդերձները ^աճերմակ են Գառի արյան միջոցով. և այդ նրանք են, ովքեր համարվում են Հովսեփի սերնդի թվում, ովքեր Իսրայելի տնից էին:

11 Եվ հետո կգա նաև հին Երուսաղեմը. և դրա բնակիչները, օրհնված են նրանք, քանզի նրանք մաքրվել են Գառի արյունով. և այդ նրանք են, ովքեր ցրվել էին ու ^ահավաքվել աշխարհի չորս կողմերից և ^բհյուսիսի երկրներից, և մասնակիցներն են ուխտի կատարման, որն Աստված արեց իրենց հոր՝ ^գԱբրահամի հետ:

12 Եվ երբ այս բաները գան, կիրականանա սուրբ գիրքը, որն ասում է՝ կլինեն այնպիսիք, որ ^աառաջինն էին, ովքեր կդառնան վերջինը. և կլինեն այնպիսիք, որ վերջինն էին, ովքեր կդառնան առաջինը:

13 Եվ ես պատրաստվում էի գրել ավելին, բայց ինձ արգելվեց. բայց մեծ և հրաշալի էին Եթերի մարգարեությունները. բայց և այնպես, նրան ոչինչ համարեցին և դուրս գցեցին. և ցերեկը նա թաքնվում էր ժայռի խոռոչում, իսկ գիշերը, նա գնում էր դուրս՝ տեսնելու այն բաները, որոնք պիտի գային ժողովրդի վրա:

14 Եվ մինչ նա բնակվում էր ժայռի խոռոչում, նա գիշերով գրեց իր հիշատակարանի մնացածը՝

6ա ՎևոՒ 42.9, 45.66–67, 84.2–5, ՀՀ 1.10:
բ սոՒ Հովսեփ՝ Հակոբի որդի:
գ Ալմա 46.24:
սոՒ Խոթիբդամշակա-նություն:
7ա ԾՆ. ԽՁ.2–7, ԽԷ.6:
բ 2 Նեփի 3.5:

8ա սոՒ Խոստացված երկիր:
բ Մոր. 10.31:
9ա Բ Գեա. Գ.10–13, Հայտ. ԲԱ.1, 3 Նեփի 26.3, ՎևոՒ 101.23–25:
10ա Հայտ. Է.14, 1 Նեփի 12.10–11, Ալմա 5.27:

11ա սոՒ Իսրայել – Իսրայելի ցրվելը:
բ ՎևոՒ 133.26–35:
գ սոՒ Աբրահամի ուխտը:
12ա Մար. Ժ.31, 1 Նեփի 13.42, Հակոբ 5.63, ՎևոՒ 90.9:

տեսնելով ավերածությունները, որոնք գալիս էին ժողովրդի վրա:

15 Եվ եղավ այնպես, որ այն նույն տարում, երբ նա դուրս էր գցվել ժողովրդի միջից, մի մեծ պատերազմ սկսվեց ժողովրդի մեջ, քանզի կային շատերը, ովքեր բարձրացան, ովքեր զորավոր մարդիկ էին, և ջանացին կործանել Կորիանթումբին իրենց ամբարշտության գաղտնի ծրագրերով, որոնց մասին խոսվել է:

16 Եվ այժմ Կորիանթումբը՝ ինքը ուսումնասիրած լինելով պատերազմի ողջ արվեստը և աշխարհի ողջ խորամանկությունը, ուստի նա ճակատամարտ տվեց նրանց, ովքեր ջանում էին կործանել իրեն:

17 Բայց նա չապաշխարեց, ոչ էլ նրա գեղեցիկ որդիներն ու դուստրերը. ոչ էլ Կոհորի գեղեցիկ որդիներն ու դուստրերը. ոչ էլ Կորիհորի գեղեցիկ որդիներն ու դուստրերը. և, ի վերջո, չկար ոչ մեկը գեղեցիկ որդիներից ու դուստրերից ողջ երկրի երեսին, որ ապաշխարեր իր մեղքերից:

18 Ուստի, եղավ այնպես, որ առաջին տարում, երբ Եթերը բնակվում էր ժայռի խոռոչում, եղան շատ մարդիկ, ովքեր սպանվեցին այն՝ գաղտնի խմբակցությունների սրով, որոնք կռվում էին Կորիանթումբի դեմ, որ կարողանային ձեռք բերել թագավորությունը:

19 Եվ եղավ այնպես, որ Կորիանթումբի որդիները շատ մարտնչեցին և շատ արյուն թափեցին:

20 Եվ երկրորդ տարում Տիրոջ խոսքը եկավ Եթերին, որ նա պիտի գնա և մարգարեանա

՝ Կորիանթումբին, որ եթե նա ապաշխարի, և ողջ նրա գերդաստանը, Տերը կտա նրան իր թագավորությունը և կխնայի ժողովրդին,

21 Հակառակ դեպքում նրանք կկործանվեն, և նրա ողջ գերդաստանը, բացի իրենից: Եվ նա միայն պիտի ապրի՝ տեսնելու իրականացումն այն մարգարեությունների, որոնք խոսվել էին՝ այդ երկիրը որպես ժառանգություն՝ մեկ ուրիշ ժողովրդի ստանալու վերաբերյալ. և Կորիանթումբը պիտի թողվեր նրանց կողմից. և ամեն հոգի պիտի կործանվեր, բացի՝ Կորիանթումբից:

22 Եվ եղավ այնպես, որ Կորիանթումբը չապաշխարեց, ոչ էլ իր գերդաստանը, ոչ էլ ժողովուրդը. և պատերազմները շղաղարեցին. և նրանք ջանում էին սպանել Եթերին, բայց նա փախավ նրանց առաջից և նորից թաքնվեց ժայռի խոռոչում:

23 Եվ եղավ այնպես, որ Սարեղը բարձրացավ, և նա նույնպես ճակատամարտ տվեց Կորիանթումբին. և նա ջարդեց նրան, այնպես որ երրորդ տարում, նա գերության բերեց նրան:

24 Եվ չորրորդ տարում, Կորիանթումբի որդիները ջարդեցին Սարեղին և կրկին նվաճեցին թագավորությունն իրենց հոր համար:

25 Արդ, մի պատերազմ սկսվեց ողջ երկրի երեսին, ամեն մարդ իր ավազակախմբով՝ կռվելով նրա համար, ինչ ինքը փափագում էր:

26 Եվ կային ավազակներ, և ի վերջո, ամեն ձևի ամբարշտություն, երկրի ողջ երեսին:

27 Եվ եղավ այնպես, որ Կորիանթումբը խիստ բարկացած

էր Սարեղի վրա, և նա գնաց նրա դէմ՝ մարտնչելու իր գորքերով. և նրանք հանդիպեցին մեծ բարկությամբ, և նրանք հանդիպեցին Գաղգաղա հովտում. և ճակատամարտը սաստիկ ծանրացավ:

28 Եվ եղավ այնպես, որ Սարեղը կռվեց նրա դէմ երեք օրվա ընթացքում: Եվ եղավ այնպես, որ Կորիանթումը ջարդեց նրան և հետապնդեց նրան, մինչև նա հասավ Հելլոնի տափաստանները:

29 Եվ եղավ այնպես, որ Սարեղը կրկին ճակատամարտ տվեց նրան տափաստաններում. և ահա, նա ջարդեց Կորիանթումը, և նրան կրկին ետ քշեց դեպի Գաղգաղայի հովիտը:

30 Եվ Կորիանթումը կրկին ճակատամարտ տվեց Սարեղին Գաղգաղայի հովտում, որում նա ջարդեց Սարեղին և սպանեց նրան:

31 Եվ Սարեղն ագրրից վիրավորեց Կորիանթումը, այնպես որ նա չգնաց կրկին ճակատամարտելու՝ երկու տարիների ընթացքում, ժամանակ, որի ընթացքում բոլոր մարդիկ երկրի երեսին արյուն էին հեղում, և չկար մեկը, որ զսպեր նրանց:

ԳԼՈՒԽ 14

Ժողովրդի անօրինությունն անեծք է բերում երկրի վրա – Կորիանթումը պատերազմում է ընդդէմ Գաղսաղի, հետո՝ ընդդէմ Լիբի, և հետո՝ ընդդէմ Սիզի – Արյունն ու կոտորածը պատում են երկիրը:

Եվ այժմ, ժողովրդի անօրինության պատճառով մի մեծ ՝ անեծք

եղավ ողջ երկրի վրա, այնպիսին, որ եթե մի մարդ դներ իր գործիքը կամ իր սուրն իր թարեքի վրա, կամ այն տեղում, որտեղ նա պահում էր դա, ահա, հաջորդ օրը, նա չէր կարողանա գտնել այն, այնքան մեծ էր անեծքը երկրի վրա:

2 Ուստի ամեն մարդ իր երկու ձեռքով կառչել էր նրան, ինչն իր սեփականն էր, և չէր կամենում ոչ պարտքով վերցնել, ոչ էլ կամենում էր պարտքով տալ. և ամեն մարդ պահում էր իր սրի բռնակն իր աջ ձեռքում՝ իր ունեցվածքի և իր սեփական կյանքի, իր կանանց ու երեխաների պաշտպանության համար:

3 Եվ այժմ, երկու տարի անց և Սարեղի մահից հետո, ահա, բարձրացավ Սարեղի եղբայրը և ճակատամարտեց Կորիանթումի դէմ, որում Կորիանթումը ջարդեց նրան և հետապնդեց մինչև Աբիսի անապատը:

4 Եվ եղավ այնպես, որ Սարեղի եղբայրը ճակատամարտեց նրադէմ Աբիսի անապատում. և ճակատամարտը սաստիկ ծանրացավ, և շատ հազարավորներ ընկան սրից:

5 Եվ եղավ այնպես, որ Կորիանթումը պաշարում դրեց անապատում. և Սարեղի եղբայրը զիշերով արշավեց անապատից դուրս և սպանեց Կորիանթումի գորքի մի մասին, քանի որ նրանք հարբած էին:

6 Եվ նա եկավ առաջ՝ դեպի Մորոնի երկիրը և նստեց Կորիանթումի գահին:

7 Եվ եղավ այնպես, որ Կորիանթումը իր բանակի հետ բնակվեց անապատում՝ երկու տարիների

ընթացքում, որի ժամանակ նա մեծ ուժ ստացավ իր բանակի համար:

8 Այժմ Սարեդի եղբայրը, որի անունը Գաղաադ էր, գաղտնի խմբակցությունների շնորհիվ, նույնպես մեծ ուժ ստացավ իր բանակի համար:

9 Եվ եղավ այնպես, որ նրա քահանայապետը սպանեց նրան, երբ նա նստած էր իր գահին:

10 Եվ եղավ այնպես, որ գաղտնի խմբակցություններից մեկը սպանեց նրան մի գաղտնի անցումում և ձեռք բերեց թագավորությունն իր համար. և նրա անունը Լիբ էր. և Լիբը մի հաղթանդամ մարդ էր, ավելի քան որևէ այլ մարդ՝ ողջ ժողովրդի մեջ:

11 Եվ եղավ այնպես, որ Լիբի առաջին տարում, Կորիանթումը մոտեցավ Մորոնի երկրին և ճակատամարտեց Լիբի դեմ:

12 Եվ եղավ այնպես, որ նա մարտնչեց Լիբի հետ, որի ժամանակ Լիբը զարկեց նրա բազկին, այնպես որ նա վիրավորվեց. այնուամենայնիվ, Կորիանթումրի բանակն առաջ նետվեց Լիբի վրա, այնպես որ նա փախավ դեպի ծովափի սահմանները:

13 Եվ եղավ այնպես, որ Կորիանթումը հետապնդեց նրան. և Լիբը ծովափին ճակատամարտ տվեց նրան:

14 Եվ եղավ այնպես, որ Լիբը զարկեց Կորիանթումրի բանակին, այնպես որ նրանք կրկին փախուստի դիմեցին դեպի Աքիսի անապատը:

15 Եվ եղավ այնպես, որ Լիբը հետապնդեց նրան, մինչև նա հասավ Ագոսի տափաստանները: Եվ Կորիանթումըն իր հետ վերցրել

էր բոլոր մարդկանց, երբ նա փախուստի դիմեց Լիբի առջևից, դեպի երկրի այն մասը, ուր նա փախչում էր:

16 Եվ երբ նա հասել էր Ագոսի տափաստանները, նա ճակատամարտեց Լիբի դեմ և զարկեց նրան, այնպես որ նա մեռավ. սակայն, Լիբի եղբայրը Կորիանթումրի դեմ եկավ նրա փոխարեն, և ճակատամարտը սաստիկ ծանրացավ, որի ժամանակ Կորիանթումը կրկին փախուստի դիմեց Լիբի եղբոր բանակի առջևից:

17 Արդ, Լիբի եղբոր անունը Սիզ էր: Եվ եղավ այնպես, որ Սիզը հետապնդեց Կորիանթումրին, և նա տապալեց շատ քաղաքներ, և նա սպանում էր թե՛ կանանց և թե՛ երեխաներին, և նա հրկիզում էր քաղաքները:

18 Եվ Սիզից մի վախ տարածվեց ողջ երկրով մեկ. այո, մի աղաղակ առաջ գնաց երկրով մեկ. Ո՞վ կարող է կանգնել Սիզի բանակի դեմ: Ահա, նա քշում-տանում է հողն իր առաջից:

19 Եվ եղավ այնպես, որ ժողովուրդը սկսեց հավաքվել միասին՝ գորբերով, ողջ երկրի երեսով մեկ:

20 Եվ նրանք բաժանվեցին. և նրանց մի մասը փախավ Սիզի բանակը, իսկ նրանց մի մասը փախավ Կորիանթումրի բանակը:

21 Եվ այնքան մեծ ու երկարատև էր եղել պատերազմը, և այնքան երկար էր եղել արյունահեղության ու կոտորածի տեսարանը, որ երկրի ողջ երեսը ծածկվել էր մեռածների՝ մարմիններով:

22 Եվ այնքան արագ ու սրընթաց էր պատերազմը, որ ոչ ոք չէր մնացել, որ թաղեր մեռելներին,

այլ նրանք արշավում էին առաջ՝ մի արյունահեղությունից մյուս արյունահեղությունը, թողնելով տղամարդկանց և կանանց և երեխաների մարմինները սփռված երկրի երեսին՝ կեր դառնալու մսի «որդերին»:

23 Եվ դրանց հոտը տարածվեց հեռու՝ երկրի երեսին, նույնիսկ ամբողջ երկրի երեսին. ուստի, ժողովուրդը ցերեկ ու գիշեր նեղվում էր դրանց գարշահոտությունից:

24 Այնուամենայնիվ, Սիզը չէր դադարում Կորիանթումրին հետապնդելը. քանզի նա երդվել էր վրեժ լուծել Կորիանթումրից իր եղբոր արյան համար, որը սպանվել էր, և Տիրոջ խոսքի համար, որը եկել էր Եթերին, որ Կորիանթումրը չպետք է ընկներ սրից:

25 Եվ այսպիսով մենք տեսնում ենք, որ Տերն այցելեց նրանց իր լիակատար ցամամբ, և նրանց ամբարշտությունն ու պղծությունն ենք ուղի էին պատրաստել նրանց հավիտենական կործանման համար:

26 Եվ եղավ այնպես, որ Սիզը հետապնդեց Կորիանթումրին դեպի արևելք, նույնիսկ մինչև ծովափի սահմանները, և այնտեղ նա երեք օրվա ընթացքում մարտնչեց Սիզի դեմ:

27 Եվ այնքան սարսափելի էր Սիզի զորքերի կործանումը, որ ժողովուրդը սկսեց վախենալ և սկսեց փախչել Կորիանթումրի զորքերի առաջից. և նրանք փախան Կորիհորի երկիրը և ոչընչացրեցին բնակիչներին իրենց առաջից, բոլոր նրանց, ովքեր չկամեցան միանալ իրենց:

28 Եվ նրանք խփեցին իրենց վրանները Կորիհորի հովտում. և

Կորիանթումրը խփեց իր վրանները Սուրի հովտում: Արդ Սուրի հովիտը Կոմնոր բլրի մոտ էր. ուստի, Կորիանթումրն ի մի հավաքեց իր զորքերը Կոմնորի բլրի վրա և փող փչեց Սիզի զորքերի համար՝ հրավիրելու նրանց առաջ՝ ճակատամարտելու:

29 Եվ եղավ այնպես, որ նրանք եկան առաջ, բայց կրկին ետ մղվեցին. և նրանք եկան երկրորդ անգամ, և նրանք կրկին ետ մղվեցին՝ երկրորդ անգամ: Եվ եղավ այնպես, որ նրանք եկան նորից՝ երրորդ անգամ, և ճակատամարտը սաստիկ ծանրացավ:

30 Եվ եղավ այնպես, որ Սիզը զարկեց Կորիանթումրին, այնպես որ նրան շատ խորը վերքեր հասցրեց. և Կորիանթումրը, արյուն կորցրած լինելով, նվաղեց և հեռու տարվեց, կարծես մեռած լինեք:

31 Արդ, տղամարդկանց, կանանց և երեխաների կորուստը երկու կողմից էլ այնքան մեծ էր, որ Սիզը հրամայեց իր մարդկանց, որ նրանք չհետապնդեն Կորիանթումրի զորքերին. ուստի, նրանք վերադարձան իրենց ճամբարը:

ԳԼՈՒԽ 15

Միլիոնավոր Հարեդացիներ սպանվում են ճակատամարտում – Սիզը և Կորիանթումրը բոլոր մարդկանց հավաքում են մահացու մարտի – Տիրոջ Հոգին դադարում է ճիզ թափել նրանց հետ – Հարեդացի ազգն ամբողջովին կործանվում է – Միայն Կորիանթումրն է մնում:

Եւ եղավ այնպես, երբ Կորիանթումրն ապաքինվեց իր վերքերից,

նա սկսեց հիշել այն Մխոսքերը, որոնք Եթերն ասել էր իրեն:

2 Նա տեսավ, որ արդեն իր ժողովրդից սրով սպանվել էին մոտ երկու միլիոն, և նա սկսեց իր սրտում վշտանալ. այդ, սպանվել էին երկու միլիոն զորավոր տղամարդիկ, և նաև նրանց կանայք և նրանց երեխաները:

3 Նա սկսեց ապաշխարել այն չարիքի համար, որ նա արել էր. նա սկսեց հիշել այն խոսքերը, որոնք խոսվել էին մարգարեների բերանով, և նա տեսավ, որ դրանք կատարվել էին մինչ այժմ, ամեն մասնիկը. և նրա հոգին սգում էր ու հրաժարվում մխիթարվել:

4 Եվ եղավ այնպես, որ նա մի նամակ գրեց Սիզին՝ կամենալով, որ նա խնայեր ժողովրդին, և նա, հանուն մարդկանց կյանքի, կիրառարվեր թագավորությունից:

5 Եվ եղավ այնպես, որ երբ Սիզը ստացավ նրա նամակը, նա մի նամակ գրեց Կորիանթումբին, որ եթե նա հանձնվեր, այնպես որ ինքը կարողանար սպանել նրան իր իսկ սրով, նա կխնայեր մարդկանց կյանքը:

6 Եվ եղավ այնպես, որ ժողովուրդը չապաշխարեց իր անօրինություններից. և Կորիանթումբի մարդիկ բարկության էին դրդվել Սիզի ժողովրդի դեմ. իսկ Սիզի ժողովուրդը բարկության էր դրդվել Կորիանթումբի ժողովրդի դեմ. ուստի, Սիզի ժողովուրդը ճակատամարտ տվեց Կորիանթումբի ժողովրդին:

7 Եվ երբ Կորիանթումբը տեսավ, որ ինքն ընկնելու վրա էր, նա կրկին փախուստի դիմեց Սիզի մարդկանց առաջից:

8 Եվ եղավ այնպես, որ նա եկավ Ռիփլիանկումբի ջրերի մոտ, որը թարգմանաբար նշանակում է՝ լայնարձակ կամ ամենին գերազանցող. ուստի, երբ նրանք եկան այս ջրերի մոտ, խփեցին իրենց վրանները. և Սիզը նույնպես խփեց իր վրանները նրանց մոտիկ. և ուստի, հաջորդ օրը նրանք եկան ճակատամարտելու:

9 Եվ եղավ այնպես, որ նրանք մղեցին մի շատ ծանր ճակատամարտ, որում Կորիանթումբը կրկին վիրավորվեց, և նա արյան կորստից նվաղեց:

10 Եվ եղավ այնպես, որ Կորիանթումբի զորքերը ճնշեցին Սիզի զորքերին, այնպես որ ջարդեցին նրանց և ստիպեցին նրանց փախչել իրենց առաջից. և նրանք փախան դեպի հարավ, և խփեցին իրենց վրանները մի վայրում, որը կոչվում էր Ագաթ:

11 Եվ եղավ այնպես, որ Կորիանթումբի բանակը խփեց իր վրանները Ռամա բլրի մոտ. և դա այն նույն բլուրն էր, որտեղ իմ հայր Մորմոնը՝ Մպահ տվեց Տիրոջը հիշատակարանները, որոնք սրբազան էին:

12 Եվ եղավ այնպես, որ նրանք երկրի ողջ երեսին ի մի հավաքեցին ամբողջ ժողովրդին, ովքեր չէին սպանվել, բացի Եթերից:

13 Եվ եղավ այնպես, որ Եթերը տեսավ ժողովրդի բոլոր արածները. և նա տեսավ, որ մարդիկ, ովքեր Կորիանթումբի կողմից էին, միացան Կորիանթումբի բանակին. իսկ մարդիկ, ովքեր Սիզի կողմից էին, միացան Սիզի բանակին:

14 Ուստի, նրանք չորս տարիների ընթացքում ի մի հավաքեցին

ժողովրդին, որ կարողանային բերել բույրքին, ուրբեր երկրի երեսին էին, և որ նրանք ստանային ողջ էիմ, և որ նրանք ստանային ողջ ինժը, ինչ հնարավոր էր ստանալ:

15 Եվ եղավ այնպես, որ երբ նրանք բույրն ի մի էին հավաքվել՝ ամեն մեկն այն բանակի հետ, որի հետ ինքը կամեցել էր, իրենց կանանց և իրենց երեխաների հետ՝ թե՛ տղամարդ, թե՛ կին և թե՛ երեխա, զինված լինելով պատերազմի զենքերով, ունենալով վահաններ և լանջապանակներ և սաղավարտներ, և հազնված լինելով պատերազմական ձևով, նրանք արշավեցին առաջ՝ ճակատամարտելու մեկը մյուսի դեմ. և նրանք մարտնչեցին ամբողջ այդ օրը և չհաղթեցին:

16 Եվ եղավ այնպես, որ երբ գիշեր եղավ, նրանք հոգնած էին, և հեռացան իրենց ճամբարները. և իրենց ճամբարները հեռանալուց հետո, նրանք հեծեժանք ու ողբ սկսեցին իրենց սպանված մարդկանց կորստի համար. և այնքան ուժեղ էին նրանց աղաղակները, նրանց հեծեժանքն ու ողբը, որ դրանք սաստիկ ծվատում էին օրը:

17 Եվ եղավ այնպես, որ հաջորդ օրը նրանք կրկին գնացին՝ ճակատամարտելու, և մեծ ու սարսափելի էր այդ օրը. այնուամենայնիվ, նրանք չհաղթեցին, և երբ կրկին գիշեր եկավ, նրանք իրենց աղաղակներով, և իրենց հեծեժանքներով ու ողբերով ծվատեցին օդն իրենց սպանված մարդկանց կորստի համար:

18 Եվ եղավ այնպես, որ Կորիանթումըրը նորից մի նամակ գրեց Սիզիլին՝ կամենալով, որ նա չգար՝ կրկին ճակատամարտելու, այլ որ

նա վերցնեք թագավորությունը և խնայեք մարդկանց կյանքը:

19 Բայց ահա, Տիրոջ Հոգին դադարել էր նրանց հետ ճիգ թափելուց, և Մատանան լիակատար գործություն ուներ մարդկանց սրտերի վրա. քանզի նրանք հանձնվել էին իրենց սրտերի կարծությանը և իրենց մտքերի կուրությանը, որ կործանվեին. ուստի, նրանք նորից գնացին ճակատամարտելու:

20 Եվ եղավ այնպես, որ նրանք մարտնչեցին ամբողջ այդ օրը, և երբ գիշերը եկավ, նրանք քնեցին իրենց սրերի վրա:

21 Եվ հաջորդ օրը նրանք մարտնչեցին, նույնիսկ մինչև գիշեր:

22 Եվ երբ եկավ գիշերը, նրանք ՚հարբած էին բարկությանը, ճիշտ ինչպես մարդ հարբած է լինում զինուց. և նրանք կրկին քնեցին իրենց սրերի վրա:

23 Եվ հաջորդ օրը նրանք կրկին մարտնչեցին. և երբ գիշեր եկավ, նրանք բույրն ընկել էին սրից, բացի հիսուններկուսից՝ Կորիանթումրի մարդկանցից, և վաթսուներկուսից՝ Սիզիլի մարդկանցից:

24 Եվ եղավ այնպես, որ նրանք այդ գիշերը քնեցին իրենց սրերի վրա, և հաջորդ օրը նրանք նորից մարտնչեցին, և ամբողջ այդ օրը նրանք իրենց գործությամբ մարտնչեցին իրենց սրերով և իրենց վահաններով:

25 Եվ երբ գիշեր եկավ, մնացել էին երեսուներկուսը՝ Սիզիլի մարդկանցից, և քսանևտըր՝ Կորիանթումրի մարդկանցից:

26 Եվ եղավ այնպես, որ նրանք կերան ու քնեցին՝ պատրաստվե-

լով մահվան հաջորդ օրը: Եվ նրանք հաղթանդամ և զորավոր մարդիկ էին, ինչ վերաբերում էր մարդկային ուժին:

27 Եվ եղավ այնպես, որ նրանք կովեցին երեք ժամվա ընթացքում, և նրանք նվաղեցին արյան կորստից:

28 Եվ եղավ այնպես, որ երբ Կորիանթուհի մարդիկ բավականաչափ ուժ վերգտան, որ կարողացան քայլել, նրանք հանուն իրենց կյանքի պատրաստվեցին փախչել. բայց ահա, Սիզը բարձրացավ, և նաև նրա մարդիկ, և նա իր ցասման մեջ երդվեց, որ սպանելու է Կորիանթուհին կամ մեռնելու է սրով:

29 Ուստի, նա հետապնդեց նրանց, և հաջորդ օրը նա հասավ նրանց. և նրանք կրկին կովեցին սրով: Եվ եղավ այնպես, որ երբ նրանք ՞բոլորն ընկել էին սրից, բացի Կորիանթուհից և Սիզից, ահա Սիզն արյան կորստից նվաղեց:

30 Եվ եղավ այնպես, որ երբ Կորիանթուհը հենվեց իր սրին,

այնպես որ մի քիչ հանգստացավ, նա կտրեց Սիզի գլուխը:

31 Եվ եղավ այնպես, որ Սիզի գլուխը կտրելուց հետո, Սիզը բարձրացավ իր ձեռքերի վրա և ընկավ. և այնուհետև, նա, շնչահեղձ լինելով, մահացավ:

32 Եվ եղավ այնպես, որ ՞Կորիանթուհին ընկավ գետնին և կարծես անկենդան դարձավ:

33 Եվ Տերը խոսեց Եթերի հետ և ասաց նրան. Գնա առաջ: Եվ նա գնաց առաջ ու տեսավ, որ Տիրոջ բոլոր խոսքերը կատարվել էին. և նա ավարտեց իր ՞հիշատակարանը. (և հարյուրերորդ մասն իսկ էս չեն գրել) և նա թաքցրեց դրանք այնպես, որ Լիմքիի մարդիկ գտան դրանք:

34 Արդ, վերջին խոսքերը, որոնք գրված են ՞Եթերի կողմից, սրանք են. Արդյոք Տերը կկամենա, որ ես փոխվեմ, թե մարմնում տանեմ Տիրոջ կամքը, նշանակություն չունի, եթե այնպես լինի, որ ես փրկվեմ Աստծո արքայությունում: Ամեն:

ՄՈՐՈՆԻԻ ԳԻՐՔԸ

ԳԼՈՒԽ 1

Մորոնին գրում է Լամանացիների բարօրության համար – Այն Նեփիացիները, որոնք չեն կամենում ուրանալ Քրիստոսին, մահվան են դատապարտվում: Մոտ 401–421թթ. Ք.ծ.հ.:

ԱՅԺՄ ես՝ ՞Մորոնիս, ավարտելով Հարեդի ժողովրդի հիշատակարանի կրճատելը, չէի կարծում, որ կգրեմ ավելին, բայց ես դեռ չեմ մահացել. և ես ինձ հայտնի չեմ դարձնում Լամանացիներին, որ չլինի թե նրանք կործանեն ինձ:

29ա Եթեր 13.20–21:
32ա Օմնի 1.20–22:
33ա Մոսիա 8.9,

Ալմա 37.21–31,
Եթեր 1.1–5:
34ա Եթեր 12.2:

[ՄՈՐՈՆԻ]
1 1ա սո՛ս Մորոնի՛ Մորոնի
որդի:

2 Քանզի ահա, նրանց ^ապատե-
րազմները խիստ կատաղի են մի-
նյանց միջև. և իրենց ատելության
պատճառով, նրանք մահվան են
^բդատապարտում յուրաքանչյուր
Նեփիացու, որը չի կամենում ու-
րանալ Քրիստոսին:

3 Եվ ես՝ Մորոնիս, չեմ կամենում
^աուրանալ Քրիստոսին. ուստի, ես
իմ իսկ կյանքի ապահովության
համար թափառում եմ, ուր որ
կարող եմ:

4 Ուստի, ես գրում եմ մի քանի
բան ևս, հակառակ նրա, ինչ ես
կարծում էի. քանզի ես կարծում
էի, որ այլևս չեմ գրելու. բայց ես
գրում եմ մի քանի բան ևս, որ-
պեսզի գուցե դրանք ինչ-որ մի օր՝
ապագայում, արժեքավոր լինեն
իմ եղբայրների՝ Լամանացիների
համար, Տիրոջ կամքի համաձայն:

ԳԼՈՒԽ 2

*Հիսուսը զորություն տվեց տասներ-
կու Նեփիացի աշակերտներին՝
շնորհելու Սուրբ Հոգու պարգևը:
Մոտ 401–421թթ. Ք.ծ.հ.:*

ՔՐԻՍՏՈՍԻ խոսքերը, որոնք նա
ասաց իր ^աաշակերտներին՝ այն
տասներկուսին, որոնց նա ընտրել
էր, երբ նա դրեց իր ձեռքերը
նրանց վրա,

2 Եվ նա կոչեց նրանց անունով՝
ասելով. Դուք պիտի զորավոր
աղոթքով կանչեք առ Հայրը՝ իմ
անունով. և այս անելուց հետո,
դուք ^ազորություն կունենաք, որ

նրան, ում վրա դուք կդնեք ձեր
^բձեռքերը, ^գդուք կշնորհեք Սուրբ
Հոգին. և իմ անունով դուք կշնոր-
հեք այն, քանզի այսպես են
անում իմ առաքյալները:

3 Արդ, Քրիստոսն ասաց այս
խոսքերը նրանց՝ առաջին անգամ
հայտնվելու ժամանակ. և բազմու-
թյունը չլսեց դա, բայց աշակերտ-
ները լսեցին դա. և բոլոր նրանց
վրա, որ նրանք ^ադրեցին իրենց
ձեռքերը, իջավ Սուրբ Հոգին:

ԳԼՈՒԽ 3

*Երեցները ձեռնադրմամբ կարգում
են քահանաներ և ուսուցիչներ: Մոտ
401–421թթ. Ք.ծ.հ.:*

ԱՅՆ ձևը, որով աշակերտները,
ովքեր կոչվում էին եկեղեցու
^աերեցներ, ^բկարգում էին քահա-
նաներ և ուսուցիչներ,

2 Հետո, երբ նրանք աղոթում էին
Հորը՝ Քրիստոսի անունով, դնում
էին իրենց ձեռքերը նրանց վրա և
ասում.

3 Հիսուս Քրիստոսի անունով ես
կարգում եմ քեզ քահանա (կամ
եթե ուսուցիչ՝ ես կարգում եմ քեզ
ուսուցիչ), քարոզելու ապաշխա-
րություն և մեղքերի ^աթողություն
Հիսուս Քրիստոսի միջոցով՝ հա-
վատքի տոկոսությանը առ նրա
անունը, մինչև վերջ: Ամեն:

4 Եվ այս ձևով էին նրանք քահա-
նաներ և ուսուցիչներ ^ակարգում,
մարդկանց համար Աստծո ^բպար-
գևների և կոչումների համաձայն.

2ա1 Նեփի 12.20–23:
բ Ավնա 45.14:
3ա Մատ. Ժ.32–33,
3 Նեփի 29.5:
2 1ա 3 Նեփի 13.25:
2ա սոս Զորություն:

բ սոս Զեռնադրություն:
գ 3 Նեփի 18.37:
3ա Գոր. ԺԹ.6:
3 1ա Ավնա 6.1:
սոս Երեց:
բ սոս Կարգել, Կարգում:

3ա սոս Մեղքերի
թողություն:
4ա Վևու 18.32, 20.60:
բ սոս Պարգև:

և նրանք կարգում էին նրանց Սուրբ Հոգու Պարությունները, որը նրանց մեջ էր:

ԳԼՈՒԽ 4

Բացատրվում է, թե ինչպես են երեցները և քահանաները սպասավորում հաղորդության հացը: Մոտ 401–421թթ. Ք.ծ.հ.:

ՆՐԱՆՑ Երեցների և քահանաների կողմից Քրիստոսի մարմինը և արյունը եկեղեցուն սպասավորելու ժամը. և նրանք սպասավորում էին այն՝ Քրիստոսի պատվիրանների համաձայն. ուստի, մենք գիտենք, որ ձեր ճիշտ է, և երեցը կամ քահանան մատակարարում էին այն,

2 Եվ նրանք ծնկի էին իջնում եկեղեցու հետ և աղոթում չորս Քրիստոսի անունով, ասելով.

3 Ո՛վ Աստված, Հայր Հավերժական, խնդրում ենք քեզ, քո Որդու՝ Հիսուս Քրիստոսի անունով, օրհնիր և սրբացրու այս հացը բոլոր նրանց հոգիների համար, ովքեր ճաշակում են այն. որ նրանք կարողանան ուտել, ի հիշատակ Որդու մարմնի, և վկայեն քեզ, ո՛վ Աստված, Հայր Հավերժական, որ նրանք հոժար են իրենց վրա վերցնել անունը քո Որդու և միշտ հիշել նրան և պահել նրա պատվիրանները, որոնք նա տվել է իրենց, որպեսզի նրանք նրա շնորհից միշտ իրենց հետ ունենան: Ամեն:

ԳԼՈՒԽ 5

Բացատրվում է հաղորդության գինու սպասավորման եղանակը: Մոտ 401–421թթ. Ք.ծ.հ.:

ԳԻՆՈՒՍ սպասավորման ժամը. Ահա, նրանք վերցնում էին զավաթը, և ասում.

2 Ո՛վ Աստված, Հայր Հավերժական, խնդրում ենք քեզ, քո Որդու՝ Հիսուս Քրիստոսի անունով, օրհնիր և սրբացրու այս գինին բոլոր նրանց հոգիների համար, ովքեր ընպում են այն, որ նրանք կարողանան անել այդ, ի հիշատակ Որդու արյան, որ հեղվել է իրենց համար. որ նրանք կարողանան վկայել քեզ, ո՛վ Աստված, Հայր Հավերժական, որ նրանք միշտ հիշում են նրան, որպեսզի նրանք նրա շնորհից իրենց հետ ունենան: Ամեն:

ԳԼՈՒԽ 6

Ապաշխարող անձինք մկրտվում են և ընկերակցվում – Եկեղեցու անդամները, ովքեր ապաշխարում են, ներվում են – Ժողովները ղեկավարվում են Սուրբ Հոգու զորությամբ: Մոտ 401–421թթ. Ք.ծ.հ.:

ԵՎ այժմ, ես խոսում եմ մկրտության վերաբերյալ: Ահա, երեցներ, քահանաներ և ուսուցիչներ էին մկրտվում. և նրանք չէին մկրտվում, մինչև առաջ չէին բերում վայել

4q 1 Նեփի 13.37, Մոր. 6.9:
4 1ա սուրբ Երեց:
բ 3 Նեփի 18.1–7:
գ ՎևոՒ 20.76–77:
3ա սուրբ Հաղորդություն:
բ Ղուկ. ԻԲ.19,
Ա Կոր. ԺԱ.23–24,

3 Նեփի 18.7:
գ սուրբ Հիսուս Քրիստոս – Հիսուս Քրիստոսի անունը մեզ վրա վերցնելը:
դ սուրբ Սուրբ Հոգի:
5 1ա 3 Նեփի 18.8–11, ՎևոՒ 20.78–79:

2ա ՎևոՒ 27.2–4:
սուրբ Հաղորդություն:
բ Ղուկ. ԻԲ.19–20,
Ա Կոր. ԺԱ.25:
6 1ա սուրբ Մկրտություն,
Մկրտել:

պտուղ, որ նրանք Քարժանի էին դրան:

2 Ոչ էլ նրանք ընդունում էին մկրտության որևէ մեկին, եթե նրանք առաջ չէին գալիս Մկտորված սրտով և փշրված հոգով և վկայում եկեղեցուն, որ նրանք, իսկապես, ապաշխարել էին բոլոր իրենց մեղքերից:

3 Եվ ոչ որ մկրտության չէր ընդունվում, մինչև նրանք իրենց վրա չէին Մվերցնում Քրիստոսի անունը՝ վճռականություն ունենալով ծառայել նրան մինչև վերջ:

4 Եվ հետո, երբ նրանք մկրտության էին ընդունվում, և ներգործվում ու Մնաքրվում էին Սուրբ Հոգու գորությամբ, նրանք համարվում էին Քրիստոսի եկեղեցու ժողովրդի թվում. և նրանց Քանունները գրի էին առնվում, որպեսզի հիշվեին և սնուցվեին Աստծո քարի խոսքով՝ պահելու նրանց ճշմարիտ ուղու վրա, շարունակ պահելու նրանց Պարթուն աղոթքում, Պապավինելով միմիայն Քրիստոսի արժանիքներին, որը նրանց հավատքի հեղինակն ու ամբողջացնողն էր:

5 Եվ Մեկեղեցին Քհաճախ հավաքվում էր՝ Պծոմ պահելու ու աղոթելու, և խոսելու մեկը մյուսի հետ, իրենց հոգիների բարօրության վերաբերյալ:

6 Եվ նրանք հաճախ հավաքվում

էին՝ ճաշակելու հացից և զինուց՝ ի հիշատակ Տեր Հիսուսի:

7 Եվ նրանք խիստ հեռուում էին, որ Մանօրինություն չլիներ իրենց մեջ. և ում որ հայտնաբերում էին անօրինություն գործելիս, և եկեղեցու Քերեք վկաներ դատապարտում էին նրանց Պերեցների առջև, և եթե նրանք չէին ապաշխարում, և չէին Պխոստովանում, նրանց անունները հջջվում էին, և նրանք չէին համարվում Քրիստոսի ժողովրդի թվում:

8 Բայց Մորքան հաճախ որ նրանք ապաշխարում էին ու ներում փնտրում, անկեղծ միտումով, նրանք Մներվում էին:

9 Եվ նրանց ժողովները Մղեկավարվում էին եկեղեցու կողմից՝ համաձայն Հոգու ներգործումների ձևին, և ՔՍուրբ Հոգու գորությամբ. քանզի, ինչպես որ Սուրբ Հոգու գորությունն առաջնորդում էր նրանց՝ լինելու դա քարոզելը, թե՛ հորդորելը կամ աղոթելը, թե՛ աղերսելը կամ երգելը, ճիշտ այդպես էլ արվում էր:

ԳԼՈՒԽ 7

Հրավեր է տրվում մտնելու Տիրոջ հանգիստը – Աղոթեք անկեղծ միտումով – Քրիստոսի Հոգին հնարավորություն է տալիս մարդկանց

<p>1բ սուր Արժանի, Արժանավորություն: 2ա սուր Կոտրված սիրտ: 3ա սուր Հիսուս Քրիստոս – Հիսուս Քրիստոսի անունը մեզ վրա վերցնելը: 4ա սուր Անարատ, Անարատություն: բ ՎևՈՒ 20.82: գ Ալմա 34.39, 3 Նեփի 18.15-18:</p>	<p>դ 2 Նեփի 31.19, ՎևՈՒ 3.20: ե Եբր. ԺԲ.2: 5ա սուր Հիսուս Քրիստոսի եկեղեցի: բ 3 Նեփի 18.22, 4 Նեփի 1.12, ՎևՈՒ 88.76: գ սուր Ծոմ, Ծոմապահություն: 7ա ՎևՈՒ 20.54: բ ՎևՈՒ 42.80-81:</p>	<p>սուր Վկա: գ Ալմա 6.1: սուր Երեց: դ սուր Խոստովանել, Խոստովանություն: ե Ել. ԼԲ.33, ՎևՈՒ 20.83: սուր Հեռացում: 8ա Մոսիա 26.30-31: բ սուր Ներել: 9ա ՎևՈՒ 20.45, 46.2: բ սուր Սուրբ Հոգի:</p>
--	--	---

տարբերել բարին չարից – Սատանան համոզում է մարդկանց ուրանալ Քրիստոսին և չարիք գործել – Մարգարեները հայտնում են Քրիստոսի գալուստը – Հավատքով են հրաշքներ գործվում և հրեշտակներ ծառայում – Մարդիկ պետք է հուսան հավերժական կյանքի համար և հարեն գթությանը: Մոտ 401–421թթ. Ք.ծ.հ.:

Եւ այժմ ես՝ Մորմնիս, գրում եմ իմ հոր՝ Մորմնի խոսքերից մի քանիսը, որոնք նա ասել էր՝ հավատքի, հույսի և գթության մասին. քանզի այս ձևով էր նա խոսել ժողովրդի հետ, երբ նա սովորեցնում էր նրանց ժողովարանում, որը նրանք կառուցել էին, որպես պաշտամունքի վայր:

2 Եվ այժմ ես՝ Մորմնոս, խոսում եմ ձեզ հետ, իմ սիրելի՛ եղբայրներ. և դա Հայր Աստծո շնորհով է, և մեր Տեր Հիսուս Քրիստոսի, և նրա սուրբ կամքով, ինձ պարզաձեռն նրա՝ Սկոչումի շնորհիվ, որ ինձ թույլ է տրվել խոսել ձեզ հետ այս պահին:

3 Ուստի, ես կկամենայի խոսել ձեզ հետ, որ եկեղեցուց եք, որ Քրիստոսի խաղաղ հետևորդներն եք, և որ ձեռք եք բերել բավականաչափ հույս, որի միջոցով, դուք, այս ժամանակից հետո, կարող եք մտնել Տիրոջ՝ հանգիստը, մինչև որ դուք նրա հետ հանգիստ առնեք երկնքում:

4 Եվ այժմ, իմ եղբայրներ, ես դատում եմ այս բաները ձեր մասին՝

մարդկանց զավակների հետ ձեր խաղաղ՝ ընթացքի պատճառով:

5 Քանզի ես հիշում եմ Աստծո խոսքը, որն ասում է. իրենց գործերով դուք պիտի՝ ճանաչեք նրանց. քանզի, եթե նրանց գործերը բարի լինեն, ուրեմն նրանք նույնպես բարի են:

6 Քանզի ահա, Աստված ասել է. մարդ, չար լինելով, չի կարող անել այն, ինչ բարի է. քանզի, եթե նա ընծա է մատուցում կամ Քաղոթում Աստծուն, եթե նա չի անում դա անկեղծ միտումով, դա նրան ոչ մի օգուտ չի տալիս:

7 Քանզի ահա, դա նրա համար արդարություն չի համարվում:

8 Քանզի ահա, եթե մարդ՝ չար լինելով, տալիս է ընծա, նա անում է դա Քղծկամությամբ. ուստի, դա համարվում է նրա համար նույնը, կարծես նա պահած լիներ ընծան. ուստի, նա համարվում է չար՝ Աստծո առաջ:

9 Եվ նմանապես չար է համարվում նաև մարդու համար, եթե նա աղոթի, բայց ոչ սրտի՝ անկեղծ միտումով. այո, և դա նրան ոչ մի օգուտ չի տա, քանզի Աստված այդպիսի ոչ մեկին չի ընդունում:

10 Ուստի, մարդ՝ չար լինելով, չի կարող անել այն, ինչ բարի է. ոչ էլ նա բարի ընծա կտա:

11 Քանզի ահա, դառն՝ աղբյուրը լավ ջուր չի կարող առաջ բերել. ոչ էլ լավ աղբյուրն առաջ կբերի դառը ջուր. ուստի, մարդ՝ դևի ծառա լինելով, չի կարող հետևել Քրիստոսին. և եթե նա Քհեռևի

7 1ա Ա Կոր. ԺԳ.1-13, Եթեր 12.3-22, 27-37, Մոր. 8.14, 10.20-23:
 2ա ՍՈՒ Կանչ, Աստծո կողմից կանչված, Կոչում:
 3ա ՍՈՒ Հանգիստ:

4ա Ա Հովի. Բ.6, ՎևոՒ 19.23:
 5ա 3 Նեփի 14.15-20:
 6ա Մատ. Է.15-18:
 7 Ալմա 34.28:
 սՈՒ Աղոթք:
 8ա Առակ. ԺԵ.8:

7 ՎևոՒ 64.34:
 9ա Հակ. Ա.6-7, Ե.16, Մոր. 10.4:
 11ա Հակ. Գ.11-12:
 7 Մատ. 9.24,
 2 Նեփի 31.10-13, ՎևոՒ 56.2:

Քրիստոսին, նա չի կարող լինել դևի ծառա:

12 Ուստի, բոլոր բաները, որոնք ՞բարի են, գալիս են Աստծուց. իսկ այն, ինչ ՞չար է, գալիս է դևից. քանզի դևը թշնամի է Աստծուն, և շարունակ կռվում է նրա դեմ, և հրավիրում է ու հրապուրում ի օմեղք, և շարունակ անելու այն, ինչ չար է:

13 Բայց ահա, այն, ինչ Աստծուց է, շարունակ հրավիրում և հրապուրում է անել բարիք. ուստի, ամեն բան, որ հրավիրում և ՞հրապուրում է անել բարիք, և սիրել Աստծուն, և ծառայել նրան, ՞ոգեշընչված է Աստծուց:

14 Ուստի, ուշք դարձրեք, իմ սիրելի՛ եղբայրներ, որ դուք չդատեք այն, ինչը որ ՞չարից է՝ Աստծուց լինի, կամ այն, ինչը որ բարի է և Աստծուց՝ դևից լինի:

15 Քանզի ահա, իմ եղբայրներ՛ր, ձեզ տրված է ՞դատել, որպեսզի դուք կարողանաք բարին տարբերել չարից. և դատելու ուղին այնքան պարզ է, որ դուք կարող եք տարբերել մի կատարյալ իմացությամբ, ինչպես ցերեկը խավար զիշերից:

16 Քանզի ահա, Քրիստոսի ՞ճոգին տրվում է ամեն մարդու, որպեսզի նա կարողանա բարին ՞տարբերել չարից. ուստի, ես ցույց եմ տալիս ձեզ դատելու ուղին. քանզի ամեն բան, որ հրավիրում

է անել բարիք, և համոզում է հավատալ Քրիստոսին, առաջանում է Քրիստոսի գորությամբ ու պարզևոյ. ուստի, դուք կարող եք կատարյալ իմացությամբ իմանալ՝ դա Աստծուց է:

17 Բայց ինչ բան, որ համոզում է մարդկանց գործել ՞չարիք, և չհավատալ Քրիստոսին, և ուրանալ նրան, և չծառայել Աստծուն, այդ դեպքում դուք կարող եք իմանալ մի կատարյալ իմացությամբ՝ դա դևից է. քանզի այս ձևով է դևը գործում, քանզի նա ոչ մի մարդու չի համոզում բարիք գործել, ո՛չ, ոչ մեկին. ո՛չ էլ նրա հրեշտակներն են անում այդ. ո՛չ էլ նրանք են անում այդ, ովքեր ենթարկվում են նրան:

18 Եվ այժմ, իմ եղբայրներ՛ր, տեսնելով, որ դուք գիտեք լույսը, որով դուք կարող եք դատել, լույս, որը Քրիստոսի ՞լույսն է, տեսե՛ք, որ դուք սխալ չդատեք. քանզի այն նույն ՞դատաստանով, որ դուք եք դատում, դուք ևս պիտի դատվեք:

19 Ուստի, ես աղաչում եմ ձեզ, եղբայրներ՛ր, որ դուք ջանասիրաբար քննեք Քրիստոսի ՞լույսով, որ կարողանաք բարին տարբերել չարից. և եթե դուք որդեգրեք այն ամենը, ինչ բարի է, և չդատապարտեք այն, դուք, անշուշտ, կլինեք Քրիստոսի ՞գավակը:

20 Եվ այժմ, իմ եղբայրներ՛ր, ինչպես է դա հնարավոր, որ դուք

<p>12ա Հակ. Ա.17, Ա Հովհ. Գ.1-2, Եբեր 4.12: բ Ալմա 5.39-42: գ Հել. 6.30: սո՛ր Մեղք: 13ա 2 Նեփի 33.4, Եբեր 8.26: բ սո՛ր Ոգեշնչում, Ոգեշնչել: 14ա Ես. Ե.20,</p>	<p>2 Նեփի 15.20: 15ա սո՛ր Չանազանելու պարզև: 16ա սո՛ր Խղմնտանք. Լույս, Քրիստոսի լույս: բ Ծն. Գ.5, 2 Նեփի 2.5, 18, 26, Մոսիա 16.3, Ալմա 29.5, Հել. 14.31: 17ա սո՛ր Մեղք:</p>	<p>18ա Մոսիա 16.9, Վևո՛ր 50.24, 88.7-13: սո՛ր Լույս, Քրիստոսի լույս: բ ՋՍԹ, Մատ. Է.1-2, Գուլ. 2.37, Հովհ. Է.24: 19ա Վևո՛ր 84.45-46: բ Մոսիա 15.10-12, 27.25: սո՛ր Աստծո որդիներն ու դուստրերը:</p>
---	---	--

կարողանաք որդեգրել այն ամենը, ինչ բարի է:

21 Եվ այժմ ես անդրադառնում եմ այն հավատքին, որի մասին ասացի, որ կխոսեմ. և ես կասեմ ձեզ ուղիւն, որով դուք կարող եք ընդունել այն ամենը, ինչ բարի է:

22 Քանզի ահա, Աստված, իմանալով բոլոր բաները, լինելով հավիտենականությունից հավիտենականություն, ահա, նա ՚հրեշտակներ ուղարկեց՝ սպասավորելու մարդկանց զավակներին, հայտնի դարձնելու Քրիստոսի գալստի վերաբերյալ. և Քրիստոսի միջոցով պիտի գա ամեն բարի բան:

23 Եվ Աստված իր իսկ բերանով նույնպես հայտարարեց մարգարեներին, որ Քրիստոսը պիտի գա:

24 Եվ ահա, եղան զանազան ուղիներ, որոնցով նա մարդկանց զավակներին հայտնեց բաներ, որոնք բարի են. և բոլոր բաները, որոնք բարի են, գալիս են Քրիստոսից. այլպես մարդիկ չընկած էին, և ոչ մի բարի բան չէր կարող գալ նրանց:

25 Ուստի, ՚հրեշտակների սպասավորումով, և ամեն խոսքով, որը դուրս էր եկել Աստծո բերանից, մարդիկ սկսեցին հավատք գործադրել առ Քրիստոս. և այսպես, հավատքով նրանք որդեգրեցին այն ամենը, ինչ բարի էր. և դա այդպես էր մինչև Քրիստոսի գալուստը:

26 Եվ հետո, երբ նա եկավ, այնուհետև էլ մարդիկ փրկվում էին հավատքով առ նրա անունը. և հավատքով նրանք դառնում են Աստծո որդիներ: Եվ այնպես

անկասկած, ինչպես ապրում է Քրիստոսը, նա ասել է այս խոսքերը մեր հայրերին՝ ասելով. ՚Ինչ էլ որ դուք խնդրեք չորք՝ իմ անունով, որը բարի է, հավատքով հավատալով, որ դուք կստանաք, ահա, դա կարվի ձեզ համար:

27 Ուստի, իմ սիրելի՛ եղբայրներ, մի՞թե ՚հրաշքները դադարել են, որովհետև Քրիստոսը համբարձվել է երկինք և նստել Աստծո աջ կողմում՝ ՚հայցելու չորից ողորմության իր իրավունքները, որոնք նա ունի մարդկանց զավակների հանդեպ:

28 Քանզի նա բավարարել է օրենքի պահանջները, և նա պահանջում է բոլոր նրանց, ովքեր հավատք ունեն առ նա. և նրանք, ովքեր հավատք ունեն առ նա, ՚կհարեն այն ամենին, ինչ բարի է. ուստի, նա ՚բարեխոսում է մարդկանց զավակների գործի համար. և նա հավերժորեն բնակվում է երկինքներում:

29 Եվ քանի որ նա արել է այս, իմ սիրելի՛ եղբայրներ, մի՞թե հրաշքները դադարել են: Ահա, ես ասում եմ ձեզ՝ Ո՛չ. ոչ էլ հրեշտակներն են դադարել մարդկանց զավակներին սպասավորելը:

30 Քանզի ահա, նրանք ենթարկվում են նրան՝ սպասավորելու համաձայն նրա հրամանի խոսքի, իրենց ցույց տալով նրանց, ովքեր ուժեղ են հավատքով և կայուն՝ մտքով, ամեն ձևի աստվածապաշտությամբ:

31 Եվ նրանց ծառայության պաշտոնն է՝ կանչել մարդկանց ապաշխարության, և իրականացնել ու

22ա ՄՈՐ Աստված, Աստվածագլուխ: ք Մովսես 5.58: ՄՈՐ Հրեշտակներ: 24ա 2 Նեփի 2.5:

25ա Ալմա 12.28–30: 26ա 3 Նեփի 18.20: ՄՈՐ Աղոթք: 27ա ՄՈՐ Հրաշք: ք Ես. ԾԳ.12,

Մոսիա 14.12: 28ա Հռոմ. ԺԲ.9, ՎևոՒ 98.11: ք Ա Հովի. Բ.1, 2 Նեփի 2.9: ՄՈՐ Բարեխոս:

կատարել գործը Հոր ուխտերի, որոնք նա արել է մարդկանց զավակների հետ՝ նախապատրաստելու ճանապարհը մարդկանց զավակների մեջ, հայտարարելով Քրիստոսի խոսքը Տիրոջ ընտրյալ անոթներին, որ նրանք կարողանան վկայություն տալ նրա մասին:

32 Եվ այդպես անելով, Տեր Աստված ճանապարհ է նախապատրաստում, որ մնացած մարդիկ «հավատք ունենան առ Քրիստոս, որպեսզի Սուրբ Հոգին տեղ ունենա նրանց սրտերում՝ համաձայն նրա զորության. և այս ձևով է Հայրն իրագործում ուխտերը, որոնք նա արել է մարդկանց զավակներին:

33 Եվ Քրիստոսն ասել է. «Եթե դուք հավատք ունենաք առ ինձ, ապա զորություն կունենաք՝ անելու ինչ որ քննատակահարմար է ինձ:

34 Եվ նա ասել է. «Ապաշխարեք, աշխարհի բոլոր ծայրեր, և եկեք ինձ մոտ, և մկրտվեք իմ անունով, և ունեցեք հավատք առ ինձ, որ դուք կարողանաք փրկվել:

35 Եվ այժմ, իմ սիրելի՛ եղբայրներ, եթե լինի այնպես, որ այս բաները ճշմարիտ լինեն, որոնք ես խոսեցի ձեզ հետ, և Աստված ցույց է տալու ձեզ՝ զորությամբ ու մեծ փառքով, վերջին քորը, որ դրանք ճշմարիտ են, և եթե դրանք ճշմարիտ են, մի՞թե հրաշքների օրը դադարել է:

36 Կամ մի՞թե հրեշտակները դադարել են հայտնվել մարդկանց զավակներին: Կամ մի՞թե նա

նրանցից «ետ է պահել Սուրբ Հոգու զորությունը: Կամ մի՞թե նա կանի դա, քանի դեռ ժամանակը կտևի, կամ երկիրը կանգուն կլինի, կամ նրա երեսին մեկ մարդ կլինի՝ փրկվելու:

37 Ահա, ես ասում եմ ձեզ՝ Ո՛չ. քանզի հավատքով է, որ «հրաշքներ են գործվում. և հավատքով է, որ հրեշտակներ են հայտնվում և սպասավորում մարդկանց. ուստի, եթե այս բաները դադարել են, վա՛յ լինի մարդկանց զավակներին, քանզի դա քանհավատության պատճառով է, և բոլորը զուր է:

38 Քանզի ոչ մի մարդ չի կարող փրկվել, համաձայն Քրիստոսի խոսքերի, եթե նրանք հավատք չունենան առ նրա անունը. ուստի, եթե այս բաները դադարել են, ապա հավատքը նույնպես դադարել է. և սուկալի է մարդկանց վիճակը, քանզի նրանք այնպես են, կարծես ոչ մի փրկագնում չի արվել:

39 Բայց, ահա, իմ սիրելի՛ եղբայրներ, ես դատում եմ ձեր մասին ավելի լավ բաներ, քանզի ես դատում եմ, որ դուք ունեք հավատք առ Քրիստոս, ձեր հեզության պատճառով. քանզի եթե դուք չունենաք հավատք առ նա, ապա դուք «պիտանի չեք՝ համարվելու նրա եկեղեցու ժողովրդի թվում:

40 Եվ բացի դրանից, իմ սիրելի՛ եղբայրներ, ես կկամենայի խոսել ձեզ հետ «հույսի վերաբերյալ: Ի՞նչպես կարող եք դուք ձեռք բերել հավատք, եթե դուք չունենաք հույս:

32ա սուրբ Հավատք:
33ա Մատ. ԺԷ.19:
բ ՎևոՒ 88.64-65:
34ա 3 Նեփի 27.20,
Եթեր 4.18:
35ա 2 Նեփի 33.11:

բ ՎևոՒ 35.8:
36ա Մոր. 10.4-5, 7, 19:
37ա Մատ. ԺԳ.58,
Մորմ. 9.20,
Եթեր 12.12-18:
բ Մոր. 10.19-24:

39ա սուրբ Արժանի,
Արժանավորություն:
40ա Եթեր 12.4:
սուրբ Հույս:

41 Եվ ի՞նչն է, որի համար դուք պիտի ^ահույս ունենաք: Ահա, ես ասում եմ ձեզ, որ դուք կունենաք ^բհույս, Քրիստոսի քավության և նրա հարության գործության միջոցով, բարձրացվելու դեպի հավերժական ^գկյանք, և դա՝ ձեր հավատքի շնորհիվ առ նա՝ խոստումի համաձայն:

42 Ուստի, եթե մարդ ունի ^ահավատք, նա ^բանպայման պետք է ունենա հույս. քանզի առանց հավատքի չի կարող լինել որևէ հույս:

43 Եվ դարձյալ, ահա ես ասում եմ ձեզ, որ նա չի կարող ունենալ հավատք և հույս, եթե նա չլինի ^ահեզ և սրտով խոնարհ:

44 Եթե այդպես է, նրա ^ահավատքը և հույսը գուր է, քանզի ոչ մեկն ընդունելի չէ Աստծո առաջ, բացի հեզից և սրտով խոնարհից. և եթե մարդ հեզ է ու սրտով խոնարհ, և ^բխոստովանում է Սուրբ Հոգու գործությամբ, որ Հիսուսը Քրիստոսն է, նա անպայման պետք է ունենա գթություն. քանզի եթե նա չունի գթություն, նա ոչինչ է. ուստի, նա անպայման պետք է ունենա գթություն:

45 Եվ ^ագթությունը երկայնամիտ է և բարի, չի ^բնախանձում, փքված չէ, իրենը չի փնտրում, չի գրգռվում հեշտորեն, չարը չի մտածում և չի հրճվում անօրինությանբ, այլ հրճվում է ճշմարտությամբ, տանում է ամեն բան, հավատում է

ամեն բանի, ամեն բանի հույս ունի, ամեն բանի համբերում է:

46 Ուստի, իմ սիրելի՛ եղբայրներ, եթե դուք չունեք գթություն, դուք ոչինչ եք, քանզի գթությունը երբեք չի խափանվում: Ուստի, հարե՛ք գթությանը, որը բոլորից մեծ է, քանզի բոլոր բաները պիտի խափանվեն,

47 Բայց ^ագթությունը Քրիստոսի մաքուր ^բսերն է, և այն տևում է հավերժ. և ով որ օժտված լինի դրանով վերջին օրը, նրա համար լավ կլինի:

48 Ուստի, իմ սիրելի՛ եղբայրներ, ^աաղոթեք Հորը, սրտի ողջ կորովով, որ դուք կարողանաք լցված լինել այդ սիրով, որը նա շնորհել է բոլոր նրանց, ովքեր նրա Որդու՝ Հիսուս Քրիստոսի ճշմարիտ ^բհետևողներն են. որ դուք կարողանաք դառնալ Աստծո որդիները. որպեսզի երբ նա հայտնվի, մենք ^գլինենք նրա մեան. քանզի մենք պիտի տեսնենք նրան, ինչպես որ ինքն է. որ մենք կարողանանք ունենալ այդ հույսը. որ մենք կարողանանք ^դմաքրվել, ճիշտ ինչպես նա է մաքուր: Ամեն:

ԳԼՈՒԽ 8

Փոքր երեխաների մկրտությունը չար պղծություն է – Փոքր երեխաները կենդանի են Քրիստոսով Քա-

41ա Վև.ՈՒ 138.14:
բ Տիտոս Ա.2, Հակոբ 4.4, Ալմա 25.16, Մոր. 9.25:
գ սուր Հավերժական կյանք:
42ա սուր Հավատք:
բ Մոր. 10.20:
43ա սուր Հեզ, Հեզություն:
44ա Ալմա 7.24, Եթեր 12.28-34:

բ Ղուկ. ԺԲ.8-9:
սուր Խոստովանել, Խոստովանություն. Վկայություն:
45ա Ա Կոր. ԺԳ.1-13:
բ սուր Նախանձել:
47ա 2 Նեփի 26.30:
սուր Գթություն:
բ Հես. ԻԲ.5:
սուր Սեր:
48ա սուր Աղոթք:

բ սուր Հիսուս Քրիստոս – Հիսուս Քրիստոսի օրինակը. Հնազանդություն, Հնազանդ, Հնազանդվել:
գ Ա Հովհ. Գ.1-3, 3 Նեփի 27.27:
դ 3 Նեփի 19.28-29:
սուր Անարատ, Անարատություն:

վոթյան շնորհիվ – Հավատքը, ապաշխարությունը, հեգությունը և սրտի խոնարհությունը, Սուրբ Հոգին ստանալը և մինչև վերջ համբերելը փրկության են առաջնորդում: Մոտ 401-421թթ. Ք.ծ.հ.:

ՆԱՄԱԿ, գրված ինձ՝ Մորոնիիս, իմ Պապի Մորմոնից. և այն գրվել էր ինձ, շուտով, իմ ծառայության կանչվելուց հետո: Եվ այս ձևով էր նա գրել ինձ՝ ասելով.

2 Իմ սիրելի՛ որդի Մորոնի, ես անչափ հրճվում եմ, որ Տեր Հիսուս Քրիստոսը հիշում է քեզ և կանչել է քեզ իր ծառայությանը և իր սուրբ աշխատանքին:

3 Ես միշտ հիշում եմ քեզ իմ աղոթքներում, շարունակ աղոթելով Հայր Աստծուն, իր Սուրբ Չավակ Հիսուսի անունով, որ նա, իր անսահման Պարությանը ու Զնորհով, պահի քեզ առ իր անունը հավատքի տոկունությանը, մինչև վերջ:

4 Եվ այժմ, որդի՛ս, ես խոսում եմ քեզ հետ այն բանի վերաբերյալ, ինչն ինձ չափազանց վշտացնում է. բանգի ինձ վշտացնում է, որ Պիճաբանություններ պիտի բարձրանային ձեր մեջ:

5 Քանգի, եթե ճշմարտությունն են իմացել, ձեր մեջ վիճաբանություններ են եղել՝ ձեր փոքր երեխաների մկրտության վերաբերյալ:

6 Եվ այժմ, որդի՛ս, ես փափագում եմ, որ դու ջանասիրաբար աշխատես, որպեսզի այս կոպիտ

սխալը վերացվի ձեր միջից. քանգի, այդ նպատակի համար եմ ես գրել այս նամակը:

7 Քանգի անմիջապես հետո, երբ իմացա այս բաները քեզանից, ես տեղեկացա Տիրոջից այդ հարցի վերաբերյալ: Եվ Տիրոջ Պատարի եկավ ինձ Սուրբ Հոգու գորությանը՝ ասելով.

8 Լսեք Քրիստոսի՛ ձեր Քալչի՛ ձեր Տիրոջ և ձեր Աստծո խոսքերը: Ահա, ես եկա աշխարհ՝ ապաշխարության կանչելու ոչ թե արդարների, այլ մեղավորներին. Պողոտը բժշկի կարիք չունեն, այլ նրանք, որ հիվանդ են. ուստի, փոքր Պերիսաները Պողոտ են, քանգի նրանք ընդունակ չեն Պմեղք գործելու. ուստի, ՊԱդամի անեծքը նրանցից վերցված է ինձանով, այնպես որ այն գորություն չունի նրանց վրա. և Պժլիատության օրենքը խափանվում է ինձանով:

9 Եվ այս ձևով Սուրբ Հոգին հայտնեց ինձ Աստծո խոսքը. ուստի, սիրելի՛ որդիս, ես գիտեմ, որ դա լուրջ ծաղր է Աստծո առաջ, որ դուք մկրտեք փոքր երեխաներին:

10 Ահա, ես ասում եմ ձեզ, որ այս բանը պիտի դուք սովորեցնեք՝ ապաշխարություն և մկրտություն նրանց, ովքեր Պպատասխանատու են և ընդունակ մեղք գործելու. այո, սովորեցրեք ծնողներին, որ նրանք պետք է ապաշխարեն և մկրտվեն, և խոնարհեցնեն իրենց, ինչպես իրենց փոքր Պերիսաները,

8 1ա ՄՄ 1.1:
3ա Մոսիա 4.11:
բ սո՛ւ Շնորհ:
4ա 3 Նեփի 11.22, 28, 18.34:
7ա սո՛ւ Աստծո խոսքը:
8ա Մար. Բ.17:
բ Մար. Ժ.13-16:

գ Մոսիա 3.16, ՎեՌԻ 74.7:
դ սո՛ւ Մեղք:
ե 2 Նեփի 2.25-27:
սո՛ւ Ադամի և Եվայի անկումը:
զ ԾՆ. ԺԷ.10-11:
սո՛ւ Թլփատություն:

10ա սո՛ւ Հաշիվ, Պատասխանատու, Պատասխանատվություն:
բ սո՛ւ Երեխա, Երեխաներ. Խոնարհ, Խոնարհություն:

և նրանք բոլորը պիտի փրկվեն իրենց փոքր երեխաների հետ:

11 Իսկ նրանց փոքր տերեխաները կարիք չունեն ապաշխարության, ոչ էլ մկրտության: Ահա, մկրտությունն ապաշխարության համար է՝ ի կատարումն պատվիրանների՝ մեղքերի թողության համար:

12 Բայց փոքր տերեխաները կենդանի են Քրիստոսով, նույնիսկ աշխարհի հիմնադրումից ի վեր. եթե ոչ, Աստված կողմնապահ Աստված է, և նաև փոփոխական Աստված, և մարդկանց հանդեպ՝ թաշառ. քանզի, որքան շատ փոքր երեխաներ են մահացել առանց մկրտության:

13 Ուստի, եթե փոքր երեխաները չկարողանային փրկվել առանց մկրտության, նրանք պետք է գնացած լինեին մի անվերջ դժոխք:

14 Ահա, ես ասում եմ ձեզ, նա, ով կարծում է, որ փոքր երեխաները կարիք ունեն մկրտության, դառը մաղձի և անօրինության կապանքների մեջ է. քանզի նա չունի ո՛չ տալիս, ո՛չ հույս, ո՛չ էլ գթություն. ուստի, եթե նա մեռնի, մինչ այդ մտքին է, նա պետք է վար գնա դժոխք:

15 Քանզի սուկալի ամբարըշտություն է կարծել, որ Աստված փրկում է մի երեխայի՝ մկրտության շնորհիվ, իսկ մյուսը պետք

է կորչի, որովհետև նա չունի մկրտություն:

16 Վա՛յ լինի նրանց, որ կխեղաբյուրեն Տիրոջ ճանապարհներն այս ձևով, քանզի նրանք կկորչեն, եթե չապաշխարեն: Ահա, ես խոսում եմ համարձակորեն՝ տխրաբանություն ունենալով Աստծուց. և ես չեմ վախենում՝ ինչ կարող է անել մարդը. քանզի կատարյալ թերեքստություն է ամեն վախ:

17 Եվ ես լցված եմ գթությամբ, որը հավիտենական սեր է. ուստի, բոլոր երեխաները մեկ են ինձ համար. ուստի, ես սիրում եմ փոքր երեխաներին մի կատարյալ սիրով. և նրանք բոլորը մեկ են և մասնակիցներ են փրկության:

18 Քանզի ես գիտեմ, որ Աստված կողմնապահ Աստված չէ, ոչ էլ փոփոխական էակ. այլ նա տանջվող է՝ ողջ հավերժությունից ողջ հավերժություն:

19 Փոքր տերեխաները չեն կարող ապաշխարել. ուստի, դա սուկալի ամբարըշտություն է՝ ուրանալ Աստծո մաքուր ողորմությունները նրանց հանդեպ, քանզի նրանք բոլորը կենդանի են նրանում՝ նրա ողորմության շնորհիվ:

20 Եվ նա, ով ասում է, որ փոքր երեխաները կարիք ունեն մկրտության, ուրանում է Քրիստոսի ողորմությունները, և անարգում նրա տալիսությունն ու փրկագնելու նրա գործությունը:

11ա սուր Մկրտություն, Մկրտել – Մկրտության համար անհրաժեշտ պայմանները. Երեխա, Երեխաներ:
բ սուր Մեղքերի թողություն:
12ա Վևուխ 29.46–47, 93.38:
բ Եփես. 2.9, 2Նեփի 26.33,

Վևուխ 38.16:
14ա Ա Կոր. ԺԳ.1–13, Եթեր 12.6, Մոր. 7.25–28, 10.20–23:
16ա սուր Իշխանություն:
բ սուր Սեր:
գ Ա Հովհ. Դ.18:
17ա սուր Գթություն:
բ Մոսիա 3.16–19:

18ա Ավմա 7.20, Մորմ. 9.9:
սուր Աստված, Աստվածալուխ:
բ Մոր. 7.22:
19ա Ղուկ. ԺԸ.15–17:
բ սուր Ողորմած, Ողորմություն:
20ա սուր Քավել, Քավություն, Փրկագնան ծրագիր:

21 Վա՛յ այդպիսիներին, քանզի նրանք մահվան, ^ադժոխքի և ^բանվերջ տանջանքի վտանգի տակ են: Ես խոսում եմ համարձակորեն. Աստված է պատվիրել ինձ: Լսե՛ք և ուշադրություն դարձրեք դրանց, այլապես դրանք կկանգնեն ձեր դեմ՝ Քրիստոսի ^գատյանում:

22 Քանզի ահա, բոլոր փոքր երեխաները ^ակենդանի են Քրիստոսով, և նաև բոլոր նրանք, ովքեր առանց ^բօրենքի են: Քանզի ^գփրկագնման գործությունը գալիս է բոլոր նրանց վրա, ովքեր չունեն օրենք. ուստի նա, որ դատապարտված չէ, կամ նա, որ ոչ մի դատապարտության տակ չէ, չի կարող ապաշխարել. և այդպիսիների համար մկրտությունը ոչնչով օգտակար չէ,

23 Այլ այն ծաղր է Աստծո առաջ, ուրանալով Քրիստոսի ողորմությունները, և նրա Սուրբ Հոգու գործությունը, և վստահությունը դնելով ^ամեռած գործերի վրա:

24 Ահա, որդի՛ս, այս բանը չպետք է լինի. քանզի ^աապաշխարությունը նրանց համար է, որոնք դատապարտության տակ են և խախտած օրենքի անեծքի տակ:

25 Եվ ^աապաշխարության առաջին պտուղներից է ^բմկրտությունը. և մկրտությունը գալիս է հավատ-

քով պատվիրանների կատարման համար. և պատվիրանները կատարելը բերում է մեղքերի ^գթողություն.

26 Եվ մեղքերի թողությունը բերում է ^ահեզություն և սրտի խոնարհություն. և հեզության ու սրտի խոնարհության շնորհիվ գալիս է ^բՍուրբ Հոգու այցելությունը, ^գՄխիթարիչ, որը լցնում է ^դհույսով և կատարյալ ^եսիրով, սեր, որը համբերում է ^զջանասիրությամբ առ ^էաղոթքը, մինչև որ կգա վերջը, երբ բոլոր ^զսրբերը կքնակվեն Աստծո հետ:

27 Ահա, որդի՛ս, ես քեզ կրկին կգրեմ, եթե շուտով դուրս չգամ Լամանացիների դեմ: Ահա, այս ազգի կամ Նեփիացիների ^ահպարտությունը նրանց հասցնում է կործանման, եթե նրանք չապաշխարեն:

28 Աղոթի՛ր նրանց համար, որդի՛ս, որպեսզի ապաշխարություն գա նրանց: Բայց ահա, ես վախենում եմ, որ չլինի թե Հոգին դադարել է նրանց հետ ^աճիգ թափելուց. և երկրի այս մասում նրանք նույնպես ջանում են տապալել ողջ գործությունն ու իշխանությունը, որը գալիս է Աստծուց. և նրանք ^բուրանում են Սուրբ Հոգին:

29 Եվ այսպիսի մեծ գիտելիքը մերժելուց հետո, որդի՛ս, նրանք

21ա սուր Գժոխք:
բ Հակոբ 6.10,
Մոսիա 28.3,
Վե՛նի 19.10-12:
գ սուր Հիսուս Քրիստոս -
Գատավոր:
22ա սուր Փրկություն -
Երեխաների
փրկությունը:
բ Գոր. Ժէ.30,
Վե՛նի 76.71-72:
գ սուր Փրկագնել,
Փրկագնված,

Փրկագնում:
23ա Վե՛նի 22.2:
24ա սուր Ապաշխարել,
Ապաշխարություն:
25ա սուր Մկրտություն,
Մկրտել - Մկրտության
համար անհրաժեշտ
պայմանները:
բ Մովսես 6.58-60:
գ Վե՛նի 76.52:
սուր Մեղքերի
թողություն:
26ա սուր Հեզ, Հեզություն:

բ սուր Սուրբ Հոգի:
գ սուր Մխիթարիչ:
դ սուր Հույս:
ե Ա Պետ. Ա.22,
1 Նեփի 11.22-25:
զ սուր Ջանասիրություն:
է սուր Աղոթք:
ը սուր Սուրբ:
27ա Վե՛նի 38.39:
սուր Հպարտություն:
28ա Մորմ. 5.16:
բ Ալմա 39.6:
սուր Աններելի մեղք:

շուտով պիտի կործանվեն՝ ի կատարումն մարգարեությունների, որոնք խոսվել էին մարգարեների կողմից, ինչպես նաև ի կատարումն իր՝ մեր Փրկչի խոսքերի:

30 Մնաս բարով, որդի՛ս, մինչև որ կրկին կգրեն կամ կհանդիպեն քեզ: Ամեն:

Մորմոնի երկրորդ նամակն իր որդուն՝ Մորմոնիին:

Ընդգրկելով գլուխ 9:

ԳԼՈՒԽ 9

Ինչպես Նեփիացիները, այնպես էլ Լամանացիներն անտալ են ու այլատերված – Նրանք տանջում են և սպանում մեկը մյուսին – Մորմոնն աղոթում է, որ շնորհը և բարությունը հանգչի Մորմոնի վրա հավիտյան: Մոտ 401–421թթ. Ք.ծ.հ.:

ԻՄ սիրելի՛ որդի, ես կրկին գրում եմ քեզ, որպեսզի իմանաս, որ ես դեռ կենդանի եմ. բայց ես որոշ բան գրում եմ այն մասին, ինչը ցավալի է:

2 Քանզի ահա, ես ծանր ճակատամարտ մղեցի Լամանացիների դեմ, որում մենք չհաղթեցինք. և Արքեանթուսը սրից ընկավ, և Ղուրամն ու Եմրոնը՝ նույնպես. այո, և մենք կորցրեցինք մեր ընտիր մարդկանցից շատերին:

3 Եվ այժմ ահա, որդի՛ս, ես վախենում եմ, որ չլինի թե Լամանացիները կործանեն այս ժողովրդին. քանզի նրանք չեն ապաշխարում, և Սատանան շարունակ նրանց

բարկության է դրդում մեկը մյուսի դեմ:

4 Ահա, ես շարունակ տքնում եմ նրանց հետ. և երբ ես խոսում եմ Աստծո խոսքը՝ Մխտությանը, նրանք դողում են և բարկանում իմ դեմ. և եթե ես չեմ գործածում խստություն, նրանք կարծրացնում են իրենց սրտերը դրա դեմ. ուստի, ես վախենում եմ, որ չլինի թե Տիրոջ Հոգին դադարել է նրանց հետ՝ ճզգնելուց:

5 Քանզի այնպես սաստիկ են նրանք բարկանում, որ ինձ թվում է, որ նրանք վախ չունեն մահից. և նրանք կորցրել են իրենց սերը մեկը մյուսի հանդեպ. և նրանք՝ ծարավ են արյան և շարունակ վրեժ են լուծում:

6 Եվ այժմ, սիրելի՛ որդիս, չնայած նրանց կարծրասրտությանը, եկ գործենք՝ ջանասիրաբար. քանզի եթե մենք դադարենք՝ գործելուց, մենք պիտի բերվենք դատապարտության տակ. քանզի մենք գործ ունենք կատարելու, մինչ այս կավե տաղավարում ենք, որպեսզի կարողանանք հաղթել ամեն արդարության թշնամուն, և մեր հոգիները հանգչեն Աստծո արքայությունում:

7 Եվ այժմ, ես գրում եմ որոշ բան այս ժողովրդի տառապանքների վերաբերյալ: Քանզի համաձայն այն գիտելիքի, որը ես ստացել եմ Ամորոնից, ահա, Լամանացիներն ունեն շատ ռազմագերիներ, որոնց նրանք վերցրել են Սերիգա աշտարակից. և կան տղամարդիկ, կանայք և երեխաներ:

8 Եվ այն կանանց ու երեխաների ամուսիններին ու հայրերին,

9 4ա 2 Նեփի 1.26–27, ՎևոՒ 121.41–43: *բ* ՎևոՒ 1.33:

5ա Մորմ. 4.11–12: 6ա սոՒ Չանասիրություն: *բ* Հակոբ 1.19,

Ենովս 1.20: սոՒ Պարտականություն:

նրանք սպանել են. և նրանք կերակրում են կանանց իրենց ամուսինների մտով, և երեխաներին՝ իրենց հայրերի մտով. և բացի մի քիչ ջրից, նրանց ոչինչ չեն տալիս:

9 Եվ չնայած Լամանացիների այս մեծ պղծությանը, այն չի գերազանցում մեր ժողովրդինը Մորիանթում: Քանզի ահա, Լամանացիների աղջիկներից շատերին նրանք գերի են վերցրել. և նրանց զրկելուց հետո նրանից, ինչն ամենաթանկն է ու արժեքավորը՝ բոլոր բաներից առավել, որը՝ մաքրաբարոյությունն է ու ^բկուսությունը,

10 Եվ այս բանն անելուց հետո, նրանք ամենադաժան ձևով սպանել են նրանց, տանջելով նրանց մարմինները, մինչև իսկ ի մահ. և այս անելուց հետո, նրանք խժռել են նրանց միսը վայրի գազանների պես, իրենց սրտերի կարծրության պատճառով. և նրանք անում են դա՝ ի նշան քաջության:

11 Ա՛խ, սիրելի՛ որդիս, ի՞նչպես կարող է այդպիսի մի ժողովուրդ, որ առանց քաղաքակրթության է,

12 (Եվ միայն մի քանի տարիներ են անցել, և նրանք մի քաղաքակիրթ և հրաշալի ժողովուրդ էին)

13 Բայց ա՛խ, որդի՛ս, ի՞նչպես կարող է այդպիսի մի ժողովուրդ, որի բերկրանքն այդքան շատ պղծության մեջ է,

14 Ի՞նչպես կարող ենք մենք սպասել, որ Աստված ետ ^բկպահի իր ձեռքը մեր դեմ դատաստանում:

15 Ահա, սիրտս աղաղակում է. Վա՛յ այս ժողովրդին: Գ՛ո՛ւրս արի դատաստանով, ո՛վ Աստված, և քաքցրու նրանց մեղքերը

և ամբարշտությունը և պղծությունները քո երեսի առաջից:

16 Եվ բացի այդ, որդի՛ս, կան շատ ^աայրիներ և նրանց դուստրերը, ովքեր մնում են Սերիգայում. և մթերքի այն մասը, որը Լամանացիները չեն տարել, ահա, Ձե՛նեփիի բանակն է տարել, և թողել նրանց՝ թափառելու ուտելիքի համար ուր որ նրանք կարող են. և բազում ծեր կանայք ճանապարհին նվաղում են ու մեռնում:

17 Եվ բանակը, որն ինձ հետ է, թույլ է. և Լամանացիների զորքերը Սերիգայի և իմ մեջտեղում են. և բոլոր նրանք, ովքեր փախել են՝ Մհարոնի բանակը, ընկել են՝ դարձել են նրանց սոսկալի վայրագության զոհերը:

18 Ա՛խ, իմ ժողովրդի անառակությունը: Նրանք առանց կարգի ու կանոնի են և առանց ողորմության: Ահա, ես ընդամենը մի մարդ եմ, և ես ունեմ ընդամենը մի մարդու ուժ, և ես այլևս չեմ կարողանում գործադրել իմ հրամանները:

19 Եվ նրանք խստացել են իրենց այլանդակության մեջ. և նրանք միանման վայրագ են, չխնայելով ոչ մեկին՝ ո՛չ ծերին, ո՛չ երիտասարդին. և նրանք հրճվում են ամեն բանով, բացի նրանից, ինչը բարի է. և մեր կանանց ու մեր երեխաների տառապանքը, այս երկրի ողջ երեսին, գերազանցում է ամեն ինչին. այո, լեզուն չի կարող պատմել, ո՛չ էլ դա կարող է գրվել:

20 Եվ այժմ, որդի՛ս, ես այլևս կանգ չեմ առնում այս մողկալի տեսարանի վրա: Ահա, դու գիտես այս ժողովրդի ամբարշտությունը. դու գիտես, որ նրանք առանց սկզբունքի են և անզգա. և նրանց

9ա սոՒ Մաքրաբարոյություն: 14ա Ավմա 10.23: 16ա սոՒ Այրի: 17ա Մորմ. 2.9:

ամբարշտությունը ^ագերազանցում է Լամանացիներին:

21 Ահա, որդի՛ս, ես նրանց համար չեմ կարող երաշխավորել Աստծո առջև, որ չլինի թե նա զարկի ինձ:

22 Բայց ահա, որդի՛ս, քեզ համար ես երաշխավորում եմ Աստծո առաջ, և ես վստահում եմ Քրիստոսին, որ դու կփրկվես. և ես աղոթում եմ Աստծուն, որ նա ^ախնայի քո կյանքը, որ ականատես լինես իր ժողովրդի վերադարձին իր մոտ կամ նրանց լիակատար կործանմանը. քանզի ես գիտեմ, որ նրանք պիտի մեռնեն, եթե ^բչապաշխարեն ու չվերադառնան նրա մոտ:

23 Եվ եթե նրանք մեռնեն, դա նման կլինի Հարեդացիներին, իրենց սրտերի համառության պատճառով՝ ^աձգտելով արյան ու ^բվրեժխնդրության:

24 Եվ եթե լինի այնպես, որ նրանք մեռնեն, մենք գիտենք, որ մեր եղբայրներից շատերն ^աանցել են Լամանացիների կողմը, և շատ շատերը նույնպես կանցնեն նրանց կողմը. ուստի, գրի՛ր մի քանի քաներ, եթե դու խնայվես, իսկ ես մեռնեմ ու չտեսնեմ քեզ. բայց ես հուսով եմ, որ շուտով կարող եմ տեսնել քեզ. քանզի ես ունեմ սրբազան հիշատակարաններ, որոնք ես կկամենայի ^բհանձնել քեզ:

25 Որդի՛ս, հավատարիմ եղիր Քրիստոսին. և թող այն բաները, որ ես գրել եմ, չվշտացնեն քեզ՝ ծանրաբեռնելով քեզ ի մահ. այլ թող Քրիստոսը քեզ վեր բարձրաց-

նի, և թող նրա ^ատառապանքներն ու մահը, և իր մարմնի ցույց տալը մեր հայրերին, և նրա ողորմությունն ու երկայնամտությունը, և նրա փառքի և ^բհավերժական կյանքի հույսը մնա քո ^գմտքում հավիտյան:

26 Եվ թող շնորհը Հայր Աստծո, որի գահը բարձր երկինքներում է, և Տեր Հիսուս Քրիստոսի, որը նստում է նրա գորության ^աաջ կողմում, մինչև որ բոլոր բաները հպատակ դառնան նրան, լինի և մնա քեզ հետ հավիտյան: Ամեն:

ԳԼՈՒԽ 10

Մորմոնի Գրքի վկայությունը գալիս է Մուրբ Հոգու գորությանը – Հոգու պարզվածները բաշխվում են հավատարիմներին – Հոգևոր պարզվածներին միշտ ուղեկցում է հավատքը – Մորմոնիի խոսքերը խոսում են փոշուց – Եկեք Քրիստոսի մոտ, կատարելագործվե՛ք նրանով և սրբագործե՛ք ձեր հոգիները: Մոտ 421թ. Ք.ժ.հ.:

ԱՅՑՄԵՄ՝ Մորմոնիս, գրում եմ որոշ բան, ինչն ինձ կարևոր է թվում. և ես գրում եմ իմ եղբայրներին՝ ^աԼամանացիներին. և ես կկամենայի, որ նրանք իմանան, որ ավելի քան չորս հարյուր և քսան տարիներ անց են կացել այն ժամանակից ի վեր, ինչ տրվել էր Քրիստոսի գալստի նշանը:

2 Եվ ես, ձեզ համար հորդորանքի ձևով մի քանի խոսքեր

20ա Հել. 6.34–35:
22ա Մորմ. 8.3:
բ Մաղ. Գ.7, Հել. 13.11,
3 Նեփի 10.6, 24.7:
23ա Մորմ. 4.11–12:
բ Եթեր 15.15–31:

24ա Ալմա 45.14:
բ Մորմ. 6.6:
25ա սու՛ր Քավել,
Քավություն:
բ սու՛ր Հավերժական
կյանք:

գ սու՛ր Միսք:
26ա Ղուկ. ԻԲ.69,
Գոր. Է.55,
Մոսիա 5.9,
Ալմա 28.12:
10 1ա Վևո 10.48:

խոսելուց հետո, ^ակկնքեմ այս հիշատակարանները:

3 Ահա, ես կկամենայի հորդորել ձեզ, որ երբ դուք կարդաք այս բաները, եթե դա Աստծո իմաստությամբ լինի, որ դուք կարդաք դրանք, որ դուք հիշեք, թե որքան ողորմած է եղել Տերը մարդկանց զավակների հանդեպ Ադամի ստեղծումից ի վեր, մինչև ընդհուպ այն ժամանակը, երբ դուք կստանաք այս բաները և ^ակխորհեք այն ձեր ^բարտերում:

4 Եվ երբ դուք ստանաք այս բաները, ես կկամենայի հորդորել ձեզ, որ դուք ^ահարցնեք Աստծուն՝ Հավերժական Հորը, Քրիստոսի անունով, թե արդյոք այս բաները ճիշտ ^բչեն. և եթե դուք հարցնեք ^գմաքուր սրտով, ^դանկեղծ միտունով, ^եհավատք ունենալով առ Քրիստոս, նա ^զկհայտնի ձեզ դրանց ^էճշմարտության մասին՝ Սուրբ Հոգու գործությամբ:

5 Եվ Սուրբ Հոգու գործությամբ դուք կարող եք ^աիմանալ ^բճշմարտությունը բոլոր բաների վերաբերյալ:

6 Եվ ինչ բան, որ բարի է, արդար է ու ճշմարիտ. ուստի, ոչ մի բան, որ բարի է, չի ուրանում Քրիստոսին, այլ ընդունում է, որ նա կա:

7 Եվ դուք կարող եք իմանալ, որ նա կա, Սուրբ Հոգու գործությամբ. ուստի, ես կկամենայի հորդորել ձեզ, որ դուք չուրանաք Աստծո

գործությունը. քանզի նա գործում է գործությամբ, ^ահամաձայն մարդկանց զավակների հավատքի, նույնը՝ այսօր և վաղը և հավիտյան:

8 Եվ դարձյալ, ես հորդորում եմ ձեզ, իմ եղբայրներ, որ դուք չուրանաք Աստծո ^ապարզևեղերը, քանզի դրանք շատ են. քանզի դրանք գալիս են նույն Աստծուց: Եվ կան ^բզանազան ուղիներ, որոնցով այս պարզևեղերը տրվում են. բայց դա նույն Աստվածն է, որ գործում է ամենուրեք՝ ամենի մեջ. և դրանք տրվում են մարդկանց, Աստծո Հոգու դրսևորումների միջոցով, ի օգուտ նրանց:

9 Քանզի ահա, ^ամեկին տրվում է Աստծո Հոգով, որ նա կարողանա ^բսովորեցնել իմաստության խոսքը.

10 Եվ մեկ ուրիշին, որ նա նույն Հոգով կարողանա սովորեցնել գիտության խոսքը.

11 Եվ մեկ ուրիշին՝ չափազանց մեծ ^ահավատք. և մեկ ուրիշին՝ ^բբժշկության պարզևեղեր նույն Հոգով.

12 Եվ բացի դրանից, մեկ ուրիշին, որ նա կարողանա գործել գորավոր ^ահրաշքներ.

13 Եվ բացի դրանից, մեկ ուրիշին, որ նա կարողանա մարգարեանալ բոլոր բաների վերաբերյալ.

14 Եվ բացի դրանից, մեկ ուրիշին՝ հրեշտակներ ու սպասավորող ոգիներ տեսնել.

2ա Մորմ. 8.4, 13-14:
սուր Սուրբ գրքեր –
Սուրբ գրքերի ի
հայտ գալու
մարգարեություններ:
3ա Բ Օր. ԺԱ.18-19:
սուր Խորհել:
բ Բ Օր. 2.6-7:
4ա սուր Աղոթք:
բ 1 Նեփի 13.39, 14.30,
Մոսիա 1.6,

Եթեր 4.10-11, 5.3:
գ սուր Ազնիվ,
Ազնվություն:
դ Հակ. Ա.5-7, Մոր. 7.9:
ե սուր Հավատք:
զ սուր Հայտնություն:
է սուր ճշմարտություն:
5ա ՎևոՒԲ 35.19:
սուր Չանազանելու
պարզև, Վկայություն:
բ Հովհ. Ը.32:

7ա 1 Նեփի 10.17-19:
8ա սուր Հոգու պարզևեղեր:
բ ՎևոՒԲ 46.15:
9ա Ա Կոր. ԺԲ.8-11,
ՎևոՒԲ 46.8-29:
բ ՎևոՒԲ 88.77-79, 118:
11ա սուր Հավատք:
բ սուր Բժշկել,
Բժշկումներ:
12ա սուր Հրաշք:

15 Եվ բացի դրանից, մեկ ուրիշին՝ ամեն ձևի լեզուներ.

16 Եվ բացի դրանից, մեկ ուրիշին՝ լեզուների և տարբեր տեսակի խոսվածքների բարգմանություն:

17 Եվ բոլոր այս պարզակները գալիս են Քրիստոսի Հոգու միջոցով. և դրանք գալիս են ամեն մարդու առանձին-առանձին՝ ըստ նրա կամքի:

18 Եվ ես կկամենայի հորդորել ձեզ, իմ սիրելի՛ եղբայրներ, որ դուք հիշեք, որ ամեն բարի պարզակ գալիս է Քրիստոսից:

19 Եվ ես կկամենայի հորդորել ձեզ, իմ սիրելի՛ եղբայրներ, որ դուք հիշեք, որ նա նույնն է՝ երեկ, այսօր և հավիտյան, և որ բոլոր այս պարզակները, որոնց մասին ես խոսեցի, որոնք հոգևոր են, երբեք չեն վերանա, նույնիսկ այնքան ժամանակ, որքան աշխարհը կանգուն կլինի, բացի միայն՝ մարդկանց զավակների քանակատության պատճառով:

20 Ուստի, պետք է լինի հավատք, պիտի լինի նաև հույս. և եթե պիտի լինի հույս, պիտի լինի նաև գթություն:

21 Եվ եթե դուք չունենաք գթություն, դուք ոչ մի կերպ չեք կարող փրկվել Աստծո արքայությունում. ոչ էլ կարող եք դուք փրկվել Աստծո արքայությունում, եթե դուք չունենաք հավատք. ոչ էլ կարող եք, եթե չունենաք հույս:

22 Եվ եթե դուք չունենաք հույս, դուք անպայման պիտի լինեք

հուսահատության մեջ. և հուսահատությունը գալիս է անօրինության պատճառով:

23 Եվ Քրիստոսը ճշմարիտ է ասել մեր հայրերին. «Եթե դուք հավատք ունենաք, ապա զորություն կունենաք՝ անելու ինչ որ նպատակահարմար է ինձ:

24 Եվ այժմ ես խոսում եմ աշխարհի բոլոր ծայրերի համար. որ, եթե օրը գա, երբ Աստծո զորությունը և պարզակները վերացած լինեն ձեր միջից, դա կլինի անհավատության քառատունգ:

25 Եվ վա՛յ լինի մարդկանց զավակներին, եթե դա այդպես լինի. քանզի չի լինի ձեր մեջ ո՛չ մեկը, որ բարիք գործի, ո՛չ, ոչ մեկը: Քանզի եթե ձեր մեջ լինի մեկը, որ բարիք գործի, նա պիտի գործի Աստծո զորությամբ և պարզակներով:

26 Եվ վա՛յ նրանց, ովքեր այս բաները կվերացնեն և կմռռնեն, քանզի նրանք կմռռնեն իրենց մեղքերի մեջ, և նրանք չեն կարող փրկվել Աստծո արքայությունում. և ես խոսում եմ Քրիստոսի խոսքերի համաձայն. և ես չեմ ստում:

27 Եվ ես հորդորում եմ ձեզ հիշել այս բաները. քանզի ժամանակն արագ մոտենում է, երբ դուք կիմանաք, որ ես չեմ ստում, քանզի դուք կտեսնեք ինձ Աստծո դատարանում. և Տեր Աստված կասի ձեզ. Մի՞թե ես չեի հայտարարել իմ խոսքերը ձեզ, որոնք գրվել էին այս մարդու կողմից, այնպես, կարծես մեկն անդադակեր մեռած

16ա սո՛ւ Լեզուների պարզակ:
18ա Հակ. Ա.17:
19ա Եբր. ԺԳ.8:
բ Մոր. 7.37:
20ա Եբր. 12.3–37:
21ա Ա Կոր. ԺԳ.1–13,
Մոր. 7.1, 42–48:

սո՛ւ Գթություն:
23ա Մոր. 7.33:
24ա սո՛ւ Անհավատություն:
բ Մոր. 7.37:
25ա ՉՄԹ, Մաղ. 14.1–7,
Հռովմ. Գ.10–12:
26ա Եզեկ. ԺԸ.26–27,

1 Նեփի 15.32–33,
Մոսիա 15.26:
բ Հովհ. Ը.21:
27ա 2 Նեփի 33.10–11:
բ 2 Նեփի 3.19–20, 27.13,
33.13,
Մորմ. 9.30:

տեղից, այո, ճիշտ ինչպես մեկը խոսեր Գփոշու միջից:

28 Ես հայտարարում եմ այս բաները՝ ի կատարումն մարգարեությունների: Եվ ահա, դրանք դուրս պիտի գան հավիտենական Աստծո բերանից. և նրա խոսքն «առաջ պիտի սլանա սերնդից սերունդ»:

29 Եվ Աստված ցույց կտա ձեզ, որ այն, ինչ ես գրել եմ, ճշմարիտ է:

30 Եվ կրկին, ես կկամենայի հորդորել ձեզ, որ դուք «գաք Քրիստոսի մոտ, և կառչած մնաք ամեն բարի պարգևից, և թձեռք չտաք չար պարգևի, ոչ էլ անմաքուր բանի»:

31 Եվ, «գարթնիր և ելիր փոշուց, ո՛վ Երուսաղեմ. այո, և հագիր գեղեցիկ հանդերձներդ, ո՛վ Պիոնի դուստր. և Գամրացրու քո Գցցերը և ընդարձակիր քո սահմանները հավիտյան, որ դու Նայկս չձուլվես, որ Հավերժական Հոր ուխտերը, որոնք նա արել է քեզ հետ, ո՛վ Իսրայելի տուն, կատարվեն»:

32 Այո, «եկեք Քրիստոսի մոտ և թկատարելագործվեք նրանում, և հրաժարվեք ամեն անաստվածությունից. և եթե դուք հրաժարվեք ամեն անաստվածությունից և

Գսիրեք Աստծուն, ձեր ողջ զորությունը, մտքով և ուժով, ապա նրա շնորհը բավական է ձեզ, որպեսզի նրա Պշնորհով դուք կատարյալ լինեք Քրիստոսում. և եթե Աստծո շնորհով դուք կատարյալ լինեք Քրիստոսում, դուք ոչ մի կերպ չեք կարող ուրանալ Աստծո զորությունը:

33 Եվ բացի այդ, եթե դուք Աստծո շնորհով կատարյալ լինեք Քրիստոսում և չուրանաք նրա զորությունը, ապա դուք «կարբագործվեք Քրիստոսում՝ Աստծո շնորհով, Քրիստոսի Պարյան հեղվելով, որը Հոր ուխտի մեջ է՝ մեղքերի Գթողության համար, այնպես որ դուք դառնում եք Պսուրբ՝ առանց բժի»:

34 Եվ այժմ, ես հղում եմ բոլորիդ՝ մնաք բարով: Ես շուտով գնալու եմ՝ «հանգիստ առնելու Աստծո Պդրախտում, մինչև որ իմ Գողգին և մարմինը կրկին Պկվերամիավորվեն, և ես առաջ կբերվեմ հաղթական, Նօղի միջով՝ հանդիպելու ձեզ, մեծ Գեհովայի՝ թե՛ ողջերի, թե՛ մեռածների Հավերժական Կատավորի Պհանելի դատարանի առջև: Ամեն:

27գ Ես. ԻԹ.4:
28ա2 Նեփի 29.2:
30ա1 Նեփի 6.4,
Մորմ. 9.27, Եթեր 5.5:
բ Ալմա 5.57:
31ա Ես. ԾԲ.1–2:
բ սո՛ր Սիոն:
գ Ես. ԾԳ.2:
դ սո՛ր Ցից:
ե Եթեր 13.8:
32ա Մատ. ԺԱ.28,

2 Նեփի 26.33,
Հակոբ 1.7, Օմնի 1.26:
բ Մատ. Ե.48,
3 Նեփի 12.48:
սո՛ր Կատարյալ:
գ ՎևՈՒ 4.2, 59.5–6:
դ 2 Նեփի 25.23:
33ա սո՛ր Սրբագործում:
բ սո՛ր Քավել,
Քավություն:
գ սո՛ր Մեղքերի

թողություն:
դ սո՛ր Սրբություն:
34ա սո՛ր Հանգիստ:
բ սո՛ր Դրախտ:
գ սո՛ր Ոգի:
դ սո՛ր Հարություն:
ե ԱԹես. Գ.16:
գ սո՛ր Եհովա:
է սո՛ր Հիսուս Քրիստոս –
Գատավոր:
ը Հակոբ 6.13:

ՀԻՍՈՒՄ ԲՐԻՍՏՈՍԻ

ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ

ԵԿԵՂԵՅՈՒ

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ
ՈՒԽՏԵՐԸ

ՊԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է

ՋՈՋԵՖ ՍՄԻԹ ՄԱՐԳԱՐԵԻՆ

ՏՐՎԱԾ ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԵԿԵՂԵՅՈՒ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ՆՐԱՆ ՀԱՋՈՐԴՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՐՎԱԾ

ՈՐՈՇ ԼՐԱՑՈՒՄՆԵՐՈՎ

«Վարդապետություն և Ուխտեր» գիրքն Աստծո արքայությունը վերջին օրերին երկրի վրա հաստատելու և կանոնակարգելու համար տրված աստվածային հայտնությունների և ոգեշնչված հայտարարությունների մի ժողովածու է: Թեպետ բաժիններից շատերն ուղղված են Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամներին, պատգամները, զգուշացումներն ու հորդորները ողջ մարդկության օգտի համար են և պարունակում են հրավեր՝ բոլոր մարդկանց համար, ամենուրեք, լսելու Տեր Հիսուս Քրիստոսի ձայնը, որը խոսում է իրենց հետ՝ իրենց մահկանացու բարեկեցության և հավիտենական փրկության համար:

Այս ժողովածուի հայտնությունների մեծ մասը ստացվել է Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու առաջին մարգարե և նախագահ՝ Ջոզեֆ Սմիթ կրտսերի միջոցով: Մյուսները տրվել են Նախագահությունում նրան հաջորդողներից մի քանիսի միջոցով (տե՛ս 135, 136 և 138-րդ բաժինների նախադրությունները և 1-ին և 2-րդ Պաշտոնական Հայտարարությունները):

«Վարդապետություն և Ուխտերը» Եկեղեցու օրինակելի աշխատություններից մեկն է՝ «Աստվածաշնչի», «Մորմոնի Գրքի» և «Թանկագին Մարգարիտի» հետ մեկտեղ: Սակայն «Վարդապետություն և Ուխտերը» եզակի գիրք է, քանի որ այն հնադարյան փաստաթղթի թարգմանություն չէ, այլ ունի ժամանակակից ծագում և տրվել է Աստծուց, իր ընտրյալ մարգարեների միջոցով, այս օրերին երկրի վրա իր սուրբ գործի վերականգնման և Աստծո արքայության հաստատման համար: Հայտնություններում լսվում է Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի մեղմ, բայց հաստատուն ձայնը, որը կրկին խոսում է ժամանակների լրության տնտեսության ժամանակ. և աշխատանքը, որ ներկայացված է այստեղ, նախապատրաստություն է նրա երկրորդ գալստի համար՝ ի կատարումն և համաձայն աշխարհի սկզբից ի վեր բոլոր սուրբ մարգարեների խոսքերի:

Ջոզեֆ Սմիթ կրտսերը ծնվել է 1805 թվականի դեկտեմբերի 23-ին, Վերմոնտ նահանգի, Վինձոր գավառի, Շերոն շրջանում: Իր կյանքի վաղ շրջանում, նա իր ընտանիքի հետ տեղափոխվեց Մանչեստր, Նյու Յորքի արևմտյան մաս: Մանչեստրի մոտակայքում ապրելու ժամանակ էր, 1820-ի գարնանը, տասնչորս տարեկանում, երբ նա տեսավ իր առաջին տեսիլքը, որի ժամանակ նրան անձնապես այցելեցին Աստված՝ Հավերժական Հայրը, և նրա Որդին՝ Հիսուս Քրիստոսը: Այս տեսիլքում նրան ասվեց, որ Հիսուս Քրիստոսի ճշմարիտ Եկեղեցին, որը հաստատվել էր Նոր Կտակարանի ժամանակներում, և որը սպասավորում էր ավետարանի լրիվությունը, այլևս երկրի վրա չէ: Դրան հաջորդեցին աստվածային այլ հայտնություններ, երբ նա ուսուցանվեց շատ հրեշտակների կողմից. նրան ցույց տրվեց, որ Աստված իր համար հատուկ աշխատանք ունի կատարելու երկրի վրա և, որ իր միջոցով Հիսուս Քրիստոսի Եկեղեցին պետք է վերականգնվի երկրի վրա:

Ժամանակի ընթացքում, աստվածային օգնությամբ, Ջոզեֆ Սմիթին հնարավորություն տրվեց թարգմանել և հրատարակել «Մորմոնի Գիրքը»: Միևնույն ժամանակ նա և Օլիվեր Բարոլտերին Ահարոնյան Բահանայության կարգվեցին Հովհաննես Մկրտչի կողմից, 1829 թվականի մայիսին (տե՛ս ՎևՈՒ 13), իսկ դրանից ոչ շատ անց, վաղեմի Առաքյալների՝ Պետրոսի, Հակոբոսի և Հովհաննեսի կողմից, նրանք կարգվեցին նաև Մելքիսեդեկյան Բահանայության (տե՛ս ՎևՈՒ 27.12): Դրանց հետևեցին այլ կարգումներ, որոնց ժամանակ, Մովսեսի, Եղիայի, Եղիասի և վաղեմի շատ մարգարեների կողմից նրանց շնորհվեց քահանայության բանալիներ (տե՛ս ՎևՈՒ 110, 128.18, 21): Փաստորեն, այդ կարգումները եղան երկրի վրա աստվածային իշխանության վերականգնում՝ մարդու համար: 1830-ի ապրիլի 6-ին, երկնային ղեկավարության ներքո, Մարգարե Ջոզեֆ Սմիթը կազմավորեց Եկեղեցին, և, այդպիսով, Հիսուս Քրիստոսի ճշմարիտ Եկեղեցին, որպես հաստատություն, կրկին գործում է մարդկանց մեջ՝ ավետարանն ուսուցանելու և փրկության արարողությունները սպասավորելու իշխանությամբ: (Տե՛ս Թանկագին Մարգարիտ, Ջոզեֆ Սմիթ–Պատմություն 1.1–75, և ՎևՈՒ 20):

Այս սրբազան հայտնություններն ստացվել են ի պատասխան աղոթքի, ժամանակների պահանջով, և բխել են իրական կյանքի իրավիճակներից՝ ընդգրկելով իրական մարդկանց: Մարգարեն և նրա գործընկերները փնտրում էին աստվածային առաջնորդություն, և այս հայտնությունները հավաստիացնում են, որ նրանք ստանում էին այն: Հայտնություններում երևում է Հիսուս Քրիստոսի ավետարանի վերականգնումն ու բացահայտումը և ժամանակների լրության տնտեսության մուտքը: Այս հայտնություններում ցույց է տրված Եկեղեցու շարժումն արևմուտքի ուղղությամբ՝ Նյու Յորքից և Պենսիլվանիայից դեպի Օհայո, Միսսուրի, Իլլինոյս և, ի վերջո, դեպի արևմտյան Ամերիկայի Մեծ Ավազան, ինչպես նաև Սրբերի հզոր ջանքերը՝ մինչ նրանք փորձում էին արդի ժամանակներում երկրի վրա կառուցել Սիոնը:

Ավելի վաղ տրված բաժիններից մի քանիսը պարունակում են «Մորմոնի Գրքի» թարգմանությանը և հրատարակությանը վերաբերող նյութեր (տե՛ս բաժիններ՝ 3, 5, 10, 17 և 19): Ավելի ուշ տրված որոշ բաժիններ անդրադառնում են Մարգարե Ջոզեֆ Սմիթի աշխատանքին, մինչ նա Աստվածաշնչի ոգեշնչված թարգմանություն էր կատարում, որի ընթացքում ստացվեցին մեծ վարդապետություններ պարունակող բաժիններից շատերը (տե՛ս, օրինակ, բաժիններ՝ 37, 45, 73, 76, 77, 86, 91 և 132, որոնցից յուրաքանչյուրն ինչ-որ անմիջական կապ ունի Աստվածաշնչի թարգմանության հետ):

Հայտնություններում շարադրվում են ավետարանի վարդապետությունները՝ սկզբունքային այնպիսի նյութերի մասին բացատրություններով, ինչպիսիք են՝ Աստվածագլխի բնույթը, մարդու ծագումը, Սատանայի

իսկությունը, մահկանացու կյանքի նպատակը, հնազանդության անհրաժեշտությունը, ապաշխարության կարիքը, Սուրբ Հոգու ներգործումները, փրկությանը վերաբերող արարողություններն ու ծխակատարությունները, երկրագնդի ճակատագիրը, մարդու հետագա վիճակը՝ Հարությունից և Դատաստանից հետո, ամուսնական հարաբերությունների հավերժությունը և ընտանիքի հավերժական բնույթը: Նմանապես, ցույց է տրվում Եկեղեցու վարչական կառուցվածքի աստիճանական բացահայտումը՝ եպիսկոպոսների, Առաջին Նախագահության, Տասներկուսի Խորհրդի և Յոթանասունի կոչումով, և այլ նախագահող պաշտոնների ու քվորումների հիմնումով: Ի վերջո, Հիսուս Քրիստոսի մասին տրված վկայությունը, – նրա աստվածայնության, նրա վեհափառության, նրա կատարելության, նրա սիրո և նրա փրկագնող գործության մասին, – դարձնում է այս գիրքը մարդկության ընտանիքի համար մեծ արժեք ունեցող, և ավելի արժեքավոր, քան հարստությունները ողջ երկրի:

Հայտնությունների մի մասը հրատարակվել է Սիոնում (Ինդիպենդենս), Միսսուրի, 1833 թվականին, «A Book of Commandments for the Government of the Church of Christ» (Պատվիրանների գիրք Քրիստոսի Եկեղեցու կառավարման համար) վերնագրով: Այդ հրատարակության վերաբերյալ Եկեղեցու երեցները հանդիսավոր վկայություն են բերել, որ Տերը վկայություն է տվել իրենց հոգուն, որ այդ հայտնությունները ճշմարիտ են: Քանի որ Տերը շարունակում էր հաղորդակցվել Իր ծառաների հետ, երկու տարի անց Կիրթլենդում, Օհայո, ավելի ծավալուն ժողովածու հրատարակվեց «Doctrine and Covenants of the Church of the Latter Day Saints» (Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Վարդապետություն և Ուխտեր) վերնագրով: 1835 թվականի այդ հրատարակությանը կցվել էր Տասներկու Առաքյալների հետևյալ գրավոր վկայությունը.

**ՏԱՄՆԵՐԿՈՒ ԱՌԱՔՅԱԼՆԵՐԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ
ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՒՏԵՐ ԳՐՔԻ
ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Վկաների Վկայությունը Տիրոջ Պատվիրանների Գրքի վերաբերյալ, պատվիրաններ, որոնք նա տվել է Իր Եկեղեցուն, Ջոզեֆ Սմիթ կրտսերի միջոցով, որը Եկեղեցու ձայնով նշանակվել էր այդ նպատակի համար.

Հետևաբար, մենք հոժարակամ վկայություն ենք բերում մարդկության աշխարհին, երկրի երեսին գտնվող ամեն մի արարածի, որ Տերը մեր հոգուն վկայություն է տվել, Սուրբ Հոգին մեզ վրա թափելով, որ այս պատվիրանները տրվել են Աստծո ոգեշնչմամբ և օգտակար են բոլոր մարդկանց համար ու իրոք ճշմարիտ են:

Մենք տալիս ենք այս վկայությունն աշխարհին՝ Տիրոջը մեզ ապավեն ունենալով. և Հայր Աստծո ու Նրա Որդու՝ Հիսուս Քրիստոսի

շնորհով է, որ մեզ թույլ է տրվել ունենալ աշխարհին վկայություն տալու այս արտոնությունը, որով մենք անչափ ցնծում ենք, միշտ աղոթելով Տիրոջը, որ մարդկանց զավակները կարողանան օգտվել դրանից:

Տասներկուսի անուններն էին.

Թոմաս Բ. Մարշ	Օրսոն Հայդ	Վիլյամ Սմիթ
Դեյվիդ Վ. Փաթեն	Վլմ. Ի. Մակլեյլին	Օրսոն Պրատ
Բրիգամ Յանգ	Փարլի Պ. Պրատ	Ջոն Ֆ. Բոյնտոն
Հեբեր Չ. Բիմբալ	Լյուկ Ս. Ջոնսոն	Լայման Ի. Ջոնսոն

«Վարդապետություն և Ուխտերի» հաջորդ հրատարակություններում լրացուցիչ հայտնություններ և այլ արձանագրված նյութեր են ավելացվել, երբ որ ստացվել և ընդունվել են իրավասու հավաքներում կամ Եկեղեցու համաժողովներում:

Սկսած 1835 թվականի հրատարակությունից, նաև ընդգրկվել էր աստվածաբանական յոթ դասերի մի շարք. դրանք վերնագրվել էին՝ «Lectures on Faith» (Դասախոսություններ հավատքի վերաբերյալ): Դրանք նախապատրաստվել էին Մարգարեների Դպրոցում օգտագործելու համար, Կիրթլենդում, Օհայո, 1834–1835թթ.: Չնայած վարդապետության և ուսուցանման համար օգտակար լինելուն, այդ դասախոսությունները, սկսած 1921 թվականի հրատարակությունից, դուրս են թողնվել «Վարդապետություն և Ուխտերից», քանի որ դրանք չէին տրվել կամ ներկայացվել որպես հայտնություններ ողջ Եկեղեցու համար:

Ակնհայտ է, որ անգլերեն լույս տեսած հին հրատարակություններում որոշ սխալներ են կրկնվել, հատկապես բաժինների նախադրությունների պատմական մասերում: Հետևաբար, այս հրատարակությունը պարունակում է ամսաթվերի և տեղանունների ուղղումներ և նաև այլ աննշան ուղղումներ, երբ դա պատշաճ է թվացել: Այդ փոփոխությունները կատարվել են, որպեսզի նյութը համաձայնեցվի պատմական փաստաթղթերի հետ: Այս վերջին հրատարակության այլ առանձնահատուկ հատկանիշների թվում են՝ խաչածև հղումները, բաժինների նախադրությունները, թեմատիկ ամփոփումները, որոնք բոլորն էլ նախատեսված են կարդացողներին օգնելու համար՝ հասկանալու և ցնծալու Տիրոջ պատգամով, ինչպես տրված է «Վարդապետություն և Ուխտերում»:

«Վարդապետություն և Ուխտերի» անգլերեն հրատարակության մեջ, բաժինների նախաբանները հղումներ են պարունակում դեպի «History of the Church» (Եկեղեցու պատմություն): «History of the Church»-ը յոթհատորյա պատմական մատենագրություն է Հիսուս Բրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու մասին, 1820–1848թթ.: Քանի որ այդ հատորները չեն թարգմանվել և մատչելի են միայն անգլերեն լեզվով, «Վարդապետություն և Ուխտերի» այս հրատարակության բաժինների նախաբաններում հղումներ կան դեպի «History of the Church», որոնք վերաբերում են այդ պատմության անգլերեն հատորներին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՑԱՆԿ

<i>Ժամանակը</i>	<i>Վայրը</i>	<i>Բաժինները</i>
1823	Սեպտեմբեր	Մանչեստր, Նյու Յորք 2
1828	Հուլիս	Հարմոնի, Պենսիլվանիա 3
	Ամառ	Հարմոնի, Պենսիլվանիա 10
1829	Փետրվար	Հարմոնի, Պենսիլվանիա 4
	Մարտ	Հարմոնի, Պենսիլվանիա 5
	Ապրիլ	Հարմոնի, Պենսիլվանիա 6, 7, 8, 9
	Մայիս	Հարմոնի, Պենսիլվանիա 11, 12, 13
	Հունիս	Ֆայեթ, Նյու Յորք 14, 15, 16, 17, 18
1830	Մարտ	Մանչեստր, Նյու Յորք 19
	Ապրիլ	Ֆայեթ, Նյու Յորք 20*, 21
	Ապրիլ	Մանչեստր, Նյու Յորք 22, 23
	Հուլիս	Հարմոնի, Պենսիլվանիա 24, 25, 26
	Օգոստոս	Հարմոնի, Պենսիլվանիա 27
	Սեպտեմբեր	Ֆայեթ, Նյու Յորք 28, 29, 30, 31
	Հոկտեմբեր	Ֆայեթ, Նյու Յորք 32*, 33
	Նոյեմբեր	Ֆայեթ, Նյու Յորք 34
	Դեկտեմբեր	Ֆայեթ, Նյու Յորք 35, 36, 37
1831	Հունվար	Ֆայեթ, Նյու Յորք 38, 39, 40
	Փետրվար	Կիրթլենդ, Օհայո 41, 42, 43, 44
	Մարտ	Կիրթլենդ, Օհայո 45, 46, 47, 48, 49
	Մայիս	Կիրթլենդ, Օհայո 50
	Մայիս	Թոմսոն, Օհայո 51
	Հունիս	Կիրթլենդ, Օհայո 52, 53, 54, 55, 56
	Հուլիս	Միոն, Ջեկսոն գավառ, Միսսուրի 57
	Օգոստոս	Միոն, Ջեկսոն գավառ, Միսսուրի 58, 59, 60
	Օգոստոս	Միսսուրիի գետի մոտ, Միսսուրի 61, 62
	Օգոստոս	Կիրթլենդ, Օհայո 63
	Սեպտեմբեր	Կիրթլենդ, Օհայո 64
	Հոկտեմբեր	Հայրամ, Օհայո 65
	Հոկտեմբեր	Օրինջ, Օհայո 66
	Նոյեմբեր	Հայրամ, Օհայո 1, 67, 68, 69, 133
	Նոյեմբեր	Կիրթլենդ, Օհայո 70
	Դեկտեմբեր	Հայրամ, Օհայո 71
	Դեկտեմբեր	Կիրթլենդ, Օհայո 72
1832	Հունվար	Հայրամ, Օհայո 73, 74
	Հունվար	Ամհերստ, Օհայո 75
	Փետրվար	Հայրամ, Օհայո 76
	Մարտ	Հայրամ, Օհայո 77, 78, 79, 80, 81
	Ապրիլ	Ջեկսոն գավառ, Միսսուրի 82, 83
	Ապրիլ	Ինդիփենդենս, Միսսուրի 83
	Օգոստոս	Հայրամ, Օհայո 99
	Սեպտեմբեր	Կիրթլենդ, Օհայո 84

* Նշված վայրում կամ մոտակայքում

<i>Ժամանակը</i>	<i>Վայրը</i>	<i>Բաժինները</i>
	Նոյեմբեր	Կիրթլենդ, Օհայո 85
	Դեկտեմբեր	Կիրթլենդ, Օհայո 86, 87*, 88
1833	Փետրվար	Կիրթլենդ, Օհայո 89
	Մարտ	Կիրթլենդ, Օհայո 90, 91, 92
	Մայիս	Կիրթլենդ, Օհայո 93, 94
	Հունիս	Կիրթլենդ, Օհայո 95, 96
	Օգոստոս	Կիրթլենդ, Օհայո 97, 98
	Հոկտեմբեր	Փերիսբուրգ, Նյու Յորք 100
	Դեկտեմբեր	Կիրթլենդ, Օհայո 101
1834	Փետրվար	Կիրթլենդ, Օհայո 102, 103
	Ապրիլ	Կիրթլենդ, Օհայո 104*
	Հունիս	Ֆիշինգ գետ, Միսսուրի 105
	Նոյեմբեր	Կիրթլենդ, Օհայո 106
1835	Մարտ	Կիրթլենդ, Օհայո 107
	Օգոստոս	Կիրթլենդ, Օհայո 134
	Դեկտեմբեր	Կիրթլենդ, Օհայո 108
1836	Հունվար	Կիրթլենդ, Օհայո 137
	Մարտ	Կիրթլենդ, Օհայո 109
	Ապրիլ	Կիրթլենդ, Օհայո 110
	Օգոստոս	Սալեմ, Մասաչուսեթս 111
1837	Հուլիս	Կիրթլենդ, Օհայո 112
1838	Մարտ	Ֆար Վեստ, Միսսուրի 113*
	Ապրիլ	Ֆար Վեստ, Միսսուրի 114, 115
	Մայիս	Սփրինգ Հիլ, Դեյվիես գավառ, Միսսուրի . . . 116
	Հուլիս	Ֆար Վեստ, Միսսուրի 117, 118, 119, 120
1839	Մարտ	Լիբերթի բանտ, Քլեյ գավառ, Միսսուրի 121, 122, 123
1841	Հունվար	Նավու, Իլինոյս 124
	Մարտ	Նավու, Իլինոյս 125
	Հուլիս	Նավու, Իլինոյս 126
1842	Սեպտեմբեր	Նավու, Իլինոյս 127, 128
1843	Փետրվար	Նավու, Իլինոյս 129
	Ապրիլ	Ռեյմոս, Իլինոյս 130
	Մայիս	Ռեյմոս, Իլինոյս 131
	Հուլիս	Նավու, Իլինոյս 132
1844	Հունիս	Նավու, Իլինոյս 135
1847	Հունվար	Վինթեր Քուորթերս (այժմ՝ Նեբրասկա) . . . 136
1890	Հոկտեմբեր	Սույթ Լեյք Սիթի, Յուտա . . Պաշտոնական Հայտարարություն–1
1918	Հոկտեմբեր	Սույթ Լեյք Սիթի, Յուտա 138
1978	Հունիս	Սույթ Լեյք Սիթի, Յուտա . . Պաշտոնական Հայտարարություն–2

* Նշված վայրում կամ մոտակայքում

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՆՏԵՐ

ԲԱԺԻՆ 1

Հայտնություն տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեի միջոցով, Եկեղեցու երեցների հատուկ համաժողովի ժամանակ, անցկացված Հայրամուս, Օհայո, 1831թ. նոյեմբերի 1-ին [History of the Church («Եկեղեցու Պատմություն»), 1.221–224]: Նախքան այդ ժամանակը, Տիրոջ կողմից բազմաթիվ հայտնություններ էին ստացվել, և համաժողովում քննարկվող հիմնական հարցերից մեկն էր՝ դրանց ժողովածուն գրքի ձևով հրատարակելը: Այս բաժինը սահմանում է արդի տնտեսության ժամանակ Տիրոջ կողմից տրված վարդապետությունների, ուխտերի և պատվիրանների նախաբանը:

1–7՝ Նախագուշացնող ձայնը գնում է բոլոր ժողովուրդներին. 8–16՝ Ուրացությունն ու ամբարշտությունը նախորդում են Երկրորդ Գալատին. 17–23՝ Ջոզեֆ Սմիթը կանչված է երկրի վրա վերականգնելու Տիրոջ ճշմարտություններն ու զորությունները. 24–33՝ «Մորմոնի Գիրքն» ի հայտ է բերվել, և ճշմարիտ Եկեղեցին հաստատվել է. 34–36՝ Խաղաղությունը վերցվելու է երկրի վրայից. 37–39՝ Քննեք այս պատվիրանները:

ԱԿԱՆՋ դրեք, ո՛վ դուք, իմ ^աեկեղեցու՝ ժողովուրդ, ասում է ձայնը նրա, ով բնակվում է բարձրում, և ում ^բաչքերը բոլոր մարդկանց վրա են. այո՛, ճշմարիտ ասում եմ ես. ^գԱկանջ դրեք, դո՛ւք, ժողովուրդներ՝ հեռվի, և դո՛ւք, որ կղզիներում եք ծովի, լսեցեք միասին:

2 Քանզի, ճշմարտապես, Տիրոջ ^աձայնը գնում է բոլոր մարդկանց,

և ^բչկա մեկը, որ խոյս տա. և չկա աչք, որ չտեսնի, ոչ էլ ականջ, որ չլսի, ոչ էլ ^գսիրտ, որ չներթափանցվի:

3 Եվ ^ապատամբները խորը վշտով պիտի խոցվեն. քանզի նրանց անօրինությունները պիտի ^բխտսվեն կտուրների վրա, և նրանց գաղտնի գործերը պիտի բացահայտվեն:

4 Եվ նախագուշացնող ^աձայնը պիտի գնա բոլոր ժողովուրդներին, իմ աշակերտների բերանով, որոնց ես ընտրել եմ այս ^բվերջին օրերին:

5 Եվ նրանք առաջ կգնան, և ոչ ոք ետ չի պահի նրանց, քանզի ես՝ Տերս եմ պատվիրել նրանց:

6 Ահա, սա իմ ^աիշխանությունն է, և իշխանությունն իմ ծառաների, և իմ նախաբանն իմ պատվիրանների գրքի, որ ես տվել եմ նրանց՝ ^բհրատարակելու ձեզ համար, ո՛վ երկրի բնակիչներ:

1 1ա 3 Նեփի 27.3,
ՎևոՒ 20.1:
սու չիսուս Քրիստոսի
Եկեղեցի:
բ ՎևոՒ 38.7–8:
սու Աստված,
Աստվածագլուխ:
գ Բ Օր. ԼԲ.1:
2ա ՎևոՒ 133.16:

բ Փիլ. Բ.9–11:
գ սու Սիրտ:
3ա սու Ապատամբություն:
բ Ղուկ. Ը.17, 12.3,
2 Նեփի 27.11,
Մորմ. 5.8:
4ա Եզեկ. Գ.17–21,
ՎևոՒ 63.37:
սու Միսիոներական

աշխատանք,
Զգուշացնել,
Զգուշացում:
բ սու Վերջին օրեր,
Ետին օրեր:
6ա սու չիսուս Քրիստոս –
Իշխանությունը:
բ ՎևոՒ 72.21:

7 Ուստի, արվեստներ և դողացք, ո՛վ դուք, ժողովուրդներ, քանզի, ինչ որ ես՝ Տերս, հրամանագրել եմ դրանցում, պետք է ՚իրականանա:

8 Եվ ճշմարիտ ասում եմ ձեզ, որ նրանք, ովքեր առաջ են գնում՝ տանելով այս ավետիքը երկրի բնակիչներին, նրանց զորություն է տրված՝ կնքելու անհավատներին ու ՚ապստամբներին՝ և՛ երկրի վրա, և՛ երկնքում:

9 Այո՛, իրոք, կնքել նրանց՝ այն օրվա համար, երբ Աստծո՝ արասումն առանց չափի դուրս կթափվի ՚ամբարիշտների վրա, -

10 Այն՝ օրվա համար, երբ Տերը կգա՝ ՚հատուցելու ամեն մարդու իր՝ գործի համաձայն, և ՚չափելու ամեն մարդու, այն չափի համաձայն, որով նա չափել է իր մերձավորին:

11 Ուստի Տիրոջ ձայնը գնում է աշխարհի ծայրերը, որպեսզի բռնորը, ովքեր կամենում են լսել, կարողանան լսել:

12 Պատրաստվեք, պատրաստվեք այն բանի համար, որը պետք է գա, քանզի Տերը մոտ է:

13 Եվ Տիրոջ ՚բարկությունը բռնկված է, և նրա ՚սուրը երկնքում լվացած է, և այն պիտի ընկնի երկրի բնակիչների վրա:

14 Եվ Տիրոջ ՚բազուկը պիտի

հայտնվի. և գալիս է օրը, երբ նրանք, ովքեր չեն կամենում ՚լսել Տիրոջ ձայնը, ոչ նրա ծառաների ձայնը, ոչ էլ՝ Պուշք են դարձնում մարգարեների ու առաքյալների խոսքերին, պիտի ՚կտրվեն մարդկանց միջից:

15 Քանզի նրանք ՚շեղվել են իմ ՚արարողություններից, և Պրժել են իմ ՚հավիտենական ուխտը:

16 Նրանք Տիրոջը չեն ՚փնտրում՝ նրա արդարությունը հաստատելու, այլ ամեն մարդ քայլում է իր ՚իսկ Պճանապարհով, և իր իսկ աստծո ՚պատկերի հետևից, որի պատկերն աշխարհի մնացորթյամբ է, և որի էությունը մույնն է, ինչ մի կուռքինը, որը ՚հնանում է և պիտի կորչի Բաբելոնում, մույնիսկ մեծ Պբաբելոնում, որը պիտի ընկնի:

17 Ուստի, ես՝ Տերս, իմանալով այն աղետի մասին, որը պիտի գա երկրի ՚բնակիչների վրա, կանչեցի իմ ծառա Ջոզեֆ Սմիթ կրտսերին, և երկնքից խոսեցի նրա հետ, և նրան պատվիրաններ տվեցի:

18 Եվ նաև ուրիշներին պատվիրաններ տվեցի, որ նրանք պետք է հռչակեն այս բաներն աշխարհին. և այս ամենը, որպեսզի իրականանա այն, ինչ գրվել է մարգարեների կողմից, -

7աբ օր. Ե.29,
Ժող. ԺԲ.13:
բ ՎևոՒ 1.38:
8ա սոՒ Կնիք, Կնքում:
բ սոՒ Ապստամբություն:
9ա չայտ. ԺԺ.15-16,
1 Նեփի 22.16-17:
բ Մոսիա 16.2,
ՋՍ-Մ 1.31, 55:
10ա սոՒ չիսուս Քրիստոսի երկրորդ գալուստը:
բ Եզեկ. Է.4, ՎևոՒ 56.19:
սոՒ չիսուս Քրիստոս -
Գատավոր:

գ Առակ. ԻԳ.12,
Այմա 9.28, 41.2-5,
ՎևոՒ 6.33:
դ Մատ. Է.2:
13ա ՎևոՒ 63.6:
բ Եզեկ. ԻԱ.3,
ՎևոՒ 35.14:
14ա Ես. ԾԳ.1:
բ 2 Նեփի 9.31,
Մոսիա 26.28:
գ ՎևոՒ 11.2:
դ Գոր. Գ.23, Այմա 50.20,
ՎևոՒ 50.8, 56.3:
15ա չեւ. ԻԳ.16, Ես. ԻԳ.5:

բ սոՒ Արարողություններ:
գ սոՒ Ուրացություն:
դ սոՒ Նոր և
հավիտենական ուխտ:
16ա Մատ. Զ.33:
բ Ես. ԾԳ.6:
գ ՎևոՒ 82.6:
դ Ել. Ի.4, 3 Նեփի 21.17:
սոՒ Կուսպաշտություն:
ե Ես. Ծ.9:
գ ՎևոՒ 64.24, 133.14:
սոՒ Բաբելոն:
Աշխարհիկություն:
17ա Ես. ԻԳ.1-6:

19 Աշխարհի թույլ բաներն առաջ պիտի գան և ջարդեն գորավորներին և ուժեղներին, որպեսզի մարդ խորհուրդ չտա իր ընկերոջը, ոչ էլ Քապավինի մարմնի բազկին, –

20 Այլ, որ ամեն մարդ կարողանա խոսել Տեր Աստծո, այսինքն՝ աշխարհի Փրկչի անունով.

21 Որ նաև հավատքն ավելանա երկրի վրա.

22 Որ իմ հավիտենական թուխտը հաստատվի.

23 Որ իմ ավետարանի լրիվությունը թույլերի և պարզամիտների միջոցով Պոռակվի աշխարհի ծայրերում և թագավորների ու կառավարիչների առաջ:

24 Ահա, ես եմ Աստված և ասել եմ դրանք. այս աստվածներն ինձանից են և տրվել են իմ ծառաներին իրենց թույլության մեջ, ըստ նրանց Քլեզվի, որ նրանք կարողանան Պասկացողության գալ:

25 Եվ որքան որ նրանք սխալվում էին՝ այն հայտնի դարձվեր.

26 Եվ որքան որ նրանք Պիմաստություն էին փնտրում կարողանային հրահանգվել.

27 Եվ որքան որ նրանք մեղանչում էին՝ կարողանային խրատվել, որ նրանք կարողանային Քապաշխարել.

28 Եվ որքան որ նրանք խոնարհ էին՝ նրանք կարողանային գորացվել և օրհնվել բարձրից, և ժամանակ առ ժամանակ Քգիտելիք ստանալ:

29 Եվ Նեփիացիների հիշատակարանն ստանալուց հետո, այո, այսինքն՝ իմ ծառա Ջոզեֆ Սմիթ կրտսերը կարողանար գորություն ունենալ՝ թարգմանելու Մորմոնի Գիրքը՝ Աստծո ողորմությամբ, Աստծո գորությամբ:

30 Եվ նաև, որ նրանք, ում տրվել էին այս պատվիրանները, կարողանային աստվածություն ունենալ՝ դնելու հիմքն այս Քեկեղեցու, և մթությունից ու Պխավարից դուրս բերելու այն՝ միակ ճշմարիտ և կենդանի Քեկեղեցին ողջ երկրի երեսի վրա, որը, ես՝ Տերս, հավանում եմ, խոսելով եկեղեցու մասին հավաքապես և ոչ անհատապես, –

31 Բանգի, ես՝ Տերս, չեմ կարող անեղըր նվազագույն իսկ աստիճանով թույլատրելի համարել.

32 Այնուամենայնիվ, նա, ով ապաշխարում և կատարում է Տիրոջ պատվիրանները, պիտի աներվի.

33 Եվ նա, ով չի ասապաշխարում, նրանից պիտի վերցվի նույնիսկ այն լույսը, որն ինքն ստացել է.

19ա Գոր. Գ.13, Ա Կոր. Ա.27, ՎևոՒ 35.13, 133.58–59:
 սոՒ Հեգ, Հեգություն:
 p 2 Նեփի 28.31:
 սոՒ Ապավինել:
 20ա սոՒ Վկայել:
 22ա ՎևոՒ 39.11:
 սոՒ Ուխտ. Նոր և հավիտենական ուխտ:
 23ա սոՒ Ավետարան:
 p Ա Կոր. Ա.26–29:
 q սոՒ Միսիոներական աշխատանք:
 24ա 2 Նեփի 33.10–11, Մոր. 10.27–28:
 p 2 Նեփի 31.3,

Եթեր 12.39:
 q ՎևոՒ 50.12:
 սոՒ Հասկանալ:
 26ա Հակ. Ա.5, ՎևոՒ 42.68:
 սոՒ Իմաստություն:
 27ա սոՒ Խրատել, Խրատելը:
 p սոՒ Ապաշխարել, Ապաշխարություն:
 28ա սոՒ Խոնարհ, Խոնարհություն:
 p սոՒ Գիտություն:
 29ա սոՒ Մորմոնի Գիրքը:
 30ա ՎևոՒ 1.4–5, 17–18:
 p սոՒ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի

Եկեղեցի, Ավետարանի վերականգնումը:
 q սոՒ Հոգևոր խավար:
 η Եփես. Գ.5, 11–14:
 սոՒ Եկեղեցու ճշմարտության նշանները:
 ե ՎևոՒ 38.10:
 31ա Ալմա 45.16, ՎևոՒ 24.2:
 սոՒ Մեղք:
 32ա ՎևոՒ 58.42–43:
 սոՒ Ներել:
 33ա Մոսիա 26.32:
 p Ալմա 24.30, ՎևոՒ 60.2–3:

Քանզի իմ ⁴Հոզին միշտ չի ²տքնի մարդու հետ, ասում է Ջորազ Տերը:

34 Եվ բացի այդ, ճշմարիտ ասում են ձեզ, ո՛վ երկրի բնակիչներ. Ես՝ Տերս, կամենում եմ հայտնի դարձնել այս բաներն ³ամեն մարմնի.

35 Քանզի ես ⁴անաչառ եմ անձանց հանդեպ, և կամենում եմ, որ բոլոր մարդիկ իմանան, որ սքընթաց գալիս է ⁵Քորը. դեռևս ժամը չէ, բայց մոտ է՝ առ ձեռն, երբ ⁶խաղաղությունը պիտի վերցվի երկրի վրայից, և ⁷դևը գործություն պիտի ունենա իր իսկ տիրապետության վրա:

36 Եվ մաս Տերը գործություն պիտի ունենա իր ⁸սրբերի վրա, և պիտի ⁹թագավորի նրանց ¹⁰մեջ, և ¹¹դատաստանով վար պիտի գա ¹²Եդովմեայի, կամ աշխարհի վրա:

37 Քննեք այս ¹³պատվիրանները, քանզի դրանք ճշմարիտ են ու հավատարիմ, և մարգարեություններն ու ¹⁴խոստումները, որոնք դրանց մեջ են, բոլորը պիտի կատարվեն:

38 Ինչ որ ես՝ Տերս, ասել եմ, ես եմ ասել, և չեմ արդարանում. ու թեև երկինքն ու երկիրը պիտի անցնեն, իմ ¹⁵խոսքը չպիտի անցնի, այլ բոլորը պիտի ¹⁶կատարվի, լինի դա իմ իսկ ¹⁷ձայնով, թե իմ ¹⁸ձառաների ձայնով՝ ¹⁹մինչև նույն է:

39 Քանզի ահա, տե՛ս, Տերն Աստված է, և ²⁰Հոզին վկայություն է բերում, և վկայությունը ճշմարիտ է, և ²¹ճշմարտությունը մնում է հավիտյանս հավիտենից: Ամեն:

ԲԱԺԻՆ 2

Մի հատված՝ հրեշտակ Մորմոնի՝ Ջոզեֆ Սմիթ Մարգարեին ասված խոսքերից, Մանչեստրում, Նյու Յորք, Մարգարեի հոր տանը, 1823թ. սեպտեմբերի 21-ի երեկոյան (History of the Church, 1.12): Մորմոնին վերջինն էր պատմագիրների մեծ շարքում, ովքեր գրել էին այն հիշատակարանը, որն այժմ աշխարհի առջև է, որպես Մորմոնի Գիրքը: (Համեմատե՛ք Մաղաքիա Գ.5–6. նաև բաժիններ՝ 27.9, 110.13–16 և 128.18):

1 Եղիան պետք է հայտնի քահանայությունը. 2–3՝ Հայրերի խոստում-

ները սերմանվում են զավակների սրտերում:

33գ սուր Սուրբ Հոզի:
 դ Ծն. 2.3, 2 Նեփի 26.11, Մոմ. 5.16, Եթեր 2.15, Մոր. 9.4:
 34ա Մատ. ԻԸ.19, ՎևոՒ 1.2, 42.58:
 35ա Բ Օր. Ժ.17, Գոր. Ժ.34, Մոր. 8.12, ՎևոՒ 38.16:
 բ սուր Վերջին օրեր, Ետին օրեր:
 գ ՎևոՒ 87.1–2: սուր Խաղաղություն. Ժամանակների նշանները:
 դ սուր Դև:

36ա սուր Սուրբ:
 բ սուր Հիսուս Քրիստոս – Քրիստոսի հազարամյա թագավորությունը:
 գ Չաք. Բ.10–11, ՎևոՒ 29.11, 84.118–119:
 դ սուր Դատել, Դատաստան:
 ե սուր Աշխարհ:
 37ա սուր Սուրբ գրքեր:
 բ ՎևոՒ 58.31, 62.6, 82.10:
 38ա Գ Թագ. Ժ.10, Մատ. Ե.18,

ԻԳ.35, 2 Նեփի 9.16, ՋՍ–Մ 1.35:
 բ ՎևոՒ 101.64:
 գ Բ Օր. ԺԸ.18, ՎևոՒ 18.33–38, 21.5: սուր Հայտնություն.
 Չայն:
 դ սուր Մարգարե:
 ե սուր Իշխանություն. Եկեղեցու ղեկավարներից հաստատելը:
 39ա Ա Հովհ. Ե.6, ՎևոՒ 20.27, 42.17:
 բ սուր Ճշմարտություն:

ԱՀԱ, ես ձեզ կհայտնեմ Քահանայությունը, ^աԵղիա մարգարեի ձեռքով, նախքան Տիրոջ ^բմեծ ու ահեղ օրվա գալը:

2 Եվ զավակների սրտերում ^անա կտերմանի հայրերին տված

^բխոստումները, և զավակների սրտերը կդառնան դեպի իրենց հայրերը:

3 Եթե այդպես չլինի, ողջ երկիրն ամբողջովին կամայաճառաւ նրա զալստյան ժամանակ:

ԲԱԺԻՆ 3

Հայտնություն տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեին, Հարմոնիում, Պենսիլվանիա, 1828թ. հուլիսին, Մորմոնի Գրքի առաջին մասից թարգմանված 116 ձեռագիր էջերը կորցնելու վերաբերյալ, որը կոչվում էր Լեքիի գիրքը: Մարգարեն դժկամորեն թույլ էր տվել, որ այդ էջերն իր հսկողությունից անցնեն Մարտին Հարրիսին, որը Մորմոնի Գրքի թարգմանության ընթացքում, մի կարճ ժամանակ, ծառայել էր որպես դպիր: Հայտնությունը տրվել էր Ուրիմի ու Թումիմի միջոցով: (History of the Church, 1.21–23: Տե՛ս բաժին 10):

1–4 Տիրոջ ընթացքը մեկ հավերժական շրջան է. 5–15 Ջոզեֆ Սմիթը պետք է ապաշխարի, այլապես կկորցնի թարգմանելու պարզևը. 16–20՝ Մորմոնի Գիրքն ի հայտ է գալիս՝ փրկելու Լեքիի սերունդը:

ԱՍԾՈ ^ագործերը և ծրագրերը խափանվել, ոչ էլ կարող են ոչընչանալ:

2 Քանզի ^աԱստված չի քայլում ծուռ շավիղներով, նա չի թեքվում ո՛չ աջ կամ ձախ, ո՛չ էլ շեղվում է այն բանից, ինչ ասել է, ուստի նրա շավիղներն ուղիղ են, և նրա ^բընթացքը մեկ հավերժական շրջան է:

3 Հիշիր, հիշիր, որ Աստծո ^ագործը

չէ, որ խափանվում է, այլ մարդկանց գործը.

4 Քանզի, թեև մարդ կարող է ունենալ շատ հայտնություններ, և ունենալ շատ գորավոր գործեր անելու գորություն, այդուհանդերձ, եթե նա ^ապարծենում է իր սեփական ուժով, և ոչինչ է համարում Աստծո ^բխորհուրդներն ու հետևում է իր իսկ կամքի ու ^գմարմնական ցանկությունների թելադրանքին, նա պետք է ընկնի և իր վրա հրավիրի արդար Աստծո ^դվրեժխնդրությունը:

5 Ահա՛, թեզ վստահվել էին այս բաները, բայց որքա՛ն խիստ էին քո պատվիրանները. և հիշիր նաև խոստումները, որոնք տրվել էին թեզ, եթե դու չզանցառեիր դրանք:

2 1ա Մաղ. Գ.5–6, 3 Նեփի 25.5–6, ՎևոՒ 110.13–15, 128.17, ՋՍ–Պ 1.38–39: սո՛ւ Եղիա. Քահանայության բանալիները: ^բ ՎևոՒ 34.6–9, 43.17–26: 2ա ՎևոՒ 27.9, 98.16–17:

^բ սո՛ւ Փրկություն մահացածների համար. Կնիք, Կնքում: 3 1ա Մաղ. Ը.3–9, ՎևոՒ 10.43: 2ա Ալմա 7.20: սո՛ւ Աստված, Աստվածագլուխ: ^բ 1 Նեփի 10.18–19, ՎևոՒ 35.1: 3ա Գոր. Ե.38–39,

Մորմ. 8.22, ՎևոՒ 10.43: 4ա ՎևոՒ 84.73: սո՛ւ Հպարտություն: ^բ Հակոբ 4.10, Ալմա 37.37: սո՛ւ Պատվիրաններն Աստծո. Խորհուրդ: ^գ սո՛ւ Մարմնական: ^դ սո՛ւ Վրեժխնդրություն:

6 Եվ ահա, որքա՛ն հաճախ ես դու ՝ Պանգոթեյ Աստծո պատվիրաններն ու օրենքները և հետևել մարդկանց ՝ համոզմունքներին:

7 Քանզի ահա, դու մարդուց չպետք է ավելի շատ ՝ վախենայիր, քան Աստծուց: Չնայած մարդիկ ոչինչ են համարում Աստծո խորհուրդները, և ՝ Բարհամարիում են նրա խոսքերը,

8 Այնուամենայնիվ, դու պետք է հավատարիմ լինեիր. և նա կնկններ իր ձեռքը և կաջակցեր քեզ ՝ հակառակորդի բոլոր կրակոտ ՝ նետերի դեմ. և նա քեզ հետ կլիներ բոլոր ՝ փորձանքների ժամանակ:

9 Ահա, դու Չոզեֆն ես, և դու ընտրվել ես Տիրոջ գործը կատարելու, սակայն, օրինազանցության պատճառով, եթե դու աշխուրջ չլինես, ապա կընկես:

10 Սակայն հիշիր, Աստված ողորմած է. ուստի, ապաշխարիր այն բանից, ինչ դու արել ես, ինչը դեմ է այն պատվիրանին, որը ես տվել էի քեզ, և դու դեռևս ընտրված ես և կրկին կանչված այս գործին.

11 Եթե դու չանես այն, դու կհանձնվես ու կդառնաս ուրիշ մարդկանց պես և այլևս պարզ և չես ունենա:

12 Եվ երբ դու հանձնեցիր այն, ինչը ՝ թարգմանելու համար Աստված քեզ տեսություն և գորություն

եր տվել, դու հանձնեցիր այն, ինչը սրբազան է, ամբարիշտ ՝ մարդու ձեռքը,

13 Որը ոչինչ է համարել Աստծո խորհուրդները, և դրժել է Աստծո առաջ տրված ամենասրբազան խոստումները, և հիմնվել է իր սեփական դատողության վրա ու ՝ պարծեցել իր սեփական իմաստությամբ:

14 Եվ այդ է պատճառը, որ դու որոշ ժամանակ կորցրել ես քո առանձնաշնորհները,

15 Քանզի դու հանդուրժել ես, որ ՝ Պեկավարիդ խորհուրդն ի սկզբանե ոտնահարվի:

16 Չնայած դրան, իմ գործն առաջ է ընթանալու, քանզի, ինչպես որ ՝ Փրկչի մասին գիտելիքը եկել է աշխարհ՝ հրեաների ՝ վկայության միջոցով, ճիշտ այդպես էլ Փրկչի մասին ՝ գիտելիքը պիտի հասնի իմ ժողովրդին, -

17 Եվ ՝ Նեփիացիներին, և՛ Հակոբացիներին, և՛ Հովսեփացիներին, և՛ Չորամացիներին՝ իրենց հայրերի վկայության միջոցով, -

18 Եվ այս ՝ վկայությունը պիտի հասնի ՝ Լամանացիների, Լեմուելացիների և Իսմայելացիների իմացությանը, որոնք իրենց հայրերի անօրինության պատճառով անհավատության մեջ ՝ ղրկվան, որոնց՝ Տերը թույլ տվեց ՝ կործանել իրենց եղբայրներին՝ Նեփիացիներին, նրանց անօրինությունների

6ա Վևո 5.21,
ՋՄ-Պ 1.28-29:
բ Վևո 45.29, 46.7:
7ա Սաղ. ԻԷ.1, Ղուկ. Թ.26,
Վևո 122.9:
սո՝ Քաջություն,
Քաջարի. Վախ:
բ Ղև. ԻՋ.42-43,
1 Նեփի 19.7,
Հակոբ 4.8-10:

8ա սո՝ Գև:
բ Եփես. 2.16,
1 Նեփի 15.24,
Վևո 27.17:
գ Ալմա 38.5:
12ա Վևո 1.29, 5.4:
բ Վևո 10.6-8:
13ա սո՝ Հպարտություն:
15ա նշ. Տիրոջ:
16ա սո՝ Փրկիչ:

բ 1 Նեփի 13.23-25,
2 Նեփի 29.4-6:
գ Մոսիա 3.20:
17ա 2 Նեփի 5.8-9:
18ա սո՝ Մորմոնի Գիրքը:
բ 2 Նեփի 5.14,
Ենոկ 1.13-18:
գ 2 Նեփի 26.15-16:
դ Մորմ. 8.2-3:

ու նրանց պղծությունների պատճառով:

19 Եվ հենց այս ^անպատակի համար են այդ ^բքիթեղները պահպանվել, որոնք պարունակում են այդ հիշատակարանները, – որպեսզի իրականանան Տիրոջ ^գխոստումները, որոնք նա տվել է իր ժողովրդին:

20 Եվ որ ^աԼամանացիները կա-

րողանան գալ իրենց հայրերի գիտությանը, և որ նրանք կարողանան իմանալ Տիրոջ խոստումները, և որ նրանք ^բհավատան ավետարանին և ^գվստահեն Հիսուս Քրիստոսի արժանիքներին, և ^դփառավորվեն հավատքի միջոցով առ նրա անունը, և որ իրենց ապաշխարության միջոցով նրանք կարողանան փրկվել: Ամեն:

ԲԱԺԻՆ 4

Հայտնություն տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեի միջոցով, իր հորը՝ Ջոզեֆ Սմիթ ավագին, Հարմոնիում, Պենսիլվանիա, 1829թ. փետրվարին (History of the Church, 1.28):

1–4 Անվեհեր ծառայությունը փրկում է Տիրոջ ծառաներին: 5–6՝ Աստվածային հատկանիշները նրանց որակում են ծառայության համար: 7՝ Աստծո բաներն է պետք փնտրել:

ԱՐԳ ահա, մի ^ազարմանալի գործ է առաջ գալիս մարդկանց զավակների մեջ:

2 Ուստի, ո՛վ դուք, որ մտնում եք Աստծո ^ածառայության մեջ, տեսեք, որ ձեր ողջ ^բսրտով, գործությամբ, մտքով և ուժով ^գծառայեք նրան, որ վերջին օրը դուք կարողանաք ^դանարատ կանգնել Աստծո առաջ:

3 Ուստի, եթե դուք ցանկություն

ունեք Աստծուն ծառայելու, ապա ^ականչված եք գործին:

4 Քանզի ահա ^աարտը սպիտակել է՝ արդեն ^բհնձին հասել: և ահա, ով զցում է իր մանգաղն իր գործությամբ, նա հավաքում է ի ^գպահուստ, այնպես որ, նա չի կորչում, այլ փրկություն է բերում իր հոգուն:

5 Եվ ^ահավատքը, ^բհույսը, ^գզբուքյունը և ^դսերը, պարզ ^եաչքով ուղղված Աստծո ^զփառքին, որակում են նրան գործի համար:

6 Հիշեք, հավատք, ^աառաքինություն, գիտություն, ժուժկալություն, ^բհամբերություն, եղբայրասիրություն, աստվածայնություն, զբու-

- 19ա 1 Նեփի 9.3, 5:
բ սուր Ոսկե քիթեղներ:
գ 3 Նեփի 5.14–15,
ՎևՈՒ 10.46–50:
- 20ա 2 Նեփի 30.3–6,
ՎևՈՒ 28.8, 49.24:
բ Մորմ. 3.19–21:
գ 2 Նեփի 31.19, Մոր. 6.4:
դ Մոր. 7.26, 38:
- 4 1ա Ես. ԻԹ.14,
1 Նեփի 14.7, 22.8,
ՎևՈՒ 6.1, 18.44:
սուր Ավետարանի

- վերականգնումը:
2ա սուր Ծառայություն:
բ սուր Միրտ. Միտք:
գ Հես. ԻԲ.5, ԱԹագ. Է.3,
ՎևՈՒ 20.19, 76.5:
դ Ա Կոր. Ա.8, Հակոբ 1.19,
3 Նեփի 27.20:
3ա ՎևՈՒ 11.4, 15, 36.5,
63.57:
սուր Կանչ, Աստծո
կողմից կանչված,
Կոչում:
4ա Հովհ. Դ.35,

- Ալմա 26.3–5,
ՎևՈՒ 11.3, 33.3, 7:
բ սուր Հունձը:
գ Ա Տիմ. 2.19:
5ա սուր Հավատք:
բ սուր Հույս:
գ սուր Գթություն:
դ սուր Սեր:
ե Սաղ. ՂԽԱ.8,
Մատ. 2.22, Մորմ. 8.15:
գ սուր Փառք:
6ա սուր Առաքինություն:
բ սուր Համբերություն:

քյուն, Պսոմարիոքյուն, Պջանա- սիրոքյուն:

7 ՄԽնդրեք, և դուք կստանաք. քակեք, և ձեզ կբացվի: Ամեն:

ԲԱԺԻՆ 5

Հայտնություն՝ տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեի միջոցով, Հարմոնիում, Պենսիլվանիա, 1829թ. մարտին, ի պատասխան Մարտին Հարրիսի խնդրանքին (History of the Church, 1.28–31):

1–10՝ Այս սերունդը Տիրոջ խոսքը կստանա Ջոզեֆ Սմիթի միջոցով. 11–18՝ Երեք վկաներ կվկայեն Մորմոնի Գրքի վերաբերյալ. 19–20՝ Տիրոջ խոսքը կհաստատվի, ինչպես նախկինում. 21–35՝ Մարտին Հարրիսը կարող է ապաշխարել և լինել վկաներից մեկը:

տաս, բացի այն Մանձանցից, որոնց համար պատվիրեցի քեզ. և դու Քորուքյուն չունես դրանց վրա, եթե ես չընորհեմ այն քեզ:

4 Եվ դու պարզև ունես՝ թիթեղները թարգմանելու. և դա առաջին պարզևն է, որ ես շնորհեցի քեզ. և ես պատվիրեցի, որ ուրիշ այլ պարզևի հավակնություն դու չպիտի ունենաս, մինչև այս մեկում իմ նպատակը չիրականանա. քանզի ուրիշ այլ պարզև ես քեզ չեմ շնորհելու, մինչև այս մեկը չավարտվի:

ԱՀԱ, ես ասում եմ քեզ, որ քանի որ իմ ծառա Մարտին Հարրիսը վկայություն է փափագել իմ ձեռքից, որ դո՛ւ, իմ ծառա Ջոզեֆ Սմիթ կրտսերդ, ունես այն Քթիթեղները, որոնց մասին դու վկայել ես ու արձանագրել, որ ստացել ես ինձանից.

5 Ճշմարիտ եմ ասում քեզ, որ վա՛յ պիտի գա երկրի բնակիչների վրա, եթե նրանք ականջ չհղնեն իմ խոսքերին.

2 Եվ արդ, ահա, դու պիտի ասես նրան հետևյալը, – նա, ով խոսել է քեզ հետ, ասել է քեզ. Ես՝ Տերս եմ Աստված, և այս բաները տվել եմ քեզ, իմ ծառա Ջոզեֆ Սմիթ կրտսեր, և պատվիրել եմ, որ դու պետք է կանգնես որպես այս բաների Մվկա.

6 Քանզի, այսուհետև, դու պիտի Մկարգվես և առաջ գնաս ու հասցնես իմ Քխոսքերը մարդկանց զավակներին:

3 Եվ ես կարգադրել եմ քեզ, որ դու ինձ հետ ուխտի մեջ պիտի մտնես, որ դրանք ցույց չպետք է

7 Ահա, եթե նրանք չկամենան Մհավատալ իմ խոսքերին, նրանք չեն հավատա քեզ, իմ ծառա՝ Ջոզեֆ, եթե հնարավոր լիներ, որ դու նրանց ցույց տայիր բոլոր այս բաները, որոնք ես հանձնել եմ քեզ:

8 Ա՛խ, այս Մանհավատ և

6գ ստ. Խոնարի, Խոնարիություն: ղ ստ. Ջանասիրություն: 7ա Մատ. Է.7–8, 2Նեփի 32.4: ստ. Ադոքք: 5 1ա ՎևոՒ 5.23–24, ՋՍ–Պ 1.61: ք ստ. Ոսկե թիթեղներ:

2ա ստ. Վկա: 3ա 2Նեփի 27.13: 2Նեփի 27.13: Տե՛ս նաև «Երեք վկաների վկայությունը» և «Ուր վկաների վկայությունը» Մորմոնի Գրքի ներածական էջերում: ք 2Նեփի 3.11:

5ա Երեմ. ԻՋ.4–5, Ալմա 5.37–38, ՎևոՒ 1.14: 6ա ՎևոՒ 20.2–3: ստ. Կարգել, Կարգում: ք 2Նեփի 29.7: 7ա Գուլ. ԺՁ.27–31, ՎևոՒ 63.7–12: 8ա ստ. Անհավատություն:

Քիստաապարանոց սերունդը, – իմ բարկությունը բռնկվել է նրանց դեմ:

9 Ահա, ճշմարիտ ասում եմ քեզ. Այն բաները, որոնք ես վատահել եմ քեզ, իմ ծառա՝ Ջոզեֆ, ես ՝պահպանել եմ իմ իմաստուն նպատակի համար, և այն հայտնի պիտի դարձվի ապագա սերունդներին.

10 Բայց այս սերունդն իմ խոսքը կունենա քո միջոցով.

11 Եվ ի լրումն քո վկայության, իմ ծառաներից երեքի ՝վկայությունը ևս, որոնց ես պիտի կանչեմ և կարգեմ, որոնց ես ցույց կտամ այս բաները, և նրանք առաջ պիտի գնան իմ խոսքերով, որոնք տրվել են քո միջոցով:

12 Այո, նրանք անկասկած պիտի իմանան, որ այս բաները ճշմարիտ են, քանզի ես երկնքից այն կհայտարարեմ նրանց:

13 Ես գորություն կտամ նրանց, որ նրանք կարողանան նայել ու տեսնել այս բաները՝ ինչպես դրանք կան.

14 Եվ այս սերնդի մեջ ուրիշ ՝ոչ ոքի ես չեմ շնորհի այդ գորությունը՝ ստանալու այդ նույն վկայությունը, այժմ, երբ իմ ՝եկեղեցին բարձրանում և դուրս է գալիս անապատից՝ պարզ, ինչպես Գլու-

սինը, և մաքուր, ինչպես արևը, և ահարկու, ինչպես դրոշակակիր զորքը:

15 Եվ երեք ՝վկաների վկայությունը, իմ խոսքի վերաբերյալ, ես առաջ կուղարկեմ:

16 Եվ ահա, ովքեր որ ՝հավատան իմ խոսքին, նրանց ես ՝կայցելեմ իմ ՝Հոգու ՝դրսևորմամբ. և նրանք ՝կծնվեն ինձանից, այսինքն՝ ջրից և Հոգուց, –

17 Եվ դու դեռ պետք է մի քիչ սպասես, քանզի դու դեռ ՝կարգված չես, –

18 Եվ նրանց վկայությունը նույնպես առաջ կգնա՝ ի ՝դատապարտություն այս սերնդի, եթե նրանք կարծրացնեն իրենց սրտերը նրանց դեմ.

19 Քանզի ամայացնող մի ՝պատուհաս պիտի գա երկրի բնակիչների մեջ և ժամանակ առ ժամանակ պիտի շարունակի դուրս թափվել, եթե նրանք ՝չապաշխարեն, մինչև որ երկիրը ՝դատարկվի, և նրա բնակիչներն այրվեն ու ամբողջովին կործանվեն իմ ՝գալստի պայծառությունից:

20 Ահա, ես ասում եմ քեզ այս բաները, ճիշտ այնպես, ինչպես մարդկանց ՝ասացի Երուսաղեմի կործանման վերաբերյալ. և իմ

8բ Մորմ. 8.33:
սուր Հպարտություն:
9ա Ալմա 37.18:
11ա 2 Նեփի 27.12,
Եթեր 5.3–4,
Վև.ՈՒ 171–5:
14ա 2 Նեփի 27.13:
բ սուր Հիսուս Քրիստոսի
Եկեղեցի, Ավետարանի
վերականգնումը:
գ Վև.ՈՒ 105.31, 109.73:
15ա Վև.ՈՒ 171–20:
սուր Մորմոնի Գրքի
վկաները:

16ա Եթեր 4.11:
բ 1 Նեփի 2.16:
գ սուր Մուրբ Հոգի:
դ Վև.ՈՒ 8.1–3:
ե սուր Մկրտություն,
Մկրտել. Վերստին
ծնված, Աստծուց
ծնված. Մուրբ Հոգու
պարզև:
17ա սուր Իշխանություն.
Կարգել, Կարգում:
18ա 1 Նեփի 14.7,
Վև.ՈՒ 20.13–15:
19ա Վև.ՈՒ 29.8, 35.11,

43.17–27:
սուր Վերջին օրեր,
Ետին օրեր.
Ժամանակների
նշանները:
բ սուր Ապաշխարել,
Ապաշխարություն:
գ Ես. ԻՂ.1, 5–6:
դ Ես. ԿԶ.15–16,
Վև.ՈՒ 133.41:
սուր Հիսուս Քրիստոսի
երկրորդ գալուստը:
20ա 1 Նեփի 1.18,
2 Նեփի 25.9:

Քիտսըը պիտի հաստատվի այս ժամանակ, ինչպես այն հաստատվել է մինչ այժմ:

21 Եվ այժմ, իմ ծառա՝ Ջոզեֆ, ես պատվիրում եմ քեզ ապաշխարել, և ավելի ուղիղ քայլել իմ առաջ, և այլևս չտրվել մարդկային համոզմունքներին:

22 Եվ որ դու հաստատուն լինես այն պատվիրանները՝ «պահելիս, որոնք ես պատվիրել եմ քեզ. և եթե դու կատարես դրանք, ահա ես շնորհում եմ քեզ հավերժական կյանք, նույնիսկ եթե դու ՚սպանվես:

23 Եվ այժմ, բացի դրանից, իմ ծառա՝ Ջոզեֆ, ես ասում եմ քեզ այն՝ «մարդու վերաբերյալ, որը վկայություն է փափագում:

24 Ահա, ես ասում եմ նրան՝ նա բարձրացնում է իրեն և բավականաչափ չի խոնարհեցում իրեն իմ առաջ. սակայն, եթե նա խոնարհվի իմ առաջ և խոնարհեցնի իրեն զորավոր աղոթքով ու հավատքով, իր սրտի անկեղծությամբ, այն ժամանակ, ես նրան մի՛ տեսարան կշնորհեմ այն բաների վերաբերյալ, որոնք նա ցանկանում է տեսնել:

25 Եվ այն ժամանակ, նա պիտի ասի այս սերնդի մարդկանց. Ահա, ես տեսել եմ այն բաները, որոնք Տերը ցույց է տվել Ջոզեֆ Սմիթ կրտսերին, և ես՝ գիտեմ, անկասկած, որ դրանք ճշմարիտ են, քանզի ես տեսել եմ դրանք, քանզի դրանք ինձ ցույց են տրվել Աստծո զորությամբ, ոչ թե մարդու:

26 Եվ ես՝ Տերս, պատվիրում եմ նրան՝ իմ ծառա Մարտին Հարրի-

սին, որ այս բաների վերաբերյալ նա նրանց չպիտի ասի ավելին, բացի այն, որ նա պիտի ասի. Ես տեսել եմ դրանք, և դրանք ինձ ցույց են տրվել Աստծո զորությամբ. և սրանք են այն խոսքերը, որոնք նա պիտի ասի:

27 Բայց եթե նա ուրանա այդ, նա կդրժի այն ուխտը, որը նախկինում ուխտել է ինձ հետ, և ահա, նա դատապարտված է:

28 Եվ արդ, եթե նա չխոնարհեցնի իրեն և չխոստովանի ինձ այն բաները, որոնք նա արել է, որոնք սխալ են, և ուխտ չկապի ինձ հետ, որ նա կպահի իմ պատվիրանները, և հավատք չգործադրի առ ինձ, ահա, ես ասում եմ նրան՝ նա չի ունենա այդպիսի տեսարաններ, քանզի ես չեմ շնորհի այն բաների տեսարանները, որոնց մասին ես ասել եմ:

29 Եվ եթե այդպես լինի, ես պատվիրում եմ քեզ, իմ ծառա Ջոզեֆ, որ դու ասես նրան, որ նա ոչինչ չպիտի անի ավելին, ոչ էլ այլևս ինձ անհանգստացնի այս հարցի վերաբերյալ:

30 Եվ եթե այդպես լինի, ահա, ես ասում եմ քեզ, Ջոզեֆ, երբ դու մի քանի էջ ևս թարգմանես, դու որոշ ժամանակ պիտի դադարես, նույնիսկ մինչև որ ես կրկին պատվիրեմ քեզ. այն ժամանակ դու կարող ես կրկին թարգմանել:

31 Եվ եթե դու այդպես չվարվես, ահա, դու այլևս պարզ չես ունենա, և ես ետ կվերցնեմ այն բաները, որոնք վստահել եմ քեզ:

32 Եվ արդ, քանի որ ես կանխատեսում եմ, որ դարան են մտել

20բ ՎևՈՒ 1.38:
22ա սու՝ Հնազանդություն,
Հնազանդ, Հնազանդվել:
բ Ալմա 60.13,

ՎևՈՒ 6.30, 135.1–7:
23ա ՎևՈՒ 5.1:
24ա Տե՛ս «Երեք վկաների
վկայությունը»

Մորմոնի Գրքի
ներածական էջերում:
25ա Եթեր 5.3:

կործանելու քեզ, այո, ես կանխատեսում եմ, որ, եթե իմ ծառա Մարտին Հարրիսը չխոնարհեցնի իրեն և վկայություն չստանա իմ ձեռքից, ապա նա կընկնի օրինազանցության մեջ.

33 Եվ կան շատերը, որ դարան են մտել՝ ^ակործանելու քեզ երկրի երեսից. և դրա համար, որպեսզի քո օրերը երկարացվեն, ես տվել եմ քեզ այս պատվիրանները:

34 Այո, դրա համար եմ քեզ ասել. Դադար առ և խաղաղվիր, մինչև քեզ պատվիրեմ, և ես միջոցներ ^ակապահովեմ, որոնցով դու կկարողանաս իրագործել այն, ինչ պատվիրել եմ քեզ:

35 Ու եթե դու ^ահավատարիմ լինես իմ պատվիրանները պահելիս, վերջին օրը դու պիտի ^բբարձրացվես: Ամեն:

ԲԱԺԻՆ 6

Հայտնություն՝ տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեին և Օլիվեր Բատլերիին, Հարմոնիում, Պենսիլվանիա, 1829թ. ապրիլին (History of the Church, 1.32–35): 1829թ. ապրիլի 7-ին Օլիվեր Բատլերին սկսեց Մորմոնի Գրքի քարգնանության իր աշխատանքները՝ որպես դալիր: Նա արդեն աստվածային հայտնություն էր ստացել Մարգարեի վկայության ճշմարտացիության վերաբերյալ՝ այն թիթեղների մասին, որոնց վրա փորագրված էր Մորմոնի Գրքի հիշատակարանը: Մարգարեն Ուրիմի ու Թումիմի միջոցով հարցրեց Տիրոջը և ստացավ հետևյալ պատասխանը:

1–6՝ Տիրոջ արտում աշխատողները փրկություն են ստանում. 7–13՝ Չկա ավելի մեծ պարգև, քան փրկության պարգևը. 14–27՝ Ճշմարտության մասին վկայությունը գալիս է Հոգու գործությամբ. 28–37՝ Նայեք Բրիստոսին և շարունակ քարիք գործեք:

ՄԵՇ և ^ազարմանալի մի գործ է առաջ գալիս մարդկանց զավակների համար:

2 Ահա, ես եմ Աստված. ուշք դարձրեք իմ ^ախոսքին, որը կենդանի է և գորեղ, երկասյր սրից ^բհատու՝ հողերը և ծուծը բաժա-

նող. ուստի, ուշք դարձրեք իմ խոսքերին:

3 Ահա, ^աարտը սպիտակել է՝ արդեն հնձին հասել. ուստի, ով որ փափագում է հնձել, թող գցի իր մանգաղն իր գործությամբ ու հնձի, քանի դեռ օրը ցերեկ է, որ կարողանա իր հոգու համար հավիտենական փրկություն գանձել Աստծո արքայությունում:

4 Այո՛, ով որ ^ագցի իր մանգաղն ու հնձի, նա կանչված է Աստծուց:

5 Ուստի, եթե ^ախնդրեք ինձանից, դուք կստանաք. եթե թակեք, կբացվի ձեզ:

6 Արդ, որովհետև դուք հարցրե-

33ա ՎևոՒ 10.6, 38.13, 28:
34ա 1 Նեփի 3.7:
35ա Ել. ԺԵ.26, ՎևոՒ 11.20:
բ Հովհ. 2.39–40,
Ա ԹԵ. Գ.16,
3 Նեփի 15.1,
ՎևոՒ 9.14, 17.8,

75.16, 22:
6 1ա Ես. ԻԹ.14,
ՎևոՒ 4.1–7, 18.44:
2ա Եբր. Գ.12,
Հայտ. Ա.16,
ՎևոՒ 27.1:
բ Հել. 3.29, ՎևոՒ 33.1:

3ա Հովհ. Գ.35,
ՎևոՒ 31.4, 33.3,
101.64:
4ա Հայտ. ԺԳ.15–19,
Ալմա 26.5,
ՎևոՒ 11.3–4, 27:
5ա Մատ. Է.7–8:

ցիք, ահա ես ասում եմ ձեզ. Պահեք իմ պատվիրանները և ՝փնտրեք առաջ տանել և հաստատել ՝Սիոնի գործը.

7 Մի ՝փնտրեք ՝հարստություն, այլ ՝հիմաստություն, և ահա, Աստծո ՝խորհուրդները կբացվեն ձեզ համար, և այն ժամանակ դուք կհարստանաք: Ահա, նա, ով ունի ՝հավերժական կյանք, հարուստ է:

8 Ճշմարիտ, ճշմարիտ ասում եմ քեզ, որ քեզ համար կլինի ճիշտ այնպես, ինչպես դու ցանկանում ես ինձանից. և եթե ցանկանաս, դու կլինես այն միջոցը, որով շատ բարիք կգործվի այս սերնդի մեջ:

9 Ոչինչ մի ասա այս սերնդին, բացի ՝ապաշխարությունից. պահիր իմ պատվիրանները և օգնիր առաջ տանել իմ գործը, իմ պատվիրանների համաձայն, և դու պիտի օրհնվես:

10 Ահա դու ունես պարզ, և օրհնված ես դու քո պարզեկ շնորհիվ: Հիշիր, այն ՝սրբազան է և գալիս է վերևից.

11 Եվ եթե ՝հարցնես, դու կիմանաս ՝խորհուրդներ, որոնք մեծ են և զարմանալի. ուստի, դու պետք է գործածես քո ՝պարզը, որ կարողանաս հասկանալ խորհուրդները, որ կարողանաս շատերին

բերել ճշմարտության իմացությանը, այո՛, ՝համոզես նրանց՝ իրենց սխալ ուղիների վերաբերյալ:

12 Հայտնի մի դարձրու քո պարզը ոչ որի, բացի նրանցից, ովքեր քո հավատքից են: Մի կատակիր ՝սրբազան բաների հետ:

13 Եթե բարիք գործես, այո՛, և ՝հավատարիմ ՝մնաս մինչև ՝վերջ, դու կփրկվես Աստծո արքայությունում, ինչն Աստծո պարզներից մեծագույնն է. քանզի չկա ավելի մեծ պարզ, քան ՝փրկության պարզը:

14 Ճշմարիտ, ճշմարիտ ասում եմ քեզ. Օրհնված ես դու այն բանի համար, որ արել ես. քանզի դու ՝հարցրել ես ինձ, և ահա, այնքան հաճախ, որքան հարցրել ես ինձ, դու հրահանգներ ես ստացել իմ Հոգուց: Եթե դա այդպես չլիներ, դու չէիր լինի այն տեղում, որտեղ հիմա գտնվում ես:

15 Ահա, դու գիտես, որ հարցրել ես ինձ, և ես լուսավորել եմ քո ՝միտքը. և այժմ ես ասում եմ քեզ այս բաները, որ կարողանաս իմանալ, որ դու լուսավորվել ես ճշմարտության Հոգով.

16 Այո, ես ասում եմ քեզ, որ կարողանաս իմանալ, որ չկա ուրիշ ոչ մեկը, բացի Աստծուց, որ ՝իմանա

<p>6ա1 Նեփի 13.37: բ սո՛ր Սիոն: 7ա Ալմա 39.14, Վևո՛ր 68.31: բ Գ Թագ. Գ.10-13, Մատ. ԺԹ.23, Հակոբ 2.18-19: սո՛ր Հարստություններ. Աշխարհիկություն: գ սո՛ր Բմաստություն: դ Վևո՛ր 42.61, 65: սո՛ր Աստծո խորհուրդները: ե Վևո՛ր 14.7: 9ա Ալմա 29.9,</p>	<p>Վևո՛ր 15.6, 18.14-15, 34.6: սո՛ր Միսիոներական աշխատանք. Ապաշխարել, Ապաշխարություն: 10ա Վևո՛ր 63.64: 11ա Վևո՛ր 102.23, ՋՍ-Պ 1.18, 26: բ Մատ. ԺԱ.25, ԺԳ.10-11, Ալմա 12.9: գ սո՛ր Պարզ. Հոգու պարզները: դ Հակ. Ե.20, Ալմա 62.45, Վևո՛ր 18.44:</p>	<p>12ա Մատ. Է.6: 13ա Մոսիա 2.41, Եթեր 4.19, Վևո՛ր 51.19, 63.47: բ 1 Նեփի 15.24: գ սո՛ր Համբերել: դ սո՛ր Փրկություն: 14ա սո՛ր Աղոթք: 15ա սո՛ր Միտք: 16ա Ա Մն. ԻԸ.9, Մատ. ԺԲ.25, Եբր. Դ.12, Մոսիա 24.12, 3 Նեփի 28.6: սո՛ր Ամենագետ:</p>
--	---	--

քո մտքերը և մտադրությունները քո ^բսրտի:

17 Ես քեզ ասում եմ այս բաները՝ որպես վկայություն քեզ համար, որ այն խոսքերը կամ աշխատությունները, որոնք դու գրում ես, ^աճշմարիտ են:

18 Ուստի ^աջանասեր եղիր. ^բկանգնիր իմ ծառա Ջոզեֆի կողքին, հավատարմորեն, ինչպիսի դժվար իրավիճակներում էլ որ նա լինի՝ հանուն խոսքի:

19 Խրատիր նրան իր սխալներում, և նաև, ընդունիր նրա խրատը: Եղիր համբերատար. եղիր լրջմիտ. եղիր ժուժկալ. ունեցիր համբերություն, հավատք, հույս և գթություն:

20 Ահա, դու Օլիվերն ես, և ես խոսեցի քեզ հետ քո ցանկությունների պատճառով. ուստի ^ագանձիր այս խոսքերը քո սրտում: Հավատարիմ և ջանասեր եղիր Աստծո պատվիրանները պահելիս, և ես կօղակեմ քեզ իմ սիրո բազուկներով:

21 Ահա, ես Հիսուս Քրիստոսն եմ՝ Աստծո ^աՈրդին: Ես նա եմ, որ եկա ^բյուրայինների մեջ, և յուրայիներն ինձ չընդունեցին: Ես եմ ^գլույսը, որը շողում է ^դխավարում, և խավարը չի ըմբռնում այն:

22 Դճմարիտ, ճշմարիտ, ասում եմ քեզ. Եթե դու լրացուցիչ վկայություն ես փափագում, ուղղիր

միտքդ դեպի այն գիշերը, երբ դու ինձ էիր կանչում քո սրտում, որպեսզի ^աիմանայիր այս բաների ճշմարտության մասին:

23 ^աԽաղաղություն չխոսեցի՞՞ ես քո մտքին այդ հարցի վերաբերյալ: Ավելի մեծ ի՞նչ ^բվկայություն կարող ես դու ունենալ, քան Աստծուց:

24 Եվ արդ, ահա, դու ստացել ես վկայություն. քանզի, եթե ես ասել եմ քեզ բաներ, որոնք ոչ ոք չգիտի, դու վկայություն չե՞ս ստացել:

25 Եվ, ահա, եթե դու ցանկանում ես ինձանից, ես շնորհում եմ քեզ պարզև՝ ^աթարգմանել, ճիշտ ինչպես իմ ծառա Ջոզեֆը:

26 Դճմարիտ, ճշմարիտ ասում եմ քեզ, որ կան ^ահիշատակարաններ, որոնք շատ բաներ են պարունակում իմ ավետարանից, որոնք ետ էին պահվել մարդկանց ^բամբարըշտության պատճառով.

27 Եվ այժմ ես պատվիրում եմ քեզ, որ եթե դու ունես բարի ցանկություններ, – երկնքում քեզ համար գանձեր հավաքելու ցանկություն, – այդ դեպքում, քո պարզև, դու կօգնես ի լույս բերել իմ սուրբ ^ագրքերի այն մասերը, որոնք թաքցվել են անօրինության պատճառով:

28 Եվ արդ, ահա, ես տալիս եմ քեզ, և նաև իմ ծառա Ջոզեֆին, բանալիներն այս պարզևի, որն ի

16բ Գ Թագ. Ը.39:
17ա ՎևոՒ 18.2:
18ա սոՒ Ջանախրություն:
բ ՎևոՒ 124.95–96:
20ա Եթեր 3.21,
ՎևոՒ 84.85:
21ա սոՒ Հիսուս Քրիստոս:
բ Հովհ. Ա.10–12,
Գոր. Գ.13–17,
3 Նեփի 9.16,
ՎևոՒ 45.8:

գ Հովհ. Ա.5,
ՎևոՒ 10.58:
սոՒ Լույս, Քրիստոսի լույս:
դ սոՒ Հոգևոր խավար:
22ա սոՒ Ջանագանելու պարզև:
23ա սոՒ Խաղաղություն:
բ Ա Հովհ. Ե.9,
ՎևոՒ 18.2:
25ա Մոսիա 8.13,

ՎևոՒ 5.4, 9.1–5, 10:
26ա ՎևոՒ 8.1, 9.2:
սոՒ Սուրբ գրքեր – Սուրբ գրքերի ի հայտ գալու մարգարեություններ:
բ սոՒ Ամբարիշտ, Ամբարշտություն:
27ա ՎևոՒ 35.20:

լույս կրերի այս ծառայությունը. և երկու կամ երեք ՝վկաների բերանով ամեն խոսք կհաստատվի:

29 Ճշմարիտ, ճշմարիտ ասում են քեզ, որ, եթե նրանք մերժեն իմ խոսքերը, և իմ ավետարանի ու ծառայության այս մասը, օրհնված եք դուք, քանզի նրանք ձեզ չեն կարող անել ավելին, քան ինձ:

30 Եվ, նույնիսկ, եթե նրանք ձեզ հետ ՝վարվեն ճիշտ այնպես, ինչպես ինձ հետ, օրհնված եք դուք, քանզի դուք պիտի ՝բնակվեք ինձ հետ, Պատրի մեջ:

31 Բայց, եթե նրանք ՝չմերժեն իմ խոսքերը, որոնք կհաստատվեն ՝վկայությամբ, որը պետք է տրվի, օրհնված են նրանք, և այն ժամանակ դուք կուրախանաք ձեր աշխատանքի պտուղներով:

32 Ճշմարիտ, ճշմարիտ ասում են ձեզ, ինչպես ես ասացի իմ աշակերտներին, որ որտեղ երկուսը կամ երեքն իմ անունով ՝ժողովված լինեն, մի բանի կապակցությամբ, ահա, այնտեղ ես

նրանց ՝մեզ կլինեն,– ճիշտ այդպես էլ, ես ձեր մեջ եմ:

33 ՝Մի վախեցեք բարիք գործել, իմ որդիներ, քանզի ինչ որ ՝սերմանեք, այն էլ կհնձեք. հետևաբար, եթե դուք բարիք սերմանեք, բարիք էլ կհնձեք, որպես վարձք:

34 Ուստի, մի վախեցի՛ր, փոքրիկ հոտ. բարիք գործի՛ր. թող երկիրն ու դժոխքը միանան քո դեմ, քանզի, եթե դու կառուցված ես իմ ՝վեմի վրա, նրանք չեն կարող գերիշխել:

35 Ահա, ես ձեզ չեմ դատապարտում. գնացեք ձեր ճամփով և այլևս մի ՝մեղանչեք. լրջմտորեն կատարեք այն գործը, որը պատվիրել եմ ձեզ:

36 ՝Նայեք ինձ ձեր բոլոր մտորումներում. մի կասկածեք, մի վախեցեք:

37 ՝Տեսեք խոցվածքը, որ ծակեց իմ կողը, և նաև ՝բևեռների նշանները՝ իմ ձեռքերի ու ոտքերի վրա. եղեք հավատարիմ, պահեք իմ պատվիրանները և դուք Պատանգեք երկնքի ՝արքայությունը: Ամեն:

ԲԱԺԻՆ 7

Հայտնություն տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեին և Օլիվեր Քաուդերիին, Հարմոնիում, Պենսիլվանիա, 1829թ. ապրիլին, այն ժամանակ, երբ նրանք Ուրիմի ու Թոմիմի միջոցով հարցրեցին, թե արդյոք Հովհաննեսը սիրեցյալ

<p>28ա Բ Օր. ԺԹ.15, Բ Կոր. ԺԳ.1, 2 Նեփի 27.12–14, ՎևՈՒ 128.3: 30ա ՎևՈՒ 5.22, 135.1–7: սո՛ր Նահատակ, Նահատակություն: բ Հայտ. Գ.21: գ սո՛ր Փառք: 31ա 3 Նեփի 16.10–14, ՎևՈՒ 20.8–15: բ սո՛ր Վկայություն: 32ա Մատ. ԺԼ.19–20: սո՛ր Միություն: բ ՎևՈՒ 29.5, 38.7:</p>	<p>33ա սո՛ր Քաջություն, Քաջարի: բ Գաղ. 2.7–8, Մոսիա 7.30–31, Այմա 9.28, ՎևՈՒ 1.10: 34ա Մաղ. ՀԱ.3, Մատ. Է.24–25, Ա Կոր. Ժ.1–4, Հել. 5.12, ՎևՈՒ 10.69, 18.4, 17, 33.13, Մովսես 7.53: սո՛ր Վեմ: 35ա Հովհ. Ը.3–11:</p>	<p>36ա Ես. ԽԵ.22, ՎևՈՒ 43.34: 37ա սո՛ր Հիսուս Քրիստոս – Քրիստոսի եսմանհիկանացու հայտնության դեպքերը: բ սո՛ր Խաչելություն: գ Մատ. Ե.3, 10, 3 Նեփի 12.3, 10: դ սո՛ր Աստծո արքայություն կամ Երկնքի արքայություն:</p>
---	--	---

աշակերտը, մնաց մարմնում, թե մահացավ: Հայտնությունը՝ Հովհաննեսի կողմից մագաղաթի վրա գրված և նրա կողմից թարգմած հիշատակարանի թարգմանված տարբերակն է (History of the Church, 1.35-36):

1-3՝ Հովհաննեսը՝ Սիրեցյալը, ապրելու է մինչև Տիրոջ գալուստը: 4-8՝ Պետրոսը, Հակոբոսը և Հովհաննեսը կրում են ավետարանի բանալիները:

ԵՎ Տերն ասաց ինձ. Հովհաննեսն՝ս, իմ "սիրեցյալ, ի՞նչ ես քանականում դու: Քանզի, եթե դու խնդրես այն, ինչ կամենում ես՝ պիտի շնորհվի քեզ:

2 Եվ ես նրան ասացի. Տեր, տուր ինձ զորություն՝ մահվան վրա, որ կարողանամ ապրել և հոգիներ բերել քեզ մոտ:

3 Եվ Տերն ասաց ինձ. Ճշմարիտ, ճշմարիտ ասում եմ քեզ, որ քանի որ դու փափագում ես, դու պիտի մնաս, մինչև ես գամ իմ քիառքով, և պիտի 4մարգարեանաս ազգերի, ցեղերի, լեզուների և ժողովուրդների առաջ:

4 Եվ դրա համար Տերն ասաց Պետրոսին. Եթե ես կամենում եմ, որ նա մնա, մինչև ես գամ, քե՞զ ինչ: Քանզի նա ինձանից ցանկացավ, որ կարողանա հոգիներ բերել ինձ մոտ, բայց դու ցանկացար,

որ կարողանաս շուտով գալ ինձ մոտ՝ իմ "արքայություն:

5 Ասում եմ քեզ, Պետրո՛ս, դա բարի ցանկություն է. սակայն իմ սիրեցյալը ցանկացավ, որ կարողանա մարդկանց մեջ կատարել ավելին, կամ դեռ ավելի մեծ գործ, քան կատարել էր մինչ այդ:

6 Այո՛, նա հանձն է առել ավելի մեծ գործ. ուստի ես կդարձնեմ նրան, ինչպես բոցավառ կրակ և "սպասավոր հրեշտակ. նա պիտի ծառայի նրանց, ովքեր փրկության քառանգներ կլինեն, ովքեր բնակվում են Գերկրի վրա:

7 Եվ ես կդարձնեմ քեզ սպասավոր՝ նրա համար և քո եղբայր Հակոբոսի համար. և ձեզ՝ երեքիդ, ես կտամ այս զորությունն ու այս ծառայության "բանալիները, մինչև որ ես գամ:

8 Ճշմարիտ ասում եմ ձեզ՝ դուք երկուսդ էլ պիտի ստանաք ձեր ցանկությունների համաձայն, քանզի դուք երկուսդ էլ "ուրախանում եք նրանով, ինչ ցանկացել եք:

ԲԱԺԻՆ 8

Հայտնություն տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեի միջոցով, Օլիվեր Քաուդերիին, Հարմոնիում, Պենսիլվանիա, 1829թ. ապրիլին (History of the Church, 1.36-37): Մորմոնի Գրքի թարգմանության ընթացքում, Օլիվերը,

7 1ա սուր Հովհաննես՝ Չերեղեռնի որդի:
բ 3 Նեփի 28.1-10:
2ա Ղուկ. Թ.27:
սուր Մահ ֆիզիկական:
3ա Հովհ. ԻԱ.20-23:
սուր Փոխակերպված էակներ:
բ սուր Փառք. Հիսուս

Քրիստոսի երկրորդ գալուստը:
գ Հայտ. Ժ.11:
4ա սուր Աստծո արքայություն կամ Երկնքի արքայություն:
6ա Վե՛.130.5:
բ Վե՛.76.86-88:

գ Հովհ. Ժ.8-11, Վե՛.77.14:
7ա Մատ. ԺԶ.19, Գոր. ԺԵ.7, ՋՍ-Պ 1.72:
սուր Քահանայության բանալիները:
8ա սուր Ուրախություն:

որը շարունակում էր ծառայել որպես դպիր, գրելով Մարգարեի թելադրանքով, ցանկացավ օժտվել քարզանության պարզևով: Տերը պատասխանեց նրա աղաչանքին շնորհելով այս հայտնությունը:

1-5՝ Հայտնությունը գալիս է Սուրբ Հոգու գործությամբ. 6-12՝ Աստծո խորհուրդների մասին իմացությունը և հնադարյան հիշատակարանների քարզանության գործությունը գալիս է հավատքով:

ՕԼԻՎԵՐ Քառուղերի, ճշմարիտ, ճշմարիտ ասում ենք քեզ, որ հաստատապես, ինչպես կենդանի է Տերը, որը քո Աստվածն է ու քո Քավիչը, ճիշտ այդպես, հաստատ, դու կատանաս ^բիմացություն, ինչ բաների վերաբերյալ էլ որ դու ^գխնդրես հավատքով, ազնիվ սրտով, հավատալով, որ դու իմացություն կատանաս փորագրությունների վերաբերյալ՝ հին ^դհիշատակարանների, որոնք հնադարյան են, որոնք պարունակում են իմ սուրբ գրքերի այն մասերը, որոնց մասին ասվեց իմ Հոգու ^եհայտնությամբ:

2 Այո՞, ահա, ես ^ակասեմ քեզ քո մտքում և քո ^բսրտում, ^գՍուրբ Հոգով, որը կիջնի քո վրա և որը կմնա քո սրտում:

3 Արդ, ահա, սա է հայտնության ոգին. ահա, սա է այն ոգին, որով Մովսեսն Իսրայելի զավակներին դուրս բերեց ^աԿարմիր ծովի միջով, չոր գետնի վրայով:

4 Ուստի սա է քո պարզևը. դիմիր դրան, և օրհնված ես դու, քանզի այն կազատի քեզ քո թշնամիների ձեռքից, մինչդեռ, եթե այդպես

չլիներ, նրանք կսպանեին քեզ ու կործանման կբերեին քո հոգին:

5 Օ՞, հիշիր այս ^ախոսքերը և պահիր իմ պատվիրանները: Հիշիր, սա է քո պարզևը:

6 Արդ, դա քո միակ պարզևը չէ. քանզի դու ունես ևս մեկ պարզև, որն Ահարոնի պարզևն է. ահա, այն շատ բաներ է ասել քեզ.

7 Ահա, չկա որևէ այլ գործություն, բացի Աստծո գործությունից, որը կարող է պատճառել, որ Ահարոնի այս պարզևը լինի քեզ հետ:

8 Ուստի, մի կասկածիր, քանզի դա Աստծո պարզևն է. և դու պետք է բռնես այն քո ձեռքերում և կատարես զարմանալի գործեր. և ոչ մի գործություն ի վիճակի չի լինի վերցնել այն քո ձեռքերից, քանզի դա Աստծո գործն է:

9 Եվ, հետևաբար, ինչ էլ որ դու խնդրես ինձ ասել քեզ այդ միջոցով, ես քեզ կշնորհեմ այն, և դու իմացություն կունենաս դրա վերաբերյալ:

10 Հիշիր, որ առանց ^ահավատքի դու ոչինչ չես կարող անել. ուստի, հավատքով խնդրիր: Կատակ մի արա այդ բաների հետ. մի ^բխնդրիր այն, ինչ դու չպետք է խնդրես:

11 Խնդրիր, որ դու կարողանաս իմանալ Աստծո խորհուրդները, և որ դու կարողանաս ^աթարգմանել և գիտելիք ստանալ այն բոլոր հնադարյան հիշատակարանները:

8 1ա ՁԱ-Պ 1.66:
սուր Քառուղերի Օլիվեր:
բ սուր Գիտություն:
գ սուր Աղոթք:
դ Վևու 6.26-27, 9.2:
ե Վևու 5.16:

2ա Վևու 9.7-9:
սուր Հայտնություն:
բ սուր Սիրտ:
գ սուր Սուրբ Հոգի:
3ա Ել. ԺԳ.13-22,
Բ Օր. ԺԱ.4,

1 Նեփի 4.2, Մոսիա 7.19:
սուր Կարմիր ծով:
5ա Բ Օր. ԺԱ.18-19:
10ա սուր Հավատք:
բ Վևու 88.63-65:
11ա Վևու 9.1, 10:

րից, որոնք թաքցված էին, որոնք սրբազան են. և քեզ համար կկատարվի՝ համաձայն քո հավատքի:

12 Ահա, այդ ես եմ, որ ասել եմ դա. և ես այն նույնն եմ, որ սկզբից քեզ հետ խոսել է: Ամեն:

ԲԱԺԻՆ 9

Հայտնություն տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեի միջոցով Օլիվեր Քաուդերիին, Հարմոնիում, Պենսիլվանիա, 1829թ. ապրիլին (History of the Church, 1.37–38): Տերն Օլիվերին խրատում է համբերող լինել և համոզում է, առայժմ բավարարվել թարգմանչի թելադրմամբ գրելով, քան վորձել թարգմանել:

1–6 Հնադարյան այլ հիշատակարաններ կան, որոնք դեռ պետք է թարգմանվեն. 7–14 Մորմոնի Գիրքը թարգմանվում է ուսումնասիրմամբ և հոգևոր հաստատմամբ:

ԱՀԱ, ես ասում եմ քեզ, որդի՛ս, քանի որ դու ^աջարգմանեցիր՝ համաձայն նրա, ինչ դու ցանկացար ինձանից, և կրկին սկսեցիր ^բգրել իմ ծառա Ջոզեֆ Սմիթ կրտսերի համար, ճիշտ այդպես, ես կկամենայի, որ դու շարունակես, մինչև չավարտեք այս հիշատակարանը, որը ես վստահել եմ նրան:

2 Եվ այն ժամանակ, ահա ^աուրիշ ^բհիշատակարաններ ունեմ ես, որ քեզ գորություն կտամ, որպեսզի դու աջակցես թարգմանելուն:

3 Համբերող եղիր, որդի՛ս, քանզի դա իմ իմաստությամբ է, և ներկայումս նպատակահարմար չէ, որ դու թարգմանես:

4 Ահա, գործը, որը դու կանչված ես կատարելու, գրելն է՝ իմ ծառա Ջոզեֆի համար:

5 Եվ, ահա, այն որ ես վերցրել եմ

այդ առանձնաշնորհը քեզանից, այն պատճառով է, որ, սկսելով թարգմանել, դու չշարունակեցիր այնպես, ինչպես սկսել էիր:

6 Մի ^ատրտնջա, որդի՛ս, քանզի դա իմ իմաստությամբ է, որ այս ձևով եմ ես վարվել քեզ հետ:

7 Ահա, դու չհասկացար. դու կարծում էիր, որ ես պիտի տայի քեզ, երբ դու միտք չարեցիր, այլ միայն խնդրեցիր ինձ:

8 Բայց, ահա, ես ասում եմ քեզ, որ դու պետք է ^աքննես այն քո մտքում. հետո դու պետք է ^բհարցնես ինձ, թե արդյոք դա ճիշտ է, և եթե դա ճիշտ լինի, ես այնպես կանեմ, որ ^գկուրծքդ ^դկայրվի քո ներսում. ուստի, դու պիտի ^եզգաս, որ դա ճիշտ է:

9 Բայց, եթե դա ճիշտ չլինի, դու նման զգացումներ չես ունենա, այլ կունենաս մտքի ^աընդարմացում, որի արդյունքում դու կմոռանաս այն, ինչը սխալ է. ուստի, դու չես կարող գրել այն, ինչը սրբազան է, եթե դա չտրվի ինձանից:

10 Արդ, եթե դու իմացած լինեիր

9 1ա ՎևոՒ 8.1, 11:
բ ՋՍ–Պ 1.67:
2ա Ակնարկում է լրացուցիչ թարգմանչական գործ, այդ թվում Աստվածաշնչի և Աբրահամի գրքի Ջոզեֆ Սմիթի

թարգմանությունը, որի ժամանակ Օլիվեր Քաուդերին օգնում էր որպես դպիր: սուր Ջոզեֆ Սմիթի Թարգմանություն (ՋՍԹ):
բ ՎևոՒ 6.26, 8.1:

6ա սուր Տրտնջա:
8ա սուր Խորհել:
բ սուր Աղոթք:
գ Ղուկ. ԻԳ.32:
դ սուր Ոգեշնչում, Ոգեշնչել. Վկայություն:
ե ՎևոՒ 8.2–3:
9ա ՎևոՒ 10.2:

դա, դու կկարողանայիր ^աթարգմանել. այնուամենայնիվ, ներկայումս նպատակահարմար չէ, որ դու թարգմանես:

11 Ահա, դա նպատակահարմար էր, երբ դու սկսեցիր. սակայն դու ^ավախեցար, և ժամանակն անցել է, իսկ այժմ նպատակահարմար չէ.

12 Քանզի, դու չե՞ս տեսնում, որ իմ ծառա ^աՉոզեֆին ես բավականաչափ ուժ եմ տվել, որով պա-

կաար լրացվում է: Եվ ձեզանից ոչ մեկին ես չեմ դատապարտել:

13 Կատարիի այն, ինչ պատվիրել եմ քեզ, և դու պիտի բարգավաճես: Հավատարիմ եղիր, և մի տրվիր ոչ մի ^ազայթակողության:

14 Հաստատուն կանգնիր այն ^ագործում, որին քեզ ^բկանչել եմ, և քո գլխից ոչ մի մազ չի կորչի, և վերջին օրը դու ^գկբարձրացվես: Ամեն:

ԲԱԺԻՆ 10

Հայտնություն տրված Չոզեֆ Սմիթ Մարգարեին, Հարմոնիում, Պենսիլվանիա, 1828թ. ամռանը (History of the Church, 1.20–23): Այստեղ Տերը Չոզեֆին տեղեկացնում է Մորմոնի Գրքում՝ Լեքիի գրքի թարգմանության 116 ձեռագիր էջերում, ամբարիշտ մարդկանց կողմից կատարված փոփոխությունների մասին: Այդ ձեռագիր էջերը կորել էին Մարտին Հարրիսի մոտից, որին ժամանակավորապես վստահվել էին թերթերը: (Տե՛ս բաժին 3-ի նախադրությունը): Մի չարական ծրագիր կար՝ սպասել գողացված էջերում պարփակված մյուսի հնարավոր վերաթարգմանությանը և, ապա, փոփոխություններ կատարելու միջոցով, ցույց տալով ստեղծված անհամաձայնությունները, վարկաբեկել թարգմանչին: Որ այդ ամբարիշտ նպատակը չարի կողմից էր ներշնչած, և Տիրոջը հայտնի էր եղել, նույնիսկ այն ժամանակ, երբ հնադարյան Նեփիացի պատմագիր Մորմոնը համառոտագրում էր հավաքված թիթեղները, ցույց է տրված Մորմոնի Գրքում (տե՛ս Մորմոնի Խոսքերը 1.3–7):

1–26 Սատանան ամբարիշտ մարդկանց դրդում է հակառակվել Տիրոջ գործին. 27–33՝ Նա ջանում է կործանել մարդկանց հոգիները. 34–52՝ Ավետարանը պետք է հասնի Լամանացիներին և բոլոր ազգերին՝ Մորմոնի Գրքի միջոցով. 53–63՝ Տերն իր Եկեղեցին և իր ավետարանը կհաստատի մարդկանց մեջ. 64–70՝ Նա սպաշխարողներին կհավաքի իր Եկեղեցում և կիրկի հնազանդներին:

ԱՐԳ, ահա, ես ասում եմ քեզ, որ, քանի որ այն գրությունները, որոնք քեզ գորություն էր տրվել թարգմանել ^աՈւրիմի ու Թումիմի միջոցով, դու հանձնեցիր ^բամբարիշտ մարդու ձեռքը, դու կորցրել ես դրանք:

2 Եվ, միևնույն ժամանակ, դու նաև կորցրել ես քո պարզևը, և քո ^ամիտքը մթազնել է:

3 Այնուամենայիվ, այժմ այն

10ա ՎևոՒ 8.11:
11ա սոՒ Վախ:
12ա ՎևոՒ 18.8:
13ա սոՒ Գայթակղել,
Գայթակղություն:

14ա Ա Կոր. ԺՁ.13:
բ սոՒ Կանչ, Աստծո
կողմից կանչված,
Կոչում:
գ Ալմա 13.29,

ՎևոՒ 17.8:
10 1ա սոՒ Ուրիմ ու Թումիմ:
բ ՎևոՒ 3.1–15:
2ա սոՒ Միտք:

դարձյալ ՝վերականգնվել է. ուստի տես, որ դու հավատարիմ լինես և շարունակես, մինչև թարգմանության մնացած աշխատանքի ավարտելը, ինչպես դու սկսել էիր:

4 Մի վագիր ավելի ՝արագ, ոչ էլ տքնիր ավելի շատ, քան քո ՝ուժերն են ու այն միջոցները, որոնք տրվել են քեզ, որ կարողանաս թարգմանել. սակայն, եղիր ճշմաստեր մինչև վերջ:

5 Միշտ ՝աղոթիր, որ կարողանաս հաղթող դուրս գալ. այո՛, որ կարողանաս հաղթել Սատանային, և որ կարողանաս խույս տալ Սատանայի ծառաների ձեռքից, որոնք նեցուկ են նրա գործին:

6 Ահա, նրանք փնտրել են ՝կործանել քեզ. այո՛, նույնիսկ այն ՝մարդը, որին դու վստահել ես, փնտրել է կործանել քեզ:

7 Եվ դրա համար ես ասացի, որ նա ամբարիշտ մարդ է, քանզի նա փնտրել է վերցնել այն բաները, որոնք վստահվել էին քեզ. և նա նաև փնտրել է կործանել քո պարզերը:

8 Եվ քանի որ դու գրությունները հանձնեցիր նրա ձեռքը, ահա, ամբարիշտ մարդիկ վերցրել են դրանք քեզանից:

9 Հետևաբար, դու հանձնել ես դրանք ամբարշտությանը, այո, այն, ինչը սրբազան էր:

10 Եվ, ահա, ՝Սատանան դրել է նրանց սրտում՝ փոփոխել խոսքերը, որոնք դու թելադրել ես, որ գրվեն, կամ, որոնք դու թարգմանել ես, որոնք դուրս են մնացել քո ձեռքից:

11 Եվ ահա, ես ասում եմ քեզ, որ քանի որ նրանք փոփոխել են խոսքերը, դրանք հակառակ են կարդացվում նրան, ինչը դու թարգմանեցիր և թելադրեցիր, որ գրվի:

12 Եվ, այսպես, դեր փնտրել է մի խորամանկ ծրագիր ձեռնարկել, որ կարողանա կործանել այս աշխատանքը:

13 Քանզի նրանց սրտերում նա դրել է, որ անեն այդ, որպեսզի, ստելով, նրանք կարողանան ասել, որ ՝բռնել են քեզ այն խոսքերում, որոնք դու ձևացրել ես, թե թարգմանել ես:

14 Ճշմարիտ ասում եմ քեզ՝ ես թույլ չեմ տա, որ այս բանում Սատանան իրագործի իր շարամիտ ծրագիրը:

15 Քանզի ահա, նա դրել է նրանց սրտում՝ ստիպել քեզ, որ փորձես Տիրոջը՝ քո Աստծուն՝ խնդրելով մեկ անգամ ևս թարգմանել այն:

16 Եվ հետո, ահա, նրանք իրենց սրտերում ասում են ու մտածում. Մենք կտեսնենք, թե արդյոք Աստված նրան տվե՞լ է թարգմանելու գործություն. եթե այդպես է, նա նորից՝ կրկին գործություն կտա նրան:

17 Եվ, եթե Աստված կրկին գործություն տա նրան, կամ, եթե նա կրկին թարգմանի այն, կամ, այլ խոսքով, եթե նա կրկին վերականգնի միևնույն խոսքերը, ահա, նույնը մենք ունենք մեզ մոտ, և մենք փոփոխել ենք դրանք:

18 Ուստի դրանք չեն համընկնի, և մենք կասենք, որ նա ստել է իր խոսքերում, և որ նա չունի ոչ մի

<p>3ա ՎևոՒ 3.10: 4ա Մոսիա 4.27: բ Ել. ԺԸ.13-26: գ Մատ. Ժ.22:</p>	<p>սոՒ Չանասիրություն: 5ա3 Նեփի 18.15-21: սոՒ Աղոթք: 6ա ՎևոՒ 5.32-33, 38.13:</p>	<p>բ ՎևոՒ 5.1-2: 10ա սոՒ Դև: 13ա Երեմ. Ե.26:</p>
---	---	--

պարզ, և որ նա չունի ոչ մի գործություն:

19 Ուստի մենք կկործանենք նրան, և նաև այդ աշխատանքը. և մենք դա կանենք, որպեսզի վերջում չամաչենք, և որ մենք կարողանանք փառք ստանալ աշխարհից:

20 Ճշմարիտ, ճշմարիտ ասում ենք եզ, որ Սատանան մեծ ազդեցություն ունի նրանց սրտերի վրա. նա՞ ղրդում է նրանց Քանօրինության՝ այն բանի դեմ, ինչը բարի է:

21 Եվ նրանց սրտերն ապականված և լցված են Քանբարըշտությանը ու պղծություններով. և նրանք զխավարն ավելի շատ են սիրում, քան լույսը, որովհետև նրանց զգործերը չար են. ուստի նրանք չեն կամենում խնդրել ինձ:

22 Սատանան նրանց դրդում է, որ կարողանա նրանց հոգիները Քտանել կործանման:

23 Եվ այսպես, նա մի խորամանկ ծրագիր է ձեռնարկել, մտածելով՝ կործանել Աստծո գործը. սակայն ես պահանջելու եմ դա նրանց ձեռքից և, դատաստանի օրը, այն նրանց համար կվերածվի ամոթի ու զատապարտության:

24 Այո՛, նա դրդում է նրանց սրտերը՝ բարկանալու այս աշխատանքի դեմ:

25 Այո՛, նա ասում է նրանց. Խաբեք և դարան մտեք՝ բռնելու համար, որ կարողանաք կործանել:

ահա, դա վնաս չէ: Եվ այդպես նա շողորթում է նրանց և ասում, որ՞ ստելը մեղք չէ, եթե կարողանաք բռնել մարդուն իր ստի մեջ, որ կարողանաք նրան կործանել:

26 Եվ այսպես, նա շողորթում է նրանց և՞ առաջնորդում, մինչև որ քաշում է նրանց հոգիները ցած՝ դեպի Քդժոխք. և այդպես, նա ստիպում է նրանց բռնվել իրենց իսկ Քթակարդով:

27 Եվ այդպես, նա գնում է վեր ու վար, ՞դեսողեն, երկրի վրա, փնտրելով Քկործանել մարդկանց հոգիները:

28 Ճշմարիտ, ճշմարիտ ասում ենք եզ. Վա՛յ լինի նրան, ով ստում է, որ ՞խաբի, որովհետև կարծում է, թե դիմացինն է ստում, որ խաբի, քանզի այդպիսիներն ազատված չեն Աստծո Քարդարադատությունից:

29 Արդ, ահա, նրանք փոփոխել են այս խոսքերը, որովհետև Սատանան ասել է նրանց. Նա խաբել է ձեզ, – և այսպես, նա շողորթում է նրանց անօրինություն գործել՝ ստիպել քեզ, որ ՞փորձես Տիրոջը՝ քո Աստծուն:

30 Ահա, ես ասում եմ քեզ, որ դու կրկին չպետք է թարգմանես այն խոսքերը, որոնք դուրս են մնացել քո ձեռքից:

31 Զանգի, ահա, նրանք չպիտի իրագործեն իրենց չարամիտ ծրա-

20ա2 Նեփի 28.20–22:

բ սո՞ր Մեղք:

21ա ՎևՈՒ 112.23–24:

բ սո՞ր Ամբարիշտ,

Ամբարշտություն:

գ Մոսիա 15.26:

սո՞ր Հոգևոր խավար:

դ Մովսես 5.13–18:

ե Հովհ. Գ.18–21,

ՎևՈՒ 29.45:

22ա2 Նեփի 2.17–18:

բ սո՞ր Գայթակղել,
Գայթակղություն:

23ա Հել. 8.25,

ՎևՈՒ 121.23–25:

25ա2 Նեփի 2.18, 28.8–9,

Ալմա 10.17,

Մովսես 4.4:

սո՞ր Ստել:

26ա սո՞ր Ուրացություն:

բ սո՞ր Գժոխք:

գ Առակ. ԻԹ.5–6,

1 Նեփի 14.3:

27ա Հոր Ա.7:

բ 2 Նեփի 28.19–23,

ՎևՈՒ 76.28–29:

28ա սո՞ր Խաբկանք, Խաբել,

Խաբություն:

բ Հռովմ. Բ.3:

սո՞ր Արդարադատու-
թյուն:

29ա Մատ. Գ.7:

գիրը՝ ստելով այդ խոսքերի դեմ: Քանզի, ահա, եթե դու վերականգնես միևնույն խոսքերը, նրանք կասեն, որ դու ստել ես, և որ դու ձևացրել ես, թե թարգմանում ես, սակայն ինքդ քեզ հակասել ես:

32 Եվ, ահա, նրանք կհրատարակեն այդ, և Սատանան կկարծրացնի մարդկանց սրտերը, որ նրանց բարկության դրդի քո դեմ, որ նրանք չհավատան իմ խոսքերին:

33 Այսպիսով, Մատանան մտածում է հաղթել քո վկայությունն այս սերնդի մեջ, որ այս սերնդում գործն առաջ չգնա:

34 Սակայն ահա, այստեղ է իմաստությունը, և որովհետև ես քեզ ցույց եմ տալիս ՝ իմաստությունը և քեզ պատվիրաններ եմ տալիս այս բաների վերաբերյալ, թե ինչ պիտի դու անես, ցույց մի տուր այն աշխարհին, քանի դեռ չես ավարտել թարգմանության աշխատանքը:

35 Մի զարմացիր, որ քեզ ասացի. Այստեղ է իմաստությունը, այն ցույց մի տուր աշխարհին, - քանզի ես ասացի՝ այն ցույց մի տուր աշխարհին, որպեսզի դու պահպանվես:

36 Ահա, ես քեզ չեմ ասում, որ դու այն չպետք է ցույց տաս արդարին.

37 Բայց, քանի որ միշտ չէ, որ դու կարող ես դատել ՝ արդարին, կամ, քանի որ միշտ չէ, որ դու կարող ես ամբարիշտին տարբերել արդարից, ուստի ասում եմ քեզ. ^բԼուռ մնա, մինչև որ ես հարմար կզտնեմ այս նյութի վերաբերյալ

բոլոր բաներն աշխարհին հայտնի դարձնել:

38 Եվ այժմ, ճշմարիտ ասում եմ քեզ, որ այն ՝ բաների պատմությունը, որոնք դու գրել էիր, որոնք դուրս էին մնացել քո ձեռքից, փորագրված է Նեփիի Քիթեղների վրա:

39 Այո՛, և դու հիշում ես, որ այդ գրություններում ասվում էր, որ Նեփիի թիթեղների վրա այս բաների վերաբերյալ ավելի մանրամասն մի պատմություն է տրված:

40 Եվ արդ, քանի որ Նեփիի թիթեղների վրա փորագրված պատմությունն ավելի մանրամասն է այն բաների վերաբերյալ, որոնք, իմ իմաստությամբ, ես կկամենայի հասցնել մարդկանց իմացությանը, այս պատմության մեջ,

41 Ուստի, դու պետք է թարգմանես այն փորագրությունները, որոնք Նեփիի Քիթեղների վրա են, նույնիսկ մինչև հասնես թագավոր Բենիամինի թագավորմանը, կամ մինչև դու հասնես նրան, ինչը թարգմանել էիր, որը դու պահպանել ես.

42 Եվ ահա, դու պիտի հրատարակես այն, որպես Նեփիի հիշատակարանը. և այդպիսով, ես պիտի ձախողեմ նրանց, ովքեր փոփոխել են իմ խոսքերը:

43 Ես չեմ հանդուրժի, որ նրանք կործանեն իմ գործը. այո՛, ես ցույց կտամ նրանց, որ իմ իմաստությունն ավելի մեծ է, քան դևի խորամանկությունը:

33ա սոՒ Գև:
 34ա սոՒ Իմաստություն:
 37ա Մատ. ԻԳ.28:
 բ Ել. ԺԳ.14:
 38ա Մորմոնի Գրքի
 առաջին հրատարա-

կության նախաբանում
 Մարգարեն բացատրել
 էր, որ 116 կորցրած
 էջերի նյութը նա
 թարգմանել էր
 թիթեղների մի մասից,

որը կոչվում էր
 «Լեքիի Գիրքը»:
 բ սոՒ Թիթեղներ:
 41ա ՄԻՆ 1.3-7:

44 Ահա, նրանք ունեն Նեփիի պատմության միայն մի մասը կամ համառոտագրումը:

45 Ահա, Նեփիի թիթեղների վրա շատ բաներ կան փորագրված, որոնք ավելի մեծ հայացք են գցում իմ ավետարանի վրա. ուստի իմ իմաստությամբ է, որ դու պիտի քարգմանես Նեփիի փորագրությունների այս առաջին մասն ու առաջ ուղարկես այս աշխատանքի հետ:

46 Եվ ահա, այս ^աաշխատանքի մնացած մասը պարունակում է իմ ^բավետարանի այն բոլոր մասերը, որոնք իմ սուրբ մարգարեները, այո՛, և նաև իմ աշակերտները, իրենց աղոթքներում ^գփափագեցին, որ ի հայտ բերվի այս ժողովրդի համար:

47 Եվ ես նրանց ասացի, որ այն ^դկնոթիվի նրանց իրենց աղոթքներում ունեցած ^եհավատքի համաձայն.

48 Այո՛, և սա էր նրանց հավատքը,– որ իմ ավետարանը, որը ես տվել էի նրանց, որ նրանք կարողանային քարոզել իրենց օրերում, հասներ իրենց եղբայրներին՝ ^զԼամանացիներին, և նաև բոլորին, ովքեր դարձել էին Լամանացիներ՝ իրենց երկպառակությունների պատճառով:

49 Արդ, սա բոլորը չէ,– նրանց հավատքն իրենց աղոթքներում այն էր, որ այս ավետարանը հայտնի դարձվի, նաև, եթե հնարավոր լիներ, որ ուրիշ ազգեր տիրեին այս հողին.

50 Եվ այդպիսով, իրենց աղոթքներում, նրանք օրհնություններ թողեցին այս հողի վրա, որ, ով որ հավատա այս ավետարանին, այս հողի վրա, կարողանա հավերժական կյանք ունենալ.

51 Այո՛, որ այն ազատ լինի բոլորի համար, ինչպիսի ազգ, ցեղ, լեզու կամ ժողովուրդ էլ որ նա լինի:

52 Եվ արդ, ահա, իրենց աղոթքներում ունեցած հավատքի համաձայն, ես իմ ավետարանի այս մասը կբերեմ իմ ժողովրդի իմացությանը: Ահա, ես դա չեմ բերում կործանելու այն, ինչը նրանք ստացել են, այլ՝ կառուցելու:

53 Եվ դրա համար եմ ես ասել. Եթե այս սերունդը չկարծրացնի իր սիրտը, ես կհիմնեմ իմ եկեղեցին նրանց մեջ:

54 Արդ, ես դա չեմ ասում իմ եկեղեցին կործանելու համար, այլ ասում եմ՝ իմ եկեղեցին կառուցելու համար.

55 Ուստի, ով որ պատկանում է իմ եկեղեցուն, ^ավախենալու կարիք չունի, քանզի այդպիսինը պիտի ^բժառանգի երկնքի ^գարքայությունը:

56 Բայց, այդ նրանք են, որ չեն ^դվախենում ինձանից, ոչ էլ պահում են իմ պատվիրանները, սակայն, իրենց համար ^եեկեղեցիներ են հիմնում՝ ^զչափ ստանալու համար, այո՛, և բոլոր նրանք, ովքեր գործում են ամբարշտորեն և կառուցում են դևի թագավորությունը,– այո՛, ճշմարիտ, ճշմարիտ

46ա սուր Մորմոնի Գիրքը:
բ սուր Ավետարան:
գ Ենովս 1.12–18,
Մորմ. 8.24–26, 9.34–37:
47ա 3 Նեփի 5.13–15,
Վևոթ 3.19–20:
բ սուր Հավաքը:

48ա Մոր. 10.1–5,
Վևոթ 109.65–66:
55ա սուր Վախ:
բ Մատ. Ե.10:
գ սուր Աստծո
արքայություն
կամ Երկնքի

արքայություն:
56ա Ժող. ԺԲ.13–14:
բ սուր Դև – Դևի
եկեղեցին:
գ 4 Նեփի 1.26:

ասում են քեզ, որ այդ նրանց է, որ ես պիտի վրդովեմ, և այնպես անեմ, որ դողան ու ցնցվեն մինչև հոգու խորքը:

57 Ահա, ես Հիսուս Քրիստոսն եմ՝ Աստծո Պրոփին: Ես եկա յուրայինների մեջ, և յուրայիններն ինձ չընդունեցին:

58 Ես եմ ՝լույսը, որը շողում է խավարում, և խավարը չի ըմբռնում այն:

59 Ես նա եմ, որ իմ աշակերտներին ասացի. ՝Ուրիշ ՝ոչխարներ էլ ես ունեմ, որոնք այս փարախից չեն, - և շատերը կային, որ ինձ չհասկացան:

60 Եվ ես ցույց կտամ այս ժողովրդին, որ ես ունեի ուրիշ ոչխարներ, և, որ նրանք Հակոբի ՝տան մի ճյուղն էին:

61 Եվ ի լույս կբերեմ նրանց զարմանալի գործերը, որոնք նրանք արեցին իմ անունով:

62 Այո՛, և նաև, ի լույս կբերեմ իմ ավետարանը, որը տրվել էր նրանց, և, ահա, նրանք չեն ուրանա այն, ինչ դու ստացել ես, այլ կկառուցեն այն, և ի լույս կբերեմ իմ ՝վարդապետության ճշմարիտ կետերը, այո՛, և միակ վարդապետությունը, որն իմ մեջ է:

63 Եվ սա ես անում եմ, որ կարողանամ հաստատել իմ ավետարանը, որ չլինեն այդքան շատ հակառակություններ. այո՛, ՝Սատանան

մարդկանց սրտերը ՝հակառակության է դողում իմ վարդապետության կետերի վերաբերյալ. և այդ բաներում նրանք սխալվում են, քանզի նրանք Պաղավաղում են սուրբ գրքերը և չեն հասկանում դրանք:

64 Ուստի, ես կբացեմ նրանց այս մեծ խորհուրդը:

65 Քանզի, ահա, ես ՝հավաքելու եմ նրանց, ինչպես հավն է իր թևերի տակ հավաքում իր ճուղերին, եթե նրանք չկարծրացնեն իրենց սրտերը:

66 Այո՛, եթե կամենան, նրանք կարող են գալ և ազատ ճաշակել կյանքի ՝ջրերից:

67 Ահա, սա իմ վարդապետությունն է, - ով ապաշխարում և ՝գալիս է ինձ մոտ, նա իմ ՝եկեղեցին է:

68 Ով որ ՝հայտարարում է ավել կամ պակաս, քան սա, նա ինձանից չէ, այլ ՝դեմ է ինձ. ուստի նա իմ եկեղեցուց չէ:

69 Եվ արդ, ահա, ով որ իմ եկեղեցուց է, և իմ եկեղեցում համբերում է մինչև վերջ, նրան ես կհաստատեմ իմ ՝վեմի վրա, և դժոխքի ՝դռները չպիտի հաղթեն նրանց:

70 Եվ արդ, հիշիր խոսքերը նրա, ով կյանքն է ու ՝լույսն աշխարհի՝ քո Քավիչը՝ քո ՝Տերն ու Աստվածը: Ամեն:

<p>57ա Հռովմ. Ա.4: 58ա ՎևոՒ 6.21: 59ա Հովհ. Ժ.16: բ սո՛ւ Բարի հովիվ: գ 3 Նեփի 15.16-18: 60ա սո՛ւ Տիրոջ այգին: 62ա 3 Նեփի 11.31-40: 63ա սո՛ւ Գև: բ սո՛ւ Հակառակություն:</p>	<p>գ Բ Պետ. Գ.16: 65ա Ղուկ. ԺԳ.34, 3 Նեփի 10.4-6, ՎևոՒ 43.24: 66ա սո՛ւ Կենդանի ջուր: 67ա Մատ. ԺԱ.28-30: բ սո՛ւ Հիսուս Քրիստոսի Եկեղեցի: 68ա 3 Նեփի 11.40:</p>	<p>բ Ղուկ. ԺԱ.23: 69ա սո՛ւ Վեմ: բ Մատ. ԺԶ.18, 2 Նեփի 4.31-32, ՎևոՒ 17.8, 128.10: 70ա սո՛ւ Լույս, Քրիստոսի լույս: բ սո՛ւ Հիսուս Քրիստոս:</p>
--	---	--

ԲԱԺԻՆ 11

Հայտնությունն տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեի միջոցով, իր եղբայր Հայրում Սմիթին, Հարմոնիում, Պենսիլվանիա, 1829թ. մայիսին (History of the Church, 1.39-46): Այս հայտնությունը ստացվել էր Ուրիմի ու Թումիմի միջոցով ի պատասխան Ջոզեֆի աղաչանքին ու հարցմանը: «History of the Church»-ը ենթադրում է, որ այս հայտնությունը ստացվել է Ահարոնյան Քահանայության վերականգնումից հետո:

1-6 Այգում աշխատողները փրկություն կստանան. 7-14՝ Փնտրիք իմաստություն, աղաղակիր ապաշխարություն, վստահիր Հոգուն. 15-22՝ Պահիր պատվիրանները և ուսումնասիրիր Տիրոջ խոսքը. 23-27 Մի ուրաջիր հայտնության և մարգարեության ոգին. 28-30՝ Նրանք, ովքեր ընդունում են Քրիստոսին, դառնում են Աստծո որդիներ:

4 Այո՛, ով որ գցի իր ^ամանգաղն ու հնձի, մա կանչված է Աստծուց: 5 Ուստի, եթե ^ախնդրեք ինձանից, դուք կստանաք. եթե թակեք, ձեզ կբացվի:

6 Արդ, որովհետև դուք հարցրեցիք, ահա, ասում եմ ձեզ. Պահեք իմ պատվիրանները և փնտրեք առաջ տանել և հաստատել ^աՄիոնի գործը:

7 Մի փնտրեք ^ահարստություն, այլ ^բիմաստություն. և ահա, Աստծո խորհուրդները կբացվեն ձեզ համար, և այն ժամանակ դուք կհարստանաք: Ահա, մա, ով ունի հավերժական կյանք, հարուստ է:

8 Ճշմարիտ, ճշմարիտ, ասում եմ քեզ, որ քեզ համար կկատարվի ճիշտ այնպես, ինչպես դու ցանկանում ես ինձանից. և եթե դու ցանկանաս, դու կլինես այն միջոցը, որով շատ բարիք կգործվի այս սերնդի մեջ:

9 Ոչինչ մի ^աասա այս սերնդին, բացի ^բապաշխարությունից: Պահիր իմ պատվիրանները և օգնիր առաջ տանել իմ գործը, իմ պատ-

ՄԵՃ և ^ագարմանալի գործ է առաջ գալիս մարդկանց գավակների մեջ:

2 Ահա, ես Աստված եմ. ^աուշք դարձրեք իմ ^բխոսքին, որը կենդանի է և ^գգորավոր, երկսայր սրից ^դհատու՝ հողերը և ծուծը բաժանող. ուստի, ուշք դարձրեք իմ խոսքին:

3 Ահա, արտը ^ասպիտակել է՝ արդեն հնձին հասել. ուստի, ով որ փափագում է հնձել, թող գցի իր մանգաղն իր գորուքյամբ ու հնձի, քանի դեռ օրը ցերեկ է, որ կարողանա իր հոգու համար ^բհավիտենական փրկություն ^գգանձել Աստծո արքայությունում:

11 1ա Ես. ԻԹ.14, ՎևոԲ 4: սո՛ւ Ավետարանի վերականգնումը:
2ա 1 Նեփի 15.23-25, ՎևոԲ 1.14, 84.43-45:
բ Եբր. Գ.12:
գ Ալմա 4.19, 31.5:
դ Հել. 3.29-30, ՎևոԲ 6.2:

3ա ՎևոԲ 12.3:
բ Ա Տիմ. 2.19:
գ Դուկ. ԺԸ.22, Հել. 5.8:
4ա Հայտ. ԺԳ.15, ՎևոԲ 14.3-4:
5ա սո՛ւ Ադոթթ:
6ա Ես. ԾԲ.7-8, ՎևոԲ 66.11:
սո՛ւ Միոն:

7ա Գ Թագ. Գ.11-13, 2 Նեփի 26.31, Հակոբ 2.17-19, ՎևոԲ 38.39:
բ սո՛ւ Իմաստություն:
9ա ՎևոԲ 19.21-22:
բ սո՛ւ Ապաշխարել, Ապաշխարություն:

վիրանների Գհամաձայն, և դու պիտի օրհնվես:

10 Ահա, դու ունես Սպարզև, կամ դու կունենաս պարզև, եթե փափագես ինձանից՝ հավատքով, Բազմիվ սրտով, հավատալով Հիսուս Քրիստոսի գործքանը, կամ իմ գործքանը, ով խոսում է քեզ հետ.

11 Քանզի, ահա, այդ ես եմ, որ խոսում եմ. ահա, ես Մլույսն եմ, որը շողում է խավարում, և իմ Բգործքանք եմ ես այս խոսքերը տալիս քեզ:

12 Եվ արդ, ճշմարիտ, ճշմարիտ ասում եմ քեզ. Սպավինիր այն ԲՀոգուն, որն առաջնորդում է բարիք գործել. այո՛, արդար գործել, Գխոնարի Բքայլել, արդարությամբ Գդատել. և դա է իմ Հոգին:

13 Ճշմարիտ, ճշմարիտ ասում եմ քեզ. Ես քեզ բաժին պիտի հանեմ իմ Հոգուց, որը Սկլուսավորի քո Բմիտքը, որն Գուրախությունով կլցնի քո հոգին.

14 Եվ այն ժամանակ դու կիմանաս, կամ դրանով դու կիմանաս բոլոր բաները, ինչ-որ կցանականաս ինձանից, որոնք վերաբերում են Սարդարության բաներին, հավատքով հավատալով ինձ, որ դու պիտի ստանաս:

15 Ահա, ես պատվիրում եմ քեզ, որ դու կարիք չունես ենթադրելու,

որ կանչված ես քարոզելու, մինչև դու Սչկանչվես:

16 Մի քիչ էլ սպասիր, մինչև ունենաս իմ խոսքը, իմ Սվեմը, իմ եկեղեցին և իմ ավետարանը, որ կարողանաս հաստատապես իմանալ իմ վարդապետությունը:

17 Եվ այն ժամանակ, ահա, քեզ համար կարվի քո ցանկությունների համաձայն, այո՛, ճիշտ քո հավատքի համաձայն:

18 Պահիր իմ պատվիրանները. լուռ մնա. դիմիր իմ Հոգուն.

19 Այո՛, քո ողջ սրտով Սհարիք ինձ, որ օգնես ի լույս բերել այն բաները, որոնց մասին խոսվել է, – այո՛, իմ աշխատության թարգմանությունը. համբերող եղիր, մինչև որ դուք ավարտեք այն:

20 Ահա, սա է քո աշխատանքը՝ Սպահել իմ պատվիրանները, այո՛, քո ողջ գործքամբ, մտքով և ուժով:

21 Մի փնտրիր հայտարարել իմ խոսքը, այլ, նախ փնտրիր Սձեռք բերել իմ խոսքը, և հետո քո լեզուն պիտի արձակվի. հետո, եթե կամենաս, դու կունենաս իմ Հոգին և իմ խոսքը, այո՛, Աստծո գործությունը՝ մարդկանց համոզելու համար:

22 Իսկ այժմ, լուռ մնա. ուսումնասիրիր Սիմ խոսքը, որն առաջ է գնացել մարդկանց զավակների մեջ, և նաև Բուսումնասիրիր Գիմ խոսքը, որն առաջ պիտի գա

9գ ՎևոՒ 105.5:
10ա ՎևոՒ 46.8–12:
բ Ղուվ. Ը.15:
11ա սոՒ Լույս, Քրիստոսի լույս:
բ սոՒ Չորություն:
12ա ՎևոՒ 84.116:
սոՒ Ապավինել:
բ Հռովմ. Ը.1–9, Ա Հովհ. Գ.1–6:
գ սոՒ Խոնարի, Խոնարիություն:
դ սոՒ Քայլել, Քայլել

Աստծո հետ:
ե Մատ. Է.1–5,
Ալմա 41.14–15:
13ա ՎևոՒ 76.12:
բ սոՒ Միտք:
գ սոՒ Ուրախություն:
14ա սոՒ Արդար,
Արդարություն:
15ա ՀՀ 1.5:
սոՒ Իշխանություն.
Կանչ, Աստծո կողմից
կանչված, Կոչում:
16ա ՎևոՒ 6.34:

սոՒ Վեմ:
19ա Հակոբ 6.5,
ՎևոՒ 98.11:
20ա սոՒ Հնագանդություն,
Հնագանդ,
Հնագանդվել:
21ա Ալմա 172–3,
ՎևոՒ 84.85:
22ա ճշ. Աստվածաշունչը:
բ սոՒ Սուրբ գրքեր –
Սուրբ գրքերի
արժեքը:
գ ճշ. Մորմնի Գիրքը:

մարդկանց զավակների մեջ, կամ այն, որն այժմ թարգմանվում է, այո՛, մինչև ձեռք չբերես այն ամենը, ինչ ես պիտի շնորհեմ մարդկանց զավակների այս սերնդին, և ապա, բոլոր բաները պիտի ավելացվեն դրանց վրա:

23 Ահա, դու ՝ Հայրումն ես, իմ որդին. Բնութարար Աստծո արքայությունը, և բոլոր բաները պիտի ավելացվեն՝ համաձայն նրա, ինչն արդար է:

24 Վառուցիր իմ վեմի վրա, որն իմ Բավետարանն է.

25 Մի ուրացիր ՝ հայտնության ոգին, ոչ էլ Բնարգարեության ոգին, քանզի վա՛յ նրան, ով ուրանում է այս բաները.

26 Ուստի, Վանձիք քո սրտում,

մինչև այն ժամանակը, որն իմ իմաստությամբ է, որ դու պիտի առաջ գնաս:

27 Ահա, ես ասում եմ բոլորին, ովքեր բարի ցանկություններ ունեն և Վագել են իրենց մանգաղը, որ հնձեն:

28 Ահա, ես Վիսու Քրիստոսն եմ՝ Աստծո Որդին: Ես կյանքն եմ ու Բլույսն աշխարհի:

29 Ես նա եմ, որ եկա յուրայինների մեջ, և յուրայիններն ինձ ընդունեցին.

30 Բայց ճշմարիտ, ճշմարիտ ասում եմ ձեզ, որ, բոլոր նրանց, ովքեր ընդունում են ինձ, ես Վորություն կտամ՝ դառնալու Աստծո Բորդիներ, այսինքն՝ նրանց, ովքեր հավատում են իմ անվանը: Ամեն:

ԲԱԺԻՆ 12

Հայտնություն տրված Չոզեֆ Սմիթ Մարգարեի միջոցով, Չոզեֆ Նայթ ավագին, Հարմոնիում, Պենսիլվանիա, 1829թ. մայիսին (History of the Church, 1.47–48): Չոզեֆ Նայթը հավատում էր Չոզեֆ Սմիթին, որը հայտարարում էր Մորմոնի Գրքի թիթեղներն ունենալու և թարգմանության աշխատանքի մասին, որն այն ժամանակ ընթացքի մեջ էր, և բազմիցս նյութական օժանդակություն էր ցույց տվել Չոզեֆ Սմիթին և նրա դպիրին, ինչը նրանց հնարավորություն էր տվել շարունակել թարգմանությունը: Չոզեֆ Նայթի խնդրանքով Մարգարեն հարցրեց Տիրոջը և ստացավ այս հայտնությունը:

1–6 Այգում աշխատողները փրկություն կատանան. 7–9 Բողոքը, ովքեր ցանկանում են և որակված են, կարող են աջակցել Տիրոջ գործին:

ՄԵՇԸ և զարմանալի գործ է առաջ գալիս մարդկանց զավակների մեջ:

2 Ահա, ես եմ Աստված. ուշք դարձրեք իմ խոսքին, որը կենդա-

24դ Ավմա 29.8:
23ա ՋՍ–Պ 1.4:
բ Մատ. 2.33:
24ա Մատ. է.24–27:
բ սո՛ւ Ավետարան:
25ա սո՛ւ Հայտնություն:
բ Հայտ. ԺԺ.10:
սո՛ւ Մարգարեություն,

Մարգարեանալ:
26ա Բ Օր. ԺԱ.18,
ՎևՈՒ 6.20, 43.34,
ՋՍ–Մ 1.37:
27ա սո՛ւ Միսիոներական
աշխատանք:
28ա սո՛ւ Հիսուս Քրիստոս:
բ սո՛ւ Լույս, Քրիստոսի

լույս:
30ա Հովհ. Ա.12:
բ սո՛ւ Աստծո որդիներն
ու դուստրերը:
12 1ա Տե՛ս ՎևՈՒ 11.1–6
հատվածները խաչածև
վկայակոչման
համար:

նի է և գորավոր, երկսայր սրից հատու՝ հողերը և ծուծը բաժանող. ուստի, ուշք դարձրեք իմ խոսքին:

3 Ահա, արտը սպիտակել է՝ արդեն հնձին հասել. ուստի, ով որ փափագում է հնձել, թող գցի իր մանգաղն իր գորությամբ ու հնձի, քանի դեռ օրը ցերեկ է, որ կարողանա իր հոգու համար հավիտենական փրկություն գանձել Աստծո արքայությունում:

4 Այո՛, ով որ գցի իր մանգաղն ու հնձի, նա կանչված է Աստծուց:

5 Ուստի, եթե խնդրեք ինձանից, դուք կստանաք. եթե թակեք, ձեզ կբացվի:

6 Արդ, որովհետև դուք հարցրեցիք, ահա ես ասում եմ ձեզ. Պահե՛ք

իմ պատվիրանները և փնտրեք առաջ տանել և հաստատել Սիոնի գործը:

7 Ահա, ես ասում եմ քեզ և նաև բոլոր նրանց, ովքեր փափագում են առաջ տանել և հաստատել այս գործը.

8 Եվ ոչ ոք չի կարող օգնել այս գործում, եթե նա չլինի ^ախոնարհ և ^բսիրով լի, ունենալով ^գհավատք, ^դհույս և ^եգթություն, ժուժկալ լինելով բոլոր բաներում, ինչ էլ որ վստահված լինի նրա խնամքին:

9 Ահա, ես եմ լույսը և կյանքն աշխարհի, որ ասում եմ այս խոսքերը, ուստի ուշք դարձրու քո գորությամբ, և ապա, դու կանչված ես: Ամեն:

ԲԱԺԻՆ 13

Ջոզեֆ Սմիթի և Օլիվեր Քատտերիի կարգումն Ահարոնյան Քահանայություն, Հարմոնիի մոտ գտնվող Սասքուեհանա գետի ափին, Պենսիլվանիա, 1829թ. մայիսի 15-ին (History of the Church, 1.39–42): Կարգումը կատարվեց հրեշտակի ձեռքով, որը հայտարարեց, որ ինքը Հովհաննեսն է՝ նույն ինքը, որին Նոր Կտակարանում կոչում են Հովհաննես Մկրտիչ: Հրեշտակը բացատրեց, որ նա գործում է վաղեմի առաքյալների՝ Պետրոսի, Հակոբոսի և Հովհաննեսի ղեկավարության ներքո, որոնք կրում էին ավելի բարձր քահանայության բանալիները, որը կոչվում էր Մելքիսեդեկի Քահանայություն: Ջոզեֆին և Օլիվերին խոստում տրվեց, որ իր ժամանակին իրենց կշնորհվի Մելքիսեդեկի Քահանայությունը: (Տե՛ս բաժին 27.7, 8, 12):

Ներկայացվում են Ահարոնյան Քահանայության բանալիներն ու գորությունները:

եմ ձեզ Ահարոնի ^բՔահանայությունը, որը կրում է հրեշտակների ^գսպասավորության, ^դապաշխարության ավետարանի և մեղքերի թողության համար ընկղմամբ ^եմկրտության բանալիները. և այն

ԻՄ ընկերակի՛ց ծառաներ, Մեսիայի անունով ես ^աշնորհում

Տ ա ս ո Ւ Խ ո ն ա ր Ի, Խ ո ն ա ր Ի ո թ յ ո Ւ ն :
բ ս ո Ւ Մ Ե ր :
գ ս ո Ւ Հ ա վ ա տ ք :
դ ս ո Ւ Հ ո յ ս :
ե ս ո Ւ Գ թ ո թ յ ո Ւ ն :

13 1ա ՁՍ–Պ 1.68–75:
ս ո Ւ Կ ա ր գ Ե լ, Կ ա ր գ ո Ւ մ :
բ Վ և Ռ Ի 278, 84.18–34:
ս ո Ւ Ա հ ա ր ո ն յ ա ն
ք ա հ ա ն ա յ ո թ յ ո Ւ ն :
գ ս ո Ւ Հ ր Ե շ տ ա կ ն Ե ր :

դ ս ո Ւ Ա պ ա շ խ ա ր Ե լ,
Ա պ ա շ խ ա ր ո թ յ ո Ւ ն :
ե ս ո Ւ Մ կ ր տ ո թ յ ո Ւ ն,
Մ կ ր տ Ե լ :

այլևս երբեք չի վերցվի երկրի վրայից, մինչև որ ⁹Ղևիի որդիներ-

ըը կրկին ¹արդարությամբ ընծա մատուցեն Տիրոջը:

ԲԱԺԻՆ 14

Հայտնություն տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեի միջոցով, Դեյվիդ Ուիթմերին, Ֆայեթում, Նյու Յորք, 1829թ. հունիսին (History of the Church, 1.48-50): Ուիթմերների ընտանիքը սկսել էր մեծապես հետաքրքրվել Մորմոնի Գրքի թարգմանությամբ: Մարգարեն բնակություն էր հաստատել Պիտեր Ուիթմեր ավագի տանը, որտեղ նա բնակվեց, մինչև որ թարգմանության աշխատանքը հասցվեց ավարտին, և ապահովվեց առաջ եկող գրքի հեղինակային իրավունքը: Ուիթմեր որդիներից երեքը, յուրաքանչյուրը վկայություն ստանալով աշխատանքի իսկության վերաբերյալ, խորապես մտահոգված էին իրենց անհատական պարտկանությունների հարցում: Այս հայտնությունը և հաջորդ երկուսը (15 և 16 բաժիները) տրվել էին ի պատասխան Ուրիմի ու Թումիմի միջոցով արված հարցումի: Հետագայում Դեյվիդ Ուիթմերը դարձավ Մորմոնի Գրքի Երեք Վկաներից մեկը:

1-6 Այգում աշխատողները փրկություն կստանան. 7-8 Հավերժական կյանքն Աստծո պարգևներից մեծագույնն է. 9-11 Քրիստոսն է ստեղծել երկիւրներն ու երկիրը:

դանա իր հոգու համար հավիտեանական փրկություն զանձել Աստծո արքայությունում:

4 Այո՛, ով որ գցի իր մանգաղն ու հնձի, նա կանչված է Աստծուց:

5 Ուստի, եթե խնդրես ինձանից, դու կստանաս. եթե թակես, քեզ կբացվի:

ՄԵՃ և ¹զարմանալի գործ է առաջ գալիս մարդկանց գավակների համար:

6 Փնտրիր առաջ բերել և հաստատել իմ Սիռնը: Պահիր իմ պատվիրանները բոլոր բաներում:

7 Եվ, եթե ¹պահես իմ պատվիրանները և ²համբերես մինչև վերջ, դու կունենաս ³հավերժական կյանք, պարզև, որը մեծագույնն է Աստծո բոլոր պարգևներից:

2 Ահա, ես եմ Աստված. ուշք դարձրեք իմ խոսքին, որը կենդանի է և զորավոր, երկսայր սրից հատու՝ հողերը և ծուծը բաժանող. ուստի, ուշք դարձրեք իմ խոսքին:

8 Եվ կլինի այնպես, որ եթե դու խնդրես Հորը՝ իմ անունով, հավատքով հավատալով, դու կստանաս ¹Սուրբ Հոգին, որը խոսել է

3 Ահա, արտը սպիտակել է՝ արդեն հնձին հասել. ուստի, ով որ փափագում է հնձել, թող գցի իր մանգաղն իր զորությամբ ու հնձի, քանի դեռ օրը ցերեկ է, որ կարո-

1գ Տե՛ս Օլիվեր Քաուդերիի պատմությունը Ահարոնյան Քահանայության վերականգնման մասին Ջոզեֆ Սմիթ – Պատմություն գրքի վերջում: Բ Օր. Ժ.8,

Ա Մն. 2.48, ՎևՈՒ 128.24:
է սո՛ւ Արդար, Արդարություն:
14 1ա Տե՛ս ՎևՈՒ 11.1-6 հատվածները խաչածև վկայակոչման համար:
7ա Ղև. Ի2.3-12,

Հովհ. ԺԵ.10, Մոսիա 2.22, 41, ՎևՈՒ 58.2:
բ սո՛ւ Համբերել:
գ 2 Նեփի 31.20, ՎևՈՒ 6.13:
սո՛ւ Հավերժական կյանք:
8ա սո՛ւ Սուրբ Հոգի:

տալիս, որ կարողանաս կանգնել որպէս այն բաների թվկա, որոնք դու և՛ Գլլսես, և՛ կտեսնես, և նաև, որ կարողանաս ապաշխարություն հայտարարել այս սերնդին:

9 Ահա, ես ՝ Հիսուս Քրիստոսն եմ՝ Քկենդանի Աստծո Պրդին, որը Պստեղծել է երկինքներն ու երկիրը, Գլույս, որը հնարավոր չէ քաքցնել էխավարում.

10 Ուստի, ես առաջ պիտի բերեմ իմ ավետարանի ՝ լրիվությունը՝ Պիեթանոսներից դեպի Իսրայելի տունը:

11 Եվ ահա, դու Գեյվիդն ես, և դու կանչված ես օգնելու. ինչը եթե անես և հավատարիմ մնաս, դու պիտի օրհնվես՝ և՛ հոգևորով, և՛ ֆիզիկականով, և մեծ պիտի լինի քո վարձքը: Ամեն:

ԲԱԺԻՆ 15

Հայտնություն՝ տրված Չոզեֆ Սմիթ Մարգարեի միջոցով, Չոն Ուիթմերին, Ֆայեթում, Նյու Յորք, 1829թ. հունիսին (History of the Church, 1.50): (Տես 14-րդ բաժնի նախադրությունը): Ուղերձը մտերմիկ և խիստ անձնական է, որովհետև Տերն ասում է այն բաների մասին, որոնք հայտնի էին միայն իրեն և Չոն Ուիթմերին: Հետագայում Չոն Ուիթմերը դարձավ Մորմոնի Գրքի Ութ Վկաներից մեկը:

1–2՝ Տիրոջ բազուկը ողջ երկրի վրա է.
3–6՝ Ավետարանը քարոզելն ու հոգիներին փրկելն ամենաարժեքավոր բանն է:

ԱԿԱՆՁ դիր, իմ ծառա՝ Չոն, և լսիր Հիսուս Քրիստոսի՝ քո Տիրոջ և քո Քավչի խոսքերը:

2 Քանզի ահա, ես խոսում եմ քեզ հետ խստությամբ ու ՝ զորությամբ, քանզի իմ բազուկը ողջ երկրի վրա է:

3 Եվ ես կասեմ քեզ այն, ինչը ոչ մի մարդ չգիտի, բացի միայն ինձանից և քեզանից,

4 Քանզի դու բազմիցս փափագել

ես ինձանից իմանալ այն, ինչն ամենաարժեքավորը կլիներ քեզ համար:

5 Ահա, օրհնված ես դու այդ բանի համար և իմ պատվիրանների համաձայն՝ իմ խոսքերը խոսելու համար, որոնք տվել եմ քեզ:

6 Եվ արդ, ահա, ես ասում եմ քեզ, որ այն, ինչն ամենաարժեքավորը կլինի քեզ համար, այս ժողովրդին ապաշխարություն ՝ հայտարարելն է, որ կարողանաս հոգիներ բերել ինձ մոտ, որ կարողանաս նրանց հետ Պիեթանոսանալ իմ Պար Պարբայությունում: Ամեն:

8բ Մոսիա 18.8–10:
սու՝ Վկա:
գ Տես «Երեք վկաների վկայությունը» Մորմոնի Գրքի ներածական էջերում:
9ա Մոսիա 4.2,
ՎևՈՒՒ 76.20–24:
բ Դան. 2.26,
Ալմա 7.6,
ՎևՈՒՒ 20.19:
գ Հռովմ. Ա.4:

դ Հովհ. Ա.1–3, 14,
3 Նեփի 9.15,
ՎևՈՒՒ 45.1:
սու՝ Ստեղծել,
Ստեղծում:
ե Աբր. 4.12, 24–25:
գ ԲԹագ. ԻԲ.29:
սու՝ Լույս, Քրիստոսի լույս:
է սու՝ Հոգևոր խավար:
10ա ՎևՈՒՒ 20.8–9,
ՋՄ–Պ 1.34:

բ սու՝ Հեթանոսներ:
15 ա Հել. 3.29–30:
սու՝ Չորություն:
6ա ՎևՈՒՒ 18.15–16:
սու՝ Միսիոներական աշխատանք:
բ սու՝ Հանգիստ:
գ սու՝ Հայր Երկնային:
դ սու՝ Աստծո արքայություն կամ Երկնքի արքայություն:

ԲԱԺԻՆ 16

Հայտնություն տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեի միջոցով, Պիտեր Ուիթմեր կրտսերին, Ֆայեթում, Նյու Յորք, 1829թ. հունիսին (History of the Church, 1.51): (Տե՛ս 14-րդ բաժնի նախադրությունը): Հետագայում Պիտեր Ուիթմեր կրտսերը դարձավ Մորմոնի Գրքի Ութ Վկաներից մեկը:

1-2՝ Տիրոջ բազուկը ողջ երկրի վրա է.
3-6՝ Ավետարանը քարոզելն ու հոգիներին փրկելն ամենաարժեքավոր բանն է:

Մ ԱԿԱՆՁ դիր, իմ ծառա՝ Պիտեր, և լսիր Հիսուս Քրիստոսի՝ քո Տիրոջ և քո Քավչի խոսքերը:

2 Քանզի ահա, ես խոսում եմ քեզ հետ խստությամբ ու զորությամբ, քանզի իմ բազուկը ողջ երկրի վրա է:

3 Եվ ես կասեմ քեզ այն, ինչը ոչ մի մարդ չգիտի, բացի միայն ինձանից և քեզանից,

4 Քանզի դու բազմիցս փափագել ես ինձանից իմանալ այն, ինչն ամենաարժեքավորը կլիներ քեզ համար:

5 Ահա, օրհնված ես դու այդ բանի համար և իմ պատվիրանների համաձայն իմ խոսքերը խոսելու համար, որոնք տվել եմ քեզ:

6 Եվ արդ, ահա, ես ասում եմ քեզ, որ այն, ինչն ամենաարժեքավորը կլինի քեզ համար, այս ժողովրդին ապաշխարություն հայտարարելն է, որ կարողանաս հոգիներ բերել ինձ մոտ, որ կարողանաս նրանց հետ հանգստանալ իմ Հոր արքայությունում: Ամեն:

ԲԱԺԻՆ 17

Հայտնություն տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեի միջոցով, Օլիվեր Քատլեր-րիին, Դեյվիդ Ուիթմերին և Մարտին Հարրիսին, Ֆայեթում, Նյու Յորք, 1829թ. հունիսին, նախքան նրանց՝ փորագրված թիթեղները տեսնելը, որոնք պարունակում էին Մորմոնի Գրքի հիշատակարանը (History of the Church, 1.52-57): Ջոզեֆն ու իր դպիրը, Օլիվեր Քատլերին, Մորմոնի Գրքի թիթեղների թարգմանությունից իմացել էին, որ երեք հատուկ վկաներ են նշանակվելու (տե՛ս Եթեր 5.2-4, 2 Նեպիի 11.3, 27.12): Օլիվեր Քատլերին, Դեյվիդ Ուիթմերը և Մարտին Հարրիսը մղվել էին ոգեշնչված ցանկությամբ՝ լինել երեք հատուկ վկաները: Մարգարեն հարցրեց Տիրոջը, և, որպես պատասխան, Ուրիմի ու Թումիմի միջոցով տրվեց այս հայտնությունը:

1-4՝ Հավատքով Երեք Վկաները կտեսնեն թիթեղները և մյուս սրբազան իրերը. 5-9՝ Քրիստոսը վկա-

յություն է բերում Մորմոնի Գրքի աստվածայնության մասին:

16 1ա Տե՛ս Վե՛ր 15.1-6 հատվածները խաչաձև վկայակոչման համար:

ԱՀԱ, ես ասում եմ ձեզ, որ դուք պետք է վստահեք իմ խոսքին, որը, եթե անեք արտի ողջ նվիրվածությամբ, դուք ^ակոտենեք ^բքիթեղները, և նաև լանջապանակը, Լաբանի ^գսուրը, ^դՈւրիմն ու Թումիմը, որոնք սարի վրա տրվել էին Հարեդի ^եեղբորը, երբ նա ^զդեմառդեմ խոսեց Տիրոջ հետ, և ^էհրաշագործ ուղեցույցները, որոնք տրվել էին Լեքիին, մինչ նա անապատում էր, ^ըԿարմիր ծովի եզերքին:

2 Եվ ձեր հավատքով է, որ դուք պիտի տեսնեք դրանք, այսինքն՝ այն հավատքով, որն ունեին հին մարգարեները:

3 Եվ հետո, երբ դուք հավատք ձեռք բերեք և տեսնեք դրանք ձեր աչքերով, դուք պիտի ^ավկայեք դրանց մասին, Ասածո գորությամբ.

4 Եվ դուք պետք է դա անեք, որպեսզի իմ ծառա Ջոզեֆ Սմիթ կրտսերը չկործանվի, որ այս աշխատանքով ես կարողանամ իրականացնել իմ արդար նպատակները մարդկանց զավակների համար:

5 Եվ դուք պետք է վկայեք, որ տեսել եք դրանք, ճիշտ ինչպես իմ ծառա Ջոզեֆ Սմիթ կրտսերն է տեսել. քանզի իմ գորությամբ է, որ նա տեսել է դրանք. և դա՝ իր հավատքի շնորհիվ:

6 Եվ նա թարգմանել է ^ազիրքը, այսինքն՝ այն ^բմասը, որը ես նրան պատվիրել եմ, և, ինչպես կենդանի է ձեր Տերն ու ձեր Աստվածը, այն ճշմարիտ է:

7 Ուստի, դուք ստացել եք միևնույն գորությունը, և միևնույն հավատքը, և միևնույն պարզևր, ինչպես նա.

8 Եվ, եթե դուք կատարեք իմ այս վերջին պատվիրանները, որոնք ես տվել եմ ձեզ, դժոխքի ^ադռները չպետք է հաղթեն ձեզ. քանզի իմ ^բշնորհը ձեզ համար բավական է, և վերջին օրը դուք ^գկբարձրացվեք:

9 Եվ ես՝ Հիսուս Քրիստոսս՝ ձեր ^աՏերն ու ձեր Աստվածը, ասել եմ ձեզ դա, որ կարողանամ իրականացնել իմ արդար նպատակները մարդկանց զավակների համար: Ամեն:

ԲԱԺԻՆ 18

Հայտնություն՝ տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեին, Օլիվեր Քաուլերիին և Դեյվիդ Ուիթմերին, Ֆայեթում, Նյու Յորք, 1829թ. հունիսին (History of the Church, 1.60-64): Միարդյան Քահանայությունը շնորհելիս խոստացվել էր Մելքիսեդեկյան Քահանայության պարզևումը (տե՛ս 13-րդ բաժնի նա-

<p>17 1ա 2 Նեփի 27.12, Եթեր 5.2-4, ՎևոՒ 5.15: Տե՛ս նաև «Երեք վկաների վկայությունը» Մորմոնի Գրքի ներածական էջերում: ^բ Մորմ. 6.6, ՁՄ-Պ 1.52: սուր Թիթեղներ: ^գ 1 Նեփի 4.8-9, 2 Նեփի 5.14, Հակոբ 1.10,</p>	<p>Մոսիա 1.16: ^դ սուր Ուրիմ ու Թումիմ: ^ե Եթեր 3.1-28: ^զ Մն. ԼԲ.30, Ել. ԼԳ.11, Մովսես 1.2: ^է 1 Նեփի 16.10, 16, 26-29, Ալմա 37.38-47: ^ը 1 Նեփի 2.5: 3ա սուր՝ Վկայել. Վկայություն: 6ա սուր՝ Մորմոնի Գիրքը:</p>	<p>^բ 2 Նեփի 27.22, 3 Նեփի 26.7-10: 8ա Մատ. ԺԶ.18, 3 Նեփի 11.39, ՎևոՒ 10.69: ^բ սուր Ծնոթի: ^գ 1 Նեփի 13.37, 3 Նեփի 27.14-15, 22, ՎևոՒ 9.14: 9ա սուր՝ Տեր:</p>
--	--	--

խաղորդությունը): Ի պատասխան նրանց աղաչանքին, այս հարցի իմացությանը վերաբերյալ, Տերը տվեց այս հայտնությունը:

1-5 Սուրբ գրքերը ցույց են տալիս՝ ինչպես կառուցել Եկեղեցին. 6-8՝ Աշխարհը հասունանում է անօրինության մեջ. 9-16՝ Հոգիների արժեքը մեծ է. 17-25՝ Փրկություն ձեռք բերելու համար մարդիկ պետք է իրենց վրա վերցնեն Քրիստոսի անունը. 26-36՝ Հայտնվում է Տասներկուսի կոչումն ու առաքելությունը. 37-39՝ Օլիվեր Քառուղեքին ու Դեյվիդ Ուիթմերը պետք է փնտրեն և գտնեն Տասներկուսին. 40-47՝ Փրկություն ձեռք բերելու համար, մարդիկ պետք է ապաշխարեն, մկրտվեն և պահեն պատվիրանները:

ԱՐԴ, ահա, այն բանի պատճառով, որ դո՛ւ, իմ ծառա՝ Օլիվեր Քառուղեքի, փափագեցիր ինձանից իմանալ, ես տալիս եմ քեզ այս խոսքերը.

2 Ահա, բազմաթիվ առիթներով, իմ Հոգով ես քեզ ցույց եմ տվել, որ բաները, որոնք դու գրել ես, ճշմարիտ են. ուստի, դու գիտես, որ դրանք ճշմարիտ են:

3 Եվ եթե դու գիտես, որ դրանք ճշմարիտ են, ահա, ես պատվիրան եմ տալիս քեզ, որ դու վստահես այն բաներին, որոնք ՞գրված են.

4 Բանգի դրանցում բոլոր բաները գրված են՝ իմ եկեղեցու, իմ ՞ավետարանի և իմ ՞վեմի հիմնադրման վերաբերյալ:

5 Ուստի, եթե դու իմ ավետարա-

նի ու իմ վեմի հիմքի վրա կառուցես իմ եկեղեցին, դժոխքի դռները չպիտի հաղթեն քեզ:

6 Ահա, ՞աշխարհը հասունանում է անօրինության մեջ. և անպայման պետք է, որ մարդկանց զավակները դրովեն ապաշխարության՝ և՛ ՞հեթանոսները, և՛ նաև Իսրայելի տունը:

7 Ուստի, քանի որ դու ՞մկրտվել ես իմ ծառա Ջոզեֆ Սմիթ կրտսերի ձեռքով, համաձայն նրա, ինչ ես պատվիրել եմ նրան, նա իրագործել է այն, ինչը ես պատվիրեցի նրան:

8 Եվ արդ, մի զարմացիր, որ ես նրան կանչել եմ իմ իսկ նպատակի համար, նպատակ, որը հայտնի է ինձ. ուստի, եթե նա ՞ջանասեր լինի իմ պատվիրանները ՞պահելիս, նա պիտի օրհնվի հավերժական կյանքով. և նրա անունը ՞Ջոզեֆ է:

9 Եվ արդ, Օլիվեր Քառուղեքի, ես ասում եմ քեզ, և նաև Դեյվիդ Ուիթմերին, պատվիրանի ձևով. քանզի, ահա, ես պատվիրում եմ բոլոր մարդկանց, ամենուր, ապաշխարել, և ես ասում եմ ձեզ, ճիշտ ինչպես Պողոսին՝ իմ ՞առաքյալին, քանզի դուք կանչված եք, ճիշտ այն նույն կոչումով, որով նա էր կանչված:

10 Հիշե՛ք, ՞հոգիների ՞արժեքը մեծ է Աստծո աչքում.

18 2ա ՎևոՒ 6.15-17:
3ա ՎևոՒ 98.11:
սու՛ Սուրբ գրքեր – Սուրբ գրքերի արժեքը:
4ա սու՛ Ավետարան:
բ սու՛ Վեմ:
6ա սու՛ Աշխարհ:

բ սու՛ Հեթանոսներ:
7ա ՋՍ–Պ 1.70-71:
8ա սու՛ Ջանասիրություն:
բ սու՛ Հնագանդություն, Հնագանդ, Հնագանդվել:
գ սու՛ Օրհնել, Օրհնված, Օրհնություն:

դ 2 Նեփի 3.14-15:
սու՛ Սմիթ Ջոզեֆ կրտսեր
9ա Հռովմ. Ա.1:
10ա սու՛ Հոգի:
բ սու՛ Հոգի – Հոգու արժեքը:

11 Քանզի, ահա, Տերը՝ քո ^աՔավիչը, մարմնի մեջ ^բմահ տարավ. ուստի նա ^գտարավ բոլոր մարդկանց ^դցավը, որ բոլոր մարդիկ կարողանան ապաշխարել ու գալ իր մոտ:

12 Եվ նա կրկին ^ահարություն է առել մեռելներից, որ կարողանա բոլոր մարդկանց բերել իր մոտ՝ ^բապաշխարության պայմաններով:

13 Եվ որքա՛ն մեծ է նրա ^աուրախությունն այն հոգու համար, որն ապաշխարում է:

14 Ուստի, դուք կանչված եք՝ ապաշխարություն ^աաղաղակելու այս ժողովրդին:

15 Եվ, եթե լինի այնպես, որ դուք տքնեք ձեր բոլոր օրերում, ապաշխարություն աղաղակելով այս ժողովրդին, և ինձ մոտ բերեք զեք մեկ ^ահոգի, որքա՛ն մեծ կլինի ձեր ուրախությունը նրա հետ իմ ^բչոր արքայությունում:

16 Եվ արդ, եթե ձեր ուրախությունը մեծ կլինի մեկ հոգու հետ, որին դուք բերել եք ինձ մոտ՝ իմ ^բչոր ^աարքայություն, որքա՛ն մեծ կլինի ձեր ^բուրախությունը, եթե դուք շատ հոգիներ ^գբերեք ինձ մոտ:

17 Ահա, դուք ունեք ձեր առաջ

ին ավետարանը և իմ վեմը և իմ ^ափրկությունը:

18 ^աԽնդրեք Հորը՝ իմ ^բանունով, հավատքով հավատալով, որ պիտի ստանաք, և դուք կունենաք Սուրբ Հոգին, որը ցույց է տալիս բոլոր բաները, որոնք ^գնպատակահարմար են մարդկանց զավակների համար:

19 Եվ, եթե դուք չունեք ^ահավատք, ^բհույս և ^գգթություն, դուք ոչինչ չեք կարող անել:

20 Մի ^ահակառակվեք ոչ մի եկեղեցու, բացի միայն դևի ^բեկեղեցուց:

21 Չեզ վրա վերցրեք ^աանունը Քրիստոսի և ^բխոսեք ճշմարտությունը ^գլրջմտությամբ:

22 Եվ բոլոր նրանք, ովքեր ապաշխարում ու ^ամկրտվում են իմ անունով, որն է՝ Հիսուս Քրիստոս, և ^բհամբերում են մինչև վերջ, պիտի փրկվեն:

23 Ահա, Հիսուս Քրիստոսն այն ^աանունն է, որը տրված է Հորից, և ուրիշ անուն չկա տրված, որով մարդ կարողանա փրկվել.

24 Ուստի, բոլոր մարդիկ պետք է իրենց վրա վերցնեն անունը, որը տրված է Հորից, քանզի այդ անունով պիտի նրանք կոչվեն վերջին օրը.

11ա սուր Քավիչ:
բ սուր Խաչելություն:
գ սուր Փրկագնել, Փրկագնված, Փրկագնում:
դ Ես. ԾԳ. 4–5:
սուր Քավել, Քավություն:
12ա սուր Հարություն:
բ ՎևոՒ 19.4–18:
սուր Ապաշխարել, Ապաշխարություն:
13ա Դուկ. ԺԵ. 7:
14ա Ալմա 29.1–2, ՎևոՒ 34.5–6, 63.57:
15ա սուր Հոգի – Հոգու

արժեքը:
16ա սուր Աստծո արքայություն կամ Երկնքի արքայություն:
բ Ալմա 26.11:
սուր Ուրախություն:
գ սուր Միսիոներական աշխատանք:
17ա սուր Փրկություն:
18ա սուր Աղոթք:
բ Հովի. ԺԵ. 16:
գ ՎևոՒ 88.63–65:
19ա սուր Հավատք:
բ սուր Հույս:
գ սուր Գթություն:

20ա Բ Տիմ. Բ. 23–24, 3 Նեփի 11.29–30:
բ սուր Դև – Դևի եկեղեցին:
21ա 2 Նեփի 31.13, Մոսիա 5.8, 3 Նեփի 27.5, ՎևոՒ 20.37:
բ ՎևոՒ 100.5–8:
գ Հռովմ. ԺԲ. 3:
22ա սուր Մկրտություն, Մկրտել:
բ սուր Համբերել:
23ա Մաղ. Ա. 11, Գոր. Դ. 12, Մոսիա 3.17, Հել. 3.28–29:

25 Ուստի, եթե նրանք չգիտեն «անունը, որով նրանք կոչվում են, նրանք չեն կարող տեղ ունենալ իմ Հոր Քարքայությունում:

26 Եվ արդ, ահա, կան նաև ուրիշները, որոնք կանչված են հայտարարելու իմ ավետարանը՝ թե՛ «հեթանոսին, թե՛ հրեային.

27 Այո՛, նույնիսկ տասներկուսը. և Տասներկուսը կլինեն իմ աշակերտները, և նրանք իրենց վրա կվերցնեն իմ Քանունը. և Տասներկուսը նրանք են, ովքեր, սրտի ողջ նվիրվածությամբ, կփափագեն իրենց վրա վերցնել իմ անունը:

28 Եվ եթե նրանք սրտի ողջ նվիրվածությամբ փափագեն իրենց վրա վերցնել իմ անունը, նրանք կանչված են գնալու «աշխարհը բոլոր՝ քարոզելու իմ Քավետարանն՝ «ամեն արարածի:

29 Եվ այդ նրանք են, ովքեր կարգվել են իմ կողմից՝ «մկրտելու իմ անունով, համաձայն նրա, ինչ գրված է.

30 Եվ դուք ձեր առջև ունեք այն, ինչ գրված է. ուստի, դուք պետք է դա կատարեք համաձայն այն խոսքերի, որոնք գրված են:

31 Եվ արդ, ես ասում եմ ձեզ՝ «Տասներկուսիդ. Ահա, իմ շնորհը բավական է ձեզ համար. դուք պետք է ուղիղ քայլեք իմ առաջ և չձեղանչեք:

32 Եվ, ահա, դուք նրանք եք, ովքեր «կարգված են իմ կողմից՝ կարգելու քահանաներ և ուսուցիչներ. հայտարարելու իմ ավետա-

րանը՝ Քհամաձայն Սուրբ Հոգու զորության, որը ձեր մեջ է, և համաձայն մարդկանց համար Աստծո Պոչությունների ու պարգևների.

33 Եվ ես՝ Հիսուս Քրիստոսս՝ ձեր Տերն ու ձեր Աստվածն եմ ասել դա:

34 Այս խոսքերը ոչ մարդկանցից են, ոչ էլ մարդուց, այլ ինձանից. ուստի, դուք պետք է վկայեք՝ դրանք ինձանից են և ոչ թե մարդուց.

35 Քանզի իմ ճայնն է, որ ասում է դրանք ձեզ. քանզի դրանք իմ Հոգով են տրված ձեզ, և իմ զորությամբ դուք կարող եք դրանք կարդալ մեկդ մյուսին. և եթե չլինեք իմ զորությամբ, դուք չէիք ունենա դրանք.

36 Ուստի, դուք կարող եք Վկայել, որ լսել եք իմ ձայնը և գիտեք իմ խոսքերը:

37 Եվ արդ, ահա, ես տալիս եմ քեզ, Օլիվե՛ր Քաուղերի, և նաև Դեյվիդ Ուիթմերին, որ դուք պիտի փնտրեք և գտնեք Տասներկուսին, որոնք կունենան այն ցանկությունները, որոնց մասին ես ասացի.

38 Եվ ըստ նրանց ցանկությունների ու նրանց «գործերի, դուք կճանաչեք նրանց:

39 Եվ երբ դուք գտնեք նրանց, դուք ցույց պիտի տաք նրանց այս բաները:

40 Եվ դուք պետք է վայր ընկնեք ու «երկրպագեք Հորը՝ իմ անունով:

41 Եվ դուք պետք է քարոզեք աշխարհին՝ ասելով. Դուք պետք է ապաշխարեք և մկրտվեք Հիսուս Քրիստոսի անունով.

25ա Մոսիա 5.9–14:
բ սո՛ր Սելեստիալ փառք:
26ա Վևո՛Ւ 90.8–9, 112.4:
27ա սո՛ր Առաքյալ:
բ Վևո՛Ւ 27.12:
28ա Մար. ԺԶ.15–16:
բ սո՛ր Ավետարան:
գ Վևո՛Ւ 1.2, 42.58:

29ա 3 Նեփի 11.21–28,
Վևո՛Ւ 20.72–74:
31ա Վևո՛Ւ 107.23–35:
32ա Մոր. 3.1–4,
Վևո՛Ւ 20.60, 107.58:
սո՛ր Կարգել, Կարգում:
բ Բ Պեո. Ա.21,
Վևո՛Ւ 68.3–4:

գ Վևո՛Ւ 20.27:
34ա սո՛ր Սուրբ գրքեր:
35ա Վևո՛Ւ 1.38:
սո՛ր Չայն:
36ա սո՛ր Վկայել:
38ա սո՛ր Գործեր:
40ա սո՛ր Երկրպագել:

42 Քանզի բոլոր մարդիկ պետք է ապաշխարեն ու մկրտվեն, և ոչ միայն տղամարդիկ, այլ կանայք և այն երեխաները, որոնք հասել են [՝]պատասխանատվության տարիքի:

43 Եվ այժմ, երբ դուք ստացել եք այս, դուք պետք է պահեք իմ [՝]պատվիրանները բոլոր բաներում.

44 Եվ ձեր ձեռքերով մարդկանց զավակներին մեջ ես կգործեմ [՝]զարմանալի մի գործ՝ շատերին [՝]համոզելու իրենց մեղքերի մեջ, որ

նրանք կարողանան զավ ապաշխարության, և որ նրանք կարողանան զավ իմ Հոր արքայություն:

45 Ուստի, օրհնությունները, որոնք ես տալիս եմ ձեզ, բոլոր բաներից [՝]առավել են:

46 Եվ հետո, երբ դուք ստացել եք այս, եթե դուք [՝]չպահեք իմ պատվիրանները, դուք չեք կարող փրկվել իմ Հոր արքայությունում:

47 Ահա, ես՝ Հիսուս Քրիստոս՝ ձեր Տերն ու ձեր Աստվածը, և ձեր Քավիչը, իմ Հոգու զորությամբ եմ ասել դա: Ամեն:

ԲԱԺԻՆ 19

Հայտնություն տրված Ջոզեֆ Սմիթի միջոցով, Մանչեստրում, Նյու Յորք, 1830թ. մարտին (History of the Church, 1.72–74): Իր պատմության մեջ Մարգարեն ներկայացրել է այն, որպես «պատվիրան Աստծուց, և ոչ թե մարդուց, Մարտին Հարրիսին, տրված նրանից, ով Հավերժական է» (History of the Church, 1.72):

1–3՝ Քրիստոսն ունի ողջ զորությունը. 4–5՝ Բոլոր մարդիկ պետք է ապաշխարեն կամ տառապեն. 6–12՝ Հավերժական պատիժն Աստծո պատիժն է. 13–20՝ Քրիստոսը տառապեց բոլորի համար, որպեսզի նրանք չտառապեն, եթե ապաշխարեն. 21–28՝ Քարոզի՛ր ապաշխարության ավետարանը. 29–41՝ Հայտարարի՛ր ավետիք:

նիսկ ես նա եմ՝ սկիզբը և վերջը՝ աշխարհի Քավիչը:

2 Ես՝ իրագործելով և [՝]ավարտելով իմ վերաբերյալ նրա կամքը, այսինքն՝ Հոր, ում ես պատկանում եմ, – կատարելով այն, որ կարողանամ ամեն բան ինձ [՝]հնազանդեցնել, –

3 Պահպանելով ողջ [՝]զորությունը, նույնիսկ Սատանային ու նրա աշխատանքը [՝]կործանելը աշխարհի [՝]վերջում և դատաստանի վերջին մեծ օրը, որը ես պիտի

ԵՍ եմ [՝]Ալֆան և Օմեգան՝ [՝]Քրիստոս Տերը. այո՛, նույ-

42ա ՎևոՒ 20.71, 29.47, 68.27:
սու՝ Հաշիվ, Պատասխանատու, Պատասխանատվություն:
43ա սու՝ Պատվիրաններն Աստծո:
44ա Ես. ԻԹ.14, ՎևոՒ 4.1:
բ Ալմա 36.12–19, 62.45:

45ա ՎևոՒ 84.35–38:
46ա ՎևոՒ 82.3:
19 1ա Հայտ. Ա.8, 11, 3 Նեփի 9.18, ՎևոՒ 35.1, 61.1:
սու՝ Ալֆա և Օմեգա:
բ սու՝ Հիսուս Քրիստոս:
2ա Հովհ. ԺԷ.4, 3 Նեփի 11.11:

բ Փիլ. Գ.21:
3ա սու՝ Ջորություն:
բ Ես. ԺԳ.12–17, Ա Հովհ. Գ.8, 1 Նեփի 22.26, ՎևոՒ 88.111–115:
գ սու՝ Աշխարհ – Աշխարհի վերջը:

բերեմ նրա բնակիչների վրա, ²դատելով ամեն մարդու ըստ իր ³գործերի ու արարքների, որոնք նա կատարել է:

4 Եվ, անշուշտ, ամեն մարդ պետք է ⁵ապաշխարի կամ ⁶տառապի, քանզի ես՝ Աստվածս, ⁷անվերջ եմ:

5 Ուստի, ես ետ չեմ ⁸դարձրել դատաստանները, որոնք պետք է բերեմ, այլ վայելք պիտի գան՝ լացով, ⁹կոծով և ատամների կրճտոցով, այո՛, նրանց համար, ովքեր կզոհվեն իմ ¹⁰ձախ կողմում:

6 Այնուամենայնիվ, գրված ¹¹է, որ վերջ չպիտի լինի այդ տանջանքին, այլ գրված է՝ ¹²անվերջ տանջանք:

7 Բացի դրանից, գրված է՝ ¹³հավերժական նզովք. հետևաբար, այն ավելի որոշակի է, քան այլ սուրբ գրություն, որ հնարավոր լինի ներգործել մարդկանց զավակների սրտերի վրա, ամբողջությամբ իմ անվան փառքի համար:

8 Ուստի, ես կբացատրեմ ձեզ այս խորհուրդը, քանզի պատշաճ է, որ դուք իմանաք, ճիշտ ինչպես իմ առաքյալները:

9 Ես ասում եմ ձեզ, որ ընտրված եք այս բանում, ճիշտ ինչպես մեկ, որ կարողանաք մտնել իմ ¹⁰հանգիստը:

10 Քանզի, ահա՛, աստվածայնության ¹¹խորհուրդը, ի՛նչ մեծ է այն: Քանզի, ահա, ես անվերջ եմ,

և պատիժը, որը տրվում է իմ ձեռքով՝ անվերջ պատիժ է, քանզի իմ անունն ¹²Անվերջ է: Ուստի,–

11 ¹³Հավերժական պատիժն Աստծո պատիժն է:

12 Անվերջ պատիժն Աստծո պատիժն է:

13 Ուստի, ես պատվիրում եմ քեզ ապաշխարել և պահել ¹⁴պատվիրանները, որոնք դու ստացել ես իմ ծառա Ջոզեֆ Սմիթ կրտսերի ձեռքից՝ իմ անունով:

14 Եվ իմ ամենակարող զորությամբ է, որ դու ստացել ես դրանք:

15 Հետևաբար, ես պատվիրում եմ քեզ՝ ապաշխարել,– ապաշխարի՛ր, չլինի թե քեզ զարկեմ իմ բերանի զավազանով և իմ ցատունով և իմ բարկությամբ, և քո ¹⁶տառապանքները լինեն դառը,– որքա՛ն դառը, դու չգիտես, որքա՛ն սուր, դու չգիտես, այո՛, որքա՛ն ծանր՝ տանելու, դու չգիտես:

16 Քանզի ահա, ես՝ Աստվածս, ¹⁷տառապել եմ այս բաները բոլորի համար, որպեսզի նրանք ¹⁸չտառապեն, եթե ¹⁹ապաշխարեն:

17 Բայց, եթե չապաշխարեն, նրանք պետք է ²⁰տառապեն, ճիշտ ինչպես ես:

18 Տառապանք, որը ստիպեց ինձ, նույնիսկ Աստծուս, բոլորից մեծագույնիս, ցավից դողալ և արյունահոսել ամեն մի ծակոտիից և տառապել՝ թե՛ մարմնով,

3դ սուր Վերջին դատաստան: ե սուր Գործեր:	6ա ՎևոՒ 76.105–106, 138.59: բ ՎևոՒ 76.33, 44–45:	13ա ՎևոՒ 5.2, 10.6–7, 171–9:
4ա սուր Ապաշխարել, Ապաշխարություն:	7ա Հել. 12.25–26, ՎևոՒ 29.44:	15ա Ալմա 36.11–19: 16ա Ալմա 11.40–41: սուր Քավել, Քավություն:
բ Դուկ. ԺԳ.3, Հել. 14.19:	9ա սուր Հանգիստ: 10ա Հակոբ 4.8, ՎևոՒ 76.114–116:	բ սուր Ողորմած, Ողորմություն: գ սուր Մեղքերի թողություն:
գ Մովսես 1.3:	բ Մովսես 1.3, 7.35: սուր Անվերջ:	17ա ՎևոՒ 29.17:
5ա ՎևոՒ 56.4, 58.32: բ Մատ. ԺԳ.42: գ Մատ. ԻԵ.41–43:	11ա Մատ. ԻԵ.46:	

քե՛ն ոգով,– և ես ցանկացա, որ գուցե ՝չխմենմ դառը բաժակը և ընկրկեմ,–

19 Այնուամենայնիվ, փա՛ռք լինի ձորը, և ես ճաշակեցի ու ՝ավարտեցի իմ նախապատրաստուքյունները մարդկանց զավակների համար:

20 Ուստի, ես կրկին պատվիրում եմ քեզ ապաշխարել, չլինի քե ես խոնարհեցնեմ քեզ իմ ամենակարող զորությամբ. և, որ դու ՝խոստովանես քո մեղքերը, չլինի քե դու կրես այն պատիժները, որոնց մասին ես ասացի, որից դու փոքրագույն, այո՛, նույնիսկ նվազագույն չափով ճաշակել ես այն ժամանակ, երբ ես հեռացրել էի իմ ձողին:

21 Եվ ես պատվիրում եմ քեզ, որ դու ոչինչ ՝չքարոզես, բացի ապաշխարությունից, և այս բաները ցույց ՝չտաս աշխարհին, մինչև դա չլինի իմ իմաստությամբ:

22 Քանզի նրանք չեն կարող այժմ ՝ղիմանալ մահն, այլ ՝կաթ պետք է տրվի նրանց. ուստի, նրանք չպետք է իմանան այս բաները, չլինի քե նրանք կորչեն:

23 Սովորիք ինձանից և լսիր իմ խոսքերը. ՝քայլիր իմ ձողու ՝հեզությամբ, և դու ՝խաղաղություն կունենաս ինձանում:

24 Ես ՝Հիսուս Քրիստոսն եմ. ես եկա ձոր կամքով, և ես կատարում եմ նրա կամքը:

25 Եվ բացի այդ, ես պատվիրում եմ քեզ, որ դու չպետք է ՝ցանկանաս քո մերձավորի ՝կնջը. ոչ էլ փնտրես քո մերձավորի կյանքը:

26 Եվ բացի այդ, ես պատվիրում եմ քեզ, որ դու չպետք է անհագ լինես քո սեփական ունեցվածքով, այլ դրանից առատորեն բաժին հանես Մորմնի Գրքի տպագրության համար, որը պարունակում է ՝ճշմարտությունը և Աստծո խոսքը,–

27 Որն իմ խոսքն է ՝հեթանոսին, որ շուտով այն գնա ՝հրեային, որի մի ՝մնացորդ են Լամանացիները, որ նրանք կարողանան հավատալ ավետարանին և չսպասեն ՝Մեսիայի գալույն, որն արդեն եկել է:

28 Եվ բացի այդ, ես պատվիրում եմ քեզ, որ դու պիտի ՝աղոթես՝ ինչպես ՝բարձրաձայն, այնպես էլ քո սրտում. այո՛, ինչպես աշխարհի առաջ, այնպես էլ գաղտնի, ինչպես հրապարակավ, այնպես էլ առանձին:

29 Եվ դու պետք է ավետիք ՝հայտարարես, այո՛, հրատարակես այն սարերի վրա և ամեն բարձր տեղում և ամեն ժողովրդի մեջ, որ քեզ թույլ պիտի տրվի տեսնել:

30 Եվ դու պիտի անես դա՝ ողջ խոնարհությամբ, ՝վատահեղով ինձ, չանարգելով անարգողներին:

18ա Ղուկ. Ի.Բ.42–44:
19ա Նովի. ԺԷ.4, ԺԹ.30:
20ա Թվ. Ե.6–7,
Մոսիա 26.29,
ՎևոՒ 58.43, 64.7:
սո՛ւ Խոստովանել,
Խոստովանություն:
21ա ՎևոՒ 11.9:
բ ՋՄ–Պ 1.42:
22ա ՎևոՒ 78.17–18:
բ Եբր. Ե.11–14,

ՎևոՒ 50.40:
23ա Մոր. 7.3–4:
բ սո՛ւ Հեզ, Հեզություն:
գ սո՛ւ Խաղաղություն:
24ա սո՛ւ Հիսուս Քրիստոս:
25ա սո՛ւ Ագահ լինել:
բ Ել. Ի.17, Ա Կոր. Է.2–4:
սո՛ւ Շնություն:
26ա սո՛ւ ճշմարտություն:
27ա սո՛ւ Հեթանոսներ:
բ սո՛ւ Հրեաներ:

գ Օմնի 1.14–19,
Մոսիա 25.2–4,
Հել. 8.21,
3 Նեփի 2.12–16:
դ սո՛ւ Մեսիա:
28ա Ա Տիմ. Բ.8:
սո՛ւ Աղոթք:
բ ՎևոՒ 20.47, 51, 23.6:
29ա սո՛ւ Միսիոներական
աշխատանք:
30ա սո՛ւ Ապավինել:

31 Եվ ^ազաղափարախոսությունների մասին դու չպետք է խոսես, այլ պետք է հայտարարես ապաշխարություն և ^բհավատք առ Փրկիչը, և մեղքերի ^գքողություն՝ ^դմկրտությամբ և ^եկրակով, այո՛, այսինքն՝ ^զՍուրբ Հոգով:

32 Ահա, սա մեծ և վերջին ^ապատվիրանն է, որ ես պիտի տամ քեզ՝ այս նյութի վերաբերյալ. քանզի այն բավական կլինի քո ամենօրյա քայլերի համար, նույնիսկ մինչև քո կյանքի վերջը:

33 Եվ թշվառություն կստանաս դու, եթե դու անտեսես այս ^ախորհուրդները, այո՛, նույնիսկ քո և ունեցվածքիդ կործանումը:

34 ^աԲաժին հանիր քո ունեցվածքից, այո՛, այսինքն՝ քո հողերի մի մասը, և ամբողջը, բացի ընտանիքիդ ապրուստից:

35 Վճարիր տպագրիչին ^ապարտավորված ^բպարտքը: Ազատիր քեզ ^գզերությունից:

36 ^աԹող քո տունը և բնակարանը,

բացառությամբ, երբ կցանկանաս տեսնել քո ընտանիքը.

37 Եվ ազատ ^ախոսիր բոլորի հետ. այո՛, քարոզիր, հորդորիր, հայտարարիր ^բճշմարտությունը, նույնիսկ բարձր ձայնով, ցմծոթյան հնչյունով՝ աղաղակելով. Ով-սա՛ննա, ովսա՛ննա, օրհնյա՛լ է Տեր Աստծո անունը:

38 Անդադար ^աաղոթիր, և ես իմ Հոգին դուրս ^բկթափեմ քո վրա, և մեծ կլինի քո օրհնությունը, այո՛, նույնիսկ ավելի մեծ, քան եթե դու ձեռք բերեիր երկրի գանձերը և դրանց չափով ապականություն:

39 Ահա, կարո՞ղ ես դու կարդալ այս՝ առանց ցմծոթյան և սիրտդ ուրախությունից բարձրանալու:

40 Կամ, կարո՞ղ ես դու շարունակ վազվզել այս ու այն կողմ, որպես կույր ուղեկցող:

41 Կամ, կարո՞ղ ես դու լինել ^ախոնարհ ու հեզ և իմաստությամբ վարվել իմ առաջ: Այո՛, ^բեկ ինձ մոտ՝ քո Փրկչի մոտ: Ամեն:

ԲԱԺԻՆ 20

Հայտնություն՝ Եկեղեցու կազմակերպման և կառավարման վերաբերյալ, տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեի միջոցով, 1830թ. ապրիլին (History of the Church, 1.64–70): Սկսելով այս հայտնության իր արձանագրումը՝ Մարգարեն գրել է. «Մենք ստացանք նրանից [Հիսուս Քրիստոսից] հետևյալը՝ մարգարեության և հայտնության ոգով. որը ոչ միայն շատ տեղեկություններ տվեց մեզ, այլ նաև ցույց տվեց այն ճշգրիտ օրը, երբ մենք, ըստ նրա կամքի ու պատվիրանի, այստեղ՝ երկրի վրա, ևս մեկ անգամ պետք է սկսեինք կազմակերպել նրա Եկեղեցին» (History of the Church, 1.64):

31ա Բ Տիմ. Բ.23–24:
բ սո՛ր Հավատք:
գ սո՛ր Մեղքերի քողություն:
դ սո՛ր Մկրտություն, Սկրտել:
ե Մատ. Գ.11:
զ սո՛ր Սուրբ Հոգու պարզև:
32ա Վևու՛ 58.26–29:

33ա սո՛ր Պատվիրաններն Աստծո:
34ա Գոր. Դ.34–35:
35ա նշ. վճարել Մորմոնի Գրքի առաջին հրատարակության տպագրության համար:
բ սո՛ր Պարտք:
գ Առակ. ԻԲ.7:
36ա Մատ. ԺԹ.29:

37ա Վևու՛ 58.47, 68.8, 71.7:
բ Վևու՛ 75.4:
38ա Ղուկ. ԺԸ.1, 2 Նեփի 32.9, Վևու՛ 10.5:
բ Առակ. Ա.23, Գոր. Բ.17:
41ա սո՛ր Խոնարհ, Խոնարհություն:
բ Մատ. ԺԱ.28–30:

1–16 Մորմունի Գիրքն ապացուցում է վերջին օրերի աշխատանքի աստվածայնությունը. 17–28 Ստեղծման, անկման, քավության և մկրտության մասին վարդապետությունները հաստատվում են. 29–37 Ներկայացվում են ապաշխարությունը, արդարացումը, սրբագործումը և մկրտությունը կառավարող օրենքները. 38–67 Ամփոփվում են երեցների, քահանաների, ուսուցիչների և սարկավագների պարտականությունները. 68–74՝ Բացահայտվում են անդամների պարտականությունները, երեխաների օրհնությունը և մկրտության եղանակը. 75–84՝ Տրվում են հաղորդության աղոթքները և Եկեղեցու անդամությունը կառավարող կանոնակարգումները:

ՔՐԻՍՏՈՍԻ ^աԵկեղեցու ^բբարձրանալն այս վերջին օրերին, մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի՝ մարմնի մեջ գալստից հազար ութ հարյուր երեսուն տարի անց, այն կանոնավորապես ^գկազմակերպված և հաստատված լինելով մեր երկրի օրենքների համաձայն, Աստծո կամքով և պատվիրաններով, չորրորդ ամսում, և ապրիլ կոչվող ամսվա վեցերորդ օրը,–

2 Պատվիրաններ, որոնք տրվել են Ջոզեֆ Սմիթ կրտսերին, որը ^ականչվել է Աստծո կողմից և կարգվել Հիսուս Քրիստոսի ^բառաքյալ՝ լինելու այս եկեղեցու առաջին ^գերեցը.

3 Եվ Օլիվեր Քաուդերիին, որը նույնպես Աստծո կողմից կանչվել է Հիսուս Քրիստոսի առաքյալ և կարգվել է նրա ձեռքի տակ լինելու այս եկեղեցու երկրորդ երեցը.

4 Եվ դա՛ մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի շնորհի համաձայն, որին լինի ողջ փառքն այժմ և հավիտյան: Ամեն:

5 Հետո, երբ այս առաջին երեցին ճշմարտապես հայտնվել էր, որ նա թողություն է ստացել իր մեղքերից, նա կրկին ^ախճճվել էր աշխարհի ունայնությունների մեջ.

6 Սակայն, հավատքի միջոցով, ապաշխարելուց և անկեղծորեն իրեն խոնարհեցնելուց հետո, Աստված ծառայեց նրան՝ սուրբ ^ահրեշտակի միջոցով, որի ^բդեմքը փայլակի պես էր, և որի հանդերձները մաքուր էին և ճերմակ՝ ամեն ճերմակությունից առավել.

7 Եվ տվեց նրան պատվիրաններ, որոնք ոգեշնչեցին նրան.

8 Եվ նրան ի վերուստ գորություն տվեց՝ թարգմանելու Մորմունի Գիրքն այն ^ամիջոցներով, որոնք նախապես պատրաստվել էին.

9 Որը պարունակում է մի ընկած ժողովրդի հիշատակարան և Հիսուս Քրիստոսի ^աավետարանի ^բլրիվությունը՝ հեթանոսին, ինչպես նաև հրեային.

10 Որը տրվել է ոգեշնչմամբ, և հրեշտակների սպասավորությամբ հաստատվել է ^աուրիշներին, և

20 1ա 3 Նեփի 27.1–8:
սո՛ր Եկեղեցու անունը.
Հիսուս Քրիստոսի
Վերջին Օրերի Սրբերի
Եկեղեցի:
բ ՋՍ–Պ 1.2:
գ ՎևՈՒ 21.3:

2ա սո՛ր Իշխանություն.
Կանչ, Աստծո կողմից
կանչված, Կոչում:
բ սո՛ր Առաքյալ:
գ սո՛ր Երեց:
5ա ՋՍ–Պ 1.28–29:
6ա ՋՍ–Պ 1.30–35:

սո՛ր Հրեշտակներ:
բ Մատ. ԻԸ.2–3:
8ա սո՛ր Ուրիմ ու Թումիմ:
9ա սո՛ր Ավետարան:
բ ՋՍ–Պ 1.34:
10ա Մոր. 7.29–32,
ՎևՈՒ 5.11:

նրանց կողմից ^բհայտարարվել է աշխարհին, –

11 Ապացուցելով աշխարհին, որ սուրբ գրքերը ^աճշմարիտ են, և որ Աստված ^բոգեշնչում է մարդկանց և կանչում է նրանց իր ^գսուրբ գործին՝ այս դարաշրջանում և սերնդում, այնպես ինչպես հին սերունդների ժամանակ.

12 Այդպիսով ցույց տալով, որ նա ^անույն Աստվածն է՝ երեկ, այսօր և հավիտյան: Ամեն:

13 Ուստի, ունենալով այսքան մեծ վկաներ, նրանցով պիտի աշխարհը դատվի, այսինքն՝ բոլոր նրանք, ովքեր այսուիետև իմացության կգան այս գործի վերաբերյալ:

14 Եվ նրանք, ովքեր կընդունեն դա հավատքով և ^աարդարություն կգործեն, կստանան հավերժական կյանքի ^բպսակը.

15 Բայց նրանք, ովքեր կկարծրացնեն իրենց սրտերն ^աանհավատությամբ և կմերժեն այն, այն կդառնա իրենց իսկ դատապարտությունը, –

16 Զանգի Տեր Աստված է ասել դա. և մենք, եկեղեցու երեցներս, լսել և վկայություն ենք բերում բարձրում գտնվող փառավոր Մեծության խոսքերի համար,

որին լինի փառքը հավիտյանս հավիտենից: Ամեն:

17 Այս բաներով մենք ^ագիտենք, որ երկնքում կա ^բԱստված, որն անասհման է և հավերժական, հավիտենականությունից հավիտենականություն՝ նույն անփոփոխ Աստվածը, ձևավորող երկնքի և երկրի և բոլոր բաների, որոնք դրանց մեջ են.

18 Եվ, որ նա ^աստեղծեց մարդուն՝ արու և էգ. իր իսկ ^բպատկերով և իր իսկ մմանությամբ ստեղծեց նրանց.

19 Եվ տվեց նրանց պատվիրաններ, որ նրանք պետք է ^ասիրեն և ^բծառայեն իրեն, միակ կենդանի և ճշմարիտ Աստծուն, և որ նա միակ էակը պիտի լինի, որին նրանք պետք է ^գերկրպագեն:

20 Սակայն, այս սուրբ օրենքների օրինազանցությամբ, մարդը դարձավ ^ազգայական և ^բդիվային, և դարձավ ^գընկած մարդ:

21 Ուստի, Ամենագոր Աստված տվեց իր ^աՄիածին Որդուն, ինչպես գրված է սուրբ գրքերում, որոնք տրվել են նրա մասին:

22 Նա կրեց ^ագայթակություններ, սակայն ուշք չդարձրեց դրանց:

23 Նա ^ախաչվեց, մահացավ և

10բ Տե՛ս «Երեք վկաների վկայությունը» և «Ութ վկաների վկայությունը» Մորմոնի Գրքի ներածական էջերում:
 11ա սո՛ւ Սուրբ գրքեր – Սուրբ գրքերի արժեքը:
 բ սո՛ւ Ոգեշնչում, Ոգեշնչել:
 գ սո՛ւ Սուրբ:
 12ա Եբբ. ԺԳ. 8, 1 Նեփի 10.18–19, Մորմ. 9.9–10, Վևո՛Ւ 35.1, 38.1–4:

14ա սո՛ւ Արդար, Արդարություն:
 բ սո՛ւ Հավերժական կյանք. Վեհացում:
 15ա սո՛ւ Անհավատություն:
 17ա Վևո՛Ւ 76.22–23:
 բ Հես. Բ.11:
 սո՛ւ Աստված, Աստվածագլուխ:
 18ա սո՛ւ Ստեղծել, Ստեղծում:
 բ Ծն. Ա.26–27, Մոսիա 7.27, Եբբ. 3.14–17:

19ա Բ Օր. ԺԱ.1, Մատ. ԻԲ.37, Մոր. 10.32, Վևո՛Ւ 59.5–6:
 բ Բ Օր. 2.13–15:
 սո՛ւ Ծառայություն:
 գ սո՛ւ Երկրպագել:
 20ա սո՛ւ Զգայական, Զգայականություն:
 բ սո՛ւ Գև:
 գ սո՛ւ Բնական մարդ:
 21ա սո՛ւ Միածին:
 22ա Մատ. Գ.1–11, ԻԷ.40:
 23ա սո՛ւ Խաչելություն:

երրորդ օրը կրկին ^բհարություն առավ.

24 Եվ ^ահամբարձվեց երկինք, ^բՀոր աջ կողմում նստելու, ամենակարող գործյամբ թագավորելու՝ համաձայն Հոր կամքի.

25 Այնպես որ, բոլոր նրանք, ովքեր ^ակհավատան ու կմկրտվեն իր սուրբ անունով և հավատքով ^բկհամբերեն մինչև վերջ, պիտի փրկվեն,–

26 Ոչ միայն նրանք, ովքեր հավատացին՝ այն բանից հետո, երբ նա եկավ մարմնի մեջ, ժամանակների ^ագազաթնակետին, այլ բոլոր նրանք, սկզբից ի վեր, այսինքն՝ բոլոր նրանք, ովքեր կային նրա գալստից առաջ, ովքեր հավատացին ^բսուրբ մարգարեների խոսքերին, որոնք խոսել էին Սուրբ Հոգու ^գպարգևով ոգեշնչված, որոնք, ճշմարտապես, ^դվկայել էին նրա մասին բոլոր բաներում, հավերժական կյանք պիտի ունենան,

27 Ինչպես նաև նրանք, ովքեր պիտի գան հետո, ովքեր կհավատան Աստծո ^ապարգևներին և կոչումներին՝ Սուրբ Հոգով, որը ^բվկայում է Հոր մասին և Որդու մասին.

28 Որոնք՝ Հայրը, Որդին և Սուրբ Հոգին, ^ամեկ Աստված են, ան-

սահման և հավերժական, առանց վերջի: Ամեն:

29 Եվ մենք գիտենք, որ բոլոր մարդիկ պետք է ^աապաշխարեն և հավատան Հիսուս Քրիստոսի անվանը, և երկրպագեն Հորը՝ նրա անունով, և ^բհավատքով առ նրա անունը համբերեն մինչև վերջ, այլապես նրանք չեն կարող ^գփրկվել Աստծո արքայությունում:

30 Եվ մենք գիտենք, որ ^աարդարացունը, մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի ^բշնորհով, արդար է և ճշմարիտ.

31 Եվ մենք գիտենք նաև, որ ^ասրբագործունը, մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի շնորհով, արդար է և ճշմարիտ, բոլոր նրանց համար, ովքեր սիրում և ծառայում են Աստծուն՝ իրենց ողջ ^բգործյամբ, մտքով և ուժով:

32 Բայց կա հավանականություն, որ մարդ կարող է շնորհից ^աընկնել և հեռանալ կենդանի Աստծուց.

33 Հետևաբար, թող եկեղեցին զգուշանա և միշտ աղոթի, չլինի թե նա ընկնի ^ագայթակորության մեջ.

34 Այո՛, և նույնիսկ նրանք, ովքեր սրբագործված են, նույնպես թող զգուշանան:

35 Եվ մենք գիտենք, որ այս բաները ճշմարիտ են և Հովհաննեսի հայտնությունների համաձայն է՝

23բ սուրբ Հարություն:
24ա սուրբ Համբարձում:
բ սուրբ Հայր Երկնային.
Աստված, Աստվածածագլուխ – Աստված Հայրը:
25ա Վև.ՈՒ 35.2, 38.4, 45.5, 8, 68.9, 76.51–53:
բ սուրբ Համբերել:
26ա Վև.ՈՒ 39.1–3:
բ Հակոբ 4.4, 7.11, Մոսիս 13.33:
գ Մովսես 5.58:
սուրբ Սուրբ Հոգի:

դ սուրբ Հիսուս Քրիստոս – Մարգարեություններ Հիսուս Քրիստոսի ծննդի և մահվան մասին:
27ա Վև.ՈՒ 18.32:
բ Վև.ՈՒ 42.17:
28ա Հովհ. ԺԷ.20–22, 3 Նեփի 11.27, 36:
սուրբ Աստված, Աստվածագլուխ:
29ա սուրբ Ապաշխարել, Ապաշխարություն:
բ սուրբ Հավատք:

գ սուրբ Փրկություն, Փրկագնման ծրագիր:
30ա սուրբ Արդարացում, Արդարացնել:
բ սուրբ Հանրի:
31ա սուրբ Սրբագործում:
բ Բ Օր. 2.5, Մոր. 10.32:
32ա սուրբ Ուրացություն, Ապստամբություն:
33ա սուրբ Գայթակղել, Գայթակորություն:

ո՛չ ապվեալացնելով, ո՛չ էլ պակասեցնելով նրա գրքի մարգարեութիւնից, սուրբ ^բգրքերից կամ Աստծո այն հայտնութիւններից, որոնք պիտի գան այսուհետև Սուրբ Հոգու պարգևով ու զորությամբ, Աստծո ^գձայնով կամ հրեշտակների սպասավորությամբ:

36 Եվ Տեր Աստված է խոսել դրանք. և պատիվ, զորություն և փառք տրվի նրա անվանը, այժմ և ընդմիշտ: Ամեն:

37 Եվ բացի այդ, եկեղեցուն որպէս պատվիրան, մկրտության ձևի վերաբերյալ,– Բոլոր նրանք, ովքեր իրենց խոնարհեցնում են Աստծո առաջ և ցանկանում են ^ամկրտվել, և առաջ են գալիս ^բկոտրված սրտով և փշրված հոգով, և եկեղեցու առաջ վկայում են, որ իրենք ճշմարտապէս ապաշխարել են իրենց բոլոր մեղքերից և հոժար են իրենց վրա վերցնել Հիսուս Քրիստոսի ^գանունը, ^դվճռականություն ունենալով ծառայել նրան մինչև վերջ, և իրենց ^եգործերով ճշմարտապէս ցույց են տալիս, որ իրենք ստացել են Քրիստոսի Հոգուց՝ իրենց մեղքերի ^զթողության համար, մկրտությամբ պիտի ընդունվեն իր եկեղեցին:

38 Քրիստոսի եկեղեցու երեցների, քահանաների, ուսուցիչների, սարկավագների և անդամների պար-

տականությունները,– ^աԱռաքյալը երեց է, և նրա կոչումն է՝ ^բմկրտել.

39 Եվ ^գկարգել այլ երեցներ, քահանաներ, ուսուցիչներ և սարկավագներ.

40 Եվ ^ասպասավորել հացը և գինին,– Քրիստոսի մարմնի և արյան խորհրդանիշները,–

41 Եվ եկեղեցու անդամ ^ահաստատել նրանց, ովքեր մկրտվել են, ^բձեռնադրելով՝ կրակով և ^գՍուրբ Հոգով մկրտության համար՝ համաձայն սուրբ գրքերի.

42 Եվ ուսուցանել, մեկնաբանել, հորդորել, մկրտել և հսկել եկեղեցու վրա.

43 Եվ հաստատել եկեղեցին՝ ձեռնադրելով և Սուրբ Հոգին պարգևելով.

44 Եվ ստանձնել բոլոր ժողովների ղեկավարումը:

45 Երեցները պետք է ^ավարեն ժողովներն ինչպէս որ առաջնորդում է Սուրբ Հոգին՝ Աստծո պատվիրանների ու հայտնությունների համաձայն:

46 ^աՔահանայի պարտականությունն է՝ քարոզել, ^բուսուցանել, մեկնաբանել, հորդորել և մկրտել և հաղորդությունը սպասավորել.

47 Եվ այցելել յուրաքանչյուր անդամի տուն և հորդորել նրանց, որ ^աաղոթեն ^բբարձրաձայն և զաղտնի, և կատարեն ^գընտանեկան բոլոր պարտականությունները:

35ա Հայտ. ԻԲ.18-19:
բ սուր Սուրբ գրքեր:
գ ՎևՈՒԹ 18.33-36:
37ա սուր Մկրտություն,
Մկրտել:
բ սուր Կոտրված սիրտ:
գ Մոսիա 5.7-9, 18.8-10:
սուր Հիսուս Քրիստոս –
Հիսուս Քրիստոսի
անունը մեզ վրա
վերցնելը:
դ սուր Համբերել:

ե Հակ. Բ.18:
սուր Գործեր:
գ սուր Մեղքերի
թողություն:
38ա սուր Առաքյալ:
բ 3 Նեփի 11.21-22:
39ա Մոր. 3.1-4,
ՎևՈՒԹ 107.58:
40ա սուր Հաղորդություն:
41ա ՎևՈՒԹ 33.11, 14-15,
55.3:
բ սուր Չեռնադրություն:

գ սուր Սուրբ Հոգու
պարգև:
45ա Մոր. 6.9, ՎևՈՒԹ 46.2:
46ա ՎևՈՒԹ 84.111, 107.61:
սուր Քահանա՝
Ահարոնյան
քահանայություն:
բ սուր Ուսուցանել,
Ուսուցիչ:
47ա Ա Տիմ. Բ.8:
բ ՎևՈՒԹ 19.28:
գ սուր Ընտանիք:

48 Եվ նա կարող է նաև ՝կարգել այլ քահանաներ, ուսուցիչներ և սարկավազներ:

49 Եվ նա պետք է ստանձնի ժողովների ղեկավարումը, երբ ոչ մի երեց ներկա չէ:

50 Բայց, երբ երեց կա ներկա, նա միայն պետք է քարոզի, ուսուցանի, մեկնաբանի, հորդորի և մկրտի,

51 Եվ այցելի յուրաքանչյուր անդամի տուն և հորդորի նրանց, որ աղոթեն բարձրաձայն և գաղտնի, և կատարեն ընտանեկան բոլոր պարտականությունները:

52 Բոլոր այս պարտականություններում քահանան պետք է ՝օգնի երեցին, եթե առիթը պահանջում է:

53 ՝Ուսուցչի պարտականությունն է՝ միշտ ՝հսկել եկեղեցու վրա, լինել նրա հետ և ամրապնդել այն:

54 Եվ հետևել, որ եկեղեցում չլինի անօրինություն, ոչ ՝կոպտություն միմյանց հանդեպ, ոչ էլ ստախտություն, ոչ բամբասանք, ոչ էլ ՝չարախտություն:

55 Եվ հետևել, որ եկեղեցին հաճախ հավաքվի միասին, և նաև հետևել, որ բոլոր անդամները կատարեն իրենց պարտականությունը:

56 Եվ նա պետք է ստանձնի ժողովների ղեկավարումը՝ երեցի և քահանայի բացակայության դեպքում,–

57 Եվ միշտ, եկեղեցական իր բոլոր պարտականություններում,

պետք է օժանդակվի ՝սարկավազների կողմից, եթե առիթը պահանջում է:

58 Սակայն ո՛չ ուսուցիչները, ո՛չ էլ սարկավազները մկրտելու, հաղորդությունը սպասավորելու կամ ձեռնադրելու իշխանություն չունեն:

59 Այնուամենայնիվ, նրանք պետք է զգուշացնեն, մեկնաբանեն, հորդորեն և ուսուցանեն և բոլորին հրավիրեն գալ Քրիստոսի մոտ:

60 Ամեն մի ՝երեց, քահանա, ուսուցիչ կամ սարկավազ պետք է կարգվի իր համար Աստծո պարգևների և ՝կոչումների համաձայն. և նա պետք է կարգվի Սուրբ Հոգու գործությամբ, որը նրա մեջ է, ով կարգում է իրեն:

61 Քրիստոսի այս եկեղեցին կազմող առանձին երեցները պետք է համաժողովի հավաքվե՛ն՝ երեք ամիսը մեկ անգամ, կամ ժամանակ առ ժամանակ, ինչպես նշված համաժողովները կորոշեն կամ կնշանակեն:

62 Եվ նշված համաժողովները պետք է կատարեն եկեղեցական բոլոր գործերը, որոնք անհրաժեշտ է կատարել այդ ժամանակ:

63 Երեցները պետք է ստանան իրենց արտոնագրերն այլ երեցներից, այն եկեղեցու ՝քվեով, որին իրենք պատկանում են, կամ համաժողովներից:

64 Յուրաքանչյուր քահանա, ուսուցիչ կամ սարկավազ, որը կարգվել է քահանայի կողմից, այդ ժամանակ կարող է նրանից

48ա սո՛ւ Կարգել, Կարգում:
52ա Վև.ՈՒ 107.14:
53ա սո՛ւ Ուսուցիչ՝
Ահարոնյան
քահանայություն:

բ սո՛ւ Արթուն լինել:
54ա Ա Թեա. Ե.11–13:
բ սո՛ւ Չարախտություն:
57ա սո՛ւ Սարկավազ:
60ա սո՛ւ Երեց:

բ սո՛ւ Կանչ, Աստծո
կողմից կանչված,
Կոչում:
63ա սո՛ւ Ընդհանուր
համաձայնություն:

վկայագիր վերցնել, ^ավկայագիր, որը երբ ներկայացվի մի երեցի, նրան իրավունք կտա արտոնագրի, ինչը նրան կլիազորի՝ կատարելու իր կոչման պարտականությունները, կամ էլ նա կարող է դա ստանալ համաժողովից:

65 Ոչ ոք չպետք է ^ակարգվի որևէ պաշտոնի այս եկեղեցում, որտեղ որ գոյություն ունի նույնի կանոնավորապես կազմակերպված ճյուղ, առանց այդ եկեղեցու ^բքվեարկության.

66 Սակայն նախագահող երեցները, ճամփորդող եպիսկոպոսները, բարձրագույն խորհրդականները, քահանայապետերը և երեցները կարող են ունենալ կարգելու առանձնաշնորհը, որտեղ չկա եկեղեցու ճյուղ, որ հնարավոր լինի քվեարկություն պահանջել:

67 Բարձրագույն քահանայության ամեն մի նախագահ (կամ նախագահող երեց), ^աեպիսկոպոս, բարձրագույն խորհրդական և ^բքահանայապետ պետք է կարգվի ^գբարձրագույն խորհրդի կամ գերագույն համաժողովի ղեկավարությամբ:

68 *Անդամների ^ապարտականությունները մկրտությանը ընդունվելուց հետո*, – Երեցները կամ քահանաները պետք է բավականաչափ ժամանակ ունենան՝ նրանց ^բհասկացողության համար բա-

ցատրել բոլոր բաները Քրիստոսի եկեղեցու վերաբերյալ, նախքան նրանք կճաշակեն ^գհաղորդությունից և կհաստատվեն՝ երեցների ^դձեռնադրմամբ, այնպես որ բոլոր բաները հնարավոր լինի անել կարգով:

69 Եվ անդամներն աստվածային քայլերով ու հաղորդակցությամբ պիտի ցույց տան եկեղեցուն, և նաև երեցներին, որ իրենք արժանի են դրան, որպեսզի ^ագործերը և հավատքը լինեն սուրբ գրքերի համաձայն՝ ^բսրբությամբ քայլելով Տիրոջ առաջ:

70 Քրիստոսի եկեղեցու ամեն մի անդամ՝ ունենալով երեխաներ, պետք է նրանց բերի երեցների մոտ, եկեղեցու առաջ, որոնք պետք է իրենց ձեռքերը դնեն նրանց վրա՝ Հիսուս Քրիստոսի անունով, և ^աօրհնեն նրանց՝ նրա անունով:

71 Ոչ ոք չի կարող ընդունվել Քրիստոսի եկեղեցի, մինչև չհասնի Աստծո առաջ ^ապատասխանատվության տարիքի և ենթակա լինի ^բապաշխարության:

72 ^աՄկրտությունը պետք է կատարվի, բոլոր նրանց համար, ովքեր ապաշխարում են, հետևյալ ձևով, –

73 Անձը, որը կոչված է Աստծուց և մկրտելու իշխանություն ունի Հիսուս Քրիստոսի կողմից, պետք է ջրի մեջ մտնի այն անձի հետ,

64ա Վ.ԼՈՒ 20.84, 52.41:
65ա սո՛ւ Կարգել, Կարգում:
բ Վ.ԼՈՒ 26.2:
սո՛ւ Ընդհանուր համաձայնություն:
67ա սո՛ւ Եպիսկոպոս:
բ սո՛ւ Քահանայապետ:
գ սո՛ւ Բարձրագույն խորհուրդ:
68ա սո՛ւ Պարտականություն:

բ սո՛ւ Հասկանալ:
գ սո՛ւ Հաղորդություն:
դ սո՛ւ Ձեռնադրություն:
69ա Հակ. Բ.14–17:
բ սո՛ւ Սրբություն:
70ա սո՛ւ Օրհնել, Օրհնված, Օրհնություն – Երեխաներին օրհնելը:
71ա Վ.ԼՈՒ 18.42, 29.47, 68.25–27:
սո՛ւ Հաշիվ, Պատաս-

խանատու, Պատասխանատվություն.
Մկրտություն, Մկրտել – Մկրտության համար անհրաժեշտ պայմանները:
բ սո՛ւ Ապաշխարել, Ապաշխարություն:
72ա 3 Նեփի 11.22–28:

որն իրեն ներկայացրել է մկրտու-
թյան համար, և պետք է ասի՝ կոչե-
լով նրան անունով. Լիազորված
լինելով Հիսուս Քրիստոսի կողմից,
ես մկրտում եմ քեզ անունով Հոր
և Որդու և Սուրբ Հոգու: Ամեն:

74 Այնուհետև, նա պետք է
՞ընկղմի նրան ջրի մեջ և կրկին
դուրս բերի ջրից:

75 Նպատակահարմար է, որ
եկեղեցին հաճախ հավաքվի՝
՞ճաշակելու հացից և գինուց՝ ի
՞հիշատակ Տեր Հիսուսի:

76 Եվ երեցը կամ քահանան
պետք է այն սպասավորեն. և այս
՞ձևով պետք է նրանք սպասավո-
րեն այն,– նա պետք է ծնկի իջնի
եկեղեցու հետ և կանչի առ Հայրը
հանդիսավոր աղոթքով՝ ասելով.

77 Ո՛վ Աստված, Հայր Հավեր-
ժական, խնդրում ենք քեզ, քո Որ-
դու՝ Հիսուս Քրիստոսի անունով,
օրհնիր և սրբացրու այս ՞հացը
բոլոր նրանց հոգիների համար,
ովքեր ճաշակում են այն, որ նրանք
կարողանան ուտել, ի հիշատակ
Որդուդ մարմնի, և ՞վկայեն քեզ,
ո՛վ Աստված, Հայր Հավերժա-
կան, որ նրանք հոժար են իրենց
վրա ՞վերցնել անունը քո Որդու և
միշտ հիշել նրան և ՞պահել նրա
պատվիրանները, որոնք նա տվել
է իրենց. որպեսզի նրանք նրա
՞Հոգին միշտ իրենց հետ ունենան:
Ամեն:

78 Գինին սպասավորելու ՞ձևը,
– նա նաև պետք է վերցնի ՞գա-
վաթը և ասի.

79 Ո՛վ Աստված, Հայր Հավեր-

ժական, խնդրում ենք քեզ, քո Որ-
դու՝ Հիսուս Քրիստոսի անունով,
օրհնիր և սրբացրու այս ՞գինին
բոլոր նրանց հոգիների համար,
ովքեր ըմպում են այն, որ նրանք
կարողանան անել այդ, ի հիշա-
տակ Որդուդ արյան, որ հեղվել է
իրենց համար. որ նրանք կարողա-
նան վկայել քեզ, ո՛վ Աստված,
Հայր Հավերժական, որ նրանք
միշտ հիշում են նրան, որպեսզի
նրանք նրա Հոգին իրենց հետ ու-
նենան: Ամեն:

80 Քրիստոսի եկեղեցու օրինա-
զանցող կամ ինչ-որ սխալի մեջ
բռնված անդամի հետ պետք է
վարվել, ինչպես սուրբ գրքերն են
ուղղորդում:

81 Քրիստոսի եկեղեցին կազմող
առանձին եկեղեցիների պարտա-
կանությունը կլինի՝ իրենց ուսու-
ցիչներից մեկին կամ երկուսին
ուղարկել՝ հաճախելու եկեղեցու
երեցների կողմից անցկացվող
տարբեր համաժողովները,

82 Նախորդ համաժողովից ի
վեր եկեղեցուն միավորված առան-
ձին անդամների ՞անունների ցու-
ցակով. կամ էլ ուղարկել ինչ-որ
քահանայի ձեռքով. այնպես որ
հնարավոր լինի ամբողջ եկեղեցու
բոլոր անունների կանոնավոր ցու-
ցակ պահել մի գրքում, երեցնե-
րից մեկի կողմից, ում որ մյուս
երեցները կնշանակեն ժամանակ
առ ժամանակ.

83 Եվ նաև, եթե ինչ-որ մեկը
՞հեռացվել է եկեղեցուց՝ այնպես
որ նրանց անունները հնարավոր

74ա սո՛ւ Մկրտություն,
Մկրտել – Ընկղմամբ
մկրտություն:
75ա Գոր. Ի.7:
բ սո՛ւ Հաղորդություն:
76ա Մոր. 4.1–3:
77ա Ղուկ. ԻԲ.19:

բ Մոսիա 18.8–10,
Վևո՛ւ 20.37:
գ Մոսիա 5.8–12:
դ սո՛ւ Հնազանդություն,
Հնազանդ, Հնազանդվել:
ե Հովհ. ԺԴ.16:
78ա Մոր. 5.1–2:

բ Ղուկ. ԻԲ.20:
79ա Վևո՛ւ 27.2–4:
82ա Մոր. 6.4:
83ա Ել. ԼԲ.33,
Ալմա 5.57,
Մոր. 6.7:
սո՛ւ Հեռացում:

լինի ջնջել անուանների եկեղեցական ընդհանուր գրանցումից:

84 Բոլոր անդամները, այն եկեղեցուց տեղափոխվելիս, որտեղ իրենք բնակվում են, եթե գնում են եկեղեցի, որտեղ նրանց չեն ճանաչում, կարող են վերցնել վկայող մի նամակ, որ նրանք կանոնավոր անդամներ են

և լավ դիրքում են, մի վրկայագիր, որը կարող է ստորագրվել որևէ երեցի կամ քահանայի կողմից, եթե նամակ ստացողն անձամբ ծանոթ է երեցի կամ քահանայի հետ, կամ էլ այն կարող է ստորագրվել եկեղեցու ուսուցիչների կամ սարկավագների կողմից:

ԲԱԺԻՆ 21

Հայտնություն տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեին, Ֆայեթում, Նյու Յորք, 1830թ. ապրիլի 6-ին (History of the Church, 1.74–79): Այս հայտնությունը տրվել էր Եկեղեցու կազմակերպման ժամանակ, նշված օրը, Պիտեր Ուիթմեր ավագի տանը: Մասնակցում էին վեց տղամարդիկ, որոնք մինչ այդ մկրտվել էին: Միաձայն քվեարկումով, այս անձինք արտահայտեցին Եկեղեցին հիմնադրելու իրենց ցանկությունն ու վճռականությունը՝ համաձայն Աստծո պատվիրանի (տե՛ս բաժին 20): Նրանք նաև քվեարկեցին Ջոզեֆ Սմիթ կրտսերին և Օլիվեր Բաուդերիին, որպես Եկեղեցու նախագահող պաշտոնյաներ ընդունելու և հաստատելու համար: Այնուհետև, ձեռնադրմամբ, Ջոզեֆն Օլիվերին կարգեց Եկեղեցու երեց, իսկ Օլիվերը նույն ձևով կարգեց Ջոզեֆին: Հաղորդության սպասավորումից հետո Ջոզեֆը և Օլիվերն անհատապես ձեռնադրեցին մասնակիցներին Սուրբ Հոգու շնորհման և որպես Եկեղեցու անդամ յուրաքանչյուրի հաստատման համար:

1–3՝ Ջոզեֆ Սմիթը կոչվում է լինելու՝ տեսանող, քարզմանիչ, մարգարե, առաքյալ և երեց. 4–8՝ Նրա խոսքը կողեկցի Սիոնի գործը. 9–12՝ Սրբերը կհավատան նրա խոսքերին, բանի որ նա խոսում է Մխիթարիչով:

2 Պզեղնչված լինելով Սուրբ Հոգուց՝ դնել նրա հիմքը և կառուցել այն՝ ամենասուրբ հավատքի համար:

3 Եկեղեցի, որը Քազմակերպվեց և հիմնադրվեց ձեռ Տիրոջ հազար ութ հարյուր երեսուներորդ տարվա չորրորդ ամսին և ապրիլ կոչվող ամսվա վեցերորդ օրը:

4 Ուստի, դու, նկատի ունենալով եկեղեցին, պիտի ուշք դարձնես նրա բոլոր խոսքերին ու պատվիրաններին, որոնք նա կտա քեզ, երբ նա ստանա դրանք՝ ողջ սրբությանբ քայլելով իմ առաջ.

ԱՀԱ, մի ^ահիշատակարան պիտի պահվի ձեր մեջ. և նրանում դու պիտի կոչվես ^բտեսանող, քարզմանիչ, մարգարե, Հիսուս Քրիստոսի ^գառաքյալ, եկեղեցու երեց՝ Հայր Աստծո կանքով և քո Տեր՝ Հիսուս Քրիստոսի շնորհով,

21 1ա ՎևոՒ 47.1, 69.3–8, 85.1:
բ սոՒ Տեսանող:
գ սոՒ Առաքյալ:

2ա սոՒ Ոզեղնչում,
Ոզեղնչել:
3ա սոՒ Հիսուս Քրիստոսի
Վերջին Օրերի Սրբերի

Եկեղեցի:
բ ՎևոՒ 20.1:
4ա սոՒ Սուրբ գրքեր:
բ սոՒ Սրբություն:

5 Քանզի նրա ՝խոսքը դուք պետք է ընդունեք, ինչպես որ իմ իսկ բերանից, ողջ համբերությամբ ու հավատքով:

6 Քանզի այդ բաները կատարելով, դժոխքի ՝ղոները չեն հաղթի ձեզ. այո՛, և Տեր Աստված ձեր առջևից կցրի ՝խավարի գորությունները և այնպես կանի, որ երկինքները ՝կցնցվեն՝ ձեր բարիքի և իր անվան ՝փառքի համար:

7 Քանզի այսպես է ասում Տեր Աստվածը. Նրան եմ ես ոգեշնչել՝ հզոր ուժով առաջ տանելու ՝Սիոնի գործը բարիքի համար, և նրա ջանասիրությունը ես գիտեմ, և նրա աղոթքները ես լսել եմ:

8 Այո՛, Սիոնի համար նրա լացը ես տեսել եմ, և ես այնպես կանեմ, որ նա այլևս չի սգա նրա համար. քանզի նրա ցնծության օրերը եկել են՝ նրա մեղքերի ՝թողությամբ և նրա գործերի վրա իմ օրհնությունների դրսևորմամբ:

9 Քանզի, ահա, բոլոր նրանց,

ովքեր տքնում են իմ ՝այգում, ես ՝կօրհնեմ մի մեծ օրհնությամբ, և նրանք կհավատան նրա խոսքերին, որոնք նրան տրվել են իմ միջոցով՝ ՝Մխիթարիչի կողմից, որոնք ՝հայտնում են, որ չիսուսը ՝խաչվեց ՝մեղսավոր մարդկանց կողմից՝ ՝աշխարհի մեղքերի համար, այո՛, ՝վշտված սրտի մեղքերի թողության համար:

10 Ուստի ինձ պետք է, որ նա ՝կարգվի քո կողմից, իմ առաքյալ Օլիվեր Քաուդերի.

11 Դա արարողություն լինելով քեզ համար, որ դու երեց ես նրա ձեռքի տակ, նա լինելով ՝առաջինը քեզ համար, որպեսզի դու երեց լինես իմ անունը կրող Քրիստոսի այս եկեղեցու համար,–

12 Եվ առաջին քարոզիչն այս եկեղեցու՝ եկեղեցու համար և աշխարհի առաջ, այո՛, հեթանոսների առաջ. այո, և այսպես է ասում Տեր Աստվածը, ահա, տե՛ս, ՝հրեաների համար նույնպես: Ամեն:

ԲԱԺԻՆ 22

Հայտնություն տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեի միջոցով, Մանչեստրում, Նյու Յորք, 1830թ. ապրիլին (History of the Church, 1.79–80): Այս հայտնությունը տրվել էր Եկեղեցուն այն բանի հետևանքով, որ ոմանք, ովքեր նախկինում մկրտվել էին, ցանկանում էին միանալ Եկեղեցուն առանց կրկին մկրտվելու:

1՝ Մկրտությունը նոր և հավիտենական ուխտ է. 2–4՝ Լիազորված մկրտություն է պահանջվում:

ԱՀԱ, ես ասում եմ ձեզ, որ այս բանով ես վերջ եմ դրել բոլոր

5ա Վև.ՈՒ 1.38:
սու Եկեղեցու
ղեկավարներին
հաստատելը.
Մարգարե:
6ա Մատ. ԺՁ.18,
Վև.ՈՒ 10.69:
բ Կող. Ա.12–13:
գ Վև.ՈՒ 35.24:
դ սու Փառք:

7ա սու Սիոն:
8ա Վև.ՈՒ 20.5–6:
9ա սու Տիրոջ այգին:
բ 1 Նեփի 13.37,
Հակոբ 5.70–76:
գ սու Մխիթարիչ:
դ սու Վկայել:
ե սու Խաչելություն:
զ սու Մեղք:
է Ա Հովհ. Բ.2:

սու Աշխարհ –
Մարդիկ, ովքեր չեն
հնազանդվում
պատվիրաններին:
բ սու Կոտրված սիրտ:
10ա սու Կարգել, Կարգում:
11ա Վև.ՈՒ 20.2:
12ա 1 Նեփի 13.42,
Վև.ՈՒ 19.27, 90.8–9:

“հին ուխտերին. և սա մի նոր և Բիսպիտենական ուխտ է, այսինքն՝ այն, որ կար ի սկզբանե:

2 Ուստի, թեև մարդ մկրտված լինի հարյուր անգամ, դա նրան ոչնչով օգտակար չի լինի, քանզի ո՛չ Մովսեսի “օրենքով, ո՛չ էլ ձեր Բնեռած գործերով, դուք չեք կարող ներս մտնել նեղ դռնով:

3 Քանզի ձեր մեռած գործերի պատճառով է, որ ես արել եմ այնպես, որ այս վերջին ուխտն ու այս եկեղեցին կառուցվի ինձ համար, ճիշտ ինչպես հին օրերում:

4 Ուստի, ներս մտեք այդ “դռնով, ինչպես ես պատվիրել եմ ձեզ և մի Բիսպերեք խորհուրդ տալ ձեր Աստծուն: Ամեն:

ԲԱԺԻՆ 23

Հայտնություն տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեի միջոցով, Օլիվեր Քառդեբիին, Հայրամ Սմիթին, Մեմյուել Հ. Սմիթին, Ջոզեֆ Սմիթ ավագին և Ջոզեֆ Նայթ ավագին, Մանչեստրում, Նյու Յորք, 1830թ. ապրիլին (History of the Church, 1.80): Անվանված հինգ անձանց կողմից իրենց համապատասխան պարտականություններն իմանալու բռուն ցանկության հետևանքով, Մարգարեն դիմեց Տիրոջը և ստացավ այս հայտնությունը:

1–7 Այս առաջին աշակերտները կոչված են քարոզելու, հորդորելու և ամրապնդելու Եկեղեցին:

ԱՀԱ, Օլիվեր, ես ասում եմ քեզ մի քանի խոսք: Ահա, դու օրհնված ես և դատապարտության տակ չես: Սակայն, զգուշացիր “հպարտությունից, որ չլինի թե ընկնես Բայթակություն մեջ:

2 Հայտնի դարձրու քո կոչումը եկեղեցուն և նաև աշխարհի առաջ, և քո սիրտը կրացվի՝ ճշմարտությունը քարոզելու համար այսուհետև և հավիտյան: Ամեն:

3 Ահա, Հայրո՛ւմ, ես ասում եմ քեզ մի քանի խոսք. քանզի դու ևս դատապարտության տակ չես, և քո սիրտը բացվել է, և քո լեզուն՝ արձակվել. և քո կոչումը հորդո-

րելն է, և եկեղեցին շարունակ “ամրապնդելը: Ուստի քո պարտականությունն ի Եկեղեցին է հավիտյան, և դա՝ քո ընտանիքի պատճառով: Ամեն:

4 Ահա, ես մի քանի խոսք եմ ասում քեզ, “Մեմյուել՝. քանզի դու ևս դատապարտության տակ չես, և քո կոչումը հորդորելն է, և եկեղեցին ամրապնդելը. և դու դեռևս կանչված չես քարոզելու աշխարհի առաջ: Ամեն:

5 Ահա, ես մի քանի խոսք եմ ասում քեզ, Ջոզեֆ. քանզի դու ևս դատապարտության տակ չես, և քո կոչումը նույնպես հորդորելն է, և եկեղեցին ամրապնդելը. և սա քո պարտականությունն է այսուհետև և հավիտյան: Ամեն:

6 Ահա, ես հայտնում եմ քեզ,

22 1ա Եբր. Ը.13,
3 Նեփի 12.46–47:
բ Վևոթ 66.2:
սո՛ւ Ուխտ. Նոր և
հավիտենական ուխտ:
2ա Գաղ. Բ.16:
սո՛ւ Մովսեսի օրենք:

բ Մոր. 8.23–26:
4ա Մատ. Է.13–14,
Դուկ. ԺԳ.24,
2 Նեփի 9.41, 31.9,
17–18,
3 Նեփի 14.13–14:
սո՛ւ Մկրտություն,

Մկրտել:
բ Հակոբ 4.10:
23 1ա սո՛ւ Հպարտություն:
բ սո՛ւ Գայթակղել,
Գայթակղություն:
3ա Վևոթ 81.4–5, 108.7:
4ա ՋՍ–Պ 1.4:

Չոզեֆ Նայթ, այս խոսքերով, որ դու պետք է վերցնես քո Մխաչը, այն է, որ դու պետք է Քարծրածայն Գաղոթես աշխարհի առաջ, ինչպես մահ գաղտնապես և քո ընտանիքում, քո ընկերների մեջ և բոլոր վայրերում:

7 Եվ, ահա, քո պարտականությունն է միանալ ճշմարիտ եկեղեցուն, և հանձնել քո լեզուն շարունակ հորդորելուն, որ դու կարողանաս ստանալ վարձքը մշակի: Ամեն:

ԲԱԺԻՆ 24

Հայտնություն տրված Չոզեֆ Սմիթ Մարգարեին և Օլիվեր Քաուդերիին, Հարմոնիում, Պենսիլվանիա, 1830թ. հուլիսին (History of the Church, 1.101–103): Թեև Եկեղեցու կազմակերպման օրից անցել էր ավելի քիչ, բան չորս ամիս, հարածանքները դարձել էին աստիկ, և ղեկավարները ստիպված էին ապահովություն փնտրել՝ մասնակիորեն առանձնանալով: Հետևյալ երեք հայտնությունները տրվել են այդ ժամանակ՝ նրանց ամրապնդելու, քաջալերելու և հրահանգելու համար:

1–9՝ Չոզեֆ Սմիթը կանչված է թարգմանելու, քարոզելու և սուրբ գրքերը մեկնաբանելու: 10–12՝ Օլիվեր Քաուդերին կանչված է քարոզելու ավետարանը: 13–19՝ Բացահայտվում է հրաշքների, անեծքների, ոտքերի փոշին թոթափելու և առանց քսակի կամ պարկի գնալու վերաբերյալ օրենքը:

3 Մեծարիք քո պաշտոնը. և քո արտերը ցանելուց ու դրանք ապահովելուց հետո շտապ գնա եկեղեցին, որ Քուլսիլում է, Ֆայթթում և Մանչեստրում, և նրանք Կաջակցեն քեզ. և ես նրանց կօրհնեմ՝ և՛ հոգևորով, և՛ նյութականով:

4 Բայց եթե նրանք չընդունեն քեզ, ես, օրհնության փոխարեն, նրանց վրա անեծք կուղարկեմ:

5 Եվ դու պետք է շարունակես կանչել առ Աստված՝ իմ անունով, և գրես այն բաները, որոնք քեզ կտրվեն Մխիթարիչի կողմից, և մեկնաբանես բոլոր սուրբ գրքերը՝ եկեղեցու համար:

6 Եվ այդ նույն պահին քեզ կտրվի, թե ինչ պիտի դու՝ ասես ու գրես, և նրանք կլսեն դա, եթե ոչ, ես, օրհնության փոխարեն, նրանց վրա անեծք կուղարկեմ:

7 Քանզի դու պետք է քո ողջ

ԱՀԱ, դու կանչվել ես և ընտրվել՝ Մորմոնի Գիրքը գրելու և ինձ ծառայելու. և ես քեզ բարձրացրել եմ քո չարչարանքներից ու խրատել եմ քեզ, այնպես որ դու ազատվել ես քո բոլոր թշնամիներից, և ազատվել ես Սատանայի իշխանությունից ու խավարից:

2 Այնուամենայնիվ, դու չես ներվի քո Օրիհնազանցությունների մեջ. այնուամենայնիվ, գնա քո ճանապարհով և այլևս մեղք մի գործիր:

6ա Մատ. Ժ.38,
3 Նեփի 12.30:
բ ՎևոՒ 20.47, 51:
գ սոՒ Աղոթք:
7ա սոՒ Մկրտություն,
Սկրտել – Էսական է:

24 2ա ՎևոՒ 1.31–32:
3ա Հակոբ 1.19, 2.2:
բ ՎևոՒ 26.1, 37.2:
գ ՎևոՒ 70.12:
5ա սոՒ Մխիթարիչ:
6ա Ել. Գ.12,

Մատ. Ժ.19–20,
Դուկ. ԺԲ.11–12,
Հել. 5.18–19,
ՎևոՒ 84.85, 100.5–8,
Մովսես 6.32:

«Ծառայությունը նվիրես Սիոնին. և դրանում դու ուժ կունենաս:

8 ^աՀամբերող եղիր ^բչարչարանքներում, քանզի դու շատ կունենաս. բայց ^գդիմացիր դրանց, քանի որ, տե՛ս, ես քեզ հետ եմ, նույնիսկ մինչև քո օրերի ^դվերջը:

9 Եվ նյութական գործերում դու ուժ չես ունենա, քանզի դա չէ քո կոչումը: Նվիրվիր քո ^ակոչմանը և կունենաս ինչ որ անհրաժեշտ է, որ մեծարես քո պաշտոնը, և մեկնաբանես բոլոր սուրբ գրքերը, և շարունակիր ձեռնադրելն ու եկեղեցիները հաստատելը:

10 Իսկ քո եղբայր Օլիվերը պիտի շարունակի կրել իմ անունն աշխարհի առաջ և նաև եկեղեցու: Եվ նա չպետք է ենթադրի, թե կարող է չափից ավելին ասել՝ ի պաշտպանություն ինձ. և ահա, ես նրա հետ եմ մինչև վերջ:

11 Ինձանով նա կունենա փառք, և ոչ թե իրենով՝ լինի թուլության մեջ, թե ուժի, կապանքների մեջ, թե ազատության:

12 Եվ բոլոր ժամանակներում, և բոլոր տեղերում նա պիտի բանա իր բերանը և ^ահայտարարի իմ ավետարանը, ինչպես մի ^բփողի ձայնով՝ թե՛ ցերեկ, թե՛ գիշեր: Եվ ես այնպիսի ուժ կպարզեմ նրան, ինչպիսին հայտնի չէ մարդկանց:

13 ^աՀրաշքներ մի պահանջեք, մինչև ես ^բչպատվիրեմ ձեզ, բացի ^գդևերին դուրս ^դզցելուց, հիվանդ-

ներին ^աբժշկելուց, և ^բթունավոր օձերի դեմ, և մահացու թույների դեմ.

14 Եվ ^աայս բաները դուք չպետք է անեք, եթե չպահանջվի ձեզանից, նրանց կողմից, ովքեր փափագում են այդ, որպեսզի սուրբ գրքերն իրականանան. քանզի դուք պետք է կատարեք համաձայն նրա, ինչ գրված է:

15 Եվ որտեղ էլ որ դուք ^ամտնեք, և նրանք ձեզ չընդունեն իմ անունով, դուք պիտի թողնեք անեծք, օրհնության փոխարեն, նրանց դեմ թոթափելով ձեր ոտքերի ^բփոշին, որպես վկայություն, և մաքրելով ձեր ոտքերը ճամփեզրին:

16 Եվ կլինի այնպես, որ, ովքեր բռնությամբ ձեռք կբարձրացնեն ձեր վրա, դուք պիտի հրամայեք զարկվել՝ իմ անունով. և ահա, ես կզարկեմ նրանց, ձեր խոսքերի համաձայն, ինձ հարմար ժամանակ:

17 Եվ ով որ օրենք բերի քո վրա՝ օրենքով պիտի անիծվի:

18 Եվ դու քեզ հետ չպետք է վերցնես ոչ ^աքսակ, ոչ էլ պարկ, ոչ զավազաններ, ոչ էլ երկու վերարկու, քանի որ եկեղեցին քեզ կտա նույն այն ժամին, ինչի կարիք դու կունենաս՝ ուտելիքի համար, թե հագուստի համար, կոշիկի համար, դրամի համար, թե պարկի համար:

19 Քանզի դու կանչված ես ^աԷտելու իմ այգին՝ գորավոր էտունով, այո՛, նույնիսկ վերջին անգամ.

<p>7ա ստե Ծառայություն: 8ա ստե Համբերություն: բ ստե Չախորդություն: գ ստե Համբերել: դ Մատ. ԻԸ.20: 9ա ստե Տնտես: 12ա ստե Քարոզել: բ ՎևոՒ 34.6: 13ա ստե Հրաշք, Նշան: բ 1 Նեփի 17.50:</p>	<p>գ ստե Ոգի – Չար ոգիներ: դ Մար. ԺԶ.17: ե ստե Բժշկել, Բժշկումներ: գ Գոր. ԻԸ.3-9, ՎևոՒ 84.71-72, 124.98-99: 14ա ստե Հիվանդների սպասավորում:</p>	<p>15ա Մատ. Ժ.11-15: բ Մար. Զ.11, Ղուկ. Ժ.11, ՎևոՒ 60.15, 75.19-22, 99.4-5: 18ա Մատ. Ժ.9-10, Ղուկ. Ժ.4, ՎևոՒ 84.78-79: 19ա Հակոբ 5.61-74, ՎևոՒ 39.17, 71.4:</p>
--	--	--

այո, և նաև բոլոր նրանք, որոնց դու թկարգել ես, և նրանք պետք

է գործեն՝ ճիշտ համաձայն այս օրինակի: Ամեն:

ԲԱԺԻՆ 25

Հայտնություն՝ տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեի միջոցով, Հարմոնիում, Պենսիլվանիա, 1830թ. հուլիսին (History of the Church, 1.103-104): (Տե՛ս 24-րդ բաժնի նախադրությունը): Այս հայտնությունը ցույց է տալիս Տիրոջ կամքը Էմմա Սմիթի՝ Մարգարեի կնոջ վերաբերյալ:

1-6 Էմմա Սմիթը, ընտրյալ տիկինը, կանչված է՝ օգնելու և մխիթարելու իր ամուսնուն. 7-11՝ Նա կանչված է նաև գրելու, սուրբ գրքերը մեկնաբանելու և օրհներգեր ընտրելու. 12-14՝ Արդարների երգն աղոթք է Տիրոջ համար. 15-16՝ Այս հայտնության հնազանդության սկզբունքները կիրառելի են բոլորի համար:

պատճառով, որոնք դու չես տեսել, քանզի դրանք պահվում են քեզանից և աշխարհից, որն իմ իմաստությամբ է, գալիք ժամանակի համար:

5 Եվ քո կոչման պաշտոնը կլինի՝ մխիթարել իմ ծառային՝ Ջոզեֆ Սմիթ կրտսերին՝ քո ամուսնուն իր չարչարանքերի մեջ, սփոփիչ խոսքերով, հեզության ոգով:

6 Եվ դու պետք է գմաս նրա հետ, նրա գնալու ժամանակ, և դպիր լինես նրա համար, քանի դեռ չկա մեկ ուրիշը, որ դպիր լինի նրա համար, որ ես կարողանամ ուղարկել իմ ծառա Օլիվեր Քաուդերիին, ուր որ կամենամ:

7 Եվ նրա ձեռքի տակ դու՝ կկարգվես՝ բացատրելու սուրբ գրքերը և հորդորելու եկեղեցին՝ համաձայն նրա, ինչ կտրվի քեզ իմ Հոգու կողմից:

8 Քանզի նա կդնի իր ձեռքերը քեզ վրա, և դու կստանաս Սուրբ Հոգին, և քո ժամանակը պիտի մկրվի գրելուն և շատ սովորելուն:

9 Եվ դու չպետք է վախենաս, քանզի ամուսինդ քեզ կաջակցի

ԱԿԱՆՋ դիր Տիրոջ՝ քո Աստծո ձայնին, մինչ ես խոսում եմ քեզ հետ, Էմմա Սմիթ, իմ դուստր. քանզի ճշմարիտ ասում եմ քեզ, որ բոլոր նրանք, ովքեր ՞ընդունում են իմ ավետարանը, որդիներ և դուստրեր են իմ թարգայությունում:

2 Մի հայտնություն եմ տալիս քեզ իմ կամքի վերաբերյալ. և եթե դու հավատարիմ լինես ու իմ առաջ ՞քայլես թառաքինության շավիղներում, ես կպահպանեմ քո կյանքը, և դու ՞ժառանգություն կստանաս Սիոնում:

3 Ահա, քո ՞մեղքերը ներված են քեզ, և դու մի ընտրյալ տիկին ես, որին ես ՞կանչել եմ:

4 Մի տրտնջա այն բաների

19p սո՛ւ Կարգել, Կարգում:
25 1ա Հովհ. Ա.12:
սո՛ւ Աստծո որդիներն ու դուստրերը:
p սո՛ւ Աստծո արքայություն կամ Երկնքի արքայություն:

2ա սո՛ւ Քայլել, Քայլել Աստծո հետ:
p սո՛ւ Առաքինություն:
q Վե՛ՌԻ 52.42, 64.30, 101.18:
սո՛ւ Սիոն:
3ա Մատ. Թ.2:
p սո՛ւ Կանչ, Աստծո

կողմից կանչված, Կոչում:
5ա սո՛ւ Կարեկցանք:
7ա ԿԵՄ ի սպաս կղրվես:
սո՛ւ Ի սպաս դնել:
8ա սո՛ւ Ձեռնադրություն:

եկեղեցում. քանզի նրանց համար է նրա ՝ կոչումը, որպեսզի բոլոր բաները, ինչ որ ես կամենում եմ, ՝ հայտնի դառնան նրանց՝ համաձայն նրանց հավատքի:

10 Եվ ճշմարիտ եմ ասում քեզ, որ դու մի կողմ պետք է դնես այս ՝ աշխարհի ՝ բաները, և ավելի լավ բաների ՝ ձգտես:

11 Եվ քեզ պետք է տրվի նաև պատրաստել սրբազան ՝ օրհներգերի մի հավաքածու, ինչպես որ պետք է տրվի քեզ, որը հաճելի է ինձ, իմ եկեղեցում ունենալու համար:

12 Քանզի իմ հոգին հրճվում է ՝ սրտաբուխ ՝ երգով. այո՛, արդարների երգն աղոթք է ինձ համար, և

այն կպատասխանվի օրհնությամբ նրանց գլխին:

13 Ուստի, բարձրացրու սիրտդ և ցնծա, և հավատարիմ մնա այն ուխտերին, որոնք դու արել ես:

14 Շարունակիր ՝ հեզության ոգով և զգուշացիր ՝ հպարտությունից: Թող քո հոգին հրճվի քո ամուսնով և այն փառքով, որը պիտի գա նրա վրա:

15 Պահիր իմ պատվիրանները շարունակ, և ՝ արդարության ՝ պսակը կստանաս դու: Եվ եթե դա չանես, որտեղ որ ես եմ, դու ՝ չես կարող գալ:

16 Եվ ճշմարիտ, ճշմարիտ ասում եմ քեզ, որ սա իմ ՝ ճայնն է բոլորին: Ամեն:

ԲԱԺԻՆ 26

Հայտնություն՝ տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեին, Օլիվեր Քաուդերիին և Ջոն Ուիքմերին, Հարմոնիում, Պենսիլվանիա, 1830թ. հուլիսին (History of the Church, 1.104): (Տե՛ս 24-րդ բաժնի նախադրությունը):

- 1՝ Նրանց հրահանգվում է ուսումնասիրել սուրբ գրքերը և քարոզել.
- 2՝ Հաստատվում է ընդհանուր համաձայնության օրենքը:

ԱՀԱ, ես ասում եմ ձեզ, որ դուք պետք է թույլ տաք, որ ձեր ժամանակը նվիրվի սուրբ գրքերն ՝ ուսումնասիրելուն և քարոզելուն և ՝ Բոլավիլում եկեղեցին հաստատելուն և ձեր հողի աշխատանքները կատարելուն, ինչ որ պա-

հանջվում է, մինչև որ դուք գնաք արևմուտք՝ հաջորդ համաժողովն անցկացնելու համար. և այն ժամանակ ձեզ հայտնի կդարձվի, թե ինչ պետք է անեք:

2 Եվ բոլոր բաները եկեղեցում պետք է արվեն ՝ ընդհանուր համաձայնությամբ՝ շատ աղոթքով ու հավատքով, քանզի բոլոր բաները դուք պետք է ստանաք հավատքով: Ամեն:

9ա սո՛ւ Կանչ, Աստծո կողմից կանչված, Կոչում. Մարգարե:
 բ սո՛ւ Մարգարեություն, Մարգարեանալ.
 Հայտնություն:
 10ա սո՛ւ Աշխարհիկություն:
 բ սո՛ւ Ազաի լինել.
 Հարստություններ:
 գ Եթեր 12.4:

11ա սո՛ւ Օրհներգ:
 12ա սո՛ւ Միրա:
 ք Ա Մն. ԺՁ.9:
 սո՛ւ Երգել:
 14ա սո՛ւ Հեզ, Հեզություն:
 բ սո՛ւ Հպարտություն:
 15ա սո՛ւ Արդար, Արդարություն:
 բ սո՛ւ Պսակ. Վեհացում:
 գ Հովհ. Է.34:

16ա Վևո՛ւ 1.38:
 26 1ա սո՛ւ Սուրբ գրքեր – Սուրբ գրքերի արժեքը:
 բ Վևո՛ւ 24.3, 37.2:
 2ա Ա Թագ. Ը.7, Մոսիա 29.26:
 սո՛ւ Ընդհանուր համաձայնություն:

ԲԱԺԻՆ 27

Հայտնություն տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեին, Հարմոնիում, Պենսիլվանիա, 1830թ. օգոստոսին (History of the Church, 1.106-108): Նախապատրաստվելով կրոնական ծառայությանը, որի ժամանակ հացի և զինու հաղորդությունը պետք է սպասավորվեր, Ջոզեֆը դուրս գնաց զինի հայթայթելու: Նա հանդիպեց մի երկնային սուրհանդակի և ստացավ հետևյալ հայտնությունը, որի մի մասը գրի էր առնվել այդ ժամանակ, իսկ մնացածը՝ զալիք սեպտեմբերին: Եկեղեցու հաղորդության ծառայություններում այժմ զինու փոխարեն ջուր է օգտագործվում:

1-4 Բացատրվում են այն խորհրդանիշները, որոնք պետք է օգտագործվեն հաղորդությունից ճաշակելիս. 5-14՝ Քրիստոսը և բոլոր տնտեսությունների իր ծառաները պետք է ճաշակեն հաղորդությունից. 15-18՝ Աստծո ողջ սպառազինությունը հագեք:

ԼՍԵՔ ձայնը Հիսուս Քրիստոսի՝ ձեր Տիրոջ, ձեր Աստծո, և ձեր Քավչի, որի խոսքը՝ «Կենդանի է և գորավոր:

2 Քանզի, ահա, ես ասում եմ ձեզ, որ նշանակություն չունի, թե ինչ պիտի դուք ուտեք և թե ինչ պիտի դուք խմեք, երբ որ ճաշակեք «հաղորդությունից, եթե այնպես լինի, որ դուք անեք դա՝ պարզ աչքով ուղղված իմ ^բփառքին, Հոր առաջ հիշելով իմ մարմինը, որը ցած է դրվել ձեզ համար, և իմ ^գարյունը, որը թափվել է ձեզ համար՝ ձեր մեղքերի ^դթողության համար:

3 Ուստի, պատվիրան եմ տալիս ես ձեզ, որ դուք ձեր թշնամիներից չգնեք ոչ զինի, ոչ էլ թունդ խմիչք.

4 Ուստի, դրանցից ոչ մեկից դուք

չպետք է ճաշակեք, եթե այն չլինի նոր պատրաստված ձեր մեջ. այո՛, իմ Հոր այս արքայության մեջ, որը պիտի կառուցվի երկրի վրա:

5 Ահա, դա իմ իմաստությամբ է. ուստի, մի զարմացեք, քանզի գալիս է ժամը, որ ես «կխմեմ ձեզ հետ որթի բերքից, երկրի վրա, և ^բՄորոնիի հետ, որին ես ուղարկել եմ ձեզ մոտ՝ հայտնելու Մորմոնի Գիրքը, որը պարունակում է իմ հավիտենական ավետարանի լրիվությունը, որին ես հանձնել եմ Եփրեմի ^գփայտի հիշատակարանի բանալիները.

6 Եվ նաև «Եղիաօսի հետ, որին ես հանձնել եմ աշխարհի սկզբից ի վեր բոլոր սուրբ մարգարեների բերանով խոսված՝ վերջին օրերին վերաբերող բոլոր բաների վերականգնումն իրագործելու բանալիները.

7 Եվ նաև Հովհաննեսի՝ Չաքարիայի որդու, այն Չաքարիայի, որին նա («Եղիասը) այցելեց և խոստում տվեց, որ նա որդի կունենա, և նրա անունը կլինի ^բՀովհաննես, և նա լցված կլինի Եղիաօսի հոգով.

27 1ա Հեղ. 3.29, ՎևոՒ 6.2:
2ա սուր Հաղորդություն:
բ սուր Փառք:
գ սուր Արյուն:
դ սուր Մեղքերի բողոքություն:

5ա Մատ. ԻՁ.29, Մար. ԺԳ.25, Գուկ. ԻԲ.18:
բ ՁՍ-Պ 1.30-34:
գ Եգեկ. ԼԷ.16:
սուր Եփրեմ - Եփրեմի

կան Հովսեփի փայտը:
6ա սուր Եղիաօս:
7ա Գուկ. Ա.17-19:
բ Գուկ. Ա.13, ՎևոՒ 84.27-28:

8 Այն Հովհաննեսի, որին ես ձեզ մոտ եմ ուղարկել, իմ ծառաներ Ջոզեֆ Սմիթ կրտսեր և Օլիվեր Քառուկերի, ձեզ կարգելու առաջին քահանայությանը, որը դուք ստացել եք, որ կանչվեք ու Բարգվեք, ճիշտ ինչպես Պահարոնը.

9 Եվ նաև Մեղիայի հետ, որին ես հանձնել եմ հայրերի սրտերը դեպի զավակները և զավակների սրտերը դեպի հայրերը Դարձնելու գործության բանալիները, որպեսզի ողջ երկիրը չզարկվի անեծքով.

10 Եվ նաև Հովսեփի, Հակոբի, Իսահակի և Աբրահամի հետ, ձեր հայրերի, որոնց միջոցով խոստումները մնում են.

11 Եվ նաև Միքայելի հետ, կամ Մադամի՝ բոլորի հոր՝ բոլորի իշխանի՝ հիմնավորցի.

12 Եվ նաև Պետրոսի, Հակոբոսի և Հովհաննեսի հետ, որոնց ես ուղարկեցի ձեր մոտ, որոնց միջոցով ես կարգեցի ձեզ և հաստատեցի ձեզ՝ լինելու Բառաքյալներ և իմ անվան հատուկ զվկաներ, և կրելու բանալիները ձեր ծառայության և այն նույն բաների, որոնք ես հայտնել եմ նրանց.

13 Որոնց ես հանձնել եմ իմ արքայության Բանալիները և

զավետարանի Գտնեսությունը՝ վերջին ժամանակների համար. և ժամանակների Ղրության համար, որի ընթացքում ես ի Էմի կհավաքեմ բոլոր բաները, ինչ որ երկնքում է և ինչ որ երկրի վրա է.

14 Եվ նաև բոլոր նրանց հետ, որոնց իմ Հայրը՝ տուվել է ինձ աշխարհից:

15 Ուստի, բարձրացրեք ձեր սրտերն ու ցնձացեք, և գոտեպընդեք ձեր մեջքը, և ձեր վրա վերցրեք իմ ողջ սպառազինությունը, որ կարողանաք դիմակայել չար օրվան, արած լինելով ամեն ինչ, որ կարողանաք Բանագուն մնալ:

16 Կանգնեք, ուրեմն, ձեր մեջքը ճշմարտությանը՝ Գոտևորած, Գարդարության Գլանջապանակը հագած, և ձեր ոտքերը՝ խաղաղության ավետարանի պատրաստությանը պատած, ինչը ես ուղարկել եմ, որ իմ Գրեշտակները հանձնեն ձեզ.

17 Հավատքի վահանը վերցրած, որով դուք կկարողանաք հանգցնել ամբարիշտների բոլոր կրակոտ նետերը.

18 Եվ վերցրեք փրկության սաղավարտն ու սուրն իմ Հոգու, որը ես կթափեմ ձեր վրա, և իմ խոսքը, որը ես հայտնում եմ ձեզ, և

8ա ՎևոՒ 13.1:
սու՛ Ահարոնյան
քահանայություն:
բ սու՛ Կարգել, Կարգում:
գ Ել. ԻԸ.1-3, 41,
ՎևոՒ 107.13:
9ա Գ Թագ. ԺԷ.1-22,
Գ Թագ. Ա-Բ,
ՎևոՒ 2.1-3, 110.13-16,
ՋՄ-Պ 1.38-39:
սու՛ Եղիա.
Տոհմաբանություն:
բ սու՛ Տոհմաբանություն:
10ա սու՛ Աբրահամի
ուխտը:
11ա սու՛ Ադամ:

12ա ՋՄ-Պ 1.72:
սու՛ Մեղիսեդեկյան
քահանայություն:
բ սու՛ Առաքյալ:
գ Գոր. Ա.8:
13ա Մատ. ԺՁ.19:
բ սու՛ Քահանայության
բանալիները:
գ սու՛ Ավետարան:
դ սու՛ Տնտեսություն:
ե Հակոբ 5.71,
ՎևոՒ 43.28-30:
գ Եփես. Ա.9-10,
ՎևոՒ 112.30, 124.41:
է ՎևոՒ 84.100:
14ա Հովհ. Ջ.37,

ԺԷ.9, ԺԱ,
3 Նեփի 15.24,
ՎևոՒ 50.41-42, 84.63:
15ա Հովմ. ԺԳ.12,
Եփես. Ջ.11-18:
բ Մաղ. Գ.2,
ՎևոՒ 87.8:
16ա սու՛ Ճշմարտություն:
բ Ես. ԺԱ.5:
գ սու՛ Արդար,
Արդարություն:
դ Ես. ԾԹ.17:
ե 2 Նեփի 19.6:
գ ՎևոՒ 128.19-21:
17ա 1 Նեփի 15.24,
ՎևոՒ 3.8:

համաձայնության եկեք՝ ինչ վերաբերում է այն բաներին, որոնք դուք հարցնում եք ինձ, և հավա-

տարիմ եղեք, մինչև ես գամ, և դուք վեր ^ակհափշտակվեք, որ ուր որ ես եմ, դուք ^բլ լինեք: Ամեն:

ԲԱԺԻՆ 28

Հայտնություն տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեի միջոցով, Օլիվեր Քաուդերիին, Ֆայեթում, Նյու Յորք, 1830թ. սեպտեմբերին (History of the Church, 1.109-111): Եկեղեցու մի անդամ Հայրամ Փեյջը, ինչ-որ քարուններ և հայտարարում էր, որ դրա օգնությամբ հայտնություններ է ստանում Միոնի կառուցման և Եկեղեցու կարգի վերաբերյալ: Մի քանի անդամներ այդ պնդումներով խաբվել էին, և նույնիսկ Օլիվեր Քաուդերին, սխալվելով, ընկել էր դրա ազդեցության տակ: Նշանակված մի համաժողովից անմիջապես առաջ, Մարգարեն լրջորեն հարցրեց Տիրոջը, այդ նյութի վերաբերյալ, և հետևեց այս հայտնությունը:

1-7 Ջոզեֆ Սմիթը կրում է խորհուրդների բանալիները, և միայն նա է հայտնություններ ստանում Եկեղեցու համար. 8-10՝ Օլիվեր Քաուդերին պետք է քարոզի Լամանացիներին. 11-16՝ Սատանան խաբել է Հայրամ Փեյջին և տվել նրան կեղծ հայտնություններ:

քանզի նա ստանում է դրանք, ճիշտ ինչպես Մովսեսը:

3 Եվ դու պետք է հնազանդ լինես այն բաներին, որոնք ես կտամ նրան, ճիշտ ինչպես ^աԱհարոնը, և հավատարմորեն հայտարարես այդ պատվիրաններն ու հայտնությունները եկեղեցուն, զորությամբ և ^բիշխանությամբ:

ԱՀԱ, ես ասում եմ քեզ, ^աՕլիվեր, որ քեզ տրված կլինի այն, որ եկեղեցին կլսի քեզ, բոլոր այն բաներում, ինչ դու ^բկուսուցանես նրանց ^գՄիսիթարիչի միջոցով՝ այն հայտնությունների ու պատվիրանների վերաբերյալ, որոնք տվել եմ ես:

4 Եվ եթե դու, ինչ-որ ժամանակ կամ բոլոր ժամանակներում, Միսիթարիչի կողմից պատվիրանի ձևով առաջնորդվում ես ^աԽոսել կամ ուսուցանել, եկեղեցու համար, դու կարող ես դա անել:

2 Սակայն, ահա, ճշմարիտ, ճշմարիտ ասում եմ քեզ, որ այս եկեղեցուն ^աոչ ոք չի նշանակվի՝ ստանալու պատվիրաններ ու հայտնություններ, բացի իմ ծառա ^բՋոզեֆ Սմիթ կրտսերից,

5 Սակայն դու չպետք է գրես պատվիրանով, այլ իմաստությամբ.

6 Եվ դու չպետք է հրամայես նրան, ով քո զլխին է և եկեղեցու զլխին.

7 Քանզի ես նրան եմ տվել ^աբանալիները ^բխորհուրդների և

18ա1 Նեփի 13.37, ՎևոՒ 17.8:
բ Հովի. ԺԳ.3:
28 1ա ՎևոՒ 20.3:
բ սո՛ւ Ուսուցանել, Ուսուցիչ - Հոգով ուսուցանելը:

գ սո՛ւ Միսիթարիչ:
2ա ՎևոՒ 35.17-18, 43.4:
բ 2 Նեփի 3.14-20:
սո՛ւ Սմիթ Ջոզեֆ կրտսեր
3ա սո՛ւ Ահարոն՝ Մովսեսի եղբայր:

բ սո՛ւ Իշխանություն:
4ա Ել. Գ.12-16, ՎևոՒ 24.5-6:
7ա ՎևոՒ 64.5, 84.19:
բ սո՛ւ Աստծո խորհուրդները:

հայտնությունների, որոնք կնքված են, մինչև որ նրանց համար մեկ ուրիշին նշանակեմ նրա տեղը:

8 Եվ արդ, ահա, ես ասում եմ քեզ, որ դու պետք է գնաս ՄԼամանացիների մոտ և քարոզես նրանց իմ Քավետարանը. և որքանով որ նրանք ընդունեն քո ուսմունքները, դու պետք է այնպես անես, որ իմ եկեղեցին նրանց մեջ հաստատվի. և դու կունենաս հայտնություններ, սակայն մի գրիր դրանք պատվիրանի ձևով:

9 Եվ արդ, ահա, ես ասում եմ քեզ, որ դա հայտնված չէ, և ոչ մի մարդ չգիտի, թե որտեղ պիտի կառուցվի Սիոն Քաղաքը, բայց ապագայում դա կտրվի: Ահա, ես ասում եմ քեզ, որ այն կլինի Լամանացիների սահմաններին հարակից:

10 Դու չպիտի թողնես այս վայրը, մինչև համաժողովի ավարտը. և իմ ծառա Ջոզեֆը պիտի նշանակվի՝ նախագահելու համաժողովի վրա, վերջինիս ձայնով, և այն, ինչ նա ասում է քեզ, դու պիտի ասես:

11 Եվ բացի այդ, դու պետք է

վերցնես քո եղբորը, Հայրամ Փեյջին, միայն քո և իր Մմիջև, և ասես նրան, որ այն բաները, որոնք նա գրել է այդ քարից, ինձանից չեն, և որ Քատանան Պապում է նրան.

12 Քանզի, ահա, այդ բաները նշանակված չեն նրան, ոչ էլ որևէ մեկին այս եկեղեցում որևէ բան կնշանակվի՝ եկեղեցու ուխտերին հակառակ:

13 Քանզի բոլոր բաները եկեղեցում պետք է կատարվեն կարգով, ընդհանուր համաձայնությամբ՝ հավատքի աղոթքով:

14 Եվ դու պետք է օգնես կարգավորել բոլոր այս բաները՝ եկեղեցու ուխտերի համաձայն, մինչև որ կսկսես քո ճամփորդությունը Լամանացիների մեջ:

15 Եվ քեզ Մտրված կլինի ինչ անել՝ այն ժամանակից սկսած, երբ դու կգնաս, մինչև այն ժամանակը, երբ դու կվերադառնաս:

16 Եվ դու պետք է բացես քո բերանը բոլոր ժամանակներում՝ հայտարարելով իմ ավետարանը ցնծության հնչյունով: Ամեն:

ԲԱԺԻՆ 29

Հայտնություն տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեի միջոցով, վեց երեցների ներկայությամբ, Ֆայեթում, Նյու Յորք, 1830թ. սեպտեմբերին (History of the Church, 1.111–115): Այս հայտնությունը տրվել էր 1830թ. սեպտեմբերի 26-ին սկսվող համաժողովից մի քանի օր առաջ:

1–8՝ Քրիստոսը հավաքում է իր ընտրյալներին. 9–11՝ Նրա գալստով մուտք է գործում Հազարամյակը. 12–13՝ Տասներկուսը կդատեն ողջ Իսրայելը. 14–21՝ Նշաններ, արեա-

ներ ու ամայացումներ են նախորդելու Երկրորդ Գալստին. 22–28՝ Վերջին հարությունն ու վերջին դատաստանը հաջորդում են Հազարամյակին. 29–35՝ Տիրոջ համար բոլոր

8ա2 Նեփի 3.18–22,
վևՈՒ 30.5–6, 32.1–3:
բ վևՈՒ 3.19–20:
9ա վևՈՒ 57.1–3:

բ վևՈՒ 52.42–43:
սոՒ Սիոն:
11ա Մատ. ԺԸ.15:
բ Հայտ. Ի.9:

գ վևՈՒ 43.5–7:
13ա սոՒ Ընդհանուր
համաձայնություն:
15ա2 Նեփի 32.3, 5:

բաները հոգևոր են. 36-39՝ Դևր և նրա գործերը երկնքից դուրս են գցվել մարդուն փորձելու համար. 40-45՝ Անկումը և Քավությունը փրկություն են բերում. 46-50՝ Փոքր երեխաները փրկագնված են Քավության միջոցով:

ԼՍԵՔ ձայնը Հիսուս Քրիստոսի՝ ձեր Քավչի, Մեծ ՄԵՍ ԵՄ-ի, որի թողորմության բազուկը Գրավել է ձեր մեղքերը.

2 Որը չհավաքելու է իր ժողովրդին, ճիշտ ինչպես հավն է իր թևերի տակ հավաքում իր ճտերին, նույնիսկ բոլոր նրանց, ովքեր ականջ են դնում իմ ձայնին, և իրենց խոնարհեցնում են իմ առաջ, և գորավոր աղոթքով կանչում են առ ինձ:

3 Ահա, ճշմարիտ, ճշմարիտ ասում են ձեզ, որ այժմ ձեր մեղքերը չմերվել են ձեզ, հետևաբար, դուք ստանում եք այս բաները. սակայն հիշեք չմեղանչել այլևս, չլինի թե վտանգներ գան ձեր վրա:

4 Ճշմարիտ ասում են ձեզ, որ դուք ընտրված եք աշխարհից՝ հայտարարելու իմ ավետարանը ցնծության հնչումով՝ ինչպես մի փողի ձայնով:

5 Բարձրացրեք ձեր սրտերը և ուրախացեք, քանզի ես ձեր մեծ եմ, և ձեր թրաբեխտան եմ Հոր մոտ. և նրա բարի կամքն է՝ տալ ձեզ Գարբայությունը:

6 Եվ ինչպես գրված է. Ինչ էլ որ դուք չխնդրեք թիմարով, Գմիաբանվելով աղոթքով, համաձայն իմ պատվիրանի, դուք կստանաք:

7 Եվ դուք կանչված եք՝ իրագործելու իմ ընտրյալների թիմարումը. քանզի իմ ընտրյալները Գլտում են իմ ձայնը և չեն կարծրացնում իրենց սրտերը.

8 Ուստի հրամանագիր է արձակվել Հոր կողմից, որ նրանք պետք է չհավաքվեն մի տեղ, այս հողի երեսին՝ իրենց սրտերը թնախապատրաստելու և բոլոր բաներում պատրաստ լինելու այն օրվա համար, երբ Գմեղություն և ամայացում կուղարկվեն ամբարիշտների վրա:

9 Քանզի ժամը մոտ է և օրը՝ շուտով առ ձեռն, երբ երկիրը կհասունանա. և բոլոր չհպարտները և նրանք, որ գործում են ամբարշտորեն, թիմարի պես կլինեն. և ես Գկայրեմ նրանց, ասում է Ջորաց Տերը, որ ամբարշտություն չլինի երկրի վրա.

10 Քանզի մոտ է ժամը, և այն, ինչ

29 1ա սուբ ԵՍ ԵՄ:
 բ սուբ Ողորմած, Ողորմություն:
 գ սուբ Քավել, Քավություն:
 2ա Մատ. ԻԳ.37,
 3 Նեփի 10.4-6:
 բ սուբ Խոնարհ, Խոնարհություն:
 3ա սուբ Ներել:
 4ա Ալմա 29.1-2, ՎևոԻ 19.37, 30.9:
 5ա Մատ. ԺԸ.20, ՎևոԻ 6.32, 38.7, 88.62-63:
 բ սուբ Բարեխոս:

գ սուբ Աստծո արքայություն կամ Երկնքի արքայություն:
 6ա Մատ. ԻԱ.22, Հովհ. ԺԳ.13:
 բ Մար. ԺԱ.24:
 գ 3 Նեփի 27.1-2, ՎևոԻ 84.1:
 7ա սուբ Իսրայել - Իսրայելի ցովելը:
 բ Մար. ԺԳ.20, ՎևոԻ 84.34:
 սուբ Ընտրյալ:
 գ Ալմա 5.37-41:
 դ սուբ Սիրա:

8ա ՎևոԻ 45.64-66, 57.1:
 բ ՎևոԻ 58.6-9, 78.7:
 գ ՎևոԻ 5.19, 43.17-27:
 9ա 2 Նեփի 20.33, 3 Նեփի 25.1:
 սուբ Հպարտություն:
 բ Նաում Ա.10, Մադ. Գ.1, 1 Նեփի 22.15, 23, ՋՍ-Պ 1.37:
 գ ՎևոԻ 45.57, 63.34, 54, 64.24, 88.94, 101.23-25, 133.64:
 սուբ Երկիր - Երկրի ամբարշտործումը:

«Խոսվել է իմ առաքյալների կողմից, պիտի իրականանա. քանզի ինչպես նրանք խոսեցին, այնպես էլ պիտի լինի.

11 Քանզի ես կհայտնվեմ երկրնքից գորությանը ու մեծ փառքով, նրա ողջ «գորքով, և մարդկանց հետ Քարդարության մեջ կբնակվեմ երկրի վրա, Պապար տարի, և ամբարիշտները կանգուն չեն մնա:

12 Եվ կրկին, ճշմարիտ, ճշմարիտ ասում եմ ձեզ, և դա արձակվել է անխախտ հրամանագրով, Հոր կամքով, որ իմ «առաքյալները՝ Տասներկուսը, որոնք ինձ հետ էին Երուսաղեմում իմ ծառայության ժամանակ, պիտի կանգնեն իմ աջ կողմում, Քերակի սյունով իմ գալու օրը, արդարության պարեգոտ հագած, թագեր իրենց գլխին, Պառքի մեջ, ճիշտ ինչպես ես եմ, Պատելու Իսրայելի ողջ տունը, նույնիսկ բոլոր նրանց, ովքեր սիրել են ինձ և պահել են իմ պատվիրանները, և ուրիշ ոչ մեկի:

13 Քանզի «փողը կհնչի՝ երկար և բարձր, ճիշտ ինչպես Միմայ սարի վրա, և ողջ երկիրը կցնցվի, և նրանք առաջ Քկան, – այո՛, այսինքն՝ Պմեռելները, որոնք մահացել են ինձանում, – ստանալու արդարության Պպակը, և հանդերձա-

վորվելու, ճճիշտ ինձ նման, լինելու ինձ հետ, որ մենք կարողանանք մեկ լինել:

14 Սակայն, ահա, ես ասում եմ ձեզ, որ նախքան այդ մեծ «օրվա գալը, Քարեգակը պիտի խավարեցվի, և լուսինը պիտի դարձվի արյուն, և աստղերը վայր պիտի ընկնեն երկնքից, և ավելի մեծ Պնշաններ պիտի լինեն վերևը՝ երկնքում, և ներքևը՝ երկրում.

15 Եվ լաց ու «կոծ պիտի լինի մարդկանց բազմությունների մեջ.

16 Եվ մի ուժեղ «կարկտահողմ պիտի առաջ ուղարկվի՝ երկրի բերքն ավերելու:

17 Եվ կլինի այնպես, որ աշխարհի ամբարշտության պատճառով, ես «վրեժ կառնեմ Քամբարիշտներից, քանզի նրանք չեն ապաշխարի. քանզի իմ գայրույթի բաժակը լի է. քանզի ահա, իմ Պարյունը չի մաքրի նրանց, եթե նրանք ինձ չլսեն:

18 Ուստի, ես՝ Տեր Աստվածս, միջատներ կուղարկեմ երկրի երեսի վրա, որոնք կկաչեն նրա բնակիչներին և կուտեն նրանց մարմինը, և պատճառ կլինեն, որ նրանց վրա թրթուռներ գան.

19 Եվ նրանց լեզուները ետ պիտի պահվեն, այնպես որ նրանք չպի-

10w սո՛ւ Հիսուս Քրիստոսի երկրորդ գալուստը:	Քրիստոսի փառքը: դ Մատ. ԺԹ.28, Դուկ. ԻԲ.30,	q սո՛ւ Ժամանակների նշանները:
11w ՋՍ–Մ 1.37:	1 Նեփի 12.9,	15w Մատ. ԺԳ.42:
p սո՛ւ Արդար,	Մորմ. 3.18–19:	16w Եզեկ. ԼԸ.22,
Արդարություն:	13w Վևո՛Ւ 43.18, 45.45:	Հայտ. ԺԱ.19,
q սո՛ւ Հիսուս Քրիստոս –	p Վևո՛Ւ 76.50:	ԺՁ.21:
Քրիստոսի	q Վևո՛Ւ 88.97, 133.56:	17w Հայտ. ԺՁ.7–11,
հազարամյա	դ սո՛ւ Պսակ. Վեհացուն:	2 Նեփի 30.10,
թագավորությունը,	ե Վևո՛Ւ 76.94–95,	ՋՍ–Մ 1.53–55:
Հազարամյակ:	84.35–39:	սո՛ւ Վրեժխնդություն:
12w սո՛ւ Առաքյալ:	14w սո՛ւ Հիսուս Քրիստոսի	p սո՛ւ Ամբարիշտ,
p Ես. ԿՁ.15–16,	երկրորդ գալուստը:	Ամբարշտություն:
Վևո՛Ւ 130.7, 133.41:	p Հովել Բ.10,	q Ա Հովի. Ա.7,
q սո՛ւ Փառք, Հիսուս	ՋՍ–Մ 1.33:	Ալմա 11.40–41,
Քրիստոս – Հիսուս		Վևո՛Ւ 19.16–18:

տի խոստեն իմ դեմ. և նրանց մարմինը պիտի թափվի իրենց ոսկորների վրայից, և նրանց աչքերը՝ իրենց խոռոչներից.

20 Եվ կլինի այնպես, որ անտառի զգազաններն ու երկնքի թռչունները կհոշոտեն նրանց:

21 Եվ այն մեծ և չպիղծ եկեղեցին, որը ողջ աշխարհի քաղաքն է, վայր պիտի գցվի Գլափող կրակով, համաձայն նրա, ինչպես խոսվել է Եզեկիել մարգարեի բերանով, որը խոսեց այն բաների մասին, որոնք դեռ չեն եղել, բայց անկասկած կլինեն, ինչպես կենդանի են ես, քանզի պղծությունները չպետք է գերիշխեն:

22 Եվ կրկին, ճշմարիտ, ճշմարիտ ասում եմ ձեզ, որ երբ իհարկե տարիս վերջանա, և մարդիկ կրկին սկսեն ուրանալ իրենց Աստծուն, այն ժամանակ ես կխնայեմ երկիրը, բայց մի քոքր ժամանակով.

23 Եվ պիտի գա ՚վերջը, և երկինքն ու երկիրը կսպառվեն ու կանցնեն, և կլինի մի նոր երկինք և մի Գնոր երկիր:

24 Քանզի բոլոր հին բաները պիտի անցնեն, և բոլոր բաները պիտի նոր լինեն, նույնիսկ երկինքն ու երկիրը, և նրանց ողջ լրիվությունը, թե՛ մարդիկ ու գա-

զանները, երկնքի թռչունները, թե՛ ծովի ձկները.

25 Եվ ոչ մի մնաց, ոչ էլ մի փոշու հատիկ չի կորչի, քանզի դա իմ ձեռքի ստեղծագործությունն է:

26 Սակայն, ահա, ճշմարիտ ասում եմ ձեզ, որ նախքան երկիրը կանցնի, Միքայելը՝ իմ հրեշտակապետը, կինչեցնի իր փողը, և ապա բոլոր մեռելները կարթնանան, քանզի նրանց գերեզմանները կբացվեն, և նրանք զորս կգան, – այո՛, նույնիսկ բոլորը:

27 Եվ արդարները պիտի հավաքվեն իմ քաղաքում՝ հավերժական կյանքի համար. իսկ ամբարիշտներին, որ իմ ձախ կողմում են, ես կամաչեմ իմը ճանաչել Հոր առաջ.

28 Ուստի ես նրանց կասեմ. չեռացեք ինձանից, դո՛ւք, անիծյալներ, հավիտենական կրակի մեջ, որ պատրաստված է ղևի և նրա հրեշտակների համար:

29 Եվ այժմ, ահա, ես ասում եմ ձեզ, որ երբեք, ոչ մի անգամ իմ իսկ բերանով ես չեմ հայտարարել, որ նրանք կվերադառնան, քանզի Մուր որ ես եմ, նրանք չեն կարող գալ, քանզի նրանք չունեն գորություն:

30 Սակայն հիշեք, որ բոլոր

19ա Չաք. ԺԳ.12:
20ա Ես. ԺԸ.6, Եզեկ. ԼԹ.17, Հայտ. ԺԹ.17–18:
21ա սո՛ւ Գև – Գևի եկեղեցին:
բ Հայտ. ԺԹ.2:
գ Հովել Ա.19–20, 2.3, ՎևՈՒ 97.25–26:
սո՛ւ Երկիր – Երկրի մաքրագործումը:
դ ՎևՈՒ 1.38:
22ա սո՛ւ Հագարամյակ:
բ Հայտ. Ի.3, ՎևՈՒ 43.30–31,

88.110–111:
23ա Մատ. ԻԳ.14:
սո՛ւ Աշխարհ – Աշխարհի վերջը:
բ Մատ. ԻԳ.35, ՉՄ–Մ 1.35:
գ սո՛ւ Երկիր – Երկրի վերջնական վիճակը:
24ա Հայտ. ԻԱ.1–4:
25ա Ալմա 40.23:
26ա սո՛ւ Ադամ. Միքայել:
բ սո՛ւ Հրեշտակապետ:
գ Ա Կոր. ԺԵ.52–55:
դ սո՛ւ Անմահ,

Անմահություն, Հարություն:
ե Հովի. Ե.28–29:
27ա սո՛ւ Արդար, Արդարություն:
բ Մատ. ԻԵ.33:
սո՛ւ Վերջին դատաստան:
28ա Մատ. ԻԵ.41, ՎևՈՒ 29.41:
բ ՎևՈՒ 43.33:
գ սո՛ւ Գև:
29ա Հովի. Է.34, ՎևՈՒ 76.112:

իմ դատաստանները տրված չեն մարդկանց. և ինչպես որ խոսքերը դուրս են եկել իմ բերանից, ճիշտ այդպես էլ նրանք պիտի իրականանան, որ ^աառաջինը լինի վերջինը, և որ վերջինը լինի առաջինը՝ բոլոր բաներում, ինչ որ ես ստեղծել եմ իմ խոսքի գորությամբ, որը գորությունն է իմ Հոգու:

31 Քանզի իմ Հոգու գորությամբ եմ ես նրանց ^աստեղծել. այո՛, բոլոր բաները՝ թե՛ ^բհոգևոր, թե՛ ֆիզիկական, -

32 Առաջինը՝ ^ահոգևորը, երկրորդը՝ ֆիզիկականը, որը սկիզբն է իմ գործի. և մյուս կողմից, առաջինը՝ ֆիզիկականը, երկրորդը՝ հոգևորը, որը վերջն է իմ գործի, -

33 Խոսելով ձեզ հետ, որ դուք կարողանաք բնական ձևով հասկանալ. բայց ինձ համար՝ իմ գործերին չկա ոչ ^ավերջ, ոչ էլ սկիզբ. բայց ձեզ տրված է, որ դուք հասկանաք, որովհետև դուք հարցրել եք ինձ և համաձայնության եք եկել:

34 Ուստի, ճշմարիտ ասում եմ ձեզ, որ բոլոր բաներն ինձ համար հոգևոր են, և ոչ մի անգամ ես ձեզ չեմ տվել օրենք, որը լինի ֆիզիկական. ոչ որևէ մարդու, ոչ էլ մարդկանց զավակներին. ոչ էլ Ադամին՝ ձեր հորը, որին ես ստեղծեցի:

35 Ահա, ես տվեցի նրան, որ նա

^ագործակալը լիներ իր անձի. և ես տվեցի նրան պատվիրան, բայց ես չտվեցի նրան ֆիզիկական պատվիրան, քանզի իմ ^բպատվիրանները հոգևոր են. դրանք ոչ բնական են, ոչ էլ ֆիզիկական, ոչ մարմնական են, ոչ էլ զգայական:

36 Եվ եղավ այնպես, որ Ադամը, գայթակղվելով դևի կողմից, - քանզի ահա ^ադևն Ադամից առաջ էր, քանզի նա ^բապատամբեց իմ դեմ, ասելով. Տո՛ւր ինձ քո ^գպատիվը, որն իմ ^գգորությունն է. և նա երկնքի ^գգորքերի մեկ ^դերրորդին նա շրջեց ինձանից՝ նրանց ^էկամքի ազատության պատճառով.

37 Եվ նրանք նետվեցին ցած, և այդպես եկան ^ադևն ու իր ^բիրեշտակները.

38 Եվ, ահա, նրանց համար տեղ կար պատրաստված ի սկզբանե, տեղ, որը ^ադժոխքն է:

39 Եվ անպայման պետք է որ դևը ^ագայթակղեր մարդկանց զավակներին, այլապես նրանք չէին կարող գործակալը լինել իրենց անձի. քանզի եթե նրանք երբևէ չճաշակեին ^բդառնություն, ապա չէին իմանա քաղցրությունը, -

40 Ուստի, եղավ այնպես, որ դևը գայթակղեց Ադամին, և նա ճաշակեց արգելված ^ապտղից, և զանց արեց պատվիրանը, որով ^բենթարկ-

30ա Մատ. ԺԹ.30,
1 Նեփի 13.42:
31ա սոս. Ստեղծել,
Ստեղծում:
բ Մովսես 3.4-5:
32ա սոս. Հոգեղեն
ստեղծում:
33ա Սաղ. ԾԺԱ.7-8,
Մովսես 1.4:
35ա սոս. Կամքի
ազատություն:
բ սոս. Պատվիրաններն
Աստծո:
36ա ՎևոՒ 76.25-26,

Մովսես 4.1-4:
բ սոս. Խորհուրդ
Երկնքում:
գ սոս. Պատվել:
դ Ես. ԺԴ.12-14,
ՎևոՒ 76.28-29:
է ՎևոՒ 38.1, 45.1:
սոս. Նախամահկանա-
ցու կյանք:
զ Հայտ. ԺԲ.3-4:
է սոս. Կամքի
ազատություն:
37ա սոս. Դև:
բ Բ.Պետ. Բ.4,

Հուդա Ա.6,
Մովսես 7.26:
սոս. Հրեշտակներ:
38ա սոս. Դժոխք:
39ա Մովսես 4.3-4:
սոս. Գայթակղել,
Գայթակղություն:
բ Մովսես 6.55:
40ա Ծն. Գ.6,
Մովսես 4.7-13:
բ 2 Նեփի 10.24,
Մոսիա 16.3-5,
Ալմա 5.41-42:

վեց դևի կամքին, որովհետև նա տեղի տվեց զայթակողությունը:

41 Ուստի, ես՝ Տեր Աստվածս, այնպես արեցի, որ նա դուրս ազգվեր Քեղեմի պարտեզից, իմ ներկայությունից, իր օրինազանցության պատճառով, որով նա դարձավ զհոգեպես մահացած, որն առաջին մահն է, նույնիսկ այն նույն մահը, որը վերջին մահն է, որը հոգևոր է, որը կհայտարարվի ամբարիշտներին, երբ որ ես ասեմ. Հեռացեք, դո՛ւք, ա՛նիծյալներ:

42 Քանզի, ահա, ես ասում եմ քեզ, որ ես՝ Տեր Աստվածս, Ադամին և նրա սերնդին շնորհեցի, որ նրանք ա՛ջմեռնեին, ինչ վերաբերում է ֆիզիկական մահին, մինչև որ ես՝ Տեր Աստվածս, կուղարկեի Քրիշտակներ՝ զապաշխարություն և զփրկագնում հայտարարելու նրանց՝ հավատքի միջոցով առ իմ Սիածին Որդու անունը:

43 Եվ այսպես, ես՝ Տեր Աստվածս, մարդու համար նշանակեցի իր փորձության օրերը, – որ իր բնական մահով հնարավոր լինի Քարձրացնել նրան զանմահության մեջ՝ ի հավերժական կյանք, նույնիսկ բոլոր նրանց, ովքեր կհավատան.

44 Իսկ նրանց, ովքեր չեն հավա-

տա՝ ի հավերժական ա՛նգովք. քանզի նրանք չեն կարող փրկագնվել իրենց հոգևոր անկումից, որովհետև չեն ապաշխարում.

45 Քանզի նրանք խավարն ավելի են սիրում, քան լույսը, և նրանց ազորժերը չար են, և նրանք ստանում են իրենց Քվարձքը նրանից, ում կամենում են հնազանդվել:

46 Բայց ահա, ես ասում եմ քեզ, որ փոքր տերեխաները Քփրկազրկված են աշխարհի հիմնադրումից ի վեր՝ իմ Միածնի միջոցով.

47 Ուստի, նրանք չեն կարող մեղանչել, քանզի Սատանային տրված չէ փոքր երեխաներին ազաթակղելու զորություն, մինչև որ նրանք չսկսեն Քպատասխանատու դառնալ իմ առաջ.

48 Քանզի նրանց տրված է, ճիշտ ինչպես ես եմ ցանկանում, համաձայն իմ կամքի, որպեսզի մեծ բաներ պահանջվեն նրանց ահայրերի ձեռքից:

49 Եվ բացի այդ, ես ասում եմ ձեզ. Նրան, ով գիտելիք ունի, մի՞թե ես չեմ պատվիրել, որ ապաշխարի:

50 Իսկ նրա հետ, ով չունի ահասկացողություն, ինձ մնում է վարվել զրվածի համաձայն: Եվ արդ, ավելին ես ձեզ չեմ հայտարարում այս անգամ: Ամեն:

41ա սուր Ադամի և Եվայի անկումը:
բ սուր Քեղեմ:
գ սուր Մահ հոգևոր:
դ Ալմա 40.26:
ե Վև.ՈՒ 29.27–28, 76.31–39:
42ա2 Նեփի 2.21:
սուր Մահ ֆիզիկական:
բ Ալմա 12.28–30:
գ սուր Ապաշխարել, Ապաշխարություն:
դ սուր Փրկագնել, Փրկագնված, Փրկագնում:
ե Մովսես 5.6–8:

43ա Ալմա 12.24, 42.10:
բ սուր Հարություն:
գ Մովսես 1.39:
սուր Անմահ, Անմահություն:
դ սուր Հավերժական կյանք:
44ա Վև.ՈՒ 19.7–12:
սուր Նգովք:
45ա Հովհ. Գ.18–20, Վև.ՈՒ 93.31–32:
բ Մոսիա 2.32–33, Ալմա 3.26–27, 5.41–42, 30.60:
46ա Մոր. 8.8, 12, Վև.ՈՒ 93.38:

սուր Երեխա, Երեխաներ:
բ Վև.ՈՒ 74.7:
սուր Փրկագնել, Փրկագնված, Փրկագնում:
47ա սուր Գայթակղել, Գայթակղություն:
բ սուր Հաշիվ, Պատասխանատու, Պատասխանատվություն:
48ա Վև.ՈՒ 68.25:
50ա Վև.ՈՒ 137.7–10:
սուր Հասկանալ:

ԲԱԺԻՆ 30

Հայտնություն տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեի միջոցով Դեյվիդ Ուիթմերին, Պիտեր Ուիթմեր կրտսերին և Ջոն Ուիթմերին, Ֆայեթում, Նյու Յորք, 1830թ. սեպտեմբերին, Ֆայեթի եռօրյա համաժողովից հետո, բայց՝ նախքան Եկեղեցու երեցների բաժանվելը (History of the Church, 1.115-116): Սկզբնապես այս նյութը հրատարակվել էր որպես երեք հայտնություններ. Մարգարեի կողմից այն միավորվել է մեկ բաժնի մեջ՝ Վարդապետություն և Ուիտերի 1835թ. հրատարակության համար:

1-4 Դեյվիդ Ուիթմերը խրատվում է ջանասիրաբար չծառայելու համար. 5-8 Պիտեր Ուիթմեր կրտսերը պետք է ընկերակցի Օլիվեր Քաուդերիին դեպի Լամանացիները կատարվելիք առաքելության ընթացքում. 9-11՝ Ջոն Ուիթմերը կանչված է քարոզելու ավետարանը:

ԱՀԱ, ես ասում եմ քեզ, ^աԴեյվիդ, որ դու ^բվախեցել ես մարդուց, և ինչպես հարկն է, ինձ չես ^գապավինել զորության համար:

2 Բայց քո միտքն ավելի շատ եղել է ^աերկրային բաների վրա, քան այն բաների, որոնք ինձանից են՝ քո Արարչից, և այն ծառայության, որի համար դու կանչվել ես. և դու ուշք չես դարձրել իմ Հոգուն, և նրանց, ովքեր դեկավար են նշանակվել քո վրա, այլ համոզվել ես նրանց կողմից, որոնց ես չեմ պատվիրել:

3 Ուստի, ես թողել եմ քեզ՝ հարցնելու իմ ձեռքից, քեզ համար, և ^ախորհելու այն բաների վրա, որոնք ստացել ես:

4 Եվ քո բնակարանը կլինի քո հայրական տունը, մինչև որ ես

լրացուցիչ պատվիրաններ տամ քեզ: Եվ դու պետք է մվիրվես ^ածառայությանը՝ եկեղեցում, և աշխարհի առաջ, և մերձակա շրջաններում: Ամեն:

5 Ահա, ես ասում եմ քեզ, ^աՊիտեր, որ դու պետք է ^բճամփա ընկնես քո եղբայր Օլիվերի հետ. քանզի եկել է ^գԺամանակը, երբ ինձ նպատակահարմար է, որ դու պետք է բացես քո բերանը՝ հայտարարելու իմ ավետարանը. ուստի, մի վախեցիր, այլ ^դուշք դարձրու քո եղբոր խոսքերին ու խորհրդին, որ նա կտա քեզ:

6 Եվ չարչարվիր նրա բոլոր չարչարանքներով, միշտ դեպի ինձ բարձրացնելով սիրտդ, աղոթքով ու հավատքով, նրա և քո ազատման համար. քանզի ես նրան զորություն եմ տվել՝ կառուցելու իմ ^աեկեղեցին ^բԼամանացիների մեջ.

7 Եվ եկեղեցում ես ոչ ոքի չեմ նշանակել՝ խորհրդատու լինելու նրա ^ավրա, բացի իր եղբայր Ջոզեֆ Սմիթ կրտսերից:

8 Ուստի, ուշք դարձրու այս բաներին և ջանասեր եղիր իմ պատվիրանները կատարելիս, և դու

30 1ա սուր Ուիթմեր Դեյվիդը:
բ Գոր. Ե.29:
գ Բ Մն. ԺՁ.7-9:
2ա Վև.ՈՒ 25.10:
3ա սուր Խորհել:
4ա սուր Ծառայել,
Ծառայություն:

5ա սուր Ուիթմեր Պիտեր կրտսեր:
բ Վև.ՈՒ 32.1-3:
գ Վև.ՈՒ 11.15:
դ սուր Խորհուրդ. Եկեղեցու ղեկավարներից

հաստատելը:
6ա սուր Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցի:
բ Վև.ՈՒ 3.20, 49.24:
սուր Լամանացիներ:
7ա Վև.ՈՒ 20.2-3:

օրինված կլինես հավերժական կյանքի համար: Ամեն:

9 Ահա, ես ասում եմ քեզ, իմ ծառա Ջոն, որ այս ժամանակից ի վեր դու պետք է սկսես ^ահռչակել իմ ավետարանը, ինչպես մի փողի ^բձայնով:

10 Եվ քո աշխատանքը պիտի լինի քո եղբայր Ֆիլիպ Բուրբոսի մոտ և մերձակա այդ շրջանում,

այո՛, որտեղ որ քեզ լսեն, մինչև որ չպատվիրեն քեզ՝ զնալ այնտեղից:

11 Եվ, այսուհետև, քո ողջ աշխատանքը պիտի լինի Միոնում, քո ողջ հոգով. այո՛, դու պետք է միշտ բացես քո բերանը՝ իմ գործի համար, ^աչվախենալով, թե ինչ կարող է անել ^բմարդը, քանզի ես քեզ ^գհետ եմ: Ամեն:

ԲԱԺԻՆ 31

Հայտնություն տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեի միջոցով Թոմաս Բ. Մարշին, 1830թ. սեպտեմբերին (History of the Church, 1.115–117): Առիթը եղավ Եկեղեցու համաժողովից անմիջապես հետո (տե՛ս 30-րդ բաժնի նախադրությունը): Թոմաս Բ. Մարշը մկրտվել էր ավելի վաղ, այդ ամսում, և Եկեղեցում երեց էր կարգվել նախքան այս հայտնության տրվելը:

1–6՝ Թոմաս Բ. Մարշը կանչվում է՝ քարոզելու ավետարանը և երաշխավորվում է իր ընտանիքի բարօրության կապակցությամբ. 7–13՝ Նրան խորհուրդ է տրվում համբերող լինել, միշտ աղոթել և հետևել Մխիթարիչին:

^ա **Թ** ՈՍԱՍ, որդի՛ս, օրհնյալ ես դու իմ գործի հանդեպ քո հավատքի համար:

2 Ահա, դու շատ չարչարանքներ ես կրել ընտանիքիդ պատճառով, այնուամենայնիվ, ես կօրհնեմ քեզ և ընտանիքդ, այո՛, քո փոքրիկներին. և գալիս է օրը, որ նրանք կհավատան և կիմանան ճշմարտությունը, և մեկ կլինեն քեզ հետ իմ եկեղեցում:

3 Բարձրացրու սիրտդ և ցնծա, քանզի քո առաքելության ժամը

եկել է. և լեզուդ պիտի արձակվի, և դու մեծ ուրախության ^աավետիք պիտի հայտարարես այս սերնդին:

4 Դու պիտի ^ահայտարարես այն բաները, որոնք հայտնվել են իմ ծառա Ջոզեֆ Սմիթ կրտսերին: Այս ժամանակից ի վեր դու պիտի սկսես քարոզել, այո՛, հնձել արտը, որը ^բսպիտակել է՝ այրվելուն հասել:

5 Հետևաբար, ^ազցիր մանգաղդ քո ողջ հոգով, և մեղքերդ ^բներված են քեզ, և քո մեջքը բեռնված պիտի լինի ^գորաներով, քանզի ^դմշակն արժանի է իր վարձքին: Ուստի, ընտանիքդ պիտի ապրի:

6 Ահա, ճշմարիտ ասում եմ քեզ, հեռացիր նրանց մոտից միայն մի փոքր ժամանակով, և հայտարարի իմ խոսքը, և ես տեղ կպատրաստեմ նրանց համար:

9ա ՎևոՒ 15.6:
բ ՎևոՒ 33.2:
11ա սոՒ Բաջություն,
Բաջարի. Վախ:
բ Ես. ԾԱ.7:
գ Մատ. ԻԸ.19–20:

31 1ա սոՒ Մարշ Թոմաս Բ.
3ա Ես. ԾԲ.7,
Դուկ. Բ.10–11,
Մոսիա 3.3–5:
4ա Մոսիա 18.19,
ՎևոՒ 42.12, 52.36:

բ ՎևոՒ 4.4–6:
5ա Հայտ. ԺԴ.15:
բ սոՒ Ներել:
գ ՎևոՒ 79.3:
դ Դուկ. Ժ.3–11,
ՎևոՒ 75.24:

7 Այո՛, ես ՝կրացեմ մարդկանց սրտերը, և նրանք կընդունեն քեզ: Եվ ես մի եկեղեցի կհաստատեմ քո ձեռքով:

8 Եվ դու պիտի ՝ամրապնդես և նախապատրաստես նրանց՝ այն ժամանակի համար, երբ նրանք պիտի հավաքվեն:

9 ՝Համբերող եղիր ՝չարչարանքների մեջ, մի անարգիր նրանց, ովքեր անարգում են քեզ: Հեգուքյամբ կառավարիր քո Պտունը և հաստատուն եղիր:

10 Ահա, ես ասում եմ քեզ, որ դու պետք է լինես բժիշկ՝ եկեղեցու հա-

մար, բայց ոչ աշխարհի համար, քանզի նրանք չեն ընդունի քեզ:

11 Գնա քո ճանապարհով, որով ես կամենում եմ, և ՝Մխիթարիչի կողմից կտրվի քեզ, թե ինչ պիտի անես, և ուր պիտի գնաս:

12 Միշտ ՝աղոթիր՝ չլինի թե ընկնես ՝գայթակղության մեջ և կորցնես քո վարձքը:

13 ՝Հավատարիմ եղիր մինչև վերջ, և տե՛ս, ես քեզ ՝հետ եմ: Այս խոսքերը մարդուց չեն, ոչ էլ մարդկանցից, այլ ինձանից են, այսինքն՝ Հիսուս Քրիստոսից, քո Քավչից՝ Հոր Պկամքով: Ամեն:

ԲԱԺԻՆ 32

Հայտնություն տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեի միջոցով Փարլի Պ. Պրատին և Ջիբա Պիտերսոնին, 1830թ. հոկտեմբերին (History of the Church, 1.118–120): Երեցների մոտ մեծ հետաքրքրություն ու ցանկություն էր առաջացել Լամանազիների նկատմամբ, որոնց համար կանխագուշակված օրհնությունների մասին Եկեղեցին իմացել էր Մորմոնի Գրքից: Դրա հետևանքով աղաչանք էր արվել, որպեսզի Տերը ցույց տար իր կամքը, թե պե՛տք էր արդյոք այդ ժամանակ երեցներ ուղարկել արևմուտքի այդ հնդկական ցեղերի մոտ: Հետևեց այս հայտնությունը:

1–3՝ Փարլի Պ. Պրատը և Ջիբա Պիտերսոնը կանչված են քարոզելու Լամանազիներին և ուղեկցելու Օլիվեր Քաուդերիին ու Պիտեր Ուիթներ կրտսերին. 4–5՝ Նրանք պետք է աղոթեն սուրբ գրքերը հասկանալու համար:

կենդանի եմ ես, ես կամենում եմ, որ նա հայտարարի իմ ավետարանն ու ՝սովորի ինձանից, և լինի հեզ ու սրտով խոնարհ:

2 Եվ այն, ինչ նրա համար ես նշանակել եմ, այն է, որ նա, իմ ծառաների՝ Օլիվեր Քաուդերիի և Պիտեր Ուիթներ կրտսերի հետ պետք է ՝զնա անապատ՝ ՝Լամանազիների մեջ:

3 Եվ ՝Ջիբա Պիտերսոնը նույն-

ԵՎ այժմ, իմ ծառա ՝Փարլի Պ. Պրատի վերաբերյալ. Ահա, ես ասում եմ նրան, որ ինչպես որ

<p>7ա սուր Գարձի գալ, Նորադարձ: 8ա ՎևՈՒԲ 81.5, 108.7: 9ա սուր Համբերություն: բ սուր Չախորդություն: գ սուր Ընտանիք – Ծնողների պարտականությունները:</p>	<p>11ա սուր Մխիթարիչ, Սուրբ Հոգի: 12ա 3 Նեփի 18.17–21: սուր Աղոթք: բ սուր Գայթակղել, Գայթակղություն: 13ա սուր Համբերել: բ Մատ. ԻԸ.20:</p>	<p>գ սուր Հիսուս Քրիստոս – Իշխանությունը: 32 1ա սուր Պրատ Փարլի Պարկեր: բ Մատ. ԺԱ.28–30: 2ա ՎևՈՒԲ 28.8, 30.5: բ ՎևՈՒԲ 3.18–20: 3ա ՎևՈՒԲ 58.60:</p>
---	--	---

պես պիտի գնա նրանց հետ. և ես ինքս պիտի գնամ նրանց հետ և լինեմ նրանց Քմեջ. և ես նրանց զբարեխոսն եմ Հոր մոտ, և ոչ մի բան չի հաղթի նրանց:

4 Եվ նրանք պիտի ՝ուշք դարձնեն այն բանին, ինչ գրված է, և այլ Քհայտնության հավակնություն

չունենան. և նրանք պետք է միշտ աղոթեն, որ ես կարողանամ զբացել այն նրանց Պհասկացողության համար:

5 Եվ նրանք պիտի ուշք դարձնեն այս խոսքերին ու չկատակեն դրանցով, և ես կօրհնեմ նրանց: Ամեն:

ԲԱԺԻՆ 33

Հայտնություն տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեի միջոցով Էզրա Թայրին և Նորթրոփ Սվիթին, Ֆայեթում, Նյու Յորք, 1830թ. հոկտեմբերին (History of the Church, 1.126–127): Այս հայտնությունն արձանագրելիս, Մարգարեն հաստատեց, որ «Տերը... միշտ պատրաստ է ուսուցանելու նրանց, ովքեր ջանասիրաբար փնտրում են հավատքով» (History of the Church, 1.126):

1–4՝ Աշխատողները կանչված են ավետարանը հայտարարելու ժամը տասնմեկին. 5–6՝ Եկեղեցին հաստատված է, և ընտրյալները պետք է հավաքվեն. 7–10՝ Ապաշխարեք, քանզի երկնքի արքայությունը մոտ է. 11–15՝ Եկեղեցին կառուցված է ավետարանի վեմի վրա. 16–18՝ Նախապատրաստվեք Փեսայի գալտին:

ԱՀԱ, ես ասում եմ ձեզ, իմ ծառաներ Էզրա և Նորթրոփ, բացեք ձեր ականջները և ականջ դրեք Տիրոջ՝ ձեր Աստծո ձայնին, որի ՝խոսքը կենդանի է և գորավոր, երկայր սրից հատու՝ հողերը և ծուծը, հոգին և ոգին բաժանող. և սրտի խորհուրդներն ու Քմտադրությունները զանազանող:

2 Քանզի, ճշմարիտ, ճշմարիտ ասում եմ ձեզ, որ դուք կանչված եք՝ բարձրացնելու ձեր ձայնը, ինչպես փողի ՝հնչումով, հայտարարելու իմ ավետարանը մի ծոված ու խոտորյալ սերնդի:

3 Քանզի ահա, ՝արտը սպիտակել է՝ արդեն հնձին հասել. և ժամը Քտասնմեկն է՝ և Պերջին անգամը, որ ես պետք է մշակներ կանչեմ իմ այգի:

4 Եվ իմ ՝այգին Քապականվել է՝ ամեն մի կտորը. և չկա մեկը, որ զբարիք գործի, բացի մի քանիսից. և նրանք բոլորը շատ դեպքերում ՝սխալվում են, իբրև հանանենգության պատճառով, ունենալով ապականված միտք:

5 Եվ ճշմարիտ, ճշմարիտ ասում

3բ Մատ. ԺԸ.20, ՎևՈՒ 6.32, 38.7:
գ սո՛ւ Բարեխոս:
4ա1 Նեփի 15.25, ՎևՈՒ 84.43–44:
բ ՎևՈՒ 28.2:
գ ՋՍ–Պ 1.74:
դ սո՛ւ Զականալ:
33 1ա Երբ. Գ.12,

Հել. 3.29–30:
բ Ալմա 18.32, ՎևՈՒ 6.16:
2ա Ես. ԾԸ.1:
3ա Հովհ. Գ.35, ՎևՈՒ 4.4, 12.3, 14.3:
բ Մատ. Ի.1–16:
գ Հակոբ 5.71, ՎևՈՒ 43.28:

4ա սո՛ւ Տիրոջ այգին:
բ 2 Նեփի 28.2–14, Մորմ. 8.28–41:
գ Հռովմ. Գ.12, ՎևՈՒ 35.12:
դ 2 Նեփի 28.14:
ե սո՛ւ Քահանանենգություն:

եմ ձեզ, որ այս «եկեղեցին ես թհաստատել և կանչել եմ անապատից դուրս:

6 Եվ ճիշտ այդպես կհավաքեմ ես իմ ընտրյալներին աշխարհի թշորս կողմերից, այսինքն՝ բոլոր նրանց, ովքեր կհավատան ինձ և ականջ կդնեն իմ խոսքերին:

7 Այո՛, ճշմարիտ, ճշմարիտ ասում եմ ձեզ, որ արտը սպիտակել է՝ արդեն հնձին հասել. ուստի զցեք ձեր մանգաղները և հնձեք ձեր ողջ զորությամբ, մտքով և ուժով:

8 «Բացեք ձեր բերանը և այն պիտի լցվի, և դուք կդառնաք ճիշտ ինչպես թՆեփին՝ հնում, որը ճամփորդեց Երուսաղեմից անապատ:

9 Այո՛, բացեք ձեր բերանը և մի խնայեք, և ձեր մեջքը բեռնված պիտի լինի «որաներով, քանզի, տեսե՛ք, ես ձեզ հետ եմ:

10 Այո՛, բացեք ձեր բերանը, և այն պիտի լցվի, ասելով. Ապաշխարեք, «ապաշխարեք և պատրաստ արեք Տիրոջ ճանապարհը, և ուղիղ արեք նրա շավիղները. քանզի երկնքի արքայությունը մոտ է.

11 Այո՛, ապաշխարեք և «մկրտվեք, ամեն մեկդ՝ ձեր մեղքերի թողության համար. այո՛, մկրտվեք, այսինքն՝ ջրով, և ապա գալիս է կրակով և Սուրբ Հոգով մկրտությունը:

12 Ահա՛, ճշմարիտ, ճշմարիտ ասում եմ ձեզ. Սա իմ «ավետարանն է. և հիշեք, որ նրանք պետք է ունենան հավատք առ ինձ, այլապես, ոչ մի կերպ նրանք չեն կարող փրկվել:

13 Եվ այս «վեմի վրա ես կկառուցեմ իմ եկեղեցին. այո՛, այս վեմի վրա եք դուք կառուցված, և եթե դուք շարունակեք, դժոխքի թղմները չեն հաղթի ձեզ:

14 Եվ դուք պետք է հիշեք եկեղեցու «հանգանակներն ու ուխտերը, որ պահեք դրանք:

15 Եվ նրանց, ովքեր հավատք ունեն, դուք պիտի «հաստատեք իմ եկեղեցում, թձեռնադրմամբ, և ես նրանց կշնորհեմ Սուրբ Հոգու «պարզևր:

16 Եվ Մորմոնի Գիրքն ու մյուս սուրբ «գրքերը տրվել են իմ կողմից՝ ձեզ թուսուցանելու համար. և իմ Հոգու զորությունը «կենդանացնում է բոլոր բաները:

17 Ուստի, հավատարիմ եղեք, միշտ աղոթելով, ունենալով ձեր լապտերները պատրաստ ու վառ, և ձեք՝ ձեզ հետ, որ կարողանաք պատրաստ լինել «Փեսայի գալստի ժամանակ,–

18 Քանզի ահա, ճշմարիտ, ճշմարիտ ասում եմ ձեզ, որ ես շուտով «գալիս եմ: Դիշտ այդպես: Ամեն:

<p>5ա սուր Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցի: <i>բ</i> սուր Ավետարանի վերականգնումը: 6ա սուր Իսրայել – Իսրայելի ցրվելը: <i>բ</i> 1 Նեփի 19.15–17: 8ա Վև.ՈՒՒ 88.81: <i>բ</i> 2 Նեփի 1.26–28: 9ա Սաղ. ԴԻՁ.6, Ալմա 26.3–5,</p>	<p>Վև.ՈՒՒ 75.5: 10ա Մատ. Գ.1–3: 11ա սուր Մկրտություն, Մկրտել: 12ա 3 Նեփի 27.13–22: 13ա սուր Վեմ: <i>բ</i> Մատ. ԺՁ.16–19, Վև.ՈՒՒ 10.69–70: 14ա Նկատի ունի 20–22 բաժինները. Վև.ՈՒՒ 42.13: 15ա Վև.ՈՒՒ 20.41:</p>	<p><i>բ</i> սուր Չեռնադրություն: <i>գ</i> սուր Սուրբ Հոգու պարզև: 16ա սուր Սուրբ գրքեր: <i>բ</i> Բ Տիմ. Գ.16: <i>գ</i> Հովհ. 2.63: 17ա Մատ. ԻԵ.1–13: սուր Փեսա: 18ա Հայտ. ԻԲ.20: սուր Հիսուս Քրիստոսի երկրորդ գալուստը:</p>
---	---	---

ԲԱԺԻՆ 34

Հայտնություն տրված Ջոզեֆ Սնիթ Մարգարեի միջոցով Օրսոն Պրատին, Ֆայեթում, Նյու Յորք, 1830թ. նոյեմբերի 4-ին (History of the Church, 1.127–128): Եղբայր Պրատն այդ ժամանակ տասնինը տարեկան էր: Նա դարձի էր եկել և մկրտվել, երբ վեց շաբաթ առաջ առաջին անգամ լսել էր վերականգնված ավետարանի քարոզումն իր ավագ եղբոր՝ Փայրի Պ. Պրատի կողմից: Այս հայտնությունը ստացվել էր Պիտեր Ուիթմեր ավագի տանը:

1–4՝ Բավության միջոցով հավատարիմները դառնում են Աստծո որդիներ. 5–9՝ Ավետարանի քարոզումը ճանապարհ է պատրաստում Երկրորդ Գալտի համար. 10–12՝ Մարգարեությունը գալիս է Սուրբ Հոգու զորությամբ:

ԻՄ որդի՝ ՝Օրսոն, ականց դիր և լսիր ու տես, թե ինչ պիտի ասես քեզ, ես՝ Տեր Աստվածս, այսինքն՝ Հիսուս Քրիստոսը՝ քո Բավիչը.

2 ՄԼույսը և կյանքն աշխարհի, լույս, որը շողում է խավարում, և խավարը չի ըմբռնում այն.

3 Նա, ով այնպես ՝սիրեց աշխարհը, որ ՝տվեց ՝իր կյանքը, որ բոլոր նրանք, ովքեր կհավատան, դառնան Աստծո ՝որդիներ: Ուստի դու իմ որդին ես.

4 Եվ ՝օրհնված ես դու, որովհետև հավատացիր.

5 Եվ օրհնված ես դու ավելի շատ, որովհետև ես ՝կանչել եմ քեզ՝ քարոզելու իմ ավետարանը,–

6 Քո ձայնը բարձրացնելու,

ինչպես փողի հնչումով՝ երկար ու բարձր, և ապաշխարություն ՝աղաղակելու ծոված ու խոտորյալ մի սերնդի՝ պատրաստելով Տիրոջ ճանապարհն իր երկրորդ ՝գալստի համար:

7 Բանգի ահա, ճշմարիտ, ճշմարիտ ասում եմ քեզ, որ ՝ժամանակը շուտով մոտ է, երբ ես կգամ ՝ամսյի մեջ՝ զորությամբ ու մեծ փառքով:

8 Եվ ՝մեծ օր կլինի իմ գալստյան ժամանակը, քանզի բոլոր ազգերը պիտի ՝դողան:

9 Բայց նախքան այդ մեծ օրվա գալը, արեգակը պիտի խավարեցվի, և լուսինը դարձվի արյուն, և աստղերը պիտի հրաժարվեն շողալ, և մի քանիսը վայր պիտի ընկնեն, և մեծ ավերածություններ են սպասվում ամբարիշտներին:

10 Ուստի, բարձրացրու ձայնդ և մի ՝խնայիր, քանզի Տեր Աստվածն է խոսել. ուստի մարգարեացիր, և այն պիտի տրվի Սուրբ Հոգու ՝զորությամբ:

11 Եվ եթե դու հավատարիմ ես,

34 1ա սո՛ր Պրատ Օրսոն: 2ա Հովհ. Ա.1–5: սո՛ր Լույս, Քրիստոսի լույս: 3ա Հովհ. Գ.16, ԺԵ.13: սո՛ր Մեր: Բ սո՛ր Բավել, Բավություն. Փրկագնել, Փրկագնված, Փրկագնում: Գ սո՛ր Բավիչ:

դ Հովհ. Ա.9–12, Հռովմ. Ը.14, 16–17, Մովսես 6.64–68: սո՛ր Աստծո որդիներն ու դուստրերը: 4ա Հովհ. Ի.29: 5ա սո՛ր Կանչ, Աստծո կողմից կանչված, Կոչում: 6ա ՎևՈՒ 6.9: Բ սո՛ր Հիսուս Քրիստոսի

երկրորդ գալուստը: 7ա Հայտ. Ա.3: Բ Ղուկ. ԻԱ.27: 8ա Հովել Բ.11, Մաղ. Գ.5, ՎևՈՒ 43.17–26: սո՛ր Հիսուս Քրիստոսի երկրորդ գալուստը: Բ Ես. ԿԳ.2: 10ա Ես. ԾԸ.1: Բ Բ Պետ. Ա.21:

<p>ահա՛, ես քեզ հետ եմ, մինչև իմ գալը,– 12 Եվ ճշմարիտ, ճշմարիտ ասում</p>	<p>եմ քեզ, ես շուտով գալիս եմ: Ես քո Տերն ու քո Քավիչն եմ: Ահիշտ այդպես: Ամեն:</p>
--	--

ԲԱԺԻՆ 35

Հայտնություն տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեին և Միդնի Ռիզդոնին, Ֆայեթում կամ նրա մոտակայքում, Նյու Յորք, 1830թ. դեկտեմբեր (History of the Church, 1.128–131): Այս ժամանակաշրջանում մարգարեն գրեթե ամեն օր զբաղված էր Աստվածաշնչի բարգմանությամբ: Թարգմանությունն սկսվել էր 1830թ. հունիսից ոչ շուտ, և թե՛ Օլիվեր Քաուդերին, թե՛ Ջոն Ուիթմերը ծառայել էին, որպես դպիրներ: Քանի որ այժմ նրանք կանչվել էին այլ պարտականությունների, Միդնի Ռիզդոնն աստվածային նշանակմամբ կանչվել էր ծառայելու այս աշխատանքում, որպես Մարգարեի դպիր (տե՛ս հատված 20): Որպես այս հայտնության իր արձանագրման նախաբան, Մարգարեն գրել է. «Դեկտեմբերին Միդնի Ռիզդոնը եկավ [Օհայոյից] Տիրոջը հարցնելու, և նրա հետ եկել էր Էդվարդ Պատրիջը... Այս երկու եղբայրների ժամանումից կարճ ժամանակ անց, այսպես խոսեց Տերը» (History of the Church, 1.128):

1–2՝ Ինչպես կարող եմ մարդիկ դառնալ Աստծո որդիներ. 3–7 Միդնի Ռիզդոնը կանչված է մկրտելու և շնորհելու Սուրբ Հոգին. 8–12՝ Նշաններն ու հրաշքներն իրագործվում են հավատքով. 13–16՝ Տիրոջ ծառաները Հոգու գործությամբ կկայսեն ազգերը. 17–19՝ Ջոզեֆ Սմիթը կրոն է խորհուրդների բանալիները. 20–21՝ Ընտրվածները կմնան Տիրոջ գալստյան օրը. 22–27՝ Իսրայելը կփրկվի:

2 Ես Հիսուս Քրիստոսն եմ՝ Աստծո Որդին, որը լիազվել էր աշխարհի մեղքերի համար, այսինքն՝ բոլոր նրանց համար, ովքեր թյուրապատան իմ անվանը, որ նրանք կարողանան դառնալ Աստծո որդիներ, նույնիսկ մեկ՝ ինձանում, ինչպես ես եմ մեկ՝ Հոր մեջ, ինչպես Հայրն է մեկ՝ ինձանում, որ մենք կարողանանք մեկ լինել:

3 Ահա, ճշմարիտ, ճշմարիտ ես ասում եմ իմ ծառա Միդնիին. Ես նայել եմ քեզ և քո գործերին: Ես լսել եմ քո աղոթքները և նախապատրաստել քեզ ավելի մեծ գործի համար:

4 Օրհնված ես դու, քանզի մեծ բաներ պիտի անես: Ահա դու առաջ

ԼՍԵՔ ձայնը ՊՏՏՏ, որ ձեր Աստվածն է, այսինքն՝ ՊԱՄԻԱՆ և Օմեգան՝ սկիզբը և վերջը, որի Գրքազգր մեկ հավերժական շրջան է, Պնույնը՝ երեկ, այսօր և հավիտյան:

35 1ա սուր Տեր:
բ Հայտ. Ա.8:
սուր ԱՄԻԱՆ և Օմեգա:
գ 1 Նեփի 10.19,
Վևո 3.2:

դ Եբր. ԺԳ.8,
Վևո 38.1–4, 39.1–3:
2ա սուր Խաչելություն:
բ Վևո 20.25, 45.5, 8:
գ սուր Աստծո որդիներն

ու դուստրերը:
դ Հովհ. ԺԵ.20–23:
սուր Միություն:
ե սուր Աստված,
Աստվածագլուխ:

էիր ուղարկվել, ճիշտ ինչպես ^աՀովհաննեսը, ճանապարհ պատրաստելու իմ առաջ, և ^բԵղիայի առաջ, որը պիտի գա, և դու չգիտեսիր դա:

5 Դու մկրտեցիր ջրով՝ ապաշխարության համար, բայց նրանք ^աչստացան Սուրբ Հոգին:

6 Բայց այժմ ես տալիս եմ քեզ պատվիրան, որ դու պիտի ^ամկրտես ջրով, և նրանք պիտի ստանան ^բՍուրբ Հոգին՝ ^գձեռնադրումով, ճիշտ ինչպես առաքյալները հնում:

7 Եվ կլինի այնպես, որ մի մեծ գործ կկատարվի երկրի վրա, նույնիսկ ^ահեթանոսների մեջ, քանզի նրանց անմտությունն ու նրանց պղծությունները հայտնի պիտի դարձվեն բոլոր մարդկանց աչքերում:

8 Քանզի ես Աստված եմ, և իմ ձեռքը չի ^ակարճացել. և ^բհրաշքներ, ^գնշաններ և զարմանալիքներ ես պիտի ցույց տամ նրանց, ովքեր ^դհավատում են իմ անվանը:

9 Եվ ովքեր որ կխնդրեն իմ անունով, ^ահավատքով, նրանք ^բդևեր պիտի դուրս ^գզցեն. նրանք պիտի ^դբժշկեն հիվանդներին. նրանք պիտի հրամայեն, և կույրերը կստանան իրենց տեսողությունը, և խուլերը կլսեն, և համրերը կխոսեն, և կաղերը կքայլեն:

10 Եվ արագ մոտենում է ժամանակը, որ մեծ բաներ ցույց կտրվեն մարդկանց զավակներին:

11 Սակայն ^աառանց հավատքի ոչ մի բան ցույց չի տրվի, բացի ^բամայացումներից՝ ^գԲաբելոնի վրա, այն նույնի, որը ստիպել է բոլոր ազգերին խնել իր ^դպոռնկության ցասման գիճուց:

12 Եվ ^աչկա մեկը, որ բարիք գործի, բացի նրանցից, ովքեր պատրաստ են ընդունելու իմ ավետարանի լրիվությունը, որը ես առաջ եմ ուղարկել դեպի այս սերունդը:

13 Ուստի, ես կանչում եմ աշխարհի ^աթույլերին, նրանց, ովքեր ^բանուսում են և արհամարիված, որպեսզի կալսեն ազգերն իմ Հոգու գործությամբ:

14 Եվ նրանց ձեռքը պիտի լինի իմ ձեռքը, և ես կլինեմ նրանց ^ավահանն ու նրանց ասպարը. և ես կգոտեսպնդեմ նրանց մեջքը, և նրանք տղամարդու պես պիտի մարտնչեն ինձ համար. և նրանց ^բքնամիները կլինեն նրանց ոտքերի տակ. և ես թույլ կտամ, որ ^գընկնի սուրը, նրանց օգտի համար, և իմ զայրույթի ^դբոցով կպահպանեն նրանց:

15 Եվ ^աաղքատներին ու ^բհեզերին պիտի քարոզվի ավետարանը, և նրանք պիտի ^գսպասեն իմ

4ա Մադ. Գ.1,
Մատ. ԺԱ.10,
1 Նեփի 11.27,
ՎևՈՒ 84.27–28:
բ 3 Նեփի 25.5–6,
ՎևՈՒ 2.1, 110.13–15:
5ա Գոր. ԺԹ.1–6:
6ա սոՒ Մկրտություն,
Մկրտել:
բ սոՒ Սուրբ Հոգու
պարզև:
գ սոՒ Չեռնադրություն:
7ա սոՒ Հեթանոսներ:
8ա Ես. Ծ.2, ԾԹ.1:

բ սոՒ Հրաշք:
գ սոՒ Նշան:
դ սոՒ Հավատ,
Հավատալ:
9ա սոՒ Հավատք:
բ Մար. Ա.21–45:
գ Մար. ԺԶ.17:
դ սոՒ Բժշկել,
Բժշկումներ:
11ա ՎևՈՒ 63.11–12:
բ ՎևՈՒ 5.19–20:
գ սոՒ Բաբելոն:
դ Հայտ. ԺԸ.2–4:
12ա Հռովմ. Գ.10–12,

ՎևՈՒ 33.4, 38.10–11,
84.49:
13ա Ա Կոր. Ա.27,
ՎևՈՒ 1.19–23, 124.1:
բ Գոր. Գ.13:
14ա Բ Թագ. ԻԲ.2–3:
բ ՎևՈՒ 98.34–38:
գ ՎևՈՒ 1.13–14:
դ ՎևՈՒ 128.24:
15ա Մատ. ԺԱ.5:
բ սոՒ Հեզ, Հեզություն:
գ Բ Պետ. Գ.10–13,
ՎևՈՒ 39.23, 45.39,
Մովսես 7.62:

գալստյան ժամին, քանզի այն ⁹մոտ է՝ առ ձեռն,–

16 Եվ նրանք կտվորեն ¹⁰քզենու առակը, քանզի, նույնիսկ հիմա, ամառն արդեն մոտ է:

17 Եվ ես առաջ եմ ուղարկել իմ ավետարանի ¹¹լրիվությունը՝ իմ ծառա ¹²Ջոզեֆի ձեռքով. և իր բուլության մեջ ես օրհնել եմ նրան.

18 Եվ ես տվել եմ նրան ¹³բանալիներն այն խորհուրդների, որոնք ¹⁴կնքված են եղել, այսինքն՝ այն բաների, որոնք կային աշխարհի ¹⁵հիմնադրումից ի վեր, և այն բաների, որոնք պիտի գան այս ժամանակից ի վեր, մինչև իմ գալու ժամանակը, եթե նա մնա ինձ հետ, իսկ թե ոչ, նրա տեղում ես մեկ ուրիշին կդնեմ:

19 Ուստի, հսկիր նրան, որ նրա հավատքը չպակասի, և դա կտրվի ¹⁶Մխիթարիչի՝ ¹⁷Սուրբ Հոգու միջոցով, որը զիտի բոլոր բաները:

20 Եվ ես պատվիրան եմ տալիս քեզ,– որ դու պետք է ¹⁸գրես նրա համար. և սուրբ գրքերը պիտի տրվեն, ճիշտ ինչպես դրանք իմ ծոցում են, իմ ¹⁹ընտրյալների փրկության համար.

21 Քանզի նրանք պիտի լսեն իմ ²⁰ձայնը, և պիտի տեսնեն ինձ,

և քնած չպիտի լինեն, և պիտի ²¹մնան իմ ²²գալու օրը. քանզի նրանք պիտի մաքրագործվեն, ճիշտ ինչպես ես եմ ²³մաքուր:

22 Եվ այժմ ես առում եմ ²⁴քեզ. Մնա նրա հետ, և նա պիտի ճանփորդի քեզ հետ. մի թողնիր նրան և, անկասկած, այս բաները պիտի իրականանան:

23 Եվ ²⁵որքան որ դուք չեք գրի, ահա՛, նրան պիտի տրվի մարգարեանալ. իսկ դու պիտի քարոզես իմ ավետարանը և վկայակոչես սուրբ ²⁶մարգարեներին՝ հաստատելու համար նրա խոսքերը, երբ որ դրանք տրվեն նրան:

24 ²⁷Պահեք բոլոր պատվիրաններն ու ուխտերը, որոնցով դուք կապված եք. և ես ²⁸կցնցեմ երկինքները ձեր բարիքի համար, և ²⁹Սատանան պիտի դողա, իսկ Սիոնը պիտի ³⁰ցնձա բլուրների վրա և ծաղկի.

25 Եվ ³¹Իսրայելը ³²կփրկվի ինձ հարմար ժամանակ. և այն ³³բանալիներով, որոնք ես տվել եմ, նրանք պիտի առաջնորդվեն և ամենևին էլ չեն խարխալի:

26 Բարձրացրեք ձեր սրտերը և ուրախ եղեք՝ ձեր ³⁴փրկագնումը մոտենում է:

15դ ՎևոՒ 63.53:
16ա Մատ. ԻԳ.32, ՎևոՒ 45.36–38, ՋՍ–Մ 1.38:
սուրբ ժամանակների նշանները:
17ա ՎևոՒ 42.12:
բ ՎևոՒ 135.3:
18ա ՎևոՒ 84.19:
բ Դան. ԺԲ.9, Մատ. ԺԳ.35, 2 Նեփի 27.10–11, Եթեր 4.4–7, ՋՍ–Պ 1.65:
գ ՎևոՒ 128.18:
19ա Հովհ. ԺԳ.16, 26, ԺԵ.26:

սուրբ Մխիթարիչ:
բ սուրբ Սուրբ Հոգի:
20ա Այդ ժամանակ Մարգարեն հայտնությամբ քարգմանում էր Աստվածաշունչը, և Սիդնի Ռիզոնը կանչվել էր օգնելու՝ որպես դպիր:
բ սուրբ Ընտրյալ:
21ա Հովել Բ.11, ՎևոՒ 43.17–25, 88.90, 133.50–51:
բ Մադ. Գ.2–3:
գ սուրբ Հիսուս Քրիստոսի երկրորդ գալուտը:
դ սուրբ Անարատ,

Անարատություն:
22ա ՎևոՒ 100.9–11:
23ա Նշ. այն ժամանակ, երբ Սիդնի Ռիզոնը զգալիված չէր լինի գրելով:
բ նշ. սուրբ գրքերը:
24ա ՎևոՒ 103.7:
բ ՎևոՒ 21.6:
գ 1 Նեփի 22.26:
դ սուրբ Ուրախություն:
25ա սուրբ Իսրայել:
բ Ես. ԽԵ.17, 1 Նեփի 19.15–16, 22.12:
գ սուրբ Քահանայության բանալիները:
26ա Դուլ. ԻԱ.28:

27 Մի վախեցիր, փո՛քր հոտ.
՝արքայությունը բռնն է, մինչև որ

ես գամ: Ահա, ես շուտով ^բգալիս եմ: Դիշտ այդպես: Ամեն:

ԲԱԺԻՆ 36

Հայտնություն տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեի միջոցով Էդվարդ Պատրիցին, Ֆայեթի մոտակայքում, Նյու Յորք, 1830թ. դեկտեմբերին (History of the Church, 1.131): (Տե՛ս 35-րդ բաժնի նախադրությունը): Մարգարեն ասել է, որ Էդվարդ Պատրիցը «բարեպաշտության օրինակ էր և Տիրոջ մեծ մարդկանցից մեկը» (History of the Church, 1.128):

1–3՝ Միդնի Ռիգդոնի ձեռքով Տերը ձեռնադրում է Էդվարդ Պատրիցին.
4–8՝ Ամեն մի տղամարդ, որ ընդունում է ավետարանը և քահանայությունը, պետք է կանչվի, որ առաջ գնա և քարոզի:

վիրանն եմ ես տալիս ձեզ՝ բոլոր մարդկանց վերաբերյալ,–

5 Որ, բոլոր նրանք, ովքեր կգան իմ ծառաներ Միդնի Ռիգդոնի և Ջոզեֆ Սմիթ կրտսերի առաջ, ընդունելով այս կոչումն ու պատվիրանը, պիտի ^ակարգվեն և առաջ ուղարկվեն՝ ^բքարոզելու հավիտենական ավետարանն ազգերի մեջ,–

ԱՅՍՊԵՍ է ասում Տեր Աստվածը՝ Իսրայելի ^աՀզորը. Ահա ես ասում եմ քեզ, իմ ծառա ^բԷդվարդ, որ դու օրհնված ես, և որ քո մեղքերը ներված են քեզ, և դու կանչված ես իմ ավետարանը քարոզելու, ինչպես մի փողի ձայնով.

6 Ապաշխարություն աղաղակելով՝ ասելով. ^աԱզատվեք այս անհրճազանդ սերնդից, և դո՛ւրս եկեք կրակի միջից, ատելով նույնիսկ մարմնից բծոտվող ^բհանդերձները:

2 Եվ ես ^ակձեռնադրեմ քեզ իմ ծառա Միդնի Ռիգդոնի ձեռքով, և դու կստանաս իմ Հոգին՝ Սուրբ Հոգին, այսինքն՝ ^բՄխիթարիչը, որը կսովորեցնի քեզ արքայության ^գխաղաղարար բաները.

7 Եվ այս պատվիրանը պիտի տրվի իմ եկեղեցու երեցներին, որ ամեն մարդ, որը կընդունի դա սրտի պարզությամբ, կարող է կարգվել ու առաջ ուղարկվել, ճիշտ ինչպես ես ասացի:

3 Եվ դու պիտի հայտարարես այն բարձր ձայնով՝ ասելով. Ովսա՛ննա, օրհնյա՛լ է բարձրյալ Աստծո անունը:

8 Ես Հիսուս Քրիստոսն եմ՝ Աստծո Որդին. ուստի, գոտեպնդեք ձեր մեջքը, և ես հանկարծակի գալու եմ իմ ^ատաճարը: Դիշտ այդպես: Ամեն:

4 Եվ արդ, այս կոչումն ու պատ-

27ա սուր Աստծո արքայություն կամ Երկնքի արքայություն:
^բ Հայտ. ԻԲ.20:
36 1ա սուր Հիսուս Քրիստոս. Եհովա:

^բ ՎևՈՒ 41.9–11:
2ա սուր Չեռնադրություն:
^բ սուր Մխիթարիչ. Սուրբ Հոգի:
^գ ՎևՈՒ 42.61:
5ա ՎևՈՒ 63.57:

սուր Կարգել, Կարգում:
^բ սուր Քարոզել:
6ա Գ.որ. Բ.40:
^բ Հուդա Ա.23:
8ա Մաղ. Գ.1:

ԲԱԺԻՆ 37

Հայտնություն տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեին և Միդնի Ռիզդոնին, Ֆայեթի մոտակայքում, Նյու Յորք, 1830թ. դեկտեմբերին (History of the Church, 1.139): Այստեղ արդի տնտեսության ժամանակ առաջին պատվիրանն է տրվում հավաքվելու վերաբերյալ:

1–4՝ Սրբերին կոչ է արվում հավաքվել Օհայոյում:

Պնդվախյում. քանզի, ահա, նրանք աղոթում են առ ինձ՝ մեծ հավատքով:

ԱՀԱ, ես ասում եմ ձեզ, որ ինձ նպատակահարմար չէ, որ դուք թարգմանեք ավելին, մինչև չգնաք Օհայո, և դա՝ թշնամու պատճառով, և ձեր օգտի համար:

3 Եվ բացի այդ, եկեղեցուն ես մի պատվիրան եմ տալիս, որ ինձ նպատակահարմար է, որ նրանք հավաքվեն Օհայոյում, մինչև այն ժամանակը, երբ իմ ծառա Օլիվեր Քաուդերին կվերադառնա իրենց մոտ:

2 Եվ բացի այդ, ես ասում եմ ձեզ, որ դուք չպետք է գնաք, մինչև չքարոզեք իմ ավետարանն ու չամրապնդեք եկեղեցին՝ որտեղ որ այն հիմնված է, և հատկապես

4 Ահա, այստեղ է իմաստությունը, և թող ամեն մարդ իր համար ընտրի, մինչև որ ես գամ: Դիշտ այդպես: Ամեն:

ԲԱԺԻՆ 38

Հայտնություն տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեի միջոցով, Ֆայեթում, Նյու Յորք, 1831թ. հունվարի 2-ին (History of the Church, 1.140–143): Առիթը եղավ Եկեղեցու համաժողովը:

1–6՝ Քրիստոսը ստեղծեց բոլոր բաները. 7–8՝ Նա իր սրբերի մեջ է, որոնք շուտով կտեսնեն նրան. 9–12՝ Ամեն մարմին ապականվել է նրա առաջ. 13–22՝ Իր Սրբերի համար նա մի խոստումի երկիր է վերապահել՝ ժամանակի և հավերժության մեջ. 23–27 Սրբերին պատվիրվում է՝ լինել մեկ և միմյանց ընդունել, ինչպես եղբայրներ. 28–29՝ Կանխագուշակվում են պատերազմներ. 30–33՝ Սրբերին գորություն պիտի տրվի ի վերոստ, և նրանք պետք է

առաջ գնան բոլոր ազգերի մեջ. 34–42՝ Եկեղեցուն պատվիրվում է՝ հոգալ աղքատների և կարիքավորների մասին և փնտրել հավերժության հարստությունները:

ԱՅՍՊԵՍ է ասում Տերը՝ ձեր Աստվածը, այսինքն՝ Հիսուս Քրիստոսը՝ Մեծ ՄԵՍ ԵՄ-ը՝ Ալֆան և Օմեգան՝ Պսկիզբը և վերջը, նա, ով աշխարհի Գարարումից Պառաջ նայում էր հավերժության լայնարձակ տարածության վրա

37 1ա նշ. Աստվածաշնչի թարգմանությունն արդեն ընթացքի մեջ էր:
2ա Վև.ՈՒ 24.3, 26.1:

3ա նշ. Օհայո նահանգը: Վև.ՈՒ 38.31–32:
4ա սոՒ Կամքի ազատություն:
38 1ա սոՒ ԵՍ ԵՍ:

բ Հայտ. Ա.8:
գ սոՒ Նախամահկանացու կյանք:
դ Սաղ. Ղ.2:

և երկնքի բոլոր սերովբեական ⁶գորքերի վրա.

2 Նա, ով ⁷գիտի բոլոր բաները, քանզի իմ աչքի առաջ ⁸բոլոր բաները ներկա են.

3 Ես նա եմ, ով խոսեց, և աշխարհն ⁹արարվեց, և բոլոր բաներն ինձանով եղան:

4 Ես նա եմ, որ իմ ծոցն եմ վերցրել Ենովքի ¹⁰Միոնը. և ճշմարիտ ասում եմ, նույնիսկ բոլոր նրանք, ովքեր ¹¹հավատացել են իմ անվանը, քանզի ես Քրիստոսն եմ, և իմ անունով, ¹²արյան շնորհիվ, որ քափել եմ, ես նրանց համար բարեխոսել եմ Հոր առաջ:

5 Բայց ահա, ¹³ամբարիշտների մնացորդին ես պահել եմ խավարի ¹⁴կապանքներում, մինչև մեծ օրվա ¹⁵դատաստանը, որը պիտի գա աշխարհի վերջում.

6 Եվ ճիշտ այդպես ես կպահեմ այն ամբարիշտներին, որոնք չեն լսի իմ ձայնը, այլ կկարծրացնեն իրենց սրտերը, և վա՛յ, վա՛յ, վա՛յ է նրանց դատավճիռը:

7 Բայց ահա, ճշմարիտ, ճշմարիտ ասում եմ ձեզ՝ իմ ¹⁶աչքերը ձեր վրա են: Ես ձեր ¹⁷մեջ եմ, և դուք չեք կարող տեսնել ինձ.

8 Սակայն օրը շուտով գալիս է, որ դուք պիտի ¹⁸տեսնեք ինձ և իմանաք, որ ես եմ. քանզի խավարի վարագույրը շուտով պիտի պատուվի, և նա, որ ¹⁹մաքրագործված չէ, չի ²⁰մնա այդ օրը:

9 Ուստի, գոտեպնդեք ձեր մեջքը և պատրաստվեք: Ահա, ²¹արքայությունը ձերն է, և թշնամին չպիտի հաղթի:

10 Դժմարիտ ասում եմ ձեզ. Դուք ²²մաքուր եք, բայց ոչ բոլորդ. և չկա ուրիշ ոչ մեկը, որին ես ²³հավանեմ.

11 Քանզի ամեն ²⁴ամարմին ապականվել է իմ առաջ. և ²⁵խավարի ուժերը գերիշխում են երկրի վրա, մարդկանց գավակների մեջ, երկնքի բոլոր գորքերի ներկայությամբ,–

12 Որի պատճառով լռություն է տիրում, և ողջ հավերժությունը ²⁶ցավ է քաշում, և ²⁷հրեշտակները սպասում են մեծ հրամանին՝ ²⁸հնձելու երկիրը, հավաքելու ²⁹որոմները, որ դրանք ³⁰այրվեն. և, ահա, թշնամին միավորվել է:

13 Եվ այժմ, ես ձեզ ցույց եմ տալիս մի խորհուրդ, մի բան, որը գաղտնի սենյակներում է, որ որոշ ժամանակ անց իրագործի ան-

<p>1ե ՎևոՒ 45.1: 2ա ՎևոՒ 88.41, Մովսես 1.35: սոՒ Ամեհազես: բ Առակ. Ե.21, 2 Նեփի 9.20: 3ա Մադ. 1Գ.6-9: սոՒ Ստեղծել, Ստեղծում: 4ա ՎևոՒ 45.11-14, 76.66-67, 84.99-100, Մովսես 7.18-21: ՋՍԹ, ԾՆ. 14.25-40: սոՒ Միոն: բ ՎևոՒ 20.25, 35.2, 45.3-5: գ սոՒ Քավել,</p>	<p>Քավություն: 5ա սոՒ Անիրավ, Անիրավություն: բ Բ Պետ. Բ.4, Հուդա Ա.6: սոՒ Դժոխք: գ սոՒ Վերջին դատաստան: 7ա ՎևոՒ 1.1: բ ՎևոՒ 6.32, 29.5: 8ա Հայտ. ԻԲ.4-5: սոՒ Հիսուս Քրիստոսի երկրորդ գալուստը: բ սոՒ Անարատ, Անարատություն: գ Մադ. Գ.2: 9ա Դուկ. 2.20:</p>	<p>սոՒ Աստծո արքայու- թյուն կամ Երկնքի արքայություն: 10ա սոՒ Մաքուր և Ամաքուր: բ ՎևոՒ 1.30: 11ա Ես. Ա.3-4, ՎևոՒ 33.4: բ Միքիա Գ.6, ՎևոՒ 112.23, Մովսես 7.61-62: 12ա Մովսես 7.41: բ ՎևոՒ 86.3-7: գ սոՒ Հունձք: դ ՎևոՒ 88.94, 101.65-66: ե Մատ. ԺԳ.30:</p>
---	--	--

գամ ձեր ^ակործանումը, և դուք չգիտեք դա:

14 Բայց այժմ, ես ասում եմ դա ձեզ, և դուք օրհնված եք, բայց ոչ ձեր անօրինության կամ ձեր անհավատ սրտերի պատճառով: քանզի, արդարև, ձեզանից ոմանք մեղավոր են իմ առաջ, բայց ես ողորմած կլինեմ ձեր թուլության համար:

15 Ուստի, ^աամուր եղեք այսուհետև: մի ^բվախեցեք, քանզի արքայությունը ձերն է:

16 Եվ ձեր փրկության համար, ես ձեզ տալիս եմ պատվիրան, քանզի ես լսել եմ ձեր աղոթքները, և ^աաղբատները զանգատվել են իմ առաջ, և ^բհարուստներին էլ ինքս եմ ստեղծել, և ամեն մարմին իմն է, և ես ^գանաչառ եմ անձանց հանդեպ:

17 Եվ երկիրը ես ստեղծել եմ հարուստ, և ահա, այն իմ ոտքերի ^ապատվանդանն է, ուստի, ես կրկին կկանգնեմ նրա վրա:

18 Եվ ես առաջ եմ մեկնել և կամենում եմ շնորհիվ ձեզ ավելի մեծ հարստություններ, նույնիսկ խոստումի երկիր՝ կաթ ու մեղր բխող մի հող, որի վրա անեծք չի լինի, երբ որ Տերը գա:

19 Եվ ես այն կտամ ձեզ, որպես ձեր ժառանգության հող, եթե դուք ձգտեք դրան ձեր ողջ սրտով:

20 Եվ սա կլինի իմ ուխտը ձեզ

հետ, դուք կունենաք այն, որպես հող՝ ձեր ժառանգության և ձեր զավակների ^աժառանգության համար հավիտյան, քանի դեռ երկիրը կանգուն է, և հավերժության մեջ դուք այն կրկին կտիրեք, և այն այլևս չի անցնի:

21 Սակայն ճշմարիտ ասում եմ ձեզ, որ ժամանակի ընթացքում դուք չպետք է ունենաք ո՛չ թագավոր, ո՛չ էլ կառավարիչ, քանզի ես պիտի լինեմ ձեր ^աթագավորն ու հսկեմ ձեր վրա:

22 Ուստի, լսեք իմ ձայնն ու ^ահետևեք ինձ, և դուք կլինեք ^բազատ ժողովուրդ, և երբ ես գամ, դուք չեք ունենա ոչ մի այլ օրենք, բացի իմ օրենքներից, քանզի ես եմ ձեր ^գօրենսդիրը, և ի՞նչը կարող է ես պահել իմ ձեռքը:

23 Սակայն, ճշմարիտ ասում եմ ձեզ: ^աՈւսուցանեք միմյանց՝ համաձայն պաշտոնի, որին նշանակել եմ ձեզ:

24 Եվ թող ամեն մարդ ^ագնահատի իր եղբորը, ինչպես ինքն իրեն, և ^բառաքինություն ու ^գսրբություն գործադրի իմ առաջ:

25 Եվ կրկին ես ասում եմ ձեզ: Թող ամեն մարդ գնահատի իր եղբորը, ինչպես ինքն իրեն:

26 Քանզի, ձեզանից ո՞ր մարդն է, որ ունի տասներկու որդի, և անաչառ է նրանց հանդեպ, և նրանք ծառայում են նրան հնազանդու-

13ա ՎևոՒ 5.32–33:
15ա սոՒ Քաջություն,
Քաջարի:
բ սոՒ Վախ – Մարդուց
վախենալը:
16ա Մոսիս 4.16–18:
բ Ա Թագ. Բ.7:
գ Գոր. Ժ.34,
Մոր. 8.11–12,
ՎևոՒ 1.34–35:
17ա 1 Նեփի 17.39,

Աբր. 2.7:
20ա ՎևոՒ 45.58:
21ա Չաք. ԺԳ.9,
2 Նեփի 10.14,
Ալմա 5.50:
22ա Հովի. Ժ.27:
բ սոՒ Հիսուս Քրիստոս –
Քրիստոսի
հազարամյա
թագավորությունը:
գ Ես. 1.Գ.22,

Միքիա Գ.2,
ՎևոՒ 45.59:
23ա ՎևոՒ 88.77–79, 118,
122:
սոՒ Ուսուցանել,
Ուսուցիչ:
24ա Բ Օր. Ժ.Է.20,
Ա Կոր. Գ.6:
բ ՎևոՒ 46.33:
սոՒ Առաքինություն:
գ սոՒ Սրբություն:

քյամբ, և նա ասում է մեկին. Պատմունճան հազիր ու նատիր այստեղ. իսկ մյուսին. Յնցոտիներ հազիր ու նատիր այնտեղ,– և նայում է իր որդիներին ու ասում. Ես արդար եմ:

27 Ահա, սա ես ասացի ձեզ, որպես առակ, և դա ճիշտ ինձ նման է: Ասում եմ ձեզ. Եղեք՝ մեկ. և եթե դուք մեկ չեք, դուք իմը չեք:

28 Եվ դարձյալ, ես ասում եմ ձեզ, որ թշնամին գաղտնի սենյակներում փնտրում է ձեր՝ կյանքը:

29 Դուք լսում եք հեռու երկրների՝ պատերազմների մասին, և ասում եք, որ շուտով մեծ պատերազմներ կլինեն հեռու երկրներում, սակայն դուք չգիտեք մարդկանց սրտերը ձեր հոգում:

30 Ես ասում եմ այս բաները ձեր աղոթքների պատճառով. ուստի, իմաստությունը՝ զանձեք ձեր ծոցում, չլինի թե մարդկանց ամբարշտությունն իր ամբարշտությամբ ձեզ հայտնի դարձնի այդ բաները, մի ձևով, որը ձեր ականջներում կխոսի ավելի բարձր ձայնով, քան այն, որը ցնցում է երկիրը. բայց եթե պատրաստ լինեք, դուք չեք վախենա:

31 Եվ, որ դուք կարողանաք խոյս տալ թշնամու գործությունից և հավաքվել ինձ մոտ՝ մի արդարակյաց ժողովուրդ,՝ ասե՛րի՛ծ ու ամարատ,–

32 Ուստի, այդ նպատակով ես ձեզ պատվիրան տվեցի, որ դուք

զնաք՝ Օհայո. և այնտեղ ես կտամ ձեզ իմ ՝ օրենքը. և այնտեղ դուք գորուքյամբ՝ Գլօժտվեք ի վերուստ.

33 Եվ այնտեղից, նրանք, ում ես կամենամ, առաջ պիտի գնան՝ բռնոր ազգերի մեջ, և նրանց պիտի սավի, թե ինչ պետք է նրանք անեն. քանզի ես մի մեծ գործ ունեմ պահ տված, քանզի Իսրայելը պիտի ՝ փրկվի, և ես պիտի տանեմ նրանց ուր որ կամենամ, և ոչ մի գորուքյուն չեմ չի պահի իմ ձեռքը:

34 Եվ այժմ, ես տալիս եմ պատվիրան, այս մասում գտնվող եկեղեցուն, որ նրանց միջից որոշակի մարդիկ պետք է նշանակվեն, և նրանք պետք է նշանակվեն եկեղեցու՝ ձայնով.

35 Եվ նրանք պետք է հոգ տանեն աղքատների ու կարիքավորների համար, և ծառայեն ի՝ ասփոփանք նրանց, որ նրանք չտառապեն. և ուղարկեն նրանց այն վայրը, ուր որ պատվիրել եմ նրանց.

36 Եվ սա պիտի լինի նրանց աշխատանքը՝ կառավարել այս եկեղեցու սեփականության գործերը:

37 Եվ նրանք, ովքեր ազարակներ ունեն, որոնք հնարավոր չէ վաճառել, թող դրանք թողնեն կամ վարձով տան, ինչպես որ բարի են համարում:

38 Տեսեք, որ բոլոր բաները պահպանվեն. և երբ մարդիկ գորուքյամբ՝ օժտվեն ի վերուստ և առաջ ուղարկվեն, բոլոր այս բա-

27ա Հովհ. ԺԷ.21–23, Ա Կոր. Ա.10, Եփես. Գ.11–14, 3 Նեփի 11.28–30, Մովսես 7.18: սո՛ւ Միություն: 28ա Վևև՛ 5.33, 38.13: 29ա Վևև՛ 45.26, 63, 87.1–5, 130.12:

30ա սո՛ւ Իմաստություն: ք ՁՍ–Ս 1.37: 31ա Բ Պետ. Գ.14: 32ա Վևև՛ 37.3: ք Վևև՛ 42: Գ Ղուկ. ԻԳ.49, Վևև՛ 39.15, 95.8, 110.9–10: 33ա սո՛ւ Միությունբական

աշխատանք: ք Ես. ԽԵ.17, Երեմ. Լ.10, Վևև՛ 136.22: Գ Գաւ. Գ.35: 34ա սո՛ւ Ընդհանուր համաձայնություն: 35ա սո՛ւ Բարօրություն: 38ա սո՛ւ Օժտում:

ները պիտի հավաքվեն եկեղեցու ծոցում:

39 Եվ եթե դուք փնտրեք ^ահարստություններ, որոնք Հայրը կամենում է տալ ձեզ, դուք կլինեք բոլոր մարդկանցից ամենահարուստը, քանզի դուք կունենաք հավերժության ^բհարստությունները. և անպայման այդպես էր պետք, որ երկրի հարստություններն իմն են՝ տալու համար. բայց զգուշացեք ^գհպարտությունից, չլինի թե դուք դառնաք ինչպես հին ^դՆեփիացիները:

40 Եվ բացի այդ, ես ասում եմ

ձեզ. Ես տալիս եմ ձեզ պատվիրան, որ ամեն մարդ՝ թե՛ երեց, քահանա, ուսուցիչ և թե՛ անդամ, սկսի իր գործքամբ, իր ^աձեռքերի աշխատանքով, որ նախապատրաստի և իրագործի այն բաները, որոնք ես պատվիրել եմ:

41 Եվ թող ձեր ^բքարոզը լինի ^գնախազգուշացնող ձայն, ամեն մարդ իր մերձավորին, մեղմությամբ ու հեզությամբ:

42 Եվ ^դդուրս եկեք ամբարիշտների միջից: Փրկվե՛ք: Մաքուր եղեք, ով Տիրոջ սպասները կրողներ: Դիշտ այդպես: Ամեն:

ԲԱԺԻՆ 39

Հայտնություն տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեի միջոցով Ջեյմս Քովիլին, Ֆայեթում, Նյու Յորք, 1831թ. հունվարի 5-ին (History of the Church, 1.143–145): Ջեյմս Քովիլը, որը Մկրտական սպասավոր էր եղել մոտ քառասուն տարի, Տիրոջ հետ ուխտեց, որ կհնազանդվի ցանկացած պատվիրանի, որը Տերն իրեն կտա Մարգարե Ջոզեֆի միջոցով:

1–4 Սրբերը գործքյուն ունեն դառնալու Աստծո որդիներ. 5–6 Ընդունել ավետարանը, նշանակում է ընդունել Քրիստոսին. 7–14 Ջեյմս Քովիլին պատվիրվում է մկրտվել և աշխատել Տիրոջ այգում. 15–21՝ Տիրոջ ծառաները պետք է քարոզեն ավետարանը, նախքան Երկրորդ Գալուստը. 22–24՝ Նրանք, ովքեր ընդունում են ավետարանը, կհավաքվեն ժամանակի և հավերժության մեջ:

ԱԿԱՆՁ դրեք և լսեք ձայնը Անրա, ով ողջ ^ահավերժությունից ողջ հավերժություն է, Մեծ ^բԵՍ ԵՄ-ը, այսինքն՝ Հիսուս Քրիստոսը,–

2 ^աԼույսը և կյանքն աշխարհի, լույս, որը շողում է խավարում, և խավարը չի ըմբռնում այն.

3 Այն մույնը, որ ժամանակի ^ազգազաթնակետին եկա յուրայինների մեջ, և յուրայիններն ինձ չընդունեցին.

39ա Հակոբ 2.17–19, ՎևոՒ 11.7:
բ Անգե Բ.8:
գ սոՒ Հպարտություն:
դ Մոր. 8.27:
40ա Ա Կոր. Գ.12:
41ա սոՒ Քարոզել:

բ սոՒ Ջգուշացնել, Ջգուշացում:
42ա Ես. ԾԲ.11:
39 1ա Եբր. ԺԳ.8, ՎևոՒ 20.12, 35.1, 38.1–4:
բ Ել. Գ.14:

սոՒ Եհովա:
2ա սոՒ Լույս, Քրիստոսի լույս:
3ա ՎևոՒ 20.26, Մովսես 6.57, 62:

4 Բայց բոլոր նրանց, ովքեր ընդունեցին ինձ, ես գործություն տվեցի՝ դառնալու իմ ^աորդիները. և ճիշտ այդպես, բոլոր նրանց, ովքեր կընդունեն ինձ, ես գործություն կսամ՝ դառնալու իմ որդիները:

5 Եվ ճշմարիտ, ճշմարիտ ասում եմ քեզ՝ նա, ով ընդունում է իմ ավետարանը, ^աընդունում է ինձ. և նա, ով չի ընդունում իմ ավետարանը, չի ընդունում ինձ:

6 Եվ սա է իմ ^աավետարանը, – ապաշխարություն և ջրով մկրտություն, իսկ հետո գալիս է ^բմկրտությունը կրակով և Սուրբ Հոգով, այսինքն՝ Մխիթարիչով, որը ցույց է տալիս բոլոր բաները և ^գուսուցանում է արքայության խաղաղարար բաները:

7 Եվ այժմ, ահա, ես ասում եմ քեզ, իմ ծառա՝ ^աՋեյմս, ես տեսել եմ քո գործերը և գիտեմ քեզ:

8 Եվ ճշմարիտ ասում եմ քեզ. Այս պահին քո սիրտն ուղիղ է իմ առաջ. և, ահա, ես մեծ օրհնություններ եմ դրել քո գլխին.

9 Այնուամենայնիվ, դու մեծ վիշտ ես տեսել, քանի որ շատ անգամ մերժել ես ինձ՝ հպարտության և ^աաշխարհիկ հոգսերի պատճառով:

10 Բայց, ահա, քո ազատման օրերը եկել են, եթե դու ակամջ դնես իմ խոսքին, որն ասում է քեզ. Վեր կաց ու ^ամկրտվիր, և լվա քո մեղքերը, կանչելով իմ անունը, և դու կստանաս իմ Հոգին, և

այնպիսի մեծ օրհնություն, ինչպիսին երբևէ չես իմացել:

11 Եվ եթե դա անես, ես պատրաստել եմ քեզ ավելի մեծ գործի համար: Դու պիտի քարոզես իմ ավետարանի լրիվությունը, որը ես առաջ եմ ուղարկել այս վերջին օրերին, այն ուխտը, որը ես առաջ եմ ուղարկել՝ ^ավերականգնելու իմ ժողովրդին, որոնք Իսրայելի տնից են:

12 Եվ կլինի այնպես, որ գործություն պիտի ^ահանգչի քեզ վրա. դու մեծ հավատք պիտի ունենաս, և ես կլինեմ քեզ հետ և կգնամ քո երեսի առաջից:

13 Դու կանչված ես՝ ^աաշխատելու իմ այգում, և կառուցելու իմ եկեղեցին, և առաջ ^բերելու Սիոնը, որպեսզի այն ցնձա բլուրների վրա և ^գծաղկի:

14 Ահա, ճշմարիտ, ճշմարիտ ասում եմ քեզ, դու կանչված չես՝ գնալու արևելյան շրջանները, այլ կանչված ես գնալու Օհայո:

15 Եվ քանի որ իմ ժողովուրդը պիտի հավաքվի Օհայոյում, ես այնպիսի ^աօրհնություններ ունեմ պահ տված, ինչպիսիք հայտնի չեն մարդկանց զավակների մեջ, և այն պիտի թափվի նրանց գլխին: Եվ այնտեղից, տղամարդիկ առաջ պիտի գնան ^բբոլոր ^գազգերի մեջ:

16 Ահա, ճշմարիտ, ճշմարիտ ասում եմ քեզ, որ Օհայոյի ժողովուրդն ինձ է կանչում մեծ

<p>4ա Հովհ. Ա.12: սո՛ր Ասածո որդիներն ու դուստրերը:</p> <p>5ա Հովհ. ԺԳ.20: 6ա սո՛ր Մկրտություն, Մկրտել. Ավետարան. Ապաշխարել, Ապաշխարություն: <i>բ</i> սո՛ր Վերստին ծնված, Ասածուց ծնված.</p>	<p>Սուրբ Հոգի: <i>գ</i> ՎևոՒ 42.61: 7ա ՎևոՒ 40.1: 9ա Մատ. ԺԳ.22: 10ա ՎևոՒ 40.1–3: սո՛ր Մկրտություն, Մկրտել: 11ա սո՛ր Իսրայել – Իսրայելի ցրվելը: 12ա Բ Կոր. ԺԲ.9:</p>	<p>13ա Մատ. Ի.1–16: <i>բ</i> Ես. ԾԲ.8: <i>գ</i> ՎևոՒ 1177: 15ա ՎևոՒ 38.32, 95.8, 110.8–10: <i>բ</i> ՎևոՒ 1.2: <i>գ</i> սո՛ր Միսիոներական աշխատանք:</p>
--	--	--

հավատքով, մտածելով, որ ես ետ կպահեմ իմ ձեռքն ազգերի վրա դատաստանից, սակայն ես չեմ կարող ուրանալ իմ խոսքը:

17 Ուստի ձեր ողջ գործոթյամբ գործի անցեք և հավատարիմ մշակներ կանչեք իմ այգի, որպեսզի այն ^աԷտեն վերջին անգամ:

18 Եվ որքան որ նրանք ապաշխարեն և ընդունեն իմ ավետարանի լրիվությունը, և սրբագործվեն, ես ետ կպահեմ իմ ձեռքը ^ադատաստանից:

19 Ուստի, առաջ գնացեք, աղադակելով բարձր ձայնով՝ ասելով. Երկնքի արքայությունը մո՛տ է. աղադակելով՝ Ովսա՛ննա, օրհնյա՛լ է Բարձրյալ Աստծո՛ւ անունը:

20 Առաջ գնացեք, մկրտելով

ջրով, ճանապարհ պատրաստելով իմ երեսի առաջ՝ իմ ^ագալստյան ժամանակի համար.

21 Քանզի ժամանակը մոտ է. ^աօրը կամ ժամը ոչ ոք ^բչգիտի. բայց այն անկասկած պիտի գա:

22 Եվ նա, ով ընդունում է այս բաները, ընդունում է ինձ. և նրանք պիտի հավաքվեն ինձ մոտ՝ ժամանակի և հավերժության մեջ:

23 Եվ բացի այդ, կլինի այնպես, որ բոլոր նրանց, ում դուք կմկրտեք ջրով, դուք պիտի ^աձեռնադրեք, և նրանք պիտի ստանան Սուրբ Հոգու ^բպարգևը, և պիտի ^գակնկալեն իմ ^դգալստյան նշանները, և պիտի ճանաչեն ինձ:

24 Ահա, ես շուտով գալիս եմ: Դիշտ այդպես: Ամեն:

ԲԱԺԻՆ 40

Հայտնություն տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեին և Միդնի Ռիզդոնին, Ֆայեթում, Նյու Յորք, 1831թ. հունվարին (History of the Church, 1.145): Սկսելով այս հայտնության արձանագրումը, Մարգարեն գրել է. «Քանի որ Ձեյմս Քովիլը մերժեց Տիրոջ խոսքը և վերադարձավ իր նախկին սկզբունքներին ու նարդկանց, Տերը տվեց ինձ և Միդնի Ռիզդոնին հետևյալ հայտնությունը» (History of the Church, 1.145):

1–3՝ Հալածանքի վախը և աշխարհիկ հոգսերը պատճառ են դառնում ավետարանը մերժելուն:

ԱՀԱ, ճշմարիտ ասում եմ ձեզ, որ իմ ծառա ^աՁեյմս Քովիլի սիրտն ուղիղ էր իմ առաջ, քանզի նա ինձ հետ ուխտել էր, որ կհնազանդվի իմ խոսքին:

2 Եվ նա ուրախությամբ ^աընդու-

նեց խոսքը, բայց Սատանան անմիջապես գայթակղեց նրան. և ^բհալածանքի վախն ու աշխարհիկ հոգսերը պատճառ դարձան, որ նա ^գմերժի խոսքը:

3 Այդ պատճառով, նա դրժեց իմ ուխտը, և ինձ մնում է նրա հետ վարվել ինչպես ինձ բարի է երևում: Ամեն:

17ա Հակոբ 5.61–75, ՎևՈՒԲ 24.19:
18ա սո՛ւ Հիսուս Քրիստոս – Գատավոր:
20ա սո՛ւ Հիսուս Քրիստոսի երկրորդ գալուստը:
21ա Մատ. ԻՊ.36:

բ ՁՍ–Մ 1.40:
23ա սո՛ւ Ձեռնադրություն:
բ սո՛ւ Սուրբ Հոգու պարգև:
գ Հայտ. Գ.3, ՎևՈՒԲ 35.15, 45.39–44:
դ Բ Պետ. Գ.10–14:

40 1ա ՎևՈՒԲ 39.7–11:
2ա Մար. Գ.16–19:
բ Մատ. ԺԳ.20–22:
սո՛ւ Հալածել, Հալածանք:
գ սո՛ւ Ուրացություն:

ԲԱԺԻՆ 41

Հայտնություն տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեի միջոցով, Եկեղեցուն, Կիրթլենդում, Օհայո, 1831թ. փետրվարի 4-ին (History of the Church, 1.146-147): Եկեղեցու Կիրթլենդ ճյուղն այդ ժամանակ արագորեն աճում էր իր թվաքանակով: Որպես այս հայտնության նախաբան, Մարգարեն գրել է. «Անդամները... ջանում էին կատարել Աստծո կամքը, այնքանով, որքանով զիտեին այն, թեև որոշ տարօրինակ զաղափարներ ու կեղծ ոգիներ էին ներթափանցել նրանց մեջ... [և] Տերը Եկեղեցուն տվեց հետևյալը» (History of the Church, 1.146-147):

1-3՝ Երեցները Եկեղեցին պիտի դեկավարեն հայտնության հոգով. 4-6՝ ճշմարիտ աշակերտները կատանան և կպահեն Տիրոջ օրենքը. 7-12՝ Էդվարդ Պատրիջը նշանակվում է որպես Եկեղեցու եպիսկոպոս:

ԱԿԱՆՁ դրեք և լսեք, ո՛վ դուր, իմ ժողովուրդ, ասում է Տերը և ձեր Աստվածը, դո՛ւք, որոնց ես բերկրանքով ^աօրհնելու եմ բոլոր օրհնություններից մեծագույնով, դո՛ւք, որ լսում եք ինձ. իսկ ձե՛զ, որ ինձ չեք լսում, որ ^բդավանել եք իմ անունը, ես ^գկանիծեմ բոլոր անեծքներից ծանրագույնով:

2 Ականջ դրեք, ո՛վ դուր, իմ եկեղեցու՛ երեցներ, որոնց ես կանչել եմ, ահա ես ձեզ տալիս եմ պատվիրան, որ դուք պետք է միասին հավաքվեք, որ ^ահամաձայնության գաք իմ խոսքի վերաբերյալ.

3 Եվ ձեր հավատքի աղոթքով դուք պիտի ստանաք իմ ^աօրենքը, որպեսզի իմանաք՝ ինչպես կա-

ռավարել իմ եկեղեցին և բոլոր բաներում ճիշտ լինել իմ առաջ:

4 Եվ ես կլինեմ ձեր ^ակառավարիչը, երբ ^բգամ. և ահա, ես շուտով գալիս եմ, և դուք պիտի հետևեք, որ իմ օրենքը պահվի:

5 Ով որ ^աստանում է իմ օրենքն ու ^բկատարում է այն, նա իմ աշակերտն է. իսկ ով ասում է, որ ստացել է այն և չի կատարում, նա իմ աշակերտը չէ, և պիտի դուրս ^գզգվի ձեր միջից.

6 Քանզի լավ չէ, որ արքայության զավակներին պատկանող բաները տրվեն նրանց, ովքեր արժանի չեն, կամ ^աշնեռին, կամ, որ ^բմարգարիտները գցվեն խոզերի առաջ:

7 Եվ բացի այդ, լավ է, որ իմ ծառա Ջոզեֆ Սմիթ կրտսերի համար մի ^ատուն կառուցվի, որտեղ նա կապրի ու ^բկրթագմանի:

8 Եվ բացի այդ, լավ է, որ իմ ծառա Սիդնի Ռիզոլոնն ապրի, ինչպես բարի է համարում, որքան որ նա պահում է իմ պատվիրանները:

9 Եվ բացի այդ, ես կանչել եմ

41 1ա սու՛ր Օրհնել, Օրհնված, Օրհնություն:
բ ՎևՌԻ 56.1-4, 112.24-26:
գ Բ Օր. ԺԱ.26-28, 1 Նեփի 2.23:
2ա սու՛ր Միություն:
3ա ՎևՌԻ 42:
4ա Ջաք. ԺԴ.9,

ՎևՌԻ 45.59:
սու՛ր Հիսուս Քրիստոս – Քրիստոսի հազարամյա թագավորությունը:
բ սու՛ր Հիսուս Քրիստոսի երկրորդ գալուստը:
5ա Մատ. Է.24:
բ Հակ. Ա.22-25, ՎևՌԻ 42.60:

գ ՎևՌԻ 50.8-9:
սու՛ր Հեռացում:
6ա Մատ. ԺԵ.26:
բ Մատ. Է.6:
7ա ՎևՌԻ 42.71:
բ նշ. կրթագմանի Աստվածաշունչը:
ՎևՌԻ 45.60-61:

ին ծառա ^աԷղվարդ Պատրիզին. և ես պատվիրում եմ, որ նա եկեղեցու ձայնով նշանակվի և կարգվի ^բԵպիսկոպոս, եկեղեցու համար, որ թողնի իր առք ու վաճառքը և իր ողջ ժամանակը ^գնվիրի եկեղեցու գործերին.

10 Հետևելու համար բոլոր բաներին, ինչ իմ օրենքներով կնշանակվի նրան, այն օրը, երբ ես կտամ դրանք:

11 Եվ դա՝ որովհետև նրա սիրտը մաքուր է իմ առաջ, քանզի նա նման է հին ^աՆաթանայելին, որի մեջ չկա ^բնենգություն:

12 Այս խոսքերը տրվել են ձեզ և մաքուր են իմ առաջ. ուստի, զգույշ եղեք, թե ինչպես եք վերաբերվում դրանց, քանզի դատաստանի օրը դրանք պիտի դրվեն ձեր հոգիների վրա: Դիշտ այդպես: Ամեն:

ԲԱԺԻՆ 42

Հայտնություն տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեի միջոցով, Կիրթլենդում, Օհայո, 1831թ. փետրվարի 9-ին (History of the Church, 1.148–154): Այն ստացվել է տասներկու երեցների ներկայությամբ և՛ ի կատարումն նախկինում տրված Տիրոջ խոստումի, որ «օրենքը» կտրվի Օհայոյում (տե՛ս բաժին 38.32): Մարգարեն այն բնորոշում է, որպես «Եկեղեցու օրենքն ընդգրկող» հայտնություն (History of the Church, 1.148):

1–10՝ Երեցները կանչված են քարոզելու ավետարանը, մկրտելու նորադարձներին և կառուցելու Եկեղեցին. 11–12՝ Նրանք պիտի կանչվեն, և կարգվեն, և ուսուցանեն սուրբ գրքերում պարունակող ավետարանի սկզբունքները. 13–17՝ Նրանք պիտի ուսուցանեն և մարգարեանան Հոգու գործությամբ. 18–29՝ Սրբերին պատվիրված է չսպանել, չզոդանալ, չստել, ցանկասեր չլինել, շնություն չանել, ոչ էլ չարախոսել ուրիշների հանդեպ. 30–39՝ Շարադրվում են ունեցվածքի նվիրաբերումը կառավարող օրենքներ. 40–42՝ Հպարտությունը և ծուլությունը դատապարտվում են. 43–52՝ Հիվանդները պետք է բժշկվեն սպասավորությամբ և հավատքով. 53–60՝ Սուրբ գրքերը կառավարում են Եկեղեցին և պիտի հռչակվեն աշխարհին. 61–69՝ Նոր

Երուսաղեմի տեղը և արքայության խորհուրդները հայտնի կդարձվեն. 70–73՝ Նվիրաբերված ունեցվածքը պետք է օգտագործվի Եկեղեցու պաշտոնյաներին աջակցելու համար. 74–93՝ Սահմանվում են պրոնկությունը, շնությունը, սպանությունը, գողությունը և մեղքերի խոստովանությունը կառավարող օրենքներ:

ԱԿԱՆՋ դրեք, ով իմ եկեղեցու՝ Երեցներ, որ ժողովվել էք միասին, իմ անունով, այսինքն՝ Հիսուս Քրիստոսի, կենդանի Աստծո Որդու, աշխարհի Փրկչի. որովհետև դուք հավատում եք իմ անվանը և պահում եք իմ պատվիրանները:

2 Կրկին ես ասում եմ ձեզ. Ականջ դրեք ու լսեք և հնազանդվեք այն ^աօրենքին, որը ես պիտի տամ ձեզ:

9ա ՎևոՒ 36.1:
բ ՎևոՒ 72.9–12,
107.68–75:

սոՒ Եպիսկոպոս:
գ ՎևոՒ 51:
11ա Հովհ. Ա.47:

բ սոՒ Նենգություն:
42 2ա ՎևոՒ 58.23:
սոՒ Օրենք:

3 Քանզի, ճշմարիտ ասում եմ ես՝ քանի որ դուք ժողովվել եք միասին՝ ըստ ^ապատվիրանի, որով պատվիրել եմ ձեզ, և համաձայնության եք եկել այս ^բհարցի շուրջը, և հարցրել եք Հորը՝ իմ անունով, ապա դուք կստանաք:

4 Ահա, ճշմարիտ ասում եմ ձեզ, ես տալիս եմ ձեզ այս առաջին պատվիրանը, որ դուք առաջ պիտի գնաք իմ անունով, ձեզանից ամեն մեկը, բացի իմ ծառա Ջոզեֆ Սմիթ կրտսերից և Սիդնի Ռիզդոնից:

5 Եվ ես պատվիրան եմ տալիս նրանց, որ նրանք առաջ գնան, մի փոքր ժամանակով, և ^աՀոգու գործությամբ կտրվի, թե նրանք երբ պիտի վերադառնան:

6 Եվ դուք առաջ պիտի գնաք իմ Հոգու գործությամբ, քարոզելով իմ ավետարանը, ^աերկու-երկու, իմ անունով, բարձրացնելով ձեր ձայները, ինչպես փողի ձայնով, հայտարարելով իմ խոսքը, ինչպես Աստծո հրեշտակներ:

7 Եվ դուք առաջ պիտի գնաք, մկրտելով ջրով, ասելով. Ապաշխարե՛ք, ապաշխարե՛ք, քանզի երկնքի արքայությունը մոտ է:

8 Եվ այս տեղից դուք առաջ պիտի գնաք դեպի արևմտյան շրջանները. և որքան որ դուք գտնեք նրանց, ովքեր կրնդունեն ձեզ, դուք պիտի կառուցեք իմ եկեղեցին յուրաքանչյուր շրջանում,–

9 Մինչև որ կգա ժամանակը, երբ բարձրից պիտի հայտնվի ձեզ, թե երբ պիտի ^աՆոր Երուսաղեմ ^բքաղաքը պատրաստվի, որ դուք կարողանաք ^գհավաքվել, որ կարողանաք լինել իմ ^դժողովուրդը, և ես կլինեմ ձեր Աստվածը:

10 Եվ բացի այդ, ես ասում եմ ձեզ, որ իմ ծառա ^աԷդվարդ Պատրիջը պետք է կանգնի այն պաշտոնում, որտեղ նշանակել եմ նրան: Եվ պիտի լինի այնպես, որ, եթե նա օրինազանցի, մեկ ^բուրիշը կնշանակվի նրա տեղում: Ճիշտ այդպես: Ամեն:

11 Բացի այդ, ես ասում եմ ձեզ, որ ոչ ոքի չպետք է տրվի առաջ գնալ՝ ^աքարոզելու իմ ավետարանը կամ կառուցելու իմ եկեղեցին, մինչև որ նա ^բչկարգվի մեկի կողմից, որն ունի ^գիշխանություն, և եկեղեցուն հայտնի չլինի, որ նա ունի իշխանություն և կանոնավոր կերպով կարգված է եկեղեցու ղեկավարների կողմից:

12 Եվ բացի այդ, այս եկեղեցու ^աերեցները, քահանայություն ու ուսուցիչները պետք է ^բուսուցանեն իմ ավետարանի սկզբունքները, որոնք ^գԱստվածաշնչի մեջ են, և ^դՄորմոնի Գրքի, որը պարունակում է ^եավետարանի լրիվությունը:

13 Եվ նրանք պիտի հետևեն ուխտերին ու եկեղեցու հանգանակներին, որ կատարեն դրանք,

3ա Վև.ՈՒ 38.32:
բ Մատ. ԺԼ.19:
5ա սոՒ Սուրբ Հոգի:
6ա Մար. 2:7:
սոՒ Միսիոններական աշխատանք:
9ա Եթեր 13.2–11, Վև.ՈՒ 45.66–71, 84.2–5, Մովսես 7.62, ՀՀ 1.10:
սոՒ Նոր Երուսաղեմ:

բ Վև.ՈՒ 571–2:
գ սոՒ Իսրայել – Իսրայելի ցրվելը:
դ Ջաք. Ը.8:
10ա Վև.ՈՒ 41.9–11, 124.19:
բ Վև.ՈՒ 64.40:
11ա սոՒ Քարոզել:
բ սոՒ Կանչ, Աստծո կողմից կանչված, Կոչում. Կարգել, Կարգում:

գ սոՒ Իշխանություն. Քահանայություն:
12ա սոՒ Երեց:
բ Մոսիա 18.19–20, Վև.ՈՒ 52.9, 36:
սոՒ Ուսուցանել, Ուսուցիչ:
գ սոՒ Աստվածաշունչ:
դ սոՒ Մորմոնի Գիրքը. Սուրբ գրքեր – Սուրբ գրքերի արժեքը:
ե սոՒ Ավետարան:

և այդ բաները պիտի նրանք ուսուցանեն, ինչպես որ նրանց ցույց կտրվի Հոգու կողմից:

14 Եվ Հոգին կտրվի ձեզ հավատքի ^աաղոթքով. և եթե դուք չստանաք ^բՀոգին, դուք չպետք է ուսուցանեք:

15 Եվ այս բոլորը դուք պիտի հետևեք որ կատարեք, ինչպես որ ես պատվիրեցի ձեր ուսուցման վերաբերյալ, մինչև որ իմ սուրբ ^ագրքերի լրիվությունը կտրվի:

16 Եվ երբ ձեր ձայները բարձրացնեք՝ ^աՄխիթարիչով, դուք պիտի խոսեք և մարգարեանաք, ինչպես բարի է երևում ինձ:

17 Քանզի, ահա, Մխիթարիչը զիտի բոլոր բաները և վկայում է Հոր մասին և Որդու մասին:

18 Եվ այժմ, ահա, ես ասում եմ եկեղեցուն. Մի ^ասպանիր. Եվ ով որ ^բսպանում է ներում չի ստանա ոչ այս աշխարհում, ոչ էլ գալիք աշխարհում:

19 Եվ բացի այդ, ես ասում եմ. Մի սպանիր. իսկ նա, ով սպանում է, պիտի ^ամեռնի:

20 Մի ^ագողացիր. և նա, ով գողանում է և չի կամենում ապաշխարել, դուրս պիտի գցվի:

21 Մի ^աստիր. նա, ով ստում է և

չի կամենում ապաշխարել, դուրս պիտի գցվի:

22 ^աՄիրիկ կնոջդ քո ողջ սրտով ու ^բհարիկ նրան և ուրիշ ոչ մեկի:

23 Եվ նա, ով նայում է մի կնոջ վրա՝ ^ացանկանալով նրան, ուրանում է հավատքը, և չպիտի ունենա Հոգին. և եթե նա չապաշխարի, նա դուրս պիտի գցվի:

24 ^աՇնություն մի արա. իսկ նա, ով շնություն է անում և չի ապաշխարում, դուրս պիտի գցվի:

25 Բայց նրան, ով շնություն է անում և ^աապաշխարում է իր ողջ սրտով, և թողնում է այն, և այլևս չի անում, դու պիտի ^բնեղես.

26 Սակայն, եթե նա անում է դա ^ակրկին, նա չպիտի ներվի, այլ դուրս պիտի գցվի:

27 Քո մերձավորի մասին չար բան մի ^ախոսիր, ոչ էլ որևէ վնաս հասցրու նրան:

28 Դու գիտես, որ իմ օրենքն այս բաների վերաբերյալ տրված է սուրբ գրքերում. նա, ով մեղանշում է և չի ապաշխարում, դուրս պիտի ^ագցվի:

29 Եթե ինձ ^ասիրում ես, ^բծառայիր ինձ և ^գպահիր իմ բոլոր պատվիրանները:

30 Եվ ահա, դու պետք է հիշես

14ա ՎևոՒ 63.64:
սոՒ Աղոթք:
բ սոՒ Սուրբ Հոգի.
Ուսուցանել, Ուսուցիչ –
Հոգով ուսուցանելը:
15ա ՎևոՒ 42.56–58:
16ա Ա Կոր. Բ.10–14,
ՎևոՒ 68.2–4:
սոՒ Մխիթարիչ:
18ա Ել. Ի.13–17,
Մատ. Ե.21–37,
2 Նեփի 9.35,
Մոսիա 13.21–24,
3 Նեփի 12.21–37:
բ սոՒ Սպանություն:

19ա սոՒ Գերագույն
պատիժ:
20ա սոՒ Գողություն,
Գողանալ:
21ա սոՒ Ազնիվ,
Ազնվություն. Ստել:
22ա սոՒ Սեր,
Անուանություն,
Անուանալ:
բ Ծն. Բ.23–24,
Եփես. Ե.25, 28–33:
23ա Մատ. Ե.28,
3 Նեփի 12.28,
ՎևոՒ 63.16:
սոՒ Ցանկանալ:

24ա սոՒ Շնություն:
25ա սոՒ Ապաշխարել,
Ապաշխարություն:
բ Հովհ. Ը.3–11:
սոՒ Ներել:
26ա Բ Պետ. Բ.20–22,
ՎևոՒ 82.7:
27ա սոՒ Բամբասանք:
28ա սոՒ Հեռացում:
29ա Հովհ. ԺԳ.15, 21:
բ սոՒ Ծառայություն:
գ սոՒ Հնազանդություն,
Հնազանդ,
Հնազանդվել:

“աղքատներին և Քնվիրաբերես քո ունեցվածքից՝ նրանց Պաշակցելու համար, այն ինչ կարող ես բաժին հանել նրանց համար, ուխտով և վավերագրով, որը չի կարող խախտվել:

31 Եվ որքան որ դուք ձեր ստացվածքից Պբաժին հանեք Քաղքատներին, դուք դա կանեք ինձ համար. և դրանք պիտի դրվեն իմ եկեղեցու Պեպիսկոպոսի և նրա խորհրդականների՝ երեցներից կամ քահանայապետերից երկուսի առաջ, որոնց նա կնշանակի կամ նշանակել է, և այդ նպատակի համար ի սպաս է Պդրել:

32 Եվ կլինի այնպես, որ հետո, երբ դրանք դրվեն իմ եկեղեցու եպիսկոպոսի առաջ, և հետո, երբ նա ստանա իմ եկեղեցու ունեցվածքի Պնվիրաբերման վերաբերյալ այդ վկայագրերը, որ դրանք չեն կարող ետ վերցվել եկեղեցուց, համաձայն իմ պատվիրանների, ամեն մարդ Քպատասխանատու պիտի դառնա իմ առաջ, որպես Պտնտես, իր իսկ ունեցվածքի կամ այն բանի վրա, ինչ նա ստացել է նվիրաբերմամբ, որչափ որ բավարար է իր և Պընտանիքի համար:

33 Եվ բացի այդ, այս առաջին նվիրաբերումից հետո, եթե եկեղեցու կամ նրա անհատների ձեռքում ավելի շատ ունեցվածք լինի, քան

նրանց անհրաժեշտ է իրենց արուստի համար, Պմնացորդ, որը պետք է նվիրաբերվի եպիսկոպոսին, այն պիտի պահվի, որպեսզի ժամանակ առ ժամանակ տրվի նրանց, ովքեր շունեն, որ ամեն մարդ, ով կարիքի մեջ է, լիովին բավարարվի ու ստանա իր պահանջների համեմատ:

34 Ուստի, մնացորդը պիտի պահվի իմ շտեմարանում, աղքատին ու կարիքավորին սատարելու համար, ինչպես որ կնշանակվի եկեղեցու բարձրագույն խորհրդի և եպիսկոպոսի ու նրա խորհրդի կողմից.

35 Եվ հողեր գնելու նպատակով՝ եկեղեցու հանրային օգտի, և երկրրպագության տներ կառուցելու, և ՊՆոր Երուսաղեմը կառուցելու համար, որը հայտնի պիտի դարձվի հետագայում,–

36 Որ իմ ուխտյալ ժողովուրդը կարողանա հավաքվել այն օրը, երբ ես Պկգամ իմ Քտաճարը: Եվ սա ես անում եմ իմ ժողովրդի փրկության համար:

37 Եվ կլինի այնպես, որ նա, ով մեղանչում է և չի ապաշխարում, պիտի դուրս Պգցվի եկեղեցուց, և ետ չի ստանա այն, ինչ նա Քնվիրաբերել է իմ եկեղեցու աղքատների և կարիքավորների համար, կամ, այլ խոսքով, ինձ համար,–

38 Քանզի, որքան որ դուք Պանում

30ա Մոսիս 4.16–26,
Ալմա 1.27:
սո՛ր Աղքատ:
բ սո՛ր Նվիրաբերել,
Նվիրաբերման օրենք:
գ սո՛ր Բարօրություն:
31ա Մոսիս 2.17:
սո՛ր Ողորմություններ,
Ողորմություններ
տալը:
բ սո՛ր Աղքատ:

գ սո՛ր Եպիսկոպոս:
դ սո՛ր Ի սպաս դնել:
32ա ՎևոՒ 51.4:
բ ՎևոՒ 72.3–11:
սո՛ր Հաշիվ, Պատասխանատու, Պատասխանատվություն:
գ սո՛ր Տնտես:
դ ՎևոՒ 51.3:
33ա ՎևոՒ 42.55, 51.13,
119.1–3:

35ա սո՛ր Նոր Երուսաղեմ,
Սիոն:
36ա ՎևոՒ 36.8:
բ Մաղ. Գ.1:
37ա ՎևոՒ 41.5, 50.8–9:
սո՛ր Հեռացում:
բ սո՛ր Նվիրաբերել,
Նվիրաբերման օրենք:
38ա Մատ. ԻԵ.34–40:
սո՛ր Գթություն:
Բարօրություն:

եք այս փոքրերից մեկի համար, դուք այդ անում եք ինձ համար:

39 Քանզի կլիմի այնպես, որ այն, ինչ ես խոսել եմ իմ մարգարեների բերանով, պիտի կատարվի. քանզի նրանց հարստությունից, ովքեր ընդունում են իմ ավետարանը հեթանոսների միջից, ես կնվիրաբերեմ իմ ժողովրդի աղքատներին, որոնք Իսրայելի տնից են:

40 Եվ բացի այդ, քո սրտում ^ահպարտ մի եղիր. թող քո բոլոր ^բհանդերձները լինեն պարզ, իսկ դրանց գեղեցկությունը լինի քո ձեռքերի աշխատանքի գեղեցկությունը.

41 Եվ թող բոլոր բաները մաքրությամբ կատարվեն իմ առաջ:

42 ^աԾույլ մի եղիր. քանզի նա, ով ծույլ է, չպետք է ուտի աշխատողի հացը, ոչ էլ հազմի նրա հանդերձները:

43 Եվ ովքեր որ ձեր մեջ ^ահիվանդ են և բժշկվելու հավատք չունեն, բայց հավատում են, պիտի սնուցվեն մեղմությամբ, բույսերով ու թեթև սննդով, և դա ոչ թշնամու ձեռքով:

44 Եվ եկեղեցու երեցները՝ երկուսը կամ ավելին, պիտի կանչվեն, որ նրանց համար աղոթեն ու ^աձեռնադրեն նրանց՝ իմ անունով. և եթե ^բմահանան, նրանք պիտի մահանան ինձ համար, իսկ եթե

ապրեն, նրանք պիտի ապրեն ինձ համար:

45 ^աԱպրեք միասին ^բսիրով, այնպես որ ^գազաք նրանց կորստի համար, ովքեր մահանում են, և հատկապես նրանց համար, ովքեր չունեն փառավոր հարության ^դհույս:

46 Եվ կլիմի այնպես, որ նրանք, ովքեր մահանում են ինձանում, ^ամահ չեն ճաշակի, քանզի այն ^բքաղցր կլիմի նրանց համար.

47 Իսկ նրանք, ովքեր ինձանում չեն մահանում, վա՛յ լիմի նրանց, քանզի նրանց մահը դառն է:

48 Եվ բացի այդ, կլիմի այնպես, որ նա, ով ^աբժշկվելու ^բհավատք ունի առ ինձ և ^գնշանակված չէ մահվան, պիտի բժշկվի:

49 Նա, ով հավատք ունի տեսնելու, պիտի տեսնի:

50 Նա, ով հավատք ունի լսելու, պիտի լսի:

51 Կաղը, որ հավատք ունի ցատկելու, պիտի ցատկի:

52 Եվ նրանք, ովքեր այս բաներն անելու հավատքը չունեն, բայց հավատում են ինձ, զորություն ունեն դառնալու իմ ^աորդիները. և որքան որ նրանք չեն խախտում իմ օրենքները, դու պիտի ^բկրես նրանց տկարությունները:

53 Կանգնիր այնտեղ, որտեղ քո ^ատնտեսությունն է:

54 Մի վերցրու եղբորդ հանդերձը.

40ա Առակ. ԺՁ.5:
սո՛ւ Հպարտություն:
բ սո՛ւ Համեստություն:
42ա Վև. 68.30–32:
սո՛ւ Ծույլ, Ծուլություն:
43ա սո՛ւ Հիվանդ,
Հիվանդություն:
44ա սո՛ւ Հիվանդների
սպասավորում.
Ձեռնադրություն:
բ Հռովմ. ԺԴ.8,

Հայտ. ԺԴ.13,
Վև. 63.49:
45ա Ա Հովհ. Գ.16, 20–21:
բ սո՛ւ Մեր:
գ Ալմա 28.11–12:
դ Ա Կոր. ԺԵ.19–22:
սո՛ւ Հույս:
46ա սո՛ւ Մահ ֆիզիկական:
բ Հայտ. ԺԴ.13:
48ա սո՛ւ Բժշկել,
Բժշկումներ:

բ Վև. 46.19:
սո՛ւ Հավատք:
գ Ժող. Գ.1–2,
Գոր. ԺԷ.26,
Եբր. Թ.27,
Վև. 122.9:
52ա սո՛ւ Աստծո որդիներն
ու դուստրերը:
բ Հռովմ. ԺԵ.1:
սո՛ւ Ընկերակցել:
53ա սո՛ւ Տնես:

վճարի՛ր այն բանի համար, ինչ ստանում ես եղբորիցդ:

55 Եվ եթե դու ^աստանաս ավելին, քան անհրաժեշտ է քո ապրուստի համար, իմ ^բշտեմարան հանձնիր այն, որ բոլոր բաներն արվեն համաձայն նրա, ինչ ես ասել եմ:

56 Խնդրիր, և իմ սուրբ ^գգրքերը կտրվեն, ինչպես ես նշանակել եմ, և դրանք պետք է ապահովությանը ^դպահպանվեն:

57 Եվ նպատակահարմար է, որ դու լռես դրանց վերաբերյալ և չուսուցանես դրանք, մինչև որ դուք դրանք ամբողջությամբ ստանաք:

58 Եվ ես ձեզ տալիս եմ պատվիրան, որ այդ ժամանակ, դուք դրանք կուսուցանեք բոլոր մարդկանց. քանզի դրանք պետք է ուսուցանվեն ^եբոլոր ազգերին, ցեղերին, լեզուներին ու ժողովուրդներին:

59 Ընդունեք այն բաները, որոնք դուք ստացել եք, որոնք տրվել են ձեզ իմ սուրբ գրքերում, որպես օրենք, որ լինի իմ եկեղեցին կառավարելու իմ օրենքը:

60 Եվ նա, ով ^զգործում է համաձայն այս բաների, պիտի փրկվի, և նա, ով կատարում է դրանք, չպիտի ^ընգոսկրվի, եթե այդպես շարունակի:

61 Եթե խնդրես, դու կստանաս ^ահայտնություն հայտնության վրա, ^բգիտություն գիտության վրա, որ

կարողանաս իմանալ ^ախորհուրդներն ու ^բխաղաղարար բաները, – որոնք բերում են ^գուրախություն, որոնք բերում են կյանք հավերժական:

62 Խնդրիր, և ինձ հարմար ժամանակ քեզ հայտնի կդարձվի, թե որտեղ պիտի կառուցվի ^աՆոր Երուսաղեմը:

63 Եվ ահա, կլինի այնպես, որ իմ ծառաներն առաջ կուղարկվեն դեպի արևելք և դեպի արևմուտք, դեպի հյուսիս և դեպի հարավ:

64 Եվ նույնիսկ հիմա, նա, ով գնում է արևելք, թող ուսուցանի նրանց, ովքեր դարձի կգան, որ փախչեն ^աարևմուտք, և դա՛ երկրի վրա գալիք բաների և ^բգաղտնի խմբակցությունների հետևանքով:

65 Ահա, դու պիտի հետևես բոլոր այս բաներին, և մեծ պիտի լինի քո վարձքը. քանզի ձեզ տրված է իմանալ արքայության խորհուրդները, բայց աշխարհին տրված չէ իմանալ դրանք:

66 Հետևեք օրենքներին, որոնք դուք ստացել եք և եղեք հավատարիմ:

67 Եվ հետագայում, դուք կստանաք եկեղեցու ^աուխտերը, այնպիսիք, որոնք բավական կլինեն հաստատելու ձեզ՝ թե՛ այստեղ, թե՛ Նոր Երուսաղեմում:

68 Ուստի նա, ով ^աիմաստության պակաս ունի, թող խնդրի ինձ, և

55ա Վև.ՈՒ 82.17–19, 119.1–3:
բ Վև.ՈՒ 42.34, 51.13:
56ա Ակնարկում է Աստվածաշնչի քարգնամությունը: Վև.ՈՒ 45.60–61:
բ սոՒ Սուրբ գրքեր – Սուրբ գրքերի արժեքը:
58ա Վև.ՈՒ 1.2:
60ա Վև.ՈՒ 41.5:

սոՒ Հնագանդություն, Հնագանդ, Հնագանդվել:
բ Մովսես 5.15:
սոՒ Նգովք:
61ա սոՒ Հայտնություն:
բ Աբր. 1.2:
սոՒ Գիտություն. Վկայություն:
գ Վև.ՈՒ 63.23:
սոՒ Աստծո

խորհուրդները:
դ Վև.ՈՒ 39.6:
ե սոՒ Ուրախություն:
62ա Վև.ՈՒ 57.1–5:
64ա Վև.ՈՒ 45.64:
բ սոՒ Գաղտնի խմբակցություններ:
67ա Վև.ՈՒ 82.11–15:
68ա Հակ. Ա.5:
սոՒ Իմաստություն:

ես կտամ նրան առատությամբ և չեմ նախատի:

69 Բարձրացրեք ձեր սրտերն ու ցնձացեք, քանզի ^աարքայությունը, կամ այլ խոսքով, եկեղեցու ^բբանալիները տրվել են ձեզ: Ճիշտ այդպես: Ամեն:

70 ^աՔահանաներն ու ^բուսուցիչները պիտի ունենան իրենց ^գտնտեսությունները, ճիշտ ինչպես անդամները:

71 Եվ երեցներն ու քահանայապետերը, որոնք նշանակված են օգնելու եպիսկոպոսին, որպես խորհրդականներ բոլոր բաներում, իրենց ընտանիքներն ապահովելու համար պետք է օգտվեն այն ունեցվածքից, որը ^ամվիրաբերված է եպիսկոպոսին՝ աղքատների օգտի և այլ նպատակների համար, ինչպես նախկինում նշվեց:

72 Կամ էլ նրանք պետք է արդար փոխհատուցում ստանան իրենց բոլոր ծառայությունների համար, կա՛մ տնտեսության, կա՛մ այլ ձևով, ինչպես հարմար կգտնվի կամ կորոշվի խորհրդականների ու եպիսկոպոսի կողմից:

73 Եվ եպիսկոպոսը, նույնպես, աջակցություն կամ արդար փոխհատուցում պիտի ստանա եկեղեցում իր բոլոր ծառայությունների համար:

74 Ահա, ճշմարիտ ասում եմ ձեզ, որ ձեր միջից նրանք, ովքեր թողել են իրենց կողակցին ^ապոռնկության պատճառով, կամ, այլ խոս-

քով, եթե նրանք վկայեն ձեր առաջ, սրտի խոնարհությամբ, որ դա այդպես է, դուք նրանց չպետք է դուրս գցեք ձեր միջից:

75 Բայց եթե դուք իմանաք, որ ինչ-որ անձինք հեռացել են իրենց կողակցից ^աշնության համար, և նրանց կողակցն ապրում է, և նրանք իրենք են մեղավոր, նրանք պետք է դուրս ^բզգվեն ձեր միջից:

76 Եվ բացի այդ, ես ասում եմ ձեզ, որ դուք ^աաչալուրջ և զգուշ պիտի լինեք, մանրամասն տեղեկանալով, որ այդպիսիներին, եթե նրանք ամուսնացած են, դուք չընդունեք ձեր մեջ:

77 Իսկ եթե ամուսնացած չեն, նրանք պիտի ապաշխարեն իրենց բոլոր մեղքերից, այլապես դուք չպետք է ընդունեք նրանց:

78 Եվ բացի այդ, ամեն ոք, ով պատկանում է Քրիստոսի այս եկեղեցուն, պիտի հետևի, որ պահի եկեղեցու բոլոր պատվիրաններն ու ուխտերը:

79 Եվ պիտի լինի այնպես, որ, եթե ձեզանից որևէ մեկը ^ասպանություն գործի, նրան պիտի հանձնեն և նրա հետ պիտի վարվեն համաձայն երկրի օրենքների. քանզի հիշեք, որ նա մեռում չունի. և դա կապացուցվի՝ համաձայն երկրի օրենքների:

80 Եվ եթե որևէ տղամարդ կամ կին շնություն անի, նա պիտի դատվի եկեղեցու երկու կամ ավելի երեցների առաջ, և ամեն մի խոսք,

69ա սո՛ւ Աստծո արքայություն կամ Երկնքի արքայություն:
բ Մատ. ԺԶ.19, Վևո՛Ւ 65.2:
սո՛ւ Քահանայության բանալիները:
70ա սո՛ւ Քահանա՝

Ահարոնյան քահանայություն:
բ սո՛ւ Ուսուցիչ՝
Ահարոնյան քահանայություն:
գ սո՛ւ Տնտես.
Տնտեսություն:
71ա սո՛ւ Նվիրաբերել, Նվիրաբերման օրենք:

74ա սո՛ւ Պոռնկություն.
Մեռական անբարոյականություն:
75ա սո՛ւ Շնություն:
բ սո՛ւ Հեռացում:
76ա սո՛ւ Արքուն լինել:
79ա սո՛ւ Սպանություն:

նրա դեմ, պիտի հաստատվի եկեղեցու երկու վկաների, բայց ոչ թշնամիների կողմից. իսկ եթե կան ավելի, քան երկու վկաներ, ավելի լավ է:

81 Բայց նա պիտի դատապարտվի երկու վկաների բերանով. և երեցները գործը պիտի դնեն եկեղեցու առաջ, և եկեղեցին պիտի ձեռք բարձրացնի նրա դեմ, որպեսզի նրա հետ վարվեն համաձայն Աստծո օրենքի:

82 Եվ եթե հնարավոր է, անիրաժեշտ է, որ եպիսկոպոսը նույնպես ներկա լինի:

83 Եվ այդպես դուք պիտի վարվեք բոլոր հարցերում, որոնք կծագեն ձեր առաջ:

84 Եվ եթե տղամարդը կամ կինը կողոպտի, նա պիտի հանձնվի երկրի օրենքին:

85 Եվ եթե նա չգողություն անի, նա պիտի հանձնվի երկրի օրենքին:

86 Եվ եթե նա չստի, նա պիտի հանձնվի երկրի օրենքին:

87 Եվ եթե նա ինչ-որ ամբարշտություն գործի, նա պիտի հանձնվի օրենքին, այսինքն՝ այն, որ Աստծունն է:

88 Եվ եթե քո չեղբայրը կամ քույրը մեղանչի քո դեմ, դու պիտի հանդիպես նրա հետ՝ միայն ինքը և դու. և եթե նա չխոստովանի, դու պիտի հաշտվես:

89 Իսկ եթե նա չխոստովանի, դու պիտի նրան հանձնես եկեղեցուն՝ ոչ թե անդամներին, այլ երեցներին: Եվ դա պետք է արվի ժողովում և ոչ աշխարհի առաջ:

90 Եվ եթե քո եղբայրը կամ քույրը մեղանչի շատերի դեմ, նա պիտի չխրատվի շատերի առաջ:

91 Եվ եթե մեկը հրապարակայնորեն մեղանչի, նա պիտի հրապարակայնորեն կշտամբվի, որպեսզի ամաչի: Եվ եթե նա չխոստովանի, նա պիտի հանձնվի Աստծո օրենքին:

92 Եթե մեկը գաղտնաբար մեղանչի, նա պիտի կշտամբվի գաղտնաբար, որ հնարավորություն ունենա գաղտնաբար խոստովանել նրան, ում ինքը վիրավորել է, և Աստծուն, որ եկեղեցին նրա մասին չխոսի հանդիմանությամբ:

93 Եվ այդպես դուք պիտի վարվեք բոլոր բաներում:

ԲԱԺԻՆ 43

Հայտնություն՝ տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեի միջոցով, Կիրթենդում, Օհայո, 1831թ. փետրվարին (History of the Church, 1.154–156): Այդ ժամանակ Եկեղեցու որոշ անդամների անհանգստացում էին մարդիկ, որոնք կեղծ հայտարարություններ էին անում, որպես հայտնողներ: Մարգարեն հարցրեց Տիրոջը և ստացավ հետևյալ հաղորդակցությունը՝ ուղղված Եկեղեցու երեցներին: Առաջին մասը վերաբերում է Եկեղեցու կառավարմանը. վերջին մասը պարունակում է մի զգուշացում, որը երեցները պետք է հանձնեն երկրի ազգերին:

85ա սուր Գողություն, Գողանալ:
86ա սուր Ազնիվ, Ազնվություն. Ստել:

88ա սուր Եղբայրներ, Եղբայր. Քույր:
բ Մատ. ԺԸ.15–17:
գ սուր Խոստովանել,

Խոստովանություն:
90ա սուր Խրատել, Խրատել:

1-7 Հայտնություններն ու պատվիրանները գալիս են միայն մեկի միջոցով, ով նշանակված է. 8-14 Սրբերը սրբագործվում են Տիրոջ ստաջ ամենայն սրբությանը վարվելով. 15-22 Երեցներն ուղարկվում են ապաշխարություն աղադակելու և մարդկանց նախապատրաստելու Տիրոջ մեծ օրվա համար. 23-28՝ Տերը կանչում է մարդկանց իր սեփական ձայնով և բնության ուժերի միջոցով. 29-35՝ Հազարամյակը, և Սատանային կապելը, գալու է:

Օ՛, ԼՍԵՔ, իմ եկեղեցու՛ երեցներ, և ականջ դրեք այն խոսքերին, որ պիտի ասեմ ձեզ:

2 Քանզի ահա, ճշմարիտ, ճշմարիտ ասում եմ ձեզ, որ դուք պատվիրան եք ստացել եկեղեցու՝ օրենքի համար, նրա միջոցով, ում ես նշանակել եմ իմ ձեռքից Քպատվիրաններ և հայտնություններ ստանալու ձեզ համար:

3 Եվ սա իմացեք հաստատապես, – որ ուրիշ ոչ մեկը նշանակված չէ պատվիրաններ ու հայտնություններ ստանալու ձեզ համար, քանի դեռ նա չի վերցվել, քանի դեռ նա՝ մնում է ինձանում:

4 Բայց ճշմարիտ, ճշմարիտ ասում եմ ձեզ, որ՝ ոչ ոք չի նշանակվի այս պարզևին, եթե դա չլինի նրա միջոցով. քանզի եթե դա վերցվի նրանից, նա գորություն չի ունենա, բացի իր տեղը մեկ ուրիշին նշանակելուց:

5 Եվ դա օրենք պիտի լինի ձեզ համար, որ դուք որպես հայտնու-

թյուն և պատվիրան չընդունեք ոչ որի ուսմունքները, ովքեր կզան ձեզ մոտ.

6 Եվ սա ես ձեզ տալիս եմ, որպեսզի դուք՝ չչխաբվեք, որ կարողանաք իմանալ, որ նրանք ինձանից չեն:

7 Քանզի ճշմարիտ ասում եմ ձեզ, որ նա, ով՝ կարգված է իմ կողմից, պիտի մտնի Քդռնով և կարգվի, ինչպես ձեզ ասել եմ նախկինում, որ ուսուցանի այն հայտնությունները, որոնք դուք ստացել եք և պիտի ստանաք նրա միջոցով, ում ես նշանակել եմ:

8 Եվ այժմ, ահա, ես ձեզ տալիս եմ մի պատվիրան, որ երբ ժողովվում եք միասին, դուք պետք է՝ հրահանգեք և շենացնեք միմյանց, որ կարողանաք իմանալ՝ ինչպես գործել և ղեկավարել իմ եկեղեցին, ինչպես գործել իմ օրենքի կետերի և պատվիրանների վերաբերյալ, որոնք ես տվել եմ:

9 Եվ այդպես՝ դուք պիտի հրահանգված լինեք իմ եկեղեցու օրենքի մեջ, և՝ սրբագործվեք նրանով, ինչ ստացել եք, և դուք պետք է ինքներդ՝ ձեզ պարտավորեցնեք՝ ամենայն սրբությանը վարվել իմ առաջ, –

10 Որ, որքան որ դուք այդպես վարվեք, փառք պիտի՝ ասվելանա արքայությանը, որ դուք ստացել եք: Որքան որ դուք այդպես չվարվեք, ձեզանից Քկվերցվի նույնիսկ այն, ինչը դուք ստացել եք:

11 Մաքրեք՝ անօրինությունը, որ ձեր մեջ է. սրբացրեք ձեզ իմ առաջ.

43 2ա ՎևՈՒ 42:
 Բ սո՛ Պատվիրաններն
 Աստծո. Հայտնություն:
 3ա Հովհ. ԺԵ.4:
 4ա ՎևՈՒ 28.2-3:
 6ա ՎևՈՒ 46.7:
 սո՛ Խարկանք,

Խարել, Խարություն:
 7ա սո՛ Կարգել, Կարգում:
 Բ Մար. Բ.13-14,
 2 Նեփի 9.41, 31.9,
 17-18,
 3 Նեփի 14.13-14,
 ՎևՈՒ 22.1-4:

8ա ՎևՈՒ 88.77:
 9ա սո՛ Սրբագործում:
 10ա Ալմա 12.10:
 Բ Մար. Դ.25:
 11ա սո՛ Մեղք:

12 Եվ եթե դուք փափագում եք արքայության փառքերը, նշանակեք իմ ծառա Ջոզեֆ Սմիթ կրտսերին և հավատքի աղոթքով ^ամեցուկ եղեք նրան իմ առաջ:

13 Եվ բացի այդ, ես ասում եմ ձեզ, որ եթե դուք փափագում եք արքայության ^ախորհուրդները, ապահովեք նրան մթերքով ու հագուստով և ինչի կարիք որ ունի, որ նա իրագործի աշխատանքը, որը ես պատվիրել եմ նրան:

14 Եվ եթե դուք չանեք այդ, նա պիտի մնա նրանց համար, ովքեր ընդունեցին նրան, որ ես կարողանամ մի ^ամանարատ ժողովուրդ պահպանել իմ առաջ:

15 Կրկին ասում եմ ես. Ակա՛նջ դրեք, իմ եկեղեցու՛ երեցներ, ում ես նշանակել եմ. Դուք առաջ եք ուղարկվել ոչ թե ուսուցանվելու, այլ ^աուսուցանելու մարդկանց զավակներին այն բաները, որոնք ես դրել եմ ձեր ձեռքում՝ իմ ^բՀոգու զորությամբ:

16 Եվ դուք պետք է ^աուսուցանվեք ի վերուստ: ^բՍրբացրեք ձեզ, և դուք զորությամբ ^գկօծովեք, որ կարողանաք ուսուցանել, ճիշտ ինչպես ես ասացի:

17 Ականջ դրեք, քանզի, ահա, Տիրոջ ^ամեծ ^բօրը մոտ է՝ առ ձեռն:

18 Քանզի գալիս է օրը, երբ Տերը կարճակի իր ^աձայնը երկնքից. երկինքները ^բկցնցվեն և երկիրը

^գկողողա, և Աստծո՛ ^գփողը երկար և բարձր կհնչի, և կասի քնած ազգերին. Դո՛ւք, սրբեր, ^գվեր կացեք և ապրեք. դո՛ւք, մեղավորներ, ^գմնացեք և ^էքնեք, մինչև որ ես կրկին կկանչեմ:

19 Ուստի գոտեպնդեք ձեր մեջքը, չլինի թե դուք գտնվեք ամբարիշտների մեջ:

20 Բարձրացրեք ձեր ձայները և մի խնայեք: Ապաշխարելու կոչ արեք ազգերին, ինչպես ծերերին, այնպես էլ երիտասարդներին, ինչպես ծառաներին, այնպես էլ ազատներին՝ ասելով. Պատրաստվեք Տիրոջ մեծ օրվա համար:

21 Քանզի եթե ես, մարդ լինելով, բարձրացնում եմ իմ ձայնն ու կանչում ձեզ ապաշխարության, և դուք ատում ենք ինձ, ի՞նչ կասեք դուք, երբ օրը գա, երբ ^աորոտները երկրի ծայրերից կաղաղակեն իրենց ձայնով, խոսելով բոլոր ապրողների ականջին, ասելով. Ապաշխարեք, և պատրաստվեք Տիրոջ մեծ օրվա համար:

22 Այո՛, և բացի այդ, երբ կայծակները կալանան արևելքից արևմուտք, և կաղաղակեն իրենց ձայնով բոլոր ապրողներին, և կզնգացնեն բոլոր լսողների ականջները՝ ասելով այս խոսքերը, – Ապաշխարե՛ք, քանզի Տիրոջ մեծ օրը գալիս է:

23 Եվ բացի այդ, Տերն իր ձայնով

12ա սուր Եկեղեցու ղեկավարներին հաստատելը:
13ա սուր Աստծո խորհուրդները:
14ա սուր Ամարատ, Ամարատություն:
15ա սուր Միսիոներական աշխատանք:
բ սուր Ուսուցանել, Ուսուցիչ – Հոգով ուսուցանելը:

16ա սուր Ոգեշնչում, Ոգեշնչել:
բ սուր Սրբագործում:
գ Գուկ, ԻԳ.49,
ՎևՈՒ 38.32, 95.8–9, 110.8–10:
17ա Մաղ. Գ.5,
ՎևՈՒ 2.1, 34.6–9:
բ ՎևՈՒ 29.8:
սուր Հիսուս Քրիստոսի երկրորդ գալուստը:
18ա Հովել Բ.11,

ՎևՈՒ 133.50:
բ Հովել Բ.10, 3.16,
ՎևՈՒ 45.48:
գ ՎևՈՒ 88.87:
դ ՎևՈՒ 29.13, 45.45:
ե սուր Հարություն:
զ ՎևՈՒ 76.85,
88.100–101:
է Մորմ. 9.13–14:
21ա2 Նեփի 27.2,
ՎևՈՒ 88.90:

կազդարարի երկնքից, ասելով. Ականջ դրեք, ո՛վ դուք, երկրի՛ ազգեր, և լսեք խոսքերն այն Աստծո, որն արարել է ձեզ:

24 Ո՛վ դուք, երկրի՛ ազգեր, որքա՛ն հաճախ հավաքած կլինեի ես ձեզ, ինչպես ՝հավն է իր թևերի տակ հավաքում իր ճտերին, բայց դուք ՝չկամեցաք:

25 Որքա՛ն հաճախ ես ՝կանչեցի ձեզ, իմ ՝ծառանների բերանով, և հրեշտակների ՝սպասավորությամբ, և իմ իսկ բերանով, և որոտների ձայնով, և կայծակների ձայնով, և փոթորիկների ձայնով, և երկրաշարժերի ձայնով, և մեծ կարկտահողմերով, և ՝սուվերի ու ամեն տեսակի ժանտախտների ձայնով, և փողի բարձր հնչումով, և դատաստանի ձայնով, և ՝ողորմության ձայնով՝ ողջ օրվա ընթացքում, և փառքի ու պատվի և հավերժական կյանքի հարստությունների ձայնով, և ձեզ փրկած կլինեի ՝հավիտենական փրկությամբ, բայց դուք չկամեցաք:

26 Ահա, օրը եկել է, երբ իմ գայրության ցասման բաժակը լցվել է:

27 Ահա, ճշմարիտ ասում եմ ձեզ, որ սրանք Տիրոջ՝ ձեր Աստծո խոսքերն են:

28 Ուստի, աշխատե՛ք, ՝տրքներ իմ այգում վերջին անգամ, - վերջին

անգամ կոչ արեք երկրի բնակիչներին:

29 Քանզի ինձ իսկ հարմար ժամանակ ես երկիր ՝կզամ դատաստանով, և իմ ժողովուրդը կփրկագնվի և ինձ հետ կթագավորի երկրի վրա:

30 Քանզի մեծ ՝Հազարամյակը, որի մասին ես խոսել եմ իմ ծառաների բերանով, պիտի գա:

31 Քանզի ՝Սատանան պիտի ՝կապվի, և երբ կրկին արձակվի, նա մի ՝փոքր ժամանակով միայն պիտի թագավորի, իսկ հետո գալիս է երկրի ՝վախճանը:

32 Եվ նա, ով ՝արդարությամբ է ապրում, պիտի ՝փոխվի մի ակընթաքթում, և երկիրը պիտի անցնի այնպես, ինչպես կրակով:

33 Իսկ ամբարիշտները պիտի գնան անշեջ ՝կրակը, և նրանց վախճանը ոչ ոք չգիտի երկրի վրա, ոչ էլ երբևէ կիմանա, մինչև որ նրանք գան իմ առաջ ՝դատաստանի:

34 Ականջ դրեք այս խոսքերին: Ահա, ես Հիսուս Քրիստոսն եմ՝ աշխարհի ՝Փրկիչը: ՝Գանձեք այս բաները ձեր սրտերում, և թող հավերժության ՝հանդիսավոր բաները ՝հանգչեն ձեր ՝մտքերում:

35 ՝Լրջմիտ եղեք: Պահեք իմ բոլոր պատվիրանները: Ընշտ այդպես: Ամեն:

24ա Մատ. ԻԳ.37,
3 Նեփի 10.4-6:
բ սուր Ապաստմբություն:
25ա Հեղ. 12.2-4:
բ Մատ. ԻԳ.34:
սուր Մարգարե:
գ ՎևոՒ 7.6, 130.4-5:
դ Երեմ. ԻԳ.10,
Ամով Գ.6, ՎևոՒ 87.6,
ՋՍ-Մ 1.29:
ե սուր Ողորմած,
Ողորմություն:
զ սուր Հավերժական
կյանք. Ամնահ,
Ամնահություն.

Փրկություն:
28ա Հակոբ 5.71,
ՎևոՒ 33.3:
սուր Տիրոջ այգին:
29ա սուր Հիսուս Քրիստոսի
երկրորդ գալուստը:
30ա սուր Հազարամյակ:
31ա 1 Նեփի 22.26:
սուր Դև:
բ ՎևոՒ 45.55, 84.100,
88.110:
գ Հայտ. Ի.3, Հակոբ 5.77,
ՎևոՒ 29.22:
դ սուր Աշխարհ -
Աշխարհի վերջը:

32ա սուր Արդար,
Արդարություն:
բ Ա Կոր. ԺԵ.51-52,
ՎևոՒ 63.51, 101.31:
սուր Հարություն:
33ա Մատ. Գ.12:
բ սուր Հիսուս Քրիստոս -
Դատավոր:
34ա սուր Փրկիչ:
բ ՋՍ-Մ 1.37:
գ ՎևոՒ 84.61, 100.7-8:
դ սուր Խորհել:
ե սուր Միտք:
35ա Հռովմ. ԺԲ.3,
ՎևոՒ 18.21:

ԲԱԺԻՆ 44

Հայտնություն տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեին և Սիդնի Ռիզդոնին, Կիրթլենդում, Օհայո, 1831թ. փետրվարի վերջին (History of the Church, 1.157): Ի կատարումն այստեղ ներկայացված պահանջի, Եկեղեցին որոշեց համաժողով անցկացնել գալիք հունիս ամսվա սկզբին:

1-3՝ Երեցները պետք է հավաքվեն համաժողովի. 4-6՝ Նրանք պետք է կազմակերպվեն երկրի օրենքների համաձայն և պետք է հոգան աղքատների կարիքները:

ԱՀԱ, այսպես է ասում Տերը ձեզ՝ իմ ծառաներին. Ինձ նպատակահարմար է, որ իմ եկեղեցու երեցները նամակով կամ ինչ-որ այլ ձևով կանչվեն մեկտեղ՝ արևելքից և արևմուտքից, հյուսիսից և հարավից:

2 Եվ պիտի լինի այնպես, որ, որքան որ նրանք հավատարիմ լինեն և հավատք գործադրեն առ ինձ, ես իմ ՝ Հոգին կթափեմ նրանց վրա, այն օրը, երբ նրանք միասին կժողովվեն:

3 Եվ պիտի լինի այնպես, որ նրանք պիտի առաջ գնան դեպի մերձակա շրջանները, և ապաշ-

խարություն ՝ քարոզեն մարդկանց:

4 Եվ շատերը պիտի ՝ դարձի գան, այնպես որ դուք զորություն պիտի ունենաք՝ կազմակերպվելու մարդկանց օրենքների ՝ համաձայն.

5 Որ ձեր ՝ թշնամիները զորություն չունենան ձեզ վրա. որ դուք կարողանաք պահպանվել բոլոր բաներում. որ ձեզ հնարավորություն տրվի պահել իմ օրենքները. որ ամեն կապանք բանդվի, որով թշնամին փնտրում է կործանել իմ ժողովրդին:

6 Ահա, ասում եմ ձեզ, որ դուք պետք է ՝ այցելեք աղքատներին ու կարիքավորներին և սպասավորեք՝ ի սիովանք նրանց, որ նրանք պահպանվեն, մինչև բոլոր բաները հնարավոր լինի կատարել համաձայն իմ օրենքի, որը դուք ստացել եք: Ամեն:

ԲԱԺԻՆ 45

Հայտնություն տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեի միջոցով, Եկեղեցուն, Կիրթլենդում, Օհայո, 1831թ. մարտի 7-ին (History of the Church, 1.158-163): Իր այս հայտնությունն արձանագրելիս, որպես նախաբան, Մարգարեն հաղորդում է, որ «Եկեղեցու այս ժամանակաշրջանում... բազմաթիվ կեղծ զեկույցներ... և անմիտ պատմություններ էին հրատարակվել... և տարածվել... մարդկանց խանգարելու նպատակով, որ չհետաքրքրվեն այս աշխատանքով կամ չընդունեն այս հավատքը... Բայց ի նորախություն Սրբերի... ես ստացա հետևյալը» (History of the Church, 1.158):

44 2ա Գ.որ. Բ.17:
3ա սոՒ Բարոզել:
4ա սոՒ Դարձի գալ,

Նորադարձ:
բ ՎևՈՒ 98.5-7:
5ա2 Նեփի 4.33:

6ա Հակ. Ա.27:
սոՒ Կարեկցանք.
Բարօրություն:

1-5՝ Քրիստոսը մեր բարեխոսն է չոր առաջ. 6-10՝ Ավետարանը Տիրոջ առաջ ճանապարհ պատրաստող պատգամաբեր է. 11-15՝ Ենովքն ու նրա եղբայրները Տիրոջ կողմից վերցվել են իր մոտ. 16-23՝ Քրիստոսը հայտնեց իր գալստյան նշանները, ինչպես տվել էր Ձիթենյաց սարի վրա. 24-38՝ Ավետարանը կվերականգնվի, հեթանոսների ժամանակը կլրանա և ամայացնող մի հիվանդություն կպատի երկիրը. 39-47՝ Երկրորդ Գալուստը պիտի ուղեկցվի նշաններով, զարմանալիքներով և Հարությամբ. 48-53՝ Քրիստոսը կկանգնի Ձիթենյաց սարի վրա, և հրեաները կտեսնեն նրա ձեռքերի ու ոտքերի խոցերը. 54-59՝ Տերը կթազավորի հազարամյակի ընթացքում. 60-62՝ Մարգարեին հրահանգվել է սկսել Նոր Կտակարանի թարգմանությունը, որի միջոցով կարևոր տեղեկություններ են հայտնի դարձվելու. 63-75՝ Սրբերին պատվիրվում է՝ հավաքվել և կառուցել Նոր Երուսաղեմը, ուր բոլոր ազգերից ժողովուրդներ պիտի գան:

ԱԿԱՆՁ դրեք, ո՛վ իմ ^աեկեղեցու ժողովուրդ, որին տրվել է ^բարքայությունը. ականջ դրեք և ականջալուր եղեք նրան, ով դրել է երկրի հիմքը, ով ^գարարել է երկինքները և նրա բոլոր զորքերը, և ում միջոցով արարվել են բոլոր

բաները, որ ապրում են, և շարժվում են, և կան:

2 Եվ կրկին ասում եմ. Ականջ դրեք իմ ձայնին, չլինի թե ^ամահը վրա հասնի ձեզ. մի ^բժամի, երբ դուք չեք կարծում՝ ամառը կանցնի և ^գհունձքը կավարտվի, իսկ ձեր հոգիները չեն փրկվի:

3 Լսեք նրան, որ ձեր ^աբարեխոսն է չոր առաջ, որը նրա առաջ պաշտպանում է ձեր դատը,–

4 Ասելով. Հայր, տե՛ս ^ատառապանքներն ու մահը նրա, ով ^բչմեղանչեց, որին դու հավանել ես. տես Որդուդ արյունը, որը հեղվել է, արյունը նրա, ում դու տվեցիր, որ ինքդ ^գփառավորվես.

5 Ուստի, Հայր, խնայիր իմ այս եղբայրներին, որ ^ահավատում են իմ անվանը, որ նրանք կարողանան զալ ինձ մոտ և ունենալ ^բհավիտենական կյանք:

6 Ականջ դրեք, ով իմ եկեղեցու ժողովուրդ, և դո՛ւք, երեցնե՛ր, ունկնդրեք միասին և լսեք իմ ձայնը, քանի դեռ կոչվում է՝ ^աայսօր, և մի կարծրացրեք ձեր սրտերը.

7 Քանզի ճշմարիտ ասում եմ ձեզ, որ ես եմ ^աԱլֆան և Օմեգան՝ սկիզբը և վերջը՝ լույսը և կյանքն աշխարհի,– ^բլույս, որը շողում է խավարում, և խավարը չի ըմբռնում այն:

8 Ես եկա յուրայինների մոտ, և յուրայիններն ինձ չընդունեցին. բայց նրանց բոլորին, ովքեր ըն-

<p>45 1ա սուր Հիսուս Քրիստոսի Եկեղեցի: բ ՎևոՒ 50.35: գ Երեմ. ԺԳ.22, 3 Նեփի 9.15, ՎևոՒ 14.9: սուր Ստեղծել, Ստեղծում: 2ա Ալմա 34.33-35: բ Մատ. ԻԳ.44:</p>	<p>գ Երեմ. Ը.20, ՎևոՒ 56.16: սուր Հունձք: 3ա ՎևոՒ 62.1: սուր Բարեխոս: 4ա ՎևոՒ 19.18-19: սուր Քավել, Քավություն: բ Երբ. Գ.15: գ Հովհ. ԺԲ.28:</p>	<p>5ա ՎևոՒ 20.25, 35.2, 38.4: բ Հովհ. Գ.16: 6ա Երբ. Գ.13, ՎևոՒ 64.23-25: 7ա Հայտ. Ա.8, ԻԱ.6, ՎևոՒ 19.1: բ Հովհ. Ա.5:</p>
---	---	--

դունեցին ինձ, ես ^ագործություն տվեցի՝ գործելու բազում ^բհրաշքներ և դառնալու Աստծո ^գորդիներ. և նույնիսկ նրանց, ովքեր ^դհավատացին իմ անվանը, ես գործություն տվեցի ստանալու ^եհավերժական կյանք:

9 Եվ ճիշտ այդպես, ես աշխարհ եմ ուղարկել իմ ^ահավիտենական ^բուխտը, որ լույս լինի աշխարհին, և ^գչափանիշ լինի իմ ժողովրդի համար, և ^դհեթանոսների համար, որպեսզի փնտրեն նրան, և ^եպատգամաբեր լինի իմ երեսի առաջ, որ ճանապարհ պատրաստի իմ առաջ:

10 Ուստի, եկեք դեպի նա, և նրա հետ, ով գալիս է, ես կտրամախոսեմ, ինչպես հին օրերի մարդկանց հետ, և ես ձեզ ցույց կտամ իմ ^ահզոր տրամաբանությունը:

11 Ուստի, ականջ դրեք միասին և թույլ տվեք ձեզ ցույց տալ իմ իսկ իմաստությունը, – իմաստությունը նրա, ում դուք ասում եք, որ ^աԵնովքի և նրա եղբայրների Աստվածն է,

12 Որոնց ^աառանձնացրեցի երկրից և վերցրեցի ինձ մոտ, – մի ^բքաղաք՝ պահպանված, մինչև արդարության օրը կգա, – օր, որը փնտրում էին բոլոր սուրբ մարդիկ, և նրանք չգտան այն՝ անբարշտու-

թյան և պղծությունների պատճառով.

13 Եվ նրանք խոստովանեցին, որ ^աօտարներ և պանդուխտներ են երկրի վրա.

14 Բայց ^ախոստում ստացան, որ մարմնի մեջ կգտնեն և կտեսնեն այն:

15 Ուստի, ականջ դրեք, և ես կտրամաբանեմ ձեզ հետ և կխոսեմ ձեզ հետ ու կմարգարեանամ, ինչպես հին օրերի մարդկանց հետ:

16 Եվ ես ձեզ պարզորոշ ցույց կտամ այն, ինչպես ^ացույց տվեցի իմ աշակերտներին, երբ կանգնած էի նրանց առաջ, մարմնի մեջ, և խոսում էի նրանց հետ՝ ասելով. Քանի որ դուք հարցրեցիք ինձ իմ գալստյան ^բնշանների վերաբերյալ, այն օրը, երբ ես կգամ իմ փառքով, երկնքի ամպերի մեջ՝ կատարելու համար ձեր հայրերին տված իմ խոստումները,

17 Քանզի, որովհետև ձեր ^աոգիների երկարատև ^բբացակայությունը ձեր մարմիններից դուք համարեցիք գերություն, ես ցույց կտամ ձեզ, թե փրկագնման օրն ինչպես պիտի գա, և նաև ^գցրված Իսրայելի ^դվերականգնումը:

18 Եվ արդ դուք տեսնում եք այս տաճարը, որը Երուսաղեմում է,

8ա Մատ. Ժ.1:
սուր Ջորություն:
բ սուր Հրաշք:
գ սուր Աստծո որդիներն ու դուստրերը:
դ սուր Հավատ, Հավատալ. Հավատք:
ե ՎևոՒ 14.7:
9ա սուր Նոր և հավիտենական ուխտ:
բ Երեմ. Լ.Ա.31-34, Մորմ. 5.20:
գ 2 Նեփի 29.2:
դ Ես. ԽԲ.6:

2 Նեփի 10.9-18:
ե Մադ. Գ.1:
10ա Ես. ԽԱ.21, ՎևոՒ 50.10-12:
11ա Մովսես 7.69:
12ա ՋՍԹ, Ծն. 14.30-34, ՎևոՒ 38.4, Մովսես 7.21:
բ Մովսես 7.62-64:
սուր Միոն:
13ա Եբր. ԺԱ.13, Ա Պետ. Բ.11:
14ա Եբր. ԺԱ.8-13, Մովսես 7.63:

16ա Մատ. ԻԳ, Ղուկ. ԻԱ.7-36, ՋՍ-Մ 1:
բ սուր Հիսուս Քրիստոսի երկրորդ գալուստը:
17ա սուր Ոգի:
բ ՎևոՒ 138.50:
գ 1 Նեփի 10.12-14:
սուր Իսրայել – Իսրայելի ցրվելը:
դ սուր Իսրայել – Իսրայելի ցրվելը:

որը դուք կոչում եք Աստծո տուն, և ձեր թշնամիներն ասում են, որ այս տունը երբեք չի ընկնի:

19 Սակայն, ճշմարիտ ասում եմ ձեզ, որ ամայացում պիտի գա այս սերնդի վրա, ինչպես գողը գիշերով, և այս ժողովուրդը պիտի կործանվի ու ցրվի բոլոր ազգերի մեջ:

20 Եվ այս տաճարը, որն այժմ տեսնում եք, պիտի քանդվի, այնպես որ քարը քարին չի մնա:

21 Եվ պիտի լինի այնպես, որ հրեաների այս սերունդը չպիտի անցնի, մինչև ամեն ամայացում, որ ձեզ ասացի նրանց վերաբերյալ, չիրականանա:

22 Դուք ասում եք, որ գիտեք, որ աշխարհի «վերջը գալիս է. դուք ասում եք նաև, որ գիտեք, որ երկինքներն ու երկիրը պիտի անցնեն.

23 Եվ դուք ճիշտ եք ասում, քանզի դա այդպես է. բայց այդ բաները, որոնք ձեզ ասացի, չեն անցնի, մինչև բոլորը չկատարվի:

24 Եվ սա ձեզ ասացի Երուսաղեմի վերաբերյալ. և երբ այդ օրը գա, մնացորդն էլ պիտի «ցրվի բոլոր ազգերի մեջ.

25 Բայց նրանք կրկին պիտի «հավաքվեն. սակայն նրանք պիտի մնան, մինչև Քրիստոսների ժամանակը լրանա:

26 Եվ «այդ օրը Քատերազմներ և պատերազմների համբավներ կլավեն, և ողջ երկիրը խառնաշփոթի մեջ կլինի, և մարդկանց սրտե-

րը «կնվաղեն, և նրանք կասեն, որ Քրիստոսն իր գալն «ուշացնում է մինչ երկրի վախճանը:

27 Եվ մարդկանց սերը կատշի և անօրինությունը կշատանա:

28 Եվ երբ «հեթանոսների ժամանակները գան, Քույս կծագի խավարում նստածների մեջ, և դա կլինի իմ ավետարանի լրիվությունը.

29 Բայց նրանք դա չեն «ընդունում. քանզի նրանք չեն ըմբռնում լույսը, և մարդկանց «ցուցումների պատճառով իրենց «սրտերը շրջում են ինձանից:

30 Եվ այդ սերնդում հեթանոսների ժամանակը կլրանա:

31 Եվ կլինեն մարդիկ, որոնք կապրեն այդ սերնդում, որոնք չեն անցի, մինչև չտեսնեն տարածվող «խարազանը. քանզի մի ամայացնող հիվանդություն կպատի երկիրը:

32 Բայց իմ աշակերտները պիտի «կանգնեն սուրբ տեղերում և չեն շարժվի. բայց ամբարիշտների միջից մարդիկ կբարձրացնեն իրենց ձայները և Քկհայիոյեն Աստծուն ու կմահանան:

33 Եվ նաև «երկրաշարժեր և շատ ամայացումներ կլինեն տարբեր տեղերում. այնուամենայնիվ, մարդիկ կկարծրացնեն իրենց սրտերն իմ դեմ, և նրանք Քսուր կբարձրացնեն մեկմեկու դեմ և կսպանեն մեկմեկու:

34 Եվ արդ, երբ ես՝ Տերս, այս

22ա ստ. Աշխարհ – Աշխարհի վերջը:
24ա 2 Նեփի 25.15:
25ա Նեեմ. Ա.9,
Ես. ԺԱ.12–14,
1 Նեփի 22.10–12,
2 Նեփի 21.12–14:
բ Գուկ. ԻԱ.24:
26ա ստ. Վերջին օրեր,

Ետին օրեր:
բ ՎևոՒ 87, ՋՍ–Մ 1.23:
գ Գուկ. ԻԱ.26:
դ Ք Գեա. Գ.3–10:
28ա 1 Նեփի 15.13:
բ ստ. Լույս, Քրիստոսի լույս. Ավետարանի վերականգնումը:
29ա չովհ. Ա.5:

բ Մառ. ԺԵ.8–9:
գ ՎևոՒ 3.6–8, 46.7, ՋՍ–Պ 1.19:
31ա ՎևոՒ 5.19–20, 97.22–25:
32ա ՎևոՒ 101.21–22, 64:
բ Հայտ. ԺԶ.11, 21:
33ա ՎևոՒ 43.18, 88.87–90:
բ ՎևոՒ 63.33:

խոսքերն ասացի իմ աշակերտներին, նրանք խոռվվեցին:

35 Եվ ես ասացի նրանց. Մի՛ խոռվվեք, քանզի, երբ բոլոր այս բաները տեղի ունենան, դուք կարող եք իմանալ, որ խոստումները, որոնք տրվել էին ձեզ, կկատարվեն:

36 Եվ երբ լույսն սկսի ծագել, նրանց հետ պիտի լինի ինչպես մի առակում, որը ես ցույց կտամ ձեզ, -

37 Դուք նայում և տեսնում եք թզենու ծառերը, և դուք այն տեսնում եք ձեր աչքերով, և երբ նրանք սկսում են բողբոջել և տերևներ արձակել, ասում եք, որ ամառը մոտ է՝ առ ձեռն.

38 Ճիշտ այդպես էլ կլինի այն օրը, երբ նրանք կտեսնեն բոլոր այս բաները, այն ժամանակ նրանք կիմանան, որ ժամը մոտ է.

39 Եվ կլինի այնպես, որ նա, ով տերկյուղում է ինձանից, պիտի թսպասի Տիրոջ մեծ օրվա գալըստին, նույնիսկ Մարդու Պրոֆու գալստյան նշաններին:

40 Եվ նրանք կտեսնեն նշաններ ու զարմանալիքներ, քանզի դրանք պիտի ցույց տրվեն վերևում՝ երկինքներում և ներքևում՝ երկրի վրա:

41 Եվ նրանք կտեսնեն արյուն, և կլրակ, և ծխի մեզ:

42 Եվ նախքան Տիրոջ մեծ օրվա գալը, տարեգակը պիտի խավարեցվի, և լուսինը դարձվի արյուն, և աստղերը վայր պիտի ընկնեն երկնքից:

43 Եվ մնացորդը պիտի հավաքվի այս վայրում.

44 Եվ այն ժամանակ նրանք կփնտրեն ինձ, և ահա, ես կգամ. և նրանք կտեսնեն ինձ երկնքի ամպերի մեջ՝ զորությամբ ու մեծ փառք հագած. բոլոր սուրբ հրեշտակների հետ. և նա, ով չի թսպասում ինձ, պիտի կտրվի:

45 Սակայն մինչ Տիրոջ բազկի ընկնելը, հրեշտակը պիտի հնչեցնի իր փողը, և ննջեցյալ սրբերն առաջ պիտի գան՝ Գամպի մեջ ինձ դիմավորելու:

46 Ուստի, եթե դուք ննջել եք խաղաղության մեջ, օրհնված եք դուք. քանզի ինչպես որ այժմ դուք տեսնում եք ինձ և գիտեք, որ ես եմ, ճիշտ այդպես էլ պիտի թգաք դուք ինձ մոտ, և ձեր հոգիները պիտի Գապրեն, և ձեր փրկագնումը պիտի կատարելագործվի. և սրբերն առաջ պիտի գան աշխարհի չորս կողմերից:

47 Այն ժամանակ Տիրոջ տառապանքը կընկնի ազգերի վրա:

48 Եվ այն ժամանակ Տերն իր ոտքը կդնի այս տարի վրա, և այն միջից կպատռվի, և երկիրը

35ա Մատ. ԻԳ.6:
37ա Մար. ԺԳ.28,
Ղուկ. ԻԱ.29-31:
39ա ՎևոՒ 10.55-56:
սոՒ Վախ -
Աստվածավախություն.
Հնազանդություն,
Հնազանդ, Հնազանդվել:
բ Բ Պետ. Գ.10-13,
ՎևոՒ 35.15-16,
Մովսես 7.62:
գ սոՒ Հիսուս Քրիստոսի

երկրորդ գալուստը:
դ սոՒ Մարդու Որդի:
ե սոՒ Ժամանակների
նշանները:
41ա ՎևոՒ 29.21, 97.25-26:
42ա Հովել Բ.10,
Հայտ. 2.12,
ՎևոՒ 88.87, 133.49:
44ա սոՒ Հիսուս Քրիստոս -
Հիսուս Քրիստոսի
փառքը:
բ Մատ. ԻԳ.43-51,

Մար. ԺԳ.32-37:
45ա ՎևոՒ 29.13, 43.18:
բ ՎևոՒ 88.96-97:
սոՒ Հարություն:
գ Ա Թե. Գ.15-16:
46ա Ալմա 40.12:
բ Ես. ԾԵ.3:
գ սոՒ Հավերժական
կյանք:
47ա ՎևոՒ 1.12-16:
48ա Չաք. ԺԳ.4:

Քրիստոսն ու կերեքա այս ու այն կողմ, և երկինքները նույնպես զկցնցվեն:

49 Եվ Տերը պիտի արձակի իր ձայնը, և աշխարհի բոլոր ծայրերը պիտի լսեն այն. և երկրի ազգերը պիտի սագան, և նրանք, ովքեր ծաղր էին անում, պիտի տեսնեն իրենց անմտությունը:

50 Եվ աղետը պիտի պատի ծաղողոցներին, և արիսմարիողները պիտի այրվեն. և նրանք, ովքեր անօրինություն անելու համար արքուն են, պիտի կտրվեն և կրակի մեջ գցվեն:

51 Եվ այն ժամանակ ՝հրեաները Քնայեն ինձ և կասեն. Այս ի՞նչ խոցեր են քո ձեռքերին ու քո ոտքերին:

52 Այն ժամանակ նրանք կիմանան, որ ես եմ Տերը. Քանզի ես կասեմ նրանց. Այս խոցերն այն խոցերն են, որոնցով ես ՝խոցվեցի իմ բարեկամների տանը: Ես նա եմ, որին բարձրացրեցին: Ես Հիսուսն եմ, որին ՝խաչեցին: Ես Աստծո Որդին եմ:

53 Եվ այն ժամանակ նրանք ՝լաց կլինեն իրենց անօրինությունների համար. այն ժամանակ նրանք կողբան, որովհետև նրանք հալածել էին իրենց ՝բազավորին:

54 Եվ այն ժամանակ ՝հեթանոս

ազգերը կփրկագնվեն, և նրանք, ովքեր ոչ մի օրենք չեն իմացել, բաժին կունենան առաջին ՝հարության մեջ. և նրանց համար ՝հեշտ կլինի:

55 Եվ ՝Սատանան պիտի ՝կապվի, այնպես որ, նա տեղ չի ունենա մարդկանց զավակների սրտերում:

56 Եվ այն ՝օրը, երբ ես կգամ իմ փառքով, կկատարվի առակը, որը ես խոսեցի տասը ՝կույսերի վերաբերյալ:

57 Քանզի նրանք, ովքեր իմաստուն են և ընդունել են ՝ճշմարտությունը, և վերցրել են Սուրբ Հոգին որպես իրենց ՝ուղեկից, և չեն ՝խաբվել,– ճշմարիտ ասում են ձեզ, նրանք չպիտի կտրվեն և ՝կրակի մեջ գցվեն, այլ պիտի մնան այդ օրը:

58 Եվ ՝երկիրը պիտի տրվի նրանց, որպես ՝ժառանգություն. և նրանք պիտի բազմանան ու զորանան, և նրանց զավակները պիտի ՝մեծանան առանց մեղքի՝ ի ՝փրկություն:

59 Քանզի Տերը պիտի լինի նրանց ՝մեջ, և նրա փառքը պիտի լինի նրանց վրա, և նա պիտի լինի նրանց թագավորն ու նրանց ՝օրենսդիրը:

60 Եվ այժմ, ահա, ես ասում եմ քեզ, որ քեզ չի տրվելու իմանալ այս գլխի մասին ավելին, մինչև որ

48բ ՎևոՒ 43.18, 88.87:

q Հովել Գ.16,
վևոՒ 49.23:

49ա ՎևոՒ 87.6:

51ա սոՒ Հրեաներ:

p Չաք. ԺԲ.10:

52ա Չաք. ԺԳ.6:

p սոՒ Խաչելություն:

53ա Հայտ. Ա.7:

p Գուլ. ԻԳ.38,

Հովհ. ԺԹ.3, 14–15:

54ա Եգեկ. ԼԶ.23, ԼԹ.21:

p սոՒ Հարություն:

q ՎևոՒ 75.22:

55ա սոՒ Գև:

p Հայտ. Ի.2,

1 Նեփի 22.26,

վևոՒ 43.31, 88.110:

56ա սոՒ Հիսուս Քրիստոսի

երկրորդ գալուստը:

p Մատ. ԻԵ.1–13,

վևոՒ 63.54:

57ա սոՒ Նշմարություն:

p սոՒ Սուրբ Հոգի:

q ՋՍ–Մ 1.37:

η վևոՒ 29.7–9, 63.34,
64.23–24, 101.22–25:

58ա սոՒ Հազարամյակ:

p Մատ. Ե.5:

q ՎևոՒ 63.51, 101.29–31:

η սոՒ Փրկություն:

59ա ՎևոՒ 29.11, 104.59:

p Ծճ. ԽԹ.10,

Չաք. ԺԳ.9,

վևոՒ 38.21–22:

Մոր Կտակարանը չթարգմանվի, և նրա մեջ բոլոր այս բաները հայտնի կդարձվեն.

61 Ուստի ես քեզ տալիս եմ, որ այժմ դու կարող ես այն թարգմանել, որ դուք կարողանաք պատրաստվել գալիք բաներին:

62 Քանզի ճշմարիտ ասում եմ ձեզ, որ մեծ բաներ են սպասվում ձեզ.

63 Դուք լսում եք օտար երկրների Պատերազմների մասին. սակայն, ահա, ես ասում եմ ձեզ, որ դրանք մոտ են, անգամ ձեր դռան շեմին, և ոչ շատ տարիներ անց դուք կլսեք պատերազմների մասին ձեր իսկ երկրում:

64 Ուստի ես՝ Տերս, ասացի. Հավաքվեք՝ արևելյան հողերից, ժողովվեք միասին, դո՛ւք, իմ եկեղեցո՛ւ երեցներ. առաջ գնացեք դեպի արևմտյան շրջանները, կոչ արեք բնակիչներին՝ ապաշխարել, և որքան որ նրանք ապաշխարեն, եկեղեցիներ կառուցեք ինձ համար:

65 Եվ մեկ սրտով ու մեկ մտքով հավաքեք ձեր հարստությունները, որ կարողանաք ժառանգություն գնել, որը հետագայում պիտի նշանակվի ձեզ համար:

66 Եվ այն պիտի կոչվի Մոր Երուսաղեմ՝ Դադարության հող, Կապաստանի քաղաք, Բարձրյալ Աստծո սրբերի ապահովության վայր:

67 Եվ Տիրոջ փառքը պիտի լինի այնտեղ, և նաև Տիրոջ ահը պիտի

լինի այնտեղ, այնպես որ ամբարիշտները չեն գա այնտեղ, և այն պիտի կոչվի Սիոն:

68 Եվ ամբարիշտների մեջ կլինի այնպես, որ ամեն մի մարդ, որն իր սուրը չի վերցնի իր մերձավորի դեմ, անպայման պիտի փախչի Սիոն՝ ապահովության համար:

69 Եվ այնտեղ՝ հավաքված կլինեն երկնքի տակի ամեն ազգից. և այն կլինի միակ ժողովուրդը, որ պատերազմի մեջ չի լինի մեկը մյուսի հետ:

70 Եվ ամբարիշտների մեջ պիտի ասվի. Եկեք չզնանք ճակատամարտելու Սիոնի դեմ, քանի որ Սիոնի բնակիչներն ահեղ են. ուստի մենք չենք կարող դիմանալ:

71 Եվ կլինի այնպես, որ արդարները պիտի հավաքվեն բոլոր ազգերի միջից և պիտի գան Սիոն՝ երգելով հավիտենական ուրախության երգեր:

72 Եվ արդ, ես ասում եմ ձեզ. Պահեք այս բաները, որ դուրս չգնա աշխարհ, մինչև որ ինձ նպատակահարմար կլինի, որ դուք կարողանաք իրագործել այս աշխատանքը մարդկանց աչքի առաջ, և ձեր թշնամիների աչքի առաջ, որ նրանք չիմանան ձեր գործերի մասին, մինչև որ դուք չավարտեք այն, ինչ ձեզ պատվիրեցի.

73 Որ երբ նրանք իմանան այդ մասին, որ նրանք կարողանան խորհրդածել այդ բաների վերաբերյալ:

60ա սուր. Ջոզեֆ Սմիթի Թարգմանություն (ՋՍԹ): Տե՛ս նաև Աստվածաշնչի Ջոզեֆ Սմիթի թարգմանության ընտրանի:
63ա Վև.Ու.Ւ 38.29, 87.1-5, 130.12:

64ա Վև.Ու.Ւ 42.64:
65ա Վև.Ու.Ւ 63.27:
66ա Եթեր 13.5-6, Մովսես 7.62, ՀՀ 1.10:
սուր Նոր Երուսաղեմ. Սիոն:
բ սուր Խաղաղություն:
գ Վև.Ու.Ւ 57.1-3:

դ Ես. Դ.6, Վև.Ու.Ւ 115.6:
67ա Վև.Ու.Ւ 64.41-43, 97.15-18:
սուր Հիսուս Քրիստոս - Հիսուս Քրիստոսի փառքը:
69ա Բ Օր. Լ.3, Երեմ. Լ.Բ.37-39, Վև.Ու.Ւ 33.6:

74 Քանզի երբ Տերը հայտնվի, նա «ահարկու կլինի նրանց համար, այնպես որ երկյուղը կպատի նրանց, և նրանք կկանգնեն հեռվում ու կողոպտան:

75 Եվ բոլոր ազգերը պիտի վախենան Տիրոջ ահից և նրա գործության հզորությունից: Դիշտ այդպես: Ամեն:

ԲԱԺԻՆ 46

Հայտնություն՝ տրված Եկեղեցուն, Ջոզեֆ Սմիթ Մարգարեի միջոցով, Կիրթլենդում, Օհայո, 1831թ. մարտի 8-ին (History of the Church, 1.163–165): Եկեղեցու այս վաղ ժամանակներում, Եկեղեցու ծառայություններն անցկացնելու միասնական օրինակ դեռ չէր հաստատվել: Ինչևէ, հաղորդության ժողովներին և Եկեղեցական այլ հավաքներին միայն անդամներին ու լուրջ հետաքրքրվողներին ընդունելու սովորությունն ինչ-որ չափով ընդհանուր էր դարձել: Այս հայտնությունն արտահայտում է Տիրոջ կամքը՝ ժողովները ղեկավարելու և անցկացնելու վերաբերյալ:

1–2՝ Երեցները պետք է վարեն ժողովները, ինչպես որ կուղեկցվեն Սուրբ Հոգու կողմից. 3–6՝ Ծշմարտությունը փնտրողները չպետք է հեռացվեն հաղորդության ծառայություններից. 7–12՝ Խնդրեք Աստծուն և փնտրեք Հոգու պարզակները. 13–26՝ Տրվում է այդ պարզակներից մի քանիսի թվարկումը. 27–33՝ Եկեղեցու ղեկավարներին տրված է Հոգու պարզակները զանազանելու գործություն:

վիրվում է երբեք, ոչ ոքի դուրս «չհանել ձեր հասարակական ժողովներից, որոնք անցկացվում են աշխարհի առաջ:

4 Չեզ նաև պատվիրվում է ձեր հաղորդության ժողովներից դուրս չհանել ոչ մեկին, ով պատկանում է «եկեղեցուն. սակայն, եթե մեկը զանցանք է գործել, թող նա «չընդունի, մինչև հաշտություն չկնքի:

5 Եվ բացի այդ, ես ասում եմ ձեզ, որ դուք չպետք է դուրս հանեք ձեր հաղորդության ժողովներից նրանց, ովքեր լրջորեն փնտրում են արքայությունը, – սա ես ասում եմ նրանց վերաբերյալ, ովքեր եկեղեցուց չեն:

6 Եվ բացի այդ, ես ասում եմ ձեզ, ձեր «հաստատման ժողովների վերաբերյալ, որ եթե լինեն անձինք, որոնք այս եկեղեցուց չեն, որոնք լրջորեն փնտրում են արքայությունը, դուք նրանց չպետք է դուրս հանեք:

ԱԿԱՆՁ դրեք, ո՛վ դուք, իմ եկեղեցու ժողովուրդ. քանզի ճշմարիտ ասում եմ ձեզ, որ այս բաները ձեզ ասվել են ձեր «օգտի և ուսման համար:

2 Սակայն, չնայած այն ամենին, ինչ գրված է, իմ եկեղեցու «երեցներին ի սկզբանե տրված է եղել, և միշտ կլինի, բոլոր ժողովները թվարել, ինչպես հրահանգում և ուղեկցում է Սուրբ Հոգին:

3 Այնուամենայնիվ, ձեզ պատ-

74ա Սուփ. Բ.11:
46 1ա Բ Տիմ. Գ.16–17:
2ա Ալմա 6.1:
բ Մոր. 6.9, ՎևոՒ 20.45:

3ա 3 Նեփի 18.22–25:
սուՒ Ընկերակցել:
4ա սուՒ Հիսուս Քրիստոսի
Եկեղեցի:

բ 3 Նեփի 18.26–32:
սուՒ Հաղորդություն:
6ա նշ. նոր մկրտվածների
հաստատման համար:

7 Բայց ձեզ պատվիրված է բոլոր բաներում ՝ խնդրել Աստծուն, որը չափս է առատորեն. և այն, ինչ Հոգին վկայում է ձեզ, ճիշտ այդպես էս կկամենայի, որ դուք վարվեք՝ սրտի ՝ խոնարհությամբ, ուղիղ քայլերով իմ առաջ, ⁴աչքի առաջ ունենալով ձեր փրկության վախճանը, բոլոր բաներն անելով աղոթքով ու ⁵զոհաբանությամբ, որպեսզի ⁶չնոլորվեք չար ոգիների կողմից, կամ ⁷դևերի վարդապետություններից, կամ մարդկանց ⁸պատվիրաններից. քանզի ոմանք մարդկանցից են, իսկ ոմանք՝ դևերից:

8 Ուստի, զգուշացեք, չլինի թե խաբվեք. և որպեսզի չխաբվեք, ՝ հետամուտ եղեք լավագույն պարզևներիին, միշտ մտապահելով, թե ինչի համար են դրանք տրված.

9 Քանզի ճշմարիտ ասում են ձեզ, որ դրանք տրված են նրանց օգտի համար, ովքեր սիրում են ինձ և պահում են իմ բոլոր պատվիրանները, և նրա համար, ով փնտրում է այդպես վարվել. որ բոլորը, ովքեր փնտրում են կամ ովքեր խնդրում են ինձ, կարողանան օգտվել, ովքեր խնդրում են, բայց ոչ ¹անշանի համար, որ ²վատնեն իրենց ցանկությունների վրա:

10 Եվ բացի այդ, ճշմարիտ ասում են ձեզ, էս կկամենայի, որ դուք միշտ հիշեք և միշտ ձեր ¹մտքում պահեք, թե ինչ են այն ²պարզևները, որոնք տրված են եկեղեցուն:

11 Քանզի բոլորին տրված չէ ամեն պարզև. քանզի կան շատ պարզևներ, և ՝ ամեն մարդու մի պարզև է տրված Աստծո Հոգուց:

12 Ոմանց տրված է մի բան, ոմանց էլ տրված է մեկ ուրիշ բան, որպեսզի բոլորն այդպիսով օգտվեն:

13 Ոմանց տրված է, Սուրբ Հոգուց, ՝ իմանալ, որ Հիսուս Քրիստոսն Աստծո Որդին է, և որ նա խաչվեց աշխարհի մեղքերի համար:

14 Մյուսներին տրված է ՝ հավատալ նրանց խոսքերին, որ նրանք նույնպես կարողանան հավերժական կյանք ունենալ, եթե հավատարմորեն շարունակեն:

15 Եվ բացի այդ, ոմանց տրված է, Սուրբ Հոգուց, իմանալ պաշտոնավարության ¹տարբերությունները, ինչպես որ հաճելի կլինի հենց Տիրոջը, ինչպես որ կամենում է Տերը՝ իր ողորմությունները համապատասխանեցնելով մարդկանց զավակների պայմաններին:

16 Եվ բացի այդ, ոմանց տրված է, Սուրբ Հոգուց, իմանալ ներգործությունների տարբերությունը, թե արդյոք դրանք Աստծուց են, որ Հոգու դրսևորումները տրվեն ամեն մարդու՝ դրանից օգտվելու համար:

17 Եվ բացի այդ, ճշմարիտ ասում են ձեզ, որ ոմանց Աստծո Հոգուց տրված է ՝ իմաստության խոսքը:

18 Մեկ ուրիշին տրված է ՝ զհտուրյան խոսքը, որ բոլորը կարողա-

<p>7ա Հակ. Ա.5-6, ՎևՈՒ 88.63: բ սոՒ Սրբություն: գ սոՒ Խորհել: դ Սաղ. Ծ, Ալմա 34.38: սոՒ Շնորհակալ, Շնորհակալություն, Գոհաբանություն: ե Ա Տիմ. Գ.1-4,</p>	<p>ՎևՈՒ 43.5-7: գ սոՒ Դև: է ՎևՈՒ 3.6-7, 45.29: 8ա Ա Կոր. ԺԲ.31: 9ա սոՒ Նշան: բ Հակ. Գ.3: 10ա սոՒ Միտք: բ Ա Կոր. ԺԳ.12: սոՒ Հոգու պարզևները:</p>	<p>11ա Ա Կոր. ԺԲ.4-11: 13ա սոՒ Վկայություն: 14ա 3 Նեփի 12.2: սոՒ Հավատ, Հավատալ: 15ա Մոր. 10.8: 17ա Մոր. 10.9: սոՒ Իմաստություն: 18ա սոՒ Գիտություն:</p>
--	---	--

նան ուսուցանվել՝ իմաստուն լինել և գիտելիք ունենալ:

19 Եվ բացի այդ, ոմանց տրված է ^ահավատք ունենալ՝ բժշկվելու:

20 Իսկ ուրիշներին տրված է հավատք ունենալ՝ ^աբժշկելու:

21 Եվ բացի այդ, ոմանց տրված է ^ահրաշքներ գործել:

22 Իսկ ուրիշներին տրված է ^ամարգարեանալ:

23 Եվ ուրիշներին՝ հոգիներ ^ազանազանել:

24 Եվ բացի այդ, ոմանց տրված է ^ալեզուներով խոսել:

25 Իսկ մեկ ուրիշի տրված է լեզուներ թարգմանել:

26 Եվ բոլոր այս ^ապարզևները գալիս են Աստծուց՝ Աստծո ^բզավակների օգտի համար:

27 Եվ եկեղեցու ^աեպիսկոպոսին, և նմանապես նրանց, ում Աստված կնշանակի ու կկարգի, եկեղեցին հսկելու և եկեղեցու երեցներ լինելու, նրանց տրված պիտի լինի բոլոր այդ պարզևները ^բզանազանելը, չլինի թե՛ ձեր մեջ մեկը

դավանող լինի և, այնուամենայնիվ, Աստծուց չլինի:

28 Եվ կլինի այնպես, որ նա, ով խնդրում է ^աձոգով, պիտի ստանա ձոգով:

29 Որ, ոմանց տրված լինի՝ ունենալ բոլոր այդ պարզևները, որ լինի մեկ գլուխ, որպեսզի ամեն մի անդամ այդպիսով օգտվի:

30 Նա, ով ^ախնդրում է ^բձոգով, խնդրում է համաձայն Աստծո ^գկամքի. հետևաբար դա կատարվում է, ճիշտ ինչպես նա խնդրում է:

31 Եվ բացի այդ, ես ասում եմ ձեզ, որ բոլոր բաները պետք է արվեն Քրիստոսի անունով, ինչ էլ որ դուք անեք ձոգով:

32 Եվ դուք պետք է ^ագոհությամբ հայտնեք Աստծուն, ձոգով, բոլոր օրհնությունների համար, որոնցով դուք օրհնված եք:

33 Եվ դուք պետք է անդադար ^աառաքինություն և ^բսրբություն գործադրեք իմ առաջ: Դիշտ այդպես: Ամեն:

ԲԱԺԻՆ 47

Հայտնություն տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեի միջոցով, Կիրթլենդում, Օհայո, 1831թ. մարտի 8-ին (History of the Church, 1.166): Մինչև այդ ժամանակը Օլիվեր Քառուրդին էր գործում որպես Եկեղեցու պատմագիր և մատենագիր: Չուն Ուիթմերը չէր ձգտում նշանակվել պատմագիր, սակայն, երբ խնդրեցին ծառայել այս կոչման մեջ, նա ասաց, որ կհնազանդվի Տիրոջ կամքին այդ հարցում: Նա արդեն ծառայել էր որպես Մարգարեի

19ա Վև.Ու. 42.48–52: սուր Հավատք:	բ սուր Աստծո որդիներն ու դուստրերը:	Ա Թես. Ա.2, Ալմա 37.37,
20ա սուր Բժշկել, Բժշկումներ:	27ա սուր Եպիսկոպոս: բ սուր Չանազանելու պարզև:	Վև.Ու. 59.7, 21: սուր Շնորհակալ, Շնորհակալություն, Գոհաբանություն:
21ա սուր Հրաշք:	28ա Վև.Ու. 88.64–65:	33ա սուր Առաքինություն: բ սուր Սրբություն:
22ա սուր Մարգարեություն, Մարգարեանալ:	30ա Վև.Ու. 50.29: բ սուր Սուրբ Հոգի:	
23ա Մովսես 1.13–15:	գ 2 Նեփի 4.35:	
24ա սուր Լեզուների պարզև:	32ա Ա Մն. ԺՁ.8–15,	
26ա Մոր. 10.8–19:		

քարտուղար, արձանագրելով Նյու Յորքի Ֆայեթի տարածքում ստացված հայտնություններից շատերը:

1–4 Ձոն Ուիթմերը նշանակվում է Եկեղեցու պատմագրությունը վարող և Մարգարեի համար արձանագրող:

ԱՀԱ, ինձ նպատակահարմար է, որ իմ ծառա Ձոնը գրի ու կանոնավոր «պատմագրություն վարի և օգնի քեզ իմ ծառա Ջոզեֆ, բոլոր այն բաներն արտագրի, որոնք կտրվեն քեզ, մինչև որ նա կկանչվի այլ պարտականությունների:

2 Բացի այդ, ճշմարիտ ասում եմ քեզ, որ նա ժողովների ժամանակ

կարող է նաև իր ձայնը բարձրացնել, երբ որ նպատակահարմար լինի:

3 Եվ բացի այդ, ես ասում եմ քեզ, որ նրան նշանակված կլինի շարունակ վարել եկեղեցական գրանցումներն ու պատմագրությունը. քանզի Օլիվեր Քաուդերիին ես նշանակել եմ մեկ այլ պաշտոնի:

4 Ուստի, «Մխիթարիչի կողմից նրան պիտի տրվի, որքան որ նա հավատարիմ է, գրելու այս բաները: Դիշտ այդպես: Ամեն:

ԲԱԺԻՆ 48

Հայտնություն տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեի միջոցով, Կիրթենդում, Օհայո, 1831թ. մարտին (History of the Church, 1.166–167): Մարգարեն հարցրել էր Տիրոջը՝ Սրբերի բնակեցման համար հողեր ձեռք բերելու գործընթացի վերաբերյալ: Դա մի կարևոր խնդիր էր՝ նկատի ունենալով Եկեղեցու անդամների գաղթը Միացյալ Նահանգների արևելքից, ի հնազանդություն Տիրոջ այն պատվիրանի, որ նրանք պետք է հավաքվեն Օհայոյում (տե՛ս բաժիններ՝ 37.1–3, 45.64):

1–3՝ Օհայոյի Սրբերն իրենց հողերը պետք է կիսեն իրենց եղբայրների հետ. 4–6՝ Սրբերը պետք է հողեր գնեն, քաղաք կառուցեն, և հետևեն իրենց նախագահող պաշտոնյաների խորհրդին:

ՆԵՐԿԱՅՈՒՄՍ անհրաժեշտ է, որ դուք մնաք ձեր բնակության վայրերում՝ ձեր պայմաններին համապատասխան:

2 Եվ որքան որ դուք հողեր ունենաք, դուք «բաժին պիտի հանեք ձեր արևելյան եղբայրներին.

3 Եվ որքան որ դուք հողեր չեք ունենա, թող մերկայունս նրանք գնեն մերձակա շրջաններում, որտեղ իրենց հարմար է թվում, քանզի անպայման պետք է, որ մերկայունս նրանք տեղ ունենան բնակվելու:

4 Անպայման պետք է, որ դուք տնտեսեք ամբողջ դրամը, որը կարող եք, որ ձեռք բերեք այն ամենն, ինչ կարող եք, արդարությանը, որ ժամանակին ի վիճակի լինեք հող «գնել ժառանգության համար, »նույնիսկ քաղաքը:

47 1ա ՎևՈՒ 69.2–8, 85.1–2: 4ա սուր Մխիթարիչ. Սուրբ Հոգի:

48 2ա սուր Բարորություն: 4ա ՎևՈՒ 57.4–5: ք ՎևՈՒ 42.35–36,

45.65–67:

5 Վայրը դեռևս չպետք է հայտնի դառնա. բայց հետո, երբ ձեր եղբայրները գան արևելքից, “որոշակի մարդիկ պիտի նշանակվեն, և նրանց պիտի տրվի ^բիմանալ վայրը, կամ նրանց պիտի հայտնի դարձվի:

6 Եվ նրանք պիտի նշանակվեն՝ հողեր գնելու և դնելու “քաղաքի հիմնադրման սկիզբը. և այնու-

հետև, դուք պիտի սկսեք հավաքվել ձեր ընտանիքներով, ամեն մարդ իր ^բընտանիքով, իր պայմանների համեմատ, և ինչպես իրեն նշանակված է եկեղեցու նախագահության և եպիսկոպոսի կողմից՝ համաձայն օրենքների ու պատվիրանների, որոնք դուք ստացել եք, և որոնք դուք հետագայում կստանաք: Ծիշտ այդպես: Ամեն:

ԲԱԺԻՆ 49

Հայտնություն տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեի միջոցով, Սիդնի Ռիզդոնին, Փարիի Պ. Պրատին և Լեման Քոփլին, Կիրթլենդում, Օհայո, 1831թ. մարտին (History of the Church, 1.167–169): (Որոշ պատմական աղբյուրներ, որպես այս հայտնության ամսաթիվ նշում են 1831թ. մայիսը): Լեման Քոփլին ընդունել էր ավետարանը, սակայն դեռևս կառչած էր Շեյքերների [United Society of Believers in Christ’s Second Appearing (Քրիստոսի երկրորդ հայտնվելուն հավատացողների միացյալ ընկերություն)] որոշ ուսմունքներից, որին պատկանել էր նախկինում: Շեյքերների որոշ համոզմունքներից էր այն, որ Քրիստոսի երկրորդ գալուստն արդեն տեղի էր ունեցել, և որ նա հայտնվել էր մի կնոջ՝ Աննա Լիի տեսքով. ջրով մկրտությունն էական չէր համարվում. արգելվում էր հատկապես խոզի միս ուտելը, իսկ շատերն ընդհանրապես միս չէին ուտում. և ամուրի կյանքը համարվում էր ավելի բարձր, քան ամուսնականը: Որպես այս հայտնության նախաբան Մարգարեն գրել է. «Այդ նյութի վերաբերյալ ավելի կատարյալ իմացություն ստանալու համար, ես հարցրեցի Տիրոջը և ստացա հետևյալը» (History of the Church, 1.167): Հայտնությունը հերքեց Շեյքերների խմբի որոշ հիմնական գաղափարներ: Վերոհիշյալ եղբայրները հայտնության մի օրինակը տարան Շեյքերների համայնք (Քլիվլենդի մոտակայքում, Օհայո) և այն ամբողջությամբ կարդացին նրանց համար, սակայն այն մերժվեց:

1–7 Քրիստոսի գալստյան օրը և ժամը կմնա անհայտ, մինչև նրա գալը. 8–14 Մարդիկ պետք է ապաշխարեն, հավատան ավետարանին և հնազանդվեն արարողություններին, որպեսզի ձեռք բերեն փրկություն. 15–16 Ամուսնությունը կարգված է Աստծու կողմից. 17–21 Միս ուտելը թույլատրվում է. 22–28՝ Նախքան

Երկրորդ Գալուստը Սիոնը կծաղկի և Լամանացիները կփոթեն, ինչպես վարդը:

ԱԿԱՆՁ դրեք իմ խոսքին, իմ ծառանե՛ր Սիդնի և Փարլի և Լեման. քանզի ահա, ճշմարիտ ասում եմ ձեզ, որ ես ձեզ տալիս եմ պատվիրան, որ դուք գնաք և

5ա ՎևՈՒ 57.6–8:
բ ՎևՈՒ 57.1–3:

6ա սոՒ Նոր Երուսաղեմ:
բ ՎևՈՒ 51.3:

Շեյքերներին «քարոզեք իմ ավետարանը, որը դուք ստացել եք, ճիշտ ինչպես ստացել եք այն:

2 Ճշմարիտ ասում եմ ձեզ, որ նրանք փափագում են իմանալ ճշմարտությունը մասամբ, ոչ ամբողջովին, քանզի նրանք «ճիշտ չեն իմ առաջ և անպայման պետք է ապաշխարեն:

3 Ուստի, իմ ծառաներ՝ Սիդնի և Փարլի, ես ուղարկում եմ ձեզ՝ ավետարանը նրանց քարոզելու:

4 Եվ իմ ծառա Լեմանը պիտի կարգվի այս գործին, որպեսզի տրամախոսի նրանց հետ, ոչ թե համաձայն նրա, ինչ նա ստացել է նրանցից, այլ համաձայն նրա, ինչ իրեն «կուսուցանվի ձեր՝ իմ ծառաների կողմից. և այդպես վարվելով ես կօրհնեմ նրան, հակառակ դեպքում նա չի բարգավաճի:

5 Այսպես է ասում Տերը. Քանզի ես Աստված եմ, և ես աշխարհ եմ՝ «ուղարկել իմ Միածին Որդուն՝ աշխարհի Քրիստոսին՝ համար, և հրամանագրել եմ, որ նա, ով ընդունում է նրան, պիտի փրկվի, իսկ նա, ով չի ընդունում նրան, պիտի «նզովվի,–

6 Եվ նրանք վարվել են Մարդու «Որդու հետ, ինչպես կամեցել են. և նա ստացել է իր գորությունը նրա Քրիստոսի «աջ կողմում, և այժմ թագավորում է երկինքներում, և

կթագավորի, մինչև որ իջնի երկիր՝ իր ոտքերի «տակ դնելու բոլոր թշնամիներին, այն ժամին, որը մոտ է առ ձեռն,–

7 Ես՝ Տեր Աստվածս եմ ասել դա. բայց ժամը և «օրը ոչ մի մարդ չգիտի, ոչ էլ հրեշտակները երկնքում, ոչ էլ պետք է որ նրանք իմանան, մինչև նա չգա:

8 Ուստի, ես կամենում եմ, որ բոլոր մարդիկ ապաշխարեն, քանզի բոլորն էլ «մեղքի տակ են, բացի նրանցից, ում պահպանել եմ ինձ համար, այն «սուրբ մարդկանցից, որոնց մասին դուք չգիտեք:

9 Ուստի, ասում եմ ձեզ, որ ես ձեզ համար ուղարկել եմ իմ հավիտենական «ուխտը, այսինքն՝ այն, որ կար ի սկզբանե:

10 Եվ այն, ինչ ես խոստացել եմ, այդպես էլ կատարել եմ, և երկրի «ազգերը պիտի «խոնարհվեն դրան. և եթե ոչ իրենցով, ապա պիտի իջեցվեն, քանզի նա, ով հիմա իրենով բարձրացած է, ուժով պիտի «ցածրացվի:

11 Ուստի, ես տալիս եմ ձեզ պատվիրան, որ «գնաք այս մարդկանց մեջ, և ասեք նրանց, ինչպես իմ հիմ առաքյալը, որի անունը Պետրոս էր.

12 Հավատացե՛ք Տեր Հիսուսի անվանը, նա, ով երկրի վրա էր և պիտի գա, որը սկիզբն է և վերջը.

49 1ա սուր Քարոզել:
2ա Գոր. Ը.21:
4ա սուր Ավետարան,
Ճշմարտությունը:
5ա Հովհ. Գ.16-17,
ՎևՈՒ 132.24:
սուր Հիսուս Քրիստոս –
Իշխանությունը:
բ սուր Փրկագնել,
Փրկագնված,
Փրկագնում. Քափիչ:
գ սուր Նզովք:
6ա սուր Մարդու Որդի:

բ սուր Հիսուս Քրիստոս –
Հիսուս Քրիստոսի
փառքը:
գ Գոր. Է.55,
ՎևՈՒ 76.20-23:
դ Ա Կոր. ԺԵ.25,
ՎևՈՒ 76.61:
7ա Մատ. ԻԳ.36,
Մար. ԺԳ.32-37,
Հայտ. ԺԶ.15,
ՎևՈՒ 133.11:
8ա Գաղ. Գ.22,
Մոսիա 16.3-5:

բ Եբր. ԺԳ.2,
3 Նեփի 28.25-29:
9ա Ծն. ԺԷ.7,
ՎևՈՒ 66.2:
սուր Նոր և
հավիտենական ուխտ:
10ա Չաք. Բ.11,
ՎևՈՒ 45.66-69,
97.18-21:
բ Ես. Կ.14:
գ Մատ. ԻԳ.12:
11ա սուր Միսիոներական
աշխատանք:

13 ^աԱպաշխարե՛ք և նկրտվե՛ք Հիսուս Քրիստոսի անունով, սուրբ պատվիրանի համաձայն, մեղքերի թողության համար.

14 Եվ, ով որ դա անի, կստանա Սուրբ Հոգու ^ապարգևը՝ եկեղեցու երեցների ^բձեռնադրմամբ:

15 Եվ բացի այդ, ճշմարիտ ասում եմ ձեզ, որ նա, ով ^աարգելում է ամուսնանալը, կարգված չէ Աստծու կողմից, քանզի ^բամուսնությունն Աստծու կողմից է կարգված մարդու համար:

16 Ուստի, օրինական է, որ նա ունենա մեկ ^ակին, և նրանք երկուսով կլինեն ^բմեկ մարմին, և այս բոլորը, որպեսզի ^գերկիրը կատարի իր ստեղծման նպատակը.

17 Եվ որպեսզի այն լրացնի մարդկանց քանակը, աշխարհի արարումից ^աառաջ նրանց ^բստեղծման համաձայն:

18 Եվ ով ^աարգելում է ձեռնպահ մնալ ^բմսից, ասելով, թե մարդ չպետք է այն ուտի, նա կարգված չէ Աստծուց.

19 Քանզի, ասա, դաշտի ^ագազաններն ու երկնքի թռչունները, և այն, ինչ դուրս է գալիս երկրից, կարգված է մարդու օգտագործման համար՝ կերակրի և հագուս-

տի համար, և որ նա կարողանա ունենալ առատորեն:

20 Սակայն տրված չէ, որ մի մարդ ^աունենա ավելին, քան մեկ ուրիշը, ուստի ^բաշխարհն ընկած է մեղքի մեջ:

21 Եվ վա՛յ լինի մարդուն, որ արյուն է ^աթափում, կամ, որ վատնում է միսը, բայց կարիքը չունի:

22 Եվ բացի այդ, ճշմարիտ ասում եմ ձեզ, որ Մարդու Որդին չի ^ագալիս կնոջ տեսքով, ոչ էլ տղամարդու, որ ճանփորդում է երկրի վրա:

23 Ուստի, մի ^ախաբվեք, այլ շարունակեք հաստատուն, ^բսպասելով, որ երկինքները ցնցվեն, և երկիրը դողա ու երերա այս ու այն կողմ, ինչպես մի հարբած մարդ, և ^գհարթավայրերը բարձրացվեն, և ^դսարերը ցածրացվեն, և խորդուբորդ տեղերը հարթվեն, – և այդ բոլորը՝ երբ հրեշտակը կհնչեցնի իր ^եփողը:

24 Սակայն, նախքան Տիրոջ մեծ օրվա գալը, ^աՀակոբը պիտի ծաղկի անասատում, և Լամանացիները պիտի ^բփթթեն, ինչպես վարդը:

25 Մի՞ո՞ւր պիտի ^ածաղկի ^բբլուրների վրա և ցնձա սարերի վրա, և պիտի ժողովվի միասին այն վայրում, որը ես նշանակել եմ:

<p>13ա3 Նեփի 27.19–20: 14ա սո՛ր Սուրբ Հոգու պարգև: բ սո՛ր Չեռնադրություն: 15ա Ա Տիմ. Գ.1–3: բ Ծն. Բ.18, 24, Ա Կոր. ԺԱ.11: սո՛ր Ամուսնություն, Ամուսնանալ: 16ա Հակոբ 2.27–30: բ Ծն. Բ.24, Մատ. ԺԹ.5–6: գ սո՛ր Երկիր – Մարդկանց համար ստեղծված:</p>	<p>17ա սո՛ր Նախամահկանացու կյանք: բ Մովսես 3.4–5: սո՛ր Ստեղծել, Ստեղծում: 18ա նշ. առաջարկում է ձեռնպահ մնալ: բ Ծն. Թ.3, Ա Տիմ. Գ.1–3: 19ա Վև.ՈՒ 89.10–13: 20ա Գոր. Գ.32, Վև.ՈՒ 51.3, 70.14, 78.6: բ սո՛ր Աշխարհիկություն: 21ա ՋՍԹ, Ծն. 9.10–15: 22ա սո՛ր Հիսուս Քրիստոսի երկրորդ գալուստը:</p>	<p>23ա Մատ. ԻԳ.4–5: բ Բ Պետ. Գ.12, Վև.ՈՒ 45.39: գ Ես. Խ.4, Վև.ՈՒ 109.74: դ Միքիա Ա.3–4: ե Մատ. ԻԳ.29–31: 24ա3 Նեփի 5.21–26: բ Ես. ԼԵ.1, 2 Նեփի 30.5–6, 3 Նեփի 21.22–25, Վև.ՈՒ 3.20, 109.65: 25ա Վև.ՈՒ 35.24: բ Ծն. ԽԹ.26, 2 Նեփի 12.2–3:</p>
--	--	--

26 Ահա, ես ասում եմ ձեզ. Առաջ գնացեք, ինչպես ես պատվիրել եմ ձեզ. ապաշխարեք ձեր բոլոր մեղքերից. Մանդրեք և դուք կատանաք. քակեք և ձեզ կբացվի:

27 Ահա, ես կգնամ ձեր առջևից

և ձեր Մթիկնապահը կլինեմ. և ես կլինեմ ձեր Քննիչ, և դուք չեք ջշփոթվի:

28 Ահա, ես Հիսուս Քրիստոսն եմ, և ես շուտով գալիս եմ: Երիշտ այդպես: Ամեն:

ԲԱԺԻՆ 50

Հայտնություն տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեի միջոցով, Կիրթլենդում, Օհայո, 1831թ. մայիսին (History of the Church, 1.170–173): Մարգարեի հաղորդում է, որ երեցներից ոմանք չէին հասկանում երկրի վրա ամենուրեք տարածված տարբեր ոգիների դրսևորումները, և որ այս հայտնությունը տրվել էր ի պատասխան այս խնդրի վերաբերյալ նրա հատուկ հարցմանը: Այսպես կոչված հոգևոր նորանշաններն անսովոր բան չէին անդամների մոտ, որոնցից ոմանք պնդում էին, որ ստանում են տեսիլքներ և հայտնություններ:

1–5 Երկրի վրա բազմաթիվ կեղծ ոգիներ կան տարածված. 6–9 Վա՛յ կեղծավորներին և նրանց, ովքեր կտրված են Եկեղեցուց. 10–14՝ Երեցները պետք է Հոգով քարոզեն ավետարանը. 15–22՝ Թե՛ քարոզողները և թե՛ լսողները պետք է լուսավորվեն Հոգու կողմից. 23–25՝ Այն, որ չի շենացնում, Աստուծուց չէ. 26–28՝ Հավատարիմները տիրապետում են բոլոր բաներին. 29–36՝ Մաքրագործվածների աղոթքները պատասխանվում են. 37–46 Քրիստոսն է Բարի Հովիվը և Իսրայելի Քարը:

ԼՍԵՔ, ով իմ եկեղեցու՛ երեցներ և ականջ դրեք կենդանի Աստծո՛ ձայնին. և ուշք դարձրեք իմաստության խոսքերին, որ պիտի տրվեն ձեզ, համաձայն նրա, ինչ դուք հարցրել եք և համաձայնության եք եկել եկեղեցու և

այն ոգիների վերաբերյալ, որոնք տարածված են ամենուրեք, երկրի վրա:

2 Ահա, ճշմարիտ ասում եմ ձեզ, որ կան շատ ոգիներ, որոնք Մկեղծ ոգիներ են, որոնք տարածված են երկրի վրա՝ խաբելով աշխարհին:

3 Եվ նաև Մատանան է փնտրել ձեզ խաբել, որ կարողանա ձեզ տապալել:

4 Ահա, ես՝ Տերս, նայել եմ ձեզ և պղծություններ են տեսել իմ անունը Պավանող եկեղեցում:

5 Սակայն, օրհնյալ են նրանք, ովքեր հավատարիմ են, և Մհամբերում են կյանքում լինի, թե մահվան մեջ, քանզի նրանք հավերժական կյանք պիտի ժառանգեն:

6 Բայց վա՛յ նրանց, ովքեր Մխաբեբաներ են ու կեղծավորներ, քանզի, այսպես է ասում Տերը. Ես նրանց դատաստանի կբերեմ:

7 Ահա, ճշմարիտ ասում եմ ձեզ,

26ա ՎևՈՒ 88.63:
27ա Ես. ԾԲ.12:
բ 3 Նեփի 20.22:
գ Ա Պետ. Բ.6,
վևՈՒ 84.116:
28ա ՎևՈՒ 1.12:

50 2ա ՎևՈՒ 129:
սոՒ Ոգի – Չար ոգիներ:
3ա Ղուկ. ԻԲ.31,
3 Նեփի 18.18:
4ա սոՒ Հիսուս Քրիստոս –
Հիսուս Քրիստոսի

անունը մեզ վրա
վերցնելը:
5ա սոՒ Համբերել:
6ա սոՒ Խաբկանք,
Խաբել, Խաբություն:

ձեր մեջ կան ^ակեղծավորներ, որոնք խաբել են ոմանց, ովքեր ^բհակառակորդին ^գզորություն են տվել. բայց ահա, ^դայդպիսիները պիտի ուղղվեն.

8 Բայց կեղծավորները պիտի ի հայտ բերվեն ու պիտի ^ակտրվեն՝ թե՛ կենդանության և թե՛ մահվան մեջ, ճիշտ ինչպես ես եմ կամենում. և վա՛յ նրանց, ովքեր կտրվում են իմ եկեղեցուց, քանզի աշխարհը հաղթում է նրանց:

9 Ուստի, թող ամեն մարդ զգուշանա, չլինի թե նա կատարի այն, ինչ ճշմարտությամբ ու արդարությամբ չէ իմ առաջ:

10 Եվ այժմ եկեք, ասում է Տերը Հոգով, եկեղեցու երեցմերին, և եկեք միասին ^ատրամաբանենք, որպեսզի դուք հասկանաք.

11 Եկեք տրամախոսենք, ճիշտ ինչպես մարդ տրամախոսում է մեկ այլ մարդու հետ, դեմ առ դեմ:

12 Արդ, երբ մարդ տրամախոսում է, նա հասկացվում է մարդու կողմից, որովհետև տրամաբանում է մարդու պես. ճիշտ այդպես էլ ես՝ Տերս, կտրամախոսեմ ձեզ հետ, որպեսզի դուք ^ահասկանաք:

13 Ուստի, Ես՝ Տերս, տալիս եմ ձեզ այս հարցը,– Ինչի՞ համար եք դուք ^ակարգվել:

14 Քարոզելու իմ ավետարանը ^աՀոգով, այսինքն՝ ^բՄխիթարիչով, որն առաջ է ուղարկվել՝ ճշմարտությունն ուսուցանելու:

15 Եվ ապա, դուք ստացաք

^աճիներ, որոնց չէիք կարողանում հասկանալ և ընդունեցիք, որ դրանք Աստծուց էին. արդ արդարացվա՞ծ եք դուք այս բանում:

16 Ահա, այս հարցին դուք ինքներդ պիտի պատասխանեք. այնուամենայնիվ, ես ողորմած կլինեմ ձեր հանդեպ. նա, ով թույլ է ձեր մեջ, այսուհետև պիտի ^աուժեղացվի:

17 Ճշմարիտ ասում եմ ձեզ, նա, ով կարգված է իմ կողմից և առաջ է ուղարկված ճշմարտության խոսքը ^աքարոզելու՝ Մխիթարիչի միջոցով, ճշմարտության Հոգով, արդյո՞ք նա քարոզում է դա ճշմարտության ^բՀոգով, թե՞ որևէ այլ ձևով:

18 Եվ եթե լինի որևէ այլ ձևով, ապա Աստծուց չէ:

19 Եվ բացի այդ, նա, ով ստանում է ճշմարտության խոսքը, արդյո՞ք այն ընդունում է ճշմարտության Հոգով, թե՞ որևէ այլ ձևով:

20 Եթե լինի որևէ այլ ձևով, ապա Աստծուց չէ:

21 Ուստի, ինչո՞ւ դուք չեք կարողանում հասկանալ և իմանալ, որ նա, ով խոսքը ստանում է ճշմարտության Հոգով, ստանում է այնպես, ինչպես քարոզվում է ճշմարտության Հոգով:

22 Հետևաբար, նա, ով քարոզում է, և նա, ով ստանում է, հասկանում են միմյանց, և երկուսն էլ ^աշենանում են և միասին ^բցնծում:

7ա Մատ. ԻԳ.13–15,
Ալմա 34.28:
բ Մոսիա 27.8–9:
գ սո՛ր Գև:
դ նշ. նրանք, ովքեր խաբվել են:
8ա Վևո՛ւ 1.14, 56.3, 64.35:
սո՛ւ Հեռացում:
10ա Ես. Ա.18, Վևո՛ւ 45.10:

12ա Վևո՛ւ 1.24:
13ա սո՛ւ Կարգել, Կարգում:
14ա Վևո՛ւ 43.15:
սո՛ւ Ուսուցանել,
Ուսուցիչ – Հոգով ուսուցանելը:
բ սո՛ւ Մխիթարիչ:
15ա սո՛ւ Չամազանելու պարգև:

16ա Եթեր 12.23–27:
17ա սո՛ւ Մխիթներական աշխատանք. Քարոզել:
բ Վևո՛ւ 6.15:
սո՛ւ Մուրք Հոգի.
Ճշմարտություն:
22ա Ա Կոր. ԺԳ.26:
բ Հովհ. Գ.36:

23 Իսկ այն, ինչ չի շենացնում, Աստծուց չէ, և ՞խավար է:

24 Այն, ինչ Աստծուց է՝ ՞լույս է. և նա, ով ստանում է լույսը և ՞շարունակում է Աստծո հետ, ստանում է ՞ավելի շատ լույս. և այդ լույսն ավելի ու ավելի է պայծառանում, մինչև որ կատարյալ օր է դառնում:

25 Եվ բացի այդ, ճշմարիտ ասում են ձեզ, և ես դա ասում եմ, որպեսզի իմանաք ՞ճշմարտությունը, որ կարողանաք խավարը ցրել ձեր միջից:

26 Ով կարգված է Աստծո կողմից և առաջ է ուղարկված, նա նշանակված է լինել ՞ամենամեծը, չնայած, նա ամենափոքրն է և բոլորի ՞ծառան:

27 Ուստի նա է բոլոր բաների ՞տիրապետողը. քանզի բոլոր բաները ենթակա են նրան՝ թե՛ երկնքում և թե՛ երկրի վրա, կյանքը և լույսը, Հոգին և ՞գորությունը, առաջ ուղարկված Հոր կամքով, Հիսուս Քրիստոսի՝ նրա Որդու միջոցով:

28 Բայց ոչ մեկը չի տիրապետի բոլոր բաներին, եթե ՞չնաքրագործվի ու ՞չնաքրվի ամեն մեղքից:

29 Եվ եթե դուք մաքրագործված ու մաքրված եք ամեն մեղքից, դուք ՞կխնդրեք, ինչ կամենաք,

Հիսուսի անունով, և այն կկատարվի:

30 Սակայն իմացեք սա՝ այն, ինչ խնդրեք, ձեզ կտրվի. և քանի որ դուք նշանակված եք ՞գլխավոր, ոգիները ձեզ կենթարկվեն:

31 Ուստի, կլինի այնպես, որ եթե դուք նկատեք ՞ոգու դրսևորում, որը չեք կարողանում հասկանալ, և դուք չեք ընդունում այդ ոգին, դուք պիտի խնդրեք Հորը՝ Հիսուսի անունով. և եթե նա ձեզ չտա այդ ոգին, ապա դուք կիմանաք, որ այն Աստծուց չէ:

32 Եվ ձեզ ՞գորություն պիտի տրվի այդ ոգու վրա. և դուք բարձր ձայնով պիտի հռչակեք այդ ոգու դեմ, որ այն Աստծուց չէ,–

33 Ոչ ՞հայիոյող մեղադրանքով, որ դուք չհաղթվեք, ոչ ՞պարծենալով, ոչ էլ հրճվելով, չլինի թե տարվեք դրանով:

34 Նա, ով ստանում է Աստծուց, թող համարի դա Աստծուց. և թող նա ցնձա, որ արժանի է համարվել Աստծո կողմից ստանալուն:

35 Եվ ուշք դարձնելով ու կատարելով այս բաները, որոնք ստացել եք, և որոնք հետագայում կստանաք,– և ՞արքայությունը տրվել է ձեզ, Հոր կողմից, և ՞գորություն՝ հաղթահարելու բոլոր բաները, որոնք նրա կողմից չեն կարգված,–

23ա սո՛ւ Հոգևոր խավար: 24ա Ա Հովհ. Բ.8–11, Մոր. 7.14–19, ՎևՈՒ 84.45–47, 88.49: սո՛ւ Լույս, Քրիստոսի լույս: p Հովհ. ԺԵ.4–5, 10: q 2 Նեփի 28.30: 25ա Հովհ. Ը.32: 26ա Մատ. ԻԳ.11: p Մար. Ժ.42–45: սո՛ւ Ծառայություն:

27ա ՎևՈՒ 76.5–10, 53–60, 84.34–41: p սո՛ւ Չորություն: 28ա 3 Նեփի 19.28–29, ՎևՈՒ 88.74–75: սո՛ւ Անարատ, Անարատություն. Սրբագործում: p Ա Հովհ. Ա.7–9: 29ա Հել. 10.5, ՎևՈՒ 46.30: սո՛ւ Աղոթք:

30ա սո՛ւ Իշխանություն: 31ա Ա Հովհ. Դ.1: սո՛ւ Ոգի – Չար ոգիներ: 32ա Մատ. Ժ.1: 33ա Հուդա Ա.9: p ՎևՈՒ 84.67, 73: 35ա սո՛ւ Աստծո արքայություն կամ Երկնքի արքայություն: p Ա Հովհ. Դ.4, ՎևՈՒ 63.20, 47:

36 Եվ ահա, ճշմարիտ ասում եմ ձեզ. Օրհնված եք դուք, որ այժմ լսում եք իմ այս խոսքերն իմ ծառայի բերանից, քանզի ձեր մեղքերը [՞]ներված են ձեզ:

37 Թող իմ ծառա Ջոզեֆ Վեյլֆիլդը, որին ես հավանում եմ, և իմ ծառա [՞]Փարլի Պ. Պրատը, առաջ գնան եկեղեցիների մեջ և [՞]հորդորանքի խոսքով ամրապնդեն նրանց.

38 Եվ նաև իմ ծառա Ջոն Քորրիլը, կամ բոլոր նրանք, ովքեր կարգվել են այս պաշտոնում, և թող նրանք աշխատեն [՞]այգում. և թող ոչ մեկը չխանգարի նրանց ամելու այն, ինչը ես նշանակել եմ նրանց համար,—

39 Ուստի, այս բանում իմ ծառա [՞]Էդվարդ Պատրիջն արդարացված չէ. այնուամենայնիվ, թող նա ապաշխարի, և նա կներվի:

40 Ահա, դուք փոքր երեխաներ եք և չեք կարող [՞]տանել բոլոր

բաներն այժմ. դուք պետք է [՞]աճեք [՞]շնորհի մեջ և ճշմարտության [՞]գիտության մեջ:

41 Մի [՞]վախեցեք, փո՛քր [՞]երեխաներ, քանզի դուք իմն եք, և ես [՞]հաղթել եմ աշխարհին, և դուք նրանցից եք, որոնց իմ Հայրը [՞]տրվել է ինձ.

42 Եվ նրանցից ոչ ոք, որ իմ Հայրը տվել է ինձ, չպետք է [՞]կորչի:

43 Եվ Հայրը և ես [՞]մեկ ենք: Ես Հոր մեջ եմ և Հայրը՝ իմ մեջ. և որքան որ դուք ընդունել եք ինձ, դուք իմ մեջ եք, և ես՝ ձեր մեջ:

44 Ուստի, ես ձեր մեջ եմ, և ես եմ [՞]բարի հովիվը և Իսրայելի [՞]քարը: Նա, ով կառուցում է այդ [՞]վեմի վրա, [՞]Երբեք չի ընկնի:

45 Եվ գալիս է օրը, երբ դուք կլսեք իմ ձայնը և [՞]կտեսնեք ինձ, և կիմանաք, որ ես եմ:

46 Հետևաբար, [՞]արթուն մնացեք, որ [՞]պատրաստ լինեք: Դիշտ այդպես: Ամեն:

ԲԱԺԻՆ 51

Հայտնությունն տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեի Միջոցով, Թոնսոնում, Օհայո, 1831թ. մայիսին (History of the Church, 1.173-174): Այս ժամանակ արևելյան նահանգներից գաղթող Սրբերը սկսեցին ժամանել Օհայո, և անհրաժեշտ դարձավ որոշակի նախապատրաստություններ կատարել նրանց բնակեցման համար: Քանի որ այդ պարտականությունն անմիջականորեն եպիսկոպոսի պաշտոնի մեջ էր մտնում, Եպիսկոպոս

36ա ՎևոՒ 58.42-43:
սուր Ներել:
37ա սուր Պրատ Փարլի Պարկեր:
բ ՎևոՒ 97.3-5:
38ա սուր Տիրոջ այգին:
39ա սուր Պատրիջ Էդվարդ:
40ա 3 Նեփի 17.2-3,
ՎևոՒ 78.17-18:
բ Ա Կոր. Գ.2-3,
ՎևոՒ 19.22-23:
գ սուր Շնորհ:
դ սուր ճշմարտություն:

41ա Ա Հովհ. Գ.18:
բ սուր Աստծո որդիներն ու դուստրերը:
գ Հովհ. ԺՁ.33:
դ Հովհ. Ժ.27-29, ԺԷ.2,
3 Նեփի 15.24,
ՎևոՒ 27.14, 84.63:
42ա Հովհ. ԺԷ.12,
3 Նեփի 27.30-31:
43ա Հովհ. ԺԷ.20-23,
3 Նեփի 11.35-36:
սուր Աստված,
Աստվածագլուխ:

44ա Հովհ. Ժ.14-15:
սուր Բարի հովիվ:
բ Ծն. ԽԹ.24,
Ա Պետ. Բ.4-8:
սուր Անկյունաքար:
գ Ա Կոր. Ժ.1-4:
սուր Վեմ, Հիսուս Քրիստոս:
դ Հել. 5.12:
45ա ՎևոՒ 67.10-13:
46ա սուր Արթուն լինել:
բ Ալմա 34.32-33:

Էդվարդ Պատրիջը հրահանգներ էր փնտրում այդ հարցի վերաբերյալ, և Մարգարեն հարցրեց Տիրոջը:

1-8՝ Էդվարդ Պատրիջը նշանակված է կարգավորելու տնտեսություններն ու ունեցվածքը. 9-12՝ Սրբերը պետք է գործեն ազնվորեն և ստանան միանման. 13-15՝ Նրանք եպիսկոպոսի շտեմարան պետք է ունենան և պետք է կազմակերպեն ունեցվածքը՝ Տիրոջ օրենքի համաձայն. 16-20՝ Օհայոն պիտի լինի ժամանակավոր հավաքման վայր:

ԱԿԱՆՋ դրեք ինձ, ասում է Տերը՝ ձեր Աստվածը, և ես կխոսեմ իմ ծառա՝ Էդվարդ Պատրիջի հետ և հրահանգներ կտամ նրան. քանզի անպայման պետք է, որ նա հրահանգներ ստանա այս ժողովրդին կազմակերպելու վերաբերյալ:

2 Քանզի անպայման պետք է, որ նրանք կազմակերպվեն՝ իմ օրենքների համաձայն. հսկառակ դեպքում նրանք կկտրվեն:

3 Ուստի թող իմ ծառա Էդվարդ Պատրիջը, և նրանք, ում նա ընտրել է, որոնց ես հավանում եմ, այս ժողովրդին նշանակեն իրենց բաժինները, յուրաքանչյուր մարդուն՝ հավասարապես՝ իր ընտանիքի համեմատ, իր պայմանների և իր պահանջների ու քարիքների համեմատ:

4 Եվ իմ ծառա Էդվարդ Պատրիջը, երբ որ մի մարդու նշանակի

իր բաժինը, թող տա նրան գրություն, որը նրան կերաշխավորի նրա բաժինը, որ նա պահպանելու է այն, այսինքն՝ այդ իրավունքն ու ժառանգությունը եկեղեցում, մինչև որ չօրինազանցի և եկեղեցու ձայնով արժանի չհամարվի պատկանել եկեղեցուն՝ համաձայն եկեղեցու օրենքների ու Սուխտերի:

5 Եվ եթե նա օրինազանցի և արժանի չհամարվի պատկանել եկեղեցուն, նա իրավունք չի ունենա պահանջել այն մասը, որն ինքը մվիրաբերել է եպիսկոպոսին՝ իմ եկեղեցու աղքատների և կարիքավորների համար. ուստի, նա չի պահպանի այդ պարզը, այլ միայն իրավունք կունենա այն մասի վրա, որը վավերագրով հանձնվել է իրեն:

6 Եվ այսպես բոլոր բաները պիտի հաստատագրվեն՝ համաձայն երկրի օրենքների:

7 Եվ թող այն, ինչ պատկանում է այս ժողովրդին, նշանակվի այս ժողովրդին:

8 Եվ հրամար, որը մնացել է այս ժողովրդի համար, - թող մի գործակալ նշանակվի այս ժողովրդի համար, որ վերցնի քրամը, ապահովելու սննդով և հագուստով՝ այս ժողովրդի պահանջների համաձայն:

9 Եվ թող ամեն մարդ գործի

51 1ա սուր Պատրիջ Էդվարդ:
2ա ՎևՈՒ 42.30-39, 105.5:
սուր Նվիրաբերել, Նվիրաբերման օրենք:
3ա ՎևՈՒ 49.20:
բ Գոր. Բ.44-45,

4 Նեփի 1.2-3:
4ա նշ. 20 և 22 բաժինները կոչվում են Քրիստոսի Եկեղեցու Հանգանակներն ու Ուխտերը:
վևՈՒ 33.14, 42.13:

սուր Ուխտ:
6ա Ա Պետ. Բ.13,
վևՈՒ 98.5-7:
բ վևՈՒ 58.21-22:
8ա վևՈՒ 84.104:
բ վևՈՒ 104.15-18:

ազնվորեն, և միանման լինի այս ժողովրդի մեջ, և ստանա միանման, որպեսզի դուք լինեք մեկ, ճիշտ ինչպես պատվիրել ենք ձեզ:

10 Եվ թող այն, ինչ պատկանում է այս ժողովրդին, չվերցվի ու չտրվի մեկ ալլ եկեղեցու:

11 Ուստի, եթե մեկ ալլ եկեղեցի դրան ստանա այս եկեղեցուց, թող նրանք այն կրկին վճարեն այս եկեղեցուն՝ համաձայն պայմանավորվածության:

12 Եվ դա պիտի արվի եպիսկոպոսի կամ այն գործակալի միջոցով, որը պիտի նշանակվի եկեղեցու՝ ձայնով:

13 Եվ բացի այդ, թող եպիսկոպոսը մի՞ առնմարան հիմնի այս եկեղեցու համար. և թող բոլոր բաները՝ թե՛ դրամով և թե՛ մթերքով, որոնք ավելի են, քան թանկարժեշտ է այս ժողովրդի պահանջների համար, պահվեն եպիսկոպոսի ձեռքում:

14 Եվ թող նա պահպանի նաև իր համար, իր սեփական պահանջների համար, և իր ընտանիքի պահանջների համար, քանի

որ նա զբաղված կլինի այս գործը կատարելով:

15 Եվ այսպես, ես այս ժողովրդին տալիս եմ կազմակերպվելու արտոնություն՝ համաձայն իմ՝ օրենքների:

16 Եվ ես նվիրաբերում եմ՝ այս հողը նրանց մի փոքր ժամանակով, մինչև ես՝ Տերս, կապահովեմ նրանց մեկ ալլ ձևով և կպատվիրեմ նրանց գնալ այստեղից:

17 Եվ ժամը և օրը նրանք տրված չէ, ուստի թող նրանք գործեն այս հողի վրա, կարծես տարիների համար, և այն կվերադառնա նրանց՝ որպես բարիք:

18 Ահա, սա՞ օրինակ կլինի իմ ծառա Էդվարդ Պատրիջի համար, այլ վայրերում, բոլոր եկեղեցիներում:

19 Եվ ով որ գտնվի հավատարիմ, արդար և իմաստուն՝ տնտես, պիտի մտնի իր Տիրոջ՝ թուրախությունը, և պիտի ժառանգի հավերժական կյանք:

20 Ենչարիտ ասում են ձեզ, ես Հիսուս Զրիստոսն եմ, ով՞ գալիս է շուտով, այն թժամին, որ դուք չեք կարծում: Ե՛րբ այդպես: Ամեն:

ԲԱԺԻՆ 52

Հայտնություն՝ տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեի միջոցով, Եկեղեցու երեցներին, Կիրթլենդում, Օհայո, 1831թ. հունիսի 7-ին (History of the Church, 1.175–179): Կիրթլենդում համաժողով էր անցկացվել, որն սկսվել էր հունիսի 3-ին և ավարտվել հունիսի 6-ին: Այս համաժողովում առաջին բնորոշ կարգումներն էին արվել քահանայապետի պաշտոնում, և կեղծ ու խաբող ոգիների որոշակի դրսևորումներ էին զանազանվել ու կշտամբվել:

<p>9ա սուր Ազնիվ, Ազնվություն: բ Վև.ՈՒ 38.27: սուր Միություն: 10ա նշ. Եկեղեցու մեկ ալլ ճյուղի կամ մեկ ալլ դավանանքի: 12ա սուր Ընդհանուր</p>	<p>համաձայնություն: 13ա Վև.ՈՒ 42.55: սուր Շտեմարան: բ Վև.ՈՒ 42.33–34, 55, 82.17–19: 15ա Վև.ՈՒ 51.2: 16ա նշ. Օհայո նահանգի Կիրթլենդի տարածքը:</p>	<p>18ա նշ. գործելակերպ: 19ա Մատ. ԻԳ. 45–47: սուր Տնտես: բ սուր Ուրախություն: 20ա Հայտ. ԻԳ. 6–16: բ Մատ. ԻԳ. 44:</p>
---	--	---

1-2՝ Հաջորդ համաժողովը որոշվում է անցկացնել Միասուրիում. 3-8՝ Որոշ երեցների նշանակումներ են արվում ճամփորդել միասին. 9-11՝ Երեցները պետք է ուսուցանեն այն, ինչ առաքյալներն ու մարգարեներն են գրել. 12-21՝ Նրանք, ովքեր լուսավորված են Հոգու կողմից, առաջ են բերում գովասանքի և իմաստության պտուղներ. 22-44՝ Մի քանի երեցներ նշանակվում են, որ առաջ գնան, քարոզելով ավետարանը, մինչ կճամփորդեն դեպի Միասուրի՝ համաժողովի համար:

ԱՀԱ, այսպես է ասում Տերը երեցներին, որոնց մա՛կանչել է և ընտրել, այս վերջին օրերին, իր Հոգու ձայնով, -

2 Ասելով. Ես՝ Տերս, ձեզ հայտնի կդարձնեմ, թե ինչ են կամենում, որ դուք անեք այս ժամանակից ի վեր, մինչև հաջորդ համաժողովը, որը կանցկացվի Միասուրիում, այն՝ հողի վրա, որը ես Քնվիիրաբերեմ իմ ժողովրդի համար, որոնք Հակոբի Գմնացորդն են, և նրանց համար, ովքեր ժառանգներ են՝ Դուխտի համաձայն:

3 Ուստի, ճշմարիտ ասում եմ ձեզ, թող իմ ծառաներ Ջոզեֆ Սմիթ կրտսերը և Միդնի Ռիզդոնը ճամփա ընկնեն, որքան շուտ որ կարող են նախապատրաստություն տեսնել՝ իրենց տներից հեռանալու համար, և ուղևորվեն դեպի Միասուրիի հողը:

4 Եվ որքան որ նրանք հավա-

տարին կլինեն ինձ, նրանց հայտնի կդարձվի, թե ինչ պետք է անեն.

5 Եվ մահ, որքան որ նրանք հավատարիմ կլինեն, նրանց հայտնի կդարձվի ձեր ժառանգության հողը:

6 Եվ որքան որ նրանք հավատարիմ չեն լինի, նրանք պիտի կտրվեն, ճիշտ ինչպես ես եմ կամենում, ինչպես ինձ բարի է երևում:

7 Եվ բացի այդ, ճշմարիտ ասում եմ ձեզ. Թող իմ ծառա Լայման Ուայթը և իմ ծառա Ջոն Քորրիլը շտապ ճամփա ընկնեն.

8 Եվ մահ իմ ծառա Ջոն Մարդոկը, և իմ ծառա Հայրում Սմիթը, ճամփա ընկնեն դեպի նույն վայրը, Գետրոյտի ճանապարհով:

9 Եվ թող նրանք ուղևորվեն այնտեղից՝ ճանապարհին քարոզելով խոսքը, չասելով՝ ոչինչ, բացի այն, ինչ գրել են ՚մարգարեներն ու առաքյալները, և այն, ինչն ուսուցանվել է իրենց՝ Պիտիթարիչի կողմից, հավատքի աղոթքով:

10 Թող նրանք գնան,՝ Երկուերկու, և այդպես, թող ճանապարհին քարոզեն յուրաքանչյուր ժողովքում, մկրտելով ՚ջրով և ճճեռնադրմամբ՝ ջրի մոտ:

11 Քանզի այսպես է ասում Տերը. Ես կկարճացնեմ իմ գործն՝ արդարությանը, քանզի մոտենում են օրերը, երբ ես դատաստան առաջ կուղարկեմ՝ ի հաղթություն:

12 Եվ թող իմ ծառա Լայման Ուայթը զգուշանա, քանզի Սա-

52 1ա սու՛ր Կանչ, Աստծո՛ կողմից կանչված, Կոչում:
 2ա Վև՛ՈՒԲ 57.1-3:
 բ Վև՛ՈՒԲ 58.57, 84.3-4:
 գ Սաղ. 6ԼԵ.4,
 3 Նեփիի 5.21-26:
 դ Աբր. 2.6-11:

սու՛ր Աբրահամի ուխտը:
 5ա Վև՛ՈՒԲ 57.1-3:
 9ա Մոսիա 18.19-20:
 բ Վև՛ՈՒԲ 42.12, 52.36:
 սու՛ր Սուրբ գրքեր:
 գ սու՛ր Միտիթարիչ, Սուրբ Հոգի, Ուսուցանել,

Ուսուցիչ - Հոգով ուսուցանելը:
 10ա Մար. 2,7,
 Վև՛ՈՒԲ 61.35:
 բ Հովհ. Ա.26:
 գ Գոր. Ը.14-17:
 11ա Հռովմ. Թ.28:

տանան ցանկանում է մղեղի պես
՝մաղել իրեն:

13 Եվ ահա, նա, ով ՝հավատա-
րիւմ է, կառավարիչ կդրվի շատ
բաների վրա:

14 Եվ բացի այդ, ես ձեզ կտամ
մի օրինակ, բոլոր բաների համար,
որպեսզի դուք չխաբվեք. բանզի
Սատանան դրսում է, երկրի վրա,
և նա առաջ է գնում՝ խաբելով ազ-
գերին,–

15 Ուստի, ով որ աղոթում է, ում
հոգին ՝փշրված է, նա ՝ընդունվում
է իմ կողմից, եթե հնազանդվում է
իմ Գարարողություններին:

16 Ով որ խոսում է, ում հոգին
փշրված է, ում լեզուն հեզ է և
շենացնող, նա Աստծուց է, եթե
հնազանդվում է իմ արարողու-
թյուններին:

17 Եվ բացի այդ, նա, ով դողում
է իմ զորության ներքո, ՝ուժեղ
պիտի դարձվի, և զովասանքի և
՝իմաստության պտուղներ պիտի
բերի, համաձայն հայտնություննե-
րի ու ճշմարտությունների, որոնք
ես տվել եմ ձեզ:

18 Եվ բացի այդ, նա, ով հաղթ-
վում է և պտուղներ չի ՝բերում,
ճիշտ այս օրինակի համաձայն,
ինձանից չէ:

19 Ուստի, այս օրինակով դուք
պիտի ՝ճանաչեք ոզիները, բոլոր
պարագաներում, ողջ երկնքի տակ:

20 Եվ օրերը եկել են. մարդկանց
համար ՝կկատարվի՝ համաձայն
իրենց հավատքի:

21 Ահա, այս պատվիրանը

տրվել է բոլոր երեցներին, որոնց
ես ընտրել եմ:

22 Եվ բացի այդ, ճշմարիտ ասում
եմ ձեզ. Թող իմ ծառա ՝Թոմաս Բ.
Մարշը և իմ ծառա Էզրա Թայրը
նույնպես ճամփա ընկնեն դեպի
այդ նույն հողը՝ ճանապարհին
քարոզելով խոսքը:

23 Եվ բացի այդ, ճշմարիտ ասում
եմ ձեզ. Թող իմ ծառա Իսահակ
Մորլին և իմ ծառա Էզրա Բուրը
նույնպես ճամփա ընկնեն դեպի
այդ նույն հողը՝ ճանապարհին
քարոզելով խոսքը:

24 Եվ բացի այդ, թող իմ ծառաներ
՝Էդվարդ Պատրիջն ու Մարտին
Հարրիսը ճամփա ընկնեն իմ ծա-
ռաներ Սիդնի Ռիգդոնի և Ջոզեֆ
Սմիթ կրտսերի հետ:

25 Թող իմ ծառաներ Դեյվիդ
Ուիթմերն ու Հարվի Ուիթլոկը
նույնպես ճամփա ընկնեն դեպի
այդ նույն հողը և ճանապարհին
քարոզեն:

26 Եվ թող իմ ծառաներ ՝Փարլի
Պ. Պրատն ու ՝Օրսոն Պրատը
ճամփա ընկնեն և քարոզեն ճա-
նապարհին, նույնիսկ մինչև այդ
նույն հողը:

27 Եվ թող իմ ծառաներ Սողո-
մոն Հենկոկը և Սիմեոն Քարտերը
նույնպես ճամփա ընկնեն դեպի
այդ նույն հողը և քարոզեն ճանա-
պարհին:

28 Թող իմ ծառաներ Էդսոն Ֆուլ-
լերը և Ջեյկոբ Սքոտը նույնպես
ճամփա ընկնեն:

29 Թող իմ ծառաներ Լիվայ Ու.

12ա Ղուկ. ԻԲ.31,
3 Նեփի 18.17–18:

13ա Մատ. ԻԵ.23,
ՎևՈՒ 132.53:

15ա սՈՒ Կոտրված սիրտ:
բ ՎևՈՒ 97.8:

գ սՈՒ Արարողություններ:

17ա ՎևՈՒ 66.8, 133.58:
բ սՈՒ Իմաստություն:

18ա Մատ. Գ.10:

19ա սՈՒ Չանազանելու
պարզ:

20ա Մատ. Ը.5–13:

22ա ՎևՈՒ 56.5:

սՈՒ Մարշ Թոմաս Բ.
24ա սՈՒ Պատրիջ Էդվարդ:

26ա սՈՒ Պրատ Փարլի
Պարլեր:

բ սՈՒ Պրատ Օրսոն:

Հենկոկը և Ջեքեդե Քոլթրինը նույնպես ճամփա ընկնեն:

30 Թող իմ ծառաներ Ռեյնոլդս Քահունը և Սեմյուել Հ. Սմիթը նույնպես ճամփա ընկնեն:

31 Թող իմ ծառաներ Ուիլլեր Բալդվինը և Վիլյամ Քարտերը նույնպես ճամփա ընկնեն:

32 Եվ թող իմ ծառաներ ՄՆյուել Նայթը և Սելա Ջ. Գրիֆինը՝ երկուսն էլ կարգվեն և նույնպես ճամփա ընկնեն:

33 Այո, ճշմարիտ ասում եմ ես. Թող նրանք բոլորը ճամփա ընկնեն նույն վայրը, իրենց տարբեր ուղղություններով, և ոչ մեկը չպիտի կառուցի մեկ ուրիշի՝ ՝հիմքի վրա, ոչ էլ պիտի ճամփորդի մեկ ուրիշի հետքերով:

34 Նա, ով հավատարիմ կմնա, պիտի պահվի ու օրհնվի շատ ՝պտղով:

35 Եվ բացի այդ, ասում եմ ձեզ. Թող իմ ծառաներ Ջոզեֆ Վեյկֆիլդը և Սողոմոն Համփրին ճամփա ընկնեն դեպի արևելյան հողերը.

36 Թող նրանք աշխատեն իրենց ընտանիքների հետ, ՝չհայտարարելով ուրիշ ոչ մի բան, բացի մարգարեներից ու առաքյալներից, այն, ինչ նրանք ՝տեսել են և լսել ու ամենայն համոզվածությամբ ճիշտությամբ են, որպեսզի մարգարեություններն իրականանան:

37 Օրինազանցության հետևանքով, թող այն, ինչ շնորհվել էր Հիման Բասսեթին, ՝վերցվի նրա-

նից և դրվի Սայմոնդս Ռ-այդերի գլխին:

38 Եվ բացի այդ, ճշմարիտ ասում եմ ձեզ. Թող Ջարեդ Քարտերը ՝կարգվի քահանա, և նաև Ջորջ Ջեյմսը կարգվի ՝քահանա:

39 Թող մնացած երեցները ՝հսկեն եկեղեցիները և հայտարարեն խոսքն իրենց մոտակա շրջաններում. և թող նրանք աշխատեն իրենց սեփական ձեռքերով, որպեսզի որևէ ՝կռապաշտություն, ոչ էլ ամբարշտություն չգործածվի:

40 Եվ բոլոր բաներում հիշեք ՝աղքատներին ու ՝կարիքավորներին, հիվանդներին ու տառապյալներին, քանզի ով որ չի անում այս բաները, նա իմ աշակերտը չէ:

41 Եվ բացի այդ, թող իմ ծառաներ Ջոզեֆ Սմիթ կրոտերը և Սիդնի Ռիգդոնը և Էդվարդ Պատրիջն իրենց հետ ՝երաշխավորագիր վերցնեն եկեղեցուց: Եվ թող մեկն էլ ձեռք բերվի իմ ծառա Օլիվեր Քաուդերիի համար:

42 Եվ այսպես, ճիշտ ինչպես ես ասացի, եթե դուք հավատարիմ լինեք, դուք կժողովվեք միասին՝ ուրախանալու ՝Միսսուրիի հողի վրա, որը հողն է ձեր ՝Ժառանգության, որն այժմ ձեր թշնամիների հողն է:

43 Սակայն, ահա, ես՝ Տերս, իր ժամանակին կարագացնեմ քաղաքի կառուցումը, և ՝ուրախությանը ու ցնծությանը կպսակեմ հավատարիմներին:

32ա ՎևՈՒ 56.6-7:
33ա Հոովմ. ԺԵ.20:
34ա Հովհ. ԺԵ.16,
ՎևՈՒ 18.15-16:
36ա Մոսիա 18.19-20,
ՎևՈՒ 52.9:
բ Հովհ. Գ.11:
գ սո՛ւ Հավատ, Հավատալ:

37ա Մատ. ԻԵ.25-30:
38ա ՎևՈՒ 79.1:
բ սո՛ւ Քահանա՝
Ահարոնյան
քահանայություն:
39ա Ալմա 6.1:
բ սո՛ւ Կռապաշտություն:
40ա ՎևՈՒ 104.15-18:

սո՛ւ Ադրատ:
բ սո՛ւ Բարօրություն:
41ա ՎևՈՒ 20.64:
42ա սո՛ւ Սիոն:
բ ՎևՈՒ 25.2, 57.1-3:
43ա սո՛ւ Ուրախություն:

44 Ահա, ես Հիսուս Քրիստոսն եմ՝ Աստծո Որդին, և վերջին օրը

ես նրանց ^ակբարձրացնեմ: Դիշտ այդպես: Ամեն:

ԲԱԺԻՆ 53

Հայտնություն տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեի միջոցով, Ալջերնոն Սիդնի Գիլբերտին, Կիրթլենդում, Օհայո, 1831թ. հունիսին (History of the Church, 1.179–180): Սիդնի Գիլբերտի խնդրանքով, Մարգարեն հարցրեց Տիրոջը, թե որն է Եղբայր Գիլբերտի գործը և նշանակումը Եկեղեցում:

1–3՝ Սիդնի Գիլբերտի կոչումը և ընտրությունը Եկեղեցում երեց կարգվելն է. 4–7՝ Նա պետք է նաև ծառայի, որպես եպիսկոպոսի գործակալ:

համաձայն իմ խոսքի, և Սուրբ Հոգու ստացումը ^բձեռնադրմամբ. 4 Եվ նաև ^ագործակալ լինելու այս եկեղեցու համար, այնտեղ, որտեղ եպիսկոպոսը կնշանակի, համաձայն պատվիրանների, որոնք կարվեն այսուհետև:

ԱՀԱ, ես ասում եմ քեզ, իմ ծառա՝ Սիդնի Գիլբերտ, որ ես լսել եմ քո աղոթքները. և դու կանչել ես առ ինձ, որ քեզ հայտնի դարձվի Տիրոջ՝ քո Աստծու կողմից, եկեղեցում քո կոչման և ^բընտրության վերաբերյալ, որը ես՝ Տերս, բարձրացրել եմ այս վերջին օրերին:

5 Եվ բացի այդ, ճշմարիտ ասում եմ քեզ, դու պետք է ճամփա ընկնես իմ ծառա Ջոզեֆ Սմիթ կրտսերի և Սիդնի Ռիգդոնի հետ:

2 Ահա, ես՝ Տերս, որը ^ախաչվեց աշխարհի մեղքերի համար, պատվիրան եմ տալիս քեզ, որ դու պետք է ^բթողնես աշխարհը:

6 Ահա, դրանք առաջին արարողություններն են, որ դու պիտի ստանաս. իսկ մնացածը քեզ հայտնի կդարձվի ապագայում՝ իմ այգում քո աշխատանքի համաձայն:

3 Քեզ վրա վերցրու իմ կարգումը, այսինքն՝ այն, որ երեցինն է, քարոզելու հավատք և ապաշխարություն և մեղքերի ^աթողություն,

7 Եվ բացի այդ, ես կկամենայի, որ դուք իմանաք, որ միայն նա է փրկվում, ով ^ահամբերում է մինչև վերջ: Դիշտ այդպես: Ամեն:

ԲԱԺԻՆ 54

Հայտնություն տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեի միջոցով, Նյուեյ Նայքին, Կիրթլենդում, Օհայո, 1831թ. հունիսին (History of the Church, 1.180–181): Թոմսոնում, Օհայո, ճյուղի անդամները տարակարծիք էին ունեցվածքի նվիրաբերմանը վերաբերող հարցերում: Եսասիրություն և ժլատություն էր դրսևորվել, և Լեման Քոփլին խախտել էր իր ուխտը՝ նվիրաբերելու իր մեծ ազարակը, որպես ծառանգության վայր,

44ա ՎևՈՒ 88.96–98:
53 1ա սոՒ Կոչում և ընտրություն, Ընտրյալ, Ընտրություն:
2ա սոՒ Խաչելություն:

բ սոՒ Աշխարհ. Աշխարհիկություն:
3ա սոՒ Մեղքերի թողություն:
բ սոՒ Ձեռնադրություն:

4ա ՎևՈՒ 57.6, 8–10, 14–15, 84.113:
7ա սոՒ Համբերել:

Քողովիլից, Նյու Յորք, ժամանող Սրբերի համար: Էզրա Թայրը նույն-
պես հակաճառողներին մեջ էր: Արդյունքում, Նյուել Նայթը (ճյուղի
նախագահը Թոմսոնում) և այլ երեցներ եկել էին Մարգարեի մոտ՝ հարց-
նելու, թե ինչպես վարվել: Մարգարեն հարցրեց Տիրոջը և ստացավ
այս հայտնությունը: (Տե՛ս 56-րդ բաժինը, որն այս հարցի շարունա-
կությունն է):

1-6՝ Սրբերը պետք է պահեն ավե-
տարանի ուխտը, որպեսզի որդրմու-
թյուն ձեռք բերեն: 7-10՝ Նեղություն
մեջ նրանք պետք է համբերող լինեն:

ԱՀԱ, այսպես է ասում Տերը,
Այսիքն՝ ՄԱլֆան և Օմեգան՝
սկիզբը և վերջը, այսիքն՝ նա,
ով Քիսաչվել է աշխարհի մեղքերի
համար, -

2 Ահա, ճշմարիտ, ճշմարիտ
ասում եմ քեզ, իմ ծառա՝ Նյուել
Նայթ, դու պետք է անխախտ
կանգնես այն պաշտոնում, որին
քեզ նշանակել եմ:

3 Եվ եթե քո եղբայրները ցան-
կանում են խույս տալ իրենց
քնամիներից, թող նրանք ապաշ-
խարեն իրենց բոլոր մեղքերից և
արդարև Միտնարի լինեն իմ առաջ
և գղջացող:

4 Եվ քանի որ ՝ ուխտը, որը
նրանք կապել էին ինձ հետ, դրժ-
վել է, ճիշտ այդպես էլ այն դարձել
է Քզուր և ապարդյուն:

5 Եվ վայ նրան, ում միջոցով գա-
լիս է այս ՝ հանցանքը, քանզի նրա
համար ավելի լավ կլիներ, որ նա
ծովի անդունդում խեղդվեր:

6 Բայց օրհնված եմ նրանք, ով-
քեր պահել են ուխտը և հետևել
են պատվիրանին, քանզի նրանք
՝ որդրմություն ձեռք կբերեն:

7 Ուստի, գնացեք այժմ և փա-
խեք այս հողից, շլինի թե ձեր
քշնամիները գան ձեր վրա. և
ճամփա ընկեք ու նշանակեք ում
կամենում եք, որ լինի ձեր առաջ-
նորդը և գումար վճարողը ձեզ
համար:

8 Եվ այսպես, դուք պետք է ճամ-
փա ընկնեք դեպի արևմտյան
շրջաններ՝ դեպի ՝ Միսսուրիի
հողը և Լամանացիների սահ-
մանները:

9 Եվ ճամփորդությունն ավար-
տելուց հետո, ահա, ասում եմ
ձեզ. ՝ Ապրուստ փնտրեք, ինչպես
մարդիկ, մինչև որ ես տեղ կպատ-
րաստեմ ձեզ համար:

10 Եվ բացի այդ, ՝ համբերող
եղեք նեղության մեջ, մինչև որ ես
Քգամ. և ահա, ես շուտով գալիս
եմ, և իմ վարձքն ինձ հետ է, և
նրանք, ովքեր կանուխ ՝ փնտրել
են ինձ, ՝ հանգստություն պիտի
գտնեն իրենց հոգիների համար:
Ճիշտ այդպես: Ամեն:

54 1ա Հայտ. Ա.8,
ՎևՈՒ 19.1:
սու Ալֆա և Օմեգա:
բ սու Խաչելություն:
3ա սու Խոնարի,
Խոնարիություն:
4ա ՎևՈՒ 42.30-39:
սու Նվիրաբերել,

Նվիրաբերման օրենք:
բ ՎևՈՒ 58.32-33:
5ա Մատ. ԺԸ.6-7:
6ա սու Ողորմած,
Ողորմություն:
8ա ՎևՈՒ 52.42:
9ա Ա Թես. Գ.11:
10ա սու Համբերություն:

բ Հայտ. ԻԲ.12:
սու Հիսուս Քրիստոսի
երկրորդ գալուստը:
գ Առակ. Ը.17:
սու Աղոթք:
դ Մատ. ԺԱ.28-30:
սու Հանգիստ:

ԲԱԺԻՆ 55

Հայտնություն տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեի միջոցով, Վիլյամ Վ. Ֆելփսին, Կիրթլենդում, Օհայո, 1831թ. հունիսին (History of the Church, 1.184-186): Վիլյամ Վ. Ֆելփսը՝ մի տպագրիչ, իր ընտանիքի հետ հենց նոր էր ժամանել Կիրթլենդ, և Մարգարեն նրա մասին տեղեկություն խնդրեց Տիրոջից:

1-3 Վ. Վ. Ֆելփսը կանչված և ընտրված է մկրտվելու, երեց կարգվելու և ավետարանը քարոզելու. 4՝ Նա պետք է նաև գրքեր գրի Եկեղեցու դպրոցների երեխաների համար. 5-6՝ Նա պետք է ճանապարհվի դեպի Միսսուրի, որը կլինի նրա գործելու տարածքը:

3 Եվ ում վրա էլ որ դնես քո ձեռքերը, եթե նրանք ապաշխարող են իմ առաջ, դու գործություն կունենաս պարզելու Սուրբ Հոգին:

4 Եվ բացի այդ, դու պիտի կարգվես՝ օգնելու իմ ծառա Օլիվեր Քատոլերիին, կատարելու տպագրության և այս եկեղեցու դպրոցների համար՝ գրքեր ընտրելու և գրելու աշխատանքը, որպեսզի փոքր երեխաները նույնպես կարողանան ուսուցանվել իմ առաջ, ինչը հաճելի է ինձ:

ԱՀԱ, այսպես է ասում Տերը քեզ, իմ ծառա՝ Վիլյամ, այո, այսինքն՝ Տերը ողջ էր կրի. Դու կանչված և ընտրված ես. և նրանից հետո, երբ դու ջրով թվակրտվես, ինչը եթե անես պարզ աչքով ուղղված իմ փառքին, դու կունենաս քո մեղքերի թողությունը և Սուրբ Հոգու ստացումը՝ ճեռնադրմամբ.

5 Եվ բացի այդ, ճշմարիտ ասում եմ քեզ, որ դրա համար դու պետք է իմ ծառաներ Ջոզեֆ Սմիթ կրտսերի և Սիդնի Ռիգդոնի հետ ճամփա ընկնես, որ կարողանաս ՝հիմնավորվել քո ժառանգության հողում՝ այդ գործը կատարելու համար:

2 Եվ հետո դու պիտի կարգվես, իմ ծառա Ջոզեֆ Սմիթ կրտսերի ձեռքով, այս եկեղեցու համար երեց լինելու, քարոզելու ապաշխարություն և մեղքերի ՝թողություն՝ Հիսուս Քրիստոսի՝ կենդանի Աստծո Որդու անունով մկրտվելու միջոցով:

6 Եվ բացի այդ, թող իմ ծառա Ջոզեֆ Կոն նույնպես ճամփա ընկնի նրանց հետ: Մնացածը հայտնի կդարձվի ապագայում, ճիշտ ինչպես ես եմ կամենում: Ամեն:

ԲԱԺԻՆ 56

Հայտնություն տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեի միջոցով, Կիրթլենդում, Օհայո, 1831թ. հունիսին (History of the Church, 1.186-188): Էգրա Թայրը, որը նշանակվել էր գնալու Միսսուրի, Թոմաս Մարշի հետ (տե՛ս բաժին 52.22), ի վիճակի չէր սկսելու իր առաքելությունը, երբ վերջինս

55 1ա Բ Օր. Ժ.14,
1 Նեփի 11.6,
2 Նեփի 29.7:
բ սո՛ր Մկրտություն,

Մկրտել:
գ սո՛ր Ձեռնադրություն:
2ա սո՛ր Մեղքերի
թողություն:

4ա Վևո՛ւ 88.118, 109.7, 14:
5ա Ամո՛ս Թ.15:

պատրաստ էր: Երեց Թայրը պատրաստ չէր մեկնելու իր ուղևորությանը՝ Թոմսոնում, Օհայո, խնդիրների մեջ ներգրավված լինելու պատճառով (տե՛ս 54-րդ բաժնի նախադրությունը): Տերը պատասխանեց այդ խնդրի վերաբերյալ Մարգարեի հարցմանը՝ տալով այս հայտնությունը:

1-2՝ Փրկություն ստանալու համար Սրբերը պետք է վերցնեն իրենց խաչը և հեռուեն Տիրոջը. 3-13՝ Տերը պատվիրում է, և չեղյալ է համարում, և անհնազանդները կտրվում են. 14-17՝ Վա՛յ հարուստներին, որոնք չեն կամենում օգնել աղքատներին, և վա՛յ աղքատներին, որոնց սրտերը կտրված չեն. 18-20՝ Օրհնված են աղքատները, որոնք սրտով մաքուր են, քանզի նրանք կժառանգեն երկիրը:

ԱՎԱՆՁ դրեք, ո՛վ մարդիկ, որ Մոհավանում եք իմ անունը, ասում է Տերը՝ ձեր Աստվածը. քանզի ահա, իմ բարկությունը բռնկվել է ապստամբների դեմ, և ազգերի վրա Քայցելության ու ցասման օրը նրանք պիտի ճանաչեն իմ բազուկը և իմ զայրույթը:

2 Եվ ով որ չի կամենում վերցնել իր Մխաչը և Քհետևել ինձ, և պահել իմ պատվիրանները, նա չի վրկվի:

3 Ահա, ես՝ Տերս, պատվիրում եմ. և նա, ով չի կամենում Մհնազանդվել, պիտի Քկտրվի ինձ հարմար ժամանակ, այն բանից հետո, երբ ես պատվիրում եմ, և պատվիրանը դրժվում է:

4 Ուստի ես՝ Տերս, պատվիրում եմ և Մչեղյալ եմ համարում, ինչպես ինձ բարի է երևում. և այս

բոլորը պիտի դրվի Քապատամբների գլխին, ասում է Տերը:

5 Ուստի, ես չեղյալ եմ համարում պատվիրանը, որը տրվել էր իմ ծառա ՄԹոմաս Բ. Մարշին և Էզրա Թայրին, և նոր պատվիրան եմ տալիս իմ ծառա Թոմասին, որ նա պետք է շտապ ճամփա ընկնի դեպի Միսսուրիի հողը և իմ ծառա Սելա Ջ. Գրիֆինը նույնպես պիտի գնա նրա հետ:

6 Քանզի ահա, ես չեղյալ եմ համարում այն պատվիրանը, որը տրվել էր իմ ծառաներ Սելա Ջ. Գրիֆինին և Նյուել Նայթին, Թոմսոնում գտնվող իմ ժողովրդի խստապարանոցության և նրանց ապստամբության հետևանքով:

7 Ուստի, թող իմ ծառա Նյուել Նայթը մնա նրանց հետ. և բոլոր նրանք, ովքեր կկամենան գնալ, ովքեր ապաշխարող են իմ առաջ, կարող են գնալ, և պիտի առաջնորդվեն նրա կողմից՝ դեպի այն հողը, որը ես նշանակել եմ:

8 Եվ բացի այդ, ճշմարիտ ասում եմ ձեզ, որ իմ ծառա Էզրա Թայրը պետք է ապաշխարի իր Մհպարտությունից ու եսասիրությունից, և հնազանդվի նախկին պատվիրանին, որ տվել եմ իրեն՝ այն տեղի վերաբերյալ, որտեղ նա ապրում է:

9 Եվ եթե նա կամենա անել դա, քանի որ բաժանումներ չպետք է

56 1ա ՎևՈՒ 41.1:
բ Ես. Ժ.3-4, Մորմ. 9.2, ՎևՈՒ 1.13-14, 124.10:
2ա Ղուկ. ԺԳ.27:
բ Ա Պետ. Բ.21, 2Նեփի 31.10-13,

Մոր. 7.11:
սո՛ւ Հիսուս Քրիստոս – Հիսուս Քրիստոսի օրինակը:
3ա սո՛ւ Հնազանդություն, Հնազանդ,

Հնազանդվել:
բ ՎևՈՒ 1.14-16, 50.8:
4ա ՎևՈՒ 58.31-33:
բ սո՛ւ Ապստամբություն:
5ա սո՛ւ Մարշ Թոմաս Բ.
8ա սո՛ւ Հպարտություն:

առաջացվեն այդ հողի վրա, նա դեռևս պիտի նշանակվի գնալու Միսսուրիի հողը.

10 Հակառակ դեպքում, նա պիտի ստանա գումարը, որ վճարել է, և պիտի հեռանա այն վայրից, և պիտի ^ակտրվի իմ եկեղեցուց, ասում է զորաց Տեր Աստվածը.

11 Եվ թեև երկիրը և երկիրը պիտի անցնեն, այս խոսքերը չպիտի ^աանցնեն, այլ պիտի իրականանան:

12 Եվ, եթե իմ ծառա Ջոզեֆ Սմիթ կրտսերը հարկադրված լինի վճարելու գումարը, ահա, ես՝ Տերս, կրկին այն կվճարեմ նրան Միսսուրիի հողում, որպեսզի նրանք, ումից նա ստանա, կարողանան փոխարենը վարձատրվել՝ համաձայն նրա, ինչ նրանք անում են.

13 Քանզի, համաձայն նրա, ինչ նրանք անում են, նրանք պիտի ստանան, նույնիսկ հողերով՝ իրենց ժառանգության համար:

14 Ահա, այսպես է ասում Տերն իմ ժողովրդին,– դուք շատ բաներ ունեք անելու և ապաշխարելու. քանզի ահա, ձեր մեղքերը հասել են ինձ, և չեն ներվել, որովհետև դուք փնտրում եք ^ախորհուրդ անել ձեր իսկ ուրիներով:

15 Եվ ձեր սրտերը բավարարված չեն: Եվ դուք չեք հնազանդվում ճշմարտությանը, այլ ^ահաճույք եք ստանում անիրավությունից:

16 Վա՛յ ձեզ, ^ահարուստներ, որ չեք կամենում ձեր ստացվածքը ^բտալ ^գաղքատներին, քանզի ձեր ^ահարստությունները կապականեն ձեր հոգիները. և դա կլինի ձեր ողբն այցելության, դատաստանի և գայրույթի օրը. ^բՀունձքն անցավ, ամառն ավարտվեց, և իմ հոգին փրկված չէ:

17 Վա՛յ ձեզ, ^աաղքատներ, որոնց սրտերը կտրված չեն, որոնց հոգիները փշրված չեն, և որոնց փորը չի կշտանում, և որոնք ձեռքերը ետ չեն պահում ուրիշի ունեցվածքի վրա դնելուց, որոնց աչքերը լի են ^բազահությամբ, և որ չեք կամենում աշխատել սեփական ձեռքերով:

18 Բայց օրհնված են ^աաղքատները, որոնք սրտով մաքուր են, որոնց սիրտը ^բկտրված է, և որոնց հոգին փշրված է, քանզի նրանք կտեսնեն Աստծո ^գարքայության գալը, զորությամբ ու մեծ փառքով՝ ի ազատումն իրենց. քանզի ^դերկրի պարարտությունը նրանցը կլինի:

19 Քանզի ահա, Տերը պիտի գա, և նրա ^ավարձքը կլինի իր հետ, և նա կհատուցի ամեն մարդու, և աղքատը պիտի ցնձա.

20 Եվ նրանց սերունդները պիտի ^աժառանգեն երկիրը, սերնդե-սերունդ՝ հավիտյանս հավիտենից: Եվ այժմ ես ավարտում եմ ձեզ ուղղած իմ խոսքը: Ճիշտ այդպես: Ամեն:

<p>10ա սո՛ւ Հեռացում: 11ա 2 Նեփի 9.16: 14ա Հակոբ 4.10: 15ա Ալմա 41.10, 3 Նեփի 27.11: 16ա Երեմ. ԺԷ.11, 2 Նեփի 9.30: բ սո՛ւ Ողորմություններ, Ողորմություններ տալը: գ Առակ. ԺԳ.31, Ալմա 5.55–56:</p>	<p>սո՛ւ Աղքատ: դ Հակ. Ե.3: ե Երեմ. Ը.20, Ալմա 34.33–35, Վևո՛Թ 45.2: 17ա Մոսիա 4.24–27, Վևո՛Թ 42.42, 68.30–32: բ սո՛ւ Ազահ լինել: 18ա Մատ. Ե.3, Ը, Դուկ. 2.20, 3 Նեփի 12.3:</p>	<p>սո՛ւ Աղքատ: բ սո՛ւ Կտրված սիրտ: գ սո՛ւ Աստծո արքայություն կամ Երկնքի արքայություն: դ սո՛ւ Երկիր: 19ա Հայտ. ԻԲ.12, Վևո՛Թ 1.10: 20ա Մատ. Ե.5, Վևո՛Թ 45.56–58:</p>
---	--	--

ԲԱԺԻՆ 57

Հայտնություն տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեի միջոցով, Միոնում, Ջեկսոն գավառ, Միսսուրի, 1831թ. հուլիսի 20-ին (History of the Church, 1.189-190): Համաձայն Տիրոջ պատվիրանի (բաժին 52), երեցները ճանփորդել էին Կիրթլենդից Միսսուրի, անցնելով բազմազան փորձառությունների ու որոշակի ընդդիմության միջով: Խորհելով Լամանացիների վիճակի, և մարդկանց մեջ քաղաքակրթության, գեղագիտության և կրոնի ընդհանուր պակասի մասին Մարգարեն բացակայեց. «Ե՞րբ է անապատը ծաղկելու, ինչպես վարդը: Ե՞րբ է կառուցվելու Միոնն իր փառքի մեջ, և ո՞րտեղ է կանգնելու Քո տաճարը, որտեղ պիտի գան բոլոր ազգերը վերջին օրերին»: (History of the Church, 1.189): Հետագայում նա ստացավ այս հայտնությունը:

1-3՝ Միսսուրիի Ինդիպենդենսն է վայրը Միոն քաղաքի և տաճարի համար. 4-7 Սրբերը պետք է հողեր գնեն և ժառանգություն ստանան այդ տարածքում. 8-16 Միդնի Գիլբերտը պետք է մի վաճառատուն հիմնի, Վ. Վ. Ֆելիսը պետք է լինի տպագրիչը, իսկ Օլիվեր Քատլերին պետք է նյութեր խմբագրի հրատարակության համար:

ԱԿԱՆՋ դրեք, ով իմ եկեղեցու՛ Երեցներ, ասում է Տերը՝ ձեր Աստվածը, դո՛ւք, որ ժողովվել եք միասին, համաձայն իմ պատվիրանների, այս հողում, որն է Միսսուրիի հողը, որն այն Քողոն է, որը ես նշանակել եմ Գովիթրագործել եմ սրբերի Քիավաքման համար:

2 Ուստի, սա է խոստումի երկիրը և Մվայրը Քիոն քաղաքի համար:

3 Եվ այսպես է ասում Տերը՝ ձեր Աստվածը. Եթե դուք կամենում եք ստանալ իմաստություն, այստեղ է իմաստությունը: Ահա, վայրը, որն

այժմ կոչվում է Ինդիպենդենս, կենտրոնական վայրն է. իսկ Մտաճարի տեղն ընկած է արևմուտք, այն հողակտորի վրա, որը հեռու չէ դատարանի շենքից:

4 Ուստի, իմաստություն է այն, որ սրբերը ՞գնեն այդ հողը, և նաև արևմուտք ընկած ամեն մի հողատարածք, նույնիսկ մինչև այն գիծը, որն ուղղակիորեն երկարաձգվում է Քիեթայի ու հեթանոսի միջև.

5 Եվ նաև ամեն հողատարածք, որ սահմանակից է տափաստանների, որքան որ իմ աշակերտներն ի վիճակի կլինեն հողեր ՞գնել: Ահա, սա է իմաստությունը, որ նրանք կարողանան Քձեռք բերել այն՝ հավիտենական ժառանգության համար:

6 Եվ թող իմ ծառա Միդնի Գիլբերտը կանգնի այն պաշտոնում, որին նրան նշանակել եմ՝ գումար ստանալու, ՞գործակալ լինելու եկեղեցու համար, հող գնելու մեր-

57 1ա ՎևՈԲ 52.42:
բ ՎևՈԲ 29.7-8,
45.64-66:
գ ՎևՈԲ 61.17:
դ սո՛ւ Բարայել –
Իսրայելի ցրվելը:
2ա ՎևՈԲ 28.9, 42.9, 62:

բ սո՛ւ Միոն:
3ա ՎևՈԲ 58.57, 97.15-17:
4ա ՎևՈԲ 48.4:
բ նշ. «Հրեա» այստեղ
նկատի ունի
Լամանացիներին,
իսկ «Հեթանոս»՝

սպիտակամորթ
նորարանակներին:
5ա ՎևՈԲ 58.49, 51,
101.68-74:
բ ՎևՈԲ 56.20:
6ա ՎևՈԲ 53:

ծակա շրջաններում, որքան որ հնարավոր կլինի դա անել, արդարությամբ, և ինչպես կթելադրի իմաստությունը:

7 Եվ թող իմ ծառա ՝ Եղվարդ Պատրիքը կանգնի այն պաշտոնում, որին նրան նշանակել եմ, և սրբերին ՝ քաժանի իրենց ժառանգությունը, ճիշտ ինչպես պատվիրել եմ. և նույնը թող անեն նաև նրանք, որոնց նա նշանակել է իրեն օգնելու:

8 Եվ բացի այդ, ես ասում եմ ձեզ, թող իմ ծառա Սիդնի Գիլբերտը հիմնավորվի այս վայրում և մի վաճառատուն հիմնի, որ կարողանա ապրանքներ վաճառել, առանց խարդախության, որ կարողանա գումար վաստակել, որպեսզի հող գնի՝ սրբերի բարիքի համար, և որ կարողանա ձեռք բերել ինչ որ աշակերտներին անհրաժեշտ կլինի՝ իրենց ժառանգություններում հիմնավորվելու համար:

9 Եվ նաև թող իմ ծառա Սիդնի Գիլբերտը մի արտոնագիր ձեռք բերի, - ահա, այստեղ է իմաստությունը, և ով կարդում է, թող հասկանա, - որ կարողանա ապրանքներ ուղարկել ժողովրդին, նրանց միջոցով, ում կկամենա ծառայության վարձել՝ որպես գործավարներ:

10 Եվ այդպես ապահովի իմ սրբերին, որպեսզի իմ ավետարանը քարոզվի նրանց, ովքեր նստած են ՝ խավարի մեջ և մահվան տարածքում ու ՝ ստվերում:

11 Եվ բացի այդ, ճշմարիտ ասում եմ ձեզ. Թող իմ ծառա ՝ Վիլյամ Վ. Ֆելփսը հիմնավորվի այս վայրում և հաստատվի որպես ՝ տպագրիչ եկեղեցու համար:

12 Եվ ահա, եթե աշխարհն ընդունի նրա գրությունները, - ահա այստեղ է իմաստությունը, - թող նա ձեռք բերի ինչ-որ կարող է ձեռք բերել արդարությամբ՝ սրբերի բարիքի համար:

13 Եվ թող իմ ծառա ՝ Օլիվեր Քաուդերին օգնի նրան, ճիշտ ինչպես ես պատվիրել եմ, որտեղ որ ես կնշանակեմ նրան՝ արտագրելու, և ուղղելու, և ընտրելու, որ բոլոր բաները ճիշտ լինեն իմ առաջ, ինչպես որ այն կհաստատվի Հոգու կողմից, նրա միջոցով:

14 Եվ այսպես, թող նրանք, որոնց մասին ես խոսեցի, հիմնավորվեն Սիոնի հողում, որքան հնարավոր է արագ, իրենց ընտանիքներով, որ կատարեն այդ բաները, ճիշտ ինչպես ես ասացի:

15 Իսկ այժմ հավաքման վերաբերյալ, - Թող եպիսկոպոսը և գործակալը պատրաստություններ տեսնեն այն ընտանիքների համար, որոնց պատվիրվել է գալ այս հողը, որքան հնարավոր է շուտ, և նրանց հիմնավորեն իրենց ժառանգությունում:

16 Իսկ մնացած երեցների ու անդամների համար լրացուցիչ ուղղություններ պիտի տրվեն հետագայում: Դիշտ այդպես: Ամեն:

7ա ՎևոՒ 58.24:
սոՒ Պատրիք Եղվարդ:
բ ՎևոՒ 41.9-11,
58.14-18:

10ա Ես. Թ.2,
Մատ. Գ.16:
սոՒ Հոգևոր խավար:
բ Սաղ. ԻԳ.4:

11ա սոՒ Ֆելփս Վիլյամ Վ.
բ ՎևոՒ 58.37, 40-41:
13ա սոՒ Քաուդերի Օլիվեր:

ԲԱԺԻՆ 58

Հայտնություն տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեի միջոցով, Միոնում, Ջեկսոն գավառ, Միսսուրի, 1831թ. օգոստոսի 1-ին (History of the Church, 1.190-195): Մարգարեի և նրա խմբի Միսսուրիի Ջեկսոն գավառ վերադառնալու առաջին Հանգստության օրը կրոնական ծառայություն անցկացվեց, և մկրտությամբ երկու անդամներ ընդունվեցին: Քոլսվիլի Սրբերից ոմանք, Թոմսոն ճյուղից, և այլոք ժամանեցին այդ շաբաթվա ընթացքում (տե՛ս 54-րդ բաժինը): Շատերը խիստ փափագում էին իմանալ Տիրոջ կամքն իրենց վերաբերյալ՝ հավաքման այդ նոր վայրում:

1-5՝ Նրանք, ովքեր համբերում են նեղության մեջ, կպասկվեն փառքով. 6-12՝ Սրբերը պետք է նախապատրաստվեն Գառի հարսանիքին և Տիրոջ ընթրիքին. 13-18՝ Եպիսկոպոսները՝ Իսրայելի դատավորներն են. 19-23՝ Սրբերը պետք է հնազանդվեն երկրի օրենքներին. 24-29՝ Մարդիկ պետք է իրենց կամքի ազատությունը գործածեն բարիք գործելու համար. 30-33՝ Տերը պատվիրում է և չեղյալ է համարում. 34-43՝ Ապաշխարելու համար մարդիկ պետք է խոստովանեն և թողնեն իրենց մեղքերը. 44-58՝ Սրբերը պետք է գնեն իրենց ծառանգությունը և հավաքվեն Միսսուրիում. 59-65՝ Ավետարանը պիտի քարոզվի ամեն արարածի:

ԼՍԵՔ, ով իմ եկեղեցու՝ երեզներ, և ականջ դրեք իմ խոսքին, և սովորեք ինձանից, թե որն է իմ կամքը ձեր վերաբերյալ և նաև՝ «այս հողի վերաբերյալ, ուր ուղարկել եմ ձեզ:

2 Քանզի ճշմարիտ ասում եմ ձեզ, որ օրհնված է նա, ով «պահում է

իմ պատվիրանները՝ կյանքում լինի, թե ^բմահվան մեջ. և ով որ ^գհավատարիմ է ^անեղության մեջ, նրա վարձքն ավելի մեծ է երկնքի արքայությունում:

3 Ներկայումս, դուք ձեր բնական աչքերով չեք կարող տեսնել ձեր «Աստծո ծրագիրը, այն բաների վերաբերյալ, որոնք ապագայում տեղի են ունենալու, և ^բփառքը, որը պիտի գա շատ նեղությունից հետո:

4 Քանզի շատ ^անեղությունից հետո գալիս են ^բօրհնությունները: Ուստի գալիս է օրը, երբ դուք պիտի ^գպասկվեք մեծ ^ափառքով. դեռևս ժամը չէ, բայց մոտ է՝ առ ձեռն:

5 Հիշեք սա, որն ասում եմ ձեզ նախապես, որ կարողանաք այն սրտի մեջ ^ադնել, և ընդունել այն, ինչը պիտի հետևի:

6 Ահա, ճշմարիտ ասում եմ ձեզ, որ այս նպատակով եմ ձեզ ուղարկել, – որ կարողանաք լինել հնազանդ, և որ ձեր սրտերը ^ապատրաստ լինեն ^բվկայություն բերելու այն բաների մասին, որոնք պիտի գան.

58 1ա ՎևոԲ 57.1-8:
2ա Մոսիա 2.22:
բ Ա Պետ. Գ.6:
գ սո՛ր Չախորդություն:
դ Բ Թեա. Ա.4:
3ա սո՛ր Աստված,
Աստվածագլուխ:

բ սո՛ր Փառք:
4ա Սաղ. Լ.5,
ՎևոԲ 101.2-7,
103.11-14, 109.76:
բ սո՛ր Օրհնել, Օրհնված,
Օրհնություն:
գ սո՛ր Պսակ. Վեհացում:

դ Հռովմ. Ը.17-18,
ՎևոԲ 136.31:
5ա Բ Օր. ԺԱ.18-19:
6ա ՎևոԲ 29.8:
բ սո՛ր Վկայություն:

7 Եվ նաև, որ դուք պատիվ ունենաք հիմքը դնելու և վկայելու այն հողի մասին, որի վրա Աստծո Սիոնը պիտի կանգնի.

8 Եվ նաև, որ պարարտ բաներով մի խնջույք պատրաստվի՝ աղքատների համար. այո, մի խնջույք՝ պարարտ բաներով, ^բհին և մաքրված գինով, որպեսզի երկիրն իմանա, որ մարգարեների բերանները չեն խափանվելու.

9 Այո, Տիրոջ տան մի ընթրիք, լավ պատրաստված, որին բոլոր ազգերը պիտի հրավիրվեն:

10 Առաջինը՝ հարուստները և ուսյալները, իմաստուններն ու ազնվականները.

11 Իսկ դրանից հետո գալիս է իմ գորության օրը. այն ժամանակ, աղքատները, կաղերը, և կույրերը, և խուլերը պիտի ներս մտնեն Գառի ՝ հարսանիքը, և ճաշակեն Տիրոջ ^բընթրիքից, որ պատրաստվել է գալիք մեծ օրվա համար:

12 Ահա, ես՝ Տերս եմ ասել դա:

13 Եվ որպեսզի ՝ վկայությունը դուրս գա Սիոնից, այո՛, Աստծո ժառանգության քաղաքի բերանից, -

14 Այո, դրա համար եմ ես ձեզ ուղարկել այստեղ, և ընտրել իմ ծառա ՝ Էդվարդ Պատրիզիին, և նշանակել նրան նրա առաքելությունն այս հողի վրա:

15 Բայց եթե նա չապաշխարի իր մեղքերից, որոնք են քերահավատությունն ու սրտի

կորուսյունը, թող նա զգուշանա՝ չլինի թե ՝ ընկնի:

16 Ահա, նրա առաքելությունը տրված է նրան, և այն չի տրվելու կրկին:

17 Եվ ով որ կանգնած է այս առաքելության մեջ, նշանակված է՝ լինելու ՝ դատավոր Իսրայելում, ճիշտ ինչպես հին օրերում, բաժանելու Աստծո ժառանգության հողերն իր ^բզավակներին.

18 Եվ դատելու իր ժողովրդին արդարի վկայությամբ, և իր խորհրդականների օժանդակությամբ, համաձայն արքայության օրենքների, որոնք տրվել են Աստծո մարգարեների կողմից:

19 Քանզի ճշմարիտ ասում եմ քեզ, որ իմ օրենքը պիտի պահպանվի այս երկրի վրա:

20 Թող ոչ ոք չմտածի, թե ինքը կառավարիչ է. այլ թող Աստված կառավարի նրան, ով դատում է, ըստ իր կամքի խորհրդի, կամ, այլ խոսքով, նրան, ով խորհուրդ է տալիս կամ մատում է դատավորական աթոռին:

21 Թող ոչ ոք չխախտի երկրի ՝ օրենքները, քանզի նա, ով պահում է Աստծո օրենքները, պետք չէ որ խախտի երկրի օրենքները:

22 Ուստի, ենթարկվեք իշխանություններին, որոնք կան, մինչև որ թագավորի ՝ նա, ում իրավունքն է թագավորել, և բոլոր թշնամիներին հպատակեցնի իր ոտքերի տակ:

23 Ահա, ՝ օրենքները, որոնք դուք

7ա սո՛ւ Սիոն:
8ա սո՛ւ Աղքատ:
բ Ես. ԻԵ.6:
11ա Մատ. ԻԲ.1-14,
Հայտ. ԺԹ.9,
ՎևՈՒ 65.3:
բ Ղուկ. ԺԳ.16-24:

13ա Միքիա Գ.2:
14ա սո՛ւ Պատրիզ Էդվարդ:
15ա Ա Կոր. Ժ.12:
17ա ՎևՈՒ 107.72-74:
սո՛ւ Եպիսկոպոս:
բ սո՛ւ Աստծո որդիներն ու դուստրերը:

18ա սո՛ւ Մարգարե:
21ա Ղուկ. Ի.22-26,
ՎևՈՒ 98.4-10, ՀՀ 1.12:
սո՛ւ Կառավարություն:
22ա սո՛ւ Հիսուս Քրիստոս.
Մեսիա. Հազարամյակ:
23ա սո՛ւ Օրենք:

ստացաք իմ ձեռքից, եկեղեցու օրենքներն են, և այդ լույսի ներքո պիտի դուք պահեք դրանք: Ահա, այստեղ է իմաստությունը:

24 Եվ այժմ, ինչպես ես ասեցի իմ ծառա Էդվարդ Պատրիջի մասին, այս հողն է նրա բնակության հողը, և նրանց, ում նա նշանակել է իրեն խորհրդականներ լինելու. և նաև նրա բնակության հողը, ում ես նշանակել եմ պահպանելու իմ շտեմարանը:

25 Ուստի, թող նրանք բերեն իրենց ընտանիքներն այս հողը, ինչպես որ կխորհրդակցեն միմյանց և ինձ հետ:

26 Քանզի ահա, լավ չէ, որ ես պատվիրեմ բոլոր բաներում. քանզի ով հարկադրվում է բոլոր բաների մեջ, նա թույլ է և իմաստուն ծառա չէ. ուստի նա վարձք չի ստանում:

27 Ճշմարիտ ասում եմ. Մարդիկ պետք է ջերմեռանդ ներգրավված լինեն բարի գործի մեջ, և շատ բաներ անեն իրենց իսկ ազատ կամքով, և շատ արդարություն գործեն:

28 Քանզի գորություն կա նրանց մեջ, որով նրանք գործակալն են իրենց կամքի: Եվ որքան որ մարդիկ բարիք գործեն, նրանք ոչ մի դեպքում չեն կորցնի իրենց վարձքը:

29 Բայց ով ոչինչ չի անում, մինչև նրան չեն պատվիրում, և ընդունում է պատվիրանը կասկածամիտ սրտով, և պահում է այն ծուլությամբ, նա մեզովված է:

30 Ո՞վ եմ ես, որ աքարեցի

մարդուն, ասում է Տերը, որ անմեղ համարեմ նրան, որ չի հնազանդվում իմ պատվիրաններին:

31 Ո՞վ եմ ես, ասում է Տերը, որ խոստացել եմ և չեմ կատարել:

32 Ես պատվիրում եմ, և մարդիկ չեն հնազանդվում. ես չեղյալ եմ համարում, և նրանք չեն ստանում օրհնությունը:

33 Ապա նրանք ասում են իրենց սրտում. Սա Տիրոջ աշխատանքը չէ, քանզի նրա խոստումները չեն կատարվում: Սակայն, վա՛յ այդպիսիներին, քանզի նրանց վարձքը թաքնված է մերքևում, և վերևից չէ:

34 Իսկ այժմ, ես ձեզ լրացուցիչ ուղղություններ եմ տալիս այս երկրի վերաբերյալ:

35 Դա իմ իմաստությամբ է, որ իմ ծառա Մարտին Հարրիսը պետք է օրինակ լինի եկեղեցու համար՝ Պնելոյվ իր գումարը եկեղեցու եպիսկոպոսի առաջ:

36 Եվ նաև, սա օրենք է ամեն մարդու համար, որ գալիս է այս երկիր՝ ժառանգություն ստանալու համար. և նա պետք է իր դրամի հետ վարվի, ինչպես օրենքն է թելադրում:

37 Եվ նաև իմաստություն է այն, որ հողեր գնվեն Ինդիպենդենսում, շտեմարանի տեղի համար և նաև թույլագրատան համար:

38 Եվ լրացուցիչ ուղղություններ, իմ ծառա Մարտին Հարրիսի վերաբերյալ, նրան կտրվեն Հոգու կողմից, որ նա կարողանա ստանալ իր ժառանգությունը, ինչպես բարի է համարում:

24ա ՎևՈՒ 51.13, 70.7–11:
26ա Մատ. ԻԳ.45–51,
ՎևՈՒ 107.99–100:
27ա ՍՈՒ Չանասիրություն.
Գործեր:

28ա ՍՈՒ Կամքի
ազատություն:
29ա ՍՈՒ Նզովք:
30ա Ես. ԽԵ.9–10,
Հեղ. 12.6:

31ա ՎևՈՒ 1.37–38, 82.10:
32ա ՎևՈՒ 56.3–4:
33ա ՎևՈՒ 29.45:
35ա ՎևՈՒ 42.30–32:
37ա ՎևՈՒ 57.11–12:

39 Եվ թող նա ապաշխարի իր մեղքերից, քանզի նա փնտրում է "գովքն աշխարհի:

40 Եվ նաև, թող իմ ծառա "Վիլյամ Վ. Ֆելփսը կանգնի այն պաշտոնում, որին նրան նշանակել եմ, և ստանա իր ժառանգությունն այս հողում.

41 Եվ բացի այդ, նա կարիք ունի ապաշխարելու, քանզի ես՝ Տերս, չեմ հավանում նրան, քանզի նա գերազանցություն է փնտրում և բավականաչափ հեզ չէ իմ առաջ:

42 Ահա, ով որ "ապաշխարել է իր մեղքերից, նա "ներվում է, և ես՝ Տերս, այլևս չեմ "հիշում դրանք:

43 Այս բանով դուք կարող եք իմանալ, թե արդյոք մարդն ապաշխարում է իր մեղքերից, – ահա նա "կխոստովանի և "կթողնի դրանք:

44 Եվ արդ, ճշմարիտ, ես ասում եմ իմ եկեղեցու մնացած երեցների վերաբերյալ. ժամանակը դեռ չի եկել, և դեռ շատ տարիներ կան նրանց համար, որ ստանան իրենց ժառանգությունն այս հողում, բացառությամբ, եթե նրանք ցանկանան դա հավատքի աղոթքով, միայն եթե դա նրանց նշանակվի Տիրոջ կողմից:

45 Քանզի, ահա, նրանք պիտի "մղեն մարդկանց՝ հավաքվել աշխարհի ծայրերից:

46 Ուստի, ժողովվեք միասին, և նրանք, ովքեր նշանակված չեն մնալու այս հողում, թող քարոզեն ավետարանը մերձակա շրջան-

ներում. իսկ դրանից հետո, թող վերադառնան իրենց տները:

47 Թող ճանապարհին նրանք քարոզեն և վկայություն "բերեն ճշմարտության մասին, բոլոր վայրերում, և ապաշխարելու կոչ անեն հարուստներին, բարձր և ցածր խավերին, և աղքատներին:

48 Եվ թող նրանք "եկեղեցիներ հիմնեն, որքան որ երկրի բնակիչները կապաշխարեն:

49 Եվ թող մի գործակալ նշանակվի եկեղեցու ձայնով, Օհայոյի եկեղեցու համար, որ գումար վերցնի՝ "Սիոնում հողեր գնելու համար:

50 Եվ ես իմ ծառա Սիդնի Ռիգդոնին տալիս եմ պատվիրան, որ նա պիտի "գրի Սիոնի հողի նկարագրությունը, և մի հաղորդագրություն՝ Աստծո կամքի մասին, ինչպես նրան հայտնի կդարձվի Հոգու կողմից.

51 Եվ մի մամակ ու վկայագիր, որ ներկայացվի բոլոր եկեղեցիներին՝ գումար հայթայթելու համար, որպեսզի դրվի եպիսկոպոսի ձեռքում, իր կամ գործակալի ձեռքում, ինչպես ճիշտ կհամարի, կամ, ինչպես ինքը կիրահանգի, հողեր գնելու՝ Աստծո զավակների ժառանգության համար:

52 Քանզի, ահա, ճշմարիտ ասում եմ ձեզ. Տերը կամենում է, որ աշակերտներն ու մարդկանց զավակները բացեն իրենց սրտերը, այսինքն՝ երկրի այս ողջ շրջանը գնելու համար, այնքան շուտ, որքան ժամանակը կների:

39ա2 Նեփի 26.29, ՎևՌԻ 121.34–37:
40ա սո՛ւ Ֆելփս Վիլյամ Վ.
42ա սո՛ւ Ապաշխարել, Ապաշխարություն:
բ Ես. Ա.18:
սո՛ւ Ներել:

գ Ես. ԽԳ.25:
43ա ՎևՌԻ 19.20, 64.7:
սո՛ւ Խոստովանել, Խոստովանություն:
բ ՎևՌԻ 82.7:
45ա Բ Օր. ԼԳ.17:
սո՛ւ Իսրայել –

Իսրայելի ցրվելը:
47ա ՎևՌԻ 68.8:
48ա նշ. Եկեղեցու ճյուղեր:
49ա սո՛ւ Սիոն:
50ա ՎևՌԻ 63.55–56:

53 Ահա, այստեղ է իմաստությունը: Թող նրանք անեն այդ, այլապես նրանք չեն ստանա ոչ մի ³ժառանգություն, բացի միայն արյուն թափելով:

54 Եվ բացի այդ, որքան որ հող է ձեռք բերվում, թող տարբեր տեսակի աշխատավորներ ուղարկվեն այդ հողը՝ աշխատելու Աստծո սրբերի համար:

55 Թող բոլոր այս բաներն արվեն կարգով, և թող, ժամանակ առ ժամանակ, եպիսկոպոսի կամ եկեղեցու գործակալի կողմից հայտնի դարձվեն հողի արտոնությունները:

56 Եվ թող հավաքման գործը չլինի հապճեպ, ոչ էլ փախուստով. այլ թող դա կատարվի, ինչպես խորհուրդ կտրվի եկեղեցու երեցների կողմից, համաժողովներում, այն գիտելիքի համաձայն, որը նրանք ժամանակ առ ժամանակ կստանան:

57 Եվ թող իմ ծառա Սիդնի Ռիզդոնը նվիրաբերի ու նվիրագործի այս հողը և ⁴տաճարի հողակտորը՝ Տիրոջ համար:

58 Եվ թող համաժողովի մի հավաք կանչվի. և դրանից հետո թող իմ ծառաներ Սիդնի Ռիզդոնը և Ջոզեֆ Սմիթ կրոսերը վերադառնան, և նաև Օլիվեր Քաուդերին նրանց հետ, ավարտելու համար գործի մնացած մասը, որը ես նրանց նշանակել եմ իրենց իսկ հողում, իսկ մնացածը, ինչպես ⁵կկառավարվի համաժողովների կողմից:

59 Եվ թող ոչ մի մարդ չվերա-

դառնա այս հողից, մինչև նա ճանապարհին վկայություն ⁶չբերի այն բանի մասին, ինչ գիտի և ինչին ամենայն համոզվածությամբ հավատում է:

60 Թող այն, ինչ դրվել է Ջիբա Պիտերսոնի վրա, վերցվի նրանից. և թող նա կանգնի որպես անդամ՝ եկեղեցում, և աշխատի իր սեփական ձեռքերով, եղբայրների հետ, մինչև որ նա բավականաչափ ⁷խրատվի բոլոր իր մեղքերի համար. քանզի նա չի խոստովանում դրանք, և նա մտածում է թաքցնել դրանք:

61 Թող այս եկեղեցու մնացած երեցները, որոնք գալիս են այս հողը, որոնցից ոմանք մեծապես օրհնվել են, նույնիսկ չափից շատ, նույնպես համաժողով անցկացնեն այս հողի վրա:

62 Եվ թող իմ ծառա Էդվարդ Պատրիջը ղեկավարի համաժողովը, որը պիտի անցկացվի նրանց կողմից:

63 Եվ թող նրանք նույնպես վերադառնան, ճանապարհին քարոզելով ավետարանը, վկայություն բերելով այն բաների մասին, որոնք բացահայտվել են իրենց համար:

64 Քանզի, ճշմարիտ, ձայնն առաջ պիտի գնա այստեղից դեպի ողջ աշխարհը, և դեպի երկրի ծայրամասերը, – ավետարանը պիտի ⁸քարոզվի ամեն արարածի, ⁹մշաններով, որոնք կհետևեն նրանց, ովքեր կհավատան:

65 Եվ ահա, Մարդու Որդին ¹⁰գալիս է: Ամեն:

53ա ՎևոՒ 63.27–31:
57ա ՎևոՒ 57.3, 84.3–5,
31, 97.10–17:
58ա սոՒ Ընդհանուր

համաձայնություն:
59ա սոՒ Վկայություն:
60ա սոՒ Խրատել,
Խրատելը:

64ա սոՒ Քարոզել:
բ սոՒ Նշան:
65ա սոՒ Հիսուս Քրիստոսի
երկրորդ գալուստը:

ԲԱԺԻՆ 59

Հայտնություն տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեի միջոցով, Միոնում, Ջեկսոն գավառ, Միսսուրի, 1831թ. օգոստոսի 7-ին (History of the Church, 1.196-201): Սկսելով արձանագրել այս հայտնությունը՝ Մարգարեն նկարագրում է Միոնի հողը, որտեղ այն ժամանակ հավաքվել էր ժողովուրդը: Տիրոջ հրահանգի համաձայն՝ հողը նվիրաբերվել էր և ապագա տաճարի հողակտորը նվիրագործվել էր: Այս պատվիրանները Տերը հատկապես պատշաճ է դարձնում Միոնի Սրբերի համար:

1-4՝ Միոնի հավատարիմ Սրբերը կօրհնվեն. 5-8՝ Նրանք պետք է սիրեն և ծառայեն Տիրոջն ու պահեն նրա պատվիրանները. 9-19՝ Տիրոջ օրը սուրբ պահելով, Սրբերը կօրհնվեն աշխարհիկով և հոգևորով. 20-24՝ Արդարներին խոստացվում է խաղաղություն այս աշխարհում և հավերժական կյանք՝ գալիք աշխարհում:

ԱՀԱ, օրհնված են նրանք, ասում է Տերը, ովքեր եկել են այս հողը, պարզ աչքով ուղղված իմ փառքին՝ իմ պատվիրանների համաձայն:

2 Բանգի նրանք, ովքեր ապրում են, պիտի ՝ ժառանգեն երկիրը, իսկ նրանք, ովքեր ՝ մահանում են, պիտի հանգստանան իրենց բոլոր աշխատանքներից, և նրանց գործերը պիտի զնան իրենց հետևից. և նրանք ՝ պսակ պիտի ստանան իմ հոր ՝ ապարանքներում, որոնք ես պատրաստել եմ նրանց համար:

3 Այո՛, օրհնված են նրանք, ում ոտքերը կանգնած են Միոնի հողի վրա, ովքեր հնազանդվել են իմ ավետարանին. քանզի նրանք, որպես իրենց վարձք կստանան երկրի բարիքները, որոնք այն առաջ կբերի իր ՝ ուժով:

4 Եվ նրանք նույնպես պիտի պսակվեն օրհնություններով բարձրից, այո՛, և ոչ քիչ պատվիրաններով, և ՝ հայտնություններով իրենց ժամանակին, - նրանք, ովքեր ՝ հավատարիմ և ՝ զանաասեր են իմ առաջ:

5 Ուստի, ես նրանց տալիս եմ պատվիրան, ասելով այսպես. ՝ Սիրի՛ր Տիրոջը՝ քո Աստծուն, քո ողջ ՝ սրտով, քո ողջ գործքամբ, մտքով և ուժով. և Հիսուս Զրիստոսի անունով ՝ ծառայիր նրան:

6 Սիրիր քո ՝ մերձավորին քո անձի պես: Մի՛ ՝ գողացիր. ՝ զնություն մի՛ արա, մի՛ ՝ սպանիր, ոչ էլ նման որևէ բան գործիր:

59 1ա Մատ. 2.22-24, ՎևՈՒ 88.67:
2ա Մատ. Ե.5, ՎևՈՒ 63.20, 48-49:
բ Հայտ. ԺԳ.13: սո՛ւ Մահ ֆիզիկական. Դրախտ:
գ սո՛ւ Պսակ. Վեհացում:
դ Հովհ. ԺԳ.2, ՎևՈՒ 72.4, 76.111, 81.6, 98.18:

3ա Ծն. Գ.12, Մովսես 5.37:
4ա ՎևՈՒ 42.61, 76.7, 98.12, 121.26-29: սո՛ւ Հայտնություն: բ սո՛ւ Արժանի, Արժանավորություն: գ սո՛ւ Ջանափրություն: 5ա Բ Օր. ԺԱ.1, Մատ. ԻԲ.37, Մոր. 10.32,

ՎևՈՒ 20.19: սո՛ւ Մեր: բ սո՛ւ Սիրտ: գ սո՛ւ Ծառայություն: 6ա սո՛ւ Ընկերակցել: բ սո՛ւ Գողություն, Գողանալ: գ սո՛ւ Ծնություն: դ սո՛ւ Սպանություն:

7 ^ԳԳոհուրյուն հայտնիք Տիրոջը՝ քո Աստծուն, բոլոր բաներում:

8 ^ԱԱրդարությամբ ^ԲԲոհ մատուցիր Տիրոջը՝ քո Աստծուն, այսինքն՝ կտորված սրտի ու ^ՎՎշրված հոգու գոհը:

9 Եվ որ դու կարողանաս էլ ավելի ^Մանբիծ պահել քեզ աշխարհից, դու պետք է գնաս աղոթքի տուն և քո հաղորդությունները մատուցես իմ ^Սսուրբ օրը:

10 Բանգի, ճշմարիտ, դա է քեզ նշանակված օրը, որ քո աշխատանքներից հանգստանաս և քո տուրքը ^Մմատուցես Բարձրալիմ:

11 Այնուամենայնիվ, քո խոստումներն արդարությամբ պիտի տրվեն՝ բոլոր օրերում և բոլոր ժամանակներում:

12 Բայց հիշի՛ր, որ այս՝ Տիրոջ օրը, դու պետք է Բարձրալիմ մատուցես քո ^Մպատարագներն ու քո հաղորդությունները՝ ^Խխոստովանելով մեղքերդ քո եղբայրների և Տիրոջ առաջ:

13 Եվ այդ օրը դու ուրիշ բաներ չպիտի անես, միայն թող քո ուտելիքը պատրաստվի սրտի պարգուրյամբ, որ քո ^Ծծոմապահությունը լինի կատարյալ, կամ, այլ խոսքով, որ քո ^Նուրախությունը լինի լիակատար:

14 Ճշմարիտ, սա ծոմապահություն է և աղոթք, կամ այլ խոսքով, ցնծություն և աղոթք:

15 Եվ որքան որ դուք անեք այս բաները՝ ^Գգոհաբանությամբ, ^Նուրախ ^Սարտերով ու դեմքերով, ոչ շատ ^Ծծիծաղով, քանզի դա մեղք է, բայց ուրախ սրտով և զվարթ դեմքով,–

16 Ճշմարիտ են ասում, որ, որքան որ դուք այդպես անեք, երկրի լիությունը ձերը կլինի՝ դաշտի գազաններն ու երկնքի թռչունները, և այն, ինչ մագլցում է ծառերի վրա և քայլում երկրի վրա:

17 Այո՛, և բուսականությունը, և ամեն լավ բան, որ բխում է երկրից՝ թե՛ սնունդ և թե՛ հագուստ, թե՛ տներ, թե՛ ամբարներ, թե՛ պտղատու այգիներ, թե՛ պարտեզներ և թե՛ խաղողի այգիներ:

18 Այո՛, բոլոր բաները, որ բխում են ^Մերկրից, իր ժամանակին, ստեղծված են մարդու օգտի և գործածության համար՝ թե՛ աչքը շոյելու և թե՛ սիրտն ուրախացնելու համար:

19 Այո՛, սննդի և հագուստի համար, համի և հոտի համար, մարմինն ամրացնելու և հոգու կենսարարության համար:

20 Եվ հաճելի է Աստծուն, որ մա տվել է մարդուն այս բոլոր բաները. քանզի այդ նպատակով են դրանք ստեղծվել, որ օգտագործվեն դատողությամբ, ոչ շռայլորեն, ոչ էլ բռնի կորզելով:

21 Եվ ոչնչով մարդ չի ^Վվիրավոր-

7ա Սաղ. ՂԲ.1, Ալմա 37.37, ՎևՈՒ 46.32: սո՛ւ Ընորհակալ, Ընորհակալություն, Գոհաբանություն: 8ա սո՛ւ Արդար, Արդարություն: Բ սո՛ւ Չոհաբերություն: Գ սո՛ւ Կտորված սիրտ: 9ա Հակ. Ա.27: Բ սո՛ւ Հանգստության օր:

10ա սո՛ւ Երկրպագել: 12ա նշ. Աստծու և մերձավորի ծառայության համար նվիրաբերված ժամանակը, շնորհները կամ միջոցները: սո՛ւ Չոհաբերություն: Բ սո՛ւ Խոստովանել, Խոստովանություն: 13ա սո՛ւ Ծոմ, Ծոմապահություն:

Բ սո՛ւ Ուրախություն: 15ա սո՛ւ Ընորհակալ, Ընորհակալություն, Գոհաբանություն: Բ Ել. ԻԵ.2, ՎևՈՒ 64.34: Գ Առակ. ԺԷ.22: Դ ՎևՈՒ 88.69: 18ա սո՛ւ Երկիր: 21ա սո՛ւ Վիրավորել:

րում Աստծուն կամ ոչ որի հանդեպ նրա ցատունը չի բռնկվում, բացի նրանցից, ովքեր չեն ՝խոստովանում նրա ձեռքը բոլոր բաներում և չեն հնազանդվում նրա պատվիրաններին:

22 Ահա, սա համաձայն օրենքի է և մարգարեների, ուստի, ինձ այլևս մի անհանգստացրեք այս հարցի վերաբերյալ:

23 Բայց իմացեք, որ նա, ով ՝արդարության գործեր է անում, պիտի ստանա իր ՝վարձքը, այսինքն՝ ՝խաղաղություն այս աշխարհում և ՝հավերժական կյանք գալիք աշխարհում:

24 Ես՝ Տերս եմ ասել դա, և Հոգին վկայություն է բերում: Ամեն:

ԲԱԺԻՆ 60

Հայտնություն տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեի միջոցով, Ջեկսոն գավառում, Միսսուրի, 1831թ. օգոստոսի 8-ին (History of the Church, 1.201–202): Այս պարագայում, երեցները, որոնք նշանակվել էին վերադառնալու Արևելք, ցանկացան իմանալ, թե ինչպես պետք է նրանք վարվեն և թե ինչ ուղեգծով և ինչ ձևով պետք է նրանք ճամփորդեն:

1–9՝ Երեցները պետք է ավետարանը քարոզեն ամբարիշտների հավաքներում. 10–14՝ Նրանք չպետք է ծուլությանը վատնեն իրենց ժամանակը, ոչ էլ պետք է թաքցնեն իրենց քանքարները. 15–17՝ Նրանք կարող են լվանալ իրենց ոտքերը, որպես վկայություն նրանց դեմ, ովքեր մեղքում են ավետարանը:

ԱՀԱ, այսպես է ասում Տերն իր եկեղեցու երեցներին, որոնք պետք է շտապ վերադառնան այն հողը, որտեղից եկել են. Ահա, ինձ հաճելի է, որ դուք բարձրացել եք այստեղ.

2 Բայց ոմանց ես չեմ հավանում, քանզի նրանք չեն կամենում բացել իրենց ՝բերանը, այլ մարդուց ՝վախենալու պատճառով ՝թաքցնում

են քանքարը, որ տվել են նրանց: Վա՛յ այդպիսիներին, քանզի իմ բարկությունը բռնկվել է նրանց դեմ:

3 Եվ կլինի այնպես, որ եթե նրանք չլինեն ավելի հավատարիմ իմ հանդեպ, նրանցից ՝կվերցվի, նույնիսկ այն, ինչ նրանք ունեն:

4 Քանզի ես՝ Տերս, իշխում եմ վերը՝ երկինքներում, և երկրի ՝գորբերի վրա. և այն օրը, երբ ես կհավաքեմ իմ ՝գոհարները, բոլոր մարդիկ կիմանան, թե ինչն է, որ վկայախոսում է Աստծո գործության մասին:

5 Բայց, ճշմարիտ, ես կխոսեմ ձեզ հետ ձեր ճամփորդության մասին, դեպի այն հողը, որտեղից եկել եք: Թող մի նավ պատրաստվի կամ գնվի, ինչպես ձեզ բարի է թվում, նշանակություն չունի ինձ

21բ Հոբ Ա.21:
23ա սուր Արդար, Արդարություն:
բ սուր Օրհնել, Օրհնված, Օրհնություն:
գ Մատ. ԺԱ.28–30:

սուր Խաղաղություն:
դ ՎևոՒ 14.7:
60 2ա Եփես. 2.19–20:
բ Մատ. ԻԵ.14–30:
սուր Վախ – Մարդուց վախենալը:
գ Ղուկ. Ը.16, 18:

3ա Մար. Գ.25, ՎևոՒ 1.33:
4ա Ալմա 43.50:
բ Ես. ԿԲ.3, 2աք. Թ.16, Մաղ. Գ.17, ՎևոՒ 101.3:

համար, և արագ ճամփա ընկեք դեպի այն վայրը, որ Սենտ Լուիս է կոչվում:

6 Եվ այնտեղից, թող իմ ծառաներ Սիդնի Ռիզոլոնը, Ջոզեֆ Սմիթ կրտսերը և Օլիվեր Քաուդերին ճամփա ընկնեն դեպի Սինսինատի.

7 Եվ այդ վայրում թող նրանք իրենց ձայնը բարձրացնեն և հայտարարեն իմ խոսքը բարձր ձայնով, առանց բարկության կամ երկմտության, բարձրացնելով սուրբ ձեռքերը նրանց համար: Քանզի ես կարող եմ ձեզ ^ասուրբ դարձնել, և ձեր մեղքերը ^բմերված են ձեզ:

8 Եվ թող մնացածը ճամփա ընկնեն Սենտ Լուիսից, երկու-երկու, և քարոզեն խոսքը, ոչ հապճեպորեն, ամբարիշտների ժողովքներում, մինչև որ վերադառնան եկեղեցիները, որտեղից եկել են:

9 Եվ այս բոլորը՝ եկեղեցիների բարիքի համար. այս մտադրությամբ եմ ես ուղարկել նրանց:

10 Թող իմ ծառա ^աԷդվարդ Պատրիջը բաժին հանի այն գումարից, որ ես տվել եմ նրան, մի մաս, իմ երեցների համար, որոնց պատվիրված է վերադառնալ.

11 Եվ նա, ով ի վիճակի է, թող վերադարձնի դա, գործակալի միջոցով. իսկ նա, ով ի վիճակի չէ՝ նրանից դա չի պահանջվի:

12 Իսկ այժմ ես խոսում եմ մնացածների մասին, ովքեր պետք է գան այս հողը:

13 Ահա, նրանք ուղարկվել են՝ քարոզելու իմ ավետարանն ամբարիշտների ժողովքներում. ուստի, ես նրանց տալիս եմ այսպիսի պատվիրան. ^աԾուլությամբ մի վատնիր ժամանակդ, ոչ էլ թաքցրու քո ^բքանքարը, որ դրա մասին չիմացվի:

14 Եվ հետո, երբ դու գաս Սիդնի հողը, և հռչակես իմ խոսքը, դու պետք է շտապ վերադառնաս, հռչակելով իմ խոսքն ամբարիշտների ժողովքներում՝ ոչ հապճեպորեն, ոչ ^ացասմամբ, ոչ էլ վիճաբանությամբ:

15 Եվ թոթափիր ոտքերիդ ^ափոշին, նրանց դեմ, ովքեր չեն ընդունում քեզ. ոչ թե նրանց ներկայությամբ, չլինի թե բարկության դրդես նրանց, այլ գաղտնաբար. և լվա ոտքերդ, որպես վկայություն նրանց դեմ, դատաստանի օրվա համար:

16 Ահա, սա բավական է ձեզ, և կամքն է նրա, ով ուղարկել է ձեզ:

17 Եվ իմ ծառա Ջոզեֆ Սմիթ կրտսերի բերանով հայտնի կդարձվի Սիդնի Ռիզոլոնի և Օլիվեր Քաուդերիի վերաբերյալ: Մնացածը՝ ապագայում: Դիշտ այդպես: Ամեն:

ԲԱԺԻՆ 61

Հայտնություն տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեի միջոցով, Միսսուրիի գետի ափին, Մակիլվեյնի ոլորանի մոտ, 1831թ. օգոստոսի 12-ին (History of the Church, 1.202-205): Դեպի Կիրթլենդ իրենց վերադարձի ճանապարհին, Մարգարեն և տասը երեցներ մակույկներով ուղևորվել էին Միսսուրիի գետի

<p>7ա ստ. Սրբություն: բ ստ. Ներել: 10ա ստ. Պատրիջ Էդվարդ: 13ա վ.և.ՌԻ 42.42:</p>	<p>ստ. Ծույլ, Ծուլություն: բ Մատ. ԻԵ.24-30, Վ.և.ՌԻ 82.18: 14ա Առակ. ԺԴ.29:</p>	<p>15ա Մատ. Ժ.14, Ղուկ. Թ.5, Գոր. ԺԳ.51, Վ.և.ՌԻ 24.15, 75.20, 84.92:</p>
---	--	--

հոսանքով: Ուղևորության երրորդ օրը շատ փորձանքներ տեղի ունեցան: Երեց Վիլյամ Վ. Ֆելիսը, ցերեկը տեսիլքում տեսել էր ջրի երեսին գորտթյամբ ընթացող կործանիչին:

1-12՝ Տերը մեծ ավերածություններ է սահմանել ջրերի վրա. 13-22՝ Ջրերն անիծվել էին Հովհաննեսի կողմից, և կործանիչը շրջում է դրանց երեսին. 23-29՝ Ոմանք գորտթյուն ունեն հրամայելու ջրերին. 30-35՝ Երեցները պետք է ճանապարհվեն երկու-երկու և քարոզեն ավետարանը. 36-39՝ Նրանք պետք է նախապատրաստվեն Մարդու Որդու գալստին:

ՈՒՇԸ դարձրեք և ականջ դրեք նրա ձայնին, ով ունի ողջ զորությունը, ով հավիտենականությունից հավիտենականություն է, այսինքն՝ ՊԱՖԱՆ և Օմեգան՝ սկիզբը և վերջը:

2 Ահա, ճշմարիտ, այսպես է ասում Տերը ձեզ, ով իմ եկեղեցու՝ երեցներ, որ ժողովվել եք այս վայրում, որ ձեր մեղքերն այժմ ներված են ձեզ, քանզի ես՝ Տերս, ՚ներում եմ մեղքերը և ՚ողորմած եմ նրանց հանդեպ, ովքեր խոնարհ սրտով ՚խոստովանում են իրենց մեղքերը.

3 Սակայն ճշմարիտ ասում եմ ձեզ, որ կարիք չկա, որ իմ երեցների այս ողջ խումբը սրընթաց շարժվի այս ջրերի վրայով, քանի դեռ երկու կողմի բնակիչները կորչում են անհավատության մեջ:

4 Այնուամենայնիվ, ես դա հանդուրժել եմ, որ դուք կարողանաք վկայություն բերել. ահա, շատ

վտանգներ կան ջրերի վրա, և հատկապես սրանից հետո.

5 Զանգի ես՝ Տերս, իմ բարկության մեջ, մեծ ավերածություններ եմ հրամանագրել ջրերի վրա, այո՛, և հատկապես այս ջրերի վրա:

6 Այնուամենայնիվ, ամեն մարմին իմ ձեռքում է, և ձեր մեջ նա, ով հավատարիմ է, չի կորչի ջրերում:

7 Ուստի, նպատակահարմար է, որ իմ ծառա Սիդնի Գիլբերտը և իմ ծառա Վիլյամ Վ. Ֆելիսը շտապեն իրենց հանձնարարության ու առաքելության մեջ:

8 Այնուամենայնիվ, ես չեի կամենա թույլ տալ, որ դուք բաժանվեք, մինչև դուք ՚չխրատվեք ձեր բոլոր մեղքերի համար, որպեսզի լինեք մեկ, որպեսզի չկորչեք ՚ամբարըշտության մեջ.

9 Բայց այժմ, ճշմարիտ ասում եմ, որ ինձ պետք է, որ դուք բաժանվեք: Ուստի թող իմ ծառաներ Սիդնի Գիլբերտը և Վիլյամ Վ. Ֆելիսը վերցնեն իրենց նախկին խումբը, և թող նրանք շտապ ճամփա ընկնեն, որ կարողանան կատարել իրենց առաքելությունը, և հավատքի միջոցով նրանք կհաղթահարեն.

10 Որքան որ նրանք հավատարիմ լինեն, նրանք կպահպանվեն, և ես՝ Տերս, կլինեմ նրանց հետ:

11 Եվ թող մնացածը վերցնեն այն, ինչն անհրաժեշտ է հագուստի համար:

61 1ա սու՛ Ջորտթյուն:
բ սու՛ Ալֆա և Օմեգա:
2ա Մոսիա 4.10-11:
սու՛ Ներել:
բ սու՛ Ողորմած,

Ողորմություն:
գ սու՛ Խոստովանել,
Խոստովանություն:
7ա սու՛ Ֆելիս Վիլյամ Վ.
8ա սու՛ Խրատել,

Խրատել:
բ սու՛ Ամբարիշտ,
Ամբարշտություն:

12 Թող իմ ծառա Սիդնի Գիլ-բերտն իր հետ վերցնի այն, ինչի կարիքը չունեք, ինչպես որ դուք կհամաձայնվեք:

13 Եվ արդ, ահա, ձեր ^աբարիքի համար, այդ բաների վերաբերյալ ես ձեզ ^բպատվիրան տվեցի. և ես՝ Տերս, կտրամախոսեմ ձեզ հետ, ինչպես հին օրերի մարդկանց հետ:

14 Ահա, ես՝ Տերս, սկզբում օրհնեցի ^աջրերը. բայց վերջին օրերին, իմ ծառա Հովհաննեսի բերանով, ես ^բանիծեցի ջրերը.

15 Ուստի, կգան օրեր, երբ ոչ մի մարմին ապահով չի լինի ջրերի վրա:

16 Եվ գալիք օրերում պիտի ասվի, որ ոչ ոք չի կարողանում գնալ վեր՝ դեպի Սիոնի հողը, ջրերի վրայով, բացի նրանից, ով սրտով ուղիղ է:

17 Եվ ինչպես, ես՝ Տերս, սկզբում ^աանիծեցի հողը, ճիշտ այդպես, վերջին օրերին ես օրհնեցի այն, իր ժամանակին, իմ սրբերի օգտագործման համար, որ նրանք կարողանան ճաշակել վերջինիս պարարտությունից:

18 Եվ այժմ ես տալիս եմ ձեզ պատվիրան. Այն, ինչ ես ասում եմ մեկին, ասում եմ բոլորին, որ այս ջրերի մասին դուք պետք է նախագուշացնեք ձեր եղբայրներին, որ նրանք չգան՝ ճանապարհորդելով դրանց վրայով, չլինի թե նրանց հավատքը պակասի, և նրանք բռնվեն ծուղակների մեջ:

19 Ես՝ Տերս, հրամանագրել եմ, և կործանիչը շրջում է դրանց վրա, և ես չեմ փոխում այդ հրամանագիրը:

20 Երեկ, ես՝ Տերս, բարկացած

էի ձեր վրա, բայց այսօր իմ բարկությունն անցել է:

21 Ուստի, թող նրանք, ում մասին ես ասացի, որ պետք է շտապ ճամփա ընկնեն,– կրկին ասում եմ ձեզ,– թող նրանք շտապ ճամփա ընկնեն:

22 Եվ նշանակություն չունի ինձ համար, քիչ անց, եթե այնպես լինի, որ նրանք կատարեն իրենց առաքելությունը, արդյոք նրանք ջրով կգնան, թե ցամաքով. թող դա լինի, ինչպես նրանց հայտնի կդարձվի հետագայում, համաձայն իրենց դատողության:

23 Իսկ այժմ, ինչ վերաբերում է իմ ծառաներ Սիդնի Ռիզոնին, Ջոզեֆ Սմիթ կրտսերին և Օլիվեր Քատլերիին, թող նրանք կրկին դուրս չգան ջրերի վրա՝ դեպի իրենց տուն ճամփորդելիս, բացառությամբ ջրանցքով անցնելիս. կամ, այլ խոսքով, նրանք չպետք է դուրս գան ջրերի վրա՝ ճամփորդելու, բացառությամբ ջրանցքով անցնելիս:

24 Ահա, Ես՝ Տերս, իմ սրբերի ուղևորության համար մի ճանապարհ եմ նշանակել. և ահա, սա է ճանապարհը,– որ ջրանցքն անցնելուց հետո, նրանք պետք է ճամփորդեն ցամաքով, որքան որ նրանց պատվիրված է ճամփորդել և գնալ վեր՝ դեպի Սիոնի հողը.

25 Եվ նրանք պետք է վարվեն Իսրայելի զավակների նման՝ ^ախրվելով իրենց վրանները ճանապարհին:

26 Եվ, ահա, այս պատվիրանը դուք պետք է տաք ձեր բոլոր եղբայրներին:

27 Այնուամենայնիվ, ում ^ագո-

13ա Վևև 21.6:
բ սո՛ւ Պատվիրաններն
Աստծո:

14ա Ծն. Ա.20:
բ Հայտ. Ը.8–11:
17ա Մովսես 4.23:

25ա Թվ. Թ.18:
27ա սո՛ւ Քահանայություն,
Չորություն:

ընթացում է տրված՝ հրամայելու ջրերին, նրան Հոգով տրված է իմանալ նրա բոլոր ճանապարհները.

28 Ուստի, թող նա վարվի, ինչպես կենդանի Աստուծո Հոգին պատվիրում է իրեն, լինի ցամաքում, թե ջրերի վրա, ինչպես որ ինձ կննա վարվել հետագայում:

29 Եվ ձեզ տրված է սրբերի ճամփորդելու ուղին, կամ Տիրոջ բանակի սրբերի ճանապարհը:

30 Եվ բացի այդ, ճշմարիտ ասում եմ ձեզ, որ իմ ծառաները՝ Սիդնի Ռիգոնը, Ջոզեֆ Սմիթ կրտսերը և Օլիվեր Քաուդերին, չպետք է բանան իրենց բերաններն ամբարիշտների ժողովքներում, մինչև որ նրանք կհասնեն Սիմսինաթի.

31 Եվ այնտեղ նրանք պետք է բարձրացնեն իրենց ձայներն առ Աստված, այդ ժողովրդի դեմ, այդ, առ նա, ում բարկությունը բռնկված է նրանց ամբարշտությունից, ժողովուրդ, որը գրեթե ՝ հասունանացած է կործանման համար:

32 Եվ այնտեղից, թող նրանք ճանապարհվեն դեպի իրենց եղբայրների ժողովքները, քանզի ճիշտ այս պահին, իրենց աշխատանքների պահանջն ավելի մեծ է նրանց մեջ, քան ամբարիշտների ժողովքներում:

33 Իսկ այժմ, ինչ վերաբերում է մնացածին, թող նրանք ճանա-

պարհվեն և խոսքը ՝ հայտարարեն ամբարիշտների ժողովքներում, որքան որ դա տրված է.

34 Եվ որքան որ նրանք անեն այդ, նրանք ՝ կազատեն իրենց հանդերձները և անբիծ կլինեն իմ առաջ:

35 Եվ թող նրանք ճամփորդեն միասին, ՝ երկու-երկու, ինչպես բարի է թվում իրենց, միայն թող իմ ծառա Ռեյնոլդս Քահունը և իմ ծառա Սեմյուել Հ. Սմիթը, որոնց ես հավանում եմ, չբաժանվեն, մինչև չվերադառնան իրենց տները, և դա՝ իմ իմաստուն նպատակի համար:

36 Եվ այժմ, ճշմարիտ ասում եմ ձեզ, և ինչ ես ասում եմ մեկին, ասում եմ բոլորին. Ուրախ եղեք, ՝ փոքր երեխաներ. քանզի ես ձեր ^բմեջ եմ, և ես չեմ ^գլքել ձեզ.

37 Եվ քանի որ դուք ձեզ խոնարհեցրել եք իմ առաջ, ՝ արքայության օրհնությունները ձերն են:

38 Գոտեպնդեք ձեր մեջքը և ՝ արթուն ու լրջմիտ եղեք, սպասելով Մարդու Որդու գալստին, քանզի նա գալիս է այն ժամին, որ դուք չեք կարծում:

39 Միշտ ՝ աղոթեք, որ չընկնեք ^բգայթակղության մեջ, որ կարողանաք մնալ նրա գալու օրը, կյանքում լինի, թե մահվան մեջ: Դիշտ այդպես: Ամեն:

ԲԱԺԻՆ 62

Հայտնություն՝ տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեի միջոցով, Միսսուրի գետի ափին, Չարիտոնում, Միսսուրի, 1831թ. օգոստոսի 13-ին (History of the Church, 1.205–206): Այդ օրը, Մարգարեն և իր խոսքը, որոնք Ինդիսիեն-

31ա Ավնա 37.31, Հել. 13.14, ՎևոՒ 101.11:
33ա սոՒ Քարոզել, Վկայել:
34ա 2 Նեփի 9.44, Հակոբ 2.2, Մոսիա 2.28:

35ա սոՒ Միսիոներական աշխատանք:
36ա Հովհ. ԺԳ.33:
բ Մատ. ԺԸ.20:
գ Ես. ԽԱ.15–17, 1 Նեփի 21.14–15:

37ա ՎևոՒ 50.35:
38ա սոՒ Արթուն լինել:
39ա սոՒ Աղոթք:
բ սոՒ Գայթակղել, Գայթակղություն:

դենսից դեպի Կիրթլենդ իրենց ճանապարհին էին, հանդիպեցին մի քանի երեցմերի, որոնք դեպի Միոնի հող իրենց ճանապարհին էին, և, ուրախալի ողջույններից հետո, նա ստացավ հետևյալ հայտնությունը:

1-3՝ Վկայություններն արձանագրովում են երկնքում. 4-9՝ Երեցները պետք է ճանփորդեն ու քարոզեն ըստ իրենց դատողության և ինչպես կղեկավարի Հոգին.

ՈՒՇԶ դարձրեք և ականց դրեք, ով իմ եկեղեցու՝ երեցներ, ասում է Տերը՝ ձեր Աստվածը, այսինքն՝ Հիսուս Քրիստոսը, ձեր քարեխոսը, որը գիտի թույլությունը մարդու, և թե ինչպես քսատարի նրանց, ովքեր Գիործվում են:

2 Եվ ճշմարիտ, իմ աչքերը նրանց վրա են, ովքեր դեռ չեն գնացել Միոնի հողը. ուստի ձեր առաքելությունը դեռ չի ավարտվել:

3 Այնուամենայնիվ, օրհնված եք դուք, քանզի Վկայությունը, որ դուք բերել եք, քարձանագրվել է երկնքում, հրեշտակների համար, որ կարդան. և նրանք ցնծում են ձեր համար, և ձեր Գնեղքերը ներված են ձեզ:

4 Իսկ այժմ, շարունակեք ձեր ճամփորդությունը: Ժողովվեք Միոնի հողում. և մի հավաք անցկացրեք, և ցնծացեք միասին, և հաղորդություն մատուցեք Բարձրյալին:

5 Եվ հետո դուք կարող եք վերադառնալ՝ վկայություն բերելու, այո՛, նույնիսկ բոլորդ միասին, կամ երկու-երկու, ինչպես ձեզ բարի է թվում, ինձ համար նշանակություն չունի. միայն եղեք հավատարիմ և ավետիք՝ հայտարարեք երկրի բնակիչներին, կամ ամբարիշտների ժողովքներում:

6 Ահա, ես՝ Տերս, բերել եմ ձեզ մեկտեղ, որպեսզի կատարվի խոստումը, որ հավատարիմները, ձեր միջից, պիտի պահպանվեն և ցնծան միասին Միսսուրիի հողում: Ես՝ Տերս, հավատարիմներին խոստանում եմ և չեմ կարող ՝ ստել:

7 Ես՝ Տերս, հոժար եմ, որ եթե ձեր միջից մեկը ցանկանա գնալ ձիով, կամ ջորիով, կամ կառքով, նա կստանա այդ օրհնությունը, եթե բոլոր բաներում Տիրոջ ձեռքից ընդունի դա՝ գոհացող սրտով:

8 Այս բաները մնում են ձեզ հետ, որպեսզի վարվեք ըստ դատողության ու Հոգու ղեկավարության:

9 Ահա, Վարքայությունը ձերն է: Եվ ահա, տե՛ս, ես հավատարիմների ՝ քետ եմ ընդմիշտ: Դիշտ այդպես: Ամեն:

ԲԱԺԻՆ 63

Հայտնություն՝ տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեի միջոցով, Կիրթլենդում, Օհայո, 1831թ. օգոստոսի վերջին (History of the Church, 1.206-211): Մարգարեն, Միոնի Ռիզդոնը և Օլիվեր Քաուդերին օգոստոսի 27-ին, Միս-

62 1ա ՎևՈՒ 45.3-4:
սու Բարեխոս:
բ Եբր. Բ.18, Ալմա 7.12:
գ սու Գայթակղել,
Գայթակղություն:
3ա Ղուկ. ԺԲ.8-9:

սու Վկայություն:
բ սու Կյանքի գիրք:
գ ՎևՈՒ 84.61:
4ա ՎևՈՒ 57.1-2:
5ա սու Միսիոններական
աշխատանք:

6ա Եթեր 3.12:
7ա սու Ընդհակալ,
Ընդհակալություն,
Գոհաբանություն:
9ա ՎևՈՒ 61.37:
բ Մատ. ԻԸ.20:

սուրի կատարած իրենց այցելությունից հետո ժամանեցին Կիրթլենդ: Իր այս հայտնությունն արձանագրելիս, որպես նախաբան, Մարգարեն գրել է. «Եկեղեցու այդ մասնով օրերին բուռն ցանկություն կար ստանալ Տիրոջ խոսքն ամեն մի հարցի վերաբերյալ, որն ինչ-որ ձևով առնչվում էր մեր փրկությանը. և քանի որ Սիոնի հողն այժմ ամենակարևոր նյութական բանն էր տեսադաշտում, ես հարցրեցի Տիրոջը լրացուցիչ տեղեկության համար՝ Սրբերի հավաքման, հողերի գնման և այլ հարցերի վերաբերյալ» (History of the Church, 1.207):

1-6՝ Յասման օրը պիտի գա ամբարիշտների վրա. 7-12՝ Նշանները գալիս են հավատքով. 13-19՝ Սրտում շնացողները կորսման հավատքը և կգցվեն կրակի լիճը. 20՝ Հավատարիմները ժառանգություն կստանան կերպարանափոխված երկրի վրա. 21՝ Կերպարանափոխման սարի իրադարձությունների ողջ պատմությունը դեռ չի հայտնվել. 22-23՝ Հնազանդներն ստանում են խորհուրդներն արքայության. 24-31՝ Պետք է ժառանգություններ գնվեն Սիոնում. 32-35՝ Տերը հրամանագրում է պատերազմներ, և ամբարիշտները սպանում են ամբարիշտներին. 36-48՝ Սրբերը պետք է հավաքվեն Սիոնում և դրան հասկացնեն այն կառուցելու համար. 49-54՝ Օրինություններ են հաստատվում հավատարիմների համար՝ Երկրորդ Գալստի ժամանակ, Հարության մեջ և Հազարամյակի ընթացքում. 55-58՝ Սա զգուշացման օր է. 59-66՝ Տիրոջ անունն իզուր է օգտագործվում նրանց կողմից, ովքեր այն օգտագործում են իշխանություն չունենալով:

ձրեք, դո՛ւք, որ ձեզ կոչում եք Տիրոջ ժողովուրդ, և լսեք Տիրոջ խոսքը և նրա կամքը ձեր վերաբերյալ:

2 Այո՛, ճշմարիտ ասում եմ. Լսեք ձայնը նրա, ում բարկությունը բռնկված է ընդդեմ ամբարիշտներն ու «ապստամբները».

3 Ով կամենում է վերցնել նրանց, ում «վերցնում է, և պահպանում է նրանց կյանքը, ում կամենում է պահպանել.

4 Ով կառուցում է իր սեփական կամքով ու հաճությամբ. և կործանում է, երբ հաճո է իրեն, և ի գորու է հոգին գցել վար՝ դժոխք:

5 Ահա, ես՝ Տերս, արձակում եմ իմ ձայնը, և նրան պետք է հնազանդվել:

6 Ուստի, ճշմարիտ ասում եմ, թող ամբարիշտներն զգուշանան, և թող ապստամբները վախենան ու դողան. և թող անհավատները փակեն իրենց շուրթերը, քանզի «ցասման օրը պիտի գա նրանց վրա, ինչպես մի ^բպտտահողմ, և ամեն մարմին պիտի ^գիմանա, որ ես Աստված եմ:

7 Ես վրա, ով փնտրում է «նշաններ, պիտի տեսնի նշաններ, բայց ոչ փրկության համար:

8 Ճշմարիտ ասում եմ ձեզ, ձեր

ԼՍԵՔ, ո՛վ դուք, ժողովուրդներ, և բաց արեք ձեր սրտերն ու ականջ դրեք հեռվից. և ուշք դար-

63 2ա սոՒ Ապստամբություն: 3ա սոՒ Մահ ֆիզիկական: 6ա սոՒ Արդարադատու-

թյուն. Հիսուս Քրիստոսի երկրորդ գալուստը: բ Երեմ. Լ.23:

գ Ես. ԽԹ:26: 7ա ՎևՈՒ 46:9: սոՒ Նշան:

մեջ կան ոմանք, ովքեր նշաններ են փնտրում, և նույնիսկ ի սկզբանե այդպիսիք եղել են:

9 Բայց, ահա, հավատքը չի գալիս նշաններով, այլ նշաններն ուղեկցում են նրանց, ովքեր հավատում են:

10 Այո, նշանները գալիս են "հավատքով, ոչ մարդկանց կամքով, ոչ էլ նրանց հաճությամբ, այլ Աստծո կամքով:

11 Այո՛, նշանները գալիս են գորավոր գործերի հանդեպ հավատքով, քանզի առանց "հավատքի ոչ ոք հաճո չէ Աստծուն. և ում վրա Աստված բարկացած է, նրան չի հավանում. ուստի, այդպիսիներին նա նշաններ ցույց չի տալիս, միայն իր քրատման մեջ՝ ի Գրատապարտումն նրանց:

12 Ուստի, ես՝ Տերս, չեմ հավանում ձեր միջից նրանց, ովքեր նշաններ ու զարմանալիքներ են փնտրում հավատքի համար, և ոչ մարդկանց բարիքի համար՝ ի փառս ինձ:

13 Այնուամենայնիվ, ես տալիս եմ պատվիրաններ, և շատերն են շրջվել իմ պատվիրաններից ու չեն պահել դրանք:

14 Ձեր մեջ "շնացող տղամարդիկ և կանայք կային. նրանցից ոմանք շրջվել են ձեզանից, իսկ մյուսները դեռ ձեզ հետ են, որոնք հետագայում հայտնի պիտի դառնան:

15 Թող այդպիսիք զգուշանան և

անհապաղ ապաշխարեն, չլինի թե դատաստանը որոգայթի պես իջնի նրանց վրա, և նրանց անմըտությունը հայտնի դարձվի, և նրանց գործերը գնան իրենց հետևից՝ ժողովրդի աչքի առաջ:

16 Եվ ճշմարիտ ասում եմ ձեզ, ինչպես ասել եմ նախկինում. Նա, ով "նայում է մի կնոջ վրա քրատմանով նրան, կամ, եթե մարդիկ Գնություն անեն իրենց սրտում, նրանք չեն ունենա Հոգին, այլ կուրանան հավատքը և վախ կունենան:

17 Ուստի, ես՝ Տերս, ասել եմ, որ "վախկոտները, և անհավատները, և բոլոր քրատախոսները, և ովքեր սիրում և Գործում են խաբեություն, և անառակները, և կախարդները, իրենց բաժինը կունենան այն Դժուր, որը վառվում է կրակով և ծծմբով, որը Երկրորդ մահն է:

18 Գնարիտ եմ ասում, որ նրանք բաժին չեն ունենա "առաջին հարության մեջ:

19 Եվ արդ, ահա, ես՝ Տերս, ասում եմ ձեզ, որ դուք "արդարացված չեք, քանի որ այս բաները ձեր մեջ են:

20 Այնուամենայնիվ, նա, ով "համբերում է հավատքով և կատարում է իմ կամքը, նա պիտի հաղթի, և քրատագություն պիտի ստանա երկրի վրա, երբ կերպարանափոխման օրը գա.

10ա Մոր. 7.37:
սո՛ւ Հավաքք:
11ա Եբր. ԺԱ.6:
բ Վևո՛Ւ 35.11:
գ Վևո՛Ւ 88.65:
14ա Վևո՛Ւ 42.24-25:
16ա Մատ. Ե.27-28,
Վևո՛Ւ 42.23-26:
բ սո՛ւ Ցանկանալ:

գ սո՛ւ Ծնություն:
17ա Հայտ. ԻԱ.8:
բ սո՛ւ Ստել:
գ Հայտ. ԻԲ.15,
Վևո՛Ւ 76.103:
դ Հայտ. ԺԹ.20,
2 Նեփի 9.8-19, 26,
28.23, Հակոբ 6.10,
Ալմա 12.16-18,

Վևո՛Ւ 76.36:
սո՛ւ Դժոխք:
ե սո՛ւ Մահ հոգևոր:
18ա Հայտ. Ի.6:
19ա սո՛ւ Արդարացում,
Արդարացնել:
20ա Վևո՛Ւ 101.35:
բ Մատ. Ե.5,
Վևո՛Ւ 59.2, 88.25-26:

21 Երբ որ ^աերկիրը ^բկկերպարանափոխվի, ճիշտ այն օրինակով, որ ցույց տրվեց իմ առաքյալներին ^գսարի վրա. որի պատմության ամբողջությունը դուք դեռ չեք ստացել:

22 Եվ արդ, ճշմարիտ ասում եմ ձեզ, որ ինչպես ես ասացի, որ ես իմ կամքը ձեզ հայտնի կդարձնեմ, ահա, ես այն ձեզ հայտնի կդարձնեմ, բայց ոչ պատվիրանի ձևով, քանզի շատերը կան, ովքեր չեն հետևում, որ պահեն իմ պատվիրանները:

23 Բայց նրան, ով պահում է իմ պատվիրանները, ես կպարգևեմ իմ արքայության ^ախորհուրդները, որոնք նրանում կլինեն դեպի հավիտենական կյանք ^բբխող ^գկենդանի ջրի աղբյուր:

24 Եվ արդ, ահա, սա է Տիրոջ՝ ձեր Աստծո կամքն իր սրբերի վերաբերյալ, որ նրանք պետք է միասին ժողովվեն Սիոնի հողում, առանց շտապողականության, որ չլինի խառնաշփոթություն, որը ժանտախտ է բերում:

25 Ահա, ^աՍիոնի հողը, – ես՝ Տերս, այն պահում եմ իմ ձեռքերում.

26 Այնուամենայնիվ, ես՝ Տերս, ^աԿայսրին եմ տալիս այն ամենն, ինչը Կայսրինն է:

27 Ուստի, ես՝ Տերս, կամենում եմ, որ դուք հողեր գնեք, որ կարողանաք առավելություն ունենալ աշխարհից, որ կարողանաք իրավունք ունենալ աշխարհի վրա,

որպեսզի նրանք չդողնեն բարկության:

28 Քանզի ^աՍատանան դրել է նրանց սրտերում, որ բարկանան ձեր վրա, և որ արյուն թափեն:

29 Ուստի, Սիոնի հողը ձեռք չի բերվի, բայց միայն գնելով կան արյունով, հակառակ դեպքում՝ չկա ոչ մի ժառանգություն ձեզ համար:

30 Եվ եթե գնելով, ահա, օրհնված եք դուք:

31 Իսկ եթե արյունով, քանի որ ձեզ արգելված է արյուն թափել, ահա, ձեր թշնամին վրա է հասել, և դուք պիտի հետապնդվեք քաղաքից քաղաք, և ժողովարանից ժողովարան, և միայն քչերը կանգուն կմնան, որ ժառանգություն ստանան:

32 Ես՝ Տերս, բարկացած եմ ամբարիշտների վրա. ես ետ եմ պահում իմ Հոգին երկրի բնակիչներից:

33 Ես երդվել եմ իմ ցասման մեջ, և ^ապատերազմներ եմ հրամանագրել երկրի երեսին, և ամբարիշտները պիտի սպանեն ամբարիշտներին, և վախ պիտի գա ամեն մարդու վրա.

34 Եվ ^ասրբերը ևս դժվարությամբ խոյս կտան. այնուամենայնիվ, ես՝ Տերս, նրանց հետ եմ, և ^բկիջնեմ երկնքի մեջ, իմ Հոր ներկայությունից, և կայրեմ ^գամբարիշտներին անշեջ ^դկրակով:

35 Եվ ահա, սա դեռևս չի եղել, բայց մոտ է:

21ա սո՛ր Երկիր – Երկրի վերջնական վիճակը:
բ սո՛ր Աշխարհ – Աշխարհի վերջը:
գ Մատ. ԺԷ.1–3:
23ա Ալմա 12.9–11, ՎևոՒ 42.61, 84.19, 107.18–19:
բ Հովհ. Գ.14:

գ սո՛ր Կենդանի ջուր:
25ա սո՛ր Սիոն:
26ա Գուկ. Ի.25, ՎևոՒ 58.21–23:
սո՛ր Կառավարություն:
28ա սո՛ր Գև:
33ա սո՛ր Պատերազմ:
34ա սո՛ր Սուրբ:
բ սո՛ր Հիսուս Քրիստոսի

երկրորդ գալուստը:
գ Մատ. Գ.12, 2 Նեփի 26.6, ՎևոՒ 45.57, 64.24, 101.23–25, 66:
սո՛ր Ամբարիշտ, Ամբարշտություն:
դ սո՛ր Կրակ:

36 Ուստի, տեսնելով, որ ես՝ Տերս, հրամանագրել եմ բոլոր այս բաները երկրի երեսին, ես կամենում եմ, որ իմ արբերը ժողովվեն Սիոնի հողի վրա:

37 Եվ որ ամեն մարդ՝ արդարություն պիտի վերցնի իր ձեռքում և հավատարմություն իր մեջքին, և ^բզգուշացման ձայն բարձրացնի երկրի բնակիչների համար. և հայտարարի և՛ խոսքով, և՛ փախուստով, որ ^աամայացում պիտի գա ամբարիշտների վրա:

38 Ուստի, իմ աշակերտները, ուժքեր ապրում են այդ ազարակում՝ Կիրթլենդում, թող կարգավորեն իրենց աշխարհիկ հոգսերը:

39 Թող իմ ծառա Տիտոս Բիլլինգսը, որի վրա է դրա խնամքը, ազատվի այդ հողից, որ պատրաստ լինի գալիք գարնանը ճամփա ընկնել դեպի Սիոնի հողը, նրանց հետ, ուժքեր բնակվում են այնտեղ, բացառելով նրանց, որոնց ես կպահպանեմ ինձ համար, ուժքեր չեն գնա, մինչև ես չպատվիրեմ նրանց:

40 Եվ թող բոլոր դրամը, որը հնարավոր է տնտեսել, նշանակություն չունի՝ քիչ է, թե շատ, ուղարկվի Սիոնի հողը, նրանց համար, ում ես նշանակել եմ, որ ստանան:

41 Ահա, ես՝ Տերս, զորություն կտամ իմ ծառա Ջոզեֆ Սմիթ կրտսերին, որ նա ի գորու լինի Հոգու միջոցով՝ զանազանել նրանց, ուժքեր պիտի գնան Սիոնի հողը, և

ին աշակերտներից նրանց, ուժքեր պիտի մնան:

42 Թող իմ ծառա Նյուել Զ. Ուիթնին իր վաճառատունը, կամ, ավելի ճիշտ, վաճառատունը, պահպանի մի փոքր ժամանակ ևս:

43 Այնուամենայնիվ, թող նա բաժին հանի բոլոր դրամը, որ կարող է բաժին հանել, Սիոնի հող ուղարկվելու համար:

44 Ահա, այդ բաներն իր ձեռքում են, թող նա վարվի ըստ իմաստության:

45 Դժմարիտ ասում եմ. Թող նա զործակալ կարգվի այն աշակերտների համար, ուժքեր պիտի մնան, և թող նա կարգվի այս զորությանը.

46 Եվ արդ, իմ ծառա Օլիվեր Քաուդերիի հետ անհապաղ այցելի եկեղեցիները՝ մեկնաբանելով նրանց այս բաները: Ահա, դա է իմ կամքը, և դրամ հայթայթիր, ճիշտ ինչպես ես եմ հրահանգել:

47 Նա, ով ^ահավատարիմ է, և համբերում է, կհաղթի աշխարհին:

48 Նա, ով գանձեր է ուղարկում Սիոնի հողը, ^աժառանգություն կստանա այս աշխարհում, և մակ վարձք՝ գալիք աշխարհում, և նրա զործերը կգնան նրա հետևից:

49 Այո՛, և օրհնված են մեռելները, որոնք ^ամեռնում են առ Տերը, այսուհետև, երբ Տերը գա, և իհիմ բաներն ^բանցնեն, և բոլոր բաները դառնան նոր, նրանք ^գկբարձրանան մեռելներից և հետո չեն ^ամեռնի, և ժառանգություն կստանան Տիրոջ առաջ, սուրբ քաղաքում:

50 Եվ նա, ով ապրում է, երբ Տերը

37ա սոս Արդար, Արդարություն:
բ ՎևՈՒ 1.4:
գ Ես. ԽԷ.11:
41ա սոս Չանազանելու պարզ:

47ա Մոսիա 2.41,
ՎևՈՒ 6.13:
48ա ՎևՈՒ 101.18:
49ա Հայտ. ԺԴ.13,
ՎևՈՒ 42.44-47:
բ Բ Կոր. Ե.17:

գ սոս Հարություն:
դ Հայտ. ԻԱ.4,
Ալմա 11.45,
ՎևՈՒ 88.116:
սոս Ամմահ,
Ամմահություն:

գա, և պահպանել է հավատքը, ^աօրհնված է նա. այնուամենայնիվ, նշանակված է, որ նա ^բմահանա մարդու տարիքում:

51 Ուստի, երեխաները ^ապիտի ^բմեծաման, մինչև որ ծերանան. ծերերը կմահանան. սակայն նրանք չեն ննջի հողի մեջ, այլ ^գկփոխվեն մի ակնթարթում:

52 Ուստի, դրա համար էին առաքյալներն աշխարհին քարոզում մեռելների հարությունը:

53 Սրանք են այն բաները, որոնք դուք պետք է ակնկալեք. և, խոսելով Տիրոջ ձևով, դրանք այժմ ^ամոտ են՝ առ ձեռն, և գալիք ժամանակներում են, այսինքն՝ Մարդու Որդու գալստյան օրը:

54 Իսկ մինչև այդ ժամը, կլինեն հիմար ^ակույսեր՝ իմաստունների մեջ. և այդ ժամին գալիս է արդարների և ամբարիշտների լիովին առանձնացումը. և այդ օրը ես կուղարկեմ իմ հրեշտակներին՝ ^բարմատախիլ անելու ամբարիշտներին և անշեջ կրակը գցելու նրանց:

55 Եվ այժմ, ահա, ճշմարիտ ասում են ձեզ, ես՝ Տերս, չեմ հավանում իմ ծառա ^աՄիդնի Ռիզդոնին. նա իրեն ^բբարձրացրել է իր սրտում, և խորհուրդ չի ընդունել, այլ տրտմեցրել է Հոգին:

56 Ուստի նրա ^ագրվածքն ընդունելի չէ Տիրոջ համար, և նա պետք է պատրաստի մեկ ուրիշը. և եթե Տերը դա էլ չընդունի, ահա, նա այ-

լև չի կանգնի այն պաշտոնում, որին նրան նշանակել էմ:

57 Եվ բացի այդ, ճշմարիտ ասում են ձեզ, որ ^անրանք, ովքեր իրենց սրտերում փափագում են, հեզուքյամբ, որ ^բզգուշացնեն մեղավորներին՝ ապաշխարել, թող նրանք կարգվեն այդ գորությանը:

58 Քանզի սա զգուշացման օր է, և ոչ թե շատ խոսքերի օր: Քանզի ես՝ Տերս, չպետք է ծաղրվեմ վերջին օրերին:

59 Ահա, ես վերևից եմ, և իմ գորությունը սիռոված է ներքևում: Ես բոլորի վրա եմ, և բոլորի մեջ, և բոլորի միջով, և բոլոր բաները ^աքննում եմ, և գալիս է օրը, երբ բոլոր բաները ենթակա կլինեն ինձ:

60 Ահա, ես ^աԱլֆան եմ և Օմեգան, այսինքն՝ Հիսուս Քրիստոսը:

61 Ուստի, թող բոլոր մարդիկ զգուշանան, թե ինչպես են գործածում իմ ^աանունն իրենց շուրթերով,–

62 Քանզի ահա, ճշմարիտ ասում են, որ շատերը կան, որոնք այս դատապարտության տակ են, որոնք օգտագործում են Տիրոջ անունը, և դա անում են իզուր՝ չունենալով իշխանություն:

63 Ուստի, թող եկեղեցին ապաշխարի իր մեղքերից, և ես՝ Տերս, ինը կդարձնեմ նրանց. այլապես, նրանք պիտի կտրվեն:

64 Հիշե՛ք, որ այն, ինչ գալիս է վերևից, ^ասրբազան է, և պետք է ^բխոսվի զգուշությամբ, և Հոգու

50ա սո՛ւ Օրհնել, Օրհնված, Օրհնություն:
բ սո՛ւ Մահ ֆիզիկական:
51ա սո՛ւ Հազարամյակ:
բ Ես. ԿԵ.20-22, Վև.ՈՒ 45.58, 101.29-31:
գ Ա Կոր. ԺԵ.51-52, Վև.ՈՒ 43.32:
53ա Վև.ՈՒ 35.15:

54ա Մատ. ԻԵ.1-13, Վև.ՈՒ 45.56-59:
բ Մոսիա 16.2:
55ա սո՛ւ Ռիզդոն Սիդնի:
բ սո՛ւ Հպարտություն:
56ա Վև.ՈՒ 58.50:
57ա Վև.ՈՒ 4.3-6:
բ Վև.ՈՒ 18.14-15:
սո՛ւ Միսիոներական

աշխատանք.
Զգուշացնել, Զգուշացում:
59ա Ա Կոր. Բ.10:
60ա սո՛ւ Ալֆա և Օմեգա:
61ա սո՛ւ Անարգանք:
64ա սո՛ւ Սուրբ:
բ սո՛ւ Պատկառանք:

դրդմամբ. և դրանում չկա դատապարտություն, և Հոգին դուք կատանաք աղոթքի Գմիջոցով. ուստի, առանց դրա դատապարտությունը մնում է:

65 Թող իմ ծառաները՝ Ջոզեֆ Սմիթ կրտսերը և Սիդնի Ռիզոլոնը, իրենց համար տուն փնտրեն, ինչ-

պես նրանք կուսուցանվեն Հոգու կողմից՝ Կաղոթքի միջոցով:

66 Այս բաները մնում են, որ համբերությամբ հաղթահարվեն, որ այդպիսիք կարողանան ստանալ Կաղոթքի ավելի գերազանց և հավերժական Քրիստոս, այլապես՝ ավելի մեծ դատապարտություն: Ամեն:

ԲԱԺԻՆ 64

Հայտնություն տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեի միջոցով, Եկեղեցու երեցներին, Կիրթլենդում, Օհայո, 1831թ. սեպտեմբերի 11-ին (History of the Church, 1.211–214): Մարգարեն պատրաստվում էր տեղափոխվել Հայրամ, Օհայո, վերսկսելու Աստվածաշնչի բարգձմանության իր աշխատանքը, որը մի կողմ էր դրվել, մինչ նա Միսսուրիում էր: Մի խումբ եղբայրներ, որոնց պատվիրվել էր ճանփորդել դեպի Միոն (Միսսուրի), լրջորեն զբաղված էին հոկտեմբերին մեկնելու պատրաստություն տեսնելով: Հայտնությունն ստացվեց այս զբաղված ժամանակ:

1–11՝ Սրբերին պատվիրվում է ներել միմյանց, չլինի թե նրանց մեջ մնա ավելի մեծ մեղք. 12–22՝ Չապաշխարողները պետք է բերվեն Եկեղեցու առաջ. 23–25՝ Նա, ով տասանորդ է տալիս, չի այրվի Տիրոջ գալստի ժամանակ. 26–32՝ Սրբերին զգուշացվում է խուսափել պարտքից. 33–36՝ Ապստամբները կարտաքսվեն Միոնից. 37–40՝ Եկեղեցին կդատի ազգերին. 41–43՝ Միոնը պիտի ծաղկի:

աշխարհին. ուստի ես Քուրթ կունենամ ձեր վրա:

3 Ձեր մեջ կան ոմանք, ովքեր մեղանչել են. բայց ճշմարիտ ասում են, այս անգամ միայն, իմ Կաղոթքի համար, և հոգիների փրկության համար, ես Քներել եմ ձեզ՝ ձեր մեղքերը:

4 Ես ողորմած կլինեմ ձեր հանդեպ, քանզի ձեզ եմ տվել արքայությունը:

5 Եվ արքայության խորհուրդների քանակները չեն վերցվի իմ ծառա Ջոզեֆ Սմիթ կրտսերից, իմ սահմանած ձևով, քանի դեռ նա ապրում է, որքան որ նա կհնազանդվի իմ Քարարողություններին:

6 Կան ոմանք, ովքեր մեղադրանք են փնտրել նրա դեմ, առանց պատճառի:

ԱՀԱ, այսպես է ասում ձեզ Տերը՝ ձեր Աստվածը. Ով իմ եկեղեցու՝ երեցներ, ականջ դրեք և լսեք, և ընդունեք իմ կամքը ձեր վերաբերյալ:

2 Քանզի ճշմարիտ ասում եմ ձեզ. Ես կամենում եմ, որ դուք Կաղոթք

64g ՎևոՒ 42.14:
65a սոՒ Աղոթք:
66a Հռովմ. Ը.18,
ՎևոՒ 58.4, 136.31:
բ Բ Կոր. Գ.17:

64 2a Ա Հովհ. Ե.4:
բ սոՒ Կարեկցանք:
3a Մովսես 1.39:
բ Ես. ԽԳ.25:
5a ՎևոՒ 28.7, 84.19:

սոՒ Քահանայության
բանալիները:
բ սոՒ Արարողություններ:

7 Այնուամենայնիվ, նա մեղանչել է. բայց ճշմարիտ ասում եմ ձեզ, որ ես՝ Տերս, ^աներում եմ մեղքերը նրանց, ովքեր ^բխոստովանում են իրենց մեղքերն իմ առաջ և ներում են խնդրում, ովքեր չեն մեղանչել ի ^գմահ:

8 Իմ աշակերտները, հին օրերում, ^ամեղադրանք էին փնտրում մեկ-մեկու դեմ և միմյանց չէին ներում իրենց սրտերում. և այս չարիքի համար նրանք չարչարվեցին և դառնորեն ^բխրատվեցին:

9 Ուստի, ես ասում եմ ձեզ, որ դուք պետք է ^աներեք միմյանց. քանզի, ով իր եղբորը չի ^բներում նրա զանցանքները, դատապարտված կանգնած է Տիրոջ առաջ. քանզի նրա մեջ ավելի մեծ մեղք է մնում:

10 Ես՝ Տերս, ^ակներեմ, ում որ կներեմ, բայց ձեզանից պահանջվում է ^բներել բոլոր մարդկանց:

11 Եվ դուք պետք է ասեք ձեր սրտերում. Թող Աստված ^ադատի իմ և քո միջև, և հատուցի քեզ՝ քո ^բգործերի համեմատ:

12 Եվ նրան, ով չի ապաշխարում իր մեղքերից, և չի խոստովանում դրանք, դուք պետք է բերեք ^աեկեղեցու առաջ և վարվեք նրա հետ, ինչպես սուրբ գրքերն են ասում ձեզ թե՛ պատվիրանով և թե՛ հայտնությամբ:

13 Եվ դուք դա պետք է անեք, որպեսզի Աստված փառավորվի, – ոչ թե, որովհետև դուք չեք ներում, չունենալով գութ, այլ որ դուք

կարողանաք արդարացվել օրենքի աչքում, որպեսզի դուք չմեղանչեք նրա դեմ, ով ձեր օրենսդիրն է, –

14 Ճշմարիտ ասում եմ, որ այդ պատճառով դուք պետք է անեք դրանք:

15 Ահա, ես՝ Տերս, բարկացած էի նրա վրա, ով իմ ծառան էր՝ Էզրա Բուբը, և նաև իմ ծառա Իսահակ Մորլին, քանզի նրանք չպահեցին ոչ օրենքը, ոչ էլ պատվիրանը.

16 Նրանք չարիք փնտրեցին իրենց սրտերում, և ես՝ Տերս, ետ պահեցի իմ Հոգին: Նրանք որպես չարիք ^ադատապարտեցին այն, ինչի մեջ չկար չարիք. այնուամենայնիվ, ես ներել եմ իմ ծառա Իսահակ Մորլիին:

17 Եվ նաև իմ ծառա ^աԷդվարդ Պատրիջը, ահա, նա մեղանչել է, և ^բՍատանան փնտրում է կործանել նրա հոգին. բայց երբ այդ ամենը հայտնի դարձվի նրանց, և նրանք ապաշխարեն այդ չարիքից, նրանք կներվեն:

18 Եվ արդ, ճշմարիտ ասում եմ, որ ինձ նպատակահարմար է, որ իմ ծառա Սիդնի Գիլբերտը մի քանի շաբաթ անց վերադառնա իր գործին և իր գործակալությանը՝ Սիոնի հողում.

19 Եվ որ այն, ինչ նա տեսել և լսել է, հայտնի դարձվի իմ աշակերտներին, որպեսզի նրանք չկորչեն: Եվ այս նպատակով եմ ես խոսել այդ բաները:

20 Եվ բացի այդ, ես ասում եմ ձեզ. Որպեսզի իմ ծառա Իսահակ

<p>7ա սուր Ներել. Մեղքերի բողոքային: բ Թվ. Ե.6-7, ՎևՈՒ 19.20, 58.43: սուր Խոստովանել, Խոստովանություն: գ ՎևՈՒ 76.31-37: 8ա սուր Հակառակություն:</p>	<p>բ սուր Խրատել, Խրատելը: 9ա Մար. ԺԱ.25-26, ՎևՈՒ 82.1: բ Մատ. 2.14-15, Եփես. Գ.32: 10ա Ել. ԼԳ.19, Ալմա 39.6, ՎևՈՒ 56.14:</p>	<p>բ Մոսիա 26.29-31: 11ա Ա Թագ. ԻԳ.12: բ Բ Տիմ. Գ.14: 12ա ՎևՈՒ 42.80-93: 16ա 2 Նեփի 15.20, ՎևՈՒ 121.16: 17ա սուր Պատրիջ Էդվարդ: բ սուր Դև:</p>
---	---	--

Մորլին ^աչգայթակղվի նրանից վեր, ինչ կարող է տանել, և սխալ խորհուրդ տա, ի վնաս ձեզ, ես պատվիրան տվեցի, որ նրա ազարակը վաճառվի:

21 Ես չեմ կամենում, որ իմ ծառա Ֆրեդերիկ Գ. Վիլյամսը վաճառի իր ազարակը, քանզի ես՝ Տերս, կամենում եմ մի ամբողջ պահպանել Կիրթլենդի հողում, հինգ տարվա ընթացքում, որի ժամանակ ես չեմ տապալի ամբարիշտներին, որ այդպիսով, կարողանամ փրկել մի քանիսի:

22 Եվ այդ օրվանից հետո, ես՝ Տերս, ^ամեղավոր չեմ համարի որևէ մեկի, ով բաց սրտով կզնա Սիոնի հողը. քանզի ես՝ Տերս, պահանջում եմ մարդկանց զավակների ^բսրտերը:

23 Ահա, ներկան կոչվում է ^աայսօր, մինչև Մարդու Որդու ^բգալուստը, և ճշմարիտ որ, սա ^գզոհաբերության օր է, և իմ ժողովրդի տասանորդը տալու օր. քանզի նա, ով ^դտասանորդ է տալիս, չի ^եայրվի նրա գալստի ժամանակ:

24 Քանզի այսօրվանից հետո գալիս է ^աայրումը, – սա խոսելով Տիրոջ ձևով, – քանզի ճշմարիտ ես ասում եմ, որ վաղը, բոլոր ^բհպարտները և բոլոր նրանք, ովքեր ամբարշտորեն են գործում, հարդի պես կլինեն. և ես կայրեմ նրանց, քանզի ես Ջորաջ Տերն եմ. և ես

չեմ խնայի ոչ ոքի, ով մնում է ^գԲաբելոնում:

25 Ուստի, եթե դուք հավատում եք ինձ, դուք կաշխատեք, քանի դեռ կոչվում է այսօր:

26 Եվ լավ չէ, որ իմ ծառաները՝ ^աՆյուել Բ. Ուիթնին և Սիդնի Գիլբերտը վաճառեն իրենց ^բվաճառատունն ու իրենց ունեցվածքն այստեղ. քանզի դա իմաստություն չէ, մինչև որ մնացածը եկեղեցու, որը մնացել է այս վայրում, չզնա Սիոնի հողը:

27 Ահա, իմ օրենքներում ասված է, կամ արգելված է ^ապարտքի տակ ընկնել թշնամիներից.

28 Բայց ահա, երբևէ չի ասվել, որ Տերը չպետք է վերցնի, երբ կամենում է, և վճարի, ինչպես իրեն բարի է թվում:

29 Ուստի, քանի որ դուք գործակալներ եք, դուք Տիրոջ հանձնարարության տակ եք. և ինչ էլ որ դուք անեք Տիրոջ կամքի համաձայն, Տիրոջ գործն է:

30 Եվ նա ձեզ նշանակել է, որ իր սրբերին ապահովեք այս վերջին օրերին, որ նրանք կարողանան ^աժառանգություն ստանալ Սիոնի հողում:

31 Եվ ահա, ես՝ Տերս, հայտարարում եմ ձեզ, և իմ ^ախոսքերը հաստատուն են ու ^բանխափան, այնպես որ նրանք ստանալու են այն:

20ա սուր Գայթակղել, Գայթակղություն:
22ա սուր Մեղավորություն:
բ Ել. ԼԵ.5,
Վև.ՈՒՒ 59.15, 64.34:
23ա Վև.ՈՒՒ 45.6, 64.24-25:
բ սուր Հիսուս Քրիստոսի երկրորդ գալուստը:
գ սուր Չոհաբերություն:
դ Մաղ. Գ.10-11:
սուր Տասանորդ,

Տասանորդել:
ե Մաղ. Գ.1, 3 Նեփի 25.1,
ՉՍ-Պ 1.37:
24ա Ես. ԿԶ.15-16:
սուր Երկիր – Երկրի մաքրագործումը.
Աշխարհ – Աշխարհի վերջը:
բ Մաղ. Գ.15,
2 Նեփի 12.12, 23.11:
սուր Հպարտություն:

գ Վև.ՈՒՒ 1.16:
սուր Բաբելոն:
26ա սուր Ուիթնի Նյուել Բ.
բ Վև.ՈՒՒ 57.8:
27ա սուր Պարտք:
30ա Վև.ՈՒՒ 63.48:
31ա Մար. ԺԳ.31,
2 Նեփի 31.15,
Վև.ՈՒՒ 1.37-38:
բ Վև.ՈՒՒ 76.3:

32 Սակայն բոլոր բաները պետք է լինեն իրենց ժամանակին:

33 Ուստի, մի՛ ճանճրացե՛ք բարին գործելուց, քանզի դուք դնում եք հիմքը մի մեծ գործի: Եվ Քիտրբր բաներից է առաջանում այն, ինչը մեծ է:

34 Ահա, Տերը՝ Սպահանջում է Քսիրտն ու պատրաստակամ միտքը. և պատրաստակամն ու Գինազանդը կճաշակեն Սիոնի հողի բարիքն այս վերջին օրերին:

35 Իսկ Սպաստամբները պիտի կտրվեն Սիոնի հողից, և պիտի դուրս քշվեն, և չպիտի ժառանգեն հողը:

36 Քանզի, ճշմարիտ ասում են, որ սպաստամբները՝ Մեփրեմի արյունից չեն, ուստի նրանք պիտի արմատախիլ արվեն:

37 Ահա, ես՝ Տերս, այս վերջին օրերին իմ եկեղեցին դարձրել եմ, ինչպես բլրին կամ բարձր տեղ նստած մի դատավոր, ազգերին դատելու համար:

38 Քանզի կլինի այնպես, որ Սիոնի բնակիչները՝ կղատեն Սիոնին վերաբերող բոլոր բաները:

39 Եվ ստախտաներն ու կեղծավորները կբացահայտվեն նրանց կողմից, և նրանք, ովքեր Սառաքյալներ ու մարգարեներ չեն, պիտի իմացվեն:

40 Եվ անգամ Մեպիսկոպոսը, որը Քդատավոր է, և նրա խորհրդականները, եթե նրանք հավատարիմ չեն իրենց Գոնտեստության մեջ, պիտի դատապարտվեն, և Գուրիշները պիտի դրվեն նրանց տեղում:

41 Քանզի, ահա, ես ասում եմ ձեզ, որ Միոնը պիտի ծաղկի, և Տիրոջ Քփառքը պիտի լինի նրա վրա.

42 Եվ նա մի՛ Պրոշ պիտի լինի մարդկանց համար, և երկնքի տակի բոլոր ազգերից պիտի գան դեպի նա:

43 Եվ կգա օրը, երբ երկրի ազգերը՝ կողողան նրա պատճառով և կվախենան նրա ահեղներից: Տերն է ասել դա: Ամեն:

ԲԱԺԻՆ 65

Հայտնություն՝ տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեի միջոցով, Հայրամուս, Օհայո, 1831թ. հոկտեմբերին (History of the Church, 1.218): Մարգարեն այս հայտնությունը բնութագրում է, որպես աղոթք:

1–2՝ Աստծո արքայության բանալիները երկրի վրա վատահված են մարդուն, և ավետարանի գործը հաղթանակելու է. 3–6՝ Հազարամյա

երկնքի արքայությունը կգա և կնիանա Աստծո արքայությանը երկրի վրա:

33ա Գաղ. 2:9:
բ ՎևոՒ 123.16:

34ա Միքիա 2:8:
բ Բ Օր. ԼԳ.46,

չես. ԻԲ.5,
Մորմ. 9.27:

սո՛ր Միքս:
գ Ես. Ա.19:

սո՛ր Հնազանդություն,
Հնազանդ, Հնազանդվել:

35ա սո՛ր Ապստամբություն:

բ ՎևոՒ 41.5, 50.8–9,
56.3:

սո՛ր Հեռացում:
36ա Բ Օր. ԼԳ.16–17:

38ա Ես. Բ.3–4,
ՎևոՒ 133.21:

39ա Հայտ. Բ.2:
սո՛ր Առաքյալ:

40ա սո՛ր Եպիսկոպոս:
բ ՎևոՒ 58.17,

107.72–74:

գ սո՛ր Տնտես.

Տնտեսություն:

դ ՎևոՒ 107.99–100:

41ա սո՛ր Սիոն:
բ ՎևոՒ 45.67, 84.4–5,

97.15–20:
սո՛ր Փառք:

42ա սո՛ր Դրոշ:

43ա Ես. Կ.14,
ՎևոՒ 97.19–20:

ԱԿԱՆՋ դրեք, և տեսե՛ք, ահա մի ձայն, որը ցած է ուղարկված վերևից՝ մեկի կողմից, ով հզոր է և գորեղ, որի գնացքը հասնում է աշխարհի ծայրերը, այո՛, ում ձայնը գնում է մարդկանց, – *Պատրա՛ստ արեք Տիրոջ ճանապարհը, ուղի՛ղ արեք նրա շավիղները:*

2 Աստծո՛ւ արքայության Քրանալիները վստահված են մարդուն երկրի վրա, և այնտեղից ավետարանը կգլորվի մինչև աշխարհի ծայրերը, ինչպես *քարը*, որը կտրվել է սարից՝ առանց ձեռքի, կգլորվի մինչև որ *լցնի* ողջ երկիրը:

3 Այո՛, աղադակող մի ձայն, – Պատրա՛ստ արեք Տիրոջ ճանապարհը, պատրա՛ստ արեք Գառի ճրճերիքը, պատրա՛ստ եղեք դիմավորելու Քրիստոսին:

4 Աղոթեք Տիրոջը, կանչեք նրա

սուրբ անունը, հայտնի դարձրեք նրա հրաշալի գործերը մարդկանց մեջ:

5 Կանչեք առ Տերը, որ նրա արքայությունն առաջ գնա երկրի վրա, որ նրա բնակիչները ստանան այն և պատրաստ լինեն գալիք օրերի համար, որի ժամանակ Մարդու Որդին *կիջնի* երկնքի մեջ, իր Քրիստոսի պայծառությամբ *հանդերձավորված՝ դիմավորելու* երկրի վրա հաստատված Աստծո՛ւ արքայությանը:

6 Ուստի, թող Աստծո՛ւ արքայությունն առաջ գնա, որ երկնքի արքայությունը գա, որպեսզի դու, ո՛վ Աստված, փառավորվես, ինչպես երկնքում, այնպես էլ երկրի վրա, որպեսզի քո թշնամիները հպատակեցվեն. քանզի *քոնն* է պատիվը, գորությունն ու փառքը, հավիտյանս հավիտենից: Ամեն:

ԲԱԺԻՆ 66

Հայտնություն տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեի միջոցով, Օրինջում, Օհայո, 1831թ. հոկտեմբերի 25-ին (History of the Church, 1.219–221): Սա մի կարևոր համաժողովի առաջին օրն էր: Որպես այս հայտնության նախաբան, մարգարեն գրել է. «Վիլյամ Ի. Մակլելլինի խնդրանքով, ես դիմեցի Տիրոջը և ստացա հետևյալը» (History of the Church, 1.220):

1–4՝ Հավիտենական ուխտը՝ ավետարանի լրիվությունն է. 5–8՝ Երեցները պետք է քարոզեն, վկայեն և տրամաբանեն ժողովրդի հետ. 9–13՝ Հավատարիմ սպասավորական ծա-

ռայությունը երաշխավորում է հավերժական կյանքի ժառանգություն:

ԱՀԱ, այսպես է ասում Տերն իմ ճառա Վիլյամ Ի. Մակլելլի-

65 1ա Ես. Խ.3, Մատ. Գ.3, Հովհ. Ա.23:
 2ա ՎևՈՒ 90.1–5:
 ք Մատ. ԺԶ.19, ՎևՈՒ 42.69:
 սո՛ւ Քահանայության բանալիները:
 գ Դան. Բ.34–45:
 դ Սաղ. ՀԲ.19:

սո՛ւ Դանիել – Դանիելի գիրքը.
 Վերջին օրեր, Ետին օրեր:
 3ա Մատ. ԻԲ.1–14, Հայտ. ԺԹ.9, ՎևՈՒ 58.11:
 ք սո՛ւ Փեսա:
 5ա Մատ. ԻԳ.30:
 ք սո՛ւ Փառք:

գ Սաղ. ՂԳ.1:
 դ Դան. Բ.44:
 6ա սո՛ւ Աստծո՛ւ արքայություն կամ երկնքի արքայություն:
 ք Հայտ. ԺԱ.15:
 գ Ա Մն. ԻԹ.11, Մատ. Զ.13:

նին. Օրհնված ես դու, որքան որ դու ես ես դարձել քո անօրինություններին և ընդունել ես իմ ճշմարտությունները, ասում է Տերը՝ քո Քավիչը, Փրկիչն աշխարհի, նույնիսկ բոլոր նրանց, ովքեր ^ակհավատան իմ անվանը:

2 Ճշմարիտ ասում եմ քեզ, օրհնված ես դու, որ ընդունել ես իմ ^ահավիտենական ուխտը, այսինքն՝ իմ ավետարանի լրիվությունը, որն առաջ է ուղարկված մարդկանց զավակներին, որպեսզի նրանք ունենան ^բկյանք և ճաշակողներ դարձվեն փառքերի, որոնք պիտի հայտնի դարձվեն վերջին օրերին, ինչպես որ այն գրվել է հիմ մարգարեների և առաքյալների կողմից:

3 Ճշմարիտ ասում եմ քեզ, իմ ծառա՝ Վիլյամ, որ դու մաքուր ես, բայց ոչ լիովին. ապաշխարիր, հետևաբար, այն բաներից, որոնք հաճելի չեն իմ աչքին, ասում է Տերը, քանզի Տերը դրանք ^ացույց կտա քեզ:

4 Եվ արդ, ճշմարիտ, ես՝ Տերս, ցույց կտամ քեզ, թե ինչ եմ կամենում քեզանից, կամ, որն է իմ կամքը քո վերաբերյալ:

5 Ահա, ճշմարիտ ասում եմ քեզ, որ դա իմ կամքն է, որ դու պետք է ^ահռչակես իմ ավետարանը՝ երկրից երկիր և քաղաքից քաղաք, այո՛, մերձակա այն շրջաններում, որտեղ այն չի հռչակվել:

6 Ծատ մի մնա այս վայրում.

դեռևս մի գնա Միոնի հողը. բայց որքան կարող ես ուղարկել, ուղարկիր. այլ կերպ, մի մտահոգվիր քո ունեցվածքի համար:

7 ^աԳնա արևելյան հողերը, ^բվկայություն բեր ամենուր, բոլոր մարդկանց մեջ և նրանց ժողովարաններում, տրամաբանելով ժողովրդի հետ:

8 Թող իմ ծառա Սեմյուել չ. Սմիթը գնա քեզ հետ, և մի թողնիր նրան, և հաղորդիր նրան քո հրահանգները. և նա, ով հավատարիմ է, ^աամուր կդարձվի որտեղ որ լինի. և ես՝ Տերս, կգնամ քեզ հետ:

9 ^աՉեռքերդ դիր հիվանդների վրա, և նրանք ^բկառողջանան: Մի վերադարձիր, մինչև որ ես՝ Տերս, չուղարկեմ քեզ: Նեղության մեջ համբերող եղիր: ^գԽնդրիր, և դու կստանաս. թակիր, և քեզ կբացվի:

10 Մի փնտրիր ծանրաբեռնվել: Թո՛ղ ամեն անիրավություն: ^աՇնություն մի՛ արա, – գայթակղություն, որից դու մեղվել ես:

11 ^աՊահիր այս ասածները, քանզի դրանք ճշմարիտ և հավատարիմ են. և դու պետք է մեծաբես քո պաշտոնը, և մղես շատ մարդկանց դեպի ^բՄիոն՝ հավիտենական ուրախության ^գերգեր իրենց գլխին:

12 ^աՇարունակիր այս բաների մեջ, նույնիսկ մինչև վերջ, և դու կունենաս հավերժական կյանքի ^բպսակն իմ Հոր աջ կողմում, որը լի է շնորհով և ճշմարտությամբ:

66 1ա Հովհ. Ա.12:
սուր Հավատ, Հավատալ:
2ա սուր Նոր և
հավիտենական ուխտ:
բ Հովհ. Ժ.10,
3 Նեփի 5.13:
3ա Հակոբ 4.7, Եթեր 12.27:
5ա Մար. ԺՁ.15:
7ա Վևոթ 75.6:

բ սուր Վկայություն:
8ա Վևոթ 52.17, 133.58:
9ա սուր Հիվանդների
սպասավորում.
Չեռնադրություն:
բ Մատ. Թ.18:
սուր Բժշկել, Բժշկումներ:
գ Հակ. Ա.5:
10ա սուր Շնություն:

11ա Վևոթ 35.24:
բ Վևոթ 11.6:
գ Ես. ԼԵ.10, Վևոթ 45.71:
սուր Երգել:
12ա Բ Տիմ. Գ.14-15,
2 Նեփի 31.20:
բ Ես. ԿԲ.3,
Մատ. ԻԵ.21,
Ա Պետ. Ե.4:

13 Ճշմարիտ, այսպես է ասում Տերը՝ ձեր Մատվածը՝ ձեր Քավի-

չը, այսինքն՝ Հիսուս Քրիստոսը: Ամեն:

ԲԱԺԻՆ 67

Հայտնություն տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեի միջոցով, Հայրամուս, Օհայո, 1831թ. նոյեմբերին (History of the Church, 1.224–225): Առիթը եղավ Եկեղեցու հատուկ համաժողովը, և Մարգարեի միջոցով Տիրոջ կողմից մինչ այդ ստացված հայտնությունների հրատարակումը քննարկվեց և գործի դրվեց (տե՛ս 1-ին բաժնի նախադրությունը): Որոշվեց, որ Օլիվեր Քատլերին և Ջոն Ուիթմերը պետք է հայտնությունների ձեռագրերը տանեն Ինդիպենդենս, որտեղ Վ. Վ. Ֆելիսը կհրատարակի դրանք, որպես Պատվիրանների Գիրք: Եղբայրներից շատերը հանդիսավոր վկայություն բերեցին, որ այդ ժամանակ հրատարակության համար կազմված հայտնությունները, արդարև, ճշմարիտ են, ինչպես որ վկայություն էր տրվել՝ Սուրբ Հոգին նրանց վրա թափելով: Մարգարեն արձանագրել է, որ այն բանից հետո, երբ ստացվել էր հայտնությունը, որը հայտնի է որպես՝ բաժին 1, որոշ բացասական խոսակցություններ էին եղել հայտնություններում գործածված լեզվի վերաբերյալ: Դրան հաջորդեց հետևյալ հայտնությունը:

1–3՝ Տերը լսում է աղոթքները և հսկում է իր երեցների վրա. 4–9՝ Նա կոչ է անում, որ ամենափնաստուն անձը փորձի կրկնօրինակել իր հայտնություններից ամենափոքրը. 10–14՝ Հավատարիմ երեցները կկենդանացվեն Հոգով և կտեսնեն Աստծո ղեմքը:

Ու՛րբ դարձրեք և ականջ դրեք, ուր իմ եկեղեցու՝ Երեցներ, որ ժողովվել եք միասին, ում աղոթքները ես լսել եմ, և ում սրտերը ես գիտեմ, և ում ցանկությունները վեր են եկել իմ առաջ:

2 Ահա, տեսե՛ք, իմ աչքերը ձեր վրա են, և երկինքներն ու երկիրն իմ ձեռքում են, և հավերժության հարստություններն իմն են՝ տալու համար:

3 Դուք ջանացիք հավատալ, որ

կատանաք օրհնությունը, որն առաջարկվել էր ձեզ. բայց ահա, ճշմարիտ ասում եմ ձեզ, որ ՝վկախ կար ձեր սրտերում և, արդարև, սա՛ է պատճառը, որ դուք չստացաք:

4 Եվ այժմ, ես՝ Տերս, ձեզ ՝վկայություն եմ տալիս այս պատվիրանների ճշմարտության վերաբերյալ, որոնք դրված են ձեր առաջ:

5 Ձեր աչքերը Ջոզեֆ Սմիթ կրտսերի վրա են եղել, և նրա ՝լեզուն դուք իմացել եք, և նրա թուլությունները դուք իմացել եք. և դուք գիտելիք եք փնարել ձեր սրտերում, որ կարողանաք արտահայտվել նրա լեզվից առավել. դուք սա նույնպես գիտեք:

6 Արդ, փնտրեք Պատվիրանների Գրքում, նույնիսկ ամենափոքրը, որ դրանց մեջ կա, և նշանակեք

13ա սու՛ Աստված, Աստվածագլուխ – Աստված Որդին:

67 1ա սու՛ Երեց: 2ա Սաղ. ԼԴ.15: 3ա սու՛ Վախ:

4ա սու՛ Վկայություն. Ճշմարտություն: 5ա Վև՛ՈՒ 1.24:

նրան, ով ^աամենախնաստունն է ձեր մեջ.

7 Կամ, եթե ձեր մեջ լինի մեկը, ով կպատրաստի դրա նման մեկը, այն ժամանակ դուք կարդարացվեք, եթե ասեք, թե չգիտեք, որ դրանք ճշմարիտ են.

8 Բայց եթե դուք չկարողանաք պատրաստել դրա նման մեկը, ապա դատապարտության տակ եք, եթե ^ավկայություն չբերեք, որ դրանք ճշմարիտ են:

9 Քանզի դուք գիտեք, որ դրանցում չկա անարդարություն, իսկ այն, ինչ ^աարդար է, իջնում է վերևից՝ ^բլույսերի Հորից:

10 Եվ բացի այդ, ճշմարիտ ասում են ձեզ, որ դա ձեր առանձնաշնորհն է, և ես խոստում եմ տալիս ձեզ, որ կարգվել եք այս ծառայությանը, որ որքան որ դուք ձեր վրայից հանեք ^անախանձն ու ^բվախը, և ձեզ ^գխոնարհեցնեք իմ առաջ, քանզի դուք բավականաչափ խոնարհ չեք, ^գվարագույրը

կպատովի, և դուք ^բկտեսնեք ինձ և կիմանաք, որ ես եմ, — ոչ թե մարմնական կամ բնական մտքով, այլ հոգևորով:

11 Քանզի ոչ ^աոր չի տեսել Աստծուն, ոչ մի անգամ, մարմնում, մինչև որ չի կենդանացվել Աստծո Հոգով:

12 Ոչ էլ կարող է որևէ ^աբնական մարդ մնալ Աստծո ներկայության մեջ, ոչ էլ մարմնական մտքով մարդ:

13 Դուք ի գորու չեք տանել Աստծո ներկայությունն այժմ, ոչ էլ հրեշտակների սպասավորությունը. ուստի, ^ահամբերությամբ շարունակեք, մինչև որ ^բկատարյալ դարձվեք:

14 Մի թողեք, որ ձեր մտքերը ետ դառնան. և երբ որ դուք ^աարժանի լինեք, ինձ հարմար ժամանակ, դուք կտեսնեք և կիմանաք այն, ինչ շնորհվել է ձեզ իմ ծառա Ջոզեֆ Սմիթ կրտսերի ձեռքով: Ամեն:

ԲԱԺԻՆ 68

Հայտնություն տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեի միջոցով, Հայրամում, Օհայո, 1831թ. նոյեմբերին, ի պատասխան Օրսոն Հայդի, Լյուկ Ս. Ջոնսոնի, Լայման Ի. Ջոնսոնի և Վիլյամ Ի. Մակլեյլի խնդրանքի (History of the Church, 1.227–229): Թեև այս հայտնությունը տրվել էր ի պատասխան աղաչանքի, որ Տիրոջ միտքը հայտնի դարձվի նշված երեցների վերաբերյալ, բովանդակության մեծ մասը վերաբերում է ողջ Եկեղեցուն:

1–5՝ Երեցների խոսքերը, Սուրբ Հոգով շարժված, սուրբ գրություն են.

6–12՝ Երեցները պետք է քարոզեն և մկրտեն, և նշաններ կուղեկցեն

6ա2 Նեփի 9.28–29, 42:
8ա սոՒ Վկայություն:
9ա Մոր. 7.15–18:
բ Հակ. Ա.17,
Վև.ՈՒ 50.24, 84.45,
88.49:
10ա սոՒ Նախանձոտ,
Նախանձավորություն:
բ սոՒ Վախ:

գ սոՒ Խոնարհ,
Խոնարհություն:
դ սոՒ Վարագույր:
ե Վև.ՈՒ 88.68, 93.1, 97.16:
11ա ՋՍԹ, Ել. 33.20, 23,
Հովհ. Ա.18, Զ.46,
ՋՍԹ, Ա Հովհ. 4.12,
Վև.ՈՒ 84.19–22,
Մովսես 1.11, 14:

12ա Մոսիա 3.19:
սոՒ Բնական մարդ:
13ա Հռովմ. Բ.7:
սոՒ Համբերություն:
բ Մատ. Ե.48,
3 Նեփի 12.48:
14ա սոՒ Արժանի,
Արժանավորություն:

ճշմարիտ հավատացյալներին. 13-24՝ Ահարոնի որդիներից անդրանիկը կարող է ծառայել որպես Նախագահող Եպիսկոպոս (այսինքն կրել նախագահության բանալիները, որպես եպիսկոպոս), Առաջին Նախագահության ներքո. 25-28՝ Ծնողներին պատվիրվում է ուսուցանել ավետարանն իրենց երեխաներին. 29-35՝ Սրբերը պետք է պահեն Հանգստության օրը, աշխատեն ջանասիրաբար, և աղոթեն:

ԻՄ ծառան՝ Օրսուն Հայդը, իր կարգումով կանչվել է՝ կենդանի Աստծո՝ ^աՀոգով հռչակելու հավիտենական ավետարանը ժողովրդից ժողովուրդ, հողից հող, ամբարիշտների ժողովքներում, նրանց ժողովարաններում, տրամաբանելով նրանց հետ և նրանց համար մեկնաբանելով բոլոր սուրբ գրքերը:

2 Եվ ահա, տե՛ս, սա օրինակ է բոլոր նրանց համար, ովքեր կարգվել են այս քահանայությանը, ում նշանակված առաքելությունն է՝ առաջ գնալ, -

3 Եվ սա է օրինակը նրանց համար, որ նրանք պետք է լսոսեն, երբ շարժվում են Սուրբ Հոգով:

4 Եվ ինչ որ նրանք խոսեն, երբ շարժվում են Սուրբ Հոգով, պիտի լինի սուրբ գրություն, պիտի լինի Տիրոջ կամքը, պիտի լինի Տիրոջ միտքը, պիտի լինի Տիրոջ խոսքը,

պիտի լինի Տիրոջ ձայնը, և Աստծո՝ ^բգորությունը ի փրկություն:

5 Ահա, սա Տիրոջ խոստումն է ձեզ, ո՛վ դուք, իմ ծառաներ:

6 Ուստի, ուրախ եղեք, և մի ^ավախեցեք, քանզի ես՝ Տերս, ձեզ հետ եմ, և ես կանգնելու եմ ձեր կողքին. և դուք պիտի վկայություն բերեք իմ մասին, այսինքն՝ Հիսուս Քրիստոսի, որ ես կենդանի Աստծո Որդին եմ, ես, որ էի՛, որ եմ, և որ գալու եմ:

7 Սա Տիրոջ խոսքն է ուղղված քեզ, իմ ծառա՝ ՍՕրսուն Հայդ, և նաև իմ ծառա Լյուկ Ջոնսոնին, և իմ ծառա Լայման Ջոնսոնին, և իմ ծառա Վիլյամ Ի. Մակլելլինին, և իմ եկեղեցու բոլոր հավատարիմ երեցներին, -

8 ^աԳնացեք աշխարհով մեկ, ^բքարոզեք իմ ավետարանն ամեն ^գարարածի, գործելով այն ^դիշխանությամբ, որը ես տվել եմ ձեզ՝ ^եմկրտելով անունով Հոր և Որդու և Սուրբ Հոգու:

9 Եվ ^անա, ով կհավատա և կմկրտվի, պիտի ^բփրկվի, իսկ նա, ով չի հավատա, պիտի ^գհրավիրվի:

10 Եվ նա, ով կհավատա, պիտի օրհնվի ուղեկցվող ^անշաններով, ճիշտ ինչպես գրված է:

11 Եվ ձեզ պիտի տրվի՝ իմանալ ^անշանները ժամանակների, և նշանները Մարդու Որդու գալըստյան.

12 Եվ բոլոր նրանց, ում մասին Հայրը վկայություն կբերի, ձեզ

68 1ա սուրբ Սուրբ Հոգի:
 3ա Բ Պետ. Ա.21,
 ՎևՈՒ 18.32, 42.16,
 100.5:
 4ա սուրբ Սուրբ Հոգի.
 Հայտնություն:
 բ Հռովմ. Ա.16:
 6ա Ես. ԽԱ.10:

7ա սուրբ Հայդ Օրսուն:
 8ա ՎևՈՒ 1.2, 63.37:
 բ սուրբ Միսիոներական
 աշխատանք. Քարոզել:
 գ Մար. Ժ.2.15:
 դ սուրբ Իշխանություն:
 է սուրբ Մկրտություն,
 Մկրտել:

9ա Մար. Ժ.2.16,
 ՎևՈՒ 20.25:
 բ սուրբ Փրկություն:
 գ սուրբ Նզովք:
 10ա սուրբ Նշան:
 11ա սուրբ Ժամանակների
 նշանները:

գորություն պիտի տրվի ^ակնքելու նրանց՝ հավերժական կյանքի համար: Ամեն:

13 Իսկ այժմ, բացի ուխտերից և պատվիրաններից, մյուս հարցերի մասին. դրանք հետևյալն են,–

14 Այսուհետև մնում է, Տիրոջը հարմար ժամանակ, ուրիշ ^աեպիսկոպոսներ ի սպաս դրվեն եկեղեցու համար՝ ծառայելու ճիշտ ինչպես առաջինը.

15 Ուստի նրանք պետք է լինեն արժանի ^աքահանայապետեր, և նրանք պիտի նշանակվեն Մելքիսեդեկյան Քահանայության ^աՄռաջին Նախագահության կողմից, բացառությամբ, եթե նրանք ^աԱհարոնի անմիջական հետնորդներն են:

16 Եվ եթե նրանք լինեն ^աԱհարոնի անմիջական հետնորդները, նրանք օրինական իրավունք ունեն եպիսկոպոսության, եթե նրանք անդրանիկներն են Ահարոնի որդիների միջից.

17 Քանզի անդրանիկն է կրում նախագահության իրավունքն այս քահանայության վրա և դրա ^աբանալիները, կամ իշխանությունը:

18 Ոչ մի տղամարդ չունի այս պաշտոնի՝ այս քահանայության բանալիները կրելու օրինական իրավունքը, եթե նա Ահարոնի ^աանմիջական հետնորդը և անդրանիկը չէ:

19 Բայց, քանի որ Մելքիսեդեկյան Քահանայության ^աքահանայապետն իշխանություն ունի պաշտոնավարելու մյուս բոլոր

փոքր պաշտոններում, նա կարող է պաշտոնավարել ^աեպիսկոպոսի պաշտոնում, երբ հնարավոր չէ գտնել Ահարոնի անմիջական հետնորդ, պայմանով, որ նա կկանչվի և ի սպաս կդրվի և կկարգվի այդ գորությանը Մելքիսեդեկյան Քահանայության Առաջին Նախագահության ձեռքերի ներքո:

20 Եվ Ահարոնի անմիջական հետնորդը ևս պետք է նշանակվի այս Նախագահության կողմից, և արժանի գտնվի, և ^աօծվի, և ^ակարգվի այս Նախագահության ձեռքերի ներքո, այլապես նրանք օրինապես լիազորված չեն պաշտոնավարելու իրենց քահանայության մեջ:

21 Սակայն, այն հրամանագրի հիման վրա, որը վերաբերում է քահանայությունը հորից որդուն անցնելու նրանց իրավունքներին, նրանք կարող են պահանջել իրենց օծումը, եթե երբևիցե կարողանան պարզել իրենց ազգատոհմը, կամ հաստատեն այն հայտնությամբ, Տիրոջ կողմից, վերոհիշյալ Նախագահության ձեռքերի ներքո:

22 Եվ բացի այդ, ոչ մի եպիսկոպոս կամ քահանայապետ, որն ի սպաս կդրվի այս ծառայության, չպետք է դատվի կամ դատապարտվի որևէ հանցանքի համար, բացի միայն եկեղեցու ^աԱռաջին Նախագահության առաջ.

23 Եվ եթե նա մեղավոր ճանաչվի այդ Նախագահության առաջ, վկայությամբ, որը հնարավոր չի

12ա Վև.ՈՒ 1.8, 132.49:
տո՛ Կնիք, Կնքում:
14ա տո՛ Եպիսկոպոս:
15ա Վև.ՈՒ 72.1:
բ տո՛ Առաջին
Նախագահություն:
գ տո՛ Ահարոն՝ Մովսեսի
եղբայր:

16ա Վև.ՈՒ 107.15–17:
տո՛ Ահարոնյան
քահանայություն:
17ա տո՛ Քահանայության
բանալիները:
18ա Ել. Խ.12–15,
Վև.ՈՒ 84.18,
107.13–16, 70–76:

19ա տո՛ Քահանայապետ:
բ տո՛ Եպիսկոպոս:
20ա տո՛ Օծել:
բ տո՛ Կարգել, Կարգում:
22ա տո՛ Առաջին
Նախագահություն:

լինի հերքել, նա պիտի դատապարտվի.

24 Եվ եթե նա ապաշխարի, նա պիտի ^աճերվի՝ եկեղեցու ուխտերի և պատվիրանների համաձայն:

25 Եվ բացի այդ, որքան որ ^ածնողները երեխաներ ունեն Սիոնում կամ նրա կազմակերպված ^բցցերում, որոնց չեն ^գուսուցանում, որպեսզի մինչև ^դուր տարեկանը նրանք հասկանան վարդապետությունն ապաշխարության, հավատքի՝ առ Քրիստոսը՝ կենդանի Աստծո Որդին, և մկրտության ու ձեռնադրմամբ Սուրբ Հոգու պարզևի, ^եմեղքը լինի ծնողների գլխին:

26 Քանզի դա օրենք կլինի ^աՍիոնի բնակիչների և նրա կազմակերպված ցցերի համար:

27 Եվ նրանց երեխաները պիտի ^ամկրտվեն իրենց մեղքերի ^բթողության համար, երբ ^գուր տարեկան են, և ձեռնադրվեն:

28 Եվ նրանք նաև պետք է իրենց երեխաներին ուսուցանեն ^աաղոթել և ուղիղ քայլել Տիրոջ առաջ:

29 Եվ Սիոնի բնակիչները նաև պետք է հետևեն, որ սուրբ պահեն ^աՀանգստության օրը:

30 Եվ Սիոնի բնակիչները նաև պետք է հիշեն իրենց աշխատանք-

ները, որքանով որ նշանակված են աշխատելու, ողջ հավատարմությամբ. քանի որ ծուլը հիշողության մեջ պիտի պահվի Տիրոջ առաջ:

31 Արդ, ես՝ Տերս, չեմ հավանում Սիոնի բնակիչներին, քանի որ նրանց մեջ կան ^ածուլեր. և նրանց զավակները նույնպես աճում են ^բամբարշտության մեջ. նաև նրանք լրջորեն չեն ^գփնտրում հավերժության հարստությունները, այլ նրանց աչքերը լի են ժլատությանմբ:

32 Այդ բաները չպիտի լինեն, և պետք է հեռացվեն նրանց միջից. ուստի թող իմ ծառա Օլիվեր Քառուղերին այս ասածները տանի Սիոնի հող:

33 Եվ մի պատվիրան եմ տալիս ես նրանց, – որ նա, ով չի պահպանում իր ^աաղոթքները Տիրոջ առաջ, իր ժամանակին, թող ^բհիշողության մեջ պահվի իմ ժողովրդի դատավորի առաջ:

34 Այս ^աասածները ճշմարիտ են և հավատարիմ. ուստի, զանց մի առնիր դրանք, ոչ էլ ^բպակասեցրու դրանցից:

35 Ահա, ես եմ ^աԱլֆան և Օմեգան, և ես ^բզավիս եմ շուտով: Ամեն:

ԲԱԺԻՆ 69

Հայտնություն տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեի միջոցով, Հայրամուս, Օհայո, 1831թ. նոյեմբերին (History of the Church, 1.234–235):

24ա սո՛ւ Ներել:
25ա սո՛ւ Ընտանիք –
Ծնողների պարտականությունները:
բ սո՛ւ Յից:
գ սո՛ւ Ուսուցանել, Ուսուցիչ:
դ ՎևՈՒ 18.42, 20.71:
ե Հակոբ 1.19,
ՎևՈՒ 29.46–48:
26ա սո՛ւ Սիոն:

27ա սո՛ւ Մկրտություն, Մկրտել:
բ սո՛ւ Մեղքերի թողություն:
գ սո՛ւ Հաշիվ, Պատասխանատու, Պատասխանատվություն:
28ա սո՛ւ Աղոթք:
29ա ՎևՈՒ 59.9–12:
սո՛ւ Հանգստության օր:
31ա սո՛ւ Ծուլ, Ծուլություն:

բ սո՛ւ Ամբարիշտ, Ամբարշտություն:
գ ՎևՈՒ 6.7:
33ա սո՛ւ Աղոթք:
բ սո՛ւ Խրատել, Խրատելը. Դատել, Դատաստան:
34ա Հայտ. ԻԲ.6:
բ ՎևՈՒ 20.35, 93.24–25:
35ա սո՛ւ Ալֆա և Օմեգա:
բ ՎևՈՒ 1.12:

Հայտնությունների ժողովածուն, որը նախատեսվել էր մոտ ապագայում հրատարակելու համար, հաստատվել էր նոյեմբերի 1-ի հատուկ համաժողովում: Նոյեմբերի 3-ին ավելացվեց հայտնությունը, որն այս գրքում հայտնի է որպես 133-րդ բաժին, և անվանվեց Հավելված: Համաժողովի որոշմամբ Օլիվեր Քաուդերին նշանակվեց, որ ժողովված հայտնություններն ու պատվիրանները տանի Ինդիպենդենս, Միսսուրի՝ տպագրելու համար: Նա պետք է նաև իր հետ վերցներ դրամը, որը նվիրաբերվել էր Միսսուրիում Եկեղեցին կառուցելու համար: Քանի որ դեպի սահմանամերձ հողեր նրա ճանփորդությունն ընթանալու էր սակավարժակ շրջաններով, ցանկալի էր, որ լիներ ուղեկից մի ընկեր:

1-2՝ Չոն Ուիթմերը պետք է ուղեկիցի Օլիվեր Քաուդերիին դեպի Միսսուրի: 3-8՝ Նա նաև պետք է քարոզի և հավաքի, գրի առնի և գրանցի պատմական փաստերը:

ԱԿԱՆՁ դրեք ինձ, ասում է Տերը՝ ձեր Աստվածը, ի սեր իմ ծառա՝ Օլիվեր Քաուդերիի: Դա իմ իմաստությամբ չէ, որ նրան վստահվի պատվիրանները և դրամը, որը նա պետք է տանի Սիոնի հող, եթե նրա հետ չգնա մեկը, որը կլինի ճշմարիտ ու հավատարիմ:

2 Ուստի, ես՝ Տերս, կամենում եմ, որ իմ ծառա՝ Չոն Ուիթմերը գնա իմ ծառա Օլիվեր Քաուդերիի հետ:

3 Եվ նաև, որ նա շարունակի գրելն ու՝ պատմություն կազմելը բոլոր կարևոր բաների մասին, որոնք նա կնկատի և կիմանա իմ եկեղեցու վերաբերյալ:

4 Եվ նաև, որ նա՝ խորհուրդ և

օգնություն ստանա իմ ծառա Օլիվեր Քաուդերիից և մյուսներից:

5 Եվ նաև իմ ծառաները, որոնք ամենուր երկրի վրա են, Սիոնի հող պիտի ուղարկեն իրենց՝ տնտեսության հաշիվը:

6 Քանզի Սիոնի հողը կլինի այս բաները ստանալու և կատարելու կենտրոնն ու վայրը:

7 Այնուամենայնիվ, թող իմ ծառա Չոն Ուիթմերը բազմաթիվ անգամներ ճամփորդի մի վայրից մյուսը, մի եկեղեցուց մյուսը, որ ավելի հեշտորեն գիտելիք ձեռք բերի, -

8 Քարոզելով և մեկնաբանելով, գրի առնելով, պատճենագրելով, ընտրելով և ձեռք բերելով բոլոր բաները, որոնք կլինեն եկեղեցու բարիքի համար, և աճող սերունդների համար, որոնք պիտի մեծանան՝ Միոնի հողի վրա, որ տիրեն այն սերնդե-սերունդ՝ հավիտյանս հավիտենից: Ամեն:

ԲԱԺԻՆ 70

Հայտնություն տրված Չոզեֆ Սմիթ Մարգարեի միջոցով, Կիրթլենդում, Օհայո, 1831թ. նոյեմբերի 12-ին (History of the Church, 1.235-237): Մարգարեի կողմից գրված պատմությունը հաղորդում է, որ չորս հատուկ համաժողովներ էին անցկացվել նոյեմբերի 1-12-ը ներառյալ: Այդ ժողովնե-

69 1ա սու՝ Քաուդերի Օլիվեր: 2ա սու՝ Ուիթմեր Չոն:

3ա ՎևՈՒ 47.1-3, 85.1: 4ա սու՝ խորհուրդ: 5ա սու՝ Տնտես:

8ա սու՝ Սիոն:

րից վերջինում քննարկվել էր Պատվիրանների Գրքի մեծ կարևորությունը, որը հետագայում կոչվեց Վարդապետություն և Ուխտեր. և Մարգարեն այն վերագրում է, որպես «Եկեղեցու հիմքը, այս վերջին օրերին, ի օգուտ աշխարհի, ցույց տալով, որ մեր Փրկչի արքայության խորհուրդների բանալիները կրկին վստահվել են մարդուն» (History of the Church, 1.235):

1–5՝ Տնտեսներ են նշանակվում հայտնությունները հրատարակելու համար. 6–13՝ Նրանք, ովքեր աշխատում են հոգևոր գործերում, արժանի են իրենց վարձքին. 14–18՝ Սրբերը պետք է հավասար լինեն նյութական հարցերում:

ՈՒՇՔ դարձրեք, և ականջ դրեք, ով Սիոնի՝ բնակիչներ, և ո՛վ դուք, իմ եկեղեցու՝ ժողովուրդ, որ հեռվում եք, և լսեք Տիրոջ խոսքը, որը պատվիրանի ձևով ես տալիս եմ նրանց՝ իմ ծառա Ջոզեֆ Սմիթ կրտսերին, և նաև իմ ծառա Մարտին Հարրիսին, և նաև իմ ծառա Օլիվեր Քաուդերիին, և նաև իմ ծառա Ջոն Ուիթմերին, և նաև իմ ծառա Սիդնի Ռիգդոնին, և նաև իմ ծառա Վիլյամ Վ. Ֆելլիսին:

2 Քանզի ես տալիս եմ նրանց պատվիրան. ուստի ականջ դրեք և լսեք, քանզի նրանց այսպես է ասում Տերը.

3 Ես՝ Տերս, նշանակել եմ նրանց և կարգել եմ նրանց՝ տնտեսներ լինելու հայտնությունների և պատվիրանների վրա, որոնք ես տվել եմ նրանց, և որոնք այսուհետև ես պետք է տամ նրանց.

4 Եվ այդ տնտեսության հաշիվը դատաստանի օրը ես պահանջելու եմ նրանցից:

5 Ուստի, ես նշանակել եմ նրանց, և սա է նրանց գործն Աստծո եկեղեցում՝ կառավարել դրանք և

դրանց հոգսերը, այո՛, դրանց օգուտները:

6 Ուստի ես պատվիրան եմ տալիս նրանց, որ նրանք այդ ամենը չտան եկեղեցուն, ոչ էլ աշխարհին.

7 Այնուամենայնիվ, որքան որ նրանք ավելին ստանան, քան անհրաժեշտ է իրենց կարիքների ու պահանջների համար, այն պիտի հանձնվի իմ ՚՚շտեմարան.

8 Իսկ օգուտները պիտի նվիրաբերվեն Սիոնի բնակիչներին և նրանց սերունդներին, որքան որ նրանք կդառնան ՚՚Ժառանգներ՝ համաձայն արքայության օրենքների:

9 Ահա, սա է այն, ինչ Տերը պահանջում է ամեն մարդուց իր ՚՚տնտեսության մեջ, ճիշտ ինչպես ես՝ Տերս, նշանակել եմ կամ ապագայում կնշանակեմ որևէ մարդու:

10 Եվ ահա, ոչ ոք, ով պատկանում է կենդանի Աստծո եկեղեցուն, ազատված չէ այս օրենքից.

11 Այո՛, ո՛չ եպիսկոպոսը, ո՛չ էլ ՚՚գործակալը, ով պահում է Տիրոջ շտեմարանը, ո՛չ էլ նա, ում նշանակված է նյութական բաների տնտեսություն:

12 Ով որ նշանակված է վարելու հոգևոր գործերը, նա ՚՚արժանի է իր վարձքին, ճիշտ ինչպես նա, ում նշանակված է նյութական գործերը վարելու տնտեսությունը.

13 Այո՛, նույնիսկ ավելի առատորեն, առատություն, որը նրանց

70 3ա Ա Կոր. Գ.1, ՎևոՒ 72.20: 7ա ՎևոՒ 72.9–10:	8ա ՎևոՒ 38.20: 9ա սոՒ Տնտես. Տնտեսություն:	11ա ՎևոՒ 57.6: 12ա Գուլ. Ժ.7:
---	--	----------------------------------

համար բազմապատկվում է Հոգու դրսևորումներով:

14 Այնուամենայնիվ, ձեր նյութական հարցերում դուք պետք է «հավասար լինեք, և դա՝ առանց դժկամության, այլապես Հոգու դրսևորումների առատությունը ետ պիտի պահվի:

15 Արդ, այս «պատվիրանը ետ տալիս եմ իմ ծառաներին իրենց օգտի համար, քանի դեռ նրանք կան, իմ օրհնությունները նրանց գլխին ցույց տալու համար, և նրանց թջանասիրության վարձքի ու նրանց ապահովության համար.

16 Սննդի և «հագուստի համար. ժառանգության համար. տների և հողերի համար, ինչպիսի պայմաններում էլ որ ես՝ Տերս, նրանց դնեմ, և որտեղ էլ որ ես՝ Տերս, նրանց ուղարկեմ:

17 Քանզի նրանք հավատարիմ են եղել «շատ բաներում, և լավ են գործել, որքան որ չեն մեղանչել:

18 Ահա, ես՝ Տերս, «ողորմած եմ, և կօրհնեմ նրանց, և նրանք կվայելեն դրանց ուրախությունը: Դիշտ այդպես: Ամեն:

ԲԱԺԻՆ 71

Հայտնություն տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեին և Միդնի Ռիզդոնին, Հայրամուս, Օհայո, 1831թ. դեկտեմբերի 1-ին (History of the Church, 1.238–239): Մարգարեն շարունակում էր թարգմանել Աստվածաշունչը, ունենալով Միդնի Ռիզդոնին որպես դպիր, մինչև որ ստացվեց այս հայտնությունը, որից հետո այն որոշ ժամանակով մի կողմ դրվեց, որ հնարավոր լինի իրականացնել այստեղ տրված հրահանգները: Եղբայրները պետք է առաջ գնային քարոզելու, որպեսզի մեղմացնեին անբարյացակամությունը, որն աճել էր Եկեղեցու հանդեպ, այն բանի հետևանքով, որ որոշ լրագրային հոդվածներ էին հրատարակվել Էզրա Բուրթի կողմից, որն ուրացել էր:

1–4 Ջոզեֆ Սմիթը և Միդնի Ռիզդոնն առաջ են ուղարկվում ավետարանը հռչակելու. 5–11՝ Սրբերի թշնամիները պիտի կործանվեն:

ԱՀԱ, այսպես է ասում Տերը ձեզ, իմ ծառաներ, Ջոզեֆ Սմիթ կրտսեր և «Միդնի Ռիզդոն, որ ժամանակն իսկապես եկել է, երբ անհրաժեշտ և նպատակահարմար է ինձ համար, որ դուք բացեք ձեր բերանները՝ թհռչակե-

լով իմ ավետարանը, արքայության բաները, մեկնաբանելով նրա ⁹խորհուրդները սուրբ գրքերի միջից, համաձայն Հոգու այն մասի և զորության, որ կտրվի ձեզ, ճիշտ ինչպես ես եմ կամենում:

2 ԴՆՄարիտ ասում եմ ձեզ. Հռչակե՛ք աշխարհին, մերձակա շրջաններում, և նաև եկեղեցում, որոշ ժամանակի ընթացքում, նույնիսկ մինչև ձեզ հայտնի դարձվի:

14ա ՎևՈՒ 49.20:
սուր Եվիրաբերել,
Նվիրաբերման օրենք:
15ա Բ Օր. Ժ.12–13:
բ սուր Չանասիրություն:

16ա ՎևՈՒ 59.16–20:
17ա Մատ. ԻԵ.21–23:
18ա սուր Ողորմած,
Ողորմություն:
71 1ա սուր Ռիզդոն Միդնի:

բ սուր Միսիոներական
աշխատանք:
գ ՎևՈՒ 42.61, 65:

3 Ճշմարիտ, սա առաքելություն է որոշ ժամանակով, որը ես տալիս եմ ձեզ:

4 Ուստի, աշխատեք իմ այգում: Կանչեք առ երկրի բնակիչները, և վկայություն բերեք, և ճանապարհ պատրաստեք պատվիրանների և հայտնությունների համար, որոնք պիտի գան:

5 Արդ, սհա սա է իմաստությունը. նա, ով կարդում է, թող ^ահասկանա և նաև ^բընդունի:

6 Քանզի նրան, ով ընդունում է, ավելի ^աառատորեն պիտի տրվի, նույնիսկ զորություն:

7 Ուստի, ^ակարկամեցրեք ձեր թշնամիներին. կանչեք նրանց՝ ^բհանդիպելու ձեզ հետ՝ թե՛ հրա-

պարակավ, թե՛ առանձին. և որքան որ դուք հավատարիմ եք, նրանց ամոթը կբացահայտվի:

8 Ուստի, թող նրանք առաջ բերեն իրենց զորավոր փաստերը Տիրոջ առաջ:

9 Ճշմարիտ, այսպես է ասում Տերը ձեզ. Չկա ձեր դեմ պատրաստված ^ազենք, որ հաջողություն ունենա.

10 Եվ եթե որևէ մարդ իր ձայնը բարձրացնի ձեր դեմ, նա պիտի կործանվի ինձ հարմար ժամանակ:

11 Ուստի, պահեք իմ պատվիրանները. դրանք ճշմարիտ են և հավատարիմ: Դիշտ այդպես: Ամեն:

ԲԱԺԻՆ 72

Հայտնություն տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեի միջոցով, Կիրթլենդում, Օհայո, 1831թ. դեկտեմբերի 4-ին (History of the Church, 1.239–241): Մի քանի երեցներ ու անդամներ հավաքվել էին իրենց պարտականությունները սովորելու և լրացուցիչ հրահանգներ ստանալու Եկեղեցու ուսմունքների վերաբերյալ: Այս բաժինը նույն օրը ստացված երկու հայտնությունների ժողովածու է: 1–8 հատվածները հայտնի են դարձնում Նյուել Զ. Ուիթնիի կոչումը՝ որպես եպիսկոպոս: Այսպես կանչվեց ու կարգվեց, որից հետո ստացվեցին 9–26 հատվածները՝ հաղորդելով լրացուցիչ տեղեկություններ եպիսկոպոսի պարտականությունների վերաբերյալ:

1–8՝ Երեցները պետք է հաշիվ ներկայացնեն եպիսկոպոսին իրենց տնտեսության մասին. 9–15՝ Եպիսկոպոսը պահում է շտեմարանը և հոգում է աղքատների ու կարիքավորների մասին. 16–26՝ Եպիսկոպոսները պետք է վավերացնեն երեցների արժանավորությունը:

ԱԿԱՆՁ դրեք և լսեք Տիրոջ ձայնը, ո՛վ դուք, որ ժողովվել եք միասին, որ իմ եկեղեցու ^աքահանայապետերն եք, որոնց տրվել է ^բարքայությունն ու զորությունը: 2 Քանզի ճշմարիտ, այսպես է ասում Տերը. Ինձ նպատակահարմար է, որ մի ^աեպիսկոպոս

5ա սուր Հասկանալ:
բ Ալմա 12.9–11:
6ա Մառ. ԺԳ.12:
7ա Մովսես 7.13–17:

բ ՎեոՒ 63.37, 68.8–9:
9ա Ես. ԾԳ.17:
72 1ա ՎեոՒ 68.14–19:
բ սուր Աստծո

արքայություն
կամ երկնքի
արքայություն:
2ա սուր Եպիսկոպոս:

նշանակվի ձեր համար, կամ ձեր միջից, եկեղեցու համար, Տիրոջ այգու այս մասում:

3 Եվ ճշմարիտ, այս բանում դուք վարվել եք իմաստությամբ, քանզի Տերը պահանջում է, յուրաքանչյուր “տնտեսի ձեռքից, ^բհաշիվ ներկայացնել իր ^գտնտեսության մասին, թե՛ ժամանակի և թե՛ հավերժության մեջ:

4 Քանզի նա, ով հավատարիմ և “իմաստուն է ժամանակի մեջ, արժանի է համարվում ժառանգելու իմ Հոր կողմից նրանց համար պատրաստած ^բապարանքները:

5 Դճմարիտ ասում եմ ձեզ, որ իմ “այգու այս մասի եկեղեցու երեցները պետք է իրենց տնտեսության մասին հաշիվ ներկայացնեն եպիսկոպոսին, որը կնշանակվի իմ կողմից, իմ այգու այս մասում:

6 Այդ բաների մասին գրանցում պետք է պահվի, որպեսզի փոխանցվի Սիոնի եպիսկոպոսի ձեռքը:

7 Եվ “եպիսկոպոսի պարտականությունը հայտնի կդարձվի պատվիրաններով, որոնք տրվել են, և համաժողովի ձայնով:

8 Եվ արդ, ճշմարիտ ասում եմ ձեզ, որ իմ ծառա “Նյուել Ք. Ուիթնին է այն մարդը, որ պիտի նշանակվի ու կարգվի այդ գործությանը: Սա է Տիրոջ՝ ձեր Աստծո՝ ձեր Քավչի կամքը: Դիշտ այդպես: Ամեն:

9 Տիրոջ խոսքը, ի լրումն օրենքի, որ տրվել է, հայտնի դարձնելով եպիսկոպոսի պարտականություն-

ըր, որը կարգվել է եկեղեցու համար, այգու այս մասում, արդարև հետևյալն է, –

10 Պահել Տիրոջ “շտեմարանը. ստանալ եկեղեցու հիմնադրամներն այգու այս մասում.

11 Հաշիվ վերցնել երեցներից, ինչպես պատվիրվել էր նախկինում. և “բավարարել նրանց պահանջները, որոնք կվճարեն այն ամենի համար, ինչ կստանան, որքան որ նրանք կունենան թե ինչով վճարել.

12 Որպեսզի դա ևս նվիրաբերվի՝ եկեղեցու բարիքի համար, աղքատների և կարիքավորների համար:

13 Եվ նրանից, ով “չունի որ վճարի, հաշիվ պետք է վերցվի ու ներկայացվի Սիոնի եպիսկոպոսին, որը կվճարի պարտքն այն բանից, ինչ Տերը կդնի նրա ձեռքում:

14 Եվ հավատարիմների ջանքերը, ովքեր տքնում են հոգևոր գործերում, սպասավորելով ավետարանը և արքայության բաները եկեղեցում, և աշխարհին, պարտքի փոխհատուցում կլինի Սիոնի եպիսկոպոսին.

15 Այդպիսով, այն դուրս է գալիս եկեղեցուց, քանզի, ըստ “օրենքի, ամեն մարդ, որ գալիս է Սիոն, պետք է բոլոր բաները դնի Սիոնի եպիսկոպոսի առաջ:

16 Եվ արդ, ճշմարիտ ասում եմ ձեզ, որ, քանի որ ամեն մի երեց, այգու այս մասում, պետք է հաշիվ տա իր տնտեսության մասին, այգու այս մասի եպիսկոպոսին, –

17 Մի “վկայագիր՝ դատավորից,

<p>3ա ստ՝ Տնտես: բ ՎևոՒ 42.32, 104.11–13: գ Ղուկ. ԺԹ.11–27: 4ա Մատ. ԻԳ.45–47: բ ՎևոՒ 59.2: 5ա ստ՝ Տիրոջ այգիին:</p>	<p>7ա ՎևոՒ 42.31, 46.27, 58.17–18, 107.87–88: 8ա ստ՝ Ուիթնի Նյուել Ք. 10ա ՎևոՒ 70.7–11, 78.3: ստ՝ Շտեմարան: 11ա ՎևոՒ 75.24:</p>	<p>13ա ստ՝ Աղքատ: 15ա ՎևոՒ 42.30–31: ստ՝ Նվիրաբերել, Նվիրաբերման օրենք: 17ա ՎևոՒ 20.64, 84:</p>
---	---	---

կամ այգու այս մասի եպիսկոպոսից, Սիոնի եպիսկոպոսի համար ընդունելի է դարձնում ամեն մարդու և պատասխանում է բոլոր հարցերին, ժառանգության համար և ընդունվելու համար, որպես իմաստուն ^բտնտես և որպես հավատարիմ մշակ.

18 Այլապես, նա չի ընդունվի Սիոնի եպիսկոպոսի կողմից:

19 Եվ արդ, ճշմարիտ ասում են ձեզ. Ամեն մի երեց, ով հաշիվ կտա եկեղեցու եպիսկոպոսին այգու այս մասում, թող երաշխավորվի եկեղեցու կամ եկեղեցիների կողմից, որոնցում նա ծառայում է, որ կարողանա բոլոր բաներում հավանության արժանի դարձնել ինքն իրեն և իր հաշիվները:

20 Եվ բացի այդ, թող իմ ծառաները, որոնք տնտես են նշանակվել իմ եկեղեցու “գրական հարցերի վրա, իրավունք ունենան բոլոր բաներում օժանդակություն ստանալ եպիսկոպոսից կամ եպիսկոպոսներից,–

21 Որպեսզի “հայտնությունները հրատարակվեն և առաջ ուղարկվեն մինչև աշխարհի ծայրերը.

որպեսզի նրանք նաև ձեռք բերեն դրամական միջոցներ, որոնք բոլոր բաներում կնպաստեն եկեղեցուն.

22 Որպեսզի նրանք նույնպես բոլոր բաներում հավանության արժանի դարձնեն իրենց և իմաստուն տնտես համարվեն:

23 Եվ արդ, ահա, սա օրինակ պիտի լինի իմ եկեղեցու բոլոր ընդարձակ ճյուղերի համար, որ հողի վրա էլ որ նրանք հաստատված լինեն: Եվ արդ, ես վերջ եմ դնում իմ խոսքերին: Ամեն:

24 Մի քանի խոսք, ի լրումն արքայության օրենքների, եկեղեցու անդամների առնչությամբ,– նրանք, ովքեր Սուրբ Հոգով “նշանակվել են գնալու Սիոն, և նրանք, ովքեր արտոնություն ունեն գնալու Սիոն,–

25 Թող եպիսկոպոսին մի վկայագիր տանեն եկեղեցու երեք երեցներից, կամ մի վկայագիր՝ եպիսկոպոսից.

26 Այլապես, նա ով կգնա Սիոնի հող, չի համարվի իմաստուն տնտես: Սա նույնպես օրինակ է: Ամեն:

ԲԱԺԻՆ 73

Հայտնություն՝ տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեին և Սիդնի Ռիզդոնին, Հայրամում, Օհայո, 1832թ. հունվարի 10-ին (History of the Church, 1.241–242): Նախորդ տարվա դեկտեմբերի սկզբից սկսած՝ Մարգարեն և Սիդնին զբաղված էին քարոզելով, և դրա շնորհիվ մեծ գործ էր արվել՝ մեղմացնելու համար Եկեղեցու հանդեպ առաջացած անբարյացակամությունը (տե՛ս 71-րդ բաժնի նախադրությունը):

1–2՝ Երեցները պետք է շարունակեն քարոզելը. 3–6՝ Ջոզեֆ Սմիթն ու Սիդնի Ռիզդոնը պետք է շարունա-

կեն քարգմանել Աստվածաշունչը, մինչև նրա ավարտը:

17բ ՎևՈՒ 42.32:
20ա ՎևՈՒ 70.3–5:
21ա սուր Վարդապետու-

բյուն և Ուխտեր:
24ա սուր Կանչ, Աստծո կողմից կանչված,

Կոչում:

ՔԱՆՁԻ ճշմարիտ, այսպես է ասում Տերը. Ինձ նպատակա- հարմար է, որ նրանք՝ շարունակե- նն ավետարանը քարոզելը և եկե- ղեցիներին հորդորելը, մերձակա շրջաններում, մինչև համաժողովը.

2 Իսկ դրանից հետո, ահա, հա- մաժողովի՝ ձայնով նրանց հայտ- նի կդարձվեն իրենց առանձին առաքելությունները:

3 Արդ, ճշմարիտ ասում եմ ձեզ, իմ ծառաներ՝ Ջոզեֆ Սմիթ կրոսեր և Սիդնի Ռիզդոն, ասում է Տերը. ՍԱՆԻՐԱԺԷՂՆ է կրկին թարգմանել.

4 Եվ, որքան որ հնարավոր է, քարոզել մերձակա շրջաններում, մինչև համաժողովը. իսկ դրանից հետո անհրաժեշտ է շարունակել քարգմանության գործը, մինչև այն ավարտվի:

5 Եվ թող սա օրինակ լինի երեց- ների համար, մինչև որ ստանան լրացուցիչ գիտելիք, ճիշտ ինչպես գրված է:

6 Արդ, ես ձեզ չեմ տալիս ավելին այժմ: Պոտեպոնտեք ձեր մեջքը և լրջմիտ եղեք: Ընչտ այդ- պես: Ամեն:

ԲԱԺԻՆ 74

Հայտնությունն տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեին, Հայրամում, Օհայո, 1832թ. հունվարին (History of the Church, 1.242): Մարգարեն գրում է. «Տիրոջ նախորդ խոսքն ստանալուն պես [ՎԼՈՒՒ 73], ես վերսկսեցի Սուրբ գրքերի թարգմանությունը և ջանասիրաբար աշխատեցի, ընդհուպ մինչև համաժողովը, որը պետք է գումարվեր հունվարի 25-ին: Այդ ժամանակա- հատվածում ես ստացա նաև հետևյալը՝ որպես բացատրություն առ Կորն- քացիս Առաջին Թղթի Է գլխի 14-րդ հատվածի վերաբերյալ» (History of the Church, 1.242):

1–5 Պողոսն իր օրերի Եկեղեցուն խորհուրդ է տալիս չպահել Մովսեսի օրենքը. 6–7 Փոքր երեխաները սուրբ են և սրբազործված են Քա- վության միջոցով:

2 Արդ, առաքյալների օրոք թըլ- փատության օրենքը պահվում էր բոլոր այն հրեաների մեջ, որոնք չէին հավատում Հիսուս Քրիստոսի ավետարանին:

3 Եվ եղավ այնպես, որ մարդ- կանց մեջ մեծ չհակառակու- քյուն առաջացավ թլփատության օրենքի վերաբերյալ, քանզի ան- հավատ ամուսինը ցանկանում էր, որ իր երեխաները թլփատ- վեին և ենթարկվեին Մովսեսի

ՈՐՈՎՀԵՏԵՎ չանհավատ մարդը սրբազործված է կնկանով, և անհավատ կինը սրբազործված է մարդով. եթե ոչ՝ ձեր զավակները պիղծ կլինեին. բայց հիմա սուրբ են:

73 1ա նշ. մյուսները, ովքեր միսիայում էին. տե՛ս ՎԼՈՒՒ 57–68:
2ա ՎԼՈՒՒ 20.63:
3ա նշ. Որոշ ժամանակ առաջ Ջոզեֆին և Սիդնիին պատվիրվել

եր դադարեցնել Աստվածաշնչի թարգմանությունը և քարոզել ավետարանը: ՎԼՈՒՒ 71.2:
բ ՎԼՈՒՒ 45.60–61, 76.15:
սՈՒ Ջոզեֆ Սմիթի

թարգմանություն (ՋՍԹ):
6ա Ա Պետ. Ա.13:
74 1ա Ա Կոր. Է.14–19:
3ա Գոր. ԺԵ.1–35,
Գաղ. Բ.1–5:
բ սՈՒ Թլփատություն:

՝օրենքին, օրենք, որը կատարվել էր:

4 Եվ եղավ այնպես, որ երեխաները, մեծացած լինելով Մովսեսի օրենքի ենթակայության տակ, սուրբ էին տալիս իրենց հայրական ՝ավանդություններին և չէին հավատում Քրիստոսի ավետարանին, որով դառնում էին անսուրբ:

5 Ուստի, դրա համար առաքյալը գրեց եկեղեցուն՝ տալով նրանց պատվիրան, ոչ թե Տիրոջ, այլ իր

կողմից, որ հավատացյալը չպիտի ՝միանա անհավատին, մինչև Մովսեսի ՝օրենքը չհեռացվի նրանց միջից,

6 Որ նրանց երեխաները մնան անթլիատ. և որ ավանդությունը վերացվի, որն ասում է, թե փոքր երեխաներն անսուրբ են. քանզի դա ընդունված էր հրեաների մեջ.

7 Բայց փոքր ՝երեխաները ՝սուրբ են՝ ՝արբազործված լինելով չիսուս Քրիստոսի ՝քավության միջոցով. և սա է սուրբ գրության իմաստը:

ԲԱԺԻՆ 75

Հայտնություն՝ տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեի միջոցով, Ամհերստում, Օհայո, 1832թ. հունվարի 25-ին (History of the Church, 1.242–245): Առիթը եղավ համաժողովը, որը նշանակված էր նախօրոք: Այս համաժողովում Ջոզեֆ Սմիթը հաստատվեց և կարգվեց՝ որպես Բարձրագույն Քահանայության Նախագահ: Որոշ երեցներ, որոնք իրենց պատգամը մարդկանց հասցնելու գործում դժվարությունների էին հանդիպել, փախագեցին ավելի մանրամասն իմանալ իրենց անմիջական պարտականությունների մասին: Հետևեց այս հայտնությունը:

1–5 Հավատարիմ երեցները, որոնք քարոզում են ավետարանը, կատանան հավերժական կյանք. 6–12՝ Աղոթեք, որ ստանաք Մխիթարիչին, որն ուսուցանում է բոլոր բաները. 13–22 Երեցները պիտի նստեն դատելու նրանց, ովքեր չեն ընդունում իրենց պատգամը. 23–36 Քարոզիչների ընտանիքները պետք է օգնություն ստանան Եկեղեցուց:

նույնիսկ իմ Հոգու ՝ձայնով, այսինքն՝ ՝Ալֆան ու Օմեգան՝ ձեր Տերն ու ձեր Աստվածը,–

2 Ականջ դրեք, ո՛վ դուք, որ տվել եք ձեր անունները, որպեսզի առաջ գնաք՝ հռչակելու իմ ավետարանը և ՝Էտելու իմ ՝այգին:

3 Ահա, ես ասում եմ ձեզ, որ իմ կամքն է, որ դուք առաջ գնաք և չհապաղեք, ոչ էլ ՝ծուլվանաք, այլ աշխատեք ձեր գործությամբ,–

4 Բարձրացնելով ձեր ձայնը, ինչպես փողի հնչյուն, ՝հռչակե-

ԱՇՄԱՐԻՏ, ճշմարիտ ասում եմ ձեզ, Ես, որ խոսում եմ,

3գ սուր Մովսեսի օրենք:
4ա սուր Ավանդություններ:
5ա սուր Ամուսնություն, Ամուսնանալ – Միջհավատքային ամուսնություն:
բ 2 Նեփի 25.24–27:
7ա Մոր. 8.8–15,

ՎեՌԻ 29.46–47, 137.10:
բ սուր Սուրբ:
գ սուր Փրկություն – Երեխաների փրկությունը:
դ սուր Քավել, Քավություն:
75 1ա սուր Հայտնություն:

բ Հայտ. Ա.8:
սուր Ալֆա և Օմեգա:
2ա Հակոբ 5.62:
բ սուր Տիրոջ այգին:
3ա սուր Ծույլ, Ծուլություն:
4ա սուր Միսիոներական աշխատանք:

լով ^բճշմարտությունը՝ համաձայն հայտնությունների և պատվիրանների, որոնք ես տվել եմ ձեզ:

5 Եվ այսպես, եթե դուք հավատարիմ եք, դուք բեռնված կլինեք շատ ^աորաներով, և ^բպսակված՝ ^գպատվով, ^դփառքով, ^եանմահությանը և ^զհավերժական կյանքով:

6 Հետևաբար, ճշմարիտ ասում եմ իմ ծառա Վիլյամ Ի. Մակլելլինին, որ ես ^աեռ եմ վերցնում այն հանձնարարությունը, որը տվել էի նրան՝ զնալու արևելյան շրջանները:

7 Եվ ես տալիս եմ նրան նոր հանձնարարություն և նոր պատվիրան, որով ես՝ Տերս, ^ախրատում եմ նրան իր սրտի ^բտրտունջների համար:

8 Եվ նա մեղանչել է. այնուամենայնիվ, ես ներում եմ նրան, և կրկին ասում եմ նրան. Գնա՛ հարավային շրջանները:

9 Եվ թող իմ ծառա Լյուկ Ջոնսոնը նրա հետ զնա և հռչակի այն բաները, որոնք պատվիրել եմ նրանց, –

10 Կանչելով Տիրոջ անունը՝ ^աՄխիթարիչի համար, որը նրանց կուտուցանի բոլոր բաները, որոնք նպատակահարմար են նրանց համար, –

11 Միշտ ^աաղոթելով, որպեսզի չթուլանան. և որքան որ նրանք անեն դա, ես նրանց հետ կլինեմ, նույնիսկ մինչև վերջ:

12 Ահա, սա է Տիրոջ՝ ձեր Աստծո կամքը ձեր վերաբերյալ: Ճիշտ այդպես: Ամեն:

13 Եվ բացի այդ, ճշմարիտ այսպես է ասում Տերը. Թող իմ ծառա

^աՕրսոն Հայդը և իմ ծառա ^բՍեմյուել Հ. Սմիթը ճամփա ընկնեն դեպի արևելյան շրջանները և հռչակեն այն բաները, որոնք պատվիրեցի նրանց. և որքան որ նրանք հավատարիմ են, ահա, ես նրանց ^գհետ կլինեմ, նույնիսկ մինչև վերջ:

14 Եվ բացի այդ, ես ասում եմ իմ ծառա Լայման Ջոնսոնին և իմ ծառա ^աՕրսոն Պրատին, որ նրանք ևս պետք է ճամփա ընկնեն դեպի արևելյան շրջանները. և ահա, տե՛ս, ես նաև նրանց հետ եմ, նույնիսկ մինչև վերջ:

15 Եվ բացի այդ, ես ասում եմ իմ ծառա Ասա Դոդզին և իմ ծառա Կալվուս Վիլսոնին, որ նրանք ևս պետք է ճամփա ընկնեն դեպի արևմտյան շրջանները, և հռչակեն իմ ավետարանը, ճիշտ ինչպես ես պատվիրել եմ նրանց:

16 Եվ նա, ով հավատարիմ է, կհաղթահարի բոլոր բաները և ^ակբարձրացվի վերջին օրը:

17 Եվ բացի այդ, ես ասում եմ իմ ծառա Մեյջոր Ն. Էշլիին և իմ ծառա Բուր Ռիզզին. Թող նրանք ևս ճամփա ընկնեն դեպի հարավային շրջան:

18 Այո, թող նրանք բոլորը ճամփա ընկնեն, ինչպես պատվիրել եմ նրանց, զնալով տնից տուն, գյուղից գյուղ, քաղաքից քաղաք:

19 Եվ, ո՛ր տուն որ մտնեք, և նրանք ընդունեն ձեզ, թողեք ձեր օրհնություններն այդ տան վրա:

20 Եվ, ո՛ր տուն որ մտնեք, և նրանք չընդունեն ձեզ, դուք պետք

<p>4բ ՎևՈՒ 19.37: 5ա Սաղ. ճԻՁ.6, Ալմա 26.5: բ սո՛ր Պասկ: գ սո՛ր Պատվել: դ սո՛ր Փառք: ե սո՛ր Ամմահ, Ամմահություն:</p>	<p>գ սո՛ր Հավերժական կյանք: 6ա ՎևՈՒ 66.1–13: 7ա սո՛ր Խրատել, Խրատելը: բ սո՛ր Տրանջալ. Սոքեր: 10ա Հովհ. ԺԴ.26:</p>	<p>սո՛ր Մխիթարիչ: 11ա 2 Նեփի 32.9: 13ա սո՛ր Հայդ Օրսոն: բ սո՛ր Սմիթ Սամուել Հ. գ Սաու. ԻԸ.19–20: 14ա սո՛ր Պրատ Օրսոն: 16ա ՎևՈՒ 5.35:</p>
--	---	--

է շտապ հեռանաք այդ տնից, և քոթափեք ձեր ոտքերի փոշին, որպես վկայություն նրանց դեմ:

21 Եվ դուք լցված պիտի լինեք ուրախությամբ ու ցնծությամբ. և իմացեք, որ դատաստանի օրը դուք պիտի լինեք այդ տան ղատավորները և դատապարտեք նրանց.

22 Եվ հեթանոսների համար ավելի հեշտ կլինի դատաստանի օրը, քան այդ տան համար. հետևաբար, գոտեպնդեք ձեր մեջքը և հավատարիմ եղեք, և դուք կհաղթահարեք բոլոր բաները և կբարձրացվեք վերջին օրը: Ճիշտ այդպես: Ամեն:

23 Եվ բացի այդ, այսպես է ասում ձեզ Տերը, ով դուք, իմ եկեղեցու երեցներ, որ տվել եք ձեր անունները, որ կարողանաք իմանալ նրա կամքը ձեր վերաբերյալ, –

24 Ահա, ասում եմ ձեզ, որ դա եկեղեցու պարտականությունն է՝ աջակցությամբ օժանդակել նրանց ընտանիքներին, և նաև աջակցել նրանց ընտանիքներին, ովքեր կանչվել են և անպայման պետք է ուղարկվեն աշխարհ՝ հռչակելու ավետարանն աշխարհին:

25 Ուստի, ես՝ Տերս, տալիս եմ ձեզ այս պատվիրանը, որ դուք տեղ գտնեք ձեր ընտանիքի համար, որքան որ ձեր եղբայրները կկամենան բացել իրենց սրտերը:

26 Եվ թող բոլոր նրանք, ովքեր կարող են տեղ գտնել իրենց ընտանիքների համար և եկեղեցու աջակցությունը՝ նրանց համար,

չհապաղեն զնալ աշխարհ, լինի դեպի արևելք, թե դեպի արևմուտք, դեպի հյուսիս, թե դեպի հարավ:

27 Թող նրանք խնդրեն և կատանան, թակեն և նրանց կբացվի, և հայտնի կդարձվի բարձրից, նույնիսկ Մխիթարիչի միջոցով, թե ուր պիտի նրանք գնան:

28 Եվ բացի այդ, ճշմարիտ ասում եմ ձեզ, որ ամեն տղամարդ, ով պարտավոր է ապահովել իր սեփական ղընտանիքը, թող ապահովի այն, և ոչ մի դեպքում նա չի կորցնի իր պսակը. և թող նա ծառայի եկեղեցուն:

29 Թող ամեն մարդ ջանասեր լինի բոլոր բաներում: Իսկ թույլը տեղ չպիտի ունենա եկեղեցում, եթե չապաշխարի և չուղղի իր ճանապարհները:

30 Ուստի, թող իմ ծառա Սիմեոն Քարտերը և իմ ծառա Էմեր Հարրիսը միանան ծառայության մեջ.

31 Եվ նաև իմ ծառա Էզրա Թայրը և իմ ծառա Թոմաս Բ. Մարշը.

32 Նաև իմ ծառա Հայրում Սմիթը և իմ ծառա Ռեյնոլդս Քահունը.

33 Եվ նաև իմ ծառա Դանիել Ստանտոնը և իմ ծառա Սիմուր Բրունսոնը.

34 Եվ նաև իմ ծառա Սիլվեստեր Սմիթը և իմ ծառա Գեդեոն Քարտերը.

35 Եվ նաև իմ ծառա Ռազլես Իմեսը և իմ ծառա Ստեփան Բարնեթը.

36 Եվ նաև իմ ծառա Միքիա Բ. Վելթոնը և նաև իմ ծառա Իդեն Սմիթը: Ճիշտ այդպես: Ամեն:

20ա Մատ. Ժ.14,
Ղուկ. Ժ.10–11,
Վև.ՈՒ 24.15, 60.15:
21ա Մատ. Ե.11–12:
բ սո՛ւ Գատել,
Գատաստան:

22ա Եփես. 2.14,
Վև.ՈՒ 27.15–18:
27ա 2 Նեփի 32.5,
Վև.ՈՒ 8.2:
սո՛ւ Մուրք Հոգի:
28ա Ա Տիմ. Ե.8,

Վև.ՈՒ 83.2:
բ սո՛ւ Ընտանիք:
29ա սո՛ւ Ջանասիրություն:
բ սո՛ւ Ծույլ, Ծուլություն:
31ա սո՛ւ Մարշ Թոմաս Բ.

ԲԱԺԻՆ 76

Տեսիլք՝ տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեին և Միդնի Ռիզդոնին, Հայրամուս, Օհայո, 1832թ. փետրվարի 16-ին (History of the Church, 1.245–252): Որպես այս տեսիլքի իր արձանագրման նախաբան, Մարգարեն գրել է. «Ամհերստի համաժողովից վերադառնալուն պես, ես վերսկսեցի Սուրբ գրքերի թարգմանությունը: Տարբեր հայտնություններից, որոնք ստացվել էին, ակնհայտ էր, որ մարդու փրկությանը վերաբերող շատ կարևոր կետեր Աստվածաշնչից հանվել կամ կորսվել էին, նախքան նրա ժողովածուն կազմելը: Մնացած ճշմարտություններից պարզ երևում էր, որ, եթե Աստված ամեն մարդու հատուցում է համաձայն մարմնում կատարած արարքների, ապա «Երկինք» հասկացությունը, որպես սրբերի հավերժական բնակավայր, պետք է որ ընդգրկեր մեկից ավելի արքայություններ: Համապատասխանաբար... մինչ թարգմանում էինք Սուրբ Հովհաննեսի Ավետարանը, ես և Երեց Ռիզդոնը տեսանք հետևյալ տեսիլքը» (History of the Church, 1.245): Մարգարեի կողմից Հովհաննեսի Ե.29-ը թարգմանելուց հետո էր, որ տրվեց այս տեսիլքը:

1-4՝ Տերն Աստված է. 5-10՝ Արքայության խորհուրդները պիտի բացահայտվեն բոլոր հավատարիմներին. 11-17՝ Բոլորն առաջ կգան արդարների կամ անարդարների հարության մեջ. 18-24՝ Հիսուս Լքիստոսի քավության միջոցով, բազմաթիվ աշխարհների բնակիչներ ծնվում են որպես Աստծո որդիներ ու դուստրեր. 25-29՝ Աստծո մի հրեշտակ ընկավ և դարձավ դև. 30-49՝ Կորստի որդիները կրում են հավերժական նզովք. մնացած բոլորը ձեռք են բերում փրկության ինչ-որ աստիճան. 50-70՝ Նկարագրվում է վեհացում ստացած էակների փառքն ու պարզևր սելեստիալ արքայության մեջ. 71-80՝ Նկարագրվում են նրանք, ովքեր կժառանգեն թերեստրիալ արքայությունը. 81-113՝ Բացատրվում է թելեստիալ, թերեստրիալ, և

սելեստիալ փառքերում գտնվողների կարգավիճակը. 114-119՝ Հավատարիմները Սուրբ Հոգու գործությամբ կարող են տեսնել և հասկանալ Աստծո արքայության խորհուրդները:

ԼՍԵՔ, ո՛վ երկինքներ, և Լականջ դիր, ո՛վ երկիր, և ցնծացեք, դո՛ւք, բնակիչներ, որ այնտեղ եք, քանզի Տերն ^բԱստված է, և նրանից բացի ^գՓրկիչ ^դչկա:

2 ^աՄեծ է նրա իմաստությունը, ^բսքանչելի են նրա ուղիները, և նրա գործերի սահմանը ոչ ոք չի կարող գտնել:

3 Նրա ^անպատակները չեն ձախողվում, ոչ էլ կա մեկը, ով կարող է ետ պահել նրա ձեռքը:

4 Հավերժությունից հավերժությունն նա ^անույնն է, և նրա տարիները երբեք չեն ^բպակասում:

76 1ա Ես. Ա.2:
բ Երեմ. Ժ.10:
սուր Աստված,
Աստվածազուլխ –
Աստված Որդին:
գ սուր Փրկիչ:

դ Ես. ԽԳ.11, Ովկե ԺԳ.4:
2ա2 Նեփի 2.24,
ՎևՈՒ 38.1-3:
բ Հայտ. ԺԵ.3:
3աԳ Թագ. Ը.56,
ՎևՈՒ 1.38, 64.31:

4ա Եբր. ԺԳ.8,
ՎևՈՒ 35.1, 38.1-4,
39.1-3:
բ Սաղ. ԴԲ.25-27,
Եբր. Ա.12:

5 Քանզի այսպես է ասում Տերը, – Ես՝ Տերս, ՝ողորմած և բարեգութ եմ նրանց հանդեպ, ովքեր ^բվախենում են ինձանից, և բերկրանքով պատվում են նրանց, ովքեր արդարությամբ և ճշմարտությամբ ^գծառայում են ինձ մինչև վերջ:

6 Մեծ պիտի լինի նրանց վարձքը և հավերժական պիտի լինի նրանց ^ափառքը:

7 Եվ նրանց ես ^ակհայտնեմ բոլոր ^բխորհուրդները, այո՛, բոլոր հնուց ի վեր թաքցված խորհուրդներն իմ արքայության, և գալիք դարերի ընթացքում ես նրանց հայտնի կդարձնեմ բարեհաճությունն իմ կամքի՝ բոլոր բաների առնչությամբ, որոնք վերաբերում են իմ արքայությանը:

8 Այո՛, նույնիսկ հավերժության գարնանալիքները կիմանան նրանք, և գալիք բաները ես ցույց կտամ նրանց, նույնիսկ բաներ՝ շատ սերունդների վերաբերյալ:

9 Եվ նրանց ^աիմաստությունը մեծ պիտի լինի, և նրանց ^բհասկացողությունը կհասնի երկինք. և նրանց առաջ իմաստունների իմաստությունը ^գկոչնչանա, և խելամիտների հասկացողությունը ոչինչ կդառնա:

10 Քանզի իմ ^աՀոգով ես ^բկլուսավորեմ նրանց, և իմ ^գգորությամբ ես նրանց հայտնի կդարձնեմ իմ կամքի գաղտնիքները,– այո, նույնիսկ

այն բաները, որոնք ^աաչք չի տեսել, և ականջ չի լսել, և մարդու սիրտ չի թափանցել:

11 Մենք՝ Ջոզեֆ Սմիթ կրտսերը և Սիդնի Ռիզոլոնը, լինելով ^աՀոգու մեր Տիրոջ հազար ութ հարյուր երեսուներկուերորդ տարվա փետրվարի տասնվեցերորդ օրը, –

12 ^աՀոգու գորության մեր ^բաչքերը բացվեցին և մեր հասկացողությունը լուսավորվեց, այնպես որ մենք կարողացանք տեսնել ու հասկանալ Աստծո բաները,–

13 Նույնիսկ այն բաները, որոնք եղել են ի սկզբանե՝ աշխարհի լինելուց առաջ, որոնք կարգվել էին Հոր կողմից, նրա Միածին Որդու միջոցով, որը Հոր ծոցում էր, նույնիսկ ի ^ասկզբանե.

14 Որի մասին մենք վկայություն ենք բերում. և վկայությունը, որը մենք բերում ենք, ավետարանի լրիվությունն է Հիսուս Քրիստոսի, որը Որդին է, որին մենք տեսանք, և որի հետ մենք ^ախոսեցինք երկնային ^բտեսիլքում:

15 Քանզի, մինչ մենք կատարում էինք ^աթարգմանության աշխատանքը, որը Տերը նշանակել էր մեզ, մենք հասանք Հովհաննեսի հինգերորդ գլխի քսանինը հատվածին, որը տրվեց մեզ հետևյալ ձևով,–

16 Խոսելով մեռելների հարու-

<p>5ա Ել. ԼԳ.6, Մաղ. ԾԳ.8: Սո՛ղողորմած, Ողորմություն: <i>բ</i> Բ Օր. 2.13, Հեւ. Գ.23–24: սո՛ւ Վախ. Պատկառնք: <i>գ</i> ՎևՈՒ 4.2: 6ա սո՛ւ Սելեստիալ փառք: 7ա ՎևՈՒ 42.61, 59.4, 98.12, 121.26–33:</p>	<p><i>բ</i> սո՛ւ Աստծո խորհուրդները: 9ա սո՛ւ Իմաստություն: <i>բ</i> սո՛ւ Հասկանալ: <i>գ</i> Եւ. ԻԹ.14, 2 Նեփի 9.28–29: 10ա Մոր. 10.5: <i>բ</i> սո՛ւ Հայտնություն. Վկայություն: <i>գ</i> սո՛ւ Ջորություն: <i>դ</i> Եւ. ԿԳ.4, Ա Կոր. Բ.9, 3 Նեփի 17.15–17,</p>	<p>ՎևՈՒ 76.114–116: 11ա Հայտ. Ա.10: 12ա սո՛ւ Կերպարանափոխում: <i>բ</i> ՎևՈՒ 110.1, 137.1, 138.11, 29: 13ա Մովսես 4.2: 14ա ՎևՈՒ 109.57: <i>բ</i> սո՛ւ Տեսիլք: 15ա սո՛ւ Ջոզեֆ Սմիթի թարգմանություն (ՋՍԹ):</p>
--	--	---

քյան մասին, նրանց մասին, ովքեր պիտի լսեն Մարդու Քրդու ձայնը.

17 Եվ դուրս պիտի գան. նրանք, ովքեր ՝բարիք են գործել՝ Քարդարների Գհարության մեջ. իսկ նրանք, ովքեր չարիք են գործել՝ անարդարների հարության մեջ:

18 Արդ, դա զարմանք պատճառեց մեզ, քանզի այն տրվեց Հոգու կողմից:

19 Եվ մինչ մենք ՝խորհրդածում էինք այդ ամենի մասին, Տերը դիպավ մեր հասկացողության աչքերին, և դրանք բացվեցին, և Տիրոջ փառքը ծագեց մեր շուրջը:

20 Եվ մենք տեսանք ՝փառքը Որդու, ՔՀոր Գաջ կողմում, և ստացանք նրա լիությաննից.

21 Եվ տեսանք սուրբ ՝հրեշտակներին, և նրանց, ովքեր Քսրբագործված են նրա գահի առաջ, որ երկրպագում էին Աստծուն, և Գառին, ովքեր Գերկրպագում են նրան հավիտյանս հավիտենից:

22 Եվ արդ, բազմաթիվ վկայություններինց հետո, որ տրվել են նրա մասին, սա է ՝վկայությունը, ամենավերջինը, որ մենք տալիս ենք նրա մասին. Որ, նա Քապրում է:

23 Քանզի մենք ՝տեսանք նրան, նույնիսկ ՔԱստծո աջ կողմում. և

մենք լսեցինք ձայնը, որը վկայում էր, որ նա Հոր ԳՄիածինն է, –

24 Որ ՝նրանով, նրա միջոցով, և նրանից է, որ Քաշխարհները կան և ստեղծվել են, և դրանց բնակիչները ծնված Գորդիներն ու դուստրերն են Աստծո:

25 Եվ մենք տեսանք նաև, և վկայում ենք, որ Աստծո մի ՝հրեշտակ, որն իշխանություն ուներ Աստծո ներկայության մեջ, որն ապստամբեց Միածին Որդու դեմ, որին Հայրը սիրում էր և որը Հոր ծոցում էր, ցած գցվեց Աստծո և Որդու ներկայությունից,

26 Եվ կոչվեց Կորուստ, քանզի երկինքները լաց եղան նրա վրա, – նա ՝Լյուցիֆերն էր՝ արշալույսի որդին:

27 Եվ մենք տեսանք, և ահա, նա ՝ընկե՛լ է, ընկե՛լ է, նույնիսկ արշալույսի որդին:

28 Եվ մինչդեռ մենք Հոգում էինք, Տերը պատվիրեց մեզ, որ մենք գրի առնենք տեսիլքը. քանզի մենք տեսանք Սատանային, այն հին ՝օձին, այսինքն՝ Քդևին, որն Գապստամբեց Աստծո դեմ և փնտրեց վերցնել մեր Աստծո և նրա Քրիստոսի արքայությունը.

29 Ուստի, նա ՝պատերազմում է

16ա Հովհ. Ե.28:
բ սո՛ր Մարդու Որդի:
17ա սո՛ր Գործեր:
բ Գոր. ԻԳ.15:
գ սո՛ր Հարություն:
19ա սո՛ր Խորհել:
20ա սո՛ր Հիսուս Քրիստոս – Հիսուս Քրիստոսի փառքը:
բ սո՛ր Աստված, Աստվածագլուխ – Աստված Հայրը:
գ Գոր. Է.55:
21ա Մատ. ԻԵ.31, Վևո՛ր 130.6–7, 136.37:
բ սո՛ր Սրբագործում:
գ սո՛ր Երկրպագել:

22ա սո՛ր Վկայություն:
բ Վևո՛ր 20.17:
23ա սո՛ր Հիսուս Քրիստոս – Քրիստոսի ետմահկանացու հայտնության ղեպերը:
բ սո՛ր Աստված, Աստվածագլուխ – Աստված Հայրը:
գ Հովհ. Ա.14:
սո՛ր Միածին:
24ա Եբր. Ա.1–3, 3 Նեփի 9.15, Վևո՛ր 14.9, 93.8–10:
բ Մովսես 1.31–33, 7.30:
սո՛ր Ստեղծել,

Ստեղծում:
գ Գոր. ԺԷ.28, 29, Եբր. ԺԲ.9, սո՛ր Աստծո որդիներն ու դուստրերը:
25ա Վևո՛ր 29.36–39, Մովսես 4.1–4:
սո՛ր Դև:
26ա Ես. ԺԳ.12–17:
սո՛ր Լյուցիֆեր:
27ա Գուլ. Ժ.18:
28ա Հայտ. ԺԲ.9:
բ սո՛ր Դև:
գ սո՛ր Պատերազմ երկնքում:
29ա Հայտ. ԺԳ.7, 2 Նեփի 2.18, 28.19–23:

Աստծո սրբերի հետ և շրջապատում է նրանց շուրջանակի:

30 Եվ մենք տեսանք տեսիլքը նրանց տառապանքների, ուն հետնա պատերազմնց ու հաղթեց, քանզի այսպես եկավ մեզ Տիրոջ ձայնը.

31 Այսպես է ասում Տերը բոլոր նրանց մասին, ովքեր գիտեն իմ զորությունը, և դարձվել են նրանից ճաշակողներ, և իրենց թույլ են տվել դևի զորությամբ՝ հաղթվել, և ուրանալ ճշմարտությունն ու արհամարհել իմ զորությունը,–

32 Այդ նրանք են, որոնք՝ կորուստի ղորդիներն են, որոնց մասին ասում եմ, որ ավելի լավ կլինեն, որ նրանք ընդհանրապես ծնված չլինեին.

33 Քանզի նրանք ցասման անոթներ են, մատնված՝ կրելու Աստծո ցասումը, դևի և նրա հրեշտակների հետ հավերժության մեջ.

34 Որոնց վերաբերյալ ասել եմ, որ՝ ներում չունեն ո՛չ այս աշխարհում, ո՛չ էլ գալիք աշխարհում,–

35 Մուրանալով Սուրբ Հոգին, այն ստանալուց հետո, և ուրանալով Հոր Միածին Որդուն, իրենց համար ղխաչելով և բացահայտ անարգանքի մատնելով նրան:

36 Այդ նրանք են, որ պիտի գնան կրակի և ծծմբի՝ լիճը՝ դևի և նրա հրեշտակների հետ,–

37 Եվ միայն նրանք, որոնց վրա երկրորդ՝ մահը զորություն կունենա.

38 Այո՛, ճշմարիտ, միայն՝ նրանք, որոնք չեն փրկագնվի Տիրոջը հարմար ժամանակ, նրա ցասումը կրելուց հետո:

39 Քանզի մնացած բոլորն առաջ՝ կրելվեն մեռելների ղարությունը, ղԳառի հաղթանակի և փառքի միջոցով, որը սպանվեց, որը Հոր ծոցում էր նախքան աշխարհների արարումը:

40 Եվ սա է՝ մավետարանը՝ ավետիքը, որ երկնքից մի ձայն վկայեց մեզ,–

41 Որ նա եկավ աշխարհ, այսինքն՝ Հիսուսը, աշխարհի համար՝ ղխաչվելու, և ղաշխարհի մեղքերը ղկրելու, և աշխարհը ղսրբագործելու, և այն անիրավությունից ղմաքրելու համար.

42 Որ նրա միջոցով կարողանան՝ փրկվել բոլորը, ուն Հայրը դրել է նրա զորության ներքո և նրանով արարել է.

43 Ով փառավորում է Հորը և փրկում է իր ձեռքի բոլոր գործերը, բացի այն կորստի որդիներից, որոնք ուրանում են Որդուն, այն բանից հետո, երբ Հայրը հայտնել է նրան:

44 Ուստի, նա փրկում է բոլորին, բացի նրանցից,– նրանք պիտի

31ա սո՛ւ Ուրացություն:
32ա Վև.ՈՒ 76.26,
Մովսես 5.22-26:
բ սո՛ւ Կորստի որդիներ:
34ա Մատ. ԺԲ.31-32:
սո՛ւ Ներել:
35ա Բ Պետ. Բ.20-22,
Ալմա 39.6:
սո՛ւ Աններելի մեղք:
բ Եբր. 2.4-6,
1 Նեփի 19.7,
Վև.ՈՒ 132.27:
36ա Հայտ. ԺԹ.20,

Ի.10, ԻԱ.8,
2 Նեփի 9.16, 28.23,
Ալմա 12.16-18,
Վև.ՈՒ 63.17:
37ա սո՛ւ Մահ հոգևոր:
38ա սո՛ւ Կորստի որդիներ:
39ա մշ. կփրկագնվեն. տե՛ս
38 հատվածը: Բոլորը
հարություն կանեն:
Տե՛ս Ալմա 11.41-45:
սո՛ւ Կենդանացնել:
բ սո՛ւ Հարություն:
գ սո՛ւ Հիսուս Քրիստոս:

40ա 3 Նեփի 27.13-22:
սո՛ւ Ավետարան.
Փրկագնման ծրագիր:
41ա սո՛ւ ղխաչելություն:
բ Ա Հովհ. Բ.1-2:
գ Ես. ԾԳ.4-12,
Եբր. Թ.28:
դ սո՛ւ Սրբագործում:
ե սո՛ւ Փրկագնել,
Փրկագնված,
Փրկագնում:
42ա սո՛ւ Փրկություն:

զնան ^ահավիտենական ^բպատիժը, որն անվերջ պատիժ է, որը հավերժական պատիժ է, թագավորելու ^գդևի և նրա հրեշտակների հետ հավերժության մեջ, որտեղ նրանց ^դորդը չի մեռնում, և կրակը չի հանգչում, որը նրանց տանջանքն է,–

45 Եվ որի ^ավերջը, ո՛չ դրա տեղը, ո՛չ էլ նրանց տանջանքը, ոչ մի մարդ չգիտի.

46 Այն ոչ հայտնվել է, ոչ հայտնի է, ոչ էլ կհայտնվի մարդուն, բացի նրանցից, ովքեր դարձվում են դրա ճաշակողները.

47 Սակայն, ես՝ Տերս, այն ցույց եմ տալիս շատերին տեսիլքով, բայց կրկին, իսկույն ևեթ փակում եմ այն.

48 Ուստի, վերջը, լայնությունը, բարձրությունը, ^ախորությունը և թշվառությունը դրա, նրանք չեն հասկանում, ոչ էլ որևէ մարդ, բացի նրանցից, ովքեր ^բկարգվել են այդ ^գդատապարտությանը:

49 Եվ մենք լսեցինք ձայնը՝ ասելիս. Գրի առեք տեսիլքը, քանզի ահա, սա է անաստվածների տառապանքների մասին տեսիլքի վերջը:

50 Եվ կրկին մենք վկայություն ենք բերում,– քանզի մենք տե-

սանք և լսեցինք, և սա է Քրիստոսի ավետարանի ^ավկայությունը նրանց վերաբերյալ, ովքեր առաջ պիտի գան արդարների ^բհարության մեջ,–

51 Այդ նրանք են, ովքեր ընդունեցին Հիսուսի մասին վկայությունը և ^ահավատացին նրա անվանը, և ^բմկրտվեցին նրա թաղվելու ^գձևով, ^դթաղվելով ջրի մեջ՝ նրա անունով, և դա՝ այն պատվիրանի համաձայն, որ տվել է նա,–

52 Որպեսզի պատվիրանը պահելով՝ նրանք կարողանան ^ավացվել և ^բմաքրվել իրենց բոլոր մեղքերից, և ^գձեռնադրմամբ ստանան Սուրբ Հոգին, նրա միջոցով, ով ^դկարգված և կնքված է այս ^եգործությանը.

53 Եվ ովքեր հաղթում են հավատքով, և ^ակնքվում են խոստումի ^բՍուրբ Հոգով, որը Հայրը թափում է բոլոր նրանց վրա, ովքեր արդար են և ճշմարիտ:

54 Այդ նրանք են, ովքեր ^աԱնդրանիկի եկեղեցին են:

55 Այդ նրանք են, ում ձեռքն է դրել Հայրը ^աբոլոր բաները,–

56 Այդ նրանք են, ովքեր ^աքահանաներ ու թագավորներ են, ովքեր ստացել են նրա լիությունից և նրա փառքից.

44ա Վև.ՈՒ 19.6–12:
բ սուր Եզովբ:
գ սուր Դև:
դ Ես. ԿԶ.24,
Մար. Թ.43–48:
45ա Վև.ՈՒ 29.28–29:
48ա Հայտ. Ի.1:
բ նշ. դատապարտվել,
պատժվել:
գ Ալմա 42.22:
50ա սուր Վկայություն:
բ սուր Հարություն:
51ա Վև.ՈՒ 20.25–27, 37:
բ սուր Մկրտություն,

Մկրտել:
գ Վև.ՈՒ 128.13:
դ Հռովմ. Զ.3–5:
սուր Մկրտություն,
Մկրտել – Ընկղմամբ
մկրտություն:
52ա 2 Նեփի 9.23,
Մոր. 8.25–26:
բ սուր Անարատ,
Անարատություն:
գ սուր Սուրբ Հոգու
պարգև.
Ձեռնադրություն:
դ սուր Կարգել, Կարգում:

ե սուր Իշխանություն:
53ա սուր Կնիք, Կնքում:
բ Եփես. Ա.13,
Վև.ՈՒ 88.3–5:
սուր Խոստումի Սուրբ
Հոգի:
54ա Եբր. ԺԲ.23,
Վև.ՈՒ 93.21–22:
սուր Առաջնել:
55ա Բ.Պետ. Ա.3–4,
Վև.ՈՒ 50.26–28,
84.35–38:
56ա Ել. ԺԹ.6,
Հայտ. Ա.5–6, Ի.6:

57 Եվ Բարձրյալի «քահանաներ են, ըստ Մելքիսեդեկի կարգի, որն ըստ Քենովքի կարգի էր, որն ըստ Միածին Արդու՝ կարգի էր:

58 Ուստի, ինչպես գրված է՝ նրանք «աստվածներ են, այսինքն՝ Քաստծո Գորդիներ, –

59 Ուստի, «բոլոր բաները նրանցն են, լինի կյանքը, թե մահը, թե ներկա բաները, թե գալիք բաները, բոլորը նրանցն է, և նրանք՝ Քրիստոսին, և Քրիստոսը՝ Աստծունը:

60 Եվ նրանք «կհաղթահարեն բոլոր բաները:

61 Ուստի, թող ոչ մի մարդ չպարծենա մարդով, այլ թող Քպարծենա Աստծով, որը պիտի Գիպատակեցնի բոլոր թշնամիներին իր ոտքերի տակ:

62 Նրանք պիտի «բնակվեն Աստծո և իր Քրիստոսի Քներկայության մեջ հավիտյանս հավիտենից:

63 Այդ «նրանք են, որոնց նա պիտի բերի իր հետ, երբ որ նա Քգա երկնքի ամպերի մեջ, որ Գթագավորի երկրի վրա իր ժողովրդին:

64 Այդ նրանք են, ովքեր բաժին ունեն «առաջին հարության մեջ:

65 Այդ նրանք են, ովքեր առաջ կգան արդարների «հարության մեջ:

66 Այդ նրանք են, ովքեր եկել են «Միոն Քսարը, և կենդանի Աստծո քաղաքը՝ երկնային վայրը՝ ամենաարբագույնը:

67 Այդ նրանք են, ովքեր միացել են հրեշտակների անթիվ բազմությանը, «Ենովքի և ՔԱնդրանիկի եկեղեցուն ու ընդհանուր ժողովին:

68 Այդ նրանք են, որոնց անունները «գրված են երկնքում, որտեղ Աստված և Քրիստոսն են Քդատավորը բոլորի:

69 Այդ նրանք են, ովքեր «արդար մարդիկ են, Հիսուսի՝ նոր Քուխտի միջնորդի միջոցով Գկատարյալ դարձված, որն իր արյունը՝ հեղելով իրագործեց այս կատարյալ քավությունը:

70 Այդ նրանք են, որոնց մարմինները «սելեստիալ են, որոնց Քփառքը նույնն է, ինչ Գարեգակինը,

57ա սո՛ւ Քահանա՛
Մելքիսեդեկյան
քահանայություն:
p Ծն. Ե.21-24:
սո՛ւ Ենովք:
q ՎևՈՒ 107.1-4:
58ա Մաղ. ՉԲ.1, 6,
Հովհ. Ժ.34-36:
սո՛ւ Մարդ, Մարդիկ –
Մարդ՝ Երկնային Հոր
նման դառնալու
ներուժը:
p ՎևՈՒ 121.32:
սո՛ւ Աստված,
Աստվածագլուխ:
q սո՛ւ Աստծո որդիներն
ու դուստրերը:
59ա Դուկ. ԺԲ.42-44,
3 Նեփի 28.10,
ՎևՈՒ 84.36-38:
60ա Հայտ. Գ.5, ԻԱ.7:
61ա Հովհ. Ե.41-44,
Ա Կոր. Գ.21-23:

p 2 Նեփի 33.6,
Ալմա 26.11-16:
սո՛ւ Փառք:
q ՎևՈՒ 49.6:
62ա Մաղ. ԺԵ.1-3, 24.3-4,
1 Նեփի 15.33-34,
Մովսես 6.57:
p ՎևՈՒ 130.7:
սո՛ւ Հավերժական
կյանք:
63ա ՎևՈՒ 88.96-98:
սո՛ւ Հիսուս Քրիստոսի
երկրորդ գալուստը:
p Մատ. ԻԳ.30:
q ՎևՈՒ 58.22:
սո՛ւ Հիսուս Քրիստոս –
Քրիստոսի
հազարամյա
քաղաքությունը:
64ա Հայտ. Ի.6:
65ա սո՛ւ Հարություն:
66ա սո՛ւ Միոն:
p Ես. ԻԳ.23,

Երբ. ԺԲ.22-24,
Հայտ. ԺԳ.1,
ՎևՈՒ 84.2, 133.56:
67ա ՎևՈՒ 45.9-12:
p Երբ. ԺԲ.23,
ՎևՈՒ 76.53-54:
սո՛ւ Առաջնեկ:
68ա սո՛ւ Կյանքի գիրք:
p սո՛ւ Հիսուս Քրիստոս –
Գատավոր:
69ա ՎևՈՒ 129.3, 138.12:
p սո՛ւ Նոր և
հավիտենական ուխտ:
q Մոր. 10.32-33:
η սո՛ւ Արյուն:
ե սո՛ւ Քավել, Քավություն:
70ա ՎևՈՒ 88.28-29,
131.1-4, 137.7-10:
սո՛ւ Սելեստիալ փառք:
p ՎևՈՒ 137.1-4:
q Մատ. ԺԳ.43:

նույնիսկ Աստծո փառքը, ամենաբարձրյալինը, ում փառքը, ինչպես գրված է, մնամ է երկնականարի արեգակին:

71 Եվ բացի այդ, մենք տեսանք թերեստրիալ աշխարհը, և ահա, տես, այդ նրանք են, ովքեր թերեստրիալից են, որոնց փառքը տարբերվում է նրանից, որն Անդրանիկի եկեղեցունն է, որն ստացել է Հոր լիությունից, ճիշտ ինչպես լուսնինը տարբերվում է արեգակից, որ երկնականարում է:

72 Ահա, այդ նրանք են, ովքեր մահացել են Մառանք օրենքի.

73 Եվ մաս նրանք, որոնք Մբանտում պահված մարդկանց ղոգիներն են, որոնց այցելեց Որդին և Գարգոզեց Պավետարանը, որ նրանք կարողանան դատվել մարմնում գտնվող մարդկանց պես.

74 Որոնք չընդունեցին Հիսուսի մասին Վկայությունը մարմնում, բայց հետո ընդունեցին այն:

75 Այդ նրանք են, ովքեր երկրի վրա պատվավոր մարդիկ են, ովքեր կուրացել են մարդկանց խորամանկության պատճառով:

76 Այդ նրանք են, ովքեր ստանում են նրա փառքից, բայց ոչ նրա լիությունից:

77 Այդ նրանք են, ովքեր ստանում են Որդու ներկայությունից, բայց ոչ Հոր լիությունից:

78 Ուստի, նրանք թերեստրիալ

մարմիններ են, և ոչ սելեստիալ մարմիններ, և տարբերվում են փառքով, ինչպես լուսինն է տարբերվում արեգակից:

79 Այդ նրանք են, ովքեր Մանվեհեր չեն Հիսուսի վկայության մեջ. ուստի, նրանք չեն ստանում մեր Աստծո արքայության թագը:

80 Եվ այժմ սա տեսիլքի վերջն է, որը մենք տեսանք թերեստրիալի վերաբերյալ, որը Տերը պատվիրեց մեզ գրի առնել, մինչ մենք Հոգում էինք:

81 Եվ բացի այդ, մենք տեսանք թերեստրիալի փառքը, որն ավելի ցածրի փառքն է, ճիշտ ինչպես աստղերի փառքն է տարբերվում այն փառքից, որը լուսնինն է երկնականարում:

82 Այդ նրանք են, ովքեր չընդունեցին Քրիստոսի ավետարանը, ոչ էլ Հիսուսի Վկայությունը:

83 Այդ նրանք են, ովքեր չեն ուրանում Սուրբ Հոգին:

84 Այդ նրանք են, որոնք ցած են գցվել Պժոխք:

85 Այդ նրանք են, որոնք Պևից չեն փրկագնվի, մինչև Վերջին հարությունը, մինչև որ Տերը, այսինքն՝ Քրիստոս Գառը, չավարտի իր գործը:

86 Այդ նրանք են, որոնք հավերժական աշխարհում չեն ստանում նրա լիությունից, բայց ստանում են Սուրբ Հոգուց՝ թերեստրիալի ծառայությամբ.

<p>71ա ՎևոՒ 88.30: սոՒ Թերեստրիալ փառք: բ Ա Կոր. ԺԵ.40–41: 72ա ՎևոՒ 137.7, 9: բ սոՒ Օրենք: 73ա ՎևոՒ 88.99, 138.8: սոՒ Դժոխք. Փրկություն մահացածների</p>	<p>համար: բ Ալմա 40.11–14: սոՒ Ոգի: գ Ա Պետ. Գ.19–20, Դ.6, ՎևոՒ 138.28–37: դ սոՒ Ավետարան: 74ա սոՒ Վկայություն: 78ա Ա Կոր. ԺԵ.40–42: 79ա ՎևոՒ 56.16: 81ա ՎևոՒ 88.31:</p>	<p>սոՒ Թերեստրիալ փառք: 82ա ՎևոՒ 138.21: 84ա 2 Նեփի 9.12, Ալմա 12.11: սոՒ Դժոխք: 85ա սոՒ Դև: բ Ալմա 11.41, ՎևոՒ 43.18, 88.100–101: գ սոՒ Աստծո Գառը:</p>
---	--	--

87 Եվ թերեստրիալը՝ սելեստիալի ժառանգությամբ:

88 Եվ նաև, թելեստիալն այն ստանում է հրեշտակների սպասավորությամբ, որոնք նշանակված են նրանց համար ծառայելու, կամ, որոնք նշանակված են՝ նրանց համար լինելու սպասավոր ոգիներ. քանզի նրանք կլինեն փրկության ժառանգներ:

89 Եվ այսպես, երկնային տեսիլքում մենք տեսանք թելեստիալի փառքը, որ ամեն հասկացողությունից վեր է.

90 Եվ ոչ մի մարդ չզիտի այն, բացի նրանից, ում Աստված հայտնել է:

91 Եվ այսպես, մենք տեսանք թերեստրիալի փառքը, որն ամեն ինչով գերազանցում է թելեստիալի փառքին, այսինքն՝ փառքով, և զորությամբ, և հզորությամբ, և տիրապետությամբ:

92 Եվ այսպես մենք տեսանք սելեստիալի փառքը, որը գերազանցում է ամեն ինչով,՝ որտեղ Աստված, այսինքն՝ Հայրը, իր գահի վրա թագավորում է հավիտյանս հավիտենից.

93 Որի գահի առաջ բոլոր բաները խոնարհ Վատկառանքով խոնարհվում են, և փառք են տալիս նրան հավիտյանս հավիտենից:

94 Նրանք, ովքեր բնակվում են իր մերկայության մեջ, ՄԱղորանիկի եկեղեցին են. և ստացած լինելով նրա շնորհի Գլխությունը՝ նրանք տեսնում են, ինչպես իրենք են

տեսնված, և ճանաչում են, ինչպես իրենք են ճանաչված.

95 Եվ նա նրանց Վատկառանքով և հզորությամբ, և տիրապետությամբ:

96 Եվ ուրիշ է սելեստիալի փառքը, ճիշտ ինչպես ուրիշ է Վարեգակի փառքը:

97 Եվ ուրիշ է թերեստրիալի փառքը, ճիշտ ինչպես ուրիշ է լուսնի փառքը:

98 Եվ ուրիշ է թելեստիալի փառքը, ճիշտ ինչպես ուրիշ է աստղերի փառքը. քանզի, ինչպես մեկ աստղ մյուսից տարբերվում է փառքով, ճիշտ այդպես, թելեստիալ աշխարհում մեկը մյուսից տարբերվում է փառքով.

99 Քանզի այդ նրանք են, ովքեր Վարդոսական են և ավարդոսական և կեփասական:

100 Այդ նրանք են, ովքեր ասում են, որ իրենցից ոմանք մեկինն են, իսկ ոմանք մյուսինը,՝ ոմանք քրիստոսական են և ոմանք հովհաննեսական, և ոմանք մովսիսական, և ոմանք եղիասական, և ոմանք եսայական են, և ոմանք եսայիական, և ոմանք ենովքական.

101 Սակայն չընդունեցին ո՛չ ավետարանը, ո՛չ Հիսուսի վկայությունը, ո՛չ մարգարեներին, ո՛չ էլ Վատկառանքական ուխտը:

102 Ի վերջո, այդ բոլորը նրանք են, ովքեր հավաքված չեն լինի սրբերի հետ, որպեսզի Վատկառանքական վեր, Ամղորանիկի Վեկեղեցին, և առնվեն ամպերի մեջ:

103 Այդ նրանք են, ովքեր

87ա ՎևՈՒ 138.37:
93ա սոՒ Պատկառանք:
94ա ՎևՈՒ 130.7:
բ սոՒ Առաջնել:
գ սոՒ Շնորհ:
դ Ա Կոր. ԺԳ.12:

95ա ՎևՈՒ 29.13, 78.5-7,
84.38, 88.107,
132.20:
96ա Ա Կոր. ԺԵ.40-41:
99ա Ա Կոր. Գ.4-7, 22:
101ա սոՒ Նոր և

հավիտենական ուխտ:
102ա Ա Թես. Գ.15-16,
ՎևՈՒ 88.96-98:
բ ՎևՈՒ 78.21:
103ա Հայտ. ԻԱ.8,
ՎևՈՒ 63.17-18:

Քստախոսներ են, և կախարդներ, և Գնացողներ, և անառակներ, և ուրբեր սուտն են սիրում և գործում:

104 Այդ նրանք են, ուրբեր կրում են Աստծո ՝ ցասումը երկրի վրա:

105 Այդ նրանք են, ուրբեր կրում են հավերժական կրակի ՝ վրեժը:

106 Այդ նրանք են, ուրբեր ցած են գցված ՝ Դժոխք և Քրոմ են ԳԱմենագոր Աստծո ցասումը, մինչև ժամանակների ՝ լրությունը, երբ Քրիստոսը ՝ հպատակեցրած կլինի բոլոր թշնամիներին՝ իր ոտքերի տակ, և Գավարտած կլինի իր գործը:

107 Երբ նա կհանձնի արքայությունը, և այն անբիժ կներկայացնի Հորը՝ ասելով. Ես հաղթեցի և միայնակ ՝ կոխ տվեցի զինու ՝ Ինձանը, այսինքն՝ Ամենագոր Աստծո կատաղի ցասման զինու հնձանը:

108 Այնժամ նա կպսակվի իր փառքի պսակով, որ նստի իր իշխանության ՝ զահին՝ թագավորելու հավիտյան հավիտենից:

109 Բայց ահա, և տե՛ս, մենք տեսանք թելեստիալ աշխարհի փառքը և բնակիչներին, որոնք անհամար էին, ինչպես աստղերը երկնքի երկնակամարում, կամ, ինչպես ավազը ծովի ափին:

110 Եվ լսեցինք Տիրոջ ձայնն՝ ասելիս. Մրանք բոլորը պիտի ծունկ ծալեն և ամեն լեզու պիտի

՝ խոստովանի նրան, ով նստած է զահին հավիտյան հավիտենից:

111 Քանզի նրանք կդատվեն, համաձայն իրենց գործերի, և ամեն մարդ, իր իսկ ՝ գործերի համաձայն, իր տիրապետությունը կստանա ՝ Բապարանքներում, որոնք պատրաստված են:

112 Եվ նրանք կլինեն Բարձրյալի ծառաները. բայց ՝ որտեղ որ Աստված և Քրիստոսն են ՝ Բապրում, նրանք չեն կարողանա զալ՝ աշխարհներ անվերջ:

113 Սա է տեսիլքի վերջը, որը մենք տեսանք, որը մեզ պատվիրվեց գրի առնել, մինչդեռ մենք Հոգում էինք:

114 Սակայն ՝ մեծ և զարմանալի են Տիրոջ գործերը, և նրա արքայության ՝ խորհուրդները, որ նա ցույց տվեց մեզ, որոնք ամեն հասկացողությունից վեր են՝ փառքով, հզորությամբ և տիրապետությամբ:

115 Որոնք նա պատվիրեց մեզ, որ գրի չառնենք, մինչդեռ Հոգում էինք. և ՝ օրինավոր չէ որ մարդն արտասանի դրանք:

116 Ոչ էլ մարդ ի ՝ վիճակի է հայտնի դարձնել դրանք, քանզի դրանք հնարավոր է տեսնել ու ՝ հասկանալ միայն Սուրբ Հոգու զորությամբ, որն Աստված շնորհում է նրանց, ուրբեր սիրում են նրան և մաքրագործվում են նրա առաջ:

103բ սուր Ստեղ:

q սուր Շնություն:

104ա սուր Նգովք:

105ա Հուդա Ա.7:

106ա սուր Գժոխք:

p ՎևոՒ 19.3–20:

q ՎևոՒ 87.6:

η Եփես. Ա.10:

է Ա Կոր. ԺԵ.24–28:

q Եբր. Ժ.14:

107ա Հայտ. ԺԺ.15,

ՎևոՒ 88.106,

133.46–53:

p Ծն. ԽԹ.10–12,

Ես. ԿԳ.1–3:

108ա ՎևոՒ 137.3:

110ա Փիլ. Բ.9–11,

Մոսիա 27.31:

111ա Հայտ. Ի.12–13:

սուր Գործեր:

p Հովհ. ԺԳ.2,

ՎևոՒ 59.2, 81.6:

112ա ՎևոՒ 29.29:

p Հայտ. ԻԱ.23–27:

114ա Հայտ. ԺԵ.3,

Մորմ. 9.16–18,

Մովսես 1.3–5:

p Հակոբ 4.8:

115ա Բ Կոր. ԺԲ.4:

116ա 3 Նեփի 17.15–17,

19.32–34:

p Ա Կոր. Բ.10–12:

117 Որոնց նա պարզևում է՝ հրեանց համար տեսնելու և իմանալու այս արտոնությունը.

118 Որ Հոգու զորությամբ ու դրսևորմամբ, դեռևս մարմնում, նրանք ի վիճակի լինեն դիմանա-

լու նրա ներկայությանը փառքի աշխարհում:

119 Եվ Աստծուն և Գառին լինի փառքը, և պատիվը, և տիրապետությունը հավիտյանս հավիտեցից: Ամեն:

ԲԱԺԻՆ 77

Հայտնություն տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեին, Հայրամում, Օհայո, 1832թ. մարտին (History of the Church, 1.253-255): Մարգարեն գրել է. «Սուրբ գրքերի թարգմանության առնչությամբ, ես ստացա հետևյալ բացատրությունը Սուրբ Հովհաննեսի Հայտնության վերաբերյալ» (History of the Church, 1.253):

1-4 Կենդանիներն ունեն ոգի և պիտի բնակվեն հավերժական երանության մեջ անմահ երկրի վրա. 5-7 Այս երկիրն ունի 7000 տարվա աշխարհային գոյություն. 8-10՝ Մի քանի հրեշտակներ վերականգնում են ավետարանը և ծառայում են երկրի վրա. 11՝ 144000-ի կնքումը. 12-14՝ Քրիստոսը կգա յոթերորդ հազարամյակի սկզբին. 15՝ Երկու մարգարեներ կբարձրացվեն հրեա ազգի համար:

Հ Ի՞նչ է ապակյա ծծովը, որի մասին խոսում է Հովհաննեսը, Հայտնության Դ գլխի 6-րդ հատվածում:

Պ. Դա թերկիրն է՝ իր սրբագործված, անմահ և Գհավերժական վիճակում:

2 Հ. Ի՞նչ են նշանակում այն չորս կենդանիները, որոնց մասին խոսվում է նույն հատվածում:

Պ. Դրանք ՝ փոխաբերական արտահայտություններ են, Հայտնողի՝ Հովհաննեսի կողմից օգտա-

գործված, նկարագրելու համար թերկիրը, Աստծո Գրախտը, մարդու, և կենդանիների, և սողունների, և երկնքի թռչունների թերջանկությունը. այն, ինչ հոգեղեն է, լինելով ֆիզիկականի մմանությամբ. և այն, ինչ ֆիզիկականի է՝ հոգեղենի մմանությամբ. մարդու Գհոգին՝ իր անձի մմանությամբ, ինչպես նաև հոգին Գկենդանու և Աստծո ստեղծած յուրաքանչյուր այլ արարածի:

3 Հ. Արդյո՞ք այդ չորս կենդանիներն ուղղակի առանձին կենդանիներ են, թե՞ նրանք ներկայացնում են դասեր կամ կարգեր:

Պ. Դրանք ուղղակի չորս առանձին կենդանիներ են, որոնք ցույց էին տրվել Հովհաննեսին՝ ներկայացնելու համար տարբեր դասերի էակների փառքը, իրենց սահմանված կարգի կամ ստեղծման ՝ ոլորտի մեջ, իրենց հավերժական թերանությունը վայելելիս:

4 Հ. Ի՞նչ են նշանակում այն

77 1ա ՎևՈԻ 130.6-9:
բ ՎևՈԻ 88.17-20, 25-26:
գ սո՛ Երկիր - Երկրի վերջնական վիճակը.
Սելեստիալ փառք:
2ա սո՛ Խորհրդանշակա-

նություն:
բ սո՛ Երկիրը:
գ սո՛ Դրախտ:
դ սո՛ Ուրախություն:
ե Եթեր 3.15-16,
Աբբ. 5.7-8:

սո՛ Ոգի:
գ Մովսես 3.19:
3ա ՎևՈԻ 93.30,
Մովսես 3.9:
բ ՎևՈԻ 93.33-34:

աչքերը և թևերը, որոնք ունեին կենդանիները:

Պ. Նրանց աչքերը լույսի և "գիտության պատկերում է, այսինքն՝ նրանք լի են գիտությամբ. իսկ նրանց թևերը պատկերում են ^բգորություն՝ տեղափոխվելու, գործելու և այլն:

5 Հ. Ի՞նչ պետք է հասկանանք՝ ուվքե՞ր էին քսանչորս ^աերեցները, որոնց մասին խոսել է Հովհաննեսը:

Պ. Մենք պետք է հասկանանք, որ այդ երեցները, որոնց Հովհաննեսը տեսավ, այն երեցներն են, ովքեր ^բհավատարիմ էին եղել ծառայության գործում և մահացել էին. որոնք պատկանում էին ^գյոթ եկեղեցիներին և այն ժամանակ գտնվում էին Աստծո դրախտում:

6 Հ. Ի՞նչպես պետք է հասկանանք այն գիրքը, որը տեսավ Հովհաննեսը, որը դրսից ^ակնքված էր յոթը կնիքով:

Պ. Մենք պետք է հասկանանք, որ այն պարունակում է Աստծո բացահայտված կամքը, ^բխորհուրդներն ու գործերը. նրա տնտեսության թաքնված բաներն այս ^գերկրի առնչությամբ՝ յոթ հազար տարիների իր տևողության ընթացքում, կամ իր աշխարհային գոյության ժամանակ:

7 Հ. Ի՞նչպես պետք է հասկանանք այն յոթը կնիքները, որոնցով այն կնքված էր:

Պ. Մենք պետք է հասկանանք, որ առաջին կնիքը պարունակում է ^աառաջին հազար տարիների բաները, ինչպես և երկրորդը՝ երկրորդ

հազար տարիների, և այդպես շարունակ, մինչև յոթերորդը:

8 Հ. Ի՞նչ պետք է հասկանանք՝ ուվքե՞ր էին այն չորս հրեշտակները, որոնց մասին խոսվում է Հայտնության է գլխի 1-ին հատվածում:

Պ. Մենք պետք է հասկանանք, որ դրանք Աստծուց ուղարկված չորս հրեշտակներն են, որոնց գործություն է տրվել աշխարհի չորս մասերի վրա՝ կյանքեր փրկելու ու կործանելու. այդ նրանք են, ովքեր ունեն ^ահավիտենական ավետարանը և պետք է հանձնեն ամեն ազգի, ցեղի, լեզվի և ժողովրդի. գործություն ունենալով երկինքները փակելու, կյանքի համար կնքելու կամ ցած գցելու՝ դեպի խավարի ^բտարածքները:

9 Հ. Ի՞նչ պետք է հասկանանք, ո՞վ է արևելքից դուրս եկող հրեշտակը Հայտնության է գլխի 2-րդ հատվածում:

Պ. Մենք պետք է հասկանանք, որ արևելքից դուրս եկող հրեշտակը նա է, ում տրված է կենդանի Աստծո կնիքը՝ ^աԻսրայելի տասներկու ցեղերի վրա. ուստի, նա աղաղակում է հավիտենական ավետարանն ունեցող չորս հրեշտակներին՝ ասելով. Վնաս մի տվեք ո՛չ երկրին, ո՛չ ծովին և ո՛չ էլ ծառերին, մինչև որ մենք կնիք դնենք մեր Աստծո ծառաների վրա՝ նրանց ^բճակատներին: Եվ, եթե դուք կրնդունեք, սա ^գԵղիասն է, որը պիտի գար՝ հավաքելու Իսրայելի ցեղերը և ^դվերականգնելու բոլոր բաները:

<p>4ա սոս Գիտություն: բ սոս Չորություն: 5ա Հայտ. Դ.4, 10: բ Հայտ. ԺԳ.4-5: գ Հայտ. Ա.4: 6ա Հայտ. Ե.1: բ սոս Աստծո</p>	<p>խորհուրդները: գ սոս Երկիր: 7ա ՎևոՒ 88.108-110: 8ա Հայտ. ԺԳ.6-7: բ Մատ. Ը.11-12, ԻԲ.1-14, ՎևոՒ 133.71-73:</p>	<p>9ա Հայտ. Է.4-8: բ Եզեկ. Թ.4: գ սոս Եղիաս: դ սոս Ավետարանի վերականգնումը:</p>
--	---	---

10 Հ. Ե՞րբ պիտի իրագործվեն այս գլխում նշված բաները:

Պ. Դրանք պետք է իրագործվեն ^ավեցերորդ հազարամյակում, կամ, վեցերորդ կնիքը բացելիս:

11 Հ. Ի՞նչպես պետք է հասկանանք ^ահարյուր քառասունչորս հազարի կնքելն Իսրայելի բոլոր ցեղերից՝ ամեն մի ցեղից տասններկու հազար:

Պ. Մենք պետք է հասկանանք, որ նրանք, ովքեր կնքվեցին, ^բքահանայապետեր են, Աստծո սուրբ կարգով կարգված՝ սպասավորելու հավիտենական ավետարանը. քանզի այդ նրանք են, ովքեր կարգվել են ամեն ազգից, ցեղից, լեզվից և ժողովրդից, հրեշտակների կողմից, որոնց գործություն է տրվել երկրի ազգերի վրա, բերելու բոլոր նրանց, ովքեր կամենում են գալ ^գԱնդրանիկի եկեղեցին:

12 Հ. Ի՞նչպես պետք է հասկանանք ^ափողեր հնչեցնելը, որը նշված է Հայտնության Ը գլխում:

Պ. Մենք պետք է հասկանանք, որ ճիշտ ինչպես Աստված արարեց երկիրը վեց օրում, և յոթերորդ օրը նա ավարտեց իր աշխատանքը, և ^բսրբագործեց այն, և նաև երկրի ^գփռշույց կազմավորեց մարդուն, այդպես էլ յոթերորդ հազարամյակի սկզբին Տեր Աստված ^դկարբագործի երկիրը, և ավարտին կհասցնի մարդու փրկությունը, և ^եկղատի բոլոր բաները, և

^զկփրկագնի բոլոր բաները, բացի նրանցից, որոնց չի դրել իր գործության մեջ, երբ նա կնքած կլինի բոլոր բաները, բոլոր բաների վերջի համար. և յոթ հրեշտակների փողեր հնչեցնելը՝ նախապատրաստումն ու ավարտումն է իր գործի, յոթերորդ հազարամյակի սկզբին,– ճանապարհի պատրաստումը, մինչ նրա գալստի ժամանակը:

13 Հ. Ե՞րբ պետք է իրագործվեն այն բաները, որոնք գրված են Հայտնության Թ գլխում:

Պ. Դրանք պետք է իրագործվեն յոթերորդ կնիքը բացելուց հետո, նախքան Քրիստոսի գալուստը:

14 Հ. Ի՞նչպես պետք է հասկանանք այն գրքույկը, որը ^ակերավ Հովհաննեսը, ինչպես նշված է Հայտնության Ժ գլխում:

Պ. Մենք պետք է հասկանանք, որ դա առաքելություն և արարողություն էր նրա համար՝ ^բհավաքելու Իսրայելի ցեղերը. ահա, դա Շղիասն է, որը, ինչպես գրված է, պետք է գա և ^գվերականգնի բոլոր բաները:

15 Հ. Ի՞նչ պետք է հասկանալ՝ ո՞վ են Հայտնության տասնմեկերորդ գլխի երկու ^ավկանները:

Պ. Նրանք երկու մարգարե են, որոնք պիտի բարձրացվեն ^բհրեա ազգի համար, ^գվերջին օրերին, ^դվերականգնման ժամանակ, և պիտի մարգարեանան հրեաներին,

10ա Հայտ. Զ.12–17:
11ա Հայտ. ԺԳ.3–5:
բ սո՛ւ Քահանայապետ:
գ Վևո՛Թ 76.51–70:
սո՛ւ Առաջնեկ:
12ա Հայտ. Ը.2:
բ Ծն. Բ.1–3, Ել. Ի.11, ԼԱ.12–17, Մոսիա 13.16–19, Մովսես 3.1–3,

Աբբ. 5.1–3:
գ Ծն. Բ.7:
դ Վևո՛Թ 88.17–20:
ե սո՛ւ Հիսուս Քրիստոս – Դատավոր:
զ սո՛ւ Փրկագնել, Փրկագնված, Փրկագնում:
14ա Եզեկ. Բ.9–10, Գ.1–4, Հայտ. Ժ.10:

բ սո՛ւ Իսրայել – Իսրայելի ցրվելը:
գ Մատ. ԺԷ.11:
15ա Հայտ. ԺԱ.1–14:
բ սո՛ւ Հրեաներ:
գ սո՛ւ Վերջին օրեր, Ետին օրեր:
դ սո՛ւ Ավետարանի վերականգնումը:

այն ամենից հետո, երբ նրանք հավաքված և կառուցած կլինեն

Երուսաղեմ քաղաքն իրենց հայրերի՝ հողում:

ԲԱԺԻՆ 78

Հայտնություն՝ տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեի միջոցով, Հայրամուս, Օհայո, 1832թ. մարտին (History of the Church, 1.255-257): Տիրոջ կողմից Ջոզեֆ Սմիթին տրվեց հաստատված մի կարգ՝ աղքատների համար շտեմարան հիմնելու նպատակով: Միշտ չէ, որ ցանկալի էր, որ այն անհատների ինքնությունները, որոնց Տերը դիմում էր հայտնություններում, հայտնի դարձվեին աշխարհին. հետևաբար, այս և հետագա որոշ հայտնությունների հրատարակության մեջ եղբայրներին, իրենց սեփական անվան փոխարեն դիմում էին այլ անուններով: Երբ որ անցավ այդ անհատների անուններն անհայտ պահելու անհրաժեշտությունը, դրանից հետո նրանց իրական անունները տրվեցին փակագծերում: Քանի որ այսօր որևէ կենսական անհրաժեշտություն չկա օգտագործելու ծածկագիր անունները, այժմ այստեղ գործածվում են իսկական անունները, ինչպես տրվել է բնագրերում:

1-4 Սրբերը պետք է կազմակերպելու հիմնեն մի շտեմարան. 5-12՝ Իրենց ունեցվածքի իմաստուն օգտագործումը կտանի դեպի փրկություն. 13-14՝ Եկեղեցին պետք է անկախ լինի երկրային իշխանություններից. 15-16՝ Միքայելը (Ադամը) ծառայում է Սուրբի (Քրիստոսի) դեկավարության ներքո. 17-22՝ Օրհնված են հավատարիմները, քանզի նրանք կժառանգեն բոլոր բաները:

ձեր ականջին, որ դուք փրկություն ունենաք այն բանում, որը ներկայացրել էք իմ առաջ, ասում է Տեր Աստված:

3 Քանզի ճշմարիտ ասում եմ ձեզ, որ ժամանակը եկել է, և այժմ մոտ է. և ահա, տեսե՛ք, անպայման անհրաժեշտ է, որ իմ ժողովրդի մի՝ կազմակերպություն լինի, իմ ժողովրդի՝ աղքատների համար՝ շտեմարանի գործերը կարգավորելիս և հաստատելիս, թե՛ այս վայրում և թե՛ Պիոնի հողում, -

ՏԵՐԸ խոսեց Ջոզեֆ Սմիթ կրտսերի հետ՝ ասելով. Ականջ դրեք ինձ, ասում է Տերը՝ ձեր Աստվածը, դուք, որ կարգվել եք իմ եկեղեցու՝ բարձրագույն քահանայությանը, որ հավաքվել եք միասին.

4 Որպես մշտական և հավիտենական հաստատություն և կարգ, իմ եկեղեցու համար, որպեսզի առաջ գնա այն գործը, որը դուք հանձն եք առել՝ մարդու փրկության համար, և ձեր Հոր փառքի համար, որը երկնքում է.

2 Եվ լսեք՝ յխորհուրդը նրա, ով Քարգել է ձեզ բարձրից, ով իմաստության խոսքեր պիտի խոսի

5 Որպեսզի դուք՝ հավասար լինեք երկնային բաների կապերի

15ե Ամոն Թ.14-15:
78 1ա սուր Մելքիսեդեկյան քահանայություն:
2ա սուր Խորհուրդ:
բ սուր Կարգել, Կարգում:

3ա ՎևոՒ 82.11-12, 15-21:
բ ՎևոՒ 42.30-31:
սուր Բարօրություն:
գ ՎևոՒ 72.9-10, 83.5-6:
դ ՎևոՒ 57.1-2:

5ա ՎևոՒ 49.20:
սուր Նվիրաբերել,
Նվիրաբերման օրենք:

մեջ, այո, և մաս երկրային բաների մեջ՝ երկնային բաները ստանալու համար:

6 Քանզի, եթե դուք հավասար չեք երկրային բաներում, դուք չեք կարող հավասար լինել երկնային բաները ստանալիս:

7 Քանզի եթե դուք կամենում եք, որ ես ձեզ տեղ տամ՝ սելեստիալ աշխարհում, դուք պետք է քափարաստվեք, քափարելով այն բաները, որոնք ես պատվիրել եմ ձեզ և պահանջել եմ ձեզանից:

8 Եվ արդ, ճշմարիտ, այսպես է ասում Տերը: Անհրաժեշտ է, որ բոլոր բաներն արվեն իմ փառքի համար, ձեր կողմից, որ միասին միացել եք այս քափարանության մեջ:

9 Կամ, այլ խոսքով, թող իմ ծառա Նյուել Է. Ուիթնին և իմ ծառա Ջոզեֆ Սմիթ կրտսերը, և իմ ծառա Սիդնի Ռիզոնը խորհրդի մատեն սրբերի հետ, որոնք Սիոնում են:

10 Այլ ապես՝ Սատանան փնտրում է հեռացնել նրանց սրտերը ճշմարտությունից, որ նրանք դառնան կույր և չհասկանան այն բաները, որոնք պատրաստված են իրենց համար:

11 Ուստի, ես պատվիրան եմ տալիս ձեզ՝ պատրաստվել և կազմակերպվել մի կապով կամ հավիտենական՝ ուխտով, որը չի կարող դրժվել:

12 Եվ մա, ով դրժում է այն, պիտի կորցնի իր պաշտոնն ու դիրքը եկեղեցում, և պիտի հանձնվի

Սատանայի՝ հարվածներին, մինչև փրկագման օրը:

13 Ահա, սա է նախապատրաստությունը, որով ես նախապատրաստում եմ ձեզ, և հիմքը, և օրինակը, որ տալիս եմ ձեզ, որով դուք կկարողանաք կատարել ձեզ տրված պատվիրանները:

14 Որ իմ նախախնամության միջոցով, չնայած՝ նեղություններին, որոնք կիջնեն ձեր վրա, որ եկեղեցին կարողանա կանգնել անկախ՝ սելեստիալ աշխարհի տակ գտնվող բոլոր մյուս արարածներից բարձր:

15 Որ դուք կարողանաք հասնել ձեզ համար պատրաստված՝ պասկին, և քառավարիչներ դարձվեք շատ արքայությունների վրա, ասում է Տեր Աստվածը, Սիոնի Սուրբը, որը հաստատել է քառամ-օնդի-Ահմանի հիմքերը:

16 Որը ձեզ համար իշխան է նշանակել՝ Միքայելին, և հաստատել է նրա ուղեքը, և դրել է նրան վերևում, և տվել է նրան փրկության բանալիները Սուրբի խորհրդի և ղեկավարության մերքո, որը չունի օրերի սկիզբ, ոչ էլ կյանքի վերջ:

17 Ճշմարիտ, ճշմարիտ ասում եմ ձեզ, որ դուք փոքր երեխաներ եք, և դեռ չեք հասկացել, թե որքան մեծ օրհնություններ ունի Հայրն իր ձեռքում և ձեզ համար պատրաստած:

18 Եվ դուք չեք կարող՝ տանել բոլոր բաներն այժմ: այնուամենայնիվ, ուրախ եղեք, քանզի ես ձեր քողերիցը կլինեմ: Արքայությունը

7ա ստ. Սելեստիալ փառք:
բ ՎևՈՒ 29.8, 132.3:
գ ՎևՈՒ 82.10:
8ա Մովսես 1.39:
բ ՎևՈՒ 92.1:
10ա ստ. Գև:
11ա ստ. Ուխտ:

12ա Ա Կոր. Ե.5,
ՎևՈՒ 82.21, 104.8-10:
14ա ՎևՈՒ 58.2-4:
15ա ստ. Պսակ. Վեհացում:
բ Հայտ. Ե.10,
ՎևՈՒ 76.56-60, 132.19:
գ ստ. Ադամ-օնդի-

ահման:
16ա ՎևՈՒ 27.11, 107.54-55:
ստ. Ադամ:
18ա Հովհ. Ժ.2.12,
3 Նեփի 17.2-3,
ՎևՈՒ 50.40:
բ ՎևՈՒ 112.10:

ձերն է և նրա օրհնությունները ձերն են, և Գիավերժության հարստությունները ձերն են:

19 Եվ նա, ով ընդունում է բոլոր բաները՝ գոհությամբ, պիտի փառավորվի. և այս աշխարհի բաները պիտի ավելացվեն նրա համար, նույնիսկ Բարյուրապատիկ, այո, ավելի շատ:

20 Ուստի, կատարեք այն բաները, որոնք պատվիրել են ձեզ,

ասում է ձեր Քավիչը, այսինքն՝ Սահման Որդին, որը պատրաստում է բոլոր բաները՝ նախքան նա ձեզ Քվկերցնի.

21 Քանզի դուք Անդրանիկի եկեղեցին եք, և նա Քվկերցնի ձեզ ամպի մեջ, և ամեն մարդու կնշանակի իր բաժինը:

22 Եվ նա, ով հավատարիմ և իմաստուն Քունտես է, պիտի ժառանգի Գբոլոր բաները: Ամեն:

ԲԱԺԻՆ 79

Հայտնություն տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեի միջոցով, Հայրամուս, Օհայո, 1832թ. մարտին (History of the Church, 1.257):

1–4 Ջարեդ Քարտերը կանչվում է քարոզելու ավետարանը Մխիթարիչի միջոցով:

ԱՇԱՐԻՏ ասում են քեզ, որ Ադա իմ կամքն է, որ իմ ծառա Ջարեդ Քարտերը կրկին պիտի գնա արևելյան երկրները, տեղից տեղ, քաղաքից քաղաք, այն կարգման գործությամբ, որով նա կարգվել է, հռչակելով մեծ ուրախության ավետիքը, այսինքն՝ հավիտենական ավետարանը:

2 Եվ ես նրա վրա կուղարկեմ Մխիթարիչին, որը նրան կսովորեցնի ճշմարտությունը և այն ճանապարհը, որով նա պետք է գնա.

3 Եվ որքան որ նա հավատարիմ կլինի, ես կրկին կպսակեմ նրան որաներով:

4 Ուստի, թող քո սիրտն ուրախանա, իմ ծառա՝ Ջարեդ Քարտեր, և մի վախեցիր, ասում է քո Տերը, այսինքն՝ Հիսուս Քրիստոսը: Ամեն:

ԲԱԺԻՆ 80

Հայտնություն տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեի միջոցով, Հայրամուս, Օհայո, 1832թ. մարտին (History of the Church, 1.257):

1–5 Ստեփան Բարնեթը և Իդեն Սմիթը կանչվում են քարոզելու, որտեղ որ նրանք ընտրեն:

ԱՇԱՐԻՏ, այսպես է ասում Տերը քեզ, իմ ծառա՝ Ստեփան Բարնեթ. Գնա՛. գնա՛ աշխարհի

18գ սուր Հավերժական կյանք:
19ա Մոսիա 2.20–21:
սուր Շնորհակալ, Շնորհակալություն, Գոհաբանություն:
բ Մատ. ԺԺ.29:

20ա ՎևոՒ 95.17:
բ Ա Թես. Գ.16:
21ա ՎևոՒ 76.53–54:
բ ՎևոՒ 88.96–98:
22ա ՎևոՒ 72.3–4:
բ սուր Տնտես:
գ ՎևոՒ 84.38:

79 1ա ՎևոՒ 52.38:
սուր Կարգել, Կարգում:
2ա Հովհ. ԺԳ.26:
սուր Մխիթարիչ:
4ա ՎևոՒ 68.5–6:

մեջ և «քարոզիր ավետարանն ամեն արարածի, ում հասանելի է քո ձայնի հնչումը:

2 Եվ քանի որ դու գործընկեր ես ուզում, ես կտամ քեզ իմ ծառա Իդեն Սմիթին:

3 Ուստի, գնացեք և քարոզեք իմ ավետարանը, թե՛ դեպի հյուսիս, թե՛ դեպի հարավ, թե՛ դեպի արևելք, թե՛ դեպի արևմուտք,

նշանակություն չունի, քանզի հնարավոր չէ, որ դուք սխալ գնաք:

4 Հետևաբար, հայտարարեք այն բաները, որոնք դուք լսել եք, և արդարև հավատացել եք, և «գիտեք, որ ճշմարիտ եմ:

5 Ահա, սա է կամքը նրա, ով «կանչել է ձեզ, ձեր Քավչի, այսինքն՝ Հիսուս Քրիստոսի: Ամեն:

ԲԱԺԻՆ 81

Հայտնություն՝ տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեի միջոցով, Հայրամուս, Օհայո, 1832թ. մարտին (History of the Church, 1.257–258): Ֆրեդերիկ Գ. Վիլյամսը կանչվում է լինելու քահանայապետ և Բարձրագույն Քահանայության Նախագահությունում խորհրդական: Պատմական արձանագրությունները ցույց են տալիս, որ երբ 1832թ. մարտին ստացվել էր այս հայտնությունը, Նախագահությունում Ջոզեֆ Սմիթի խորհրդականի պաշտոնին էր կանչվել Ջեսսի Գաուսին: Ինչևէ, երբ նա թերացավ շարունակել այն ձևով, որը համապատասխանում էր այդ նշանակմանը, կոչումը հետագայում փոխանցվեց Ֆրեդերիկ Գ. Վիլյամսին: Հայտնությունը (1832թ. մարտ ամսով գրանցված) պետք է համարել մի քայլ՝ Առաջին Նախագահության պաշտոնական կազմավորման ուղղությամբ, այդ մարմնում խորհրդականի պաշտոնի հաստիկ կոչումով և այդ նշանակման արժանապատվության բացատրությամբ: Եղբայր Գաուսը որոշ ժամանակ ծառայեց, սակայն 1832թ. դեկտեմբերին հեռացվեց Եկեղեցուց: Եղբայր Վիլյամսը կարգվեց նշված պաշտոնին 1833թ. մարտի 18-ին:

1–2՝ Առաջին Նախագահությունը միշտ կրում է արքայության բանալիները. 3–7՝ Եթե Ֆրեդերիկ Գ. Վիլյամսը հավատարիմ լինի իր ծառայության մեջ, նա հավերժական կյանք կունենա:

ԱՇԱՐԻՏ, ճշմարիտ ասում ենք քեզ, իմ ծառա՝ Ֆրեդերիկ Գ. Վիլյամս. Լսիր ձայնը նրա, ով խոսում է, Տիրոջ՝ քո Աստծո խոսքը, և ականջ դիր այն կոչմանը,

որով դու կանչվել ես, այսինքն՝ լինելու «քահանայապետ իմ եկեղեցում և խորհրդական իմ ծառա Ջոզեֆ Սմիթ կրտսերի համար.

2 Որին ես տվել եմ արքայության «բանալիները, որոնք միշտ պատկանում են Բարձրագույն Քահանայության «Նախագահությանը.

3 Հետևաբար, ճշմարիտ, ես ճանաչում եմ նրան և կօրհնեմ նրան, և նաև քեզ, որքան որ դու հավատարիմ լինես խորհրդի մեջ, այն

80 1ա Մար. Ժ2.15:
4ա սուր Վկայություն:
5ա սուր Կանջ, Աստծո կողմից կանչված,

Կոչում:
81 1ա սուր Քահանայապետ:
2ա սուր Քահանայության բանալիները:

p ՎևոՒ 1078–9, 22:
սուր Առաջին Նախագահություն:

պաշտոնում, որում նշանակել եմ քեզ, միշտ աղոթքի մեջ՝ բարձրաձայն և սրտունդ, հրապարակավ և առանձին, ինչպես նաև քո ծառայության մեջ՝ կենդանեաց երկրում և քո եղբայրների մեջ ավետարանը քարոզելիս:

4 Եվ անելով այս բաները՝ դու ամենամեծ բարիքը կգործես քո մերձավորների համար և կավելացնես փառքը նրա, ով քո Տերն է:

5 Ուստի, եղիբ հավատարիմ.

կանգնիր այն պաշտոնում, որում նշանակել եմ քեզ. աստարիբ թույլերին, բարձրացրու ընկած ձեռքերը և քամրացրու Գտկար ծնկները:

6 Եվ եթե դու հավատարիմ լինես մինչև վերջ, դու կունենաս անմահության պսակը, և քհավերժական կյանք՝ ապարանքներում, որոնք ես պատրաստել եմ իմ Հոր տան մեջ:

7 Ահա, տե՛ս, սա խոսքերն են Ալֆայի և Օմեգայի, այսինքն՝ Հիսուս Քրիստոսի: Ամեն:

ԲԱԺԻՆ 82

Հայտնություն տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեին, Ջեկսոն գավառում, Միսսուրի, 1832թ. ապրիլի 26-ին (History of the Church, 1.267–269): Առիթը եղավ Եկեղեցու ընդհանուր խորհուրդը, որտեղ Ջոզեֆ Սմիթ Մարգարեն հաստատվեց որպես Բարձրագույն Քահանայության Նախագահ՝ պաշտոն, որին նա կարգվել էր մինչ այդ, քահանայապետերի, երեցների և անդամների համաժողովում, Ամհերստում, Օհայո, 1832թ. հունվարի 25-ին (տե՛ս 75-րդ բաժնի նախադրությունը): Նախկինում այս հայտնության հրատարակության մեջ նշված անձանց ինքնությունը քողարկելու համար, անսովոր անուններ էին օգտագործվել (տե՛ս 78-րդ բաժնի նախադրությունը):

1–4՝ Որտեղ որ շատ է տրված, շատ էլ պահանջվում է. 5–7՝ Խավարն է իշխում աշխարհում. 8–13՝ Տերը կապված է, երբ մենք անում ենք այն, ինչ նա ասում է. 14–18՝ Միոնը պետք է աճի գեղեցկությանը և սրբությանը. 19–24՝ Ամեն մարդ պիտի փնտրի իր մերձավորի շահը:

ԱՇՄԱՐԻՏ, ճշմարիտ ասում եմ ձեզ, իմ ծառաներ, որ, որքան որ դուք միմյանց աներել եք

ձեր զանցանքները, ճիշտ այդպես, ես՝ Տերս, ներում եմ ձեզ:

2 Այնուամենայնիվ, ձեր մեջ կան ոմանք, ովքեր չափազանց շատ են մեղանչել. այո՛, նույնիսկ դուք քոլորդ մեղանչել եք. բայց ճշմարիտ ասում եմ ձեզ. Այսուհետ զգուշացեք, և խուսափեք մեղքից, չլինի թե դառը դատաստաններ ընկնեն ձեր գլխին:

3 Քանզի նրանից, ում քշատ տրվել է, շատ էլ քպահանջվում է. և նա, ով քմեղանչում է ավելի մեծ

4ա Մովսես 1.39:
5ա Մոսիա 4.15–16:
բ ՎևոՒ 108.7:
գ Ես. Լե.3:
6ս սոՒ Անմահ, Անմահություն:
բ սոՒ Հավերժական

կյանք. Վեհացում:
գ Հովի. ԺԳ.2–3,
ՎևոՒ 59.2, 106.8:
82 1ա Մատ. Զ.14–15,
ՎևոՒ 64.9–11:
2ա Հռովմ. Գ.23:
3ա Ղուկ. ԺԲ.48,

Հակ. Գ.17:
սոՒ Հաշիվ, Պատասխանատու, Պատասխանատվություն:
բ սոՒ Տնտես:
գ սոՒ Ուրացություն.
Մեղք:

Վլույսի դեմ, ավելի մեծ դատապարտություն պիտի ստանա:

4 Դուք կանչում եք իմ անունը՝ «հայտնությունների համար, և ես տալիս եմ ձեզ դրանք. և որքան որ դուք չեք պահում իմ խոսքերը, որոնք ես տալիս եմ ձեզ, դուք դառնում եք օրինազանցներ. և Քարդարադատությունն ու դատաստանն այն պատիժներն են, որոնք կցված են իմ օրենքին:

5 Հետևաբար, ինչ որ ես ասում եմ մեկին, ասում եմ բոլորին. «Արթուն մնացեք, քանզի Քհակառակորդը տարածում է իր տիրապետությունները, և Չխավարն է իշխում:

6 Եվ Աստծո բարկությունը բռնկված է երկրի բնակիչների դեմ. և ոչ ոք բարիք չի գործում, քանզի բոլորը հեռացել են Մճանապարհից:

7 Եվ արդ, ճշմարիտ ասում եմ ձեզ, ես՝ Տերս, այլևս ՚մեղավոր չեմ համարի ձեզ. գնացեք ձեր ճանապարհով և այլևս մի մեղանչեք. բայց մեղանչող հոգու մոտ պիտի վերադառնան Քնախկին մեղքերը, ասում է Տերը՝ ձեր Աստվածը:

8 Եվ բացի այդ, ես ասում եմ ձեզ. Ես տալիս եմ ձեզ ՚նոր պատվիրան, որ կարողանաք հասկանալ իմ կամքը ձեր վերաբերյալ:

9 Կամ, այլ խոսքով, ես տալիս եմ ձեզ ուղղություններ, թե ինչպես ՚վարվեք իմ առաջ, որպեսզի այն դառնա ձեզ՝ ձեր փրկության համար:

10 Ես՝ Տերս, ՚կապված եմ, երբ դուք անում եք այն, ինչ ես ասում եմ. բայց երբ դուք չեք անում այն, ինչ ես ասում եմ, դուք խոստում չունեք:

11 Հետևաբար, ճշմարիտ ասում եմ ձեզ, որ իմ ծառաներ Էդվարդ Պատրիջի ու Նյուել Ք. Ուիթնիի, Ա. Սիդնի Գիլբերտի ու Սիդնի Ռիգդոնի, և իմ ծառա Ջոզեֆ Սմիթի, և Ջոն Ուիթմերի ու Օլիվեր Բաուդերիի, և Վ. Վ. Ֆելփսի ու Մարտին Հարրիսի համար նպատակահարմար է՝ ձեր առանձին տնտեսություններով ՚միմյանց հետ կապվել մի կապով և ուխտով, որը չի կարող խախտվել օրինազանցությամբ, բացառությամբ, որ անմիջապես դատաստաններ կհետևեն, –

12 Կառավարելու համար աղքատների գործերը և եպիսկոպոսության հետ կապված բոլոր բաները՝ թե՛ Սիոնի հողում և թե՛ Կիրթլենդի հողում:

13 Քանզի ես նվիրագործել եմ Կիրթլենդի հողը, ինձ հարմար ժամանակ, Բարձրյալի սրբերի օգտի համար և Սիոնի ՚ցցի համար:

14 Քանզի Սիոնը պիտի աճի գեղեկությամբ և սրբությամբ. նրա սահմանները պիտի ընդլայնվեն. նրա ցցերը պիտի ամրացվեն. այո՛, ճշմարիտ ասում եմ ձեզ. ՚Սիոնը պիտի բարձրանա և հազնի իր Քգեղեցիկ հանդերձները:

15 Հետևաբար, ես տալիս եմ ձեզ այս պատվիրանը, որ դուք

<p>3դ Հովհ. ԺԵ.22-24: սուր Լույս, Քրիստոսի լույս:</p> <p>4ա սուր Հայտնություն: բ սուր Արդարադատություն:</p> <p>5ա սուր Արթուն լինել: բ սուր Դև: գ սուր Հոգևոր խավար:</p>	<p>6ա Հռովմ. Գ.12, ՎևոՒ 1.16: 7ա սուր Մեղք: բ ՎևոՒ 1.32-33, 58.43: 8ա Հովհ. ԺԳ.34: 9ա ՎևոՒ 43.8: 10ա Հես. ԻԳ.14, Գ Թագ. Ը.23, ՎևոՒ 1.38, 130.20-21: սուր Օրհնել, Օրհնված,</p>	<p>Օրհնություն. Հնազանդություն, Հնազանդ, Հնազանդվել: 11ա ՎևոՒ 78.3-7, 11-15: 13ա Ես. ԼԳ.20, ԾԳ.2: սուր Ցից: 14ա սուր Սիոն: բ Ես. ԾԲ.1, ՎևոՒ 113.7-8:</p>
--	---	--

կապեք ձեզ այդ ուխտով, և այն պիտի արվի Տիրոջ օրենքների համաձայն:

16 Ահա, սա նույնպես իմ իմաստությամբ է՝ ձեր բարիքի համար:

17 Եվ դուք պետք է ՝հավասար լինեք, կամ, այլ խոսքով, դուք հավասար իրավունքներ պիտի ունենաք ունեցվածքների վրա, ձեր տնտեսությունների խնդիրների կառավարման օգտի համար, ամեն մարդ՝ համաձայն իր պահանջների և իր կարիքների, որքանով որ նրա պահանջներն արդար են, –

18 Եվ այս բոլորը՝ կենդանի Աստծո եկեղեցու օգտի համար, որ ամեն մարդ կարողանա ավելացնել իր ՝քանքարի վրա, որ ամեն մարդ կարողանա ստանալ ուրիշ քանքարներ, այո՛, նույնիսկ հարյուրապատիկ, որ գցվի Տիրոջ ՝շտեմարանը, որ դառնա ամբողջ եկեղեցու սեփականությունը, –

19 Ամեն մարդ փնտրելով իր մերձավորի շահը, և բոլոր բաներն անելով պարզ ՝աչքով ուղղված Աստծո փառքին:

20 Այս ՝միաբանությունը ես նշանակել եմ, որ հավիտենական միաբանություն լինի ձեր համար և ձեզ հաջորդողների համար, որքան որ դուք չեք մեղանչի:

21 Եվ այն հոգու հետ, որ այս ուխտի դեմ մեղանչում է, և իր սիրտը նրա դեմ կարծրացնում է, պիտի վարվեն համաձայն իմ եկեղեցու օրենքների, և նա պիտի հանձնվի Սատանայի ՝հարվածներին, մինչև փրկազրնման օրը:

22 Եվ արդ, ճշմարիտ ասում եմ ձեզ, և սա է իմաստությունը. Անիրավ մամոնայից բարեկամներ արեք ձեր համար, և նրանք չեն կործանի ձեզ:

23 Միայն ինձ թողեք դատաստանը, քանզի այն իմն է, և ես ՝կհատուցեմ: Խաղաղություն լինի ձեզ. իմ օրհնությունները շարունակ լինեն ձեզ հետ:

24 Քանզի ՝արքայությունը դեռևս ձերն է, և պիտի լինի ընդմիշտ, եթե դուք չընկնեք ձեր հաստատականությունից: Ճիշտ այդպես: Ամեն:

ԲԱԺԻՆ 83

Հայտնություն տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեի միջոցով, Ինդիպենդենսում, Միսսուրի, 1832թ. ապրիլի 30-ին (History of the Church, 1.269–270): Այս հայտնությունը ստացվեց, երբ Մարգարեն իր եղբայրների հետ խորհրդի էր նստել:

1–4՝ Կանայք և երեխաներն իրավունք ունեն աջակցվելու իրենց ամուսինների ու հայրերի կողմից. 5–6՝ Այրիներն ու որբերն իրա-

<p>17ա Վև.ՈՒ 51.3: սո՛ր Նվիրաբերել, Նվիրաբերման օրենք: 18ա Մատ. ԻԵ.14–30, Վև.ՈՒ 60.13: սո՛ր Պարգև. Հոգու պարգևները: բ Վև.ՈՒ 42.30–34, 55,</p>	<p>119.1–3: սո՛ր Շտեմարան: 19ա Վև.ՈՒ 88.67: սո՛ր Աչք, Աչքեր: 20ա սո՛ր Միացյալ Միաբանություն: 21ա Վև.ՈՒ 104.8–10: 23ա Հռովմ. ԺԲ.19,</p>	<p>Մորմ. 3.15: 24ա Գուլ. ԺԲ.32, Վև.ՈՒ 64.3–5: սո՛ր Աստծո արքայություն կամ Երկնքի արքայություն:</p>
---	--	--

վունք ունեն աջակցվելու Եկեղեցու կողմից:

ԱՇՄԱՐԻՏ, այսպես է ասում Տերը, ի լրումն կանանց և երեխաների վերաբերյալ եկեղեցու օրենքի, նրանց, ովքեր պատկանում են եկեղեցուն, ովքեր կորցրել են իրենց ամուսիններին կամ հայրերին.

2 Կանայք իրենց ապրուստի համար չիրավունք ունեն աջակցվելու իրենց ամուսինների կողմից, քանի դեռ նրանց ամուսինները չեն վերցվել. և եթե նրանք չեն համարվում օրինազանցներ, նրանք ընկերակցություն կունենան եկեղեցուն:

3 Եվ եթե նրանք հավատարիմ չեն, նրանք ընկերակցություն չեն

ունենա եկեղեցում. սակայն նրանք կարող են մնալ իրենց ժառանգությունների վրա՝ համաձայն երկրի օրենքների:

4 Բոլոր տերեխաները, մինչ չափահաս դառնալը, իրենց ապրուստի համար իրավունք ունեն աջակցվելու իրենց ծնողների կողմից:

5 Եվ դրանից հետո, նրանք իրավունք ունեն աջակցվելու եկեղեցու կողմից, կամ, այլ խոսքով, Տիրոջ շտեմարանից, եթե նրանց ծնողները չունեն, որ ժառանգություն տան նրանց:

6 Եվ շտեմարանը պետք է պահվի եկեղեցու նվիրաբերումների միջոցով. և Պալիմերն ու որբերը պետք է ապահովվեն, ինչպես նաև Քաղքատները: Ամեն:

ԲԱԺԻՆ 84

Հայտնություն՝ տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեի միջոցով, Կիրթլենդում, Օհայո, 1832թ. սեպտեմբերի 22-ին և 23-ին (History of the Church, 1.286-295): Սեպտեմբեր ամսվա ընթացքում երեցներն սկսեցին վերադառնալ արևելյան նահանգների իրենց առաքելություններից՝ հաշվետվություններ ներկայացնելու իրենց աշխատանքների մասին: Ուրախության այդ ժամանակաշրջանում էր, երբ նրանք միասին էին, որ ստացվեց հետևյալ հաղորդակցությունը: Մարգարեն անվանեց այն հայտնություն քահանայության վերաբերյալ:

1-5՝ Նոր Երուսաղեմը և տաճարը կկառուցվեն Միսսուրիում. 6-17՝ Տրվում է քահանայության տոհմագիծը՝ Մովսեսից մինչև Ադամ. 18-25՝ Մեծագույն քահանայությունը կրում է Աստծո գիտության բանալիները. 26-32՝ Փոքրագույն քահանայությունը կրում է հրեշտակների

սպասավորման և նախապատրաստական ավետարանի բանալիները. 33-44՝ Քահանայության երդման և ուխտի միջոցով մարդիկ ստանում են հավերժական կյանք. 45-53՝ Քրիստոսի Հոգին լուսավորում է մարդկանց, և աշխարհն ընկած է մեղքի մեջ. 54-61՝ Սրբերը պետք

83 1ա Հակ. Ա.27:
2ա Ա Տիմ. Ե.8:
4ա Մոսիա 4.14:
5ա ՎևոՒ 78.3:

սուՒ Շտեմարան:
6ա սուՒ Այրի:
բ Մոսիա 4.16-26,
Հել. 4.11-13,

ՎևոՒ 42.30-39:
սուՒ Աղքատ:

է վկայեն այն բաների մասին, որ իրենք ստացել են. 62-76՝ Նրանք պետք է քարոզեն ավետարանը, և նշաններ կհետևեն. 77-91՝ Երեցները պետք է առաջ գնան, առանց քսակի կամ պարկի, և Տերը կհոգա նրանց կարիքները. 92-97՝ Ժանտախտներ և անեծքներ են սպասվում նրանց, ովքեր մերժում են ավետարանը. 98-102՝ Միոնի փրկագնման նոր երգ է տրվում. 103-110՝ Թող ամեն մարդ կանգնի իր իսկ պաշտոնում և աշխատի իր իսկ կոչման մեջ. 111-120՝ Տիրոջ ծառաները պիտի հոշակեն վերջին օրերի ավերման պղծությունը:

➤ ԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ Հիսուս Քրիստոսից՝ իր ծառա Ջոզեֆ Սմիթ կրտսերին և վեց երեցներին, մինչ նրանք միացրել էին իրենց սրտերն ու ՞բարձրացրել իրենց ձայները դեպի վեր:

2 Այո, Տիրոջ խոսքն իր եկեղեցու վերաբերյալ, որ հաստատվել է վերջին օրերին՝ իր ժողովրդի ՞վերականգնման համար, ինչպես նա ասել է իր ՞մարգարեների բերանով, և իր ՞սրբերի հավաքման համար՝ կանգնելու Միոն ՞սարի վրա, որը պիտի լինի ՞Նոր Երուսաղեմ քաղաքը:

3 Քաղաք, որը պիտի կառուցվի, սկսելով ՞տաճարի հողակտորից, որը նշանակվել է Տիրոջ մատով, Միսսուրի մահանգի արևմտյան սահմաններում, և նվիրագործվել է

Ջոզեֆ Սմիթ կրտսերի ձեռքով, և ուրիշների, ում Տերը հավանել էր:

4 Ճշմարիտ, սա է Տիրոջ խոսքը, որ ՞Նոր Երուսաղեմ քաղաքը պիտի կառուցվի սրբերի հավաքվելով, սկսած այս տեղից, այսփինքն՝ ՞տաճարի տեղից, տաճար, որը պիտի կանգնեցվի այս սերնդի մեջ:

5 Քանզի ճշմարիտ, այս սերունդն ամբողջությամբ չի անցնի, մինչև որ մի տուն չկառուցվի Տիրոջ համար, և մի ամպ չհանգչի նրա վրա, ամպ, որը կլինի ճիշտ Տիրոջ ՞փառքը, որը կլցնի այդ տունը:

6 Եվ Մովսեսի որդիները, համաձայն Սուրբ Քահանայության, որը նա ստացավ իր աներոջ՝ ՞Հոթորի ՞ձեռքով.

7 Եվ Հոթորն այն ստացավ Քաղեբի ձեռքով.

8 Եվ Քաղեբն այն ստացավ Եղիուսի ձեռքով.

9 Եվ Եղիուսը՝ Երեմիայի ձեռքով.

10 Եվ Երեմիան՝ Գադի ձեռքով.

11 Եվ Գադը՝ Եսայու ձեռքով.

12 Եվ Եսային այն ստացավ Աստծո ձեռքով:

13 Եսային նույնպես ապրում էր Աբրահամի օրերում և օրհնվել էր նրա կողմից, -

14 ՞Աբրահամի, որը քահանայությունն ստացել էր ՞Մելքիսեդեկից, որն այն ստացել էր իր հայրերի ազգատոհմի միջոցով, նույնիսկ մինչև ՞Նոյը.

15 Եվ Նոյից մինչև ՞Ենովքը,

84 1ա սոՒ Ադոքք:
 2ա սոՒ Իսրայել -
 Իսրայելի ցրվելը:
 բ Գոր. Գ.19-21:
 գ սոՒ Սուրբ:
 դ Ես. Բ.2-5, Եբր. ԺԲ.22,
 Հայտ. ԺԳ.1,
 ՎևոՒ 76.66, 84.32,
 133.18, 56:

ե Եթեր 13.2-11,
 ՎևոՒ 42.8-9, 45.66-67,
 ՀՀ 1.10:
 սոՒ Նոր Երուսաղեմ:
 3ա ՎևոՒ 57.3:
 4ա սոՒ Նոր Երուսաղեմ:
 բ սոՒ Տաճար՝ Տիրոջ
 տուն:
 5ա ՎևոՒ 45.67, 64.41-43,

97.15-20, 109.12, 37:
 6ա սոՒ Հոթոր:
 բ սոՒ Ձեռնադրություն:
 14ա սոՒ Աբրահամ:
 բ սոՒ Մելքիսեդեկ:
 գ սոՒ Նոյ՝ Աստվածաշնչյան
 հայրապետ:
 15ա սոՒ Ենովք:

իրենց հայրերի ազգատոհմի միջոցով.

16 Եվ Ենովքից մինչև ՄԱբելը, որը սպանվեց իր եղբոր Բավադդրոսյամբ, որն Գստացավ քահանայությունն Աստծո պատվիրաններով, իր հոր՝ Ադամի ձեռքով, որն առաջին մարդն էր, -

17 ՄՔահանայություն, որը շարունակվում է Աստծո եկեղեցում, բոլոր սերունդների մեջ, և չունի օրերի սկիզբ կամ տարիների վերջ:

18 Եվ Տերը Մքահանայությունը հաստատեց նաև ՄԱհարոնի և նրա հետնորդների վրա, նրանց բոլոր սերունդների ընթացքում, քահանայություն, որը նաև Գշարունակվում և հավիտյան մնում է այն քահանայության հետ, որն ըստ Աստծո սրբագույն կարգի է:

19 Եվ այս մեծագույն քահանայությունը սպասավորում է ավետարանը և կրում է արքայության խորհուրդների բանալիները, այսինքն՝ Աստծո Բգիտության բանալիները:

20 Հետևաբար, նրա Մարարություններում է բացահայտվում աստվածայնության գործությունը:

21 Եվ առանց նրա արարողությունների և քահանայության Միշ-

խանության, աստվածայնության գործությունը չի բացահայտվում մարդկանց՝ մարմնում.

22 Քանզի առանց դրա, ոչ ՝ որ չի կարող տեսնել Աստծո, այսինքն՝ Հոր երեսը, և ապրել:

23 Արդ, ՄՄովսեսն անապատում պարզորոշ սովորեցրեց դա Իսրայելի զավակներին և ջանասիրաբար փնտրեց Բսրբագործել իր ժողովրդին, որ նրանք կարողանային Գտեսնել Աստծո երեսը.

24 Սակայն նրանք Մկարծրացրեցին իրենց սրտերը և չկարողացան դիմանալ նրա ներկայությանը. հետևաբար, Տերն իր Բցաման մեջ երդվեց, քանզի նրա բարկությունը բռնկվել էր նրանց դեմ, որ նրանք իր հանգիստը չեն Գմտնի, քանի դեռ անապատում են, հանգիստ, որը լիությունն է նրա փառքի:

25 Հետևաբար, նա վերցրեց նրանց միջից ՄՄովսեսին և նաև Սուրբ ՄՔահանայությունը.

26 Իսկ փոքրագույն Մքահանայությունը շարունակվեց, քահանայություն, որը կրում է հրեշտակների Բսպասավորության և նախապատրաստական ավետարանի Գբանալիները.

27 Ավետարան, որն Մապաշխարության և Բմկրտության ավետա-

16ա սո՛ւ Աբել:
բ Մովսես 5.29-32:
գ ՎևՈՒ 107.40-57:
դ սո՛ւ Ադամ:
17ա Ալմա 13.1-19,
Աբր. 2.9, 11:
սո՛ւ Մեքիսեդեկյան
քահանայություն:
18ա սո՛ւ Ահարոնյան
քահանայություն:
բ սո՛ւ Ահարոն՝
Մովսեսի եղբայր:
գ ՎևՈՒ 13.1:
19ա ՎևՈՒ 63.23, 107.18-19:
սո՛ւ Աստծո
խորհուրդները:

բ Աբր. 1.2:
20ա սո՛ւ Արարողություններ:
21ա սո՛ւ Իշխանություն,
Քահանայություն:
22ա ՎևՈՒ 67.11:
23ա Ել. ԺԹ.5-11, ԼԳ.11:
բ սո՛ւ Սրբագործում:
գ Ել. ԻԳ.9-11,
ՎևՈՒ 93.1:
24ա Ել. Բ.18-21, ԼԲ.8,
Բ Օր. Թ.23,
1 Նեփի 17.30-31, 42:
բ Սաղ. ՂԵ.8,
Եբր. Գ.8-11,
Հակոբ 1.7-8,
Ալմա 12.36:

գ ՋՍԹ, Ել. 34.1-2,
Թվ. ԺԳ.23,
Եբր. Գ.1-11:
25ա Բ Օր. ԼԳ.1-5:
բ սո՛ւ Մեքիսեդեկյան
քահանայություն:
26ա սո՛ւ Ահարոնյան
քահանայություն:
բ ՎևՈՒ 107.20:
գ ՎևՈՒ 13.1:
27ա սո՛ւ Ապաշխարել,
Ապաշխարություն:
բ սո՛ւ Մկրտություն,
Մկրտել:

բանն է, և մեղքերի Գթողության, և Դմարմնավոր պատվիրանների Եօրենքի, որը, Տերն իր ցասման մեջ կարգադրեց, որ շարունակվի Ահարոնի տան հետ, Իսրայելի զավակների մեջ, մինչև ԳՆովհաննեսը, որին Աստված բարձրացրեց, որը դեռ իր մոր որովայնից էլցված էր Սուրբ Հոգով:

28 Քանզի նա մկրտվել էր, դեռևս իր մանկության մեջ, և ութ օրականում, Աստծո հրեշտակի կողմից կարգվել էր այս գորությանը՝ տապալելու հրեաների թագավորությունը, և Մուղիղ անելու Տիրոջ ճանապարհն իր ժողովրդի երեսի առաջ, որ նրանց նախապատրաստի Տիրոջ գալստի համար, ում ձեռքն է տրված Բողջ գորությունը:

29 Եվ բացի այդ, երեցի և եպիսկոպոսի պաշտոններն անհրաժեշտ Միավելումներ են, որոնք պատկանում են բարձրագույն քահանայությանը:

30 Եվ բացի այդ, ուսուցչի և սարկավագի պաշտոններն անհրաժեշտ հավելումներ են, որոնք պատկանում են փոքրագույն քահանայությանը, քահանայություն, որը հաստատվել էր Ահարոնի և նրա որդիների վրա:

31 Հետևաբար, ինչպես ես ասացի Մովսեսի որդիների վերաբերյալ, – քանզի Մովսեսի որդիները և նաև

Ահարոնի որդիներն ընդունելի Մընծա և զոհ պիտի մատուցեն Տիրոջ տանը, տուն, որը պիտի կառուցվի Տիրոջ համար, այս սերընդում, նվիրաբերված Բողջակտորի վրա, ինչպես նշանակել են ես, –

32 Եվ Մովսեսի ու Ահարոնի որդիները պիտի լցվեն Տիրոջ Միառքով, Միոն Բսարի վրա, Տիրոջ տանը, որոնց որդիներն եք դուք. և նաև շատերը, որոնց ես կանչել և առաջ են ուղարկել՝ կառուցելու իմ Գեկեղեցին:

33 Քանզի նրանք, ովքեր Միավատարիմ են՝ այս երկու քահանայությունները ստանալու, որոնց մասին ես խոսեցի, և իրենց կոչումը մեծարելու, Հոգու կողմից Գսրբագործվում են ի նորացումն իրենց մարմնի:

34 Նրանք դառնում են Մովսեսի ու Ահարոնի որդիները, և ՄԱբրահամի Բսերունդը, և եկեղեցին ու արքայությունը և Գընտրյալներն Աստծո:

35 Եվ նաև, բոլոր նրանք, ովքեր ընդունում են այդ քահանայությունը, ընդունում են ինձ, ասում է Տերը.

36 Քանզի նա, ով ընդունում է իմ ծառաներին, Մընդունում է ինձ.

37 Եվ նա, ով Մընդունում է ինձ, ընդունում է իմ Հորը.

38 Եվ նա, ով ընդունում է իմ Հորը,

27q սուր Մեղքերի թողություն:
η Եբր. Է.11–16:
է սուր Մովսեսի օրենք:
q սուր Հովհաննես Մկրտիչ:
t Գուլ. Ա.15:
28u Ես. Խ.3, Մատ. Գ.1–3, Հովհ. Ա.23:
p Մատ. ԻԸ.18, Հովհ. ԺԷ.2, Ա Պետ. Գ.22, ՎևոՒ 93.16–17:

29a ՎևոՒ 107.5:
31a ՎևոՒ 128.24:
p ՎևոՒ 57.3:
32a սուր Փառք:
p Եբր. ԺԲ.22, ՎևոՒ 76.66, 84.2, 133.56:
q սուր Հիսուս Քրիստոսի Եկեղեցի:
33a սուր Արժանի, Արժանավորություն:
p սուր Քահանայություն:
q սուր Սրբագործում:

34a ՎևոՒ 132.30–32:
սուր Աբրահամի ուխտը:
p Գաղ. Գ.29, Աբր. 2.9–11:
սուր Աբրահամ – Աբրահամի Սերունդը:
q սուր Ընտրյալ:
36a Մատ. Ժ.40–42, Գուլ. Ժ.16, ՎևոՒ 112.20:
37a Հովհ. ԺԳ.20:

ընդունում է իմ Հոր արքայությունը. հետևաբար, այն ամենն, ինչ իմ Հայրն ունի, կտրվի նրան:

39 Եվ դա՝ Երդման և ուխտի համաձայն, որը պատկանում է քահանայությանը:

40 Հետևաբար, բոլոր նրանք, ովքեր ընդունում են քահանայությունը, ընդունում են այս երդումն ու ուխտն իմ Հորից, որը նա չի կարող դրժել, ոչ էլ այն կարող է խախտվել:

41 Բայց նա, ով արժում է այս ուխտը, հետո, երբ ընդունում է այն, և ամբողջովին շրջվում է նրանից, չի ունենա մեղքերի ներում, ոչ այս աշխարհում, ոչ էլ գալիք աշխարհում:

42 Եվ վա՛յ բոլոր նրանց, ովքեր չեն գալիս այս քահանայությանը, որն ընդունել էք դուք, որն այժմ ես հաստատում եմ ձեր վրա, որ ներկա եք այս օրը, իմ իսկ ձայնով, երկինքներից. և ձեզ համար ես նույնիսկ հրաման եմ տվել երկնային զորքերին ու իմ՝ հրեշտակներին:

43 Եվ այժմ ես ձեզ պատվիրան եմ տալիս, որ զգուշանաք ձեր համար, որ ջանասիրաբար՝ ուշք դարձնեք հավերժական կյանքի խոսքերին:

44 Քանզի դուք պետք է՝ ասարեք Աստծո բերանից դուրս եկող ամեն մի խոսքով:

45 Քանզի Տիրոջ խոսքը ճշմարտություն է, և այն ինչ՝ ճշմարտություն է՝ լույս է, և այն ինչ լույս է՝ Հոգի է, այսինքն՝ Հիսուս Քրիստոսի Հոգին:

46 Եվ Հոգին՝ լույս է տալիս քամեն մարդու, որն աշխարհ է գալիս. և Հոգին լուսավորում է ամեն մարդու, աշխարհով մեկ, որ ականջ է դնում Հոգու ձայնին:

47 Եվ ամեն ոք, ով ականջ է դնում Հոգու ձայնին, գալիս է Աստծո մոտ, այսինքն՝ Հոր:

48 Եվ Հայրը նրան՝ ուսուցանում է՝ ուխտի մասին, որը նա նորացրել և հաստատել է ձեր վրա, որը հաստատվել է ձեր վրա՝ ի սեր ձեզ, և ոչ միայն ի սեր ձեզ, այլ ի սեր ողջ աշխարհի:

49 Եվ ողջ աշխարհն ընկած է մեղքի մեջ, և հառաչում է՝ խավարի տակ, և մեղքի գերության տակ:

50 Եվ քանի որ նրանք չեն գալիս ինձ մոտ, դրանով կարող եք իմանալ, որ նրանք՝ մեղքի՝ գերության տակ են:

51 Քանզի նա, ով չի գալիս ինձ մոտ, մեղքի գերության տակ է:

52 Եվ նա, ով չի ընդունում իմ ձայնը, ծանոթ չէ իմ ձայնին և իմը չէ:

53 Եվ դրանով դուք կարող եք տարբերել արդարին անբարիշտից, և որ ողջ աշխարհը՝ հառա-

38ա Դուկ. ԺԲ.43-44, Հռովմ. Ը.32, Հայտ. ԻԱ.7, 3 Նեփի 28.10, ՎևոՒ 132.18-20: սուր Վեհացում:
39ա սուր Քահանայության երդումը և ուխտը:
41ա սուր Ուրացություն: Բ ՎևոՒ 76.34-38, 132.27:
42ա ՎևոՒ 84.88:

43ա 1 Նեփի 15.23-25, ՎևոՒ 1.14:
44ա Բ Օր. Ը.3, Մատ. Դ.4, ՎևոՒ 98.11:
45ա Մաղ. ԼԳ.4: սուր Աստծո խոսքը: Բ սուր Ճշմարտություն:
46ա սուր Խղճմտանք. Լույս, Քրիստոսի լույս: Բ Հովի. Ա.9, ՎևոՒ 93.2:

48ա սուր Ոգեշնչում, Ոգեշնչել: Բ սուր Ուխտ. Նոր և հավիտենական ուխտ:
49ա Ա Հովի. Ե.19: Բ սուր Հոգևոր խավար:
50ա սուր Մեղք:
Բ Գաղ. Դ.9:
52ա Հովի. Ժ.27:
53ա սուր Աշխարհ: Բ Հռովմ. Ը.22, Մովսես 7.48:

չում է Գնդքի և խավարի տակ, նույնիսկ այժմ:

54 Եվ ձեր միտքն անցյալում մթազնել է՝ անհավատության պատճառով, և որովհետև դուք թեթևամտորեն եք վերաբերվել այն ամենին, ինչ ստացել եք, -

55 Մունայնություն և անհավատություն, որոնք դատապարտության տակ են դրել ողջ եկեղեցին:

56 Եվ այդ դատապարտությունն ընկած է Սիոնի զավակների, նույնիսկ բոլորի վրա:

57 Եվ նրանք պետք է մնան այդ դատապարտության տակ, մինչև որ ապաշխարեն և հիշեն նոր Պիտոն, այսինքն՝ Մորմոնի Գիրքը և Գնախկին պատվիրանները, որոնք ես տվել եմ նրանց, որ ոչ միայն խոսեն, այլ Գործեն՝ համաձայն նրա, ինչ ես գրել եմ, -

58 Որ նրանք կարողանան իրենց Հոր արքայությանը վայել պտուղներ առաջ բերել. այլապես, մնում է խարազան և դատաստան թափվի Սիոնի զավակների վրա:

59 Քանզի մի՞թե արքայության զավակները պիտի պղծեն իմ սուրբ հողը: Շշմարիտ ասում եմ ձեզ՝ ո՛չ:

60 Շշմարիտ, ճշմարիտ ասում եմ ձեզ, որ այժմ լսում եք իմ Մխոսքերը, որոնք իմ ձայնն են. Օրհնված եք դուք, որքան որ դուք ընդունում եք այդ բաները.

61 Քանզի ես Մկներեմ ձեզ ձեր մեղքերը՝ այս պատվիրանով հանդերձ, - որ դուք հաստատուն մնաք՝ ձեր մտքով, Բանդիսավորությամբ և աղոթքի ոգով, վկայություն բերելով ողջ աշխարհին, այն բաների մասին, որոնք հաղորդվել են ձեզ:

62 Հետևաբար, Գնացեք ողջ աշխարհը. իսկ այն տեղերը, որտեղ դուք չեք կարող գնալ, դուք պիտի ուղարկեք ձեր վկայությունը, որպեսզի այն ձեզանից անցնի ողջ աշխարհին՝ ամեն մի արարածի:

63 Եվ ինչպես ես ասացի իմ Մառքյալներին, ճիշտ այդպես ես ասում եմ ձեզ, քանզի դուք իմ առաքյալներն եք, այսինքն՝ Աստծո քահանայապետերը. դուք նրանք եք, ում իմ Հայրը թուվել է ինձ. դուք իմ Գբարեկամներն եք.

64 Հետևաբար, ինչպես ես ասացի իմ առաքյալներին, ես կրկին ասում եմ ձեզ, որ ամեն Մոգի, ով Բավատում է ձեր խոսքերին և մկրտվում է ջրով՝ մեղքերի Գթություն համար, պիտի ստանա Պուրբ Հոգին:

65 Եվ այս Մշանները կհետևեն նրանց, ովքեր հավատում են, -

66 Իմ անունով նրանք կանեն շատ զարմանալի Գործեր.

67 Իմ անունով նրանք դուրս կգցեն դևերի.

68 Իմ անունով նրանք Մկրծշկեն հիվանդների.

53q սուր Աշխարհիկություն:
54ա սուր Անհավատություն:
55ա սուր Ունայն, Ունայնություն:
57ա Երեմ. ԼԱ.31-34:
p սուր Մորմոնի Գիրքը:
q 1 Նեփի 13.40-41:
դ Նակ. Ա.22-25, Վևո 42.13-15:
60ա Վևո 18.34-36:
61ա Դան. Թ.9:
սուր Ներել:

p Վևո 43.34, 88.121, 100.7:
62ա Մար. Ժ2.15, Վևո 1.2-5:
սուր Միսիոներական աշխատանք:
63ա սուր Առաքյալ:
p 3 Նեփի 15.24, Վևո 50.41-42:
q Հովհ. ԺԵ.13-15, Վևո 93.45:
64ա սուր Հոգի:

p Մար. Ժ2.15-16:
սուր Հավատ, Հավատալ:
q սուր Մեղքերի թողություն:
դ սուր Սուրբ Հոգու պարզել:
65ա Մար. Ժ2.17-18:
սուր Նշան:
66ա սուր Գործեր:
67ա Մատ. ԺԷ.14-20:
68ա սուր Բժշկել, Բժշկումներ:

69 Իմ անունով նրանք կբացեն կույրերի աչքերը, և կարձակեն խուլերի ականջները.

70 Եվ համբերի լեզուն կխոսի.

71 Եվ եթե որևէ մարդ նրանց “թույն սպասավորի, այն նրանց չի վնասի.

72 Եվ օձի թույլը նրանց վնասելու գորություն չի ունենա:

73 Բայց ես պատվիրան եմ տալիս նրանց, որ նրանք չպիտի “պարծենան այդ բաներով, ոչ էլ դրանք պատմեն աշխարհի առաջ. քանզի այդ բաները տրված են ձեզ՝ ձեր օգտի և փրկության համար:

74 Ճշմարիտ, ճշմարիտ ասում եմ ձեզ. Նրանք, ովքեր չեն հավատում ձեր խոսքերին, և ջրով չեն “մկրտվում՝ իմ անունով, իրենց մեղքերի թողության համար, որ կարողանան ստանալ Սուրբ Հոգին, պիտի ^բնզովվեն, և չպիտի զան իմ Հոր արքայությունը, որտեղ իմ Հայրն է և ես եմ:

75 Եվ ձեզ տրված այս հայտնությունը, և պատվիրանը, հենց այս ժամից ուժի մեջ է ողջ աշխարհի համար, և ավետարանը գնում է բոլորին, ովքեր չեն ստացել այն:

76 Սակայն, ճշմարիտ, ես ասում եմ բոլոր նրանց, ում տրված է արքայությունը,– Ձեր կողմից նրանց պիտի քարոզվի այն, որ նրանք պետք է ապաշխարեն իրենց նախկին չարագործություններից. քանզի նրանք պիտի հանդիմանվեն իրենց անհավատ չար սրտերի համար, և նաև Սիոնի ձեր եղբայրները՝ ձեր դեմ իրենց ապստամ-

բության համար, այն ժամանակ, երբ ես ուղարկել էի ձեզ:

77 Եվ բացի այդ, ես ասում եմ ձեզ, իմ բարեկամներ, քանզի այսուհետև ես ձեզ կոչելու եմ բարեկամներ. Նպատակահարմար է, որ ես տամ ձեզ այս պատվիրանը, որ դուք դառնաք ճիշտ ինչպես իմ բարեկամներն այն օրերին, երբ ես նրանց հետ էի, և ճամփորդում էի՝ ավետարանն իմ գորությամբ քարոզելու.

78 Քանզի ես թույլ չտվեցի, որ նրանք ունենան “քսակ կամ պարկ, ոչ էլ երկու վերարկու:

79 Ահա, ես ձեզ ուղարկում եմ աշխարհը փորձելու, և մշակն արժանի է իր “վարձքին:

80 Եվ որևէ մարդ, որ կգնա և “կքարոզի արքայության այս ^բավետարանը, և չի դադարի հավատարիմ մնալ բոլոր բաներում, չպիտի հոգնի մտքով, կամ մթագնի, ոչ էլ մարմնով, վերջույթով կամ հոդով. և նրա գլխից ոչ մի ^գմազ աննկատ չի ընկնի գետնին: Եվ նրանք չեն քաղցի, ոչ էլ կմնան պապակ:

81 Հետևաբար, “հոգ մի արեք վաղվա մասին, այն մասին, թե ինչ պիտի ուտեք, կամ ինչ պիտի խմեք, կամ ինչ պիտի հագնեք:

82 Մտիկ արեք դաշտի շուշաններին, թե ինչպես են նրանք աճում, ոչ բանում են, ոչ մանում. և աշխարհի թագավորությունները, իրենց ողջ փառքով, զուգված չեն դրանցից ոչ մեկի պես:

83 Քանզի ձեր “հայրը, որ երկրն-

71ա Մար. ԺԶ.18, Գոր. ԻԸ.3–9, ՎևոՒ 24.13, 124.98–100:
73ա ՎևոՒ 105.24:
սու՝ Հպարտություն:
74ա 2 Նեփի 9.23,

ՎևոՒ 76.50–52:
սու՝ Մկրտություն,
Մկրտել – Էական է:
^բ Հովհ. Գ.18:
78ա Մատ. Ժ.9–10,
ՎևոՒ 24.18:
79ա ՎևոՒ 31.5:

80ա սու՝ Միսիոներական աշխատանք:
^բ սու՝ Ավետարան:
^գ Դուկ. ԻԱ.18:
81ա Մատ. Զ.25–28:
83ա սու՝ Հայր Երկնային:

քում է, ^բգիտի որ դուք բոլոր այդ քաների կարիքն ունեք:

84 Հետևաբար, թող վաղվա օրն իր հոգսերը ^ահոգա:

85 Ոչ էլ նախօրոք հոգ արեք, թե ^աինչ եք ասելու. բայց շարունակ ձեր մտքում ^բզանձեք կյանքի խոսքերը, և հենց նույն պահին ձեզ ^գկտրվի ամեն մարդու համար չափված բաժինը:

86 Հետևաբար, թող ձեզանից ոչ մեկը, ով առաջ է գնում՝ հռչակելու արքայության այս ավետարանը, քանզի այս պատվիրանը բոլոր ^ահավատարիմների համար է, ովքեր Աստծո կողմից կանչված են եկեղեցում այս ծառայությանը, այս ժամից սկսած չվերցնի քսակ կամ պարկ:

87 Ահա, ես ^աուղարկում եմ ձեզ՝ աշխարհին հանդիմանելու բոլոր իր անիրավ գործերի համար, և ուսուցանելու նրանց այն դատաստանի մասին, որը գալու է:

88 Եվ որտեղ որ ձեզ ^աընդունեն, այնտեղ կլինեն նաև ես, քանզի ես կգնամ ձեր առջևից: Ես կլինեմ ձեր աջ կողմում և ձեր ձախ կողմում, և իմ Հոգին կլինի ձեր սրտերում, և իմ ^բհրեշտակները՝ ձեր շուրջը, որ բարձրացնեն ձեզ:

89 Ով որ ընդունում է ձեզ՝ ընդունում է ինձ. և նույնը կկերակրի ձեզ և կհագցնի ձեզ և դրամ կտա ձեզ:

90 Եվ նա, ով կերակրում է ձեզ,

կամ հագցնում է ձեզ, կամ դրամ է տալիս ձեզ, ոչ մի դեպքում ^աչի կորցնի իր վարձքը:

91 Եվ նա, ով չի անում այս բաները, իմ աշակերտը չէ. դրանով կարող եք իմանալ ^աիմ աշակերտների:

92 Նա, ով ձեզ չի ընդունում, հեռացեք նրանից, մենակ ինքներդ, և ^ամաքրեք ձեր ոտքերը, այսինքն՝ ջրով, մաքուր ջրով, լինի շոգին, թե ցրտին, և այդ մասին վկայություն բերեք Հորը, որ երկրնքում է, և այլևս մի վերադարձեք այդ մարդու մոտ:

93 Եվ ինչ գյուղ կամ քաղաք էլ որ մտնեք, նույն կերպ վարվեք:

94 Այնուամենայնիվ, փնտրեք ջանասիրաբար և մի խնայեք. և վա՛յ այն տանը, կամ այն գյուղին կամ քաղաքին, որ մերժում է ձեզ, կամ ձեր խոսքերը, կամ ձեր վկայությունն իմ մասին:

95 Վա՛յ, ասում եմ կրկին, այն տանը, կամ այն գյուղին կամ քաղաքին, որը մերժում է ձեզ, կամ ձեր խոսքերը, կամ ձեր վկայությունն իմ մասին.

96 Քանզի ես՝ ^աԱմենագորս, դրել եմ իմ ձեռքն ազգերի վրա՝ ^բխարազանելու նրանց՝ իրենց ^գամբարշտության համար:

97 Եվ պատուհասներ կտարածվեն, և դրանք չեն վերցվի երկրի վրայից, մինչև ես չավարտեմ իմ

83բ Մատ. 2.8:
 84ա Մատ. 2.34:
 85ա Մատ. Ժ.19–20,
 Դուկ. ԺԲ.11–12,
 ՎևՈՒ 100.6:
 բ 2 Նեփի 31.20,
 Ալմա 17.2–3,
 ՎևՈՒ 6.20, 11.21–26:
 սոՒ Խորհել:
 գ սոՒ Ուսուցանել,
 Ուսուցիչ – Հոգով

ուսուցանելը:
 86ա Մատ. ԻԳ.44–46,
 ՎևՈՒ 58.26–29,
 107.99–100:
 87ա սոՒ Միսիոներական
 աշխատանք:
 88ա Մատ. Ժ.40,
 Հովհ. ԺԳ.20:
 բ ՎևՈՒ 84.42:
 սոՒ Հրեշտակներ:
 90ա Մատ. Ժ.42,

Մար. Թ.40:
 91ա Հովհ. ԺԳ.35:
 92ա Մատ. Ժ.14,
 Դուկ. Թ.5,
 ՎևՈՒ 60.15:
 96ա սոՒ Ամենակարող:
 բ ՎևՈՒ 1.13–14:
 գ սոՒ Ամբարիշտ,
 Ամբարշտություն:

աշխատանքը, որը պիտի ^ակարճեցվի արդարությամբ,–

98 Մինչև որ բոլորը կճանաչեն ինձ, ովքեր կմնան, նույնիսկ ամենափոքրից մինչև ամենամեծը, և կլցվեն Տիրոջ գիտությամբ, և ^ակտեսնեն դեմ հանդիման, և կբարձրացնեն իրենց ձայնը, և միաձայն ^բկերգեն այս նոր երգը՝ ասելով.

99 Միոնը կրկին բերել է Տերը. Իր ժողովրդին՝ ^աԻսրայելին, ^բփրկագնել է Տերը, Համաձայն ^գշնորհի ^դընտրության, Որն իրագործվել էր իրենց հայրերի հավատքով և ^եուխտով:

100 Տերը փրկագնել է իր ժողովրդին.

Եվ Սատանան ^ակապված է, և այլևս ժամանակ չկա: Տերն ի ^բմի է հավաքել բոլոր բաները:

Տերը վերևից վար է բերել ^գՄիոնը: Տերը ներքևից վեր է ^դտարել Միոնը:

101 ^աԵրկիրը երկնել և առաջ է բերել իր ուժը.

Եվ ճշմարտություն է նրա որովայնում հաստատվել.

Եվ երկինքները ժպտացել են նրան.

Եվ հագել է իր Աստծո ^բփառքը նա.

Քանզի կանգնած է իր ժողովրդի մեջ նա:

102 Փառք, և պատիվ, և զորություն, և հզորություն

Թող լինի մեր Աստծուն. քանզի նա լի է ^աողորմությամբ, Արդարադատությամբ, շնորհով և ճշմարտությամբ, և ^բխաղաղությամբ,

Հավիտյան հավիտենից. Ամեն:

103 Եվ բացի այդ, ճշմարիտ, ճշմարիտ ասում եմ ձեզ. նպատակահարմար է, որ ամեն մարդ, ով առաջ է գնում՝ հռչակելու իմ հավիտենական ավետարանը, որքան որ նրանք ընտանիքներ ունեն, և դրան են ստանում, որպես պարգև, որ նրանք դա ուղարկեն նրանց, կամ օգտագործեն նրանց օգտի համար, ինչպես որ Տերն ուղղություն կտա նրանց, քանզի այդպես ինձ բարի է թվում:

104 Եվ թող բոլոր նրանք, ովքեր չունեն ընտանիքներ, ովքեր ^ադրան են ստանում, ուղարկեն այն Միոնի եպիսկոպոսին կամ Օհայոյի եպիսկոպոսին, որպեսզի այն նվիրաբերվի՝ հայտնություններն առաջ բերելու ու դրանք տպագրելու համար և Միոնը հաստատելու համար:

105 Եվ եթե ինչ-որ մեկը ձեզանից որևէ մեկին վերարկու տա, կամ բաճկոն, հինը տար ու գցիր ^աաղքատի վրա, և ուրախ շարունակիր ճանապարհդ:

106 Եվ եթե ձեզանից ինչ-որ մեկն ամուր է Հոգով, թող նա ^ավերցնի մեկին, որ տկար է, որպեսզի

97ա Մատ. ԻԳ.22:
98ա Ես. ԾԲ.8:
բ Սաղ. ԳՁ.1,
Հայտ. ԺԵ.3,
ՎևՈՒ 25.12, 133.56:
սո՛ր Երզն.:
99ա սո՛ր Իսրայել:
բ Հայտ. Ե.9,
ՎևՈՒ 43.29:
գ սո՛ր Շնրի:

դ սո՛ր Ընտրություն:
ե սո՛ր Արքահամի ուխտը:
100ա Հայտ. Ի.2–3,
ՎևՈՒ 43.31, 45.55,
88.110:
բ Եփես. Ա.10,
ՎևՈՒ 27.13:
գ ՎևՈՒ 45.11–14,
Մովսես 7.62–64:
սո՛ր Միոն:

դ ՎևՈՒ 76.102, 88.96:
101ա սո՛ր Երկիր:
բ սո՛ր Փառք:
102ա սո՛ր Ողորմած,
Ողորմություն:
բ սո՛ր Խաղաղություն:
104ա ՎևՈՒ 51.8–9, 12–13:
105ա սո՛ր Աղքատ –
Նյութապես աղքատ:
106ա սո՛ր Ընկերակցել:

շենացնի նրան ողջ ^բհեզությամբ, որ նա նույնպես կարողանա ամրանալ:

107 Հետևաբար, վերցրեք ձեզ հետ նրանց, ովքեր կարգված են ^ափոքրագույն քահանայությանը, և ուղարկեք նրանց ձեզանից առաջ, որ պայմանավորվածություններ ձեռք բերեն, և ճանապարհի պատրաստեն, և ներկա գտնվեն այդ պայմանավորվածություններին, որոնց ինքներդ չեք կարող ներկա գտնվել:

108 Ահա, այս ձևով է, որ իմ առաքյալները, հին օրերում, կառուցեցին իմ եկեղեցին ինձ համար:

109 Հետևաբար, թող ամեն մարդ կանգնի իր պաշտոնում և ծառայի իր իսկ կոչման մեջ. և թող գլուխը չասի ոտքերին, թե ոտքերի կարիքը չունի. քանզի առանց ոտքերի ի՞նչպես կկարողանա մարմինը կանգնել:

110 Նմանապես, մարմինն ունի ամեն ^աանդամի կարիքը, որպեսզի բոլորը կարողանան միասին շենանալ, որպեսզի համակարգը կատարյալ պահվի:

111 Եվ ահա, ^աքահանայապետերը պետք է ճամփորդեն, և նաև երեցները, և նաև ^բքահանաները. բայց ^գսարկավագներն ու ^դուսուցիչները պետք է նշանակվեն՝ ^եհսկելու եկեղեցու վրա, տեղի սպասավորներ լինելու եկեղեցու համար:

112 Եվ եպիսկոպոսը՝ Նյուել Բ. Ուիթնին, նույնպես պետք է

ճամփորդի շրջակայքում և բոլոր եկեղեցիների մեջ, փնտրելով աղքատների, որ ^աբավարարի նրանց պահանջները՝ ^բխոնարհեցնելով հարուստներին և հպարտներին:

113 Նա պետք է նաև մի ^ագործակալ վարձի, որը պատասխանատվություն կվերցնի և կկատարի իր աշխարհիկ գործերը, ինչպես որ ինքն ուղղություն կտա:

114 Այնուամենայնիվ, թող եպիսկոպոսը գնա Նյու Յորք քաղաքը, նաև Ալբանի քաղաքը, և նաև Բոստոն քաղաքը, և զգուշացնի այդ քաղաքների մարդկանց, ավետարանը հնչեցնելով, բարձր ձայնով, այն ^աավերածության և լիակատար ոչնչացման մասին, որը սպասվում է նրանց, եթե նրանք մերժեն այս բաները:

115 Քանզի եթե նրանք մերժեն այս բաները, նրանց դատաստանի ժամը մոտ է, և նրանց տունն ^աավերված կթողնվի իրենց:

116 Թող նա ^աապավինի ինձ և ոչ ոք նրան չի ^բկարկամեցնի. և նրա գլխից ոչ մի ^գմազ գետնին չի ընկնի աննկատ:

117 Եվ ճշմարիտ ասում եմ ձեզ, իմ մնացած ծառաներ. Առաջ գնացեք, ինչպես ձեր պայմանները թույլ կտան, ձեր առանձին կոչումներով, դեպի մեծ և նշանակալից քաղաքներն ու գյուղերը, արդարությամբ հանդիմանելով աշխարհին իր բոլոր անիրավ և անաստված գործերի համար, պարզորոշ և հաս-

106բ սուր Հեզ, Հեզություն:
107ա սուր Ահարոնյան քահանայություն:
110ա Ա. Կոր. ԺԲ. 12–23:
111ա սուր Քահանայապետ: Բ սուր Քահանա՝ Ահարոնյան քահանայություն:

գ սուր Սարկավագ:
դ սուր Ուսուցիչ՝ Ահարոնյան քահանայություն:
ե սուր Արթուն լինել:
112ա սուր Բարօրություն:
բ Վև. Թ. 56.16:
113ա Վև. Թ. 90.22:

114ա Վև. Թ. 1.13–14:
115ա Ղուկ. ԺԳ. 35:
116ա սուր Ապավինել:
բ Սաղ. ԻԲ. 5,
Ա Պետ. Բ. 6:
գ Մատ. Ժ. 29–31:

կանալի բացատրելով սուսկալի ավերումը վերջին օրերին:

118 Քանգի, ձեզ հետ, ասում է Ամենագոր Տերը, ես ՝ջարդուփշուր կանեն նրանց թագավորությունները. ես ՝կցնցնեմ ոչ միայն երկիրը, այլ կողոպտեմ նաև աստղալից երկինքը:

119 Քանգի ես՝ Տերս, մեկնել եմ

ձեռքս, որ գործի դնեմ երկնքի գործությունները. ներկայումս դուք չեք կարող տեսնել այն, բայց մի փոքր ևս, և դուք կտեսնեք ինձ, և կիմանաք, որ ես եմ, և որ ես ՝կզան ու ՝կթագավորեմ իմ ժողովրդի հետ:

120 Ես եմ ՝Ալֆան և Օմեգան՝ սկիզբը և վերջը: Ամեն:

ԲԱԺԻՆ 85

Հայտնություն՝ տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեի միջոցով, Կիրթենդում, Օհայո, 1832թ. նոյեմբերի 27-ին (History of the Church, 1.298–299): Այս բաժինը մի հատված է Մարգարեի նամակից՝ ուղղված Վ.Վ. Ֆելիսին, որն ապրում էր Ինդիպենդենսում, Միսսուրի: Այն գրվել էր ի պատասխան հարցերի, որոնք կապված էին այն Սրբերի հետ, որոնք տեղափոխվել էին Սիոն, բայց որոնք չէին ստացել իրենց ժառանգությունը՝ համաձայն Եկեղեցում հաստատված կարգի:

1–5 Միոնում ժառանգությունները ստացվելու են նվիրաբերման միջոցով. 6–12՝ Հզոր և զորավոր մի մարդ Սրբերին կտա իրենց ժառանգությունը Միոնում:

ՏԻՐՈՋ գործավարի պարտականությունն է, որին նա նշանակել է, պատմություն և ընդհանուր եկեղեցական ՝գրանցում վարել, այն բոլոր բաների վերաբերյալ, որոնք տեղի են ունենում Միոնում, և բոլոր նրանց մասին, ովքեր սեփականություն են ՝նվիրաբերում և օրինական ձևով ժառանգություն են ստանում եպիսկոպոսից.

2 Եվ նաև նրանց ապրելակերպի, նրանց հավատքի և գործերի. և նաև ուրացողների, ովքեր ուրացել են՝ իրենց ժառանգությունները ստանալուց հետո:

3 Աստծո կամքին և պատվիրանին հակառակ է, որ Աստծո ժողովրդի թվում իրենց անունները գրված ունենան նրանք, ովքեր չեն ստանում իրենց ժառանգությունը ՝նվիրաբերումով, համաձայն իր օրենքի, որը նա տվել է, որ կարողանա ՝տասանորդել իր ժողովրդին, որպեսզի նրանց նախապատրաստի ՝վրեժխնդրության և այրման օրվա համար:

4 Ոչ էլ պետք է պահել նրանց

118ա Դան. Բ.44–45:
բ Հովել Բ.10, ՎևոՒ 43.18, 45.33, 48, 88.87, 90:
սոՒ Վերջին օրեր, Տսին օրեր.
Ժամանակների նշանները:

119ա ՎևոՒ 1.12, 35–36, 29.9–11, 45.59:
սոՒ Հիսուս
Քրիստոսի երկրորդ գալուստը:
բ սոՒ Հագարամյակ:
120ա սոՒ Ալֆա և Օմեգա:
85 1ա ՎևոՒ 21.1, 47.1,

69.3–6:
բ ՎևոՒ 42.30–35:
3ա սոՒ Նվիրաբերել, Նվիրաբերման օրենք:
բ սոՒ Տասանորդ, Տասանորդել:
գ Մաղ. Գ.10–11, 17, ՎևոՒ 97.25–26:

տոհմաբանությունը կամ ունենալ, որ այն լինի եկեղեցու պատմության որևէ գրանցումներում:

5 Ո՛չ նրանց անունները, ո՛չ նրանց հայրերի, ո՛չ էլ երեխաների անունները, չպետք է Աստծո օրենքի ³գրքում գրված լինեն, ասում է Չորաց Տերը:

6 Այո՛, այսպես է ասում ⁴մեղմ հանդարտ ձայնը, որը շնչում է և ⁵թափանցում բոլոր բաների միջով, և հաճախ այն սարսեցնում է ոսկորներս, երբ հայտնում է՝ ասելով.

7 Եվ կլինի այնպես, որ ես՝ Տեր Աստվածս, կուղարկեմ հզոր և գորավոր մի մարդու, իշխանության գայիսունը ձեռքին, լույս հագած՝ որպես զգեստ, ում բերանը կարտաբերի խոսքեր՝ հավերժական խոսքեր. մինչդեռ, նրա որովայնը կլինի ճշմարտության աղբյուր, որ կարգի դնի Աստծո տունը, և բաժին առ բաժին կարգավորի այն սրբերի ժառանգությունները, որոնց անունները և իրենց հայրերի ու իրենց զավակների անունները գրված կլինեն Աստծո օրենքի գրքում.

8 Մինչդեռ այն մարդը, որը կանչված ու նշանակված է եղել

Աստծուց, որն իր ձեռքը մեկնում է՝ Աստծո ⁶տապանակը պահելու, պիտի ընկնի մահվան նետից, ինչպես մի ծառ, որը զարկվում է վառ կայծակի նետից:

9 Եվ բոլոր նրանք, ովքեր գրված չեն լինի հիշատակի ⁷գրքում, ժառանգություն չեն գտնի այն օրը, այլ կտոր-կտոր կարվեն, և նրանց բաժինն անհավատների հետ կնշանակվի, որտեղ կլինի ⁸լացն ու ատամների կրճտոցը:

10 Այս բաները ես ասում եմ ոչ ինձանից. ուստի, ինչպես որ Տերն ասում է, այնպես էլ նա կանի:

11 Եվ նրանք, ովքեր Բարձրագույն Քահանայությունից են, որոնց անունները գրված չեն լինի օրենքի ⁹գրքում, կամ որոնք ¹⁰նուրացած են կամ եկեղեցուց ¹¹կտրված, ինչպես նաև փոքրագույն քահանայությունը կամ անդամները, այն օրը ժառանգություն չեն գտնի Բարձրյալի սրբերի մեջ.

12 Հետևաբար, նրա հետ պետք է վարվեն, ինչպես այն քահանայի երեխաների հետ, որն արձանագրված է Եզրասի երկրորդ գլխի վաթսուներկ և վաթսուներկու հատվածներում:

ԲԱԺԻՆ 86

Հայտնություն տրված Չոզեֆ Սմիթ Մարգարեի միջոցով, Կիրթլենդում, Օհայո, 1832թ. դեկտեմբերի 6-ին (History of the Church, 1.300): Այս հայտնությունն ստացվել էր, մինչ մարգարեն ստուգում և խմբագրում էր Աստվածաշնչի թարգմանության ձեռագիրը:

1-7 Տերը մեկնաբանում է գրեթե և որոմների առակի իմաստը. 8-11՝

Նա բացատրում է քահանայության օրհնությունները նրանց,

5ա սո՛ւ Կյանքի գիրք:
6ա Գ. Թագ. ԺԹ. 11-12,
Հէլ. 5.30-31,
3 Նեփի 11.3-7:
բ Եբր. Գ. 12:
8ա Բ. Թագ. 2.6-7,

Ա Մն. ԺԳ. 9-10:
սո՛ւ Ուխտի տապանակ:
9ա 3 Նեփի 24.16,
Մովսես 6.5-6:
սո՛ւ Պատվիրանների

գիրք:
բ Վե՛ՌԻ 19.5:
11ա սո՛ւ Կյանքի գիրք:
բ սո՛ւ Ուրացություն:
գ սո՛ւ Հեռացում:

ովքեր օրինական ժառանգներ են ըստ մարմնի:

ԱՇՄԱՐԻՏ, այսպես է ասում Տերը ձեզ, իմ ժառանգներ, ցորենի և որոմնեթի ^{առաջին} վերաբերյալ.

2 Ահա, ճշմարիտ ասում եմ, որ արտն աշխարհն էր, իսկ առաքյալները՝ սերմնացանները.

3 Եվ նրանց ննջելուց հետո, եկեղեցու մեծ հալածողը՝ ուրացողը, պոռնիկը, այսինքն՝ ^{առաջին} Բաբելոնը, որը ստիպում է բոլոր ազգերին խմել իր բաժակից, որոնց սրտերում թշնամին, այսինքն՝ Սատանան, նստել է իշխելու, — ահա նա է ցանում որոմները. ուստի, որոմները խեղդում են ցորենը և անպատ են քշում ^{հեղեղեցին}:

4 Բայց ահա, ^{վերջին} օրերին, նույնիսկ այժմ, երբ Տերը սկսում է առաջ բերել խոսքը, և ցողումներն աճում են ու դեռ նուրբ են, —

5 Ահա, ճշմարիտ ասում եմ ձեզ, որ ^{հրեշտակներն} օր ու գիշեր աղաղակում են առ Տերը, ովքեր պատրաստ են և սպասում են, որ ուղարկվեն արտերը ^{հնձելու}.

6 Բայց Տերն ասում է նրանց. Մի բաղիաներ որոմները, բանի դեռ ընձյուղները նուրբ են (քանզի, արդարև, ձեր հավատքը

բույլ է), չլինի թե ցորենը նույնպես փչացնեք:

7 Հետևաբար, թող ցորենն ու որոմները միասին աճեն, մինչև որ հունձքը լիովին հասունանա. այն ժամանակ դուք սկզբում կհավաքեք ցորենը որոմների միջից, և ցորենը հավաքելուց հետո, ահա, տես, որոմները կապված կլինեն խրձերով, և կմնա որ արտն այրվի:

8 Հետևաբար, այսպես է Տերն ասում ձեզ, ում հետ ^{առաջին} քահանայությունը շարունակվել է ձեր հայրերի ազգատոհմի միջոցով, —

9 Քանզի դուք օրինական ^{առաջին} ժառանգներ եք՝ ըստ մարմնի, և աշխարհից ^{առաջին} քաթքցվել եք Քրիստոսի հետ Աստծո մեջ, —

10 Հետևաբար, ձեր կյանքը և քահանայությունը մնացել է, և պետք է մնա ձեր և ձեր ազգատոհմի միջոցով, մինչև բոլոր այն բաների ^{վերականգնումը} որոնք աշխարհի սկզբից ի վեր խոսվել են բոլոր սուրբ մարգարեների բերանով:

11 Հետևաբար, օրհնված եք դուք, եթե շարունակեք իմ բարության մեջ, որպես ^{առաջին} լույս՝ հեթանոսների համար և փրկիչ՝ իմ ^{առաջին} Բարայել ժողովրդի համար, այս քահանայության միջոցով: Տերն է ասում դա: Ամեն:

ԲԱԺԻՆ 87

Հայտնություն և մարգարեություն պատերազմի մասին տրված Չոզեֆ Սմիթ Մարգարեի միջոցով, 1832թ. դեկտեմբերի 25-ին (History of the Church, 1.301–302): Այս բաժինը ստացվեց այն ժամանակ, երբ եղբայրները խորհում

86 1ա Մատ. ԺԳ.6–43, ՎևոՒ 101.64–67:
3ա Հայտ. ԺԷ.1–9:
սուր Բաբելոն:
բ Հայտ. ԺԲ.6, 14:
4ա սուր Վերջին օրեր, Ետին օրեր:

5ա ՎևոՒ 38.12:
բ սուր Հունձք:
8ա ՎևոՒ 113.8:
սուր Մեքսիկեղեկյան քահանայություն:
9ա Աբր. 2.9–11:
սուր Աբրահամի

ուխտը:
բ Ես. ԽԹ.2–3:
10ա Գոր. Գ.19–21:
սուր Ավետարանի վերականգնումը:
11ա Ես. ԽԹ.6:
բ ՎևոՒ 109.59–67:

և տրամաբանում էին Ամերիկյան աշխարհամասում Աֆրիկյան ստրկության և ամբողջ աշխարհում մարդկանց զավակների ստրկության մասին:

1-4 Հյուսիսային նահանգների և Հարավային նահանգների միջև պատերազմ է կանխագուշակվում. 5-8 Մեծ աղետներ պիտի ընկնեն երկրի բնակիչների վրա:

ԱՇՄԱՐԻՏ, այսպես է ասում Տերը պատերազմների մասին, որոնք շուտով պիտի լինեն, սկսվելով ³Հարավային Կարոլինայի ապստամբությունից, որն ի վերջո կավարտվի բազում հոգիների մահով և թշվառությամբ.

2 Եվ կգա ժամանակ, երբ ³պատերազմ կթափվի բոլոր ազգերի վրա՝ սկսվելով այստեղից:

3 Քանզի ահա, Հարավային նահանգները կառանձնանան ընդդեմ Հյուսիսային Նահանգների, և Հարավային նահանգները կդիմեն այլ ազգերի, մույնիսկ Մեծ Բրիտանիայի ազգին, ինչպես այն անվանում են, և նրանք մույնպես կդիմեն այլ ազգերի՝ ուրիշ ազգերից պաշտպանվելու համար. և այն ժամանակ ³պատերազմ կթափվի բոլոր ազգերի վրա:

4 Եվ կլինի այնպես, շատ օրեր անց, որ ³աստրուկները կբարձրանան իրենց տերերի դեմ, որոնք

շարք կկանգնեցվեն և կվարժեցվեն պատերազմի համար:

5 Եվ մահ կլինի այնպես, որ մնացածը, ովքեր մնացել են երկրում, իրենք պիտի շարք կանգնեն, և պիտի խիստ բարկանան, և դառը նեղությամբ պիտի նեղեն հեթանոսներին:

6 Եվ այդպես, սրով և արյունահեղությամբ, երկրի բնակիչները ³կսգան. և ²սովով, և պատուհասով, և երկրաշարժով, և երկնքի որոտով, և մահ կատաղի ու վառ կայծակով պիտի զգան երկրի բնակիչները ցասումը, և զայրույթը, և ⁴խրատող ձեռքն Ամենագոր Աստծո, մինչև որ որոշված ավերումը լիովին ²վերջ տա բոլոր ազգերին.

7 Որ սրբերի և սրբերի ³արյան աղաղակը դադարի երկրից բարձրանալ վեր՝ ²Սաբաովթի Տիրոջ ականջներին, նրանց թշնամիներից վրեժ առնելու համար:

8 Ուստի, ³կանգնեք սուրբ տեղերում, և մի շարժվեք, մինչև որ Տիրոջ օրը գա. քանզի ահա, այն ²արագ մոտենում է, ասում է Տերը: Ամեն:

ԲԱԺԻՆ 88

Հայտնություն՝ տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեի միջոցով, Կիրթլենդում, Օհայո, 1832թ. դեկտեմբերի 27-ին (History of the Church, 1.302-312): Մարգարեի կողմից այն բնութագրվել էր որպես «Դ-րախտի ծաղից պոկված... «ձիթենու տերև» Տիրոջ խաղաղության ուղերձն ուղղված մեզ» (History

87 1ա ՎևՈՒ 130.12-13:
2ա Հովել Գ.9-16,
Մատ. ԻԳ.6-7,
ՎևՈՒ 45.26, 63, 63.33:
3ա ՎևՈՒ 45.68-69:
4ա ՎևՈՒ 134.12:

6ա ՎևՈՒ 29.14-21, 45.49:
բ ՋՍ-Մ 1.29:
գ սոՒ Խրատել,
Խրատելը:
դ սոՒ Աշխարհ -
Աշխարհի վերջը:

7ա Եթեր 8.22-24:
բ Հակ. Ե.4,
ՎևՈՒ 88.2, 95.7:
8ա Մատ. ԻԳ.15,
ՎևՈՒ 45.32, 101.21-22:
բ Հայտ. Գ.11:

of the Church, 1.316): Պատմական արձանագրություններից երևում է, որ այս հայտնությունը կազմող մասերը ստացվել էին 1832թ. դեկտեմբերի 27-ին ու 28-ին և 1833թ. հունվարի 3-ին:

1-5 Հավատարիմ Սրբերն ստանում են այն Մխիթարիչին, որը հավերժական կյանքի խոստումն է. 6-13՝ Բոլոր բաները ղեկավարվում ու կառավարվում են Քրիստոսի Լույսով. 14-16՝ Հարությունը գալիս է Փրկագնան միջոցով. 17-31՝ Հնազանդությունը՝ սելեստիալ, թերեստրիալ կամ թելեստիալ օրենքներին, մարդկանց նախապատրաստում է այդ առանձին արքայություններին ու փառքերին. 32-35՝ Նրանք, ովքեր կկամենան մնալ մեղքի մեջ, կեղտոտ էլ կմնան. 36-41՝ Բոլոր քաղալորությունները կառավարվում են օրենքով. 42-45 Աստված օրենք է տվել բոլոր բաների համար. 46-50՝ Մարդը կրմբռնի նույնիսկ Աստծուն. 51-61՝ Իր ծառաներին արտ ուղարկող և հերթով նրանց այցելող մարդու առակը. 62-73՝ Մոտեցեք Տիրոջը, և դուք կտեսնեք նրա երեսը. 74-80՝ Սրբագործեք ձեզ և միմյանց ուսուցանեք արքայության վարդապետությունները. 81-85՝ Ամեն մարդ, ով զգուշացվել է, պետք է զգուշացնի իր մերձավորին. 86-94՝ Նշանները, տարերային աղետները և հրեշտակները, ճանապարհ են պատրաստում Տիրոջ գալստյան համար. 95-102՝ Հրեշտակային փողերը կանչում են մեռելներին ըստ իրենց հերթի. 103-116՝ Հրեշտակային փողերը հռչակում են մվետարանի վերականգնումը, Բարեբրնի անկումն ու մեծ Աստծո պատերազմը. 117-126՝ Ուսում

փնտրեք, Աստծո տուն (տաճար) հաստատեք և հազեք գթության կապը. 127-141՝ Կարգ է հաստատվում Մարգարեների Դպրոցի համար, ներառյալ ոտնվալի արարողությունը:

ԱՇՄԱՐԻՏ, այսպես է ասում Տերը ձեզ, որ հավաքվել եք միասին՝ ստանալու նրա կամքը ձեր վերաբերյալ.

2 Ահա, սա հաճելի է ձեր Տիրոջը, և հրեշտակները ⁹ցնծում են ձեզ համար. ձեր աղոթքների ⁸ողորմությունները հասել են ⁹Սաբաովթի Տիրոջ ականջին և գրվել են սրբագործվածների անունների ²գրքում, այսինքն՝ նրանց, ովքեր սելեստիալ աշխարհիկն են:

3 Ուստի, այժմ ես ուղարկում եմ ձեզ մեկ ուրիշ ³Մխիթարիչ, այսինքն՝ ձեզ՝ իմ բարեկամներին, որ այն մնա ձեր սրտերում, այսինքն՝ խոստումի ²Սուրբ Հոգին. մեկ ուրիշ Մխիթարիչ, որը նույնն է, ինչ ես խոստացա իմ աշակերտներին, ինչպես արձանագրված է Հովհաննեսի վկայության մեջ:

4 Այդ Մխիթարիչը խոստումն է, որը ես տալիս եմ ձեզ, որը ³հավերժական կյանք է, այսինքն՝ սելեստիալ արքայության ²փառքը.

5 Փառք, որը նույնն է, ինչ ³Անդրանիկի եկեղեցունը, այսինքն՝ Աստծունը, բոլորից սրբագույնինը, Հիսուս Քրիստոսի՝ իր Որդու միջոցով, -

<p>88 2ա Ղուկ. ԺԵ.10: բ Գոր. Ժ.1-4: սուր Աղոթք: գ Հակ. Ե.4, ՎևոՒ 95.7:</p>	<p>դ սուր Կյանքի գիրք: 3ա Հովհ. ԺԳ.16: բ ՎևոՒ 76.53: սուր Խոստումի Սուրբ</p>	<p>Հոգի: 4ա ՎևոՒ 14.7: բ սուր Սելեստիալ փառք: 5ա սուր Առաջնեկ:</p>
--	--	--

6 ՄԼա, ով վեր ելավ բարձր, ինչպես և, վայր Բիջավ բոլոր բաներից ցած, որով և Գըմբռնեց բոլոր բաները, որ կարողանա ամենի մեջ և ամենուրեք լինել ճշմարտության Դլույսը.

7 Ճշմարտություն, որը շողում է: Դա Քրիստոսի Մլույսն է: Ինչպես և, նա արևի մեջ է, և արևի լույսն է, և նրա զորությունը, որի միջոցով այն Բարարվել է:

8 Ինչպես և, նա լուսնի մեջ է, և լուսնի լույսն է, և զորությունը, որի միջոցով այն արարվել է:

9 Ինչպես և, աստղերի լույսը, և զորությունը, որի միջոցով դրանք արարվել են:

10 Եվ նաև երկրինը, և նրա զորությունը, այսինքն՝ այն երկրինը, որի վրա դուք Մկանգնած եք:

11 Եվ լույսը, որը շողում է, որը լույս է տալիս ձեզ, նրա միջոցով է, ով լուսավորում է ձեր աչքերը, որը նույն այն լույսն է, որը կենդանացնում է ձեր Միասակացողությունը.

12 ՄԼույս, որը դուրս է գալիս Աստծո ներկայությունից, որ լցնի տարածության անսահմանությունը,–

13 Լույս, որը Մբոլոր բաների մեջ է, որը Բկյանք է տալիս բոլոր բաներին, որն այն Գօրենքն է,

որով կառավարվում են բոլոր բաները, այսինքն՝ զորությունն Աստծո, որը նստած է իր գահին, որը հավերժության ծոցում է, որը բոլոր բաների մեջ է:

14 Արդ, ճշմարիտ ասում են ձեզ, որ Մփրկագնման միջոցով, որը կատարվել է ձեր համար, իրագործվում է մեռելներից հարությունը:

15 Եվ Մոգին ու Բմարմինը՝ մարդու Գհոգին են:

16 Եվ մեռելներից Մհարությունը հոգու փրկագնումն է:

17 Եվ հոգու փրկագնումը նրա միջոցով է, ով կենդանացնում է բոլոր բաները, ում ծոցում հրամանագրված է, որ Մերկիրը պիտի ժառանգեն նրա Բաղքատներն ու Գհեզերը:

18 Հետևաբար, այն սրբագործված պիտի լինի ամեն անիրավությունից, որպեսզի պատրաստ լինի Մսելեստիալ փառքի համար.

19 Քանզի ստեղծման իր չափը լցնելուց հետո, այն պիտի պասկվի Մփառքով, նույնիսկ Հայր Աստծո ներկայությամբ.

20 Որ մարմինները, որոնք սելեստիալ արքայությանն են, կարողանան Մտիրել այն՝ հավիտյանս հավիտենից. քանզի, այդ Բմտաղ–

6ա սոտ Հիսուս Քրիստոս:
բ ՎևոՒ 122.8:
սոտ Քավել, Քավություն:
գ սոտ Ամենագետ:
դ ՎևոՒ 93.2, 8–39:
սոտ Լույս, Քրիստոսի լույս. Ճշմարտություն:
7ա Մոր. 7.15–19, ՎևոՒ 84.45:
բ Ծն. Ա. 16:
սոտ Ստեղծել, Ստեղծում:
10ա Մովսես 2.1:
11ա սոտ Հասկանալ:
12ա սոտ Լույս, Քրիստոսի

լույս:
բ Երեմ. ԻԳ.24:
13ա Կող. Ա.16–17:
բ ԲՕր. Լ.20, ՎևոՒ 10.70:
գ Հոր ԼԸ, ՎևոՒ 88.36–38:
սոտ Օրենք:
14ա սոտ Քավել, Քավություն. Փրկագնման ծրագիր:
15ա սոտ Մարդ, Մարդիկ – Մարդը՝ Երկնային Հոր հոգեղեն զավակ. Ոգի:
բ սոտ Մարմին:
գ Ծն. Բ.7:
սոտ Հոգի:

16ա Ալմա 11.42:
սոտ Հարություն:
17ա սոտ Երկիր – Երկրի վերջնական վիճակը:
բ սոտ Աղքատ:
գ սոտ Հեզ, Հեզություն:
18ա սոտ Սելեստիալ փառք:
19ա ՎևոՒ 130.7–9:
20ա ՎևոՒ 38.20:
բ Մովսես 1.39:
սոտ Մարդ, Մարդիկ – Մարդը՝ Երկնային Հոր նման դառնալու ներուժը:

րությամբ էր այն արարվել ու ստեղծվել, և այդ նպատակով են նրանք Գարբագործվում:

21 Եվ նրանք, ովքեր չեն սրբագործվում օրենքի միջոցով, որը ես տվել եմ ձեզ, այսինքն՝ Քրիստոսի օրենքով, պետք է ժառանգեն մեկ այլ արքայություն, այսինքն՝ այն, որը թերեստրիալ արքայությունն է կամ այն, որը թելեստիալ արքայությունն է:

22 Քանզի նա, ով չի կարողանում մնալ սելեստիալ արքայության օրենքում, չի կարողանա մնալ սելեստիալ փառքում:

23 Եվ նա, ով չի կարողանում մնալ թերեստրիալ արքայության օրենքում, չի կարողանա մնալ փերեստրիալ փառքում:

24 Եվ նա, ով չի կարողանում մնալ թելեստիալ արքայության օրենքում, չի կարողանա մնալ փելեստիալ փառքում. հետևաբար, նա արժանի չէ փառքի արքայության: Հետևաբար, նա կմնա մի արքայությունում, որը փառքի արքայությունն է:

25 Եվ բացի այդ, ճշմարիտ ասում եմ ձեզ, որ Խերկիլը մնում է սելեստիալ արքայության օրենքի մեջ, քանզի այն լցնում է իր ստեղծման չափը և չի օրինագանցում օրենքը, –

26 Ուստի, այն պիտի Կարբագործվի. այո՛, չնայած որ այն Քկմեռնի,

այն վերստին պիտի կենդանանա, և պիտի մնա այն գորության մեջ, որով այն կենդանացվել է, և Գարդարները Քկժառանգեն այն:

27 Քանզի, չնայած որ նրանք մահանում են, նրանք ևս վերստին Կբարձրանան, որպես Քոգևոր մարմին:

28 Նրանք, ովքեր սելեստիալ ոգիներ են, կստանան նույն մարմինը, որը բնական մարմին էր. այսինքն՝ դուք կստանաք ձեր մարմինները, և ձեր փառքը կլինի այն փառքը, որով Քկենդանացվում են ձեր մարմինները:

29 Դուք, որ կենդանացվում եք սելեստիալ Քփառքի մի մասով, այնուհետև կստանաք նույնից, նույնիսկ լրիվությունը:

30 Եվ նրանք, ովքեր կենդանացվում են փերեստրիալ փառքի մի մասով, այնուհետև կստանան նույնից, նույնիսկ լրիվությունը:

31 Եվ նաև նրանք, ովքեր կենդանացվում են փելեստիալ փառքի մի մասով, այնուհետև կստանան նույնից, նույնիսկ լրիվությունը:

32 Եվ նրանք, ովքեր կմնան, նույնպես Կկկենդանացվեն. այնուամենայնիվ, նրանք կրկին կվերադառնան իրենց տեղը, վայելելու այն, ինչ նրանք Քկամենում են ստանալ, որովհետև նրանք չկամեցան վայելել այն, ինչ կարող էին ստանալ:

20գ սուր Սրբագործում:
22ա ՎևոՒ 105.5:
23ա սուր Թերեստրիալ փառք:
24ա սուր Թելեստիալ փառք:
25ա սուր Երկիր:
26ա սուր Երկիր – Երկրի վերջնական վիճակը:
բ սուր Աշխարհ – Աշխարհի վերջը:
գ Բ Պետ. Գ.11–14:
սուր Արդար,

Արդարություն:
դ Մատ. Ե.5,
ՎևոՒ 45.58, 59.2,
63.49:
27ա սուր Հարություն:
բ Ա Կոր. ԺԵ.44:
28ա սուր Վերջին դատաստան:
բ ՎևոՒ 43.32, 63.51,
101.31:
29ա սուր Սելեստիալ փառք:
բ սուր Մարդ, Մարդիկ –

Մարդ՝ Երկնային Հոր մնան դառնալու ներուժը:
30ա սուր Թերեստրիալ փառք:
31ա սուր Թելեստիալ փառք:
32ա Ալմա 11.41–45:
բ սուր Կամքի ազատություն:

33 Քանզի ի՞նչ օգուտ մարդուն, եթե նրան պարզև է տրվում, և նա չի ընդունում այդ պարզևը: Ահա, նա չի ուրախանում այն ամենով, ինչ տրված է իրեն, ոչ էլ ուրախանում է այդ պարզևը տվողով:

34 Եվ բացի այդ, ճշմարիտ ասում են ձեզ, որ նա, ով ղեկավարվում է օրենքով, նաև պահպանվում է օրենքով և կատարելագործվում ու չարագործվում է նույնով:

35 Նա, ով խախտում է օրենքը, և չի մնում օրենքի մեջ, այլ փնտրում է ինքն իր օրենքը դառնալ, և կամենում է մնալ մեղքի մեջ, և ամբողջովին մեղքի մեջ է մնում, չի կարող սրբագործվել օրենքով, ոչ ղողորմությամբ, ոչ արդարադատությամբ, ոչ էլ դատաստանով: Հետևաբար, նրանք պետք է մնան:

36 Բոլոր թագավորություններին տրված է օրենք.

37 Եվ կան բազմաթիվ թագավորություններ. քանզի չկա տարածություն, որտեղ չլինի թագավորություն. և չկա թագավորություն, որտեղ չլինի տարածություն՝ լինի մեծ, թե փոքր թագավորություն:

38 Եվ ամեն մի թագավորության տրված է ռ օրենք. և ամեն մի օրենքում կան նաև որոշակի սահմաններ և պայմաններ:

39 Բոլոր էակները, ովքեր չեն

մնում այդ չպայմաններում, չեն արդարացվում:

40 Քանզի չբանականությունը հարում է բանականությանը. ղիմաստությունը ստանում է ղիմաստություն. ճշմարտությունը փարվում է ճշմարտությանը. առաքիլությունը սիրում է առաքիլությանը. լույսը հարում է լույսին. ողորմությունը ճուր ունի ողորմության վրա և պահանջում է յուրախիններին. արդարադատությունը շարունակում է իր ընթացքը և պահանջում է յուրախիններին. դատաստանը քայլում է նրա առջևից, ով նստած է գահին և կառավարում ու իրականացնում է բոլոր բաները:

41 Նա ղըմբռնում է բոլոր բաները, և բոլոր բաները նրա առջև են, և բոլոր բաները նրա շրջապատում են. և նա բոլոր բաներից վեր է, և բոլոր բաների մեջ, և բոլոր բաների միջով, և բոլոր բաների շուրջը. և բոլոր բաները նրանով են և նրանից, այսինքն՝ Աստծուց, հավիտյանս հավիտենից:

42 Եվ բացի այդ, ճշմարիտ ասում են ձեզ, որ նա բոլոր բաներին տվել է օրենք, որով նրանք շարժվում են՝ իրենց ժամանակի ու իրենց ժամանակաշրջանի մեջ.

43 Եվ նրանց ընթացքը սահմանված է, նույնիսկ երկինքների ու երկրի ընթացքը, որոնք ընդգրկում են երկիրն ու բոլոր մոլորակները:

34ա սոՒ Սրբագործում:
35ա սոՒ Ապստամբություն:
բ սոՒ Ողորմած,
Ողորմություն:
գ սոՒ Արդարադատություն:
դ Հայտ. ԻԲ.11,
1 Նեփի 15.33-35,
2 Նեփի 9.16,
Ավան 7.21:

37ա ՎևՈՒ 78.15:
38ա ՎևՈՒ 88.13:
39ա ՎևՈՒ 130.20-21:
բ սոՒ Արդարացում,
Արդարացնել:
40ա սոՒ Բանականություն,
Բանականություններ:
բ սոՒ Իմաստություն:
գ սոՒ Ճշմարտություն:
դ սոՒ Առաքիլություն:

ե սոՒ Լույս, Քրիստոսի լույս:
զ սոՒ Կարեկցանք:
41ա Ա Հովհ. Գ.20,
1 Նեփի 9.6,
2 Նեփի 9.20,
ՎևՈՒ 38.1-3:
սոՒ Ամենագետ:
42ա Գ.ան. Բ.20-22,
Արբ. 3.4-19:

44 Եվ նրանք միմյանց չլույս են տալիս իրենց ժամանակի ու իրենց ժամանակաշրջանի մեջ. իրենց բռնությունից, իրենց ժամերի, իրենց օրերի, իրենց շաբաթների, իրենց ամիսների, իրենց տարիների ընթացքում, – այդ բոլորը ^բմեկ տարի է Աստծո համար, բայց ոչ մարդու համար:

45 Երկիրը պտտվում է իր թևերով, և ^աարևը տալիս է իր լույսն օրվա մեջ, և լուսինը տալիս է իր լույսը գիշերով, և աստղերը նույնպես տալիս են իրենց լույսը, մինչ նրանք գլորվում են իրենց թևերով՝ իրենց փառքով, Աստծո ^բգործության մեջ:

46 Ինչի^օ մնանեցնեն են այդ թագավորությունները, որ կարողանաք հասկանալ:

47 Ահա, այդ բոլորը թագավորություններ են, և որևէ մեկը, ով տեսել է դրանցից անգամ ամենափոքրը, ^ատեսել է Աստծուն իր վեհափառությամբ ու զորությամբ շարժվելիս:

48 Ես ձեզ ասում եմ՝ նա տեսել է նրան. այնուամենայնիվ, նա, ով եկավ ^այուրայինների մեջ, չընդունվեց նրանց կողմից:

49 ^աԼույսը շողում է խավարում, և խավարը չի ըմբռնում այն. այնուամենայնիվ, օրը կգա, երբ դուք ^բկըմբռնեք նույնիսկ Աստծուն՝ կենդանացված լինելով նրանով և նրա կողմից:

50 Այն ժամանակ դուք կիմանաք, որ տեսել եք ինձ, որ ես եմ, և որ ես եմ ճշմարիտ լույսը, որը ձեր մեջ է, և որ դուք ինձանում եք.

այլապես դուք չէիք կարողանա քարգավաճել:

51 Ահա, ես կմնանեցնեմ այդ թագավորություններն արտ ունեցող մի մարդու, որն արտ ուղարկեց իր ծառաներին՝ արտը փորելու:

52 Եվ նա առաջինին ասաց. Գնա և աշխատիր արտում, և առաջին ժամին ես կգամ քեզ մոտ, և դու կտեսնես իմ դեմքի ուրախությունը:

53 Եվ նա երկրորդին ասաց. Դու նույնպես արտ գնա, և երկրորդ ժամին ես քեզ կայցելեմ՝ ուրախությունը դեմքիս:

54 Եվ նա երրորդին՝ ասելով. Ես քեզ կայցելեմ.

55 Եվ չորրորդին, և այդպես, մինչև տասներկուերորդը:

56 Եվ արտի տերը գնաց առաջինի մոտ, առաջին ժամին, և նրա հետ մնաց ողջ այդ ժամը, և նա ուրախացավ իր տիրոջ դեմքի լույսով:

57 Եվ հետո նա հեռացավ առաջինից, որ կարողանա այցելել երկրորդին նույնպես, և երրորդին, և չորրորդին, և այդպես մինչև տասներկուերորդը:

58 Եվ այդպես, նրանք բոլորն ստացան իրենց տիրոջ դեմքի լույսից, ամեն մարդ իր ժամին, և իր ժամանակին, և իր եղանակին, –

59 Սկսած առաջինից, և այդպես մինչև ^ավերջինը, և վերջինից մինչև առաջինը, և առաջինից մինչև վերջինը.

60 Ամեն մարդ իր հերթին, մինչև որ իր ժամը լրացավ, ճիշտ ինչպես իր տերն էր պատվիրել իրեն,

44ա սոՒ Լույս, Քրիստոսի լույս:
բ Սաղ. Դ.4,
Բ Պետ. Գ.8:
45ա Ծն. Ա.16, Աբր. 4.16:
բ ՎևոՒ 88.7–13:

47ա Այն 30.44,
Մովսես 1.27–28, 6.63,
Աբր. 3.21:
48ա Հովհ. Ա.11,
3 Նեփի 9.16,
ՎևոՒ 39.1–4:

49ա ՎևոՒ 6.21, 50.23–24,
84.45–47:
բ Հովհ. ԺԷ.3,
ՎևոՒ 93.1, 28:
59ա Մատ. Ի.1–16:

որպեսզի իր տերը փառավորվի իրենով, իսկ նա՝ իր տիրոջով, որ նրանք բոլորը կարողանան փառավորվել:

61 Հետևաբար, ես այս առակին կնմանեցնեմ բոլոր այն բազավորությունները, և նրանց ^աբնակիչներին, – ամեն բազավորություն իր ժամին, և իր ժամանակին, և իր եղանակին, ճիշտ այն հրամանագրի համաձայն, որն Աստված արձակել է:

62 Եվ բացի այդ, ճշմարիտ ասում եմ ձեզ, իմ ^աբարեկամներ. Ես թողնում եմ ձեզ այս ասածները՝ ^բխորհելու ձեր սրտում, այս պատվիրանի հետ միասին, որը ես տալիս եմ ձեզ, որ դուք պետք է ^գկանչեք ինձ, քանի դեռ ես մոտ եմ, –

63 ^աՄոտեցեք ինձ, և ես կմոտեցնամ ձեզ. ^բփնտրեք ինձ ջանասիրաբար, և ^գկգտնեք ինձ. խնդրեք, և կստանաք. Թակեք, և ձեզ կբացվի:

64 Ինչ որ ^ախնդրեք Հորը՝ իմ անունով, կտրվի ձեզ, այն, ինչը ^բնպատակահարմար է ձեզ համար.

65 Իսկ եթե դուք խնդրում եք որևէ բան, որը ^անպատակահարմար չէ ձեզ համար, այն պիտի դառնա ձեր ^բդատապարտությունը:

66 Ահա, այն ինչ դուք լսում եք, մեկի ^աձայնն է, ով կանչում է ամապատում, – ամապատում,

որովհետև դուք չեք կարողանում տեսնել նրան, – իմ ձայնը, որովհետև իմ ձայնը ^բՀոգի է. իմ Հոգին ճշմարտություն է. ^գճշմարտությունը հարատևում է և չունի վերջ. և եթե այն կա ձեր մեջ, այն կաճի:

67 Եվ եթե ձեր աչքն ուղղված լինի ^ամիայն իմ ^բփառքին, ձեր ամբողջ մարմինը լցված կլինի լույսով, և ձեր մեջ չի լինի խավար. և այն մարմինը, որը լցված է լույսով, ^գըմբռնում է բոլոր բաները:

68 Հետևաբար, ^ասրբագործեք ձեզ, որ ձեր ^բմիտքն ուղղված լինի միայն առ Աստված, և օրերը կզան, որ դուք ^գկտեսնեք նրան. քանզի նա ձեզ համար բաց կանի իր երեսի քողը, և դա կլինի իր ժամանակին, և իր ձևով, և ըստ իր կամքի:

69 Հիշեք այն մեծ և վերջին խոստումը, որը ես ձեզ տվեցի. հեռու վանեք ձեզանից ձեր ^ապարապ մտքերն ու չափից շատ ^բծիծաղը:

70 Մնացե՛ք, մնացե՛ք այս վայրում, և կանչեք մի հանդիսավոր ժողով, այսինքն՝ նրանցից, ովքեր այս վերջին բազավորության առաջին մշակներն են:

71 Եվ թող, ում որ նրանք ^ազգուշացրել են իրենց ճամփորդության ժամանակ, կանչեն առ Տերը և մի փոքր ժամանակ խորհրդածեն

61ա ՎևոՒ 76.24:
62ա ՎևոՒ 84.63, 93.45:
բ սուր Խորհել:
գ Ես. ԾԵ.6, Հակ. Ա.5, ՎևոՒ 46.7:
63ա Չաք. Ա.3, Հակ. Գ.8, Հայտ. Գ.20:
բ Ա Մն. ԻԸ.9, Եթեր 12.41, ՎևոՒ 101.38:
գ ՎևոՒ 4.7, 49.26:
64ա սուր Աղոթք:
բ ՎևոՒ 18.18, 46.28–30:

65ա Հակ. Գ.3:
բ ՎևոՒ 63.7–11:
66ա Ես. Խ.3, 1 Նեփի 17.13, Ալմա 5.37–38, ՎևոՒ 128.20:
բ սուր Սուրբ Հոգի. Լույս, Քրիստոսի լույս:
գ սուր Ճշմարտություն:
67ա Մատ. 2.22, Դուկ. ԺԱ.34–36, ՎևոՒ 82.19:
բ Հովհ. Է.18:
գ Առակ. ԻԸ.5,

ՎևոՒ 93.28:
սուր Չանազանելու պարզև:
68ա սուր Սրբագործում:
բ սուր Միտք:
գ ՎևոՒ 67.10–13, 93.1, 97.15–17:
69ա Մատ. ԺԲ.36, Մոսիա 4.29–30, Ալմա 12.14:
բ ՎևոՒ 59.15, 88.121:
71ա սուր Չզուլացնել, Չզուլացում:

իրենց սրտերում այն զգուշացումների մասին, որոնք ստացել են:

72 Ահա, տես, ես հոգ կտանեմ ձեր հոտերի համար, և երեցներ կբարձրացնեմ և կուղարկեմ նրանց մոտ:

73 Ահա, ես կարագացնեմ իմ աշխատանքն իր ժամանակին:

74 Եվ ձեզ, որ առաջին մշակներն եք այս վերջին թագավորության մեջ, ես տալիս եմ պատվիրան, որ դուք հավաքվեք միասին, և կազմակերպեք ձեզ, և պատրաստեք ձեզ, և թորագործեք ձեզ. այո, մաքրագործեք ձեր սրտերը, և մաքրեք ձեր ձեռքերն ու ոտքերն իմ առաջ, որ ես կարողանամ ձեզ մաքուր դարձնել.

75 Որպեսզի ես կարողանամ վկայել ձեր «Հորը, և ձեր Աստծուն, և իմ Աստծուն, որ դուք մաքուր եք այս ամբարիշտ սերնդի արյունից. որ ես կարողանամ իրականացնել այս խոստումը, երբ որ կանենամ, այս մեծ և վերջին խոստումը, որը ես տվեցի ձեզ:

76 Նաև, ես ձեզ տալիս եմ պատվիրան, որ այս ժամանակից ի վեր դուք պետք է շարունակեք «աղոթքով ու թոնով»:

77 Եվ ես ձեզ տալիս եմ պատվիրան, որ դուք միմյանց պետք է «ուսուցանեք արքայության թվարկապետությունը»:

78 Ուսուցանեք ջանասիրաբար,

և իմ «շնորհը կուղեկցի ձեզ, որպեսզի դուք ավելի կատարյալ ձևով թրահանգվեք ավետարանի տեսության, սկզբունքի, վարդապետության և օրենքի մեջ, բոլոր բաներում, որոնք վերաբերում են Աստծո արքայությանը, որոնք նպատակահարմար է, որ դուք հասկանաք.

79 Բաների մասին, որ «երկնքում են, և երկրի վրա, և երկրի տակ. բաներ, որոնք եղել են, որոնք կան, որոնք շուտով պիտի լինեն. բաներ, որոնք տանն են, բաներ, որոնք դրսում են. թպատերազմներն ու հուզումներն ազգերի, և դատաստանները, որոնք երկրի վրա են. և նաև գիտելիք՝ երկրորդների ու թագավորությունների մասին,—

80 Որպեսզի դուք կարողանաք պատրաստ լինել բոլոր բաներում, երբ որ ես կրկին ուղարկեմ ձեզ՝ մեծարելու կոչումը, որին կանչել եմ ձեզ, և առաքելությունը, որով լիազորել եմ ձեզ:

81 Ահա, ես ուղարկել էի ձեզ՝ «վկայելու և զգուշացնելու մարդկանց, և ամեն մարդ, ով զգուշացվել է, պետք է զգուշացնի իր մերձավորին:

82 Հետևաբար, նրանք թողնվել են առանց արդարացման, և նրանց մեղքերն իրենց իսկ գլխին են:

83 Նա, ով «կանուխ թիմորում է

74ա Մատ. Ի.1, 16:
բ Գև. Ի.7–8,
3 Նեփի 19.28–29,
ՎևոՒ 50.28–29, 133.62:
գ սոՒ Մաքուր և
Ամմաքուր:
դ Եթեր 12.37:
75ա սոՒ Աստված,
Աստվածագլուխ –
Աստված Հայրը. Հայր
Երկնային. Մարդ,
Մարդիկ – Մարդը՝

Երկնային Հոր
հոգեղեն զավակ:
76ա սոՒ Աղոթք:
բ սոՒ Ծոմ,
Ծոմապահություն:
77ա սոՒ Ուսուցանել,
Ուսուցիչ:
բ սոՒ Քրիստոսի
վարդապետությունը:
78ա սոՒ Ընդրի:
բ ՎևոՒ 88.118, 90.15,
93.53:

79ա սոՒ Երկինք:
բ սոՒ Պատերազմ:
81ա սոՒ Վկայել:
բ ՎևոՒ 63.58:
սոՒ Զգուշացնել,
Զգուշացում:
83ա Ալմա 37.35:
բ Բ Օր. Դ.29–31,
Երեմ. ԻԹ.12–14,
ՎևոՒ 54.10:

ինձ, կգտնի ինձ, և Տերը չի թողնի նրան:

84 Հետևաբար, մնացեք, և աշխատեք ջանասիրաբար, որ կարողանաք կատարելագործվել ձեր ծառայության մեջ՝ առաջ գնալու ^ահեթանոսների մեջ, վերջին անգամ, բոլոր նրանք, ում որ Տիրոջ բերանը կանվանի, ^բկապելու օրենքն ու կնքելու վկայությունը, և սրբերին նախապատրաստելու դատաստանի ժամվա համար, որը պիտի գա.

85 Որպեսզի նրանց հոգիները կարողանան խույս տալ Աստծո ցասումից, սուկալի ^աավերումից, որը սպասվում է ամբարիշտների, և՛ այս աշխարհում, և՛ գալիք աշխարհում: Դժամարիտ ասում եմ ձեզ. Թող նրանք, ովքեր առաջին երեցները չեն, շարունակեն այգում, մինչև որ Տիրոջ բերանով ^բկկանչվեն, քանի որ նրանց ժամանակը դեռ չի եկել. նրանց հանդերձները ^գմաքուր չեն այս սերնդի արյունից:

86 Մնացեք այն ^աազատության մեջ, որով դուք ^բազատ եք դարձվել. մի ^գխառնվեք ^դմեղքի մեջ, այլ թող ձեր ձեռքերը ^եմաքուր լինեն, մինչև որ Տերը գա:

87 Քանզի շատ օրեր չեն անցնի և ^աԵրկիրը ^բկողոպտ ու կերերա այս ու այն կողմ, ինչպես մի հարբած

մարդ. և ^գարևը կծածկի իր երեսը և կիրաժարվի լույս տալ. և լուսինը կլողա ^դարյան մեջ. և ^եաստղերը խիստ կբարկանան և իրենց ցած կնետեն, ինչպես թուզը, որն ընկնում է թզենուց:

88 Եվ ձեր վկայությունից հետո, ցասում և զայրույթ է գալիս մարդկանց վրա:

89 Քանզի ձեր վկայությունից հետո, գալիս է վկայությունը ^աԵրկրաշարժերով, որի հետևանքով երկիրը կհառաչի իր ներսում, և մարդիկ կընկնեն զետնին և չեն կարողանա կանգնել:

90 Եվ գալիս է նաև վկայությունը որոտների ^աձայնով, և կայծակների ձայնով, և փոթորիկների ձայնով, և իրենց սահմաններից դուրս եկող ծովի ալիքների ձայնով:

91 Եվ բոլոր բաները կլիսեն ^ախառնաշփոթության մեջ. և, անկասկած, մարդկանց սրտերը կնվաղեն. քանզի երկյուղը կպատի բոլոր մարդկանց:

92 Եվ ^ահրեշտակներ պիտի թռչեն երկնքի մեջ, աղաղակելով բարձր ձայնով, հնչեցնելով Աստծո փողը՝ ասելով. Պատրաստվե՛ք, պատրաստվե՛ք, ով երկրի՝ բնակիչներ. քանզի մեր Աստծո դատաստանը եկել է: Ահա, տեսե՛ք, ^բՓեսան գալիս է. դուրս եկեք նրան դիմավորելու:

84աՁՍ-Պ 1.41:
 բ Ես. Ը.16–17:
 85աՄատ. ԻԳ.15:
 բ ՎևՈՒ 11.15:
 գ 1 Նեփի 12.10–11,
 Հակոբ 1.19, 2.2,
 ՎևՈՒ 112.33:
 սոՒ Անարատ,
 Անարատություն:
 86աՄոսիա 5.8:
 սոՒ Անկախություն:
 բ Հովի. Ը.36:

սոՒ Կամքի
 ազատություն, Ազատ,
 Ազատություն:
 գ Գաղ. Ե.1:
 դ սոՒ Մեղք:
 ե Հոբ ԺԷ.9,
 Մաղ. ԻԳ.4,
 Ալմա 5.19:
 87աԵս. ԺԳ.4–13:
 բ ՎևՈՒ 43.18:
 գ Հովել Բ.10,
 ՎևՈՒ 45.42, 133.49:

դ Հայտ. Զ.12:
 ե Հովել Գ.15:
 89աՎևՈՒ 45.33:
 90աՀայտ. Ը.5,
 ՎևՈՒ 43.17–25:
 91աՎևՈՒ 45.26:
 92աՀայտ. Ը.13,
 ՎևՈՒ 133.17:
 բ Մատ. ԻԵ.1–13,
 ՎևՈՒ 33.17, 133.10, 19:

93 Եվ անմիջապես մի մեծ նշան կհայտնվի երկնքում, և բոլոր մարդիկ միասին կտեսնեն այն:

94 Եվ մեկ ուրիշ հրեշտակ պիտի հնչեցնի իր փողը՝ ասելով. Այն մեծ ՚Եկեղեցին՝ պղծությունների հմայրը, որը ստիպել է բոլոր ազգերին խմել իր ՚պոռնկության ցամաք գինուց, որը հալածում է Աստծո սրբերին, որը թափեց նրանց արյունը, – նա, ով նստած է շատ ջրերի վրա և ծովի կղզիների վրա, – ահա, նա ՚որոմներն է երկրի. նա կապված է խրճերով. նրա կապերն ամրացված են՝ ոչ ոք չի կարող արձակել դրանք. հետևաբար, նա պատրաստ է ՚այրվելու: Եվ նա պիտի հնչեցնի իր փողը՝ երկար և բարձր, և բոլոր ազգերը պիտի լսեն այն:

95 Եվ ՚լուրթյուն կլինի երկրնքում, կես ժամ շարունակ. և, անմիջապես, դրանից հետո, երկնքի վարագույրը կբացվի, ինչպես ՚մագաղաթն է փաթաթվելուց հետո բացվում, և Տերը կբացի իր ՚երեսի թողը.

96 Եվ սրբերը, որոնք երկրի վրա են, որոնք ապրում են, կկենդանացվեն և ՚կհափշտակվեն վեր, որ դիմավորեն նրան:

97 Եվ նրանք, ովքեր մնջել են իրենց գերեզմաններում, առաջ ՚կգան, քանզի նրանց գերեզմանները կբացվեն. և նրանք մույնպես

կհափշտակվեն վեր, որ դիմավորեն նրան երկնքի սյունների մեջ, –

98 Նրանք Քրիստոսին են՝ առաջին պտուղները, նրանք, ովքեր առաջինը պիտի իջնեն նրա հետ, և նրանք, ովքեր երկրի վրա են և իրենց գերեզմաններում, ովքեր առաջինն են հափշտակվում վեր, որ դիմավորեն նրան. և այդ բոլորը՝ Աստծո հրեշտակի փող հնչեցնելու ձայնով:

99 Եվ դրանից հետո, մեկ ուրիշ հրեշտակ կհնչեցնի, որը երկրորդ փողն է. և ապա գալիս է փրկագնումը նրանց, ովքեր Քրիստոսին են՝ նրա գալտի ժամանակ. որոնք ստացան իրենց բաժինն այն ՚բանտում, որը պատրաստված է նրանց համար, որպեսզի նրանք ստանան ավետարանը, և ՚դատվեն մարմնի մեջ գտնվող մարդկանց պես:

100 Եվ բացի այդ, մեկ ուրիշ փող պիտի հնչի, որը երրորդ փողն է. և այն ժամանակ գալիս են մարդկանց ՚հոգիները, որոնք պետք է դատվեն, և գտնվեն ՚դատապարտության տակ.

101 Եվ դրանք մնացած մեռելներն են. և նրանք կրկնա չեն ապրի, մինչև որ ՚հազար տարին չլրանա, ոչ էլ կրկին՝ մինչև երկրի վերջը:

102 Եվ մեկ ուրիշ փող պիտի հնչի, որը չորրորդ փողն է՝ ասելով. Նրանց մեջ, ովքեր պիտի մնան

93ա Մատ. ԻԳ.30, Դուկ. ԻԱ.25–27: սուր ժամանակների նշանները:
94ա 1 Նեփի 13.4–9: p սուր Դև – Դևի եկեղեցին:
q Հայտ. ԺԷ.5: η Հայտ. ԺԳ.8: և Մատ. ԺԳ.38: q ՎևոՒ 64.23–24, 101.23–25:

սուր Երկիր – Երկրի մաքրագործումը:
95ա ՎևոՒ 38.12: p Հայտ. Զ.14: q սուր Հիսուս Քրիստոսի երկրորդ գալուստը:
96ա Ա թես. Գ.15–16:
97ա ՎևոՒ 29.13, 45.45–46, 133.56: սուր Հարություն:
98ա Ա Կոր. ԺԵ.23:
99ա ՎևոՒ 76.73, 138.8:

սուր Փրկություն մահացածների համար:
p Ա Պես. Գ.6:
100ա Հայտ. Ի.12–13, Ալմա 11.41, ՎևոՒ 43.18, 76.85: p սուր Դատապարտել, Դատապարտություն:
101ա Հայտ. Ի.5: p սուր Հազարամյակ:

մինչև այդ մեծ և վերջին օրը, այսինքն՝ վերջը, կգտնվեն այնպիսիք, որոնք դեռևս ^ակեղտոտ են:

103 Եվ մեկ ուրիշ փող պիտի հնչի, որը հինգերորդ փողն է, որը հինգերորդ հրեշտակն է, որը հանձնում է ^ահավիտենական ավետարանը,– երկինքների մեջ թռչելով՝ դեպի բոլոր ազգերը, ցեղերը, լեզուները և ժողովուրդները:

104 Եվ սա պիտի լինի նրա փողի հնչումը, ասելով բոլոր մարդկանց, որոնք և՛ երկնքում, և՛ երկրի վրա, և՛ երկրի տակ են,– քանզի ^աամեն ականջ պիտի լսի դա, և ամեն ծունկ պիտի ^բձավի, և ամեն լեզու պիտի խոստովանի, մինչ նրանք լսում են փողի հնչումը, որն ասում է. ^գՎախեցեք Աստծուց, և փառք տվեք նրան, ով նստած է գահին, հավիտյանս հավիտենից. քանզի նրա դատաստանի ժամը եկել է:

105 Եվ բացի այդ, մեկ ուրիշ հրեշտակ պիտի հնչեցնի իր փողը, որը վեցերորդ հրեշտակն է՝ ասելով. ^աԸնկե՛լ է նա, ով բոլոր ազգերին ստիպում էր խմել իր պողոտայի ցամաք գինուց. ընկե՛լ է նա, ընկե՛լ է:

106 Եվ բացի այդ, մեկ ուրիշ հրեշտակ պիտի հնչեցնի իր փողը, որը յոթերորդ հրեշտակն է՝ ասելով. Վերջացա՛վ. վերջացա՛վ: Աստծո ^գԳառը ^բհաղթել է և միայնակ ^գԿոխ տվել զինու հնձանը, այսինքն՝

Ամենագոր Աստծո ցամաք կատաղության զինու հնձանը:

107 Եվ այն ժամանակ պիտի հրեշտակները պակվեն նրա գործության փառքով, և ^աարբերը պիտի լցվեն նրա ^բփառքով, և ստանան իրենց ^գժառանգությունը և ^դհավասարեցվեն նրան:

108 Եվ ապա, առաջին հրեշտակը կրկին կհնչեցնի իր փողը բոլոր ապրողների ականջներում, և ^ահայտնի կդարձնի ^բառաջին հազարամյակի մարդկանց գաղտնի արարքները և Աստծո հզոր գործերը:

109 Եվ ապա, երկրորդ հրեշտակը կհնչեցնի իր փողը և հայտնի կդարձնի մարդկանց գաղտնի արարքները, և նրանց սրտի խորհուրդներն ու մտադրությունները, և Աստծո հզոր գործերը երկրորդ հազարամյակում,–

110 Եվ այդպես շարունակ, մինչև որ յոթերորդ հրեշտակը կհնչեցնի իր փողը. և նա կկանգնի ցամաքի վրա և ծովի վրա, և կերդվի նրա անունով, ով նստած է գահի վրա, որ այլևս ^աժամանակ չի լինի. և ^բՍատանան պիտի կապվի, այն հին օձը, որը դև է կոչվում, և չպիտի արձակվի ^գհազար տարվա ընթացքում:

111 Եվ հետո, նա պիտի ^աարձակվի մի փոքր ժամանակով, որ կարողանա հավաքել իր գորքերը:

102ա սո՛ւ Կեղոս, Կեղտոտություն:
103ա Հայտ. ԺԳ.6–7: սո՛ւ Ավետարանի վերականգնումը:
104ա Հայտ. Ե.13: ^բ Ես. ԽԵ.23, Փիլ. Բ.9–11: ^գ սո՛ւ Վախ – Աստվածավախություն. Պատկառանք:

105ա Հայտ. ԺԳ.8, Վևո՛ւ 1.16:
106ա սո՛ւ Աստծո Գառը: ^բ Ա Կոր. ԺԵ.25: ^գ Ես. ԿԳ.3–4, Հայտ. ԺԹ.15, Վևո՛ւ 76.107, 133.50:
107ա սո՛ւ Սուրբ: ^բ սո՛ւ Սելեստիալ փառք: ^գ սո՛ւ Վեհացում:

^դ Վևո՛ւ 76.95:
108ա Ալմա 37.25, Վևո՛ւ 1.3: ^բ Վևո՛ւ 77.6–7: 110ա Վևո՛ւ 84.100: ^բ Հայտ. Բ.1–3, 1 Նեփի 22.26, Վևո՛ւ 101.28: սո՛ւ Գև: ^գ սո՛ւ Հազարամյակ: 111ա Վևո՛ւ 29.22, 43.30–31:

112 Եվ ՝Միքայելը, յոթերորդ հրեշտակը, այսինքն՝ հրեշտակապետը, ի մի կհավաքի իր զորքերը, այսինքն՝ երկնքի զորքերը:

113 Եվ դևը պիտի հավաքի իր զորքերը. այսինքն՝ դժոխքի զորքերը, և առաջ պիտի գա՝ Միքայելի ու նրա զորքերի դեմ պատերազմելու:

114 Եվ հետո գալիս է մեծ Աստծո ՝պատերազմը. և դևն ու նրա զորքերը դուրս պիտի գցվեն իրենց իսկ տեղը, այնպես որ նրանք այլևս որևէ ձևով զորություն չեն ունենա սրբերի վրա:

115 Որովհետև Միքայելը պիտի պատերազմի նրանց պատերազմները, և պիտի հաղթի նրան, ով ՝փնտրում է գահը նրա, որ նստած է գահին, այսինքն՝ Գառի:

116 Դա է փառքն Աստծո և ՝սրբագործվածների. և նրանք այլևս ՝մահ չեն տեսնի:

117 Հետևաբար, ճշմարիտ ասում են ձեզ, իմ ՝բարեկամներ. Կանչեք ձեր հանդիսավոր ժողովը, ինչպես ձեզ պատվիրեցի:

118 Եվ քանի որ բոլորը չէ, որ հավատք ունեն, ջանասիրաբար փնտրեք և ՝իմաստության խոսքեր ՝ուսուցանեք միմյանց. այո՛, իմաստության խոսքեր փնտրեք լավագույն Պրոֆետից. ուսում փնտրեք, այսինքն՝ ուսումնասիրելով և նաև հավատքով:

119 Կազմակերպվեք. նախա-

պատրաստեք ամեն անհրաժեշտ բան. և հաստատեք մի ՝տուն, այսինքն՝ աղոթքի տուն, ծոմապահության տուն, հավատքի տուն, ուսման տուն, փառքի տուն, կարգ ու կանոնի տուն, Աստծո տուն.

120 Որ ձեր մուտքը լինի Տիրոջ անունով. որ ձեր ելքը լինի Տիրոջ անունով. որ ձեր բոլոր ողջույնները լինեն Տիրոջ անունով՝ դեպի Բարձրյալը պարզած ձեռքերով:

121 Հետևաբար, ՝վերջ տվեք բոլոր ձեր դատարկախոսություններին, ամեն ՝ծիծաղին, բոլոր Պեղծասեր ցանկություններին, ձեր բոլոր ՝հպարտությանը և թեթևատությանը, և ձեր բոլոր ամբարիշտ արարքներին:

122 Ուսուցիչ նշանակեք ձեր մեջ, և թող բոլորը միանգամից խոսնակ չլինեն. այլ տվյալ պահին թող մեկը խոսի, և թող բոլորը լսեն նրա ասածները, որ բոլորի խոսելուց հետո, բոլորը կարողանան միմյանցով շենանալ, և որ ամեն մարդ ունենա հավասար արտոնություն:

123 Տեսեք, որ դուք ՝սիրեք միմյանց, դադարեք ՝ազահ լինել. սովորեք բաժին հանել մեկդ մյուսին, ինչպես պահանջում է ավետարանը:

124 Դադարեք ՝ծույլ լինել. դադարեք անմաքուր լինել. դադարեք սխալներ ՝գտնել միմյանց մեջ. դադարեք քնել ավելի շատ, քան

112ա սուր Միքայել:
114ա Հայտ. ԺԶ.14:
115ա Ես. ԺԳ.12–17,
Մովսես 4.1–4:
116ա սուր Վեհացուն.
Սրբագործում:
բ Հայտ. ԻԱ.4,
Ալմա 11.45, 12.18,
ՎևոՒ 63.49:
սուր Անմահ,

Անմահություն:
117ա ՎևոՒ 109.6:
118ա սուր Իմաստություն:
բ ՎևոՒ 88.76–80:
սուր Ուսուցանել,
Ուսուցիչ:
գ ՎևոՒ 55.4, 109.7, 14:
119ա ՎևոՒ 95.3, 97.10–17,
109.2–9, 115.8:
սուր Տանար՝ Տիրոջ

տուն:
121ա ՎևոՒ 43.34, 100.7:
բ ՎևոՒ 59.15, 88.69:
գ սուր Մարմնակախ:
դ սուր Հպարտություն:
123ա սուր Սեր:
բ սուր Ազահ լինել:
124ա սուր Ծույլ, Ծուլություն:
բ ՎևոՒ 64.7–10:
սուր Չարախոսություն:

անհրաժեշտ է. վաղ մտեք ձեր անկողինը, որպեսզի չհոգնեք. վաղ վեր կացեք, որ ձեր մարմինն ու միտքն առույգ լինեն:

125 Եվ ամեն բանից վեր, ձեր վրա հագեք "գթության կապը, ինչպես մի քիկնոց, որը կատարելության և Պատարհության կապն է:

126 Միշտ "աղոթեք, որպեսզի չմոռացեք, մինչև որ ես ՞գամ: Ահա, տեսե՛ք, ես շուտով գալիս եմ, և ինձ մոտ կառնեմ ձեզ: Ամեն:

127 Եվ բացի այդ, այն տան կարգի վերաբերյալ, որը պատրաստվել է մարգարեների "դպրոցի նախագահության համար, հաստատված՝ նրանց հրահանգների համար, բոլոր բաներում, որոնք նպատակահարմար են նրանց, այսինքն՝ եկեղեցու բոլոր ՞պաշտոնյաների համար, կամ, այլ խոսքով, նրանց, ովքեր ծառայության են կանչվել եկեղեցում, սկսած քահանայապետերից, նույնիսկ մինչև սարկավազները, -

128 Եվ սա պիտի լինի այդ տան կարգը դպրոցի նախագահության համար. նա, ով նշանակված կլինի նախագահ, կամ ուսուցիչ, պետք է գտնվի իր տեղում, այն տանը, որը պատրաստված կլինի նրա համար:

129 Հետևաբար, նա առաջինը պիտի լինի Աստծո տան մեջ, այնտեղ, որտեղ տան ժողովքը կկարողանա ուշադիր և պարզորեն լսել նրա խոսքերը, բայց ոչ բարձր ձայնով:

130 Եվ երբ նա գալիս է Աստծո տուն, քանզի նա պետք է առաջինը

լինի տան մեջ, - ահա, դա գեղեցիկ է, որ նա կարողանա օրինակ լինել, -

131 Թող նա ծնկաչոք աղոթքով "մատուցի իրեն առ Աստված, ի նշան կամ ի հիշատակումն հավիտենական ուխտի:

132 Եվ երբ որևէ մեկը ներս մտնի իրենից հետո, թող ուսուցիչը կանգնի, և, ձեռքերը դեպի երկինք պարզած, այո, այսինքն՝ ուղիղ, ողջունի իր եղբորը կամ եղբայրների՝ հետևյալ խոսքերով.

133 Եղբա՞յր ես, կամ, եղբայրների՞ր եք: Ես ողջունում եմ թե՛՝ Տեր Հիսուս Քրիստոսի անունով, ի նշան կամ ի հիշատակումն հավիտենական ուխտի, ուխտ, որով ես ընդունում եմ թե՛՝ "ընկերակցության՝ հաստատուն, անասան և անփոփոխ վճռականությանը, լիներու քո բարեկամն ու ՞եղբայրը՝ Աստծո շնորհով, սիրո կապով, քայլելու անարատ՝ Աստծո բոլոր պատվիրաններով, գոհաբանությանը, հավիտյանս հավիտենից: Ամեն:

134 Եվ նա, ով անարժան գտնվի այս ողջույնին, տեղ չի ունենա ձեր մեջ. քանզի դուք չպիտի թույլ տաք, որ իմ տունը "պղծվի նրա կողմից:

135 Եվ նա, ով ներս է մտնում և հավատարիմ է իմ առաջ, և եղբայր է, կամ եթե եղբայրներ են, նրանք պետք է ողջունեն նախագահին կամ ուսուցչին՝ ձեռքերը դեպի երկինք պարզած, այս նույն աղոթքով և ուխտով, կամ ասելով՝ Ամեն, ի նշան համաձայնության:

125ա սուր Գթություն:
բ սուր Խաղաղություն:
126ա սուր Աղոթք:
բ ՎԼՈՒ 1.12:
127ա սուր Մարգարեների

դպրոց:
բ սուր Պաշտոն,
Պաշտոնյա:
131ա սուր Երկրպագել:
133ա սուր Ընկերակցել:

բ սուր Եղբայրներ,
Եղբայր. Քույր:
134ա ՎԼՈՒ 97.15-17,
110.7-8:

136 Ահա, ճշմարիտ ասում եմ ձեզ, որ սա օրինակ է ձեզ համար՝ Աստծո տանը, մարգարեների դպրոցում մինչանց ողջունելու համար:

137 Եվ դուք կանչված եք դա անելու աղոթքով և գոհաբանությամբ, ինչպես որ Հոգին ձեզ խսել կտա՝ ձեր բոլոր գործերում, Տիրոջ տանը, մարգարեների դպրոցում, որպեսզի այն դառնա սրբարան, Սուրբ Հոգու խորան՝ ձեր շինության համար:

138 Եվ դուք չպետք է ընդունեք որևէ մեկին ձեր մեջ այս դպրոց, եթե նա մաքուր չէ այս սերնդի ՝արյունից.

139 Եվ նա պիտի ընդունվի ՝ ոտնվալի արարողությամբ, քանզի այս նպատակի համար էր ոտնվալի արարողությունը հաստատվել:

140 Եվ բացի այդ, ոտնվալի արարողությունը պետք է սպասավորվի նախագահի կամ եկեղեցու նախագահող երեցի կողմից:

141 Այն պետք է սկսվի աղոթքով. և հացից ու ջրից ՝ ճաշակելուց հետո, նա պետք է գոտևորվի՝ համաձայն այն ՝ օրինակի, որը տրված է իմ մասին Հովհաննեսի վկայության տասներեքերորդ գլխում: Ամեն:

ԲԱԺԻՆ 89

Հայտնություն տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեի միջոցով, Կիրթլենդում, Օհայո, 1833թ. փետրվարի 27-ին (History of the Church, 1.327–329): Եկեղեցու վաղ շրջանում, եղբայրների կողմից իրենց ժողովների ժամանակ ծխախոտ օգտագործելը Մարգարեին ստիպել էր խորհել այդ հարցի շուրջ. դրա հետևանքով, նա հարցրեց Տիրոջն այդ բանի վերաբերյալ: Արդյունքում եղավ այս հայտնությունը, որը հայտնի է որպես Իմաստության Խոսք: Առաջին երեք հատվածներն ի սկզբանե գրվել են Մարգարեի կողմից, որպես ոգեշնչված նախաբան և նկարագրություն:

1–9՝ Գինու, թունդ խմիչքների, ծխախոտի և տաք ըմպելիքների օգտագործումն արգելվում է. 10–17 Խոտաբույսերը, մրգերը, միսը և հատիկը սահմանված են մարդու և կենդանիների օգտագործման համար. 18–21՝ Ավետարանի օրենքին հնազանդվելը, ներառյալ Իմաստության Խոսքը, բերում է աշխարհիկ և հոգևոր օրհնություններ:

ԻՄԱՍՏՈՒԹՅԱՆ ՄԽՈՍՔ՝ Կիրթլենդում հավաքված քահանայապետերի խորհրդի և եկեղեցու և նաև Սիոնի սրբերի օգտի համար,–

2 Ուղարկված ողջույնով. ոչ պատվիրանով կամ ստիպողաբար, այլ հայտնությունով և իմաստության խոսքով, ցույց տալով կարգը և ՝ կամքն Աստծու՝ վերջին օրերին

137ա Վև.ՈՒ 50.21–24:
138ա Վև.ՈՒ 88.74–75,
84–85:
139ա սոՒ Լվացվել,
Լվացված,

Լվացումներ:
141ա սոՒ Հաղորդություն:
բ Հովհ. ԺԳ.4–17:
89 1ա սոՒ Իմաստության
Խոսք:

2ա Վև.ՈՒ 29.34:
սոՒ Պատվիրաններն
Աստծո:

բոլոր սրբերի ֆիզիկական փրկության վերաբերյալ, -

3 Տրված՝ որպես "խոստումով սկզբունք, թույլերի և ամենաթույլերի կարողությանը հարմարեցված, բոլոր ՚Սրբերի համար, ովքեր կոչվում են և հնարավոր է կոչվեն սրբեր:

4 Ահա, ճշմարիտ, այսպես է Տերն ասում ձեզ. "Չարիքների ու դավադրությունների հետևանքով, որոնք կան և վերջին օրերին կլինեն ՚Պավադիր մարդկանց սրտերում, ես ՚Պզուշացրել եմ ձեզ, և նախագզուշացնում եմ, տալով ձեզ այս իմաստության խոսքը հայտնությամբ, -

5 Որ, որքան որ ձեր մեջ որևէ մեկը խմում է "զիմի կամ թունդ խմիչք, ահա դա լավ չէ, ոչ էլ հաճելի է ձեր Հոր աչքում, բացառությամբ միասին հավաքվելիս՝ ձեր հաղորդությունները նրա առաջ մատուցելու համար:

6 Եվ, ահա, այն պիտի լինի զինի, այո՛, ձեր պատրաստած՝ խաղողի որդի "անարատ զինի,

7 Եվ, բացի այդ, "թունդ խմիչքները որովայնի համար չեն, այլ ձեր մարմինները լվանալու համար են:

8 Եվ բացի այդ, ծխախոտը "մարմնի համար չէ, ոչ էլ որովայնի համար, և այն օգտակար չէ մարդու համար, բայց դեղաբույս է՝ վնասվածքների և բոլոր հիվանդ անասունների համար, որը պետք

է օգտագործվի դատողությամբ և հմտությամբ:

9 Եվ բացի այդ, տաք ըմպելիքները մարմնի կամ որովայնի համար չեն:

10 Եվ բացի այդ, ճշմարիտ ասում եմ ձեզ, որ բոլոր առողջարար "խոտաբույսերն Աստված սահմանել է մարդու կազմության, բնության և օգտագործման համար, -

11 Ամեն խոտաբույս իր եղանակին, և ամեն միջոց իր եղանակին. և դրանք պետք է օգտագործվեն խելամտորեն ու "գոհաբանությամբ:

12 Այո, "միսը նույնպես, ՚կենդանիների ու երկնքի թռչունների, ես՝ Տերս, սահմանել եմ, որ մարդ օգտագործի գոհաբանությամբ. սակայն դրանք պետք է օգտագործվեն ՚խնայողաբար.

13 Եվ հաճելի է ինձ, որ դրանք չօգտագործվեն, բացի այն ժամանակներից, երբ ձնեռ է, կա՛մ ցուրտ է, կա՛մ սով է:

14 Բոլոր "հատիկները սահմանված են մարդու և կենդանիների օգտագործման համար՝ կյանքին նեցուկ լինելու. ոչ միայն մարդու համար, այլ դաշտի կենդանիների և երկնքի թռչունների և բոլոր վայրի կենդանիների համար, որոնք վազում կամ սողում են երկրի վրա.

15 Եվ դրանք Աստված ստեղծել է մարդու օգտագործման համար, միայն այն ժամանակ, երբ սով և ծայրահեղ քաղց է:

<p>3ա ՎևոՒ 89.18-21: բ սոՒ Սուրբ: 4ա սոՒ Խաբկանք, Խաբել, Խաբեություն: բ սոՒ Գաղտնի խմբակցություններ: գ սոՒ Զզուշացնել, Զզուշացում: 5ա Ղև. Ժ.9-11,</p>	<p>Ես. Ե.11-12, Ա Կոր. Զ.10: 6ա ՎևոՒ 27.1-4: 7ա Առակ. Ի.1, ԻԳ.29-35: 8ա Ա Կոր. Գ.16-17: սոՒ Մարմին: 10ա նշ. քույսերը: Ծն. Ա.29, ՎևոՒ 59.17-20:</p>	<p>11ա սոՒ Ընդհակալ, Ընդհակալություն, Գոհաբանություն: 12ա Ծն. Թ.3, Ղև. ԺԱ.1-8: բ Ա Տիմ. Դ.3-4, ՎևոՒ 49.18-21: գ ՎևոՒ 59.20: 14ա Դ.ան. Ա.6-20:</p>
---	--	---

16 Բոլոր հատիկներն օգտակար են մարդու սննդի համար. ինչպես նաև որթի պտուղը. այն, ինչ պտուղ է տալիս՝ թե՛ հողի մեջ, թե՛ հողի վրա,–

17 Այնուամենայնիվ, ցորենը լավ է մարդու համար, եգիպտացորենը՝ եզան, վարսակը՝ ձիու, և աշորան՝ թռչունների ու խոզի և դաշտի բոլոր կենդանիների համար, և գարին՝ բոլոր ընտանի կենդանիների, և թույլ ըմպելիքների համար, ինչպես նաև մյուս հատիկները:

18 Եվ բոլոր սրբերը, ովքեր հիշում

են, որ պահեն և կատարեն այս ասածները, քայլելով պատվիրաններին հնազանդ, կունենան Պառուջություն իրենց պորտում և ծուծ՝ իրենց ոսկորներում.

19 Եվ կգտնեն Պիմաստություն և Քրիստոսյան մեծ զանձեր, մույնիսկ քաքված զանձեր.

20 Եվ կվկազեն ու չեն հոգնի, և կքայլեն ու չեն նվաղի:

21 Եվ ես՝ Տերս, տալիս եմ նրանց Պխոստում, որ կործանիչ հրեշտակը Քլանցնի նրանց կողքով, ինչպես Իսրայելի զավակների, և չի սպանի նրանց: Ամեն:

ԲԱԺԻՆ 90

Հայտնություն՝ տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեին, Կիրթլենդում, Օհայո, 1833թ. մարտի 8-ին (History of the Church, 1.329–331): Այս հայտնությունը հաջորդ քայլն է Առաջին Նախագահության հաստատման ուղղությամբ (տես ս 81-րդ բաժնի նախադրությունը). դրա արդյունքում, նշված խորհրդականները կարգվեցին 1833թ. մարտի 18-ին:

1–5՝ Արքայության բանալիները հանձնվել են Ջոզեֆ Սմիթին և նրա միջոցով Եկեղեցուն. 6–7՝ Միդնի Ռիզորնը և Ֆրեդերիկ Գ. Վիլյամսը պետք է ծառայեն Առաջին Նախագահությունում. 8–11՝ Ավետարանը պետք է քարոզվի Իսրայելի ժողովուրդներին, հեթանոսներին և հրեաներին, և ամեն մարդ պիտի լսի իր իսկ լեզվով. 12–18՝ Ջոզեֆ Սմիթը և նրա խորհրդականները պետք է կարգի բերեն Եկեղեցին. 19–37՝ Տերը մի քանիսի խորհուրդ է տալիս ուղիղ քայլել և ծառայել իր արքայությունում:

ԱՅՄՊԵՍ է ասում Տերը. Ճշմարիտ, ճշմարիտ ասում եմ քեզ՝ որդիս, քո մեղքերը քեզ չենք վաճառում եմ՝ քո խնդրանքի համաձայն, քանզի քո աղոթքները և քո եղբայրների աղոթքները հասել են իմ ականջին:

2 Հետևաբար, այսուհետև դու օրհնված ես, որ կրում ես քեզ տրված արքայության Պբանալիները. Պարքայություն, որը հաստատվում է վերջին անգամ:

3 Ճշմարիտ ասում եմ քեզ, որ այս արքայության բանալիները երբեք քեզանից չեն վերցվի՝ ո՛չ քանի դեռ

18ա Առակ. Գ.8:
19ա սուր Իմաստություն:
բ սուր Գիտություն.
Վկայություն:
20ա Ես. Խ.31:

21ա Վ.և.Ռ 84.80:
բ Ել. ԺԲ.23, 29:
90 1ա սուր Ներել:
2ա Վ.և.Ռ 65.2:
սուր Քահանայության

բանալիները:
բ սուր Աստծո
արքայություն
կամ Երկնքի
արքայություն:

դու աշխարհում ես, ո՛չ էլ գալիք աշխարհում.

4 Այնուամենայնիվ, քո միջոցով պետք է ^ապատգամները տրվեն ուրիշների, այո, այսինքն՝ եկեղեցուն:

5 Եվ բոլոր նրանք, ովքեր ընդունում են Աստծո պատգամները, թող ^ազուշանան, թե ինչպես են պահում դրանք, չլինի թե թեթև քան համարեն, և այդպիսով, դատապարտության տակ ընկնեն և սայթաքեն ու ընկնեն, երբ որ փոթորիկներ բարձրանան և քամիներ փչեն և ^բանձրևներ տեղան ու զարկեն իրենց տներին:

6 Եվ բացի այդ, ճշմարիտ ես ասում եմ քո եղբայրներ Սիդնի Ռիզոլոնին և Ֆրեդերիկ Գ. Վիլյամսին, որ նրանց մեղքերը նույնպես ներված են իրենց, և նրանք քեզ հետ համարվում են հավասար՝ կրելու այս վերջին արքայության բանալիները.

7 Ինչպես և, քո պաշտոնավարությամբ, բանալիները մարգարենների ^ադպրոցի, որը ես պատվիրել եմ, որ կազմակերպվի.

8 Որ դրանով նրանք կարողանան կատարելագործվել իրենց ծառայության մեջ՝ Սիոնի փրկության համար, և Իսրայելի ազգերի, և հեթանոսների, բոլոր նրանց, ովքեր կհավատան.

9 Որ քո պաշտոնավարությամբ նրանք կարողանան ստանալ խոս-

քը, և որ նրանց պաշտոնավարությամբ խոսքն առաջ գնա դեպի աշխարհի ծայրերը՝ ^ասկզբում դեպի ^բհեթանոսները, իսկ հետո, ահա և տե՛ս, նրանք պետք է դառնան դեպի հրեաները:

10 Եվ սպա, գալիս է օրը, երբ Տիրոջ բազուկը ^ակհայտնվի զորությամբ՝ համոզելու ազգերին, հեթանոս ազգերին, ^բՀովսեփի տանը, իրենց փրկության ավետարանի մասին:

11 Քանզի այդ օրը կլինի այնպես, որ ամեն մարդ ^ակլսի ավետարանի լրիվությունն իր լեզվով՝ իր մայրենի լեզվով, նրանց միջոցով, ովքեր ^բկարգված են այդ ^գզորությանը, ^դՄիսիթարիչի սպասավորությամբ, որը կթափվի նրանց վրա Հիսուս Քրիստոսի հայտնության համար:

12 Եվ արդ, ճշմարիտ ասում եմ ձեզ. Ես տալիս եմ ձեզ պատվիրան, որ դուք շարունակեք ^ածառայության և նախագահության մեջ:

13 Եվ երբ որ դուք ավարտեք մարգարենների թարգմանությունը, դրանից հետո դուք պիտի ^անախագահեք եկեղեցու և ^բդպրոցի գործերի վրա.

14 Եվ, ժամանակ առ ժամանակ, ինչպես որ կբացահայտվի Միսիթարիչի կողմից, կստանաք ^ահայտնություններ՝ արքայության ^բխորհուրդները բացելու համար.

15 Եվ կարգի դնելու եկեղեցիներ-

<p>4ա Գոր. Է.38, Հովմ. Գ.2, Եբր. Ե.12, ՎևՈՒ 124.39, 126: սու Մարգարեություն, Մարգարեանալ:</p> <p>5ա ՎևՈՒ 1.14: <i>բ</i> Մատ. Է.26-27:</p> <p>7ա սու Մարգարեների դպրոց:</p> <p>9ա Մատ. ԺԹ.30,</p>	<p>Եթեր 13.10-12: <i>բ</i> 1 Նեփի 13.42, ՎևՈՒ 107.33, 133.8: 10ա ՎևՈՒ 43.23-27, 88.84, 87-92: <i>բ</i> Ծն. ԽԹ.22-26, 1 Նեփի 15.13-14: 11ա սու Միսիոներական աշխատանք: <i>բ</i> սու Կանչ, Աստծո կողմից կանչված,</p>	<p>Կոչում. Կարգել, Կարգում: <i>գ</i> սու Քահանայություն: <i>դ</i> սու Միսիթարիչ: 12ա սու Ծառայել: 13ա ՎևՈՒ 107.91-92: <i>բ</i> սու Մարգարեների դպրոց: 14ա սու Հայտնություն: <i>բ</i> սու Աստծո խորհուրդները:</p>
--	---	--

րը, և "ուսումնասիրելու ու "սովորելու, և ծանոթանալու բոլոր լավ գրքերին և Գլեզուներին, բարբառներին ու ժողովուրդներին:

16 Եվ սա պիտի լինի ձեր գործն ու առաքելությունը, ողջ ձեր կյանքի ընթացքում՝ նախագահել խորհրդով, և կարգի դնել այս եկեղեցու և արքայության բոլոր գործերը:

17 Մի "կաշկանդվեք, ոչ էլ ամաչեք. այլ ընդունեք խրատը բոլոր ձեր մեծամտության և "հպարտության վերաբերյալ, քանզի դրանք որոգայթն են գցում ձեր հոգիները:

18 Կարգի դրեք ձեր տները. ձեզանից հեռու պահեք "ծուլությունն ու "անմաքրությունը:

19 Արդ, ճշմարիտ ասում են քեզ. Թող մի տեղ հատկացվի, որքան հնարավոր է շուտ, քո խորհրդականի ու դպիրի, այսինքն՝ Ֆրեդերիկ Գ. Վիլյամսի ընտանիքի համար:

20 Եվ թող իմ "տարեց ծառան՝ Ջոզեֆ Սմիթ ավագը, շարունակի իր ընտանիքի հետ, այն տեղում, որտեղ այժմ ապրում է. և թող այն չվաճառվի, մինչև որ Տիրոջ բերանով չասվի:

21 Եվ թող իմ խորհրդականը, այսինքն՝ Սիդնի "Ռիզդոնը, մնա այնտեղ, որտեղ այժմ ապրում է, մինչև որ Տիրոջ բերանով չասվի:

22 Եվ թող եպիսկոպոսը ջանասիրաբար փնտրի, որ գտնի մի "գործակալ, և թող դա լինի մի մարդ,

որը "հարատւություններ ունի կուտակած,– Աստծո մարդ և ամուր հավատքով մարդ,–

23 Որ այդպիսով, նա ի վիճակի լինի վճարելու բոլոր պարտքերը. որ Տիրոջ շտեմարանը վատ համբավ ձեռք չբերի ժողովրդի աչքում:

24 Փնտրեք "ջանասիրաբար, "աղոթեք անդադար և եղեք հավատացող, և Գրոյր բաները միաժամանակ կգործեն ձեր բարիքի համար, եթե դուք ուղիղ քայլեք և հիշեք "ուխտը, որով ուխտ եք կապել միմյանց հետ:

25 Թող ձեր ընտանիքները լինեն "փոքր, հատկապես իմ տարեց ծառա Ջոզեֆ Սմիթ ավագինը, ինչ վերաբերում է նրանց, ովքեր չեն պատկանում ձեր ընտանիքին.

26 Որպեսզի այն բաները, որոնք հատկացված են ձեզ, իմ աշխատանքն իրագործելու համար, ձեզանից չվերցվի ու տրվի նրանց, ովքեր արժանի չեն,–

27 Եվ որ դա չխանգարի ձեզ՝ կատարելու այն բաները, որոնք ես պատվիրել եմ:

28 Եվ բացի այդ, ճշմարիտ ասում են ձեզ. Դա իմ կամքով է, որ իմ աղային Վիեննա Հագուեսը դրամ ստանա՝ իր ծախսերը հոգալու համար և գնա Սիոնի հող.

29 Եվ դրամի մնացորդը նվիրաբերի ինձ, և նա իր վարձքը կստանա ինձ հարմար ժամանակ:

30 Ե՛լ ճշմարիտ ասում են ձեզ, որ իմ աչքին հաճելի է, որ նա Սիոնի

15ա ՎևՌՖ 88.76–80, 118, 93.53:
բ ՎևՌՖ 107.99–100, 130.18–19:
գ սոՒ Լեզու:
17ա Հռովմ. Ա.16, 2 Նեփի 6.13:
բ ՎևՌՖ 88.121:
սոՒ Հպարտություն:

18ա ՎևՌՖ 58.26–29:
սոՒ Ծույլ, Ծուլություն:
բ ՎևՌՖ 38.42:
20ա սոՒ Սմիթ Ջոզեֆ կրտսեր:
21ա սոՒ Ռիզդոն Սիդնի:
22ա ՎևՌՖ 84.112–113:
բ Հակոբ 2.17–19:
24ա սոՒ Ջանասիրություն:

բ սոՒ Աղոթք:
գ Եզր. Ը.22, Հռովմ. Ը.28, ՎևՌՖ 100.15, 122.7–8:
դ սոՒ Ուխտ:
25ա նշ. Այն աղքատները, որոնց մասին հոգում էր Ջոզեֆ Սմիթ ավագը:

հող գնա և ժառանգություն ստանա եպիսկոպոսի ձեռքից.

31 Որ նա կարողանա բնակվել խաղաղությամբ, որքան որ նա հավատարիմ է, և դրանից հետո ծույլ չլինի իր օրերում:

32 Եվ ահա, ճշմարիտ ասում են ձեզ, որ դուք պետք է գրի առնեք այս պատվիրանը, և ասեք Սիոնի ձեր եղբայրներին, սիրո ողջույնով, որ ես ձեզ կանչել եմ՝ մնախազահելու նաև Սիոնի վրա՝ ինձ հարմար ժամանակ:

33 Հետևաբար, թող նրանք դադարեն ինձ հոգնեցնել այս հարցի վերաբերյալ:

34 Ահա, ես ասում եմ ձեզ, որ Սիոնի ձեր եղբայրները սկսում

են ապաշխարել, և հրեշտակները ցնծում են նրանց համար:

35 Այնուամենայնիվ, շատ բաներից ես գոհ չեմ. և ես գոհ չեմ իմ ծառա՝ Վիլյամ Ի. Մակելլիմից, ոչ էլ իմ ծառա Սիդնի Գիլբերտից. և եպիսկոպոսը, և մյուսները ևս շատ բաներ ունեն, որոնցից պետք է ապաշխարեն:

36 Բայց ճշմարիտ ասում եմ ձեզ, որ ես՝ Տերս, պիտի վիճաբանեմ Սիոնի հետ, և աղերսեմ նրա ուժեղներին, և պիտի յխրատեմ նրան, մինչև որ նա հաղթի և Գմաքրվի իմ առաջ:

37 Քանզի նա չպետք է իր տեղից շարժվի: Ես՝ Տերս եմ ասել դա: Ամեն:

ԲԱԺԻՆ 91

Հայտնություն տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեի միջոցով, Կիրթենդում, Օհայո, 1833թ. մարտի 9-ին (History of the Church, 1.331–332): Այդ օրերին Մարգարեն զբաղված էր Հին Կտակարանի թարգմանությամբ: Հասնելով հնադարյան այն գրություններին, որոնք հայտնի են որպես Պարականոն գրքեր, նա հարցրեց Տիրոջն ու ստացավ հետևյալ հրահանգը:

1–3՝ Պարականոն գրքերը հիմնականում ճիշտ են թարգմանված, սակայն մարդկանց ձեռքով արված շատ ընդմիջարկումներ են պարունակում, որոնք ճշմարիտ չեն. 4–6՝ Դրանք օգտակար են Հոգով լուսավորվածներին:

ՃՇԱՐԻՏ, այսպես է Տերը ձեզ ասում՝ պարականոն գրքերի վերաբերյալ, – Դրանցում շատ բաներ կան, որոնք ճշմարիտ են, և հիմնականում ճիշտ են թարգմանված.

2 Դրանցում կան շատ բաներ,

որոնք ճշմարիտ չեն, որոնք մարդկանց ձեռքով արված ընդմիջարկումներ են:

3 Դճմարիտ ասում եմ ձեզ. Կարիք չկա, որ պարականոն գրքերը թարգմանվեն:

4 Հետևաբար, նա, ով կարդում է դրանք, թող՝ հասկանա, քանզի Հոգին հայտնում է ճշմարտությունը.

5 Եվ նա, որ լուսավորված է ՝ Հոգով, օգուտ կբաղի դրանցից.

6 Իսկ նա, ով Հոգով չի ստանում, չի կարողանա օգուտ քաղել: Հետևաբար, կարիք չկա, որ դրանք թարգմանվեն: Ամեն:

32ա Վ.Լ.ՈՒ 10791–92:
35ա Վ.Լ.ՈՒ 66.1, 75.6–9:
36ա սուր Սիոն:
բ սուր Խրատել,

Խրատելը:
գ սուր Ամարատ,
Ամարատություն:
91 1ա սուր Պարականոն

գրքեր:
4ա սուր Հասկանալ:
5ա սուր Սուրբ Հոգի.
Ոգեչնչում, Ոգեչնչել:

ԲԱԺԻՆ 92

Հայտնություն տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեին, Կիրթլենդում, Օհայո, 1833թ. մարտի 15-ին (History of the Church, 1.333): Այս հայտնությունն ուղղված էր Ֆրեդերիկ Գ. Վիլյամսին, որը վերջերս խորհրդական էր նշանակվել Առաջին Նախագահությունում:

1–2՝ Տերը պատվիրան է տալիս Միացյալ Միաբանության մեջ ընդունվելու վերաբերյալ:

ԱՇՄԱՐԻՏ, այսպես է ասում Տերը. Ես մի հայտնություն և պատվիրան եմ տալիս միացյալ միաբանությանը, որը կազմակերպվել է նախկինում տրված պատվիրանի համաձայն, իմ ծառա Ֆրեդերիկ Գ. Վիլյամսի վերաբերյալ, որ դուք պետք է նրան

վերցնեք միաբանության մեջ: Այն, ինչ ես ասում եմ մեկին, ասում եմ բոլորին:

2 Եվ բացի այդ, ես ասում եմ քեզ, իմ ծառա՝ Ֆրեդերիկ Գ. Վիլյամս, որ դու գործունյա անդամ պետք է լինես այդ միաբանության մեջ. և որքան որ հավատարիմ լինես նախկին բոլոր պատվիրանները պահելիս, դու հավիտյան պիտի օրհնվես: Ամեն:

ԲԱԺԻՆ 93

Հայտնություն տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեի միջոցով, Կիրթլենդում, Օհայո, 1833թ. մայիսի 6-ին (History of the Church, 1.343–346):

1–5 Բոլոր հավատարիմները կոտենեն Տիրոջը. 6–18՝ Հովհաննեսը վկայել է, որ Աստծո Որդին անցավ շնորհից շնորհ, մինչև որ ստացավ Հոր փառքի լիությունը. 19–20՝ Հավատարիմ մարդիկ, անցներով շնորհից շնորհ, նույնպես կստանան նրա լիությունը. 21–22՝ Նրանք, ովքեր ծնվել են Քրիստոսի միջոցով, Անդրանիկի Եկեղեցին են. 23–28՝ Քրիստոսն ստացավ ողջ ճշմարտության լրիվությունը, և մարդը, հնազանդության միջոցով, կարող է ստանալ նույնը. 29–32՝ Մարդն ի սկզբանե Աստծո հետ էր. 33–35՝ Տարբերը հավերժական

են, և Հարության միջոցով մարդ կարող է ստանալ ուրախության լիությունը. 36–37՝ Աստծո փառքը բանականություն է. 38–40՝ Քրիստոսի փրկագնման շնորհիվ, երեսներն անմեղ են Աստծո առաջ. 41–53՝ Ղեկավարող եղբայրներին պատվիրվում է կարգ հաստատել իրենց ընտանիքներում:

ԱՇՄԱՐԻՏ, այսպես է ասում Տերը. Կլինի այնպես, որ ամեն հոգի, որ չթողնում է իր մեղքերը և գալիս է ինձ մոտ, և Քկանչում է իմ անունը, և Գնազանդվում է իմ ձայնին, և պահում է իմ պատ-

92 1ա ՎևՈՒ 82.11, 15–21: սոՒ Միացյալ Միաբանություն: 93 1ա սոՒ Ապաշխարել,

Ապաշխարություն. Արժանի, Արժանավորություն: p Հոով է.32:

q սոՒ Հնազանդություն, Հնազանդ, Հնազանդվել:

վիրանները, պիտի ²տեսնի իմ ⁶երեսը և իմանա, որ ես եմ.

2 Եվ որ ես եմ ճշմարիտ ³լույսը, որը լուսավորում է ամեն մարդու, ով գալիս է աշխարհ.

3 Եվ որ ես Հոր ⁴մեջ եմ, և Հայրը՝ իմ մեջ, և Հայրը և ես մեկ ենք,–

4 Հայրը, ⁵որովհետև նա ⁶սովեց ինձ իր լիությունից, և Որդին, որովհետև ես աշխարհում էի և ⁷մարմինը դարձրի իմ խորանը, և բնակվեցի մարդկանց որդիների մեջ:

5 Ես աշխարհում էի և ստացա իմ Հորից, և նրա ⁶գործերը պարզորոշ դրսևորվեցին:

6 Եվ ⁷Հովհաննեսը տեսավ և վկայեց իմ ⁸փառքի լիության մասին, և ⁹Հովհաննեսի արձանագրության լրիվությունն ապագայում պիտի հայտնվի:

7 Եվ նա վկայեց՝ ասելով. Ես տեսա նրա փառքը, որ նա կար ի ²սկզբանե՝ նախքան աշխարհի լինելը.

8 Հետևաբար, ի սկզբանե էր ⁹Բանը, քանզի նա էր Բանը, այսինքն՝ փրկության բանբերը,–

9 ¹Լույսը և ²Քավիչն աշխարհի. ճշմարտության Հոգին, որը եկավ աշխարհ, որովհետև աշխարհը

նրանով էր արարվել, և նրանում էր մարդկանց կյանքը և մարդկանց լույսը:

10 Աշխարհներն ¹արարվել էին նրանով. մարդիկ արարվել էին նրանով. բոլոր բաներն արարվել էին նրանով, և նրա միջոցով, և նրանից:

11 Եվ ես՝ Հովհաննեսս, վկայում եմ, որ տեսա նրա փառքը, ինչպես փառքը Հոր Միածնի, շնորհով և ճշմարտությամբ լի, այսինքն՝ ճշմարտության Հոգին, որը եկավ ու բնակվեց մարմնում և բնակվեց մեր մեջ:

12 Եվ ես՝ Հովհաննեսս, տեսա, որ նա ²լիությունը չստացավ սկզբում, այլ ստացավ ³շնորհի՝ շնորհի տեղ.

13 Եվ նա լիությունը չստացավ սկզբում, այլ շարունակեց՝ ⁴շնորհից շնորհ, մինչև որ ստացավ լիությունը.

14 Եվ այդպես, նա կոչվեց Աստծո ⁵Որդի, որովհետև չստացավ լիությունը սկզբում:

15 Եվ ես՝ ⁶Հովհաննեսս, վկայում եմ, և ահա, երկինքները բացվեցին, և ⁷Սուրբ Հոգին իջավ նրա վրա ⁸աղավնու տեսքով և նստեց նրա վրա, և մի ձայն եկավ երկնքից՝ ասելով. Սա է իմ ⁹սիրելի Որդին:

1η Ել. Լ.Գ.11,
 Վև.ՈՒՒ 38.7-8,
 67.10-12, 88.68,
 101.23, 130.3:
 սուր Մխիթարիչ:
 և ՋՍԹ, Ա Հովհ. 4.12:
 2ա Հովհ. Ա.4-9,
 Վև.ՈՒՒ 14.9, 84.45-47,
 88.6-7:
 սուր Լույս, Քրիստոսի
 լույս:
 3ա Հովհ. Ժ.25-38,
 ԺԷ.20-23,
 Վև.ՈՒՒ 50.43-45:
 4ա Մոսիս 15.1-7:
 p սուր Հիսուս Քրիստոս
 – Իշխանությունը:

q Դուկ. Ա.26-35,
 Բ.4-14,
 3 Նեպի 1.12-14,
 Եթեր 3.14-16:
 5ա Հովհ. Ե.36, Ժ.25,
 ԺԳ.10-12:
 6ա Հովհ. Ա.34:
 p սուր Հիսուս Քրիստոս –
 Հիսուս Քրիստոսի
 փառքը:
 q Հովհ. Ի.30-31:
 7ա Հովհ. Ա.1-3, ԺԳ,
 ԺԷ.5, Վև.ՈՒՒ 76.39:
 8ա սուր Հիսուս Քրիստոս.
 Եհովա:
 9ա սուր Լույս, Քրիստոսի
 լույս:

p սուր Քավիչ:
 10ա Եբր. Ա.1-3,
 Վև.ՈՒՒ 76.24,
 Մովսես 1.31-33:
 12ա Փիլ. Բ.6-11:
 p Հովհ. Ա.16-17:
 13ա Դուկ. Բ.52:
 14ա Դուկ. Ա.31-35,
 Վև.ՈՒՒ 6.21:
 սուր Աստված,
 Աստվածագլուխ –
 Աստված Որդին:
 15ա Հովհ. Ա.29-34:
 p սուր Սուրբ Հոգի:
 q սուր Աղավնու նշանը:
 η Մատ. Գ.16-17:

16 Եվ ես՝ Հովհաննեսս, վկայում եմ, որ նա ստացավ Հոր փառքի լիությունը.

17 Եվ նա ստացավ ^աողջ ^բգորությունը և՛ երկնքում, և՛ երկրի վրա, և ^գՀոր փառքը նրա հետ էր, քանզի նա բնակվում էր նրանում:

18 Եվ կլինի այնպես, որ եթե դուք հավատարիմ եք, դուք կստանաք Հովհաննեսի արձանագրության լրիվությունը:

19 Ես տալիս եմ ձեզ այս խոսքերը, որ կարողանաք հասկանալ և իմանալ, թե ինչպես պիտի ^աերկրրպագեք, և իմանաք, թե ում եք երկրպագում, որ կարողանաք գալ Հոր մոտ, իմ անունով, և իր ժամանակին ստանաք նրա լիությունը:

20 Քանզի եթե դուք պահեք իմ ^ապատվիրանները, դուք կստանաք նրա ^բլիությունը, և ^գկփառավորվեք ինձանով, ինչպես որ ես եմ փառավորվել Հորով. հետևաբար, ես ասում եմ ձեզ, որ դուք կստանաք ^դշնորհ՝ շնորհի տեղ:

21 Եվ արդ, ճշմարիտ ասում եմ ձեզ. Ես ^ասկզբում Հոր մոտ էի, և ^բԱնդրանիկն եմ.

22 Եվ բոլոր նրանք, ովքեր ծնվել են իմ միջոցով, իմ ^ափառքի

^բճաշակողներն են և Անդրանիկի եկեղեցին:

23 Դուք նույնպես սկզբում Հոր ^ամոտ էիք. այն էիք, որ Հոգի է, այսինքն՝ ճշմարտության Հոգին.

24 Եվ ^աճշմարտությունը ^բգիտություն է բաների մասին, ինչպես որ կան, և ինչպես որ կային, և ինչպես որ կլինեն.

25 Եվ ինչ որ սրանից ^աավել կան պակաս է, այն ամբարիշտ մեկի ոգին է, որն ի սկզբանե ^բստախտս էր:

26 ^աՃշմարտության Հոգին Աստծուց է: Ես եմ ճշմարտության Հոգին, և Հովհաննեսը վկայեց իմ մասին՝ ասելով. Նա ստացավ ճշմարտության լրիվությունը, այո, այսինքն՝ ողջ ճշմարտության.

27 Եվ ոչ մի մարդ չի ստանում ^ալրիվությունը, մինչև չի պահում նրա պատվիրանները:

28 Նա, ով ^ապահում է նրա պատվիրանները, ստանում է ճշմարտություն և ^բլույս, մինչև որ փառավորվի ճշմարտությամբ և ^գԳիմանա բոլոր բաները:

29 Մարդը նույնպես ^ասկզբում Աստծո մոտ էր: ^բԲանականությունը, կամ ճշմարտության լույսը, չի

17ա Մատ. ԻԸ.18, Հովհ. ԺԷ.2, Ա Պետ. Գ.22:
բ սո՛ւ Հիսուս Քրիստոսս – Իշխանությունը. Չորություն:
գ սո՛ւ Աստված, Աստվածագլուխ – Աստված Հայրը:
19ա Հովհ. Դ.21–26, ԺԷ.3, Գոր. ԺԷ.22–25: սո՛ւ Երկրպագել:
20ա Վևո՛ւ 50.28:
բ Հովհ. Ա.16, Վևո՛ւ 84.36–39:
գ Հովհ. ԺԷ.4–5, 22: սո՛ւ Մարդ, Մարդիկ –

Մարդ՝ Երկնային Հոր նման դառնալու ներուժը:
դ սո՛ւ Ընորհ:
21ա Հովհ. Ա.1–2, Ա Պետ. Ա.19–20, Մովսես 4.2:
բ սո՛ւ Առաջնել:
22ա սո՛ւ Մեղստիպ փառք:
բ Ա Պետ. Ե.1, Վևո՛ւ 133.57:
23ա սո՛ւ Մարդ, Մարդիկ – Մարդը՝ Երկնային Հոր հոգեղեն զավակ:
24ա սո՛ւ Ճշմարտություն:
բ սո՛ւ Գիտություն:
25ա Վևո՛ւ 20.35:
բ Հովհ. Ը.44,

2 Նեփի 2.18, Մովսես 4.4:
26ա Հովհ. ԺԴ.6:
27ա սո՛ւ Կատարյալ:
28ա սո՛ւ Հնազանդություն, Հնազանդ, Հնազանդվել:
բ Վևո՛ւ 50.24, 84.45: սո՛ւ Լույս, Քրիստոսի լույս:
գ Հովհ. ԺԷ.3, Վևո՛ւ 88.49, 67:
29ա Աբբ. 3.18: սո՛ւ Նախամահկացու կյանք. Մարդ, Մարդիկ:
բ սո՛ւ Բանականություն, Բանականություններ:

ստեղծվել կամ արարվել, ոչ էլ իրականում կարող է:

30 Ամեն ճշմարտություն անկախ է այն ոլորտում, որտեղ Աստված դրել է, որ այն "ինքնուրույն գործի, ինչպես նաև ամեն բանականություն. այլապես չկա գոյություն:

31 Ահա, դրանում է մարդու "կամքի ազատությունը, և դրանում է մարդու դատապարտությունը. որովհետև այն, ինչ ի սկզբանե եղել է, "պարզորոշ հայտնի է դարձված նրանց, և նրանք չեն ընդունում լույսը:

32 Եվ ամեն մարդ, որի ոգին չի ընդունում "լույսը, դատապարտության տակ է:

33 Զանգի մարդը "ոգի է: "Տարբերը հավերժական են, և ոգին ու տարրը, անբաժանելիորեն միացած, ստանում են ուրախության լիությունը:

34 Եվ երբ "բաժանված են, մարդը չի կարող ստանալ "ուրախության լիությունը:

35 "Տարբերն Աստծո խորանն են. այո, մարդն Աստծո խորանն է, այսինքն՝ "տաճարները. և ամեն

տաճար, որը պղծված է, Աստված կկործանի այն տաճարը:

36 Աստծո "փառքը "բանականություն է, կամ, այլ խոսքով, "լույս և ճշմարտություն:

37 Լույսը և ճշմարտությունը լքում են այն "չարագործին:

38 Ամեն մարդու ոգի սկզբում "ամմեղ էր. և Աստծո կողմից մարդուն "անկումից "փրկագնելու շնորհիվ, մարդիկ կրկին, իրենց մանկության մեջ, "ամմեղ դարձան Աստծո առաջ:

39 Եվ այն չարագործը գալիս և "վերցնում է լույսն ու ճշմարտությունը մարդկանց զավակներից, անհնազանդության միջոցով, և նրանց հայրերի "ավանդությունների պատճառով:

40 Բայց ես պատվիրել եմ ձեզ՝ մեծացնել ձեր "երեխաներին լույսի և ճշմարտության մեջ:

41 Բայց ճշմարիտ ասում եմ քեզ, իմ ծառա՝ Ֆրեդերիկ Գ. Վիլյամս, դու շարունակում ես այս դատապարտության տակ:

42 Դու քո երեխաներին լույս և ճշմարտություն չես "ուսուցանում՝ պատվիրանների համաձայն. և այն

30ա2 Նեփի 2.13-27:

31ա սուր Կամքի

ազատություն:

բ Բ Օր. Լ.11-14,

ՎևՈՒ 84.23-24:

32ա սուր Լույս, Քրիստոսի լույս. ճշմարտություն:

33ա ՎևՈՒ 772,

Աբր. 5.7-8:

սուր Մարդ, Մարդիկ – Մարդը՝ Երկնային

Հոր հոգեղեն զավակ:

բ ՎևՈՒ 131.7-8, 138.17:

սուր Հարություն:

34ա2 Նեփի 9.8-10:

բ սուր Ուրախություն:

35ա ՎևՈՒ 130.22:

բ Ա Կոր. Գ.16-17:

36ա սուր Փառք, Հիսուս

Քրիստոս – Հիսուս

Քրիստոսի փառքը:

բ ՎևՈՒ 130.18-19,

Աբր. 3.19:

սուր Բանականություն, Բանականություններ:

գ ՎևՈՒ 88.6-13:

37ա Մովսես 1.12-16:

սուր Գև:

38ա սուր Ամմեղություն,

Ամմեղ:

բ սուր Ադամի և Եվայի

անկումը:

գ Մոսիս 27.24-26,

Մովսես 5.9, ՀՀ 1.3:

սուր Փրկագնել,

Փրկագնված,

Փրկագնում:

դ Մոր. 8.8, 12, 22,

ՎևՈՒ 29.46-47:

սուր Փրկություն – Երեխաների

փրկությունը:

39ա Մատ. ԺԳ.18-19,

Բ Կոր. Դ.3-4,

Ալմա 12.9-11:

բ Եգեկ. Ի.18-19,

Ալմա 3.8:

սուր Ավանդություններ:

40ա սուր Ընտանիք – Ծնողների պարտա-

կանությունները:

42ա Ա Թագ. Գ.11-13,

ՎևՈՒ 68.25-31:

չարագործը դեռևս գործություն ունի քո վրա, և դա է քո չարչարանքի պատճառը:

43 Եվ այժմ ես տալիս եմ քեզ մի պատվիրան, – եթե դու կամենում ես ազատվել, ապա ^ակարգի բեր քո սեփական տունը, որովհետև քո տանը շատ բաներ կան, որոնք ճիշտ չեն:

44 Ճշմարիտ, ես ասում եմ իմ ծառա Սիդնի Ռ-իգոդնին, որ որոշ բաներում նա չի պահել իմ պատվիրաններն իր երեխաների վերաբերյալ. ուստի, նախ կարգի բեր քո տունը:

45 Ճշմարիտ, ես ասում եմ իմ ծառա Ջոզեֆ Սմիթ կրտսերին, կամ այլ խոսքով, ես ձեզ կկոչեմ ^աբարեկամներ, քանզի դուք իմ բարեկամներն եք, և դուք ժառանգություն պիտի ունենաք ինձ հետ, –

46 Ես ձեզ կոչել եմ ^ածառաներ հանուն աշխարհի, և դուք նրանց ծառաներն եք հանուն ինձ, –

47 Եվ արդ, ճշմարիտ ես ասում եմ Ջոզեֆ Սմիթ կրտսերին, – Դու չես պահել պատվիրանները և անպայման պետք է ^ակշտամբվես՝ Տիրոջ առաջ կանգնելով.

48 Քո ^աընտանիքն անպայման պետք է ապաշխարի և հրաժարվի որոշ բաներից, և ավելի լրջորեն ուշք դարձնի քո ասածներին, թե չէ կհանվի իր տեղից:

49 Այն ինչ ես ասում եմ մեկին, ասում եմ բոլորին. միշտ ^աաղոթիր, չլինի թե այն չարագործը գորու-

թյուն ունենա քո վրա, և հանի քեզ քո տեղից:

50 Իմ ծառա Նյուել Ք. Ուիթնին՝ իմ եկեղեցու եպիսկոպոսը ևս կարիք ունի խրատվելու և կարգի բերելու իր ընտանիքը, և հետևելու, որ նրանք ավելի ջանասեր լինեն և մտահոգվեն տան համար, և միշտ աղոթեն, թե չէ նրանք կհանվեն իրենց ^ատեղից:

51 Արդ, ես ասում եմ ձեզ, իմ բարեկամներ. Թող իմ ծառա Սիդնի Ռ-իգոդնը ճանապարհ ընկնի և արագացնի, և նաև հռչակի Տիրոջ ^աընդունելի տարին և փրկության ավետարանը, ինչպես որ կխոսեցնեմ նրան. և ձեր հավատքի միաբան աղոթքով ես կաջակցեմ նրան:

52 Եվ բող իմ ծառաներ Ջոզեֆ Սմիթ կրտսերը և Ֆրեդերիկ Գ. Վիլյամսը նույնպես արագացնեն, և նրանց կտրվի ըստ հավատքի աղոթքի. և որքան որ պահեք իմ ասածները, դուք չեք կործանվի ո՛չ այս աշխարհում, ո՛չ էլ գալիք աշխարհում:

53 Եվ, ճշմարիտ ասում եմ ձեզ, որ դա իմ կամքով է, որ դուք արագացնեք ^աթարգմանել իմ սուրբ գրքերը և ^բգիտելիք ^գստանաք պատմության մասին և երկրների մասին և թագավորությունների մասին, Աստծո և մարդկանց օրենքների մասին, և այդ բոլորը՝ Սիոնի փրկության համար: Ամեն:

43ա Ա Տիմ. Գ.4–5:
45ա ՎևՈՒ 84.63, 88.62:
46ա Ղև. ԻԵ.55,
1 Նեփի 21.3–8:
սուր Ծառայություն:
47ա ՎևՈՒ 95.1–2:
սուր Խրատել,

Խրատելը:
48ա սուր Ընտանիք –
Երեխայի պարտականությունները:
49ա 3 Նեփի 18.15–21:
50ա ՎևՈՒ 64.40:
51ա Ղուկ. Գ.19:

53ա սուր Ջոզեֆ Սմիթի
թարգմանություն
(ՉՍԹ):
բ սուր Գիտություն:
գ ՎևՈՒ 88.76–80, 118:

ԲԱԺԻՆ 94

Հայտնություն տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեի միջոցով, Կիրթլենդում, Օհայո, 1833թ. մայիսի 6-ին (History of the Church, 1.346-347): Հայրում Սմիթը, Ռեյնոլդս Քահունը և Ջարեդ Քարտերը նշանակվում են, որպես Եկեղեցու շինարարական հանձնախումբ:

1-9՝ Տերը պատվիրան է տալիս Նախագահության գործի համար մի տուն կառուցելու մասին. 10-12՝ Մի տպարան պետք է կառուցվի. 13-17՝ Նշանակվում են որոշակի ժառանգություններ:

ԵՎ կրկին, ճշմարիտ ասում են ձեզ, իմ քարեկամներ, ես ձեզ մի պատվիրան եմ տալիս, որ դուք պետք է սկսեք մախագծել և մախապատրաստել Սիոնի քաղաքի սկիզբն ու հիմնադրումը, այստեղ՝ Կիրթլենդի հողում, սկսելով իմ տնից:

2 Եվ ահա, այն պետք է արվի այն քարեկանի համապատասխան, որը ես տվել եմ ձեզ:

3 Եվ թող հարավի առաջին հողաբաժինը նվիրաբերվի ինձ, որպեսզի մի տուն կառուցվի մախագահության համար՝ մախագահության գործերի համար՝ հայտնություններ ստանալու համար. և քաղաքագահության ծառայության գործի համար՝ եկեղեցուն և թագավորությանը պատկանող բոլոր բաներում:

4 Ընծարիտ ասում եմ ձեզ, որ այն պետք է կառուցվի հիսունհինգ ոտնաչափ լայնությամբ և վաթսունհինգ ոտնաչափ երկարությամբ ներսի գավիթով:

5 Եվ պիտի լինի ստորին գավիթ և վերին գավիթ՝ այն օրինակի համաձայն, որը ձեզ կտրվի ապագայում:

6 Եվ այն պիտի նվիրաբերվի Տիրոջը, հիմքից սկսած, քահանայության կարգի համաձայն, այն օրինակի համաձայն, որը ձեզ կտրվի ապագայում:

7 Եվ այն ամբողջությամբ պիտի նվիրաբերվի Տիրոջը՝ մախագահության գործի համար:

8 Եվ դուք բույլ չէք տա, որ որևէ անմաքուր բան ներս մտնի այնտեղ. և իմ փառքը կլինի այնտեղ, և իմ ներկայությունը կլինի այնտեղ:

9 Բայց եթե այնտեղ մի անմաքուր բան մտնի, իմ փառքը չի լինի այնտեղ. և իմ ներկայությունը չի լինի այնտեղ:

10 Եվ բացի այդ, ճշմարիտ ասում եմ ձեզ, որ հարավի երկրորդ հողաբաժինը պիտի նվիրաբերվի ինձ, որ ինձ համար մի տուն կառուցվի, որպեսզի տպագրվի իմ սուրբ գրքերի քարոզմանությունը, և բոլոր բաները, ինչ որ ես կպատվիրեմ ձեզ:

11 Եվ այն պիտի լինի հիսունհինգ ոտնաչափ լայնությամբ և վաթսունհինգ ոտնաչափ երկարությամբ ներսի գավիթով. և պիտի լինի ստորին և վերին գավիթ:

94 1ա ՎևՈՒ 93.45:
բ սու՛ Յից:
2ա ՎևՈՒ 52.14-15:
3ա ՎևՈՒ 107.9, 22:
8ա Ղուկ. ԺԹ. 45-46,

ՎևՈՒ 109.16-20:
բ Գ. Թագ. Ը.10-11:
սու՛ Փառք:
9ա ՎևՈՒ 97.15-17:
10ա ՎևՈՒ 104.58-59:

բ սու՛ Ջոզեֆ Սմիթի քարոզմանություն (ՋՍԹ):

12 Եվ այդ տունն ամբողջությամբ պիտի նվիրագործվի Տիրոջը, հիմքից սկսած՝ տպագրական աշխատանքի համար, բոլոր բաների համար, որոնք ես կպատվիրեմ ձեզ, որ բոլոր բաներում սուրբ և անապական լինի՝ համաձայն այն օրինակի, որը կտրվի ձեզ:

13 Եվ երբորդ հողաբաժնի վրա իմ ծառա Հայրում Սմիթը պիտի ստանա իր ժառանգությունը:

14 Եվ հյուսիսում՝ առաջին և երկրորդ հողաբաժնի վրա, իմ ծառաներ Ռեյնոլդս Քահունն ու

Ջարեդ Քարտերը պիտի ստանան իրենց ժառանգությունները,–

15 Որպեսզի նրանք կարողանան կատարել այն աշխատանքը, որին նշանակել եմ նրանց, որ հանձնախումբ կազմեն իմ տները կառուցելու համար, համաձայն այն պատվիրանի, որը ես՝ Տեր Աստվածս, տվել եմ ձեզ:

16 Այդ երկու տները չպետք է կառուցվեն, մինչև որ դրանց վերաբերյալ ես ձեզ պատվիրան չտամ:

17 Եվ արդ, ավելին ես ձեզ չեմ տալիս այժմ: Ամեն:

ԲԱԺԻՆ 95

Հայտնություն տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեի միջոցով, Կիրթլենդում, Օհայո, 1833թ. հունիսի 1-ին (History of the Church, 1.350–352): Այս հայտնությունը շարունակությունն է աստվածային ցուցումների տներ կառուցել երկրպագության և հրահանգների համար, մասնավորապես Տիրոջ տունը (տե՛ս բաժին 88.119–136 և բաժին 94):

1–6՝ Սրբերը խրատվում են Տիրոջ տան կառուցումն ընդհատելու համար. 7–10՝ Տերը ցանկանում է օգտագործել իր տունը՝ իր ժողովրդին բարձրից զորությամբ օժտելու համար. 11–17՝ Տունը պետք է նվիրագործվի, որպես երկրպագության վայր և դպրոց՝ Առաքյալների համար:

ԱՇՄԱՐԻՏ, այսպես է ասում Տերը ձեզ, ում ես սիրում եմ, և ում որ սիրում եմ, ես նաև Մխրատում եմ, որ նրանց մեղքերը թնրվեն, քանզի խրատելով՝ ես ուղի եմ հարթում բոլոր բաների

Պաշտակությունից նրանց՝ ազատելու համար, և ես սիրում եմ ձեզ,–

2 Ուստի, դուք պետք է անպայման խրատվեք և կշտամբվեք՝ իմ երեսի առաջ կանգնելով.

3 Քանզի դուք մեղանչել եք իմ դեմ խիստ ցավագին մեղքով, նրանով, որ հաշվի չեք առել այն մեծ պատվիրանը բոլոր բաներում, որ ես տվել եմ ձեզ իմ տունը կառուցելու վերաբերյալ.

4 Այն նախապատրաստության համար, որով ես նախատեսել եմ պատրաստել իմ առաքյալներին՝ իմ այգին վերջին անգամ՝ էտելու, որ կարողանամ իրագործել իմ

95 1ա Բ Օր. ԺԱ.1–8, Առակ. ԺԳ.18, Եբր. ԺԲ.5–11, Հել. 15.3, ՎևոՒ 101.4–5, 105.6: սուր Խրատել,

Խրատելը: ք սուր Ներել: Գ սուր Գայթակղել, Գայթակղություն: Դ Ա Կոր. Ժ.13: 3ա Անգե Ա.7–11,

ՎևոՒ 88.119: սուր Տաճար՝ Տիրոջ տուն: 4ա Հակոբ 5.61–75, ՎևոՒ 24.19, 33.3–4: սուր Տիրոջ այգին:

Քտարօրինակ գործը, որ կարողանամ իմ Հոգին Գթափել ամեն մարմնի վրա, -

5 Բայց ահա, ճշմարիտ ասում եմ ձեզ, որ ձեր մեջ կան շատերը, որոնք կարգվել են, որոնց ես կանչել եմ, բայց նրանցից քչերն են ՚ընտրված:

6 Նրանք, ովքեր ընտրված չեն, մեղանչել են խիստ ցավազին մեղքով, այն բանում, որ նրանք կեսօրին քայլում են ՚խավարի մեջ:

7 Եվ դրա համար, ես ձեզ պատվիրան տվեցի, որ դուք կանչեք ձեր ՚հանդիսավոր ժողովը, որպեսզի ձեր ՚ծոներն ու ձեր ողբը գան-հասնեն Գաբառվթի Տիրոջ ականջին, որը թարգմանաբար՝ առաջին օրվա ՚ստեղծողը, սկիզբն ու վերջն է:

8 Այո, ճշմարիտ ասում եմ ձեզ. Ես ձեզ պատվիրան տվեցի, որ դուք տուն կառուցեք, մի տուն, որտեղ ես նախատեսել եմ բարձրից գորությանը ՚օժտել նրանց, որոնց ընտրել եմ.

9 Քանզի դա Հոր ՚խոստումն է ձեզ. հետևաբար, ես պատվիրում եմ ձեզ մնալ, ճիշտ ինչպես իմ առաքյալները Երուսաղեմում:

10 Այնուամենայնիվ, իմ ծառաները մեղանչել են հույժ ցավազին մեղքով. և մարգարեների ՚դպրոցում ՚հակառակություններ են բարձրացել. որոնք անչափ

վշտացրել են ինձ, ասում է ձեր Տերը. հետևաբար, ես նրանց առաջ եմ ուղարկում, որ խրատվեն:

11 Ճշմարիտ ասում եմ ձեզ. Իմ կամքն է, որ դուք մի տուն կառուցեք: Եթե պահեք իմ պատվիրանները, դուք այն կառուցելու գորություն կունենաք:

12 Եթե դուք ՚չպահեք իմ պատվիրանները, Հոր ՚սերը չի մնա ձեզ հետ, հետևաբար դուք կքայլեք խավարում:

13 Արդ, այստեղ է իմաստությունը, և Տիրոջ միտքը, - տունը թող չկառուցվի աշխարհի ձևով, քանզի ես ձեզ թույլ չեմ տվել, որ դուք ապրեք աշխարհի ձևով.

14 Հետևաբար, թող դա կառուցվի այն ձևով, որը ես ցույց կտամ ձեզանից երեքին, որոնց դուք պիտի նշանակեք և կարգեք այդ գորությանը:

15 Եվ նրա չափերը պիտի լինեն հիսուն և հինգ ոտնաչափ լայնությամբ, և թող այն լինի վաթսունհինգ ոտնաչափ երկարությամբ՝ իր ներսի գավիթով:

16 Եվ թող ներսի գավիթի ստորին մասը նվիրագործվի ինձ՝ ձեր հաղորդությունը մատուցելու համար, և ձեր քարոզի, և ձեր ծոնապահության, և ձեր ամենատարբ ցանկություններն ինձ ՚մատուցելու համար, ասում է ձեր Տերը:

17 Եվ թող ներսի գավիթի վերին

4բ Ես. ԻԵ.21, ՎևՈՒ 101.95:
գ Առակ. Ա.23, Հովել Բ.28, ՎևՈՒ 19.38:
սոր Հոգու պարգևները.
Սուրբ Հոգի:
5ա Մատ. Ի.16, ՎևՈՒ 105.35-37, 121.34-40:
սոր Ընտրություն:

6ա սոր Հոգևոր խավար:
7ա ՎևՈՒ 88.70, 74-82, 117-120:
բ սոր Ծոն,
Ծոնապահություն:
գ սոր Եհովա:
դ սոր Ստեղծել,
Ստեղծում:
8ա ՎևՈՒ 38.32, 39.15, 43.16, 110.9-10:

սոր Օծում:
9ա Գուլ. ԻԳ.49:
10ա սոր Մարգարեների դպրոց:
բ սոր Հակառակություն:
12ա Հովհ. ԺԵ.10:
բ Ա Հովհ. Բ.10, 15:
16ա ՎևՈՒ 59.9-14:

մասն ինձ նվիրագործվի իմ առաքյալների դպրոցի համար, ասում է ՄԱհման Որդին. կամ, այլ խոսքով,

Ալֆան. կամ, այլ խոսքով, Օմեգան. այսինքն՝ ձեր ՊՏԵՐ Հիսուս Քրիստոսը: Ամեն:

ԲԱԺԻՆ 96

Հայտնություն՝ տրված Ջոզեֆ Սնիթ Մարգարեին, 1833թ. հունիսի 4-ին, որպես օրինակ Կիրթլենդի Սրբերի համար, որը ցույց է տալիս Սիոնի քաղաքի կամ ցցի կազմակերպումը Կիրթլենդում, Օհայո (History of the Church, 1.352-353): Առիթը եղավ քահանայապետերի համաժողովը, և քննարկման հիմնական նյութը որոշ հողերի բաժանումն էր, որոնք գտնվում էին Եկեղեցու տիրապետության տակ, Կիրթլենդում, և հայտնի էին որպես Ֆրենչի ագարակ: Քանի որ համաժողովը չէր կարողանում համաձայնության գալ, թե ում պատասխանատվությանն էր պետք հանձնել ագարակը, բոլորը համաձայնեցին այդ խնդրի վերաբերյալ հարցնել Տիրոջը:

1՝ Սիոնի Կիրթլենդ գիցը պետք է ամրացնել. 2-5՝ Եպիսկոպոսը պետք է բաժանի Սրբերի ժառանգությունները. 6-9՝ Ջոն Ջոնսոնը պետք է լինի միացյալ միաբանության անդամ:

4 Հետևաբար, զգուշացեք, որ հետևեք այս խնդրին, և այն բաժնին, որն անհրաժեշտ է իմ միաբանության օգտի համար, այն նպատակի համար, որ իմ խոսքն առաջ տարվի դեպի մարդկանց զավակները:

ԱՀԱ, ես ասում եմ ձեզ. Այստեղ է իմաստությունը, որով դուք կարող եք իմանալ, թե ինչպես վարվեք այդ հարցում, քանզի ինձ համար նպատակահարմար է, որ այս ՝ ցիցն ամրացվի, որը ես հաստատել եմ Սիոնն ամրացնելու համար:

5 Քանզի ահա, ճշմարիտ ասում եմ ձեզ, որ ինձ համար առավել նպատակահարմար է այն, որ իմ խոսքն առաջ գնա դեպի մարդկանց զավակները, ձեր բարիքի համար՝ մարդկանց զավակների սրտերը մեղմացնելու նպատակով: Ընչտ այդպես: Ամեն:

2 Հետևաբար, թող իմ ծառա Նյուել Ք. Ուիթնին ընդունի ձեր մեջ նշվող այդ վայրի պատասխանատվությունը, որի վրա ես նախատեսել եմ կառուցել իմ սուրբ տունը:

6 Եվ բացի այդ, ճշմարիտ ասում եմ ձեզ. Իմ իմաստությամբ և ինձ նպատակահարմար է, որ իմ ծառա Ջոն Ջոնսոնը, որի ընծան ես ընդունել եմ, և որի աղոթքները ես լսել եմ, որին ես տալիս եմ հավերժական կյանքի խոստումը, որքան որ նա այսուիետև կպահի իմ պատվիրանները, -

3 Եվ բացի այդ, թող այն բաժանվի հողակտորների, իմաստությամբ, նրանց օգտի համար, ովքեր ժառանգություններ են փնտրում, ինչպես որ ձեր խորհրդով կորոշվի:

7 Քանզի նա ՝ Հովսեփի հետնորդն է և իր հայրերին տրված

17ա ՎևՈՒ 78.20:
բ սոՒ Տեր:
96 1ա Ես. ԼԳ.20, 54.2:

սոՒ Ցից:
4ա ՎևՈՒ 78.3-4:
սոՒ Միացյալ

Միաբանություն:
7ա սոՒ Հովսեփ՝ Հակոբի
որդի:

խոստման օրհնությունների ճաշակողը,–

8 Ճշմարիտ ասում են ձեզ. Ինձ նպատակահարմար է, որ նա դառնա միաբանության անդամ, որպեսզի օգնի՝ առաջ տանելու իմ խոսքը դեպի մարդկանց զավակները:

9 Ուստի, դուք պետք է կարգեք նրան այդ օրհնության համար, և նա պետք է ջանասիրաբար փնտրի հարթել ձեր մեջ նշված այս տան բոլոր իրավական պարտավորությունները, որ նա կարողանա բնակվել այնտեղ: Դիշտ այդպես: Ամեն:

ԲԱԺԻՆ 97

Հայտնություն տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեի միջոցով, Կիրթլենդում, Օհայո, 1833թ. օգոստոսի 2-ին (History of the Church, 1.400–402): Այս հայտնությունը նասնավորապես վերաբերում է Միոնի Սրբերի գործերին, Ջեկսոն գավառում, Միսսուրի, ի պատասխան Տիրոջից տեղեկություն ստանալու Մարգարեի խնդրանքին: Այդ ժամանակ Միսսուրիում Եկեղեցու անդամները դաժան հալածանքների էին ենթարկվել և, 1833թ. հուլիսի 23-ին, հարկադրվել էին ստորագրել Ջեկսոն գավառից հեռանալու մի պայմանագիր:

1–2՝ Միոնի Սրբերից շատերը (Ջեկսոնի գավառ, Միսսուրի) օրհնված են իրենց հավատարմության համար. 3–5՝ Փարլի Պ. Պրատը գովաբանվում է Միոնի դպրոցի իր աշխատանքների համար. 6–9՝ Նրանք, ովքեր պահում են իրենց ուխտերը, ընդունվում են Տիրոջ կողմից. 10–17՝ Տուն պետք է կառուցվի Միոնում, որի մեջ սրտով մաքուրները կտեսնեն Աստծուն. 18–21՝ Միոնը սրտով մաքուրներն են. 22–28՝ Միոնը կխոսասի Տիրոջ խարազանից, եթե հավատարիմ լինի:

փնտրում են իմաստություն սովորել և ճշմարտություն գտնել:

2 Ճշմարիտ, ճշմարիտ ասում են ձեզ. Օրհնված են այդպիսիք, քանզի նրանք պիտի ստանան. քանզի ես՝ Տերս, ողորմություն են ցուցաբերում բոլոր ՚հեզերի հանդեպ, և բոլոր նրանց հանդեպ, ում կամենում են, որպեսզի ես արդարացվեմ, երբ դատաստանի բերեմ նրանց:

3 Ահա, ես ասում են ձեզ Միոնի ՚դպրոցի վերաբերյալ. Ես՝ Տերս, շատ գոհ եմ, որ պետք է մի դպրոց լինի Միոնում, և նաև իմ ծառա ՔՓարլի Պ. Պրատից, քանզի նա մնում է ինձ հետ:

ԱՐԱՐԵԿԱՄՆԵՐ, ես խոսում են ձեզ հետ իմ ձայնով, այսինքն՝ իմ Հոգու ձայնով, որ կարողանամ ձեզ ցույց տալ իմ կամքը ՚Միոնի հողի ձեր եղբայրների վերաբերյալ, որոնցից շատերն իսկապես խոնարհ են և ջանասիրաբար

4 Եվ որքան որ նա շարունակի մնալ ինձ հետ, նա պիտի շարունակի նախագահել դպրոցի վրա, Միոնի հողում, մինչև որ նրան չտամ այլ պատվիրաններ:

5 Եվ ես կօրհնեմ նրան բազում

97 1ա սու՛ Միոն:
2ա Մատ. Ե.5,
Մոսիա 3.19:

3ա սու՛ Մարգարեների
դպրոց:
բ սու՛ Պրատ Փարլի

Պարկեր:

օրհնություններով՝ մեկնելով բոլոր սուրբ գրքերը և խորհուրդները Սիոնի դպրոցի և եկեղեցու շենացման համար:

6 Եվ դպրոցի մնացածի հանդեպ, ես՝ Տերս, հոժար եմ ողորմություն ցուցաբերել. այնուամենայնիվ, կան ոմանք, ովքեր ՝խրատվելու կարիք ունեն, և նրանց գործերը հայտնի պիտի դարձվեն:

7 ՄԿացիներ դրված է ծառերի արմատների մոտ. և ամեն ծառ, որն առաջ չի բերում ՝բարի պտուղ, պիտի կտրվի ու կրակի մեջ զգվի: Ես՝ Տերս եմ ասել դա:

8 Շշմարիտ ասում եմ ձեզ, որ նրանցից բոլորը, ովքեր գիտեն, որ իրենց ՝պիրտն ՝ազնիվ է ու կտորված, իսկ իրենց հոգին՝ փշրված, և ՝կամենում են պահպանել իրենց ուխտերը ՝գոհաբերությամբ,– այո, ամեն մի գոհաբերությամբ, որը ես՝ Տերս, կպատվիրեմ,– նրանք ՝ընդունված են իմ կողմից:

9 Քանզի ես՝ Տերս, այնպես կանեմ, որ նրանք առաջ բերեն բարի գործեր, ինչպես շատ պտղաբեր մի ծառ, որը տնկված է մի բերրի հողում, մաքուր վտակի մոտ, և որը շատ բանկարծեք պտուղ է տալիս:

10 Շշմարիտ ասում եմ ձեզ, որ իմ կամքով է, որ մի ՝տուն կառուցվի ինձ համար Սիոնի հողում, այն ՝օրինակի համապատասխան, որը ես տվել եմ ձեզ:

11 Այո, թող այն շուտափույթ կառուցվի իմ ժողովրդի տասանորդով:

12 Ահա, սա է ՝տասանորդը և գոհաբերությունը, որը ես՝ Տերս, պահանջում եմ նրանց ձեռքից, որ մի ՝տուն կառուցվի ինձ համար՝ Սիոնի փրկության համար,–

13 Որ լինի ՝գոհաբանության տեղ՝ բոլոր սրբերի համար, և հրահանգների տեղ, բոլոր նրանց համար, ովքեր կանչված են ծառայության գործին՝ բոլոր իրենց տարբեր կոչումներում ու պաշտոններում.

14 Որպեսզի նրանք կատարելագործվեն իրենց ծառայության ՝հասկացողության մեջ՝ տեսության, սկզբունքի և վարդապետության մեջ, երկրի վրա Աստծո ՝արքայությանը վերաբերող բոլոր բաներում, արքայություն, որի ՝բանալիները շնորհվել են ձեզ:

15 Եվ որքան որ իմ ժողովուրդը Տիրոջ անունով տուն կառուցի ինձ համար, և թույլ չտա, որ որևէ ՝անմաքուր բան մտնի այնտեղ, որպեսզի այն չապականվի, իմ ՝փառքը պիտի հանգչի դրա վրա:

16 Այո, իմ ՝մերկայությունը պիտի լինի այնտեղ, քանզի ես կմտնեմ այնտեղ, և բոլոր սրտով ՝մաքուրները, որոնք կմտնեն այնտեղ, պիտի տեսնեն Աստծուն:

17 Բայց եթե այն պղծվի, ես չեմ

<p>6ա սոս Խրատել, Խրատելը: 7ա Մատ. Գ.10: բ Ղուկ. 2.43–45, Ալմա 5.36, 52, 3 Նեփի 14.15–20: 8ա սոս Կոտրված սիրտ: բ սոս Ազնիվ, Ազնվություն: գ ՎևոՒ 64.34: դ սոս Չոհաբերություն: ե ՎևոՒ 52.15, 132.50:</p>	<p>10ա ՎևոՒ 573, 88.119, 124.51: բ ՎևոՒ 115.14–16: 12ա սոս Տասանորդ, Տասանորդել: բ սոս Տաճար՝ Տիրոջ տուն: 13ա սոս Շնորհակալ, Շնորհակալություն, Գոհաբանություն: 14ա սոս Հասկանալ: բ սոս Աստծո</p>	<p>արքայություն կամ Երկնքի արքայություն: գ սոս Քահանայության բանալիները: 15ա ՎևոՒ 94.9, 109.20–21: բ Անգե Բ.7, ՎևոՒ 84.5: 16ա ՎևոՒ 110.1–10: բ Մատ. Ե.8, ՎևոՒ 67.10–13, 88.68: սոս Անարատ, Անարատություն:</p>
---	--	---

մտնի այնտեղ, և իմ փառքը չի լինի այնտեղ. քանզի ես չեմ մտնի անսուրբ տաճարներ:

18 Եվ արդ, ահա, եթե Սիոնն անի այդ բաները, այն ^ակբարգավաճի, և կտարածվի ու կդառնա շատ փառահեղ, շատ մեծ և շատ ահարկու:

19 Եվ երկրի ^աազգերը կհարգեն նրան ու կասեն. Անկասկած, ^բՍիոնը մեր Աստծո քաղաքն է, և անկասկած, Սիոնը հնարավոր չէ որ ընկնի, ոչ էլ որ իր տեղից հանվի, քանզի Աստված այնտեղ է, և Տիրոջ ձեռքն այնտեղ է.

20 Եվ նա գործության ուժով երդվել է՝ լինել նրա փրկությունն ու նրա բարձր ^աաշտարակը:

21 Հետևաբար, ճշմարիտ, այսպես է ասում Տերը. Թող Սիոնը ցնձա, քանզի ^աՍիոնը սա է, – ՍՐՏՏՈՎ ՄԱՔՈՒՐՆԵՐԸ. հետևաբար, թող Սիոնը ցնձա, մինչդեռ բոլոր անբարիշտները պիտի սգան:

22 Քանզի ահա, տես, ^ավրեժխնդրությունը սրընթաց գալիս է անաստվածների վրա, ինչպես պտտահողմը. և ո՞վ խույս կտա դրանից:

23 Տիրոջ ^ախարազանը պիտի

անցնի գիշերով ու ցերեկով, և դրա մասին լուրը պիտի նեղի բոլոր մարդկանց. այո, այն չի կանգնեցվի, մինչև որ Տերը չիա.

24 Քանզի Տիրոջ զայրույթը բռնկված է նրանց պղծությունների և նրանց անբարիշտ գործերի դեմ:

25 Այնուամենայնիվ, Սիոնը ^ախույս կտա, եթե հետևի, որ կատարի բոլոր բաները, որոնք պատվիրել են նրան:

26 Բայց եթե նա չհետևի, որ կատարի բոլոր բաները, որոնք պատվիրել են, ես նրան ^ակայցելեմ, նրա բոլոր գործերի համաձայն, դառը չարչարանքով, ^բժանտախտով, պատուհասով, սրով, ^գվրեժխնդրությամբ, ^դլափող կրակով:

27 Այնուամենայնիվ, թող այս մեկ անգամ նրա ականջներին կարդացվի, որ ես՝ Տերս, ընդունել եմ նրա ընծան. և եթե նա այլևս չմեղանչի, այս բաներից ^աոչ մեկը չի գա նրա վրա.

28 Եվ ես ^ակօրհնեմ նրան օրհնություններով և կբազմապատկեմ նրա և նրա սերունդների բազում օրհնությունները հավիտյանս հավիտենից, ատում է քո Տեր Աստվածը: Ամեն:

ԲԱԺԻՆ 98

Հայտնություն՝ տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեի միջոցով, Կիրթենդոմ, Օհայո, 1833թ. օգոստոսի 6-ին (History of the Church, 1.403–406): Այս հայտնությունը եկավ ի պատասխան Միսսուրիի Սրբերի հալածանքների: Բնական էր, որ Միսսուրիի Սրբերը, ֆիզիկապես տառապելուց և նաև

<p>18ա ՎևոՒ 90.24, 100.15: 19ա Ես. Կ.14, Չաք. Բ.10–12, ՎևոՒ 45.66–70, 49.10: բ սոՒ Նոր Երուսաղեմ: 20ա Բ Թագ. ԻԲ.3: 21ա Մովսես 7.18: սոՒ Անարատ,</p>	<p>Անարատություն. Սիոն: 22ա սոՒ Վրեժխնդրություն: 23ա Ես. ԻԸ.14–19, ՎևոՒ 45.31: 25ա 2 Նեփի 6.13–18, ՎևոՒ 63.34, ՉՍ–Մ 1.20:</p>	<p>26ա ՎևոՒ 84.54–59: բ Ղուկ. ԻԱ.10–13: գ Մաղ. Դ.1–3, 3 Նեփի 21.20–21: դ Հովել Ա.15–20: 27ա Եզեկ. ԺԸ.27: 28ա սոՒ Օրհնել, Օրհնված, Օրհնություն:</p>
--	--	---

իրենց ունեցվածքը կորցնելուց հետո, լցվել էին հաստուցելու և վրեժ լուծելու ցանկությամբ: Այդ պատճառով Տերը տվեց այս հայտնությունը: Չնայած Միսսուրիի դժկարությունների լուրն անկասկած հասել էր Մարգարեին, որը Կիրթենընում էր (ինը հարյուր մղոն հեռու), իրավիճակի լրջությունն այդ օրվա դրությամբ նրան կարող էր հայտնի դառնալ միայն հայտնությամբ:

1-3՝ Սրբերի չարչարանքները կլինեն իրենց բարիքի համար. 4-8՝ Սրբերը պետք է բարեկամանան երկրի սահմանադրական օրենքի հետ. 9-10՝ Ազնիվ, իմաստուն և բարի մարդիկ պետք է աջակցվեն աշխարհիկ կառավարման մեջ. 11-15՝ Նրանք, ովքեր Տիրոջ գործի համար վայր են դնում իրենց կյանքը, կունենան հավերժական կյանք. 16-18՝ Մերժեք պատերազմը և հռչակեք խաղաղություն. 19-22՝ Կիրթենդի Սրբերը հանդիմանվում են և նրանց պատվիրվում է ապաշխարել. 23-32՝ Տերը հայտնում է իր ժողովրդի վրա գործադրված հալածանքների ու չարչարանքների ժամանակ ղեկավարվելու իր օրենքները. 33-38՝ Պատերազմն արդարացված է, միայն, երբ Տերն է դա պատվիրում. 39-48՝ Սրբերը պետք է ներեն իրենց թշնամիներին, որոնք, եթե ապաշխարեն, նույնպես կխոստապեն Տիրոջ վրեժխնդրությունից:

ԱՇՄԱՐԻՏ ասում են ձեզ, իմ բարեկամներ. Սի՛ր՝ Վախեցեք. թող ձեր սրտերը մխիթարվեն. այո՛, ամեն ժամանակ ուրախ եղեք, և ամեն ինչի համար թ՛գոհություն հայտնեք.

2 Համբերությամբ ՝սպասելով Տիրոջը, քանզի ձեր աղոթքները

հասել են Սաբաովթի Տիրոջ ականջին և գրված են այս կնիքով ու վկայությամբ, - Տերը երդվել և հրամանագրել է, որ դրանք կպարզակատրվեն:

3 Հետևաբար, նա այս խոստումն է տալիս ձեզ, անխախտ ուխտով, որ դրանք կկատարվեն. և բոլոր բաները, ինչով դուք ՝չարչարվել եք, միաժամանակ կգործեն ձեր բարիքի համար և իմ անվան փառքի համար, ասում է Տերը:

4 Եվ արդ, ճշմարիտ ասում են ձեզ երկրի օրենքների վերաբերյալ. Դա իմ կամքն է, որ իմ ժողովուրդը հետևի, որ կատարի այն ամենը, ինչ պատվիրում են նրան:

5 Եվ երկրի այն ՝օրենքը, որը թսահմանադրական է, որը պաշտպանում է ազատության սկզբունքը, պահպանելով իրավունքներն ու արտոնությունները, պատկանում է ողջ մարդկությանը և արդար է իմ առաջ:

6 Հետևաբար, ես՝ Տերս, արդարացնում են ձեզ և իմ եկեղեցու ձեր եղբայրներին, որ բարեկամանում եք այն օրենքի հետ, որը երկրի սահմանադրական օրենքն է.

7 Իսկ ինչ վերաբերում է մարդու օրենքին, ինչ որ սրանից ավել կամ պակաս է, չարից է գալիս:

8 Ես՝ Տեր Աստվածս, ՝ազատ

98 1ա ՎևՈՒ 68.6:
բ սո՛ւ Շնորհակալ, Շնորհակալություն, Գոհաբանություն:
2ա Սաղ. ԻԷ.14, Ես. Լ.18-19, ՎևՈՒ 133.45:

3ա ՎևՈՒ 122.7:
սո՛ւ Չախորդություն:
5ա Ա Պետ. Բ.13-14, ՎևՈՒ 58.21, 134.5:
բ ՎևՈՒ 101.77-80, 109.54:
սո՛ւ Մահմանադրու-

բյուն. Անկախություն:
8ա Հովհ. Ը.32, Բ Կոր. Գ.17:
սո՛ւ Կամքի ազատություն. Ազատ, Ազատություն:

եմ դարձրել ձեզ, հետևաբար, դուք իսկապես ազատ եք. և օրենքը նույնպես ձեզ ազատ է դարձնում:

9 Այնուամենայնիվ, երբ ^աամբարիշտներն են իշխում, ժողովուրդը սզում է:

10 Ուստի, ^աազնիվ մարդիկ և իմաստուն մարդիկ պետք է փնտրվեն ջանասիրաբար, և դուք պետք է հետևեք, որ բարի մարդիկ և իմաստուն մարդիկ աջակցվեն. այլապես, ինչ որ սրանից ավել կամ պակաս է, չարից է գալիս:

11 Եվ ես ձեզ պատվիրան եմ տալիս, որ դուք թողնեք ամեն մի չարիք և հարեք ամեն բարի բանի, որ դուք ապրեք Աստծո բերանից դուրս եկող ամեն մի ^ախոսքով:

12 Քանզի հավատարիմներին նա ^ատալու է տող առ տող, ցուցում առ ցուցում. և դրանով ես ^ակփորձեմ ձեզ և կստուգեմ ձեզ:

13 Եվ ով իմ գործի համար, իմ անվան համար, ^ավայր է դնում իր կյանքը, նա կգտնի այն կրկին, այսինքն՝ կյանք հավերժական:

14 Հետևաբար, մի ^ավախեցեք ձեր թշնամիներից, քանզի ես իմ սրտում որոշել եմ, ասում է Տերը, որ ես ^ակփորձեմ ձեզ բոլոր բաներում, թե արդյոք դուք կմնաք իմ ուխտի մեջ, մինչև իսկ ^գմահով, որպեսզի դուք արժանի գտնվեք:

15 Քանզի եթե դուք իմ ուխտի մեջ չմնաք, ապա արժանի չեք ինձ:

16 Հետևաբար, ^ամերժեք ^ապատերազմը և ^գխաղաղություն հռչակեք, և ջանասիրաբար փնտրեք, որ զավակների սրտերը ^ադարձնեք դեպի հայրերը, և հայրերի սրտերը՝ դեպի զավակները.

17 Եվ բացի այդ, ^ահրեաների սրտերը՝ դեպի մարգարեները, և մարգարեներինը՝ դեպի հրեաները. որ չլինի թե ես գամ և ողջ երկիրը զարկեմ անեծքով, և ամեն մարմին այրվի իմ առաջ:

18 Թող ձեր սրտերը չխռովեն. քանզի իմ Հոր տանը ^աշատ ապարանքներ կան, և ես տեղ եմ պատրաստել ձեզ համար. և ուր որ ես և իմ Հայրն ենք, դուք ևս այնտեղ կլինեք:

19 Ահա, ես՝ Տերս, գոհ չեմ շատերից, որոնք Կիրթլենդի եկեղեցում են.

20 Քանզի նրանք չեն թողնում իրենց մեղքերը, և իրենց ամբարիշտ ուղիները, իրենց սրտերի հպարտությունը, և իրենց ազահությունը, և իրենց բոլոր զարշելիությունները, և չեն հետևում իմաստության և հավերժական կյանքի խոսքերին, որոնք ես տվել եմ նրանց:

21 Դժմարիտ ասում եմ ձեզ, որ ես՝ Տերս, ^ակխրատեմ նրանց և կանեմ ինչ որ կկամենամ, եթե նրանք չապաշխարեն և չհետևեն

9ա Առակ. ԻԹ.2:
10ա սուր Ազնիվ,
Ազնվություն:
11ա Բ օր. Ը.3, Մատ. Դ.4,
ՎևՈՒ 84.43-44:
12ա Ես. ԻԸ.10,
ՎևՈՒ 42.61:
բ Աբր. 3.25-26:
13ա Դուլ. Թ.24,
ՎևՈՒ 101.35-38,
103.27-28:

սուր Նահատակ,
Նահատակություն:
14ա Նեեմ. Դ.14,
ՎևՈՒ 122.9:
բ ՎևՈՒ 124.55:
գ Հայտ. Բ.10,
ՎևՈՒ 136.31, 39:
16ա Ալմա 48.14:
սուր Խաղաղաբար:
բ սուր Պատերազմ:
գ սուր Խաղաղություն:

դ Մադ. Դ.5-6,
ՎևՈՒ 2.1-2:
17ա սուր Հրեաներ:
18ա Հովհ. ԺԳ.2,
ՎևՈՒ 59.2, 76.111,
81.6:
21ա Մոսիա 23.21,
Հել. 12.3:
սուր Խրատել,
Խրատելը:

բոլոր բաներին, որոնք պատվիրել են նրանց:

22 Եվ բացի այդ, ես ասում եմ ձեզ. Եթե դուք հետևեք, որ ^ակատարեք ինչ որ պատվիրում եմ ձեզ, ես՝ Տերս, մեկդի կդարձնեմ ողջ ցասումն ու զայրույթը ձեզանից, և դժոխքի ^բդռները չեն հաղթի ձեզ:

23 Այժմ ես խոսում եմ ձեզ հետ ձեր ընտանիքների վերաբերյալ, – եթե մարդիկ ^ազարկեն ձեզ կամ ձեր ընտանիքներին, մեկ անգամ, և դուք համբերությամբ տանեք ու չանարգեք նրանց, ոչ էլ փնտրեք վրեժ լուծել, դուք պիտի վարձատրվեք.

24 Բայց եթե դուք համբերությամբ չտանեք, այն ձեզ կհամարվի որպես ձեզ համար ^աչափված արդար չափ:

25 Եվ բացի այդ, եթե ձեր թշնամին զարկի ձեզ երկրորդ անգամ, և դուք չանարգեք ձեր թշնամուն և տանեք այն համբերությամբ, ձեր վարձքը կլինի հարյուրապատիկ:

26 Եվ բացի այդ, եթե նա զարկի ձեզ երրորդ անգամ, և դուք դա տանեք ^ահամբերությամբ, ձեր վարձքը քառասպատիկ կավելացվի ձեզ.

27 Եվ այս երեք վկայությունները կկանգնեն ձեր թշնամու դեմ, եթե նա չապաշխարի, և չեն ջնջվի:

28 Եվ արդ, ճշմարիտ ասում եմ ձեզ, որ եթե այդ թշնամին խույս տա իմ վրեժխնդրությունից, որ չբերվի իմ առաջ՝ դատաստանի, ապա դուք անպայման պետք է ^ազգուշացնեք նրան իմ անունով,

որպեսզի նա այլևս չգա ձեր վրա, ոչ էլ ձեր ընտանիքի, մույնիսկ ձեր երեխաների երեխաների, մինչև երրորդ և չորրորդ սերունդը:

29 Եվ եթե այն ժամանակ նա գա ձեր վրա կամ ձեր երեխաների վրա կամ ձեր երեխաների երեխաների վրա, մինչև երրորդ և չորրորդ սերունդը, ապա ես քո ձեռքն եմ հանձնել քո թշնամուն.

30 Եվ եթե այդ ժամանակ դու խնայես նրան, ապա պիտի վարձատրվես քո արդարության համար. և նաև քո երեխաները և քո երեխաների երեխաները, մինչև երրորդ և չորրորդ սերունդը:

31 Այնուամենայնիվ, թշնամիդ քո ձեռքում է. և եթե դու հատուցես նրան, իր գործերի համաձայն, դու արդարացված ես. եթե նա փնտրել է քո կյանքը, և նա վտանգի է ենթարկել քո կյանքը, թշնամիդ քո ձեռքում է, և դու արդարացված ես:

32 Ահա, սա է օրենքը, որ ես տվեցի իմ ծառա Նեփիին, և ձեր ^ահայրերին՝ Հովսեփին, և Հակոբին, և Իսահակին, և Աբրահամին, և բոլոր իմ հնագույն մարգարեներին ու առաքյալներին:

33 Եվ բացի այդ, սա է այն ^աօրենքը, որը ես տվեցի իմ հնագույն ժողովրդին, որ նրանք չպետք է պատերազմելու գնալին ոչ մի ազգի, ցեղի, լեզվի, կամ ժողովրդի դեմ, մինչև որ ես՝ Տերս, չպատվիրեի նրանց:

34 Եվ եթե որևէ ազգ, լեզու կամ ժողովուրդ պատերազմ հայտարարեի նրանց դեմ, նրանք պետք

<p>22ա սուր Հնազանդություն, Հնազանդ, Հնազանդվել: բ Մատ. ԺՁ.17–18, ՎևոՒ 33.12–13: 23ա Ղուկ. Զ.29,</p>	<p>Այն 43.46–47: սուր Հալածել, Հալածանք: 24ա Մատ. Է.1–2: 26ա սուր Համբերություն: 28ա սուր Զգուշացնել,</p>	<p>Զգուշացում: 32ա ՎևոՒ 27.10: 33ա Բ Օր. Ի.10, Այն 48.14–16:</p>
--	---	--

է սկզբում Մխաղաղության դրոշ բարձրացնենի այդ ժողովրդի, ազգի կամ լեզվի դեմ.

35 Եվ եթե այդ ժողովուրդը չընդուներ խաղաղության առաջարկը, ոչ էլ երկրորդ կամ երրորդ անգամ, նրանք պետք է այդ վկայությունները բերեին Տիրոջ առաջ.

36 Այն ժամանակ, ես՝ Տերս, նրանց պատվիրան կտայի և կարդարացնեի նրանց պատերազմ գնալն այդ ազգի, լեզվի կամ ժողովրդի դեմ:

37 Եվ ես՝ Տերս, ՝կկռվեի նրանց պատերազմներում, և նրանց երեխաների պատերազմներում, և նրանց երեխաների երեխաների, մինչև որ նրանք վրեժ առնեին իրենց բոլոր թշնամիներից, մինչև երրորդ և չորրորդ սերունդը:

38 Ահա, սա օրինակ է բոլոր ժողովուրդների համար, ասում է Տերը՝ քո Աստվածը, իմ առաջ արդարացվելու համար:

39 Եվ բացի այդ, ճշմարիտ ասում եմ ձեզ, որ, եթե թշնամիդ առաջին անգամ քո վրա գալուց հետո ապաշխարի և գա քեզ մոտ, քո ներումն աղերսելու, դու պետք է ներես նրան և այլևս չպահես այն որպես վկայություն քո թշնամու դեմ,–

40 Եվ այդպես շարունակ, երկրորդ և երրորդ անգամ. և որքան հաճախ որ թշնամիդ ապաշխարում է այն զանցանքի համար, ինչով նա զանցանք է գործել քո դեմ, դու պետք է ՝ններես նրան, մինչև յոթանասուն անգամ յոթը:

41 Եվ եթե նա զանցանք է գործում քո դեմ առաջին անգամ և չի

ապաշխարում, այնուամենայնիվ, դու պետք է ներես նրան:

42 Եվ եթե նա զանցանք է գործում քո դեմ երկրորդ անգամ և չի ապաշխարում, այնուամենայնիվ, դու պետք է ներես նրան:

43 Եվ եթե նա զանցանք է գործում քո դեմ երրորդ անգամ և չի ապաշխարում, դու կրկին պետք է ներես նրան:

44 Բայց եթե նա զանցանք է գործում քո դեմ չորրորդ անգամ, դու չպետք է ներես նրան, այլ պետք է բերես այս վկայությունները Տիրոջ առաջ. և դրանք չեն ջնջվի, մինչև որ նա չապաշխարի և քառապատիկ վարձախատույց չլինի քեզ, բոլոր բաներում, որով նա զանցանք է գործել քո դեմ:

45 Եվ եթե նա անի այդ, դու պետք է ներես նրան քո ողջ սրտով. իսկ եթե նա չանի այդ, ես՝ Տերս, ՝վրեժ կառնեմ քո թշնամուց հարյուրապատիկ.

46 Եվ նրա երեխաներից, և նրա երեխաների երեխաներից, բոլոր նրանցից, ովքեր ատում են ինձ, մինչև ՝Երրորդ և չորրորդ սերունդը:

47 Բայց եթե երեխաներն ապաշխարեն, կամ երեխաների երեխաները, և ՝դարձի գան դեպի Տերը՝ իրենց Աստվածը, իրենց ողջ սրտով, և իրենց ողջ զորությամբ, մտքով և ուժով, և քառապատիկ վերադարձնեն իրենց բոլոր զանցանքների համար, որոնցով զանցանք են գործել, կամ որոնցով իրենց հայրերը զանցանք են գործել, կամ իրենց հայրերի հայրերը, այն ժամանակ դու պիտի մեկդի դարձնես քո զայրույթը.

34ա ՎևՈՒ 105.38-41:
37ա Չես. ԻԳ. 10,
Ես. ԽԹ. 25:

40ա Մատ. ԺԸ. 21-22,
ՎևՈՒ 64.9-11:
սոՒ Ներել:

45ա Մորմ. 8.20:
46ա Բ Օր. Ե. 9-10:
47ա Մոսիա 7.33, Մորմ. 9.6:

48 Եվ այլևս չի գա նրանց վրա, ասում է Տերը՝ քո Աստվածը, և նրանց զանցանք-

ներն այլևս երբեք չեն բերվի Տիրոջ առաջ, որպես վկայություն նրանց դեմ: Ամեն:

ԲԱԺԻՆ 99

Հայտնություն տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեի միջոցով, Ջոն Մարդոկին, 1832թ. օգոստոսին, Հայրամում, Օհայո: Չնայած Վարդապետություն և Ուխտերի հրատարակություններում 1876թ. ի վեր, որպես այս հայտնության ստացում նշվել է Կիրթենդը, 1833թ. օգոստոսը, սակայն ավելի վաղ հրատարակություններն ու պատմական գրառումները վկայում են ճշգրիտ ժամանակի մասին:

1–8՝ Ջոն Մարդոկը կանչված է հռչակելու ավետարանը, և նրանք, ովքեր ընդունում են նրան, ընդունում են Տիրոջը և ողորմություն ձեռք կրերեն:

Մներժվի իմ Հոր և նրա տան կողմից. և դու պետք է մաքրես քո թոռքերը ճանապարհին, գաղտնի տեղերում, որպես վկայություն նրանց դեմ:

ԱՀԱ, այսպես է ասում Տերն իմ ծառա Ջոն Մարդոկին, – Դու կանչված ես գնալու արևելյան երկրները՝ տնից տուն, գյուղից գյուղ, և քաղաքից քաղաք, որ հալածանքների ու ամբարշտության մեջ հռչակես իմ հավիտենական ավետարանն այնտեղի բնակիչներին:

5 Եվ ահա, տե՛ս, ես շուտով «գալիս եմ՝ Քրիստոսան անելու, համոզելու բոլորին իրենց ոչ աստվածային արարքներում, որոնք նրանք կատարել են իմ դեմ, ինչպես որ այն իմ կողմից գրված է գրքի հատորում:

2 Եվ նա, ով ընդունում է քեզ, ընդունում է ինձ. և դու գորություն պիտի ունենաս հայտարարելու իմ խոսքը՝ թցույց տալով իմ Մուրբ Հոգու գորությունը:

6 Եվ արդ, ճշմարիտ ասում եմ քեզ, որ նպատակահարմար չէ, որ դու գնաս, մինչև որ երեխաներդ ապահովված ու հոգատարությամբ ուղարկված կլինեն Սիոնի եպիսկոպոսի մոտ:

3 Եվ ով որ ընդունում է քեզ, ինչպես մի փոքր երեխա, ընդունում է իմ Քարքայությունը. և օրհնված են նրանք, քանզի նրանք ողորմություն ձեռք կրերեն:

7 Եվ մի քանի տարի անց, եթե ցանկանաս ինձանից, դու նույնպես կարող ես գնալ այդ բերրի հողը՝ քո ժառանգությանը տիրանալու:

4 Եվ ով որ մերժում է քեզ, պիտի

8 Իսկ եթե ոչ, դու պիտի շարունակես հռչակել իմ ավետարանը, մինչև որ վերցվես: Ամեն:

48ա Եզեկ. ԺԸ. 19–23:
99 1ա սու՝ Հալածել, Հալածանք:
2ա Մատ. Ժ. 40:
բ Ա Կոր. Բ. 4–5:
3ա Մատ. ԺԸ. 1–6:
բ սու՝ Աստծո

արքայություն կամ Երկնքի արքայություն:
գ սու՝ Ողորմած, Ողորմություն:
4ա Հովհ. ԺԲ. 44–50:
բ Վևո՛ 75.19–22:

5ա Վևո՛ 1.11–14:
բ Հուդա Ա. 14–15:
սու՝ Հիսուս Քրիստոս – Դատավոր:
8ա Մատ. ԺԹ. 29:

ԲԱԺԻՆ 100

Հայտնություն տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեին և Սիդնի Ռիզդոնին, Փերիսբուրգում, Նյու Յորք, 1833թ. հոկտեմբերի 12-ին (History of the Church, 1.416, 419-421): Այս երկու եղբայրները, մի քանի օր բացակայելով իրենց ընտանիքներից, մտահոգված էին նրանց համար:

1-4՝ Ջոզեֆն ու Սիդնին պետք է քարոզեն ավետարանը հոգիների փրկության համար. 5-8՝ Անհրաժեշտ ժամին նրանց կտրվի, քե ինչ պիտի ասեն. 9-12՝ Սիդնին պիտի լինի խոսնակը, իսկ Ջոզեֆը պիտի լինի հայտնողը և վկայության մեջ գորավորը. 13-17՝ Տերը պիտի բարձրացնի մաքուր ժողովուրդ, և հնազանդները կիրկվեն:

ԱՇՄԱՐԻՏ, այսպես է Տերն ասում ձեզ, իմ բարեկամներ՝ Սիդնի և Ջոզեֆ. Ձեր ընտանիքները բարվոք են. նրանք իմ ձեռքում են, և ես կվարվեմ նրանց հետ, ինչպես ինձ բարի է երևում. քանզի ինձանում է ողջ գորությունը:

2 Հետևաբար, հետևեք ինձ և լսեք խորհուրդը, որը ես կամ ձեզ:

3 Ահա, տե՛ս, ես բազում ժողովուրդ ունեմ այս վայրում, մերձակա շրջաններում. և արդյունավետ դուռ պիտի բացվի մերձակա շրջաններում, արևելյան այս հողում:

4 Հետևաբար, ես՝ Տերս, թույլ եմ տվել, որ դուք գաք այս վայրը. քանզի ինձ այդպես էր նպատակահարմար հոգիների փրկության համար:

5 Հետևաբար, ճշմարիտ ասում եմ ձեզ. Բարձրացրեք ձեր ձայնը

դեպի այս ժողովուրդը. ասե՛ք այն մտքերը, որոնք ես կդնեմ ձեր սրտում, և դուք ամոթով չէք մնա մարդկանց առաջ.

6 Զանգի այն նույն ժամին, այո, այն նույն պահին ասե՛ք ինչ պիտի ասեք:

7 Բայց ես պատվիրան եմ տալիս ձեզ, որ ինչ որ հայտարարում եք, դուք պետք է ՝հայտարարեք իմ անունով, սրտի հանդիսավորությամբ, ՝հեզուրյան ոգով, բոլոր բաներում:

8 Եվ ես տալիս եմ ձեզ այս խոստումը, որ որքան որ դուք անեք այդ, ՝Սուրբ Հոգին կբափվի՝ վկայություն բերելով բոլոր բաների մասին, որոնք դուք կասեք:

9 Եվ ինձ նպատակահարմար է, որ դո՛ւ, իմ ծառա՝ Սիդնի, ՝խոսնակ լինես այս ժողովրդի համար. այո, ճշմարիտ, ես կկարգեմ քեզ այս կոչմանը, այսինքն՝ խոսնակ լինելու իմ ծառա Ջոզեֆի համար:

10 Իսկ նրան ես գորություն կտամ՝ գորավոր լինելու ՝վկայության մեջ:

11 Եվ ես քեզ գորություն կտամ՝ գորավոր լինելու բոլոր սուրբ գրքերը մեկնաբանելիս, որպեսզի դու խոսնակ լինես նրա համար, իսկ նա ՝հայտնող լինի քեզ համար, որպեսզի դու իմանաս

<p>100 1ա սուր Ռիզդոն Սիդնի: բ սուր Սմիթ Ջոզեֆ կրտսեր 4ա սուր Փրկություն: 5ա Հել. 5.18, վևՈՒ 68.3-4:</p>	<p>6ա Մատ. Ժ.19-20, վևՈՒ 84.85: 7ա վևՈՒ 84.61: բ սուր Հեզ, Հեզուրյուն: 8ա 2 Նեփի 33.1-4: 9ա Ել. Գ.14-16,</p>	<p>2 Նեփի 3.17-18, վևՈՒ 124.103-104: 10ա սուր Վկայել: 11ա Ալմա 172-3: բ վևՈՒ 124.125:</p>
--	--	---

երկրի վրա իմ արքայությանը վերաբերող բոլոր բաների հաստատ լինելը:

12 Հեռաբար, շարունակեք ձեր ճամփորդությունը, և թող ձեր սրտերը ցնձան. քանզի ահա, տե՛ս, ես ձեզ հետ եմ, նույնիսկ մինչև վերջ:

13 Իսկ այժմ, ես տալիս եմ ձեզ մի խոսք՝ Միոնի վերաբերյալ: Միոնը պիտի փրկագնվի, չնայած որ այն խրատվել է մի փոքր ժամանակով:

14 Զո եղբայրները՝ իմ ծառաներ Օրսոն՝ Հայդը և Ջոն Գոլդը, իմ ձեռքերում են. և որքան որ նրանք

պահեն իմ պատվիրանները, նրանք կփրկվեն:

15 Հեռաբար, թող ձեր սրտերը մխիթարվեն. քանզի՝ ՞բոլոր բաները միաժամանակ կգործեն նրանց բարիքի համար, ովքեր ուղիղ են քայլում, և եկեղեցու սրբագործման համար:

16 Քանզի ես ինձ համար ՞մասքուր մի ժողովուրդ կբարձրացնեմ, որն արդարությամբ կժառայի ինձ.

17 Եվ բոլորը, ովքեր ՞կանչում են Տիրոջ անունը, և պահում են նրա պատվիրանները, պիտի փրկվեն: Ե՛հշտ այդպես: Ամեն:

ԲԱԺԻՆ 101

Հայտնություն՝ տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեին, Կիրթլենդում, Օհայո, 1833թ. դեկտեմբերի 16-ին (History of the Church, 1.458-464): Այդ ժամանակ Միսսուրիում հավաքված Սրբերը տառապում էին ծանր հալածանքից: Ամբոխները նրանց դուրս էին հանել Ջեկսոն գավառի իրենց տներից, և Սրբերից ոմանք փորձել էին հաստատվել Վան Բուրեն գավառում, սակայն հալածանքը հետևում էր նրանց: Սրբերի մեծ մասն այդ ժամանակ գտնվում էր Միսսուրիի Քլեյ գավառում: Մահվան շատ սպառնալիքներ կային Եկեղեցու անհատ անդամների հանդեպ: Մարդիկ գրկվել էին տան կահույքից, հագուստից, ընտանի անասուններից և այլ անձնական ունեցվածքից. և նրանց դաշտերի բերքի մեծ մասը ոչնչացվել էր:

1-8՝ Սրբերը խրատվում և չարչարվում են իրենց օրինազանցությունների պատճառով. 9-15՝ Տիրոջ զայրույթը կթափվի ազգերի վրա, բայց իր ժողովուրդը պիտի հավաքվի և մխիթարվի. 16-21՝ Միոնն ու նրա ցեղերը պիտի հաստատվեն. 22-31՝ Բնորոշվում է կյանքի բնույթը Հազարամյակի ժամանակ. 32-42՝ Այն ժամանակ Սրբերը պիտի օրհնվեն ու վարձատրվեն. 43-62՝

Ազնվականի և ձիթենիների առակը խորհրդանշում է Միոնի փորձություններն ու վերջնական փրկագնումը. 63-75՝ Սրբերը պետք է շարունակեն հավաքվել. 76-80՝ Տերն է հաստատել Միացյալ Նահանգների Սահմանադրությունը. 81-101՝ Սրբերը պետք է իրենց կրած վնասների դիմաց փոխատուցում խնդրեն՝ կնոջ և անիրավ դատավորի առակի համաձայն:

13ա սուր Միոն:
բ ՎևոՒ 84.99, 105.9-10,
31, 37:
14ա սուր Հայդ Օրսոն:

15ա Հոովմ. Ը.28,
ՎևոՒ 90.24, 105.40:
16ա սուր Անարատ,
Անարատություն:

17ա Հովել Բ.32,
Ալմա 38.4-5:

ՃՇՍԱՐԻՏ ասում են ձեզ՝ ձեր եղբայրների վերաբերյալ, որոնք չարչարվել են, ^ահալածվել և ^բդուրս են գցվել իրենց ժառանգությունից հողից, -

2 Ես՝ Տերս, հանդուրժել եմ, որ ^աչարչարանքները, որոնցով նրանք չարչարվել են, նրանց վրա գան իրենց ^բօրինազանցությունների հետևանքով.

3 Այնուամենայնիվ, ես նրանց ^աիմը կդարձնեմ, և նրանք իմ սեփականությունը կլինեն այն օրը, երբ ես կգամ հավաքելու իմ գոհարները:

4 Հետևաբար, նրանք պետք է անպայման ^ախրատվեն ու փորձվեն, ճիշտ ինչպես ^բԱբրահամը, որին պատվիրվեց գոհաբերել իր միակ որդուն:

5 Քանզի բոլոր նրանք, ովքեր չեն կամենում խրատին համբերել, այլ ^աուրանում են ինձ, չեն կարող ^բսրբագործվել:

6 Ահա, ես ասում եմ ձեզ, որ նրանց մեջ կային գտություններ, և ^ահակառակություններ, և ^բնախանձություն, և վիճաբանություններ, և ^գհեշտասեր ու ընչաքաղց ցանկություններ. հետևաբար, այս բաներով նրանք ապականեցին իրենց ժառանգությունները:

7 Նրանք հապաղում էին ^ալսել

իրենց Տեր Աստծո ձայնը. հետևաբար, Տերը՝ իրենց Աստվածը, հապաղում է լսել նրանց աղոթքները, որ պատասխանի նրանց իրենց նեղության օրը:

8 Իրենց խաղաղության օրը նրանք թեթևամտորեն վերաբերվեցին իմ խորհրդին. սակայն, իրենց ^անեղության օրը նրանք կարիքից ^բխարխափում են՝ փնտրելով ինձ:

9 Ճշմարիտ ասում եմ ձեզ, որ չնայած նրանց մեղքերին, որովայնս լի է ^ակարեկցանքով նրանց հանդեպ: Ես լիովին դուրս չեմ ^բգցի նրանց. և ^գցասման օրը ես ողորմություն կիիշնեմ:

10 Ես երդվել եմ, և հրամանագիրն առաջ է գնացել նախկին պատվիրանով, որը տվել եմ ձեզ, որ ես թույլ պիտի տամ՝ իմ զայրույթի ^ասուրն ընկնի իմ ժողովրդի համար. և ճիշտ ինչպես ես ասացի, այդպես կլինի:

11 Իմ զայրույթը շուտով դուրս պիտի թափվի առանց չափի, բոլոր ազգերի վրա. և դա ես կանեմ, երբ որ նրանց անօրինությունների բաժակը ^ալցվի:

12 Եվ այդ օրը բոլորը, ովքեր կգտնվեն ^ադիտարանի վրա, կամ, այլ խոսքով, ողջ իմ Իսրայելը, պիտի փրկվեն:

101 1ա սուր Հալածել, Հալածանք:
բ ՎևՈՒ 103.1-2, 11, 109.47:
2ա ՎևՈՒ 58.3-4:
բ Մոսիա 7.29-30, ՎևՈՒ 103.4, 105.2-10:
3ա Ես. ԿԲ.3, Մադ. Գ.17, ՎևՈՒ 60.4:
4ա ՎևՈՒ 95.1-2, 136.31: սուր Խրատել, Խրատելը:

բ Ծն. ԻԲ.1-14, Հակոբ 4.5: սուր Աբրահամ:
5ա Մատ. Ժ.32-33, Հռովմ. Ա.16, 2 Նեփի 31.14:
բ սուր Սրբագործում:
6ա սուր Հակառակություն:
բ սուր Նախանձել:
գ սուր Ցանկանալ:
7ա Ես. ԾԹ.2, Մոսիա 11.22-25, 21.15, Ալմա 5.38:

8ա Հել. 12.3:
բ Գոր. ԺԷ.27, Ալմա 32.5-16:
9ա սուր Կարեկցանք. Ողորմած, Ողորմություն:
բ Երեմ. Լ.11:
գ ՎևՈՒ 98.21-22:
10ա ՎևՈՒ 1.13-14:
11ա Հել. 13.14, Եթեր 2.9-11:
12ա սուր Արթուն լինել:

13 Եվ նրանք, ովքեր ցրվել էին, պիտի ^ահավաքվեն:

14 Եվ բոլոր նրանք, ովքեր ^ասգացել են, պիտի մխիթարվեն:

15 Եվ բոլոր նրանք, ովքեր տվել են իրենց ^ակյանքը՝ իմ անվան համար, պիտի պսակվեն:

16 Հետևաբար, թող ձեր սրտերը մխիթարվեն Սիոնի վերաբերյալ. քանզի ամեն մարմին իմ ^աձեռքում է. հանգիստ եղեք և ^բիմացեք, որ ես եմ Աստված:

17 ^աՍիոնը չի շարժվի իր տեղից, չնայած որ նրա զավակները ցրվել են:

18 Նրանք, ովքեր մնում են, և մաքուր են սրտով, պիտի վերադառնան և հասնեն իրենց ^աժառանգություններին, նրանք և նրանց զավակները, հավիտենական ուրախության ^բերգերով՝ ^գկառուցելու Սիոնի ամայի վայրերը,–

19 Եվ այս բոլորը՝ որպեսզի մարգարեների մարգարեությունները կատարվեն:

20 Եվ, ահա, չկա որևէ այլ նշանակված ^ավայր, բացի նրանից, որը նշանակել են ես. ոչ էլ պիտի նշանակվի որևէ այլ վայր, բացի նրանից, որը ես նշանակել եմ իմ սրբերի հավաքման գործի համար,–

21 Մինչև որ կգա օրը, երբ այլևս տեղ չի լինի նրանց համար. և այն ժամանակ, ես ուրիշ վայրեր ունեմ, որոնք ես կնշանակեմ նրանց համար, և դրանք պիտի կոչվեն ^ացցեր՝ Սիոնի ծածքի և ամրության համար:

22 Ահա, իմ կամքն է, որ բոլոր նրանք, ովքեր կանչում են իմ անունը և երկրպագում են ինձ, համաձայն իմ հավիտենական ավետարանի, պետք է միասին ^ահավաքվեն և ^բկանգնեն սուրբ տեղերում.

23 Եվ պատրաստվեն հայտնությանը, որը պիտի գա, երբ իմ խորանում, իմ տաճարը ծածկող ^ավարագույրը, որը թաքցնում է երկիրը, կվերցվի, և ամեն մարմին միասին ^բկուեսնի ինձ:

24 Եվ ամեն ^աապականելի բան, թե՛ մարդիկ, թե՛ դաշտի զազանները, թե՛ երկնքի թռչունները, թե՛ ծովի ձկները, որ բնակվում են ողջ երկրի երեսին, պիտի ^բայրվեն.

25 Եվ նաև տարրերը պիտի ^ահավեն այրող տաքությունից. և բոլոր բաները պիտի դառնան ^բնոր, որպեսզի իմ գիտելիքն ու ^գփառքը բնակվի ողջ երկրի վրա:

26 Եվ այդ օրը մարդու ^աթշնամանքը, և զազանների թշնամանքը,

<p>13աԲ Օր. Լ.3–6, 1 Նեփի 10.14: սո՛ւ Իսրայել – Իսրայելի ցրվելը: 14աՄատ. Ե.4: 15աՄատ. Ժ.39: սո՛ւ Նահատակ, Նահատակություն: 16աՄովսես 6.32: բ Ել. ԺԳ.13–14, Սաղ. ԽԶ.10: 17աՍո՛ւ Սիոն: 18աՎևո՛ւ 103.11–14: բ Ես. ԼԵ.10, Վևո՛ւ 45.71:</p>	<p>սո՛ւ Երզնի: գ Անովս Թ.13–15, Վևո՛ւ 84.2–5, 103.11: 20աՎևո՛ւ 571–4: 21աՎևո՛ւ 82.13–14, 115.6, 17–18: սո՛ւ Ցից: 22աՍո՛ւ Իսրայել – Իսրայելի ցրվելը: բ Մատ. ԻԳ.15, Վևո՛ւ 45.32, 115.6: 23աՍո՛ւ Վարագույր: բ Ես. Խ.5, Վևո՛ւ 38.8, 93.1:</p>	<p>սո՛ւ Հիսուս Քրիստոսի երկրորդ գալուստը: 24աՎևո՛ւ 29.24: բ Սոփ. Ա.2–3, Մաղ. Գ.1, Վևո՛ւ 88.94, ՋՄ–Պ 1.37: 25աԱնովս Թ.5, Բ Պետ. Գ.10–14: սո՛ւ Երկիր – Երկրի մաքրագործումը: բ Հայտ. ԻԱ.5: գ սո՛ւ Հազարամյակ: 26աԵս. ԺԱ.6–9: սո՛ւ Թշնամանք:</p>
---	---	--

քը, այո՛, ամեն մարմնի թշնամանք՝ կվերանա իմ երեսի առաջից:

27 Եվ այդ օրը, այն, ինչ մարդ խնդրի, կտրվի նրան:

28 Եվ այդ օրը, Սատանան գործություն չի ունենա գայթակղելու մարդուն:

29 Եվ չի լինի Վիշտ, որովհետև չի լինի մահ:

30 Այդ օրը, մանուկը չի մահանա, մինչ չծերանա. և նրա կյանքը կլինի, ինչպես ծառի տարիքը.

31 Իսկ երբ նա մահանա, նա չի ննջի, այսինքն՝ հողում, այլ՝ կվերափոխվի մի ակնթարթում, և թկափշտակվի, և նրա հանգիստը կլինի փառահեղ:

32 Այո, ճշմարիտ ասում ենք քեզ, որ այն օրը, երբ Տերը գա, նա թիստանի կդարձնի բոլոր բաները, –

33 Բաներ, որոնք անցած են, և թաքնված բաներ, որոնք ոչ մի մարդ չի իմացել, երկրի բաները, որոնցով այն արարվել էր, և նրա նպատակն ու վախճանը, –

34 Բաներ՝ շատ թանկարժեք, բաներ, որոնք վերևում են, և բաներ, որոնք ներքևում են, բաներ, որ երկրի մեջ են, և երկրի վրա, և երկնքում:

35 Եվ բոլոր նրանք, ովքեր չհալածվում են իմ անվան համար, և հավատքով համբերում են, չնայած նրանք կանչված են վայր

դնելու իրենց կյանքը թիստանում ինձ, այնուամենայնիվ, նրանք ճաշակելու են այդ ողջ փառքից:

36 Ուստի, մի վախեցեք, անգամ մահից. բանից այս աշխարհում ձեր ուրախությունը լիակատար չէ, բայց ինձանով ձեր թուրախությունը լիակատար է:

37 Հետևաբար, մի մտահոգվեք մարմնի համար, ոչ էլ մարմնի կյանքի համար. այլ մտահոգվեք՝ հոգու համար, և հոգու կյանքի համար:

38 Եվ միշտ փնտրեք Տիրոջ երեսը, որ կարողանաք թիստանում տիրել ձեր հոգիներին, և դուք կունենաք հավերժական կյանք:

39 Երբ մարդիկ կանչվում են իմ թիստանական ավետարանով, և ուխտ են անում հավիտենական ուխտով, նրանք համարվում են երկրի թաղը և մարդկանց համը.

40 Նրանք կանչվում են՝ լինելու մարդկանց համը. հետևաբար, եթե երկրի աղը կորցնի իր համը, ահա, այն այլևս ոչնչի պետք չէ, բացի դուրս գցվելուց և մարդկանց ոտքերի տակ կոխկրտվելուց:

41 Ահա, այստեղ է իմաստությունը Միոնի զավակների վերաբերյալ, նույնիսկ շատերի, բայց ոչ բոլորի. նրանք օրինազանցել են, հետևաբար, պետք է անպայման թխրատվեն, –

26բ սուր Խաղաղություն:
28ա Հայտ. Ի.2-3,
1 Նեփի 22.26,
ՎևոՒ 88.110:
29ա Հայտ. ԻԱ.4:
30ա Ես. ԿԵ.20-22,
ՎևոՒ 63.51:
31ա Ա Կոր. ԺԵ.52,
ՎևոՒ 43.32:
բ Ա Թես. Դ.15-16:
32ա ՎևոՒ 29.11:

սուր Հազարամյակ:
բ ՎևոՒ 121.26-28:
33ա սուր Աստծո
խորհուրդները:
35ա ՎևոՒ 63.20:
սուր Հալածել,
Հալածանք:
բ ՎևոՒ 98.13:
36ա սուր Մահ ֆիզիկական:
բ սուր Ուրախություն:
37ա սուր Հոգի:

38ա Բ Մն. Է.14,
ՎևոՒ 93.1:
բ սուր Համբերություն:
39ա սուր Նոր և
հավիտենական ուխտ:
բ Մատ. Ե.13,
ՎևոՒ 103.10:
41ա սուր Խրատել,
Խրատելը:

42 Նա, ով ^բբարձրացնում է իրեն, պիտի խոնարհեցվի, և նա, ով ^բխոնարհեցնում է իրեն, պիտի բարձրացվի:

43 Եվ արդ, ես յույց կտամ ձեզ մի առակ, որ դուք կարողանաք իմանալ իմ կամքը Սիոնի փրկագնման վերաբերյալ:

44 Մի ^աազնվական շատ ընտիր մի հողակտոր ուներ. և նա իր ծառաներին ասաց. Գնացեք իմ ^բայգին, այսինքն՝ շատ ընտիր այն հողակտորը, և տնկեք տասներկու ձիթենի:

45 Եվ ^ապահապաններ նշանակեք դրանց շուրջը, և մի աշտարակ կառուցեք, որպեսզի մեկը պահապան լինի աշտարակի վրա, կարողանա հսկել շրջակա տարածքը, որպեսզի երբ թշնամին գա, որ փշացնի և իրեն վերցնի իմ այգու պտուղը, իմ ձիթենիները չկտրվեն:

46 Արդ, ազնվականի ծառաները գնացին և արեցին, ինչպես նրանց պատվիրել էր իրենց տերը և տնկեցին ձիթենիները և դրա շուրջը ցանկապատ կառուցեցին և պահապան նշանակեցին և սկսեցին աշտարակ կառուցել:

47 Եվ մինչ նրանք դնում էին դրա հիմքը, նրանք սկսեցին իրար մեջ խոսել. Իսկ ինչի՞ համար է ուզում իմ տերն այս աշտարակը:

48 Եվ երկար ժամանակ իրար մեջ խորհուրդ արեցին՝ ասելով. Ինչի՞ համար է ուզում իմ տերն այս աշտարակը, տեսնելով հանդերձ, որ խաղաղ ժամանակներ են:

49 Ավելի լավ չէ՞ր այս դրամը տրվեր վաշխառուներին: Քանզի այդ բաների կարիքը չկա:

50 Եվ մինչ նրանք մեկը մյուսի հետ տարածայնության մեջ էին, նրանք շատ ծուլացան և ականջ չդրեցին իրենց տիրոջ պատվիրաններին:

51 Եվ թշնամին եկավ գիշերով, և կտորեց ^ացանկապատը. և ազնվականի ծառաներն արթնացան և վախեցան ու փախան. և թշնամին կործանեց նրանց աշխատանքը և կտորեց ձիթենիները:

52 Արդ, ահա, ազնվականը՝ այգու տերը, կանչեց իր ծառաներին, և նրանց ասաց. Ինչո՞ւ: Ի՞նչն է այս մեծ չարագործության պատճառը:

53 Արդյոք չպե՞տք է դուք անեիք, ինչպես ես պատվիրել էի ձեզ, և, – այգին տնկելուց, և դրա շուրջը ցանկապատ կառուցելուց, և դրա շուրջը պահապաններ նշանակելուց հետո, – մաև աշտարակ կառուցեիք, և պահապան դնեիք աշտարակի վրա, և հսկեիք իմ այգին ու քնով չանցնեիք, որ չլիներ թե թշնամին գար ձեր վրա:

54 Եվ ահա, աշտարակի վրայի պահապանը կտեսներ թշնամուն, մինչ նա հեռվում էր. և այն ժամանակ դուք կպատրաստվեիք և թույլ չէիք տա, որ թշնամին ցանկապատը կտորեր և կփրկեիք իմ այգին կործանիչի ձեռքից:

55 Եվ այգու տերն իր ծառաներից մեկին ասաց. Գնա և հավաքիր իմ մնացած ծառաներին, և վերցրու իմ տան ^աողջ ամրու-

42ա Արդիա Ա.3–4, Դուկ. ԺԳ.11, Հել. 4.12–13: Բ Դուկ. ԺԸ.14: սո՛ւ Խոնարհ,

Խոնարհություն: 44ա ՎևՈՒ 103.21–22: Բ սո՛ւ Տիրոջ այգին: 45ա Եզեկ. ԼԳ.2, 7, 3 Նեփի 16.18:

սո՛ւ Արթուն լինել: 51ա Ես. Ե.1–7: 55ա ՎևՈՒ 103.22, 29–30, 105.16, 29–30:

քյունը, որոնք են իմ զինվորները՝ իմ երիտասարդ տղամարդիկ, և նաև իմ ծառաների միջից նրանք, որ միջին տարիքի են, որոնք իմ տան ամբողջությունն են, բացի միայն նրանցից, որոնց ես նշանակել եմ, որ մնան.

56 Եվ անմիջապես գնա իմ այգու հողը, և փրկագնիր իմ այգին. քանզի այն իմն է. ես այն գնել եմ փողով:

57 Հետևաբար, անհապաղ հասիր իմ հողը. քանզի իմ թշնամիների պարիսպները. տապալիր նրանց աշտարակը և ցրիր նրանց պահապաններին:

58 Եվ որքան որ նրանք ի մի հավաքվեն ձեր դեմ, իմ փրեժն առ իմ թշնամիներից, որ շուտով ես կարողանամ գալ իմ տան մնացածով և տիրել հողին:

59 Եվ ծառան ասաց իր տիրոջը. Ե՞րբ պիտի այս բաները լինեն:

60 Եվ նա ասաց իր ծառային. Երբ որ ես կամենամ. անմիջապես գնա և կատարիր բոլոր բաները, որոնք պատվիրեցի քեզ.

61 Եվ սա պիտի լինի իմ կնիքն ու օրհնությունը քո վրա,– հավատարիմ և փիմաստուն տնտես՝ իմ տան մեջ, թառավարիչ՝ իմ թագավորությունում:

62 Եվ նրա ծառան անմիջապես գնաց և արեց բոլոր բաները, ինչ որ իր տերը պատվիրել էր իրեն. և շատ օրեր անց բոլոր բաները կատարվեցին:

63 Բացի այդ, ճշմարիտ ասում եմ ձեզ, ես ցույց կտամ ձեզ իմ

ինաստությունը բոլոր եկեղեցիների վերաբերյալ, որքան որ նրանք կամենում են ուղեկցվել իրենց փրկության համար ճիշտ և պատշաճ ձևով,–

64 Որ իմ սրբերի հավաքվելու գործը շարունակվի, որպեսզի ես կարողանամ հաստատել նրանց իմ անվան համար՝ սուրբ վայրերում. քանզի ՚հնձի ժամանակը եկել է, և իմ խոսքն անպայման պիտի ՚կատարվի:

65 Ուստի, ես պետք է հավաքեմ իմ ժողովրդին՝ ցորենի և ՚որոմների առակի համաձայն, որպեսզի ցորենը պահվի շտեմարաններում, որ հավերժական կյանք ունենա և պահվի ՚սելեստիալ փառքով, երբ ես կգամ իմ Հոր արքայության մեջ՝ հատուցելու ամեն մարդու իր գործի համեմատ.

66 Մինչդեռ որոմները պիտի կապվեն խրճերով, և նրանց կապերն ամրացվեն, որպեսզի նրանք ՚այրվեն անմար կրակով:

67 Ուստի, ես պատվիրան եմ տալիս բոլոր եկեղեցիներին, որ նրանք պետք է հավաքվեն այն վայրերում, որ ես նշանակել եմ:

68 Այնուամենայնիվ, ինչպես ես ասացի նախորդ պատվիրանում, թող ձեր ՚հավաքվելը չլինի հապճեպ, ոչ էլ փախուստով. այլ թող բոլոր բաները նախապես պատրաստ լինեն:

69 Եվ որպեսզի բոլոր բաները նախապես պատրաստ լինեն, հետևեք պատվիրանին, որը ես տվեցի այս բաների վերաբերյալ,–

70 Որն ասում, կամ սովորեցնում

58ա ՎևՈՒ 97.22-24, 105.15:
61ա ՎևՈՒ 78.22:
բ Մատ. ԻԵ.20-23:
62ա ՎևՈՒ 105.37:
64ա ՎևՈՒ 87.8:

բ ՎևՈՒ 33.3, 7:
սուր Հունձք:
գ ՎևՈՒ 1.38:
65ա Մատ. ԺԳ.6-43,
ՎևՈՒ 86.1-7:

բ սուր Սելեստիալ փառք:
66ա Նաում Ա.5,
Մատ. Գ.12,
ՎևՈՒ 38.12, 63.33-34:
68ա ՎևՈՒ 58.56:

է՝ փողով ^ազնել բոլոր հողերը, որոնք հնարավոր է գնել փողով, այն հողի մերձակա տարածքում, որը ես նշանակել եմ լինելու Սիոնի հող՝ իմ սրբերի հավաքումը սկսելու համար.

71 Բոլոր հողերը, որոնք հնարավոր է գնել Ջեկսոն գավառում և նրա հարակից գավառներում, իսկ մնացածը թողեք իմ ձեռքում:

72 Արդ, ճշմարիտ ասում եմ ձեզ. Թող բոլոր եկեղեցիները մեկտեղ հավաքեն իրենց դրամը. թող այս բաներն արվեն իրենց ժամանակին, բայց ոչ ^ահապճեպ. և հետևեք, որ բոլոր բաները պատրաստ ունենաք ձեր առաջ:

73 Եվ թող նշանակվեն պատվարժան մարդիկ, այսինքն՝ իմաստուն մարդիկ, և ուղարկեք նրանց գնելու այդ հողերը:

74 Եվ արևելյան շրջանների եկեղեցիները, երբ որ նրանք ամրապնդվեն, եթե նրանք կկամենան ականջ դնել այս խորհրդին, նրանք կարող են հողեր գնել և հավաքվել այնտեղ. և այս ձևով նրանք կարող են հաստատել Սիոնը:

75 Նույնիսկ հիմա արդեն բավականաչափ կուտակված է, այո, այսինքն՝ առատություն, Սիոնը փրկագնելու և նրա ամայի վայրերը հաստատելու համար, այլևս չտապալվելու, եթե իմ անվամբ կոչվող եկեղեցիները ^ակամենան ականջ դնել իմ ձայնին:

76 Եվ բացի այդ, ես ասում եմ ձեզ. Նրանք, ովքեր ցրվել են

իրենց թշնամիների կողմից, իմ կամքով է, որ նրանք շարունակեն վնասների դիմաց փոխհատուցում և փրկագումն խնդրել նրանց ձեռքով, ովքեր կառավարիչներ ու իշխանավորներ են դրված ձեր վրա,–

77 Ժողովրդի օրենքների ու ^ասահմանադրության համաձայն, որոնք ես թույլ եմ տվել, որ հաստատվեն, և որոնք պետք է պահպանվեն՝ ամեն մարմնի ^բիրավունքների ու պաշպանության համար՝ համաձայն արդար և սուրբ սկզբունքների.

78 Որ ամեն մարդ կարողանա գործել վարդապետությամբ և սկզբունքով, ինչ վերաբերում է ապագային, համաձայն ^աբարոյական կամքի ազատության, որը տվել եմ նրան, որպեսզի ^բդատաստանի օրն ամեն մարդ ^գպատասխան տա իր իսկ մեղքերի համար:

79 Հետևաբար, արդարացի չէ, որ մի մարդ մեկ ուրիշի գերության տակ լինի:

80 Եվ այդ նպատակով եմ ես հաստատել այս երկրի ^աՍահմանադրությունը, իմաստուն մարդկանց ձեռքով, որոնց ես բարձրացրել եմ հենց այդ նպատակի համար, և արյուն ^բթափելով փրկագնել եմ երկիրը:

81 Արդ, ինչի՞ ^գկնմանեցնեմ Սիոնի գավակներին: Ես նրանց պիտի նմանեցնեմ կնոջ և անիրավ դատավորի ^աառակին, քանզի մարդիկ պետք է միշտ ^բաղոթեն ու չմվաղեն, որն ասում է,–

70ա ՎևոՒ 63.27–29:
72ա Ես. ԾԲ.10–12:
75ա Ալմա 5.37–39:
77ա սոՒ Կառավարություն:
բ սոՒ Անկախություն:
78ա սոՒ Կամբի
ազատություն:

բ սոՒ Վերջին դատաստան:
գ սոՒ Հաշիվ, Պատասխանատու, Պատասխանատվություն:
80ա 2 Նեփի 1.7–9,
ՎևոՒ 98.5–6:

սոՒ Սահմանադրություն:
բ 1 Նեփի 13.13–19:
81ա Գուկ. ԺԼ.1–8:
բ սոՒ Աղոթք:

82 Մի քաղաքում մի դատավոր կար, որն Աստծուց չէր վախենում, ոչ էլ մարդկանց էր հաշվի առնում:

83 Եվ այդ քաղաքում մի այրի կար, և նա գալիս էր նրա մոտ՝ ասելով. Վրեժա առ իմ հակառակորդից:

84 Եվ նա որոշ ժամանակ չէր ցանկանում, սակայն ի վերջո ինքն իրեն ասաց. Թեև Աստծուց չեմ վախենում, ոչ էլ մարդկանց եմ հաշվի առնում, բայց, քանի որ այս այրին անհանգստացնում է ինձ, ես նրա վրեժը կառնեմ, որ անվերջ մոտս գալով չհոգնեցնի ինձ:

85 Այդպես կնամանեցնեմ Սիոնի գավակներին:

86 Թող նրանք խնդրեն՝ դատավորի ոտքերն ընկնելով.

87 Իսկ եթե նա ականջ չդնի նրանց, թող նրանք խնդրեն՝ նահանգապետի ոտքերն ընկնելով.

88 Իսկ եթե նահանգապետն ականջ չդնի նրանց, թող նրանք խնդրեն՝ նախագահի ոտքերն ընկնելով.

89 Իսկ եթե նախագահն ականջ չդնի նրանց, ապա Տերը վեր կկենա և առաջ կգա իր՝ քարքարած տեղից և իր կատաղի գայրույթով կչարչարի այդ ազգին.

90 Եվ իր այրող դժգոհությամբ ու իր կատաղի բարկությամբ, իր ժամանակին, կկտրի այն ամբարիշտ, անհավատարիմ և անարդար՝ տնտեսներին և նրանց բաժին կնշանակի կեղծավորների ու քանհավատների հետ.

91 Այսինքն՝ դրսի խավարում,

որտեղ՝ լաց ու կոծ է և աստամների կրճտոց:

92 Աղոթե՛ք հետևաբար, որ նրանց ականջները բացվեն ձեր աղաղակների համար, որ ես կարողանամ՝ ողորմած լինել նրանց հանդեպ, որպեսզի այս բաները չգան նրանց վրա:

93 Այն, ինչ ձեզ ասացի, պետք է անպայման լինի, որպեսզի բոլոր մարդիկ առանց՝ արդարացման մնան.

94 Որ իմաստուն մարդիկ և կառավարիչները կարողանան լսել և իմանալ այն, ինչ նրանք երբեք չեն՝ գիտակցել.

95 Որպեսզի ես կարողանամ սկսել իրագործել իմ գործը՝ իմ տարօրինակ գործը, և կատարեմ իմ պաշտոնը, իմ տարօրինակ պաշտոնը, որպեսզի մարդիկ կարողանան արդարին ամբարիշտից քտարբերել, ասում է ձեր Աստվածը:

96 Եվ բացի այդ, ես ասում եմ ձեզ, որ իմ պատվիրանին ու կամքին հակառակ է այն, որ իմ ծառա Սիդնի Գիլբերտն իմ թշնամիների ձեռքը վաճառի իմ՝ շտեմարանը, որը ես նշանակել եմ իմ ժողովրդի համար:

97 Մի թողեք, որ այն, ինչը ես նշանակել եմ, պղծվի իմ թշնամիների կողմից, նրանց թույլտվությամբ, ովքեր իրենց՝ կոչում են իմ անունով.

98 Քանզի դա շատ դառը և ցավազին մեղք է իմ դեմ և իմ ժողովրդի դեմ, այն բաների

89ա Ես. ԽԵ.15, ՎևՈՒ 121.1, 4, 123.6:
90ա սուր ՏՏտես:
բ Հայտ. ԻԱ.8:
սուր Անհավատություն:
91ա Մատ. ԻԵ.30, ՎևՈՒ 19.5, 29.15-17,

124.8:
92ա սուր Ողորմած, Ողորմություն:
93ա Հռովմ. Ա.18-21:
94ա Ես. ԾԲ.15, 3 Նեփի 20.45, 21.8:
95ա Ես. ԻԸ.21, ՎևՈՒ 95.4:

բ Մաղ. Գ.18:
սուր Չանազանելու պարզե:
96ա սուր Շտեմարան:
97ա ՎևՈՒ 103.4, 112.25-26, 125.2:

հետևանքով, որոնք ես հրամանագրել եմ, և որոնք շուտով պիտի պատահեն ազգերի հետ:

99 Ուստի, դա իմ կամքն է, որ իմ ժողովուրդը պահանջի, և հայց ներկայացնի այն բանի համար, որը ես նշանակել եմ նրանց համար, թեև նրանց թույլ չեն տա բնակվել այնտեղ:

100 Այնուամենայնիվ, ես չեմ

ասում, որ նրանք չեն բնակվի այնտեղ. քանզի որքան որ նրանք իմ արքայությանը վայել պտուղներ և գործեր առաջ բերեն, նրանք կբնակվեն այնտեղ:

101 Նրանք պիտի կառուցեն, և մեկ ուրիշը չպիտի ժառանգի այն. նրանք պիտի այգիներ տնկեն, և պիտի ուտեն դրա պտուղը: Դիշտ այդպես: Ամեն:

ԲԱԺԻՆ 102

Արձանագրություն Եկեղեցու առաջին բարձրագույն խորհուրդը կազմակերպելու մասին, Կիրթլենդում, Օհայո, 1834թ. փետրվարի 17-ին (History of the Church, 2.28–31): Արձանագրության բնօրինակը գրվել էր Երեցներ Օլիվեր Քատլերիի և Օրսոն Հայդի կողմից: Երկու օր անց, արձանագրությունը սրբագրվել էր Մարգարեի կողմից, կարդացվել բարձրագույն խորհրդի առաջ և ընդունվել այդ խորհրդի կողմից: 30–32 հատվածները, որոնք վերաբերում են Տասներկու Առաքյալների Խորհրդին, ավելացվել են Մարգարե Ջոզեֆ Սմիթի կողմից, 1835թ., երբ նա պատրաստում էր այս բաժինը հրատարակել Վարդապետություն և Ուխտերի մեջ:

1–8՝ Բարձրագույն խորհուրդը նշանակվում է լուծելու կարևորագույն խնդիրներ, որոնք առաջանում են Եկեղեցում. 9–18՝ Տրվում են գործերը լսելու ընթացակարգերը. 19–23՝ Խորհրդի նախագահն է կայացնում որոշումը. 24–34՝ Շարադրվում է բողոքարկման ընթացակարգը:

ԱՅՍ օրը քանչորս քահանայապետերի ընդհանուր խորհուրդ հավաքվեց Ջոզեֆ Սմիթ կրտսերի տանը, հայտնությամբ, և սկսեց կազմակերպել Քրիստոսի եկեղեցու՝ բարձրագույն խորհուրդը, որը պետք է կազմվեր տասներկու քահանայապետերից և մեկ կամ երեք նախագահներից, ինչպես որ գործը կպահանջեր:

2 Բարձրագույն խորհուրդը հայտնությամբ նշանակվեց, որ լուծի այն կարևորագույն խնդիրները, որոնք հնարավոր է առաջանան եկեղեցում, որոնք եկեղեցու կամ՝ եպիսկոպոսի խորհուրդը չի կարողանա լուծել՝ ի բավարարումն կողմերի:

3 Ջոզեֆ Սմիթ կրտսերը, Սիդնի Ռիգդոնը և Ֆրեդերիկ Վիլյամսը խորհրդի ձայնով հաստատվեցին նախագահներ. իսկ քահանայապետեր Ջոզեֆ Սմիթ ավագը, Ջոն Սմիթը, Ջոզեֆ Կոն, Ջոն Ջոնսոնը, Մարտին Հարրիսը, Ջոն Ս. Քարտերը, Ջարեդ Քարտերը, Օլիվեր Քատլերին, Մեմյուել Հ. Սմիթը, Օրսոն Հայդը, Սիլվեստեր Սմիթը և Լյուկ Ջոնսոնը խորհրդի միա-

101ա Ես. ԿԵ.21–22:
սուր Հազարամյակ:

102 1ա սուր Բարձրագույն
խորհուրդ:

2ա ՎևոՒ 107.72–74:

բան ձայնով ընտրվեցին՝ մշտական խորհուրդ լինելու եկեղեցու համար:

4 Այնուհետև, վերոհիշյալ խորհրդակազմներին հարցվեց, թե արդյոք նրանք ընդունում են իրենց նշանակումները, և արդյոք նրանք կգործեն այդ պաշտոնում՝ համաձայն երկնային օրենքի, որին նրանք բոլորը պատասխանեցին, որ ընդունում են իրենց նշանակումները, և իրենց պաշտոնում կծառայեն՝ իրենց տրված Աստծո շնորհի համաձայն:

5 Վերոհիշյալ խորհրդակազմներին նշանակելիս, եկեղեցու անունից և եկեղեցու համար քվեարկող խորհուրդը կազմողների թիվը քառասուներեք էր, որոնք էին. ինը քահանայապետ, տասնյոթ երեց, չորս քահանա և տասներեք անդամ:

6 Սահմանվեց. որ բարձրագույն խորհուրդը գործելու գործություն չի ունենա, եթե վերոհիշյալ խորհրդակազմներից յոթը կամ պատշաճ կարգով նշանակված նրանց հաջորդողները ներկա չեն:

7 Այդ յոթը գործություն պիտի ունենան նշանակելու ուրիշ քահանայապետեր, որոնց նրանք արժանավոր և ընդունակ կհամարեն՝ բացակայող խորհրդակազմների փոխարեն գործելու համար:

8 Սահմանվեց. որ որևէ թափուր պաշտոն առաջանալիս, վերոհիշյալ խորհրդակազմներից որևէ մեկի մահվան, օրինազանցության պատճառով պաշտոնագրկման կամ եկեղեցու այս տարածքի դեկավարությունից հեռանալու դեպքում, այն պետք է զբաղեցվի նախագահի կամ նախագահների

կողմից առաջարկված անձով, և վավերացվի այդ նպատակով հրավիրված քահանայապետերի ընդհանուր խորհրդի ձայնով, որը կգործի եկեղեցու անունից:

9 Եկեղեցու նախագահը, որը նաև խորհրդի նախագահն է, նշանակվում է՝ ^ահայտնությամբ, և իր պաշտոնավարության մեջ է ^բհաստատվում եկեղեցու ձայնով:

10 Եվ իր պաշտոնի կոչման համաձայն է, որ նա պետք է նախագահի եկեղեցու խորհրդի վրա. և դա նրա առանձնաշնորհն է, որ նրան օգնեն երկու այլ նախագահներ, նշանակված նույն ձևով, ինչպես անձամբ ինքն է նշանակվել:

11 Եվ նրա նշանակված օգնականներից մեկի կամ երկուսի բացակայության դեպքում, նա գործություն ունի առանց օգնականի նախագահել խորհրդում. և եթե նա ինքը բացակայում է, մյուս նախագահները, միասին, թե առանձին, գործություն ունեն նախագահել նրա փոխարեն:

12 Ամեն անգամ, երբ Քրիստոսի եկեղեցու բարձրագույն խորհուրդը պատշաճ կարգով կազմավորված է, համաձայն վերը նկարագրված օրինակի, տասներկու խորհրդակազմների պարտականությունը պիտի լինի՝ վիճակ գցել թվերով, և դրանով պարզել, թե տասներկուսից ով պետք է խոսի առաջինը, սկսելով թիվ մեկից, և այդպես հաջորդականությամբ, մինչև տասներկու թիվը:

13 Ամեն անգամ, երբ այս խորհուրդը հավաքվում է քննելու որևէ գործ, տասներկու խորհրդակազմները պետք է խորհրդածեն, թե արդյոք այն դժվար է, թե ոչ. եթե

այն դժվար չէ, խորհրդականներից միայն երկուսը պետք է խոսեն այդ մասին՝ համաձայն վերևում գրված ձևի:

14 Բայց եթե այն դժվար համարվի, պիտի նշանակվեն չորսը. իսկ եթե ավելի դժվար՝ վեցը. սակայն ոչ մի դեպքում չպետք է նշանակվեն խոսելու վեցից ավելին:

15 Մեղադրվողի իրավունքն է, բոլոր գործերում, ունենալ խորհրդրդի մեկ երկրորդի ձայնը՝ անարգանքը կամ անարդարությունը կանխելու համար:

16 Եվ խորհրդականները, որոնք նշանակված են խորհրդի առաջ խոսելու, փաստը քննելուց հետո, պետք է ճշմարիտ լույսի ներքո ներկայացնեն գործը խորհրդի առաջ. և ամեն մարդ պետք է խոսի անաչառությամբ և ^աարդարադատությամբ:

17 Այն խորհրդականները, որոնք քաշել են զույգ թվեր, այսինքն՝ 2, 4, 6, 8, 10 և 12, այն անհատներն են, որոնք պետք է խոսեն ի նպաստ մեղադրվողի, և կանխեն անարգանքն ու անարդարությունը:

18 Բոլոր գործերում մեղադրողը և մեղադրվողն արտոնություն պետք է ունենան խոսելու խորհրդի առաջ՝ ի պաշտպանություն իրենց, փաստարկները լսելուց և այն բանից հետո, երբ խորհրդականները, որոնք նշանակվել էին գործի առնչությամբ խոսելու, ավարտել են իրենց դիտողությունները:

19 Հետո, երբ փաստարկները լսվել են, խորհրդականները, մեղադրողը և մեղադրվողը խոսել են, նախագահը պետք է վճիռ կացնի, տվյալ գործի վերաբերյալ

ունեցած հասկացողության համաձայն, և ներկայացնի տասներկու խորհրդականներին՝ նրանց քվեարկումով այն վավերացնելու համար:

20 Բայց եթե մնացած խորհրդրդականները, ովքեր չեն խոսել, կամ նրանցից որևէ մեկը, փաստարկներն ու միջնորդություններն անաչառությամբ լսելուց հետո նախագահի որոշման մեջ սխալ են գտնում, նրանք կարող են հայտնել այդ մասին, և գործը պետք է վերանայվի:

21 Եվ եթե ուշադիր վերանայելուց հետո գործի վերաբերյալ որևէ լրացուցիչ լույս բացվի, ապա որոշումը պետք է համապատասխանաբար փոխվի:

22 Բայց եթե լրացուցիչ լույս չբացվի, ապա առաջին որոշումը պետք է մնա, և խորհրդի մեծամասնությունը զորություն ունի նույնը հաստատելու:

23 ^աՎարդապետության և սկզբունքի հետ կապված դժվարությունների դեպքում, եթե չկա բավականաչափ գրվածք, որպեսզի գործը խորհրդի մտքի համար պարզ դարձվի, նախագահը կարող է խնդրել և ^բհայտնությամբ ստանալ Տիրոջ միտքը:

24 Քահանայապետերը, երբ հեռվում են գտնվում, զորություն ունեն խորհուրդ կանչելու և կազմելու, վերը նկարագրված օրինակի համաձայն, դժվարությունները հարթելու համար, երբ կողմերը կամ նրանցից որևէ մեկը կպահանջեն դա:

25 Եվ քահանայապետերի այս խորհուրդը զորություն կունենա իր կազմից մեկին նշանակելու, որ

16ա սոՒ Արդարադատություն:

23ա ԹՎ. Թ. 8: ք սոՒ Հայտնություն:

ծամանակավորապես նախագահի մնան խորհրդում:

26 Վերոհիշյալ խորհրդի պարտականությունը պետք է լինի՝ իրենց վարած գործի մի օրինակն անմիջապես ուղարկել Եկեղեցու Առաջին Նախագահության աթոռի բարձրագույն խորհրդին՝ իրենց որոշմանը կցելով վկայությունների ամբողջական հաղորդագրությունը:

27 Եթե կողմերը կամ նրանցից մեկը բավարարված չէ վերոհիշյալ խորհրդի որոշմամբ, նրանք կարող են դիմել Եկեղեցու Առաջին Նախագահության աթոռի բարձրագույն խորհրդին, և գործը դնել վերանայման, որը պետք է կատարվի նախորդ գրված օրինակի համաձայն, ասես մնան ոչ մի որոշում չի կայացվել:

28 Հեռվում գտնվող քահանայապետների այս խորհուրդը, պետք է կանչվի միայն եկեղեցական «ամենաբարդ գործերի համար. և հասարակ ու սովորական որևէ գործ բավարար չպետք է լինի մնան խորհուրդ կանչելու համար:

29 Ճանփորդող կամ տեղաբնակ քահանայապետները, հեռվում, գործություն ունեն ասելու, թե արդյոք անհրաժեշտություն կա կանչելու մնան խորհուրդ, թե ոչ:

30 Տարբերություն կա ընդունած որոշումների մեջ, բարձրագույն խորհրդի կամ ճանփորդող քահանայապետների, որ հեռվում են, և «ճանփորդող բարձրագույն

խորհրդի, որը բաղկացած է տասներկու Քառաքյալներից:

31 Առաջինի որոշումը ենթակա է բողոքարկման. սակայն վերջինի որոշումը՝ ոչ:

32 Վերջինը կարող է քննության առնվել միայն եկեղեցու գերագույն իշխանությունների կողմից՝ օրինագանցության առկայության դեպքում:

33 Վճռվեց. որ Եկեղեցու Առաջին Նախագահության աթոռի նախագահը կամ նախագահները գործություն կունենան որոշելու, բողոքարկումը և կից փաստերն ու հաղորդագրություններն ուսումնասիրելուց հետո, թե արդյոք մնան որևէ գործ, որը բողոքարկված է, իրավացիորեն է ներկայացված վերանայման:

34 Այնուհետև, տասներկու խորհրդականներն սկսեցին վիճակ գցել կամ վիճակահանություն կատարել, որոշելու համար, թե ով պետք է խոսի առաջինը, և արդյունքը եղավ հետևյալը, անվանապես՝ 1. Օլիվեր Քատլերի, 2. Ջոզեֆ Կո, 3. Սեմյուել Հ. Սմիթ, 4. Լյուկ Ջոնսոն, 5. Ջոն Ս. Քարտեր, 6. Սիլվեստեր Սմիթ, 7. Ջոն Ջոնսոն, 8. Օրսոն Հայդ, 9. Ջարեդ Քարտեր, 10. Ջոզեֆ Սմիթ ավագ, 11. Ջոն Սմիթ, 12. Մարտին Հարրիս: Աղոթքից հետո համաժողովը փակվեց:

Գործավարներ՝

ՕԼԻՎԵՐ ՔԱՏԻԳԵՐԻ,

ՕՐՍՈՆ ՀԱՅԳ

ԲԱԺԻՆ 103

Հայտնություն տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեի միջոցով, Կիրթլենդում, Օհայո, 1834թ. փետրվարի 24-ին (History of the Church, 2.36–39):

28ա Վև.ՈՒ 107.78:

30ա Վև.ՈՒ 107.23–24,

35–38:

բ սոՒ Առաքյալ:

Այս հայտնությունը ստացվել էր Փարլի Պ. Պրատի և Լայման Ուայթի՝ Օհայոյի Կիրթլենդ ժամանելուց հետո, որոնք եկել էին Միսսուրիից, որ Մարգարեի հետ խորհրդակցեն Սրբերին սպոփելու և Ջեկսոն գավառի իրենց հողերում նրանց վերականգնելու վերաբերյալ:

1-4 Ինչու է Տերը թույլ տվել, որ Ջեկսոն գավառի Սրբերը հալածվեն. 5-10՝ Սրբերը կհաղթեն, եթե պատվիրանները պահեն. 11-20՝ Միոնի փրկագնումը կլինի զորությանը, և Տերը կզնա իր ժողովրդի առաջից. 21-28՝ Սրբերը պետք է հավաքվեն Միոնում, և նրանք, ովքեր վայր են դնում իրենց կյանքը, կրկին կգտնեն այն. 29-40՝ Բազմաթիվ եղբայրներ կանչվում են կազմելու Միոնի ճամբարը և գնալու Միոն. նրանց հաղթանակ է խոստացվում, եթե հավատարիմ լինեն:

ՃՇՄԱՐԻՏ ասում են ձեզ, իմ բարեկամներ, ահա, ես հայտնություն և պատվիրան կտամ ձեզ, որպեսզի դուք իմանաք, թե ինչպես «վարվեք՝ ձեր եղբայրների փրկության և փրկագնման հարցում ձեր պարտքը կատարելիս, որոնք ցրված են Միոնի հողում.

2 «Զշված ու զարկված լինելով իմ թշնամիների ձեռքով, որոնց վրա, ինձ հարմար ժամանակ, ես առանց չափի դուրս կթափեմ իմ զայրույթը:

3 Քանզի ես մինչև այժմ հանդուրժել եմ, որ նրանք կարողանան «լցնել իրենց անօրինությունների չափը, որ նրանց բաժակը լցվի.

4 Եվ որ նրանք, ովքեր իրենց կոչում են իմ անունով, կարողանան

մի փոքր ժամանակով «խրատվել դառը և վշտալի խրատով, որովհետև նրանք ամբողջովին Բականջ չէին դնում ցուցումներին և պատվիրաններին, որոնք ես տվել եմ նրանց:

5 Բայց ճշմարիտ ասում են ձեզ, որ ես մի հրամանագիր եմ հրամանագրել, որն իմ ժողովուրդը պետք է իրագործի, որքան որ նրանք հենց այս ժամից ի վեր ականջ կդնեն այն «խորհրդին, որը ես՝ Տերս՝ նրանց Աստվածը, պիտի տամ նրանց:

6 Ահա նրանք կսկսեն հաղթել իմ թշնամիներին, հենց այս ժամից ի վեր, քանի որ ես հրամանագրել եմ դա:

7 Եվ «լսելով ու հետևելով բոլոր խոսքերին, որոնք ես՝ Տերս՝ նրանց Աստվածը, պիտի խոսեն նրանց հետ, նրանք երբևէ չեն դադարի հաղթել, մինչև որ աշխարհի Թագավորությունները չհպատակեցվեն իմ ոտքերի տակ, և երկիրը զչտրվի արբերին՝ հավիտյանս հավիտենից այն Խորելու համար:

8 Բայց որքան որ նրանք չեն «պահի իմ պատվիրանները, և ականջ չեն դնի, որ հետևեն իմ բոլոր խոսքերին, աշխարհի թագավորությունները պիտի հաղթեն նրանց:

9 Քանզի նրանք նշանակված էին՝

103 1ա ՎևՈՒ 43.8:
բ ՎևՈՒ 101.43-62:
2ա ՎևՈՒ 101.1, 109.47:
3ա Ալմա 14.10-11, 60.13:
4ա ՎևՈՒ 95.1:
սու՝ Խրատել,

Խրատելը:
բ ՎևՈՒ 101.2, 105.2-6:
5ա սու՝ Խորհուրդ:
7ա ՎևՈՒ 35.24:
սու՝ Հնազանդություն,
Հնազանդ, Հնազանդվել:

բ Գան. Բ.44:
գ Գան. Է.27:
դ սու՝ Սուրբ:
ե ՎևՈՒ 38.20:
8ա Մոսիա 1.13,
ՎևՈՒ 82.10:

«Լույս լինելու աշխարհի համար և փրկիչները լինելու մարդկանց.

10 Եվ որքան որ նրանք մարդկանց փրկիչները չեն, նրանք նման են «աղի, որը կորցրել է իր համը, և հետևաբար ոչնչի պետք չէ, բացի միայն դուրս գցելուց և մարդկանց ոտքերի տակ կոխկրտավելուց:

11 Բայց ճշմարիտ ասում են ձեզ. Ես որոշել եմ, որ ձեր եղբայրները, որոնք ցրվել են, պետք է վերադառնան իրենց ժառանգության «հողերը և պետք է կառուցեն Սիոնի ամայի վայրերը:

12 Քանզի «շատ նեղությունից հետո, ինչպես ասել են ձեզ նախկին պատվիրաճում, գալիս են օրհնությունները:

13 Ահա, սա է այն օրհնությունը, որը ես խոստացել եմ՝ ձեր նեղություններից և ձեր եղբայրների նեղություններից հետո, – ձեր փրկագնումը և ձեր եղբայրների փրկագնումը, այսինքն՝ նրանց վերականգնումը Սիոնի հողում, որ հաստատվեն և այլևս չտապալվեն:

14 Այնուամենայնիվ, եթե նրանք պղծեն իրենց ժառանգությունները, նրանք պետք է տապալվեն. քանզի ես չեմ խնայի նրանց, եթե նրանք պղծեն իրենց ժառանգությունները:

15 Ահա, ես ասում եմ ձեզ. Սիոնի փրկագնումն անպայման պետք է լինի գործությամբ.

16 Հետևաբար, ես մի մարդ կբարձրացնեմ իմ ժողովրդի հա-

մար, որը կառաջնորդի նրանց, ինչպես «Մովսեսն առաջնորդեց Իսրայելի զավակներին:

17 Քանզի դուք Իսրայելի զավակներն եք, և Աբրահամի «սերունդից եք, և դուք գերությունից դուրս պիտի առաջնորդվեք գործությամբ և մեկնված բազկով:

18 Եվ ինչպես ձեր հայրերն առաջներում առաջնորդվեցին, ճիշտ նույն ձևով պիտի լինի Սիոնի փրկագնումը:

19 Հետևաբար, թող ձեր սրտերը չնվաղեն, քանզի ես չեմ ասում ձեզ, ինչպես ձեր հայրերին. Իմ «հրեշտակը կգնա ձեր առաջից, բայց ոչ իմ «ներկայությունը:

20 Այլ ասում եմ ձեզ. Իմ «հրեշտակը կգնա ձեր առջևից, և նաև իմ ներկայությունը, և ժամանակին դուք «կտիրեք այդ բերրի հողին:

21 Ե՛ւ ճշմարիտ, ճշմարիտ ասում եմ ձեզ, որ իմ ծառա Ջոզեֆ Սմիթ կրտսերն է այն «մարդը, որին ես նմանեցրի այն ծառային, որի հետ «այգու Տերը խոսում էր այն առակում, որը ես տվեցի ձեզ:

22 Հետևաբար, թող իմ ծառա Ջոզեֆ Սմիթ կրտսերն ասի իմ տան «ամրությանը՝ իմ երիտասարդ և միջին տարիքի տղամարդկանց, – Ի մի հավաքվեք Սիոնի հողում, այն հողի վրա, որը ես գնել եմ ինձ նվիրաբերված դրամով:

23 Եվ թող բոլոր եկեղեցիներն իմաստուն մարդիկ ուղարկեն իրենց դրամով և հողեր «գնեն,

9ա1 Նեփի 21.6:
 10ա Մատ. Ե.13–16,
 ՎևոՒ 101.39–40:
 11ա ՎևոՒ 101.18:
 12ա Հայտ. Է.13–14,
 ՎևոՒ 58.4, 112.13:
 16ա Ել. 9.2–10,
 ՎևոՒ 107.91–92:

սոՒ Մովսես:
 17ա սոՒ Աբրահամ –
 Աբրահամի Սերունդը.
 Աբրահամի ուխտը:
 19ա սոՒ Հրեշտակներ:
 ք ՎևոՒ 84.18–24:
 20ա Ել. ԺԴ.19–20:
 ք ՎևոՒ 100.13:

21ա ՎևոՒ 101.55–58:
 ք սոՒ Տիրոջ այգին:
 22ա ՎևոՒ 35.13–14,
 105.16, 29–30:
 23ա ՎևոՒ 42.35–36,
 57.5–7, 58.49–51,
 101.68–74:

ճիշտ ինչպես ես պատվիրել եմ նրանց:

24 Եվ որքան որ իմ թշնամիները գամ ձեր վրա՝ դուրս հանելու ձեզ իմ բերրի՝ ^ահողից, որը ես նվիրաբերել եմ, որ լինի Սիոնի հողը, այսինքն՝ ձեր սեփական հողերից, այս վկայություններից հետո, որոնք դուք բերել եք իմ առաջ նրանց դեմ, դուք պիտի անիծեք նրանց.

25 Եվ ում որ դուք անիծեք, ես պիտի անիծեմ, և դուք պիտի իմ վրեժն առնեք իմ թշնամիներից:

26 Եվ իմ ներկայությունը ձեզ հետ կլինի, նույնիսկ իմ թշնամիներից ^ավրեժ առնելիս, մինչև երրորդ և չորրորդ սերունդը նրանց, ովքեր ատում են ինձ:

27 Թող ոչ ոք չվախենա ինձ համար վայր ^ադնել իր կյանքը. քանզի ով ինձ համար վայր է դնում իր կյանքը, նա կրկին կգտնի այն:

28 Եվ ով որ չի կամենում ինձ համար վայր դնել իր կյանքը, իմ աշակերտը չէ:

29 Իմ կամքով է այն, որ իմ ծառա ^աՍիդնի Ռիզդոնն իր ձայնը բարձրացնի արևելյան շրջանների ժողովներում, նախապատրաստելով եկեղեցիները, որ պահեն պատվիրանները, որոնք տվել եմ նրանց՝ Սիոնի վերականգնման ու փրկագնման վերաբերյալ:

30 Իմ կամքով է այն, որ իմ ծառա Փարլի Պ. ^աՊրատն ու իմ ծառա Լայման Ուայթը չպետք է վերադառնան իրենց եղբայրների հողը, մինչև որ նրանք չգտնեն

ընկերակիցներ՝ գնալու դեպի Սիոնի հողը՝ տասով կամ քսանով կամ հիսունով կամ հարյուրով, մինչև որ նրանք չգտնեն թվով հինգ հարյուր մարդ իմ տան ^աամրությունից:

31 Ահա, դա իմ կամքն է. խնդրեք և կստանաք. սակայն մարդիկ միշտ ^աչէ, որ կատարում են իմ կամքը:

32 Հետևաբար, եթե դուք չկարողանաք գտնել հինգ հարյուր մարդ, փնտրեք ջանասիրաբար, որ միգուցե կարողանաք գտնել երեք հարյուրը:

33 Եվ եթե դուք չկարողանաք գտնել երեք հարյուր մարդ, փնտրեք ջանասիրաբար, որ միգուցե կարողանաք գտնել հարյուրը:

34 Բայց ճշմարիտ ասում եմ ձեզ. ես պատվիրան եմ տալիս ձեզ, որ դուք վեր չգնաք Սիոնի հողը, մինչև որ չգտնեք իմ տան ամրությունից հարյուրը, որոնք ձեզ հետ կզնան Սիոնի հողը:

35 Հետևաբար, ինչպես ասացի ձեզ. Խնդրեք, և դուք կստանաք. լրջորեն աղոթեք, որ միգուցե իմ ծառա Ջոզեֆ Սմիթ կրտսերը կարողանա ձեզ հետ գնալ և նախագահել իմ ժողովրդի մեջ, և կազմակերպի իմ արքայությունը ^անվիրաբերված հողի վրա, և հաստատի Սիոնի զավակներին օրենքների և պատվիրանների վրա, որոնք կային, և որոնք կտրվեն ձեզ:

36 Ամեն հաղթանակ ու փառք ձեզ համար իրականացվում է

24ա ՎևՈՒ 29.7–8, 45.64–66, 57.1–2:
26ա ՎևՈՒ 97.22:
27ա Մատ. Ժ. 39, Դուկ. Թ. 24,

ՎևՈՒ 98.13–15, 124.54:
29ա սոՒ Ռիզդոն Սիդնի:
30ա սոՒ Պրատ Փարլի Պարկեր:

բ ՎևՈՒ 101.55:
31ա ՎևՈՒ 82.10:
35ա ՎևՈՒ 84.31:

ձեր ^աջանասիրության, հավատարմության և հավատքի ^բաղոթքի միջոցով:

37 Թող իմ ծառա Փարլի Պ. Պրատը ճամփորդի իմ ծառա Ջոզեֆ Սմիթ կրտսերի հետ:

38 Թող իմ ծառա Լայման Ուայքը ճամփորդի իմ ծառա Սիդնի Ռիզդոնի հետ:

39 Թող իմ ծառա Հայրում Սմիթը

ճամփորդի իմ ծառա Ֆրեդերիկ Գ. Վիլյամսի հետ:

40 Թող իմ ծառա Օրսոն Հայդը ճամփորդի իմ ծառա Օրսոն Պրատի հետ, ուր որ իմ ծառա Ջոզեֆ Սմիթ կրտսերը խորհուրդ կտա նրանց, այս պատվիրանների կատարումը ձեռք բերելիս, որոնք տվել եմ ձեզ, իսկ մնացածը թողեք իմ ձեռքում: Դիշտ այդպես: Ամեն:

ԲԱԺԻՆ 104

Հայտնություն՝ տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեին, 1834թ. ապրիլի 23-ին, Միացյալ Միաբանության, կամ աղքատներին սատարելու համար Եկեղեցու Միաբանության վերաբերյալ (History of the Church, 2.54–60): Առիթը եղավ Առաջին Նախագահության և այլ քահանայապետների խորհրդի ժողովը, որի ժամանակ քննարկվեցին մարդկանց նյութական խիստ կարիքները: Կիրթլենդի Միացյալ Միաբանությունը ժամանակավորապես պետք է լուծարվեր և վերակազմավորվեր, և ունեցվածքը՝ որպես տնտեսություններ, պետք է բաժանվեր Միաբանության անդամների միջև:

1–10՝ Միացյալ Միաբանության դեմ օրինազանցող Սրբերն անիծյալ կլինեն. 11–16՝ Տերն իր Սրբերին ապահովում է իր իսկ ձևով. 17–18՝ Ավետարանի օրենքը կարգավորում է աղքատների համար հոգ տանելը. 19–46՝ Նշվում են մի քանի եղբայրների տնտեսություններն ու օրհնությունները. 47–53՝ Կիրթլենդի Միացյալ Միաբանությունը և Սիոնի Միաբանությունը պետք է առանձին գործեն. 54–66՝ Հաստատվում է Տիրոջ սրբազան գանձարանը՝ սուրբ գրքերի տպագրման համար. 67–77՝ Միացյալ Միաբանության ընդհանուր գանձարանը պետք է գործի ընդհանուր համաձայնության հիման վրա. 78–86՝ Նրանք, ովքեր Միացյալ Միաբանության մեջ են, պետք է վճարեն բոլոր իրենց պարտքերը,

և Տերը նրանց կազատի ֆինանսական գերությունից:

ԱՇՄԱՐԻՏ ասում եմ ձեզ, իմ բարեկամներ, ես տալիս եմ ձեզ մի խորհուրդ և մի պատվիրան՝ բոլոր այն ունեցվածքի վերաբերյալ, որը պատկանում է միաբանությանը, որը ես պատվիրեցի կազմակերպել և հաստատել, որ լինի ^ամիացյալ միաբանություն, և հավիտենական միաբանություն՝ իմ եկեղեցու օգտի համար, և մարդկանց փրկության համար, մինչև որ ես գամ,–

2 Անխախտ ու անկոտրում խոստումով, որ, որքան որ նրանք, ում ես պատվիրել եմ, հավատարիմ են, նրանք պիտի օրհնվեն բազում օրհնություններով.

3 Բայց որքան որ նրանք հավա-

36ասու՝ Ջանասիրություն: Բ ՎևՌԹ 104.79–82:

104 1ա ՎևՌԹ 78.3–15: սու՝ Միացյալ

Միաբանություն:

տարիմ չեն, նրանք մոտ կլինեն անեծքին:

4 Հետևաբար, որքան որ իմ ծառաներից ոմանք չեն պահել պատվիրանը, այլ դրժել են ուխտն՝ ազահուության պատճառով, և հնարովի խոսքերով, ես նրանց անիծել եմ շատ դառը և վշտալի անեծքով:

5 Քանզի ես՝ Տերս, իմ սրտում որոշել եմ, որ, որքան որ միաբանությանը պատկանող որևէ մեկն օրինազանցի, կամ, այլ խոսքով, դրժի ուխտը, որով դուք կապված եք, նա պիտի անիծվի իր կյանքում, և պիտի կոխկրտվի նրա կողմից, ում ես կկամենամ:

6 Քանզի ես՝ Տերս, չպետք է ծաղրի ենթարկվեմ այս բաներում, -

7 Եվ այս բոլորը՝ որպեսզի ձեր միջից անմեղը չդատապարտվի անարդարի կողմից. և որ ձեր միջից մեղավորը խույս չտա. քանզի ես՝ Տերս, ձեզ խոստացել եմ փառքի՝ ապակն իմ աջ կողմում:

8 Հետևաբար, որքան որ օրինազանցեք, դուք ձեր կյանքում չէք կարող խույս տալ իմ ցասումից:

9 Որքան որ դուք՝ կտրվեք օրինազանցության պատճառով, դուք չէք կարող խույս տալ թատանայի՝ հարվածներից, մինչև փրկագնման օրը:

10 Եվ այժմ ես ձեզ տալիս եմ գործություն, այս ժամից ի վեր, որ եթե ձեր միջից միաբանությանը

պատկանող որևէ տղամարդ օրինազանցի և չապաշխարի չարիքից, դուք պիտի հանձնեք նրան Սատանայի հարվածներին. և նա գործություն չպիտի ունենա չարություն՝ բերելու ձեր վրա:

11 Դ-ա իմ իմաստությանք է. հետևաբար, ես ձեզ տալիս եմ պատվիրան, որ դուք պետք է կազմակերպվեք և ամեն մարդու նշանակեք իր՝ տնտեսությունը.

12 Որ ամեն մարդ կարողանա ինձ հաշիվ տալ իր տնտեսության վերաբերյալ, որը նշանակված է իրեն:

13 Քանզի նպատակահարմար է, որ ես՝ Տերս, ամեն մարդու՝ իբրև՝ տնտեսի, թպատասխանատու դարձնեմ երկրային օրհնությունների վրա, որոնք ես արարել եմ և պատրաստել իմ արարածների համար:

14 Ես՝ Տերս եմ տարածել երկինքները և՝ հաստատել երկիրը՝ իմ իսկ՝ թձեռքերի գործերը. և բոլոր բաները նրանցում իմն են:

15 Եվ իմ նպատակն է՝ ապահովել իմ սրբերին. քանզի բոլոր բաներն իմն են:

16 Սակայն դա անպայման պետք է արվի իմ իսկ՝ ձևով. և ահա, սա է այն ձևը, որը ես՝ Տերս, որոշել եմ իմ սրբերին՝ ապահովելու համար, որ թաղքատը պիտի բարձրացվի, նրանով, որ հարուստը կխոնարհեցվի:

17 Քանզի՝ տերկիրը լի է, և բա-

4ա սուր Ազահ լինել:
6ա Գաղ. 2.7-9:
7ա Ես. ԿԲ.3, ՎևՈՒ 76.56:
սուր Փառք:
9ա սուր Հեռացում:
բ ՎևՈՒ 82.21:
գ սուր Դ-և:
10ա ՎևՈՒ 109.25-27:
11ա ՎևՈՒ 42.32:

սուր Տնտես.
Տնտեսություն:
13ա ՎևՈՒ 72.3-5, 16-22:
բ սուր Հաշիվ, Պատասխանատու, Պատասխանատվություն:
14ա Ես. ԽԲ.5, 45.12:
սուր Ստեղծել, Ստեղծում:

բ Սաղ. ԺԹ.1, 24.1:
16ա ՎևՈՒ 105.5:
սուր Բարօրություն:
բ ԱԹագ. Բ.7-8,
Դուկ. Ա.51-53,
ՎևՈՒ 88.17:
17ա ՎևՈՒ 59.16-20:
սուր Երկիր:

վականաչափ կա նաև խնայելու համար. այո, ես պատրաստել եմ բոլոր բաները և շնորհել եմ մարդկանց զավակներին լինելու ^բգործակալն իրենց անձի:

18 Հեռևաբար, եթե մի մարդ վերցնում է այն ^աառատությունից, որը ես պատրաստել եմ, և իր մասից բաժին չի հանում ^բաղքատին ու կարիքավորին, իմ ավետարանի ^գօրենքի համաձայն, նա, ամբարիշտների հետ, իր աչքերը կբարձրացնի ^դդժոխքում՝ տանջանքի մեջ լինելով:

19 Եվ արդ, ճշմարիտ ասում եմ ձեզ ^ամիաբանության ունեցվածքի վերաբերյալ, –

20 Թող իմ ծառա Սիդնի Ռիգդոնին նշանակվի այն վայրը, որտեղ այժմ բնակվում է, և դաբադանոցի հողաբաժինը, որպես իր տնտեսություն, որպես աջակցություն իրեն, մինչ նա կաշխատի իմ այգում, ճիշտ ինչպես ես եմ կամենում, երբ որ ես պատվիրեմ նրան:

21 Եվ թող բոլոր բաներն արվեն միաբանության խորհրդով, այն միաբանության ձայների ընդհանուր համաձայնությամբ, որը բնակվում է Կիրթլենդի հողում:

22 Եվ այս տնտեսությունն ու օրհնությունը, ես՝ Տերս, շնորհում եմ իմ ծառա Սիդնի Ռիգդոնին, որպես օրհնություն նրա վրա և նրա զաւիք սերնդի վրա.

23 Եվ ես կբազմապատկեմ նրա օրհնությունները, որքան որ նա խոնարհ կլինի իմ առաջ:

24 Եվ բացի այդ, թող իմ ծառա Մարտին Հարրիսին, իր համար և իր զաւիք սերնդի համար, որպես

իր տնտեսություն նշանակվի հողաբաժնի այն կտորը, որն իմ ծառա Ջոն Ջոնսոնը ձեռք բերեց իր նախկին ծառանության փոխարեն.

25 Եվ որքան որ նա հավատարիմ է, ես կբազմապատկեմ նրա և նրա զաւիք սերնդի օրհնությունները:

26 Եվ թող իմ ծառա Մարտին Հարրիսն իր դրամները նվիրի իմ խոսքերը հռչակելուն, համաձայն նրա, ինչպես իմ ծառա Ջոզեֆ Սմիթ կրտսերը կհրահանգի:

27 Եվ բացի այդ, թող իմ ծառա Ֆրեդերիկ Գ. Վիլյամսին տրվի այն տեղը, որտեղ այժմ նա բնակվում է:

28 Եվ թող իմ ծառա Օլիվեր Քաուդերիին տրվի այն հողաբաժինը, որն առանձնացված է կից տնից, որտեղ պիտի լինի տպարանը, որը թիվ առաջին հողաբաժինն է, և նաև այն հողաբաժինը, որի վրա բնակվում է իր հայրը:

29 Եվ թող իմ ծառաներ Ֆրեդերիկ Գ. Վիլյամսին և Օլիվեր Քաուդերիին տրվի տպարանը և դրան պատկանող բոլոր բաները:

30 Եվ դա պիտի լինի նրանց տնտեսությունը, որը նշանակված կլինի նրանց:

31 Եվ որքան որ նրանք հավատարիմ են, ահա ես կօրհնեմ և կբազմապատկեմ նրանց օրհնությունները:

32 Եվ դա սկիզբն է այն տնտեսության, որը ես նշանակել եմ նրանց՝ իրենց և իրենց զաւիք սերնդի համար:

33 Եվ որքան որ նրանք հավա-

17բ սուբ Կամքի ազատություն:
18ա Ղուկ. Գ.11,
Հակ. Բ.15–16:

բ Առակ. ԺԳ.21,
Մոսիա 4.26,
ՎևՈՒ 52.40:
գ ՎևՈՒ 42.30:

դ Ղուկ. ԺԶ.20–31:
19ա սուբ Միացյալ
Միաբանություն:

տարիւն են, ես կրազնապատկեմ նրանց և նրանց գալիք սերնդի օրհնությունները, նույնիսկ բազում օրհնություններով:

34 Եվ բացի այդ, թող իմ ծառա Ջոն Ջոնսոնին տրվի այն տունը, որտեղ նա ապրում է, և ժառանգություն, բոլորը, բացի այն հողից, որը պահպանվել է իմ տները՝ կառուցելու համար, որը պատկանում է այն ժառանգությանը և այն հողաբաժիններին, որոնք անվանվել էին իմ ծառա Օլիվեր Քաուդերիի համար:

35 Եվ որքան որ նա հավատարիւն է, ես կրազնապատկեմ նրա օրհնությունները:

36 Եվ իմ կամքն է, որ նա վաճառի այն հողաբաժինները, որոնք հատկացված են իմ սրբերի քաղաքը կառուցելու համար, որքան որ նրան հայտնի կղարձվի Հոգու՝ ձայնով, և միաբանության խորհրդով, և միաբանության ձայնով:

37 Եվ սա է այն տնտեսության սկիզբը, որը ես նշանակել եմ նրան, որպէս օրհնություն նրա համար և նրա գալիք սերնդի համար:

38 Եվ որքան որ նա հավատարիւն է, ես կրազնապատկեմ նրա բազում օրհնությունները:

39 Եվ բացի այդ, թող իմ ծառա Նյուել Ք. Մուիթնիին նշանակվեն այն տները և հողաբաժինը, որտեղ այժմ բնակվում է, և այն հողաբաժինն ու կառույցը, որտեղ առևտրի հաստատություն է հիմնվել, և նաև այն հողաբաժինը, որն առևտրի հաստատության հարավային անկյունում է, և նաև հողաբաժինը, որի վրա տեղակայված է մոխրանոցը:

40 Եվ այդ բոլորը ես նշանակել եմ իմ ծառա Նյուել Ք. Մուիթնիին, որպէս իր տնտեսություն, որպէս օրհնություն նրա վրա, և նրա գալիք սերնդի վրա, իմ միաբանության առևտրի հաստատության օգտի համար, որը ես հաստատել եմ Կիրթլենդի իմ ցցի համար:

41 Այո, ճշմարիտ, սա է այն տնտեսությունը, որը նշանակել եմ իմ ծառա Ն. Ք. Մուիթնիին, այսինքն՝ այս ողջ առևտրի հաստատությունը, նրան և նրա՝ գործակալին և նրա գալիք սերնդին:

42 Եվ որքան որ նա հավատարիւն լինի իմ պատվիրանները պահելիս, որոնք տվել եմ նրան, ես կրազնապատկեմ նրա և նրա գալիք սերնդի օրհնությունները, նույնիսկ բազում օրհնություններով:

43 Եվ բացի այդ, թող իմ ծառա Ջոզեֆ Սմիթ կրտսերին նշանակվի այն հողաբաժինը, որը հատկացված է իմ տունը կառուցելու համար, որը քառասուն հինգ մետրանոց ձողի երկարություն և տասներկու՝ լայնություն ունի, և նաև այն ժառանգությունը, որի վրա այժմ բնակվում է նրա հայրը:

44 Եվ դա այն տնտեսության սկիզբն է, որը ես նշանակել եմ նրան, որպէս օրհնություն նրա համար և նրա հոր համար:

45 Քանզի ահա, ես մի ժառանգություն եմ պահել նրա՝ հոր համար՝ որպէս աջակցություն. հետևաբար, նա պիտի համարվի իմ ծառա Ջոզեֆ Սմիթ կրտսերի տան քվում:

46 Եվ ես կրազնապատկեմ իմ ծառա Ջոզեֆ Սմիթ կրտսերի տան օրհնությունները, որքան որ նա

34ա ՎևՈՒ 94.3, 10:
36ա սու՝ Հայտնություն:
39ա սու՝ Ուիթնի Նյուել Ք.

41ա ՎևՈՒ 84.112-113:
45ա ՎևՈՒ 90.20:
սու՝ Սմիթ Ջոզեֆ

կրտսեր:

հավատարիմ է, նույնիսկ բազում օրհնություններով:

47 Եվ արդ, ես մի պատվիրան եմ տալիս ձեզ Սիոնի վերաբերյալ, որ այսուհետև, դուք՝ որպես միացյալ միաբանություն, Սիոնի ձեր եղբայրների հետ կապված պիտի լինեք միայն այս ձևով,–

48 Հետո, երբ կազմավորվեք, դուք պիտի կոչվեք Կիրթլենդ Քաղաքի Սիոնի՝ Յցի Միացյալ Միաբանություն: Իսկ ձեր եղբայրները, իրենց կազմավորվելուց հետո, պիտի կոչվեն Սիոն Քաղաքի Միացյալ Միաբանություն:

49 Եվ նրանք պետք է կազմավորվեն իրենց իսկ անուններով, և իրենց իսկ անվանումով. և նրանք պետք է իրենց գործերը վարեն իրենց իսկ անվանումով, և իրենց իսկ անուններով:

50 Եվ դուք պետք է ձեր գործերը վարեք ձեր իսկ անվանումով, և ձեր իսկ անուններով:

51 Եվ դա ես պատվիրել եմ, որ արվի ձեր փրկության համար, և նաև նրանց փրկության համար, նրանց դուրս ըջվելու և այն բանի հետևանքով, որը պիտի գա:

52 Քանի որ ՝ ուխտերը դրժվել են օրինազանցության միջոցով՝ ղազահությանը և հնարովի խոսքերով,–

53 Հետևաբար, դուք՝ որպես միացյալ միաբանություն, լուծարվում եք ձեր եղբայրներից, այնպես որ դուք նրանց հետ կապված եք միայն մինչև այս ժամը, միայն այն ձևով, ինչպես ես ասացի, փոխառությամբ, ինչպես կորոշվի այս միաբանության կողմից, խորհրդ-

դով, ինչպես որ ձեր պայմանները թույլ կտան և ինչպես որ խորհրդի ձայնը կթելադրի:

54 Եվ բացի այդ, ես ձեզ պատվիրան եմ տալիս ձեր տնտեսությունների վերաբերյալ, որոնք ես նշանակել եմ ձեզ:

55 Ահա, այդ բոլոր ունեցվածքն իմն է, եթե ոչ, ապա ձեր հավատքն ունայն է, և դուք համարվում եք կեղծավոր, և ուխտերը, որոնք դուք կապել եք ինձ հետ, դրժված են:

56 Եվ եթե այդ ունեցվածքն իմն է, ապա դուք ՝ տնտեսներ եք. հակառակ դեպքում դուք տնտեսներ չեք:

57 Բայց, ճշմարիտ ասում եմ ձեզ. Ես ձեզ նշանակել եմ տնտեսներ լինելու իմ տան վրա, այսինքն՝ իրական տնտեսներ:

58 Եվ այդ նպատակով եմ ես ձեզ պատվիրել կազմակերպվել, նույնիսկ տպագրել ՝ իմ խոսքերը, իմ սուրբ գրքերի լրիվությունը, հայտնությունները, որոնք ես տվել եմ ձեզ, և որոնք ես պետք է այսուհետև, ժամանակ առ ժամանակ տամ ձեզ,–

59 Իմ եկեղեցին ու արքայությունը երկրի վրա կառուցելու և իմ ժողովրդին նախապատրաստելու նպատակով, այն ՝ ժամանակի համար, երբ ես ղքնակվեմ նրանց հետ, որը մոտ է՝ առ ձեռն:

60 Եվ դուք ձեզ համար պետք է պատրաստեք մի տեղ՝ որպես զանձարան, և այն նվիրաբերեք իմ անվանը:

61 Եվ ձեր միջից դուք պետք է մեկին զանձապահ նշանակեք, և նա պիտի կարգվի այդ օրհնության համար:

48ա Վև.ՈՒ 82.13, 94.1, 109.59:
սու՝ Յից:
51ա Վև.ՈՒ 109.47:

52ա սու՝ Ուխտ:
բ սու՝ Ազահ լինել:
56ա սու՝ Տնտես:
58ա սու՝ Ջոզեֆ Սմիթի

քարզանություն (ՋՍԹ):
59ա սու՝ Հազարամյակ:
բ Վև.ՈՒ 1.35-36, 29.9-11:

62 Եվ գանձարանի վրա մի կնիք պիտի լինի, և բոլոր սրբազան բաները պիտի տարվեն գանձարան. և ձեզանից ոչ ոք այն չպիտի կոչի իրենը, ոչ էլ դրա որևէ մասը, քանզի այն պիտի պատկանի ձեզ՝ բաղրիդ միասին:

63 Եվ այս պահից ի վեր ես այն տալիս եմ ձեզ. և արդ, տեսեք, որ դուք սկսեք և գործածեք այն տնտեսությունը, որը նշանակել եմ ձեզ, բացառությամբ սրբազան բաների, այդ սրբազան բաները տպագրելու համար, ինչպես ես սասացի:

64 Եվ այդ սրբազան բաներից ստացված [»]օգուտը պիտի պահվի գանձատանը, և նրա վրա կնիք պիտի լինի. և այն չպետք է որևէ մեկի կողմից օգտագործվի կամ գանձատանից դուրս հանվի, ոչ էլ նրա վրա դրված կնիքը պիտի հեռացվի, բացի միայն միաբանության ձայնով կամ պատվիրանով:

65 Եվ այսպես սրբազան բաներից ստացված օգուտը դուք պետք է պահպանեք գանձատանը՝ նվիրական և սուրբ նպատակների համար:

66 Եվ այն պիտի կոչվի Տիրոջ սրբազան գանձարան. և նրա վրա կնիք պիտի լինի, որպեսզի այն լինի սուրբ և Տիրոջը նվիրաբերված:

67 Եվ բացի այդ, պիտի մեկ այլ գանձարան պատրաստվի, և մի գանձապետ նշանակվի՝ գանձարանը պահպանելու, և մի կնիք պիտի դրվի նրա վրա.

68 Եվ ամբողջ դրամը, որը դուք կստանաք ձեր տնտեսություններից, ավելացնելով ունեցվածքը, որը նշանակել եմ ձեզ, տներով, թե՛

հողերով, թե՛ անասուններով և թե՛ բոլոր բաներով, բացառությամբ սուրբ և սրբազան գրությունների, որոնք ես պահպանել եմ ինձ համար՝ սուրբ և նվիրական նպատակների համար, ամմիջպատես, դրամներ ստանալուց հետո պիտի զգվեն իմ գանձարանը՝ հարյուրներով, թե հիսուններով, թե քսաններով, թե տասերով, թե հինգերով:

69 Կամ այլ խոսքով, ձեզանից ամեն ոք, ով ստանում է հինգ դոլլար, թող նա զցի դա գանձարան. կամ, եթե նա ստանում է տաս, կամ քսան, կամ հիսուն, կամ հարյուր, թող նա վարվի նույն ձևով.

70 Եվ թող ձեզանից ոչ ոք չասի, թե դա իր սեփականն է. քանզի դա, ոչ էլ դրա որևէ մի մասը, չպիտի կոչվի իրենը:

71 Եվ դրա ոչ մի մասը չպիտի օգտագործվի, ոչ էլ դուրս հանվի գանձարանից, բացի միայն միաբանության ձայների ընդհանուր համաձայնությամբ:

72 Եվ սա պետք է լինի միաբանության ձայնը և ընդհանուր համաձայնությունը, – որ ձեզանից որևէ մեկն ասի գանձապահին. Ես այսքանի կարիք ունեմ՝ որպես օգնություն իմ տնտեսության մեջ, –

73 Եթե դա լինի հինգ դոլլար, կամ եթե դա լինի տաս դոլլար, կամ քսան, կամ հիսուն, կամ հարյուր, գանձապահը նրան կտա այն գումարը, որը նա պահանջում է՝ որպես օգնություն իր տնտեսության համար, –

74 Եթե նա չի օրինականցել և միաբանության խորհրդի առաջ պարզորոշ հայտնի չի դարձել, որ նա անհավատարիմ և ոչ [»]իմաստուն տնտես է:

75 Բայց քանի դեռ նա լիարժեք ընկերակցության մեջ է, և հավատարիմ ու իմաստուն է իր տնտեսության մեջ, դա նշան պիտի լինի զանձապահի համար, այնպես որ զանձապահը չպետք է մերժի:

76 Սակայն օրինազանցության դեպքում, զանձապահը պիտի ենթարկվի միաբանության խորհրդրդին ու ձայնին:

77 Իսկ եթե զանձապահն անհավատարիմ և ոչ իմաստուն տնտես գտնվի, նա կենթարկվի միաբանության խորհրդին ու ձայնին, և կհեռացվի իր տեղից, և մեկ «ուրիշը կնշանակվի նրա տեղում:

78 Եվ բացի այդ, ճշմարիտ ասում են ձեզ, ձեր պարտքերի վերաբերյալ, – ահա, իմ կամքն է, որ դուք «վճարեք ձեր բոլոր քարտերը:

79 Եվ իմ կամքն է, որ դուք ձեզ «խոնարհեցնեք իմ առաջ և ստանաք այս օրհնությունը ձեր քանասիրությանը ու խոնարհությանը և հավատքի աղոթքով:

80 Եվ որքան որ դուք ջանասեր եք և խոնարհ, և գործադրում եք հավատքի «աղոթքը, ահա, ես կփափկացնեմ նրանց սրտերը, որոնց պարտական եք, մինչև որ ես միջոցներ ուղարկեմ ձեզ ձեր ազատման համար:

81 Հետևաբար, շտապ գրեք Նյու Յորք, և գրեք համաձայն նրա,

ինչ կթելադրի իմ «Հոգին. և ես կփափկացնեմ նրանց սրտերը, ում դուք պարտ եք, որ ձեր վրա չարչարանքներ բերելու միտքը նրանցից հեռանա:

82 Եվ որքան որ դուք «խոնարհ եք ու հավատարիմ և կանչում եք իմ անունը, ահա, ես քհաղթանակը ձեզ կտամ:

83 Ես տալիս եմ ձեզ խոստում, որ այս մեկ անգամ դուք կազատվեք ձեր գերությունից:

84 Որքան որ դուք հնարավորություն ունենաք փոխառությամբ դրամ վերցնել՝ հարյուրներով, թե հազարներով, այսինքն՝ մինչև որ դուք վերցնեք բավականաչափ՝ գերությունից ազատվելու համար, դա ձեր արտոնությունն է:

85 Եվ գրավ դրեք ունեցվածքը, որը ես դրել եմ ձեր ձեռքում, այս մեկ անգամ, տալով ձեր անունները, ընդհանուր համաձայնությամբ կամ այլ ձևով, ինչպես որ ձեզ բարի կերևա:

86 Ես տալիս եմ ձեզ այս արտոնությունն այս մեկ անգամ. և ահա, եթե դուք շարունակեք կատարել այն բաները, որոնք դրել եմ ձեր առաջ, համաձայն իմ պատվիրանների, բոլոր այս բաներն իմն են, և դուք իմ տնտեսներն եք, և տերը թույլ չի տա, որ իր տունը թալանեն: Ճիշտ այդպես: Ամեն:

ԲԱԺԻՆ 105

Հայտնություն տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեի միջոցով, Ֆիշինգ գետի վրա, Միսսուրի, 1834թ. հունիսի 22-ին (History of the Church, 2.108–111): Միսսուրիի Սրբերի նկատմամբ ամբոխների բռնությունները սաստկացել էին, և տարբեր զավառների բազմաթիվ կազմակերպված խմբեր իրենց

77ա Վև.ՈՒ 107.99–100:
78ա Վև.ՈՒ 42.54:
բ սուր Պարտք:
79ա սուր Խոնարհ,

Խոնարհություն:
բ սուր Ջանասիրություն:
80ա Հակ. Ե.15:
81ա սուր Սուրբ Հոգի:

82ա Ղուկ. ԺԳ.11,
Վև.ՈՒ 67.10:
բ Վև.ՈՒ 103.36:

մտադրությունն էին հայտարարել՝ կործանել ժողովրդին: Մարգարեն եկել էր Կիրթլենդից, գլխավորելով մի խումբ, որը հայտնի էր որպես Սիոնի ճամբար՝ բերելով հագուստ և մթերք: Մինչ այս խումբը Ֆիլիզ գետի մոտ ճամբար էր դրել, Մարգարեն ստացավ այս հայտնությունը:

1-5՝ Սիոնը կկառուցվի սելէստիայ օրենքի համաձայն. 6-13՝ Սիոնի փրկագնումը հետաձգվում է միառժամանակ. 14-19՝ Տերը կպատերազմի Սիոնի պատերազմները. 20-26՝ Սրբերը պետք է իմաստուն լինեն և չպարծենան գորավոր գործերով, երբ հավաքվում են. 27-30՝ Ջեկսոնում և հարակից գավառներում պետք է հողեր գնվեն. 31-34՝ Երեցները պետք է օժտում ստանան Տիրոջ տանը՝ Կիրթլենդում. 35-37՝ Սրբերը, որոնք կանչված և ընտրված են, կարգադրվեն. 38-41՝ Սրբերը պետք է խաղաղության դրոշ բարձրացնեն աշխարհին:

ՃՄԱՐԻՏ ասում են ձեզ, որ հավաքվել եք միասին, որպեսզի իմանաք իմ կամքը՝ իմ չարչարված ժողովրդի՝ փրկագրման վերաբերյալ, -

2 Ահա, ես ասում եմ ձեզ, որ եթե չլինեին իմ ժողովրդի՝ օրինազանցությունները, խոսելով եկեղեցու մասին, և ոչ թե անհատների, նա հնարավոր է փրկագնված լիներ նույնիսկ հիմա:

3 Բայց ահա, նա չի սովորել հնազանդվել այն բաներին, որոնք պահանջել են նրա ձեռքից, այլ լցված է ամեն տեսակի չարությունքով և քաժին չի հանում իր ստացվածքից, ինչպես վայել է

արբերին, իր միջի աղքատների ու տառապյալների համար.

4 Եվ միաբանված չէ այն միության համաձայն, որը պահանջվում է սելէստիայ արքայության օրենքով.

5 Եվ Միոնը չի կարող կառուցվել, թեթե դա չլինի սելէստիայ արքայության օրենքի սկզբունքներով. հակառակ դեպքում, ես չեմ կարող ինձ մոտ ընդունել այն:

6 Եվ իմ ժողովուրդը պետք է անպայման խիստովի այն բաներով, որոնցով նա տառապում է, եթե դա անհրաժեշտ է, մինչև որ նա քինազանդություն սովորի:

7 Ես չեմ խոսում նրանց մասին, ովքեր նշանակված են առաջնորդելու իմ ժողովրդին, որոնք իմ եկեղեցու՝ առաջին երեցներն են, քանզի նրանք բոլորը չեն այս դատապարտության տակ.

8 Այլ խոսում եմ դրսի իմ եկեղեցիների մասին, - շատերը կան, որոնք կասեն. Ո՞ր է նրանց Աստվածը: Ահա, նա կազատի նրանց փորձանքի ժամին, այլպես մենք չենք գնա Սիոն և կպահենք մեր դրամները:

9 Ուստի, իմ ժողովրդի՝ օրինազանցության հետևանքով, ինձ նպատակահարմար է, որ իմ երեցները սպասեն մի փոքր ժամանակ՝ Սիոնի փրկագնման համար, -

105 1ա ՎևՈՒ 100.13:
2ա ՎևՈՒ 104.4-5, 52:
3ա Գոր. Ե.1-11,
ՎևՈՒ 42.30:
սու Նվիրաբերել,
Նվիրաբերման օրենք:

4ա ՎևՈՒ 78.3-7:
5ա սու Սիոն:
բ ՎևՈՒ 104.15-16:
գ ՎևՈՒ 88.22:
6ա ՎևՈՒ 95.1-2:
սու Խրատել,

Խրատելը:
բ սու Հնազանդություն,
Հնազանդ, Հնազանդվել:
7ա ՎևՈՒ 20.2-3:
9ա ՎևՈՒ 103.4:

10 Որպեսզի նրանք պատրաստվեն, և որպեսզի իմ ժողովուրդն ուսուցանվի ավելի կատարյալ ձևով, և փորձ ունենա, և ավելի կատարյալ ձևով իմանա իր «պարտականությունը, և այն բաները, որոնք ես պահանջում եմ նրա ձեռքից:

11 Եվ դա չի կարող իրագործվել, մինչև որ իմ «երեցները զորությամբ» չօժտվեն բարձրից:

12 Քանզի ահա, ես մեծ օժտում և օրհնություն եմ պատրաստել, որ «թափվի նրանց վրա, որքան որ նրանք հավատարիմ են և շարունակյուն եմ խոնարհ լինել իմ առաջ:

13 Հետևաբար ինձ նպատակահարմար է, որ իմ երեցները մի փոքր ժամանակ սպասեն Միոնի փրկագնման համար:

14 Քանզի ահա, ես նրանց ձեռքից չեմ պահանջում պատերազմել Միոնի պատերազմները. քանզի, ինչպես ես ասացի նախորդ պատվիրանում, ճիշտ այդպես էլ ես կամենմ, – ես «կպատերազմեմ ձեր պատերազմները:

15 Ահա, «կործանիչին ես առաջ եմ ուղարկել, որ կործանի և բնաջնջի իմ թշնամիներին. և ոչ շատ տարիներ անց նրանք չեն մնա, որ պղծեն իմ ժառանգությունը և «հայիոյեն իմ անունն այն հողերի վրա, որոնք ես «նվիրաբերել եմ իմ սրբերի հավաքվելու համար:

16 Ահա, ես պատվիրեցի իմ ծառա Ջոզեֆ Սմիթ կրտսերին՝ ասել իմ տան «ամբողջանը, այսինքն՝

ին զինվորներին՝ իմ երիտասարդ ու միջին տարիքի տղամարդկանց, որ հավաքվեն՝ իմ ժողովրդի փրկագնման համար, և տապալեն իմ թշնամիների աշտարակներն ու ցրեն նրա «պահապաններին:

17 Բայց իմ տան ամբողջունն ականջ չդրեց իմ խոսքերին:

18 Բայց որքան որ կան այնպիսիք, որոնք ականջ են դնում իմ խոսքերին, ես մի օրհնություն և «օժտում եմ պատրաստել նրանց համար, եթե նրանք հավատարիմ շարունակեն:

19 Ես լսել եմ նրանց աղոթքները և կրնդունեմ նրանց ընձամ. և ինձ նպատակահարմար էր, որ նրանք բերվեին այսքան հեռու՝ իրենց «հավատքի փորձության համար:

20 Եվ արդ, ճշմարիտ ասում եմ ձեզ. Ես ձեզ տալիս եմ պատվիրան, որ այստեղ եկածներից բոլոր նրանք, ովքեր կարող են մնալ այս մերձակա շրջաններում, թող մնան:

21 Իսկ նրանք, ովքեր չեն կարող մնալ, որոնք ընտանիքներ ունեն արևելքում, թող մի փոքր ժամանակ սպասեն, որքան որ իմ ծառա Ջոզեֆը կնշանակի նրանց:

22 Քանզի ես նրան խորհուրդ կտամ այս հարցի վերաբերյալ, և բոլոր բաները, որոնք նա կնշանակի նրանց, պիտի կատարվեն:

23 Եվ թող իմ ողջ ժողովուրդը, որն ապրում է մերձակա շրջաններում, լինի շատ հավատարիմ և աղոթքով լի և խոնարհ իմ առաջ,

10ա սուր Պարտականություն:
11ա սուր Երեց:
բ ՎևՈՒ 38.32, 95.8:
սուր Օժտում:
12ա ՎևՈՒ 110:
14ա Հես. Ժ.12–14,

Ես. ԽԹ.25,
ՎևՈՒ 98.37:
15ա ՎևՈՒ 1.13–14:
բ ՎևՈՒ 112.24–26:
սուր Հայիոյել,
Հայիոյանք:
գ ՎևՈՒ 84.3–4, 103.35:

16ա ՎևՈՒ 101.55, 103.22,
30:
բ սուր Արթուն լինել:
18ա ՎևՈՒ 110.8–10:
19ա սուր Հավատք:

և չհայտնի այն բաները, որոնք ես հայտնել եմ իրեն, մինչև որ իմ իմաստությամբ դրանք հայտնի դարձվեն:

24 Մի խոսք է դատաստանների մասին, ոչ էլ «պարծեցեք հավատքով կամ գորավոր գործերով, այլ զգուշորեն հավաքվեք մի շրջանում այնքան, որքան հնարավոր է՝ հետևելով ժողովրդի տրամադրվածությանը:

25 Եվ ահա, ես այնպես կանեմ, որ դուք բարեհաճություն և շնորհ կգտնեք նրանց աչքում, որ կարողանաք «խաղաղություն և ապահովություն գտնել, մինչև դուք այս ժողովրդին ասում եք. Գատաստան և արդարադատություն գործադրեք մեզ համար, համաձայն օրենքի, և փոխհատուցեք մեր հանդեպ անարդարության դիմաց:

26 Արդ, ահա, ես ասում եմ ձեզ, իմ բարեկամներ, այս ձևով դուք կկարողանաք բարեհաճություն գտնել ժողովրդի աչքում, մինչև որ Իսրայելի «գորքը շատ մեծանա:

27 Եվ ես, ժամանակ առ ժամանակ, կփափկացնեմ մարդկանց սրտերը, ինչպես փափկացրեցի «Փարավոնի սիրտը, մինչև որ իմ ծառա Ջոզեֆ Սմիթ կրտսերը և իմ երեցները, որոնց նշանակել եմ, ժամանակ կունենան հավաքելու իմ տան ամրությունը,

28 Եվ ուղարկելու «իմաստուն մարդկանց, որ կատարեն այն, ինչ պատվիրել եմ այն բոլոր հողերը Բզնելու վերաբերյալ, որոնք հնա-

րավոր է գնել Ջեկսոն գավառում և դրան հարակից գավառներում:

29 Քանզի իմ կամքով է, որ բոլոր այդ հողերը գնվեն. և որպեսզի դրանք գնելուց հետո իմ սրբերը տիրեն դրանց՝ իմ տված «նվիրաբերման օրենքների համաձայն:

30 Եվ այդ հողերը գնելուց հետո, Իսրայելի «գորքերին ես չեմ մեղադրի իրենց սեփական հողերին տեր դառնալու համար, որոնք նրանք նախկինում գնել են իրենց փողերով, և իմ թշնամիների աշտարակները տապալելու համար, որոնք հնարավոր է որ լինեն դրանց վրա, և նրանց պահապաններին ցրելու համար, և իմ թշնամիներից իմ Բվրեթն առնելու համար, մինչև երրորդ և չորրորդ սերունդը նրանց, ովքեր ասում են ինձ:

31 Բայց նախ թող իմ գորքը շատ մեծանա, և թող այն «սրբագործվի իմ առաջ, որպեսզի դառնա պայծառ, ինչպես արևը և պարզ, ինչպես Բլուսինը, և որ նրա դրոշակներն ահարկու լինեն բոլոր ազգերի համար:

32 Որպեսզի այս աշխարհի թագավորությունները ստիպված լինեն ընդունելու, որ Միոնի արքայությունն իրավ մեր Աստծո և նրա Քրիստոսի «արքայությունն է. հետևաբար, եկեք Բենթարկվենք նրա օրենքներին:

33 Շշմարիտ ասում եմ ձեզ. Ինձ նպատակահարմար է, որ իմ եկեղեցու առաջին երեցները ստանան

24ա Վև.ՈՒ 84.73:
սուր Հպարտություն:
25ա սուր Խաղաղություն:
26ա Հովել Բ.11:
27ա Ծն. ԽԷ.1–12:
28ա Վև.ՈՒ 101.73:
բ Վև.ՈՒ 42.35–36:
29ա Վև.ՈՒ 42.30:

սուր Նվիրաբերել,
Նվիրաբերման օրենք.
Միացյալ
Միաբանություն:
30ա Վև.ՈՒ 35.13–14,
101.55, 103.22, 26:
բ Վև.ՈՒ 97.22:
31ա սուր Սրբագործում:

բ Երզ. 2.10,
Վև.ՈՒ 5.14, 109.73:
32ա Հայտ. ԺԱ.15:
սուր Աստծո
արքայություն
կամ Երկնքի
արքայություն:
բ սուր Կառավարություն:

իրենց ^աօժտումն ի վերուստ, իմ տանը, որը ես պատվիրել եմ, որ կառուցվի իմ անվան համար Կիրթլենդի հողում:

34 Եվ թող այն պատվիրանները, որոնք տվել եմ Սիոնի և նրա ^աօրենքի վերաբերյալ, գործադրվեն և կատարվեն նրա փրկագնումից հետո:

35 Մինչև հիմա ^ականչելու օրեր էին, բայց հիմա եկել են ընտրելու օրերը. և թող ընտրվեն նրանք, ովքեր ^բարժանի են:

36 Եվ իմ ծառային Հոգու ձայնով հայտնի կդարձվեն նրանք, ովքեր ^ըընտրված են. և նրանք պիտի ^բսրբագործվեն:

37 Եվ որքան որ նրանք հետևեն ^ախորհրդին, որոնք ստանում են,

նրանք գործություն կունենան շատ օրեր անց կատարել Սիոնի վերաբերող բաները:

38 Եվ կրկին ես ասում եմ ձեզ՝ խաղաղության կոչ արեք, ոչ միայն այն ժողովրդին, որի կողմից զարկվել եք, այլ նաև բոլոր մարդկանց:

39 Եվ բարձրացրեք ^ախաղաղության ^բդրոշը, և խաղաղություն հռչակեք աշխարհի ծայրերին:

40 Եվ խաղաղության առաջարկ արեք նրանց, ովքեր զարկել են ձեզ, համաձայն Հոգու ձայնի, որը ձեր մեջ է, և ^բբոլոր բաները միասին կգործեն ձեր բարիքի համար:

41 Հետևաբար, հավատարիմ եղեք. և ահա, տեսե՛ք, ես ձեզ ^ահետ եմ նույնիսկ մինչև վերջ: Դիշտ այդպես: Ամեն:

ԲԱԺԻՆ 106

Հայտնություն՝ տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարտի միջոցով, Կիրթլենդում, Օհայո, 1834թ. նոյեմբերի 25-ին (History of the Church, 2.170–171): Այս հայտնությունն ուղղված է Ուորեն Ա. Քառտերիին Օլիվեր Քառտերիի ավագ եղբորը:

1–3՝ Ուորեն Ա. Քառտերին կանչվում է, որպես տեղի նախագահող պաշտոնյա. 4–5՝ Երկրորդ Գալուստը վրա չի հասնի լույսի գավակներին, ինչպես գողը. 6–8՝ Եկեղեցում հավատարիմ ծառայելուն հետևում են մեծ օրհնություններ:

նախագահող քահանայապետ ^աՖրիդոմի հողի և նրա մերձակա շրջանների վրա.

2 Եվ քարոզի իմ հավիտենական ավետարանը և բարձրացնի իր ձայնն ու զգուշացնի ժողովրդին՝ ոչ միայն իր տարածքում, այլ նաև հարակից գավառներում:

3 Եվ իր ողջ ժամանակը նվիրի այս բարձր և սուրբ կոչմանը, որը ես այժմ տալիս եմ նրան, ջա-

ԻՄ կամքն է, որ իմ ծառա Ուորեն Ա. Քառտերին նշանակվի և կարգվի՝ որպես իմ եկեղեցու

33ա ՎևոՒ 95.8–9:
սու՛ օժտում:
34ա նշ. ՎևոՒ 42-ը հայտնի է, որպես «Օրենք»:
35ա սու՛ Կանչ, Աստծո կողմից կանչված, Կոչում:
բ սու՛ Արժանի,

Արժանավորություն:
36ա ՎևոՒ 95.5:
սու՛ Ընտրել, Ընտրեց, Ընտրված:
բ սու՛ Սրբագործում:
37ա սու՛ Խորհուրդ:
39ա սու՛ Դրոշ:
բ սու՛ Խաղաղություն:

40ա Հռովմ. Ը.28,
ՎևոՒ 90.24, 100.15:
41ա Մատ. ԻԸ.19–20:
106 1ա նշ. Նյու Յորք նահանգի Ֆրիդոմ քաղաքը և մերձակա շրջանները:

նասիրաբար ^ափնտրելով երկնքի ^բարքայությունը և նրա արդարությունը, և բոլոր անհրաժեշտ բաները կավելացվեն դրա վրա. քանզի ^գմշակն արժանի է իր վարձքին:

4 Եվ բացի այդ, ճշմարիտ ասում են ձեզ, որ Տիրոջ ^ագալուստը ^բմոտենում է, և այն վրա կհասնի աշխարհին, ինչպես ^գգողը գիշերով,–

5 Հետևաբար, գոտեպնդեք ձեր մեջքը, որ դուք ^ալույսի գավակները լինեք, և այդ օրը վրա չի ^բհասնի ձեզ, ինչպես գողը:

6 Եվ բացի այդ, ճշմարիտ ասում են ձեզ, որ երկնքում ուրախություն եղավ, երբ իմ ծառա Ուորենը

խոնարհվեց իմ գավազանի առաջ և առանձնացավ մարդկային նեցուքություններից.

7 Հետևաբար, օրհնյալ է իմ ծառա Ուորենը, քանզի ես ողորմություն կունենամ նրա վրա. և չնայած նրա սրտի ^աունայնությանը, ես կբարձրացնեմ նրան, որքան որ նա իրեն խոնարհեցնի իմ առաջ:

8 Եվ ես նրան կտամ ^աշնորհ և համոզվածություն, որով նա կկարողանա կանգուն մնալ. և եթե նա շարունակի լինել հավատարիմ վկա և լույս եկեղեցու համար, ես պսակ եմ պատրաստել նրա համար իմ Հոր ^ապարանքներում: Եհիշտ այդպես: Ամեն:

ԲԱԺԻՆ 107

Հայտնություն քահանայության վերաբերյալ տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեի միջոցով, Կիրթլենդում, Օհայո, 1835թ. մարտի 28-ին գրանցված (History of the Church, 2.209–217): Նշված օրը Տասներկուսը հավաքվեց խորհրդի ասպաշարությանը խոստովանելով իրենց անձնական թուլություններն ու թերությունները, և հետագա առաջնորդություն փնտրելով Տիրոջից: Նրանք պատրաստվում էին առաքելություններով առանձնանալ իրենց նշանակված շրջանները: Չնայած այս բաժնի մասերը տրվել են նշված օրը, պատմական արձանագրությունները հաստատում են, որ որոշ մասեր ստացվել էին տարբեր ժամանակներում, մի քանիսը՝ դեռևս 1831թ. Ուոյեմբերին:

1–6 Երկու քահանայություն կա՝ Մելքիսեդեկյան և Ահարոնյան. 7–12՝ Նրանք, ովքեր կրում են Մելքիսեդեկյան Քահանայություն, զորություն ունեն պաշտոնավարելու Եկեղեցու բոլոր պաշտոններում. 13–17՝ Եպիսկոպոսությունը նախագահում է Ահարոնյան Քահանայության վրա, որը սպասավորում

է արտաքին արարողությունները. 18–20՝ Մելքիսեդեկյան Քահանայությունը կրում է բոլոր հոգևոր օրհնությունների բանալիները. Ահարոնյան Քահանայությունը կրում է հրեշտակների սպասավորման բանալիները. 21–38՝ Առաջին Նախագահությունը, Տասներկուսը և Յոթանասունը կազմում են

3ա Մատ. 2.33:
բ սուր Աստծո արքայություն կամ Երկնքի արքայություն:
գ Մատ. Ժ.10, ՎևոՒ 31.5:

4ա Հակ. Ե.8:
բ սուր Վերջին օրեր, Ետին օրեր:
գ Ա.Թես. Ե.2:
5ա սուր Լույս, Քրիստոսի լույս:
բ Հայտ. ԺՁ.15:

7ա սուր Ունայն, Ունայնություն:
8ա սուր Ընդոհ:
բ Հովհ. ԺԳ.2, Եթեր 12.32–34, ՎևոՒ 59.2, 76.111, 81.6, 98.18:

նախագահող քվորումներ, որոնց որոշումները պետք է կայացվեն միատարրությամբ ու արդարությամբ. 39–52՝ Սահմանվում է Արամից մինչև Նոյ եկող հայրապետական կարգը. 53–57՝ Հնում Սրբերը հավաքվել են Ադամ-օղի-Ահմանում, և Տերը հայտնվել է նրանց. 58–67՝ Տասներկուսը պետք է կազմակերպի Եկեղեցու մյուս պաշտոնյաներին. 68–76՝ Եպիսկոպոսները ծառայում են, որպես ընդհանուր դատավորներ Իսրայելում. 77–84՝ Առաջին Նախագահությունը և Տասներկուսը կազմում են Եկեղեցու բարձրագույն դատարանը. 85–100՝ Քահանայության նախագահները կառավարում են իրենց քվորումները:

Ե Ե Ե Ղ Ե Յ Ո Ւ Մ կա երկու քահանայություն, այսինքն՝ Մելքիսեդեկյան և Մահարոնյան, որն ընդգրկում է Ղևտական Քահանայությունը:

2 Պատճառը, որ առաջինը կոչվում է Մելքիսեդեկյան Քահանայություն, այն է, որ Մելքիսեդեկը շատ մեծ քահանայապետ էր:

3 Նախքան նրա օրերը, այն կոչվում էր Սուրբ Քահանայություն ըստ Աստծո Որդու՝ Մարգի:

4 Սակայն, ելնելով Գերագույն Էակի անվան հանդեպ ունեցած հարգանքից կամ Մպատկառանքից, նրա անունը շատ հաճախ կրկնելուց խուսափելու նպատակով, նրանք՝ հիմ օրերի եկեղեցին, այդ քահանայությունը կոչեցին

Մելքիսեդեկի անունով, կամ Մելքիսեդեկյան Քահանայություն:

5 Եկեղեցու բոլոր մյուս իշխանությունները կամ պաշտոններն այդ քահանայության Միավելումներն են:

6 Սակայն երկու բաժին, կամ հիմնական գլուխ կա,– մեկը Մելքիսեդեկյան Քահանայությունն է, իսկ մյուսը՝ Ահարոնյան կամ Ղևտական Քահանայությունը:

7 ՄԵՐԵԿԻ պաշտոնը դասվում է Մելքիսեդեկի քահանայության ներքո:

8 Մելքիսեդեկյան Քահանայությունը կրում է նախագահելու իրավունքը, և զորություն ու իշխանություն ունի եկեղեցու բոլոր պաշտոնների վրա, աշխարհի բոլոր դարաշրջաններում, հոգևոր բաները ղեկավարելու համար:

9 Ըստ Մելքիսեդեկի կարգի Բարձրագույն Քահանայության ՄՆախագահությունն իրավունք ունի պաշտոնավարելու եկեղեցու բոլոր պաշտոններում:

10 Ըստ Մելքիսեդեկյան Քահանայության կարգի Քահանայապետերն իրավունք ունեն պաշտոնավարելու իրենց դիրքում, նախագահության ղեկավարության ներքո հոգևոր բաներում սպասավորելիս և նաև երեցի, քահանայի (ըստ Ղևտական կարգի), ուսուցչի, սարկավազի և անդամի պաշտոնում:

11 Երեցն իրավունք ունի պաշտոնավարելու նրա փոխարեն, երբ քահանայապետը ներկա չէ:

<p>107 1ա սո՛ւ Մելքիսեդեկյան քահանայություն: բ սո՛ւ Ահարոնյան քահանայություն: 2ա ՋՍԹ, Ծճ. 14.25–40, ՎևՈՒ 84.14:</p>	<p>սո՛ւ Մելքիսեդեկ: 3ա Ալմա 13.3–19, ՎևՈՒ 76.57: 4ա սո՛ւ Պատկառանք: 5ա ՎևՈՒ 84.29, 107.14: 6ա Բ Օր. Ժ.8–9:</p>	<p>7ա սո՛ւ Երեց: 8ա սո՛ւ Իշխանություն: 9ա ՎևՈՒ 81.2, 107.22, 65–67, 91–92: 10ա սո՛ւ Քահանայապետ: բ ՎևՈՒ 121.34–37:</p>
--	---	---

12 Քահանայապետը և երեցը, համաձայն եկեղեցու ուխտերի և պատվիրանների, պետք է ղեկավարեն հոգևոր բաները. և նրանք իրավունք ունեն պաշտոնավարելու եկեղեցու բոլոր այդ պաշտոններում, երբ ներկա չեն ավելի բարձր իշխանավորներ:

13 Երկրորդ քահանայությունը կոչվում է Ահարոնի՝ Պահանայություն, որովհետև այն շնորհվել էր Պահարոնին ու նրա հետնորդներին, նրանց բոլոր սերունդների ընթացքում:

14 Ինչու է այն կոչվում փոքրագույն քահանայություն, որովհետև այն՝ հավելումն է մեծագույնի կամ Մելքիսեդեկյան Քահանայության, և զորություն ունի սպասավորելու արտաքին արարողությունները:

15 ՄԵպիսկոպոսությունն այս քահանայության նախագահությունն է, և կրում է դրա բանալիներն ու իշխանությունը:

16 Ոչ մի տղամարդ չունի այս պաշտոնի, այս քահանայության բանալիները կրելու օրինական իրավունքը, եթե նա Ահարոնի՝ անմիջական հետնորդը չէ:

17 Բայց քանի որ Մելքիսեդեկյան Քահանայության քահանայապետն իշխանություն ունի պաշտոնավարելու մյուս բոլոր փոքր պաշտոններում, նա կարող է պաշտոնավարել եպիսկոպոսի պաշտոնում, երբ հնարավոր չէ գտնել Ահարոնի անմիջական հետնորդ,

պայմանով, որ նա կկանչվի և ի սպաս կդրվի և՛ կկարգվի այդ զորությանը Մելքիսեդեկյան Քահանայության ՊՆախագահության ձեռքերով:

18 Բարձրագույն, կամ Մելքիսեդեկյան Քահանայության զորությունն ու իշխանությունն է՝ կրել եկեղեցու բոլոր հոգևոր օրհնությունների՝ Պբանալիները, –

19 Ունենալ երկնքի արքայության Պխորհուրդներն ստանալու առանձնաշնորհը, տեսնել երկինքներն իրենց համար բացված, հաղորդակցվել Անդրանիկի եկեղեցու և Պընդհանուր Ժողովի հետ ու վայելել հաղորդակցությունն ու ներկայությունը Հայր Աստծո և Հիսուսի՝ նոր ուխտի Պմիջնորդի:

20 Փոքրագույն, կամ Ահարոնյան Քահանայության զորությունն ու իշխանությունն է՝ կրել հրեշտակների սպասավորման Պբանալիները և սպասավորել արտաքին Պարարողությունները, ավետարանի գիրը, ասպաշխարության Պմկրտությունը՝ մեղքերի Պթողության համար՝ համաձայն ուխտերի և պատվիրանների:

21 Անհրաժեշտությունից ելնելով՝ նախագահներ կամ նախագահող պաշտոնյաներ են բարձրացվում կամ նշանակվում նրանցից կամ նրանց միջից, ովքեր կարգված են այս երկու քահանայությունների առանձին պաշտոններում:

22 Մելքիսեդեկյան Քահանա-

13ա սո՛ւ Ահարոնյան քահանայություն:
բ սո՛ւ Ահարոն՝ Մովսեսի եղբայր:
14ա Վև՛ՈՒ 20.52, 107.5:
15ա սո՛ւ Եպիսկոպոս:
16ա Վև՛ՈՒ 68.14–21, 107.68–76:
17ա սո՛ւ Կարգել, Կարգում:

բ Վև՛ՈՒ 68.15:
18ա սո՛ւ Քահանայության բանալիները:
19ա Ավ՛մա 12.9–11, Վև՛ՈՒ 63.23, 84.19–22:
սո՛ւ Աստծո խորհուրդները:
բ Երբ. ԺԲ.22–24:
գ սո՛ւ Միջնորդ:

20ա Վև՛ՈՒ 13.1, 84.26–27:
բ սո՛ւ Արարողություններ:
գ սո՛ւ Մկրտություն, Մկրտել:
դ սո՛ւ Մեղքերի թողություն:
22ա սո՛ւ Մելքիսեդեկյան քահանայություն:

յությունից երեք ²⁷Նախագահող Քահանայապետ, ընտրվելով Տասներկուսի կողմից, նշանակվելով ու կարգվելով այդ պաշտոնին, և ²⁸աջակցվելով եկեղեցու վստահությամբ, հավատքով ու աղոթքով, կազմում են Եկեղեցու Նախագահության քվորումը:

23 ²⁹Տասներկու ճամփորդող խորհրդականները կանչվում են՝ լինելու Տասներկու ³⁰Առաքյալները կամ Քրիստոսի անվան հատուկ վկաները ողջ աշխարհում,– այդպիսով տարբերվելով եկեղեցու մյուս պաշտոնյաներից իրենց կոչման պարտականություններով:

24 Եվ նրանք կազմում են քվորում, որն իշխանությամբ ու զորությամբ հավասար է վերոհիշյալ երեք նախագահներին:

25 ³¹Յոթանասուներկաները նույնպես կանչված են՝ քարոզելու ավետարանը և լինելու հատուկ վկաներ հեթանոսների համար ու ողջ աշխարհում,– այդպիսով տարբերվելով եկեղեցու մյուս պաշտոնյաներից իրենց կոչման պարտականություններով:

26 Եվ նրանք կազմում են քվորում, որն իշխանությամբ հավասարագոր է նրան, ինչը վերը նշված Տասներկու հատուկ վկաներինը կամ Առաքյալներինն է:

27 Եվ յուրաքանչյուր որոշում, որը կայացվում է այս քվորումներից որևէ մեկի կողմից, պետք է լինի միաբան ձայնով. այսինքն՝ ամեն մի քվորումի յուրաքանչյուր անդամ պետք է համաձայն լինի նրա որոշումների հետ, որպեսզի

նրանց որոշումները մեկը մյուսի հետ նույն զորությունը, կամ օրինականությունն ունենան,–

28 Մեծամասնությունը կարող է կազմել քվորում, եթե հանգամանքների բերումով այլընտրանք չկա,–

29 Եթե այդպես չլինի, նրանց որոշումները չեն արժանանա այնպիսի օրհնությունների, ինչպիսիք էին երեք նախագահների քվորումի որոշումները հնում, որոնք կարգվել էին ըստ Մելքիսեդեկի կարգի, և արդար ու սուրբ մարդիկ էին:

30 Այս քվորումների որոշումները, կամ դրանցից յուրաքանչյուրը, պետք է կայացվեն ողջ ³²արդարակեցությամբ, սրբությամբ, սրտի խոնարհությամբ, հեզությամբ ու երկայնամտությամբ և հավատքով և ³³առաքինությամբ և գիտությամբ, ժուժկալությամբ, համբերությամբ, աստվածայնությամբ, եղբայրասիրությամբ ու գթությամբ.

31 Քանզի խոստումն է, որ եթե այս բաներն առատ լինեն նրանց մեջ, նրանք ³⁴անպտուղ չեն լինի Տիրոջ գիտության մեջ:

32 Եվ եթե այս քվորումների որևէ որոշում անիրավությամբ կայացվի, այն կարող է բերվել եկեղեցու հոգևոր իշխանությունները կազմող առանձին քվորումների ընդհանուր ժողովի առաջ. հակառակ դեպքում նրանց որոշումը չի կարող բողոքարկվել:

33 Տասներկուսը ճամփորդող Նախագահող Բարձրագույն Խորհուրդ է՝ Տիրոջ անունով պաշ-

22բ ՎևՈՒ 90.3, 6, 107.9, 65–67, 78–84, 91–92:
գ սուր Եկեղեցու ղեկավարներին հաստատելը:

23ա ՎևՈՒ 107.33–35:
բ սուր Առաքյալ:
25ա սուր Յոթանասուներկան:
30ա ՎևՈՒ 121.36:
սուր Արդար,

Արդարություն:
բ ՎևՈՒ 121.41:
սուր Առաքինություն:
31ա Բ Պետ. Ա.5–8:

տոնավարելու համար, Եկեղեցու Նախագահության ղեկավարության ներքո, համաձայն երկնքի հաստատության. եկեղեցին կառուցելու և բոլոր ազգերի մեջ նրա գործերը կարգավորելու համար, նախ՝ հեթանոսների համար, իսկ հետո՝ հրեաների համար:

34 Յոթանասունը պետք է գործի Տիրոջ անունով, ՝Սասներկուսի, կամ ճամփորդող բարձրագույն խորհրդի ղեկավարության ներքո, եկեղեցին կառուցելիս և բոլոր ազգերի մեջ նրա գործերը կարգավորելիս, նախ՝ հեթանոսների համար, իսկ հետո՝ հրեաների համար,–

35 Տասներկուսն ուղարկված լինելով, կրելով բանալիները, որ Հիսուս Քրիստոսի ավետարանի հռչակումով բացի դուռը, նախ՝ հեթանոսների համար, իսկ հետո՝ հրեաների համար:

36 Միոնի ցգերի տեղի ՝բարձրագույն խորհուրդները կազմում են քվորում՝ եկեղեցու գործերի մեջ իրենց բոլոր որոշումներում հավասարազոր իշխանություն ունենալով նախագահության քվորումի կամ ճամփորդող բարձրագույն խորհրդի հետ:

37 Միոնի բարձրագույն խորհուրդը կազմում է քվորում՝ եկեղեցու գործերի մեջ իրենց բոլոր որոշումներում հավասարազոր իշխանություն ունենալով Միոնի ցգերի Տասներկուսի խորհուրդների հետ:

38 Ճամփորդող բարձրագույն

խորհրդի պարտականությունն է՝ կանչել ՝Յոթանասունին, ուրիշների փոխարեն, երբ կարիք կա օգնության, զանազան կոչումներ կատարելու ավետարանի քարոզման և սպասավորման համար:

39 Տասներկուսի պարտականությունն է՝ եկեղեցու բոլոր մեծ ճյուղերում կարգել ՝ավետարանչական սպասավորներ, երբ որ նրանց կտրվի հայտնությամբ,–

40 Քահանայության այս կարգը հաստատվել է, որ փոխանցվի հորից որդուն, և արդարացիորեն պատկանում է ընտրյալ սերնդի անմիջական հետնորդներին, որոնց տրվել են խոստումները:

41 Այդ կարգը հաստատվել է ՝Ադամի օրերում և եկել է հետևյալ ՝ազգատոհմով.

42 Ադամից ՝Մեթին, որն Ադամի կողմից կարգվեց վաթսունինը տարեկան հասակում, և օրհնվեց նրա կողմից, նրա (Ադամի) մահից երեք տարի առաջ, և ստացավ Աստծո խոստումն իր հոր կողմից, որ նրա ժառանգները կլինեն Տիրոջ ընտրյալները, և որ նրանք կպահպանվեն մինչև աշխարհի վերջը.

43 Որովհետև նա (Մեթը) ՝կատարյալ մարդ էր, և նրա ՝նմանությունն իր հոր ճիշտ նմանությունն էր՝ այնքան, որ կարծես նա իր հայրը լիներ բոլոր բաներում և նրանից կարող էր տարբերվել միայն իր տարիքով:

44 Ենովսը կարգվեց հարյուր երեսունչորս տարեկան և չորս անսական հասակում, Ադամի ձեռքով:

33ա1 Նեփի 13.42,
3 Նեփի 16.4-13,
ՎևՈՒ 90.8-9:
34ա ՎևՈՒ 112.21:
36ա սոՒ Բարձրագույն
խորհուրդ:

38ա սոՒ Յոթանասունական:
39ա սոՒ Ավետարանիչ.
Հայրապետ,
Հայրապետական:
41ա սոՒ Ադամ:
բ ԾՆ. Ե, ՎևՈՒ 84.6-16,

Մովսես 6.10-25:
42ա սոՒ Մեթ:
43ա սոՒ Կատարյալ:
բ ԾՆ. Ե.3:

45 Աստված կանչեց Կայնանին անապատում, նրա քառասուն տարեկան հասակում. և նա հանդիպեց Ադամին դեպի Շեդդլամակ ճամփորդելիս: Նա ութսունյոթ տարեկան էր, երբ ստացավ իր կարգումը:

46 Մաղաղիելը չորս հարյուր իննսունվեց տարեկան և յոթ օրական էր, երբ կարգվեց Ադամի ձեռքով, որը նաև օրհնեց նրան:

47 Հարեղը երկու հարյուր տարեկան էր, երբ կարգվեց Ադամի ձեռքի ներքո, որը նաև օրհնեց նրան:

48 Մեծովքը քսանհինգ տարեկան էր, երբ կարգվեց Ադամի ձեռքի ներքո. և նա վաթսունհինգ էր, և Ադամն օրհնեց նրան:

49 Եվ նա տեսնում էր Տիրոջը, և նա քայլում էր նրա հետ, և շարունակ նրա երեսի առաջ էր. և նա թալեց Աստծո հետ երեք հարյուր և վաթսունհինգ տարի, դառնալով չորս հարյուր և երեսուն տարեկան, երբ նա թփոխակերպվեց:

50 Մաթուսաղան հարյուր տարեկան էր, երբ կարգվեց Ադամի ձեռքի ներքո:

51 Ղամեքը երեսուներկու տարեկան էր, երբ կարգվեց Մեթի ձեռքի ներքո:

52 Նոյը տաս տարեկան էր, երբ կարգվեց Մաթուսաղայի ձեռքի ներքո:

53 Ադամի մահից երեք տարի առաջ, նա Մադամ-օնդի-Ահման հովիտը կանչեց Մեթին, Ենովահին, Կայնանին, Մաղաղիելին, Հարե-

ղին, Ենովքին և Մաթուսաղային, որոնք բոլորը Քահանայապետեր էին, և մնացած իր արդարակյաց ժառանգներին, և այնտեղ իր վերջին օրհնությունը տվեց նրանց:

54 Եվ Տերը հայտնվեց նրանց, և նրանք վեր կացան ու օրհնեցին Մադամին, և կոչեցին նրան Միքայել, իշխան, հրեշտակապետ:

55 Եվ Տերը սփոփանք տվեց Ադամին և նրան ասաց. Ես քեզ դրել եմ, որ լինես գլխավերևում. ազգերի բազմություն կծնվի քեզանից, և դու նրանց վրա իշխան կլինես հավիտյան:

56 Եվ Ադամը կանգնեց ժողովքի մեջ. և չնայած տարիքից կրկնված էր, նա Սուրբ Հոգով լցված մախապատմեց, թե ինչ է տեղի ունենալու իր ժառանգների հետ, մինչև ամենավերջին սերունդը:

57 Այս բոլոր բաները գրվել են Ենովքի գրքում, և ժամանակին դրանց մասին վկայություն կտրվի:

58 Տասներկուսի պարտականությունն է, նաև, Քարգել և կազմակերպել եկեղեցու մյուս բոլոր պաշտոնյաներին, այն հայտնության համաձայն, որն ասում է.

59 Քրիստոսի եկեղեցուն, որը Սիոնի հողում է, ի լրումն եկեղեցու գործերին վերաբերող եկեղեցու օրենքների,–

60 Ճշմարիտ ասում եմ ձեզ, ասում է Չորաց Տերը, անհրաժեշտ է, որ լինեն մախազահող երեցներ՝ մախազահեղու բոլոր նրանց վրա, ովքեր երեցի պաշտոնում են.

48ա սո՛ւ Ենովք:
49ա Ծճ. Ե.22, Եբբ. ԺԱ.5, Մովսես 7.69:
բ սո՛ւ Փոխակերպված էակներ:
50ա սո՛ւ Մաթուսաղա:
52ա սո՛ւ Նոյ՝ Աստվա-

ժաշնչյան հայրապետ:
53ա Վևո՛Ւ 78.15, 116.1:
սո՛ւ Ադամ-օնդի-ահման:
բ սո՛ւ Քահանայապետ:
54ա Վևո՛Ւ 128.21:
սո՛ւ Ադամ:
բ սո՛ւ Միքայել:

55ա Վևո՛Ւ 78.16:
56ա Մովսես 5.10:
58ա սո՛ւ Առաքյալ:
բ սո՛ւ Կարգել, Կարգում:
59ա Վևո՛Ւ 43.2–9:
60ա Վևո՛Ւ 107.89–90:

61 Եվ նաև «քահանաներ՝ նախագահելու բոլոր նրանց վրա, ովքեր քահանայի պաշտոնում են.

62 Եվ նաև ուսուցիչներ՝ «նախագահելու նրանց վրա, ովքեր ուսուցչի պաշտոնում են, նույն ձևով, և նաև սարկավագները,–

63 Ուստի, սարկավագից ուսուցիչ, և ուսուցչից քահանա, և քահանայից երեց, առանձին-առանձին, ինչպես որ նրանք նշանակված են՝ եկեղեցու ուխտերի և պատվիրանների համաձայն:

64 Ապա գալիս է Բարձրագույն Քահանայությունը, որը բոլորից մեծագույնն է:

65 Ուստի, անպայման անհրաժեշտ է, որ Բարձրագույն Քահանայությունից մեկը նշանակվի՝ նախագահելու քահանայության վրա, և նա պետք է կոչվի Եկեղեցու Բարձրագույն Քահանայության Նախագահ.

66 Կամ, այլ խոսքով, Եկեղեցու Բարձրագույն Քահանայության վրա՝ «Նախագահող Քահանայապետ:

67 Նրանից են գալիս արարողությունների սպասավորումը և եկեղեցու օրհնությունները՝ «ձեռնադրմամբ:

68 Ուստի, եպիսկոպոսի պաշտոնը հավասարագոր չէ վերջինիս. քանզի «եպիսկոպոսի պաշտոնը բոլոր նյութական գործերը սպասավորելն է.

69 Այնուամենայնիվ, եպիսկոպոսը պետք է ընտրվի Բարձրագույն Քահանայությունից, եթե նա Ահարոնի Բանմիջական հետնորդ չէ:

70 Քանզի եթե նա Ահարոնի անմիջական հետնորդ չէ, նա չի կարող կրել այդ քահանայության բանալիները:

71 Այնուամենայնիվ, ըստ Մելքիսեդեկի կարգի քահանայապետը կարող է ի սպաս դրվել՝ վարելու նյութական գործերը, դրանց վերաբերյալ գիտելիք ունենալով ճշմարտության Հոգով.

72 Եվ նաև «դատավոր լինելու Իսրայելում, կատարելու եկեղեցու գործերը, դատաստանի նստելու օրինազանցների հետ, վկայության հիման վրա, ինչպես որ իրեն ներկայացված կլինի օրենքների համաձայն, իր խորհրդականների օգնությամբ, որոնց նա ընտրել է կամ կընտրի եկեղեցու երեցների միջից:

73 Սա է եպիսկոպոսի պարտականությունը, որն Ահարոնի անմիջական հետնորդ չէ, սակայն կարգվել է ըստ Մելքիսեդեկի կարգի Բարձրագույն Քահանայության:

74 Այդպիսով, նա պիտի լինի դատավոր, այսինքն՝ ընդհանուր դատավոր Սիոնի բնակիչների մեջ կամ Սիոնի ցցում կամ եկեղեցու որևէ ճյուղում, որտեղ նա ի սպաս կդրվի այս ծառայությանը, մինչև որ Սիոնի սահմանները կընդարձակվեն, և անհրաժեշտ կդառնա այլ եպիսկոպոսներ կամ դատավորներ ունենալ Սիոնում կամ որևէ այլ վայրում:

75 Եվ որքան որ այլ եպիսկոպոսներ նշանակվեն, նրանք պիտի գործեն միևնույն պաշտոնում:

76 Բայց Ահարոնի անմիջական

61ա ՎևՈՒ 107.87:
62ա ՎևՈՒ 107.85–86:
66ա ՎևՈՒ 107.9, 91–92:
սուր Նախագահ:

67ա սուր Չեռնադրություն:
68ա սուր Եպիսկոպոս:
69ա սուր Մելքիսեդեկյան քահանայություն:

բ ՎևՈՒ 68.14–24,
84.18, 107.13–17:
72ա ՎևՈՒ 58.17–18:

հետնորդն օրինական իրավունք ունի այս քահանայության նախագահության համար, այս ծառայության «բանալիների համար, որ ինքնուրույն գործի եպիսկոպոսի պաշտոնում, առանց խորհրդականների, բացի այն դեպքից, երբ, որպես Իսրայելի դատավոր՝ նա կնստի դատելու Բարձրագույն Քահանայության Նախագահին ըստ Սելքիսեդեկի կարգի:

77 Եվ այս խորհուրդներին յուրաքանչյուրի որոշումը՝ համաձայն պատվիրանի, որն ասում է.

78 Գարձյալ, ճշմարիտ ասում եմ ձեզ. Եկեղեցու ամենակարևոր գործերն ու եկեղեցու «ամենաբարդ խնդիրները, որքան որ եպիսկոպոսի կամ դատավորների որոշումը գոհացուցիչ չէ, պետք է փոխանցվեն ու ներկայացվեն եկեղեցու խորհրդին՝ Բարձրագույն Քահանայության «Նախագահության առաջ:

79 Եվ Բարձրագույն Քահանայության խորհրդի Նախագահությունը գործություն կունենա կանչելու այլ քահանայապետերի, այսինքն՝ տասներկուսին, օգնելու որպես խորհրդականներ. և այսպես, Բարձրագույն Քահանայության Նախագահությունը և նրա խորհրդականները գործություն կունենան վկայության հիման վրա որոշում կայացնելու՝ եկեղեցու օրենքների համաձայն:

80 Եվ այդ որոշումից հետո, այն այլևս չպիտի հիշատակվի Տիրոջ առաջ. քանզի սա Աստծո եկեղեցու բարձրագույն խորհուրդն է,

և նրա որոշումը, հոգևոր հարցերի վիճաբանություններում, վերջնական է:

81 Չկա եկեղեցուն պատկանող ոչ մի անձ, որ ազատված լինի եկեղեցու այդ խորհրդին ենթարկվելուց:

82 Եվ որքան որ Բարձրագույն Քահանայության Նախագահն օրինազանցի, նա պետք է հիշատակվի եկեղեցու ընդհանուր խորհրդի առաջ, որին պետք է օգնեն Բարձրագույն Քահանայության տասներկու խորհրդականներ.

83 Եվ նրանց որոշումը նրա վերաբերյալ պիտի լինի նրա հետ կապված վիճաբանության վերջը:

84 Այսպիսով, ոչ ոք չի ազատվի Աստծո «արդարադատությունից և օրենքներից, որ բոլոր բաները հնարավոր լինի անել կարգով և հանդիսավորությամբ նրա առաջ՝ համաձայն ճշմարտության ու արդարության:

85 Եվ բացի այդ, ճշմարիտ ասում եմ ձեզ. «Սարկավագի պաշտոնի վրա նախագահողի պարտականությունն է՝ նախագահել տասներկու սարկավագների վրա, խորհրդի նստել նրանց հետ և նրանց «ուսուցանել իրենց պարտականությունները, շենացնելով միմյանց, ինչպես որ տրված է, ուխտերի համաձայն:

86 Եվ նաև «ուսուցիչների պաշտոնի վրա նախագահողի պարտականությունն է՝ նախագահել քսանչորս ուսուցիչների վրա և խորհրդի նստել նրանց հետ՝

76ա սոՒ Քահանայության
բանալիները:
78ա վևՈՒ 102.13, 28:
բ վևՈՒ 68.22:
84ա սոՒ Արդարադատու-

թյուն:
85ա սոՒ Սարկավագ:
բ վևՈՒ 38.23, 88.77-79,
118:
86ա վևՈՒ 20.53-60:

սոՒ Ուսուցիչ՝
Ահարոնյան
քահանայություն:

նրանց ուսուցանելով իրենց պաշտոնի պարտականությունները, ինչպես տրված է ուխտերում:

87 Նաև Ահարոնի Քահանայության վրա նախագահողի պարտականությունն է՝ նախագահել քառասունութ ^բքահանաների վրա և խորհրդի նստել նրանց հետ՝ նրանց ուսուցանել իրենց պաշտոնի պարտականությունները, ինչպես տրված է ուխտերում,–

88 Այս նախագահը պիտի լինի ^աԵպիսկոպոս. քանզի սա այդ քահանայության պարտականություններից մեկն է:

89 Բացի այդ, ^աերեցների պաշտոնի վրա նախագահողի պարտականությունն է՝ նախագահել իննսունվեց երեցների վրա, և խորհրդի նստել նրանց հետ, և ուսուցանել նրանց՝ համաձայն ուխտերի:

90 Այս նախագահությունը տարբերվում է յոթանասունի նախագահությունից և նախատեսված է նրանց համար, ովքեր չեն ^աճամփորդում ողջ աշխարհով:

91 Եվ բացի այդ, Բարձրագույն Քահանայության պաշտոնի Նախագահի պարտականությունն է՝ ^անախագահել ողջ եկեղեցու վրա և լինել ^բՄովսեսի պես,–

92 Ահա, սա է իմաստությունը. այո, լինել ^ատեսանող, ^բհայտնող, քարզմանիչ և ^գմարգարե, ունենալով Աստծո բոլոր ^դպարզկները, որոնք նա շնորհում է եկեղեցու գլխավորին:

93 Եվ ^աՅոթանասունի կարգը ցույց տվող տեսիլքի համաձայն, նրանք պետք է ունենան յոթ նախագահ, յոթանասունի թվից ընտրված, իրենց վրա նախագահելու համար.

94 Եվ այդ նախագահներից յոթերորդ նախագահը պետք է նախագահի վեցի վրա.

95 Եվ այդ յոթ նախագահները պետք է ընտրեն ուրիշ յոթանասունի, բացի առաջին յոթանասունից, որին պատկանում են իրենք, և պետք է նախագահեն նրանց վրա.

96 Եվ նաև ուրիշ յոթանասունի, մինչև յոթ անգամ յոթանասուն, եթե այգու աշխատանքի անհրաժեշտությունը պահանջում է:

97 Եվ այդ յոթանասունականները պիտի լինեն ^աճամփորդող ծառայողներ, նախ՝ հեթանոսների համար, և նաև՝ հրեաների համար:

98 Մինչդեռ եկեղեցու մյուս պաշտոնյաները, որոնք չեն պատկանում Տասներկուսին, ոչ էլ Յոթանասունին, բոլոր ազգերի մեջ ճամփորդելու պատասխանատվություն չեն կրում, այլ պետք է ճամփորդեն, որքան որ նրանց պայմանները թույլ են տալիս, չնայած որ նրանք կարող են մեծ քարձր և պատասխանատու պաշտոններ ունենալ եկեղեցում:

99 Ուստի, այժմ թող ամեն տղամարդ սովորի իր ^ապարտականությունը և ողջ ^բջանասիրությամբ գործի այն պաշտոնում, որում նշանակված է:

87ա սուր Քահանա՝
Ահարոնյան
քահանայություն:
88ա սուր Եպիսկոպոս:
89ա սուր Երեց:
90ա ՎևոՒ 124.137:
91ա ՎևոՒ 107.9, 65–67:

բ ՎևոՒ 28.2, 103.16–21:
92ա Մոսիա 8.13–18:
սուր Տեսանող:
բ սուր Հայտնություն:
գ ՎևոՒ 21.1:
սուր Մարգարե:
դ սուր Հոգու պարզկները:

93ա ՎևոՒ 107.38:
սուր Յոթանասունական:
97ա ՎևոՒ 124.138–139:
99ա սուր Պարտականություն:
բ սուր Ջանասիրություն:

100 Նա, ով ^ածույլ է, ^բարժանի չի համարվի կանգուն մնալ, և նա, ով չի սովորում իր պարտականու-

թյունը և իրեն չի արդարացնում, արժանի չի համարվի կանգուն մնալ: Ճիշտ այդպես: Ամեն:

ԲԱԺԻՆ 108

Հայտնություն տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեի միջոցով, Կիրթլենդում, Օհայո, 1835թ. դեկտեմբերի 26-ին (History of the Church, 2.345): Այս բաժինը ստացվել էր Լայման Շերմանի խնդրանքով, որը մինչ այդ կարգվել էր քահանայապետ և յոթանասունական, և որը եկել էր Մարգարեի մոտ, իր պարտականությունը հայտնի դարձնելու հայտնության խնդրանքով:

1–3՝ Լայման Շերմանը ներվում է իր մեղքերի համար. 4–5՝ Նա կլինի Եկեղեցու առաջնորդ երեցների թվում. 6–8՝ Նա կանչվում է քարոզելու ավետարանը և գորացնելու իր եղբայրներին:

ԱՇՄԱՐԻՏ, այսպես է ասում Տեղը քեզ, իմ ծառա՝ Լայման. Քո մեղքերը ներված են քեզ, որովհետև դու հնազանդվել ես իմ ձայնին, այս առավոտ այստեղ գալով, որ խորհուրդ ստանաս նրանից, ում ես նշանակել եմ:

2 Հետևաբար, թող հոգիդ ^ահանգիստ լինի քո հոգևոր վիճակի վերաբերյալ, և այլևս չդիմադրի իմ ձայնին:

3 Եվ վեր կաց և այսուհետև ավելի ուշադիր եղիր քո խոստումները պահելիս, որոնք դու արել ես և անում ես, և դու պիտի օրհնվես անչափ մեծ օրհնություններով:

4 Համբերությամբ սպասիր, մինչև որ իմ ծառաների մի ^ահանդիսավոր ժողով կանչվի, այն ժամանակ դու կհիշվես իմ առաջին երեցների հետ և, կարգվելով, իրավունք կստանաս մնացած իմ երեցների հետ, որոնց ես ընտրել եմ:

5 Ահա, սա Հոր ^ախոստումն է քեզ, եթե դու հավատարիմ շարունակես:

6 Եվ այդ օրը քեզ համար կկատարվի այն, որ դու իրավունք կունենաս ^աքարոզելու իմ ավետարանը, ուր էլ որ ես կուղարկեմ քեզ, այսուհետև, այդ ժամանակից:

7 Հետևաբար, ^ագորացրու եղբայրներիդ քո բոլոր հաղորդակցություններով, քո բոլոր աղոթքներով, քո բոլոր հորդորներով և քո բոլոր գործերով:

8 Եվ ահա, տե՛ս, ես քեզ հետ եմ, որ օրհնեմ քեզ և ^աազատեմ քեզ հավիտյան: Ամեն:

ԲԱԺԻՆ 109

Օհայոյի Կիրթլենդի տաճարի նվիրագործման ժամանակ ասված աղոթքը, 1836թ. մարտի 27-ին (History of the Church, 2.420–426): Մարգարեի

100 աՎևՈՒ 58.26–29:
սու՛ ծույլ, ծուլություն:
բ սու՛ Արժանի,
Արժանավորություն:

108 2ա սու՛ Հանգիստ:
4ա ՎևՈՒ 109.6–10:
5ա ՎևՈՒ 82.10:
6ա սու՛ Միսիոներական

աշխատանք:
7ա Ղուկ. ԻԲ.31–32:
8ա 2 Նեփի 9.19:

գրավոր հայտարարության համաձայն, այս աղոթքը նրան տրվել էր հայտնությամբ:

1-5 Կիրթլենդի Տաճարը կառուցվել էր, որպես այցելության վայր Մարդու Որդու համար. 6-21՝ Այն պետք է լինի աղոթքի, ծոմապահության, հավատքի, ուսման, փառքի և կարգու կանոնի տուն, և Աստծո տուն. 22-33՝ Թող չսպաշխարողները, որոնք հակադրվում են Տիրոջ ժողովրդին, կարկամեցվեն. 34-42՝ Թող Սրբերը գործությամբ առաջ գնան արդարներից Սիոնում հավաքելու համար. 43-53՝ Թող Սրբերն ազատվեն այն սոսկալի բաներից, որոնք թափվելու են ամբարիշտների վրա վերջին օրերին. 54-58՝ Թող ազգերը և ժողովուրդները և եկեղեցիները պատրաստ լինեն ավետարանի համար. 59-67՝ Թող հրեաները, Լատինացիները և ողջ Իսրայելը փրկագնվեն. 68-80՝ Թող Սրբերը պասկվեն փառքով ու պատվով և ձեռք բերեն հավերժական փրկություն:

ԳՈՂՈՒԹՅՈՒՆ քո անվանը, ո՛վ Տեր, Իսրայելի՛ Աստված, որ պահում ես ^բուխտը և ողորմություն ես ցուցաբերում քո ծառաների հանդեպ, ովքեր ուղիղ են քայլում քո առաջ, իրենց ողջ սրտով,-

2 Դու, որ պատվիրել ես քո ծառաներին տուն ^ակառուցել քո անվան համար այս վայրում [Կիրթլենդում]:

3 Եվ այժմ, ո՛վ Տեր, դու տեսնում ես, որ քո ծառաները կատարել են քո պատվիրանների համաձայն:

4 Եվ արդ, խնդրում ենք քեզ, Սո՛ւրբ Հայր, Հիսուս Քրիստոսի անունով, քո ծոցի Որդու, որի անունով միայն կարող է փրկություն գալ մարդկանց զավակներին, խնդրում ենք քեզ, ո՛վ Տեր, ընդունիր այս ^ատունը, մեր՝ քո ծառաների ձեռքի ^բաշխատանքը, որը դու պատվիրեցիր մեզ կառուցել:

5 Քանզի դու գիտես, որ մենք կատարել ենք այս աշխատանքը մեծ նեղության մեջ. և մեր աղքատության միջից մենք տվել ենք մեր ստացվածքից, որ ^ատուն կառուցվի քո անվան համար, որ Մարդու Որդին մի տեղ ունենա՝ հայտնվելու իր ժողովրդին:

6 Եվ ինչպես դու ասել ես մեզ տված ^ահայտնության մեջ, կոչելով մեզ քո բարեկամները, ասելով. Կանչեք ձեր հանդիսավոր ժողովը, ինչպես պատվիրել եմ ձեզ.

7 Եվ քանի որ բոլորը չէ, որ հավատք ունեն, ջանասիրաբար փնտրեք և իմաստության խոսքեր ուսուցանեք միմյանց. այո, իմաստության խոսքեր փնտրեք լավագույն գրքերից, ուսում փնտրեք, այսինքն՝ ուսումնասիրելով և նաև հավատքով:

8 Կազմակերպվեք. նախապատրաստեք ամեն անհրաժեշտ բան. և հաստատեք մի տուն, այսինքն՝ աղոթքի տուն, ծոմապահության տուն, հավատքի տուն, ուսման տուն, փառքի տուն, կարգ ու կանոնի տուն, Աստծո տուն.

109 1ա Ալմա 37.37, ՎևոՒ 46.32: սուր Շնորհակալ, Շնորհակալություն, Գոհաբանություն:

բ Դան. Թ.4: սուր Ուխտ: 2ա ՎևոՒ 88.119: 4ա Գ. Թագ. Թ.3: սուր Տաճար՝ Տիրոջ

տուն: բ 2 Նեփի 5.16: 5ա ՎևոՒ 124.27-28: 6ա ՎևոՒ 88.117-120:

9 Որ ձեր ներս մտնելը լինի Տիրոջ անունով. որ ձեր դուրս գալը լինի Տիրոջ անունով. որ ձեր բոլոր ողջույնները լինեն Տիրոջ անունով՝ դեպի Բարձրյալը պարզած ձեռքերով,–

10 Եվ արդ, Սո՛ւրբ Հայր, մենք քեզ խնդրում ենք օգնել մեզ՝ քո ժողովրդին, քո շնորհով, մեր հանդիսավոր ժողովը կանչելիս, որ այն արվի քո պատվի և քո աստվածային ընդունելության համար.

11 Եվ այնպես, որ մենք կարողանանք արժանի գտնվել քո աչքում, ապահովելու այն «խոստումների կատարումը, որոնք դու տվել ես մեզ՝ քո ժողովրդին, մեզ տրված հայտնություններում.

12 Որ քո «փառքը հանգչի քո ժողովրդի վրա և քո այս տան վրա, որը մենք այժմ նվիրաբերում ենք քեզ, որպեսզի այն սրբագործված և նվիրագործված լինի, որ սուրբ լինի, և որ քո սուրբ ներկայությունը մշտապես լինի այս տանը.

13 Եվ որ բոլոր մարդիկ, ովքեր ոտք կդնեն Տիրոջ տան շենքին, կարողանան զգալ քո գորությունը, և պարտավորված զգան՝ ընդունելու, որ դու ես սրբագործել այն, և որ այն քո տունն է՝ քո սրբության վայրը:

14 Եվ շնորհ արա, Սո՛ւրբ Հայր, որ բոլոր նրանք, ովքեր կերկրպագեն այս տանը, կարողանան իմաստության խոսքեր ուսուցանվել լավագույն գրքերից, և որ նրանք կարողանան ուսում փնտրել, այսինքն՝ ուսումնասիրելով, և մաս հավատքով, ինչպես որ դու ասել ես.

15 Եվ որ նրանք կարողանան

ամել քեզանում, և ստանան Սուրբ Հոգու լիութունը և կազմակերպվեն՝ համաձայն քո օրենքների, և պատրաստվեն ստանալու ամեն անհրաժեշտ բան.

16 Եվ որ այս տունը լինի աղոթքի տուն, ծոմապահության տուն, հավատքի տուն, փառքի և Աստծո տուն, այսինքն՝ քո տունը.

17 Որ քո ժողովրդի ամեն այս տուն ներս մտնելը լինի Տիրոջ անունով.

18 Որ նրանց ամեն դուրս ելնելն այս տնից լինի Տիրոջ անունով.

19 Որ նրանց բոլոր ողջույնները լինեն Տիրոջ անունով, դեպի Բարձրյալը պարզած սուրբ ձեռքերով.

20 Եվ որ ոչ մի «անմաքուր բան թույլ չտրվի գալ քո տուն՝ պղծելու այն.

21 Եվ եթե քո ժողովուրդն օրինազանցի, նրանցից որևէ մեկը, որ նա շուտ ապաշխարի և վերադառնա քո մոտ, և շնորհ գտնի քո աչքում և վերականգնվի այն օրինությունների համար, որոնք դու կարգել ես, որ թափվեն նրանց վրա, ովքեր «երկրպագում են քեզ քո տանը:

22 Եվ մենք խնդրում ենք քեզ, Սո՛ւրբ Հայր, որ քո ծառաները կարողանան դուրս գալ այս տնից քո գորությամբ զինված, և որ քո անունը լինի նրանց վրա, և քո փառքը պարուրի նրանց, և քո «հրեշտակները պահպանեն նրանց.

23 Եվ որ այս վայրից նրանք կարողանան չափազանց մեծ և փառավոր ավետիք տանել, ճշմարտությամբ, մինչև երկրի

11ա ՎևՈՒ 38.32,
105.11–12, 18, 33:
12ա ՍՈՒ Փառք:

20ա ՎևՈՒ 94.8–9,
97.15–17:
21ա ՍՈՒ Պատկառանք:

22ա ՍՈՒ Հրեշտակներ:

«Ծայրերը, որ նրանք կարողանան իմանալ, որ սա քո աշխատանքն է, և որ դու առաջ ես մեկնել քո ձեռքը՝ կատարելու այն, ինչ խոսել ես մարգարեների բերանով վերջին օրերի վերաբերյալ:

24 Մենք քեզ խնդրում ենք, Սո՛ւրբ Հայր, հաստատիր այն ժողովրդին, որը կերկրպագի և պատվավոր անուն ու դիրք կունենա քո այս տանը, բոլոր սերունդների և հավերժության մեջ.

25 Որ նրանց դեմ՝ «պատրաստված ոչ մի գենք հաջողություն չունենա. որ նրանց համար ՚Քիստ փորողն ինքն ընկնի դրա մեջ.

26 Որ ամբարշտության ոչ մի խմբակցություն գորություն չունենա բարձրանալու և՛ «հաղթելու քո ժողովրդին, որի վրա քո ՚Քանունը պիտի դրվի այս տանը.

27 Եվ եթե որևէ ժողովուրդ դեմ կանգնի այս ժողովրդին, որ քո բարկությունը բռնկվի նրա դեմ.

28 Եվ եթե նա զարկի այս ժողովրդին, որ դու էլ նրան զարկես. որ դու կռվես քո ժողովրդի համար, ինչպես արեցիր պատերազմի օրը, որ նա կարողանա ազատվել իր բոլոր թշնամիների ձեռքից:

29 Մենք խնդրում ենք քեզ, Սո՛ւրբ Հայր, կարկամեցրու, և ապշեցրու, և ամաչեցրու ու շփոթեցրու բոլոր նրանց, ովքեր կեղծ տեղեկություններ են տարածում ամենուրեք, ողջ աշխարհում, քո ծառայի կամ ծառաների դեմ, եթե նրանք չկանենան ապաշխարել, երբ հավի-

տենական ավետարանը հռչակվի նրանց ականջներում.

30 Եվ որ բոլոր նրանց գործերը ոչնչանան և արբվեն՝ «կարկտով ու դատաստաններով, որոնք դու կուղարկես նրանց վրա քո բարկության մեջ, որպեսզի վերջ դրվի քո ժողովրդի դեմ՝ ՚Ստախտություններին ու գրպարտություններին:

31 Քանզի դու գիտես, ո՛վ Տեր, որ քո ծառաներն անմեղ են եղել քո առաջ՝ քո անվան մասին վկայելիս, որի համար նրանք կրել են այս բաները:

32 Հետևաբար, մենք աղերսում ենք քեզ՝ այս «լծից լիովին ու ամբողջովին ազատվելու համար:

33 Ջարդի՛ր այն, ո՛վ Տեր. ջարդիր այն քո գորությանք քո ծառաների պարանոցից, որ մենք կարողանանք բարձրանալ այս սերնդի միջից և կատարել քո աշխատանքը:

34 Ո՛վ Եհովա, ողորմած եղիր այս ժողովրդի հանդեպ, և քանի որ բոլոր մարդիկ «մեղանչում են, ներիր քո ժողովրդի օրինազանցությունները, և թող դրանք ջնջվեն հավիտյան:

35 Թող քո սպասավորների «օծումը նրանց վրա կնքվի գորությանք բարձրից:

36 Թող նրանց համար կատարվի, ինչպես մյուսների համար՝ Պենտեկոստեի օրերին. թող քո ժողովրդի վրա թափվի «լեզուների պարզևը, այսինքն՝ ՚բաժանված լեզուներ, ինչպես կրակից, և դրանց մեկնաբանությունը:

23ա ՎևոՒ 1.2:
25ա Ես. ԾԳ.17:
բ Առակ. ԻԶ.27,
1 Նեփի 14.3, 22.14:
26ա ՎևոՒ 98.22:
բ Գ. Թագ. Ը.29:

30ա Ես. ԻԸ.17,
Մոսիա 12.6,
ՎևոՒ 29.16:
բ 3 Նեփի 21.19–21:
32ա ՍոՒ Լուծ:
34ա Հռովմ. Գ.23, 5.12:

սոՒ Մեղք:
35ա սոՒ Օծել:
36ա սոՒ Լեզուների պարզև:
բ Գոր. Բ.1–3:

37 Եվ թող քո տունը լցված լինի քո Պատրիարքի, ինչպես արընթաց հզոր քամիով:

38 Ըն ծառաների վրա դիր ուխտի Պկայությունը, որ երբ նրանք առաջ գնան ու հռչակեն քո խոսքը, նրանք կարողանան Քկնքել օրենքը և նախապատրաստել քո սրբերի սրտերը բոլոր այն դատաստանների համար, որոնք դու քո ցաման մեջ շուտով ուղարկելու ես Գերկրի բնակիչների վրա, նրանց օրինազանցությունների պատճառով, որ քո ժողովուրդը չնվաղի նեղության օրը:

39 Եվ ինչ քաղաք էլ քո ծառաները մտնեն, և այդ քաղաքի ժողովուրդն ընդունի նրանց վկայությունը, թող քո խաղաղությունն ու քո փրկությունը լինի այդ քաղաքի վրա. որ նրանք կարողանան այդ քաղաքից հավաքել արդարներին, որպեսզի նրանք կարողանան առաջ գալ դեպի Միտն կամ դեպի նրա ցեղերը, քո նշանակման վայրերը, հավիտենական ուրախության երգերով:

40 Եվ մինչև դա չիրականանա, թույլ մի տուր, որ քո դատաստաններն ընկնեն այդ քաղաքի վրա:

41 Եվ ինչ քաղաք էլ որ քո ծառաները մտնեն, և այդ քաղաքի ժողովուրդը չընդունի քո ծառաների վկայությունը և քո ծառաների զգուշացումները, որ փրկվեն այս խոտորյալ սերնդից, թող այդ քաղաքի հետ լինի ըստ այն ամենի, ինչ դու խոսել ես քո մարգարեների բերանով:

42 Բայց դու, ո՛վ Եհովա, աղա-

չում ենք քեզ, քո ծառաներին ազատիր նրանց ձեռքից և մաքրիր նրանց արյունից:

43 Ո՛վ Տեր, մենք չենք հրճվում մեր մերձավորների կործանմամբ. նրանց Պհոգիները թանկ են քո առաջ:

44 Բայց քո խոսքը պիտի կատարվի: Օգնիր քո ծառաներին՝ քո շնորհի աջակցությամբ ասել. Թող քո կամքը կատարվի, ո՛վ Տեր, և ոչ մերը:

45 Մենք գիտենք, որ դու քո մարգարեների բերանով սուսկալի բաներ ես խոսել ամբարիշտների վերաբերյալ Պվերջին օրերին, - որ դու դատաստաններ ես թափելու առանց չափի:

46 Հետևաբար, ո՛վ Տեր, ազատիր քո ժողովրդին ամբարիշտների դժբախտությունից. քո ծառաներին հնարավորություն տուր կնքել օրենքը և կապել վկայությունը, որ նրանք կարողանան պատրաստ լինել այրման օրվան:

47 Մենք խնդրում ենք քեզ, Սո՛ւրբ Հայր, հիշիր նրանց, ովքեր Միսսուրիի Ջեկսոն գավառի բնակիչների կողմից քշվել են իրենց ծառանգության հողերից, և ջարդի՛ր, ո՛վ Տեր, այն չարչարանքի լուծը, որը դրված է նրանց վրա:

48 Դու գիտես, ո՛վ Տեր, որ նրանք մեծապես ճնշվել ու չարչարվել են ամբարիշտ մարդկանց կողմից. և մեր սրտերից վիշտ է Պհորդում նրանց տանջալից բեռների պատճառով:

49 Ո՛վ Տեր, Պորքա՞ն պիտի հանդուրժես, որ այս ժողովուրդը

37ա Վև.ՈՒ 84.5, 109.12:
սուր Փառք:
38ա սուր Վկայություն:
բ Ես. Ը.16, Վև.ՈՒ 1.8:
գ սուր Երկիր - Երկրի

մաքրագործումը:
39ա Ես. Լ.Ե.10:
43ա սուր Հոգի:
44ա սուր Շնորհ:
45ա սուր Վերջին օրեր,

Ետին օրեր:
48ա սուր Կարեկցանք:
49ա Սաղ. ԺԳ.1-2:

կրի այս չարչարանքը, և նրա ան-
մեղների աղոթքները հասնեն քո
ականջներին, և նրանց ^բարյունը
վկայությամբ բարձրանա քո առաջ,
և ցույց չտաս քո վկայությունն ի
նպաստ նրանց:

50 ^աՈղորմած եղիք, ո՛վ Տեր,
ամբարիշտ ամբոխի հանդեպ,
որը թշել է քո ժողովրդին, որպես-
զի նրանք դադարեն կողոպտել,
որ նրանք կարողանան ապաշ-
խարել իրենց մեղքերից, եթե
հնարավոր է ապաշխարություն
գտնել:

51 Բայց եթե նրանք չցանկանան,
ապա մերկացրու բազուկդ, ո՛վ
Տեր, և ^ափրկագնիք այն, ինչը դու
Սիոն նշանակեցիր քո ժողովրդի
համար:

52 Եվ եթե այլ կերպ հնարավոր
չէ, որ քո ժողովրդի գործը չձա-
խողվի քո առաջ, թող քո բարկու-
թյունը բռնկվի և քո զայրույթը
թափվի նրանց վրա, որպեսզի
նրանք վերանան երկնքի տակից՝
թե՛ արմատները և թե՛ ճյուղերը:

53 Բայց որքան որ նրանք
ապաշխարեն, դու բարեգութ և
ողորմած ես, և ետ կդարձնես քո
ցատունը, երբ որ դու նայես քո
Օծյալի երեսին:

54 Ողորմած եղիք, ո՛վ Տեր,
երկրի բոլոր ազգերի հանդեպ.
ողորմած եղիք մեր երկրի կա-
ռավարիչների հանդեպ. թող այն
սկզբունքները, որոնք այդքան
պատվով ու ազնվաբար պաշտ-
պանվում էին մեր հայրերի
կողմից, այսինքն՝ մեր երկրի

՝Սահմանադրությունը, հավի-
տյանս հաստատվեն:

55 Հիշիր թագավորներին, իշ-
խաններին, ազնվականներին և
երկրի մեծամեծերին և բոլոր
մարդկանց և եկեղեցիներին, երկ-
րի բոլոր աղքատներին, կարի-
քավորներին ու առապայալներին:

56 Որպեսզի նրանց սրտերը
փափկեն, երբ քո ծառաները
կզնան քո տնից, ո՛վ Եհովա,
վկայություն բերելու քո անվան
մասին. որ նրանց նախապաշար-
մունքները տեղի տան ^աճմար-
տությանը, և քո ժողովուրդը
կարողանա շնորհ գտնել բոլորի
աչքում:

57 Որ երկրի բոլոր ծայրերը
կարողանան իմանալ, որ մենք՝ քո
ծառաները, ^ալսել ենք քո ձայնը, և
որ դո՛ւ ես մեզ ուղարկել:

58 Որ այս բոլորի միջից, քո ծա-
ռաները՝ Հակոբի որդիները, կարո-
ղանան հավաքել արդարներին՝
մի սուրբ քաղաք կառուցելու քո
անվան համար, ինչպես դու
պատվիրել ես նրանց:

59 Մենք խնդրում ենք քեզ Սիոնի
համար նշանակել այլ ^ացգեր, բացի
այս մեկից, որը դու նշանակել
ես, որպեսզի քո ժողովրդի ^բհա-
վաքումն առաջ գլորվի մեծ գո-
րությամբ ու վեհափառությամբ,
որպեսզի քո գործը ^գկարճեցվի
արդարությամբ:

60 Արդ, այս խոսքերը, ո՛վ Տեր,
մենք խոսում ենք քո առաջ, համա-
ձայն հայտնությունների ու պատ-
վիրանների, որոնք դու տվել ես

49բ սուր Նահատակ,
Նահատակություն:
50ա սուր Ողորմած,
Ողորմություն:
51ա Վև.100.13, 105.2:
54ա Ա Պետ. Բ.13–15,

Վև.98.5–7,
101.77, 80:
սուր Սահմանադրու-
թյուն:
56ա սուր Ճմարտություն:
57ա Վև.20.16, 76.22–24:

59ա Ես. ԾԳ.2:
բ սուր Իսրայել –
Իսրայելի ցրվելը:
գ Մատ. ԻԳ.22:

մեզ, որ նույնացված ենք "հեթանոսների հետ:

61 Բայց դու գիտես, որ մեծ սեր ունես Հակոբի որդիների հանդեպ, որոնք երկար ժամանակ ցրված են սարերի վրա ամպամած և մութ օրը:

62 Ուստի, մենք խնդրում ենք քեզ ողորմած լինես Հակոբի զավակների հանդեպ, որպեսզի "Երուսաղեմը, այս ժամից ի վեր սկսի փրկագնվել:

63 Եվ "Դավթի տան վրայի գերության լուծն սկսի ջարդվել:

64 Եվ "Հուդայի զավակներն սկսեն վերադառնալ այն ^բհողերը, որոնք դու տվել ես Աբրահամին՝ նրանց հորը:

65 Եվ այնպես արա, որ Հակոբի "մնացորդը, որն անիծվել և զարկվել է իր օրինազանցությունների համար, իր վայրագ և կոպիտ վիճակից ^բդարձի գա դեպի հավիտենական ավետարանի լրիվությունը:

66 Որ նրանք կարողանան վայր դնել իրենց արյունահեղության զենքերը և դադարեն իրենց ապստամբությունները:

67 Եվ թող "Իսրայելի ողջ ցրված մնացորդը, որը քշվել է դեպի աշխարհի ծայրերը, գա ճշմարտության իմացությանը, հավատա Մեսիային, և փրկագնվի ճշունից, և ցնծա քո առաջ:

68 Ո՛վ Տեր, հիշիր քո ծառա

Ջոզեֆ Սմիթ կրտսերին և բոլոր նրա չարչարանքներն ու հալածանքները,– թե ինչպես էր նա "ուխտել ^բԵհովային և խոստացել քեզ, ո՛վ Հակոբի Հզոր Աստված,– և պատվիրանները, որոնք դու տվել ես նրան, և որ նա անկեղծորեն ջանացել է կատարել քո կամքը:

69 Ողորմած եղիր, ո՛վ Տեր, նրա կնոջ և երեխաների հանդեպ, որ նրանք բարձրացվեն քո ներկայության մեջ և պահպանվեն քո խնամակալ ձեռքով:

70 Ողորմած եղիր նրա բոլոր "անմիջական հարազատների հանդեպ, որպեսզի նրանց նախապաշարմունքները կոտրվեն ու սրբվեն, ինչպես ջրհեղեղով. որ նրանք կարողանան դարձի գալ և փրկագնվել Իսրայելի հետ, և իմանան, որ դու ես Աստված:

71 Հիշիր, ո՛վ Տեր, նախագահներին, այսինքն՝ քո եկեղեցու բոլոր նախագահներին, որ քո աջը բարձրացնի նրանց, իրենց բոլոր ընտանիքներով ու անմիջական հարազատներով, որ նրանց անունները հավերժացվեն և հավիտյան պահվեն հիշողության մեջ սերնդե-սերունդ:

72 Հիշիր քո ողջ եկեղեցին, ո՛վ Տեր, բոլոր ընտանիքներով և նրանց բոլոր անմիջական հարազատներով, նրանց բոլոր հիվանդներով ու տառապյալներով, երկրի բոլոր աղքատներով ու հեզերով:

60ա1 Նեփի 13.1-32,
15.13-18:
62ա3 Նեփի 20.29:
սուր Երուսաղեմ:
63ա սուր Դավիթ:
64ա Չաք. ԺԲ.6-9,
Մաղ. Գ.4,
ՎևՈՒ 133.13, 35:
սուր Հուդա:

բ Ծն. ԺԷ.1-8:
սուր Խոստացված
երկիր:
65ա2 Նեփի 30.3,
Ալմա 46.23-24,
3 Նեփի 20.15-21,
ՎևՈՒ 19.27:
բ 2 Նեփի 30.6,
3 Նեփի 21.20-22:

սուր Դարձի գալ,
Նորադարձ:
67ա սուր Իսրայել –
Իսրայելի ցրվելը:
68ա սուր Ուխտ:
բ սուր Եհովա:
70ա մշ. մոտ
ազգականների:

որ քո քաղաքավորությունը, որը հաստատել ես առանց ձեռքի, մեծ սար դառնա և ողջ երկիրը լցնի.

73 Որ քո եկեղեցին դուրս գա խավարի անապատից, և դուրս շողա՝ պարզ, ինչպես Մլուսինը, մաքուր, ինչպես արևը, և ահարկու, ինչպես դրոշակակիր զորքը.

74 Եվ զարդարված լինի, ինչպես հարս, այն օրվա համար, երբ դու կբացես երկնքի վարագույրը՝ ստիպելով սարերին ցած՝ հոսել քո ներկայությունից և քիվիտներին՝ բարձրանալ, խորդուբորդ տեղերին՝ դառնալ հարթ. որպեսզի քո փառքը լցնի երկիրը.

75 Որպեսզի, երբ հնչի փողը մահացածների համար, մենք՝ «հափշտակվենք ամպի մեջ՝ քեզ հանդիպելու, որպեսզի մենք միշտ Տիրոջ հետ լինենք.

76 Որ մեր հանդերձները մաքուր լինեն, որ մենք հանդերձավորված լինենք արդարության «պարեգոտով, արմավենու ճյուղեր մեր ձեռքին, և փառքի քաղաք մեր գլխին, և հավերժական Գուրախություն հնձենք բոլոր մեր Դատապանքների դիմաց:

77 Ո՛վ Ամենագոր Տեր Աստված, լսիր մեզ, մեր այս խնդրանքները,

և պատասխանիր մեզ երկնքից, քո սուրբ բնակավայրից, որտեղ դու նստած ես գահ բարձրացած, «փառքով, պատվով, զորությամբ, վեհափառությամբ, հզորությամբ, տիրապետությամբ, ճշմարտությամբ, արդարադատությամբ, դատաստանով, ողորմությամբ և լիության անսահմանությամբ՝ հավիտենականությունից հավիտենականություն:

78 Օ՛ լսիր, օ՛ լսիր, օ՛ լսիր մեզ, ո՛վ Տեր: Եվ պատասխանիր այս խնդրանքներին, և ընդունիր այս տան նվիրաբերումը քեզ, մեր ձեռքերի աշխատանքը, որը մենք կառուցել ենք քո անվան համար.

79 Եվ նաև այս եկեղեցին, որ նրա վրա քո անունը դրվի: Եվ օգնիր մեզ քո Հոգու զորությամբ, որ մենք կարողանանք մեր ձայները միախառնել քո գահը շրջապատող վառ, փայլուն «սերովբեներին, զովքի բացականչություններով՝ երգելով. Ովսա՛ննա Աստծուն և քառին:

80 Եվ թող քո օծյալները փրկություն «հազնեն, և քո սրբերն ուրախությունից բացականչեն: Ամեն, և Ամեն:

ԲԱԺԻՆ 110

Տեսիլքներ՝ հայտնված Ջոզեֆ Սմիթ Մարգարեին և Օլիվեր Զառուդերիին, Օհայոյի Կիրթլենդի տաճարում, 1836թ. ապրիլի 3-ին (History of the Church, 2.435–436): Առիթը եղավ Հանգստության օրվա ժողովը: Այս հայտնությունների իր արձանագրման նախաբանը Մարգարեն սկսում է հետևյալ խոսքերով. «Կեսօրին ես օգնեցի մյուս Նախագահներին Տիրոջ

<p>72ա Գան. Բ.44–45, ՎևՈՒ 65.2: 73ա Երզ. Զ.10, ՎևՈՒ 5.14, 105.31: 74ա ՎևՈՒ 133.21–22, 40: բ Ես. Խ.4, Գուկ. Գ.5,</p>	<p>ՎևՈՒ 49.23: 75ա Ա ԹԵս. Գ.16: 76ա Հայտ. Է.13–15, 2 Նեփի 9.14: բ սոՒ Պսակ. Վեհացում: գ սոՒ Ուրախություն:</p>	<p>դ Եբր. ԺԲ.1–11, ՎևՈՒ 58.4: 77ա սոՒ Փառք: 79ա Ես. Զ.1–2: բ սոՒ Աստծո Գառք: 80ա Սաղ. ԴԼԲ.16:</p>
---	---	---

Ընթրիքը Եկեղեցուն բաժանելիս, այն ստանալով Տասներկուսից, որոնց արտոնությունն էր այդ օրը պաշտոնավարել սրբազան սեղանի մոտ: Մատուցելով այս ծառայությունն իմ եղբայրներին՝ ես վերադարձա բեմ, իջեցված վարագույրների ետևը, և խոնարհվեցի, Օլիվեր Քատլերի հետ, հանդիսավոր և ցածրաձայն աղոթքի մեջ: Աղոթքից վեր կենալուց հետո, հետևյալ տեսիլքը բացվեց մեզ երկուսիս» (History of the Church, 2.435):

1-10՝ Տեր Եհովան հայտնվում է փառքով և ընդունում է Կիրթլենդի Տաճարը, որպես իրեն տուն. 11-12՝ Մովսեսը և Եղիասը հայտնվում են և հանձնում իրենց բանալիներն ու տնտեսությունը. 13-16՝ Եղիան վերադառնում է և հանձնում իր տնտեսության բանալիները, ինչպես խոստացվել էր Մադաբիայի միջոցով:

“ՎԱՐԱԳՈՒՅՐԸ հեռացվեց մեր մտքերից, և մեր հասկացողության ^բաչքերը բացվեցին:

2 Մենք տեսանք Տիրոջը, ամբիոնի բազրիքի վրա կանգնած, մեր առաջ. և նրա ոտքերի տակ աղյուսապատ սաթագույն հատակ էր մաքուր ոսկուց:

3 Նրա ^աաչքերը կարծես կրակի բոցեր լինեին. նրա գլխի մագերթը ճերմակ էին, ինչպես մաքուր ձյունը. նրա ^բդեմքը փայլում էր արևի պայծառությունից վառ. և նրա ^գձայնն ասես շառաչյուն մեծ ջրերի հնչում լիներ, այսինքն՝ ^դԵհովայի ձայնը, ասելով.

4 Ես եմ ^աառաջինը և վերջինը. ես նա եմ, ով ^բապրում է, ես նա եմ, ով սպանվել էր. ես ձեր ^գբարեխոսն եմ Հոր մոտ:

5 Ահա, ձեր մեղքերը ^ամերված են ձեզ. դուք մաքուր եք իմ առաջ. հետևաբար, բարձրացրեք ձեր գլուխները և ցնծացեք:

6 Թող ձեր եղբայրների սրտերը ցնծան, և թող իմ ողջ ժողովրդի սիրտը ցնծա, որ իրենց գորությանը ^ակառուցել են այս տունն իմ անվան համար:

7 Քանզի ահա, ես ^աընդունել եմ այս ^բտունը, և իմ անունը պիտի լինի այստեղ. և ես ողորմությամբ կհայտնվեմ իմ ժողովրդին այս տանը:

8 Այո, ես ^ակհայտնվեմ իմ ծառաներին և կխոսեմ նրանց հետ իմ իսկ ձայնով, եթե իմ ժողովուրդը պահի իմ պատվիրանները և ^բչաղժի այս ^գսուրբ տունը:

9 Այո, հազարավորների և բյուրավորների սրտերը մեծապես կցնծան այն ^աօրհնությունների հետևանքով, որոնք պիտի թափվեն, և ^բօժտման հետևանքով, որով իմ ծառաներն օժտվել են այս տանը:

10 Եվ այս տան համբավը պիտի տարածվի օտար երկրներում. և սա է սկիզբն այն օրհնության, որը պիտի ^աթափվի իմ ժողովրդի գլխին: Դիշտ այդպես: Ամեն:

110 1ա սո՛ւ Վարագույր:
^բ ՎևՈՒ 76.12, 19, 136.32, 138.11:
3ա Հայտ. Ա.14:
^բ Հայտ. Ա.16, ՋՍ-Պ 1.17:
^գ Եգեկ. ԽԳ.2, Հայտ. Ա.15, ՎևՈՒ 133.21-22:

դ սո՛ւ Եհովա:
4ա սո՛ւ Առաջնեկ:
^բ Բ Օր. Ե.24:
^գ սո՛ւ Բարեխոս:
5ա սո՛ւ Ներել:
6ա ՎևՈՒ 109.4-5:
7ա Բ Մն. Է.16:
^բ սո՛ւ Տաճար՝ Տիրոջ տուն:

8ա ՎևՈՒ 50.45:
^բ ՎևՈՒ 97.15-17:
^գ սո՛ւ Սուրբ:
9ա Ծն. ԺԲ.1-3, ՎևՈՒ 39.15, Աքք. 2.8-11:
^բ ՎևՈՒ 95.8:
սո՛ւ Օժտում:
10ա ՎևՈՒ 105.12:

11 Այս տեսիլքը փակվելուց հետո երկինքները կրկին բացվեցին մեզ համար. և Քրիստոսը հայտնվեց մեր առաջ և հանձնեց մեզ աշխարհի չորս մասերից Իսրայելը՝ հավաքելու և Պաղատի սային երկրից տասը ցեղերին առաջնորդելու՝ բանալիները:

12 Գրանից հետո Մեդիասը հայտնվեց և հանձնեց Աբրահամի Քաղաքացիների տնտեսությունը, ասելով, որ մեզանով և մեր հետնորդներով պիտի օրհնվեն մեզ հաջորդող բոլոր սերունդները:

13 Այս տեսիլքը փակվելուց հետո, մեկ այլ վեհ և փառահեղ տեսիլք պայթեց մեր առաջ. քանզի Մեդիա մարգարեն, որն առանց

մահ ճաշակելու երկինք էր վերցվել, կանգնեց մեր առաջ և ասաց.

14 Ահա, ժամանակը լիովին մոտեցել է, որը խոսվել է Մադաքիայի բերանով,– վկայելով, որ մա [Եդիան] կուղարկվի, նախքան Տիրոջ գալստյան մեծ և ահեղ օրը,–

15 Հայրերի սրտերը դեպի գավակները՝ դարձնելու համար, և գավակներինը՝ դեպի հայրերը, չլինի թե ողջ երկիրը զարկվի անեծքով,–

16 Հետևաբար, այս տնտեսության բանալիները հանձնվում են ձեր ձեռքը. և դրանով դուք կարող եք իմանալ, որ Տիրոջ մեծ և ահեղ Սօրը մոտ է, նույնիսկ դռների մոտ:

ԲԱԺԻՆ 111

Հայտնություն տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեի միջոցով, Մայլեմում, Մասաչուսետս, 1836թ. օգոստոսի 6-ին (History of the Church, 2.465–466): Այդ ժամանակ Եկեղեցու առաջնորդները ծանր պարտքերի տակ էին ծառայության իրենց գործերի պատճառով: Լսելով, որ Մայլեմում դրամական մեծ գումար ձեռք կրերեն, Մարգարեն, Սիդնի Ռիզդոնը, Հայրում Սմիթը և Օլիվեր Քատոլերին Օհայոյի Կիրթլենդից ճանապարհ ընկան դեպի այդ վայրը, որպեսզի հետազոտեն այդ պնդումը և, միևնույն ժամանակ, քարոզեն ավետարանը: Եղբայրները կատարեցին Եկեղեցական մի քանի գործեր և որոշ ժամանակ քարոզեցին: Երբ հայտնի դարձավ, որ որևէ գումար չի սպասվում, նրանք վերադարձան Կիրթլենդ: Այս հայտնության խոսքերի մեջ արտացոլվել են պատմական մի քանի հայտնի անցքեր:

1–5 Տերը հոգում է իր ծառաների նյութական կարիքները. 6–11՝ Նա ողորմածությամբ կվարվի Սիոնի

հետ և կկարգավորի բոլոր բաները՝ իր ծառաների բարիքի համար:

11ա սո՛ւ Տեսիլք:
 բ Մատ. ԺԷ.3:
 գ Հակոբ 6.2, Վևո՛Ւ 29.7:
 սո՛ւ Իսրայել – Իսրայելի ցրվելը:
 դ Վևո՛Ւ 133.26–32:
 սո՛ւ Իսրայել – Իսրայելի տասը կորած ցեղերը:

ե սո՛ւ Քահանայության բանալիները:
 12ա սո՛ւ Եդիա:
 բ Գաղ. Գ.6–29:
 սո՛ւ Աբրահամի ուխտը:
 գ սո՛ւ Տնտեսություն:
 13ա սո՛ւ Եդիա:
 բ սո՛ւ Փոխակերպված

Էակներ:
 15ա ՁՄ–Պ 1.38–39:
 սո՛ւ Տոհմաբանություն. Փրկություն մահացածների համար:
 16ա սո՛ւ Վերջին օրեր, Ետին օրեր:

ԵՄ Տերս՝ ձեր Աստվածը, գայրացած չեմ ձեր այս ճամփորդությունը ձեռնարկելու համար, չնայած ձեր անմտությանը:

2 Ես շատ գանձեր ունեմ ձեր համար այս քաղաքում, Սիոնի օգտի համար, և շատ մարդիկ՝ այս քաղաքում, որոնց ես ժամանակին կհավաքեմ ձեր միջոցով՝ Սիոնի օգտի համար:

3 Հետևաբար, նպատակահարմար է, որ դուք ծանոթություն հաստատեք այս քաղաքի մարդկանց հետ, ինչպես որ դուք կառաջնորդվեք, և ինչպես կտրվի ձեզ:

4 Եվ պիտի լինի այնպես, ժամանակին, որ այս քաղաքը ես կտամ ձեր ձեռքը, որ դուք գործություն ունենաք նրա վրա, այնպես որ նրանք չեն հայտնաբերի ձեր գաղտնիքները. և նրա հարստությունը՝ ոսկով և արծաթով, ձերը պիտի լինի:

5 Մի մտահոգվեք ձեր՝ պարտքերի համար, քանզի ես ձեզ դրանք վճարելու գործքուն կտամ:

6 Մի մտահոգվեք Սիոնի համար, քանզի ես ողորմածությամբ կվարվեմ նրա հետ:

7 Մնացեք այս վայրում և մերձակա շրջաններում.

8 Եվ այն վայրը, որտեղ իմ կանքն է, որ դուք հիմնականում մնաք, ձեզ ցույց կտրվի իմ Հոգու՝ խաղաղությամբ և զորությամբ, որը պիտի հորդա ձեր վրա:

9 Այդ վայրը դուք կարող եք ձեռք բերել վարձելով: Եվ ջանասիրաբար տեղեկացեք այս քաղաքի առավել հին բնակիչների ու հիմնադիրների վերաբերյալ.

10 Քանզի այս քաղաքում ձեզ համար ավելի շատ գանձեր կան, քան մեկը:

11 Հետևաբար, եղեք օձերի պես՝ իմաստուն, և սակայն, առանց մեղքի. և ես կպատվիրեմ բոլոր բաները ձեր Քրաքիքի համար, այնքան արագ, որքան դուք ի վիճակի կլինեք ընդունելու դրանք: Ամեն:

ԲԱԺԻՆ 112

Հայտնություն՝ տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեի միջոցով Թոմաս Բ. Մարշին, Կիրթլենդում, Օհայո, 1837թ. հուլիսի 23-ին (History of the Church, 2.499–501): Այս հայտնությունը պարունակում է Տիրոջ խոսքը Թոմաս Բ. Մարշին Գառի Տասներկու Առաքյալների վերաբերյալ: Մարգարեն արձանագրում է, որ այս հայտնությունը ստացվել էր այն օրը, երբ ավետարանն առաջին անգամ քարոզվել էր Անգլիայում: Թոմաս Բ. Մարշին այդ ժամանակ Տասներկու Առաքյալների Քվորումի Նախագահն էր:

1–10՝ Տասներկուսը պետք է ուղարկի ավետարանը և զգուշացնող ձայն բարձրացնի՝ ուղղված բոլոր ազգերին ու ժողովուրդներին. 11–15՝ Նրանք պետք է վերցնեն իրենց

խաչը, հետևեն Հիսուսին, և արածեցնեն նրա ոչխարները. 16–20՝ Նրանք, ովքեր ընդունում են Առաջին Նախագահությանը, ընդունում են Տիրոջը. 21–29՝ Խավարը պատել

111 5ա Վև.ՈՒ 64.27–29:
8ա Վև.ՈՒ 27.16:

սուր խաղաղություն:
11ա Մատ. Ժ.16:

բ Հռովմ. Ը.28,
Վև.ՈՒ 90.24, 100.15:

է աշխարհը, և միայն նրանք, ովքեր հավատում և մկրտվում են, կփրկվեն. 30–34 Առաջին Նախագահությունը և Տասներկուսը կրում են ժամանակների լրության տնտեսության բանալիները:

ԱՄՍԱՐԻՏ, այսպես է Տերն ասում քեզ, իմ ծառա՝ Թոմաս. Ես լսել եմ քո աղոթքները. և քո ողորմությունները բարձրացել են իմ առաջ՝ ^ահիշատակի համար, ի նպաստ քո այն եղբայրների, ովքեր ընտրվել են վկայելու իմ անվան համար, և ^բուղարկելու այն ամենուրեք՝ բոլոր ազգերի, ցեղերի, լեզուների և ժողովուրդների մեջ, և կարգվել են իմ ծառաների միջոցով:

2 Ճշմարիտ ասում եմ քեզ. Մի քանի բաներ են եղել քո սրտում և քեզ մոտ, որոնք ես՝ Տերս, չեմ հավանել:

3 Այնուամենայնիվ, որքան որ դու ^ախոնարհեցրել ես քեզ, դու պիտի բարձրացվես. հետևաբար, քո բոլոր մեղքերը ներված են քեզ:

4 Թող սիրտդ ^աքաջանա իմ երեսի առաջ. և դու պետք է վկայես իմ անվան մասին, ոչ միայն ^բհեթանոսներին, այլ նաև ^գհրեաներին. և դու պետք է առաջ ուղարկես իմ խոսքը մինչև աշխարհի ծայրերը:

5 Ուստի, ^ապայքարիբ առավոտից-առավոտ. և թող քո ^բզուշացող ձայնն առաջ գնա օրեցօր. և երբ գիշերը գալիս է, մի թող որ

երկրի բնակիչները քուն մտնեն քո խոսքի պատճառով:

6 Թող քո բնակության վայրն իմանան Սիոնում, և մի ^ատեղափոխիր քո տունը. քանզի, ես՝ Տերս, մեծ աշխատանք ունեմ քեզ համար, որ անես, իմ անունը մարդկանց զավակների մեջ հրատարակելու գործում:

7 Հետևաբար, ^ազոտեպնդիր մեջքդ աշխատանքի համար: Թող նաև կոշիկներդ ոտքերիդ մնան, քանզի դու ընտրված ես, և քո ճանապարհն ընկած է լեռների միջով և շատ ազգերի միջով:

8 Եվ քո խոսքի միջոցով շատ բարձրացածներ պիտի ^ացածրացվեն, և քո խոսքի միջոցով շատ ցածրացածներ պիտի բարձրացվեն:

9 Քո ձայնը պիտի կշտամբանք լինի օրինազանցի համար. և քո կշտամբանքից թող զրպարտչի լեզուն դադարի խոտորախոսել:

10 Եղիր ^ախոնարհ. և Տերը՝ քո Աստվածը, ձեռքդ բռնած կառաջնորդի քեզ և կպատասխանի քո աղոթքներին:

11 Ես գիտեմ քո սիրտը և լսել եմ աղոթքներդ քո եղբայրների վերաբերյալ: Կողմնակալ մի եղիր, ^ասիրելով նրանց առավել, քան շատ ուրիշների, այլ քո սերը նրանց հանդեպ թող լինի, ինչպես քո հանդեպ է. և թող քո սերն առատ լինի բոլոր մարդկանց հանդեպ, և բոլոր նրանց հանդեպ, ովքեր սիրում են իմ անունը:

12 Եվ աղոթիր Տասներկուսի քո

112 1ա Գոր. Ժ.4:
բ ՎևոՒ 18.28:
3ա Մատ. Ի.9.12,
Դուկ. Ժ.Գ.11:
4ա Մատ. Թ.2,
Հովհ. Ժ.2.33:

բ ՎևոՒ 18.6, 90.8–9:
գ ՎևոՒ 19.27:
5ա Հուդա Ա.3:
բ ՎևոՒ 1.4–5:
6ա Մաղ. ՃԻԵ.1:
7ա Եփես. Զ.13–17:

8ա սու՛ Խոնարհ,
Խոնարհություն:
10ա Առակ. ԺԸ.12:
11ա Մատ. Ե.43–48:
սու՛ Գթություն. Սեր:

եղբայրների համար: Խստորեն խրատիր նրանց՝ հանուն իմ անվան, և թող նրանք խրատվեն իրենց բոլոր մեղքերի համար, և հավատարիմ եղիր իմ առաջ՝ իմ անվան համար:

13 Եվ նրանց՝ գալթակղություններից և շատ ղնդությունից հետո, ահա, ես՝ Տերս, կփնտրեմ նրանց, և եթե նրանք կարծրացրած չլինեն իրենց սրտերը և խստացրած չլինեն իրենց պարանոցներն իմ դեմ, նրանք՝ դարձի կգան, և ես կբժշկեմ նրանց:

14 Արդ, ես ասում եմ քեզ, և այն ինչ քեզ եմ ասում, ասում եմ բոլոր Տասներկուսին. Վեր կացեք ու գոտեպնդեք ձեր մեջքը, վերցրեք ձեր՝ խաչը, հետևեք ինձ, և ղարածեցրեք իմ ոչխարները:

15 Մի բարձրացրեք ձեզ. մի՛ ապստամբեք իմ ծառա Ջոզեֆի դեմ. քանզի ճշմարիտ ասում եմ ձեզ, որ ես նրա հետ եմ, և իմ ձեռքը պիտի լինի նրա վրա. և ղբանալիները, որոնք ես տվել եմ նրան, և նաև ձեզ, նրանից չեն վերցվի, մինչև ես չգամ:

16 Ճշմարիտ ասում եմ քեզ, իմ ծառա՝ Թոմաս. Դու ես այն մարդը, ում ես ընտրել եմ՝ կրելու իմ արքայության բանալիները, ինչ վերաբերում է Տասներկուսին, ամենուրեք՝ բոլոր ազգերի մեջ,–

17 Որպեսզի դու լինես իմ

ծառան՝ բացելու արքայության դռները բոլոր այն վայրերում, ուր իմ ծառա Ջոզեֆը և իմ ծառա՝ Միդինն և իմ ծառա ղՀայրումը չեն կարող գալ.

18 Քանզի միառժամանակ ես նրանց վրա եմ դրել բոլոր եկեղեցիների բեռը:

19 Ուստի, որտեղ էլ նրանք ուղարկեն քեզ, դու գնա, և ես քեզ հետ կլինեմ. և որտեղ էլ դու հռչակես իմ անունը, ՝ արդյունավետ դուռ պիտի բացվի քո առաջ, որպեսզի նրանք կարողանան ընդունել իմ խոսքը:

20 Ով ՝ ընդունում է իմ խոսքը, ընդունում է ինձ, և ով ընդունում է ինձ, ընդունում է նրանց՝ Առաջին Նախագահությանը, որոնց ես ուղարկել եմ, որոնց ես խորհրդատուներ եմ դարձրել ձեզ համար՝ հանուն իմ անվան:

21 Եվ բացի այդ, ես ասում եմ ձեզ, որ ում որ դուք ուղարկեք իմ անունով, ձեր եղբայրների՝ ՝ Սասներկուսի ձայնով, ձեր կողմից պատշաճ կերպով երաշխավորված և ղլիագորված, նրանք զորություն կունենան՝ բացելու իմ արքայության դուռը, որ ազգի համար էլ որ դուք նրանց ուղարկած լինեք,–

22 Որքան որ նրանք կխոնարհեցնեն իրենց իմ առաջ, և կմնան իմ խոսքի մեջ, և ՝ ակամջ կդնեն իմ ձոգու ձայնին:

12ա սո՛ւ Հիսուս Քրիստոս – Հիսուս Քրիստոսի անունը մեզ վրա վերցնելը:

13ա սո՛ւ Գալթակղել, Գալթակղություն:
 ք չոփի. ԺՁ.33, Հայտ. Է.13–14, ՎևՈՒ 58.3–4:
 գ 3 Նեփի 18.32:
 սո՛ւ Դարձի գալ,

Նորադարձ:
 14ա Մատ. ԺՁ.24:
 ՁՄԹ, Մատ. 16.25–26, Դուկ. Թ.23:
 ք չոփի. ԻԱ.15–17:
 15ա սո՛ւ Ապստամբություն:
 ք ՎևՈՒ 28.7:
 սո՛ւ Քահանայության բանալիները:
 17ա սո՛ւ Ռիզդոն Միդնի:
 ք սո՛ւ Սմիթ Հայրում:

19ա Ա Կոր. ԺՁ.9, ՎևՈՒ 118.3:
 20ա ՎևՈՒ 84.35–38:
 21ա ՎևՈՒ 107.34–35:
 ք սո՛ւ Իշխանություն:
 22ա սո՛ւ Ակամջ դնել, Հնագանդություն, Հնագանդ, Հնագանդվել:

23 Ճշմարիտ, ճշմարիտ ասում եմ ձեզ. ^ՄԽավարը պատել է երկիրը, և թանձր խավարը՝ մարդկանց միտքը, և ամեն մարմին ^Քապականվել է իմ երեսի առաջ:

24 Ահա, սրընթաց ^Վրեժխնդրություն է գալիս երկրի բնակիչների վրա՝ ցասման օր, այրման օր, ամայացման, ^Քլացի, սզո և ողբի օր. և, ինչպես մի պտուտահողմ, այն պիտի անցնի ողջ երկրի երեսով, ասում է Տերը:

25 Եվ իմ տան վրա պիտի ^Մսկսի այն, և իմ տնից առաջ կգնա այն, ասում է Տերը:

26 Առաջինը՝ ձեզանից նրանց մեջ, ասում է Տերը, ովքեր ^Մխոստովանում են, թե ^Քզիտեն իմ ամունը, բայց չեն ճանաչել ինձ և ^Պհայհոյել են ինձ իմ տան մեջ, ասում է Տերը:

27 Հետևաբար, տեսեք, որ դուք չմտահոգվեք՝ այս վայրում իմ եկեղեցու գործերի վերաբերյալ, ասում է Տերը:

28 Այլ ^Մմաքրեք ձեր սրտերն իմ առաջ. և ապա ^Քգնացեք աշխարհով մեկ և քարոզեք իմ ավետարանն ամեն արարածի, որը չի ստացել այն.

29 Եվ նա, ով ^Մհավատում և ^Մմկրտվում է, պիտի փրկվի, իսկ

նա, ով չի հավատում, և չի մկրտվում, պիտի ^Պճգովվի:

30 Քանզի ձեզ՝ ^ՄՏասներկուսիդ, և նրանց՝ ^ՔԱռաջին Նախագահությանը, ովքեր ձեզ հետ նշանակվել են՝ լինելու ձեր խորհրդատուներն ու ձեր ղեկավարները, տրված է այս քահանայության գործությունը, վերջին օրերին ու վերջին անգամ, որը ժամանակների լրության ^Պտնտեսությունն է:

31 Չորություն, որը դուք կրում եք, բոլոր նրանց հետ միասին, ովքեր ստեղծման սկզբից ինչ-որ ժամանակ տնտեսություն են ստացել.

32 Քանզի ճշմարիտ ասում եմ ձեզ, որ տնտեսության ^Մբանալիները, որոնք դուք ստացել եք, ^Քեկել են հայրերից, և ի վերջո, ուղարկվել են ձեզ երկնքից:

33 Ճշմարիտ ասում եմ ձեզ. Տեսեք, թե որքան մեծ է ձեր կոչումը: ^ՄՄաքրեք ձեր սրտերն ու ձեր հանդերձները, որ չլինի թե այս սերնդի արյունը ^Քպահանջվի ձեր ձեռքից:

34 Հավատարիմ եղեք, մինչև ես գամ, քանզի ես շուտով ^Մգալիս եմ. և իմ վարձքն ինձ հետ է, որ ամեն մարդու հատուցեմ իր ^Քգործերի համեմատ: Ես եմ Ալֆան և Օմեզան: Ամեն:

23ա Ես. Կ.2, Միքիա Գ.6, ՎևոՒ 38.11:
սու՝ Ուրացություն – Վաղ Քրիստոնեական եկեղեցու ուրացությունը:
բ ՎևոՒ 10.20–23:
24ա սու՝ Վրեժխնդրություն:
բ ՎևոՒ 124.8:
25ա Ա Պետ. Գ.17–18:
26ա Մատ. Է.21–23, ՎևոՒ 41.1, 56.1:
բ Ղուկ. Զ.46, Մոսիա 26.24–27,

3 Նեփի 14.21–23:
զ սու՝ Հայիոյել, Հայիոյանք:
28ա սու՝ Անարատ, Անարատություն:
բ Մար. ԺԶ.15–16:
29ա Մորմ. 9.22–23, ՎևոՒ 20.25–26:
բ սու՝ Մկրտություն, Մկրտել:
զ սու՝ Նզովք:
30ա սու՝ Առաքյալ:
բ սու՝ Առաջին Նախագահություն:

զ Եփես. Ա.10, ՎևոՒ 27.13, 124.40–42:
սու՝ Տնտեսություն:
32ա ՎևոՒ 110.11–16:
սու՝ Քահանայության բանալիները:
բ Աբր. 1.2–3:
33ա Հակոբ 1.19:
բ ՎևոՒ 72.3:
34ա Հայտ. ԻԲ.7, 12, ՎևոՒ 49.28, 54.10:
բ սու՝ Գործեր:

ԲԱԺԻՆ 113

Եսայիայի գրությունների վերաբերյալ որոշ հարցերի պատասխաններ՝ տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեի կողմից, 1838թ. մարտին (History of the Church, 3.9-10):

1-6 Հեսսեի Բուրը, նրանից դուրս եկող շառավիղը, և Հեսսեի արմատը նույնացվում են. 7-10՝ Սիոնի ցրված մնացորդը քահանայության իրավունք ունի և կանչված է վերադառնալու դեպի Տերը:

Ո՞վ է ՝ Հեսսեի Բուրը, որի մասին խոսվում է Եսայիայի ԺԱ գլխի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ հատվածներում:

2 Ճշմարիտ այսպես է ասում Տերը. Դա Քրիստոսն է:

3 Ի՞նչ է նշանակում շառավիղը, որի մասին խոսվում է Եսայիայի ԺԱ գլխի առաջին հատվածում, որը դուրս պիտի գա Հեսսեի Բնից:

4 Ահա, այսպես է ասում Տերը. Դա մի ծառն է Քրիստոսի ձեռքում, որը մասամբ Հեսսեի հետևորդ է, ինչպես նաև ՝ Եփրեմի, կամ Հովսեփի տան, որի վրա մեծ ՝ գորություն է դրվել:

5 Ի՞նչ է նշանակում Հեսսեի արմատը, որի մասին խոսվում է Եսայիայի ԺԱ գլխի տասներորդ հատվածում:

6 Ահա, այսպես է ասում Տերը. Դա Հեսսեի մի հետևորդ է, ինչպես նաև Հովսեփի, որին իրավ պատկանում են քահանայությունը և արքայության ՝ քանալիները, որ նա լինի ՝ որոշ և վերջին օրերին ՝ հավաքի իմ ժողովրդին:

7 Հարցեր Եղիաս Հիզքիի կողմից. Ի՞նչ է նշանակում Եսայիայի ԾԲ գլխի 1-ին հատվածի հրամանը, որն ասում է. Հազիր գորությունը, ո՞վ Սիոն, - և ի՞նչ ժողովրդի ի նկատի ունեք Եսայիան:

8 Նա ի նկատի ունեք նրանց, ում Աստված կկանչի վերջին օրերին, ովքեր կկրեն քահանայության գորությունը, որպեսզի ետ բերեն ՝ Սիոնը և Իսրայելի փրկագնումը. իսկ նրա ՝ գորություն հազները քահանայության իշխանությունը հազներն է, որի համար նա ՝ Սիոնը, ՝ իրավունք ունի՝ ըստ ազատոհմի, և նաև վերադարձն է այն գորությանը, որը նա կորցրել էր:

9 Ի՞նչ պետք է հասկանանք Սիոնի կողմից իր պարանոցի կապերը բաց անելը՝ 2-րդ հատվածում:

10 Մենք պետք է հասկանանք, որ ՝ ցրված մնացորդին հորդորվում է ՝ վերադառնալ Տիրոջ մոտ, որտեղից նրանք ընկել են. որը, եթե նրանք անեն, Տիրոջ խոստումն է, որ նա կխոսի նրանց հետ կամ հայտնություն կտա նրանց: Տե՛ս 6-րդ, 7-րդ և 8-րդ հատվածները: Նրա պարանոցի կապերն Աստծո անեծքներն են նրա վրա կամ Իսրայելի մնացորդը հեթանոսների մեջ իր ցրված վիճակում:

113 1ա սուր Հեսսե: 4աԾն. ԽԱ.50-52, ՎԼՈՒԻ 133.30-34: սուր Եփրեմ: p սուր Չորություն: 6ա սուր Քահանայության

քանալիները: p ՎԼՈՒԻ 45.9: սուր Դրոշ: q սուր Իսրայել - Իսրայելի ցրվելը: 8ա սուր Սիոն:

p ՎԼՈՒԻ 82.14: q սուր Անդրանիկություն: 10ա սուր Իսրայել - Իսրայելի ցրվելը: p Ովսե Գ.4-5, 2 Նեփի 6.11:

ԲԱԺԻՆ 114

Հայտնություն տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեի միջոցով, Ֆար Վեստում, Միսսուրի, 1838թ. ապրիլի 17-ին (History of the Church, 3.23):

1–2՝ Եկեղեցական կոչումները, որոնք կրում են ոչ հավատարիմները, կտրվեն ուրիշներին:

լություն կատարել ինձ համար, մյուսների, այսինքն՝ տասներկուսի ընկերակցությամբ, ինքը ներառյալ, որ վկայի իմ անվան մասին և ավետիք տանի ողջ աշխարհին:

ՄԱՍԱՐԻՏ, այսպես է ասում Տերը. Դա իմաստություն է իմ ծառա Դեյվիդ Վ. Փաթենի համար, որ նա կարգավորի բոլոր իր գործերը, որքան հնարավոր է արագ, և ազատվի իր առևտրական գործերից, որպեսզի կարողանա հաջորդ գարնանն առաքե-

2 Քանզի ճշմարիտ այսպես է ասում Տերը. Որքան որ ձեր մեջ կան ոմանք, ովքեր ուրանում են իմ անունը, ուրիշները պիտի ՞դրվեն նրանց ՞տեղում և ստանան նրանց եպիսկոպոսությունը: Ամեն:

ԲԱԺԻՆ 115

Հայտնություն տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեի միջոցով, Ֆար Վեստում, Միսսուրի, 1838թ. ապրիլի 26-ին, որը հայտնի դարձրեց Աստծո կամքն այդ վայրի կառուցման և Տիրոջ տան վերաբերյալ (History of the Church, 3.23–25): Այս հայտնությունն ուղղված է Եկեղեցու նախագահող պաշտոնյաներին:

1–4՝ Տերն իր եկեղեցին անվանում է Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցի. 5–6՝ Միոնը և նրա ցեղը պաշտպանության վայր և ապաստան են Սրբերի համար. 7–16՝ Սրբերին պատվիրվում է Տիրոջ տուն կառուցել Ֆար Վեստում. 17–19՝ Ջոզեֆ Սմիթը կրում է Աստծո արքայության բանալիները երկրի վրա:

խորհրդականներին, որոնք նշանակված են և պիտի նշանակվեն ապագայում.

ՄԱՍԱՐԻՏ, այսպես է Տերն ասում ձեզ՝ իմ ծառա ՞Ջոզեֆ Սմիթ կրտսերին և նաև իմ ծառա ՞Սիդնի Ռիզդոնին և նաև իմ ծառա ՞Հայրում Սմիթին, և քո

2 Եվ նաև ձեզ՝ իմ ծառա ՞Էդվարդ Պատրիցին և նրա խորհրդականներին.

3 Եվ նաև իմ հավատարիմ ծառաներին, որոնք Միոնի իմ եկեղեցու բարձրագույն խորհրդից են, քանզի այդպես պետք է այն կոչվի, և նաև Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի իմ Եկեղեցու ողջ աշխարհով ամենուրեք ցրված բոլոր երեցներին ու ժողովրդին.

4 Քանզի այսպես պիտի կոչվի իմ

114 2ա ՎևՈՒ 118.1, 6:
բ ՎևՈՒ 64.40:
115 1ա սոՒ Սմիթ Ջոզեֆ

կրտսեր
բ սոՒ Ռիզդոն Սիդնի:
գ սոՒ Սմիթ Հայրում:

2ա սոՒ Պատրից Էդվարդ:

“Եկեղեցին վերջին օրերին, այսինքն՝ ^բՀիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցի:

5 Ճշմարիտ ասում են ձեզ բոլորիդ. ^աՎեր կացեք և շողացեք, որպեսզի ձեր լույսը ^բչափանիշ լինի բոլոր ազգերի համար:

6 Եվ որպեսզի միասին ^ահավաքվելը՝ ^բՍիոնի հողի վրա և նրա ^գցցերում, պաշտպանություն և ^դապաստան լինի փոթորկից ու ցասումից, երբ այն անխառն ^եկթափվի ողջ երկրի վրա:

7 Թող Ֆար Վեստ քաղաքը սուրբ և նվիրաբերված հող լինի ինձ համար. և այն պիտի կոչվի ամենայն սուրբ, քանզի հողը, որի վրա դու կանգնած ես, ^ասուրբ է:

8 Հետևաբար, ես պատվիրում եմ ձեզ մի տուն ^ակառուցել ինձ համար, իմ սրբերի միասին հավաքվելու համար, որ նրանք կարողանան ինձ ^բերկրպագել:

9 Եվ թող այդ աշխատանքի սկիզբը և հիմնադրումը և նախապատրաստական աշխատանքը սկսվի այս գալիք ամռանը:

10 Եվ թող սկիզբը դրվի հաջորդ հուլիսի չորրորդ օրը. և այդ ժամանակից սկսած թող իմ ժողովուրդը ջանասիրաբար աշխատի, որպեսզի տուն կառուցի իմ անվան համար:

11 Եվ այս օրից ^ամեկ տարի անց թող նրանք վերսկսեն իմ ^բտան հիմքը դնելը:

12 Այդպիսով, թող նրանք այդ

ժամանակից սկսած ջանասիրաբար աշխատեն, մինչև նրա ավարտը, նրա անկյունաքարից մինչև գագաթը, մինչև որ ոչինչ չի մնա, որ ավարտված չլինի:

13 Ճշմարիտ ասում են ձեզ. Թող ոչ իմ ծառա Ջոզեֆը, ոչ իմ ծառա Սիդնին, ոչ էլ իմ ծառա Հայրունը, այլևս պարտքի տակ չընկնեն՝ իմ անվան համար տուն կառուցելու պատճառով:

14 Այլ թող իմ անվան համար տունը կառուցվի այն ^աօրինակով, որը ես ցույց կտամ նրանց:

15 Եվ եթե իմ ժողովուրդը չկառուցի այն օրինակով, որը ես ցույց կտամ իրենց նախագահությանը, ես այն չեմ ընդունի նրանց ձեռքից:

16 Բայց եթե իմ ժողովուրդը կառուցի այն՝ համաձայն այն օրինակի, որը ես ցույց կտամ իրենց նախագահությանը, այսինքն՝ իմ ծառա Ջոզեֆ Սմիթին և նրա խորհրդականներին, այնժամ ես կընդունեմ այն իմ ժողովրդի ձեռքից:

17 Եվ բացի այդ, ճշմարիտ ասում են ձեզ. Իմ կանքով է, որ Ֆար Վեստ քաղաքն արագ կառուցվի իմ սրբերի հավաքվելով:

18 Եվ մակ, որ ^ացցերի համար այլ վայրեր նշանակվեն մերձակա շրջաններում, ինչպես որ դրանք ժամանակ առ ժամանակ հայտնի կդարձվեն իմ ծառա Ջոզեֆին:

19 Քանզի ահա, ես կլինեմ նրա հետ, և ես կարբազործեմ նրան՝

4ա3 Նեփի 274–8:
^բ սուր Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցի:
5աԵս. Կ.1–3:
^բ Ես. ԺԱ.12:
սուր Գրոշ:
6ա սուր Իսրայել – Իսրայելի ցրվելը:

^բ սուր Սիոն:
գ ՎևոՒ 101.21:
սուր Յից:
դ Ես. ԻԵ.1, 4,
ՎևոՒ 45.66–71:
ե Հայտ. ԺԳ.10,
ՎևոՒ 1.13–14:
7ա սուր Սուրբ:
8ա ՎևոՒ 88.119, 95.8:

^բ սուր Երկրպագել:
11ա ՎևոՒ 118.5:
^բ ՎևոՒ 124.45–54:
14ա Եբր. Ը.5,
ՎևոՒ 97.10:
18ա ՎևոՒ 101.21:
սուր Յից:

ժողովրդի առաջ. քանզի ես նրան եմ տվել այս արքայության և	ծառայության՝ քանալիները: Եվ իշտ այդպես: Ամեն:
--	---

ԲԱԺԻՆ 116

Հայտնություն՝ տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեին, Ուայթս Ֆերրիի մոտ, Սփրինգ Հիլ կոչված վայրում, Գեյվիլես գավառ, Միսսուրի, 1838թ. մայիսի 19-ին, (History of the Church, 3.35):

<p>ՄՓՐԻՆԳ Հիլը Տիրոջ կողմից անվանվել է ՄԱդամ-օնդի-Ահման, որովհետև, ասել է նա, դա այն վայրն է, որտեղ ՄԱդամը</p>	<p>պիտի գա՝ այցելելու իր ժողովրդին, կամ ⁹Հինավուրցը պիտի նստի, ինչպես ասվել է Գանիել մարգարեի կողմից:</p>
---	--

ԲԱԺԻՆ 117

Հայտնություն՝ տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեի միջոցով, Ֆար Վեստում, Միսսուրի, 1838թ. հուլիսի 8-ին, Վիլյամ Մարքսի, Նյուել Զ. Ուիթնիի և Օլիվեր Գրեյնզերի անմիջական պարտականությունների վերաբերյալ (History of the Church, 3.45–46):

<p>1–9՝ Տիրոջ ծառաները չպետք է տենչան նյութական բաներ, քանզի «ի՞նչ է սեփականությունը Տիրոջ համար». 10–16՝ Նրանք պետք է թողնեն փոքրոզի լիները, և նրանց զոհաբերությունները սրբազան կլինեն Տիրոջ համար:</p>	<p>3 Հետևաբար, եթե նրանք մնան, լավ չի լինի նրանց համար: 4 Թող նրանք ապաշխարեն իրենց բոլոր մեղքերից, և իրենց բոլոր ընչաքաղց ցանկություններից իմ առաջ, ասում է Տերը. քանզի՝ ի՞նչ է Մսեփականությունն իմձ համար, ասում է Տերը: 5 Թող Կիրթլենդի սեփականությունները տրվեն Մպարտքերի դիմաց, ասում է Տերը: Թողեք թող գնա, ասում է Տերը, իսկ ինչ որ կմնա, թող մնա ձեր ձեռքում, ասում է Տերը: 6 Քանզի մի՞թե իմը չեն երկնքի թռչունները և նաև ծովի ձկներն ու սարերի գազանները: Մի՞թե ես չեմ արարել երկիրը: Մի՞թե իմ ձեռքում չեն երկրի ազգերի բոլոր բանակների՝ Մճակատագրերը:</p>
<p>ՃՇՄԱՐԻՏ այսպես է ասում Տերն իմ ծառա Վիլյամ Մարքսին, և նաև իմ ծառա - Նյուել Զ. Ուիթնիին. Թող նրանք արագորեն կարգավորեն իրենց գործերը և ճամփա ընկնեն Կիրթլենդի հողից, նախքան ես՝ Տերս, կրկին ձյուն կուղարկեմ երկրի վրա: 2 Թող նրանք զարթնեն և վեր կենան, և դուրս գան ու չմնան, քանզի ես՝ Տերս եմ պատվիրում դա:</p>	

<p>19ա սուր Զահանայության քանալիները: 116 1ա ՎևՈՒ 78.15: սուր Ադամ-օնդի-ահման:</p>	<p>բ սուր Ադամ: q Գան. է.13–14, 22: 117 4ա ՎևՈՒ 104.14: 5ա ՎևՈՒ 104.78:</p>	<p>6ա Գոր. ԺԷ.26, 1 Նեփի 17.36–39:</p>
---	---	---

7 Հետևաբար, մի՞թե ես այնպես չեմ անի, որ ^ալքված վայրերը բողբոջեն ու ծաղկեն և պտուղ տան առատորեն, ասում է Տերը:

8 Մի՞թե բավականաչափ տեղ չկա ^աԱդամ-օնդի-Ահմանի սարերում, և Օլահա ^ԲՇինեհայի դաշտերում, կամ այն ^հողի վրա, որտեղ Ադամը բնակվեց, որ դուք տենչում եք այն, ինչը միայն մի կաթիլ է, և անտեսում եք ավելի ծանրակշիռ բաները:

9 Հետևաբար, եկեք այստեղ՝ իմ ժողովրդի հողը, այսինքն՝ Սիոն:

10 Թող իմ ծառա Վիլյամ Մարքսը քիչ բաների վրա ^ահավատարիմ լինի, և նա կառավարիչ կլինի շատ բաների վրա: Թող նա նախագահի Ֆար Վեստ քաղաքի իմ ժողովրդի մեջ, և թող նա օրհնվի իմ ժողովրդի օրհնություններով:

11 Թող իմ ծառա Նյուել Բ. Ուիթնին ամաչի ^անիկողայտասկանների խմբից և բոլոր նրանց ^բգաղտնի պղծություններից, և բոլոր իր փոքրոգությունից իմ առաջ, ասում է Տերը, և գա Ադամ-օնդի-Ահմանի հողը, և ^գեպիսկոպոս լինի իմ ժողովրդի համար, ասում է Տերը, ոչ թե անուհով, այլ գործերով, ասում է Տերը:

12 Եվ կրկին ես ասում եմ ձեզ. Ես հիշում եմ իմ ծառա ^աՕլիվեր

Գրենցերին. ահա, ճշմարիտ ասում եմ նրան, որ նրա անունը պիտի պահվի սրբազան հիշողության մեջ՝ սերնդե-սերունդ, հավիտյանս հավիտենից, ասում է Տերը:

13 Հետևաբար, բող նա լրջորեն պայքարի իմ Եկեղեցու Առաջին Նախագահության փրկագնման համար, ասում է Տերը. և երբ նա ընկնի, նա կրկին կբարձրանա, քանզի նրա ^ագոհաբերությունն ինձ համար ավելի սրբազան կլինի, քան նրա աճը, ասում է Տերը:

14 Հետևաբար, բող նա շտապ գա այստեղ՝ Սիոնի հող. և իր ժամանակին նա վաճառական կդարձվի իմ անվան համար, ասում է Տերը, ի օգուտ իմ ժողովրդի:

15 Հետևաբար, բող ոչ ոք չարհամարհի իմ ծառա Օլիվեր Գրենցերին, այլ թող իմ ժողովրդի օրհնությունները լինեն նրա վրա հավիտյանս հավիտենից:

16 Եվ բացի այդ, ճշմարիտ ասում եմ ձեզ. Թող Կիրթլենդի հողում գտնվող իմ բոլոր ծառաները հիշեն Տիրոջը՝ իրենց Աստծուն, և նաև իմ տունը, որ պահեն ու պահպանեն այն սուրբ, և ինձ հարմար ժամանակ դուրս գցեն դրամափոխներին, ասում է Տերը: Դիշտ այդպես: Ամեն:

ԲԱԺԻՆ 118

Հայտնություն՝ տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեի միջոցով, Ֆար Վեստում, Միսսուրի, 1838թ. հուլիսի 8-ին, ի պատասխան այս աղերսին. «Յույզ

<p>7ա Ես. ԼԵ.1, ՎևՈՒ 49.24–25: 8ա ՎևՈՒ 116.1: սուր Ադամ-օնդի-ահման: բ Աբր. 3.13: գ սուր Եղեմ:</p>	<p>10ա Մատ. ԻԵ.23: 11ա Հայտ. Բ.6, 15: բ սուր Գաղտնի խմբակցություններ: գ սուր Եպիսկոպոս: 12ա Ա. Մարգարեի</p>	<p>գործակալը, որին նա թողել էր Կիրթլենդում՝ իր գործերը կարգավորելու համար: 13ա սուր Ջոհաբերություն:</p>
---	---	---

տուր քո կամքը, ո՛վ Տեր, Տասներկուսի վերաբերյալ» (History of the Church, 3.46):

1-3՝ Տերը կապահովի Տասներկուսի ընտանիքները. 4-6՝ Տասներկուսում եղած թափուր տեղերը լրացվում են:

ՃՇՄԱՐԻՏ, այսպես է ասում Տերը. Թող անմիջապես համաժողով անցկացվի. թող Տասներկուսը կազմակերպվի. և թող մարդիկ նշանակվեն՝ լրացնելու նրանց տեղերը, ովքեր ընկել են:

2 Թող իմ ծառա՝ Թոմասը միառժամանակ մնա Սիոնի հողում՝ իմ խոսքը հրատարակելու համար:

3 Մնացածը թող այդ ժամից սկսած շարունակեն քարոզել, և եթե նրանք կամենան դա անել սրտի ողջ խոնարհությամբ, հեզությամբ և՛ համեստությամբ ու Բերկայնամտությամբ, ես՝ Տերս, խոստում եմ տալիս նրանց, որ կապահովեմ նրանց ընտանիքները.

և, այսուհետև, արդյունավետ դուռ պիտի բացվի նրանց համար:

4 Իսկ հաջորդ գարնանը թող նրանք մեկնեն մեծ ջրերի մյուս կողմը և այնտեղ հրապարակեն իմ ավետարանը, նրա լրիվությունը, և վկայեն իմ անվան մասին:

5 Թող նրանք հրաժեշտ տան սրբերին Ֆար Վեստ քաղաքում, հաջորդ ապրիլի քսանվեցերորդ օրը, իմ տան կառուցման հողակտորի վրա, ասում է Տերը:

6 Թող իմ ծառա Ջոն Թեյլորը, և նաև իմ ծառա Ջոն Ի. Փեյջը, և նաև իմ ծառա Վիլֆորդ Վուդրուֆը, և նաև իմ ծառա Վիլլարդ Ռիչարդսը, նշանակվեն՝ լրացնելու նրանց տեղերը, ովքեր ընկել են, և պաշտոնապես տեղեկացվեն իրենց նշանակման վերաբերյալ:

ԲԱԺԻՆ 119

Հայտնություն՝ տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեի միջոցով, Ֆար Վեստում, Միսսուրի, 1838թ. հուլիսի 8-ին, ի պատասխան նրա աղաչանքին. «Ո՛վ Տեր, ցույց տուր քո ծառային, թե որքան ես դու պահանջում քո ժողովրդի ունեցվածքից, որպես տասանորդ» (History of the Church, 3.44): Տասանորդի օրենքը, ինչպես հասկացվում է այսօր, նախքան այս հայտնությունը տրված չէր եկեղեցուն: Տասանորդ հասկացությունը, հենց նոր մեջբերված աղոթքում և նախկին հայտնություններում (64.23, 85.3, 97.11), նշանակում էր, ոչ թե հենց մեկ տասներորդը, այլ բոլոր կամավոր նվիրատվություններն ու ավանդները Եկեղեցու հիմնադրամների: Մինչ այդ, Տերը Եկեղեցուն տվել էր նվիրաբերման օրենքը և ունեցվածքների տնտեսվարությունը, որին անդամները (հիմնականում ղեկավարող երեցները) ենթարկվում էին, մտնելով ուխտի մեջ, որը պետք է լիներ հավիտենական: Բանի որ շատերը թերանում էին մնալ այդ ուխտի մեջ, Տերը որոշ ժամանակով վերցրեց այն, և փոխարենը ողջ Եկեղեցուն տվեց տասանորդի օրենքը: Մարգարեն հարցրեց Տիրոջը, թե

118 1ա Գոր. Ա.13, 16-17, 22-26: | 2ա սուր Մարշ Թոմաս Բ. | Խոնարհություն: 3ա սուր Խոնարհ, | ք սուր Համբերել:

որքան էր նա պահանջում իրենց ունեցվածքից՝ սրբազան նպատակների համար: Պատասխանը եղավ այս հայտնությունը:

1–5՝ Սրբերը պետք է վճարեն իրենց ավելորդ ունեցվածքը և ապա, որպես տասանորդ՝ տան իրենց տարեկան շահույթի մեկ տասներորդը. 6–7՝ Այդպիսի վարքը կսրբագործի Սիոնի հողը:

ՃՇՄԱՐԻՏ, այսպես է ասում Տերը. Ես պահանջում եմ, որ նրանց ողջ՝ «ավելորդ ունեցվածքը դրվի Սիոնի իմ եկեղեցու եպիսկոպոսի ձեռքում՝

2 Իմ՝ «տան կառուցման համար, և Սիոնի հիմնադրման համար, և քահանայության համար, և իմ Եկեղեցու Նախագահության պարտքերի համար:

3 Եվ դա կլինի իմ ժողովրդի «տասանորդ տալու սկիզբը:

4 Եվ դրանից հետո, նրանք, ովքեր այդպես տասանորդ են տվել, պետք է վճարեն իրենց տարեկան ամբողջ եկամուտի մեկ տասներորդը. և սա մնայուն օրենք պիտի

լինի նրանց համար հավիտյան, իմ սուրբ քահանայության համար, ասում է Տերը:

5 Ճշմարիտ ասում եմ ձեզ. Կլինի այնպես, որ բոլոր նրանք, ովքեր կհավաքվեն՝ «Սիոնի հողում, պիտի տասանորդ տան իրենց ավելորդ ունեցվածքից, և պիտի հետևեն այս օրենքին, այլապես նրանք արժանի չեն համարվի՝ մնալու ձեր մեջ:

6 Եվ ես ասում եմ ձեզ. Եթե իմ ժողովուրդը չհետևի այս օրենքին, որ սուրբ պահի այն, և այս օրենքով չսրբագործի՝ «Սիոնի հողն ինձ համար, որպեսզի իմ կանոններն ու դատաստանները պահվեն այնտեղ, որպեսզի այն ամենասուրբը լինի, ահա, ճշմարիտ ասում եմ ձեզ, այն չի լինի Սիոնի հող՝ ձեզ համար:

7 Եվ սա օրինակ պիտի լինի Սիոնի բոլոր «ցցերի համար: Ճիշտ այդպես: Ամեն:

ԲԱԺԻՆ 120

Հայտնություն՝ տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեի միջոցով, Ֆար Վեստում, Միսսուրի, 1838թ. հուլիսի 8-ին, որը հայտնի է դարձնում որպես տասանորդ վերցված ունեցվածքների տնօրինումը, ինչպես նշվել էր նախորդ՝ 119-րդ բաժնի հայտնության մեջ (History of the Church, 3.44):

ՃՇՄԱՐԻՏ, այսպես է ասում Տերը. Եկել է ժամանակը, որ «այն պետք է տնօրինվի խորհրդի միջոցով, որը բաղկացած է իմ Եկեղեցու Առաջին Նախագահու-

թյունից և եպիսկոպոսից ու նրա խորհրդից և իմ բարձրագույն խորհրդից, և նրանց ուղղված իմ իսկ ձայնով, ասում է Տերը: Ճիշտ այդպես: Ամեն:

119 1ա ՎևոՒ 42.33–34,
55, 51.13, 82.17–19:
2ա ՎևոՒ 115.8:
3ա ՎևոՒ 64.23,

Մաղ. Գ.8–12:
ՍոՒ Տասանորդ,
Տասանորդել:
5ա ՎևոՒ 57.2–3:

6ա ՍոՒ Սիոն:
7ա ՍոՒ Ցից:
120 1ա նշ. տասանորդը:

ԲԱԺԻՆ 121

Աղոթք և մարգարեություններ՝ գրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեի կողմից, մինչ նա բանտարկյալ էր Լիբերթիի բանտում, Միսսուրի, գրանցված 1839-ի մարտի 20-ի ամսաթվով (History of the Church, 3.289-300): Մարգարեն և մի քանի գործընկերներ ամիսներով բանտում էին գտնվում: Գործադիր պաշտոնյաներին և դատական մարմիններին ուղղված նրանց խնդրագրերն ու գանգատներն այլևս սկիզբից չէին բերում:

1-6 Մարգարեն աղաչում է Տիրոջը տառապող Սրբերի համար. 7-10՝ Տերը խաղաղություն է խոսում նրա հետ. 11-17՝ Անիծյալ են բոլոր նրանք, ովքեր կեղծ բացականչություններ են անում այն մասին, թե Տիրոջ ժողովուրդն օրինազանցել է. 18-25՝ Նրանք քահանայության իրավունք չեն ունենա և կնզովեն. 26-32՝ Փառահեղ հայտնություններ են խոստացվում նրանց, ովքեր քաջաբար համբերում են. 33-40՝ Ինչո՞ւ են շատերը կանչված և քչերն ընտրված. 41-46՝ Քահանայությունը պետք է օգտագործվի միայն արդարությանը:

Ո՛վ Աստված, ո՞րտեղ ես դու: Եվ ո՞րտեղ է տաղավարը, որ ծածկում է քո ^աթաքնված տեղը: 2 ^աՈրքա՞ն պիտի քո ձեռքը ետ պահվի, և քո աչքը, այո՛, քո մաքուր աչքը հավերժական երկինքներից նայի քո ժողովրդի և քո ծառաների հանդեպ անարդարություններին, և քո ականջը թափանցեն նրանց աղաղակները: 3 Այո, ո՞վ Տեր, ^աորքա՞ն պիտի նրանք կրեն այս անարդարություններն ու անօրինական ճնշումները, մինչև սիրտդ փափկի նրանց

հանդեպ և աղիքներդ կարեկցանքից զալարվեն նրանց հանդեպ: 4 Ո՛վ ^աԱմենագոր Տեր Աստված, արարիչ երկնքի, երկրի և ծովերի, և բոլոր բաների, որ նրանցում են, և դո՛ւ, որ հսկում և հպատակեցնում ես դեհին, և Շեղի խավար ու մթազին տիրապետությունը, - պարզիր ձեռքդ. թող քո աչքը խոցի. թող քո տաղավարը վեր բարձրացվի. թող քո ^աթաքնված տեղն այլևս ծածկված չլինի. թող ականջդ հակվի. թող քո սիրտը փափկի և աղիքներդ կարեկցանքից զալարվեն մեր հանդեպ: 5 Թող քո բարկությունը բռնկվի մեր թշնամիների դեմ. և սրտիդ կատաղությամբ, քո սրով, ^ավրեժ առ մեր հանդեպ կատարված անարդարությունների համար: 6 Հիշիր քո տառապող սրբերին, ո՛վ մեր Աստված. և ծառաներդ հավիտյան կցնձան քո անունով: 7 Որդի՛ս, խաղաղություն քո հոգուն. քո ^ամախորդություններն ու քո շարչարանքները կտևեն միայն մի փոքր պահ. 8 Եվ հետո, եթե դու լավ ^ահամբերես, Աստված քեզ վեր կբարձրացնի. դու կհաղթես քո բոլոր թշնամիներին:

121 1ա Սաղ. ԺԳ.1-2, ԵԲ.1-2: 2ա Ամբ. Ա.2: 3ա ՎևոՒ 109.49:	4ա սոՒ Ամենակարող: բ ՎևոՒ 123.6: 5ա Ղուկ. ԺԸ.7-8: 7ա սոՒ Չախորդություն:	8ա Ա Պետ. Բ.19-23: սոՒ Համբերել:
--	--	-------------------------------------

9 ՄԸնկերներդ կանգնած են կողքիդ, և նրանք կրկին կողջունեն քեզ ջերմ սրտերով ու բարյացակամ ձեռքերով:

10 Դու դեռևս չձորի պես չես. քո ընկերները չեն հակառակվել քեզ, ոչ էլ մեղադրում են քեզ օրինազանցության մեջ, ինչպես վարվեցին ձորի հետ:

11 Իսկ նրանք, ովքեր մեղադրում են քեզ օրինազանցության մեջ, նրանց հույսը պիտի կորչի, և նրանց հեռանկարները պիտի հավվեն, ինչպես Մեղամն է հավվում ծագող արևի այրող ճառագայթներից.

12 Եվ նաև Աստված դրել է իր ձեռքը և կնիքը, որ փոխի Մժամերն ու եղանակները և կուրացնի նրանց մտքերը, որպեսզի նրանք չկարողանան հասկանալ նրա զարմանալի գործերը. որպեսզի նրանց ևս փորձի և բռնի իրենց իսկ նենգության մեջ.

13 Եվ քանի որ նրանց սրտերն ապականված են, այն բաները, որոնք նրանք կամենում են բերել ուրիշների վրա և սիրում են ուրիշներին տառապանք պատճառել, որպեսզի գա Միրենց վրա մինչև վերջին աստիճանը.

14 Որպեսզի նրանք ևս հուսախաբվեն, և նրանց հույսը կտրվի.

15 Եվ ոչ շատ տարիներ անց, որպեսզի նրանք և նրանց ժառանգները սրբվեն երկնքի տակից, ասում է Աստված, որպեսզի նրանցից ոչ ոք չմնա պատի մոտ կանգնելու:

16 Անիծված են բոլոր նրանք, ովքեր կրունկ կբարձրացնեն իմ ՝օծյալների դեմ, ասում է Տերը, և կբացականչեն, թե նրանք ՚մեղանչել են, երբ նրանք չեն մեղանչել իմ առաջ, ասում է Տերը, այլ արել են այն, ինչը հաճելի էր իմ աչքին, և ինչը ես էի պատվիրել նրանց:

17 Բայց նրանք, ովքեր բացականչում են՝ օրինազանցություն, անում են այդ, որովհետև մեղքի ծառաներն են, և ինքնին անհնազանդության ՝գավակներ են:

18 Եվ նրանք, ովքեր կեղծ երդում են տալիս իմ ծառաների դեմ, որպեսզի բերեն նրանց գերության և մահվան,–

19 Վա՛յ նրանց. որովհետև նրանք ՝վիրավորել են իմ փոքրերին, նրանք պիտի կտրվեն իմ տան ՚արարողություններից:

20 Նրանց ՝գամբյուղը չի լցվի, նրանց տներն ու ամբարները կկորչեն, և նրանք կարհամարիվեն նրանց կողմից, ովքեր քծնում էին իրենց:

21 Մերնդե-սերունդ, ո՛չ նրանք, ո՛չ էլ նրանցից հետո իրենց ծառանգները ՝քահանայության իրավունք չեն ունենա:

22 ՄԱվելի լավ կլիներ նրանց համար, որ մի ջաղացի քար կախվեր նրանց պարանոցից, և նրանք խեղդվեին ծովի անդունդում:

23 Վա՛յ բոլոր նրանց, ովքեր անհանգստացնում են իմ ժողովրդին, և քշում ու սպանում և վկայում են նրա դեմ, ասում է Չորաց Տերը.

9ա Վև. 122.3:
10ա սո՛ւ ձոր:
11ա Ել. ԺԶ.14:
12ա Դան. Բ.21:
13ա Առակ. ԻԸ.10,
1 Նեփի 14.3:

16ա Ա Թագ. ԻԶ.9,
Սաղ. ԴԵ.15:
բ 2 Նեփի 15.20,
Մոր. 7.14, 18:
17ա Մեփես. Ե.6:
19ա Մատ. ԺԸ.6:

սո՛ւ Վիրավորել:
բ սո՛ւ Արարողություններ:
20ա Բ Օր. ԻԸ.15–20:
21ա սո՛ւ Քահանայություն:
22ա Մատ. ԺԸ.6,
Վև. 54.5:

իժերի "սերունդը չի խուսափելու դժոխքի նգովքից:

24 Ահա, իմ աչքերը "տեսնում են և գիտեն բոլոր նրանց գործերը, և իր ժամանակին ես սրընթաց թդատաստան ունեմ պահած, նրանց բոլորի համար.

25 Քանզի նշանակված "ժամանակ կա ամեն մարդու համար՝ ըստ կատարած թգործերի:

26 Աստված ձեզ "գիտելիք կտա իր թՍուրբ Հոգու միջոցով, այո, Սուրբ Հոգու անասելի Գպարզևով, որը հայտնի չի դարձվել աշխարհի սկզբից մինչև հիմա.

27 Որին մեր նախահայրերը փափագող ակնկալիքով սպասել են, որ հայտնի դարձվի վերջին ժամանակներում, որին ուղղվել էին նրանց մտքերը, հրեշտակների միջոցով, որը պահվել էր նրանց փառքի լիության համար.

28 Դա կլինի մի ժամանակ, երբ "ոչինչ ետ չի պահվի, լինի մեկ Աստված, թե շատ թաստվածներ, նրանք պիտի հայտնվեն:

29 Բոլոր գահերն ու տիրապետությունները, իշխանություններն ու գորությունները, պիտի "հայտնի դարձվեն և տրվեն բոլոր նրանց, ովքեր քաջաբար համբերել են հանուն Հիսուս Քրիստոսի ավետարանի:

30 Եվ մաս, եթե կան հաստատ-

ված "սահմաններ երկնքի կամ ծովերի կամ ցամաքի կամ արևի, լուսնի կամ աստղերի համար,–

31 Դրանց բոլոր պտույտների ժամանակները, բոլոր նշանակված օրերը, ամիսները և տարիները, և նրանց օրերի, ամիսների ու տարիների բոլոր օրերը, և նրանց բոլոր փառքերը, օրենքները և հաստատված ժամանակները, պիտի հայտնի դարձվեն ժամանակների լրության "տնտեսության օրերին,–

32 Համաձայն նրա, ինչը կարգվել էր բոլոր մյուս աստվածների Հավերժական "Աստծո թԽորհրդում, նախքան այս աշխարհի լինելը, որ պետք է պահպանվեր մինչև նրա ավարտն ու վերջը, երբ ամեն մարդ պիտի մտնի նրա հավերժական Գներկայությունը և նրա անմահ թհանգիստը:

33 Որքա՞ն կարող են հոսող ջրերն անմաքուր մնալ: Ի՞նչ գորություն պիտի ետ պահի երկինքները: Ինչպես մարդը կարող է պարզել իր չնչին ձեռքը և կանգնեցնել Միսսուրի գետի որոշված ընթացքը կամ շրջել այն դեպի վեր, այնպես էլ կարող է խանգարել Ամենագորին՝ երկնքից Վերջին Օրերի Սրբերի գլխին "գիտելիք քափելիս:

34 Ահա, շատերն են "կանչված,

23ա Մատ. ԺԲ.34:
24ա սոՒ Ամենագետ:
բ Հել. 8.25:
սոՒ Դատել,
Դատաստան:
25ա Հոբ Է.1,
ՎևՈՒ 122.9:
բ սոՒ Գործեր:
26ա Դան. Բ.20–22, ՀՀ 1.9:
սոՒ Հայտնություն:
բ ՎևՈՒ 8.2–3:
գ սոՒ Սուրբ Հոգու
պարզև:

28ա ՎևՈՒ 42.61, 76.7–8,
98.12:
բ Սաղ. ՁԲ.1, 6,
Հովի. Ժ.34–36,
Ա Կոր. Ը.5–6,
ՎևՈՒ 76.58, 132.20,
Աբբ. 4.1, 5.1–2:
29ա ՎևՈՒ 101.32:
30ա Հոբ ԻԶ.7–14,
Սաղ. ԾԴ.5–9,
Գոր. ԺԷ.26:
31ա սոՒ Տնտեսություն:
32ա Բ Օր. Ժ.17:

բ սոՒ Խորհուրդ
Երկնքում:
գ սոՒ Մարդ, Մարդիկ –
Մարդ Երկնային Հոր
ման դառնալու
ներուծը:
դ սոՒ Հանգիստ:
33ա ՎևՈՒ 128.19:
սոՒ Գիտություն:
34ա Մատ. Ի.16, 22.1–14,
ՎևՈՒ 95.5–6:
սոՒ Կանչ, Աստծո
կողմից կանչված, Կոչում:

բայց քչերն են ՞ընտրված: Իսկ ինչո՞ւ նրանք ընտրված չեն:

35 Որովհետև նրանց սրտերն այնքան շատ են դրված այս ՞աշխարհի բաների վրա և տենչում են մարդկանց ՞գովասանքները, որ նրանք չեն սովորում այս մեկ դասը,-

36 Որ քահանայության ՞իրավունքներն անբաժանորեն կապված են երկնքի ՞գորությունների հետ, և որ երկնքի գորությունները չեն կարող կառավարվել, ոչ էլ գործածվել, բացի միայն ՞արդարության սկզբունքների հիման վրա:

37 Որ դրանք կարող են շնորհվել մեզ, ճշմարիտ է. բայց երբ մենք ձգտում ենք ՞քողարկել մեր ՞մեղքերը կամ գոհացնել մեր ՞հպարտությունը, մեր ունայն փառասիրությունը կամ իշխանություն, տիրապետություն կամ էլ հարկադրանք ենք գործադրում մարդկանց զավակների հոգիների վրա, անիրավության որևէ աստիճանով, ահա, երկինքները ՞ետ են քաշվում. Տիրոջ Հոգին տրտմում է. և երբ այն ետ է քաշվում, Ամեն այդ մարդու քահանայությանը կամ իշխանությանը:

38 Ահա, մինչ նա կգիտակցի, նա թողնված է մենակ, որ ՞քացի տա խթանին, ՞հալածի սրբերին և կռվի Աստծո դեմ:

39 Մենք տխուր փորձառությամբ սովորել ենք, որ գրեթե բոլոր

մարդկանց ՞բնությունն ու հակվածությունն է՝ հենց որ նրանք ստանում են մի փոքր լիազորություն, ինչպես իրենք ենթադրում են, նրանք անմիջապես սկսում են անիրավ իշխանություն գործադրել:

40 Ուստի շատերն են կանչված, բայց քչերն են ընտրված:

41 Ոչ մի գորություն կամ ազդեցություն չի կարող և չպետք է պահպանվի քահանայության շնորհիվ. միայն ՞համոզումով, ՞երկայնամտությամբ, մեղմությամբ և հեզությամբ և անկեղծ սիրով.

42 Բարությանբ և մաքուր գիտելիքով, որոնք անչափ մեծացնում են հոգին՝ առանց ՞կեղծավորության ու առանց ՞նենգության,-

43 Ժամանակին խստությամբ ՞հանդիմանելով, երբ ներշնչվում ես Սուրբ Հոգով. և ապա, դրանից հետո, ավելի մեծ ՞սեր ցույց տալով նրա հանդեպ, ում հանդիմանել ես, չլինի թե նա քեզ իր թշնամին համարի.

44 Որպեսզի նա իմանա, որ քո հավատարմությունն ավելի ամուր է, քան մահվան կապանքները:

45 Նաև թող քո որովայնը գթությամբ լցված լինի բոլոր մարդկանց հանդեպ և հավատքի ընտանիքի հանդեպ, և թող ՞առաքինությունը զարդարի քո ՞մտքերն անդադար. այն ժամանակ քո վստահությունը կամրանա Աստծո ներկայության մեջ. և քահանայու-

բ սո՛ւ Ընտրյալ:
35ա սո՛ւ Աշխարհիկություն:
բ Մատ. 2.2,
2 Նեփի 26.29:
36ա սո՛ւ Քահանայություն.
Իշխանություն:
բ սո՛ւ Չորություն:
գ սո՛ւ Արդար,
Արդարություն:

37ա Առակ. ԻԸ.13:
բ սո՛ւ Մեղք:
գ սո՛ւ Հպարտություն:
դ Վե՛ր 1.33:
38ա Գոր. Թ.5:
բ սո՛ւ Հալածել,
Հալածանք:
39ա սո՛ւ Բնական մարդ:
41ա Ա Պետ. Ե.1-3:

բ Բ Կոր. 2.4-6:
42ա Հակ. Գ.17:
բ սո՛ւ Նենգություն:
43ա սո՛ւ Խրատել,
Խրատելը:
բ սո՛ւ Գթություն. Մեր:
45ա սո՛ւ Առաքինություն:
բ սո՛ւ Մտքեր:

քյան վարդապետությունը կիջնի քո հոգու վրա, ինչպես Գրողը երկնքից:

46 Մուրբ Հոգին կլինի քո մշտական ընկերը, և քո գավազանը կլինի արդարության ու ճշմարտու-

քյան անփոփոխ գավազան. և քո Մտիրապետությունը կլինի հավիտենական տիրապետություն և առանց հարկադրանքի կոռսի դեպի քեզ հավիտյանս հավիտենից:

ԲԱԺԻՆ 122

Տիրոջ խոսքը Ջոզեֆ Սմիթ Մարգարեին, մինչ նա բանտարկյալ էր Լիբերթի բանտում, Միսսուրի, 1839թ. մարտին (History of the Church, 3.300–301):

1–4 Աշխարհի ծայրերը գիտելիք են փնտրելու Ջոզեֆ Սմիթի անվան մասին. 5–7 Բողոք նրա վտանգներն ու չարքաշությունները փորձառություն կտան նրան և կլինեն նրա օգտի համար. 8–9 Մարդու Որդին իջել է այդ ամենից ցած:

միների մեջ, քան կատաղի Մառյուծինը. և քո Աստվածը կկանգնի քո կողքին հավիտյանս հավիտենից:

5 Եթե դու կանչվես անցնելու նեղության միջով. եթե դու վտանգի մեջ լինես կեղծ եղբայրների մեջ. եթե դու վտանգի մեջ լինես գողերի մեջ. եթե դու վտանգի մեջ լինես ցամաքում, թե ծովում.

ԱՇԽԱՐՀԻ ծայրերը գիտելիք կփնտրեն քո անվան մասին, և հիմարները կծաղրեն քեզ, և դժոխքը կմոլեգնի քո դեմ.

2 Մինչդեռ սրտով մաքուրները և իմաստունները և ազնվահոգիները և առաքինիները, շարունակ խորհուրդ և իշխանություն և օրհնություններ պիտի փնտրեն քո ձեռքի տակ:

6 Եթե դու մեղադրվես ամեն տեսակ կեղծ մեղադրանքներով. եթե քո թշնամիները հարձակվեն քո վրա. եթե նրանք կտրեն քեզ քո հոր և քո մոր և եղբայրներիդ ու քույրերիդ ընկերակցությունից. և եթե քո թշնամիները մերկացրած սրով կտրեն քեզ կնոջդ և զավակներիդ ծոցից, և ավագ որդիդ, չնայած վեց տարեկան հասակին, կառչի քո հանդերձներից և ասի. Հայրի՛կ իմ, հայրի՛կ, ինչո՞ւ դու չես կարող մնալ մեզ հետ: Օ՛, հայրի՛կ իմ, ի՞նչ են ուզում անել քեզ հետ այս մարդիկ. և եթե, այնուհետև, նա սրով բաժանվի քեզանից, և դու զգվես բանտ, և քո թշնամիները սողոսկեն քո շուրջը,

3 Եվ քո ժողովուրդը երբեք չի շրջվի քո դեմ դավաճանների վկայությամբ:

4 Եվ չնայած նրանց ազդեցությանը կզգվես փորձանքի մեջ և ճաղերից ու պատերից ներս, դու պիտի հիշվես պատվով. և միայն մի փոքր ժամանակ, և քո արդարության շնորհիվ քո ձայնն ավելի ահարկու կլինի քո թշնա-

q Բ Օր. ԼԲ.1–2, ՎևՈՒ 128.19: 46ատոՒ Մուրբ Հոգի:

p Գ-ան. Է.13–14: 122 1ա ՋՄ–Պ 1.33: 2ա սոՒ Խորհուրդ:

4ա ՎևՈՒ 121.7–8: p 3 Նեփի 20.16–21, 21.12:

ինչպես գառան արյուն տենչացող
՞գայլեր.

7 Եվ եթե քեզ գցեն հորը
կամ մարդասպանների ձեռքը,
և մահվան դատավճիռն անցնի
վրայովդ. եթե քեզ գցեն ՞ջրան-
դունդը. եթե բարձրացող ալիքը
դավ նյութի քո դեմ. եթե կատա-
ղի քամիները դառնան քո թշնա-
մին. եթե երկինքները մթնեն, և
բոլոր տարրերը համախմբվեն՝
ճանապարհը խոչընդոտելու. և
այդ ամենից բացի, եթե ՞դժոխքի
ծնոտները լայն բացեն երախը,
որպեսզի քեզ կուլ տան, իմացիր,
որդի՛ս, որ այս բոլոր բաները

՞փորձառություն կտան քեզ և կլի-
նեն քո օգտի համար:

8 Մարդու ՞Որդին ՞իջել է այդ
ամենից ցած: Մի՞թե դու ավելի
մեծ ես, քան նա:

9 Հետևաբար, շարունակիր ճա-
նապարհդ, և քահանայությունը
՞կմնա քեզ հետ. քանզի նրանց
՞սահմանները հաստատված են՝
նրանք չեն կարող անցնել այն: Քո
՞օրերը հայտնի են, և քո տարիները
չեն կրճատվի. հետևաբար, մի
՞վախեցիր նրանից, ինչ կարող
է անել մարդը, քանզի Աստված
քեզ հետ կլինի հավիտյանս հա-
վիտենից:

ԲԱԺԻՆ 123

*Սրբերի պարտականությունն իրենց հալածողների հանդեպ, ինչպես
ներկայացվել է Ջոզեֆ Սմիթ Մարգարեի կողմից, մինչ նա բանտարկյալ
էր Լիբերթիի բանտում, Միսսուրի, 1839թ. մարտին (History of the
Church, 3.302–303):*

1–6՝ Սրբերը պետք է ժողովեն և
հրատարակեն իրենց տառապանք-
ների ու հալածանքների պատմու-
թյունը. 7–10՝ Այն նույն ոգին, որը
հաստատում է կեղծ համոզմունք-
ները, առաջնորդում է նաև Սրբերի
հալածանքը. 11–17 Եղած աղանդ-
ներից դեռ շատերը կրնդունեն
ճշմարտությունը:

այս նահանգի մարդկանց կող-
մից նրանց պատճառած տառա-
պանքների ու բռնությունների
վերաբերյալ.

2 Եվ նաև ողջ ունեցվածքի և
նրանց կրած վնասների չափի
վերաբերյալ՝ թե՛ հեղինակության,
թե՛ մարմնական վնասվածքների և
թե՛ անշարժ գույքի առումով.

3 Եվ նաև բոլոր անձանց անուն-
ները, որոնք մասնակցություն են
ունեցել իրենց ճնշելիս, որքան
որ նրանք կարող են ձեռք բերել և
գտնել դրանք:

4 Եվ միգուցե մի հանձնախումբ

Եվ դարձյալ, մենք կառաջար-
կեինք ձեզ խորհրդածել այն
բանի պատշաճ լինելը, որ բոլոր
սրբերը տեղեկություն հավաքեն
բոլոր փաստերի վերաբերյալ և

6ա Ղուկ. Ժ.3:
7ա Հովն. Բ.3–6:
բ Բ Թագ. ԻԲ.5–7,
ՋՍ–Պ 1.15–16:
գ Բ Կոր. Դ.17,
Եբր. ԺԲ.10–11,
2Նեփի 2.11:

8ա ՍՈՒ Մարդու Որդի:
բ Եբր. Բ.9, 17–18,
ՎևՈՒ 76.107, 88.6:
9ա ՎևՈՒ 90.3:
բ Գոր. ԺԷ.26:
գ ՎևՈՒ 121.25:
դ Նեեմ. Դ.14,

Սաղ. ԾՁ.4,
ճԺԸ.6,
Առակ. Գ.5–6,
Ես. ԾԱ.7,
Ղուկ. ԺԲ.4–5,
2Նեփի 8.7,
ՎևՈՒ 3.7, 98.14:

նշանակվի, որը կպարզի այս բաները և կընդունի հայտարարություններ ու գրավոր ցուցմունքներ. և նաև կհավաքի պտտվող զրպարտիչ հրատարակումները.

5 Եվ այն ամենը, ինչ ամսագրերում են և հանրագիտարաններում. և բոլոր զրպարտիչ պատմությունները, որոնք հրատարակվում և գրվում են, և թե ովքեր են հեղինակները. և կներկայացնի ողջ այդ դիվային խարդախության հավաքածուն և ստոր ու եղեռնական բռնությունները, որոնք գործադրվել են այս ժողովրդի հանդեպ,–

6 Որ մենք ոչ միայն հրատարակենք դրանք ամբողջ աշխարհի առաջ, այլ իրենց ողջ մութ և դժոխային երանգով ներկայացնենք կառավարության ղեկավարներին, որպես վերջին փորձ, որը պահանջել է մեր Երկնային Հայրը, նախքան մենք կարող ենք լիովին ու ամբողջությամբ պահանջել այն խոստումը, որը նրան դուրս կկանչի իր թաքնված տեղից. և նաև, որպեսզի ողջ ազգը մնա առանց արդարացման, նախքան այն, որ նա կկարողանա առաջ ուղարկել իր հզոր բազկի գորությունը:

7 Դա մի հրամայական պարտականություն է, որ մենք պարտական ենք Աստծուն, հրեշտակներին, որոնց հետ մենք կրեքվենք կանգնելու, և նաև ինքներս մեզ, մեր կանանց ու երեխաներին, որոնք ստիպված են եղել խոնարհվել կսկիծով, վշտով ու հոգսով, մարդասպանության, բռնակալության և ճնշման ամենանզովյալ ձեռքի տակ, աջակցված, դրդված և նեցուկ եղած այն ոգու ազդեցու-

թյամբ, որը կեղծիք ժառանգած հայրերի համոզմունքներն այդպես ամուր գամել է զավակների սրտերին և աշխարհը լցրել է խառնաշփոթությամբ, և ավելի ու ավելի է ամրանում, և այժմ իրական շարժիչն է ամեն ապականության, և ողջ Պերկիրը հառաչում է նրա անօրինության ծանրությունից:

8 Դա երկաթե լուծ է, դա ամուր կապանք է. դրանք հենց ձեռնակապանքներն ու շղթաները և կալանդներն ու ոտնակապանքներն են դժոխքի:

9 Հետևաբար, դա մի հրամայական պարտականություն է, որ մենք պարտական ենք ոչ միայն մեր սեփական կանանց ու երեխաներին, այլ նաև այրիներին ու հայրագուրկներին, որոնց ամուսիններն ու հայրերը սպանվել են նրա երկաթե ձեռքի տակ.

10 Որոնք՝ այդ մութ և խավարեցնող գործերը, բավական են, որ դժոխքն ինքը սարսռի և զարհուրած ու գունատ կանգնի, և հենց դևի ձեռքերը դողողոյան ու կաթվածահար լինեն:

11 Եվ նաև մի հրամայական պարտականություն է, որը մենք պարտական ենք աճող սերնդին և բոլոր սրտով մաքուրներին,–

12 Քանզի երկրի վրա դեռ շատերը կան, բոլոր աղանդների, խմբակցությունների և դավանանքների մեջ, որոնք կույր են դարձվել, մոլորեցնելու համար դարան մտած մարդկանց ճարպիկ խաբեությամբ, և որոնք ճշմարտությունից հեռու են մնացել, միայն որովհետև Քզիտեն որտեղ գտնեն այն,–

123 6ա ՎևՈՒ 101.89, 121.1, 4: 7ա Մովսես 7.48–49: 8ա ՍՈՒ Լուծ: 9ա ՎևՈՒ 98.13, 124.54: 12ա Կող. Բ.8, ՎևՈՒ 76.75: p 1 Նեփի 8.21–23:

13 Դրա համար է, որ մենք պետք է հալենք ու մաշենք մեր կյանքը, որ դեպի լույսը բերենք խավարի բոլոր ՝ ծածուկ բաները, որքան մենք գիտենք. և դրանք իսկապես հայտնի են դարձվել երկնքից, -

14 Ուստի, այս բաները պետք է արվեն ամենայն ջանասիրությամբ:

15 Թող ոչ ոք աննշան չհամարի դրանք. քանզի, սրբերին վերաբերող շատ բաներ կան, որ սպասվում են ապագայում, որոնք կախված են այդ բաներից:

16 Դուք գիտեք, եղբայրներ, որ մի շատ մեծ նավ փոթորիկի ժամանակ մեծապես ՝ օգտվում է մի շատ փոքր դեկից, անհրաժեշտ դիրքում պահվելով քամու և ալիքների դեմ:

17 Հետևաբար, շատ սիրելի՛ եղբայրներ, եկեք ՝ ուրախությամբ անենք ամեն բան, որ մեր ուժի սահմաններում է. և հետո, թող մենք կանգնենք հանգիստ, ամենայն համոզվածությամբ՝ տեսնելու Աստծո ՝ փրկությունը և նրա բացահայտվող բազուկը:

ԲԱԺԻՆ 124

Հայտնություն տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեին, Նավուում, Իլինոյս, 1841թ. հունվարի 19-ին (History of the Church, 4.274-286): Պետական պաշտոնյաների կողմից իրենց դեմ աճող հալածանքների և ոչ օրինական արարքների հետևանքով, Սրբերը ստիպված էին եղել լքել Միսսուրիին: Միսսուրիի նահանգապետի՝ Լիլբուրն Վ. Բոզսի արձակած բնաջնջման հրամանը, 1838թ. հոկտեմբերի 27-ի անսաթվով գրանցված, նրանց զրկեց այլընտրանքից (History of the Church, 3.175): 1841 թվականին, երբ տրվեց այս հայտնությունը, Սրբերի կողմից կառուցվել էր Նավու քաղաքը, որը զբաղեցնում էր Իլինոյսի նախկին Կոմերս գյուղի տարածքը, և այստեղ հաստատվել էր Եկեղեցու գլխավոր վարչությունը:

1-14՝ Ջոզեֆ Սմիթին պատվիրվում է ավետարանի մի հանդիսավոր հռչակագիր պատրաստել և հղել Միացյալ Նահանգների նախագահին, նահանգապետներին և բոլոր ազգերի կառավարիչներին. 15-21՝ Հայրում Սմիթը, Դեյվիդ Վ. Փաթենը, Ջոզեֆ Սմիթ ավագը և մյուսները, ողջերի և մահացածների մեջ, օրհնված են իրենց շիտակության և առաքինության համար. 22-28՝ Սրբերին պատվիրվում է Նավուում կառուցել և՛ տուն՝ օտարականներին հյուրընկալելու համար, և՛ տաճար. 29-36՝

Մահացածների համար մկրտությունները պետք է կատարվեն տաճարներում. 37-44՝ Տիրոջ ժողովուրդը միշտ տաճարներ է կառուցում սուրբ արարողություններ կատարելու համար. 45-55՝ Իրենց թշնամիների ճնշման հետևանքով, Սրբերն ազատվում են Ջեկսոնի գավառում տաճար կառուցելու պարտավորությունից. 56-83՝ Ուղղություններ են տրվում Նավուի Տան կառուցման համար. 84-96՝ Հայրում Սմիթը կանչվում է լինելու հայրապետ, ստանալու բանալիները և փոխարինելու Օլիվեր Քաուդե-

13ա Ա Կոր. Գ.5:
16ա Հակ. Գ.4, Ալմա 37.6-7,

Վև ՈՒ 64.33:
17ա Վև ՈՒ 59.15:

բ Ել. ԺԳ.13:

րհին. 97-122՝ Վիլյամ Լոյին և ուրիշներին խորհուրդներ է տրվում իրենց գործերի վերաբերյալ. 123-145՝ Տրվում են ընդհանուր և տեղական պաշտոնյաների անունները, նրանց պարտականությունները և քվորումները, որին նրանք պատկանում են:

ԱՇՄԱՐԻՏ, այսպես է ասում Տերը քեզ, իմ ծառա Ջոզեֆ Սմիթ. Ես հավանում եմ քո ընծան և խոստովանությունները, որոնք դու արել ես. քանզի այս նպատակով եմ ես բարձրացրել քեզ, որպեսզի ցույց տամ իմ իմաստությունն աշխարհի թույլերի միջոցով:

2 Քո աղոթքներն ընդունելի են իմ առաջ. և որպես պատասխան, ես ասում եմ քեզ, որ դու այժմ կանչված ես՝ անմիջապես մի հանդիսավոր հռչակագիր գրելու իմ ավետարանի մասին, և այս սցցի մասին, որը ես տնկել եմ, որ լինի Սիոնի անկյունաքարը, որը նրբաճաշակորեն պիտի հղկվի պալատի նմանությամբ:

3 Այս հռչակագիրը պետք է հղվի աշխարհի բոլոր թագավորներին, նրա չորս ծայրերին, նորընտիր պատվարժան նախագահին ու հարգարժան նահանգապետներին՝ այն պետության, որում դու ապրում ես, և ամենուրեք սփռված երկրի բոլոր ազգերին:

4 Թող այն գրվի հեզոնիայի ոգով և Սուրբ Հոգու զորությամբ, որը քո մեջ կլինի վերջինս գրելու ժամանակ.

5 Քանզի Սուրբ Հոգով քեզ կտրվի իմանալ իմ կամքն այդ թագավորների ու իշխանավորների վերաբերյալ, նույնիսկ այն, ինչ տեղի կունենա նրանց հետ ապագայում:

6 Քանզի, ահա, ես պատրաստվում եմ կոչ անել նրանց՝ ուշք դարձնելու Սիոնի լույսին և փառքին, քանզի նրան շնորհ անելու որոշված ժամանակը հասել է:

7 Հետևաբար, կոչ արեք նրանց, բարձրաձայն հռչակումով և ձեր վկայությամբ, չվախենալով նրանցից, քանզի նրանք խոտի պես են, և ողջ նրանց փառքը՝ նրա ծաղկի պես, որը շուտով թափվում է, որ նրանք նույնպես մնան առանց արդարացման, -

8 Եվ որ ես այցելեմ նրանց՝ այցելության օրը, երբ ես կբացեմ քողն իմ երեսի ծածկոցի, որ նշանակեմ ճնշողի բաժինը կեղծավորների հետ, որտեղ ատամների կլրճոտոց կա, եթե նրանք մերժում են իմ ծառաներին և իմ վկայությունը, որը ես հայտնի եմ դարձրել նրանց:

9 Եվ կրկին, ես կայցելեմ և կփափկացնեմ նրանց սրտերը, նրանցից շատերինը, ձեր բարիքի համար, որ կարողանաք շնորհ գտնել նրանց աչքում, որ նրանք կարողանան գալ դեպի ճշմարտության լույսը, իսկ հեթանոսները՝ դեպի Սիոնի վեհացունը կամ բարձրացունը:

10 Քանզի իմ այցելության օրն արագ մոտենում է, մի ժամի, երբ դուք չեք կարծում. և ո՞րտեղ

124 1ա Ա Կոր. Ա.26-28, ՎևոՒ 1.19, 35.13:
2ա սոՒ Յից:
3ա Սաղ. ԳԺԹ.46, Մատ. Ժ.18, ՎևոՒ 1.23:

4ա սոՒ Հեզ, Հեզոնիայ: 7ա Սաղ. ԳԳ.15-16, Ես. Խ.6-8, Ա Պետ. Ա.24-25: 8ա Մատ. Ը.12, Ալմա 40.13,

ՎևոՒ 101.91, 112.24: 9ա Ես. Կ.1-4: սոՒ Լույս, Քրիստոսի լույս: 10ա Մատ. ԻԳ.44, ՋՍ-Մ 1.48:

պետք է լինի իմ ժողովրդի ապահովությունը, և նրանից սնացածի ապաստանը:

11 Չարքնե՛ք, ո՛վ երկրի քագավորներ: Եկե՛ք, օ՛ եկեք Սիոնի դուստրերի տուն, ձեր ոսկով ու ձեր արծաթով, իմ ժողովրդին օգնելու:

12 Եվ բացի այդ, ճշմարիտ ասում եմ քեզ. Թող իմ ծառա Ռոբերտ Բ. Թոմսոնն օգնի քեզ գրել այդ հռչակագիրը, քանզի ես հավանում եմ նրան և այն, որ նա լինի քեզ հետ.

13 Հետևաբար, թող նա ականջ դնի քո խորհրդին, և ես կօրհնեմ նրան բազում օրհնություններով. այսուհետև թող նա հավատարիմ և ճշմարիտ լինի բոլոր բաներում, և նա մեծ կլինի իմ աչքում.

14 Բայց թող հիշի, որ նրա տնտեսությունը ես կպահանջեմ իր ձեռքից:

15 Եվ բացի այդ, ճշմարիտ ասում եմ քեզ. Օրհնյալ է իմ ծառա՝ Հայրում Սմիթը. քանզի ես՝ Տերս, սիրում եմ նրան իր սրտի շիտակության համար, և որովհետև նա սիրում է այն, ինչը ճիշտ է իմ առաջ, ասում է Տերը:

16 Բացի այդ, թող իմ ծառա Ջոն Կ. Բենեթն օգնի քեզ իմ խոսքը քագավորներին և աշխարհի ժողովուրդներին ուղարկելու գործունի, և կանգնի քո կողքին, այսինքն՝ քո՝ իմ ծառա Ջոզեֆ Սմիթի չարչարանքի ժամին. և նրա վարձքը չի պակասի, եթե նա խորհուրդ ընդունի:

17 Եվ իր սիրո համար, նա մեծ

կլինի, քանզի նա իմը կլինի, եթե այդպես վարվի, ասում է Տերը: Ես տեսել եմ նրա կատարած գործը, որը ես ընդունում եմ, եթե նա շարունակի, և կպասկեմ նրան օրհնությամբ ու մեծ փառքով:

18 Եվ բացի այդ, ես ասում եմ քեզ, որ իմ կամքով է, որ իմ ծառա Լայման Ուայթը շարունակի քարոզելը Սիոնի համար, հեգուքյան ոգով, խոստովանելով ինձ աշխարհի առաջ. և ես նրան բարձր կպահեմ, ասես՝ արծվի թևերի վրա. և նա փառք ու պատիվ կբերի իրեն և իմ անվանը:

19 Որպեսզի, երբ նա ավարտի իր գործը, ես կարողանամ նրան ինձ մոտ ընդունել, ինչպես արեցի իմ ծառա՝ Դեյվիդ Փաթենի հետ, որն ինձ մոտ է հիմա, և նաև իմ ծառա՝ Էդվարդ Պատրիջի, և նաև իմ տարեց ծառա՝ Ջոզեֆ Սմիթ ավագի հետ, որը նստած է Պարահամի հետ, նրա աջ կողմում, և օրհնված ու սուրբ է նա, քանզի նա իմն է:

20 Եվ բացի այդ, ճշմարիտ ասում եմ քեզ, որ իմ ծառա Ջորջ Միլլերը՝ սենգությունից գերծ է. նրան կարելի է վստահել իր սրտի շիտակության համար. և այն սիրո համար, որը նա տաժում է իմ վկայության հանդեպ, ես՝ Տերս, սիրում եմ նրան:

21 Դրա համար ես ասում եմ քեզ. Ես նրա գլխին կնքում եմ՝ եպիսկոպոսության պաշտոնը, իմ ծառա Էդվարդ Պատրիջի մման, որպեսզի նա ստանա իմ տան մվիրաբերումները, որ նա օրհ-

14ա սուր Տնտես. Տնտեսություն:
15ա սուր Սմիթ Հայրում:
բ սուր Շիտակություն:
16ա սուր Խորհուրդ:

18ա Ել. ԺԹ.4, Ես. Խ.31:
19ա Վև.ՈՒ 124.130:
սուր Փաթեն Դեյվիդ Վ.
բ սուր Պատրիջ Էդվարդ:
գ սուր Սմիթ Ջոզեֆ

կրոսեր:
դ Վև.ՈՒ 137.5:
20ա սուր Նենգություն:
21ա Վև.ՈՒ 41.9:
սուր Եպիսկոպոս:

նություններ բերի իմ ժողովրդի աղքատների գլխին, ասում է Տերը: Թող ոչ մի մարդ չարհամարհի իմ ծառա Ջորջին, քանզի նա պատվելու է ինձ:

22 Թող իմ ծառա Ջորջը և իմ ծառա Լայմանը և իմ ծառա Ջոն Սնայդերը, և մյուսները, ^ատուն կառուցեն իմ անվան համար, այնպիսին, ինչպիսին նրանց ցույց կտա իմ ծառա Ջոզեֆը, մի վայրում, որը նա նույնպես ցույց կտա նրանց:

23 Եվ դա պիտի լինի տուն՝ օթևանի համար, տուն, որտեղ օտարականները կարող են հեռվից գալ՝ այնտեղ իջևանելու. հետևաբար, թող դա լինի լավ տուն, ամեն ընդունելության արժանի, որպեսզի հոգնած ^աճամփորդն առողջություն և ապահովություն գտնի, մինչ նա կխորհի Տիրոջ խոսքի վրա. և ^բանկյունաքարի մասին, որը ես նշանակել եմ Սիոնի համար:

24 Այդ տունը պիտի լինի առողջարար բնակավայր, եթե այն կառուցված լինի իմ անվան համար, և եթե նրա վրա նշանակված կառավարիչը թույլ չտա, որ որևէ պղծություն արատավորի այն: Այն պիտի լինի սուրբ, այլապես Տերը՝ ձեր Աստվածը, չի բնակվի այնտեղ:

25 Եվ բացի այդ, ճշմարիտ ասում եմ ձեզ. Թող իմ սրբերը զան հեռվից:

26 Եվ ուղարկեք արագընթաց սուրհանդակներ, այո, ընտիր

սուրհանդակներ, և ասեք նրանց. Եկե՛ք ձեր ողջ ոսկով և ձեր արծաթով և ձեր թանկարժեք քարերով և ձեր ողջ հնություններով. և բոլոր նրանց հետ, ովքեր գիտելիք ունեն հնությունների մասին, ովքեր կամենում են զալ, թող զան և բերեն տոսախ և եղևնի և սոճի՝ երկրի մնացած բոլոր թանկարժեք ծառերի հետ միասին.

27 Եվ երկաթով, պղնձով և արույրով և ցինկով և երկրի ձեր բոլոր թանկարժեք բաներով. և ^ատուն կառուցեք իմ անվան համար՝ Բարձրյալի համար, որ նա ^բբնակվի այնտեղ:

28 Քանզի երկրի վրա տեղ չկա, որ նա գա և կրկին ^ավերականգնի ձեզ համար այն, ինչը կորսվել էր, կամ ինչը նա վերցրել էր, այսինքն՝ քահանայության լրիվությունը:

29 Քանզի երկրի վրա ^ամկրտության ավազան չկա, որ նրանք՝ իմ սրբերը, կարողանան ^բմկրտվել նրանց համար, ովքեր մահացել են, -

30 Քանզի այդ արարողությունը պատկանում է իմ տանը և չի կարող ընդունելի լինել ինձ համար, բացի միայն ձեր աղքատության օրերից, երբ դուք ի վիճակի չեք տուն կառուցել ինձ համար:

31 Բայց ես պատվիրում եմ ձեզ՝ իմ բոլոր սրբերին, տուն ^ակառուցել ինձ համար. և ես ձեզ բավականաչափ ժամանակ եմ տալիս, որ տուն կառուցեք ինձ համար. և այդ ընթացքում ձեր մկրտություններն ընդունելի կլինեն ինձ համար:

22ա ՎևոՒ 124.56-60:
23ա Բ Օր. ԼԱ.12,
Մատ. ԻԵ.35, 38:
բ ՎևոՒ 124.2:
27ա ՎևոՒ 109.5:
սու՝ Տաճար՝ Տիրոջ
տուն:

բ Ել. ԻԵ.8,
ՎևոՒ 97.15-17:
28ա սու՝ Ավետարանի
վերականգնումը:
29ա ՎևոՒ 128.13:
բ Ա Կոր. ԺԵ.29,
ՎևոՒ 127.6, 138.33:

սու՝ Մկրտություն,
Մկրտել - Մկրտություն
մահացածների
համար, Փրկություն
մահացածների
համար:
31ա ՎևոՒ 97.10:

32 Բայց ահա, այդ ժամանակահատվածից հետո մահացածների համար մկրտություններն ընդունելի չեն լինի ինձ համար. և եթե դուք չկատարեք այդ բաները տրված ժամանակահատվածից հետո, դուք՝ որպես եկեղեցի, ձեր մահացածների հետ պիտի մերժվեք, ասում է Տերը՝ ձեր Աստվածը:

33 Քանզի ճշմարիտ ասում են ձեզ, որ նրանից հետո, երբ դուք բավականաչափ ժամանակ եք ունեցել, որ տուն կառուցեք ինձ համար, որին պատկանում է մահացածների համար մկրտության արարողությունը, և որի համար այն հաստատված է եղել աշխարհի հիմնադրումից առաջ, մահացածների համար ձեր մկրտությունները չեն կարող ընդունելի լինել ինձ համար:

34 Քանզի նրանում են կարգված սուրբ քահանայության ^աբանալիները, որ դուք կարողանաք պատվի ու փառքի արժանանալ:

35 Եվ այդ ժամանակից հետո, մահացածների համար ձեր մկրտությունները, նրանց կողմից, ովքեր սփռված են ամենուրեք, ընդունելի չեն լինի ինձ համար, ասում է Տերը:

36 Քանզի կարգված է, որ Սիոնում և նրա ցցերում և Երուսաղեմում, այն տեղերը, որոնք ես նշանակել եմ ^աապաստանի համար, պիտի լինեն ձեր մահացածների համար ձեր մկրտությունների վայրերը:

37 Եվ բացի այդ, ճշմարիտ ասում

են ձեզ. Ի՞նչպես պիտի ձեր ^ավացումներն ընդունելի լինեն ինձ համար, եթե դուք չկատարեք դրանք այն տանը, որը դուք կառուցել եք իմ անվան համար:

38 Քանզի այդ նպատակով ես Մովսեսին պատվիրեցի, որ նա ^ախորան կառուցի, որը նրանք պիտի տանեին իրենց հետ անապատում, և ^բտուն կառուցի խոստումի երկրում, որպեսզի այդ արարողությունները հայտնի դարձվեին, որոնք քարքանդված էին եղել աշխարհի լինելուց առաջ:

39 Հետևաբար, ճշմարիտ ասում են ձեզ, որ ձեր ^աօծումները, ձեր լվացումները և ձեր ^բմկրտությունները մահացածների համար, ձեր ^գհանդիսավոր ժողովները և ձեր հիշատակները Գևհի որդիների միջոցով ձեր ^դզոհաբերությունների համար և ձեր պատգամների համար ձեր ^եամենասուրբ վայրերում, որտեղ դուք ստանում եք հաղորդակցություններ, և ձեր կանոններն ու դատաստանները՝ Սիոնի հայտնությունների և հիմնադրման սկզբի համար և նրա բոլոր քաղաքացիների փառքի, պատվի և օժտման համար, կարգվում են իմ սուրբ տան արարողությամբ, որն իմ ժողովրդին միշտ պատվիրվել է կառուցել իմ սուրբ անվան համար:

40 Եվ ճշմարիտ ասում են ձեզ. Թող այդ տունը կառուցվի իմ անվան համար, որ նրանում ես կարողանամ հայտնի դարձնել իմ արարողություններն իմ ժողովրդին:

34ա ՎևՈՒ 110.14-16:
սուրբ քահանայության բանալիները:
36ա Ես. Գ.5-6:
37ա սուրբ Լվացվել, Լվացված, Լվացումներ:
38ա Ել. ԻԵ.1-9, 33.7:

սուր Խորան:
բ սուր Տաճար՝ Տիրոջ տուն:
39ա Ել. ԻԹ.7:
սուր ֕Օծել:
բ սուր Արարողություններ - Փոխարինող

արարողություն:
գ ՎևՈՒ 88.117:
դ ՎևՈՒ 13.1, 84.31, 128.24, ՋՄ-Պ 1.69:
ե Եզեկ. ԽԱ.4, ՎևՈՒ 45.32, 87.8, 101.22:

41 Քանզի ես նպատակահարմար եմ գտնում իմ եկեղեցուն «հայտնի դարձնել այն բաները, որոնք թժածուկ էին պահվել աշխարհի հիմնադրումից առաջ, բաներ, որոնք վերաբերում են ժամանակների Գլուխյան տնտեսությանը:

42 Եվ իմ ծառա Ջոզեֆ Սմիթին «ես ցույց կտամ այս տան հետ կապված բոլոր բաները, և դրա քահանայությունը և վայրը, որտեղ այն պիտի կառուցվի:

43 Եվ դուք պետք է դա կառուցեք այն վայրում, որտեղ մտադրվել էք կառուցել, քանզի դա է տեղը, որը ես ընտրել եմ ձեզ համար, որ այն կառուցեք:

44 Եթե դուք աշխատեք ձեր ողջ գործությամբ, ես կնվիրագործեմ այդ տեղը, որպեսզի այն «սուրբ դառնա:

45 Եվ եթե իմ ժողովուրդն ականջ դնի իմ ձայնին, և իմ «ծառաների ձայնին, որոնց ես նշանակել եմ առաջնորդելու իմ ժողովրդին, ահա, ճշմարիտ ասում եմ ձեզ, նրանք չեն հեռացվի իրենց տեղից:

46 Բայց եթե նրանք ականջ չդնեն իմ ձայնին, ոչ էլ այն մարդկանց ձայնին, որոնց ես նշանակել եմ՝ առաջնորդելու իմ ժողովրդին, նրանք չեն օրհնվի, որովհետև նրանք պղծում են իմ սուրբ հողերը, և իմ սուրբ արարողությունները և կանոնադրությունները, և իմ սուրբ խոսքերը, որոնք ես տալիս եմ նրանց:

47 Եվ պիտի լինի այնպես, որ եթե դուք տուն կառուցեք իմ անվան համար, և չանեք այն բաների, որ ես ասում եմ, ես չեմ կատարի «երդումը, որը տալիս եմ ձեզ, ոչ էլ կկատարեն խոստումները, որոնք դուք սպասում եք իմ ձեռքից, ասում է Տերը:

48 Քանզի օրհնությունների «փոխարեն դուք, ձեր իսկ գործերով, անե՞ծք, ցասում, զայրույթ և դատաստաններ եք բերում ձեր իսկ գլխին՝ ձեր անմտությամբ և ձեր բոլոր պղծություններով, որոնք դուք գործադրում եք իմ առաջ, ասում է Տերը:

49 Ճշմարիտ, ճշմարիտ ասում եմ ձեզ, որ երբ ես պատվիրան եմ տալիս մարդկանց որդիներին՝ գործ կատարել իմ անվան համար, և մարդկանց որդիներն իրենց ողջ կարողությամբ և իրենց ողջ ունեցածով սկսում են կատարել այդ գործը և չեն թուլացնում իրենց «ջանասիրությունը, և նրանց թշնամիները գալիս են նրանց վրա և խանգարում են նրանց կատարել այդ գործը, ահա, ինձ անհրաժեշտ կլինի այլևս թշնամանջել այդ գործն այդ մարդկանց որդիների ձեռքից, այլ ընդունել նրանց ընծաները:

50 Եվ անօրհնությունն ու օրհնագանցությունն իմ սուրբ օրենքների և պատվիրանների դեմ, ես «կբերեմ նրանց գլխին, ովքեր խանգարել են իմ գործին, մինչև երրորդ և չորրորդ սերունդը, քանի դեռ նրանք չեն Գապաշխարում և

41ա ՀՀ 1.9:
բ ՎևՈՒ 121.26-32:
գ Եփեւ. Ա.9-10,
ՎևՈՒ 27.13, 112.30:
42ա ՎևՈՒ 95.14-17:
44ա սո՛ւ Սուրբ:

45ա ՎևՈՒ 1.38:
սո՛ւ Մարգարե:
47ա սո՛ւ Երդում:
48ա Բ Օր. ԻԸ.15:
49ա սո՛ւ Ջանասիրություն:
բ ՎևՈՒ 56.4, 137.9:

50ա Մոսիա 12.1:
բ Բ Օր. Ե.9,
ՎևՈՒ 98.46-47:
գ սո՛ւ Ապաշխարել,
Ապաշխարություն:

դեռ ասում են ինձ, ասում է Տեր Աստվածը:

51 Ուստի, այդ պատճառով, ես ընդունել եմ նրանց ընծաները, ում ես պատվիրել էի քաղաք և չտուն կառուցել իմ անվան համար, Միսսուրիի Քեկսոն գավառում, և ում խանգարեցին իրենց թշնամիները, ասում է Տերը՝ ձեր Աստվածը:

52 Եվ ես կպատասխանեմ Պատաստանով, ցասումով և գայրույթով և կոծով և տվայտանքով և ատամների կրճտոցով նրանց գլխին, մինչև երրորդ և չորրորդ սերունդը, քանի դեռ նրանք չեն ապաշխարում և ասում են ինձ, ասում է Տերը՝ ձեր Աստվածը:

53 Եվ սա ես դարձնում եմ օրինակ ձեզ համար, ձեր մխիթարության համար՝ բոլոր նրանց վերաբերյալ, ում պատվիրվել է գործ անել և արգելվել է իրենց թշնամիների ձեռքով ու ճնշումով, ասում է Տերը՝ ձեր Աստվածը:

54 Քանզի ես եմ Տերը՝ ձեր Աստվածը, և ես կփրկեմ ձեր եղբայրներից բոլոր նրանց, որոնք սրտով չմաքուր են եղել և թսպանվել են Միսսուրիի հողում, ասում է Տերը:

55 Եվ բացի այդ, ճշմարիտ ասում եմ ձեզ. Ես կրկին պատվիրում եմ ձեզ մի չտուն կառուցել իմ անվան համար, հենց այս վայրում, որ դուք կարողանաք թսպացուցել իմ առաջ, որ դուք հավատարիմ եք բոլոր բաներում, ինչ որ ես պատվիրեմ ձեզ, որ ես կարողանամ օրհնել ձեզ և պսակել ձեզ

փառքով, անմահությամբ և հավերժական կյանքով:

56 Եվ այժմ ես ասում եմ ձեզ. Ինչ վերաբերում է իմ իջևանատանը, որը ես պատվիրել եմ ձեզ կառուցել օտարականներին օքևան տալու համար, թող այն կառուցվի իմ անվան համար, և թող իմ անունով անվանվի այն, և թող իմ ծառա Ջոզեֆն ու իր ընտանիքը սերնդե-սերունդ տեղ ունենան այնտեղ:

57 Քանզի այս օծումը ես դրել եմ նրա գլխին, որպեսզի նրա օրհնությունները դրվեն նաև նրա գալիք ժառանգների գլխին:

58 Եվ ինչպես ես ասացի ՄԱրբահամին, երկրի ազգերի վերաբերյալ, ճիշտ նույնպես ես ասում եմ իմ ծառա Ջոզեֆին. քեզանով ու քո թսերնդով երկրի ազգերը պիտի օրհնվեն:

59 Հետևաբար, թող իմ ծառա Ջոզեֆը և նրա գալիք սերունդը տեղ ունենան այդ տան մեջ՝ սերնդե-սերունդ, հավիտյանս հավիտենից, ասում է Տերը:

60 Եվ թող այդ տան անունը կոչվի Նավուի Տուն. և թող այն հաճելի բնակավայր լինի մարդու համար և հանգստավայր՝ հոգնած ճամփորդի համար, որպեսզի նա խորիի Սիոնի փառքի և նրա այս անկյունաքարի փառքի մասին.

61 Որ նա նաև խորհուրդ ստանա նրանցից, ում ես նշանակել եմ որպես փառքի չտունկեր և որպես թսպահապաններ նրա պատերի վրա:

51ա ՎևՈՒ 115.11:
բ սո՛ւ Ջեկսոն գավառ, Միսսուրի (ԱՄՆ):
52ա ՎևՈՒ 121.11-23:
54ա սո՛ւ Անարատ, Անարատություն:

բ ՎևՈՒ 98.13, 103.27-28:
55ա ՎևՈՒ 127.4:
բ Աբբ. 3.25:
56ա ՎևՈՒ 124.22-24:
58ա ԾՆ. ԺԲ.3, 22.18, Աբբ. 2.11:

սո՛ւ Աբրահամ:
բ ՎևՈՒ 110.12:
սո՛ւ Աբրահամի ուխտը:
61ա Ես. ԿԱ.3, Եգեկ. ԼԳ.29:
բ սո՛ւ Արթուն լինել:

62 Ահա, ճշմարիտ ասում եմ ձեզ. Թող իմ ծառա Ջորջ Միլլերը, և իմ ծառա Լայման Ուայթը, և իմ ծառա Ջոն Սնայդերը, և իմ ծառա Պիտեր Հոսը քվորում կազմեն և իրենցից մեկին նախագահ նշանակեն նրա վրա՝ այդ տունը կառուցելու նպատակով:

63 Եվ նրանք պետք է սահմանադրություն հիմնեն, որով կկարողանան բաժնեվճար ստանալ այդ տունը կառուցելու համար:

64 Եվ այդ տան մեկ բաժնետոմսի համար նրանք չպետք է ստանան ավելի քիչ, քան հիսուն դոլլար, և նրանց կթույլատրվի ստանալ տասնհինգ հազար դոլլար մեկ մարդուց, որպես այդ տան բաժնեվճար:

65 Բայց նրանց չպիտի թույլատրվի մեկ մարդուց ստանալ տասնհինգ հազար դոլլարից ավելի բաժնեվճար:

66 Եվ նրանց չպիտի թույլատրվի այդ տան մեկ բաժնետոմսի դիմաց մեկ մարդուց ստանալ հիսուն դոլլարից ցածր:

67 Եվ նրանց չի թույլատրվի ընդունել որևէ մարդու՝ որպես այս տան բաժնետեր, եթե բաժնետոմս ստանալիս նա առձեռն չտա իր բաժնեվճարը.

68 Եվ առձեռն տված իր բաժնեվճարի գումարին համապատասխան, նա բաժնեմաս կունենա այդ տան մեջ. բայց եթե նա առձեռն ոչինչ չի տալիս, նա բաժնեմաս չի ստանա այդ տան մեջ:

69 Եվ եթե մեկն առձեռն բաժնեվճար տա, դա կլինի այդ տան բաժնեմաս՝ իր համար և իր գալիք սերնդի համար, սերնդե-սերունդ, քանի դեռ նա և նրա ժառանգները

կպահեն այդ բաժնեմասը և իրենց հոժար կամքով ու որոշմամբ չեն վաճառի կամ փոխանցի այդ բաժնեմասն իրենց ձեռքից, եթե դուք կամենում եք կատարել իմ կամքը, ասում է Տերը՝ ձեր Աստվածը:

70 Եվ բացի այդ, ճշմարիտ ասում եմ ձեզ. Եթե իմ ծառա Ջորջ Միլլերը և իմ ծառա Լայման Ուայթը և իմ ծառա Ջոն Սնայդերը և իմ ծառա Պիտեր Հոսը բաժնեվճար ստանան առձեռն, դրանով կամ ունեցվածքով, որով ստացած կլինեն իրական դրամական արժեք, նրանք չպետք է այդ բաժնի ինչ-որ մաս օգտագործեն որևէ այլ նպատակի համար, բացի այդ տնից:

71 Եվ եթե նրանք այդ բաժնի ինչ-որ մաս օգտագործեն որևէ այլ տեղ, բացի այդ տնից, առանց բաժնետիրոջ համաձայնության, և քառապատիկ չփոխհատուցեն այն բաժնեմասի համար, որը նրանք օգտագործել են որևէ այլ տեղ, բացի այդ տնից, նրանք պիտի նգովվեն և պիտի հեռացվեն իրենց տեղից, ասում է Տեր Աստվածը. քանզի ես՝ Տերս, Աստված եմ, և չպետք է «ժաղրի ենթարկվեմ այս բաներից որևէ մեկի պատճառով:

72 Այնպիսի ասում եմ ձեզ. Թող իմ ծառա Ջոզեֆն առձեռն բաժնեվճար տա այդ տան կառուցման համար, ինչպես իրեն բարի է թվում. սակայն իմ ծառա Ջոզեֆը չի կարող տասնհինգ հազար դոլլարից ավելի վճարել, որպես այդ տան բաժնեվճար, ոչ էլ հիսուն դոլլարից պակաս. ոչ էլ կարող է ուրիշ որևէ մեկը, ասում է Տերը:

73 Եվ կան ուրիշները ևս, ովքեր ցանկանում են իմանալ իմ կամքն

իրենց վերաբերյալ, քանզի նրանք խնդրել են դա իմ ձեռքից:

74 Հեռևաբար, ես ասում եմ ձեզ իմ ծառա Վինսոն Նայթի վերաբերյալ. Եթե նա կամենում է իմ կամքը կատարել, թող նա այդ տան մեջ բաժնեվճար ներդնի իր համար և իր գալիք սերնդի համար՝ սերնդե-սերունդ:

75 Եվ թող մարդկանց մեջ նա բարձրացնի իր ձայնը, երկար և բարձր, աղքատի և կարիքավորի օգտին՝ աղերսելու համար. և թող նա չընկրկի, ոչ էլ թող նրա սիրտը թուլանա. և ես ՝ կրնդունեմ նրա ընծաները, քանզի դրանք ինձ համար չեն լինի, ինչպես Կայենի ընծաները, քանզի նա իմը կլինի, ասում է Տերը:

76 Թող նրանք ընտանիքով ուրախանան և հեռացնեն իրենց սրտերը նեղությունից. քանզի ես ընտրել եմ նրան և օժել նրան, և նա պիտի հարգվի իր տան մեջ, քանզի ես կներեմ նրա բոլոր մեղքերը, ասում է Տերը: Ամեն:

77 Նշմարիտ ասում եմ ձեզ. Թող իմ ծառա Հայրումը բաժնեվճար ներդնի այդ տան մեջ, ինչպես նրան բարի է թվում, իր համար և իր գալիք սերնդի համար՝ սերնդե-սերունդ:

78 Թող իմ ծառա Իսահակ Գալլանդը բաժնեվճար ներդնի այդ տան մեջ. քանզի ես՝ Տերս, սիրում եմ նրան իր կատարած գործի համար, և կներեմ նրա բոլոր մեղքերը. հեռևաբար, թող նա միշտ հիշվի որպես այդ տան փայտեր՝ սերնդե-սերունդ:

79 Թող իմ ծառա Իսահակ Գալլանդը նշանակվի ձեր միջից, և կարգվի իմ ծառա Վիլյամ Մարք-

սի կողմից, և օրհնվի նրա կողմից, որ գնա իմ ծառա Հայրումի հետ՝ կատարելու այն աշխատանքը, որն իմ ծառա Ջոզեֆը ցույց կտա նրանց, և նրանք մեծապես կօրհնվեն:

80 Թող իմ ծառա Վիլյամ Մարքսը բաժնեվճար ներդնի այդ տան մեջ, ինչպես իրեն բարի է թվում, իր համար և իր սերնդի համար՝ սերնդե-սերունդ:

81 Թող իմ ծառա Հենրի Ջ. Շերվուդը բաժնեվճար ներդնի այդ տան մեջ, ինչպես նրան բարի է թվում, իր համար և իր գալիք սերնդի համար՝ սերնդե-սերունդ:

82 Թող իմ ծառա Վիլյամ Լոն բաժնեվճար ներդնի այդ տան մեջ, իր համար և իր գալիք սերնդի համար՝ սերնդե-սերունդ:

83 Եթե նա կամենում է իմ կամքը կատարել, թող նա իր ընտանիքը չտանի արևելյան հողերը, այսինքն՝ Կիրթլենդ. չմայած ես՝ Տերս, կառուցելու եմ Կիրթլենդը, սակայն ես՝ Տերս, խարազան եմ պատրաստել այնտեղի բնակիչների համար:

84 Եվ ինչ վերաբերում է իմ ծառա Ալմոն Բաբիթին, շատ բաներ կան, որոնք ես չեմ հավանում. ահա, նա տենչում է հաստատել իր խորհուրդը, այն խորհրդի փոխարեն, որը կարգել եմ ես, որն է իմ Եկեղեցու Նախագահությունը. և նա ՝ ոսկե հորթ է բարձրացնում, որ իմ ժողովուրդը երկրպագի:

85 Թող այս վայրից ոչ ոք ՝ չհեռանա, ով եկել է այստեղ՝ ջանալով պահել իմ պատվիրանները:

86 Եթե նրանք ապրում են այստեղ, թող նրանք ապրեն ինձ

համար. և եթե մահանում եմ, թող մահանան ինձ համար. քանզի այստեղ նրանք ^ակհանգստանան իրենց բոլոր շարչարանքներից և կշարունակեն իրենց գործերը:

87 Հետևաբար, թող իմ ծառա Վիլյամն ապավինի ինձ և դադարի վախենալ իր ընտանիքի համար՝ այդ հողի հիվանդության պատճառով: Եթե ^ասիրում եք ինձ, պահեք իմ պատվիրանները. և այդ հողի հիվանդությունը ձեզ փառք ^բկբերի:

88 Թող իմ ծառա Վիլյամը զնա և բարձր ձայնով ու մեծ ուրախությամբ հռչակի իմ հավիտենական ավետարանը, ինչպես նա կներշնչվի իմ ^աՀոգու կողմից, Վարչավի բնակիչներին և նաև Քարթեջի բնակիչներին և նաև Բուռլինգտոնի բնակիչներին և նաև Մադիսոնի բնակիչներին, և համբերատար ու ջանասիրաբար սպասի գերագույն համաժողովին՝ հետագա հրահանգների համար, ասում է Տերը:

89 Եվ եթե նա կամենում է իմ կամքը կատարել, թող այսուհետև նա ականջ դնի իմ ծառա Ջոզեֆի խորհրդին, շահագրգռված պաշտպանի աղքատների ^աշահերը և հրատարակի իմ սուրբ խոսքի ^բնոր թարգմանությունը երկրի բնակիչների համար:

90 Եվ եթե նա այդպես վարվի, ես նրան ^ակօրհնեմ բազում օրհնություններով, այնպես որ, նա լքված

չի լինի, ոչ էլ նրա սերունդը հաց ^բկմորա:

91 Եվ բացի այդ, ճշմարիտ ասում եմ ձեզ. Թող իմ ծառա Վիլյամը նշանակվի, կարգվի և օծվի՝ որպես իմ ծառա Ջոզեֆի խորհրդական, իմ ծառա Հայրունի սենյակում, որպեսզի իմ ծառա Հայրունը ստանա Քահանայության և ^ահայրապետի պաշտոնը, որը նշանակվել էր նրան իր հոր կողմից, օրհնությամբ և նաև իրավունքով.

92 Որ այսուհետ նա կրի ^ահայրապետական օրհնության բանալիները ողջ իմ ժողովրդի գլխին,

93 Այնպես որ, ում նա օրհնի՝ պիտի օրհնվի, և ում նա ^աանիծի՝ պիտի անիծվի. որ ինչ որ նա կապի երկրի վրա, պիտի կապվի երկնքում. և ինչ որ նա ^բարձակի երկրի վրա, պիտի արձակվի երկնքում:

94 Եվ այս ժամանակից ի վեր, ես նրան նշանակում եմ, որ նա մարգարե և ^ատեսանող և հայտնող լինի իմ եկեղեցու համար, այնպես ինչպես իմ ծառա Ջոզեֆը.

95 Որպեսզի նա նաև միաբանորեն գործի իմ ծառա Ջոզեֆի հետ. և որ նա պիտի խորհուրդ ընդունի իմ ծառա Ջոզեֆից, որը նրան ցույց կտա ^աբանալիները, որոնցով նա կարող է խնդրել և ստանալ, և պասակվի միևնույն օրհնությամբ, և փառքով, և պատվով, և քահանայությամբ, և քահանայության պարգևներով, որոնք մի ժամանակ

86ա Հայտ. ԺԳ.13:
սուր Դրախտ. Հանգիստ:
87ա Հովհ. ԺԳ.15:
բ ՎևՈՒ 121.8, 122.7:
88ա սուր Աստված,
Աստվածազուլիս –
Աստված Սուրբ Հոգին:
89ա ՎևՈՒ 78.3:
բ նշ. Աստվածաշնչի

Ջոզեֆ Սմիթի
թարգմանությունը:
90ա սուր Օրհնել, Օրհնված,
Օրհնություն:
բ Սաղ. ԼԷ.25:
91ա ՎևՈՒ 107.39–40:
սուր Հայրապետ,
Հայրապետական:
92ա սուր Հայրապետական

օրհնություն:
93ա ՎևՈՒ 132.45–47:
բ Մատ. ԺԶ.19:
սուր Կնիք, Կնքում:
94ա ՎևՈՒ 107.91–92:
սուր Տեսանող:
95ա ՎևՈՒ 6.28:

դրվել էին նրա գլխին, ով իմ ծառան էր՝ Օլիվեր Բաուդերին:

96 Որպեսզի իմ ծառա Հայրումը կարողանա վկայել այն բաների մասին, որոնք ես նրան ցույց կտամ, որպեսզի նրա անունը պատվով հիշվի սերնդե-սերունդ՝ հավիտյան հավիտենից:

97 Թող իմ ծառա Վիլյամ Լոն նույնպես ստանա բանալիները, որոնցով նա կարող է խնդրել և ստանալ օրհնություններ. թող նա ՝խոնարհ լինի իմ առաջ, և ՝նենգություն չունենա, և նա կստանա իմ Հոգին, այսինքն՝ ՝Միսիթարիչը, որը նրան հայտնի կդարձնի բոլոր բաների ճշմարտությունը, և նույն ժամին կհուշի, թե նա ինչ պիտի ասի:

98 Եվ այս ՝նշանները կհետևեն նրան, - նա պիտի ՝բժշկի հիվանդներին, նա պիտի դուրս գցի դևերին և պիտի ազատվի նրանցից, ովքեր մահացու թույն կսպասավորեն նրան:

99 Եվ նա պիտի առաջնորդվի շավիղներով, որտեղ ՝թունավոր օձը չի կարող բռնել նրա կրունկը, և նա պիտի վեր բարձրանա իր մտքերի ՝երևակայության մեջ, ասես արծվի թևերի վրա:

100 Եվ եթե ես կամենամ, որ նա բարձրացնի մեռելներին, թող նա ետ չպահի իր ձայնը:

101 Հետևաբար, թող իմ ծառա Վիլյամը բարձր աղաղակի և չխնայի, ուրախությամբ և ցմծությամբ և ովսանաներով նրան, ով նստած է գահին հավիտյան

հավիտենից, ասում է Տերը՝ ձեր Աստվածը:

102 Ահա, ես ասում եմ ձեզ. Ես առաքելություն ունեմ պահած իմ ծառա Վիլյամի և իմ ծառա Հայրումի համար, և միայն նրանց համար. և թող իմ ծառա Ջոզեֆը մնա տանը, քանզի նրա կարիքը կա: Մնացածը ես ձեզ ցույց կտամ ապագայում: Ծիշտ այդպես: Ամեն:

103 Եվ բացի այդ, ճշմարիտ ասում եմ ձեզ. Եթե իմ ծառա ՝Միդնին կամենա ծառայել ինձ և խորհրդական լինել իմ ծառա Ջոզեֆի համար, թող նա վեր կենա և գա ու կանգնի իր կոչման պաշտոնում, և իրեն խոնարհեցնի իմ առաջ:

104 Եվ եթե նա ինձ ընդունելի ընծա և խոստովանություններ մատուցի և մնա իմ ժողովրդի հետ, ահա, ես՝ Տերս՝ ձեր Աստվածը, կբժշկեմ նրան, այնպես որ նա կբժշկվի. և նա կրկին կբարձրացնի իր ձայնը սարերի վրա և ՝խոսնակ կլինի իմ երեսի առաջ:

105 Թող նա գա և իր ընտանիքը տեղավորի հարևանությամբ, որտեղ բնակվում է իմ ծառա Ջոզեֆը:

106 Եվ բոլոր իր ճամփորդություններում թող նա բարձրացնի իր ձայնը, ինչպես փողի ձայնով, և զգուշացնի երկրի բնակիչներին՝ փախչել գալիք ցասումից:

107 Թող նա օգնի իմ ծառա Ջոզեֆին, և նաև, թող իմ ծառա Վիլյամ Լոն օգնի իմ ծառա Ջոզեֆին՝ աշխարհի թագավորների համար մի հանդիսավոր ՝հռչա-

95բ սուր Բաուդերի Օլիվեր:
97ա սուր Խոնարհ,
Խոնարհություն:
բ սուր Նենգություն:
գ սուր Միսիթարիչ:
98ա Մար. ԺԷ.17-18:

սուր Հոգու պարզները:
բ սուր Բժշկել,
Բժշկումներ:
99ա ՎևոՒ 84.71-73:
բ Ել. ԺԹ.4,
Ես. Խ.31:

103ա սուր Ռիզոն Սիդնի:
104ա Ել. Գ.14-16,
2 Նեփի 3.17-18,
ՎևոՒ 100.9-11:
107ա ՎևոՒ 124.2-4:

կազիր պատրաստելիս, ճիշտ ինչպես ես նախկինում ասել եմ ձեզ:

108 Եթե իմ ծառա Սիդնին կամենում է իմ կամքը կատարել, թող նա իր ընտանիքը չտանի՝ արևելյան հողերը, այլ թող նա փոխի նրանց բնակավայրը, ճիշտ ինչպես ես ասացի:

109 Ահա, դա իմ կամքը չէ, որ նա պիտի ապահովություն և ապաստան փնտրի այն քաղաքից դուրս, որը ես նշանակել եմ ձեզ համար, այսինքն՝ Նավու քաղաքը:

110 Ճշմարիտ ասում եմ ձեզ. Նույնիսկ հիմա, եթե նա ուշք դարձնի իմ ձայնին, նրա համար լավ կլինի: Դիշտ այդպես: Ամեն:

111 Եվ բացի այդ, ճշմարիտ ասում եմ ձեզ. Թող իմ ծառա Անու Դեյվիեսն առձեռն բաժնեվճար տա նրանց, ում ես նշանակել եմ, որ տուն կառուցեն իջևանելու համար, այսինքն՝ Նավուի Տունը:

112 Դա թող նա անի, եթե կամենում է լինել փայատեր. և թող նա ուշք դարձնի իմ ծառա Ջոզեֆի խորհրդին և աշխատի իր իսկ ձեռքերով, որպեսզի վայելի մարդկանց վստահությունը:

113 Եվ երբ նա ապացուցի իր հավատարմությունը բոլոր բաներում, որոնք վստահված կլինեն իր խնամքին, այո՛, այսինքն՝ քիչ բաների վրա, նա՝ ապավարիչ կդարձվի շատ բաների վրա.

114 Թող ուրեմն նա՝ խոնարհեցնի իրեն, որպեսզի բարձրացվի: Դիշտ այդպես: Ամեն:

115 Եվ բացի այդ, ճշմարիտ ասում եմ ձեզ. Եթե իմ ծառա Ռոբերտ Դ. Ֆոսթերը կամենում է

հնազանդվել իմ ձայնին, թող նա տուն կառուցի իմ ծառա Ջոզեֆի համար, այն պայմանագրի համաձայն, որը նա կապել է նրա հետ, որքան որ դուռ կբացվի նրա համար ժամանակ առ ժամանակ:

116 Եվ թող նա ապաշխարի իր բոլոր անմտություններից և հազնի՝ գթության հագուստը. և դադարի չարիք գործել, և մի կողմ դնի իր բոլոր խիստ խոսքերը.

117 Եվ նաև բաժնեվճար տա Նավուի Տան քվորումի ձեռքը՝ իր համար և իր գալիք սերնդի համար՝ սերնդե-սերունդ:

118 Եվ ականջ դնի իմ ծառաներ Ջոզեֆի և Հայրումի և Վիլյամ Լոյի խորհրդին, և մյուս իշխանավորներին, որոնց ես կանչել եմ Սիոնի հիմքը դնելու. և նրա համար լավ կլինի հավիտյանս հավիտենից: Դիշտ այդպես: Ամեն:

119 Եվ բացի այդ, ճշմարիտ ասում եմ ձեզ. Թող ոչ ոք բաժնեվճար չտա Նավուի Տան քվորումին, եթե չի հավատում Մորմոնի Գրքին և այն հայտնություններին, որոնք ես տվել եմ ձեզ, ասում է Տերը՝ ձեր Աստվածը.

120 Քանզի այն, ինչ սրանից՝ ավելին է կամ պակաս, գալիս է չարից և պիտի ուղեկցվի անեծքներով և ոչ թե օրհնություններով, ասում է Տերը՝ ձեր Աստվածը: Դիշտ այդպես: Ամեն:

121 Եվ բացի այդ, ճշմարիտ ասում եմ ձեզ. Թող Նավուի Տան քվորումն աշխատավարձով արդար փոխհատուցի բոլոր այն աշխատանքների դիմաց, որ նրանք կկատարեն Նավուի Տունը կա-

108ա Վև.ՈՒ 124.82–83:
109ա սուր Նավու, Իլինոյս (ԱՄՆ):
113ա Մատ. ԻԵ.14–30:

114ա Մատ. ԻԳ.12,
Վև.ՈՒ 101.42:
116ա Կող. Գ.14:
սուր Գթություն:

120ա Մատ. Ե.37,
Վև.ՈՒ 98.7:

ռուցելիս. և թող նրանց աշխատավարձը, ինչ վերաբերում է գումարին, լինի այնպես, ինչպես նրանք փոխադարձ կապայմանավորվեն:

122 Եվ թող ամեն մարդ, ով բաժնեվճար է տալիս, հատկացնի աշխատավարձի իր մասը, եթե անհրաժեշտ լինի, նրանց աջակցելու համար, ասում է Տերը. այլապես նրանց աշխատանքը կհամարվի որպես բաժնեվճար այդ տան մեջ: Ծիշտ այդպես: Ամեն:

123 Ծշմարիտ ասում են ձեզ. Այժմ ես ձեզ տալիս եմ՝ պաշտոնյաներ, որոնք պատկանում են իմ Քահանայությանը, որ դուք կարողանաք կրել դրա՝ բանալիները, այսինքն՝ այն Քահանայության, որն ըստ Պետրոսի կարգի է, որն ըստ իմ Միածին Որդու կարգի է:

124 Առաջինը՝ ես ձեզ տալիս եմ Հայրում Սմիթին, որ հայրապետ լինի ձեզ համար, որ կրի իմ եկեղեցու՝ Բնիկների օրհնությունները, այսինքն՝ Պատուհանի Սուրբ Հոգու, որով դուք՝ Բնիկներ եք փրկագնման օրվա համար, որ դուք վայր չընկնեք, չնայած գաթակործան ժամին, որը հնարավոր է գա ձեր վրա:

125 Ես ձեզ տալիս եմ իմ ծառա Ջոզեֆին, որ նախագահող երեց լինի իմ ողջ եկեղեցու վրա, որ լինի թարգմանիչ, հայտնող, տեսանող և մարգարե:

126 Ես նրան տալիս եմ իմ ծառա

Սիդնի Ռիզոլոնին և իմ ծառա Վիլյամ Լոյին՝ որպես խորհրդականներ, որպեսզի նրանք կազմեն քվորում և Առաջին Նախագահություն, որ պատգամներ ստանան ողջ Եկեղեցու համար:

127 Ես ձեզ տալիս եմ իմ ծառա Քրիզամ Յանգին, որ նախագահ լինի Տասներկուսի ճանփորդող խորհրդի վրա.

128 Տասներկուսի, որը կրում է իմ արքայության իշխանությունն աշխարհի չորս անկյուններում բացելու, և, դրանից հետո, իմ խոսքն ամեն արարածի՝ Պողոսյեցու բանալիները:

129 Նրանք են՝ Հեբեր Չ. Քիմբալը, Փարլի Պ. Պրատը, Օրսոն Պրատը, Օրսոն Հայդը, Վիլյամ Սմիթը, Ջոն Թեյլորը, Ջոն Ի. Փեյջը, Վիլֆոթը Վուդրուֆը, Վիլլարդ Ռիչարդսը, Ջորջ Ա. Սմիթը.

130 Պեյվիդ Փաթենին ես վերցրել եմ ինձ մոտ. ահա, նրա քահանայությունը ոչ որ չի վերցնի նրանից. բայց, ճշմարիտ ասում եմ ձեզ, մեկ ուրիշը կարող է նշանակվել այդ նույն կոչմանը:

131 Եվ բացի այդ, ես ասում եմ ձեզ. Ես տալիս եմ ձեզ՝ բարձրագույն խորհուրդ, որպես Սիոնի անկյունաքար,–

132 Անվանապես՝ Սեմյուել Բենթ, Հենրի Ջ. Շերվուդ, Ջորջ Վ. Հարրիս, Չարլզ Ք. Ռիչ, Թոմաս Գրովեր, Նյուել Նայթ, Դեյվիդ

123ա սուր Պաշտոն, Պաշտոնյա:
բ սուր Քահանայության բանալիները:
գ սուր Սեյքսեղեկյան քահանայություն:
124ա սուր Հայրապետ, Հայրապետական:
բ սուր Կնիք, Կնքում:

գ Վևոթ 76.53, 88.3–4:
սուր Խոստումի Սուրբ Հոգի:
դ Եփես. Գ.30:
ե Հայտ. Գ.10:
125ա Վևոթ 21.1:
սուր Տեսանող:
126ա Վևոթ 90.4–5:
127ա սուր Յանգ Բրիզամ:

128ա սուր Առաքյալ:
բ Մար. ԺԶ.15:
130ա սուր Փաթեն Դեյվիդ Վ.
բ Վևոթ 124.19:
131ա սուր Բարձրագույն խորհուրդ:

Դորք, Դունբար Վիլսոն,– Սինուր Բրունսոնին ես վերցրել եմ ինձ մոտ. ոչ ոք չի վերցնելու նրա քահանայությունը, բայց նրա փոխարեն մեկ ուրիշը կարող է նշանակվել նույն քահանայությանը. և ճշմարիտ ասում եմ ձեզ, թող իմ ծառա Ահարոն Ջոնսոնը կարգվի այս կոչմանը նրա փոխարեն,– Դեյվիդ Ֆուլմեր, Ալֆեոս Քատլեր, Վիլյամ Հանքինգտոն:

133 Եվ բացի այդ, ես ձեզ համար նշանակում եմ Դոն Կ. Սմիթին, որ նախագահ լինի քահանայապետների քվորումի վրա.

134 Արարողություն, որը հաստատվել է, որպեսզի որակավորի նրանց, ովքեր մնայուն նախագահներ կամ ծառայողներ կնշանակվեն ամենուրեք սփռված տարբեր ցյցերի վրա.

135 Եվ նրանք ևս կարող են ճամփորդել, եթե կնախընտրեն, բայց ավելի լավ է, որ կարգվեն որպես տեղի նախագահներ. սա է նրանց կոչման պաշտոնը, ասում է Տերը՝ ձեր Աստվածը:

136 Ես նրան տալիս եմ Ամասա Լայմանին և Նոյ Պակարդին՝ որպես խորհրդականներ, որպեսզի նրանք նախագահեն իմ եկեղեցու քահանայապետների քվորումի վրա, ասում է Տերը:

137 Բացի այդ, ես ասում եմ ձեզ. Ես ձեզ տալիս եմ Ջոն Ա. Հիքսին, Սեմյուել Վիլյամսին և Ջեսսի Բեքերին, որոնց քահանայությունն է՝ նախագահել Խերեցների քվորումի վրա, քվորում, որը հաստատվել է տեղի սպասավորների համար. չնայած նրանք կարող

են ճամփորդել, այնուամենայնիվ, նրանք կարգված են, որ տեղի սպասավորներ լինեն իմ եկեղեցու համար, ասում է Տերը:

138 Եվ բացի այդ, ես ձեզ տալիս եմ Ջոզեֆ Յանգին, Ջոսիա Բաքեր-Ֆիլդին, Դանիել Մայլսին, Հենրի Հերիմանին, Ջերա Փալսիֆերին, Լիվայ Հենկոկին, Ջեյմս Ֆոսթերին, որ նախագահեն Կոթանասունականների քվորումի վրա.

139 Քվորում, որը հաստատվել է ճամփորդող երեցների համար՝ ողջ աշխարհում իմ անվան մասին վկայելու համար, ուր որ ճամփորդող բարձրագույն խորհուրդը՝ իմ առաքյալները, նրանց կողարկեն, որ ճանապարհ պատրաստեն իմ երեսի առաջ:

140 Այս քվորումի տարբերությունը երեցների քվորումից հետևյալն է՝ մեկը շարունակ պիտի ճամփորդի, իսկ մյուսը, ժամանակ առ ժամանակ, պիտի նախագահի եկեղեցիների վրա. մեկը, ժամանակ առ ժամանակ, նախագահելու պատասխանատվություն ունի, իսկ մյուսը նախագահելու պատասխանատվություն չունի, ասում է Տերը՝ ձեր Աստվածը:

141 Եվ բացի այդ, ես ասում եմ ձեզ. Ես ձեզ տալիս եմ Վինսոն Նայթին, Սեմյուել Հ. Սմիթին և Սեդրակ Ռանոլդիին, եթե նա ընդունի, որպեսզի նախագահեն Խեյսկոպոսության վրա. նշված եպիսկոպոսության մասին ձեզ գիտելիք է տրված Քվարդապետություն և Ուխտեր գրքում:

142 Եվ բացի այդ, ես ասում եմ ձեզ. Ես ձեզ տալիս եմ Սեմյուել

134ա սուր Ցից:
137ա ՎևՈՒ 107.11–12,
89–90:
սուր Երեց,

Քահանայություն:
138ա սուր Յոթանասունական:
կան:
141ա ՎևՈՒ 68.14, 107.15:

բ սուր Վարդապետություն և Ուխտեր:

Ռուֆին և նրա խորհրդականներին, քահանաների համար, և ուսուցիչների նախագահին ու նրա խորհրդականներին, և նաև սարկավագների նախագահին ու նրա խորհրդականներին, և նաև ցցի նախագահին ու նրա խորհրդականներին:

143 Վերոհիշյալ պաշտոնները և դրանց բանալիները ես ձեզ տվել եմ՝ օգնության և կառավարման համար, ծառայության գործի և իմ սրբերի՝ Սկատարելության համար:

144 Եվ ես տալիս եմ ձեզ պատվիրան, որ դուք զբաղեցնեք այս բոլոր պաշտոնները և ՝հավանություն ստանաք այդ անունների համար, որոնք ես նշեցի, կամ հավանություն չստանաք նրանց համար իմ գերագույն համաժողովում:

145 Եվ որ սենյակներ պատրաստեք իմ տանը, բոլոր այդ պաշտոնների համար, երբ որ կառուցեք այն իմ անվան համար, ասում է Տերը՝ ձեր Աստվածը: Ընշտ այդպես: Ամեն:

ԲԱԺԻՆ 125

Հայտնություն տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեի միջոցով, Նավուում, Իլինոյս, 1841թ. մարտին, Այովայի տարածքում գտնվող Սրբերի վերաբերյալ (History of the Church, 4.311–312):

1–4 Սրբերը պետք է քաղաքներ կառուցեն և հավաքվեն Սիոնի ցգերում:

Ո՞րք է Տիրոջ կամքը՝ Այովայի Տարածքում գտնվող սրբերի վերաբերյալ:

2 Ծննդաբիտ, այսպես է ասում Տերը. Ես ասում եմ ձեզ, եթե նրանք, ովքեր իրենց Սկոչում են իմ անունով և ջանում են լինել իմ սրբերը, եթե նրանք կամենում են իմ կամքը կատարել և պահել իմ պատվիրաններն իրենց վերաբերյալ, թող միասին հավաքվեն այն վայրերում, որ ես կնշանակեմ նրանց համար իմ ծառա Ջոզեֆի միջոցով, և քաղաքներ կառուցեն իմ անվան համար, որպեսզի

նրանք պատրաստ լինեն այն բանին, ինչը պահված է գալիք ժամանակների համար:

3 Թող նրանք մի քաղաք կառուցեն իմ անվան համար, Նավու քաղաքի դիմաց գտնվող հողի վրա, և թող ՍՊարահենլա անունով կոչվի այն:

4 Եվ թող բոլոր նրանք, ովքեր գալիս են արևելքից, և արևմուտքից, և հյուսիսից, և հարավից, ովքեր ցանկություն ունեն բնակվել այնտեղ, վերցնեն իրենց ժառանգությունն այդ վայրում, ինչպես նաև ՍՆեշվիլ քաղաքում կամ Նավու քաղաքում, և բոլոր Գցերում, որոնք ես նշանակել եմ, ասում է Տերը:

143ա Եփես. Գ.11–14:
144ա Վև.ՈՒ 26.2:
սու Ընդհանուր
համաձայնություն:
125 2ա սու Հիսուս

Քրիստոս – Հիսուս
Քրիստոսի անունը
մեզ վրա վերցնելը:
3ա սու Չարահենլա:
4ա նշ. Այովա նահանգի

Լի Գավառի Նեշվիլ
քաղաքը:
p սու Ցից:

ԲԱԺԻՆ 126

Հայտնություն՝ տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեի միջոցով, Բրիգամ Յանգի տանը, Նափոում, Իլինոյս, 1841թ. հուլիսի 9-ին (History of the Church, 4.382): Այդ ժամանակ Բրիգամ Յանգը Տասներկու Առաքյալների Զվորամի Նախագահն էր:

1–3՝ Բրիգամ Յանգը գովարանվում է իր գործերի համար և ազատվում է հետագա հեռավոր ճամփորդություններից:

ԹԱՆԿԱԳԻՆ և շատ սիրելի՛ եղբայր ՝ Բրիգամ Յանգ, ճշմարիտ այսպես է ասում Տերը քեզ. Իմ ծառա՛ Բրիգամ, քեզանից այլևս չի պահանջվում թողնել քո ընտանիքը, ինչպես նախկինում,

քանզի քո ընծան ընդունելի է ինձ համար:

2 Ես տեսել եմ ճամփորդությունների ժամանակ քո ՝ գործերն ու տքմանքն իմ անվան համար:

3 Հետևաբար, ես պատվիրում եմ քեզ՝ ուղարկել իմ խոսքը դուրս և առանձնակի հոգալ ՝ ընտանիքիդ համար այս ժամանակից ի վեր՝ այսուհետև և հավիտյան: Ամեն:

ԲԱԺԻՆ 127

Ջոզեֆ Սմիթ Մարգարեի նամակն Իլինոյսի Նափոում գտնվող Վերջին Օրերի Սրբերին, որը ցուցումներ է պարունակում մահացածների համար մկրտությունների վերաբերյալ և գրանցված է Նափոում, 1842թ. սեպտեմբերի 1-ին (History of the Church, 5.142–144):

1–4՝ Ջոզեֆ Սմիթը հալածանքի և նեղության մեջ փառք է տալիս. 5–12՝ Գրանցումներ պետք է պահպանվեն մահացածների համար մկրտությունների վերաբերյալ:

ՔԱՆԻ որ Տերը հայտնել է ինձ, որ իմ թշնամիները, թե՛ Միսուրիում և թե՛ այս նահանգում, կրկին հետապնդում են ինձ. և քանի որ նրանք ինձ հետապնդում են առանց ՝ պատճառի, և արդարադատության ու իրավունքի նվազագույն նշույլ ու նշան չունեն, որ իրենց կողմից մեղադրանքներ բարձրացնեն իմ դեմ. և քանի որ նրանց բոլոր պահանջները

իր հիմնված են կեղծիքի ամենասևերանգի վրա, ես նպատակահարմար և իմաստուն համարեցի թողնել այս վայրը միառժամանակ՝ իմ ապահովության և այս ժողովրդի ապահովության համար: Կցանկանայի ասել բոլորին, ում հետ գործունեություն եմ ծավալում, որ իմ գործերը հանձնել եմ գործակալներին և գործավարներին, որոնք արագ և պատշաճ ձևով կվարեն բոլոր գործերն ու կհետևեն, որ իմ բոլոր պարտքերը ժամանակին մարված լինեն, վերադարձնելով ունեցվածքով կամ այլ ձևով, ինչպես հանգամանքները կպահանջեն, կամ ինչպես

126 1ա սուր Յանգ Բրիգամ: 2ա սուր Գործեր: 3ա սուր Ընտանիք: 127 1ա Հոբ Բ.3, Մատ. Ե.10–12, Ա Պես. Բ.20–23:

պայմանները թույլ կտան: Երբ ես տեղեկանամ, որ փոթորիկը հանդարտվել է, այն ժամանակ կրկին կվերադառնամ ձեզ մոտ:

2 Ինչ վերաբերում է ^ավտանգներին, որոնց միջով ես կանչված եմ անցնելու, դրանք ինձ չնչին բան են թվում, քանզի մարդկանց ^բնախանձն ու ցատումն իմ ամենօրյա բաժինն են եղել կյանքիս բոլոր օրերում. իսկ թե ինչ պատճառով, մնում է անբացատրելի, եթե ոչ այն, որ ես աշխարհի հիմնադրումից առաջ ^գկարգված եմ եղել ինչ-որ լավ նպատակի համար, կամ վատ, ինչպես դուք կնախընտրեք անվանել: Դատեք ինքներդ: Աստված գիտի այդ ամենը՝ արդյոք լավ է, թե վատ: Բայց, այնուամենայնիվ, խորը ջրերում լողալն ինձ համար սովորական է դարձել: Այդ ամենը դարձել է իմ երկրորդ էությունը. և ես ցանկանում եմ, ինչպես Պողոսը, ^դնեղության մեջ փառք տալ. քանզի մինչև այս օրն իմ հայրերի Աստվածն ինձ այդ ամենից ազատել է և կազատի նաև սրանից հետո. քանզի ահա, և տե՛ս, ես կհաղթեմ իմ բոլոր թշնամիներին, քանզի Տեր Աստվածն է ասել դա:

3 Հետևաբար, թող բոլոր սրբերը ցնձան և անչափ ուրախանան. քանզի Իսրայելի ^եԱստվածն է իրենց Աստվածը, և նա վարձքի արդար հատուցում կրերի բոլոր իրենց ճնշողների գլխին.

4 Եվ բացի այդ, ճշմարիտ այսպես է ասում Տերը. Թող իմ ^զտաճարի աշխատանքը, և բոլոր գործերը, որոնք ես նշանակել եմ ձեզ, շարունակվեն և չդադարեն. և թող ձեր ^էջանասիրությունը, և ձեր հետևողականությունը, և համբերությունը, և ձեր աշխատանքները կրկնապատկվեն, և դուք ոչ մի դեպքում չեք կորցնի ձեր վարձքը, ասում է Չորաց Տերը: Եվ եթե նրանք ^զհալածում են ձեզ, ձեզանից առաջ այդպես հալածում էին մարգարեներին ու արդարակյաց մարդկանց: Այդ բոլորի համար վարձք կա երկնքում:

5 Եվ բացի այդ, ես ձեզ եմ տալիս խոսքը ձեր ^ամահացածների ^բմկրտության վերաբերյալ:

6 Ճշմարիտ, այսպես է ասում Տերը ձեզ ձեր մահացածների վերաբերյալ. Երբ որ ձեզանից մեկը ^գմկրտվում է ձեր մահացածների համար, թող մի ^դարձանագրող ներկա լինի, և թող նա ձեր մկրտությունների ականատեսը լինի. թող նա իր ականջով լսի, որ կարողանա վկայել ճշմարտության մասին, ասում է Տերը.

7 Որպեսզի բոլոր ձեր արձանագրությունները ^էզրանցվեն երկնքում. ինչ-որ դուք ^զկապեք երկրի վրա, կապված լինի երկնքում. ինչ-որ արձակեք երկրի վրա, արձակված լինի երկնքում.

8 Քանզի ես պատրաստվում եմ շատ բաներ ^ավերականգնել երկրի

2ա Սաղ. ԻԳ.1-6:
սուր Հալածել,
Հալածանք:
բ սուր Նախանձել:
գ սուր Նախակարգում:
դ Բ Կոր. 2.4-5:
3ա 3 Նեփիի 11.12-14:
սուր Զախորդություն:
4ա ՎևոՒ 124.55:

բ սուր Զանասիրություն:
գ սուր Հալածել,
Հալածանք:
5ա սուր Փրկություն
մահացածների
համար:
բ սուր Մկրտություն,
Մկրտել –
Մկրտություն

մահացածների
համար:
6ա Ա Կոր. ԺԵ.29,
ՎևոՒ 128.13, 18:
բ ՎևոՒ 128.2-4, 7:
7ա սուր Կյանքի գիրք:
բ սուր Կնիք, Կնքում:
8ա սուր Ավետարանի
վերականգնումը:

վրա, որոնք կապված են քահանայության հետ, ասում է Ջորաջ Տերը:

9 Եվ բացի այդ, թող բոլոր «գրանցումները կարգի բերվեն, որպեսզի դրվեն իմ սուրբ տաճարի հնադարաններում, որպեսզի պահվեն հիշողության մեջ սերնդեսերունդ, ասում է Ջորաջ Տերը:

10 Կամենում եմ ասել բոլոր սրբերին, որ անչափ մեծ փափագով փափագում էի գալիք Հանգստության օրը բեմից դիմել նրանց՝ մահացանների համար մկրտության նյութի վերաբերյալ: Բայց քանի որ իմ զորությունից վեր է այդպես վարվելը, ես, ժամանակ

առ ժամանակ, կգրեմ Տիրոջ խոսքն այդ նյութի վերաբերյալ, ինչպես և շատ այլ հարցերի վերաբերյալ, և կուղարկեմ ձեզ փոստով:

11 Արդ, ես առայժմ ավարտում եմ նամակս՝ ժամանակի սղության պատճառով. քանզի թշնամին արթուն է, և ինչպես Փրկիչն ասաց. Գալիս է այս աշխարհի «իշխանը, բայց նա ինձանում ոչինչ չունի:

12 Ահա, իմ աղոթքն է առ Աստված, որ դուք բոլորդ փրկվեք: Եվ ես ստորագրում եմ՝ որպես Տիրոջ ձեր ծառա՝ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու մարգարե և «տեսանող:

ՋՈՋԵՖ ՍՄԻԹ:

ԲԱԺԻՆ 128

Ջոզեֆ Սմիթ Մարգարեի նամակը Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցուն, որը լրացուցիչ ցուցումներ է պարունակում մահացածների համար մկրտությունների վերաբերյալ, գրանցված Նավոում, Իլինոյս, 1842թ. սեպտեմբերի 6-ին (History of the Church, 5.148–153):

1–5 Տեղական և ընդհանուր արձանագրողները պետք է վավերացնեն մահացածների համար մկրտությունների փաստը. 6–9՝ Նրանց գրանցումները կապող են և գրանցվում են երկրի վրա և երկնքում. 10–14՝ Մկրտության ավագանը գերեզմանի նմանությունն է. 15–17՝ Եղիան վերականգնեց մահացանների համար մկրտության հետ կապված գորտությունը. 18–21՝ Անցյալի տնտեսությունների բոլոր բանալիները, գորտություններն ու իշխանությունները վերականգնվել են. 22–25՝ Ուրախսալի և փառավոր ավետիք է

ազդարարվում ապրողների և մահացածների համար:

ԻՆՉՊԵՍ հաղորդեցի ձեզ իմ նամակում, նախքան իմ բնակավայրից հեռանալը, որ ես ժամանակ առ ժամանակ կգրեմ ձեզ և տեղեկություն կհայտնեմ շատ հարցերի վերաբերյալ, այժմ ես վերադառնում եմ մահացածների համար «մկրտությունների հարցին, քանի որ այդ հարցը կարծես զբաղեցրել է միտքս և շատ ուժեղ ներգործում է իմ զգացումների վրա, այն ժամանակից

8թ սոՒ Մելքիսեդեկյան քահանայություն:
9ա ՎևոՒ 128.24:
11ա Հովհ. ԺԴ.30,

ՋՍԹ, Հովհ. 14.30:
սոՒ Դև:
12ա ՎևոՒ 124.125:
սոՒ Տեսանող:

128 1ա սոՒ Մկրտություն, Մկրտել – Մկրտություն մահացածների համար:

ի վեր, ինչ ինձ հետապնդում են իմ թշնամիները:

2 Ես հայտնության մի քանի խոսք գրեցի ձեզ արձանագրողի վերաբերյալ: Ես որոշ լրացուցիչ մտքեր եմ ունեցել այդ հարցի վերաբերյալ, որն այժմ վավերացնում եմ: Այսպես, իմ նախորդ անակում հաղորդվել էր, որ պետք է լինի մի ^աարձանագրող, որը պետք է ականատես լինի, և նաև իր ականջով լսի, որ կարողանա ճշմարիտ արձանագրություն կատարել Տիրոջ առաջ:

3 Արդ, այս հարցի առնչությամբ, մեկ արձանագրողի համար շատ դժվար կլինի ամեն անգամ ներկա լինել և կատարել բոլոր գործերը: Այդ դժվարությունից խուսափելու համար, կարելի է մի արձանագրող նշանակել քաղաքի ամեն մի ծխում, որը լավ որակավորված է ճշգրիտ արձանագրություններ կատարելու համար. և թող նա շատ մանրակրկիտ ու հստակ լինի ողջ գործընթացը գրանցելիս, իր արձանագրության մեջ վավերացնելով, որ նա տեսել է իր աչքով և լսել է իր ականջով, գրանցելով օրը, ամուսնները և այլն, և ամբողջ գործառության պատմությունը. նաև անվանելով երեք անհատների, որոնք ներկա են գտնվել, եթե եղել են ներկաներ, որոնք ցանկացած ժամանակ կանչվելու դեպքում կարող են հաստատել այդ մասին, որպեսզի երկու կամ երեք ^վվկաների բերանով ամեն խոսք հաստատվի:

4 Ապա, թող լինի գլխավոր մի արձանագրող, որին կհանձնվեն այս մյուս գրանցումները, որոնք կցված կլինեն իրենց ստորագրու-

թյամբ վկայականներով, վկայելով, որ իրենց կատարած գրանցումը ճշմարիտ է: Այնուհետև, եկեղեցու գլխավոր արձանագրողը կարող է մուտքագրել գրանցումը եկեղեցու ընդհանուր գրքի մեջ, վկայականներով և ներկա գտնված բոլոր վկաներով, իր սեփական հաղորդագրությամբ, որ ինքն իրոք հավատում է, որ վերոհիշյալ հաղորդագրությունն ու գրանցումները ճշմարիտ են, ելնելով այն բանից, որ գիտե այդ մարդկանց անձնական հատկանիշների և եկեղեցու կողմից նրանց նշանակման մասին: Եվ երբ դա գրանցված է եկեղեցու ընդհանուր գրքում, այդ գրանցումը կլինի ճիշտ նույնքան սուրբ, և կհամապատասխանի արարողությանը, ճիշտ այնպես, ինչպես որ նա տեսած լիներ իր աչքով և լսած լիներ իր ականջով, և կատարած լիներ այդ գրանցումը եկեղեցու ընդհանուր գրքում:

5 Հնարավոր է մտածեք, թե այս բաների կարգը շատ մանրամասն է. սակայն թույլ տվեք սասել, որ դա միայն Աստծո կամքը բավարարելու համար է, համաձայնեցնելով արարողությանը և նախապատրաստությանը, որը Տերը կարգել և նախապատրաստել է աշխարհի հիմնադրումից առաջ, մահացածների ^վփրկության համար, որոնք կմահանան՝ ^բգիտություն չունենալով ավետարանի մասին:

6 Եվ բացի այդ, ցանկանում եմ վերհիշեք, որ Հովհաննես Հայտնողը խորհրդածում էր մահացածների հետ կապված հենց այս հարցի շուրջ, երբ նա հայտարարեց, ինչպես գրված կգտնեք Հայտնություն

Ի.12-ում, – Եվ տեսա մեռելներին, փոքր և մեծ, կանգնած Աստծո առաջ. և գրքեր բացվեցին, և մի ուրիշ գիրք էլ բացվեց, որն է կյանքի գիրքը. և մեռելները դատվեցին այդ գրքերում գրվածներից՝ իրենց գործերի համեմատ:

7 Այս քաղվածքի մեջ դուք կհայտնաբերեք, որ գրքեր բացվեցին. և մի ուրիշ գիրք էլ բացվեց, որը կյանքի ^ագիրքն էր. բայց մեռելները դատվեցին այն գրքերում գրվածներից՝ իրենց գործերի համեմատ. հետևաբար, գրքերը, որոնց մասին խոսվում է, պետք է լինեն այն գրքերը, որոնք պարունակում էին նրանց գործերի հիշատակարանը, և վերաբերում են այն ^բգրանցումներին, որոնք կատարվում են երկրի վրա: Եվ գիրքը, որը կյանքի գիրքն է, այն հիշատակարանն է, որը պահվում է երկնքում. սկզբունքը ճշտորեն համապատասխան լինելով այն վարդապետությանը, որը պատվիրվել է ձեզ այն հայտնության մեջ, որը կար իմ նամակում, ինչը ես գրեցի ձեզ նախքան իմ բնակավայրից իմ հեռանալը, – որպեսզի բոլոր ձեր արձանագրությունները գրանցվեն երկնքում:

8 Արդ, այս արարողության եռօրյունը քահանայության ^ագործության մեջ է, Հիսուս Քրիստոսի հայտնությանմբ, որով թույլ է տրվում, որ ինչ որ ^բկապեք երկրի վրա, պիտի կապվի երկնքում. և ինչ որ արձակեք երկրի վրա, պիտի արձակվի երկնքում: Կամ, այլ խոսքով, նայելով թարգմա-

նությամն այլ տեսանկյունից, ինչ որ գրանցեք երկրի վրա, պիտի գրանցվի երկնքում, և ինչ որ չգրանցեք երկրի վրա, չի գրանցվի երկնքում. քանզի՝ ըստ գրքերում գրվածների ձեր մեռելները պիտի դատվեն՝ իրենց գործերի համեմատ, անկախ նրանից, թե իրենք անձամբ են մասնակցել ^գարարողությանը՝ սեփական անձով, թե իրենց գործակալների միջոցով, այն արարողության համաձայն, որն Աստված նախապատրաստել է նախքան աշխարհի հիմնադրումը՝ նրանց ^դփրկության համար՝ համաձայն այն գրանցումների, որ նրանք կատարել են իրենց մահացածների վերաբերյալ:

9 Ումանց կարող է շատ համարձակ վարդապետություն թվալ այն, ինչի մասին մենք խոսում ենք, – գործություն, որը գրանցում կամ կապում է երկրի վրա և կապում է երկնքում: Այնուամենայնիվ, աշխարհի բոլոր դարաշրջաններում, երբ էլ որ Տերը քահանայության ^ատնտեսությունը հանձնել է որևէ մարդու, իրական հայտնությանմբ, կամ մարդկանց որևէ խմբի, այդ գործությունը միշտ տրվել է: Ուստի, ինչ էլ որ այդ մարդիկ արել են ^բիշխանությամբ, Տիրոջ անունով, և արել են ճշտորեն և հավատարմորեն, և պատշաճ ու հավատարիմ գրանցում են կատարել դրա վերաբերյալ, այն օրենք է դարձել երկրի վրա և երկնքում, և չի կարող չեղյալ համարվել՝ ըստ մեծ ^գԵհովայի

<p>7ա Հայտ. Ի.12, Վև.ՈՒ 127.6-7: ստ՝ Կյանքի գիրք: բ Վև.ՈՒ 21.1: 8ա ստ՝ Չորրորդուն,</p>	<p>Քահանայություն: բ ստ՝ Կնիք, Կնքում: գ ստ՝ Արարողություններ: դ ստ՝ Փրկություն մահացածների</p>	<p>համար: 9ա ստ՝ Տնտեսություն: բ ստ՝ Իշխանություն: գ ստ՝ Եհովա:</p>
--	---	---

հրամանագրերի: Սա հավատարի՛մ խոսք է: Ո՞վ կարող է լսել:

10 Եվ բացի այդ, որպես օրինակ՝ Մատթեոս ԺԶ.18, 19. *Ես էլ ասում եմ քեզ, որ դու ես Պետրոս, և այդ վեմի վրա կկառուցեմ իմ եկեղեցին, և դժոխքի դռները չեն հաղթի նրան: Եվ ես կտամ քեզ երկնքի արքայության բանալիները, և այն, որ երկրի վրա կապես, կապված կլինի երկնքում. և այն, որ երկրի վրա արձակես, արձակված կլինի երկնքում:*

11 Արդ, ամբողջ գործի մեծ և գլխավոր գաղտնիքը, և մեր առաջ դրված ողջ մյուսի մեծագույն բարիքը, Սուրբ Բահանայության զորությունը ձեռք բերելու մեջ է: Նրա համար, ում տրված են այս «բանալիները, դժվար չէ գիտելիք ձեռք բերել այն փաստերի մասին, որոնք վերաբերում են մարդկանց զավակների ^բփրկությանը՝ ինչպես մահացաների համար, այնպես էլ ապրողների համար:

12 Սրանում է ^ափառքն ու ^բպատիվը, և ^գանմահությունն ու հավերժական կյանքը, – Ջրով մկրտության արարողությունը, ^դընկղմվելով նրա մեջ, մահվան նմանությանը համապատասխան, որպեսզի մի սկզբունքը համահունչ լինի մյուսին. ջրի մեջ ընկղմվելը և ջրից դուրս գալը նման է մեռելների հարությանն իրենց գերեզմաններից դուրս գալիս. ուստի, այս արարողությունը հաստատվել էր մահացածների համար մկրտության արարողության հետ կապ

ստեղծելու համար, որովհետև խորհրդանշում է մահացածներին:

13 Հետևաբար, ^ամկրտության ավազանը հաստատվել էր գերեզմանի ^բնմանությամբ և պատվիրվել էր, որ լինի այն տեղից ցածր, որտեղ սովորաբար հավաքվում են ապրողները, ցույց տալու համար կենդանի մարդկանց ու մահացածներին, և որ բոլոր բաներն ունենան իրենց նմանությունը, և որ նրանք համահունչ լինեն միմյանց, – այն ինչ երկրային է, համապատասխան լինելով նրան, ինչ երկնային է, ինչպես հայտարարել է Պողոսը՝ Ա Կորնթացիս ԺԵ.46, 47 և 48-ում.

14 *Միայն թե այն չէր առաջինը, ինչը հոգևոր է, այլ այն, ինչը բնական է, և հետո այն, ինչը հոգևոր է: Առաջին մարդը երկրից է երկրային. բայց երկրորդ մարդը Տերն է երկրնքից: Ինչպես երկրայինն է, այնպես էլ երկրայիններն են. և ինչպես երկնայինն է, այնպես էլ երկնայիններն են:* Եվ ինչպես որ գրանցումները երկրի վրա են, ձեր մահացածների վերաբերյալ, որոնք կատարվել են ճիշտ ձևով, այդպես էլ գրանցումները երկնքում են: Հետևաբար, դա ^ակնքող և կապող զորությունն է և բառի մեկ իմաստով՝ արքայության ^բբանալիները, որոնք գտնվում են ^գգիտության բանալու մեջ:

15 Եվ արդ, իմ շատ սիրելի՛ եղբայրներ և քույրեր, թույլ տվեք հավաստիացնել ձեզ, որ սրանք սկզբունքներ են, մահացածների և

11ա սուր Բահանայության բանալիները:
բ սուր Փրկություն:
12ա սուր Փառք:
բ սուր Պատվել:
գ սուր Անմահ,

Անմահություն:
դ սուր Մկրտություն,
Մկրտել – Ընկղմամբ
մկրտություն:
13ա Վ.և.ՈՒ 124.29:
բ սուր Խորհրդանշակա-

նություն:
14ա սուր Կնիք, Կնքում:
բ սուր Բահանայության
բանալիները:
գ ՋՍԹ, Գուկ. 11.53:

ապրողների հետ կապված, որոնք չի կարելի անուշադրության մատնել, ինչ վերաբերում է մեր փրկությանը: Քանզի նրանց ՝ փրկությունն անհրաժեշտ և էական է մեր փրկության համար, ինչպես Պողոսն է ասում հայրերի մասին, – որ առանց մեզ նրանք չեն կարող ^բկատարյալ դառնալ, – ոչ էլ մենք կարող ենք կատարյալ դառնալ առանց մեր մահացածների:

16 Եվ արդ, մահացածների համար մկրտության հետ կապված, ես կտամ ձեզ մեկ այլ քաղվածք Պողոսից՝ Ա Կորնթացիս ԺԵ.29. *Ապա եթե ոչ, ի՞նչ են անում մահացածների համար մկրտվողները, եթե մահացածներն ամենևին հայրություն չեն առնում: Էլ ինչո՞ւ են մահացածների համար մկրտվում:*

17 Եվ բացի այդ, այս քաղվածքի առնչությամբ ես ձեզ կտամ մեկ այլ վկայակոչում մարգարեներից մեկից, որն իր հայացքը սևեռել էր դեպի քահանայության ՝ վերականգնումը՝ փառքերի, որոնք պիտի հայտնի դարձվեին վերջին օրերին և, մի հատուկ ձևով, այս՝ ամենափառավոր թեմային, որը պատկանում է հավիտենական ավետարանին, որն է՝ մահացածների համար մկրտությունը. քանզի Մաղաքիան ասում է, վերջին գլխի 5-րդ և 6-րդ հատվածներում. *Ահա, ես կուղարկեմ ձեզ համար ^բԵդիա մարգարեին, Տիրոջ մեծ և սհեղ օրը գալուց առաջ. Եվ նա պիտի դարձնի հայրերի սրտերը դեպի զավակները, և զավակների*

սրտերը՝ դեպի իրենց հայրերը, չլինի թե ես զամ և երկիրը զարկեմ անեծքով:

18 Ես կարող էի տալ դրա ավելի ՝ պարզ թարգմանությունը, բայց ինչպիսին որ այն կա, բավական պարզ է իմ նպատակի համար: Այս դեպքում բավական է իմանալ, որ երկիրը կգարկվի անեծքով, եթե ինչ-որ ձևի մի կապակցող ^բօղակ չլինի հայրերի և զավակների միջև, ինչ-որ մի նյութի շուրջ, – և սհա, ո՞րն է այդ նյութը: Դա ^գմկրտությունն է մահացածների համար: Քանզի առանց նրանց, մենք չենք կարող կատարյալ դառնալ. ոչ էլ նրանք կարող են առանց մեզ կատարյալ դառնալ: Այդպես էլ ոչ նրանք, ոչ էլ մենք չենք կարող կատարյալ դառնալ առանց նրանց, ովքեր նույնպես մահացել են ավետարանի մեջ. քանզի անհրաժեշտ է, ժամանակների լրության ^դտնտեսության մուտք գործելիս, տնտեսություն, որն այժմ սկսում է մուտք գործել, որ լրիվ ու ամբողջական ու կատարյալ մի միացում լինի, և տնտեսությունների ու բանալիների ու գորությունների ու փառքերի փոխկապակցում տեղի ունենա, և հայտնի դարձվի Ադամի օրերից մինչև ներկա ժամանակը: Եվ ոչ միայն սա, այլ նաև այն բաները, որոնք երբեք հայտնի չեն դարձվել աշխարհի ^եհիմնադրումից ի վեր, այլ պահվել են իմաստուններից ու գիտուններից, պիտի հայտնի դարձվեն ^զմանուկներին ու կաթ-

15ա սուր Փրկություն մահացածների համար:
բ Եբր. ԺԱ.40:
սուր Կատարյալ:
17ա սուր Ավետարանի վերականգնումը:

բ 3 Նեփի 25.5–6,
ՎևՈՒ 2.1–3, 110.13–16:
սուր Եդիա:
18ա ՋՍ–Պ 1.36–39:
բ սուր Տոհմաբանություն,
Արարողություններ –
Փոխարինող

արարողություն:
գ ՎևՈՒ 124.28–30,
127.6–7:
դ սուր Տնտեսություն:
ե ՎևՈՒ 35.18:
զ Մատ. ԺԱ.25,
Ղուկ. Ժ.21, Ալմա 32.23:

նակերներին՝ ժամանակների լրու-
թյան այս տնտեսության ժամանակ:

19 Արդ, ի՞նչ ենք լսում այն ավե-
տարանից, որը մենք ստացել ենք:
Չայն ուրախության: Ողորմության
ձայն երկնքից. ^աճմարտության
ձայն երկրից. ավետիք մահացած-
ների համար. ուրախության ձայն
ողջերի և մահացածների համար.
մեծ ուրախության ^բավետիք: Ի՞նչ
զեղեցիկ են սարերի վրա ^գոտքերը
նրանց, որ բարիք են ավետում, որ
ասում են Սիոնին. Տե՛ս, քո Աստ-
վա՛ծն է թագավորում: Ինչպես
Կարմեղոսի ^դցողերը, այնպես էլ
Աստծո գիտելիքը պիտի իջնի
նրանց վրա:

20 Եվ բացի այդ, ի՞նչ ենք
մենք լսում: Ավետի՛ք ենք լսում
^աԿումորայից: Երկնային հրեշտակ
^բՄորոնիին, որը հայտարարում է
մարգարեների մարգարություն-
ների իրականացումը,– ^գգիրքը,
որը պիտի հայտնվի: Տիրոջ ձա՛յ-
նը ^դՖայեթի անապատում՝ Սենե-
քա գավառում, երեք վկաներին
հայտարարելիս, որ վկայություն
^եբերեն գրքի մասին: ^զՄիքայելի
ձայնը Սասքունեհանայի ափին,
երբ նա հայտնաբերեց դևին, որը
երևաց որպես Լույսի հրեշտակ:
^էՊետրոսի, Հակոբոսի և Հովհան-
նեսի ձայնն անապատում՝ Հար-
մոնիի, Սասքունեհանա գավառի և
Թուլսիլի՛ Բրում գավառի միջև՝

Սասքունեհանա գետի վրա, որոնք
հայտարարեցին, որ կրում են ար-
քայության և ժամանակների լրու-
թյան տնտեսության ^բբանալիները:

21 Եվ բացի այդ, Աստծո ձայնը՝
տարեց ^ահայր Ուիթմերի սենյա-
կում՝ Ֆայեթում՝ Սենեքա գավա-
ռում, և տարբեր ժամանակներում
ու զանազան վայրերում՝ Հիսուս
Քրիստոսի Վերջին Օրերի Սրբե-
րի այս Եկեղեցու բոլոր ճամփոր-
դությունների ու նեղությունների
ժամանակ: Եվ Միքայել հրեշտա-
կապետի ձայնը. ^բԳաբրիելի ձայ-
նը, և ^գՌաֆայելի, և տարբեր
^դհրեշտակների, Միքայելից, կամ
^եԱդամից ընդհուպ մինչև ներկա
ժամանակները, երբ բոլորը հայ-
տարարում էին իրենց ^զտնտեսու-
թյունը, իրենց իրավունքները,
իրենց բանալիները, իրենց պատի-
վը, իրենց վեհափառությունն ու
փառքը և իրենց քահանայության
գորությունը. տալով տող առ տող,
^էցուցում առ ցուցում, մի քիչ այս-
տեղ, մի քիչ այնտեղ. մխիթարելով
մեզ, հրապարակելով այն, ինչը
պիտի գա, ամրապնդելով մեր
^զհույսը:

22 Եղբայրնե՛ր, արդյոք չպե՞տք
է մենք շարունակենք այս մեծ
գործը: Գնացե՛ք առաջ և ոչ թե
ետ: Քաջություն, եղբայրնե՛ր. և
առա՛ջ, առաջ դեպի հաղթանակ:
Թող ձեր սրտերը ցնձան և մեծա-

19ա Սաղ. ՉԵ.10–11:
բ Ղուկ. Բ.10:
գ Ես. ԾԲ.7–10,
Մոսիա 15.13–18,
3 Նեփի 20.40:
դ Բ Օր. ԼԲ.2,
ՎևոՒ 121.45:
20ա ՋՍ–Պ 1.51–52:
սո՛ր Կումորա բլուր:
բ սո՛ր Մորոնի՛ Մորոնի
որդի:

գ Ես. ԻԹ.4, 11–14,
2 Նեփի 27.6–29:
սո՛ր Մորոնի Գիրքը:
դ սո՛ր Ֆայեթ,
Նյու Յորք (ԱՄՆ):
ե ՎևոՒ 171–3:
զ ՎևոՒ 27.11:
սո՛ր Ադամ:
է Բ Կոր. ԺԱ.14:
ը ՎևոՒ 27.12:
բ սո՛ր Քահանայության

բանալիները:
21ա նչ. Պիտեր Ուիթմեր
ավագը:
բ սո՛ր Գաբրիել:
գ սո՛ր Ռաֆայել:
դ սո՛ր Հրեշտակներ:
ե ՎևոՒ 107.53–56:
զ սո՛ր Տնտեսություն:
է Ես. ԻԸ.10:
ը սո՛ր Հույս:

պես ուրախանան: Թող երկիրը
 Խերզով բռնկվի: Թող մահացած-
 ները հավերժական գովքի օրի-
 ներգ ասեն ՔՆմանունել Թագա-
 վորին, որը, նախքան աշխարհի
 լինելը, կարգել է այն, ինչը մեզ
 հնարավորություն կտա զբանտից
 Կիրկազնելու նրանց. բանգի բան-
 տարկյալները պիտի ազատվեն:

23 Թող սարերն ուրախությու-
 նից գոչեն, և դո՛ւք, բոլո՛ր հովիտ-
 ներ, բարձր աղաղակեք. և դո՛ւք,
 բոլո՛ր ծովեր և ցամաքներ, պատ-
 մեք զարմանալիքները ձեր Հա-
 վերժական Թագավորի: Եվ դո՛ւք,
 գետե՛ր, վտակնե՛ր և առվակնե՛ր,
 հոսեք ուրախությամբ: Թող ան-
 տառներն ու դաշտի ծառերը գովք
 ասեն Տիրոջը. և դո՛ւք, կա՛րծր
 Քժայեր, լաց եղեք ուրախությու-
 նից: Եվ թող արևը, լուսինը, և
 զառավոտյան աստղերը միասին
 երգեն, և թող Աստծո բոլոր որդի-
 ները գոչեն ուրախությունից: Եվ
 թող հավերժական ստեղծագոր-
 ծությունները հրապարակեն նրա
 անունը հավիտյան հավիտենից:
 Եվ դարձյալ ես ասում եմ. Ի՛նչ
 փառավոր է երկնքից լավոր ձայնը,
 որը մեր ականջներում հոչակում
 է փառք և փրկություն և պատիվ և
 Դանմահություն և Կհավերժական

կյանք. թագավորություններ, իշ-
 խանություններ ու գորություններ:

24 Ահա, Տիրոջ մեծ Խօրը մտ
 է. և ո՞վ կկարողանա Քմալ նրա
 գալու օրը, և ո՞վ կկարողանա
 կանգնել, երբ նա երևա: Քանգի
 նա նման է զգտողի կրակին և թա-
 փիչի օճառին. և նա պիտի նստի,
 իբրև արծաթ զգտող և մաքրող, և
 պիտի մաքրագործի ԿԼԻԻ որ-
 դիներին և գտի նրանց ոսկու և
 արծաթի պես, որպեսզի նրանք
 արդարությամբ զընծա մատուցեն
 Տիրոջը. Եկեք, ուրեմն, որպես
 եկեղեցի և ժողովուրդ, և որպես
 Վերջին Օրերի Մրբեր, արդարու-
 քյամբ ընծա մատուցենք Տիրոջը.
 և եկեք նրա սուրբ տաճարում,
 երբ այն կառուցվի, ներկայաց-
 նենք մի գիրք, որը կպարունակի
 մեր մահացածների Էգրանցում-
 ները, որն արժանի կլինի ամեն
 ընդունելության:

25 Եղբայրներ, ես շատ բաներ
 ունեմ ձեզ ասելու այս նյութի վե-
 րաբերյալ. բայց հիմա առայժմ
 կավարտեմ և այս նյութի վերա-
 բերյալ կշարունակեմ մեկ ուրիշ
 անգամ: Ես, ինչպես միշտ, ձեր
 խոնարհ ծառան եմ և անխտոր
 ընկերը.

ՋՈՁԵՖ ՍՄԻԹ:

ԲԱԺԻՆ 129

Հրահանգներ՝ տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեի միջոցով, Նավուում, Իլի-
 նոյս, 1843թ. փետրվարի 9-ին, որոնք հայտնի են դարձնում երեք գլխավոր

<p>22ա Ես. ԽԹ. 13: բ Ես. Է. 14, Ալմա 5.50: սո՛ւ Էմմանուել: գ Ես. ԻԳ. 22, ՎԼՈՒ 76.72–74: դ սո՛ւ Փրկագնել, Փրկագնված, Փրկագնում: 23ա Ես. ԽԳ. 23: բ Դուկ. ԺԹ. 40:</p>	<p>գ Հոբ ԼԸ. 7: դ սո՛ւ Անմահ, Անմահություն: ե սո՛ւ Հավերժական կյանք: 24ա սո՛ւ Հիսուս Քրիստոսի երկրորդ գալուստը: բ Մաղ. Գ. 1–3: գ 3 Նեփի 24.2–3: սո՛ւ Երկիր – Երկրի</p>	<p>մաքրագործունը: դ Ջաք. ԺԳ. 9: ե Բ Օր. Ժ. 8, ՎԼՈՒ 13.1, 124.39: գ ՎԼՈՒ 84.31: սո՛ւ Ընծա: է ՎԼՈՒ 127.9: սո՛ւ Տոհմաբանություն:</p>
---	---	--

բանալիները, որոնց միջոցով կարելի է տարբերել սպասավորող հրեշտակների և հոգիների ճշմարիտ էությունը (History of the Church, 5.267):

1-3՝ Երկնքում կան և՛ հարություն առած, և՛ հոգեղեն մարմիններ. 4-9՝ Տրվում են բանալիները, որոնցով կարելի է տարբերել վարագույրի մյուս կողմից եկած սուրհանդակներին:

ՏԲԿՆՔՈՒՄ կան երկու տեսակի էակներ, առաջին՝ շնչաշատներ, որոնք Գարություն առած անձնավորություններ են, և ունեն մտք ու ուկորից մարմին, - 2 Օրինակ՝ Հիսուսն ասաց. *Շոշափեք ինձ և տեսեք, որովհետև ոգին մնա և ուկոր չունի, ինչպես ինձ եք տեսնում, որ ունեն:*

3 Երկրորդ՝ կատարյալ դարձված արդար մարդկանց՝ ոգիները, նրանք, ովքեր հարություն չեն առել, բայց ժառանգել են միևնույն փառքը:

4 Երբ որ սուրհանդակ է գալիս, ասելով որ նա պատգամ ունի Աստծուց, առաջարկիր նրան քո ձեռքը և խնդրիր նրան ձեռք սեղմել քեզ հետ:

5 Եթե նա հրեշտակ լինի, նա այդպես կվարվի, և դու կզգաս նրա ձեռքը:

6 Եթե նա կատարյալ դարձված արդար մարդու ոգի լինի, նա կզա իր փառքի մեջ. քանի որ դա միակ ձևն է, որով նա կարող է երևալ,-

7 Խնդրիր նրան ձեռք սեղմել քեզ հետ, բայց նա չի շարժվի, որովհետև երկնային կարգին դեմ է, որ արդար մարդը խաբի. այնուամենայնիվ, նա կհաղորդի իր պատգամը:

8 Եթե դա արդար լինի՝ որպես լուսի հրեշտակ, երբ որ դու խնդրես նրան ձեռք սեղմել, նա կառաջարկի իր ձեռքը, բայց դու չես զգա ոչինչ. այդպիսով դու կհայտնաբերես նրան:

9 Սրանք են երեք գլխավոր բանալիները, որով կարող եք իմանալ, թե արդյոք սպասավորությունն Աստծուց է:

ԲԱԺԻՆ 130

Հատվածներ հրահանգներից՝ տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարտի կողմից, Ռեյնոուսում, Իլլինոյս, 1843թ. ապրիլի 2-ին (History of the Church, 5.323-325):

1-3՝ Հայրը և Որդին կարող են անձնապես հայտնվել մարդուն. 4-7՝ Հրեշտակները բնակվում են սելեստիալ ոլորտում. 8-9՝ Սելեստիալ երկիրը կլինի մի մեծ Ուրիմ ու Թումիմ. 10-11՝ Սպիտակ մի քար է տրվում բոլորին, ովքեր ստանում

են սելեստիալ աշխարհ. 12-17՝ Երկրորդ Գալստի ժամը բացված է Մարգարտներից. 18-19՝ Այս կյանքում ձեռք բերած բանականությունը Հարության ժամանակ բարձրանում է մեզ հետ. 20-21՝ Բոլոր օրհնությունները գալիս են օրենքին

129 1ա սու՝ Երկինք:
բ սու՝ Հրեշտակներ:
գ սու՝ Հարություն:

2ա Ղուկ. ԻԳ.39:
3ա Եբր. ԺԲ.23,
ՎևոՒ 76.69:

բ սու՝ Ոգի:
8ա Բ Կոր. ԺԱ.14,
2 Կեփի 9.9:

հնազանդվելուց. 22–23՝ Հայրը և Որդին մարմին ունեն մտից և ոսկորից:

ԵՐԲ Փրկիչը ՝ հայտնվի, մենք կտեսնենք նրան, ինչպիսին որ կա: Մենք կտեսնենք, որ նա մեզ նման ՝ մարդ է:

2 Եվ միևնույն հարաբերությունները, որոնք այստեղ գոյություն ունեն մեր մեջ, այնտեղ ևս գոյություն կունենան մեր մեջ, միայն թե դրանք կգուզակցվեն ՝ հավերժական փառքով, փառք, որը մենք այժմ չենք վայելում:

3 Հովհաննես ԺԳ.23,– ՝ Հոր և ՝ Որդու հայտնվելը, այս հատվածում, նրանց անձնապես ՝ հայտնվելն է. և այն գաղափարը, թե Հայրը և Որդին ՝ բնակվում են մարդու սրտում, հին աղանդավորական տեսակետ է և կեղծ է:

4 Ի պատասխան հարցին,– Արդյոք Աստծո ՝ ժամանակի, հրեշտակների ժամանակի, մարգարեների ժամանակի և մարդու ժամանակի հաշվարկն այն մոլորակի համապատասխան չէ՞, որի վրա նրանք բնակվում են:

5 Ես պատասխանում եմ՝ այո՝: Բայց չկան ՝ հրեշտակներ, որոնք ծառայում են այս երկրին, բացի նրանցից, ովքեր պատկանում են կամ պատկանել են նրան:

6 Հրեշտակները չեն բնակվում այս երկրի նման մոլորակում.

7 Այլ նրանք բնակվում են Աստծո ներկայության մեջ, մի գնդի վրա, որը նման է ապակե ու ՝ կրակե ՝ ծովի, որտեղ բոլոր բաները՝ անցյալը, ներկան և ապագան, հայտնի են նրանց փառքի համար և անընդհատ Տիրոջ առաջ են:

8 Այն վայրը, որտեղ Աստված բնակվում է, մի մեծ ՝ Ուրիմ ու Թումիմ է:

9 Այս ՝ երկիրը, իր սրբագործված ու անմահ վիճակում, կդառնա բյուրեղի նման և մի Ուրիմ ու Թումիմ կլինի նրա բնակիչների համար, որով ստորադաս արքայությանը կամ ավելի ցածր կարգի բոլոր արքայություններին վերաբերող բաները հայտնի կդարձվեն նրա վրա ապրողներին. և այս երկիրը կլինի Քրիստոսինը:

10 Այն ժամանակ, Հայտնություն Բ.17-ում նշված սպիտակ քարը Ուրիմ ու Թումիմ կդառնա այն ստացող յուրաքանչյուր անհատի համար, որով հայտնի կդարձվեն ավելի բարձր կարգի արքայություններին վերաբերող բաները.

11 Եվ ՝ սպիտակ մի քար է տրվում բոլոր նրանց, ովքեր գալիս են սելեստիալ արքայություն, որի վրա մի նոր ՝ անուն է գրված, որը ոչ մի մարդ չգիտի, բացի նրանից, ով ստանում է այն: Այդ նոր անունը նշանաբառ է:

12 Ես մարգարեանում եմ Տեր

130 1ա Ա Հովհ. Գ.2, Մոր. 7.48: սո՛ւ Հիսուս Քրիստոսի երկրորդ գալուստը: Բ Դուկ. ԻԳ.36–40: 2ա սո՛ւ Սելեստիալ փառք: 3ա սո՛ւ Աստված, Աստվածագլուխ – Աստված Հայրը: Բ սո՛ւ Աստված, Աստվածագլուխ –

Աստված Որդին: Գ Վևո՛Ւ 93.1: Դ Վևո՛Ւ 130.22: սո՛ւ Աստված, Աստվածագլուխ: 4ա Բ Պետ. Գ.8, Աբր. 3.4–10. տե՛ս նաև թիվ 2 վերաստվածան 1-ին պատկերը Աբրահամի գրքում:

5ա սո՛ւ Հրեշտակներ: 7ա Ես. ԼԳ.14, Վևո՛Ւ 132.1–3: Բ Հայտ. Գ.6, ԺԵ.2: 8ա սո՛ւ Ուրիմ ու Թումիմ: 9ա Վևո՛Ւ 77.1: սո՛ւ Երկիր – Երկրի վերջնական վիճակը: 11ա Հայտ. Բ.17: Բ Ես. ԿԲ.2:

Աստծո անունով, որ այն ^ադժվարությունների սկիզբը, որը մեծ արյունահեղության պատճառ կլինի Մարդու Որդու գալստից առաջ, կլինի ^բՀարավային Կարոլինայում:

13 Հնարավոր է, որ դա բարձրանա ստրուկների հարցից: Սա հայտնեց ինձ ձայնը, երբ ես լրջորեն աղոթում էի այդ հարցի կապակցությամբ, 1832թ. դեկտեմբերի 25-ին:

14 Մի անգամ ես լրջորեն աղոթում էի, որպեսզի իմանամ Մարդու Որդու ^ագալստյան ժամանակի մասին, երբ լսեցի մի ձայն, որն ասաց հետևյալը.

15 Ջոզեֆ, որդի՛ս, եթե դու ապրես մինչև ութսունհինգ տարեկանը, դու կտեսնես Մարդու Որդու երեսը. հետևաբար, թող դա բավական լինի և այլևս մի անհանգստացրու ինձ այդ հարցով:

16 Այդպես ես մնացի, ի վիճակի չլինելով որոշել, արդյոք այդ գալը վերաբերում էր հազարամյակի սկզբին, թե մինչև այդ հայտնվելուն, թե ես պետք է մահանայի և այդպես տեսնեի նրա երեսը:

17 Հավատացած եմ, որ Մարդու Որդու գալուստը չի լինի ավելի վաղ, քան այդ ժամանակը:

18 ^աԲանականության ինչ աստիճանի որ մենք հասնենք այս կյանքում, այն կբարձրանա մեզ հետ ^բհարության ժամանակ:

19 Եվ եթե մի մարդ ավելի շատ ^ագիտելիք և բանականություն ձեռք բերի այս կյանքում, իր ^բջանասիրության և ^գհնազանդության միջոցով, քան մեկ ուրիշը, նա կունենա նույնքան ^դառավելություն գալիք աշխարհում:

20 Կա ^աօրենք, երկնքում անդարձորեն հրամանագրված, այս աշխարհի հիմնադրումից ^բառաջ, որի վրա հիմնված են բոլոր ^գօրհնությունները,–

21 Եվ եթե մենք ինչ-որ օրհնություն ենք ստանում Աստծուց, դա այն օրենքին հնազանդվելով է, որի վրա հիմնված է այն:

22 ^աՀայրն ունի մսից ու ոսկորից ^բմարմին, այնպես շոշափելի, ինչպես մարդունը. Որդին՝ նույնպես. բայց ^գՍուրբ Հոգին չունի մսից ու ոսկորից մարմին, այլ Հոգեդեն անձնավորություն է: Եթե այդպես չլիներ, Սուրբ Հոգին չէր կարող բնակվել մեզանում:

23 Մարդ կարող է ստանալ ^աՍուրբ Հոգին, և նա կարող է իջնել մարդու վրա, բայց չմնալ նրա հետ:

12ա Վև. 38.29, 45.63:
բ Վև. 87.1–5:
14ա սուր Հիսուս Քրիստոսի երկրորդ գալուստը:
18ա սուր Բանականություն, Բանականություններ:
բ սուր Հարություն:
19ա սուր Գիտություն:
բ սուր Ջանասիրություն:

գ սուր Հնազանդություն, Հնազանդ, Հնազանդվել:
դ Ալմա 12.9–11:
20ա Վև. 82.10:
բ սուր Նախամահկանացու կյանք:
գ Բ. Օր. ԺԱ. 26–28, Վև. 132.5:

սուր Օրհնել, Օրհնված, Օրհնություն:
22ա սուր Աստված, Աստվածազուլիս:
բ Գոր. ԺԷ. 29:
գ սուր Սուրբ Հոգի:
23ա սուր Սուրբ Հոգու պարզև:

ԲԱԺԻՆ 131

Հրահանգներ՝ տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեի կողմից, Ռեյնոտամ, Իլինոյս, 1843թ. մայիսի 16-ին և 17-ին (History of the Church, 5.392–393):

1–4՝ Սելեւստիալ ամուսնությունն անհրաժեշտ պայման է ամենաբարձր երկնքում վեհացման համար. 5–6՝ Բացատրվում է, թե ինչպես են մարդիկ կնքվում հավերժական կյանքի համար. 7–8՝ Ոգին ամբողջությամբ նյութ է:

5 (1843թ. մայիսի 17) Մարգարեական ավելի հաստատ խոսքը նշանակում է՝ մարդը գիտի, որ ինքը ՚Կնքվել է Գհավերժական կյանքի համար՝ հայտնությամբ ու մարգարեության ոգով, Սուրբ Զահանայության գործությամբ:

ՄԵԼԵՍԻԱԼ փառքի մեջ կա երեք երկինք կամ աստիճան.

6 Անհնար է, որ մարդ ՚Փրկվի Բանգիտության մեջ:

2 Եվ ՚ամենաբարձրին հասնելու համար մարդ պետք է մտնի քահանայության այս կարգի մեջ [որն է՝ Բամուսնության նոր և հավիտենական ուխտը].

7 Չկա աննյութական նյութ: ՚Ոգին ամբողջությամբ նյութ է, բայց ավելի նուրբ, կամ մաքուր, և կարող է զանազանվել միայն ավելի Բմաքուր աչքերով.

3 Եվ եթե նա չմտնի, չի կարող հասնել դրան:

8 Մենք չենք կարողանում տեսնել այն. բայց երբ մեր մարմինները մաքրագործվեն, մենք կտեսնենք, որ այն ամբողջությամբ նյութ է:

4 Նա կարող է մտնել մեկ ուրիշը, բայց դա նրա թագավորության վերջն է. նրա ՚աճը չի շարունակվի:

ԲԱԺԻՆ 132

Հայտնություն՝ տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեի միջոցով, Նավոտամ, Իլինոյս, գրանցված 1843թ. հուլիսի 12-ին, նոր և հավիտենական ուխտի վերաբերյալ, ներառյալ ամուսնության ուխտի հավերժությունը և նաև բազմակնությունը (History of the Church, 5.501–507): Չնայած հայտնությունը գրանցվել է 1843-ին, պատմական գրանցումներից ակնհայտ է, որ այս հայտնության մեջ ընգրկված վարդապետություններն ու սկզբունքները Մարգարեին հայտնի էին դեռևս 1831 թվականից:

1–6՝ Վեհացումը ձեռք է բերվում նոր և հավիտենական ուխտի միջոցով. 7–14՝ Ներկայացվում են այդ ուխտի

ժամկետներն ու պայմանները. 15–20՝ Սելեւստիալ ամուսնությունը և ընտանեկան միավորի շարունակու-

131 1ա ՎևՈՒ 76.70: սուր Սելեւստիալ փառք: 2ա ՎևՈՒ 132.5–21: սուր Վեհացում: Բ սուր Ամուսնություն, Ամուսնանալ – Ամուսնության նոր և հավի-

տենական ուխտը: 4ա ՎևՈՒ 132.16–17: 5ա Բ Պետ. Ա.19: սուր Կոչում և ընտրություն: Բ ՎևՈՒ 68.12, 88.4: սուր Կնիք, Կնքում:

գ սուր Հավերժական կյանք: 6ա սուր Փրկություն: Բ ՎևՈՒ 107.99–100: 7ա սուր Ոգի: Բ ՎևՈՒ 76.12, 97.16, Մովսես 1.11:

թյունը մարդկանց հնարավորություն են ընծառում դառնալ աստվածներ. 21-25՝ Նեղ և անձուկ ճանապարհը տանում է դեպի հավերժական կյանքեր. 26-27՝ Տրվում է օրենք Սուրբ Հոգու դեմ հայհոյանքի վերաբերյալ. 28-39՝ Հավերժական աճի և վեհացման խոստումներ են տրվում բոլոր սերունդների մարգարեներին ու Սրբերին. 40-47՝ Ջոզեֆ Սմիթին տրված է երկրի վրա ու երկնքում կապելու և կնքելու գործությունը. 48-50՝ Տերը նրա վեհացումը կնքում է նրա վրա. 51-57՝ Էմնա Սմիթին խորհուրդ է տրվում հավատարիմ և ճշմարիտ լինել. 58-66՝ Ներկայացվում են բազմակնությունը կառավարող օրենքները:

ԱՇՄԱՐԻՏ, այսպես է ասում Տերը քեզ, իմ ծառա՝ Ջոզեֆ. Քանի որ դու իմ ձեռքից հարցրել ես, որպեսզի իմանաս և հասկանաս, թե ինչպես են ես՝ Տերս, արդարացրել իմ ծառաներ Աբրահամին, Իսահակին և Հակոբին, և նաև Մովսեսին, Դավթին և Մոդոնոնին, իմ ծառաներին, ինչ վերաբերում է շատ ^ականայք ու հարճեր ունենալու սկզբունքին ու վարդապետությանը, -

2 Ահա, տե՛ս, ես եմ Տերը՝ քո Աստվածը, և ես կպատասխանեմ քեզ այս հարցի վերաբերյալ:

3 Հետևաբար, ^ապատրաստիր քո սիրտը, որ ընդունես և հնազանդվես այն հրահանգներին, որոնք ես պատրաստվում եմ տալ քեզ.

քանզի բոլոր նրանք, ում հայտնվում է այս օրենքը, պետք է հնազանդվեն դրան:

4 Քանզի ահա, ես հայտնում եմ քեզ նոր և հավիտենական ^աուխտը. և եթե դու չմնաս այդ ուխտի մեջ, ապա դու ^բնզովված ես. քանզի ոչ ոք չի կարող ^գմերժել այս ուխտը և թույլատրվի մտնել իմ փառքը:

5 Քանզի բոլոր նրանք, ովքեր կամենում են ^աօրհնություն ստանալ իմ ձեռքից, պիտի մնան ^բօրենքի մեջ, որը նշանակվել է այդ օրհնության համար, և նրա պայմանների մեջ, ինչպես որ հաստատվել է աշխարհի հիմնադրումից առաջ:

6 Եվ ինչ վերաբերում է նոր և ^ահավիտենական ուխտին, այն հաստատվել է իմ ^բփառքի լիության համար. և ով ստանում է նրա լիությունից, պարտավոր է և պետք է մնա օրենքի մեջ, այլապես նա պիտի նզովվի, ասում է Տեր Աստվածը:

7 Եվ ճշմարիտ ասում եմ ձեզ, որ այդ օրենքի ^ապայմանները սրանք են. Բոլոր ^բուխտերը, պայմանագրերը, մուրհակները, պարտավորությունները, երդումները, խոստումները, կատարումները, կապերը, ընկերակցությունները կամ ակնկալիքները, որոնք չեն կապվել և հաստատվել ու ^գկնքվել խոստումի ^դՍուրբ Հոգով, նրա կողմից, ում ես օժել եմ և՛ ժամանակի, և՛ ողջ հավերժության համար, և՛ այն նաև շատ սուրբ է,

132 1ա ՎևՈՒ 132.34, 37-39:
սուր Ամուսնություն, Ամուսնամալ -
Բազմակնություն:
3ա ՎևՈՒ 29.8, 58.6, 78.7:
4ա սուր Ուխտ:

բ սուր Նզովք:
գ ՎևՈՒ 131.1-4:
5ա ՎևՈՒ 130.20-21:
բ սուր Օրենք:
6ա ՎևՈՒ 66.2:
սուր Նոր և հավիտենական ուխտ:

բ ՎևՈՒ 76.70, 92-96:
սուր Սելեստիալ փառք:
7ա ՎևՈՒ 88.38-39:
բ սուր Երդում:
գ սուր Կնիք, Կնքում:
դ սուր Խոստումի Սուրբ Հոգի:

հայտնությամբ ու պատվիրանով, իմ օծյալի միջնորդությամբ, որին ես նշանակել եմ՝ կրելու այս գորությունը երկրի վրա (և ես նշանակել եմ իմ ծառա Ջոզեֆին՝ կրելու այս գորությունը վերջին օրերին, և միշտ երկրի վրա տվյալ պահին կա միայն մեկը, որին շնորհված է այս գորությունը և այս քահանայության ⁹բանալիները), չունեն ազդեցություն, գորություն կամ ուժ մեռելների հարության ժամանակ և հետո. քանզի բոլոր պայմանագրերը, որոնք չեն կնքվել այդ վախճանի համար, վերջանում են մարդկանց մահվան հետ:

8 Ահա, իմ տունը կարգ ու կանոնի տուն է, ասում է Տեր Աստվածը, ոչ թե խառնաշփոթության տուն:

9 Կընդունե՞մ ես ¹⁰մատուցումը, ասում է Տերը, որը չի կատարվել իմ անունով:

10 Կամ կընդունե՞մ ես ձեր ձեռքից այն, ինչը ես չեմ ¹¹նշանակել:

11 Եվ կնշանակե՞մ ես ձեզ, ասում է Տերը, եթե դա չլինի օրենքով, ճիշտ ինչպես ես և Հայրս ենք՝ ¹²կարգել ձեզ համար, նախքան աշխարհի լինելը:

12 Ես եմ Տերը՝ քո Աստվածը. Եվ ես տալիս եմ ձեզ այս պատվիրանը, – որ ոչ որ չի ¹³զա Հոր մոտ, եթե ոչ ինձանով կամ իմ խոսքով, որն իմ օրենքն է, ասում է Տերը:

13 Եվ ամեն բան, ինչ աշխարհում է, եթե կարգված է մարդկանց կողմից՝ գահերով, իշխանություններով, գորություններով կամ անվանի բաներով, ինչ էլ որ դրանք

լինեն, որոնք ինձանով չեն կամ իմ խոսքով, ասում է Տերը, պիտի տապալվեն և ¹⁴չպիտի մնան մարդկանց մահից հետո՝ ոչ հարության ժամանակ, ոչ էլ դրանից հետո, ասում է Տերը՝ ձեր Աստվածը:

14 Քանզի ինչ բաներ որ մնան, ինձանով են. և ինչ բաներ որ ինձանով չեն, պիտի սասանվեն ու կործանվեն:

15 Հետևաբար, եթե մի տղամարդ ¹⁶ամուսնանում է մի կնոջ հետ այս աշխարհում, և նա չի ամուսնանում ինձանով, ոչ էլ իմ խոսքով, և ուխտ է հաստատում նրա հետ, այնքան ժամանակով, որքան նա այս աշխարհում է նրա հետ, նրանց ուխտը և ամուսնությունն ուժ չունեն, երբ նրանք մահանում են, և երբ նրանք աշխարհից դուրս են. հետևաբար, նրանք կապված չեն որևէ օրենքով, երբ որ աշխարհից դուրս են:

16 Հետևաբար, երբ նրանք այս աշխարհից դուրս են, նրանք ոչ կին են առնում, ոչ էլ ¹⁷մարդի են գնում. այլ նշանակված ¹⁸հրեշտակներ են երկնքում, հրեշտակներ, որոնք սպասավոր ծառաներ են, որ սպասավորեն նրանց, ովքեր արժանի են ավելի արտակարգ և գերազանց և հավերժական փառքի մեծության:

17 Քանզի այդ հրեշտակները չեն մնացել իմ օրենքում. հետևաբար, նրանք չեն կարող շատանալ, այլ մնում են առանձին և միայնակ, առանց վեհացման, իրենց փրկված վիճակում, մինչև ողջ հավերժու-

<p>7ե սոր Հայտնություն: <i>q</i> սոր Քահանայության բանալիները: 9ա Մոր. 7.5–6: սոր Չոհաբերություն: 10ա Ղև. ԻԲ.20–25,</p>	<p>Մովսես 5.19–23: 11ա ՎևոՒ 132.5: 12ա Հովհ. ԺԳ.6: 13ա 3 Նեփի 27.10–11: 15ա սոր Ամուսնություն, Ամուսնանալ:</p>	<p>16ա Մատ. ԻԲ.23–33, Մար. ԺԲ.18–25, Ղուկ. Ի.27–36: <i>p</i> սոր Հրեշտակներ:</p>
---	--	---

քյուն. և այնուհետև աստվածներ չեն, այլ Աստծո հրեշտակներ են հավիտյան հավիտենից:

18 Եվ բացի այդ, ճշմարիտ ասում են ձեզ. Եթե մի տղամարդ ամուսնանում է մի կնոջ հետ, և ուխտ է կապում նրա հետ ժամանակի և ողջ հավերժության համար, եթե այդ ուխտն ինձանով չէ կամ իմ խոսքով, որն իմ օրենքն է, և չի կնքվում խոստումի Սուրբ Հոգով, նրա միջոցով, ում ես օծել եմ և նշանակել եմ այդ գործյանը, ապա այն վավերական չէ, ոչ էլ ուժ ունի, երբ նրանք աշխարհից դուրս են, որովհետև նրանք չեն միացել ինձանով, ասում է Տերը, ոչ էլ իմ խոսքով. երբ նրանք աշխարհից դուրս են, այն չի կարող ընդունվել այնտեղ, որովհետև հրեշտակներ և աստվածներ կան այնտեղ նշանակված, որոնց մոտով նրանք չեն կարող անցնել. հետևաբար, նրանք չեն կարող ժառանգել իմ փառքը. քանզի իմ տունը կարգ ու կանոնի տուն է, ասում է Տեր Աստվածը:

19 Եվ բացի այդ, ճշմարիտ ասում են ձեզ. Եթե մի տղամարդ ամուսնանա մի կնոջ հետ, իմ խոսքով, որն իմ օրենքն է, և «նոր և հավիտենական ուխտով, և այն նրանց համար ^բկնքվի ^գխոստումի Սուրբ Հոգով, նրա կողմից, ում ես օծել եմ, ում ես նշանակել եմ այս գործյունը և այս քահանայության ^դբանալիները. և նրան կասվի, – Դուք առաջ կգաք առաջին հարու-

քյան մեջ. և եթե դա լինի առաջին հարությունից հետո, ապա հաջորդ հարության մեջ. և կժառանգեք ^եգահեր, թագավորություններ, իշխանություններ, և գործյուններ, տիրապետություններ, բոլոր բարձրությունները և խորությունները, – այն ժամանակ Գառի Կյանքի «Գրքում կգրվի, որ նա չպետք է որևէ սպանություն գործի, որով թափած լինի անմեղ արյուն, և եթե դուք մնաք իմ ուխտի մեջ, և որևէ սպանություն չգործեք, որով թափած լինեք անմեղ արյուն, բոլոր բաներում նրանց հետ պիտի կատարվի այն, ինչ իմ ծառան դրել է նրանց վրա՝ ժամանակի մեջ և ողջ հավերժության ընթացքում. և ամբողջությամբ ուժի մեջ կլինի, երբ նրանք աշխարհից դուրս են. և նրանք կանցնեն հրեշտակների և աստվածների մոտով, որոնք նշանակված են այնտեղ, դեպի իրենց ^զվեհացումը և փառքը բոլոր բաներում, ինչպես որ կնքվել է նրանց գլխին, փառք, որը կլինի սերունդների լիությունը և շարունակությունը հավիտյան հավիտենից:

20 Այն ժամանակ նրանք կլինեն աստվածներ, որովհետև նրանք վերջ չունեն. հետևաբար նրանք կլինեն հավիտենականությունից հավիտենականություն, որովհետև նրանք հարատևում են. այն ժամանակ նրանք կլինեն բոլորից վեր, որովհետև բոլոր բաները ենթակա են նրանց: Այն ժամանակ նրանք կլինեն ^աաստվածներ, որովհետև

19ա սոս Ամուսնություն, Ամուսնանալ – Ամուսնության նոր և հավիտենական ուխտը:
բ սոս Կնիք, Կնքում:
գ ՎևոՒ 76.52–53, 88.3–4:

դ սոս Քահանայության բանալիները:
ե Ել. ԺԹ.5–6, Հայտ. Ե.10, Ի.6, ՎևոՒ 76.56, 78.15, 18:
զ սոս Կյանքի գիրք:
է սոս Վեհացում:

20ա Մատ. ԻԵ.21, ՎևոՒ 29.12–13, 132.37: սոս Մարդ, Մարդիկ – Մարդ՝ Երկնային Հոր նման դառնալու ներուժը:

նրանք ունեն ^բողջ զորությունը, և հրեշտակները ենթակա են նրանց:

21 Ճշմարիտ, ճշմարիտ ասում են ձեզ. Եթե դուք չմնաք իմ ^աօրենքում, դուք չեք կարող հասնել այդ փառքին:

22 Քանզի ^անեղ է դուռը և անձուկ է ^բճանապարհը, որը տանում է դեպի վեհացում և ^գկյանքերի շարունակություն, և քչերը կլինեն, որ կգտնեն այն, որովհետև դուք ինձ չեք ընդունում աշխարհում, ոչ էլ դուք ճանաչում եք ինձ:

23 Բայց եթե դուք ընդունեք ինձ աշխարհում, ապա կճանաչեք ինձ և կստանաք ձեր վեհացումը. որպեսզի ^անուր ես եմ, դուք էլ լինեք:

24 Սա է ^ահավերժական կյանքերը,– ճանաչել միակ իմաստուն և ճշմարիտ Աստծուն, և Հիսուս Քրիստոսին, որին նա ^բուղարկել է: Ես նա եմ: Հետևաբար, ընդունեք իմ օրենքը:

25 ^աԼայն է դուռը և ընդարձակ է դեպի ^բմահեր տանող ճանապարհը. և շատերը կան, որ գնում են դրանով, որովհետև չեն ^գընդունում ինձ, ոչ էլ մնում են իմ օրենքում:

26 Ճշմարիտ, ճշմարիտ ասում են ձեզ. Եթե մի տղամարդ ամուսնանում է մի կնոջ հետ, իմ խոսքի համաձայն, և նրանք կնքվում են խոստումի ^աՍուրբ Հոգով, իմ նշանակման համաձայն, և ամուսինը կամ կինն ինչ-որ ձևի

մեղք կամ օրինազանցություն է գործում նոր և հավիտենական ուխտի դեմ, և ամեն տեսակի հայհոյանք, բայց որևէ սպանություն չեն ^բգործում, որով թափած լինեն անմեղ արյուն, ապա նրանք առաջ կգան առաջին հարության մեջ և իրենց վեհացումը կմտնեն. սակայն մարմնի մեջ նրանք կկործանվեն և ^գկհանձնվեն ^բՍատանայի հարվածներին, մինչև փրկագնման օրը, ասում է Տեր Աստվածը:

27 Սուրբ Հոգու դեմ ^ահայհոյանքը, որը ^բչի ներվի ո՛չ աշխարհում, ո՛չ էլ աշխարհից դուրս, այն է, որ դուք սպանություն եք գործում, որով անմեղ արյուն եք թափում և հավանություն եք տալիս իմ մահվանը, նրանից հետո, երբ դուք ընդունել եք իմ նոր և հավիտենական ուխտը, ասում է Տեր Աստվածը. և նա, ով չի մնում այս օրենքում, ոչ մի դեպքում չի կարող մտնել իմ փառքը, այլ պիտի ^գնզովվի, ասում է Տերը:

28 Ես եմ Տերը՝ ձեր Աստվածը, և ես կտամ ձեզ իմ Սուրբ Քահանայության օրենքը, ինչպես որ կարգված է եղել իմ և իմ Հոր կողմից, նախքան աշխարհի լինելը:

29 Բոլոր բաները, որոնք ^աԱբրահամը ստացել էր, նա ստացել էր հայտնությամբ ու պատվիրանով, իմ խոսքով, ասում է Տերը,

20բ Վև.ՈՒ 50.26–29, 76.94–95, 84.35–39:
21ա սո՛ր Օրենք:
22ա Ղու.Վ. ԺԳ.24, 2 Նեփի 33.9, չել. 3.29–30:
բ Մատ. Է.13–14, 23, 2 Նեփի 9.41, 31.17–21:
գ Վև.ՈՒ 132.30–31:
23ա Հովհ. ԺԴ.2–3:
24ա Հովհ. ԺԷ.3:

սո՛ւ Հավերժական կյանք:
բ Հովհ. Գ.16–17, Վև.ՈՒ 49.5:
25ա Մատ. Է.13–14, 3 Նեփի 14.13–15:
բ սո՛ւ Մահ հոգևոր:
գ Հովհ. Ե.43:
26ա սո՛ւ Խոստումի Սուրբ Հոգի:
բ Ալմա 39.5–6:
գ Վև.ՈՒ 82.21, 104.9–10:

դ սո՛ւ Դև:
27ա սո՛ւ Հայհոյել, Հայհոյանք. Անցներելի մեղք:
բ Մատ. ԺԲ.31–32, Եբր. Զ.4–6, Վև.ՈՒ 76.31–35:
սո՛ւ Կորստի որդիներ:
գ սո՛ւ Նզովք:
29ա սո՛ւ Աբրահամ:

և մտել է իր վեհացումն ու նստած է իր գահին:

30 Աբրահամը ^ախոստումներ ստացավ իր սերնդի վերաբերյալ և իր երանքի պտղի համար, - դու, այսինքն՝ իմ ծառա՝ Չոզեֆ, այդ ^բերանքից ես, - որը պիտի շարունակվեր այնքան ժամանակ, որքան որ նրանք աշխարհում էին. և ինչ վերաբերում է Աբրահամին ու նրա սերնդին, նրանք պիտի շարունակվեն աշխարհից դուրս. և՛ աշխարհում, և՛ աշխարհից դուրս նրանք պիտի շարունակվեն անհամար թվով, ինչպես ^գաստղերը. կամ, եթե դուք հաշվելու լինեիք ծովափի ավազի հատիկները, դուք չեիք կարող համրել դրանք:

31 Այդ խոստումը նաև ձերն է, որովհետև դուք ^աԱբրահամից եք և խոստումը տրվել էր Աբրահամին. և այս օրենքով է իմ Հոր գործերի շարունակությունը, որով նա փառավորում է իրեն:

32 Գնացեք, հետևաբար, և կատարեք Աբրահամի ^ագործերը. ընդունեք իմ օրենքը և դուք կփրկվեք:

33 Բայց եթե դուք չընդունեք իմ օրենքը, դուք չեք կարող ստանալ իմ Հոր խոստումը, որը նա տվել է Աբրահամին:

34 Աստված ^ապատվիրեց Աբրահամին, և ^բՄարրան ^գՀազարին կնության տվեց Աբրահամին: Եվ ինչո՞ւ Մարրան արեց դա: Որով-

հետև դա էր օրենքը. և Հազարից շատ մարդիկ դուրս եկան: Հետևաբար, մյուս բաների հետ մեկտեղ, դա կատարումն էր խոստումների:

35 Արդյո՞ք Աբրահամն այդ պատճառով դատապարտության տակ էր: Դժմարիտ ասում են ձեզ՝ ո՛չ. քանզի ես՝ Տերս էի ^ապատվիրել դա:

36 Աբրահամին ^ապատվիրվեց զոհ մատուցել իր որդի ^բԻսահակին. չնայած գրված էր. Մի՛ ^գսպանիր: Ինչևէ, Աբրահամը չմերժեց և դա ^աարդարություն համարվեց նրան:

37 Աբրահամը ^ահարճեր ստացավ, և նրանք երեխաներ բերեցին նրա համար. և դա արդարություն համարվեց նրան, որովհետև նրանք տրված էին նրան, և նա մնաց իմ օրենքում. ինչպես որ Իսահակը և ^բՀակոբը չարեցին ոչինչ, բացի այն, ինչ նրանց պատվիրվել էր. և որովհետև նրանք չարեցին ոչինչ, բացի այն, ինչ նրանց պատվիրվել էր, նրանք իրենց ^գվեհացումը մտան, խոստումների համաձայն, և նստած են գահերին, և հրեշտակներ չեն, այլ աստվածներ:

38 ^աԴավիթը նույնպես ստացավ ^բշատ կանայք ու հարճեր, և նաև Մողոմոնը և Մովսեսը՝ իմ ծառաները, ինչպես և իմ ծառաներից շատ ուրիշները, ստեղծման

30ա Ծն. ԺԲ.1-3, 13.16:
սուր Աբրահամ -
Աբրահամի Սերունդը.
Աբրահամի ուխտը:
բ 2 Նեփի 3.6-16:
գ Ծն. ԺԵ.5,
ԻԲ.17:
31ա ՎևոՒ 86.8-11, 110.12:
32ա Հովհ. Ը.39,
Ալմա 5.22-24:
34ա Ծն. ԺԶ.1-3:
բ սուր Մարրա:

գ Ծն. ԻԵ.12-18:
սուր Հազար:
35ա Հակոբ 2.24-30:
36ա Ծն. ԻԲ.2-12:
բ սուր Իսահակ:
գ Ել. Ի.13:
դ Հակոբ 4.5:
սուր Արդար,
Արդարություն:
37ա Այլ ուրիշ կանայք:
Ծն. ԻԵ.5-6:
բ Ծն. Լ.1-4,

ՎևոՒ 133.55:
սուր Հակոբ՝ Իսահակի
որդի:
գ սուր Վեհացում. Մարդ,
Մարդիկ - Մարդ՝
Երկնային Հոր նման
դառնալու ներուժը:
38ա սուր Դավիթ:
բ Ա Թագ. ԻԵ.42-43,
Բ Թագ. Ե.13,
Գ Թագ. ԺԱ.1-3:

սկզբից մինչև այս ժամանակը. և ոչնչում նրանք չմեղանչեցին, բացի այն բաներից, որոնք նրանք չստացան ինձանից:

39 Դավթի կանայք ու հարճերն իմ կողմից էին տրվել նրան, Նաթանի՝ իմ ծառայի ձեռքով, և այլ մարգարեների, որոնք ունեին այդ գործության բանալիները. և այս բաներից ոչնչում նա չմեղանչեց իմ դեմ, բացի Պուրիայի և նրա կնոջ դեպքից. և, հետևաբար, նա զրկվեց իր վեհացումից և ստացավ իր բաժինը. և նա չի ժառանգի նրանց աշխարհից դուրս, քանզի ես նրանց տվել եմ մեկ ուրիշի, ասում է Տերը:

40 Ես եմ Տերը՝ քո Աստվածը, և քեզ, իմ ծառա՝ Ջոզեֆ, ես նշանակում եմ տվել. Վերականգնի՛ր բոլոր բաները: Խնդրի՛ր ինչ կամենում ես և քեզ կտրվի՝ համաձայն իմ խոսքի:

41 Եվ քանի որ դու հարցրեցիր շնության վերաբերյալ, ճշմարիտ, ճշմարիտ ասում եմ քեզ. Եթե մի տղամարդ կին է ընդունում նոր և հավիտենական ուխտով, և եթե նա լինի մեկ ուրիշ տղամարդու հետ, և ես նրան չեմ նշանակել, սուրբ օծմանը, նա շնություն է արել և պիտի կործանվի:

42 Եթե նա չլինի նոր և հավիտենական ուխտի մեջ և լինի մեկ ուրիշ տղամարդու հետ, նա շնություն է արել:

43 Եվ եթե նրա ամուսինը լինի մեկ ուրիշ կնոջ հետ, և խոստման մեջ լինի, նա դրժել է իր խոստումը և շնություն է արել:

44 Եվ եթե կինը շնություն չի արել, այլ անմեղ է և չի դրժել իր խոստումն ու գիտի դա, և ես հայտնում եմ քեզ, իմ ծառա Ջոզեֆ, այն ժամանակ դու գործություն կունենաս, իմ Սուրբ Քահանայության գործյամբ, վերցնել այդ կնոջը և տալ մեկ ուրիշի, որը շնություն չի արել, այլ եղել է հավատարիմ. քանզի նա կառավարիչ կորվի շատերի վրա:

45 Քանզի ես քեզ եմ շնորհել քահանայության բանալիները և գործությունը, որով վերականգնել եմ բոլոր բաները, և բոլոր բաները քեզ հայտնի եմ դարձնում իր ժամանակին:

46 Եվ ճշմարիտ, ճշմարիտ ասում եմ քեզ, որ ինչ որ դու կընքես երկրի վրա, կնքված կլինի երկնքում. և ինչ-որ դու կապես երկրի վրա, իմ անունով և իմ խոսքով, ասում է Տերը, այն հավերժ կապված կլինի երկնքներում. և ում մեղքերը որ թողնեք, երկրի վրա, հավերժ թողնված կլինի երկնքներում. և ում մեղքերը որ պահեք, երկրի վրա, պահված կլինի երկնքում:

47 Եվ բացի այդ, ճշմարիտ ասում եմ, ում որ դու օրհնես, ես կօրհնեմ, և ում որ դու անիծես, ես կանի-

39ա Բ Թագ. ԺԲ.7–8:
բ սուր Քահանայության բանալիները:
գ Բ Թագ. ԺԱ.4, 27, ԺԲ.9,
Գ Թագ. ԺԵ.5:
սուր Շնություն,
Սպանություն:
դ Երեմ. Ը.10:
40ա ՋՍԱ–Պ 1.33:

սուր Ավետարանի վերականգնումը:
42ա ՎևՈՒ 42.22–26:
43ա սուր Ուխտ.
Անուսնություն,
Անուսնանալ:
44ա սուր Մաքրաբարոյություն:
45ա սուր Քահանայության բանալիները:

բ Գոր. Գ.21,
ՎևՈՒ 86.10:
սուր Ավետարանի վերականգնումը:
46ա սուր Կնիք, Կնքում:
բ սուր Մեղքերի թողություն:
47ա ԾՃ. ԺԲ.1–3,
ՎևՈՒ 124.93:

ծեմ, ասում է Տերը. քանզի ես՝ Տերս եմ քո Աստվածը:

48 Եվ բացի այդ, ճշմարիտ ասում եմ քեզ, իմ ծառա՝ Ջոզեֆ, որ ինչ էլ որ դու տաս երկրի վրա, և ում էլ որ դու տաս ինչ-որ մեկին երկրի վրա, իմ խոսքով և իմ օրենքի համաձայն, կուղեկցվի օրհնություններով և իմ զորությամբ, և ոչ թե անեծքով, ասում է Տերը, և պիտի լինի առանց դատապարտության՝ երկրի վրա և երկնքում:

49 Քանզի ես եմ Տերը՝ քո Աստվածը, և կլինեմ քեզ հետ նույնիսկ մինչև երկրի վերջը, և ողջ հավերժության մեջ. քանզի, ճշմարիտ, ես թկնքում եմ քեզ վրա քո զվեհացումը, և գահ եմ պատրաստում քեզ համար իմ Հոր արքայության մեջ, Աբրահամի՝ քո հոր հետ:

50 Ահա, ես տեսել եմ քո զոհաբերությունները, և կներեմ քո բոլոր մեղքերը. ես տեսել եմ քո զոհաբերությունները՝ ի հնազանդություն այն բանի, ինչը ես ասել եմ քեզ: Ուրեմն գնա, և ես ճանապարհ եմ պատրաստում քո ազատման համար, ինչպես որ ես ընդունեցի Աբրահամի կողմից իր որդուն՝ Իսահակին մատուցելը:

51 Ճշմարիտ ասում եմ քեզ. Ես պատվիրան եմ տալիս իմ աղախին Էմմա Սմիթին՝ քո կնոջը, որին ես տվել եմ քեզ, որ նա ետ պահի իրեն և չճաշակի այն բանից, ինչը ես պատվիրեցի քեզ մատուցել նրան. քանզի ես դա արեցի, ասում է Տերը, ձեզ երկուսիդ փորձելու համար, ինչպես

փորձեցի Աբրահամին, և որ ես կարողանայի մատուցում պահանջել ձեր ձեռքից՝ ուխտով և զոհաբերությամբ:

52 Եվ թող իմ աղախին՝ Էմմա Սմիթն ընդունի նրանց բոլորին, որոնք տրվել են իմ ծառա Ջոզեֆին, և որոնք առաքինի և մաքուր են իմ առաջ. իսկ նրանք, ովքեր մաքուր չեն, բայց ասել են, որ իրենք մաքուր էին, պիտի կործանվեն, ասում է Տեր Աստվածը:

53 Քանզի ես եմ Տերը՝ քո Աստվածը, և դուք պետք է հնազանդվեք իմ ձայնին. և ես տալիս եմ իմ ծառա Ջոզեֆին, որ նա կառավարիչ դրվի շատ բաների վրա. քանզի, քիչ բաների վրա նա՝ հավատարիմ է եղել, և այսուհետև, ես կզորացնեմ նրան:

54 Եվ ես պատվիրում եմ իմ աղախին Էմմա Սմիթին՝ մնալ և հարել իմ ծառա Ջոզեֆին և ուրիշ ոչ մեկի: Բայց եթե նա չհնազանդվի այս պատվիրանին, նա պիտի կործանվի, ասում է Տերը. քանզի ես եմ Տերը՝ քո Աստվածը, և ես կկործանեմ նրան, եթե նա չմնա իմ օրենքում:

55 Իսկ եթե նա չհնազանդվի այս պատվիրանին, ապա իմ ծառա Ջոզեֆը պետք է ամեն ինչ անի նրա համար, ճիշտ ինչպես ասել է. և ես կօրհնեմ նրան և կբազմացնեմ նրան և՛ հարյուրապատիկ կտամ նրան այս աշխարհում՝ հայրեր և մայրեր, եղբայրներ և քույրեր, տներ և հողեր, կանայք և երեխաներ, և թիվերով կյանքերի

49ա Մատ. ԻԸ.20:
բ ՎևոՒ 68.12:
գ ՎևոՒ 5.22:
սոՒ Կոչում և ընտրություն:
դ Ծն. ԺԵ.1-8,

2 Նեփի 8.2:
50ա սոՒ Ջոհաբերություն:
բ Ծն. ԻԲ.10-14,
ՎևոՒ 97.8:
52ա սոՒ Սմիթ Էմմա Հեյլ:
53ա Մատ. ԻԵ.21,

ՎևոՒ 52.13:
55ա Մար. Ժ.28-31:
բ սոՒ Ընտանիք - Հավերժական ընտանիք.
Հավերժական կյանք:

պատկերներ հավերժական աշխարհներում:

56 Եվ բացի այդ, ճշմարիտ ասում են. Թող իմ աղախինը՝ «ների իմ ծառա Ջոզեֆին նրա զանգանքները. և այն ժամանակ, նրան կներվեն իր զանգանքները, որով նա օրինազանցել է իմ դեմ. և ես՝ Տերս, քո Աստվածը, կօրհնեմ նրան, և կբազմացնեմ նրան, և կուրախացնեմ նրա սիրտը:

57 Եվ բացի այդ, ես ասում եմ. Թող իմ ծառա Ջոզեֆը բաց չթողնի իր ունեցվածքն իր ձեռքից, չլինի թե թշնամին գա և կործանի իրեն. քանզի Սատանան «փնտրում է, որ կործանի. քանզի ես եմ Տերը՝ ձեր Աստվածը, և նա իմ ծառան է. և ահա, տե՛ս, ես նրա հետ եմ, ինչպես որ ձեր հոր՝ Աբրահամի հետ էի, նույնիսկ մինչև նրա Պեղեացումն ու փառքը:

58 Արդ, ինչ վերաբերում է «քահանայության օրենքին, շատ բաներ կան, որոնք վերաբերում են դրան:

59 Դձմարիտ, եթե մի մարդ կանչված լինի իմ Հոր կողմից, ինչպես «Ահարոնը, իմ ձայնով և նրա ձայնով, ով ուղարկեց ինձ, և ես նրան օժտած լինեմ այս քահանայության գորության Քանալիներով, եթե նա որևէ բան անի իմ անունով և համաձայն իմ օրենքի ու իմ խոսքի, նա մեղք գործած չի լինի, և ես կարդարացնեմ նրան:

60 Հետևաբար, թող ոչ ոք չքննադատի իմ ծառա Ջոզեֆին. քանզի ես արդարացնելու եմ նրան. քանզի

նա կանի այն զոհաբերությունը, որը ես պահանջում եմ նրա ձեռքից՝ իր օրինազանցությունների համար, ասում է Տերը՝ ձեր Աստվածը:

61 Եվ բացի այդ, ինչ վերաբերում է քահանայության օրենքին,– եթե որևէ տղամարդ կնության է վերցնում մի «կույսի և ցանկանում է կնության վերցնել մեկ Քուրիշի, և առաջինը տալիս է իր համաձայնությունը, և եթե նա կնության է վերցնում երկրորդին, և նրանք կույսեր են, և ուրիշ ոչ մի տղամարդու խոսք չեն տվել, ապա նա արդարացված է. նա չի կարող շնություն անել, քանզի նրանք տրված են իրեն. քանզի նա չի կարող շնություն անել նրա հետ, ով պատկանում է իրեն և ուրիշ ոչ ոքի:

62 Եվ եթե նա տասը կույս ունի իրեն տրված այս օրենքով, նա չի կարող շնություն անել, քանզի նրանք պատկանում են իրեն, և տրված են իրեն. դրա համար նա արդարացված է:

63 Բայց եթե կույսերից մեկը կան մյուսը, կնության վերցվելուց հետո, լինի մեկ ուրիշ տղամարդու հետ, ապա շնություն է արել և պիտի կործանվի. քանզի նրանք տրվում են նրան՝ «բազմանալու և երկիրը լցնելու համար, իմ պատվիրանի համաձայն, և խոստումն իրականացնելու համար, որը տրվել էր իմ Հոր կողմից աշխարհի հիմնադրումից առաջ, և հավերժական աշխարհներում նրանց

56ա սուր Եբեյ:
57ա Մատ. Ժ.28:
բ սուր Վեհացում:
58ա ՎևոՒ 84.19–26:
սուր Քահանայություն:
59ա Եբր. Ե.4:

սուր Ահարոն՝ Մովսեսի եղբայր:
բ սուր Քահանայության բանալիները:
61ա սուր Կույս:
բ Պաշտոնական

Հայտարարություն–1:
սուր Ամուսնություն, Ամուսանալ –
Բազմակնություն:
63ա Ծն. Ա.26–28,
Հակոբ 2.30:

վեհացման համար, որ նրանք կարողանան մարդկանց հոգիներ բերել. քանզի դրանով է իմ Հոր Քրիստոսը շարունակվում, որպեսզի նա փառավորվի:

64 Եվ բացի այդ, ճշմարիտ, ճշմարիտ ասում եմ ձեզ. Եթե մի տղամարդ, որն ունի այս քահանայության բանալիները, ունի մի կին և ուսուցանում է նրան իմ քահանայության օրենքը, ինչ վերաբերում է այս բաներին, ապա նա պետք է հավատա և սատարի նրան, թե չէ պիտի կործանվի, ասում է Տերը՝ ձեր Աստվածը. քանզի ես կկործանեմ նրան. քանզի ես կփառավորեմ իմ անունը, նրանց բոլորի վրա, ովքեր ընդունում են և մնում իմ օրենքում:

65 Հետևաբար, օրինավոր կլինի

ինձ համար, եթե նա չի ընդունում այս օրենքը, որ ամուսինը ստանա բոլոր բաները, ինչ որ ես՝ Տերս՝ նրա Աստվածը, կտամ նրան, որովհետև նա չհավատաց և չսատարեց նրան՝ ըստ իմ խոսքի. և այն ժամանակ, նա դառնում է օրինազանց. իսկ ամուսինն ազատվում է Սարքայի օրենքից, որը սատարեց Աբրահամին՝ համաձայն օրենքի, երբ ես պատվիրեցի Աբրահամին՝ կնության վերցնել Հազարին:

66 Եվ արդ, ինչ վերաբերում է այս օրենքին, ճշմարիտ, ճշմարիտ ասում եմ ձեզ, հետագայում ես ավելի շատ կհայտնեմ ձեզ. հետևաբար, թող ներկայումս սա բավարարի ձեզ: Ահա, ես եմ Ալֆան և Օմեգան: Ամեն:

ԲԱԺԻՆ 133

Հայտնություն տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեի միջոցով, Հայրամուս, Օհայո, 1831թ. նոյեմբերի 3-ին (History of the Church, 1.229–234): Որպես այս հայտնության նախաբան, Մարգարեն գրել է. «Այս ժամանակ շատ բաներ կային, որ Երեցները ցանկանում էին իմանալ՝ երկրի բնակիչներին Ավետարանը քարոզելու վերաբերյալ և հավաքման վերաբերյալ. և որպեսզի մենք քայլենք ճշմարիտ լույսով և ուսուցանվենք ի վերուստ, 1831թ. նոյեմբերի 3-ին ես հարցրեցի Տիրոջը և ստացա հետևյալ կարևոր հայտնությունը» (History of the Church, 1.229): Առաջին անգամ այս բաժինը Վարդապետություն և Ուխտեր գրքին ավելացվել էր՝ որպես հավելված, իսկ հետագայում դրան տրվել էր բաժնի հաջորդական թիվ:

1–6՝ Սրբերին պատվիրվում է նախապատրաստվել Երկրորդ Գալուստին. 7–16՝ Բոլոր մարդկանց պատվիրվում է փախչել Բաբելոնից, գալ Սիոն և պատրաստվել Տիրոջ մեծ օրվա համար. 17–35՝ Նա պիտի կանգնի Սիոն սարի վրա, մայրցամաքները կդառնան մեկ հող, և

Իսրայելի կորած ցեղերը կվերադառնան. 36–40՝ Ավետարանը վերականգնվել է Ջոզեֆ Սմիթի միջոցով, որ քարոզվի ողջ աշխարհում. 41–51՝ Տերը վրեժխնդրությամբ կիջնի ամբարիշտների վրա. 52–56՝ Դա կլինի նրա փրկագնվածների տարին. 57–74՝ Ավետարանը պիտի առաջ

ուղարկվի Սրբերի փրկելու համար և ամբարիշտների կործանման համար:

ԱԿԱՆՁ դրեք, ով իմ եկեղեցո՛ւ ժողովուրդ, ասում է Տերը՝ ձեր Աստվածը, և լսեք Տիրոջ խոսքը ձեր վերաբերյալ,–

2 Տերը, որը հանկարծակի պիտի ՝ գա իր տաճարը. Տերը, որը վար պիտի գա աշխարհի վրա անեծքով՝ ՝ դատաստանի համար. այո, բոլոր ազգերի վրա, որոնք մոռանում են Աստծուն, և ձեր միջի բոլոր անաստվածների վրա:

3 Քանզի նա ՝ կմերկացնի իր սուրբ բազուկը բոլոր ազգերի աչքի առաջ, և երկրի բոլոր ծայրերը պիտի տեսնեն իրենց Աստծո ՝ փրկությունը:

4 Ուստի, նախապատրաստվեք, նախապատրաստվե՛ք, ո՛վ իմ ժողովուրդ. սրբագործվեք, հավաքվեք միասին, ով իմ եկեղեցո՛ւ ժողովուրդ, Սիոնի հողի վրա, դուք բոլորդ, ում պատվիրված չէ մնալ:

5 Դուրս եկեք ՝ Բաբելոնից: ՝ Մաքուր եղեք, ո՛վ Տիրոջ սպասները կրողներ:

6 Կանչեք ձեր հանդիսավոր ժողովները և հաճախ ՝ խոսեք միմյանց հետ: Եվ թող ամեն մարդ կանչի Տիրոջ անունը:

7 Այո, ճշմարիտ ասում են ձեզ կրկին, ժամանակը եկել է, երբ Տիրոջ ձայնը գալիս է ձեզ. Դուրս եկեք Բաբելոնից. ՝ Հավաքվեք ազգերի միջից, ՝ շոքս հողմերից՝ երկնքի մի ծայրից մյուսը:

8 Առաջ ՝ ուղարկեք իմ եկեղեցու երեցներին դեպի հեռվում գտնվող ազգերը. դեպի ծովի ՝ կղզիները. առաջ ուղարկեք դեպի օտար երկրները. կոչ արեք բոլոր ազգերին, նախ՝ ՝ հեթանոսներին, իսկ հետո՝ ՝ հրեաներին:

9 Եվ ահա, տես՛ս, սա պիտի լինի նրանց կոչը և Տիրոջ ձայնը բոլոր մարդկանց. Առաջ գնացեք դեպի Սիոնի հողը, որպեսզի իմ ժողովրդի սահմաններն ընդարձակվեն, և որ նրա ՝ ցցերն ամրանան, և որպեսզի ՝ Սիոնը տարածվի մերձակա շրջաններում:

10 Այո, թող այս կոչը տարածվի բոլոր մարդկանց մեջ. Չարթներ և վեր կացեք և առաջ գնացեք Փեսային դիմավորելու. ահա, տես՛ս, ՝ Փեսան գալիս է. դուրս եկեք նրան դիմավորելու: Պատրաստվեք Տիրոջ ՝ մեծ օրվա համար:

11 Ուրեմն, ՝ արթուն մնացեք, որովհետև ՝ չգիտեք ոչ օրը, ոչ էլ ժամը:

12 Հետևաբար, թող նրանք,

133 2ա Մաղ. Գ.1,
ՎևՈՒ 36.8:
բ ՎևՈՒ 1.36:
սու՝ Հիսուս Քրիստոս –
Դատավոր:
3ա Ես. ԾԲ.10:
բ Ես. ԺԲ.2,
ԾԲ.10:
սու՝ Փրկագնման
ծրագիր. Փրկություն:
5ա Ալմա 5.57,
ՎևՈՒ 1.16:
սու՝ Բաբելոն.
Աշխարհիկություն:
բ Բ Տիմ. Բ.21,

3 Նեփի 20.41,
ՎևՈՒ 38.42:
սու՝ Անարատ,
Անարատություն:
6ա Մաղ. Գ.16–18:
7ա ՎևՈՒ 29.8:
սու՝ Իսրայել –
Իսրայելի ցրվելը:
բ Չաք. Բ.6–7,
Մար. ԺԳ.27:
8ա սու՝ Միսիոներական
աշխատանք:
բ Ես. ԺԱ.11,
1 Նեփի 22.4,
2 Նեփի 10.8, 20:

գ սու՝ Հեթանոսներ:
դ սու՝ Հրեաներ:
9ա Ես. ԾԳ.2:
սու՝ Յից:
բ սու՝ Սիոն:
10ա Մատ. ԻԵ.6,
ՎևՈՒ 33.17–18,
45.54–59:
սու՝ Փեսա:
բ ՎևՈՒ 1.12–14:
11ա Մար. ԺԳ.32–37,
ՉՍ–Ս 1.46, 48:
բ ՎևՈՒ 49.7:

ովքեր հեթանոսների ^ամեջ են, փախչեն ^բՍիոն:

13 Եվ թող նրանք, ովքեր ^աՀուդայից են, փախչեն ^բԵրուսաղեմ, դեպի Տիրոջ ^գտան ^դսարերը:

14 Դուրս եկեք ազգերի միջից, այսինքն՝ Բաբելոնից, ամբարըշտության միջից, որը հոգևոր Բաբելոնն է:

15 Բայց ճշմարիտ, այսպես է ասում Տերը. Թող ձեր փախուստը չլինի ^ահապճեպ, այլ թող բոլոր բաները պատրաստված լինեն ձեր առաջ. և նա, ով գնում է, թող ետ ^բչնայի, չլինի թե անսպասելի կործանում գա նրա վրա:

16 Ականջ դրեք և լսեք, ո՛վ երկրի բնակիչներ: ^աՈւնկնդրեք միասին, իմ եկեղեցո՛ւ երեցներ, և լսեք Տիրոջ ձայնը. քանզի նա կոչ է անում բոլոր մարդկանց և բոլոր մարդկանց, ամենուրեք, նա պատվիրում է ^բապաշխարել:

17 Քանզի ահա, Տեր Աստված առաջ է ^աուղարկել հրեշտակին, որը երկնքի միջից աղաղակում է՝ ասելով. Պատրաստ արեք Տիրոջ ճանապարհը և ^բուղիղ արեք նրա շավիղները. քանզի նրա ^գզալստի ժամը մոտ է,–

18 Երբ ^աԳառը կկանգնի Սիոն ^բսարի վրա, և նրա հետ ^գհարյուր

քառասունչորս հազարը՝ իր Հոր անունն իրենց ճակատների վրա գրված:

19 Ուստի, պատրաստվեք ^աՓեսայի ^բզալստին. գնացեք, դուրս եկեք նրան դիմավորելու:

20 Քանզի ահա, նա ^ականգնելու է Չիթենյաց սարի վրա և հզոր օվկիանոսի վրա, այսինքն՝ մեծ անդունդի վրա և ծովի կղզիների վրա և Սիոնի հողի վրա:

21 Եվ նա ^աՍիոնից իր ձայնը ^բկարճակի, և նա Երուսաղեմից կխոսի, և նրա ձայնը կլսվի բոլոր մարդկանց մեջ.

22 Եվ այդ ձայնը կլինի շատ ջրերի ^աձայնի պես, և ուժեղ ^բամպրոպի ձայնի պես, որը ^գքարուքանդ կանի սարերը և կվերացնի հովիտները:

23 Նա կպատվիրի մեծ անդունդին, և այն ետ կքաշվի դեպի հյուսիսային երկրները, և ^ակղզիները կդառնան մեկ հող.

24 Եվ ^աԵրուսաղեմի հողն ու Սիոնի հողը կվերադառնան իրենց տեղը, և երկիրը կլինի այնպես, ինչպես մինչև իր ^բբաժանման օրերին էր:

25 Եվ Տերը, այսինքն՝ Փրկիչը, կկանգնի իր ժողովրդի մեջ և ^ակթագավորի ամեն մարմնի վրա:

12ա Վև. 38.31, 42:

^բ սուր Սիոն:

13ա սուր Հուդա:

^բ սուր Երուսաղեմ:

^գ Սաղ. ճիբ. 1–9:

^դ Ես. Բ. 1–3,

Եզեկ. ԼԸ. 8:

15ա Ես. ԾԲ. 10–12,

Վև. 58.56:

^բ Ծն. ԺԹ. 17, 26,

Ղուկ. Թ. 62:

16ա Վև. 1.1–6:

^բ սուր Ապաշխարել,

Ապաշխարություն:

17ա Վև. 13.1, 27.7–8,

88.92:

^բ Ես. Խ. 3–5:

^գ Սաղ. Գ. 1:

18ա Հայտ. ԺԳ. 1:

սուր Աստծո Գառը:

^բ Վև. 84.2:

^գ Հայտ. Է. 1–4:

19ա սուր Փեսա:

^բ Սառ. ԻԵ. 1–13,

Վև. 33.17–18, 88.92:

սուր Հիսուս Քրիստոսի

երկրորդ զալուստը:

20ա Չաք. ԺԳ. 4,

Վև. 45.48–53:

21ա Ես. Բ. 2–4:

^բ Հովել Գ. 16, Ամովս Ա. 2:

22ա Եզեկ. ԽԳ. 2,

Հայտ. Ա. 15,

Վև. 110.3:

^բ Սաղ. ՀԷ. 18,

Հայտ. ԺԳ. 2:

^գ Գառ. Ե. 5, Ես. Խ. 4,

ԿԳ. 1, Հայտ. ԺԶ. 20,

Վև. 49.23, 109.74:

23ա Հայտ. Զ. 14:

24ա սուր Երուսաղեմ:

^բ Ծն. Ժ. 25:

սուր Երկիր – Երկրի

բաժանումը:

25ա սուր Հիսուս Քրիստոս –

Քրիստոսի

հազարամյա

թագավորությունը:

26 Եվ նրանք, ովքեր "հյուսիսային երկրներում են, պիտի հիշվեն Տիրոջ առաջ. և նրանց մարգարեները կլսեն նրա ձայնը և այլևս ետ չեն պահի իրենց. և նրանք կգարկեն ժայռերին, և սառույցը ցած կհոսի նրանց ներկայությունից:

27 Եվ "մայրուղի կզցվի մեծ անդունդի միջով:

28 Նրանց թշնամիները նրանց զոհը կդառնան,

29 Եվ "անբերրի անապատներում կենդանի ջրի ավազաններ կգոյանան. և ճաքճաք գետինն այլևս չի լինի ծարավ հող:

30 Եվ նրանք իրենց հարուստ զանձերն առաջ կբերեն "Եփրեմի զավակների՝ իմ ծառաների համար:

31 Եվ հավիտենական "բլուրների սահմանները պիտի դողան նրանց ներկայությունից:

32 Եվ այնտեղ նրանք վայր կիջնեն և կպսակվեն փառքով, այսինքն՝ Սիոնում, Տիրոջ ծառաների, այսինքն՝ Եփրեմի զավակների ձեռքով:

33 Եվ նրանք կլցվեն հավիտենական ուրախության "երգերով:

34 Ահա, սա է հավիտենական Աստծո օրհնությունն Իսրայելի "ցեղերի վրա, և առավել արժեքավոր օրհնությունը "Եփրեմի և նրա ընկերների գլխին:

35 Եվ նրանք ևս, որ "Հուդայի ցեղից են, իրենց ցավից հետո պիտի "սրբությամբ սրբազործվեն Տիրոջ առաջ, որպեսզի բնակվեն նրա ներկայության մեջ օր ու գիշեր՝ հավիտյան հավիտենից:

36 Եվ արդ, ճշմարիտ ասում է Տերը, որպեսզի այս բաները հայտնի դառնան ձեր մեջ, ով երկրի՝ բնակիչներ. Ես ուղարկել եմ իմ "հրեշտակին, որը թռչում է երկնքի մեջ և ունի հավիտենական "ավետարանը, որը հայտնվել է ոմանց և մարդուն է հանձնել այն, որը շատերին պիտի հայտնվի, ովքեր ապրում են երկրի վրա:

37 Եվ այս "ավետարանը պիտի "քարոզվի Գամեն ազգի և ցեղի և լեզվի և ժողովրդի:

38 Եվ Աստծո ծառաներն առաջ պիտի գնան՝ բարձր ձայնով ասելով. Վախեցեք Աստծուց և փառք տվեք նրան, քանզի նրա դատաստանի ժամը եկել է.

39 Եվ "երկրպագեք նրան, ով արարել է երկինքը և երկիրը և ծովերը և ջրերի աղբյուրները, -

40 Կանչելով Տիրոջ անունն օր ու գիշեր՝ ասելով. Երանի՜ թե "ճեղքեիր երկինքները և վայր իջնեիր, որպեսզի սարերը քո ներկայությունից ցած հոսեին:

41 Եվ այն կպատասխանվի նրանց գլխին. քանզի Տիրոջ ներկայությունը մնան պիտի լինի

26ա Երեմ. Ժ2.14-15, ՎևոՒ 110.11: սոՒ Իսրայել - Իսրայելի տաաը կորած ցեղերը:
27ա Ես. ԺԱ.15-16, 2 Նեփի 21.16:
29ա Ես. ԼԵ.6-7:
30ա Չաք. Ժ.7-12: սոՒ Եփրեմ - Եփրեմի ցեղը:

31ա Ծն. ԽԹ.26:
33ա Ես. ԼԵ.10, ԾԱ.11, ՎևոՒ 66.11:
34ա սոՒ Իսրայել - Իսրայելի տասներկու ցեղերը:
p Ծն. ԽԸ.14-20, Ա Մն. Ե.1-2, Եթեր 13.7-10:
35ա սոՒ Հուդա - Հուդայի ցեղը:

p սոՒ Սրբություն:
36ա Հայտ. ԺԳ.6-7, ՎևոՒ 20.5-12:
p սոՒ Ավետարանի վերականգնումը:
37ա սոՒ Ավետարան:
p սոՒ Միսիոներական աշխատանք, Քարոզել:
q ՎևոՒ 42.58:
39ա սոՒ Երկրպագել:
40ա Ես. ԿԳ.1-2:

հալեցնող կրակի, որ վառում է, և կրակի, որը ^աեռացնում է ջուրը:

42 Ո՛վ Տեր, դու պիտի վայր իջնես, որպեսզի հայտնի դարձնես անունդ քո թշնամիներին, և բոլոր ազգերը պիտի դողան քո ներկայությունից,–

43 Երբ դու անես սոսկալի բաներ, որ նրանք չեն սպասում.

44 Այո, երբ դու վայր իջնես, և սարերը ցած հոսեն քո ներկայությունից, դու ^ակհանդիպես նրան, ով ուրախանում և արդարություն է գործում, ով հիշում է քեզ քո ուղիներում:

45 Քանզի աշխարհի սկզբից ի վեր, մարդիկ չեն լսել և նրանց ականջին չի հասել, ոչ էլ որևէ աչք է տեսել, ո՛վ Աստված, բացի քեզանից, թե ինչ մեծ բաներ ես դու ^ապատրաստել նրա համար, ով ^բսպասում է քեզ:

46 Եվ պիտի ասվի. ^աՈ՞վ է սա, որ ^բիջնում է երկնքի Աստծուց, ներկված հանդերձներով. այո՛, անձանոթ վայրերից, փառավոր զգեստ հագած, որ ճամփորդում է իր գործության մեծության մեջ:

47 Եվ նա կասի. Ես նա եմ, որ խոսում է արդարությամբ, որ գորավոր է փրկելու:

48 Եվ Տիրոջ զգեստները կլինեն ^ակարմիր, և նրա հանդերձները՝ նրա պես, ով կոխ է տալիս հնձանը:

49 Եվ այնքան մեծ կլինի նրա ներկայության փառքը, որ ^աարևն

ամոթից կծածկի իր երեսը, և լուսինը ետ կպահի իր լույսը, և աստղերը կնետվեն իրենց տեղերից:

50 Եվ կլսվի նրա ձայնը. Ես մենակ եմ ^ակոխ տվել հնձանը, և դատաստան բերել բոլոր մարդկանց վրա. և ոչ ոք չկար ինձ հետ.

51 Եվ ես նրանց կոխ տվեցի իմ կատաղության մեջ և տրորեցի իմ բարկության մեջ, և նրանց արյունն իմ հանդերձների վրա ^ացանեցի և բոլոր իմ զգեստը բծոտեցի. քանզի դա վրեժխնդրության օրն էր, որը կար իմ սրտում:

52 Եվ այժմ գալիս է իմ փրկազրկվածների տարին. և նրանք պիտի հիշատակեն իրենց Տիրոջ ողորմությունը, և այն ամենը, ինչ նա շնորհել է նրանց իր բարությամբ և իր ողորմությամբ հավիտյանս հավիտենից:

53 Բոլոր նրանց ^աչարչարանքներով նա չարչարվել է: Եվ նրա ներկայության հրեշտակը փրկել է նրանց. և իր ^բսիրով ու իր գթությամբ նա ^գփրկագնել է նրանց, և պահել է նրանց, և պահպանել է նրանց բոլոր հին օրերում.

54 Այո, և նաև ^աԵնովքը, և բոլորը, ովքեր նրա հետ էին. մարգարեները, որ մինչև նա էին. և նաև ^բՆոյը, և նրանք, ովքեր նրանից առաջ էին. և նաև ^գՄովսեսը, և նրանք, ովքեր նրանից առաջ էին.

55 Եվ Մովսեսից մինչև Եղիա, և Եղիայից մինչև Հովհաննես, որը

41ա Հոր ԽԱ.31:
44ա Ա Թես. Գ.14-17:
45ա Ես. ԿԳ.4,
Ա Կոր. Բ.9:
բ Ողբ. Գ.25,
2 Նեփի 6.7, 13:
46ա Ես. ԿԳ.1-2:
բ սուր Հիսուս Քրիստոսի երկրորդ գալուստը:
48ա Ծն. ԽԹ.11-12,

Ղուկ. ԻԲ.44,
Հայտ. ԺԹ.11-15,
ՋՄԹ, Հայտ. 19.15,
Մոսիա 3.7,
ՎևՈՒ 19.18:
49ա Ես. ԺԳ.10, ԻԳ.23,
ՎևՈՒ 45.42, 88.87:
50ա Ես. ԿԳ.2-3,
ՎևՈՒ 76.107, 88.106:
51ա Ղև. Բ.30:

53ա Ես. ԿԳ.4-9:
բ սուր Գթություն:
գ սուր Փրկագնել, Փրկագնված, Փրկագնում:
54ա սուր Ենովք:
բ սուր Նոյ՝ Աստվածաշնչյան հայրապետ:
գ սուր Մովսես:

Քրիստոսի հետ էր նրա "հարու-
քյան ժամանակ, և սուրբ առա-
քյալները, Աբրահամի, Իսահակի
և Հակոբի հետ, կլինեն Գառի
ներկայության մեջ:

56 Եվ "սրբերի ⁹գերեզմանները
⁹կբացվեն. և նրանք առաջ կգան
ու կկանգնեն Գառի ⁹աջ կողմում,
երբ նա կանգնած կլինի Սիոն
⁶սարի և սուրբ քաղաքի՝ ⁹Նոր
Երուսաղեմի վրա. և նրանք կեր-
զեն ⁶Գառի ²երզն օր ու գիշեր՝
հավիտյան հավիտենից:

57 Եվ այս պատճառով, որպես-
զի մարդիկ դառնան այն "փառ-
քերի ճաշակողները, որոնք պիտի
հայտնի դարձվեն, Տերն առաջ
է ուղարկել իր ⁹ավետարանի
լրիվությունը, իր հավիտենական
ուխտը, տրամաբանելով պարզ
ու հասարակ ձևով:

58 Որպեսզի թույլերին նախա-
պատրաստի այն բաների համար,
որոնք պիտի գան երկրի վրա, և
Տիրոջ հանձնարարության համար,
այն օրը, երբ "թույլը կկարկամեց-
նի իմաստունին, և ⁹փոքրը կդառ-
նա մեծ ազգ, և ⁹երկուսը բյուրա-
վորներին կստիպեն փախչել:

59 Եվ երկրի թույլ բաների
միջոցով Տերը պիտի "կախի ազ-
գերն իր Հոգու զորությամբ:

60 Եվ դրա համար էին տրվել
այս պատվիրանները. այն օրը,
երբ դրանք տրվել էին, պատվիր-
վել էր, որ դրանք պահվեին աշ-
խարհից, բայց այժմ առաջ պիտի
"գնան դեպի ⁹ամեն մարմին,–

61 Եվ դա՝ Տիրոջ մտքի և կամքի
համաձայն, որը կառավարում է
ամեն մարմնի վրա:

62 Եվ նրան, ով "ապաշխարում
է և իրեն ⁹սրբագործում է Տիրոջ
առաջ, պիտի տրվի ⁹հավերժա-
կան կյանք:

63 Իսկ նրանց համար, ովքեր
"ուշք չեն դարձնում Տիրոջ ձայ-
նին, կկատարվի այն, ինչ գրվել
է Մովսես մարգարեի կողմից,
որ նրանք ⁹կկտրվեն ժողովրդի
միջից:

64 Եվ նաև այն, ինչ գրվել է
"Մաղաքիա մարգարեի կողմից.
Քանզի ահա, գալիս է ⁹օրը, որը
⁹կայրի թոնրի պես, և բոլոր
հպարտները, այո, և բոլորը, որ
ամբարշտորեն են գործում, հարդի
պես կլինեն. և օրը, որ գալիս է,
կայրի նրանց, ասում է զորաց
Տերը, այնպես որ նրանց չի թողնի
ո՛չ արմատ, ո՛չ ճյուղ:

65 Ուստի, նա կլինի Տիրոջ պա-
տասխանը նրանց.

66 Այն օրը, երբ ես եկա յուրային–

55ա սո՛ւ Հարություն:
56ա սո՛ւ Սուրբ:
p ՎևՈՒ 29.13:
q ՎևՈՒ 45.45–46,
88.96–97:
η Մատ. ԻԵ.33–34:
է Ես. ԻԳ.23, Հայտ. ԺԳ.1,
ՎևՈՒ 76.66, 84.2,
98–102:
q սո՛ւ Նոր Երուսաղեմ:
է սո՛ւ Աստժո Գառը:
p Հայտ. ԺԵ.3,
ՎևՈՒ 84.98–102:
57ա սո՛ւ Փառքի
աստիճաններ:

p սո՛ւ Ավետարան:
58ա Մատ. ԺԱ.25,
Ա Կոր. Ա.27,
Ալմա 32.23, 37.6–7:
p Ես. Կ.22:
q Բ Օր. ԼԲ.29–30:
59ա Միքիա Գ.11–13:
60ա ՎևՈՒ 104.58–59:
p ՎևՈՒ 1.2:
62ա սո՛ւ Ապաշխարել,
Ապաշխարություն:
p ՎևՈՒ 88.74:
սո՛ւ Սրբագործում:
q սո՛ւ Հավերժական
կյանք:

63ա սո՛ւ Ականջ ղնել:
p Գոր. Գ.22–23,
1 Նեփի 22.20–21,
3 Նեփի 20.23, 21.11,
ՎևՈՒ 1.14,
ՋՄ–Պ 1.40:
64ա Մաղ. Գ.1:
սո՛ւ Մաղաքիա:
p ՋՄ–Պ 1.36–37:
q Ես. ԿԶ.15–16,
1 Նեփի 22.15,
3 Նեփի 25.1,
ՎևՈՒ 29.9, 64.24:
սո՛ւ Երկիր – Երկրի
մաքրագործումը:

ների մեջ, ձեզանից ոչ ոք՝ չընդունեց ինձ, և դուք դուրս բշվեցիք:

67 Երբ ես կանչեցի կրկին, ոչ ոք չկար, որ պատասխաներ. այնուամենայնիվ, իմ ձեռքն ամենևին չէր կարճացել, որ ես չկարողանայի փրկագնել, ոչ էլ իմ ազատելու ղորությունն էր թուլացել:

68 Ահա, իմ սաստումով ես չորացնում եմ ծովերը: Ես գետերն անապատ եմ դարձնում. նրանց ձկները հոտում են և ծարավից սատկում:

69 Ես երկինքները խավար եմ հագցնում և քուրճը նրանց ծածկոցը դարձնում:

70 Եվ ՝սաս կունենաք դուք իմ

ձեռքից, - դուք կհանգչեք վշտի մեջ:

71 Ահա, տե՛ս, ոչ ոք չկա, որ ազատի ձեզ. քանզի դուք չհնազանդվեցիք իմ ձայնին, երբ ես կանչեցի ձեզ երկինքներից. դուք չհավատացիք իմ ծառաներին, և երբ նրանք ՝ուղարկվել էին ձեզ մոտ, դուք չընդունեցիք նրանց:

72 Ուստի, նրանք ՝կնքեցին վկայությունը և կապեցին օրենքը, և դուք հանձնվեցիք խավարին:

73 Սրանք կզման դրսի խավարը, որտեղ ՝լաց ու կոժ է և աստամների կրճտոց:

74 Ահա Տերը՝ ձեր Աստվածն է խոսել դա: Ամեն:

ԲԱԺԻՆ 134

Հայտարարություն կառավարությունների և ընդհանուր առմամբ օրենքների վերաբերյալ հավատքի մասին, ընդունված միաձայն քվեարկումով, Եկեղեցու ընդհանուր ժողովում, որն անցկացվել էր Կիրթլենդում, Օհայո, 1835թ. օգոստոսի 17-ին (History of the Church, 2.247-249): Առիթը Եկեղեցու ղեկավարների ժողովն էր, որը հրավիրվել էր, որպեսզի քննարկվեր Վարդապետություն և Ուխտերի առաջին հրատարակության համար առաջարկված բովանդակությունը: Այդ ժամանակ այս հայտարարությանը տրվել էր հետևյալ առաջաբանը. Որպեսզի երկրային կառավարությունների և, ընդհանուր առմամբ, օրենքների վերաբերյալ մեր հավատքը սխալ չմեկնաբանվի, ոչ էլ սխալ հասկացվի, մենք հարկ համարեցինք այս հատորի վերջում ներկայացնել մեր կարծիքն այդ հարցի վերաբերյալ (History of the Church, 2.247):

1-4՝ Կառավարությունները պետք է պահպանեն խղճի և երկրպագության ազատությունը. 5-8՝ Բոլոր մարդիկ պետք է սատարեն իրենց կառավարություններին և պատվով ու հարգանքով վերաբերվեն օրենքին.

9-10՝ Կրոնական կազմակերպությունները չպետք է ստանձնեն քաղաքացիական իշխանությունների դերը. 11-12՝ Մարդիկ իրավասու են պաշտպանելու իրենց և իրենց ունեցվածքը:

66ա Հովհ. Ա.11:
67ա 2Նեփի 28.32:
բ Ես. Ծ.2, 2Նեփի 7.2:
68ա Ել. ԺԳ.21,
Հեւ. Գ.14-17:

70ա Ես. Ծ.11:
71ա Բ Մն. ԼԶ.15-16,
Երեմ. ԽԳ.4-5:
72ա Ես. Ը.16-20:
73ա Մատ. Ը.11-12,

Գուլ. ԺԳ.28,
ՎևոՒ 19.5:
սոՒ Հոգևոր խավար.
Գժոխք:

ՄԵՆՔ հավատում ենք, որ ^ակառավարությունները հաստատվել են Աստծու կողմից՝ մարդու օգտի համար. և որ նա մարդկանց ^բպատասխանատու է համարում իրենց գործողությունների համար նրանց հանդեպ, երբ նրանք օրենքներ են ընդունում և գործադրում՝ հասարակության բարիքի և ապահովության համար:

2 Մենք հավատում ենք, որ ոչ մի կառավարություն չի կարող խաղաղ գոյատևել, եթե չկազմվեն այնպիսի օրենքներ ու պահվեն անխախտ, որոնք ամեն անհատի կապահովեն ^ախղճի գործադրման ^բազատությունը, սեփականության և այն տնօրինելու իրավունքը և կյանքի ^գպաշտպանությունը:

3 Մենք հավատում ենք, որ բոլոր կառավարություններն անխուսափելիորեն պետական և դատական ^ապաշտոնյաների պահանջ ունեն՝ իրենց օրենքները գործի դնելու համար. և որ այդպիսիներին, ովքեր անաշառությամբ ու արդարադատությամբ կգործադրեն օրենքը, պետք է գտնել և սատարել՝ ժողովրդի ձայնով, եթե հանրապետություն է, կամ միապետի կամքով:

4 Մենք հավատում ենք, որ կրոնը հաստատվել է Աստծո կողմից. և որ վերջինիս գործադրման մեջ մարդիկ պատասխանատու են նրան և միմիայն նրան, եթե նրանց կրոնական համոզմունքները նրանց չեն մղում՝ ոտնահարելու ուրիշների իրավունքներն ու ազատությունները. բայց մենք

չենք հավատում, որ մարդկային օրենքն իրավունք ունի միջամտել, հրամանագրելով ^աերկրպագության կանոններ, սահմանափակելով մարդկանց խիղճը, ոչ էլ թելադրել հասարակական կամ անձնական պաշտամունքի ձևեր. որ դատական պաշտոնյաները պետք է սանձեն ոճիրը, բայց երբեք չիշխեն խղճի վրա. պետք է պատժեն հանցանքը, բայց երբեք չճնշեն հոգու ազատությունը:

5 Մենք հավատում ենք, որ բոլոր մարդիկ պարտավոր են աջակցել և սատար կանգնել համապատասխան կառավարությանը, որտեղ նրանք բնակվում են, քանի դեռ այդպիսի կառավարությունների օրենքներով պաշտպանվում են իրենց բնատուր և անօտարելի իրավունքները. և որ խռովությունն ու ^աապստամբությունն անպատեհ են մման ձևով պաշտպանվող ամեն քաղաքացու համար, և պետք է պատժվեն համապատասխան ձևով. և որ բոլոր կառավարություններն իրավունք ունեն սահմանել այնպիսի օրենքներ, որոնք, ըստ իրենց դատողության, լավագույնն են համարվում հասարակական շահերն ապահովելու համար. միևնույն ժամանակ, այնուամենայնիվ, սրբազան պահելով խղճի ազատությունը:

6 Մենք հավատում ենք, որ ամեն մարդ պետք է հարգվի իր տեղում, կառավարական ու դատական մարմիններն իրենց դիրքում, նշանակված լինելով՝ պաշտպանելու անմեղին և պատժելու

134 1ա ՎևոՒ 98.4–7, ՀՀ 1.12:
բ սոՒ Հաշիվ, Պատասխանատու, Պատասխանատվություն:

2ա սոՒ Խղճմտանք:
բ սոՒ Կամքի ազատություն:
գ ՎևոՒ 42.18–19:
3ա ՎևոՒ 98.8–10:

4ա Ալմա 21.21–22, ՀՀ 1.11:
սոՒ Երկրպագել:
5ա ՀՀ 1.12:
սոՒ Ապստամբություն:

մեղավորին. և որ ^աօրենքները հարգելն ու պատվելը բոլոր մարդկանց պարտքն է, քանի որ Կառնը դրանց, խաղաղության և ներդաշնակության տեղը կգրավի անիշխանությունն ու անաբեկչությունը. մարդկային օրենքները հաստատվել են հատուկ նպատակի՝ մեր շահերը կանոնակարգելու համար, որպես անհատներ ու ազգեր, մի մարդու և մեկ ուրիշի միջև. իսկ աստվածային օրենքները տրվել են երկնքից, կանոններ սահմանելով հոգևոր հարցերում, հավատքի և երկրպագության համար, որոնց՝ երկուսի համար էլ մարդ պատասխան պիտի տա իր Արարչին:

7 Մենք հավատում ենք, որ իշխանությունները, պետությունները և կառավարություններն իրավունք ունեն և պարտավոր են օրենքներ սահմանել՝ ի պաշտպանություն բոլոր քաղաքացիների, նրանց կրոնական հավատքն ազատ գործադրելու համար. բայց մենք չենք հավատում, որ նրանք իրավունք ունեն, ըստ արդարադատության, գրկել քաղաքացիներին այդ արտոնությունից, կամ անօրինական համարել նրանց համոզմունքները, քանի դեռ հարգանք ու պատկառանք է ցուցաբերվում օրենքների հանդեպ, և այդպիսի կրոնական համոզմունքները չեն արդարացնում խռովությունները, ոչ էլ դավադրությունները:

8 Մենք հավատում ենք, որ հանցագործությունը պետք է ^ապատրժվի՝ հանցանքի բնույթին համապատասխան. որ սպանությունը, դավաճանությունը, կողոպուտը,

գողությունը և ընդհանուր խաղաղության խախտումը, բոլոր ձևերով, պետք է պատժվեն՝ հանցագործության բնույթին և մարդկանց մեջ եղած չար միտումին համապատասխան, այն կառավարության օրենքներով, որտեղ գործվել է հանցանքը. և հասարակական խաղաղության ու անդորրի համար՝ բոլոր մարդիկ պետք է քայլ կատարեն և գործածեն իրենց կարողությունը, որպեսզի լավ օրենքները խախտողները պատժի բերվեն:

9 Մենք արդար չենք համարում կրոնական ազդեցությունը քաղաքացիական կառավարության հետ խառնելը, որով մի կրոնական կազմակերպությունը քաջալերվում է, իսկ մյուսը գրկվում է իր հոգևոր արտոնություններից, և նրա անդամների անհատական իրավունքները, որպես քաղաքացիներ, մերժվում են:

10 Մենք հավատում ենք, որ բոլոր կրոնական կազմակերպություններն իրավունք ունեն անկարգապահ վարքի համար իրենց անդամների հետ վարվել այդ կազմակերպության կանոնների ու կանոնակարգումների համաձայն. պայմանով սակայն, որ այդ վարվելաձևը կառնչվի ընկերակցությանը և լավ դիրքին. բայց մենք չենք հավատում, որ որևէ կրոնական կազմակերպություն լիազորություն ունի մարդկանց դատել սեփականության կամ կյանքի իրավունքի հարցում՝ վերցնելով նրանցից այս աշխարհի բարիքները կամ վտանգի ենթարկելով նրանց կյանքը կամ մարմինը, կամ որևէ ֆիզիկական պատժի ենթար-

կելով նրանց: Նրանք կարող են միայն «հեռացնել նրանց իրենց կազմակերպությունից և զրկել նրանց իրենց ընկերակցությունից:

11 Մենք հավատում ենք, որ մարդիկ պետք է դիմեն քաղաքացիական օրենքին՝ բոլոր չարագործությունների ու վիրավորանքների փոխհատուցման համար, երբ անձնական վիրավորանք է հասցվել, կամ խախտվել է սեփականության իրավունքը կամ անձի հեղինակությունը, որտեղ որ նման օրենքներ են գործում, որոնք կպաշտպանեն նրանց. բայց մենք հավատում ենք, որ անհետաձգելի դեպքերում, երբ հնարավոր չէ անհապաղ դիմել օրենքներին և սփոփանք ձեռք բերել, բոլոր մարդիկ արդարացված են, երբ պաշտպանում են իրենց, իրենց բարեկամներին ու սեփականությունը և կառավարությանը՝ անօրինական ոտնձգությունից ու

բոլոր անձանց իրավունքների ոտնահարումից:

12 Մենք հավատում ենք, որ արդար է ավետարանը երկրի ազգերին «քարոզելը և արդարներին զգուշացնելը, որ իրենց փրկեն աշխարհի ապականությունից. բայց մենք հավատում ենք, որ ճիշտ չէ որևէ ձևով միջամտել ստրուկ ծառաներին, ոչ էլ նրանց քարոզել ավետարանը, ոչ էլ նրանց մկրտել, հակառակ իրենց տերերի կամքի, ոչ էլ հաղորդակցվել նրանց հետ կամ ինչ-որ չափով ազդել նրանց վրա, որ անբավարարվածություն զգան իրենց վիճակով այս կյանքում, այդպիսով վտանգի ենթարկելով մարդկանց կյանքը. նման միջամտությունները, մենք հավատում ենք, որ անօրինական են ու անարդար, և վտանգավոր են յուրաքանչյուր կառավարության համար, որը թույլատրում է ստրկության մեջ պահել մարդկանց:

ԲԱԺԻՆ 135

Ջոզեֆ Սմիթ Մարգարեի և նրա եղբայր Հայրում Սմիթ հայրապետի նահատակությունը Քարթեջում, Իլլինոյս, 1844թ. հունիսի 27-ին (History of the Church, 6.629–631): Այս փաստաթուղթը գրվել է Տասներկուսի Խորհրդի անդամ Երեց Ջոն Թեյլորի կողմից, որը վկա է եղել այդ իրարածություններին:

1–2՝ Ջոզեֆը և Հայրումը նահատակվել են Քարթեջի բանտում. 3՝ Ազդարարվում է Մարգարեի նշանավոր դիրքը. 4–7՝ Նրանց անմեղ արյունը վկայում է աշխատանքի ճշմարտացի ու աստվածային լինելու մասին:

ԱՆՔԵԼՈՒ համար այս գրքի և Մորմոնի Գրքի վկայությունը, մենք հայտարարում ենք «Ջոզեֆ Սմիթ Մարգարեի և Հայրում Սմիթ հայրապետի ^բնահատակության մասին: Նրանք սպանվեցին ^գՔարթեջի բանտում,

10ա սուր Հեռացում:
12ա սուր Միսիոներական աշխատանք. Քարոզել:

135 1ա սուր Սմիթ Ջոզեֆ կրտսեր: ք ՎեՆՈՒ 5.22, 6.30: սուր Նահատակ,

Նահատակություն: ց սուր Քարտեջի բանտ (ԱՄՆ):

1844թ. հունիսի 27-ին, ցերեկվա ժամը հինգի սահմաններում, զինված ամբոխի կողմից, – սև ներկված, – բաղկացած 150–200 հոգուց: *՝*Հայրումը սպանվեց առաջինը և հանգիստ վայր ընկավ՝ բացականչելով. *Ես մեռած եմ: Ջոզեֆը սպանվեց, պատուհանից դուրս ցատկելու փորձի ժամանակ՝ բացականչելով. Ո՛վ Տեր իմ Աստված: Արդեն մահացած՝ նրանց երկուսի վրա էլ դաժանաբար կրակեցին, և երկուսն էլ ստացան չորսական գնդակ:*

2 *՝*Ջոն Թեյլորը և Վիլլարդ Ռիչարդսը, երկուսն էլ Տասներկուսից, միակ մարդիկ էին սենյակում այդ ժամանակ. առաջինը՝ ծանր վիրավորվել էր չորս գնդակից, բայց ներկայումս ապաքինվել է. վերջինս, Աստծո նախախնամությամբ, ազատվել էր, առանց նույնիսկ իր պատմունանի վրա մի անցքի:

3 Ջոզեֆ Սմիթը՝ Տիրոջ ՝Մարգարեն և ՝Տեսանողը, ավելի շատ բան արեց այս աշխարհի մարդկանց փրկության համար, քան որևէ այլ մարդ, որը երբևէ ապրել է նրա վրա, բացի միայն Հիսուսից: Քսան տարիների կարճ ժամանակահատվածում նա առաջ բերեց Մորմոնի Գիրքը, որը նա թարգմանեց Աստծո պարգևով ու գորտությամբ, և որը նրա միջոցով հրատարակվեց երկու աշխարհամասերում. հավիտենական ավետարանի Գլխավորությունը պարունակող այդ գիրքը նա ուղարկեց դեպի աշխարհի չորս կողմերը. նա առաջ բերեց այն հայտնություններն ու

պատվիրանները, որոնք կազմում են այս Վարդապետություն և Ուխտեր գիրքը և շատ այլ իմաստուն փաստաթղթեր ու հրահանգներ՝ մարդկանց զավակների օգտի համար. նա հավաքեց բազմահազար Վերջին Օրերի Սրբերի, հիմնադրեց մի մեծ ՝քաղաք և համբավ ու անուն թողեց, որը չի կարող կորչել: Նա ապրեց փառքով և մահացավ փառքով՝ Աստծո և իր ժողովրդի աչքի առաջ. և ինչպես հին ժամանակների Տիրոջ օձյալներից շատերը, նա կնքեց իր առաքելությունը և իր գործերը սեփական ՝արյամբ. և այդպես արեց նաև նրա եղբայրը՝ Հայրումը: Կյանքում նրանք անբաժան էին, մահվան մեջ էլ նրանք շառանձնացան:

4 Երբ Ջոզեֆը գնում էր Քարթեջ՝ հանձնվելու օրենքի թվացյալ պահանջներին, իր սպանությունից երկու-երեք օր առաջ նա ասաց. Ես գնում եմ ինչպես ՝գառը՝ մորթվելու. սակայն ես հանգիստ եմ, ինչպես ամառային առավոտը. իմ խիղճը մաքուր է Աստծո առաջ և բոլոր մարդկանց առաջ: ԵՍ ԿՄԵՌՆԵՄ ԱՆՍԵՂ, ԵՎ ԱՅՆՈՒԱՄԵՆ ԱՅՆԻՎ, ԻՄ ՄԱՍԻՆ ԿԱՍՎԻ, – ՆԱ ՍՊԱՆՎԵՑ ՍԱՌՆԱՐՅՈՒՆ ՁԵՎՈՎ: Այդ նույն առավոտյան, երբ Հայրումը պատրաստ էր գնալու, – կարելի՞ է ասել՝ մորթվելու. այո՞, բանգի դա այդպես էր, – նա կարդաց հետևյալ պարբերությունը Մորմոնի Գրքից, Եթերի գրքի տասներկուերորդ գլխի վերջում, և ծալեց էջն այդ մասում.

5 *Եվ եղավ այնպես, որ ես աղոթեցի Տիրոջը, որ նա շնորհ տար*

<p>1<i>դ</i> սոՒ Սմիթ Հայրում: 2<i>ա</i> սոՒ Թեյլոր Ջոն: 3<i>ա</i> սոՒ Մարգարե: ք սոՒ Տեսանող:</p>	<p>գ ՎեՌԻ 35.17, 42.12: սոՒ Ավետարանի վերականգնումը: դ սոՒ Նավու, Իլիմոյս</p>	<p>(ԱՄՆ): ե Եբբ. Թ. 16–17, ՎեՌԻ 136.39: 4<i>ա</i> Ես. ԾԳ.7:</p>
---	--	--

հեթանոսներին, որ նրանք կարողանային գթություն ունենալ: Եվ եղավ այնպես, որ Տերն ասաց ինձ. Եթե նրանք գթություն չունենան, դա քեզ համար նշանակություն չունի, դու եղել ես հավատարիմ. ուստի, քո հանդերձները “մաքուր կդարձվեն: Եվ քանի որ դու տեսար քո բույրությունը, դու ուժեղ կդարձվես, մինչև իսկ նստելու այն տեղում, որը ես պատրաստել եմ իմ Հոր ասպարանքներում: Եվ այժմ ես... մնաք բարով եմ հղում հեթանոսներին, այո, և նաև իմ եղբայրներին, որոնց ես սիրում եմ, մինչև մենք կհանդիպենք Քրիստոսի՝ Քաղաքի առաջ, որտեղ բոլոր մարդիկ կիմանան, որ իմ հանդերձներն արատավորված չեն ձեր արյունով:՝ 4Կտակարարները մահացել են, և նրանց կտակն ուժի մեջ է:

6 Հայրում Սմիթը 1844թ. փետրվարին դարձել էր քառասունչորս տարեկան, իսկ Ջոզեֆ Սմիթի երեսունուրթը լրացել էր 1843թ. դեկտեմբերին. և, այսուհետև, նրանց անունները կդասվեն կրոնի մահատակների թվում. և ամեն ազգի կարդացողի կիռը վի, որ Մորմոնի Գրքի և եկեղեցու այս՝ Վարդապետություն և Ուխտեր գրքի համար վճարվել է տասանհինգերորդ դարի լավագույն արյունը, որպեսզի դրանք առաջ բերվեն՝ այս քանդված աշխարհի փրկության համար. և որ, եթե կրակը կարող է խանձել “կանաչ ծառը, Աստծո փառքի համար, որքան հեշտությամբ այն կայրի չոր ծառերը՝

այգին ապականությունից մաքրելու համար: Նրանք ապրեցին փառքի համար. նրանք մահացան փառքի համար. և փառքն է նրանց հավերժական վարձքը: Դարեղար նրանց անունները պիտի անցնեն սերունդներին, որպես գոհարներ սրբագործվածների համար:

7 Նրանք մեղավոր չէին որևէ հանցանքում, ինչպես նախկինում շատ անգամ արդարացվել էին, և բանտարկվել էին դավաճան ու ամբարիշտ մարդկանց դավադրությամբ. և նրանց *անմեղ արյունը*, Քարթեջի բանտի հատակին, «մորմոնականությանը» կցված մեծ կնիք է, որը չի կարող մերժվել որևէ դատարանի կողմից երկրի վրա. և նրանց *անմեղ արյունը*, Իլինոյս նահանգի զինանշանի վահանակի վրա, նահանգապետի խոստման պես կոտրված նահանգի հավատքով, վկայություն է հավիտենական ավետարանի մասին, որն ամբողջ աշխարհը չի կարող կասկածի ենթարկել. և նրանց *անմեղ արյունը*, Միացյալ Նահանգների ազատության դրոշի և նրա *մեծ կանոնադրության* վրա, Հիսուս Քրիստոսի կրոնի համար մի դեսպան է, որը կոհիպչի ազնիվ մարդկանց սրտերին բոլոր ազգերի մեջ. և նրանց *անմեղ արյունը*, Հովհաննեսի տեսած “գոհասեղանի մոտի բոլոր մյուս նահատակների անմեղ արյան հետ, կաղաղակի առ Չորաց Տերը, մինչև որ նա վրեժ առնի այդ արյան համար երկրի վրա: Ամեն:

5ա ՎևոՒ 88.74-75: բ Եթեր 12.36-38:	գ Եթր. Թ.16-17: 6ա Ղուկ. ԻԳ.31:	7ա Հայտ. Զ.9:
---------------------------------------	------------------------------------	---------------

ԲԱԺԻՆ 136

Տիրոջ խոսքը և կամքը, տրված Նախագահ Բրիգամ Յանգի միջոցով Վինթեր Քուորթերսի Իսրայելի ճամբարում, Օմահա ազգի տարածքում, Միսսուրի գետի արևմտյան ափին, Քաունսիլ Բլաֆիս մոտ, Այովա [Journal History of the Church («Եկեղեցու պատմության հուշամատյան»), 1847թ. հունվարի 14]:

1-16՝ Բացատրվում է, թե ինչպես պետք է կազմակերպվի Իսրայելի ճամբարը դեպի արևմուտք ճամփորդելու համար. 17-27՝ Սրբերին պատվիրվում է ապրել ըստ ավետարանական բազում չափանիշների. 28-33՝ Սրբերը պետք է երգեն, պարեն, աղոթեն և իմաստություն սովորեն. 34-42՝ Մարգարեները սպանվում են, որպեսզի փառավորվեն և ամբարիշտները դատապարտվեն:

ՏԻՐՈՋ Խոսքը և Կամքն Իսրայելի ճամբարի վերաբերյալ՝ դեպի արևմուտք նրանց ճամփորդելու մասին.

2 Թող Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի՝ ^աԵկեղեցու ողջ ժողովուրդը, և նրանք, ովքեր ճամփորդում են նրանց հետ, կազմավորեն խմբեր, Տիրոջ՝ մեր Աստծո բոլոր պատվիրաններն ու կանոնները պահելու ուխտով և խոստումով:

3 Թող խմբերը կազմավորվեն ^ահարյուրապետներով, հիսնապետներով և տասնապետներով, նախագահի և երկու խորհրդականների գլխավորությամբ, Տասներկու ^բԱռաքյալների ղեկավարության ներքո:

4 Եվ սա պետք է լինի մեր ^աուխ-

տը, - որ մենք ^բկբայլենք Տիրոջ բոլոր ^գկանոններով:

5 Թող յուրաքանչյուր խումբ իրեն ապահովի բոլոր լծվածքներով, ծածկասայլերով, պարենով, հագուստով և ճամփորդության համար անհրաժեշտ այն ամենով, ինչ կարող է:

6 Երբ խմբերը կազմավորված լինեն, թող նրանք սկսեն իրենց գործությամբ նախապատրաստել նրանց համար, ովքեր մնալու են:

7 Յուրաքանչյուր խումբ, իր խմբապետներով ու նախագահներով թող որոշի, թե քանիսը կարող են գնալ հաջորդ գարնանը. ապա ընտրի բավականաչափ ամրակազմ և գիտակ մարդիկ, որպեսզի վերցնեն լծվածքներ, սերմեր և հողագործության գործիքներ և գնան՝ որպես ռահվիրաներ, նախապատրաստվելու գարնանացանին:

8 Թող յուրաքանչյուր խումբ հավասարապես, իր ունեցվածքի բաժնեմասի համեմատ, իր հետ վերցնի ^աաղքատների, ^բայրիների, ^գհայրազուրկների և նրանց ընտանիքներին, ովքեր գնացել են քանակ, որպեսզի այրիների և հայրազուրկների աղաղակը, այս ժողովրդի դեմ, չհասնի Տիրոջ ականջին:

136 2ա սո՛ւ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցի: 3ա Ել. ԺԸ.21-26:

բ սո՛ւ Առաքյալ: 4ա սո՛ւ Ուխտ: բ սո՛ւ Քայլել, Քայլել Աստծո հետ: գ սո՛ւ Արարողություններ:

8ա սո՛ւ Աղքատ: բ սո՛ւ Այրի: գ Հակ. Ա.27, 3 Նեփի 24.5:

9 Թող յուրաքանչյուր խումբ պատրաստի տներ և դաշտեր, որ հատիկ աճեցնի նրանց համար, ովքեր ետ կմնան տարվա այս եղանակին. և սա է Տիրոջ կամքն իր ժողովրդի վերաբերյալ:

10 Թող ամեն մարդ օգտագործի իր ողջ ազդեցությունն ու ունեցվածքը, որպեսզի այս ժողովրդին տեղավորիսի այն վայրը, որտեղ Տերը պիտի տեղակայի Սիռնի [՝]ցիցը:

11 Եվ եթե դուք անեք դա մաքուր սրտով, ողջ հավատարմությամբ, դուք պիտի [՝]օրհնվեք. դուք պիտի օրհնվեք ձեր հոտերով և ձեր նախիրներով և ձեր դաշտերով և ձեր տներով և ձեր ընտանիքներով:

12 Թող իմ ծառաներ Էզրա Ս. Բենսունը և Էրաստոս Սնոուն խումբ կազմավորեն:

13 Եվ թող իմ ծառաներ Օրսոն Պրատը և Վիլֆորդ Վուդրուֆը խումբ կազմավորեն:

14 Նաև, թող իմ ծառաներ Ամասա Լայմանը և Ջորջ Ա. Սմիթը խումբ կազմավորեն:

15 Եվ նշանակեն նախագահներ և հարյուրապետներ և հիսնապետներ և տասնապետներ:

16 Եվ թող իմ ծառաները, որոնք նշանակվել են, զնան և ուսուցանեն այս իմ կամքը սրբերին, որպեսզի նրանք պատրաստ լինեն՝ զնալու խաղաղության երկիր:

17 Գնացեք ձեր ճանապարհով

և արեք ինչպես ասել եմ ձեզ, և մի վախեցեք ձեր թշնամիներից. քանզի նրանք զորություն չեն ունենա կանգնեցնելու իմ գործը:

18 Սիռնը պիտի [՝]փրկագնվի ինձ հարմար ժամանակ:

19 Եվ եթե մարդ փնտրի ինքն իրեն կառուցել, չփնտրելով իմ [՝]խորհուրդը, նա զորություն չի ունենա և նրա անմտությունը կբացահայտվի:

20 Փնտրե՛ք. և [՝]կատարեք միմյանց տված ձեր բոլոր խոստումները. և մի [՝]ցանկացեք այն, ինչը պատկանում է ձեր եղբորը:

21 Չեզ հեռու [՝]պահեք Տիրոջ անունը զուր օգտագործելու չարիքից, քանզի ես եմ Տերը՝ ձեր Աստվածը, այսինքն՝ ձեր հայրերի [՝]Աստվածը, Աբրահամի և Իսահակի և Հակոբի Աստվածը:

22 [՝]Ես նա եմ, ով Իսրայելի ժողովրդին դուրս բերեց Եգիպտոսի հողից. և իմ ձեռքը պարզած է վերջին օրերին, իմ ժողովրդին՝ Իսրայելին [՝]փրկելու համար:

23 Դադարեք [՝]հակառակվել մեկմեկու. դադարեք [՝]չարախոսել մեկը մյուսի մասին:

24 Վերջ տվեք [՝]հարբեցողությանը. և թող ձեր խոսքերը լինեն միմյանց [՝]շենացնելու միտումով:

25 Եթե պարտք ես վերցնում քո մերձավորից, պետք է վերադարձնես այն, ինչ [՝]վերցրել ես. իսկ եթե չես կարողանում ետ վճարել,

10ա սոՒ Ցից:
11ա Բ Օր. ԻՂ.1-14:
սոՒ Օրհնել, Օրհնված,
Օրհնություն:
18ա ՎևՈՒ 100.13:
19ա սոՒ Խորհուրդ:
20ա սոՒ Ազնիվ,
Ազնվություն:
բ սոՒ Ազահ լինել:
21ա սոՒ Անարգանք:

բ Ել. Գ.6, 1 Նեփի 19.10:
22ա Ել. ԺԳ.18,
Երեմ. Բ.5-7,
1 Նեփի 5.15,
Ալմա 36.28:
սոՒ Եհովա:
բ Երեմ. Լ.10,
Եզեկ. Ի.33-34,
ՎևՈՒ 38.33:
23ա 3 Նեփի 11.29-30:

սոՒ Հակառակություն:
բ ՎևՈՒ 20.54:
սոՒ Չարախոսություն:
24ա սոՒ Իմաստության
Խոսք:
բ ՎևՈՒ 108.7:
25ա Սաղ. Լ.է.21,
Մոսիա 4.28:
սոՒ Պարտք. Ազնիվ,
Ազնվություն:

ապա զնա անմիջապես և ասա մերձավորիդ, չլինի թե նա դատապարտի քեզ:

26 Եթե գտնես մի բան, որը «կորցրել է քո մերձավորը, պետք է ջանասիրաբար փնտրես, մինչև որ այն կրկին վերադարձնես նրան:

27 «Չանասեր եղիր քո ունեցածը պահպանելիս, որպեսզի իմաստուն ՚տնտես լինես. քանզի դա Տիրոջ՝ քո Աստծո ձրի պարգևն է, և դու նրա տնտեսն ես:

28 Եթե ուրախ ես, գովք ասա Տիրոջը՝ «երգելով, երաժշտությամբ, պարելով և գովքի ու Քրիստոսի անունի քաղաքացու զարգացումը:

29 Եթե «տխուր ես, աղաչանքով կանչիր առ Տերը՝ քո Աստվածը, որպեսզի հոգիդ ՚ուրախանա:

30 Մի վախեցիր քո թշնամիներից, քանզի նրանք իմ ձեռքում են, և ես նրանց հետ կվարվեմ, ինչպես կկամենամ:

31 Իմ ժողովուրդը պիտի «կործակի բոլոր բաներում, որ կարողանա պատրաստվել այն Քիստոսի ընդունելուն, որը ես ունեմ նրանց համար, այսինքն՝ Սիոնի փառքը. իսկ նա, ով չի դիմանում Գիրատին, արժանի չէ իմ արքայությանը:

32 Թող նա, ով բանիմաց չէ, «իմաստություն սովորի, իրեն Քրիստոսի անունիցով և կանչելով առ Տերը՝ իր Աստվածը, որպեսզի նրա աչքերը բացվեն, որ նա

կարողանա տեսնել, և նրա ականջները բացվեն, որ նա կարողանա լսել:

33 Քանզի իմ «Հոգին աշխարհ է ուղարկվել, որ լուսավորի խոնարհներին ու ապաշխարողներին և դատապարտի անաստվածներին:

34 Ձեր եղբայրները, այսինքն՝ ժողովուրդը, որը ձեզ դուրս է «քշել, մերժել են ձեզ և ձեր վայրթյունը:

35 Եվ հիմա գալիս է նրանց դժբախտության օրը, այսինքն՝ վշտի օրերը, ինչպես երկունքի մեջ գտնվող մի կնոջ. և նրանց վիշտը մեծ կլինի, եթե նրանք արագ չապաշխարեն, այո, շատ արագ:

36 Քանզի նրանք սպանեցին մարգարեներին, և նրանց, ովքեր ուղարկվել էին իրենց մոտ. և նրանք անմեղ արյուն են թափել, որը գետնից աղաղակում է նրանց դեմ:

37 Ուստի, մի զարմացեք այս բաների վրա, քանզի դուք «մաքուր չեք. դուք դեռևս չեք կարող դիմանալ իմ փառքին. բայց դուք կտեսնեք այն, եթե հավատարիմ լինեք իմ բոլոր խոսքերը պահելիս, որոնք ես ՚տվել եմ ձեզ Ադամի օրերից մինչև Աբրահամը, Աբրահամից մինչև Մովսեսը, Մովսեսից մինչև Հիսուսը և նրա առաքյալները, և Հիսուսից ու նրա առաքյալներից մինչև Ջոզեֆ Սմիթը, որին

<p>26աՂև. 24, Բ Օր. ԻԲ.3: 27ա սոՒ Չանասիրություն: բ սոՒ Տնտես: 28ա սոՒ Երգել: բ Բ Մն. Ե.13, ՎևՈՒ 59.15–16: սոՒ Շնորհակալ, Շնորհակալություն, Գոհաբանություն:</p>	<p>գ սոՒ Աղոթք: 29ա Բ Թագ. ԻԲ.7: բ սոՒ Ուրախություն: 31ա ՎևՈՒ 101.4: սոՒ Չախորդություն: բ Հողմ. Ը.18, ՎևՈՒ 58.3–4: սոՒ Փառք: գ սոՒ Խրատել, Խրատելը:</p>	<p>32ա սոՒ Իմաստություն: բ սոՒ Խոնարհ, Խոնարհություն: 33ա սոՒ Մուրք Հոգի: 34ա սոՒ Հալածել, Հալածանք: 37ա սոՒ Անարատ, Անարատություն: բ Հել. 8.18:</p>
---	---	--

ես կանչեցի, իմ Գիրեշտակների՝ իմ սպասավոր ծառաների միջոցով, և իմ իսկ ձայնով երկնքից՝ իմ գործն առաջ բերելու համար:

38 Որի հիմքը նա դրեց, և հավատարիմ էր. և ես վերցրեցի նրան ինձ մոտ:

39 Շատերին զարմացրեց նրա մահը. բայց անհրաժեշտ էր, որ նա ՝կնքեր իր Բվկայությունն իր Գարյամբ, որպեսզի նա փառավորվի, իսկ ամբարիշտները դատապարտվեն:

40 Ես ձեզ չե՞մ ազատել ձեր

՞քնամիներից, բայց այնպես, որ վկայություն են թողել իմ անվան մասին:

41 Արդ, ուրեմն, ականջ դիր, ով իմ ՝Եկեղեցո՛ւ ժողովուրդ. և դո՛ւք, երեցմե՛ր, լսեք միասին. դուք ստացել եք իմ Բթագավորությունը:

42 Ջանասեր եղեք իմ բոլոր պատվիրանները պահելիս, չլինի թե դատաստաններ գան ձեր վրա, և ձեր հավատքը պակասի, և ձեր քնամիները հաղթեն ձեզ: Այսպիսով, ներկայումս այսքանը: Ամեն և Ամեն:

ԲԱԺԻՆ 137

Տեսիլք՝ տրված Ջոզեֆ Սմիթ Մարգարեին, Կիրթլենդի տաճարում, Օհայո, 1836թ. հունվարի 21-ին (History of the Church, 2.380–381): Առիթը եղավ օժտման արարողությունների սպասավորումը, որքան որ դրանք հայտնի էին այդ ժամանակ:

1–6՝ Մարգարեն տեսնում է իր եղբայր Ալվինին սելեստիալ արքայությունում. 7–9՝ Հայտնի է դարձվում մահացածների փրկության վարդապետությունը. 10՝ Բոլոր երեխաները փրկվում են սելեստիալ արքայությունում:

ՄԵԿԻՆՔՆԵՐԸ բացվեցին մեզ վրա, և ես տեսա Աստծո ղԲսելեստիալ արքայությունը և նրա փառքը, Գմարմնում էի, թե մարմնից դուրս՝ չեմ կարող ասել:

2 Ես տեսա ՝դռան անսահման գեղեցկությունը, որի միջով այդ արքայության ժառանգները պիտի մտնեն, որը նման էր կրակի պտտվող քրոցերի.

3 Նաև Աստծո ՝փայլող գահը, որի վրա նստած էին ԲՀայրը և ԳՈրդին:

4 Ես տեսա այդ արքայության գեղեցիկ փողոցները, որոնք կարծես ՝ոսկով սալարկված լինեին:

37գ Հայտ. ԺԳ.6, ՎևՈՒ 110.11–16, 128.19–21, ՋՄ–Պ 1.30–47:
39ա Մոսիա 17.20, ՎևՈՒ 135.3:
բ սո՛ւ Վկայություն:
գ սո՛ւ Նահատակ, Նահատակություն:
40ա Ել. ԻԳ.22, ՎևՈՒ 8.4, 105.15:
41ա սո՛ւ Հիսուս Քրիստոսի

Եկեղեցի:
բ Դան. Է.27:
137 1ա Գոր. Է.55, 1 Նեփի 1.8, Հել. 5.45–49, ՋՄ–Պ 1.43:
բ սո՛ւ Սելեստիալ փառք:
գ Բ Կոր. ԺԲ.2–4, 1 Նեփի 11.1, Մովսես 1.11:
2ա 2 Նեփի 9.41, 31.17:
բ Ել. ԻԳ.17,

Ես. ԼԳ.14–15, Հել. 5.23, ՎևՈՒ 130.7:
3ա Ես. Ջ.1, Եգեկ. Ա.26–28:
բ սո՛ւ Աստված, Աստվածագլուխ – Աստված Հայրը:
գ սո՛ւ Աստված, Աստվածագլուխ – Աստված Որդին:
4ա Հայտ. ԻԱ.21, ՎևՈՒ 110.2:

5 Ես տեսա Հայր ^աԱդամին և ^բԱբրահամին. և իմ ^գհորն ու իմ ^դմորը. իմ եղբայր ^եԱլվինին, որի ննջելուց երկար ժամանակ է անցել.

6 Եվ զարմացա, թե ինչպես է, որ նա ^աժառանգություն էր ստացել այդ արքայությունում, մտածելով, որ նա հեռացել էր այս կյանքից նախքան այն ժամանակը, երբ Տերը պարզել էր իր ձեռքը՝ Իսրայելը ^բերկրորդ անգամ հավաքելու համար, և նա ^գմկրտված չէր եղել մեղքերի թողության համար:

7 Այսպես, Տիրոջ ^աձայնը եկավ ինձ՝ ասելով. Բոլոր նրանք, ովքեր մահացել են այս ավետարանի մասին գիտելիք ^բչունենալով, որոնք կընդունեին այն, եթե

նրանց թույլ տրվեր մնալ, կլինեն Աստծո ^գսելեստիալ արքայության ^դժառանգները.

8 Նաև բոլոր նրանք, ովքեր այսուհետև կմահանան, չունենալով այդ գիտելիքը, ովքեր այն ^ակընդունեին իրենց ողջ սրտով, կլինեն այդ արքայության ժառանգները.

9 Քանզի ես՝ Տերս, ^ակդատեմ բոլոր մարդկանց՝ համաձայն նրանց ^բգործերի, համաձայն նրանց սրտերի ^գզանկությունների:

10 Եվ ես նաև տեսա, որ բոլոր երեխաները, ովքեր մահանում են նախքան պատասխանատվության ^ատարիքին հասնելը, ^բփրկվում են երկնքի սելեստիալ արքայությունում:

ԲԱԺԻՆ 138

Տեսիլք տրված Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթին, Սոթ Լեյք Սիթիում, Յուտա, 1918թ. հոկտեմբերի 3-ին: Եկեղեցու 89-րդ կիսամյա Գերագույն համաժողովի իր բացման խոսքում, 1918թ. հոկտեմբերի 4-ին, Նախագահ Սմիթը հայտարարեց, որ վերջին ամիսների ընթացքում ստացել է մի քանի աստվածային հաղորդակցություններ: Դրանցից մեկը, որը վերաբերում էր Փրկչի այցելությանը մահացածների հոգիներին, մինչ նրա մարմինը գերեզմանում էր, Նախագահ Սմիթը ստացել էր նախորդ օրը: Համաժողովի ավարտից անմիջապես հետո, այն զրի առնվեց: 1918թ. հոկտեմբերի 31-ին այն ներկայացվեց Առաջին Նախագահության խորհրդակցաններին, Տասներկուսի Խորհրդին ու հայրապետին և միաձայն ընդունվեց նրանց կողմից:

<p>5ա սուր Ադամ: ^բ Վև.ՈՒ 132.29: սուր Աբրահամ: ^գ Վև.ՈՒ 124.19: սուր Սմիթ Ջոզեֆ կրտսեր: ^դ սուր Սմիթ Լյուսի Մակ: է ՋՍ-Պ 1.4: 6ա սուր Փրկություն մահացածների համար: ^բ Ես. ԺԱ.11, 1 Նեփի 22.10–12, Հակոբ 6.2: սուր Իսրայել –</p>	<p>Իսրայելի ցրվելը: ^գ Հովի. Գ.3–5, 2 Նեփի 9.23, Եթեր 4.18–19, Վև.ՈՒ 76.50–52, 84.74: սուր Սկրտություն, Սկրտել: 7ա Հել. 5.30: սուր Հայտնություն: ^բ ՋՍԹ, Ա Պետ. 4.6, 2 Նեփի 9.25–26, Մոսիա 15.24: ^գ Վև.ՈՒ 76.50–70: ^դ սուր Սելեստիալ փառք: 8ա Ալմա 18.32,</p>	<p>Վև.ՈՒ 6.16: 9ա Հայտ. Ի.12–13: սուր Վերջին դատաստան: ^բ սուր Գործեր: ^գ Վև.ՈՒ 64.34: սուր Սիրտ: 10ա սուր Հաշիվ, Պատասխանատու, Պատասխանատվություն: ^բ սուր Փրկություն – Երեխաների փրկությունը:</p>
---	---	--

1-10 Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթը խորհում է Պետրոսի գրվածքների և հոգիների աշխարհ մեր Տիրոջ այցելելու մասին. 11-24 Նախագահ Սմիթը տեսնում է արդար մեռելներին, դրախտում հավաքված, և Քրիստոսի ծառայությունը նրանց մեջ. 25-37 Նա տեսնում է, թե ինչպես է կազմակերպվել ավետարանի քարոզումը հոգիների մոտ. 38-52՝ Նա հոգիների աշխարհում տեսնում է Ադամին, Եվային և սուրբ մարգարեներից շատերին, որոնք իրենց հոգեղեն վիճակը, մինչև հարություն, համարում էին գերություն. 53-60՝ Մեր օրերի արդար մեռելները շարունակում են ծառայել հոգիների աշխարհում:

ՌԿՏԵՄԲԵՐԻ երեքին, հազար ինը հարյուր տասնութ թվականին, ես նստել էի իմ սենյակում՝ խորհելով սուրբ գրությունների վրա.

2 Եվ մտածելով մեծ թավիչ զոհաբերության մասին, որը կատարվել էր Աստծո Որդու կողմից՝ աշխարհի փրկագնամա համար.

3 Եվ մեծ ու հրաշալի «սիրո մասին, որը դրսևորվել էր Հոր և Որդու կողմից՝ Քավչի աշխարհ գալով.

4 Որ նրա թավության միջոցով, և ավետարանի սկզբունքներին ինազանդվելու միջոցով, մարդկությունը կարող է փրկվել:

5 Մինչ ես այդպես մտորում էի, միտքս եկան Պետրոս առաքյալի գրվածքները, որոնք ուղղվել էին

«նախկին սրբերին, որոնք ցրված էին ամենուրեք՝ ողջ Պոնտոսով, Գաղատիայով, Կապադովկիայով և Ասիայի մյուս տարածքներով, որտեղ ավետարանը քարոզվել էր Տիրոջ խաչելությունից հետո:

6 Ես բացեցի Աստվածաշունչը և կարդացի Պետրոսի թղթի երրորդ և չորրորդ գլուխները, և մինչ կարդում էի, ինձ վրա, ավելի շատ, քան երբևէ նախկինում, մեծ տպավորություն գործեցին հետևյալ հատվածները.

7 «Որովհետև Քրիստոսն էլ մեկ անգամ մեղքերի համար չարչարվեց, այն արդարն՝ անարդարներիս համար, որպեսզի մեզ մոտեցնի Աստծուն, որ թեև սպանվեց մարմնով, բայց կենդանի եղավ Հոգով.

8 Որով գնաց և թանտում եղող հոգիներին էլ քարոզեց.

9 Որոնք մի ժամանակ անհնազանդ էին, երբ մեկ անգամ Աստծո երկայնամտությունը սպասում էր, Նոյի օրերում, մինչ տապանը պատրաստվում էր, որի մեջ քիչ, այսինքն՝ ուր հոգի, ջրից փրկվեցին»: (Ա Պետրոս Գ.18-20):

10 «Որովհետև իսկ, սրա համար ավետարանը մեռելներին էլ քարոզվեց, որ նրանք կարողանան դատվել, ինչպես մարդիկ մարմնի մեջ, բայց կենդանի լինեն հոգով՝ Աստծո կամքի համաձայն»: (Ա Պետրոս Գ.6):

11 Մինչ ես խորհում էի այս թաված բաների մասին, իմ հասկացողության ղաջերը բացվեցին,

138 1ա սու խորհել:
 2ա Մատ. Ի.28:
 սու Քավչի, Քավություն:
 Բ սու Փրկագնաման ծրագիր:
 3ա Հովհ. Գ.16:
 սու Մեր:

Բ սու Քավիչ:
 4ա ՀՀ 1.3:
 Բ Մատ. Է.21:
 սու Հնազանդություն, Հնազանդ, Հնազանդվել:
 5ա նշ. հին օրերի սրբերին:

Բ Ա Պետ. Ա.1:
 8ա Ես. ԿԱ.1, Ղուկ. Գ.19, ՎևոՒԲ 76.73-74, 88.99:
 11ա սու Մուրբ գրքեր - Մուրբ գրքերի արժեքը:
 Բ Եփես. Ա.18, ՎևոՒԲ 76.10, 12, 19:

և Տիրոջ Հոգին Գիանգչեց ինձ վրա, և ես տեսա Դմեռելների բազմությունը՝ և՛ փոքր, և՛ մեծ:

12 Եվ նրանք միասին հավաքվել էին մեկտեղ, արդար հոգիների մի անթիվ բազմություն, որոնք Հիսուսի վկայության մեջ Բիանատարիմ էին եղել մահկանացության մեջ ապրելու ժամանակ.

13 Եվ որոնք Կոհ էին մատուցել Աստծո Որդու մեծ զոհաբերության մանությունը և նեղություն էին Բերել իրենց Քավչի անունով:

14 Նրանք բոլորը թողել էին մահկանացու կյանքը, փառավոր Կարության հաստատուն Բույսով, Հայր Աստծո և նրա Միածին Որդու՝ Հիսուս Քրիստոսի Զնորհի միջոցով:

15 Ես տեսա, որ նրանք լցված էին Կուրախությամբ ու խնդրությամբ և միասին ցնծում էին, որովհետև նրանց ազատման օրը մոտ էր:

16 Նրանք հավաքվել էին, սպասելով Աստծո Որդու գալստին Կոհիների աշխարհ, որ նա հայտարարի մահվան Բկապանքներից նրանց փրկագնումը:

17 Նրանց հանգչած հողը պիտի վերականգնվեր իր կատարյալ կառուցվածքով, Բոսկորն՝ իր ոսկո-

րի վրա, և ջլերն ու միսը՝ դրանց վրա, Գոգին ու մարմինը պիտի միանային, որ այլևս երբեք չբաժանվեին, որ կարողանային ստանալ Կուրախության լիությունը:

18 Մինչ այս հսկայական բազմությունը սպասում և խոսում էր, ցնծալով մահվան կապանքներից իրենց ազատման ժամով, Աստծո Որդին հայտնվեց՝ Կազատություն հայտարարելով գերիներին, ովքեր հավատարիմ էին եղել.

19 Եվ այնտեղ նա նրանց Կարողեց հավիտենական Բավետարանը, հարության վարդապետությունն ու մարդկության փրկագնումն Կանկումից և անձնական մեղքերից՝ Կապաշխարության պայմաններով:

20 Բայց Կամբարիշտների մոտ նա չգնաց, և անաստվածների ու չապաշխարողների մեջ, որոնք Բպղծել էին իրենց, մինչ մարմնում էին եղել, նրա ձայնը չբարձրացավ.

21 Եվ ապստամբները, որոնք մերժեցին հին մարգարեների վկայություններն ու զգուշացումները, չտեսան նրա ներկայությունը, ոչ էլ նայեցին նրա երեսին:

22 Որտեղ նրանք էին, Կխավարն էր իշխում, բայց արդարների մեջ Կխաղաղություն էր տիրում.

23 Եվ սրբերն ուրախանում էին

11գ Ես. ԺԱ.2:
դ սոս Ոգի:
12ա ՎևՈՒ 76.69-70:
բ ՎևՈՒ 6.13, 51.19, 76.51-53:
13ա սոս Զոհաբերություն:
բ Մատ. Ե.10-12:
14ա սոս Հարություն:
բ Եթեր 12.4, Մոր. 7.3, 40-44:
սոս Հույս:
գ սոս Աստված, Աստվածագլուխ - Աստված Հայրը:

դ սոս Միածին:
ե սոս Ընորհ:
15ա Ես. ԾԱ.11, Ալմա 40.12:
16ա Դուկ. ԻԳ.43, Ալմա 40.11-12:
սոս Դրախտ:
բ Մորմ. 9.13:
17ա 2 Նեփի 9.10-13:
բ Եգեկ. ԼԷ.1-14:
գ ՎևՈՒ 93.33-34:
դ սոս Ուրախություն:
18ա Ես. ԿԱ.1:
սոս Փրկություն մահացածների

համար:
19ա ՎևՈՒ 76.72-74:
բ սոս Ավետարան:
գ սոս Աղամի և Եվայի անկումը:
դ սոս Ապաշխարել, Ապաշխարություն:
20ա Ալմա 40.13-14:
սոս Դժոխք. Ամբարիշտ, Ամբարշտություն:
բ 1 Նեփի 10.21:
22ա սոս Հոգևոր խավար:
բ սոս Խաղաղություն:

իրենց փրկագնամար և թունկ էին ծալում ու ճանաչում Աստծո Որդուն՝ որպես իրենց Քավիչ և Ազատիչ մահից ու դժոխքի՝ Կապանքներից:

24 Նրանց դեմքերը փայլում էին, և Տիրոջ ներկայությունից եկող շողը նրանց վրա էր, և նրանք գովք էին թերգում նրա սուրբ անվանը:

25 Ես զարմացա, քանզի հասկացա, որ Փրկիչը մոտ երեք տարի անցկացրեց՝ ծառայելով հրեաների և նրանց մեջ, ովքեր Իսրայելի տնից էին, ջանալով ուսուցանել նրանց հավիտենական ավետարանը և ապաշխարության կանչել նրանց:

26 Եվ այնուամենայնիվ, չնայած իր հզոր գործերին ու հրաշքներին և մեծ զորությամբ ու իշխանությամբ ճշմարտության հռչակմանը, միայն քչերն ականջ դրեցին նրա ձայնին և ուրախացան նրա ներկայությամբ և փրկություն ստացան նրա ձեռքից:

27 Բայց մահացածների մեջ նրա ծառայությունը սահմանափակված էր խաչելության և իր հարության միջև ընկած մի փոքր ժամանակահատվածով:

28 Եվ ես խորհեցի Պետրոսի խոսքերի վրա, – որտեղ նա ասում է, որ Աստծո Որդին քարոզեց բանտում գտնվող հոգիներին, որոնք մի ժամանակ անհնազանդ էին, երբ մեկ անգամ Աստծո երկայնամտությունը սպասում էր,

Նոյի օրերում, – և ինչպես հնարավոր եղավ, որ նա քարոզեց այդ հոգիներին և այդպիսի կարճ ժամանակահատվածում նրանց մեջ կատարեց անհրաժեշտ աշխատանքը:

29 Եվ մինչ ես մտածում էի, իմ աչքերը բացվեցին և իմ հասկացողությունը՝ կենդանացավ, և ես հասկացա, որ Տերն անձամբ չգնաց ամբարիշտների ու անհնազանդների մեջ, որոնք մերժել էին ճշմարտությունը, որ ուսուցանի նրանց:

30 Այլ ահա, արդարների թվից նա կազմավորեց իր ուժերը և նշանակեց սուրհանդակներ, որոնք հանդերձավորված էին զորությամբ ու իշխանությամբ, և լիազորեց նրանց՝ առաջ գնալ և տանել ավետարանի լույսը նրանց, ովքեր խավարի մեջ էին, այսինքն՝ Գրոլոր մարդկային ոգիներին. և այդպես ավետարանը քարոզվեց մեռելներին:

31 Եվ ընտրված սուրհանդակներն առաջ գնացին՝ հայտարարելու Տիրոջ ընդունելի օրը և Քազատություն հռչակելու գերիններին, որոնք կապված էին, այսինքն՝ բոլոր նրանց, ովքեր կապաշխարեին իրենց մեղքերից և կընդունեին ավետարանը:

32 Այսպես ավետարանը քարոզվել էր նրանց, ովքեր մահացել էին իրենց մեղքերի մեջ, Քգիտություն չունենալով ճշմարտության մասին, կամ օրինազանցության

23ա սո՛ւ Փրկագնաման ծրագիր: *p* Հռովմ. ԺԳ.11, Մոսխա 27.31: *q* 2 Նեփի 1.13, Ալմա 12.11: 24ա Սաղ. ԾԳ.1–2, Ես. Կ.19, Հայտ. ԻԲ.5,

ՋՍ–Պ 1.17: սո՛ւ Լույս, Քրիստոսի լույս: *p* սո՛ւ Երգել: 26ա 1 Նեփի 11.28: 27ա Մար. Ը.31: 29ա Վևո՛ւ 76.12: 30ա Ղուկ. ԻԳ.49:

p սո՛ւ Հոգևոր խավար: *q* Վևո՛ւ 1.2: 31ա Ես. ԿԱ.2, Ղուկ. Գ.17–19: *p* սո՛ւ Անկախություն: 32ա Հովհ. Ը.21–24: *p* Վևո՛ւ 128.5: սո՛ւ Գիտություն:

մեջ՝ մերժած լինելով մարգարեներին:

33 Նրանց ուսուցանվել էր ^ահավատք առ Աստված, մեղքերից ապաշխարություն, ^բփոխարինող մկրտություն՝ մեղքերի ^գթողության համար, Սուրբ Հոգու ^դպարգևը ձեռնադրմամբ,

34 Եվ ավետարանի բոլոր մյուս սկզբունքները, որոնք նրանց անհրաժեշտ էր իմանալ, որ պատրաստվեին, որպեսզի ^ադատվեին, ինչպես մարդիկ մարմնի մեջ, բայց կենդանի լինեին հոգով՝ Աստծո կամքի համաձայն:

35 Եվ այդպես մեռելների մեջ, փոքր և մեծ, անիրավ, թե հավատարիմ, հայտնի էր դարձվել, որ ^ախաչի վրա Աստծո Որդու ^բգոհաբերությամբ փրկագնում էր իրագործվել:

36 Այդպես հայտնի էր դարձվել, որ մեր Քավիչը հոգիների աշխարհում իր կարճ բնակությունն անցկացրել էր՝ հրահանգելով ու պատրաստելով ^ամարգարեների հավատարիմ հոգիները, որոնք մարմնի մեջ վկայել էին նրա մասին:

37 Որ նրանք քավության պատգամը տանեն բոլոր մեռելներին, որոնց մոտ ինքն անձամբ չէր

կարող գնալ, նրանց ^աապստամբության և օրինազանցության պատճառով, որ իր սպասավորների ծառայության միջոցով նրանք մույնպես կարողանան լսել իր խոսքերը:

38 Արդարների այս հսկայական ժողովքում հավաքված մեծերի և հզորների թվում էին Հայր ^աԱդամը՝ Հինավուրցը և բոլորի հայրը,

39 Եվ մեր փառահեղ Մայր ^աԵվան, իր հավատարիմ դուստրերից շատերի հետ, որոնք ապրել էին դարեդար և երկրպագել ճշմարիտ և կենդանի Աստծուն:

40 Այնտեղ էր ^աԱբելը՝ առաջին ^բնահատակը, և նրա եղբայրը՝ ^գՍեթը, հզորներից մեկը, որն իր հոր՝ ^դԱդամի ճշգրիտ պատկերով էր:

41 ^աՆոյը, որը զգուշացրեց ջրհեղեղի մասին. ^բՍեմը՝ մեծ ^գքահանայապետը. ^դԱբրահամը՝ հավատարիմների հայրը. ^եԻսահակը, ^զՀակոբը և Մովսեսը՝ Իսրայելի մեծ ^էօրենսդիրը:

42 Եվ ^աԵսայիան, որը մարգարեությամբ հայտարարեց, որ Քավիչն օծվել էր, որ սրտապանդեր սրտով կոտրվածներին, ազատություն հռչակեի ^բգերիներից և ^գբանտից արձակում՝ նրանց հա-

33ա ՀՀ 1.4:
սու՝ Հավատք:
բ սու՝ Մկրտություն,
Մկրտել –
Մկրտություն
մահացածների
համար.
Արարողություններ –
Փոխարինող
արարողություն:
գ սու՝ Մեղքերի
թողություն:
դ սու՝ Սուրբ Հոգու
պարգև:
34ա սու՝ Վերջին
դատաստան:

35ա սու՝ Խաչ, Խաչելություն:
բ Ավմա 34.9-16:
սու՝ Քավել,
Քավություն.
Չոհաբերություն:
36ա Վ.ՈՒԲ 138.57:
37ա Վ.ՈՒԲ 138.20:
սու՝ Ապստամբություն:
38ա սու՝ Ադամ:
39ա Մովսես 4.26:
սու՝ Եվա:
40ա սու՝ Աբել:
բ սու՝ Նահատակ,
Նահատակություն:
գ սու՝ Սեթ:
դ ճ. Ե.3, Մովսես 6.10:

41ա սու՝ Նոյ՝
Աստվածաշնչյան
հայրապետ:
բ սու՝ Սեմ:
գ սու՝ Քահանայապետ:
դ ճ. Ժ. 1-8:
սու՝ Աբրահամ:
ե ճ. ԻԱ. 1-5:
սու՝ Իսահակ:
զ ճ. ԼԵ. 9-15:
սու՝ Հակոբ՝ Իսահակի
որդի:
է սու՝ Մովսես:
42ա սու՝ Եսայիա:
բ Ես. ԿԱ. 1-2:
գ սու՝ Դժոխք:

մար, ովքեր բանտարկյալ էին, նույնպես այնտեղ էին:

43 Դեռ ավելին, ^աԵզեկիելը, որին տեսիլքում ցույց էր տրվել ^բչորացած ոսկորներով մեծ դաշտը, որոնք պետք է մարմին հագնեին, կրկին բարձրանալով մենելների ^գհարության ժամանակ, որպես կենդանի հոգիներ.

44 ^աԴանիելը, որը կանխավ տեսավ և կանխավ պատմեց Աստծո ^բարքայության հաստատումը վերջին օրերին, որն այլևս երբեք չի կործանվի, ոչ էլ կտրվի ուրիշ ժողովրդի.

45 ^աԵղիաաը, որը Մովսեսի հետ էր ^բԿերպարանափոխման սարի վրա.

46 Եվ ^աՄաղաքիան՝ մարգարեն, որը վկայեց ^բԵղիայի գալստի մասին, – որի մասին նաև Մորոնին խոսեց Մարգարե Ջոզեֆ Սմիթի հետ, հայտարարելով, որ նա պետք է գա, նախքան Տիրոջ մեծ ու ահեղ ^գօրվա մուտքը, – նույնպես այնտեղ էին:

47 Մարգարե Եղիան գավակների ^ասրտերում պետք է սերմաներ այն խոստումները, որոնք տրվել էին իրենց հայրերին,

48 Ինչը նախանշան էր այն մեծ ^աաշխատանքի համար, որը պիտի կատարվեր Տիրոջ ^բտաճարնե-

րում, ժամանակների լրության ^գունտեսության ժամանակ, մահացածների փրկագնման համար, և գավակների ^դկնքումն իրենց ծնողների հետ, չլինի թե ողջ երկիրը զարկվի անեծքով և ամբողջովին ամայանա նրա գալստյան ժամանակ:

49 Նրանք բոլորը և էլի շատ շատեր, այսինքն՝ ^ամարգարեները, ովքեր ապրել են Նեփիացիների մեջ և վկայել են Աստծո Որդու գալստյան մասին, խառնվել էին այդ հսկայական ժողովին և սպասում էին իրենց ազատմանը,

50 Քանզի մահացածները ^ագերություն էին համարում իրենց ^բհոգիների երկար բացակայությունն իրենց մարմիններից:

51 Տերը նրանց ուսուցանեց, և նրանց ^ագորություն տվեց, որ առաջ գան, մեռելներից իր հարությունից հետո, և մտնեն իր Հոր արքայությունը, որպեսզի այնտեղ ^բանմահությամբ ու ^գհավերժական կյանքով պսակվեն,

52 Եվ դրանից հետո շարունակեն իրենց գործը, ինչպես խոստացել էր Տերը, և ճաշակողներ լինեն բոլոր ^աօրհնությունների, որոնք պահպանվել էին նրանց համար, ովքեր սիրում են նրան:

53 Մարգարե Ջոզեֆ Սմիթը և

43ա սուր Եզեկիել:
բ Եզեկ. ԼԷ.1–14:
գ սուր Հարություն:
44ա սուր Դանիել:
բ Դան. Բ.44–45:
սուր Աստծո արքայություն կամ Երկնքի արքայություն:
45ա սուր Եղիաա:
բ սուր Կերպարանափոխում:
46ա Մաղ. Գ.5–6,
ՋՍ–Պ 1.36–39:

սուր Մաղաքիա:
բ ՎևՈՒ 110.13–15:
սուր Եղիա:
գ սուր Հիսուս Քրիստոսի երկրորդ գալուստը:
47ա ՎևՈՒ 128.17:
48ա սուր Փրկություն մահացածների համար:
բ սուր Տաճար՝ Տիրոջ տուն:
գ սուր Տնտեսություն:
դ սուր Ընտանիք – Հավերժական

ընտանիք. Կնիք, Կնքում:
49ա Հել. 8.19–22:
50ա ՎևՈՒ 45.17:
բ սուր Ոգի:
51ա Ա Կոր. 2.14,
Ալմա 40.19–21:
բ սուր Անմահ, Անմահություն:
գ ՎևՈՒ 29.43:
սուր Հավերժական կյանք:
52ա Ես. ԿԳ.4, Ա Կոր. Բ.9, ՎևՈՒ 14.7:

ին հայրը՝ Հայրուն Սմիթը, Բրի-
գամ Յանգը, Ջոն Թեյլորը, Վիլ-
ֆորդ Վուդրուֆը և ուրիշ ընտրյալ
հոգիներ, որոնք ^ապահվել էին՝
առաջ գալու ժամանակների լրու-
թյան մեջ, որպեսզի մասնակցեն
վերջին օրերի մեծ աշխատանքի
^բհիմնադրմանը,

54 Այդ թվում՝ տաճարների
կառուցմանը և նրանցում արարո-
ղությունների կատարմանը՝ ^ամա-
հացածների փրկագնման հա-
մար, - նրանք էլ էին հոգիների
աշխարհում:

55 Ես նկատեցի, որ նրանք էլ
էին այն ^աազնիվ ու մեծ անձանց
թվում, որոնք ի սկզբանե ^բընտրվել
էին ղեկավարներ լինելու Աստծո
Եկեղեցում:

56 Նույնիսկ նախքան ծնվելը,
ուրիշ շատերի հետ, նրանք ստա-
ցել էին իրենց առաջին դասերը
հոգիների աշխարհում և ^ապատ-
րաստվել էին՝ առաջ գալու Տիրո-
ջը հարմար ^բժամանակ, որպեսզի
աշխատեին նրա ^գայգում՝ մարդ-
կանց հոգիների փրկության
համար:

57 Ես տեսա, որ այս տնտեսու-
թյան հավատարիմ ^աերեցները,
հեռանալով մահկանացու կյանքից,
շարունակում են իրենց աշխա-
տանքները՝ քարոզելով ապաշխա-
րության ավետարանը և փրկագ-
նումը, Աստծո Միածին Որդու
զոհաբերության միջոցով, նրանց
մեջ, ովքեր ^բխավարում են և մեղքի
զերության տակ՝ մահացածների
հոգիների մեծ աշխարհում:

58 Մահացածները, որոնք ապաշ-
խարում են, պիտի ^ափրկագնվեն՝
Աստծո տան ^բարարողություննե-
րին հնազանդվելու միջոցով,

59 Եվ իրենց օրինազանցություն-
ների պատիժը վճարելուց և մա-
քուր ^ավլացվելուց հետո, նրանք
վարձք պիտի ստանան, համա-
ձայն իրենց ^բգործերի, քանզի
նրանք փրկության ժառանգներ են:

60 Այսպես էր ինձ հայտնվել
մահացածների փրկագնման տե-
սիլքը, և ես վկայում եմ, և գիտեմ,
որ այս վկայությունը ^աճմարիտ
է, մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիս-
տոսի օրհնությամբ, ճիշտ այդպես:
Ամեն:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ-1

Ի գիտություն բոլոր հետաքրքրվողների.

Սույլ Լեյք Սիթիից քաղաքական նպատակներով ուղարկված մամուլի
հաղորդագրությունները, որոնք լայնորեն հրատարակվել են, ազդարա-
րելով, որ Յուտայի Հանձնաժողովը Ներքին Գործերի Քարտուղարին
ուղղած իր հաշվետվության մեջ պնդում է, որ բազմամուսնությունները
դեռևս հանդիսավորությամբ կատարվում են, և որ հունիս ամսից ի վեր,

53ա սուր Նախակարգում:
^բ Վ.ՈՒԹ 64.33:
54ա սուր Արարողություն-
ներ - Փոխարինող
արարողություն:
55ա Աբբ. 3.22-24:
^բ սուր Նախակարգում:
56ա Հոր Լ.Ը.4-7,

Ալմա 13.3-7:
^բ Գոր. Ժ.Է.24-27:
^գ Հակոբ 6.2-3:
սուր Տիրոջ այգին:
57ա սուր Երեց:
^բ սուր Դժոխք:
58ա սուր Փրկագնել,
Փրկագնված,

Փրկագնում:
^բ սուր Արարողություններ:
59ա Ալմա 5.17-22:
սուր Ներել:
^բ սուր Գործեր:
60ա սուր Ճշմարտություն:

կամ անցյալ տարվա ընթացքում, քառասուն կամ ավելի նմանատիպ ամուսնություններ են կնքվել Յուտայում, նաև, որ հասարակական բանախոսություններում Եկեղեցու ղեկավարներն ուսուցանում, քաջալերում և պնդում են, որ շարունակվի բազմակնության սովորությունը, –

Հետևաբար, ես՝ որպես Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Նախագահ, սույն փաստաթղթով հանդիսավոր ձևով հայտարարում եմ, որ նման մեղադրանքները կեղծ են: Մենք չենք ուսուցանում բազմակնություն, կամ բազմամուսնություն, ոչ էլ թույլ ենք տալիս որևէ մեկի շարունակել այն, և ես ժխտում եմ, որ այդ ժամանակամիջոցում քառասուն կամ որևէ այլ թվով բազմամուսնություններ են հանդիսավորվել մեր Տաճարներում կամ Տարածքի որևէ այլ վայրում:

Հաղորդվել է մի դեպքի մասին, որի մասնակից կողմերը պնդում են, որ ամուսնություն է կատարվել Օժտման Տանը, Սուլթ Լեյք Սիթիում, 1889-ի գարնանը, սակայն ինձ չի հաջողվել իմանալ, թե ով է կատարել այդ արարողությունը. այն, ինչ կատարվել է այս դեպքում, եղել է առանց իմ գիտության: Հիշատակված դիպվածի հետևանքով, իմ հրահանգներով, Օժտման Տունն անմիջապես քանդվել է:

Քանի որ Կոնգրեսի կողմից բազմամուսնություններն արգելող օրենքներ են ընդունվել, օրենքներ, որոնք սահմանադրական են հռչակվել վերջին ատյանի դատարանով, սույնով ես հայտարարում եմ իմ դիտավորությունը՝ հնազանդվել այդ օրենքներին և օգտագործել իմ ազդեցությունն այս Եկեղեցու անդամների վրա, որտեղ ես նախագահում եմ, որ նրանք մույն կերպ վարվեն:

Եկեղեցուն ուղղված իմ ուսմունքներում կամ իմ գործընկերների ուսմունքներում, նշված ժամանակաընթացքում, չի եղել ոչինչ, որը տրամաբանորեն հնարավոր լիներ մեկնաբանել բազմակնությունն արմատավորող կամ քաջալերող. և եթե Եկեղեցու որևէ Երեց երբևէ այնպիսի արտահայտություն է օգտագործել, որն, ըստ երևույթին, նման ուսմունք է հաղորդել, նա անմիջապես հանդիմանվել է: Եվ այժմ, ես հրապարակավ հայտարարում եմ, որ իմ խորհուրդն է Վերջին Օրերի Սրբերին՝ հեռու մնալ որևէ ամուսնություն կնքելուց, որն արգելված է երկրի օրենքով:

ՎԻԼՖՈՐԴ ՎՈՒԴԲՈՒՖ՝

Հիսուս Քրիստոսի

Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Նախագահ:

Նախագահ Լորենցո Սնոուն ներկայացրեց հետևյալը.

«Առաջարկում եմ, որ ընդունելով Վիլֆորդ Վուդրուֆին որպես Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Նախագահ և ներկայումս միակ մարդը երկրի վրա, որը կրում է կնքման արարողությունների

բանալիները, մենք համարենք նրան լիովին իրավասու՝ իր պաշտոնի առաքինությամբ հրապարակելու Հռչակագիրը, որը կարդացվեց մեր ներկայությամբ, և որը գրանցված է 1890թ. սեպտեմբերի 24-ի ամսաթվով, և որ, որպես Եկեղեցի, Գերագույն համաժողովում հավաքված, մենք ընդունենք բազմամուսնության վերաբերյալ նրա հայտարարությունը, որպես լիազորված և պարտավորեցնող»:

Առաջարկությունը հաստատելու քվեարկությունն անցավ միաձայն:

Սույլ Լեյք Սիթի, Յուտա, 1890թ. հոկտեմբերի 6:

ՔԱՂՎԱԾՔՆԵՐ ՀՈՉԱԿԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՆԱԽԱԳԱՀ ՎԻԼՖՈՐԴ ՎՈՒԴԻՈՒՅԻ
ԵՐԵՔ ԵԼՈՒՅԹՆԵՐԻՑ

Տերը երբեք թույլ չի տա, որ ես կամ որևէ այլ մարդ, որը կանգնած է որպես այս Եկեղեցու Նախագահ, մոլորեցնի ձեզ: Դա ընգրկված չէ ծրագրի մեջ: Դա Աստծո մտադրությունը չէ: Եթե ես փորձեի դա անել, Տերն ինձ կհեռացներ իմ տեղից, և նույնը նա կանի որևէ այլ մարդու հետ, որը կփորձի մարդկանց զավակներին հեռացնել Աստծո պատգամներից և իրենց պարտականություններից: (Եկեղեցու վաթսուներկերորդ կիսամյա Գերագույն համաժողով, 1890թ. հոկտեմբերի 6, երկուշաբթի, Սույլ Լեյք Սիթի, Յուտա: Տպագրվել է «Deseret Evening News» լրագրում, 1890թ. հոկտեմբերի 11, էջ 2):

Նշանակություն չունի, թե ով է ապրում կամ ով է մեռնում, կամ ով է կանչված առաջնորդելու այս Եկեղեցին, նրանք պետք է այն առաջնորդեն Ամենագոր Աստծո ոգեշնչմամբ: Եթե նրանք չեն անում այդ ձևով, ապա չեն կարողանա անել դա ընդհանրապես...

Վերջերս մի քանի հայտնություններ եմ ստացել՝ շատ կարևոր ինձ համար, և ես կպատմեմ ձեզ, թե ինչ է ասել ինձ Տերը: Թույլ տվեք ձեր միտքն ուղղել նրան, ինչը կոչում ենք հռչակագիր...

Տերը խնդրել է ինձ մի հարց տալ Վերջին Օրերի Սրբերին, և Նա ասել է մաև, որ եթե նրանք լսեն, թե ինչ եմ ես ասում նրանց և Աստծո Հոգով ու գորությանբ պատասխանեն իրենց տրված հարցին, ապա բոլորը կպատասխանեն միևնույն ձևով, և նրանք բոլորը միևնույն ձևով կհավատան, ինչ վերաբերում է այս խնդրին:

Հարցը հետևյալն է. Ո՞րն է ամենաիմաստուն ուղին, որին պետք է հետամուտ լինեն Վերջին Օրերի Սրբերը, – շարունակել բազմամուսնություն կիրառելու փորձերը, ունենալով երկրի օրենքները դրա դեմ և վաթսուն միլիոն ժողովրդի ընդդիմությունը, և որի հետևանքն է բոլոր Տաճարների բռնագրավումն ու կորուստը, և թե՛ ապրողների, թե՛ մահացածների համար դրանցում կատարվող բոլոր արարողությունների դադարեցումը, և Առաջին Նախագահության ու Տասներկուսի և Եկեղեցու ընտանիքների ղեկավարների բանտարկումը, և ժողովրդի մասնավոր սեփականության բռնագրավումը (որն ինքնին կդադարեցներ այդ գործունեությունը). թե՞, նրանից հետո, ինչ մենք արել ենք ու տառապել, ինչը եղել է այդ սկզբունքին կառչած մնալու հետևանքով, դադարեցնել այդ գործունեությունը և ենթարկվել օրենքին, և այդպիսով բողոքել, որ Մարգարեները, Առաքյալները և հայրերը մնան տանը, որպեսզի նրանք հրահանգեն ժողովրդին և մասնակցեն Եկեղեցական պարտականություններին, և մաև թողնել, որ Տաճարները մնան Սրբերի ձեռքում, այնպես որ նրանք կարողանան մասնակցել Ավետարանի արարողություններին՝ թե՛ ապրողների, թե՛ մահացածների համար:

Տերն ինձ տեսիլքով ու հայտնությամբ ճշգրիտ ցույց տվեց, թե ինչ տեղի կունենար, եթե մենք չդադարեցնեինք այդ գործունեությունը: Եթե մենք չդադարեցնեինք այն,

դուք այս մարդկանցից ոչ մեկի կարիքը չէիք ունենա.... Լոզանի այս տաճարում. քանզի բոլոր արարողությունները կդադարեցվեին ողջ Միոնի հողով մեկ: Խառնաշփոթություն կտիրեր Իսրայելով մեկ, և շատ մարդիկ կբանտարկվեին: Այս անախորժությունը կգար ողջ Եկեղեցու վրա, և մենք ստիպված կլինեինք դադարեցնել այդ գործունեությունը: Արդ, հարցը սա է, արդյոք այն պիտի դադարեցվի նման ձևով, թե այն ձևով, ինչպես Տերն է հռչակել մեզ, և թույլ տրվի, որ մեր Մարգարեներն ու Առաքյալները և հայրերը մնան ազատ մարդիկ, իսկ տաճարները՝ ժողովրդի ձեռքին, այնպես որ մահացածներին հնարավոր լինի փրկագնել: Արդեն այս ժողովրդի միջոցով բավական մեծ թվով մահացածներ են ազատվել հոգիների աշխարհի բանտից, և արդյոք աշխատանքը պետք է շարունակվի, թե՞ դադարեցվի: Սա է այն հարցը, որը ես դնում եմ Վերջին Օրերի Սրբերի առաջ: Դուք ինքներդ պետք է դատեք: Ես ցանկանում եմ, որ դուք ինքներդ պատասխանեք: Ես չեմ տա դրա պատասխանը. բայց ասում եմ ձեզ, որ սա է իրական այն իրավիճակը, որում մենք կհայտնվեինք, որպես ժողովուրդ, եթե ընտրած չլինեինք այս ուղին:

....Ես ճշգրիտ տեսա, թե ինչ տեղի կունենար, եթե ոչինչ չարվեր: Այս հոգին ինձ վրա էր երկար ժամանակ: Բայց ես ուզում եմ ասել հետևյալը. Ես թույլ կտայի բոլոր տաճարները գնային մեր ձեռքից. ես ինքս կգնայի բանտ և կթողնեի, որ մյուս բոլոր տղամարդիկ գնային այնտեղ, եթե երկնքի Աստվածն ինձ պատվիրած չլիներ անել այն, ինչ ես արեցի. և երբ եկավ ժամը, երբ ինձ պատվիրվեց անել այն, ինձ համար ամեն ինչ պարզ էր: Ես գնացի Տիրոջ առաջ և գրեցի այն, ինչ Տերը պատվիրեց ինձ գրել....

Ես թողնում եմ ձեզ, որ դուք խորհեք և մտածեք: Տերը գործակից է մեզ: (Քեյչ ցցի համաժողով, Լոզան, Յուտա, 1891թ. նոյեմբերի 1, կիրակի: Տպագրվել է «Deseret Weekly» շաբաթաթերթում, 1891թ. նոյեմբերի 14-ին):

Այժմ ես կասեմ ձեզ, թե ինչ էր հայտնի դարձվել ինձ և ինչ արեց Աստծո Որդին այս բանով.... Ինչպես կենդանի է Ամենագոր Աստված, բոլոր այս բաները տեղի կունենային, եթե այդ Հռչակագիրը չտրվեր: Ուստի, Աստծո Որդին հարկ համարեց այդ բանը ներկայացնել Եկեղեցուն և աշխարհին՝ նպատակ ունենալով իր մտքում: Տերը հռչակել էր Միոնի հաստատումը: Նա հռչակել էր այս տաճարի ավարտը: Նա հռչակել էր, որ ապրողների և մահացածների փրկությունը պիտի տրվի սարերի այս հովիտներում: Եվ Ամենագոր Աստված հռչակեց, որ Դևը չպետք է այն խափանի: Եթե կարողանար ըմբռնել, սա է բանալին: (Մոլթ Լեյքի Տաճարի նվիրագործման վեցերորդ նիստի ելույթից, 1893թ. ապրիլ: Նվիրագործման ծառայությունների մեքենագրություններից, Արխիվներ, Եկեղեցու Պատմական Բաժանմունք, Մոլթ Լեյք Միթի, Յուտա):

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ-2

Ի գիտություն բոլոր հետաքրքրվողների.

1978թ. սեպտեմբերի 30-ին, Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու 148-րդ կիսամյա Գերագույն համաժողովում, Եկեղեցու Առաջին Նախագահության Առաջին Խորհրդակցական Նախագահ Ն. Էլլոն Թաների կողմից ներկայացվեց հետևյալը.

Այս տարվա հունիսի սկզբին, Առաջին Նախագահությունը հայտարարեց, որ Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալի կողմից հայտնություն էր ստացվել, որը քահանայության և տաճարային օրհնությունները տարածում է Եկեղեցու բոլոր արժանի տղամարդկանց վրա: Նախագահ Քիմբալը խնդրել է, որ ես համաժողովին տեղեկացնեմ, որ այն բանից հետո, երբ նա ստացել էր այս հայտնությունը, որը եկել էր նրան սուրբ տաճարի սրբազան սենյակներում երկար խորհելուց ու աղոթելուց հետո,

նա ներկայացրել էր այն իր խորհրդականներին, որոնք ընդունել էին այն և հավանություն տվել: Ապա այն ներկայացվել էր Տասներկու Առաքյալների Քվորումին, որոնք միաձայն հավանություն էին տվել դրան, իսկ հետագայում այն ներկայացվել էր բոլոր մյուս Բարձրագույն Իշխանավորներին, որոնք նույնպես միաձայն հավանություն էին տվել դրան:

Նախագահ Քիմբալը խնդրել է, որ այժմ ես կարդամ այդ նամակը.

1978թ. հունիսի 8

Աշխարհով մեկ սփռված Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու քահանայության ընդհանուր և տեղական բոլոր պաշտոնյաներին.

Թանկագին Եղբայրներ.

Ականատես լինելով երկրի վրա Տիրոջ աշխատանքի տարածմանը՝ մենք երախտապարտ ենք, որ շատ ազգերի ժողովուրդներ արձագանքել են վերականգնված ավետարանի պատգամին և շարունակ աճող թվերով միանում են Եկեղեցուն: Սա, իր հերթին, ոգեշնչել է մեզ ցանկությամբ՝ Եկեղեցու յուրաքանչյուր արժանի անդամի վրա տարածել բոլոր արտոնություններն ու օրհնությունները, որոնք տալիս է ավետարանը:

Քաջատեղյակ այն խոստումներին, որոնք տրվել են մարգարեների և Եկեղեցու նախագահների կողմից, որոնք մեզանից առաջ էին, որ ինչ-որ ժամանակ, Աստծո հավերժական ծրագրով, բոլոր մեր եղբայրները, որոնք արժանի են, կկարողանան ստանալ քահանայություն, և վկա լինելով նրանց հավատարմությանը, որոնցից քահանայությունը ետ էր պահվել, մենք երկար ու լրջմտորեն աղերսում էինք մեր այս հավատարիմ եղբայրների համար, բազում ժամեր անցկացնելով Տաճարի Վերնատանը՝ աղաչելով Տիրոջն աստվածային առաջնորդության համար:

Նա լսեց մեր աղոթքները և հայտնությամբ հաստատեց, որ վաղուց խոստացված օրը եկել է, երբ Եկեղեցու յուրաքանչյուր հավատարիմ, արժանի տղամարդ կարող է ստանալ սուրբ քահանայությունը, դրա աստվածային իշխանությունը գործադրելու գործությամբ, և իր սիրեցյալների հետ վայելելու յուրաքանչյուր օրհնություն, որը գալիս է դրանից՝ տաճարային օրհնությունները ներառյալ: Ուստի, Եկեղեցու բոլոր արժանի տղամարդիկ կարող են քահանայության կարգվել, անկախ ռասայից կամ մաշկի գույնից: Քահանայության ղեկավարներին հրահանգվում է հետևել քաղաքականությանը՝ ուշադիր հարցազրույց անցկացնել բոլոր թեկնածուների հետ՝ թե՛ Ահարոնյան, թե՛ Մելքիսեդեկյան Քահանայությանը կարգվելու համար, որպեսզի համոզվեն, որ նրանք համապատասխանում են արժանավորության համար հաստատված չափանիշներին:

Մենք լրջորեն հայտարարում ենք, որ այժմ Տերը հայտնի է դարձրել իր կամքը՝ երկրագնդի վրա ապրող իր բոլոր այն զավակներին օրհնելու

համար, որոնք ականջ կդնեն նրա լիազորված ծառաների ձայնին և իրենց կնախապատրաստեն, որպեսզի ստանան ավետարանի յուրաքանչյուր օրհնություն:

Հարգանքներով ձեր՝

ՄՊԵՆՍԵՐ Վ. ՔԻՄԲԱԼ

Ն. ԷԼԳՈՆ ԹԱՆԵՐ

ՄԱՐԻՈՆ Ջ. ՌՈՄԵԻ

Առաջին Նախագահություն

Ընդունելով Սպենսեր Վ. Քիմբալին որպես մարզարե, տեսանող և հայտնող, և Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու նախագահ, առաջարկվում է, որ մենք, որպես սահմանադիր ժողով, ընդունենք այս հայտնությունը, որպես Տիրոջ խոսքը և կամքը: Բոլորը, ովքեր կողմ են, խնդրում ենք ցույց տալ՝ բարձրացնելով աջ ձեռքը: Ովքեր դեմ են՝ միևնույն նշանով:

Առաջարկությունը հաստատելու քվեարկությունն անցավ միաձայն դրական արդյունքով:

Սույժ Լեյք Սիթի, Յուտա, 1978թ. սեպտեմբերի 30:

ԹԱՆԿԱԳԻՆ ՄԱՐԳԱՐԻՏ

ՀԻՍՈՒՄ ԶՐԻՍՏՈՍԻ

ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ ԵԿԵՂԵՑՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՐԳԱՐԵ, ՏԵՍԱՆՈՂ ԵՎ ՀԱՅՏՆՈՂ

ՋՈՋԵՖ ՍՄԻԹԻ

ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ԵՎ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐԱՆԻ

«Թանկագին Մարգարիտը» Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Մրբերի Եկեղեցու դավանանքի և վարդապետության բազմաթիվ նշանակալից կետերին առնչվող նյութերի ընտրանի է: Այդ նյութերը թողարկվել են Մարգարե Չոզեֆ Սմիթի կողմից և նրա ժամանակ հրատարակվել են Եկեղեցու պարբերականներում:

«Թանկագին Մարգարիտ» վերնագիրը կրող նյութերի առաջին հավաքածուն պատրաստվել է 1851 թվականին, Երեց Ֆրանկլին Գ. Ռիչարդսի կողմից, որն այն ժամանակ Տասներկուսի Խորհրդի անդամ էր և Բրիտանական Առաքելության նախագահը: Գրա նպատակն էր առավել մատչելի դարձնել որոշ կարևոր հոդվածներ, որոնք սահմանափակ քանակով էին հրատարակվում Չոզեֆ Սմիթի ժամանակ: Եվրոպայում և Ամերիկայում Եկեղեցու անդամների քանակի աճին համընթաց, այս նյութերը մատչելի դարձնելու անհրաժեշտություն զգացվեց: «Թանկագին Մարգարիտ» լայն կիրառում գտավ և, հետագայում, Առաջին Նախագահության և գերագույն համաժողովի որոշմամբ, Մոլթ Լեյք Սիթիում, 1880-ի հոկտեմբերի 10-ին դարձավ եկեղեցու օրինակելի աշխատություններից մեկը:

Գրքի բովանդակությունը, ելնելով Եկեղեցու կարիքներից, մի քանի անգամ վերանայվել է: 1878-ին ավելացվեցին Մովսեսի Գրքի այն բաժինները, որոնք չէին ընդգրկվել առաջին հրատարակության մեջ: 1902-ին հանվեցին «Թանկագին Մարգարիտի» որոշակի մասեր, որոնք կրկնվում էին նաև «Վարդապետություն և Ուխտերի» հրատարակության մեջ: Գլուխների և հատվածների բաժանումը, տողատակի հղումներով, արվել է 1902-ին: Առաջին հրատարակությունը՝ երկայունակ էջերով, ցանկով, լույս է տեսել 1921-ին: Այլ փոփոխություններ չեն կատարվել, մինչև 1976-ի ապրիլը, երբ ավելացվեցին երկու հայտնություններ: 1979-ին այդ երկու նյութերը հանվեցին «Թանկագին Մարգարիտից» և տեղափոխվեցին «Վարդապետություն և Ուխտեր», որտեղ նրանք այժմ հայտնի են որպես 137-րդ և 138-րդ բաժիններ: Ներկա հրատարակության մեջ որոշ փոփոխություններ են կատարվել, որպեսզի նյութը համաձայնության բերվի ավելի վաղ փաստաթղթերի հետ:

Ներքոհիշյալը համարվում է ներկա բովանդակության կարճ ներածությունը՝

Ընտիր մասեր Մովսեսի Գրքից: Քաղվածք Աստվածաշնչի Ծննդոց գրքի Չոզեֆ Սմիթի թարգմանությունից, որը նա սկսել էր 1830-ի հունիսին [«History of the Church» (Եկեղեցու պատմություն), 1.98–101, 131–139]:

Արբախամի Գիրքը: Թարգմանություն եգիպտական պապիրաթղթերից, որոնք Չոզեֆ Սմիթի ձեռքն էին ընկել 1835-ին և պարունակում էին Արբախամ հայրապետի գրվածքները: Թարգմանությունը մաս-մաս հրատարակվում էր «Times and Seasons» (Ժամանակներ և ժամանա-

կաշրջաններ) պարբերականում, 1842-ի մարտի 1-ից սկսած, Նավուում, Իլինոյս («History of the Church», 4.519–534):

Չոզեֆ Սմիթ–Մատթեոս: Քաղվածք Աստվածաշնչի Չոզեֆ Սմիթի թարգմանության Մատթեոսի վկայությունից (Նոր Կտակարանի թարգմանությունը սկսելու աստվածային կարգադրության վերաբերյալ, տե՛ս Վարդապետություն և Ուխտեր 45.60–61):

Չոզեֆ Սմիթ–Պատմություն: Հատվածներ Չոզեֆ Սմիթի պաշտոնական վկայությունից ու պատմությունից, որը նա պատրաստել էր 1838-ին, և որը մաս-մաս հրատարակվել էր «Times and Seasons»-ում, Նավուում, Իլինոյս, 1842-ի մարտի 15-ից սկսած («History of the Church», 1.1–44):

Հիսուս Զրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Հավատո Հանգանակը: Չոզեֆ Սմիթի կողմից կատարված հայտարարություն, որը հրատարակվել է «Times and Seasons»-ում 1842-ի մարտի 1-ին, Եկեղեցու համառոտ պատմության հետ մեկտեղ, որը հանրության մեջ ճանաչված էր որպես Վենսվորֆի նամակ («History of the Church», 4.535–541):

ԹԱՆԿԱԳԻՆ ՄԱՐԳԱՐԻՏՈՒՄ

	Էջ
Ընտիր մասեր Մովսեսի Գրքից	1
Աբրահամի Գիրքը	33
Վերատպում՝ թիվ 1	34
Վերատպում՝ թիվ 2	42
Վերատպում՝ թիվ 3	47
Ջոզեֆ Սմիթ–Մատթեոս	51
Ջոզեֆ Սմիթ–Պատմություն	55
Հավատո Հանգանակը	73

ԸՆՏԻՐ ՄԱՍԵՐ ՄՈՎՍԵՍԻ ԳՐՔԻՑ

Քաղվածք Աստվածաշնչի թարգմանությունից, ինչպես հայտնի էր դարձվել Ջոզեֆ Սմիթ Մարգարեին, 1830 հունիս–1831 փետրվար:

ԳԼՈՒԽ 1

(1830թ. հունիս)

Աստված իրեն հայտնի է դարձնում Մովսեսին – Մովսեսը կերպարանափոխվում է – Սատանան հակադրվում է նրան – Մովսեսը տեսնում է բնակեցված բազում աշխարհներ – Անթիվ աշխարհներ են ստեղծվել Որդու կողմից – Աստծո գործն ու փառքն է՝ իրականացնել մարդու անմահությունն ու հավերժական կյանքը:

ԱՍԾՈ խոսքերը, որոնք նա ^ախոսեց ^բՄովսեսի հետ, այն ժամանակ, երբ Մովսեսը հափրշտակվեց մի չափազանց բարձր սար,

2 Եվ նա ^ատեսավ Աստծուն ^բդեմառդեմ, և խոսեց նրա հետ, և Աստծո ^գփառքը Մովսեսի վրա էր. ուստի Մովսեսը կարողացավ ^դդիմանալ նրա ներկայությամբ:

3 Եվ Աստված խոսեց Մովսեսի հետ՝ ասելով. Ահա, ես եմ ^աԱմենագոր Տեր Աստվածը, և ^բԱնվերջ

է իմ անունը. քանզի ես առանց օրերի սկզբի եմ կամ տարիների վերջի. և մի՞թե դա անվերջ է:

4 Եվ ահա, դու իմ որդին ես. ուստի ^ատես, և ես քեզ ցույց կտամ իմ ^բձեռքերի ստեղծագործությունը. բայց ոչ բոլորը, քանզի իմ ^գգործերն ^դանվերջ են, և նաև իմ ^եխոսքերը, քանզի դրանք երբեք չեն դադարում:

5 Ուստի, ոչ ոք չի կարող տեսնել իմ բոլոր գործերը, եթե նա չտեսնի իմ ողջ փառքը. և ոչ ոք չի կարող տեսնել իմ ողջ փառքը, և դրանից հետո մնալ մարմնում՝ երկրի վրա:

6 Եվ ես աշխատանք ունեմ քեզ համար Մովսես, որդի՛ս. և դու իմ ^աՄիածնի ^բմանությունս ես. և իմ Միածինն է՝ և կլինի ^գՓրկիչը, քանզի նա լի է ^դշնորհով ու ^եճշմարտությամբ. բայց ^զչկա Աստված, ինձանից բացի, և բոլոր բաները ներկա են իմ առաջ, քանզի ես ^էգիտեմ բոլոր բաները:

7 Եվ արդ, ահա, այս մի բանը ես ցույց եմ տալիս քեզ Մովսես, իմ

1 *ա* Այն 12.30, Մովսես 1.42:
բ սո՛ր Մովսես:
 2 *ա* Ել. 9.6, Լ9.11, Հովհ. Ա.18, 2.46, Եթեր 3.6–16, Մովսես 1.11: ՋՍԹ, Ել. 33.20, 23:
բ Թվ. ԺԲ.6–8, Բ Օր. ԼԴ.10, Վևո՛՛ 17.1:
գ Բ Օր. Ե.24, Մովսես 1.13–14, 25: սո՛ր Փառք:
դ սո՛ր Կերպարանափոխում:

3 *ա* Հայտ. ԺԱ.17, 19.6, 1 Նեփի 1.14, 121.4: սո՛ր Աստված, Աստվածագլուխ:
բ Վևո՛՛ 19.9–12, Մովսես 7.35: սո՛ր Անվերջ:
 4 *ա* Մովսես 7.4:
բ Մովսես 7.32, 35–37:
գ Մաղ. Խ.5, Վևո՛՛ 76.114:
դ Մաղ. ճԺԱ.7–8, Մովսես 1.38:
ե 2 Նեփի 9.16, Վևո՛՛ 1.37–39: սո՛ր Աստծո խոսքը:

6 *ա* սո՛ր Միածին:
բ Ծճ. Ա.26, Եթեր 3.14–15, Մովսես 1.13–16:
գ սո՛ր Փրկիչ:
դ Հովհ. Ա.14, 17, Այն 13.9: սո՛ր Ընորհ:
ե Մովսես 5.7:
զ Գ Թագ. Ը.60, Ես. ԽԵ.5–18, 21–22:
է 1 Նեփի 9.6, 2 Նեփի 9.20, Այն 18.32, Վևո՛՛ 38.1–2: սո՛ր Ամենագետ:

որդի՛, քանզի դու աշխարհում ես, և այժմ ես այն ցույց եմ տալիս քեզ:

8 Եվ եղավ այնպես, որ Մովսեսը նայեց, և տեսավ ^աաշխարհը, որի վրա նա ստեղծվել էր. Եվ Մովսեսը ^բտեսավ աշխարհը և նրա ծայրերը, և բոլոր մարդկանց զավակներին, որոնք կային, և որոնք ստեղծվել էին. այդ ամենից նա մեծապես ^գզմայլվեց և զարմացավ:

9 Եվ Աստծո ներկայությունը հեռացավ Մովսեսից, այնպես որ նրա փառքը Մովսեսի վրա չէր. և Մովսեսը թողնվեց ինքն իր հետ: Եվ երբ նա թողնվեց ինքն իր հետ, նա վայր ընկավ գետին:

10 Եվ եղավ այնպես, որ շատ ժամեր անցան, մինչև Մովսեսը կրկին ստացավ իր մարդկային բնական ^աուժը. և նա ինքն իրեն ասաց. Այժմ, այս պատճառով, ես զհտեմ, որ մարդը ^բոչինչ է, մի բան, որը երբեք չէի ենթադրել:

11 Բայց այժմ իմ սեփական աչքերը տեսան ^աԱստծուն. բայց ոչ իմ ^բբնական, այլ իմ հոգևոր աչքերը, քանզի իմ բնական աչքերը չէին կարող տեսնել. քանզի ես ^գկշորանայի և ^դկմահանայի նրա ներկայության մեջ. բայց նրա փառքն ինձ վրա էր. և ես տեսա նրա ^եերեսը, քանզի ես ^զկերպարանափոխվեցի նրա առաջ:

12 Եվ եղավ այնպես, որ երբ Մովսեսն ասաց այս խոսքերը,

ահա, ^աՍատանան եկավ՝ նրան ^բփորձելով ասաց. Մովսես, մարդո՛ր որդի, երկրպագիր ինձ:

13 Եվ եղավ այնպես, որ Մովսեսը նայեց Սատանայի վրա և ասաց. Ո՞վ ես դու: Քանզի ահա, ես Աստծո ^աորդի եմ, նրա Միածնի նմանությամբ. և ո՞ւր է քո փառքը, որ ես երկրպագեմ քեզ:

14 Քանզի ահա, ես չէի կարողանում նայել Աստծուն, մինչև նրա փառքը չիջավ ինձ վրա և ես ^աչկերպարանափոխվեցի նրա առաջ: Բայց քեզ վրա ես նայում եմ, որպես բնական մարդու: Այդպես չէ՞, անկասկած:

15 Օրհնյալ լինի իմ Աստծո անունը, քանզի նրա Հոգին ամբողջովին չի հեռացվել ինձանից, կամ թե չէ, ո՞րտեղ է քո փառքը, քանզի այն խավար է ինձ համար: Եվ ես կարող եմ տարբերել քեզ և Աստծուն. քանզի Աստված ինձ ասաց. Աստծուն ^աերկրպագիր, քանզի դու միայն նրան պիտի ^բծառայես:

16 Դե՛ն գնա, Սատանա. ինձ մի խաբիր. քանզի Աստված ինձ ասաց. Դու իմ Միածնի ^անմանությամբ ես:

17 Եվ նա նաև տվեց ինձ պատվիրաններ, երբ նա կանչեց ինձ այրվող ^աթփի միջից՝ ասելով. ^բԿանչիր առ Աստված իմ Միածնի անունով և երկրպագիր ինձ:

18 Եվ կրկին Մովսեսն ասաց. Ես

8ա Մովսես 2.1:
բ Մովսես 1.27:
գ Սաղ. Ը.3–4:
10ա Դան. Ժ.8, 17,
1 Նեփի 17.47,
Ալմա 27.17,
ՋՄ–Պ 1.20:
բ Դան. Դ.35, Հել. 12.7:
11ա սուր Աստված,
Աստվածագլուխ:
բ Մովսես 6.36,
ՎևոՒ 67.10–13:

գ Ել. ԺԹ.21:
դ Ել. Ի.19:
ե Ծն. ԼԲ.30,
Մովսես 7.4:
զ Մատ. ԺԷ.1–8:
սուր Կերպարանափոխում:
12ա Մովսես 4.1–4:
սուր Դև:
բ Մովսես 6.49:
սուր Գայթակղել,
Գայթակղություն:

13ա Սաղ. ՉԲ.6,
Ա Հովի. Գ.2,
Եբր. ԺԲ.9:
14ա սուր Կերպարանափոխում:
15ա Մատ. Դ.10:
սուր Երկրպագել:
բ Ա Թագ. Է.3,
3 Նեփի 13.24:
16ա Մովսես 1.6:
17ա Ել. Գ.2:
բ Մովսես 5.8:

չեմ դադարի կանչել առ Աստված, ես ուրիշ բաներ ունեմ հարցնելու նրան. քանզի նրա փառքը եղել է ինձ վրա, ուստի ես կարող եմ տարբերել քեզ և նրան: Հեռացի՛ր այստեղից, Սատանա:

19 Եվ արդ, երբ Մովսեսն ասաց այս խոսքերը, Սատանան գոչեց բարձր ձայնով, և բղավեց երկրի վրա և հրամայեց՝ ասելով. Ե՛ս եմ՝ Միածինը, ի՛նձ երկրպագիր:

20 Եվ եղավ այնպես, որ Մովսեսը սկսեց աստիկ վախենալ, և երբ սկսեց վախենալ, նա տեսավ՝ Պիլոսի դառնությունը: Սակայն, իկանչելով առ Աստված, նա ուժ ստացավ և հրամայեց՝ ասելով. Հեռացի՛ր ինձանից, Սատանա՛, քանզի այս մեկ Աստծուն միայն պիտի երկրպագեմ, որը փառքի Աստվածն է:

21 Եվ արդ, Մատանան սկսեց դողալ, և երկիրը ցնցվում էր. և Մովսեսն ուժ ստացավ, և կանչեց առ Աստված՝ ասելով. Միածնի անունով, հեռացի՛ր այստեղից, Սատանա:

22 Եվ եղավ այնպես, որ Սատանան գոչեց բարձր ձայնով, լացով և կոծով և ատամների՝ կրճտոցով. և հեռացավ այնտեղից, այսինքն՝ Մովսեսի ներկայությունից, այնպես որ նա չտեսավ նրան:

23 Եվ արդ, այս բաների մասին Մովսեսը վկայեց. բայց ամբարըչտության պատճառով մարդկանց զավակները չունեն այն:

24 Եվ եղավ այնպես, որ երբ Սա-

տանան հեռացավ Մովսեսի ներկայությունից, որ Մովսեսը բարձրացրեց իր աչքերը դեպի երկինք, լցված լինելով՝ Մուրբ Հոգով, որը վկայում է Հոր և Որդու մասին.

25 Եվ կանչելով Աստծո անունը՝ նա կրկին տեսավ նրա փառքը, քանզի այն նրա վրա էր. և նա լսեց մի ձայն, որն ասում էր. Օրհնված ես դու, Մովսես՛ս, քանզի ես՝ Ամենագորս, ընտրել եմ քեզ, և դու ավելի ուժեղ կդարձվես, քան շատ ջրերը. քանզի նրանք կհնազանդվեն քո իրամանին՝ ասես դու՝ Աստված լինելի:

26 Եվ ահա, ես քեզ հետ եմ, նույնիսկ մինչև քո օրերի վերջը. քանզի դու՝ գերությունից Քլազատես իմ ժողովրդին, այսինքն՝ Իսրայելին, իմ ընտրյալին:

27 Եվ եղավ այնպես, մինչ ձայնը դեռ խոսում էր, Մովսեսն իր աչքերը բարձրացրեց և տեսավ երկիրը, այո, նույնիսկ ամբողջությամբ. և չկար դրա մի մասնիկ, որ նա չտեսներ, զանազանելով Աստծո Հոգով:

28 Եվ նա տեսավ նաև նրա բնակիչներին, և չկար մի հոգի, որին նա չտեսներ. և նա զանազանեց նրանց Աստծո Հոգով. և մեծ էր նրանց թիվը, նույնիսկ անթիվ, ինչպես ծովեզրի ավազը:

29 Եվ նա տեսավ շատ հողեր. և յուրաքանչյուր հող կոչվում էր՝ երկիր. և դրանց երեսին բնակիչներ կային:

30 Եվ եղավ այնպես, որ Մովսես-

19ա Մատ. ԻԳ.4–5:

20ա ստ՝ Դժոխք:

բ ՁՄ–Պ 1.15–16:

ստ՝ Աղոթք:

21ա ստ՝ Դև:

22ա Մատ. ԺԳ.41–42,

Մոսիա 16.1–3:

24ա ստ՝ Մուրբ Հոգի:

25ա Ել. ԺԳ.21–22:

բ ստ՝ Չորություն,
Քահանայություն:

գ Ել. Դ.16:

26ա 1 Նեփի 17.23–25:

բ Ել. Գ.7–12:

գ Գ Թագ. Ը.51–53:

ստ՝ Իսրայել:

դ ստ՝ Ընտրյալ:

27ա ՎևոՒԹ 88.47,

Մովսես 1.8:

ստ՝ Տեսիլք:

29ա ստ՝ Երկիր:

սը կանչեց առ Աստված՝ ասելով. Ասա ինձ, խնդրում եմ քեզ, ինչո՞ւ եմ այս բաներն այսպես, և ինչով ես դու արարել դրանք:

31 Եվ ահա, Տիրոջ փառքը Մովսեսի վրա էր, այնպես որ Մովսեսը կանգնած էր Աստծո ներկայության մեջ, և խոսում էր նրա հետ՝ Պե-մառդեմ: Եվ Տեր Աստված ասաց Մովսեսին. Իմ անձնական թնայա-տակի համար եմ ես արարել այս բաները: Այստեղ է իմաստությունը և այն մնում է ինձանում:

32 Եվ իմ զորության Մխոսքով եմ ես ստեղծել դրանք, որն է իմ Միա-ծին Որդին, որը լի է Քննորհով ու ճշմարտությամբ:

33 Եվ անթիվ Մաշխարհներ եմ ես թստեղծել. և դրանք նույնպես ես ստեղծել եմ իմ անձնական նպա-տակի համար. և Որդու միջոցով եմ ես ստեղծել դրանք, որն իմ Պիածինն է:

34 Եվ Մառաջին մարդուն, բոլոր մարդկանցից, ես կոչեցի թԱդամ, որը Քրազում է:

35 Բայց միայն այս երկրի և նրա բնակիչների պատմությունն եմ ես քեզ տալիս: Քանզի ահա, բազում աշխարհներ կան, որ անցել են իմ զորության խոսքով: Եվ շատերը կան, որոնք այժմ կանգուն են, և դրանք անհաշվելի են մարդու

համար. բայց ինձ համար բոլոր բաները հաշվելի են, քանզի դրանք իմն են, և ես Մգիտեմ դրանց:

36 Եվ եղավ այնպես, որ Մովսեսը խոսեց Տիրոջ հետ՝ ասելով. Ողոր-մած եղի՛ր քո ծառայի համդեպ, ո՛վ Աստված, և ասա ինձ այս երկրի և նրա բնակիչների և նաև երկինքների վերաբերյալ, և քո ծառան կզոհանա:

37 Եվ Տեր Աստված խոսեց Մովսեսի հետ՝ ասելով. Մերկինքները շատ են, և դրանք անհաշվելի են մարդու համար. բայց ինձ համար դրանք հաշվելի են, քանզի դրանք իմն են:

38 Եվ ինչպես մի երկիրը և նրա երկինքները կանցնեն, ճիշտ այդ-պես կգա մեկ ուրիշը. և չկա Մվերջ իմ գործերին, ոչ էլ իմ խոսքերին:

39 Քանզի ահա, սա է իմ Մգործը և իմ թփառքը՝ իրականացնել մար-դու Պանմահությունն ու Պհավերժա-կան կյանքը:

40 Եվ արդ, Մովսե՛ս, որդի՛ս, ես կխոսեմ քեզ հետ այս երկրի վերա-բերյալ, որի վրա դու կանգնած ես. և դու պիտի Մգրես բաները, որոնք ես կասեմ:

41 Եվ այն օրը, երբ մարդկանց զավակները ոչինչ կհամարեն իմ խոսքերը և Մկհանեն դրանցից շա-տերն այն գրքից, որը դու կգրես,

31ա Բ Օր. Ե.4, Մովսես 1.11:
բ Ես. ԽԵ.17-18, 2Նեփի 2.14-15:
32ա Հովհ. Ա.1-4, 14, Եբր. Ա.1-3, Հայտ. ԺԹ.13, Հակոբ 4.9, Մովսես 2.1, 5:
սո՛ւ Հիսուս Քրիստոս:
բ Մադ. ԺԺ.1, Մովսես 5.7-8:
սո՛ւ Շնորհ:
գ սո՛ւ ճշմարտություն:

33ա Մադ. Ը.3-4, Վև.ՈՒ 76.24, Մովսես 7.29-30:
բ սո՛ւ Ստեղծել, Ստեղծում:
գ Մովսես 1.6:
34ա Մովսես 3.7:
բ Աբր. 1.3:
սո՛ւ Ադամ:
գ Մովսես 4.26, 6.9:
35ա Մովսես 1.6, 7.36:
սո՛ւ Ամենագետ:
37ա Աբր. 4.1:
սո՛ւ Երկինք:

38ա Մովսես 1.4:
39ա Հռովմ. Ը.16-17, 2Նեփի 2.14-15:
սո՛ւ Փրկագնման ծրագիր:
բ սո՛ւ Փառք:
գ սո՛ւ Ամմահ, Ամմահություն:
դ սո՛ւ Հավերժական կյանք:
40ա 2Նեփի 29.11-12:
41ա 1Նեփի 13.23-32, Մովսես 1.23:

ահա, ես կբարձրացնեմ քեզ ⁹մնամ
մեկ ուրիշին. և ⁹դրանք կրկին
կլինեն մարդկանց զավակների
մեջ՝ բոլոր նրանց մեջ, ովքեր
կհավատան:

42 (Այս խոսքերն ^աասվել են Մով-
սեսին մի սարի վրա, որի անունը
չի իմացվի մարդկանց զավակների
մեջ: Եվ այժմ դրանք ասվում են
ձեզ: Մի ցույց տվեք դրանք ոչ որի,
բացի նրանցից, ովքեր հավատում
են: Ճիշտ այդպես: Ամեն):

ԳԼՈՒԽ 2

(1830թ. հունիս–հոկտեմբեր)

*Աստված ստեղծում է երկինքներն
ու երկիրը – Ստեղծվում են կյանքի
բոլոր տեսակները – Աստված արա-
րում է մարդուն և նրան իշխանու-
թյուն է տալիս բոլոր մյուսների վրա:*

Եւ եղավ այնպես, որ Տերը խոսեց
Մովսեսի հետ՝ ասելով. Ահա, ես
^ահայտնում եմ քեզ այս ^բերկնքի ու
այս ^գերկրի վերաբերյալ. գրիք
խոսքերը, որոնք ես ասում եմ: Ես
եմ Սկիզբը և Վերջը՝ ^աԱմենագոր
Աստվածը. իմ ^բՄիածնով եմ ես
^գստեղծել այս բաները. այո,
սկզբում ես ստեղծեցի երկինքը, և
երկիրը, որի վրա դու կանգնած ես:

2 Եվ ^աերկիրն անձև էր ու անբո-
վանդակ. և ես այնպես արեցի, որ
խավար իջավ անդունդի երեսին.
և իմ Հոգին շրջում էր ջրերի վրա.
բանգի ես եմ Աստված:

3 Եվ ես՝ Աստվածս, ասացի. Թող
լինի ^ալույս. և լույս եղավ:

4 Եվ ես՝ Աստվածս, տեսա լույսը.
և որ լույսը ^աբարի էր: Եվ ես՝ Աստ-
վածս, լույսը բաժանեցի խավարից:

5 Եվ ես՝ Աստվածս, լույսը կոչեցի
Ցերեկ, իսկ խավարը ես կոչեցի
Գիշեր. և սա ես արեցի իմ գորու-
թյան ^ախոսքով, և կատարվեց այն-
պես, ինչպես ես ^բասացի. և իրի-
կունը և առավոտը եղան առաջին
^գօրը:

6 Եվ բացի այդ, ես՝ Աստվածս,
ասացի. Թող ^ահաստատություն
լինի ջրերի մեջտեղը, և եղավ
այնպես, ինչպես ես ասացի. և ես
ասացի. Թող այն բաժանի ջրերը
ջրերից. և դա կատարվեց.

7 Եվ ես՝ Աստվածս, արարեցի
հաստատությունը և բաժանեցի
^աջրերը, այո, հաստատության
տակի մեծ ջրերը՝ հաստատության
վրայի ջրերից, և դա եղավ, ճիշտ
ինչպես ես ասացի:

8 Եվ ես՝ Աստվածս, հաստատու-
թյունը կոչեցի ^աԵրկինք. և իրիկու-
նը և առավոտը եղան երկրորդ օրը:

9 Եվ ես՝ Աստվածս, ասացի. Թող
երկնքի տակի ջրերը ժողովեն
^ամեկտեղ, և այդպես եղավ. և ես՝
Աստվածս, ասացի. Թող ցամաք
լինի. և այդպես եղավ:

10 Եվ ես՝ Աստվածս, ցամաքը կո-
չեցի ^աԵրկիր. իսկ ջրերի ժողովքը
եւ կոչեցի Ծով. Եվ ես՝ Աստվածս,
տեսա, որ բոլոր բաները, որոնք ես
ստեղծել էի, բարի էին:

41բ 2 Նեփի 3.7–19:
գ 1 Նեփի 13.32, 39–40,
վևՈՒ 9.2:
42ա Մովսես 1.1:
2 1ա Մովսես 1.30, 36:
բ սուր Երկինք:
գ Մովսես 1.8:
դ սուր Աստված,
Աստվածազուլիս –

Աստված Հայրը:
ե սուր Միածին:
գ սուր Ստեղծել,
Ստեղծում:
2ա ԾՆ. Ա.2, Աբբ. 4.2:
3ա ՎևՈՒ 88.6–13:
սուր Լույս, Քրիստոսի
լույս:
4ա ԾՆ. Ա.4, Աբբ. 4.4:

5ա Մովսես 1.32:
բ Բ Կոր. Գ.6:
գ ԾՆ. Ա.5:
6ա ԾՆ. Ա.6–8:
7ա Աբբ. 4.9–10:
8ա սուր Երկինք:
9ա ԾՆ. Ա.9,
Աբբ. 4.9:
10ա սուր Երկիր:

11 Եվ ես՝ Աստվածս, ասացի. Թող երկիրը՝ Մկանաչ խոտ առաջ բերի, սերմ տվող խոտեր, իր տեսակի պես պտուղ տվող պտղատու ծառեր, և պտուղ տվող ծառեր, որոնց սերմն իր մեջ կլինի՝ երկրի վրա, և եղավ ճիշտ այնպես, ինչպես ես ասացի.

12 Եվ երկիրն առաջ բերեց կանաչ խոտ, իր տեսակի պես սերմ տվող ամեն բույս և պտուղ տվող ծառեր, որոնց սերմն իր մեջ կլինի, իր տեսակի պես. և ես՝ Աստվածս, տեսա, որ բոլոր այս բաները, որոնք ես արարել էի, բարի էին.

13 Եվ իրիկունը և առավոտը եղան երրորդ օրը:

14 Եվ ես՝ Աստվածս, ասացի. Թող լուսատուներ լինեն երկնքի հաստատության մեջ, որ ցերեկը զիշերից բաժանեն, և թող դրանք լինեն նշանների ու եղանակների համար և օրերի ու տարիների համար.

15 Եվ թող դրանք լինեն լույսի համար երկնքի հաստատության մեջ, որ լույս տան երկրի վրա. և եղավ այդպես:

16 Եվ ես՝ Աստվածս, երկու մեծ լուսատուներ արարեցի. մեծ՝ լուսատուն՝ ցերեկը կառավարելու համար, իսկ փոքր լուսատուն՝ զիշերը կառավարելու համար, և մեծ լուսատուն արևն էր, իսկ փոքր լուսատուն՝ լուսինը. և աստղերը նույնպես արարվեցին ճիշտ իմ խոսքի համաձայն:

17 Եվ ես՝ Աստվածս, նրանց դրեցի երկնքի հաստատության մեջ, որ լույս տան երկրի վրա,

18 Եվ արևը՝ ցերեկը կառավարելու համար, իսկ լուսինը՝ զիշերը

կառավարելու համար, և լույսը խավարից բաժանելու համար. և ես՝ Աստվածս, տեսա, որ բոլոր բաները, որոնք ես արարել էի, բարի էին.

19 Եվ իրիկունը և առավոտը եղան չորրորդ օրը:

20 Եվ ես՝ Աստվածս, ասացի. Թող ջրերն առատորեն առաջ բերեն զեռուններ, որոնք կյանք ունեն, և թռչուններ, որոնք կկարողանան թռչել երկրի վրա՝ երկնքի բաց հաստատության մեջ:

21 Եվ ես՝ Աստվածս, ստեղծեցի մեծ՝ կետերին և ամեն կենդանի արարած, որը շարժվում է, որոնք ջրերն առաջ բերեցին առատորեն, իրենց տեսակի պես, և ամեն թևավոր թռչուն իր տեսակի պես. և ես՝ Աստվածս, տեսա, որ բոլոր բաները, որոնք ես ստեղծել էի, բարի էին:

22 Եվ ես՝ Աստվածս, օրհնեցի նրանց՝ ասելով. Պտղաբեր եղեք և՝ Մբազմացեք և լցրեք ծովի ջրերը. և թող թռչունները բազմանան երկրի վրա.

23 Եվ իրիկունը և առավոտը եղան հինգերորդ օրը:

24 Եվ ես՝ Աստվածս, ասացի. Թող երկիրը կենդանի արարածներ առաջ բերի իր տեսակի պես՝ անասուններ և սողուններ և երկրի զազաններ իրենց տեսակի պես, և եղավ այդպես.

25 Եվ ես՝ Աստվածս, ստեղծեցի երկրի զազաններին իրենց տեսակի պես, և անասուններին, իրենց տեսակի պես, և ամեն ինչ, ինչը սողում է երկրի վրա, իր տեսակի պես. և ես՝ Աստվածս, տեսա, որ այս բոլոր բաները բարի էին:

26 Եվ ես՝ Աստվածս, ասացի իմ

11աԾն. Ա.11–12, Աբբ. 4.11–12:

16աԾն. Ա.16: 21աԾն. Ա.21, Աբբ. 4.21:

22աԾն. Ա.22–25, Աբբ. 4.22–25:

Միածնին, որն ինձ հետ էր ի սկզբանե. Եկ մարդ Քարաբենք մեր Գլատկերով՝ մեր մնամությամբ. և այդպես եղավ: Եվ ես՝ Աստվածս, ասացի. Թող նրանք Պիշխեն ծովի ձկների և օղի թռչունների և անասունների և ողջ երկրի վրա, և երկրի վրա սողացող ամեն սողունի վրա:

27 Եվ ես՝ Աստվածս, ստեղծեցի մարդուն իմ պատկերով, իմ Միածնի պատկերով ստեղծեցի նրան. արու և էգ ստեղծեցի նրանց:

28 Եվ ես՝ Աստվածս, օրհնեցի նրանց և ասացի նրանց. Պտղաբեր եղեք և Քազմացեք, լցրեք երկիրը և տիրեք նրան և իշխեք ծովի ձկների, օղի թռչունների և երկրի վրա շարժվող ամեն կենդանու վրա:

29 Եվ ես՝ Աստվածս, ասացի մարդուն. Ահա, ես տվել եմ քեզ ամեն սերմ տվող խոտ, որ ողջ երկրի երեսի վրա է, և ամեն ծառ, որի մեջ կա սերմ տվող ծառի պտուղ. քեզ համար այն կերակուր լինի:

30 Եվ երկրի ամեն գազանի համար, և երկնքի ամեն թռչունի համար, և երկրի վրայի ամեն մի սողունի համար, որին ես կյանք եմ տվել, ամեն մաքուր խոտ կտրվի, որպես կերակուր. և եղավ այնպես, ինչպես ես ասացի:

31 Եվ ես՝ Աստվածս, տեսա ամեն ինչ, որ արարել էի, և ահա, բոլոր բաները, որոնք ես արարել էի,

չառ Քարի էին. և իրիկունը և առավոտը եղան Քվեցերորդ օրը:

ԳԼՈՒԽ 3

(1830թ. հունիս-հոկտեմբեր)

Աստված արարեց բոլոր բաները հոգեղեն, նախքան դրանք բնականորեն երկրի վրա էին – Նա արարեց մարդուն, առաջին մարմինը երկրի վրա – Կինը լավ օգնական է մարդու համար:

ԱՅՏՊԵՍ Մավարտվեցին երկինքն ու երկիրը, և նրանց բոլոր Քգորքերը:

2 Եվ յոթերորդ օրը, ես՝ Աստվածս, վերջացրեցի իմ գործը, և բոլոր բաները, որոնք ես արարել էի. և յոթերորդ օրը ես Քհանգրստացա իմ բոլոր գործերից, և բոլոր բաները, որոնք ես արարել էի, ավարտվել էին, և ես՝ Աստվածս, տեսա, որ դրանք բարի էին.

3 Եվ ես՝ Աստվածս, Մօրհնեցի յոթերորդ օրը, և սրբացրեցի այն. որովհետև այդ օրը ես հանգստացա իմ բոլոր Քգործերից, որոնք ես՝ Աստվածս, ստեղծեցի և արարեցի:

4 Եվ այժմ, ահա, ես ասում եմ քեզ, որ սրանք են երկնքի և երկրի սերունդները, երբ դրանք ստեղծվեցին, այն օրը, երբ ես՝ Տեր Աստվածս, արարեցի երկինքն ու երկիրը,

5 Եվ դաշտի ամեն մի բույս, Մնախքան երկրի վրա լինելը, և դաշտի ամեն մի խոտ, նախքան իր

26ա սո՛ւ Հիսուս Քրիստոս:
 բ սո՛ւ Ստեղծել, Ստեղծում:
 գ Ծճ. Ա.26–27, Մովսես 6.8–10, Աբր. 4.26–27:
 դ Ծճ. Ա.28, Մովսես 5.1, Աբր. 4.28:
 27ա սո՛ւ Աստված,

Աստվածազուլիս:
 28ա Մովսես 5.2:
 29ա Ծճ. Ա.29–30, Աբր. 4.29–30:
 31ա Ծճ. Ա.31, ՎևՌԻ 59.16–20:
 բ Ել. Բ.11, Աբր. 4.31:
 3 1ա սո՛ւ Ստեղծել, Ստեղծում:

բ Ծճ. Բ.1, Աբր. 5.1:
 2ա սո՛ւ Հանգստության օր:
 բ Ծճ. Բ.2–3, Աբր. 5.2–3:
 սո՛ւ Հանգիստ:
 3ա Մոսիս 13.19:
 բ Ել. ԼԱ.14–15:
 5ա Ծճ. Բ.4–5, Աբր. 5.4–5:

աճելը: Քանզի ես՝ Տեր Աստվածս, ^բհոգեղեն ^գստեղծեցի բոլոր բաները, որոնց մասին ասացի, նախքան դրանք բնական տեսքով երկրի երեսին էին: Քանզի ես՝ Տեր Աստվածս, անձրև չէի բերել երկրի երեսին: Եվ ես՝ Տեր Աստվածս, ^դստեղծել էի բոլոր մարդկանց գավակներին: Բայց դեռ ոչ մարդուն, որ մշակի ^եհողը: քանզի ^զերկնքում էի ես ^էստեղծել նրանց. և դեռ մարմին չկար ոչ երկրի վրա, ոչ ջրի մեջ, ոչ էլ օդում:

6 Սակայն, ես՝ Տեր Աստվածս, խոսեցի, և ^ագոլորշի բարձրացավ երկրից, և ջրեց ամբողջ հողի երեսը:

7 Եվ ես՝ Տեր Աստվածս, հողի ^ափռշուց կազմավորեցի մարդուն, և նրա ռնգերում շնչեցի կյանքի շունչը. և ^բմարդը դարձավ կենդանի ^գհոգի, ^դառաջին մարմինը երկրի վրա, նաև առաջին մարդը: չնայած, բոլոր բաները մինչ այդ ստեղծվել էին, բայց հոգեղեն էին նրանք ստեղծվել ու արարվել՝ համաձայն իմ խոսքի:

8 Եվ ես՝ Տեր Աստվածս, մի պարտեզ տնկեցի արևելքի կողմը՝ ^աԵդենում, և այնտեղ դրեցի մարդուն, որին կազմավորել էի:

9 Եվ հողից, ես՝ Տեր Աստվածս, աճեցրի բոլոր ծառերը, բնական տեսքով, որոնք հաճելի են մարդու աչքին. և մարդը կարողանում էր տեսնել այն: Եվ այն նույնպես դարձավ կենդանի հոգի: Քանզի այն հոգեղեն էր այն օրը, երբ ես

ստեղծեցի այն. քանզի այն մնում է այն ոլորտում, որում ես՝ Աստվածս, ստեղծեցի այն, այո, նույնիսկ բոլոր բաները, որոնք ես պատրաստել էի մարդու օգտագործման համար. և մարդը տեսավ, որ այն լավ էր, որպես սնունդ: Եվ ես՝ Տեր Աստվածս, տնկեցի նաև կյանքի ^ածառը պարտեզի մեջտեղում, և նաև բարին և չարը գիտեմալու ^բծառը:

10 Եվ ես՝ Տեր Աստվածս, մի գետ դուրս բերեցի Եդենից՝ պարտեզը ջրելու համար. և այդտեղից այն բաժանվեց և դարձավ չորս գետի ^աակունք:

11 Եվ ես՝ Տեր Աստվածս, առաջինի անունը դրեցի Փիսոն, և այն պտտվում է Եվիլայի ողջ երկրով, որտեղ ես՝ Տեր Աստվածս, շատ ոսկի ստեղծեցի:

12 Եվ այդ երկրի ոսկին լավն էր, և այնտեղ կային սուտակ և գահանակ ակնաքարեր:

13 Եվ երկրորդ գետի անունը կոչվեց Գեհոն. դա այն նույնն է, որը շրջանցում է ողջ Եթովպայի երկիրը:

14 Եվ երրորդ գետի անունը Տիգրիս էր. այն, որը հոսում է Ասորեստանի արևելքով: Եվ չորրորդ գետը Եփրատն էր:

15 Եվ ես՝ Տեր Աստվածս, վերցրեցի մարդուն, և դրեցի նրան Եդենի պարտեզում, որ մշակի այն, և պահի այն:

16 Եվ ես՝ Տեր Աստվածս, պատվիրեցի մարդուն՝ ասելով. Պարտեզի

5բ Աբր. 3.23,
ՎևոՒ 29.31–34:
սոՒ Հոգեղեն ստեղծում:
գ Մովսես 6.51:
դ սոՒ Ոգի:
է ԾՆ. Բ.5:
զ սոՒ Երկինք:

է սոՒ Մարդ, Մարդիկ –
Մարդը՝ Երկնային
Հոր հոգեղեն զավակ:
6ա ԾՆ. Բ.6:
7ա ԾՆ. Բ.7,
Մովսես 4.25, 6.59,
Աբր. 5.7:

բ սոՒ Ադամ:
գ սոՒ Հոգի:
դ Մովսես 1.34:
8ա սոՒ Եդեն:
9ա սոՒ Կյանքի ծառ:
բ ԾՆ. Բ.9:
10ա ԾՆ. Բ.10:

բոլոր ծառերից ազատ կարող ես ունել,

17 Բայց բարու և չարի գիտության ծառից՝ դու չպետք է ունես դրանից, այնուամենայնիվ, դու կարող ես ՝ընտրել քեզ համար, քանզի դա տրված է քեզ. սակայն, հիշիր, որ ես արգելում եմ դա, քանզի այն ՝օրը, երբ դու ունես դրանից, դու անկասկած ճկմեռնես:

18 Եվ ես՝ Տեր Աստվածս, ասացի իմ ՝Միածնին, որ լավ չէ, որ մարդը մենակ լինի. ուստի, ես մի լավ ՝օգնական կարարեմ նրա համար:

19 Եվ ես՝ Տեր Աստվածս, հողից կազմավորեցի դաշտի ամեն գագան, և երկնքի ամեն թռչուն. և պատվիրեցի, որ նրանք գան Ադամի մոտ, որ տեսնեմ, թե ինչպես կկոչի նրանց. և նրանք նույնպես կենդանի հոգիներ էին. քանզի ես՝ Աստվածս, նրանց մեջ շնչեցի կյանքի շունչը, և պատվիրեցի, որ ինչ որ Ադամը կոչեց ամեն կենդանի արարածի, դա պիտի լինի նրա անունը:

20 Եվ Ադամն անուններ տվեց բոլոր անասուններին, և երկնքի թռչուններին, և դաշտի բոլոր գագաններին. իսկ ինչ վերաբերում է Ադամին՝ նրա համար լավ օգնական չգտնվեց:

21 Եվ ես՝ Տեր Աստվածս, խորը քուն բերեցի Ադամի վրա. և նա քնեց, և ես վերցրեցի նրա կողերից մեկը և տեղը մտով ժածկեցի.

22 Եվ այդ կողից, որ ես՝ Տեր Աստվածս, վերցրել էի մարդուց, ես արարեցի ՝կնոջը, և բերեցի նրան մարդու մոտ:

23 Եվ Ադամն ասաց. Սա հիմա ես գիտեմ՝ ոսկր է իմ ոսկրից, և ՝մարմին է իմ մարմնից. նրան կկոչեն Կին, որովհետև նա վերցվել է մարդուց:

24 Դրա համար՝ մարդը կթողնի իր հորը և իր մորը, և ՝կիսարի իր կնոջը. և նրանք կլինեն ՝մեկ մարմին:

25 Եվ նրանք երկուսն էլ մերկ էին՝ մարդը և նրա կինը, և չէին ամաչում:

ԳԼՈՒԽ 4

(1830թ. հունիս-հոկտեմբեր)

Թե ինչպես Սատանան դարձավ դև – Նա փորձում է Եվային – Ադամը և Եվան ընկնում են, և մահը մուտք է գործում աշխարհ:

ԵՎ ես՝ Տեր Աստվածս, խոսեցի Մովսեսի հետ՝ ասելով. Այն ՝Սատանան, որին դու հրամայեցիր՝ իմ Միածնի անունով, նույնն է, որն ի ՝սկզբանե էր, և նա եկավ իմ առաջ՝ ասելով. Ահա, ես այստեղ եմ, ի՛նձ ուղարկիր, ես կլինեմ քո որդին և կփրկագնեմ ողջ մարդկությանը, այնպես որ մեկ հոգի չի կորչի, և անկասկած ճես դա կանեմ. ուստի, տուր ինձ քո պատիվը:

2 Բայց, ահա, իմ Սիրելի ՝Որդին, որն իմ Սիրելին ու ՝Ընտրյալն էր

17ա Մովսես 7.32:
սուր Կամբի
ազատություն:
բ Աբր. 5.13:
գ Ծն. Բ.17:
սուր Մահ ֆիզիկական.
Մահկանացու,
Մահկանացություն:
18ա սուր Միածին:

բ Ծն. Բ.18,
Աբր. 5.14:
22ա սուր Եվա. Կին,
Կանայք:
23ա Ծն. Բ.23,
Աբր. 5.17:
24ա Ծն. 2.24,
ՎևոՒ 42.22, 49.15-16,
Աբր. 5.17-18:

բ սուր Ամուսնություն,
Ամուսնանալ:
4 1ա սուր Դև:
բ ՎևոՒ 29.36-37:
գ Ես. ԺԴ.12-15:
2ա սուր Հիսուս Քրիստոս:
բ Մովսես 7.39,
Աբր. 3.27:
սուր Նախակարգում:

ի սկզբանե, ինձ ասաց. ⁹Հայր, քո կամքը ¹⁰կատարվի, և ¹¹փառքը քոնը լինի հավիտյան:

3 Ուստի, քանի որ Սատանան ¹²ապստամբեց իմ դեմ, և փնտրեց կործանել մարդու ¹³կամքի ազատությունը, որը ես՝ Տեր Աստվածս, տվել էի նրան, և նաև փնտրեց իմ գորությունը, որ ես պետք է տայի նրան. իմ Միածնի գորությամբ ես այնպես արեցի, որ նա ¹⁴ցած գցվեր.

4 Եվ նա դարձավ Սատանա, այո, այսինքն՝ դևը, բոլոր ¹⁵ստերի հայրը, որ խաբի և կուրացնի մարդկանց, և գերության տանի նրանց իր կամքով, նույնիսկ բոլոր նրանց, ովքեր չեն կամենա ականջ դնել իմ ձայնին:

5 Եվ արդ, օձն ավելի ¹⁶խորամանկ էր, քան դաշտի որևէ այլ գազան, որին ես՝ Տեր Աստվածս, արարել էի:

6 Եվ Սատանան դրեց օձի սրտում, (քանզի նա շատերին էր հեռու տարել իր ետևից), և նաև փորձեց խաբել ¹⁷Եվային, քանզի չգիտեր Աստծո միտքը, ուստի փնտրում էր կործանել աշխարհը:

7 Եվ նա ասաց կնոջը. Իրա՞վ Աստված ասել է,– Դուք չպետք է ուտեք ¹⁸պարտեզի ոչ մի ծառից: (Եվ նա խոսում էր օձի բերանով):

8 Եվ կինն ասաց օձին. Մենք կարող ենք ուտել պարտեզի ծառերի պտղից.

9 Բայց այն ծառի պտղից, որը դու տեսնում ես պարտեզի միջում,

Աստված ասել է,– Դուք չպետք է ուտեք այն, ոչ էլ պետք է դրան ձեռք տաք, որ չլինի թե մեռնեք:

10 Եվ օձն ասաց կնոջը. Դուք բնավ չեք մեռնի:

11 Քանզի Աստված գիտի, որ այն օրը, երբ դուք ուտեք նրանից, ձեր ¹⁹աչքերը կբացվեն, և դուք աստվածների պես կլինեք՝ բարին և չարը ²⁰գիտեցող:

12 Եվ երբ կինը տեսավ, որ ծառը լավ է ուտելիքի համար, և որ այն հաճելի է դարձել աչքի համար, և ²¹փափագելի ծառ է՝ իրեն իմաստուն դարձնելու համար, նա վերցրեց դրա պտղից և ²²կերավ, և իր հետ իր ամուսնուն էլ տվեց, և նա կերավ:

13 Եվ նրանց երկուսի աչքերը բացվեցին, և նրանք իմացան, որ ²³մերկ են: Եվ նրանք կարեցին թզենու տերևները միասին և իրենց համար գոգնոցներ պատրաստեցին:

14 Եվ նրանք լսեցին Տեր Աստծո ձայնը, պարտեզում ²⁴քայլելիս, օրվա հովին. և Ադամն ու իր կինը զնացին պարտեզի ծառերի մեջ, որ թաքնվեն Տեր Աստծո ներկայությունից:

15 Եվ ես՝ Տեր Աստվածս, կանչեցի Ադամին և ասացի նրան. Ո՞ր ես ²⁵զգնում դու:

16 Եվ նա ասաց. Ես լսեցի քո ձայնը պարտեզում, և վախեցա, որովհետև տեսա, որ մերկ եմ, և թաքնվեցի:

2*q* սո՛ր Աստված, Աստվածագլուխ – Աստված Հայրը:
η Դուկ. ԻԲ.42:
ե սո՛ր Փառք:
 3*ա* սո՛ր Խորհուրդ Երկնքում:
բ սո՛ր Կամքի ազատություն:

q ՎևՈՒ 76.25-27:
 4*ա* 2 Նեփի 2.18, ՎևՈՒ 10.25:
 սո՛ր Խաբկանք, Խաբել, Խաբեություն. Ստել:
 5*ա* ԾՆ. Գ.1, Մոսիա 16.3, Ալմա 12.4:
 6*ա* սո՛ր Եվա:
 7*ա* սո՛ր Եդեմ:

11*ա* ԾՆ. Գ.3-6, Մովսես 5.10:
բ Ալմա 12.31:
 12*ա* ԾՆ. Գ.6:
բ սո՛ր Ադամի և Եվայի անկումը:
 13*ա* ԾՆ. Բ.25:
 14*ա* ԾՆ. Գ.8:
 15*ա* ԾՆ. Գ.9:

17 Եվ ես՝ Տեր Աստվածս, ասացի Ադամին. Ո՞վ ասաց քեզ, որ մերկ ես: Մի՞թե կերել ես այն ծառից, որից պատվիրեցի, որ չուտես, թե չէ անկասկած՝ կմեռնես:

18 Եվ մարդն ասաց. Կինը, որին տվեցիր ինձ, և պատվիրեցիր, որ մնա ինձ հետ, նա ինձ տվեց այն ծառի պտղից, և ես կերա:

19 Եվ ես՝ Տեր Աստվածս, ասացի կնոջը. Այս ի՞նչ է, որ դու արեցիր: Եվ կինն ասաց. Օձն ինձ խաբեց, և ես կերա:

20 Եվ ես՝ Տեր Աստվածս, ասացի օձին. Որովհետև դու արեցիր սա, դու՝ անիծված կլինես բոլոր անասուններից և դաշտի բոլոր գազաններից առավել. փորիդ վրա դու կգնաս և հող կուտես կյանքիդ բոլոր օրերում.

21 Եվ ես թշնամություն կդնեմ քո և կնոջ միջև, քո սերնդի և նրա սերնդի միջև. և նա կջախջախի քո գլուխը, և դու կխայթես նրա կրունկը:

22 Կնոջը ես՝ Տեր Աստվածս, ասացի. Ես մեծապես կշատացնեմ քո ցավերն ու հիղությունը: Մձավով զավակներ կբերես և դեպի ամուսինդ կլինի քո փափագը, և նա կկառավարի քեզ:

23 Եվ Ադամին ես՝ Տեր Աստվածս, ասացի. Որովհետև դու ականջ դրեցիր կնոջ ձայնին, և կերար ծառի պտղից, որի համար պատվիրեցի քեզ ասելով. Դու չպետք է ուտես դրանից, անիծված կլինի հողը քո պատճառով. նեղությամբ

կուտես դրանից կյանքիդ բոլոր օրերում:

24 Նաև փուշ ու տատասկ առաջ կբերի այն քեզ համար, և դու կուտես դաշտի խոտը:

25 Երեսիդ՝ քրտինքով հաց կուտես, մինչև որ վերադառնաս հողին, - քանզի անկասկած պիտի մեռնես, - քանզի դրանից էիր դու վերցվել. քանզի՞ հող էիր և դեպի հողը պիտի վերադառնաս:

26 Եվ Ադամն իր կնոջ անունը կոչեց Եվա, որովհետև նա եղավ բոլոր կենդանիների մայրը. քանզի ես՝ Տեր Աստվածս, այդպես կոչեցի առաջինին բոլոր կանանցից, որոնք շատ են:

27 Ադամի համար, և նաև իր կնոջ համար, ես՝ Տեր Աստվածս, կաշվից հանդերձներ պատրաստեցի և՛ հագցրեցի նրանց:

28 Եվ ես՝ Տեր Աստվածս, ասացի իմ Միածնին. Ահա, մարդը դարձել է մեզանից մեկը՝ զիտեճալով բարին և չարը. և արդ, որ չլինի թե նա առաջ մեկնի իր ձեռքը և ճաշակի նաև կյանքի ծառից, և ուտի ու ապրի հավիտյան,

29 Ուստի, ես՝ Տեր Աստվածս, նրան կհանեմ՝ Եդեմի պարտեզից, որ նա մշակի հողը, որից վերցվել էր.

30 Քանզի, ինչպես ես՝ Տեր Աստվածս, ապրում եմ, ճիշտ այդպես իմ խոսքերը ետ չեն դառնա իզուր, քանզի երբ դրանք դուրս են գալիս իմ բերանից, դրանք պետք է կատարվեն:

17ա Մովսես 3.17:
 19ա Ծն. Գ.13, Մոսիա 16.3:
 20ա Ծն. Գ.13-15:
 22ա Ծն. Գ.16:
 25ա Ծն. Գ.17-19:
 սուր Ադամի և Եվայի անկումը:
 Բ Ծն. Բ.7, Մովսես 6.59,

Աբր. 5.7:
 26ա Մովսես 1.34, 6.9:
 27ա սուր Համեստություն:
 28ա Ծն. Գ.22:
 սուր Մարդ, Մարդիկ - Մարդ՝ Երկնային Հոր մնան դառնալու ներուժը:

Բ սուր Գիտություն:
 գ Ալմա 42.4-5:
 դ Ծն. Բ.9, 1 Նեփի 11.25, Մովսես 3.9:
 սուր Կյանքի ծառ:
 29ա սուր Եդեմ:
 30ա Գ.Թագ. Ը.56, ՎևոՒ 1.38:

31 Այդպես, ես հանեցի մարդուն, և Եղեմի պարտեզի արևելքում՝ քերովքեներ կանգնեցրի և ամեն կողմ պատվող բոցեղեն մի սուր՝ կյանքի ծառի ճանապարհը պահելու համար:

32 (Եվ սրանք են այն խոսքերը, որոնք ես ասացի իմ ծառա Մովսեսին, և դրանք ճշմարիտ են, ճիշտ ինչպես ես եմ կամենում. և ես ասացի դրանք քեզ: Տես, որ դրանք ցույց չտաս ոչ ոքի, մինչև որ ես չպատվիրեմ քեզ, բացի նրանցից, ովքեր հավատում են: Ամեն):

ԳԼՈՒԽ 5

(1830թ. հունիս–հոկտեմբեր)

Ադամը և Եվան երեխաներ են ծնում – Ադամը գոհ է մատուցում և ծառայում է Աստծուն – Ծնվում են Կայենը և Աբելը – Կայենն ապստամբում է, Սատանային ավելի շատ է սիրում, քան Աստծուն, և դառնում է Կորուստ – Սպանություն ու ամբարշտություն է տարածվում – Ավետարանը քարոզվում է սկզբից ի վեր:

Եվ եղավ այնպես, նրանից հետո, երբ ես՝ Տեր Աստվածս, դուրս էի արել նրանց, որ Ադամը սկսեց մշակել երկիրը, և Խիշխել դաշտի բոլոր գազանների վրա, և ուտել իր հացն իր ճակատի քրտինքով, ինչպես որ ես՝ Տերս, պատվիրել էի նրան: Եվ Եվան՝ իր կինը, ևս տքմում էր նրա հետ:

2 Եվ Ադամը գիտեցավ իր կնոջը, և նա որդիներ և Դուստրեր՝ բերեց նրա համար, և նրանք սկսեցին Գրագմանալ և լցնել երկիրը:

3 Եվ այդ ժամանակից ի վեր, Ադամի որդիներն ու Դուստրերն սկսեցին երկրի վրա բաժանվել երկու-երկու, և հողը մշակել, և հոտեր պահել, և նրանք նույնպես ծնեցին որդիներ և դուստրեր:

4 Եվ Ադամն ու Եվան՝ նրա կինը, կանչեցին Տիրոջ անունը, և նրանք լսեցին Տիրոջ ձայնը՝ Եղեմի պարտեզի կողմից, որը խոսում էր նրանց հետ, և նրանք չէին տեսնում նրան. քանզի նրանք զրկված էին նրա Բերկայությունից:

5 Եվ նա պատվիրաններ տվեց նրանց, որ նրանք պետք է Երկրպագեն Տիրոջը՝ իրենց Աստծուն, և իրենց հոտերի Բառաջնեկներին պետք է ընծա մատուցեն Տիրոջը: Եվ Ադամը Գնագանդ էր Տիրոջ պատվիրաններին:

6 Եվ շատ օրեր անց Տիրոջ Խիշխուկը հայտնվեց Ադամին՝ ասելով. Ինչո՞ւ ես դու Բոհ մատուցում Տիրոջը: Եվ Ադամն ասաց նրան. Ես չգիտեմ, գիտեմ միայն, որ Տերն է պատվիրել ինձ:

7 Եվ ապա հրեշտակը խոսեց՝ ասելով. Դա Հոր Միածնի Գոհաբերության Բնամությունն է, որը լի է Գնորհով և ճշմարտությամբ:

8 Ուստի դու պետք է ամեն ինչ անես Որդու Կանոնով, և դու

31ա Ալմա 42.3:
սուր Բերովքեներ:
5 1ա Մովսես 2.26:
2ա Վև.ՈՒ 138.39:
բ Ծն. Ե.4:
գ Ծն. Ա.28, Մովսես 2.28:
3ա Մովսես 5.28:
4ա սուր Եղեմ:
բ Ալմա 42.9:

5ա սուր Երկրպագել:
բ Ել. ԺԳ.12–13,
Թվ. ԺԸ.17, Մոսիա 2.3:
սուր Առաջնեկ:
գ սուր Հնագանդություն,
Հնագանդ,
Հնագանդվել:
6ա սուր Հրեշտակներ:
բ սուր Չոհաբերություն:

7ա Ալմա 34.10–15:
սուր Արյուն:
բ սուր Հիսուս
Քրիստոս – Քրիստոսին
մարմնավորող
խորհրդանիշները:
գ Մովսես 1.6, 32:
սուր Ծնորի:
8ա 2 Նեփի 31.21:

պետք է Քապաշխարես և Գլանչես առ Աստված առհավետ՝ Որդու անունով:

9 Եվ այդ օրը Մուրբ Հոգին իջավ Ադամի վրա, որը վկայում է Հոր և Որդու մասին՝ ասելով. Ես Հոր Միածինն եմ ի սկզբանե, այսուհետև և հավիտյան, և քանի որ դու Գրնկել ես, դու կարող ես Կիրկագնվել, և նաև ողջ մարդկությունը, նույնիսկ բոլոր նրանք, ովքեր կկամենան:

10 Եվ այդ օրը, Ադամն օրհնեց Աստծուն և Մլցված էր, և սկսեց մարգարեանալ երկրի բոլոր ընտանիքների վերաբերյալ՝ ասելով. Օրհնյալ է Աստծո անունը, քանզի իմ օրինազանցության հետևանքով աչքերս բացվել են, և այս կյանքում ես Գուրախություն կունենամ, և կրկին, մարմնի մեջ, ես կտեսնեմ Աստծուն:

11 Եվ ՄԵՎան՝ նրա կինը, լսեց բոլոր այս բաները, և ուրախացավ՝ ասելով. Եթե չլինեիր մեր օրինազանցությունը, մենք երբեք Մսերունդ չէինք ունենա, և երբեք չէինք գիտենա բարին և չարը, և մեր փրկագնման ուրախությունը, և հավերժական կյանքը, որն Աստված տալիս է բոլոր հնազանդներին:

12 Եվ Ադամն ու Եվան օրհնեցին Աստծո անունը, և նրանք բոլոր

բաները Մհայտնի դարձրեցին իրենց որդիներին ու դուստրերին:

13 Եվ Մատանան եկավ նրանց մեջ՝ ասելով. Ես էլ եմ Աստծո որդի. և նա պատվիրեց նրանց՝ ասելով. Մի՛ հավատացեք. և նրանք Քչիավատացին, և նրանք Սատանային ավելի շատ Գսիրեցին, քան Աստծուն: Եվ այդ ժամանակից ի վեր, մարդիկ սկսեցին լինել մարմնական, զգայական և դիվական:

14 Եվ Տեր Աստվածը Մուրբ Հոգով ամենուրեք կոչ արեց մարդկանց և պատվիրեց նրանց, որ ապաշխարեն.

15 Եվ բոլոր նրանք, ովքեր Միավատացին Որդուն և ապաշխարեցին իրենց մեղքերից, Մկիրկվեցին. և բոլոր նրանք, ովքեր չհավատացին և չապաշխարեցին, Գնգովվեցին. և խոսքերն առաջ գնացին Աստծո բերանից անխախտ հռչակումով. ուստի, դրանք պետք է կատարվեն:

16 Եվ Ադամն ու Եվան՝ իր կինը, չդադարեցին կանչել առ Աստված: Եվ Ադամը գիտեցավ Եվային՝ իր կնոջը, և նա հղիացավ ու ծնեց ՄԿայենին, և ասաց. Ես մարդ ստացա Տիրոջից. ուստի, նա չի մերժի նրա խոսքերը: Բայց ահա, Կայենն ականջ չդրեց՝ ասելով. Ո՞վ է Տերը, որ ես պետք է ճանաչեմ նրան:

17 Եվ նա կրկին հղիացավ և ծնեց

8բ Մովսես 6.57:
սուր Ապաշխարել,
Ապաշխարություն:
գ սուր Աղոթք:
9ա սուր Մուրբ Հոգի:
բ սուր Հիսուս Քրիստոս.
Միածին:
գ սուր Մահ հոգևոր.
Ադամի և Եվայի
անկումը:
դ Մոսիս 27.24-26,
Վևև 93.38, ՀՀ 3:
սուր Փրկագնման

ծրագիր. Փրկագնել,
Փրկագնված,
Փրկագնում:
10ա սուր Վերստին ծնված,
Աստծուց ծնված:
բ Վևև 107.41-56:
սուր Մարգարեություն,
Մարգարեանալ:
գ սուր Ուրախություն:
դ Հոր ԺԹ.26,
2 Նեփի 9.4:
11ա սուր Եվա:
բ 2 Նեփի 2.22-23:

12ա Բ Օր. Դ.9:
13ա սուր Դև:
բ սուր Անհավատություն:
գ Մովսես 6.15:
դ սուր Մարմնական.
Բնական մարդ:
14ա Հովհ. ԺԴ.16-18, 26:
15ա սուր Հավատ, Հավատալ:
բ սուր Փրկություն:
գ Վևև 42.60:
սուր Նգովք:
16ա Ծն. Դ.1-2:
սուր Կայեն:

նրա եղբորը՝ ՄԱբելին: Եվ Աբելն Քականջ դրեց Տիրոջ ձայնին: Եվ Աբելը ոչխարների հովիվ էր, բայց Կայենը երկայագործ էր:

18 Եվ Կայենը Սատանային ավելի շատ Սփրեց, քան Աստծուն: Եվ Սատանան հրամայեց նրան՝ ասելով. Ընծա Քնատուցիր Տիրոջը:

19 Եվ որոշ ժամանակ անց եղավ այնպես, որ Կայենը հողի պտղից ընծա մատուցեց Տիրոջը:

20 Եվ Աբելը՝ նա նույնպես ընծայեց իր հոտի անդրանիկներից և դրանց պարարտներից: Եվ Տերն ընդունեց Աբելին ու նրա ՞ընծան.

21 Բայց Կայենին ու նրա ՞ընծան նա չընդունեց: Արդ, Սատանան զհտեր դա, և դա հաճելի էր նրան: Եվ Կայենը շատ բարկացել էր ու իր երեսը կախել:

22 Եվ Տերն ասաց Կայենին. Ինչո՞ւ ես բարկացել: Ինչո՞ւ ես երեսդ կախել:

23 Եթե բարին գործես, դու ՞կընդունվես: Իսկ եթե բարին չգործես, մեղքը դուան շեմին է, և Սատանան ցանկանում է տիրել քեզ. և եթե դու ականջ չդնես իմ պատվիրաններին, ես քեզ կհանձնեմ, և քեզ հետ կլինի նրա ցանկության համաձայն: Եվ դու կիշխես նրա վրա.

24 Քանզի, այսուհետև, դու կլինես նրա ստերի հայրը. դու կկոչվես ՞Կորուստ. քանզի դու նույնպես եղել ես աշխարհից առաջ:

25 Եվ պիտի ասվի զպիք ժամանակներում, որ այս ՞պղծությունները եկել են Կայենից. քանզի նա

մերժեց ավելի մեծ խորհուրդը, որը տրվել էր Աստծուց. և սա է անեծքը, որը ես կդնեմ քեզ վրա, եթե դու չապաշխարես:

26 Եվ Կայենը բարկացավ և այլևս չլսեց Տիրոջ ձայնը, ոչ էլ Աբելին՝ իր եղբորը, որը սրբությամբ էր քայլում Տիրոջ առաջ:

27 Եվ Ադամն ու իր կինը Կայենի և նրա եղբայրների համար սզացին Տիրոջ առաջ:

28 Եվ եղավ այնպես, որ Կայենը կնության վերցրեց իր եղբայրներից մեկի դստերը, և նրանք Սատանային ավելի շատ ՞սփրեցին, քան Աստծուն:

29 Եվ Սատանան ասաց Կայենին. Երդվիր ինձ կոկորդովդ, և եթե պատմես դա, դու կմահանաս. և երդվել տուր քո եղբայրներին իրենց գլխով, և կենդանի Աստծով, որ նրանք չպատմեն. քանզի եթե պատմեն, նրանք անպայման կմեռնեն. և դա, որպեսզի քո հայրը չիմանա այդ մասին. և այսօր ես քո եղբայր Աբելին կհանձնեմ քո ձեռքը:

30 Եվ Սատանան երդվեց Կայենին, որ կգործի ըստ նրա հրամանների: Եվ բոլոր այս բաներն արվեցին զաղտնի:

31 Եվ Կայենն ասաց. Իրավ ես Մահանն եմ, այս մեծ զաղտնիքի վարպետը, որ կարողանամ ՞սպասնել և շահ ստանալ: Ուստի Կայենը կոչվեց Վարպետ ՞Մահան, և նա պարծենում էր իր ամբարշտությանբ:

17ա սՄՈՒ Աբել:
բ Եբր. ԺԱ.4:
18ա ՎևՈՒ 10.20–21:
բ ՎևՈՒ 132.8–11:
20ա սՄՈՒ Ընծա.
Չոհարերություն:
21ա ՄՈՒ. Գ.3–7:

23ա ՄՈՒ. Գ.7,
ՎևՈՒ 52.15, 97.8:
24ա սՄՈՒ Կորստի որդիներ:
25ա Վև. 6.26–28:
28ա Մովսես 5.13:
31ա սՄՈՒ Սպանություն:
բ նշ. «Մահան» բառի

հիմքում ընկած արմատների հնարավոր իմաստներն են՝ «միտք», «կործանիչ» և «հզոր»:

32 Եվ Կայենը գնաց դաշտ, և Կայենը խոսեց Աբելի՝ իր եղբոր հետ: Եվ եղավ այնպես, որ մինչ նրանք դաշտում էին, Կայենը վեր կացավ իր եղբոր՝ Աբելի դեմ, և սպանեց նրան:

33 Եվ Կայենը պարծեցավ այն բանով, ինչ նա արել էր՝ ասելով. Ես ազատ եմ. անկասկած, իմ եղբորը հոտերն ընկել են իմ ձեռքը:

34 Եվ Տերն ասաց Կայենին. Ո՞րտեղ է Աբելը՝ քո եղբայրը: Եվ նա ասաց. Ես չգիտեմ: Մի՞թե ես եղբորս պահապանն եմ:

35 Եվ Տերն ասաց. Այդ ի՞նչ ես արել: Եղբորդ արյան ձայնը գետնից աղաղակում է առ ինձ:

36 Եվ արդ, դու անիծյալ կլինես երկրից, որը բացել է իր բերանը՝ քո եղբոր արյունը քո ձեռքից ընդունելու համար:

37 Երբ որ հողը մշակես, այն քեզ այլևս չի տա իր ուժը: Թափառական և աստանդական կլինես երկրի վրա:

38 Եվ Կայենն ասաց Տիրոջը. Սատանան պաշակդեց ինձ իմ եղբոր հոտերով: Եվ նաև ես բարկացած էի. քանզի նրա ընծան դու ընդունեցիր և ոչ ինձ. իմ պատիժն ավելի մեծ է, քան կարող եմ տանել:

39 Ահա, այսօր դու ինձ հեռացրեցիր Տիրոջ երեսից, և քո երեսից ես թաքնված կլինեմ. և ես թափառական և աստանդական կլինեմ երկրի վրա. և կլինի այնպես, որ ով որ ինձ գտնի, կսպանի ինձ, իմ անօրինությունների պատճառով,

քանզի դրանք ծածկված չեն Տիրոջից:

40 Եվ ես՝ Տերս, ասացի նրան. Ով որ քեզ սպանի, նրանից յոթնապատիկ վրեժ կառնվի: Եվ ես՝ Տերս, Կայենի վրա մշան դրեցի, որ չլինի թե նրան գտնողը սպանի նրան:

41 Եվ Կայենը գրկվեց Տիրոջ մերկայությունից, և իր կնոջ ու իր եղբայրներից շատերի հետ բնակվեց Նայիդ երկրում, Եդեմի արևելքում:

42 Եվ Կայենը գիտեցավ իր կնոջը, և նա հղիացավ ու ծնեց Ենոքին, և նա նույնպես ծնեց շատ որդիներ ու դուստրեր: Եվ նա մի քաղաք կառուցեց և այդ՝ քաղաքի անունը կոչեց իր որդու՝ Ենոքի անունով:

43 Եվ Ենոքի համար ծնվեց Գալիբադը և այլ որդիներ ու դուստրեր: Եվ Գալիբադը ծնեց Մայիելին, և այլ որդիներ ու դուստրեր: Եվ Մայիելը ծնեց Մաթուսայելին, և այլ որդիներ ու դուստրեր: Եվ Մաթուսայելը ծնեց Ղամեքին:

44 Եվ Ղամեքը երկու կին առավ իրեն. մեկի անունն Ադդա, իսկ մյուսի անունը Սելլա:

45 Եվ Ադդան բերեց Հոբելին. նա վրանաբնակների և խաշնարածների հայրն էր. և նրա եղբոր անունը Հոբալ էր, որը բոլոր քնարահարների ու սրնգահարների հայրն էր:

46 Եվ Սելլան՝ նա բերեց նաև Թոբել-Կայենին՝ արույրի և երկաթի ամեն արհեստավորի ուսուցչին: Եվ Թոբել-Կայենի թրոջ անունը Նասանն դրեցին:

33ա սուր. Հպարտություն.
Աշխարհիկություն:
34ա Ծն. Գ. 9:
37ա Ծն. Գ. 11-12:
38ա սուր. Ագահ լինել.
Գայթակղել,
Գայթակղություն:

40ա Ծն. Գ. 15:
41ա Մովսես 6. 49:
42ա նշ. Ենոք անունով մի տղամարդ կար Կայենի տոհմում և նրա ժողովրդի նույնանուն քաղաքում: Նրան

չպետք է շփոթել Սեթի արդարակյաց տոհմի Ենովքի և նրա քաղաքի՝ Սիոնի հետ, որը կոչվում էր նաև «Ենովքի քաղաք»:

47 Եվ Ղամեքն ասաց իր կանանց՝ Աղոլային և Սելլային. Լսեք իմ ձայնը, դո՛ւք, Ղամեքի կանայք, ականջ դրեք իմ խոսքերին. քանզի ես մարդ եմ սպանել՝ ի խորոց ինձ, և մի երիտասարդ՝ ի ցավս ինձ:

48 Եթե Կայենի վրեժը պիտի առնվեր յոթնապատիկ, արդարև, Ղամեքինը պիտի լինի՝ յոթանասուս և յոթնապատիկ.

49 Քանզի Ղամեքն՝ ուխտի մեջ էր մտել Սատանայի հետ, Կայենի նման, որով նա դարձել էր Վարպետ Մահան, այն մեծ գաղտնիքի վարպետը, որը Կայենին տրվել էր Սատանայի կողմից. և Գայիրադը՝ Ենոքի որդին, իմանալով նրանց գաղտնիքը, սկսեց հայտնել այն Ադամի որդիներին.

50 Ուստի Ղամեքը, բարկացած լինելով, սպանեց նրան, ոչ թե ինչպես Կայենն իր եղբայր Աբելին՝ շահ ստանալու համար, այլ սպանեց նրան երդման համար:

51 Քանզի, Կայենի օրերից ի վեր կար մի՞ գաղտնի խմբակցություն, և նրանց գործերը խավարում էին, և նրանք գիտեին՝ ամեն մարդ իր եղբորը:

52 Դրա համար Տերն անիծեց Ղամեքին և նրա տունը և բոլոր նրանց, ովքեր ուխտ էին կապել Սատանայի հետ. քանզի նրանք չէին պահում Աստծո պատվիրանները, և դա հաճելի չէր Աստծուն, և նա չժառայեց նրանց, և նրանց գործերը պղծություններ էին և սկսեցին տարածվել բոլոր

մարդկանց՝ որդիների մեջ: Եվ դա մարդկանց որդիների մեջ էր:

53 Իսկ մարդկանց դուստրերի մեջ այս բաները չէին խոսվում, որովհետև Ղամեքը գաղտնիքն ասել էր իր կանանց, և նրանք ապստամբել էին նրա դեմ և հայտարարել այս բաներն ամենուրեք, և կարեկցանք չէին ունեցել.

54 Ուստի Ղամեքն արհամարհվեց, և դուրս գցվեց, և չէր գալիս մարդկանց որդիների մեջ, որ չլիներ թե մեռներ:

55 Եվ այդպես, Մխավարի գործերն սկսեցին գերակշռել բոլոր մարդկանց որդիների մեջ:

56 Եվ Աստված անիծեց երկիրը դառն անեծքով, և բարկացած էր ամբարիշտների վրա, բոլոր մարդկանց որդիների վրա, որոնց նա արարել էր.

57 Քանզի նրանք ականջ չէին դնում նրա ձայնին, ոչ էլ հավատում էին նրա՝ Միածին Որդուն, այսինքն՝ նրան, ում նա հայտարարել էր, որ պիտի գա ժամանակների գազաթնակետին, որը նախապատրաստվել էր աշխարհի հիմնադրումից առաջ:

58 Եվ այդպես, Մվետարանը սկսեց քարոզվել ի սկզբանե, հայտարարվելով Աստծո ներկայությունից ուղարկված սուրբ Պրեշտակների կողմից, և նրա սեփական ձայնով, և Սուրբ Հոգու Գարգևով:

59 Եվ այդպես, բոլոր բաները հաստատվեցին Ադամի համար, սուրբ արարողությամբ, և Ավետա-

48աԾն. Գ.24: Նշկ. Ղամեքը պարծեցում էր, որ Սատանան իր համար ավելի շատ կանի, քան արել էր Կայենի համար: Նրա ենթադրության պատճառները տրված են

49-50 հատվածներում: 49ա սո՛՛՛ Երդում: 51ա սո՛՛ Գաղտնի խմբակցություններ: 52ա Մովսես 8.14-15: 55ա սո՛՛ Հոգևոր խավար. Ամբարիշտ, Ամբարշտություն:

57ա սո՛՛ Հիսուս Քրիստոս: 58ա սո՛՛ Ավետարան: Բ Ալմա 12.28-30, Մոր. 7.25, 29-31: սո՛՛ Հրեշտակներ: Գ սո՛՛ Սուրբ Հոգու պարզև:

րանի քարոզմամբ, և հրամանագրի արձակմամբ, որ այն պիտի լինի աշխարհում, մինչև նրա վերջը. Եվ դա այդպես եղավ: Ամեն:

ԳԼՈՒԽ 6

(1830թ. նոյեմբեր-դեկտեմբեր)

Ադամի սերունդը հիշատակի գիրք է պահում – Նրա արդար սերունդն ապաշխարություն է քարոզում – Աստված իրեն հայտնի է դարձնում Ենովքին – Ենովքը քարոզում է ավետարանը – Փրկության ծրագիրը հայտնի էր դարձվել Ադամին – Նա մկրտվել էր և ընդունել քահանայությունը:

Եւ ՍԱՂԱՄՆ ականջ դրեց Աստծո ձայնին, և կոչ արեց իր որդիներին, որ ապաշխարեն:

2 Եվ Աղամը գիտեցավ իր կնոջը կրկին, և նա բերեց որդի, և նա կոչեց նրա անունը ՍԵՔ: Եվ Աղամը փառավորեց Աստծո անունը. քանզի նա ասաց. Աստված մեկ ուրիշ սերունդ նշանակեց ինձ, Աբելի փոխարեն, որին Կայենը սպանեց:

3 Եվ Աստված իրեն հայտնի դարձրեց Սեթին, և նա չապատամբեց, այլ իր եղբայր Աբելի նման ընդունելի ՝ զոհ մատուցեց: Եվ նրան նույնպես որդի ծնվեց, և նա կոչեց նրա անունը Ենովս:

4 Եվ այդ ժամանակ, այս մարդիկ

սկսեցին ՝ կանչել Տիրոջ անունը, և Տերն օրհնեց նրանց.

5 Եվ հիշատակի մի ՝ գիրք էր պահվում, որում գրվում էր, Ադամի լեզվով, քանզի բոլոր նրանց, ովքեր կանչել են Աստծուն, տրվել է գրել ՝ ոգեշնչման ոգով.

6 Եվ նրանց կողմից իրենց երեխաները սովորեցվել էին գրել և կարդալ՝ ունենալով լեզու, որը մաքուր էր և անարատ:

7 Արդ, այդ նույն ՝ Քահանայությունը, որը կար ի սկզբանե, կլինի նաև աշխարհի վերջում:

8 Արդ, այս մարգարեությունն Ադամը խոսեց, շարժվելով Սուրբ Հոգու կողմից, և մի ՝ տոհմաբանություն էր պահվել Աստծո ՝ գավակների կողմից: Եվ դա Ադամի սերունդների ՝ գիրքն էր, որն ասում էր. Այն օրը, երբ Աստված ստեղծեց մարդուն, Աստծո նմանությամբ արարեց նա նրան.

9 Իր մարմնի ՝ պատկերով, արու և էգ ստեղծեց նա ՝ նրանց, և օրհնեց նրանց, և նրանց ՝ անունը կոչեց Ադամ, այն օրը, երբ նրանք ստեղծվեցին ու դարձան կենդանի ՝ հոգիներ այն երկրի վրա, որն Աստծո ոտքերի ՝ պատվանդանն է:

10 Եվ ՍԱՂԱՄՆ ասարեց հարյուր և երեսուն տարի, և որդի ծնեց, իր նմանությամբ, իր ՝ պատկերով, և նրա անունը կոչեց Սեք:

11 Եվ Ադամի օրերը, Սեթին ծնելուց հետո, ութ հարյուր տարի

6 1ա սու՝ Աղամ:
2ա Ծն. Գ.25:
սու՝ Սեք:
3ա սու՝ Չոհաբերություն:
4ա Ծն. Գ.26:
սու՝ Աղոթք:
5ա Աբր. 1.28, 31:
սու՝ Պատվիրանների գիրք:
բ սու՝ Ոգեշնչում,

Ոգեշնչել:
7ա սու՝ Քահանայություն:
8ա Բ Պետ. Ա.21:
բ սու՝ Տոհմաբանություն:
գ սու՝ Աստծո որդիներն ու դուստրերը:
դ Ծն. Ե.1:
9ա Ծն. Ա.26-28,
Մովսես 2.26-29,
Աբր. 4.26-31:

բ սու՝ Մարդ, Մարդիկ:
գ Մովսես 1.34, 4.26:
դ սու՝ Հոգի:
ե Աբր. 2.7:
10ա ՎևոՒ 107.41-56:
բ Ծն. Ե.3,
ՎևոՒ 107.42-43,
138.40:

եղավ, և նա շատ որդիներ ու դուստրեր ծնեց.

12 Եվ Ադամի ապրած բոլոր օրերն ինն հարյուր և երեսուն տարի եղավ, և նա մահացավ:

13 Սեթն ապրեց հարյուր և հինգ տարի, և ծնեց Ենոքսին, և մարգարեացավ իր բոլոր օրերում, և ուսուցանեց իր որդի Ենոքսին Աստծո ճանապարհներով. ուստի Ենոքսը նույնպես մարգարեացավ:

14 Եվ Ենոքսին ծնելուց հետո, Սեթն ապրեց ութ հարյուր և յոթ տարի, և շատ որդիներ ու դուստրեր ծնեց:

15 Եվ մարդկանց զավակները բազմաթիվ էին ողջ երկրի երեսին: Եվ այդ օրերին Սատանան մեծ ^ատիրապետություն ուներ մարդկանց մեջ, և մոլեգնում էր նրանց սրտերում. և այդ ժամանակից ի վեր եղան պատերազմներ ու արյունահեղություն. և մարդու ձեռքն իր եղբոր դեմ էր բարձրացված, մահ բերելով, ^բգաղտնի գործերի պատճառով փնտրելով իշխանություն:

16 Եվ Սեթի բոլոր օրերն ինն հարյուր և տասներկու տարի եղավ, և նա մահացավ:

17 Եվ Ենոքսն ապրեց իննսուն տարի, և ծնեց ^աԿայնանին: Եվ Ենոքսը և Աստծո մնացած ժողովուրդը դուրս եկան երկրից, որը կոչվում էր Շուլոն, և բնակվեցին խոստումի երկրում, որը նա կոչեց իր որդու անունով, որին նա կոչել էր Կայնան:

18 Եվ Կայնանին ծնելուց հետո, Ենոքսն ապրեց ութ հարյուր և տասնհինգ տարի, և ծնեց շատ

որդիներ ու դուստրեր: Եվ Ենոքսի բոլոր օրերն ինն հարյուր և հինգ տարի եղավ, և նա մահացավ:

19 Եվ Կայնանն ապրեց յոթանասուն տարի, և ծնեց Մադադիելին. և Մադադիելին ծնելուց հետո, Կայնանն ապրեց ութ հարյուր և քառասուն տարի, և ծնեց որդիներ ու դուստրեր: Եվ Կայնանի բոլոր օրերն ինն հարյուր և տասը տարի եղավ, և նա մահացավ:

20 Եվ Մադադիելն ապրեց վաթսունհինգ տարի, և ծնեց Հարեդին. Հարեդին ծնելուց հետո, Մադադիելն ապրեց ութ հարյուր և երեսուն տարի, և որդիներ ու դուստրեր ծնեց: Եվ Մադադիելի բոլոր օրերն ութ հարյուր և իննսունհինգ տարի եղավ, և նա մահացավ:

21 Եվ Հարեդն ապրեց հարյուր և վաթսուներկու տարի և ծնեց ^աԵնոկքին. և Հարեդը, Ենոկքին ծնելուց հետո, ապրեց ութ հարյուր տարի, և որդիներ ու դուստրեր ծնեց: Եվ Հարեդը Ենոկքին ուսուցանեց Աստծո բոլոր ճանապարհներով:

22 Եվ սա է Ադամի որդիների տոհմաբանությունը, որն Աստծո ^աորդի էր, որի հետ Աստված անձամբ խոսեց:

23 Եվ նրանք արդարության ^աքարոզիչներ էին, և խոսեցին և ^բմարգարեացան, և բոլոր մարդկանց, ամենուրեք, կոչ արեցին ^գապաշխարել. և մարդկանց զավակներին ^դհավատք էին ուսուցանում:

24 Եվ եղավ այնպես, որ Հարեդի բոլոր օրերն ինն հարյուր և վաթ-

15աՄովսես 5.13:
բ սո՛ւ Գաղտնի խմբակցություններ:
17աԾճ. Ե.10–14,
վևՈՒ 107.45, 53:

21աԾճ. Ե.18–24,
Մովսես 7.69, 8.1–2:
սո՛ւ Ենոկք:
22աՂուկ. Գ.38:
23աՍո՛ւ Մարգարե:

բ սո՛ւ Մարգարեություն,
Մարգարեանալ:
գ սո՛ւ Ապաշխարել,
Ապաշխարություն:
դ սո՛ւ Հավատք:

սուներկու տարի եղավ, և նա մահացավ:

25 Եվ Ենովքն ապրեց վաթսունհինգ տարի, և ծնեց Մաթուսաղային:

26 Եվ եղավ այնպես, որ Ենովքը ճամփորդում էր երկրով մեկ, մարդկանց մեջ. և մինչ նա ճամփորդում էր, Աստծո Հոգին երկրներից իջավ, և մնաց նրա վրա:

27 Եվ նա մի ձայն լսեց երկնքից ասելիս. Ենովք, որդի՛ս, մարգարեացիր այս ժողովրդի համար և ասա նրանց, – Ապաշխարեք, քանզի այսպես է ասում Տերը. Ես ՞բարկացած եմ այս ժողովրդի վրա, և իմ կատաղի բարկությունը բռնկված է նրանց դեմ. քանզի նրանց սիրտը կարծրացած է, և նրանց ՞ականջները ծանրացած են, որ լսեն, և նրանց աչքերը հեռուն ՞չեն տեսնում.

28 Եվ այս շատ սերունդների ընթացքում, այն օրից, ինչ նրանց ստեղծել եմ, նրանք ՞մոլորվել են, և ուրացել են ինձ, և իրենց իսկ խորհուրդներն են փնտրել խավարի մեջ. և իրենց պղծությունների մեջ նրանք սպանություն են դավել և չեն պահել պատվիրանները, որոնք ես տվել եմ նրանց հորը՝ Ադամին:

29 Ուստի, նրանք սուտ երդում են տվել իրենց, և իրենց ՞երդումներով, նրանք մահ են բերել իրենց վրա. և ես ՞դժոխք եմ պատրաստել նրանց համար, եթե նրանք չապաշխարեն.

30 Եվ դա է հրամանագիրը, որը ես առաջ եմ ուղարկել աշխարհի սկզբում, իմ իսկ բերանով, նրա հիմնադրումից ի վեր, և իմ ծառաների՝ ձեր հայրերի բերանով, ես սահմանել եմ դա, ինչպես որ այն առաջ կուղարկվի աշխարհում, մինչև նրա ծայրերը:

31 Եվ երբ Ենովքը լսեց այս խոսքերը, նա խոնարհվեց մինչև գետին, Տիրոջ առաջ, և խոսեց Տիրոջ առաջ՝ ասելով. Ինչո՞ւ եմ ես շնորհ գտել քո աչքում, և ես մի պատանի եմ միայն, և բոլոր մարդիկ ատում են ինձ. քանզի ես ՞ծանրախոս եմ. ուստի, մի՞թե ես քո ծառան եմ:

32 Եվ Տերն ասաց Ենովքին. Առաջ գնա և վարվիր ինչպես պատվիրել եմ քեզ, և ոչ մի մարդ քեզ չի խոցի: Բացիր ՞բերանդ, և այն կլցվի, և ես կտամ քեզ արտասանություն, քանզի բոլոր մարմիններն իմ ձեռքում են, քանզի ես կվարվեմ, ինչպես ինձ բարի է երևում:

33 Ասա այս ժողովրդին. ՞Ընտրեք այսօր՝ ծառայելու Տեր Աստծուն, որն արարել է ձեզ:

34 Ահա, իմ Հոգին քո վրա է, ուստի քո բոլոր խոսքերը ես կարդարացնեմ. և ՞սարերը կփախչեն քո ներկայությունից, և ՞գետերը կփոխեն իրենց հոսանքը. և դու կմնաս ինձ հետ, և ես՝ քեզ հետ. հետևաբար, ՞քայլիր ինձ հետ:

35 Եվ Տերը խոսեց Ենովքի հետ, և ասաց նրան. Կավով օձիր քո

25ա սուր Մաթուսաղա:
27ա ՎևոՒ 63.32:
բ Մատ. ԺԳ.15,
2 Նեփի 9.31,
Մոսիա 26.28,
ՎևոՒ 1.2, 11, 14:
գ Ալմա 10.25, 14.6:

28ա սուր Ապստամբություն:
29ա սուր Երդում:
բ սուր Գժոխք:
31ա Ել. Գ.10–16,
Երեմ. Ա.6–9:
32ա ՎևոՒ 24.5–6, 60.2:
33ա սուր Կամքի

ազատություն:
34ա Մատ. ԺԷ.19:
բ Մովսես 7.13:
գ Ծճ. Ե.24,
Մովսես 7.69:
սուր Քայլել, Քայլել
Աստծո հետ:

աչքերը, և լվա այն, և դու կտեսնես: Եվ նա այդպես արեց:

36 Եվ նա տեսավ ՝ ոգիներին, որոնց Աստված ստեղծել էր. և նա տեսավ նաև բաները, որոնք տեսանելի չէին ՝ բնական աչքերով. և այն ժամանակից ի վեր խոսակցություն տարածվեց ամենուրեք երկրի վրա. Տերը մի Գտեսանող է բարձրացրել իր ժողովրդի համար:

37 Եվ եղավ այնպես, որ Ենովքն առաջ գնաց երկրով, մարդկանց մեջ, կանգնելով բլուրների վրա և բարձր տեղերում, և բացականչեց բարձր ձայնով՝ վկայելով նրանց զործերի դեմ. և բոլոր մարդիկ ՝ վիրավորվեցին նրա պատճառով:

38 Եվ նրանք առաջ էին գալիս նրան լսելու, բարձր տեղերում՝ վրանապահներին ասելով. Մնացեք այստեղ և պահեք վրանները, մինչև որ մենք գնանք այնտեղ, որ տեսներք այդ տեսանողին, քանզի նա մարգարեանում է, և տարօրինակ բան կա երկրում. մի վայրի մարդ է եկել մեր մեջ:

39 Եվ եղավ այնպես, երբ նրանք լսում էին նրան, ոչ ոք ձեռք չբարձրացրեց նրա վրա. քանզի վախ եկավ բոլոր նրանց վրա, ովքեր լսեցին նրան. քանզի նա քայլում էր Աստծո հետ:

40 Եվ մի մարդ եկավ նրանց մոտ, որի անունը Մահիա էր, և նրան որսաց. Պարզ ասա մեզ, ո՞վ էս դու, և որտեղի՞ց ես եկել:

41 Եվ նա ասաց նրանց. Ես եկել եմ Կայնանի երկրից, իմ հայրերի երկրից, որն արդարության երկիր է մինչ այսօր: Եվ իմ հայրն ինձ

սովորեցրել է Աստծո բոլոր ճանապարհներով:

42 Եվ եղավ այնպես, որ մինչ ես ճամփորդում էի Կայնանի երկրից, ծովի արևելքով, ես մի տեսիլք տեսա. և ահա, երկինքները ես տեսա, և Տերը խոսեց ինձ հետ և պատվիրան տվեց ինձ. ուստի, այդ պատճառով, որպեսզի պահեմ պատվիրանը, ես խոսում եմ այս խոսքերը:

43 Եվ Ենովքը շարունակեց իր խոսքը՝ ասելով. Տերը, որը խոսեց ինձ հետ, նա այն նույն Աստվածն է երկնքի, և նա իմ Աստվածն է, և ձեր Աստվածն է, և դուք իմ եղբայրներն եք, և ինչո՞ւ եք դուք ՝ խորհուրդ անում և ուրանում եք երկնքի Աստծուն:

44 Երկինքները նա է արարել. ՝երկիրը նրա ոտքի ՝ պատվանդանն է. և դրա հիմքն իրենն է: Ահա, նա է այն դրել, մարդկանց բազմությունը նա է բերել դրա երեսին:

45 Եվ մահ է եկել մեր հայրերի վրա. այնուամենայնիվ, մենք գիտենք նրանց, և չենք կարող ուրանալ, և նույնիսկ բոլորից առաջինին մենք գիտենք, այսինքն՝ Ադամին:

46 Քանզի մենք մեր մեջ ՝ հիշատակի գիրք ենք գրել՝ Աստծո մատով տրված օրինակի համաձայն. և այն տրվել է մեր իսկ լեզվով:

47 Եվ երբ Ենովքը խոսում էր Աստծո խոսքերը, ժողովուրդը դողում էր, և չէր կարողանում կանգնել նրա ներկայությամբ:

48 Եվ նա ասաց նրանց. Քանի որ Ադամն ՝ ընկավ, մենք կանք. և նրա

36ա սուր Հոգեդեմ ստեղծում:
բ Մովսես 1.11:
գ սուր Տեսանող:
37ա 1 Նեփի 16.1-3:

43ա Առակ. Ա.24-33,
ՎևոՒ 56.14-15:
44ա Բ Օր. Ժ.14:
բ Աբր. 2.7:
46ա սուր Պատվիրանների

գիրք:
48ա 2 Նեփի 2.25:
սուր Ադամի և Եվայի անկումը:

անկումով եկավ ^բմահը. և մենք դարձել ենք թշվառության և վայի ճաշակողներ:

49 Ահա, Սատանան եկել է մարդկանց զավակների մեջ և նրանց ^ազայթակրում է, որ երկրպագեն իրեն. և մարդիկ դարձել են ^բմարմնական, ^գզգայական և դիվական, և ^դգրկված են Աստծո ներկայությունից:

50 Բայց Աստված մեր հայրերին հայտնի է դարձրել, որ բոլոր մարդիկ պետք է ապաշխարեն:

51 Եվ նա կանչեց մեր հայր Ադամին իր իսկ ձայնով՝ ասելով. Ես եմ Աստված. Ես արարեցի աշխարհը և ^ամարդկանց, ^բնախքան նրանց մարմնում լինելը:

52 Եվ նա նաև նրան ասաց. Եթե դառնաս դեպի ինձ և ականջ դնես իմ ձայնին և հավատաս և ապաշխարես քո բոլոր օրինազանցություններից և ^ամկրտվես, այսինքն՝ ջրով, իմ Միածին Որդու անունով, որը լի է ^բշնորհով ու ճշմարտությամբ, որը ^գՀիսուս Քրիստոսն է, միակ ^դանունը, որը պիտի տրվի երկնքի տակ, որով ^եփրկություն կգա մարդկանց զավակներին, դու կստանաս Մուրբ Հոգու պարգևը՝ խնդրելով բոլոր բաները նրա անունով, և ինչ էլ որ խնդրես, այն կտրվի քեզ:

53 Եվ մեր հայր Ադամը խոսեց Տիրոջ հետ և ասաց. Ինչո՞ւ պետք է մարդիկ ապաշխարեն և ջրով մկրտվեն: Եվ Տերն ասաց Ադամին. Ահա, ես քեզ ^ամներել եմ Եդեմի պարտեզի քո օրինազանցությունը:

54 Այդտեղից տարածվեց խոսքն ամենուրեք մարդկանց մեջ, որ Աստծո ^աՈրդին ^բբավել է նախնական հանցանքը, որով ծնողների մեղքը չի դրվի ^գզավակների գլխին, քանզի նրանք անմեղ են աշխարհի հիմնադրումից ի վեր:

55 Եվ Տերը խոսեց Ադամի հետ՝ ասելով. Քանի որ քո զավակները ծնվել են դեպի մեղքը, ճիշտ այդպես, երբ նրանք սկսում են մեծանալ, ^ամեղքը ծնվում է նրանց սրտում, և նրանք ^բդառնություն են ճաշակում, որպեսզի սովորեն գնահատել բարին:

56 Եվ նրանց տրված է բարին տարբերել չարից. ուստի նրանք ^ագործակալն են իրենց անձի, և ես ձեզ տվել եմ մեկ ուրիշ օրենք և պատվիրան:

57 Ուստի ուսուցանեք ձեր երեխաներին, որ բոլոր մարդիկ, ամենուրեք, պետք է ^աապաշխարեն, այլապես նրանք ոչ մի կերպ չեն ժառանգի Աստծո արքայությունը, քանզի ոչ մի ^բանմաքուր բան չի կարող բնակվել այնտեղ, կամ

48բ սո՛ր Մահ ֆիզիկական:
49ա Մովսես 1.12:
սո՛ր Գայթակղել, Գայթակղություն:
բ Մոսիա 16.3–4,
Մովսես 5.13:
սո՛ր Մարմնական:
գ սո՛ր Զգայական, Զգայականություն:
դ սո՛ր Մահ հոգևոր:
51ա սո՛ր Մարդ, Մարդիկ – Մարդը՝ Երկնային Հոր հոգեղեն զավակ:
բ սո՛ր Հոգեղեն

ստեղծում:
52ա 3 Նեփի 11.23–26:
սո՛ր Մկրտություն, Մկրտել:
բ սո՛ր Ընորհ:
գ սո՛ր Հիսուս Քրիստոս:
դ Գոր. Դ.12,
2 Նեփի 31.21:
ե սո՛ր Փրկություն:
53ա սո՛ր Ներել:
54ա սո՛ր Հիսուս Քրիստոս:
բ սո՛ր Քավել, Քավություն:
գ Մոսիա 3.16:
55ա սո՛ր Մեղք:

բ Վևո՛ր 29.39:
սո՛ր Չախտություն:
56ա 2 Նեփի 2.26–27,
Հել. 14.29–30:
սո՛ր Կամքի ազատություն:
57ա Ա Կոր. Զ.9–10:
սո՛ր Ապաշխարել, Ապաշխարություն:
բ 1 Նեփի 10.21:
սո՛ր Մաքուր և Անմաքուր:

Գրնակվել նրա ներկայության մեջ. քանզի Ադամի լեզվով, Սրբության Պարոն է նրա անունը, և նրա Միածնի անունն է՝ Մարդու Նորդի, այսինքն՝ Հիսուս Քրիստոս, արդար Գատավոր, որը պիտի գա ժամանակների գազաթնակետին:

58 Դրա համար, ես ձեզ պատվիրում եմ այս բաներն ազատ սովորեցնել ձեր Պավակներին՝ ասելով.

59 Որ, օրինազանցության պատճառով գալիս է անկումը, անկում, որը մահ է բերում, և քանի որ դուք աշխարհում ծնվել եք ջրով և արյունով և Պոզով, որն արարել եմ ես, և այդպես Քրիստոս կենդանի հոգի դարձավ, ճիշտ այդպես, դուք պետք է վերստին զմովք երկնքի արքայության մեջ՝ ջրով և Հոզով, և մաքրվեք արյունով, այսինքն՝ իմ Միածնի արյունով. որպեսզի դուք սրբագործվեք բոլոր մեղքերից և վայելեք հավերժական կյանքի խոսքերն այս աշխարհում և հավերժական կյանք՝ գալիք աշխարհում, այսինքն՝ անմահության Կիառքը.

60 Քանզի, ջրով դուք պահում եք պատվիրանը. Հոզով դուք Քարդարացվում եք, և Գարյամբ դուք սրբագործվում եք.

61 Դրա համար տրվում է, որ ձեր մեջ մնա. երկնքի վկայությունը. Մխիթարիչը. անմահության

փառքի խաղարարար բաները. բոլոր բաների ճշմարտությունը. այն, որ կենդանացնում է բոլոր բաները, որը կյանք է տալիս բոլոր բաներին. այն, որը գիտի բոլոր բաները, և ունի ողջ գորությունը՝ համաձայն իմաստության, ողորմության, ճշմարտության, արդարադատության և դատաստանի:

62 Եվ արդ, ահա, ես ասում եմ քեզ. Սա է փրկության ծրագիրը բոլոր մարդկանց համար, իմ Միածնի արյան միջոցով, որը պիտի գա ժամանակների գազաթնակետին:

63 Եվ ահա, բոլոր բաներն ունեն իրենց մնանությունը, և բոլոր բաները ստեղծվել և արարվել են իմ մասին Վկայելու համար՝ թե՛ նյութական բաները, թե՛ հոգևոր բաները. բաներ, որոնք վերը՝ երկնքում են, և բաներ, որոնք երկրի վրա են, և բաներ, որոնք երկրի մեջ են, և բաները, որոնք երկրի տակ են՝ թե՛ վերևում, թե՛ ներքևում. բոլոր բաները վկայում են իմ մասին:

64 Եվ եղավ այնպես, որ հետո, երբ Տերը խոսել էր Ադամի՝ մեր հոր հետ, Ադամը կանչեց առ Տերը, և նա հափշտակվեց Տիրոջ Պոզու կողմից, որը տարավ նրան ջրի մեջ, ընկղմեց ջրի տակ և դուրս բերեց ջրից:

65 Եվ այդպես նա մկրտվեց, և

57q Սաղ. ԻԴ. 3–4, 1 Նեփի 15.33–36, Մորմ. 7.7, ՎևՈՒ 76.50–62: η Մովսես 7.35: սո՛ւ Մարո Սրբության: ե սո՛ւ Մարդու Որդի: q սո՛ւ Հիսուս Քրիստոս – Դատավոր, Արդարադատություն: 58w սո՛ւ Երեխա, Երեխաներ:

59w Ա Հովհ. Ե. 8: p Ծն. Բ. 7, Մովսես 4.25, Աբր. 5.7: q սո՛ւ Վերստին ծնված, Աստծուց ծնված: η սո՛ւ Մկրտություն, Մկրտել: ե 2 Նեփի 4.15–16, Վլմա 32.28: q Հովհ. 2.69: է սո՛ւ Սելեստիալ փառք: 60w Մոր. 8.25: p սո՛ւ Արդարացում,

Արդարացնել: q սո՛ւ Արյուն: η սո՛ւ Սրբագործում: 61w սո՛ւ Սուրբ Հոգի: 62w սո՛ւ Փրկագնման ծրագիր: p սո՛ւ Միածին: 63w Ալմա 30.44, ՎևՈՒ 88.45–47: 64w սո՛ւ Սուրբ Հոգի: p սո՛ւ Մկրտություն, Մկրտել:

Աստծո չնգին իջավ նրա վրա, և այդպես նա ՝ ծնվեց Հոգուց, և կենդանացավ ՝ Բնեքսի մարդուն:

66 Եվ նա ձայն լսեց երկնքից, որն ասաց. Դու ՝ մնկրտվել ես կրակով, և Մուրբ Հոգով: Սա Հոր և Որդու ՝ Քվախությունն է այսուհետև և հավիտյանս:

67 Եվ դու ըստ նրա ՝ կարգի ես, որն առանց օրերի սկզբի է կամ տարիների վերջի, ողջ հավերժությունից ողջ հավերժություն:

68 Ահա, դու ՝ մեկ ես ինձանում՝ Աստծո որդի. և այդպես բոլորը կարող են դառնալ իմ ՝ որդիները: Ամեն:

ԳԼՈՒԽ 7

(1830թ. դեկտեմբեր)

Ենովքն ուսուցանում է, առաջնորդում է ժողովրդին և սարեր է տեղափոխում – Հաստատվում է Սիոն քաղաքը – Ենովքը կանխատեսում է Մարդու Որդու գալուստը, նրա քափիչ զոհաբերությունը, և Մրբերի հարությունը – Նա կանխատեսում է Վերականգնումը, Հավաքումը, Երկրորդ Գալուստը և Սիոնի վերադարձը:

Եւ եղավ այնպես, որ Ենովքը շարունակեց իր խոսքը՝ ասելով. Ահա, մեր հայր Ադամն ուսուցանեց այս բաները, և շատերը հավատացել են ու դարձել Աստծո ՝ որդիներ, և շատերը չեն հավատացել ու մահացել են իրենց մեղ-

քերի մեջ, և տանջանքի մեջ ՝ վախով սպասում են Աստծո ցամառն բոցավառ զայրույթն իրենց վրա քափվելուն:

2 Եվ այդ ժամանակից ի վեր Ենովքն սկսեց մարգարեանալ՝ ժողովրդին ասելով. Երբ ես ճամփորդում էի, և կանգնել էի Մահուա վայրում, և կանչում էի առ Տերը, մի ձայն եկավ երկնքից՝ ասելով. Ետ դարձիր, և բարձրացիր Շմավոն սարը:

3 Եվ եղավ այնպես, որ ես ետ դարձա և բարձրացա սարի վրա. և երբ սարին կանգամա՛ծ էի, ես տեսա երկինքները բացված, և ՝ փառք իջավ իմ վրա:

4 Եվ ես տեսա Տիրոջը. և նա կանգնեց իմ առաջ, և նա խոսեց ինձ հետ ՝ Պեմառդեմ, ճիշտ ինչպես մի մարդ խոսում է մեկ ուրիշի հետ. Եվ նա ինձ ասաց. ՔՏե՛ս, և ես քեզ ցույց կտամ աշխարհը շատ սերունդների ընթացքում:

5 Եվ եղավ այնպես, որ ես նայեցի Շում հովտին, և ահա մի մեծ ժողովուրդ, որը բնակվում էր վրաններում, որը Շումի ժողովուրդն էր:

6 Եվ կրկին Տերն ասաց ինձ. Նայիր. և ես նայեցի հյուսիսի ուղղությամբ, և տեսա Քանանի ժողովրդին, որը բնակվում էր վրաններում:

7 Եվ Տերն ասաց ինձ. Մարգարեացիր. և ես մարգարեացա՝ ասելով. Ահա Քանանի ժողովուրդը, որը բազմաթիվ է, առաջ կգնա՝ պատերազմելու Շումի ժողովրդի

65ա սուր Վերստին ծնված, Աստծուց ծնված: Ք Մոսիա 27.25, Ալմա 5.12-15: 66ա ՎևոՒ 19.31: սուր Մուրբ Հոգու պարզել: Ք 2 Նեփի 31.17-18,

3 Նեփի 28.11: 67ա սուր Մելքիսեդեկյան քահանայություն: 68ա Ա Հովհ. Գ. 1-3, ՎևոՒ 35.2: Ք Հովհ. Ա. 12, ՎևոՒ 34.3: սուր Աստծո որդիներն ու դուստրերը:

7 1ա սուր Աստծո որդիներն ու դուստրերը: Ք Ալմա 40.11-14: 3ա սուր Կերպարանափոխում: 4ա Ճճ. ԼԲ. 30, Ք Օր. Ե. 4, Մովսես 1.2, 11, 31: Ք Մովսես 1.4:

դեմ, և կկոտորի նրանց, այնպես որ նրանք ամբողջովին կբնաջնջվեն. և Քանանի ժողովուրդը բաժանաբաժան կլինի երկրում և երկիրը կլինի ամուլ և անբերրի, և ոչ մի այլ ժողովուրդ չի բնակվի այնտեղ, բացի Քանանի ժողովրդից.

8 Քանգի ահա, Տերը կանիծի երկիրը մեծ տապով, և նրա ամլությամբ կշարունակվի հավիտյան. և Քանանի բոլոր զավակների վրա մի սևություն եկավ, այնպես որ նրանք արհամարհվում էին բոլոր ժողովուրդների կողմից:

9 Եվ եղավ այնպես, որ Տերն ասաց ինձ. Նայիր. և ես նայեցի ու տեսա Սարոնի երկիրը, և Ենովքի երկիրը, և Օմների երկիրը, և Հենիի երկիրը, և Սեմի երկիրը, Հաների երկիրը, և Հանաննիայի երկիրը, և այնտեղի բոլոր բնակիչներին.

10 Եվ Տերն ասաց ինձ. Գնա այս ժողովրդի մոտ, և ասա նրանց, — «Ապաշխարեք, չլինի թե ես դուրս գամ և նրանց զարկեմ անեծքով, և նրանք մահանան:

11 Եվ նա տվեց ինձ պատվիրան, որ ես պետք է մնկրտեմ անունով Հոր, և Որդու, որը լի է շնորհով ու ճշմարտությամբ, և Պարբ Հոգու, որը վկայում է Հոր և Որդու մասին:

12 Եվ եղավ այնպես, որ Ենովքը շարունակեց ապաշխարելու կոչ անել ողջ ժողովրդին, բացի Քանանի ժողովրդից.

13 Եվ այնքան մեծ էր Ենովքի հավատքը, որ նա առաջնորդեց Աստծո ժողովրդին, և նրա թշնամի-

ները եկան պատերազմելու նրանց դեմ. և նա խոսեց Տիրոջ խոսքը, և գետինը ցնցվեց, և Պարբերը փախան, ճիշտ նրա հրամանի համաձայն. և ջրի զգեսերը փոխեցին իրենց հոսանքը. և առյուծների մռնչյունն էր լսվում անապատից. և բոլոր ազգերը մեծապես վախեցան, այնքան զորեղ էր Ենովքի խոսքը, և այնքան մեծ էր լեզվի զորությունը, որն Աստված տվել էր նրան:

14 Նաև ծովի անդունդից հող բարձրացավ, և այնքան մեծ էր Աստծո ժողովրդի թշնամիների վախը, որ նրանք փախան և կանգնեցին հեռվում ու գնացին հողի վրայով, որը բարձրացել էր ծովի անդունդից:

15 Եվ երկրի հսկաները, նույնպես, կանգնեցին հեռվում. և մի անեծք եկավ բոլոր մարդկանց վրա, որոնք կռվում էին Աստծո դեմ.

16 Եվ այդ ժամանակից ի վեր պատերազմներ ու արյունահեղություններ եղան նրանց մեջ. բայց Տերը եկավ ու բնակվեց իր ժողովրդի հետ, և նրանք բնակվեցին արդարության մեջ:

17 Տիրոջ Վախը բոլոր ազգերի վրա էր, այնքան մեծ էր Տիրոջ փառքը, որն իր ժողովրդի վրա էր: Եվ Տերն թօրհնեց երկիրը, և նրանք օրհնված էին սարերի վրա, և բարձր տեղերում, և ծաղկում էին:

18 Եվ Տերն իր ժողովրդին կոչեց ՄԻՈՆ, որովհետև նրանք մեկ սրտի և մեկ մտքի էին, և բնակվում

8ա2 Նեփի 26.33:
10ա Մովսես 6.57:
սոՒ Ապաշխարել,
Ապաշխարություն:
11ա սոՒ Մկրտություն,
Մկրտել:
բ սոՒ Շնորհ:

գ սոՒ Սուրբ Հոգի:
13ա սոՒ Հավատք:
բ Մառ. ԺԷ.19:
գ Մովսես 6.34:
դ սոՒ Չորություն.
Քահանայություն:
15ա Ծն. 2.4, Մովսես 8.18:

17ա Ել. ԻԳ.27:
բ Ա Մն. ԻԸ.7-8,
1 Նեփի 17.35:
18ա սոՒ Միոն:
բ Գոր. Դ.32,
Փիլ. Բ.1-4:
սոՒ Միություն:

էին արդարության մեջ. և ոչ մի աղբատ չկար նրանց մեջ:

19 Եվ Ենովքն արդարությամբ շարունակում էր իր քարոզն Աստծո ժողովրդի համար: Եվ եղավ այնպես, որ իր օրերում նա կառուցեց մի քաղաք, որը կոչվեց Սրբության քաղաք, այսինքն՝ ՄԻՆՆ:

20 Եվ եղավ այնպես, որ Ենովքը խոսեց Տիրոջ հետ. և նա ասաց Տիրոջը. Անկասկած՝ Մի՞տոնը կբնակվի ապահովության մեջ հավիտյան: Բայց Տերն ասաց Ենովքին. Մի՞տոնը ես օրհնել եմ, բայց մնացած ժողովրդին ես անիծել եմ:

21 Եվ եղավ այնպես, որ Տերը Ենովքին ցույց տվեց երկրի բոլոր բնակիչներին. և նա նայեց, և ահա, Մի՞տոնը, որոշ ժամանակ անց, ՝վերցվեց երկինք: Եվ Տերն ասաց Ենովքին. Ահա իմ հավիտենական օթևանը:

22 Եվ Ենովքը նաև տեսավ մնացած մարդկանց, որոնք Ադամի որդիներն էին. և նրանք Ադամի բոլոր սերունդների խառնուրդներն էին, բացի Կայենի սերնդից, քանզի Կայենի սերունդը ՝սև էր, և տեղ չունեին նրանց մեջ:

23 Եվ նրանից հետո, երբ Մի՞տոնը վերցվել էր ՝երկինք, Ենովքը ՝նայեց, և ահա, երկրի Պոլոսը ազգերը նրա առաջ էին.

24 Եվ եկավ սերունդ սերնդի հետևից. և Ենովքը բարձր էր և ՝բարձրացված, այսինքն՝ Հոր և Մարդու Որդու ծոցում. և ահա, Սատանայի գորությունը ողջ երկրի երեսին էր:

25 Եվ նա երկնքից իջնող հրեշտակներ տեսավ. և մի բարձր ձայն լսեց, որն ասում էր. Վա՛յ, վա՛յ լինի երկրի բնակիչներին:

26 Եվ նա տեսավ Սատանային. և նա մի մեծ ՝շրթա ուներ իր ձեռքին, և ողջ երկրի երեսը ծածկված էր ՝խավարով. և նա վեր էր նայում և ծիծաղում, և նրա Պրեշտակներն ուրախանում էին:

27 Եվ Ենովքը երկնքից իջնող ՝հրեշտակներ տեսավ, որոնք ՝վկայում էին Հոր և Որդու մասին. և Մուրբ Հոգին իջավ շատերի վրա, և նրանք երկնքի գորությունների կողմից հափշտակվեցին Մի՞տոն:

28 Եվ եղավ այնպես, որ երկնքի Աստվածը նայեց մնացած մարդկանց վրա, և լաց եղավ. և Ենովքը վկայեց այդ մասին՝ ասելով. Ի՞նչպես է, որ երկինքները լաց են լինում, և իրենց արցունքներն անձրևի պես թափում են սարերի վրա:

29 Եվ Ենովքն ասաց Տիրոջը. Ի՞նչպես է, որ դու ՝լաց ես լինում, տեսնելով, որ դու սուրբ ես և ողջ հավերժությունից ողջ հավերժություն ես:

30 Եվ եթե հնարավոր լիներ, որ մարդը կարողանար հաշվել երկրի մասնիկները, այո՛, սրա նման մի լիոնավոր ՝երկրները, դա չէր լինի քո ՝արարչագործությունների թվի սկիզբը. և քո վարագույրները դեռ տարածված են. և դու, այնուամենայնիվ, այնտեղ ես և այնտեղ քո ծոցն է. և նաև դու արդար ես. դու հավիտյան ողորմած ես և բարի.

20ա Մովսես 7.62–63:
սուր Նոր Երուսաղեմ:
21ա Մովսես 7.69:
22ա 2 Նեփի 26.33:
23ա սուր Երկինք:
բ սուր Տեսիլք:
գ ՎևՈՒ 88.47,

Մովսես 1.27–29:
24ա Բ Կոր. ԺԲ.1–4:
26ա Ալմա 12.10–11:
բ Ես. Կ.1–2:
գ Հուդա Ա.6,
ՎևՈՒ 29.36–37:
27ա սուր Հրեշտակներ:

բ սուր Վկայություն:
29ա Ես. ԿԳ.7–10:
30ա ՎևՈՒ 76.24,
Մովսես 1.33:
բ սուր Ստեղծել,
Ստեղծում:

31 Եվ դու քո ծոցն ես վերցրել Սիոնը, բոլոր քո արարչագործությունների միջից, ողջ հավերժություննից ողջ հավերժություն. և միայն «խաղաղություն, քարդարադատություն և ճշմարտություն է քո գահի բնակավայրում. և ողորմություն պիտի գնա քո երեսի առաջից և չունենա վերջ. ի՞նչպես է, որ դու լաց ես լինում:

32 Տերն ասաց Ենովքին. Նայիր քո այս եղբայրներին. նրանք իմ իսկ «ձեռքերի ստեղծագործությունն են, և ես նրանց տվեցի իրենց քգիտելիքը, այն օրը, երբ ես ստեղծեցի նրանց. և Եղեմի պարտեզում ես մարդուն տվեցի իր «կամքի ազատությունը.

33 Եվ քո եղբայրներին ես ասել եմ, և նաև տվել պատվիրաններ, որ նրանք պետք է «սիրեն միմյանց, և որ նրանք պետք է ընտրեն ինձ, իրենց Հորը. բայց ահա, նրանք անգութ են, և նրանք ատում են իրենց իսկ արյունակցին.

34 Եվ իմ գայրույթի «կրակը բռնկվել է նրանց հանդեպ. և իմ այրող դժգոհությամբ ես քջրհեղեղներ կուղարկեմ նրանց վրա, քանզի իմ կատաղի բարկությունը բռնկվել է նրանց դեմ:

35 Ահա, ես եմ Աստված. Սրբության «Մարդ է իմ անունը. Խորհրդի Մարդ է իմ անունը. և նաև Անվերջ և Հավերժական է իմ անունը:

36 Ուստի, ես կարող եմ պարզել

իմ ձեռքերը և պահել բոլոր արարչագործությունները, որոնք ես արարել եմ. և նաև իմ «աչքը կարող է խոցել նրանց, և իմ ձեռքերի ստեղծագործության մեջ չի եղել այդքան քամարշտություն, որքան քո եղբայրների մեջ:

37 Բայց ահա, նրանց մեղքերը կլինեն նրանց հայրերի գլխին. Սատանան կլինի նրանց հայրը, և թշվառություն կլինի նրանց ճակատագիրը. և ողջ երկինքները լաց կլինեն նրանց վրա, մույնիսկ իմ ձեռքերի բոլոր ստեղծագործությունները. ուստի, լաց չլինե՞ն երկինքները՝ տեսնելով նրանց տառապանքը:

38 Բայց ահա, սրանք, որոնց տեսնում են քո աչքերը, պիտի կորչեն ջրհեղեղների մեջ. և ահա, ես կփակեմ նրանց. ես մի «բանտ եմ պատրաստել նրանց համար:

39 Եվ «նա, ում ես ընտրել եմ, աղերսել է իմ երեսի առաջ: Ուստի, նա կտառապի նրանց մեղքերի համար. մինչև որ նրանք ապաշխարեն, այն օրը, երբ իմ քննարկալը կվերադառնա ինձ մոտ, և մինչև այդ օրը նրանք կլինեն «տանջանքի մեջ.

40 Ուստի, դրա համար երկինքները, այո, և իմ ձեռքերի բոլոր ստեղծագործությունները լաց կլինեն:

41 Եվ եղավ այնպես, որ Տերը խոսեց Ենովքի հետ և պատմեց Ենովքին մարդկանց զավակների

<p>31ա սոս Խաղաղություն: բ սոս Արդարադատություն: գ սոս Ծշմարտություն: 32ա Մովսես 1.4: բ սոս Գիտություն: գ սոս Կամքի ազատություն: 33ա սոս Տեր: 34ա Ես. Լ.27,</p>	<p>Նաում Ա.6, Վև.ՈՒ 35.14: բ Ծն. Է.4, 10, Մովսես 8.17, 24: սոս Նոյի ժամանակի ջրհեղեղը: 35ա Մովսես 6.57: բ Մովսես 1.3: 36ա Վև.ՈՒ 38.2, 88.41, Մովսես 1.35-37:</p>	<p>բ Ծն. 2.5-6, Մովսես 8.22, 28-30: 38ա Ա Պետ. Գ.18-20: սոս Դ-ժոխք: 39ա նշ. Փրկիչը: բ Մովսես 4.2, Աբբ. 3.27: սոս Հիսուս Քրիստոս: գ սոս Նզովք:</p>
---	--	---

բոլոր արարքները. ուստի, Ենովբը գիտեր և նայում էր նրանց ամբարշտությանը և նրանց թշվառությանը, և նա լաց եղավ և պարզեց իր ձեռքերը, և նրա ^Մսիրտը լցվեց, ինչպես հավերժությունը. և նրա աղիքները գալարվեցին. և ողջ հավերժությունը ցնցվեց:

42 Եվ Ենովբը տեսավ նաև ^ՄՆոյին, և նրա ^Քընտանիքին, որ Նոյի որդիների բոլոր ժառանգները պիտի փրկվեն ֆիզիկական փրկությամբ.

43 Ուստի Ենովբը տեսավ, որ Նոյը ^Մտապան կառուցեց. և որ Տերը ժպտաց նրան և պահեց այն իր ձեռքում. բայց մնացած ամբարիշտների վրա ջրհեղեղները եկան և կուլ տվեցին նրանց:

44 Եվ երբ Ենովբը տեսավ դա, նա դառնություն զգաց հոգում և լաց եղավ իր եղբայրների վրա և ասաց երկինքներին. Ես ^Մչեմ կամենում մխիթարվել. Բայց Տերն ասաց Ենովբին. բարձրացրու սիրտդ և ուրախացիր. և նայիր:

45 Եվ եղավ այնպես, որ Ենովբը նայեց. և Նոյից սկսած, նա տեսավ երկրի բոլոր ընտանիքները. և նա կանչեց առ Տերը՝ ասելով. Ե՞րբ պիտի գա Տիրոջ օրը: Ե՞րբ պիտի թափվի Արդարի արյունը, որ բոլոր նրանք, ովքեր սգում են, կարողանան ^Մսրբագործվել և ունենալ հավերժական կյանք:

46 Եվ Տերն ասաց. Դա կլինի ժամանակների ^Մգազաթնակետին, ամբարշտության և վրեժխնդրության օրերին:

47 Եվ ահա, Ենովբը տեսավ Մարդու Որդու գալու օրը, այսինքն՝ մարմնում. և նրա հոգին ուրախացավ՝ ասելով. Արդարը բարձրացվել է և ^ՄԳառը մորթվել է աշխարհի հիմնադրումից ի վեր. և հավատքի միջոցով ես Հոր ծոցում եմ, և ահա, ^ՄՍիրուն ինձ հետ է:

48 Եվ եղավ այնպես, որ Ենովբը նայեց ^Մերկրի վրա. և նա մի ձայն լսեց նրա որովայնից, որն ասում էր. Վա՛յ, վա՛յ ինձ՝ մարդկանց մորը. Ես ցավում եմ, ես հոգնել եմ իմ զավակների ամբարշտությունից: Ե՞րբ պիտի ես ^Քհանգստանամ և մաքրվեմ այն ^Պկեղտոտությունից, որը դուրս է եկել ինձանից: Ե՞րբ պիտի իմ Ստեղծողը սրբագործի ինձ, որպեսզի ես հանգստանամ, և արդարությունը որոշ ժամանակ մնա իմ երեսին:

49 Եվ երբ Ենովբը լսեց երկրի սուգը, նա լաց եղավ, և կանչեց առ Տերը՝ ասելով. Ո՛վ Տեր, արդյոք կարեկցանք չե՞ս ունենա երկրի հանդեպ: Չե՞ս օրհնի դու Նոյի զավակներին:

50 Եվ եղավ այնպես, որ Ենովբը շարունակեց իր աղաչանքն առ Տերը՝ ասելով. Ո՛վ Տեր, խնդրում եմ քեզ՝ քո Միածնի, այսինքն՝ Հիսուս Քրիստոսի անունով, որ դու ողորմած լինես Նոյի և նրա սերունդների հանդեպ, որպեսզի երկիրն այլևս երբեք ջրհեղեղներով չծածկվի:

51 Եվ Տերը չկարողացավ ետ կանգնել. և նա ուխտ արեց Ենովբի հետ, և երդումով երդվեց նրան,

41ա Մոսիա 28.3:
սուր Կարեկցանք:
42ա սուր Նոյ՝
Աստվածաշնչյան
հայրապետ:
բ Մովսես 8.12:

43ա Ծն. 2.14-16, Եթեր 6.7:
44ա Սաղ. ՀԷ.2,
Եթեր 15.3:
45ա սուր Սրբագործում:
46ա Մովսես 5.57:
47ա սուր Աստծո Գառը:

բ Մովսես 7.21:
48ա սուր Երկիր - Երկրի
մաքրագործումը:
բ Մովսես 7.54, 58, 64:
գ սուր Կեղտ,
Կեղտոտություն:

որ նա կկանգնեցնի՝ օջրհեղեղները. որ նա կկանչի Նոյի զավակներին.

52 Եվ նա առաջ ուղարկեց մի ամխախտ հրամանագիր, որ նրա սերունդների՝ մնացորդը միշտ կգտնվի բոլոր ազգերի մեջ, քանի դեռ երկիրը կանգուն կմնա.

53 Եվ Տերն ասաց. Օրհնված է նա, որի սերնդից կծնվի Մեսիան. քանզի նա ասում է. Ես՝ Մեսիան եմ՝ Սյոնի թափափորը՝ Երկնքի Վեմը, որը հավերժության պես լայնարձակ է. ով որ ներս է մտնում դռնով և թարծրանում է ինձանով, երբեք չի ընկնի. ուստի օրհնված են նրանք, որոնց մասին ես խոսեցի, քանզի նրանք առաջ կգան հավիտենական ուրախության երգերով:

54 Եվ եղավ այնպես, որ Ենովքը կանչեց առ Տերը՝ ասելով. Երբ որ Մարդու Որդին գա մարմնի մեջ, արդյո՞ք երկիրը կհանգստանա: Աղաչում եմ քեզ, ցույց տուր ինձ այս բաները:

55 Եվ Տերն ասաց Ենովքին. Նայիր. և նա նայեց ու տեսավ Մարդու՝ Որդուն թխաչի վրա բարձրացված, մարդկանց ձևով.

56 Եվ նա լսեց մի բարձր ձայն. և երկինքները քողարկվեցին. և Աստծո բոլոր արարչագործությունները ողբացին. և երկիրը՝ հառաչեց. և ժայռերը ճեղքվեցին. և սրբերը Վեր էլան և փառքի պսակներով՝ զպսակվեցին Մարդու Որդու՝ աջ կողմում.

57 Եվ բոլոր այն՝ հոգիները, որոնք թանտում էին, դուրս եկան և կանգնեցին Աստծո աջ կողմում. իսկ մնացածը պահվեցին խավարի կապանքներում, մինչև մեծ օրվա դատաստանը:

58 Եվ կրկին Ենովքը լաց եղավ և կանչեց առ Տերը՝ ասելով. Ե՞րբ պիտի երկիրը հանգստանա:

59 Եվ Ենովքը տեսավ, որ Մարդու Որդին համբարձվեց Հոր մոտ. Եվ նա կանչեց առ Տերը՝ ասելով. Դու այլևս չե՞ս գա երկիր: Որովհետև դու Աստված ես, և ես ճանաչում եմ քեզ, և դու երդվել ես ինձ, և պատվիրել ես, որ ես պետք է խնդրեմ քո Միածնի անունով. դու արարել ես ինձ, և ինձ իրավունք ես տվել քո գահի համար, բայց ոչ թե ինձանով, այլ քո իսկ շնորհով. դրա համար եմ ես հարցնում, թե արդյոք դու կրկին կգաս երկիր:

60 Եվ Տերն ասաց Ենովքին. Ինչպես ես ապրում եմ, ճիշտ այդպես ես կգամ՝ վերջին օրերին, ամբարշտության և վրեժխնդրության օրերին, որ կատարեմ երդումը, որը տվել եմ քեզ Նոյի զավակների վերաբերյալ.

61 Եվ կգա մի օր, երբ երկիրը՝ կհանգստանա, բայց նախքան այդ օրը երկինքները պիտի թխավարեցվեն, և խավարի՝ զվարագույրը պիտի ծածկի երկիրը. և երկինքները պիտի ցցցվեն, և մնանապես երկիրը. և մեծ նեղու-

51ա Սաղ. ԳԴ.6–9:
52ա Մովսես 8.2:
53ա սո՛ւ Մեսիա:
բ Մատ. Բ.2,
2 Նեփի 10.14,
Ալմա 5.50,
ՎևՈՒ 128.22:
գ Սաղ. ՀԱ.3, ՀԸ.35,
Հել. 5.12:
սո՛ւ Վեմ:

դ 2 Նեփի 31.19–20:
ե սո՛ւ Երաժշտություն:
55ա սո՛ւ Մարդու Որդի:
բ 3 Նեփի 27.14:
սո՛ւ Խաչելություն:
56ա Մատ. ԻԷ.45, 50–51:
բ սո՛ւ Հարություն:
գ սո՛ւ Պսակ. Վեհացում:
դ Մատ. ԻԵ.34:
57ա սո՛ւ Ոգի:

բ ՎևՈՒ 76.71–74, 88.99:
60ա սո՛ւ Վերջին օրեր,
Ետին օրեր:
61ա սո՛ւ Երկիր – Երկրի
վերջնական վիճակը:
բ ՎևՈՒ 38.11–12,
112.23:
գ սո՛ւ Վարագույր:

թյուններ պիտի լինեն մարդկանց գավակների մեջ, բայց իմ ժողովրդին ես ⁹կպահպանեմ:

62 Եվ ես ¹⁰արդարություն ցած կուղարկեմ երկնքից, և ¹¹ճշմարտություն առաջ կուղարկեմ ¹²Գերկրից, որ ¹³վկայություն բերի իմ Միածնի մասին: մեռելներից նրա ¹⁴հարության մասին: այո՛, և նաև բոլոր մարդկանց հարության մասին: և արդարությունով ու ճշմարտությունով ես կարբեմ երկիրը, ասես ջրհեղեղով, որպեսզի ¹⁵հավաքեմ իմ ընտրյալներին աշխարհի չորս կողմերից մի վայրում, որը ես կպատրաստեմ, մի Սուրբ քաղաք, որ իմ ժողովուրդը կարողանա գոտեպնդել իր մեջքը և սպասել իմ գալստի ժամանակին: քանզի այնտեղ կլինի իմ խորանը, և այն կկոչվի Սիոն՝ ¹⁶Նոր Երուսաղեմ:

63 Եվ Տերն ասաց Ենովքին: Այն ժամանակ դու և քո ողջ ¹քաղաքը կդիմավորեք նրանց այնտեղ, և մենք կընդունենք նրանց մեր ծոցը, և նրանք կտեսնեն մեզ: և մենք նրանց վզով կընկնենք, և նրանք մեր վզով կընկնեն, և մենք կհամբուրենք միմյանց:

64 Եվ այնտեղ կլինի իմ բնակավայրը, և այն կլինի Սիոն, որն առաջ կգա բոլոր արարչագործությունների միջից, որոնց ես արարել եմ: և ²հազար տարի շարունակ երկիրը ³կհանգստանա:

65 Եվ եղավ այնպես, որ Ենովքը

տեսավ Մարդու Որդու ¹գալստյան օրը, վերջին օրերին, որ բնակվի երկրի վրա արդարության մեջ, հազար տարվա ընթացքում:

66 Բայց նախքան այդ օրը, նա տեսավ մեծ նեղություն ամբարիշտների մեջ: և նա տեսավ նաև ծովը, որ այն անհանգիստ էր, և մարդկանց սրտերը, որ ²նվաղել էին, որ վախով սպասում էին Ամենագոր Աստծո ³ղատաստաններին, որոնք պիտի գան ամբարիշտների վրա:

67 Եվ Տերը Ենովքին ցույց տվեց բոլոր բաները, նույնիսկ մինչև աշխարհի վերջը: և նա տեսավ արդարների օրը, նրանց փրկագրման ժամը, և ստացավ լիակատար ⁴ուրախություն:

68 Եվ ¹Միոնի բոլոր օրերը, Ենովքի օրոք, երեք հարյուր և վաթսուներեց տարի եղավ:

69 Եվ Ենովքն ու իր ողջ ժողովուրդը ²քայլում էին Աստծո հետ, և նա բնակվում էր Սիոնի մեջ: և եղավ այնպես, որ Սիոնը չկար, քանզի Աստված վերցրեց այն իր ծոցը: և այն ժամանակից տարածվեց այս խոսքը՝ ՍԻՈՆԸ ՓԼԽԵԼ Է:

ԳԼՈՒԽ 8

(1831թ. փետրվար)

Մաթուսաղան մարգարեանում է – Նոյը և նրա որդիները քարոզում են ավետարանը – Մեծ ամբարշտու-

61դ 1 Նեփի 22.15–22, 2 Նեփի 30.10:
62ա Սաղ. 2Թ.11:
սո՛ւ Ավետարանի վերականգնումը:
բ սո՛ւ Մորմոնի Գիրքը:
գ Ես. ԻԹ.4:
դ սո՛ւ Վկայություն:
ե սո՛ւ Հարություն:
զ սո՛ւ Իսրայել –

Իսրայելի ցրվելը:
է սո՛ւ Նոր Երուսաղեմ:
63ա Հայտ. ԻԱ.9–11, ՎԼՈՒ 45.11–12, Մովսես 7.19–21:
64ա սո՛ւ Հազարամյակ:
բ Մովսես 7.48:
65ա Հուդա Ա.14:
սո՛ւ Հիսուս Քրիստոսի երկրորդ գալուստը:

66ա Ես. ԺԳ.6–7:
բ սո՛ւ Վերջին դատաստան:
67ա սո՛ւ Ուրախություն:
68ա Ծճ. Ե.23, Մովսես 8.1:
69ա Ծճ. Ե.24, Մովսես 6.34:
սո՛ւ Քայլել, Քայլել Աստծո հետ:

քյուն է տիրում – Ապաշխարության կոչին ուշք չի դարձվում – Աստված հրամանագրում է բոլոր մարմինների կործանումը ջրհեղեղով:

Եւ Ենովքի բոլոր օրերը չորս հարյուր և երեսուն տարի եղավ:

2 Եվ եղավ այնպես, որ Մաթուսաղան՝ Ենովքի որդին, չէր վերցվել, որպեսզի Տիրոջ ուխտերը կատարվեն, որոնք նա կապել էր Ենովքի հետ. քանզի նա իրոք ուխտ էր արել Ենովքի հետ, որ Նոյը պիտի լիներ նրա երանքի պտղից:

3 Եվ եղավ այնպես, որ Մաթուսաղան մարգարեացավ, որ իր երանքից պիտի ծագեն երկրի բոլոր թագավորությունները (Նոյի միջոցով), և նա իրեն վերցրեց փառքը:

4 Եվ մի մեծ սով եղավ այդ հողում, և Տերն անիծեց երկիրը դառն անեծքով, և այնտեղի շատ բնակիչներ մահացան:

5 Եվ եղավ այնպես, որ Մաթուսաղան ապրեց հարյուր և ութսունյոթ տարի և ծնեց Ղամեքին.

6 Եվ Ղամեքին ծնելուց հետո Մաթուսաղան ապրեց յոթ հարյուր և ութսուն երկու տարի և որդիներ ու դուստրեր ծնեց.

7 Եվ Մաթուսաղայի բոլոր օրերը եղան ինն հարյուր և վաթսունինը տարի, և նա մահացավ:

8 Եվ Ղամեքն ապրեց հարյուր և ութսուներկու տարի և մի որդի ծնեց,

9 Եվ նա կոչեց նրա անունը ՄՆոյ՝ ասելով. Այս որդին կմխիթարի մեզ մեր գործերի մեջ և մեր ձեռքերի ծանր աշխատանքում, այն հողի պատճառով, որը Տերն Քանիծել է:

10 Եվ Ղամեքն ապրեց, Նոյին ծնելուց հետո, հինգ հարյուր և իննսունհինգ տարի, և որդիներ ու դուստրեր ծնեց.

11 Եվ Ղամեքի բոլոր օրերը եղան յոթ հարյուր և յոթանասունյոթ տարի, և նա մահացավ:

12 Եվ Նոյը չորս հարյուր և հիսուն տարեկան էր, և Մծնեց Հաբեթին. և քառասուներկու տարի անց նա ունեցավ Քեմին՝ նրանից, ով Հաբեթի մայրն էր, և երբ նա հինգ հարյուր տարեկան էր, նա ծնեց Քամին:

13 Եվ ՄՆոյն ու նրա որդիներն Քականջ դրեցին Տիրոջը, և ուշք դարձրին, և նրանք կոչվեցին Աստծո Պորդիներ:

14 Եվ երբ այս մարդիկ սկսեցին բազմանալ երկրի երեսին, և դուստրեր ծնվեցին նրանց, մարդկանց Պորդիները տեսան, որ այդ դուստրերը գեղեցիկ էին, և կնության վերցրեցին նրանց, ինչպես որ կանեցան:

15 Եվ Տերն ասաց Նոյին. Քո որդիների դուստրերը Մծախել են իրենց. քանզի ահա, իմ բարկությունը բռնկված է մարդկանց որդիների դեմ, քանի որ նրանք չեն կամենում ականջ դնել իմ ձայնին:

16 Եվ եղավ այնպես, որ Նոյը մարգարեացավ, և ուսուցանեց

8 2ա սուր Մաթուսաղա:
9ա սուր Նոյ՝
Աստվածաշնչյան
հայրապետ:
բ Մովսես 4.23:
12ա Ծն. Ե.32:
սուր Հաբեթ:

բ սուր Մեմ:
գ սուր Քամ:
13ա Վ.և.ՈՒ 138.41:
սուր Գաբրիել:
բ սուր Հնագանդություն,
Հնագանդ,
Հնագանդվել:

գ սուր Աստծո որդիներն
ու դուստրերը:
14ա Մովսես 5.52:
15ա սուր Ամուսնություն,
Ամուսնանալ –
Միջավատքային
ամուսնություն:

Աստծո բաները, ճիշտ ինչպես դրանք կային ի սկզբանե:

17 Եվ Տերն ասաց Նոյին. Իմ Հոգին միշտ չի ^աճգնի մարդու հետ, քանզի նա կիմանա, որ ամեն ^բմարմին պիտի մահանա. այնուամենայնիվ, նրա օրերը կլինեն հարյուր և քսան տարի. և եթե մարդիկ չապաշխարեն, ես ^գջրհեղեղներ կուղարկեմ նրանց վրա:

18 Եվ այդ օրերին ^ահսկաներ կային երկրի վրա, և նրանք փնտրում էին Նոյին, որ խլեն նրա կյանքը. սակայն, Տերը Նոյի հետ էր, և Տիրոջ ^բգորությունը նրա վրա էր:

19 Եվ Տերը ^ակարգեց ^բՆոյին ըստ իր ^գկարգի, և նրան պատվիրեց, որ նա առաջ գնա և ^դհռչակի իր Ավետարանը մարդկանց զավակներին, ճիշտ ինչպես տրվել էր Ենովքին:

20 Եվ եղավ այնպես, որ Նոյը կոչ արեց մարդկանց զավակներին, որ ^աապաշխարեն. բայց նրանք ուշք չդարձրեցին նրա խոսքերին.

21 Եվ նաև, նրան լսելուց հետո, նրանք եկան նրա առաջ՝ ասելով. Ահա, մենք Աստծո որդիք ենք. մի՞թե մենք մեզ չենք վերցրել մարդկանց դուստրերին: Մի՞թե մենք չենք ^աուտում և խմում, և ամուսնանում և կնության տալիս: Եվ մեր կանայք մեզ համար

երեխաներ են բերում, և նրանք զորեղ մարդիկ են, որոնք նման են հին մարդկանց՝ մեծահամբավ մարդկանց: Եվ նրանք ականջ չդրեցին Նոյի խոսքերին:

22 Եվ Աստված տեսավ, որ մարդկանց ^աամբարշտությունը շատացել էր երկրի վրա. և ամեն մարդ բարձրացել էր իր սրտի ^բխորհուրդների երևակայության մեջ, որոնք միշտ չար էին:

23 Եվ եղավ այնպես, որ Նոյը շարունակեց մարդկանց ուղղված իր ^աքարոզը՝ ասելով. Ականջ դրեք և ուշք դարձրեք իմ խոսքերին.

24 ^աՀավատացեք և ապաշխարեք ձեր մեղքերից և ^բմկրտվեք Հիսուս Քրիստոսի՝ Աստծո Որդու անունով, ճիշտ ինչպես մեր հայրերը, և դուք կստանաք Սուրբ Հոգին, որ ձեզ բոլոր բաները ^գհայտնի դարձվեն. և եթե դուք դա չանեք, ջրհեղեղներ կգան ձեր վրա. այնուամենայնիվ, նրանք ականջ չդրեցին:

25 Եվ Նոյը զոջաց, և նրա սիրտը ցավեց, որ Տերը ստեղծել է մարդուն երկրի վրա, և դա վշտացրեց նրա սիրտը:

26 Եվ Տերն ասաց. Ես երկրի երեսից ^ակոչնչացնեմ մարդուն, որին ստեղծել եմ՝ և՛ մարդուն, և՛ կենդանիներին, և՛ սողուններին, և՛ երկնքի թռչուններին. քանզի Նոյը զոջում է, որ ես ստեղծեցի

17ա Ծն. 2.3, 2 Նեփի 26.11, Եթեր 2.15, Վևո 1.33:
բ 2 Նեփի 9.4:
սո՛ւ Մարմին:
գ Ծն. Է.4, 10, Մովսես 7.34:
18ա Ծն. 2.4, Թվ. ԺԳ.33, Հեւ. ԺԷ.15:
բ սո՛ւ Ջորություն:
19ա Վևո 107.52:
սո՛ւ Կարգել, Կարգում:

բ Աբր. 1.19:
գ սո՛ւ Մեղքիսեղեկյան քահանայություն:
դ սո՛ւ Միսիոներական աշխատանք:
20ա սո՛ւ Ապաշխարել, Ապաշխարություն:
21ա Մատ. ԻԳ.38–39, ՉՄ–Մ 1.41:
22ա Ծն. 2.5, Մովսես 7.36–37:
բ Մոսիա 4.30,

Այն 12.14:
սո՛ւ Մոքեր:
23ա սո՛ւ Քարոզել:
24ա սո՛ւ Հավատ, Հավատալ:
բ սո՛ւ Մկրտություն, Մկրտել – Մկրտության համար անհրաժեշտ պայմանները:
գ 2 Նեփի 32.2–5:
26ա սո՛ւ Երկիր – Երկրի մաքրագործումը:

նրանց, և որ ես արարեցի նրանց. և նա կանչել է առ ինձ. քանզի նրանք փնտրել են նրա կյանքը:

27 Եվ այդպես, Նոյը շնորհ գտավ Տիրոջ աչքում. քանզի Նոյն արդար մարդ էր, և Քատարյալ էր իր սերնդի մեջ. և նա զբայլում էր Աստծո հետ, ինչպես նաև նրա երեք որդիները՝ Սեմը, Քամը և Հաբեթը:

28 Երկիրն ապականվել էր

Աստծո առաջ, և այն լցված էր բռնությամբ:

29 Եվ Աստված նայեց երկրի վրա, և ահա, այն ապականված էր, քանզի ամեն մարմին երկրի վրա իր ճանապարհն ապականել էր:

30 Եվ Աստված Նոյին ասաց. Ամեն մարմնի վերջը եկել է իմ առաջ, քանզի երկիրը լցվել է բռնությամբ, և ահա, ես կոչնչացնեմ ամեն մարմին երկրի վրայից:

27ա սուր Շնորհ:
բ ԾՆ. Զ.9:

գ սուր Քայլել, Քայլել
Աստծո հետ:

28ա ԾՆ. Զ.11-13:
30ա ՎԱՌԻ 56.3:

ԱՔՐԱՀԱՍԻ ԳԻՐՔԸ

ԹԱՐԳՄԱՆՎԵԼ Է ՊԱՊԻՐԱԹՂԹԵՐԻՑՑ ԶՈՋԵՖ ՍՄԻԹԻ ԿՈՂՄԻՑ

Թարգմանություն հնագույն Հիշատակարաններից, որոնք մեր ձեռքը են ընկել Եգիպտոսի գետնադամբաններից: Աբրահամի գրվածքները, մինչև նա Եգիպտոսում էր, որը կոչվում է Աբրահամի Գիրքը, իր իսկ ձեռքով գրված պապիրաթերի վրա: (History of the Church, 2.235–236, 348–351):

ԳԼՈՒԽ 1

Աբրահամը փնտրում է հայրապետական կարգի օրհնությունները – Քաղղեայում նրան հետապնդում են կեղծ քահանաները: Եհովան փրկում է նրան – Բացատրվում են Եգիպտոսի սկզբնաղբյուրներն ու նրա կառավարությունը:

ՔԱՂԴԵԱՑԻՆՆԵՐԻ երկրում, իմ հայրերի բնակավայրում, ես՝ ՊԱբրահամս, տեսա, որ ինձ պետք է մեկ ուրիշ զբնակավայր ձեռք բերել.

2 Եվ, հայտնաբերելով, որ ավելի մեծ տերջանկություն և խաղաղություն և թիանգիստ կար ինձ համար, ես փնտրեցի հայրերի օրհնությունները, և իրավունքը, որին պետք է կարգվեի՝ դրանք տալու համար. ինքս լինելով զարդարության հետևորդ, ցանկանալով նաև լինել մեկը, որը մեծ զգիտելիքի տեր է, և լինել արդարության ավելի մեծ հետևորդ, և ավելի շատ գիտելիքի տիրանալ, և լինել շատ ազգերի հայր, խաղաղության իշխան, և ցանկա-

նալով ստանալ հրահանգներ և պահել Աստծո պատվիրանները, ես դարձա օրինական ժառանգ՝ Քահանայապետ՝ ունենալով հայրերին պատկանող Պիրավունքը:

3 Այն ինձ՝ շնորվել էր հայրերի կողմից. այն եկել էր հայրերից, ժամանակի սկզբից, այո, մույնիսկ սկզբից, կամ երկրի հիմնադրումից առաջ, ընդհուպ մինչև ներկա ժամանակը, այսինքն՝ իրավունքն թանդրանիկի, կամ առաջին մարդու, որն ՊԱդամն է, կամ առաջին հայրը, հայրերի միջոցով մինչև ինձ:

4 Ես փնտրում էի Քահանայության իմ Մնանակումը՝ սերունդների վերաբերյալ հայրերին տրված Աստծո նշանակման համաձայն:

5 Իմ՝ հայրերը, հեռանալով արդարությունից և սուրբ պատվիրաններից, որոնք Տերը՝ նրանց Աստվածը, տվել էր նրանց, դեպի հեթանոսների աստվածներին թերկրպագելը, լիովին հրաժարվեցին ականջ դնել իմ ձայնին.

6 Քանզի նրանց սրտերը հակված էին չարիք գործելու, և ամբողջովին դարձել էին դեպի Եղկենայի

1 1ա սուր Ուր:
բ սուր Աբրահամ:
գ Գոր. Է.2–4:

2ա սուր Ուրախություն:
բ սուր Հանգիստ:
գ սուր Արդար,
Արդարություն:

դ ՎևոՒ 42.61:
սուր Գիտություն:
ե սուր Քահանայապետ:
զ սուր Մելքիսեդեկյան
քահանայություն:
3ա ՎևոՒ 84.14:
բ ՎևոՒ 68.17:

սուր Առաջնեկ:
գ Մովսես 1.34:
սուր Ադամ:
4ա սուր Անդրանիկություն:
5ա ԾՆ. ԺԲ.1:
բ սուր Կռապաշտություն:



ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ

Պատկեր 1: Տիրոջ հրեշտակը

Պատկեր 2: Արրահամն ամրացված է գոհասեղանին:

Պատկեր 3: Եղկենայի կռապաշտ քուրմը՝ Արրահամին որպես գոհ մատուցելու փորձ անելիս:

Պատկեր 4: Զոհասեղան կռապաշտ քրմերի գոհաբերությունների համար, որը կանգնած է Եղկենայի, Լեբնայի, Մահմաքրայի, Կորասի և Փարավոնի աստվածների առաջ:

Պատկեր 5: Եղկենայի կուռք աստվածը:

Պատկեր 6: Լեբնայի կուռք աստվածը:

Պատկեր 7: Մահմաքրայի կուռք աստվածը:

Պատկեր 8: Կորասի կուռք աստվածը:

Պատկեր 9: Փարավոնի կուռք աստվածը:

Պատկեր 10: Արրահամը Եգիպտոսում:

Պատկեր 11: Գծագրված է՝ երկնքի սյուները պատկերելու համար, ինչպես հասկացվում էր Եգիպտացիների կողմից:

Պատկեր 12: Ռաուփիյանգ՝ նշանակում է տարածություն կամ հաստատություն մեր գլխավերևում. սակայն այս դեպքում, այս նյութի հետ կապված, Եգիպտացիները ցանկացել են ցույց տալ Շաունան՝ բարձր լինելը, կամ երկինքները, և համարժեք է Երրայերեն Շաունահին բառին:

«աստվածը, և Լեբնայի աստվածը, և Մահմաքրայի աստվածը, և Կորասի աստվածը, և Փարավոնի՝ Եգիպտոսի թագավորի աստվածը.

7 Ուստի, նրանք իրենց արտերը դարձրել էին դեպի հեթանոսների զոհաբերությունները՝ իրենց երեխաներն ընծա մատուցելով համը կուռքերին, և ականջ չէին դարձնում իմ ձայնին, այլ ջանում էին իմ կյանքը խլել Եղկենայի քրմի միջոցով: Եղկենայի քուրմը նաև Փարավոնի քուրմն էր:

8 Արդ, այդ ժամանակ Եգիպտոսի թագավորի՝ Փարավոնի քրմի սովորությամբ էր՝ տղամարդկանց, կանանց և երեխաների մատուցում անել այն զոհասեղանի վրա, որը կառուցվել էր Քաղդեայի երկրում՝ այս տարօրինակ աստվածներին մատուցում անելու համար:

9 Եվ եղավ այնպես, որ քուրմը մատուցում արեց Փարավոնի աստծուն և նաև Շագրիլի աստծուն, ճիշտ Եգիպտացիների ձևով: Արդ, Շագրիլի աստվածն արևն էր:

10 Նույնիսկ երեխայի գոհության ընծա մատուցեց Փարավոնի քուրմը զոհասեղանի վրա, որը կանգնած էր Պետափրեսի Բլուր կոչվող բլրի վրա, Օլիշեմի հարթավայրի սկզբում:

11 Արդ, մի անգամ այդ քուրմն այս զոհասեղանի վրա երեք կույս էր մատուցել, որոնք Օնիտայի դուստրերն էին, որն անմիջապես «Քամի երանքից եղող թագավորական ժառանգներից մեկն էր: Այդ կույսերը մատուցվել էին իրենց առաքինության պատճառով. նրանք հրաժարվել էին թխնարիվել ու երկրպագել փայտե

կամ քարե աստվածներին, հետևաբար, նրանք սպանվեցին այդ զոհասեղանի վրա, և դա արվել էր Եգիպտացիների ձևով:

12 Եվ եղավ այնպես, որ քրմերն ուժով բռնեցին ինձ, որպեսզի ինձ նույնպես սպանեն, ինչպես նրանք արել էին այն կույսերին այս զոհասեղանի վրա. և որպեսզի դուք գիտելիք ունենաք այդ զոհասեղանի վերաբերյալ, ես ձեզ կհղեմ դեպի այս հիշատակարանի սկզբում տրված պատկերը:

13 Այն պատրաստված էր մահճի տեսքով, այնպիսին, որը կար Քաղդեացիների մեջ, և այն կանգնած էր Եղկենայի, Լեբնայի, Մահմաքրայի, Կորասի աստվածների առաջ, և նաև մի աստծո, որը նման էր նրան, որը Փարավոնինն էր՝ Եգիպտոսի թագավորինը:

14 Որպեսզի դուք գիտելիք ունենաք այդ աստվածների մասին, սկզբում ես ձեզ տվել եմ նրանց տեսքը պատկերների ձևով, պատկերներ, որոնք Քաղդեացիների կողմից կոչվում են Ռ-ահլեմոս, և նշանակում է մեհենագրեր:

15 Եվ երբ նրանք ձեռք բարձրացրեցին ինձ վրա, որպեսզի ինձ մատուցում անեն և խլեն իմ կյանքը, ահա, ես իմ ձայնը բարձրացրեցի առ Տերը՝ իմ Աստվածը, և Տերն «ականջ դրեց և լսեց, և ինձ Ամենագործի տեսիլքով լցրեց, և նրա ներկայության հրեշտակը կանգնեց ինձ մոտ և անմիջապես թքանդեց իմ կապերը.

16 Եվ նրա ձայնը եկավ ինձ. Աբրահամ, Աբրահամ, ահա, իմ «անունը Եհովա է, և ես լսել եմ քեզ, և իջել եմ, որ քեզ ազատեմ, և

<p>6անջ. կեղծ աստվածները, ինչպես ցույց է տրված Աբրահամի Գրքի Թիվ</p>	<p>1 Վերատպման մեջ: 11ա սուր՝ Քամ: բ Դ-ան. Գ.13-18:</p>	<p>15ա Մոսիա 9.17-18: բ Աբր. 2.13: 16ա սուր՝ Եհովա:</p>
--	---	---

քեզ հեռու տաննեմ քո հոր տնից, և քո բոլոր ազգականներից, դեպի մի օտար ^բերկիր, որի մասին դու չգիտես.

17 Եվ դա, որովհետև նրանք իրենց սրտերը շրջել են ինձանից, որ երկրպագեն Եղկենայի աստծուն, և Լեբնայի աստծուն, և Մահմաքրայի աստծուն, և Կորասի աստծուն, և Փարավոնի ^Եգիպտոսի թագավորի աստծուն. հետևաբար, ես իջել եմ, որ այցելեմ նրանց, և կործանեմ նրան, ով իր ձեռքը բարձրացրել է քո դեմ, Աբրահամ, որդիս, քո կյանքը խլելու համար:

18 Ահա, ես կառաջնորդեմ քեզ իմ ձեռքով, և կվերցնեմ քեզ, որ քեզ վրա դնեմ իմ անունը, այսինքն՝ քո հոր ^ՄՔահանայությունը, և իմ գորությունը կլինի քեզ վրա:

19 Ինչպես եղավ Նոյի հետ, այնպես էլ կլինի քեզ հետ. բայց քո ծառայության միջոցով իմ ^Մանունը հավիտյան կիմացվի երկրի վրա, քանզի ես քո Աստվածն եմ:

20 Ահա, Պետափրեսի Բլուրը Քաղդեայի ^ՄՈւր քաղաքում էր: Եվ Տերը ջարդեց Եղկենայի և երկրի աստվածների զոհասեղանը, և լիովին ավերեց դրանք, և զարկեց քրմին, այնպես որ նա մահացավ. և մեծ սուգ էր Քաղդեայում և նաև Փարավոնի արքունիքում. Փարավոն, որը նշանակում է՝ թագավորական արյունով թագավոր:

21 Արդ, Եգիպտոսի այս թագավորը հետևորդ էր ^ՄՔամի երանքից, և ծննդով արյունակից էր ^ՔՔանանացիներին:

22 Այս ժառանգից ծագեցին բոլոր Եգիպտացիները, և այդպես, Քանանացիների արյունը պահպանվել էր երկրում:

23 ^ՄԵգիպտոսի հողը առաջինը հայտնաբերված լինելով մի կնոջ կողմից, որը Քամի դուստրն էր և Եգիպտոսի դուստրը, որը Քաղդեացիների լեզվով նշանակում է Եգիպտոս, այսինքն՝ այն, ինչ արգելված է.

24 Երբ այս կինը հայտնաբերեց հողը, այն ջրի տակ էր, և նա հետագայում բնակեցրեց իր որդիներին այնտեղ. և այդպես, Քամից ծագեց այն ազգը, որի միջոցով անեծքը մնաց այդ հողում:

25 Արդ, Եգիպտոսի առաջին կառավարությունը հաստատվել էր Քամի դստեր Եգիպտոսի ավագ որդու՝ Փարավոնի կողմից, և այն Քամի կառավարության ձևով էր, որը հայրապետական էր:

26 Փարավոնը՝ լինելով արդարակյաց մարդ, հաստատեց իր թագավորությունը և դատեց իր ժողովրդին իմաստությամբ և արդարությամբ, բոլոր իր օրերում, լրջորեն փորձելով ընդօրինակել այն կարգը, որը հաստատվել էր հայրերի կողմից առաջին սերունդների ժամանակ, առաջին հայրապետական իշխանության օրերին, այսինքն՝ Ադամի իշխանության ժամանակ, և նաև Նոյի՝ նրա հոր, որն օրհնեց նրան երկրի ^Մօրհնություններով և իմաստության օրհնությամբ, սակայն Քահանայության հարցում անիծեց նրան:

<p>16բ սուր Խոստացված երկիր: 18ա սուր Քահանայություն: 19ա Ծն. ԺԲ.1-3: 20ա Ծն. ԺԱ.28, Աբբ. 2.4:</p>	<p>21ա Ծն. Ժ.6, Սաղ. չԸ.51, Մովսես 8.12: բ Մովսես 7.6-8: սուր Քանան, Քանանացի:</p>	<p>23ա սուր Եգիպտոս: 26ա սուր Օրհնել, Օրհնված, Օրհնություն:</p>
---	--	--

27 Արդ, Փարավոնը, լինելով այն ազգատոհմից, ըստ որի նա չէր կարող ունենալ ^ՄՔահանայության իրավունքը, չնայած Փարավոններն այն անձկալից փափագում էին Նոյից, Քամի միջոցով, ուստի իմ հայրը մոլորվել էր նրանց կռապաշտությամբ:

28 Բայց ես կշանամ, հետագայում, ուրվագծել ժամանակագրությունը, որն ինձանից ձգվում է ետ, մինչև ստեղծման սկիզբը, քանզի իմ ձեռքը ^Մհիշատակարաններ են ընկել, որոնք ես պահում եմ մինչև այս ներկա ժամանակը:

29 Արդ, հետո, երբ Եղկենայի քուրմը զարկվեց, այնպես որ մահացավ, եղավ այն բաների իրականացումը, որոնք ինձ ասվել էին Քաղդեայի երկրի վերաբերյալ, որ այդ երկրում սով կլինի:

30 Հետևաբար, Քաղդեայի երկրով մեկ սով էր տիրում, և իմ հայրը ցավալի տանջանք կրեց սովի պատճառով, և նա ապաշխարեց այն շարությունից, որ մտադրվել էր իմ դեմ, որպեսզի խլի իմ ^Մկյանքը:

31 Բայց հայրերի, այսինքն՝ հայրապետների հիշատակարանը, Քահանայության իրավունքի վերաբերյալ, Տերը՝ իմ Աստվածը, պահպանել էր իմ ձեռքում. հետևաբար, ստեղծման սկզբի մասին և նաև ^Մմոլորակների և աստղերի մասին, ինչպես որ դրանք հայտնի էին դարձվել հայրերին, ես մի գիտելիք եմ պահել մինչև իսկ այս օրը, և ես կշանամ գրել այդ բա-

ներից մի քանիսն այս հիշատակարանի մեջ, իմ ժառանգների օգտի համար, որոնք կզան ինձանից հետո:

ԳԼՈՒԽ 2

Արրահամը թողնում է Ուրը, որ զնա Քանան – Եհովան հայտնվում է նրան Խառանում – Ավետարանի բոլոր օրհնությունները խոստացվում են նրա սերնդին, և նրա սերնդի միջոցով բոլորին – Նա զնում է Քանան և այնտեղից՝ Եգիպտոս:

ԱՐԴ, Տեր Աստվածը սաստկացրեց սովը Ուր երկրում, այնքան, որ ^ՄԱռանը՝ իմ եղբայրը, մահացավ. բայց ^ՔԹարան՝ իմ հայրը, դեռ ապրում էր Քաղդեացիների Ուր երկրում:

2 Եվ եղավ այնպես, որ ես՝ Արրահամս, կնության վերցրեցի ^ՄՍարային, իսկ ^ՔՆաբովը՝ իմ եղբայրը, կնության վերցրեց Մեղքային, որն Առանի դուստրն էր:

3 Արդ, Տերն ^Մասաց ինձ. Արրահամ, դուրս եկ քո երկրից և քո ցեղից և քո հայրական տնից դեպի մի երկիր, որը ես ցույց կտամ քեզ:

4 Հետևաբար, ես թողեցի Քաղդեացիների ^ՄՈւր երկիրը, որ զնամ Քանանի երկիրը. և ես վերցրեցի Ղովտին՝ իմ եղբոր որդուն, և նրա կնոջը, և Սարային՝ իմ կնոջը. և իմ ^Քհայրը նույնպես հետևեց ինձ, մինչև այն վայրը, որը մենք անվանեցինք Խառան:

5 Եվ սովը մեղմացավ. և իմ հայ-

27ա ՎևՈՒՒ ՊՀ-2:
սուր Քահանայություն:
28ա Մովսես 6.5:
սուր Պատվիրանների գիրք:
30ա Աբր. 1.7:

31ա Աբր. 3.1–18:
2 1ա Ծն. ԺԱ.28:
բ Ծն. ԺԱ.24–26,
Ա Մն. Ա.26:
2ա Ծն. ԺԱ.29:
սուր Սարբա:

բ Ծն. ԺԱ.27,
ԻԲ.20–24:
3ա Ծն. ԺԲ.1,
Գոր. է.1–3:
4ա Նեեմ. Թ.7:
բ Ծն. ԺԱ.31–32:

ըը մնաց Խառանում ու բնակվեց այնտեղ, քանի որ Խառանում շատ հոտեր կային. և իմ հայրը կրկին դարձավ դեպի իր ^աԿռապաշտությունը, դրա համար նա շարունակեց ապրել Խառանում:

6 Բայց ես՝ Աբրահամս, և ^աՂովտը՝ իմ եղբոր որդին, աղոթեցինք Տիրոջը, և Տերը ^ահայտնվեց ինձ և ասաց. Վեր կաց, և վերցրու Ղովտին քեզ հետ. քանզի ես նպատակով եմ հեռացրել քեզ Խառանից, որ քեզ իմ ծառան դարձնեմ՝ օտար ^աերկրում իմ ^աանունը կրելու համար, որը ես կտամ քո սերունդներին, քեզանից հետո, որպես հավիտենական տիրապետություն, երբ նրանք ականջ դնեն իմ ձայնին:

7 Քանզի ես եմ Տերը՝ քո Աստվածը. ես բնակվում եմ երկնքում. երկիրն իմ ^ապատվանդանն է. ես պարզում եմ իմ ձեռքը ծովի վրա, և այն հնազանդվում է իմ ձայնին. ես քամին ու կրակն իմ ^ակառքն եմ դարձնում. ես ասում եմ սարերին, – Հեռացե՛ք այստեղից, – և ահա, նրանք մի վայրկյանում հանկարծակի հեռացվում են պտտահողմի կողմից:

8 Իմ անունը ^աԵհովա է, և ես ի սկզբանե ^ազիտեմ վերջը. ուստի, իմ ձեռքը կլինի քո վրա:

9 Եվ ես քեզանից մեծ ազգ կշինեմ,

և ^ակօրհնեմ քեզ անչափ, և անունդ մեծ կդարձնեմ բոլոր ազգերի մեջ, և դու օրհնություն կլինես քո գալիք սերնդի համար, այնպես որ նրանք իրենց ձեռքերում կտանեն այս ծառայությունն ու ^աՔահանայությունը բոլոր ազգերին.

10 Եվ ես կօրհնեմ նրանց քո անվան միջոցով. քանի որ, բոլոր նրանք, ովքեր կընդունեն այս ^աԱվետարանը, կկոչվեն քո անունով, և կհամարվեն քո ^ասերունդը, և վեր կկենան ու կօրհնեն քեզ, որպես իրենց ^ահայր.

11 Եվ ես ^ակօրհնեմ նրանց, ովքեր օրհնում են քեզ, և կանիծեն նրանց, ովքեր անիծում են քեզ. և քեզանով (այսինքն՝ քո Քահանայությունով) և քո ^ասերնդով (այսինքն՝ քո Քահանայությամբ), քանզի ես տալիս եմ քեզ խոստում, որ այս ^աիրավունքը կշարունակվի քեզանով և քո գալիք սերնդով (նկատի ունենալով անմիջական սերունդը, կամ մարմնական սերունդը) երկրի բոլոր ընտանիքները պիտի օրհնվեն, այսինքն՝ Ավետարանի օրհնություններով, որոնք փրկության, այսինքն՝ հավերժական կյանքի օրհնություններն են:

12 Արդ, երբ Տերը հեռացել էր ինձ հետ խոսելուց, և հեռացրել էր իր երեսն ինձանից, ես ասացի իմ սրտում. Քո ծառան լրջորեն

5ա Հեւ. ԻԳ.2:
6ա սո՛ւ Ղովտ:
բ Ծն. ԺԷ.1:
սո՛ւ Հիսուս Քրիստոս – Քրիստոսի նախամահկանացու գոյությունը:
գ Ծն. ԺԳ.14–15, ԺԷ.8, Ել. ԼԳ.1:
սո՛ւ Խոստացված երկիր:
դ Ծն. ԺԲ.2–3, Աբբ. 1.19:
7ա 1 Նեփի 17.39, Վևո՛ւ 38.17:

բ Եւ. ԿԶ.15–16:
8ա սո՛ւ Եհովա:
բ սո՛ւ Ամենագետ:
9ա 1 Նեփի 17.40, 2 Նեփի 29.14, 3 Նեփի 20.27, Մորմ. 5.20:
սո՛ւ Աբրահամ – Աբրահամի Սերունդը:
բ Վևո՛ւ 84.17–19, Մովսես 6.7:
սո՛ւ Մելքիսեդեկյան քահանայություն:

10ա Գաղ. Գ.7–9:
բ Ծն. ԺԳ.16, Գաղ. Գ.29, 2 Նեփի 30.2:
գ սո՛ւ Հայրապետ, Հայրապետական:
11ա սո՛ւ Աբրահամի ուխտը:
բ Եւ. ԿԱ.9:
գ սո՛ւ Անդրանիկություն. Բարայել. Քահանայություն:

«փնտրում էր քեզ. այժմ ես գտել եմ քեզ.

13 Գու ուղարկեցիր քո հրեշտակին, որ ^աազատի ինձ Եղկենայի աստվածներից, և ես լավ կանեմ, որ ականջ դնեմ քո ձայնին, հետևաբար, թող որ քո ծառան վեր կենա ու խաղաղությամբ հեռանա:

14 Այդպես, ես՝ Աբրահամս, հեռացա, ինչպես Տերն ասաց ինձ, և Դովոն էլ ինձ հետ. և ես՝ Աբրահամս, ^ավաթսուն և երկու տարեկան էի, երբ դուրս եկա Խառանից:

15 Եվ ես վերցրեցի ^աՍարային, որին կնության էի վերցրել, երբ Քաղդեայի ^բՈւրում էի, և Դովտին՝ իմ եղբոր որդուն, և բոլոր մեր ստացվածքը, որ հավաքել էինք, և այն հոգիներին, որոնց ^գշահել էինք Խառանում, և մենք առաջ ընկանք՝ ճանապարհվելով դեպի ^գՔանանի երկիրը և բնակվելով վրաններում, մինչ գնում էինք մեր ճանապարհով.

16 Հետևաբար, հավերժությունն էր մեր ծածկը և մեր ^ավեճն ու փրկությունը, մինչ մենք ճամփորդում էինք Խառանից, Երսոնի ճանապարհով, որպեսզի գանք Քանանի երկիրը:

17 Արդ, ես՝ Աբրահամս, մի ^ազոհասեղան կառուցեցի Երսոնի երկրում, և մատուցում արեցի Տիրոջը, և աղոթեցի, որ ^բսովը հեռանա իմ հոր տնից, որ նրանք չմեռնեն:

18 Եվ ապա, մենք անցանք Երսոնից, այդ երկրի միջով, դեպի Սյուքեմ վայրը. այն գտնվում էր

Մորեի դաշտերում, և մենք արդեն հասել էինք ^աՔանանացիների երկրի սահմաններին, և այնտեղ՝ Մորեի դաշտերում, ես ^բզոհ մատուցեցի և սրտանց կանչեցի առ Տերը, որովհետև մենք արդեն հասել էինք այս կռապաշտ ազգի երկիրը:

19 Եվ Տերը հայտնվեց ինձ՝ ի պատասխան իմ աղոթքներից, և ասաց ինձ. Քո սերնդին եմ տալու այս ^աերկիրը:

20 Եվ ես՝ Աբրահամս, վեր կացա այն զոհասեղանի տեղից, որը կառուցել էի Տիրոջ համար, և հեռացա այնտեղից դեպի Բեթելի արևելքում գտնվող սարը և խփեցի իմ վրանն այնտեղ, ^աԲեթելը՝ արևմուտքում, իսկ ^բԳային՝ արևելքում. և այնտեղ ես կառուցեցի մեկ ուրիշ զոհասեղան Տիրոջ համար և կրկին ^գկանչեցի Տիրոջ անունը:

21 Եվ ես՝ Աբրահամս, ճամփորդում էի, գնալով դեռևս հարավի ուղղությամբ. և սովը շարունակվում էր երկրում. և ես՝ Աբրահամս, վճռեցի իջնել Եգիպտոս, պանդուխտ լինելու այնտեղ, քանզի սովը չափազանց աստկացել էր:

22 Եվ եղավ այնպես, երբ ես մտնեցել էի, որ մտնեի Եգիպտոս, Տերն ասաց ինձ. Ահա, ^աՍարան՝ քո կինը, շատ գեղեցիկ տեսքով կին է.

23 Հետևաբար, այնպես կլինի, որ երբ Եգիպտացիք տեսնեն նրան, նրանք կասեն,– Սա նրա կինն է. և նրանք կսպանեն քեզ, բայց նրան կենդանի կպահեն. հետևաբար, տես, որ դու անես այսպես.

12ա Վև.ՈՒ 88.63:
 13ա Աբր. 1.15–17:
 14ա ԾՆ. ԺԲ.4–5:
 15ա սոտ Սարբա:
 բ սոտ Ուր:
 գ սոտ Դարձի գալ,
 Նորադարձ:
 դ սոտ Քանան,

Քանանացի:
 16ա սոտ Վեճ:
 17ա սոտ Չոհասեղան:
 բ Աբր. 1.29:
 18ա ԾՆ. ԺԲ.6:
 բ սոտ Չոհաբերություն:
 19ա ԾՆ. ԺԳ.12–15,
 ԺԷ.8,

Ել. Գ.1–10,
 Թվ. ԼԳ.2:
 սոտ Խոստացված
 երկիր:
 20ա սոտ Բեթել:
 բ ԾՆ. ԺԳ.3–4:
 գ ԾՆ. ԺԲ.8:
 22ա ԾՆ. ԺԲ.11–13:

24 Թող նա Եգիպտացիներին ասի, որ քո քույրն է, և քո հոգին կապրի:

25 Եվ եղավ այնպես, որ ես՝ Աբրահամս, ասացի Սարային՝ իմ կնոջը, այն ամենը, ինչ Տերն ասել էր ինձ, – Հետևաբար, ասա նրանց, խնդրում եմ քեզ, որ դու իմ քույրն ես, որ քո շնորհիվ ինձ համար լավ լինի և քո շնորհիվ իմ հոգին ապրի:

ԳԼՈՒԽ 3

Աբրահամն իմանում է արևի, լուսնի, և աստղերի մասին Ուրիմի ու Թումիմի միջոցով – Տերը նրան հայտնում է ոգիների հավերժական բնույթը – Նա սովորում է նախաերկրային կյանքի, նախակարգման, Ստեղծման, Քավչի ընտրության, և մարդու երկրորդ վիճակի մասին:

Եվ ես՝ Աբրահամս, ՝Ուրիմ ու Թումիմ ունեի, որը Տերը՝ իմ Աստվածը տվել էր ինձ Քաղդեայի Ուրում:

2 Եվ ես տեսա ՝աստղերը, որ նրանք շատ մեծ էին, և որ նրանցից մեկն ամենամոտն էր Աստծո գահին. և կային էլի շատ մեծերը, որոնք մոտ էին այդ մեկին:

3 Եվ Տերն ասաց ինձ. Սրանք կառավարողներն են. և այդ մեծի անունը ՝Կոլաբ է, որովհետև այն մոտ է ինձ, քանզի ես եմ Տերը՝ քո Աստվածը. ես դրել եմ այս մեկը, որ ղեկավարի բոլոր նրանց, որոնք պատկանում են այն նույնի կարգին, որի վրա դու կանգնած ես:

4 Եվ Տերն ասաց ինձ Ուրիմ ու Թումիմով, որ ըստ իր ժամանակների ու եղանակների և իր պտույ-

տի՝ Կոլաբը Տիրոջ ձևով է. որ մեկ պտույտը մի ՝օր է Տիրոջ համար՝ ըստ նրա հաշվարկման ձևի, որը հազար ^բտարի է՝ ըստ այն ժամանակի, որը նշանակված է նրան, որի վրա դու կանգնած ես: Սա է Տիրոջ ժամանակի հաշվարկումը՝ ըստ Կոլաբի հաշվարկման:

5 Եվ Տերն ասաց ինձ. Այն մուրափը, որն ավելի փոքր լուսատուն է, ավելի փոքրը, քան այն, որը պետք է կառավարի ցերեկը, այսինքն՝ գիշերը, հաշվարկման իմաստով բարձր է կամ ավելի մեծ է, քան այն, որի վրա դու կանգնած ես, քանզի նրա շարժումն իր կարգով ավելի դանդաղ է. սա ըստ կարգի է, քանի որ այն կանգնած է երկրից վեր, որի վրա դու կանգնած ես, հետևաբար նրա ժամանակի հաշվարկումն այնքան մեծ չէ, որքան նրա օրերի և ամիսների և տարիների թիվը:

6 Եվ Տերն ասաց ինձ. Արդ, Աբրահամ, գոյություն ունեն այս ՝երկու փաստերը, ահա, քո աչքերը տեսնում են դա. քեզ տրված է իմանալ ժամանակների հաշվարկումը, և նշանակված ժամանակը, այո՛, երկրին նշանակված ժամանակը, որի վրա դու կանգնած ես, և ավելի մեծ լուսատուին նշանակված ժամանակը, որը նշանակված է կառավարելու ցերեկը, և ավելի փոքր լուսատուին նշանակված ժամանակը, որը նշանակված է կառավարելու գիշերը:

7 Արդ, առավել փոքր լուսատուին նշանակված ժամանակն ավելի երկար ժամանակ է, ինչ վերաբերում է նրա հաշվարկմանը, քան այն

3 1ա Ել. ԻԸ.30, Մոսիա 8.13, 28.13–16, ՋՍ–Պ 1.35: սո՛ւ Ուրիմ ու Թումիմ:

2ա Աբր. 1.31: 3ա Տե՛ս Վերաստպում Թիվ 2, 1–5 պատկերներ:

սո՛ւ Կոլաբ: 4ա Աբր. 5.13: բ Սաղ. Դ.4, Բ Պետ. Գ.8: 6ա Աբր. 3.16–19:

երկրի ժամանակի հաշվարկումը, որի վրա դու ես կանգնած:

8 Եվ որտեղ որ այս երկու փաստերը գոյություն ունեն, պիտի լինի մեկ ուրիշ փաստ դրանցից բարձր, այսինքն՝ պիտի լինի մեկ ուրիշ մտլորակ, որի ժամանակի հաշվարկումն էլ ավելի երկար պիտի լինի.

9 Եվ այդպես, մեկ մոլորակի ժամանակի հաշվարկումը պիտի լինի մյուսից ավելի բարձր, մինչև որ մոտենաս Կոլաթին, Կոլաթ, որը Տիրոջ ժամանակի հաշվարկման պես է. Կոլաթ, որը մոտ է դրված Աստծո գահին, որպեսզի կառավարի բոլոր այն մոլորակները, որոնք պատկանում են միևնույն Կարգին, ինչպես այն մեկը, որի վրա դու ես կանգնած:

10 Եվ քեզ տրված է իմանալ բոլոր այն աստղերին նշանակված ժամանակները, որոնք դրված են լույս տալու համար, մինչև որ դու մոտ գաս Աստծո գահին:

11 Այդպես, ես՝ Աբրահամս, Խոսեցի Տիրոջ հետ, դեմառդեմ, ինչպես մի մարդ խոսում է մեկ ուրիշի հետ. և նա պատմեց ինձ այն գործերի մասին, որոնք նրա ձեռքերն էին արարել.

12 Եվ նա ասաց ինձ. Որդի՛ս, որդի՛ս (և նա պարզել էր իր ձեռքը), ահա, ես քեզ ցույց կտամ այս բոլորը: Եվ նա իր ձեռքը դրեց իմ աչքերին, և ես տեսա այն բաները, որոնք նրա ձեռքերն արարել էին, որոնք շատ էին. և դրանք բազմապատկվում էին իմ աչքերի առաջ, և ես չէի կարողանում տեսնել դրանց վերջը:

13 Եվ նա ինձ ասաց. Սա Շինեհան է, որն արևն է: Եվ նա ինձ

ասաց. Կոկոր, որն է՝ աստղ: Եվ նա ինձ ասաց. Օլե, որը լուսինն է: Եվ նա ասաց ինձ. Կոկորիմ, որը նշանակում է աստղեր կամ բոլոր մեծ լույսերը, որոնք կային երկնակամարում:

14 Եվ գիշերային ժամ էր, երբ Տերն ասաց ինձ այս խոսքերը. Ես սրանց նման Կրագմացնեմ քեզ և քո գալիք Սերունդը. և եթե դու կարողանաս հաշվել ավագի հատիկների Գթիվը, քո սերունդների թիվը կլինի այդքան:

15 Եվ Տերն ասաց ինձ. Աբրահամ, ես քեզ ցույց եմ տալիս այս բաները, նախքան քո Եզիպտոս գնալը, որպեսզի դու հայտարարես այս բոլոր խոսքերը:

16 Եթե գոյություն ունեն երկու բաներ, և մեկը մյուսից բարձր է, ուրեմն պետք է որ լինեն դրանցից ավելի բարձր բաներ. ուստի, Կոլաթը քո տեսած բոլոր Կոկորիմներից բարձրն է, որովհետև ամենամոտն է ինձ:


17 Արդ, եթե լինեն երկու բաներ, մեկը մյուսից բարձր, և լուսինը լինի երկրից բարձր, ուրեմն հնարավոր է մեկ ուրիշ մոլորակ կամ աստղ գոյություն ունենա, որն ավելի բարձր է. և չկա ոչինչ, որ Տերը՝ քո Աստվածը, իր սրտում մտադրվի, բայց Կանին:

18 Ինչ էլ որ լինի, նա արարել է ավելի մեծ աստղը. ինչպես և, եթե կան երկու ոգի, և մեկն ավելի խելացի է, քան մյուսը, այնուամենայնիվ, այս երկու ոգիները, չնայած նրան, որ մեկն ավելի խելացի է, քան մյուսը, չունեն սկիզբ. նրանք գոյություն են ունեցել նախկինում, նրանք չեն ունենա վերջ, նրանք

9ա ՎևոՒ 88.37–44:
11ա Ծն. Ժ.1,
Թվ. ԺԲ.5–8:

14ա Աբր. 2.9:
բ Ծն. ԺԳ.16,
ՎևոՒ 132.30:

գ Ծն. ԻԲ.17, Ովսե Ա.10:
16ա Աբր. 3.3:
17ա Հոր Թ.4–12:



ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

Պատկեր 1: Կոլաբ՝ նշանակում է առաջին ստեղծումը, ամենամոտը սելեստիալին, կամ Աստծո բնակավայրը: Առաջինը՝ կառավարման մեջ, վերջինը՝ ինչ վերաբերում է ժամանակի հաշվարկմանը: Հաշվարկումն ըստ սելեստիալ ժամանակի, սելեստիալ ժամանակ, որի մեկ օրը նշանակում է մի կանգուն: Կոլաբի մեկ օրը հավասար է հազար տարվա՝ ըստ այն երկրի հաշվարկման, որը Եգիպտացիների կողմից կոչվում է Ե-օհ-էհ:

Պատկեր 2: Կոլաբի մոտակա աստղը, որը Եգիպտացիների կողմից կոչվում է Օլիբիլշ, որը հաջորդ գլխավոր կառավարող արարչագործությունն է, սելեստիալին, կամ այն տեղին մոտ, որտեղ բնակվում է Աստված. կրելով մաև գորտոբյան բանալին, որը վերաբերում է մյուս մոլորակներին. ինչպես հայտնվել է Աստծո կողմից Աբրահամին, երբ նա գոհ էր մատուցում գոհասեղանի վրա, որը պատրաստել էր Տիրոջ համար:

Պատկեր 3: Պատկերված է Աստծուն ներկայացնելու համար, իր գահին նստած, գորտոբյամբ ու իշխանությամբ հանդերձավորված. հավերժական լույսի թագն իր գլխին. ներկայացնելով մաև Սուրբ Քահանայության գլխավոր Բանալի-բառերը, ինչպես որ Եղեմի պարտեզում հայտնի էր դարձվել Ադամին, ինչպես մաև Սեբին, Նոյին, Մելքիսեղեկին, Աբրահամին, և բոլորին, ում հայտնի էր դարձվել Քահանայությունը:

Պատկեր 4: Համարժեք է Եբրայերեն Ռ-աուբիյանգ բառին, որը նշանակում է տարածություն կամ երկինքների հաստատություն. մաև թվային պատկեր, որը եգիպտերեն նշանակում է հազար. համարժեք լինելով Օլիբիլշի ժամանակաչափին, որն իր պտույտով ու իր ժամանակաչափով հավասար է Կոլաբին:

Պատկեր 5: Եգիպտերեն կոչվում է Էնիշ-գո-օհ-դոշ. սա նույնպես կառավարող մոլորակներից է, և Եգիպտացիների կողմից ասվում է, որ դա արևն է, որն իր լույսը վերցնում է Կոլաբից, Կա-է-վամրաշի միջոցով, որը գլխավոր Բանալին է, կամ, այլ խոսքով, կառավարող գորությունը, որը կառավարում է տասնհինգ այլ ամրացված մոլորակներ կամ աստղեր, ինչպես մաև Ֆլոխը կամ Լուսինը, Երկիրը և Արևն իրենց ամենամյա պտույտի մեջ: Այս մոլորակն իր գորությունն ընդունում է Կլի-ֆլու-խ-էսի կամ Հա-կո-կո-բիմի միջոցով, այն աստղերի, որոնք ներկայացված են 22 և 23 թվերով, լույս ստանալով Կոլաբի պտույտներից:

Պատկեր 6: Ներկայացնում է երկիրն իր չորս կողմերով:

Պատկեր 7: Ներկայացնում է Աստծուն՝ իր գահի վրա նստած, երկինքների միջոցով հայտնելով Քահանայության գլխավոր Բանալի-բառերը. ինչպես մաև Սուրբ Հոգու նշանն Աբրահամին՝ աղավառ տեսքով:

Պատկեր 8: Պարունակում է գրություն, որը չի կարող հայտնի դարձվել աշխարհին. բայց հնարավոր է ձեռք բերել Աստծո Սուրբ Տաճարում:

Պատկեր 9: Չպետք է հայտնի դարձվի ներկայումս:

Պատկեր 10: Սա նույնպես:

Պատկեր 11: Սա նույնպես: Եթե աշխարհը կարողանա հայտնաբերել այս թվերը, թող այդպես լինի: Ամեն:

Պատկերներ 12, 13, 14, 15, 16, 17, 18, 19, 20 և 21՝ կտրվեն Տիրոջը հարմար ժամանակ:

Վերոհիշյալ թարգմանությունը տրվել է այնքանով, որքանով ներկայումս մեզ իրավունք է վերապահված:

գոյություն կունենան հետագայում, քանզի նրանք ^անուխ են, կամ հավերժական:

19 Եվ Տերն ասաց ինձ. Գոյություն ունեն այս երկու փաստերը, որ կան երկու ոգիներ՝ մեկը լինելով ավելի խելացի, քան մյուսը. պիտի լինի մեկ ուրիշը, առավել խելացի, քան նրանք. Ես եմ Տերը՝ քո Աստվածը, ես ^աավելի խելացի եմ, քան նրանք բոլորը:

20 Տերը՝ քո Աստվածը, ուղարկեց իր հրեշտակին, որ քեզ ^աազատի Եղկենայի քրմի ձեռքից:

21 Ես բնակվում եմ նրանց բոլորի մեջ. դրա համար ես այժմ իջել եմ քո մոտ, որ քեզ հայտնեմ իմ ձեռքերի արարած ^ագործերը, որում իմ ^բիմաստությունը գերազանցում է նրանց բոլորին, քանզի ես կառավարում եմ վերևում՝ երկնքում, և ներքևում՝ երկրի վրա, ողջ իմաստությամբ և խելամտությամբ, բոլոր բանականությունների վրա, որոնք քո աչքերը տեսել են ի սկզբանե. սկզբում ես վայր իջա բոլոր բանականությունների մեջ, որոնց դու տեսել ես:

22 Արդ, Տերը ինձ՝ Աբրահամիս, ցույց էր տվել այն ^բբանականությունները, որոնք կազմավորվել էին ^բնախքան աշխարհի լինելը. և նրանց բոլորի մեջ կային շատ ^գազնվազարմ ու մեծ հոգիներ.

23 Եվ Աստված տեսավ այդ հոգիները, որ նրանք լավն էին, և նա կանգնեց նրանց մեջ և ասաց. Սրանց ես կդարձնեմ իմ կառավարիչները. քանզի նա կանգնել էր նրանց մեջ, ովքեր ոգի էին, և նա տեսավ, որ նրանք լավն էին. և նա ասաց ինձ. Աբրահամ, դու սրանցից մեկն ես. դու ^բընտրվել էիր նախքան քո ծնվելը:

24 Եվ նրանց մեջ կանգնած էր ^ամեկը, որն Աստծո նման էր, և նա ասաց նրանց, ովքեր իր հետ էին. Մենք կիջնենք ներքև, քանզի մի տարածություն կա այնտեղ, և մենք կվերցնենք այս նյութերից և ^բկստեղծենք մի ^գերկիր, որի վրա սրանք կկարողանան բնակվել.

25 Եվ դրանով մենք նրանց ^ակստուգենք, որպեսզի տեսնենք, թե արդյոք նրանք ^բկանեն այն ամենը, ինչ Տերը՝ իրենց Աստվածը, կպատվիրի նրանց.

26 Եվ նրանց, ովքեր պահում են իրենց ^աառաջին վիճակը, կտրվի ավելին. իսկ նրանք, ովքեր չեն պահում իրենց առաջին վիճակը, փառք չեն ունենա այն նույն թագավորության մեջ, նրանց հետ, ովքեր պահում են իրենց առաջին վիճակը. և նրանք, ովքեր կպահեն իրենց ^բերկրորդ վիճակը,

18ա Նուխ բառը եբրայերեն բառի տառադարձությունն է, որը նշանակում է հավերժական:
19ա Ես. ԾԵ.8-9: սո՛ւ Ամենագետ:
20ա Աբր. 1.15:
21ա Վևո՛ւ 88.45-47, Մովսես 1.27-29:
բ սո՛ւ Իմաստություն:
22ա սո՛ւ Բանականություն, Բանականություններ:

բ սո՛ւ Խորհուրդ Երկնքում. Նախամահկանացու կյանք:
գ Վևո՛ւ 138.55:
23ա Ես. ԽԹ.1-5, Երեմ. Ա.5: սո՛ւ Ընտրել, Ընտրեց, Ընտրված. Նախակարգում:
24ա սո՛ւ Առաջնել: բ սո՛ւ Ստեղծել, Ստեղծում: գ սո՛ւ Երկիր –

Մարդկանց համար ստեղծված:
25ա Վևո՛ւ 98.12-14, 124.55: սո՛ւ Կամքի ազատություն. Փրկագնման ծրագիր: բ սո՛ւ Հնազանդություն, Հնազանդ, Հնազանդվել:
26ա Հուդա Ա.6: բ սո՛ւ Մահկանացու, Մահկանացություն:

նրանց գլխին Գիառք կավելացվի հավիտյան հավիտենից:

27 Եվ Մերն ասաց. Ո՞ւմ ուղարկեմ: Եվ մեկը՝ Մարդու Պորդու նման, պատասխանեց. Ահա ես, ինձ ուղարկիր: Եվ մեկ Գուրիշը պատասխանեց և ասաց. Ահա ես, ինձ ուղարկիր: Եվ Մերն ասաց. Ես կուղարկեմ առաջինին:

28 Եվ Մերկրորդը բարկացավ, և չպահեց իր առաջին վիճակը. և այդ օրը Չատերը հետևեցին նրան:

ԳԼՈՒԽ 4

Աստվածները ծրագրում են երկրի ստեղծումը և դրա վրայի ողջ կյանքը – Ներկայացվում է ստեղծման վեցօրյա նրանց ծրագիրը:

Ես ապա Մերն ասաց. Եկեք իջնենք ներքև: Եվ նրանք Մսկզբում իջան ներքև, և նրանք, այսինքն՝ Աստվածները, Քլազմավորեցին և ձևավորեցին երկինքներն ու երկիրը:

2 Եվ երկիրը, ձևավորվելուց հետո, դատարկ էր ու անայի, որով հետև նրանք բացի երկրից ոչինչ չէին ձևավորել. և խավարն իշխում էր անդունդի երեսին, և Աստվածների Հոգին էր Մթխսում ջրերի երեսին:

3 Եվ նրանք (Աստվածները) ասացին. Թող լինի լույս. և եղավ լույս:

4 Եվ նրանք (Աստվածները) ընդունեցին լույսը, քանզի այն պայծառ էր. և նրանք բաժանեցին

լույսը, կամ այնպես արեցին, որ այն բաժանվի խավարից:

5 Եվ Աստվածները լույսը կոչեցին Յերեկ, իսկ խավարը նրանք կոչեցին Գիշեր: Եվ եղավ այնպես, որ երեկոյից մինչև առավոտ նրանք կոչեցին գիշեր. և առավոտից մինչև երեկո, նրանք կոչեցին ցերեկ. և դա եղավ առաջինը, կամ սկիզբը նրա, որը նրանք կոչեցին ցերեկ ու գիշեր:

6 Եվ Աստվածներն ասացին նաև. Թող Մհաստատություն լինի ջրերի մեջտեղը, և ջրերը ջրերից բաժանի:

7 Եվ Աստվածները հրամայեցին հաստատությանը, այնպես որ այն բաժանեց ջրերը, որոնք հաստատության տակ էին, այն ջրերից, որոնք հաստատության վրա էին. և եղավ այնպես, ինչպես նրանք հրամայեցին:

8 Եվ Աստվածները հաստատությունը կոչեցին ՄԵրկինք: Եվ եղավ այնպես, որ երեկոյից մինչև առավոտն էր, որ նրանք կոչեցին գիշեր. և եղավ այնպես, որ առավոտից մինչև երեկոն էր, որ նրանք կոչեցին ցերեկ. և դա երկրորդ թամանակն էր, որ նրանք կոչեցին գիշեր ու ցերեկ:

9 Եվ Աստվածները հրամայեցին՝ ասելով. Թող երկնքի տակի Մջրերը միասին հավաքվեն Քմեկտեղ, և թող երկիրը ցամաք լինի. և եղավ այնպես, ինչպես նրանք հրամայեցին:

10 Եվ Աստվածները ցամաքը կոչեցին Երկիր. և ջրերի ժողովքը

26գ Տիտու Ա.2:
սուր Փառք:
27ա սուր Աստված,
Աստվածագուլխ –
Աստված Հայրը:
բ սուր Հիսուս Քրիստոս.
Մարդու Որդի:

գ Մովսես 4.1-2:
28ա սուր Դև:
բ սուր Կորստի որդիներ:
4 1ա Ծն. Ա.1, Մովսես 2.1:
բ սուր Ստեղծել,
Ստեղծում:
2ա Ծն. Ա.2, Մովսես 2.2:

6ա Ծն. Ա.4-6,
Մովսես 2.4:
8ա սուր Երկինք:
բ Ծն. Ա.8:
9ա Անովս Թ.6,
Մովսես 2.7:
բ Ծն. Ա.9:

նրանք կոչեցին Մեծ Ջրեր. և Աստվածները տեսան, որ դրանք հնազանդ էին:

11 Եվ Աստվածներն ասացին. Եկեք պատրաստենք երկիրը, որ Քուսականություն առաջ բերի. սերմ տվող բույս. իր տեսակի պես պտուղ տվող պտղատու ծառ, որի սերմն իր նմանությամբ աճում է երկրի վրա. և եղավ ճիշտ այնպես, ինչպես նրանք հրամայել էին:

12 Եվ Աստվածները կազմավորեցին երկիրը, որ կանաչ խոտ աճի իր իսկ սերմից, և բույսը բույս առաջ բերի իր իսկ սերմից, սերմ տալով իր տեսակի պես. և երկիրը ծառ առաջ բերի իր իսկ սերմից, տալով պտուղ, որի սերմը միայն առաջ կբերի նույն ծառը՝ իր տեսակի պես. և Աստվածները տեսան, որ դրանք հնազանդ էին:

13 Եվ եղավ այնպես, որ նրանք հաշվեցին օրերը. երեկոյից մինչև առավոտ, նրանք կոչեցին գիշեր. և եղավ այնպես, որ առավոտից մինչև երեկո նրանք կոչեցին ցերեկ. և դա երրորդ ժամանակն էր:

14 Եվ Աստվածները լուսատուներ կազմավորեցին երկնքի հաստատության մեջ, և այնպես արեցին, որ դրանք բաժանեցին ցերեկը գիշերից. և կազմավորեցին դրանք նշանների ու եղանակների համար և օրերի ու տարիների համար.

15 Եվ կազմավորեցին դրանք՝ լույսի համար լինելու երկնքի հաստատության մեջ, որ լույս տան երկրին. և այդպես եղավ:

16 Եվ Աստվածները երկու մեծ լուսատուներ կազմավորեցին, մեծ լուսատուն՝ ցերեկը կառավարելու

համար, իսկ փոքր լուսատուն՝ գիշերը կառավարելու համար. փոքր լուսատուի հետ նրանք դրեցին նաև աստղերը.

17 Եվ Աստվածները դրեցին դրանք երկնքի հաստատության մեջ, որ լույս տան երկրին, և կառավարեն ցերեկն ու գիշերը, և այնպես անեն, որ լույսը բաժանվի խավարից:

18 Եվ Աստվածները նայեցին այն բաներին, որոնց նրանք հրամայել էին, մինչև որ դրանք հնազանդվեցին:

19 Եվ եղավ այնպես, որ երեկոյից առավոտ էր, որ գիշեր էր. և եղավ այնպես, որ առավոտից մինչև երեկո էր, որ ցերեկ էր. և դա չորրորդ ժամանակն էր:

20 Եվ Աստվածներն ասացին. Եկեք պատրաստենք ջրերը, որ առատորեն առաջ բերեն գեռուներ, որոնք կյանք ունեն. և թռչուններ, որոնք կկարողանան թռչել երկրի վրա՝ երկնքի բաց հաստատության մեջ:

21 Եվ Աստվածները պատրաստեցին ջրերը, որ դրանք առաջ բերեն մեծ կետեր, և ամեն կենդանի արարած, որ շարժվում է, որոնք ջրերը պետք է առատորեն առաջ բերեին նրանց տեսակի պես. և ամեն թևավոր թռչուն իր տեսակի պես: Եվ Աստվածները տեսան, որ նրանք հնազանդ կլինեն, և որ իրենց ծրագիրը լավն էր:

22 Եվ Աստվածներն ասացին. Մենք կօրհնենք նրանց, և այնպես կանենք, որ նրանք պտղաբեր լինեն և բազմանան, և լցնեն ջրերը ծովերի, կամ մեծ ջրերի. և կբազմացնենք թռչուններին երկրի վրա:

10աԾճ. Ա.10, Աբբ. 4.22:

11աԾճ. Ա.11–12,
Մովսես 2.11–12:

14ա ՎևՌԲ 88.7–11:

16աԾճ. Ա.16:

21աԾճ. Ա.21, Մովսես 2.21:

22ա Աբբ. 4.10:



ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ

Պատկեր 1: Աբրահամը՝ Փարավոնի գահին նստած, թագավորի բարեհաճությամբ, թագն իր գլխին, որը ներկայացնում է Հահանայությունը, որը խորհրդանշում է Երկնքի գլխավոր Նախագահությանը. արդարադատության և դատաստանի գայիստնն իր ձեռքին:

Պատկեր 2: Փարավոն թագավորը, որի անունը տրված է նրա գլխավերևի գրերում:

Պատկեր 3: Խորհրդանշում է Աբրահամին Եգիպտոսում, ինչպես տրված է մահ 1-ին Վերատպման 10-րդ պատկերում:

Պատկեր 4: Եգիպտոսի թագավորի՝ Փարավոնի թագաժառանգը, ինչպես գրված է ձեռքի վերևում:

Պատկեր 5: Շուլենը՝ թագավորի գլխավոր մատուցողներից մեկը, ինչպես ներկայացված է նրա գլխավերևի գրերում:

Պատկեր 6: Օլիմյաիր՝ թագաժառանգին պատկանող ստրուկներից մեկը:

Թագավորի արքունիքում, Աբրահամը տրամաբանում է Աստղագիտության սկզբունքների վերաբերյալ:

23 Եվ եղավ այնպես, որ երեկոյից մինչև առավոտն էր, որ նրանք կոչեցին գիշեր. և եղավ այնպես, որ առավոտից մինչև երեկոն էր, որ նրանք կոչեցին ցերեկ. և դա եղավ հինգերորդ ժամանակը:

24 Եվ «Աստվածները պատրաստեցին երկիրը, որ կենդանի արարածներ առաջ բերի իրենց տեսակի պես, անասուններ և սողուններ, երկրի գազաններ իրենց տեսակի պես. և եղավ այնպես, ինչպես նրանք ասել էին:

25 Եվ Աստվածները կազմավորեցին երկիրը, որ գազաններ առաջ բերի իրենց տեսակի պես, և անասուններ՝ իրենց տեսակի պես, և երկրի վրա սողացող ամեն մի սողուն իր տեսակի պես. և Աստվածները տեսան, որ նրանք կհնազանդվեն:

26 Եվ Աստվածները «Խորհուրդ արեցին միմյանց հետ և ասացին. Եկեք իջնենք ներքև և մարդ՝ ճակատորենք մեր՝ «պատկերով՝ մեր նմանությամբ. և մենք նրանց տիրապետություն կտանք ծովի ձկների վրա, և երկնքի թռչունների վրա, անասունների վրա, և ողջ երկրի վրա, և երկրի վրա սողացող ամեն մի սողունի վրա:

27 Այդպես, «Աստվածներն իջան ներքև, որ կազմավորեն մարդուն իրենց իսկ պատկերով, որ Աստվածների պատկերով ձևավորեն նրան, արու և էգ ձևավորեն նրանց:

28 Եվ Աստվածներն ասացին. Մենք կօրհնենք նրանց: Եվ Աստվածներն ասացին. Մենք այնպես կանենք, որ նրանք լինեն պտղաբեր և բազմանան, և լցնեն երկիրը, և տիրեն նրան, և իշխանություն

ունենան ծովի ձկների վրա, և օդի թռչունների վրա, և երկրի վրա շարժվող ամեն կենդանու վրա:

29 Եվ Աստվածներն ասացին. Ահա, մենք նրանց կտանք ամեն սերմ տվող խոտ, որը կաճի երկրի երեսին, և ամեն ծառ, որը պտուղ ունի իր վրա. այո՛, ծառի պտուղը, սերմ տվող, մենք կտանք նրանց. այն «կերակուր կլինի նրանց համար:

30 Եվ երկրի ամեն գազանին, և օդի ամեն թռչունին, և ամեն մի սողունին երկրի վրայի, ահա, մենք կյանք կտանք նրանց, և նաև, մենք նրանց կտանք ամեն կանաչ խոտ, որպես կերակուր, և բոլոր այս բաներն այդպես կազմավորված կլինեն:

31 Եվ Աստվածներն ասացին. Մենք կանենք այն ամենը, ինչ ասացինք, և կկազմավորենք դրանք. և ահա, նրանք շատ հնազանդ կլինեն: Եվ եղավ այնպես, որ երեկոյից մինչև առավոտը նրանք կոչեցին գիշեր. և եղավ այնպես, որ առավոտից մինչև երեկոն նրանք կոչեցին ցերեկ. և նրանք հաշվեցին «վեցերորդ ժամանակը:

ԳԼՈՒԽ 5

Աստվածներն ավարտում են բոլոր բաների ստեղծման իրենց ծրագրումը – Նրանք իրագործում են Ստեղծումը՝ համաձայն իրենց ծրագրերի – Աղամն անուն է տալիս բոլոր կենդանի արարածներին:

Եվ այդպես, մենք կավարտենք երկինքներն ու երկիրը, և նրանց բոլոր գորքերը:

24ա սո՛ւ Աստված,
Աստվածագլուխ:
26ա սո՛ւ Խորհուրդ:

բ սո՛ւ Մարդ, Մարդիկ:
գ Մովսես 6.8-10:
27ա ճն. Ա.26-27, Աբբ. 5.7:

29ա ճն. Ա.29-30:
31ա Ել. Լ.Ա.17:

2 Եվ Աստվածներն իրար մեջ ասացին. ^աՅոթերորդ ժամանակում մենք կավարտենք մեր աշխատանքը, որի համար խորհրդակցեցինք. և յոթերորդ ժամանակում մենք կհանգստանանք բոլոր մեր գործերից, որոնց համար մենք խորհրդակցեցինք:

3 Եվ Աստվածներն ավարտեցին յոթերորդ ժամանակին, որովհետև յոթերորդ օրը նրանք պիտի ^ահանգստանալին բոլոր գործերից, որոնց համար նրանք (Աստվածները) խորհրդակցեցին իրար մեջ, որ կազմավորեն. և ^բսրբագործեցին այն: Եվ այդպիսին էին նրանց որոշումները, այն ժամանակ, երբ նրանք խորհրդակցեցին իրար մեջ, որ կազմավորեն երկինքներն ու երկիրը:

4 Եվ Աստվածներն իջան ներքև և կազմավորեցին երկինքների և երկրի այս սերունդները, երբ դրանք կազմավորվեցին այն օրը, երբ Աստվածները կազմավորեցին երկիրն ու երկինքները,

5 Համաձայն այն ամենի, որ նրանք ասել էին դաշտի ամեն մի բույսի վերաբերյալ, ^անախքան դրանց երկրի վրա լինելը, և դաշտի ամեն խոտի վերաբերյալ, նախքան դրա աճելը. քանզի Աստվածներն անձրև դեռ չէին բերել երկրի վրա, երբ խորհրդակցել էին դրանք անել, և մարդուն դեռ չէին ձևավորել, որ մշակի հողը:

6 Բայց երկրից գոլորշի էր դուրս գալիս, և ջրում ողջ հողի երեսը:

7 Եվ ^աԱստվածները հողի ^բփոշուց կազմավորեցին մարդուն, և վերցրեցին նրա ^գոգին (այսինքն՝ մարդու ոգին), և դրեցին այն նրա մեջ. և նրա ռնգերում շնչեցին կյանքի շունչը, և մարդը դարձավ կենդանի ^դհոգի:

8 Եվ Աստվածները մի պարտեզ տնկեցին արևելքի կողմը՝ ^աԵդեմում, և այնտեղ դրեցին մարդուն, որի ոգին նրանք դրել էին այն մարմնի մեջ, որը նրանք կազմավորել էին:

9 Եվ հողից Աստվածներն աճեցրին ամեն ծառ, որը հաճելի է մարդու աչքին և օգտակար է սննդի համար. նաև կյանքի ^ածառը՝ պարտեզի մեջտեղում, և բարին ու չարը գիտենալու ծառը:

10 Եդեմից մի գետ էր հոսում՝ պարտեզը ջրելու համար, և այդտեղից այն բաժանվեց և դարձավ չորս գետի ակունք:

11 Եվ Աստվածները վերցրեցին մարդուն և դրեցին նրան Եդեմի պարտեզում, որ մշակի ու պահի այն:

12 Եվ Աստվածները պատվիրեցին մարդուն՝ ասելով. Պարտեզի ամեն ծառից ազատ կարող ես ուտել,

13 Բայց բարու և չարի գիտության ծառից՝ դու չպետք է ուտես դրանից. քանզի այն ժամանակ, երբ ուտես նրանից, դու անկասկած կմեռնես: Արդ, ես՝ Աբրահամս, տեսա, որ դա Տիրոջ ^աժամանակի համեմատ էր, որն ըստ ^բԿուլաբի

5 2ա սուր Հանգստության օր:
 3ա Ել. Ի.8-11,
 Մոսիս 13.16-19:
 բ ՎևոՒ 77.12:
 5ա սուր Հոգեղեն ստեղծում:

7ա Աբր. 4.26-31:
 բ Մովսես 4.25, 6.59:
 գ Ծն. Բ.7,
 ՎևոՒ 93.33:
 սուր Նախամահկանացու կյանք. Ոգի:
 դ սուր Հոգի:

8ա սուր Եդեմ:
 9ա սուր Կյանքի ծառ:
 13ա Բ Պետ. Գ.8:
 բ Աբր. 3.2-4:
 սուր Կուլաբ:

ժամանակի էր. քանզի Աստվածներն Ադամին դեռևս չէին նշանակել նրա հաշվարկումը:

14 Եվ Աստվածներն ասացին. Եկեք մի լավ օգնական արարենք մարդու համար, քանզի լավ չէ, որ մարդը մենակ լինի, ուստի մենք մի լավ օգնական կկազմավորենք նրա համար:

15 Եվ Աստվածները խորը քուն բերեցին Սադամի վրա. և նա քնեց, իսկ նրանք վերցրեցին նրա կողերից մեկը, և մտավ ծածկեցին դրա տեղը.

16 Եվ այդ կողից, որն Աստվածները վերցրել էին մարդուց, նրանք կազմավորեցին Սկոզը, և նրան բերեցին մարդու մոտ:

17 Եվ Ադամն ասաց. Մա ոսկր է իմ ոսկրից, և մարմին՝ իմ մարմնից.

արդ, նա կկոչվի Կին, որովհետև վերցվել է մարդուց.

18 Դրա համար, մարդ կթողնի իր հորն ու մորը, և Սկհարի իր կնոջը, և նրանք կլինեն մեկ մարմին:

19 Եվ նրանք երկուսն էլ մերկ էին, մարդը և իր կինը, և չէին ամաչում:

20 Եվ հողից՝ Աստվածները կազմավորեցին դաշտի ամեն զազան, և օդի ամեն թռչուն, և նրանց բերեցին Ադամի մոտ, որ տեսնեն, թե ինչպես կկոչի նրանց. և ինչպես որ Ադամն անվանեց ամեն մի կենդանի արարածի, այդպես պիտի լինի նրա անունը:

21 Եվ Ադամն անուն տվեց բոլոր անասուններին, երկնքի թռչուններին, դաշտի ամեն մի զազանին. և Ադամի համար՝ նրա համար օգնական գտնվեց:

15ա սո՛ւ Ադամ:
16ա սո՛ւ Եվա:

18ա Վե՛ՌԻ 42.22, 49.15–16:
բ սո՛ւ Ամուսնու՛թյուն,

Ամուսնանալ:

ՉՈՁԵՖ ՍՄԻԹ–ՄԱՏԹԵՈՍ

Քաղվածք Աստվածաշնչի թարգմանությունից, ինչպես հայտնվել է ՉՈՁԵՖ Սմիթ Մարգարեին 1831թ. Մատթեոս ԻԳ.39 և ԻԴ գլուխը:

Հիտուը կանխավ պատմում է Երուսաղեմի մոտալուտ կործանումը – Նա խոսում է նաև Մարդու Որդու երկրորդ գալստյան և ամբարիշտների կործանման մասին:

ՔԱՆՁԻ ասում եմ ձեզ, որ այսուհետև դուք ինձ չեք տեսնի և չեք իմանա, որ ես եմ նա, որի մասին գրվել է մարգարեների կողմից, մինչև որ չասեք. Օրհնյալ է նա, ով ^ագալիս է Տիրոջ անունով, երկնքի ամպերի մեջ, և բոլոր սուրբ հրեշտակներն իր հետ: Այդ ժամանակ նրա աշակերտները հասկացան, որ նա կրկին երկիր պիտի գա, նրանից հետո, երբ կփառավորվի և կթագադրվի ^բԱստծո աջ կողմում:

2 Եվ Հիտուը դուրս եկավ և հեռանում էր տաճարից. և նրա աշակերտները նրա մոտ եկան, որ լսեն նրանից՝ ասելով. Վարդապետ, ցույց տուր մեզ տաճարի կառույցի մասին, քանզի դու ասացիր, – Այն կքանդվի և ավերված կթողնվի ձեզ:

3 Հիտուսն էլ ասաց նրանց. Չե՞ք տեսնում այդ ամենը, և չե՞ք հասկանում դրանք: Ե՛լմարիտ ասում եմ ձեզ. ^աքարը քարին չի թողնվի այս տաճարի վրա, որ չքանդվի:

4 Եվ Հիտուը թողեց նրանց, և

քարձրացավ Չիթենյաց ^ասարը: Եվ երբ որ նա Չիթենյաց սարի վրա նստած էր, աշակերտներն առանձին եկան նրա մոտ՝ ասելով. Ասա մեզ, ե՞՞րբ պիտի լինեն այս բաները, որոնք դու ասացիր տաճարի և հրեաների կործանման վերաբերյալ. և ո՞րն է ^բնշանը քո ^գգալըստյան և աշխարհի ^դվերջի, կամ ^եամբարիշտների կործանման, որն աշխարհի վերջն է:

5 Հիտուսն էլ պատասխանեց և ասաց նրանց. Չգույշ կացեք, որ ոչ ոք ձեզ չխաբի.

6 Քանզի շատերը կզան իմ անունով՝ ասելով, – Ես եմ Քրիստոսը, – և շատերին կմոլորեցնեն.

7 Այն ժամանակ ձեզ ^ամեղության կմատնեն, և ձեզ կսպանեն, և իմ անվան համար բոլոր ազգերից ^բատված կլինեք.

8 Եվ այն ժամանակ շատերը կզայթակղվեն, և իրար կմատնեն և իրար կատեն.

9 Եվ շատ կեղծ մարգարեներ կքարձրանան, ու շատերին կմոլորեցնեն.

10 Եվ անօրինության շատանալու պատճառով, շատերի ^ասերը կսառչի.

11 Բայց ով որ կմնա հաստատուն և չի հաղթվի, նա կփրկվի:

12 Ուստի, երբ դուք տեսնեք

1 1ա Մատ. ԻԶ.64,
Գոր. Ա.11:
բ սո՛ւ Աստված,
Աստվածագլուխ:
3ա Դուկ. ԺԹ.44:
4ա սո՛ւ Չիթենյաց սար:
բ Դուկ. ԻԱ.7–36,
Վևո՛Ի 45.16–75:

սո՛ւ Վերջին օրեր,
Ետին օրեր.
Ժամանակների
նշանները:
գ սո՛ւ Հիտու Քրիստոսի
երկրորդ գալուստը:
դ սո՛ւ Աշխարհ –
Աշխարհի վերջը:

ե Մաղ. Դ.1,
Վևո՛Ի 133.64–74:
սո՛ւ Ամբարիշտ,
Ամբարշտություն:
7ա Ա Պետ. Դ.12–14:
բ սո՛ւ Հալածել,
Հալածանք:
10ա Վևո՛Ի 45.27:

ավերածության պարծությունը, որը խոսվել է ՊՂ-անիել մարգարեի կողմից, Երուսաղեմի կործանման վերաբերյալ, այն ժամանակ դուք կանգնած կլինեք Պսուրբ վայրում. ով որ կարդում է, թող հասկանա:

13 Այն ժամանակ, նրանք, ովքեր չրեաստանում են, թող փախչեն սարերը.

14 Թող նա, ով կտուրի վրա է փախչի և ետ չդառնա իր տնից որևէ բան վերցնելու.

15 Ոչ էլ թող նա, ով դաշտում է ետ վերադառնա իր հագուստը վերցնելու.

16 Եվ վա՛յ նրանց այն օրերին, ովքեր տրեխայով են, և նրանց, ովքեր կուրծք են տալիս.

17 Գրա համար, աղոթքեք Տիրոջը, որ ձեր փախուստը չլինի ձմռանը, ոչ էլ Հանգստության օրը.

18 Քանզի այն ժամանակ, այն օրերին, մեծ նեղություն կլինի հրեաների համար, և ՊԵրուսաղեմի բնակիչների համար, այնպիսին, որի նմանն առաջ երբեք Աստծո կողմից չի ուղարկվել Իսրայելի վրա, նրանց թագավորության սկզբից մինչև այժմ. ո՛չ, ոչ էլ երբևէ կրկին կուղարկվի Իսրայելի վրա:

19 Բոլոր բաները, որոնք պատահել են նրանց, միայն այն ցավերի սկիզբն է, որոնք պիտի գան նրանց վրա:

20 Եվ եթե այդ օրերը չկարճացվեն, նրանցից ոչ մի մարմին չի փրկվի. բայց հանուն ընտրվածների, ուխտի համաձայն, այդ օրերը պիտի կարճացվեն:

21 Ահա, այս բաները ես ձեզ ասացի հրեաների վերաբերյալ. և բացի այդ, այն օրերի նեղություններից հետո, որոնք պիտի գան Երուսաղեմի վրա, եթե որևէ մեկը ձեզ ասի. Ահա, այստեղ է Քրիստոսը, կամ այնտեղ, չհավատարար նրան.

22 Քանզի այդ օրերին կեղծ քրիստոսներ և նաև կեղծ մարգարեներ կբարձրանան, և մեծ նշաններ ու զարմանալիքներ ցույց կտան, այնպես որ, եթե հնարավոր լինի, նրանք կմոլորեցնեն նույնիսկ ընտրվածներին, որոնք ընտրված են՝ ուխտի համաձայն:

23 Ահա, ես ասում եմ ձեզ այս բաները հանուն ընտրվածների. և դուք նաև կլսեք Պպատերազմների ու պատերազմների համբավների մասին. տեսեք, որ դուք չշփոթվեք. քանզի այն ամենը, ինչ ձեզ ասացի, պիտի իրականանա. բայց դեռ վերջը չէ:

24 Ահա, ես ասացի ձեզ նախապես.

25 Ուստի, եթե նրանք ձեզ ասեն. Ահա, նա անապատում է. դուք չգնաք. Ահա, նա գաղտնի սենյակներում է. չհավատաք.

26 Որովհետև, ինչպես առավոտյան լույսը դուրս է գալիս՝ արևելքից, և ճառագայթում է նույնիսկ մինչև արևմուտք, և ծածկում ողջ երկիրը, այդպես կլինի նաև Մարդու Որդու գալուստը:

27 Եվ արդ, ես ձեզ ցույց եմ տալիս մի առակ: Ահա, որտեղ որ դիակն է, այնտեղ կհավաքվեն արծիվները. այդպես էլ իմ ընտրվածներն

12ա Գան. ԺԲ.11:
բ սուր Գանիել:
գ սուր Երուսաղեմ:
դ ՎևոՒ 101.22-25:
13ա ՎևոՒ 133.13:

16ա Գուկ. ԻԳ.29-30:
18ա սուր Հրեաներ:
բ Չաք. ԺԲ,
ԺԳ.1-5:
23ա սուր Ընտրյալ:

բ ՎևոՒ 45.26:
26ա Եզեկ. ԽԳ.2:
27ա սուր Իսրայել -
Իսրայելի ցրվելը:

աշխարհի չորս կողմերից կհավաքվեն:

28 Եվ նրանք կլսեն պատերազմներ և պատերազմների համբավներ:

29 Ահա, ես ասում եմ հանուն իմ ընտրյալների. քանզի ազգազգի դեմ կբարձրանա, և թագավորություն՝ թագավորության դեմ. կլինեն ^ասովեր, ժանտախտներ և երկրաշարժեր տարբեր տեղերում:

30 Եվ բացի այդ, անօրինության շատանալու պատճառով, մարդկանց սերը կսառչի. բայց նա, ով չի հաղթվի, նույնը կփրկվի:

31 Եվ բացի այդ, Արքայության այս Ավետարանը պիտի քարոզվի ողջ ^աաշխարհում, որպես վկայություն բոլոր ազգերի համար, և այն ժամանակ կգա վերջը, կամ ամբարիշտների կործանումը.

32 Եվ մեկ անգամ ևս, ավերածության պղծությունը, որը խոսվել է Դանիել մարգարեի կողմից, պիտի իրականանա:

33 Եվ շուտով այն օրերի նեղությունից հետո, ^աարևը կխավարեցվի և լուսինն իր լույսը չի տա, և աստղերը վայր կընկնեն երկրներից, և երկնքի գորությունները կշարժվեն:

34 Դժմարիտ ասում եմ ձեզ, այն սերունդը, որի ժամանակ այդ բաները ցույց կտրվեն, չի անցնի, մինչև որ բոլոր բաները, որոնք ձեզ ասացի, չկատարվեն:

35 Թեև կգան օրեր, որ երկինքն ու երկիրը կանցնեն. սակայն, իմ

^ախոսքերը չեն անցնի, այլ բոլորը կկատարվեն:

36 Եվ, ինչպես ասացի նախկինում, այն օրերի ^անեղությունից և երկինքների գորությունները շարժվելուց հետո, այն ժամանակ երկրքում կհայտնվի Մարդու Որդու նշանը, և այն ժամանակ երկրի բոլոր ազգերը կսգան. և նրանք կտեսնեն Մարդու Որդուն երկնքի ամպերի մեջ գորությունով ու մեծ փառքով ^բգալիս.

37 Եվ ով որ գանձում է իմ ^ախոսքը, չի մոլորվի, քանզի Մարդու Որդին պիտի գա և իր ^բիրեշտակներին պիտի ուղարկի իր առաջից, փողի մեծ հնչումով, և նրանք ^գկհավաքեն մնացած իր ընտրյալներին չորս հողմերից՝ երկնքի մի ծայրից մյուսը:

38 Արդ, սովորեք ^թթզենու առակից, – Երբ նրա ճյուղերը դեռ նուրբ են, և այն տերևներ է արձակում, դուք իմանում եք, որ ամառը մոտ է՝ առ ձեռն.

39 Այդպես էլ իմ ընտրյալները, երբ տեսնեն բոլոր այս բաները, նրանք կիմանան, որ նա մոտ է, այսինքն՝ դռան շեմին.

40 Սակայն այդ օրվա և ժամի մասին, ոչ ոք ^չչգիտի. ո՛չ, ոչ էլ Աստծո իրեշտակները երկնքում, այլ միայն իմ Հայրը:

41 Բայց ինչպես որ ^ՆՆոյի օրերում էր, այդպես էլ պիտի լինի Մարդու Որդու գալստյան ժամանակ.

42 Քանզի նրանց հետ կլինի այնպես, ինչպես ^ջջրիեղեղին նա-

29ա ՎևոՒ 43.24–25:
31ա Մատ. ԻԸ.19–20:
33ա Հովվել Բ.10,
ՎևոՒ 29.14:
35ա ՎևոՒ 1.38:
36ա ՋՍ–Մ 1.18:

բ սոՒ Հիսուս Քրիստոսի երկրորդ գալուստը:
37ա սոՒ Սուրբ գրքեր:
բ ՎևոՒ 29.11–15:
գ սոՒ Իսրայել – Իսրայելի ցրվելը:

38ա ՎևոՒ 35.16:
40ա ՎևոՒ 39.20–21, 49.7:
41ա ՄԾ. 2.5:
42ա սոՒ Նոյի ժամանակի ջրիեղեղը:

խորդող օրերին. որովհետև, մինչև այն օրը, երբ Նոյը մտավ տապանը, նրանք ուտում էին և խմում, կին էին առնում և մարդի գնում.

43 Եվ չիմացան, մինչև որ ջրհեղեղը չեկավ, և նրանց բոլորին տարավ. այդպես էլ կլինի Մարդու Որդու գալուստը:

44 Այն ժամանակ կկատարվի այն, ինչ գրված է, որ ^ավերջին օրերին երկուսը կլինեն դաշտում, մեկը կվերցվի, իսկ մյուսը ^բկթողնվի.

45 Երկուսը ջաղացում կաղան, մեկը կվերցվի, իսկ մյուսը կթողնվի.

46 Եվ ինչ էս ասում են մեկին, ասում են բոլոր մարդկանց. արդ, ^աարթուն կացեք, որովհետև չգիտեք, թե որ ժամին է ձեր Տերը գալու:

47 Բայց իմացեք սա, որ եթե բարի տանուտերը գիտենար, թե որ ժամին կգա գողը, նա արթուն կմնար, և թույլ չէր տա, որ իր տունը ծակեին, այլ պատրաստ կլիներ:

48 Դրա համար, դուք էլ պատրաստ եղեք, քանզի այն ժամին, որ չեք կարծում, Մարդու Որդին կգա:

49 Ուրեմն, ո՞վ է ^ահավատարիմ

և իմաստուն ծառան, որի տերը նրան կառավարիչ է դրել իր տնեցիների վրա, որ նրանց կերակուր տա իր ժամանակին:

50 Օրհնյալ է այն ծառան, որին իր տերը, երբ գա, կգտնի այդպես անելիս. և ճշմարիտ ասում են ձեզ, նա նրան կառավարիչ կդնի իր ողջ ունեցվածքի վրա:

51 Բայց եթե այդ չար ծառան ասի իր սրտում. տերս ^աուշացնում է իր գալը,

52 Եվ սկսի ծեծել իր ծառայակիցներին, և կեր ու խում անի հարբեցողների հետ,

53 Այդ ծառայի տերը կգա մի օր, երբ նա չի սպասում նրան, և մի ժամի, որից նա տեղյակ չէ,

54 Եվ նրան կտոր-կտոր կանի, և նրան կնշանակի իր բաժինը կեղծավորների հետ. այնտեղ կլինի լացը և ատամների ^ակրճտոցը:

55 Եվ այդպես է գալիս ամբարիշտների ^ավերջը, համաձայն Մովսեսի մարգարեության, որն ասում է. Նրանք կկտրվեն մարդկանց միջից. սակայն երկրի վերջը դեռ չի եկել, բայց շատ մոտ է:

44ա սուօ վերջին օրեր, Եսայն օրեր:
բ Չաք. ԺԳ.8:
46ա սուօ Արթուն լինել:

49ա սուօ Ապավինել:
51ա վ.և.Ռ 45.26:
54ա Մատ. Ը.12:
55ա 2 Նեփի 30.10,

վ.և.Ռ 1.9-10, 29.17:
սուօ Աշխարհ - Աշխարհի վերջը:

ՋՈՁԵՖ ՍՄԻԹ–ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՔԱՂՎԱՆՃՔՆԵՐ ՄԱՐԳԱՐԵ ՋՈՁԵՖ ՍՄԻԹԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

History of the Church, հատոր 1, Ա–Ե գլուխներ:

Ջոզեֆ Սմիթը պատմում է իր նախնիների, ընտանիքի անդամների և նրանց վաղ բնակավայրերի մասին – Կրոնի շուրջ անսովոր հուզումներ էին առաջացել արևմտյան Նյու Յորքում – Նա որոշում է իմաստություն փնտրել, ինչպես թելադրում է Հակոբոսը – Հայրը և Որդին հայտնվում են, և Ջոզեֆը կանչվում է իր մարգարեական ծառայությանը: (Հատվածներ 1–20):

Բ ԱՁՈՒՄ գեկուցումների պատճառով, որոնք տարածվում են չարական ու նենգ մարդկանց կողմից, Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի ¹Մեկեղեցու ²բարձրացման ու զարգացման վերաբերյալ, որոնք բոլորն իրենց հեղինակների կողմից նախատեսված են՝ պայքարելու, որպես Եկեղեցի նրա էության և նրա զարգացման դեմ աշխարհում, – ես ստիպված եմ գրել այս պատմությունը, որպեսզի մոլորությունից հանեմ հասարակական կարծիքը և բոլոր ճշմարտություն փնտրողներին տեղեկացնեմ փաստերին, ինչպես որ դրանք տեղի են ունեցել, ինչ վերաբերում է ինձ և Եկեղեցուն, որքան որ ես նման փաստեր ունեմ իմ ձեռքի տակ:

2 Այս պատմության մեջ, ես կներկայացնեմ այս Եկեղեցու հետ

կապված մի քանի իրադարձություններ, ճշմարտությամբ և արդարությամբ, ինչպես որ դրանք տեղի են ունեցել, կամ ինչպես դրանք ներկայումս գոյություն ունեն, այժմ [1838թ.] նշված Եկեղեցու ³կազմակերպումից անցած լինելով ութ տարի:

3 ⁴Մես ծնվել եմ Վերմոնտ նահանգի Վինձոր գավառի Շերոն շրջանում, մեր Տիրոջ ծննդյան հազար ութ հարյուր և հինգ թվականի դեկտեմբերի քսաներեքորդ օրը... Տասր տարեկան էի, կամ մոտ այդքան, երբ հայրս՝ ⁵Ջոզեֆ Սմիթ ավագը, թողնելով Վերմոնտ նահանգը, տեղափոխվեց Նյու Յորք նահանգի Օնտարիո (այժմ՝ Վեյն) գավառի Պալմիրա շրջան: Պալմիրա ժամանելուց մոտ չորս տարի անց, հայրս իր ընտանիքով տեղափոխվեց նույն Օնտարիո գավառի Մանչեստր շրջան, –

4 Նրա ընտանիքը բաղկացած լինելով տասնմեկ հոգուց, անվանապես՝ հայրս՝ ⁶Ջոզեֆ Սմիթը. ⁷մայրս՝ Լյուսի Սմիթը (որի ազգանունը, նախքան ամուսնանալը, Մակ էր՝ Սողոմոն Մակի դուստրը). եղբայրներս՝ ⁸Ալվինը (որը մահացավ 1823թ. նոյեմբերի 19-ին, քսանվեց տարեկան հասակում), ⁹Հայրունը, ես, ¹⁰Մեմյուել Հարրիսունը, Վիլյամը, Դոն Կառլոսը. և

1 1ա սուր Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցի:
բ սուր Ավետարանի վերականգնումը:

2ա Վե.ՈՒ 20.1:
3ա սուր Սմիթ Ջոզեֆ կրտսեր
բ 2 Նեփի 3.15:
4ա սուր Սմիթ Ջոզեֆ

կրտսեր:
բ սուր Սմիթ Լյուսի Մակ:
գ Վե.ՈՒ 137.5–6:
դ սուր Սմիթ Հայրուն:
ե սուր Սմիթ Մամուել Հ.

քույրերս՝ Սոֆրոնիան, Կատերինը և Լյուսին:

5 Մանչեստր տեղափոխվելու մեր երկրորդ տարին, մեր բնակավայրում կրոնի շուրջ անսովոր հուզումներ սկսվեցին: Այն սկսվեց Մեթոդականներից, բայց շուտով տարածվեց այդ երկրամասի բոլոր աղանդների մեջ: Հիրավի, այն կարծես կլանել էր երկրի ողջ այդ շրջանը, և մարդկանց մեծ բազմություններ միանում էին կրոնական տարբեր խմբակցությունների, որոնք մարդկանց մեջ առաջացնում էին նկատելի իրարանցումներ և բաժանումներ՝ ոմանք բացականչելով. «ՄԱհա, այստե՛ղ է»: Իսկ մյուսները՝ «Ահա, այնտե՛ղ է»: Ոմանք պայքարում էին մեթոդական հավատքի համար, ոմանք՝ երիցականների, ոմանք էլ մկրտականների համար:

6 Քանզի, չնայած մեծ սիրուն, որը տաժում էին տարբեր հավատքի նորադարձներն իրենց նորադարձության պահին, և չնայած մեծ եռանդին, որը ցուցաբերում էին համապատասխան հոգևորականները, որոնք ջանասեր էին կրոնական զգացումների այդ արտասովոր տեսարանը բարձրացնելիս ու քաջալերելիս, որպեսզի բոլորը դարձի գան, ինչպես նրանց դուր էր գալիս ասել. Թող նրանք միանան, որ աղանդին կկամենան: Այնուամենայնիվ, երբ նորադարձները սկսում էին ցուցակագրվել, ոմանք մի խմբակցությանը, մյուսները՝ մեկ ուրիշին, նկատվում էր, որ քահանաների և նորադարձների լավ թվացող զգացումներն ավելի շուտ ձևական էին, քան իրական. քանզի հետևեց մեծ

խառնաշփոթության ու վատ զգացումների մի տեսարան՝ քահանան վիճում էր քահանայի հետ, նորադարձը՝ նորադարձի հետ. այնպես որ, միմյանց հանդեպ բոլոր լավ զգացումները, եթե երբևէ եղել էին, ամբողջովին կորչում էին՝ «վիճաբանությունների և տարածայնությունների մեջ»:

7 Այդ ժամանակ ես տասնհինգ տարեկան էի: Հորս ընտանիքը դարձել էր դեպի Երիցականների հավատքը և նրանցից չորսը միացել էին այդ եկեղեցուն, այդ թվում՝ մայրս՝ Լյուսին. եղբայրներս՝ Հայրումը և Սեմյուել Հարրիսոնը. և քույրս՝ Սոֆրոնիան:

8 Այս մեծ հուզումների ժամանակ, միտքս համակված էր լուրջ մտախոհությամբ ու մեծ անհանգստությամբ. բայց չնայած իմ զգացումները խորն էին ու հաճախ շատ սուր, ես շարունակում էի ինձ հեռու պահել բոլոր այդ խմբակցություններից, չնայած հնարավորություն ունենալու դեպքում հաճախում էի նրանց առանձին ժողովներին: Ժամանակի ընթացքում համակրանքս ուղղվեց դեպի Մեթոդական աղանդը, և ես ինչ-որ չափով ցանկություն զգացի միանալ նրանց. սակայն այնքան մեծ էին տարբեր դավանանքների միջև եղած տարածայնություններն ու վիճաբանությունները, որ մարդկանց ու իրերին անծանոթ այնպիսի մի երիտասարդի համար, ինչպիսին ես էի, անհնար էր որոշակի եզրակացության գալ, թե ով է ճիշտ և ով է սխալ:

9 Ժամանակ առ ժամանակ միտքս խորապես հուզվում էր, քանի որ աղմուկն ու ժխորը շատ

մեծ էր ու անդադար: Երիցականները խիստ վճռական էին Սկրտականների և Մեթոդականների դեմ, և օգտագործում էին տրամաբանության և իմաստակության ողջ գործառնությունները՝ նրանց սխալներն ապացուցելու համար, կամ, առնչված, մարդկանց ստիպելու հավատալ, որ նրանք սխալվում են: Մյուս կողմից, Սկրտականներն ու Մեթոդականներն իրենց հերթին հավասարապես նախանձախնդիր էին իրենց սեփական դրույթները հաստատելու և մյուսներինը հերքելու ջանքերում:

10 Խոսքերի պատերազմի և տարածայնությունների այդ ադմուկի մեջ, ես հաճախ ինքս ինձ հարց էի տալիս. Ի՞նչ անել: Այս բոլոր խմբակցություններից ո՞րն է ^աճիշտ. կամ, միգուցե նրանք բոլորը սխալ են: Եթե դրանցից որևէ մեկը ճիշտ է, ապա ո՞րն է այն, և ի՞նչպես կարող եմ դա իմանալ:

11 Ճզնելով այդ ծայրագույն դժվար կացության մեջ, որի պատճառը կրոնամոլների այդ խմբավորումների վիճաբանություններն էին, մի օր ես ընթերցում էի Հակոբոսի Թուղթը, որի առաջին գլխի հինգերորդ հատվածում ասվում է. *Բայց եթե մեկը ձեզանից իմաստության պակասություն ունի, թող խնդրի Աստծուց, որ ամենին տալիս է առատությամբ և չի նախատում. և կտրվի նրան:*

12 Մուրբ գրքի ոչ մի հատված երբևէ այդպիսի ուժով չի ազդել մարդու սրտի վրա, ինչպես այդ ժամանակ եղավ ինձ հետ: Այն ասես մեծ ուժով ներթափանցեց սրտիս զգացմունքների խորքը: Ես

նորից ու նորից վերընթերցեցի այն, իմանալով, որ եթե կար մեկը, որն իմաստության կարիք ուներ Աստծուց, այդ էս էի. քանզի, թե ինչպես վարվել, ես չգիտեի և երբեք չէի իմանա, եթե չստանայի ավելի շատ իմաստություն, քան այդ ժամանակ ունեի. քանի որ կրոնական տարբեր աղանդների ուսուցիչները սուրբ գրքի միևնույն հատվածներն այնքան տարբեր էին ^ահասկանում, որ կոտորում էին ^բԱստվածաշնչին դիմելով հարցը լուծելու ողջ վստահությունը:

13 Ի վերջո, ես այն եզրակացության հանգեցի, որ կամ պետք է մնամ խավարի ու անորոշության մեջ, կամ պետք է հետևեմ Հակոբոսի թելադրանքին, այսինքն՝ խնդրեմ Աստծուն: Վերջիվերջո, ես որոշեցի «^ախնդրել Աստծուց», եզրակացնելով, որ եթե նա իմաստություն է տալիս նրանց, ովքեր իմաստության կարիք ունեն, և տալիս է առատությամբ ու չի նախատում, ապա ես կարող եմ խիզախել:

14 Այդպես, Աստծուն խնդրելու իմ այդ որոշման համաձայն, ես առանձնացա անտառում, որ փորձեմ: Հազար ութ հարյուր և քսան թվականի վաղ գարնան մի գեղեցիկ ու պարզ օրվա առավոտ էր: Առաջին անգամն էր իմ կյանքում, որ ես մնան փորձ էի անում, քանզի, իմ բոլոր անհանգստություններով հանդերձ, ես երբեք դեռ չէի փորձել բարձրաձայն ^աաղոթել:

15 Երբ առանձնացել էի այն վայրում, որտեղ նախապես որոշել էի զնալ, նայելով շուրջս և հավաստիանալով, որ մենակ եմ, ես ծնկի

10ա սուր Ծնարություն: 12ա Ա Կոր. Բ.10–16:	բ սուր Աստվածաշունչ: 13ա սուր Աղոթք:	14ա սուր Աղոթք:
--	---	-----------------

իջա և սկսեցի սրտիս ցանկությունները հայտնել Աստծուն: Հազիվ էի սկսել, երբ, անմիջապես, ինձ հափշտակեց մի ինչ-որ ուժ, որն ամբողջովին հաղթահարեց ինձ, և այնպիսի մի ասշելի ազդեցություն ունեցավ ինձ վրա, որ լեզուս կարծես կապվեց, այնպես որ ես չէի կարողանում խոսել: Թանձր մի խավար պատեց ինձ և մի պահ քվաց, թե մատնվել էի հանկարծահաս կործանման:

16 Սակայն, լարելով ողջ ուժերս՝ կանչելու առ Աստված, որ ազատեր ինձ այն թշնամու գորությունից, որը հափշտակել էր ինձ, և հենց այն պահին, երբ պատրաստ էի հուսահատության մեջ ընկղմվել և ինձ կործանման հանձնել, - ոչ թե երևակայական կործանման, այլ անտեսանելի աշխարհի իրական էակի գորության, որն այնպիսի զարմանալի ուժ ուներ, ինչպիսին նախկինում երբեք չէի զգացել ոչ մի էակի մեջ, - հենց այդ մեծ տազնապի պահին, իմ գլխավերևում ես տեսա Պարկի պայծառությունը գերազանցող լույսի մի Գյուն, որն աստիճանաբար իջնում էր ցած, մինչև որ ընկավ ինձ վրա:

17 Լույսի հայտնվելուն պես, ես ինձ ազատված գտա այդ թշնամու կապանքներից: Երբ լույսը հանգչեց ինձ վրա, ես տեսա Պարկու Անձնավորություն, ինձանից վեր՝ օդի մեջ կանգնած, որոնց պայծա-

ռությունն ու Գիառքն ամեն նկարագրությունից վեր էր: Նրանցից մեկը խոսեց ինձ հետ, դիմելով ինձ անունով, և ասաց՝ մատնացույց անելով մյուսին: Սա է Իմ ԳՄիրելի ԳՈրդին: Լսի՛ր Նրան:

18 Տիրոջը՝ դիմելու իմ նպատակն էր՝ իմանալ, թե բոլոր աղանդներից որն էր ճշմարիտը, որպեսզի իմանայի, թե որին միանամ: Ուստի, ինքնատիրապետումս վերականգնվելուն պես, այնպես որ կարող էի խոսել, ես հարցրեցի Անձնավորություններին, որոնք կանգնած էին ինձանից վեր՝ լույսի մեջ, թե եղած աղանդներից որն էր ճշմարիտ (քանզի այդ ժամանակ իմ մտքով երբեք չէր անցել, որ բոլորը սխալ են), և թե որին պետք է ես միանայի:

19 Ինձ պատասխանեցին, որ դրանցից ոչ մեկին չպետք է միանայի, քանի որ դրանք բոլորն էլ սխալ էին. և Անձնավորությունը, որը դիմեց ինձ, ասաց, որ նրանց բոլոր դրույթները գարշելի էին իր աչքում. որ բոլոր այդ դավանողներն ապականված էին, որ «նրանք դեպի ինձ են Պհակված իրենց շուրթերով, մինչդեռ նրանց Գրտերը հեռու են ինձանից, նրանք վարդապետություններ են ուսուցանում, որոնք մարդկանց Պպատվիրաններն են, և նրանք ունեն աստվածայնության Գկերպարանք, բայց ուրանում են նրա գորությունը»:

20 Նա կրկին արգելեց ինձ միա-

16ա Մովսես 1.20:
բ Հայտ. Ա.16:
գ Գոր. ԻԶ.13:
17ա սոՒ Տեսիլք:
բ Գոր. Է.55,
Կող. Գ.1:
սոՒ Աստված,
Աստվածագլուխ:
գ սոՒ Փառք:

դ Մատ. Գ.17, ԺԷ.5,
3 Նեփի 11.7:
ե սոՒ Հիսուս Քրիստոս:
18ա Վ.ՆՌԻ 6.11, 46.7:
19ա Մաղ. ԺԳ:
սոՒ Ուրացություն -
Վաղ Քրիստոնեական
Եկեղեցու
ուրացությունը:

բ Ես. ԻԹ.13-14,
Եզեկ. ԼԳ.30-31:
գ սոՒ Ուրացություն -
Ընդհանուր
ուրացություն:
դ Տիտոս Ա.14,
ՎՆՌԻ 45.29:
ե Բ Տիմ. Գ.5:

նալ դրանցից որևէ մեկին. և էլի շատ բաներ ասաց ինձ, որոնք այս պահին չեն կարող գրել: Կրկին ուշքի գալով՝ ես ինձ գտա մեջքի վրա պառկած, հայացքս երկնքին հառած: Երբ լույսը հեռացավ, ես ուժասպառ էի եղել. բայց շուտով ինչ-որ չափով վերականգնվելով՝ ես գնացի տուն: Եվ երբ հակվել էի բուխարուն, մայրս հարցրեց, թե ինչ է պատահել: Ես պատասխանեցի. «Ոչինչ, ամեն ինչ լավ է.— Ես լավ եմ»: Այնուհետև, ես ասացի մորս. «Ինձ հայտնի է դարձել, որ երիցականությունը ճշմարիտ չէ»: Կարծես թե ^ահակառակորդը տեղյակ էր, իմ կյանքի դեռ վաղ շրջանում, որ ինձ վիճակվել էր դառնալու իր թագավորության խանգարողն ու ցնցողը. այլապես, ինչո՞ւ պետք է խավարի ուժերը միավորվեին իմ դեմ: Ինչի՞^բ համար էր այդ ^բընդդիմությունն ու հետապնդումը, որը բարձրացավ իմ դեմ գրեթե մանկությունից:

Որոշ քարոզիչներ և կրոնի այլ դավանողներ մերժում են Առաջին Տեսիլքի պատմությունը – Հալածանք է դիզվում Ջոզեֆ Սմիթի վրա – Նա վկայում է տեսիլքի ճշմարտության վերաբերյալ: (Հատվածներ 21–26):

21 Իմ ունեցած այս ^ատեսիլքից մի քանի օր անց, ես պատահաբար հանդիպեցի մեթոդականների քարոզիչներից մեկին, որը վերը նշված կրոնական հուզումների եռանդուն մասնակիցներից էր. և, խոսելով նրա հետ կրոնի թեմայով, ես օգտվեցի առիթից և նրան պատմեցի իմ ունեցած տեսիլքի

մասին: Նրա վարքն ինձ շատ զարմացրեց. նա ոչ միայն անլուրջ վերաբերվեց իմ ունեցած հաղորդակցությանը, այլ մեծ արհամարհանքով, ասելով, որ այդ բոլորը դեկից է, որ մեր օրերում չկան այնպիսի բաներ, ինչպիսիք են ^ատեսիլքներն ու ^բհայտնությունները. որ բոլոր նման բաները դադարել են առաքյալների հետ, և որ երբեք այլևս չեն կրկնվելու:

22 Ինչևէ, շուտով ես հայտնաբերեցի, որ պատմությունս իմ հանդեպ մեծ նախապաշարմունք էր առաջացրել կրոնի դավանողների մեջ, և ծանր ^ահետապնդումների պատճառ էր դարձել, որը շարունակ աճում էր. և չնայած ես ^բչճանաչված մի պատանի էի, տասնչորս-տասնհինգ տարեկան, և կյանքիս պայմաններն այնպիսին էին, որ ինձ կարևոր չէին դարձնում հասարակության մեջ, այնուամենայնիվ, ես արժանացել էի հեղինակավոր մարդկանց ուշադրությանը, այնքան, որ նրանք հասարակական միտքը լարում էին ընդդեմ ինձ և ծանր հետապնդման մղում. և դա բնորոշ էր բոլոր աղանդներին,— բոլորը միավորվել էին՝ ինձ հետապնդելու:

23 Գ-ա ինձ լուրջ մտորելու առիթ էր տալիս այն ժամանակ, և շարունակվում է մինչև հիմա, թե որքան տարօրինակ էր, որ չճանաչված մի պատանու մասին, տասնչորս տարեկանը հազիվ բոլորած, և նաև մեկը, որը մատնված էր իր ամենօրյա աշխատանքով խղճուկ ապրուստ հայթայթելու անհրաժեշտության, մտածում էին, որպես մի

20ա սոՒ Գ-և:
 p 2 Նեփի 2.11,
 ՎևՈՒ 58.2–4:
 սոՒ Չախորդություն:

21ա սոՒ Առաջին Տեսիլք:
 p սոՒ Տեսիլք:
 q սոՒ Հայտնություն:
 22ա Հակ. Ե.10–11:

սոՒ Հալածել,
 Հալածանք:
 p Ա Թագ. ԺՉ.7,
 Ալմա 37.35:

կարևոր անձնավորության, որն այդ ժամանակի ամենահանրաճանաչ աղանդների մեծամեծերի ուշադրությանն էր արժանացել, այնպես որ նրանց մեջ առաջացրել էր դաժան հետապնդման ու անարգանքի ոգի: Բայց տարօրինակ էր, թե ոչ, դա այդպես էր, և հաճախ այն մեծ վշտի պատճառ էր դառնում ինձ համար:

24 Ինչևէ, իմ ունեցած տեսիլքը, այնուամենայնիվ, իրականություն էր: Խորհրդածելով այդ մասին՝ ես ինձ շատ նման էի զգում Մոդոսին, երբ նա Ագրիպպա քազավորի առաջ ղպաշտպանում էր իրեն, և պատմեց իր ունեցած տեսիլքի մասին, երբ նա տեսել էր լույսը և լսել ձայնը. բայց դեռևս քչերն էին, որ հավատացին նրան. ոմանք ասում էին, թե նա անազնիվ է, մյուսներն էլ ասում էին, թե նա խենթ է. և նրան ծաղրում էին ու անարգում: Մակայն այդ ամենը չխաթարեցին նրա տեսիլքի իրական լինելը: Նա տեսիլք էր տեսել, նա գիտե՞ր, որ տեսել է, և երկնքի տակ ոչ մի հալածանք չէր կարող դա փոխել. և անգամ, եթե նրան հալածեին մինչև մահ, միևնույն է, նա կհմանար, մինչև իր վերջին շունչը, որ տեսել էր լույս և լսել էր իր հետ խոսող մի ձայն, և ողջ աշխարհը չէր կարող նրան ստիպել, որ այլ կերպ հավատա:

25 Այսպես էր և ինձ հետ: Ես իսկապես տեսել էի լույսը և այդ լույսի մեջ ես տեսել էի երկու ՄԱճճԱՎՈՐՈՒՅԱՆ, և նրանք իրականում խոսել էին ինձ հետ. և չնայած ինձ ատում և հալածում էին այն բանի համար, որ ասում էի, թե տեսիլք

եմ տեսել, այնուամենայնիվ, դա ճշմարիտ էր. և մինչ նրանք հետապնդում էին ինձ, այդպես ասելու համար անարգելով ինձ, և ընդդեմ ինձ ամեն տեսակի չար բան սուտ տեղն ասելով, ես դրդվում էի ասելու իմ սրտում. Ինչո՞ւ եք ինձ հալածում ճշմարտությունն ասելու համար: Ես իսկապես տեսիլք եմ տեսել. և ո՞վ եմ ես, որ դեմ կանգնեմ Աստծուն, կամ ինչո՞ւ է աշխարհը մտադրված՝ ստիպելու ինձ ուրանալ այն, ինչ իրականում տեսել եմ: Քանզի, ես տեսել էի տեսիլք. ես գիտեի դա և գիտեի, որ Աստված գիտի դա, և չէի կարող ղուրանալ, ոչ էլ կհամարձակվեի դա անել. համենայն դեպս, ես գիտեի, որ այդպես անելով, կմեղանչեի Աստծո առաջ և կընկնեի դատապարտության տակ:

26 Արդ, իմ միտքն այժմ բավարարված էր՝ ինչ վերաբերում էր աղանդավորական աշխարհին, որ իմ գործը չէր՝ միանալ դրանցից որևէ մեկին, այլ շարունակել, ինչպես որ կայի, մինչև որ լրացուցիչ հրահանգներ ստանայի: Ես գտա, որ Հակոբոսի Մկկայությունը ճշմարիտ էր, որ իմաստության պակաս ունեցող մարդը կարող է խնդրել Աստծուն և ստանալ՝ առանց նախատվելու:

Մորոնին հայտնվում է Չոզեֆ Սմիթին – Չոզեֆի անունը կիմացվի բոլոր ազգերի մեջ՝ թե՛ որպես բարի, թե՛ որպես չար – Մորոնին նրան ասում է Մորոնի Գրքի մասին և Տիրոջ գալիք դատաստանների մասին, և վկայակոչում է շատ սուրբ գրություններ – Հայտնի է դարձվում

24ա սուր Պոդոս:
բ Գոր. ԻԶ.1-32:
25ա ՋՄ-Պ 1.17:

բ սուր Քաջություն,
Քաջարի.
Շիտակություն:

26ա Հակ. Ա.5-7:

ուկե քիթեղների պահված տեղը — Մորոնին շարունակում է ուսուցանել Մարգարեին: (Հատվածներ 27–54):

27 Ես շարունակեցի հետևել իմ կյանքի առօրյա գործերին, մինչև հազար ութ հարյուր քսաներեք թվականի սեպտեմբերի քսանները, այդ ընթացքում ծանր հալածանքների ենթարկվելով մարդկանց բռնոր խավերի կողմից՝ թե՛ կրոնական, թե՛ ոչ կրոնական, քանի որ շարունակում էի պնդել, որ տեսիլք էի տեսել:

28 Տեսիլք ունենալու և հազար ութ հարյուր քսաներեք թվականի միջև ընկած ժամանակահատվածում, — ինձ արգելված լինելով, որ միանամ այդ օրերի որևէ կրոնական աղանդի, և ես լինելով շատ դյուրագգաց տարիքում, և հետապնդվելով նրանց կողմից, ովքեր պետք է որ իմ ընկերները լինեին և բարյացակամ վերաբերվեին ինձ, և եթե կարծում էին, թե մոլորված եմ, փորձեին պատշաճ ձևով և սիրով վերափոխել ինձ, — ես ենթարկվում էի տարբեր տեսակի «գայթակորությունների. և, շփվելով հասարակության տարբեր խավերի հետ, ես հաճախ կատարում էի շատ անմիտ սխալներ, և ցուցաբերում պատանեկությանը և մարդկային էությանը բնորոշ թուլություններ. որոնք, ցավալի է ասել, ինձ տանում էին տարբեր գայթակորությունների, որոնք վիրավորական էին Աստծո աչքում: Այս խոստովանությունն անելով, ոչ որ կարիք չունի ինձ մեղավոր կարծելու մեծ ու չարամիտ մեղքերում: Այդպի-

սիք գործելու հակվածություն իմ էության մեջ երբեք չի եղել: Այլ իմ մեղավորությունը եղել է թեթևամտության մեջ, և երբեմն էլ զվարթ ընկերության հետ կապված, և այլև, որոնք անհամապատասխան էին այն բնավորությանը, որը պետք է պահպանվեր մեկի կողմից, որը ՞կանչվել էր Աստծո կողմից, ինչպես ես: Այնուամենայնիվ, դա շատ տարօրինակ չի թվա մեկին, ով մտաբերում է իմ պատանեկությունը և ծանոթ է իմ բնածին ուրախ բնավորությանը:

29 Այդ ամենի արդյունքում ես հաճախ ինձ դատապարտված էի զգում իմ թուլությունների ու անկատարելության համար. երբ, վերը նշված սեպտեմբերի քսանմեկի երեկոյան, անկողին մտնելուց հետո, որ քնեմ, ես «աղոթքով ու աղաչանքով դիմեցի Ամենագոր Աստծուն» բոլոր մեղքերիս ու անմտություններիս թողության համար, և նաև հայտնության համար, որ իմանամ իմ վիճակն ու դիրքը նրա առաջ. որովհետև ես լիովին համոզված էի, որ աստվածային հայտնություն կստանամ, ինչպես որ նախկինում էի ստացել:

30 Մինչ այդպես առ Աստված էի կանչում, ես նկատեցի իմ սենյակը թափանցող մի լույս, որը շարունակում էր պայծառանալ, մինչև որ սենյակը դարձավ կեսօրից էլ լուսավոր, երբ անմիջապես մի «անձնավորություն հայտնվեց մահճակալիս կողքին, օդի մեջ կանգնած, քանզի նրա ոտքերը չէին դիպչում հատակին:

31 Նա շլացուցիչ «ճերմակության

<p>28ա սուր Գայթակղել, Գայթակորություն: Բ սուր Կանչ, Աստծո կողմից կանչված,</p>	<p>Կոչում: 29ա սուր Աղոթք: 30ա սուր Հրեշտակներ. Մորոնի՝ Մորոնոնի</p>	<p>որդի: 31ա Գ-որ. Ժ.30, 1 Նեփի 8.5, 3 Նեփի 11.8:</p>
--	--	---

մի լայն պարեգոտ ուներ իր հագին: Դա մի ճերմակություն էր՝ երկրային ամեն բանից վեր, որ ես երբևիցե տեսել էի. ոչ էլ հավատում եմ, որ որևէ երկրային բան կարելի էր դարձնել այդքան արտասովոր ճերմակ ու փայլուն: Նրա ձեռքերը մերկ էին, և նրա արմուկները նույնպես՝ դաստակից քիչ վեր. նմանապես մերկ էին նրա ոտնաթաթերը. ինչպես նաև ոտքերը՝ կոճերից քիչ վեր: Նրա գլուխը և պարանոցը նույնպես մերկ էին: Ես նկատեցի, որ բացի այդ պարեգոտից, նա ուրիշ այլ հագուստ չուներ իր վրա, քանի որ այն բաց էր, այնպես որ նրա կրծքավանդակը երևում էր:

32 Ոչ միայն նրա պարեգոտն էր չափազանց ճերմակ, այլ ողջ նրա անձն աննկարագրելի ^ափառահեղ էր, և նրա դեմքը՝ ճիշտ ինչպես ^բկայծակ: Մենյակը չափազանց լուսավոր էր, բայց ոչ այնքան պայծառ, որքան անմիջապես նրա անձի շուրջը: Երբ առաջին անգամ նայեցի նրան, ես ^գվախեցա. բայց շուտով վախս անցավ:

33 Նա դիմեց ինձ ^աանունով և ասաց, որ ինքը սուրհանդակ է, Աստծո ներկայությունից ինձ մոտ ուղարկված, և որ նրա անունը Մորոնի է. որ Աստված աշխատանք ունի ինձ համար՝ կատարելու. և որ իմ անունը՝ որպես բարի և չար, կհմացվի բոլոր ազգերի, ցեղերի և լեզուների մեջ, կամ, որ բոլոր

ժողովուրդների մեջ նրա մասին կխոսվի և՛ բարի, և՛ չար:

34 Նա ասաց, որ ^աուսկե թիթեղների վրա գրված մի ^բգիրք կա պահված, որը տալիս է այս մայրցամաքի նախկին բնակիչների պատմությունը և նրանց ծագման սկզբնաղբյուրը: Նա ասաց նաև, որ այն պարունակում է հավիտենական Ավետարանի ^գլրիվությունը, ինչպես որ այն Փրկչի կողմից հանձնվել է հնագույն բնակիչներին.

35 Ինչպես նաև, որ թիթեղների հետ երկու քարեր կան պահված արծաթե աղեղների մեջ, և այդ քարերը, ^ալանջապանակին ամրացված, կազմում են այսպես կոչված ^բՈւրիմն ու Թումիմը. և հին կամ վաղեմի ժամանակներում այդ քարերն ունեցողներն ու օգտագործողներն էին կոչվում «^գտեսանողներ».

և որ Աստված դրանք պատրաստել է գիրքը քարզմանելու նպատակով:

36 Այս բաներն ինձ ասելուց հետո, նա սկսեց մարգարեություններ մեջ բերել ^աՀին Կտակարանից: Առաջինը նա մեջ բերեց ^բՄաղաքիայի երրորդ գլխի մի մասը. և ապա նա մեջ բերեց նույն մարգարեության չորրորդ, կամ վերջին գլուխը, բայց մի փոքր փոփոխված այն ձևից, որ կարդացվում է մեր Աստվածաշնչում: Ի տարբերություն մեր գրքերում գրվածի, առաջին հատվածը նա մեջ բերեց այսպես.

37 *Քանզի ահա, գալիս է ^աօրը, որը*

32ա3 Նեփի 19.25:
սուր Փառք:
բ Ել. ԼԳ.29-35,
Հել. 5.36, ՎևոՒ 110.3:
գ Ել. Գ.6,
Եթեր 3.6-8, 19:
33աԵլ. ԼԳ.12, 17,

Ես. ԽԵ.3-4:
34ա սուր Ոսկե թիթեղներ:
բ սուր Մորմոնի Գիրքը:
գ սուր Ավետարանի
վերականգնումը:
35ա Ղև. Ը.8:
սուր Լանջապանակ:

բ Ել. ԻԸ.30:
սուր Ուրիմ ու Թումիմ:
գ սուր Տեսանող:
36ա սուր Հին Կտակարան:
բ սուր Մաղաքիա:
37ա սուր Հիսուս Քրիստոսի
երկրորդ գալուստը:

Քայրի թոնրի պես. և բոլոր հայարտները, այո՛, և բոլորը, որ գործում են ամբարշտորեն, Գարդի պես կայրվեն. քանզի նրանք, ովքեր գայիս են, պիտի այրեն նրանց, ասում է Ջորայց Տերը, այնպես որ այն չի թողնի նրանց ո՛չ արմատ, ո՛չ ճյուղ:

38 Եվ բացի այդ, նա մեջ բերեց հինգերորդ հատվածն այսպես. *Ահա, ես ձեզ կհայտնեմ Պահանայությունը, Եղիա մարգարեի ձեռքով, նախքան Տիրոջ մեծ ու ակեղ օրվա գալը:*

39 Նա այլ կերպ մեջ բերեց նաև հաջորդ հատվածը. *Եվ նա գավակների սրտերում կտրմանի հայրերին տված խոստումները, և գավակների սրտերը կդառնան դեպի իրենց հայրերը: Եթե այդպես չլինի, ողջ երկիրն ամբողջովին կամայանա նրա գալատյան ժամանակ:*

40 Ի լրումն այս բաների, նա մեջբերեց Եսայիայի տասնմեկերորդ գլուխը՝ ասելով, որ այն շուտով կիրականանա: Նա մեջբերեց նաև Գործք Առաքելոցի երրորդ գլուխը, քսաներկուերորդ և քսաներեքերորդ հատվածները, ճիշտ ինչպես դրանք գրված են մեր Նոր Կտակարանում: Նա ասաց, որ այդ մարգարեն Բրիստոսն է. բայց, որ օրը դեռ չի եկել, երբ ամեն անձ, ով չի լսում նրա ձայնին, պիտի քկտրվի ժողովրդի միջից, բայց շուտով կգա:

41 Նա մեջբերեց նաև Քովելի երկրորդ գլուխը՝ քսանութերորդ

հատվածից մինչև վերջ: Նա ասաց նաև, որ այն դեռ չի կատարվել, բայց շուտով կկատարվի: Բացի այդ, նա ասաց, որ Պեթանոսների լրությունը շուտով կգա: Նա ուրիշ շատ հատվածներ մեջբերեց սուրբ գրքերից և շատ բացատրություններ տվեց, որոնք հնարավոր չէ նշել այստեղ:

42 Բացի այդ, նա ասաց ինձ, որ երբ ստանամ այն թիթեղները, որոնց մասին նա խոսել էր, քանզի դրանց ստանալու ժամանակը դեռ չէր լրացել, ես դրանք չպետք է ցույց տամ որևէ մեկին. ոչ էլ լանջապանակը՝ Ուրիմի ու Թումիմի հետ. միայն նրանց, ում ինձ կպատվիրվեր ցույց տալ դրանք. հակառակ դեպքում, ես կկործանվեմ: Մինչ նա ինձ հետ խոսում էր թիթեղների մասին, մի տեսիլք բացվեց իմ մտքում, որպեսզի ես կարողանայի տեսնել վայրը, որտեղ թիթեղները պահված էին, և դա այնքան հստակ ու որոշակի էր, որ վայրն այցելելուն պես, ես դարձյալ ճանաչեցի այն:

43 Այս հաղորդակցությունից հետո ես տեսա, թե ինչպես սենյակի լույսն անմիջապես սկսեց հավաքվել այդ անձնավորության շուրջը՝ նրա, ով խոսում էր ինձ հետ, և դա շարունակվեց այնքան, մինչև սենյակը կրկին մթնեց, բացառությամբ միայն նրա շուրջը. երբ հանկարծ ես տեսա, կարծես մի անցուղի բացվեց ուղիղ վեր՝

37բ 3 Նեփի 25.1-6, ՎևՈՒ 64.23-24: սու Երկիր - Երկրի մաքրագործումը. Աշխարհ - Աշխարհի վերջը:
գ Նսում Ա.8-10, 1 Նեփի 22.15, 23, 2 Նեփի 26.4-6,

ՎևՈՒ 29.9:
38ա սու Քահանայության բանալիները. Քահանայություն: ք ՎևՈՒ 279, 110.13-16: սու Եղիա:
39ա Գաղ. Գ.8, 19: ք սու Տոնմաքանություն. Փրկություն

մահացածների համար:
40ա Բ Օր. ԺԼ.15-19: ք 3 Նեփի 20.23, 21.20: 41ա Գոր. Բ.16-21: ք Հովով. ԺԱ.11-25, ՎևՈՒ 88.84: սու Հեթանոսներ: 42ա սու Միտք:

դեպի երկինք, և նա համբարձվեց, մինչև ամբողջովին անհետացավ, և սենյակը մնաց՝ ինչպես որ եղել էր նախքան այս երկնային լույսի հայտնվելը:

44 Ես պառկած խորհրդածում էի այս տեսարանի եզակիության մասին, մեծապես զարմանալով այդ արտասովոր սուրհանդակի կողմից ինձ ասված բաների վրա. երբ, ^ամտորումների մեջ, հանկարծ զգացի, որ սենյակս նորից սկսում է լուսավորվել, և կարծես թե մի ակնթարթից նույն երկնային սուրհանդակը կրկին մահճակալիս կողքին էր:

45 Նա սկսեց և նորից պատմեց ճիշտ նույն բաները, որոնք ասել էր իր առաջին այցելության ժամանակ, առանց չնչին իսկ փոփոխության. որից հետո նա տեղեկացրեց ինձ մեծ դատաստանների մասին, որոնք գալիս էին երկրի վրա մեծ ամայացումներով՝ սովով, սրով և ժանտախտով. և որ այս դառնադետ դատաստանները գալու էին երկրի վրա այս սերնդի ժամանակ: Այս բաները պատմելուց հետո նա կրկին համբարձվեց, ինչպես նախորդ անգամ:

46 Այդ ընթացքում մտքիս վրա թողած տպավորություններն այնքան խորն էին, որ քունը փախել էր աչքերիցս, և ես պառկել էի՝ ցնցված ու ապշած այն ամենից, ինչ տեսել էի ու լսել: Բայց ինչպիսին էր իմ զարմանքը, երբ կրկին տեսա նույն սուրհանդակին, մահճակալիս կողքին, և մեկ անգամ ևս լսեցի, թե ինչպես նա վերապատմեց, կամ կրկնեց ինձ նույն բաները, ինչ նախկինում. և ավել-

լացրեց ինձ մի նախազգուշացում, ասելով, որ ^աՍատանան կփորձի ^բգայթակղել ինձ (հորս ընտանիքի թշվառ պայմանների հետևանքով) վերցնել թիթեղները հարըստանալու նպատակով: Նա ինձ արգելեց այդ անել, ասելով, որ թիթեղները վերցնելու դեպքում ես չպետք է ունենամ ոչ մի ուրիշ դիտավորություն, բացի Աստծուն փառաբանելուց, և չպետք է ազդվեմ որևէ այլ ^գդրդապատճառից, բացի նրա թագավորությունը կառուցելուց. հակառակ դեպքում, ես չէի կարող վերցնել դրանք:

47 Այս երրորդ այցելությունից հետո նա կրկին համբարձվեց երկինք, ինչպես առաջ, ինձ նորից թողնելով՝ խորհելու հենց նոր ունեցած փորձառության արտասովորության վրա. երբ, երկնային սուրհանդակի երրորդ անգամ իմ մոտից համբարձվելուց շատ չանցած, աքաղաղը կանչեց, և ես տեսա, որ լուսաբացը մոտենում է, այնպես որ մեր գրույցները պետք է որ զբաղեցրած լինեին ողջ այդ գիշերը:

48 Քիչ անց, ես վեր կացա մահճակալից և, սովորականի պես, անցա օրվա անհրաժեշտ գործերին. բայց փորձելով աշխատել, ինչպես ուրիշ անգամներ, ես զգացի, որ այնքան ուժասպառ եմ, որ լիովին անկարող եմ դարձել: Հայրս, որն աշխատում էր ինձ հետ, նկատեց որ ինձ հետ ինչ-որ բան է պատահել և պատվիրեց ինձ տուն գնալ: Ես ճամփա ընկա՝ տուն գնալու մտադրությամբ. բայց փորձելով անցնել դաշտեզրի ցանկապատի վրայով, որտեղ մենք

էինք, ուժերս ամբողջովին լքեցին ինձ, և ես անօգնական գետնին փռվեցի և որոշ ժամանակ բոլորովին ոչինչ չէի գիտակցում:

49 Առաջին բանը, որ կարող եմ մտաբերել, դա մի ձայն էր, որ խոսում էր ինձ հետ՝ տալով անուն: Ես վեր նայեցի և տեսա նույն սուրհանդակին՝ իմ գլխավերևում կանգնած, լույսով շրջապատված, ինչպես առաջ: Այս նա կրկին պատմեց ինձ այն ամենը, ինչ պատմել էր նախորդ գիշեր, և կարգադրեց ինձ գնալ՝ «հորս մոտ և պատմել նրան տեսիլքի ու պատվիրանների մասին, որոնք ես ստացել էի:

50 Ես հնազանդվեցի. վերադարձա դաշտ՝ հորս մոտ և պատմեցի նրան ողջ պատահածը: Նա պատասխանեց ինձ, որ դա Աստծուց է եղել, և պատվիրեց ինձ գնալ և անել, ինչպես կարգադրել էր սուրհանդակը: Ես թողեցի դաշտը և գնացի այն վայրը, որտեղ, սուրհանդակի ասելով, պահ էին տրված թիթեղները. և տեսիլքի հստակության շնորհիվ, որ ունեցել էի դրա վերաբերյալ, տեղ հասնելուն պես, ես անմիջապես ճանաչեցի վայրը:

51 Նյու Յորքի Օնտարիո գավառի Մանչեստր գյուղից ոչ հեռու բավականին մեծ մի՝ «բլուր կա՝ ամենաբարձադիրն այդ շրջակայքում: Բլրի արևմտյան կողմում, գագաթից ոչ հեռու, մի բավական մեծ քարի տակ էին դրված թիթեղները՝ քարե արկղում պահված: Այդ քարը հաստ էր և վերևի մասի մեջտեղում՝ կլոր, իսկ եզրերը՝

ավելի բարակ, այնպես որ գետնից բարձր երևում էր նրա մեջտեղի մասը, իսկ եզրերը բոլոր կողմերից ծածկված էին հողով:

52 Հեռացնելով հողը՝ ես վերցրեցի մի լծակ, որը հարմարեցրի քարի եզրի տակ և, մի փոքր ճիգ գործադրելով, բարձրացրեցի այն: Ես ներս նայեցի և այնտեղ, իսկապես, տեսա՝ «թիթեղները, ^բՈւրիմն ու ^ԹՌումիմը և ^Գլանջապանակը, ինչպես հաղորդել էր սուրհանդակը: Արկղը, որի մեջ դրանք դրված էին, շինված էր միմյանց ինչ-որ շաղախով ամրացված քարերից: Արկղի հատակին երկու քարեր էին դրված, արկղին խաչաձև, և այդ քարերի վրա դրված էին թիթեղները և դրանց հետ՝ մյուս բաները:

53 Ես փորձեցի հանել դրանք, բայց սուրհանդակն արգելեց և կրկին տեղեկացրեց, որ դրանք ի հայտ բերելու ժամանակը դեռ չի եկել, և կգա այդ ժամանակից չորս տարի անց. բայց նա ասաց ինձ, որ ես պետք է գամ այդ վայրը՝ այդ ժամանակից ուղիղ մեկ տարի անց, և որ նա կհանդիպի ինձ այնտեղ, և որ ես պետք է շարունակեմ նույնն անել, մինչև որ գա թիթեղները ստանալու ժամանակը:

54 Այսպիսով, ինչպես որ ինձ պատվիրվել էր, ես ամեն տարին լրանալիս գնում էի և ամեն անգամ այնտեղ գտնում էի նույն սուրհանդակին, և մեր յուրաքանչյուր գրույցի ժամանակ ես ցուցումներ ու գիտելիք էի ստանում նրանից այն մասին, թե ինչ էր պատրաստվում անել Տերը, և թե ինչպես ու

49ա սոՒ Սմիթ Ջոզեֆ կրտսեր:
51ա սոՒ Կումորա բլուր:

52ա Մորմ. 6.6:
սոՒ Ոսկե թիթեղներ:
բ սոՒ Ուրիմ ու Թումիմ:

գ սոՒ Լանջապանակ:

ինչ ձևով էր նրա "Քազավորությունը կառավարվելու վերջին օրերին:

Չոզեֆ Սմիթն ամուսնանում է Էմմա Հեյլի հետ – Նա Մորոնիից ստանում է ոսկե քիթեղները և քարզմանում է գրերի մի մասը – Մարտին Հարրիսը գրերը և քարզմանությունը ցույց է տալիս պրոֆեսոր Անտոնին, որն ասում է. «Ես չեմ կարող կարդալ կնքված գիրքը»: (Հատվածներ 55-65):

55 Քանի որ հորս նյութական պայմանները շատ սուղ էին, մենք ստիպված էինք մեր ձեռքի աշխատանքով ապահովել մեր կարիքները՝ համաձայնվելով ցանկացած օրավարձու կամ այլ աշխատանքի, երբ հնարավորություն էր ընձեռվում: Երբեմն աշխատում էինք տանը, երբեմն՝ տնից հեռու, և անդադար աշխատանքով հնարավոր էր դառնում բավարար ապրուստի միջոցներ ձեռք բերել:

56 1823 թվականին հորս ընտանիքը մեծ չարչարանքներ կրեց իմ ավագ եղբոր՝ Ալվինի մահվան հետևանքով: 1825-ի հոկտեմբերին ես աշխատանքի վարձվեցի Ղուսիա Սթոուլ անունով մի տարեց պարոնի մոտ, որն ապրում էր Նյու Յորք նահանգի Չինանգո գավառում: Նա լսել էր ինչ-որ արծաթի հանքի մասին, որը բացվել էր իսպանացիների կողմից՝ Հարմոնիում, Պենսիլվանիա նահանգի Սաքրեմենտո գավառում. և նախքան իմ աշխատանքի վարձվելը, հորատումներ էր կատարել, որպեսզի, եթե հնարավոր է, հայտնաբերի այդ հանքը: Հետո, երբ ես բնակվելու գնացի նրա մոտ, նա

վերցրեց ինձ, իր մյուս աշխատողների հետ, արծաթի հանքը փորելու, որի վրա ես շարունակեցի աշխատել մոտ մեկ ամիս, հաջողություն չունենալով մեր ձեռնարկման մեջ, և, ի վերջո, ես կարողացա համոզել տարեց պարոնին, որ դադարեցնի փորելը: Այստեղից էլ տարածվել է այն պատմությունը, թե ես գանձ որոնող եմ եղել:

57 Այդ ընթացքում, վարձված լինելով այս աշխատանքին, այդ վայրում, ես պետք է ուտելիք և օթևան ստանայի պարոն Իսահակ Հեյլի տանը. այդտեղ էր, որ առաջին անգամ տեսա իմ կնոջը (նրա դստերը)՝ Էմմա Հեյլին: 1827թ. հունվարի 18-ին մենք ամուսնացանք, երբ ես դեռ աշխատանքի էի վարձված պ-ն Սթոուլի մոտ:

58 Քանի որ ես շարունակում էի հայտարարել, որ տեսիլք էի տեսել, "հալածանքը դեռ հետևում էր ինձ, և կնոջս հոր ընտանիքը կտրականապես ղեմ էր մեր ամուսնությանը: Ուստի, ես ստիպված էի տանել նրան մեկ ուրիշ վայր. այնպես որ մենք գնացինք և ամուսնացանք դատավոր Թարբիլի տանը՝ Սաուր Բեյնբրիջում, Նյու Յորքի Չինանգո գավառում: Ամմիջապես իմ ամուսնությունից հետո, ես լքեցի պ-ն Սթոուլին ու գնացի հորս մոտ, և այդ ամառ աշխատեցի նրա հետ ազարակում:

59 Վերջապես եկավ քիթեղները, Ուրիմն ու Թումիմը, և լանջապանակը ստանալու ժամանակը: Հազար ութ հարյուր քսանյոթ թվականի սեպտեմբերի քսաներկուսին, սովորականի պես, այդ

54ա սու՛ Աստժոն արքայություն կամ Երկնքի

արքայություն: 56ա Վ.և.ՌԻ 1375-8: 57ա սու՛ Սմիթ Էմմա Հեյլ:

58ա սու՛ Հալածել, Հալածանք:

տարվա վերջին ևս գնալով այն վայրը, որտեղ դրանք պահված էին, նույն երկնային սուրհանդակը հանձնեց ինձ դրանք՝ հետևյալ հանձնարարությամբ. որ ես պետք է պատասխանատու լինեմ դրանց համար. որ, եթե անգգուշության կամ անվտուրության պատճառով ձեռքիցս բաց թողնեմ դրանք, ես կկտրվեմ Տիրոջից. իսկ եթե բոլոր ջանքերս գործադրեմ՝ դրանք ^բպահպանելու համար, մինչև նա՝ սուրհանդակը, գա դրանց ետևից, դրանք կպահպանվեն:

60 Շուտով ես հասկացա պատճառը, թե ինչու դրանք ապահով պահելու համար այդպիսի խիստ հանձնարարականներ ստացա և թե ինչու սուրհանդակն ասաց, որ երբ ես արած լինեմ այն, ինչ պահանջվում էր ինձանից, ինքը կգա դրանց ետևից: Քանզի դեռ նոր էր իմացվել, որ դրանք ինձ մոտ են, երբ ամենաեռանդուն ջանքերը գործադրվեցին՝ դրանք ինձանից վերցնելու համար: Ամեն մի հնարք, որ հնարավոր էր հորինել, օգտագործվեց՝ այդ նպատակի համար: Հալածանքը դարձավ ավելի անողոք ու դաժան, քան առաջ, և ամբողջ աշխարհ սպասում էր, որ հնարավորության դեպքում խլի դրանք ինձանից: Բայց Աստծո իմաստությանը, դրանք իմ ձեռքում ապահով մնացին, մինչև որ ես դրանցով կատարեցի այն, ինչ պահանջվում էր իմ ձեռքից: Երբ, համաձայն պայմանավորվածության, սուրհանդակը եկավ դրանց ետևից, ես դրանք հանձնեցի նրան. և դրանք նրա հսկողության տակ են մինչ

այսօր՝ հազար ութ հարյուր երեսուներթ թվականի մայիսի երկրորդ օրը:

61 Հուզումները, այնուամենայնիվ, դեռ շարունակվում էին, և բանբասանքն իր հազարավոր լեզուներով անդադար զբաղված էր հորս ընտանիքի և իմ մասին սուտ լուրեր տարածելով: Հատորներ կլցվեին, եթե պատմեի դրանց հազարերորդ մասն անգամ: Հալածանքն, այնուամենայնիվ, այնքան դաժանացավ, որ ես ստիպված էի հեռանալ Մանչեստրից և գնալ Պենսիլվանիա նահանգի Սասքուեհանա գավառ: Պատրաստվելով մեկնել, — մենք չափազանց աղքատ էինք, և մեր հանդեպ հալածանքն այնքան ծանր էր, որ երբևէ նման վիճակից դուրս գալու հավանականություն չկար, — մեր չարչարանքների մեջ մի ընկեր գտանք, Մարտին Հարրիս անունով մի պարոն, որը եկավ մեզ մոտ և ինձ տվեց հիսուն դոլար՝ մեզ օգնելու համար, որ մեկնենք: Պարոն Հարրիսը Նյու Յորք նահանգի Վեյն գավառի Պալմիրա շրջանի բնակիչ և մի բարեհամբավ ազարակատեր էր:

62 Ժամանակին հասած այս օգնությամբ, ես կարողացա հասնել Պենսիլվանիայի իմ որոշած վայրը. և անմիջապես, տեղ հասնելուն պես, ես սկսեցի քիթեղներից արտագրել գրերը: Ես արտագրեցի դրանց զգալի մասը, և Մուրիմի ու Թումիմի միջոցով թարգմանեցի դրանցից մի քանիսը, որը ես արեցի դեկտեմբերին՝ կնոջս հայրական տուն ժամանելուց մինչև

<p>59ա.ՁՄ—Պ 1.42: բ սուր Սուրբ գրքեր – Սուրբ գրքերը պետք է</p>	<p>պահպանվեն: 61ա Վե.ՈՒԲ 5.1: սուր Հարրիս Մարտին:</p>	<p>62ա սուր Ուրիմ ու Թումիմ:</p>
--	---	----------------------------------

եկող փետրվարն ընկած ժամանակամիջոցում:

63 Փետրվար ամսվա մի օր, վերը հիշատակված պ-ն Մարտին Հարրիսը եկավ մեր տուն, վերցրեց այն գրերը, որոնք ես արտատպել էի քիթեղներից, և մեկնեց Նյու Յորք: Թե ինչ պատահեց նրա հետ և այդ գրերի հետ, ես մեջբերում եմ անում իրադարձությունների նրա նկարագրությունը, ինչպես որ նա պատմեց ինձ վերադառնալուն պես, որը հետևյալն էր.

64 «Ես գնացի Նյու Յորք, և գրերը, որոնք թարգմանվել էին, և դրանց թարգմանությունները ներկայացրեցի պրոֆեսոր Չարլզ Անտոնին, որը գրական նվաճումներով ճանաչված մի պարոն էր: Պրոֆեսոր Անտոնը հայտարարեց, որ թարգմանությունը ճիշտ է, առավել ճշգրիտ, քան մինչև այդ տեսած եգիպտերենից կատարված այլ թարգմանություն: Այնուհետև, ես նրան ցույց տվեցի գրերը, որոնք դեռ չէին թարգմանվել, և նա ասաց, որ դրանք եգիպտական, քաղղեական, ասորական և արաբական գրեր էին. և նա ասաց, որ դրանք ճիշտ գրեր էին: Նա տվեց ինձ մի վկայական, որը հավաստիացնում էր Պալմիրայի մարդկանց, որ դրանք ճիշտ գրեր էին, և որ դրանց թարգմանությունը, ինչպես որ թարգմանվել էին, նույնպես ճիշտ էր կատարված: Ես վերցրեցի վկայականը և դրեցի գրպանս, և պատրաստվում էի հեռանալ, երբ պ-ն Անտոնը ետ կանչեց ինձ և հարցրեց, թե ինչպես է երիտասարդն իմացել, որ ոսկե քիթեղներ կային այնտեղ, որտեղից

դրանք գտել է: Ես պատասխանեցի, որ Աստծո հրեշտակն է նրան հայտնել դա:

65 Հետո նա ասաց ինձ. «Թույլ տվեք նայել վկայականը»: Ապա ես հանեցի այն գրպանիցս և տվեցի նրան, երբ նա վերցրեց այն և պատռեց, ասելով, որ ներկայումս նման բան չի լինում, ինչպիսին [»]հրեշտակների սպասավորությունն է, և որ, եթե ես բերեմ քիթեղները նրա մոտ, նա կթարգմանի դրանք: Ես տեղեկացրեցի նրան, որ քիթեղների մի մասը [»]կնքված է, և որ ինձ արգելված է բերել դրանք: Նա պատասխանեց. «Ես չեմ կարող կարդալ կնքված գիրքը»: Ես հեռացա այնտեղից և գնացի դոկտոր Միտչելի մոտ, որը հաստատեց պրոֆեսոր Անտոնի ասածը՝ թե՛ գրերի և թե՛ թարգմանության վերաբերյալ»:

. . . .

Օլիվեր Քաուդերին ծառայում է որպես դպիր Մորմոնի Գիրքը թարգմանելիս – Չոզեֆը և Օլիվերը ստանում են Մհարոնյան Քահանայությունը Հովհաննես Մկրտչից – Նրանք մկրտվում են, կարգվում և ստանում են մարգարեության ոգին: (Հատվածներ 66-75):

66 1829 թվականի ապրիլի 5-րդ օրը մեր տուն եկավ [»]Օլիվեր Քաուդերին, որին ես մինչ այդ երբեք չէի տեսել: Նա հայտնեց, որ հորս բնակավայրի մոտ գտնվող դպրոցում դասավանդելիս, – և հայրս իր երեխաներին դպրոց ուղարկողներից մեկն էր, – նա որոշ ժամանակ ուտելիք և օքևան էր ստացել նրա տանը, և այնտեղ եղած ժամանակ ընտանիքը նրան

պատմել էր, թե ինչպիսի հանգամանքներում եմ ստացել թիթեղները, և այդ պատճառով նա եկել է ինձանից հարցուփորձ անելու:

67 Պ-ն Քառուղերիի ժամանումից երկու օր անց (ապրիլի 7-ին), ես սկսեցի թարգմանել Մորմոնի Գիրքը, և նա սկսեց գրել ինձ համար:

• • • •

68 Մենք դեռ շարունակում էինք թարգմանության գործը, երբ, հաջորդ ամսին (1829-ի մայիսին), մի օր մենք գնացինք անտառ, որպեսզի աղոթենք և Տիրոջը հարցնենք մեղքերի ^աթողության համար ^բմկրտվելու վերաբերյալ, որի մասին նշվում էր թիթեղների թարգմանության մեջ: Մինչ մենք զբաղված էինք աղոթելով ու կանչելով առ Տերը, երկնքից մի ^գսուրհանդակ իջավ լուսե ^դամպի մեջ, և իր ^եձեռքերը դնելով մեր վրա, նա ^զկարգեց մեզ՝ ասելով:

69 *Իմ ընկերակի՛ց ծառաներ, Մեսիայի անունով ես շնորհում եմ ձեզ Ահարոնի՝ Քահանայությունը, որը կրում է հրեշտակների սպասվորության, սպաշխարության ավետարանի և մեղքերի թողության համար ընկղմամբ մկրտության*

բանալիները. և այն այլևս երբեք չի վերցվի երկրի վրայից, մինչև որ ^բՂևկի որդիները կրկին արդարությամբ ընձա մատուցեն Տիրոջը:

70 Նա սասց, որ այս Ահարոնյան Քահանայությունը չունի Սուրբ Հոգու ^ապարզևի համար ձեռնադրելու գորությունը, բայց որ այն կշնորհվի մեզ հետագայում. և նա պատվիրեց մեզ՝ գնալ ու մկրտվել, և մեզ ցուցում տվեց, որ ես պետք է մկրտեմ Օլիվեր Քառուղերիին, և որ դրանից հետո նա պիտի մկրտի ինձ:

71 Ուստի, մենք գնացինք և մկրտվեցինք: Սկզբում ես մկրտեցի նրան, իսկ հետո, նա մկրտեց ինձ, որից հետո, ես ձեռնադրեցի նրան և կարգեցի նրան Ահարոնյան Քահանայության, իսկ հետո, նա ձեռնադրեց ինձ և կարգեց ինձ նույն Քահանայության, քանզի այդպես էր մեզ պատվիրվել:*

72 Սուրհանդակը, որն այցելել էր մեզ այդ ժամանակ և շնորհել մեզ այդ Քահանայությունը, սասց, որ իր անունը Հովհաննես է, այն նույնը, որին Նոր Կտակարանում կոչում են ^աՀովհաննես Մկրտիչ, և որ նա գործում էր ^բՊետրոսի, ^գՀակոբոսի և ^դՀովհաննեսի ղեկա-

*Օլիվեր Քառուղերին այսպես է նկարագրում այդ իրադարձությունները. «Դրանք անմոռանալի՝ օրեր էին. մտել երկնքից ոգեշնչված ձայնի թելադրման ներքո, որը կրծքումդ խորը երախտագիտություն է արթնացնում: Օրը-օրին ես շարունակում էի անդադար գրել նրա բերանից, մինչ նա Ուրիմով ու Թումիմով, կամ ինչպես Նեփիացիները կասեին՝ «մեկնիչներով» թարգմանում էր «Մորմոնի Գիրքը» կոչվող պատմությունը կամ հիշատակարանը:

68աստ՝ Մեղքերի թողություն:
բ ստ՝ Մկրտություն, Մկրտել:
գ ստ՝ Հովհաննես Մկրտիչ:
դ ԹՎ. ԺԱ.25, Եթեր 2.4-5, 14, ՎևոՒ 34.7:
ե ՀՀ 5:

ստ՝ Ձեռնադրություն:
գ ստ՝ Իշխանություն.
Կարգել, Կարգում:
69աստ՝ Ահարոնյան քահանայություն:
բ Բ Օր. Ժ.8, ՎևոՒ 13, 124.39:
ստ՝ Ղևի - Ղևիի ցեղը:
70աստ՝ Սուրբ Հոգու պարզև:

72աստ՝ Հովհաննես Մկրտիչ:
բ ՎևոՒ 27.12-13:
ստ՝ Պետրոս:
գ ստ՝ Հակոբոս՝ Ձեբեղեոսի որդի:
դ ստ՝ Հովհաննես՝ Ձեբեղեոսի որդի:

վարության ներքո, որոնք կրում էին ⁶Մելքիսեդեկյան Քահանայության ⁹բանալիները, Քահանայություն, ասաց նա, որը ժամանակին կշնորհվի մեզ, և որ ես պիտի կոչվեմ Եկեղեցու առջին ⁵Երեցը, իսկ նա (Օլիվեր Քաուդերին) երկրորդը: 1829-ի մայիսի տասնհինգերորդ օրն էր, երբ մենք կարգվեցինք այս սուրհանդակի ձեռքերի ներքո և մկրտվեցինք:

73 Անմիջապես, մեր մկրտվելուց հետո ջրից դուրս գալուն պես, մենք մեծ և փառավոր օրհնություններ զգացինք մեր Երկնային Հորից: Օլիվեր Քաուդերին մկրտելուց ոչ շատ անց, ⁷Սուրբ Հոգին իջավ նրա վրա, և նա կանգնեց ու շատ բաների մասին ⁸մարգարեացավ, որոնք շուտով պիտի իրականանային: Եվ բացի այդ, նրա կողմից մկրտվելուց հետո, ես նույնպես զգացի մարգարեության ոգին, երբ, կանգնելով մարգարեացա այս Եկեղեցու բարձրանալու մասին և ուրիշ շատ բաներ՝ կապված Եկեղեցու և մարդկանց զավակների այս սերնդի հետ: Մենք լցված էինք Սուրբ Հոգով և ցմծում էինք մեր փրկության Աստծով:

74 Այժմ մեր մտքերը լուսավորված լինելով, մեր ⁹հասկացո-

ղությանը սկսեցին բացվել սուրբ գրությունները, և դրանց առավել խորհրդավոր հատվածների ¹⁰ճշմարիտ իմաստն ու նշանակությունը մեզ հայտնի դարձվեց այնպիսի ձևով, որը երբեք հասու չէր եղել մեզ, ոչ էլ երբևէ նախկինում անցել էր մեր մտքով: Միևնույն ժամանակ, մենք ստիպված էինք գաղտնի պահել Քահանայությունը ստանալու պայմանները, և մեր մկրտվելը, հետապնդման ոգու պատճառով, որն արդեն դրսևորվել էր այդ վայրերում:

75 Ժամանակ առ ժամանակ մեզ սպառնում էին ամբոխի հաշվեհարդարով, և դա նույնպես կրոնի դավանողների կողմից էր: Եվ մեր վրա բռնանալու նրանց ցանկությունները կանխարգելվում էին միայն կնոջս հոր ընտանիքի ազդեցության շնորհիվ (Աստվածային նախախնամությամբ), որոնք շատ մտերմացել էին ինձ հետ և դեմ էին կանգնում ամբոխներից ու կամենում էին, որ ինձ թույլ տրվեր՝ առանց ընդհատման շարունակելու թարգմանության աշխատանքը. և, հետևաբար, առաջարկում և խոստանում էին իրենց ուժերի ներածին չափով պաշտպանել մեզ բոլոր անօրինական ոտնձգություններից:

Անգամ մի քանի խոսքով այն հետաքրքիր հաշվետվության մասին նշելը, որը ներկայացնում են Մորմոնը և նրա հավատարիմ որդի Մորմոնին մի ժողովրդի մասին, որը ժամանակին սիրվել ու հովանավորվել է երկնքից, կգերազանցեր ներկայիս իմ մտադրությունը. հետևաբար, ես կհետաձգեմ այն մինչև մոտ ապագան և ուղղակի կանցնեմ, ինչպես ասացի առաջաբանում, անմիջապես այս Եկեղեցու բարձրանալու հետ կապված որոշ դեպքերին, որոնք կարող է հետաքրքրեն այն հազարավոր մարդկանց, որոնք քայլ են կատարել մոլեռանդների դատապարտության ու կեղծավորների զրպարտության միջից և ընդունել են Քրիստոսի Ավետարանը:

72ե սուր Մելքիսեդեկյան քահանայություն:
9 սուր Քահանայության բանալիները:

է սուր Երեց:
73ասուր Սուրբ Հոգի:
բ սուր Մարգարեություն, Մարգարեանալ:

74ասուր Հասկանալ:
բ Հովհ. ԺՁ.13:

Ոչ մեկը, իր ողջամիտ բանականությամբ, չէր կարող թարգմանել և նման ճշգրտությամբ գրել Փրկչի շուրթերով Նեփիացիներին տրված այն ցուցումները, թե ինչպես մարդիկ պիտի կառուցեն Նրա Եկեղեցին, հատկապես այն ժամանակ, երբ ապակառույցումն անորոշություն էր տարածել մարդկանց մեջ գործող բոլոր կարգերի ու համակարգերի վրա, եթե չփափագեր այդ առանձնաշնորհը՝ ցույց տալ սրտի հոժարությամբ, թաղվելով հեղուկ գերեզմանի մեջ՝ ի պատասխան «մաքուր խղճմտանքի՝ Հիսուս Քրիստոսի հարության միջոցով»:

Այս աշխարհամասուն չակոթի սերունդների մնացորդին մատուցած Փրկչի ծառայության մասին հաշվետվությունը գրելուց հետո, հեշտ էր նկատել, ինչպես մարգարեն էր կանխատեսել, որ խավարը ծածկել է երկիրը և թանձր խավարը՝ մարդկանց մտքերը: Ըարունակելով մտորումները, հեշտ էր տեսնել նաև, որ կրոնի հարցում եղած մեծ կոիվների ու աղմուկի մեջ չկար մեկը, որ Աստծուց իշխանություն ունենար՝ սպասավորելու Ավետարանի արարողությունները: Քանզի կարելի է հարց տալ. արդյո՞ք Քրիստոսի անունով սպասավորելու իշխանություն ունեն այն մարդիկ, ովքեր ժխտում են հայտնությունները, այն ժամանակ, երբ Նրա վկայությունը ոչ այլ ինչ է, քան մարգարեության ոգին, և աշխարհի բոլոր դարաշրջաններում, երբ էլ որ Նա ժողովուրդ է ունեցել երկրի վրա, Նրա կրոնը հիմնվել, կառուցվել և հաստատվել է անմիջական հայտնություններով: Եթե այդ փաստերը թաղվել և զգուրությամբ թաքցվում էին այն մարդկանց կողմից, որոնց արհեստը վտանգի տակ կլիներ, եթե թույլ տրվեր որ այն շողա մարդկանց երեսին, մեզ համար դրանք այլևս թաքցված չէին. և մենք միայն սպասում էինք, որ պատվիրանը տրվեր. «Կէ՛ր կացեք ու մկրտվեք»:

Երկար չսպասեցինք, մինչև այդ փափագն իրականություն դարձավ: Տերը, որը հարուստ է ողորմությամբ և միշտ պատրաստ է խոնարհի հետևողական աղոթքին պատասխանելու, ջերմեռանդ աղոթքով նրան դիմելուն պես, մարդկանց բնակավայրերից հեռու, բարեհաճեց մեզ ցույց տալ Իր կամքը: Հանկարծակի, կարծես հավերժության միջոց, Քավչի ձայնը խաղաղություն խոսեց մեզ, երբ վարպույրը բացվեց և Տիրոջ հրեշտակը փառք հագած իջավ ցած և փոխանցեց անհամբեր սպասված պատգամը և ապաշխարության Ավետարանի բանալիները: Ինչպիսի՞ ուրախություն: Ինչպիսի՞ հրաշք: Ինչպիսի՞ զմայլանք: Այն ժամանակ, երբ աշխարհը պրկված էր ու խառնված, երբ միլիոնավոր մարդիկ կոյրի պես խարխափում էին, պատը փնտրելով, և երբ բոլոր մարդիկ, որպես ընդհանուր զանգված, անորոշության մեջ էին, մեր աչքերը տեսան, մեր ականջները լսեցին, ինչպես «ցերեկվա լույսով». այո՞, ավելի՛ն, – առավել, քան մայիսյան արևի ճառագայթների պայծառությամբ, որն այնուհետև իր շողերը պցում է բնության դեմքին: Ապա նրա ձայնը, թեև մեղմ էր, բայց թափանցեց մինչև սրտի խորքը, իսկ նրա խոսքերը՝ «Ես ձեռք ընկերակից ծառան եմ», փարատեցին ամեն մի վախ: Մենք լսո՞ւմ էինք. մենք հայո՞ւմ էինք. մենք հիանո՞ւմ էինք: Դա հրեշտակի ձայնն էր փառքի միջոց, դա Բարձրալի պատգամն էր: Եվ լսելով՝ մենք ցնծում էինք, մինչ նրա սերը վառվում էր մեր հոգում, և մենք պարուրված էինք Ամենագործի տեսիլքով: Ո՞րտեղ էր կասկածի տեղը: Չկա՛ր. անորոշությունն անհետացել էր, կասկածը սուզվել էր, որ այլևս չբարձրանա, մինչ պատրանքն ու խաբեությունն անհետացել էին հավիտյան:

Սակայն, թանկագին եղբայր, մտածի՛ր, շարունակիր մտածել մի պահ, ինչպիսի՞ ուրախություն էր լցվել մեր սրտերը, և ինչպիսի՞ անակնկալով մենք պիտի խոնարվեինք (քանզի, ո՞վ ծուկն էր խոնարհի այդպիսի օրհնության համար), երբ մենք ստացանք նրա ձեռքի ներքո Սուրբ Քահանայությունը, երբ մա սասց. «Իմ ընկերակից ծառաներ, Մեսիայի անունով, ես շնորհում եմ ձեզ այս Քահանայությունը և այս իշխանությունը, որը կմնա երկրի վրա, որպեսզի Ղևիի որդիները դեռ կարողանան արդարությամբ ընձա մատուցել Տիրոջը»:

Ես չեմ փորձի նկարագրել ձեզ սրտիս այն զգացումները, ոչ էլ այն վեհասքանչ գեղեցկությունն ու փառքը, որ շրջապատել էր մեզ այդ ժամանակ. բայց դուք կհավատաք ինձ, եթե ասեմ, որ ո՛չ երկիրը, ո՛չ էլ մարդիկ ժամանակի պերճախոսությամբ չեն կարող լեզվի նույնքան հեռաքրքրի ու վսեմ ձև ընտրել, որքան այդ սուրբ ամձնավորությունը: Ո՛չ. ոչ էլ այս երկիրը գորություն ունի տալու այն ուրախությունը, շնորհելու

այն խաղաղությունը, կամ ըմբռնելու այն իմաստությունը, որ պարունակվում էր ամեն մի նախադասության մեջ, երբ դրանք տրվում էին Սուրբ Հոգու գորությանը: Մարդ կարող է խաբել իր մերձավորին, հնարավոր է խաբեությունը հետևի խաբեությանը, և այն ամբարիշտ մեկի զավակները կարող են գորություն ունենալ՝ մոլորեցնելու ամմիտ և անուսում մարդկանց, քանի դեռ ոչ այլ ինչ, քան պատրանքն է սնում շատերին և կեղծիքի պտուղն իր հոսանքով գերեզման է տանում փոփոխամիտներին. բայց նրա սիրո մատի մեկ հպումը, այո՛, փառքի մեկ ցուլը վերին աշխարհից, կամ մեկ խոսքը Փրկչի բերանից, հավերժության ծոցից, ցնցում է այդ ամենը, դարձնելով աննշան, և հավերժ ջնջում է մտքից: Վստահությունը, որ մենք հրեշտակի ներկայության մեջ էինք, համոզվածությունը, որ մենք լսեցինք Հիսուսի ձայնը, և այն անարատ ճշմարտությունը, որը հորդում էր մաքուր անճնավորությունից, Աստծո կամքով թելադրված, ինձ համար աննկարագրելի է, և ես միշտ զմայլանքով և երախտագիտությամբ կնայեմ Փրկչի բարության այս դրսևորմանը, քանի դեռ ինձ թույլ կտրվի ապրել. և այն ապարանքներում, որտեղ բնակվում է կատարելությունը, և մեղքը երբեք չի մտնում, ես հույս ունեմ, որ կերկրպագեմ Նրան այն երբեք չվերջացող օրը»: «Messenger and Advocate» (Սուրհանդակ և Բարեխոս), հատոր 1 (1834թ. հոկտեմբեր), էջ 14–16:

ՀԱՎԱՏՈ ՀԱՆԳԱՆԱԿԸ

History of the Church, հատոր 4, էջ 535–541

ՄԵՆՔ ^ահավատում ենք ^բԱստ-
ծուն՝ Հավերժական Հորը, և
Նրա ^գՈրդուն՝ Հիսուս Քրիստոսին,
և ^դՍուրբ Հոգուն:

2 Մենք հավատում ենք, որ մար-
դիկ կպատժվեն իրենց ^աիսկ գոր-
ծած մեղքերի, այլ ոչ թե Ադամի
^բօրինազանցության համար:

3 Մենք հավատում ենք, որ Քրիս-
տոսի ^աՔավության շնորհիվ ողջ
մարդկությունը կարող է ^բփրկվել՝
^գհնազանդվելով Ավետարանի
^դօրենքներին և ^եարարողություն-
ներին:

4 Մենք հավատում ենք, որ Ավե-
տարանի առաջնային սկզբունք-
ներն ու ^աարարողություններն են.
առաջին՝ ^բՀավատք առ Տեր Հիսուս
Քրիստոս. երկրորդ՝ ^գԱպաշխարու-
թյուն. երրորդ՝ ընկղմանը ^դՍկրտու-
թյուն մեղքերի ^եթողության համար.

չորրորդ՝ ^զՁեռնադրում Սուրբ
Հոգու ^էպարզևի համար:

5 Մենք հավատում ենք, որ
Ավետարանը ^աքարոզելու և նրա
^բարարողությունները սպասավո-
րելու համար, մարդ պետք է
^գկանչված լինի Աստծո կողմից՝
^դմարգարեությանը և ^եիշխանու-
թյուն ունեցողների ^զձեռնադրմամբ:

6 Մենք հավատում ենք նույն
^ակազմակերպությանը, որը գոյու-
թյուն ուներ Նախնական Եկեղե-
ցուն՝ իր ^բառաքյալներով, ^գմար-
գարեներով, ^դհովիվներով, ուսու-
ցիչներով, ^եավետարանիչներով և
այլն:

7 Մենք հավատում ենք ^ալեզուներ-
ի, ^բմարգարեության, ^գհայտնու-
թյան, ^դտեսիլքների, ^եբժշկության,
լեզուների ^զթարգմանության և այլ
^էպարզևների:

1ա սո՛ւ Հավատ, Հավատալ:
բ սո՛ւ Աստված,
Աստվածագլուխ –
Աստված Հայրը:
գ սո՛ւ Աստված,
Աստվածագլուխ –
Աստված Որդին.
Հիսուս Քրիստոս:
դ սո՛ւ Աստված,
Աստվածագլուխ –
Աստված Սուրբ
Հոգին. Սուրբ Հոգի:
2ա Բ Օր. ԻԳ. 16,
Եգեկ. ԺԸ. 19–20:
սո՛ւ Հաշիվ, Պատաս-
խանատու, Պատաս-
խանատվություն.
Կանքի ազատություն:
բ սո՛ւ Ադամի և Եվայի
անկումը:
3ա սո՛ւ Քավել, Քավություն:
բ Մոսիա 27.24–26,

Մովսես 5.9:
սո՛ւ Փրկություն:
գ սո՛ւ Հնազանդություն,
Հնազանդ, Հնազանդվել:
դ սո՛ւ Օրենք:
ե սո՛ւ Ավետարան:
4ա սո՛ւ Արարողություններ:
բ սո՛ւ Հավատք:
գ սո՛ւ Ապաշխարել,
Ապաշխարություն:
դ սո՛ւ Մեղքերի թողություն:
ե սո՛ւ Սկրտություն,
Սկրտել:
զ սո՛ւ Ձեռնադրություն:
է սո՛ւ Սուրբ Հոգու պարզև:
5ա սո՛ւ Քարոզել:
բ Ալմա 13.8–16:
գ սո՛ւ Կանչ, Աստծո
կողմից կանչված,
Կոչում:
դ սո՛ւ Մարգարեություն,
Մարգարեանալ:

ե սո՛ւ Իշխանություն.
Քահանայություն:
գ սո՛ւ Ձեռնադրություն:
6ա սո՛ւ Եկեղեցու
ճշմարտության
նշանները – Եկեղեցու
կազմակերպությունը:
բ սո՛ւ Առաքյալ:
գ սո՛ւ Մարգարե:
դ սո՛ւ Եպիսկոպոս:
ե սո՛ւ Ավետարանիչ.
Հայրապետ,
Հայրապետական:
7ա սո՛ւ Լեզուների պարզև:
բ սո՛ւ Մարգարեություն,
Մարգարեանալ:
գ սո՛ւ Հայտնություն:
դ սո՛ւ Տեսիլք:
ե սո՛ւ Բժշկել, Բժշկումներ:
զ Ա Կոր. ԺԲ. 10,
Մորմ. 9.7–8:
է սո՛ւ Հոգու պարզևները:

8 Մենք հավատում ենք, որ ^աԱստվածաշունչն Աստծո ^բխոսքն է, որքան որ այն ^գճիշտ է թարգմանված. մենք հավատում ենք նաև, որ Մորմոնի ^դԳիրքն Աստծո խոսքն է:

9 Մենք հավատում ենք այն ամենին, ինչ Աստված ^ահայտնել է, այն ամենին, ինչ Նա այժմ հայտնում է, և հավատում ենք, որ Նա դեռ շատ մեծ ու կարևոր բաներ է ^բհայտնելու Աստծո Արքայության վերաբերյալ:

10 Մենք բառացիորեն հավատում ենք Իսրայելի Տան ^ահավաքմանը և նրա ^բՏասը Ցեղերի վերականգնմանը. որ ^գՄիոնը (Նոր Երուսաղեմը) կկառուցվի Ամերիկյան աշխարհամասում. որ Քրիստոսն անձամբ ^դկթագավորի երկրի վրա. և որ երկիրը ^եկնորանա և կընդունի իր ^զդրախտային ^էփառքը:

11 Մենք պահանջում ենք մեր իսկ ^ախղճի ^բթելադրանքով Ամենագոր Աստծուն երկրպագելու ^գարտոնությունը, և նույն արտո-

նությունը վերապահում ենք բոլոր մարդկանց. թող նրանք ^աերկրպագեն ինչպե՛ս, որտե՛ղ կամ ինչ որ կամենում են:

12 Մենք հավատում ենք բազավորներին, նախագահներին, կառավարիչներին և մյուս իշխանավորներին հպատակվելուն, ^աօրենքին հնազանդվելուն, այն հարգելուն և պաշտպանելուն:

13 Մենք հավատում ենք ^աազնիվ, ճշմարիտ, ^բմաքրաբարո, բարյացակամ, առաքինի լինելուն և բոլոր մարդկանց բարիք ^գանելուն: Իրավ, կարող ենք ասել, որ մենք հետևում ենք Պողոս Առաքյալի ^դհորդորանքին. Ամեն բանի հավատում ենք, ամեն բանի համար ^եհույս ունենք, համբերել ենք շատ բաների և հույս ունենք, որ կկարողանանք ^զհամբերել բոլոր բաներին: Եթե մի բան ^էառաքինի է, գեղեցիկ, բարեհամբավ, զովեստի արժանի, – մենք ձգտում ենք այդ ամենին:

ՉՈՁԵՖ ՍՄԻԹ

8ա սոս Աստվածաշունչ:
բ սոս Աստծո խոսքը:
գ 1 Նեփի 13.20–40, 14.20–26:
դ սոս Մորմոնի Գիրքը:
9ա սոս Հայտնություն:
բ Ամովա Գ.7, Վև.121.26–33:
սոս Սուրբ գրքեր – Սուրբ գրքերի ի հայտ գալու մարգարեություններ:
10ա Ես. ԽԹ.20–22, Կ.4, 1 Նեփի 19.16–17:
սոս Իսրայել – Իսրայելի ցրվելը:
բ սոս Իսրայել –

Իսրայելի տասը կորած ցեղերը:
գ Եթեր 13.2–11, Վև.ՈՒ 45.66–67, 84.2–5, Մովսես 7.18:
սոս Նոր Երուսաղեմ. Միոն:
դ սոս Հազարամյակ:
ե սոս Երկիր – Երկրի մաքրագործումը:
զ նշ. Եղեմի պարտեզի մնամ պայմաններ. Ես. ԺԱ.6–9, ԼԵ.1–10, ԾԱ.1, ԿԵ.17–25, Եզ ԼԶ.35:
սոս Դրախտ:
է սոս Փառք:

11ա Վև.ՈՒ 134.1–11:
բ սոս Կամքի ազատություն:
գ սոս Խղճմտանք:
դ սոս Երկրպագել:
12ա Վև.ՈՒ 58.21–23:
սոս Օրենք:
13ա սոս Ազնիվ, Ազնվություն. Շիտակություն:
բ սոս Մաքրաբարոյություն:
գ սոս Ծառայություն:
դ Փիլ. Դ.8:
ե սոս Հույս:
զ սոս Համբերել:
է սոս Համեստություն. Առաքինություն:

ՄՈՒՐԲԵ ԳՐՔԵՐԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՆԱԽԱԲԱՆ

ԹԵՄԱՆԵՐԻ ԱՅԲԲԵՆԱԿԱՆ ՑԱՆԿ

ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ՁՈՁԵՖ ՍՄԻԹԻ
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱՆԻ

ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՔԱՐՏԵԶՆԵՐ ԵՎ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ

ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ՔԱՐՏԵԶՆԵՐ ԵՎ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ

ՆԱԽԱԲԱՆ

Սուրբ գրքերի Ուղեցույցը պարզաբանում է տալիս ընտրված վարդապետությունների, սկզբունքների, մարդկանց և տեղանունների մասին, որոնք հանդիպում են «Աստվածաշունչ», «Մորմոնի Գիրքը», «Վարդապետություն և Ուխտեր» և «Թանկագին Մարգարիտ» գրքերում: Այն տալիս է նաև սուրբ գրքերի առանցքային հղումներ՝ յուրաքանչյուր բեման ուսումնասիրելու համար: Ուղեցույցը կարող է օգնել ձեզ անհատապես և ընտանիքով սուրբ գրքերն ուսումնասիրելիս: Այն կարող է օգնել, որպեսզի պատասխան գտնեք ավետարանի վերաբերյալ հարցերին, ուսումնասիրեք սուրբ գրքերի թեմաները, պատրաստեք ելույթներ ու դասեր և ավելացնեք ձեր գիտելիքն ու վկայությունն ավետարանի վերաբերյալ:

Ուղեցույցն ունի երեք բաժին. (1) թեմաների այբբենական ցանկ, (2) Աստվածաշնչի Ջոզեֆ Սմիթի Թարգմանության ընտրանի (ՋՍԹ), (3) Եկեղեցու պատմության ժամանակագրություն, քարտեզներ և լուսանկարներ. և Աստվածաշնչյան քարտեզներ և լուսանկարներ:

1. *Թեմաների այբբենական ցանկ:* Այս բաժինը տալիս է յուրաքանչյուր բեմայի կարճ սահմանումը և թվարկում է սուրբ գրքերի ամենանշանակալից հղումներն այդ բեմայի վերաբերյալ: Յուրաքանչյուր հղմանը մի կարճ քաղվածք կամ համառոտ շարադրանք է նախորդում այդ սուրբ գրությունից: Սուրբ գրքերի հղումները տրված են հետևյալ կարգով՝ Հին Կտակարան, Նոր Կտակարան, Մորմոնի Գիրք, Վարդապետություն և Ուխտեր, Թանկագին Մարգարիտ:

2. *Աստվածաշնչի Ջոզեֆ Սմիթի Թարգմանության ընտրանի:* 1830 թվականին Տերը Մարգարե Ջոզեֆ Սմիթին պատվիրեց սկսել Աստվածաշնչի՝ Հակոբ Թագավորի Տարբերակի վերանայումը կամ թարգմանությունը: Մարգարեի խնդիրն էր՝ վերականգնել այն պարզ և արժեքավոր ճշմարտությունները, որոնք կորել էին Աստվածաշնչի բնագիր ձեռագրերից: Գործի մեծ մասը նա ավարտեց մինչև 1833թ. հուլիսը: Սակայն, մինչև իր մահանալը՝ 1844թ., նա շարունակում էր փոփոխություններ անել, մինչև ձեռագիրը հրատարակության էր պատրաստվում: Չնայած ամբողջ հատորն ավարտին չհասավ, ոչ էլ այն պաշտոնապես որդեգրվեց Եկեղեցու կողմից, Ջոզեֆ Սմիթի Թարգմանությունը սուրբ գրությունների բովանդակության շատ ներդրումներ է պարունակում և արժեքավոր օգնություն է Աստվածաշունչը հասկանալու համար: Առավել կարևոր ուղղումներից մի քանիսը ներառվել են Սուրբ գրքերի Ուղեցույցում: (Լրացուցիչ տեղեկության համար, տես Ուղեցույցի «Ջոզեֆ Սմիթի Թարգմանություն» թեման):

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին, որպես անգլերեն Աստվածաշնչի պաշտոնական թարգմանություն օգտագործում է Հակոբ Թագավորի Տարբերակը: Այն առանցքային դեր է խաղացել ավետարանի վերականգնման գործում և շարունակում է նշանակալից ազդեցություն թողնել աշխարհով մեկ՝ շատ ազգերի վրա:

3. *Եկեղեցու պատմության ժամանակագրություն, քարտեզներ և լուսանկարներ և Աստվածաշնչյան քարտեզներ:* Իմանալով աշխարհագրական տեղանքները, որոնց մասին խոսվում է սուրբ գրքերում, դուք կարող եք ավելի լավ հասկանալ սուրբ գրքերի իրադարձությունները: Ուղեցույցում զետեղված են Եկեղեցու պատմության կարևոր տարածքների 6 քարտեզ, աստվածաշնչյան հողերի 14 քարտեզ և 1 աշխարհի քարտեզ: Տեղանքը գտնելու համար, օգտագործեք ձեզ հետաքրքրող քարտեզների հավաքածուի ցուցիչը: Յուցիչը ձեզ կհղի դեպի համապատասխան քարտեզը և այդ տեղանքի կոորդինատները քարտեզի վրա: Եկեղեցու պատմության 18 և աստվածաշնչյան 32 լուսանկարները նույնպես նկարագրություններ ունեն, որոնք կօգնեն ձեզ՝ ավելի լավ հասկանալ սուրբ գրքերի որոշ իրադարձություններ:

Եկեղեցու Պատմության Ժամանակագրությունը թվարկում է Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու վերականգնման և աճի համար կարևոր իրադարձությունների ամսաթվերը:

Սուրբ գրքերի ուսումնասիրության մեջ ձեզ ավելի շատ օգնելու համար, Ուղեցույցը պարունակում է մի շարք այլ օգտակար առանձնահատկություններ: Օրինակ, եթե դուք

բացեք «Հիսուս Քրիստոս» բառահոդվածը, ապա կգտնեք Ուղեցույցում տրված քեմաների մանրամասն մի ցուցակ, որոնք անմիջական տեղեկություն են պարունակում Փրկչի և նրա ծառայության վերաբերյալ: Մա Ուղեցույցում տրված միակ քեման է, որն ունի այդպիսի մեծ ցուցակ, ինչը շեշտում է Քրիստոսի կարևոր լինելը ողջ մարդկության համար: Ի լրումն, «Ժամանակագրություն» քեմայի տակ թվարկված են Աստվածաշնչի և Մորմոնի Գրքի ժամանակների ամենակարևոր իրադարձություններից մի քանիսը՝ մոտավոր տարեթվերով համդերձ: «Ավետարաններ» քեման պարունակում է Ավետարանների համաձայնություն ենթավերնագիրը: Այդ համաձայնությունը համեմատում է Մատթեոսում, Մարկոսում, Դուկասում, Հովհաննեսում և վերջին օրերի հայտնություններում տրված Փրկչի ուսմունքները:

Ուղեցույցում սուրբ գրքերի համար օգտագործվել են հետևյալ համառոտագրությունները.

Հին Կտակարան		Ջաբարիայի Մարգարեությունը	Ջաբ.
Գիրք Ծննդոց	Ծն.	Մադաբիայի Մարգարեությունը	Մադ.
Գիրք Ելից	Ել.	Նոր Կտակարան	
Գիրք Ղևոսացոց	Ղև.	Ավետարան ըստ Մատթեոսի	Մատ.
Գիրք Թվոց	Թվ.	Ավետարան ըստ Մարկոսի	Մար.
Գիրք Ներկրորդ Օրինաց	Բ Օր.	Ավետարան ըստ Դուկասի	Դուկ.
Գիրք Հեռուի	Հեա.	Ավետարան ըստ Հովհաննեսի	Հովի.
Գիրք Դատավորաց	Դատ.	Գործք Առաքելոց	Գորք.
Գիրք Հռութի	Հռութ	Թուղթ Պողոսի առ Հռովմայեցիս	Հռովմ.
Գիրք Ա. Թագավորաց	Ա Թագ.	Թուղթ Պողոսի առ Կորնթացիս Ա.	Ա Կոր.
Գիրք Բ. Թագավորաց	Բ Թագ.	Թուղթ Պողոսի առ Կորնթացիս Բ.	Բ Կոր.
Գիրք Գ. Թագավորաց	Գ Թագ.	Թուղթ Պողոսի առ Գաղատացիս	Գաղ.
Գիրք Դ. Թագավորաց	Դ Թագ.	Թուղթ Պողոսի առ Եփեսացիս	Եփես.
Գիրք Ա. Մնացորդաց	Ա Մն.	Թուղթ Պողոսի առ Փիլիպպեցիս	Փիլ.
Գիրք Բ. Մնացորդաց	Բ Մն.	Թուղթ Պողոսի առ Կոլոսացիս	Կոլ.
Գիրք Եզրասի	Եզր.	Թուղթ Պողոսի առ	
Գիրք Նենմիայի	Նենմ.	Թեսաղոնիկեցիս Ա.	Ա Թես.
Գիրք Եսթերի	Եսթ.	Թուղթ Պողոսի առ	
Գիրք Հոբի	Հոբ.	Թեսաղոնիկեցիս Բ.	Բ Թես.
Գիրք Սաղմոսաց	Սաղ.	Թուղթ Պողոսի առ Տիմոթեոս Ա.	Ա Տիմ.
Գիրք Առակաց	Առակ.	Թուղթ Պողոսի առ Տիմոթեոս Բ.	Բ Տիմ.
Գիրք Ժողովող	Ժող.	Թուղթ Պողոսի առ Տիտոս	Տիտոս
Գիրք Երգ Երգոց	Երգ.	Թուղթ Պողոսի առ Փիլիմոն	Փիլիմ.
Եսայիայի Մարգարեությունը	Ես.	Թուղթ Պողոսի առ Եբրայեցիս	Եբր.
Երեմիայի Մարգարեությունը	Եր.	Հակոբոսի Թուղթը	Հակ.
Երեմիայի Ողբերը	Ողբ.	Պետրոսի Ա. Թուղթը	Ա Պետ.
Եզեկիելի Մարգարեությունը	Եզեկ.	Պետրոսի Բ. Թուղթը	Բ Պետ.
Դանիելի Մարգարեությունը	Դան.	Հովհաննեսի Ա. Թուղթը	Ա Հովի.
Ովսեի Մարգարեությունը	Ովսե	Հովհաննեսի Բ. Թուղթը	Բ Հովի.
Հովելի Մարգարեությունը	Հովել	Հովհաննեսի Գ. Թուղթը	Գ Հովի.
Ամովսի Մարգարեությունը	Ամովս	Հուդա Առաքյալի Թուղթը	Հուդա
Աբդիայի Մարգարեությունը	Աբդիա	Հովհաննես Առաքյալի	
Հովմանի Մարգարեությունը	Հովմ.	Հայտնությունը	Հայտ.
Միքիայի Մարգարեությունը	Միքիա		
Նաումի Մարգարեությունը	Նաում		
Ամբակումի Մարգարեությունը	Ամբ.	Մորմոնի Գիրքը	
Մոփոնիայի Մարգարեությունը	Մոփ.	1 Նեփի	1 Նեփի
Անգեի Մարգարեությունը	Անգե	2 Նեփի	2 Նեփի

Հակոբ	Հակոբ	Վարդապետություն և Ուխտեր	ՎևՈՒ
Ենովս	Ենովս	Պաշտոնական Հայտարարություն-1	ՊՀ-1
Հարոմ	Հարոմ	Պաշտոնական Հայտարարություն-2	ՊՀ-2
Օմնի	Օմնի		
Մորմոնի Խոսքերը	ՄԽ	Թանկագին Մարգարիտ	
Մոսիա	Մոսիա	Մովսես	Մովսես
Ալմա	Ալմա	Աբրահամ	Աբր.
Հելաման	Հել.	Ջոզեֆ Սմիթ-Մատթեոս	ՋՄ-Մ
3 Նեփի	3 Նեփի	Ջոզեֆ Սմիթ-Պատմություն	ՋՄ-Պ
4 Նեփի	4 Նեփի	Հավատո Հանգանակ	ՀՀ
Մորմոն	Մորմ.		
Եթեր	Եթեր		
Մորմոնի	Մոր.	Ջոզեֆ Սմիթի Թարգմանություն	ՋՄԹ

ԹԵՄԱՆԵՐԻ ԱՅԲԲԵՆԱԿԱՆ ՑԱՆԿ

Ինչպես օգտագործել: Սուրբ գրքերի Ուղեցույցն ավետարանական բեմաների այլ-բեմական ցուցակ է: Այն տալիս է յուրաքանչյուր բեմայի կարճ սահմանումը և տալիս է սուրբ գրությունների ամենանշանակալից հղումներն այդ բեմայի վերաբերյալ: Յուրաքանչյուր հղմանը մի կարճ բաղվածք կամ համառոտ շարադրանք է նախորդում այդ սուրբ գրությունից: Սուրբ գրքերի հղումները տրված են հետևյալ կարգով. Հին Կտակարան, Նոր Կտակարան, Մորմունի Գիրք, Վարդապետություն և Ուխտեր, Թանկագին Մարգարիտ: Հետևյալ սխեման բացատրում է բառահոդվածի մի նմուշ.

Թեմաները բավատառ են մեծատառերով գրված:

ԵՐԿԻՐ: *Տե՛ս նաև* Աշխարհ. Ստեղծել, Ստեղծում

Երբեմն ուղեցույցի այլ բեմաներ տեղեկություն են պարունակում, որը վերաբերում է այն բեմային, որը դուք ուսումնասիրում եք: Շղագիր *տես նաև* արտահայտությունը ձեզ ակնարկում է փոխկապակցված բեմաները:

Յուրաքանչյուր բեմայի համար հակիրճ սահմանում է տրված:

Մոլորակը, որի վրա մենք ապրում ենք, որը ստեղծվել է Աստծո կողմից, Հիսուս Քրիստոսի միջոցով, որպեսզի մարդիկ օգտագործեն այն իրենց մահկանացու փորձնական ժամանակաշրջանում: Նրա հավերժական ճակատագիրն է՝ դառնալ փառավոր և վեհացած (ՎևՈՒ 77.1–2, 130.8–9): Երկիրը կդառնա նրանց հավերժական ժառանգությունը, ովքեր արժանի են ապրել սելեստիալ փառքի համար (ՎևՈՒ 88.14–26): Նրանք կվալելեն Հոր և Որդու ներկայությունը (ՎևՈՒ 76.62):

Սուրբ գրությունների փոխկապակցված հղումները տրված են փակագծերում:

Որոշ բեմաներ ունեն ենթախորագրեր: Դրանք տրված են շղագիր տառերով:

Մարդկանց համար ստեղծված. Աստված մարդուն իշխանություն ավեց երկրի վրա՝ **ԾՆ.** Ա.28 (Մովսես 2.28): Երկիրը Տիրոջն է՝ **Ել.** Թ.29 (Սաղ. ԻԳ.1): Տեղը երկիրը մարդկանց զավակներին է տվել՝ **Սաղ.** ԳԺԵ.16: Ես եմ արարել երկիրը և մարդուն նրա վրա ստեղծել՝ **Ես.** ԽԵ.12: Նրա խոսքի գործությամբ մարդը եկավ երկիր՝ **Հակոբ** 4.9: Երկիրը պիտի տրվի նրանց, ովքեր վերցրել են Սուրբ Հոգին՝ որպես իրենց ուղեկից՝ **ՎևՈՒ** 45.56–58 (ՎևՈՒ 103.7): Նրանք, ովքեր հնազանդվել են ավետարանին, որպես իրենց վարձք կատանան երկրի բարիքները՝ **ՎևՈՒ** 59.3: Երկիրը պիտի ժառանգեն նրա աղբատներն ու հեգերը՝ **ՎևՈՒ** 88.17 (Մատ. Ե.5, 3 Նեփի 12.5): Մենք կստեղծենք մի երկիր, և մենք նրանց կատուզենք՝ **Աբբ.** 3.24–25:

Սուրբ գրային յուրաքանչյուր հղմանը նախորդում է մի կարճ բաղվածք այդ սուրբ գրությունից կամ այդ սուրբ գրության համառոտ շարադրանքը:

Փակագծերի մեջ տրված են Սուրբ գրքերի հղումներ, որոնք օգնում են հասկանալ սահմանումը:

ՉԱՏԻԿ: *Տե՛ս* Հարություն. Հիսուս Քրիստոս

Շղագիր *տես u* (կամ *տես u նաև*) բառին հետևող գիծը ձեզ հուշում է, որ տեղեկությունը գտնվում է հիմնական բեմայի («Ընկղմամբ մկրտություն») ենթախորագրի («Մկրտություն, Մկրտել») տակ:

Երբեմն ձեռք գտած բեմայի նյութի վերաբերյալ տեղեկություն տրված չէ: Շղագիր *տես u* բառն ակնարկում է այն բեման, որտեղ կարելի է գտնել տեղեկությունը:

ԸՆԿՂՄՈՒՄ: *Տե՛ս* Մկրտություն, Մկրտել – Ընկղմամբ մկրտություն

ԱՔԳԻԱ

Հին Կտակարանի մարգարե, որը կանխապատմել է Եդոմի պատիժը: Նա մարգարեացել է, հավանաբար, Հովրամի թագավորության ժամանակ (Ք.ծ.ա. 848–844 թթ.) կամ էլ Բաբելոնյան արշավանքի ժամանակ Ք.ծ.ա. 586թ.:

Աբդիայի գիրքը. Գիրք Հին Կտակարանում: Այն ունի միայն մեկ գլուխ: Նրանում Աբդիան գրել է Եդոմի անկման մասին և մարգարեացել է, որ փրկիչներ պիտի կանգնեն Սիոն սարի վրա:

ԱՔԵԳՆԱԳՈՎ: *Տե՛ս նաև* Դանիել

Հին Կտակարանում՝ Սեդրաքը, Միսաքը և Աբեդնագովը Իսրայելացի այն երեք երիտասարդներն էին, որոնք Դանիելի հետ բերվեցին Բաբելոնի թագավոր՝ Նաբուգոդոնոսորի պալատը: Աբեդնագովի երթայական անունն Ազարիա էր: Այդ չորս երիտասարդները մերժեցին իրենց պղծել թագավորի կերակրով ու նրա գինով (Դան. Ա): Սեդրաքը, Միսաքը և Աբեդնագովը թագավորի կողմից զգվեցին կրակով բորբոքված հնոցի մեջ, սակայն Աստծո Որդին պահպանեց եղավ նրանց (Դան. Գ):

ԱՔԵԼ: *Տե՛ս նաև* Ադամ, Կայեն

Հին Կտակարանում՝ Ադամն և Եվայի որդին:

Ավելի լավ ընծա մատուցեց Աստծուն, քան իր եղբայր Կայենը՝ **ԾՃ.** Գ. 4–5 (Եբր. ԺԱ.4, Մովսես 5.16–21): Սպանվեց Կայենի կողմից՝ **ԾՃ.** Գ.8 (Մովսես 5.32): Քահանայություն ստացավ Ադամից՝ **ՎՆՈՒ** 84.16: Սատանան դավ նյութեց Կայենի հետ, որ սպանի Աբելին՝ **Մովսես** 5.28–31 (Հել. 6.27):

ԱՔԻՆԱԳԻ: *Տե՛ս նաև* Նահատակություն, Նահատակություն

Նեփիացի մարգարե Մորմոնի Գրքում: Մարգարեացավ, որ Աստված կպատժի ամբարիշտ թագավոր Նոյի ժողովրդին, եթե նրանք չապաշխարեն՝ **Մոսիա** 11.20–25: Բանտարկվեց, որովհետև մարգարեացավ թագավոր Նոյի և նրա ժողովրդի կործանման մասին՝ **Մոսիա** 12.1–17: Թագավոր Նոյի ամբարիշտ քահանաներին ուսուցանեց Մովսեսի օրենքի և Քրիստոսի մասին՝ **Մոսիա** 12–16: Ալման՝

երեքը, հավատաց և գրեց նրա խոսքերը՝ **Մոսիա** 17.2–4: Թագավոր Նոյի կողմից կրակով մահվան դատապարտվեց՝ **Մոսիա** 17.20:

ԱՔՐԱՀԱՄ: *Տե՛ս նաև* Աբրահամի Ուխտը

Թարայի որդին՝ Քաղդեայի Ուրում ծնված (Ծն. ԺԱ.26, 31, ԺԷ.5): Տիրոջ մարգարե, որի հետ Տեբը հավերժական ուխտեր հաստատեց, որոնց միջոցով օրհնվում են երկրի բոլոր ազգերը: Աբրահամի սկզբնական անունն Աբրամ էր:

Քոչեցին Խառան, որտեղ Թարան մահացավ՝ **ԾՃ.** ԺԱ.31–32 (Աբր. 2.1–5): Աստծո կողմից կանչվեց, որ գնա Քանան՝ աստվածային ուխտը ստանալու համար՝ **ԾՃ.** ԺԲ.1–8 (Աբր. 2.4, 15–17): Գնաց Եգիպտոս՝ **ԾՃ.** ԺԲ.9–20 (Աբր. 2.21–25): Բնակվեց Քեբրոնում՝ **ԾՃ.** ԺԳ.18: Ազատեց Դոմտին՝ **ԾՃ.** ԺԳ.1–16: Հանդիպեց Մելքիսեդեկին՝ **ԾՃ.** ԺԴ.18–20: Հագարը ծնեց նրա որդի Իսմայելին՝ **ԾՃ.** ԺԶ.15–16: Նրա անունը փոխվեց՝ դարձավ Աբրահամ՝ **ԾՃ.** ԺԷ.5: Տերն ասաց Աբրահամին և Սարային, որ նրանք որդի կունենան՝ **ԾՃ.** ԺԷ.15–22, ԺԸ.1–14: Սարան ծնեց նրա որդի Իսահակին՝ **ԾՃ.** ԻԱ.2–3: Պատվիրվեց զոհաբերել Իսահակին՝ **ԾՃ.** ԻԲ.1–18: Սարան մահացավ և թաղվեց՝ **ԾՃ.** ԻԳ.1–2, 19: Աբրահամը մահացավ և թաղվեց՝ **ԾՃ.** ԻԵ.8–10: Իսահակին զոհաբերելու Աբրահամի պատրաստակամությունը նման էր Աստծուն և նրա Միածին Որդուն՝ **Հակոբ** 4.5: Տասանորդ վճարեց Մելքիսեդեկին՝ **Ալմա** 13.15: Կանխագուշակեց և վկայեց Քրիստոսի գալստի մասին՝ **Հել.** 8.16–17: Քահանայությունը ստացավ Մելքիսեդեկից՝ **ՎՆՈՒ** 84.14: Հավատարիմները դառնում են Աբրահամի սերունդը՝ **ՎՆՈՒ** 84.33–34 (Գաղ. Գ.27–29): Բոլոր բաները ստացավ հայտնությամբ՝ **ՎՆՈՒ** 132.29: Իր վեհացմանն արժանացավ՝ **ՎՆՈՒ** 132.29: Փնտրեց հայրական օրհնությունները և քահանայության նշանակումները՝ **Աբր.** 1.1–4: Հետապնդվեց Քաղդեայի կեղծ քահանաների կողմից՝ **Աբր.** 1.5–15: Փրկվեց Տիրոջ կողմից՝ **Աբր.** 1.16–20: Մովորեց արևի, լուսնի և աստղերի մասին՝ **Աբր.** 3.1–14: Մովորեց նախամահկանացու կյանքի և Ստեղծման մասին՝ **Աբր.** 3.22–28:

Արբահամի Գիրքը. Հնադարյան հիշատակարաններ, Արբահամի ձեռքով գրված, որոնք Եկեղեցու սեփականությունն էին դարձել 1835 թվականին: Հիշատակարաններն ու մի քանի մուսիաներ հայտնաբերվել էին եգիպտական գետնադամբաններում, Անտոնիո Լեբոլոյի կողմից, որը դրանք կտակել էր Մայքլ Չանդլերին: 1835 թվականին Չանդլերը դրանք ցուցահանդեսի էր հանել Միացյալ Նահանգներում: Ջոզեֆ Մմիթի ընկերներից ոմանք դրանք գնել էին Չանդլերից և տվել էին Մարգարեին, որը բարգմանեց դրանք: Այժմ այդ հիշատակարանների մի մասը գտնելված է Թանկակահն Մարգարիտ գրքում:

1-ին գլխում գրանցված է Քաղղեայի Ուրում ունեցած Արբահամի փորձառությունների մասին, որտեղ ամբարիշտ քրքրերը փորձել էին գոհարերել նրան: 2-րդ գլուխը պատմում է դեպի Քանան նրա ճամփորդության մասին: Տերը հայտնվեց նրան և ուխտեր հաստատեց նրա հետ: 3-րդ գլուխն արձանագրում է, որ Արբահամը տեսավ տիեզերքը և հասկացավ երկնային մարմինների հարաբերությունները: 4-րդ և 5-րդ գլուխները Ստեղծման մասին մեկ այլ պատմություն է:

Արբահամի Սերունդը. Մարդիկ, ովքեր Հիսուս Քրիստոսի ավետարանի օրենքներին ու արարողություններին հնազանդվելու միջոցով ստանում են Ասածո կողմից Արբահամին տրված խոստումներն ու ուխտերը: Տղամարդիկ և կանայք կարող են ստանալ այդ օրհնությունները, եթե նրանք Արբահամի անմիջական ազատոհմից են, կամ եթե նրանք որդեգրվում են նրա ընտանիքի մեջ՝ ընդունելով ավետարանը և մկրտվելով (Գաղ. Գ.26–29, Գ.1–7, ՎևՈՒ 84.33–34, 103.17, 132.30–32, Աբր. 2.9–11): Արբահամի անմիջական հետնորդներն անհնազանդության պատճառով կարող են զրկվել իրենց օրհնություններից (Հռովմ. Գ.13, Թ.6–8):

ԱՐԱՎԱՍԻ ՌԻՏԵ: Տես նաև

Արբահամ. Թլփատություն. Ուխտ

Արբահամն ընդունեց ավետարանը և կարգվեց բարձրագույն քահանայության (ՎևՈՒ 84.14, Աբր. 2.11) և ստավ սելեստիալ ամուսնության մեջ, որը վեհացման ուխտն է (ՎևՈՒ 131.1–4, 132.19, 29): Արբահամը խոստում ստացավ, որ այդ

ուխտերի բոլոր խոստումները կառաջարկվեն իր մահկանացու ժառանգներին (ՎևՈՒ 132.29–31, Աբր. 2.6–11): Այդ ուխտերն ու խոստումները միասին կոչվում են Արբահամի ուխտ: Այդ ուխտի վերականգնումն ավետարանի վերականգնում էր վերջին օրերին, որովհետև դրա միջոցով օրհնվում են երկրագնդի բոլոր ազգերը (Գաղ. Գ.8–9, 29, ՎևՈՒ 110.12, 124.58, Աբր. 2.10–11):

ԱՐՐԱՄ: Տես Արբահամ

ԱԳԱՀ ԼԻՆԵԼ: Տես նաև Նախանձել

Սուրբ գրքերում գործածվող իմաստով, ազահ լինելը նախանձելն է ինչ-որ մեկին կամ տենչամուլ ցանկություն ունենալն ինչ-որ բանի համար:

Մի ցանկանա՝ **Ել. Ի.17** (Բ Օր. Ե.21, Մոսիա 13.24, ՎևՈՒ 19.25): Ազահությունն ատողն իր օրերը կերկարացնի՝ **Առակ. ԻԸ.16**: Նրանք ցանկանում են ազարակներ և հափշտակում են՝ **Միքիա Բ.2**: Ջգուշացեք ազահությունից՝ **Ղուկ. ԺԲ.15**: Օրենքն ասել է. Մի ցանկանա՝ **Հռովմ. Է.7**: Վերջին օրերին մարդիկ կլինեն ազահ՝ **Բ Տիմ. Գ.1–2**: Երբ Լաբանը տեսավ մեր ունեցվածքը, մա փափագեց այն՝ **1 Նեփի 3.25**: Դու չպետք է անհագ լինես քո սեփական ունեցվածքով՝ **ՎևՈՒ 19.26**: Դադարեք ազահ լինել՝ **ՎևՈՒ 88.123**: Մի ցանկացեք այն, ինչը պատկանում է ձեր եղբորը՝ **ՎևՈՒ 136.20**:

ԱԳՐԻՊՊԱՍ: Տես նաև Պողոս

Նոր Կտակարանում՝ Հերովդես Ագրիպպա Ա-ի որդին և Բերկնիկի ու Դրուսիլայի եղբայրը: Նա Քաղկիսի թագավորն էր, որը Լիբանաններում է: Նա լսեց Պողոս Առաքյալին և գրեթե համոզվել էր, որ դառնա Քրիստոնյա (Գոր. 25–26, ՋՍ–Պ 1.24):

ԱԳԱՄ: Տես նաև Ադամ-օճղի-Ահման.

Ադամի և Եվայի անկումը. Եղեն. Եվա. Հրեշտակապետ. Միքայել

Երկրի վրա ստեղծված առաջին մարդը: Ադամը մարդկային ցեղի հայրապետն է երկրի վրա: Նրա օրինազանցությունը Եղենի պարտեզում (Ծն. Գ, ՎևՈՒ 29.40–42, Մովսես 4) պատճառ եղավ, որ նա «ընկնի» և մահկանացու դառնա, անհրա-

ծեշտ մի քայլ, որպեսզի մարդկությունը զարգանա այս երկրի վրա (2 Նեփի 2.14–29, Ալմա 12.21–26): Ուստի, մենք պետք է հարգանք մատուցենք Ադամին և Եվային՝ մեր հավերժական զարգացումը հնարավոր դարձնելու համար: Ադամը չինավորոցն է, և նա հայտնի է նաև որպես Միքայել (Դան. 7, ՎևոՒ 27.11, 107.53–54, 116, 138.38): Նա հրեշտակապետն է, և նա կրկին երկիր կգա, որպես մարդկային ընտանիքի հայրապետ՝ ի նախապատրաստումն Հիսուս Քրիստոսի երկրորդ գալստի (ՎևոՒ 29.26):

Աստված մարդուն ստեղծեց իր կերպարանքով՝ **ԾՃ. Ա.26–28** (Մովսես 2.26–28, Աբր. 4.26–28): Աստված մարդուն իշխանություն տվեց բոլոր բաների վրա և պատվիրեց բազմաճառ և լցնել երկիրը՝ **ԾՃ. Ա.28–31** (Մովսես 2.28–31, Աբր. 4.28–31): Աստված Ադամին և Եվային դրեց Տեղեմի պարտեզում և նրանց արգելեց ուտել բարոտ և չարի գիտության ծառից՝ **ԾՃ. Բ.7–9, 15–17** (Մովսես 3.7–9, 15–17, Աբր. 5.7–13): Ադամն անուններ տվեց բոլոր կենդանի արարածներին՝ **ԾՃ. Բ.19–20** (Մովսես 3.19–20, Աբր. 5.20–21): Աստված ամուսնացրեց Ադամին և Եվային՝ **ԾՃ. Բ.18–25** (Մովսես 3.18–25, Աբր. 5.14–21): Ադամն ու Եվան գայթակղվեցին Սատանայի կողմից, ճաշակեցին արգելված պտղից և դուրս գզվեցին Տեղեմի պարտեզից՝ **ԾՃ. Գ. (Մովսես 4)**: Ադամը մահանալիս 930 տարեկան էր՝ **ԾՃ. Ե.5** (Մովսես 6.12): Ադամն առաջին մարդն էր՝ **ՎևոՒ 84.16**: Իր մահանալուց առաջ Ադամը հավաքեց իր արդարակյաց ժառանգներին Ադամ-օնդի-Ահմանում և օրհնեց նրանց՝ **ՎևոՒ 107.53–57**: Ադամը զոհ մատուցեց՝ **Մովսես 5.4–8**: Ադամը մկրտվեց, առաջավ Սուրբ Հոգին և քահանայության կարգվեց՝ **Մովսես 6.51–68**:

ԱԳԱՄԻ ԵՎ ԵՎԱՅԻ ԱՆԿՈՒՄԸ.

Տե՛ս նաև Ադամ. Բնական մարդ. Եվա. Հիսուս Քրիստոս. Մահ հոգևոր. Մահկանացու, Մահկանացություն. Մահ ֆիզիկական. Փրկագնման ծրագիր. Փրկագնել, Փրկագնված, Փրկագնում. Քավել, Քավություն

Այն ընթացքը, որով մարդկությունը մահ-

կանացու դարձավ այս երկրի վրա: Երբ Ադամն ու Եվան կերան արգելված պտղից, նրանք դարձան մահկանացու, այսինքն՝ մեղքին և մահվան ենթակա: Ադամը դարձավ «առաջին մարմինը» երկրի վրա (Մովսես 3.7): Վերջին օրերի հայտնությունները պարզ են դարձնում, որ Անկումն օրհնություն է, և որ Ադամին և Եվային պետք է հարգանք մատուցել՝ որպես ողջ մարդկության առաջին ծնողներին:

Անկումն անհրաժեշտ քայլ էր մարդու զարգացման համար: Քանի որ Աստված գիտեր, որ Անկումը լինելու է, դեռ նախաերկրային կյանքում նա Փրկիչ էր նախապատրաստել: Հիսուս Քրիստոսը եկավ ժամանակների զագաթնակետին, որ քավություն անի Ադամի անկման համար և նաև մարդու անձնական մեղքերի համար՝ մի պայմանով, որ մարդ պիտի ապաշխարի:

Նրանից կերած օրդ մահով կմեռնես՝ **ԾՃ. Բ.17** (Մովսես 3.17): Նա առավ նրա պտղից և կերավ՝ **ԾՃ. Գ.6** (Մովսես 4.12): Ինչպես Ադամով բոլորը մեռնում են, ճիշտ այդպես Քրիստոսով բոլորը կկենդանանան՝ **Ա Կոր. ԺԵ.22**: Ողջ մարդկությունը կորած և ընկած վիճակում էր՝ **1 Նեփի 10.6**: Ուղին պատրաստված է՝ մարդու անկումից ի վեր՝ **2 Նեփի 2.4**: Ադամն ու Եվան, արգելված պտղից ճաշակելուց հետո, դուրս քվեցին Տեղեմի պարտեզից՝ **2 Նեփի 1.19**: Ադամն ընկավ, որպեսզի մարդիկ լինեն՝ **2 Նեփի 2.15–26**: Բնական մարդն Աստծո մի թշնամի է, և եղել է՝ Ադամի անկումից ի վեր՝ **Մոսիա 3.19**: Ահարոնը Լամոնիի հորն ուսուցանեց Անկման մասին՝ **Ալմա 22.12–14**: Պետք է մի քավություն արվի, այլապես, ողջ մարդկությունն ընկած է և կորած՝ **Ալմա 34.9**: Մեր առաջին ծնողները Տիրոջ ներկայությունից կտրված էին և՛ ֆիզիկապես, և՛ հոգեպես՝ **Ալմա 42.2–15** (Հել. 14.16): Անկման պատճառով մեր էությունը չար է դարձել՝ **Եթեր 3.2**: Այս սուրբ օրենքների օրինազանցությամբ, մարդը դարձավ ընկած մարդ՝ **ՎևոՒ 20.20** (ՎևոՒ 29.34–44): Քանի որ դու ընկել ես, դու կարող ես փրկագնվել՝ **Մովսես 5.9–12**: Օրինազանցության պատճառով գալիս է անկումը՝ **Մովսես 6.59**: Մարդիկ կպատժվեն իրենց իսկ մեղքերի համար՝ **ՀՀ 1.2**:

ԱԳԱՄ-ՕՆԳԻ-ԱՀՄԱՆ: *Տե՛ս նաև Ադամ*

Այն վայրը, որտեղ Ադամն օրհնեց իր արդարակյաց ժառանգներին իր մահանալուց երեք տարի առաջ (ՎևոՒ 107.53–56), և ուր նա կգա նախքան Երկրորդ Գալստի ժամանակը (ՎևոՒ 116):

ԱԶԱՏ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ: *Տե՛ս Կամբի ազատություն*

ԱԶԱՏ, ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ. *Տե՛ս նաև Անկախություն. Գերություն. Կամբի ազատություն*

Առանց հարկադրանքի անձնական ընտրություն կատարելու ուժը կամ կարողությունը: Հոգևոր իմաստով՝ անձը, որն ապաշխարում և հնազանդվում է Աստծո կամքին, Հիսուս Քրիստոսի բավության միջոցով ազատ է մեղքի գերությունից (Մոսիս 5.8):

Ճշմարտությունը ձեզ ազատ կդարձնի՝ **Հովհ.** Ը.32: Նրանք, ովքեր մեղքից ազատված են, ստանում են հավերժական կյանք՝ **Հռովմ.** 2.19–23: Իսրայելի տան արդար մի ճյուղ գերությունից դուրս կրե՞րվի դեպի ազատություն՝ **2 Նեփի** 3.5: Նրանք միաձայն աղաղակեցին առ Տերը՝ իրենց ազատության համար՝ **Ալմա** 43.48–50: Մորոնին ցնձում էր իր երկրի ազատության համար՝ **Ալմա** 48.11: Աստծո Հոգին ազատության հոգին է՝ **Ալմա** 61.15: Հետևեք ինձ, և դուք կլինեք ազատ ժողովուրդ՝ **ՎևոՒ** 38.22:

ԱԶԱՏԻՉ: *Տե՛ս նաև Հիսուս Քրիստոս*

Հիսուս Քրիստոսը մարդկության Ազատիչն է, որովհետև նա բոլորին փրկում է մահվան գերությունից, իսկ ապաշխարողներին՝ մեղքի պատիժներից:

Տերն իմ վեճն է ու իմ ազատիչը՝ **ԲԹագ.** ԻԲ.3 (Մաղ. ԺԸ.2, ՃԻԳ.2): Դու իմ օգնությունն ու իմ ազատիչն ես՝ **Մաղ. Խ.17** (Մաղ. 4.5): Միոնից պիտի գա Ազատիչը՝ **Հռովմ.** ԺԱ.26: Սրբերն Աստծո Որդուն ճանաչում էին որպես իրենց Քավիչ և Ազատիչ՝ **ՎևոՒ** 138.23:

ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԳՐՈՇ: *Տե՛ս նաև Մորոնի հրամանատարը*

Գրոշ, որը բարձրացրել էր Մորոնին, Նեփիական բանակի գլխավոր հրամանատարը Մորոնի Գրքում: Մորոնին պատրաստել էր այդ դրոշը, որպեսզի ոգեշնչի Նեփիացի ժողովուրդին՝ պաշտպանելու իրենց կրոնը, ազատությունը, խաղաղությունը և ընտանիքները:

Մորոնին պատրաստեց ազատության դրոշն իր պատռած պատմունանից՝ **Ալմա** 46.12–13: Նրանք, ովքեր կամենում էին պաշտպանել դրոշը, մտնում էին ուխտի մեջ՝ **Ալմա** 46.20–22: Մորոնին կարգադրեց, որ դրոշ բարձրացվի ամեն աշտարակի վրա՝ **Ալմա** 46.36 (Ալմա 51.20):

ԱԶՆԻՎ, ԱԶՆՎՈՒԹՅՈՒՆ: *Տե՛ս նաև Շիտակություն*

Լինել անկեղծ, ճշմարիտ և անխաբոյախ: Հավատարմություն անողները հաճելի են Տիրոջը՝ **Առափ. ԺԲ.22:** Հատուցիր այն, ինչ խոստացել ես՝ **Ժող. Ե.4–5:** Մենք մեքե՛լ ենք անազնիվ ծածուկ բաները՝ **Բ Կոր. Գ.1–2:** Չեր վարքն ազնիվ պահեք՝ **Ա Պետ. Բ.12:** Վա՛յ ստախտսին, քանզի նա վայր պիտի գցվի դժոխք՝ **2 Նեփի** 9.34: Հոգին ճշմարտությունն է խոսում և չի խաբում՝ **Հակոբ** 4.13: Ով որ պարտք է վերցնում իր հարևանից, պետք է վերադարձնի այն, ինչը պարտք է վերցրել **Մոսիս** 4.28 (ՎևոՒ 136.25): Տես որ դու վարվես ազնվորեն, դատես արդարացիորեն և գործես բարիք՝ **Ալմա** 41.14: Թող ամեն մարդ գործի ազնվորեն՝ **ՎևոՒ** 51.9: Բոլորը, ովքեր գիտեն, որ իրենց սիրտն ազնիվ է, ընդունված են իմ կողմից՝ **ՎևոՒ** 97.8: Ազնիվ, իմաստուն և բարի մարդիկ պետք է փնտրել քաղաքական պաշտոնների համար՝ **ՎևոՒ** 98.4–10: Ջանասիրաբար փնտրիր, որ վերադարձնես այն, ինչ կորցրել է քո մերձավորը՝ **ՎևոՒ** 136.26: Մենք հավատում ենք ազնիվ լինելուն՝ **ՀՀ** 1.13:

ԱԼՄԱ ԱՎԱԳԸ

Նեփիացի մարզաբե Մորոնի Գրքում, որը Եկեղեցի կազմավորեց ամբարիշտ թագավոր Նոյի օրոք:

Ամբարիշտ թագավոր Նոյի քահանան էր և Նեփիի հետնորդը՝ **Մոսիս** 17.1–2: Լսելով ու հավատալով Աբինադդիին՝ նա

դուրս գցվեց թագավորի կողմից: Նա փախավ, թաքնվեց և գրեց Աբինադիի խոսքերը՝ **Մոսիա** 17.3–4: Ապաշխարեց և ուսուցանեց Աբինադիի խոսքերը՝ **Մոսիա** 18.1: Մկրտեց Մորմոնի ջրերի մոտ՝ **Մոսիա** 18.12–16: Կազմակերպեց Եկեղեցին՝ **Մոսիա** 18.17–29: Իր ժողովրդի հետ եկավ Ջարահենմալ՝ **Մոսիա** 24.25: Իշխանություն ստացավ Եկեղեցու վրա՝ **Մոսիա** 26.8: Գատում և ղեկավարում էր Եկեղեցին՝ **Մոսիա** 26.34–39: Քահանայապետի պաշտոնը շնորհեց իր որդուն՝ **Ալմա** 4.4 (Մոսիա 29.42, Ալմա 5.3):

ԱԼՄԱ՝ ԱԼՄԱՅԻ ՈՐԳԻ: *Տե՛ս նաև*

Ալմա ավագը. Ամուղեկ. Մոսիայի որդիները

Մորմոնի Գրքում՝ Նեփի ազգի առաջին գլխավոր դատավորն ու մարգարեն: Իր երիտասարդության տարիներին նա փորձում էր կործանել Եկեղեցին (Մոսիա 27.8–10): Սակայն, մի հրեշտակ հայտնվեց նրան և նա դարձի եկավ դեպի ավետարանը (Մոսիա 27.8–24, Ալմա 36.6–27): Ավելի ուշ նա թողեց գլխավոր դատավորի իր պաշտոնը, որպեսզի ուսուցանի մարդկանց (Ալմա 4.11–20):

Ալմայի գիրքը: Առանձին մի գիրք Մորմոնի Գրքում, որն ընդգրկում է մարգարեներ Ալմայի՝ Ալմայի որդու, և նրա որդի Հելամանի հիշատակարանների համառոտագրումը: Գրքում նկարագրված իրադարձությունները տեղի են ունենում Ք.ծ.ա. մոտ 91–52թթ.: Գիրքը բաղկացած է 63 գլխից: 1–4-րդ գլուխները նկարագրում են Նեեհորի և Ամդիկիի հետևորդների պատամբությունը Նեփիացիների դեմ: Այդպես առած պատերազմները մինչ այդ տեղի ունեցածներից ամենակործամարարներն էին Նեփիացիների պատմության մեջ: 5–16-րդ գլուխները պարունակում են Ալմայի վաղ միսիոներական ճամփորդությունների հիշատակարանը, այդ թվում՝ նրա քարոզը Բարի Հովվի մասին (Ալմա 5) և Ամմոնիա քաղաքում նրա քարոզը Ամուղեկի հետ: 17–27-րդ գլուխները պարունակում են Մոսիայի որդիների հիշատակարանը և նրանց ծառայությունը Լամանացիների մեջ: 28–44-րդ գլուխները պարունակում են Ալմայի ամենակարևոր քարոզներից մի քանիսը: 32-րդ գլխում

Ալման խոսքը համեմատել է սերմի հետ, 36-րդ գլխում նա իր որդի Հելամանին պատմել է իր դարձի գալու պատմությունը: 39–42-րդ գլուխները հիշատակում են Ալմայի խորհուրդները բարոյական օրինազանցության մեջ ներգրավված իր որդուն՝ Կորիսանոնին. այդ կարևոր քարոզը բացատրում է արդարադատությունը, ողորմությունը, հարությունը և Քավությունը: 45–63-րդ գլուխները նկարագրում են այդ ժամանակաշրջանի պատերազմները և արտագաղթը Հազաթի դեկավարությամբ: Չորսպետ Մորմոնիի, Թեանկումի և Լեքիի նման մեծ առաջնորդները, իրենց քաջարի և ժամանակին կատարված գործողությունների շնորհիվ, պահպանեցին Նեփիացիներին:

ԱԼՖԱ ԵՎ ՕՄԵԳԱ: *Տե՛ս նաև* Հիսուս

Քրիստոս

Ալֆան հունարեն այբուբենի առաջին տառն է. Օմեգան՝ վերջինը: Դրանք նաև անուններ են, Հիսուս Քրիստոսին տրված, և օգտագործվում են որպես խորհրդանիշ՝ ցույց տալու համար, որ Հիսուսը ողջ արարման սկիզբն է և վերջը (Հայտ. Ա.8, Վև.ՈՒ 19.1):

ԱԿԱՆՁ: *Տե՛ս նաև* Ականջ դնել

Մտքը գրքերում ականջը հաճախ խորհրդրդանշում է մարդու կողմից Աստծո բաները լսելու և հասկանալու կարողություն.

Ականջներ ունեն և չեն լսում՝ **Մադ. ճԺԵ.6:** Տերը զարթնեցնում է իմ ականջը, որ լսեմ՝ **Ես. Ծ.4–5** (2 Նեփի 7.4–5): Ով որ լսելու ականջ ունի, թող լսի՝ **Մատ. ԺԱ.15:** Նրանց ականջները ծանր են լսում՝ **Մատ. ԺԳ.15** (Մովսես 6.27): Ոչ մի աչք չի տեսել, ոչ էլ ականջ է լսել այն բաները, որոնք Աստված պատրաստել է նրանց համար, ովքեր սիրում են նրան՝ **Ա Կոր. Բ.9** (Վև.ՈՒ 76.10): Դեը շջջում է նրանց ականջին՝ **2 Նեփի 28.22:** Բացե՛ք ձեր ականջները, որ կարողանաք լսել՝ **Մոսիա 2.9** (3 Նեփի 11.5): Ես կանչվել եմ շատ անգամներ, և չեմ կամեցել լսել՝ **Ալմա 10.6:** Ականջ դիր իմ խոսքերին՝ **Ալմա 36.1** (Ալմա 38.1, Վև.ՈՒ 58.1): Չկա ականջ, որ չլսի՝ **Վև.ՈՒ 1.2:** Ականջները բացվում են խոնարհության և աղոթքի միջոցով՝ **Վև.ՈՒ 136.32:**

ԱԿԱՆՋ ԴՆԵԼ: *Տէ՛ս նաև* Ականջ.

Հնազանդություն, Հնազանդ,
Հնազանդվել

Լսել և հնազանդվել Տիրոջ ձայնին կամ ուսմունքներին.

Տերը քո եղբայրներից ինձ պես մի մարգարե վեր կկացնի ձեզ համար, լսեցեք նրան՝ **Բ Օր.** ԺԸ.15: Ականջ դնելն ավելի լավ է, քան խոյերի գոհաբերության ճարպը՝ **Ա Թագ.** ԺԵ.20–23: Մենք չլսեցինք Տիրոջ ծառաներին՝ մարգարեներին՝ **Դան.** Թ.6: Արդարները, որոնք լսում են մարգարեների խոսքերը, չեն ոչնչանա՝ **2 Նեփի** 26.8: Եթե դուք չեք կամենում ականջ դնել բարի հովվի ձայնին, դուք նրա ոչխարները չեք՝ **Ալմա** 5.38 (Հել. 7.18): Ականջ դրեք, ո՛վ դուք, իմ եկեղեցու՝ ժողովուրդ՝ **ՎևոՒ** 1.1: Ամեն ոք, ով ականջ է դնում Հոգու ձայնին, լուսավորվում է և գալիս է Հոր մոտ՝ **ՎևոՒ** 84.46–47: Նրանք հապաղում էին լսել իրենց Տիրոջը. ուստի նա հապաղում է լսել նրանց աղոթքները՝ **ՎևոՒ** 101.7–9: Նրանք, ովքեր ականջ չեն դնում պատվիրաններին, խրատվում են՝ **ՎևոՒ** 103.4 (Մովսես 4.4):

ԱՀԱՐՈՆ՝ ՄՈՍԻԱՅԻ ՈՐԳԻ: *Տէ՛ս*

նաև Մոսիա՝ Բենիամինի որդի.
Մոսիայի որդիները

Մորմոնի Գրքում՝ Մոսիա թագավորի որդին: Ահարոնը ծառայեց որպես միսիոներ, որի հետևողական ջանքերն օգնեցին բազում հոգիներ դարձի բերել դեպի Քրիստոսը:

Նա այն անհավատների թվում էր, որոնք ջանում էին կործանել Եկեղեցին՝ **Մոսիա** 27.8–10, 34: Մի հրեշտակ հայտնվեց նրան և նրա գործընկերներին՝ **Մոսիա** 27.11: Ապաշխարեց և սկսեց քարոզել Աստծո խոսքը՝ **Մոսիա** 27.32–28.8: Հրաժարվեց թագավոր հռչակվել և, փոխարենը, գնաց Լամանացիների հողը և քարոզեց Աստծո խոսքը՝ **Ալմա** 17.6–9: Ծոմ պահեց և աղոթեց ուղղություն ստանալու համար՝ **Ալմա** 17.8–11: Ուսուցանեց Թագավոր Լամոնիի հորը՝ **Ալմա** 22.1–26: Գնաց Չորամացիներին քարոզելու՝ **Ալմա** 31.6–7:

ԱՀԱՐՈՆ՝ ՄՈՎՍԵՍԻ ԵՂՔԱՅԻ:

Տէ՛ս նաև Ահարոնյան
Քահանայություն. Մովսես

Հին Կտակարանում՝ Ամրամի և Հոբաբեղի որդին՝ Ղևկի ցեղից (Ել. 2.16–20). Մովսեսի ավագ եղբայրը (Ել. 7.7):

Տիրոջ կողմից նշանակվել էր, որ Մովսեսին օգնի՝ Իսրայելի որդիներին Եգիպտոսից դուրս բերելիս, և լինի նրա խոսնակը՝ **Ել.** Գ.10–16, 27–31, Ե.1–ԺԲ.51: Սինայ սարի վրա Մովսեսը հրահանգներ ստացավ Ահարոնից և նրա չորս որդիներին Ահարոնյան Քահանայությունը նշանակելու վերաբերյալ՝ **Ել.** ԻԸ.1–4: Ոսկե հորթ շինեց ժողովրդի խնդրանքով՝ **Ել.** ԼԲ.1–6, 21, 24, 35: Մահացավ Հովր սարի վրա 123 տարեկանում՝ **Թվ.** Ի.22–29 (Թվ. ԼԳ.38–39): Տերը քահանայությունը հաստատեց նաև Ահարոնի և նրա հետնորդների վրա՝ **ՎևոՒ** 84.18, 26–27, 30: Նրանք, ովքեր մեծարում են քահանայության կոչումը, դառնում են Մովսեսի և Ահարոնի որդիները՝ **ՎևոՒ** 84.33–34: Տերը կարողարացնի նրանց արդար գործերը, ովքեր կանչված են Հոր կողմից, ինչպես Ահարոնը՝ **ՎևոՒ** 132.59:

ԱՀԱՐՈՆՅԱՆ

ՔԱՀԱՆԱՅՈՒՆԹՅՈՒՆ: *Տէ՛ս նաև*

Ահարոն՝ Մովսեսի եղբայր.
Մովսեսի Օրենք. Քահանայություն

Ցածր քահանայությունը (Եբբ. Է.11–12, ՎևոՒ 107.13–14): Նրա պաշտոններն են՝ եպիսկոպոս, քահանա, ուսուցիչ և սարկավագ (ՎևոՒ 84.30, 107.10, 14–15, 87–88): Հնում, Մովսեսի օրենքի օրոք, կային քահանայապետեր, քահանաներ և Ղևտացիներ: Ահարոնյան Քահանայությունը հայտնի դարձվեց Մովսեսին, որովհետև հին Իսրայելացիներն ապստամբեցին Աստծո դեմ: Նրանք մերթեցին սրբազորվել և ընդունել Մեքիսեդեկյան Քահանայությունն ու նրա արարողությունները (ՎևոՒ 84.23–25): Ահարոնյան Քահանայությունը պատասխանատու է օրենքի և ավետարանի աշխարհիկ հարցերի ու արտաքին արարողությունների համար (Ա Մն. ԻԳ.27–32, ՎևոՒ 84.26–27, 107.20): Այն կրում է հրեշտակների սպասավորության, ապաշխարության ավետարանի և մկրտության բանալիները (ՎևոՒ 13): Արդի տնտեսության ժամանակ Ահարոնյան Քահանայությունը երկրի վրա վերականգնվեց 1829թ. մայիսի 15-ին: Հովհաննես Մկրտիչն այն

շնորհեց Ջոզեֆ Սմիթին և Օլիվեր Քաուդերիին՝ Պենսիլվանիա նահանգի Հարմոնի բնակավայրի մոտ, Մասքուեհանա գետի ափին (ՎևՈՒ 13, ՋՍ-Պ 1.68-73):

Եվ նա կունենա հավիտենական քահանայության ուխտը՝ **ԹՎ. ԻԵ.13:** Տերը մաքրելու է Ղևիի որդիներին և գտելու է նրանց՝ **Մաղ. Գ.3** (3 Նեփի 24.3): Ոչ ոք չի կարող իրեն վերցնել այդ պատիվը՝ **Եբբ. Ե.4:** Կատարելությունը չի գալիս Ղևտական Քահանայությունով՝ **Եբբ. Է.11:** Այս քահանայությունը երբեք կրկին չի վերցվի երկրի վրայից, մինչև որ Ղևիի որդիներն ընծա մատուցեն՝ **ՎևՈՒ 13.1:** Ջոզեֆ Սմիթը և Օլիվեր Քաուդերին կարգվեցին Ահարոնյան Քահանայության՝ **ՎևՈՒ 27.8:** Ցածր քահանայությունը կրում է հրեշտակների սպասավորության բանալին՝ **ՎևՈՒ 84.26** (**ՎևՈՒ 13.1**): Կա երկու քահանայություն, անվանապես՝ Մելքիսեդեկյան և Ահարոնյան՝ **ՎևՈՒ 107.1:** Երկրորդ քահանայությունը կոչվում է Ահարոնի Քահանայություն՝ **ՎևՈՒ 107.13:**

ԱՂ

Հին աշխարհում օգտագործվում էր որպես մթերքի կարևոր պահպանիչ նյութ. այն կենսական էր համարվում կանքի համար:

Ղովտի կինը դարձավ աղի արձան՝ **ԾՃ. ԺԹ.26:** Դուք երկրի աղն եք՝ **Մաա. Ե.13** (Ղուկ. ԺԳ.34, 3 Նեփի 12.13): Տիրոջ ուխտյալ ժողովուրդը համարվում է երկրի աղը՝ **ՎևՈՒ 101.39-40:** Եթե Սրբերը մարդկանց փրկիչները չեն, նրանք մնան են աղի, որը կորցրել է իր համը՝ **ՎևՈՒ 103.9-10:**

ԱՂԱՎՆՈՒ ՆՇԱՆԵ: *Տե՛ս նաև* Սուրբ Հոգի

Նախահաստատված նշան, որով Հովհաննես Մկրտիչը պիտի ճանաչեր Մեսիային (Հովհ. Ա.32-34): Ջոզեֆ Սմիթն ուսուցանել է, որ աղավնու նշանը նախքան աշխարհի ստեղծումը հաստատվել է որպես Սուրբ Հոգու վկայություն. ուստի, դևը չի կարող գալ աղավնու նշանով:

Աստծո Հոգին վայր էր իջնում աղավնու պես՝ **Մաա. Գ.16:** Հիսուսի մկրտվելուց հետո Սուրբ Հոգին վայր իջավ աղավնու տեսքով՝ **1 Նեփի 11.27:** Ես՝ Հովհաննեսս, վկայում եմ, և ասեա, երկինքները բացվե-

ցին և Սուրբ Հոգին իջավ նրա վրա աղավնու տեսքով՝ **ՎևՈՒ 93.15:**

ԱՂԹՔ: *Տե՛ս նաև* Ամեն.

Երկրպագել. Խնդրել. Խորհել

Ակնածալից հաղորդակցություն Աստծո հետ, որի ընթացքում մարդ շնորհակալություն է հայտնում և օրհնություններ է խնդրում: Աղոթքներն ուղղվում են Երկնային Հորը՝ Հիսուս Քրիստոսի անունով: Աղոթքները կարող են ասվել կամ բարձրաձայն, կամ լուռ: Մարդու մտքերը նույնպես կարող են աղոթք լինել, եթե ուղղված են Աստծուն: Աղոթքների երգը կարող է աղոթք լինել Աստծուն (ՎևՈՒ 25.12):

Աղոթքի նպատակը ոչ թե Աստծո կամքը փոխելն է, այլ ապահով դարձնել մեր և ուրիշների օրհնությունները, որոնք Աստված կամենում է շնորհել, բայց որոնք մենք պետք է խնդրենք, որ ստանանք:

Մենք աղոթում ենք Հորը՝ Քրիստոսի անունով (Հովհ. ԺԳ.13-14, ԺՉ.23-24): Մենք իրոք կարողանում ենք աղոթել Քրիստոսի անունով, երբ մեր ցանկությունները Քրիստոսի ցանկություններն են (Հովհ. ԺԵ.7, ՎևՈՒ 46.30): Ապա մենք խնդրում ենք այն բաները, որոնք ճշմարիտ են, և այդպիսով, հնարավոր է, որ Աստված շնորհի (3 Նեփի 18.20): Որոշ աղոթքներ անպատասխան են մնում, որովհետև ոչ մի կերպ Քրիստոսի ցանկությունը չեն արտահայտում, այլ մարդու եսասիրության արդյունքն են (Հակ. Դ.3, ՎևՈՒ 46.9): Իսկապես, եթե մենք անարդար բաներ ենք խնդրում Աստծուց, այն դատապարտություն կդառնա մեզ համար (ՎևՈՒ 88.65):

Այն ժամանակ սկսեցին կանչել Տիրոջ անունը՝ **ԾՃ. Դ.26:** Չոհասեղանի տեղն Աբրահամը կանչեց Տիրոջ անունը՝ **ԾՃ. ԺԳ.4:** Աբրահամի ծառան աղոթեց, որ Իսահակի համար կին գտնելիս օգնություն ստանա՝ **ԾՃ. ԻԳ.10-19:** Աստված արգելի, որ ես մեղք չգործեմ Տիրոջ դեմ և չդադարեմ ձեզ համար աղոթելը՝ **Ա ԹՄԺ. ԺԲ.23:** Տերը լսում է արդարների աղոթքը՝ **Առակ. ԺԵ.29:** Դուք ինձ կգտնեք, եթե ձեր ողջ արտոլ որոնեք ինձ՝ **Եբեմ. ԻԹ.12-13:** Աղոթեք նրանց համար, ովքեր չարչարում են ձեզ՝ **Մաա. Ե.44** (Ղուկ. Չ.28, 3 Նեփի 12.44): Աղոթիր քո Հորը, որը ծածուկում է՝ **Մաա. Զ.5-8**

(3 Նեփի 13.5–8): Այս ձևով դուք աղոթեք՝ **Մատ.** 2.9–13 (Ղուկ. ԺԱ.2, 3 Նեփի 13.9): Խնդրեք և ձեզ կտրվի՝ **Մատ.** Է.7 (3 Նեփի 14.7, ՎևոՒ 4.7, 6.5, 66.9): Հիսուսը վեր ելավ սարը՝ առանձին աղոթք անելու՝ **Մատ.** ԺԳ.23: Արթուն կացեք և աղոթեք, որ փորձության մեջ չմտնեք՝ **Մատ.** Ի2.41 (Մար. ԺԳ.38, 3 Նեփի 18.15–18, ՎևոՒ 31.12): Թող խնդրի հավատքով, առանց երկմտելու՝ **Հակ.** Ա.5–6 (ՎևոՒ 42.68, 46.7): Արդարի ջերմեռանդ աղոթքը շատ գորավոր է՝ **Հակ.** Ե.16: Ականջ դրեք այն Հոգուն, որը մարդուն սովորեցնում է աղոթել՝ **2 Նեփի** 32.8–9: Ես կանչեցի առ նա գորավոր աղոթքով՝ **Ենոփս** 1.4: Ես ծոմ եմ պահել և աղոթել եմ շատ օրեր՝ **Ալմա** 5.45–46 (Ալմա 26.22): Նրանք ցվիրվել էին շատ աղոթքի ու ծոմի՝ **Ալմա** 17.3: Հիշո՞ւմ եք ինչ էր ասել Ձեռնոս աղոթքի և երկրպագության վերաբերյալ՝ **Ալմա** 33.3: Խոնարհեցրեք ձեզ և շարունակեք աղոթքով՝ **Ալմա** 34.18–27: Խորհուրդ արա Տիրոջ հետ բոլոր քո գործերում՝ **Ալմա** 37.37: Դուք պետք է միշտ աղոթեք Հորն իմ անունով՝ **3 Նեփի** 18.19–20: Աղոթեք ձեր ընտանիքներում՝ **3 Նեփի** 18.21: Հիսուսն աղոթեց Հորը՝ **3 Նեփի** 19.31–34 (Հովհ. ԺԷ, 3 Նեփի 18.16): Նա նրանց պատվիրեց չդադարել սրտում աղոթելը՝ **3 Նեփի** 20.1: Տթե նրանք սրտի անկեղծ միտումով չեն աղոթում, այն նրանց չի օգնում՝ **Մոք.** 7.6–9: Մի խնդրեք այն բաները, որոնք չպետք է խնդրեք՝ **ՎևոՒ** 8.10: Միշտ աղոթեք, որ դուք հաղթող դուրս գաք՝ **ՎևոՒ** 10.5: Ես քեզ պատվիրում եմ, որ աղոթես՝ ինչպես բարձրաձայն, այնպես էլ քո սրտում՝ **ՎևոՒ** 19.28: Հոգին ձեզ կտրվի հավատքի աղոթքով՝ **ՎևոՒ** 42.14: Գնա աղոթքի տուն և քո հաղորդությունները մատուցիր՝ **ՎևոՒ** 59.9 (Մատ. ԻԱ.13): Ծոռոները պետք է իրենց երեխաներին աղոթել սովորեցնեն՝ **ՎևոՒ** 68.28: Տերը՝ իրենց Աստվածը, հապադում է լսել նրանց աղոթքները՝ **ՎևոՒ** 101.7–8 (Մոսիա 21.15): Եղիր խոնարհ. և Տերը՝ քո Աստվածը, կպատասխանի քո աղոթքներին՝ **ՎևոՒ** 112.10: Աղամին պատվիրվեց կանչել առ Աստված՝ Որդու անունով՝ **Մովսես** 5.8: Հայրը և Որդին հայտնվեցին Ջոզեֆ Սմիթին՝ ի պատասխան նրա աղոթքին՝ **ՋՍ-Պ** 1.11–20:

ԱՂՋՍ: *Տես նաև* Բարօրություն.

Ընծա. Խոնարհեցնել, Խոնարհություն. Ծոմ, Ծոմապահություն.

Ողորմություններ, Ողորմություններ սալը

Սուրբ գրքերում *աղբատ* բառը կարող է վերաբերել՝ (1) մարդկանց, որոնք չունեն անհրաժեշտ նյութական միջոցներ, օրինակ՝ ուտելիք, հագուստ և ապաստարան. կամ էլ (2) մարդկանց, որոնք խոնարհ են և հպարտ չեն:

Նյութապես աղբատ. Չեքոջ չփակես քո աղբատ եղբորից՝ **Բ Օր.** ԺԵ.7: Ամբարիշտն իր ամբարտավանությամբ հալածում է աղբատին՝ **Մադ.** Ժ.2: Ով որ աղբատին տա՝ պակասություն չի ունենա՝ **Առակ.** ԻԸ.27: Աղբատին տար քո տուն՝ **Ես.** ԾԸ.6–7: Եթե կաննում ես կատարյալ լինել, տուր աղբատներին՝ **Մատ.** ԺԹ.21 (Մար. Ժ.21, Ղուկ. ԺԸ.22): Չէ՞ որ Աստված ընտրեց այս աշխարհի աղբատներին՝ **Հակ.** Բ.5: Որովհետև նրանք հարուստ են, նրանք արհամարհում են աղբատներին՝ **2 Նեփի** 9.30: Չեք մեղքերի բողոքյունը պահելու համար, ձեր ստացվածքից բաժին հանեք աղբատներին՝ **Մոսիա** 4.26: Նրանք իրենց ստացվածքից բաժին էին հանում աղբատին՝ **Ալմա** 1.27: Եթե դուք երես դարձնեք կարիքավորից, ձեր աղոթքը գուր է՝ **Ալմա** 34.28: Նեփիացիների մեջ բոլոր բաներն ընդհանուր էին. չկային հարուստ ու աղբատ՝ **4 Նեփի** 1.3: Դու պետք է հիշես աղբատներին՝ **ՎևոՒ** 42.30 (ՎևոՒ 52.40): Վայ աղբատներին, որոնց սրտերը կտրված չեն՝ **ՎևոՒ** 56.17–18: Աղբատները կմասնակցեն Գառի հարսանիքին՝ **ՎևոՒ** 58.6–11: Եպիսկոպոսը պետք է փնտրի աղբատներին՝ **ՎևոՒ** 84.112: Ավետարանի օրենքն է կառավարում աղբատների մասին հոգալը՝ **ՎևոՒ** 104.17–18: Աղբատներ չկային նրանց մեջ՝ **Մովսես** 7.18:

Հոգով աղբատ. Ավելի օրհնված են նրանք, ովքեր իրենց խոնարհեցնում են ոչ աղբատությունից հարկադրված լինելով՝ **Ալմա** 32.4–6, 12–16: Օրհնված են հոգով աղբատները, որոնք գալիս են ինձ մոտ՝ **3 Նեփի** 12.3 (Մատ. Ե.3): Աղբատներին ու հեզերին պիտի քարոզվի ավետարանը՝ **ՎևոՒ** 35.15:

ԱՄԱՂԵԿԱՑԻՆԵՐ (Հին Կտակարան)

Արաբական մի ցեղ, որն ապրում էր Փառան անապատում Արաբա հովտի և Միջերկրական ծովի միջև: Մովսեսի ժամանակներից (Ել. ԺԷ.8) մինչև Սավուղը և Դավիթը, նրանք շարունակ պատերազմում էին Եբրայեցիների դեմ (Ա Թագ. ԺԵ, ԻԷ.8, Լ, Բ Թագ. Ը.11–12):

ԱՄԱՂԵԿԱՑԻՆԵՐ (Մորմոնի Գիրք)

Ուրացած Նեփիացիների մի խումբ, որը Լամանացիներին պատերազմի առաջնորդեց Նեփիացիների դեմ (Ալմա 21–24, 43):

ԱՄԱՂԻԿԻԱ

Մորմոնի Գիրքում՝ Նեփիացի դավաճան, որն իշխանություն ձեռք բերեց Լամանացիների վրա և նրանց տարավ Նեփիացիների դեմ (Ալմա 46–51):

ԱՄԲԱԿՈՒՄ

Հին Կտակարանի մարգարե Հուդայում, որը խոսել է մարդկանց մեղսավոր լինելու մասին, հավանաբար, Հովաքիին թագավորության ժամանակ (մոտ 600թ. Ք.ծ.ա.):

Ամբակումի Գիրքը. Ա գլուխը երկխոսություն է Տիրոջ և իր մարգարեի միջև, ինչպես Երեմիա ԺԲ-ում և ՎևոՒ 121-ում: Ամբակումը մտահոգված էր, որ ամբարիշտները կարծես բարգավաճում են: Բ գլխում Տերն Ամբակումին խորհուրդ է տալիս համբերատար լինել,– արդար մարդիկ սովորում են հավատքով ապրել: Գ գլխում հիշատակվում է Ամբակումի աղոթքը, որում նա հաստատում է, որ Աստված արդար է դատում:

ԱՄԲԱՐԻՇՏ,

ԱՄԲԱՐՇՏՈՒԹՅՈՒՆ: *Տե՛ս նաև*

Անաստվածային. Անիրավ, Անիրավություն. Կեղտ, Կեղտոտություն. Հոգևոր Խավար. Մեղք

Չարություն, անօրինություն. Աստծո պատվիրաններին անհնազանդ լինելը:

Ի՞նչպես գործեն այս մեծ չարությունը և Աստծո դեմ մեղանչե՞մ **ԾՃ.** ԼԹ.7–9: Տերը հեռու է ամբարիշտներից, բայց լսում է արդարների աղոթքը **Առալ.** ԺԵ.29: Երբ ամբարիշտն է իշխում, ժողովուրդը սգում

է **Առալ.** ԻԹ.2 (ՎևոՒ 98.9): Չար մարդուն ձեր միջից հեռացրե՛ք **Ա Կոր.** Ե.13: Մեր պատերազմը հոգևոր ամբարշտության դեմ է բարձր տեղերում **Եփես.** 2.12: Դուրս եկեք ամբարիշտների միջից և մի դիպե՛ք նրանց անմաքուր բաներին՝ **Ալմա** 5.56–57 (ՎևոՒ 38.42): Սա է ամբարիշտի վերջնական վիճակը **Ալմա** 34.35 (Ալմա 40.13–14): Ամբարշտությունը երբեք երջանկություն չի եղել՝ **Ալմա** 41.10: Ամբարիշտների միջոցով է, որ ամբարիշտները պատժվում են՝ **Մորմ.** 4.5 (ՎևոՒ 63.33): Այդ ժամին գալիս է արդարների և ամբարիշտների լիովին առանձնացումը՝ **ՎևոՒ** 63.54: Այդպես է գալիս ամբարիշտների վերջը՝ **ՋՍ-Մ** 1.55:

ԱՄԵՆ: *Տե՛ս նաև* Աղոթք

Նշանակում է՝ «թող այդպես լինի» կամ «այդպես է»: *Ամենն* ասվում է ի սրտե հավանություն և հանդիսավոր համաձայնություն (Բ Օր. ԻԷ.14–26) կամ ճշմարտացիություն արտահայտելու համար (Գ Թագ. Ա.36): Այսօր աղոթքների, վկայությունների և ելույթների վերջում, աղոթքի կամ ուղերձի ունկնդիրները լսելի *ամեն* են ասում՝ համաձայնություն և հավանություն արտահայտելու համար:

Հին Կտակարանի ժամանակներում մարդ պետք է *ամեն* ասեր երդում տալիս (Ա Մն. ԺՁ.7, 35–36, Նեմ. Ե.13, Ը.2–6): Քրիստոսին կոչել են «Ամենը՝ հավատարիմ և ճշմարիտ վկան» (Հայտ. Գ.14): *Ամենը* նաև ուխտի նշան էր ծառայում Մարգարեների Դպրոցում (ՎևոՒ 88.133–135):

ԱՄԵՆԱԳԵՏ: *Տե՛ս նաև* Աստված, Աստվածություն

Ամեն բան իմանալու աստվածային գիծ (Մատ. 2.8, 2 Նեփի 2.24):

ԱՄԵՆԱԿԱՐՈՂ: *Տե՛ս նաև* Աստված, Աստվածություն

Ողջ գործությունն ունենալու աստվածային գիծ (Ծն. ԺԸ.14, Ալմա 26.35, ՎևոՒ 19.1–3):

ԱՄԵՆԱՀԱՍ: *Տե՛ս նաև* Աստված, Աստվածություն

Իր հոգու միջոցով ամենուրեք ներկա լինելու Աստծո կարողությունը (Մաղ. ԸԼԹ.7–12, ՎևոՒ 88.7–13, 41):

ԱՄՂԻԿԻ, ԱՄՂԻԿԻԱՑԻՆԵՐ

Մի մարդ, Մորմոնի Գրքում, որն առաջնորդում էր Նեփիաացիների մի խումբ, որոնք դատավորների կառավարման ժամանակ թագավոր էին ցանկանում ունենալ: Այդ Նեփիաացիները, որոնք կոչվում էին Անդիլիաացիներ, բաց ապստամբության ելան Աստծո դեմ, որի համար անհիժյալ դարձան (Ալմա 2–3):

ԱՄՄՈՆ՝ ՋԱՐԱՀՆԵՄԼԱՅԻ

ՀԵՏՆՈՐԴ: *Տե՛ս նաև* Լիմբի

Մորմոնի Գրքում՝ ուժեղ և գորեղ մի մարդ, որը մի արշավախումբ առաջնորդեց Ջարահեմվայից դեպի Լեքի-Նեփի հողը (Մոսիա 7.1–16): Նրան ցույց տրվեցին հնագույն հիշատակարաններ, և նա բացատրեց, թե ինչ է տեսանողը (Մոսիա 8.5–18): Հետագայում նա օգնեց՝ ազատելու Թագավոր Լիմբիին և նրա ժողովրդին Լամանացիներից և նրանց ետ բերելու Ջարահեմվա (Մոսիա 22):

ԱՄՄՈՆ՝ ՄՈՍԻԱՅԻ ՈՐԴԻ: *Տե՛ս*

նաև Անթի-Նեփի-Լեքիներ. Մոսիա՝ Բենիամինի որդի. Մոսիայի որդիները

Մորմոնի Գրքում՝ Մոսիա թագավորի որդին: Ամմոնը ծառայեց որպես միսիոներ, որի ջանասեր ծառայությունն օգնեց բազում հոգիներ դարձի բերել դեպի Քրիստոսը:

Անհավատ էր, որը փնտրում էր կործանել Եկեղեցին՝ **Մոսիա** 27.8–10, 34: Մի հրեշտակ հայտնվեց նրան և նրա ընկերներիին՝ **Մոսիա** 27.11: Ապաշխարեց և սկսեց քարոզել Աստծո խոսքը՝ **Մոսիա** 27.32–28.8: Հրաժարվեց թագավոր հռչակվել և, փոխարենը, գնաց Լամանացիների հողը՝ Աստծո խոսքը քարոզելու՝ **Ալմա** 17.6–9: Ողորդություն ստանալու համար ծոմ պահեց և աղոթեց՝ **Ալմա** 17.8–11: Գերեվարվեց թագավոր Լամոնիի մոտ՝ **Ալմա** 17.20–21: Փրկեց Լամոնիի հոտերը՝ **Ալմա** 17.26–39: Քարոզեց Լամոնիին՝ **Ալմա** 18.1–19.13: Գոհություն հայտնեց Աստծուն և հաղթվեց ուրախությունից՝ **Ալմա** 19.14: Նրա նորադարձները երբեք չհեռացան **Ալմա** 23.6: Յնծում էր՝ հազարավորների ճշմարտության բերելիս Աստծո ձեռքին գործիք լինելու համար՝ **Ալմա** 26.1–8 (Ալմա 26.1–37): Անթի-Նեփի-Լեքի

ժողովրդին առաջնորդեց դեպի անվտանգություն՝ **Ալմա** 27: Մեծ ուրախություն ապրեց՝ հանդիպելով իր եղբայրներին՝ **Ալմա** 27.16–18:

ԱՄՈՎՍ

Հին Կտակարանի մարգարե, որը մարգարեացավ մոտ 792–740թթ. Ք.ծ.ա. Հնդդայի թագավոր Ոգիայի և Իսրայելի թագավոր Հերոբոլամի օրոք:

Ամովսի Գիրքը. Գիրք Հին Կտակարանում: Ամովսի մարգարեությունների մեծ մասն Իսրայելին և նրա հարևան ազգերին զգուշացնում է վերադառնալ արդարակեցության:

1–5-րդ գլուխներն Իսրայելին և նրա հարևան ազգերին ապաշխարության կոչ են անում: 3-րդ գլուխը բացատրում է, որ Տերն իր գաղտնիքները հայտնում է մարգարեներին, և որ օրինագանցության պատճառով Իսրայելը կկործանվի հակառակորդի կողմից: 6–8-րդ գլուխները, ասորեստանյան արշավանքից շատ տարիներ առաջ, մարգարեանում են Իսրայելի անկման մասին: 9-րդ գլուխը մարգարեություն է, որ Իսրայելը կվերականգնվի իր սեփական հողերում:

ԱՄՈՒԿԵԿ: *Տե՛ս նաև* Ալմա՝ Ալմայի որդի

Մորմոնի Գրքում՝ Ալմայի որդի Ալմայի միսիոներ ընկերը:

Նրան այցելեց հրեշտակը՝ **Ալմա** 8.20, 10.7: Ալմային ընդունեց իր տուն՝ **Ալմա** 8.21–27: Ջորությամբ քարոզում էր Ամոնիայի ժողովրդին՝ **Ալմա** 8.29–32, 10.1–11: Լեքիի, Նեփիի և Մամասեի հետնորդն էր՝ **Ալմա** 10.2–3: Վկայեց ճշմարտության մասին՝ **Ալմա** 10.4–11: Ժողովրդին ապաշխարելու կոչ արեց և մերժվեց՝ **Ալմա** 10.12–32: Վիճեց Ջիզրոմի հետ՝ **Ալմա** 11.20–40: Ուսուցանեց հարության, դատաստանի և վերականգնման մասին՝ **Ալմա** 11.41–45: Յանկացավ կանխել հավատացյալների անհատակումը՝ **Ալմա** 14.9–10: Ալմայի հետ միասին բանտարկվեց՝ **Ալմա** 14.14–23: Հավատքի միջոցով ազատվեց բանտի կապանքներից՝ **Ալմա** 14.24–29: Վկայեց Քավության, ողորմության և արդարադատության մասին՝ **Ալմա** 34.8–16: Ուսուցանեց աղոթքի մասին՝ **Ալմա** 34.17–28: Մարդկանց քաջալերեց

չհետաձգել ապաշխարությունը՝ **Ալմա** 34.30–41: Ալմայի և Ամուղեկի հավատքը փլուզեց բանտի պատերը՝ **Եթեր** 12.13:

ԱՄՈՒՄԻՆ: *Տես* *Ա* ամուսնություն, Ամուսնանալ. Ընտանիք

ԱՄՈՒՄՆԱԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ: *Տես* *ս* *նս* Ամուսնություն, Ամուսնանալ

Ամուսնության լուծարումը պետական կամ հոգևոր օրենքների իշխանությամբ: Ըստ Նոր Կտակարանի մարդկանց կարծրասրբտության պատճառով, որոշ հանգամանքների դեպքում, Աստված բույլ էր տվել ամուսնալուծությունը, սակայն ինչպես բացատրել է Հիսուսը. «սկզբից այդպես չի եղել» (Մատ. ԺԹ.3–12): Սուրբ գրքերն ընդհանրապես խորհուրդ չեն տալիս ամուսնալուծվել և տղամարդկանց ու կանանց խորհուրդ են տալիս արդարությանը սիրել միմյանց (Ա Կոր. Է.10–12, ՎևոՒ 42.22):

ԱՄՈՒՄՆՈՒԹՅՈՒՆ,

ԱՄՈՒՄՆԱՆԱԼ: *Տես* *ս* *նս*

Ամուսնալուծություն. Ընտանիք

Օրինական ուխտ կամ պայմանագիր, տղամարդու և կնոջ միջև, ըստ որի նրանք դառնում են ամուսին և կին: Ամուսնությունը կարգված է Աստծո կողմից (ՎևոՒ 49.15):

Լավ չէ, որ մարդ մեռնակ լինի՝ **Ծճ.** Բ.18 (Մովսես 3.18): Մարդ պետք է հարի իր կնոջը, և նրանք կլինեն մեկ մարմին՝ **Ծճ.** Բ.24 (Մատ. ԺԹ.5, Աբր. 5.18): Այն, ինչ Աստված միավորեց, բոլ մարդը չբաժանի՝ **Մատ.** ԺԹ.6 (Մար. Ժ.9): Վերջին օրերին շատերը հավատքից կիեռանան՝ արգելելով ամուսնանալը՝ **Ս Տիմ.** Գ.1–3: Ամուսնությունը պատվական է՝ **Եբր.** ԺԳ.4: Տերը Լեքիի որդիներին պատվիրեց ամուսնանալ Իսմայելի դուստրերի հետ՝ **1 Նեփի** 7.1, 5 (1 Նեփի 16.7–8): Աստված Ադամին և Եվային ստեղծեց, որ լինեն տղամարդ և կին՝ **Մովսես** 3.7, 18, 21–25:

Ամուսնության նոր և հավիտենական ուխտը. Ամուսնությունը, որը կատարվում է ավետարանի օրենքով և սուրբ քահանայությանը, մահկանացու կյանքի և հավերժության համար է: Արժանի տղամարդիկ և կանայք, այդպես կնքվելով տաճարային ամուսնությամբ, կարող են հավերժության մեջ ամուսին և կին մնալ:

Հիսուսն ուսուցանեց ամուսնության օրենքը՝ **Ղուկ.** Ի.27–36: Ոչ էլ մարդն է առանց կնոջ Տիրոջ մոտ՝ **Ա Կոր.** ԺԱ.11: Ամուսինը և կինը միասին կյանքի շնորհի ժառանգակիցներ են՝ **Ա Պետ.** Գ.7: Ինչ որ կնքեք երկրի վրա, կկնքվի երկնքում՝ **Հել.** 10.7 (Մատ. Ժ.2.19): Սելեստիալ արքայության ամենաբարձր աստիճանին հասնելու համար, մարդը պետք է մտնի ամուսնության նոր և հավիտենական ուխտի մեջ՝ **ՎևոՒ** 131.1–4: Եթե տղամարդը կնոջ հետ ամուսնանում է ոչ ինձանով, նրանց ուխտը և ամուսնությունն ուժի մեջ չեն նրանց մահից հետո՝ **ՎևոՒ** 132.15: Եթե մի մարդ ամուսնանա մի կնոջ հետ, իմ խոսքով ու նոր և հավիտենական ուխտով, և այն կնքվի Խոստումի Սուրբ Հոգով, այն ամբողջովին ուժի մեջ կլինի, երբ նրանք դուրս են աշխարհից՝ **ՎևոՒ** 132.19:

Միջհավաքային ամուսնություն. Ամուսնություն տարբեր կրոնական դավանանքներ և սովորություններ ունեցող տղամարդու և կնոջ միջև:

Իմ որդու համար կին չառնես Քանանացիների աղջիկներից՝ **Ծճ.** ԻԳ.3: Եթե Հակոբս էլ է Քետի աղջիկներից կին առնելու, ինչո՞ւ է ինձ կյանքը պետք՝ **Ծճ.** ԻԷ.46 (Ծճ. ԻԸ.1–2): Իսրայելը չպետք է ամուսնանա Քանանացիների հետ՝ **Բ Օր.** Է.3–4: Իսրայելը Քանանացիների հետ ամուսնացավ, երկրպագեց կեղծ աստվածների և անիծվեց՝ **Գատ.** Գ.1–8: Սողոմոնի կանայք նրա սիրտը դարձրին դեպի կեղծ աստվածների պաշտամունքը՝ **Գ Թագ.** ԺԱ.1–6: Մենք չենք տա մեր աղջիկներին երկրի ազգերին, ոչ էլ նրանց աղջիկները կառնենք մեր որդիների համար՝ **Նեեմ.** Ժ.30: Անհավատների հետ այլախառն լծակից մի եղեք՝ **Բ Կոր.** Զ.14: Տերը մի նշան էր դրել Լամանացիների վրա, որպեսզի Նեփիացիները չխառնվեին ու չհավատային քրիստ ավանդություններին՝ **Ալմա** 3.6–10: Եթե տղամարդը կնոջ հետ ամուսնանում է ոչ ինձանով, նրանց ուխտը և ամուսնությունն ուժի մեջ չեն նրանց մահից հետո՝ **ՎևոՒ** 132.15: Մարդկանց որդիներն իրենց կին էին վերցնում, ինչպես որ կամենում էին՝ **Մովսես** 8.13–15:

Բազմակնություն. Տղամարդու ամուսնու-

թյունը երկու և ավելի ապրող կանանց հետ: Տղամարդու համար օրինական է ունենալ միայն մեկ կին, եթե Տերն այլ բան չի պատվիրել հայտնության միջոցով (Հակոբ 2.27–30): Հայտնության միջոցով բազմակնությունը գործածվում էր Հին Կտակարանի ժամանակ և վերականգնված Եկեղեցու վաղ օրերին, մարգարեի ղեկավարությամբ, որը կրում էր քահանայության բանալիները (ՎևոՒ 132.34–40, 45): Այն այլևս չի կիրառվում Եկեղեցում (ՎևոՒ Դ՛–1): ախօր, մեկից ավելի կին ունենալն անհամատեղելի է Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամության հետ:

Մարան Հագարին տվեց Աբրամին, որ նրան կին լինի՝ **ԾՆ**. ԺԶ.1–11: Հակոբն ընդունեց Լիային ու Ռաբելին և նրանց աղախիններին, որպես կանայք՝ **ԾՆ**. ԻԹ.21–28 (ԾՆ. Լ.4, 9, 26): Եթե մի մարդ մեկ ուրիշ կին վերցնի, նա չպետք է պակասեցնի առաջին կնոջը պատկանող բաները՝ **ԵԼ**. ԻԱ.10: Դավիթն իր երկու կանանց հետ վեր գնաց Քեբրոն՝ **Բ Թագ**. Բ.1–2: Աբրահամը, Իսահակը և Հակոբն արեցին այն, ինչ իրենց պատվիրվել էր, և ունեցան մի քանի կին՝ **ՎևոՒ** 132.37: Դավիթը և Սողոմոնը նույնպես չնեղանչեցին ոչնչում, բացի այն բաներից, որոնք չստացան Տիրոջից՝ **ՎևոՒ** 132.38–39:

ԱՅԻԻ: *Տե՛ս նաև* Բարօրություն

Կին, որի ամուսինը մահացել է, և նա կրկին չի ամուսնացել:

Հայրագուրկը և այրին կգան և կուտեն՝ **Բ Օր**. ԺԴ.29: Այս աղքատ որբևայրին ամեն ինչ որ ուներ, գցեց՝ **Մար**. ԺԲ.41–44: Հայրագուրկներին և այրիներին այցելեք նրանց նեղության մեջ՝ **Հակ**. 1.27: Տերը ժիր վկա կլինի նրանց դեմ, ովքեր հարբստահարում են որբևայրիին՝ **3 Նեփի** 24.5 (Չաք. Է.10): Այրիներն ու որբերը պետք է ապահովվեն՝ **ՎևոՒ** 83.6 (ՎևոՒ 136.8):

ԱՆՆԻԱ ԴԱՄԱՍԿՈՍՑԻ: *Տե՛ս նաև* Պողոս

Քրիստոնյա մի աշակերտ Դամասկոսում, որը մկրտեց Պողոսին (Գոր. Թ.10–18, ԻԲ.12):

ԱՆՆԻԱ ԵՐՈՒՄԱՂԵՄՑԻ

Նոր Կտակարանում՝ նա և նրա կին

Սավիթրան ստեցին Տիրոջը՝ ետ պահելով Տիրոջը նվիրաբերած գումարի մի մասը: Երբ Պետրոսը հանդիմանեց նրանց, նրանք երկուսն էլ գետնին ընկան և մահացան (Գոր. Ե.1–11):

ԱՆԱՏՎԱԾԱՅԻՆ: *Տե՛ս նաև*

Ամբարիշտ, Ամբարշտություն.
Անիրավ, Անիրավություն. Կեղո, Կեղտոտություն. Մեղք

Ինչ-որ մեկը կամ ինչ-որ բան, որն Աստծո կամքին ու պատվիրաններին համապատասխան չէ. ամբարիշտ է և անսուրբ:

Ամբարիշտների ճանապարհը կկորչի՝ **Սաղ**. Ա.6: Եթե արդարը հազիվ է փրկվում, ամբարիշտը ո՞րտեղ կհայտնվի՝ **Ա Պետ**. Դ.18: Հրաժարվեք ամեն անաստվածությունից՝ **Մոր**. 10.32: Վրեժխնդրությունը սրընթաց գալիս է անաստվածների վրա՝ **ՎևոՒ** 97.22: Անաստվածների մեջ Փրկչի ձայնը չբարձրացավ՝ **ՎևոՒ** 138.20:

ԱՆԱՐԱՏ, ԱՆԱՐԱՏՈՒԹՅՈՒՆ:

Տե՛ս նաև Մարտր և Ամմարտր.
Սրբագործում

Մեղքից կամ հանցանքից զերծ. անմեղ: Մարդ անարատ է դառնում, երբ նրա մտքերն ու գործերը մաքուր են լինում ամեն իմաստով: Մեղք գործած մարդը կարող է անարատ դառնալ՝ հավատալով Հիսուս Քրիստոսին, ապաշխարելով և ստանալով ավետարանի արարողությունները.

Նա, ով մաքուր է ձեռքով և անարատ՝ սրտով, կստանա Տիրոջ օրհնությունները՝ **Սաղ**. ԻԴ.3–5: Մաքուր եղեք, ով Տիրոջ սպասները կրողներ՝ **Ես**. ԾԲ.11 (ՎևոՒ 133.4–5): Երանի նրանց, որ սրտով մաքուր են՝ **Մատ**. Ե.8 (3 Նեփի 12.8): Ինչ բաներ որ սուրբ են, դրանք մտածեք՝ **Փիլ**. Դ.8 (ՀՀ 1.13): Բուրդը, որ մաքուր էք սրտով, բարձրացրեք ձեր գլուխը և ընդունեք Աստծո հաճելի խոսքը՝ **Հակոբ** 3.2–3: Կարո՞ղ եք նայել Աստծուն, այն օրը, անարատ սրտով և մաքուր ձեռքերով՝ **Ալմա** 5.19: Անարատ և անքիժ լինելով Աստծո առաջ՝ նրանք մեղքի վրա կարող էին նայել ոչ այլ կերպ, քան զգվանքով՝ **Ալմա** 13.12: Անարատ եղեք, ինչպես Քրիստոսն է անարատ՝ **Մոր**. 7.48 (Մորմ. 9.6): Քրիստոսը մի անարատ ժողովուրդ

է պահպանելու իր համար՝ **ՎՆՈՒ** 43.14: Տերը պատվիրեց, որ տուն կառուցվի Սիոնում, որի մեջ սրտով մաքուրները կտեսնեն Աստծուն՝ **ՎՆՈՒ** 97.10–17: Սա է Սիոնը՝ սրտով մաքուրները՝ **ՎՆՈՒ** 97.21:

ԱՆԱՐԳԱՆՔ: *Տե՛ս նաև Հայիոյել, Հայիոյանք*

Անհարգալից կամ արհամարհական վերաբերմունք սուրբ բաների հանդեպ. հատկապես Աստծո անվան անհարգալից օգտագործում:

Քո Տեր Աստծո անունը դատարկ տեղը մի հիշատակիր՝ **Ել.** Ի.7 (2 Նեփի 26.32, Մոսիա 13.15, ՎՆՈՒ 136.21): Ինչո՞ւ ենք մենք անարգում մեր հայրերի ուխտը՝ **Մաղ.** Բ.10: Ամեն դատարկ խոսքի համար, որ մարդիկ խոսեն, դատաստանի օրը հաշիվ պիտի տան՝ **Մատ.** ԺԲ.34–37: Միևնույն բերանից դուրս են գալիս օրհնություն և անեծք, որ չպետք է այդպես լինի՝ **Հակ.** Գ.10: Մեր խոսքերը կհանդիմանեն մեզ **Ալմա** 12.14 (Մոսիա 4.30): Թող բոլոր մարդիկ զգուշանան, թե ինչպես են գործածում իմ անունն իրենց շուրթերով՝ **ՎՆՈՒ** 63.61–62:

ԱՆԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ: *Տե՛ս* Ամբարիշտ, Ամբարշտություն. Զգայական, Զգայականություն. Մաքրաբարոյություն. Սեռական Ամբարոյականություն

ԱՆԳԵ

Հին Կտակարանի մարգարե, որը մարգարեացել է մոտ 520 տարի Բ.ձ.ա. Երուսաղեմում՝ Բաբելոնյան գերությունից հրեաների վերադարձից կարճ ժամանակ անց (Եզր. Ե.1, Զ.14): Նա խոսել է Տիրոջ Երուսաղեմի տաճարը վերակառուցելու մասին և հանդիմանել ժողովրդին, որ այն չի ավարտվել: Նա գրել է նաև հազարամյակի տաճարի և Փրկչի թագավորության մասին:

Անգեի գիրքը. Ա գլխում Տերը հանդիմանել է ժողովրդին նրա համար, որ նրանք ապրում էին իրենց ձեռնադարձ տներում, մինչդեռ տաճարը մնում էր կիսակառույց: Բ գլուխը հիշատակում է Անգեի մարգարեությունը, որ Տերը հանգիստ կպարզվի իր տաճարում:

ԱՆԴՐԱՆԻԿՈՒԹՅՈՒՆ: *Տե՛ս նաև* Առաջնեկ. Ուխտ

Անդրանիկ որդուն պատկանող ժառանգության իրավունք: Լայն իմաստով անդրանիկության մեջ մտնում է մի ընտանիքում կամ մշակույթում ծնված անձին փոխանցվող բոլոր իրավունքներն ու ժառանգությունը կամ դրանց մի մասը:

Ծախիր ինձ վրա այսօր քո անդրանիկությունը՝ **Ծճ.** ԻԵ.29–34 (Ծճ. ԻԷ.36): Նստեցին անդրանիկն իր անդրանկության համեմատ՝ **Ծճ.** ԽԳ.33: Եփրեմին Մանասեից առաջ դրեց՝ **Ծճ.** ԽԸ.14–20 (Երեմ. ԼԱ.9): Անդրանկությունը Հովսեփինը եղավ՝ **Ա Մճ.** Ե.2: Եսավն իր անդրանիկությունը ծախեց՝ **Եբր.** ԺԲ.16: Դուք օրինական ժառանգներ եք՝ **ՎՆՈՒ** 86.9: Սիոնը քահանայության համար իրավունք ունի ազգատոհմով՝ **ՎՆՈՒ** 113.8 (Աբր. 2.9–11):

ԱՆԴՐԵԱՄ

Նոր Կտակարանում՝ Սիմոն Պետրոսի եղբայրը և Տասներկու առաքյալներից մեկը, որին Հիսուս կանչել էր իր մահկանացու ծառայության ժամանակ (Մատ. Գ.18–19, Մար. Ա.16–18, 29):

ԱՆԵԾՔ, ԱՆԵԾՔՆԵՐ: *Տե՛ս նաև* Ամարգանք. Նգովք

Անեծքը՝ սուրբ գրքերում, աստվածային օրենքի գործադրումն է, որը թույլ է տալիս կամ բերում է դատաստաններ և դրանց հետևանքները՝ իրերի, անձանց, կամ մարդկանց վրա՝ գլխավորապես անիրավության հետևանքով: Անեծքներն Աստվածային սիրո և արդարադատության արտահայտություն են: Դրանք կարող են իջեցվել անմիջապես նրա լիազորված ծառաների կողմից: Երբեմն անեծքների իրական պատճառները հայտնի են միայն Աստծուն: Բացի այդ, անիծված վիճակ են ապրում նրանք, ովքեր գիտակցաբար չեն հնազանդվում Աստծուն, և այդպիսով, Տիրոջ Հոգին հեռացնում են իրենցից:

Տերը կարող է հեռացնել անեծքն անձից կամ մարդկանցից՝ առ Հիսուս Քրիստոս նրանց հավատքի և ավետարանի օրենքներին ու արարողություններին նրանց հնազանդվելու շնորհիվ (Ալմա 23.16–18, 3 Նեփի 2.14–16, ՀՀ 1.3):

Ադամին և Եվային խաբելու համար Աստված անիծեց օձին՝ **Ծճ.** Գ.13–15 (Մովսես 4.19–21): Հողն անիծվեց Ադամի և Եվայի համար՝ **Ծճ.** Գ.17–19 (Մովսես 4.23–25): Աբելին սպանելու համար Տերը Կայենին անիծեց՝ **Ծճ.** Գ.11–16 (Մովսես 5.22–41): Տերն անիծեց Քանանին և նրա սերունդներին՝ **Ծճ.** Թ.25–27 (Մովսես 7.6–8, Աբր. 1.21–27): Իսրայելը կորհնվի, եթե հնազանդ լինի Աստծուն, և կանիծվի, եթե անհնազանդ լինի՝ **Բ Օր.** ԻԸ.1–68 (Բ Օր. ԻԹ.18–28): Գեեեզին և նրա սերունդներն անիծվեցին Նեեմանի բորոտությունով՝ **Գ Թագ.** Ե.20–27: Տերն անիծեց հնադարյան Իսրայելի ազգին տասանորդ և նվիրատվություններ չվճարելու համար՝ **Մադ.** Գ.6–10: Հիսուսն անիծեց թզի ծառը և այն չորացավ՝ **Մար.** ԺԱ.11–14, 20–21: Հիսուսն անիծեց Քորազին, Բեթսայիդա և Կափառնայում քաղաքները՝ **Ղուկ.** Ժ.10–15: Քանի որ Լամանացիները չէին կամենում լսել Տիրոջը, նրանք առանձնացվեցին Տիրոջ ներկայությունից և անիծվեցին՝ **2 Նեփի** 5.20–24: Բոլորը հրավիրված են գալ Աստծո մոտ՝ **2 Նեփի** 26.33: Տերը կանիծի նրանց, ովքեր պռոնկություններ կգործեն՝ **Հակոբ** 2.31–33: Նեփիացիները, եթե չապաշխարեն, ավելի մեծ անեծք կստանան, քան Լամանացիները՝ **Հակոբ** 3.3–5: Ապատամբ մարդիկ իրենք են իրենց վրա անեծքներ բերում՝ **Ալմա** 3.18–19 (Բ Օր. ԺԱ.26–28): Ժողովրդին Աստծուց հեռացնելու համար Կորիհորն անիծվեց՝ **Ալմա** 30.43–60: Ժողովրդի անօրինությունների պատճառով Տերն անիծել էր Նեփիացիների իողերն ու հարստությունները՝ **Հել.** 13.22–23 (2 Նեփի 1.7, Ալմա 37.31): Տերն անիծեց ամբարիշտ Հարեղացիներին՝ **Եթեր** 9.28–35: Քրիստոսի քավությունն Ադամի անեծքը հեռացնում է երեխաներից՝ **Մոր.** 8.8–12: Նրանք, ովքեր հեռանում են Տիրոջից, անիծվում են՝ **ՎևոՒ** 41.1: Երկիրը կգարկվի անեծքով, եթե ինչ-որ կապակցող օղակ չլինի հայրերի և զավակների միջև՝ **ՎևոՒ** 128.18 (Մադ. Գ.5–6):

Անարգանք. Անիծել նշանակում է նաև անպատիվ, հայտնող կամ արհամարհական լեզու օգտագործել:

Մարդիկ չպետք է անիծեն իրենց հորը կամ մորը՝ **Ել.** ԻԱ.17 (Մատ. ԺԵ.4): Մի

անիծեք նրանց, ովքեր կառավարում են ձեզ՝ **Ել.** ԻԲ.28 (Ժող. Ժ.20): Ոչ տղամարդիկ, ոչ կանայք չպետք է անիծեն Աստծուն՝ **ՂԱ. ԻԳ.13–16:** Պետրոսը սկսեց անիծել, երբ ուրացավ, որ ճանաչում է Հիսուսին՝ **Մատ.** ԻԶ.69–74: Ամբարիշտ Նեփիացիներն անիծում էին Աստծուն և ցանկանում էին մեռնել՝ **Մորմ.** 2.14:

ԱՆԹԻ-ՆԵՓԻ-ԼԵՔԻՆԵՐ: *Տե՛ս նաև*

Ամնոն՝ Մոսիայի որդի. Հելաման՝ որդիները. Մոսիայի որդիները

Մորմոնի Գբբուն՝ Մոսիայի որդիների միջոցով դարձի եկած Լամանացիներին տրված անուն: Գարձի գալուց հետո, այս ժողովուրդը, որին անվանում էին նաև Ամնոնի ժողովուրդ, հավատարիմ մնաց իր ողջ կյանքում (Ալմա 23.4–7, 16–17, 27.20–27):

Նրանք վերցրեցին Անթի-Նեփի-Լեքիներ անունը՝ **Ալմա** 23.16–17, 24.1: Նրանք հրաժարվեցին արյուն թափելուց և քաղեցին իրենց զենքերը՝ **Ալմա** 24.6–19: Նրանց որդիները նախապատրաստվեցին պատերազմի և ընտրեցին Հելամանին՝ որպես իրենց առաջնորդ՝ **Ալմա** 53.16–19, 56–58 (այդ որդիները նաև հայտնի էին՝ որպես 2000 պատանի զինվորներ):

ԱՆԻՐԱՎ, ԱՆԻՐԱՎՈՒԹՅՈՒՆ:

Տե՛ս նաև Ամբարիշտ, Ամբարշտություն. Անաստվածային. Արդար, Արդարություն. Կեղտ, Կեղտոտություն. Մեղք

Ամբարիշտ, անարդար մարդիկ, որոնք չեն սիրում Աստծուն կամ Աստծո բաները, և որոնք չեն աջակցում նրա գործին:

Անիրավներն Աստծո արքայությունը չեն ժառանգի՝ **Ա Կոր.** Զ.9–10: Բոլորը, ովքեր հավանում են անօրինությունը, նզովված են՝ **Բ Թես.** Բ.11: Հիսուս Քրիստոսը կարող է մեզ սրբել ամեն անիրավությունից՝ **Ա Հովհ.** 1.9: Մի անարդար թագավորը խեղաբյուրում է բոլոր արդարությունն ուղիները՝ **Մոսիա** 29.23: Կործանման հիմքը դրվում է օրինագետների և դատավորների անարդարության միջոցով՝ **Ալմա** 10.27: Ես ուղարկում եմ ձեզ՝ աշխարհին հանդիմանելու բոլոր իր անիրավ գործերի համար՝ **ՎևոՒ** 84.87: Հոգին սրբագործված պիտի լինի ամեն

անիրավությունից՝ **ՎևոՒ** 88.17–18: Գրեթե բոլոր մարդկանց բնությունն ու հակվածությունն է՝ անիրավ տիրապետություն գործադրել՝ **ՎևոՒ** 121.39:

ԱՆԿԱՆՈՒԹՅՈՒՆ: *Տե՛ս նաև*

Ազատ, Ազատություն. Գերություն.
Կամքի ազատություն

Ազատ գործելու և մտածելու հնարավորություն ունենալու վիճակը կամ պայմանները: Ավետարանի սկզբունքներից հնազանդվելը մարդուն ազատում է մեղքի հոգևոր գերությունից (Հովհ. Ը.31–36):

Ազատ կզմամ. որովհետև թո պատվիրաններն են փնտրում **Մաղ. ճԺԺ.45:** Որտեղ որ Տիրոջ Հոգին է, այնտեղ ազատություն է՝ **Բ Կոր. Գ.17:** Հաստատ կանգնեք այն ազատության մեջ, որով Քրիստոսը մեզ ազատ է դարձրել՝ **Գաղ. Ե.1** (ՎևոՒ 88.86): Մարդիկ ազատ են ընտրելու ազատություն և հավերժական կյանք՝ **2 Նեփի 2.27:** Այս երկիրն ազատության երկիր կլինի՝ **2 Նեփի 10.11:** Մորոնիմ կանգնեցրեց ազատության դրոշը Նեփիացիների մեջ՝ **Ալմա 46.36:** Տերը և նրա ծառաներն ազատություն են հայտարարում գերյալ ոգիներին՝ **ՎևոՒ** 138.18, 31, 42:

ԱՆԿՅՈՒՆԱՔԱՐ: *Տե՛ս նաև* Հիսուս
Քրիստոս

Կառույցի հիմքի անկյունը կազմող հիմնաքարը: Հիսուս Քրիստոսին անվանում են գլխավոր անկյունաքար (Եփես. Բ.20):

Այն քարը, որ շինողներն անարգեցին, նա եղավ անկյունի գլուխ՝ **Մաղ. ճԺԸ.22** (Մատ. ԻԱ.42–44, Մար. ԺԲ.10, Ղուկ. Ի.17, Գոր. Գ.10–12): Հրեաները մերժեցին անկյունաքարը՝ **Հակոբ 4.15–17:**

ԱՆՀԱՎԱՏՈՒԹՅՈՒՆ: *Տե՛ս նաև*
Հավատ, Հավատալ

Աստծո և նրա ավետարանի հանդեպ հավատքի պակաս:

Այնտեղ նա շատ զորավոր գործեր չարեց՝ նրանց անհավատության պատճառով՝ **Մատ. ԺԳ.58:** Իրենց անհավատության պատճառով՝ Հիսուսի աշակերտները չկարողացան դևին դուրս գցել՝ **Մատ. ԺԷ.14–20:** Օգնիր իմ անհավատությանը՝ **Մար. Թ.22–23:** Հիսուսը հանդիմանեց իր Առաքյալների անհավատությունն ու

քարսրությունը՝ **Մար. ԺԶ.14:** Մի՞թե անհավատությունն Աստծո հավատքը կխափանի՝ **Հոովմ. Գ.3:** Ավելի լավ է մի մարդ կորչի, քան մի ազգ անհավատության մեջ ընկնի և կորչի՝ **1 Նեփի 4.13:** Երբ ժամանակը գա, որ նրանք ընկնեն անհավատության մեջ, նա այնպես կանի, որ նրանք ցրվեն և զարկվեն՝ **2 Նեփի 1.10–11** (ՎևոՒ 3.18): Իրենց անհավատության պատճառով՝ նրանք չէին հասկանում Աստծո խոսքը՝ **Մոսիա 26.1–5:** Ես չկարողացա հրեաներին ցույց տալ այսպիսի մեծ հրաշքներ՝ նրանց անհավատության պատճառով՝ **3 Նեփի 19.35:** Չեք միտքն անցյալում մթազնել է՝ անհավատության պատճառով՝ **ՎևոՒ** 84.54–58:

ԱՆՄԱՀ, ԱՆՄԱՀՈՒԹՅՈՒՆ: *Տե՛ս նաև*
Հարություն. Հիսուս Քրիստոս.
Մահկանացու, Մահկանացություն.
Փրկություն. Քավել, Քավություն

Հարություն առած՝ ֆիզիկական մահվանը ոչ ենթակա վիճակում հավիտյան ապրելը:

Նա հարություն է առել՝ **Մար. ԺԶ.6:** Ճիշտ այդպես Քրիստոսով բոլորը կկենդանանան՝ **Ա Կոր. ԺԵ.22:** Մահը կուլ կզմա, երբ որ այս մահկանացուն կհազնի անմահություն՝ **Ա Կոր. ԺԵ.53–54:** Քրիստոսը խափանեց մահը և բերեց անմահություն՝ **Բ Տիմ. Ա.10:** Անմահությունը ոգու մարմնի վերականգնումն է՝ **2 Նեփի 9.13:** Հոգիները, միավորվելով իրենց մարմինների հետ, դառնում են անապական, որ այլևս չմահանան՝ **Ալմա 11.45:** Հավատարիմները կպահպանեն անմահությանը և հավերժական կյանքով՝ **ՎևոՒ** 75.5: Երկիրը կլինի սրբագործված և անմահ՝ **ՎևոՒ** 77.1 (ՎևոՒ 130.9): Աստծո գործը և փառքն է՝ իրականացնել մարդու անմահությունն ու հավերժական կյանքը՝ **Մովսես 1.39:**

ԱՆՄԱՔՈՒՐ: *Տե՛ս* Մաքուր և
Անմաքուր

ԱՆՄԵՂՈՒԹՅՈՒՆ, ԱՆՄԵՂ

Անաղարտ կամ մեղք չունեցող:

Նախքան անկումը, Ադամը և Եվան անմեղության վիճակում էին՝ **2 Նեփի 2.23:** Անմեղների արյունը պիտի կանգնի որպես վկայություն՝ **Ալմա 14.11:** Ամեն մարդու ոգի սկզբում անմեղ էր՝ **ՎևոՒ** 93.38:

Անճեղները չպետք է դատապարտվեն անարդարների կողմից՝ **ՎՆՈՒ** 104.7: Ջոզեֆ և Հայրում Սմիթներն անճեղ էին որևէ հանցանքից՝ **ՎՆՈՒ** 135.6-7: Երեխաներն անճեղ են աշխարհի հիմնադրումից ի վեր՝ **Մովսես** 6.54:

ԱՆՆԱ

Նոր Կտակարանում՝ մարգարեուհի, որն Աստերի ցեղից էր: Հիսուսի ծննդյան ժամանակ նա տարեց այրի էր: Նա տեսավ մանուկ Հիսուսին, երբ նրան ներկայացնում էին տաճարում, և ընդունեց նրան որպես Քավչի (Ղուկ. Բ.36-38):

ԱՆՆԱ: *Տե՛ս նաև* Կայիափա

Նոր Կտակարանում՝ տղամարդ, որը մեծ ազդեցություն ուներ Ծերակույտում: Երբ Հիսուսին բռնեցին, առաջինը բերեցին նրա մոտ (Հովհ. ԺԸ.13). նա ղեկավար դեր ուներ նաև Առաքյալներին դատելիս (Գոր. Դ.3-6):

ԱՆՆԱ: *Տե՛ս նաև* Սամուել՝ Հին Կտակարանի Մարգարե

Հին Կտակարանի մարգարե՝ Սամուելի մայրը: Տերը Սամուելին շնորհեց Աննային՝ ի պատասխան նրա աղոթքների՝ (Ա Թագ. Ա.11, 20-28): Աննան Սամուելին նվիրաբերեց Տիրոջը: Նրա գոհաբանության երգը կարելի է համեմատել Մարիամի՝ Հիսուսի մոր երգի հետ (Ա Թագ. Բ.1-10, Ղուկ. Ա.46-55):

ԱՆՆԵՐԵԼԻ ՄԵՂՔ: *Տե՛ս նաև*

Կորսաի որդիներ. Հայիոյել, Հայիոյանք. Սպանություն. Սուրբ Հոգի

Սուրբ Հոգին ուրանալու մեղքը մի մեղք է, որը չի կարող ներվել:

Սուրբ Հոգու դեմ հայիոյանքը չի ներվի մարդկանց **Մատ.** ԺԲ.31-32 (Մար. Գ.29, Ղուկ. ԺԲ.10): Անկարելի է նրանց, որ Սուրբ Հոգուց ճաշակած դարձյալ նորոգվեն ապաշխարության համար՝ **Եբբ.** 2.4-6: Եթե մենք ճշմարտության գիտությունն ընդունելուց հետո հոժար կամքով մեղք գործենք, այլևս նրանից հետո մեղքերի համար գոհ չի մնում **Եբբ.** Ժ.26: Եթե ուրանում ես Սուրբ Հոգին և գիտես, որ ուրանում ես այն, դա մեղք է, որն աններելի է՝ **Ալմա** 39.5-6 (Հակոբ 7.19):

Նրանք ներում չունեն, ուրացած լինելով Միածին Որդուն՝ իրենց համար խաչած լինելով նրան՝ **ՎՆՈՒ** 76.30-35: Սուրբ Հոգու դեմ հայիոյանքը չի ներվի, որն անճեղ արյուն բափելն է, այն բանից հետո, երբ դուք ստացել եք իմ նոր և հավիտենական ուխտը՝ **ՎՆՈՒ** 132.26-27:

ԱՆՍՈՒՐԲ: *Տե՛ս* Անաստվածային

ԱՆՎԵՐՋ: *Տե՛ս նաև* Աստված, Աստվածագլուխ

Աստծո անուններից մեկը, որը բնութագրում է նրա հավերժական էությունը (ՎՆՈՒ 19.10-12, Մովսես 1.3, 7.35):

ԱՆՈՒՆԸ ԵԿԵՂԵՑՈՒ: Տե՛ս

Եկեղեցու անունը. Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցի

ԱՇԱԿԵՐՏ: *Տե՛ս նաև* Առաքյալ.

Դարձի գալ, Նորադարձ. Լուծ. Քրիստոնյաներ

Հիսուս Քրիստոսի հետևորդ, որն ապրում է Քրիստոսի ուսմունքների համաձայն (ՎՆՈՒ 41.5): *Աշակերտ* բառն օգտագործվել է Տասներկու Առաքյալներին նկարագրելու համար, որոնց կանչեց Քրիստոսն իր մահկանացու ծառայության ժամանակ (Մատ. Ժ.1-4): *Աշակերտ* բառն օգտագործվել է նաև այն տասներկու տղամարդկանց նկարագրելու համար, որոնց Հիսուսն ընտրեց, որպեսզի ղեկավարեն իր Եկեղեցին Նեփիացիների և Լամանացիների մեջ (3 Նեփի 19.4):

Կնքիր օրենքն իմ աշակերտների մեջ՝ **Ես.** Ը.16: Եթե դուք իմ խոսքի մեջ մնաք, ապա դուք իմ աշակերտներն եք՝ **Հովհ.** Ը.31: Մորմոնը Հիսուս Քրիստոսի աշակերտն էր՝ **3 Նեփի** 5.12-13: Դուք իմ աշակերտներն եք՝ **3 Նեփի** 15.12: Երեք աշակերտ մահ չեն ճաշակի՝ **3 Նեփի** 28.4-10: Նախագույշացնող ձայնը կլինի իմ աշակերտների բերանով՝ **ՎՆՈՒ** 1.4: Իմ աշակերտները պիտի կանգնեն սուրբ տեղերում՝ **ՎՆՈՒ** 45.32: Նրանք, ովքեր չեն հիշում աղքատներին, կարիքավորներին, հիվանդներին ու տառապյալներին, իմ աշակերտները չեն՝ **ՎՆՈՒ** 52.40: Ով որ չի կանենում վայր

դնել իր կյանքը, իմ աշակերտը չէ՝ **ՎևոՒ** 103.27–28:

ԱՇԽԱՐՀ: *Տե՛ս նաև* Բաբելոն. Երկիր. Մահկանացու, Մահկանացություն

Երկիրը. մահկանացու մարդկանց փորձություն վայր: Փոխաբերական իմաստով, այն մարդիկ, ովքեր չեն հնազանդվում Աստծո պատվիրաններին:

Մահկանացու գոյություն. Աշխարհում նեղություն կունենաք՝ **Հովհ.** ԺՁ.33: Մի վախեցեք մահից. քանզի այս աշխարհում ձեր ուրախությունը լիակատար չէ՝ **ՎևոՒ** 101.36:

Մարդիկ, ովքեր չեն հնազանդվում պատվիրաններին. Ես պիտի պատժեմ աշխարհին իրենց չարության համար՝ **Ես.** ԺԳ.11 (2 Նեփի 23.11): Եթե աշխարհը ձեզ ատում է, ինացեք, որ ինձ ձեզանից առաջ է ստել՝ **Հովհ.** ԺԵ.18–19: Մեծ ու ընդարձակ շենքն աշխարհի հպարտությունն է՝ **1 Նեփի** 11.36: Աշխարհը հասունացնում է անօրինության մեջ՝ **ՎևոՒ** 18.6: Անբիժ պահիր քեզ աշխարհից՝ **ՎևոՒ** 59.9: Նա, ով հավատարիմ է և համբերում է, կհաղթի աշխարհին՝ **ՎևոՒ** 63.47: Դուք չպետք է ապրեք աշխարհի ձևով՝ **ՎևոՒ** 95.13:

Աշխարհի վերջը. Ես նոր երկիր եմ ստեղծում. և առաջինները չեն հիշվի՝ **Ես.** ԿԵ.17 (Հայտ. ԻԱ.1, ՀՀ 1.10): Այս աշխարհի վերջում որոմները պիտի հավաքվեն ու կրակով այրվեն՝ **Մատ.** ԺԳ.40, 49 (Մադ. Դ.1, Հակոբ 6.3): Իմ այգին ես այրել կտամ կրակով՝ **Հակոբ** 5.77 (ՎևոՒ 64.23–24): Աշխարհի վերջում Տերը կկործանի Սատանային ու նրա գործերը՝ **ՎևոՒ** 19.3: Երկիրը կմահանա, բայց վերստին կկենդանանա՝ **ՎևոՒ** 88.25–26: Տերը Ենովքին ցույց տվեց աշխարհի վերջը՝ **Մովսես** 7.67:

ԱՇԽԱՐՀԻ ՎԵՐՁԸ: *Տե՛ս* Աշխարհ – Աշխարհի վերջը

ԱՇԽԱՐՀԻ ԿՈՒԹՅՈՒՆ: *Տե՛ս նաև* Հարստություններ. Հպարտություն. Ունայն, Ունայնություն. Փող

Անիրավ ցանկությունները և հոգևոր բաները թողնելով՝ ժամանակավոր հարստություններ և նյութական բարիքներ ձեռք բերելու ջանքեր:

Ի՞նչ օգուտ ունի մարդ, եթե բոլոր աշխարհը ստանա և իր անձը կորցնի՝ **Մատ.** ԺՁ.26: Նրանք իրենց սրտերը դրել են աշխարհի սին բաների վրա՝ **Ալմա** 4.8 (Ալմա 31.27): Մի կողմ դրեք այս աշխարհի բաները՝ **ՎևոՒ** 25.10: Մարդկանց սրտերն այնքան շատ է դրված այս աշխարհի բաների վրա՝ **ՎևոՒ** 121.35:

ԱՉԸ, ԱՉԸԵՐ

Մուրք գրքերում աչքը հաճախ օգտագործվում է որպես Աստծո լույսն ընդունելու մարդու կարողության խորհրդանիշ: Մարդու աչքը նաև խորհրդանշաբար ցույց է տալիս հոգևոր վիճակ և Աստծո բաների հասկացողություն:

Տիրոջ պատվիրանները մարդու են՝ աչքերը լուսավորող՝ **Մադ.** ԺԹ.8: Հիմարներն աչքեր ունեն, բայց չեն տեսնում՝ **Երեմ.** Ե.21 (Մար. Ը.18): Մարմնի լույսն աչքն է՝ **Մատ.** Չ.22 (Ղուկ. ԺԱ.34, 3 Նեփի 13.22, ՎևոՒ 88.67): Երանելի են ձեր աչքերը, որովհետև տեսնում են՝ **Մատ.** ԺԳ.16: Չեր հասկացողության աչքերը կբացվեն՝ **Եփես.** Ա.17–18: Վայ իրենց աչքում իմաստուններին՝ **2 Նեփի** 15.21 (Ես. Ե.21): Նրանք սկսեցին ծոմ պահել և աղոթել, որպեսզի ժողովրդի աչքերը բացվեն՝ **Մոսիա** 27.22: Սատանան կուրացրեց նրանց աչքերը՝ **3 Նեփի** 2.2: Ոչ ոք գործություն չի ունենա առաջ բերելու Մորմոնի Գիրքը, եթե դա չարվի Աստծո փառքին նվիրված աչքով՝ **Մորմ.** 8.15: Հոգու գործությամբ մեր աչքերը բացվեցին և մեր հասկացողությունը լուսավորվեց՝ **ՎևոՒ** 76.12: Լույսը նրա միջոցով է, ով լույս է տալիս ձեր աչքերին՝ **ՎևոՒ** 88.11: Եթե ձեր աչքն ուղղված լինի միայն իմ փառքին, ձեր ամբողջ մարմինը լցված կլինի լույսով՝ **ՎևոՒ** 88.67:

ԱԳԱՇԽԱՐԵԼ, ԱԳԱՇԽԱՐՈՒԹՅՈՒՆ: *Տե՛ս նաև* Խոստովանել, Խոստովանություն. Կտրված սիրտ. Հիսուս Քրիստոս. Մեղքերի թողություն. Ներել. Քավել, Քավություն

Մտքի և սրտի փոփոխություն, որը նոր վերաբերմունք է բերում Աստծո, սեփական անձի և, առհասարակ, կյանքի հանդեպ: Ապաշխարությունը ենթադրում է, որ մարդը շրջվում է շարից և իր սիրտը և

կամքը դարձնում է դեպի Աստված՝ հնազանդվելով Աստծո պատվիրաններին ու ցանկություններին և թողնելով մեղքը: Եշմարիտ ապաշխարությունը գալիս է Աստծո հանդեպ եղած սիրուց և նրա պատվիրաններին հնազանդվելու անկեղծ ցանկությունից: Բոլոր պատասխանատու մարդիկ մեղք են գործել և պետք է ապաշխարեն, որպեսզի առաջանան դեպի փրկություն: Միայն Հիսուս Քրիստոսի քավության միջոցով է, որ մեր ապաշխարությունը կարող է գործություն ունենալ և ընդունվել Աստծո կողմից:

Խոստովանվեք Տիրոջ առաջ՝ **Եզր. Ժ.11:** Հեռացրե՛ք ձեր գործերի չարությունը. դադարե՛ք չարություն գործելուց՝ **Ես. Ա.16:** Գարձի եկեք և ձեր բոլոր հանցանքներից ետ դարձե՛ք՝ **Եզեկ. ԺԸ.30–31:** Ապաշխարե՛ք, որ մոտեցել է երկնքի արքայությունը՝ **Մառ. Գ.2:** Երկնքում ուրախություն կա մեկ մեղավորի համար, որ ապաշխարում է՝ **Դուկ. ԺԵ.7:** Աստված պատվիրում է բոլոր մարդկանց, ամեն տեղ, ապաշխարել՝ **Գոթ. ԺԷ.30 (2 Նեփի 9.23, 3 Նեփի 11.31–40, ՎևոՒ 133.16):** Աստվածային տրամաբանություն ապաշխարություն է գործում փրկության համար՝ **Բ Կոր. Է.10:** Ամենակարող Տիրոջ Հոգին մեր սրտերում գորեղ փոփոխություն է առաջացրել, այնպես որ մենք այլևս հակված չենք չարիք անելու՝ **Մոսիս 5.2:** Եթե նա խոստովանի իր մեղքերը և ապաշխարի, նրան դու կենես՝ **Մոսիս 26.29:** Ալմայի բարոզից հետո շատ մարդիկ սկսեցին ապաշխարել՝ **Ալմա 14.1:** Մի հետաձգե՛ք ձեր ապաշխարության օրը՝ **Ալմա 34.33:** Ալման Հելամանին տվորեցրեց իր ապաշխարության և դարձի գալու մասին՝ **Ալմա 36 (Մոսիս 27.8–32):** Ապաշխարությունը չէր կարող գալ մարդկանց, եթե պատիժ չլիներ՝ **Ալմա 42.16:** Թող միայն քո մեղքերը խռովեն քեզ, այնպիսի խռովքով, որը քեզ ապաշխարության կրեթի՝ **Ալմա 42.9:** Որպես զոհ դուք պիտի մատուցեք ինձ կոտրված սիրտ և փշրված հոգի՝ **3 Նեփի 9.20:** Ով որ ապաշխարում է և գալիս ինձ մոտ, ինչպես մի փոքր երեխա, նրան ես կընդունեմ՝ **3 Նեփի 9.22:** Ապաշխարե՛ք, ով դուք, աշխարհի ծայրեր՝ **3 Նեփի 27.20:** Որքան հաճախ որ նրանք ապաշխարում էին, նրանք ներվում էին՝ **Մոր. 6.8:** Ոչինչ

մի ասեք այս սերնդին, բացի ապաշխարությունից՝ **ՎևոՒ 6.9 (ՎևոՒ 11.9):** Որքա՛ն մեծ է նրա ուրախությունն այն հոգու համար, որն ապաշխարում է՝ **ՎևոՒ 18.13:** Ամեն մարդ պետք է կա՛ն ապաշխարի, կա՛ն տառապի՝ **ՎևոՒ 19.4:** Նա, ով մեղք է գործում և չի ապաշխարում, դուք պիտի գզվի՝ **ՎևոՒ 42.28:** Նա, ով խոստովանում է ու թողնում իր մեղքերը, ներվում է՝ **ՎևոՒ 58.42–43:** Մահացածները, ովքեր ապաշխարում են, կփրկագվեն՝ **ՎևոՒ 138.58:** Մենք հավատում ենք ապաշխարությանը՝ **ՀՀ 1.4:**

ԱՊԱՎԻՆԵԼ: *Տե՛ս նաև* Հավատք.

Վստահություն

Հուսալ կամ վստահությունը դնել ինչ-որ մեկի կամ ինչ-որ բանի վրա: Հոգևոր հարցերում ապավինելը ներառում է հույսը դնել Աստծո և նրա Հոգու վրա:

Թեև ինձ սպանի, ես նրան եմ հուսալու՝ **Հոթ ԺԳ.15:** Տիրոջն ապավինիր քո բոլոր սրտով՝ **Առակ. Գ.5:** Աստված ազատեց իր ծառաներին, որոնք նրան ապավինեցին՝ **Դան. Գ.19–28:** Ես հավիտյան քեզ եմ ապավինելու՝ **2 Նեփի 4.34:** Ուրախացե՛ք և ապավինե՛ք Աստծուն՝ **Մոսիս 7.19:** Ով որ իր վստահությունը դնում է Աստծո վրա, պիտի բարձրացվի վերջին օրը՝ **Մոսիս 23.22:** Ովքեր որ դնեն իրենց վստահությունն Աստծո վրա, պիտի սատարվեն իրենց փորձանքների մեջ՝ **Ալմա 36.3, 27:** Մի ապավինիր մարմնի բազկին՝ **ՎևոՒ 1.19:** Ապավինիր այն Հոգուն, որն առաջնորդում է բարիք գործել՝ **ՎևոՒ 11.12:** Թող նա ապավինի ինձ, և ոչ ոք նրան չի կարկամեցնի՝ **ՎևոՒ 84.116:**

ԱՊՈԿԱԼԻՊՏԻՍ: *Տե՛ս նաև*

Հովհաննեսի Հայտնություն

Հայտնության գիրքը՝ վերջին գիրքը Նոր Կտակարանում. կարող է նշանակել ցանկացած այլ նշանակալից հայտնություն: Հուճարեն բառ, որը նշանակում է «հայտնված» կամ «բացահայտված»:

ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆ: *Տե՛ս նաև* Դև.

Մեղք. Տրտնջալ. Ուրացություն

Տիրոջն ընդոտանալը կամ ընդդիմանալը, այդ թվում՝ նրա ընտրյալ ղեկավարներին հետևելուց հրաժարվելը և գիտակցաբար նրա պատվիրաններին չհնազանդվելը:

Տիրոջ դեմ մի ապստամբք՝ **ԹՎ. ԺԳ.9:** Միշտ ապստամբություն է փնտրում չար մարդը՝ **Առակ. ԺԷ.11:** Վա՛յ ապստամբ զավակներին՝ **Ես. Լ.1:** Տերը չի փրկագնում այնպիսիներին, որոնք ապստամբում են նրա դեմ և մեռնում իրենց մեղքերի մեջ՝ **Մոսիա 15.26:** Անդիկիացիները դուրս էին եկել բացահայտ ապստամբության ընդդեմ Աստծո՝ **Ալմա 3.18–19:** Ապստամբները խորը վշտով պիտի խոցվեն՝ **ՎՆՈՒ 1.3:** Տիրոջ բարկությունը բռնկված է ապստամբների դեմ՝ **ՎՆՈՒ 56.1 (ՎՆՈՒ 63.1–6):** Մատանան ապստամբեց Աստծո դեմ՝ **Մովսես 4.3:**

ԱՌԱԿ: *Տե՛ս նաև* Ավետարաններ – Ավետարանների համաձայնությունը

Առակ բառը, ինչպես որ օգտագործվել է սուրբ գրքերում, ունի երկու իմաստ՝ (1) համառոտ բարոյախոսություն կամ խորհուրդ. (2) պարզ պատմություն, որն օգտագործվում է հոգևոր ճշմարտություն կամ սկզբունք լուսաբանելու կամ ուսուցանելու համար: Առակը հիմնված է հասարակ մի առարկա կամ մի իրադարձություն ճշմարտության հետ համեմատելու վրա, և դրա տակ թաքնված իմաստը կամ առակի պատգամը հաճախ մատչելի չէ այն լսողների համար, որոնք հոգով պատրաստ չեն այն ստանալու (Մատ. ԺԳ.10–17):

Հիսուսը հաճախ էր ուսուցանում առակներով: Նրա հիմնական առակների ցանկի համար տես «Ավետարաններ» բեման:

Առակաց գիրքը. Հին Կտակարանի գիրք, որը պարունակում է շատ առածներ, ասացվածքներ և բանաստեղծություններ, որոնցից մի քանիսը գրվել են Սողոմոնի կողմից: Առակաց գրքից շատ մեջբերումներ կան Նոր Կտակարանում:

Ա–Թ գլուխները բացատրություն են ճշմարիտ իմաստության մասին: Ժ–ԻԳ գլուխներն ասացվածքների հավաքածուներ են ճիշտ և սխալ ապրելակերպի վերաբերյալ: ԻԵ–ԻԹ գլուխները պարունակում են Սողոմոնի առակները, որոնք արձանագրել են Հուդայի թագավոր Եզեկիայի մարդիկ: Լ–ԼԱ գլուխները շարադրում են առաքինի կնոջ կյանքագիրք:

ԱՌԱՋԻՆ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ:
Տե՛ս նաև Հայտնություն. Նախագահ. Քահանայության բանալիները

Եկեղեցու Նախագահն իր Խորհրդականների հետ: Նրանք կազմում են երեք քահանայապետերի թվորում և նախագահում են ողջ Եկեղեցու վրա: Առաջին Նախագահությունը կրում է քահանայության բոլոր բանալիները:

Արքայության բանալիները միշտ պատկանում են Բարձրագույն Քահանայության Նախագահությանը՝ **ՎՆՈՒ 81.2:** Բարձրագույն Քահանայության Նախագահությունն իրավունք ունի պաշտոնավարելու բոլոր պաշտոններում՝ **ՎՆՈՒ 107.9, 22:** Ով որ ընդունում է ինձ, ընդունում է Առաջին Նախագահությանը՝ **ՎՆՈՒ 112.20, 30:** Առաջին Նախագահությունը պետք է պատգամներ [հայտնություններ] ստանա ամբողջ Եկեղեցու համար՝ **ՎՆՈՒ 124.126:**

ԱՌԱՋԻՆ ՏԵՍԻԼՔ: *Տե՛ս նաև*
 Ավետարանի վերականգնումը.
 Սմիթ Ջոզեֆ կրտսեր

Հայր Աստծո և նրա Որդի՝ Հիսուս Քրիստոսի հայտնվելը Մարգարե Ջոզեֆ Սմիթին ծառերի մի պուրակում:

1820 թվականի գարնանը Ջոզեֆ Սմիթ կրտսերը տասնհինգ տարեկան էր: Նա իր ընտանիքի հետ ապրում էր Նյու Յորքի Պլավմիթ շրջանում: Հայրակալ տնից դեպի արևմուտք, կարճ տարածության վրա, մեծ ծառերի մի պուրակ կար: Ջոզեֆը գնաց այդ տեղը, Աստծուն աղոթելու համար, որպեսզի իմանա, թե որ Եկեղեցին է ճշմարիտ: Կարդալով Աստվածաշունչը՝ նա զգացել էր, որ այդ պատասխանը պետք է խնդրի Աստծուց (Հակ. Ա.5–6): Ի պատասխան նրա աղոթքի, Հայրը և Որդին հայտնվեցին նրան և պատվիրեցին չմիանալ այն ժամանակ երկրի վրա գոյություն ունեցող ոչ մի եկեղեցու, քանի որ դրանք բոլորը սխալ էին (ՁՄ–Պ 1.15–20): Այդ սրբազան փորձառությամբ սկսվեցին մի շարք իրադարձություններ, որոնք իրականացրեցին ավետարանի և Քրիստոսի ճշմարիտ Եկեղեցու վերականգնումը:

ԱՌԱՋՆԵԿ: *Տե՛ս նաև*
 Անդրանիկություն. Հիսուս Քրիստոս

Հին նահապետների ժամանակ առաջնել որդուն էր տրվում անդրանիկությունը (Ծն. ԽԳ.33), և այդպիսով, նա ժառանգում էր ընտանիքի ղեկավարությունը հոր մահից հետո: Առաջնեցի պետք է

արժանի լիներ՝ այդ պատասխանատվությունն ստանձնելու (Ա Մն. Ե.1–2) և անիրավության դեպքում կարող էր կորցնել իր անդրամիկությունը:

Մովսեսի օրենքի ժամանակ ընդունված էր, որ անդրամիկ որդին Աստծուն է պատկանում: Առաջնեկն իր հոր ուսեցվածքից կրկնակի բաժին էր ստանում (Բ Օր. ԻԱ.17): Իր հոր մահից հետո, նա պատասխանատու էր մոր և քույրերի մասին հոգալու համար:

Անասունների արու առաջնեկը ևս պատկանում էր Աստծուն: Մաքուր կենդանիներին օգտագործում էին գոհաբերությունների համար, իսկ անմաքուր կենդանիները պետք է փրկագվեին կամ վաճառվեին կամ մորթվեին (Ել. ԺԳ.2, 11–13, ԼԳ.19–20, Ղև. ԻԷ.11–13, 26–27):

Առաջնեկը խորհրդանշում էր Հիսուս Քրիստոսին և նրա երկրային ծառայությունը, մարդկանց հիշեցնելով, որ մեծ Մեսիան պիտի գա (Մովսես 5.4–8, 6.63):

Հիսուսն անդրամիկն է մեր Երկնային Հոր հոգեղեն զավակների մեջ՝ Հոր Միածինը մարմնում, և առաջինը, որ մեռելներից բարձրանալով պիտի հարություն առներ (Կող. Ա.13–18): Հավերժության մեջ հավատարիմ Սրբերը դառնում են Անդրամիկի Եկեղեցու անդամները (ՎևոՒ 93.21–22):

Քո որդիների անդրամիկներն ինձ պիտի տաս՝ **Ել.** ԻԲ.29: Իսրայելի մեջ բոլոր առաջնեկներին սրբեցի ինձ համար՝ **Թվ.** Գ.13: Որ նա անդրամիկ լինի շատ եղբայրների մեջ՝ **Հռովմ.** Ը.29: Նա անդրամիկն աշխարհ է մտցնում՝ **Եբր.** Ա.6: Այդ նրանք են, որ Անդրամիկի Եկեղեցին են՝ **ՎևոՒ** 76.54, 94: Այն ինձ շնորհել էր հայրերի կողմից, այսինքն՝ իրավունքն անդրամիկի՝ **Աբր.** 1.3:

ԱՌԱՔԻՆՈՒԹՅՈՒՆ: *Տե՛ս նաև*

Չորություն. Մաքրաբարոյություն.

Շիտակություն

Շիտակություն և բարոյական գերազանցություն, ուժ և զորություն (Դուկ. Ը.46) կամ սեռական անարատություն (Մոր. 9.9):

Դու մի առաքինի կին ես՝ **Հռուք Գ.11:** Նա, ով ունի սուրբ ձեռքեր և անարատ սիրտ, կկանգնի Տիրոջ սրբության տեղում՝ **Մաղ.**

ԻԳ.3–4: Առաքինի կինը պսակ է իր անուսնու համար՝ **Առաք. ԺԲ.4:** Առաքինի կնոջ գինը գոհարներից ավելի է՝ **Առաք. ԼԱ.10–31:** Չեր հավատքին ավելացրեք առաքինություն՝ **Բ Պետ. 1.5** (ՎևոՒ 4.6): Փորձեք Աստծո խոսքի առաքինությունը՝ **Ալմս 31.5:** Թող առաքինությունը շարունակ գարդարի բո մաքերը՝ **ՎևոՒ 121.45:** Մենք հավատում ենք առաքինի լինելուն՝ **ՀՀ 1.13** (Փիլ. Դ.8):

ԱՌԱՔՅԱԼ: *Տե՛ս նաև* Աշակերտ.

Հայտնություն

Այն կոչումը, որը Հիսուսը տվեց Տասներկուսին, որոնց նա ընտրեց և կարգեց, որ լինեն իր մերձավոր աշակերտներն ու օգնականները երկրային իր ծառայության ժամանակ (Դուկ. Զ.13, Հովի. ԻԵ.16): Նա առաջ ուղարկեց նրանց, որ իր ներկայացուցիչները լինեն և ծառայեն նրա փոխարեն դեպի երկինք իր համբարձվելուց հետո: Ե՛վ հնում, և՛ այսօր, վերականգնված Եկեղեցու Տասներկու Առաքյալների Քվորումում, Առաքյալը Հիսուս Քրիստոսի հատուկ վկան է ողջ աշխարհում՝ նրա աստվածայնության և մեռելներից նրա հարության մասին վկայելու համար (Գոր. Ա.22, ՎևոՒ 107.23):

Քրիստոսի եկեղեցին կառուցված է Առաքյալների և մարգարեների հիմքի վրա՝ **Եփես. Բ.20, Դ.11:** Լեքին և Նեփին տեսան Տասներկու Առաքյալներին, որոնք հետևում էին Հիսուսին՝ **1 Նեփի 1.10, 11.34:** Առաքյալները պետք է դատեն Իսրայելի տունը՝ **Մորմ. 3.18:** Նրանք, ովքեր ուշք չեն դարձնում մարգարեների և առաքյալների խոսքերին, պիտի կորվեն՝ **ՎևոՒ 1.14** (3 Նեփի 12.1): Հայտնի դարձվեց Տասներկուսի կոչումը և առաքելությունը՝ **ՎևոՒ 18.26–36:** Ջոզեֆ Սմիթն Առաքյալ կարգվեց՝ **ՎևոՒ 20.2, 21.1:** Առաքյալները Քրիստոսի անվան հատուկ վկաներ են և կրում են ծառայության բանալիները՝ **ՎևոՒ 27.12** (ՎևոՒ 112.30–32): Տասներկու Առաքյալները կազմում են թվորում, որն իշխանությանը ու զորությանը հավասար է Առաջին Նախագահությանը՝ **ՎևոՒ 107.23–24:** Տասներկուսը համարվում են ճանփորդող Նախագահող Բարձրագույն Խորհուրդ՝ **ՎևոՒ 107.33:** Առաքյալները կրում են միախոնրակաճ աշխատանքների բանա-

լիները՝ **ՎԼՈՒ** 107.35: Նկարագրվում են Առաքյալների որոշ պարտականությունները՝ **ՎԼՈՒ** 107.58: Ես ասում եմ բոլոր Տասներկուսին. հետևեք ինձ և արածեցրեք իմ ոչխարները՝ **ՎԼՈՒ** 112.14–15: Մենք հավատում ենք Առաքյալներին՝ **ՀՀ** 1.6:

Առաքյալների ընտրությունը. Առաքյալներն ընտրվում են Տիրոջ կողմից (Հովհ. 2.71, ԺԵ.16):

Իր աշակերտներին, Հիսուսն ընտրեց տասներկու Առաքյալների՝ **Ղուկ.** 2.13–16: Մատաթիան ընտրվեց Առաքյալ լինելու՝ **Գոր.** Ա.21–26: Օլիվեր Քառուղերիին և Գեյվիդ Ուիթմերին պատվիրվեց գտնել Տասներկուսին՝ **ՎԼՈՒ** 18.37–39:

ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ: *Տե՛ս*
Իմաստության Խոսք

ԱՍՍ

Հին Կտակարանում՝ Հուդայի երրորդ թագավորը: Սուրբ գրքերն արձանագրում են, որ նրա «սիրտն ուղիղ էր Տիրոջ հետ իր բոլոր օրերում» (Գ.Թագ. ԺԵ.14): Իր թագավորության ժամանակ նա բարձրացրեց բանակի մարտունակությունը, վայր գցեց Եթովպացիների լուծը, վերացրեց սուտ կուռքերին և ժողովրդին հորդորեց Եհովային փնտրելու ուխտ անել: (Գ.Թագ. ԺԵ–ԺԶ, Բ Մն. ԺԳ–ԺԶ): Սակայն, երբ նա ոտքերից հիվանդացավ, նա չխնդրեց Տիրոջ օգնությունը և մահացավ (Գ.Թագ. ԺԵ.23–24, Բ Մն. ԺԶ.12–13):

ԱՍԵՐ: *Տե՛ս նաև* Իսրայել. Հակոբ՝
Իսահակի որդի

Հին Կտակարանում՝ Հակոբի և Լիայի աղայիսին Ձեղփայի որդին (Ճն. Լ.12–13):

Ասերի ցեղը: Հակոբն օրհնեց Ասերին (Ճն. ԽԹ.20), և Մովսեսն օրհնեց Ասերի սերունդներին (Բ Օր. ԼԳ.1, 24–29): Այդ սերունդները կոչվեցին «քաջագուններ» (Ա Մն. Է.40):

ԱՍՈՐԵՍԱՆ

Հնագույն կայսրություն, որը Հին Կտակարանի ժամանակներում իր այսոյան Բաբելոնի հետ իշխում էր Ասորիքի և Պաղեստինի հին մահանգներից շատերի վրա: Չմայած որ Ասորեստանցիները մեծ ուժ ունեին Ք.ծ.ա. 12-րդ դարից

մինչև Ք.ծ.ա. 7-րդ դարը, նրանք երբեք ի վիճակի չեղան հիմնելու հաստատուն քաղաքական հասարակարգ: Նրանք իշխում էին ահաբեկչությանը՝ կրակով ու սրով ջախջախելով իրենց բշտամիներին կամ թուլացնելով նրանց՝ կայսրության ծայրամասերը վտարելով բնակչության հոծ զանգվածներ: Նրանց հպատակները երբեք չդադարեցին նրանց ախտյանները լինելուց, և կայսրության ողջ պատմությունն ուղեկցվեց անդադար խռովություններով: (Տե՛ս Դ.Թագ. ԺԼ–ԺԹ, Բ Մն. ԼԲ, Ես. Է.17–20, Ժ, ԺԹ, ԼԷ):

ԱՍՏՈՒ ԱՐՔԱՅՈՒԹՅՈՒՆ ԿԱՍ
ԵՐԿՆՔԻ ԱՐՔԱՅՈՒԹՅՈՒՆ:

Տե՛ս նաև Հիսուս Քրիստոսի
Եկեղեցի. Մելեստիալ փառք

Աստծո արքայությունը երկրի վրա Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին է (ՎԼՈՒ 65): Եկեղեցու նպատակն է՝ իր անդամներին նախապատրաստել հավերժ ապրելու սելեստիալ արքայությունում կամ երկնքի արքայությունում: Այնուամենայնիվ, սուրբ գրքերում Եկեղեցին երբեմն կոչվում է երկնքի արքայություն, ինչը նշանակում է, որ Եկեղեցին երկնքի արքայությունն է երկրի վրա:

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին Աստծո արքայությունն է երկրի վրա, բայց ներկայումս այն սահմանափակված է հոգևոր թագավորությամբ: Հազարամյակի ժամանակ, Աստծո արքայությունը լինելու է և՛ քաղաքացիական, և՛ հոգևոր:

Տերն է թագավոր հավիտյան հավիտենից՝ **Մադ.** Ժ.16 (Մադ. ԺԱ.4): Երկնքի Աստվածը մի թագավորություն կիսատասի, որը երբեք չի կործանվի՝ **Դճն.** Բ.44 (ՎԼՈՒ 138.44): Ապաշխարեք, որովհետև երկնքի արքայությունը մոտեցել է՝ **Մատ.** Գ.2 (Մատ. Գ.17): Քո արքայությունը թող գա, քո կամքը թող կատարվի երկրի վրա՝ **Մատ.** 2.10: Առաջ Աստծո արքայությունը փնտրեք՝ **Մատ.** 2.33 (3 Նեփի 13.33): Ես կտամ քեզ արքայության բանալիները՝ **Մատ.** ԺԶ.19: Եկեք, ժառանգեք ձեզ համար պատրաստված թագավորությունը՝ **Մատ.** ԻԵ.34: Երբ ես կճաշակեմ հաղորդությունը ձեզ հետ իմ Հոր արքայության մեջ՝ **Մատ.** ԻԶ.26–29: Դուք կտեսնեք բոլոր մարգարեներին Աստծո արքայության

մեջ՝ **Ղուկ. ԺԳ.28:** Անհրավներն Աստծոն արքայությունը չեն ժառանգի՝ **Ա Կոր. 2:9:** Մարմինն ու արյունը չեն կարող ժառանգել Աստծոն արքայությունը՝ **Ա Կոր. ԺԵ.50:** Նախքան հարստություններ որոնելը, որոնեք Աստծոն արքայությունը՝ **Հակոբ 2:18:** Ոչ մի անմաքուր բան չի կարող ժառանգել երկնի արքայությունը՝ **Ալմա 11:37:** Որ դու կարողանաս նրանց հետ հանգստանալ իմ Հոր արքայության մեջ՝ **ՎևոՒ 15:6:** Արքայությունը, կամ Եկեղեցու բանալիները, տրվել են ձեզ՝ **ՎևոՒ 42:69 (ՎևոՒ 65:2):** Թող Աստծոն արքայությունն առաջ գնա, որ երկնքի արքայությունը զա՝ **ՎևոՒ 65:5–6:** Այս արքայության բանալիները երբեք քեզանից չեն վերցվի՝ **ՎևոՒ 90:3:** Ով որ ընդունում է քեզ, ինչպես մի փոքր երեխա, ընդունում է իմ արքայությունը՝ **ՎևոՒ 99:3:** Այսպես պիտի կոչվի իմ Եկեղեցին վերջին օրերին, այսինքն՝ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցի՝ **ՎևոՒ 115:4:** Երկիրները բացվեցին, և ես տեսա Աստծոն սելեւստիալ արքայությունը՝ **ՎևոՒ 137:1–4:**

ԱՍՏՈՆ ԳԱՌԸ: *Տե՛ս նաև* Չատիկ. Հիսուս Քրիստոս. Բավել, Բավություն

Փրկչին տրված մի անուն, որն ակնարկում է Հիսուսին, որպես մեզ համար մատուցված գոհաբերության ընձա:

Նա բերվում է ինչպես մի գառ, որ մորթվելու է տարվում՝ **Ես. ԾԳ.7 (Մոսիա 14.7):** Ահա Աստծոն Գառը, որը վեր է առնում աշխարհի մեղքը՝ **Հովհ. Ա.29 (Ալմա 7.14):** Դուք փրկագնվել եք Քրիստոսի պատվական արյունով, ինչպես մի անարատ գառի՝ **Ա Պետ. Ա.18–20:** Արժանի է մորթված Գառը՝ **Հայտ. Ե.12:** Մենք հաղթում ենք Սատանային Գառի արյունով՝ **Հայտ. ԺԲ.11:** Սրանք ձերմակ են դարձել Գառի արյունով՝ նրա հանդեպ նրանց հավատքի շնորհիվ՝ **1 Նեփի 12.11:** Աստծոն Գառը Հավերժական Հոր Որդին է և աշխարհի Փրկիչը՝ **1 Նեփի 13.40 (1 Նեփի 11.21):** Ուժգնորեն աղաղակեք առ Հայրը՝ Հիսուսի անունով, որ, միգուցե, դուք կարողանաք մաքրվել Գառի արյամբ՝ **Մորմ. 9.6 (Հայտ. Է.14, Ալմա 34.36):** Մարդու Որդին Գառն է, որը մորթվել է աշխարհի հիմնադրումից ի վեր՝ **Մովսես 7.47:**

ԱՍՏՈՆ ԶՍՎԱԿՆԵՐ: *Տե՛ս* Աստծոն որդիներն ու դուստրերը. Մարդ, Մարդիկ

ԱՍՏՈՆ ԽՈՍՔԸ: *Տե՛ս նաև* Հայտնություն. Պատվիրաններն Աստծոն. Սուրբ գրքեր

Աստծուց ստացված հրահանգներ, պատվիրաններ կամ ուղերձներ: Աստծոն զավակները կարող են նրա խոսքը ստանալ անմիջական հայտնությամբ, Հոգու միջոցով կամ իր ընտրյալ ծառաների միջոցով (ՎևոՒ 1.38):

Տիրոջ բերանից դուրս եկած ամեն բանով մարդ կապրի՝ **Բ Օր. Ը.3 (Մատ. Դ.4, ՎևոՒ 84.43–44):** Քո խոսքը ճրագ է իմ ուռների համար և լույս՝ իմ ճանապարհի համար՝ **Սաղ. ԴժԹ.105:** Նրանք բոլորը Սուրբ Հոգով լցվեցին և Աստծոն խոսքը խոսում էին համարձակորեն՝ **Գոր. Դ.31–33:** Երկաթյա ձողն Աստծոն խոսքն էր, որն առաջնորդում էր դեպի կյանքի ծառը՝ **1 Նեփի 11.25 (1 Նեփի 15.23–25):** Դուք անզգայացած էիք, որպեսզի կարողանալիք զգալ նրա խոսքերը՝ **1 Նեփի 17.45–46:** Վա՛յ նրան, ով մերժում է Աստծոն խոսքը՝ **2 Նեփի 27.14 (2 Նեփի 28.29, Եթեր 4.8):** Առաջ մղվեք՝ սնվելով Քրիստոսի խոսքով՝ **2 Նեփի 31.20 (2 Նեփի 32.3):** Իրենց անհավատության պատճառով, նրանք չէին հասկանում Աստծոն խոսքը՝ **Մոսիա 26.3 (Ալմա 12.10):** Նրանք ջանասիրաբար քննել էին սուրբ գրքերը, որպեսզի իմանային Աստծոն խոսքը՝ **Ալմա 17.2:** Փորձիր Աստծոն խոսքի առաքիներությունը՝ **Ալմա 31.5:** Ալման Աստծոն խոսքը համեմատել է սերմի հետ՝ **Ալմա 32.28–43:** Ինչ որ նրանք խոսեն, երբ շարժվում են Սուրբ Հոգով, պիտի լինի Տիրոջ խոսքը՝ **ՎևոՒ 68.4:** Ապրեք Աստծոն բերանից դուրս եկող ամեն մի խոսքով՝ **ՎևոՒ 84.44–45:** Նա, ով զանձում է իմ խոսքը, չի մոլորվի՝ **ԶՍ–Մ 1.37:**

ԱՍՏՈՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ

Աստծոն խորհուրդները հոգևոր ճշմարտություններ են, որոնք տրվում են միայն հայտնությամբ: Աստված իր խորհուրդները հայտնում է նրանց, ովքեր հնազանդ են ավետարանին: Աստծոն որոշ խորհուրդներ դեռևս հայտնի պիտի դառնան:

Ձեզ տրված է իմանալ երկնքի արքայու-

քյան խորհուրդները՝ **Մատ. ԺԳ.11**: Եթե բոլոր խորհուրդներն իմանան, բայց գթություն չունենան, ոչինչ են՝ **Ա Կոր. ԺԳ.2**: Նեփին մեծ գիտելիքներ ուներ Աստծո խորհուրդների մասին՝ **1 Նեփի 1.1**: Շատերին է տրված իմանալ Աստծո խորհուրդները՝ **Ալմա 12.9**: Այդպիսինե-րին տրված է իմանալ Աստծո խորհուրդ-ները՝ **Ալմա 26.22**: Այս խորհուրդները դեռ լիովին հայտնի չեն դարձվել ինձ՝ **Ալմա 37.11**: Շատ խորհուրդներ կան, որոնք ոչ ոք չգիտի, բացի Աստծուց՝ **Ալմա 40.3**: Ի՜նչ մեծ է աստվածայնու-թյան խորհուրդը՝ **ՎևոՒ 19.10**: Եթե խնդրես, դու կստանաս հայտնություն և կիմանաս արքայության խորհուրդները՝ **ՎևոՒ 42.61, 65** (Ա Կոր. Բ.7, 11-14): Նրան, ով պահում է իմ պատվիրանները, կտրվեն արքայության խորհուրդները՝ **ՎևոՒ 63.23**: Ես բոլոր խորհուրդները հայտնի կդարձնեմ նրանց՝ **ՎևոՒ 76.7**: Մեծագույն քահանայությունը կրում է խորհուրդների բանալիները՝ **ՎևոՒ 84.19**: Իր գալստի ժամանակ Տերը հայտնի կդարձնի քաքաված բաներ, որոնք ոչ ոք չի իմացել՝ **ՎևոՒ 101.32-33**: Մելքիսե-ղեկյան Քահանայությունն արքայության խորհուրդները ստանալու առանձնաշ-նորին ունենալու է՝ **ՎևոՒ 107.19**:

ԱՍՏԾՈ ՈՐԳԻ: *Տե՛ս* Աստված, Աստվածություն. Հիսուս Քրիստոս

ԱՍՏԾՈ ՈՐԳԻՆՆԵՐՆ ՈՒ ԳՈՒՍՏՐԵՐԸ: *Տե՛ս նաև* Ծնված. Մարդ, Մարդիկ. Վերստին ծնված, Աստծուց ծնված. Քավել, Քավություն. Քրիստոսի գավակները.

Սուրբ գրքերում այս տերմինն օգտա-գործվում է երկու ձևով: Մի իմաստով՝ մենք բոլորս, բառացիորեն, մեր Երկնա-յին Հոր գավակներն ենք: Մեկ այլ իմաս-տով՝ Աստծո որդիներն ու դուստրերը նրանք են, ովքեր վերստին ծնվել են Քրիստոսի քավության միջոցով:

Հոր հոգեղեն գավակները. Գուր աստված-ներ եք և Բարձրյալի գավակները՝ **Մաղ. ԺԲ.6**: Մենք Աստծո ազգից ենք՝ **Գոր. ԺԲ.29**: Հնազանդվեք հոգիների Հորը՝ **Եբր. ԺԲ.9**: Ես Աստծո որդի եմ՝ **Մովսես 1.13**:

Քավության միջոցով վերստին ծնված գա-վակներ. Նրանց, ովքեր ընդունեցին նրան,

իշխանություն տվեց Աստծո որդիներ լի-նելու՝ **Հովհ. Ա.12** (Հռովմ. Ը.14, 3 Նեփի 9.17, ՎևոՒ 11.30): Հիմա Աստծո որդիք ենք՝ **Ա Հովհ. Գ.1-2**: Գուր կկոչվեք Քրիստոսի գավակներ՝ նրա որդիներն ու նրա դուստրերը՝ **Մոսիա 5.7**: Բոլոր մարդիկ պետք է վերստին ծնվեն դառնա-լով նրա որդիներն ու դուստրերը՝ **Մոսիա 27.25**: Նրանք կդառնան իմ որդիներն ու իմ դուստրերը՝ **Եթեր 3.14**: Գուր, անշուշտ, կլինեք Քրիստոսի գավակը՝ **Մոր. 7.19**: Բոլոր նրանք, ովքեր ընդունում են իմ ավետարանը, որդիներ և դուստրեր են՝ **ՎևոՒ 25.1**: Նրանք աստվածներ են, այ-սինքն՝ Աստծո որդիներ՝ **ՎևոՒ 76.58**: Այդպիսով բոլորը կարող են դառնալ իմ որդիները՝ **Մովսես 6.68**: Շատերն են հավատացել և դարձել Աստծո որդիները՝ **Մովսես 7.1**:

ԱՍՏՎԱԾ, ԱՍՏՎԱԾԱԳԼՈՒԽ: *Տե՛ս նաև* Հայր Երկնային. Հիսուս Քրիստոս. Սուրբ Հոգի. Տեր

Աստվածազլխում կան երեք առանձին անձնավորություններ՝ Աստված՝ Հավեր-ժական Հայրը. նրա Որդին՝ Հիսուս Քրիստոսը. և Սուրբ Հոգին: Մենք հավա-տում ենք նրանցից յուրաքանչյուրին (ՀՀ 1.1): Վերջին օրերի հայտնություններից մենք սովորում ենք, որ Հայրը և Որդին ունեն շոշափելի մարմին՝ մսից և ոսկո-րից, և որ Սուրբ Հոգին հոգեղեն անձնա-վորություն է՝ առանց մսի և ոսկրի (ՎևոՒ 130.22-23): Այս երեք անձնավորու-թյունները մեկ են՝ նպատակի և վարդա-պետության կատարյալ միության մեջ ու ներդաշնակության մեջ (Հովհ. ԺԷ.21-23, 2 Նեփի 31.21, 3 Նեփի 11.27, 36):

Աստված Հայրը. Հիմնականում Հայրն է, կամ Էլոհիմը, որին դիմում ենք Աստված տիտղոսով: Նրան անվանում ենք Հայր, որովհետև նա մեր հոգիների Հայրն է (Մաղ. Բ.10, Թվ. ԺԶ.22, ԻԷ.16, Մատ. Զ.9, Եփես. Գ.6, Եբր. ԺԲ.9): Հայր Աստվածը տիեզերքի գերագույն կառավարիչն է: Նա ամենագոր է (Ծն. ԺԸ.14, Ալմա 26.35, ՎևոՒ 19.1-3), ամենազետ (Մատ. Զ.8, 2 Նեփի 2.24) և ամենուրեք ներկա է իր Հոգով (Մաղ. ԸԼԹ.7-12, ՎևոՒ 88.7-13, 41): Մարդկությունն առանձնահատուկ կապ ունի Աստծո հետ, ինչը մարդուն առանձնացնում է բոլոր մյուս ստեղծված

բաներից. տղամարդիկ և կանայք Աստծո հոգեղեն զավակներն են (Մառ. ՉԲ.6, Ա Հովհ. Գ.1-3, ՎևոՒ 20.17-18):

Հայր Աստծո կողմից մարդուն հայտնվելու կամ խոսելու մի քանի դեպքեր կան արձանագրված: Սուրբ գրքերն ասում են, որ նա խոսեց Ադամի և Եվայի հետ (Մովսիս 4.14-31) և մի քանի անգամ ներկայացրեց Հիսուս Քրիստոսին (Մատ. Գ.17, ԺԷ.5, Հովհ. ԺԲ.28-29, 3 Նեփի 11.3-7): Նա հայտնվեց Ստեփանոսին (Գոր. Է.55) և Չոզեֆ Սմիթին (ՋՍ-Պ 1.17): Ավելի ուշ նա հայտնվեց է՝ Չոզեֆ Սմիթին, և՛ Սիդնի Ռիզոնին (ՎևոՒ 76.20, 23): Նրանց, ովքեր սիրում են Աստծուն և մաքրագործվում են նրա առաջ, Աստված երբեմն տալիս է արտուներթյուն, որ իրենց համար տեսնեն և ճանաչեն, որ նա է Աստվածը (Մատ. Ե.8, 3 Նեփի 12.8, ՎևոՒ 76.116-118, 93.1):

Ին Աստված, ին Աստված, ինչն՞ու թողիր ինձ՝ **Մար.** ԺԵ.34: Այս մարդիկ Բարձրյալ Աստծո ծառայողներն են՝ **Գոր.** ԺԶ.17: Մենք Աստծո ազգից ենք՝ **Գոր.** ԺԷ.28-29: Դու պետք է քո հաղորդությունները մատուցես Բարձրյալին՝ **ՎևոՒ 59.10-12:** Ենովքը տեսավ ոգիներին, որոնց Աստված ստեղծել էր՝ **Մովսես 6.36:** Մրբության Մարդ է նրա անունը՝ **Մովսես 6.57:**

Աստված Որդին. Աստված, որը հայտնի է որպես Եհովա՝ Որդին է՝ Հիսուս Քրիստոսը (Ես. ԺԲ.2, ԽԳ.11, ԽԹ.26, Ա Կոր. Ժ.1-4, Ա Տիմ. Ա.1, Հայտ. Ա.8, 2 Նեփի 22.2): Հիսուսը գործում է Հոր դեկավարությամբ և կատարելապես ներդաշնակ է նրա հետ: Բոլոր մարդիկ նրա եղբայրներն ու քույրերն են, քանի որ նա Էլոհիմի հոգեղեն զավակներից ավագն է: Սուրբ գրքերի որոշ հղումներ նրան դիմում են *Աստված* բառով: Օրինակ՝ սուրբ գրությունն ասում է, որ «Աստված ստեղծեց երկինքը և երկիրը» (Ճճ. Ա.1), բայց իրականում դա Հիսուսն էր, որը Ստեղծողն էր՝ Հայր Աստծո դեկավարության ներքո (Հովհ. Ա.1-3, 10, 14, Եբր. Ա.1-2):

Տերը հայտնեց իր ինքնությունը, որպես ԵՍ ԵՄ **Ել.** Գ.13-16: Ես եմ Տերը [Եհովան], և ինձամից բացի փրկիչ չկա՝ **Ես.** ԽԳ.11 (Ես. ԽԵ.23): Ես եմ աշխարհի լույսը՝ **Հովհ. Ը.12:** Արքահամի լինելոյց առաջ Ես եմ՝ **Հովհ. Ը.58:** Տերը կծառայի մարդ-

կանց մեջ կավե տաղավարում՝ **Մոսիս 3.5-10:** Աբինադին բացատրել է, թե ինչպես Քրիստոսը Հայրն է և Որդին՝ **Մոսիս 15.1-4** (Եբեր 3.14): Տերը հայտնվեց Հարեդի եղբորը՝ **Եբեր 3:** Լսեք Քրիստոսի՝ ձեր Տիրոջ և ձեր Աստծո ձայնը՝ **Մոր.** 8.8: Եհովան ողջերի և մեռածների դատավորն է՝ **Մոր.** 10.34: Հիսուսը հայտնվեց Չոզեֆ Սմիթին և Սիդնի Ռիզոնին՝ **ՎևոՒ 76.20, 23:** Տեր Եհովան հայտնվեց Կիրթլենդի Տաճարում՝ **ՎևոՒ 110.1-4:** Եհովան խոսեց Արքահամի հետ՝ **Աբր.** 1.16-19: Հիսուսը հայտնվեց Չոզեֆ Սմիթին՝ **ՋՍ-Պ 1.17:**

Աստված Սուրբ Հոգին. Սուրբ Հոգին նույնպես Աստված է, և նրան դիմում են Հոգի, Աստծո Հոգի և այլ մեանամիպ անուններով ու տիտղոսներով: Սուրբ Հոգու օգնությամբ մարդ կարող է իմանալ Հայր Աստծո կամքը և իմանալ, որ Հիսուսը Քրիստոսն է (Ա Կոր. ԺԲ.3):

Սուրբ Հոգին ձեզ կսովորեցնի, թե ինչ պիտի խոսեք՝ **Ղուկ.** ԺԲ.12: Սուրբ Հոգին Միսիթարիչն է՝ **Հովհ. ԺԳ.26** (Հովհ. ԺԶ.7-15): Սուրբ Հոգու միջոցով Հիսուսը պատվիրաններ էր տալիս Առաքյալներին՝ **Գոր.** Ա.2: Սուրբ Հոգին վկայում է Աստծո և Քրիստոսի մասին՝ **Գոր.** Ե.29-32 (Ա Կոր. ԺԲ.3): Սուրբ Հոգին նույնպես վկայում է մեզ՝ **Եբր.** Ժ.10-17: Սուրբ Հոգու գործությամբ դուք կարող եք իմանալ ճշմարտությունը բոլոր բաների մասին՝ **Մոր.** 10.5: Սուրբ Հոգին հայտնության ոգին է՝ **ՎևոՒ 8.2-3** (ՎևոՒ 68.4):

ԱՄՏՎԱԾԱՇՈՒՆԶ: Տե՛ս նաև

Եփրեմ – Եփրեմի կամ Հովսեփի փայտը. Կանոնական Գրքեր. Հին Կտակարան. Հուդա – Հուդայի փայտը. Նոր Կտակարան. Պարակաճող Գրքեր. Սուրբ գրքեր

Եբրայական և Քրիստոնեական գրությունների հավաքածու, որոնք պարունակում են աստվածային հայտնություններ: Աստվածաշունչը շատ մարգարեների և ոգեշնչված մատենագիրների աշխատանք է, որոնք գործել են Սուրբ Հոգու ազդեցության ներքո (Բ Պետ. Ա.21):

Քրիստոնեական Աստվածաշունչն ունի երկու բաժին, որոնք սովորաբար կոչվում են Հին և Նոր Կտակարաններ: Հին Կտակարանը բաղկացած է սուրբ գրքերից,

որոնք օգտագործվում էին Պաղեստինի հրեաների կողմից Տիրոջ երկրային ծառայության ժամանակ: Նոր Կտակարանը պարունակում է Առաքելական դարաշրջանին պատկանող գրություններ, որոնք համարվում են նույնքան սուրբ և հեղինակավոր, որքան հրեաների սուրբ գրքերը: Հին Կտակարանի գրքերը վերցվել են շատ դարերով ձգվող ազգային գրականությունից և գրեթե ամբողջությամբ գրված են եղել եբրայերեն, մինչդեռ Նոր Կտակարանի գրքերը մեկ սերնդի աշխատանքներ են և հիմնականում գրվել են հունարեն:

Կտակարան բառը Հին Կտակարանում ներկայացնում է եբրայերեն մի բառ, որը նշանակում է «ուխտ»: Հին Ուխտն այն օրենքն է, որը տրվեց Մովսեսին, երբ Իսրայելը մերժեց ավետարանի լրիվությունը, որն Աստծո ժողովուրդն ունեցել էր մահկանացության սկզբից ի վեր: Նոր Ուխտը Հիսուս Քրիստոսի կողմից ուսուցանված ավետարանն է:

Եբրայեցիների Աստվածաշնչում (Հին Կտակարանում) գրքերը բաժանված էին երեք խմբի՝ Օրենք, Մարգարեներ և Գրություններ: Քրիստոնեական աշխարհում օգտագործվող Աստվածաշնչի գրքերը դասակարգվում են ըստ համապատասխան թեմաների, ինչպես օրինակ՝ պատմական, բանաստեղծական և մարգարեական:

Նոր Կտակարանի գրքերը հիմնականում ունեն հետևյալ հերթականությունը՝ չորս Ավետարանները և Գործքը: Պողոսի թղթերը, Հակոբոսի, Պետրոսի, Հովհաննեսի և Հուդայի ընդհանրական թղթերը, և Հովհաննեսի Հայտնությունը:

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին հարգում ու պատվում է Աստվածաշունչը և նաև պնդում, որ Տերը շարունակում է լրացուցիչ Հայտնություններ տալ իր վերջին օրերի մարգարեների միջոցով, որոնք պաշտպանում և հաստատում են մարդկության հետ ունեցած Աստծո գործերի վերաբերյալ աստվածաշնչի արձանագրությունները:

Հուդայի փայտը (Աստվածաշունչը) և Հովսեփի փայտը (Մորմոնի Գիրքը) մեկ կղառնան Տիրոջ ձեռքում՝ **Եզեկ**, Լ.է.15–20: Աստվածաշնչի ճշմարտացիությունը կհաստատվի վերջին օրերի սուրբ գրքերի կողմից՝ **1 Նեփի** 13.38–40: Աստվածա-

շունչը և Մորմոնի Գիրքը կսերտանան, որպեսզի վերացնեն կեղծ վարդապետությունները՝ **2 Նեփի** 3.12: Աստվածաշունչ, Աստվածաշունչ: Մենք ունենք Աստվածաշունչ **2 Նեփի** 29.3–10: Բոլորը, ովքեր հավատում են Աստվածաշնչին, կհավատան նաև Մորմոնի Գրքին՝ **Մորմ.** 7.8–10: Երեցները պետք է ուսուցանեն իմ ավետարանի սկզբունքները, որոնք Աստվածաշնչի և Մորմոնի Գրքի մեջ են՝ **Վևո** 42.12: Մենք հավատում ենք, որ Աստվածաշունչն Աստծո խոսքն է, որքան որ այն ճիշտ է քարգմանված՝ **ՀՀ** 1.8:

ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ՝ ՋՈՋԵԾ
ՍՄԻԹԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ
(ՋՄԹ): *Տե՛ս* Ջոզեֆ Սմիթի Թարգմանություն (ՋՄԹ)

ԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ: *Տե՛ս* Հավերժական կյանք, Մարդ, Մարդիկ – Մարդ՝ Երկնային Հոր նման դառնալու ներուժը. Վեհացում

ԱՎԱՆԳՈՒԹՅՈՒՆՆԵՐ
 Գավանանքներ և սովորույթներ, որոնք փոխանցվում են մի սերնդից մյուսին (Բ Թես. Բ.15): Սուրբ գրքերում Տերը շարունակ գոյացնում է արդարներից, որ խոսափեն մարդկանց շար ավանդություններից (Գև. ԺԸ.30, Մար. Է.6–8, Մոսիա 1.5, Վևո 93.39–40):

ԱՎԵՏԱՐԱՆ: *Տե՛ս նաև* Տնտեսություն. Փրկագնման ծրագիր. Քրիստոսի վարդապետությունը

Աստծո փրկության ծրագիրը, որը հնարավոր է դարձել Հիսուս Քրիստոսի քավության միջոցով: Ավետարանն իր մեջ ընդգրկում է հավերժական ճշմարտություններ կամ օրենքներ, ուխտեր և արարողություններ, որոնք մարդկությանն անհրաժեշտ են կրկին Աստծո ներկայությունը մտնելու համար: Տասնիններորդ դարում, Մարգարե Ջոզեֆ Սմիթի միջոցով, Աստված վերականգնեց ավետարանի լրիվությունը երկրի վրա:

Գնացեք ամբողջ աշխարհով և քարոզեք ավետարանը՝ **Մար.** ԺՁ.15: Գառի ավետարանի պարզ և արժեքավոր մասերը ետ էին պահվել **1 Նեփի** 13.32: Սա է իմ ավետարանը՝ **3 Նեփի** 27.13–21 (Վևո

39.6): Մորմոնի Գիրքը պարունակում է ավետարանի լրիվությունը՝ **ՎՆՈՒ** 20.8–9 (ՎՆՈՒ 42.12): Սա է ավետարանը՝ **ՎՆՈՒ** 76.40–43: Մելքիսեդեկյան Քահանայությունը սպասավորում է ավետարանը՝ **ՎՆՈՒ** 84.19: Ամեն մարդ կրի ավետարանի լրիվությունն իր լեզվով՝ **ՎՆՈՒ** 90.11: Որդին ավետարանը քարոզեց մահացածների ոգիներին՝ **ՎՆՈՒ** 138.18–21, 28–37: Ավետարանը քարոզվում էր սկզբից ի վեր՝ **Մովսես** 5.58: Բացատրվում են ավետարանի առաջնային սկզբունքներն ու արարողությունները՝ **ՀՀ** 1.4:

ԱՎԵՏԱՐԱՆԻ ԱՌԱՋԻՆ

ՍԿՋԲՈՒՆՔՆԵՐԸ: Տե՛ս

Ապաշխարել, Ապաշխարություն.
Հավատք. Սկրտություն, Սկրտել.
Մուրք Հոգի

ԱՎԵՏԱՐԱՆԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ

ՄԸ: Տե՛ս նաև Ավետարան. Սմիթ Ջոզեֆ կրտսեր. Տնտեսություն.
Ուրացություն

Աստծո կողմից երկրի վրա իր ավետարանի ճշմարտությունների ու արարողությունների վերահաստատումը մարդկանց մեջ: Հիսուս Քրիստոսի ավետարանը կրթվել էր երկրի վրայից ուրացության հետևանքով, որը տեղի ունեցավ Քրիստոսի Առաքյալների երկրային ծառայությունից հետո: Այդ ուրացության հետևանքով՝ անհրաժեշտություն առաջացավ, որ ավետարանը վերականգնվի: Տեսիլքների, հրեշտակների սպասավորության և երկրի վրա մարդկանց տրված հայտնությունների միջոցով Աստված վերականգնեց ավետարանը: Վերականգնումը սկսվեց Մարգարե Ջոզեֆ Սմիթի միջոցով (ՋՍ–Պ 1.1–75, ՎՆՈՒ 128.20–21) և շարունակվում է մինչև այժմ՝ Տիրոջ կենդանի մարգարեների աշխատանքի միջոցով:

Տիրոջ տունը կհաստատվի սարերի գլխին՝ **Յս.** Բ.2 (Միքիա Գ.2, 2 Նեփի 12.2): Աստված կատարելու է գարմանալի և սքանչելի մի գործ՝ **Յս.** ԻԹ. 14 (2 Նեփի 25.17–18, ՎՆՈՒ 4.1): Աստված մի թագավորություն է հաստատելու, որը երբեք չի կործանվի՝ **Գան.** Բ.44: Եղիան կզգա և կվերականգնի բոլոր բաները՝ **Մատ.** Ժ.11 (Մար. Թ.11, ՎՆՈՒ 77.14): Ամեն բաները վերահաստատելու ժամանակները կզան՝ **Գոր.**

Գ.21 (ՎՆՈՒ 27.6): Ժամանակների լուրջյան տնտեսության ժամանակ Աստված կբովանդակի ամեն բան՝ **Եփես.** Ա.10: Ես տեսա մեկ ուրիշ հրեշտակ, որը հավիտեական ավետիք ուներ քարոզելու՝ **Հայտ.** ԺԳ.6: Ավետարանի լրիվությունը կհասնի հեթանոսներին՝ **1 Նեփի** 15.13–18: Հրեաները կվերականգնվեն ճշմարիտ եկեղեցուն՝ **2 Նեփի** 9.2: Վերջին օրերին ճշմարտությունը կվերականգնվի՝ **3 Նեփի** 16.7: Ես շնորհում եմ ձեզ Ահարոնի Քահանայությունը՝ **ՎՆՈՒ** 13.1 (ՋՍ–Պ 1.69): Ես հանձնել եմ արքայության բանալիները վերջին ժամանակների համար՝ **ՎՆՈՒ** 27.6, 13–14 (ՎՆՈՒ 128.19–21): Հավաքեք Իսրայելի ցեղերին և վերականգնեք բոլոր բաները՝ **ՎՆՈՒ** 77.9: Այս տնտեսության բանալիները տրված են՝ **ՎՆՈՒ** 110.16 (ՎՆՈՒ 65.2): Քահանայությունը տրվել է ժամանակների լուրջյան տնտեսության ժամանակ՝ **ՎՆՈՒ** 112.30: Ես տեսա երկու անձնավորություն՝ **ՋՍ–Պ** 1.17: Ես ձեզ կհայտնեմ քահանայությունը Եղիայի ձեռքով՝ **ՋՍ–Պ** 1.38 (Մաղ. Գ.5–6):

ԱՎԵՏԱՐԱՆԻԶ: Տե՛ս նաև

Հայրապետ, Հայրապետական.
Հայրապետական օրհնություններ

Նա, ով ունի և հռչակում է Հիսուս Քրիստոսի ավետարանի բարի լուրը: Ջոզեֆ Սմիթն ուսուցանել է, որ ավետարանիչը հայրապետ էր: Հայրապետները կանչվում և կարգվում են Տասներկու Առաքյալների ղեկավարության ներքո՝ հատուկ օրհնություններ տալու համար, որոնք կոչվում են հայրապետական օրհնություններ:

Տերը մի քանիսին կանչել է Առաքյալներ լինելու, մի քանիսին՝ մարգարեներ և մի քանիսին՝ ավետարանիչներ՝ **Եփես.** Գ.11: Ավետարանի գործը կատարի՝ **Բ Տիմ.** Գ.5: Մենք հավատում ենք Առաքյալներին, մարգարեներին, հովիվներին, ուսուցիչներին, ավետարանիչներին՝ **ՀՀ** 1.6:

ԱՎԵՏԱՐԱՆՆԵՐ: Տե՛ս նաև

Հովհաննես՝ Ձեբեղեռուի Որդի.
Ղուկաս. Մարկոս. Մատթեոս

Չորս հիշատակարանները կան վկայությունները՝ Հիսուսի մահկանացու կյանքի և նրա ծառայությանը վերաբերող իրադարձությունների մասին, որոնք գտնվում են

Նոր Կտակարանի առաջին չորս գրքերում: Գրված լինելով Մատթեոսի, Մարկոսի, Ղուկասի և Հովհաննեսի կողմից՝ դրանք Քրիստոսի կյանքը հիշատակող վկայություններ են: Մորմոնի Գրքի 3 Նեփիի գիրքը շատ բաներով նման է Նոր Կտակարանի այդ չորս Ավետարաններին:

Նոր Կտակարանի գրքերն սկզբնապես գրվել էին հունարեն լեզվով: Ինչպես հունարենում, *ավետարան* բառը նշանակում է «բարի լուր»: Բարի լուրն այն է, որ Հի-

սու Քրիստոսը քավություն է արել, որը մահից կփրկագնի մարդկությանը և ամեն մարդու կհատուցի իր գործերի համեմատ (Հովհ. Գ.16, Հռովմ. Ե.10-11, 2 Նեփի 9.26, Ալմա 34.9, ՎևոՒ 76.69):

Ավետարանների համաձայնություն. Փրկչի ուսմունքները Մատթեոսում, Մարկոսում, Ղուկասում և Հովհաննեսում, ինչպես նաև վերջին օրերի հայտնությունները, կարելի է համեմատել միմյանց հետ հետևյալ կերպ.

ԱՎԵՏԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹՅՈՒՆ

Իրադարձություն Մատթեոս Մարկոս Ղուկաս Հովհաննես Վերջին օրերի հայտնություններ

Հիսուսի սոսկաբանությունը	Ա.2-17		Գ.23-38		
Հովհաննես Մկրտչի ծնունդը			Ա.5-25, 57-58		
Հիսուսի ծնունդը	Բ.1-15		Բ.6-7		1 Նեփի 11.18-20, 2 Նեփի 17.14, Մոսիա 3.5-8, Ալմա 7.10, Հել. 14.5-12, 3 Նեփի 1.4-22
Սիմեոնի և Աննայի մարգարեությունները			Բ.25-39		
Տաճար այցելելը (Զատկին)			Բ.41-50		
Հովհաննեսի ծառայության սկիզբը	Գ.1, 5-6	Ա.4	Գ.1-3	Ա.6-14	
Հիսուսի մկրտությունը	Գ.13-17	Ա.9-11	Գ.21-22	Ա.32-34	1 Նեփի 10.7-10, 2 Նեփի 31.4-21
Հիսուսի փորձվելը	Գ.1-11		Գ.1-13		

Իրադարձություն	Մատթեոս	Մարկոս	Գուկաս	Հովհաննես	Վերջին օրերի հայտնություններ
Հովհաննես Մկրտչի վկայությունը				Ա.15-36	ՎԱՈՒ 93.6-18, 26
Կանայի հարսանիքը (Հիսուսի առաջին հրաշքը)				Բ.1-11	
Տաճարի առաջին մաքրումը				Բ.14-17	
Նիկողեմնոսի հետ հանդիպումը				Գ.1-10	
Սամարացի կինը ջրհորի մոտ				Գ.1-42	
Հիսուսը մերժվում է Նազարեթում	Գ.13-16		Գ.16-30		
Ձկնորսները կանչվում են՝ մարդկանց որսորդներ լինելու	Գ.18-22	Ա.16-20			
Ուռկանները հրաշքով լցվում են			Ե.1-11		
Հայրոսի աղջկան կենդանացնելը	Թ.18-19, 23-26	Ե.21-24, 35-43	Ը.41-42, 49-56		
Տեռատես կնոջ բժշկումը	Թ.20-22	Ե.25-34	Ը.43-48		
Տասներկուսին կանչելը	Ժ.1-42	Գ.13-19, Զ.7-13	Զ.12-16, Թ.1-2, ԺԲ.2-12, 49-53		1 Նեփի 13.24-26, 39-41, ՎԱՈՒ 95.4
Որբկայրու որդուն կենդանացնելը			Է.11-15		
Քրիստոսի ոտքերի օծումը			Է.36-50	ԺԲ.2-8	
Փոքորիկը հանդարտեցնելը		Գ.36-41	Ը.22-25		

Իրադարձություն	Մատթեոս	Մարկոս	Գուկաս	Հովհաննես	Վերջին օրերի հայտնություններ
Յոթանասունին կանչելը			Ժ.1		ՎևՈՒ 107,25, 34, 93-97
Գևերի լեզեոնին դուրս հանելը և խոզերի մեջ գցելը		Ե.1-20			
Սարի վրայի քարոզը	Ե-Է		Չ.17-49		3 Նեփի 12-14
Հիսուսի առակները կարճ պատմություններ են, որոնք հասարակ առարկաները կամ իրադարձությունները համեմատում են ճշմարտության հետ: Հիսուսը հաճախ էր դրանք օգտագործում՝ հոգևոր ճշմարտություններ ուսուցանելու համար:					
Սերմնացանը.	ԺԳ.3-9, 18-23	Գ.3-9, 14-20	Ը.4-8, 11-15		
Որոմները.	ԺԳ.24-30, 36-43				ՎևՈՒ 86.1-7
Մանանեխի հատիկը.	ԺԳ.31-32	Գ.30-32	ԺԳ.18-19		
Թթխմորը.	ԺԳ.33		ԺԳ.20-21		
Արտի միջի գանձը.	ԺԳ.44				
Թանկագին մարգարիտը.	ԺԳ.45-46				
Չկնորսի ուռկանը.	ԺԳ.47-50				
Տանտերը.	ԺԳ.51-52				
Կորած ոչխարը.	ԺԸ.12-14		ԺԵ.1-7		
Կորած դրամը.			ԺԵ.8-10		
Անառակ որդին.			ԺԵ.11-32		
Անշնորհակալ ծառան.	ԺԸ.23-35				
Բարի Սամարացին.			Ժ.25-37		

Իրադարձություն	Մատթեոս	Մարկոս	Գուկաս	Հովհաննես	Վերջին օրերի հայտնություններ
Անիրավ տնտեսք.			ԺՁ.1-8		
Հարուստը և Դազարոսը.			ԺՁ.14-15, 19-31		
Անարդար դատավորը.			ԺԸ.1-8		
Բարի հովիվը.				Ժ.1-21	3 Նեփի 15.17-24
Այգում աշխատողները.	Ի.1-16	Ժ.31			
Մնասները.			ԺԹ.11-27		
Երկու որդին.	ԻԱ.28-32				
Ամբարիշտ մշակները.	ԻԱ.33-46	ԺԲ.1-12	Ի.9-20		
Թագավորի որդու հարսանիքը.	ԻԲ.1-14		ԺԳ.7-24		
Տասը կույսերը.	ԻԵ.1-13		ԺԲ.35-36		ՎևՈԻ 45.56-59
Քանքարները.	ԻԵ.14-30				
Ոչխարները, այծերը.	ԻԵ.31-46				
Հինգ հազարին կերակրելը	ԺԳ.16-21	Ձ.33-44	Թ.11-17	Ձ.5-14	
Հիսուսը քայլեց ջրի վրայով	ԺԳ.22-33	Ձ.45-52		Ձ.16-21	
Քրիստոսի մասին Պետրոսի վկայությունը	ԺՁ.13-16	Ը.27-29	Թ.18-20		
Պետրոսին խոստացվում են արքայության բանալիները	ԺՁ.19				

Իրադարձություն	Մատթեոս	Մարկոս	Ղուկաս	Հովհաննես	Վերջին օրերի հայտնություններ
Կյանքի հացի քարոզը				Ձ.22-71	
Հանգստության օրը կույր մարդուն բժշկելը				Թ.1-41	
Կերպարանափոխումը, քահանայության բանալիները հանձնելը	ԺԷ.1-13	Թ.2-13	Թ.28-36		ՎևՈՒ 63.20-21, 110.11-13
Երեխաներին օրհնելը	ԺԹ.13-15	Ժ.13-16	ԺԸ.15-17		
Տիրոջ աղոթքը	Ձ.5-15		ԺԱ.1-4		
Ղազարոսին կենդանացնելը				ԺԱ.1-45	
Հանդիսավոր մուտքը	ԻԱ.6-11	ԺԱ.7-11	ԺԹ.35-38	ԺԲ.12-18	
Դրամափոխներին տաճարից դուրս հանելը	ԻԱ.12-16	ԺԱ.15-19	ԺԹ.45-48		
Որբկայրու լուման		ԺԲ.41-44	ԻԱ.1-4		
Բանախոսություն Երկրորդ Գալստի մասին	ԻԳ.1-51	ԺԳ.1-37	ԺԲ.37-48, ԺԷ.20-37, ԻԱ.5-38		ՎևՈՒ 45.16-60, ՋՍ-Մ 1.1-55
Տասը բորոտներին բժշկելը			ԺԷ.12-14		
Հիսուսի վերջին Ջատիկը, հաղորդության հաստատումը, հրահանգներ Տասներկուսին, աշակերտների ոտքերը լվանալը	ԻՁ.14-32	ԺԴ.10-27	ԻԲ.1-20	ԺԳ-ԺԷ	

Իրադարձություն	Մատթեոս	Մարկոս	Ղուկաս	Հովհաննես	Վերջին օրերի հայտնություններ
Հիսուսի տառապանքը Գեթսեմանիում	ԻՁ.36–46	ԺԳ.32–42	ԻԲ.40–46		2 Նեփի 9.21–22, Մոսիա 3.5–12, ՎևոՒ 19.1–24
Հիսուսն է որբը				ԺԵ.1–8	
Հուդայի մատնելը	ԻՁ.47–50	ԺԳ.43–46	ԻԲ.47–48	ԺԸ.2–3	
Կայիափայի առաջ լսելը	ԻՁ.57	ԺԳ.53	ԻԲ.54, 66–71	ԺԸ.24, 28	
Պիղատոսի առաջ լսելը	ԻԷ.2, 11–14	ԺԵ.1–5	ԻԳ.1–6	ԺԸ.28–38	
Հերովդեսի առաջ լսելը			ԻԳ.7–10		
Հիսուսին խարազանում և ծաղրում են	ԻԷ.27–31	ԺԵ.15–20		ԺԹ.1–12	
Խաչելությունը	ԻԷ.35–44	ԺԵ.24–33	ԻԳ.32–43	ԺԹ.18–22	Հեյ. 14.20–27, 3 Նեփի 8.5–22, Ժ.9
Հարությունը	ԻԸ.2–8	ԺՁ.5–8	ԻԳ.4–8		
Հիսուսի հայտնվելն աշակերտներին		ԺՁ.14	ԻԳ.13–32, Ի.19–23 36–51		
Հիսուսի հայտնվելը Թովմասին				Ի.24–29	
Համբարձումը		ԺՁ.19–20	ԻԳ.50–53		

ԱՅԵԼ, ԱՅԵԼՈՒԹՅՈՒՆ. *Տե՛ս նաև* Թշնամանք. Սեր. Վրեժխնդրություն

Ատելությունը խիստ հակակրանք է ինչ-որ մեկի կամ ինչ-որ բանի հանդեպ:

Ես՝ Աստված, կհատուցեմ հայրերի անօրինությունը որդիների վրա նրանց, ովքեր ատում են ինձ՝ **ԵՂ.** Ի.5: Վեց բան կա, որ Տերն ատում է՝ **Առակ.** Զ.16: Հիմար մարդն անարգում է իր մորը՝ **Առակ.** ԺԵ.20: Նա

անարգված է և մարդկանցից մերժված՝ **Ես.** ԾԳ.3: Բարիք արեք ձեզ ատողներին՝ **Մատ.** Ե.44: Կամ մեկին կատի և մյուսին կսիրի, կամ մեկին կմեծարի և մյուսին կարհամարի՝ **Մատ.** Զ.24: Ամենից կատվեք իմ անվան համար՝ **Մատ.** Ժ.22: Ամեն չար գործող ատում է լույսը՝ **Հովհ.** Գ.20: Թող ոչ ոք չը երիտասարդությունը չանարգի՝ **Ա Տիմ.** Գ.12: Քանի որ նրանք

հարուստ են, նրանք արհամարհում են աղքատներին՝ **2 Նեփի 9.30**: Մի արհամարհեք Աստծո հայտնությունները՝ **Հակոբ 4.8**: Նրանք հավերժական ատելություն ունեին մեր հանդեպ՝ **Հակոբ 7.24**: Մարդիկ ոչինչ են համարում Աստծո խորհուրդները և արհամարհում են նրա խոսքերը՝ **ՎևոՒ 3.7**: Ինձ ատում և հալածում էին այն բանի համար, որ ասում էի, թե տեսիլք են տեսել՝ **ԶՍ-Պ 1.25**:

ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ: *Տե՛ս նաև* Կնիք, Կնքում. Տաճար՝ Տիրոջ տուն. Տոհմաբանություն. Փրկություն. Փրկություն մահացածների համար

Սրբազան ծեսեր և ծիսակարգեր: Արարողությունները բաղկացած են գործողություններից, որոնք հոգևոր իմաստ են կրում: Արարողությունները կարող են նշանակել նաև Աստծո օրենքներն ու կանոնները:

Եկեղեցու արարողությունների թվում են՝ հիվանդների սպասավորումը (Հակ. Ե.14–15), հաղորդության օրհները (ՎևոՒ 20.77, 79), ընկղմամբ մկրտությունը (Մատ. Գ.16, ՎևոՒ 20.72–74), երեխաներին օրհները (ՎևոՒ 20.70), Սուրբ Հոգու շնորհումը (ՎևոՒ 20.68, 33.15), քահանայություն շնորհելը (ՎևոՒ 84.6–16, 107.41–52), տաճարային արարողությունները (ՎևոՒ 124.39), նոր և հավիտենական ուխտով ամուսնանալը (ՎևոՒ 132.19–20):

Սովորեցրու նրանց կանոններն ու օրենքները՝ **Ել. ԺԼ.20**: Քայլեք իմ օրենքներով և պահեք իմ արարողությունները՝ **Եզեկ. ԺԱ.20**: Ժողովուրդը խիստ էր Աստծո արարողություններին հետևելիս՝ **Ալմա 30.3**: Ինչ օգուտ, որ մենք պահել ենք նրա արարողությունները՝ **3 Նեփի 24.13–14**: Նա, ով աղոթում է և ապաշխարող է, ընդունվում է իմ կողմից, եթե հնազանդվում է իմ արարողություններին՝ **ՎևոՒ 52.14–19**: Ողջ մարդկությունը կարող է փրկվել՝ հնազանդվելով ավետարանի օրենքներին և արարողություններին՝ **ՀՀ 1.3**:

Փոխարինող արարողություն. Կրոնական արարողություն, որը կատարվում է ապրող մարդու կողմից՝ մեկ ուրիշի համար, որը մահացել է: Այդ արարողություններն ազդեցություն են ունենում միայն երբ անձինք, ում համար կատարվում են այդ

արարողությունները, ընդունում են դրանք, պահում են դրանց հետ կապված ուխտերը և կնքվում են Խոստումի Սուրբ Հոգով: Նման արարողություններ այսօր կատարվում են տաճարում:

Ի՞նչ կանեն մեռելների համար մկրտվողները, եթե արդարև մեռելները հարություն չեն առնում՝ **Ա Կոր. ԺԵ.29**: Մահացածների համար մկրտությունները պետք է կատարվեն տաճարում՝ **ՎևոՒ 124.29–36**: Հոգիների աշխարհի հոգիներին ուսուցանվեց փոխարինող մկրտություն՝ մեղքերի թողության համար՝ **ՎևոՒ 138.29–34**:

ԱՐԳԵԼՎԱՍԾ ՊՏՈՒՂ: *Տե՛ս* Աղամի և Եվայի անկումը. Եղեմ

ԱՐԳԱՐ, ԱՐԳԱՐՈՒԹՅՈՒՆ: *Տե՛ս նաև* Անիրավ, Անիրավություն. Արժանավոր, Արժանավորություն. Եղարկություն. Պատվիրաններն Աստծո. Քայլել, Քայլել Աստծո հետ

Ճշմարիտ, սուրբ, առաքինի, շիտակ լինելը. Աստծո պատվիրաններին հնազանդ ապրելը. մեղքից խուսափելը:

Տերը կօրհնի արդարին՝ **Մաղ. Ե.12**: Տիրոջ աչքերն արդարների վրա են՝ **Մաղ. ԼԳ.15, 17** (Ա Պետ. Գ.12): Երբ արդարներն են իշխում, ժողովուրդն ուրախանում է՝ **Առակ. ԻԹ.2** (ՎևոՒ 98.9–10): Երանի նրանց, ովքեր սոված և ծարավ են արդարության՝ **Մատ. Ե.6** (3 Նեփի 12.6): Առաջ Աստծո արքայությունը և նրա արդարությունը փնտրեք՝ **Մատ. Զ.33**: Արդարները կզման հավերժական կյանքը՝ **Մատ. ԻԵ.46**: Արդարի ջերմեռանդ աղոթքը շատ գորավոր է՝ **Հակ. Ե.16**: Նա, ով արդար է, օրհմվում է Աստծուց՝ **1 Նեփի 17.35**: Նա կպահպանի արդարներին. նրանք վախենալու կարիք չունեն՝ **1 Նեփի 22.17, 22**: Տիրոջ ժողովրդի արդարության շնորհիվ Սատանան գորություն չի ունենա՝ **1 Նեփի 22.26**: Եթե չլինի արդարություն, չի լինի երջանկություն՝ **2 Նեփի 2.13**: Արդարները կժառանգեն Աստծո արքայությունը՝ **2 Նեփի 9.18**: Արդարները չեն վախենում ճշմարտության խոսքերից՝ **2 Նեփի 9.40**: Ողջ մարդկությունը պետք է փոխվի արդարության մի վիճակի՝ **Մոսիա 27.25–26**: Արդարների ամուսնները պիտի գրվեն կյանքի գրքում՝ **Ալմա 5.58**:

Դուք երջանկություն եք փնտրել անօրինություն անելու մեջ, որը հակառակ է արդարության եությանը՝ **Հել.** 13.38: Արդարների երգն աղոթք է ինձ համար՝ **ՎևոՒ** 25.12: Կանգնեք՝ արդարության լանջապանակը հագած՝ **ՎևոՒ** 27.16 (Եփես. 2.14): Արդարների մահը քաղոք կլինի նրանց համար՝ **ՎևոՒ** 42.46: Արդարները պիտի հավաքվեն բոլոր ազգերի միջից՝ **ՎևոՒ** 45.71: Մարդիկ պետք է իրենց իսկ ազատ կամքով շատ արդարություն իրագործեն՝ **ՎևոՒ** 58.27: Նա, ով արդարության գործեր է անում, ձեռք կբերի խաղաղություն այս աշխարհում և հավերժական կյանք՝ գալիք աշխարհում՝ **ՎևոՒ** 59.23: Երկրորդ Գալստի ժամանակ կլինի արդարների և ամբարիշտների լիովին առանձնացում՝ **ՎևոՒ** 63.54: Երկրների գորությունները կարող են կառավարվել միայն արդարության սկզբունքների հիման վրա՝ **ՎևոՒ** 121.36: Արդարների մեջ խաղաղություն էր տիրում՝ **ՎևոՒ** 138.22: Միոնի ժողովուրդը բնակվում էր արդարության մեջ՝ **Մովսես** 7.18: Աբրահամ արդարության հետևորդ էր՝ **Աբր.** 1.2:

ԱՐԳԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ: *Տե՛ս նաև*

Ողորմած, Ողորմություն. Քավել, Քավություն

Արդար մտքերի ու գործերի համար օրհնվելու և չապաշխարած մեղքերի համար պատժվելու ամխուսափելի հետևանքը: Արդարադատությունը հավերժական օրենք է, որը պատիժ է պահանջում ամեն անգամ Աստծո օրենքը խախտելու համար (Ալմա 42.13–24): Մեղավորը պարտավոր է պատիժը վճարել, եթե նա չի ապաշխարում (Մոսիա 2.38–39, ՎևոՒ 19.17): Եթե նա ապաշխարում է, Փրկիչը, Քավության միջոցով, վճարում է պատիժը և ողորմություն հայցում (Ալմա 34.16):

Մեղանշող անձը պիտի մեռնի՝ **Եզեկ.** ԺԸ.4: Տերն ի՞նչ է ուզում քեզանից, միայն արդար գործել՝ **Միքիա** 2.8: Հիսուսն արդար կլինի և մեզ կների մեր մեղքերը՝ **Ա Հովի.** Ա.9: Աստծո արդարադատությունն ամբարիշտներին բաժանում էր արդարներից՝ **1 Նեփի** 15.30: Քավությունը բավարարում է արդարադատության պահանջները՝ **2 Նեփի** 9.26: Ողջ մարդկությունն ընկած է և արդարադատության ճանկում է՝ **Ալմա** 42.14: Քավու-

թյունը բավարարում է արդարադատության պահանջները՝ **Ալմա** 42.15: Կարծում ես ողորմությունը կարող է կողոպտե՞լ արդարադատությանը՝ **Ալմա** 42.25: Աստծո արդարադատությունը կախված է ձեզ վրա, եթե դուք չապաշխարեք՝ **Ալմա** 54.6: Արդարադատությունն ու դատաստանն այն պատիժներն են, որոնք կցված են իմ օրենքին՝ **ՎևոՒ** 82.4: Արդարադատությունը շարունակում է իր ընթացքը և պահանջում է յուրայիններին՝ **ՎևոՒ** 88.40: Ոչ ոք չի ազատվի Աստծո արդարադատությունից և օրենքներից՝ **ՎևոՒ** 107.84:

ԱՐԳԱՐԱՏՈՒՄ, ԱՐԳԱՐԱՑՆԵԼ:

Տե՛ս նաև Սբբագործում. Քավել, Քավություն

Ազատվել մեղքի համար տրվող պատժից և ճանաչվել անմեղ: Անձն արդարացվում է Փրկչի շնորհով՝ նրա հանդեպ ունեցած հավատքով: Այդ հավատքը ցուցաբերվում է ապաշխարելով և ավետարանի օրենքներին և արարողություններին հնազանդվելով: Հիսուս Քրիստոսի քավությունը մարդկանց հնարավորություն է տալիս ապաշխարել և արդարացվել կամ ներվել պատժից, որը նրանք հակառակ դեպքում կստանային:

Տերով պիտի արդարանա բոլոր Իսրայելը՝ **Ես.** ԽԵ.25: Ոչ թե օրենքը լսողները, այլ կատարողներն են արդարացվում՝ **Հռովմ.** Բ.13: Մարդն արդարացում է Քրիստոսի արյան միջոցով՝ **Հռովմ.** Ե.1–2, 9: Դուք արդարացվում եք Տեր Հիսուսի անունով՝ **Ա Կոր.** Զ.11: Նրա շնորհով արդարացված՝ մենք ժառանգներ կդարձվենք՝ **Տիտոս** Գ.7: Չէ՞ որ մեր հայր Աբրահամը գործերով արդարացավ՝ **Հակ.** Բ.21: Մարդ գործերով է արդարանում, և ոչ միայն հավատքով՝ **Հակ.** Բ.14–26: Օրենքով ոչ մի մարմին արդարացված չէ՝ **2 Նեփի** 2.5: Իմ արդար ծառան պիտի արդարացնի շատերին. քանզի նա պիտի կրի նրանց անօրհնությունները՝ **Մոսիա** 14.11 (Ես. ԾԳ.11): Կկարողանայի՞ք դուք ասել, որ ձեր հանդերձները մաքրված են Քրիստոսի միջոցով՝ **Ալմա** 5.27: Արդարացումը, Հիսուս Քրիստոսի շնորհի միջոցով, ճշմարիտ է՝ **ՎևոՒ** 20.30–31 (ՎևոՒ 88.39): Հոգով դուք արդարացվում եք՝ **Մովսես** 6.60:

ԱՐԹՈՒՆ ԼԻՆԵԼ

Աչալուրջ լինել, սպասել: Այն անձը, որն արթուն է և հնազանդ, պատրաստ է և նախապատրաստված:

Արդ, արթուն մնացեք. քանի որ չգիտեք ժամը, երբ ձեր Տերը կգա՝ **Մատ. ԻԳ.42-43** (Մատ. ԻԵ.13, Մար. ԺԳ.35-37, ՎևոՒ 133.10-11): Արթուն կացեք և աղոթք արեք, որ փորձության մեջ չմտնեք՝ **Մատ. ԻԶ.41** (3 Նեփի 18.15, 18): Եթե դուք չհետևեք ձեզ, ձեր մտքերին, ձեր խոսքերին, ձեր գործերին, դուք կկորչեք՝ **Մոսիա 4.30**: Նա, ով չի սպասում Փրկչին, պիտի կորվի՝ **ՎևոՒ 45.44**:

ԱՐԺԱՆԱՎՈՐ, ԱՐԺԱՆԱՎՈ-

ՐՈՒԹՅՈՒՆ: *Տե՛ս նաև* Արդար,

Արդարություն

Անճնապես արդար լինել և ընդունված լինել Աստծո և նրա նշանակված ղեկավարների առաջ:

Ով որ չի առնում իր խաչը, ինձ արժանի չէ՝ **Մատ. Ժ.38**: Մշակն արժանի է իր վարձքին՝ **Ղուկ. Ժ.7** (ՎևոՒ 31.5): Տեսեք, որ դուք բոլոր այս բաներն անեք արժանավորությամբ՝ **Մոքմ. 9.29**: Նրանք չէին մկրտվում, մինչև որ արժանի չէին լինում՝ **Մոք. 6.1**: Նա, ով ծույլ է, արժանի չի համարվի կանգուն մնալ՝ **ՎևոՒ 107.100**: Նա, ով չի դիմանում խրատին, արժանի չէ իմ արքայությանը՝ **ՎևոՒ 136.31**: Քահանայությունը տարածվում է բոլոր արժանի տղամարդկանց վրա՝ **ՎևոՒ ԴՀ-2**:

ԱՐՀԱՄԱՐՀԵԼ: *Տե՛ս* Ասել,

Ասելություն

ԱՐՄԱԳԵԴՈՆ: *Տե՛ս նաև* Գոգ.

Հիսուս Քրիստոսի երկրորդ գալուստը. Մագոգ

Արմազեղոն անունը սերվել է եբրայերեն *Հար Մեզիդոն* արտասայությունից, որը նշանակում է «Մակեդոնի լեռ»: Մակեդոնի հովիտը Եգրեթլոնի հարթավայրի արևմտյան մասում է, Երուսաղեմից ութսուն կիլոմետր դեպի հյուսիս, և համարվում է Հին Կտակարանի ժամանակների մի շարք վճռական ճակատամարտերի վայրը: Մեծ և վերջին ընդհարումը, որը տեղի կունենա Տիրոջ երկրորդ գալստի ժամանակ, կոչվում է Արմազեղոնի ճա-

կատամարտ, որովհետև այն կսկսվի նույն վայրում: (Տե՛ս Եզեկ. ԼԺ.11, Ջաք. ԺԲ-ԺԴ, հատկապես՝ ԺԲ.11, Հայտ. ԺԶ.14-21):

ԱՐՅՈՒՆ: *Տե՛ս նաև* Չոհաբերություն.

Հիսուս Քրիստոս. Քավել, Քավություն

Հին Իսրայելացիների մոտ և ներկայիս շատ ազգերի մոտ համարվում է կյանքի աղբյուրը, կամ բոլոր մարմինների կենսական ուժը: Հին Կտակարանի ժամանակներում Տերը Իսրայելին արգելել էր արյունը որպես կերակուր օգտագործելը (Ղև. Գ.17, Է.26-27, ԺԷ.10-14):

Չոհաբերության քավիչ ուժն արյան մեջ էր, քանի որ արյունը համարվում էր կյանքի էական մասը: Կենդանիների գոհաբերությունը, Հին Կտակարանում, ավելի ուշ Հիսուս Քրիստոսի կատարած մեծ գոհաբերության խորհրդանիշն էր (Ղև. ԺԷ.11, Մովսես 5.5-7): Հիսուս Քրիստոսի քավիչ արյունն ապաշխարողին մաքրում է մեղքերից (Ա Հովհ. Ա.7):

Նրա քրտինքն արյան կաթիլների պես էր՝ **Ղուկ. ԻԲ.44**: Մենք սրբագործվում ենք Քրիստոսի հեղած արյամբ՝ **Եբք. Ժ.1-22**: Արյուն էր հոսում ամեն մի ծակոտից՝ **Մոսիա 3.7** (ՎևոՒ 19.18): Տիրոջ արյունը քափվել էր մեղքերի բողոքյան համար՝ **ՎևոՒ 27.2**: Իր արյունը հեղելով՝ Հիսուսը կատարյալ քավություն իրագործեց՝ **ՎևոՒ 76.69**: Արյունով դուք սրբագործվում եք՝ **Մովսես 6.60**:

ԱՐՏ: *Տե՛ս նաև* Աշխարհ. Տիրոջ այգին

Սուրբ գրքերում՝ բաց հողատարածք, որն օգտագործվում է որպես վարելահող կամ որպես արոտավայր: Հաճախ այն խորհրդանշում է աշխարհն ու նրա ժողովուրդները:

Արտն աշխարհն է՝ **Մատ. ԺԳ.38**: Երկնքի արքայությունը մնան է արտի մեջ քացցված գանձի՝ **Մատ. ԺԳ.44**: Ես տեսա մեծ ու ընդարձակ մի դաշտ՝ **1 Նեփի 8.9, 20**: Դաշտը հասել էր՝ **Ալմա 26.5**: Արտը սպիտակել է, արդեն հնձին հասել՝ **ՎևոՒ 4.4** (ՎևոՒ 6.3, 11.3, 12.3, 14.3, 31.4, 33.3, 7): Արտն աշխարհն էր՝ **ՎևոՒ 86.1-2**: Ես կնճանեցնեմ այդ քազավորություններն արտ ունեցող մի մարդու՝ **ՎևոՒ 88.51**:

ԱՐՈՒՅՐԵ ԹԻԹԵՂՆԵՐ: *Տե՛ս նաև*
Թիթեղներ

Հրեաների մի հիշատակարան՝ սկզբից սկսած մինչև Ք.ծ.ա. 600թ., որը պարունակում էր մարգարեների շատ գրվածքներ (1 Նեփի 5.10–16): Այս հիշատակարանը պահվում էր Լաբանի՝ Երուսաղեմի հրեա ծերերից մեկի կողմից: Մինչ Լեքին և նրա ընտանիքը դեռ անապատում էին, Լեքին իր որդիներին ետ ուղարկեց Երուսաղեմ, որպեսզի ձեռք բերեն այդ հիշատակարանը (1 Նեփի 3–4): (Լրացուցիչ տեղեկության համար, տե՛ս «Մորմոնի Գրքի մասին համառոտ բացատրություն» խորագիրը, որը գտնվում է Մորմոնի Գրքում):

ԱՐՈՒՅՄԱԿ: *Տե՛ս* Լյուցիֆեր

ԱՔԱԱԲ: *Տե՛ս նաև* Հեզաբել

Հին Կտակարանում՝ հյուսիսային Իսրայելի ամենամբարիշտ ու հզոր թագավորներից մեկը: Նա ամուսնացավ Միդոնի արքայադստեր՝ Հեզաբելի հետ, որի ազդեցությամբ Իսրայելում հաստատվեց Բահադի և Աստարովթի երկրպագությունը (Գ. Թագ. ԺՁ.29–33, Գ. Թագ. Գ.2) և փորձ արվեց վերացնել մարգարեներին և Եհովային երկրպագելը (Գ. Թագ. ԺԸ.13):

Իսրայելի վրա Սամարիայում թագավորեց քսաներկու տարի՝ **Գ. Թագ.** ԺՁ.29 (Գ. Թագ. 16–22): Իրենից առաջ եղածներից առավել չարիք գործեց Տիրոջ աչքի առաջ՝ **Գ. Թագ.** ԺՁ.30: Սպանվեց պատերազմում՝ **Գ. Թագ.** ԻԲ.29–40:

ԲԱԲԵԼՈՆ: *Տե՛ս նաև* Աշխարհ.
Նաբուգոդոնոսոր

Բաբելոնիայի մայրաքաղաքը:

Բաբելոնը հիմնվել է Նեբրոզի կողմից և եղել է Միջագետքի կամ Սեմաարի ամենահին քաղաքներից մեկը (Ծն. Ժ.8–10): Բաբելոնի աշտարակը կառուցելու ժամանակ Տերը խառնեց լեզուները (Ծն. ԺԱ.1–9, Եթեր 1.3–5, 33–35): Հետագայում Բաբելոնը դարձավ Նաբուգոդոնոսորի մայրաքաղաքը: Նա մի հսկայական քաղաք կառուցեց, որի ավերակները դեռ մնում են: Բաբելոնը դարձավ շատ ամբարիշտ քաղաք և այդ ժամանակից ի վեր դարձավ աշխարհի ամբարշտության խորհրդանիշը:

Փայտեք Բաբելոնի միջից՝ **Երեմ.** ԾԱ.6: Բաբելոնը կհաստատվի և կընկնի՝ **Հայտ.** ԺԷ–ԺԸ: Բաբելոնը կավերվի՝ **2 Նեփի** 25.15: Բաբելոնը պիտի ընկնի՝ **ՎևոՒ** 1.16: Ես չեմ խնայի ոչ որի, ով մնում է Բաբելոնում՝ **ՎևոՒ** 64.24: Գուրս եկեք Բաբելոնից՝ **ՎևոՒ** 133.5, 7, 14:

ԲԱԶՄԱԿՆՈՒԹՅՈՒՆ: *Տե՛ս*
Ամուսնություն, Ամուսնանալ –
Բազմակնություն

ԲԱԶՄԱՍՈՒՄՆՈՒԹՅՈՒՆ: *Տե՛ս*
Ամուսնություն, Ամուսնանալ –
Բազմակնություն

ԲԱՀԱՂ: *Տե՛ս նաև* Կռապաշտություն

Տղամարդ արև-աստված, որին գլխավորապես պաշտում էին Փյունիկեում (Գ. Թագ. ԺՁ.31), սակայն, նրան տարբեր ձևերով պաշտում էին նաև այլ տեղերում՝ Մովաբացիները, որպես Բեվեդոլը (Թվ. ԻԵ.1–3), Մյուբեմում՝ որպես Բահադրերիթ (Գ.ստ. Ը.33, Թ.4), Ակկարոնում՝ որպես Բահադ-ճանճիկ (Գ. Թագ. Ա.2): Բահաղը, հավանաբար, նույն Բաբելոնի Բելն ու Հունաստանի Չևսն էր: *Բահաղ* բառն արտահայտում է տիրոջ և իր ստրուկի միջև եղած փոխարաբերությունը: Բահաղի խորհրդանիշը հիմնականում մի ցուլ էր: Բահաղի հետ մեկտեղ սովորաբար պաշտում էին Աստարովթ աստվածուհուն:

Բահաղը երբեմն միացվում էր այլ անունների կամ բառերի հետ, Բահաղի հետ եղած կապը ցույց տալու համար, ինչպես օրինակ՝ տեղը, որտեղ նրան պաշտում էին կամ անձը, որն ուներ Բահաղին բնորոշ հատկանիշներ: Ավելի ուշ, քանի որ *Բահաղը* սկսեց ձեռք բերել զանազան վատ իմաստներ, *Բուսթե* բառը սկսվեց օգտագործվել այդ համադրված անուններում: *Բուսթե* նշանակում է «ամոք»:

ԲԱՂԱՍՍ

Մարգարե, Հին Կտակարանում, որը ցանկանում էր անիծել Իսրայելին՝ փողի համար: Տերը նրան պատվիրեց չանիծել Իսրայելին (Թվ. ԻԲ–ԻԳ):

Բաղասմի էլը հրաժարվեց առաջ գնալ, որովհետև մի հրեշտակ կանգնել էր նրա ճանապարհին՝ **Թվ.** ԻԲ.22–35:

ԲԱՂԳԱՍԱՐ: *Տե՛ս նաև* Բաբելոն

Հին Կոստանդնուպոլիս Բաբելոնի վերջին թագավորը, որը թագավորեց մախբան Կյուրոսի կողմից Բաբելոնի նվաճումը. Նաբուգոդոնոսորի որդին և նրան հաջորդողը (Դան. Ե.1-2):

ԲԱՄԲԱՍԱՆՔ: *Տե՛ս նաև* Համբավ.
Չարախոսություն

Որևէ մեկի անճանկան փաստերով կամ տեղեկությամբ կիսվելը՝ չունենալով տվյալ անձի թույլտվությունը:

Մարդիկ պետք է հաշիվ տան ամեն դատարկ խոսքի համար, որ խոսում են՝ **Մատ. ԺԲ.36:** Սրբերին հորդորվում է չլինել շատախոս և հետաքրքրասեր, և չխոսել այն, ինչ պետք չէ՝ **Ա Տիմ. Ե.11-14:** Քո մեթոճավորի մասին չար բան մի խոսի՝ **ՎևոՒ 42.27:** Ձորացրու եղբայրներիդ քո բոլոր հաղորդակցություններով՝ **ՎևոՒ 108.7:**

ԲԱՆ: *Տե՛ս* Հիսուս Քրիստոս –
Քրիստոսի մախամահկանացու գոյությունը

ԲԱՆԱԼԻՆԵՐԸ
ՔԱՀԱՆԱՅՈՒԹՅԱՆ: *Տե՛ս*
Քահանայության բանալիները

ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ,
ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ: *Տե՛ս*
նաև Լույս, Քրիստոսի լույս.
Ճշմարտություն. Ոգի

Բանականությունն ունի շատ իմաստներ, որոնցից երեքը հետևյալն են. (1) Դա ճշմարտության լույսն է, որը կյանք և լույս է տալիս բոլոր բաներին տիեզերքում: Այն միշտ գոյություն է ունեցել: (2) *Բանականություններ* բառը կարող է նաև վերաբերել Աստծո հոգեղեն զավակներին: (3) Սուրբ գրքերում բանականության մասին խոսվում է՝ նկատի ունենալով նաև այն հոգեղեն մախանյութը, որը գոյություն է ունեցել մախբան մեր ծնվելը՝ որպես հոգեղեն զավակներ:

Բանականությունը հարում է բանականությանը՝ **ՎևոՒ 88.40:** Բանականությունը չի ստեղծվել կամ արարվել՝ **ՎևոՒ 93.29:** Ամեն բանականություն անկախ

է այն ոլորտում, որտեղ Աստված դրել է՝ **ՎևոՒ 93.30:** Աստծո փառքը բանականությունն է՝ **ՎևոՒ 93.36-37:** Այս կյանքում ձեռք բերած բանականությունը մեզ հետ բարձրանալու է հարության ժամանակ՝ **ՎևոՒ 130.18-19:** Տերը կառավարում է բոլոր բանականություններին՝ **Աքք. 3.21:** Տերն Աքքահամին ցույց տվեց այն բանականությունները, որոնք կազմավորվել էին մախբան աշխարհի լինելը՝ **Աքք. 3.22:**

ԲԱՌՆԱԲԱՍ

Անուն, որը տրվեց Հովսեփին (նաև Հովսե Էին կոչում), Կիպրոսում ծնված Ղևտացուն, որը վաճառեց իր հողը և գումարը տվեց Առաքյալներին (Գոր. Գ.36-37): Չմայած մախնական Առաքյալներից չէր, նա դարձավ Առաքյալ (Գոր. ԺԳ.4, 13) և ծառայեց մի քանի միսիոներական ճանապարհորդություններում (Գոր. ԺԱ.22-30, ԺԲ.25, 13-15, Ա Կոր. Թ.6, Գաղ. Բ.1, 9, Կոլ. Գ.10):

ԲԱՐԱԲԱՍ

Այն մարդու անունը, որին Խաչելության ժամանակ ազատեցին Հիսուսի փոխարեն: Բարաբբան ապստամբ էր, մարդասպան և ավազակ (Մատ. ԻԷ.16-26, Մար. ԺԵ.6-15, Ղուկ. ԻԳ.18-25, Հովհ. ԺԸ.40):

ԲԱՐԵՆՈՍ: *Տե՛ս նաև* Հիսուս Քրիստոս

Հիսուս Քրիստոսը մեր Բարեխոսն է Հոր մոտ (Մոր. 7.28), և նա պաշտպանում է մեր դատը նրա մոտ:

Հիսուս Քրիստոսը մեր բարեխոսն է Հոր մոտ՝ **Ա Հովհ. Բ.1** (ՎևոՒ 110.4): Հիսուսը կբարեխոսի բոլորի համար՝ **2 Նեփի 2.9** (Եբր. Է.25): Հիսուսը հաղթանակ տարավ մահվան դեմ, որը նրան գործություն տվեց բարեխոսելու մարդկանց զավակների համար՝ **Մոսիա 15.8:** Ես ձեր բարեխոսն եմ Հոր մոտ՝ **ՎևոՒ 29.5:** Հիսուս Քրիստոսը պաշտպանում է ձեր դատը՝ **ՎևոՒ 45.3-5:**

ԲԱՐԹՈՂՈՄԵՈՍ: *Տե՛ս նաև*
Նաբանայել

Նոր Կոստանդնուպոլիս Հիսուս Քրիստոսի մախնական Տասներկու Առաքյալներից մեկը (Մատ. Ժ.2-4):

ԲԱՐԻ ՀՈՎԻՎ: *Տե՛ս նաև* Հիսուս Քրիստոս

Հիսուս Քրիստոսը Բարի Հովիվն է: Խորհրդանշաբար, նրա հետևորդները նման են ոչխարների, որոնց հովիվը Հիսուսն է:

Տերն է իմ հովիվը՝ **Սաղ. ԻԳ.1:** Նա հովվի նման հովվելու է իր հոտը՝ **Ես. Խ.11:** Այդպես էլ ես պիտի որոնեմ իմ ոչխարներին՝ **Եզեկ. ԼԳ.12:** Ես եմ բարի հովիվը՝ **Հովի. Ժ.14–15:** Հիսուսն է ոչխարների մեծ Հովիվը՝ **Եբր. ԺԳ.20:** Նա հաշվում է իր ոչխարներին, և նրանք գիտեն նրան՝ **1 Նեփի 22.25:** Բարի հովիվը կանչում է ձեզ իր անունով, որն է՝ Քրիստոս՝ **Ալմա 5.38, 60:** Կլիմի մեկ հոտ և մեկ հովիվ՝ **3 Նեփի 15.21** (Հովի. Ժ.16):

ԲԱՐԿՈՒԹՅՈՒՆ: *Տե՛ս նաև* Ասել, Ասելություն. Սեր

Բարկությունը ջղայնության արտահայտումն է: Տերը զգուշացրել է իր Սրբերին՝ զսպել իրենց բարկությունը (Մատ. Ե.22): Ոչ ծնողները, ոչ էլ երեխաները չպետք է վիրավորեն ընտանիքի մյուս անդամներին: Սուրբ գրքերում հաճախ բարկության փոխաբերական պատկերը կրակն է (2 Նեփի 15.25, ՎևոՒ 1.13):

Եվ Կայենը շատ բարկացավ և երեսը կախեց՝ **Ճն. Գ.5:** Տերը դանդաղ է բարկանալիս և բազումողորմ է՝ **Սաղ. ՃԽԵ.8:** Մեղմ պատասխանը հանգստացնում է բարկությունը՝ **Առակ. ԺԵ.1:** Բարկացկոտ մարդը կռիվ է գրգռում, բայց նա, ով դանդաղ է բարկանալիս, վեճը հանգստացնում է՝ **Առակ. ԺԵ.18** (Առակ. ԺԳ.29): Իմ անվան համար ես կուշացնեմ իմ բարկությունը՝ **Ես. ԽԸ.9:** Ես տարածեցի իմ ձեռքերը դեպի մի ժողովուրդ, որն ինձ միշտ բարկացնում է՝ **Ես. ԿԵ.2–3:** Ով որ ապտակ տա քո աչ երեսին, մյուսն էլ նրան դարձրու՝ **Մատ. Ե.39:** Հայրեր, մի բարկացրեք ձեր զավակներին՝ **Եփես. 2.4:** Հանի որ ես ասացի ձեզ ճշմարտությունը, դուք բարկացած եք ինձ վրա՝ **Մոսիա 13.4:** Ես կայցելեմ այս ժողովրդին իմ բարկության մեջ՝ **Ալմա 8.29:** Ոչ որի համոզեցիք նրա ցասումը չի բռնկվում, բացի նրանցից, ովքեր չեն խոստովանում նրա ձեռքը բոլոր բաներում՝ **ՎևոՒ 59.21:** Ես՝

Տերս, բարկացած եմ ամբարիշտների վրա՝ **ՎևոՒ 63.32:**

ԲԱՐՉՐԱԳՈՒՅՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ: *Տե՛ս* Առաջին Նախագահություն. Առաքյալ. Նախագահող Եպիսկոպոս. Յոթնասունական

ԲԱՐՉՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՈՒՐԳ

Տասներկու քահանայապետերի խորհուրդ:

Վերականգնված Եկեղեցու վաղ օրերին *բարձրագույն խորհուրդ* տերմինը վերաբերում էր երկու տարբեր դեկավար մարմինների՝ (1) Եկեղեցու Տասներկու Առաքյալների Քվորումին (ՎևոՒ 107.33, 38). և (2) յուրաքանչյուր ցցի սահմաններում ծառայող բարձրագույն խորհրդին (ՎևոՒ 102, 107.36):

ԲԱՐՉՐԱԳՈՒՅՆ ԲԱՀԱՆԱՅՈՒԹՅՈՒՆ: *Տե՛ս* Մելքիսեդեկյան Բահանայություն

ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ: *Տե՛ս* Մաքրաբարոյություն. Ծնություն. Պոռնկություն. Սեռական Անբարոյականություն

ԲԱՐՕՐՈՒԹՅՈՒՆ: *Տե՛ս նաև* Աղքատ. Ընծա. Ծառայություն. Ծոմ, Ծոմապահություն. Ողորմություններ, Ողորմություններ տալը

Մարդկանց հոգևոր և նյութական կարիքները հոգալու գործընթացը և միջոցները:

Չեղբղ լայն բաց քո երկրում եղած աղքատ և չբավոր եղբորդ՝ **Ք Օր. ԺԵ.11:** Ով որ աղքատին տա, կարոտ չի լինի՝ **Առակ. ԻԸ.27:** Սա՝ չէ ծոմը, որին ես հավանում եմ. հացը կտրես տաս սովածին, քո տուն տանես չբավորին՝ **Ես. ԾԸ.6–7:** Սովեցի և ինձ ուտելիք տվեցիք. օտար էի, և ինձ ձեզ մոտ առաք. որովհետև այս իմ փոքր եղբայրներից մեկին արեցիք, ինձ արեցիք՝ **Մատ. ԻԵ.35–40:** Տվեք ձեր տասցվածից նրան, ով կարիք ունի՝ **Մոսիա 4.16–26:** Նրանք մեկնելու բաժին էին հանում՝ և՛ աշխարհիկով, և՛ հոգևորով՝ համաձայն իրենց կարիքների և պետքերի՝ **Մոսիա 18.29:** Նրանց պատվիրվել էր միասին ծոմ պահել այն մարդկանց բարոյության համար, ովքեր չգիտեին Աստծուն՝ **Ալմա**

6.6: Աղոթքն ձեր բարօրության համար, և նրանց բարօրության համար, ովքեր ձեր շրջապատում են՝ **Ալմա** 34.27–28: Նրանց մեջ բոլոր բաներն ընդհանուր էին **4 Նեփի** 1.3: Հիշեք աղբատներին՝ **ՎևոՒ** 42.30–31: Այցելեք աղբատներին ու կարիքավորներին՝ **ՎևոՒ** 44.6: Բոլոր բաներում հիշեք աղբատներին և կարիքավորներին՝ **ՎևոՒ** 52.40: Վա՛յ ձեզ, հարուստներ, որ չեք կամենում ձեր ստացվածքը տալ աղբատներին, և վա՛յ ձեզ, աղբատներ, որ չեք բավարարվում, որ ազահ եք և չեք կամենում աշխատել՝ **ՎևոՒ** 56.16–17: Միոնում ոչ մի աղբատ կլար նրանց մեջ՝ **Մովսես** 7.18:

ԲԵԹԱՆԻԱ

Գյուղը, որտեղ Հիսուս Քրիստոսը մնաց իր մահկանացու կյանքի վերջին շաբաթը (Մատ. ԻԱ.17, Մար. ԺԱ.11): Բերանիան Ղազարոսի, Մարիամի և Մարթայի բնակավայրն էր, և այն գտնվում էր Չիթենյաց լեռան հարավ-արևելյան լանջին (Հովհ. ԺԱ.1–46, ԺԲ.1):

ԲԵԹԱՆԻԱՅԻ ՄԱՐԻԱՄԸ: Տե՛ս նաև Ղազարոս. Մարթա

Նոր Կտակարանում՝ Ղազարոսի և Մարթայի քույրը:

Մարիամը Հիսուսի ոտքերի մոտ նստած լսում էր՝ **Ղուկ.** Ժ.39, 42: Մարիամը և նրա քույր Մարթան մարդ ուղարկեցին Հիսուսի մոտ՝ **Հովհ.** ԺԱ.1–45: Նա յուրով ձեռնեց Հիսուսի ոտքերը՝ **Հովհ.** ԺԲ.3–8:

ԲԵԹԵԼ

Երբայերեն նշանակում է «Աստժո տուն», և Իսրայելի ամենաարքայազան հողակտորներից մեկն է: Այն գտնվում է Երուսաղեմից տասնվեց կիլոմետր դեպի հյուսիս: Այստեղ Աբրահամը, առաջին անգամ Քանան ժամանելով, կառուցեց իր զոհասեղանը (Ծն. ԺԲ.8, ԺԳ.3): Այստեղ Հակոբը տեսիլքում սանդուղք տեսավ, որը հասնում էր երկինք (Ծն. ԻԸ.10–19): Այն սուրբ վայր էր նաև Մամունելի օրոք (Ա Թագ. Է.16, Ժ.3):

ԲԵԹԼԵՀԵՄ

Փոքրիկ քաղաք, որը գտնվում է Երուսաղեմից ութ կիլոմետր դեպի հարավ: Բերլեհեմի երբայերեն նշանակությունն է

«հացի տուն»։ այն անվանում էին նաև Եփրաթա, որը նշանակում է «պտղաբեր»։ Հիսուս Քրիստոսը ծնվեց Բերլեհեմում (Միքիա Ե.2, Մատ. Բ.1–8): Այնտեղ է քաղվել Ռաբելը (Ծն. ԼԵ.19, ԽԸ.7):

Հռուբը և Բոսոն ապրում էին այնտեղ՝ **Հռուբ Ա.22:** Այնտեղ Մամունելն օծեց Դավթին՝ **Ա Թագ. ԺԶ.1–13, ԺԷ.12, 15, Ի.6, 28:** Հերովդեսը սպանեց այնտեղի երեխաներին՝ **Մատ. Բ.16:**

ԲԵՆԻԱՄԻՆՆ՝ ՀԱԿՈՔԻ ՈՐԴԻ: Տե՛ս նաև Իսրայել. Հակոբ՝ Իսահակի որդի

Հին Կտակարանում՝ Հակոբի և Ռաբելի երկրորդ որդին (Ծն. ԼԵ.16–20):

Բենիամինի ցեղը. Հակոբն օրհնեց Բենիամինին (Ծն. ԽԹ.27): Բենիամինի հետնորդները պատերազմասեր ցեղ էին: Երկու հայտնի Բենիամինացիներ էին Սավուրը՝ առաջին Իսրայելացի թագավորը (Ա Թագ. Թ.1–2), և Պողոսը՝ Նոր Կտակարանի Առաքյալը (Հռովմ. ԺԱ.1):

ԲԵՆԻԱՄԻՆՆ՝ ՄՈՍԻԱՅԻ ՀԱՅՐ:

Տե՛ս նաև Մոսիա՝ Բենիամինի որդի

Մորմոնի Գրքի մարգարե և թագավոր (Մոսիա 1–6):

Մեծ դժվարությունների հանդիպեց երկրում խաղաղություն հաստատելիս՝ **Օմնի** 1.23–25 (ՄեՆ 1.12–18): Ուսուցանեց իր որդիներին՝ **Մոսիա** 1.1–8: Թագավորությունը շնորհեց իր որդուն՝ Մոսիային՝ **Մոսիա** 1.9–18: Նրա ժողովուրդը հավաքվեց լսելու նրա վերջին խոսքը՝ **Մոսիա** 2.1–8: Դիմեց իր ժողովրդին՝ **Մոսիա** 2.9–4.30: Նրա ժողովուրդն ուխտ կապեց Տիրոջ հետ՝ **Մոսիա** 5–6:

ԲԵՐՍԱԲԵ: Տե՛ս նաև Դավիթ

Ուրիայի կինը. հետագայում՝ Դավիթի կինը և Սողոմոնի մայրը: Դավիթ թագավորը շնություն արեց նրա հետ: Նա նաև կազմակերպեց նրա ամուսնու սպանությունը ճակատամարտում (Բ Թագ. ԺԱ), մեղք, որը հավերժական հետևանք ունեցավ Դավիթի համար (ՎևոՒ 132.39):

ԲԺՇԿԵԼ, ԲԺՇԿՈՒՄՆԵՐ: Տե՛ս նաև

Հիվանդների սպասավորում. Օծել

Լավացնել, կամ կրկին առողջացնել՝ և՛ ֆիզիկապես, և՛ հոգեպես: Մուրբ գրքերը

Տիրոջ և նրա ծառաների կողմից հրաշագործ բժշկումների շատ օրինակներ են պարունակում:

Ես եմ Տերը՝ քո բժիշկը՝ **Ել. ԺԵ.26:** Նեեմանը յոթ անգամ սուզվեց Հորդանան գետը և բժշկվեց՝ **Դ Թագ. Ե.1-14:** Նրա վերքերով մենք բուժվեցինք՝ **Ես. ԾԳ.5 (Մոսիա 14.3):** Արդարության Որդին պիտի բարձրանա և բժշկություն պիտի լինի նրա թևերի վրա՝ **Մաղ. Գ.2:** Հիսուսը բժշկում էր ամեն տեսակի հիվանդություն՝ **Մատ. Գ.23 (Մատ. Թ.35):** Նա նրանց գորություն ավեց՝ բժշկելու ամեն տեսակի հիվանդություն՝ **Մատ. Ժ.1:** Նա ինձ ուղարկել է սրտով կտրվածներին բժշկելու՝ **Ղուկ. Գ.18:** Եվ նրանք բժշկվեցին Աստծո Գառի գորությամբ՝ **1 Նեփի 11.31:** Եթե հավատում ես Քրիստոսի փրկագնամանը, դու կարող ես բժշկվել՝ **Ալմա 15.8:** Նա բժշկեց նրանց բոլորին՝ **3 Նեփի 17.9:** Նա, ով բժշկվելու հավաքք ունի առ ինձ, կբժշկվի՝ **ՎևոՒ 42.48:** Իմ անունով նրանք կբուժեն հիվանդների՝ **ՎևոՒ 84.68:** Մենք հավատում ենք բժշկության պարզակին՝ **ՀՀ 1.7:**

ԲՆԱԿԱՆ ՄԱՐԳ: *Տե՛ս նաև* Ադամի և Եվայի անկումը. Մարմնական. Վերստին ծնված, Աստծուց ծնված

Անճամպորություն, որն ավելի շատ նախընտրում է դեկավարվել մարմնական կրքերով, ցանկություններով, հակումներով ու զգացումներով, քան Մուրք Հոգու հուշումներով: Այդպիսի անճամպորությունը կարող է ըմբռնել ֆիզիկական բաները, բայց ոչ հոգևոր բաները: Ադամի և Եվայի անկման հետևանքով բոլոր մարդիկ մարմնական, կամ մահկանացու են: Յուրաքանչյուր մարդ պետք է վերստին ծնվի, Հիսուս Քրիստոսի քավության միջոցով, որպեսզի դադարի բնական մարդ լինել:

Ընչավոր մարդը Հոգու բաները չի ընդունում՝ **Ա Կոր. Բ.14:** Բնական մարդն Աստծո մի թշնամի է և պետք է վրայից հանվի՝ **Մոսիա 3.19:** Նա, ով համառուն է իր սեփական մարմնական էությանը, մնում է իր ընկած վիճակում՝ **Մոսիա 16.5 (Ալմա 42.7-24, ՎևոՒ 20.20):** Ո՞ր բնական մարդն է, որ գիտի այս բաները՝ **Ալմա 26.19-22:** Բնական կամ մարմնական մարդիկ առանց Աստծո Նե աշխար-

հում **Ալմա 41.11:** Իր օրինազանցության պատճառով, մարդը դարձավ հոգեպես մահացած՝ **ՎևոՒ 29.41:** Ոչ էլ կարող է որևէ բնական մարդ մնալ Աստծո ներկայության մեջ՝ **ՎևոՒ 67.12:** Եվ մարդն սկսեց լինել մարմնական, զգայական և դիվական՝ **Մովսես 5.13 (Մովսես 6.49):**

ԲՈՈՍ: *Տե՛ս նաև* Հռութ

Հռութի ամուսինը (Հռութ Գ.9-10). Իսրայելի Դավիթ թագավորի մեծ պապը (Հռութ Գ.13-17). Քրիստոսի՝ Թագավորների Թագավորի նախածնողը (Ղուկ. Գ.32):

ԲՈՐՈՏՈՒԹՅՈՒՆ

Վարակիչ հիվանդություն, որի մասին հաճախ է խոսվում Հին և Նոր Կտակարաններում: Աստվածաշնչի շատ հռչակավոր մարդիկ ինչ-որ ժամանակ վարակված են եղել դրանով, դրանց թվում նաև Մովսեսը (Ել. Գ.6-7), նրա քույր Մարիամը (Թվ. ԺԲ.10), Նեեմանը (Դ Թագ. Ե) և Ոզիա թագավորը (Բ ՄՃ. ԻԶ.19-21):

Հիսուսը բուժեց շատ մարդկանց բորոտությունը՝ **Մատ. Ը.2-4 (Մար. Ա.40-45, Ղուկ. Ե.12-15, 3 Նեփի 17.7-9):** Հիսուսը բուժեց տասը բորոտների՝ **Ղուկ. ԺԷ.11-19:**

ԲՐՈՆՁԵ ՕՁ: *Տե՛ս նաև* Հիսուս Քրիստոս. Մովսես

Արույրե օձ, որը պատրաստել էր Մովսեսը, Աստծո պատվիրանով, բժշկելու համար այն Իսրայելացիներին, որոնց կծել էին կիզող (թունավոր) օձերն անապատում (Թվ. ԻԱ.8-9): Այդ արույրե օձը դրվել էր մի ձողի վրա և «բարձրացվել... որ ով որ նայեր դրա վրա, կկարողանար ապրել» (Ալմա 33.19-22): Տերն ակնարկել է, որ անապատում օձի բարձրացնելը խորհրդանշում է խաչի վրա իր բարձրացվելը (Հովհ. Գ.14-15): Վերջին օրերի հայտնությունները հաստատում են կիզող օձերի պատմությունը, և թե ինչպես մարդիկ բժշկվեցին (1 Նեփի 17.41, 2 Նեփի 25.20, Հել. 8.14-15):

ԳԱԲՐԻԵԼ: *Տե՛ս նաև* Հրեշտակներ. Մարիամ՝ Հիսուսի մայրը. Նոյ՝ աստվածաշնչյան հայրապետ

Հրեշտակ, որն ուղարկվել էր Դանիելին (Դան. Ը.16, Թ.21), Չաքարիային (Ղուկ.

Ա.11–19, ՎևոՒ 27.7), Մարիամին (Ղուկ. Ա.26–38) և ուրիշների (ՎևոՒ 128.21): Մարգարե Ջոզեֆ Սմիթը նշել է, որ Գաբրիելը Հին Կտակարանի Նոյ մարգարեն է:

ԳԱԳԱԹ: *Տե՛ս Գողգոթա*

ԳԱԴ ՏԵՍԱՆՈՂԸ: *Տե՛ս նաև* Սուրբ գրքեր – Կորած սուրբ գրքեր

Հին Կտակարանում՝ մարգարե և Դավթի հավատարիմ ընկերն ու խորհրդատուն (Ա Թագ. ԻԲ.5, Բ Թագ. ԻԳ.11–19): Նա գրեց Դավթի գործերի գիրքը, որը դարձավ կորած սուրբ գիրք (Ա Մն. ԻԹ.29):

ԳԱԴ՝ ՀԱԿՈՔԻ ՈՐԴԻ: *Տե՛ս նաև*

Իսրայել. Հակոբ՝ Իսահակի որդի

Հին Կտակարանում՝ Հակոբի և Ջեդփայի որդին (Ծննդոց Լ.10–11): Նրա հետնորդները դարձան Իսրայելի մի ցեղը:

Գաղի ցեղը. Իր որդի Գաղին տված Հակոբի օրհնության համար, տե՛ս Ծննդոց ԽԹ.19: Գաղի ցեղին տված Մովսեսի օրհնության համար, տե՛ս Երկրորդ Օրինաց ԼԳ.20–21: Ըստ այդ օրհնությունների՝ Գաղի հետնորդները պատերազմասեր ցեղ էին լինելու: Քանանում նրանց բաժին ընկած հողերը Հորդանան գետի արևելքում էին և ընդգրկում էին ջրառատ լավ արոտավայրեր:

ԳԱԴԻԱՆԹՈՆԻ ԱՎԱՋԱԿՆԵՐ.

Տե՛ս նաև Գաղտնի Խմբակցություններ

Մորմոնի Գրքում՝ ավազակների հրոսակախումբ, որը հիմնվել էր Գաղիանթոն անունով մի ամբարիշտ Նեփիացու կողմից: Նրանց կազմակերպությունը հիմնված էր գաղտնիության և սատանայական երդումների վրա:

Գաղիանթոնը Նեփիի ժողովրդի կործանման պատճառը դարձավ՝ **Հել.** 2.12–13: Դեկր գաղտնի երդումներ ու ուխտեր տվեց Գաղիանթոնին՝ **Հել.** 6.16–32: Գաղտնի խմբակցությունները Հարեդացի ազգի կործանման պատճառը եղան՝ **Եթեր** 8.15–26:

ԳԱԼ: *Տե՛ս նաև* Աշակերտ.

Հնազանդություն, Հնազանդ, Հնազանդվել

Սուրբ գրքերում՝ ինչ-որ մեկին հնազանդ-

վելով և հետևելով՝ մոտենալ նրան, ինչպես հետևյալ արտահայտության մեջ՝ «Եկեք Քրիստոսի մոտ և կատարելագործվեք նրանում» (Մոր. 10.32):

Ձեր ականջը խոնարհեցրեք և ինձ մոտ եկեք՝ **Ես.** ԾԵ.3: Ինձ մոտ եկեք ամեն վաստակածներ՝ **Մատ.** ԺԱ.28: Թույլ տվեք երեխաներին ինձ մոտ գալ՝ **Մատ.** ԺԹ.14: Եթե մեկը կամենում է իմ ետևից գալ, թող իր անձն ուրանա՝ **Ղուկ.** Թ.23: Ինձ մոտ եկողը չի սովի՝ **Հովհ.** 2.35: Քրիստոսը բոլորին հրավիրում է գալ իր մոտ՝ **2 Նեփի** 26.33: Եկեք ինձ մոտ և փրկվեք՝ **3 Նեփի** 12.20: Եկեք Քրիստոսի մոտ՝ **Մոր.** 10.32: Բոլորին հրավիրեք՝ գալ Քրիստոսի մոտ՝ **ՎևոՒ** 20.59: Եկեք ինձ մոտ, և ձեր հոգիները պիտի ապրեն՝ **ՎևոՒ** 45.46:

ԳԱԼԻԼԵԱ

Հնադարում և արդի ժամանակներում Իսրայելի ամենահյուսիսային շրջանը Հորդանան գետի և Գալիլեայի ծովի արևմուտքում: Գալիլեայի երկարությունը մոտ իննսուները կիլոմետր է, իսկ լայնությունը՝ մոտ քառասուները կիլոմետր: Հնադարում այն ընդգրկում էր Իսրայելի ամենալավ հողերն ու ամենազբաղեցված քաղաքները: Կարևոր մայրուղիները, որոնք տանում էին դեպի Դամասկոս, Եգիպտոս և Իսրայելի արևելք, անցնում էին Գալիլեայով: Նրա գերագանց կլիման ու բերրի հողը ձիթապտղի, ցորենի, գարու և խաղողի առատ բերք էին տալիս: Գալիլեայի ծովափնյա ձկնորսաբաններն առևտրի խոշոր արտահանում էին ապահովում և մեծ հարստության աղբյուր էին: Իր ժամանակի մեծ մասը Փրկիչն անցկացրեց Գալիլեայում:

Գալիլեայում մեծ լույս է ծագելու՝ **Ես.** Թ.1–3 (2 Նեփի 19.1–3): Հիսուսը ման էր գալիս բոլոր Գալիլեայում՝ քարոզելով, սովորեցնելով և բժշկելով՝ **Մատ.** Գ.23: Հարություն առնելուց հետո, Հիսուսը հայտնվեց Գալիլեայում՝ **Մար.** ԺԳ.28 (Հովհ. ԻԱ.1–14): Հիսուսի համբավը տարածվեց ողջ Գալիլեայում՝ **Ղուկ.** Գ.14: Իր հրաշքները Հիսուսն սկսեց Գալիլեայի Կանայում՝ **Հովհ.** Բ.11:

Գալիլեայի ծովը. Գալիլեայի ծովը գտնվում

է Իսրայելի հյուսիսում: Այն կոչվել է նաև Քեներեթի ծով՝ Հին Կտակարանում, և Գեննեսարեթի կամ Տիբերեայի ծովակ՝ Նոր Կտակարանում: Հիսուսը մի քանի քարոզներ է կարդացել այնտեղ (Մատ. ԺԳ.2): Ծովը տանձածև է և ունի 20 կիլոմետր երկարություն և 12 կիլոմետր լայնություն՝ ամենալայն տեղում: Ծովի մակարդակից 207 մետր ցածր է, որի հետևանքով շրջակա օդի ջերմաստիճանը բավական բարձր է: Բլուրների սառը հոսանքները, սրընթաց ցած հոսելով և հանդիպելով ջրի վրայի տաք հոսանքներին, հաճախ առաջացնում են անսպասելի փոթորիկներ: (Գուկ. Ը.22–24):

ԳԱՂԱՍԴԻ ԲԱԼԱՍԱՆ

Անուշաբույր խեժ կամ համեմունք, որն օգտագործվում էր վերքերը բուժելու համար (Ծն. ԽԳ.11, Երես. Ը.22, ԽԶ.11, ԾԱ.8): Թուփը, որի սրտադրած բուսախեժից պատրաստում էին բալասանը, այնքան շատ էր աճեցվում Գաղաաղում, Հին Կտակարանի ժամանակներում, որ այդ բալասանը հայտնի դարձավ՝ որպես «Գաղաաղի բալասան» (Ծն. ԼԷ.25, Եգեկ. ԻԷ.17):

ԳԱՂԱՍՍՏԻՍ՝ ԹՈՒԴԹ ԱՌ: *Տե՛ս նաև* Պողոս. Պողոսի Թղթերը

Գիրք Նոր Կտակարանում: Սկզբում դա մի նամակ էր, որ Պողոս Առաքյալը գրել էր Գաղատիայում ապրող Սրբերին: Այս նամակի թեման այն է, որ իրական ազատություն կարելի է ձեռք բերել միայն ապրելով Հիսուս Քրիստոսի ավետարանով: Եթե Սրբերը որդեգրեին հրեա քրիստոնյաների ուսմունքները, որոնք պնդում էին Մովսեսի օրենքը պահելու անհրաժեշտությունը, նրանք կսահմանափակեին կամ կկործանեին այն ազատությունը, որը գտել էին Քրիստոսում: Նամակում Պողոսը հաստատել է իր դիրքը՝ որպես Առաքյալ, բացատրել է հավատքով արդար ապրելու վարդապետությունը և հաստատել է հոգևոր կրոնի արժեքը:

Ա և Բ գլուխներում Պողոսն ափսոսանք է հայտնում իր ստացած նորության համար, որ Գաղատացիներից ոմանք ուրացել են և պարզաբանել է առաքյալների մեջ ունեցած իր դիրքը: Գ և Դ գլուխներում խոսվում է հավատքի և գործերի վարդա-

պետության մասին: Ե և Զ գլուխները քարոզներ են հավատքի վարդապետության գործնական արդյունքների մասին:

ԳԱՂՏՆԻ ԽՄԱԿՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ: *Տե՛ս նաև* Գաղիանթոնի Ավազակներ. Կայեն

Մարդկանց կազմակերպություն, որի անդամները միացած են խմբակցության չար նպատակներն առաջ տանելու երդումով:

Ստերի հայրը մարդկանց զավակներին դրդում է գաղտնի խմբակցությունների՝ **2 Նեփի** 9.9: Ես անպայման պետք է կործանեմ խավարի գաղտնի գործերը՝ **2 Նեփի** 10.15: Աստծո դատաստանները եկան գաղտնի խմբակցությունների այս գործիչների վրա՝ **Ավմա** 37.30: Գաղիանթոնը գրեթե լիակատար կործանման հասցրեց Նեփիի ժողովրդին՝ **Հել.** 2.4–13: Սատանան դրեց մարդկանց սրտերում՝ կազմել գաղտնի երդումներ և ուխտեր՝ **Հել.** 6.21–31: Տերը չի գործում գաղտնի խմբակցություններով՝ **Եփեթ** 8.19: Ազգերը, որոնք սատարում են գաղտնի խմբակցություններին, պիտի կործանվեն՝ **Եփեթ** 8.22–23: Իրենց գաղտնի կազմակերպության պատճառով՝ նրանք մերժեցին մարգարեների բոլոր խոսքերը՝ **Եփեթ** 11.22: Կայենի օրերից ի վեր կար մի գաղտնի խմբակցություն՝ **Մովսես** 5.51:

ԳԱՄԱԴԻԵԼ: *Տե՛ս նաև* Փարիսեցիներ

Հայտնի Փարիսեցի՝ Նոր Կտակարանում, որը գիտեր և ուսուցանում էր հրեաների օրենքը: Պողոս Առաքյալը նրա ուսանողներից մեկն է եղել (Գոր. ԻԲ.3): Նա մեծ ազդեցություն ուներ Ծերակույտում (Գոր. Ե.34–40):

ԳԱՅԹԱԿՂԵԼ, ԳԱՅԹԱԿՂՈՒԹՅՈՒՆ: *Տե՛ս նաև* Դև. Կամքի ազատություն. Համբերել

Չարի փոխարեն բարին ընտրելու մարդու կարողության փորձություն. մեղք գործելու և Աստծո փոխարեն Սատանային հետևելու հրապարանք:

Եթե քո աչ աչքը գայթակղեցնում է քեզ, հանիր այն՝ **Մատ.** Ե.29: Մի տար մեզ փորձության, այլ ազատիր մեզ չարից՝ **Մատ.** Ե.13 (3 Նեփի 13.12): Ով որ գայթակղեցնի այս փոքրիկներից մեկին, որը

հավատում է ինձ, ավելի լավ է, որ նա ծովի անդունդն ընկղմվի՝ **Մատ. ԺԸ.6** (ՎևոՒ 121.19–22): Աստված չի թողնի, որ դուք փորձվեք ձեր կարողություններից վեր՝ **Ա Կոր. Ժ.13**: Քրիստոսը փորձվեց, ինչպես որ մենք՝ **Եբր. Դ.14–15**: Օրհնված է այն մարդը, որը փորձություններին դիմանում է՝ **Հակ. Ա.12–14**: Հակառակորդի գայթակղությունները չեն կարող հաղթել նրանց, ովքեր ակամջ են դնում Աստծո խոսքին՝ **1 Նեփի 15.24** (Հել. 5.12): Մարդը չէր կարող գործել ինքնուրույն, մինչև որ շրջապուրվեր մեկի կամ մյուսի կողմից՝ **2 Նեփի 2.11–16**: Արթուն մնացեք և շարունակ աղոթեք, որպեսզի չընկնեք ավելի մեծ գայթակղության մեջ, քան դուք կարող եք դիմանալ՝ **Ալմա 13.28**: Տովորեցրու նրանց դիմակայել դևի ամեն գայթակղության, իրենց հավատքով առ Տեր Հիսուս Քրիստոս՝ **Ալմա 37.33**: Միշտ աղոթեք, որ չլինի թե գայթակղության մեջ ընկնեք՝ **3 Նեփի 18.15, 18** (ՎևոՒ 20.33, 31.12, 61.39): Ջգուշացի՛ր հպարտությունից՝ չլինի թե ընկնես գայթակղության մեջ՝ **ՎևոՒ 23.1**: Ադամը ենթարկվեց դևի կամքին, որովհետև տեղի տվեց գայթակղությանը՝ **ՎևոՒ 29.39–40**: Ես ենթարկվում էի տարբեր տեսակի գայթակղությունների՝ **ՋՍ–Պ 1.28**:

ԳԵԳԵՈՆ (ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆ)

Առաջնորդ, որն Իսրայելին ազատեց Մադիանացիներից (Դաւ. 9.11–40, Է–Ը):

ԳԵԳԵՈՆ (ՄՈՐՄՈՆԻ ԳԻՐԸ)

Նեփիացի հավատարիմ առաջնորդ:

Ուժեղ մարդ էր և թագավոր Նոյին բջնամի՝ **Մոսիա 19.4–8**: Խորհրդակցեց թագավոր Լիմբիի հետ՝ **Մոսիա 20.17–22**: Լամանացիների ճորտությունից փախչելու ծրագիր առաջարկեց՝ **Մոսիա 22.3–9**: Սպանվեց Նեորի կողմից՝ **Ալմա 1.8–10**:

ԳԵԹԵՄԱՆԻ: Տե՛ս նաև Զիթենյաց սար. Զավել, Զավություն

Պարտեզ, որի մասին խոսվում է Նոր Կտակարանում, որը Զիթենյաց սարի լանջին էր: Արամեական լեզվով *գեթեմանի* բառը նշանակում է «ձիթենյաց հնձան»: Հուդայի կողմից մատնվելու գիշերը Հիսուսը գնաց այդ պարտեզը: Այնտեղ՝

Գեթեմանիում, նա աղոթեց և տառապեց մարդկության մեղքերի համար (Մատ. ԻԶ.36, 39, Մար. ԺԳ.32, Հովհ. ԺԸ.1, Ալմա 21.9, ՎևոՒ 19.15–19):

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՊԱՏԻԺ: Տե՛ս նաև Ապանություն

Մահվան պատիժ՝ գործած հանցանքի համար, հատկապես վերաբերում է սպանության համար տրված պատժին:

Ով որ մարդու արյուն թափի, նրա արյունը մարդով պիտի թափվի՝ **Ծն. Թ.6** (ՋՍԹ՝ Ծն. Թ.12–13): Մարդասպանն անպայման պիտի մեռցվի՝ **Թվ. ԼԵ.16**: Մարդասպանները, ովքեր միտումնավոր սպանում են, պիտի մեռնեն՝ **2 Նեփի 9.35**: Դու դատապարտվում ես մահվան՝ համաձայն օրենքի՝ **Ալմա 1.13–14**: Նա, ով սպանում էր, պատժվում էր մահվամբ՝ **Ալմա 1.18**: Օրենքը պահանջում է նրա կյանքը, ով սպանել է՝ **Ալմա 34.12**: Նա, ով սպանում է, պիտի մեռի՝ **ՎևոՒ 42.19**:

ԳԵՐԵՉՄԱՆ: Տե՛ս նաև Հարություն

Մահկանացու մարմինը թաղելու վայրը: Քավության շնորհիվ բոլորը հարություն կառնեն գերեզմանից:

Քրիստոսի հարությունից հետո գերեզմանները բացվեցին և շատ մարմիններ հարություն առան՝ **Մատ. ԻԷ.52–53** (3 Նեփի 23.9–13): Ով գերեզման, ո՞րք է քո հաղթությունը՝ **Ա Կոր. ԺԵ.55**: Գերեզմանը պիտի ազատի իր մեռելներից՝ **2 Նեփի 9.11–13**: Նրանք, ովքեր ննջել են իրենց գերեզմաններում, առաջ կգան՝ **ՎևոՒ 88.97–98**: Սլքսության ավագանը գերեզմանի խորհրդանիշն է՝ **ՎևոՒ 128.12–13**:

ԳԵՐՈՒԹՅՈՒՆ: Տե՛ս նաև Ազատ, Ազատություն

Ֆիզիկական կամ հոգևոր կապանքների մեջ լինելը:

Իսրայելի տունն իր անօրինությունների համար գերի է ընկել՝ **Եզեկ. ԼԹ.23**: Եթե մեկը գերության քաշի, գերության պիտի տարվի՝ **Հայտ. ԺԳ.10**: Ամբարիշտները գերության կտարվեն դևի կողմից՝ **1 Նեփի 14.4, 7**: Մարդիկ ազատ են ընտրելու ազատություն և հավերժական կյանք կամ գերություն և մահ՝ **2 Նեփի 2.27**: Մարմնի կամքը դևի ոգուն գորություն է

տալիս՝ գերելու՝ **2 Նեփի** 2.29: Հիշողության մեջ բավականաչափ պահպանե՞լ եք արդյոք ձեր հայրերի գերությունը՝ **Ալմա** 5.5–6: Նրանք, ովքեր կարծացնում են իրենց սրտերը, գերի են վերցվում դևի կողմից՝ **Ալմա** 12.11: Արթուն կացեք և միշտ աղոթեք, որ չլինի թե գայթակղովք դևի կողմից ու գերության տարվեք նրա կողմից՝ **3 Նեփի** 18.15:

ԳԹՈՒԹՅՈՒՆ: *Տե՛ս նաև*

Բարօրություն. Ծառայություն.
Կարեկցանք. Սեր

Քրիստոսի մաքուր սերը (Մոր. 7.47). այն սերը, որը Քրիստոսն ունի մարդկանց զավակների հանդեպ, և որը մարդկանց զավակները պետք է ունենան միմյանց հանդեպ (**2 Նեփի** 26.30, 33.7–9, Եթեր 12.33–34). ոչ թե պարզապես կապվածություն, այլ ամենավեհ, ամենաազնիվ, ամենագորեղ սերը:

Գիտությունը հպարտացնում է, բայց գթությունը շենացնում է՝ **Ա Կոր.** Ը.1: Գթությունը՝ մաքուր սերը, գերազանցում և անցնում է գրեթե ամեն բան՝ **Ա Կոր.** ԺԳ: Պատվիրանքի վախճանը սերն է՝ սուրբ սրտից՝ **Ա Տիմ.** Ա.5: Եղբայրասիրության վրա ավելացրեք գթություն՝ **Բ Պետ.** Ա.7: Տերը պատվիրել է, որ բոլոր մարդիկ գթություն ունենան՝ **2 Նեփի** 26.30 (Մոր. 7.44–47): Տեսեք, որ դուք ունենաք հավատք, հույս և գթություն՝ **Ալմա** 7.24: Սերը, որը Տերն ունի մարդկանց հանդեպ, գթությունն է՝ **Եթեր** 12.33–34: Առանց գթության, մարդիկ չեն կարող ժառանգել այն տեղը, որը պատրաստվել է Հոր ապարանքներում՝ **Եթեր** 12.34 (Մոր. 10.20–21): Մորոնիհն գրեց Մորոնիի խոսքերը հավատքի, հույսի և գթության մասին՝ **Մոր.** 7: Գթությունը մարդկանց որակն է Տիրոջ գործի համար՝ **Վևոթ** 4.5–6 (Վևոթ 12.8): Ձեր վրա հագեք գթության կապը՝ **Վևոթ** 88.125: Թող քո աղիները լցված լինեն գթությամբ՝ **Վևոթ** 121.45:

ԳԻՏՈՒԹՅՈՒՆ: *Տե՛ս նաև*

Իմաստություն. Հասկանալ.
Ճշմարտություն

Հասկացողություն և իմացություն, հատկապես ճշմարտության վերաբերյալ, ինչպես որ ուսուցանվել կամ հաստատվել է Հոգու կողմից:

Տերը գիտության Աստված է՝ **Ա Թագ.** Բ.3: Տերը գիտությամբ կատարյալ է՝ **Հոր** ԼԷ.16: Տիրոջ վախը գիտության սկիզբն է՝ **Առակ.** Ա.7: Գիտություն ունեցողը զսպում է իր խոսքերը՝ **Առակ.** ԺԷ.27: Տրկիկը լիքն է լինելու Տիրոջ գիտությունով՝ **Ես.** ԺԱ.9 (**2 Նեփի** 21.9, 30.15): Դուք վերցրել եք գիտության բանալին՝ **Ղուկ.** ԺԱ.52: Քրիստոսի սերն ամեն գիտությունից գերազանց է՝ **Եփես.** Գ.19: Ձեր հավատքի վրա ավելացրեք առաքինություն, և առաքինության վրա՝ գիտություն՝ **Բ Պետ.** Ա.5: Նեփին մեծ գիտելիք ուներ Աստծո բարության մասին՝ **1 Նեփի** 1.1: Նրանք կզան իրենց Քավչի իմացությանը՝ **2 Նեփի** 6.11: Արդարները կատարյալ իմացություն կունենան իրենց արդարության մասին՝ **2 Նեփի** 9.14: Հոգին տալիս է գիտելիք՝ **Ալմա** 18.35: Ձեր գիտելիքը կատարյալ է այդ բանում՝ **Ալմա** 32.34: Լամանացիները կբերվեն իրենց Քավչի ճշմարիտ իմացությանը՝ **Հել.** 15.13: Դուք կարող եք կատարյալ իմացությամբ իմանալ, որ դա Աստծուց է՝ **Մոր.** 7.15–17: Սրբերը կզանեն գիտության մեծ զանձեք՝ **Վևոթ** 89.19: Մաքուր գիտելիքը խիստ մեծացնում է հոգին՝ **Վևոթ** 121.42: Նրա համար, ով ունի սուրբ քահանայության բանալիները, դժվար չէ գիտելիք ձեռք բերել փաստերի վերաբերյալ՝ **Վևոթ** 128.11: Եթե մի անձնավորություն գիտելիք է ձեռք բերում այս կյանքում, նա առավելություն ունի գալիք շախարհում՝ **Վևոթ** 130.19: Անհնար է փրկվել անգիտության մեջ՝ **Վևոթ** 131.6:

ԳԻՐՔԸ ՄՈՐՄՈՆԻ: *Տե՛ս Մորմոնի*

Գիրքը

ԳՆԱՀԱՏԵԼ: *Տե՛ս նաև* Պատվեկ.

Պատկառանք

Ինչ-որ բան կամ ինչ-որ մեկին արժանավոր և արժեքավոր համարել, հատկապես ավետարանի տեսանկյունից:

Նա անարգված էր, և մենք նրան չէինք գնահատում՝ **Ես.** ԾԳ.3–4: Մարդկանց մեջ բարձր համարվող բանը պղծություն է Աստծո առաջ՝ **Ղուկ.** ԺԶ.15: Թող մեկը մյուսին իր անձից ավելի լավը համարի՝ **Փիլ.** Բ.3: Տերը բոլոր մարմինը մեկ է համարում՝ **1 Նեփի** 17.35: Ամեն մարդ պետք է գնահատի իր մերձավորին, ինչ-

պես ինքն իրեն՝ **Մոսիա** 27.4 (ՎևոՒՒ 38.24–25): Իրենց խաղաղության օրը նրանք քեթևամտորեն վերաբերվեցին իմ խորհրդին՝ **ՎևոՒՒ** 101.8:

ԳՈԳ. *Տե՛ս նաև* Մազգ. Հիսուս Քրիստոսի երկրորդ գալուստը

Մազգոյի քագավորը: Եզեկիելը մարգարեացել է, որ Տիրոջ երկրորդ գալուստի ժամանակ Գոգը կներխուսի Իսրայել (Եզեկ. ԼԸ–ԼԹ): Մեկ այլ պատերազմ, որը կոչվում է Գոգի և Մազգոյի պատերազմ, տեղի կունենա Հազարամյակի վերջում (Հայտ. Ի.7–9, ՎևոՒՒ 88.111–116):

ԳՈՂԳՈԹԱ. *Տե՛ս նաև* Խաչելություն. Հիսուս Քրիստոս

Արամեական լեզվով *Գողգոթա* նշանակում է «գանգ»: Դա այն տեղի անունն է, որտեղ խաչվեց Քրիստոսը (Մատ. ԻԷ.33, Մար. ԺԵ.22, Հովհ. ԺԹ.17): Այս տեղը հայտնի է նաև Գազաք անունով (Ղուկ. ԻԳ.33):

ԳՈՂԻԱԹ: *Տե՛ս նաև* Դավիթ

Հին Կտակարանում՝ Փղշտացի հսկա, որը մարտի կոչեց Իսրայելացիների բանակին: Դավիթն ընդունեց նրա մարտակոչը և Տիրոջ օգնությամբ սպանեց նրան (ԱԹագ. ԺԷ):

ԳՈՂՈՒԹՅՈՒՆ, ԳՈՂԱՆԱԼ

Անագնիվ և անօրինական ձևով մեկից մի քան վերցնելը: Տերը միշտ իր զավակներին պատվիրել է գողություն չանել (Ել. Ի.15, Մատ. ԺԹ.18, 2 Նեփի 26.32, Մոսիա 13.22, ՎևոՒՒ 59.6):

Ձեզ համար գանձեր դիզեք երկնքում, ուր գողերը չեն մտնում ու չեն գողանում՝ **Մատ.** 2.19–21: Նեփիացիների պարտությունը եղավ հպարտության, հարբստությունների, թալանելու, գողանալու պատճառով՝ **Հել.** 4.12: Նա, ով գողանում է և չի կամենում ապաշխարել, դուրս պիտի գցվի՝ **ՎևոՒՒ** 42.20: Նրանք, ովքեր գողանում են, կհանձնվեն երկրի օրենքին՝ **ՎևոՒՒ** 42.84–85:

ԳՈՄՈՐ: *Տե՛ս նաև* Սողոմ

Հին Կտակարանում՝ ամբարիշտ մի քաղաք, որը Տերը կործանեց (Ծն. ԺԹ.12–29):

ԳՈՎՔ: *Տե՛ս* Փառք. Ընորհակալ, Ընորհակալություն, Գոհաբանություն

ԳՈՐԾԵՐ

Մարդու գործողությունները՝ բարի, թե չար: Յուրաքանչյուր անձ դատվելու է ըստ իր իսկ գործերի:

Տերը մարդուն հատուցելու է իր գործերի համեմատ՝ **Առակ.** ԻԳ.12: Թող ձեր լույսն այնպես շողա մարդկանց առաջ, որ նրանք տեսնեն ձեր բարի գործերը՝ **Մատ.** Ե.16 (3 Նեփի 12.16): Նա, ով կատարում է իմ Հոր կամքը, կմտնի երկնքի արքայությունը՝ **Մատ.** Է.21: Հավատքն առանց գործերի մեռած է՝ **Հակ.** Բ.14–26: Նրանք պետք է դատվեն իրենց գործերի համար՝ **1 Նեփի** 15.32 (Մոսիա 3.24): Մենք գիտենք, որ շնորհի միջոցով է, որ մենք փրկվում ենք՝ այն ամենից հետո, ինչ կարող ենք անել՝ **2 Նեփի** 25.23: Սովորեցրու նրանց երբեք չձանձորանալ բարի գործերից՝ **Ալմա** 37.34: Հարկավոր է, որ մարդիկ դատվեն ըստ իրենց գործերի՝ **Ալմա** 41.3: Իրենց գործերով դուք պիտի ճանաչեք նրանց՝ **Մոր.** 7.5 (ՎևոՒՒ 18.38): Ես՝ Տերս, կդատեմ բոլոր մարդկանց՝ համաձայն նրանց գործերի՝ **ՎևոՒՒ** 137.9:

ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՑ: *Տե՛ս նաև* Դուկաս

Սա Դուկասի կողմից Թեոփիլեին գրված երկու մասից բաղկացած աշխատության երկրորդ գիրքն է: Առաջին մասը հայտնի է՝ որպես Ավետարան ըստ Դուկասի: Ա–ԺԲ գլուխները նկարագրում են Պետրոսի ղեկավարությամբ Տասներկու Առաքյալների հիմնական միսիոներական գործերից մի քանիսն անմիջապես Փրկչի մասից և հարությունից հետո: ԺԳ–ԻԸ գլուխները նկարագրում են Պողոս Առաքյալի ճանփորդությունները և միսիոներական աշխատանքը:

ԳԱԼԻԱ: *Տե՛ս նաև* Փղշտացիներ

Փղշտացի կին՝ Հին Կտակարանում, որը խաբեց և դավաճանեց Սամսոնին (Դատ. ԺԶ):

ԳԱՄԱՍԿՈՍ

Ատրիքի հնագույն քաղաք: Դամասկոսը գտնվում է արգասավոր հարթավայրի վրա, անապատի ծայրամաս-

սում և լավ ոռոգվում է Բարադա գետով: Այն հաճախ է հիշատակվում սուրբ գրքերում (սկսած Ծն. ԺԵ.2-ից): Պողոսը Դամասկոսի ճանապարհին էր, երբ հարություն առած Տերը հայտնվեց նրան (Գոր. Ժ.1-27, ԻԲ.5-16, ԻՋ.12-20, Բ Կոր. ԺԱ.32-33):

ԴԱՆ: *Տե՛ս նաև* Իսրայել. Հակոբ՝ Իսահակի որդի

Հին Կտակարանում՝ Հակոբի և Ռաբելի աղայիսին Բաղդայի որդին (Ծն. Լ.5-6):

Դանի ցեղը. Դանին տված Հակոբի օրհնության մասին, տե՛ս Ծննդոց ԽԹ.16-18: Դանին տված Մովսեսի օրհնության մասին, տե՛ս Երկրորդ Օրինաց ԼԳ.22: Քանանում բնակություն հաստատելուց հետո Դանի ցեղը ստացավ փոքր, բայց չափազանց պարարտ հողաբաժին (Հես. ԺԹ.40-48): Նրանք բավական մեծ դժվարություններ ունեցան Ամորիացիներից (Դատ. Ա.34) և Փղշտացիներից այն պաշտպանելիս (Դատ. ԺԳ.2, 25, ԺԸ.1): Արդյունքում, Դանի ցեղը տեղափոխվեց Պաղեստինի հյուսիսային մասը (Դատ. ԺԸ), Լայիսի շրջապայքը, և այդ քաղաքը վերանվանվեց Դան: Այս քաղաքը քաջ հայտնի է որպես Պաղեստինի հյուսիսային սահման, որը ձգվում էր «Դանից մինչև Բերսաբե»:

ԴԱՆԻԵԼ

Հին Կտակարանի Դանիելի գրքի հիմնական գործող անձը. Աստծո մարգարե և մեծ հավատքի տեր մարդ:

Նրա ծնողների մասին ոչինչ հայտնի չէ, չնայած որ նա, ըստ երևույթին, թագավորական սերնդից է սերվել (Դան. Ա.3): Նա գերեվարվեց Բաբելոն, որտեղ ստացավ Բաղդասասար անունը (Դան. Ա.6-7): Դանիելը և երեք այլ գերիներ կրոնական դրողուններով մերժեցին թագավորական կերակուրը (Դան. Ա.8-16):

Դանիելը երազներ մեկնաբանելու իր կարողությամբ՝ Նաբոգոդոնոսորի և Դարեհի բարեհաճությանն արժանացավ (Դան. Բ, Դ): Նա նաև կարդաց և մեկնաբանեց պատի վրայի ձեռագիրը (Դան. Ե): Նրա թշնամիները դավ նյութեցին նրա դեմ, և նա գցվեց առյուծների գուրը, սակայն Տերը պահպանեց նրա կյանքը (Դան. Զ):

Դանիելի Գիրքը. Գիրքը բաղկացած է երկու մասից. Ա-Չ գլուխները պատմում են Դանիելի և նրա երեք ընկերների մասին. Է-ԺԲ գլուխները Դանիելի տեսած մարգարեական տեսիլքներն են: Գիրքն ուսուցանում է Աստծուն հավատարիմ լինելու կարևորությունը և ցույց է տալիս, որ Տերն օրհնում է հավատարիմ մարդկանց:

Գրքի գլխավոր ավանդը Նաբոգոդոնոսոր թագավորի երազի մեկնաբանությունն է: Երազում Աստծո արքայությունը վերջին օրերին ներկայացվում է որպես մի քար, որը կտրվել է սարից: Քարը պիտի գլորվի, մինչև որ լցնի ողջ երկիրը (Դան. Բ, տե՛ս նաև ՎևոՒԹ 65.2):

ԴԱՎԻԹ: *Տե՛ս նաև* Բերսաբե. Սաղմոս

Հնագույն Իսրայելի թագավոր Հին Կտակարանում:

Դավիթը Հեսսեի որդին էր՝ Հուդայի ցեղից: Նա քաջազուն երիտասարդ էր, որն սպանեց մի առյուծ, մի արջ և Փղշտացի հսկա Գողիաթին (Ա Թագ. ԺԷ): Դավիթն ընտրվեց և օծվեց որպես Իսրայելի թագավոր: Սավուդի մնա՞ն, իր հասուն տարիքում նա ծանր հանցանքների մեղսակից եղավ, սակայն, ի տարբերություն Սավուդի, նա ընդունակ էր անկեղծ զղջման: Ուստի նա կարողացավ ներում գտնել, բացի Ուրիայի սպանության դեպքից: (ՎևոՒԹ 132.39): Նրա կյանքը կարելի է բաժանել չորս մասի. (1) Բեթլեհեմում, որտեղ նա հովիվ էր (Ա Թագ. ԺԶ-ԺԷ). (2) Սավուդ թագավորի արքունիքում (Ա Թագ. ԺԸ-ԺԹ.18). (3) որպես զաղթական (Ա Թագ. ԺԹ.18-Բ Թագ. Ա.27). (4) որպես Հուդայի թագավոր Քերթոնում (Բ Թագ. Բ-Դ), իսկ ավելի ուշ՝ որպես ողջ Իսրայելի թագավոր (Բ Թագ. Ե-Գ Թագ. Բ.11):

Բերսաբեի հետ Դավիթի շնության մեղքին հետևեցին լուրջ դժբախտություններ, որոնք մրոտեցին նրա կյանքի վերջին քսան տարիները: Ազգը, ամբողջությամբ վերցրած, բարգավաճում էր նրա թագավորության ժամանակ, սակայն ինքը՝ Դավիթը, տառապում էր իր մեղքերի պատճառով: Շարունակ ընտանեկան գծտություններ էին լինում, որոնք, Աբիսողոմի և Արոնիայի դեպքում, ավարտվեցին բաց ապստամբությամբ: Այդ դեպ-

քերը Նաթան մարգարեի հայտարարությունների իրականացումն էին Դավթի վերաբերյալ՝ նրա մեղքերի պատճառով (Բ Թագ. ԺԲ.7-13):

Չնայած այդ դժբախտություններին՝ Դավթի թագավորությունն ամենափայլուն էր Իսրայելացիների պատմության մեջ, քանի որ. (1) նա ցեղերին միավորեց մեկ ազգի մեջ, (2) նա ապահովեց երկրի անվիճելի տարածքների անվտանգությունը, (3) նա կառավարությունը հաստատեց ճշմարիտ կրոնի վրա, այնպես որ Աստծո կամքը դարձել էր Իսրայելի օրենքը: Նշված պատճառներով Դավթի թագավորությունը հետագայում գնահատվեց որպես ազգի ոսկե դարաշրջան, և որպես այն ավելի փառահեղ դարաշրջանի մարմնավորում, երբ Մեսիան պիտի գա (Ես. ԺՁ.5, Երեմ. ԻԳ.5, Եզեկ. ԼԷ.24-28):

Դավթի կյանքը ցույց է տալիս, որ բոլոր մարդիկ պետք է արդարության մեջ համբերեն մինչև վերջ: Որպես երիտասարդ՝ նրա մասին ասվում էր, որ Տիրոջ «սրտի համեմատ» մարդ է (Ա Թագ. ԺԳ.14). որպես տղամարդ՝ նա խոսում էր չոգով և շատ հայտնություններ ուներ: Սակայն նա ծանր զին վճարեց Աստծո պատվիրաններին չհնազանդվելու համար (ՎևոՒ 132.39):

ԴԱՏԱՊԱՐՏԵԼ, ԴԱՏԱՊԱՐՏՈՒ-ԹՅՈՒՆ: *St'u nusal* Դատել,

Դատաստան. Վերջին դատաստան Մեղավոր համարել կամ այդպիսին համարվել Աստծո կողմից:

Նենգավոր մարդուն Աստված կդատապարտի՝ **Առակ. ԺԲ.2:** Տիրոջից խրատվում ենք, որ աշխարհի հետ չդատապարտվենք՝ **Ա Կոր. ԺԱ.32:** Մեր խոսքերը, գործերը և մտքերը կդատապարտեն մեզ՝ **Ալմա 12.14:** Իմանալով բաները և չանելով դրանք, մարդիկ ընկնում են դատապարտության տակ՝ **Հեյ. 14.19:** Եթե դադարենք գործելուց, մենք կընկնենք դատապարտության տակ՝ **Մոր. 9.6:** Ով իր եղբորը չի ներում, դատապարտված կանգնած է Տիրոջ առաջ՝ **ՎևոՒ 64.9:** Նա, ով մեղանչում է ավելի մեծ լույսի դեմ, ավելի մեծ դատապարտություն պիտի ստանա՝ **ՎևոՒ 82.3:** Ողջ եկեղեցին դատապարտության տակ է, մինչև որ նրանք

ապաշխարեն և հիշեն Մորմոնի Գիրքը՝ **ՎևոՒ 84.54-57:**

ԴԱՏԱՎՈՐԱՑ ԳԻՐՔԸ

Գիրք Հին Կտակարանում: Դատավորաց գիրքն Իսրայելացիների վերաբերյալ է՝ Հեսուի մահից մինչև Սամուելի ծնունդը:

Ա-Գ գլուխները նախաբան են Դատավորաց ողջ գրքի համար: Դրանք բացատրում են, որ քանի որ Իսրայելացիները դուրս չըջեցին իրենց բջնամիներին (Դատ. Ա.16-35), Իսրայելացիները պետք է կրեն դրա հետևանքները. հավատքի կորուստ, անհավատների հետ ամուսնություն և կռապաշտություն: Գ-Ե գլուխները պատմում են Դեբորայի և Բարակի փորձառությունների մասին, որոնք Իսրայելին ազատեցին Քանանացիներից: Զ-Ը գլուխները հավատք ամրացնող պատմություններ են Գեդեոնի մասին, որին Տերն օրհնեց, որ Իսրայելին ազատի Մադիանացիներից: Թ-ԺԲ գլուխներում մի քանի տարբեր տղամարդիկ ծառայում են որպես դատավորներ Իսրայելում, որը մեծամասամբ ուրացության մեջ էր և ճնշման տակ: ԺԳ-ԺՁ գլուխները պատմում են Սամսոնի վերջին դատավորի բարձրացման և անկման մասին: Եզրափակիչ՝ ԺԷ-ԻԱ գլուխները կարելի է դիտել որպես հավելվածներ, որոնք հայտնի են դարձնում Իսրայելի մեղքերի խորությունը:

ԴԱՏԵԼ, ԴԱՏԱՍՏԱՆ: *St'u nusal*

Դատապարտել, Դատապարտություն. Հիսուս Քրիստոս - Դատավոր. Վերջին դատաստանը

Գ-ն հատել վառքը՝ ավետարանի սկզբունքներին համահունչ լինելու առումով. որոշել. բարին չարից տարբերել:

Մովսեսը նստեց՝ դատելու ժողովրդին՝ **Ել. ԺԸ.13:** Քո դրացուն արդարությունով դատիր՝ **Ղև. ԺԹ.15:** Մի դատիր, որ չդատվես՝ **Մատ. Է.1 (ՁՄԹ՝ Մատ. 7.1-2, Դուկ. Զ.37, 3 Նեփի 14.1):** Նրանք, որ օրենքի տակ մեղք գործեցին, օրենքով կդատվեն՝ **Հոռվմ. Բ.12:** Սրբերը կդատեն աշխարհը՝ **Ա Կոր. Զ.2-3:** Հավիտենական Աստծո Որդին դատվեց աշխարհի կողմից՝ **1 Նեփի 11.32:** Գառի Տասներկու Առաքյալները կդատեն Իսրայելի տասներկու ցեղերին՝ **1 Նեփի 12.9 (ՎևոՒ 29.12):**

Մահը, դժոխքը, դևը և բոլորը, ովքեր կապված են եղել դրանցով, պետք է դատվեն՝ **2 ՆԵՓԻ** 28.23 (1 ՆԵՓԻ 15.33): Եթե դուք դատում եք մարդուն, որը ստացվածքի համար խնդրանքով դիմում է ձեզ, որքան շատ ավելի արդար կլինի ձեզ դատապարտելը՝ ձեր ստացվածքը ետ պահելու համար՝ **ՄՈՍԻԱ** 4.22: Մարդկի պիտի դատվեն՝ համաձայն իրենց գործերի՝ **Ալմա** 41.3: Արդար դատիր և քեզ համար կրկին կվերականգնվի արդարադատությունը՝ **Ալմա** 41.14: Գրված գրքերից պիտի դատվի աշխարհը՝ **3 ՆԵՓԻ** 27.23–26 (Հայտ. Ի. 12): Այս ժողովրդի մնացորդը պիտի դատվի տասներկուսի կողմից, որոնց Հիսուսն ընտրեց այս երկրում՝ **ՄՈՐՄ**. 3.18–20: Մորմնը բացատրել է, թե ինչպես կարելի է բարին և չարը դատել՝ **ՄՈՐ**. 7.14–18: Ապավինիր այն Հոգուն, որն առաջնորդում է ճշմարտությանը դատել՝ **ՎՆՈՒ** 11.12: Դուք պետք է ասեք ձեր սրտերում. Թող Աստված դատի իմ և քո միջև՝ **ՎՆՈՒ** 64.11: Տիրոջ Եկեղեցին պիտի դատի ազգերին՝ **ՎՆՈՒ** 64.37–38: Որդին այցելեց բանտում եղած ոգիներին, որ նրանք կարողանան դատվել մարմնում գտնվող մարդկանց պես՝ **ՎՆՈՒ** 76.73 (Ա Պետ. Գ.6): Եպիսկոպոսն ընդհանուր դատավոր պիտի լինի՝ **ՎՆՈՒ** 107.72–74: Տերը կդատի բոլոր մարդկանց՝ համաձայն նրանց գործերի՝ համաձայն նրանց սրտերի ցանկությունների՝ **ՎՆՈՒ** 137.9:

ԴԱՐԵՆ: *Տես՝ սուս Բարելուն*

Հին Կտակարանում՝ Մարաց թագավորը, որը Բաղդասարի մահից հետո թագավորեց Բարելունում (Դան. Ե. 31, Չ. 9, 25–28, Թ. 1, ԺԱ. 1):

ԴԱՐՉԻ ԳԱԼ, ՆՈՐԱԳԱՐՉ: *Տես՝ սուս Կերասին ծնված, Աստծուց ծնված. Աշակերտ*

Համոզմունքները, սիրտը և կյանքը փոխել՝ Աստծո կամքն ընդունելու և դրան հարմարվելու համար (Գոր. Գ. 19):

Դարձի գալու մեջ է մտնում նաև գիտակից որոշումը՝ նախկին կենսաձևին վերջ տալ և փոխվել՝ Քրիստոսի աշակերտ դառնալու համար: Ապաշխարությունը, մկրտությունը՝ մեղքերի թողության համար, Սուրբ Հոգու ստանալը՝ ձեռնադրմամբ, և շարունակվող հավատքն առ Տեր

Հիսուս Քրիստոս, դարձի գալը դարձնում են ամբողջական: Բնական մարդը կփոխվի նոր անձի, որը սրբագործված է և մաքուր՝ Քրիստոս Հիսուսով վերստին ծնված (Բ Կոր. Ե. 17, Մոսիա 3.19):

Մարդիկ պետք է դարձի գան և դառնան երեխաների նման՝ **Մառ.** ԺԸ. 3 (Մոսիա 3.19): Դու երբ որ դառնաս, եղբայրներիդ հաստատիր՝ **Ղուկ.** ԻԲ. 32: Նրանք, որ նրա խոսքն ուրախությամբ ընդունեցին, մկրտվեցին՝ **Գոր.** Բ. 37–41: Դարձրու մեղավորին իր մոլորության ճանապարհից՝ **Հակ.** Ե. 20: Եհովայ դարձի եկավ՝ **Եհովա** 1.2–5: Բենիամին թագավորի խոսքերը մեծ փոփոխություն առաջացրեցին մարդկանց մոտ՝ **Մոսիա** 5.2 (Ալմա 5.12–14): Ողջ մարդկությունը պետք է վերստին ծնվի, այո՛, Աստծուց ծնվի՝ **Մոսիա** 27.25: Ալման և Մոսիայի որդիները դարձի եկան՝ **Մոսիա** 27.33–35: Լամոնիի հայրը դարձի եկավ՝ **Ալմա** 22.15–18: Աստծո գործության և խոսքի միջոցով նրանք դարձի եկան առ Տերը՝ **Ալմա** 53.10: Ապաշխարությունը սրտի փոփոխություն է բերում՝ **Հել.** 15.7: Բոլոր նրանք, ովքեր դարձի եկան, իսկապես ցույց տվեցին, որ Աստծո գործությունն ու Հոգին այցելել էր իրենց՝ **3 ՆԵՓԻ** 7.21: Քրիստոսի հանդեպ նրանց հավատքի պատճառով, դարձի ժամանակ, նրանք մկրտվեցին կրակով և Սուրբ Հոգով՝ **3 ՆԵՓԻ** 9.20: Նրանք պիտի առաջ գնան և ապաշխարություն քարոզեն, և շատերը դարձի կգան՝ **ՎՆՈՒ** 44.3–4:

ԴԵՔՈՐԱ

Հին Կտակարանում՝ մարգարեուհի, որը դատավոր էր Իսրայելում, և որը Բարակին քաջալերեց Քանանացիների դեմ (Դատավորաց Դ): Դեբորայի և Բարակի երգը տոնում էր Իսրայելի ազատումը գերությունից (Դատավորաց Ե):

ԴԵՁՈՒՐԵԹ: *Տես՝ սուս Զարեդագիներ*

Մորմնի Գրքում՝ Զարեդական բառ, որը նշանակում է «մեղրի մեղու» (Եթեր 2.3):

ԴԵՄԸԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆ

Մարդու դեմքի ընդհանուր տեսքը, որը հաճախ արտացոլում է հոգևոր կեցվածքը և մտքի վիճակը:

Նրանց երեսի տեսքը վկայում է իրենց դեմ՝ **Ես. Գ.9:** Թագավորի դեմքի գույնը փոխվեց, և նրա խորհուրդները նրան խռովեցրին՝ **Դան. Ե.6:** Նրա կերպարանքը փայլակի պես էր՝ **Մատ. ԻԸ.3:** Նրա երեսն արեգակի պես էր՝ **Հայտ. Ա.16:** Ընդունե՞լ եք դուք Աստծո պատկերը ձեր դեմքին՝ **Ալմա 5.14, 19:** Ամռնը տեսավ, որ թագավորի դեմքը փոխված էր՝ **Ալմա 18.12:** Ծոռ պահեք և աղոթեք ուրախ սրտով և զվարթ դեմքով՝ **ՎևՈՒ 59.14–15:** Նրա դեմքը փայլում էր՝ արևի պայծառությունից վառ՝ **ՎևՈՒ 110.3:**

ԳԵՎ: *Տե՛ս նաև* Գժոխք. Լյուցիֆեր.

Կործանիչ. Կորստի որդիներ.

Հակաքրիստոս. Ոգի – Չար ոգիներ

Սատանան: Դևն արդարության և այն մարդկանց թշնամին է, որոնք ջանում են կատարել Աստծո կամքը: Նա բառացիորեն Աստծո հոգեղեն զավակն է, և մի ժամանակ իշխանություն ունեցող հրեշտակ է եղել Աստծո ներկայության մեջ (Ես. ԺԳ.12, 2 Նեփի 2.17): Ինչևիցե, մախամահկանացու կյանքում նա ապստամբեց և Հոր հոգեղեն զավակների մեկ երրորդ մասին համոզեց իր հետ ապստամբել (ՎևՈՒ 29.36, Մովսես 4.1–4, Աբր. 3.27–28): Նրանք դուրս գցվեցին երկնքից, նրանց մերժվեց մահկանացու մարմիններ ստանալու և մահկանացու կյանքով ապրելու հնարավորությունը, և նրանք հավերժ նզովված կլինեն: Այն ժամանակից ի վեր, երբ դևը դուրս է գցվել երկնքից, նա շարունակ ձգտում է բոլոր տղամարդկանց և կանանց մոլորեցնել ու հեռացնել Աստծո գործից, որպեսզի ողջ մարդկությանը դարձնի իր նման թշվառ (Հայտ. ԺԲ.9, 2 Նեփի 2.27, 9.8–9):

Հիսուսը սաստեց դևին՝ **Մատ. ԺԷ.17:** Հավիտենական կրակ է պատրաստված դևի և նրա հրեշտակների համար՝ **Մատ. ԻԵ.41:** Դեմ կանգնեք դևին, և նա կփախչի ձեզանից՝ **Հակ. Գ.7:** Ամբարիշտները կերբեմնե դևի գերությունը՝ **1 Նեփի 14.7:** Դևը բոլոր ստերի հայրն է՝ **2 Նեփի 2.18** (Մովսես 4.4): Դևը ջանում է, որ բոլոր մարդիկ լինեն թշվառ, ինչպես ինքը՝ **2 Նեփի 2.27:** Եթե մարմինն այլևս չբարձրանա, մեր հոգիները ենթակա պիտի դառնան դևին՝ **2 Նեփի 9.8–9:** Դևը կմոլեզնի, կհանդարտեցնի և կշողորորի՝

2 Նեփի 28.20–23: Այն, ինչ չար է, գալիս է դևից՝ **Օմնի 1.25** (Ալմա 5.40, Մոր. 7.12, 17): Զգուշացե՛ք, չլինի թե ձեր մեջ հակառակություններ բարձրանան, և դուք հնազանդվեք չար ոգուն՝ **Մոսիա 2.32:** Եթե դուք բարի հովվի ոչխարները չեք, ապա դևն է ձեր հովվիլը՝ **Ալմա 5.38–39:** Դևը չի աջակցի իր զավակներին՝ **Ալմա 30.60:** Շարունակ աղոթեք, որպեսզի չմոլորեցվեք դևի գայթակղություններով՝ **Ալմա 34.39** (3 Նեփի 18.15, 18): Չեր հիմքը կառուցեք Քավչի վրա, որպեսզի դևի գորեղ փորձերից զորություն չունենա ձեր վրա՝ **Հեյ. 5.12:** Դևը բոլոր մեղքերի հեղինակն է՝ **Հեյ. 6.26–31:** Դևը փնտրել է մի խորամանկ ծրագիր ձեռնարկել՝ **ՎևՈՒ 10.12:** Անպայման պետք է որ դևը գայթակղեր մարդկանց զավակներին, այլապես նրանք չէին կարող գործակալ լինել՝ **ՎևՈՒ 29.39:** Աղամբ ենթարկվեց դևի կամքին, որովհետև տեղի տվեց գայթակղությանը՝ **ՎևՈՒ 29.40:** Կորստի որդիները հավերժության մեջ կբազավորեն դևի և նրա հրեշտակների հետ՝ **ՎևՈՒ 76.33, 44:** Դևը կապված կլինի հազար տարվա ընթացքում՝ **ՎևՈՒ 88.110** (Հայտ. Ի.2): Չարագործը գալիս և վերցնում է լույսն ու ճշմարտությունը՝ **ՎևՈՒ 93.39:** Սատանան չպահեց իր առաջին վիճակը՝ **Աբր. 3.28:**

Դևի եկեղեցին. Ամեն մի չար և աշխարհիկ կազմակերպություն երկրի վրա, որը խեղաթյուրում է մաքուր և կատարյալ ավետարանը և կովում է Աստծո Գառի դեմ:

Դևն է հիմնադրել այն մեծ և պիղծ եկեղեցին՝ **1 Նեփի 13.6** (1 Նեփի 14.9): Կա միայն երկու եկեղեցի. մեկը՝ Աստծո Գառինը, իսկ մյուսը՝ դևինը՝ **1 Նեփի 14.10** (Ալմա 5.39): Մի հակառակվեք ոչ մի եկեղեցու, բացի դա լինի դևի եկեղեցին՝ **ՎևՈՒ 18.20:** Այն մեծ և պիղծ եկեղեցին վայր պիտի գցվի՝ **ՎևՈՒ 29.21:**

ԳԺՈՒՅԸ: *Տե՛ս նաև* Դև. Կորստի որդիներ. Մահ հոգևոր. Նզովք

Վերջին օրերի հայտնությունները դժոխքի մասին խոսում են առնվազն երկու իմաստով: Առաջին՝ դա հոգիների աշխարհում ժամանակավոր բնակատեղ է նրանց համար, ովքեր անհնազանդ են եղել մահկանացու կյանքում: Տվյալ իմաստով դժոխքն ունի վերջ: Այնտեղի

հոգիներին կբարոզվի ավետարանը, և ինչ-որ ժամանակ, իրենց ապաշխարությունից հետո, նրանք հարություն կառնեն այն փառքի աստիճանի համար, որին արժանի են: Նրանք, ովքեր չեն ապաշխարի, բայց այնուամենայնիվ, կորստի որդիները չեն, դժոխքում կմնան Հազարամյակի ընթացքում: Հազարամյա այդ տանջանքներից հետո, նրանք հարություն կառնեն քելեստիալ փառքի համար (ՎևևՒ 76.81–86, 88.100–101):

Երկրորդ՝ դա մշտական տեղ է նրանց համար, ովքեր չեն փրկագնվել Հիսուս Քրիստոսի բավությանը: Այս իմաստով, դժոխքը հարատև է: Այն նրանց համար է, ովքեր «դեռևս կեղտոտ են» (ՎևևՒ 88.35, 102): Դա այն տեղն է, որտեղ հավերժ պետք է մնան Սատանան, նրա հրեշտակները և կորստի որդիները, – նրանք, ովքեր ուրացել են Որդուն այն բանից հետո, երբ Հայրը հայտնել է նրանց (ՎևևՒ 76.43–46):

Սուրբ գրքերում դժոխքն ակնարկվում է մաս որպես դրսի խավար:

Դավթի հոգին չի մնա դժոխքում՝ **Մադ.** ԺԶ.10 (Մադ. ԶԶ.13): Դժոխքը գնաս, այն մասնացանելի կրակի մեջ՝ **Մար.** Թ.42 (Մոսիա 2.38): Հարուստը դժոխքում, մինչ տանջանքների մեջ էր, իր աչքերը բարձրացրեց՝ **Գուկ.** ԺԶ.22–23 (ՎևևՒ 104.18): Մահը և դժոխքն իրենց միջի մեռելներին տվեցին՝ **Հայտ.** Ի.13: Մի տեղ կո պատրաստված, այո, հենց այն ահավոր դժոխքը՝ **1 Նեփի** 15.35: Մարմնի կամքը դևի ոգուն գորություն է տալիս, որ մեզ իջեցնի դժոխք՝ **2 Նեփի** 2.29: Քրիստոսն ուղի է պատրաստել մահից ու դժոխքից մեր ազատման համար՝ **2 Նեփի** 9.10–12: Նրանք, ովքեր մնում են կեղտոտ, կգնան հավիտենական տանջանքը՝ **2 Նեփի** 9.16: Դևը խաբում է նրանց հոգիները և զգուշորեն հեռացնում նրանց իջեցնելով դժոխք՝ **2 Նեփի** 28.21: Հիսուսը փրկագնել է իմ հոգին դժոխքից՝ **2 Նեփի** 33.6: Ազատե՛ք ձեզ դժոխքի ցավերից՝ **Հակոբ** 3.11: Դևի կողմից գերի վերցվելը և նրա կամքով դեպի կործանում տարվելը դժոխքի շղթաներն են՝ **Ալմա** 12.11: Ամբարիշտները դուրս են գցվում դրսի խավարը մինչև իրենց հարության ժամանակը՝ **Ալմա** 40.13–14: Կեղտոտ մարդիկ ավելի թվառ կլինեն Աստծո հետ ապրելու, քան դժոխքում ապրելու՝ **Մոր.** 9.4:

Իմ ձեռքով տրված պատիժն անվերջ պատիժ է՝ **ՎևևՒ** 19.10–12: Դժոխքը մի վայր է, որը պատրաստված է դևի և նրա հրեշտակների համար՝ **ՎևևՒ** 29.37–38: Նրանք, ովքեր ընդունում են Աստծուն, ազատվում են մահից ու դժոխքի կապանքներից՝ **ՎևևՒ** 138.23:

ԴՊԻՐ

Հին և Նոր Կտակարաններն այս տերմինն օգտագործում են որոշ տարբերությամբ. (1) Հին Կտակարանում դպիրի անմիջական պարտականությունն էր՝ արտագրել սուրբ գրքերը (Երեմ. Ը.8): (2) Դպիրները հաճախ են նշվում Նոր Կտակարանում և երբեմն կոչվում են օրինականներ կամ օրենքի վարդապետներ: Նրանք օրենքն ավելացնում էին մանրամասնություններով և համապատասխանեցնում իրենց ժամանակի պայմաններին (Մատ. ԺԳ.52, Մար. Բ.16–17, ԺԱ.17–18, Գուկ. ԺԱ.44–53, Ի.46–47):

ԴՐԱՆՏ: *Sti u gna* Երկինք

Հոգիների աշխարհի այն մասը, որտեղ այս կյանքից հեռացած արդարակյաց հոգիները սպասում են մարմնի հարությանը: Դա երջանկության և խաղաղության մի վիճակ է:

Դրախտ բառը սուրբ գրքերում օգտագործվել է մաս հոգիների աշխարհ (Գուկ. ԻԳ.43), սելեստիալ արքայություն (Բ Կոր. ԺԲ.4) և երկրի հազարամյա փառավոր վիճակ (ՀՀ 1.10) իմաստներով:

Նրան, ով հաղթում է, ես թույլ կտամ ուտել կյանքի ծառի պտղից, որն Աստծո դրախտում է՝ **Հայտ.** Բ.7: Աստծո դրախտը պիտի զատի արդարների ոգիները՝ **2 Նեփի** 9.13: Արդարների հոգիներն ընդունվում են երջանկության մի վիճակի մեջ, որը կոչվում է դրախտ՝ **Ալմա** 40.11–12: Հիսուսի բոլոր աշակերտները գնացին Աստծո դրախտը, բացի երեքից՝ **4 Նեփի** 1.14: Շուտով ես գնում եմ հանգստանալու Աստծո դրախտում՝ **Մոր.** 10.34: Քրիստոսը ծառայեց դրախտի արդար հոգիներին՝ **ՎևևՒ** 138:

ԴՐՈՇ

Սուրբ գրքերում՝ դրոշակ կամ խորհրդրդանշան, որի շուրջ համախմբվում են նպատակով կամ գաղափարով միավոր-

ված մարդիկ: Հին ժամանակներում, պատերազմող զինվորների համար դրոշը ծառայում էր որպես հավաքվելու կետ: Մորմոնի Գիրքը և Հիսուս Քրիստոսի Եկեղեցին խորհրդանշական դրոշ են երկրի բոլոր ազգերի համար:

Նա դրոշակ է բարձրացնելու ազգերի համար՝ **Ես. Ե.26** (2 Նեփի 15.26): Հեսուսի արմատն ազգերի համար դրոշակ կկանգնի՝ **Ես. ԺԱ.10** (2 Նեփի 21.10, ՎևոՒ 113.6): Խաղաղության դրոշ բարձրացրեք՝ **ՎևոՒ 105.39**:

ԴՐՄԻ ԽԱՎԱՐ: *Տես* Դ-ժոխք. Դ.և.

Կորստի որդիներ. Մահ հոգևոր

ԵԲՐԱՅԵՐԵՆ: *Տես* *մատ* Իսրայել

Մեմական լեզու, որով խոսում էին Իսրայելի գավակները:

Իսրայելացիները եբրայերեն խոսում էին մինչև Բաբելոնյան գերությունից վերադառնալը, որից հետո արամեականը դարձավ առօրյա խոսակցական լեզուն: Հիսուսի ժամանակ եբրայերենն ուսուցանելի, օրենքի և կրոնական գրականության լեզուն էր:

ԵԲՐԱՅԵՑԻՄ ԹՈՒՂԹ ԱՈ: *Տես* *մատ* Պողոս. Պողոսի Թղթերը

մատ Պողոս. Պողոսի Թղթերը

Գիրք Նոր Կտակարանում: Այս անմակը Պողոսն ուղղել է Եկեղեցու հրեա անդամներին, նրանց համոզելու համար, որ Մովսեսի օրենքի նշանակալից մասերը կատարվել են Քրիստոսում, և որ Քրիստոսի ավելի բարձր՝ ավետարանական օրենքը փոխարինել է դրան: Իր երրորդ առաքելության վերջում Երուսաղեմ վերադառնալուց հետո (մոտ 60թ. Ք.ժ.հ.), նա հայտնաբերեց, որ Եկեղեցու շատ հրեա անդամներ դեռևս հավատարիմ էին Մովսեսի օրենքին (Գոր. ԻԱ.20): Առնչված տաս տարի անցել էր այն բանից հետո, երբ Եկեղեցու Երուսաղեմի համաժողովը որոշել էր, որ Մովսեսի օրենքի որոշակի արարողություններ անհրաժեշտ չէին հեթանոս Քրիստոնյաների փրկության համար: Ըստ երևույթի՝ դրանից ոչ շատ անց, Պողոսը գրեց Եբրայեցիներին, որպեսզի նրանց ցույց տա, իրենց իսկ սուրբ գրություններով և առողջ դատողությանը, թե ինչու այլևս անհրաժեշտություն չկա կիրառելու Մովսեսի օրենքը:

Ա և Բ գլուխները բացատրում են, որ Հիսուսն ավելի մեծ է, քան հրեշտակները: Գ–Է գլուխները Հիսուսին համեմատում են Մովսեսի և Մովսեսի օրենքի հետ, վկայելով, որ նա երկուսից էլ մեծ է: Դ-բանք ուսուցանում են նաև, որ Մելքիսեդեկյան Քահանայությունը մեծ է Ահարոնյանից: Ը–Թ գլուխները նկարագրում են, թե ինչպես Մովսեսական արարողությունները ժողովրդին նախապատրաստել են Քրիստոսի ծառայությանը, և թե ինչպես է Քրիստոսը նոր ուխտի միջնորդը (Ավան 37.38–45, ՎևոՒ 84.21–24): Ժ գլուխը ջանասիրության և հավատարմության հորդոր է: ԺԱ գլուխը բանախոսություն է հավատքի վերաբերյալ: ԺԲ գլուխը պարունակում է խրատներ և ողջույններ: ԺԳ գլուխն առնչվում է ամուսնության պատվավոր բնույթին և հնազանդության կարևորությանը:

ԵԳԵՄ: *Տես* *մատ* Ադամ. Եվա

Մեր առաջին ծնողների՝ Ադամի և Եվայի բնակավայրը (Ծն. Բ.8–3.24, Դ.16, 2 Նեփի 2.19–25, Մովսես 3, 4, Աբր. 5), որը պարտեզ էր արևելքի կողմը՝ Տղեմուս: Ադամը և Եվան, արգելված պտուղն ուտելուց և մահկանացու դառնալուց հետո դուրս հանվեցին Տղեմից (Մովսես 4.29): Վերջին օրերի հայտնությունները հաստատում են Տղեմի պարտեզի աստվածաշնչային պատմությունը: Դ-բանք կարևոր տեղեկություն է ավելացնում, որ պարտեզը գտնվել է այժմյան Հյուսիսային Ամերիկայի աշխարհամասում (ՎևոՒ 116, 117.8):

ԵԳԻՊՏՈՍ

Երկիր, որը գտնվում է Աֆրիկայի հյուսիս-արևելյան անկյունում: Եգիպտոսի մեծ մասն ամառի է և անմարդաբնակ: Բնակչության մեծ մասն ապրում է Նեղոսի հովտում, որը երկարաձգվում է մոտ 890 կմ:

Հնագույն Եգիպտոսը հարուստ էր և բարգավաճ: Մեծ հասարակական շինություններ էին կառուցվում, այդ թվում՝ ոռոգման ջրանցքներ. պաշտպանական ամուր քաղաքներ. և շքեղ հուշարձաններ, հատկապես բուրգ-շիրիմներ և տաճարներ, որոնք մինչ այժմ աշխարհի հրաշալիքների թվում են: Եգիպտական

կառավարությունը որոշ ժամանակ քահանայության հայրապետական կարգի նմանությամբ էր (Աբր. 1.21–27):

Աբրահամը և Հովսեփը տարվեցին Եգիպտոս, որպեսզի իրենց ընտանիքները փրկեն սովից՝ **ԾՃ.** ԺԲ.10 (ԾՃ. ԼԷ.28): Հովսեփը վաճառվեց Եգիպտոս՝ **ԾՃ.** ԽԵ.4–5 (1 Նեփի 5.14–15): Հակոբին տարան Եգիպտոս՝ **ԾՃ.** ԽՁ.1–7: Մովսեսն Իսրայելի զավակներին դուրս հանեց Եգիպտոսից՝ **Ել.** Գ.7–10, ԺԳ.14 (Եբր. ԺԱ.27, 1 Նեփի 17.40, Մովսես 1.25–26): Եգիպտոսը շարի խորհրդանիշ էր՝ **Եզեկ.** ԻԹ.14–15 (Ովսե Թ.3–7, Աբր. 1.6, 8, 11–12, 23): Հրեշտակը Հովսեփին և Մարիամին պատվիրեց փախչել Եգիպտոս՝ **Մատ.** Բ.13 (Ովսե ԺԱ.1):

ԵԳԻՊՏՈՒՄ

Նոյի որդի Քամի և՛ կնոջ, և՛ դստեր անունը: Քաղղեացիների լեզվով այդ անունը նշանակում է Եգիպտոս, կամ այն, ինչ արգելված է (Աբր. 1.23–25):

ԵՁԵԿԻԱ

Հին Կտակարանում՝ Հուդայի ազգի արդար թագավոր: Նա թագավորել է քսանինը տարի, այն ժամանակ, երբ Եսայիան մարգարե էր Հուդայում (Դ Թագ. 18–20, Բ Մն. 29–32, Ես. ԼՁ–ԼԹ): Եսայիան օգնեց նրան և՛ եկեղեցու, և՛ կառավարության բարեփոխումների գործում: Նա ճնշեց կռակաստությունը և վերահաստատեց սուրբալային ծառայությունները: Աղոթքի և հավատքի շնորհիվ Եզեկիայի կյանքը երկարեց տասնհինգ տարով (Դ Թագ. Ի.1–7): Նրա թագավորության վաղ շրջանը ծաղկում էր, սակայն Ասորեստանի թագավորի դեմ նրա ապստամբությունը (Դ Թագ. ԺԼ.7) հանգեցրեց Ասորեստանի կողմից երկու արշավանքների: Առաջինը նկարագրված է Եսայիա Ժ.24–32-ում, իսկ երկրորդը՝ Դ Թագավորաց ԺԼ.13–ԺԹ.7-ում: Երկրորդ արշավանքի ժամանակ Երուսաղեմը փրկվեց Տիրոց հրեշտակի կողմից (Դ Թագ. ԺԹ.35):

ԵՁԵԿԻԵԼ

Մարգարե, որը Հին Կտակարանի Եզեկիել գրքի հեղինակն է: Նա քահանա էր՝ Սաղովկի ընտանիքից, և Նաբուգոդոնոսորի կողմից գերության տարված հրեա-

ներից մեկը: Նա բնակվեց տարագիր հրեաների հետ Բաբելոնում և մարգարեացավ քսաներկու տարիների ընթացքում՝ Բ.ծ.ա. 592–570թթ.:

Եզեկիելի գիրքը. Եզեկիելի գիրքը կարելի է բաժանել չորս մասի. Ա–Գ գլուխները պատմում են Ասածո տեսիլքի և Եզեկիելի ծառայության կանչվելու մասին. Գ–ԻԳ գլուխները խոսում են Երուսաղեմի վրա եկած դատաստանների մասին, և թե ինչու էին դրանք տրվել. ԻԵ–ԼԲ գլուխները դատաստաններ են հռչակում ազգերի վրա. և ԼԳ–ԽԸ գլուխներում տեսիլքներ են գրված վերջին օրերի Իսրայելի վերաբերյալ:

ԵՁԲԱՍ

Հին Կտակարանի քահանա և դպիր, որը հրեաների մի մասին Բաբելոնյան գերությունից ետ քերեց Երուսաղեմ (Եզր. Է–Ժ, Նեեմ. Ը, ԺԲ): Բ.ծ.ա. 458 թվականին նա Պարսից թագավոր Արտաշեսից թույլտվություն ստացավ Երուսաղեմ տանել բոլոր տարագիր հրեաներին, որոնք կցանկանային գնալ (Եզր. Է.12–26):

Նախքան Եզրասի ժամանակները, քահանաները գրեթե միայն իրենք էին կարողում սուրբ գրքերի գրված հավաքածուն, որը կոչվում էր «օրենք»: Եզրասն օգնեց, որ սուրբ գրքերը հասանելի լինեին ամեն մի հրեայի համար: «Օրենքի գիրքն» ազատ կարդալի և վերջո դարձավ հրեաների ազգային կյանքի կենտրոնական մասը: Հավամբար, Եզրասի ամենամեծ ուսուցումը գալիս էր իր սիրտը պատրաստելու անձնական օրինակից, որ փնտրի Տիրոց օրենքը, հնազանդվի նրան և այն ուսուցանի ուրիշների (Եզր. Է.10):

Եզրասի գիրքը. Ա–Ձ գլուխները նկարագրում են այն իրադարձությունները, որոնք տեղի էին ունեցել Եզրասի Երուսաղեմ գալուց վաթսուն–ութսուն տարի առաջ, – Կյուրոսի հռչակագիրը, Բ.ծ.ա. 537 թվականին, և հրեաների վերադարձը Չորաբաբելի դեկավարությամբ: Է–Ժ գլուխները նկարագրում են, թե ինչպես Եզրասը գնաց Երուսաղեմ: Նա իր խմբի հետ ծոմ պահեց և աղոթեց պաշտպանության համար: Երուսաղեմում նրանք հանդիպեցին շատ հրեաների, որոնք Երուսաղեմ էին գնացել ավելի վաղ՝ Չորաբա-

բելի հետ, և, ուխտից դուրս, կանայք էին կնուրջան վերցրել և այդպես իրենց պղծել էին: Եզրասն աղոթեց նրանց համար և նրանց ուխտի տակ դրեց, որ բաժանվեն այդ կանանցից: Եզրասի հետագա պատմությունը տրվում է Նեեմիայի գրքում:

ԵԹԵԲ: *Տե՛ս նաև* Հարեղացիներ

Վերջին Հարեղացի մարգարեն Մորմոնի Գրքում (Եթեբ 12.1-2):

Եթեբի գիրքը. Գիրք՝ Մորմոնի Գրքում, որը պարունակում է Հարեղացիների հիշատակարանի որոշ մասեր: Հարեղացիները մի խումբ ժողովուրդ էին, որոնք Լեբիի ժողովրդից շատ դարեր առաջ ապրում էին արևմտյան կիսագնդում: Եթեբի գիրքը գրվեց Լիմբիի ժողովրդի կողմից գտնված քսանչորս փեթեղներից (Մոսիա 8.8-9):

1-2-րդ գլուխները պատմում են, թե ինչպես Հարեղացիները թողեցին իրենց բնակավայրը Բաբելոնի Աշտարակի ժամանակներում և սկսեցին իրենց ճամփորդությունը դեպի այժմ մեզ հայտնի Ամերիկյան աշխարհամաս: 3-6-րդ գլուխները բացատրում են, որ Հարեղի եղբայրը տեսավ մախամահկանացու Փրկչին, և որ Հարեղացիները ճամփորդում էին ութ բեռնանավերով: 7-11-րդ գլուխները շարունակում են ամբարշտության պատմությունը, որը գերակշռում էր Հարեղացիների պատմության մեծ մասի ընթացքում: Մորմոնին, որը խմբագրում էր Եթեբի հիշատակարանը, 12-13-րդ գլուխներում գրեց այն հրաշագործությունների մասին, որոնք արվել էին հավատքով և Քրիստոսի ու Նոր Երուսաղեմի գալստի մասին: 14-15-րդ գլուխները պատմում են, թե ինչպես Հարեղացիները դարձան գորավոր սագգ, սակայն կործանվեցին քաղաքացիական պատերազմում՝ ամբարշտության պատճառով:

ԵԼԻՑ: *Տե՛ս նաև* Հնգամատյան

Գիրք Հին Կտակարանում, Մովսեսի կողմից գրված, որը նկարագրում է Իսրայելացիների ելքը Եգիպտոսից: Իսրայելացիների վաղ պատմությունը, ինչպես հիշատակված է Ելիցում, կարելի է բաժանել երեք մասի՝ (1) Ժողովրդի ստրուկ դառնալը Եգիպտոսում. (2) Մովսեսի ղեկավարությամբ Եգիպտոսից նրանց հեռանալը. և (3) Իրենց կրոնական և քա-

ղաքական կյանքում Աստծո ծառայությանը նվիրվելը:

Առաջին մասը՝ Ա-ԺԵ գլուխները, մեկնաբանում են Իսրայելի հարստահարումը Եգիպտոսում. Մովսեսի վաղ պատմությունը և կանչվելը. Ելիցը և Ջատկի հաստատումը. երթը դեպի Կարմիր ծով, Փարափոնի գորբերի կործանումը և Մովսեսի հաղթության երգը:

Երկրորդ մասը՝ ԺԵ-ԺԸ գլուխները, պատմում է Իսրայելի փրկագնման և Կարմիր ծովից դեպի Սինայ սարը ճամփորդության ժամանակ տեղի ունեցած իրադարձությունների մասին. Մեռայի դառը ջրերը, լուրեր ու մանանա տալը, Հանգստության օրը պահելը, ջրի հրաշք պարզելը Ռափիդիմում և այնտեղի պատերազմն Ամադեկացիների հետ. Հոբորի գալը ճամբար և նրա խորհուրդը ժողովրդի քաղաքացիական հարցերի կառավարման վերաբերյալ:

Երրորդ մասը՝ ԺԹ-Խ գլուխները, վերաբերում են Աստծո ծառայությանն Իսրայելի նվիրաբերվելուն՝ Սինայի հանդիսավոր դեպքերի ժամանակ: Տերն իր ժողովրդին առանձնացրեց՝ որպես քահանաների թագավորություն և սուրբ ազգ. նա տվեց Տասը Պատվիրանները. նա հրահանգներ տվեց խորամի վերաբերյալ, դրա կահավորանքի և դրանում երկրպագելու վերաբերյալ: Ապա հետևում է պատմությունը ժողովրդի մեղքի՝ ոսկե հորթին երկրպագելու և, ի վերջո, խորանի կառուցման և նրա ծառայություններին մասխապատրաստվելու մասին:

ԵԿԵՂԵՑՈՒ ՄԵԾ ԵՎ ՊԻՂԾ: *Տե՛ս* Դև - Դևի եկեղեցին

ԵԿԵՂԵՑՈՒ ԱՆՈՒՆԸ: *Տե՛ս նաև* Հիսուս Քրիստոսի Եկեղեցի. Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցի. Մորմոն(ներ)

Մորմոնի Գրքում, երբ իր հարությունից կարճ ժամանակ անց Հիսուս Քրիստոսն այցելեց արդարակյաց Նեփիաացիներին, նա ասաց, որ իր Եկեղեցին պետք է կրի իր անունը (3 Նեփի 27.3-8): Արդի ժամանակներում Տերը հայտնել է, որ Եկեղեցու անունը պետք է լինի Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցի (ՎևոՒ 115.4):

ԵԿԵՂԵՑՈՒ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻՆ
ՀԱՍՏԱՏԵԼԸ: *Տե՛ս նաև* Ընդհանուր
Համաձայնություն

Եկեղեցու տեղական և բարձրագույն ղեկավարների կոչումներում ծառայողների համար աջակցություն խնդրելը:

Հետիմ բոլոր ժողովրդի առաջ կանգնեցրու և նրանց աչքի առաջ նրան պատվեր սուր՝ **ԹՎ**. ԻԷ. 18–19: Բոլոր ժողովուրդն աղաղակեց և ասաց. Աստված փրկի՝ քաղաքդին՝ **Ա Թագ**. Ժ. 24: Հավատարեցեք նրա մարգարեներին և հաջողություն կունենաք՝ **Բ Մն**. Ի. 20: Հնազանդվեք նրանց, ովքեր հսկում են ձեր վրա՝ **Եբր**. ԺԳ. 17: Դու կաջակցվես Տիրոջ կողմից, որովհետև դու չտրտնջացիր՝ **1 Նեփի** 3.6: Ովքեր ընդունեցին մարգարեներին, խնայվեցին՝ **3 Նեփի** 10.12–13: Ուշք դարձրեք այս տասներկուսի խոսքերին՝ **3 Նեփի** 12.1: Իմ իսկ ձայնով, թե իմ ծառաների ձայնով՝ միևնույն է՝ **ՎևոՒ** 1.38: Նրա խոսքը դուք պետք է ընդունեք, ինչպես որ իմ իսկ բերանից՝ **ՎևոՒ** 21.5: Նա, ով ընդունում է իմ ծառաներին, ընդունում է ինձ՝ **ՎևոՒ** 84.35–38: Նա, ով ընդունում է ինձ, ընդունում է նրանց, ում են ուղարկել եմ՝ **ՎևոՒ** 112.20: Եթե իմ ժողովուրդն ականջ չդնի այն մարդկանց ձայնին, որոնց ես նշանակել եմ, մա չի օրհնվի՝ **ՎևոՒ** 124.45–46:

ԵԿԵՂԵՑՈՒ ՃԵՄԱՐՏՈՒԹՅԱՆ
ՆՇԱՆՆԵՐԸ: *Տե՛ս նաև* Հիսուս
Քրիստոսի Եկեղեցի. Հիսուս
Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի
Եկեղեցի. Նշան

Եկեղեցու վարդապետություններն ու գործերը, որոնք ցույց են տալիս, որ այն Աստծո հավանությունը ստացած և Տիրոջ կողմից հաստատված միջոց է, որպեսզի իր զավակները ձեռք բերեն նրա օրհնությունների ամբողջությունը: Դժմարիտ Եկեղեցու որոշ նշաններից են.

Աստվածազյխի ճիշտ հասկացողությունը. Աստված մարդուն ստեղծեց իր իսկ պատկերով՝ **ԾՆ**. Ա. 26–27: Տերը խոսում էր Մովսեսի հետ դեմ առ դեմ՝ **Ել**. ԼԳ. 11: Հավերժական կյանքը՝ Հայր Աստծուն և Հիսուս Քրիստոսին ճանաչելն է՝ **Հովհ**. ԺԷ. 3: Հայրը և Որդին մարմին ունեն մսից և ոսկորից՝ **ՎևոՒ** 130.22–23: Հայրը և

Որդին հայտնվեցին Ջոզեֆ Սմիթին՝ **ՋՍ–Պ** 1.15–20: Մենք հավատում ենք Աստծուն՝ Հավերժական Հորը՝ **ՀՀ** 1.1:

Առաջին սկզբունքներն ու արարողությունները. Եթե մարդ չծնվի ջրից և Հոգուց՝ **Հովհ**. Գ. 3–5: Ապաշխարեք և ձեզանից ամեն մեկը բող մկրտվի Հիսուս Քրիստոսի անունով՝ **Գոր**. Բ. 38: Այն ժամանակ ձեռքերը դրին նրանց վրա, և նրանք ընդունում էին Սուրբ Հոգին՝ **Գոր**. Ը. 14–17: Աստծո զավակներ եք Հիսուս Քրիստոսի հավատքով՝ **Գաղ**. Գ. 26–27: Ապաշխարեք և մկրտվեք իմ Միքելի Որդու անունով՝ **2 Նեփի** 31.11–21: Նրանք, ովքեր հավատացին, մկրտվեցին և ձեռնադրմամբ ստացան Սուրբ Հոգին՝ **ՎևոՒ** 76.50–53: Պատշաճ քահանայություն է հարկավոր՝ մկրտելու և Սուրբ Հոգու պարգևը շնորհելու համար՝ **ՋՍ–Պ** 1.70–72: Նկարագրվում են ավետարանի առաջին սկզբունքներն ու արարողությունները՝ **ՀՀ** 1.4:

Հայտնությունը. Որտեղ տեսիլք չկա, այնտեղ ժողովուրդը կործանվում է՝ **Առաչկ**. ԻԹ. 18: Տերը հայտնում է իր գաղտնիքներն իր մարգարեներին՝ **Ամոզ** Գ. 7: Եկեղեցին կառուցված է Հայտնության վեմի վրա՝ **Մատ**. ԺԶ. 17–18 (ՎևոՒ 33.13): Վայ նրան, ով կասի՝ Տերն այլևս չի գործում հայտնությամբ՝ **3 Նեփի** 29.6: Հայտնություններն ու պատվիրանները գալիս են միայն նրա կողմից, ով նշանակված է՝ **ՎևոՒ** 43.2–7: Մենք հավատում ենք այն ամենին, ինչ Աստված հայտնել է՝ **ՀՀ** 1.9:

Մարգարեները. Եկեղեցին կառուցված է Առաքյալների և մարգարեների հիմքի վրա՝ **Եփես**. Բ. 19–20: Առաքյալները և մարգարեներն էական են Եկեղեցու համար՝ **Եփես**. Գ. 11–16: Ջոզեֆ Սմիթը կանչվել էր լինելու տեսաճող, մարգարե և Առաքյալ՝ **ՎևոՒ** 21.1–3: Մենք հավատում ենք մարգարեներին՝ **ՀՀ** 1.6:

Իշխանությունը. Հիսուսը գորություն և իշխանություն տվեց իր աշակերտներին՝ **Ղուկ**. Թ. 1–2 (Հովհ. ԺԵ. 16): Նեփին՝ Հելլամանի որդին, մեծ իշխանություն ուներ Աստծո կողմից՝ **Հել**. 11.18 (3 Նեփի 7.17): Մարգարեն պետք է պատվիրաններ ստանա Եկեղեցու համար՝ **ՎևոՒ** 21.4–5: Ոչ ոք չպետք է քարոզի ավետարանը և կառուցի Եկեղեցին, մինչև ևս չկարգվի մեկի կող-

մից, ով իշխանություն ունի՝ **ՎևՈՒ** 42.11: Երեցները պետք է քարոզեն ավետարանը՝ գործելով իշխանությամբ՝ **ՎևՈՒ** 68.8: Ամեն ոք, ով քարոզում կամ սպասավորություն է անում Աստծո համար, պետք է կանչվի Աստծուց՝ իշխանություն ունեցողների միջոցով՝ **ՀՀ** 1.5:

Լրացուցիչ սուրբ գրքերի ի հայտ գալը. Հնուդայի փայտը պիտի միանա Հովսեփի փայտին՝ **Եզեկ**. ԼԷ.15–20: Վերջին օրերի սուրբ գրքերի հայտնվելը կանխագուշակվել էր՝ **1 Նեփի** 13.38–41: Մենք հավատում ենք, որ Աստված դեռ շատ մեծ է կարևոր բաներ կհայտնի՝ **ՀՀ** 1.9:

Եկեղեցու կազմակերպությունը. Եկեղեցին կառուցված է Առաքյալների և մարգարեների հիմքի վրա՝ **Եփես.** Բ.19–20: Առաքյալները և մարգարեներն էական են Եկեղեցու համար՝ **Եփես.** Գ.11–16: Քրիստոսն է Եկեղեցու Գլուխը՝ **Եփես.** Ե.23: Քրիստոսի Եկեղեցին պետք է կոչվի իր անունով՝ **3 Նեփի** 27.8: Մենք հավատում ենք նույն կազմակերպությանը, որը գոյություն ունի Նախնական Եկեղեցում՝ **ՀՀ** 1.6:

Քարոզչական աշխատանքը. Ուրեմն գնացեք և բոլոր ազգերն աշակերտեցեք՝ **Մատ.** ԻԸ.19–20: Յուրանասունը կանչվեցին՝ քարոզելու ավետարանը՝ **Ղուկ.** Ժ.1: Նրանք ուզում էին, որ փրկությունը հայտարարվեր ամեն արարածի՝ **Մոսիա** 28.3: Երեցները պետք է առաջ գնան, երկու-երկու, քարոզելով իմ ավետարանը՝ **ՎևՈՒ** 42.6: Ավետարանը պետք է քարոզվի ամեն արարածի՝ **ՎևՈՒ** 58.64:

Հոգևոր պարզևները. Նրանք սկսեցին խոսել այլ լեզուներով՝ **Գոր.** Բ.4: Երեցները պետք է բուժեն հիվանդներին՝ **Հակ.** Ե.14: Մի ուրացեք Աստծո պարզևները՝ **Մոր.** 10.8: Թվարկվում են հոգևոր պարզևները՝ **ՎևՈՒ** 46.13–26 (Ա Կոր. ԺԲ.1–11, Մոր. 10.9–18):

Տաճարները. Ես ուխտ կանեմ և իմ սրբարանը նրանց մեջ կդնեմ հավիտյան՝ **Եզեկ**. ԼԷ.26–27: Տերը հանկարծակի գալու է իր տաճարը՝ **Մադ.** Գ.1: Նեփին մի տաճար կառուցեք՝ **2 Նեփի** 5.16: Սրբերը խրատվում են Տիրոջ տունը չկառուցելու համար՝ **ՎևՈՒ** 95 (ՎևՈՒ 88.119): Տիրոջ ժողովուրդը միշտ տաճարներ է կառուցում

սուրբ արարողություններ կատարելու համար՝ **ՎևՈՒ** 124.37–44: Տաճարներ կառուցելը և արարողություններ կատարելը վերջին օրերի մեծ աշխատանքի մի մասն են՝ **ՎևՈՒ** 138.53–54:

ԵՀՈՎԱ: *Տե՛ս նաև* ԵՄ ԵՄ. Հիսուս Քրիստոս

Իսրայելի Աստծո ուխտի անունը կամ հատուկ անունը: Այն նշանակում է «հավերժական ԵՄ ԵՄ» (Ել. Գ.14, Հովհ. Ը.58): Եհովան նախամահկանացու Հիսուս Քրիստոսն է և եկավ երկիր՝ որպես Մարիամի որդի (Մոսիա 3.8, 15.1, 3 Նեփի 15.1–5): Հին Կտակարանում հանդիպող *Տեր* բառը սովորաբար նշանակում է Եհովա:

Եհովան Քրիստոսն է. Հին մարգարեները ճանաչում էին Եհովային (Ել. 2.3, Աբր. 1.16): Պողոս Առաքյալն ուսուցանել է, որ Քրիստոսը Հին Կտակարանի Եհովան էր (Ել. ԺԷ.6, Ա Կոր. Ժ.1–4): Հարեդի եղբայրը, Մորմոնի Գրքում, տեսավ նախամահկանացու Քրիստոսին և երկրպագեց նրան (Եթեր 3.13–15): Մորմոնի նույնպես Քրիստոսին անվանել է Եհովա (Մոր. 10.34): Կիրթլենդի Տաճարում Ջոզեֆ Սմիթը և Օլիվեր Քաուդերին տեսան հարություն առած Եհովային (ՎևՈՒ 110.3–4):

ԵՂԱՅՅՐՆԵՐ, ԵՂԱՅՅՐ: *Տե՛ս նաև* Մարդ, Մարդիկ. Քույր

Որպես մեր Երկնային Հոր զավակներ՝ բոլոր տղամարդիկ և կանայք հոգևոր եղբայրներ են բույրեր են: Եկեղեցում տղամարդ անդամներին և Եկեղեցու ընկերներիին հաճախ անվանում են եղբայրներ:

Ղ-ու երբոր դառնա՝ եղբայրներիդ հաստատիր՝ **Ղուկ.** ԻԲ.32: Ով որ չի սիրում իր եղբորը, մնում է մահի մեջ՝ **Ա Հովհ.** Գ.10–17: Մտածեք ձեր եղբայրների մասին, ինչպես ինքներդ ձեր մասին՝ **Հակոբ** 2.17: Թող ամեն մարդ գնահատի իր եղբորը, ինչպես ինքն իրեն՝ **ՎևՈՒ** 38.24–25: Չորացրու եղբայրներիդ քո բոլոր վարքով՝ **ՎևՈՒ** 108.7:

ԵՂԻԱ: *Տե՛ս նաև* Կնիք, Կնքում. Փրկություն

Հին Կտակարանի մարգարե, որը վերջին օրերին վերադարձավ, որպեսզի Ջոզեֆ Սմիթին և Օլիվեր Քաուդերին շնորհի

կնքման գործքյան բանալիները: Իր օրերում Եղիան ծառայում էր Իսրայելի Հյուսիսային Թագավորությունում (Գ Թագ. ԺԷ-Գ Թագ. Բ): Նա մեծ հավատք ուներ առ Տեբը և հայտնի է բազում հրաշքներով: Նա կանխեց անձրևը երեք և կես տարի: Նա մի պատամուռ բարձրացրեց մեռելներից և երկնքից կրակ իջեցրեց (Գ Թագ. ԺԷ-ԺԸ): Հրեա ժողովուրդը դեռևս սպասում է Եղիայի վերադարձին, ինչպես մարգարեացել է Մաղաքիան, որ նա կգա (Մաղ. Գ.5): Նա հրավիրված հյուր է հրեաների գատկի խնջույքին, որտեղ բաց դուռը և ազատ արժող միշտ սպասում են նրան:

Մարգարե Ջոզեֆ Սմիթն ասել է, որ Եղիան կրել է Մելքիսեդեկյան Քահանայության կնքման գործքությունը և եղել է վերջին մարգարեն, որն այն ունեցել է նախքան Հիսուս Քրիստոսի ժամանակները: Կերպարանափոխման սարի վրա նա հայտնվեց Մովսեսի հետ և շնորհեց քահանայության բանալիները Պետրոսին, Հակոբոսին և Հովհաննեսին (Մատ. ԺԷ.3): Նա հայտնվեց կրկին, Մովսեսի և այլոց հետ, 1836թ. ապրիլի 3-ին, Օհայոյի Կիրթլենդի տաճարում, և նույն բանալիները շնորհեց Ջոզեֆ Սմիթին և Օլիվեր Քաուդերիին (ՎևՈՒ 110.13-16): Այդ բոլորը եղավ՝ ի նախապատրաստություն Տիրոջ երկրորդ գալստին, ինչպես խոսվել է Մաղաքիայի Գ.5-6-ում:

Եղիայի գործքությունը քահանայության կնքման գործքությունն է, որով երկրի վրա կապած կամ արձակած բաները կապվում կամ արձակվում են երկնքում (ՎևՈՒ 128.8-18): Այսօր, երկրի վրա, Տիրոջ ընտրյալ ծառաներն ունեն այս կնքման գործքությունը և կատարում են ավետարանի փրկության արարողություններն ապրողների և մահացածների համար (ՎևՈՒ 128.8):

Կնքեց երկինքները և կերակրվեց ազնավների միջոցով՝ **Գ Թագ. ԺԷ.1-7**: Հրամայեց, որ որբևայրու սափորի այլուրը և կուժի յուրը չպակասեն **Գ Թագ. ԺԷ.8-16**: Մահից բարձրացրեց որբևայրու որդուն՝ **Գ Թագ. ԺԷ.17-24**: Հաղթեց Բահաղի քահանաներին՝ **Գ Թագ. ԺԸ.21-39**: Մեղմ ու բարակ ձայնը խոսեց նրա հետ՝ **Գ Թագ. ԺԹ.11-12**: Հրեղեն կառքով համբարձվեց երկինք՝ **Գ Թագ. Բ.11**:

Մաղաքիան մարգարեացել է վերջին օրերին նրա վերադառնալու մասին՝ **Մաղ. Գ.5-6** (3 Նեփի 25.5): Հայտնվեց Կերպարանափոխման սարի վրա՝ **Մատ. ԺԷ.3-4**: Փրկիչը հիշատակել է նրա ծառայության մասին՝ **Ղուկ. Գ.25-26**: Հակոբոսը հիշատակել է նրա ծառայության մասին՝ **Հակ. Ե.17**: 1836-ին հայտնվեց Օհայոյի Կիրթլենդի Տաճարում՝ **ՎևՈՒ 110.13-16**:

ԵՐԻԱՍ

Սուրբ գրքերում *Եղիաս* անունը կամ կոչումն օգտագործվում է մի քանի ձևով:

Նախակարասկետ. Եղիասը կոչում է այն մարդու համար, որը նախակարասկետ է: Օրինակ՝ Հովհաննես Մկրտիչը Եղիասն էր, որովհետև նա ուղարկվել էր՝ Հիսուսի համար ճանապարհ նախապատրաստելու (Մատ. ԺԷ.12-13):

Վերականգնիչ. Եղիաս կոչումը վերագրվել է նաև ուրիշների, որոնք հատուկ առաքելություն են ունեցել կատարելու, ինչպիսիք եղել են Հովհաննես Հայտնողը (ՎևՈՒ 77.14) և Գաբրիելը (Ղուկ. Ա.11-20, ՎևՈՒ 27.6-7, 110.12):

Աբրահամի տնտեսության ժամանակ ապրող մարդ. Մարգարե, որի անունն էր Եսայի կամ Եղիաս, որն, ըստ երևույթին, ապրել է Աբրահամի օրոք (ՎևՈՒ 84.11-13, 110.12):

ԵՐԻՍԱԲԵԹ: Տե՛ս նաև Հովհաննես Մկրտիչ

Նոր Կտակարանում՝ Չաքարիայի կինը, Հովհաննես Մկրտչի մայրը և Մարիամի ազգականը (Ղուկ. Ա.5-60):

ԵՐԻՍԵ

Հին Կտակարանի Իսրայելի Հյուսիսային Թագավորության մարգարե և այդ երկրի թագավորներից մի քանիսի խորհրդատու:

Եղիսեն ուներ մեղմ և հանդարտ բնավորություն՝ ի տարբերություն այն բոցավառ տառնդի, որով աչքի էր ընկնում նրա ուսուցիչը՝ Եղիան: Նրա նշանավոր հրաշքները (Գ Թագ. Բ-Ե, Ը) վկայում են, որ նա իսկապես ստացել էր Եղիայի գործքությունը, երբ նա՝ որպես մարգարե, հաջորդեց Եղիային (Գ Թագ. Բ.9-12): Օրինակ՝ նա բժշկեց դառն աղբյուրի ջրերը, բաժանեց

Հորդանան գետի ջրերը, շատացրեց որբևայրու յուղը, մահից բարձրացրեց մի տղայի, մի մարդու բուժեց բորոտությունից, այնպես արեց, որ երկաթե տապարը լողա և Ասորիներին զարկեց կուրությամբ (Գ. Թագ. Բ-Ձ): Նրա ծառայությունը տևեց ավելի քան հիսուն տարի՝ Հովրամի, Հնուի, Հովաթափի և Հովասի բագավորման ընթացքում:

Ստացավ Եղիայի բիկնոցը՝ **Գ. Թագ. Բ.13:** Շատացրեց որբևայրու յուղը՝ **Գ. Թագ. Գ.1-7:** Մահից բարձրացրեց Մունամացու կնոջ որդուն՝ **Գ. Թագ. Գ.18-37:** Բժշկեց ասորացի Նեեմանին՝ **Գ. Թագ. Բ.1-14:** Կուրացրեց Ասորական զինվորներին, և նրա ծառայի աչքերը բացվեցին՝ **Գ. Թագ. Զ.8-23:**

ԵՆՈՎՍ՝ ՀԱԿՈՔԻ ՈՐԳԻՑ

Մորմնի Գրքում՝ Նեփիացի մարգարե և հիշատակարանները պահող, որն աղոթեց և իր մեղքերին թողություն ստացավ՝ Քրիստոսի հանդեպ իր հավատքի միջոցով (Ենովս 1.1-8): Տերը Ենովսի հետ ուխտեց, որ Մորմնի Գիրքն առաջ կբերի Լամանացիների համար (Ենովս 1.15-17):

Ենովսի գիրքը. Գիրք՝ Մորմնի Գրքում, որը պատմում է Տիրոջն ուղղված Ենովսի աղոթքի մասին՝ իր ներման համար, իր ժողովրդի և ուրիշների համար: Տերը նրան խոստացավ, որ Մորմնի Գիրքը կպահպանվի և ապագայում կտրվի Լամանացիներին: Չնայած գիրքը միայն մեկ գլուխ է պարունակում, այնուամենայնիվ, այն գորավոր պատմության հիշատակում է մի մարդու մասին, որն աղոթքով փնտրում էր իր Աստծուն, ապրում էր Աստծո պատվիրաններին հնազանդ, և նախքան մահանալը հրժմում էր Քավչի մասին իր գիտելիքով:

ԵՆՈՎՔ: Տե՛ս նաև Սիոն

Մարգարե, որն առաջնորդում էր Սիոն քաղաքի ժողովրդին: Նրա ծառայության մասին խոսվում է և՛ Հին Կտակարանում, և՛ Թանկագին Մարգարիտում: Ադամից հետո նա յոթերորդ հայրապետն էր: Նա Հարեղի որդին էր և Մաթուսաղայի հայրը (Մն. Ե.18-24, Ղուկ. Գ.37):

Ենովքը մեծ անձնավորություն էր, և նրա ծառայությունն ավելի նշանակալից

է եղել, քան նշված է Աստվածաշնչի համառոտ պատմության մեջ: Աստվածաշնչում նշվում է, որ նա փոխակերպվեց (Եբր. ԺԱ.5), սակայն մանրամասնություններ չեն նշվում նրա ծառայության վերաբերյալ: Հուդա Ա.14-ը քաղվածք է պարունակում նրա մարգարեությունից: Վերջին օրերի հայտնություններն ավելի շատ են բացատրում Ենովքի մասին, հատկապես նրա քարոզչության, Սիոն կոչվող նրա քաղաքի, նրա տեսիլքների և նրա մարգարեությունների մասին (Վևնժ 107.48-57, Մովսես 6-7): Սիոնը երկինք փոխադրվեց՝ նրանում ապրողների արդարության շնորհիվ (Մովսես 7.69):

Աստված իրեն հայտնի դարձրեց Ենովքին՝ **Մովսես 6.26-37:** Ենովքն ուսուցանում էր ավետարանը՝ **Մովսես 6.37-68:** Ենովքն ուսուցանեց ժողովրդին և հաստատեց Սիոնը՝ **Մովսես 7.1-21:** Ենովքը տեսավ ապագան՝ ընդհուպ մինչև Քրիստոսի երկրորդ գալուստը՝ **Մովսես 7.23-68:**

ԵՊԻՍԿՈՊՈՍ: Տե՛ս նաև Ահարոնյան Քահանայություն

Պաշտոն կամ պատասխանատվության կոչում՝ «վերակացու» նշանակությամբ: Եպիսկոպոսը կարգված պաշտոն է (Ահարոնյան Քահանայությունում և Վևնժ 20.67, 107.87-88), և եպիսկոպոսն ընդհանուր դատավոր է Իսրայելում (Վևնժ 107.72, 74):

Սուրբ Հոգին ձեզ վերակացուներ է դրել՝ **Գռք. Ի.28:** Տրվում են եպիսկոպոսին անհրաժեշտ հատկանիշները՝ **Ա Տիմ. Գ.1-7** (Տիտոս Ա.7): Եպիսկոպոս պետք է կարգվի՝ **Վևնժ 20.67:** Էդվարդ Պատրիջը պետք է ծառայեր Եկեղեցու համար, որպես եպիսկոպոս՝ **Վևնժ 41.9:** Եպիսկոպոսը պետք է զանազանի հոգևոր պարզկները՝ **Վևնժ 46.27, 29:** Քահանայապետը կարող է պաշտոնավարել եպիսկոպոսի պաշտոնում՝ **Վևնժ 68.14, 19** (Վևնժ 107.17): Եպիսկոպոս է նշանակվում Տիրոջ կողմից՝ **Վևնժ 72.1-26:** Եպիսկոպոսը պետք է հոգ տանի աղքատների համար՝ **Վևնժ 84.112:** Եպիսկոպոսը պետք է կառավարի բոլոր աշխարհիկ գործերը՝ **Վևնժ 107.68:** Եպիսկոպոսն Ահարոնյան Քահանայության նախագահն է՝ **Վևնժ 107.87-88:**

ԵՄ ԵՄ: *Տե՛ս նաև* Եհովա. Հիսուս Քրիստոս

Տեր Հիսուս Քրիստոսի անուններից մեկը:

Տերն ասաց Մովսեսին. ԵՄ ԵՄ ՈՐ ԵՄ **Ել.** Գ.14–15: Ես եմ Տերը՝ **Ել.** 2.2–3: Աբրահամի լինելուց առաջ ԵՄ ԵՄ **Հովի.** Ը.56–59: Լսեք ձայնը Հիսուս Քրիստոսի՝ Մեծ ԵՄ ԵՄ-ի՝ **ՎևՈՒ** 29.1 (ՎևՈՒ 38.1, 39.1):

ԵՄԱՎ: *Տե՛ս նաև* Իսահակ. Հակոբ՝ Իսահակի որդի

Հին Կտակարանում՝ Իսահակի և Ռեբեկայի ավագ որդին և Հակոբի երկվորյակը: Երկու եղբայրներն իրենց ծննդից ի վեր ախտյաններ էին (Ճճ. ԻԵ.19–26): Եսավի հետնորդները՝ Եղովմացիները, և Հակոբի հետնորդները՝ Իսրայելացիները, դարձան թշնամի ազգեր (Ճճ. ԻԵ.23):

Եսավն իր անդրանիկությունը վաճառեց Հակոբին՝ **Ճճ.** ԻԵ.33 (Եբր. ԺԲ.16–17): Եսավն ամուսնացավ Քետացի կանանց հետ, ինչը դառնություն եղավ իր ծնողների համար՝ **Ճճ.** ԻԶ.34–35: Հակոբը և Եսավը հաշտվեցին՝ **Ճճ.** ԼԳ:

ԵՄԱՅԻ

Եսայիա անվան Նոր Կտակարանի (հունարեն) ձևը (Մատ. Գ.3): Նաև եղել է Եսայի մարգարե, որն ապրել է Աբրահամի օրոք (ՎևՈՒ 76.100, 84.11):

ԵՄԱՅԻԱ

Հին Կտակարանի մարգարե, որը մարգարեացել է Ք.ծ.ա. 740–701թթ.: Որպես Եգեկիա թագավորի գլխավոր խորհրդատու՝ Եսայիան կրոնական և քաղաքական մեծ ազդեցություն է ունեցել:

Հիսուսը Եսայիային վկայակոչել է շատ ավելի հաճախ, քան որևէ այլ մարգարեի: Եսայիային հաճախ վկայակոչել են նաև Պետրոս, Հովհաննես և Պողոս Առաքյալները Նոր Կտակարանում: Մորմոհի Գիրքը և Վարդապետություն և Ուխտերն ավելի շատ քաղվածքներ են պարունակում Եսայիայից, քան որևէ այլ մարգարեից, և մեծապես օգնում են Եսայիային մեկնաբանելիս: Նեփին իր ժողովրդին ուսուցանում էր Եսայիայի գրություններից (2 Նեփի 12–24, Ես Բ–ԺԳ): Տերը Նեփիացիներին ասաց, որ «մեծ են

Եսայիայի խոսքերը», և որ Եսայիայի բոլոր մարգարեությունները պիտի կատարվեն (3 Նեփի 23.1–3):

Եսայիայի գիրքը. Գիրք Հին Կտակարանում: Եսայիայի մարգարեություններից շատերը վերաբերում են Քավչի գալստին՝ թե՛ նրա երկրային ծառայությանը (Ես. Թ.6) և թե՛ որպես վերջին օրերի Մեծ Թագավոր (Ես. ԿԳ): Նա նաև շատ է մարգարեացել Իսրայելի ապագայի մասին:

Ա գլուխը նախաբան է գրքի մնացած մասի համար: Եսայիա Է.14, Թ.6–7, ԺԱ.1–5, ԾԳ.1–12 և ԿԱ.1–3 կանխավ պատմում են Փրկչի առաքելության մասին: Բ, ԺԱ, ԺԲ և ԼԵ գլուխները խոսում են վերջին օրերի իրադարձությունների մասին, երբ ավետարանը կվերականգնվի, Իսրայելը կհավաքվի, և ծարավ հողը վարդի պես կծաղկի: ԻԺ գլուխը մարգարեություն է պարունակում Մորմոհի Գրքի ի հայտ գալու վերաբերյալ (2 Նեփի 27): Խ–ԽԶ գլուխները հռչակում են Եհովայի՝ որպես ճշմարիտ Աստծո գերազանցությունը կռապաշտ ժողովուրդների կողք աստվածների նկատմամբ: Մնացած ԽԷ–ԿԶ գլուխները վերաբերում են Իսրայելի վերջնական վերականգնման ժամանակ տեղի ունեցող իրադարձություններին, Սիոնի հաստատմանը, որտեղ Տերը կբնակվի իր ժողովրդի հետ:

ԵՄԹԵՐ

Մեծ հավատքի տեր կին և Եսթերի գրքի հիմնական կերպարը:

Եսթերի գիրքը. Գիրք Հին Կտակարանում, որը պատմում է Եսթեր թագուհու մեծ քաջության մասին, երբ նա փրկեց իր ժողովրդին կործանումից:

Ա–Բ գլուխները պատմում են, թե ինչպես Եսթերը՝ հրեա մի կին՝ Մուրթթե անունով հրեա տղամարդու որդեգրած աղջիկը, իր գեղեցկության շնորհիվ ընտրվեց Պարսկաստանի թագուհի: Գ գլուխը բացատրում է, որ Համան անունով մի մարդ, որը թագավորի արքունիքի գլխավոր իշխանն էր, ատելությամբ լցվեց Մուրթթեի հանդեպ և մի հրամանագիր ընդունեց՝ մահվան ենթարկել բոլոր հրեաներին: Դ–Ժ գլուխները պատմում են, թե ինչպես Եսթերը, մեծապես վտանգի ենթարկելով իր անձը, թագավորին հայտնի դարձրեց

իր ազգությունը և ձեռք բերեց հրամանագրի չեղյալ լինելը:

ԵՎԱ: *Տե՛ս նաև* Ադամի և Եվայի անկումը. Եղեմ

Առաջին կինը, որն ապրել է այս երկրի վրա (Ծն. Բ.21–25, Գ.20): Նա Ադամի կինն էր: Եբրայերենում այդ անունը նշանակում է «կյանք» և ակնարկում է, որ Եվան առաջին մայրն էր երկրի վրա (Մովսես 4.26): Նա և Ադամը՝ առաջին տղամարդը, հավերժական փառքի կարժանանա՝ ողջ մարդկության հավերժական զարգացումը հնարավոր դարձնելու համար:

Եվան գայթակղվեց և ճաշակեց արգելված պտղից՝ **ԾՆ. Գ** (2 Նեփի 2.15–20, Մովսես 4): Եվան հասկացավ Անկման անհրաժեշտությունը և փրկագնման ուրախությունը՝ **Մովսես** 5.11–12: Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթը հոգիների աշխարհի իր տեսիլքում տեսավ Եվային՝ **ՎևոՒ** 138.39:

ԵՏԵՎԻՑ ԽՈՍՄԵԼ: *Տե՛ս* Չարախոսություն

ԵՐԱԶ: *Տե՛ս նաև* Հայտնություն

Երազը մի ձև է, որով Աստված իր կամքը հայտնի է դարձնում երկրի տղամարդկանց և կանանց: Այնուամենայնիվ, ոչ բոլոր երազներն են հայտնություններ: Ոգեշնչված երազները հավատքի պտուղներն են:

Նա երազ տեսավ, և ահա մի սանդուղք՝ երկնքին հասնող **ԾՆ. ԻԸ.12:** Հովսեփը մի երազ տեսավ՝ **ԾՆ. ԼԷ.5:** Տերը երազի մեջ կխոսի նրա հետ՝ **ԹՎ. ԺԲ.6:** Նաբոգոդոնոսորը երազներ տեսավ՝ **Դան. Բ.1–3:** Ծերերը երազներ պիտի երազեն՝ **Հովել Բ.28** (Գոր. Բ.17): Տիրոջ հրեշտակը երազում երևաց նրան՝ **Մատ. Ա.20** (Մատ. Բ.19): Լեքին գրեց շատ բաներ, որ տեսել էր երազներում **1 Նեփի 1.16:** Լեքին մի երազ երազեց **1 Նեփի 8:**

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ: *Տե՛ս նաև* Երգել. Օրհներգ

Մեղեդիներն ու ռիթմերը, որոնք երգում և նվագում էին աստվածաշնչի վաղ ժամանակներից՝ ուրախություն, գովք և երկըրպագություն արտահայտելու համար

(Բ Թագ. Զ.5): Այն կարող է լինել աղոթքի մի ձև: Մաղմունքը, հավանաբար, երգում էին պարզ մեղեդիների ներքո և նվագակցվում էին գործիքներով:

Մարիամը՝ Ահարոնի և Մովսեսի քույրը, վերցրեց բմբուկը և պարեց կամանց հետ՝ **Ել. ԺԵ.20:** Երգիչ Ղևտացիները ծծնդաներ և տավիղներ ունեին և հարյուր քսան քահանա փողեր էին հնչեցնում՝ **Բ ՄՃ. Ե.12:** Հիսուսը և Տասներկուսը Վերջին Ընթրիքից հետո օրհներգեցին՝ **Մատ. ԻԶ.30:** Սովորեցրեք ու խրատեք միմյանց սաղմունքերով և օրհներգեքով ու հոգևոր երգերով՝ **Կող. Գ.16:** Դուք տրամադրված եք եղել երգելու քավիչ սիրո երգը՝ **Ալմա 5.26:** Աստծո իրզին հրժվում է սրտաբուխ երգով. այո՛, արդարների երգն աղոթք է՝ **ՎևոՒ** 25.12: Գովք ասեք Տիրոջը՝ երգելով, երաժշտությամբ և պարելով՝ **ՎևոՒ** 136.28:

ԵՐԱԽԱՅՐԻ

Տարվա տվյալ եղանակին հավաքած առաջին պտուղները՝ բերքը: Հին Կտակարանի ժամանակներում դրանք մատուցվում էին Տիրոջը (Ղև. ԻԳ.9–20): Նրանք, ովքեր ընդունում են ավետարանը և հավատարիմ համբերում են մինչև վերջ, խորհրդանշաբար, երախայրի են, որովհետև պատկանում են Աստծուն:

Նրանք, ովքեր Գառնի ետևից գնում են, ուր որ մա գնա, երախայրի են Աստծո համար՝ **Հայտ. ԺԴ.4:** Նրանք, ովքեր առաջինը կիջնեն Քրիստոսի հետ, առաջին պտուղներն են՝ **ՎևոՒ** 88.98:

ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ. Տե՛ս

Շնորհակալ, Շնորհակալություն, Գոհաբանություն

ԵՐԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ: *Տե՛ս նաև* Սարի վրայի քարոզը

Մի շարք ուսմունքներ, որոնք Հիսուսն ուսուցանեց Սարի վրայի Քարոզում, որոնք մաքուր և հոգևոր բնութագրի նկարագիր են (Մատ. Ե.3–12, Դուկ. Զ.20–23): Երանությունները տրված են այնպիսի ձևով, որ յուրաքանչյուր դրույք կառուցված է նախորդի հիմքի վրա: Երանությունների ավելի մանրամասն և ճշգրիտ արձանագրությունը գտնվում է 3 Նեփի 12-ում:

ԵՐԳ ԵՐԳՈՑ

Գիրք Հին Կտակարանում: Մարգարե Ջոզեֆ Սմիթն ուսուցանել է, որ Երգ Երգոցը ոգեշնչված գրություն է:

ԵՐԳԵԼ: *Տե՛ս նաև* Երածշտություն. Օրհներգ

Երգով ու սաղմոսով երկրպագել և փառաբանել Աստծուն:

Երգեք Տիրոջը՝ **Ա ՄՃ**. ԺՁ.23–36 (Սաղ. ԳՁ): Երգեք և գոհություն հայտնեք Տիրոջը՝ **Սաղ. Լ.4:** Ուրախությամբ աղաղակեք առ Տերը՝ **Սաղ. Ճ.1:** Օրհներգելուց հետո դուրս եկան Չիբենյաց սարը՝ **Մատ. ԻՁ.30:** Սուրբ Հոգին նրանց առաջնորդում էր երգել **Մոք. 6.9:** Արդարի երգն աղոթք է ինձ համար՝ **ՎևՈՒ 25.12:** Եթե զվարթ ես, գովք սաս Տիրոջը երգելով՝ **ՎևՈՒ 136.28:**

ԵՐԳՈՒՄ: *Տե՛ս նաև* Ուխտ.

Քահանայության երդումը և ուխտը

Սուրբ գրքերում օգտագործված իմաստով, սովորաբար, սրբազան ուխտ կամ խոստում: Ինչևէ, ամբարիշտ մարդիկ, այդ թվում՝ Սատանան և նրա հրեշտակները, նույնպես երդում են տալիս իրենց չար նպատակներին հասնելու համար: Հին Կտակարանի ժամանակներում երդումներն ընդունելի էին. սակայն Հիսուս Քրիստոսն ուսուցանել է, որ մարդիկ չպետք է երդվեն՝ ո՛չ Աստծո անունով, ո՛չ էլ նրա ստեղծագործություններով (Մատ. Ե.33–37):

Ես կկատարեմ այն խոստումը, որ երդվեցի Աբրահամին՝ **ԾՃ**. ԻՁ.3: Եթե մի մարդ երդում անի իր հոգին կապել, թող զանց չանի այն՝ **ԹՎ. Լ.2:** Նրանք երդում արեցին, որ գնան Աստծո օրհներով՝ **Նեեմ. Ժ.29:** Աստարիք Տիրոջ համար քո երդումները՝ **Մատ. Ե.33 (Ժող. Ե.1–2, 3 Նեփի 12.33):** Աստված երդումով խոստացավ, որ հավատարիմները կփրկվեն՝ **Եբք. Զ.13–18:** Երբ Չորամը երդում տվեց, մեր մտավախությունները փարատվեցին՝ **1 Նեփի 4.37:** Ամմոնի ժողովուրդը երդվեց, որ երբեք արյուն չի թափի՝ **Ալմա 53.11:** Ամբարիշտ Նեփիացիները գաղամի երդումներ և ուխտեր արեցին Սատանայի հետ՝ **Հեյ. 6.21–30:** Մարդիկ հավերժական կյանք են ստանում քահանայության երդման և ուխտի միջոցով՝ **ՎևՈՒ 84.33–42:** Բոլոր

ուխտերը, դաշինքները, մուրիակները, պարտավորությունները և երդումները, որոնք չեն կնքվել Խոստումի Սուրբ Հոգով, վերջանում են մարդկանց մահվան հետ՝ **ՎևՈՒ 132.7:**

ԵՐԵՆԱ, ԵՐԵՆԱՆԵՐ: *Տե՛ս նաև*

Ընտանիք. Հաշիվ, Պատասխանատու, Պատասխանատվություն. Մանուկների մկրտություն. Փրկություն – Երեխաների փրկությունը. Քավել, Քավություն. Օրհնել, Օրհնված, Օրհնություն – Երեխաներին օրհնելը

Գեռահաս, որը չի հասել իր սեռական հասունությանը: Հայրերն ու մայրերը պետք է իրենց երեխաներին սովորեցնեն հնազանդվել Աստծո կամքին: Երեխաներն անմեղ են, մինչև պատասխանատվության տարիքին հասնելը (Մոք. 8.22, ՎևՈՒ 68.27):

Երեխաները Տիրոջ ժառանգությունն են՝ **Սաղ. ԸԻԷ.3–5:** Կրթիր երեխային իր ճանապարհի համեմատ՝ **Առակ. ԻԲ.6:** Թույլ տվեք այդ երեխաներին, և դրանց մի արգելեք ինձ մոտ գալ՝ **Մատ. ԺԹ.14:** Հնազանդվեք ձեր ծնողներին՝ **Եփես. Զ.1–3 (Կող. Գ.20):** Եթե Անկումը չլինեք, Ադամը և Եվան երեխաներ չէին ունենա՝ **2 Նեփի 2.22–23:** Երեխաներին սովորեցրեք ճշմարտություն և լրջմտություն՝ **Մոսիս 4.14–15:** Փոքր երեխաներն ունեն հավերժական կյանք՝ **Մոսիս 15.25:** Հիսուսը վերցրեց փոքր երեխաներին և օրհնեց նրանց՝ **3 Նեփի 17.21:** Քո բոլոր զավակները պիտի սովորեցվեն Տիրոջ կողմից, և մեծ պիտի լինի քո զավակների խաղաղությունը՝ **3 Նեփի 22.13 (Ես. ԾԳ.13):** Փոքր երեխաներն ապաշխարության կամ մկրտության կարիք չունեն՝ **Մոք. 8.8–24:** Փոքր երեխաները փրկագնված են աշխարհի հիմնադրումից ի վեր՝ իմ Միածնի միջոցով՝ **ՎևՈՒ 29.46–47:** Ծնողները պետք է իրենց երեխաներին սովորեցնեն ավետարանի սկզբունքներն ու սովորությունները՝ **ՎևՈՒ 68.25, 27–28:** Փոքր երեխաները սուրբ են՝ Քրիստոսի քավության միջոցով, **ՎևՈՒ 74.7:** Ծնողներին պատվիրվում է երեխաներին մեծացնել լույսի և ճշմարտության մեջ՝ **ՎևՈՒ 93.40:** Երեխաները, որոնք մահանում են նախքան պատաս-

խանավորության տարիքին հասնելը, փրկվում են երկնքի սելեստիալ արքայությունում՝ ՎԼՈՒ 137.10:

ԵՐԵՆԱՆԵՐԻ ՓՐԿՈՒԹՅՈՒՆԸ:

Տես Երեխա, Երեխաներ.
Փրկություն – Երեխաների փրկությունը

ԵՐԵՄԻԱ: *Տես* *Նաև* Երեմիայի Ողբերը

Հին Կտակարանի մարգարե, որը ծնվել է քահանայական ընտանիքում և մարգարեացել է Հուդայում, Ք.ծ.ա. 626–586թթ.: Նա ապրել է մյուս մեծ մարգարեների՝ Լեքիի, Եզեկիելի, Ովսեի և Գանիելի մոտ ժամանակաշրջանում:

Երեմիան մարգարե էր կարգվել նախամահկանացու կյանքում (Երեմ. Ա.4–5): Մարգարե լինելու մոտ քառասուն տարիների ընթացքում, նա ուսուցանել է հրեա ժողովրդի մեջ եղած կռապաշտության և անբարոյականության դեմ (Երեմ. Գ.1–5, Է.8–10): Նա ստիպված է եղել դիմանալ շարունակվող ընդդիմությանն ու անարգանքների (Երեմ. Ի.2, Լ.2, Լ.18–19, Լ.Ը.4): Երուսաղեմի անկումից հետո, հրեաները, որոնք հեռացան Եգիպտոս, Երեմիային վերցրեցին իրենց հետ (Երեմ. ԽԳ.5–6), որտեղ, ըստ ավանդության, նրանք քարկոծելով սպանեցին նրան:

Երեմիայի գիրքը. Ա–Չ գլուխները պարունակում են Հովսիայի թագավորության ժամանակ տրված մարգարեությունները: Է–Ի գլուխները Հովակիմի ժամանակի մարգարեություններն են: ԻԱ–ԼԸ գլուխները վերաբերում են Սեղեկիայի թագավորությանը: ԼԹ–ԽԳ գլուխները պարունակում են մարգարեություններ և նկարագրում են Երուսաղեմի անկումից հետո տեղի ունեցած պատմական իրադարձությունները: ԽԵ գլուխը խոստում է պարունակում Բաբելոնի նրա դափնի, որ Բաբելոնի կյանքը կպահպանվի: Ի վերջո, ԽՉ–ԾԱ գլուխները մարգարեություններ են օտար ազգերի դեմ: ԾԲ գլուխը պատմական վերջաբան է: Երեմիայի մարգարեությունների մի մասը գրված էին Նեփիի կողմից ձեռք բերված Լաբանի արույրե թիթեղների վրա (1 Նեփի 5.10–13): Երեմիայի անունը Մորմոնի Գրքում նշվել է ևս երկու անգամ (1 Նեփի 7.14, Հել. 8.20):

Երեմիայի գրքում ընդգրկված են նաև մարդու նախամահկանացու գոյության ճանաչումը և Երեմիայի նախակարգումը (Երեմ. Ա.4–5). մարգարեություն՝ իր ցրված վիճակից Իսրայելի վերադառնալու մասին, քաղաքից մեկին և ընտանիքից երկուսին Սիոնում հավաքելու մասին, հիանալի երկրի մասին, որտեղ Իսրայելը և Հուդան կկարողանան բնակվել ապահովության և խաղաղության մեջ (Երեմ. Գ.12–19). և մարգարեություն այն բանի մասին, որ Տերը կհավաքի Իսրայելը հյուսիսային երկրներից՝ ջառ «ձկնորսներ» և «որսորդներ» ուղարկելով, որպեսզի գտնեն նրան (Երեմ. ԺՁ.14–21): Վերջին օրերի այս իրադարձությունն անհամեմատ ավելի մեծ է լինելու, քան Եգիպտոսից Իսրայելին դուրս բերելը (Երեմ. ԺՁ.13–15, ԻԳ.8):

ԵՐԵՄԻԱՅԻ ՈՂԲԵՐԸ

Գիրք Հին Կտակարանում, որը գրվել է Երեմիայի կողմից: Այն Երուսաղեմի և Իսրայելի ազգի անկման մասին ողբալից բանաստեղծությունների և երգերի մի ժողովածու է: Գիրքը գրվել է Ք.ծ.ա. 586 թվականին քաղաքի անկումից հետո:

ԵՐԵՑ: *Տես* *Նաև* Մելքիսեդեկյան

Քահանայություն. Քահանայություն

Երեց (ծեր) տերմինն Աստվածաշնչում օգտագործվում է տարբեր իմաստներով: Հին Կտակարանում այն հաճախ վերաբերում է ցեղի տարիքով երեցներին, որոնց սովորաբար վստահվում էին կառավարման գործերը (Մհ. Ծ.7, Հես. Ի.4, Հուրթ Գ.2, Մատ. ԺԵ.2): Նրանց տարիքն ու փորձը նրանց տված խորհուրդը դարձնում էին արժեքավոր: Նրանց պաշտոնը պարտադիր չէ, որ քահանայության կոչում լիներ:

Կային նաև Մելքիսեդեկյան Քահանայության կարգված երեցներ Հին Կտակարանի ժամանակներում (Ել. ԻԳ.9–11): Նոր Կտակարանում երեցները նշվում են որպես քահանայության պաշտոնյաներ Եկեղեցում (Հակ. Ե.14–15): Նեփիացիների թվում նույնպես կային քահանայության կարգված երեցներ (Ալմա 4.7, 16, Մոր. 3.1): Արդի տնտեսության ժամանակ Ջոզեֆ Սմիթը և Օլիվեր Քաուդերին առաջին երեցներն էին, որ պիտի կարգվեին (ՎԼՈՒ 20.2–3):

Ներկայումս երեքը կոչում է, որը տրվում է բոլոր Մեքիսեղեկյան Քահանայություն կրողներին: Օրինակ՝ տղամարդ միսիոներներին դիմում են որպես երեցների: Առաքյալը նույնպես երեց է, և Տասներկուսի Քվորումի կամ Յոթանասուների Քվորումների անդամներին պատշաճ է դիմել այդ կոչումով (ՎևոՒ 20.38, Ա Պետ. Ե.1): Եկեղեցում կարգված ներկայիս երեցների պարտականությունները տրվել են վերջին օրերի հայտնություններում (ՎևոՒ 20.38–45, 42.44, 46.2, 107.12):

Մովսեսը գրեց Իսրայելի բոլոր ծերերին՝ **Բ Օր.** Լ Ա.9: Բառնաբարը եկեղեցու երեցների համար օգնություն ուղարկեց՝ **Գոր.** Ժ Ա.30: Երեցներ կարգվեցին ամեն մի եկեղեցու համար՝ **Գոր.** Ժ Գ.22 (Տիտոս Ա.5): Կանչեք երեցներին, որ հիվանդի վրա աղոթք անեն՝ **Հակ.** Ե.14: Երեցներ էին կարգվում ձեռնադրմամբ՝ **Ալմա** 6.1: Երեցները պետք է օրհնեն երեխաներին՝ **ՎևոՒ** 20.70: Երեցները պետք է ժողովները վարեն Սուրբ Հոգով՝ **ՎևոՒ** 46.2: Երեցները պետք է հաշիվ ներկայացնեն իրենց տնտեսության մասին՝ **ՎևոՒ** 72.5: Երեցները պետք է ավետարանը քարոզեն ազգերին՝ **ՎևոՒ** 133.8:

ԵՐԵՔ ՆԵՓԻԱՅԻ

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ: *Տե՛ս նաև*

Աշակերտ. Նեփիացիներ.
Փոխակերպված եակներ

Քրիստոսի ընտրած Նեփիացի աշակերտներից երեքը, որոնց մասին նշվում է Մորմոնի Գրքում:

Տերը շնորհեց այս աշակերտներին այն նույն օրհնությունը, որը շնորհել էր Սիրեցյալ Հովհաննեսին, այսինքն՝ որ նրանք մինչև Տիրոջ վերադարձը մնան երկրի վրա, որպեսզի հոգիներ բերեն դեպի Քրիստոս: Նրանք փոխակերպվեցին, որպեսզի ցավ չզգան և չմահանան (3 Նեփի 28):

Քրիստոսը շնորհեց երեք աշակերտների ցանկությունը՝ մնալ մինչև իր վերադարձը՝ **3 Նեփի** 28.1–9: Նրանք երբեք չեն տանի մահվան ցավերը, ոչ էլ վիշտ կունենան՝ **3 Նեփի** 28.7–9: Նրանք լիակատար ուրախություն կունենան՝ **3 Նեփի** 28.10: Նրանք ժամանակավորապես հափշտակվեցին երկինք՝ **3 Նեփի** 28.13–

17: Նրանք ծառայեցին ժողովրդին և հալածանքներ կրեցին՝ **3 Նեփի** 28.18–23: Նրանք ծառայեցին Մորմոնին՝ **3 Նեփի** 28.24–26 (Մորմ. 8.10–11): Նրանք կծառայեն հեթանոսներին, հրեաներին, ցրված ցեղերին և բոլոր ազգերին՝ **3 Նեփի** 28.27–29: Սատանան զորություն չունի նրանց վրա՝ **3 Նեփի** 28.39:

ԵՐԻՔՈՎ

Պարսպապատ քաղաք Հորդանանի հովտում, որը 245 մետր ցածր է ծովի մակարդակից: Երիքովը մոտ է այն վայրին, որտեղ Իսրայելացիներն անցան գետը, երբ նոր էին մտել խոստումի երկիր (Հես. Բ.1–3, Գ.16, 2):

Իսրայելացիները պատերազմեցին Երիքովի մոտ՝ **Հես.** 2.1–20: Հեսուն անեծք դրեց Երիքովի վրա՝ **Հես.** 2.26 (Գ Թագ. Ժ 2.34): Երիքովը Բենիամինին նշանակված տարածքի մեջ էր՝ **Հես.** ԺԸ.11–12, 21: Դեպի Երուսաղեմ իր վերջին ուղևորության ժամանակ Տերը մտավ Երիքով՝ **Մար.** Ժ 46 (Ղուկ. ԺԸ.35, ԺԹ.1):

ԵՐԿԻՆՔ: *Տե՛ս նաև* Աստծո արքայություն կամ Երկնքի արքայություն. Դրախտ.
Սելեստիալ փառք

Երկինք բառը սուրբ գրքերում հիմնականում երկու իմաստ ունի: (1) Դա Աստծո բնակության վայրն է և Սրբերի ապագա տունը (Ճն. ԻԸ.12, Սաղ. Ժ Ա.4, Մատ. 2.9): (2) Դա երկիրը շրջապատող հաստատությունն է (Ճն. Ա.1, 17, Ել. Ի Գ.10): Երկինքն ակնհայտորեն *դրախտը* չէ, որն այս երկրի վրա ապրած և մահացած հավատարիմ մարդկանց հոգիների ժամանակավոր բնակավայրն է: Խաչի վրա իր մահից հետո Հիսուսն այցելեց դրախտ, բայց երրորդ օրը նա Մարիամին տեղեկացրեց, որ դեռ չի եղել Հոր մոտ (Ղուկ. Ի Գ.39–44, Հովհ. Ի.17, ՎևոՒ 138.11–37):

Ես տեսնում եմ երկինքը՝ քո մատների գործը՝ **Սաղ.** Ը.3: Տիրոջ խոսքով ստեղծվեցին երկինքները՝ **Սաղ.** Լ Գ.6: Ի՛նչպես վայր ընկար երկնքից, ով Լյուցիֆեր՝ **Ես.** Ժ Գ.12 (2 Նեփի 24.12): Երկինքները պիտի գալարվեն մազադաթի պես՝ **Ես.** Լ Գ.4: Ես նոր երկինք և նոր երկիր եմ

ստեղծում՝ **Ես.** ԿԵ.17: Աստված կրացի երկնքի պատուհանները՝ **Մաղ.** Գ.10: Մեր Հայր, որ երկնքում ես. սուրբ լինի քո անունը՝ **Մատ.** 2.9 (3 Նեփի 13.9): Պողոսը հափշտակվեց մինչև երրորդ երկինքը՝ **Բ Կոր.** ԺԲ.2: Լուսություն եղավ երկնքում՝ **Հայտ.** Ը.1 (ՎևոՒ 88.95–98): Եթե նրանք հավատարմորեն դիմանում են մինչև վերջ, նրանք ընդունվում են երկնքում՝ **Մոսիա** 2.41: Որպեսզի դուք կարողանաք լինել զավակները ձեր Հոր, որ երկնքում է՝ **3 Նեփի** 12.45: Ես պիտի գամ երկնքի ամպերի մեջ՝ **ՎևոՒ** 45.16: Եղիան երկինք էր վերցվել առանց մահ ճաշակելու՝ **ՎևոՒ** 110.13: Քահանայության իրավունքները կապված են երկնքի գորությունների հետ՝ **ՎևոՒ** 121.36: Երկնքում կան երկու տեսակի էակներ՝ **ՎևոՒ** 129.1: Միոմը վերցվել էր երկինք՝ **Մովսես** 7.23:

ԵՐԿԻՐ: *St'u nian* Աշխարհ. Ստեղծել, Ստեղծում

Մոլորակը, որի վրա մենք ապրում ենք, որը ստեղծվել է Աստծո կողմից, Հիսուս Քրիստոսի միջոցով, որպեսզի մարդիկ օգտագործեն այն իրենց մահկանացու փորձնական ժամանակաշրջանում: Նրա հավերժական ճակատագիրն է՝ դառնալ փառավոր և վեհացած (ՎևոՒ 77.1–2, 130.8–9): Երկիրը կդառնա նրանց հավերժական ժառանգությունը, ովքեր արժանի են ապրելու սելեստիալ փառքի համար (ՎևոՒ 88.14–26): Նրանք կվայելեն Հոր և Որդու ներկայությունը (ՎևոՒ 76.62):

Մարդկանց համար ստեղծված. Աստված մարդուն իշխանություն տվեց երկրի վրա՝ **ԾՆ.** Ա.28 (Մովսես 2.28): Երկիրը Տիրոջն է՝ **Ել.** Թ.29 (Սաղ. ԻԳ.1): Տերը երկիրը մարդկանց զավակներին է տվել՝ **Մաղ.** ԸԺԵ.16: Ես եմ արարել երկիրը և մարդուն նրա վրա ստեղծել՝ **Ես.** ԽԵ.12: Նրա խոսքի գորությամբ մարդը եկավ երկիր՝ **Հակոբ** 4.9: Երկիրը պիտի տրվի նրանց, ովքեր վերցրել են Մուրբ Հոգին՝ որպես իրենց ուղեկից՝ **ՎևոՒ** 45.56–58 (ՎևոՒ 103.7): Նրանք, ովքեր հնազանդվել են ավետարանին, որպես իրենց վարձք կստանան երկրի բարիքները՝ **ՎևոՒ** 59.3: Երկիրը պիտի ժառանգեն նրա աղբաստներն ու հեգերը՝ **ՎևոՒ** 88.17 (Մատ. Ե.5, 3 Նեփի 12.5): Մենք

կստեղծենք մի երկիր, և մենք նրանց կստուգենք՝ **Աբր.** 3.24–25:

Կենդանի գոյություն. Երկիրը հավիտյան կանգնած է՝ **Ժող.** Ա.4: Ապակյա ծովը երկիրն է՝ իր սրբագործված, անմահ և հավերժական վիճակում՝ **ՎևոՒ** 77.1: Երկիրը սրբագործված և պատրաստ պիտի լինի սելեստիալ փառքի համար՝ **ՎևոՒ** 88.18–19: Երկիրը բարձրաձայն ողբում էր՝ **Մովսես** 7.48:

Երկրի բաժանումը. Թող ջրերը մեկտեղ ժողովվեն՝ **ԾՆ.** Ա.9: Փաղեկի օրերում բաժանվեց երկիրը՝ **ԾՆ.** Ժ.25: Ջրերը ետ քաշվելուց հետո այն դարձավ մի ընտիր երկիր՝ **Եթեր** 13.2: Երկիրը կլինի այնպես, ինչպես մախթան իր բաժանվելը՝ **ՎևոՒ** 133.24:

Երկրի մաքրագործումը. Քառասուն օր երկրի վրա անձրև եկավ՝ **ԾՆ.** Է.4: Երկիրը պահվում է դատաստանի օրվա կրակի համար՝ **Բ Պետ.** Գ.7: Այսօրվանից հետո զախի է այրումը՝ **ՎևոՒ** 64.24: Երկիրը ցանկանում է մաքրվել կեղտոտությունից՝ **Մովսես** 7.48:

Երկրի վերջնական վիճակը. Երկիրը պիտի զալարվի մագաղաթի պես և պիտի անցնի՝ **3 Նեփի** 26.3 (ՎևոՒ 29.23): Կլիմի նոր երկինք և նոր երկիր՝ **Եթեր** 13.9 (ՎևոՒ 29.23): Ապակյա ծովը երկիրն է՝ իր սրբագործված, անմահ և հավերժական վիճակում՝ **ՎևոՒ** 77.1: Երկիրը պիտի սրբագործվի և պատրաստվի սելեստիալ փառքի համար՝ **ՎևոՒ** 88.18–19: Այս երկիրը կդառնա բյուրեղի նման և մի Ուրիմ ու Թումիմ կլինի՝ **ՎևոՒ** 130.8–9: Հազար տարի շարունակ երկիրը կհանգստանա՝ **Մովսես** 7.64: Երկիրը կնորացվի՝ **ՀՀ** 1.10:

ԵՐԿՆԱՅԻՆ ՀԱՅՐ. *St'u* Աստված, Աստվածագլուխ. Հայր Երկնային

ԵՐԿՐՊԱԳԵԼ: *St'u nian* Աստված, Աստվածություն

Միրել, ակնածել, ծառայել և նվիրվել Աստծուն (ՎևոՒ 20.19): Երկրպագությունը ներառում է աղոթք, ծոմապահություն, եկեղեցական ծառայություն, մասնակցություն ավետարանական արարողություններին և այլ սովորույթներին, որոնք

նվիրվածություն և սեր են արտահայտում առ Աստված:

Ուրիշ աստվածներ չունենա իմ առաջ՝ **Ել. Ի.3** (Ել. ԼԲ.1–8, 19–35, Սաղ. ՉԱ.9): Հոգով և ճշմարտությունով երկրպագեք Հորը՝ **Հովհ. Գ.23**: Երկրպագեք երկնքի և երկրի արարչին՝ **Հայտ. ԺԳ.7** (Վև.ՈՒ 133.38–39): Երկրպագեք նրան ձեր ողջ գորույթյամբ, մտքով և ուժով՝ **2 Նեփի 25.29**: Նրանք հավատում էին Քրիստոսին և պաշտում էին Հորը՝ նրա անունով՝ **Հակոբ 4.5**: Չենուն ուսուցանել էր, որ մարդիկ պետք է աղոթեն ու երկրպագեն ամեն տեղ՝ **Ալմա 33.3–11**: Հոգով և ճշմարտությամբ երկրպագեք Աստծուն, որտեղ էլ որ լինեք՝ **Ալմա 34.38**: Մարդիկ ընկան Հիսուսի ոտքերը և երկրպագեցին նրան՝ **3 Նեփի 11.17**: Բոլոր մարդիկ պետք է ապաշխարեն, հավատան առ Հիսուս Քրիստոս և երկրպագեն Հորը՝ նրա անունով՝ **Վև.ՈՒ 20.29**: Ես տալիս եմ ձեզ այս խոսքերը, որ կարողանաք հասկանալ և իմանալ, թե ինչպես պիտի երկրպագեք, և իմանաք, թե ում եք երկրպագում՝ **Վև.ՈՒ 93.19**: Այս մեկ Աստծուն միայն ես կերկրպագեմ՝ **Մովսես 1.12–20**: Մենք պահանջում ենք Ամենագոր Աստծուն երկրպագելու արտոնությունը՝ **ՀՀ 1.11**:

ԵՐԿՐՈՐԳ ՄՆԻԹԱՐԻՉ: *Տե՛ս*
Մխիթարիչ

ԵՐԿՐՈՐԳ ՎԻՃԱԿ: *Տե՛ս*
Մահկանացու, Մահկանացություն

ԵՐԿՐՈՐԳ ՕՐԻԵՆՍ: *Տե՛ս նաև*
Հնգամատյան

Նշանակում է «օրենքի կրկնում» և համարվում է Հին Կտակարանի հինգերորդ գիրքը:

Երկրորդ Օրինացում ընդգրկված են Մովսեսի վերջին երեք բանախոսությունները, որոնք նա հաղորդեց Մովսեսի դաշտերում ամիֆապես իր փոխակերպվելուց առաջ: Առաջին բանախոսությունը (Ա–Դ գլուխները) նախաբան է: Երկրորդ բանախոսությունը (Ե–Իձ գլուխները) բաղկացած է երկու մասից. (1) Ե–ԺԱ գլուխները՝ տասը պատվիրանները և դրանց վերաբերյալ գործնական բացատրություններ. (2) ԺԲ–Իձ գլուխները՝ օրենքների մի

համակարգ, որը կազմում է ողջ գրքի էությունը: Երրորդ բանախոսությունը (ԻԷ–Լ գլուխները) ներառում է Իսրայելի և Աստծո միջև ուխտի հանդիսավոր վերահաստատումը և այն օրհնությունների և անեծքների հայտարարումը, որոնք կհետևեն հնազանդությանը և անհնազանդությանը: ԼԱ–ԼԳ գլուխները նկարագրում են օրենքի հանձնումը Ղևտացիներին, Մովսեսի երգն ու վերջին օրհնությունը և Մովսեսի հեռանալը:

ԵՐՋԱՆԻԿ, ԵՐՋԱՆԿՈՒԹՅՈՒՆ:

Տե՛ս Ուրախություն

ԵՐՈՒՍԱԳԵՄ

Քաղաք, որը գտնվում է այժմյան Իսրայելում: Այն ամենամշահակալից քաղաքն է աստվածաշնչյան պատմության մեջ: Այստեղ են գտնվում քրիստոնյաների, հրեաների և մահմեդականների ամենաարագան վայրերից մի քանիսը, որտեղ պարբերաբար այցելում են բազում հավատարիմ հավատացյալներ: Այն հաճախ ակնարկվում է որպես սուրբ քաղաք:

Մի ժամանակ, հայտնի լինելով որպես Սաղեմ (ՇՆ. ԺԳ.18, Սաղ. ՀՁ.2), Երուսաղեմը Հեբրուսացիների քաղաքն էր, մինչև որ Դավիթը գրավեց այն (Հես. Ժ.1, ԺԵ.8, Բ Թագ. Ե.6–7) և դարձրեց իր մայրաքաղաքը: Մինչ այդ, այն առավելապես ծառայել էր որպես լեռնային ամրոց, որն 800 մետր բարձր էր ծովի մակարդակից: Բոլոր կողմերից, բացի հյուսիսայինից, այն շրջապատված է խոր հովիտներով:

Դավիթ թագավորը Երուսաղեմում իր թագավորության ժամանակ ապրում էր փայտե պալատում: Սակայն Սողոմոնի թագավորության ժամանակ մարդիկ շատ բաներ արեցին քաղաքը գեղեցկացնելու համար, այդ թվում՝ կառուցեցին թագավորական պալատը և տաճարը:

Իսրայելի և Հուդայի թագավորությունների բաժանվելուց հետո, Երուսաղեմը մնաց Հուդայի մայրաքաղաքը: Նրա վրա հաճախ հարձակվում էին զավթիչ զորքերը (Գ Թագ. ԺԳ.25, Գ Թագ. ԺԳ.13, ԺՁ.5, 18–19, ԻԳ.10, 25): Եզեկիայի օրոք Երուսաղեմը դարձավ կրոնական պաշտամունքի կենտրոն, սակայն մասամբ ավերվեց Ք.ծ.ա. 320, 168 և 65թթ.: Հերովդեսը վերակառգեց պատերը և տաճարը,

ասակայն Ք.ձ.հ. 70թ. Հռոմեացիներն ամբողջովին ավերեցին այն:

Մեկքիստեղեկը Սաղեմի բազավորն էր՝ **ԾՃ. ԺԳ.18** (Եբր. Է.2): Եսայիան Երուսաղեմին կոչ արեց հազմել իր փառավոր հանդերձները՝ **Ես. ԾԲ.1**: Տիրոջ խոսքը պիտի գար Երուսաղեմից՝ **Միքիա Գ.2**: Քրիստոսը ողբաց Երուսաղեմի ճակատագրի համար՝ **Մատ. ԻԳ.37-39** (Ղուկ. ԺԳ.34): Երուսաղեմը կենդանի Աստծո քաղաքն է՝ **Եբր. ԺԲ.22**: Երուսաղեմը պիտի կործանվեր, եթե չապաշխարեր՝ **1 Նեփի 1.4, 13, 18** (2 Նեփի 1.4, Հել. 8.20): Երուսաղեմը, քանդվելուց հետո, կրկին պիտի բնակեցվի՝ **3 Նեփի 20.46**: Երուսաղեմը պիտի կրկին կառուցվի՝ **Եթեր 13.5**: Քրիստոսը զգուշացրել է Վերջին Օրերի Սրբերին, ինչպես որ զգուշացրել է Երուսաղեմի ժողովրդին՝ **ՎևոՒ 5.20**: Նրանք, ովքեր Հնուդայից են, թող փախչեն Երուսաղեմ՝ **ՎևոՒ 133.13**: Տերը կխոսի Երուսաղեմից՝ **ՎևոՒ 133.21**:

ԵՐՈՒՍԱՂԵՄ՝ ՆՈՐ: *Տե՛ս Նոր* Երուսաղեմ. Սիոն

ԵՓԵՍԱՑԻՍՄ ԹՈՒՂԹ ԱՈՒ: *Տե՛ս նաև* Պողոս. Պողոսի Թղթերը

Նոր Կտակարանում՝ թուրք, որը գրվել էր Պողոս Առաքյալի կողմից Եփեսոսի Սրբերին: Թուրքը մեծ կարևորություն ունի, որովհետև պարունակում է Պողոսի ուսմունքները Քրիստոսի Եկեղեցու վերաբերյալ:

Ա գլուխը ներառում է ավանդական ողջույններ: Բ և Գ գլուխները բացատրում են այն փոփոխությունները, որոնք կատարվում են մարդկանց հետ, երբ նրանք դառնում են Եկեղեցու անդամ,՝ նրանք համաքաղաքացի են դառնում Սրբերին՝ մեկ Եկեղեցում միավորված հեթանոսներին ու հրեաներին: Գ-Ձ գլուխները բացատրում են Առաքյալների և մարգարեների դերը, միասնության անհրաժեշտությունը և Աստծո ողջ սպառազինությունը հազմելու անհրաժեշտությունը:

ԵՓԵՄ. *Տե՛ս նաև* Իսրայել. Հովսեփ՝ Հակոբի որդի. Մանասե. Մորմոնի Գիրքը

Հին Կտակարանում՝ Հովսեփի և Ասանթի երկրորդ որդին (ԾՃ. ԽԱ.50-52, ԽՁ.20):

Ավանդական սովորությանը հակառակ, Եփրեմն ստացավ անդրամիկության օրհնությունը Մանասեի փոխարեն, որն ավագ որդին էր (ԾՃ. ԽԸ.17-20): Եփրեմը դարձավ Եփրեմի ցեղի հայրը:

Եփրեմի ցեղը. Եփրեմին տրվեց անդրամիկությունն Իսրայելի մեջ (Ա Մն. Ե.1-2, Երեմ. ԼԱ.9): Վերջին օրերին նրանց արտոնությունն ու պատասխանատվությունն է՝ կրել քահանայությունը, վերականգնված ավետարանի պատգամը հասցնել աշխարհին և դրոշ բարձրացնել՝ ցրված Իսրայելից հավաքելու համար (Ես. ԺԱ.12-13, 2 Նեփի 21.12-13): Եփրեմի զավակները փառքով կպսակեն հյուսիսի երկրներից նրանց, ովքեր կվերադառնան վերջին օրերին (ՎևոՒ 133.26-34):

Եփրեմի կամ Հովսեփի փայտը. Հիշատակարան Եփրեմի ցեղի մի խմբի, որը Երուսաղեմից առաջնորդվել էր Ամերիկա՝ մոտավորապես Ք.ձ.ա. 600 թվականին: Այս խմբի հիշատակարանն անվանում են Եփրեմի կամ Հովսեփի փայտ, կամ Մորմոնի Գիրք: Հնուդայի փայտի (Աստվածաշնչի) հետ միասին այն միասնական վկայություն է պարունակում Տեր Հիսուս Քրիստոսի մասին, նրա հարության մասին, և Իսրայելի տան այս երկու բաժինների մեջ կատարած նրա աստվածային աշխատանքի մասին:

Եփրեմի մի ճյուղ կկտրվի և կգրի ևս մեկ վկայություն Քրիստոսի մասին՝ **ՋՄԹ՝ ԾՃ. 50.24-26, 30-31**: Հնուդայի փայտը և Հովսեփի փայտը մեկ կդառնան՝ **Եգեկ. ԼԷ.15-19**: Հնուդայի և Հովսեփի գրվածները պիտի սերտաճեն՝ **2 Նեփի 3.12**: Տերը խոսում է շատ ազգերի հետ՝ **2 Նեփի 29**: Եփրեմի փայտի հիշատակարանի բանալիները հանձնվել էին Մորմոնին՝ **ՎևոՒ 27.5**:

ՉԱՔՈՒՂՈՆ: *Տե՛ս նաև* Իսրայել. Հակոբ՝ Իսահակի որդի

Հին Կտակարանում՝ Հակոբի և Լիայի որդին (ԾՃ. Լ.19-20):

Չաբուղոնի ցեղը. Հակոբն օրհնեց Չաբուղոնի ցեղը (ԾՃ. ԽԹ.13): Իսրայելի բշնամիների դեմ կռվելիս Չաբուղոնի ցեղը միացավ Դեբորայից և Բարակից (Դատ. Դ.4-6, 10): Միդիանացիների դեմ կռվե-

լիս նույնպես նրանք միացան Գեղեոնին (Դատ. 2.33-35):

ՉԱՆԱԶՆԱԵԼՈՒ ՊԱՐԳԵՎ: *Տե՛ս նաև* Հոգու պարզևները

Հասկանալ կամ իմանալ ինչ-որ բան Հոգու գործըյամբ: Ձանազանելու պարզևը Հոգու պարզևներից մեկն է: Այն ընդգրկում է մարդկանց իսկական բնութագիրն ըմբռնելը և հոգևոր դրսևորումների աղբյուրն ու իմաստը հասկանալը:

Մարդը տեսնում է աչքի առաջինը, բայց Տերը սրտին է նայում՝ **Ա Թագ.** ԺԶ.7: Վա՛յ նրանց, որ չարին ասում են բարի՝ **Ես.** Ե.20 (2 Նեփի 15.20): Աստծո Հոգու բաները հոգով են զանազանվում՝ **Ա Կոր.** Բ.14: Ոմանց տրված է հոգիները զանազանելու պարզևը՝ **Ա Կոր.** ԺԲ.10: Ամնունը կարողանում էր կռահել նրա մտքերը՝ **Ալմա** 18.18, 32: Մեղմ ձայնը ներթափանցեց նրանց մեջ, ովքեր լսում էին՝ **3 Նեփի** 11.3: Որպեսզի չխաբվեք, հետամուտ եղեք լավագույն պարզևների՝ **ՎևՈՒ** 46.8, 23: Եկեղեցու ղեկավարներին տրված է Հոգու պարզևները զանազանելու գորությունը՝ **ՎևՈՒ** 46.27: Այն մարմինը, որը լցված է լույսով, ըմբռնում է բոլոր բաները՝ **ՎևՈՒ** 88.67: Մովսեսը տեսավ երկիրը՝ զանազանելով Աստծո Հոգով՝ **Մովսես** 1.27:

ՉԱՏԻԿ: *Տե՛ս նաև* Աստծո Գառ. Հարություն. Հիսուս Քրիստոս. Վերջին Ընթրիք

Ձատկի տոնը հաստատվել է Իսրայելի զավակներին օգնելու համար, որպեսզի հիշեն, որ կործանիչ հրեշտակն անցավ իրենց տների վրայով և իրենց ազատեց Եգիպտացիներից (Ել. ԺԲ.21-28, ԺԳ.14-15): Անարատ գառները, որոնց արյունն օգտագործվել էր, որպես նշան՝ հնում Իսրայելին փրկելու համար, խորհրդանշում են Հիսուս Քրիստոսին՝ Աստծո Գառին, որի զոհաբերությունը փրկագնեց ողջ մարդկությանը:

Սա է Ձատկի արարողությունը՝ **Ել.** ԺԲ.43: Հիսուսը և նրա Առաքյալները տոնեցին Ձատիկը Վերջին Ընթրիքի ժամանակ՝ **Մատ.** ԻԶ.17-29 (Մար. ԺԳ.12-25): Ահա Աստծո Գառը, որը վեր է առնում աշխարհի մեղքը՝ **Հով.** Ա.29, 36:

Քրիստոսը՝ մեր Ձատիկը, զոհաբերվել է մեզ համար՝ **Ա Կոր.** Ե.7: Մենք փրկագնեվեցինք Քրիստոսի՝ անարատ գառի արյամբ՝ **Ա Պետ.** Ա.18-19: Հավատացեք Աստծո Գառին, որը վերցնում է աշխարհի մեղքերը՝ **Ալմա** 7.14: Սրբերը, ովքեր ապրում են Իմաստության Խոսքով, կպաշտպանվեն, ինչպես Իսրայելի զավակները պաշտպանվեցին՝ **ՎևՈՒ** 89.21: Գառը մորթված է աշխարհի հիմնադրումից եեք՝ **Մովսես** 7.47:

ՉԱՐԱՀԵՄԼԱ: *Տե՛ս նաև* Ամնոն. Մուղեկ

Մորմոնի Գրքում Չարահեմլա անունը վերաբերում է՝ (1) մի մարդու, որը ղեկավարում էր Մուղեկի գաղթականներին, (2) քաղաքի, որը կոչվել էր նրա անունով, (3) Չարահեմլա հողին, կամ (4) այն մարդկանց, ովքեր հետևում էին նրան:

Չարահեմլան ցնծում էր, որ Տերն ուղարկել է Նեփիացիներին՝ **Օմնի** 1.14: Չարահեմլան տվեց հայրերի տոհմաբանությունը՝ **Օմնի** 1.18: Ամնոնը Չարահեմլայի հետնորդ էր՝ **Մոսիա** 7.3, 13: Եկեղեցին հաստատվեց Չարահեմլա քաղաքում՝ **Ալմա** 5.2: Արդարների շնորհիվ՝ ամբարիշտները փրկվեցին Չարահեմլայում՝ **Հել.** 13.12: Չարահեմլա քաղաքն այրվեց Քրիստոսի մահվան ժամանակ՝ **3 Նեփի** 8.8, 24:

ՉԱՔԱՐԻԱ

Հին Կտակարանի մարգարե, որը մարգարեացել է Ք.ծ.ա. մոտ 520թ.: Նա ապրել է միևնույն ժամանակաշրջանում, ինչ Անգե մարգարեն (Եզր. Ե.1, 2.14):

Չաքարիայի գիրքը. Գիրքը նշանավոր է Քրիստոսի մահկանացու ծառայության և նրա երկրորդ գալստի մասին իր մարգարեություններով (Չաք. Թ.9, ԺԱ.12-13, ԺԲ.10, ԺԳ.6): Ա-Ը գլուխները պարունակում են մի շարք տեսիլքներ Աստծո ժողովրդի ապագայի վերաբերյալ: Թ-ԺԳ գլուխները պարունակում են տեսիլքներ Մեսիայի, վերջին օրերի, Իսրայելի հավաքման, վերջին մեծ պատերազմի և Երկրորդ Գալստի վերաբերյալ:

ՉԱՔԱՐԻԱ: *Տե՛ս նաև* Եղիսաբեթ. Հովհաննես Մկրտիչ

Նոր Կտակարանում՝ Հովհաննես Մկրտչի հայրը: Չաքարիան կրում էր քահանա-

յի պաշտոնը և պաշտոնավարում էր տաճարում:

Գաբրիել հրեշտակը Ջաբարիային և նրա կնոջը՝ Եղիսաբեթին, որդի խոստացավ՝ **Ղուկ.** 1.5–25 (ՎևոՒ 277): Նրա լեզուն արձակվեց՝ **Ղուկ.** 1.59–79: Ջաբարիան սպանվեց տաճարի և գոհասեղանի միջև՝ **Մատ.** ԻԳ.35 (Ղուկ. ԺԱ.51):

ՉԳԱԼ: *Տե՛ս նաև* Սուրբ Հոգի

Հոգու դրդումները զգալով ընկալել:

Դուք անզգայացած էիք, որպեսզի կարողանայիք զգալ նրա խոսքերը՝ **1 Նեփի** 17.45: Երբ դուք զգաք այդ ուռչելու շարժումները, դուք կսկսեք ասել, որ այն լավ սերմ է՝ **Ալմա** 32.28: Դու պիտի զգաս, որ դեռ միշտ է՝ **ՎևոՒ** 9.8: Բոլոր մարդիկ, ովքեր կմտնեն Տիրոջ տուն, կարողանան զգալ քո գործությունը՝ **ՎևոՒ** 109.13:

ՉԳԱՅԱԿԱՆ, ՉԳԱՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ: *Տե՛ս նաև* Մաքրաբարություն. Ծնություն. Պոռնկություն. Սեռական Անբարոյականություն. Ցանկանալ

Ցանկասիրություն կամ տենչանք դեպի անիրավ ֆիզիկական հաճույքը, հատկապես դեպի սեռական անբարոյականությունը:

Նրա տիրոջ կինն աչք զցեց Հովսեփի վրա՝ **Ծն. ԼԺ.7:** Ով որ մի կնկա վրա մտիկ տա նրան ցանկանալով, արդեն շնություն է անում՝ **Մատ.** Ե.28 (3 Նեփի 12.28): Հեռու մնացեք մարմնավոր ցանկություններից, որ կռվում են հոգու դեմ՝ **Ա Պետ.** Բ.11: Մարմնի ցանկությունը և աչքերի ցանկությունը Հորից չեն՝ **Ա Հովի.** Բ.16: Այլևս մի գնա քո աչքերի տենչանքների ետևից՝ **Ալմա** 39.9: Սուրբ օրենքներն օրինականցելով՝ մարդը դարձավ զգայական՝ **ՎևոՒ** 20.20: Եթե մարդիկ շնություն անեն իրենց սրտում, նրանք չեն ունենա Հոգին՝ **ՎևոՒ** 63.16: Վերջ տվեք ձեր բոլոր հեշտասեր ցանկություններին՝ **ՎևոՒ** 88.121: Մարդիկ սկսեցին լինել մարմնական, զգայական և դիվական՝ **Մովսես** 5.13 (Մոսիա 16.3, Մովսես 6.49):

ՉԳՈՒՇԱՅՆԵԼ, ՉԳՈՒՇԱՅՈՒՄ: *Տե՛ս նաև* Պահապաններ

Տեղեկություն հաղորդել կամ նախազգու-

շացնել: Մարգարեները, դեկավարները և ծնողները զգուշացնում և ուսուցանում են՝ հնազանդ լինել Տիրոջը և նրա ուսմունքներին:

Հակոբը Նեփիի ժողովրդին զգուշացրեց ամեն տեսակի մեղքերի դեմ՝ **Հակոբ** 3.12: Նախազգուշացնող ձայնը գնում է բոլոր ժողովուրդներին՝ **ՎևոՒ** 1.4: Թող ձեր քարոզը լինի նախազգուշացնող ձայնը՝ **ՎևոՒ** 38.41: Սա զգուշացման օր է՝ **ՎևոՒ** 63.58: Ամեն մարդ, ով զգուշացվել է, պետք է զգուշացնի իր մերձավորին՝ **ՎևոՒ** 88.81: Ես զգուշացրել եմ ձեզ, և նախազգուշացնում եմ, տալով ձեզ այս իմաստության խոսքը՝ **ՎևոՒ** 89.4:

ՉԵՆԻՑ

Մորմոնի Գրքում՝ մի մարդ, որն առաջնորդում էր այն խումբը, որը վերադարձավ Նեփիի երկիրը. նա դարձավ նրանց թագավորը և արդարությամբ ղեկավարեց նրանց (Մոսիա 9–10):

ՉԵՆՈՍ

Իսրայելի մարգարե Հին Կտակարանի ժամանակներում, որի մարգարեությունները Քրիստոսի առաքելության վերաբերյալ գտնվում են միայն Մորմոնի Գրքում:

Մարգարեացել է Քրիստոսի թաղման և երեք օրվա խավարի մասին՝ **1 Նեփի** 19.10, 12: Կանխազգուշակել է Իսրայելի հավաքումը՝ **1 Նեփի** 19.16: Հակոբը մեջ բերեց Ջենոսի առակն ընտանի և վայրի ձիթենիների մասին՝ **Հակոբ** 5: Հակոբը մեկնաբանեց Ջենոսի այլաբանությունը՝ **Հակոբ** 6.1–10: Ուսուցանել է աղոթքի և երկրպագության վերաբերյալ՝ **Ալմա** 33.3–11: Ուսուցանել է, որ փրկագնումը գալիս է Որդու միջոցով՝ **Ալմա** 34.7: Սպանվել է իր համարձակ վկայության համար՝ **Հել.** 8.19: Խոսել է Լամանացիների վերականգնման վերաբերյալ՝ **Հել.** 15.11: Վկայել է Քրիստոսի մահվան ժամանակ կործանումների մասին՝ **3 Նեփի** 10.15–16:

ՉԵՆՈՔ

Իսրայելի մարգարե Հին Կտակարանի ժամանակներում, որի մասին նշվում է միայն Մորմոնի Գրքում:

Մարգարեացել է Քրիստոսի մահվան մասին՝ **1 Նեփի** 19.10: Խոսել է Աստծո Որդու մասին՝ **Ալմա** 33.15 (Ալմա 34.7): Նահատակվեց ճշմարտության համար՝ **Ալմա** 33.17: Մարգարեացել է Մեսիայի գալստի վերաբերյալ՝ **Հել.** 8.20:

ՉԻՋՐՈՄ

Մորմոնի Գրքում՝ Ամմոնիա քաղաքի օրինագետներից մեկը: Ալման և Ամուղեկը Հոգու օգնությամբ զգացին, որ Ջիզրոմը ստում էր: Այնուհետև նա դարձի եկավ դեպի Քրիստոսի ավետարանը (Ալմա 11.21–46, 15.1–12):

ՉՈՂԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ: *Տե՛ս նաև*

- Արյուն. Կոտրված սիրտ.
- Հաղորդություն. Հիսուս Քրիստոս.
- Քավել, Քավություն

Հնում *գոհաբերությունը* նշանակում էր մի բան կամ մեկին սուրբ դարձնել: Ներկայումս այն սկսել է գործածվել ինչ-որ բանից հրաժարվելու կամ Տիրոջ և նրա բազավորության համար աշխարհիկ բաներից զրկվելու իմաստով: Տիրոջ Եկեղեցու անդամները պետք է պատրաստակամ լինեն՝ գոհաբերելու ամեն բան Տիրոջ համար: Ջոզեֆ Սմիթն ուսուցանել է, որ «կրոնը, որը չի պահանջում գոհաբերել ամեն բան, երբեք բավական զորություն չի ունենա զարգացնելու այն հավատքը, որն անհրաժեշտ է կյանքի և փրկության համար»: Հավերժության տեսանկյունից՝ գոհաբերությամբ ձեռք բերված օրինություններն ավելի մեծ են, քան ցանկացած բան, որից հրաժարվում ենք:

Այն բանից հետո, երբ Ադամը և Եվան դուրս էին գցվել Եդեմի պարտեզից, Տերը նրանց տվեց գոհաբերության օրենքը: Այդ օրենքը ներառում էր անասունների արու առաջնեկներին մատուցում անելը: Այդ գոհաբերությունը խորհրդանշում էր այն գոհաբերությունը, որը պիտի արվեր Աստծո Միածին Որդու կողմից (Մովսես 5.4–8): Այդ սովորությունը շարունակվեց մինչև Հիսուս Քրիստոսի մահը, որը վերջ դրեց կենդանիների գոհաբերությանը, որպես ավետարանի արարողություն (Ալմա 34.13–14): Այսօր՝ Եկեղեցում, անդամները ճաշակում են հաղորդության հացը և ջուրը՝ ի հիշատակ Հիսուս Քրիստոսի գոհաբերության: Այսօր Քրիստոսի

Եկեղեցու անդամներին խնդրվում է նաև, որպես գոհաբերություն՝ մատուցել կոտրված սիրտ և փշրված հոգի (3 Նեփի 9.19–22): Դա նշանակում է, որ նրանք խոնարհ են, ապաշխարող և պատրաստակամ՝ հնազանդվելու Աստծո պատվիրաններին:

Աբրահամը կապեց Իսահակին՝ իր որդուն, և նրան դրեց գոհասեղանի վրա՝ **Ծճ.** ԻԲ.1–18 (Հակոբ 4.5): Մատուցիր քո ողջակեզները՝ **Ել.** Ի.24: Չոհաբերվող անասունները պետք է անարատ լինեն՝ **Բ Օր.** ԺԵ.19–21: Հնազանդությունը գոհաբերությունից լավ է՝ **Ա Թագ.** ԺԵ.22: Միրելի ավելի ին է, քան ամեն ողջակեզներ և գոհեր՝ **Մար.** ԺԲ.32–33: Մենք սրբագործված ենք Քրիստոսի գոհաբերության միջոցով՝ **Եբք.** Ժ.10–14: Քրիստոսն իրեն գոհ է մատուցում մեղքի համար՝ **2 Նեփի** 2.6–7: Այն մեծ և վերջին գոհաբերությունը լինելու է Աստծո Որդին, այո՛, անասնման և հավերժական՝ **Ալմա** 34.8–14: Այլևս ողջակեզներ մի մատուցեք. Աստծուն գոհաբերեք կոտրված սիրտ և փշրված հոգի՝ **3 Նեփի** 9.19–20 (Մաղ. ԾԱ.16–17, Վևու 59.8): Այսօր է գոհաբերության օրը՝ **Վևու** 64.23 (Վևու 97.12): Բոլորը, ովքեր կամենում են պահպանել իրենց ուխտերը գոհաբերությամբ, ընդունելի են Տիրոջ համար՝ **Վևու** 97.8: Ջոզեֆ Ֆ. Սմիթը տեսավ արդարների հոգիները, որոնք Փրկչի գոհաբերության նմանությամբ գոհեր էին մատուցել՝ **Վևու** 138.13: Փրկագնումը եկավ խաչի վրա Աստծո Որդու գոհաբերությամբ՝ **Վևու** 138.35:

ՉՈՂԱՄԵՂԱՆ: *Տե՛ս նաև*

Չոհաբերություն

Չոհաբերությունների, մատուցումների և երկրպագության համար օգտագործվող շինություն:

Նոյը մի գոհասեղան կառուցեց Տիրոջ համար և ողջակեզներ մատուցեց՝ **Ծճ.** Ը.20: Աբրամը գոհասեղան շինեց Տիրոջ համար՝ **Ծճ.** ԺԲ.7–8: Աբրահամն իր որդուն՝ Իսահակին, կապեց գոհասեղանին՝ **Ծճ.** ԻԲ.9 (Ծճ. ԻԲ.1–13): Հակոբը մի գոհասեղան շինեց այնտեղ և այդ տեղի անունը կոչեց Էլ-Բեթել՝ **Ծճ.** ԼԵ.6–7: Եղիան մի գոհասեղան շինեց և մարտակոչ արեց Բահաղի քահանաներին՝ **Գ Թագ.** ԺԸ.17–40: Եթե քո ընձամ բերում ես գոհասեղանի մոտ, նախ հաշտվիր քո եղբոր հետ՝ **Մատ.**

Ե.23–24: Չոհասեղանի ներքևում տեսա նրանց հոգիները, ովքեր սպանվել էին Աստծո խոսքի համար՝ **Հայտ.** 2.9 (ՎևՈՒ 135.7): Լեքին շինեց քարե զոհասեղան և զոհություն հայտնեց Տիրոջը՝ **1 Նեփի** 2.7: Եղկենայի զոհասեղանի վրա Աբրահամը փրկվեց մահից՝ **Աբր.** 1.8–20:

ՉՈՐԱԲԱԲԵԼ

Հին Կտակարանում, երբ Կյուրտսը թույլատրեց հրեաներին վերադառնալ Պաղեստին, Չորաբաբելը նշանակվեց կառավարիչ կամ Հուդայի թագավորական տան ներկայացուցիչ: Նրա պարսկական անունը Սասրասար էր (Եզր. Ա.8): Նա ներգրավվեց Երուսաղեմի տաճարը կրկին կառուցելու գործում (Եզր. Գ.2, 8, Ե.2):

ՉՈՐԱՄ, ՉՈՐԱՄՄԱՅԻՆԵՐ

Մորմոնի Գրքում՝ Լաբանի ծառան, որը միացավ Նեփիին և Լեքիին, որպեսզի գա խոստումի երկիր (1 Նեփի 4.31–38): Չորամի հավատարմության շնորհիվ, Լեքին օրհնեց նրան իր որդիների հետ միասին (2 Նեփի 1.30–32): Նրա հետնորդները հայտնի էին որպես Չորամացիներ (Հակոբ 1.13):

ՉՈՐԱՑ ՏԵՐ: *Տե՛ս նաև* Հիսուս Թրիստոս

Հիսուս Թրիստոսի անուններից մեկը: Նա թագավորում է երկնքի և երկրի գործերի վրա, և արդարներին առաջնորդում է չարի դեմ (ՎևՈՒ 29.9, 121.23):

Չորաց Տերը փառաց Թագավորն է՝ **Սաղ.** ԻԳ.10: Իսրայելի Աստվածն է Չորաց Տերը՝ **1 Նեփի** 20.2: Իմ Հոգին միշտ չի տքնի մարդկանց հետ, ասում է Չորաց Տերը՝ **ՎևՈՒ** 1.33:

ՉՈՐՈՒԹՅՈՒՆ: *Տե՛ս նաև* Իշխանություն. Քահանայություն

Ինչ-որ բան անելու կարողություն: Ինչ-որ մեկի կամ ինչ-որ բանի վրա գործություն ունենալ նշանակում է կարողանալ կառավարել կամ հրամայել նրան: Սուրբ գրքերում գործությունը հաճախ կապված է Աստծո գործության կամ երկնային գործության հետ: Հաճախ այն սերտորեն կապված է քահանայության իշխանության հետ, որն Աստծո անունից գործելու թույլատվություն է կամ իրավունք:

Սրա համար քեզ բարձրացրեցի, որ քեզ անով ցույց տամ իմ գործությունը՝ **Ել.** Թ.16: Աստված իմ ուժն է և գործությունը՝ **Բ Թագ.** ԻԲ.33: Բարությունը մի խնայիր, երբոր ձեռքումդ գործություն կա անելու՝ **Առաջ.** Գ.27: Արդարև, ես լցված եմ գործությունով՝ Տիրոջ հոգով՝ **Միքիա** Գ.8: Ամեն իշխանություն ինձ է տրվել երկնքում և երկրում՝ **Մատ.** ԻԸ.18: Նրանք զարմանում էին նրա վարդապետության վրա. որ նրա խոսքն իշխանությանը էր՝ **Ղուկ.** Գ.32: Մնացե՛ք քաղաքում, մինչև որ վերևից գործություն հագնե՛ք՝ **Ղուկ.** ԻԳ.49: Որոնք որ նրան ընդունեցին, նրանց իշխանություն տվեց Աստծո որդիներ լինելու՝ **Հովհ.** Ա.12 (ՎևՈՒ 11.30): Դուք գործություն կատանաք, երբ որ Սուրբ Հոգին իջնի ձեր վրա՝ **Գոր.** Ա.8: Չկա իշխանություն, որ Աստծուց չէ՝ **Հռովմ.** ԺԳ.1: Աստծո գործությանը պահպանվում էք՝ հավատքով դեպի փրկություն՝ **Ա Պետ.** Ա.3–5: Ես լցված եմ Աստծո գործությամբ՝ **1 Նեփի** 17.48: Ինձ հայտնի է դարձվել Սուրբ Հոգու գործությամբ՝ **Հակոբ** 7.12: Մարդը կարող է Աստծո կողմից իրեն տրված մեծ գործություն ունենալ՝ **Մոսիա** 8.16: Նրանք ուսուցանում էին Աստծո գործությամբ և իշխանությամբ՝ **Ալմա** 17.2–3: Նեփին ծառայում էր գործությամբ և մեծ իշխանությամբ՝ **3 Նեփի** 7.15–20 (3 Նեփի 11.19–22): Թեև մարդ կարող է ունենալ գորավոր գործեր անելու գործություն, այդուհանդերձ, եթե նա պարծենում է իր սեփական ուժով, նա պետք է ընկնի՝ **ՎևՈՒ** 3.4: Ամեն մարդու մեջ բարիք գործելու գործություն կա՝ **ՎևՈՒ** 58.27–28: Մեքիսեղեկյան Քահանայության արարողություններում բացահայտվում է աստվածայնության գործությունը՝ **ՎևՈՒ** 84.19–22: Քահանայության իրավունքներն անբաժանորեն կապված են երկնքի գործությունների հետ՝ **ՎևՈՒ** 121.34–46: Ես կառաջնորդեմ քեզ իմ ձեռքով, և իմ գործությունը կլինի քեզ վրա՝ **Աբր.** 1.18:

ԷԼՈՂՀԻՄ: *Տե՛ս* Աստված, Աստվածագլուխ. Հայր Երկնային

ԷՄՄԱՆՈՒՅԸ: *Տե՛ս նաև* Հիսուս Թրիստոս

Հիսուս Թրիստոսի անուններից մեկը: Այն սերվում է եբրայերեն բառերից և նշանակում է «Աստված մեզ հետ է»:

Էմմանուելն անուն-տիրոջն է, որը տրվել է որպես Աստծո ազատման նշան (Ես. Է.14): Եսայայի կողմից Էմմանուել բառի հիշատակումը Մատթեոսն առանձնապես նշում է, որպես մարգարեություն Հիսուսի մահկանացու ծննդի վերաբերյալ (Մատ. Ա.18–25): Այդ բառը հայտնվում է նաև վերջին օրերի սուրբ գրություններում (2 Նեփի 17.14, 2 Նեփի 18.8, ՎևոՒ 128.22):

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ:

ԹՅՈՒՆ: *Տես նաև* Եկեղեցու Ղեկավարներին Հաստատելը. Հիսուս Քրիստոսի Եկեղեցի

Այն սկզբունքը, որով Եկեղեցու անդամները հաստատում են Եկեղեցուն ծառայության կանչվածներին, ինչպես նաև մյուս Եկեղեցական որոշումները, որոնք պահանջում են նրանց աջակցությունը, որը սովորաբար, արտահայտվում է այ ձեռքի բարձրացմամբ:

Հիսուս Քրիստոսը կանգնած է իր Եկեղեցու գլխին: Սուրբ Հոգու ոգեշնչմամբ նա ղեկավարում է Եկեղեցու առաջնորդներին կարևոր գործերում և որոշումներում: Այնուամենայնիվ, Եկեղեցու բոլոր անդամներն իրավունք և արտոնություն ունեն՝ հաստատելու կամ չհաստատելու իրենց առաջնորդների որոշումները:

Բոլոր ժողովուրդը միաձայն պատասխան տվեցին՝ **Ել.** ԻԳ.3 (Թվ. ԻԷ.18–19): Առաքյալները և երեցները միաբան ժողովվեցին՝ **Գոր.** ԺԵ.25: Ոչ ոք չպետք է կարգվի որևէ պաշտոնի՝ առանց Եկեղեցու քվեարկության՝ **ՎևոՒ** 20.65–66: Բոլոր բաները պետք է արվեն ընդհանուր համաձայնությամբ՝ **ՎևոՒ** 26.2 (ՎևոՒ 28.13): Թող բոլոր բաներն արվեն ընդհանուր համաձայնությամբ՝ **ՎևոՒ** 104.21:

ԸՆԾԱ: *Տես նաև* Բարօրություն.

Ձոհաբերություն. Ծոմ, Ծոմապահություն. Ողորմություններ, Ողորմություններ տալը. Տասանորդ, Տասանորդել

Նվիրատվություն Տիրոջը: Հին Կտակարանում այս բառն օգտագործվում է ակնարկելով գոհաբերությունները կամ ողջակեզները: Այսօր Եկեղեցին ծոմի

նվիրատվությունները և այլ կամավոր նվիրատվությունները (այդ թվում՝ ժամանակը, շնորհները և ունեցվածքը) օգտագործում է աղքատներին օգնելու և այլ արժանավոր գործերի համար:

Դուք ինձ կողոպտում եք տասանորդով և ընծայով՝ **Մաղ.** Գ.8–10: Առաջ հաշտվիր քո եղբոր հետ, հետո քո ընծան մատուցիր՝ **Մատ.** Ե.23–24: Չեր հոգին ամբողջությամբ ընծա մատուցեք Քրիստոսին՝ **Օմնի** 1.26: Եթե մարդ ընծա է մատուցում, բայց ոչ անկեղծ միտումով, դա նրան ոչ մի օգուտ չի տալիս՝ **Մոր.** 7.6: Քահանայության բանալիները երբեք կրկին չեն վերցվի երկրի վրայից, մինչև որ Ղևկի որդիները, դարձյալ, արդարությամբ ընծա մատուցեն Տիրոջը՝ **ՎևոՒ** 13.1: Այդ օրը՝ Տիրոջ օրը, դու պետք է Բարձրյալին մատուցես քո ընծաներն ու քո հաղորդությունները՝ **ՎևոՒ** 59.12: Եկեք, որպես եկեղեցի և ժողովուրդ, արդարությամբ ընծա մատուցե՛ք Տիրոջը՝ **ՎևոՒ** 128.24:

ԸՆԿԵՐԱԿՑԵԼ: *Տես նաև* Միություն.

Սեր

Վերջին Օրերի Մրբերի համար ընկերակցել նշանակում է մերձավորներին բարեկամական հաղորդակցություն առաջարկել, ծառայել, բարձրացնել և ամրացնել:

Միրի մերձավորիդ քո անձի պես՝ **Ղև.** ԺԹ.18 (Մատ. ԺԹ.19, ՎևոՒ 59.6): Երբ որ դու դարձի գաս, եղբայրներիդ հաստատիր՝ **Ղուկ.** ԻԲ.32: Դուք իմ աշակերտներն եք, եթե սիրում եք միմյանց՝ **Հովհ.** ԺԳ.35: Արածեցրու իմ ոչխարները՝ **Հովհ.** ԻԱ.15–17: Նրանք աղաչեցին, որ մեզ վրա վերցնե՛ք Մրբերին հաղորդակցություն պաշտոնը՝ **Բ Կոր.** Ը.1–5: Մեր հաղորդությունը Հոր հետ և նրա Որդու հետ է՝ **Ա Հովհ.** Ա.3: Նեփիացիներն ու Լամանացիներն ընկերակցում էին միմյանց հետ՝ **Հել.** 6.3: Թող ամեն մարդ զնահատի իր եղբորը, ինչպես ինքն իրեն՝ **ՎևոՒ** 38.24–25: Եթե դուք մեկ չեք, դուք իմը չեք՝ **ՎևոՒ** 38.27: Ես ընդունում եմ քեզ ընկերակցության՝ լինելու քո բարեկամն ու եղբայրը՝ **ՎևոՒ** 88.133:

ԸՆԿՎՄՈՒՄ: *Տես* Սկրություն, Սկրտել – Ընկղմամբ մկրություն

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ.

Տե՛ս Տոհմաբանություն. Փրկություն մահացածների համար

ԸՆՏԱՆԻՔ: *Տե՛ս Անև Ամուսնություն, Ամուսնանալ. Երեխա, Երեխաներ. Հայր մահկանացու. Մայր*

Սուրբ գրքերում օգտագործվող իմաստով, ընտանիքը բաղկացած է ամուսնուց և կնոջից, երեխաներից, իսկ երբեմն՝ այլ ազգականներից, որոնք ապրում են միևնույն տանը կամ ընտանեկան մեկ ղեկավարի ներքո: Ընտանիք կարող է լինել անս միայնակ ծնողը երեխաների հետ, ամուսինը և կինն առանց երեխաների, կամ մույնիսկ միայնակ ապրող մեկ անձնավորությունը:

Ընդհանուր սուրբ գրություններ. Քեզանով երկրի բոլոր ընտանիքները պիտի օրհնվեն՝ Ծճ. ԺԲ.3 (Ծճ. ԻԸ.14, Աբր. 2.11): Ես Աստված կլինեմ Իսրայելի բոլոր ընտանիքների համար՝ Երեմ. ԼԱ.1: Ամեն ընտանիք երկնքում և երկրի վրա անուն է առնում Հոր կողմից՝ Եփես. Գ.14-15: Ադամն ու Եվան բերեցին ողջ երկրագրնդի ընտանիքը՝ 2 Նեփի 2.20: Քո փառքը կլինի սերունդների շարունակությունը հավիտյան՝ ՎևոՒ 132.19: Ես կտամ նրան հավերժական կյանքերի պակեներ հավերժական աշխարհներում՝ ՎևոՒ 132.55: Չավակների կնքումը ծնողների հետ ժամանակների լրության մեծ աշխատանքի մի մասն է՝ ՎևոՒ 138.48: Աբու և Էզ ստեղծեցի ես նրանց, և ասացի նրանց. Պողաբեր եղեք և բազմացեք՝ Մովսես 2.27-28: Լավ չէ, որ մարդը մենակ լինի՝ Մովսես 3.18: Ադամը և Եվան տքնում էին միասին՝ Մովսես 5.1:

Ծնողների պարտականությունները. Աբրահամը կպատվիրի իր երեխաներին, և նրանք կպահեն Տիրոջ ճանապարհը՝ Ծճ. ԺԸ.17-19: Այս խոսքերը ջանասիրաբար ուսուցանիր քո երեխաներին՝ Բ Օր. 2.7 (Բ Օր. ԺԱ.19): Նա, ով սիրում է իր որդուն, իրատուն է նրան՝ Առակ. ԺԳ.24 (Առակ. ԻԳ.13): Կրթիր երեխային, թե ինչ ճանապարհով պիտի գնա՝ Առակ. ԻԲ.6: Ուրախությամբ ապրիր քո սիրելի կնոջ հետ՝ Ժող. Թ.9: Քո բոլոր զավակները Տիրոջ կողմից ուսուցանված կլինեն՝ Ես. ԾԴ.13 (3 Նեփի 22.13): Մեծացրեք

նրանց Տիրոջ ուսմունքով՝ Եփես. 2.1-4 (Ենովս 1.1): Եթե մեկն իրենների համար խնամք չտանի, նա հավատքից ուրացած է՝ Ա Տիմ. Ե.8: Նա հորդորեց նրանց սիրող ծնողի ողջ զգացումով՝ 1 Նեփի 8.37: Մեք խոսում ենք Քրիստոսի մասին, որ մեր զավակները կարողանան իմանալ, թե ինչ տալույրի նրանք կարող են ապավինել՝ 2 Նեփի 25.26: Նրանց ամուսիններն ու նրանց կանայք սիրում են իրենց երեխաներին՝ Հակոբ 3.7: Սովորեցրեք նրանց՝ սիրել մեկը մյուսին ու ծառայել մեկը մյուսին՝ Մոսիա 4.14-15: Դուք պետք է պաշտպանեք ձեր ընտանիքներն ընդհուպ մինչև արյունահեղություն՝ Ալմա 43.47: Աղոթեք ձեր ընտանիքներում, որպեսզի ձեր կանայք և ձեր զավակները կարողանան օրհնվել՝ 3 Նեփի 18.21: Ծնողները պետք է ուսուցանեն ավետարանն իրենց երեխաներին՝ ՎևոՒ 68.25: Ամեն տղամարդ պարտավոր է ապահովել իր ընտանիքը՝ ՎևոՒ 75.28: Բոլոր երեխաներն իրավունք ունեն աջակցվելու իրենց ծնողների կողմից՝ ՎևոՒ 83.4: Մեծացրեք ձեր երեխաներին լույսի և ճշմարտության մեջ՝ ՎևոՒ 93.40: Կարգի բեր քո սեփական տունը՝ ՎևոՒ 93.43-44, 50: Քահանայություն կրողներն ուրիշների վրա պետք է ազդեն միայն անկեղծ սիրով՝ ՎևոՒ 121.41: Ադամը և Եվան բոլոր բաները հայտնի դարձրեցին իրենց երեխաներին՝ Մովսես 5.12:

Երեխայի պարտականությունները. Պատվիր քո հորը և քո մորը՝ Ել. Ի.12: Լսիր, որդյակս, քո հոր խրատը՝ Առակ. Ա.8 (Առակ. ԺԳ.1, ԻԳ.22): Հիսուսը հնազանդ էր իր ծնողներին՝ Ղուկ. Բ.51: Հիսուսը կատարեց իր Հոր կամքը՝ Հովհ. 2.38 (3 Նեփի 27.13): Հնազանդ եղեք ձեր ծնողներին Տերով՝ Եփես. 2.1 (Կող. Գ.20): Եթե երեխաներն ապաշխարեն, դու պիտի մեկդի դնես քո զայրույթը՝ ՎևոՒ 98.45-48: Եվայի հավատարիմ դուստրերը պաշտում էին ճշմարիտ և կենդանի Աստծուն՝ ՎևոՒ 138.38-39:

Հավերժական ընտանիք. Վարդապետություն և Ուխտերը ներկայացնում է ամուսնական հարաբերությունների և ընտանիքի հավերժական բնույթը: Սելեստիալ ամուսնությունը և ընտանեկան միավորի շարունակությունն ամուսինների և կանանց

հնարավորություն է տալիս դառնալ աստվածներ (ՎևոՒ 132.15–20):

ԸՆՏՐԵԼ, ԸՆՏՐԵՑ, ԸՆՏՐՎԱԾ:

Տե՛ս նաև Ազատ, Ազատություն.

Կամքի ազատություն. Կանչ,

Աստծո կողմից Կանչված, Կոչում

Երբ Տերն ընտրում է մի անձի կամ խմբի, նա սովորաբար նաև կանչում է նրանց ծառայելու:

Ընտրեցեք այսօր ձեզ համար, թե ում եք ծառայելու՝ **Հես.** ԻԳ.15 (Ալմա 30.8, Մովսես 6.33): Ես թեզ փորձեցի մեղոթյան հալոցում՝ **Ես.** ԽԸ.10 (1 Նեփի 20.10): Ոչ թե դուք ինձ ընտրեցիք, այլ ես ձեզ ընտրեցի՝ **Հովհ.** ԺԵ.16: Այս աշխարհի հիմարներից Աստված ընտրեց, որ ամաչեցնի իմաստուններին՝ **Ա Կոր.** Ա.27: Նա մեզ ընտրել է աշխարհի հիմնադրումից առաջ՝ **Եփես.** Ա.4: Մենք ազատ ենք՝ ընտրելու ազատություն և հավերժական կյանք կամ գերություն և մահ՝ **2 Նեփի** 2.27: Ազնիվ ու մեծ մարդիկ ի սկզբանե ընտրվել էին՝ **ՎևոՒ** 138.55–56: Իսրայելն ընտրվել էր Աստծո կողմից՝ **Մովսես** 1.26: Աբրահամն ընտրվել էր նախքան իր ծնվելը՝ **Աբր.** 3.23:

ԸՆՏՐՅԱԼ: Տե՛ս նաև Կանչ, Աստծո կողմից կանչված, Կոչում

Սուրբ գրքերում *ընտրյալ* բառն ունի երկու իմաստ. (1) նրանք, ովքեր Աստծո կողմից ընտրվել են՝ հատուկ պատասխանատվություններ կրելու. (2) նրանք, ովքեր իրենց ողջ սրտով սիրում են Աստծուն և ապրում են նրան հանելի կյանքով: Նրանք, ովքեր ապրում են աշակերտի այդպիսի կյանքով, մի օր Տիրոջ կողմից կընտրվեն՝ լինելու նրա ընտրյալ զավակների թվում:

Նրանք, ովքեր Աստծո կողմից ընտրվել են հատուկ պատասխանատվություններ կրելու. Ես ուխտ դրեցի իմ ընտրյալի հետ՝ **Մադ.** 2Թ.3: Շատերն են կանչված, բայց քչերն են ընտրված՝ **Մատ.** ԻԲ.14 (Մատ. Ի.16, ՎևոՒ 95.5, 121.34, 40): Սրբերն ընտիր ազգ են՝ թագավորական քահանայություն՝ **Ա Պետ.** Բ.9: Քրիստոսն Աստծո Սիրելին և Ընտրյալն էր ի սկզբանե՝ **Մովսես** 4.2:

Նրանք, ովքեր ապրում են Աստծուն հանելի կյանքով. Եթե հնարավոր լինի, ընտրվածներին էլ կ'ընտրեցնեն՝ **Մատ.** ԻԳ.24:

Հովհաննեսն ուրախանում էր, որովհետև ընտրյալ տիկնոջ զավակները ճշմարիտ էին և հավատարիմ՝ **Բ Հովհ.** Ա: Քո մեղքերը ներված են քեզ, և դու մի ընտրյալ տիկին ես՝ **ՎևոՒ** 25.3: Իմ ընտրյալները լսում են իմ ձայնը և չեն կարծրացնում իրենց սրտերը՝ **ՎևոՒ** 29.7: Ծիշա այդպես կհավաքում ես իմ ընտրյալներին աշխարհի չորս կողմերից՝ **ՎևոՒ** 33.6: Սուրբ գրքեր պիտի տրվեն իմ ընտրյալների փրկության համար՝ **ՎևոՒ** 35.20–21: Նրանք, ովքեր մեծարում են իրենց քահանայության կոչումները, դառնում են Աստծո ընտրյալների՝ **ՎևոՒ** 84.33–34: Հնամուն ընտրյալների, մեղության օրերը պիտի կարճացվեն՝ **ԶՄ–Մ** 1.20:

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ. *Տե՛ս նաև* Կոչում և Ընտրություն. Ընտրել, Ընտրեց, Ընտրված. Կամքի ազատություն

Նախամահկանացու կյանքում, արժանավորության հիման վրա, Աստված ընտրել է նրանց, ովքեր կլինեն Աբրահամի սերունդն ու Իսրայելի տունը և կդառնան ուխտի ժողովուրդը (Բ Օր. ԼԲ.7–9, Աբր. 2.9–11): Այդ մարդկանց տրվում են հատուկ օրհնություններ և պարտակալություններ, որպեսզի նրանք կարողանան օրհնել աշխարհի ազգերին (Հովմ. ԺԱ.5–7, Ա Պետ. Ա.2, Ալմա 13.1–5, ՎևոՒ 84.99): Սակայն, նույնիսկ այդ ընտրյալները պետք է կանչվեն և ընտրվեն այս կյանքում, որպեսզի փրկություն ձեռք բերեն:

ԹԱԳ: *Տե՛ս* Պսալ

ԹԱԳԱՎՈՐԱՍԵՐՆԵՐ

Մորմոնի Գրքում՝ մի խումբ մարդիկ, ովքեր ցանկանում էին տապալել Նեփիալցիների կառավարությունը (Ալմա 51.1–8):

ԹԱԳԱՎՈՐԱՑ: *Տե՛ս նաև* Ժամանակագրություն

Չորս գիրք Հին Կտակարանում: Հայերեն Աստվածաշնչում Ա և Բ Թագավորաց գրքերը կոչվում են նաև Սամունելի Ա և Բ գրքեր, իսկ անգլերեն ՀԹՏ Աստվածաշնչի Ա և Բ Թագավորաց գրքերը, համապատասխանաբար, Գ և Դ Թագավորաց գրքերն են: Առաջին երկու գրքերում ընդգրկված է մոտ 130 տարվա պատմություն՝ Սամունելի ծննդից սկսած, գրեթե

մինչև Դավիթ թագավորի մահը: Երրորդ և չորրորդ գրքերում տրվում է Իսրայելի պատմությունը՝ Դավիթ թագավորի որդի Ադոնիայի ապստամբությունից սկսած (մոտ Ք.ծ.ա. 1015թ.) մինչև Հուդայի վերջնական գերությունը (մոտ Ք.ծ.ա. 586թ.): Դրանք պարունակում են հյուսիս-սայրին թագավորության (Իսրայելի տասը ցեղերի) ամբողջ պատմությունը, բաժանումից մինչև Ասորեստանցիների կողմից գերի վերցվելը և դեպի հյուսիսային երկրներ տանելը:

Ա Թագավորաց. Ա-Դ գլուխները նկարագրում են, որ Տեոն անիծեց և պատժեց Հեղիի ընտանիքը և Սամուելին կանչեց որպես քահանայապետ և դատավոր: Դ-Ջ գլուխները պատմում են, թե ինչպես ուխտի տապանակն ընկավ Փշտացիների ձեռքը: Է-Ը գլուխներն արձանագրում են Սամուելի զգուշացումները կեղծ աստվածներ և ամբարիշտ թագավոր ունենալու վերաբերյալ: Թ-ԺԵ գլուխները նկարագրում են Սավուդի թագադրությունը և որպես թագավոր նրա կառավարումը: ԺՋ-ԼԱ գլուխները պատմում են Դավիթի պատմությունը և նրա իշխանություն ստանալը՝ Սամուելն օժեց Դավիթին, որը սպանել էր Գողիաթին: Սավուդն ասում էր Դավիթին, սակայն Դավիթը հրաժարվեց սպանել Սավուդին, թեև դրա համար հնարավորություն ունեցավ:

Բ Թագավորաց. Այս գիրքը պարունակում է Դավիթի թագավորության մանրամասները, որպես Հուդայի և, ի վերջո, որպես ամբողջ Իսրայելի թագավոր: Ա-Դ գլուխները ցույց են տալիս երկարատև պայքարը Դավիթի հետևորդների և Սավուդի հետևորդների միջև, այն բանից հետո, երբ Դավիթը թագադրվեց Հուդայի կողմից: Ե-Ժ գլուխները ցույց են տալիս, որ Դավիթի հզորությունը տարածվում է շատ երկրներով մեկ: ԺԱ-ԻԱ գլուխները ցույց են տալիս Դավիթի հողակոր ուժի անկումը նրա մեղքերի և նաև սեփական ընտանիքում բարձրացած ապստամբության պատճառով: ԻԲ-ԻԴ գլուխները նկարագրում են Տիրոջ հետ հաշտվելու Դավիթի փորձերը:

Գ Թագավորաց. Ա գլուխը նկարագրում է Դավիթ թագավորի կյանքի վերջին օրերը: Բ-ԺԱ գլուխները հիշատակում են

Սողոմոնի կյանքը: ԺԲ-ԺՋ գլուխները պատմում են Սողոմոնի անմիջական հաջորդողների՝ Ռոբոլամի և Հերոբոլամի մասին: Հերոբոլամը դարձավ Իսրայելի թագավորության բաժանման պատճառը: Հիշատակվում են նաև մյուս թագավորները: ԺԷ-ԻԱ գլուխներում հիշատակվում են որոշ մասեր Եղիայի ծառայության մասին, երբ նա խրատում էր Աքաաբին՝ Իսրայելի թագավորին: ԻԲ գլուխը նկարագրում է պատերազմն Ասորիքի դեմ, որի ժամանակ Աքաաբը և Հովսափատը՝ Հուդայի թագավորը, միացնում են իրենց ուժերը: Միջիա մարգարեի մարգարեանում է ընդդեմ այդ թագավորների:

Դ Թագավորաց. Ա գլխից մինչև Բ.11-ը պարունակում է Եղիայի կյանքը, այդ թվում՝ Եղիայի երկինք բարձրանալը հրեղեն կաթոլ: Բ-Թ գլուխները պատմում են Եղիսեի հավատքի ծառայության և մեծ գորության մասին: Ժ գլուխը պատմում է Հեու թագավորի մասին, և թե ինչպես նա կործանեց Աքաաբի տունը և Բահալի քահանաներին: ԺԱ-ԺԳ գլուխները պատմում են Հովասի արդար թագավորության մասին և Եղիսեի մահվան մասին: ԺԴ-ԺԷ գլուխները պատմում են զանազան թագավորների մասին, որոնք, հաճախ ամբարշտություններ, թագավորել են Իսրայելում և Հուդայում: ԺԸ գլուխը հիշատակում է, թե ինչպես ասորեստանցիները գերության տարան Իսրայելի տասը ցեղերին: ԺԹ-Ի գլուխները հիշատակում են Եզեկիայի՝ Հուդայի թագավորի արդարակյաց կյանքի, և Եսայիա մարգարեի մասին: ԻԱ-ԻԳ գլուխները պատմում են Մանասե և Հովսիա թագավորների մասին: Ավանդության համաձայն՝ Մանասեն պատասխանատու է եղել Եսայիայի նահատակության համար: Հովսիան արդարակյաց թագավոր էր, որը վերահաստատեց օրենքը հրեաների մեջ: ԻԴ-ԻԵ գլուխները պատմում են Բաբելոնյան գերության մասին:

ԹԱՆԿԱԳԻՆ ՄԱՐԳԱՐԻՏ: Տե՛ս նաև Կանոնական Գրքեր. Սմիթ Ջոզեֆ կրտսեր. Սուրբ գրքեր

Աստծո արքայությունը երկրի վրա նմանեցվում է «քանկազին մարգարիտի» (Մատ. ԺԳ.45-46):

Թանկազին Մարգարիտը նաև այն ան-

եր վերադառնալ Թեսաղոնիկե, սակայն չէր կարողանում (Ա Թես. Բ.18): Ուստի, նա ուղարկեց Տիմոթեոսին, որպեսզի քաջալերի նորադարձներին և նրանց մասին մի լուր բերի: Առաջին թուրքը Պողոսը գրեց, որպես իր երախտագիտության արտահայտություն, Տիմոթեոսի վերադարձից հետո:

Ա Թեսաղոնիկեցիս. Ա-Բ գլուխներում Պողոսի ողջույններն են Սրբերին և աղոթքը նրանց համար. Գ-Ե գլուխներում հրահանգ է տրվում հոգևոր աճի, սիրո, մաքրաբարոյության, ջանասիրության և Հիսուս Քրիստոսի երկրորդ գալստի մասին:

Բ Թեսաղոնիկեցիս. Ա գլուխն աղոթք է Սրբերի համար: Բ գլուխը խոսում է սպասվող ուրացության մասին: Գ գլուխը Պողոսի աղոթքն է ավետարանի գործի հաղթանակի համար:

ԹԵՐԵՍՏՐԻԱԼ ՓԱՈՔ: *Տե՛ս նաև*

Փառքի աստիճաններ

Փառքի երեք աստիճաններից երկրորդը, որտեղ մարդիկ կբնակվեն վերջին դատաստանից հետո:

Պողոսը տեսավ թերեստրիալ փառքը՝ այն նմանեցրեց լուսնի փառքի հետ՝ **Ա Կոր.** ԺԵ.40-41: Ջոզեֆ Սմիթը և Միդնի Ռիֆդոնը տեսան թերեստրիալ փառքը՝ **ՎևուՒ** 76.71-80: Թերեստրիալի փառքը գերազանցում է թելեստիալի փառքը՝ **ՎևուՒ** 76.91: Նրանք, ովքեր չեն կարողանում մնալ թերեստրիալ արքայության օրենքում, չեն կարողանա մնալ թերեստրիալ փառքում՝ **ՎևուՒ** 88.23, 30, 38:

ԹԻԹԵՂՆԵՐ: *Տե՛ս նաև* Մորմոնի

Գիրքը. Ոսկե թիթեղներ

Հնում որոշ ժողովուրդներ իրենց պատմությունը և հիշատակարանները գրում էին մետաղյա թիթեղների վրա, ինչպես Մորմոնի Գրքի դեպքում: Լրացուցիչ տեղեկությունների համար, տես «Մորմոնի Գրքի մասին համառոտ բացատրություն» խորագիրը Մորմոնի Գրքի ներածական էջերում:

ԹԼՓԱՏՈՒԹՅՈՒՆ: *Տե՛ս նաև*

Աբրահամի ուխտը

Աբրահամի ուխտի նշան բոլոր Իսրայել-

լացիների համար Հին Կտակարանի տնտեսությունների ժամանակ (Ծն. ԺԷ.10-11, 23-27. ՋՍԹ, Ծն. ԺԷ.11): Թլփատությունը կատարվում էր տղա երեխաների և նաև մեծերի «անթլփատության մարմնից» կտրելով: Նրանք, ովքեր ընդունում էին այն, վայելում էին ուխտի արտոնությունները և ստանձնում էին դրա պատասխանատվությունները: Քրիստոսի առաքելությամբ՝ թլփատությունը՝ որպես ուխտի նշան, վերացվեց (Մոր. 8.8, ՎևուՒ 74.3-7):

ԹՇՆԱՄԱՆՔ: *Տե՛ս նաև* Նախանձ.

Մեր. Վրեժխնդրություն

Սուրբ գրքերում՝ թշնամություն, ոխ և ատելություն:

Ես թշնամություն կդնեմ քո և կնոջ միջև՝ **Ծն. Գ.15** (Մովսես 4.21): Մարմնի խորհուրդն Աստծո դեմ թշնամություն է՝ **Հռովմ. Ը.7:** Աշխարհի հետ բարեկամությունն Աստծո հետ թշնամություն է՝ **Հակ. Դ.4:** Այդ օրը թշնամանքը կվերանա իմ երեսի առաջից՝ **ՎևուՒ** 101.26:

ԹՈՎՄԱՍ

Նոր Կտակարանում՝ սկզբնական Տասներկու Առաքյալներից մեկը, որն ընտրվել էր Փրկչի կողմից իր մահկանացու ծառայության ժամանակ: Թովմասին անվանում էին նաև Երկվորյակ (Մատ. Ժ.2-3, Հովի. ԺԴ.5, Ի.24-29, ԻԱ.2): Թեև Թովմասը կասկածացի Հիսուսի հարությանը, մինչև որ չտեսեց Փրկչին, սակայն իր ամուր բնավորության շնորհիվ նա կամովին դիմակայեց հալածանքներին և մահացավ իր Տիրոջ համար (Հովի. ԺԱ.16, Ի.19-25):

ԹՎՈՑ: *Տե՛ս նաև* Հնգամատյան

Հին Կտակարանի չորրորդ գիրքը: Թվոց գիրքը գրել է Մովսեսը: Թվոց գիրքը պատմում է Իսրայելացիների ճամփորդության մասին Սինայ սարից դեպի Քանանի ասիմաններում գտնվող Մովաբի դաշտերը: Ամենակարևոր դասերից մեկը, որ այն ուսուցանում է, այն է, որ Աստծո ժողովուրդը, եթե ցանկանում է հաջողակ շարունակել, պետք է քայլի հավատքով՝ վստահելով նրա խոստումներին: Այն շարադրում է Աստծո պատիժներն Իսրայելին, անհնազանդության համար, և տեղեկություն է

տալիս Իսրայելացիների օրենքների մասին: Գրքի անունը բխել է մարդահամարի նշանակալից քվերից (ԹՎ. Ա-Բ, ԻԶ):

Ա-Ժ գլուխները պատմում են Իսրայելացիների Սինայից հեռանալու նախապատրաստության մասին: ԺԱ-ԺԳ գլուխները նկարագրում են երբքը, լրտեսներ ուղարկելը՝ Քանան և խոստումի երկիր մտնելու Իսրայելի մերժումը: ԺԵ-ԺԹ գլուխները նշում են տարբեր օրենքներ և պատմական իրադարձություններ: Ի-ԼԶ գլուխներն անապատում անցկացրած ժողովրդի վերջին տասը տարիների պատմությունն են:

ԹՈՒԼՈՒԹՅՈՒՆ: *Տե՛ս նաև*

Խոնարհեցնել, Խոնարհություն

Մահկանացու լինելու վիճակը և կարողության, ուժի կամ հմտության պակասը: Թուլությունը գոյության վիճակ է: Բոլոր մարդիկ թույլ են, և միայն Աստծո շնորհով է, որ նրանք գոյություն են ստանում գործելու արդար գործեր (Հակոբ 4.6-7): Այդ

թուլությունը մասամբ արտահայտվում է անհատական թուլությամբ կամ տկարությամբ, որն ունի յուրաքանչյուր անձ:

Ուժովացրեք թուլացած ձեռքերը՝ **Տս. ԼԵ.3-4**: Հոգին հոժար է, բայց մարմինը տկար՝ **Մատ. ԻԶ.41** (Մար. ԺԳ.38): Թուլությունների համար, որոնք ինձանում են՝ ըստ մարմնի, ես կկամենայի արդարացնել ինձ՝ **1 Նեփի 19.6**: Չնայած իմ տկարությանը, ինձ պատվիրվել է գրել այս բաները՝ **2 Նեփի 33.11**: Մի բարկացիր քո ծառայի վրա՝ նրա թուլության պատճառով՝ **Եթեր 3.2**: Հեթանոսները կծիծաղեն այս բաների վրա՝ գրելու մեջ մեր թուլության պատճառով՝ **Եթեր 12.23-25, 40**: Ես նրանց ցույց կտամ իրենց թուլությունը՝ **Եթեր 12.27-28**: Քանի որ դու տեսար քո թուլությունը, դու կդարձվես ուժեղ՝ **Եթեր 12.37**: Նա, ով թույլ է ձեր մեջ, այսուհետև պիտի ուժեղացվի՝ **ՎևոՒ 50.16**: Հիսուս Քրիստոսը գիտի մարդու թուլությունը՝ **ՎևոՒ 62.1**:

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հետևյալ ժամանակագրությունը, կամ իրադարձությունների ցանկը, ամբողջական չէ և նախատեսված է միայն ընթերցողին օգնելու համար՝ զգալու իրադարձությունների հաջորդականությունն աստվածաշնչյան և Մորմոնի Գրքի ժամանակներում:

Վաղ հայրապետների օրերի իրադարձությունները. (Այս բաժնի իրադարձությունների ճշգրիտ տարեթվերը որոշելու դժվարության պատճառով՝ տարեթվերը տրված չեն):

Ք.ծ.ա. (Քրիստոսի ծննդից առաջ կամ մ.թ.ա.)
4000թ. Ադամն ընկավ:

Ենովքը սպասավորեց:

Նոյը սպասավորեց. ջրհեղեղը ծածկեց երկիրը:

Բաբելոնի աշտարակը կառուցվեց. Հարեղացիները ճամփորդեցին դեպի Խոստումի Երկիր:

Մելքիսեդեկը սպասավորեց:

Նոյը մահացավ:

Աբրամը (Աբրահամը) ծնվեց:

Իսահակը ծնվեց:

Հակոբը ծնվեց:

Հովսեփը ծնվեց:

Հովսեփը վաճառվեց Եգիպտոս:

Հովսեփը հայտնվեց Փարավոնի առաջ:

Հակոբը (Իսրայելը) և նրա ընտանիքը գնացին Եգիպտոս:

Հակոբը (Իսրայելը) մահացավ:

Հովսեփը մահացավ:

Մովսեսը ծնվեց:

Մովսեսն Իսրայելի զավակներին դուրս հանեց Եգիպտոսից (Ելիցը):

Մովսեսը փոխակերպվեց:

Հեսուն մահացավ:

Հետոի մահից հետո սկսվեց դատավորաց ժամանակաշրջանը՝ առաջին դատավորը լինելով Գոթոնիելը, իսկ վերջինը՝ Սամուելը. մնացածի կարգը և տարեթվերը շատ անորոշ են:
Սավուղը թագավոր օծվեց:

Իսրայելի միացյալ թագավորության իրադարձությունները.

- 1095թ. Սկսվեց Սավուղի թագավորությունը:
1063թ. Գավիթը թագավոր օծվեց Սամուելի կողմից:
1055թ. Գավիթը դարձավ Քեբրոնի թագավորը:
1047թ. Գավիթը թագավոր դարձավ Երուսաղեմում. Նաթանը և Գադը մարգարե էին:
1015թ. Սողոմոնը դարձավ Իսրայելի թագավորը:
991թ. Տաճարն ավարտվեց:
975թ. Սողոմոնը մահացավ. տասը հյուսիսային ցեղերն ապստամբեցին նրա որդու՝ Ռոբովամի դեմ, և Իսրայելը բաժանվեց:

<i>Իսրայելի իրադարձությունները.</i>	<i>Հուդայի իրադարձությունները.</i>	<i>Մորմոնի Գրքի իրադարձությունները.</i>
975թ. Հերոբոլամն Իսրայելի թագավորն էր:	949թ. Եզիպտոսի Սիսակ թագավորը թալանեց Երուսաղեմը:	
875թ. Աքաաբը թագավորում էր Սամարիայում՝ հյուսիսային Իսրայելի վրա. Եղիան մարգարեություն արեց:		
851թ. Եղիսեն մեծ հրաշքներ գործեց:		
792թ. Ամովսը մարգարեություն արեց:		
790թ. Հովնանը և Ովսենն մարգարեություն արեցին:		
	740թ. Եսայիայի մարգարեության սկիզբը: (Հիմնադրվեց Հռոմը. Նաբոնասարը Բաբելոնի թագավորն էր 747 թվականին. Թագաթ-փաղասար Գ թագավորեց Ասորեստանի վրա 747–734թթ.):	
	728թ. Եզեկիան Հուդայի թագավորն էր: (Սաղմանասար Գ Ասորեստանի թագավորն էր):	

<i>Իսրայելի իրադարձությունները.</i>	<i>Հուդայի իրադարձությունները.</i>	<i>Մորմոնի Գրքի իրադարձությունները.</i>
721թ. Հյուսիսային Թագավորությունը կործանվեց. տասը ցեղերը գերության տարվեցին. Միքիան մարգարեություն արեց:	642թ. Նաումը մարգարեություն արեց: 628թ. Երեմիան և Սոփոնիան մարգարեություն արեցին:	
	609թ. Աբդիան մարգարե էր. Դանիելը գերության տարվեց Բաբելոն: (Նինվեն կործանվեց 606թ., Նաբուգոդոնոսորը Բաբելոնի թագավորն էր 604–561թթ.):	
	598թ. Եզեկիելը մարգարեություն արեց Բաբելոնում. Անբակումը մարգարեություն արեց. Սեդեկիան Հուդայի թագավորն էր:	600թ. Լեքին հեռացավ Երուսաղեմից:
	587թ. Նաբուգոդոնոսորը գրավեց Երուսաղեմը:	588թ. Մուղեկը հեռացավ Երուսաղեմից դեպի խոստումի երկիր: 588թ. Նեփիացիները բաժանվեցին Լամանացիներից (մոտ 588–570թթ.):

Պատմական Հրեաստանի իրադարձությունները.

Մորմոնի Գրքի իրադարձությունները.

- 537թ. Կյուրոսը հռչակեց, որ հրեաները կարող են վերադառնալ Բաբելոնից:
- 520թ. Անգեն և Ջաքարիան մարգարեություն արեցին:
- 486թ. Եսթերն ապրում էր:
- 458թ. Եզրասը բարեփոխումներ կատարելու լիազորություն ստացավ:
- 444թ. Նեեմիան նշանակվեց Հուդայի կառավարիչ:
- 432թ. Մադաքիան մարգարեություն արեց:

- 400թ. Հարոմը ստացավ թիթեղները:
- 360թ. Օմնին ստացավ թիթեղները:

- 332թ. Ալեքսանդր Մեծը նվաճեց Ասորիքը և Եգիպտոսը:
- 323թ. Ալեքսանդրը մահացավ:

**Պատմական Հրեաստանի
իրադարձությունները.**

Մորմնի Գրքի իրադարձությունները.

- 277թ. Սկսվեց Սեպտագենտի՝ հրեական սուրբ գրքերի թարգմանությունը հունարեն լեզվով:
- 167թ. Մատաթիա Մակաբեն ապստամբեց Ասորիքի դեմ:
- 166թ. Հուդա Մակաբայեն դարձավ հրեաների առաջնորդը:
- 165թ. Տաճարը մաքրվեց և կրկին մվիրագործվեց. Անուկան ծնվեց:
- 161թ. Հուդա Մակաբայեն մահացավ:

- 148թ. Արինադին մահատակվեց. Ալման վերահաստատեց Եկեղեցին Նեփիացիների մեջ:
- 124թ. Բենիամինն իր վերջին խոսքով դիմեց Նեփիացիներին:
- 100թ. Ալմա կրտսերը և Մոսիայի որդիները սկսեցին իրենց աշխատանքը:
- 91թ. Նեփիացիների մեջ սկսվեց դատավորների իշխանությունը:

- 63թ. Պոմպեոսը նվաճեց Երուսաղեմը, և Մակաբայեցիների իշխանությունն Իսրայելում ավարտվեց:
- 51թ. Կլեոպատրան թագավորեց:
- 41թ. Հերովդեսն ու Փասայելը դարձան Հրեաստանի միացյալ չորրորդապետները:
- 37թ. Հերովդեսը ղեկավար դարձավ Երուսաղեմի վրա:
- 31թ. Տեղի ունեցավ Ակտիումի ճակատամարտը. Օգոստոսը դարձավ Հռոմի կայսրը Ք.ծ.ա. 31-ից մինչև Ք.ծ.հ. 14 թվականը:
- 30թ. Կլեոպատրան մահացավ:
- 17թ. Հերովդեսը վերականգնեց տաճարը:

- 5թ. Սամուել Լամանացին մարգարեացավ Քրիստոսի ծննդի մասին:

**Քրիստոնեական պատմության
իրադարձությունները.**

Մորմնի Գրքի իրադարձությունները.

- Ք.ծ.հ. (Քրիստոսի ծննդից հետո, կամ մ.թ.) Հիսուս Քրիստոսի ծնունդը:
- 30թ. Սկսվեց Քրիստոսի ծառայությունը:

Ք.ծ.հ. կամ մ.թ.

Քրիստոնեական պատմության իրադարձությունները.

- Ք.ծ.հ. (Քրիստոսի ծննդից հետո, կամ մ.թ.) Հիսուս Քրիստոսի ծնունդը:
- 33թ. Քրիստոսին խաչեցին:
- 35թ. Պողոսը դարձի եկավ:
- 45թ. Պողոսի առաջին միսիոներական ճամփորդությունը:
- 58թ. Պողոսն ուղարկվեց Հռոմ:
- 61թ. Ավարտվեց Առաքյալների գործերի պատմությունը:
- 62թ. Հռոմն այրվեց: Ներոնի գլխավորությամբ Քրիստոնյաներին սկսեցին հալածել:
- 70թ. Քրիստոնյաները գնում են Պելլա. Երուսաղեմը պաշարվում և գերության է վերցվում:
- 95թ. Քրիստոնյաները հալածվում են Դոմիտիանոսի կողմից:

Մորոնի Գրքի իրադարձությունները.

- Ք.ծ.հ. կամ մ.թ.
- 33թ. կամ
- 34թ. Հարություն առած Քրիստոսը հայտնվեց Ամերիկայում:
- 385թ. Նեփիացիների ազդը կործանվեց:
- 421թ. Մորոնին քաքրեց քիթեղները:

ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ՆՇԱՆՆԵՐԸ:

Տե՛ս նաև Հիսուս Քրիստոսի երկրորդ գալուստը. Նշան. Վերջին օրեր, Ետին օրեր

Իրադարձություններ կամ փորձառություններ, որոնք Աստված տալիս է մարդկանց, ցույց տալու համար, որ իր գործում ինչ-որ կարևոր բան է կատարվել կամ շուտով պետք է կատարվի: Փրկչի երկրորդ գալստի համար շատ նշաններ են մարգարեացվել, որոնք կիրականան վերջին օրերին: Այդ ազդանշանները հավատարիմ մարդկանց թույլ են տալիս ճանաչել Աստծո ծրագիրը, զգուշանալ և նախապատրաստվել:

Տիրոջ տան սարը հաստատ կլինի սարերի գլխին՝ **Ես.** Բ.2–3: Տերը դրոշակ է բարձրացնելու և հավաքելու է Իսրայելը՝ **Ես.** Ե.26 (2 Նեփի 15.26–30): Արեգակը խավար է լինելու և լուսինը չի ցույցնելու իր լույսը՝ **Ես.** ԺԳ.10 (Հովել Գ.15, Վև.11 29.14): Մարդիկ զանց կանեն օրենքը և կխափանեն հավիտենական ուխտը՝ **Ես.** ԻԳ.5: Նեփիացիները պիտի խոսեն, ինչպես փռուց դուրս եկող մի ձայն՝ **Ես.**

ԻԹ.4 (2 Նեփի 27): Իսրայելը գորության մեջ պիտի հավաքվի՝ **Ես.** ԽԹ.22–23 (1 Նեփի 21.22–23, 3 Նեփի 20–21): Աստված մի թագավորություն կհաստատի, որը չի կործանվի՝ **Դան.** Բ.44 (Վև.11 65.2): Պատերազմներ, երազներ և տեսիլքներ կնախորդեն Երկրորդ Գալստյանը՝ **Հովել** Բ: Բոլոր ազգերը կհավաքվեն Երուսաղեմի դեմ պատերազմելու՝ **Ջաք.** ԺԳ.2 (Եգեկ. ԼԸ–ԼԹ): Օրը կգա, որը թոնրի պես կայրի՝ **Մադ.** Դ.1 (3 Նեփի 25.1, Վև.11 133.64, ՉՍ–Պ 1.37): Մեծ աղետներ կլինեն մախքան Երկրորդ Գալուստը՝ **Մատ.** ԻԳ (ՉՍ–Մ 1): Պողոսը նկարագրել է ուրացությունը և վտանգավոր ժամանակները վերջին օրերին՝ **Բ Տիմ.** Գ–Դ: Երկու մարգարեներ կսպանվեն և հարություն կառնեն Երուսաղեմում՝ **Հայտ.** ԺԱ (Վև.11 77.15): Վերջին օրերին ավետարանը կվերականգնվի հրեշտակների սպասավորությամբ՝ **Հայտ.** ԺԳ.6–7 (Վև.11 13, 27, 110.11–16, 128.8–24): Բաբելոնը կհաստատվի և կընկնի՝ **Հայտ.** ԺԷ–ԺԸ: Իսրայելը կհավաքվի գորությանը՝ **1 Նեփի** 21.13–26 (Ես. ԽԹ.13–26, 3 Նեփի 20–21): Սա է նշանը, որպեսզի

դուք իմանաք ժամանակը՝ **3 Նեփի** 21.1: Մորմոնի Գիրքն առաջ կգա Աստծո գորությունքս՝ **Մորմ.** 8: Լամանացիները կծաղկեն՝ **ՎևոՒ** 49.24–25: Ամբարիշտները կսպանեն ամբարիշտներին՝ **ՎևոՒ** 63.32–35 (Հայտ. Թ): Պատերազմ կբաժնի բոլոր ազգերի վրա՝ **ՎևոՒ** 87.2: Նշանները, տարերային աղեակները և հրեշտակները, ճանապարհ են պատրաստում Տիրոջ գալատյան համար՝ **ՎևոՒ** 88.86–94: Խավարը կպատի երկիրը՝ **ՎևոՒ** 112.23–24: Տերը Սրբերին պատվիրել է նախապատրաստվել Երկրորդ Գալատին՝ **ՎևոՒ** 133:

ԺԱՌԱՆԳ

Անձ, որն իրավունք ունի ժառանգելու ֆիզիկական և հոգևոր պարգևները: Սուրբ գրքերում արդարներին խոստացվում է, որ նրանք կդառնան ժառանգորդներն այն ամենի, ինչ ունի Աստուծոյ:

Աբրահամը մի ժառանգ ցանկացավ՝ **Ծճ.** ԺԵ.2–5: Աբրահամն աշխարհի ժառանգը դարձավ հավատքի արդարությունով՝ **Հռոմ.** Գ.13: Մենք Աստծո զավակներն ենք, և եթե զավակները, ապա ժառանգները. Աստծո ժառանգները և Քրիստոսի ժառանգակիցները՝ **Հռոմ.** Ը.16–17 (ՎևոՒ 84.38): Դու որդի ես և Աստծո ժառանգը Քրիստոսով՝ **Գաղ.** Գ.7: Աստված իր Որդուն ամեն բանի ժառանգ նշանակեց՝ **Եբր.** Ա.2: Նրանք, ովքեր սպասում են իրենց մեղքերի թողության, Աստծո արքայության ժառանգներն են՝ **Մոսիս** 15.11: Մարդիկ դարձան Քրիստոսի զավակները և Աստծո արքայության ժառանգները՝ **4 Նեփի** 1.17: Նրանք, ովքեր մահացել են, գիտություն չունենալով ավետարանի մասին, կարող են դառնալ Աստծո սելեստիալ արքայության ժառանգները՝ **ՎևոՒ** 137.7–8: Մահացածները, ովքեր ապաշխարում են, փրկության ժառանգներ են՝ **ՎևոՒ** 138.59: Իր արդարակեցության շնորհիվ Աբրահամը դարձավ օրինական ժառանգ՝ **Աբր.** 1.2:

ԺՈՂՈՎԱԸՐԱՆ: *Տե՛ս նաև* Հրեաներ

Կրոնական նպատակներով օգտագործվող հավաքատեղ: Նոր Կտակարանի ժամանակներում, կահավորանքը հիմնականում հասարակ էր և ընդգրկում էր տապանակը, որի մեջ կային օրենքի թղթավանդները և այլ սրբազան գրություններ,

կարդալու բարձր սեղանը և երկըրպագողների համար նստատեղերը:

Երեցների տեղական խորհուրդը կառավարում էր յուրաքանչյուր ժողովարանը: Նրանք էին որոշում, թե ում էր պետք ներս թողնել, իսկ ում պետք էր դուրս գցել (Հովհ. Թ.22, ԺԲ.42): Ամենակարևոր պաշտոնյան ժողովարանի գլխավորն էր (Լուկ. ԺԳ.14, Մար. Ե.22): Նա հիմնականում դպիր էր, հոգ էր տանում շենքի համար և ղեկավարում էր ծառայությունները: Մի սպասավոր կատարում էր հոգևորական պարտականությունները (Լուկ. Գ.20):

Ժողովարան կար ամեն մի քաղաքում, որտեղ ապրում էին հրեաները՝ թե՛ Պաղեստինում և թե՛ ուրիշ վայրերում: Գա մեծ օգնություն էր Հիսուս Քրիստոսի ավետարանը տարածելիս, որովհետև Եկեղեցու առաջին միսիոներներին սովորաբար թույլ էր տրվում խոսել ժողովարաններում (Գոր. ԺԳ.5, 14, ԺԳ.1, ԺԷ.1, 10, ԺԸ.4): Այս նույն սովորությունը կիրառում էին Մորմոնի Գրքի միսիոներները (Ալմա 16.13, 21.4–5, 32.1), ինչպես նաև արդի տնտեսության վաղ շրջանի միսիոներները (ՎևոՒ 66.7, 68.1):

ԺՈՂՈՎՈՂ

Գիրք Հին Կտակարանում, որը մտորումներ է պարունակում կյանքի ամենախորհիմնախնդիրներից մի քանիսի շուրջը:

Գրքի հեղինակը՝ ժողովողը, գրքի մեծ մասը գրում է նրանց տեսանկյունից, ովքեր չեն ըմբռնում ավետարանը: Նա գրում է աշխարհի մարդկանց, այսինքն՝ «արեգակի տակ» (Ժող. Ա.9) գանվողների զգացմունքների համաձայն: Գրքի մեծ մասը թվում է բացասական և ոչ լավատեսական (Ժող. Թ.5, 10): Գա այն չէ, ինչպես Տերը կցանկանար, որ մենք ըմբռնեինք կյանքը, այլ, ավելի շուտ, ժողովողի դիտողություններն են, թե ինչպես են իրերը երևում երկրի վրայի շուտափոփոխված մարդկանց: Գրքի ամենահոգևոր մասը ԺԱ և ԺԲ գլուխներն են, որտեղ գրողը եզրակացնում է, որ միակ հարատև արժեքն Աստծո պատվիրաններին հնազանդվելն է:

Ի ՍՊԱՍ ԳՆԵԼ: *Տե՛ս նաև* Կանչ,

Աստծո կողմից Կանչված, Կոչում.

Ձեռնադրություն

Սուրբ նպատակների համար ընտրվելն

ու նվիրաբերվելը: Սա որոշակի ծառայության նշանակելն է Եկեղեցու կազմակերպության շրջանակներում, որն արվում է ձեռնադրմամբ, մեկի կողմից, ով ունի պատշաճ իշխանություն: Միայն քահանայության քվորումների վրա նախագահողներն են ստանում բանալիները, երբ ի սպաս են դրվում: Կոչման համար սպասադրվող մարդկանց կարող են տրվել քահանայության օրհնություններ, բայց այդ օրհնության հետ բանալիներ չեն տրվում. դրանք տրվում են միայն քահանայության քվորումների նախագահներին:

Ինձ համար առանձնացրեք Բառնաբասին և Սողոսին այդ գործի համար՝ **Գոր. ԺԳ.2-3**: Ուրիշ եպիսկոպոսներ պետք է ի սպաս դրվեն՝ **ՎևոՒ 68.14**: Եպիսկոպոսը՝ ընդհանուր դատավորը, պիտի ի սպաս դրվի այդ ծառայության համար՝ **ՎևոՒ 107.17, 74**: Մարդ պետք է մարգարեությանը և ձեռնադրմամբ կանչված լինի Աստծո կողմից՝ **ՀՀ 1.5**:

ԻՄԱՍՏՈՒԹՅԱՆ ԽՈՍՔ

Առողջության օրենք, որը հայտնի է դարձվել Տիրոջ կողմից՝ Սրբերի ֆիզիկական և հոգևոր օրհնության համար (ՎևոՒ 89): Սովորական է դարձել այն անվանել Իմաստության Խոսք: Տերն իր հետևորդներին միշտ ուսուցանել է առողջության սկզբունքները: Տերը Ջոզեֆ Սմիթին հայտնի է դարձրել, թե ինչպիսի ուսելիք պետք է օգտագործել և ինչից խուսափել՝ ժամանակավոր և հոգևոր օրհնություններ խոստանալով Իմաստության Խոսքին հնազանդվելու համար:

Գինի և օղի չխմեք՝ **Ղև. Ժ.9**: Ծաղրող է գինին և խռովարար է ցքին՝ **Առակ. Ի.1**: Դառնամալու է ցքին իրեն խնդրների համար՝ **Ես. ԻԴ.9**: Դանիելը չցանկացավ իրեն պղծել թագավորի կերակուրով և գինով՝ **Դան. 1.8**: Եթե մեկը պղծի Աստծո տաճարը, Աստված կկործանի նրան՝ **Ա Կոր. Գ.16-17**: Արբեցողներն Աստծո արքայությունը չեն ժառանգի՝ **Ա Կոր. 2.10** (Գաղ. Ե.21): Նա, ով արգելում է, ասելով, թե մարդ չպետք է միս ուտի, կարգված չէ Աստծուց՝ **ՎևոՒ 49.18-21**: Բոլոր բաները, որոնք դուրս են գալիս երկրից, պետք է օգտագործվեն դատողությանը, ոչ շռայլորեն՝ **ՎևոՒ 59.20**:

Տերը Սրբերին խորհուրդ է տվել չօգտագործել գինի, բունդ խմիչքներ, ծխախոտ և տաք ըմպելիքներ՝ **ՎևոՒ 89.1-9**: Խոտաբույսերը, մրգերը, միսը և հացահատիկը կարգված են մարդու և կենդանիների օգտագործման համար՝ **ՎևոՒ 89.10-17**: Իմաստության Խոսքին հնազանդվելը բերում է ժամանակավոր և հոգևոր օրհնություններ՝ **ՎևոՒ 89.18-21**:

ԻՄԱՍՏՈՒԹՅՈՒՆ: *Տե՛ս նաև*
 Գիտություն. Հասկանալ.
 Ճշմարտություն

Ճիշտ դատելու աստվածային պարզ կամ կարողություն: Մարդն իմաստություն է ձեռք բերում փորձով և սովորելով և Աստծո խորհուրդներին հետևելով: Առանց Աստծո օգնության, մարդը չունի ճշմարիտ իմաստություն (2 Նեփի 9.28, 27.26):

Աստված Սողոմոնին իմաստություն տվեց՝ **Գ Թագ. Դ.29-30**: Ամեն բանի գլուխն իմաստությունն է. ուստի, իմաստություն ստացիր՝ **Առակ. Դ.7**: Իմաստություն ստացողը սիրում է իր հոգին՝ **Առակ. ԺԹ.8**: Հիսուսն աճում էր իմաստությունով՝ **Ղուկ. Բ.40, 52**: Եթե մեկն իմաստության պակաս ունի, թող խնդրի Աստծուն՝ **Հակ. 1.5** (ՎևոՒ 42.68, ՋՄ-Պ 1.11): Ես ձեզ ասում եմ այս բաները, որ դուք կարողանաք իմաստություն սովորել՝ **Մոսիա 2.17**: Իմաստություն սովորիր քո երիտասարդության տարիներին՝ **Ալմա 37.35**: Սրբերը կգտնեն իմաստություն և գիտության մեծ գանձեր՝ **ՎևոՒ 89.19**: Թող նա, ով բանիմաց չէ, իմաստություն սովորի՝ իրեն խոնարհեցնելով և կանչելով առ Տերը՝ **ՎևոՒ 136.32**:

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ: *Տե՛ս նաև*
 Ջոբություն. Կանչ, Աստծո կողմից
 Կանչված, Կոչում. Կարգել,
 Կարգում. Քահանայություն.
 Քահանայության բանալիները

Հայր Աստծո և Հիսուս Քրիստոսի անունով և անունից գործելու թույլատվություն, որը շնորհված է երկրի վրա Աստծո գործը կատարելու համար կանչված և կարգված մարդկանց:

Ես եմ քեզ ուղարկել՝ **Ել. Գ.12-15**: Խոսիր այն ամենը, ինչ որ քեզ կիրամայեմ՝ **Ել. Է.2**: Նա իշխանություն տվեց տասներկու

աշակերտներին՝ **Մառ. Ժ.1:** Ոչ քե դուք ինձ ընտրեցիք, այլ ես ընտրեցի ձեզ և կարգեցի ձեզ՝ **Հովհ. ԺԵ.16:** Նեփին և Լեքին քարոզեցին մեծ իշխանությամբ՝ **Հեւ. 5.18:** Նեփին՝ Հելամանի որդին, Աստծո մարդ էր, որը մեծ գորություն և իշխանություն ուներ Աստծուց՝ **Հեւ. 11.18** (3 Նեփի 7.17): Հիսուս գորություն և իշխանություն տվեց տասներկու Նեփիացիներին՝ **3 Նեփի 12.1-2:** Ջոզեֆ Սմիթը կանչվել է Աստծո կողմից և կարգվել՝ **ՎևոՒ 20.2:** Ոչ որ չպետք է քարոզի իմ ավետարանը կամ կառուցի իմ Եկեղեցին, մինչև որ չկարգվի և Եկեղեցուն հայտնի չլինի, որ նա իշխանություն ունի՝ **ՎևոՒ 42.11:** Երեցները պետք է քարոզեն ավետարանը՝ գործելով իշխանությամբ՝ **ՎևոՒ 68.8:** Մելքիսեդեկյան Քահանայությունն ունի հոգևոր բաներում սպասավորելու իշխանություն՝ **ՎևոՒ 107.8, 18-19:** Ինչ էլ որ մարդիկ կատարում են իշխանությամբ, դառնում է օրենք՝ **ՎևոՒ 128.9:** Բոլոր նրանք, ովքեր քարոզում կամ սպասավորում են Աստծո համար, պետք է կանչվեն Աստծո կողմից՝ իշխանություն ունեցողների միջոցով՝ **ՀՀ 1.5:**

ԻՍԱՀԱԿ: *Տե՛ս նաև* Աբրահամ

Հին Կտակարանի հայրապետ: Աբրահամի և Սարայի ծեր տարիքում նրա ծնվելը հրաշք էր՝ (Ճն. ԺԵ.4-6, ԺԷ.15-21, ԻԱ.1-8): Իսահակին մատուցում անելու Աբրահամի պատրաստակամությունն Աստծո և նրա Միածին Որդու մանությունը էր (Հակոբ 4.5): Իսահակը Աբրահամի ուխտի խոստումների ժառանգորդ էր (Ճն. ԻԱ.9-12, 1 Նեփի 17.40, ՎևոՒ 27.10):

Ծնվեց Իսահակը՝ **Ճն. ԻԱ.1-7:** Պետք է գոհ մատուցվեր Մորիա սարի վրա՝ **Ճն. ԻԲ.1-19** (ՎևոՒ 101.4): Ամուսնացավ՝ **Ճն. ԻԳ:** Վարվեց իր որդիների հետ՝ **Ճն. ԻԷ.1-ԻԸ.9:** Վեհացում ձեռք բերեց Աբրահամի և Հակոբի հետ՝ **ՎևոՒ 132.37** (Մառ. Ը.11):

ԻՍԱԶԱՐ: *Տե՛ս նաև* Իսրայել. Հակոբ՝ Իսահակի որդի

Հակոբի և Լիայի որդին Հին Կտակարանում (Ճն. Լ.17-18, ԼԵ.23, ԽԶ.13): Նրա հետևորդները դարձան Իսրայելի տասներկու ցեղերից մեկը:

Իսաքարի ցեղը. Հակոբի օրհնությունն Իսաքարին կարելի է գտնել Ծննդոց ԽԹ.14-15-ում: Քանանում հաստատվելուց հետո, այդ ցեղը ստացավ Պաղեստինի ամենահարուստ հողերից մեկը, այդ թվում՝ Եզդրելոնի հովիտը: Իսաքարի սահմաններում էին գտնվում հրեական մի քանի կարևոր պատմական վայրեր, օրինակ՝ Կարմելը, Մակեդոնը, Գոթայինը, Գեղբունեն, Հեզրայելը, Թաբորը և Նազաբեթը (Հեւ. ԺԹ.17-23):

ԻՍՄԱՅԵԼ՝ ԱՔՐԱՀԱՍԻ ՈՐԳԻ:

Տե՛ս նաև Աբրահամ. Հազար

Հին Կտակարանում Աբրահամի և Սարայի եգիպտացի աղախին՝ Հազարի որդին (Ճն. ԺԶ.11-16): Տերը և՛ Աբրահամին, և՛ Հազարին խոստացավ, որ Իսմայելը կդառնա մեծ ազգի հայր (Ճն. ԻԱ.8-21):

Ուխտը եկավ ավելի շուտ Իսահակից, ոչ քե Իսմայելից՝ **Ճն. ԺԷ.19-21** (Գաղ. Գ.22-5.1): Աստված օրհնեց Իսմայելին, որ նա շատ բազմանա՝ **Ճն. ԺԷ.20:** Իսմայելն օգնեց թաղել Աբրահամին՝ **Ճն. ԻԵ.8-9:** Տրվում են Իսմայելի տասներկու որդիների անունները՝ **Ճն. ԻԵ.12-16:** Իսմայելը մահացավ՝ **Ճն. ԻԵ.17-18:** Եսավն Իսմայելի դուստր Մայելեթին կնության վերցրեց՝ **Ճն. ԻԸ.9:**

ԻՍՄԱՅԵԼ՝ ՆԵՓԻԻ ԱՆԵՐ: *Տե՛ս*

նաև Լեքի՝ Նեփիի հայր

Մի մարդ Մորմոնի Գրքում, որն իր ընտանիքի հետ միացավ Լեքիի ընտանիքին՝ խոստումի երկիր նրանց ճամփորդելիս:

Նեփին և նրա եղբայրները վերադարձան Երուսաղեմ և Իսմայելին ու նրա ընտանիքին համոզեցին Լեքիին ու նրա ընտանիքին ուղեկցել դեպի խոստումի երկիր՝ **1 Նեփի 7.2-5:** Երկու ընտանիքների միջև ամուսնություններ եղան՝ **1 Նեփի 16.7:** Իսմայելը մահացավ ամապատում՝ **1 Նեփի 16.34:**

ԻՍՐԱՅԵԼ: *Տե՛ս նաև* Աբրահամ –

Աբրահամի Սերունդը. Հակոբ՝

Իսահակի որդի. Որդեգրում

Հին Կտակարանում Տերը Աբրահամի թոռ և Իսահակի որդի Հակոբին տվեց Իսրայել անունը (Ճն. ԼԲ.28, ԼԵ.10): Իսրայել անունը կարող է վերաբերել անձամբ

Հակոբին, նրա հետնորդներին կամ այն թագավորությանը, որն ունեին նրա հետնորդները Հին Կտակարանի ժամանակներում (Բ Թագ. Ա.24, ԻԳ.3): Իսրայելի զավակները, Մովսեսի կողմից Եգիպտական գերությունից դուրս բերվելուց հետո (Ել. 9-14), ավելի էին երեք հարյուր տարի ղեկավարվում Քան դատավորների կողմից: Սավուղ թագավորից սկսած, թագավորներն էին կառավարում միացյալ Իսրայելը, մինչև Սողոմոնի մահը, երբ տասը ցեղերն անջատվեցին Ռոբովամից, որպեսզի առանձին պետություն ստեղծեն: Իսրայելի թագավորության բաժանումից հետո, հյուսիսային ցեղերը, լինելով մեծ մասը, պահպանեցին Իսրայել անունը, մինչդեռ հարավային թագավորությունը կոչվեց Հուդա: Այսօր Քանանի երկիրը նույնպես կոչվում է Իսրայել: Մեկ այլ իմաստով՝ Իսրայել նշանակում է Քրիստոսի ճշմարիտ հավատացյալ (Հռովմ. Ժ.1, ԺԱ.7, Գաղ. 2.16, Եփես. Բ.12):

Իսրայելի տասներկու ցեղերը. Աբրահամի թոռ Հակոբը, որի անունը փոխվեց Իսրայել, ուներ տասներկու որդի: Նրանց հետնորդները հայտնի դարձան որպես Իսրայելի տասներկու ցեղեր կամ Իսրայելի զավակներ: Սրանք են տասներկու ցեղերը՝ Ռուբեն, Շամալոն, Ղևի, Հուդա, Իսաքար և Չաբուղոն (Հակոբի և Լիայի որդիները), Դան և Նեփթաղիմ (Հակոբի և Բաղդայի որդիները), Գադ և Ասեր (Հակոբի և Ջեդփայի որդիները), Հովսեփ և Բենիամին (Հակոբի և Ռաքելի որդիները) (Ճն. ԻԹ.32-Լ.24, ԼԵ.16-18):

Նախքան մահանալը Հակոբն օրհնություն տվեց յուրաքանչյուր ցեղի ղեկավարին (Ճն. ԽԹ.1-18): Լրացուցիչ տեղեկության համար, տե՛ս Հակոբի յուրաքանչյուր որդու անունը:

Ռուբենը՝ Հակոբի առաջնեկ որդին նրա առաջին կին Լիայից, անբարոյականության պատճառով կորցրեց իր անդրանիկության օրհնությունը և ժառանգության կրկնակի բաժինը (Ճն. ԽԹ.3-4): Այս անդրանիկությունն անցավ Հովսեփին, որը Հակոբի երկրորդ առաջնեկ որդին էր նրա երկրորդ կնոջից՝ Ռաքելից (Ա Մն. Ե.1-2): Ղևին, որի ցեղին Տերն ընտրեց, որ իր համար քահանայության ծառայողներ լինեն, չստացավ ժառանգություն՝ իր հատուկ կոչման հետևանքով, որ

պիտի ծառայեր բոլոր ցեղերի մեջ: Դաս բույլ տվեց, որ Հովսեփի կրկնակի բաժինը կիսվի Հովսեփի որդիների՝ Եփրեմի և Մանասեի միջև (Ա Մն. Ե.1, Երեմ. ԼԱ.9), որոնք համարվեցին որպես Իսրայելի առանձին ցեղեր (ՉՄԹ՝ Ճն. 48.5-6):

Հուդայի ցեղի անդամները պետք է կառավարվեցին լինեին մինչև Մեսիայի գալը (Ճն. ԽԹ.10, ՉՄԹ՝ Ճն. 50.24): Վերջին օրերին Եփրեմի ցեղին է տրված ավետարանի վերականգնման պատգամն աշխարհին տանելու և ցրված Իսրայելը հավաքելու արտոնությունը (Բ Օր. ԼԳ.13-17): Կգա ժամանակ, երբ Հիսուս Քրիստոսի ավետարանի միջոցով, Եփրեմը ղեկավար դեր կունենա Իսրայելի բոլոր ցեղերին միավորելու գործում (Ես. ԺԱ.12-13, ՎևոՒԹ 133.26-34):

Իսրայելի ցրվելը. Իրենց անարդարակեցության և ըմբոստության պատճառով Տերը ցրեց և չարչարեց Իսրայելի տասներկու ցեղերին: Սակայն, իր ընտրյալ ժողովրդի այս ցրումն աշխարհի ազգերի մեջ, Տերն օգտագործեց նաև այդ ազգերին օրհնելու համար:

Ես ձեզ հեթանոսների մեջ կցրեմ՝ **Ղև.** ԻԶ.33: Տերը կցրի քեզ բոլոր ժողովուրդների մեջ՝ **Բ Օր.** ԻԸ.25, 37, 64: Ես պիտի բողոքեմ, որ նրանք արտոյվեն երկրի բոլոր թագավորությունների մեջ՝ **Երեմ.** ԻԹ.18-19: Ես պիտի մաղեմ Իսրայելի տունը բոլոր ազգերի մեջ՝ **Ամոս** Թ.9 (Չաք. Ժ.9): Հիսուսն ուղարկվել էր Իսրայելի տան կորած ոչխարների համար՝ **Մատ.** ԺԵ.24: Ուրիշ ոչխարներ ես ունեմ, որոնք այս փարախից են՝ **Հովհ.** Ժ.16: Իսրայելը պիտի ցրվի ողջ երկրի երեսով՝ **1 Նեփի** 22.3-8: Հակոբը շարադրում է Ջենոսի այլաբանությունն ընտանի և վայրի ձիթենիների վերաբերյալ՝ **Հակոբ** 5-6: Հոր գործը կսկսվի իմ ժողովրդի բոլոր ցրվածների մեջ՝ **3 Նեփի** 21.26:

Իսրայելի հավաքումը. Վերջին օրերին, նախքան Քրիստոսի գալուստը, Իսրայելի տունը պիտի հավաքվի (ՀՀ 1.10): Տերը կհավաքի Իսրայելի իր ժողովրդին, երբ նրանք ընդունեն նրան և պահեն նրա պատվիրանները:

Նա դրոշ կբարձրացնի և նրանք կգան՝ **Ես.** 2.6: Մեծ ողորմությանը ես կհավաքեմ քեզ՝ **Ես.** ԾԳ.7: Իսրայելը և Հուդան պիտի

հավաքվեն իրենց հողերում՝ **Երեմ.** Լ.3: Տերը կհավաքի Իսրայելի տունն այն ժողովուրդների միջից, որոնց մեջ նրանք ցրվել են՝ **Եզեկ.** ԻԸ.25: Ժամանակների լրուրյան տնտեսության ժամանակ նա ասեն ինչ կրովանդակի Քրիստոսում՝ **Եփես.** Ա.10: Յրվելուց հետո, Իսրայելը կրկին կհավաքվի՝ **1 Նեփի** 15.12–17: Տերը կհավաքի Իսրայելի տան ողջ ժողովրդին՝ **1 Նեփի** 19.16 (3 Նեփի 16.5): Նրանք դուրս կբերվեն խավարից և կիմանան, որ Տերն է իրենց Փրկիչը՝ **1 Նեփի** 22.12: Աստված հավաքում և հաշվում է իր զավակներին՝ **1 Նեփի** 22.25: Հեթանոսների ազգերն Իսրայելին կառաջնորդեն դեպի իր ժառանգության հողերը՝ **2 Նեփի** 10.8 (3 Նեփի 16.4): Իմ ժողովուրդը և իմ խոսքը պիտի հավաքվեն մեկտեղ՝ **2 Նեփի** 29.13–14: Երեցները կանշված են հավաքելու ընտրյալներից՝ **ՎևոՒ** 29.7 (ՎևոՒ 39.11): Ես կհավաքեմ իմ ընտրյալներից՝ **ՎևոՒ** 33.6: Այնպես հավաքվեք, որ ես կարողանամ տալ ձեզ իմ օրենքը, և որ դուք կարողանաք օժտվել՝ **ՎևոՒ** 38.31–33: Ես պիտի վերականգնեմ իմ ժողովրդին, որոնք Իսրայելի տնից են՝ **ՎևոՒ** 39.11: Սրբերն առաջ պիտի գան՝ **ՎևոՒ** 45.46: Մովսեսը հանձնեց հավաքման բանալիները՝ **ՎևոՒ** 110.11: Արդարությունն ու ճշմարտությունը կարբեն երկիրը և կհավաքեն Տիրոջ ընտրյալներին՝ **Մովսես** 7.62: Հավաքումը համեմատվում է դիակի վրա արծիվների հավաքման հետ՝ **ԶՍ–Մ** 1.27:

Իսրայելի տասը կորած ցեղերը. Իսրայելի տասը ցեղերը կազմում էին Իսրայելի հյուսիսային թագավորությունը և Ք.ծ.ա. 721թ. գերի տարվեցին Ասորեստան: Այդ ժամանակ նրանք գնացին «հյուսիսային երկրներ» և կորան մյուսների համար: Վերջին օրերին նրանք կվերադառնան:

Հյուսիսին ասելու են՝ Տուր՝ **Ես.** ԽԳ.6: Սրանք պիտի գան հյուսիսից՝ **Ես.** ԽԹ.12 (1 Նեփի 21.12): Հուդան և Իսրայելը միասին պիտի գան հյուսիսային երկրից՝ **Երեմ.** Գ.18: Կենդանի է Տերը, որ Իսրայելի զավակներին հանեց հյուսիսի երկրից՝ **Երեմ.** ԺԶ.14–16: Ես նրանց պիտի բերեմ հյուսիսի երկրից՝ **Երեմ.** ԼԱ.8: Նեփիացիները և հրեաները կունենան Իսրայելի կորած ցեղերի խոսքերը՝ **2 Նեփի** 29.12–

13: Ես գնում եմ, որ ինձ ցույց տամ Իսրայելի կորած ցեղերին՝ **3 Նեփի** 17.4: Երբ ավետարանը քարոզվի Իսրայելի տան մնացորդին, կորած ցեղերը պիտի հավաքվեն տանը՝ իրենց ժառանգության հողերում՝ **3 Նեփի** 21.26–29: Մովսեսը Ջոզեֆ Սմիթին և Օլիվեր Զաուդերին հանձնեց Իսրայելի տան հավաքման բանալիները՝ **ՎևոՒ** 110.11: Տերը հիշելու է նրանց, ովքեր հյուսիսի երկրներում են՝ **ՎևոՒ** 133.26–32: Մենք բառացիորեն հավատում ենք Իսրայելի Տան հավաքմանը՝ **ՀՀ** 1.10:

ԻՄՐԱՅԵԼԻ ԶԱՎԱԿՆԵՐ: *Տե՛ս* Իսրայել

ԻՄՐԱՅԵԼԻ ՀԱՎԱՔՈՒՄԸ: *Տե՛ս* Իսրայել – Իսրայելի հավաքումը

ԻՄՐԱՅԵԼԻ ՍՈՒՐՔԸ: *Տե՛ս* Հիսուս Զրիստոս

ԻՄՐԱՅԵԼԻ ՏՈՒՆ: *Տե՛ս* Իսրայել

ԻՄՐԱՅԵԼԻ ՑՐՈՒՄԸ: *Տե՛ս* Իսրայել – Իսրայելի ցրումը

ԼԱՔԱՆ՝ ԱՐՈՒՅՐԵ ԹԻԹԵՂՆԵՐԸ
ՊՎՀՊԱՆՈՂԸ: *Տե՛ս նաև* Արույրե Թիթեղներ

Մորմոնի Գրքում՝ այն մարդը, որը Երուսաղեմում, Լեքիի ընտանիքի օրոք պահպանում էր արույրե թիթեղները: Լաբանը կողոպտեց և փորձեց սպանել Նեփիին և նրա եղբայրներին (1 Նեփի 3.1–27): Թիթեղները ձեռք բերելու համար Հոզին Նեփիին առաջնորդեց՝ սպանելու Լաբանին (1 Նեփի 4.1–26):

ԼԱՔԱՆ՝ ՌԵԲԵԿԱՅԻ ԵՂՔԱՅՐ:
Տե՛ս նաև Ռեբեկա

Հին Կտակարանում՝ Ռեբեկայի եղբայրը և Հակոբի կանանց՝ Լիայի և Ռաբելի հայրը (Ծն. ԻԳ.29–60, ԻԷ.43–44, ԻԸ.1–5, ԻԹ.4–29, Լ.25–42, ԼԱ.1–55):

ԼԱՄԱՆ: *Տե՛ս նաև* Լամանացիներ. Լեքի՝ Նեփիի հայր

Մորմոնի Գրքում՝ Լեքիի և Սարիայի ավագ որդին և Նեփիի ավագ եղբայրը (1 Նեփի 2.5): Լամանը, հիմնականում, բարիք գործելու փոխարեն ընտրում էր չարք:

Լամանը տրտնջում էր իր հոր դեմ՝ **1 Նեփի 2.11–12**: Ապստամբեց իր արդար եղբոր՝ Նեփիի դեմ՝ **1 Նեփի 7.6** (1 Նեփի 3.28–29): Լեքիի տեսիլքում չճաշակեց կյանքի ծառի պտղից՝ **1 Նեփի 8.35–36**: Մի անեծք իջավ Լամանի և նրա հետևորդների վրա՝ **2 Նեփի 5.21** (Ալմա 3.7):

ԼԱՄԱՆԱՅԻՆԵՐ: *St'u Anu* Լաման.

Մորմոնի Գիրքը. Նեփիացիներ

Մի խումբ մարդիկ, Մորմոնի Գրքում, որոնցից շատերը Լեքիի ավագ որդի Լամանի հետևորդներն էին: Նրանք կարծում էին, թե Նեփիի և նրա հետևորդների կողմից խաբվել են (Մոսիա 10.11–17): Այդ պատճառով նրանք ապստամբում էին Նեփիացիների դեմ և հաճախ մերժում ավետարանի ուսմունքները: Այնուամենայնիվ, Հիսուս Քրիստոսի ճննդից ոչ շատ առաջ, Լամանացիներն ընդունեցին ավետարանը և դարձան ավելի արդարակյաց, քան Նեփիացիները (Հել. 6.34–36): Ամերիկյան աշխարհամասը Քրիստոսի այցելությունից երկու հարյուր տարի անց և՛ Լամանացիները, և՛ Նեփիացիները դարձան ամբարիշտ և սկսեցին պատերազմել մեկմեկու դեմ: Ք.ծ.հ. մոտ 400 թվականին Լամանացիներն ամբողջովին բնաջնջեցին Նեփիացիների ազգը:

Լամանացիները հաղթեցին Նեփիի սերնդին՝ **1 Նեփի 12.19–20**: Լամանացիներն ատում էին Նեփիացիներին՝ **2 Նեփի 5.14**: Լամանացիները խարազան կլինեն Նեփիացիների համար՝ **2 Նեփի 5.25**: Մորմոնի Գիրքը Լամանացիներին գիտելիք կտա իրենց նախահայրերի և Հիսուս Քրիստոսի ավետարանի մասին՝ **2 Նեփի 30.3–6** (Մորմոնի Գրքի տխտղոսաթերթ): Լամանացիները հրեաների մի մնացորդ են՝ **ՎևոՒՒ 19.27**: Նախքան Տիրոջ գալուստը, Լամանացիները վարդի պես կփթթեն՝ **ՎևոՒՒ 49.24**:

ԼԱՄՈՆԻ: *St'u Anu* Ամմոն՝ Մոսիայի որդի

Մորմոնի Գրքում՝ Լամանացի թագավոր, որը դարձի եկավ Տիրոջ Հոգու միջոցով՝ Ամմոնի ոգեշնչված ջանքերի ու ուսմունքների արդյունքում: (Ալմա 17–19):

ԼԱՆՋԱՊԱՆԱԿ: *St'u Anu* Ուրիմ ու Թումիմ

Սուրբ գրքերում նշվում են երկու տեսակի լանջապանակ. (1) Զինվորի կուրծքը պաշտպանող հագուստ կամ զրահ: Խորհրդանշական իմաստով Սրբերը պետք է կրեն արդարության լանջապանակը, որպեսզի պաշտպանվեն չարից (Ես. ԾԹ.17, Եփես. Զ.14): (2) Հազուստի մի մաս, որը կրում էր քահանայապետը Մովսեսի օրենքի ժամանակ (Ել. ԻԸ.13–30, ԼԹ.8–21): Այն պատրաստվում էր քաթանից և կրում էր տասներկու թանկարժեք քարեր: Երբեմն այն նշվում է Ուրիմի և Թումիմի հետ միասին (ՎևոՒՒ 17.1, ԶՄ–Պ Ա.35, 42, 52):

ԼեՋՈՒ: *St'u Anu* Լեզուների պարզ

Գրավոր կամ բանավոր բառեր, որոնք հատուկ ձևով փոխկապակցվում են՝ տեղեկություն, մտքեր և գաղափարներ հաղորդելու համար: Լեզուն օգտագործելու ձևը ցույց է տալիս մեր զգացմունքներն առ Աստված և այլ մարդիկ: Հիսուս Քրիստոսի երկրորդ գալստի ժամանակ Տերը ողջ մարդկությանը մաքուր լեզու կպարզվի (Մով. Գ.8–9): Նաև խոսելուձևի խորհրդանշանը: Սրբերը պետք է զգայն իրենց լեզուն, ինչը նշանակում է, որ նրանք պետք է կառավարեն իրենց խոսակցությունը: *Լեզուն* վերաբերում է նաև լեզուներին և ժողովուրդներին: Ի վերջո ամեն ծունկ պիտի ծալվի և ամեն լեզու խոստովանի Աստծուն (Ես. ԽԵ.23, Հռովմ. ԺԴ.11):

Եվ բոլոր երկրում մեկ լեզու էր՝ **ԾՃ. ԺԱ.1**: Տերը խառնեց բոլոր երկրի լեզուն՝ **ԾՃ. ԺԱ.4–9**: Պահիր քո լեզուն չարությունից՝ **Սաղ. ԼԴ.13** (Ա Պետ. Գ.10): Ով որ զսայի իր բերանն ու իր լեզուն, իր հոգին նեղություններից հեռու կպահի՝ **Առափ. ԻԱ.23**: Ամեն մեկը խոսելու էր նրանց, որ իր լեզով խոսում էին **Գոր. Բ.1–6**: Ով որ իր լեզուն չսանձահարի, այդ մարդու կրոնասիրությունը գուր է՝ **Հափ. Ա.26**: Եթե մեկը խոսքով չի մեղանշում, նա կատարյալ մարդ է՝ **Հափ. Գ.1–13**: Ավետարանը կքարոզվի ամեն ազգի, ցեղի, լեզվի և ժողովրդի՝ **Հայտ. ԺԴ.6–7** (2 Նեփի 26.13, Մոսիա 3.13, 20, ՎևոՒՒ 88.103, 112.1): Տերը մարդկանց հետ խոսում է ըստ իրենց լեզվի՝ **2 Նեփի 31.3** (ՎևոՒՒ 1.24): Բենիամինն իր որդիներին ուսուցանեց իր հայրերի լեզուն, որպեսզի նրանք դառնային խելավիտ մարդիկ՝ **Մոսիա 1.2–5**: Տերը շնոր-

հում է բոլոր ազգերին, իրենց սեփական ազգից և լեզվից, որ սովորեցնեն խոսքը՝ **Ալմա** 29.8: Այս թիթեղներն առաջ կգնան դեպի ամեն ազգ, ցեղ, լեզու և ժողովուրդ՝ **Ալմա** 37.4: Ձեռք բեր իմ խոսքը և այն ժամանակ քո լեզուն կրացվի՝ **ՎևոՒ** 11.21: Նա, ում լեզուն հեղ է և շենացնող, Աստծուց է, եթե հնազանդվում է իմ արարողություններին՝ **ՎևոՒ** 52.16: Ամեն մարդ կլսի ավետարանի լրիվությունն իր իսկ լեզվով՝ **ՎևոՒ** 90.11: Ծանոթացեք բոլոր լեզուներին, բարբառներին և ժողովուրդներին՝ **ՎևոՒ** 90.15: Աղստը և նրա երեխաներն ունեին մաքուր և անարատ լեզու՝ **Մովսես** 6.5–6, 46: Աստված Ենովքին տվել էր լեզվի մեծ գորություն՝ **Մովսես** 7.13:

ԼԵՉՈՒՆԵՐԻ ՊԱՐԳԵՎ: *Տե՛ս նաև*
Լեզու. Հոգու պարզևները

Սուրբ Հոգու պարզև, որը հնարավորություն է տալիս ոգեշնչված անձանց խոսել, հասկանալ կամ թարգմանել անձանք լեզուներ: Մենք հավատում ենք լեզուներին պարզևին (ՀՀ 1.7):

Ամենքը Սուրբ Հոգով լցվեցին և սկսեցին խոսել ուրիշ լեզուներով՝ **Գոր.** Բ.4: Անձանոթ լեզվով խոսողը մարդու հետ չի խոսում, այլ Աստծո հետ՝ **Ա Կոր.** ԺԳ.1–5, 27–28: Լեզուները նշան են նրանց համար, ովքեր չեն հավատում՝ **Ա Կոր.** ԺԳ.22–28: Այն ժամանակ կգա կրակով և Սուրբ Հոգով մկրտությունը. և այն ժամանակ դուք կարող եք խոսել հրեշտակների լեզուներով՝ **2 Նեփի** 31.13–14: Ամաղեկին բոլոր մարդկանց հորդորել է հավատալ լեզուներով խոսելու և պարզևին՝ **Օմնի** 1.25: Ոճանց տրված է լեզուներով խոսելը. իսկ մեկ ուրիշի՝ լեզուների թարգմանությունը՝ **ՎևոՒ** 46.24–25 (Ա Կոր. ԺԲ.10, Մոր. 10.8, 15–16): Թող թափվի լեզուների պարզևը՝ **ՎևոՒ** 109.36:

ԼԵՄՈՒԵԼ: *Տե՛ս նաև* Լաման.
Լամանացիներ. Լեքի՝ Նեփիի հայր

Մորմոնի Գրքում Լեքիի երկրորդ որդին և Նեփիի ավագ եղբայրներից մեկը: Նա միացավ Լամանին՝ Նեփիին ընդդիմանալու համար:

Լեքին Լեմուելին հորդորեց հաստատուն լինել, ինչպես հովիտը՝ **1 Նեփի** 2.10: Բարկացավ Նեփիի վրա և ակամօջ դրեց

Լամանին՝ **1 Նեփի** 3.28: Լեմուելացիները մտնում էին Լամանացիների մեջ՝ **Հակոբ** 1.13–14 (Ալմա 47.35):

ԼԵՔԻ՝ ՆԵՓԻԱՑԻ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ

Մորմոնի Գրքում՝ Նեփիացի զինվորական հրամանատար (Ալմա 43.35–53, 49.16–17, 52.27–36, 53.2, 61.15–21):

ԼԵՔԻ՝ ՆԵՓԻԱՑԻ ՔԱՐՈՉԻՉ: *Տե՛ս նաև*
նաև Հելաման՝ Հելամանի որդի

Մորմոնի Գրքում՝ Հելամանի որդի Հելամանի որդին: Լեքին մեծ քարոզիչ էր (Հել. 3.21, 4.14):

Նրան անվանել էին Լեքի, որպեսզի հիշեր իր նախահորը՝ **Հել.** 5.4–6: Նեփիի հետ միասին շատ մարդկանց դարձի բերեց, բանտարկվեց, կրակով օղակվեց և խոսեց հրեշտակների հետ՝ **Հել.** 5.14–48: Ամեն օր բազմաթիվ հայտնություններ էր ստանում՝ **Հել.** 11.23:

ԼԵՔԻ՝ ՆԵՓԻԻ ՀԱՅՐ

Մորմոնի Գրքում՝ երբայեցի մարգարե, որն առաջնորդեց իր ընտանիքը և իրեն հետևողներին Երուսաղեմից դեպի խոստումի մի երկիր արևմտյան կիսագնդում, Ք.ծ.ա. սոտ 600 թվականին: Լեքին իր ժողովրդի միջից առաջին մարգարեն էր Մորմոնի Գրքում:

Տիրոջ հրամանով՝ Լեքին իր ընտանիքով փախավ Երուսաղեմից (1 Նեփի 2.1–4): Նա Հովսեփի հետնորդ էր, որը վաճառվել էր Եգիպտոս (1 Նեփի 5.14): Տերը տվեց նրան կյանքի ծառի տեսիլքը (1 Նեփի 8.2–35): Լեքին ու նրա տղաները մի նավ կառուցեցին և նավարկեցին դեպի արևմտյան կիսագնդ (1 Նեփի 17–18): Նա և նրա հետնորդները հաստատվեցին մի նոր երկրում (1 Նեփի 18.23–25): Նախքան իր մահանալը, Լեքին օրհնեց իր որդիներին և ուսուցանեց նրանց Քրիստոսի մասին և վերջին օրերին Մորմոնի Գրքի ի հայտ գալու մասին (2 Նեփի 1–3, 4.1–12):

Լեքիի Գիրքը. Մորմոնի Գրքի թարգմանությունը Ջոզեֆ Սմիթն սկսել էր Լեքիի գրքից: Դա մի հիշատակարան էր, որը Մորմոնը համառոտագրել էր Լեքիի թիթեղներից: Այդ գրքից 116 ձեռագիր էջ

թարգմանելուց հետո, Ջոզեֆը ձեռագիրը տվեց Մարտին Հարրիսին, որը, Մորմոնի Գիրքը թարգմանելիս, կարճ ժամանակ ծառայեց որպես Ջոզեֆի դպիր: Մարտինը կորցրեց այդ էջերը: Ջոզեֆը կրկին չթարգմանեց Լեքիի գիրքը, կորած ձեռագրերի փոխարեն, այլ թարգմանեց դրան առջվող այլ պատմություններ ոսկե թիթեղներով (տես ՎևոՒՒ 3-ի և 10-ի նախաբանները): Այդ մյուս պատմություններն այժմ Մորմոնի Գրքի առաջին վեց գրքերն են:

ԼԻԱ: *Տես նաև* Լաբան՝ Ռեբեկայի եղբայր. Հակոբ՝ Իսահակի որդի

Հին Կտակարանում՝ Լաբանի ավագ դուստրը և Հակոբի կանանցից մեկը (Ծն. ԻԹ): Լիան դարձավ վեց որդիների և մեկ աղջկա մայր (Ծն. ԻԹ.31–35, Լ.17–21):

ԼԻԱՀՈՆԱ

Մորմոնի Գրքում՝ արույրե մի գունդ, երկու պաքներով, որը, կողմնացույցի նման, Լեքիին և նրա հետևորդներին ուղղություն, ինչպես նաև հոգևոր ցուցումներ էր տալիս, երբ նրանք արդար էին ապրում: Տերը տվել էր այդ Լիահոնան և դրա միջոցով հրահանգներ էր տալիս:

Լեքին գտավ արույրե մի գունդ, երկու պաքներով, որոնք ցույց էին տալիս այն նախապարհը, որով պիտի գնային Լեքին ու նրա ընտանիքը՝ **1 Նեփի** 16.10: Գունդը գործում էր հավատքի և ջանասիրության համեմատ՝ **1 Նեփի** 16.28–29 (Ալմա 37.40): Բենիամինը գունդը տվեց Մոսիային՝ **Մոսիա** 1.16: Գունդը, կամ ուղեցույցը կոչվեց Լիահոնա՝ **Ալմա** 37.38: Լիահոնան համեմատվեց Քրիստոսի խոսքերի հետ՝ **Ալմա** 37.43–45: Մորմոնի Գրքի Երեք Վկաները պետք է տեսնեին Լեքիին տրված ուղեցույցը՝ **ՎևոՒՒ** 17.1:

ԼԻԲԵՐԹԻ ԲԱՆՏ, ՄԻՍՍՈՒՐԻ
(ԱՄՆ): *Տես նաև* Սմիթ Ջոզեֆ կրտսեր

Փոքրիկ մի բանտ, որի մեջ 1838-ի նոյեմբերից մինչև 1839-ի ապրիլ անարդարացիորեն բանտարկվել էին Մարգարե Ջոզեֆ Սմիթը և ուրիշներ: Գտնվելով նման դժվարին պայմաններում՝ Ջոզեֆը որոշ հայտնություններ ստացավ, մարգարեություններ արեց և ոգեշնչվեց Սրբերին

կարևոր նամակ գրել, որի քաղվածքն ընդգրկված է Վարդապետություն և Ուխտերի 121–123 բաժիններում:

ԼԻՄՔԻ: *Տես նաև* Նոյ՝ Ջենիֆի որդի

Մորմոնի Գրքում՝ Նեփիացի արդար թագավոր Նեփիի երկրում. նա թագավոր Նոյի տղաներից մեկն էր (Մոսիա 7.7–9): Թագավոր Լիմքին ուխտի մեջ մտավ՝ ծառայելու Աստծուն (Մոսիա 21.32): Նա իր ժողովրդին դուրս հանեց Լամանացիների գերությունից և վերադարձավ Չարահեմլա (Մոսիա 22):

ԼՅՈՒՑԻՖԵՐ: *Տես նաև* Դժոխք. Դև. Կործանիչ. Կորստի որդիներ. Հակաքրիստոս

Այս անունը նշանակում է Ամենապայծառ կամ Լուսաբեր: Նա հայտնի է նաև որպես Արչալույսի Որդի: Լյուցիֆերը Երկնային Հոր հոգեղեն զավակներից էր և նախամահկանացու կյանքում ապստամբության առաջնորդը: Լյուցիֆեր (Արուսյակ) անունը միայն մեկ անգամ է հայտնվում Աստվածաշնչում (Ես. ԺԳ.12): Վերջին օրերի հայտնությունները լրացուցիչ տեղեկություններ են տալիս Լյուցիֆերի անկան մասին (ՎևոՒՒ 76.25–29):

Լյուցիֆերն ընկել էր նախամահկանացու գոյության ժամանակ՝ **Ես. ԺԳ.12** (Դուկ. Ժ.18, 2 Նեփի 24.12): Իր անկումից հետո, նա դարձավ Սատանան և ղեկ՝ **ՎևոՒՒ** 76.25–29 (Մովսես 4.1–4):

ԼՎԱՅՎԵԼ, ԼՎԱՅՎԱՍԾ, ԼՎԱՅՈՒՄՆԵՐ: *Տես նաև* Սկրտություն, Սկրտել. Քավել, Քավություն

Ֆիզիկապես կամ հոգեպես մաքրվել: Ապաշխարող անձը, խորհրդանշաբար, Հիսուս Քրիստոսի քավիչ գոհաբերությամբ կարող է մաքրվել մեղքերից ծանրացած կյանքից ու դրա հետևանքներից: Որոշ լվացումներ, որոնք կատարվում են քահանայության պատշաճ իշխանության ներքո, ծառայում են որպես սրբազան արարողություններ:

Քահանան իր հանդերձները ջրով ողողի և իր մարմինը ջրով լվանա՝ **ԹՎ. ԺԹ.7**: Իսպառ լվա ինձ իմ անօրինությունից՝ **Սաղ. ԾԱ.2, 7**: Լվացվեք, մաքրվեք,

դադարեք չարություն գործել՝ **Ես.** 1.16–18: Հիսուսը վազ իր Առաքյալների ոտքերը՝ **Հովհ.** ԺԳ.4–15 (ՎևոՒ 88.138–139): Մկրավիր և քո մեղքերը վա՛ր **Գոր.** ԻԲ.16 (Ալմա 7.14, ՎևոՒ 39.10): Ոչ ոք չի կարող փրկվել մինչև նրա հանդերձները վազված չլինեն ճերմակ՝ **Ալմա** 5.21 (3 Նեփի 27.19): Նրանց հանդերձները վազվեցին ճերմակ՝ Քրիստոսի արյան միջոցով՝ **Ալմա** 13.11 (Եթեր 13.10): Որպեսզի, պատվիրանը պահելով, նրանք կարողանան վազվել և մաքրվել իրենց բոլոր մեղքերից՝ **ՎևոՒ** 76.52: Չեր օծումները և ձեր վազումները կարգված են իմ սուրբ տան արարողությամբ՝ **ՎևոՒ** 124.39–41:

ԼՈՒԾ: *Տե՛ս նաև* Աշակերտ

Հարմարանք, որը դրվում է անասունների կամ մարդկանց պարանոցին՝ միմյանց լծակցելու համար: Քրիստոսի լուծն աշակերտության խորհրդանիշ է, մինչդեռ ճորտության լուծը ճնշման խորհրդանիշ է:

Իմ լուծը քաղցր է, և իմ բեռը՝ թեթև՝ **Մատ.** ԺԱ.29–30: Անհավասար լծակից մի եղեք անհավաստներից՝ **Բ Կոր.** 2.14: Ծառայության լծի տակ մի մտեք՝ **Գաղ.** Ե.1: Ոչ էլ փափագում ենք որևէ մեկին բերել ճորտության լծի՝ **Ալմա** 44.2: Սբերի տառապանքները երկաթե լուծ է, ամուր կապանք է, և դժոխքի շղթաներն են՝ **ՎևոՒ** 123.1–3, 7–8:

ԼՈՒՅՍ, ԲԻՒՍՈՍԻ ԼՈՒՅՍ: *Տե՛ս նաև* Բանականություն, Բանականություններ, Խղճմանք, Հիսուս Քրիստոս, Ճշմարտություն, Սուրբ Հոգի

Աստվածային էներգիա, գորություն կամ ազդեցություն, որը բխում է Աստծուց, Քրիստոսի միջոցով, և կյանք ու լույս է տալիս բոլոր բաներին: Դա այն օրենքն է, որով կառավարվում են բոլոր բաները երկնքում և երկրի վրա (ՎևոՒ 88.6–13): Այն օգնում է նաև մարդկանց՝ հասկանալու ավետարանի ճշմարտությունները և օգնում է՝ նրանց դնել ավետարանի այն ճանապարհի վրա, որը տանում է դեպի փրկություն: (Հովհ. Գ.19–21, ԺԲ.46, Ալմա 26.15, 32.35, ՎևոՒ 93.28–29, 31–32, 40, 42):

Քրիստոսի լույսը չպետք է շփոթել Սուրբ Հոգու հետ: Քրիստոսի լույսն անձնավորությունն է: Այն ազդեցություն է, որը գալիս է Աստծուց և մարդուն պատրաստում է ստանալ Սուրբ Հոգին: Այն ազդեցություն է, որը բարիք է բերում բոլոր մարդկանց կյանք (Հովհ. Ա.9, ՎևոՒ 84.46–47):

Քրիստոսի լույսի դրսևորումներից մեկը խիղճն է, որը մարդուն օգնում է ընտրել ճշտի և սխալի միջև (Մոր. 7.16): Երբ մարդիկ ավելի շատ են սովորում ավետարանի մասին, նրանց խիղճը դառնում է ավելի նրբազգաց (Մոր. 7.12–19): Մարդիկ, ովքեր լսում են Քրիստոսի լույսին, առաջնորդվում են դեպի Հիսուս Քրիստոսի ավետարանը (ՎևոՒ 84.46–48):

Տերն իմ լույսն է՝ **Մաղ.** ԻԷ.1: Եկեք քայլենք Տիրոջ լույսի մեջ՝ **Ես.** Բ.5 (2 Նեփի 12.5): Տերը հավիտենական լույս կլինի՝ **Ես.** Ա.19: Ճշմարիտ լույսը լուսավորում է ամեն մարդու, որ գալիս է աշխարհ՝ **Հովհ.** Ա.4–9 (Հովհ. Գ.19, ՎևոՒ 6.21, 34.1–3): Ես եմ աշխարհի լույսը՝ **Հովհ.** Ը.12 (Հովհ. Թ.5, ՎևոՒ 11.28): Ինչ-որ լույս է՝ բարի է **Ալմա** 32.35: Քրիստոսն է կյանքը և լույսն աշխարհի՝ **Ալմա** 38.9 (3 Նեփի 9.18, 11.11, Եթեր 4.12): Քրիստոսի լույսը տրված է ամեն մարդու, որ նա կարողանա բարին տարբերել չարից՝ **Մոր.** 7.15–19: Այն, ինչ Աստծուց է, լույս է և ավելի ու ավելի է պայծառանում, մինչև կատարյալ օր է դառնում՝ **ՎևոՒ** 50.24: Հոգին լույս է տալիս ամեն մարդու՝ **ՎևոՒ** 84.45–48 (ՎևոՒ 93.1–2): Ով որ պահում է նրա պատվիրանները, լույս և ճշմարտություն է ստանում՝ **ՎևոՒ** 93.27–28: Լույսը և ճշմարտությունը լքում են այն չարագործին՝ **ՎևոՒ** 93.37:

ԽԱԲԿԱՆՔ, ԽԱԲԵԼ, ԽԱԲԵՌՈՒԹՅՈՒՆ: *Տե՛ս նաև* Նենգություն, Ստել

Սուրբ գրքերում խաբել նշանակում է այնպես անել, որ մարդ հավատա մի բանի, ինչը ճշմարիտ չէ:

Նա, ով նենգությամբ երդում չի անում, վեր կգնա Տիրոջ արքը՝ **Մաղ.** ԻԳ.4: Խաբող մարդուց ազատի ինձ՝ **Մաղ.** ԽԳ.1: Վայ նրանց, որ չարին ատում են բարի, և բարուն ատում են չար՝ **Ես.** Ե.20 (2 Նեփի 15.20): Թող ոչ ոք իր անձը չխաբի՝

Ա Կոր. Գ.18: Թող ոչ ոք չխաբի ձեզ դատարկ խոսքերով՝ **Եփես.** Ե.6: Չար մարդիկ պիտի մոլորեցնեն և իրենք մոլորվեն՝ **Բ Տիմ.** Գ.13: Սատանան, որը ողջ աշխարհին մոլորեցնում էր, վայր գցվեց՝ **Հայտ.** ԺԲ.9: Սատանան կապվեց, որ այլևս չմոլորեցնի ազգերին՝ **Հայտ.** Ի.1-3: Տերը չի կարող խաբվել՝ **2 Նեփի** 9.41: Եթե դուք հետևեք Որդուն, չգործելով ոչ մի խաբեություն Աստծո առաջ, դուք կստանաք Սուրբ Հոգին՝ **2 Նեփի** 31.13: Մերենը խոստովանեց, որ խաբված է եղել դևի գորուքյամբ՝ **Հակոբ** 7.18: Թագավոր Նոյի մարդիկ խաբվել էին շողոքորթ խոսքերից՝ **Մոսիա** 11.7: Իմաստունները վերցրել են Սուրբ Հոգին, որպես իրենց ուղեկից, և չեն խաբվել՝ **ՎևոՒ** 45.57: Վայ նրանց, ովքեր խաբեբաներ են՝ **ՎևոՒ** 50.6: Նա դարձավ Սատանա՝ բոլոր ստերի հայրը, որ խաբի և կուրացնի մարդկանց՝ **Մովսես** 4.4:

ԽԱՂԱՂԱՐԱՐ: *Տե՛ս նաև*
Խաղաղություն

Խաղաղություն բերող կամ դրան նպաստող անձնավորություն (Մատ. Ե.9, 3 Նեփի 12.9): Խաղաղարար կարող է կոչվել նաև նա, ով հռչակում է ավետարանը (Մոսիա 15.11-18):

ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ: *Տե՛ս նաև*
Խաղաղարար. Հազարամյակ.
Հանգիստ

Սուրբ գրքերում խաղաղությունը կարող է նշանակել կա՛մ ազատություն ընդհարումներից ու ընդվզումներից, կա՛մ ներքին անդորր և հանգստություն, որը գալիս է այն Հոգուց, որն Աստված տալիս է իր հավատարիմ Սրբերին:

Ազատություն ընդհարումներից ու ընդվզումներից. Նա դադարեցնում է պատերազմները՝ **Մաղ.** ԽՁ.9: Նրանք այլևս պատերազմի չեն վարժվի՝ **Ես.** Բ.4: Մարդկանց հետ խաղաղություն ունեցեք. ձեր անձերի համար վրեժխնդրություն մի արեք՝ **Հռովմ.** ԺԲ.18-21: Երկրում դեռ խաղաղություն էր տիրում՝ **4 Նեփի** 1.4, 15-20: Մերժեք պատերազմը և խաղաղություն հռչակեք՝ **ՎևոՒ** 98.16: Բարձրացրեք խաղաղության դրոշը՝ **ՎևոՒ** 105.39:

Աստծո խաղաղությունը հնազանդներին.

Փրկիչը կկոչվի Խաղաղության Իշխան՝ **Ես.** Թ.6: Խաղաղություն չկա ամբարիշտներին՝ **Ես.** ԽԸ.22: Երկնային գործի մի քազմություն օրհնում էր Աստծուն և ասում. Փառք Աստծուն բարձունքում և երկրի վրա խաղաղություն՝ **Ղուկ.** Բ.13-14: Խաղաղություն են բողոնում ձեզ՝ **Հովհ.** ԺԴ.27: Աստծո խաղաղությունը վեր է ամեն հասկացողությունից՝ **Փիլ.** Դ.7: Բենիամին քազավորի ժողովուրդը խղճմտանքի խաղաղություն ստացավ՝ **Մոսիա** 4.3: Ի՛նչ գեղեցիկ են սարերի վրա նրանց ոտքերը, ովքեր խաղաղություն են հրատարակում՝ **Մոսիա** 15.14-18 (Ես. ԾԲ.7): Ալման աղաղակեց առ Տերը և խաղաղություն գտավ՝ **Ալմա** 38.8: Արդարների հոգիներն ընդունվում են խաղաղության մի վիճակում՝ **Ալմա** 40.12: Ես քո մտքին խաղաղություն չխոսեցի՞՞ այդ հարցի վերաբերյալ՝ **ՎևոՒ** 6.23: Քայլիք իմ Հոգու հեզուքյամբ և դու խաղաղություն կունենաս ինձանում՝ **ՎևոՒ** 19.23: Նա, ով արդարության գործեր է կատարում, խաղաղություն կստանա՝ **ՎևոՒ** 59.23: Չեր վրա հագեք գթության կապը, որը կատարելության և խաղաղության կապն է՝ **ՎևոՒ** 88.125: Որդիս, խաղաղություն քո հոգուն՝ **ՎևոՒ** 121.7: Հայտնաբերելով, որ ավելի մեծ խաղաղություն կար, ես փնտրեցի հայրերի օրհնությունները՝ **Աբր.** 1.2:

ԽԱՉ: *Տե՛ս նաև* Գողգոթա.
Խաչելություն. Հաղորդություն.
Հիսուս Քրիստոս. Քավել,
Քավություն

Փայտե կառույց, որի վրա խաչվեց Հիսուս Քրիստոսը (Մար. ԺԵ.20-26): Ներկայումս շատերն աշխարհում մտածում են դրա մասին՝ որպես Քրիստոսի խաչելության և քավիչ զոհաբերության խորհրդանիշ. այնուամենայնիվ, Տերը հաստատել է իր խաչելության և զոհաբերության իր իսկ խորհրդանիշները՝ հաղորդության հացը և ջուրը (Մատ. ԻՁ.26-28. ՎևոՒ 20.40, 75-79): Սուրբ գրքերում՝ իրենց խաչը վերցնողները նրանք են, ովքեր այնքան սիրում են Հիսուս Քրիստոսին, որ հրաժարվում են ամեն անաստվածությունից ու ամեն աշխարհիկ ցանկությունից և պահում են նրա պատվիրանները (ՉՍԹ՝ Մատ. ԺՁ.25-26):

վերցրու խաչը և հետևիր ինձ՝ **Մար.** Ժ.21 (3 Նեփի 12.30, ՎևՈՒ 23.6): Հիսուսը հանձն առավ խաչը և նստեց Աստծո գահի աջ կողմում՝ **Եբր.** ԺԲ.2: Նա խաչ բարձրացվեց և սպանվեց աշխարհի մեղքերի համար՝ **1 Նեփի** 11.33: Նրանք, ովքեր դիմացել են աշխարհի խաչերին, կժառանգեն Աստծո արքայությունը՝ **2 Նեփի** 9.18: Իմ Հայրն ուղարկեց ինձ, որպեսզի ես խաչի վրա բարձրացվեմ՝ **3 Նեփի** 27.14–15: Նա, ով չի կամենում վերցնել իր խաչը և հետևել ինձ, և պահել իմ պատվիրանները, նույնը չպետք է փրկվի՝ **ՎևՈՒ** 56.2: Նայիր Մարդու Որդուն՝ խաչի վրա բարձրացված՝ **Մովսես** 7.55:

ԽԱՉԵԼՈՒԹՅՈՒՆ: *Տե՛ս նաև*
Գողգոթա. Հիսուս Քրիստոս. Խաչ.
Քավել, Քավություն

Պատժի հռոմեական ձև, որն ընդունված էր Նոր Կտակարանի ժամանակներում, ըստ որի անընդ մահվան էր ենթարկվում խաչին կապելով կամ գամելով նրա ձեռքերն ու ոտքերը: Սովորաբար այդպես վարվում էին ստրուկների և ստորագույն հանցագործների հետ: Խաչելությանը սովորաբար նախորդում էր խարազանելը կամ մորակելը (Մար. ԺԵ.15): Խաչվող անձին սովորաբար ստիպում էին տանել իր խաչը մինչև պատժի վայրը (Հովհ. ԺԺ.16–17): Նրա հագուստները սովորաբար վերցնում էին դատավճիռն իրականացրած զինվորները (Մատ. ԻԵ.35): Խաչն այնպես էր դրվում հողի մեջ, որ անձի ոտքերը միայն մեկ-երկու ոտնաչափ էր հողից բարձր լինում: Չինվորները հետևում էին խաչին, մինչև որ խաչված անընդ մահանում էր, ինչը երբեմն մինչև երեք օր տևում էր (Հովհ. ԺԺ.31–37):

Հիսուս Քրիստոսը խաչվեց, որովհետև անհավատների մի խումբ խարդախությամբ նրան մեղադրեցին Կեսարի դեմ խռովության մեջ և աստվածամարգության մեջ, որովհետև նա ասում էր, որ Աստծո Որդին է: Հիսուսին ծիրանի հանդերձ հազցրին (Հովհ. ԺԺ.2), փչերից պսակ դրեցին և այլ վիրավորանքներ հասցրեցին (Մատ. ԻԶ.67, Մար. ԺԳ.65):

Ամբարիշտները ծակեցին Մեսիայի ձեռքերն ու ոտքերը՝ **Մաղ.** ԻԲ.11–18: Քրիստոսը մորթվելու կտարվի, ինչպես մի

ոչխար՝ **Ես.** ԾԳ.7: Հիսուսը կանխավ պատմեց իր խաչելության մասին՝ **Մատ.** Ի.18–19: Նկարագրվում է Քրիստոսի խաչելությունը՝ **Մատ.** ԻԵ.22–50 (Մար. ԺԵ.22–37, Ղուկ. ԻԳ.26–46, Հովհ. ԺԺ.17–30): Նեփին տեսիլքում տեսավ Աստծո Գառի խաչելությունը՝ **1 Նեփի** 11.33: Նեփին հաղորդել է Քրիստոսի տառապանքների և խաչելության մասին՝ **1 Նեփի** 19.9–14: Հակոբը հաղորդել է Իսրայելի Սուրբի ծառայության և խաչելության մասին՝ **2 Նեփի** 6.9: Ամերիկայում փոթորիկները, երկրաշարժերը, հրդեհները և պտուտահողմերը հաստատեցին Քրիստոսի խաչելությունը Երուսաղեմում՝ **3 Նեփի** 8: Ես Հիսուսն եմ, որը խաչվել էր՝ **ՎևՈՒ** 45.51–52: Քրիստոսի ծառայությունը բանտում գտնվող հոգիների մեջ սահմանափակվեց իր մահվան և հարության միջև ընկած ժամանակով՝ **ՎևՈՒ** 138.27:

ԽԱՎԱՐ ԳՐՄԻ: *Տե՛ս* Գժոխք

ԽՂՃՄՏԱՆԶ: *Տե՛ս նաև* Լույս, Քրիստոսի լույս

Քրիստոսի Լույսից եկող ճշտի և սխալի ներքին զգացում բոլոր մարդկանց մեջ (Մոր. 7.16): Մենք ծնվում ենք ճիշտը սխալից տարբերելու բնական ունակությամբ՝ Քրիստոսի Լույսի շնորհիվ, որը տրված է ամեն մարդու (ՎևՈՒ 84.46): Այդ ձիրքը կոչվում է խղճմտանք: Այն մեզ դարձնում է պատասխանատու էակներ: Մեր մյուս ձիրքերի պես, խղճմտանքը ևս կարող է մահանալ մեղքի կամ սխալ օգտագործման միջոցով:

Գպիրներն ու Փարիսեցիներն իրենց խղճմտանքից հանդիմանվեցին՝ **Հովհ.** Ը.9: Խղճմտանքը նույնպես վկայություն է տալիս՝ **Հռովմ.** Բ.14–15: Ուրացածների խղճմտանքը տաք արդուկով դադարված՝ բթացած է՝ **Ա Տիմ.** Գ.2: Մարդիկ բավականաչափ ուսուցանված են, որ տարբերեն բարին չարից՝ **2 Նեփի** 2.5: Բենիամին բազավորը մաքուր խղճմտանք ուներ Աստծո առաջ՝ **Մոսիա** 2.15: Նեփիացիները լցվեցին ուրախությամբ՝ ունենալով խղճմտանքի խաղաղություն՝ **Մոսիա** 4.3: Չիրգումը տակնուվրա էր լինում սեփական մեղքի գիտակցումից՝ **Ալմա** 14.6: Մեզ տրվում է ուրախություն կամ խղճի խայթ՝ մեր ցանկությունների

համաձայն՝ **Ալմա** 29.5: Պատիժն ու արդար օրենքը բերում են խղճի խայթ՝ **Ալմա** 42.18: Քրիստոսի Հոգին տրված է ամեն մարդու, որ նա կարողանա բարին չարից տարբերել՝ **Մոր.** 7.16: Ամեն անհատ պետք է ունենա խղճի գործադրման պատասխան՝ **ՎևոՒ** 134.2: Իմ խիղճը մաքուր է՝ **ՎևոՒ** 135.4: Մենք պահանջում ենք մեր խղճի թելադրանքով Աստծուն երկրպագելու արտոնությունը՝ **ՀՀ** 1.11:

ԽՄԱԸԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ: *Տե՛ս*

Գաղտնի Խմբակություններ

ԽՄԵԼ, ԽՄԱԾ: *Տե՛ս* Իմաստության Խոսք

ԽՆԴԻԵԼ: *Տե՛ս նաև* Աղոթք

Տեղեկանալ, հարցնել կամ դիմել Աստծուն՝ հատուկ շնորհի համար:

Խնդրեք և կտրվի ձեզ՝ **Մատ.** Է.7: Եթե ձեզանից որևէ մեկն իմաստության կարիք ունի, թող խնդրի Աստծուն՝ **Հակ.** Ա.5 (ՁՄ–Պ 1.7–20): Խնդրեք ինձ հավատքով՝ **1 Նեփի** 15.11: Եթե դուք չեք կարողանում հասկանալ այս խոսքերը, դա կլինի, որովհետև դուք չեք խնդրում՝ **2 Նեփի** 32.4: Խնդրեք սրտի անկեղծությամբ՝ **Մոսիա** 4.10: Աստված շնորհում է ձեզ ինչ որ խնդրում եք, որը ճիշտ է, հավատքով՝ **Մոսիա** 4.21: Հարցրեք Աստծուն, թե արդյոք այս բաները ճիշտ չեն՝ **Մոր.** 10.4: Նրանք խավարն ավելի շատ են սիրում, քան լույսը. ուստի նրանք չեն կամենում խնդրել ինձ՝ **ՎևոՒ** 10.21: Չեզ պատվիրված է բոլոր բաներում խնդրել Աստծուն՝ **ՎևոՒ** 46.7:

ԽՈՆԱՐՀԵՑՆԵԼ, ԽՈՆԱՐՀՈՒ-
ԹՅՈՒՆ: *Տե՛ս նաև* Աղբատ.

Թուլություն. Կոտրված սիրտ. Հեզ, Հեզություն. Հպարտություն

Հեզ և սովորելու ընդունակ դարձնելը կամ հեզ և սովորելու ընդունակ լինելը: Խոնարհությունը ներառում է Աստծուց մեր կախվածությունն ընդունելը և նրա կամքին հնազանդվելու ցանկությունը:

Աստված քեզ քառասուն տարի ման ածեց անապատում, որ խոնարհեցնի քեզ՝ **Բ Օր.** Ը.2: Իմ անձը ծոնով խոնարհեցնում էի՝ **Մաղ.** ԼԵ.13: Լավ է մի աղքատ և իմաստուն երեխան, քան թե ձեր և անմիտ

բազավորը՝ **Ժող.** Գ.13: Տերը բնակվում է նրա հետ, ով խոնարհ է՝ **Ես.** ԾԷ.15: Ով որ իր անձն այս երեխայի մնան խոնարհեցնի, նա է մեծ երկնքի արքայության մեջ՝ **Մատ.** ԺԸ.4: Ով որ իր անձը խոնարհեցնի՝ կբարձրանա՝ **Մատ.** ԻԳ.12 (Ղուկ. ԺԳ.11, ԺԸ.14): Հիսուսն իրեն խոնարհեցրեց և հնազանդ եղավ մինչև մահ՝ **Փիլ.** Բ.8 (Ղուկ. ԻԲ.42, ԻԳ.46): Աստված հպարտներին հակառակ է կենում, բայց խոնարհներին շնորհք է տալիս՝ **Ա Պետ.** Ե.5–6 (2 Նեփի 9.42): Խոնարհեցրեք ձեզ, մինչև համեստության խորքերը՝ **Մոսիա** 4.11 (2 Նեփի 9.42, 3 Նեփի 12.2): Դուք բավականաչափ խոնարհ եք եղել՝ **Ալմա** 5.27–28: Ժողովրդի ավելի խոնարհի մասը դառնում էր ավելի ու ավելի ուժեղ իր համեստության մեջ՝ **Հել.** 3.33–35: Ես մարդկանց թուլություն եմ տալիս, որ նրանք կարողանան լինել խոնարհ՝ **Եթեր** 12.27: Խոնարհությունը որակում է մկրտության համար՝ **ՎևոՒ** 20.37: Խոնարհեցրեք ձեզ իմ առաջ, և դուք կտեսնեք ինձ և կիմանաք, որ ես եմ՝ **ՎևոՒ** 67.10: Եղիք խոնարհ և Տերը կպատասխանի քո աղոթքներին՝ **ՎևոՒ** 112.10: Թող նա, ով բանիմաց չէ, իմաստություն սովորի՝ իրեն խոնարհեցնելով՝ **ՎևոՒ** 136.32: Իմ Հոգին աշխարհի է ուղարկվել, որ լուսավորի խոնարհներին՝ **ՎևոՒ** 136.33:

ԽՈՍՍԱՑՎԱԾ ԵՐԿԻՐ

Հողեր, որոնք, որպես ժառանգություն՝ Տերը խոստանում է իր հավատարիմ հետևորդներին, և հաճախ, նաև նրանց հետնորդներին: Խոստացված երկրներ շատ կան: Մորմնի Գրքում, հաճախ, խոստացված երկիրը, որի մասին խոսվում է, Ամերիկյան աշխարհամասն է:

Քո սերնդին պիտի տամ այս երկիրը՝ **ԾՆ.** ԺԲ.7 (Աբր. 2.19): Ես քեզ և քո սերնդին կտամ Քանանի երկիրը՝ **ԾՆ.** ԺԷ.8 (ԾՆ. ԻԸ.13): Քանանում Մովսեսը նշեց հողերի սահմաններն Իսրայելի համար՝ **Թվ.** ԼԳ.1–12 (Թվ. ԻԷ.12): Դուք կառաջնորդվեք խոստումի մի երկիր՝ **1 Նեփի** 2.20 (1 Նեփի 5.5): Տերն արդարներին առաջնորդում է դեպի ընտիր երկրներ՝ **1 Նեփի** 17.38: Եթե Լեքիի հետնորդները պահեն Աստծո պատվիրանները, նրանք կբարգավաճեն խոստումի երկրում՝ **2 Նեփի** 1.5–9: Իսրայելը կվերադառնա դեպի իրենց

խոստումի երկրները՝ **2 Նեփի** 24.1–2 (Ես. ԺԳ.1–2): Ինչ ազգ էլ որ տիրի այս խոստումի երկրին, պիտի ծառայի Աստծուն, այլապես նրանք կոչնչանան՝ **Եբեր** 2.9–12: Սա է խոստումի երկիրը և վայրը Միոն քաղաքի համար՝ **ՎևոՒ** 57.2: Հուդան կարող է սկսել վերադառնալ Աբրահամի հողերը՝ **ՎևոՒ** 109.64: Նոր Երուսաղեմը կկառուցվի Ամերիկյան աշխարհամասում՝ **ՀՀ** 1.10:

ԽՈՍՏՈՎԱՆԵԼ, ԽՈՍՏՈՎԱՆՈՒ-

ԹՅՈՒՆ: *Տե՛ս նաև* Ապաշխարել, Ապաշխարություն. Ներել

Սուրբ գրքերում *խոստովանել* բառն օգտագործվում է առնվազն երկու իմաստով. Մի իմաստով՝ խոստովանել նշանակում է հայտնի դարձնել հավատքն ինչ-որ բանի հանդեպ, ինչպես օրինակ՝ խոստովանել, որ Հիսուսը Քրիստոսն է (Մատ. Ժ.32, Հովմ. Ժ.9, Ա Հովի. Գ.1–3, ՎևոՒ 88.104):

Մեկ այլ իմաստով՝ խոստովանել նշանակում է ընդունել մեղավորությունը, ինչպես օրինակ՝ մեղքերը խոստովանել: Բոլոր մարդկանց պարտականությունն է՝ իրենց բոլոր մեղքերը խոստովանել Տիրոջը և ներում ստանալ նրանից (ՎևոՒ 58.42–43): Անհրաժեշտության դեպքում մեղքերը պետք է խոստովանել այն անձին կամ անձանց, որոնց հանդեպ մեղանչել ենք: Լուրջ մեղքերը պետք է խոստովանել Եկեղեցու պաշտոնյային (մեծ մասամբ, եպիսկոպոսին):

Նա պետք է խոստովանի՝ ինչու՞մ որ մեղք է գործել՝ **Ղև. Ե.5**: Նրանք պետք է խոստովանեն իրենց անօրինությունը՝ **Ղև. ԻԶ.40–42**: Իսրայելի Տեր Աստծուն փառք տուր և նրան խոստովանիր՝ **Հես. Է.19**: Իրենց մեղքերը խոստովանելով՝ մարդիկ մկրտվում էին Հորդանանի մեջ նրա կողմից՝ **Մատ. Գ.5–6**: Օրինազանցը, որը խոստովանում է իր մեղքերը, պիտի ներվի՝ **Մոսիա** 26.29: Խոստովանիր քո մեղքերը, չլինի քե դու պատիժներ կրես՝ **ՎևոՒ** 19.20: Ապաշխարողները կխոստովանեն և կրողեն իրենց մեղքերը՝ **ՎևոՒ** 58.43: Տերը ողորմած է նրանց հանդեպ, ովքեր խոնարհ սրտով խոստովանում են իրենց մեղքերը՝ **ՎևոՒ** 61.2: Տերը ներում է նրանց մեղքերը, ովքեր խոստովանում են և ներում են խնդրում՝ **ՎևոՒ** 64.7:

ԽՈՍՏՈՒՄԻ ՍՈՒՐԲ ՀՈԳԻ: *Տե՛ս նաև* Սուրբ Հոգի

Սուրբ Հոգին Խոստումի Սուրբ Հոգին է (Գոր. Բ.33): Նա հաստատում է մարդկանց արդար գործերի, արարողությունների և ուխտերի ընդունելի լինելն Աստծո կողմից: Խոստումի Սուրբ Հոգին Հորը վկայում է, որ փրկության արարողությունները կատարվել են պատշաճ ձևով, և որ դրանց հետ կապված ուխտերը պահպանվել են:

Նրանք, ովքեր կնքվում են Խոստումի Սուրբ Հոգով, ստանում են այն ամենը, ինչ ունի Հայրը՝ **ՎևոՒ** 76.51–60 (Եփես. Ա.13–14): Բոլոր ուխտերն ու կատարումները պետք է կնքվեն Խոստումի Սուրբ Հոգով, որպեսզի ուժ ունենան այս կյանքից հետո՝ **ՎևոՒ** 132.7, 18–19, 26:

ԽՈՐԱՆ: *Տե՛ս նաև* Սրբությանց Սրբություն. Տաճար՝ Տիրոջ տուն. Ուխտի Տապանակ

Տիրոջ տուն՝ Իսրայելացիների երկրագության կենտրոնը Եգիպտոսից դուրս գալուց հետո: Իրականում խորանը փոխադրելի տաճար էր, որը կարելի էր մասերի բաժանել և կրկին հավաքել: Իսրայելի զավակներն օգտագործում էին խորանը մինչև որ կառուցեցին Մոդոնոնի տաճարը (ՎևոՒ 124.38):

Խորանի ձևն Աստված հայտնի դարձրեց Մովսեսին (Ել. ԻԶ–ԻԷ), և Իսրայելի զավակներն այն կառուցեցին ըստ այդ ձևի (Ել. ԼԵ–Խ): Երբ խորանը պատրաստ էր, մի ամպ պատեց վրանը, և Տիրոջ փառքը լցրեց խորանը (Ել. Խ.33–34): Ամպն Աստծո ներկայության նշան էր: Գիշերն այն կրակի տեսք ուներ: Երբ ամպը կանգ էր առնում վրանի վրա, Իսրայելի զավակները ճամբար էին դնում: Երբ այն շարժվում էր, նրանք շարժվում էին ամպի հետ (Ել. Խ.36–38, Թվ. Թ.17–18): Իսրայելի զավակները խորանն իրենց հետ տանում էին՝ անապատում իրենց դեգերումների ժամանակ և Քանանի երկիրը նվաճելիս: Այդ նվաճումից հետո, խորանը տեղադրվեց Մելովում, այն տեղում, որը Տերն էր ընտրել (Հես. ԺԸ.1): Այն բանից հետո, երբ Իսրայելի զավակները կառուցեցին Մոդոնոնի տաճարը, խորանն ամբողջովին անհետացավ պատմությունից:

Տերը և Եսայիան, օգտագործել են խորանը, որպես Սիոն և Երուսաղեմ քաղաքների խորհրդանիշ Տիրոջ երկրորդ գալըստի ժամանակ (Ես. ԼԳ.20, Մովսես 7.62):

ԽՈՐՀԵԼ: *Տե՛ս նաև* Աղոթք. Հայտնություն

Մտորել և խորհրդածել, հաճախ սուրբ գրությունների կամ Աստծո այլ բաների մասին: Երբ խորհրդածելն ուղեկցվում է աղոթքով, Աստծո բաների մասին խորհրդածելը կարող է հայտնություն և հասկացողություն բերել:

Մարիամն իր սրտում մտածում էր այդ բաների մասին՝ **Ղուկ.** Բ.19: Մինչ ես խորհում էի իմ սրտում, ես տարվեցի հեռու՝ **1 Նեփի** 11.1: Սիրտս խորհում է սուրբ գրքերի մասին՝ **2 Նեփի** 4.15: Նեփին գնաց իր ճանապարհով՝ խորհելով այն բաների վրա, ինչ Տերը ցույց էր տվել՝ **Հեյ.** 10.2–3: Գնացեք ձեր սննդը և խորհեք այն բաների վրա, որոնք ես ասացի՝ **3 Նեփի** 17.3: Հիշեք, թե որքան ողորմած է եղել Տերը և խորհեք ձեր սրտում՝ **Մճք.** 10.3: Խորհիր այն բաների վրա, որոնք ստացել ես՝ **ՎևոՒ** 30.3: Մինչ մենք խորհրդածում էինք այդ ամենի մասին, Տերը դիպավ մեր հասկացողության աչքերին՝ **ՎևոՒ** 76.19: Ես նստել էի իմ սենյակում՝ խորհելով սուրբ գրությունների մասին՝ **ՎևոՒ** 138.1–11: Նորից ու նորից ես անդրադարձա դրան՝ **ՋՍ–Պ** 1.12:

ԽՈՐՀՐԳԱՆՇԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Օգտագործել մի բան՝ որպես մեկ այլ բանի նմանություն կամ պատկեր: Խորհրդանշակամությունը սուրբ գրքերում օգտագործում է ծանոթ մի առարկա, իրադարձություն կամ իրավիճակ՝ ավետարանի որևէ սկզբունք կամ ուսմունք ներկայացնելու համար: Օրինակ՝ Մորմոնի Գրքի Ալմա մարգարեն օգտագործել է սերնդ՝ Աստծո խոսքը ներկայացնելու համար (Ալմա 32):

Բոլոր սուրբ գրքերում մարգարեներն օգտագործել են խորհրդանիշների լեզուն, որպեսզի ուսուցանեն Հիսուս Քրիստոսի մասին: Այդ խորհրդանիշներն են եղել ծեսերն ու արարողությունները (Մովսես 6.63), գոհաբերությունները (Եբր. Թ.11–15, Մովսես 5.7–8), հաղորդությունը (Ղուկ.

ԻԲ.13–20, ՋՍԹ՝ Մար. 14.20–24) և մկրտությունը (Հռովմ. Զ.1–6, ՎևոՒ 128.12–13): Աստվածաշնչյան շատ անուններ խորհրդանշական են: Հին Կտակարանի խորանի ծեսերը և Մովսեսի օրենքը հավերժական ճշմարտություններ են ներկայացրել (Եբր. Ը–Ժ, Մոսիս 13.29–32, Ալմա 25.15, Հեյ. 8.14–15): Որպես օրինակներ՝ տե՛ս նաև Մատ. Ե.13–16, Հովի. Գ.14–15, Հակոբ 4.5, Ալմա 37.38–45:

ԽՈՐՀՈՒՐԳ: *Տե՛ս նաև* Մարգարե

Խրատներ, զգուշացումներ, առաջարկություններ և հրահանգներ՝ Տիրոջ և նրա կարգված ղեկավարների կողմից:

Ես քեզ խորհուրդ եմ տալիս՝ **Ել.** ԺԸ.19: Աստված կառաջնորդի իճն իր խորհրդով՝ **Սադ.** ՀԳ.24: Խորհրդի բացակայությունից ժողովուրդն ընկնում է՝ **Առակ.** ԺԱ.14: Փարիսեցիներն ու օրինականներն անարգեցին Աստծո խորհուրդը՝ **Ղուկ.** Է.30: Ուսյալ լինելը լավ է, եթե նրանք ակնաջ են դնում Աստծո խորհուրդներին՝ **2 Նեփի** 9.29: Լսեք խորհուրդը նրա, ով կարգել է ձեզ՝ **ՎևոՒ** 78.2: Խորհուրդ ստացիր նրանից, ում ես նշանակել եմ՝ **ՎևոՒ** 108.1: Նա տենչում է հաստատել իր խորհուրդը, այն խորհրդի փոխարեն, որը կարգել են ես՝ **ՎևոՒ** 124.84: Ակնաջ դիր իմ ծառա Ջոզեֆի խորհրդին՝ **ՎևոՒ** 124.89: Եթե մարդ չի փնտրում իմ խորհուրդը, նա գործություն չի ունենա՝ **ՎևոՒ** 136.19:

ԽՈՐՀՈՒՐԳ ԵՐԿՆՔՈՒՄ: *Տե՛ս նաև*

- Նախամահկանացու Կյանք.
- Պատերազմ Երկնքում.
- Փրկագնման ծրագիր

Իրադարձություն նախամահկանացու կյանքում, երբ Հայրը ներկայացրեց իր ծրագիրն իր հոգևոր զավակներին, որոնք պիտի գային այս երկիր:

Աստծո որդիներն ուրախությունից գոչում էին՝ **Հոբ** ԼԸ.7: Աստծո աստղերից բարձր կդնեմ իմ արքող՝ **Ես.** ԺԳ.12–13: Պատերազմ եղավ երկնքում՝ **Հայտ.** ԺԲ.7–11: Նախքան ծնվելը, նրանք ստացել էին իրենց առաջին դասերը հոգիների աշխարհում՝ **ՎևոՒ** 138.56: Նախամահկանացու կյանքում Սատանան ապստամբեց՝ **Մովսես** 4.1–4: Բանականությունները կազմավորվել էին նախքան աշխարհի

ստեղծումը՝ **Աքք.** 3.22: Աստվածները խորհուրդ արեցին միմյանց հետ՝ **Աքք.** 4.26: Աստվածներն ավարտեցին աշխատանքը, որը խորհրդակցել էին կատարել՝ **Աքք.** 5.2:

ԽՈՐՀՈՒԳ՝ ՏԱԼ

Սուրբ գրքերում խորհուրդ տալն օգտագործված է խրատ կամ հրահանգ տալու իմաստով:

Ես խորհուրդ եմ տալիս քեզ, ինձանից կրակում փորձված ոսկի առ՝ **Հայտ.** 9.18: Մի փնտրեք խորհուրդ տալ Տիրոջը՝ **Հակոբ** 4.10: Եւ խորհուրդ է տալիս իմաստությամբ բոլոր իր ստեղծածներին՝ **Ալմա** 37.12: Չեր մեղքերը հասել են ինձ, որովհետև դուք փնտրում եք խորհուրդ անել ձեր իսկ ուղիներով՝ **ՎևոՒ** 56.14:

ԽՐԱՏԵԼ, ԽՐԱՏԵԼԸ: *Տե՛ս նաև*
Չախորդություն

Կատարելագործվելու կամ ավելի ուժեղ դարձնելու նպատակով՝ անհատներին կամ խմբերին տրված ուղղություն կամ պատիժ:

Մի անարգիր Ամենակարողի խրատող ձեռքը՝ **Հոբ** 5.17 (Առակ. Գ.11): Երանի այն մարդուն, ում դու խրատում ես, ով Տեր՝ **Սադ.** Գ.Գ.12: Բոլոր Սուրբ գրքերը տրվել են հանդիմանության համար, ուղղելու համար՝ **Բ Տիմ.** Գ.16: Տերը խրատում է, ում որ սիրում է՝ **Եբր.** ԺԲ.5–11: Տերը հարմար է գտնում խրատել իր ժողովրդին՝ **Մոսիա** 23.21–22: Մինչև Տերը չի խրատում իր ժողովրդին, նրանք չեն կամենում հիշել նրան՝ **Հել.** 12.3: Տերը խոսեց Հարեդի եղբոր հետ և խրատեց նրան՝ **Եթեր** 2.14: Նրանք խրատվել էին, որ կարողանային ապաշխարել՝ **ՎևոՒ** 1.27: Ում որ սիրում եմ, ես նաև խրատում եմ, որ նրանց մեղքերը ներվեն՝ **ՎևոՒ** 95.1: Բոլոր նրանք, ովքեր չեն կամենում խրատին համբերել, չեն կարող սրբագործվել՝ **ՎևոՒ** 101.2–5: Անպայման պետք է, որ իմ ժողովուրդը խրատվի, մինչև որ նա հնգաանդություն սովորի՝ **ՎևոՒ** 105.6: Նա, ով չի դիմանում խրատին, արժանի չէ իմ արքայությանը՝ **ՎևոՒ** 136.31:

ԾԱՌԱՅԵԼ: *Տե՛ս նաև* Ծառայություն.
Քահանայություն

Տիրոջ գործը կատարել երկրի վրա:

Աստծո ընտրյալ ծառաները, նրա գործում ծառայություն անելու համար պետք է կանչված լինեն Աստծուց: Երբ ճշմարիտ ծառաները կատարում են Տիրոջ կամքը, նրանք իրենց պաշտոնական պարտականություններում ներկայացնում են Տիրոջը և գործում են որպես նրա գործակալներ (ՎևոՒ 64.29), այդպիսով վարելով մարդկության փրկության համար անհրաժեշտ գործերը: Տերը տվել է Առաքյալներ, մարգարեներ, ավետարանիչներ, քահանայապետեր, յոթանասունականներ, երեցներ, եպիսկոպոսներ, քահանաներ, ուսուցիչներ, սարկավագներ, օգնություններ և կառավարություններ՝ Սրբերի կատարելագործման համար, պաշտոնի գործի համար (Եփես. Գ.11–16, Ա Կոր. ԺԲ.12–28, ՎևոՒ 20, 107):

Տերը նրան է ընտրել, որ Տիրոջ անունով ծառայություն անի՝ **Բ Օր.** ԺԸ.5: «Մեր Աստծո պաշտոնյաներ» են կոչելու ձեզ՝ **Ես.** ԿԱ.6: Մարդու Որդին չեկավ, որ իրեն ծառայեն, այլ որ ինքը ծառայի՝ **Մատ.** Ի.26–28: Ես քեզ երևացի, որ քեզ պաշտոնյա և վկա դարձնեմ՝ **Գոր.** ԻԶ.16–18: Աստված անիրավ չէ, որ մռռանա ձեր սիրո աշխատանքը, որով ծառայում էիք սրբերին՝ **Եբր.** Զ.10: Եթե որևէ մարդ ծառայում է, թող անի դա այն գործությամբ, որը տալիս է Աստված՝ **Ա Պետ.** Գ.10–11: Նրանք սովորեցնում էին և ծառայում էին միմյանց **Յ Նեփի** 26.19: Տասներկուսի պարտականությունն է՝ կարգել ավետարանչական սպասավորներ՝ **ՎևոՒ** 107.39–40: Քահանայապետը կարող է ի սպաս դրվել՝ վարելու նյութական գործերը՝ **ՎևոՒ** 107.71–72: Այդ յոթանասունականները պիտի լինեն ճամփորդող ծառայողներ՝ **ՎևոՒ** 107.93–97: Երեցները կարգված են, որ տեղի ծառայողներ լինեն իմ եկեղեցու համար՝ **ՎևոՒ** 124.137:

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ: *Տե՛ս նաև*
Բարօրություն. Մեր

Ցուցաբերված հոգատարություն և կատարված աշխատանք՝ ի նպաստ Աստծո և ուրիշների: Ծառայելով ուրիշներին, մենք նաև ծառայում ենք Աստծուն:

Ընտրեք այսօր, քե ում եք ծառայելու՝ **Հես.** ԻԳ.15: Որովհետև այս իմ փոքր եղբայրներից մեկին արիք, ինձ արիք՝ **Մատ.**

ԻԵ.35–45: Չեր մարմինները ներկայացրեք կենդանի գոհաբերություն, որն է ձեր խոհեն ծառայությունը՝ **Հոովմ**. ԺԲ.1: Միրով ծառայեք միմյանց՝ **Գադ**. Ե.13: Քո օրերը կանցնեն թո Աստծո ծառայության մեջ՝ **2 Նեփի** 2.3: Երբ դուք ձեր մերձավորների ծառայության մեջ եք, դուք սուկ ձեր Աստծո ծառայության մեջ եք՝ **Մոսիա** 2.17: Նրանք, ովքեր կտիրեն խոստումի երկրին, պիտի ծառայեն Աստծուն, այլապես կոչնչացվեն՝ **Եթեր** 2.8–12: Նրանք, ովքեր մտնում են Աստծո ծառայության մեջ, պետք է իրենց ողջ սրտով ծառայեն՝ **ՎևոՒ** 4.2: Տերը սովել է պատվիրաններ, որ մարդիկ պետք է սիրեն և ծառայեն իրեն՝ **ՎևոՒ** 20.18–19: Հիսուս Քրիստոսի անունով ծառայիր Աստծու՝ **ՎևոՒ** 59.5: Ես՝ Տերս, բերկրանքով պատվում եմ նրանց, ովքեր ծառայում են ինձ՝ **ՎևոՒ** 76.5: Երկրպագիր Աստծուն, քանզի միայն նրան դու պետք է ծառայես՝ **Մովսես** 1.15:

ԾԵՐ: *Տե՛ս* Երեց

ԾԵՐԱԿՈՒՅՑ: *Տե՛ս նաև* Հրեաներ

Հրեաների խորհրդարանը և հրեական բարձրագույն դատական մարմինը՝ թե՛ քաղաքական, թե՛ հոգևոր հարցերի համար: Ծերակույտը բաղկացած էր յոթամասունմեկ անդամներից, որոնք ընտրվում էին ավագ քահանաներից, դպիրներից և երեցներից: Սուրբ գրքերում այն հաճախ անվանվում է աղյան (Մատ. ԻԶ.59, Մար. ԺԳ.55, Գոր. Ե.34):

ԾԻԱԾԱՆ: *Տե՛ս նաև* Նոյ՝

աստվածաշնչյան հայրապետ. Նոյի ժամանակի ջրհեղեղը. Տապան

Նոյի հետ Աստծո ուխտի նշան կամ խորհրդանիշ (Ծն. Թ.13–17): **ԶՄԹ՝** Ծճ. 9.21–25-ը բացատրում է, որ ուխտը ներառում է խոստումներ, որ երկիրն այլևս երբեք չի ծածկվի ջրհեղեղով, որ Ենովբի Միոնը կվերադառնա, և որ Տերը կրկին կվերադառնա բնակվելու երկրի վրա:

ԾԽԱՆՈՏ: *Տե՛ս* Իմաստության Խոսք

ԾՆՆԳԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ: *Տե՛ս նաև* Ամուսնություն, Ամուսնանալ, Ընտանիք

Հղիությունը սահմանափակելու կամ կանխելու միջոցով զույգերի մոտ ծնված երեխաների թվի կառավարում:

Աճեցեք և շատացեք, և լցրեք երկիրը՝ **Ծճ**. Ա.28 (Մովսես 2.28): Երեխաները Տիրոջ ժառանգությունն են՝ **Մադ**. ՃԻԷ.3–5: Լեքիի ընտանիքը պետք է սերունդ աճեցնեք Տիրոջ համար՝ **1 Նեփի** 7.1: Ամուսնությունն Աստծո կողմից է կարգված մարդու համար՝ **ՎևոՒ** 49.15–17: Վեհացված էակները կունենան լիությունը և սերնդի շարունակությունը հավիտյանս հավիտենից՝ **ՎևոՒ** 132.19, 63:

ԾՆՆԳՈՑ: *Տե՛ս նաև* Հնգամատյան

Ծննդոց նշանակում է «ծագում» կամ «սկիզբ»: Ծննդոց գիրքը Հին Կտակարանի առաջին գիրքն է և գրվել է Մովսես մարգարեի կողմից: Այն պատմում է շատ բաների սկզբի մասին, ինչպիսիք են՝ երկրի ստեղծումը, կենդանիների և մարդու տեղավորումը երկրի վրա, Ադամի և Եվայի անկումը, ավետարանի հայտնությունն Ադամին, ցեղերի և ազգերի սկիզբը, տարբեր լեզուների ծագումը Բաբելոնում և Աբրահամական ընտանիքի սկիզբը, որը հիմք դրեց Իսրայելի տան հաստատմանը: Ծննդոցում շեշտվում է Հովսեփի դերը որպես Իսրայելի պահապան:

Վերջին օրերի հայտնությունները հաստատում և պարզաբանում են Ծննդոցի արձանագրությունները (1 Նեփի 5, Եթեր 1, Մովսես 1–8, Աբր. 1–5):

Ծննդոց գրքի Ա–Գ գլուխները պատմում են աշխարհի ստեղծման և Ադամի ընտանիքի զարգացման մասին: Ե–Ժ գլուխներում գրված է Նոյի պատմությունը: ԺԱ–Ի գլուխները պատմում են Աբրահամի և նրա ընտանիքի մասին, մինչև Իսահակի ժամանակը: ԻԱ–ԼԵ գլուխները կենտրոնացած են Իսահակի ընտանիքի վրա: ԼԶ գլուխը պատմում է Եսայի և նրա ընտանիքի մասին: ԼԷ–Շ գլուխները պատմում են Հակոբի ընտանիքի մասին և նկարագրում են Հովսեփի վաճառվելը Եգիպտոս և նրա դերն Իսրայելի տունը փրկելիս:

ԾՆՈՂՆԵՐ: *Տե՛ս նաև* Հայր մահկանացու. Մայր

Հայրեր և մայրեր: Արժանի ամուսինները

և կանայք, որոնց ամուսնությունը պատշաճ ձևով կնքվել է Աստծո տանարում, կարող են շարունակել իրենց ծնողական դերը հավերժության մեջ:

Երեխաներ, հնազանդվեք ձեր ծնողներին՝ **Եփես.** 2.1–3 (Կող. Գ.20): Աղանք և Եվան մեր առաջին ծնողներն էին՝ **1 Նեփի** 5.11: Որպեսզի անեծքը լինի ձեր ծնողների վրա՝ **2 Նեփի** 4.6: Ուսուցանեք ծնողներին, որ նրանք պետք է ապաշխարեն և մկրտվեն՝ **Մոր.** 8.10: Ծնողներին պատվիրվում է ուսուցանել ավետարանն իրենց երեխաներին՝ **ՎևոՒ** 68.25: Բոլոր երեխաներն իրավունք ունեն աջակցվելու իրենց ծնողների կողմից՝ **ՎևոՒ** 83.4: Ծնողների մեղքերը չեն դրվի երեխաների գլխին՝ **Մովսես** 6.54:

ԾՆՎԱԾ: *St'u Anu* Աստծո որդիներն ու դուստրերը. Միածին. Վերստին ծնված, Աստուց ծնված. Բրիստոսի զավակները

Ծնված լինել: Ծնելը ծնունդ տալն է, ծննդաբերելը, գոյության բերելը: Մուրք գրքերում այս բառերը սովորաբար օգտագործվում են Աստուց ծնվելու նշանակությամբ: Չնայած Հիսուս Բրիստոսը Հորից ծնված միակ մահկանացու զավակն է, բոլոր մարդիկ կարող են հոգով ծնվել Բրիստոսից՝ ընդունելով նրան, հնազանդվելով նրա պատվիրաններին և նոր անձ դառնալով Մուրք Հոգու գործությամբ:

Ես այսօր ծնեցի քեզ՝ **Մաղ.** Բ.7 (Գոր. ԺԳ.33, Եբր. Ա.5–6, Ե.5): Նրա փառքը Հորից եղած միածնի փառք էր՝ **Հովհ.** Ա.14 (2 Նեփի 25.12, Ամս 12.33–34, ՎևոՒ 76.23): Աստված այնպես սիրեց աշխարհը, որ ավեց իր միածին Որդուն՝ **Հովհ. Գ.**16 (ՎևոՒ 20.21): Բրիստոսը հոգով ծնեց իր ժողովրդին՝ **Մոսիա** 5.7: Նրանք, ովքեր ծնվել են Տիրոջ միջոցով, Անդրանիկի Եկեղեցին են՝ **ՎևոՒ** 93.22:

ԾՈՄ, ԾՈՄՄՊԱՀՈՒԹՅՈՒՆ. *St'u Anu* Աղբատ. Բարօրություն. Ընծա. Ողորմություններ, Ողորմություններ տալը

Կամավոր ձեռնպահ մնալ ուսելուց և խմելուց՝ Տիրոջը մոտենալու և նրա օրհնությունները խնդրելու նպատակով: Եբբ անհատները կամ խմբերը ծոմ են

պահում, նրանք պետք է նաև աղոթեն, որպեսզի հասկանան Աստծո կամքը և ավելի մեծ հոգևոր ուժ ստանան: Ծոմապահությունը միշտ կիրառվել է ճշմարիտ հավատացյալների կողմից:

Եկեղեցում՝ ներկայումս, ամեն ամսվա մեկ Հանգստության օրն առանձնացված է ծոմապահության համար: Այդ ժամանակ Եկեղեցու անդամներն ուսելիք և ջուր չեն օգտագործում քսանչորս ժամվա ընթացքում: Ապա նրանք Եկեղեցուն են նվիրաբերում այն գումարը, որը ծախսած կլինեին այդ ուսելիքների համար: Այդ գումարն անվանվում է ծոմի նվիրատվություն: Ծոմի նվիրատվությունը Եկեղեցին օգտագործում է աղքատներին և կարիքավորներին օժանդակելու համար:

Մենք ծոմ պահեցինք և խնդրեցինք մեր Աստծուն՝ **Եգր.** Ը.21–23, 31: Ես ծոմ պահեցի ու աղոթք էի անում երկնքի Աստծո առաջ՝ **Նեփ.** Ա.4: Ծոմ պահեք ինձ համար, և երեք օր ոչ կերեք, ոչ խմեք՝ **Եսթր** 4.16: Ես, ծոմ պահելով, իմ անձը խոնարհեցնում էի՝ **Մաղ.** ԼԵ.13: Սա՞ չէ ծոմը, որին ես հավանում եմ՝ **Ես.** ԾԸ.3–12: Ես իմ երեք դարձրի դեպի Տեր Աստված, որ աղոթք մատուցեմ ծոմով՝ **Դան.** Թ.3: Դեպի ինձ դարձեք ձեր բոլոր սրտով, և ծոմով՝ **Հովել** Բ.12: Սիմվեի մարդիկ հավատացին Աստծուն և ծոմ հրատարակեցին՝ **Հովն.** Գ.5: Հիսուսը քառասուն օր ծոմ պահեց՝ **Մատ.** Դ.2 (Ել. ԼԳ.28, Գ Թագ. ԺԺ.8, Ղուկ. Գ.1–2): Մարդկանց ծոմ պահող մի երևա՝ **Մատ.** 2.18 (3 Նեփի 13.16): Այս ցեղը դուրս չի գա, եթե ոչ աղոթքով և ծոմով՝ **Մատ.** ԺԷ.20: Շարունակեք ծոմով ու աղոթքով՝ **Օմնի** 1.26 (4 Նեփի 1.12): Նրանք սկսեցին ծոմ պահել ու աղոթել Տիրոջը՝ իրենց Աստծուն՝ **Մոսիա** 27.22: Ես ծոմ եմ պահել ու աղոթել շատ օրեր, որ ես ինքս կարողանամ իմանալ այս բաները՝ **Ալմա** 5.46: Աստծո զավակները միանում էին ծոմով ու գորավոր աղոթքով՝ **Ալմա** 6.6: Մոսիայի որդիները նվիրվել էին շատ աղոթքի ու ծոմի՝ **Ալմա** 17.3, 9: Շատ Նեփիացիների մահվանը հետևեց ծոմապահության և աղոթքի ժամանակը՝ **Ալմա** 28.5–6: Նրանք շատ ծոմ պահեցին և շատ աղոթեցին՝ **Ալմա** 45.1 (Հել. 3.35): Թող քո ուսելիքը պատրաստվի սրտի պարզությամբ, որ քո ծոմապահությունը լինի կատարյալ՝

ՎԼՈՒՒ 59.13–14: Դուք պետք է շարունակեք աղոթքով ու ծոնով՝ **ՎԼՈՒՒ** 88.76:

ԾՐԱԳԻՐ ՓՐԿԱԳՆՄԱՆ: *St'u*
Փրկագնման ծրագիր

ԾՐԱԳԻՐ ՓՐԿՈՒԹՅԱՆ: *St'u*
Փրկագնման ծրագիր

ԾՈՒՅԼ, ԾՈՒԼՈՒԹՅՈՒՆ

Անգործունյա և արդար գործերին չմասնակցող:

Եթե մեկը չի կամենում գործել, թող չուտի էլ՝ **Բ ԹԵՍ**. Գ.10: Նրանք դարձան շարությանը լի մի ծուլ ժողովուրդ՝ **2 Նեփի** 5.24: Ջերժ մնա անգործությունից՝ **Ալմա** 38.12: Նա, ով ծուլ է, չպետք է ուտի աշխատողի հացը՝ **ՎԼՈՒՒ** 42.42: Վա՛յ ձեզ, որ չեք կամենում աշխատել ձեր ձեռքերով՝ **ՎԼՈՒՒ** 56.17: Ջերմեռանդ ներգրավվեք բարի գործի մեջ՝ **ՎԼՈՒՒ** 58.27: Դադարեք ծուլ լինել՝ **ՎԼՈՒՒ** 88.124:

ԿԱՍՔԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ: *St'u նաև*
Ազատ, Ազատություն. Հաշիվ,
Պատասխանատու,
Պատասխանատվություն

Աստծո կողմից մարդկանց տրված՝ ինքնուրույն ընտրելու և գործելու կարողություն և արտոնություն:

Պարտեզի ամեն ծառից ազատ կարող ես ուտել՝ **ԾՄ**. Բ.16: Մարդը չէր կարող գործել ինքնուրույն, մինչև որ չհրապուրվեր՝ **2 Նեփի** 2.15–16: Մարդիկ ազատ են՝ ընտրելու ազատություն և հավերժական կյանք կամ գերություն և մահ՝ **2 Նեփի** 2.27: Դուք ազատ եք. ձեզ թույլատրված է գործել ինքներդ ձեզ համար՝ **Հեկ**. 14.30: Երկնքի զորքերի մեկ երրորդին նա շրջեց՝ նրանց կամքի ազատության պատճառով՝ **ՎԼՈՒՒ** 29.36: Անպայման պետք է որ դևը գայթակղեր մարդկանց զավակներին, այլապես նրանք չէին կարող գործակալ լինել՝ **ՎԼՈՒՒ** 29.39: Թող ամեն մարդ իր համար ընտրի՝ **ՎԼՈՒՒ** 37.4: Ամեն մարդ կարողանա գործել բարոյական կամքի ազատության համաձայն, որը տվել են նրան՝ **ՎԼՈՒՒ** 101.78: Սատանան փորձեց կործանել մարդու կամքի ազատությունը՝ **Մովսես** 4.3: Տերը մարդուն տվեց նրա կամքի ազատությունը՝ **Մովսես** 7.32:

ԿԱՅՆ: *St'u նաև* Արել. Ադամ.
Գաղտնի Խմբակցություններ.
Սպանություն

Ադամի և Եվայի որդին, որը սպանեց իր կրտսեր եղբայր Աբելին (ԾՄ. Գ.1–16):

Տերը շնորհունեց նրա ընծան՝ **ԾՄ**. Գ.3–7 (Մովսես 5.5–8, 18–26): Սպանեց իր եղբայր Աբելին՝ **ԾՄ**. Գ.8–14 (Մովսես 5.32–37): Տերը մի անեծք և մի նշան դրեց նրա վրա՝ **ԾՄ**. Գ.15 (Մովսես 5.37–41): Ադամը և Եվան շատ երեխաներ ունեցան՝ նախքան նրա ծնվելը՝ **Մովսես** 5.1–3, 16–17: Սատանային ավելի շատ սիրեց, քան Աստծուն՝ **Մովսես** 5.13, 18: Անսուրբ ուխտ կնքեց Սատանայի հետ՝ **Մովսես** 5.29–31:

ԿԱՅԻԱՓՈՒ: *St'u նաև* Աննա.
Սաղուկեցիներ

Քահանայապետ և Աննայի փեսան Նոր Կտակարանում: Կայիափան ակտիվ մասնակցություն ուներ Հիսուսին և նրա աշակերտներին ընդդիմանալու գործում (Մատ. ԻՁ.3–4, Հովհ. ԺԱ.47–51, ԺԸ.13–14):

ԿԱՅՄԸ

Նոր Կտակարանում՝ այն տիտղոսը, որով կոչվում էին Հռոմեական միապետներից ոմանք: Մուրք գրքերում այն օգտագործվում է որպես աշխարհիկ կառավարության կամ իշխանության խորհրդանիշ:

Կայսրինը կայսրին տվեք՝ **Մատ**. ԻԲ.21 (Մար. ԺԲ.17, Ղուկ. Ի.25, ՎԼՈՒՒ 63.26):

ԿԱՆԳՈՒՆ

Սովորական չափի միավոր Եբրայեցիների մեջ,– սկզբնապես արմունկից մինչև միջնամատի ծայրն ընկած հեռավորությունը:

ԿԱՆՈՆԱԿԱՆ ԳՐՔԵՐ: *St'u նաև*
Աստվածաշունչ. Թանկագին
Մարգարիտ. Մորմոնի Գիրքը.
Մուրք գրքեր. Վարդապետություն և
Ուխտեր

Վավերացված, հեղինակություն ստացած սրբազան գրքերի հավաքածու: Հիսուս-Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցուն կանոնական գրքերը կոչվում են օրինակելի աշխատություններ և ընդգրկը-

կում են՝ Հին և Նոր Կտակարանները, Մորմոնի Գիրքը, Վարդապետություն և Ուխտերը, և Թանկագին Մարգարիտը:

ԿԱՆՉ, ԱՍՏԾՈ ԿՈՂՄԻՅՑ

ԿԱՆՉՎԱՄ, ԿՈՉՈՒՄ: *Տե՛ս նաև*

Իշխանություն. Ընտրել, Ընտրեց, Ընտրված. Ընտրյալ. Կարգել, Կարգում. Տնտես. Տնտեսություն

Աստծո կողմից կանչվելը՝ նրա կողմից կամ նրա պատշաճ լիազորությունը ստացած Եկեղեցու ղեկավարների կողմից նշանակում կամ հրավեր ստանալն է՝ հատուկ ձևով նրան ծառայելու համար:

Իր ձեռքը նրա վրա դրեց և նրան պատվեր տվեց՝ **ԹՎ.** ԻԷ.23: Ես քեզ մարգարե եմ կարգել՝ **Երեմ.** Ա.5: Ես ընտրեցի ձեզ և կարգեցի ձեզ՝ **Հովհ.** ԺԵ.16: Պողոսը կանչվել էր Առաքյալ՝ **Հռոմ.** Ա.1: Ոչ որ չի կարող այդ պատիվն իրեն վերցնել, բացի նրանից, ով Աստծուց կանչված է՝ **Եբր.** Ե.4: Հիսուսն Աստծուց կանչվել էր Մեղքիսեղեկի կարգի պես՝ **Եբր.** Ե.10: Ես կանչվել եմ Աստծո խոսքը քարոզելու՝ հայտնության և մարգարեության ոգու համաձայն՝ **Ալմա** 8.24: Քահանաները կանչված և պատրաստված էին աշխարհի հիմնադրումից ի վեր՝ **Ալմա** 13.3: Եթե դուք ցանկություն ունեք ծառայելու Աստծուն, դուք կանչված եք՝ **Վևոթ** 4.3: Հաստատուն կանգնիր այն գործում, որին քեզ կանչել են՝ **Վևոթ** 9.14: Գու կարիք չունես ենթադրելու, որ կանչված ես քարոզելու, մինչև դու չկանչվես՝ **Վևոթ** 11.15: Երեցները կանչված են՝ իրագործելու ընտրյալների հավաքումը՝ **Վևոթ** 29.7: Ոչ որ չպետք է քարոզի իմ ավետարանը կամ կառուցի իմ եկեղեցին, մինչև որ նա չկարգվի՝ **Վևոթ** 42.11: Շատերն են կանչված, բայց քչերն են ընտրված՝ **Վևոթ** 121.34: Մարդ պետք է կանչված լինի Աստծո կողմից՝ **ՀՀ** 1.5:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ: *Տե՛ս նաև*

Սահմանադրություն

Երբ Հիսուս Քրիստոսը վերադառնա, նա կհաստատի արդարության իշխանություն:

Իշխանությունը կլինի նրա ուսերին՝ **Ես.** Թ.6 (2 Նեփի 19.6): Կեսարիմը տվեք Կեսարին՝ **Մատ.** ԻԲ.21 (Վևոթ 63.26): Հնազանդվեք բարձր իշխանություններ-

րին՝ **Հռոմ.** ԺԳ.1: Աղոթեք թագավորների և ամեն իշխանավորի համար՝ **Ա Տիմ.** Բ.1–2: Ենթարկվեք իշխանություններին և պետություններին և հնազանդվեք իշխանավորներին՝ **Տիտոս** Գ.1: Հնազանդվեք ամեն մարդկային կարգի՝ Տիրոջ համար՝ **Ա Պետ.** Բ.13–14: Հիսուս Քրիստոսը կլինի աշխարհի թագավորությունների կառավարիչը՝ **Հայտ.** ԺԱ.15: Արդար մարդիկ ունեցեք ձեզ թագավորներ՝ **Մոսիա** 23.8: Չեր գործերն արեք ժողովրդի ձայնով՝ **Մոսիա** 29.26: Քրիստոսը կլինի մեր կառավարիչը, երբ որ գա՝ **Վևոթ** 41.4: Նա, ով պահում է Աստծո օրենքները, պետք չէ որ խախտի երկրի օրենքները՝ **Վևոթ** 58.21: Երբ ամբարիշտներն են կառավարում, ժողովուրդը սգում է՝ **Վևոթ** 98.9–10: Կառավարություններն Աստծո կողմից են կարգված՝ մարդկության օգտի համար՝ **Վևոթ** 134.1–5: Մարդիկ պարտավոր են աջակցել և սատար կանգնել կառավարությանը՝ **Վևոթ** 134.5: Մենք հավատում ենք թագավորներին, նախագահներին, կառավարիչներին և մյուս իշխանավորներին հպատակվելուն՝ **ՀՀ** 1.12:

ԿԱՏԱՐԵԼ: *Տե՛ս* Հնազանդություն, Հնազանդ, Հնազանդվել

ԿԱՏԱՐՅԱԼ

Ամբողջական, լրիվ և լիովին զարգացած. բացարձակ արդարակյաց: Կատարյալ կարող է նշանակել նաև անմեղ կամ անարատ: Միայն Քրիստոսն է եղել բացարձակապես կատարյալ: Քրիստոսի ճշմարիտ հետևորդները կարող են կատարյալ դառնալ նրա շնորհի և քավության միջոցով:

Չեր սիրոս ուղիղ լինի Տիրոջ հետ՝ **Գ Թագ.** Ը.61: Արդ դուք կատարյալ եղեք, ճիշտ ինչպես ձեր Հայրը, որ Երկրն քրում է՝ **Մատ.** Ե.48 (3 Նեփի 12.48): Եթե մեկը խոսքով չի մեղանշում, նա կատարյալ մարդ է՝ **Հակ.** Գ.2: Հավատքը բաների մասին կատարյալ գիտելիք ունենալը չէ՝ **Ալմա** 32.21, 26: Քավությունը կատարվեց, որպեսզի Աստված լինի կատարյալ Աստված՝ **Ալմա** 42.15: Մորոնին կատարյալ հասկացողությամբ մարդ էր՝ **Ալմա** 48.11–13, 17–18: Աստծո Հոգին տրվել է ամեն մարդու, որ դատի և կատարյալ գիտելիքով իմանա, թե արդյոք տվյալ բանն Աստծուց է, թե դևից՝ **Մոր.** 7.15–17: Եկեք

Քրիստոսի մոտ և կատարելագործվեք նրանում՝ **Մոր.** 10.32: Համբերությամբ շարունակեք, մինչև որ կատարյալ դարձվեք՝ **ՎևոՒ** 67.13: Այդ նրանք են, ովքեր արդար մարդիկ են, Հիսուսի միջոցով կատարյալ դարձված՝ **ՎևոՒ** 76.69: Եկեղեցու պաշտոնները Սրբերի կատարելության համար են՝ **ՎևոՒ** 124.143 (Եփես. Դ.11-13): Առանց մահացածների՝ ապրողները կատարյալ չեն՝ **ՎևոՒ** 128.15, 18: Նոյն արդար մարդ էր՝ իր սերնդի մեջ կատարյալ՝ **Մովսես** 8.27:

ԿԱՐԳԵԼ, ԿԱՐԳՈՒՄ: *Տե՛ս նաև*

- Իշխանություն. Կանչ, Աստծո կողմից Կանչված, Կոչում.
- Չեռնադրություն. Պաշտոն,
- Պաշտոնյա. Քահանայություն

Նշանակել կամ շնորհել իշխանություն կամ պաշտոն: Տիրոջ Եկեղեցում իշխանություն գործածելու համար, մարդ պետք է կանչված լինի Աստծուց, մարգարեությամբ և իշխանություն ունեցողների ձեռնադրությամբ (ՀՀ 1.5): Չնայած որ մարդ կարող է կարգվելով իշխանություն ստանալ, նա պետք է այն օգտագործի նրանց ղեկավարության ներքո, ովքեր այդ իշխանության համար որոշակի բանալիներ են կրում:

Ես քեզ մարգարե եմ կարգել ազգերի համար՝ **Երեմ.** Ա.5: Ոչ թե դուք եք ինձ ընտրել, այլ ես եմ ձեզ ընտրել և կարգել՝ **Հովհ.** ԺԵ.16: Իշխանություն ունենալով Աստծո կողմից՝ Ալման կարգեց քահանաներ՝ **Մոսիա** 18.18: Մարդիկ բարձրագույն քահանայության են կարգվում սուրբ արարողությամբ՝ **Ալմա** 13.1-9: Հիսուսը կանչեց և կարգեց տասներկու աշակերտներին՝ **3 Նեփի** 12.1: Երեցները քահանաներ և ուսուցիչներ էին կարգում ձեռնադրմամբ՝ **Մոր.** 3.1-4: Սպասիր մի փոքր, քանզի դու դեռ կարգված չես՝ **ՎևոՒ** 5.17: Չոգե՛ք Սմիթը կարգվեց Հիսուս Քրիստոսի Առաքյալ՝ **ՎևոՒ** 20.2 (ՎևոՒ 27.12): Ոչ որ չպետք է կարգվի առանց Եկեղեցու քվեարկության՝ **ՎևոՒ** 20.65: Ոչ ոքի չի տրվի քարոզել իմ ավետարանը, եթե նա չկարգվի մեկի կողմից, ով իշխանություն ունի՝ **ՎևոՒ** 42.11: Երեցները կարգվել են՝ քարոզելու իմ ավետարանը՝ **ՎևոՒ** 50.13-18: Տասներկուսի պարտականությունն է՝ կարգել և կազմակերպել Եկեղեցու մյուս

բոլոր պաշտոնյաներին՝ **ՎևոՒ** 107.58: Ես փնտրեցի հայրերի օրհնությունները և իրավունքը, որին պետք է կարգվել՝ **Աբր.** 1.2: Չոգե՛ք Սմիթը և Օլիվեր Քաուդերին Ահարոնյան Քահանայության կարգեցին միմյանց՝ **ՋՄ-Պ** 1.68-72:

ԿԱՐԵԿՏԱՆՔ: *Տե՛ս նաև* Գթություն.

Ողորմած, Ողորմություն. Մեր

Սուրբ գրքերում կարեկցանքը նշանակում է բառացիորեն «ցավը կիսել»: Դա նշանակում է նաև վշտակից լինել, գրալ և ողորմություն ցուցաբերել մեկի հանդեպ:

Տերն իր ժողովրդին կոչ է անում գթություն ցուցաբերել՝ **Ջաք.** Է.8-10: Հիսուսի գուրը շարժվեց՝ **Մատ.** Թ.36 (Մատ. Ի.34, Մար. Ա.41, Դուկ. Է.13): Մի Սամարացի գրաց նրան՝ **Ղուկ.** Ժ.33: Կարեկից եղեք մեկմեկու՝ **Ա Պետ.** Գ.8: Քրիստոսը կարեկցանքով լի է մարդկանց զավակների հանդեպ՝ **Մոսիա** 15.9: Իմ սիրտը լցված է կարեկցանքով հանդեպ ձեզ՝ **3 Նեփի** 17.6: Չոգե՛ք Սմիթն աղերսում էր Տիրոջ կարեկցանքը՝ **ՎևոՒ** 121.3-5:

ԿԱՐՄԻՐ ԾՈՎ: *Տե՛ս նաև* Մովսես

Ջրային զանգված Եգիպտոսի և Արաբիայի միջև: Նրա հյուսիսային երկու ծովածոցերը կազմում են Սինայ թերակղզու ջրափնյա գիծը: Տերը հրաշքով բաժանեց Կարմիր ծովը, այնպես որ Իսրայելացիները, Մովսեսի առաջնորդությամբ, կարողացան անցնել չոր հողի վրայով (Ել. ԺԴ.13-31, Եբր. ԺԱ.29): Մովսեսի կողմից ծովի բաժանելը հաստատվում է վերջին օրերի հայտնություններում (1 Նեփի 4.2, Հել. 8.11, ՎևոՒ 8.3, Մովսես 1.25):

ԿԵՂՏ, ԿԵՂՏՈՒԹՅՈՒՆ: *Տե՛ս*

- նաև* Անաստվածային. Ամբարիշտ, Ամբարշտություն. Անիրավ, Անիրավություն. Մաքուր և Անմաքուր. Մեղք

Աստծուն գիտակցաբար չհնազանդվելու հետևանքով առաջացած հոգևոր անմաքրություն:

Տերը կմաքրի Սիոնի դուստրերի աղտը՝ **Ես.** Դ.4 (2 Նեփի 14.4): Աստծո արքայությունը կեղտոտ չէ՝ **1 Նեփի** 15.34 (Ալմա 7.21): Նրանք, ովքեր կեղտոտ են, կեղտոտ էլ կլինեն՝ **2 Նեփի** 9.16 (Մորմ.

9.14): Ի՞նչպես կզգաք, եթե կանգնեք Աստծոն դատարանի առաջ՝ ձեր հանդերձները բծոտված լինելով կեղտոտությամբ՝ **Ալմա** 5.22: Նրանք կեղտոտ էլ պիտի մնան՝ **ՎևոՒ** 88.35: Ե՞րբ պիտի հանգստանամ և մաքրվեմ կեղտոտությունից՝ **Մովսես** 7.48:

ԿԵՆԴԱՆԱՑՆԵԼ: *Տե՛ս նաև*
Հարություն

Կենդանություն պարզել, հարուցանել կամ փոխակերպել մարդուն, որպեսզի նա կարողանա լինել Աստծո ներկայության մեջ:

Աստված մեզ կենդանացրեց Քրիստոսի հետ՝ **Եփես.** Բ.4–5 (Կող. Բ.6, 12–13): Քրիստոսը մահվան ենթարկվեց մարմնով, բայց կենդանի եղավ Հոգով՝ **Ա Պետ.** Գ.18 (ՎևոՒ 138.7): Ոչ ոք չի տեսել Աստծուն, մինչև որ չի կենդանացվել Հոգով՝ **ՎևոՒ** 67.11: Փրկագնումը նրա միջոցով է, ով կենդանացնում է բոլոր բաները՝ **ՎևոՒ** 88.16–17: Սրբերը կկենդանացվեն և կհափշտակվեն վեր՝ Քրիստոսին դիմավորելու՝ **ՎևոՒ** 88.96: Ադամը կենդանացավ ներսի մարդուն՝ **Մովսես** 6.65:

ԿԵՆԴԱՆԻ ՋՈՒՐ: *Տե՛ս նաև* Հիսուս
Քրիստոս

Տեր Հիսուս Քրիստոսի և նրա ուսմունքների խորհրդանիշը: Ինչպես որ ջուրն անհրաժեշտ է ֆիզիկական կյանքի համար, այնպես էլ Փրկիչը և նրա ուսմունքները (կենդանի ջուրը) անհրաժեշտ են հավերժական կյանքի համար:

Դուք ուրախությամբ ջուր կքաշեք փրկության աղբյուրներից՝ **Ես.** ԺԲ.3: Նրանք թողել են ինձ՝ կենաց ջրի աղբյուրին՝ **Երեմ.** Բ.13: Ով որ խմի այս ջրից, որ ես տալիս եմ նրան, երբեք չի ծարավի՝ **Հովհ.** Դ.6–15: Եթե մեկը ծարավ է, թող ինձ մտա գա և խմի՝ **Հովհ.** Է.37: Երկաթյա ձողը տանում էր դեպի կենդանի ջրերի աղբյուրը՝ **1 Նեփի** 11.25: Ազատ ճաշակեք կյանքի ջրերից՝ **ՎևոՒ** 10.66: Իմ պատվիրանները կլինեն կենդանի ջրի աղբյուր՝ **ՎևոՒ** 63.23:

ԿԵՐՊԱՐԱՆԱՓՈՒՈՒՄ: *Տե՛ս նաև*
Հիսուս Քրիստոս. Քահանայության
բանալիները

Այն մարդկանց վիճակը, որոնք ժամանա-

կավորապես վերափոխվում են արտաքինով և ներքինով, այսինքն՝ բարձրացվում են հոգևոր ավելի բարձր աստիճանի, որպեսզի կարողանան դիմանալ երկնային էակների ներկայությանն ու փառքին:

Քրիստոսի կերպարանափոխումը. Պետրոսը, Հակոբոսը և Հովհաննեսը տեսան Տիրոջը՝ փառավորված և կերպարանափոխված իրենց առաջ: Փրկիչը նախկինում խոստացել էր, որ Պետրոսին կտրվեն երկնքի արքայության բանալիները (Մատ. ԺԶ.13–19, ԺԷ.1–9, Մար. Թ.1–9, Դուկ. Թ.28–36, Բ Պետ. Ա.16–18): Այս կարևոր իրադարձության ժամանակ, Փրկիչը, Մովսեսը և Եղիան տվեցին քահանայության խոստացված բանալիները Պետրոսին, Հակոբոսին և Հովհաննեսին: Քահանայության այս բանալիներով Առաքյալները գործություն ունեցան շարունակելու արքայության աշխատանքը Հիսուսի համբարձվելուց հետո:

Չոզեֆ Սմիթն ուսուցանել է, որ կերպարանափոխման սարի վրա Պետրոսը, Հակոբոսը և Հովհաննեսը նույնպես կերպարանափոխվել էին: Նրանք տեսան երկրի տեսիլքը, ինչպես որ այն կհայտնվի իր ապագա փառավոր վիճակում (ՎևոՒ 63.20–21): Նրանք տեսան Մովսեսին և Եղիային՝ երկու փոխակերպված էակների, և լսեցին Հոր ձայնը: Հայրն ասաց. «Սա է իմ սիրելի Որդին, որին ես հավանել եմ. լսեք նրան» (Մատ. ԺԷ.5):

Կերպարանափոխված էակներ. Նրանք տեսան Իսրայելի Աստծուն՝ **Ել.** ԻԳ.9–11: Նրա երեսի մորթը լուսավայլում էր, մինչև նա խոսում էր Աստծո հետ՝ **Ել.** ԼԳ.29 (Մար. Թ.1–2): Հիսուսի դեմքը փայլում էր՝ **Մատ.** ԺԷ.2 (Մար. Թ.1–2): Իսրայելի զավակները չէին կարողանում նայել Մովսեսի երեսին՝ նրա երեսի փառքի համար՝ **Բ Կոր.** Գ.7: Արիևադդիի դեմքը շողում էր արտասովոր փայլով՝ **Մոսիա** 13.5–9: Նրանք կարծես կրակով օղակված լինեին՝ **Հել.** 5.23, 36, 43–45 (3 Նեփի 17.24, 19.14): Նրանք այնպես ճերմակ էին, ինչպես Հիսուսի դեմքը՝ **3 Նեփի** 19.25: Նրանք թվում էր, թե կարծես կերպարանափոխվել էին՝ **3 Նեփի** 28.15: Ոչ ոք մարմնում չի տեսել Աստծուն, մինչև որ չի կենդանացվել Հոգով՝ **ՎևոՒ** 67.10–12: Հոգու գործությամբ մեր աչքերը բացվեցին՝

ՎԼՈՒՒ 76.12: Աստծո փառքը Մովսեսի վրա էր՝ **Մովսես** 1.2: Նրա փառքն իմ վրա էր. և ես տեսա նրա դեմքը, քանզի ես կերպարանափոխվել էի՝ **Մովսես** 1.11: Ես տեսա երկինքները բացված, և փառք իջավ իմ վրա՝ **Մովսես** 7.3–4:

ԿԻՆ: *Տես* Ամուսնություն, Ամուսնանալ, Ընտանիք

ԿԻՍՎՈՒՄԵՆ: *Տես* *ուսու* Գաղիանթոնի ավազակներ

Մորմոհի Գրքում՝ մի խումբ ամբարիշտ մարդկանց ղեկավար, որոնք հետագայում հայտնի էին որպես Գաղիանթոնի ավազակներ (Հել. 1.9–12, 2):

ԿԻՐԱԿԻ: *Տես* *ու* Հանգստության օր

ԿԻՐԹԼԵՆԳԻ ՏԱՃԱՐ

Արդի ժամանակներում Եկեղեցու կողմից կառուցված առաջին տաճարը: Մյրբերը կառուցեցին այն Կիրթլենդում, Օհայո (Ամերիկայի Միացյալ Նահանգներ), Տիրոջ պատվիրանի համաձայն (ՎԼՈՒՒ 94.3–9): Գրա մի նպատակն էր՝ տեղ պատրաստել, որտեղ Եկեղեցու արժանավոր անդամները կկարողանային հոգևոր գործություն և իշխանություն ստանալ և լուսավորվել (ՎԼՈՒՒ 109, 110): Այն նվիրագործվեց 1836թ. մարտի 27-ին. նվիրագործման աղոթքը հայտնությամբ տրվել էր Մարգարե Ջոզեֆ Սմիթին (ՎԼՈՒՒ 109): Տերը տվեց մի քանի կարևոր հայտնություններ և վերականգնեց քահանայության անհրաժեշտ բանալիներն այս տաճարում (ՎԼՈՒՒ 110, 137): Այն չէր օգտագործվում տաճարային բոլոր արարողությունների համար, որոնք այսօր արվում են տաճարներում:

ԿՅԱՆՔ: *Տես* *ուսու* Լույս, Քրիստոսի լույս. Հավերժական կյանք

Աստծո գործքամբ հնարավոր դարձած ժամանակավոր և հոգևոր գոյություն:

Ես այսօր քո առաջն եմ դնում կյանքը և բարին՝ **Բ Օր.** Լ.15–20: Դու ինձ ճանաչեցնում ես կյանքի ճանապարհը՝ **Մադ.** Ժ2.11: Արդարության հետևողը կյանք կգտնի՝ **Առակ.** Ի.Ա.21: Ով որ գտնում է իր կյանքը, կկորցնի այն. և ով որ կորցնում է իր կյանքն ինձ համար, կգտնի այն՝ **Մատ.**

Ժ.39 (Մատ. Ժ2.25, Մար. Ը.35, Դուկ. Թ.24, ԺԷ.33): Մարդու Որդին չի եկել կործանելու մարդկանց կյանքը, այլ փրկելու նրանց՝ **Դուկ.** Թ.56: Նրանում էր կյանքը, և կյանքը մարդկանց լույսն էր՝ **Հովհ.** Ա.4: Ինձ ուղարկողին հավատացողը մահից փոխվում է դեպի կյանք՝ **Հովհ.** Ե.24: Ես եմ ճանապարհը, ճշմարտությունը և կյանքը՝ **Հովհ.** ԺԳ.6: Եթե միայն այս կյանքում ունենք հույս Քրիստոսի վրա, մենք անեմատողորմելի մարդիկ ենք՝ **Ա Կոր.** ԺԵ.19–22: Աստվածայնությունն ունի այժմյան և գալիք կյանքի խոստումը՝ **Ա Տիմ.** Գ.8: Մեր զավակները կարողանան սպասել այն կյանքին, որը Քրիստոսում է՝ **2 Նեփի** 25.23–27: Մարդկանց համար այս կյանքն է ժամանակը նախապատրաստվելու՝ հանդիպելու Աստծուն՝ **Ալմա** 34.32 (Ալմա 12.24): Ես եմ լույսը և կյանքն աշխարհի՝ **3 Նեփի** 9.18 (Մոսիա 16.9, 3 Նեփի 11.11, Եթեր 4.12): Օրինյալ են նրանք, ովքեր հավատարիմ են՝ կյանքում լինի, թե մահվան մեջ՝ **ՎԼՈՒՒ** 50.5: Սա է հավերժական կյանքերը՝ ճանաչել Աստծուն և Հիսուս Քրիստոսին՝ **ՎԼՈՒՒ** 132.24: Սա է իմ գործը և իմ փառքը՝ իրականացնել մարդու անմահությունն ու հավերժական կյանքը՝ **Մովսես** 1.39:

ԿՅԱՆՔԻ ԳԻՐՔ: *Տես* *ուսու*
Չիշատակի Գիրք

Ինչ-որ իմաստով Կյանքի Գիրքը մարդու մտքերի և գործերի ամբողջությունն է՝ նրա կյանքի հիշատակարանը: Սակայն սուրբ գրքերը նշում են, որ նաև երկնային հիշատակարան է պահվում հավատարիմների վերաբերյալ, որն ընդգրկում է նրանց անունների և արդար գործերի արձանագրությունը:

Տերը մեղանշողներին կջնջի իր գրքից՝ **Ել.** ԼԲ.33: Ով որ հաղթում է, նրա անունը կյանքի գրքից չի ջնջվի՝ **Հայտ.** Գ.5: Մի ուրիշ գիրք էլ բացվեց, որը կյանքի գիրքն է՝ **Հայտ.** Ի.12 (ՎԼՈՒՒ 128.6–7): Արդարների անունները պիտի գրվեն կյանքի գրքում՝ **Ալմա** 5.58: Չեր աղոթքները գրվել են սրբագործվածների անունների գրքում՝ **ՎԼՈՒՒ** 88.2:

ԿՅԱՆՔԻ ԾԱՌ: *Տես* *ուսու* Եղեմ

Ծառ Եղեմի պարտեզում և Աստծո դրախտում (Ծն. Բ.9, Հայտ. Բ.7): Լեքիի

երագում կյանքի ծառը ներկայացնում է Աստծո սերը և համարվում է Աստծո պարզևնեթից մեծագույնը (1 Նեփի 8, 11.21–22, 25, 15.36):

Քերովբեները և բոցեղեն սուրը պահում են կյանքի ծառի ճանապարհը՝ **ԾՆ.** Գ.24 (Ալմա 12.21–23, ԽԲ.2–6): Հովհաննեսը տեսավ կյանքի ծառը, և տերևները բժշկող գորոթյուն ունեին ազգերի համար՝ **Հայտ.** ԻԲ.2: Լեքին տեսավ կյանքի ծառը՝ **1 Նեփի** 8.10–35: Նեփին տեսավ այն ծառը, որը տեսել էր իր հայրը՝ **1 Նեփի** 11.8–9: Երկաթե ձողն առաջնորդում է դեպի կյանքի ծառը՝ **1 Նեփի** 11.25 (1 Նեփի 15.22–24): Մի ահավոր անդունդ ամբարիշտներին բաժանում է կյանքի ծառից՝ **1 Նեփի** 15.28, 36: Անպայման պետք է որ լիներ արգելված պտուղ՝ ի հակադրություն կյանքի ծառի՝ **2 Նեփի** 2.15: Եկեք դեպի Տերը և ճաշակեք կյանքի ծառի պտղից՝ **Ալմա** 5.34, 62: Եթե մեր առաջին ծնողները ճաշակեին կյանքի ծառի պտղից, նրանք հավիտյան թշվառ կլինեին՝ **Ալմա** 12.26: Եթե դուք չսնուցեք խոսքը, դուք երբեք չեք կարող քաղել կյանքի ծառի պտղից՝ **Ալմա** 32.40: Տերը սունկեց կյանքի ծառը պարտեզի մեջտեղում՝ **Մովսես** 3.9 (Աբր. 5.9): Աստված Ադամին դուրս հանեց Եդենից, որ չլիներ թե նա ճաշակեր կյանքի ծառի պտղից և ապրեր հավիտյան՝ **Մովսես** 4.28–31:

ԿՅԱՆՔԻ ՀԱՅՐ: *Տե՛ս նաև*

Հաղորդություն. Հիսուս Քրիստոս

Հիսուս Քրիստոսը Կյանքի Հացն է: Հաղորդության հացը խորհրդանշական ձևով ներկայացնում է Քրիստոսի մարմինը:

Ես եմ կյանքի հացը՝ **Հովհ.** 2.33–59: Կերեք և խմեք կյանքի հացից ու ջրից՝ **Ալմա** 5.34: Հացն ի հիշատակ Քրիստոսի մարմնի է՝ **3 Նեփի** 18.5–7: Հացը Քրիստոսի մարմնի խորհրդանշան է՝ **ՎևոՒ** 20.40, 77 (Մոր. 4.1–3):

ԿՅՈՒՐՈՍ

Հին Կտակարանում՝ Պարսից թագավոր, որն իրականացրեց Եսայիայի մարգարեությունը (Բ Մն. ԼՁ.22–23, Ես ԽԴ.28, 45.1), թույլ տալով հրեաներին վերադառնալ Երուսաղեմ, վերակառուցելու տաճարը, այդպիսով, մասնակիորեն,

վերջ դնելով Բաբելոնյան գերությանը: Եսայիայի մարգարեությունն արվել էր թագավորի գործողություններից 180 տարի առաջ:

ԿՆԻՔ, ԿՆՔՈՒՄ: *Տե՛ս նաև*

Արարողություններ. Եղիա.
Քահանայություն

Երկրի վրա քահանայության իշխանությանը կատարված արարողությունները վավերական դարձնել երկնքում: Արարողությունները կնքվում են, երբ դրանք ստանում են Խոստումի Սուրբ Հոգու, այսինքն՝ Սուրբ Հոգու հաստատումը:

Ինչ որ կապեք երկրի վրա, կկապվի երկնքում՝ **Մատ.** ԺՁ.19 (Մատ. ԺԸ.18, ՎևոՒ 124.93, 132.46): Դուք կնքվեցիք Խոստումի Սուրբ Հոգով՝ **Եփես.** Ա.13: Ես քեզ գորություն եմ տալիս, որ ինչ որ կնքես երկրի վրա, կկնքվի երկնքում՝ **Հել.** 10.7: Նրանց գորություն է տված՝ կնքելու և՛ երկրի վրա, և՛ երկնքում՝ **ՎևոՒ** 1.8: Սելեստիալ փառքում գտնվողները կկնքվեն Խոստումի Սուրբ Հոգով՝ **ՎևոՒ** 76.50–70: Եղիան կնքման գորության բանալիները համձնում է Ձոզեֆ Սմիթի ձեռքը՝ **ՎևոՒ** 110.13–16: Դա կնքող և կապող գորություն է՝ **ՎևոՒ** 128.14: Մարգարեական ավելի հաստատ խոսքը նշանակում է իմանալ, որ մարդ կնքվել է հավերժական կյանքի համար՝ **ՎևոՒ** 131.5: Բոլոր ուխտերը, որոնք չեն կնքվել Խոստումի Սուրբ Հոգով, վերջանում են մարդկանց մահանալու հետ՝ **ՎևոՒ** 132.7: Մեծ աշխատանքը, որը պիտի արվի տաճարներում, ներառում է երեխաներին իրենց ծնողների հետ կնքելը՝ **ՎևոՒ** 138.47–48:

ԿՏԱԿԱՐԱՆ: *Տե՛ս* Հին Կտակարան.
Նոր Կտակարան

ԿՈՒՍԱԲ

Այն աստղը, որն ամենամոտն է Աստծո գահին (Աբր. 3.2–3, 9):

Աբրահամը տեսավ Կուլաքը և աստղերը՝ **Աբր.** 3.2–18: Տիրոջ ժամանակը հաշվարկվում է ըստ Կուլաքի ժամանակի՝ **Աբր.** 3.4, 9 (Աբր. 5.13):

ԿՈՂՈՍԱՅԻՄ ԹՈՒՂԹ ԱՌ: *Տե՛ս նաև* Պողոս. Պողոսի Թղթերը

Գիրք Նոր Կտակարանում: Սկզբում դա

մի մամակ էր, որ Պողոս Առաքյալը գրել էր Կողոսացիներին, նրանից հետո, երբ Եփապրասը՝ Կողոսայի Եկեղեցու ավետարանիչը, այցելել էր իրեն (Կող. Ա.7–8): Եփապրասը Պողոսին ասել էր, որ Կողոսացիները լուրջ սխալների մեջ են ընկել, նրանք կարծում էին, որ ավելի լավն են, քան մյուսները, որովհետև ստույգ կատարում էին որոշ արտաքին արարողություններ (Կող. Բ.16), իրենց գրկում էին որոշ ֆիզիկական կարիքներից և երկրպագում էին հրեշտակների (Կող. Բ.18): Կողոսացիները կարծում էին, որ այդ սովորությունները սրբագործում էին իրենց: Նրանք մահ կարծում էին, թե տիեզերքի գաղտնիքներն ավելի լավ էին հասկանում, քան Եկեղեցու մյուս անդամները: Իր մամակում Պողոսն ուղղեց նրանց, ուսուցանելով, որ փրկագնումը գալիս է միայն Քրիստոսի միջոցով, և որ մենք պետք է իմաստուն լինենք և ծառայենք նրան:

Ա գլուխը Կողոսացիներին ուղղված Պողոսի ողջույնն է: Բ–Գ գլուխները վարդապետական են, և դրույթներ են պարունակում Քրիստոսի մասին՝ որպես Վավչի, կեղծ պաշտամունքի վասնզի մասին և հարության կարևորության մասին: Դ գլուխը սովորեցնում է, որ Սրբերն իմաստուն պիտի լինեն բոլոր բաներում:

ԿՈՉՈՒՄ ԵՎ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ:

Տե՛ս նաև Ընտրություն

Քրիստոսի արդար հետևորդները կարող են համարվել այն ընտրյալների թվում, որոնք ստանում են վեհացման երաշխիքը: Այդ կոչումը և ընտրությունը սկսվում է ապաշխարությունից և մկրտությունից: Այն կատարյալ է դառնում, երբ նրանք «առաջ են մղվում, սնվելով Քրիստոսի խոսքով, և համբերում են մինչև վերջ» (2 Նեփի 31.19–20): Այս ընթացքը սուրբ գրքերում կոչվում է մեր կոչումը և ընտրությունը հաստատ դարձնել (Բ Պետ. Ա.4–11, ՎևոՒ 131.5–6):

Դուք ինձ համար քահանաների թագավորություն կլինեք՝ **Ել. ԺԹ.5–6** (Հայտ. Ա.6): Աստված սկզբից ի վեր ընտրյալներին ընտրել է՝ փրկության համար՝ **Բ Թես. Բ.13**: Չանք արեք, որ ձեր կոչումը և ընտրությունը հաստատ անեք՝ **Բ Պետ. Ա.10**: Տերը կարողանա կնքել ձեզ, որպես իրենը՝ **Մոսիա 5.15**: Ես ուխտում եմ քեզ

հետ, որ դու կունենաս հավերժական կյանք՝ **Մոսիա 26.20**: Հավատարիմ քահանայություն կրողները դառնում են Աստծո եկեղեցին, արքայությունը և ընտրյալները՝ **ՎևոՒ 84.33–34**: Մարգարեական ավելի հաստատ խոսքը մշակում է մարդու իմացությունը, որ մահ կնքվել է հավերժական կյանքի համար՝ **ՎևոՒ 131.5–6**: Ես կնքում եմ քեզ վրա քո վեհացումը՝ **ՎևոՒ 132.49**:

ԿՈՆՆԵԼԻՈՍ: *Տե՛ս նաև* Հարյուրապետ. Հեթանոսներ. Պետրոս

Պետրոսի կողմից մկրտված հարյուրապետ Կեսարիայում (Գործ. Ժ): Նա, հավանաբար, առաջին հեթանոսն էր, որը միացավ Եկեղեցուն առանց դեպի հուդայականություն դարձի գալու: Կոռնելիոսի և նրա ընտանիքի մկրտությունը եղավ հեթանոսներին ավետարանը քարոզելու ճանապարհի բացման նշանը: Պետրոսը՝ գլխավոր առաքյալը, որն այդ ժամանակ կրում էր Աստծո արքայության բանալիները երկրի վրա, ղեկավարեց այդ քարոզությունը:

ԿՈՏՐՎԱԾ ՍԻՐՏ: *Տե՛ս նաև*

Ապաշխարել, Ապաշխարություն. Չոհաբերություն. Խոնարհեցնել, Խոնարհություն. Հեզ, Հեզություն. Սիրտ

Կտորված սիրտ ունենալը՝ խոնարհ, ապաշավող, ապաշխարող և հեզ, այսինքն՝ Աստծո կամքն ընդունող լինելն է:

Ես բնակվում եմ կտորված և խոնարհ հոգի ունեցողի հետ՝ **Ես. ԾԷ.15**: Քրիստոսն իրեն զոհ մատուցեց նրանց համար, ովքեր ունեն կտորված սիրտ և փշրված հոգի՝ **2 Նեփի 2.7**: Որպես զոհ Տիրոջը մատուցեք կտորված սիրտ և փշրված հոգի՝ **3 Նեփի 9.20** (ՎևոՒ 59.8): Սկրտության ընդունվում էին միայն կտորված սիրտ և փշրված հոգի ունեցողները՝ **Մոր. 6.2**: Հիսուսը խաչվեց փշրված սրտի մեղքերի թողության համար՝ **ՎևոՒ 21.9**: Նա, ում հոգին փշրված է, ընդունվում է՝ **ՎևոՒ 52.15**: Սուրբ Հոգին խոստացվում է նրանց, ովքեր ապաշխարող են՝ **ՎևոՒ 55.3**: Իմ Հոգին ուղարկվել է, որ լուսավորի խոնարհներին և ապաշխարողներին՝ **ՎևոՒ 136.33**:

ԿՈՐԱՇ ՍՈՒՐԲ ԳՐՔԵՐ: *Տե՛ս*

Սուրբ գրքեր – Կորած սուրբ գրքեր

ԿՈՐԱՇ ՅԵՂԵՐ: *Տե՛ս* Իսրայել –

Իսրայելի տասը կորած ցեղերը

ԿՈՐԻԱՆԹՈՆ: *Տե՛ս նաև* Ալմա՝

Ալմայի որդի

Մորմոնի Գրքում՝ Ալմայի որդի Ալմայի որդին:

Գնաց Չորամացիների մոտ՝ **Ալմա** 31.7: Լքեց ծառայությունը և գնաց մի պոռնիկի հետևից՝ **Ալմա** 39.3: Ալման նրան ուսուցանեց եանմականացու գոյության վիճակի մասին, հարության և քավության մասին՝ **Ալմա** 39–42: Կրկին կանչվեց քարոզելու՝ **Ալմա** 42.31: Նավով գնաց դեպի հյուսիսային կողմի երկիրը՝ **Ալմա** 63.10:

ԿՈՐԻԱՆԹՈՒՄԸ: *Տե՛ս նաև*

Հարեղացիներ

Մորմոնի Գրքում՝ Հարեղացիների թագավորը և Հարեղացիների ազգից վերջին կենդանի մնացածը:

Հայտնաբերվեց Չարահենլայի ժողովրդի կողմից՝ **Օմնի** 1.21: Թագավոր էր ողջ երկրի վրա՝ **Եթեր** 12.1–2: Գերության տարվեց Սարեղի կողմից և ազատագրվեց իր որդիների կողմից՝ **Եթեր** 13.23–24: Պատերազմեց տարբեր թշնամիների դեմ՝ **Եթեր** 13.28–14.31: Ապաշխարեց **Եթեր** 15.3: Կռվեց իր վերջին ճակատամարտը Սիգի դեմ՝ **Եթեր** 15.15–32:

ԿՈՐԻՀՈՐ: *Տե՛ս նաև* Հակաքրիստոս

Հակաքրիստոս Մորմոնի Գրքում, որը նշան էր ուզում՝ որպես Աստծո գորության ապացույց. Տերը Կորիհորին զարկեց համրությանը (Ալմա 30.6–60):

ԿՈՐԾԱՆԻՉ: *Տե՛ս նաև* Դև

Սատանան կործանիչն է:

Տերը չի թողնի, որ կործանիչը մտնի ձեր սները՝ **Ել.** ԺԲ.23: Կործանիչը շրջում է ջրերի վրա՝ **ՎևոՒ** 61.19: Պահապանը կարող էր փրկել իմ այգին կործանիչից՝ **ՎևոՒ** 101.51–54:

ԿՈՐՆԹՍՅԻՄ ԹՈՒՂԹ ԱՈՒ: *Տե՛ս*

նաև Պողոս. Պողոսի Թղթերը

Երկու գիրք Նոր Կտակարանում: Սկզբում

դրանք նամակներ էին, որոնք Պողոսը գրել էր Կորնթոսի Սրբերին՝ նրանց անկարգություններն ուղղելու համար: Կորնթացիներն ապրում էին բարոյապես ամբարիշտ հասարակարգում:

Ա Կորնթացիս. Ա գլուխը պարունակում է Պողոսի ողջույններն ու շնորհակալական ուղերձը: Բ–Չ գլուխները Կորնթացի Սրբերի սխալների ուղղումն է: Է–ԺԲ գլուխները պարունակում են Պողոսի պատասխանները որոշ հարցերի: ԺԳ–ԺԵ գլուխները վերաբերում են գթությանը, հոգևոր պարզակներին և հարությանը: ԺԶ գլուխը պարունակում է Պողոսի հորդորը՝ հաստատ մնալ հավատքում:

Բ Կորնթացիս. Ա գլուխը պարունակում է Պողոսի ողջույններն ու շնորհակալական ուղերձը: Բ գլուխն անձնական խորհուրդ է պարունակում Տիտոսի համար: Գ–Է գլուխներում խոսվում է Սրբերի և նրանց ղեկավարների կյանքում ավետարանի գորության մասին: Ը–Թ գլուխներում Սրբերին խորհուրդ է տրվում ուրախ սրտով նվիրաբերել աղքատների համար: Ժ–ԺԲ գլուխները հաստատում են Պողոսի անձնական դիրքը՝ որպես առաքյալ: ԺԳ գլուխը կատարյալ լինելու հորդորանք է:

ԿՈՐՄՏԻ ՈՐԳԻՆՆԵՐ: *Տե՛ս նաև*

Աններեյի մեղք Դժոխք. Դև. Մահ հոգևոր. Նզովք

Սատանայի հետևորդները, որոնք հավերժության մեջ կտառապեն նրա հետ: Կորստի որդիներն թվում են (1) նրանք, ովքեր հետևեցին Սատանային և ապստամբության համար դուրս գցվեցին երկնքից նախամահկանացու կյանքի ժամանակ և (2) նրանք, որոնց թույլ է տրվել ծնվել այս աշխարհում ֆիզիկական մարմնով, սակայն հետո նրանք ծառայել են Սատանային և կատարելապես ընդդիմացել են Աստծուն: Այդ երկրորդ խմբում եղածները հարություն կանեն մեռելներից, սակայն չեն փրկագվի երկրորդ (հոգևոր) մահից և չեն կարող բնակվել փառքի թագավորության մեջ (ՎևոՒ 88.32, 35):

Նրանցից ոչ մեկը չկորավ, բացի կորստի որդուց՝ **Հովհ.** ԺԷ.12: Անկարելի է, որ նրանք դարձյալ նորոգվեն ապաշխարության համար՝ **Եբր.** 2.4–6 (Եբր. Ժ.26–29):

Որորնությունն ուժ չունի այդ մարդու վրա և նրա վերջնական ճակատագիրը երբեք չվերջացող ստանձանքն է՝ **Մոսիա** 2.36–39: Նա այնպես է, կարծես ոչ մի փրկագնում չի արվել՝ **Մոսիա** 16.5: Նրանք, ովքեր շահ ստանալու համար ուրանում են Քրիստոսի հրաշքները, կրառնան կորստի որդու պես՝ **3 Նեփի** 29.7: Նրանք ներում չեն ստանա՝ ո՛չ այս, ո՛չ էլ հանդերձյալ աշխարհում՝ **ՎևոՒ** 76.30–34 (ՎևոՒ 84.41, 132.27): Միայն նրանք են, որ չեն փրկագնվի երկրորդ մահից՝ **ՎևոՒ** 76.34–48: Կորստի որդիներն ուրանում են Սուրբ Հոգին, այն ստանալուց հետո՝ **ՎևոՒ** 76.35: Կորստի որդիներն ուրանում են Որդուն, այն բանից հետո, երբ Հայրը հայտնել է նրան՝ **ՎևոՒ** 76.43: Կայենը կկոչվի Կորուստ՝ **Մովսես** 5.22–26:

ԿՈՐՈՒՏ: *Տե՛ս* Կորստի որդիներ

ԿՈՒՊԱՇՏՈՒԹՅՈՒՆ

Կուռքերին երկրպագելը կամ որևէ բանի չափազանց կապված կամ նվիրված լինելը:

Իմ առաջ ուրիշ աստվածներ չունենա՛ս՝ **Ել.** Ի.3 (Մոսիա 12.35, 13.12–13): Եթե ուրիշ աստվածների հետևից գնաս, անպատճառ կկորչես՝ **ԲՕր.** Ը.19: Անհրճազանդությունն անօրինության և կռապաշտության պես է՝ **ԱԹազ.** ԺԵ.23: Դու քեզ հայտնի ես դարձրել մեկ ուրիշին, բայց ոչ ինձ՝ **Ես.** ԾԷ.8: Արծաթի ու ոսկի աստվածներին փառավորեցիր՝ **Դան.** Ե.23: Չեք կարող Աստծուն ծառայել և մամոնային՝ **Մառ.** 2.24: Ազահությունը կռապաշտություն է՝ **Կող.** Գ.5: Որդյակներ, պահեք ձեր անձերը կուռքերից՝ **Ա Հովի.** Ե.21: Վա՛յ նրանց, ովքեր պաշտում են կուռքերի՝ **2 Նեփի** 9.37: Նեփիի ժողովրդի կռապաշտությունն էր նրանց վրա բերում իրենց պատերազմներն ու կործանումները՝ **Ալմս** 50.21: Ամեն մարդ քայլում է իր իսկ աստծո պատկերի հետևից՝ **ՎևոՒ** 1.16: Թող նրանք աշխատեն իրենց սեփական ձեռքերով, որպեսզի որևէ կռապաշտություն չլինի՝ **ՎևոՒ** 52.39: Աբրահամի հայրը հեռու էր տարվել կռապաշտությանը՝ **Աբր.** 1.27:

ԿՐԱԿ: *Տե՛ս նաև* Դժոխք. Երկիր – Երկրի մաքրագործումը. Սկրտություն, Սկրտել. Սուրբ Հոգի

Մաքրելու, մաքրագործելու կամ արագործելու խորհրդանիշ: Կրակը կարող է ծառայել նաև որպես Աստծո ներկայության խորհրդանիշ:

Քո Աստվածը մաշող կրակ է՝ **ԲՕր.** Դ.24: Տերն իր ծառաներին այրող կրակ է շինում՝ **Մաղ.** ԳԴ.4: Ջորաց Տերն այցելելու է նրանց մաշող կրակի բոցով՝ **Ես.** ԻԹ.6 (2 Նեփի 27.2): Տերը գալիս է կրակով՝ **Ես.** ԿԷ.15: Նա հալեցնողի կրակի պես է՝ **Մաղ.** Գ.2 (3 Նեփի 24.2, ՎևոՒ 128.24): Նա ձեզ կմկրտի Սուրբ Հոգով և կրակով՝ **Մառ.** Գ.11 (Դուկ. Գ.16): Արդարները կպահպանվեն կրակով՝ **1 Նեփի** 22.17: Ամբարիշտները կկործանվեն կրակով՝ **2 Նեփի** 30.10: Նեփին բացատրել է, թե ինչպես ենք մենք մկրտվել կրակով և Սուրբ Հոգով՝ **2 Նեփի** 31.13–14 (3 Նեփի 9.20, 12.1, 19.13, Եթեր 12.14, ՎևոՒ 33.11): Դու պետք է հայտարարես մեղքերի թողություն մկրտության և կրակով՝ **ՎևոՒ** 129.31: Մեծ և պիղծ եկեղեցին վայր պիտի գցվի լափող կրակով՝ **ՎևոՒ** 29.21: Երկիրը պիտի անցնի այնպես, ինչպես կրակից՝ **ՎևոՒ** 43.32: Տիրոջ ներկայությունը մնան կլինի հալեցնող կրակի՝ **ՎևոՒ** 133.41: Ադամը մկրտվեց կրակով և Սուրբ Հոգով՝ **Մովսես** 6.66:

ԿՈՒՍՈՐԱ ԲԱՆՈՒՐ: *Տե՛ս նաև*

Մորմնի Գիրքը. Մորմնի՝ Մորմնի որդի. Սմիթ Ջոզեֆ կրտսեր

Փոքրիկ բլուր, որը գտնվում է արևմտյան Նյու Յորքում՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներում: Այստեղ Մորմնի անունով հնագույն մի մարգարե թաքցրել էր ոսկե քիթեղները, որոնք պարունակում էին Նեփիացի և Հարեդացի ազգերի մի քանի հիշատակարաններ: Ջոզեֆ Սմիթն ուղեկցվեց այս բլուրը 1827թ., հարություն առած Մորմնի կողմից, որպեսզի ձեռք բերի այդ քիթեղները և թարգմանի դրանց մի մասը: Մորմնի Գիրքն այդ թարգմանությունն է:

Նեփիացիները հավաքվեցին Կումորայում՝ **Մորմ.** 6.2–4: Կումորան շատ ջրերի երկրում էր՝ **Մորմ.** 6.4: Մորմնը հիշատակարանները թաքցրեց Կումորա բլրում՝ **Մորմ.** 6.6: Բոլոր Նեփիացիները սպանվեցին Կումորայում, բացի քսանչորսից՝ **Մորմ.** 6.11: Ավետիք ենք լսում Կումորայից՝ **ՎևոՒ** 128.20: Ջոզեֆ Սմիթը

վերցրեց թիթեղները Կումորա բլրից՝ **ՁՄ-Պ** 1.42, 50-54, 59:

ԿՈՒՅՍ: *Տե՛ս նաև* Մարիամ՝ Հիսուսի մայրը

Անուանության տարիքի տղամարդ կամ կին, որը երբեք չի ունեցել սեռական հարաբերություններ: Սուրբ գրքերում կույս բառը կարող է վերաբերել մեկին, որը բարոյապես մաքուր է (Հայտ. ԺԴ.4):

Կույսը կեղիանա և որդի կծնի՝ **Ես.** Է.14 (Մատ. 1.23, 2 Նեփի 17.14): Երկնքի արքայությունը նմանեցվում է տասը կույսերի՝ **Մատ.** ԻԵ.1-13: Նազարեթ քաղաքում ես տեսա մի կույս, որն Աստծո Որդու մայրն էր՝ **1 Նեփի** 11.13-18: Մարիամը կույս էր՝ արժանավոր և ընտրյալ մի անոթ՝ **Ալմա** 7.10:

ԿՈՒՅՍ ՄԱՐԻԱՄ: *Տե՛ս* Մարիամ՝ Հիսուսի մայրը

ԿՈՒՍԱԿՐՈՆՈՒԹՅՈՒՆ: *Տե՛ս* Անուանություն, Անուանանալ

ՀԱՐԵԹ: *Տե՛ս նաև* Նոյ՝ աստվածաշնչյան հայրապետ

Նոյի՝ Հին Կտակարանի մարգարեի ավագ որդին (Մովսես 8.12):

Նոյը ծնեց Հաբեթին՝ **Ծն.** Ե.32 (Ծն. 2.10, Մովսես 8.12): Հաբեթն իր կնոջ հետ մտավ Նոյի տապանը՝ **Ծն.** Է.13: Հաբեթը դուրս եկավ տապանից՝ **Ծն.** Թ.18: Աստված կրնդարձակի Հաբեթին՝ **Ծն.** Թ.27:

ՀԱԳԱԹ

Նեփիացի նավաշինարար Մորմոնի Գրքում (Ալմա 63.5-7):

ՀԱԳԱՐ: *Տե՛ս նաև* Աբրահամ. Իսմայել՝ Աբրահամի որդի

Հին Կտակարանում՝ Սարայի եգիպտացի աղայիհնը: Նա դարձավ Աբրահամի կինը և Իսմայելի մայրը (Ծն. ԺՁ.1-16, ԻԵ.12, ՎևոՒ 132.34, 65): Տերը Հագարին խոստացավ, որ նրա որդուց մեծ ազգ կսերվի (Ծն. ԻԱ.9-21):

ՀԱԶԱՐԱՄՅԱԿ: *Տե՛ս նաև* Դժոխք. Հիսուս Քրիստոսի երկրորդ գալուստը

Հագարանյա խաղաղության ժամանակաշրջան, որը կսկսվի, երբ Քրիստոսը կվերադառնա՝ երկրի վրա անձամբ թագավորելու (ՀՀ 1.10):

Մարդիկ սուր չեն բարձրացնի, ոչ էլ կտվորեն պատերազմել՝ **Ես.** Բ.4 (2 Նեփի 12.4, Միքիա Դ.3): Ամայացած երկիրը Տեղեմի պարտեզի նման է դարձել՝ **Եզեկ.** ԼՁ.35: Նրանք կենդանացան և Քրիստոսի հետ թագավորեցին հազար տարի՝ **Հայտ.** Ի.4: Արդարության շնորհիվ Սատանան գործություն չունի՝ **1 Նեփի** 22.26: Ես արդարության մեջ կբնակվեմ երկրի վրա հազար տարի՝ **ՎևոՒ** 29.11: Երբ հազար տարին վերջանա, ես կխնայեմ երկիրը մի փոքր ժամանակով՝ **ՎևոՒ** 29.22: Մեծ Հագարամյակը պիտի գա՝ **ՎևոՒ** 43.30: Արդարների զավակները կմեծանան առանց մեղքի՝ **ՎևոՒ** 45.58: Երեխաները պիտի մեծանան, մինչև որ դառնան ծեր. մարդիկ կփոխվեն մի ակնբարբոս՝ **ՎևոՒ** 63.51: Յոթերորդ հազարամյակի սկզբում Տերը կսրբագործի երկիրը՝ **ՎևոՒ** 77.12: Նրանք կրկին չեն ապրի, մինչև որ հազար տարին չվերջանա՝ **ՎևոՒ** 88.101: Սատանան կապված կլինի հազար տարվա ընթացքում՝ **ՎևոՒ** 88.110: Նկարագրվում է Հագարամյակը՝ **ՎևոՒ** 101.23-34: Հագար տարի երկիրը պիտի հանգստանա՝ **Մովսես** 7.64:

ՀԱԼԱԾԵԼ, ՀԱԼԱԾԱՆՔ: *Տե՛ս նաև* Չախտրդություն

Տառապանք ու ցավ պատճառել ուրիշներին՝ հավատքի կամ սոցիալական կարգավիճակի պատճառով. նեղել կամ ճնշել:

Երանի նրանց, ովքեր արդարության համար հալածվում են՝ **Մատ.** Ե.10 (3 Նեփի 12.10): Աղոթեք ձեզ չարչարողների և ձեզ հալածողների համար՝ **Մատ.** Ե.44 (3 Նեփի 12.44): Որովհետև նրանք հարուստ են, նրանք հալածում են հեղեթին՝ **2 Նեփի** 9.30 (2 Նեփի 28.12-13): Արդարները, որոնք չնայած բոլոր հալածանքներին՝ սպասում են Քրիստոսին, չեն կորչի՝ **2 Նեփի** 26.8: Բոլոր այս բաները քեզ փորձառություն կտան՝ **ՎևոՒ** 122.7:

ՀԱԿԱԴՐՈՒԹՅՈՒՆ: *Տե՛ս* Չախտրդություն

ՀԱԿԱՌԱԿՈՐԳ: *Տե՛ս* Դև

ՀԱՎԱՌԱՎԿՈՒԹՅՈՒՆ: *St'u Gusal*
Ապստամբություն

Կռիվը, վիճաբանելը, հակաճառելը: Հակառակությունը, հատկապես Տիրոջ Եկեղեցու անդամների կամ ընտանիքի անդամների միջև, հաճելի չէ Տիրոջը:

Թող իմ և քո միջև կռիվ չլինի՝ **ԾՖ.** ԺԳ.8: Հպարտությունից հակառակություն է առաջանում՝ **Առակ.** ԺԳ.10: Եթե մի մարդ մեկ ուրիշի հետ վիճել է, թող ների, ինչպես Քրիստոսը ներեց՝ **Կող.** Գ.13: Անմիտ հարցերից ու հակառակություններից խուսափիր՝ **Տիտոս** Գ.9: Տերը մարդկանց պատվիրում է չվիճել միմյանց հետ՝ **2 Նեփի** 26.32: Դուք չեք հանդուրժի, որ ձեր զավակները կռվեն ու վիճեն միմյանց հետ՝ **Մոսիա** 4.14: Այժման պատվիրեց, որ Եկեղեցու անդամների մեջ հակառակություն չլինի՝ **Մոսիա** 18.21: Սատանան համբավներ ու հակառակություններ է տարածում՝ **Հել.** 16.22: Դևը հակառակության հայրն է, և նա մարդկանց դողում է հակառակվել մեկմեկու՝ **3 Նեփի** 11.29 (Մոսիա 23.15): Հաստատեք իմ ավետարանը, որ չլինեն այդքան շատ հակառակություններ՝ **ՎևոՒ** 10.62–64: Դադարեք հակառակվել մեկմեկու՝ **ՎևոՒ** 136.23:

ՀԱՎԱՔՐԻՍՏՈՍ: *St'u Gusal* Դև

Ամեն ոք, ով բացահայտորեն կամ ծածուկ ընդդիմանում է Քրիստոսին, կամ այն ամենը, որ ավետարանի և փրկության ճշմարիտ ծրագրի կեղծ արտահայտումն է: Հովհաննես Հայտնողը հակաքրիստոսին նկարագրում է որպես մոլորեցնող (Ա Հովհ. Բ.18–22, Գ.3–6, Բ Հովհ. Ա.7): Լյուցիֆերը մեծ հակաքրիստոսն է, բայց նա ունի շատ օգնականներ՝ և՛ հոգեղեն էակներ, և՛ մահկանացուներ:

Կորստի որդին ապստամբում է և գոռոզանում այն ամենի վրա, որ Աստված է անվանվում՝ **Բ Թես.** Բ.1–12: Նա երկրի վրա ապրողներին մոլորեցնում է հրաշագործությունների միջոցով՝ **Հայտ.** ԺԳ.13–17: Մերեմն ուրացել էր Քրիստոսին և մոլորեցրել շատերին՝ **Հակոբ** 7.1–23: Նեորը կեղծ վարդապետություն ուսուցանեց, եկեղեցի հիմնադրեց և քահանանենգում մտցրեց՝ **Ալմա** 1.2–16: Կորիիորը ծաղրում էր Քրիստոսին, Քավությունը և մարգարեության ոգին՝ **Ալմա** 30.6–60:

ՀԱՎՈՐՔ ԻՍԱՀԱԿԻ ՈՐԴԻ: *St'u Gusal*
Եսալ. Իսահակ. Իսրայել

Հին Կտակարանի հայրապետ և մարգարե. Իսահակի և Ռեբեկայի երկվորյակ եղբայրների փոքրը (ԾՖ. ԻԵ.19–26): Հակոբն իր եղբայր Եսավից վերցրեց անդրամիկությունը: Դա եղավ Հակոբի արժանավորության և ուխտի մեջ ամուսնանալու շնորհիվ, մինչդեռ Եսավն արհամարհեց իր անդրամիկությունը և ամուսնացավ ուխտից դուրս (ԾՖ. ԻԵ.30–34, ԻԶ.34–35, 27, ԻԸ.6–9, Եբր. ԺԲ.16):

Ռեբեկան Տիրոջ կողմից իմացավ, որ Եսավը ծառայելու է Հակոբին՝ **ԾՖ.** ԻԵ.23: Անդրամիկությունը գնեց Եսավից՝ **ԾՖ.** ԻԵ.29–34: Երագուն դեպի երկինք մի աստիճան տեսավ՝ **ԾՖ.** ԻԸ: Ամուսնացավ Լիայի և Ռաբելի հետ՝ **ԾՖ.** ԻԹ.1–30: Անեցավ տասներկու որդի և մի դուստր՝ **ԾՖ.** ԻԹ.31–Լ.24, ԼԵ.16–20: Ամուսնացավ Բաղդայի և Ջեդփայի հետ՝ **ԾՖ.** Լ.3–4, 9: Անունը փոխվեց Իսրայել՝ **ԾՖ.** ԼԲ.28: Դեմառդեն տեսավ Աստծուն՝ **ԾՖ.** ԼԲ.30: Հովսեփին ամենից շատ սիրեց **ԾՖ.** ԼԷ.3: Իր ընտանիքի հետ գնաց Եգիպտոս՝ **ԾՖ.** ԽԶ.1–7: Օրինեց իր որդիներին և նրանց ժառանգներին՝ **ԾՖ.** ԽԹ: Մահացավ՝ **ԾՖ.** ԽԹ.33: Պահեց պատվիրանները և այժմ Աբրահամի և Իսահակի հետ միասին երկնքում բարձրացված է գահի վրա՝ **ՎևոՒ** 132.37:

ՀԱՎՈՐՔ ԼԵՔԻԻ ՈՐԴԻ: *St'u Gusal*
Լեքի՝ Նեփիի հայր

Մարգարե Մորմոնի Գրքում. 2 Նեփիի ու Հակոբի գրքերի մի քանի բարոզների հեղինակը (2 Նեփի 6–11, Հակոբ 1–7):

Հակոբի գիրքը. Մորմոնի Գրքի երրորդ գիրքը: 1-ին գլուխը պատմում է, որ Նեփին հիշատակարանները փոխանցեց Հակոբին, և ապա Հակոբին ու նրա եղբայր Հովսեփին նվիրաբերեց, որ քահանաներ և ուսուցիչներ լինեն ժողովրդի համար: 2–4-րդ գլուխները բարոզներ են, որոնք ժողովրդին հորդորում են մաքրաբարո լինել: Հակոբը նաև ուսուցանել է փրկագնող Մեսիայի գալստի մասին և պատճառներ է քվարկել, թե ինչու ոճանք Իսրայելում չեն ընդունի նրան, երբ որ նա գա: 5–6-րդ գլուխները պարունակում են Հակոբի վկայությունը և մարգարեական

մի այլաբանություն Իսրայելի ժողովրդի պատմության և առաքելության վերաբերյալ: 7-րդ գլխում մի պատմություն է ընդգրկված Մերեմ անունով ուսյալ մի խռովարարի մասին, որին Հակոբը հաղթեց աստվածային վկայությամբ:

ՀԱԿՈՒԹԻ ՀՈՒԴԱ

Նոր Կտակարանում՝ Հիսուս Քրիստոսի նախնական Տասներկու Առաքյալներից մեկը (Ղուկ. 2.13-16): Նա, հավանաբար, հայտնի էր նաև՝ որպես Ղեբեոս Թաղեոս (Մատ. Ժ.2-4):

ՀԱԿՈՒԹՈՍ՝ ՁԵԲԵԳԻՆՈՍԻ ՈՐԳԻ

Իր մահկանացու ծառայության ժամանակ Հիսուսի կողմից ընտրված Տասներկու Առաքյալներից մեկը: Նա Հովհաննեսի եղբայրն էր: Նա այն երեք Առաքյալներից մեկն էր, որոնք ընտրվել էին՝ Հիսուսի հետ լինելու մի քանի իրադարձությունների ժամանակ. Հայրուսի աղջկան կենդանացնելիս (Մար. Ե.37), Կերպարանափոխվելիս (Մատ. ԺԷ.1, Մար. Թ.1, Ղուկ. Թ.28) և Գեթսեմանիում (Մատ. Ի2.37, Մար. ԺԴ.33): Պետրոսի և Հովհաննեսի հետ նա երկրի վրա վերականգնեց Մեքիստեղեկյան Քահանայությունը՝ կարգելով Չոզեֆ Սմիթին (ՎևոՒՒ 27.12, 128.20, 2Ս-Պ 1.72):

ՀԱԿՈՒԹՈՍ՝ ԱԼՓԵՆՈՍԻ ՈՐԳԻ

Իր մահկանացու ծառայության ժամանակ Հիսուսի կողմից ընտրված Տասներկու Առաքյալներից մեկը (Մատ. Ժ.3, Մար. Գ.18, Ղուկ. 2.15, Գոր. Ա.13):

ՀԱԿՈՒԹՈՍ՝ ՏԻՐՈՋ ԵՂՔԱՅՐ

Նոր Կտակարանում՝ եղբայրը Տիրոջ (Գաղ. Ա.19) և Հովսեփի, Միմոնի, Հուդայի և մի քանի քույրերի (Մատ. ԺԳ.55-56, Մար. 2.3, Հուդա Ա.1): Նա նաև հայտնի էր՝ որպես Հակոբոս Արդար, և Երուսաղեմի Եկեղեցում կարևոր պաշտոն էր զբաղեցնում (Գոր. ԺԲ.17, ԺԵ.13, Ա Կոր. ԺԵ.7, Գաղ. Բ.9-12): Ենթադրվում է, որ Հակոբոսի թուրքը նա է գրել:

Հակոբոսի թուրքը. Գիրք Նոր Կտակարանում: Սկզբում դա մի նամակ էր, որն ուղղված էր Իսրայելի տասներկու ցրված ցեղերին և, հավանաբար, գրվել էր Երու-

սաղեմում: Թղթում պարզորոշ սահմանված են որոշ հարցեր գործնական կրոնի վերաբերյալ, ներառյալ Ա գլխի կարևոր խորհուրդը, որ եթե մարդ իմաստության պակասություն ունի, նա պետք է օգնություն խնդրի Աստուծոց (Հակ. Ա.5-6, 2Ս-Պ 1.9-20): Բ գլխի վերաբերում է հավատքին և գործերին: Գ-Դ գլուխներում խստվում է լեզուն սանձելու անհրաժեշտության մասին և Սրբերին հորդորում է չարախոսել միմյանց մասին: Ե գլուխը Սրբերին քաջալերում է համբերություն ունենալ և հիվանդության դեպքում կանչել երեցներից, որ օրհնեն. այն նուսուցանում է նաև ուրիշների դարձի բերմանն օգնելու օրինությունների մասին:

ՀԱՂՈՐԳԱԿՅՈՒԹՅՈՒՆ: Տե՛ս
Հաղորդություն

ՀԱՂՈՐԳՈՒԹՅՈՒՆ: Տե՛ս նաև
Չոհաբերություն. Խաչ. Կենդանի ջուր. Կյանքի հացը. Հիսուս Քրիստոս. Մկրտություն, Մկրտել. Վերջին Ընթրիք. Քավել, Քավություն

Վերջին Օրերի Սրբերի համար *հաղորդությունը* վերաբերում է հացից և ջրից ճաշակելու արարողությանը՝ ի հիշատակ Քրիստոսի քավիչ գոհաբերության: Կորոնած հացը խորհրդանշում է նրա կտորված մարմինը. ջուրը խորհրդանշում է արյունը, որ նա թափեց՝ մեր մեղքերը քավելու համար (Ա Կոր. ԺԱ.23-25, ՎևոՒՒ 27.2): Երբ Եկեղեցու արժանի անդամները հաղորդություն են ընդունում, նրանք խոստանում են իրենց վրա վերցնել Քրիստոսի անունը, միշտ հիշել նրան և պահել նրա պատվիրանները: Այս արարողության միջոցով Եկեղեցու անդամները նորացնում են իրենց մկրտության ուխտերը:

Վերջին Ընթրիքին, Տասներկու Առաքյալների հետ ընթրելու ընթացքում, Հիսուսը բացատրեց հաղորդության արարողությունը (Մատ. Ի2.17-28, Ղուկ. ԻԲ.1-20):

Հիսուսը վերցրեց հացը և օրհնեց այն. և նա վերցրեց բաժակը և գոհություն հայտնեց՝ **Մատ.** Ի2.26-28 (Մար. ԺԴ.22-24, Ղուկ. ԻԲ.19-20): Իմ մարմինն ուտողը և իմ արյունը խմողը հավերժական կյանք ունի՝ **Հովհ.** 2.55: Անարժանությամբ

ուտողը և խնդն իր հոգու համար նգովք է ուսում՝ **Ա Կոր. ԺԱ.29** (3 Նեփի 18.29): Հիսուսը Նեփիացի իր տասներկու աշակերտներին ուսուցանեց հաղորդության մասին՝ **3 Նեփի 18.1–11**: Հիսուսն ուսուցանեց այս աշակերտներին, որ անարժան մարդկանց թույլ չտան ընդունել հաղորդությունը՝ **3 Նեփի 18.28–29** (Մորմ. 9.29): Տրված են հաղորդության աղոթքները՝ **Մոր. 4–5** (ՎևոՒ 20.75–79): Հաղորդությունը պետք է ապաստվորվի քահանայի կամ երեցի կողմից՝ **ՎևոՒ 20.46, 76**: Ուսուցիչները և ասրկավագներն իշխանություն չունեն օրհնելու հաղորդությունը՝ **ՎևոՒ 20.58**: Հաղորդության համար, գինուց բացի, կարելի է օգտագործել նաև այլ հեղուկներ՝ **ՎևոՒ 27.1–4**:

ՀԱՄԱՍԵՌԱՄՈԼՈՒԹՅՈՒՆ: *Տե՛ս նաև* Զգայական, Զգայականություն, Շնորհություն

Միևնույն սեռի անձանց սեռական հարաբերություն: Աստված արգելում է նմանատիպ սեռական գործողությունները:

Նրանց դուրս բեր մեզ մոտ, և գիտեմանք նրանց՝ **Ծն. ԺԹ.1–11** (Մովսես 5.51–53): Արուի հետ կնկա հետ պառկելու պես չպառկես. պղծություն է այդ՝ **Գև. ԺԸ.22** (Գև. 20.13): Իսրայելի տղերքից իգացյալ չլինի՝ **Բ Օր. ԻԳ.17**: Նրանք իրենց մտերքերը հրատարակում են Մողոմի պես, չեն ծածկում՝ **Ես. Գ.9** (2 Նեփի 13.9): Տղամարդիկ իրենց ցանկություններով իրար հետ բորբոքվեցին՝ **Հռոզմ. Ա.27**: Արվագետները չեն ժառանգի Աստծո արքայությունը՝ **Ա Կոր. Զ.9–10**: Օրենքն արդարի համար չէ ստեղծված, այլ իրենց պղծող արվագետների՝ **Ա Տիմ. Ա.9–10**: Ուրիշ մարմնի ետևից գնացողներն օրինակի համար մեր առաջ դրված են՝ հավերժական կրակի դատաստանն ընդունելով՝ **Հուդա Ա.7**:

ՀԱՄԲԱՎ: *Տե՛ս նաև* Բամբասանք, Չարախոսություն

Սատանան տարածում է համբավներ և հակառակություններ, երբեմն մասամբ ճշմարտության վրա հիմնված, որպեսզի մարդկանց շրջի ընդդեմ Աստված և ամենայն բարին (Հել. 16.22, ԶՄ–Պ 1.1): Հիսուս Քրիստոսի երկրորդ գալստի

նշաններից մեկն այն է, որ մարդիկ կխոսեն պատերազմների և պատերազմների համբավների մասին (Մատ. ԻԳ.6, ՎևոՒ 45.26, ԶՄ–Մ 1.23):

ՀԱՄԲԱՐՉՈՒՄ: *Տե՛ս նաև* Հիսուս Քրիստոս. Հիսուս Քրիստոսի երկրորդ գալուստը

Փրկչի հանդիսավոր մեկնումը երկրից՝ իր հարությունից քառասուն օր անց: Համբարձումը տեղի ունեցավ Չիթենյաց սարի վրա՝ աշակերտների ներկայությամբ (Մար. ԺԶ.19, Դույ. ԻԳ.51): Այդ ժամանակ երկնքից իջած երկու հրեշտակ վկայեցին, որ ապագայում Տերը «այդպես» էլ կվերադառնա (Գոր. Ա.9–12):

ՀԱՄԲԵՐԵԼ. *Տե՛ս նաև* Գայթակղել, Գայթակղություն, Համբերություն, Զախորդություն

Տոկուն մնալ Աստծո պատվիրաններին հավատարիմ լինելու պարտավորության մեջ, չնայած գայթակղությանը, ընդդիմությանը և ձախորդությանը:

Ով որ համբերի մինչև վերջ, նա կփրկվի՝ **Մատ. Ժ.22** (Մար. ԺԳ.13): Նրանք արմատներ չունեն և, ուստի, դիմանում են միայն փոքր ժամանակ՝ **Մար. Գ.17**: Գթությունն ամեն բանի համբերում է՝ **Ա Կոր. ԺԳ.7**: Աբրահամը երկայնամտությամբ համբերելով հասավ խոստմանը՝ **Եբր. Ը.15**: Եթե համբերեն մինչև վերջ, վերջին օրը նրանք կբարձրագվեն՝ **1 Նեփի 13.37**: Եթե դուք հնգաճանց լինեք պատվիրաններին և համբերեք մինչև վերջ, ապա կփրկվեք՝ **1 Նեփի 22.31** (Ալմա 5.13): Եթե առաջ մղվեք, սնվելով Քրիստոսի խոսքով, և համբերեք մինչև վերջ, դուք կունենաք հավերժական կյանք՝ **2 Նեփի 31.20** (3 Նեփի 15.9, ՎևոՒ 14.7): Ով որ վերցնում է իր վրա իմ անունը և համբերում է մինչև վերջ, նույնը պիտի փրկվի՝ **3 Նեփի 27.6**: Ով որ իմ եկեղեցուն համբերում է մինչև վերջ, նրան ես կհաստատեմ իմ վեմի վրա՝ **ՎևոՒ 10.69**: Նա, ով հավատքով համբերում է և կատարում է իմ կամքը, կհաղթի աշխարհին՝ **ՎևոՒ 63.20, 47**: Բոլոր գահերն ու տիրապետությունները պիտի տրվեն բոլոր նրանց, ովքեր քաջաբար համբերել են հանուն Հիսուս Քրիստոսի ավետարանի՝ **ՎևոՒ 121.29**:

ՀԱՄԲԵՐՈՒԹՅՈՒՆ: *St'u Gsul*
Համբերել, Հեզ, Հեզություն

Հանգիստ տոկունություն. չարչարանքները, անարգանքները կամ վիրավորանքներն առանց գանգատվելու կամ վրեժխնդրության տանելու կարողություն:

Հանգստացիր Տիրոջով և համբերատար սպասիր նրան՝ **Սաղ.** Լ.Է.7-8: Նա, ով դանդաղ է բարկության մեջ, մեծ հասկացողություն ունի՝ **Ռապ.** Ժ.Գ.29: Ձեր համբերությամբ տիրապետե՛ք ձեր անձը՝ **Դուկ.** ԻԱ.19: Համբերությամբ և սուրբ գրքերի մխիթարությամբ հույս ունենա՛ք՝ **Հռովմ.** ԺԵ.4: Հետևե՛ք նրանց, ովքեր հավատքով և համբերությամբ են ժառանգում խոստումները՝ **Եբր.** Ջ.12-15: Թող համբերությունն իր կատարյալ գործը կատարի, որպեսզի դուք կատարյալ և ամբողջական լինե՛ք՝ **Հակ.** Ա.2-4: Հորի համբերության մասին լսել ե՛ք՝ **Հակ.** Ե.11: Նրանք զվարթությամբ և համբերատարությամբ հնազանդվեցին Տիրոջ ողջ կամքին՝ **Մոսիա** 24.15: Դու այս բոլոր բաները համբերությամբ տարար, որովհետև Տերը քեզ հետ էր՝ **Ալմա** 38.4-5: Համբերությամբ շարունակիր, մինչև որ կատարյալ դառնաս՝ **ՎևոՒ** 67.13:

ՀԱՄԵՍՏՈՒԹՅՈՒՆ: *St'u Gsul*
Խոնարհեցնել, Խոնարհություն

Խոնարհ, չափավոր և պարկեշտ վարք կամ արտաքին տեսք: Համեստ անձնավորությունը գերծ է մնում չափազանցությունից և ձևաճորտությունից:

Աստված կաշվից հանդերձներ շինեց Ադամի և Եվայի համար և հագցրեց նրանց՝ **Ծն.** Գ.21 (Մովսես 4.27): Կանայք վայելուչ հագուստով իրենց անձերը զարդարեն՝ **Ա Տիմ.** Բ.9: Եղեք խոհեմ, մաքրաբարո, տնարար՝ **Տիտոս** Բ.5: Իրենց հագուստների բանկարժեքության պատճառով շատերը հպարտությունից բաժրամտացել են՝ **Հակոբ** 2.13: Թող քո բոլոր համդերձները լինեն պարզ՝ **ՎևոՒ** 42.40: Մե՛նք հավատով ենք մաքրաբարո և առաքինի լինելուն՝ **ՀՀ** 1.13:

ՀԱՅԳ ՕՐՄՈՆ

Արդի տնտեսության ժամանակ կանչված Տասներկու Առաքյալների առաջին Քվորումի անդամ (ՎևոՒ 68.1-3, 75.13, 102.3,

124.128-129): Նա բազմաթիվ առաքելություններ կատարեց Եկեղեցու համար, այդ թվում՝ Սուրբ Հոդի նվիրագործումը, 1841 թվականին՝ հրեա ժողովրդի վերադարձի համար:

ՀԱՅՀՈՅԵԼ, ՀԱՅՀՈՅԱՆՔ: *St'u Gsul*
Անարգանք. Աններելի մեղք

Աստծո կամ սրբազան բաների վերաբերյալ անպատիվ կամ անհարգալից խոսելը:

Հիտուր շատ անգամ հրեաների կողմից մեղադրվում էր հայհոյանք խոսելու մեջ, որովհետև նա պնդում էր, որ մեղքերը թողելու իրավունք ունի (Մատ. Թ.2-3, Դուկ. Ե.20-21), որովհետև իրեն Աստծո Որդի էր անվանում (Հովհ. Ժ.22-36, ԺԹ.7), և որովհետև ասում էր, որ նրան կտեսնեն գործրթյան այց կողմում նստած և երկնքի ամպերի մեջ գալիս (Մատ. ԻՋ.64-65): Այդ մեղադրանքները ճիշտ կլինեին, եթե ճշմարիտ չլինեք այն ամենն, ինչ նա ասում էր: Ծերակույտի առաջ դատվելիս՝ նրա դեմ բերած սուտ վկաների մեղադրանքը (Մատ. ԻՋ.59-61) հայհոյանքն էր Աստծո տաճարի դեմ: Սուրբ Հոգու դեմ հայհոյանքը, որը Քրիստոսին գիտակցաբար ուրանալն է, նրա մասին կատարյալ գիտելիք ստանալուց հետո, աններելի մեղք է (Մատ. ԺԲ.31-32, Մար. Գ.28-29, ՎևոՒ 132.27):

Ով հայհոյում է Տիրոջ անունը, պետք է մահվան ենթարկվի՝ **Դև. ԻԳ.**11-16: Տիրոջ թշնամիները չեն մնա, որ հայհոյեն նրա անունը՝ **ՎևոՒ** 105.15: Վրեժխնդրություն կզա նրանց վրա, ովքեր հայհոյում են Տիրոջը՝ **ՎևոՒ** 112.24-26:

ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ: *St'u Gsul* Աստծո Խոսքը. Երազ. Լույս, Քրիստոսի լույս. Չայն. Մարգարեություն, Մարգարեանալ. Ոգեշնչում, Ոգեշնչել. Սուրբ Հոգի. Տեսիլք.

Աստծո կողմից երկրի վրա իր գավակների հետ հաղորդակցություն: Հայտնությունը կարող է գալ Քրիստոսի Լույսի և Սուրբ Հոգու միջոցով՝ ոգեշնչմամբ, տեսիլքներով, երազներով կամ հրեշտակների այցելությամբ: Հայտնությունը ապահովում է ղեկավարություն, որը հավատարիմներին կարող է առաջնորդել

դեպի հավերժական փրկություն սելեստիալ արքայության մեջ:

Տերն իր գործերը հայտնի է դարձնում իր մարգարեներին և հավատացյալներին հաստատում է, որ մարգարեներին տրված հայտնությունները ճշմարիտ են (Ամովս Գ.7): Հայտնության միջոցով Տերն անհատական առաջնորդություն է ապահովում յուրաքանչյուր անձի համար, որը ձգտում է դրան, և որը հավատք ունի, ապաշխարում է և հնազանդ է Հիսուս Քրիստոսի ավետարանին: «Սուրբ Հոգին հայտնողն է, – ասել է Ջոզեֆ Սմիթը և, – ոչ ոք չի կարող ստանալ Սուրբ Հոգին առանց հայտնություններ ստանալու»:

Տիրոջ Եկեղեցում, Առաջին Նախագահությունը և Տասներկու Առաքյալների Քվորումը մարգարեներ, տեսանողներ և հայտնողներ են Եկեղեցու և աշխարհի համար: Եկեղեցու նախագահը միակ մարդն է, ում Տերը լիազորել է հայտնություններ ստանալ Եկեղեցու համար (ՎևՈՒ 28.2-7): Ամեն մարդ կարող է անձնական հայտնություն ստանալ իր օգտի համար:

Տիրոջ քերականից դուրս եկած ամեն խոսքով կապրի մարդը՝ **Բ Օր.** Ը.3 (Մատ. Գ.4, ՎևՈՒ 98.11): Տերը խոսում է մեզմ ու բարակ ձայնով՝ **Գ Թագ.** ԺԹ.12: Որտեղ տեսիլք չկա, այնտեղ ժողովուրդը կործանվում է՝ **Առակ.** ԻԹ.18: Որովհետև Տեր Աստված ոչ մի բան չի անի, եթե չհայտնի իր խորհուրդն իր ծառայողներին՝ մարգարեներին՝ **Ամովս** Գ.7: Երանի քեզ Սիմոն՝ Հովնանի որդի, որովհետև մարմինը և արյունը չհայտնեց քեզ, բայց իմ Հայրը՝ **Մատ.** Ժ.2.15-19: Հոգին կառաջնորդի ձեզ ամեն ճշմարտության մեջ և գալու բաները ցույց կտա ձեզ՝ **Հովհ.** Ժ.2.13: Եթե ձեզամից մեկն իմաստության պակաս ունի, թող խնդրի Աստծուց՝ **Հակ.** Ա.5: Բոլոր բաները հայտնի կդարձվեն՝ **2 Նեփի** 27.11: Ես կտամ մարդկանց գավակներին տող առ տող՝ **2 Նեփի** 28.30: Չկա ոչ մի գաղտնիք, որ չբացահայտվի՝ **2 Նեփի** 30.17: Սուրբ Հոգին ձեզ ցույց կտա բոլոր բաները՝ **2 Նեփի** 32.5: Ոչ մի մարդ չգիտի Աստծո ուղիները, մինչև այն հայտնի չդարձվի նրան՝ **Հակոբ** 4.8: Ալման ծած էր պահել և աղոթել հայտնություն ստանալու համար՝ **Ալմա** 5.46: Բաներ, որոնք երբեք չեն հայտնվել,

հայտնի կդառնան հավատարիմներին՝ **Ալմա** 26.22: Նրանք, ովքեր ժխտում են հայտնությունը, չգիտեն Հիսուս Քրիստոսի ավետարանը և չեն հասկանում սուրբ գրքերը՝ **Մորմ.** 9.7-8: Նախքան ձեր հավատքի փորձությունը, դուք վկայություն չեք ստանում՝ **Եթե** 12.6: Իմ խոսքերը բոլորը պիտի կատարվեն՝ **ՎևՈՒ** 1.38: Խաղաղություն չխոսեցի՞ ես քո մտքին այդ հարցի վերաբերյալ՝ **ՎևՈՒ** 6.22-23: Ես կասեմ քեզ քո մտքում և քո սրտում՝ **ՎևՈՒ** 8.2-3: Եթե դա ճիշտ լինի, ես այնպես կանեմ, որ կուրծքդ կայրվի՝ **ՎևՈՒ** 9.8: Մի ուրացիր հայտնության ոգին՝ **ՎևՈՒ** 11.25: Նրանք ովքեր խնդրում են, ստանում են հայտնություն հայտնության վրա՝ **ՎևՈՒ** 42.61: Ինչ որ նրանք խոսեն, երբ շարժվում են Սուրբ Հոգով, պիտի լինի Տիրոջ ձայնը՝ **ՎևՈՒ** 68.4: Աստված ձեզ գիտություն կտա՝ **ՎևՈՒ** 121.26: Ջոզեֆ Սմիթը տեսավ Հորը և Որդուն՝ **ՋՄ-Պ** 1.17: Մենք հավատում ենք այն ամենին, ինչ Աստված հայտնել է և դեռ կհայտնի՝ **ՀՀ** 1.7, 9:

ՀԱՅՐ ԵՐԿՆԱՅԻՆ: *Տե՛ս նաև*
Աստված, Աստվածազույլս

Ողջ մարդկության հոգիների Հայրը (Մաղ. ԶԲ.6, Մատ. Ե.48, Հովի. Ժ.34, Հռոմ. Ը.16-17, Գաղ. Գ.7, Ա Հովի. Գ.2): Հիսուսը նրա Միածին Որդին է մարմնում: Մարդուն պատվիրվել է հնազանդվել և պատկառանք ունենալ Հոր հանդեպ, և աղոթել նրան Հիսուսի անունով:

Եթե դուք մարդկանց ներքե, ձեր Երկնային Հայրն էլ ձեզ կների՝ **Մատ.** Զ.14 (Մատ. ԺԸ.35, 3 Նեփի 13.14): Չեր Երկնային Հայրը գիտի, որ դուք ունեք այդ ամենի կարիքը՝ **Մատ.** Զ.26-33 (3 Նեփի 13.26-33): Որքա՞ն ավելի Երկնային Հայրը Սուրբ Հոգին կտա նրանց, որ ուզում են նրանից՝ **Ղուկ.** ԺԱ.11-13: Օրհնյալ է Աստված և մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հայրը՝ **Եփես.** Ա.3: Դուք հավերժ պարտական եք ձեր Երկնային Հորը՝ **Մոսիա** 2.34: Քրիստոսը փառավորեց Հոր անունը՝ **Եթե** 12.8: Սրբերը պետք է վկայություն բերեն իրենց հալածանքների մասին, նախքան Հայրը դուրս կգա իր բացատրողից՝ **ՎևՈՒ** 123.1-3, 6: Մենք մեծ և փառավոր օրհնություններ ունեցանք մեր Երկնային Հորից՝ **ՋՄ-Պ** 1.73:

ՀԱՅՐ ՄԱՀԿԱՆԱՑՈՒ: *Տե՛ս նաև*
Ընտանիք. Ծնողներ. Հայրապետ,
Հայրապետական.
Հայրապետական օրհնություններ

Սրբազան կոչում, որով դիմում են տղամարդուն, որը երեխա ունի կամ օրհնական ձևով որդեգրել է:

Պատվիր քո հորը և քո մորը՝ **Ել.** Ի.12 (ԲՕր. Ե.16, Մատ. ԺԹ.19, Մոսիա 13.20): Հայրը կողդի իր երեխային, որին սիրում է՝ **Առակ.** Գ.12: Հայրե՛ր, մի բարկացրեք ձեր երեխաներին՝ **Եփես.** 2.1–4: Ես ինչոր չափով սովորեցվել էի հորս բոլոր գիտելիքներից՝ **1 Նեփի** 1.1: Հայրս արդար մարդ էր, քանզի ինձ սովորեցրել էր՝ **Ենոպս** 1.1: Ալման աղոթում էր իր որդու համար՝ **Մոսիա** 27.14: Ալման պատվիրաններ տվեց իր որդիներին՝ **Ալմա** 36–42: Հելամանն իր որդիներին կոչեց իր նախնիների անուններով՝ **Հել.** 5.5–12: Մորմոնն իր աղոթքներում միշտ հիշում էր իր որդուն՝ **Մոր.** 8.2–3: Որպեսզի մեծ բաներ պահանջվեն նրանց հայրերի ձեռքից՝ **Վևոթ** 29.48: Ամեն տղամարդ պարավոր է ապահովել իր սեփական ընտանիքը՝ **Վևոթ** 75.28: Նա ինձ պատվիրեց, որ գնամ իմ հոր մոտ՝ **ՋՄ–Պ** 1.49:

ՀԱՅՐԱՊԵՏ, ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ:
Տե՛ս նաև Ավետարանիչ. Հայր մահկանացու. Հայրապետական օրհնություններ. Մելքիսեդեկյան Քահանայություն

Սուրբ գրքերում խոսվում է երկու տեսակի հայրապետների մասին՝ (1) կարգված պաշտոն Մելքիսեդեկյան Քահանայության մեջ, որը երբեմն կոչվում է ավետարանիչ. (2) ընտանիքների հայրեր: Կարգված հայրապետները հատուկ օրհնություններ են տալիս Եկեղեցու արժանի անդամներին:

Կարգված հայրապետներ. Ոմանց նա դրել է մարգարեներ, իսկ ոմանց՝ ավետարանիչներ՝ **Եփես.** Դ.11 (ՀՀ 1.6): Տասներկուսի պարտականությունն է՝ ավետարանչական սպասավորներ կարգել՝ **Վևոթ** 107.39: Հայրանք կարող է վերցնել քահանայության և հայրապետի պաշտոնը՝ **Վևոթ** 124.91–92, 124, 135.1:

Հայրեր. Հակոբն օրհնեց իր որդիներին և

նրանց հետնորդներին՝ **Ծճ.** ԽԹ.11–28: Կարող եմ վստահորեն խոսել Դավիթ նահապետի մասին՝ **Գոր.** Բ.29: Լեքին խորհուրդ տվեց և օրհնեց իր ժառանգներին՝ **2 Նեփի** 4.3–11: Ես դարձա արդարակյաց ժառանգ՝ կրելով հայրերին պատկանող իրավունքը՝ **Աբր.** 1.2–4:

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ: *Տե՛ս նաև*
Ավետարանիչ. Հայրապետ, Հայրապետական. Հայր մահկանացու

Կարգված հայրապետների կողմից Եկեղեցու արժամատուր անդամներին տրվող օրհնություն: Հայրապետական օրհնությունը ներառում է Տիրոջ խորհուրդն օրհնություն ստացող անձին և հայտարարություն Իսրայելի տան մեջ այդ անձի ազգատոհմի մասին: Որպես իրենց ընտանիքների հայրապետներ՝ հայրերը կարող են հատուկ օրհնություններ տալ, բայց այդ օրհնությունները չեն գրանցվում և չեն պահպանվում Եկեղեցու կողմից:

Իսրայելն իր աջ ձեռքը մեկնեց և Եփրեմի գլխին դրեց՝ **Ծճ.** ԽԸ.14: Հակոբն օրհնեց իր որդիներին և նրանց սերունդներին՝ **Ծճ.** ԽԹ: Լեքին օրհնեց իր ժառանգներին՝ **2 Նեփի** 4.3–11:

ՀԱՆԳԻՍ: *Տե՛ս նաև* Խաղաղություն. Հանգստության օր

Հոգսից ու աղմուկից խաղաղություն և ազատություն վայելելը: Տերը մնան հանգիստ է խոստացել իր հավատարիմ հետևորդներին այս կյանքի ընթացքում: Նա նրանց համար հանգստի մի վայր է պատրաստել մահ հաջորդ կյանքում:

Իմ ներկայությունը քեզ հետ կլինի, և ես քեզ կհանգստացնեմ՝ **Ել.** ԼԳ.14: Ինձ մոտ եկեք, ամեն բեռնավորվածներ, և ես հանգիստ կտամ ձեզ՝ **Մատ.** ԺԱ.28–29: Մենք աշխատում էինք, որպեսզի նրանք կարողանային ներս մտնել նրա հանգիստը՝ **Հակոբ** 1.7 (Եբր. Դ.1–11): Ով որ ապաշխարում է, պիտի ներս մտնի իմ հանգիստը՝ **Ալմա** 12.34: Կային շատերը, իսկայական քանակությամբ, ովքեր դարձվել էին անարատ և մտել էին Տիրոջ հանգիստը՝ **Ալմա** 13.12–16: Դրախտը հանգստի վիճակ է՝ **Ալմա** 40.12 (Ալմա 60.13):

Ոչինչ ներս չի մտնում նրա հանգիստը, բացի նրանցից, ովքեր իրենց հանդերձները լվացել են իմ արյունով՝ **3 Նեփի 27.19**: Ապաշխարություն հայտարարիր այս ժողովրդին, որ կարողանաս նրանց հետ հանգատանալ իմ Հոր արքայությունում՝ **ՎևոՒ 15.6** (ՎևոՒ 16.6): Նրանք, ովքեր մահանում են, կհանգատանան իրենց աշխատանքներից՝ **ՎևոՒ 59.2** (Հայտ. ԺԳ.13): Տիրոջ հանգիստը նրա փառքի լիությունն է՝ **ՎևոՒ 84.24**:

ՀԱՆԳԱՏՈՒԹՅԱՆ ՕՐ: *Տե՛ս նաև*
Հանգիստ. Ստեղծել, Ստեղծում

Սուրբ օր, որն ամեն շաբաթ առանձնացվում է հանգստի և երկրպագության համար: Այն բանից հետո, երբ Աստված ստեղծեց բոլոր բաները, յոթերորդ օրը նա հանգատացավ և պատվիրեց, որ շաբաթվա մեկ օրը լինի հանգստի օր՝ օգնելու մարդկանց, որ հիշեն իրեն (Ել. Ի.8–11):

Նախքան Քրիստոսի հարությունը, Եկեղեցու անդամները շաբաթվա վերջին օրն էին պահում որպես Շաբաթ (Հանգրստության օր), ինչպես որ անում էին հրեաները: Հարությունից հետո Եկեղեցու անդամները՝ թե՛ հրեաները և թե՛ հեթանոսները, սկսեցին պահել շաբաթվա առաջին օրը (Տիրոջ օրը), որպեսզի հիշեն Տիրոջ հարությունը: Այսօր Եկեղեցին շարունակում է պահել շաբաթվա մեկ օրը՝ որպես սուրբ հանգատության օր, Աստծուն երկրպագելու և աշխարհի գործերից հանգրստանալու համար:

Հանգատության օրը մարդկանց հիշեցնում է հոգևոր սնունդման կարիքի և նրանց պարտականության մասին, որ հնազանդվեն Աստծուն: Երբ որ երկիրն անլրջությամբ է վերաբերվում Հանգրստության օրը պահելուն, այն ազդում է կյանքի բոլոր ոլորտների վրա և հոգևոր կյանքը քայքայվում է (Նեեմ. ԺԳ.15–18, Երեմ. ԺԷ.21–27):

Աստված հանգատացավ յոթերորդ օրը՝ **ԾՆ. Բ.1–3**: Իսրայելի զավակները մահանա չէին հավաքում հանգատության օրը՝ **Ել. ԺԶ.22–30**: Հիշիր հանգատության օրը՝ այն սուրբ պահելու համար՝ **Ել. Ի.8–11** (Մոսիա 13.16–19): Հանգատության օրը տրվել է որպես նշան Աստծո և մարդու միջև՝ **Ել. Լ.Ա.12–17** (Եզեկ. Ի.12, 20): Մենք չպետք է առք ու վաճառք անենք

հանգատության օրը՝ **Նեեմ. Ժ.31**: Շաբաթը կոչիր բերկրանք՝ պատվելով Տիրոջը և չկատարելով թո բաղձանքները՝ **Ես. ԾԸ.13–14**: Շաբաթը մարդու համար եղավ և ոչ թե մարդը շաբաթի համար՝ **Մար. Բ.23–28**: Մարդու Որդին շաբաթի Տերն է՝ **Ղուկ. Զ.1–10**: Հիսուսը հանգատության օրն ուսուցանում էր ժողովարանում և բժշկում էր՝ **Ղուկ. ԺԳ.10–14**: Նեփիացիները հանգատության օրը սուրբ էին պահում՝ **Հարոմ 1.5**: Հարգեք հանգատության օրը, որպեսզի սուրբ պահեք այն՝ **Մոսիա 18.23**: Քո հաղորդությունները մատուցիր իմ սուրբ օրը՝ **ՎևոՒ 59.9–13**: Միոմի բնակիչները պետք է պահեն հանգատության օրը՝ **ՎևոՒ 68.29**: Ես՝ Աստվածս, յոթերորդ օրը հանգատացա իմ բոլոր գործերից՝ **Մովսես 3.1–3** (Ծն. Բ.1–3, Աբր. 5.1–3):

ՀԱՇՎ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ:
Տե՛ս նաև Կամքի ազատություն

Տերն ասել է, որ բոլոր մարդիկ պատասխանատու են իրենց իսկ դրդապատճառների, վերաբերմունքի, ցանկությունների և գործողությունների համար:

Պատասխանատվության տարիքն այն տարիքն է, երբ երեխաները պատասխանատու են համարվում իրենց գործողությունների համար և ունակ են մեղք գործել և ապաշխարել:

Ամեն մարդու իր ճանապարհների համեմատ պիտի դատեմ՝ **Եզեկ. ԺԸ.30**: Մարդիկ հաշիվ կտան ամեն դատարկ խոսքի համար՝ **Մատ. ԺԲ.36**: Հաշիվ տուր թո տնտեսության համար՝ **Ղուկ. ԺԶ.2**: Մեզանից ամեն մեկն իր անձի համար պիտի հաշիվ տա Աստծուն՝ **Հռովմ. ԺԳ.12**: Մեռելները պիտի դատվեն իրենց գործերի համեմատ՝ **Հայտ. Ի.12**: Մեր խոսքերը, գործերը և մտքերը կրատապարտեն մեզ՝ **Ալմա 12.14**: Մենք մեր սեփական դատավորներն ենք՝ գործենք բարիք, թե չարիք՝ **Ալմա 41.7**: Չեզ թույլատրված է գործել ինքներդ ձեզ համար՝ **Հել. 14.29–31**: Այս բանը պիտի դուք սովորեցնեք՝ ապաշխարություն և մկրտություն նրանց, ովքեր պատասխանատու են՝ **Մոր. 8.10**: Բոլորը, ովքեր հասել են պատասխանատվության տարիքին, պետք է ապաշխարեն և մկրտվեն՝ **ՎևոՒ 18.42**: Մատանան չի

կարող գայթակղել փոքր երեխաներին, մինչև որ նրանք չսկսեն պատասխանատու դառնալ իմ առաջ՝ **ՎՆՈՒ** 29.46–47: Երեխաները պետք է մկրտվեն, երբ նրանք ութ տարեկան են՝ **ՎՆՈՒ** 68.27: Գատաստանի օրն ամեն մարդ պատասխանատու կլինի իր իսկ մեղքերի համար՝ **ՎՆՈՒ** 101.78: Մարդկանց տրված է բարին տարբերել չարից. ուստի նրանք գործակալ են իրենց համար՝ **Մովսես** 6.56: Մարդիկ կպատժվեն իրենց իսկ մեղքերի համար՝ **ՀՀ** 1.2:

ՀԱՄԿԱՆԱԼ: *Տե՛ս նաև* Գիտություն.
Իմաստություն. Ճշմարտություն

Գիտելիք ստանալ կամ ըմբռնել ճշմարտության իմաստը և նաև դրա կիրառությունը կյանքում:

Քո հասկացողությանը մի վստահիր՝ **Առափ.** Գ.5: Քո ամեն ստացվածքի հետ հանճար ստացիր՝ **Առափ.** Դ.7: Հիսուսը խոսում էր առակներով և ոմանք չէին հասկանում՝ **Մատ.** ԺԳ.12–17: Տերը բացեց նրանց միտքը՝ **Ղուկ.** ԻԳ.45: Եթե դուք չեք կարողանում հասկանալ այս խոսքերը, դա նրանից է, որ դուք չեք խնդրում՝ **2 Նեփի** 32.4 (3 Նեփի 17.3): Հիշատակարանները պահպանվել են, որպեսզի մենք կարողանք և հասկանանք՝ **Մոսիս** 1.2–5: Իրենց անհավատության պատճառով՝ նրանք չէին կարողանում հասկանալ Աստծո խոսքը՝ **Մոսիս** 26.3: Նրանք առողջ դատողությամբ մարդիկ էին՝ **Ալմա** 17.2–3: Խոսքը սկսում է լուսավորել իմ հասկացողությունը՝ **Ալմա** 32.28: Եկեք միասին տրամաբանենք, որպեսզի դուք հասկանաք՝ **ՎՆՈՒ** 50.10–12, 19–23: Ծնողները պետք է ուսուցանեն իրենց երեխաներին, որպեսզի նրանք հասկանան՝ **ՎՆՈՒ** 68.25: Աստծո գործերն ու խորհուրդները հնարավոր է հասկանալ միայն Սուրբ Հոգով՝ **ՎՆՈՒ** 76.114–116: Սատանան փնտրում է հեռացնել նրանց սրտերը հասկացողությունից՝ **ՎՆՈՒ** 78.10: Քրիստոսի Լույսը կենդանացնում է մեր հասկացողությունը՝ **ՎՆՈՒ** 88.11:

ՀԱՍՏԱՏՈՒՄ: *Տե՛ս* Չեռնադրություն

ՀԱՎԱՍ, ՀԱՎԱՍԱԼ: *Տե՛ս նաև*
Ապավինել. Անհավատություն.
Հավատք. Հիսուս Քրիստոս

Հավատք ունենալ ինչ-որ մեկի հանդեպ կամ ընդունել մի բան որպես ճշմարտություն: Մարդը պետք է ապաշխարի և հավատա Հիսուս Քրիստոսին, որպեսզի փրկվի Աստծո արքայությունում (**ՎՆՈՒ** 20.29):

Հավատացեք ձեր Տեր Աստծուն. հավատացեք նրա մարգարեներին՝ **Բ Մն.** Ի.20: Դանիելը չվնասվեց աշյուծների գութում, որովհետև հավատաց Աստծուն՝ **Դան.** 2.23: Ինչպես որ հավատացիր, թող այնպես լինի քեզ՝ **Մատ.** Ը.13: Ամեն ինչ, որ հավատարով խնդրեք աղոթքի մեջ, կստանալ՝ **Մատ.** ԻԱ.22: Մի վախեցիր, բայց միայն հավատա՝ **Մար.** Ե.36: Ամեն բան հնարավոր է հավատացողի համար՝ **Մար.** Թ.22–23: Ով որ հավատաց և մկրտվեց, կփրկվի՝ **Մար.** ԺԶ.16 (2 Նեփի 2.9, 3 Նեփի 11.33–35): Որդուն հավատացողը հավիտենական կյանք ունի՝ **Հովհ.** Գ.16, 18, 36 (Հովհ. Ե.24, ՎՆՈՒ 10.50): Մենք հավատացինք և ճանաչեցինք, թե դու ես Քրիստոսը՝ **Հովհ.** 2.70: Ինձ հավատացողը, թեև մեռնի էլ, կապրի՝ **Հովհ.** ԺԱ.25–26: Մենք, որ հավատացինք, մտնում ենք հանգստի մեջ՝ **Եբր.** Դ.3: Հավատանք Հիսուս Քրիստոսին և սիրենք միմյանց՝ **Ա Հովհ.** Գ.23: Մեսիան չի կործանի ոչ ոքի, ով հավատում է իրեն՝ **2 Նեփի** 6.14: Հրեաները կհալածվեն, մինչև որ նրանք կհամոզվեն հավատալու Քրիստոսին՝ **2 Նեփի** 25.16: Եթե դուք հավատում եք այս բաներին, տեսեք որ դուք անեք դրանք՝ **Մոսիս** 4.10: Որդին իր վրա կվերցնի նրանց օրինականությունները, ովքեր հավատում են իր անվանը՝ **Ալմա** 11.40: Օրինված է նա, ով հավատում է Աստծո խոսքին, առանց հարկադրված լինելու հավատալ **Ալմա** 32.16: Եթե դուք չեք կարող ավելին, քան ցանկանալ հավատալ, թույլ տվեք, որ այդ ցանկությունը գործի ձեր մեջ՝ **Ալմա** 32.27: Եթե դուք հավատում եք Քրիստոսի անվանը, դուք կապաշխարեք՝ **Հել.** 14.13: Նրանք, ովքեր հավատում են Քրիստոսին, հավատում են նաև Հորը՝ **3 Նեփի** 11.35: Երբեք մարդն այնպես չի հավատացել Տիրոջը, ինչպես Հարեդի եղբայրը՝ **Եթեր** 3.15: Ամեն ինչ, որ համոզում է հավատալ Քրիստոսին, ուղարկված է Քրիստոսի գործությամբ՝ **Մոր.** 7.16–17: Տիրոջ խոսքին հավատացողներին կորվի

Հոգու հայտնությունը՝ **ՎևոՒ** 5.16: Ովքեր որ հավատում են Տիրոջ անվանը, կրառնան Աստծո որդիներ՝ **ՎևոՒ** 11.30 (Հովհ. Ա.12): Ոմանց էլ տրված է հավատալ ուրիշների խոսքերին՝ **ՎևոՒ** 46.14: Նշանները հետևում են նրանց, ովքեր հավատում են՝ **ՎևոՒ** 58.64 (ՎևոՒ 63.7-12): Նրանք, ովքեր հավատում են, ապաշխարում և մկրտվում, կստանան Սուրբ Հոգին՝ **Մովսես** 6.52:

ՀԱՎԱՏՈ ՀԱՆԳԱՆԱԿ: *Տե՛ս նաև*

Թանկագին Մարգարիտ. Սմիթ
Ջոզեֆ կրոսեր

Դավանանքի տասներեք կետեր, որոնց հավատում են Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամները:

Ջոզեֆ Սմիթն առաջին անգամ այն գրեց «Chicago Democrat» լրագրի խմբագիր Ջոն Վենտվորֆին ուղղված իր նամակում՝ որպես այն հարցի պատասխան, թե ինչի են հավատում Եկեղեցու անդամները: Այդ նամակը հայտնի դարձավ որպես «Վենտվորֆի նամակ» և առաջին անգամ հրատարակվեց «Times and Seasons» պարբերականում, 1842թ. մարտին: 1880թ. հոկտեմբերի 10-ին Եկեղեցու անդամների քվեարկությամբ Հավատո Հանգանակն ընդունվեց որպես սուրբ գրություն և դարձավ Թանկագին Մարգարիտի մի մաս:

ՀԱՎԱՏՔ. *Տե՛ս նաև* Հավատ,

Հավատալ. Հիսուս Քրիստոս. Հույս.
Վստահություն

Վստահություն ինչ-որ բանի կամ ինչ-որ մեկի հանդեպ: Ինչպես ամենից հաճախ օգտագործվում է սուրբ գրքերում, հավատքը վստահելն ու ապավինելն է Հիսուս Քրիստոսին, ինչը մարդուն առաջնորդում է հնազանդվելու նրան: Հավատքը պետք է կենտրոնացված լինի Հիսուս Քրիստոսի վրա, որպեսզի մարդուն տանի փրկության: Վերջին Օրերի Սրբերը հավատք ունեն նաև առ Հայր Աստված, Սուրբ Հոգին, քահանայության գրությունը և վերականգնված ավետարանի կարևոր այլ տեսակետները:

Հավատքը ներառում է հույս այն բաների համար, որոնք տեսանելի չեն, բայց որոնք ճշմարիտ են (Եբր. ԺԱ.1, Ալմա 32.21, Եթեր 12.6): Հավատքը ծնվում է

ավետարանը լսելուց, որն ուսուցանվում է Աստծո կողմից ուղարկված՝ լիազորված սպասավորների կողմից (Հռովմ. Ժ.14-17): Հրաշքները հավատք չեն առաջացնում, այլ ամուր հավատքը զարգանում է Հիսուս Քրիստոսի ավետարանին հնազանդվելով: Այլ կերպ ասած՝ հավատքը գալիս է արդար ապրելուց (Ալմա 32.40-43, Եթեր 12.4, 6, 12, ՎևոՒ 63.9-12):

Ճշմարիտ հավատքը բերում է հրաշքներ, տեսիլքներ, երագներ, բժշկումներ և Աստծո բոլոր պարգևները, որոնք նա տալիս է իր Սրբերին: Հավատքով ստանում ենք մեղքերի թողություն և հնարավորություն՝ ի վերջո բնակվելու Աստծո ներկայության մեջ: Հավատքի պակասը մարդուն տանում է հուսահատության, որը գալիս է անօրինության պատճառով (Մոր. 10.22):

Արդարը հավատքով պիտի ապրի՝ **Ամբ.** Բ.4: Քո հավատքը քեզ ապրեցրեց՝ **Մատ.** Թ.22 (Մար. Ե.34, Ղուկ. Է.50): Չեր հավատքի պես թող լինի ձեզ՝ **Մատ.** Թ.29: Եթե մանանեխի հատի չափ հավատք ունենաք, ոչինչ անկարելի չի լինի ձեզ համար՝ **Մատ.** ԺԷ.19 (Ղուկ. ԺԷ.6): Ես աղաչեցի քեզ համար, որ քո հավատքը չպակասի՝ **Ղուկ.** ԻԲ.32: Քրիստոսի անվան հավատքն այս մարդուն բժշկեց՝ **Գոր.** Գ.16: Հավատքը գալիս է Աստծո խոսքը լսելուց՝ **Հռովմ.** Ժ.17: Եթե Քրիստոսը հարություն չի առել, ձեր հավատքն ունայն է՝ **Ա. Կոր.** ԺԵ.14: Հավատքը գործում է սիրով՝ **Գաղ.** Ե.6: Ընդհուպ եք փրկվել՝ հավատքի միջոցով՝ **Եփես.** Բ.8 (2 Նեփի 25.23): Վերցրեք հավատքի վահանը՝ **Եփես.** Զ.16 (ՎևոՒ 27.17): Ավարտեցի ընթացքս, հավատքը պահեցի՝ **Բ Տիմ.** Դ.7: Հավատքը հուսացած բաների հաստատությունն է՝ **Եբր.** ԺԱ.1: Առանց հավատքի հնարավոր չէ նրան հաճո լինել՝ **Եբր.** ԺԱ.6: Հավատքը, եթե գործեր չունի, մեռած է՝ **Հակ.** Բ.17-18, 22: Ես կզմամ և կանեմ այն բաները, որոնք Տերը պատվիրել է **1 Նեփի** 3.7: Տերն ամեն բան կարող է անել մարդկանց զավակների համար, եթե նրանք հավատք գործադրեն նրա հանդեպ՝ **1 Նեփի** 7.12: Լիահոնայի ցուցիչները գործում էին ըստ հավատքի՝ **1 Նեփի** 16.28: Ապաշխարեք և մկրտվեք նրա անունով, կատարյալ հավատք ունենալով առ Սուրբը՝ **2 Նեփի** 9.23: Քրիստոս

սը հզոր հրաշքներ է գործում մարդկանց զավակների մեջ՝ նրանց հավատքի համաձայն՝ **2 Նեփի** 26.13 (Եթեր 12.12, Մոր. 7.27–29, 34–38): Ենովսի մեղքերը ներվեցին Քրիստոսի հանդեպ նրա հավատքի պատճառով՝ **Ենովս** 1.3–8: Փրկությունն այդպիսիներից ոչ մեկին չի գա, բացի դա լինի առ Տեր Հիսուս Քրիստոսը հավատքի միջոցով՝ **Մոսիա** 3.12: Մրտերը փոխվում են առ նրա անունը հավատքի միջոցով՝ **Մոսիա** 5.7: Աստծո ծառաների աղոթքները պատասխանվում են նրանց հավատքի համաձայն՝ **Մոսիա** 27.14: Չորություն տուր մեզ՝ Քրիստոսի հանդեպ մեր հավատքի համաձայն՝ **Ալմա** 14.26: Կանչեք Աստծո անունը հավատքով՝ **Ալմա** 22.16: Հավատքը բաների մասին կատարյալ գիտելիք ունենալը չէ՝ **Ալմա** 32.21 (Եթեր 12.6): Երբ այն սկսի ուռչել՝ սնուցեք այն հենց այդպես, ձեր հավատքով՝ **Ալմա** 33.23 (Ալմա 32.28): Նրանց պահպանունը վերագրվում էր Աստծո հրաշագործ գործությանը՝ նրանց մեծ հավատքի շնորհիվ՝ **Ալմա** 57.25–27: Բոլոր նրանք, ովքեր հավատքով կնայեն Աստծո Որդուն, կարող են ապրել՝ **Հել.** 8.15: Ես տեսնում եմ, որ ձեր հավատքը բավարար է, որ ես ձեզ բժշկեմ՝ **3 Նեփի** 17.8: Հավատքը բաներն են, որոնց համար հույս ունենք և չենք տեսնում՝ **Եթեր** 12.6: Բոլոր նրանք, ովքեր հրաշքներ գործեցին, հավատքով արեցին դրանք՝ **Եթեր** 12.12–18: Եթե նրանք հավատք ունենան ինձանում, այն ժամանակ նրանց բոլոր կողմերը ես կդառննեմ ուժեղ՝ **Եթեր** 12.27–28, 37: Մորմոնն ուսուցանել էր հավատքի, հույսի և գթության մասին՝ **Մոր.** 7: Ինչ էլ որ դուք խնդրեք՝ Հորը՝ իմ անունով, որը բարի է, հավատքով հավատալով, որ դուք կստանաք, ահա, դա կարվի ձեզ համար՝ **Մոր.** 7.26: Նրանք, ովքեր հավատք ունեն Քրիստոսում, կհարեն այն ամենին, ինչ բարի է՝ **Մոր.** 7.28: Եթե դուք հարցնեք, հավատք ունենալով առ Քրիստոս, նա կհայտնի ձեզ ճշմարտությունը՝ **Մոր.** 10.4: Առանց հավատքի դու ոչինչ չես կարող անել. ուստի, հավատքով խնդրիր՝ **Վևոթ** 8.10: Այն կշնորհվի նրանց՝ իրենց աղոթքներում ունեցած հավատքի համաձայն՝ **Վևոթ** 10.47, 52: Բոլոր մարդիկ պետք է հավատքով առ նրա անունը համբերեն մինչև վերջ՝ **Վևոթ** 20.25, 29: Արդարացումը, Քրիս-

տոսի շնորհով, արդար է և ճշմարիտ՝ **Վևոթ** 20.30: Հոգին կտրվի ձեզ հավատքի աղոթքով՝ **Վևոթ** 42.14: Հավատքը չի գալիս նշաններով, այլ նշաններն ուղեկցում են նրանց, ովքեր հավատում են՝ **Վևոթ** 63.9–12: Ծնողները պետք է երեխաներին ուսուցանեն հավատք առ Քրիստոս՝ **Վևոթ** 68.25: Ուսում փնտրեք, այսինքն՝ ուսումնասիրելով և նաև հավատքով՝ **Վևոթ** 88.118: Հավատքն առ Տեր Հիսուս Քրիստոս ավետարանի առաջին սկզբունքն է՝ **ՀՀ** 1.4:

ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ԿՅԱՆՔ: Տե՛ս նաև

Կյանք. Պսակ. Սելեստիալ փառք.

Վեհացում. Քավել, Քավություն

Աստծո ներկայության մեջ ընտանիքներով առհավետ ապրելը (Վևոթ 132.19–20, 24, 55): Հավերժական կյանքն Աստծո ամենամեծ պարգևն է մարդու համար:

Հավերժական կյանքի խոսքեր ունես դու՝ **Հովհ.** 2.69: Սա է հավերժական կյանքը, որ ճանաչեն քեզ՝ միակ ճշմարիտ Աստված. և Հիսուս Քրիստոսին՝ **Հովհ.** ԺԷ.3 (Վևոթ 132.24): Պատերազմի հավատքի բարի պատերազմը, և բռնի հավերժական կյանքը՝ **Ա Տիմ.** 2.12: Մարդիկ ազատ են՝ ընտրելու ազատություն և հավերժական կյանք՝ **2 Նեփի** 2.27 (Հել. 14.31): Հոգևոր մտածողությամբ լինելը հավերժական կյանք է՝ **2 Նեփի** 9.39: Այն ժամանակ դուք անձուկ արահետի վրա եք, որը տանում է դեպի հավերժական կյանք՝ **2 Նեփի** 31.17–20: Քրիստոսին հավատալը և մինչև վերջ համբերելը հավերժական կյանք է՝ **2 Նեփի** 33.4 (3 Նեփի 15.9): Նա, ով հավերժական կյանք ունի, հարուստ է՝ **Վևոթ** 6.7 (Վևոթ 11.7): Հավերժական կյանքը մեծագույնն է Աստծո բոլոր պարգևներից՝ **Վևոթ** 14.7 (Հռովմ. 2.23): Արդարները կստանան խաղաղություն այս աշխարհում և հավերժական կյանք գալիք աշխարհում՝ **Վևոթ** 59.23: Նրանք, ովքեր համբերում են մինչև վերջ, կստանան հավերժական կյանքի պսակը՝ **Վևոթ** 66.12 (Վևոթ 75.5): Բոլոր նրանք, ովքեր մահացել են առանց ավետարանի, որոնք ընդունած կլինեին այն, եթե ապրեին, սելեստիալ արքայության ժառանգներն են՝ **Վևոթ** 137.7–9: Աստծո աշխատանքն ու փառքն է՝ իրագործել մարդու ամանախությունն ու հավերժական կյանքը՝ **Մովսես**

1.39: Աստված հավերժական կյանք է պարգևում հնազանդներին՝ **Մովսես** 5.11:

ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ՀԱՅՐ: *Տե՛ս* Հայր Երկնային. Աստված, Աստվածազուլիս

ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ԿՅԱՆՔ: *Տե՛ս* Հավերժական կյանք

ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՈՒԽՏ: *Տե՛ս* Նոր և Հավիտենական Ուխտ. Ուխտ

ՀԱՐԵԳ: *Տե՛ս* *Նսև* Հարեղացիներ. Հարեղի եղբայր

Առաջնորդ Մորմոնի Գրքում, որն իր եղբոր հետ մի խումբ ժողովրդի առաջնորդեց Բաբելոնի աշտարակից դեպի խոստումի մի երկիր արևմտյան կիսագնդում (Եթեր 1.33–2.1):

Հարեղն իր եղբորը խնդրեց աղոթել Տիրոջը, որ չխառնի նրանց ընտանիքների և ընկերների լեզուն՝ **Եթեր** 1.34–37: Ճանապարհորդեց դեպի ծովի ափ և չորս տարի բնակվեց այնտեղ՝ **Եթեր** 2.13: Նավարկեց դեպի խոստումի երկիր՝ **Եթեր** 6.4–12:

ՀԱՐԵԳ-ԱՅԻՆԵՐ: *Տե՛ս* *Նսև* Հարեղ. Հարեղի եղբայր. Մորմոնի Գիրքը

Ժողովուրդ Մորմոնի Գրքում, որոնք Հարեղի, նրա եղբոր և նրանց ընկերների հետնորդներն էին (Եթեր 1.33–41): Աստված նրանց առաջնորդեց Բաբելոնի աշտարակից դեպի Ամերիկյան աշխարհամաս՝ խոստումի մի երկիր (Եթեր 1.42–43, 2–3, 6.1–18): Չնայած նրանց ազգը ժամանակին եղել էր միլիոնանոց ժողովուրդ, նրանք բոլորը բնաջնջվել էին ամբարշտության պատճառով առաջացած քաղաքացիական պատերազմում (Եթեր 14–15):

ՀԱՐԵԳԻ ԵՂԲԱՅՐ: *Տե՛ս* *Նսև* Հարեղ. Հարեղացիներ

Մորմոնի Գրքի մարգարե: Նա և նրա եղբայրը հիմնեցին Հարեղացիների ազգը, երբ մի խումբ ժողովրդի Բաբելոնի աշտարակից առաջնորդեցին դեպի խոստումի մի երկիր արևմտյան կիսագնդում (Եթեր 1–6): Նա այնպիսի մեծ հավատքով մարդ էր, որ Տիրոջ հետ խոսեց դեմառդեմ

(ՎևոՒ 17.1): Նրա պատմությունը շարադրված է Եթերի գրքում:

Հարեղի եղբայրը մի հաղթանդամ ու հզոր և Տիրոջից մեծապես հովանավորված մի մարդ էր՝ **Եթեր** 1.34: Իր հավատքի շնորհիվ Հարեղի եղբայրը տեսավ Տիրոջ մատը՝ **Եթեր** 3.6–9 (Եթեր 12.20): Քրիստոսը Հարեղի եղբորը ցույց տվեց իր հոգեղեն մարմինը՝ **Եթեր** 3.13–20: Ավելի մեծ բաներ երբեք ցույց տրված չեն եղել, քան նրանք, որոնք ցույց են տրվել Հարեղի եղբորը՝ **Եթեր** 4.4: Հարեղի եղբայրն իր ժողովրդին գոուչացրեց չհիմնել միապետություն՝ **Եթեր** 6.22–23: Տերը բոլոր բաները ցույց տվեց Հարեղի եղբորը՝ **Եթեր** 12.21: Հարեղի եղբայրը գորավոր էր գրելիս՝ **Եթեր** 12.24: Հարեղի եղբայրը հավատքով տեղափոխեց Ջերիկն սարը՝ **Եթեր** 12.30:

ՀԱՐՅՈՒՐԱՊԵՏ

Հռոմեական բանակի սպա, որը 50–100 մարդկանց հրամանատար էր: Այդ զորախումբը կազմում էր Հռոմեական լեգեոնի մեկ վաթսուներորդ մասը: (*Տե՛ս* Մատ. Ը.5, Դուկ. ԻԳ.47, Գոր. Ժ.1–8):

ՀԱՐՈՄ

Մորմոնի Գրքում՝ Ենովսի որդին և Լեքիի ծոռնորդին: Նա վաթսուն տարի, Ք.ծ.ա. 420–361թթ., պահեց Նեփիացիների հիշատակարանները (Ենովս 1.25, Հարոմ 1.13): Նա հավատարիմ մարդ էր, որը որոշեց շատ չգրել այդ պատմական հիշատակարանում (Հարոմ 1.2):

Հարոմի Գիրքը. Մորմոնի Գրքի այս գրքում միայն տասնհինգ հատված կա: Հարոմն արձանագրել է, որ Նեփիացիները շարունակում էին ապրել Մովսեսի օրենքով և սպասում էին Քրիստոսի գալստին: Նրանց ղեկավարում էին թագավորներ, որոնք հզոր հավատքով մարդիկ էին: Ուշք դարձնելով իրենց մարգարեներին, քահանաներին և ուսուցիչներին՝ նրանք բարգավաճում էին:

ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆ: *Տե՛ս* Հարստություններ

ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ: *Տե՛ս* *Նսև* Փող. Հպարտություն

Հարստություն կամ առատություն: Տերը

Սրբերին խորհուրդ է տալիս չփնտրել աշխարհիկ հարստություններ, բացի միայն բարիք գործելու համար: Նախքան աշխարհիկ հարստություններ որոնելը, Սրբերը պետք է որոնեն Աստծո արքայությունը, որը ներառում է հավերժության հարստությունները (Հակոբ 2.18–19):

Եթե հարստությունը շատանա, սիրտ մի դրեք նրա վրա՝ **Մաղ.** ԿԲ.10: Օգուտ չունի հարստությունը բարկության օրը՝ **Առալ.** ԺԱ.4: Իր հարստությանը հուսացողը վայր կընկնի՝ **Առալ.** ԺԱ.28: Անունը հարստությունից ավելի ընտիր է՝ **Առալ.** ԻԲ.1: Ինչքան դժվար է, որ հարստություններ ունեցողները մտնեն Աստծո արքայությունը՝ **Մար.** Ժ.23 (Ղուկ. ԺԸ.24–25): Արծաթասիրությունն ամեն չարիքի արմատն է՝ **Ա Տիմ.** 2.10: Վայ հարուստներին, որոնք արհամարհում են աղքատներին և նրանց գանձն իրենց աստվածն է՝ **2 Նեփի** 9.30: Արդարներն իրենց սրտերը չէին դնում հարստության վրա, այլ կիսվում էին բոլորի հետ՝ **Ալմա** 1.30: Ժողովուրդն սկսեց հպարտանալ հարստությունների պատճառով՝ **Ալմա** 4.6–8: Ժողովուրդը սկսեց տարբերվել դասերով՝ ըստ իրենց հարստությունների՝ **3 Նեփի** 6.12: Մի փնտրեք հարստություն, այլ իմաստություն՝ **Վևոթ** 6.7 (Ալմա 39.14, Վևոթ 11.7): Երկրի հարստություններն Աստծուն են, տալու համար, բայց զգուշացեք հպարտությունից՝ **Վևոթ** 38.39:

Հավերժության հարստությունները. Գանձեր դիզեք երկնքում՝ **Մատ.** 2.19–21: Որքան հաճախ ես կանչեցի ձեզ հավերժական կյանքի հարստություններով՝ **Վևոթ** 43.25: Հավերժության հարստություններն իմն են տալու համար՝ **Վևոթ** 67.2 (Վևոթ 78.18):

ՀԱՐՐԻՍ ՄԱՐՏԻՆ: Տե՛ս նաև

Մորմոնի Գրքի վկաները

Մորմոնի Գրքի աստվածային ծագումն ու ճշմարտությունը հաստատող Երեք Վկաներից մեկը: Նա նյութապես օգնեց Ջոզեֆ Սմիթին և Եկեղեցուն: Տերը Մարտին Հարրիսին խնդրեց վաճառել իր ունեցվածքը և նվիրել իր դրամները՝ վճարելու Մորմոնի Գրքի հրատարակման ծախսերը (Վևոթ 19.26–27, 34–35): օրինակ լինելու Եկեղեցու համար (Վևոթ

58.35): և օգնելու ծառայության ծախսերի վճարմանը (Վևոթ 104.26):

Մարտին Հարրիսը հեռացվեց Եկեղեցուց, բայց հետո վերադարձավ լիարժեք անդամակցության: Մինչև իր կյանքի վերջը նա վկայում էր, որ տեսել է Մորմոնի հրեշտակին և ոսկե թիթեղները, որոնցից Ջոզեֆ Սմիթը բարգձմանել էր Մորմոնի Գիրքը:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ: Տե՛ս նաև Անմահ,

Անմահություն. Հիսուս Քրիստոս.

Մահ ֆիզիկական. Մարմին. Ոգի.

Քավել, Քավություն

Հոգեղեն մարմնի և մտն ու ոսկրե ֆիզիկական մարմնի վերամիավորումը մահից հետո: Հարությունից հետո ոգին և մարմինն այլևս երբեք չեն առանձնանա, և մարդ կդառնա ամմահ: Քանի որ Հիսուս Քրիստոսը հաղթել է մահը, ամեն մարդ, որը ծնվել է երկրի վրա, հարություն կառնի (Ա Կոր. ԺԵ.20–22):

Հիսուս Քրիստոսն առաջին մարդն էր երկրի վրա, որը հարություն առավ (Գոր. Ի2.23, Կոր. Ա.18, Հայտ. Ա.5): Նոր Կտակարանն ակնհայտ փաստեր է տալիս, որ Հիսուսը հարություն առավ իր ֆիզիկական մարմնով. նրա գերեզմանը դատարկ էր, նա ծուկ և մեղրախորիխ կերավ, նա մսից ու ոսկորից մարմին ուներ, մարդիկ շոշափեցին նրան և հրեշտակներն ասացին, որ նա հարություն է առել (Մար. Ժ2.1–6, Ղուկ. ԻԳ.1–12, 36–43, Հովհ. Ի.1–18): Վերջին օրերի հայտնությունները հաստատում են Քրիստոսի և ողջ մարդկության հարության իրականությունը (Ալմա 11.40–45, 40, 3 Նեփի 11.1–17, Վևոթ 76, Մովսես 7.62):

Բոլոր մարդիկ հարություն չեն առնի միևնույն փառքի մեջ (Ա Կոր. ԺԵ.39–42, Վևոթ 76.89–98), ոչ էլ բոլորը հարություն կառնեն միևնույն ժամանակ (Ա Կոր. ԺԵ.22–23, Ալմա 40.8, Վևոթ 76.64–65, 85): Քրիստոսի հարությունից հետո շատ սրբեր հարություն առան (Մատ. ԻԷ.52): Արդարները հարություն կառնեն ամբարիշտներից առաջ և առաջ կգան առաջին հարության ժամանակ (Ա Թես. Գ.15): չապաշխարող մեղսագործներն առաջ կգան վերջին հարության ժամանակ (Հայտ. Ի.5–13, Վևոթ 76.85):

Թեև իմ մորբն այսպես թափվի, այնուա-

մենայնիվ, ես իմ մարմնում տեսնելու եմ Աստծուն՝ **Հոր ԺԹ.** 26 (Մովսես 5.10): Ես պիտի բացեմ գերեզմանները և դուրս պիտի հանեմ ձեզ՝ **Եզեկ.** ԼԷ.12: Գերեզմանները բացվեցին և շատ մարմիններ հարուրթյուն առան՝ **Մատ.** ԻԷ.52-53 (3 Նեփի 23.9): Տերը հարուրթյուն է առել՝ **Ղուկ.** ԻԴ.34: Ոգին միս և ոսկոր չունի, ինչպես ինձ եք տեսնում, որ ունեմ՝ **Ղուկ.** ԻԴ.39: Ես եմ հարուրթյունը և կյանքը՝ **Հովհ.** ԺԱ.25: Տասներկու Առաքյալներն ուսուցանեցին, որ Հիսուսը հարուրթյուն է առել՝ **Գոր.** Ա.21-22 (Գոր. Բ.32, Գ.15, Գ.33): Քրիստոսով բոլորը կկենդանացվեն՝ **Ա Կոր.** ԺԵ.1-22: Քրիստոսով մեռելներն առաջ հարուրթյուն կառնեն՝ **Ա Թես.** Գ.15: Երանելի և սուրբ է նա, ով բաժին ունի առաջին հարուրթյան մեջ՝ **Հայտ.** Ի.6: Քրիստոսը վայր է դնում իր կյանքը և վերցնում է այն կրկին, որպեսզի իրագործի մեռելների հարուրթյունը՝ **2 Նեփի 2.8** (Մոսիս 13.35, 15.20, Ալմա 33.22, 40.3, Հել. 14.15): Առանց հարուրթյան մենք ենթակա կդառնայինք Սատանային՝ **2 Նեփի 9.6-9:** Հարուրթյունը կգա բոլոր մարդկանց՝ **2 Նեփի 9.22:** Աբիմալիին ուսուցանել է առաջին հարուրթյան վերաբերյալ՝ **Մոսիս 15.21-26:** Ամբարիշտները մնում են, կարծես ոչ մի փրկագնում չի արվել, բացի մահվան կապանքներն արձակվելը՝ **Ալմա 11.41-45:** Ալման բացատրել է հոգիների լիճակը մահվան և հարուրթյան միջև՝ **Ալմա 40.6, 11-24:** Տիրոջ գալստի ժամանակ առաջ կգան նրանք, ովքեր մահացել են Քրիստոսում՝ **ՎևոՒ 29.13** (ՎևոՒ 45.45-46, 88.97-98, 133.56): Սգացեք հատկապես նրանց համար, ովքեր չունեն փառավոր հարուրթյան հույս՝ **ՎևոՒ 42.45:** Նրանք, ովքեր ոչ մի օրենք չեն իմացել, բաժին կունենան առաջին հարուրթյան մեջ՝ **ՎևոՒ 45.54:** Նրանք կբարձրանան մեռելներից և հետո չեն մեռնի՝ **ՎևոՒ 63.49:** Մեռելներից հարուրթյունը հոգու փրկագնումն է՝ **ՎևոՒ 88.14-16:** Ոգին և տարրը, անբաժան միացած, ստանում են ուրախության լիությունը՝ **ՎևոՒ 93.33:** Հրեշտակները, որոնք հարուրթյուն առած էակներ են, մից և ոսկորից մարմին ունեն՝ **ՎևոՒ 129.1:** Բանականության ինչ աստիճանի որ հասնենք այս կյանքում, հարուրթյան ժամանակ կբարձրանա մեզ հետ՝ **ՎևոՒ 130.18-19:**

ՀԵՉ, ՀԵԶՈՒԹՅՈՒՆ: *Տե՛ս նաև*

Խոնարհեցնել, Խոնարհություն.
Կտորված սիրտ. Համբերություն

Աստվածավախ, արդարակյաց, խոնարհ, ուսումնասեր և չարչարանքների մեջ համբերատար: Հեզեթը պատրաստակամ են՝ հետևելու ավետարանի ուսմունքներին:

Մովսեսը շատ հեզ էր՝ **Թվ. ԺԲ.3:** Հեզեթը կժառանգեն երկիրը՝ **Սաղ. ԼԷ.11** (Մատ. Ե.5, 3 Նեփի 12.5, ՎևոՒ 88.17): Փնտրեք Տիրոջը, ով հեզեթ. արդարություն փնտրեք, հեզություն փնտրեք՝ **Մոփ. Բ.3** (Սիմ. 2.11): Մովորեք ինձանից, որովհետև ես հեզ եմ և արտով խոնարհ՝ **Մատ. ԺԱ.29:** Հեզությունը Հոգու պտուղներից է՝ **Գաղ. Ե.22-23:** Տիրոջ ծառան պետք է հեզահոգի լինի, սովորեցնող, համբերատար, հակառակողներից հանդարտությունով խրատող՝ **Բ Տիմ. Բ.24-25:** Հեզ և հանդարտ հոգին շատ թանկագին է Աստծո համար՝ **Ա Պետ. Գ.4:** Հանք բնական մարդուն և դարձեք հեզ՝ **Մոսիս 3.19** (Ալմա 13.27-28): Աստված Հելամանին պատվիրեց, որ ժողովրդին սովորեցնի հեզ լինել՝ **Ալմա 37.33:** Տիրոջ շնորհը բավական է հեզերի համար՝ **Եթեր 12.26:** Դուք ունեք հավատք առ Քրիստոս՝ ձեր հեզության շնորհիվ՝ **Մոր. 7.39:** Ոչ ոք ընդունելի չէ Աստծո առաջ, բացի նրանից, ով հեզ է և արտով խոնարհ՝ **Մոր. 7.44:** Մեղքերի թողությունը հեզություն է բերում, և հեզության շնորհիվ գալիս է Սուրբ Հոգու այցելությունը՝ **Մոր. 8.26:** Քայլիք իմ Հոգու հեզության մեջ՝ **ՎևոՒ 19.23:** Հեզությամբ կառավարիք թո տունը՝ **ՎևոՒ 31.9:** Քահանայության գորությունն ու ազդեցությունը պետք է պահպանվի մեղությունքմբ և հեզությամբ՝ **ՎևոՒ 121.41:**

ՀԵԶԱԲԵԼ: *Տե՛ս նաև* Աքաաք

Ամբարիշտ մի կին Հին Կտակարանում, որը Փյունիկեի երկրից էր: Նա Աքաաքի՝ Իսրայելի թագավորի կինն էր (Գ. Թագ. Ժ.2.30-31), որը թագավորել է Եղիա մարգարեի ժամանակ:

Հեզաբելի ամուսնությունն Աքաաքի հետ, ավելի շատ, քան որևէ այլ եզակի դեպք, եղավ Իսրայելի հյուսիսային թագավորության անկման պատճառը: Հեզաբելը, Եհովային երկրպագելու փոխարեն, իր երկրից Իսրայել բերեց

կռապաշտության ամենավատ ձևերը (Գ Թագ. ԺԸ.13, 19):

Հեզաբելը սպանեց Աստծո մարգարեներից շատերին՝ **Գ Թագ. ԺԸ.4**: Հեզաբելը փորձեց սպանել Եղիային՝ **Գ Թագ. ԺԹ.1-3**: Հեզաբելի ամբարշտությունն ավարտվեց նրա սոսկալի մահով՝ **Գ Թագ. Թ.30-37**:

ՀԵԹՆՈՍՆԵՐ

Հեթանոսներ բառը սուրբ գրքերում օգտագործված է մի քանի իմաստով: Երբեմն այն մատնանշում է ծագումով ոչ Իսրայելացի մարդկանց, երբեմն ծագումով ոչ հրեա, իսկ երբեմն, ավետարանը չունեցող ազգերին, նույնիսկ եթե այդ մարդկանց մեջ կա Իսրայելացու արյուն: Այս վերջին գործածությունն առավել բնորոշ է այդ բառին, ինչպես որ այն օգտագործվում է Մորմոնի Գրքում և Վարդապետություն և Ուխտերում:

Իսրայելացիները չպետք է ամուսնանային ոչ Իսրայելացիների (հեթանոսների) հետ՝ **Բ Օր. Է.1-3**: Տերը կգա, որպես լույս հեթանոսներին՝ **Ես. 42.6**: Պետրոսին պատվիրվեց ավետարանը տանել հեթանոսներին՝ **Գոր. Ժ.9-48**: Աստված հեթանոսներին էլ ապաշխարություն շնորհեց՝ **Գոր. ԺԱ.18**: Մենք ամենքս մկրտվել ենք մեկ եկեղեցում՝ թե՛ հրեաներ, թե՛ հեթանոսներ՝ **Ա Կոր. ԺԲ.13**: Հեթանոսները Քրիստոսում ժառանգակիցներ են ավետարանով՝ **Եփես. Գ.6**: Մորմոնի Գիրքը գրվել է հեթանոսներին՝ **Մորմոնի Գրքի տիպոգրաֆերը** (Մորմ. 3.17): Հեթանոսների միջից մի մարդ առաջ գնաց ջրերի վրայով՝ **1 Նեփի 13.12**: Ուրիշ գրքեր եկան հեթանոսներից՝ **1 Նեփի 13.39**: Ավետարանի լրիվությունը կգա հեթանոսներին՝ **1 Նեփի 15.13** (3 Նեփի 16.7, Վևո 20.9): Այս երկիրն ազատության երկիր կլինի հեթանոսների համար՝ **2 Նեփի 10.11**: Հեթանոսները մահն են վայրի ձիթեմուն՝ **Հակոբ 5**: Ավետարանն առաջ պիտի գա հեթանոսների ժամանակներում՝ **Վևո 45.28** (Վևո 19.27): Խոսքը պիտի առաջ գնա դեպի աշխարհի ծայրերը, սկզբում՝ դեպի հեթանոսները, իսկ հետո՝ դեպի հրեաները՝ **Վևո 90.8-10**: Յոթամասունականները պետք է հատուկ վկաներ լինեն հեթանոսների համար՝

Վևո 107.25: Առաջ ուղարկեք իմ եկեղեցու երեցներին՝ կոչ անելու բոլոր ազգերին, նախ՝ հեթանոսներին, և ապա՝ հրեաներին՝ **Վևո 133.8**:

ՀԵԼԱՄԱՆ՝ ԱԼՄԱՅԻ ՈՐԳԻ. Տե՛ս

նաև Ալմա՝ Ալմայի որդի. Անթի-Նեփի-Լեքիներ. Հելամանի որդիները

Մորմոնի Գրքում՝ Ալմայի որդի Ալմայի ավագ որդին (Ալմա 31.7): Հելամանը մարգարե էր և զինվորական առաջնորդ:

Ալման իր որդի Հելամանին վստահեց իր ժողովրդի հիշատակարանները և Հարեդացիների թիթեղները՝ **Ալմա 37.1-2, 21**: Ալման Հելամանին պատվիրեց շարունակել գրել իր ժողովրդի պատմությունը՝ **Ալմա 45-62**: Հելամանը կրկին հաստատեց Եկեղեցին՝ **Ալմա 45.22-23**: Ամմոնացի երկու հազար պատանի մարտիկներ ցանկացան, որ Հելամանը լինի իրենց առաջնորդը՝ **Ալմա 53.19, 22**: Հելամանը և նրա դեռահաս Ամմոնացիները պատերազմեցին Լամանացիների դեմ և իրենց հավատքի շնորհիվ պահպանվեցին՝ **Ալմա 57.19-27**:

ՀԵԼԱՄԱՆ՝ ԲԵՆԻԱՄԻՆ

ԹԱԳԱՎՈՐԻ ՈՐԳԻ: Տե՛ս նաև Բենիամին՝ Մոսիայի հայր

Մորմոնի Գրքում՝ Բենիամին թագավորի երեք որդիներից մեկը (Մոսիա 1.2-8):

ՀԵԼԱՄԱՆ՝ ՀԵԼԱՄԱՆԻ ՈՐԳԻ

Մարգարե և մատենագիր Մորմոնի Գրքում, որն ուսուցանեց Նեփիացիներին: Նա կրտսեր Ալմայի թոռն էր և այն Նեփիի հայրը, որին գորություն էր արվել բոլոր տարրերի վրա (Հել. 5-10): Իր որդի Նեփիի հետ Հելամանը գրեց Հելամանի գիրքը:

Հելամանի գիրքը. 1-2-րդ գլուխները ներկայացնում են քաղաքական մեծ հուզումների մի ժամանակաշրջան: 3-4-րդ գլուխներում արձանագրվում է, որ Հելամանը և Մորմոնիան՝ Նեփիացիների բանակի գլխավոր զորապետը, ի վերջո կարողացան խաղաղության հասնել որոշ ժամանակ: Սակայն, չնայած այդ լավ մարդկանց առաջնորդությանը, ժողովուրդը չափազանց աճել էր ամբարշտության մեջ: 5-6-րդ գլուխներում Նեփին բողեց

դատավորական աթոռը, ինչպես արել էր Ալման՝ իր պապը, որպեսզի ուսուցանի ժողովրդին: Որոշ ժամանակ մարդիկ ապաշխարեցին: 6–12-րդ գլուխներում, սակայն, Նեփիացի ժողովուրդը դարձավ անբարիշտ: Եզրափակիչ գլուխները 13–16-ը, արտասովոր պատմություն են պարունակում մի մարգարեի մասին, որի անունն էր Սամուել Լամանացի, որը կանխավ պատմեց Փրկչի ծննդի ու խաչելության մասին, և այն նշանների մասին, որոնք կբնորոշեն այդ իրադարձությունները:

ՀԵԼԱՍՄԱՆԻ ՈՐԳԻՆՆԵՐԸ: *Տե՛ս նաև* Ամթի-Նեփի-Լեփներ. Հելաման՝ Ալմայի որդի

Մորմոհի Գրքում՝ դարձի եկած Լամանացիների որդիները, որոնք հայտնի էին՝ որպես Ամնոնացիներ, որոնք մարտիկներ դարձան Հելամանի ղեկավարությամբ ներքո (Ալմա 53.16–22):

Հելամանը նրանց արժանի համարեց իր որդիներն անվանել՝ **Ալմա** 56.10: Նրանց մայրերը նրանց սովորեցրել էին չկասկածել, որ Տերը կարողություն ունի նրանց ազատելու՝ **Ալմա** 56.47: Նրանք հաղթեցին Լամանացիներին և իրենց հավատքի շնորհիվ այնպես պահպանվեցին, որ ոչ ոք չսպանվեց՝ **Ալմա** 56.52–54, 56, 57.26:

ՀԵՂԻ: *Տե՛ս նաև* Սամուել՝ Հին Կտակարանի Մարգարե

Քահանայապետ և դատավոր Հին Կտակարանում, այն ժամանակ էր Տերը Սամուելին մարգարե կանչեց (Ա Թագ. Գ): Տերը հանդիմանեց նրան իր որդիների անբարշտությունը հանդուրժելու համար (Ա Թագ. Բ.22–36, Գ.13):

ՀԵՈՒՑՈՒՄ: *Տե՛ս նաև* Ուրացություն. Ապստամբություն

Անձին Եկեղեցու անդամությունից գրկելու և նրա իրավունքներն ու արտոնությունները ետ վերցնելու գործընթացը: Եկեղեցու իշխանություններն անձին հեռացնում են Եկեղեցուց, միայն երբ նա ընտրում է ապրել Տիրոջ պատվիրաններին հակառակ և դրանով իրեն որակագրկում է Եկեղեցու հետագա անդամակցումից:

Շատերի սրտերը կարծրացել էին, և

նրանց անունները ջնջվեցին՝ **Ալմա** 1.24 (Ալմա 6.3): Եթե նա չի ապաշխարում, նա չպետք է համարվի իմ ժողովրդի քվում՝ **3 Նեփի** 18.31 (Մոսիա 26): Ընուրթյուն անողները, ովքեր չեն ապաշխարում, դուրս պիտի գցվեն՝ **Վևո** 42.24: Նա, ով մեղահնչում է և չի ապաշխարում, դուրս պիտի գցվի՝ **Վևո** 42.28: Տրվում են Եկեղեցու հիմնական դժվարությունները հարթելու ընթացակարգերը՝ **Վևո** 102 (Վևո 42.80–93): Եպիսկոպոսը նշանակված է դատավոր լինելու Իսրայելում՝ **Վևո** 107.72: Կրոնական կազմակերպություններն ունեն անդամների անկանոն վարքով զբաղվելու իրավունքը՝ **Վևո** 134.10:

ՀԵՍՈՒ: *Տե՛ս նաև* Երիցով

Հին Կտակարանի մարգարե և առաջնորդ՝ Մովսեսին հաջորդողը: Նա ծնվեց Եգիպտոսում, նախքան Իսրայելի զավակների ազատվելը (Թվ. ԺԳ.26–31): Քաղերի հետ միասին, նա այն տասներկու լրտեսների քվում էր, որոնք ուղարկվել էին Քանան: Միայն նրանք լավ հաշվետվություն տվեցին այդ երկրի մասին (Թվ. ԺԳ.8, 17–ԺԳ.10): Նա մահացավ 110 տարեկանում (Հես. ԻԳ.29): Հետոն բարեպաշտ մարգարե-ռազմիկի մեծ օրինակ էր:

Հետոի գիրքը. Այս գիրքն անվանվել է Հետոի անունով, քանի որ նա այդտեղ գլխավոր անձն էր և ոչ թե այն պատճառով, որ նա դրա հեղինակն էր: Ա–ԺԲ գլուխները նկարագրում են Քանանի նվաճումը: ԺԳ–ԻԳ գլուխները պատմում են այդ երկիրն Իսրայելի ցեղերի մեջ բաժանելու մասին և Հետոի վերջին խորհուրդների մասին:

Հետոի գրքի երկու նշանակալից հատվածներ են՝ նրան տրված Տիրոջ պատվիրանը՝ մտորել սուրբ գրքերի վրա (Հես. Ա.8), և Հետոի կոչը ժողովրդին՝ հավատարիմ լինել Տիրոջը (Հես. ԻԳ.15):

ՀԵՍՍԵ: *Տե՛ս նաև* Դավիթ

Հին Կտակարանում՝ Դավթի հայրը և Քիստոսի ու Հուդայի բոլոր թագավորների նախնին:

Հուրի որդին՝ Ովբեդը, Հեսսեի հայրն էր՝ **Հուր** Գ.17, 22: Թվարկվում են Հեսսեի

և շատ դարեր շարունակ վկայում էին Քրիստոսի և նրա գալիք ծառայության մասին: Այն պարունակում է նաև Աբրահամի և նրա հետնորդների պատմությունը, սկսած Աբրահամից և այն ուխտից, կամ *կտակարանից*, որը Տերը հաստատեց Աբրահամի և նրա ժառանգների հետ:

Հին Կտակարանի առաջին հինգ գրքերը գրվել են Մովսեսի կողմից: Դրանք են՝ Ծննդոց, Ելից, Ղևտացոց, Թվոց և Երկրորդ Օրինաց: Ծննդոցը վերաբերում է երկրի, մարդկության, լեզուների, ռասաների ծագմանը և Իսրայելի տան սկիզբ անելուն:

Պատմական գրքերը պատմում են Իսրայելի հետ կապված իրադարձությունների մասին: Դրանք են՝ Հեսուի, Դատավորաց, Հռութի, Թագավորաց Ա, Բ, Գ և Դ, Մնացորդաց Ա և Բ, Եզրասի, Նեմիայի և Եսթերի գրքերը:

Բանաստեղծական գրքերում արձանագրված են մարգարեների իմաստությունների ու գրականության որոշ մասեր: Դրանք են՝ Հոբի, Մաղմուս, Առակաց, Ժողովող, Երգ Երգոց գրքերը և Երեմիայի ողբերը:

Մարգարեներն Իսրայելին գոռուացնում էին իր մեղքերի համար և վկայում էին հնազանդությունից եկող օրինությունների մասին: Նրանք մարգարեանում էին Քրիստոսի գալտի մասին, որը պիտի քավեր նրանց մեղքերը, ովքեր ապաշխարում են, ստանում արարողությունները և ապրում են ավետարանով: Մարգարեների գրքերն են՝ Եսայիայի, Երեմիայի, Եզեկիելի, Դանիելի, Ովսելի Հովելի, Ամոսի, Աբդիայի, Հովնանի, Միքիայի, Նաումի, Ամբակումի, Սովոնիայի, Անգեի, Ջաքարիայի և Մաղաքիայի մարգարեությունները:

Հին Կտակարանի գրքերը մեծամասամբ գրվել են եբրայերեն: Որոշ գրվածքներ գրվել են ազգակից՝ արամեական լեզվով:

ՀԻՆԱՎՈՒՐՅԸ: *Տե՛ս Ադամ*

ՀԻՇԱՏԱԿԻ ԳԻՐԹ: *Տե՛ս նաև*
Կյանքի Գիրք. Տոհմաբանություն

Գիրք, որը սկսվել էր Ադամի կողմից, որի մեջ արձանագրվել էին նրա հետնորդների գործերը. նաև որևէ այլ նմանատիպ հիշատակարաններ, որոնք այդ ժամա-

նակից ի վեր վարել են մարգարեները և հավատարիմ անդամները: Ադամը և նրա երեխաները պահում էին հիշատակի գիրք, որում նրանք գրում էին ոգեշնչման ոգով, և ծննդոց գիրք, որը պարունակում էր նրանց տոհմաբանությունը (Մովսես 6.5, 8): Նման հիշատակարանները հնարավոր է մաս կազմեն մեր վերջնական դատաստանի վճիռը կայացնելիս:

Հիշատակի գիրք գրվեց՝ **Մաղ. Գ.16–18** (3 Նեփի 24.13–26): Բոլոր նրանք, ովքեր հիշատակի գրքում գրված չեն լինի, ժառանգություն չեն գտնի այն օրը՝ **ՎևոՒ 85.9**: Մեռելները դատվեցին գրքերում գրվածներից, որոնք պարունակում էին նրանց գործերի հիշատակարանը՝ **ՎևոՒ 128.7**: Եկեք ներկայացնենք մի գիրք, որը պարունակում է մեր մահացածների գրանցումները՝ **ՎևոՒ 128.24**: Հիշատակի գիրք էր պահվում՝ **Մովսես 6.5–8**: Մենք հիշատակի գիրք ունենք մեր մեջ՝ **Մովսես 6.46**: Աբրահամը ջանում էր հիշատակարան գրել իր ժառանգների համար՝ **Աբր. 1.31**:

ՀԻՍՈՒՄ ԶԻԻՍՈՍ: *Տե՛ս նաև*

Ադամի և Եվայի անկումը. Ագատիչ. Ալֆա և Օմեգա. Անկյունաքար. Անվերջ. Ապաշխարել, Ապաշխարություն. Առաջնել. Աստծո Գառը. Աստված, Աստվածություն. Ավետարաններ. Արյուն. Բարեխոս. Բարի Հովիվ. Բրունգե օձ. Գողգոթա. Եհովա. ԵՄ ԵՄ. Չոհաբերություն. Էմմանուել. Լույս, Քրիստոսի լույս. Խաչ. Խաչելություն. Խղճմտանք. Ծնված. Կենդանի ջուր. Կերպարանավորում – Քրիստոսի կերպարանավորումը. Կյանքի հացը. Հաղորդություն. Համբարձում. Հավատք. Հարություն. Հիսուս Քրիստոսի երկրորդ գալուստը. Դանապարհ. Մարդու Որդի. Մարիամ Հիսուսի մայրը. Մեղքերի բողոքություն. Մեսիա. Միջնորդ. Մխիթարիչ. Ընորհ. Սարի վրայի քարոզը. Սկիզբ. Ստեղծել, Ստեղծում. Վեմ. Տեր. Փեսա. Փրկագնել, Փրկագնված, Փրկագնում. Փրկագնման ծրագիր. Փրկիչ. Քավել, Քավություն. Քավիչ. Օծյալը

Քրիստոս (հունարեն) և *Մեսիա* (եբրայերեն) բառերը նշանակում են «օծյալ»:

Հիսուս Բրիստոսը Հոր անդրանիկն է հոգուն (Եբր. Ա.6, ՎևՈՒՒ 93.21): Նա Հոր Միածին Որդին է մարմնում (Հովհ. Ա.14, Գ.16): Նա Եհովան է (ՎևՈՒՒ 110.3-4) և իր մեծ կոչման համար նա նախակարգված է եղել աշխարհի հիմնադրումից առաջ: Հոր ղեկավարության ներքո Հիսուսը ստեղծեց երկիրը և ամեն ինչ, որ նրա վրա է (Հովհ. Ա.3, 14, Մովսես 1.31-33): Նա ծնվեց Մարիամից, Բեթլեհեմում, ապրեց մեղսագործ կյանքով և կատարյալ քավություն կատարեց բոլոր մարդկության մեղքերի համար՝ հեղեղով իր արյունը և իր կյանքը տալով խաչի վրա (Մատ. Բ.1, 1 Նեփի 11.13-33, 3 Նեփի 27.13-16, ՎևՈՒՒ 76.40-42): Նա հարություն առավ մեռելներից՝ այդպիսով երաշխավորելով ողջ մարդկության վերջնական հարությունը: Հիսուսի քավության և հարության միջոցով, նրանք, ովքեր ապաշխարում են իրենց մեղքերից և հնազանդվում են Աստծո պատվիրաններին, կարող են հավերժ ապրել Հիսուսի և Հոր մոտ (2 Նեփի 9.10-12, 21-22, ՎևՈՒՒ 76.50-53, 62):

Հիսուս Բրիստոսն ամենավեհ էակն է, որը պիտի ծնվեր այս աշխարհի վրա: Նրա կյանքը կատարյալ օրինակ է ողջ մարդկության համար, թե ինչպես պիտի նրանք ապրեն: Բոլոր աղոթքները, օրհնությունները և քահանայության արարողությունները պետք է կատարվեն նրա անունով: Նա տերերի Տերն է, բազավորների Թագավորը, Ստեղծողը, Փրկիչը և Աստվածը ողջ երկրի:

Հիսուս Բրիստոսը կրկին կգա, գորությանը և փառքով, որպեսզի թագավորի երկրի վրա Հազարամյակի ընթացքում: Վերջին օրը նա կդատի ողջ մարդկությանը (Ալմա 11.40-41, ՋՄ-Մ 1):

Նրա կյանքի համառոտ շարադրանքը (իրարարծությունների հերթականությամբ). Հիսուսի ծնունդն ու առաքելությունը կանխավ պատմվել է՝ **Ղուկ.** Ա.26-38 (Ես. Է.14, Ժ.6-7, 1 Նեփի 11): Ծնվեց՝ **Ղուկ.** Բ.1-7 (Մատ. Ա.18-25): Թվիատովեց՝ **Ղուկ.** Բ.21: Ներկայացվեց տամարում՝ **Ղուկ.** Բ.22-38: Նրան այցելեցին իմաստունները՝ **Մատ.** Բ.1-12: Հովսեփը և Մարիամը նրա հետ փախան Եգիպտոս՝ **Մատ.** Բ.13-18: Նրան բերեցին Նազարեթ՝ **Մատ.** Բ.19-23: Այցելեց տամար տասներկու տարեկանում՝ **Ղուկ.** Բ.41-

50: Ուներ եղբայրներ և քույրեր՝ **Մատ.** ԺԳ.55-56 (Մար. 2.3): Մկրտվեց՝ **Մատ.** Գ.13-17 (Մար. Ա.9-11, Ղուկ. Գ.21-22): Փորձվեց դևի կողմից՝ **Մատ.** Գ.1-11 (Մար. Ա.12-13, Ղուկ. Գ.1-13): Կանչեց իր աշակերտներին՝ **Մատ.** Գ.18-22 (Մար. Թ.9, Մար. Ա.16-20, Բ.13-14, Ղուկ. Ե.1-11, 27-28, 2.12-16, Հովհ. Ա.35-51): Լիազորեց Տասներկուսին՝ **Մատ.** Ժ.1-4 (Մար. Գ.13-19, Ղուկ. 2.12-16): Ասաց սարի վրայի քարոզը՝ **Մատ.** 5-7: Կանխապատմեց սեփական մահն ու հարությունը՝ **Մատ.** Ժ.2.21 (Մար. ԺԵ.21-22, 20.17-19, Մար. Ը.31, Թ.30-32, Ժ.32-34, Ղուկ. Թ.22, ԺԸ.31-34): Կերպարանավորվեց՝ **Մատ.** ԺԵ.1-9 (Մար. Թ.1-7, Ղուկ. Թ.28-36): Ուղարկեց յոթանասունին՝ **Ղուկ.** Ժ.1-20: Կատարեց իր հանդիսավոր մուտքը Երուսաղեմ՝ **Մատ.** ԻԱ.1-11 (Մար. ԺԱ.1-11, Ղուկ. ԺԹ.29-40, Հովհ. ԺԲ.12-15): Հաստատեց հաղորդությունը՝ **Մատ.** ԻԶ.26-29 (Մար. ԺԳ.22-25, Ղուկ. ԻԲ.19-20): Տառապանք կրեց և աղոթեց Գերսեմանիում՝ **Մատ.** ԻԶ.36-46 (Մար. ԺԳ.32-42, Ղուկ. ԻԲ.39-46): Նրան դավաճանեցին, ձեռքակալեցին և լքեցին՝ **Մատ.** ԻԶ.47-56 (Մար. ԺԳ.43-53, Ղուկ. ԻԲ.47-54, Հովհ. ԺԸ.2-13): Խաչվեց՝ **Մատ.** ԻԷ.31-54 (Մար. ԺԵ.20-41, Ղուկ. ԻԳ.26-28, 32-49, Հովհ. ԺԹ.16-30): Հարություն առավ՝ **Մատ.** ԻԸ.1-8 (Մար. ԺԶ.1-8, Ղուկ. ԻԳ.1-12, Հովհ. Ի.1-10): Հայտնվեց իր հարությունից հետո՝ **Մատ.** ԻԸ.9-20 (Մար. ԺԶ.9-18, Ղուկ. ԻԳ.13-48, Հովհ. Ի.11-31, Գոր. Ա.3-8, Ա Կոր. ԺԵ.5-8): Համբարձվեց երկինք՝ **Մար.** ԺԶ.19-20 (Ղուկ. ԻԳ.51-53, Գոր. Ա.9-12): Հայտնվեց Նեփիացիներին՝ **3 Նեփի** 11.1-17 (3 Նեփի 11-26): Հայտնվեց Ջոզեֆ Սմիթին՝ **ՋՄ-Պ** 1.15-20:

Դատավոր. Նա արդարությամբ կդատի աշխարհը՝ **Մադ.** Թ.8 (3 Նեփի 27.16): Նա գալիս է երկիրը դատելու՝ **Մադ.** Գ.2.13: Աստված կդատի արդարին և ամբարիշտին՝ **ժող.** Գ.17: Նա պիտի դատի ազգերի մեջ՝ **Ես.** Բ.4 (Միքիա Գ.3, 2 Նեփի 12.4): Նա արդարությամբ կդատի աղքատներին՝ **Ես.** ԺԱ.2-4: Հայրը բոլոր դատաստանը տվել է Որդուն՝ **Հովհ.** Ե.22: Եթե ես դատեմ, իմ դատաստանը ճշմարիտ է՝ **Հովհ.** Ը.16: Նա կենդանիների և մեռելների դատավոր է կարգվել Աստծո կողմից՝

Գոր. Ժ.42 (Բ Տիմ. Գ.1): Աստված մարդկանց ծածուկ բաները կղատի Հիսուս Քրիստոսի ձեռքով՝ **Հռովմ.** Բ.16: Մենք բոլորս կկանգնենք Քրիստոսի դատարանի առջև՝ **Հռովմ.** ԺԳ.10 (Բ Կոր. Ե.10, Ալմա 12.12, Մորմ. 3.20, 7.6, Եթեր 12.38, ՎևոՒ 135.5): Բոլոր մարդիկ գալիս են Աստծո մոտ, որ դատվեն նրա կողմից՝ համաձայն ճշմարտության և սրբության, որը նրանում է՝ **2 Նեփի 2.10:** Կանգնեք Աստծո առաջ, որ դատվեք՝ համաձայն գործերի՝ **Ալմա 5.15** (Ալմա 12.15, 33.22, 3 Նեփի 27.14): Աստված և Քրիստոսն են դատավորը բոլորի՝ **ՎևոՒ 76.68:**

Եկեղեցու գույս. Քրիստոսը Եկեղեցու գույսն է՝ **Եփես.** Ե.23 (Եփես. Ա.22, Գ.15): Նա է մարմնի՝ Եկեղեցու գույսը՝ **Կող.** Ա.18: Սա իմ Եկեղեցին է՝ **Մոսիա 26.22** (Մոսիա 27.13): Քրիստոսը նրանց հավատքի հեղինակն էր և ամբողջացնողը՝ **Մոր.** 6.1–4: Այս Եկեղեցին ես հաստատել եմ՝ **ՎևոՒ 35.5** (3 Նեփի 27.3–8):

Իշխանությունը. Իշխանությունը կլինի նրա ուսի վրա՝ **Ես.** Թ.6 (2 Նեփի 19.6): Հիսուսն ուսուցանում էր իշխանություն ունեցողի պես՝ **Մատ.** Է.28–29 (Մար. Ա.22): Մարդու Որդին երկրի վրա մեղքեր բողբելու իշխանություն ունի՝ **Մատ.** Թ.6: Հիսուսն իշխանությունով հրամայում էր պիղծ ոգիներին և նրանք հնազանդվում էին նրան՝ **Մար.** Ա.27 (Դուկ. Գ.33–36): Հիսուսը կարգեց տասներկուսին, որ գորուքյուն ունենան՝ **Մար.** Գ.14–15: Հիսուսի խոսքը գորուքյամբ էր՝ **Դուկ. Գ.32:** Հայրը բոլոր դատաստանը հանձնել է Որդուն՝ **Հովհ.** Ե.22, 27: Աստված Հիսուսին օժել է Սուրբ Հոգով և գորուքյամբ՝ **Գոր.** Ժ.38: Քրիստոսը մախակարգվել է աշխարհի հիմնադրումից առաջ՝ **Ա Պետ.** Ա.20 (Եթեր 3.14): Քրիստոսն ունի դոժխքի և մահվան բանալիները՝ **Հայո.** Ա.18: Բոլոր մարդիկ ենթակա են դատնում Քրիստոսին՝ **2 Նեփի 9.5:** Հիսուս Քրիստոսը՝ Աստծո Որդին, երկնքի և երկրի Հայրն է, բոլոր բաների Ստեղծողն է սկզբանե՝ **Հել.** 14.12: Քրիստոսը եկավ Հոր կամքով՝ նրա կամքը կատարելու համար՝ **ՎևոՒ 19.24:** Հիսուսն ստացավ Հոր փառքի լիությունը և ստացավ ողջ գորուքյունը՝ **ՎևոՒ 93.3–4, 16–17** (Հովհ. Գ.35–36):

Հիսուս Քրիստոսի անունը մեզ վրա վերց-

նելը. Չկա ուրիշ անուն, որով մենք պետք է փրկվենք՝ **Գոր.** Գ.12 (2 Նեփի 31.21): Առաքյալներն ուրախանում էին, որ արժանի եղան նրա անունի համար անարգվել՝ **Գոր.** Ե.38–42: Սա է նրա պատվիրանը, որ հավատանք նրա Որդու՝ Հիսուս Քրիստոսի անվանը՝ **Ա Հովհ.** Գ.23: Վկայեք, որ կամենում եք մկրտվելով ձեզ վրա վերցնել Քրիստոսի անունը՝ **2 Նեփի 31.13:** Ես կկամենայի, որ դուք ձեզ վրա վերցնեք Քրիստոսի անունը՝ **Մոսիա 5.6–12** (Մոսիա 1.11): Ովքեր որ ցանկանում էին իրենց վրա վերցնել Քրիստոսի անունը, միանում էին Աստծո Եկեղեցուն՝ **Մոսիա 25.23:** Բոլոր նրանք, ովքեր Քրիստոսի ճշմարիտ հավատացյալներ էին, իրենց վրա վերցրեցին Քրիստոսի անունը՝ **Ալմա 46.15:** Երկնքի դուռը բաց է բոլորի համար, ովքեր կհավատան Հիսուս Քրիստոսի անվանը՝ **Հել.** 3.28: Օրհնյալ է նա, որ հավատարիմ կլինի իմ անվանը վերջին օրը՝ **Եթեր 4.19:** Նրանք հոժար են իրենց վրա վերցնել անունը Որդու՝ **Մոր.** 4.3 (ՎևոՒ 20.77): Չեզ վրա վերցրեք Քրիստոսի անունը՝ **ՎևոՒ 18.21–25:**

Հիսուս Քրիստոսի մասին բերված վկայությունները. Պողոսը վկայել է, որ Հիսուսը Քրիստոսն է՝ **Գոր.** ԺԲ.5: Անգամ չար ոգիներն էին վկայում, որ գիտեին Հիսուսին՝ **Գոր.** ԺԺ.15: Ոչ ոք չի կարող Հիսուսին Տեր անվանել, եթե ոչ Սուրբ Հոգով՝ **Ա Կոր.** ԺԲ.3: Ամեն ծուկ պիտի ծալվի և ամեն լեզու խոստովանի, որ Հիսուս Քրիստոսը Տեր է՝ **Փիլ.** Բ.10–11: Մենք խոսում ենք Քրիստոսի մասին, մենք հրճվում ենք Քրիստոսով, մենք քարոզում ենք Քրիստոսի մասին, մենք մարգարեանում ենք Քրիստոսի մասին՝ **2 Նեփի 25.26:** Մորմոնի Գ-իբքը հրեաներին և հեթանոսներին պիտի համոզի, որ Հիսուսը Քրիստոսն է՝ **2 Նեփի 26.12** (Մորմոնի Գ-քի տիտղոսաբերք): Մարգարեները և սուրբ գրքերը վկայում են Քրիստոսի մասին՝ **Հակոբ 7.11, 19:** Փնտրեք այս Հիսուսին, որի մասին գրել են մարգարեներն ու առաքյալները՝ **Եթեր 12.41:** Մենք տեսանք նրան և լսեցինք ձայնը, որը վկայում էր, որ նա է Միածինը՝ **ՎևոՒ 76.20–24:** Սա է հավերժական կյանքերը՝ ճանաչել Աստծուն և Հիսուս Քրիստոսին՝ **ՎևոՒ 132.24:** Մենք հավատում ենք Աստծուն՝ Հավերժական Հորը և նրա Որդուն՝ Հիսուս

Քրիստոսին՝ ՀՀ 1.1: Մենք հավատում ենք, որ Քրիստոսն անճամբ կրագավորի երկրի վրա՝ ՀՀ 1.10:

Հիսուս Քրիստոսի փառքը. Տիրոջ փառքը լցրեց խորանը՝ **Ել.** Խ.34–38: Ողջ երկիրը լցված է նրա փառքով՝ **Ես.** 2.3 (2 Նեփի 16.3): Տիրոջ փառքը ծագել է քեզ վրա՝ **Ես.** Կ.1–2: Մարդու Որդին կգա իր Հոր փառքով՝ **Մատ.** ԺՁ.27: Փառավորիք ինձ այն փառքով, որ աշխարհի լինելուց առաջ ունեի քեզ հետ՝ **Հովհ.** ԺԷ.5: Իսրայելի Սուրբը պիտի թագավորի մեծ փառքով՝ **1 Նեփի** 22.24: Մենք ունեինք նրա փառքի հույսը՝ **Հակոբ** 4.4: Աստծո Որդին գալիս է իր փառքով՝ **Ալմա** 5.50: Նա մեկնաբանեց բոլոր բաները, սկսած սկզբից, մինչև այն ժամանակը, երբ նա պիտի գա իր փառքով՝ **3 Նեփի** 26.3: Իմ Առաքյալները պիտի կանգնեն փառք հագած, ճիշտ ինչպես ես եմ՝ **ՎևոՒ** 29.12 (ՎևոՒ 45.44): Մենք տեսանք Որդու փառքը Հոր աջ կողմում՝ **ՎևոՒ** 76.19–23: Հովհաննեսը տեսավ և վկայեց իմ փառքի լիության մասին՝ **ՎևոՒ** 93.6 (Հովհ. Ա.14): Նրա դեմքը փայլում էր արևի պայծառությունից վառ՝ **ՎևոՒ** 110.3: Նրա փառքն իմ վրա էր, և ես տեսա նրա երեսը՝ **Մովսես** 1.1–11: Սա է իմ աշխատանքը և իմ փառքը՝ **Մովսես** 1.39:

Հիսուս Քրիստոսի օրինակը. Ես ձեզ օրինակ տվեցի՝ **Հովհ.** ԺԳ.15: Ես եմ ճանապարհը, ճշմարտությունը և կյանքը՝ **Հովհ.** ԺԳ.6: Քրիստոսը չարչարվեց մեզ համար, օրինակ թողնելով մեզ համար, որ նրա հետքերին հետևենք՝ **Պ Աղես.** Բ.21: Մինչև որ մարդ չհետևի կենդանի Աստծո Որդու օրինակին, նա չի կարող փրկվել՝ **2 Նեփի** 31.16: Ես կամենում եմ, որ դուք կատարյալ լինեք, ճիշտ ինչպես ես՝ **3 Նեփի** 12.48: Դուք միշտ պիտի հետևեք, որ անեք դա, ճիշտ ինչպես ես արեցի՝ **3 Նեփի** 18.6: Ես օրինակ եղա ձեզ համար՝ **3 Նեփի** 18.16: Գործերը, որոնք տեսել եք ինձ անելիս, դրանք պետք է նաև դուք անեք՝ **3 Նեփի** 27.21, 27: Հիսուս Քրիստոսի ճշմարիտ հետևորդները պետք է լինեն նրա նման՝ **Մոր.** 7.48:

Մարգարեություններ Հիսուս Քրիստոսի ծննդի և մահվան մասին. Կույսը կողիանա և մի որդի կրերի՝ **Ես.** Է.14 (1 Նեփի 11.13–20): Բերթեհեմից պիտի իշխան

դուրս գա Իսրայելի համար՝ **Միքիա** Ե.2: Սամուել Լամանացին մարգարեացավ, որ մի ցերեկ և մի գիշեր ու մի ցերեկ անընդհատ լույս կլինի. նոր աստղ և այլ նշաններ կլինեն՝ **Հել.** 14.2–6: Սամուել Լամանացին մարգարեացավ խավարի, որոտների և կայծակների և երկրի ցնցումների մասին՝ **Հել.** 14.20–27: Հիսուսի ծննդյան նշանները կատարվեցին՝ **3 Նեփի** 1.15–21: Հիսուսի մահվան նշանները կատարվեցին՝ **3 Նեփի** 8.5–23:

Քրիստոսի ետմահկանացու հայտնության դեպքերը. Երբ Հիսուսը հարություն առավ, նա առաջինը հայտնվեց Մարիամին՝ **Մար.** ԺՁ.9 (Հովհ. Ի.11–18): Հիսուսը քայլեց և խոսեց երկու աշակերտների հետ Էմմաուսի ճանապարհին՝ **Ղուկ.** ԻԳ.13–34: Հիսուսը հայտնվեց Առաքյալներին, որոնք շոշափեցին նրա ձեռքերն ու ոտքերը՝ **Ղուկ.** ԻԳ.36–43 (Հովհ. Ի.19–20): Հիսուսը հայտնվեց Թովմասին՝ **Հովհ.** Ի.24–29: Հիսուսը հայտնվեց աշակերտներին Տիբերեայի ծովի մոտ՝ **Հովհ.** ԻԱ.1–14: Իր հարությունից հետո, Հիսուսը քառասուն օր դեռ ծառայեց՝ **Գոր.** Ա.2–3: Ստեփանոսը տեսավ Հիսուսին Աստծո աջ կողմում կանգնած՝ **Գոր.** Է.55: Հիսուսը հայտնվեց Ռոդոսին՝ **Գոր.** Թ.1–8 (ՋՄԹ՝ Գոր. 9.7, Գոր. ԻՋ.9–17): Քրիստոսը երևաց ավելի քան 500 մարդու՝ **Ա Կոր.** ԺԵ.3–8: Հիսուս Քրիստոսն իրեն ցույց տվեց Նեփիի ժողովրդին՝ **3 Նեփի** 11.1–17: 2500 մարդ տեսավ և լսեց Հիսուսին՝ **3 Նեփի** 17.16–25: Տերն այցելեց Մորմոնին՝ **Մորմ.** 1.15: Ջոզեֆ Սմիթը և Սիդնի Ռիզդոնը տեսան Հիսուսին՝ **ՎևոՒ** 76.22–23: Ջոզեֆ Սմիթը և Օլիվեր Քառտերին տեսան Տիրոջը Կիրթլենդի Տաճարում՝ **ՎևոՒ** 110.1–4: Ջոզեֆ Սմիթը տեսավ Հիսուսին Աստծո աջ կողմում՝ **ՋՄ-Պ** 1.15–17:

Քրիստոսի հազարամյա թագավորությունը. Իշխանությունը կլինի նրա ուսի վրա՝ **Ես.** Թ.6 (2 Նեփի 19.6): Ես կբնակվեմ ձեր մեջ, ասում է Տերը՝ **Ջաք.** Բ.10–12 (Ջաք. ԺԳ.9): Աստված Հիսուսին կտա նրա Դավիթ հոր գահը՝ **Ղուկ.** Ա.30–33: Քրիստոսը կթագավորի հավիտյան հավիտենից՝ **Հայտ.** ԺԱ.15: Սրբերը Քրիստոսի հետ հազար տարի կթագավորեն՝ **Հայտ.** Ի.4 (ՎևոՒ 76.63): Ժողովրդի արդարու-

քյան շնորհիվ Սատանան գործություն չի ունենա՝ **1 Նեփի** 22.26 (Հայտ. Ի.1-3): Հազար տարի ես մարդկանց հետ արդարության մեջ կրճակվեմ երկրի վրա՝ **ՎևոՒ** 29.11 (ՎևոՒ 43.29-30): Եմբարկվեք գոյություն ունեցող իշխանություններին, մինչև որ թագավորի նա, ում իրավունքն է թագավորել՝ **ՎևոՒ** 58.22 (Ա Կոր. ԺԵ.25): Քրիստոսն անձամբ կթագավորի երկրի վրա՝ **ՀՀ** 1.10 (Ես. ԼԲ.1):

Քրիստոսին մարմնավորող խորհրդանիշները. Աբելը մատուցեց իր հոտի առաջնեկներին՝ **Ծճ.** Գ.4 (Մովսես 5.20): Վերցրու քո միակ որդուն՝ Իսահակին, և զոհ մատուցիր նրան՝ **Ծճ.** ԻԲ.1-13 (Հակոբ 4.5): Տերն Իսրայելի զավակներին պատվիրեց գոհաբերել անարատ գառները՝ **Ել.** ԺԲ.5, 21, 46 (Թվ. Թ.12, Հովի. Ա.29, ԺԹ.33, Ա Պետ. Ա.19, Հայտ. Ե.6): Սա այն հացն է, որ Տերը տվեց ձեզ, որ ուտեք՝ **Ել.** ԺՁ.2-15 (Հովի. Զ.51): Ժայռին զարկիր և նրանից ջուր դուրս կգա, որ ժողովուրդը խմի՝ **Ել.** ԺԷ.6 (Հովի. Գ.6-14, Ա Կոր. Ժ.1-4): Նոխազն իր վրա կտանի նրանց բոլոր անօրինությունները՝ **Ղև.** ԺՁ.20-22 (Ես. ԾԳ.11, Մոսիա 14.11, 15.6-9): Մովսեսը պղծեմ մի օձ բարձրացրեց, որ փրկի բոլոր նրանց, ովքեր կնայեն նրան՝ **Թվ.** ԻԱ.8-9 (Հովի. Գ.14-15, Այնա 33.19, Հել. 8.14-15): Հովանը երեք օր ձկան փորում էր՝ **Հովն.** Ա.17 (Մատ. ԺԲ.40): Գա Հոր կողմից Միածնի գոհաբերության նմանությունն է՝ **Մովսես** 5.4-8:

Քրիստոսի նախամահկանացու գոյությունը. Տերը հայտնվեց Աբրամին՝ **Ծճ.** ԺԲ.7 (Ծճ. ԺԷ.1, ԺԸ.1, Աբր. 2.6-8): Տերը դեմառդեմ խոսեց Մովսեսի հետ՝ **Ել.** ԼԳ.11 (Բ Օր. ԼԳ.10, Մովսես 1.1-2): Ես տեսա Տիրոջը գոհասեղանի վրա կանգնած՝ **Ամոզս** Թ.1: Սկզբում Բանն Աստծո մոտ էր: Եվ Բանը մարմին դարձավ և բնակվեց մեր մեջ՝ **Հովի.** Ա.1, 14 (Ա Հովի. Ա.1-3): Նախքան Աբրահամի լինելը, Ես եմ՝ **Հովի.** Ը.58: Փառավորիք ինձ այն փառքով, որ աշխարհի լինելուց առաջ ունեի՝ **Հովի.** ԺԷ.5: Եսայիան իսկապես տեսել էր իմ Քավչին, ինչպես ես և իմ եղբայրը՝ Հակոբն ենք տեսել նրան՝ **2 Նեփի** 11.2-3: Էզուց ես գալիս եմ աշխարհ՝ **3 Նեփի** 1.12-14: Քրիստոսը կար նախքան աշխարհը եղավ՝ **3 Նեփի** 26.5 (Հովի. Ը.63): Ինչպես

ես հայտնվում եմ քեզ, ես կհայտնվեմ իմ ժողովրդին մարմնի մեջ՝ **Եբեր** 3.14-17: Ենովքը տեսավ Տիրոջը և քայլեց նրա հետ՝ **ՎևոՒ** 107.48-49: Իմ Սիրելի Որդին, որն իմ Սիրելին ու Ընտրյալն էր ի սկզբանե՝ **Մովսես** 4.2: Տերն ասաց. Ո՞ւմ ուղարկեմ: Եվ մեկը՝ Մարդու Որդու մտան, պատասխանեց. Ահա ես, ուղարկիւ ինձ՝ **Աբր.** 3.27:

ՀԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԵԿԵՂԵՑԻ:

Տե՛ս նաև Աստծո արքայություն կամ Երկնքի արքայություն. Ավետարանի վերականգնումը. Եկեղեցու անունը. Եկեղեցու ճշմարտության նշանները. Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցի. Սուրբ

Հավատացյալների կազմավորված մարմին, որոնք մկրտությամբ և հաստատմամբ իրենց վրա են վերցրել Հիսուս Քրիստոսի անունը: Ճշմարիտ լինելու համար, Եկեղեցին պետք է լինի Տիրոջ Եկեղեցին. պետք է ունենա նրա իշխանությունը, ուսմունքները, օրենքները, արարողությունները և անունը. և պետք է ղեկավարվի նրա կողմից՝ իր նշանակած ներկայացուցիչների միջոցով:

Տերն ամեն օր ավելացնում էր Եկեղեցուն՝ **Գոր.** Բ.47: Մենք, շատ լինելով, մեկ մարմին ենք Քրիստոսուն՝ **Հռովմ.** ԺԲ.5: Մենք ամենքս Հոգով մկրտվեցինք՝ մեկ մարմին լինելու՝ **Ա Կոր.** ԺԲ.13: Եկեղեցին ժողովրդավեճ է Առաքյալների և մարգարեների հիմքի վրա՝ **Եփես.** Բ.19-20: Առաքյալները և մարգարեներն էական են Եկեղեցու համար՝ **Եփես.** Գ.11-16: Քրիստոսն է Եկեղեցու Գլուխը՝ **Եփես.** Ե.23: Չնայած շատ եկեղեցիների առկայությանը՝ դրանք բոլորը մեկ եկեղեցի էին՝ **Մոսիա** 25.19-22: Եկեղեցին մարվեց և կարգի բերվեց՝ **Ալմա** 6.1-6: Քրիստոսի եկեղեցին պետք է կոչվի իր անունով՝ **3 Նեփի** 27.8: Եկեղեցին հաճախ հավաքվում էր՝ ծոմ պահելու ու աղոթելու և խոսելու՝ **Մոր.** 6.5: Սա միակ ճշմարիտ և կենդանի եկեղեցին է՝ **ՎևոՒ** 1.30: Քրիստոսի Եկեղեցին բարձրացավ այս վերջին օրերին՝ **ՎևոՒ** 20.1: Տերը կանչում է իր ծառաներին՝ կառուցելու իր Եկեղեցին՝ **ՎևոՒ** 39.13: Քանզի այսպես պիտի կոչվի իմ եկեղեցին վերջին օրերին՝ **ՎևոՒ** 115.4:

ՀԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԵԿԵՂՈՐԴ

ԳԱՆՈՒՍՏԸ: *Տես նաև* Արմագերոն.

Գոգ. Ժամանակների նշանները.

Հիսուս Քրիստոս. Մագոգ

Հազարամյա Դարաշրջանի սկզբում Քրիստոսը կվերադառնա երկիր: Այդ իրադարձությունն այս երկրի մահկանացու փորձության ավարտի նշանը կլինի: Ամբարիշտները կհեռացվեն երկրի վրայից և արդարները կհափշտակվեն ամսյի մեջ, մինչ երկիրը կմաքրվի: Չնայած ոչ որ ճշգրիտ չգիտի, թե Քրիստոսը երբ կգա երկրորդ անգամ, այնուամենայնիվ, նա մեզ նշաններ է տվել հետևելու, որոնք ցույց են տալիս, որ ժամանակը մոտ է (Մատ. ԻԳ, ՁՍ-Մ 1):

Գիտեմ, որ իմ Քավիչը կկանգնի երկրի վրա վերջին օրերին՝ **Հոր ԺԺ**:25: Ամեն ծունկ պիտի կրկնվի և ամեն լեզու երդում անի ինձ՝ **Ես**. ԽԵ.23 (Վևև.1 88.104): Մարդու Որդին գալիս էր երկնքի ամպերով՝ **Դան**. Է.13 (Մատ. ԻԶ.64, Ղուկ. ԻԱ.25-28): Նրանք կնայեն ինձ, որին խոցեցին՝ **Ջաք**. ԺԲ.10: Նրան կասեն. Սա ի՞նչ հարվածներ են ձեռքերիդ մեջ՝ **Ջաք**. ԺԳ.6 (Վևև.1 45.51): Ո՞վ է նրա գալու օրը տանողը. որովհետև նա հալեցնող կրակի պես է՝ **Մադ**. Գ.2 (3 Նեփի 24.2, Վևև.1 128.24): Մարդու Որդին կգա իր Հոր փառքով՝ **Մատ**. ԺԶ.27 (Մատ. ԻԵ.31): Այն օրվա և ժամի մասին ոչ որ չգիտի, բայց միայն իմ Հայրը՝ **Մատ**. ԻԳ.36 (Վևև.1 49.7, ՁՍ-Մ 1.38-48): Այս նույն Հիսուսն այսպես կգա, ինչպես նրան տեսաք երկինքը գնալիս՝ **Գոր**. Ա.11: Ինքը Տերը վայր կգա երկնքից՝ **Ա Թես**. Գ.15: Տիրոջ օրը գիշերվա գողի պես կգա՝ **Բողոս**. Գ.10: Տերը կգա իր բյուրավոր սրբերով՝ **Հուդա** Ա.14: Նա գալիս է ամպերով. և ամեն աչք կտեսնի նրան՝ **Հայտ**. Ա.7: Հիսուսը կկանգնի՝ դատելու աշխարհը՝ **3 Նեփի** 27.14-18: Պատրաստվե՛ք, պատրաստվե՛ք, քանզի Տերը մոտ է՝ **Վևև.1**.12: Ես կհայտնվեմ երկնքից գործարար և կբնակվեմ երկրի վրա հազար տարի՝ **Վևև.1** 29.9-12: Բարձրացրու ձայնդ և ապաշխարություն աղաղակիր՝ պատրաստելով Տիրոջ ճանապարհն իր երկրորդ գալստի համար՝ **Վևև.1** 34.5-12: Ես Հիսուս Քրիստոսն եմ, և ես հանկարծակի կգամ իմ տաճարը՝ **Վևև.1** 36.8

(Վևև.1 133.2): Օրը շուտով գալիս է, որ դուք պիտի տեսնեք ինձ և իմանաք, որ ես եմ՝ **Վևև.1** 38.8: Ով որ երկյուղում է ինձանից, պիտի սպասի Մարդու Որդու գալստյան նշաններին՝ **Վևև.1** 45.39: Տերը կբացի իր երեսի քողը՝ **Վևև.1** 88.95: Տիրոջ մեծ և ասեղ օրը մոտ է՝ **Վևև.1** 110.16: Երբ Փրկիչը հայտնվի, մենք կտեսնենք նրան, ինչպիսին որ կա՝ **Վևև.1** 130.1: Փրկիչը կկանգնի իր ժողովրդի մեջ և կթագավորի՝ **Վևև.1** 133.25: Ո՞վ է սա, որ գալիս է երկնքի Աստուծու, ներկված համդերձներով՝ **Վևև.1** 133.46 (Ես. ԿԳ.1):

ՀԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԾՆՆԳՅԱՆ

ԵՎ ՄԱՀՎԱՆ ՆՇԱՆՆԵՐԸ: *Տես նաև* Հիսուս Քրիստոս

Իրադարձություններ, որոնք ուղեկցում էին Հիսուս Քրիստոսի ծննդյանն ու մահվանը:

Ծնունդ. Կույսը կհղիանա և որդի կբերի՝ **Ես**. Է.14: Բեթլեհեմից իշխան դուրս պիտի գա Իսրայելի համար՝ **Միքիա** Ե.2: Սամուել Լամանացին մարգարեացավ, որ կլինի մեկ ցերեկ և մի գիշեր ու մի ցերեկ լույս. նոր աստղ. և այլ նշաններ՝ **Հել**. 14.2-6: Նշաններն իրականացան՝ **3 Նեփի** 1.15-21:

Մահ. Սամուել Լամանացին մարգարեացավ, որ կլինի խավար, որոտեցու ու կայծակներ, և հողը կցնցվի՝ **Հել**. 14.20-27: Նշաններն իրականացան՝ **3 Նեփի** 8.5-23:

ՀԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ՎԵՐՋԻՆ

ՕՐԵՐԻ ՍՐՔԵՐԻ ԵԿԵՂԵՑԻ:

Տես նաև Ավետարանի վերականգնումը. Եկեղեցու անունը. Եկեղեցու ճշմարտության նշանները. Հիսուս Քրիստոսի Եկեղեցի

Վերջին օրերին Քրիստոսի Եկեղեցուն տրված անունը՝ նախորդ տնտեսությունների ժամանակների Եկեղեցուց այն տարբերելու համար (Վևև.1 115.3-4):

Տերը գիտելիք կթափի Վերջին Օրերի Սրբերի վրա՝ **Վևև.1** 121.33: Ջոզեֆ Սմիթը Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու մարգարեն և տեսաճողն է՝ **Վևև.1** 127.12: Տիրոջ մեծ օրը մոտ է Վերջին Օրերի Սրբերի համար՝ **Վևև.1** 128.21, 24: Ջոզեֆ Սմիթն օգնել է հավաքել Վերջին Օրերի Սրբերին՝ **Վևև.1** 135.3:

Վերջին Օրերի Սրբերի խմբեր պետք է կազմավորվեն դեպի Միացյալ Նահանգների արևմտյան տարածք ճամփորդելու համար՝ **ՎևոՒ** 136.2: Ամուսնության օրենքները պարզաբանվում են Վերջին Օրերի Սրբերի համար՝ **ՎևոՒ** ԴՀ-1: Քահանայությունը տրվում է Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու բոլոր արժանի տղամարդկանց՝ **ՎևոՒ** ԴՀ-2: Առաջին Տեսիլքի պատմությունը՝ բոլոր Վերջին Օրերի Սրբերի համար՝ **ՋՄ-Պ** 1.1:

ՀԻՎԱՆԴ, ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ

Տկարություն կամ ցավ ունենալ: Մուրք գրքերում ֆիզիկական հիվանդությունը երբեմն հոգևոր ոչ բարեկեցիկ վիճակի խորհրդանիշ է ծառայում (Ես. Ա.4-7, ԼԳ.24):

Լսեցի քո աղոթքը, տեսա քո արտասուքը. ահա ես քեզ կբժշկեմ՝ **Դ Թագ**. Ի.1-5 (Բ ՄԳ. ԼԲ.24, Ես ԼԸ.1-5): Հիսուսը ման էր գալիս՝ ամեն հիվանդություն և ամեն ցավ բուժելով՝ **Մատ**. Դ.23-24 (1 Նեփի 11.31, Մոսիա 3.5-6): Առողջները բժշկի կարոտ չեն, այլ հիվանդները՝ **Մատ**. Թ.10-13 (Մար. Բ.14-17, Դուկ. Ե.27-32): Եթե ձեզանից մեկը հիվանդ է, թող երեցներից կանչի՝ **Հակ**. Ե.14-15: Քրիստոսն իր վրա կվերցնի իր ժողովրդի հիվանդություններն ու ցավերը՝ **Ալմա** 7.10-12: Հիսուսը բժշկեց Նեփիազիների մեջ եղած բոլոր հիվանդներին՝ **3 Նեփի** 26.15: Հիվանդներին սնուցեք մեղմությամբ՝ բույսերով ու բեթև սննդով՝ **ՎևոՒ** 42.43 (Ալմա 46.40): Բոլոր բաներում հիշեք հիվանդներին ու տառապյալներին՝ **ՎևոՒ** 52.40: Չեռքերդ դիր հիվանդների վրա, և նրանք կառողջանան՝ **ՎևոՒ** 66.9:

ՀԻՎԱՆԴՆԵՐԻ ՍՊԱՍԱՎՈՐՈՒՄ:

Տես՛ սուս Բժշկել, Բժշկություններ. Չեռնադրություն. Յուղ. Քահանայություն. Օծել

Մեքիստեղեկյան Քահանայություն կրող տղամարդկանց կողմից հիվանդներին տրվող օրհնություն, որը ներառում է մկիրագործված յուղի գործածումը:

Չեռքդ նրա վրա դիր՝ **Մատ**. Թ.18: Հիսուսը մի քանի հիվանդների վրա ձեռք դրեց և բժշկեց՝ **Մար**. 2.5: Քրիստոսի Առաքյալ-

ները շատ հիվանդների յուղով օծում և բժշկում էին՝ **Մար**. 2.13: Երեցները պետք է օծեն և բժշկեն հիվանդներին՝ **Հակ**. Ե.14-15: Դուք չպետք է բժշկեք հիվանդներին, եթե չպահանջվի նրանց կողմից, ուլքեր փափագում են՝ **ՎևոՒ** 24.13-14: Երեցները պետք է ձեռնադրեն հիվանդներին՝ **ՎևոՒ** 42.44: Չեռքերդ դիր հիվանդների վրա և նրանք կառողջանան՝ **ՎևոՒ** 66.9:

ՀՆԱԶԱՆԴՈՒԹՅՈՒՆ, ՀՆԱԶԱՆԴ,

ՀՆԱԶԱՆԴՎԵԼ: *Տես՛ սուս* Ականջ դնել. Պատվիրաններն Աստծո. Ուրախություն. Քայլել, Քայլել Աստծո հետ. Օրենք. Օրհնել, Օրհնված, Օրհնություն

Հոգևոր իմաստով՝ հնազանդությունն Աստծո կամքը կատարելն է:

Նոյն արեց բոլոր բաները, ինչպես Աստված պատվիրել էր նրան՝ **ԾՆ**. 2.22: Աբրահամը հնազանդեց Տիրոջը՝ **ԾՆ**. ԻԲ.15-18: Տիրոջ բոլոր ասածները կաննեք՝ **Ել**. ԻԳ.7: Արդ, ով Իսրայել լսիր և զգուշություն արա կատարելու՝ **Բ Օր**. 2.1-3: Սիրիր Տիրոջը և հնազանդվիր նրա ձայնին՝ **Բ Օր**. Լ.20: Հնազանդությունը լավ է, քան գոհը՝ **Ա ճագ**. ԺԵ.22: Վախեցիր Աստծուց և պահիր նրա պատվիրանները՝ **Ժող**. ԺԲ.13-14: Ամեն մարդ չի մտնի երկնքի արքայությունը, այլ նա, ով կատարում է Հոր կամքը՝ **Մատ**. Է.21 (3 Նեփի 14.21): Եթե մեկը կամենում է կատարել նրա կամքը, նա կիմանա թե արդոք վարդապետությունն Աստծուց է՝ **Հոփ**. Է.17: Աստծուն պետք է ավելի հնազանդվել, քան մարդկանց՝ **Գոր**. Ե.29: Երեխաներ, հնազանդվեք ձեր ծնողներին՝ **Եփես**. 2.1 (Կող. Գ.20): Ես կգամ և կամեն այն, ինչ Տերը պատվիրել է՝ **1 Նեփի** 3.7: Ես հնազանդվեցի Հոգու ձայնին՝ **1 Նեփի** 4.6-18: Եթե մարդկանց զավակները պահում են Աստծո պատվիրանները, նա սնում է նրանց՝ **1 Նեփի** 17.3: Զգուշացեք, չլինի թե հնազանդվեք չար ոգուն՝ **Մոսիա** 2.32-33, 37 (ՎևոՒ 29.45): Մարդիկ հնձում են իրենց վարձքը՝ համաձայն այն ոգու, որին հնազանդվել են՝ **Ալմա** 3.26-27: Մարդիկ շատ բաներ պետք է անեն իրենց ազատ կամքով՝ **ՎևոՒ** 58.26-29: Ոչնչով մարդ չի վիրավորում Աստծուն, բացի նրանցից, ուլքեր չեն խոստովանում նրա ձեռքը և

չեն հնազանդվում նրա պատվիրաններին՝ **ՎՆՈՒ** 59.21: Ես՝ Տերս, կապված եմ, երբ դուք անում եք այն, ինչ ես ասում եմ՝ **ՎՆՈՒ** 82.10: Ամեն հոգի, որ հնազանդվում է իմ ձայնին, կտեսնի իմ երեսը և կիմանա, որ ես եմ՝ **ՎՆՈՒ** 93.1: Ժողովուրդը պետք է խրատվի, մինչև որ հնազանդություն սովորի՝ **ՎՆՈՒ** 105.6: Երբ մենք ինչ-որ օրհնություն ենք ստանում Աստծուց, դա այն օրհնքին հնազանդվելով է, որի վրա այն հիմնված է՝ **ՎՆՈՒ** 130.21: Ադամը հնազանդ էր՝ **Մովսես** 5.5: Մենք կփորձենք նրանց՝ տեսնելու, թե արդյոք նրանք կանեն այն ամենը, ինչ Տերը կպատվիրի՝ **Աքք**. 3.25:

ՀՆԳԱՄԱՏՅԱՆ: *Տե՛ս նաև* Ելից. Երկրորդ Օրինաց. ԹՎոց. Հին Կտակարան. Ծննդոց. Ղևտացոց. Մովսես

Անվանում, որը տրվել է Հին Կտակարանի առաջին հինգ Ծննդոց, Ելից, Ղևտացոց, ԹՎոց և Երկրորդ Օրինաց գրքերին: Հրեաներն այս գրքերն անվանում են «Տորա» կամ Իսրայելի օրենքը: Դրանք գրվել են Մովսեսի կողմից (1 Նեփի 5.10–11):

ՀՈՔ

Հին Կտակարանում՝ արդարակյաց մարդ, որը բավական շատ չարչարանքներ կրեց, սակայն հավատարիմ մնաց իր հավատքին առ Աստված: Նրա պատմությունը գրված է Հոբի գրքում:

Հոբի գիրքը. Չմայած, որ գիրքը Հոբի տառապանքների մասին է, այն ամբողջովին չի պատասխանում այն հարցին, թե ինչու Հոբը (կամ որևէ այլ անձնավորություն) պետք է ցավ կրեր կամ կորցներ իր ընտանիքը և ունեցվածքը: Գիրքը պարզաբանում է, որ չարչարանքներ ունենալն անպայման չի նշանակում, որ անձը մեղք է գործել: Տերը կարող է չարչարանքն օգտագործել ինչպես փորձառության, կարգապահության և ուսուցման համար, այնպես էլ պատժի համար (ՎՆՈՒ 122):

Գիրքը կարելի է բաժանել չորս մասի: Ա–Բ գլուխները պատմության նախաբանն են: Գ–ԼԱ գլուխները պատմում են Հոբի և նրա երեք ընկերների միջև տեղի ունեցած մի շարք բանավեճերի մասին: ԼԲ–ԼԷ գլուխները պարունակում են

Եղիուսի՝ չորրորդ ընկերոջ խոսքերը, որը Հոբին դատապարտում է այլ պատճառներով, քան առաջին ընկերները: ԼԸ–ԽԲ գլուխներն ամփոփում են գիրքը, Հոբին հավաստիացնելով, որ նրա կյանքի ընթացքն ի սկզբանե լավ է եղել:

Հոբի գիրքն ուսուցանում է, որ եթե մարդ միշտ գիտելիք ունի Աստծո մասին և ապրում է մի կյանքով, որն ընդունելի է Աստծո համար, նա ավելի լավ կկարողանա համբերել իր վրա եկող փորձություններին: Հոբի անսասան հավատքը բնորոշվում է նման արտահայտություններով, ինչպիսին է. «Թե որ ինձ սպանեն, էլի նրան եմ ապավինելու» (Հոբ ԺԳ.15): Հոբի մասին նշվում է նաև Եզեկիել ԺԳ.14-ում, Հակոբոս Ե.11-ում, Վարդապետություն և Ուխտեր 121.10-ում:

ՀՈԳԵՂԵՆ ՍՏԵՂԾՈՒՄ: *Տե՛ս նաև* Մարդ, Մարդիկ. Ստեղծել, Ստեղծում

Նախքան ամեն բանի ֆիզիկական ստեղծումը, Տերը դրանք ստեղծել է հոգեղեն (Մովսես 3.5):

Տերը բոլոր բույսերն արարել էր նախքան դրանց երկրի վրա լինելը՝ **ԾՃ**. Բ.4–6 (Աքք. 5.5): Իմ Հոգու զորությամբ եմ ես ստեղծել բոլոր բաները, նախ՝ հոգևորը, հետո՝ ֆիզիկականը՝ **ՎՆՈՒ** 29.31–32: Այն, ինչ ֆիզիկական է՝ հոգեղենի նմանությամբ է՝ **ՎՆՈՒ** 77.2: Ես արարեցի աշխարհը և մարդկանց, նախքան նրանք մարմնուն էին՝ **Մովսես** 6.51:

ՀՈԳԵՎՈՐ ՊԱՐԳԵՎՆԵՐ: *Տե՛ս* Հոգու պարզևները

ՀՈԳԵՎՈՐ ԽՍՎԱՐ: *Տե՛ս նաև* Ամբարիշտ, Ամբարշտություն

Ամբարշտություն կամ հոգևոր բաների արհամարհում:

Վայ նրանց, որ չարին ասում են բարի՝ **Ես**. Ե.20 (2 Նեփի 15.20): Խավարը ծածկելու է երկիրը, և մառախուղը խզերիին՝ **Ես**. Կ.2: Հիսուսը լույս կտա խավարում նստածներին՝ **Ղուկ**. Ա.79: Լույսը խավարում լույս է տալիս, և խավարը չի ըմբռնում այն՝ **Հովհ**. Ա.5 (ՎՆՈՒ 45.7): Դեռ գցենք խավարի գործերը և հագնենք լույսի զենքերը՝ **Հովվ**. ԺԳ.12: Մասնակից մի եղեք խավարի անպտուղ գործերին՝ **Եփես**.

Ե.8–11: Քանի որ դուք չեք խնդրում, դուք չեք բերվում դեպի լույսը, այլ պիտի կորչեք խավարում՝ **2 Նեփի 32.4**: Մատանան տարածում է խավարի գործերը՝ **Հել. 6.28–31**: Խավարի ուժերը գերիշխում են երկրի վրա՝ **ՎևոՒ 38.8, 11–12**: Ողջ աշխարհը հառաչում է խավարի և մեղքի տակ՝ **ՎևոՒ 84.49–54**: Եթե ձեր աչքն ուղղված լինի միայն իմ փառքին, ձեր մեջ չի լինի խավար՝ **ՎևոՒ 88.67**: Խավարի գործերն սկսեցին գերակշռել մարդկանց որդիների մեջ՝ **Մովսես 5.55**:

ՀՈԳԵՎՈՐ ՄԱՀ: *Տես՝ Մահ հոգևոր*

ՀՈԳԻ: *Տես՝ նաև Մարմին. Ոգի*

Սուրբ գրքերում հոգիների մասին խոսվում է երեք իմաստով. (1) ոգեղեն էակներ՝ թե՛ նախամահկանացու, թե՛ ետմահկանացու (Ալմա 40.11–14, Աբր. 3.23). (2) ոգու և մարմնի մահկանացու միացություն (Աբր. 5.7). և (3) անմահ, հարություն առած էակ, որի ոգին ու մարմինն անբաժանելիորեն միացած են (Ալմա 40.23, ՎևոՒ 88.15–16):

Արյունը քափություն է անում հոգու համար՝ **Ղև. ԺԷ.11**: Իմ հոգուն հանգիստ է տալիս՝ **Մաղ. ԻԳ.3**: Սիրիքը քո Տեր Աստծուն քո ողջ հոգով՝ **Մատ. ԻԲ.37** (Մար. ԺԲ.30): Դեք խաբում է նրանց հոգիները՝ **2 Նեփի 28.21**: Մատուցե՛ք նրան ձեր ողջ հոգիները՝ որպես ընծա՝ **Օմնի 1.26**: Խոսքը սկսում է մեծացնել իմ հոգին՝ **Ալմա 32.28**: Նրա հոգին երբեք չպիտի քաղցի, ոչ էլ ծարավի՝ **3 Նեփի 20.8**: Հաղորդության հացը և ջուրը սրբագործված են նրանց հոգիների համար, ովքեր ճաշակում են դրանցից՝ **Մոր. 4–5** (ՎևոՒ 20.77–79): Թագավորության մեջ աշխատողներն իրենց ծառայությանը փրկություն են բերում իրենց հոգիներին՝ **ՎևոՒ 4.2, 4**: Հոգիների արժեքը մեծ է՝ **ՎևոՒ 18.10**: Դուք աշխարհ եք եկել ջրով, արյունով և ոգով, և այդպես կենդանի հոգի դարձել՝ **Մովսես 6.59**:

Հոգիների արժեքը. Բոլոր մարդիկ Աստծո հոգևոր զավակներն են: Նա հոգ է տանում իր յուրաքանչյուր զավակի համար և յուրաքանչյուրին կարևոր է համարում: Քանի որ նրանք իր երեխաներն են, նրանք իր նման դաճալու ներուժ ունեն: Ուստի նրանք մեծ արժեք ունեն:

Ուրախություն է, երբ մի մեղավոր ապաշ-

խարում է՝ **Ղուկ. ԺԵ.10**: Աստված այնպես սիրեց աշխարհը, որ տվեց իր Միածին Որդուն՝ **Հովհ. Գ.16**: Նրանք չէին կարող տանել, որ որևէ մարդկային հոգի պետք է ոչնչանա՝ **Մոսիա 28.3**: Մի՞թե մի հոգին այնքան արժեքավոր չէ Աստծո համար՝ այս ժամանակ, ինչքան կլինի մի հոգին նրա գալստյան ժամանակ՝ **Ալմա 39.17**: Այն, ինչն ամենարժեքավորը կլինի քեզ համար, հոգիներ բերելն է ինձ մոտ՝ **ՎևոՒ 15.6**: Հիշե՛ք, հոգիների արժեքը մեծ է Աստծո աչքում՝ **ՎևոՒ 18.10–15**: Սա է իմ գործը և իմ փառքը՝ իրականացնել մարդու անմահությունն ու հավերժական կյանքը՝ **Մովսես 1.39**:

ՀՈԳԻ ՍՈՒՐԲ: *Տես՝ Սուրբ Հոգի*

ՀՈԳԻՆԵՐԻ ԱՇԽԱՐՀ: *Տես՝*

Դժոխք. Դրախտ.

Նախամահկանացու կյանք

ՀՈԳԻՆԵՐԻ ԲԱՆՏ: *Տես՝ Դժոխք*

ՀՈԳՈՒ ՊԱՐԳԵՎՆԵՐԸ: *Տես՝ նաև*

Պարզ

Հատուկ հոգևոր օրհնություններ, որոնք Տերը տալիս է արժանի անհատներին, որ օգտագործեն իրենց օգտի և ուրիշների օրհնության համար: Հոգու պարզների նկարագրության համար, ուսումնասիրեք Վարդապետություն և Ուխտեր 46.11–33, Ա Կորնթացի ԺԲ.1–12, Մորոնի 10.8–18 գրվածքները:

Նախանձավոր եղեք լավագույն պարզներին՝ **Ա Կոր. ԺԲ.31** (Ա Կոր. ԺԴ.1): Նեփիացիներին Հոգու շատ պարզներ էին շնորհվել՝ **Ալմա 9.21**: Վա՛յ նրան, ով կասի, թե Տերն այլևս չի գործում պարզներով կամ Սուրբ Հոգու գորույսամբ՝ **3 Նեփի 29.6**: Աստված պարզներ է տալիս հավատարիմ մարդկանց՝ **Մորմ. 9.7**: Պարզները գալիս են Քրիստոսի Հոգուց՝ **Մոր. 10.17**: Քանզի կան շատ պարզներ, և ամեն մարդու մի պարզ է տրված Աստծո Հոգուց՝ **ՎևոՒ 46.11**: Եկե՛ղեցու դեկավարներին Հոգու պարզները տարբերելու գործություն է տրված՝ **ՎևոՒ 46.27**: Եկե՛ղեցու Նախագահն ունի Աստծո բոլոր պարզները՝ **ՎևոՒ 107.92**:

ՀՈԹՈՐ: *Տես՝ նաև Մովսես*

Հին Կտակարանի Մաղիանացիների

իշխան և քահանա, որը Մովսեսին Եգիպտոսից փախչելուց հետո ապաստան տվեց: Նրան նաև կոչում էին Ռազուել (Ել. Բ.18): Ավելի ուշ Մովսեսն ամուսնացավ Հոթորի դուստր Մեպփորայի հետ (Ել. Գ.1, Գ.18, ԺԼ.1-12): Հոթորը Մովսեսին ուսուցանեց բաշխել լիազորությունները (Ել. ԺԼ.13-27): Մովսեսը Մեքիսեղեկյան Քահանայությունն ստացավ Հոթորից (ՎևՈՒ 84.6-7):

ՀՈՐԳԱՆԱՆ ԳԵՏ

Հորդանան գետը հոսում է Գալիլեայի ծովից դեպի Մեռյալ ծովը: Գետի երկարությունը 160 կմ է, և այն սկիզբ է առնում Հերմոն սարից հոսող բազմաթիվ աղբյուրներից: Այն Իսրայելի ամենակարևոր գետն է:

Այս գետի հետ կապված երկու կարևոր իրադարձություններն են՝ գետի բաժանումը Տիրոջ կողմից՝ Իսրայելի անցման համար (Հեա. Գ.14-17) և Հիսուս Քրիստոսի մկրտությունը (Մատ. Գ.13-17, 1 Նեփի 10.9):

ՀՈՎԵԼ

Հին Կտակարանի մարգարե Հուդայի երկրում: Նրա կյանքի տարեթվերն անհայտ են. նա կարող է ապրած լինել Ք.ծ.ա. 850 թվականից առաջ՝ չովասի թագավորության և Հուդայի ցեղի Բաբելոնյան գերությունից վերադառնալու միջև ընկած ժամանակահատվածում:

Հովելի գիրքը. Գիրքը կենտրոնանում է այն մարգարեության վրա, որն արել էր Հովելը նրանից հետո, երբ Հուդայի հողին հարվածել էին դաժան երաշուն ու մորեխները (Հովել Ա.4-20): Հովելը ժողովրդին հավաստիացրեց, որ ապաշխարության միջոցով նրանք կրկին կստանան Աստծո օրհնությունները (Հովել Բ.12-14):

Ա գլուխը Տիրոջ տանը հանդիսավոր ժողով հավաքելու կոչ է: Բ գլխում ավանդ է պատերազմների և ամայացումների մասին, որոնք կնախորդեն Հազարամյակին: Գ գլուխը խոսում է վերջին օրերի մասին և հաստատում է, որ բոլոր ազգերը պատերազմի մեջ կլինեն, բայց, ի վերջո, Տերը կբնակվի Սիոնում:

Պնտեկոստի օրը Պետրոսը մեջ բերեց Հովելի մարգարեությունը Հոգու

թափվելու մասին (Հովել Բ.28-32, Գոր. Բ.16-21): Մորոնի հրեշտակը նույնպես մեջ բերեց այդ նույն հատվածը Ջոզեֆ Սմիթին (ՋՍ-Պ 1.41):

ՀՈՎԻՎ: *Տե՛ս նաև* Բարի Հովիվ. Հիսուս Քրիստոս

Խորհրդանշաբար՝ մարդ, որը հոգում է Տիրոջ զավակների մասին:

Տերն իմ հովիվն է՝ **Մադ.** ԻԳ.1: Հովիվները պետք է արածեցնեն հոտը՝ **Եզեկ.** ԼԳ.2-3:

ՀՈՎՀԱՆՆԵՄ՝ ՁԵԲԵԳԵՈՍԻ ՈՐԳԻ: *Տե՛ս նաև* Առաքյալ.

Ավետարաններ. Հովհաննեսի Հայտնությունը. Մեքիսեղեկյան Քահանայություն. Փոխակերպված Էակներ

Տասներկու Առաքյալներից մեկը Նոր Կտակարանում, Ջեբեղեսոսի որդին և Հակոբոսի եղբայրը: Իր կյանքի սկզբնական շրջանում նա ձկնորս էր (Մար. Ա.17-20): Հավանաբար, նա Հովհաննես Սկրտչի այն անանուն առաքյալն է, որի մասին նշված է Հովհաննես Ա.40-ում: Ավելի ուշ նա կանչվեց որպես Հիսուս Քրիստոսի աշակերտ (Մատ. Գ.21-22, Դուկ. Ե.1-11): Նա է գրել Հովհաննեսի Ավետարանը, երեք թղթերը և Հայտնության գիրքը: Նա այն երեքից մեկն էր, որոնք Տիրոջ հետ էին Հայրոսի աղջկան կենդանացնելիս (Մար. Ե.35-42), Կերպարանափոխման սարում (Մատ. ԺԷ.1-9) և Գեթսեմանիում (Մատ. ԻՁ.36-46): Իր գրություններում նա իրեն դիմում է, որպես աշակերտ, որին Հիսուսը սիրում էր (Հովի. ԺԳ.23, ԻԱ.20) և որպես «մյուս աշակերտ» (Հովի. Ի.2-8): Հիսուսը նրան և նրա եղբորը կոչում էր նաև Բաներեզես՝ «որոտմունքի որդիք» (Մար. Գ.17): Խաչելության և հարության պատմությունների մեջ նա հաճախ է ակնարկվում (Դուկ. ԻԲ.8, Հովի. ԺԼ.15, ԺԺ.26-27, 20.2-8, ԻԱ.1-2): Ավելի ուշ Հովհաննեսն աքաղվեց Պատմոս, որտեղ նա գրեց Հայտնության գիրքը (Հայտ. Ա.9):

Վերջին օրերի հայտնություններում Հովհաննեսի անունը հաճախ է հիշատակվում (1 Նեփի 14.18-27, 3 Նեփի 28.6, Եթեր 4.16, ՎևՈՒ 7, 27.12, 61.14, 77,

88.141): Այդ հատվածները հաստատում են Հովհաննեսի աստվածաշնչային արձանագրությունները, և նաև օգնում են ըմբռնել նրա մեծությունը և այն աշխատանքի կարևորությունը, որը Տերը տվել էր, որ նա կատարի երկրի վրա Նոր Կտակարանի ժամանակներում և վերջին օրերին: Վերջին օրերի սուրբ գրքերը պարզաբանում են, որ Հովհաննեսը չմահացավ, այլ նրան թույլ տրվեց մնալ երկրի վրա՝ որպես սպասավոր ծառա, մինչև Տիրոջ երկրորդ գալուստը (Հովհ. ԻԱ.20–23, 3 Նեփի 28.6–7, ՎևՈՒ 7):

Հովհաննեսի բոթերը. Չնայած որ այս երեք բոթերի հեղինակն իրեն չի նշում անունով, գրվածքի լեզուն այնքան է նման Հովհաննես Առաքյալի լեզվին, որ բոլոր երեքն էլ ենթադրվում է, որ նա է գրել:

Ա Հովհաննես Ա գլուխը Սրբերին հորդորում է հաղորդակցվել Աստծո հետ: Բ գլուխը շեշտում է, որ Սրբերն Աստծուն ճանաչում են հնազանդությամբ, և նրանց հորդորում է չսիրել աշխարհը: Գ գլուխը բոլորին կոչ է անում դառնալ Աստծո գավակները և սիրել միմյանց: Դ գլուխը բացատրում է, որ Աստված սեր է և բնակվում է նրանց մեջ, ովքեր սիրում են նրան: Ե գլուխը բացատրում է, որ Սրբերը ծնվում են Աստծուց՝ Քրիստոսի հավատքի միջոցով:

Բ Հովհաննեսը նման է Ա Հովհաննեսին: Նրանում Հովհաննեսը ցնծում է «ընտրյալ տիկնոջ» երեխաների հավատարմության համար:

Գ Հովհաննեսը Գայիոս անունով մի անձնավորության գովաբանում է նրա հավատարմության համար և այն մարդկանց օգնելու համար, ովքեր սիրում են ճշմարտությունը:

Հովհաննեսի ավետարանը. Նոր Կտակարանի այս գրքում Հովհաննես Առաքյալը վկայել է, որ (1) Հիսուսը Քրիստոսն է, կամ Մեսիան, և որ (2) Հիսուսն Աստծո Որդին է (Հովհ. Ի.31): Հիսուսի կյանքից ընտրված դրվագները, որոնք մեզ նկարագրում է, զգուշորեն ընտրված և դասավորված են՝ աչքի առաջ ունենալով այդ նպատակը: Գիրքը սկսվում է Քրիստոսի նախամահկանացու գոյության և դիրքի մասին հայտնելով. նա Աստծո մոտ էր, նա Աստված էր, և նա բոլոր բաների

ստեղծողն էր: Նա ծնվեց մարմնում՝ որպես Հոր Միածին Որդի: Հովհաննեսը Հիսուսի ծառայության ընթացքը նկարագրում է՝ մեծապես շեշտելով նրա աստվածայնությունը և նրա հարությունը մեռելներից: Նա հստակ ձևով պնդում է, որ Հիսուսն Աստծո Որդին է, ինչը հաստատվում է հրաշքներով, վկաներով, մարգարեներով և Քրիստոսի սեփական ձայնով: Հովհաննեսն ուսուցանում է, հակադրելով լույսը և խավարը, ճիշտը և սխալը, բարին և չարը, Աստծուն և դևին: Հավանաբար, ուրիշ ոչ մի այլ հիշատակարանում այդքան պարզորոշ չի հռչակվում Հիսուսի սրբությունը և հրեա դեկավարների անհավատությունը:

Հովհաննեսը հիմնականում նկարագրել է Քրիստոսի ծառայությունը Հուդայում, հատկապես նրա մահկանացու ծառայության վերջին շաբաթը, մինչդեռ Մատթեոսը, Մարկոսը և Դուկասը հիմնականում նկարագրել են նրա ծառայությունը Գալիլեայում: Այս ավետարանի միջից շատ հարցեր պարզաբանվել են վերջին օրերի հայտնություններով (ՎևՈՒ 7 և ՎևՈՒ 88.138–141):

Գլուխների ընդհանուր տեսության համար, տե՛ս «Ավետարաններ» թեման:

Հայտնության գիրքը. Տե՛ս Հովհաննեսի Հայտնություն

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏԻՉ: Տե՛ս նաև
Ահարոնյան Քահանայություն.
Եղիաս

Չաքարիայի և Եղիաբեթի որդին Նոր Կտակարանում: Հովհաննեսն ուղարկվել էր մարդկանց նախապատրաստելու համար, որպեսզի ընդունեն Մեսիային (Հովհ. Ա.19–27): Նա կրում էր Ահարոնյան Քահանայության բանալիները և մկրտեց Հիսուս Քրիստոսին:

Եսայիան և ուրիշները մարգարեացել են Հովհաննեսի առաքելության մասին՝ **Տս.** Խ.3 (Մար. Գ.1, 1 Նեփի 10.7–10, 2 Նեփի 31.4): Գ-ցվեց բանտ և գլխատվեց **Մատ.** ԺԳ.3–12 (Մար. Զ.17–29): Գաբրիելը հայտարարեց Հովհաննեսի ծննդի և ծառայության մասին Չաքարիային՝ **Ղուկ.** Ա.5–25: Հիսուսն ուսուցանեց, որ Հովհաննեսը մեծ մարգարե էր՝ **Ղուկ.** Է.24–28: Դանաչեց Հիսուսին՝ որպես Աստծո Որդի՝

Հովհ. Ա.29–34: Հովհաննեսի աշակերտները դարձան Հիսուսի աշակերտները՝

Հովհ. Ա.25–29, 35–42 (Գոր. Ա.21–22): Հրաշքներ չգործեց՝ **Հովհ.** Ժ.41: Որպես հարություն առած էակ՝ ուղարկվեց Ահարոնյան Քահանայության կարգելու Ջոզեֆ Սմիթիին և Օլիվեր Քաուդերիին՝ **ՎՆՈՒ** 13 (ՎՆՈՒ 277–8, ՋՍ–Պ 1.68–72): Կարգվել էր հրեշտակի կողմից, երբ ութ օրական էր՝ **ՎՆՈՒ** 84.28:

ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ:

Տե՛ս նաև Ապոկալիպսիս.

Հովհաննես՝ Չեբեդեոսի Որդի

Վերջին գիրքը Նոր Կտակարանում, որը պարունակում է Հովհաննես Առաքյալին տրված հայտնությունը: Նրան թույլ տրվեց տեսնել աշխարհի պատմությունը, հատկապես վերջին օրերը (Հայտ. Ա.1–2, 1 Նեփի 14.18–27, ՎՆՈՒ 77): Հովհաննեսի Հայտնությունը հայտնի է նաև որպես Ապոկալիպսիս.

Հովհաննեսն այս հայտնությունը ստացավ Տիրոջ օրը՝ Պատմոս կղզում (Հայտ. Ա.9–10), Ասիական ծովափի մոտ, Տփեսոսից ոչ հեռու: Հայտնության ճշգրիտ տարեթիվը հայտնի չէ:

Գիրքը հասկանալու որոշ բանալիներ կան 1 Նեփի 14.18–27-ում և ՎՆՈՒ 77-ում (Եթեր 4.15–16):

Ա–Գ գլուխները նախաբան են գրքի և Ասիայի յոթ եկեղեցիներին ուղղված նամակների համար: Հովհաննեսը նամակները գրել է՝ Սրբերին օգնելու համար, որ լուծեն որոշակի հիմնախնդիրներ: Գ–Ե գլուխներն արձանագրում են այն տեսիլքները, որոնք ստացավ Հովհաննեսը, որոնք ցույց են տալիս Աստծո և Քրիստոսի վեհությունն ու արդար իշխանությունը: Զ–Թ, ԺԱ գլուխներում Հովհաննեսն արձանագրել է կնքված գրքի տեսիլքը, որն ուներ յոթ կնիք, յուրաքանչյուր կնիքը ներկայացնելով երկրի աշխարհային պատմության յուրաքանչյուր հազար տարին: Այդ գլուխներն առաջին հերթին վերաբերում են յոթերորդ կնիքի իրադարձություններին (տե՛ս Հայտ. Ը–Թ, ԺԱ.1–15): Ժ գլուխը նկարագրում է այն գիրքը, որը կերավ Հովհաննեսը: Գիրքը ներկայացնում է ապագայի այն առաքելությունը, որը մենք կկատարենք: ԺԲ գլուխն արձանագրում է տեսիլքն այն չարիքի,

որը սկսվեց երկնքում, երբ Սատանան ապստամբեց և դուրս գգվեց: Պատերազմը, որը սկսվեց այնտեղ, շարունակվում է երկրի վրա: ԺԳ, ԺԷ–ԺԹ գլուխներում Հովհաննեսը նկարագրել է աշխարհի այն ամբարիշտ թագավորությունները, որոնք կառավարվում են Սատանայի կողմից, և արձանագրել է նրանց ճակատագիրը, ինչպես նաև չարի վերջնական կործանումը: ԺԴ–ԺԶ գլուխները նկարագրում են Սրբերի արդարությունը չարերի մեջ, Քրիստոսի երկրորդ գալստից անմիջապես առաջ: Ի–ԻԲ գլուխները նկարագրում են Հազարամյակը, հրաշագեղ Նոր Երուսաղեմ քաղաքը և երկրի պատմության վերջին իրադարձությունները:

ՀՈՎՆԱԹԱՆ: *Տե՛ս նաև Դավիթ.*

Սավուղ՝ Իսրայելի թագավոր

Հին Կտակարանում՝ Սավուղի՝ Իսրայելի թագավորի որդին: Հովնաթանը Դավթի մոտ ընկերն է եղել (Ա Թագ. ԺԳ–ԻԳ, ԼԱ):

ՀՈՎՆԱՆ: *Տե՛ս նաև Նինվե*

Հին Կտակարանի մարգարե, որը Տիրոջ կողմից կանչվեց ապաշխարություն քարոզելու Նինվե քաղաքին (Հովն. Ա.1–2):

Հովնանի գիրքը. Գիրք Հին Կտակարանում, որը պատմում է Հովնանի կյանքի փարձառության մասին: Հավանաբար, Հովնանն ինքը չի գրել գիրքը: Հովնանի գրքի հիմնական գաղափարն այն է, որ Եհովան թագավորում է ամենուրեք և իր սերը չի սահմանափակում մեկ ազգով կամ ժողովրդով:

Ա գլխում Տերը կանչեց Հովնանին, որ քարոզի Նինվեում: Տիրոջ պատվիրանը կատարելու փոխարեն, Հովնանը նավակով փախավ, և մի մեծ ձուկ կուլ տվեց նրան: Բ գլխում Հովնանն աղոթեց Տիրոջը, և ձուկը փսխեց նրան չոր հողի վրա: Գ գլուխն արձանագրում է, որ Հովնանը գնաց Նինվե և մարգարեացավ նրա անվան մասին: Ինչևէ, ժողովուրդն ապաշխարեց: Դ գլխում Տերը Հովնանին հանդիմանեց, որ նա բարկացել էր, որ Տերը փրկեց ժողովրդին:

Հիսուսն ուսուցանել է, որ Հովնանի կուլ գնալը ձկանը նախանշան էր հենց իր՝ Հիսուսի մահվան և հարության համար: (Մատ. ԺԲ.39–40, ԺԶ.4, Գուկ. ԺԱ.29–30):

ՀՈՎՍՍՓՈՍ

Հին Կտակարանում՝ Հուդայի հավատա-
րին քազավոր (Գ. Թագ. ԺԵ.24, 22):

ՀՈՎՍԵՓ ԱՐԻՄԱԹԻԱՑԻ

Արիմաթիացի Հովսեփը Ճերակույտի
անդամ էր, Քրիստոսի աշակերտ, և հա-
րուստ ու հավատարիմ Իսրայելացի, որը
չմասնակցեց մեր Տիրոջ դատապարտու-
թյանը: Խաչելությունից հետո Հովսեփը
հոգ տարավ, որ Փրկչի մարմինը պա-
տանվի մաքուր կտավով և դրեց նրան իր
սեփական վիմակոր գերեզմանում (Մատ.
ԻԷ.57-60, Մար. ԺԵ.43-46, Դուկ. ԻԳ.50-
53, Հովհ. ԺԹ.38-42):

ՀՈՎՍԵՓ՝ ՀԱՎՈՐՔԻ ՈՐՂԻԻ: *Տես u
նակ* Իսրայել. Հակոբ՝ Իսահակի
որդի

Հին Կտակարանում՝ Հակոբի և Ռաբելի
անդրանիկ որդին (ՃՆ. Լ.22-24, ԼԷ.3):

Հովսեփը ձեռք բերեց Իսրայելի անդրա-
նիկությունը, որովհետև Ռուբենը՝ Հակոբի
առաջին կնոջ անդրանիկ որդին, օրինա-
զանցության պատճառով կորցրեց այդ
արտոնությունը (Ա Մն. Ե.1-2): Իր ար-
ժանավորության շնորհիվ, Հովսեփը՝ որ-
պես Հակոբի երկրորդ կնոջ անդրանիկ
որդի, ըստ հեթթականության հաջորդն
էր օրինության համար: Հովսեփը նաև
օրինություն ստացավ իր հոր կողմից՝
Հակոբի մահանալուց ոչ շատ առաջ (ՃՆ.
ԽԹ.22-26):

Հովսեփը լավ բնավորության տեր մարդ
էր՝ «հանճարեղ և իմաստուն» անհատ
(ՃՆ. ԽԱ.39): Պետափրեսի կնոջը մերժե-
լով՝ նա հավատքի, մաքրաբարոյություն
և անճնական շիտակության օրինակ
դարձավ (ՃՆ. ԼԹ.7-12): Եգիպտոսում,
երբ Հովսեփն իր ուլ լինելը հայտնեց իր
եղբայրներին, նա նրանց ոչ թե մեղադ-
րեց, այլ շնորհակալություն հայտնեց իր
հանդեպ նրանց վերաբերմունքի համար:
Նա հավատացած էր, որ նրանց գործո-
ղություններն օգնել էին, որ կատարվեր
Աստծո կամքը (ՃՆ. ԽԵ.4-15):

Վերջին օրերի հայտնությունները
ըստնում են վերջին օրերին Հովսեփի
ընտանիքի ավելի մեծ առաքելության
մասին (2 Նեփի 3:3-24, 3 Նեփի 20.25-
27, ՉՍԹ՝ ՃՆ. 50):

Հակոբը շատ էր սիրում Հովսեփին և նրա
համար քեքերով մի պատմունան էր
շինել՝ **ՃՆ. ԼԷ.3:** Նախանձից դրոպած՝ Հով-
սեփի եղբայրներն սկսեցին ատել նրան և
դավադրեցին սպանել նրան, սակայն, դրա
փոխարեն, նրան վաճառեցին առևտրա-
կաններին, որոնք գնում էին Եգիպտոս՝
ՃՆ. ԼԷ.5-36: Եգիպտոսում Տերը հաջողու-
թյուն տվեց նրան, և նա վերակացու դար-
ձավ Պետափրեսի տան վրա՝ **ՃՆ. ԼԹ.1-4:**
Պետափրեսի կինը ստեց, ասելով, որ Հով-
սեփը փորձել է գայթակղել իրեն. Հովսեփն
անարդարացի ձևով դատապարտվեց և
բանտ գրվեց՝ **ՃՆ. ԼԹ.7-20:** Հովսեփը
մեկնաբանեց Փարավոնի գլխավոր մատրո-
վակի և հացագործի երազները՝ **ՃՆ. Խ:**
Փարավոնն սկսեց շնորհ անել Հովսեփին,
որովհետև Հովսեփը մեկնաբանել էր Փա-
րավոնի երազներից մեկը. նա Հովսեփին
կառավարիչ նշանակեց Եգիպտոսի վրա՝
ՃՆ. ԽԱ.14-45: Ծնվեցին Եփրեմը և Մա-
նասեն՝ **ՃՆ. ԽԱ.50-52:** Հովսեփը կրկին
միացավ իր հորը և եղբայրներին՝ **ՃՆ.**
ԽԵ-ԽԶ: Հովսեփը մահացավ Եգիպտո-
սում՝ 110 տարեկանում՝ **ՃՆ. Ծ.22-26:**

ՀՈՎՍԵՓ՝ ՄԱՐԻԱՄԻ ԱՄՈՒՄԻՆ:

Տես u նակ Հիսուս Քրիստոս. Մարիամ՝
Հիսուսի մայրը

Հիսուսի մայր Մարիամի անունները:
Հովսեփը Գավթի հետնորդն էր (Մատ.
Ա.1-16, Դուկ. Գ.23-38) և ապրում էր
Նազարեթում: Նա նշանված էր Մարիամի
հետ: Իրենց ամուսնությունից անմիջապես
առաջ, Մարիամին այցելեց Գաբրիել հրեշ-
տակը, որը հայտարարեց, որ Մարիամն
ընտրվել է, որ լինի Փրկչի մայրը (Դուկ.
Ա.26-35): Հովսեփը նույնպես հայտնու-
թյուն ստացավ այդ աստվածային ծննդի
վերաբերյալ (Մատ. Ա.20-25):

Մարիամը Հիսուսի միակ երկրային
ծնողն էր, որովհետև Հայր Աստված էր
Հիսուսի հայրը: Բայց հրեաները կարծում
էին, որ Հովսեփն է Հիսուսի հայրը, և Հիսու-
սը նրան վերաբերվում էր որպես այդպի-
սին (Դուկ. Բ.48, 51): Երկնային երազների
զգուշացմամբ, Հովսեփը պահպանեց մա-
նուկ Հիսուսի կյանքը՝ փախչելով Եգիպ-
տոս (Մատ. Բ.13-14): Հերովդեսի մահից
հետո, հրեշտակը Հովսեփին հրահանգեց
Քրիստոս մանուկին ետ տանել Իսրայել
(Մատ. Բ.19-23):

ՀՈՎՍԵՓԻ ՓԱՅՏՔ: *Տե՛ս* Եփրեմ – Եփրեմի կամ Հովսեփի փայտը. Մորմոնի Գիրքը

ՀՈՎՍԻԱ

Հուդայի արդար թագավոր՝ Ք.ծ.ա. 641–610 թթ.: (Դ Թագ. ԻԲ–ԻԴ, Բ Մն. ԼԴ–ԼԵ): Նրա թագավորության ժամանակ օրենքի մի գիրք գտնվեց Տիրոջ տան մեջ (Դ Թագ. ԻԲ.8–13):

ՀՊԱՐՏՈՒԹՅՈՒՆ: *Տե՛ս նաև*

Աշխարհիկություն. Խոնարհեցնել, Խոնարհություն. Հարստություններ. Ունայն, Ունայնություն. Փող

Խոնարհության և ուսուցանվելու հատկանիշի պակաս կամ բացակայություն: Հպարտությունն ընդդիմություն է ստեղծում առանձին մարդկանց միջև և Աստծո միջև: Հպարտ մարդն իրեն վեր է դասում շրջապատի մարդկանցից և ավելի շատ հետևում է սեփական կամքին, քան Աստծո կամքին: Ինքնահավանությունը, նախանձը, կարծրաստությունը և գոռոզությունը նույնպես բնորոշ են հպարտ մարդուն:

Ձգուշացիր, որ միգուցե Տիրոջը մոռանաս և սիրտդ բարձրամտանա՝ **Բ Օր.** Ը.11–14: Հպարտությունն ու ամբարտավանությունը ես ատում եմ՝ **Առակ.** Ը.13 (Առակ. Չ.16–17): Կործանումից առաջ գնում է հպարտությունը՝ **Առակ.** Ժ.2.18: Տիրոջ օրը կգա հպարտների վրա՝ **Մա.** Բ.11–12 (2 Նեփի 12.11–12): Քո սրտի հպարտությունը քեզ խաբել է՝ **Արդիա** Ա.3: Բոլոր գոռոզները հարդի պես են լինելու՝ **Մադ.** Դ.1 (1 Նեփի 22.15, 3 Նեփի 25.1, ՎևոՒ 29.9): Ով որ իր անըն բարձրացնի, կխոնարհվի՝ **Մատ.** ԻԳ.12 (ՎևոՒ 101.42): Աստված հպարտներին հակառակ է կենում՝ **Ա Պետ.** Ե.5: Այն մեծ և ընդարձակ շենքն աշխարհի հպարտությունն էր՝ **1 Նեփի** 11.36 (1 Նեփի 12.18): Երբ նրանք ուսյալ են, նրանք կարծում են, մի նմատուն են՝ **2 Նեփի** 9.28–29: Դուք բարձրամտացել եք ձեր սրտերի հպարտությունից՝ **Հակոբ** 2.13, 16 (Ալմա 4.8–12): Արդյոք դուք զե՞րծ եք հպարտությունից՝ **Ալմա** 5.28: Չափազանց մեծ հպարտություն էր մտել մարդկանց սրտերը՝ **Հել.** 3.33–36: Ինչ արագ են մարդկանց զավակները բարձրամտանում

հպարտությունից՝ **Հել.** 12.4–5: Այս ազգի հպարտությունը նրանց հասցրել է կործանման՝ **Մոր.** 8.27: Ձգուշացեք հպարտությունից, շլինի թե դուք դառնաք ինչպես Նեփիացիները՝ **ՎևոՒ** 38.39: Վերջ տվեք ձեր բոլոր հպարտությանը և թեթևամտությանը՝ **ՎևոՒ** 88.121:

ՀՈՈՎՄԱՅԵՑԻՄ ԹՈՒԴԹ ԱՈ:

Տե՛ս նաև Պողոս. Պողոսի Թղթերը

Նոր Կտակարանում՝ նամակ, որը Պողոսը գրել էր Հռոմի Սրբերին: Նա մտադրվել էր այցելել Երուսաղեմ, չնայած հավատացած էր, որ դա վտանգավոր է: Եթե նա փրկեր իր կյանքը, հույս ուներ հետագայում այցելել Հռոմ: Մասնակիորեն, նամակի նպատակն այնտեղի Եկեղեցուն մախապատրաստելն էր՝ իրեն ընդունելու, երբ նա գնար այնտեղ: Այն կարելի է նաև դիտել որպես պաշտոնական հաղորդագրություն որոշակի վարդապետությունների վերաբերյալ, որոնց շուրջ վեճեր էին ծագել, և որոնք Պողոսն այժմ համարում էր որպես վերջնականապես հիմնավորված:

Ա գլխում Պողոսի ողջույններն են Հռոմեացիներին: Բ–ԺԱ գլուխներն ընդգրկում են մի քանի բացատրություններ հավատքի, գործերի և շնորհի վարդապետության վերաբերյալ: ԺԲ–ԺԶ գլուխները պարունակում են գործնական ուսմունքներ սիրո, պարտականությունների և սրբության վերաբերյալ:

ՀՈՈՄ: *Տե՛ս նաև* Հռոմեական Կայսրություն

Նոր Կտակարանում՝ Հռոմեական Կայսրության մայրաքաղաքը, որը գտնվում է Իտալիայում՝ Տիբեր գետի վրա (Գոր. ԺԸ.2, ԺԹ.21, ԻԳ.11): Պողոսն ուսուցանեց ավետարանը Հռոմում, երբ Հռոմեական կառավարության բանադրվել էր (Հովվ. Ա.7, 15–16, Գոր. ԻԸ.14–31):

ՀՈՈՍՏԵԱԿԱՆ ԿԱՅՏՐՈՒԹՅՈՒՆ:

Տե՛ս նաև Հռոմ

Հին Հռոմի կայսրությունը: Առաքելական դարաշրջանում Հռոմեական Կայսրությունը միակ հզոր ուժն էր աշխարհում: Այն ներառում էր այն ամենը, ինչ գտնվում էր Եփրատ, Դանուբ, Հեռնոս գետերի, Ատլանտյան օվկիանոսի և Սահարա ամա-

պատի միջև: Ք.ժ.ա. 63 թվականին, երբ Պոմպեոսը գրավեց Երուսաղեմը, Պաղեստինը դարձավ ենթակա մահանգ: Չնայած Հռոմեացիները հրեաներին շատ արտոնություններ էին տվել, հրեաներն ասում էին Հռոմեական իշխանությունը և շարունակ ապստամբում էին:

Պողոսը, որը Հռոմեական կայսրության քաղաքացի էր, օգտագործեց հունարենը, կայսրության մեջ ամենաշատ օգտագործվող լեզուն, ավետարանը կայսրությունով մեկ տարածելու համար:

Կայսրինը կայսրին տվեք՝ **Մատ.** ԻԲ.17–22: Պողոսը՝ որպես Հռոմեացի, պահանջեց իր իրավունքները՝ **Գոր.** ԺՁ.37–39 (Գոր. ԻԲ.25–29):

ՀՈՉԱԿԱԳԻՐ: *Տե՛ս նաև*

Ամուսնություն, Ամուսնանալ – Բազմակնություն. Վուդրուֆ Վիֆորդ

Նախագահ Վիֆորդ Վուդրուֆի կողմից կատարված պաշտոնական հայտարարություն, 1890 թվականին, որը պարզորոշ հաղորդում է, որ Եկեղեցին և նրա անդամները ենթարկվում են երկրի օրենքին և այլևս չեն կիրառում բազմակնություն (ՎևոՒ ՊՀ–1): Նախագահ Վուդրուֆը Հռչակագիրն արձակել է Աստծո կողմից տեսիլք և հայտնություն ստանալուց հետո:

ՀՈՈՒԹ: *Տե՛ս նաև* Բոսս

Հին Կտակարանում՝ Իսրայելացի Նոեմիի և Ելիմեյեթի Մովաբացի հարսը: Իր ամուսնու մահից հետո Հուրֆն ամուսնացավ Նոեմիի ազգական Բոսսի հետ: Նրանց որդի Ովբեդը դարձավ Դավթի և Քրիստոսի նախահայրը: Հուրֆի պատմությունը գեղեցիկ կերպով ցույց է տալիս ոչ Իսրայելացու դարձի գալը դեպի Իսրայելի փարախը: Հուրֆը թողեց իր նախկին աստծուն և նախկին կյանքը, որպեսզի միանա հավատքի ընտանիքին՝ ծառայելով Իսրայելի Աստծուն (Հուր. Ա.16):

Հուրֆի գիրքը. Ա գլուխը նկարագրում է Ելիմեյեթի ու նրա ընտանիքի կյանքը Մովաբում: Իրենց ամուսինների մահից հետո, Նոեմին և Հուրֆը գնացին Բեթլեհեմ: Բ գլուխը բացատրում է, որ Հուրֆը հասկ էր ժողովում Բոսսի արտերում: Գ գլուխը պատմում է, թե ինչպես Նոեմին Հուրֆին խորհուրդ տվեց գնալ կալը և

պառել Բոսսի ոտքերի մոտ: Դ գլուխը պատմում է, թե ինչպես Հուրֆն ամուսնացավ Բոսսի հետ: Նրանք ունեցան որդի՝ Ովբեդին, որի ազգատոհմից էին Դավիթը և Քրիստոսը:

ՀՐԱՇԶ: *Տե՛ս նաև* Հավատք. Նշաններ

Աստծո գործությամբ կատարված արտասովոր իրադարձություն: Հիսուս Քրիստոսի գործի մեջ հրաշքները կարևոր տարրեր են: Դրանց թվում են բուժումները, մահացածներին կյանքի վերադարձնելը և հարությունը: Հրաշքները Հիսուս Քրիստոսի ավետարանի մասն են: Հրաշքներ տեսնելու համար հավատք է հարկավոր (Մար. 2.5–6, Մորմ. 9.10–20, Եթեր 12.12):

Երբ Փարավոնն ասի. Մի հրաշք ցույց տվեք՝ **Ել.** Է.9: Ոչ ոք չկա, որ իմ ամուսնով հրաշք գործի և շուտով իմ մասին չար խոսի՝ **Մար.** Թ.38: Կանան այն վայրն էր, որտեղ Հիսուսը գործեց իր առաջին հրաշքը՝ **Հովհ.** Բ.11: Ես հրաշքների Աստված եմ՝ **2 Նեփի** 27.23: Աստծո գործությունը հրաշքներ է գործում՝ **Ալմա** 23.6: Քրիստոսը կարողացավ ավելի մեծ հրաշքներ գործել նրանց համար, ովքեր Ամերիկյան աշխարհամասում էին, որովհետև նրանք մեծ հավատք ունեին՝ **3 Նեփի** 19.35: Աստված չի դողարել հրաշքների Աստված լինել՝ **Մորմ.** 9.15: Հրաշքներ մի պահանջեք, մինչև Տերը չպատվիրի ձեզ՝ **ՎևոՒ** 24.13–14: Ոմանց տրված է հրաշքներ գործելու պարզև՝ **ՎևոՒ** 46.21 (Մոր. 10.12):

ՀՐԵԱՆԵՐ: *Տե՛ս նաև* Իսրայել. Հուդա

Հրեաներ կարող են լինել՝ կա՛մ (1) Հուդայի՝ Հակոբի տասներկու որդիներից մեկի հետնորդները, (2) հին Հուդայի՝ հարավային թագավորության ժողովուրդը, կա՛մ էլ (3) մարդիկ, որոնք ծնունդով կարող են լինել կամ չլինել հրեա, բայց ապրում և են Հուդայիզմի կրոնով, կենսաձևով և սովորություններով: Սովորական է դարձել *հրեա* բառն օգտագործել Հակոբի բոլոր հետնորդներին ակնարկելու համար, սակայն դա սխալ է: Այն պետք է սահմանափակել Հուդայի թագավորության ժողովրդով կամ, հատկապես այսօր, Հուդայի ցեղի հետնորդներով և նրան միացողներով:

Գավազանը Հուդայից չի հեռացվի, մինչև որ գա Մելովը՝ **Ծճ. ԽԹ.10:** Քրիստոսի ավետարանն Աստծո գորությունն է ի փրկություն, առաջ՝ հրեային՝ **Հռովմ. Ա.16:** Տերը մի մարգարե կբարձրացնի հրեաների միջից, այսինքն՝ մի Մեսիա՝ **1 Նեփի 10.4:** Երբ գիրքը դուրս եկավ հրեայի բերանից, գրվածները պարզ էին և անադարտ՝ **1 Նեփի 14.23:** Հրեաները կցրվեն բոլոր ազգերի մեջ՝ **2 Նեփի 25.15:** Հրեաներն իմ հին ուխտի ժողովուրդն են՝ **2 Նեփի 29.4:** Հրեաները, որոնք ցրված են, կկանեն հավատալ Քրիստոսին՝ **2 Նեփի 30.7:** Հրեաները կմերժեն քարը, որի վրա կկարողանային կառուցել՝ **Հակոբ 4.14-16:** Հրեաները կունենան ևս մեկ վկայություն, որ Հիսուսը հենց ինքը՝ Քրիստոսն էր՝ **Մորմ. 3.20-21:** Երկու մարգարե պիտի բարձրացվի հրեա ազգի համար վերջին օրերին՝ **ՎևոՒՒ 77.15:** Կոչ արեք բոլոր ազգերին, նախ՝ հեթանոսներին, և ապա՝ հրեաներին՝ **ՎևոՒՒ 133.8:** Այն օրերին մեծ նեղություն կլինի հրեաների համար՝ **ՋՍ-Մ 1.18:**

ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏ: *Sti u snk* Ադամ.

Միքայել

Միքայելը, կամ Ադամը, հրեշտակապետն է կամ հրեշտակների գլխավորը:

Տերը՝ հրամանով, հրեշտակապետի ձայնով վայր կգա երկնքից՝ **Ա Թես. Գ.15:** Միքայելը հրեշտակապետն է՝ **Հուդա Ա.9 (ՎևոՒՒ 29.26, 88.112, 128.20-21):**

ՀՐԵՇՏԱԿՆԵՐ

Երկու տեսակի էակներ կան երկնքում, որոնք կոչվում են հրեշտակներ. նրանք, որոնք ոգիներ են, և նրանք, որոնք ունեն մսից և ոսկորից մարմին: Հրեշտակները, որոնք ոգիներ են, կամ դեռևս ձեռք չեն բերել մսից և ոսկորից մարմին, կամ այն ոգիներն են, որոնք մի ժամանակ ունեցել են մահկանացու մարմին և սպասում են հարությանը: Հրեշտակները, որոնք ունեն մսից և ոսկորից մարմին, կամ հարություն են առել մեռելներից, կամ էլ փոխակերպվել են:

Սուրբ գրքերում շատ հղումներ կան հրեշտակների աշխատանքի մասին: Երբեմն հրեշտակները խոսում են որդու ձայնով, երբ նրանք հաղորդում են Աստ-

ծո պատգամները (Մոսիա 27.11-16): Արդարակյաց մահկանացու մարդիկ ևս կարող են կոչվել հրեշտակներ (ՋՄԹ՝ Ծճ. ԺԹ.15): Որոշ հրեշտակներ ծառայում են երկնքում՝ Աստծո գահի մոտ (Ամա 36.22):

Սուրբ գրքերում խոսվում է նաև դեպի հրեշտակների մասին: Գրանք այն ոգիներն են, որոնք նախաերկրային կյանքում հետևեցին Լյուցիֆերին և Աստծո ներկայությունից վտարվեցին և ցած գգվեցին երկիր (Հայտ. ԺԲ.1-9, 2 Նեփի 9.9, 16. ՎևոՒՒ 29.36-37):

Հակոբը տեսավ Աստծո հրեշտակներին վեր գնալիս և իջնելիս՝ **Ծճ. ԻԸ.12:** Աստծո հրեշտակները պատահեցին Հակոբին՝ **Ծճ. ԼԲ.1-2:** Գեղեճը դեմառդեմ տեսավ Տիրոջ հրեշտակին՝ **Գատ. Զ.22:** Հրեշտակն իր ձեռքը մեկնեց Երուսաղեմի վրա, որ կործանի այն՝ **Բ Թագ. ԻԴ.16:** Հրեշտակը դիպավ Եդիսիին և ասաց նրան. Վեր կաց, կեր՝ **Գ Թագ. ԺԹ.5-7:** Դանիելը տեսիլքում տեսավ Գաբրիել հրեշտակին՝ **Գան. Ը.15-16:** Միքայել հրեշտակն օգնեց Դանիելին՝ **Գան. Ժ.13:** Գաբրիել հրեշտակն ուղարկվեց Աստծո կողմից՝ **Դուկ. Ա.19, 26-27:** Դևի հրեշտակները կապանքների մեջ կպահվեն մինչև դատաստանը՝ **Հուդա Ա.6 (Բ Պետ. Բ.4):** Մարդիկ տեսան հրեշտակներին՝ երկնքից իջնելիս՝ **3 Նեփի 17.24:** Մորոնին գրել է հրեշտակների սպասավորության մասին՝ **Մոր. 7.25-32:** Ահարոնյան Զահանայությունը կրում է հրեշտակների սպասավորության բանալիները՝ **ՎևոՒՒ 13:** Մորոնին, Հովհաննես Մկրտիչը, Պետրոսը, Հակոբոսը, Հովհաննեսը, Մովսեսը, Եդիսան և Եդիսար, - բոլորը՝ որպես հրեշտակներ, սպասավորել են Ջոզեֆ Սմիթին՝ **ՎևոՒՒ 27.5-12:** Դուք չեք կարող դիմանալ հրեշտակների սպասավորությանը՝ **ՎևոՒՒ 67.13:** Միքայել հրեշտակապետն Ադամն է՝ **ՎևոՒՒ 107.54:** Հրեշտակները հարություն առած անձնավորություններ են, որոնք ունեն մսից և ոսկորից մարմին՝ **ՎևոՒՒ 129:** Չկան հրեշտակներ, որոնք սպասավորում են այս երկիրը, բացի նրանցից, ովքեր պատկանում են նրան՝ **ՎևոՒՒ 130.5:** Մարդիկ, որոնք չեն հնազանդվում հավերժական աճումնորթյան Աստծո օրենքին, ո՛չ կին կառնեն, ո՛չ էլ մարդի կզանս. այլ հրեշտակներ կնշանակվեն երկնքում՝ **ՎևոՒՒ 132.16-17:**

ՀՈՒԳԱ

Նոր Կտակարանում՝ Հիսուսի եղբայրներից մեկը և Հուդայի թղթի հավանական հեղինակը (Մատ. ԺԳ.55, Հուդա Ա.1):

Հուդայի թուղթը. Այս գիրքը բաղկացած է մի նամակից, որը Հուդան գրել է որոշ Սրբերի, որոնց հավատքը թուլանում էր: Նրանց թուլացնում էին իրենց միջից նրանք, ովքեր դավանում էին, որ Քրիստոսն այս են, սակայն անբարոյական հեթանոսական պաշտամունքներ էին կատարում և պնդում էին, որ ազատված են բարոյական օրենքներից: Հուդան ցանկանում էր Սրբերին տեղեկացնել նրանց սպասվող հոգևոր վտանգի մասին և քաջալերել նրանց՝ հավատարիմ մնալու:

Հուդայի թղթի նշանավոր հատվածներից է 6-րդ հատվածը, որը պատմում է երկնքի պատերազմի մասին և Լյուցիֆերին ու նրա հրեշտակներին իրենց նախամահկանացու վիճակից դուրս գցելու մասին (Աբր. 3.26–28), և 14–15-րդ հատվածները, որոնք վկայակոչում են Ենովքի մարգարեությունը:

ՀՈՒԳԱ: Տե՛ս նաև Աստվածաշունչ.

Իսրայել. Հրեաներ

Հին Կտակարանում՝ Հակոբի և Լիայի չորրորդ որդին (Ճն. ԻԹ.35, ԼԷ.26–27, ԽԳ.3, 8, ԽԴ.16, ԽԹ.8): Հակոբն օրհնեց Հուդային, որ նա լավ ղեկավար կլինի Հակոբի որդիների մեջ, և որ Սելովը (Հիսուս Քրիստոսը) կլինի նրա հետնորդը (Ճն. ԽԹ.10):

Հուդայի ցեղը. Քանանում բնակություն հաստատելուց հետո Հուդայի ցեղը վերցրեց ղեկավարությունը: Նրա գլխավոր մրցակիցը Եփրեմի ցեղն էր: Մովսեսն օրհնեց Հուդայի ցեղը (Բ Օր. ԼԳ.7): Մողոմնի թագավորությունից հետո Հուդայի ցեղը դարձավ Հուդայի թագավորությունը:

Հուդայի թագավորությունը. Ռոբոլամի թագավորության ժամանակ Մողոմնի տիրապետությունները բաժանվեցին երկու առանձին թագավորությունների, հիմնականում Եփրեմի և Հուդայի ցեղերի միջև եղած նախանի պատճառով: Հարավային թագավորությունը, կամ Հուդայի թագավորությունը, ներառում էր Հուդայի ցեղը և Բենիամինի մեծ մասը: Երուսա-

ղենը նրա մայրաքաղաքն էր: Ընդհանուր առմամբ այն ավելի հավատարիմ մնաց Եհովայի երկրպագությանը, քան հյուսիսային թագավորությունը: Հուդան ավելի քիչ էր հարձակման ենթարկվում հյուսիսից և արևելքից, և գերագույն իշխանությունը մնաց Դավիթ ընտանիքի ձեռքում, մինչև Բաբելոնյան գերությունը: Իսրայելի ավելի զորեղ և բնակչությամբ ավելի մեծ թագավորության անկումից հետո, Հուդայի թագավորությունը կարողացավ գոյատևել 135 տարի:

Հուդայի փայտը. Մա վերաբերում է Աստվածաշնչին՝ որպես Հուդայի տան հիշատակարանի (Եզեկ. ԼԷ.15–19): Վերջին օրերին, երբ Իսրայելի տան տարբեր ճյուղերը հավաքվեցին, նրանց սրբազան հիշատակարանները նույնպես մեկտեղ կհավաքվեն: Մուրբ գրային այս հիշատակարանները կրացնեն միմյանց և կկազմեն միասնական վկայություն, որ Հիսուսը Քրիստոսն է Իսրայելի Աստվածը և ողջ երկրի Աստվածը (2 Նեփի 3, 29, ՋՍԹ՝ Ճն. 50.24–36):

ՀՈՒԳԱ ԻՍԿԱՐԻՈՎՏԱՑԻ

Հիսուսի Տասներկու առաքյալներից մեկը Նոր Կտակարանում (Մատ. Ժ.4, Մար. ԺԴ.10, Հովի. Զ.72, ԺԲ.4): Նրա ազգանունը նշանակում էր «Կարիծվի մարդ»: Նա Հուդայի ցեղից էր և միակ Առաքյալն էր, որ Գալիլեացի չէր: Հուդան դավաճանեց Տիրոջը:

Երեսուն արժաք ստացավ Քրիստոսին քահանայապետերից մեկին հանձնելու համար՝ **Մատ.** ԻԶ.14–16 (Չաք. ԺԱ.12–13): Մասունեց Տիրոջը համբույրով՝ **Մատ.** ԻԶ.47–50 (Մար. ԺԴ.43–45, Դուկ. ԻԲ.47–48, Հովի. ԺԸ.2–5): Կախվեց՝ **Մատ.** ԻԷ.5: Մատանան մտավ Հուդայի մեջ՝ **Դուկ.** ԻԲ.3 (Հովի. ԺԳ.2, 26–30): Դավիթն ասել էր, որ Հուդան կդավաճանի Հիսուսին՝ **Գոր.** Ա.16 (Մաղ. ԽԱ.9):

ՀՈՒՅՍ: Տե՛ս նաև Հավատք

Արդարության դիմաց խոստացված օրհնությունների վստահ սպասում ու փափագ: Մուրբ գրքերը հաճախ են խոսում հույսի մասին՝ որպես հավերժական կյանքի ակնկալում Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատքի միջոցով:

Օրինյալ է այն մարդը, որի հույսը Տերն է՝ **Եբեմ**. ԺԷ.7: Տերը կլինի իր ժողովրդի հույսը՝ **Հովել** Գ.16: Մենք հույս ունենք համբերությամբ և սուրբ գրքերի միջոցով՝ **Հռովմ**. ԺԵ.4: Քրիստոսի հարությանը Աստված մեզ վերստին ծնեց դեպի կենդանի հույսը՝ **Ա Պետ**. Ա.3: Ամեն մարդ, ով այս հույսն ունի, սրբազործում է իրեն՝ **Ա Հովի**. Գ.2-3: Դուք պետք է առաջ մղվեք՝ հույսի կատարյալ պայծառություն ունենալով՝ **2 Նեփի** 31.20: Տեսե՛ք, որ դուք ունենաք հավատք, հույս և գրություն՝ **Ալմա** 7.24 (Ա Կոր. ԺԳ.13, Մոր. 10.20): Ես ցանկանում եմ, որ դուք ապանջղե՛ք իմ խոսքերից՝ ունենալով մի հույս, որ դուք պիտի ստանաք հավերժական կյանք՝ **Ալմա** 13.27-29: Եթե դուք ունե՛ք հավատք, դուք հույս ունե՛ք բաների համար, որոնք տեսանելի չեն, որոնք ճշմարիտ են՝ **Ալմա** 32.21 (Եբր. ԺԱ.1): Հույսը գալիս է հավատքից և դառնում է խարիսխ հոգու համար՝ **Եթեր** 12.4 (Եբր. 2.17-19): Մարդ պետք է հուսա, այլապես նա չի կարող ժառանգություն ստանալ՝ **Եթեր** 12.32: Մորմունք խոսել է հավատքի, հույսի և գրության մասին՝ **Մոր**. 7.1: Դուք պիտի հուսաք, որ Հիսուս Քրիստոսի քավության միջոցով բարձրացվելու եք դեպի հավերժական կյանք՝ **Մոր**. 7.40-43: Սուրբ Հոգին ձեզ լցնում է հույսով՝ **Մոր**. 8.26 (Հռովմ. ԺԵ.13): Նրանք մահկանացու կյանքից հեռացել էին փառավոր հարության հաստատման հույսով՝ **ՎևոՒ** 138.14:

ՀՈՒՆՉՔ

Սուրբ գրքերում *հունճք* բառը երբեմն օգտագործվում է փոխաբերաբար, նշելով մարդկանց Եկեղեցի բերելը, որն Աստծո արքայությունն է երկրի վրա, կամ դատաստանի ժամանակը, ինչպիսին է Հիսուս Քրիստոսի երկրորդ գալուստը.

Հունճքն անցավ, ամառը վերջացավ, բայց մենք չփրկվեցինք՝ **Եբեմ**. Ը.20 (ՎևոՒ 56.16): Հունճքը շատ է, բայց մշակները քիչ են՝ **Մատ**. Թ.37: Հունճքն աշխարհի վերջն է՝ **Մատ**. ԺԳ.39: Մարդ ինչ որ սերմանի, այն էլ կհնճի՝ **Գաղ**. 2.7-9 (ՎևոՒ 6.33): Արաղ սպիտակել է, արդեն հնճին հասել՝ **ՎևոՒ** 4.4: Հունճքը կավարավի, իսկ ձեր հոգիները չեն փրկվի՝ **ՎևոՒ** 45.2:

Հնճի ժամանակը եկել է, և իմ խոսքն անպայման պիտի կատարվի՝ **ՎևոՒ** 101.64:

ՉԱԽՈՐԴՈՒԹՅՈՒՆ: *St'u nahl*
 Գայթակղել, Գայթակղություն.
 Խրատել, Խրատելը. Հալածել, Հալածանք. Համբերել

Չախորդությունների, այսինքն՝ փորձանքների, անախորժությունների և նեղությունների միջոցով, մարդ կարող է շատ փորձառություններ ունենալ, որոնք տանում են հոգևոր աճի և հավերժական առաջընթացի, եթե նա դառնում է դեպի Տերը:

Աստված ձեզ փրկել է ձեր բոլոր ձախորդություններից ու նեղություններից՝ **Ա Թագ**. Ժ.19: Նրանք Տիրոջը կանչեցին իրենց նեղության մեջ՝ **Մաղ**. ԴԷ.6, 13, 19, 28: Թեև Տերը ձեզ տալիս է նեղության հաց, քո ուսուցիչներն այն ետ չեն քաշվելու՝ **Ես**. Լ.20-21: Անպայման անհրաժեշտ է, որ հակադրություն լինի բոլոր բաներում՝ **2 Նեփի** 2.11: Եթե նրանք երբևէ չճաշակեին դառնություն, ապա չէին իմանա քաղցրությունը՝ **ՎևոՒ** 29.39: Քո ձախորդությունները կտեսն միայն մի փոքր պահ՝ **ՎևոՒ** 121.7-8: Բոլոր այս բաները փորձառություն կտան քեզ և կլինեն քո բարիքի համար՝ **ՎևոՒ** 122.5-8: Նրանք դառնություն են ճաշակում, որպեսզի սովորեն գնահատել բարին՝ **Մովսես** 6.55:

ՉԱՅՆ: *St'u nahl* Հայտնություն

Սուրբ գրքերում օգտագործված իմաստով՝ Տիրոջ կամ նրա սուրհանդակների կողմից ասված պատգամ՝ երբեմն հստակ լսելի: Հոգու ձայնը կարող է նաև ոչ լսելի լինել և ուղղված լինել սրտին կամ մտքին:

Աղանը և Եվան լսեցին Տեր Աստծո ձայնը՝ **Ծն**. Գ.8 (Մովսես 4.14): Տերը խոսեց Եղիայի հետ մեղմ բարակ ձայնով՝ **Գ Թագ**. ԺԹ.11-13: Արդարները հետևում են Բարի Հովվի ձայնին՝ **Հովի**. Ժ.1-16: Ամեն ով որ ճշմարտությունից է, իմ ձայնը լսում է՝ **Հովի**. ԺԸ.37: Ես հնագնդվեցի Հոգու ձայնին՝ **1 Նեփի** 4.6-18: Մի ձայն եկավ ինձ՝ ասելով. Ենովս, քո մեղքերը ներված են՝ **Ենովս** 1.5: Դա կատարյալ մեղմության մի ձայն էր և այն թափանցեց մինչև հոգու խորքը՝ **Հել**. 5.29-33 (3 Նեփի 11.3-7): Իմ իսկ ձայնով, թե իմ ծառանե-

րի ձայնով՝ միևնույն է՝ **ՎևոՒ** 1.38: Ինչ որ նրանք խոսեն, երբ շարժվում են Սուրբ Հոգու կողմից, պիտի լինի Տիրոջ ձայնը՝ **ՎևոՒ** 68.2–4: Ամեն հոգի, որ հնազանդվում է իմ ձայնին, պիտի տեսնի իմ երեսը և իմանա, որ ես եմ՝ **ՎևոՒ** 93.1:

ՉԵՌՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ: *Տե՛ս նաև* Ի սպաս դնել. Կարգել, Կարգում. Հիվանդների սպասավորում. Սուրբ Հոգու պարգև

Չեռքերն անձի գլխին դնելու գործողությունը՝ որպես քահանայության արարողության մաս: Քահանայության շատ արարողություններ, ինչպիսիք են՝ կարգումները, օրհնությունները, հիվանդներին սպասավորելը, Եկեղեցու անդամության հաստատումը և Սուրբ Հոգի շնորհելը, կատարվում են ձեռնադրմամբ:

Մովսեսն իր ձեռքերը Հեսուի գլխին դրեց, ինչպես պատվիրել էր Տերը՝ **ԹՎ.** ԻԷ.18, 22–23 (ԲՕՐ. ԼԳ.9): Հիսուսը ձեռնադրեց մի քանի հիվանդների և բժշկեց նրանց՝ **Մար.** 9.5 (Մորմ. 9.24): Առաքյալները ձեռնադրեցին այն յոթին, որոնք պիտի օգնեին նրանց՝ **Գոր.** 2.5–6: Սուրբ Հոգին սրվում էր ձեռնադրմամբ՝ **Գոր.** Ը.14–17: Անանիան ձեռնադրեց Մողոսին և վերականգնեց նրա տեսողությունը՝ **Գոր.** Թ.12, 17–18: Պողոսը ձեռնադրեց և բժշկեց նրան՝ **Գոր.** ԻԸ.8: Պողոսն ուսուցանել է մկրտության և ձեռնադրման վարդապետությունը՝ **Եբր.** 9.2: Ալման քահանաներ և երեցներ կարգեց ձեռնադրմամբ՝ **Ալմա** 6.1: Հիսուսն իր աշակերտներին գորություն տվեց շնորհել Սուրբ Հոգին ձեռնադրմամբ՝ **3 Նեփի** 18.36–37: Ում վրա դուք կդնեք ձեր ձեռքերը, դուք կշնորհեք Սուրբ Հոգին՝ **Մոր.** 2.2: Երեցները պետք է ձեռնադրեն երեխաներին՝ օրհնության համար՝ **ՎևոՒ** 20.70: Նրանք Սուրբ Հոգին կստանան ձեռնադրմամբ՝ **ՎևոՒ** 35.6 (ՀՀ 1.4): Երեցները պետք է ձեռնադրեն հիվանդներին՝ **ՎևոՒ** 42.44 (ՎևոՒ 66.9): Մկրտությունից հետո երեխաները պետք է ձեռնադրվեն՝ **ՎևոՒ** 68.27: Քահանայությունը ստանում են ձեռնադրմամբ՝ **ՎևոՒ** 84.6–16:

ՉԵՌՔԵՐԸ ՎՐԱՆ ԳՆԵԼ: *Տե՛ս* Չեռնադրություն

ՉԻԹԵՆԻ: *Տե՛ս նաև* Իսրայել. Յուդ

Իսրայելում տարածված ծառ և կարևոր գյուղատնտեսական պաշար Աստվածաշնչյան երկրներում: Այն աճեցվում է իր փայտի, պտղի և յուղի համար: Սուրբ գրքերում ձիթենին ամենից հաճախ օգտագործվում է որպես Իսրայելի տան խորհրդանիշ:

Իսրայելի տունը համեմատվում է ձիթենու հետ, որի ճյուղերը կտրվում և ցրվում են՝ **1 Նեփի** 10.12 (1 Նեփի 15.12): Տերը Իսրայելի տունը համեմատել է ընտանի ձիթենու հետ՝ **Հակոբ** 5–6: Չոգեֆ Սմիթը 88-րդ բաժնի հայտնությունն անվանել է ձիթենու տերև՝ **ՎևոՒ** 88.նախադրություն: Ազնվականն իր ծառաներին կարգադրեց՝ գնալ իր այգին և տասներկու ձիթենի տնկել՝ **ՎևոՒ** 101.43–62:

ՉԻԹԵՆՅԱՑ ՍԱՐ: *Տե՛ս նաև* Գեթսեմանի

Երուսաղեմից դեպի արևելք, Կեդրոնի հեղեղատի արևելյան մասում գտնվող բլուր: Նրա արևմտյան լանջի ներքևի մասում Գեթսեմանի պարտեզն է: Բեթփագեն և Բեթանիան տեղակայված են սարի վերևում և արևելյան լանջին: Այս սարն աստվածաշնչյան շատ իրադարձությունների վայր է եղել (Մատ. ԻԳ.3) և նաև կարևոր վայր կլինի վերջին օրերի իրադարձությունների համար (Չար. ԺԳ.3–5, ՎևոՒ 45.48–54, 133.20):

ՂԱԶԱՐՈՍ: *Տե՛ս նաև* Բեթանիացի Մարիամը. Մարթա

Նոր Կտակարանում՝ Մարթայի և Մարիամի եղբայրը: Հիսուսը նրան բարձրացրեց մեռելներից (Հովի. ԺԱ.1–44, ԺԲ.1–2, 9–11): Սա այն առակի մտրացկան Ղազարոսը չէ, որի մասին ուսուցանում էր Հիսուսը (Ղուկ. ԺԶ.19–31):

ՂԵՎԻ: *Տե՛ս նաև* Իսրայել. Հակոբ՝ Իսահակի որդի

Հին Կտակարանում՝ Հակոբի և Լիայի երրորդ որդին (Շն. ԻԹ.34, ԼԵ.23): Ղևին դարձավ Իսրայելի ցեղերից մեկի հայրը:

Ղևիի ցեղը. Հակոբն օրհնեց Ղևիին ու նրա հետնորդներին (Շն. ԽԹ.5–7): Ղևիի հետնորդները սպասավորում էին Իսրայելի սրբարաններում (ԹՎ. Ա.47–54): Ահարոնը Ղևտացի էր, և նրա հետնորդները քահանաներ եղան (Ել. 9.16–20,

ԻԸ.1-4, ԻԹ): Ղևտացիներն օգնում էին քահանաներին՝ Ահարոնի որդիներին (ԹՎ. Գ.5-10, Գ. Թագ. Ը.4): Երբեմն նրանք գործում էին որպես երաժիշտներ (Ա Մն. ԺԵ.16, Նեեմ. ԺԱ.22). սորթում էին գոհեր (Բ Մն. ԻԹ.34, Եզր. Զ.20). և ընդհանուր առմամբ օգնում էին տաճարում (Նեեմ. ԺԱ.16): Ղևտացիները նվիրվել էին Տիրոջ ծառայությանը՝ Իսրայելի զավակների համար արարողություններ կատարելու գործին: Ղևտացիներն իրենց էին ընծա մատուցում Իսրայելի զավակների փոխարեն (ԹՎ. Ը.11-22). այդպիսով նրանք դառնում էին Աստծո յուրահատուկ սեփականությունը, որոնք առաջնեկների փոխարեն տրվում էին նրան (ԹՎ. Ը.16): Նրանք չէին նվիրաբերվում, սակայն մաքրվում էին իրենց ծառայության համար (ԹՎ. Ը.7-16): Նրանք հողի ժառանգություն չստացան Քանանում (ԹՎ. ԺԸ.23-24), սակայն ստանում էին տասանորդը (ԹՎ. ԺԸ.21), ստացան քառասունուր քաղաք (ԹՎ. ԼԵ.6) և տոների ժամանակ ժողովրդի նվիրատվությունները ստանալու իրավունք (Բ Օր. ԺԲ.18-19, ԺԴ.27-29):

ՂԵՎՏԱԿԱՆ ՔԱՀԱՆԱՅՈՒՆ
ԹՅՈՒՆ: *Տե՛ս* Ահարոնյան Քահանայություն

ՂԵՎՏԱՅՈՒՆ: *Տե՛ս նաև* Հնգամատյան

Գիրք Հին Կտակարանում, որը պատմում է քահանայական պարտականությունների մասին Իսրայելում: Այն հատկանշում է Աստծո սրբությունը և այն օրինագիրը, ըստ որի իր ժողովուրդը կարող էր ապրել՝ սուրբ դառնալու համար: Նրա նպատակն է ծեսերի միջոցով ուսուցանել Մովսեսի օրենքի բարոյական կանոններն ու կրոնական ճշմարտությունները: Ղևտացո գիրքը գրել է Մովսեսը:

Ա-է գլուխները բացատրում են գոհաբերության արարողությունները: Ը-Ժ գլուխները նկարագրում են քահանաների նվիրաբերման ծեսերը: ԺԱ գլուխը բացատրում է, թե ինչը պետք է ուտել և ինչը ոչ, ինչն է մաքուր և ինչը՝ անմաքուր: ԺԲ գլուխը քննարկում է կամանց վիճակը երեխա բերելուց հետո: ԺԳ-ԺԵ գլուխներն օրենքներ են՝ կապված ծիսական անմաքրությունների հետ: ԺԶ գլուխը

պարունակում է այն ծիսակարգը, որը պետք է պահվի Քավուբյան օրը: ԺԷ-ԻԶ գլուխները պարունակում են կրոնական և հասարակական կանոնապահումների հետ կապված օրենքների օրինագրեր: ԻԷ գլուխը բացատրում է, որ Տերը Իսրայելին պատվիրել է Տիրոջը նվիրաբերել իր բերքը, հոտերն ու նախիրները:

ՂՈՎՏ: *Տե՛ս նաև* Աբրահամ

Հին Կտակարանում՝ Առանի որդին և Աբրահամի եղբորորդին (Ճն. ԺԱ.27, 31, Աբր. 2.4): Առանը մահացավ Ուրում եղած սովի պատճառով (Աբր. 2.1): Ղովուր թողեց Ուրը և Աբրահամի ու Մարայի հետ գնաց Քանան (Ճն. ԺԲ.4-5): Ղովուր որոշեց ապրել Սոդոմում: Տերն ուղարկեց իր սուրիանդակներին, որպեսզի զգուշացնեն Ղովտին, որ փախչի Սոդոմից, նախքան Տերը կկործաներ այն՝ ժողովրդի ամբարշտության պատճառով (Ճն. ԺԳ.8-13, ԺԹ.1, 13, 15). ինչևէ, Ղովտի կինը ետ նայեց կործանման ժամանակ և դարձավ աղե արձան (Ճն. ԺԹ.26): Նոր Կտակարանում ակնարկվում է Ղովտի մասին (Ղուկ. ԺԷ.29, Բ Պետ. Բ.6-7): Նրա կյանքը, Աբրահամից առանձնանալուց հետո, նկարագրված է Ճնճոցո ԺԳ, ԺԴ և ԺԹ գլուխներում:

ՂՈՒԿԱՍ: *Տե՛ս նաև* Ավետարաններ.
 Գործք Առաքելոց

Ղուկասի ավետարանի և Գործք գրքի հեղինակը և Պողոսի միսիոներական գործընկերը Նոր Կտակարանում: Նա ծնվել էր Հույն ծնողներից և զբաղվում էր բժշկությամբ (Կող. Դ.14): Ղուկասը լավ կրթված էր: Նա իրեն ներկայացնում է որպես Պողոս Առաքյալի գործընկեր, երբ Տրովադայում միանում է Պողոսին (Գոր. ԺԶ.10-11): Ղուկասը Պողոսի հետ էր նաև Փիլիպպետոմ՝ դեպի Երուսաղեմ Պողոսի վերջին ճամփորդության ժամանակ (Գոր. Ի.6), և երկուսը միասին էին մինչև Հռոմ ժամանելը: Ղուկասը Պողոսի հետ էր նաև նրա հռոմեական երկրորդ բանտարկության ժամանակ (Բ Տիմ. Դ.10): Ըստ ավանդության՝ նա նահատակվել է, որպես մարտիրոս:

Ղուկասի ավետարանը. Ղուկասի գրած պատմությունը Հիսուս Քրիստոսի և

նրա մահկանացու ծառայության մասին: Գործք Առաքելոց գիրքը Ղուկասի ավետարանի շարունակությունն է: Ղուկասը թողել է Հիսուսի ծառայության մասին լավ գրված պատմություն՝ Հիսուսին ներկայացնելով որպես Փրկիչ՝ և՛ հրեաների, և՛ հեթանոսների համար: Նա շատ է գրել Հիսուսի ուսմունքների և նրա գործերի մասին: Միայն Ղուկասում է հիշատակվում Չաքարիային և Մարիամին Գաբրիելի այցելելու մասին (Ղուկ. Ա). մանուկ Հիսուսին հովիվների այցելելու մասին (Ղուկ. Բ.8–18). Հիսուսի տասներկու տարեկանում տաճարում լինելու մասին (Ղուկ. Բ.41–52). յոթնասունի մասին, որոնք հանձնարարվում և ուղարկվում են (Ղուկ. Ժ.1–24). Հիսուսի արյան քրքուրը մասին (Ղուկ. ԻԲ.44). խաչի վրա չարագործի հետ Հիսուսի երկխոսության մասին (Ղուկ. ԻԳ.39–43). և իր հարությունից հետո Հիսուսի ձուկ և մեղրախորիսխ ուտելու մասին (Ղուկ. ԻԴ.42–43):

Գլուխների ընդհանուր տեսության համար, տես «Ավետարաններ» թեման:

ՃԱՆԱՊԱՐՀ: *Տես նաև* Հիսուս

Քրիստոս. Քայլել, Քայլել Աստծո հետ

Այն ուղին կամ ընթացքը, որին մարդ հետևում է: Հիսուսն ասաց, որ նա է ճանապարհը (Հովհ. ԺԳ.4–6):

Պահիր Տիրոջ պատվիրանները և քայլիր նրա ճանապարհներում՝ **Ք Օր.** Ը.6: Կրթիր երեխային իր ճանապարհի համեմատ՝ **Առակ.** ԻԲ.6 (2 Նեփի 4.5): Տերն ասել է, որ իր ճանապարհները բարձր են մեր ճանապարհներից՝ **Ես.** ԾԵ.8–9: Նեղ է դուռը և նեղվածք է ճանապարհը, որը տանում է դեպի կյանք՝ **Մատ.** Է.13–14 (3 Նեփի 14.13–14, 3 Նեփի 27.33, Վև.132.22, 25): Աստված փորձությունից ազատվելու ճանապարհ կպատրաստի՝ **Ա Կոր.** Ժ.13: Տերը ոչ մի պատվիրան չի տալիս, եթե ճանապարհ չի պատրաստում իր գավակների համար, որ պահեն՝ **1 Նեփի** 3.7 (1 Նեփի 9.6, 17.3, 13): Չկա ոչ մի ուրիշ ճանապարհ, բացի դռնից՝ **2 Նեփի** 9.41: Դուք ազատ եք գործելու ինքնուրույն՝ ընտրելու հավիտենական մահվան ճանապարհը կամ հավերժական կյանքի ճանապարհը **2 Նեփի** 10.23: Սա է ճանապարհը. և չկա ոչ մի այլ ճանապարհ,

ոչ էլ անուն՝ **2 Նեփի** 31.21 (Մոսիա 3.17, Ալմա 38.9, Հել. 5.9): Իր Որդու պարզևով, Աստված պատրաստել է մի ավելի գերազանց ուղի՝ **Եթեր** 12.11 (Ա Կոր. ԺԲ.31): Ամեն մարդ քայլում է իր իսկ ճանապարհով՝ **Վև.16:** Դա անպայման պետք է արվի իմ իսկ ձևով՝ **Վև.104.16:**

ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ: *Տես նաև*

Բանականություն, Բանականություններ. Գիտություն. Լույս, Քրիստոսի լույս

Գիտություն բաների մասին, ինչպես որ դրանք կան և ինչպես որ դրանք կային, և ինչպես որ դրանք պիտի լինեն (Վև.104.93.24): Ծնարտությունը վերաբերում է նաև լույսին և հայտնությանը երկնքից:

Ծնարտություն կրուսի երկրից՝ **Մաղ.** ԶԵ.11 (Մովսես 7.62): Ծնարտությունը կճանաչեք և ճնարտությունը կազատի ձեզ՝ **Հովհ.** Ը.32: Ես եմ ճանապարհը, ճնարտությունը և կյանքը՝ **Հովհ.** ԺԳ.6: Եթե ասենք թե մեղք չունենք, ճնարտություն չկա մեզանում՝ **Ա Հովհ.** Ա.8: Մեղավորը կարծում է ճնարտությունը խիստ է՝ **1 Նեփի** 16.2: Արդարները սիրում են ճնարտությունը՝ **2 Նեփի** 9.40: Հոգին ճնարտությունն է խոսում և չի ստում՝ **Հակոբ** 4.13: Դու ճնարտության Աստված ես և չես կարող ստել՝ **Եթեր** 3.12: Սուրբ Հոգու զորությամբ դուք կարող եք իմանալ ճնարտությունը բոլոր բաների մասին՝ **Մոր.** 10.5: Ծնարտությունը մնում է հավիտյան հավիտենից՝ **Վև.104.1.39:** Դու լուսավորվել ես ճնարտության Հոգով՝ **Վև.104.6.15:** Մորմոնի Գիրքը պարունակում է ճնարտությունը և Աստծո խոսքը՝ **Վև.104.19.26:** Միսիթարիչն ուղարկվել է, որ ուսուցանի ճնարտությունը՝ **Վև.104.50.14:** Նա, ով խոսքը ստանում է ճնարտության Հոգով, ստանում է այնպես, ինչպես քարոզվում է ճնարտության Հոգով՝ **Վև.104.50.17–22:** Հոչակեք ճնարտությունը՝ համաձայն հայտնությունների, որոնք ես տվել եմ ձեզ՝ **Վև.104.75.3–4:** Այն, ինչ ճնարտություն է, լույս է՝ **Վև.104.84.45:** Քրիստոսի լույսը ճնարտության լույսն է՝ **Վև.104.88.6–7, 40:** Իմ Հոգին ճնարտություն է՝ **Վև.104.88.66:** Բանականությունը, կամ ճնարտության լույսը, չի ստեղծվել՝ **Վև.104.93.29:** Աստծո փառքը բանականություն է, կամ լույս և ճնարտություն՝ **Վև.104.**

93.36: Ես ձեզ պատվիրել եմ ձեր երեխաներին մեծացնել լույսի և ճշմարտության մեջ՝ **ՎևոՒ** 93.40: Իմ Միածինը լի է շնորհով և ճշմարտությամբ՝ **Մովսես** 1.6:

ՄԱԳՈԳ: *Տե՛ս նաև* Գոգ. Հիսուս Քրիստոսի երկրորդ գալուստը

Աստվածաշնչում՝ մի երկիր և ժողովուրդ Սև ծովի մոտ: Նրանց թագավորը՝ Գոգը, կառաջնորդի Մագոգի բանակը Քրիստոսի երկրորդ գալուստից առաջ վերջին մեծ պատերազմի ժամանակ (Եզեկ. ԼԸ.2, ԼԹ.6): Սուրբ գրքերում խոսվում է Հազարամյակի վերջում Աստծո բանակի և չարի բանակի միջև Գոգի և Մագոգի մեկ այլ մեծ պատերազմի մասին (Հայտ. Ի.7-9, ՎևոՒ 88.111-116):

ՄԱԹՈՒՍԱՂԱ: *Տե՛ս նաև* Ենովք

Ենովքի որդին Հին Կտակարանում: Մարուսադան ապրեց 969 տարի (Ծն. Ե.21-27, Ղուկ. Գ.37, Մովսես 8.7): Նա արդարակյաց մարգարե էր, որը երկրի վրա էր բողոքել, երբ Ենովքի քաղաքը վերցվեց երկինք: Նա մնաց երկրի վրա, որպեսզի ժառանգներ ունենա, որոնցից պիտի ծնվեր Նոյը (Մովսես 8.3-4):

ՄԱՀ ՀՈԳԵՎՈՐ: *Տե՛ս նաև* Ադամի և Եվայի անկումը. Դժոխք. Դև. Կորստի որդիներ. Նգովք. Փրկություն

Հեռացում Աստծուց և նրա ազդեցությունից. մահանալ արդարությանը վերաբերող բաների նկատմամբ: Լյուցիֆերը և երկնային գործերի մեկ երրորդ մասը հոգևոր մահ ապրեցին, երբ նրանք դուրս գցվեցին երկնքից (ՎևոՒ 29.36-37):

Հոգևոր մահն աշխարհի մտավ Ադամի անկումն միջոցով (Մովսես 6.48): Չար մտքերով, խոսքերով և գործերով մահկանացու մարդիկ հոգով մահացած են, չնայած որ ֆիզիկապես ապրում են երկրի վրա (Ա Տիմ. Ե.6): Հիսուս Քրիստոսի քավության և ավետարանի սկզբունքներին ու արարողություններին հնազանդվելու միջոցով, տղամարդիկ և կանայք կարող են մարքովել մեղքերից և հաղթահարել հոգևոր մահը:

Հոգևոր մահը լինում է նաև մահկանացու մահից հետո: Թե՛ հարություն առած էակները, թե՛ դևն ու նրա հրեշտակները

պիտի դատվեն: Նրանք, ովքեր գիտակցաբար ապստամբել են ավետարանի լույսի և ճշմարտության դեմ, հոգևոր մահ կապրեն: Այդ մահը հաճախ անվանվում է երկրորդ մահ (Ալմա 12.16. Հել. 14.16-19. ՎևոՒ 76.36-38):

Չարագործները կկորվեն՝ **Մադ. ԼԷ.9:** Մարմնական մտածողությամբ լինելը մահ է՝ **Հռովմ. Ը.6** (2 Նեփի 9.39): Ցանկությունները մարդկանց ընկղմում են կործանման և կորստի մեջ՝ **Ա Տիմ. Չ.9:** Մեղքը մահ է ծնում՝ **Հակ. Ա.15:** Ով որ հաղթում է, երկրորդ մահից չի վնասվի՝ **Հայտ. Բ.11:** Նման մարդկանց վրա երկրորդ մահը գործություն չունի՝ **Հայտ. Ի.6, 12-14:** Ամբարիշտների բաժինը կլինի այն լճում, որը կրակով և ծծմբով վառվում է. որը երկրորդ մահն է՝ **Հայտ. ԻԱ.8** (ՎևոՒ 63.17-18): Մարդիկ ազատ են՝ ընտրելու ազատություն և հավերժական կյանք կամ ընտրելու գերություն և մահ՝ **2 Նեփի 2.27** (2 Նեփի 10.23, Ալմա 29.5, Հել. 14.30-31): Աստված մեզ համար ուղի է պատրաստել, որ խուսափենք մահից ու դժոխքից՝ **2 Նեփի 9.10:** Ազատեք ձեզ դժոխքի ցավերից, որպեսզի չհաշակեք երկրորդ մահը՝ **Հակոբ 3.11:** Բնական մարդը բշտամի է Աստծուն՝ **Մատթ. 3.19:** Թող որ Տերը շնորհի ձեզ ապաշխարություն, որպեսզի դուք չսանեք երկրորդ մահը՝ **Ալմա 13.30:** Ալման օղակված էր մահվան հավիտենական շղթաներով՝ **Ալմա 36.18:** Ամբարիշտները մահանում են արդարությանը վերաբերող բաների նկատմամբ՝ **Ալմա 40.26** (Ալմա 12.16): Անկումը մի հոգևոր մահ էր բերել ողջ մարդկության վրա՝ **Ալմա 42.9** (Հել. 14.16-18): Ադամն իր անկումով դարձավ հոգեպես մահացած՝ **ՎևոՒ 29.40-41, 44:**

ՄԱՀ ԵՐԿՐՈՐԳ: *Տե՛ս* Մահ հոգևոր

ՄԱՀ ՖԻԶԻԿԱԿԱՆ: *Տե՛ս նաև* Ադամի և Եվայի անկումը. Հարություն. Մահկանացու, Մահկանացություն. Փրկություն

Մարմնի և ոգու առանձնացումը: Անկումը մահկանացություն և մահ բերեց երկիր (2 Նեփի 2.22, Մովսես 6.48): Հիսուս Քրիստոսի քավությունը հաղթեց մահը, այնպես որ բոլորը հարություն կանեն (Ա Կոր. ԺԵ.21-23): Հարությունն անհա-

տույց պարզև է բոլոր մարդկանց՝ անկախ նրանից, թե այս կյանքում նրանք բարիք են գործել, թե չարիք (Ալմա 11.42-44): Յուրաքանչյուր անձնավորություն միայն մեկ ֆիզիկական մահ է ունենալու, որովհետև երբ մենք հարություն առնենք, մեր մարմիններն այլևս չեն մահանա (Ալմա 11.45):

Ասեն մարմին կմեռնի, և մարդը կրկին հող կդառնա՝ **Հոբ** Լ.Գ.15: Պատվական է Տիրոջ առաջ նրա սրբերի մահը՝ **Մադ.** ԾԺԶ.15: Հողը ետ կդառնա երկիր, և ոգին կվերադառնա Աստծո մոտ՝ **Ժող.** ԺԲ.7: Մարդով եղավ մահը՝ **Ա Կոր.** ԺԵ.21: Փրկիչն ունի դժոխքի և մահվան բանալիները՝ **Հայտ.** Ա.18: Ոչ մահ, ոչ ցավ այլևս չեն լինի՝ **Հայտ.** ԻԱ.4: Մահն անցել է բոլոր մարդկանց վրա՝ **2 Նեփի** 9.6, 11 (Ալմա 12.24): Նրանք երբեք սարսավով չէին նայում մահվան վրա՝ **Ալմա** 27.28: Ալման բացատրել է հոգու վիճակը մահվան և հարության միջև՝ **Ալմա** 40.11: Նրանք, ովքեր մահանում են ինձանում, մահ չեն ճաշակի՝ **ՎևոՒ** 42.46: Նրանք, ովքեր նշանակված չեն մահվան, պիտի բժշկվեն՝ **ՎևոՒ** 42.48: Ես ձեզ կփորձեմ բոլոր բաներում, մինչև իսկ մահով՝ **ՎևոՒ** 98.14: Դեպի հողը պիտի վերադառնաս՝ **Մովսես** 4.25: Ադամն ընկավ. և նրա անկումով եկավ մահը՝ **Մովսես** 6.48:

ՄԱՀԱՑԱԾՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՓՐԿՈՒԹՅՈՒՆ: *Տե՛ս* Փրկություն մահացածների համար

ՄԱՀԿԱՆԱՑՈՒ, ՄԱՀԿԱՆԱՑՈՒ-ԹՅՈՒՆ: *Տե՛ս նաև* Ադամի և Եվայի անկումը. Աշխարհ. Մահ ֆիզիկական. Մարմին

Ծնողից մինչև ֆիզիկական մահն ընկած ժամանակաշրջանը: Սա երբեմն կոչվում է երկրորդ վիճակ:

Նրանից կերած օրդ անկասկած պիտի մեռնես՝ **Ճն.** Բ.16-17 (Մովսես 3.16-17): Մահանալիս հոգին կվերադառնա Աստծո մոտ, իսկ մարմինը՝ երկրի հողին՝ **Ժող.** ԺԲ.7 (Ճն. Գ.19, Մովսես 4.25): Մի թողեք, որ մեղքը թագավորի ձեռք մահկանացու մարմնի մեջ՝ **Հոովմ.** Զ.12: Այս մահկանացու մարմինը պիտի անհամություն հագնի՝ **Ա Կոր.** ԺԵ.53 (Ենովս 1.27, Մոսիա 16.10, Մորմ. 6.21): Մարդու վիճակը

դարձավ փորձության վիճակ՝ **2 Նեփի** 2.21 (Ալմա 12.24, 42.10): Ադամն ընկավ, որպեսզի մարդիկ լինեն՝ **2 Նեփի** 2.25: Արդյոք դուք նայո՞ւմ եք առաջ ու տեսնում այս մահկանացու մարմինն անմահության մեջ բարձրացած՝ **Ալմա** 5.15: Այս կյանքն է ժամանակը նախապատրաստվելու՝ հանդիպելու Աստծուն՝ **Ալմա** 34.32: Մի վախեցեք մահից. քանզի այս աշխարհում ձեր ուրախությունը լիակատար չէ՝ **ՎևոՒ** 101.36: Նրանք, ովքեր պահում են իրենց երկրորդ վիճակը, փառքի կարժամանան՝ **Աբբ.** 3.26:

ՄԱՂԱՔԻԱ

Հին Կտակարանի մարգարե, որը գրել է մարգարեացել է մոտավորապես Ք.ծ.ա. 430 թվականին:

Մաղաքիայի գիրքը. Մաղաքիայի գիրքը, կամ մարգարեությունը, Հին Կտակարանի վերջին գիրքն է: Այն կարծես ամփոփում է չորս հիմնական թեմա՝ (1) Իսրայելի մեղքերը Մաղաքիա Ա.6-2.17, Գ.8-9. (2) Իսրայելի վրա գալիք դատաստանները՝ նրա անհնազանդության պատճառով Մաղաքիա Ա.14, Բ.2-3, 12, Գ.5. (3) խոստումներ հնազանդության համար՝ Մաղաքիա Գ.10-12, 16-18, Գ.2-3 և (4) մարգարեություններ Իսրայելի վերաբերյալ՝ Մաղաքիա Գ.1-5, Գ.1, 5-6 (ՎևոՒ 2, 128.17, ՋՍ-Պ 1.37-39):

Իր մարգարեության մեջ, Մաղաքիան գրել է Հովհաննես Մկրտչի մասին (Մաղ. Գ.1, Մատ. ԺԱ.10), տասանորդի օրենքի մասին (Մաղ. Գ.7-12), Տիրոջ երկրորդ գալստի մասին (Մաղ. Գ.5) և Եղիայի վերադարձի մասին (Մաղ. Գ.5-6, ՎևոՒ 2, 128.17, ՋՍ-Պ 1.37-39): Փրկիչը Նեփիացիներին վկայակոչել է Մաղաքիայի Գ և Գ գլուխներն ամբողջությամբ (3 Նեփի 24-25):

ՄԱՄՈՆԱ: *Տե՛ս նաև* Փող

Արամեական բառ, որը նշանակում է «հարստություններ» (Մատ. Զ.24, Դուկ. ԺԶ.9, ՎևոՒ 82.22):

ՄԱՅՐ: *Տե՛ս նաև* Եվա. Ընտանիք. Ծնողներ

Սրբազան տիտղոս, որը վերաբերում է այն կնոջը, որը երեխաներ է բերում կամ

որդեզրում: Մայրերն օժանդակում են Աստծո ծրագրին՝ մահկանացու մարմին տալով Աստծո հոգեղեն զավակներին:

Ադամն իր կնոջն անվանեց Եվա, որովհետև նա բոլոր ապրողների մայրն էր՝ **ԾՃ. Գ.20** (Մովսես 4.26): Պատվիր քո հորը և քո մորը՝ **ԵԼ. Ի.12** (Եփես. 2.1–3, Մոսիա 13.20): Մի մերժիր քո մոր օրենքը՝ **Առակ. 1.8**: Հիմար մարդը կանարգի իր մորը՝ **Առակ. ԺԹ.20** (Առակ. Ժ.1): Մի անարգիր քո մորը, երբ ծեր է՝ **Առակ. ԻԳ.22**: Նրա երեխաներն ու ամուսինը կանգնում են և անվանում նրան երանելի և նրա ամուսինը գովաբանում է նրան՝ **Առակ. ԼԱ.28**: Հիսուսի մայրը կանգնել էր խաչի մոտ՝ **Հովհ. ԺԹ.25–27**: Երկու հազար Լամանացի ռազմիկներն ուսուցանվել էին իրենց մայրերի կողմից՝ **Ալմա 56.47** (Ալմա 57.21): Մեր փառահեղ մայր Եվան այն մեծերի և հզորների թվում էր, որոնց Տերն ուսուցանել էր հոգիների աշխարհում՝ **ՎԼՈՒ 138.38–39**:

ՄԱՆԱՆԱ: *Տե՛ս նաև* Ելից. Կյանքի հաց

Նուրբ, թեփիկների մման ուտելիք՝ մեղրով գաթայի (Ել. ԺԶ.14–31) կամ յուղով շինած գաթայի համով (Թվ. ԺԱ.8): Տերը պատրաստեց այն՝ Իսրայելի զավակներին բառասուն տարի անապատում կերակրելու համար (Ել. ԺԶ.4–5, 14–30, 35, Հես. Ե.12, 1 Նեփի 17.28):

Իսրայելի զավակներն այն կոչեցին Ման (կամ եբրայերեն «Մա՞ն հու»), որը նշանակում է՝ «ի՞նչ է սա», որովհետև չգիտեին, թե դա ինչ էր (Ել. ԺԶ.15): Այն անվանվել է նաև «հրեշտակների հաց» և «երկնքի հաց» (Սաղ. ՀԼ.24–25, Հովհ. 2.31): Այն խորհրդանշում էր Քրիստոսին, որը պիտի լիներ Կյանքի Հացը (Հովհ. 2.31–35):

ՄԱՆԱՍԵ: *Տե՛ս նաև* Եփրեմ. Իսրայել. Հովսեփ՝ Հակոբի որդի

Հին Կտակարանում՝ ավագ որդին Ասամեթի և Հովսեփի, որը ծախվեց Եգիպտոս (ԾՃ. ԽԱ.50–51): Նա և նրա եղբայր Եփրեմը Հակոբի (Իսրայելի) թոռներն էին, սակայն որդեգրվեցին ու օրինվեցին նրա կողմից, ինչպես որ նրա որդիները լինեին (ԾՃ. ԽԸ.1–20):

Մանասեի ցեղը. Մանասեի հետնորդներ

րը համարվեցին Իսրայելի ցեղերի թվում (Թվ. Ա.34–35, Հես. ԺԳ.29–31): Մովսեսի օրհնությունը Հովսեփի ցեղին, որը տրվեց նաև Եփրեմին և Մանասեին, արձանագրված է Երկրորդ Օրինաց ԼԳ.13–17-ում: Նրանց նշանակված հողերը մասամբ Հորդանանից արևմուտք էին և Եփրեմի կողքին: Նրանք նաև գաղութներ ունեին Հորդանանի արևելքում, Բասանի և Գադադի հարուստ արոտավայրերում: Վերջին օրերին, ցրված Իսրայելի հավաքման գործում, Մանասեի ցեղը կօգնի Եփրեմի ցեղին (Բ Օր. ԼԳ.13–17): Մորմոնի Գրքի մարգարե Լեքին Մանասեի հետնորդն էր (Ալմա 10.3):

ՄԱՆԱՆԵՆԻ ՀԱՏԻԿ

Մանանելս բույսի սերմերը: Չնայած որ սերմը շատ փոքր է, սակայն նրանից աճող բույսի բարձրությունը շատ մեծ է: Հիսուսը երկնքի արքայությունը համեմատել է մանանելսի հատիկի հետ (Մատ. ԺԳ.31):

Եթե մանանելսի հատի չափ հավատք ունենաք, կարող եք սարերը տեղավորխել՝ **Մատ. ԺԷ.19**:

ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՄԿԻՐՏՈՒԹՅՈՒՆ:

Տե՛ս նաև Երեխա, Երեխաներ. Հաշիվ, Պատասխանատու, Պատասխանատվություն. Մկրտություն, Մկրտել – Մկրտությունը մանուկների համար չէ. Փրկություն – Երեխաների փրկությունը

Պատասխանատվության տարիքից՝ ուր տարեկանից ցածր մանուկներին և փոքր երեխաներին մկրտելու ոչ անհրաժեշտ գործողություն: Տերը դատապարտում է մանուկների մկրտությունը (Մոր. 8.10–21): Երեխաները ծնվում են անաղարտ և անմեղ: Սատանան գորություն չունի փորձելու երեխաներին, քանի դեռ նրանք պատասխանատու չեն դարձել (ՎԼՈՒ 29.46–47), ուստի նրանք կարիք չունեն ոչ պաշխարելու, ոչ էլ մկրտվելու: Երեխաները պիտի մկրտվեն ուր տարեկան հասակում (ՎԼՈՒ 68.25–27):

ՄԱՍԱԹԻԱ: *Տե՛ս նաև* Առաքյալներ – Առաքյալների ընտրությունը

Այն անձնավորությունը, որն ընտրվել էր,

որ փոխարիներ Հուդա Իսկարիովտացուն, որպես Տասներկու Առաքյալների Քվորումի անդամ (Գոր. Ա.15–26): Նա աշակերտ էր եղել Հիսուսի ողջ մահկանացու ծառայության ընթացքում (Գոր. Ա.21–22):

ԱՄՏԹԵՈՍ: *Տես նաև* Ավետարաններ

Հիսուս Քրիստոսի Առաքյալը և Նոր Կտակարանի առաջին գրքի հեղինակը: Մատթեոսը, որը հրեա էր և Կափառնալուծում մաքսավոր էր Հռոմեացիների մոտ, հավանաբար, ծառայում էր Հերովդես Անտիպասին: Նախքան իր դարձի գալը, նա հայտնի էր որպես Ղևի Ալփեան (Մար. Բ.14): Հիսուսի աշակերտ կանչվելուց ոչ շատ անց, նա խնջույք կազմակերպեց, որին ներկա էր Տերը (Մատ. Թ.9–13, Մար. Բ.14–17, Ղուկ. Ե.27–32): Մատթեոսը, ըստ երևույթին, շատ գիտելիքներ ուներ Հին Կտակարանի սուրբ գրությունների վերաբերյալ, և մանրամասնորեն տեսնում էր Տիրոջ կյանքում կատարվող մարգարեությունները: Առաքյալի հետագա կյանքի մասին շատ քիչ է հայտնի: Կա ավանդություն, որը հայտարարում է, որ նա նահատակվել է որպես մարտիրոս:

Մատթեոսի Ավետարանը. Նոր Կտակարանի առաջին գիրքը: Մատթեոսի Ավետարանը սկզբնապես գրվել էր, հավանաբար, Պաղեստինի հրեաների օգտագործման համար: Այնտեղ շատ քաղվածքներ կան Հին Կտակարանից: Մատթեոսի հիմնական նպատակն էր՝ ցույց տալ, որ Հիսուսը Հին Կտակարանի Մեսիան է, որի մասին խոսել էին մարգարեները: Նա շեշտել է նաև, որ Հիսուսը մարդկանց Թագավորն ու Դատավորն է:

Գլուխների ընդհանուր տեսության համար, տես «Ավետարաններ» թեման:

ՄԱՐԳԱՐԵ: *Տես նաև* Հայտնություն.

Մարգարեություն, Մարգարեանալ.

Նախագահ. Տեսանող

Մարդ, որը կանչվել է Աստծո կողմից և խոսում է նրա անունից: Որպես Աստծո ստրիանդակ՝ մարգարեն Աստծո կողմից ստանում է պատվիրաններ, մարգարեություններ և հայտնություններ: Նրա պատասխանատվությունն է՝ հայտնի դարձնել Աստծո կամքը և նրա իրական բնույթը մարդկությանը և ցույց տալ այն գործերի

իմաստը, որոնք նա կատարում է նրանց համար: Մարգարեն դատապարտում է մեղքը և կանխավ ասում է հետևանքների մասին: Նա արդարության քարոզիչ է: Երբեմն մարգարեները կարող են ոգեշնչվել կանխավ պատմելու ապագան՝ մարդկության օգուի համար: Այնուամենայնիվ, նրա առաջնային պատասխանատվությունն է՝ վկայել Քրիստոսի մասին: Այսօր Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Նախագահն Աստծո մարգարեն է երկրի վրա: Առաջին Նախագահության անդամները և Տասներկու Առաքյալները հաստատվում են՝ որպես մարգարեներ, տեսանողներ և հայտնողներ:

Աստված կցանկանար, որ Տիրոջ բոլոր ժողովուրդը մարգարեներ լինեին՝ **Թվ. ԺԱ.29:** Եթե ձեզանից մեկը մարգարե լինի, ես՝ Տերս, ինձ կճանաչեցնեմ նրան տեսիլքի մեջ՝ **Թվ. ԺԲ.6:** Տերը վկայություն էր տվել Իսրայելի դեմ՝ իր բոլոր մարգարեների միջոցով՝ **Գ.Թագ. ԺԷ.13 (Բ Մն. ԼԶ.15–16, Երեմ. Է.25):** Ես քեզ ազգերի մարգարե եմ կարգել **Երեմ. Ա.5, 7:** Նա իր գաղտնիքները հայտնում է իր ծառաներին՝ մարգարեներին՝ **Ամոնս Գ.7:** Նա խոսեց իր սուրբ մարգարեների բերանով՝ **Ղուկ. Ա.70 (Գոր. Գ.21):** Բոլոր մարգարեները վկայել են Քրիստոսի մասին **Գոր. Ժ.43:** Աստված մարգարեներ է դրել Եկեղեցում՝ **Ա Կոր. ԺԲ.28 (Եփես. Գ.11):** Եկեղեցին կառուցված է Առաքյալների և մարգարեների հիմքի վրա՝ **Եփես. Բ.19–20:** Մարդիկ մեծեցին մարգարեների խոսքերը՝ **1 Նեփի 3.17–18 (2 Նեփի 26.3):** Հոգու միջոցով են բոլոր բաները հայտնի դարձվում մարգարեներին՝ **1 Նեփի 22.1–2:** Քրիստոսը եկավ Նեփիացիների մոտ, որպեսզի իրագործի բոլոր բաները, որոնք նա խոսել էր իր սուրբ մարգարեների բերանով՝ **3 Նեփի 1.13 (ՎևոՒ 42.39):** Նրանք, ովքեր ուշք չեն դարձնում մարգարեների խոսքերին, կկարվեն՝ **ՎևոՒ 1.14:** Նրանք, ովքեր հավատում են մարգարեների խոսքերին, հավերժական կյանք ունեն՝ **ՎևոՒ 20.26:** Դուք պիտի ընդունեք մարգարեի խոսքերը, ինչպես իմ իսկ բերանից՝ **ՎևոՒ 21.4–6:** Հայտնություններն ու պատվիրանները, Եկեղեցու համար, գալիս են միայն մեկի միջոցով, ով նշանակված է՝ **ՎևոՒ 43.1–7:** Նախագահի պարտականությունն է՝ նախագահել ողջ

Եկեղեցու վրա և լինել Մովսեսի պես՝ լինել մարգարե՝ **ՎԼՈՒ** 107.91–92: Մենք հավատում ենք մարգարեներին՝ **ՀՀ** 1.6:

ՄԱՐԳԱՐԵՆԵՐԻ ԳՊՐՈՑ: *Տե՛ս*

նաև Սմիթ Ջոզեֆ կրտսեր

Կիրթննդում՝ Օհայո (Ամերիկայի Միացյալ Նահանգներում), 1832–1833թթ. ձմռանը Տերը Ջոզեֆ Սմիթին պատվիրեց մի դարոց կազմակերպել, որպեսզի եղբայրներին ուսուցանվի բոլոր բաները, որոնք վերաբերում են ավետարանին և Աստծո արքայությանը: Եկեղեցու վաղ շրջանի ղեկավարներից շատերը ծնունդ առան այդ դարոցից: Մարգարեների կամ երեցների մեկ այլ դարոց ղեկավարում էր Փարլի Պ. Պրատը Միսսուրիի Ջեկսոն գավառում (ՎԼՈՒ 97.1–6): Նմանատիպ դարոցներ սկսեցին կազմակերպվել Մրբերի արևմուտք գաղթելուց ոչ շատ անց. սակայն շուտով դրանք դադարեցին գործել: Ավետարանի ուսուցումն այսօր անցկացվում է տանը, քահանայության քվորումներում և տարբեր օժանդակ կազմակերպություններում, և Եկեղեցու դարոցների և ճեմարանի ու ինստիտուտի դասարանների միջոցով:

Սրբագործվեք և միմյանց սովորեցրեք արքայության վարդապետությունները՝ **ՎԼՈՒ** 88.74–80: Փոտրեք ջանասիրաբար և ուսուցանեք միմյանց՝ **ՎԼՈՒ** 88.118–122: Հաստատվեց մարգարեների դարոցի կարգը՝ **ՎԼՈՒ** 88.127–141: Առաջին Նախագահությունն է կրում մարգարեների դարոցի բանալիները՝ **ՎԼՈՒ** 90.6–7:

ՄԱՐԳԱՐԵՈՒԹՅՈՒՆ,

ՄԱՐԳԱՐԵԱՆԱԼ: *Տե՛ս նաև*

Մարգարե. Մարգարետիի. Հայտնություն. Տեսանող

Մարգարեությունը բաղկացած է Աստծու ոգեշնչված խոսքերից կամ գրություններից, որոնք մարդ ստանում է Սուրբ Հոգուց, հայտնության միջոցով: Հիսուսի վկայությունը մարգարեության ոգին է (Հայտ. ԺԹ.10): Մարգարեությունը կարող է վերաբերել անցյալին, ներկային կամ ապագային: Երբ մարդ մարգարեանում է, նա խոսում կամ գրում է այն, ինչ Աստված ցանկանում է, որ նա իմանա՝ իր բարիքի կամ ուրիշների բարիքի համար: Մարդիկ կարող են մարգարեություն կամ

հայտնություն ստանալ իրենց անձնական կյանքի համար:

Աստված կցանկանար, որ Տիրոջ բոլոր ժողովուրդը մարգարե լիներ՝ **ԹՎ. ԺԱ.29**: Ձեր որդիները և դուստրերը կմարգարեանան՝ **Հովել** Բ.28 (Գոր. Բ.17–18): Նա հայտնում է իր գաղտնիքներն իր ծառաներին՝ մարգարեներին՝ **Ամովս** Գ.7: Սուրբ գրքերի ամեն մարգարեություն իր հատուկ մեկնությունը չունի՝ **Բ Պետ.** Ա.20: Նեփիացիներն ունեին շատ հայտնություններ և մարգարեության ոգին՝ **Հակոբ** 4.6, 13: Աման և Ամուղելը գիտեին Ջիզրոմի սրտի խորհուրդները մարգարեության ոգու շնորհիվ՝ **Ալմա** 12.7: Վայ նրան, ով ասում է, որ Տերն այլևս չի գործում մարգարեությամբ՝ **3 Նեփի** 29.6: Զննեք Եսայիայի մարգարեությունները՝ **Մորմ.** 8.23: Բոլոր մարգարեությունները կկատարվեն՝ **ՎԼՈՒ** 1.37–38: Մարդիկ պետք է Աստծուց կանչված լինեն մարգարեությամբ՝ **ՀՀ** 1.5:

ՄԱՐԳԱՐԵՈՒՀԻ: *Տե՛ս նաև*

Մարգարեություն, Մարգարեանալ

Կին, որը վկայություն է ստացել Հիսուսի մասին և վայելում է հայտնության ոգին: Մարգարետիին չի կրում քահանայություն կամ նրա բանալիները: Չնայած սուրբ գրքերում քիչ թվով կանայք են կոչվել մարգարետիին, բայց շատերն են մարգարեություններ արել, ինչպես՝ Ռեբեկան, Աննան, Եղիսաբեթը և Մարիամը:

Մարիամն անվանվել է մարգարետիի՝ **Ել. ԺԵ.20**: Դեբորան անվանվել է մարգարետիի՝ **Դատ.** Դ.4: Ողբան անվանվել է մարգարետիի՝ **Դ Թագ.** ԻԲ.14 (Բ Մն. ԼԴ.22): Աննան անվանվել է մարգարետիի՝ **Ղուկ.** Բ.36:

ՄԱՐԳ ՄԱՐՈՒԹՅԱՆ: *Տե՛ս նաև*

Աստված, Աստվածություն.

Երկնային Հայր. Մարդու Որդի

Հայր Աստծո մեկ այլ անունը (Մովսես 6.57):

ՄԱՐԳ, ՄԱՐԳԻԿ: *Տե՛ս նաև* Աստծո

որդիներն ու դուստրերը. Աստված, Աստվածություն. Հոգեղեն ստեղծում. Ոգի

Վերաբերում է ողջ մարդկությանը՝ և՛

տղամարդկանց, և՛ կանանց: Բոլոր տղամարդիկ և կանայք, բառացիորեն, Երկնային Հոր հոգևոր զավակներն են: Ծնվելով մահկանացու կյանքում, նրանք ստանում են ֆիզիկական, մահկանացու մարմին: Այդ մարմինները ստեղծվել են Աստծո պատկերով (Ծն. Ա.26–27): Տղամարդիկ և կանայք, որոնք հավատարիմ կլինեն ամերիաժեշտ օրինություններ ստանալու, պահելով իրենց ուխտերը, և պահելով Աստծո պատկերացները, կստանան իրենց վեհացումը և կլինեն ինչպես Աստված:

Աստված մարդուն ստեղծեց իր պատկերով՝ **Ծն. Ա.27** (Մոսիա 7.27, Վև.ՈՒՄ 20.17–18): Ի՞նչ է մարդը, որ հիշում ես նրան՝ **Մադ. Ը.4–5**: Անհիշյալ է նա, որ մարդու է ապավինում և մարմինն իրեն բազուկ շինում՝ **Երեմ. ԺԷ.5** (2 Նեփի 4.34, 28.26, 31): Երբ որ մարդ դարձա, երեխայության բաները խափանեցի՝ **Ա Կոր. ԺԳ.11**: Մարդիկ կան, որպեսզի ունենան ուրախություն **2 Նեփի 2.25**: Բնական մարդը բշնամի է Աստծուն՝ **Մոսիա 3.19**: Ինչպիսի մարդ էք դուք պարտավոր լինել՝ **3 Նեփի 27.27**: Մարդու գործերն են խափանվում, ոչ թե Աստծո գործերը՝ **Վև.ՈՒՄ 3.3**: Դուք չպետք է մարդուց ավելի շատ վախենալիք, քան Աստծուց՝ **Վև.ՈՒՄ 3.7** (Վև.ՈՒՄ 30.11, 122.9): Բոլոր բաներն արարվել են մարդու օգտի և օգտագործման համար՝ **Վև.ՈՒՄ 59.18**: Ես գիտեմ, որ մարդը ոչինչ է՝ **Մովսես 1.10**: Աստծո գործը և փառքն է՝ իրականացնել մարդու անմահությունը և հավերժական կյանքը՝ **Մովսես 1.39**:

Մարդը՝ Երկնային Հոր հոգեղեն զավակ. Նրանք իրենց երեսների վրա ընկան և ասացին. Ո՛վ Աստված, բոլոր մարմնի հոգիները Աստված՝ **ԹՎ. ԺՂ.22** (ԹՎ. ԻԷ.16): Դուք ձեր Տեր Աստծո զավակներն եք՝ **Բ Օր. ԺԳ.1**: Դուք աստվածներ եք և ամենքը՝ Բարձրյալի զավակներ՝ **Մադ. ԶԲ.6**: Դուք կենդանի Աստծո որդիք եք՝ **Ով.Ս.Ա.10**: Մի՞թե մեր ամենի հայրը մեկ չէ. մի՞թե մեկ Աստված չէ ստեղծել մեզ՝ **Մադ. Բ.10**: Մենք Աստծո ազգից ենք՝ **Գոր. ԺԷ.29**: Հոգին ինքը վկայություն է տալիս, որ մենք Աստծո զավակներն ենք՝ **Հռովմ. Ը.16**: Հնազանդվել հոգիների Հորը՝ **Եբր. ԺԲ.9**: Բոլոր մարդկանց հոգիները տարվում են տուն՝ այն Աստծո մոտ, որը նրանց

կյանք է տվել՝ **Ալմա 40.11**: Երկրի բնակիչներն Աստծո ծնված որդիներն ու դուստրերն են՝ **Վև.ՈՒՄ 76.24**: Մարդն ի սկզբանե Հոր մոտ էր՝ **Վև.ՈՒՄ 93.23, 29**: Աստված բոլոր մարդկանց ստեղծեց հոգեղեն, նախքան նրանց երկրի վրա լինելը՝ **Մովսես 3.5–7**: Ես եմ Աստված. Ես արարեցի աշխարհը, և մարդկանց, նախքան նրանց մարմնում լինելը՝ **Մովսես 6.51**:

Մարդ՝ Երկնային Հոր նման դառնալու ներուժը. Արդ դուք կատարյալ եղեք, ճիշտ ինչպես ձեր Հայրը՝ **Մատ. Ե.48** (3 Նեփի 12.48): Գրված չէ՞ ձեր օրենքում, որ դուք աստվածներ եք՝ **Հովհ. Ժ.34** (Վև.ՈՒՄ 76.58): Մենք կարող ենք դառնալ Աստծո ժառանգներ և Քրիստոսի ժառանգակիցների՝ **Հռովմ. Ը.17**: Դու որդի ես, և եթե որդի, ապա Աստծո ժառանգ՝ Քրիստոսի միջոցով՝ **Գաղ. Գ.7**: Երբ նա հայտնվի նրա նման կլինենք՝ **Ա Հովհ. Գ.2**: Ով որ հաղթում է, կտամ նրան, որ ինձ հետ նստի իմ գահի վրա՝ **Հայտ. Գ.21**: Նրանց ես տվել եմ դառնալու Աստծո որդիներ՝ **3 Նեփի 9.17**: Նրանք, ովքեր ժառանգում են սելեւոսիալ թագավորությունը, աստվածներ են, այսինքն՝ Աստծո որդիք՝ **Վև.ՈՒՄ 76.50, 58**: Այն ժամանակ նրանք աստվածներ կլինեն, որովհետև ունեն ողջ գործությունը՝ **Վև.ՈՒՄ 132.20**:

ՄԱՐԳԻԿ: *Տե՛ս* Մարդ, Մարդիկ

ՄԱՐԳՈՒՆ ՈՐԳԻ: *Տե՛ս նաև* Աստված, Աստվածություն. Հիսուս Քրիստոս

Տիտղոս, որը Հիսուս Քրիստոսն օգտագործում էր իր մասին խոսելիս (Ղուկ. Թ.22, Ղուկ. ԻԱ.36): Այն նշանակում էր Սրբության Մարդու Որդի: Սրբության Մարդը Հայր Աստծո անուններից մեկն է: Երբ Հիսուսն իրեն կոչում էր Մարդու Որդի, դա բացահայտ հայտարարություն էր Հոր հետ ունեցած իր աստվածային հարաբերության վերաբերյալ: Այս տիտղոսը հաճախ է հայտնվում Ավետարաններում: Վերջին օրերի հայտնությունները հաստատում են Փրկչի այս անվան հատուկ իմաստն ու սրբությունը (Վև.ՈՒՄ 45.39, 49.6, 22, 58.65, Մովսես 6.57):

ՄԱՐԹԱ: *Տե՛ս նաև* Բեթանիացի Մարիամը. Ղազարոս

Ղազարոսի և Մարիամի քույրը Նոր

Կտակարանում (Ղուկ. Ժ.38-42, Հովհ. ԺԱ.1-46, ԺԲ.2):

ՄԱՐԻԱՄ: *Տէս նուս* Մովսես

Հին Կտակարանում՝ Մովսեսի քույրը (Թվ. ԻԶ.59):

Հետևում էր եղեգնից պատրաստած տապանակին՝ **Ել.** Բ.1-8: Թմբուկներով առաջնորդեց կանանց՝ **Ել.** ԺԵ.20-21: Տրտնջաց Մովսեսի դեմ և զարկվեց բորոտությամբ, հետո բժշկվեց՝ **Թվ.** ԺԲ.1-15 (Բ Օր. ԻԳ.9):

ՄԱՐԻԱՄ՝ ՀԻՍՈՒՍԻ ՄԱՅՐԸ: *Տէս նուս* Հիսուս Քրիստոս. Հովսեփ՝ Մարիամի ամուսինը

Նոր Կտակարանում՝ կույս, որն ընտրվել էր Հայր Աստծո կողմից, որ լինի Իր Որդու մարմնական մայրը: Հիսուսի ծնունդից հետո, Մարիամն էլի երեխաներ ունեցավ (Մար. Զ.3):

Նա նշանված էր Հովսեփի հետ՝ **Մատ.** Ա.18 (Ղուկ. Ա.27): Հովսեփին ասվեց, որ չբաժանվի Մարիամից, ոչ էլ նրա նշանը նա վերցնի՝ **Մատ.** Ա.18-25: Իմաստուններն այցելեցին Մարիամին՝ **Մատ.** Բ.11: Մարիամը և Հովսեփը երեխայի հետ փախան Եգիպտոս՝ **Մատ.** Բ.13-14: Հերովդեսի մահից հետո ընտանիքը վերադարձավ Նազարեթ՝ **Մատ.** Բ.19-23: Գաբրիել հրեշտակն այցելեց նրան՝ **Ղուկ.** Ա.26-38: Նա այցելեց Եղիսաբեթին՝ իր ազգակցին՝ **Ղուկ.** Ա.36, 40-45: Մարիամը Տիրոջը փառավորելու սաղմոս ասաց՝ **Ղուկ.** Ա.46-55: Մարիամը Հովսեփի հետ գնաց Բեթլեհեմ՝ **Ղուկ.** Բ.4-5: Մարիամը ծնեց Հիսուսին և նրան մտրիի մեջ դրեց՝ **Ղուկ.** Բ.7: Հովիվները գնացին Բեթլեհեմ՝ այցելելու մանուկ Քրիստոսին՝ **Ղուկ.** Բ.16-20: Մարիամը և Հովսեփը Հիսուսին տարան Երուսաղեմի տաճար՝ **Ղուկ.** Բ.21-38: Մարիամը և Հովսեփը Հիսուսի հետ գնացին Չատկի տոնին՝ **Ղուկ.** Բ.41-52: Մարիամը ներկա էր Կանայի հարսանիքին՝ **Հովհ.** Բ.2-5: Փրկիչը, երբ խաչի վրա էր, Հովհաննեսին խնդրեց հոգալ իր մոր մասին՝ **Հովհ.** ԺԹ.25-27: Քրիստոսի երկինք հավիտակվելուց հետո, Մարիամն Առաքյալների հետ էր՝ **Գոր.** Ա.14: Մարիամը մնացած բոլոր կույսերից գեղեցկագույնն էր ու ազնվագեղը՝ **1 Նեփի**

11.13-20: Քրիստոսի մայրը պիտի կոչվեր Մարիամ՝ **Մոսիա** 3.8: Մարիամը լինելու էր կույս՝ արժանավոր ու ընտրյալ մի անոթ՝ **Ալմա** 7.10:

ՄԱՐԻԱՄ ՄԱԳՂԱՂԵՆԱՑԻ

Մի կին Նոր Կտակարանում, որը դարձավ Հիսուս Քրիստոսի նվիրյալ աշակերտը: Մագղաղենացի բառն ակնարկում է Մագղաղեն, այն վայրը, որտեղից Մարիամն էր: Այն գտնվում է Գալիլեայի ծովի արևմտյան ափին:

Նա եղել է խաչի մոտ՝ **Մատ.** ԻԷ.56 (Մար. ԺԵ.40, Հովհ. ԺԹ.25): Նա եղել է Քրիստոսի թաղմանը՝ **Մատ.** ԻԷ.61 (Մար. ԺԵ.47): Նա գերեզմանի մոտ էր հարության առավոտյան՝ **Մատ.** ԻԸ.1 (Մար. ԺՁ.1, Ղուկ. ԻԳ.10, Հովհ. Ի.1, 11): Հարությունից հետո, Հիսուսն առաջինը հայտնվեց նրան՝ **Մար.** ԺՁ.9 (Հովհ. Ի.14-18): Նրանից յոթը դև էին դուրս եկել՝ **Ղուկ.** Ը.2:

ՄԱՐԻԱՄ՝ ՄԱՐԿՈՍԻ ՄԱՅՐԸ:

Տէս նուս Մարկոս

Նոր Կտակարանում՝ մայրը Հովհաննես Մարկոսի, որը գրել է Մարկոսի ավետարանը (Գոր. ԺԲ.12):

ՄԱՐԿՈՍ: *Տէս նուս* Ավետարաններ

Նոր Կտակարանում՝ Հովհաննես Մարկոսը Երուսաղեմում ապրող Մարիամի որդին էր (Գոր. ԺԲ.12). հնարավոր է նաև, որ նա Բառնաբասի կուզենը (կամ եղբորդին) էր (Կող. Գ.10): Նա գնաց Պողոսի և Բառնաբասի հետ, Երուսաղեմից իրենց առաջին միսիոներական ճամփորդության ժամանակ, և նրանցից բաժանվեց Պերգեոն (Գոր. ԺԲ.25, ԺԳ.5, 13): Ավելի ուշ, նա ուղեկցեց Բառնաբասին Կիպրոս գնալիս (Գոր. ԺԵ.37-39): Նա Պողոսի հետ էր Հռոմում (Կող. Գ.10, Փիլիմ. Ա.24). և Պետրոսի հետ էր Բաբելոնում (հավանաբար Հռոմում) (Ա Պետ. Ե.13): Ի վերջո, նա Տիմոթեոսի և Եփեսոսի հետ էր (Բ Տիմ. Գ.11):

Մարկոսի ավետարանը. Նոր Կտակարանի երկրորդ գիրքը: Մարկոսի ավետարանը հավանաբար գրվել է Պետրոսի ղեկավարությամբ: Նրա նպատակն է նկարագրել Տիրոջը, որպես Աստծո որդի, որն ապրում և գործում էր մարդկանց

մեջ: Մարկոսը եռանդազին և համեստությամբ նկարագրում է այն տպավորությունները, որ թողնում էր Հիսուսն իր ականատեսների վրա: Ըստ ավանդության՝ Պետրոսի մահից հետո Մարկոսը գնաց Տեգիպոսս, կազմավորեց Եկեղեցին Ալեքսանդրիայում և այնտեղ էլ նահատակվեց որպես մարտիրոս:

Գլուխների ընդհանուր տեսության համար, տես «Ավետարաններ» թեման:

ՄԱՐՄԻՆ: Տես նաև Հարություն.

Հոգի. Մահ ֆիզիկական.

Մահկանացու, Մահկանացություն

Մարմին բառն ունի մի բանի իմաստ՝ (1) մահկանացություն. (2) մարդու ֆիզիկական կամ մարմնական էություն. (3) մահկանացու, ֆիզիկական կառուցվածք՝ մսից և ոսկորից, որը ստեղծվել է Աստծո պատկերով, որը միավորված է ոգու հետ՝ որպես կենդանի անձի բաղկացուցիչ մաս: Հարության ժամանակ բոլոր տղամարդկանց և կանանց մարմինները հավերժ կվերամիավորվեն իրենց ոգու հետ: Մուրբ գրքերում մարմնի և ոգու միավորումը երբեմն անվանվում են հոգի (Ծն. Բ.7, ՎևՈՒ 88.15, Մովսես 3.7, 9, 19, Աբր. 5.7):

Մահկանացություն. Հիսուսը Հոր Միածինն է մարմնում՝ **Հովհ.** Ա.14 (Մոսիա 15.1-3): Ադամը դարձավ առաջին մարմինը՝ **Մովսես** 3.7:

Մարդու մարմնական էությունը. Անիծյալ լինի այն մարդը, որը մարմինն իրեն բազուկ է շինում՝ **Եբեմ.** ԺԵ.5: Հոգին հոծար է, բայց մարմինը տկար՝ **Մար.** ԺԳ.38: Մարմնի ցանկությունը Հորից չէ՝ **Ա Հովհ.** Բ.16: Նեփին վշտացած էր իր մարմնի և անօրինությունների համար՝ **2 Նեփի** 4.17-18, 34: Մի հաշտվեք դևի ու մարմնի հետ՝ **2 Նեփի** 10.24:

Ֆիզիկական կառուցվածք. Տեր Աստվածը հողի փոշուց կազմավորեց մարդուն՝ **Ծն.** Բ.7 (Մովսես 3.7): Շոշափեք ինձ և տեսե՛ք. որովհետև ոգին մարմինն և ոսկորներ չունի՝ **Ղուկ.** ԻԳ.39: Ես իմ մարմինը ճնշում եմ և նվաճում՝ **Ա Կոր.** Թ.27: Կա շնչավոր մարմին, կա և հոգևոր մարմին՝ **Ա Կոր.** ԺԵ.44: Մարմինն առանց հոգու մեռած է՝ **Հակ.** Բ.26: Մահկանացու մարմինը հարություն կառնի՝ որպես անմահ մարմին՝ **Ալմա** 11.43-45: Մարմնի ամեն

մաս պիտի վերականգնվի՝ **Ալմա** 41.2: Հիսուսը Նեփիացիներին ցույց տվեց իր հարություն առած մարմինը՝ **3 Նեփի** 10.18-19, 11.13-15: Հայրն ունի մսից և ոսկորից մարմին, այնպես շոշափելի, ինչպես մարդունը. Որդին նույնպես՝ **ՎևՈՒ** 130.22: Տղամարդուն և կնոջն Աստված ստեղծեց իր մարմնի պատկերով՝ **Մովսես** 6.9 (Ծն. Թ.6):

ՄԱՐՄՆԱԿԱՆ: Տես նաև Ադամի և

Եվայի անկումը. Բնական մարդ.

Զգայական, Զգայականություն

Այն, ինչը հոգևոր չէ. այս բառը, մասնավորապես, կարող է գործածվել կա՛մ մահկանացու և ֆիզիկական (ՎևՈՒ 67.10), կա՛մ աշխարհիկ, մարմնավոր և զգայական իմաստով (Մոսիա 16.10-12):

Մարմնական մտածողությամբ լինելը մահ է՝ **2 Նեփի** 9.39: Դևը հանդարտեցնում է մարդկանց՝ տանելով դեպի մարմնական ապահովություն՝ **2 Նեփի** 28.21: Նրանք իրենց դիտել էին իրենց մարմնական վիճակում՝ **Մոսիա** 4.2: Նա, ով համառում է իր սեփական մարմնական էությամբ, մնում է իր ընկած վիճակում՝ **Մոսիա** 16.5: Բոլորը պետք է Աստծուց ծնվեն՝ փոխված իրենց մարմնական և ընկած վիճակից՝ **Մոսիա** 27.25: Մարդկությունը դարձել է մարմնական, զգայական և դիվական՝ **Ալմա** 42.10: Նրանք, ովքեր հետևում են իրենց կամքի ու մարմնական ցանկությունների թելադրանքին, պետք է ընկնեն՝ **ՎևՈՒ** 3.4: Մարմնական մտքով մարդը չի կարող տեսնել Աստծուն՝ **ՎևՈՒ** 67.10-12: Մարդիկ դարձան մարմնական, զգայական և դիվական՝ **Մովսես** 5.13, 6.49:

ՄԱՐԸ ԹՈՄԱՍ Բ.

1830 թվականին Եկեղեցու վերականգնվելուց հետո՝ Տասներկու Առաքյալների Քվորումի առաջին Նախագահը՝ Նա կրում էր արքայություն բանալիները, որոնք վերաբերում էին Տասներկուսին (ՎևՈՒ 112.16), և 1838թ. հայտնությամբ պատվիրան ստացավ՝ հրատարակել Տիրույ խոսքը (ՎևՈՒ 118.2): Վարդապետություն և Ուխտերի 31-րդ բաժինն ուղղված է նրան: 1839թ. Մարչը Եկեղեցուց հեռացվեց, բայց 1857-ին կրկին մըրտվեց:

ՄԱՔՍԱՎՈՐ: *Տե՛ս նաև* Հռոմեական կայսրություն

Հին Հռոմում կառավարության համար սուրբ զանձող պաշտոնյա: Հրեաները հիմնականում ատում էին մաքսավորների: Որոշ մաքսավորներ պատրաստակամորեն ընդունեցին ավետարանը (Մատ. Թ.9–10, Գուկ. ԺԹ.2–8):

ՄԱՔՐԱՔԱՐՈՅՈՒԹՅՈՒՆ: *Տե՛ս նաև* Առաքինություն. Չգայական, Չգայականություն. Շնություն. Պռոնկություն

Տղամարդու և կնոջ սեռական մաքրություն:

Հովսեփը հակառակվեց Պետափրեսի կնոջ առաջարկին՝ **ԾՃ. ԼԹ.7–21** (ՎևՈՒ 42.24, 59.6): Շնություն մի անի՝ **ԵԼ. Ի.14:** Առաքինի կինն իր մարդու պակն է՝ **Առախ. ԺԲ.4** (Առախ. ԼԱ.10): Չգիտե՞ք, որ ձեր մարմինը Սուրբ Հոգու տաճարն է՝ **Ա Կոր. 2.18–19:** Օրինակ եղիր սրբությունով՝ **Ա Տիմ. Գ.12:** Ոչ մի անմաքուր բան չի կարող բնակվել Աստծո հետ՝ **1 Նեփի 10.21:** Քանզի ես՝ Տեր Աստված, հիանում եմ կամանց մաքրաբարոյությամբ՝ **Հակոբ 2.28:** Սեռական մեղքը պղծություն է՝ **Ալմա 39.1–13:** Մաքրաբարոյությունն ու առաքինությունն ամենաբանկ և արժեքավոր բաներն են՝ բոլոր բաներից առավել՝ **Մոր. 9.9:** Մենք հավատում ենք մաքրաբարո լինելուն՝ **ՀՀ 1.13:**

ՄԱՔՈՒՐ ԵՎ ԱՆՄԱՔՈՒՐ: *Տե՛ս նաև* Կեղտ, Կեղտոտություն. Մաքուր, Անարատ. Մովսեսի Օրենք

Հին Կառակարանու Տերը Մովսեսին և հին Իսրայելացիներին հայտնել էր, որ միայն որոշ ուտելիքներ էին մաքուր կամ, այլ խոսքով, ուտելու համար պիտանի: Այն տարբերությունը, որն Իսրայելացիները դուռն էին մաքուր և անմաքուր ուտելիքի միջև, մեծ ազդեցություն ուներ նրանց կրոնական և հասարակական կյանքի վրա: Որոշ կենդանիներ, թռչուններ և ձկներ համարվում էին մաքուր և ուտելու համար թույլատրելի, մինչդեռ մյուսներն անմաքուր էին և արգելված (Գև. ԺԱ, Բ Օր. ԺԳ.3–20): Որոշ հիվանդ մարդիկ նույնպես անմաքուր էին համարվում:

Հոգևոր իմաստով, մաքուր լինելը մեղքից և մեղսավոր ցանկություններից զերծ

լինելն է: Այս իմաստով այդ բանն օգտագործվում է՝ նկարագրելու համար մի մարդու, որն առաքինի է և ունի անարատ սիրտ (Մաղ. ԻԳ.4): Աստծո ուխտյալ ժողովրդին միշտ հատուկ հրահանգներ են տրվել՝ մնալու մաքուր (3 Նեփի 20.41, ՎևՈՒ 38.42, 133.5):

Նա, որ մաքուր է ձեռքով և անարատ՝ սրտով, վեր կզն Տիրոջ սարը՝ **Մաղ. ԻԳ.3–5:** Ոչ մի մարդու մի անվանեք պիղծ կամ անմաքուր՝ **Գոր. Ժ.11–28:** Կարո՞ղ եք նայել վեր՝ Աստծուն, այդ օրը, անարատ սրտով ու մաքուր ձեռքերով՝ **Ալմա 5.19:** Տերը կխրատի Սիոնին, մինչև որ նա մաքրվի՝ **ՎևՈՒ 90.36:** Մաքուր եղեք, ով Տիրոջ սպասները կրողներ՝ **ՎևՈՒ 133.4–5, 14** (Ես. ԾԲ.11):

ՄԵԼՔԻՍԵՂԵԿ: *Տե՛ս նաև* Մելքիսեդեկյան Քահանայություն. Մաղեմ

Հին Կառակարանի մեծ քահանայապետ, մարգարե և առաջնորդ, որն ապրել է ջրհեղեղից հետո և Աբրահամի ժամանակներում: Նրան կոչում էին Մաղեմի (Երուսաղեմի) թագավոր, խաղաղության թագավոր, արդարության թագավոր (որը հենց եբրայերեն Մելքիսեդեկ անվան նշանակությունն է) և բարձրյալ Աստծո քահանա:

Աբրահամը տասանորդ վճարեց Մելքիսեդեկին՝ **ԾՃ. ԺԳ.18–20:** Մելքիսեդեկի ժողովուրդն արդարություն գործեց և հասավ երկինք՝ **ՋՍԹ՝ ԾՃ. 14.25–40:** Քրիստոսը քահանայապետ էր ըստ Մելքիսեդեկի կարգի՝ **Եբբ. Ե.6:** Մելքիսեդեկը Մաղեմի թագավորն էր՝ Բարձրյալ Աստծո քահանա՝ **Եբբ. Է.1–3:** Մելքիսեդեկից ավելի մեծը չի եղել՝ **Ալմա 13.14–19:** Աբրահամը Մելքիսեդեկից ստացավ քահանայությունը՝ **ՎևՈՒ 84.14:** Տիրոջ անվան հարգանքից ելնելով՝ հին Եկեղեցին բարձրագույն քահանայությունը կոչեց Մելքիսեդեկյան Քահանայություն՝ **ՎևՈՒ 107.1–4:**

ՄԵԼՔԻՍԵՂԵԿՅԱՆ ՔԱՀԱՆԱՅՈՒԹՅՈՒՆ: *Տե՛ս նաև* Երեց. Մելքիսեդեկ. Քահանայություն

Մելքիսեդեկյան Քահանայությունը բարձրագույն կամ մեծագույն քահանայությունն է. Ահարոնյան Քահանայությունն ավելի ցածր քահանայությունն է: Մելքի-

սեղեկյան Քահանայությունը ներառում է Եկեղեցու հոգևոր օրհնությունների բանալիները: Բարձրագույն քահանայության արարողությունների միջոցով, աստվածայնության գորությունը բացահայտվում է մարդկանց (ՎևևՒՒ 84.18–25, 107.18–21):

Այս բարձրագույն քահանայությունն Աստված սկզբում հայտնեց Ադամին: Բոլոր տնտեսությունների հայրապետներն ու մարգարեներն ունեցել են այդ իշխանությունը (ՎևևՒՒ 84.6–17): Սկզբում այն կոչվել է Սուրբ Քահանայությունը ըստ Աստծո Որդու կարգի: Հետագայում այն հայտնի դարձավ որպես Մեղիսեղեկյան Քահանայություն (ՎևևՒՒ 107.2–4):

Երբ Բարայելի զավակները չապրեցին Մեղիսեղեկյան Քահանայության արտոնությունների և ուխտերի համեմատ, Տերը վերցրեց ավելի բարձր օրենքը և տվեց նրանց ավելի ցածր քահանայությունն ու ավելի ցածր օրենքը (ՎևևՒՒ 84.23–26): Դրանք կոչվեցին Ահարոնյան Քահանայություն և Մովսեսի օրենք: Երբ Հիսուսը եկավ երկիր, նա վերականգնեց Մեղիսեղեկյան Քահանայությունը հրեաների համար և սկսեց կառուցել Եկեղեցին նրանց մեջ: Սակայն քահանայությունը և Եկեղեցին կրկին կորսվեցին ուրացության հետևանքով: Հետագայում դրանք վերականգնվեցին Ջոզեֆ Սմիթ կրտսերի միջոցով (ՎևևՒՒ 27.12–13, 128.20, ՋՄ–Պ 1.73):

Մեղիսեղեկյան Քահանայության մեջ մտնում են երեցի, քահանայապետի, հայրապետի, Յոթանասունականի և Առաքյալի պաշտոնները (ՎևևՒՒ 107): Մեղիսեղեկյան Քահանայությունը միշտ կլինի Աստծո արքայության բաղկացուցիչ մասը երկրի վրա:

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու նախագահը բարձրագույն կամ Մեղիսեղեկյան Քահանայության նախագահն է, և նա կրում է Աստծո արքայությանը պատկանող բոլոր բանալիները երկրի վրա: Նախագահի կոչումը տվյալ ժամանակաշրջանում կրում է միայն մեկ մարդ, և նա միակ մարդն է երկրի վրա, որը լիազորված է գործածելու քահանայության բոլոր բանալիները (ՎևևՒՒ 107.64–67, ՎևևՒՒ 132.7):

Քրիստոսը հավիտյան քահանա է Մեղիսեղեկի կարգի պես՝ Մաղ. ԵԺ. 4 (Եբր.

Ե.6, 10, Է.11): Մեղիսեղեկյան Քահանայությունը սպասավորում է ավետարանը՝ Եբր. Է (ՎևևՒՒ 84.18–25): Մեղիսեղեկը մեծ հավատք գործադրեց և ստացավ բարձր քահանայության պաշտոնը՝ Ալմա 13.18: Մեղիսեղեկյան Քահանայությունը շնորհվեց Ջոզեֆ Սմիթին և Օլիվեր Քաուլերիին՝ ՎևևՒՒ 27.12–13 (ՋՄ–Պ 1.72): Այս քահանայությունը ստանում են երդումով և ուխտով՝ ՎևևՒՒ 84.33–42: Երկու բաժին, կամ հիմնական գլուխ կա՝ Մեղիսեղեկյան և Ահարոնյան քահանայությունը՝ ՎևևՒՒ 107.6: Մեղիսեղեկյան Քահանայությունը կրում է բոլոր հոգևոր օրհնությունները սպասավորելու իրավունքները՝ ՎևևՒՒ 107.8–18: Մովսեսը, Եղիաբ, Եղիան Ջոզեֆ Սմիթին և Օլիվեր Քաուլերիին տվեցին քահանայության բանալիները՝ ՎևևՒՒ 110.11–16: Այժմ ես տալիս եմ ձեզ պաշտոնյաներ, որոնք պատկանում են իմ քահանայությանը, որ դուք կարողանաք կրել նրա բանալիները՝ ՎևևՒՒ 124.123:

ՄԵՆ ԵՎ ՊԻՂՆ ԵԿԵՂԵՑԻ: Տե՛ս

Դև – Դևի եկեղեցին

ՄԵԿ: Տե՛ս Աստված, Աստվածություն. Միություն

ՄԵՂՍԵՂԵԿԻՆԻՍ: Տե՛ս նաև

Ապաշխարել, Ապաշխարություն

Միալ գործած վիճակը, կամ ափսոսանքի և ցավի զգացումները, որոնք մեղքի ուղեկիցներն են:

Նա մեղք է գործել և հանցավոր է՝ Ղև. 2.1–6: Ով որ անարժանությամբ ընդունի հաղորդությունը, մեղավոր կլինի Հիսուսի նարմին և արյան մեջ՝ Ա Կոր. ԺԱ.27: Մեղավորները ճշմարտությունը ծանր են համարում՝ 1 Նեփի 16.2: Մենք կատարյալ գիտելիք կունենանք մեր ողջ հանցանքի մասին՝ 2 Նեփի 9.14: Իմ հանցանքը սրբվեց՝ Ենովս 1.6: Պատիժ կար սահմանված, որը բերում էր խղճի խայթ՝ Ալմա 42.18: Թող քո մեղքերը խոռվեն քեզ այնպիսի մի խոռվքով, որը քեզ վար կբերի դեպի ապաշխարություն՝ Ալմա 42.29: Չեզանից ոմանք մեղավոր են իմ առաջ, բայց ես ողորմած կլինեմ՝ ՎևևՒՒ 38.14: Աստծո Որդին քավել է նախնական հանցանքը՝ Մովսես 6.54:

ՄԵՂՔ: *Տէ՛ս նաև* Պիղծ, Պղծություն.

Կեղտ, Կեղտոտություն.
Ապստամբություն. Անաստվածային.
Անիրավ, Անիրավություն.
Ամբարիշտ, Ամբարշտություն

Գիտակից անհնազանդությունն Աստծո պատվիրաններին:

Իր մեղքը ծածկողը չի բարգավաճի՝ **Առափ**. ԻԲ.13: Եթե ձեր մեղքերը կրկնակի կարմիրի պես լինեն, ձյունի պես կսպիտականան՝ **Ես**. Ա.18: Մեղսագործները պիտի մեռնեն, իսկ արդարները պիտի փրկվեն՝ **Եզեկ**. ԺԲ: Աստծո Գառը վերցնում է աշխարհի մեղքերը՝ **Հովհ**. Ա.29: Մկրտվեք և լվացեք ձեր մեղքերը՝ **Գոր**. ԻԲ.16: Մեղքի վարձքը մահն է՝ **Հռովմ**. Զ.23: Ով որ բարին գիտի և չի անում, նրա համար մեղք է՝ **Հակ**. Գ.17: Կդարձնես ինձ այնպիսին, որ ցնցվեմ մեղքի տեսքից՝ **2 Նեփի** 4.31: Վայ բոլոր նրանց, ովքեր մահանում են իրենց մեղքերում՝ **2 Նեփի** 9.38: Նրանք չէին կարող նայել մեղքի վրա, բացի դա լինեք զզվանքով՝ **Ալմա** 13.12: Մի կարծեք, թե դուք կվերականգնվեք մեղքից դեպի երջանկություն՝ **Ալմա** 41.9–10: Տերը չի կարող նայել մեղքի վրա նվազագույն իսկ աստիճանի թույլտվությամբ՝ **Ալմա** 45.16 (ՎևոՒ 1.31): Փոքր երեխաներն ընդունակ չեն մեղք գործելու՝ **Մոր**. 8.8: Որպեսզի ապաշխարեն, մարդիկ պետք է խոստովանեն և թողնեն իրենց մեղքերը՝ **ՎևոՒ** 58.42–43: Ավելի մեծ մեղք է մնում նրա մեջ, ով չի ներում՝ **ՎևոՒ** 64.9: Նա, ով մեղանշում է ավելի մեծ լույսի դեմ, ավելի մեծ դատապարտություն պիտի ստանա՝ **ՎևոՒ** 82.3: Մեղանշող հոգու մոտ պիտի վերադառնան նախկին մեղքերը՝ **ՎևոՒ** 82.7: Երբ մենք ձգտում ենք քողարկել մեր մեղքերը, երկիրքները ետ են քաշվում՝ **ՎևոՒ** 121.37:

ՄԵՂՔԵՐԻ ԹՈՂՈՒԹՅՈՒՆ: *Տէ՛ս նաև* Ապաշխարել, Ապաշխարություն.
Հիսուս Քրիստոս. Ներել. Քավել, Քավություն

Կատարած սխալների ներում՝ ապաշխարության պայմանով: Մեղքերի թողությունը հնարավոր է դարձել Հիսուս Քրիստոսի քավության շնորհիվ: Անձը ստանում է իր մեղքերի թողությունը, եթե

նա հավատք ունի առ Քրիստոս, ապաշխարում է իր մեղքերից, ստանում է մկրտության և ձեռնադրման արարողությունները՝ Սուրբ Հոգու պարգևի համար, և հնազանդվում է Աստծո պատվիրաններին (ՀՀ 1.3–4):

Եթե ձեր մեղքերը կրկնակի կարմիրի պես լինեն, ձյունի պես կսպիտականան՝ **Ես**. Ա.16–18: Դա է իմ արյունը, որը թափվում է շատերի համար՝ ի թողություն մեղքերի՝ **Մատ**. ԻԶ.28 (Եբր. Թ.22–28, ՎևոՒ 272): Ապաշխարեք և մկրտվեք՝ մեղքերի թողության համար՝ **Գոր**. Բ.38 (Դուկ. Գ.3, ՎևոՒ 107.20): Ամեն նրան հավատացողը մեղքերի թողություն կստանա՝ **Գոր**. Ժ.43 (Մոսիա 3.13): Քրիստոսն է այն աղբյուրը, որին պետք է նրանք ապավինեն՝ մեղքերի թողության համար՝ **2 Նեփի** 25.26: Մեր մեղքերի թողությունը պահպանելու համար, մենք պետք է հոգ տանենք աղքատների և կարիքավորների համար՝ **Մոսիա** 4.11–12, 26: Ով որ ապաշխարում է, նա ողորմության իրավունք պիտի ունենա՝ իր մեղքերի թողության համար՝ **Ալմա** 12.34: Պատվիրանները կատարելը բերում է մեղքերի թողություն՝ **Մոր**. 8.25: Ահարոնյան Քահանայությունը կրում է մեղքերի թողության համար ընկերմամբ մկրտության բանալիները՝ **ՎևոՒ** 13.1 (ՎևոՒ 84.64, 74, ՀՀ 1.4): Ես՝ Տերս, այլև չեմ հիշում նրանց մեղքերը՝ **ՎևոՒ** 58.42–43 (Եզեկ. ԺԲ.21–22): Նրանց ուսուցանվեց փոխարինող մկրտություն՝ մեղքերի թողության համար՝ **ՎևոՒ** 138.33:

ՄԵՈՅԱԼ ԾՈՎ

Հորդանանի դաշտավայրի հարավային ծայրամասի աղի ծովը: Այն նաև հայտնի է Աղի ծով անունով: Նրա մակարդակը մոտ 395 մետր ցածր է Միջերկրական ծովից: Սողոմ, Գոմորա, Սեգովր կամ Բաղա քաղաքները նրա ափերի մոտ էին գտնվում (Մճ. ԺԳ.2–3):

Ի կատարումն մարգարեության, և որպես Փրկչի երկրորդ գալստի նշաններից մեկը, Մեռյալ ծովի ջրերը կառողջանան և կյանքն այնտեղ կծաղկի (Եզեկ. ԽԷ.8–9):

ՄԵՍԻԱ: *Տէ՛ս նաև* Հիսուս Քրիստոս.
Օծյալը

Արամեական և եբրայերեն բառաձև, որը

նշանակում է «օծյալը»: Նոր Կտակարանում Հիսուսին անվանում էին Քրիստոս, որը *Մեսիա* բառի հունարեն համարժեքն է: Այն նշանակում է օծյալ Մարգարե, Քահանա, Թագավոր և Ազատիչ, որի գալստին անհամբեր սպասում էին հրեաները:

Շատ հրեաներ սպասում էին միայն Հռոմեական իշխանությունից ազատվելուն և ազգային բարգավաճմանը. այդպիսով, երբ Մեսիան եկավ, ղեկավարներն ու շատ ուրիշներ մերժեցին նրան: Միայն խոնարհ և հավատարիմ մարդիկ կարողացան Նազովրեցի Հիսուսի մեջ տեսնել իրական Քրիստոսին (Ես. ԾԳ, Մատ. ԺԶ.16, Հովհ. Գ.25-26):

Մեսիան պիտի ունենա Հոգին, բարոզի ավետարանը և ազատություն հռչակի՝ **Ես. ԿԱ.1-3** (Դուկ. Գ.18-21): Մեսիային գտել ենք (որ բարգձմանվում է Քրիստոս)՝ **Հովհ. Ա.41** (Հովհ. Գ.25-26): Աստված հրեաների միջից բարձրացրել է մի Մեսիայի կամ, այլ խոսքով, մի Փրկչի՝ **1 Նեփի 10.17**: Փրկագնումը սուրբ Մեսիայի մեջ է կամ նրա միջոցով՝ **2 Նեփի 2.6**: Մեսիան գալիս է ժամանակի լրիվության մեջ՝ **2 Նեփի 2.26**: Մեսիան կբարձրանա մեռելներից՝ **2 Նեփի 25.14**: Մեսիայի անունով ես ձեզ շնորհում եմ Ահարոնի Քահանայությունը՝ **ՎևոՒ 13.1**: Տերն ասաց. Ես եմ Մեսիան՝ Սիոնի թագավորը՝ **Մովսես 7.53**:

ՄԻԱԾԻՆ: *Տե՛ս նաև* Ծնված. Հիսուս Քրիստոս

Հիսուս Քրիստոսին տրված ևս մեկ անուն: Նա Հոր Միածին Որդին է (Դուկ. Ա.26-35, Հովհ. Ա.14, Գ.16, 1 Նեփի 11.18-20, 2 Նեփի 25.12, Ալմա 7.10, 12.33, Մովսես 7.62):

ՄԻԱՅՅԱԼ ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ:

Տե՛ս նաև Նվիրաբերել, Նվիրաբերման Օրենք

Կազմակերպություն, որի միջոցով վերականգնված Եկեղեցու վաղ օրերի Սրբերը փորձում էին ապրել նվիրաբերման օրենքով: Մարդիկ նվիրաբերում էին իրենց ունեցվածքը, գույքը և շահույթը, ստանալով այդ բաները՝ համաձայն իրենց պահանջների և կարիքների (ՎևոՒ 51.3, 78.1-15, 104):

Չեր նյութական հարցերում դուր պետք է հավասար լինե՞ք՝ **ՎևոՒ 70.14**: Սրբերը պետք է կազմակերպվեին, որպեսզի հավասար լինեին բոլոր բաներում՝ **ՎևոՒ 78.3-11** (ՎևոՒ 82.17-20): Տերը հայտնություն և պատվիրան է տվել միացյալ միաբանության համար՝ **ՎևոՒ 92.1**: Չուն Չոնսոնը պետք է դառնա միացյալ միաբանության անդամ՝ **ՎևոՒ 96.6-9**: Տերն ընդհանուր հրահանգներ է տվել միացյալ միաբանության գործելակերպի վերաբերյալ՝ **ՎևոՒ 104**: Իմ ժողովուրդը միաբանված չէ այն միություն համաձայն, որը պահանջվում է սելեստիալ արքայության կողմից՝ **ՎևոՒ 105.1-13**:

ՄԻՋՆՈՐԳ: *Տե՛ս նաև* Հիսուս Քրիստոս. Քավել, Քավություն

Բարեխոս կամ հաշտարար: Հիսուս Քրիստոսը միջնորդն է Աստծո և մարդու միջև: Նրա քավությունն ուղի հարթեց մարդկանց համար՝ հնարավոր դարձնելով մեղքերից ապաշխարելը և Աստծո հետ հաշտվելը:

Ոչ ոք չի գալիս Հոր մոտ, եթե ոչ Հիսուս Քրիստոսով՝ **Հովհ. ԺԳ.6**: Մեկ միջնորդ կա Աստծո և մարդկանց միջև՝ **Ա Տիմ. Բ.5**: Քրիստոսն ավելի լավ ուխտի միջնորդ է՝ **Եբր. Ը.6** (Եբր. Թ.15, ԺԲ.24, ՎևոՒ 107.19): Սուրբ Մեսիան կբարեխոսի բոլոր մարդկանց զավակների համար՝ **2 Նեփի 2.9** (Ես. ԾԳ.12, Մոսիա 14.12): Դուք պիտի նայեք մեծ Միջնորդին՝ **2 Նեփի 2.27-28**: Մենք կատարյալ ենք դարձվում Հիսուսի՝ նոր ուխտի միջնորդի միջոցով՝ **ՎևոՒ 76.69**:

ՄԻՍ: *Տե՛ս նաև* Բնական մարդ. Մահկանացու, Մահկանացություն. Մարմին. Մարմնական

Փափուկ հյուսվածք, որից կազմված են մարդկանց, կենդանիների, թռչունների կամ ձկների մարմինները:

Կենդանիները ձեզ համար միս լինեն՝ **Ծն. Թ.3**: Կենդանիները չպետք է սպանվեն անտեղի՝ **ՋՍԹ՝ ԾՃ. 9.10-11** (ՎևոՒ 49.21): Կենդանիները և թռչունները մարդու համար են, որ ուտեն և օգտագործեն որպես հագուստ՝ **ՎևոՒ 49.18-19** (ՎևոՒ 59.16-20): Միսը մենք պետք է ուտենք խնայողաբար՝ **ՎևոՒ 89.12-15**:

ՄԻՍԱԶ: *Տե՛ս նաև* Դանիել

Հին Կտակարանում՝ Սեդրաքը, Միսաքը և Աբեղնագովն այն երեք Բարայելացի երիտասարդներն էին, որոնք, Դանիելի հետ միասին, բերվեցին Բաբելոնի թագավոր՝ Նաբոլզոդոնոսորի պալատը: Միսաքի եբրայերեն անունը Միսայել էր: Այդ չորս երիտասարդները հրաժարվեցին իրենց ապականել՝ չճաշակելով քաղավորի մատուցած մսից և գինուց (Դան. Ա): Սեդրաքին, Միսաքին և Աբեղնագովին թագավորը զգեց կրակի հնոցը, բայց նրանք փրկվեցին Աստծո Ռոդո կողմից (Դան. Գ):

ՄԻՍԻՈՆԵՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆԷ:

Տե՛ս նաև Ավետարան. Քարոզել

Խոսքով և օրինակով կիսվել Հիսուս Քրիստոսի ավետարանով:

Ինչ գեղեցիկ են սարերի վրա նրա ուրբերը, ով փրկություն է հրատարակում՝ **Ես**. ԾԲ.7: Ես պահանջելու եմ իմ ոչխարներին և որոնելու եմ նրանց՝ **Եզեկ**. ԼԴ.11: Ավետարանը քարոզեք ամեն արարածի՝ **Մար**. ԺԶ.15 (Մորմ. 9.22): Խոսերը սպիտակել են՝ արդեն հնձին աստել՝ **Հովհ**. Դ.35: Ինչպես պիտի նրանք քարոզեն, եթե ուղարկված չլինեն՝ **Հռովմ**. Ժ.15: Ուսուցանեք նրանց Աստծո խոսքը ողջ ջանասիրությամբ՝ **Հակոբ** 1.19: Տերը շնորհում է բոլոր ազգերին՝ սովորեցնելու իր խոսքը՝ **Ալմա** 29.8: Որպեսզի ավետարանը հռչակվի բոլորերի և պարզամիտների միջոցով՝ **ՎևոՒ** 1.23: Մի զարմանալի գործ է առաջ գալիս՝ **ՎևոՒ** 4.1: Եթե դուք տքնեք ձեր բոլոր օրերում և ինձ մոտ բերեք գեթ մեկ հոգի, որքա՛ն մեծ կլինի ձեր ուրախությունը՝ **ՎևոՒ** 18.15: Իմ ընտրյալները լսում են իմ ձայնը և չեն կարծրացնում իրենց սիրտը՝ **ՎևոՒ** 29.7: Առաջ գնացեք, քարոզելով իմ ավետարանը, երկու-երկու՝ **ՎևոՒ** 42.6: Չայնն առաջ պիտի գնա այս տեղից՝ **ՎևոՒ** 58.64: Բացեք ձեր բերանները՝ հռչակելով իմ ավետարանը՝ **ՎևոՒ** 71.1: Հռչակեք ճշմարտությունը՝ հայտնությունների և պատվիրանների համաձայն՝ **ՎևոՒ** 75.4: Ամեն մարդ, ով զգուշացվել է, պետք է զգուշացնի իր մերձավորին՝ **ՎևոՒ** 88.81 (ՎևոՒ 38.40–41): Տերը կապահովի նրանց ընտանիքները, ովքեր քարո-

զում են ավետարանը՝ **ՎևոՒ** 118.3: Աստծո ծառաներն առաջ կգնան՝ **ՎևոՒ** 133.38: Հավատարիմ երեցները, երբ հեռանում են մահկանացու կյանքից, շարունակում են իրենց աշխատանքները՝ **ՎևոՒ** 138.57:

ՄԻՍՍՈՒՐԻ: *Տե՛ս* Նոր Երուսաղեմ**ՄԻՏՔ**

Մտավոր կարողությունները. մտածելու գիտակցական գորությունները:

Ծառայիր նրան կատարյալ սրտով և հոժար մտքով՝ **Ա Մն**. ԻԸ.9: Միիբր քո Տեր Աստծուն քո ողջ մտքով՝ **Մատ**. ԻԲ.37: Մարմնական մտածողությամբ լինելը մահ է. հոգևոր մտածողությամբ լինելը՝ կյանք հավերժական՝ **2 Նեփի** 9.39: Տիրոջ ձայնը եկավ իմ մտքում՝ **Ենոզի** 1.10: Խոսքն ավելի մեծ ազդեցություն ունի մարդկանց մտքի վրա, քան սուրը՝ **Ալմա** 31.5: Ես կասեմ քեզ քո մտքում՝ **ՎևոՒ** 8.2: Քննիր այն քո մտքում՝ **ՎևոՒ** 9.8: Թող հավերժության հանդիսությունները հանգչեն քո մտքում՝ **ՎևոՒ** 43.34: Չեր միտքն անցյալում մթազնել է՝ **ՎևոՒ** 84.54: Վաղ մտեք ձեր անկողինը. վաղ վեր կացեք, որ ձեր մարմինն ու միտքն առույգ լինեն՝ **ՎևոՒ** 88.124: Սատանան չգիտեր Աստծո միտքը՝ **Մովսես** 4.6: Տերն իր ժողովրդին անվանեց Սիոն, որովհետև նրանք մի սրտի և մի մտքի էին՝ **Մովսես** 7.18:

ՄԻՔԱՅԵԼ: *Տե՛ս նաև* Ադամ.

Հրեշտակապետ

Այն անունը, որով հայտնի էր Ադամը նախամահկանացու կյանքում: Նրան անվանում են Հրեշտակապետ: Եբրայերենում այդ անունը նշանակում է «Աստծո նմանը»:

Միքայելը՝ առաջին իշխաններից մեկը, եկավ Դանիելին օգնելու՝ **Դան**. Ժ.13, 21 (ՎևոՒ 78.16): Վերջին օրերին Միքայելը՝ այն մեծ իշխանը, վեր կկենա՝ **Դան**. ԺԲ.1: Միքայել հրեշտակապետը վիճում էր դևի հետ՝ **Հուդա** Ա.9: Միքայելը և նրա հրեշտակները պատերազմեցին հրեշի դեմ՝ **Հայտ**. ԺԲ.7 (Դան. է): Միքայելն Ադամն է՝ **ՎևոՒ** 27.11 (ՎևոՒ 107.53–57, 128.21): Միքայելը՝ Տիրոջ հրեշտակապետը, կհնչեցնի իր փողը՝ **ՎևոՒ** 29.26:

Միքայելը կհավաքի իր գորբերը և կպատերազմի Սատանայի դեմ՝ **ՎևոՒ** 88.112–115: Լսվեց Միքայելի ձայնը, երբ նա հայտնաբերեց դիևին՝ **ՎևոՒ** 128.20:

ՄԻՔԻԱ

Հին Կտակարանի մարգարե: Նա ծնվել է Մորեսեթ-գեթում՝ Հուդայի հարթավայրային երկրում, և մարգարեացել է Եզեկիա քազավորի ժամանակ (Միքիա Ա.1–2):

Միքիայի գիրքը. Միքիան այն միակ գիրքն է Հին Կտակարանում, որտեղ նշվում է Բեթլեհեմը, որպես մի վայր, որտեղ պիտի ծնվեր Մեսիան (Միքիա Ե.2): Այդ գրքում Տերը խորհուրդ է տվել իր ժողովրդին և նրան պատմել է իր անցյալ բարությունների մասին. նա նրանցից պահանջել է արդարություն, ողորմություն և խոնարհություն (Միքիա 2.8):

ՄԻՈՒԹՅՈՒՆ: *Տես նաև* Աստված, Աստվածություն

Մեկ դառնալ մտքով, ցանկությամբ և նպատակով, նախ՝ մեր Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի հետ, իսկ հետո՝ մյուս Սրբերի հետ:

Բարի է, որ եղբայրները միասին միության մեջ ապրեն՝ **Մաղ.** ԸԼԳ.1: Ես և իմ Հայրը մեկ ենք՝ **Հովհ.** Ժ.30 (ՎևոՒ 50.43): Հիսուսն աղոթեց, որ բոլորը մեկ լինեն, ինչպես ինքը և իր Հայրն են մեկ՝ **Հովհ.** ԺԷ.11–23 (3 Նեփի 19.23): Աղաչում եմ ձեզ, որ ձեր մեջ երկպառակություններ չլինեն, այլ որ կատարյալ միություն ունենաք՝ **Ա Կոր.** 1.10: Վճռական եղեք՝ մտքով մեկ և սրտով մեկ՝ բոլոր բաներում միաբանված՝ **2 Նեփի** 1.21: Սրբերը պետք է միավորեն իրենց սրտերը միությանը՝ **Մսուխ** 18.21: Հիսուսն աղոթեց, որ միություն լինի իր Նեփիացի աշակերտների մեջ՝ **3 Նեփի** 19.23: Աշակերտները միաբանվեցին հզոր աղոթքով և ծոմով՝ **3 Նեփի** 27.1: Հայրը, Որդին և Սուրբ Հոգին մեկ են՝ **ՎևոՒ** 20.27–28 (ՎևոՒ 35.2, 50.43): Քո պարտականությունն է միանալ ճշմարիտ եկեղեցուն՝ **ՎևոՒ** 23.7: Ինչ էլ որ դուք խնդրեք հավատքով, միաբանվելով աղոթքով, դուք կստանաք՝ **ՎևոՒ** 29.6: Եթե դուք մեկ չեք, դուք ինը չեք՝ **ՎևոՒ** 38.27: Տերն իր ժողովրդին կոչեց Միոն, որովհետև նրանք մեկ սրտի և մեկ մտքի էին՝ **Մովսես** 7.18:

ՄԵԻԹԱՐԻՉ: *Տես նաև* Հիսուս Քրիստոս. Սուրբ Հոգի

Սուրբ գրքերում խոսվում է երկու Մյսիթարիչի մասին: Առաջինը՝ Սուրբ Հոգին է (Հովհ. ԺԳ.26–27, Մոր. 8.26, ՎևոՒ 21.9, 42.17, 90.11): Երկրորդ Մյսիթարիչը Տեր Հիսուս Քրիստոսն է (Հովհ. ԺԳ.18, 21, 23): Երբ որ մարդ ձեռք է բերում Երկրորդ Մյսիթարիչին, Հիսուս Քրիստոսը ժամանակ առ ժամանակ կհայտնվի իրեն, հայտնի կդարձնի Հորը, և դեմ առ դեմ կուսուցանի նրան (ՎևոՒ 130.3):

ՄԿՐՏԻՉ: *Տես նաև* Հովհաննես Մկրտիչ

ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆ, ՄԿՐՏԵԼ: *Տես նաև* Արարողություններ. Մանուկների մկրտություն. Սուրբ Հոգի. Վերստին ծնված, Աստծուց ծնված

Մկրտել նշանակում է խորասուզել կամ ընկղմել ջրի մեջ: Ջրի մեջ ընկղմելով մկրտությունը, իշխանություն ունեցողի կողմից, ավետարանի սկզբնական արարողությունն է, և անհրաժեշտ պայման է Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամ դառնալու համար: Դրանից առաջ պետք է հավատք ունենալ առ Հիսուս Քրիստոս և պետք է ապաշխարել: Ամբողջական լինելու համար, դրան պետք է հաջորդի Սուրբ Հոգու պարզ ստանալը (2 Նեփի 31.13–14): Ջրով և Հոգով մկրտությունը մարդու համար անհրաժեշտ պայման է, որ կարողանա մտնել սելեստիալ արքայություն: Ադամն առաջինն էր, որ մկրտվեց (Մովսես 6.64–65): Հիսուսը նույնպես մկրտվեց, որպեսզի ամեն արդարություն կատարի և ճանապարհ ցույց տա ողջ մարդկությանը (Մատ. Գ.13–17, 2 Նեփի 31.5–12):

Քանի որ երկրի վրա ոչ բոլորին է հնարավորություն ընձեռնվում ընդունել ավետարանը մահկանացու կյանքի ընթացքում, Տերը լիազորել է, որ մկրտություններ կատարվեն մահացածների համար փոխարինողների միջոցով: Ուստի, նրանք, ովքեր ընդունում են ավետարանը հոգիների աշխարհում, կարող են արժանի համարվել՝ մտնելու Աստծո արքայություն:

Էական է. Թույլ տուր հիմա, որ ամեն արդարություն կատարվի՝ **Մատ.** Գ.15: Հիսուսը եկավ և մկրտվեց Հովհաննեսի

կողմից՝ **Մար.** Ա.9: Չմկրտվելով՝ Փարիսեցիները և օրինականներն անարգեցին Աստծո խորհուրդը՝ **Ղուկ.** Է.30: Եթե մեկը ջրից և Հոգուց չձմվի, նա չի կարող Աստծո արքայությունը մտնել՝ **Հովհ.** Գ.5: Ապաշխարեք, և ձեզանից ամեն մեկը թող մկրտվի՝ **Գոր.** Բ.38: Նա պատվիրում է բոլոր մարդկանց, որ նրանք պետք է մկրտվեն իր անունով՝ **2 Նեփի** 9.23–24: Մարդիկ պետք է հետևեն Քրիստոսին, մկրտվեն, ստանան Սուրբ Հոգին և համբերեն մինչև վերջ, որպեսզի փրկվեն՝ **2 Նեփի** 31: Քրիստոսի վարդապետությունն է, որ մարդիկ պետք է հավատան և մկրտվեն՝ **3 Նեփի** 11.20–40: Նրանք, ովքեր չեն հավատում ձեր խոսքերին և ջրով չեն մկրտվում, իմ անունով, պիտի նզովվեն՝ **ՎևոՒ** 84.74: Աստված Ադամին բացատրել է, թե ինչու են ապաշխարությունն ու մկրտությունն անհրաժեշտ՝ **Մովսես** 6.52–60:

Ընկրմամբ մկրտություն. Մկրտվելուց հետո Հիսուսը շուտով դուրս եկավ ջրից՝ **Մատ.** Գ.16 (Մար. Ա.10): Հովհաննեսը մկրտում էր, որովհետև այնտեղ շատ ջուր կար՝ **Հովհ.** Գ.23: Փիլիպպոսը և ներքինին իջան ջուրը՝ **Գոր.** Ը.38: Մկրտությունով նրա հետ թաղվեցինք՝ **Հռովմ.** Զ.4 (Կող. Բ.12): Հետևեք ձեր Տիրոջը և ձեր Փրկչին, մտնելով ջուրը՝ **2 Նեփի** 31.13: Ալման, Էլամը և մյուսները թաղվեցին ջրի մեջ՝ **Մոսիա** 18.12–16: Եվ հետո դուք պիտի ընկղմեք նրանց ջրի մեջ՝ **3 Նեփի** 11.25–26: Բացատրվում է մկրտության պատշաճ ձևը՝ **ՎևոՒ** 20.72–74: Նրանք մկրտվեցին նրա թաղվելու ձևով, թաղվելով ջրի մեջ՝ նրա անունով՝ **ՎևոՒ** 76.50–51: Ադամն ընկղմվեց ջրի տակ և դուրս բերվեց ջրից՝ **Մովսես** 6.64: Մկրտությունն ընկղմամբ է՝ մեղքերի թողության համար՝ **ՀՀ** 1.4:

Մկրտություն մեղքերի թողության համար. Վեր կաց մկրտվիր և քո մեղքերը լվա՝ **Գոր.** ԻԲ.16: Մկրտությունից հետո գալիս է մեղքերի թողությունը՝ կրակով և Սուրբ Հոգով՝ **2 Նեփի** 31.17: Եկե՛ք և մկրտվե՛ք ապաշխարության համար, որ կարողանաք լվացվել ձեր մեղքերից՝ **Ալմա** 7.14: Օրինված են նրանք, ովքեր կհավատան և կմկրտվեն, քանզի նրանք իրենց մեղքերին թողություն կստանան՝ **3 Նեփի** 12.1–2: Հայտարարեք ապաշխարություն և հա-

վատք առ Փրկիչը և մեղքերի թողություն մկրտությամբ՝ **ՎևոՒ** 19.31: Մենք հավատում ենք ընկղմամբ մկրտությանը՝ մեղքերի թողության համար՝ **ՀՀ** 1.4:

Պատշաճ իշխանությանը. Գնացեք և բոլոր ազգերին ուսուցանեք՝ նրանց մկրտելով Հոր և Որդու և Սուրբ Հոգու անունով՝ **Մատ.** ԻԸ.19 (ՎևոՒ 68.8): Լիսբին ու նրա ժողովրդից շատերը ցանկանում էին մկրտվել, բայց երկրում չկար ոչ մեկը, որ Աստուծուց իշխանություն ունենար՝ **Մոսիա** 21.33: Ես տալիս եմ քեզ գործություն, որ դու մկրտես՝ **3 Նեփի** 11.19–21: Ահարոնյան Քահանայությունը կրում է մեղքերի թողության համար ընկղմամբ մկրտության բանալիները՝ **ՎևոՒ** 13.1: Այդ նրանք են, ովքեր կարգվել են իմ կողմից՝ մկրտելու իմ անունով՝ **ՎևոՒ** 18.29: Հովհաննես Մկրտիչը մկրտելու իշխանություն տվեց Ջոզեֆ Սմիթին և Օլիվեր Քաուդերիին՝ **ՋՍ–Պ** 1.68–69:

Մկրտության համար անհրաժեշտ պայմանները. Ապաշխարեք և մկրտվեք իմ Սիրելի Որդու անունով՝ **2 Նեփի** 31.11: Դուք պետք է ապաշխարեք և վերստին ծնվեք՝ **Ալմա** 7.14: Տեսե՛ք, որ դուք անարժանորեն չմկրտվեք՝ **Մորմ.** 9.29: Սովորեցրե՛ք ծնողներին, որ նրանք պետք է ապաշխարեն և մկրտվեն, և խոնարհեցնեն իրենց՝ **Մոր.** 8.10: Մկրտվել ցանկացողների համար բացատրվում են անհրաժեշտ պայմանները՝ **ՎևոՒ** 20.37: Դառնալով ութ տարեկան՝ երեխաները պետք է մկրտվեն իրենց մեղքերի թողության համար՝ **ՎևոՒ** 68.25, 27:

Մկրտության միջոցով կապած ուխտերը. Դուք մտել եք նրա հետ ուխտի մեջ, որ դուք կժառայեք նրան և կպահեք նրա պատվիրանները՝ **Մոսիա** 18.8–10, 13: Նրանք, ովքեր ապաշխարում են, իրենց վրա են վերցնում Քրիստոսի անունը և վճռում են ծառայել նրան մինչև վերջ, մկրտությամբ պիտի ընդունվեն՝ **ՎևոՒ** 20.37:

Մկրտություն մահացածների համար. Ի՞նչ են անում նրանք, ովքեր մկրտվում են մեռելների համար՝ **Ա Կոր.** ԺԵ.29: Մահացածների համար մկրտությունները կատարվում են մեղքերի թողության համար՝ **ՎևոՒ** 124.29, 127.5–9, 128.1, 138.33:

Մկրտությունը մանուկների համար չէ. Փոքր

երեխաներին մկրտելը լուրջ ծաղր է Աստ-
ծո առաջ՝ **Մոք.** 8.4–23: Երեխաները
պիտի մկրտվեն, երբ ութ տարեկան են՝
ՎևոՒ 68.27: Բոլոր երեխաները, ովքեր
մահանում են նախքան պատասխանատ-
վության տարիքի հասնելը, փրկվում են սե-
լեստիալ արքայությունում **ՎևոՒ** 137.10:

ՄՆԱՅՈՐԳԱՅ

Երկու գրքեր Հին Կտակարանում:
Դրանք տալիս են կարճ պատմություն՝
Ստեղծումից մինչև Կյուրոսի հռչակումը,
երբ հրեաներին քոյլատրվեց վերադառ-
նալ Երուսաղեմ:

Ա Մնացորդաց. Ա–Թ գլուխներում թվարկ-
վում է Ադամից եկող տոհմաբանությունը
մինչև Սավուդ: Ժ գլուխը պատմում է Սա-
վուդի մահվան մասին: ԺԱ–ԻԲ գլուխները
պատմում են Դավթի թագավորության
հետ կապված իրադարձությունները:
ԻԳ–ԻԷ գլուխները բացատրում են, որ
Սողոմոնը դարձվեց թագավոր և Ղևտա-
ցիները կազմակերպվեցին: ԻԸ գլուխը
բացատրում է, որ Դավիթը Սողոմոնին
պատվիրեց տաճար կառուցել: ԻԹ գլու-
խը նկարագրում է Դավթի մահը:

Բ Մնացորդաց. Ա–Թ գլուխները պատ-
մում են Սողոմոնի թագավորության հետ
կապված իրադարձությունները: Ժ–ԺԲ
գլուխները պատմում են Սողոմոնի որդի
Ռոբովամի թագավորության մասին, որի
ժամանակ Իսրայելի միացյալ պետությու-
նը բաժանվեց հյուսիսային և հարավային
թագավորությունների: ԺԳ–ԼԶ գլուխները
նկարագրում են զանազան թագավորնե-
րի թագավորությունների մասին, մինչև
Հուդայի գերությունը Նաբուգոդոնոսորի
կողմից: Գիրքն ավարտվում է Կյուրոս
թագավորի հրամանագրով, որ Հուդայի
գերի զավակները կարող են վերադառ-
նալ Երուսաղեմ:

ՄՈՍԻԱ՝ ԲԵՆԻԱՄԻՆԻ ՀԱՅԲ:

Տե՛ս նաև Բենիամին՝ Մոսիայի
հայր. Ջարահեմլա

Մորմոնի Գրքում՝ Նեփիաացի մարգարե,
որը թագավոր դարձավ Ջարահեմլայի
ժողովրդի վրա:

Մոսիային նախագոյազցվեց, որ փախ-
չի Նեփիի երկրից՝ **Օմնի** 1.12: Նա
հայտնաբերեց Ջարահեմլայի ժողովր-

դին՝ **Օմնի** 1.14–15: Նա Ջարահեմլայի
ժողովրդին սովորեցրեց իր լեզուն՝ **Օմնի**
1.18: Նա թագավոր նշանակվեց միացյալ
ժողովուրդների վրա՝ **Օմնի** 1.19: Նրա
մահից հետո թագավորեց նրա որդին՝
Բենիամինը՝ **Օմնի** 1.23:

ՄՈՍԻԱ՝ ԲԵՆԻԱՄԻՆԻ ՈՐԴԻ:

Տե՛ս նաև Բենիամին՝ Մոսիայի
հայր. Մոսիայի որդիները

Նեփիաացի արդարակյաց թագավոր և
մարգարե Մորմոնի Գրքում: Մոսիան հե-
տևեց իր արդար հոր օրինակին (Մոսիա
6.4–7): Նա թարգմանեց քսանչորս ոսկե
քիթեղները, որոնք պարունակում էին
Հարեալացիների հիշատակարանները (Մո-
սիա 28.17):

Մոսիայի գիրքը. Գիրք՝ Մորմոնի Գրքում:
1–6-րդ գլուխները պարունակում են Բե-
նիամին թագավորի գորեղ քարոզն իր
ժողովրդին: Տիրոջ Հոգին դիպավ նրանց
սրտերին, և մարդիկ դարձի եկան և այլևս
չարիք գործելու ցանկություն չունեին: 7–
8-րդ գլուխները պատմում են մի խումբ
Նեփիաացիների մասին, ովքեր գնացել էին
Լամանացիների մեջ ապրելու: Որոնողնե-
րի մի խումբ ուղարկվեց, որ նրանց գտնեն:
Ամմոնը՝ որոնողների խմբի ղեկավարը,
գտավ նրանց և իմացավ Լամանացիների
ճնշման ներքո նրանց փորձությունների
պատմության մասին: 9–24-րդ գլուխները
նկարագրում են այդ ճնշումը, և թե ինչպես
են նրանց ղեկավարները՝ Չենիֆը, Նոյը և
Լիմբին, ապրել Լամանացիների ներքո:
Արձանագրված է նաև մի մարգարեի՝
Աբինադդիի նահատակությունը: Այնպես
դարձի եկավ Աբինադդիի դատի ժամանակ:
25–28-րդ գլուխները շարադրում են այն
պատմությունները, թե ինչպես դարձի
եկան Ալմայի որդին և Մոսիա թագավո-
րի չորս որդիները: 29-րդ գլխում Մոսիա
թագավորն առաջարկում է, որ դատավո-
րական համակարգը փոխարինի թագա-
վորներին: Ալման՝ Ալմայի որդին, ընտրը-
վեց որպես առաջին գլխավոր դատավոր:

ՄՈՍԻԱՅԻ ՈՐԴԻՆԵՐԸ: *Տե՛ս նաև*

Ահարոն՝ Մոսիայի որդի. Ամմոն՝
Մոսիայի որդի. Հիմնի. Մոսիա՝
Բենիամինի որդի. Օմներ

Մորմոնի Գրքում՝ Մոսիա թագավորի չորս

որդիները, որոնք դարձի եկան այն բանից հետո, երբ մի հրեշտակ հայտնվեց նրանց և նրանց ապաշխարության կոչ արեց: Նրանց անուններն էին՝ Ամնոն, Ահարոն, Օմներ և Հիմնի (Մոսիա 27.34): Նրանք տասնչորս տարի հաջողությամբ քարոզեցին ավետարանը Լամանացիներին: Լամանացիների մեջ նրանց ծառայության մասին արձանագրությունը տրված է Ալմայի գրքում՝ 17–26 գլուխներում:

Սկզբում նրանք անհավատներ էին, որոնք փորձում էին կործանել Եկեղեցին՝ **Մոսիա** 27.8–10 (Ալմա 36.6): Նրանք կշտամբվեցին հրեշտակի կողմից և ապաշխարեցին՝ **Մոսիա** 27.11–12, 18–20: Նրանք թույլատրություն ստացան, որ քարոզեն Լամանացիներին՝ **Մոսիա** 28.1–7:

ՄՈՎԱԲ: *Տե՛ս նաև* Դովոս

Հին Կտակարանի ժամանակների մի երկիր, որը գտնվում էր Մեռյալ ծովի արևելքում: Մովաբացիները Դովոսի հետնորդներն էին և Իսրայելացիներին ազգակից էին: Նրանք խոսում էին մի լեզվով, որը նման էր եբրայերենին: Մովաբացիների ու Իսրայելացիների միջև անընդհատ պատերազմ էր գնում (Գառ. Գ.12–30, ԺԱ.17, Բ Թագ. Ը.2, Դ Թագ. Գ.6–27, Բ Ան. Ի.1–25, Ես ԺԵ):

ՄՈՎՍԵՍ: *Տե՛ս նաև* Ահարոն՝ Մովսեսի եղբայր. Կերպարանափոխում – Քրիստոսի կերպարանափոխումը. Հնգամատյան. Մովսեսի Օրենք. Պատվիրաններ՝ Տասր

Հին Կտակարանի մարգարե, որն Իսրայելացիներին դուրս բերեց Եգիպտական գերությունից և նրանց տվեց մի շարք կրոնական, հասարակական և սննդական օրենքներ, ինչպես որ հայտնվել էր Աստծո կողմից:

Մովսեսի ծառայությունն անցնում է նրա մահկանացու կյանքի սահմաններից դուրս: Ջոզեֆ Սմիթն ուսուցանել է, որ Նդիայի հետ միասին, նա եկավ Կերպարանափոխման սար և քահանայության բանալիները հանձնեց Պետրոսին, Հակոբոսին և Հովհաննեսին (Մատ. ԺԵ.3–4, Մար. Թ.3–8, Դուկ. Թ.30, ՎևոՒ 63.21):

Մովսեսը հայտնվեց Ջոզեֆ Սմիթին և Օլիվեր Քատլերիին, 1836թ. ապրիլի 3-

ին, Օհայոյի Կիրթլենդ տաճարում, և նրանց շնորհեց Իսրայելի հավաքման բանալիները (ՎևոՒ 110.11):

Վերջին օրերի հայտնությունները շատ բաներ են ասում Մովսեսի մասին: Նա հաճախ է հիշատակվում Մորմոնի Գրքում, իսկ Վարդապետություն և Ուխտերից մենք սովորում ենք նրա ծառայության մասին (ՎևոՒ 84.20–26), և որ նա քահանայությունը ստացել էր իր աներոջից՝ Հոբոբից (ՎևոՒ 84.6):

Վերջին օրերի հայտնությունները հաստատում են նաև Իսրայելի զավակների մեջ նրա ծառայության մասին աստվածաշնչյան պատմությունը, և վերահաստատում են, որ նա եղել է Հին Կտակարանի առաջին հինգ գրքերի հեղինակը (1 Նեփի 5.11, Մովսես 1.40–41): Փրկվեց Փարափոնի դստեր կողմից՝ **Ել.** Բ.1–10: Փախավ Մադիամացիների մոտ՝ **Ել.** Բ.11–22: Տիրոջ հրեշտակը հայտնեց նրան այրվող թփի մեջ՝ **Ել.** Գ.1–15: Հայտարարեց Եգիպտացիների վրա գալիք պատուհասները՝ **Ել.** Է–ԺԱ: Տերը սահմանեց Ջատիկը՝ **Ել.** ԺԲ.1–30: Իսրայելի զավակներին առաջնորդեց Կարմիր ծովի միջով՝ **Ել.** ԺԳ.5–31: Տերը մամուսա ուղարկեց անապատ՝ **Ել.** 16: Ժայռին զարկեց և նրանից ջուր հոսեց՝ **Ել.** ԺԷ.1–7: Ահարոնը և Ուլբը բարձր պահեցին նրա ձեռքերը, որպեսզի Հեսուն հաղթի Ամադեկացիներին՝ **Ել.** ԺԸ.8–16: Հոբոբը խորհուրդ տվեց նրան՝ **Ել.** ԺԸ.13–26: Ժողովրդին նախապատրաստեց Սինայ սարի վրա Տիրոջ հայտնվելուն՝ **Ել.** ԺԹ: Տերը նրան հայտնեց Տասր Պատվիրանները՝ **Ել.** Ի.1–17: Նա և յոթանասուն ձերեր տեսան Աստծուն՝ **Ել.** Ի.Գ.9–11: Կտորեց վկայության ապականակներ և ոչնչացրեց ոսկե հորթը՝ **Ել.** ԼԲ.19–20: Խոսեց Աստծո հետ դեմառդեմ՝ **Ել.** ԼԳ.9–11: Հայտնվեց Հիսուսի կերպարանափոխման ժամանակ՝ **Մատ.** ԺԷ.1–13 (Մար. Թ.1–12, Դուկ. Թ.28–36): Եկեք ուժեղ լինե՛ք, ինչպես Մովսեսը՝ **1 Նեփի** 4.2: Քրիստոսն է Մովսեսի նման մարգարեն, որին Տերը պիտի բարձրացնե՛ր՝ **1 Նեփի** 22.20–21 (3 Նեփի 20.23, Բ Օր. ԺԸ.15): Հայտնությամբ առաջնորդեց Իսրայելը՝ **ՎևոՒ** 8.3: Ազնիվ հոգիների թվում էր՝ **ՎևոՒ** 138.41: Տեսավ Աստծուն դեմառդեմ՝ **Մովսես** 1.2, 31: Միաձին

Որդու նմանությամբ էր՝ **Մովսես** 1.6, 13: Պետք է գրեք Ստեղծման վերաբերյալ իրեն հայտնված բաները՝ **Մովսես** 2.1:

Մովսեսի գիրքը. Գիրք Թանկագին Մարգարիտում, որը պարունակում է Ծննդոցի առաջին յոթ գլուխների Ջոզեֆ Սմիթի ոգեշնչված թարգմանությունը:

1-ին գլուխն արձանագրում է այն տեսիլքը, որում Մովսեսը տեսավ Աստծուն, որը նրան հայտնի դարձրեց փրկության ամբողջ ծրագիրը: 2–5-րդ գլուխները ստեղծման և մարդու անկման պատմություններն են: 6–7-րդ գլուխները տեսիլք են Ենովքի և երկրի վրա նրա ծառայության մասին: 8-րդ գլուխը տեսիլք է Նոյի և մեծ ջրհեղեղի մասին:

Մովսեսի հինգ գրքերը. տե՛ս Ծննդոց. Ելից. Ղևտացոց. Թվոց. Երկրորդ Օրինաց

Հին Կտակարանի առաջին հինգ գրքերը հայտնի են որպես Մովսեսի գրքեր: Լաբանից վերցված **Նեփիի** արույրե թիթեղները պարունակում էին Մովսեսի գրքերը (1 **Նեփի** 5.11):

Նեփին շատ բաներ էր կարդացել, որոնք գրված էին Մովսեսի գրքերում՝ **1 Նեփի** 19.23:

ՄՈՎԱՏԵՍԻ ՕՐԵՆՔ: *Տե՛ս նաև*

Ահարոնյան Քահանայություն.

Մաքուր և Անմաքուր. Մովսես. Օրենք

Աստված Մովսեսի միջոցով օրենքներ սովեց Իսրայելի տանը, ավելի բարձր օրենքը փոխարինելու համար, որին նրանք չէին հնազանդվում: (Ել. Լ.Գ, **ՋՍԹ՝ Ել.** 34.1–2, **ՋՍԹ՝ Բ Օր.** 10.2): Մովսեսի օրենքը բաղկացած էր շատ սկզբունքներից, կանոններից, արարողություններից, ծեսերից և խորհրդանիշներից, որոնք նախատեսված էին ժողովրդին իր պարտականություններն ու պատասխանատվությունները հիշեցնելու համար: Այն ընդգրկում էր բարոյական, վարքուբարքի, կրոնական և ֆիզիկական պատվիրանների ու ծեսերի օրենքներ, այդ թվում նաև գոհաբերություններ (Ղև. Ա–Է), որոնց նպատակն էր հիշեցնել Աստծո և նրա հանդեպ ունեցած պարտականությունների մասին (Մոսիա 13.30): Հավատքը, ապաշխարությունը, ջրի մեջ մկրտվելը և մեղքերը թողելը, ինչպես նաև Տաք Պատվիրանները և բարձր վարքի ու բարոյական

արժեքների շատ այլ պատվիրաններ օրենքի մի մասն էին կազմում: Ծիսական շատ օրենքներ կատարվեցին Հիսուս Քրիստոսի մահվան և հարության ժամանակ, ինչը վերջ դրեց արյուն թափելով գոհաբերությանը (Ավա 34.13–14): Օրենքը սպասավորվում էր Ահարոնյան Քահանայության ներքո և նախապատրաստական ավետարան էր՝ օրենքին հետևողներին Քրիստոսի մոտ բերելու համար:

Ես նրանց կտամ օրենք, ինչպես որ սկզբում, սակայն դա կլինի ըստ մարմնավոր պատվիրանների օրենքի՝ **ՋՍԹ՝ Ել.** 34.1–2: Օրենքը մեզ համար դաստիարակ եղավ, որ բերի Քրիստոսի մոտ՝ **Գաղ.** Գ.19–24: Մենք պահում ենք Մովսեսի օրենքը և հաստատամտությամբ սպասում Քրիստոսին՝ **2 Նեփի** 25.24–30: Փրկությունը չի գալիս միայն Մովսեսի օրենքով՝ **Մոսիա** 12.27–13.32: Ինձանում է Մովսեսի օրենքը կատարվում՝ **3 Նեփի** 9.17: Օրենքը, որը տրված էր Մովսեսին, վերջ ունի ինձանում՝ **3 Նեփի** 15.1–10: Անհնազանդության պատճառով՝ Տերը վերցրեց Մովսեսին և Սուրբ Քահանայությունն Իսրայելի զավակներից՝ թողնելով մարմնական պատվիրանների օրենքը՝ **Վևև** 84.23–27:

ՄՈՐՈՆԻ ՋՈՐԱՊԵՏԸ: *Տե՛ս նաև*

Ազատության դրոշ

Մորմոնի Գրքում՝ արդարակյաց Նեփիացի հրամանատար, որն ապրել է Ք.ծ.ա. մոտ 100թ.:

Մորմոնի նշանակվեց Նեփիացիների բուլր գործերի գլխավոր գորսպետ՝ **Ալմա** 43.16–17: Ոգեշնչեց Նեփիացի զինվորներին՝ կռվել իրենց ազատության համար՝ **Ալմա** 43.48–50: Իր պատմության մի կտորից ազատության դրոշ պատրաստեց՝ **Ալմա** 46.12–13: Աստծո մարդ էր՝ **Ալմա** 48.11–18: Բարկացած էր կառավարության վրա՝ երկրի ազատության համար նրանց անտարբերության պատճառով՝ **Ալմա** 59.13:

ՄՈՐՈՆԻ՝ ՄՈՐՄՈՆԻ ՈՐԳԻ: *Տե՛ս*

նաև Մորմոնի Գիրքը. Մորմոն՝

Նեփիացի Մարգարե

Վերջին Նեփիացի մարգարեն Մորմոնի Գրքում (մոտ Ք.ծ.հ. 421թ.): Մորմոնը, ան-

միջապես իր մահանալուց առաջ, Մորմոնի թիթեղներ կոչվող պատմական հիշատակարանները հանձնեց իր որդուն՝ Մորոնիին (ՄԽ 1.1): Մորոնին ավարտեց Մորմոնի թիթեղները կազմելը: Նա ավելացրեց Մորմոնի գրքի 8-րդ և 9-րդ գլուխները (Մորմ. 8.1): Նա համառոտագրեց և ներառեց Եթերի գիրքը (Եթեր 1.1-2) և ավելացրեց իր գիրքը, որը կոչվում է Մորոնիի գիրք (Մոր. 1.1-4): Մորոնին կնքեց թիթեղները և դրանք պահեց Կումորա բլրում (Մորմ. 8.14, Մոր. 10.2): 1823 թվականին, Մորոնին՝ որպես հարություն առած էակ, ուղարկվեց, որպեսզի Մորմոնի Գիրքը հայտնի դարձնի Ջոզեֆ Սմիթին (ՋՍ-Պ 1.30-42, 45, ՎևոՒ 27.5): Ամեն տարի, 1823-1827թթ., նա հրահանգում էր երիտասարդ մարգարեին (ՋՍ-Պ 1.54) և, ի վերջո, 1827-ին, նա թիթեղները հանձնեց նրան (ՋՍ-Պ 1.59): Թարգմանելուց հետո Ջոզեֆ Սմիթը թիթեղները վերադարձրեց Մորոնիին:

Մորոնիի գիրքը. Մորմոնի Գրքի վերջին գիրքը: Այն գրվել է Նեփիացի վերջին մարգարե՝ Մորոնիի կողմից: 1-3-րդ գլուխները պատմում են Նեփիացիների վերջնական բնաջնջման մասին և հրահանգներ են տալիս Սուրբ Հոգին և Քահանայությունը շնորհելու վերաբերյալ: 4-5-րդ գլուխները մանրամասն նկարագրում են հաղորդությունը սպասավորելու ձևը: 6-րդ գլուխն ամփոփում է Եկեղեցու գործերը: 7-8-րդ գլուխները քարոզներ են ավետարանի առաջին սկզբունքների վերաբերյալ, այդ թվում՝ Մորմոնի ուսմունքները հավատքի, հույսի և գրության մասին, բարին ու չարը դատելու մասին (Մոր. 7) և Մորմոնի բացատրությունը, որ փոքր երեխաները կենդանի են Քրիստոսում և մկրտության կարիք չունեն (Մոր. 8): 9-րդ գլուխը նկարագրում է Նեփիացի ազգի անառակությունը: 10-րդ գլուխը Մորոնիի վերջին պատգամն է և ընդգրկում է այն ուղիք, որով կարելի է իմանալ ճշմարտությունը Մորմոնի Գրքի մասին (Մոր. 10.3-5):

ՄՈՐՈՆԻԱ՝ ՋՈՐԱՊԵՏ ՄՈՐՈՆԻԻ ՈՐԴԻ

Արդարակյաց Նեփիացի գորավար Մորմոնի Գրքում (մոտ Ք.ծ.ա. 60թ.):

Մորոնին գորքերը հանձնեց իր որդի Մորոնիային՝ **Ալմա** 62.43: Ետ վերցրեց Ջարահեմյալ քաղաքը՝ **Հել**. 1.33: Լամանացիներին ապաշխարության բերեց և կրկին ձեռք բերեց հողերի տիրապետությունը՝ **Հել**. 4.14-20:

ՄՈՐՄՈՆ(ՆԵՐ): *Տե՛ս նաև* Հիսուս Քրիստոսի Եկեղեցի. Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցի

Մորմոն մականունը ստեղծվել է մարդկանց կողմից, որոնք Եկեղեցու անդամ չէին, Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամներին դիմելու համար: Անունը գալիս է տուրք գրքերի մի սրբազան հատորից, որը կազմվել է հին մարգարե Մորմոնի կողմից և վերնագրվել է «Մորմոնի Գիրքը»: Տիրոջ կողմից տրված անունը, որով Եկեղեցու անդամները պետք է հայտնի լինեն, «Սրբեր»-ն է: Եկեղեցու ճշգրիտ անունն է՝ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցի:

ՄՈՐՄՈՆ՝ ՆԵՓԻԱՅԻ ՄԱՐԳԱՐԵ:
Տե՛ս նաև Մորմոնի Գիրքը

Նեփիացի մարգարե, զինվորական հրամանատար և հիշատակարանները պահող Մորմոնի Գրքում: Մորմոնն այրել է Ք.ծ.հ. մոտ 311-385թթ. (Մորմ. 1.2, 6, 6.5-6, 8.2-3): Իր կյանքի մեծ մասը, տասնհինգ տարեկանից սկսած, նա եղել է զինվորական առաջնորդ (Մորմ. 2.1-2, 3.8-12, 5.1, 8.2-3): Ամմարոնը Մորմոնին հրահանգեց նախապատրաստվել, որ պահպանի հիշատակարանները և անձամբ մի հիշատակարան գրի (Մորմ. 1.2-5, 2.17-18): Իր կյանքի պատմության հուշագրություններն անելուց հետո, Մորմոնը Նեփիի մեծ թիթեղները համառոտագրեց Մորմոնի թիթեղների վրա: Հետագայում նա այս սրբազան հիշատակարանները հանձնեց իր որդուն՝ Մորոնիին: Այդ թիթեղներն այն հիշատակարանի մասն էին, որից Ջոզեֆ Սմիթը թարգմանեց Մորմոնի Գիրքը:

Մորմոնի Խոսքերը. Փոքր գիրք Մորմոնի Գրքում: Օձնիի գրքի Ամադեկի վերջին խոսքերի և Մոսիայի գրքի առաջին խոսքերի միջև, Մորմոնը, բոլոր այդ հիշատակարանների խմբագիրը, տեղադրեց այս ներդիրը: (*Տե՛ս* Մորմոնի Գրքի

սկզբում՝ «Մորմոնի Գրքի մասին համառոտ բացատրություն»):

Մորմոնի գիրքը. Առանձին գիրք այն սուրբ գրքի հատորների թվում, որը հայտնի է որպես Մորմոնի Գիրքը: 1–2-րդ գլուխները պատմում են Ամմարոնի՝ Նեփիացիների մի մարգարեի մասին, որը Մորմոնին հրահանգում է, թե երբ և որտեղ գտնել թիթեղները: Նաև սկսվում են մեծ պատերազմներ և Երեք Նեփիացիները վերցվում են մարդկանց ամբարշտության պատճառով: 3–4-րդ գլուխները պատմում են, որ Մորմոնն ապաշխարություն է աղաղակում ժողովրդին. սակայն նրանք անզգայացել էին և այնպիսի մեծ ամբարշտություն էր իշխում նրանց մեջ, ինչպիսին երբեք չէր եղել Իսրայելում: 5–6-րդ գլուխներում հիշատակվում են վերջին պատերազմները Նեփիացիների և Լամանացիների միջև: Մորմոնը սպանվում է Նեփիացիների ազգի մեծ մասի հետ: 7-րդ գլխում, նախքան մահանալը, Մորմոնը կոչ է անում իր ժամանակի և ապագայի մարդկանց, որ ապաշխարեն: 8–9-րդ գլուխներում հիշատակվում է, որ միայն Մորմոնի որդին՝ Մորոնին էր կենդանի մնացել: Նա գրի առավ մահվան և կոտորածի վերջին տեսարանները, այդ թվում՝ Նեփիական ազգի բնաջնջումը, և մի պատգամ գրեց ապագա սերունդներին և հիշատակարանները կարդացողներին:

ՄՈՐՄՈՆԻ ԳԻՐՔԸ: *Տե՛ս նաև*

Եփրեմ – Եփրեմի կամ Հովսեփի փայտը. Թիթեղներ. Կանոնական Գրքեր. Մորմոն՝ Նեփիացի Մարգարե. Մորմոնի Գրքի վկաները. Ոսկե թիթեղներ. Սմիթ Ջոզեֆ կրտսեր. Սուրբ գրքեր

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու կողմից ընդունված սուրբ գրքերի չորս հատորներից մեկը: Դա Ամերիկյան աշխարհամասի հնագույն բնակիչների հիշատակարանների համառոտագրում է հնագույն մարգարեի կողմից, որի անունը Մորմոն էր: Այն գրված է որպես վկայություն, որ Հիսուսը Քրիստոսն է: Մարգարե Ջոզեֆ Սմիթը, որը թարգմանել է այդ հիշատակարանն Աստծո պարզևոլ ու զորությամբ, ասել է դրա մասին. «Ես ասացի եղբայրներին, որ Մորմոնի Գիրքն ամենաճիշտն է երկրի վրա եղած

բոլոր գրքերից և մեր կրոնի պորտաբարձ է, և ապրելով ըստ դրա ցուցումների, մարդավերջի շատ կմտնեմ Աստծուն, քան ըստ որևէ այլ գրքի ցուցումների» (տե՛ս Մորմոնի Գրքի սկզբի նախաբանը):

Մորմոնի Գիրքը երեք խմբի մարդկանց կրոնական հիշատակարան է, որոնք Հին Աշխարհից գաղթեցին դեպի Ամերիկյան աշխարհամաս: Այդ խմբերը ղեկավարվում էին մարգարեների կողմից, որոնք իրենց հոգևոր և աշխարհիկ պատմությունները գրում էին մետաղյա թիթեղների վրա: Մորմոնի Գրքում արձանագրված է նաև Հիսուս Քրիստոսի հայտնվելն Ամերիկյան աշխարհամասի ժողովրդին իր հարությունից հետո: Քրիստոսի այդ զալստին հետևեց երկու հարյուր տարվա խաղաղ դարաշրջան:

Մորմոնի վերջին Նեփիացի մարգարե-պատմագիրը, կնքեց այդ ժողովրդի համառոտագիր հիշատակարանները, և դրանք պահ տվեց մոտ Ք.ծ.հ. 421 թվականին: 1823-ին, հարություն առած Մորմոնի այցելեց Ջոզեֆ Սմիթին և, ավելի ուշ, հանձնեց նրան այդ հնագույն և սրբազան հիշատակարանները, որ դրանք թարգմանվեց և տրվեց աշխարհին՝ որպես ևս մեկ վկայություն Հիսուս Քրիստոսի մասին:

Հովսեփը պտղատու ոստ է, որի ճյուղերը ձգվում են պատի վրայով՝ **ԾԳ**. ԻԹ.22–26: Դժմարություն կբուսնի երկրից՝ **Մաղ**. ԶԵ.11 (Մորմ. 8.16, Մովսես 7.62): Տերը դրոշակ է բարձրացնելու հեռու ազգերի համար և սուլելու է նրանց՝ **Ես**. Ե.26: Մի ձայն խոսելու է հողի միջից՝ **Ես**. ԻԹ.4 (2 Նեփի 26.14–17): Բոլորի տեսիլքը դարձել է կնքված գրքի սնան՝ **Ես**. ԻԹ.11 (Ես. ԻԹ.9–18, 2 Նեփի 27.6–26): Հովսեփի և Հուդայի փայտերը մեկ կդառնան Տիրոջ ձեռքում՝ **Եգեղ**. Լ.Է.15–20: Ուրիշ ոչխարներ ես ունեմ, որոնք այս փարսից չեն՝ **Հովի**. Ժ.16 (3 Նեփի 15.16–24): Մորմոնի Գիրքը և Աստվածաշունչը կտերտածեն միասին՝ **2 Նեփի** 3.12–21: Տիրոջ խոսքերն առաջ կալանան մինչև աշխարհի ծայրերը՝ **2 Նեփի** 29.2: Տերը Ենովսին ուխտ արեց, որ Մորմոնի Գիրքը կհասցնի Լամանացիներին՝ **Ենովս** 1.15–16: Մորմոնի Գիրքը գրվել է այն նպատակով, որ մենք հավատանք Աստվածաշնչին՝ **Մորմ**. 7.9: Մորմոնի Գիրքը կկանգնի՝ որպես վկայություն ընդդեմ աշխարհի՝

Եթեր 5.4: Հարցրեք Աստծուն, թե արդյոք այս բաները ճշմարիտ չեն՝ **Մոր.** 10.4: Քրիստոսը վկայություն է բերել, որ Մորմնի Գիրքը ճշմարիտ է՝ **ՎևոՒ** 17.6: Մորմնի Գիրքը պարունակում է Հիսուս Քրիստոսի ավետարանի լրիվությունը՝ **ՎևոՒ** 20.9 (ՎևոՒ 20.8–12, 42.12): Մենք հավատում ենք, որ Մորմնի Գիրքն Աստծո խոսքն է՝ **ՀՀ** 1.8:

ՄՈՐՄՈՆԻ ԳՐԶԻ ՎԿԱՆԵՐԸ:

Տե՛ս նաև Մորմնի Գիրքը. Վկա

Բացի Մարգարե Ջոզեֆ Սմիթից, Տերը մահ ուրիշների է պատվիրել վկայություն բերել Մորմնի Գրքի ասավածայնության վերաբերյալ (ՎևոՒ 17, 128.20): Այս վկաների վկայությունների համար տե՛ս «Նախաբան» խորագիրը Մորմնի Գրքի սկզբում:

Երեքի խոսքերով ես կհաստատեմ իմ խոսքը՝ **2 Նեփի** 11.3: Ականատեսները վկայություն կբերեն նրա խոսքի ճշմարտության վերաբերյալ մարդկանց զավակներից՝ **2 Նեփի** 27.12–13: Երեք վկաների բերանով այս բաները կհաստատվեն՝ **Եթեր** 5.4: Հավատքով Երեք Վկաները կտեսնեն թիթեղները՝ **ՎևոՒ** 17:

ՄՏՈՐԵԼ: *Տե՛ս* Խորհել

ՄՏԶԵՐ: *Տե՛ս նաև* Խորհել. Կամքի ազատություն

Գաղափարներ, մտահղացումներ և պատկերներ մարդու մտքում: Մտածելու գործընթացն Աստծո պարզ է և մենք ազատ ենք ընտրելու, թե ինչպես օգտագործենք մտածելու մեր գործընթացը: Այն, ինչ մենք մտածում ենք, մեծապես ազդում է մեր վերաբերմունքի և վարքի վրա, ինչպես նաև այս կյանքից հետո մեր ունեցած դիրքի վրա: Արդար մտքերը տանում են դեպի փրկություն. ամբարիշտ մտքերը սպանում են դեպի նզովք:

Տերը գիտի մտքերի բոլոր երևակայությունները՝ **Ա Մճ.** ԻԸ.9: Ինչպես որ մտածում է իր սրտում, այնպես էլ ինքն է՝ **Առակ.** ԻԳ.7: Իմ մտքերը քո մտքերը չեն՝ **Ես.** ԾԵ.7–9: Հիսուսը գիտեր նրանց մտքերը՝ **Մատ.** ԺԲ.25 (Ղուկ. Ե.22, 2.8): Ներսից՝ մարդկանց սրտից են դուրս գալիս չար մտքերը՝ **Մար.** Է.20–23: Գե-

րի բռնեք ամեն միտք՝ Քրիստոսին հնազանդեցնելու համար՝ **Բ Կոր.** Ժ.5: Ինչ որ ճշմարիտ է, ինչ որ պարկեշտ, ինչ որ մաքուր, ինչ որ սիրուն, այն մտածեք՝ **Փիլ.** Դ.8: Հիշեք, մարմնական մտածելակերպով լինելը մահ է, իսկ հոգևոր մտածելակերպով լինելը՝ կյանք հավերժական՝ **2 Նեփի** 9.39: Եթե դուք չիեսուեք ձեզ և ձեր մտքերին, դուք պիտի կորչեք՝ **Մոսիա** 4.30: Մեր մտքերը մեզ կդատապարտեն՝ **Ալմա** 12.14: Միայն Աստված գիտի մտքերը և մտադրությունները քո սրտի՝ **ՎևոՒ** 6.16 (ՎևոՒ 33.1): Նայե՛ք ինձ ձեր բոլոր մտդրումներում՝ **ՎևոՒ** 6.36: Կյանքի խոսքերը զանձեք ձեր մտքում՝ **ՎևոՒ** 84.85: Հեռու վանեք ձեր պարսպ մտքերը՝ **ՎևոՒ** 88.69: Մարդկանց սրտի խորհուրդները հայտնի կդարձվեն՝ **ՎևոՒ** 88.109: Թող առաքինությունը զարդարի քո մտքերն անդադար՝ **ՎևոՒ** 121.45: Բոլոր մարդկանց մտքերը միշտ չար էին՝ **Մովսես** 8.22:

ՄՈՒՂԵԿ: *Տե՛ս նաև* Սեղեկիա

Հին Կտակարանի Սեղեկիա թագավորի որդին (Ք.ծ.ա. մոտ 589թ.): Աստվածաշնչում ասվում է, որ Սեղեկիայի բոլոր որդիները սպանվել էին (Դ. Թագ. ԻԵ.7), սակայն Մորմնի Գիրքը պարզաբանում է, որ Մուղեկը կենդանի էր մնացել (Հել. 8.21):

Չարահեմլան Մուղեկի հետնորդն էր՝ **Մոսիա** 25.2: Մուղեկի ժողովուրդը միացավ Նեփիացիներին՝ **Մոսիա** 25.13: Տերը Մուղեկին բերել էր հյուսիսի երկիրը՝ **Հել.** 6.10: Սեղեկիայի բոլոր որդիները սպանվել էին, բացի Մուղեկից՝ **Հել.** 8.21:

ՅԱՆԳ ԲՐԻԳԱՍ

Արդի տնտեսության վաղ Առաքյալ և Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Տիեզերու երկրորդ Նախագահը: Նա առաջնորդեց Սրբերին Իլինոյսի Նավու քաղաքից դեպի արևմուտք՝ մինչև Սոլթ Լեյքի հովիտը, և մեծ գաղութարար դարձավ Միացյալ Նահանգների արևմուտքում:

Բրիգամ Յանգը կանչվեց Տասներկու Առաքյալների Նախագահ՝ **ՎևոՒ** 124.127: Բրիգամ Յանգը զովաբանվում է իր աշխատանքների համար և ազատվում դեպի դուրս հետագա ճամփորդու-

բյուններից՝ **ՎևոՒ** 126: Տերը հրահանգեց Բրիգամ Յանգին՝ ինչպես կազմակերպել Սրբերի երթը դեպի արևմուտք՝ **ՎևոՒ** 136: Բրիգամ Յանգն ընտրյալների թվում էր հոգիների աշխարհում՝ **ՎևոՒ** 138.53:

ՅՈԹԱՆԱՍՈՒՆԱԿԱՆ: *Տե՛ս նաև*

Առաքյալ Մելքիսեդեկյան
Քահանայություն

Մելքիսեդեկյան Քահանայության պաշտոն, որին կարգվում են տղամարդիկ: Այսօր Յոթանասունականները Եկեղեցու Բարձրագույն Իշխանավորներ են, որոնց տրված է առաքելական իշխանություն, սակայն նրանք կարգված Առաքյալներ չեն: Նրանք իրենց ողջ ժամանակը նվիրում են ծառայությանը:

Տերն ուրիշ յոթանասունի էլ կարգեց՝ **Ղուկ**. Ժ.1: Յոթանասունականները կանչված են քարոզելու ավետարանը և լինելու Հիսուս Քրիստոսի հատուկ վկաները՝ **ՎևոՒ** 107.25–26: Եկեղեցին կառուցելիս և բոլոր ազգերի մեջ նրա գործերը կարգավորելիս՝ Յոթանասունականները գործում են Տիրոջ անունով՝ Տասներկուսի ղեկավարության ներքո՝ **ՎևոՒ** 107.34: Ընտրեք ուրիշ յոթանասունի, մինչև յոթ անգամ յոթանասուն, եթե աշխատանքը պահանջում է՝ **ՎևոՒ** 107.93–97: Յոթանասունի թվորումը հաստատվել է ճամփորդող երեցների համար՝ ողջ աշխարհում իմ անվան մասին վկայելու համար՝ **ՎևոՒ** 124.138–139:

ՅՈՒՂ: *Տե՛ս նաև* Հիվանդների սպասավորում. Ձիթենի. Օծել

Սուրբ գրքերում նշվող յուղը, սովորաբար, ձիթապտղի յուղն է: Հին Կտակարանի ժամանակներից ձիթապտղի յուղն օգտագործվել է տաճարների և խորանի ծեսերի ժամանակ, օծումների համար, լապտերները վառելու համար և սննդի մեջ: Ձիթապտղի յուղը երբեմն խորհրդանշել է մաքրության և Սուրբ Հոգու ու նրա ազդեցության համար (Ա թագ. Ժ.1, 6, ԺՁ.13, Ես ԿԱ.1–3):

Քահանան պետք է յուղ քսի աջ ականջի բլթակին՝ **ՂԱ**. ԺԴ.28–29: Տերն ինձ ուղարկեց, որ քեզ թագավոր օծեն իր ժողովրդի վրա՝ **Ա թագ**. ԺԵ.1: Որբնայրու կուժից յուղը չէր պակասում **Գ թագ**. ԺԷ.10–16: Տերն իմ գլուխն օծում է յուղով՝ **Սաղ**.

ԻԳ.5: Նրանք շատ հիվանդների յուղով օծում էին՝ **Մար**. Ձ.13: Թող երեցներն աղոթք անեն նրա վրա և յուղով օծեն նրան՝ **Հակ**. Ե.13–15: Չեր լապտերները պատրաստեք ու վառեք և յուղ ունեցեք ձեզ հետ՝ **ՎևոՒ** 33.17 (Մատ. ԻԵ.1–13):

ՆԱԲՈՒԳՈՂՈՆՈՍՈՐ: *Տե՛ս նաև*

Բաբելոն. Դանիել

Հին Կտակարանում Բաբելոնի թագավորը (Ք.ծ.ա. 604–561թթ.), որը հպատակեցրեց Հուդան (Դ թագ. ԻԴ.1–4) և պաշարեց Երուսաղեմը (Դ թագ. ԻԴ.10–11): Լեքի մարգարեին պատվիրվեց փախչել Երուսաղեմից, Ք.ծ.ա. 600 թվականին, որպեսզի խուսափի Բաբելոն գերի տարվելուց (1 Նեփի 1.4–13), երբ Նաբոգոդոնոսորը տարավ Մեղեկիա թագավորին ու նրա ժողովրդին (Դ թագ. ԻԵ.1, 8–16, 20–22): Դանիելը մեկնաբանեց Նաբոգոդոնոսորի երազները (Դան. Բ, Դ):

ՆԱԶԱՐԵԹ: *Տե՛ս նաև* Հիսուս Քրիստոս

Գալիլեայի ծովի արևմտյան բլուրների միջև ընկած մի գյուղ: Նազարեթը Հիսուսի վաղ տարիքի բնակավայրն է եղել (Մատ. Բ.23): Հիսուսն ուսուցանեց Նազարեթի ժողովարանում և հայտարարեց, որ իրենով կատարվեց Եսայիայի ԿԱ.1–2-ի մարգարեությունը (Մատ. ԺԳ.54–58, Մար. Ձ.1–6, Ղուկ. Դ.16–30):

ՆԱԹԱՆ: *Տե՛ս նաև* Դավիթ

Հին Կտակարանի մարգարե՝ Դավիթ թագավորի ժամանակ: Երբ Դավիթն առաջարկեց տաճար կառուցել Տիրոջ համար, Տերը Նաթանին հրահանգեց Դավիթին ասել, որ նա չպետք է կառուցի այն: Նաթանը նաև կշտամբեց Դավիթին նրա զինվորներից մեկի՝ Ուրիայի մահվան պատճառը լինելու համար և Ուրիայի կնոջը՝ Բերսաբեթին վերցնելու համար (Բ թագ. ԺԲ.1–15, ՎևոՒ 132.38–39): Սաղովկը Նաթանի հետ թագավոր օծեց Դավիթի որդուն՝ Սողոմոնին (Գ թագ. Ա.38–39, 45):

ՆԱԹԱՆԱՅԵԼ: *Տե՛ս նաև* Բարբողոմեոս

Քրիստոսի Առաքյալը և Փիլիպպոսի ընկերը Նոր Կտակարանում (Հովհ. Ա.45–51): Նա Գալիլեայի Կանայից էր (Հովհ.

ԻԱ.2): Քրիստոսն ասաց, որ Նաբանայելն Իսրայելացի էր, որի մեջ նեղություն չկար (Հովհ. Ա.47): Ընդհանուր կարծիք կա, որ նա և Բարթողոմեոսը միևնույն անձն են (Մատ. Ժ.3, Մար. Գ.18, Ղուկ. 2.14, Հովհ. Ա.43-45):

ՆԱԽԱԳԱՀ: *Տե՛ս նաև* Առաջին Նախագահություն. Մարգարե

Կազմակերպության նախագահող պաշտոնյային տրվող կոչում: Եկեղեցու նախագահը մարգարե է, տեսանող և հայտնող (ՎևոՒ 21.1, 107.91-92), և Եկեղեցու անդամները պետք է Եկեղեցու մարգարեին դիմեն «Նախագահ» կոչումով (ՎևոՒ 107.65): Նա միակ անձն է երկրի վրա, որը լիազորված է գործադրելու քահանայության բոլոր բանալիները:

Քվորումների և Եկեղեցու մյուս կազմակերպությունների ղեկավարները նույնպես կարող են ունենալ նախագահի կոչումը:

Արքայության բանալիները Տերը տվել է Ջոզեֆ Սմիթին՝ **ՎևոՒ** 81.1-2: Երեք նախագահներ կազմում են Եկեղեցու Նախագահության քվորումը՝ **ՎևոՒ** 107.21-24: Նախագահները կարգվել էին ըստ Մելքիսեղեկի կարգի՝ **ՎևոՒ** 107.29: Բացառվում են սարկավազների, ուսուցիչների, քահանաների և երեցների վրա նախագահողների պարտականությունները՝ **ՎևոՒ** 107.85-89 (ՎևոՒ 124.136-38, 142): Յոթ նախագահներ կան մյուս բոլոր Յոթանասուրկանների վրա՝ **ՎևոՒ** 107.93-95: Նշանակվեցին ցգերի նախագահներ՝ **ՎևոՒ** 124.133-135:

ՆԱԽԱԳԱՀՉՈՂ ԵՊԻՄԿՊՈՍ

Եկեղեցու Բարձրագույն Իշխանավոր: Նա ընդհանուր պատասխանատվություն է կրում Եկեղեցու նյութական բարօրության համար (ՎևոՒ 107.68): Նախագահող Եպիսկոպոսը և նրա խորհրդակցները, որոնք նույնպես Բարձրագույն Իշխանավորներ են, նախագահում են Եկեղեցու Ահարոնյան Քահանայության վրա (ՎևոՒ 68.16-17, 107.76, 87-88):

Էդվարդ Պատրիշը պետք է կարգվի եպիսկոպոս՝ **ՎևոՒ** 41.9: Եպիսկոպոսները պետք է կանչվեն և ի սպաս դրվեն Առաջին Նախագահության կողմից՝ **ՎևոՒ** 68.14-15: Ահարոնի անմիջական

հետնորդները, որոնք անդրանիկ են, ունեն նախագահելու իրավունք, եթե կանչվում, ի սպաս են դրվում և կարգվում են Առաջին Նախագահության կողմից՝ **ՎևոՒ** 68.16, 18-20: Կարող է դասվել միայն Առաջին Նախագահության առաջ՝ **ՎևոՒ** 68.22-24 (ՎևոՒ 107.82):

ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ: *Տե՛ս* Առաջին Նախագահություն

ՆԱԽԱԿԱՐԳՈՒՄ: *Տե՛ս նաև* Նախամահկանացու Կյանք

Իր անվեհեր հոգեղեն զավակների նախամահկանացու կարգումն Աստծո կողմից՝ իրենց մահկանացու կյանքում որոշակի առաքելություն կատարելու համար:

Աստված դրել է մարդկանց սահմանները՝ **ԲՕբ. Լ.Բ.8:** Քեզ որովայնում չստեղծած, ես քեզ մարգարե են կարգել՝ **Երեմ.** Ա.5: Նախքան նշանակելը՝ Աստված որոշեց ժամանակները՝ **Գոթ. Ժ.26:** Որովհետև նրանց, ում սկզբից ճանաչեց, նրանց նախասահմանեց էլ՝ **Հռոմ.** Ը.28-30: Նա մեզ ընտրեց աշխարհի հիմնադրումից առաջ՝ **Եփես.** Ա.3-4: Հիսուս Քրիստոսը նախակարգված էր՝ Քավիչը լինելու՝ **Ա Պետ.** Ա.19-20 (Հայտ. ԺԳ.8): Նրանք կանչվել և պատրաստվել էին աշխարհի հիմնադրումից ի վեր՝ **Ալմա** 13.1-9: Ես նկատեցի այն ազնիվ ու մեծ անձանց, որոնք ի սկզբանե ընտրվել էին՝ **ՎևոՒ** 138.55-56: Իմ Սիրելի Որդին ընտրվել էր ի սկզբանե՝ **Մովսես** 4.2: Աբրահամն ընտրվել էր նախքան իր ծնվելը՝ **Աբր.** 3.23:

ՆԱԽԱՄԱՀԿԱՆԱՅՈՒ ԿՅԱՆՔ:

Տե՛ս նաև Խորհուրդ Երկնքում. Մարդ, Մարդիկ. Պատերազմ Երկնքում. Սկիզբ

Նախատերկրային կյանքը: Բոլոր տղամարդիկ և կանայք ապրել են Աստծո հետ, որպես նրա հոգեղեն զավակներ, նախքան որպես մահկանացու էակներ այս երկիր գալը: Սա երբեմն անվանում են առաջին վիճակ (Աբր. 3.26):

Երբ Աստված դնում էր երկրի հիմքը, Աստծո բոլոր որդիները ցնձում էին ուրախությունից՝ **Հոբ** Լ.Ը.4-7: Հոգին կվերադառնա Աստծո մոտ, որը տվել է այն՝ **Ժող.** ԺԲ.7: Քեզ որովայնում չստեղծած, ես քեզ գիտեի՝ **Երեմ.** Ա.4-5: Մենք բոլորս նրա

ծառանգներն ենք՝ **Գոր.** Ժ.Է.28: Աստված ընտրել է մեզ աշխարհի հիմնադրումից առաջ՝ **Եփես.** Ա.3–4: Մենք պետք է հնազանդվենք հոգիների Հորը՝ **Եբր.** ԺԲ.9: Հրեշտակներին, որոնք չպահեցին իրենց առաջին վիճակը, նա պահել է հավիտենական կապանքների մեջ՝ **Հուդա** Ա.6 (Աբր. 3.26): Դևը և նրա հրեշտակները դուրս գցվեցին՝ **Հայտ.** ԺԲ.9: Նրանք կանչվել և պատրաստվել էին աշխարհի հիմնադրումից առաջ՝ **Ալմա** 13.3: Քրիստոսը նայում էր հավերժության լայնարձակ տարածույթան վրա և երկնքի սերովբեական գործերի վրա, նախքան աշխարհի արարումը՝ **ՎևոՒ** 38.1: Մարդը նույնպես սկզբում Աստծո մոտ էր՝ **ՎևոՒ** 93.29 (Հել. 14.17, ՎևոՒ 49.17): Ազնիվ հոգիներն սկզբից ի վեր ընտրվել էին Եկեղեցու ղեկավարներ՝ **ՎևոՒ** 138.53–55: Շատերն իրենց առաջին դասերը ստացել են հոգիների աշխարհում՝ **ՎևոՒ** 138.56: Բոլոր բաները ստեղծվել են հոգեղեն, նախքան նրանց լինելը երկրի վրա՝ **Մովսես** 3.5: Ես արարեցի աշխարհը և մարդկանց, նախքան նրանք մարմնում էին՝ **Մովսես** 6.51: Աբրահամը տեսավ այն բանակառությունները, որոնք կազմավորվել էին նախքան աշխարհի լինելը՝ **Աբր.** 3.21–24:

ՆԱԽԱՍԱՀՄԱՆՈՒՄ: *Տե՛ս*
Նախակարգում

ՆԱԽԱՆՁԵԼ: *Տե՛ս նաև* Ազահ լինել.
Նախանձոտ, Նախանձավորություն

Համաձայն սուրբ գրքերի՝ սխալ է ցանկանալ այն, ինչն ուրիշին է պատկանում:

Նահապետները, նախանձելով, Հովսեփին ծախեցին Եգիպտոս՝ **Գոր.** Է.9: Գթությունը չի նախանձում՝ **Ա Կոր.** ԺԳ.4 (Մոր. 7.45): Նախանձը գալիս է հպարտությունից՝ **Ա Տիմ.** Զ.4: Ուր որ նախանձ կա, այնտեղ անկարգություն և ամեն չար բաներ կան՝ **Հակ.** Գ.16: Տերը պատվիրել է, որ մարդիկ չպետք է նախանձեն՝ **2 Նեփի** 26.32: Նախանձություններ չկային Նեփիի ժողովրդի մեջ՝ **4 Նեփի** 1.15–18: Մարդկանց նախանձն ու ցատուն իմ ամենօրյա բաժինն են եղել իմ կյանքի բոլոր օրերում՝ **ՎևոՒ** 127.2:

ՆԱԽԱՆՁՈՏ, ՆԱԽԱՆՁԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ: *Տե՛ս նաև* Նախանձել

Սուրբ գրքերում օգտագործված իմաստով *նախանձոտ* բառն ունի երկու իմաստ. (1) նախանձախնդիր լինել և նուրբ ու խորը զգացումներ ունենալ ինչ-որ մեկի կամ ինչ-որ բանի նկատմամբ և (2) նախանձամիտ լինել մեկի հանդեպ, կամ կասկածամիտ, որ դիմացինը ձգտում է առավելություն ձեռք բերել:

Նախանձախնդիր լինելը. Ես՝ Տերս, նախանձոտ Աստված եմ՝ **Ել.** Ի.5 (Բ Օր. Ե.9, Զ.15, Մոսիա 11.22): Ես պիտի նախանձեմ իմ սուրբ անվան համար՝ **Եզեկ.** ԼԹ.25: Ես նախանձել եմ Երուսաղեմի և Սիոնի համար՝ **Զաք.** Ա.14:

Նախանձամիտ և կասկածամիտ լինելը. Նախանձը մարդու կատաղությունն է՝ **Առակ.** Զ.32–35: Աքիսը սկսեց նախանձել իր որդուն՝ **Եթեր** 9.7: Չեք վրայից հանեք նախանձն ու վախը՝ **ՎևոՒ** 67.10:

ՆԱՀԱՏԱԿ, ՆԱՀԱՏԱԿՈՒԹՅՈՒՆ

Մարդ, որը նախընտրում է զոհել իր կյանքը, քան հեռանալ Քրիստոսից, ավետարանից կամ իր արդար հավատից ու սկզբունքներից:

Աբելից մինչև Չաբարիա, բոլոր արդարների արյունը կվկայի ամբարիշտների դեմ՝ **Մատ.** ԻԳ.35 (Ղուկ. ԺԱ.50): Ով որ իր անձը Քրիստոսի համար և ավետարանի համար կորցնի, կփրկի այն՝ **Մար.** Ը.35 (ՎևոՒ 98.13): Եվ նրանք քարկոծում էին Ստեփանոսին՝ **Գոր.** Է.58 (Գոր. ԻԲ.20): Որտեղ որ կտակ կա, հարկավոր է, որ կտակարարի մահը մեջ մտնի՝ **Եբր.** Թ.16–17: Աքինադին ընկավ՝ տանելով մահ կրակով՝ **Մոսիա** 17.20: Դարձի եկած Ամնոնիացիներին կրակի մեջ էին գցում՝ **Ալմա** 14.8–11: Շատերն էին սպանվել, որովհետև վկայել էին այս բաների մասին՝ **3 Նեփի** 10.15: Ով իմ գործի համար վայր է դնում իր կյանքը, նա հավերժական կյանք կգտնի՝ **ՎևոՒ** 98.13–14: Ջոզեֆ Սմիթը և Հայրում Սմիթը նահատակներ էին ավետարանի վերականգնման համար՝ **ՎևոՒ** 135: Ջոզեֆ Սմիթն արյամբ կնքեց իր վկայությունը՝ **ՎևոՒ** 136.39:

ՆԱՎՈՒ, ԻԼԻՆՈՅՍ (ԱՄՆ)

1839 թվականին Վերջին Օրերի Սրբերի կողմից հիմնադրված քաղաք Իլինոյս

նահանգում: Այն գտնվում է Միսսիսիպի գետի վրա, Մենտ Լյուիսից մոտ 300կմ գետի երկայնքով վեր:

Միսսուրի նահանգում եղած հալածանքների պատճառով, Սրբերը տեղափոխվեցին մոտ 300կմ դեպի հյուսիսարևելք, սեցնելով Միսսիսիպի գետը՝ դեպի Իլինոյս նահանգ, որտեղ նրանք ավելի բարենպաստ պայմաններ գտան: Ի վերջո Սրբերը հող գնեցին ոչ զարգացած Կոմերս քաղաքի մոտ: Ըստ էության, այն ճահճոտ ամայի վայր էր, որտեղ միայն մի քանի հասարակ կառույցներ կային: Սրբերը շորացրեցին հողը և տներ հիմնեցին: Ջոզեֆ Սմիթն իր ընտանիքը տեղավորեց մի փոքր գերանե տնակում: Կոմերս քաղաքի անունը փոխվեց Նավու, որը երբայերեն բառ է և նշանակում է «գեղեցիկ»:

Վարդապետություն և Ուխտերի մի քանի բաժիններ գրվել են Նավուում (ՎևՈՒ 124-129, 132, 135): Սրբերին պատվիրվեց տաճար կառուցել Նավուում (ՎևՈՒ 124.26-27): Նախքան 1846 թվականին իրենց տներից հանվելը, նրանք կառուցեցին տաճարը և կազմավորեցին Միոնի ցգերը: Այդ հալածանքների արդյունքում Սրբերը հեռացան այդ տարածքից և ճամապարհ ընկան դեպի արևմուտք:

ՆԱՌԻՄ

Հին Կտակարանի մարգարե Գալիլեայում, որն իր մարգարեություններն արձանագրել է Ք.ծ.ա. 642-606թթ. միջև ընկած ժամանակաշրջանում:

Նաումի գիրքը. Ա գլուխը խոսում է Երկրորդ Գալստի ժամանակ երկրի այրվելու և Տիրոջ ողորմության ու զորության մասին: Բ գլուխը պատմում է Նիմվեի կործանման մասին, որը նախանշան է այն բանի, թե ինչ պիտի գա վերջին օրերին: Գ գլուխը շարունակում է կամխավ պատմել Նիմվեի դժբախտ կործանումը:

ՆԵՇՄԱՆ: *Տե՛ս նաև* Եղիսե

Հին Կտակարանում Ասորիների թագավորական բանակի զորապետն էր: Նա նույնպես բորոտ էր: Մի Իսրայելացի աղայանի հավատքի միջոցով, նա գնաց Իսրայել՝ տեսնելու Եղիսե մարգարեին:

Նա բորոտությունից բժշկվեց՝ խոնարհեցնելով իր անձը և յոթ անգամ ընկղմվելով Հորդանան գետը, ինչպես որ հրահանգել էր Եղիսե մարգարեն (Գ. Թագ. Ե.1-19, Ղուկ. Գ.27):

ՆԵՇՄԻԱ

Հին Կտակարանում Իսրայելացի ազնվական Բաբելոնում (կամ Ղևտացի, կամ Հուդայի ցեղից), որը մատուցակի պաշտոն ուներ Արտաշեսի պալատում, որից նա թագավորական լիազորություն ստացավ, ինչը նրան իրավունք տվեց կրկին կառուցել Երուսաղեմի պատերը:

Նեեմիայի գիրքը. Այս գիրքը Եզրասի գրքի շարունակությունն է: Այն մի պատմություն է Բաբելոնյան գերությունից հրեաների վերադարձից հետո Երուսաղեմի վրա կատարվող աշխատանքների հաջողությունների և դժվարությունների մասին: Ա-է գլուխները պատմում են Երուսաղեմ կատարած Նեեմիայի առաջին այցելության և քաղաքի պատերի կառուցման մասին, չնայած մեծ ընդդիմությանը: Ը-Ժ գլուխները նկարագրում են կրոնական և սոցիալական այն բարեփոխումները, որոնք Նեեմիան փորձում էր կատարել: ԺԱ-ԺԳ գլուխները շարադրում են արժանավոր մարդկանց անունների մի ցուցակ և պատմում են պատերի մվիրագործման մասին: ԺԳ գլխի 4-31-րդ հատվածները հիշատակում են տասներկու տարի դրսում լինելուց հետո Նեեմիայի Երուսաղեմ կատարած երկրորդ այցելության մասին:

ՆԵՆԳՈՒԹՅՈՒՆ: *Տե՛ս նաև*

Խաբկանք, Խաբել, Խաբեություն

Մուրբ գրքերում՝ նեցգությունը խորամանկ խաբեությունն է:

Օրինված է այն մարդը, որի հոգում նեցգություն չկա՝ **Մադ.** Լ.Բ.2 (Մադ. Լ.Գ.13, Ա Պետ. Բ.1): Նաթանայելն Իսրայելացի էր, որի մեջ նեցգություն չկար՝ **Հովհ.** Ա.47 (ՎևՈՒ 41.9-11): Կատարյալ գիտելիքը մեծացնում է հոգին առանց նեցգության՝ **ՎևՈՒ** 121.42:

ՆԵՈՐ: *Տե՛ս նաև* Հակաքրիստոս.

Քահանանեցություն

Մի չար մարդ Մորմոնի Գրքում: Նեորն

առաջիններից մեկն էր, որը քահանանեցուքյուն էր գործադրում Նեփիացիների մեջ: Կեղծ վարդապետություն ուսուցանելուց և Գեղեճինին սպանելուց հետո, Նեորը մահվան դատապարտվեց իր հանցանքների համար (Ալմա 1): Նեորի մահից հետո, նրա հետևորդները երկար ժամանակ շարունակում էին կիրառել նրա չար գործերն ու ուսմունքները:

Ալման և Ամուդեկը բանտարկվեցին մի դատավորի կողմից, որն ըստ Նեորի կարգի էր՝ **Ալմա 14.14–18**: Նրանք Նեորի դավանանքից էին, ովքեր սպանվեցին՝ **Ալմա 16.11**: Շատերն ըստ Նեորյանների կարգի էին **Ալմա 21.4**: Իրենց եղբայրներին սպանածների առավելագույն մասն ըստ Նեորի կարգի էր՝ **Ալմա 24.28**:

ՆԵՐՇԼ: *St'u lual* Ապաշխարել, Ապաշխարություն. Խոստովանել, Խոստովանություն. Մեղքերի բողոքյուն. Քավել, Քավություն

Սուրբ գրքերում օգտագործված իմաստով ներել, հիմնականում, նշանակում է երկու բաներից մեկը. (1) Երբ Աստված ներում է մարդկանց, նա հանում կամ մի կողմ է դնում մեղքի համար պահանջվող պատիժը: Քրիստոսի քավության միջոցով մեղքերի ներումը հաստ է բոլոր նրանց, ովքեր ապաշխարում են, բացի նրանցից, ովքեր մեղավոր են սպանության կամ Սուրբ Հոգու դեմ աններելի մեղքի մեջ: (2) Երբ մարդիկ են միմյանց ներում, նրանք Քրիստոսանման սեր են ցուցաբերում միմյանց հանդեպ և վատ զգացումներ չեն ունենում նրանց հանդեպ, ովքեր վիրավորել են իրենց (Մատ. Ե.43–45, Զ.12–15, Ղուկ. ԺԷ.3–4, 1 Նեփի 7.19–21):

Տերը երկայնամիտ է, և առատ ողորմությունով և անօրինությունը և հանցանքը ներող՝ **Թվ. ԺԳ.18**: Թեև ձեր մեղքերը կրկնակի կարմիրի պես լինեն, ձյունի պես կսպիտակեն՝ **Յս. Ա.18**: Ներիր մեզ մեր պարտքերը, ինչպես մենք ենք ներում մեր պարտակալներին՝ **Մատ. Զ.12** (Ղուկ. ԺԱ.4, 3 Նեփի 13.11): Մարդու Որդին իշխանություն ունի մեղքերը ներելու՝ **Մատ. Թ.6** (Մատ. ԺԸ.35, Մար. Բ.10, Ղուկ. Ե.20–24): Քանի՞ անգամ պիտի իմ եղբայրն իմ դեմ մեղք գործի, և ես ներեմ նրան՝ **Մատ. ԺԸ.21–22** (ՎևոՒՒ

98.40): Ով որ Սուրբ Հոգուն հայիոյի, երբեք ներում չի ունենա՝ **Մար. Գ.29** (Ալմա 39.6): Եթե քո եղբայրը մեղանչի քո դեմ և ապաշխարի, ներիր նրան՝ **Ղուկ. ԺԷ.3**: Հայր, ներիր նրանց, որովհետև չգիտեն քե ինչ են անում՝ **Ղուկ. ԻԳ.34**: Աղոթք ներման համար՝ **1 Նեփի 7.21**: Գործի դիր Քրիստոսի քավիչ արյունը, որպեսզի մենք կարողանանք ներում ստանալ մեր մեղքերին՝ **Մոսիա 4.2**: Եթե նա խոստովանի իր մեղքերն իմ և քո առաջ, և ապաշխարի, նրան պիտի դու ներես՝ **Մոսիա 26.29–31**: Նա, ով ապաշխարում և կատարում է պատվիրանները, պիտի ներվի՝ **ՎևոՒՒ 1.32**: Գցիր մանգաղը քո ողջ հոգով, և մեղքերդ ներված են՝ **ՎևոՒՒ 31.5** (ՎևոՒՒ 84.61): Ով որ ապաշխարել է իր մեղքերից, նա ներված է, և ես՝ Տերս, այլևս չեմ հիշում դրանք՝ **ՎևոՒՒ 58.42**: Ես կներեմ, ում կկամենամ ներել, բայց ձեզանից պահանջվում է ներել բոլոր մարդկանց՝ **ՎևոՒՒ 64.10**: Որքան որ դուք միմյանց ներել եք ձեր զանցանքները, ճիշտ այդպես, ես՝ Տերս, ներում եմ ձեզ՝ **ՎևոՒՒ 82.1**: Ում որ սիրում եմ, ես նաև խրատում եմ, որպեսզի նրանց մեղքերը ներվեն՝ **ՎևոՒՒ 95.1**: Ես քեզ ներել եմ քո օրինազանցությունը՝ **Մովսես 6.53**:

ՆԵԹՔԱՂԻՄ: *St'u lual* Իսրայել. Հակոբ՝ Իսահակի որդի

Հինգերորդը Հակոբի տասներկու որդիներից՝ Ռաբելի աղային Բաղդայի երկրորդ որդին (Ճն. Լ.7–8): Նեփթաղիմն ունեցավ չորս որդի (Ա Մն. Է.13):

Նեփթաղիմի ցեղը. Հակոբի օրհնությունը Նեփթաղիմին արձանագրված է Ճննոց ԽԹ.21-ում: Այդ ցեղին տված Մովսեսի օրհնությունն արձանագրված է Երկրորդ Օրինաց ԼԳ.23-ում:

ՆԵՓԻՒ ԼԵՔԻԻ ՈՐԳԻ: *St'u lual* Լեքի՝ Նեփիի հայր. Նեփիացիներ

Մորմոնի Գրքում Լեքիի և Սարիայի արդարակյաց որդին (1 Նեփի 1.1–4, 2.5): Նեփին մեծ հավատք ուներ Աստծո խոսքի հանդեպ (1 Նեփի 3.7) և դարձավ մեծ մարգարե, հիշատակարաններ վարող և առաջնորդ իր ժողովրդի համար:

Հնազանդ էր և աղոթեց հավատքով՝

1 Նեփի 2.16: Վերադարձավ Երուսաղեմ՝ քիթեղները վերցնելու՝ **1 Նեփի 3-4:** Վերադարձավ Երուսաղեմ, որ անապատ բերի Իսմայելի ընտանիքը՝ **1 Նեփի 7:** Ստացավ նույն տեսիլքը, որը ստացավ Լեքին՝ **1 Նեփի 10.17-22, 11:** Տեսիլքում տեսավ իր ժողովրդի ապագան և ավետարանի վերականգնումը՝ **1 Նեփի 12-13:** Մեկնաբանեց կյանքի ծառի տեսիլքը՝ **1 Նեփի 15.21-36:** Աղեղը կտրվեց, բայց նա հավատքով կարողացավ ուտելիք հայթայթել՝ **1 Նեփի 16.18-32:** Մի նավ կառուցեց և ճանապարհորդեց դեպի խոստումի երկիր՝ **1 Նեփի 17-18:** Նեփիացիները և Լամանացիները բաժանվեցին՝ **2 Նեփի 5:** Վերջին վկայությունը բերեց **2 Նեփի 33:**

1 Նեփիի գիրքը. 1-ին գլխից մինչև 18.8-ը հիմնականում նկարագրվում է Լեքի մարգարեի և նրա ընտանիքի հեռանալը Երուսաղեմից: Նրանք ճամփորդում էին դատարկ անապատներով, մինչև որ ծովին հասան: 1 Նեփի 18.9-23-ը պատմում է դեպի խոստումի երկիր նրանց ծովային ճամփորդության մասին, ինչպես որ թելադրել էր Տերը, շնայած Լամանի և Լեմուելի ապստամբությանը: 19-22-րդ գլուխները պատմում են հիշատակարաններ վարելու Նեփիի նպատակի մասին (1 Նեփի 6.1-6, 19.18), որն էր՝ համոզել բոլորին, որ հիշեն Տիրոջը՝ իրենց Քալվին: Նա վկայակոչեց Եսայիային (1 Նեփի 20-21) և մեկնաբանեց Եսայիայի պատգամը, հույս ունենալով, որ բոլորը կգան Հիսուս Քրիստոսի ճանաչմանը, որպես իրենց Փրկիչ և Քավիչ (1 Նեփի 22.12):

2 Նեփիի գիրքը. 1-4-րդ գլուխները պարունակում են Լեքիի մահից առաջ նրա վերջին ուսմունքներից և մարգարեություններից մի քանիսը, այդ թվում՝ իր որդիներին և նրանց հետնորդներին օրհնելը: 5-րդ գլուխը բացատրում է, թե ինչու Նեփիացիները բաժանվեցին Լամանացիներից: Նեփիացիները մի տաճար կառուցեցին, ուսուցանում էին Մովսեսի օրենքը և հիշատակարաններ էին վարում: 6-10-րդ գլուխները պարունակում են Հակոբի՝ Նեփիի կրտսեր եղբոր խոսքերը: Հակոբը վերաբնեւ է Հուդայի պատմությունը և մարգարեացել Մեսիայի մասին որոշ մաս վերցնելով Եսայիա մարգարեի գրու-

թյուններից: 11-33-րդ գլուխներում Նեփին արձանագրել է իր վկայությունը Քրիստոսի մասին, Հակոբի վկայությունը, մարգարեություններ վերջին օրերի վերաբերյալ և մի քանի գլուխներ Հին Կտակարանի Եսայիայի գրքից:

Նեփիի թիթեղները. Տես Թիթեղներ

ՆԵՓԻ՝ ՀԵԼԱՄԱՆԻ ՈՐԳԻՆ: *Տես* *ու նաև* Լեքի՝ Նեփիացի քարոզիչ. Հելաման՝ Հելամանի որդի

Մորմոնի Գրքում՝ Նեփիացի մեծ մարգարե և քարոզիչ:

Հելամանի ավագ որդին էր՝ **Հել.** 3.21: Նշանակվել էր գլխավոր դատավոր՝ **Հել.** 3.37: Նա և նրա եղբայր Լեքին շատ Լամանացիների դարձի քերեցին դեպի ավետարանը՝ **Հել.** 5.18-19: Օղակված էր կրակով և ազատվեց բանտից՝ **Հել.** 5.20-52: Աղոթեց իր այգու աշտարակի վրա՝ **Հել.** 7.6-10: Հայտնի դարձրեց գլխավոր դատավորի սպանությունը՝ **Հել.** 8.25-28, 9.1-38: Մեծ գորություն էր ստացել Տիրոջ կողմից՝ **Հել.** 10.3-11: Տիրոջը խնդրեց, որ սով լինի, և որ սովն ավարտվի՝ **Հել.** 11.3-18:

ՆԵՓԻ՝ ՀԵԼԱՄԱՆԻ ՈՐԳԻՆ
ՆԵՓԻՆԻ ՈՐԳԻՆ: *Տես* *ու նաև* Աշակերտ. Նեփի՝ Հելամանի որդի

Նեփիացի տասներկու աշակերտներից մեկը, որն ընտրվել էր հարություն առած Հիսուս Քրիստոսի կողմից Մորմոնի Գրքում (3 Նեփի 1.2-3, 19.4): Այս մարգարեն իր ժողովրդի համար ուժգին աղոթեց Տիրոջը: Նեփին լսեց Տիրոջ ձայնը (3 Նեփի 1.11-14): Նեփիին նաև այցելեցին հրեշտակները, նա դերո դուրս գցեց, մահից բարձրացրեց իր եղբորը և վկայություն բերեց, որին հնարավոր չէր չհավատալ (3 Նեփի 7.15-19, 19.4): Նեփին սուրբ գրքերի հիշատակարան էր վարում (3 Նեփի 1.2-3):

3 Նեփիի գիրքը. Գ-իքը՝ Մորմոնի Գրքում, գրված Նեփիի որդի Նեփիի կողմից: 1-10-րդ գլուխները ցույց են տալիս Տիրոջ զալստի մասին մարգարեությունների իրականացումը: Տրվեց Քրիստոսի ծննդյան նշանը. մարդիկ ապաշխարեցին. բայց հետո նրանք վերադարձան անբարշտության: Ի վերջո, փոթորիկները,

երկրաշարժերը, կատաղի մրրիկները և մեծ կործանումը նշանավորեցին Քրիստոսի մահը: 11–28-րդ գլուխներն արձանագրում են Քրիստոսի գալուստն Ամերիկյան աշխարհամաս: Մա 3 Նեփիի գրքի առանցքային մասն է: Քրիստոսի խոսքերից շատերը մման են Աստվածաշնչում արձանագրված նրա քարոզներին (օրինակ՝ Մատ. Ե–Է և 3 Նեփի 12–14): 29–30-րդ գլուխները Մորմոնի խոսքերն են ուղղված վերջին օրերի ազգերին:

4 Նեփիի գիրքը. Այս գիրքն ունի միայն քառասունհինգ հատված, բոլորը՝ մեկ գլխում, սակայն ընդգրկում է Նեփիացիների պատմության մոտ երեք հարյուր տարին (Ք.ժ.հ. 34–321թթ.): Մի քանի սերունդների գրողներ, այդ թվում՝ Նեփին, գրել են այդ հիշատակարանում: 1–19-րդ հատվածները պատմում են, որ Քրիստոսի այցելությունից հետո, բոլոր Նեփիացիներն ու Լամանացիները դարձի եկան դեպի ավետարանը: Գերիշխում էր խաղաղությունը, սերը և ներդաշնակությունը: Երեք Նեփիացի աշակերտները, որոնց Քրիստոսը թույլ էր տվել մնալ երկրի վրա, մինչև իր երկրորդ գալուստը (3 Նեփի 28.4–9), ծառայում էին ժողովրդին: Նեփին հիշատակարանները թողեց իր որդի Ամովին: 19–47-րդ հատվածներն արձանագրում են Ամովի ծառայության (84 տարի) և նրա որդի Ամովի ծառայության (112 տարի) մասին: Ք.ժ.հ. 201 թվականին հպարտություն սկսեց խնդիրներ առաջացնել մարդկանց մեջ, որոնք բաժանվել էին դասերի և հիմնել կեղծ եկեղեցիներ՝ շահ ստանալու նպատակով (4 Նեփի 1.24–34):

4 Նեփիի վերջին հատվածները ցույց են տալիս, որ ժողովուրդը կրկին վերադարձավ ամբարշտության (4 Նեփի 1.35–49): Ք.ժ.հ. 305 թվականին Ամովի որդի Ամովը մահացավ և նրա եղբայր Ամմարոնը, ապահովության համար, քաբցրեց բոլոր սրբազան հիշատակարանները: Հետագայում Ամմարոնը հիշատակարանները վստահեց Մորմոնին, որը շատ իրադարձություններ արձանագրեց իր կյանքից, իսկ հետո համառոտագրեց դրանք (Մորմ. 1.2–4):

ՆԵՓԻԱՏԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ: *Տե՛ս*
Երեք Նեփիացի աշակերտները

ՆԵՓԻԱՏԻՆԵՐ: *Տե՛ս նաև*

Լամանացիներ. Մորմոնի Գիրքը.

Նեփի՝ Լեքիի որդի

Մի խումբ մարդիկ Մորմոնի Գրքում, որոնցից շատերը Լեքիի որդու՝ Նեփի մարգարեի հետնորդներն էին: Նրանք առանձնացան Լամանացիներից և հիմնականում ավելի արդարակյաց էին, քան Լամանացիները: Ինչևէ, վերջ ի վերջո, ամբարշտության պատճառով նրանք կործանվեցին Լամանացիների կողմից:

Նեփիացիներն առանձնացան Լամանացիներից՝ **2 Նեփի** 5.5–17: Բոլորը, ովքեր Լամանացիներ չէին, Նեփիացիներ էին՝ **Հակոբ** 1.13: Նեփիացիները ոգեշնչված էին ավելի արդար դրդապատճառով՝ **Ալմա** 43.6–9, 45: Նեփիացիները երբեք այնքան երջանիկ չէին եղել, որքան Մորմոնի ժամանակ՝ **Ալմա** 50.23: Նեփիացիները փրկվեցին արդարների աղոթքների շնորհիվ՝ **Ալմա** 62.40: Նեփիացիներն սկսեցին ընկնել անհավատության մեջ՝ **Հել.** 6.34–35: Հիսուսն ուսուցանեց և ծառայեց Նեփիացիների մեջ՝ **3 Նեփի** 11.1–28.12: Բոլորը դարձի եկան առ Տերը և նրանց մոտ ամեն ինչ ընդհանուր էր՝ **4 Նեփի** 1.2–3: Հակառակություններ չկային, Աստծո սերը բնակվում էր նրանց սրտում, և նրանք ամենաերջանիկ ժողովուրդն էին՝ **4 Նեփի** 1.15–16: Նեփիացիներն սկսեցին լինել հպարտ և անապարծ՝ **4 Նեփի** 1.43: Արյուն և կոտորած էր սիռվել ողջ երկրի երեսով մեկ՝ **Մորմ.** 2.8: Ամբարշտությունը շատացավ Նեփիացիների մեջ, և Մորմոնը հրաժարվեց առաջնորդել նրանց՝ **Մորմ.** 3.9–11: Բոլոր Նեփիացիները սպամվեցին, բացի քսանչորս հոգուց՝ **Մորմ.** 6.7–15: Յուրաքանչյուր Նեփիացի, ով չէր կամենում ուրանալ Քրիստոսին, մահվան էր դատապարտվում՝ **Մոր.** 1.2: Նեփիացիները կործանվեցին իրենց ամբարշտության և մեղքերի պատճառով՝ **ՎևոՒ** 3.18: Զգուշացեք հպարտությունից, չլինի թե դուք դառնաք ինչպես Նեփիացիները՝ **ՎևոՒ** 38.39:

ՆԶՈՎՔ: *Տե՛ս նաև* Դժոխք. Դև.

Կորստի որդիներ. Մահ հոգևոր

Այն վիճակը, երբ մարդու զարգացումը կանգ է առնում և Աստծո ներկայությանն ու նրա փառքին հաստ լինելը մերժվում

է: Գոյություն ունի տարբեր աստիճանի նզովք: Բոլոր նրանք, ովքեր սելեստիալ վեհացման լիությունը չեն ստանում, ինչոր չափով կսահմանափակվեն իրենց զարգացման և արտոնությունների մեջ, և նրանց նզովքը կլինի այդ չափով:

Վա՛յ ձեզ, կեղծավորներ. դուք ավելի մեծ դատապարտություն կստանաք՝ **Մատ.** ԻԳ.14: Ով որ Սուրբ Հոգուն հայհոյի, հավիտենական նզովքի վտանգի տակ կլինի՝ **Մար.** Գ.29: Նրանք, ովքեր չարիք են գործել, դուրս կգան դեպի հարությունը նզովքի՝ **Հովհ.** Ե.29 (3 Նեփի 26.5): Նա, ով անարժանորեն ուտում է խմում է, իր համար նզովք է ուտում և խմում՝ **Ա Կոր.** ԺԱ.29 (3 Նեփի 18.28–29): Նա, ով չի ապաշխարում, չի մկրտվում և չի համբերում մինչև վերջ, պիտի նզովվի՝ **2 Նեփի** 9.24 (Մար. ԺԶ.16, Եբեր 4.18, ՎևոՒ 68.9, 84.74): Ամբարիշտներն ավելի թշվառ կլինեն, բնակվելով Աստծո հետ, քան դժոխքում՝ նզովված հոգիների հետ՝ **Մորմ.** 9.4: Ով ոչինչ չի անում, մինչև նրան չեն պատվիրում, նա նզովված է՝ **ՎևոՒ** 58.29: Նա, ով ստանում է նոր և հավիտենական ուխտի լիությունը, պետք է մնա օրենքի մեջ, այլապես նա պիտի նզովվի՝ **ՎևոՒ** 132.6:

ՆԻԿՈՂԵՄՈՍ: *Տե՛ս նաև*

Փարիսեցիներ

Նոր Կտակարանում՝ հրեաների արդարակյաց ղեկավար (հավանաբար, Ծերակույտի անդամ) և Փարիսեցի (Հովհ. Գ.1):

Նա գիշերով խոսեց Հիսուսի հետ՝ **Հովհ.** Գ.1–21: Փարիսեցիների մոտ պաշտպանեց Քրիստոսին՝ **Հովհ.** Է.50–53: Նա համեմունքներ բերեց Հիսուսի թաղմանը՝ **Հովհ.** ԺԹ.39–40:

ՆԻՆՎԵ: *Տե՛ս նաև* Ասորեստան.

Հովման

Հին Կտակարանում՝ Ասորեստանի մայրաքաղաքը, որը երկու հարյուր տարի շարունակ մեծ առևտրական կենտրոն էր Տիգրիս գետի արևելյան ափին: Ասորեստանյան կայսրության անկման ժամանակ, Ք.ծ.ա. 606 թվականին, այն մույնպես ընկավ:

Սենեբերիմը՝ Ասորեստանի թագավորը, ապրում էր Նինվեում՝ **Գ Թագ.** ԺԹ.36:

Հովմանն ուղարկվեց՝ այդ քաղաքին ապաշխարության կանչելու՝ **Հովմ.** Ա.1–2 (Հովմ. Գ.1–4): Նինվեի ժողովուրդն ապաշխարեց՝ **Հովմ.** Գ.5–10: Քրիստոսը հրեաների առաջ Նինվեն օգտագործեց որպես ապաշխարության օրինակ՝ **Մատ.** ԺԲ.41:

ՆՇԱՆ: *Տե՛ս նաև* Եկեղեցու

ճշմարտության նշանները.

Ժամանակների նշանները. Հրաշք

Իրադարձություն կամ փորձառություն, որոնք մարդիկ ընդունում են, որպես ինչ-որ բանի փաստ կամ ապացույց: Նշանը, սովորաբար, Աստծոյց եկող հրաշքի դրսևորում է: Որոշ պայմանների դեպքում, Սատանան մույնպես ունի նշաններ ցույց տալու գորություն: Սրբերը պետք է փնտրեն Հոգու պարզվեները, բայց չպետք է նշաններ փնտրեն՝ իրենց հետաքրքրությունը բավարարելու կամ հավատքը հաստատելու համար: Փոխարենը, երբ Տերը հարմար գտնի, նա նշաններ կտա նրանց, ովքեր հավատում են (ՎևոՒ 58.64):

Տերն ինքը ձեզ նշան կտա՝ **Ես.** Է.14 (2 Նեփի 17.14): Աստված նշաններ և հրաշքներ է գործում երկնքում և երկրի վրա՝ **Դան.** Զ.27: Չար և շնացող ազգը նշան է ուզում **Մատ.** ԺԲ.39 (Մատ. ԺԶ.4, Դուկ. ԺԱ.29): Նրանց, ովքեր հավատացին, այս նշանները կհետևեն՝ **Մար.** ԺԶ.17 (Մորմ. 9.24, Եբեր 4.18, ՎևոՒ 84.65): Մերեմը նշան էր ուզում՝ **Հակոբ** 7.13–20: Կորիհորը նշան էր ուզում՝ **Ալմա** 30.48–60: Մեզ մի նշան ցույց տուր, այն ժամանակ կհավատանք՝ **Ալմա** 32.17: Ժողովրդի մեծ մասը հավատում էր նշաններին ու հրաշքներին՝ **3 Նեփի** 1.22: Մարդիկ մոռացան նշաններն ու հրաշքները՝ **3 Նեփի** 2.1: Նախքան ձեր հավատքի փորձությունը, դուք վկայություն չեք ստանում՝ **Եբեր** 12.6: Հրաշքներ մի պահանջեք, մինչև ես չպատվիրեմ՝ **ՎևոՒ** 24.13: Հավատքը չի գալիս նշաններով, այլ նշաններն են հետևում նրանց, ովքեր հավատում են՝ **ՎևոՒ** 63.7–11: Այն օրերին կբարձրանան կեղծ Քրիստոսներ և կեղծ մարգարեներ, և մեծ նշաններ ու հրաշքներ ցույց կտան՝ **ՋՄՄ** 1.22:

ՆՇԱՆՆԵՐԸ ՃՇՄԱՐԻՏ

ԵԿԵՂԵՑՈՒ: *Տե՛ս* Եկեղեցու

ճշմարտության նշանները

ՆՈՇՄԻ: *Տե՛ս նաև* Հռուք

Հին Կտակարանում՝ արդարակյաց մի կին՝ Ելիմելեքի կինը (Հռուք Ա-Դ): Ելիմելեքն ու Նոեմին իրենց ընտանիքը տարան Մովաբի երկիր՝ սովից փրկվելու համար: Ելիմելեքի և նրա երկու որդիների մահից հետո, Նոեմին, իր հարսի՝ Հռուքի հետ, վերադարձավ Բեթլեհեմ:

ՆՈՅ՝ ԱՍՏՎԱԾԱՆՉՅԱՆ

ՀԱՅՐԱՊԵՏ: *Տե՛ս նաև* Գաբրիել.

Ծիածան. Նոյի ժամանակի ջրհեղեղը. Տապան

Հին Կտակարանում՝ Ղամեքի որդին և տասներորդ հայրապետը՝ Ադամից սկսած (Ծն. Ե.29-32): Նա վկայել է Քրիստոսի մասին և ապաշխարություն քարոզել ամբարիշտ սերնդին: Երբ մարդիկ մեթեցին նրա պատգամը, Աստված պատվիրեց նրան տապան կառուցել, որտեղ կբնակվեին նրա ընտանիքը և բոլոր կենդանիները, երբ երկիրը կծածկվեր ջրհեղեղով՝ ամբարիշտներին կործանելու համար (Ծն. 2.13-22, Մովսես 8.16-30): Մարգարե Ջոզեֆ Սմիթն ուսուցանել է, որ Նոյը Գաբրիել հրեշտակն է և կանգնած է Ադամի կողքին՝ կրելով փրկության բանալիները:

Նա և նրա որդիներ Հաբեթը, Սեմը և Քամը և նրանց ընտանիքները փրկվեցին, երբ նրանք Աստծո հրամանով տապան կառուցեցին՝ **ԾՆ.** 2-Ը (Եբր. ԺԱ.7, Ա Պետ. Գ.20): Տերը նորացրեց այն ուխտը, որը հաստատել էր Ենոքի և Նոյի հետ՝ **ԾՆ.** Թ.1-17 (Մովսես 7.49-52, 2ՍԹ՝ ԾՆ. 9.15, 21-25): Նոյը քահանայության կարգվեց Մաթուսաղայի կողմից, տասը տարեկանում՝ **ՎԼՈՒ** 107.52: Մարդիկ փորձեցին խլել նրա կյանքը, բայց Աստծո զորությունը փրկեց նրան՝ **Մովսես** 8.18: Նա դարձավ արդարության քարոզիչ և ուսուցանեց Հիսուս Քրիստոսի ավետարանը՝ **Մովսես** 8.19, 23-24 (Բ Պետ. Բ.5):

ՆՈՅ՝ ՁԵՆԻՖԻ ՈՐԴԻ

Ամբարիշտ բազավոր Մորմոնի Գրքում: Նա մի խումբ Նեփիացիների վրա կառավարիչ էր Նեփիի երկրում:

Նոյը շատ մեղքեր գործեց՝ **Մոսիա** 11.1-

15: Նա պատվիրեց Աբինադի մարգարեի սպանությունը՝ **Մոսիա** 13.1 (Մոսիա 17.1, 5-20): Նոյը մահ տարավ կրակով՝ **Մոսիա** 19.20:

ՆՈՅԻ ԺԱՄԱՆԱԿԻ ՋՐՀԵՂԵՂԸ:

Տե՛ս նաև Ծիածան. Նոյ՝ աստվածաշնչյան հայրապետ. Տապան

Նոյի ժամանակ երկիրն ամբողջովին ծածկվեց ջրով: Դա երկրի մկրտությունն էր և խորհրդանշեց նրա մաքրվելը (Ա Պետ. Գ.20-21):

Աստված ջրհեղեղ պիտի բերի երկրի վրա՝ ամեն մարմին կործանելու համար՝ **ԾՆ.** 2.17 (Մովսես 7.34, 43, 50-52, 8.17, 30): Ջրհեղեղի ջրերը եկան երկրի վրա՝ **ԾՆ.** Է.10: Աստված իր աղեղը դրեց ամպի մեջ՝ որպես ուխտի նշան՝ **ԾՆ.** Թ.9-17: Երբ ջրերը ետ քաշվեցին, Ամերիկայի հողը դարձավ մի ընտիր երկիր՝ **Եթեր** 13.2: Ամբարիշտները պիտի տառապեն ջրհեղեղի մեջ՝ **Մովսես** 7.38, 8.24:

ՆՈՐ ԵՐՈՒՍԱԳԵՄ

Այն վայրը, որտեղ կհավաքվեն Սրբերը և Քրիստոսն անձամբ կթագավորի նրանց հետ Հազարամյակի ժամանակ: Սիոնը (Նոր Երուսաղեմը) կկառուցվի Ամերիկյան աշխարհամասում. և երկիրը կնորանա ու կընդունի իր դրախտային փառքը (ՀՀ 1.10): Այն վերաբերում է նաև մի սուրբ քաղաքի, որը կիջնի երկնքից Հազարամյակի սկզբում:

Սիոնից պիտի դուրս գա օրենքը՝ **Միքիա** Գ.2: Իմ Աստծո քաղաքի անունը Նոր Երուսաղեմ է՝ **Հայտ.** Գ.12: Հովհաննեսը տեսավ սուրբ քաղաքը՝ Նոր Երուսաղեմը՝ **Հայտ.** ԻԱ.1-5: Այս ժողովրդին ես կհաստատեմ այս հողի վրա, և այն կլինի Նոր Երուսաղեմ՝ **3 Նեփի** 20.22: Նոր Երուսաղեմը կկառուցվի Ամերիկայում՝ **Եթեր** 13.3-6, 10: Նոր Երուսաղեմ քաղաքը պատրաստ կլինի՝ **ՎԼՈՒ** 42.9, 35, 62-69: Սրբերը պետք է հավաքվեն և կառուցեն Նոր Երուսաղեմը՝ **ՎԼՈՒ** 45.63-75: Նոր Երուսաղեմը պիտի կառուցվի Միսսուրիում՝ **ՎԼՈՒ** 84.1-5 (ՎԼՈՒ 57.1-3): Գառը կկանգնի Սիոն սարի և սուրբ քաղաքի՝ Նոր Երուսաղեմի վրա՝ **ՎԼՈՒ** 133.56: Իմ խորանը կկոչվի Սիոն՝ Նոր Երուսաղեմ՝ **Մովսես** 7.62:

ՆՈՐ ԵՎ ՀՎՓԻՏԵՆԱԿԱՆ ՈՒՒՏ:

Տէ՛ս նաև Ուխտ

Հիսուս Քրիստոսի ավետարանի լրիվությունը (ՎևոՒՒ 66.2): Այն նոր է, ամեն անգամ, երբ ուրացության ժամանակաշրջանից հետո կրկին հայտնի է դառնում: Այն հավիտենական է այն իմաստով, որ Աստծո ուխտն է և մատչելի է եղել ավետարանի յուրաքանչյուր տնտեսության ժամանակ, երբ մարդիկ կամեցել են ստանալ այն: Նոր և հավիտենական ուխտը մարդկանց համար կրկին երկրի վրա հայտնվել է Հիսուս Քրիստոսի կողմից՝ մարգարե Ջոզեֆ Սմիթի միջոցով: Այն ներառում է արբավան արարողություններ, որոնք սպասավորվում են քահանայության իշխանությամբ, ինչպես օրինակ՝ մկրտությունը և տաճարային ամուսնությունը, որոնք մարդու համար ապահովում են փրկություն, անմահություն և հավերժական կյանք: Երբ մարդիկ ընդունում են ավետարանը և խոստանում են պահել Աստծո պատվիրանները, Աստված ուխտում է նրանց տալ իր նոր և հավիտենական ուխտի օրհնությունները:

Ես կհաստատեմ իմ ուխտն իմ և քո միջև՝ **ԾՆ.** ԺԷ.7: Նա կունենա հավիտենական քահանայության ուխտը՝ **ԹՎ.** ԻԵ.13: Մարդիկ փոխել են արարողությունները և դրժել հավիտենական ուխտը՝ **Ես.** ԻԳ.5 (ՎևոՒՒ 1.15): Չեզ հետ հավիտենական ուխտ պիտի դնե՞մ **Ես.** ԾԵ.3 (Երեմ. ԼԲ.40): Դա հավիտենական ուխտ կլինի՞՝ **Եզեկ.** ԼԷ.26: Տերը նոր ուխտ է հաստատել և հիմն անցել է՝ **Եքք.** Ը.13: Հիսուսը նոր ուխտի միջնորդն է՝ **Եքք.** ԺԲ.24 (ՎևոՒՒ 76.69): Սա նոր և հավիտենական ուխտ է՝ **ՎևոՒՒ** 22.1: Ես աշխարհ են ուղարկել իմ հավիտենական ուխտը՝ **ՎևոՒՒ** 45.9 (ՎևոՒՒ 49.9): Տերն ուղարկել է իր ավետարանի լրիվությունը՝ իր հավիտենական ուխտը՝ **ՎևոՒՒ** 66.2 (ՎևոՒՒ 133.57): Սելեստիալ արքայության ամենաբարձր աստիճանին հասնելու համար, մարդ պետք է մտնի ամուսնության նոր և հավիտենական ուխտի մեջ՝ **ՎևոՒՒ** 131.1–2: Նոր և հավիտենական ուխտը հաստատվել է Տիրոջ փառքի լիության համար՝ **ՎևոՒՒ** 132.6, 19:

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ: *Տէ՛ս նաև*

Աստվածաշունչ. Սուրբ գրքեր

Ոգեղնչված գրությունների հավաքածու (սկզբնապես՝ հունարեն լեզվով) Հիսուս Քրիստոսի, Առաքյալների և Հիսուս Քրիստոսի այլ հետևորդների կյանքի ու ծառայության մասին: Նոր Կտակարանը հիմնականում կազմված է Ավետարաններից, Առաքյալների Գործքից, Պողոսի բղթերից, ընդհանրական բղթերից և Հայտնության գրքից:

Չորս Ավետարանները՝ Մատթեոսի, Մարկոսի, Ղուկասի և Հովհաննեսի գրքերը, հիշատակարաններ են Քրիստոսի կյանքի վերաբերյալ: Գործք գիրքը հիշատակարան է Եկեղեցու պատմության և Առաքյալների մասին, հատկապես Պողոսի միսիոներական ճամփորդությունների մասին՝ Քրիստոսի մահից հետո: Պողոսի նամակները հրահանգներ են տալիս Եկեղեցու ղեկավարներին ու անդամներին: Մյուս նամակները գրվել են մյուս Առաքյալների կողմից և լրացուցիչ խորհուրդներ են տալիս վաղ Սրբերին: Հայտնության գիրքը, որը գրվել է Հովհաննես Առաքյալի կողմից, մեծամասամբ մարգարեություններ է պարունակում վերջին օրերի վերաբերյալ:

ՆՎԻՐԱԲԵՐԵԼ, ՆՎԻՐԱԲԵՐ-

ՄԱՆ ՕՐԵՆԶ: *Տէ՛ս նաև* Աստծո

արքայություն կամ Երկնքի արքայություն. Միացյալ Միաբանություն

Նվիրել, սուրբ դարձնել կամ արդարակյաց դառնալ: Նվիրաբերման օրենքն աստվածային սկզբունք է, որով տղամարդիկ և կանայք կամավոր կերպով նվիրում են իրենց ժամանակը, շնորհները և նյութական հարստությունը՝ Աստծո արքայությունը հաստատելու և կառուցելու համար:

Այսօր ձեզ նվիրաբերեք Տիրոջը՝ **Ել.** ԼԲ.29: Բոլոր հավատացյալներն ամեն ինչ հասարակաց ունեին՝ **Գոր.** Բ.44–45: Նրանց մեջ բոլոր բաներն ընդհանուր էր. հետևաբար չկային հարուստ ու աղքատ՝ **4 Նեփի** 1.3: Տերը բացատրել է նվիրաբերման սկզբունքները՝ **ՎևոՒՒ** 42.30–39 (ՎևոՒՒ 51.2–19, 58.35–36): Մի մարդ չպետք է ունենա ավելին, քան մեկ ուրիշը՝ **ՎևոՒՒ** 49.20: Ամեն մարդու տրվեց հավասար բաժին՝ իր ընտանիքի համեմատ՝ **ՎևոՒՒ** 51.3: Հաստատվել էր կարգ, որպեսզի Սրբերը հավասար լինեին երկնային և

երկրային բաների կապերում՝ **ՎԼՈՒ** 78.4-5: Ամեն մարդ պետք է հավասար իրավունքներ ունենա՝ համաձայն իր պահանջների և կարիքների՝ **ՎԼՈՒ** 82.17-19: Միոնը կարող է կառուցվել միայն սելեստիալ օրենքի սկզբունքներով՝ **ՎԼՈՒ** 105.5: Ենովքի ժողովուրդը մեկ սրտի և մեկ մտքի էր և բնակվում էր արդարության մեջ, և նրանց մեջ ոչ մի աղբատ չկար՝ **Մովսես** 7.18:

ՇԱՔԱԹ: *Տե՛ս* Հանգստության օր

ՇԻՏԱԿՈՒԹՅՈՒՆ: *Տե՛ս նաև* Ազնիվ, Ազնվություն, Արդար, Արդարություն

Արդարակեցություն, ազնվություն և անկեղծություն:

Մինչև մեռնելս ինձանից չեմ հեռացնելու իմ ուղղությունը՝ **Հոբ** ԻԷ.5: Արդար գնում է իր ուղղությունով՝ **Առակ** Ի.7: Նրանք ճշմարիտ տղաներ էին բոլոր դեպքերում, ինչ բան էլ որ նրանց վատակվում էր՝ **Ալմա** 53.20: Տերը սիրում էր Հայրում Սմիթին նրա շիտակ սրտի համար՝ **ՎԼՈՒ** 124.15:

ՇՄԱՎՈՆ: *Տե՛ս նաև* Իսրայել, Հակոբ՝ Իսահակի որդի

Հին Կտակարանում՝ Հակոբի և նրա կին Լիայի երկրորդ որդին (Ծն. ԻԹ.33, ԼԵ.23, Ել. Ա.2): Մյուքեմացիներին կտորրելիս նա Գևիի հետ էր (Ծն. ԼԳ.25-31): Ծնավոնի վերաբերյալ Հակոբի մարգարեությունը կարելի է գտնել Ծննդոց ԽԹ.5-7 հատվածում:

Ծնավոնի ցեղը. Ծնավոնի հետնորդները հաճախ բնակվում էին Հուդայի ցեղի հետ և Հուդայի թագավորության սահմաններում (Հեա. ԺԹ.1-9, Ա Մն. Գ.24-33): Քանանացիների դեմ պատերազմելիս Ծնավոնի ցեղը միացել էր Հուդային (Իսա. Ա.3, 17): Հետագայում նրանք միացան նաև Դավթի բանակին (Ա Մն. ԺԲ.25):

ՇՆՈՐՀ: *Տե՛ս նաև* Հիսուս Քրիստոս, Ողորմած, Ողորմություն, Փրկություն, Քավել, Քավություն

Աստծուց եկող հնարավորության գորություն, որը տղամարդկանց և կանանց բոլլ է տալիս օրհնություններ ստանալ այս կյանքում և ձեռք բերել հավերժական կյանք և վեհացում՝ հավատք գործադրե-

լուց, ապաշխարելուց և պատվիրանները պահելու համար իրենց լավագույն ջանքերը գործադրելուց հետո: Աստվածային այդպիսի օգնությունն ու ուժը տրվում է Աստծո ողորմության և սիրո շնորհիվ: Յուրաքանչյուր մահկանացու մարդ աստվածային շնորհի կարիքն ունի՝ Ադամի անկանց պատճառով և նաև մարդու թուլության պատճառով:

Շնորհը և ճշմարտությունը Հիսուս Քրիստոսով եկավ՝ **Հովհ.** Ա.17: Քրիստոսի շնորհով մենք պիտի փրկվենք՝ **Գոր.** ԺԵ.11 (Հռովմ. Գ.23-24, ՎԼՈՒ 138.14): Հավատքով ստանում ենք նրա շնորհը՝ **Հռովմ.** Ե.2: Շնորհով ենք փրկվում հավատքի միջոցով՝ **Եփես.** Բ.8: Աստծո շնորհը փրկություն է բերում՝ **Տիտոս** Բ.11: Համարձակությունով մոտենանք շնորհի գահին՝ **Եբր.** Գ.16: Աստված խոնարհների շնորհ է տալիս՝ **Ա Պետ.** Ե.5: Ոչ ոք չի կարողանա բնակվել Աստծո ներկայության մեջ, ոչ այլ կերպ, քան Սուրբ Մեսիայի արժանիքների, ողորմության և շնորհի միջոցով՝ **2 Նեփի** 2.8: Միայն Աստծո շնորհով և շնորհիվ է, որ մարդիկ փրկվում են՝ **2 Նեփի** 10.24: Շնորհի միջոցով է, որ մենք փրկվում ենք՝ այն ամենից հետո, ինչ մենք կարող ենք անել՝ **2 Նեփի** 25.23: Շնորհով է, որ մենք գորություն ունենք անելու այս բաները՝ **Հակոբ** 4.7: Մարդիկ պետք է ստանան շնորհ՝ շնորհի համար, համաձայն իրենց գործերի՝ **Հել.** 12.24: Իմ շնորհը բավական է հեզերի և բոլոր նրանց համար, ովքեր իրենց խոնարհեցնում են՝ **Եթեր** 12.26-27: Մորոնին աղոթեց, որ հեթանոսներին շնորհ տրվեր, որ նրանք կարողանային գթություն ունենալ՝ **Եթեր** 12.36, 41: Աստծո շնորհով դուք կատարյալ եք Քրիստոսում՝ **Մոր.** 10.32-33: Հիսուսը ստացավ շնորհ՝ շնորհի տեղ՝ **ՎԼՈՒ** 93.12-13, 20:

ՇՆՈՐՀԱԿԱԼ, ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ, ԳՈՀԱՔԱՆՈՒԹՅՈՒՆ: *Տե՛ս նաև* Երկրպագել, Օրհներ, Օրհնված, Օրհնություն

Երախտագիտություն՝ Աստծուց ստացած օրհնությունների համար: Երախտագիտություն հայտնելը հաճելի է Աստծուն, և ճշմարիտ երկրպագությունը ներառում է նրան շնորհակալություն հայտնելը:

Բոլոր բաների համար մենք պետք է շնորհակալություն հայտնենք Տիրոջը:

Լավ բան է Տիրոջը գոհություն հայտնելը՝ **Մաղ. ՂԲ.1:** Գոհություն տալով զանք նրա ներկայությունը՝ **Մաղ. ՂԵ.1-2:** Շնորհակալ եղեք նրան և օրհնեք նրա անունը՝ **Մաղ. Ճ.1-5:** Մի դաղաբեր գոհություն հայտնել՝ **Եփես. Ա.15-16:** Երախտապարտ եղեք՝ **Կող. Գ.15:** Օրհնություն և փառք և գոհություն և պատիվ լինի մեր Աստծուն՝ **Հայտ. Է.12:** Օ՛հ, ինչպե՛ս եք դուք պարտավոր՝ շնորհակալություն հայտնել ձեր երկնային Թագավորին՝ **Մոսիա 2.19-21:** Ապրեք գոհություն հայտնելով ամեն օր՝ **Ալմա 34.38:** Երբ դու վեր կենաս առավոտյան, թող քո սիրտը լի լինի գոհությամբ առ Աստված՝ **Ալմա 37.37:** Դուք պետք է բոլոր բաներն ամենք աղոթքով և գոհաբանությամբ՝ **ՎԼՈՒՒ 46.7:** Դուք պետք է գոհություն հայտնեք առ Աստված՝ **ՎԼՈՒՒ 46.32:** Արեք այս բաները գոհությամբ՝ **ՎԼՈՒՒ 59.15-21:** Ընդունեք այս օրհնությունը Տիրոջ ձեռքից գոհացող սրտով՝ **ՎԼՈՒՒ 62.7:** Նա, ով ընդունում է բոլոր բաները գոհությամբ, պիտի փառավորվի՝ **ՎԼՈՒՒ 78.19:** Բոլոր բաներում գոհություն հայտնեք՝ **ՎԼՈՒՒ 98.1 (Ա ԹԵՍ. Ե.18):** Գովք ասա Տիրոջը՝ գովքի ու գոհաբանության աղոթքով՝ **ՎԼՈՒՒ 136.28:**

ՇՆՈՒԹՅՈՒՆ: *Տե՛ս նաև* Զգայական, Զգայականություն. Համասեռամոլություն. Մաքրաբարոյություն. Պոռնկություն. Սեռական Անբարոյականություն

Անօրինական սեռական հարաբերությունները տղամարդու և կնոջ միջև: Չնայած շնությունը հիմնականում վերաբերում է սեռական հարաբերություններին ամուսնացած անձի և մեկ ուրիշի միջև, որն իր ամուսինը չէ, սուրբ գրքերում դա կարող է վերաբերել նաև չամուսնացածներին:

Շնությունը երբեմն օգտագործվում է որպես ուրացության խորհրդանշի մի ազգի կամ մի ողջ ժողովրդի համար, որը չեղվել է Տիրոջ ճանապարհներից (Թվ. ԻԵ.1-3, Եգեկ. ԺՁ.15-59, Երեմ. Գ.6-10, Ովես 4):

Հովսեփը չկամեցավ գործել այդ մեծ ամբարշտությունը և մեղանչել Աստծո ղեմ՝

ՃՆ. ԼԺ.7-12: Շնություն մի անիր՝ **Ել. Ի.14:** Ամեն ով որ նայում է կնոջ վրա, ցանկանալով նրան, շնանում է իր սրտում **Մատ. Ե.28:** Ո՛չ պոռնիկները, ո՛չ էլ շնացողները Աստծո արքայությունը չեն ծառանգի՝ **Ա Կոր. Զ.9-10:** Աստված կդատի անառակներին և շնացողներին՝ **Եբբ. ԺԳ.4:** Շնությունն ամենապիղծն է բոլոր մեղքերից, անմեղ արյուն թափելուց և Սուրբ Հոգին ուրանալուց հետո՝ **Ալմա 39.3-5:** Նա, ով շնություն է անում և չի ապաշխարում, դուրս պիտի գցվի՝ **ՎԼՈՒՒ 42.23-26:** Եթե մարդիկ շնություն գործեն իրենց սրտում, նրանց չեն ունենա Հոգին՝ **ՎԼՈՒՒ 63.14-16:**

ՇՏԵՄԱՐԱՆ: *Տե՛ս նաև* Բարօրություն

Պահեստ, որտեղ եպիսկոպոսը ստանում, տնօրինում և աղքատներին է բաշխում իրեն վստահված Վերջին Օրերի Սրբերի սուրբ մկիրաավությունները: Յուրաքանչյուր շտեմարան կարող է լինել այնքան մեծ կամ այնքան փոքր, որքան պայմաններն են պահանջում: Հավատարիմ Սրբերը եպիսկոպոսին են մկիրաբերում շնորհները, հմտությունները, նյութական և ֆինանսական միջոցները՝ կարիքի մեջ գտնվող աղքատներին օգնելու համար: Ուստի, շտեմարանը կարող է ընդգրկել հնարավոր ծառայությունների, գումարի, սննդամթերքի կամ այլ ապրանքների ցուցակ: Եպիսկոպոսը շտեմարանի գործակալ է և ապրանքներն ու ծառայությունները բաշխում է ըստ կարիքի և ըստ Տիրոջ Հոգու թելադրանքի (ՎԼՈՒՒ 42.29-36, 82.14-19):

Թող նրանք կերակուրի պաշար հավաքեն յոթ տարվա սովի դեմ՝ **ՃՆ. ԽԱ.34-36, 46-57:** Բերեք ձեր բոլոր տասանորդները շտեմարան՝ **Մաղ. Գ.10 (3 Նեփի 24.10):** Թող եպիսկոպոսը մի շտեմարան հիմնի այս Եկեղեցու համար՝ **ՎԼՈՒՒ 51.13:** Ավելացած ապրանքները պետք է հանձնվեն իմ շտեմարան **ՎԼՈՒՒ 70.7-8:** Սրբերը պետք է կազմակերպեն ու հիմնեն մի շտեմարան՝ **ՎԼՈՒՒ 78.1-4:** Երեխաներն իրավունք ունեն աջակցվելու Տիրոջ շտեմարանից, եթե նրանց ծնողները չունեն՝ **ՎԼՈՒՒ 83.5:**

ՈՂԵԼԻՑ ԽՄԻՉՁԲ: *Տե՛ս* Իմաստության Խոսք

ՈԳԵՇՆՉՈՒՄ, ՈԳԵՇՆՉԵԼ: *Տե՛ս նաև* Հայտնություն. Սուրբ Հոգի

Աստվածային առաջնորդություն, որը մարդուն տրվում է Աստծո կողմից: Ոգեշնչումը հաճախ մարդու մտքին կամ սրտին է գալիս Հոգու միջոցով, տարբեր ձևերով:

Կրակից հետո եկավ մի մեղմ ու բարակ ձայն՝ **Գ Թագ.** ԺԹ:12: Սուրբ Հոգին ամեն բան կտավորեցնի ձեզ և ամեն բան կիշխեցնի ձեզ՝ **Հովհ.** ԺԿ:26: Եշմարտության Հոգին կառաջնորդի ձեզ ամեն ճշմարտության մեջ՝ **Հովհ.** ԺԶ:13: Ես առաջնորդվում էի Հոգու կողմից՝ նախօրոք չիմանալով բաները, որոնք պետք է անեի՝ **1 Նեփի** 4:6: Տիրոջ ձայնը եկավ իմ մտքի մեջ՝ **Ենովս** 1:10: Ամեն բան, ինչ հրավիրում և հրապարտում է բարիք անել, ոգեշնչված է Աստծո կողմից **Մոր.** 7:13–16: Խաղաղություն չխոսեցի՞՞ ես քո մտքին՝ **ՎևոՒ** 6:23: Ես կասեմ քեզ քո մտքում և քո սրտում՝ **ՎևոՒ** 8:2: Իմ Հոգին կլուսավորի քո միտքը, որը քո հոգին կլցնի ուրախությանը՝ **ՎևոՒ** 11:13: Այդ նույն պահին քեզ կտրվի, թե ինչ պիտի դու ասես, կամ գրես՝ **ՎևոՒ** 24:6 (ՎևոՒ 84:85): Մեղմ հանդարտ ձայնը շնչում է և թափանցում բոլոր բաների միջով՝ **ՎևոՒ** 85:6:

ՈԳԻ: *Տե՛ս նաև* Մահ ֆիզիկական.

Մարդ, Մարդիկ. Հարություն. Հոգի

Կենդանի էակի այն մասը, որը գոյություն ունի նախքան մահկանացու ծնունդը, որը մահկանացության ընթացքում բնակվում է ֆիզիկական մարմնում, և որը մահից հետո մինչև հարությունը գոյություն ունի՝ որպես առանձին էակ: Նախքան կենդանության որևէ ձևի գոյությունը երկրի վրա, բոլոր կենդանի բաները՝ մարդկությունը, կենդանիները և բույսերը, ոգիներ էին (Ծն. Բ.4–5, Մովսես 3.4–7): Ոգեղեն մարմինը մնան է ֆիզիկական մարմնին (1 Նեփի 11.11, Եթեր 3.15–16, ՎևոՒ 77.2, ՎևոՒ 129): Ոգին նյութ է, բայց ավելի նուրբ և մաքուր, քան մահկանացու տարրը կամ նյութը (ՎևոՒ 131.7):

Ամեն մարդ բառացիորեն Աստծո որդին կամ դուստրն է, ծնված լինելով Երկնային ծնողների համար՝ որպես ոգի, նախքան մահկանացու ծնողների համար երկրի վրա ծնվելը (Եբր. ԺԲ.9): Երկրի վրա

գտնվող յուրաքանչյուր անձ ի լրումն մտքի ու ուկորից մարմնի, ունի անմահ ոգեղեն մարմին: Ինչպես երբեմն բացատրվում է սուրբ գրքերում, ոգին և ֆիզիկական մարմինը միասին կազմում են հոգին (Ծն. Բ.7, ՎևոՒ 88.15, Մովսես 3.7, 9, 19, Աբր. 5.7): Ոգին կարող է ապրել առանց ֆիզիկական մարմնի, բայց ֆիզիկական մարմինը չի կարող ապրել առանց ոգու (Հակ. Բ.26): Ֆիզիկական մահը ոգու առանձնացումն է մարմնից: Հարության ժամանակ ոգին վերամիավորվում է նույն ֆիզիկական մտքի և ուկորից մարմնի հետ, որը նա՝ որպես մահկանացու, ունեցել է, սակայն երկու մեծ տարբերությամբ. նրանք այլևս երբեք չեն բաժանվի, և ֆիզիկական մարմինը կլինի անմահ ու կատարյալ (Ալմա 11.45, ՎևոՒ 138.16–17):

Ոգին մարմին և ոսկերք չունի, ինչպես ինձ եք տեսնում որ ունեմ՝ **Ղուկ.** ԻԿ:39: Նույն ինքը Հոգին վկայություն է տալիս մեր հոգուն, որ մենք Աստծո զավակներն ենք՝ **Հովվ.** Ը:16: Փառավորեք Աստծուն ձեր մարմնում և ձեր հոգում՝ **Ա Կոր.** Զ:20: Այս մարմնին իմ հոգու մարմնին է՝ **Եթեր** 3:16: Մարդը ոգի է՝ **ՎևոՒ** 93:33: Քրիստոսը ծառայեց դրախտի արդար հոգիներին՝ **ՎևոՒ** 138.28–30 (Ա Պետ. Գ.18–19): Դուք աշխարհ եք եկել ջրով, արյունով և ոգով՝ **Մովսես** 6:59: Նա կանգնել էր նրանց մեջ, ովքեր ոգիներ էին՝ **Աբր.** 3:23:

Չար ոգիներ. Հիսուսը շատ դևերի հանցե՞ **Մար.** Ա.27, 34, 39: Դուրս եկ, պիղծ ոգի, այդ մարդից՝ **Մար.** Ե.2–13: Չար ոգին մարդուն սովորեցնում է, որ նա չպետք է աղոթի՝ **2 Նեփի** 32:8: Հիսուսի անունով նա դուրս հանեց դևեր և անմաքուր ոգիներ՝ **3 Նեփի** 7:19: Բազմաթիվ կեղծ ոգիներ են տարածված երկրի վրա՝ խաբելով աշխարհին՝ **ՎևոՒ** 50.2, 31–32: Չոգեֆ Սմիթը բացատրել է երեք բանալիները, որոնցով կարելի է որոշել արդյոք ոգին Աստծուց է, թե դևից՝ **ՎևոՒ** 129:

ՈՂՈՐՄԱԾ, ՈՂՈՐՄՈՒԹՅՈՒՆ:

Տե՛ս նաև Արդարադատություն.

Հիսուս Քրիստոս. Ներել. Ընորհ.

Քավել, Քավություն

Կարեկցանքի, սիրո և ներման ոգին: Ողորմությունն Աստծո բնորոշ հատկա-

նիշներին է: Հիսուս Քրիստոսը, իր քավիչ գոհաբերությամբ, մեզ ողորմություն է առաջարկում:

Տերը ողորմած է և գթառատ՝ **Ել. ԼԳ.6** (ԲՕր. Գ.31): Նրա ողորմությունը հավիտյան է՝ **ԱՄճ. ԺՁ.34**: Բարիք և ողորմություն կգան իմ ետևից՝ **Մադ. ԻԳ.6**: Ով որ աղքատի հանդեպ ողորմություն ունի, նա երջանիկ է՝ **Առակ. ԺԳ.21**: Ողորմություն են ուզում, ոչ թե գոհ՝ **Ովսե 2.6**: Երանի ողորմածներին, որ նրանք ողորմություն կգտնեն՝ **Մատ. Ե.7** (3 Նեփի 12.7): Վայ կեղծավորներին, որ տասանորոշը տալիս են և թողնում են օրեցօր ծանր բաները՝ դատաստանը, ողորմությունը և հավատքը՝ **Մատ. ԻԳ.23**: Ուրեմն ողորմած եղեք, ինչպես ձեր Հայրն է ողորմած՝ **Ղուկ. 2.36**: Ոչ թե արդարության գործերից, այլ իր ողորմության համեմատ նա փրկեց մեզ՝ **Տիտոս Գ.5**: Տիրոջ գորովագույն ողորմությունները բոլորի վրա են՝ **1 Նեփի 1.20**: Ողորմությունը հայց չունի չապաշխարողի վրա՝ **Մոսիա 2.38-39**: Աստված ողորմած է բոլոր նրանց հանդեպ, ովքեր հավատում են նրա անվանը՝ **Ալմա 32.22**: Ողորմությունը կարող է բավարարել արդարադատության պահանջները՝ **Ալմա 34.16**: Կարծում ես ողորմությունը կարող է կրողստե՞լ արդարադատությանը՝ **Ալմա 42.25** (Ալմա 42.13-25): Փոքր երեխաները կենդանի են Քրիստոսում նրա ողորմության շնորհիվ՝ **Մոր. 8.19-20** (ՎևՈՒ 29.46): Հիսուս Քրիստոսի ողորմության բազուկը քավել է ձեր մեղքերը՝ **ՎևՈՒ 29.1**: Արյան շնորհիվ, որ թափել են, ես բարեխոսել եմ Հոր առաջ նրանց համար, ովքեր հավատում են իմ անվանը՝ **ՎևՈՒ 38.4**: Նրանք, ովքեր պահել են ուխտը, ողորմություն կստանան՝ **ՎևՈՒ 54.6**: Ես՝ Տերս, մերում եմ մեղքերը և ողորմած եմ նրանց հանդեպ, ովքեր խոնարհ սրտով խոստովանում են իրենց մեղքերը՝ **ՎևՈՒ 61.2**: Ես՝ Տերս, ողորմած եմ բոլոր հեզերի հանդեպ՝ **ՎևՈՒ 97.2**: Եվ ովքեր կընդունեն ձեզ, ինչպես մի փոքր երեխա, կընդունեն մտ արքայությունը, քանզի նրանք ողորմություն կգտնեն՝ **ՎևՈՒ 99.3**: Ողորմություն պիտի գնա քո երեսի առաջից՝ **Մովսես 7.31**:

**ՈՂՈՐՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ,
ՈՂՈՐՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼԷ:**

Տե՛ս նաև Աղքատ. Բարօրություն. Ընծա. Ծոմ, Ծոմապահություն

Աղքատներին օգնելու նվիրատվություններ:

Ձեր ողորմությունները մի արեք մարդկանց առաջ՝ **Մատ. 2.1-4** (3 Նեփի 13.1-4): Այս աղքատ որբևայրից զանճանակը գողնե՞րից ամենաշատը օգեց՝ **Մար. ԺԲ.41-44**: Ավելի երանելի է տալը, քան ստանալը՝ **Գոր. Ի.33-35**: Ես կկաննայի, որ դուք ձեր ստացվածքից բաժին հանեք աղքատներին՝ **Մոսիա 4.26**: Եկեղեցու ժողովուրդը պետք է իր ստացվածքից բաժին հանի՝ ամեն մեկն իր ունեցածի համեմատ՝ **Մոսիա 18.27**:

ՈՍԿԵ ԹԻԹԵՂՆԵՐ: *Տե՛ս նաև*
Թիթեղներ. Մորմոնի Գիրքը

Ոսկե թիթեղների վրա գրված հիշատակարան: Այն տալիս է երկու մեծ քաղաքակրթությունների պատմությունն Ամերիկյան աշխարհամասում: Ջոզեֆ Սմիթը քարգմանեց և հրատարակեց այդ թիթեղների մի մասը: Այդ քարգմանությունը հայտնի է «Մորմոնի Գիրքը» անունով: (Լրացուցիչ տեղեկությունների համար, տե՛ս «Նավաբան» և «Մարգարե Ջոզեֆ Սմիթի վկայությունը» խորագրերը Մորմոնի Գրքի սկզբում):

ՈՎԲԵԳ: *Տե՛ս նաև* Բոսս. Հռութ

Հին Կտակարանում՝ Բոսսի և Հռութի որդին և Հեսսեի հայրը, որը եղավ Դավիթ Թագավորի հայրը (Հռութ Գ.13-17, 21-22):

ՈՎՍԱՆՆԱ

Երբ այերենից եկած բառ, որը նշանակում է «փրկի՛ր, աղաչո՛ւմ ենք» և օգտագործվում է գովք ասելիս և աղերսելիս:

Տաղավարահարաց տոնին, որը փառաբանում էր Տիրոջ կողմից Իսրայելին ազատելը և խոստումի երկիր բերելը, ժողովուրդը երգում էր ՃԺԸ Սաղմոսի բառերը և թափահարում արմավենու ճյուղեր: Տիրոջ հանդիսավոր մուտքի ժամանակ Երուսաղեմ, բազմությունը գաչում էր «Ովսաննա» և արմավենու ճյուղեր փռում, որ Հիսուսը դրանց վրայով անցնի, այդպիսով ցույց տալով իրենց իմացությունը,

որ Հիսուսը նույն Տերն է, որը հինում ազատել էր Իսրայելին (Մաղ. ճԺԸ.25–26, Մատ. ԻԱ.9, 15, Մար. ԺԱ.9–10, Հովհ. ԺԲ.13): Այդ մարդիկ Քրիստոսին ընդունում էին, որպես երկար սպասված Մեսիա: *Ովսեանն* բառը դարձել է Մեսիայի փառաբանում բոլոր սերունդների ընթացքում (1 Նեփի 11.6, 3 Նեփի 11.14–17): Ովսեանն բացականությունն ընդգրկվեց Կիրթլենդի Տաճարի նվիրագործման մեջ (ՎևՈՒ 109.79) և ներկայումս ժամանակակից տաճարների նվիրագործման մի մասն է:

ՈՎՍԵ

Հին կտակարանի մարգարե, որը մարգարեացել է Իսրայելի հյուսիսային թագավորությունում՝ Հեբրեովան Բ-ի թագավորության վերջում: Նա ապրել է Իսրայելի մեղսագործության հետևանքով ազգի անկման և խորտակման ժամանակ:

Ովսեի գիրքը. Գրքի հիմնական թեման Աստծո սերն է իր ժողովրդի հանդեպ: Նրա բոլոր խրատները հասցվել են սիրով, և Իսրայելի վերականգնումը կլինի նրա սիրո շնորհիվ (Ովսե Բ.19, ԺԳ.4): Ի հակադրություն դրա, Ովսեն ցույց է տալիս Իսրայելի ուխտադրությունն ու անհավատարմությունը: Այնուամենայնիվ, Աստված ի գորու է նայել հեռու՝ դեպի Իսրայելի վերջնական փրկագնումը (Ովսե ԺԱ.12–ԺԳ.9):

ՈՐԴԵԳՐՈՒՄ: *Տե՛ս նաև* Աբրահամ – Աբրահամի Սերունդը. Աստծո որդիներն ու դուստրերը. Իսրայել. Քրիստոսի զավակները

Սուրբ գրքերում խոսվում է երկու ձևի որդեգրման մասին:

1) Անձը, որը ծագումով Իսրայելացի չէ, դառնում է Աբրահամի ընտանիքի և Իսրայելի տան անդամ՝ հավատալով Հիսուս Քրիստոսին, ապաշխարելով, ընկրվմամբ մկրտվելով և ստանալով Սուրբ Հոգին (2 Նեփի 31.17–18, ՎևՈՒ 84.73–74, Աբր. 2.6, 11):

2) Բոլորը, ովքեր ստացել են ավետարանի փրկարար արարողությունները, դառնում են Հիսուս Քրիստոսի որդիներն ու դուստրերը՝ շարունակ հնազանդվելով նրա պատվիրաններին (Հռովմ. Ը.15–17, Գաղ. Գ.24–29, Գ.5–7, Մոսիա 5.7–8):

ՈՐԳԻՆՆԵՐԸ ՀԵՒԱՄԱՆԻ: *Տե՛ս* Հելամանի որդիները

ՈՐԳԻՆՆԵՐԸ ՄՈՍԻԱՅԻ: *Տե՛ս* Մոսիայի որդիները

ՈՐՈՄՆԵՐ

Խոտ կամ թունավոր մոլախոտ, որը տեսքից նման է ցորենի: Այն ցորենից չի տարբերվում, մինչև որ լիովին չի հասունանում (Մատ. ԺԳ.24–30, ՎևՈՒ 86.1–7):

ՉԱՐ ՈԳԻՆՆԵՐ: *Տե՛ս* Ոգի – Չար ոգիներ

ՉԱՐԱՆՈՍՈՒԹՅՈՒՆ: *Տե՛ս նաև* Բամբասանք. Հակառակություն. Համբավ. Ստել

Սխալ, վիրավորական և ամբարիշտ բաներ ասելը: Սուրբ գրքերում հաճախ նման խոսակցությունն ուղղված է ինչ-որ անձի դեմ՝ նրան ցավ պատճառելու հատուկ մտադրությամբ:

Պահիր քո լեզուն չարությունից՝ **Մաղ. ԼԳ.13** (Ա Պետ. Գ.10): Անաստված մարդը չարություն է փորում՝ **Առակ. ԺՁ.27**: Երանի է ձեզ, երբ մարդիկ ամեն չար բան սուտ տեղը ձեզ կասեն՝ **Մատ. Ե.11** (3 Նեփի 12.11): Չար մտքերը սրտից են դուրս գալիս՝ **Մատ. ԺԵ.19** (Մար. Է.21): Չար բան մի խոսիր քո ժողովրդի իշխանի մասին՝ **Գոր. ԻԳ.5**: Ամեն չարախոսություն բոլ վերցվի ձեզանից՝ **Եփես. Գ.31**: Իրար մասին մի չարախոսեք՝ **Հակ. Գ.11**: Տեսեք, որ չլինի ոչ բամբասանք, ոչ էլ չարախոսություն՝ **ՎևՈՒ 20.54**:

ՊԱՀՎՊԱՆՆԵՐ: *Տե՛ս նաև* Զգուշացնել, Զգուշացում

Պահապանները ղեկավարներն են, որոնք կանչված են Տիրոջ ներկայացուցիչների կողմից, որպեսզի հատուկ պատասխանատվություն կրեն ուրիշների բարօրության համար: Կանչված ղեկավարները հատուկ պատասխանատվություն ունեն՝ պահապանելու լինելու մնացած աշխարհի համար:

Ես քեզ դես են դրել՝ **Եզեկ. Գ.17–21**: Դեսերը, որոնք զգուշացման ձայն են

բարձրացնում, փրկում են իրենց հոգին՝ **Եզեկ**. ԼԳ.7-9: Ալման քահանաներ և երեցներ կարգեց, որպեսզի նախագահեն և հսկեն Եկեղեցու վրա՝ **Ալմա** 6.1: Եպիսկոպոսը և մյուսները կանչվել են և կարգվել՝ Եկեղեցին հսկելու՝ **ՎևոՒ** 46.27: Տերը պահապաններ նշանակեց այդու վրա՝ **ՎևոՒ** 101.44-58:

ՊԱՇՏՈՆ, ՊԱՇՏՈՆՅԱ: *Տե՛ս նաև*
Կարգել, Կարգում. Քահանայություն

Կազմակերպության մեջ իշխանության կամ պատասխանատվության դիրք, որը սուրբ գրքերում հաճախ օգտագործվում է քահանայության իշխանության աստիճանի իմաստով. կարող է նշանակել նաև տվյալ դիրքի հետ կապված պարտականությունները կամ այդ դիրքը գրավող անձը:

Բոլոր անդամները չունեն միևնույն պաշտոնը՝ **Հռովմ**. ԺԲ.4: Մենք մեծացնում էինք մեր պաշտոնը Տիրոջ համար՝ **Հակոբ** 1.19: Մեղքխեղեկը ստացավ բարձրագույն քահանայության պաշտոնը՝ **Ալմա** 13.18: Հրեշտակների ծառայության պաշտոնն է՝ ապաշխարության կանչել մարդկանց՝ **Մոք**. 7.31: Ոչ ոք, այս Եկեղեցում, չպետք է կարգվի որևէ պաշտոնի, առանց այդ Եկեղեցու քվեարկության՝ **ՎևոՒ** 20.65: Թող ամեն մարդ կանգնի իր պաշտոնում՝ **ՎևոՒ** 84.109: Նախագահներ կամ նախագահող պաշտոնյաներ են նշանակվում նրանց միջից, ովքեր կարգված են այս երկու քահանայությունների պաշտոններում՝ **ՎևոՒ** 107.21: Նկարագրվում են քահանայության քվորումների պաշտոնների վրա նախագահողների պարտականությունները՝ **ՎևոՒ** 107.85-98: Թող ամեն մարդ սովորի իր պարտականությունը և գործի այն պաշտոնում, որին նշանակված է՝ **ՎևոՒ** 107.99-100: Ես տալիս եմ ձեզ պաշտոնյաներ, որոնք պատկանում են իմ քահանայությանը՝ **ՎևոՒ** 124.123:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒ-
ԹՅՈՒՆ-1: *Տե՛ս նաև* Ամուսնություն,

Ամուսնանալ - Բազմակնություն.
Հռչակագիր. Վուդրուֆ Վիլֆորդ

Վարդապետություն և Ուխտերի վերջին էջերում տպագրված «Պաշտոնակա

Հայտարարություն-1»-ի առաջին մասը հայտնի է նաև որպես Հռչակագիր: Այն տրվել է Նախագահ Վիլֆորդ Վուդրուֆի միջոցով և ներկայացվել Եկեղեցու անդամներին 1890 թվականի հոկտեմբերի 6-ի գերագույն համաժողովում: 1862-ից սկսած, հաջորդ քսանհինգ տարիների ընթացքում, Միացյալ Նահանգների առանձին օրենքներ բազմակնությունն անօրինական դարձրեցին: Տերը Վիլֆորդ Վուդրուֆին տեսիլքով և հայտնությամբ ցույց տվեց, թե ինչ տեղի կունենար, եթե Սրբերը չդադարեին բազմակնության գործածությունը: Հռչակագիրը պաշտոնապես հայտարարեց, որ այլևս բազմակի ամուսնություններ չեն կատարվում:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒ-
ԹՅՈՒՆ-2: *Տե՛ս նաև* Քահանայու-

թյուն. Քիմբալ Վ. Սպենսեր

Վարդապետական հայտարարություն այն բանի վերաբերյալ, թե ով կարող է կրել Աստծո քահանայությունը, որն այժմ տպագրված է Վարդապետություն և Ուխտերի վերջին էջերում: 1978 թվականի հունիսի սկզբին Տերը հայտնեց Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալին, որ քահանայությունը պիտի տրվի Եկեղեցու բոլոր արժանավոր տղամարդկանց: Այն մտաչելի դարձրեց քահանայությունը բոլոր արժանավոր տղամարդկանց համար և տանարային օրհնությունները բոլոր արժանավոր անդամների համար՝ անկախ ռասայից կամ մաշկի գույնից: 1978թ. սեպտեմբերի 30-ին այս հայտարարությունը ներկայացվեց Եկեղեցու գերագույն համաժողովում և միաձայն ընդունվեց:

ՊԱՌՐԱՆ

Նեփիացի երրորդ գլխավոր դատավորը Մորմոնի Գրքում (Ալմա 50.39-40, 51.1-7, 59-62):

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ

ՏԱՐԻՔ: *Տե՛ս* Երեխա, Երեխաներ. Հաշիվ, Պատասխանատու, Պատասխանատվություն. Մանուկների մկրտություն. Մկրտություն, Մկրտել - Մկրտությունը մանուկների համար չէ

ՊԱՏԵՐԱԶՄ: Տե՛ս նաև
Խաղաղություն

Շակատամարտ կամ զինված ընդհարում. գենքերով կովեր: Տերը պատերազմը բույլ է տալիս միայն որպես վերջին միջոց իր Սրբերի համար՝ պաշտպանելու իրենց ընտանիքները, ունեցվածքը, իրավունքները, արտոնությունները և ազատությունը (Ալմա 43.9, 45-47):

Մորոնիի ձգտումն էր՝ պաշտպանել իր ժողովրդին, իր իրավունքները, իր երկիրը և իր կրոնը՝ **Ալմա** 48.10-17: Չոզեֆ Սմիթը հայտնություն և մարգարեություն ստացավ պատերազմի վերաբերյալ՝ **ՎևոՒ** 87: Մերժեք պատերազմը և հռչակեք խաղաղություն՝ **ՎևոՒ** 98.16, 34-46: Մենք հավատում ենք, որ մարդիկ արդարացված են իրենց, իրենց բարեկամներին և սեփականություն ու կառավարությանը պաշտպանելու հարցում՝ **ՎևոՒ** 134.11: Մենք հավատում ենք օրենքին հնազանդվելուն, այն հարգելուն և պաշտպանելուն՝ **ՀՀ** 1.12:

ՊԱՏԵՐԱԶՄ ԵՐԿՆՔՈՒՄ: Տե՛ս նաև
Խորհուրդ Երկնքում.
Նախամահկանացու Կյանք

Ընդհարում, որը տեղի ունեցավ մախամահկանացու կյանքում Աստծո հոգեղեն գավակների միջև:

Սատանան երկնքից վայր գցվեց երկիր՝ **Հայտ**. ԺԲ.4, 7-9: Դևը և երկնքի մեկ երրորդ մասը ցած նետվեցին՝ **ՎևոՒ** 29.36-37: Լյուիսիֆերն ապստամբեց Միածին Որդու դեմ՝ **ՎևոՒ** 76.25-26: Սատանան փնտրում էր Հոր փառքը և որ կործանի մարդու կամքի ազատությունը՝ **Մովսես** 4.1-4 (Ես. ԺԴ.12-15, Աբր. 3.27-28): Նրանք, ովքեր հետևեցին Աստծուն, պահեցին իրենց առաջին վիճակը, եկան երկիր և մարմին ստացան՝ **Աբր.** 3.26:

ՊԱՏԿԱՍԱՆՔ: Տե՛ս նաև Վախ.
Պատվել

Խորը հարգանք սրբազան բաների նկատմամբ. ակնածանք:

Տերը Մովսեսին պատվիրեց հանել կոշիկ-

ները, քանի որ նա կանգնած էր սուրբ հողի վրա՝ **Ել.** 9.4-5: Աստծուց պետք է վախել և ակնածել՝ **Մադ.** 26.7: Աստծուն ծառայեք հաճությամբ՝ ահով և երկյուղածությամբ՝ **Եբր.** ԺԲ.28: Մորոնին գետին խոնարհվեց և գորուքյամբ աղոթեց՝ **Ալմա** 46.13: Բազմությունն ընկավ գետնին և երկրպագեց Քրիստոսին՝ **3 Նեփի** 11.12-19: Խոնարհվիր իմ առաջ՝ **ՎևոՒ** 5.24: Բոլոր բաները խոնարհ պատկառանքով խոնարհվում են Աստծո գահի առաջ՝ **ՎևոՒ** 76.93: Չեր միտքը մրազնել է, որովհետև դուք թեթևամտությամբ եք վերաբերվել այն ամենին, ինչ ստացել եք՝ **ՎևոՒ** 84.54-57: Ամեն ծունկ պիտի ծալվի, և ամեն լեզու պիտի խոստովանի՝ **ՎևոՒ** 88.104: Գերագույն Էակի անվան հանդեպ ունեցած հարգանքից կամ պատկառանքից ելնելով՝ Եկեղեցին այդ քահանայությունը կոչեց Մելքիսեղեկի անունով՝ **ՎևոՒ** 107.4: Օրհնություններ կթափվեն նրանց վրա, ովքեր երկրպագում են Տիրոջը նրա տանը՝ **ՎևոՒ** 109.21:

ՊԱՏՎԵԼ: Տե՛ս նաև Գնահատել.
Պատկառանք

Ինչպես սովորաբար օգտագործվում է սուրբ գրքերում՝ հարգանք և պատկառանք ցուցաբերել ինչ-որ մեկի կամ ինչ-որ բանի հանդեպ:

Պատվիր քո հորը և քո մորը՝ **Ել.** Ի.12 (1 Նեփի 17.55, Մոսիա 13.20): Պատվիր Տիրոջը քո ստացվածքից՝ **Առակ.** Գ.9: Եթե մեկը ծառայի ինձ, Հայրս կպատվի նրան՝ **Հովի.** ԺԲ.26: Ամուսինները պետք է պատիվ տան իրենց կանանց՝ **Ա Պետ.** Գ.7: Իրենց շուրթերով և միայն պատվում Տիրոջը՝ **2 Նեփի** 27.25 (Ես. ԻԺ.13): Ես չեմ փնտրում աշխարհի պատիվը՝ **Ալմա** 60.36: Դևն ապստամբեց իմ դեմ, ասելով. Տո՛ւր ինձ քո պատիվը, որն իմ գորությունն է՝ **ՎևոՒ** 29.36: Հավատարիմները կպահպվեն պատվով՝ **ՎևոՒ** 75.5 (ՎևոՒ 124.55): Տերը բերկրանքով պատվում է նրանց, ովքեր ծառայում են իրեն՝ **ՎևոՒ** 76.5: Նրանք ընտրված չեն, որովհետև տենչում են մարդկանց զովասանքներին՝ **ՎևոՒ** 121.34-35: Մենք հավատում ենք օրենքը հարգելուն և պաշտպանելուն՝ **ՀՀ** 1.12 (ՎևոՒ 134.6):

ՊԱՏՎԻՐԱՆՆԵՐ՝ ՏԱՍԸ: *Տե՛ս նաև*
Պատվիրաններն Աստծո. Մովսես

Տասն օրենքներ, որոնք տրվել են Աստծո կողմից, Մովսես մարգարեի միջոցով, բարոյական վարքը կարգավորելու համար:

Եբրայերենում դրանց անվանում են «Տասը Խոսք»: Դրանց անվանում են նաև Ուխտ (Բ Օր. Թ.9) կամ Վկայություն (Ել. ԻԵ.21, ԼԲ.15): Աստծո կողմից Տասը Պատվիրանները Մովսեսին և, նրա միջոցով, Իսրայելին տալը նկարագրված է Ելից գրքում ԺԹ.9-Ի.23, ԼԲ.15-19, ԼԴ.1: Պատվիրանները փորագրվել էին երկու սալաձև քարերի վրա, որոնք դրվել էին Տապանակի մեջ. այդտեղից էլ Տապանակն անվանում էին Ուխտի Տապանակ (Թվ. Ժ.33): Տերը, մեջ բերելով Բ Օր. 2.4-5 և Ղև. ԺԹ.18 գրվածքները, Տասը Պատվիրաններն ամփոփել է «երկու մեծ պատվիրաններով» (Մատ. ԻԲ.37-39):

Տասը Պատվիրանները կրկնվել են վերջին օրերի Հայտնություններում (Մովսիա 12.32-37, 13.12-24, Վևոյի 42.18-28, 59.5-13, ՋՍԹ՝ Ել. ԼԴ.1-2):

ՊԱՏՎԻՐԱՆՆԵՐԻ ԳԻՐԹ: *Տե՛ս նաև*
Հայտնություն.

Վարդապետություն և Ուխտեր

1833 թվականին Մարգարե Ջոզեֆ Սմիթի կողմից ստացված հայտնությունների մի որոշ մաս պատրաստվեց հրատարակության «A Book of Commandments for the Government of the Church of Christ» (Պատվիրանների գիրք Քրիստոսի Եկեղեցու Կառավարման համար) վերնագրով: Տերը շարունակում էր հաղորդակցվել իր ծառայների հետ, և երկու տարի անց Հայտնությունների մի ավելի մեծ ժողովածու հրատարակվեց, որպես «Վարդապետություն և Ուխտեր»:

Վևոյի 1-ը Տիրոջ նախաբանն է իր պատվիրանների գրքի համար՝ Վևոյի 1.6: Տերը կոչ է անում, որ ամենաիմաստուն մարդը փորձի կրկնօրինակել Պատվիրանների Գրքի իր Հայտնություններից ամենավոքըը՝ Վևոյի 67.4-9: Տեստաներ են նշանակվում՝ հայտնությունները հրատարակելու համար՝ Վևոյի 70.1-5:

ՊԱՏՎԻՐԱՆՆԵՐՆ ԱՍՏԾՈ: *Տե՛ս նաև*
Աստծո Խոսքը.

Հնազանդություն, Հնազանդ, Հնազանդվել. Մեղք.

Պատվիրաններ՝ Տասը. Օրենք

Այն օրենքներն ու պահանջները, որոնք Աստված տալիս է մարդկությանը՝ թե՛ մեկ հոգուն, թե՛ ընդհանուրին: Պատվիրանները պահելը Տիրոջ օրհնությունները կրելի հնազանդի վրա (Վևոյի 130.21):

Նոյն արեց բոլորը, ինչպես Աստված պատվիրել էր նրան՝ Ծճ. 2.22: Գնացեք իմ կանոններով և պահեք իմ պատվիրանները՝ Ղև. ԻԶ.3: Պահիր իմ պատվիրանները և կապրես՝ Առաջ. Դ.4 (Առաջ. Է.2): Եթե ինձ սիրում եք, իմ պատվիրանները պահեք՝ Հովհ. ԺԴ.15 (Վևոյի 42.29): Ինչ որ խնդրեմք, կստանանք նրանից, որովհետև պահում ենք նրա պատվիրանները՝ Ա Հովհ. Գ.22: Նրա պատվիրանները ծանր չեն՝ Ա Հովհ. Ե.3: Անխախտ եղիր պատվիրանները պահելիս՝ 1 Նեփի 2.10: Տերը չի տալիս պատվիրաններ, առանց ուրի պատրաստելու՝ 1 Նեփի 3.7: Ես պետք է վարվեմ Աստծո խիստ հրամանների համաձայն՝ Հակոբ 2.10: Քանի դեռ դուք կպահեք իմ պատվիրանները, դուք կբարգավաճեք երկրում՝ Հաբոն 1.9 (Ալմա 9.13, 50.20): Քո երիտասարդության տարիներից սովորիր պահել Աստծո պատվիրանները՝ Ալմա 37.35: Այս պատվիրաններն ինձանից են՝ Վևոյի 1.24: Քննեք այս պատվիրանները՝ Վևոյի 1.37: Նրանք, ովքեր չեն պահում պատվիրանները, չեն կարող փրկվել՝ Վևոյի 18.46 (Վևոյի 25.15, 56.2): Իմ պատվիրանները հոգևոր են. դրանք ոչ բնական են, ոչ էլ ֆիզիկական՝ Վևոյի 29.35: Պատվիրանները տրվում են, որպեսզի մենք կարողանանք հասկանալ Տիրոջ կամքը՝ Վևոյի 82.8: Ես չզիտեմ, բացի այն, որ Տերը պատվիրել է ինձ՝ Մովսես 5.6: Տերը կփորձի մարդկանց, որ տեսնի, թե արդյոք նրանք կանեն այն ամենը, ինչ նա պատվիրում է նրանց՝ Աքր. 3.25:

ՊԱՏՐԻՋ ԷԴՎԱՐԴ

Արդի ժամանակներում վերականգնված Եկեղեցու վաղ անդամ և առաջնորդ: Էդվարդ Պատրիջը ծառայել է որպես Եկեղեցու առաջին եպիսկոպոս (Վևոյի 36, 41.9-11, 42.10, 51.1-18, 115, 124.19):

ՊԱՐԱԿԱՆՈՆ ԳՐՔԵՐ: *Տե՛ս նաև*

Աստվածաշունչ. Սուրբ գրքեր

Հրեա ժողովրդի սրբազան գրքեր, որոնք չեն ընդգրկվել եբրայերեն Աստվածաշունչում, սակայն պահպանվում են որոշ Քրիստոնյա Եկեղեցիների Աստվածաշունչերում: Այս գրքերը հաճախ արժեքավոր են Հին և Նոր Կտակարանները կապակցելիս և Եկեղեցու կողմից օգտակար են համարվում կարդալու համար:

Պարականոն գրքերը հիմնականում ճիշտ են թարգմանված, բայց ոչ ճիշտ ընդմիջարկումներ են պարունակում՝ **ՎևՈՒ** 91.1–3: Պարականոն գրքերը կարող են օգտակար լինել Հոգով լուսավորվածներին՝ **ՎևՈՒ** 91.4–6:

ՊԱՐԳԵՎ: *Տե՛ս նաև* Սուրբ Հոգու

պարգև. Հոգու պարգևները

Աստված մարդուն շնորհում է շատ պարգևներ:

Հոգևոր պարգևները շատ են՝ **Ա Կոր.** ԺԲ.4–10: Ջանասիրաբար փնտրեք լավագույն պարգևները՝ **Ա Կոր.** ԺԲ.31: Ամեն կատարյալ պարգև Աստծուց է՝ **Հակ.** Ա.17: Սուրբ Հոգու զորությունն Աստծո պարգև է՝ **1 Նեփի** 10.17: Նրանք, ովքեր ասում են, թե պարգևներ չկան, չգիտեն Քրիստոսի ավետարանը՝ **Մորմ.** 9.7–8: Ամեն բարի պարգև գալիս է Քրիստոսից՝ **Մորմ.** 10.8–18: Հավերժական կյանքն Աստծո պարգևներից ամենամեծն է՝ **ՎևՈՒ** 14.7 (1 Նեփի 15.36): Պարգևները տրվում են նրանց, ովքեր սիրում են Տիրոջը՝ **ՎևՈՒ** 46.8–11: Բոլորին տրված չէ ամեն պարգև՝ **ՎևՈՒ** 46.11–29:

ՊԱՐԾԵՆԱԼ: *Տե՛ս* Հպարտություն

ՊԱՐՏԱԴՐԵԼ, ՊԱՐՏԱԴՐՎԱԾ:

Տե՛ս նաև Սուրբ Հոգի

Ուժեղ դրդվել մի բան անելու կամ չանելու, հատկապես Սուրբ Հոգու ազդեցությամբ ու զորությամբ:

Ներսիս հոգին նեղում է ինձ՝ **Հոբ** ԼԲ.18: Քրիստոսի սերը ստիպում է մեզ՝ **Բ Կոր.** Ե.14: Ես Հոգու կողմից պարտադրվեցի, որ սպանեմ Լաբանին՝ **1 Նեփի** 4.10: Հոգին պարտադրում է ինձ՝ **Ալմա** 14.11: Ես պարտադրված եմ՝ համաձայն ուխտի՝

Ալմա 60.34: Ամմարոնը, պարտադրվելով Սուրբ Հոգու կողմից, թաքցրեց հիշատակարանները՝ **4 Նեփի** 1.48: Այն, ինչ գալիս է վերևից, պետք է խոսվի Հոգու դրդմամբ՝ **ՎևՈՒ** 63.64:

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ: *Տե՛ս նաև*

Հնազանդություն, Հնազանդ,

Հնազանդվել

Սուրբ գրքերում՝ հանճանարարություն, նշանակում կամ պատասխանատվություն, որը հաճախ տրվում է Տիրոջ և նրա ծառաների կողմից:

Պահիր նրա պատվիրանները. որովհետև սա է մարդու ողջ պարտականությունը՝ **Ժող.** ԺԲ.13: Տերն ինչ է ուզում քեզանից, բացի արդար գործելուց՝ **Միքիա** 2.8: Ավելի շուտ Աստծուն պետք է հնազանդվել, քան թե մարդկանց՝ **Գոր.** Ե.29: Նրանք զարկվում էին չարչարանքով, որպեսզի զարթնեին և հիշեին իրենց պարտականությունները՝ **Մոսիա** 1.17: Նկարագրվում են երեցների, քահանաների, ուսուցիչների և սարկվագների պարտականությունները՝ **ՎևՈՒ** 20.38–67: Զահանայություն կրողները պետք է մասնակցեն ընտանեկան բոլոր պարտականություններին՝ **ՎևՈՒ** 20.47, 51: Նկարագրվում են անդամների պարտականությունները մկրտությունից հետո՝ **ՎևՈՒ** 20.68–69: Իմ երեցները պետք է սպասեն մի փոքր ժամանակ, որպեսզի իմ ժողովուրդն ավելի կատարյալ ձևով իմանա իր պարտականությունը՝ **ՎևՈՒ** 105.10: Թող ամեն մարդ սովորի իր պարտականությունը՝ **ՎևՈՒ** 107.99–100:

ՊԱՐՏԵՉ ԳԵԹՍԵՄԱՆԻ: *Տե՛ս*

Գեթսեմանի

ՊԱՐՏԵՉ ԵՂԵՄԻ: *Տե՛ս* Եղեմ

ՊԱՐՏՔ: *Տե՛ս նաև* Ներել

Սուրբ գրքերում օգտագործվող իմաստով՝ ուրիշից պարտք վերցված դրամը կամ ունեցվածքը պատճառ է լինում, որ պարտապանը լինի ինչ-որ տեսակի գերության մեջ: Մեկ այլ իմաստով՝ Հիսուսն ուսուցանում էր, որ մենք պետք է Հորը խնդրենք, որ մերի մեզ մեր մեղքերը, կամ ազատի մեզ մեր մեղքերի գինը վճարելուց, Հիսուս

Քրիստոսի քավության միջոցով, այն բանից հետո, երբ մենք ուրիշներին ներում ենք մեզ հասցրած իրենց վիրավորանքների համար (Մատ. 2.12, 3 Նեփի 13.11):

Ամբարիշտը փոխ է առնում և չի վճարում՝ **Մաղ. ԼԷ.21:** Փոխ առնողը ծառա կլինի փոխ տվողին՝ **Առաչ. ԻԲ.7:** Ես այն բոլոր պարտքը շնորհեցի քեզ: Պետք չէ՞ր, որ դու էլ ողորմություն ունենայիր՝ **Մատ. ԺԸ.23–35:** Ոչ որի ոչինչ պարտական մի մնացեք, բացի իրար սիրելուց՝ **Հռովմ. ԺԳ.8:** Գուք հավերժ պարտական եք ձեր Երկնային Հորը՝ **Մոսիա 2.21–24, 34:** Ով որ պարտք է վերցնում իր հարևանից, պետք է վերադարձնի այն, ինչ պարտքով վերցրել է՝ **Մոսիա 4.28:** Վճարիր պարտքը և ազատիր քեզ գերությունից՝ **ՎՆՈՒ 19.35:** Չի կարելի թշնամիների պարտքի տակ ընկնել՝ **ՎՆՈՒ 64.27:** Վճարեք ձեր բոլոր պարտքերը՝ **ՎՆՈՒ 104.78:** Պարտքի տակ մի ընկեք Տիրոջ համար տուն կառուցելու նպատակով՝ **ՎՆՈՒ 115.13:**

ՊԵՆՏԵԿՈՍՏԵ: *St u nsk* Մովսեսի Օրենք

Որպես Մովսեսի օրենքի մաս՝ Չատկի տոնից հիսուն օր անց, Պենտեկոստեի կամ Երախայրիքի տոն էր անցկացվում (Ղև. ԻԳ.16): Պենտեկոստեն պետք է տոներ բերքահավաքը, և Հին Կտակարանում այն կոչվում էր երախայրից հնձելու տոն կամ շաբաթների տոն: Այս տոնակատարության ժամանակ էր, որ Առաքյալները Երուսաղեմում լցվեցին Սուրբ Հոգով և խոսեցին լեզուներով (Գոր. Բ, ՎՆՈՒ 109.36–37):

ՊԵՏՐՈՍ

Նոր Կտակարանում Պետրոսը սկզբում հայտնի էր որպես Շմավոն կամ Սիմոն (Բ Պետ. Ա.1), ձկնորս Բեթսայիդայից, որն իր կնոջ հետ ապրում էր Կափառնալումում: Հիսուսը բժշկեց Պետրոսի գոթանյին (Մար. Ա.29–31): Պետրոսը, իր եղբայր Անդրեասի հետ, կանչվեց Հիսուս Քրիստոսի աշակերտը լինելու (Մատ. Գ.18–22, Մար. Ա.16–18, Դուկ. Ե.1–11): Նրա արամեական անունը՝ Կեփաս, որը նշանակում է «տեսանող» կամ «վեմ», նրան տրվել էր Տիրոջ կողմից (Հովհ. Ա.40–42, ՋՍԹ՝ Հովհ. 1.42): Չմայած

Նոր Կտակարանը նշում է Պետրոսի որոշ մահկանացու թուլությունները, այն լուսաբանում է նաև, որ նա ամուր դարձվեց իր հավատքով առ Հիսուս Քրիստոս:

Պետրոսը խոստովանեց, որ Հիսուսը Քրիստոսն էր և Աստծո Որդին (Հովհ. 2.69–70), և Տերն ընտրեց նրան, որ կրի արքայության բանալիները երկրի վրա (Մատ. ԺՋ.13–18): Կերպարանավորման սարի վրա Պետրոսը տեսավ կերպարանավորված Փրկչին, ինչպես նաև Մովսեսին և Եղիային (Մատ. ԺԷ.1–9):

Պետրոսն իր օրերի ավագ Առաքյալն էր: Փրկչի մահից, հարությունից և համբարձումից հետո, նա հավաքեց Եկեղեցին մեկտեղ և ղեկավարեց Հուդա Իսկարիովտացու փոխարեն Առաքյալ կանչելու գործը: (Գոր. Ա.15–26): Պետրոսը և Հովհաննեսը մի մարդ բժշկեցին, որն ի ծնե կաղ էր (Գոր. Գ.1–16) և հրաշքով ազատվեցին բանտից (Գոր. Ե.11–29, ԺԲ.1–19): Պետրոսի ծառայությամբ էր, որ ավետարանն սկզբում բացվեց հեթանոսների առաջ (Գոր. Ժ–ԺԱ): Վերջին օրերին Պետրոսը, Հակոբոսի և Հովհաննեսի հետ, իջավ երկնքից և Մելքիսեդեկյան Քահանայությունն ու նրա բանալիները շնորհեց Ջոզեֆ Սմիթին և Օլիվեր Քաուդերիին (ՎՆՈՒ 27.12–13, 128.20):

Պետրոսի առաջին թուղթը. Առաջին թուղթը գրվել է «Բաբելոնից» (հավանաբար, Հռոմից) և ուղարկվել է այժմյան Փոքր Ասիայի տարածքի Սրբերին՝ Ներոնի կողմից Քրիստոնյաների հալածվելուց կարճ ժամանակ անց:

Ա գլխում խտավում է Քրիստոսի՝ որպես Քավիչի նախակարգված դերի մասին: Բ–Գ գլուխները բացատրում են, որ Քրիստոսը Եկեղեցու գլխավոր անկյունքաքարն է, որ Սրբերը կրում են թագավորական քահանայություն, և որ Քրիստոսը քարոզում էր բանտում եղած հոգիներին: Դ–Ե գլուխները բացատրում են, թե ինչու է ավետարանը քարոզվում մեռելներին և թե երեցներն ինչու պետք է արածեցնեն հոտը:

Պետրոսի երկրորդ թուղթը. Ա գլուխը Սրբերին հորդորում է հաստատուն անել իրենց կոչումը և ընտրությունը: Բ գլուխը գգուշացնում է կեղծ վարդապետների համար: Գ գլուխը խոսում է վերջին օրերի և Քրիստոսի երկրորդ գալստի մասին:

ՊԻՂՏՈՍ ՊՈՆՏԱՅԻ

Հոռմեացի դեկավար Հուդայում, Զ.ծ.հ. 26–36թթ. (Ղուկ. Գ.1): Նա ատում էր հրեաներին ու նրանց կրոնը և մահվան էր ենթարկել առնավազն մի քանի Գալիլեացիների (Ղուկ. ԺԳ.1): Հիսուսը Պիղատոսի առաջ մեղադրվեց և խաչման դատապարտվեց (Մատ. ԻԷ.2, 11–26, 58–66, Մար. ԺԵ, Ղուկ. ԻԳ, Հովհ. ԺԸ.28–ԺԹ.38):

ՊԻՂՏ ԵԿԵՂԵՑԻ: *Տե՛ս Դև* – Դևի եկեղեցին

ՊԻՂՏ, ՊՂԾՈՒԹՅՈՒՆ: *Տե՛ս նաև Սեղք*

Սուրբ գրքերում՝ այն բանը, որը զգվանք և ատելություն է առաջացնում արդար և մաքուր մարդկանց մոտ:

Ստախոս շուրթերը պղծություն են Տիրոջ համար **Առակ. ԺԲ.22:** Հպարտությունը պիղծ է Տիրոջ աչքում՝ **Հակոբ 2.13–22:** Ամբարիշտները հանձնվում են սեփական պղծությունների ըմբռնմանը **Մտախ 3.25:** Ամբարտյականությունը բոլոր մեղքերից ամենապիղծն է, բացի սպանությունից և Սուրբ Հոգին ուրանալուց՝ **Ալմա 39.3–5:** Տիրոջ գալույթը բռնկված է նրանց պղծությունների դեմ՝ **Վևոթ 97.24:**

ՊՈՂՈՍ: *Տե՛ս նաև Պողոսի Թղթերը*

Առաքյալ Նոր Կտակարանում: Պողոսի երբայական անունը Սողոս էր, և նա կրում էր այդ անունը մինչև հեթանոսների մեջ իր առաքելությունն սկսելը: Նախկինում նա հալածել էր Եկեղեցին, բայց Հիսուս Քրիստոսի տեսիլքը տեսնելուց հետո դարձի էր եկել դեպի նրա ճշմարտությունը: Պողոսը գնաց միսիոներական երեք մեծ ճամփորդության և շատ նամակներ գրեց Սրբերին: Այդ նամակներից տասնչորսը կազմում են այսօրվա Նոր Կտակարանի մի մասը: Վերջ ի վերջո, որպես բանտարկյալ՝ նրան տարան Հռոմ և նա սպանվեց, հավանաբար, Զ.ծ.հ. 65 թվականի գարնանը:

Կամակից էր Ստեփանոսի քարկոծմանը՝ **Գոր. Է.56–59:** Հալածեց Սրբերին՝ **Գոր. Ը.3:** Դամասկոս էր գնում, երբ Հիսուսը հայտնվեց նրան՝ **Գոր. Թ.1–9:** Մկրտվեց Անանիայի կողմից՝ **Գոր. Թ.10–18:** Արաբիա գնալուց հետո վերադարձավ

Դամասկոս՝ քարոզելու՝ **Գոր. Թ.19–25** (Գաղ. Ա.17): Իր դարձի գալուց երեք տարի անց վերադարձավ Երուսաղեմ՝ **Գոր. Թ.26–30** (Գաղ. Ա.18–19): Գնաց միսիոներական երեք ճամփորդության՝ քարոզելով ավետարանը և Եկեղեցու ճյուղեր կազմավորելով Հռոմեական Կայսրության տարբեր մասերում՝ **Գոր. ԺԳ.1–ԺԳ.26, ԺԵ.36–ԺԸ.22, ԺԸ.23–ԻԱ.15:** Իր երրորդ առաքելությունից Երուսաղեմ վերադառնալուց հետո կալանավորվեց և ուղարկվեց Կեսարիա՝ **Գոր. ԻԱ.7–23, 35:** Երկու տարի մնաց Կեսարիայում՝ որպես բանտարկյալ՝ **Գոր. ԻԳ.1–ԻԶ.32:** Ուղարկվեց Հռոմ՝ դատվելու, և ճանապարհին նավաբեկության ենթարկվեց՝ **Գոր. ԻԷ.1–ԻԸ.11:**

ՊՈՂՈՍԻ ԹՂԹԵՐԸ: *Տե՛ս նաև*

Պողոս. առանձին թղթերի վերնագրերը

Տասնչորս գիրք Նոր Կտակարանում, որոնք սկզբնապես Պողոս Առաքյալի կողմից գրված նամակներ էին ուղղված Եկեղեցուն անդամներին: Դրանք կարելի է բաժանել հետևյալ խմբերի.

Թեսաղոնիկեցիս Ա և Բ (Զ.ծ.հ. 50–51թթ.)

Թեսաղոնիկեցիներին ուղղված իր թղթերը Պողոսը գրել է Կորնթոսից՝ իր երկրորդ միսիոներական ճամփորդության ժամանակ: Թեսաղոնիկեի նրա գործերը նկարագրված են Գործք ԺԷ-ում: Նա ցանկանում էր վերադառնալ Թեսաղոնիկեա, բայց չկարողացավ (Ա Թես. Բ.18): Ուստի, նա ուղարկեց Տիմոթեոսին, որ քաջալերի նորադարձներին և իրեն լուր բերի, թե ինչպես են նրանք: Առաջին թուղթը Տիմոթեոսի վերադարձի իր գոհունակության արդյունքն է: Երկրորդ թուղթը գրվել է կարճ ժամանակ անց:

Կորնթացիս Ա և Բ, Գաղատացիս, Հռովմայեցիս (Զ.ծ.հ. 55–57թթ.)

Կորնթացիներին ուղղված թուղթը Պողոսը գրել է իր երրորդ միսիոներական ճամփորդության ժամանակ՝ որոշ հարցերի պատասխանելու և Կորնթոսի Սրբերի մեջ անկարգությունները շտկելու նպատակով:

Գաղատացիներին ուղղված թուղթը, հավանաբար, գրվել է ողջ Գաղատիայում տարածված Եկեղեցու շատ ճյուղե-

րին: Եկեղեցու որոշ անդամներ հրեական օրենքի պատճառով հրաժարվում էին ավետարանից: Այս նամակում Պողոսը բացատրել է Մովսեսի օրենքի նպատակը և հոգևոր կրոնի արժեքը:

Հռոմեացիներին ուղղված թուղթը Պողոսը գրել է Կորնթոսից, մասամբ, որպեսզի Հռոմի Սրբերին նախապատրաստի իր հնարավոր այցելությանը: Այս նամակը նաև վերահաստատում է որոշ վարդապետություններ, որոնք կասկածի տակ էին առնվում դեպի Քրիստոնեությունը դարձած որոշ հրեաների կողմից:

Փիլիպպեցիս, Կողոսացիս, Եփեսացիս, Փիլիմոն, Եբրայեցիս (Բ.ծ.հ. 60–62թթ.)

Պողոսը գրել է այս թղթերը, երբ առաջին անգամ բանտարկված էր Հռոմում:

Փիլիպպեցիներին ուղղված իր թուղթը Պողոսը գրել է, հիմնականում, իր երկար բանտարկությունից տխրած Փիլիպպեցի Սրբերին իր երախտագիտությունն ու սերը հայտնելու և նրանց քաջալերելու համար:

Կողոսացիներին ուղղված իր թուղթը Պողոսը գրել է, տեղեկանալով, որ Կողոսացիները լուրջ սխալների մեջ են ընկել: Նրանք սկսել էին հավատալ, թե կատարելության կարելի է հասնել ավելի շուտ արտաքին արարողությունները ճշտորեն կատարելով, քան Քրիստոսանման հատկանիշներ զարգացնելով:

Եփեսացիներին ուղղված թուղթը մեծ կարևորություն ունի, քանի որ ուսմունքներ է պարունակում Քրիստոսի Եկեղեցու մասին:

Փիլիմոնին ուղղված թուղթն անձնական նամակ է Ոնեսիմոսի մասին, մի ստրուկի, որը բալանել էր իր տիրոջը՝ Փիլիմոնին, և փախել էր Հռոմ: Պողոսը Ոնեսիմոսին ետ էր ուղարկել իր տիրոջ մոտ՝ մի նամակով, որում խնդրել էր ներել Ոնեսիմոսին:

Եբրայեցիներին ուղղված իր թուղթը Պողոսը գրել է Եկեղեցու հրեա անդամներին՝ նրանց համոզելու համար, որ Մովսեսի օրենքը կատարվել է Քրիստոսով, և որ այն փոխարինվել է Քրիստոսի ավետարանի օրենքով:

Ա և Բ Տիմոթեոս, Տիմու (Բ.ծ.հ. 64–65թթ.)

Այս թղթերը Պողոսը գրել է Հռոմի առաջին բանտարկությունից ազատվելուց հետո:

Պողոսը ճանփորդեց դեպի Եփեսոս, որտեղ նա թողեց Տիմոթեոսին, որպեսզի նա կանգնեցնի որոշ մտահայեցողական վարդապետությունների աճը, մտադրություն ունենալով հետագայում վերադառնալ: Տիմոթեոսին ուղղած իր առաջին թուղթը նա, հավանաբար, գրել է Մակեդոնիայից, որպեսզի խորհուրդ տա և քաջալերի նրան իր պարտքը կատարելիս:

Տիտոսին ուղղված իր թուղթը Պողոսը գրել է բանտից ազատված ժամանակ: Հավանաբար, նա այցելել էր Կրետե, որտեղ ծառայում էր Տիտոսը: Նամակը հիմնականում վերաբերում է արդարակյաց ապրելակերպին և կարգապահությանը Եկեղեցու մեջ:

Տիտոսին ուղղված իր երկրորդ թուղթը Պողոսը գրել է երկրորդ անգամ բանտում գտնվելու ժամանակ, իր նահատակությունից կարճ ժամանակ առաջ: Այս թուղթը պարունակում է Պողոսի վերջին խոսքերը և ցույց է տալիս այն զարմանահրաշքաջությունն ու վաստակությունը, որով նա դիմավորում էր մահը:

ՊՈՈՆՎՈՒԹՅՈՒՆ. Տե՛ս նաև

Զգայական, Զգայականություն. Մաքրաբարոյություն. Ընություն

Անօրինական սեռական հարաբերությունը երկու չամուսնացած մարդկանց միջև: Սուրբ գրքերում այն երբեմն օգտագործվում է նաև որպես ուրացության խորհրդանիշ:

Ինձ մի ստիպիր, որովհետև այդպիսի բան չեն անի **Բ Թագ. ԺԳ.12:** Ետ քաշվեք պոռնկությունից՝ **Գոր. ԺԵ.20:** Մարմինը պոռնկության համար չէ, այլ Տիրոջ համար **Ա Կոր. Զ.13–18:** Պոռնկությունից գերծ մնալու համար, ամեն մարդ թող իր կինն ունենա՝ **Ա Կոր. Է.2–3:** Սա է Աստծո կամքը, որ դուք հեռու մնաք պոռնկությունից՝ **Ա Թես. Դ.3:** Հակոբը Նեփիի ժողովրդին նախազուշարեց պոռնկության համար **Հակոբ 3.12:** Դուք հասունամում եք կործանման համար՝ ձեր սպանությունների և ձեր պոռնկությունների պատճառով՝ **Հեկ. 8.26:** Պոռնկություն անողները պետք է ապաշխարեն, որպեսզի միանան Եկեղեցուն՝ **ՎևոՒ 42.74–78:**

ՊՈՈՆՈԳՐԱՖԻԱ: Տե՛ս Մաքրաբարոյություն. Ընություն. Պոռնկություն

ՊՍԱԿ: *Տե՛ս նաև* Հավերժական կյանք

Օղակաձև զարդարանք, որն իրենց գլխին կրում են իշխանավորները: Այն կարող է լինել երկնային գործրայան, տիրապետության և աստվածության խորհրդանիշ: Նրանք, ովքեր համբերում են մինչև վերջ՝ պահելով Աստծո բոլոր պատվիրանները, կստանան հավերժական կյանքի պսակը: (*Տե՛ս ՎևոՒ 20.14, Մովսես 7.56, ՋՄ-Մ 1.1*):

Ինձ մնում է արդարության պսակը՝ **Բ Տիմ.** 7.8: Դուք կընդունեք փառքի անբառան պսակը՝ **Ա Պետ.** Ե.4: Տիրոջ մեջ մահացած մեռելները կստանան արդարության պսակը՝ **ՎևոՒ 29.13:** Նրանք թագ պիտի ստանան ինձ հոր պապարանքերում՝ **ՎևոՒ 59.2:** Տերը Սրբերին նախապարաստում է, որ հասնեն իրենց համար պատրաստված պսակին՝ **ՎևոՒ 78.15:** Տերն իր Սրբերին փառքի պսակ է խոստացել իր աջ կողմում՝ **ՎևոՒ 104.7:**

ՊՐԱՏ ՓԱՐԼԻ ՊԱՐԿԵՐ

Օրսոն Պրատի ավագ եղբայրը և արդի ժամանակներում Եկեղեցու վերականգնումից հետո կանչված առաջին Տասներկու Առաքյալներից մեկը (**ՎևոՒ 124.128-129**): Փարլի Պրատը կանչվեց առաջին մի քանի միսիոներական գործերին, երբ 1830թ. հոկտեմբերին Տերը նրան հայտնություն տվեց Ջոզեֆ Սմիթի միջոցով (**ՎևոՒ 32, 50.37**):

ՊՐԱՏ ՕՐՄՈՆ

Արդի ժամանակներում Եկեղեցու վերականգնումից հետո կանչված առաջին Տասներկու Առաքյալներից մեկը (**ՎևոՒ 124.128-129**): Նա միայն վեց օրվա Եկեղեցու անդամ էր, երբ Տերը նրան հայտնություն տվեց Ջոզեֆ Սմիթի միջոցով (**ՎևոՒ 34**): Օրսոն Պրատը նաև Եկեղեցու միսիոներ է եղել (**ՎևոՒ 52.26, 75.14**) և երկար տարիներ ծառայել է որպես Եկեղեցու պատմաբան:

ՋԱՆԱՄԻՐՈՒԹՅՈՒՆ

Հետևողական, անվեհեր ջանք՝ հատկապես Տիրոջը ծառայելիս և նրա խոսքին հնազանդվելիս:

Լսեք ինձ ջանասիրաբար՝ **Ես.** ԾԵ.2: Աստված վարձահատույց է լինում նրանց,

ովքեր ջանասիրաբար փնտրում են իրեն՝ **Եբր.** ԺԱ.6: Ամեն ջանք անելով՝ ձեր հավատքին ավելացրեք առաքինություն՝ **Բ Պետ.** Ա.5: Աստծո խոսքն ուսուցանեք ողջ ջանասիրությամբ՝ **Հակոբ 1.19:** Նրանք ջանասիրաբար քննել էին սուրբ գրքերը՝ **Ալմա 17.2:** Նրանք հոժար էին ողջ ջանասիրությամբ պահել պատվիրանները՝ **3 Նեփի 6.14:** Ե՛կ գործենք ջանասիրաբար՝ **Մոր.** 9.6: Ջերմնաանդներգրավվեք բարի գործի մեջ՝ **ՎևոՒ 58.27:** Ո՛չ էլ ծուլացեք, այլ աշխատեք ձեր գործությամբ՝ **ՎևոՒ 75.3:** Ջանասիրաբար ուշք դարձրեք հավերժական կյանքի խոսքերին՝ **ՎևոՒ 84.43:** Թող ամեն մարդ սովորի իր պարտականությունը և գործի ողջ ջանասիրությամբ՝ **ՎևոՒ 107.99:**

ՋԵԿՍՈՆ ԳԱՎԱՍ, ՄԻՍՍՈՒՐԻ (ԱՄՆ): *Տե՛ս նաև* Նոր Երուսաղեմ

Սրբերի հավաքման վայրը վերջին օրերին. այսինքն՝ այն կենտրոնական վայրը, որտեղ նրանք կհիմնեն Նոր Երուսաղեմը (**ՎևոՒ 57-58, 82, 101.69-71, 105.28**):

ՋՂԱՅՆՈՒԹՅՈՒՆ: *Տե՛ս* Բարկություն

ՋՈՋԵՖ ՍՄԻԹ ԿՐՏՄԵՐ: *Տե՛ս* Սմիթ Ջոզեֆ կրտսեր

ՋՈՋԵՖ ՍՄԻԹԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ (ՋՍԹ): *Տե՛ս նաև* Սմիթ Ջոզեֆ կրտսեր

Անգլերեն Աստվածաշնչի՝ Հակոբ Թագավորի Տարբերակի վերանայումը կամ թարգմանությունը, որը Մարգարե Ջոզեֆ Սմիթը սկսեց 1830 թվականի հունիսին: Նա Աստծո կողմից պատվիրվել էր թարգմանություն կատարել և այն համարում էր որպես մարգարե իր կոչման մի մասը:

Չնայած 1833-ի հուլիսին Ջոզեֆն ավարտել էր թարգմանության մեծ մասը, սակայն մինչև իր մահը, 1844թ., նա շարունակում էր փոփոխություններ կատարել, մինչ ձեռագիրը պատրաստում էր հրատարակության: Չնայած իր կենդանության օրոք նա հրատարակեց թարգմանության որոշ մասեր, սակայն հնարավոր է, որ նա լրացուցիչ փոփոխություններ կատարեի, եթե այնքան ապրեր, որ ողջ աշխատությունը հրատարակեր: 1867-ին

Հիտուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Վերակազմավորված Եկեղեցին հրատարակել է Ջոզեֆ Սմիթի ոգեշնչված թարգմանության առաջին հրատարակությունը: Այդ ժամանակից ի վեր, նրանց կողմից լույս է ընծայվել գրքի մի քանի հրատարակություններ:

Թարգմանության ընթացքում մարգարեն շատ բաներ սովորեց: Վարդապետություն և Ուխտերի մի քանի բաժիններ ստացվել են նրա թարգմանչական աշխատանքի արդյունքում (օրինակ՝ ՎևոՒ 76, 77, 91 և 132): Բացի այդ, Տերը Ջոզեֆին հատուկ հրահանգներ տվեց թարգմանության վերաբերյալ, որոնք արձանագրվել են Վարդապետություն և Ուխտերում (ՎևոՒ 37.1, 45.60–61, 76.15–18, 90.13, 91, 94.10, 104.58, 124.89): Մովսեսի գիրքը և Ջոզեֆ Սմիթ–Մաաթեոսը, որոնք այժմ ընդգրկված են Թանկագին Մարգարիտում, վերցվել են անմիջապես Ջոզեֆ Սմիթի Թարգմանությունից:

Ջոզեֆ Սմիթի Թարգմանությունը վերականգնել է այն պարզ և արժեքավոր բաներից մի քանիսը, որոնք կորել էին Աստվածաշնչից (1 Նեփի 13): Չնայած, որ այն չի համարվում Եկեղեցու պաշտոնական Աստվածաշունչը, այդ թարգմանությունը բազում հետաքրքիր ներընթացումներ է պարունակում և շատ արժեքավոր է Աստվածաշունչը հասկանալու համար: Այն նաև վկայություն է Մարգարե Ջոզեֆ Սմիթի աստվածային կոչման և ծառայության մասին:

ՌԱԳՈՒԵԼ: *Տե՛ս* Հոթոր

ՌԱՄԵՌՄՓԹՈՍ

Մորմոնի Գրքում՝ Թարձր մի բեմ, որի վրա Ջորամացիները՝ ուրացած Նեփիացիները, կանգնում էին և աղոթում (Ալմա 31.8–14):

ՌԱԶԵԼ: *Տե՛ս նաև* Հակոբ՝ Իսահակի որդի

Հին Կտակարանում՝ Հակոբի կինը (Ծն. ԻԹ-ԼԱ, ԼԵ): Նա նաև Հովսեփի և Բենիամինի մայրն էր:

ՌԱՖԱՅԵԼ: *Տե՛ս նաև* Հրեշտակներ

Տիրոջ հրեշտակ, որը մասնակցել է բոլոր բաների վերականգնմանը (ՎևոՒ 128.21):

ՌԵԲԵԿԱ: *Տե՛ս նաև* Իսահակ

Հին Կտակարանի Իսահակ նահապետի կինը (Ծն. ԻԳ-ԻԷ): Ռեբեկան Եսավի և Հակոբի մայրն էր (Ծն. ԻԵ.23–26):

ՌԻԳՎՈՆ ՍԻԳՆԻ

Վերականգնված Եկեղեցու վաղ նորադարձ և ղեկավար 1830-ական և վաղ 1840-ական թվականներին: Միդլի Ռիգդոնը որոշ ժամանակ ծառայեց որպես Ջոզեֆ Սմիթի առաջին խորհրդական Եկեղեցու Առաջին Նախագահությունում (ՎևոՒ 35, 58.50, 57, 63.55–56, 76.11–12, 19–23, 90.6, 93.44, 100.9–11, 124.126): Հնուագայում նա ուրացության մեջ ընկավ և 1844թ. սեպտեմբերին հեռացվեց Եկեղեցուց:

ՌՌԲՈՎԱՄ: *Տե՛ս նաև* Սողոմոն

Հին Կտակարանում՝ Սողոմոնի որդին: Նա հաջորդեց իր հորը և տասնյոթ տարի թագավորեց Երուսաղեմում (Գ Թագ. ԺԱ.43, ԺԳ.21, 31): Ռորովամի ժամանակ թագավորությունը բաժանվեց Իսրայելի թագավորության՝ հյուսիսում և Հնդալի թագավորության՝ հարավում (Գ Թագ. ԺԱ.31–36, ԺԲ.19–20): Ռորովամը թագավորեց Հնդալի թագավորության վրա:

ՌՌԲԵՆ: *Տե՛ս նաև* Իսրայել. Հակոբ՝ Իսահակի որդի

Հին Կտակարանում՝ Հակոբի և Լիայի ավագ որդին (Ծն. ԻԹ.32, ԼԷ.21–22, 29, ԽԲ.22, 37): Չնայած Ռուբենն առաջնեկն էր, մեղքի պատճառով նա կորցրեց իր անդրանիկությունը (Ծն. ԼԵ.22, ԽԹ.3–4):

Ռուբենի ցեղը. Ռուբենին տրված Հակոբի օրհնությունները գտնվում են Ծննդոց ԽԹ.3-ում և Երկրորդ Օրինաց ԼԳ.6-ում: Ցեղի թվաքանակն աստիճանաբար փոքրացավ, և չնայած այն շարունակեց գոյատևել, սակայն քաղաքականապես պակաս կարևոր դարձավ: Ռուբենի անբանիկությունն անցավ Հովսեփին և նրա որդիներին, որովհետև Հովսեփը Հակոբի երկրորդ կնոջ՝ Ռաբելի առաջնեկ որդին էր (Ա ՄՆ. Ե.1–2):

ՍԱԳՌԻԿԵՑԻՆԵՐ: *Տե՛ս նաև* Հրեաներ

Փոքր, բայց քաղաքականապես ուժեղ կուսակցություն կամ դասակարգ հրեա-

ների մեջ: Հավանաբար, ամենից շատ նրանք հայտնի էին Մովսեսի օրենքի գրին հնազանդվելու իրենց աննկուն հավատքի և հոգիների ու հրեշտակների իրական լինելը, ինչպես և հարության ու հավերժական կյանքի վարդապետությունները ժխտելու համար (Մար. ԺԲ.18-27, Գոր. Գ.1-3, ԻԳ.7-8):

ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ: *Տե՛ս նաև* Պետություն. Օրենք

Վարդապետություն և Ուխտերում «Սահմանադրությունը» վերաբերում է Ամերիկայի Միացյալ Նահանգների սահմանադրությանը, որը տրվել էր աստվածային ոգեշնչմամբ, որպեսզի ճանապարհ նախապատրաստի ավետարանի վերականգնման համար:

Սահմանադրական օրենքին պետք է բարեկամանալ՝ **ՎևոՒ** 98.5-6: Տերն այնպես է արել, որ Սահմանադրությունը հաստատվի՝ **ՎևոՒ** 101.77, 80:

ՄԱՂԵՄ: *Տե՛ս նաև* Երուսաղեմ. Մելքիսեդեկ

Հին Կտակարանի քաղաք, որտեղ կառավարում էր Մելքիսեդեկը: Այն, հավանաբար, տեղավորված է եղել ներկայիս Երուսաղեմի տեղում: «Սաղեմ» անունը շատ նման է Եբրայերեն մի բառի, որը նշանակում է «խաղաղություն»:

Սաղեմի թագավոր Մելքիսեդեկը հաց և զինի դուրս բերեց՝ **Ծճ.** ԺԳ.18: Մելքիսեդեկը՝ Սաղեմի թագավորը, բարձրյալ Աստծո քահանա էր՝ **Եբբ.** Է.1-2: Մելքիսեդեկը թագավոր էր Սաղեմի երկրի վրա՝ **Ալմա** 13.17-18:

ՄԱՂՄՈՍ: *Տե՛ս նաև* Դավիթ. Երաժշտություն

Ոգեշնչված բանաստեղծություն կամ օրհներգ:

Սաղմոսաց գիրքը. Հին Կտակարանի գիրք, որը պարունակում է սաղմոսների հավաքածու, որոնցից շատերը Քրիստոսի մասին են: Սաղմոսաց գրքից շատ մեջբերումներ կան Նոր Կտակարանում:

Սաղմոսներից շատերը գրել է Դավիթը: Սաղմոսները գրվել են, որպես Աստծուն փառաբանություն: Շատերը դարձել են երաժշտություն:

ՍԱՄ: *Տե՛ս նաև* Լեքի Նեփիի հայր

Մորմոնի Գրքում՝ Լեքիի երրորդ որդին (1 Նեփի 2.5): Նա արդար և սուրբ մարդ էր, որն ընտրել էր հետևել Տիրոջը (1 Նեփի 2.17, 2 Նեփի 5.5-6, Ալմա 3.6):

ՍԱՄԱՐԱՑԻՆՆԵՐ: *Տե՛ս նաև* Սամարիա

Աստվածաշնչյան ժողովուրդ, որոնք ապրում էին Սամարիայում, նրանից հետո, երբ Առոեստանը գերի վերցրեց Իսրայելի հյուսիսային թագավորությունը: Սամարացիները մասամբ Իսրայելացիներ էին, մասամբ՝ հեթանոսներ: Նրանց կրոնը հրեական և հեթանոսական հավատքների ու ծեսերի խառնուրդ էր: Բարի Սամարացու առակը Ղուկասի Ժ.25-37-ում ցույց է տալիս այն ատելությունը, որն առաջացել էր հրեաների մոտ Սամարացիների նկատմամբ, քանի որ Սամարացիներն ուրացել էին Իսրայելացիների կրոնը: Տերն Առաքյալներին ուղարկեց, որ Սամարացիներին ուսուցանեն ավետարանը (Գոր. Ա.6-8): Փիլիպպոսը հաջողությամբ քարոզեց Քրիստոսի ավետարանը Սամարացիներին և շատ հրաշքներ գործեց նրանց մեջ (Գոր. Ը.5-39):

ՍԱՄԱՐԻԱ: *Տե՛ս նաև* Սամարացիներ

Հին Կտակարանում՝ Իսրայելի հյուսիսային թագավորության մայրաքաղաքը (Գ. Թագ. ԺՁ.23-24): Բլրի վրա գտնվելու նրա ռազմական ամուր դիրքի շնորհիվ՝ Ատրեստանցիները միայն երեք տարվա պաշարումից հետո կարողացան գրավել այն (Գ. Թագ. ԺԷ.5-6): Հերովդեսը կրկին կառուցեց այն և կոչեց Մերսատա: Նոր Կտակարանի ժամանակներում Սամարիան Պաղեստինի ողջ կենտրոնական գավառի անունն էր՝ Հորդանանի արևմտյան մասում:

ՍԱՄՈՒԵԼ ԼԱՄԱՆԱՑԻ

Մորմոնի Գրքում՝ Լամանացի մարգարե, որն անմիջապես Փրկչի ծննդից առաջ Տիրոջ կողմից ուղարկվել էր Նեփիացիներին ուսուցանելու և զգուշացնելու: Սամուելը մարգարեացավ Հիսուս Քրիստոսի ծննդյան և մահվան նշանների մասին և Նեփիացիների կործանման մասին (Հեղ. 13-16):

ՍԱՄՈՒԵԼ՝ ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՄԱՐԳԱՐԵ

Եղկանայի և Աննայի որդին՝ Սամուելը, ծնվեց ի պատասխան իր մոր աղոթքների (Ա Թագավորաց Ա): Որպես երեխա՝ նա հանձնվել էր Հեղիի քահանայապետի խնամակալությանը Սելովի խորանում (Ա Թագ. Բ.11, Գ.1): Երիտասարդ տարիքում Տերը Սամուելին մարգարե կանչեց (Ա Թագ. Գ): Հեղիի մահից հետո Սամուելը դարձավ Իսրայելի մեծ մարգարեն ու դատավորը և երկրում վերականգնեց օրենքը, կարգ ու կանոնը և կանոնավոր կրոնական երկրպագությունը (Ա Թագ. Գ.15-18, է.3-17):

Ա Թագ. ԻԸ.5-20-ում պատմություն կա, որտեղ Սավուղ թագավորի խնդրանքով Ենդովրի մի վիուկի կողմից Սամուելը ետ է բերվում մեռելներից: Այդ տեսիլքը չէր կարող Աստուծուց լինել, որովհետև ոչ մի վիուկ կամ ոգիների որևէ այլ միջնորդ չի կարող ազդեցություն ունենալ մարգարեի վրա, որպեսզի մարգարեն հայտնվի նրա խնդրանքով (Ա Թագ. ԻԸ.20, ԼԱ.1-4):

Սամուելի Ա և Բ գրքերը. Որոշ Աստվածաշնչերում Սամուելի Ա և Բ գրքերը մեկ գիրք են: Մյուսներում երկու գիրք են: Հայերեն Աստվածաշնչում Սամուելի Ա և Բ գրքերը կոչվում են նաև Թագավորաց Ա և Բ գրքեր: Գրքերի բովանդակության համար, տես «Թագավորաց» թեման:

ՍԱՄՓՍՈՆ

Հին Կտակարանում՝ Իսրայելի «դատավորներ»-ից տասներկուերորդը: Նա հայտնի էր իր մեծ ֆիզիկական ուժի համար, բայց իմաստուն չէր որոշ բարոյական ընտրություններում ու գործերում (Դատ. ԺԳ.24-ԺԶ.31):

ՍԱՎՈՒՂ ԻՍՐԱՅԵԼԻ ԹԱԳԱՎՈՐ

Հին Կտակարանում՝ Իսրայելի առաջին թագավորը, նախքան նրա բաժանվելը: Չնայած իր թագավորության սկզբում նա արդար էր, ի վերջո նա լցվեց հպարտությամբ և անհնազանդ էր Աստուծու (Ա Թագ. Թ-ԼԱ):

ՍԱՏԱՆԱ: *Տես՝ Վ*

ՍԱՐ ԶԻԹԵՆՅԱՑ: *Տես՝ Ս* Չիթենյաց սար

ՍԱՐԻ ՎՐԱՅԻ ՔԱՐՈՉՁ: *Տես՝ Ասև*
Երանություններ. Հիսուս Քրիստոս

Տեր Հիսուս Քրիստոսի խոսքն իր աշակերտներին, որոնք շուտով պետք է ուղարկվեին առաքելության (Մատ. Ե-Է, Դուկ. Զ.20-49): Այդ բարոզը Տերը կարդաց Տասներկուսին կանչելուց ոչ շատ անց:

Քարոզը պարզարանվել է Աստվածաշնչի Ջոզեֆ Սմիթի Թարգմանությամբ և նմանատիպ քարոզով, որն արձանագրված է 3 Նեփի 12-14-ում, որոնք ցույց են տալիս, որ քարոզի կարևոր մասերը կորսվել են Մատթեոսի հիշատակարանից:

ՍԱՐԻԱ: *Տես՝ Ասև* Լեքի՝ Նեփիի հայր

Մորմոնի Գրքում՝ Լեքիի կինը (1 Նեփի 5.1-8, 8.14-16, 18.19) և Լամանի, Լեմուելի, Սամի, Նեփիի, Հակոբի, Հովսեփի և դուստրերի մայրը (1 Նեփի 2.5, 2 Նեփի 5.6):

ՍԱՐԿԱՎԱԳ: *Տես՝ Ասև* Ահարոնյան Քահանայություն

Եկեղեցական ծառայության կոչում Պողոս Առաքյալի ժամանակ (Փիլ. Ա.1, Ա Տիմ. Գ.8-13) և Ահարոնյան Քահանայության պաշտոն (ՎԱՌԻ 20.38, 57-59, 84.30, 111, 107.85):

ՍԱՐԲԱ: *Տես՝ Ասև* Աբրահամ

Հին Կտակարանում՝ Աբրահամի առաջին կինը: Իր տարեց հասակում նա դարձավ Իսահակի մայրը (Ծն. ԺԸ.9-15, ԻԱ.2):

ՍԵԴԵԿԻԱ: *Տես՝ Ասև* Մուղեկ

Հին Կտակարանում՝ Հուդայի վերջին թագավորը (Գ Թագ. ԻԳ.17-20, ԻԵ.2-7): Սեդեկիան բանտարկեց Երեմիա մարգարեին (Երեմ. ԼԲ.1-5), և Երեմիան մարգարեացավ Սեդեկիայի գերության մասին (Երեմ. ԼԳ.2-8, 21): Սեդեկիայի թագավորության առաջին տարին Լեքին ու նրա ընտանիքն ապրում էին Երուսաղեմում (1 Նեփի 1.4): Սեդեկիայի բոլոր որդիները սպանվեցին, բացի մեկից. նրա որդի Մուղեկն ազատվեց և գնաց Արևմտյան Կիսագունդ (Երեմ. ԾԲ.10, Օմնի 1.15, Հել. 8.21):

ՍԵՂՐԱՔ: *Տես՝ Ասև* Դանիել

Հին Կտակարանում՝ Սեդրաքը, Միսաքը և Աբեղնագովն Իսրայելացի այն երեք

երիտասարդներն էին, որոնք, Դանիելի հետ միասին բերվեցին Բաբելոնի թագավոր Նաբուգոդոնոսորի պալատ: Մեղրաքի Եբրայական անունն Անանիա էր: Այդ չորս երիտասարդները, չցանկանալով ապականվել, մերժեցին թագավորական կերակուրը և խմիչքը (Դան. Ա): Մեղրաքը, Միսաքը և Բեթեղազովը թագավորի կողմից գզվեցին կրակի հնոցը և պահպանվեցին Աստծո Որդու կողմից (Դան. Գ):

ՄԵԹ: *Տե՛ս նաև* Ադամ

Հին Կտակարանում՝ Ադամի և Եվայի արդար որդին:

Մեքը կատարյալ մարդ էր, և նրա նմանությունն իր հոր նմանության արտահայտումն էր՝ **ՎԼՈՒ** 107.42–43 (Ծն. Ե.3): Մեքը հոգիների աշխարհի հզորների թվում էր՝ **ՎԼՈՒ** 138.40: Աստված իրեն հայտնի դարձրեց Մեքին՝ **Մովսես** 6.1–3, 8–14:

ՄԵԼԵՍՏԻԱԼ ՓԱՈՋ: *Տե՛ս նաև*

Հավերժական կյանք. Վեհացուն.
Փառքի աստիճաններ

Փառքի երեք աստիճաններից ամենաբարձրը, որին մարդ կարող է հասնել այս կյանքից հետո: Այնտեղ արդարները կրճակվեն Հայր Աստծո և նրա Որդու՝ Հիսուս Քրիստոսի ներկայությամբ:

Ուրիշ է երկնավորների փառքը՝ **Ա Կոր.** ԺԵ.40 (ՎԼՈՒ 76.96): Պողոսը հափշտակվել էր մինչև երրորդ երկինքը՝ **Բ Կոր.** ԺԲ.2: Սելեստիալի փառքը ցույց տրվեց տեսիլքում՝ **ՎԼՈՒ** 76.50–70: Եթե Սրբերը տեղ են ցանկանում սելեստիալ աշխարհում, նրանք պետք է պատրաստվեն՝ **ՎԼՈՒ** 78.7: Նա, ով չի կարողանում մնալ սելեստիալ արքայության օրենքում, չի կարողանա մնալ սելեստիալ փառքում՝ **ՎԼՈՒ** 88.15–22: Սելեստիալ փառքի մեջ կա երեք երկինք. տրվում են ամենաբարձրին հասնելու համար անհրաժեշտ պայմանները՝ **ՎԼՈՒ** 131.1–2: Երեխաները, ովքեր մահանում են նախքան պատասխանատվության տարիքին հասնելը, փրկվում են սելեստիալ արքայությունում՝ **ՎԼՈՒ** 137.10:

ՄԵՊՓՈՐԱ: *Տե՛ս նաև* Մովսես

Հին Կտակարանում՝ Մովսեսի կինը և Հոթորի դուստրը (Ել. Բ.21, ԺԸ.2):

ՄԵՈՒԿԱՆ ԱՆՔԱՐՈՅԱԿԱՆՈՒ-

ԹՅՈՒՆ: *Տե՛ս նաև* Զգայական, Զգայականություն. Շնություն. Պոռնկություն

Կամավոր մասնակցություն շնության, պոռնկության, համասեռամոլության, լեսբիանիզմի, այրյունապղծության կամ որևէ այլ անտուրբ, անբնական կամ անմաքուր սեռական գործողության մեջ:

Եկ մեր հորը գինի խմեցնենք և նրա հետ պառկենք՝ **Ծն. ԺԹ.30–36:** Ռուբենը գնաց և իր հոր հարձ Բաղդաշի հետ պառկեց՝ **Ծն. ԼԵ.22** (Ծն. ԽԹ.4, Ա Մն. Ե.1): Համասեռամոլությունը և սեռական այլասերությունները պղծություն են՝ **ՂԼ. ԺԸ.22–23:** Եթե մի տղամարդ մի կնկա ստիպում է պառկել իր հետ, միայն տղամարդն է մեղավոր մեղքում՝ **Բ Օր. ԻԲ.25–27:** Ով որ մի կնկա վրա մտիկ տա նրան ցանկանալով, արդեն շնություն է անում՝ **Մատ. Ե.28** (3 Նեփի 12.28): Պոռնկությունը, պղծությունը, կիրքը կռապաշտություն են՝ **Կող. Գ.5:** Վերջին օրերին բնական սերը կպակասի մարդկանց մեջ՝ **Բ Տիմ. Գ.1–3:** Սեռական մեղքը պղծություն է՝ **Ալմա 39.3–5:**

ՄԵՄ: *Տե՛ս նաև* Նոյ՝ աստվածաշնչյան հայրապետ

Հին Կտակարանում՝ Նոյի արդար որդին և, ըստ ավանդության, նախահայրը Սեմական ժողովուրդների, որոնք են՝ արաբները, եբրայեցիները, բաբելոնացիները, ասորիները, փյունիկեցիները և ասորեստանցիները (Ծն. Ե.29–32, Զ.10, Է.13, Թ.26, Ժ.21–32, Մովսես 8.12): Վերջին օրերի հայտնություններում Մեմը հիշատակվում է, որպես «մեծ քահանայապետ» (ՎԼՈՒ 138.41):

ՄԵՐ: *Տե՛ս նաև* Գթություն. Թշնամանք. Կարեկցանք

Խորը նվիրվածություն և կապվածություն: Մերն առ Աստված ներառում է նվիրվածություն, խորը հարգանք, ակնածանք, մեղմություն, ողորմություն, ներում, կարեկցանք, շնորհ, ծառայություն, երախտագիտություն, բարություն: Իր զավակների հանդեպ Աստծո սիրո մեծագույն օրինակն արտահայտվում է Հիսուս Քրիստոսի անսահման քավությամբ:

Սիրիի քո ընկերին քո անձի պես՝ **Վև.** ԺԹ.18 (Մատ. Ե.43–44, Մատ. ԻԲ.37–40, Հովմ. ԺԳ.9, Գաղ. Ե.14, Հակ. Բ.8, Մոսիա 23.15, ՎևոՒ 59.6): Սիրիի քո Տեր Աստծուն քո բոլոր սրտով՝ **Բ Օր.** 2.5 (Մոր. 10.32, ՎևոՒ 59.5): Քո Տեր Աստվածը ձեզ փորձում է, որ տեսնի թե արդյոք սիրում եք Տիրոջը՝ ձեր Աստծուն՝ **Բ Օր.** ԺԳ.3: Տերն ում որ սիրում է՝ հանդիմանում է՝ **Առակ.** Գ.12: Ամեն ժամանակ սիրող է բարեկամը՝ **Առակ.** ԺԷ.17: Աստված այնպես սիրեք աշխարհը, որ տվեց իր Միածին Որդուն՝ **Հովհ.** Գ.16 (ՎևոՒ 138.3): Սիրեք միմյանց. ինչպես ես ձեզ սիրեցի՝ **Հովհ.** ԺԳ.34 (Հովհ. ԺԵ.12, 17, Մովսես 7.33): Եթե ինձ սիրում եք, պահեք իմ պատվիրանները՝ **Հովհ.** ԺԳ.15 (ՎևոՒ 42.29): Ոչ ոք նրանից ավելի մեծ սեր չունի, ով իր անձը դնում է իր բարեկամների համար՝ **Հովհ.** ԺԵ.13: Պետրոս՝, սիրո՞ւմ ես ինձ դրանցից ավելի: Արածեցրու իմ գառները՝ **Հովհ.** ԻԱ.15–17: Ոչինչ չի բաժանի մեզ Քրիստոսում եղած Աստծո սիրուց՝ **Հռովմ.** Ը.35–39: Ինչ որ աչք չտեսավ, այն պատրաստեց Աստված նրանց համար, ովքեր սիրում են նրան՝ **Ա Կոր.** Բ.9: Սիրով ծառայեք իրար՝ **Գաղ.** Ե.13: Անուսիմներ, սիրեք ձեր կանանց՝ **Եփես.** Ե.25 (Կող. Գ.19): Մի սիրեք աշխարհը՝ **Ա Հովհ.** Բ.15: Աստված սեր է **Ա Հովհ.** Գ.8: Մենք սիրում ենք նրան, որովհետև առաջ նա սիրեց մեզ՝ **Ա Հովհ.** Գ.19: Քրիստոսը տառապում է մարդկանց հանդեպ իր ողորմության պատճառով՝ **1 Նեփի** 19.9: Առաջ մղվեք սիրով Աստծո հանդեպ և բոլոր մարդկանց հանդեպ՝ **2 Նեփի** 31.20: Դուք ձեր երեխաներին կսովորեցնեք սիրել և ծառայել միմյանց՝ **Մոսիա** 4.15: Եթե դուք տրամադրված եք եղել երգելու քավիչ սիրո երգը, այժմ դուք ունե՞ք սնան գգացում՝ **Ալմա** 5.26: Առաջնորդվեք Սուրբ Հոգուց՝ դառնալով համբերատար, սիրով լի՝ **Ալմա** 13.28: Մանձիր քո բոլոր կրքերը, որ լցվես սիրով՝ **Ալմա** 38.12: Ոչ մի հակառակություն չկար՝ Աստծո սիրո շնորհիվ, որը բնակվում էր մարդկանց սրտերում՝ **4 Նեփի** 1.15: Ամեն բան, ինչ հրավիրում է սիրել Աստծուն, ոգեշնչված է Աստծուց՝ **Մոր.** 7.13–16: Գբուրյունը Քրիստոսի մարտիր սերն է՝ **Մոր.** 7.47: Կատարյալ սերը ցրում է վայելը՝ **Մոր.** 8.16 (Ա Հովհ. Գ.18): Մերը մարդկանց

որակում է Աստծո գործի համար՝ **ՎևոՒ** 4.5 (ՎևոՒ 12.8): Սրբագործումը գալիս է բոլոր նրանց, ովքեր սիրում և ծառայում են Աստծուն՝ **ՎևոՒ** 20.31: Եթե ինձ սիրում ես, ծառայիր ինձ և պահիր իմ բոլոր պատվիրանները՝ **ՎևոՒ** 42.29 (Հովհ. ԺԳ.15): Ավելի մեծ սեր ցուցաբերիր նրա հանդեպ, ում ուղղում կամ հանդիմանում ես՝ **ՎևոՒ** 121.43: Մարդիկ Սատանային ավելի շատ սիրեցին, քան Աստծուն՝ **Մովսես** 5.13, 18, 28:

ՄԵՐԵՄ: *Տես՝ նաև Հակաքրիստոս*

Մի մարդ, Մորմոնի Գրքում, որն ուրանում էր Քրիստոսին և նշան էր պահանջում (Հակոբ 7.1–20):

ՄԵՐՈՒՆԳ ԱՐԲԱՀԱՄԻ: *Տես՝*

Աբրահամ – Աբրահամի սերունդը

ՄԻՔԼՈՆ: *Տես՝ նաև Ալմա՝ Ալմայի որդի*

Մորմոնի Գրքում՝ Ալմա կրտսերի որդին: Սիրլոնն ուսուցանեց ավետարանը Ջորամացիներին և հալածվեց իր արդարակեցության համար: Տերը նրան ազատեց իր հալածանքներից՝ նրա հավատարմության և համբերության շնորհիվ (Ալմա 38): Սիրլոնը նաև որոշ ժամանակ պահպանում էր Նեփիացիների հիշատակարանները (Ալմա 63.1–2, 11–13):

ՄԻՋ: *Տես՝ նաև Հարեղացիներ*

Հարեղացի զինվորական առաջնորդ Մորմոնի Գրքում: Նա մահացավ մեծ պատերազմի վերջում, որն ամբողջությամբ կործանեց Հարեղացիների ազգը (Եթեր 14.17–15.31):

ՄԻՄՈՆ ԿԱՆԱՆԱՑԻ

Նոր Կտակարանում՝ Հիսուս Քրիստոսի առաջին Առաքյալներից մեկը (Մատ. Ժ.2–4):

ՄԻՄՈՆ ՊԵՏՐՈՍ: *Տես՝ Պետրոս*

ՄԻՆԱՅ ՍԱՐ: *Տես՝ նաև Մովսես.*

Մովսեսի Օրենք

Սար Սինայ թերակղզում, որի մոտ Մովսեսը և Իսրայելացիները ճամբար էին դրել Եգիպտոսից իրենց դուրս գալուց հետո. այն անվանում են նաև Քորեք սար (Ել. Գ.1): Այստեղ Աստված տվեց իր օրենքը Մովսեսին Իսրայելի տան համար.

այստեղ նաև կառուցվեց խորանը (Ել. ԺԹ.2, Ի.18, ԻԳ.12, ԼԲ.15):

ՄԻՈՒՆ: *Տե՛ս նաև* Ենովք. Նոր Երուսաղեմ

Սրտով մաքուրները (ՎևՈՒ 97.21): Սիոն նշանակում է նաև այն տեղը, որտեղ ապրում են սրտով մաքուրները: Ենովքի և նրա ժողովրդի կողմից կառուցած քաղաքը, որն, ի վերջո, երկինք էր վերցվել արդարության շնորհիվ, կոչվում էր Սիոն (ՎևՈՒ 38.4, Մովսես 7.18–21, 69): Վերջին օրերին Սիոն անունով մի քաղաք կկառուցվի Ջեկսոն գավառի մոտ՝ Միսսուրիում (Ամերիկայի Միացյալ Նահանգներ), որտեղ կհավաքվեն Իսրայելի ցեղերը (ՎևՈՒ 103.11–22, 133.18): Սրբերին խորհուրդ է տրվում կառուցել Սիոնն այնտեղ, որտեղ նրանք ապրում են աշխարհում:

Գավթի քաղաքը կոչվում էր Սիոն՝ **Գ Թագ. Ը.1:** Սիոնից դուրս է գալու օրենքը՝ **Ես. Բ.2–3** (Միքիա Գ.2, 2 Նեփի 12.2–3): Քավիչը կգա Սիոն՝ **Ես. ԾԹ.20:** Ես ձեզ ամենելու եմ քաղաքից մեկին, և ընտանիքից երկուսին, և բերելու եմ Սիոն՝ **Երեմ. Գ.14:** Սիոն սարի վրա և Երուսաղեմում փրկություն կլինի՝ **Հովել Բ.32** (Աբդիա Ա.17): Օրհնված են նրանք, ովքեր կփնտրեն առաջ բերել իմ Սիոնը՝ **1 Նեփի 13.37:** Սիոնի դուստրերը գոռոզ են՝ **2 Նեփի 13.16** (Ես. Գ.16): Վա՛յ նրան, ով անհոգ է Սիոնում՝ **2 Նեփի 28.19–25:** Փնտրեք առաջ տանել և հաստատել Սիոնի գործը՝ **ՎևՈՒ 6.6** (ՎևՈՒ 11.6): Նրան եմ ես ոգեշնչել՝ հզոր ուժով առաջ տանելու Սիոնի գործը բարիքի համար՝ **ՎևՈՒ 21.7:** Նոր Երուսաղեմը կկոչվի Սիոն՝ **ՎևՈՒ 45.66–67:** Միսսուրիի Ինդիփենդենան է վայրը Սիոն քաղաքի համար՝ **ՎևՈՒ 57.1–3:** Խարազան է մնում Սիոնի զավակների վրա մինչև նրանք ապաշխարեն՝ **ՎևՈՒ 84.58:** Տերն իր ժողովրդին կոչեց Սիոն, որովհետև նրանք մեկ սրտի և մեկ մտքի էին՝ **Մովսես 7.18–19:** Սիոնը (Նոր Երուսաղեմը) կկառուցվի Ամերիկյան աշխարհամասում՝ **ՀՀ 1.10:**

ՄԻՐՏ. *Տե՛ս նաև* Կտորված սիրտ. Վերստին ծնված, Աստծուց ծնված

Մարդու մտքի և կամքի խորհրդանիշը և բոլոր հույզերի ու զգացումների փոխաբերական աղբյուրը:

Սիրիք քո Տեր Աստծուն քո ողջ սրտով՝ **Բ Օր. 2.5** (Բ Օր. 2.3–7, Մատ. ԻԲ.37, Դուկ. Ժ.27, ՎևՈՒ 59.5): Տերն իր սրտի համեմատ մի մարդ էր ուզում՝ **Ա Թագ. ԺԳ.14:** Մարդը տեսնում է աչքի առաջինը, բայց Տերը սրտին է նայում՝ **Ա Թագ. ԺԶ.7:** Նա, ով ունի մաքուր ձեռքեր և անբարատ սիրտ, վեր կելնի Տիրոջ սարը և կօրհնվի՝ **Մաղ. ԻԳ.3–5** (2 Նեփի 25.16): Ինչպես որ մարդ սրտում մտածում է, այդպիսին էլ է՝ **Առափ. ԻԳ.7:** Եղիան հայրերի սրտերը կդարձնի դեպի զավակները և զավակների սրտերը՝ դեպի իրենց հայրերը՝ **Մաղ. Գ.5–6** (Դուկ. Ա.17, ՎևՈՒ 2.2, 110.14–15, 138.47, ՋՍ–Պ 1.39): Երանի նրանց, որ սրտով մաքուր են՝ **Մատ. Ե.8** (3 Նեփի 12.8): Մարդ իր սրտի բարուց կամ չարից է խոսում՝ **Դուկ. 2.45:** Հետևեց Որդուն սրտի ողջ մկիթվածությամբ՝ **2 Նեփի 31.13:** Դուք հոգեպես ծնվե՛լ էք Աստծուց և ձեր սրտում զգացե՛լ էք հզոր փոփոխություն՝ **Ալմա 5.14:** Տիրոջ համար, որպես զոհ, մատուցեք կտորված սիրտ ողջ փշրված հոգի՝ **3 Նեփի 9.20** (3 Նեփի 12.19, Եթեբ 4.15, Մոր. 6.2): Ես կասեմ քեզ քո մտքում և քո սրտում, Մուրե Հոգով՝ **ՎևՈՒ 8.2:**

ՄԱԶԲՈՒՆԵ: *Տե՛ս նաև* Ավետարան

Հիմնական վարդապետություն, ճշմարտություն կամ օրենք: Ավետարանի առաջնային սկզբունքներն են՝ հավատք առ Տեր Հիսուս Քրիստոս և ապաշխարություն (ՀՀ 1.4):

Զրոհելով Քրիստոսի վարդապետության սկզբունքները՝ դեպի կատարյալ գնանք՝ **Եբր. 2.1–3:** Երեցները, քահանաները և ուսուցիչները պետք է ուսուցանեն իմ ավետարանի սկզբունքները, որոնք սուրբ գրքերում են՝ **ՎևՈՒ 42.12:** Ավելի կատարյալ ձևով հրահանգվեք սկզբունքի, վարդապետության և բոլոր բաների մեջ՝ **ՎևՈՒ 88.78** (ՎևՈՒ 97.14): Որ ամեն մարդ կարողանա գործել վարդապետությամբ և սկզբունքով՝ համաձայն բարոյական կամքի ազատության, որը տվել եմ նրան՝ **ՎևՈՒ 101.78:** Բանակալության ինչ սկզբունքի որ մենք հասնենք այս կյանքում, հարության ժամանակ այն բարձրանալու է մեզ հետ՝ **ՎևՈՒ 130.18–19:**

ՄԿԻՋԲ: *Տե՛ս նաև* Հիսուս Քրիստոս.

Նախասմահականացու կյանք.

Ստեղծել, Ստեղծում

Հիմնականում վերաբերում է մահկանացու կյանքին նախորդած ժամանակին, այսինքն՝ նախասմահականացու կյանքին: Երբեմն Հիսուս Քրիստոսին անվանում են Սկիզբ:

Սկզբում Աստված ստեղծեց երկինքն ու երկիրը՝ **ԾՃ. Ա.1** (Մովսես 2.1): Սկզբում էր Բանը՝ **Հովհ. Ա.1**: Ես եմ Ալֆան և Օմեգան՝ սկիզբը և վերջը՝ **3 ՆԵՓԻ 9.18**: Քրիստոսը սկիզբն է և վերջը՝ **ՎՆՈՒ 19.1**: Նոր և հավիտենական ուխտը կար ի սկզբանե՝ **ՎՆՈՒ 22.1**: Մարդը սկզբում Աստծո մոտ էր՝ **ՎՆՈՒ 93.23, 29**: Ազնիվ ու մեծ ոգիներն ի սկզբանե ընտրվել էին՝ ղեկավարներ լինելու՝ **ՎՆՈՒ 138.55**: Իմ Միածինն ի սկզբանե ինձ հետ էր՝ **Մովսես 2.26**:

ՄՄԻԹ ԷՄՄԱ ՀԵՅԼ: *Տե՛ս նաև* Սմիթ Ջոզեֆ կրտսեր

Մարգարե Ջոզեֆ Սմիթի կինը: Տերը Էմմային պատվիրեց Եկեղեցու համար օրհներգեր ընտրել: Նա ծառայել է նաև, որպես Սփոփող Միության առաջին նախագահ:

Հայտնություն տրվեց Էմմա Սմիթի համար Տիրոջ կամքի վերաբերյալ՝ **ՎՆՈՒ 25**: Տերը խորհուրդ տվեց Էմմա Սմիթին ամուսնության վերաբերյալ՝ **ՎՆՈՒ 132.51–56**:

ՄՄԻԹ ԼՅՈՒՄԻ ՄԱԿ: *Տե՛ս նաև* Սմիթ Ջոզեֆ ավագ. Սմիթ Ջոզեֆ կրտսեր

Մարգարե Ջոզեֆ Սմիթի մայրը և Ջոզեֆ Սմիթ ավագի կինը (ՋՄ–Պ 1.4, 7, 20): Նա ծնվել է 1776 թվականի հուլիսի 8-ին և մահացել 1856թ. մայիսի 5-ին:

Սելեստիալ արքայության տեսիլքում Ջոզեֆ Սմիթ կրտսերը տեսավ իր մորը՝ **ՎՆՈՒ 137.5**:

ՄՄԻԹ ՀԱՅՐՈՒՄ: *Տե՛ս նաև* Սմիթ Ջոզեֆ կրտսեր

Ջոզեֆ Սմիթի ավագ եղբայրը և հավատարիմ գործընկերը: Հայրումը ծնվել է 1800թ. փետրվարի 9-ին: Նա ծառայել է, որպես Ջոզեֆ Սմիթի օգնական Եկեղեցու նա-

խագահությունում, ինչպես նաև եղել է Եկեղեցու երկրորդ հայրապետը: 1844-ի հունիսի 27-ին նա Ջոզեֆի հետ միասին նահատակվեց Քարթեջի բանտում:

Աստված Հայրումին հրահանգներ հայտնեց իր եղբոր՝ Ջոզեֆի միջոցով՝ **ՎՆՈՒ 11, 23.3**: Օրհնյալ է իմ ծառա Հայրում Սմիթն իր սրտի շիտակության համար՝ **ՎՆՈՒ 124.15**: Հայրումին պատվիրվեց վերցնել Եկեղեցու հայրապետի պաշտոնը՝ **ՎՆՈՒ 124.91–96, 124**: Ջոզեֆը և Հայրումը նահատակվեցին Քարթեջի բանտում՝ **ՎՆՈՒ 135**: Հայրումը և այլ ընտրյալ հոգիներ պահվել էին ժամանակների լրության մեջ առաջ գալու համար՝ **ՎՆՈՒ 138.53**:

ՄՄԻԹ ՋՈՋՇՅԱՎԱԳ: *Տե՛ս նաև* Սմիթ Լյուսի Մակ. Սմիթ Ջոզեֆ կրտսեր

Մարգարե Ջոզեֆ Սմիթի հայրը: Նա ծնվել է 1771թ. հուլիսի 12-ին: Նա ամուսնացել է Լյուսի Մակի հետ, և նրանք ունեցել են ինը երեխա (ՋՄ–Պ 1.4): Ջոզեֆը դարձավ վերջին օրերի վերականգնման հավատարիմ հավատացյալը և Եկեղեցու առաջին հայրապետը: Նա մահացել է 1840թ. սեպտեմբերի 14-ին:

Աստված նրան հրահանգներ հայտնեց իր որդու՝ Ջոզեֆի միջոցով՝ **ՎՆՈՒ 4, 23.5**: Թող իմ տարեց ծառան շարունակի իր ընտանիքի հետ՝ **ՎՆՈՒ 90.20**: Իմ տարեց ծառան նստած է Աբրահամի հետ, նրա աջ կողմում՝ **ՎՆՈՒ 124.19**: Սելեստիալ արքայության տեսիլքում Ջոզեֆ Սմիթ կրտսերը տեսավ իր հորը՝ **ՎՆՈՒ 137.5**: Հրեշտակը Ջոզեֆ Սմիթ կրտսերին պատվիրեց, որ հորը պատմի իր տեսած տեսիլքի մասին՝ **ՋՄ–Պ 1.49–50**:

ՄՄԻԹ ՋՈՋՇՅԱԿՐՏՍԵՐ: *Տե՛ս նաև*

Առաջին տեսիլք. Ավետարանի վերականգնումը. Թանկագին Մարգարիտ. Մորմոնի Գիրքը. Ջոզեֆ Սմիթի Թարգմանություն (ՋՄԹ). Վարդապետություն և Ուխտեր

Մարգարեն, որն ընտրվել էր Հիսուս Քրիստոսի ճշմարիտ Եկեղեցին երկրի վրա վերականգնելու համար: Ջոզեֆ Սմիթը ծնվել է Ամերիկայի Միացյալ Նահանգների Վերմոնտ նահանգում և ապրել է 1805–1844թթ.:

1820թ. Հայր Աստվածը և Հիսուս Քրիստոսը հայտնվեցին Ջոզեֆին, և նա հասկացավ, որ երկրի վրայի եկեղեցիներից ոչ մեկը ճշմարիտ չէր (ՋՄ-Պ 1.1-20): Ավելի ուշ նրան այցելեց Մորոնի հրեշտակը, որը հայտնեց այն ոսկե թիթեղների թաքնված տեղը, որոնք պարունակում էին Ամերիկյան Նախարհամասի հնագույն ժողովուրդների հիշատակարանը (ՋՄ-Պ 1.29-54):

Ջոզեֆը թարգմանեց ոսկե թիթեղները և 1830 թվականին հրատարակեց դրանք, որպես «Մորմոնի Գիրքը» (ՋՄ-Պ 1.66-67, 75): 1829-ին նա քահանայության իշխանություն ստացավ Հովհաննես Մկրտչից և Պետրոսից, Հակոբոսից ու Հովհաննեսից (ՎևՈՒ 13, 27.12, 128.20, ՋՄ-Պ 1.68-70):

Ինչպես Աստված պատվիրել էր, Ջոզեֆը և նա մի քանի հոգի 1830թ. ապրիլի 6-ին կազմավորեցին Հիսուս Քրիստոսի վերականգնված Եկեղեցին (ՎևՈՒ 20.1-4): Ջոզեֆի ղեկավարության ներքո Եկեղեցին աճեց Կանադայում, Անգլիայում և Միացյալ Նահանգների արևելյան մասում, հատկապես Օհայոյում, Միսսուրիում և Իլլինոյսում: Ջոզեֆը և Սրբերը ծանր հալածանքների ենթարկվեցին, որտեղ էլ բնակվեցին: 1844-ի հունիսի 27-ին Ջոզեֆը և նրա եղբայր Հայրումը նահատակվեցին Քարտեջում՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների Իլլինոյս նահանգում:

Հովսեփը՝ Հակոբի որդին, մարգարեացել է Ջոզեֆ Սմիթի մասին՝ **2 Նեփի** 3.6-15: Իմանալով գալիք աղետի մասին՝ Տերը կանչեց իր ծառա Ջոզեֆ Սմիթին՝ **ՎևՈՒ** 1.17 (ՎևՈՒ 19.13): Ջոզեֆ Սմիթը կարգվեց Հիսուս Քրիստոսի Առաքյալ և այս Եկեղեցու առաջին երեք **ՎևՈՒ** 20.2: Ջոզեֆն առաքյալ կարգվեց Պետրոսի, Հակոբոսի և Հովհաննեսի կողմից՝ **ՎևՈՒ** 27.12: Ջոզեֆը և Սիդնի Ռիգդոնը վկայեցին, որ նրանք տեսել են Հոր Միածին Որդուն՝ **ՎևՈՒ** 76.23: Օլիվեր Քաուդերիի հետ միասին Ջոզեֆ Սմիթը տեսիլքում տեսավ Տիրոջը՝ **ՎևՈՒ** 110.1-4: Տերը Ջոզեֆին կանչեց որպես նախագահող երեք, թարգմանիչ, հայտնող, տեսանող և մարգարե՝ **ՎևՈՒ** 124.125: Ջոզեֆ Սմիթն ավելի շատ բան արեց մարդկանց փրկության համար, քան որևէ այլ մարդ, բացի միայն Հիսուսից՝ **ՎևՈՒ** 135.3:

Մարգարե Ջոզեֆ Սմիթի առաջ բերած սուրբ գրքերը. Ջոզեֆը թարգմանեց մի մաս ոսկե թիթեղներից, որոնք տրվել էին նրան Մորոնի հրեշտակի կողմից, թարգմանություն, որը հրատարակվեց 1830 թվականին, որպես «Մորմոնի Գիրքը»: Նա նաև շատ հայտնություններ ստացավ Տիրոջ կողմից, որոնք ուրվագծում էին Եկեղեցու հիմնական վարդապետություններն ու կազմակերպությունը: Այդ հայտնություններից շատերը կազմում են այն գիրքը, որն այժմ հայտնի է, որպես «Վարդապետություն և Ուխտեր»: *Նա պատասխանատու էր նաև «Թանկագին Մարգարիտի» լույս ընծայման համար, որը ոգեշնչված թարգմանություններ է պարունակում Մովսեսի, Աբրահամի և Մատթեոսի գրություններից, հատվածներ իր անձնական պատմությունից և վկայությունից, և տասներեք պնդում՝ Եկեղեցու կողմից դավանվող վարդապետության և հավատքի վերաբերյալ:*

ՄԻԹ ՋՈՋՅՑ Ֆ.

Եկեղեցու վեցերորդ Նախագահը. Հայրում և Մերի Ֆիլդինգ Սմիթների միակ որդին: Նա ծնվել է 1838թ. նոյեմբերի 13-ին և մահացել՝ 1918թ. նոյեմբերի 19-ին:

Ջոզեֆ Ֆ. Սմիթին տեսիլք տրվեց մահացածների փրկագնման վերաբերյալ՝ **ՎևՈՒ** 138:

ՄԻԹ ՍԱՄՈՒԵԼ Հ.: *Տե՛ս նաև* Սմիթ Ջոզեֆ կրտսեր

Մարգարե Ջոզեֆ Սմիթի կրտսեր եղբայրը (ՋՄ-Պ 1.4): Սամուելը ծնվել է 1808 թվականին և մահացել 1844-ին: Նա եղել է Մորմոնի Գրքի Ութ Վկաներից մեկը և ծառայել է որպես առաջին միսիոներներից մեկը վերականգնված Եկեղեցու համար (ՎևՈՒ 23.4, 52.30, 61.33-35, 66.7-8, 75.13):

ՄՊԱՆԵԼ: *Տե՛ս* Գերագույն Պատիժ. Սպանություն

ՄՊԱՆՈՒԹՅՈՒՆ: *Տե՛ս նաև* Գերագույն Պատիժ. Կայնե

Մարդուն անօրինաբար և կանխամտածված ձևով սպանելը: Սպանությունը մեղք է, որը դատապարտվում է վաղ ժամանակներից ի վեր (ԾՃ. Դ.1-12, Մովսես 5.18-41):

Ով որ մարդու արյուն թափի, նրա արյունը մարդով պիտի թափվի՝ **ԾՆ.** Թ.6 (ՁՄԹ՝ ԾՆ. Թ.12-13, Ել. ԻԱ.12, Ալմա 34.12): Մի՛ սպանիր՝ **Ել.** Ի.13 (Բ Օր. Ե.17, Մատ. Ե.21-22, Մոսիա 13.21, ՎևոՒ 59.6): Հիսուսն ասաց. Մի՛ սպանիր՝ **Մատ.** ԺԹ.18: Մարդասպանների բաժինը երկրորդ մահը կլինի՝ **Հայտ.** ԻԱ.8: Դուք մարդասպաններ եք ձեր սրտում՝ **1 Նեփի** 17.44: Վայ մարդասպանին, որը սպանում է միտումնավոր՝ **2 Նեփի** 9.35: Աստված պատվիրել է, որ մարդիկ չպետք է սպանեն՝ **2 Նեփի** 26.32: Սպանությունը պղծություն է Տիրոջ համար՝ **Ալմա** 39.5-6: Ով որ սպանում է, ներում չի ունենա՝ **ՎևոՒ** 42.18: Ով որ սպանություն գործի, պիտի հանձնվի երկրի օրենքների՝ **ՎևոՒ** 42.79:

ՄՊԱՍԱՁԻՆՈՒԹՅՈՒՆ

Հանդերձանք, որը կրում են, որպեսզի մարմինը պաշտպանեն զենքերի զարկերից կամ հարվածներից: Այս բառն օգտագործվում է նաև հոգևոր հատկանիշների նշանակությամբ, որոնք մարդուն պաշտպանում են գայթակություններից ու չարից:

Հազեք Աստծո սպառազինությունը՝ **Եփես.** 2.10-18 (ՎևոՒ 27.15-18):

ՄՊԱՍԱՎՈՐ ՀՐԵՇՏԱԿՆԵՐ: *Տե՛ս* շրշտակներ

ՍՈՂՈՄ: *Տե՛ս նաև* Գոճոր

Հին Կտակարանում՝ ամբարիշտ մի քաղաք, որը կործանվեց Տիրոջ կողմից (ԾՆ. ԺԹ.12-29):

ՍՈՂՈՄՈՆ: *Տե՛ս նաև* Բերսաբե. Դավիթ

Հին Կտակարանում՝ Դավիթի և Բերսաբեի որդի (Բ Թագ. ԺԲ.24): Սողոմոնը որոշ ժամանակ թագավոր էր Իսրայելում:

Դավիթը Սողոմոնին թագավոր է անվանում **Գ Թագ.** Ա.11-53: Դավիթը Սողոմոնին պատվիրում է քայլել Տիրոջ շավիղներով՝ **Գ Թագ.** Բ.1-9: Տերը նրան հասկացող սիրտ խոստացավ՝ **Գ Թագ.** Գ.5-15: Դատեց երկու մայրերի միջև և պարզեց երեխայի իսկական մորը՝ **Գ Թագ.** Գ.16-28: Առակներ և երգեր

խոսեց՝ **Գ Թագ.** Գ.32: Տաճար կառուցեց՝ **Գ Թագ.** 2, Է.13-51: Նվիրագործեց տաճարը՝ **Գ Թագ.** Ը: Նրան այցելեց Սաբայի թագուհին՝ **Գ Թագ.** Ժ.1-13: Սողոմոնն ամուսնացավ ոչ Իսրայելացիների հետ, և նրա կանայք նրա սիրտը դարձրեցին դեպի կեղծ աստվածների երկրպագությունը՝ **Գ Թագ.** ԺԱ.1-8: Տերը բարկացավ Սողոմոնի վրա՝ **Գ Թագ.** ԺԱ.9-13: Մահացավ **Գ Թագ.** ԺԱ.43: Դավիթը մարգարեացավ Սողոմոնի թագավորության փառքի մասին՝ **Մաղ.** ՀԲ: Սողոմոնն ունեցավ շատ կանայք և հարճեր, բայց ոճանք չընդունվեցին Տիրոջ կողմից՝ **ՎևոՒ** 132.38 (Հակոբ 2.24):

ՍՈՂՈՍ ՏԱՐՍՈՆԱՅԻ: *Տե՛ս* Պողոս

ՍՈՓՈՆԻԱ

Հին Կտակարանի մարգարե, որն ապրել է Հոսիայի թագավորության ժամանակ (639-608թթ. Բ.ծ.ա.):

Սոփոնիայի գիրքը. Ա գլուխը խոսում է գալիք օրվա մասին, որը լցված կլինի ցասամար և նեղությամբ: Բ գլուխն Իսրայելի ժողովրդին խրատում է արդարության և հեզության ձգտել: Գ գլուխը պատմում է Երկրորդ Գալատի մասին, երբ բոլոր ազգերը կհավաքվեն, որ պատերազմեն: Այնուամենայնիվ, Տերը կթագավորի նրանց մեջ:

ՄՏԵԼ: *Տե՛ս նաև* Ազնիվ, Ազնվություն.

Խաբկանք, Խաբել, Խաբեություն.

Չարախոսություն

Խաբեության նպատակով որևէ կեղծ և ոչ ճշմարիտ հաղորդակցություն:

Գողություն մի արեք, իրար մի խաբեք, սուտ մի խոսեք՝ **ՂԱ.** ԺԹ.11: Ստությունն ատում են և զարշելի համարում՝ **Մաղ.** ԾԺԹ.163: Ձզվելի են Տիրոջ համար ստախոս շուրթերը՝ **Առակ.** ԺԲ.22: Նրանք իմ ժողովուրդն են, որովհետև չեն ստել՝ **Ես.** ԿԳ.8: Դևը ստախոս է և ստության հայրը՝ **Հովի.** Ը.44 (2 Նեփի 2.18, Եթեր 8.25, Մովսես 4.4): Ոչ թե մարդկանց սուտ խոսեցիր, այլ Աստծուն՝ **Գոր.** Ե.4 (Ալմա 12.3): Եթե մեկն ասի, թե Միրում է Աստծուն, բայց ասի իր եղբորը, նա ստախոս է՝ **Ա Հովի.** Գ.20: Բոլոր ստախոսները բաժին ունեն երկրորդ

մահվան մեջ՝ **Հայտ.** ԻԱ.8 (ՎևՈՒՄ 63.17): Վայ ստախտսին, քանզի նա վայր պիտի գցվի դժոխք՝ **2 Նեփի** 9.34: Շատերը կեղծ վարդապետություն կուսուցանեն՝ ասելով. Ստիր մի քիչ և դրանում ոչ մի վնաս չկա՝ **2 Նեփի** 28.8–9 (ՎևՈՒՄ 10.25): Պատկերացնո՞ւմ եք, որ կարող եք ստել Տիրոջը՝ **Ալմա** 5.17: Դու ճշարտության Աստված ես և չես կարող ստել՝ **Եթեր** 3.12 (Թվ. ԻԳ.19, Ա Թագ. ԺԵ.29, Տիտու Ա.2, Եբր. 2.18, Եմովս 1.6): Նա, ով ստում է և չի ապաշխարում, պիտի դուրս գցվի՝ **ՎևՈՒՄ** 42.21: Ստախտաները ժառանգում են թելեստիալ փառքը՝ **ՎևՈՒՄ** 76.81, 103–106: Մենք հավատում ենք ազնիվ լինելուն՝ **ՀՀ** 1.13:

ՄՏԵՂԾԵԼ, ՄՏԵՂԾՈՒՄ: *Տե՛ս նաև*
Երկիր. Հանգստության Օր. Հիսուս Քրիստոս. Հոգեդեն Ստեղծում.
Սկիզբ

Կազմավորել: Աստված՝ գործելով իր Որդու՝ Հիսուս Քրիստոսի միջոցով, կազմավորեց բնության տարրերը՝ երկիրը ձևավորելու համար: Երկնային Հայրը և Հիսուսը մարդուն ստեղծեցին իրենց պատկերով (Մովսես 2.26–27):

Սկզբում Աստված ստեղծեց երկինքն ու երկիրը՝ **Ծն.** Ա.1: Մեր պատկերով մարդ արարենք՝ **Ծն.** Ա.26 (Մովսես 2.26–27, Աբր. 4.26): Ամեն ինչ նրանով եղավ՝ **Հովի.** Ա.3, 10: Նրանով ամեն բան ստեղծվեց, ինչ որ երկնքում է՝ **Կող.** Ա.16 (Մոսիա 3.8, Հել. 14.12): Աստված աշխարհներն արարեց իր Որդիով՝ **Եբր.** Ա.2: Մարդը ստեղծվել էր ի սկզբանե՝ **Մոսիա** 7.27: Ես ստեղծեցի երկինքներն ու երկիրը և բոլոր բաները՝ **3 Նեփի** 9.15 (Մորմ. 9.11, 17): Ի սկզբանե բոլոր մարդիկ ստեղծվել էին ըստ իմ սեփական պատկերի՝ **Եթեր** 3.15: Հիսուս Քրիստոսը ստեղծել է երկինքներն ու երկիրը՝ **ՎևՈՒՄ** 14.9: Նա ստեղծեց մարդուն՝ արու և էգ, իր իսկ պատկերով՝ **ՎևՈՒՄ** 20.18: Անթիվ աշխարհներ են ես ստեղծել **Մովսես** 1.33: Իմ Միածնով են ես ստեղծել երկինքը՝ **Մովսես** 2.1: Ես՝ Տեր Աստվածս, ստեղծեցի բոլոր բաները հոգեդեն, նախքան դրանք բնականորեն երկրի երեսին էին՝ **Մովսես** 3.5: Մրա նման միլիոնավոր երկրները չէին լինի քո արարչագործությունների թվի սկիզբը՝ **Մովսես** 7.30:

Աստվածները կազմավորեցին և ձևավորեցին երկինքները՝ **Աբր.** 4.1:

ՄՏԵՂԾՈՂ: *Տե՛ս Հիսուս Քրիստոս.*
Ստեղծել, Ստեղծում

ՄՏԵՓԱՆՈՍ

Ստեփանոսը Փրկչի և նրա Եկեղեցու համար նահատակվեց Նոր Կտակարանի ժամանակներում: Նրա քարոզը նախանշան եղավ և, հավանաբար, ազդեցություն ունեցավ Պողոսի մեծ աշխատանքի վրա, որը ներկա էր, երբ Ստեփանոսն իրեն պաշտպանում էր Ծերակույտի առաջ (Գոր. Ը.1, ԻԲ.20):

Ստեփանոսն այն յոթ հոգուց մեկն էր, որոնք նշանակվել էին օգնելու Տասներկու Առաքյալներին՝ **Գոր.** 2.1–8: Ստեփանոսը մեծ զարմանալիքներ ու հրաշքներ էր գործում **Գոր.** 2.8: Ստեփանոսը վիճաբանության մեջ մտավ հրեաների հետ՝ **Գոր.** 2.9–10: Մեղադրանքներ ներկայացվեցին նրա դեմ, և նա դատվեց Ծերակույտի առաջ՝ **Գոր.** 2.11–15: Ստեփանոսն ասաց իր պաշտպանական խոսքը՝ **Գոր.** Է.2–53: Սուրբ Հոգով լցված՝ նա տեսիլքում տեսավ Հորը և Որդուն՝ **Գոր.** Է.55: Ստեփանոսը նահատակվեց իր վկայության համար՝ **Գոր.** Է.54–59:

ՄՐԲԱԳՈՐԾՈՒՄ: *Տե՛ս նաև*
Արդարացում, Արդարացնել. Հիսուս Քրիստոս. Քավել, Քավություն

Հիսուս Քրիստոսի քավության միջոցով՝ մեղքից ազատված, անարատ, մաքուր և սուրբ դառնալու գործընթացը (Մովսես 6.59–60):

Աստված ընտրեց ձեզ փրկության համար՝ Հոգու սրբագործման միջոցով՝ **Բ Թես.** Բ.12: Մենք սրբագործվել ենք Հիսուսի մարմնի պատարագով՝ **Եբր.** Ժ.10: Հիսուսը չարչարվեց, որպեսզի իր արյունով սրբագործի ժողովրդին՝ **Եբր.** ԺԳ.12: Գառի արյան միջոցով քահանայապետերը սրբագործվել էին և նրանց համոզմունքը դարձել էին ճերմակ՝ **Ալմա** 13.10–12: Սրբագործումը գալիս է նրանց, ովքեր իրենց սրտերը ենթարկում են Աստծուն՝ **Հել.** 3.33–35: Ապաշխարեք, որպեսզի կարողանաք սրբագործվել՝ ստանալով Սուրբ Հոգին՝ **3 Նեփի** 27.20: Սրբագործումը՝ Հիսուս Քրիստոսի շնորհով, արդար է

և ճշմարիտ՝ **ՎևևՌ** 20.31: Հիսուսը եկավ՝ աշխարհը սրբագործելու՝ **ՎևևՌ** 76.41: Սրբագործեք ձեզ, որ ձեր միտքն ուղղված լինի միայն առ Աստված՝ **ՎևևՌ** 88.68:

ՍՐԲԱԶԱՆ: *Տե՛ս* Սրբություն. Սուրբ

ՍՐԲԱԶԱՆ ՊՈՒՐԱԿ: *Տե՛ս* Առաջին տեսիլք

ՍՐԲՈՒԹՅԱՆՅ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ:

Տե՛ս *Ասև* Խորան. Տաճար՝ Տիրոջ տուն

Ամենասրբազան սենյակը Մովսեսի խորանում, իսկ ավելի ուշ՝ տաճարում: Սրբությանց Սրբությանն անվանում են նաև «ամենասուրբ վայր» (Ել. ԻԶ.33–34):

ՍՐԲՈՒԹՅՈՒՆ: *Տե՛ս* *Ասև* Անարատ,

Անարատություն. Սրբագործում. Սուրբ

Հոգևոր և բարոյական կատարելություն: Սրբությունը ցույց է տալիս մարդու սրտի և մտադրությունների մաքրությունը:

Անդամները պիտի ցույց տան, որ իրենք արժանի են եկեղեցուն՝ սրբությամբ քայլելով Տիրոջ առաջ՝ **ՎևևՌ** 20.69: Տիրոջ տունը սրբության վայր է՝ **ՎևևՌ** 109.13: Սրբության Մարդ է Աստծո անունը՝ **Մովսես** 6.57 (Մովսես 7.35):

ՍՈՒՐԲ: *Տե՛ս* *Ասև* Քրիստոնյաներ.

Հիսուս Քրիստոսի Եկեղեցի. Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցի. Սրբություն. Անարատ, Անարատություն. Սրբագործում

Ինչպես օգտագործված է սուրբ գրքերում, *սուրբ* բառն ունի երկու իմաստ՝ (1) լինել Հիսուս Քրիստոսի Եկեղեցու հավատարիմ անդամ. և (2) այն ինչ սրբազան է, ունի աստվածային բնույթ կամ հոգևոր և բարոյական մաքրություն: Սուրբի հակամիջը սովորականն է, կամ անսուրբը:

Եկեղեցու անդամ սրբերը. Ժողովքը ինձ մտտ իմ սրբերին՝ **Մաղ. Ծ.5**: Մողոս Երուսաղեմում մեծ չարիք էր գործում Սրբերի հանդեպ՝ **Գոր. Թ.1–21**: Պետրոսը եկավ սրբերի մտտ, որոնք բնակվում էին Լյուդիայում՝ **Գոր. Թ.32**: Չեզ ամենբիղ, որ Հռոմում եք, կանչված Սրբերիդ, շնորք լինի ձեզ և խաղաղություն՝ **Հռովմ. Ա.7**: Դուք Սրբերի համաքաղաքացիներն եք՝

Եփես. Բ.19–21: Ես տեսա Գառի Եկեղեցին, ովքեր Աստծո սրբերն էին՝ **1 Նեփի 14.12**: Բնական մարդը թշնամի է Աստծուն, մինչև որ չի դառնում Սուրբ՝ Քրիստոսի քավության միջոցով՝ **Մոսիա 3.19**: Ես՝ Տերս, օրհնեցի հողն իմ Սրբերի օգտագործման համար՝ **ՎևևՌ** 61.17: Մատանան պատերազմում է Աստծո Սրբերի հետ՝ **ՎևևՌ** 76.28–29: Աշխատեք ջանասիրաբար, որ սրբերին նախապատրաստեք դատաստանի համար, որը պիտի գա՝ **ՎևևՌ** 88.84–85: Սրբերը պետք է բաժին հանեն իրենց ստացվածքից՝ աղքատների ու տառապյալների համար՝ **ՎևևՌ** 105.3: Վերոհիշյալ պաշտոնները են սովել են ծառայության գործի և իմ սրբերի կատարելության համար՝ **ՎևևՌ** 124.143 (Եփ. Դ.12):

Սրբազան բնույթ ունենալը. Դուք ինձ համար քահանաների թագավորություն և սուրբ ազգ կլինեք՝ **Ել. ԺԹ.5–6** (Ա Պա Բ.9): Տերը պատվիրեց Իսրայելին. Սուրբ եղեք, քանզի ես սուրբ եմ՝ **Վև. ԺԱ.44–45**: Նրանք, ովքեր մաքուր են ձեռքով և անարատ՝ սրտով, կկանգնեն նրա սրբության տեղում՝ **Մաղ. ԻԳ.3–4**: Սովորեցրեք իմ ժողովրդին սուրբի և անսուրբի տարբերությունը՝ **Եզեկ. ԽԴ.23**: Աստված մեզ սուրբ կոչումով կանչեց՝ **Բ Տիմ. Ա.8–9**: Մանկությունիցդ սուրբ գրքերը գիտես՝ **Բ Տիմ. Գ.15**: Աստծո սուրբ մարդիկ խոսել են՝ Սուրբ Հոգու ազդեցության ներքո՝ **Բ Պետ. Ա.21**: Բոլոր մարդիկ պիտի դատվեն՝ համաձայն այն ճշմարտության և սրբության, որն Աստծո մեջ է՝ **2 Նեփի 2.10**: Բնական մարդը սուրբ է դառնում Քրիստոսի քավության միջոցով՝ **Մոսիա 3.19**: Զայլեք Աստծո սուրբ կարգին համապատասխան՝ **Ալմ. Գ.7.22** (Ալմ. 13.11–12): Երեք աշակերտները սրբագործվեցին մարմնում և սուրբ դարձվեցին՝ **3 Նեփի 28.1–9, 36–39**: Մի՛ կատակիր սրբազան բաների հետ՝ **ՎևևՌ** 6.12: Դու չես կարող գրել այն, ինչը սրբազան է, եթե դա չտրվի ինձանից՝ **ՎևևՌ** 9.9: Դուք պետք է ինքներդ ձեզ պարտավորեցնեք՝ ամենայն սրբությամբ վարվել՝ **ՎևևՌ** 43.9: Իմ աշակերտները պիտի կանգնեն սուրբ տեղերում՝ **ՎևևՌ** 45.32: Այն, ինչ գալիս է վերևից, սրբազան է՝ **ՎևևՌ** 63.64: Փոքր երեխաները սուրբ են՝ **ՎևևՌ** 74.7: Նվիրագործեք այդ տեղը

և այն սուրբ կդարձվի՝ **ՎևոՒ** 124.44: Տերն իր ընտրյալներին կհավաքի մի Սուրբ Քաղաքում՝ **Մովսես** 7.62:

ՄՈՒՐԱ ԳՐՔԵՐ: *Տե՛ս նաև* Աստծո խոսքը. Աստվածաշունչ. Թանկագին Մարգարիտ. Ժամանակագրություն. Կանոնական Գրքեր. Մորմոնի Գիրքը. Վարդապետություն և Ուխտեր

Աստծո սուրբ մարդկանց խոսքերը՝ թե՛ գրավոր, թե՛ բանավոր, երբ ներշնչված են Սուրբ Հոգով: Եկեղեցու ներկայիս պաշտոնապես կանոնացված սուրբ գրքերի թվում են՝ «Աստվածաշունչը», «Մորմոնի Գիրքը», «Վարդապետություն և Ուխտերը» և «Թանկագին Մարգարիտը»: Հիսուսը և Նոր Կտակարանի հեղինակները Հին Կտակարանի գրքերը համարում էին սուրբ գրքեր (Մատ. ԻԲ.29, Հովի. Ե.39, Բ Տիմ. Գ.15, Բ Պետ. Ա.20–21):

Չէ՞ որ մեր արտերը բորբոքվում էին մեզանում, երբ սուրբ գրքերը բաց էր անում մեզ համար՝ **Ղուկ**. ԻԴ.32: Բնենք սուրբ գրքերը. բանգի կարծում էք, որ նրանցով ունեն հավերժական կյանք. և նրանք են, որ վկայում են իմ մասին՝ **Հովի**. Ե.39: Քրիստոսի խոսքերը կասեն ձեզ, թե ինչ պետք է անեք՝ **2 Նեփի** 32.3: Բոլոր նրանք, ովքեր առաջնորդվում են հավատալու սուրբ գրքերին, կայում են և հաստատուն հավատքում՝ **Հեյ**. 15.7–8: Մարդիկ սխալվում են, աղավաղելով սուրբ գրքերը, և չեն հասկանում դրանք՝ **ՎևոՒ** 10.63: Այս խոսքերը ո՛չ մարդկանցից են, ո՛չ էլ մարդուց, այլ ինձանից՝ **ՎևոՒ** 18.34–36: Մորմոնի Գրքի առաջ գալն աշխարհին ապացուցում է, որ սուրբ գրքերը ճշմարիտ են՝ **ՎևոՒ** 20.2, 8–12: Թող ձեր ժամանակը նվիրվի սուրբ գրքերն ուսումնասիրելուն՝ **ՎևոՒ** 26.1: Սուրբ գրքերը տրվել են Սրբերի ուսուցման համար՝ **ՎևոՒ** 33.16: Սուրբ գրքերը տրվել են՝ ընտրյալների փրկության համար՝ **ՎևոՒ** 35.20: Ուսուցանեք իմ ավետարանի սկզբունքները, որոնք Աստվածաշնչում են և Մորմոնի Գրքում՝ **ՎևոՒ** 42.12: Այդ բաների վերաբերյալ իմ օրենքները տրված են իմ սուրբ գրքերում՝ **ՎևոՒ** 42.28: Ինչ որ խոսվում է Սուրբ Հոգու ներգործությամբ, սուրբ գրություն է՝ **ՎևոՒ** 68.4:

Կորած սուրբ գրքեր. Սուրբ գրքերում

հիշատակված են սրբազան շատ գրություններ, որոնք մենք այսօր չունենք, որոնց թվում են հետևյալ գրքերը և հեղինակները՝ ուխտի գիրքը (Եյ. ԻԴ.7), Տիրոջ պատերազմների գիրքը (Թվ. ԻԱ.14), Ուղիղի գիրքը (Հես. Ժ.13, Բ Թագ. Ա.18), Սողոմոնի գործերի գիրքը (Գ Թագ. ԺԱ.41), տեսանող Սամուելը (Ա Մն. ԻԹ.29), Նաթան մարգարեն (Բ Մն. Թ.29), Սենայիա մարգարեն (Բ Մն. ԺԲ.15), Ադդով մարգարեն (Բ Մն. ԺԳ.22), Հեուն (Բ Մն. Ի.34), տեսանողների խոսքերը (Բ Մն. ԼԳ.19), Եմովի գիրքը (Հուդա Ա.14) և Չենոքի, Նեոմի և Չենոսի խոսքերը (1 Նեփի 19.10), Չենոսի (Հակոբ 5.1), Չենոքի և Եզիասի խոսքերը (Հեյ. 8.20), և հիշատակի գիրքը (Մովսես 6.5). քուղթ առ Կորնթացիս (Ա Կոր. Ե.9) և քուղթ առ Եփեսացիս (Եփես. Գ.3) և քուղթ առ Լավոդիկեցիս (Կող. Դ.16):

Սուրբ գրքերը պետք է պահպանվեն. Մենք պետք է ձեռք բերենք այս հիշատակարանները, որպեսզի պահպանենք մարգարենների կողմից ասված խոսքերը՝ **1 Նեփի** 3.19–20: Ես պետք է պահպանեմ այս թիբեղները՝ **Հակոբ** 1.3: Այս բաները պահվել և պահպանվել են Աստծո ձեռքով՝ **Մոսիա** 1.5: Հոգ տար այս սրբազան բաների մասին՝ **Ալմա** 37.47: Սուրբ գրքերը պետք է ապահովությամբ պահպանվեն՝ **ՎևոՒ** 42.56: Բոլոր ջանքերն օգտագործիր դրանք պահպանելու համար՝ **ՋՄ–Պ** 1.59:

Սուրբ գրքերի արժեքը. Այս օրենքը կարդա ողջ Իսրայելի առաջ՝ **Բ Օր**. ԼԱ.10–13: Այս օրենքի գիրքը բերանիցդ չհեռանա՝ **Հես**. Ա.8: Տիրոջ օրենքը կատարյալ է՝ հոգին դարձի բերով՝ **Սաղ**. ԺԺ.7: Բո խոսքը ճրագ է իմ ոտքերի համար՝ **Սաղ**. ԾԺԺ.105: Սուրբ գրքերը վկայում են իմ մասին՝ **Հովի**. Ե.39: Բոլոր սուրբ գրքերն Աստծուց են ներշնչված և օգտակար են վարդապետության և ուսուցանելու համար՝ **Բ Տիմ**. Գ.15–16: Ես բոլոր սուրբ գրությունները մմանեցնում էի մեզ, որպեսզի դա լիներ մեր օգտի և ուսման համար՝ **1 Նեփի** 19.23: Հոգիս հրճվում է սուրբ գրություններից՝ **2 Նեփի** 4.15–16: Մենք ջանասիրաբար աշխատում ենք, որ գրենք, որպեսզի համոզենք մեր երեխաներին և մաև մեր եղբայրներին, որ հավատան

Քրիստոսին՝ **2 Նեփի** 25.23: Նրանք քննում էին սուրբ գրքերը և այլևս ականջ չէին դնում այս ամբարիշտ մարդու խոսքերին՝ **Հակոբ** 7.23 (Ալմա 14.1): Եթե չլիներին այս թիբեղները, մենք պիտի տառապեինք անգիտության մեջ՝ **Մոսիա** 1.2–7: Նրանք ջանասիրաբար քննել էին սուրբ գրքերը, որ կարողանային իմանալ Աստծո խոսքը՝ **Ալմա** 17.2–3: Սուրբ գրքերը պահպանվել են՝ հոգիներին փրկության բերելու համար՝ **Ալմա** 37.1–19 (2 Նեփի 3.15): Աստծո խոսքը կառաջնորդի Քրիստոսի մարդուն՝ **Հեկ**. 3.29: Ինչ որ նրանք խոսում են Սուրբ Հոգով, սուրբ գրությունը կլինի և Աստծո գործությունն է՝ փրկություն՝ **Վևոթ** 68.4: Տպագրեք իմ սուրբ գրքերի լրիվությունը՝ իմ Եկեղեցին կառուցելու և իմ ժողովրդին նախապատրաստելու համար՝ **Վևոթ** 104.58–59: Ով որ գանձում է իմ խոսքը, չի մտրվի՝ **ՋՄ–Մ** 1.37:

Սուրբ գրքերի ի հայտ գալու մարգարեություններ. Եսայիան կանխավ պատմել է Մորմոնի Գրքի առաջ գալը՝ **Ես.** ԻԹ.11–14: Վերցրու մի փայտ և վրան գրիր՝ Հուդային՝ **Եգեկ**. ԼԷ.15–20: Ուրիշ գրքեր առաջ կգան՝ **1 Նեփի** 13.39: Գուր կարիք չունեք ենթադրելու, որ Աստվածաշունչը պարունակում է իմ բոլոր խոսքերը՝ **2 Նեփի** 29.10–14: Կառչած մնացեք Քրիստոսի ավետարանից, որը ձեզ մատչելի կդարձվի այն հիշատակարանում, որն ի հայտ կգա՝ **Մորմ.** 7.8–9: Օրինված կլինի նա, ով ի լույս կբերի այս բանը՝ **Վորմ.** 8.16: Գրիր այս բաները և ես ինձ իսկ հարմար ժամանակ ցույց կտամ դրանք՝ **Եթեր** 3.27 (Եթեր 4.7): Մենք հավատում ենք, որ նա դեռ շատ բաներ հայտնի կդարձնի՝ **ՀՀ** 1.9:

ՍՈՒՐԲ ԳՐՔԵՐ՝ ԿՈՐԱԾ: *Տե՛ս*
Սուրբ գրքեր – Կորած սուրբ գրքեր

ՍՈՒՐԲ ՀՈԳԻ: *Տե՛ս նաև* Աղավուն նշանը. Աններելի մեղք. Աստված, Աստվածություն. Խոստումի Սուրբ Հոգի. Հայտնություն. Սկրտություն, Սկրտել. Մխիթարիչ. Ոգեշնչում, Ոգեշնչել. Սուրբ Հոգու պարգև

Աստվածազվիի երրորդ անդամը (Ա Հովհ. Ե.7, Վևոթ 20.28): Նա հոգեղեն անձնավորություն է՝ չունենալով մահի և ոսկորից մարմին (Վևոթ 130.22): Սուրբ Հոգուն

հաճախ դիմում են՝ որպես Հոգի, կամ Աստծո Հոգի:

Սուրբ Հոգին մի քանի էական դեր է կատարում փրկության ծրագրում: (1) Նա վկայում է Հոր և Որդու մասին (Ա Կոր. ԺԲ.3, 3 Նեփի 28.11, Եթեր 12.41): (2) Նա հայտնում է բոլոր բաների ճշմարտությունը (Հովհ. ԺԳ.26, ԺԶ.13, Սոր. 10.5, Վևոթ 39.6): (3) Նա սրբագործում է նրանց, ովքեր ապաշխարել և մկրտվել են (Հովհ. Գ.5, 3 Նեփի 27.20, Մովսես 6.64–68): (4) Նա Խոստումի Սուրբ Հոգին է (Վևոթ 76.50–53, 132.7, 18–19, 26):

Սուրբ Հոգու գործությունը կարող է իջնել մարդու վրա մկրտությունից առաջ և վկայել, որ ավետարանը ճշմարիտ է: Սակայն Սուրբ Հոգու մշտական ընկերակցությունն ունենալու իրավունքը, երբ մարդ արժանի է, պարզ և, որը կարելի է ստանալ կիսյան Մեղիսեղեկյան Քահանայություն միողներին ձեռնադրմամբ՝ Հիսուս Քրիստոսի Եկեղեցուն լիազորված մկրտությունից հետո:

Հիսուսն ուսուցանել է, որ բոլոր մեղքերը կարող են ներվել, բացի Սուրբ Հոգու դեմ հայհոյանքից (Մատ. ԺԲ.31–32, Մար. Գ.28–29, Դուկ. ԺԲ.10, Եթր. Զ.4–8, Վևոթ 76.34–35):

Հոգին մարդկանց դրդում է քայլել Աստծո կանոններով՝ **Եգեկ**. ԼԶ.27: Առաքյալները լիազորվեցին մկրտելու Հոր, Որդու և Սուրբ Հոգու անունով՝ **Մատ.** ԻԸ.19: Սուրբ Հոգին ձեզ կսովորեցնի ամեն բան՝ **Հովհ.** ԺԳ.26: Սուրբ մարդիկ խոսել են Սուրբ Հոգուց շարժված՝ **Ք Պետ.** Ա.21: Նեփին առաջնորդվում էր Հոգու կողմից՝ **1 Նեփի** 4.6: Սուրբ Հոգու գործությամբ Աստծո խորհուրդները նրանց համար հայտնի կդառնան՝ **1 Նեփի** 10.17–19: Սուրբ Հոգին ձեզ ցույց է տալիս բոլոր բաները, որ պիտի անեք՝ **2 Նեփի** 32.5: Սուրբ Հոգու գործությամբ դուք կիմանաք բոլոր բաների ճշմարտությունը՝ **Մոր.** 10.5: Սուրբ Հոգին կսպի քեզ քո մտքում և քո սրտում՝ **Վևոթ** 8.2: Հոգին առաջնորդում է բարիք գործել՝ **Վևոթ** 11.12: Սուրբ Հոգին գիտի բոլոր բաները՝ **Վևոթ** 35.19: Սուրբ Հոգին սովորեցնում է արքայության խաղաղարար բաները՝ **Վևոթ** 36.2 (Վևոթ 39.6): Եթե չստանանք Հոգին, դուք չպետք է ուսուցանեք՝ **Վևոթ** 42.14: Սուրբ Հոգին վկայում է Հոր և Որդու մասին՝ **Վևոթ** 42.17 (Ա Կոր. ԺԲ.3, 3 Նեփի 11.32,

35-36): Ոմանց տրված է, Սուրբ Հոգուց, իմանալ, որ Հիսուս Քրիստոսն Աստծո Որդին է՝ **ՎևոՒԲ** 46.13: Ինչ որ նրանք խոսեն, երբ շարժվում են Սուրբ Հոգով, պիտի լինի սուրբ գրություն՝ **ՎևոՒԲ** 68.4: Սուրբ Հոգին կրափով՝ վկայություն բերելով բոլոր բաների մասին, որոնք դուք կատեք՝ **ՎևոՒԲ** 100.8: Սուրբ Հոգին կլինի քո մշտական ընկերը՝ **ՎևոՒԲ** 121.45-46:

ՄՈՒՐԲ ՀՈԳՈՒ ՊԱՐԳԵՎ: *Տե՛ս նաև*
Աստված, Աստվածագլուխ. Հոգու պարզևները. Պարզև. Սուրբ Հոգի

Սուրբ Հոգու մշտական ազդեցությունը Եկեղեցու յուրաքանչյուր արժանի մկրտված անդամի իրավունքն է: Հիսուս Քրիստոսի ճշմարիտ Եկեղեցուն մկրտվելուց հետո, յուրաքանչյուր անձ ստանում է Սուրբ Հոգու պարզևը, ձեռնադրմամբ, մեկի կողմից, որն ունի պաշտաձ իշխանություն (Գոր. Ը.12-25, Մար. 2.1-3, ՎևոՒԲ 39.23): Սուրբ Հոգու պարզևն ստանալը հաճախ անվանում են կրակով մկրտություն (Մատ. Գ.11, ՎևոՒԲ 19.31):

Մարդկանց պատվիրվում է ապաշխարել, մկրտվել և ստանալ Սուրբ Հոգու պարզևը՝ **Գոր.** Բ.38: Պետրոսը և Հովհաննեսը Սուրբ Հոգու պարզևը շնորհում էին ձեռնադրմամբ՝ **Գոր.** Ը.14-22: Սուրբ Հոգին տրվում է ձեռնադրմամբ՝ **Գոր.** ԺԹ.2-6: Մեղքերի թողությունը գալիս է կրակով և Սուրբ Հոգով՝ **2 Նեփի** 31.17: Մենք հավատում ենք Սուրբ Հոգու պարզևի համար ձեռնադրմանը՝ **ՀՀ** 1.4:

ՎԱԽ: *Տե՛ս նաև* Հավատք. Պատկանանք. Քաջություն, Քաջարի

Վախը կարող է ունենալ երկու իմաստ. (1) վախենալ Աստծուց՝ նշանակում է ակնածանք և պատկառանք ունենալ նրա հանդեպ և հնազանդվել նրա պատվիրաններին. (2) վախենալ մարդուց, մահկանացու վտանգներից, ցավից և չարիքից, նշանակում է երկյուղել և սոսկալ դրանցից:

Աստվածավախություն. Իրավ այստեղ Աստծո վախը չկա՝ **Ծճ.** Ի.11: Քո Տեր Աստծուց վախեցիր՝ **Բ Օր.** Զ.13 (Հես. ԻԳ.14, Ա Թագ. ԺԲ.24): Վախով ծառայեք Տիրոջը՝ **Մաղ.** Բ.11: Իմաստորոշյան սկիզբը Տիրոջ երկյուղն է՝ **Մաղ.** ԾԺԱ.10: Վախեցիր Տիրոջից և հեռացիր չարից՝

Առակ. Գ.7: Աստծուց վախեցողների համար լավ կլինի՝ **Ժող.** Ը.12: Չեր անձի փրկությունը գործեք ահով ու դողալով՝ **Փիլ.** Բ.12: Վախեցեք Աստծուց և փառք տվեք նրան՝ **Հայտ.** ԺԳ.7 (ՎևոՒԲ 88.104): Մարգարեները շարունակ սրափեցնում էին մարդկանց, որպեսզի նրանց պահեն Տիրոջ երկյուղի մեջ՝ **Եսնովս** 1.23: Ալմամ և Մոսիայի որդիներն ընկան գետնին, քանզի Տիրոջ երկյուղը պատել էր նրանց՝ **Ալմա** 36.7: Երկյուղով ու դողալով իրագործեք ձեր անձնական փրկությունը՝ **Մորմ.** 9.27: Ես պիտի վրդովեմ նրանց, ովքեր չեն վախենում ինձանից, և այնպես անեն, որ նրանք դողան՝ **ՎևոՒԲ** 10.56: Նա, ով երկյուղում է ինձանից, պիտի սպասի Մարդու Որդու գալստյան նշաններից՝ **ՎևոՒԲ** 45.39:

Մարդուց վախենալը. Մի վախեցիր, որովհետև ես քեզ հետ եմ՝ **Ծճ.** ԻԶ.24 (Ես. ԽԱ.10): Տերը մեզ հետ է. նրանցից մի վախեցեք՝ **ԹՎ.** ԺԳ.9: Մի վախենա. որովհետև մեզ հետ եղողներն ավելի շատ են՝ **Դ Թագ.** Զ.16: Չեն վախենա, թե ինչ կանի մարմինը՝ **Մաղ.** ԾՁ.4: Մի վախեցեք մարդկանց նախատինքից՝ **Ես.** ԾԱ.7 (2 Նեփի 8.7): Աստված չի տվել մեզ երկչոտության հոգի՝ **Բ Տիմ.** Ա.7: Կատարյալ սերը հեռացնում է վախը՝ **Ա Հովհ.** Գ.18 (Մոր. 8.16): Հելամանի որդիները մահից չէին վախենում՝ **Ալմա** 56.46-48: Մահվան վախը լցնում է ամբարիշտների կուրծքը՝ **Մորմ.** 6.7: Մի վախեցեք, թե ինչ կարող է անել մարդը՝ **Մոր.** 8.16: Դու մարդուց չպետք է ավելի շատ վախենայիր, քան Աստծուց **ՎևոՒԲ** 3.7 (ՎևոՒԲ 30.1, 11, 122.9): Մի վախեցեք բարիք գործել՝ **ՎևոՒԲ** 6.33: Ով որ պատկանում է իմ եկեղեցուն, վախենալու կարիք չունի՝ **ՎևոՒԲ** 10.55: Եթե պարտաստ լինեք, դուք չեք վախենա՝ **ՎևոՒԲ** 38.30: Չեր վրայից հանեք նախանձն ու վախը՝ **ՎևոՒԲ** 67.10: Ուրախ եղեք, և մի վախեցեք, քանզի ես՝ Տերս, ձեզ հետ եմ՝ **ՎևոՒԲ** 68.6: Մի վախեցեք ձեր թշնամիներից՝ **ՎևոՒԲ** 136.17:

ՎԱՐԱԳՈՒՅՐ

Այս բառը սուրբ գրքերում օգտագործվել է հետևյալ իմաստներով՝ (1) խորանի կամ տաճարի սենյակները բաժանող առագաստ. (2) Աստծո և մարդու միջև բաժանման խորհրդանիշ. (3) բարակ գործվածք

(քող), որը մարդիկ կրում են՝ իրենց երեսը կամ գլուխը ծածկելու համար կամ (4) Աստծուց տրված մոռացկոտություն, որը խոչընդոտում է մարդկանց հիշողությունը նախամահականացու գոյության վերաբերյալ:

Վարագույրը բաժանում է սրբությանց սրբությունը սուրբ տեղից՝ **ԵԼ**. ԻՋ.33: Քրիստոսի խաչելության ժամանակ ամրափակված վարագույրը պատռվեց՝ **Մատ**. ԻԷ.51 (Մար. ԺԵ.38, Ղուկ. ԻԳ.45): Հիմա հայելու մեջ օրինակով ենք տեսնում. այն ժամանակ դեմառդեմ՝ **Ա Կոր**. ԺԳ.12: Անհավատության խավար վարագույրը հեռացվում էր նրա մտքից՝ **Ալմա** 19.6: Հարեդի եղբորը հնարավոր չէր պահել վարագույրի միջով տեսնելուց՝ **Եթեր** 3.19 (Եթեր 12.19): Վարագույրը կպատռվի և դուք կտեսնեք ինձ՝ **ՎԼՈՒԻ** 67.10 (ՎԼՈՒԻ 38.8): Իմ տանարը ծածկող վարագույրը կվերցվի՝ **ՎԼՈՒԻ** 101.23: Վարագույրը հեռացվեց մեր մտքերից՝ **ՎԼՈՒԻ** 110.1: Խավարի վարագույրը պիտի ծածկի երկիրը՝ **Մովսես** 7.61:

ՎԱՐԳԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՆՏԵՐ: *Տես նաև* Կանոնական Գրքեր. Պատվիրանների Գիրք. Սմիթ Ջոզեֆ կրտսեր. Սուրբ գրքեր

Վերջին օրերի աստվածային հայտնությունների և ոգեշնչված հայտարարությունների մի ժողովածու: Տերը դրանք տվել է Ջոզեֆ Սմիթին և նրան հաջորդողներից շատերին՝ Աստծո արքայությունը վերջին օրերին երկրի վրա հաստատելու և կանոնակարգելու համար: «Վարդապետություն և Ուխտերը» Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու սուրբ գրքերի օրինակելի աշխատություններից մեկն է՝ «Աստվածաշնչի», «Մորմոնի Գրքի» և «Թանկագին Մարգարիտի» հետ մեկտեղ: Սակայն «Վարդապետություն և Ուխտերը» եզակի գիրք է, քանի որ այն հնադարյան փաստաթղթերի թարգմանությունն է. Տերը տվել է այդ հայտնություններն իր ընտրյալ մարգարեներին, արդի օրերում, որպեսզի վերականգնի իր արքայությունը: Հայտնություններում լսվում է Տեր Հիսուս Քրիստոսի մեղմ, բայց հաստատուն ձայնը (ՎԼՈՒԻ 18.35–36):

Մարգարե Ջոզեֆ Սմիթն ասել է, որ «Վարդապետություն և Ուխտերը» Եկեղե-

ցու հիմքն է այս վերջին օրերին, և տրվել է ի օգուտ աշխարհի (ՎԼՈՒԻ 70.Նախադրություն): Նրանում գտնվող հայտնությունները Տիրոջ երկրորդ գալստի համար ճանապարհի պատրաստելու աշխատանքի սկիզբն են՝ ի կատարումն աշխարհի սկզբից ի վեր բոլոր սուրբ մարգարեների խոսքերի:

ՎԵՀԱՅՈՒՄ. *Տես նաև* Քավել, Քավություն. Սելեստիալ փառք. Պսակ. Հավերժական կյանք. Մարդ, Մարդիկ – Մարդ՝ Երկնային Հոր նման դառնալու ներուժը

Երջանկության և փառքի ամենաբարձր վիճակը սելեստիալ արքայության մեջ.

Քո ներկայության մեջ ուրախության լիություն կա՝ **Մադ**. ԺՁ.11: Նրանք աստվածներ են, այսինքն՝ Աստծո որդիներ. ուստի, բոլոր բաները նրանցն են՝ **ՎԼՈՒԻ** 76.58–59: Սրբերը պիտի ստանան իրենց ժառանգությունը և հավասարեցվեն նրան՝ **ՎԼՈՒԻ** 88.107: Այդ հրեշտակները չմնացին իմ օրենքում. հետևաբար, նրանք մնում են առանձին և միայնակ՝ առանց վեհացման՝ **ՎԼՈՒԻ** 132.17: Վեհացում ձեռք բերելու համար տղամարդիկ և կանայք պետք է ամուսնանան Աստծո օրենքների համաձայն՝ **ՎԼՈՒԻ** 132.19–20: Նեղ է դուռը և անձուկ է ճանապարհը, որը տանում է դեպի վեհացում՝ **ՎԼՈՒԻ** 132.22–23: Արքահամը, Իսահակը և Հակոբը մտել են իրենց վեհացումը՝ **ՎԼՈՒԻ** 132.29, 37: Ես կնքում եմ քեզ վրա քո վեհացումը՝ **ՎԼՈՒԻ** 132.49:

ՎԵՃ: *Տես նաև* Հակառակություն

ՎԵՄ: *Տես նաև* Ավետարան. Հայտնություն. Հիսուս Քրիստոս

Փոխաբերաբար՝ Հիսուս Քրիստոսը և նրա ավետարանը, որոնք ամուրի հիմք են և հենարան (ՎԼՈՒԻ 11.24, 33.12–13): *Վեմը* կարող է վերաբերել նաև հայտնությանը, որի միջոցով Աստված մարդուն հայտնի է դարձնում իր ավետարանը (Մատ. ԺՁ.15–18):

Նա վեմն է. նրա գործը կատարյալ է՝ **Բ Օր**. ԼԲ.4: Տերն իմ վեմն է. ես նրան եմ հուսալու՝ **Բ Թագ**. ԻԲ.2–3: Մի քար կորվցի՝ առանց ձեռքի՝ **Դան**. Բ.34–35: Այն հաստատված էր ժայռի վրա՝ **Մատ**. Է.25 (3 Նեփի 14.25): Հիսուս Քրիստոսն

է անարգված քարը՝ **Գոր. Գ.10-11**: Այդ վեմը Քրիստոսն էր՝ **Ա Կոր. Ժ.1-4** (Ել. ԺԷ.6): Նա, ով կառուցված է վեմի վրա, ընդունում է ճշմարտությունը՝ **2 Նեփի 28.28**: Հրեաները կմերժեն քարը [Քրիստոսին], որի վրա նրանք կկարողանային կառուցել՝ **Հակոբ 4.15-17**: Մեր Քավչի վեմի վրա է, որ մենք պետք է կառուցեք մեր հիմքը՝ **Հել. 5.12**: Ով որ կառուցում է Քրիստոսի վարդապետությունների վրա, կառուցում է նրա վեմի վրա, և չի ընկնի, երբ ցրիեղեղները գան՝ **3 Նեփի 11.39-40** (Մատ. Է.24-27, 3 Նեփի 18.12-13): Իմաստունն իր տունը կառուցում է վեմի վրա՝ **3 Նեփի 14.24**: Եթե դուք կառուցված եք իմ վեմի վրա, երկիրն ու դժոխքը չեն կարող գերիշխել՝ **ՎևոՒ 6.34**: Նա, ով կառուցում է այդ վեմի վրա, երբեք չի ընկնի՝ **ՎևոՒ 50.44**: Ես Մեսիան եմ՝ Միոնի Թագավորը՝ Երկնքի Վեմը՝ **Մովսես 7.53**:

ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ ԱՎԵՏԱՐԱՆԻ:

Տե՛ս Ավետարանի վերականգնումը

ՎԵՐԱՀԱՍՏԱՏՈՒՄ,

ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ: *Տե՛ս նաև*

Ավետարանի վերականգնումը

Վերադարձն այն բաներին կամ այն պայմաններին, որոնք վերցվել կամ կորսվել էին:

Հոգին ու մարմինը պիտի վերամիավորվեն կատարյալ տեսքով՝ **Ալմա 11.43-44**: Վերականգնումը նրա համար է, որ չարին չարը վերականգնի, արդարին՝ արդարը՝ **Ալմա 41.10-15**: Մենք հավատում ենք Տառ Ցեղերի վերականգնմանը, և որ երկիրը կվերականգնի իր դրախտային փառքը՝ **ՀՀ 1.10** (ՎևոՒ 133.23-24):

ՎԵՐՋԻՆ ԴԱՏԱՍՏԱՆ: *Տե՛ս նաև*

Դատապարտել, Դատապարտություն, Դատել, Դատաստան.

Հիսուս Քրիստոս – Դատավոր

Վերջին դատաստանը, որը տեղի կունենա հարությունից հետո: Աստված, Հիսուս Քրիստոսի միջոցով, կդատի յուրաքանչյուր անձնավորության, որոշելու համար, թե հավերժական ինչ փառքի պիտի նա արժանանա: Այդ դատաստանը կհիմնվի նրա վրա, թե որքան է տվյալ անձնավորությունը հնազանդվել Աստծու պատվի-

րաններին՝ ներառյալ Հիսուս Քրիստոսի քավիչ գոհաբերությունն ընդունելը:

Հայրը ողջ դատաստանը տվել է Ռոդուն՝ **Հովհ. Ե.22**: Բոլորս պիտի կանգնենք Քրիստոսի առաջ՝ **Հռովմ. ԺԳ.10**: Մեռելները դատվեցին՝ ըստ այն բաների, որոնք գրված էին՝ **Հայտ. Ի.12** (ՎևոՒ 128.6-7): Քո բոլոր արածների համար դու կբերվես դատաստանի՝ **1 Նեփի 10.20**: Տասներկու Առաքյալները և Նեփիացի տասներկու աշակերտները կդատեն Իսրայելին՝ **1 Նեփի 12.9** (ՎևոՒ 29.12): Բոլորը պիտի հայտնվեն Սուրբի առաջին առաջ՝ **2 Նեփի 9.15**: Պատրաստեք ձեր հոգիներն այն փառավոր օրվա համար՝ **2 Նեփի 9.46**: Կարո՞ղ եք պատկերացնել ձեզ Աստծու դատարանի առաջ՝ **Ալմա 5.17-25**: Հիսուս Քրիստոսը կկանգնի՝ դատելու աշխարհը՝ **3 Նեփի 27.16**: Տերը վար պիտի գա անձեռով, որ դատի բոլոր անաստվածներին՝ **ՎևոՒ 133.2**:

ՎԵՐՋԻՆ ԸՆԹՐԻՔ: *Տե՛ս նաև*

Չատիկ. Հաղորդություն

Համաձայն Նոր Կտակարանի՝ վերջին ճաշը, որը Հիսուսը կերավ նախքան իր բանտարկությունն ու խաչելությունը (Ղուկ. ԻԲ.14-18): Նա և նրա Տասներկու Առաքյալները կերան այդ ընթրիքը Չատիկի ժամանակ (Մատ. ԻԶ.17-30, Մար. ԺԳ.12-18, Ղուկ. ԻԲ.7-13):

Փրկիչն օրհնեց հացը և զինի նու տվեց այն իր Առաքյալներին՝ **Մատ. ԻԶ.26-29** (Մար. ԺԳ.22-25, Ղուկ. ԻԲ.7-20): Հիսուսը լվաց Առաքյալների ոտքերը՝ **Հովհ. ԺԳ**: Նշվեց Հուդայի անունը՝ որպես Հիսուսի մատնիչի՝ **Հովհ. ԺԳ.21-26** (Մատ. ԻԶ.20-25):

ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐ, ԵՏԻՆ ՕՐԵՐ:

Տե՛ս նաև Ժամանակների նշաններ.

Հիսուս Քրիստոսի երկրորդ գալուստը

Ժամանակները, որոնցում մենք ապրում ենք: Տիրոջ երկրորդ գալստին նախորդող օրերը (կամ ժամանակի անտեսությունը):

Ես պատմում եմ ինչ որ պատահելու է ձեզ վերջին օրերում՝ **ԾՃ. ԽԹ.1**: Քավիչը վերջին օրը կանգնելու է երկրի վրա՝ **Հոր**

ԺԹ.25: Վերջին օրերին Տիրոջ տունը կհաստատվի՝ **Ես. Բ.2:** Ետին օրերում չար ժամանակներ կգան՝ **Բ Տիմ. Գ.1-7:** Ետին օրերում ծաղր անողները կուրանան Երկրորդ Գալուստը՝ **Բ Պետ. Գ.3-7:** Ես մարգարեանում եմ ձեզ վերջին օրերի վերաբերյալ՝ **2 Նեփի 26.14-30:** Այսպես պիտի կոչվի իմ եկեղեցին վերջին օրերին, այսինքն՝ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցի՝ **ՎևոՒ 115.4:** Քրիստոսը կգա վերջին օրերին՝ **Մովսես 7.60:**

ՎԵՐԱՏԻՆ ՆՆՎԱԾ, ԱՍԾՈՒՅ

ՆՆՎԱԾ: *Տե՛ս նաև* Աստծո որդիներն ու դուստրերը. Բնական մարդ. Դարձի գալ, Նորադարձ. Ծնված. Սկրտություն, Սկրտել. Քրիստոսի զավակները

Տիրոջ Հոգու ներգործությամբ մարդու սրտում կատարված այնպիսի գորեղ փոփոխություն, որի հետևանքով նա այլևս չի ցանկանում չարիք գործել, այլ ավելի շուտ ցանկանում է փնտրել Աստծո բաները:

Նոր հոգի պիտի դնեմ ձեր ներսում՝ **Եզեկ. ԺԱ.19** (Եզեկ. ԺԸ.31, ԼԶ.26): Նրանք, ովքեր հավատացին Քրիստոսի անվանը, ծնվեցին ոչ արյունից, այլ Աստծուց՝ **Հովհ. Ա.12-13:** Եթե մեկը ջրից և Հոգուց չծնվի, չի կարող Աստծո արքայությունը մտնել **Հովհ. Գ.3-7:** Աստծո խոսքով մենք կարող ենք վերստին ծնվել՝ **Ա Պետ. Ա.3-23:** Ամեն ով որ ծնվում է Աստծուց, չի շարունակում մեղքի մեջ՝ **ԶԱԹ՝ Ա Հովհ. Գ.9:** Որովհետև ամեն ով որ Աստծուց է ծնված, հաղթում է աշխարհին՝ **Ա Հովհ. Ե.4:** Նրանք, ովքեր ծնվում են Քրիստոսից, ուխտ են անում Աստծո հետ՝ **Մոսիա 3.19, 5.2-7:** Բոլոր մարդիկ պետք է վերստին ծնվեն. այո՛, Աստծուց ծնվեն՝ **Մոսիա 27.25-26** (Ալմա 5.49): Ծնվե՞լ եք դուք Աստծուց հոգեպես՝ **Ալմա 5.12-19:** Եթե դուք վերստին չծնվեք, դուք չեք կարող ժառանգել երկնքի արքայությունը՝ **Ալմա 7.14:** Ովքեր որ հավատան իմ խոսքերին, նրանք կծնվեն ինձանից, այսինքն՝ ջրից և Հոգուց՝ **ՎևոՒ 5.16:** Դուք պետք է վերստին ծնվեք երկնքի արքայության մեջ՝ **Մովսես 6.59:**

ՎԻՐԱՎՈՐԵԼ

Նեղացնել կամ վնաս հասցնել. մաս ջղայնացնել կամ վրդովել:

Վիրավորված եղբորը գրավելն ավելի դժվար է, քան ամուր քաղաքը՝ **Առակ. ԺԸ.19:** Եթե քո եղբայրը կամ քույրը մեղանչի քո դեմ, և խոստովանի, դու պիտի հաշտվես՝ **ՎևոՒ 42.88:** Ոչնչով մարդ չի վիրավորում Աստծուն, բացի նրանցից, ովքեր չեն խոստովանում նրա ձեռքը և չեն հնազանդվում նրա պատվիրաններին՝ **ՎևոՒ 59.21:**

ՎԻԼՅԱՄՍ ՖԻՐԳԵՐԻԿ Գ.

Վերականգնված Եկեղեցու վաղ դեկավարներին, որը որոջ ժամանակ ծառայեց Բարձրագույն Քահանայության Նախագահությունում՝ որպես խորհրդակալ (ՎևոՒ 81, 90.6, 19, 102.3):

ՎԻՃԱԿ

Ընտրելու կամ դուրս բողոնելու ձև, ընտրության մի քանի տարբերակից, որը հաճախ արվում է թրթի կամ փայտի մի կտորը մի քանիսի միջից հանելով: Դա կոչվում է վիճակ գցել:

Նրանք բաժանեցին նրա հանդերձները՝ վիճակ գցելով՝ **Մատ. ԻԷ.35** (Մաթ. ԻԲ.18, Մար. ԺԵ.24, Դուկ. ԻԳ.34, Հովհ. ԺԹ.24): Նրանց վրա վիճակ գցեցին, և վիճակն ընկավ Մատաթիայի վրա՝ **Գոր. Ա.23-26:** Մենք վիճակ գցեցինք, թե մեզանից ով պետք է գնար ներս՝ Լաբանի տուն՝ **1 Նեփի 3.11:**

ՎԿԱ: *Տե՛ս նաև* Վկայություն

Վկան այն մարդն է, ով պնդում կամ հիմնավորում է, որ տվյալ բանը ճշմարիտ է՝ հիմնվելով սեփական իմացության վրա. այսինքն՝ մեկը, ով վկայություն է բերում:

Դուք կլինեք իմ վկաները՝ **Գոր. Ա.8:** Դուք կամենում եք կանգնել, որպես Աստծո վկաներ բոլոր ժամանակներում՝ **Մոսիա 18.8-9:** Վկաների օրենքը. երկու կամ երեք վկաների բերանով ամեն խոսք հաստատ կլինի՝ **ՎևոՒ 6.28** (Բ Օր. ԺԷ.6, Մատ. ԺԸ.16, Բ Կոր. ԺԳ.1, Եթեր 5.4, ՎևոՒ 128.3): Ես ձեզ կարգել եմ, որ Առաքյալներ և հատուկ վկաներ լինեք իմ անվան համար՝ **ՎևոՒ 27.12** (ՎևոՒ 107.23): Յոթանասուներ կանչված են, որ հատուկ վկաներ լինեն հեթանոսների համար և ողջ աշխարհում՝ **ՎևոՒ 107.25:** Թող

լինի մի արծանագրող, և թող նա ակա-
նատես լինի ձեր մկրտությունների՝
ՎԼՈՒ 127.6 (ՎԼՈՒ 128.2-4):

ՎԿԱՅԵԼ: *Տե՛ս նաև* Վկայություն

Վկայություն բերել Սուրբ Հոգու գորու-
թյամբ. ճշմարտության վերաբերյալ
հանդիսավոր հայտարարություն անել՝
հիմնված անձնական գիտելիքի կամ հա-
վատքի վրա:

Մխիթարիչը կվկայի իմ մասին՝ **Հովհ.**
ԺԵ.26: Նա մեզ պատվիրել է քարոզել և
վկայել՝ **Գոր. Ժ.42:** Երեք վկաներ կվկա-
յեն ճշմարտության մասին՝ **2 Նեփի** 27.12:
Սուրբ Հոգու գորությունը տանում է այն
մինչև մարդկանց զավակների սրտերը՝
2 Նեփի 33.1: Սուրբ գրքերը վկայում են
Քրիստոսի մասին՝ **Հակոբ** 7.10-11 (Հովհ.
Ե.39): Վկայում են ձեզ, որ ես գիտեմ, որ
այս բաները, որոնց մասին խոսել են,
ճշմարիտ են՝ **Ալմա** 5.45 (Ալմա 34.8):
Դուք պիտի վկայեք դրանց մասին Աստ-
ծո գորությանը՝ **ՎԼՈՒ** 173-5: Այն, ինչ
Հոգին վկայում է ձեզ, դուք պետք է անեք՝
ՎԼՈՒ 46.7: Ես ուղարկել էի ձեզ՝ վկայե-
լու և զգուշացնելու՝ **ՎԼՈՒ** 88.81:

ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ: *Տե՛ս նաև* Սուրբ
Հոգի. Վկա. Վկայել

Սուրբ Հոգու միջոցով տրված գիտելիք
և հոգևոր հաստատում: Վկայությունը
կարող է լինել նաև պաշտոնական կամ
իրավական հայտարարություն կամ պըն-
դում այն մասին, ինչը, ըստ մարդու
ըմբռնման, ճշմարիտ է (ՎԼՈՒ 102.26):

Սուտ վկայություն մի տուր՝ **Ել.** Ի.16:
Գիտեմ, որ իմ քավիչն ապրում է՝ **Հոր**
ԺԵ.25-26: Ավետարանը ողջ աշխար-
հում կքարոզվի բոլոր ազգերին վկայու-
թյուն լինելու համար՝ **Մատ.** ԻԳ.14
(ՋՍ-Մ 1.31): Ինքը Հոգին վկայում է մեր
հոգիներին՝ **Հռովմ.** Ը.16 (Ա Հովհ. Ե.6):
Ամբ մի համարիք մեր Տիրոջ վկայությու-
նը՝ **Բ Տիմ.** Ա.8: Հիսուսի վկայությունը
մարգարեության հոգին է՝ **Հայտ.** ԺԹ.10:
Կանգնեք որպես Աստծո վկաներ բոլոր
ժամանակներում՝ **Մոսիա** 18.9: Չկար
մարդկանց ուղղելու ուրիշ ճանապարհ,
բացի նրանց դեմ պարզ վկայությամբ
հակադրվելուց՝ **Ալմա** 4.19-20: Ես ունեմ
բոլոր բաները, որպես վկայություն, որ

այս բաները ճիշտ են՝ **Ալմա** 30.41-44:
Մենք ճաշակում ենք հաղորդությունից,
որպես վկայություն Հոր առաջ, որ մենք
միշտ կպահենք պատվիրանները և միշտ
կիյնենք Հիսուսին՝ **3 Նեփի** 18.10-11
(Մոր. 4, 5, ՎԼՈՒ 20.77-79): Նախքան
ձեր հավատքի փորձությունը, դուք վկա-
յություն չեք ստանում՝ **Եթեր** 12.6: Խա-
ղաղություն չխոսեցի՞ք ես քո մտքին՝ այդ
հարցի վերաբերյալ: Ավելի մեծ ի՞նչ
վկայություն կարող ես դու ունենալ, քան
Աստծուց՝ **ՎԼՈՒ** 6.22-23: Եվ արդ, բազ-
մաթիվ վկայություններից հետո, որ տրվել
են նրա մասին, սա է վկայությունը, որ մենք
տալիս ենք նրա մասին՝ **ՎԼՈՒ** 76.22-24:
Ես ուղարկել էի ձեզ՝ վկայելու և զգուշաց-
նելու մարդկանց՝ **ՎԼՈՒ** 88.81-82: Կտա-
կարարներն այժմ մահացել են, և նրանց
կտակն ուժի մեջ է՝ **ՎԼՈՒ** 135.4-5: Ենով-
քը տեսավ հրեշտակների, որոնք վկայում
էին Հոր և Որդու մասին՝ **Մովսես** 7.27:
Չնայած ինձ ատում և հալածում էին այն
բանի համար, որ ասում էի, թե տեսիլք եմ
տեսել, այնուամենայնիվ, դա ճշմարիտ
էր՝ **ՋՍ-Պ** 1.24-25:

ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆ: *Տե՛ս նաև*
Ապավինել. Հավատ, Հավատալ.
Հավատք

Համոզվածություն, հավաստիություն, հույս
և հավատք ունենալ մեկի հանդեպ, հատ-
կապես Աստծո և Հիսուս Քրիստոսի
հանդեպ:

Լավ է Տիրոջն ապավինել, քան վստա-
հությունը մարդու վրա դնել՝ **Մադ.** ԾԺԸ.8:
Տերը կլինի քո հույսը՝ **Առակ.** Գ.26: Որ
երբ Քրիստոսը հայտնվի, մենք կարողա-
նանք վստահություն ունենալ՝ **Ա Հովհ.**
Բ.28: Ամբարիշտ Նեփիացիները կորցրել
էին իրենց զավակների վստահությունը՝
Հակոբ 2.35: Այն ժամանակ քո վստահու-
թյունը կամրապնդվի Աստծո ներկայու-
թյան մեջ՝ **ՎԼՈՒ** 121.45:

ՎՐԵԺԽՆԳՐՈՒԹՅՈՒՆ: *Տե՛ս նաև*
Թշամամք

Վնասի կամ վիրավորանքի համար վրեժ
լուծելը կամ հատուցելը:

Չեր Աստվածը գալիս է վրեժ առնելու՝
Ես. ԼԵ.4: Վրեժխնդրությունն իմն է. ես
կհատուցեմ՝ **Հռովմ.** ԺԲ.19 (Մորմ. 3.15,

8.20): Վրեժխնդրության սուրբ կախված է ձեռ վրա՝ **Մորմ.** 8.40–41: Ես վրեժ կառնեմ ամբարիշտներից, քանզի նրանք չեն ասպաշխարհի՝ **ՎՆՈՒ** 29.17: Փրկիչը եկավ ամբարշտության և վրեժխնդրության օրերին՝ **Մովսես** 7.45–46:

ՎՈՒԳՐՈՒՖ ՎԻԼՖՈՐԳ: *Տե՛ս նաև*
Հոչակագիր. Պաշտոնական հայտարարություն–1

Եկեղեցու չորրորդ Նախագահը՝ Մարգարե Ջոզեֆ Սմիթի միջոցով ավետարանի վերականգնումից հետո: Նա ծնվել է 1807 թվականին և մահացել 1898-ին:

Կանչվեց լրացնելու Տասներկուսի Խորհրդում եղած տեղերից մեկը՝ **ՎՆՈՒ** 118.6: Այն ընտրյալ հոգիների մեջ էր, որոնք պահվել էին՝ առաջ գալու ժամանակների լրության մեջ՝ **ՎՆՈՒ** 138.53: Հայտնություն ստացավ՝ վերջ դնելու բազմակնությանը Եկեղեցում՝ **ՎՆՈՒ** ՊՆ–1:

ՏԱՂԱՆԳ: *Տե՛ս* Քանթար:

ՏԱՃԱՐ՝ ՏԻՐՈՋ ՏՈՒՆ: *Տե՛ս նաև*
Արարողություններ. Խորան.
Սրբությանց Սրբություն. Օժտում

Ուղիղ իմաստով՝ Տիրոջ տունը: Տերն իր ժողովրդին միշտ պատվիրել է տաճարներ կառուցել, սուրբ կառույցներ, որտեղ արժանավոր Սրբերն ավետարանի սրբազան ծեսեր և արարողություններ են կատարում իրենց համար և մահացածների համար: Տերն այցելում է իր տաճարները, և դրանք երկրպագության համար ամենասուրբ վայրերն են:

Մովսեսի և Իսրայելի զավակների կողմից կանգնեցված խորանը փոխադրելի տաճար էր: Իսրայելացիներն այն օգտագործում էին Եգիպտոսից դուրս գալուց հետո:

Ամենհայտնի տաճարը, որը նշվում է Աստվածաշնչում, Սողոմոնի կողմից Երուսաղեմում կառուցված տաճարն էր (Բ Մն. Բ–Ե): Այն կործանվեց Ք.ծ.ա. 600 թվականին, Բաբելոնացիների կողմից, և վերականգնվեց գրեթե հարյուր տարի անց Ջորաբաբելի կողմից (Եզր. Ա–Ձ): Տաճարի մի մասը Ք.ծ.ա. 37 թվականին այրվեց, իսկ հետագայում, Հերովդես թագավորը կրկին կառուցեց այն: Ք.ծ.հ.

70 թվականին Հռոմեացիներն ավերեցին տաճարը:

Մորմոնի Գրքում՝ Աստծո արդար հետևորդներին պատվիրվել էր տաճարներ կառուցել և երկրպագել նրանցում (2 Նեփի 5.16, Մոսիա 1.18, 3 Նեփի 11.1): Հավուր պատաշընի տաճար կառուցելը և օգտագործելը ճշմարիտ Եկեղեցու նշաններ են ցանկացած տնտեսության ժամանակ, ինչպես որ մեր օրերին է վերականգնված Եկեղեցում: Արդի տնտեսության ժամանակ Կիրթլենդի տաճարն առաջին տաճարն էր, որը կառուցվեց և նվիրաբերվեց Տիրոջը: Այդ ժամանակից ի վեր երկրագրմի վրա շատ երկրներում են տաճարներ նվիրագործվել:

Ո՞վ կկանգնի նրա սրբության տեղում՝ **Մաղ. ԻԳ.3–5:** Եկեք վեր գնանք Հակոբի Աստծո տունը՝ **Ես. Բ.2–3** (Միքիա Գ.1–2, 2 Նեփի 12.2–3): Տերը հանկարծակի գալու է իր տաճարը՝ **Մաղ. Գ.1** (3 Նեփի 24.1, ՎՆՈՒ 36.8, 42.36): Հիսուսը մաքրեց տաճարը՝ **Մատ. ԻԱ.12–16** (Մար. ԺԱ.15–18, Գուկ. ԺԹ.45–48): Սրբերին պատվիրվեց Միասուրիում տաճար կառուցել՝ **ՎՆՈՒ** 57.3 (ՎՆՈՒ 84.3–5): Աստծո տուն հիմներ՝ **ՎՆՈՒ** 88.119 (ՎՆՈՒ 109.8): Տերը խրատեց Սրբերին տաճարի կառուցումն ընդհատելու համար՝ **ՎՆՈՒ** 95.1–12: Ես չեմ մտնի անսուրբ տաճարները՝ **ՎՆՈՒ** 97.15–17: Ես ընդունել եմ այս տունը, և իմ անունը կլինի այստեղ՝ **ՎՆՈՒ** 110.7–8: Տիրոջ ժողովրդին միշտ պատվիրվել է տուն կառուցել նրա անվան համար՝ **ՎՆՈՒ** 124.39: Մեծ աշխատանք պիտի արվի տաճարներում, այդ թվում՝ ծնողների հետ երեխաներին կնքելը՝ **ՎՆՈՒ** 138.47–48: Վերջին օրերի մեծ աշխատանքը ներառում է տաճարներ կառուցելը՝ **ՎՆՈՒ** 138.53–54:

ՏԱՃԱՐԱՅԻՆ ԱՄՈՒՄՆՈՒԹՅՈՒՆ:
Տե՛ս Ամուսնություն, Ամուսնանալ

ՏԱՊԱՆ: *Տե՛ս նաև* Ծիածան. Նոյ՝ աստվածաշնչյան հայրապետ. Նոյի ժամանակի ջրհեղեղը.

Հին Կտակարանում՝ այն նավը, որը կառուցել էր Նոյը, մեծ ջրհեղեղի ժամանակ կյանքը պահպանելու համար:

Քեզ համար խիժաբեր փայտից մի տա-

պան շինիր՝ **ԾՃ. 2.14:** Տապանն Արարատ ասարի վրա նստեց՝ **ԾՃ. Ը.4:** Հարեղացիների բեռնանավերը Նոյի տապանի պես անջրանցիկ էին՝ **Եբեք 6.7:**

ՏԱՍԱՆՈՐԳ, ՏԱՍԱՆՈՐԳԵԼ: *Տե՛ս նաև Ընծա. Փող*

Մարդու տարեկան եկամտի տասներորդ մասը, որը տրվում է Տիրոջը Եկեղեցու միջոցով: Տասանորդի հիմնադրամներն օգտագործվում են՝ եկեղեցիներ և տաճարներ կառուցելու, միախմբակաճ աշխատանքին աջակցելու և Աստծո արքայությունը երկրի վրա կառուցելու համար:

Աբրահամն իր ամեն ունեցվածքից տասանորդ տվեց Մեղքիստեղեկին՝ **ԾՃ. ԺԳ.18-20** (Եբք. Է.1-2, 9, Ալմա 13.15): Բողոք տասանորդը Տիրոջն է. այն սուրբ է Տիրոջ համար՝ **Ղև. ԻԷ.30-34:** Ամեն եկամտից անպատճառ տասանորդ տուր՝ **Բ Օր. ԺԳ.22, 28:** Նրանք առատորեն բերեցին ամեն բանի տասանորդը՝ **Բ Մճ. ԼԱ.5:** Մի՞թե մարդ կկողոպտի Աստծուն: Ի՞նչ բանում ենք բեզ կողոպտում՝ Տասանորդում և ընծայում՝ **Մաղ. Գ.8-11** (3 Նեփի 24.8-11): Նա, ով տասանորդ է վճարում, չի այրվի նրա գալստի ժամանակ՝ **ՎևոՒ 64.23** (ՎևոՒ 85.3): Տիրոջ տունը կկառուցվի նրա ժողովրդի տասանորդով՝ **ՎևոՒ 97.11-12:** Տերը հայտնել է տասանորդի օրենքը՝ **ՎևոՒ 119:** Տասանորդը պետք է տնօրինվի խորհրդով՝ **ՎևոՒ 120:**

ՏԱՍԸ ՊԱՏՎԻՐԱՆՆԵՐԸ: *Տե՛ս Պատվիրաններ՝ Տասը*

ՏԱՍԸ ՑԵՂԵՐԸ: *Տե՛ս Իսրայել*

ՏԱՄՆԵՐԿՈՒ ՑԵՂԵՐՆ
ԻՍՐԱՅԵԼԻ: *Տե՛ս Իսրայել – Իսրայելի տասներկու ցեղերը*

ՏԱՄՆԵՐԿՈՒՄԻ ԽՈՐՀՈՒՐԳ: *Տե՛ս Առաքյալ*

ՏԱՄՆԵՐԿՈՒՄԻ ՔՎՈՐՈՒՄ: *Տե՛ս Առաքյալ*

ՏԵՍԱՆՈՂ: *Տե՛ս նաև Մարգարե. Ուրիմ ու Թումիմ*

Անձ, որն Աստծո կողմից լիազորված է՝ հոգևոր աչքերով տեսնելու այնպիսի

բաներ, որոնք Աստված բացքրել է աշխարհից (Մովսես 6.35-38): Նա հայտնող է և մարգարե (Մոսիա 8.13-16): Մորմոնի Գրքում՝ Ամոնն ուսուցանել է, որ միայն տեսանող կարող է օգտագործել հաստիկ մեկնիչները, կամ Ուրիմն ու Թումիմը (Մոսիա 8.13, 28.16): Տեսանող գիտի անցյալը, ներկան և ապագան: Հնում մարգարեներին հաճախ անվանում էին տեսանող (Ա Թագ. Թ.9, Բ Թագ. ԻԳ.11):

Ջոզեֆ Սմիթը վերջին օրերի մեծ տեսանողն է եղել (ՎևոՒ 21.1, 135.3): Բացի այդ, Առաջին Նախագահությունը և Տասներկուսի Խորհուրդը ևս հաստատվում են, որպես մարգարեներ, տեսանողներ և հայտնողներ:

Դա մի ապստամբ ժողովուրդ է, որ տեսանողներին ասում է՝ Մի տեսե՛ք. և մարգարեներին՝ Մի մարգարեանա՛ք՝ **Ես. Լ.9-10:** Զո երանքի պտղից ես մի ընտրյալ տեսանող կբարձրացնե՛մ՝ **2 Նեփի 3.6-15:** Սա է իմաստությունը. այո՛, լինել տեսանող, հայտնող, թարգմանիչ և մարգարե՝ **ՎևոՒ 107.92:** Տերը Հայրում Սմիթին նշանակեց, որ մարգարե և տեսանող և հայտնող լինի Եկեղեցու համար՝ **ՎևոՒ 124.91-94:**

ՏԵՄԻԼՔ: *Տե՛ս նաև Առաջին տեսիլք. Երազ. Հայտնություն*

Տեսողական հայտնություն, Մուրք Հոգու գործընթաց միջոցով, որևէ իրադարձության, անձի կամ իրի վերաբերյալ:

Կարևոր տեսիլքների օրինակներ են՝ Եզեկիելի տեսիլքը վերջին օրերի վերաբերյալ (Եզեկ. ԼԷ-ԼԹ), Ստեփանոսի տեսիլքը՝ Հիսուսը կանգնած Աստծո աջ կողմում (Գոր. Է.55), Հովհաննեսի հայտնությունը վերջին օրերի վերաբերյալ (Հայտ. Գ-ԻԱ), Լեքիի և Նեփիի տեսիլքը կյանքի ծառի վերաբերյալ (1 Նեփի 8, 10-14), Ալմա կրտսերի Տիրոջ հրեշտակին տեսնելը (Մոսիա 27), Հարեղի եղբոր տեսիլքը երկրի բոլոր բնակիչների վերաբերյալ (Եբեք 3.25), փառքերի տեսիլքը (ՎևոՒ 76), Ջոզեֆ Սմիթին և Օլիվեր Քաուլդերիին տրված տեսիլքները Կիրթլենդի տաճարում (ՎևոՒ 110), Ջոզեֆ Ֆ. Սմիթի տեսիլքը մահացածների փրկագրման վերաբերյալ (ՎևոՒ 138), Մովսեսի տեսիլքն Աստծո և նրա ստեղծագործությունների վերաբերյալ (Մովսես 1),

Ենովքի տեսիլքն Աստծո մասին (Մովսես 6-7), Ջոզեֆ Սմիթի առաջին տեսիլքը (ՋՍ-Պ 1):

Որտեղ տեսիլք չկա, այնտեղ ժողովուրդը կործանվում է՝ **Առակ. ԻԹ.18:** Երիտասարդները տեսիլքներ պիտի տեսնեն՝ **Հովել Բ.28** (Գոր. Բ.17): Նա տեսիլքներով գիտելիք է տվել ինձ՝ **2 Նեփի 4.23:** Նա Աստծո ներկայությունից ինձ մտաուղարկված սուրհանդակ էր՝ **ՋՄ-Պ 1.33:** Մենք հավատում ենք մարգարեություններին, հայանություններին, տեսիլքներին՝ **ՀՀ 1.7:**

ՏԵՐ: *Տէս նաև* Աստված, Աստվածություն. Հիսուս Քրիստոս

Խորը հարգանքի և պատվի տիտղոս Հայր Աստծո և Փրկիչ Հիսուս Քրիստոսի համար: Այդ տիտղոսը վերաբերում է նրանց դիրքին՝ որպես գերագույն, սիրող տերեր իրենց ստեղծածների վրա:

Տիրոջ համար դժվար բան չկա՝ **ԾՆ. ԺԸ.14:** Տերը խոսեց Մովսեսի հետ դեմառդեմ՝ **Ել. ԼԳ.11:** Միիբր Տիրոջը՝ քո Աստուն՝ **Բ Օր. 2.5** (Մառ. ԻԲ.37, Մար. ԺԲ.30): Բայց ես և իմ տունը Տիրոջն ենք պաշտելու՝ **Հես. ԻԳ.15:** Տերն է իմ հովիվը՝ **Մաղ. ԻԳ.1:** Տերը գորավոր է և ուժեղ. պատերազմի մեջ ուժեղ՝ **Մաղ. ԻԳ.8:** Տեր հեռվան է իմ գորությունը՝ **Ես. ԺԲ.2** (2 Նեփի 22.2): Ես՝ Տերն եմ քո Փրկիչը և քո Քավիչը՝ **Ես. Կ.16:** Տիրոջը՝ քո Աստծուն երկրպագիր՝ **Մառ. Գ.10** (Ղուկ. Գ.8): Տերն ինչ մեծ բաներ արեց քեզ՝ **Մար. Ե.19:** Մեկ Տեր կա՝ Հիսուս Քրիստոսը՝ **Ա Կոր. Ը.6:** Մեկ Տեր կա, մեկ հավատ, մեկ մկրտություն՝ **Եփես. Գ.5:** Ինքը՝ Տերը, վայր կգա երկնքը՝ **Ա Թես. Գ.15:** Ես կզնամ և կանեմ այն բաները, որոնք պատվիրել է Տերը՝ **1 Նեփի 3.7:** Տերն արդարությամբ կդատի արքատներին՝ **2 Նեփի 30.9:** Տեր Աստվածը՝ Աբրահամի Աստվածը, Իսրայելացիներին ազատեց ճորտությունից՝ **Ալմս 29.11:** Ոչինչ չի կարող մարդկանց փրկել, բացի ապաշխարությունից և հավատքից առ Տերը՝ **Հել. 13.6** (Մոսիա 3.12): Լսեք ձեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի խոսքերը՝ **ՎևՈՒ 15.1:** Միշտ փնտրեք Տիրոջ երեսը՝ **ՎևՈՒ 101.38:** Երկրորդ գալստի ժամանակ Տիրոջ զգեստները կարմիր կլինեն՝ **ՎևՈՒ**

133.48 (Ես. ԿԳ.1-4): Աբրահամը խոսեց Տիրոջ հետ դեմառդեմ՝ **Աբր. 3.11:** Մենք հավատում ենք, որ ավետարանի առաջին սկզբունքը հավատքն է առ Տեր Հիսուս Քրիստոս՝ **ՀՀ 1.4:**

ՏԻՄՈԹԵՈՍ: *Տէս նաև* Պողոս

Նոր Կտակարանում՝ Պողոսի միսիոներ գործընկերը նրա ծառայության ընթացքում (Գոր. ԺՁ.1-3, Բ Տիմ. Ա.1-5). հույն հոր և հրեա մոր որդի. նա իր ծնողների հետ ապրում էր Լյուստրա քաղաքում:

Պողոսը Տիմոթեոսին անվանում էր իր «որդին հավատքի մեջ» (Ա Տիմ. Ա.2, 18, Բ Տիմ. Ա.2): Տիմոթեոսը, հավանաբար, Պողոսի ամենավատահաված և շնորհալի օգնականն էր (Փիլ. Բ.19-23):

ՏԻՄՈԹԵՈՍ ԹՌՌՎԹ ԱՌ: *Տէս նաև* Պողոս. Պողոսի Թղթերը. Տիմոթեոս

Երկու գիրք Նոր Կտակարանում. Սկզբում երկուսն էլ նամակներ էին, որոնք Պողոսը գրել էր Տիմոթեոսին:

Ա Տիմոթեոս. Առաջին բոլորը Պողոսը գրել է իր առաջին բանտարկությունից հետո: Նա Տիմոթեոսին թողել էր Եփեսոսում, հետագայում վերադառնալու մտադրությամբ (Ա Տիմ. Գ.14): Մակայն Պողոսը զգացել էր, որ ինքը հնարավոր է ուշանա, ուստի գրեց Տիմոթեոսին, հավանաբար, Մակեդոնիայից (Ա Տիմ. Ա.3), որպեսզի խորհուրդներ տա և քաջալերի նրան՝ իր պարտականությունները կատարելիս:

Ա գլխում Պողոսի ողջույններն են և նաև նրա հրահանգներն այն խենթ մտահայեցողությունների մասին, որոնք ներքափանցում էին Եկեղեցի: Բ-Գ գլուխներն ուղղություններ են տալիս հասարակական երկրպագության մասին և ծառայողների հատկանիշների և վարքի մասին: Դ-Ե գլուխներում նկարագրվում է վերջին օրերի ուրացությունը և Տիմոթեոսին խորհուրդ է տրվում, թե ինչպես ծառայի նրանց, ում առաջնորդում է: Չ գլուխը հավատարմություն ցուցաբերելու և աշխարհիկ հարստություններից խուսափելու հորդոր է:

Բ Տիմոթեոս. Երկրորդ նամակը Պողոսը գրել է իր երկրորդ բանտարկության ժամանակ, իր նահատակությունից ոչ շատ առաջ: Դ-րանք Առաքյալի վերջին խոսքերն են և ցույց են տալիս այն զարմա-

նահրաշ քաջությունն ու վստահությունը, որով նա դիմավորում էր մահը:

Ա գլխում Պողոսի ողջույններն ու պատգամն են Տիմոթեոսին: Բ-Գ գլուխներում տրվում են տարբեր զգուշացումներ և ուղղություններ՝ կոչ անելով դիմակայել գալիք վտանգները: Դ գլուխը պատգամ է Պողոսի ընկերներին, որտեղ խորհուրդ է տրվում, թե ինչպես վարվել ուրացածների հետ:

ՏԻՏՈՍ: Տէ՛ս նաև Պողոս. Պողոսի Թղթերը. Տիտոս՝ թուղթ առ

Նոր Կտակարանում՝ վստահելի Հույն նորադարձ, որը Պողոսի հետ ճանփորդեց դեպի Երուսաղեմ, իսկ հետագայում դարձավ միախոներ (Գաղ. Բ.1-4, Բ Տիմ. Դ.10): Տիտոսը Պողոսի առաջին թուղթը հասցրեց Կորնթոսի Սրբերին (Բ Կոր. է.5-8, 13-15):

ՏԻՏՈՍ ԹՈՒՂԹ ԱՆ: Տէ՛ս նաև Պողոս. Պողոսի Թղթերը. Տիտոս

Մինչ Պողոսը ժամանակավորապես ազատվել էր Հռոմեական բանտարկությունից, նա նամակ գրեց Տիտոսին, որը Կրետեում էր: Նամակում հիմնականում խոսվում է Եկեղեցու ներքին կարգ ու կանոնի և կազմակերպության մասին:

Ա գլխում Պողոսի ողջույններն են, ինչպես նաև հրահանգներն և ընդհանուր որակավորումներ եպիսկոպոսների համար: Բ-Գ գլուխներն ընդհանուր ուսմունքներ են և Տիտոսին ուղղված անձնական պատգամներ, թե ինչպես վարվել Կրետեի Եկեղեցու տարբեր խմբերի հետ: Պողոսը Սրբերին խրախուսել է հաղթահարել ինքնահաճությունը, խոհեմ ու հավատարիմ լինել և բարի գործեր կատարել:

ՏԻՐՈՋ ԱՂՈԹՔԸ: Տէ՛ս նաև Աղոթք

Իր աշակերտների համար ասված Փրկչի աղոթքը, որն օրինակ է ծառայում բոլոր աղոթքների համար (Մատ. 2.9-13, 3 Նեփի 13.9-13):

ՏԻՐՈՋ ԱՅԳԻՆ: Տէ՛ս նաև Արտ.

Իսրայել

Խորհրդանիշ՝ հոգևոր աշխատանքների ասպարեզի համար: Սուրբ գրքերում Տիրոջ այգին ակնարկելիս, սովորաբար, նկատի ունի Իսրայելի տունը կամ Աստ-

ծո արքայությունը երկրի վրա: Երբեմն այն ակնարկում է ընդհանրապես աշխարհի մարդկանց:

Չորաց Տիրոջ այգին Իսրայելի տունն է՝ **Տս. Ե.7** (2 Նեփի 15.7): Հիսուսը պատմեց այգու մշակների առակը՝ **Մատ. Ի.1-16**: Իսրայելը նման է ընտանի ձիթենուն, որը սնուցվում է Տիրոջ այգում՝ **Հակոբ 5**: Տիրոջ ծառաները վերջին անգամ կետեն նրա այգին՝ **Հակոբ 6**: Տերը կօրհնի բոլոր նրանց, ովքեր տքնում են իր այգում՝ **ՎևոՒ 21.9** (Ալմա 28.14): Աշխատեք իմ այգում վերջին անգամ՝ **ՎևոՒ 43.28**:

ՏԻՐՈՋ ԸՆԹՐԻՔԸ: Տէ՛ս Հաղորդություն

ՏԻՐՈՋ ՏՈՒՆԸ: Տէ՛ս Տաճար՝ Տիրոջ տուն

ՏԻՐՈՋ ՕՐԸ: Տէ՛ս Հանգստության օր. Հիսուս Քրիստոսի երկրորդ գալուստը. Վերջին դատաստան

ՏՆՏԵՄ: Տէ՛ս նաև Տնտեսություն

Անձ, որը հոգ է տանում մեկ ուրիշի գործերի կամ ունեցվածքի համար: Բոլոր բաները երկրի վրա պատկանում են Տիրոջը. մենք նրա տնտեսներն ենք:

Հիսուսը տվեց անիրավ տնտեսի առակը՝ **Ղուկ. Ժ.2.1-8**: Ով որ հավատարիմ տնտես լինի, կմննի իր Տիրոջ ուրախությունը՝ **ՎևոՒ 51.19**: Նա, ով հավատարիմ և իմաստուն տնտես է, պիտի ժառանգի բոլոր բաները՝ **ՎևոՒ 78.22**: Տերն ամեն մարդու պատասխանատու կդարձնի, որպես երկային օրհնությունների տնտես՝ **ՎևոՒ 104.11-17** (ՎևոՒ 42.32): Ջանասեր եղիլի, որպեսզի իմաստուն տնտես լինես՝ **ՎևոՒ 136.27**:

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ: Տէ՛ս նաև

Ավետարան. Ավետարանի վերականգնումը. Կանչ, Աստծո կողմից Կանչված, Կոչում. Տնտես. Քահանայություն. Քահանայության բանալիները

Ինչպես օգտագործված է սուրբ գրքերում, «տնտեսություն» բառն ունի երկու իմաստ. (1) Այն, ինչ Տերը մեր խնամքին է հանձնել, որպես տնտեսների: Մենք պատասխանատու ենք Տիրոջը, սակայն մենք կարող ենք

մեր տնտեսության համար հաշվետու լինել Աստծո լիազորված ներկայացուցիչներին: Երբ մենք ծառայության կանչ ենք ստանում Տիրոջից կամ նրա լիազորված ծառաներից, այդ տնտեսությունը կարող է ընդգրկել և՛ հոգևոր, և՛ նյութական գործեր (ՎևՈՒ 29.34): (2) Ավետարանի տնտեսություն: Դա մի ժամանակաշրջան է, որի ընթացքում Տերը երկրի վրա ունի առնվազն մեկ լիազորված ծառա, որը կրում է սուրբ քահանայության բանալիները:

Ադամը, Ենովքը, Նոյը, Աբրահամը, Մովսեսը, Հիսուս Քրիստոսը, Ջոզեֆ Սմիթը և այլոք, յուրաքանչյուրն սկսել է ավետարանի նոր տնտեսություն: Երբ Տերը տնտեսություն է կազմակերպում, ավետարանը կրկին հայտնի է դարձվում, որպեսզի այդ տնտեսության մարդիկ փրկության ծրագրի մասին գիտելիքի համար կախված չլինեն անցյալ տնտեսություններից: Արդի տնտեսությունը, որն սկսվել է Ջոզեֆ Սմիթից, հայտնի է որպես «ժամանակների լրության տնտեսություն»:

Որպես տնտես՝ մեր տնտեսությունը. Քիչ բաների վրա հավատարիմ էիր, ես քեզ շատ բաների վրա կառավարիչ կդնեմ՝ **Մատ.** ԻԵ.14–23: Ում որ շատ տրված է, նրանից շատ էլ պահանջվում է՝ **Ղուկ.** ԺԲ.48 (ՎևՈՒ 82.3): Ամեն մարդ պետք է հաշիվ ներկայացնի իր տնտեսության վերաբերյալ՝ **ՎևՈՒ** 72.3–5:

Ավետարանի տնտեսությունը. Երկնքի Աստվածը մի թագավորություն է հաստատել՝ **Դան.** Բ.44 (ՎևՈՒ 65): Վերջին օրերին ես իմ Հոգին կթափեմ ամեն մարմնի վրա՝ **Գոր.** Բ.17 (Հովել Բ.28): Երկինքը պետք է ընդունի Քրիստոսին, սինչև բոլոր բաները վերականգնելու ժամանակները՝ **Գոր.** Գ.21: Ժամանակների լրության տնտեսության ժամանակ Աստված ամեն ինչ կրովանդակի Քրիստոսում՝ **Եփես.** Ա.10: Ես կիմանեմ իմ եկեղեցին նրանց մեջ՝ **3 Նեփի** 21.22: Տերը հանձնել է իր արքայության բանալիները և ավետարանի տնտեսությունը՝ վերջին ժամանակների համար՝ **ՎևՈՒ** 27.13: Այս տնտեսության բանալիները հանձնվում են ձեր ձեռքը՝ **ՎևՈՒ** 110.12–16: Անցյալի տնտեսությունների բոլոր բանալիները վերականգնվել են ժամանակների լրության տնտեսության ժամանակ՝ **ՎևՈՒ** 128.18–21:

ՏՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ. *Տե՛ս նաև*

Արարողություններ – Փոխարինող արարողություններ. Ընտանիք. Հիշատակի Գիրք. Մկրտություն, Մկրտել – Մկրտություն Մահացածների համար. Փրկություն. Փրկություն մահացածների համար

Գրառում, որը ցույց է տալիս ընտանիքի սերունդների հաջորդական ծագումը: Տոհմաբանությունը սուր զրքերում հատկապես կարևոր է եղել այն դեպքերում, երբ քահանայության պաշտոններն ու որոշակի օրհնությունները սահմանափակված են եղել՝ տրվելով որոշակի ընտանիքի (Ճն. Ե, Ժ, ԻԵ, ԽՉ, Ա Մն. Ա–Թ, Եզր. Բ.61–62, Նեեմ. Է.63–64, Մատ. Ա.1–17, Ղուկ. Գ.23–38, 1 Նեփի 3.1–4, 5.14–19, Հարոմ 1.1–2): Վերականգնված Եկեղեցում այսօր Եկեղեցու անդամները շարունակում են հետազոտել իրենց ընտանիքի ծագումնաբանությունը, մասնակիորեն, որպեսզի պատշաճ ձևով պարզեն մահացած նախնիների ինքնությունը, որպեսզի կարողանան փրկության արարողություններ կատարել իրենց նախնիների համար: Այդ արարողություններն ուժ են ստանում այն մահացած անձանց համար, ովքեր ընդունում են Հիսուս Քրիստոսի ավետարանը հոգիների աշխարհում (ՎևՈՒ 127, 128):

ՏԲՏՆՋԱԼ: *Տե՛ս նաև*

Ապստամբություն

Մրմնջալ և դժգոհել Աստծո նպատակների, ծրագրերի և ծառաների դեմ:

Ժողովուրդը տրտնջաց Մովսեսի դեմ՝ **Ել.** ԺԵ.23–ԺՋ.3: Հրեաները տրտնջում էին Հիսուսից՝ **Հովհ.** Զ.41: Լամանն ու Լեմուելը տրտնջում էին շատ բաներում՝ **1 Նեփի** 2.11–12 (1 Նեփի 3.31, 17.17): Մի տրտնջա այն բաների պատճառով, որոնք դու չես տեսել՝ **ՎևՈՒ** 25.4:

ՏՈՒՆ: *Տե՛ս նաև* Ընտանիք

Տունը պետք է լինի ավետարանի և ընտանեկան միջոցառումների կենտրոն:

Տղամարդը պետք է իր տանն ազատ լինի, որ ուրախացնի իր կնոջը՝ **Բ Օր.** ԻԴ.5: Նրան ուղարկեց նրա տուն՝ **Մաթ.** Ը.26: Թող տանը երեխաները սովորեն որդիական հարգանք ցուցաբերել՝ **Ա Տիմ.** Ե.4:

Եղեք խոհեն, մաքրաբարո, տնարար՝ **Տիտու** Բ.5: Գնացեք ձեր տները և խորհեք այն բաների վրա, որոնք ես ասացի՝ **3 Նեփի** 17.2–3: Ես նրանց համոզեցի, որ կռվեն իրենց կանանց և իրենց երեխաների, իրենց տների և իրենց օջախների համար՝ **Մորմ.** 2.23: Հայրերին պատվիրվում է ջանասեր լինել և հոգ տանել տան համար՝ **ՎևոՒ** 93.43–44, 48–50:

ՏՈՒՆԸ ՏԻՐՈՋ: *Տե՛ս* Տաճար՝ Տիրոջ տուն

ՑԱՆԿԱՆԱԼ: *Տե՛ս նաև* Զգայական, Զգայականություն

Ոչ պատշաճ բուռն ցանկություն ունենալ ինչ-որ բանի համար:

Մի ցանկանա նրա գեղեցկությունը քո սրտում՝ **Առակ.** 2.25: Ով որ նայում է մի կնկա վրա, ցանկանալով նրան, արդեն շնորքում է անում՝ **Մատ.** Ե.28 (3 Նեփի 12.28): Տղամարդիկ իրենց ցանկություններով իրար հետ բորբոքվեցին՝ **Հռովմ.** Ա.27: Իրենց հատուկ ցանկությունների համեմատ ուսուցիչներ կդիզեն իրենց վրա՝ **Բ Տիմ.** Դ.3–4: Լարանը տեսավ մեր ունեցվածքը և ցանկացավ այն՝ **1 Նեփի** 3.25: Այլևս մի գնա քո աչքերի տենչանքների ետևից՝ **Ալմա** 39.3–4, 9: Ով որ նայում է կնոջ վրա, ցանկանալով նրան, ուրանում է հավատքը՝ **ՎևոՒ** 42.23: Վերջ տվեք ձեր բոլոր հեշտասեր ցանկություններին՝ **ՎևոՒ** 88.121:

ՑԱՍՈՒՄ: *Տե՛ս* Բարկություն

ՑԻՑ

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու կազմակերպության և վարչական միավորներից մեկը: Ցիցը կազմված է մի քանի ծխերից կամ ճյուղերից: Հիմնականում այն ունի որոշակի աշխարհագրական սահմաններ և նմանվում է Եսայիայի ԾԴ.2-ում նկարագրված վրանի պատկերին: «Երկարացրու չվաններդ և ցցերդ պնդացրու»: Միոնի յուրաքանչյուր ցից աջակցում և օգնում է բարձր պահել Եկեղեցին, այնպես ինչպես վրանը կամ խորանը պահվում է իր ցցերով: Ցիցը հավաքման վայր է ցրված Իսրայելի մնացորդի համար (ՎևոՒ 82.13–14, 101.17–21): Ամրացրու ցցերդ և ընդարձակիր սահ-

մաններդ՝ **Մոր.** 10.31 (ՎևոՒ 82.14): Նշանակլիր այլ ցցեր Միոնի համար, բացի այս մեկից՝ **ՎևոՒ** 109.59: Որ միասին հավաքվելը, Միոնի հողի վրա և նրա ցցերում, պաշտպանություն լինի՝ **ՎևոՒ** 115.6 (ՎևոՒ 101.21): Ցցերի համար այլ վայրեր պետք է նշանակվեն՝ **ՎևոՒ** 115.18: Քահանայապետերի քվորումի նախագահը հաստատվել է, որպեսզի պատրաստի նրանց, ովքեր կնշանակվեն ցցերի նախագահներ՝ **ՎևոՒ** 124.133–134: Առաջ գնացեք դեպի Միոնի հողը, որպեսզի նրա ցցերն ամրանան՝ **ՎևոՒ** 133.9:

ՑՐՎԵԼ: *Տե՛ս* Իսրայել – Իսրայելի ցրվելը

ՈՒԻԹՄԵՐ ԴԵՅՎԻԴ

Վերականգնված Եկեղեցու վաղ դեկավարներից և Մորմոնի Գրքի աստվածային ծագման և ճշմարտության Երեք Վկաներից մեկը (ՎևոՒ 14, 17–18): Տերը նրան անհատական հրահանգներ է տվել Վարդապետություն և Ուխտեր 14-ում և 30.1–4-ում:

ՈՒԻԹՄԵՐ ՊԻՏԵՐ ԿՐՏՍԵՐ

Վերականգնված Եկեղեցու վաղ դեկավարներից և Մորմոնի Գրքի Ութ Վկաներից մեկը: Տե՛ս «Ութ Վկաների վկայությունը» Մորմոնի Գրքի ներածական էջերում: Տերը նրան անհատական հրահանգներ է տվել Վարդապետություն և Ուխտեր 16-ում և 30.5–8-ում:

ՈՒԻԹՆԻ ՆՅՈՒՆԵԼ Զ.

Վերականգնված Եկեղեցու վաղ դեկավարներից: Նյուել Զ. Ուիթնին եպիսկոպոս էր Կիրթլենդում, Օհայո (Ամերիկայի Միացյալ Նահանգներ), իսկ ավելի ուշ, ծառայեց որպես Եկեղեցու Նախագահող Եպիսկոպոս (ՎևոՒ 72.1–8, 104, 117):

ՈՒԻԹՄԵՐ ՋՈՆ

Վերականգնված Եկեղեցու վաղ դեկավարներից և Մորմոնի Գրքի Ութ Վկաներից մեկը: Տե՛ս «Ութ Վկաների վկայությունը» Մորմոնի Գրքի ներածական էջերում: Նա նաև կանչվել էր քարոզելու ավետարանը (ՎևոՒ 30.9–11):

ՈՒՆԱՅՆ, ՈՒՆԱՅՆՈՒԹՅՈՒՆ:

Տե՛ս նաև Աշխարհիկություն.

Հպարտություն

Սուտ կամ կեղծիք. հպարտություն: *Ունայնը և ունայնությունը* կարող է նշանակել նաև սին կամ անարժեք:

Նա, ով իր անձը չի բարձրացնում ունայնությամբ, կկանգնի Տիրոջ սրբության տեղում՝ **Մաղ.** ԻԴ.3-4: Աղոթելիս մի գործածեք ունայն կրկնություններ՝ **Մատ.** 2.7: Մեծ և ընդարձակ շենքը սին երևակայություններն ու հպարտությունն է՝ **1 Նեփի** 12.18: Մի՞թե դուք կշարունակեք ձեր սրտերը դնել աշխարհի ունայն բաների վրա՝ **Ալմա** 5.53: Մի փնտրիր աշխարհի ունայն բաները, քանզի դու չես կարող դրանք տանել քեզ հետ՝ **Ալմա** 39.14: Ունայնությունն ու անհավատությունը դատապարտության տակ են դրել Եկեղեցին՝ **ՎևոՒ** 84.54-55: Երբ մենք փորձում ենք գոհացնել մեր ունայն փառասիրությունը, երկիմբները ետ են քաշվում՝ **ՎևոՒ** 121.37:

ՈՒՆՏ: *Տե՛ս նաև* Աբրահամի Ուխտը.

Երդում. Նոր և Հավիտենական Ուխտ. Քահանայության Երդումը և Ուխտը

Աստծո և մարդու միջև համաձայնություն, որի մեջ սակայն, նրանք չեն գործում որպես հավասարներ: Աստված տալիս է ուխտի պայմանները, և մարդիկ համաձայնվում են անել այն, ինչ նա խնդրում է անել: Այնուհետև, Աստված մարդկանց որոշակի օրհնություններ է խոստանում նրանց հնազանդության համար:

Սկզբունքներն ու արարողություններն ընդունվում են ուխտի միջոցով. Եկեղեցու այն անդամները, որոնք նման ուխտեր են կապում, խոսք են տալիս հարգել դրանք: Օրինակ՝ անդամներն ուխտ են կապում Տիրոջ հետ մկրտության ժամանակ և նորացնում են այդ ուխտերը՝ ճաշակելով հաղորդությունից: Նրանք լրացուցիչ ուխտեր են կապում տաճարում: Տիրոջ ժողովուրդն ուխտայալ ժողովուրդ է, և նա մեծապես օրհնվում է՝ պահելով Տիրոջ հետ կապած ուխտերը:

Իմ ուխտը կհաստատեն քեզ հետ՝ **ԾՆ.** 2.18: Իմ ուխտը պահեք. այն ժամանակ դուք ինձ համար սեպհական ժողովուրդ

կլինեք՝ **Ել.** ԺԹ.5: Նրանց հետ և նրանց աստվածների հետ ուխտ չանես՝ **Ել.** ԻԳ.32: Պահեք հանգստության օրը, որպես հավիտենական ուխտ՝ **Ել.** ԼԱ.16: Ձեզ հետ արած ուխտս հավիտյան չեմ դրժի՝ **Դատ.** Բ.1: Իմ սրբերն ինձ հետ ուխտ արեցին զոհաբերությամբ՝ **Մաղ.** Ծ.5 (ՎևոՒ 97.8): Հիշեք նրա սուրբ ուխտը՝ **Ղուկ.** Ա.72 (ՎևոՒ 90.24): Աստծո գործունե իջավ Տիրոջ ուխտյալ ժողովրդի վրա՝ **1 Նեփի** 14.14: Աբրահամին տրված ուխտը պիտի իրականանա վերջին օրերում՝ **1 Նեփի** 15.18 (3 Նեփի 16.5, 11-12, 21.7, Մորմ. 9.37): Բեներմիին ժողովուրդը հոժար էր ուխտի մեջ մտնելու Աստծո հետ՝ կատարելու նրա կամքը՝ **Մոսիա** 5.5: Սկրտությունը վկայություն է, որ մարդ ուխտի մեջ է մտել Աստծո հետ՝ նրա կամքը կատարելու համար՝ **Մոսիա** 18.13: Դուք ուխտի զավակներն եք՝ **3 Նեփի** 20.25-26: Հրեշտակներն իրականացնում և կատարում են գործը Հոր ուխտերի՝ **Մոր.** 7.31: Քրիստոսի արյան հեղվելն ուխտն է՝ **Մոր.** 10.33: Ամեն ոք, ով պատկանում է Քրիստոսի այս եկեղեցուն, պիտի հետևի, որ պահի բոլոր ուխտերը՝ **ՎևոՒ** 42.78: Օրհնված են նրանք, ովքեր պահել են ուխտը՝ **ՎևոՒ** 54.6: Նա, ով դրժում է այս ուխտը, պիտի կորցնի իր պաշտոնն ու դիրքը Եկեղեցում՝ **ՎևոՒ** 78.11-12: Բոլոր նրանք, ովքեր ընդունում են քահանայությունը, ընդունում են այս երդումն ու ուխտը՝ **ՎևոՒ** 84.39-40: Նրանք կամենում են պահպանել իրենց ուխտերը զոհաբերությամբ՝ **ՎևոՒ** 97.8: Անուստության ուխտը կարող է հավերժական լինել՝ **ՎևոՒ** 132: Եվ սա պետք է լինի մեր ուխտը, որ մենք կքայլենք Տիրոջ բոլոր կանոններով՝ **ՎևոՒ** 136.4:

ՈՒՆՏԻ ՏԱՊԱՆԱԿ: *Տե՛ս նաև* Խորան

Ուխտի Տապանակը, որը հայտնի է նաև որպես Եհովայի Տապանակ և Վկայության Տապանակ, փայտից պատրաստված երկարավուն սնդուկ, կամ արկղ էր՝ ներսից և դրսից ոսկով պատված: Այն Իսրայելացիների կրոնական ամենահին և ամենասրբազան խորհրդանիշն էր: Քավություն կոչվող դրա կափարիչը համարվում էր Եհովայի երկրային բնակավայրը (Ել. ԻԵ.22): Խորանը կառուցելուց հետո, տապանակը դրվեց Սրբությանց Սրբության

մեջ՝ կառույցի ամենասուրբ վայրում (Գ Թագ. Ը.1-8):

Մովսեսը տապանակ պատրաստեց Աստծո հրամանով՝ **Ել. ԻԵ:** Ղևիի որդիները պատասխանատու էին տապանակի պատրաստման համար՝ **Թվ. Գ.15, 31:** Ուխտի տապանակը գնում էր նրանց առաջից՝ **Թվ. Ժ.33:** Վերցրեք այս օրենքի գիրքը և դրեք ուխտի տապանակի մեջ՝ **Բ Օր. Լ.Ա.24-26:** Հորդանանի ջրերը կտրվեցին ուխտի տապանակի առաջ՝ **Հես. Գ.13-17, Դ.1-7:** Քահանաները վերցրեցին ուխտի տապանակը Երիթովը նվաճելիս՝ **Հես. Չ.6-20:** Փղտացիներն առան Աստծո տապանակը՝ **Ա Թագ. Ե:** Տերն օրհնեց Արդեղոմի տունն Աստծո տապանակի պատճառով՝ **Բ Թագ. Չ.11-12:** Ոգան զարկվեց Տիրոջ կողմից, երբ նա անհնազանդորեն փորձեց պահել տապանակը՝ **Ա Մն. ԺԳ.9-12 (ՎևոՒ 85.8):** Կառուցեք Տեր Աստծո սրբարանը, որ բերեք ուխտի տապանակը՝ **Ա Մն. ԻԲ.19:** Նկարագրվում է ուխտի տապանակի պարուակությունը՝ **Երբ. Թ.4:**

ՈՒՏՈՒՑԱՆԵԼ, ՈՒՏՈՒՑԻՉ: *Տե՛ս նաև Սուրբ Հոգի*

Գիտելիք տալ ուրիշներին, հատկապես ավետարանի ճշմարտության վերաբերյալ և արդարության առաջնորդել: Նրանք, ովքեր ուսուցանում են ավետարանը, պետք է ղեկավարվեն Հոգով: Բոլոր ծնողներն իրենց ընտանիքներում ուսուցիչներ են: Մրբերը պետք է ձգտող և կամեցող լինեն՝ հրահանգներ ստանալու Տիրոջ և նրա առաջնորդների կողմից:

Սովորեցրու որդիներին՝ **Բ Օր. Գ.8-9:** Ջանասիրտությամբ ուսուցանիր դրանք քո զավակներին՝ **Բ Օր. Չ.7 (Բ Օր. ԺԱ.18-19):** Կրթիր երեխային իր ճանապարհի համեմատ՝ **Առակ. ԻԲ.6:** Քո զավակներն ուսուցանված կլինեն Տիրոջ կողմից՝ **Ես. ԾԳ.13 (3 Նեփի 22.13):** Գիտենք, որ Աստծուց եկած վարդապետ ես՝ **Հովհ. Գ.2:** Դու, որ ուրիշին սովորեցնում ես, քո անձին չե՞ս սովորեցնում՝ **Հռովմ. Բ.21:** Ես ինչ-որ չափով սովորեցվել էի հորս բոլոր գիտելիքներից՝ **1 Նեփի 1.1 (Ենովս 1.1):** Քահանաներն ու ուսուցիչները պետք է ջանասիրաբար ուսուցանեն, եթե ոչ, մարդկանց մեղքերը կբափվեն

նրանց գլխին՝ **Հակոբ 1.18-19:** Լսեք ինձ և բացեք ձեր ականջները՝ **Մոսիա 2.9:** Դուք պետք է սովորեցնեք ձեր երեխաներին՝ սիրել և ծառայել մեկնմեկու՝ **Մոսիա 4.15:** Մի վատախեք ոչ որքի, որ ձեր ուսուցիչը լինի, եթե նա Աստծո մարդ չէ՝ **Մոսիա 23.14:** Տերը դուրս բափեց իր Հոգին ողջ երկրի վրա՝ նրանց սրտերը պատրաստելու համար, որ ընդունեն խոսքը՝ **Ալմա 16.16:** Նրանք ուսուցանում էին Աստծո գորությանը և իշխանությանը՝ **Ալմա 17.2-3:** Նրանք սովորեցվել էին իրենց մայրերի կողմից՝ **Ալմա 56.47 (Ալմա 57.21):** Եվ որքան որ նրանք իմաստություն էին փնտրում՝ կարողանային հրահանգվել՝ **ՎևոՒ 1.26:** Ուսուցանեք միմյանց համաձայն պաշտոնի, որին նշանակել եմ ձեզ՝ **ՎևոՒ 38.23:** Ուսուցանեք իմ ավետարանի սկզբունքները, որոնք Աստվածաշնչի և Մորմոնի Գրքի մեջ են՝ **ՎևոՒ 42.12:** Դուք պետք է ուսուցանվեք բարձրից՝ **ՎևոՒ 43.15-16:** Ծնողները պետք է ուսուցանեն իրենց երեխաներին՝ **ՎևոՒ 68.25-28:** Միմյանց ուսուցանեք արքայության վարդապետությունը՝ **ՎևոՒ 88.77-78, 118:** Մի ուսուցիչ նշանակեք ձեր մեջ՝ **ՎևոՒ 88.122:** Դու քո երեխաներին լույս և ճշմարտություն չես ուսուցանում, և դա է քո նեղության պատճառը՝ **ՎևոՒ 93.39-42:** Ազատ սովորեցրեք ձեր զավակներին այս բաները՝ **Մովսես 6.57-61:**

Հոգով ուսուցանելը. Դուք չեք խոսողը, այլ Հոգին, որ խոսում է ձեզանում՝ **Մատ. Ժ.19-20:** Չե՞ որ մեր սրտերը բորբոքվում էին մեզանում, երբ նա բացում էր սուրբ գրքերը մեզ համար՝ **Ղուկ. ԻԳ.32:** Ավետարանը քարոզվում է Հոգու գորությամբ՝ **Ա Կոր. Բ.1-14:** Նա խոսում էր Աստծո գորությամբ և իշխանությամբ՝ **Մոսիա 13.5-9 (Ալմա 17.3, Հել. 5.17):** Դու կունենաս իմ Հոգին՝ մարդկանց համոզելու համար՝ **ՎևոՒ 11.21:** Քեզ կլսեն բոլոր այն բաներում, ինչ դու կուսուցանես Միսիթարիչի միջոցով՝ **ՎևոՒ 28.1 (ՎևոՒ 52.9):** Եթե դուք չառնաք Հոգին, դուք չպետք է ուսուցանեք՝ **ՎևոՒ 42.14 (ՎևոՒ 42.6):** Ուսուցանեք մարդկանց զավակներին այդ բաներն իմ Հոգու գորությամբ՝ **ՎևոՒ 43.15:** Երեցները Հոգով պետք է ուսուցանեն ավետարանը՝ **ՎևոՒ 50.13-22:** Նույն ժամին ձեզ կտրվի, քե ինչ պիտի ասեք՝ **ՎևոՒ 84.85 (ՎևոՒ 100.5-8):**

**ՈՒՍՈՒՑԻՉ՝ ԱՀԱՐՈՆՅԱՆ
ՔԱՀԱՆԱՅՈՒԹՅԱՆ:** *Տե՛ս նաև*
Ահարոնյան Քահանայություն

Ահարոնյան Քահանայության պաշտոն:

Ուսուցչի պարտականությունն է՝ հսկել Եկեղեցու վրա՝ **ՎևոՒ** 20.53–60: Ուսուցչի պաշտոնը փոքրագույն քահանայության անհրաժեշտ հավելումն է՝ **ՎևոՒ** 84.30, 111: Ուսուցիչների քվորումի նախագահը նախագահում է քանչոքս ուսուցիչների վրա՝ **ՎևոՒ** 107.86:

ՈՒՐ

Հին Կտակարանում Քաղղեացիների Ուր քաղաքն Աբրահամի սկզբնական բնակավայրն էր (ՃՆ. ԺԱ.27–28, 31, ԺԵ.7, Նեեմ. Թ.7, Աբր. 2.1, 4):

ՈՒՐԱԽՈՒԹՅՈՒՆ: *Տե՛ս նաև*
Հնազանդություն, Հնազանդ,
Հնազանդվել

Մեծ երջանկության վիճակ, որն առաջանում է արդարակյաց ապրելուց: Մահկանացու կյանքի նպատակն այն է, որ բոլոր մարդիկ ուրախություն ունենան (2 Նեփի 2.22–25): Լիակատար ուրախությունը կգա միայն Հիսուս Քրիստոսի միջոցով (Հովհ. ԺԵ.11, ՎևոՒ 93.33–34, 101.36):

Հեզեբը նույնպես ուրախություն պիտի ավելացնեն Տերով՝ **Ես**. ԻԹ.19 (2 Նեփի 27.30): Ուրախության մեծ ավետիք են բերել քեզ՝ **Ղուկ**. Բ.10: Չեր ուրախությունը ոչ որ չի առնի ձեզանից՝ **Հովհ**. ԺՁ.22: Հոգու պտուղն է՝ սեր, ուրախություն, խաղաղություն՝ **Գաղ**. Ե.22: Նրա պտուղը լցրեց իմ հոգին չափազանց մեծ ուրախությամբ՝ **1 Նեփի** 8.12: Մարդիկ կան, որպեսզի ունենան ուրախություն՝ **2 Նեփի** 2.25: Արդարների ուրախությունը լիակատար կլինի հավիտյան՝ **2 Նեփի** 9.18: Նրանք կկարողանան բնակվել Աստծո հետ՝ երբեք չվերջացող երջանկության վիճակում՝ **Մոսիա** 2.41: Ես կիրառվեմ այն ամենից, ինչ ունեմ, որ կարողանամ ստանալ այդ մեծ ուրախությունը՝ **Ալմա** 22.15: Գուցե ես կարողանամ Աստծո ձեռքում լինել մի գործիք՝ ինչ-որ մի հոգու ապաշխարության բերելու. և այս է իմ ուրախությունը՝ **Ալմա** 29.9: Ի՛նչպիսի ուրախություն, և ի՛նչ սքանչելի լույս տեսա ես՝ **Ալմա** 36.20: Իմ Հոգին կլցնի քո հոգին

ուրախությամբ՝ **ՎևոՒ** 11.13: Որքան մեծ կլինի ձեր ուրախությունը նրա հետ իմ Հոր արքայությունում՝ **ՎևոՒ** 18.15–16: Այս աշխարհում ձեր ուրախությունը լիակատար չէ, բայց ինձանում ձեր ուրախությունը լիակատար է՝ **ՎևոՒ** 101.36: Այս կյանքում ես ուրախություն կունենամ՝ **Մովսես** Ե.10–11:

ՈՒՐԱՅՈՒԹՅՈՒՆ: *Տե՛ս նաև*
Ապստամբություն. Ավետարանի վերականգնում

Երբ առանձին մարդիկ, Եկեղեցին կամ բոլոր ազգերը ճշմարտությունից երես են դարձնում:

Ընդհանուր ուրացություն. Իսրայելը պետք է զգոն լինե՞ր, որ իր սիրտը չխտուրեթ Տիրոջից՝ **Բ Օր**. ԻԹ.18: Որտեղ տեսիլք չկա, այնտեղ ժողովուրդը կործանվում է՝ **Առափ**. ԻԹ.18: Նրանք խափանել են հավիտենական ուխտը՝ **Ես**. ԻԿ.5: Քամիներն այն տանը զարկեցին, և այն ընկավ՝ **Մատ**. Է.27: Չարմանում եմ, որ այսպես շուտ փոփոխվում եք դեպի ուրիշ ավետարան՝ **Գաղ**. Ա.6: Նրանք սկսեցին լավ արահետով, սակայն մեզի մեջ կորցրեցին իրենց ճանապարհը՝ **1 Նեփի** 8.23 (1 Նեփի 12.17): Պտղից համտես անելուց հետո, նրանք հեռացան դեպի արգելված ուղիներ՝ **1 Նեփի** 8.28: Նեփիացիների ուրացությունը գայթակղության քար դարձավ անհավատների համար՝ **Ալմա** 4.6–12: Եկեղեցու շատ անդամներ դարձել էին հպարտ և հալածում էին մյուս անդամներին՝ **Հել**. 3.33–34 (Հել. 4.11–13, 5.2–3): Երբ Տերն օգնում է իր ժողովրդին բարգավաճել, երբեմն նրանք կարծրացնում են իրենց սրտերը և մոռանում են նրան՝ **Հել**. 12.2, 13.38: Նեփիացիները կարծրացնում էին իրենց սրտերը և ընկնում էին Սատանայի ազդեցության տակ՝ **3 Նեփի** 2.1–3: Մորոնիս մարգարեացել է վերջին օրերի ուրացության մասին՝ **Մորմ**. 8.28, 31–41: Երկրորդ Գալստին կնախորդի ուրացությունը՝ **ՎևոՒ** 1.13–16:

Վաղ Քրիստոնեական Եկեղեցու ուրացությունը. Այս ժողովուրդը բերանով է մոտենում ինձ՝ **Ես**. ԻԹ.10, 13: Խավարը կծածկի երկիրը՝ **Ես**. Կ.2: Տիրոջ խոսքերը լսելու սով կուղարկի Տերը՝ **Ամովս** Ը.11: Կլինեն կեղծ Քրիստոսներ և կեղծ

մարգարեներ՝ **Մատ.** ԻԳ.24: Հափշտակող գայլեր կգան ձեր մեջ՝ **Գոր.** Ի.29: Չարմանում եմ, որ այսպես շուտ փոփոխվում եք նրանից՝ **Գաղ.** Ա.6: Նախքան Երկրորդ Գալուստն ուրացություն կլինի՝ **Բ Թես.** Բ.3: Ոմանք ճշմարտությունից շեղվել են՝ **Բ Տիմ.** Բ.18: Ոմանք աստվածայնության կերպարանք ունեն, բայց ուրանում են նրա գորությունը՝ **Բ Տիմ.** Գ.5: Ժամանակ կգա, որ ողջամիտ վարդապետությամբ չեն համբերի՝ **Բ Տիմ.** Գ.3–4: Սուտ մարգարեներ և սուտ ուսուցիչներ կլինեն ժողովրդի մեջ՝ **Բ Պետ.** Բ.1: Որոշ մարդիկ ներս պրծան, որոնք ուրանում են միակ Տեր Աստծուն՝ **Հուդա** Ա.4: Ոմանք ասում էին, որ իրենք Առաքյալներ էին, բայց չէին՝ **Հայտ.** Բ.2: Նեփին տեսավ այն մեծ և պիղծ եկեղեցու կառուցումը՝ **1 Նեփի** 13.26: Հեթանոսները գայթեղ են և կառուցել բազմաթիվ եկեղեցիներ՝ **2 Նեփի** 26.20: Նրանք շեղվել են իմ կանոններից և դրժել են իմ հավիտենական ուխտը՝ **ՎևոՒ** 1.15: Խավարը պատել է երկիրը, և քանձր խավարը՝ մարդկանց մտքերը՝ **ՎևոՒ** 112.23: Չոզեֆին ասվեց, որ բոլոր եկեղեցիներն էլ սխալ էին. նրանց արտերը հեռու էին Աստծուց՝ **ՋՍ–Պ** 1.19:

ՈՒՐԻՄ ՈՒ ԹՈՒՄԻՄ: *Տե՛ս նաև*
Լանջապանակ. Տեսանոց

Գործիքներ, որոնք պատրաստվել են Աստծո կողմից՝ հայտնություն ստանալիս և լեզուներ թարգմանելիս մարդուն օգնելու համար: Եբրայերեն այդ բառերի նշանակությունն է «լույսեր և կատարելություններ»: Ուրիմն ու Թումիմը բաղկացած է երկու քարից, որոնք դրված են արծաթե աղեղների մեջ և երբեմն օգտագործվում են լանջապանակի հետ (ՎևոՒ 17.1, ՋՍ–Պ 1.35, 42, 52): Իր արբազորված և անմահ վիճակում, այս երկիրը կդառնա մեծ Ուրիմ ու Թումիմ (ՎևոՒ 130.6–9):

Եվ դատաստանի լանջապանակի մեջ դնես Ուրիմն ու Թումիմը՝ **Շլ.** ԻԸ.30: Ով որ հաղթում է, սպիտակ քար կտան նրան՝ **Հայտ.** Բ.17: Նա ունի այն, ինչով կարելի է նայել և թարգմանել՝ **Մոսիա** 8.13: Այս երկու քարերը են կտան քեզ՝ **Եբեր** 3.23–24, 28 (Եբեր 4.5): Չոզեֆ Սմիթը հայտնություններ ստացավ Ուրիմի և Թումիմի միջոցով՝ **ՎևոՒ-ի** հետևյալ բաժինների նախադրությունները՝ 6, 11, 14–16: Քեզ

գորություն էր տրվել թարգմանել Ուրիմի և Թումիմի միջոցով՝ **ՎևոՒ** 10.1: Երեք վկաները պետք է տեսնեին Ուրիմը և Թումիմը, որոնք սարի վրա տրվել էին Հարեդի եղբորը՝ **ՎևոՒ** 17.1: Վայրը, որտեղ Աստված բնակվում է, մի մեծ Ուրիմ ու Թումիմ է: Սպիտակ քարը Ուրիմ ու Թումիմ կդառնա յուրաքանչյուր անհատի համար, ով ստանում է այն՝ **ՎևոՒ** 130.6–11: Ես՝ Աբրահամս, Ուրիմ ու Թումիմ ունեի՝ **Աբր.** 3.1, 4:

ՓԱԹԵՆ ԴԵՅՎԻԻ Վ.

Վերջին օրերի տնտեսության ժամանակ ընտրված Տասներկու Առաքյալների առաջին Զվորումի անդամ: Դեյվիդ Փաթենը վերականգնված Եկեղեցու առաջին մարտիրոսն էր, որը նահատակվեց 1838թ., Միսսուրիի Քուկա գետի ճակատամարտում:

Նրան կոչ է արվում իր գործերը կարգավորել և առաքելություն կատարել՝ **ՎևոՒ** 114.1: Նա վերցվեց Տիրոջ մոտ՝ **ՎևոՒ** 124.19, 130:

ՓԱՂԵԿ

Հին Կտակարանում՝ Եբերի որդին և Սեմի ծոռնորդին: Նրա օրերում երկիրը բաժանվեց (Ճն. Ժ.22–25):

ՓԱՅՑԸ ԵՓՐԵՄԻ: *Տե՛ս* Եփրեմ – Եփրեմի կամ Հովսեփի փայտը

ՓԱՅՑԸ ՀՈՎՍԵՓԻ: *Տե՛ս* Եփրեմ – Եփրեմի կամ Հովսեփի փայտը

ՓԱՅՑԸ ՀՈՒԴԱՅԻ: *Տե՛ս* Հուդա – Հուդայի փայտը

ՓԱՈՔ: *Տե՛ս նաև* Լույս, Քրիստոսի լույս. Ճշմարտություն. Փառքի աստիճաններ

Սուրբ գրքերում փառքը հաճախ վերաբերում է Աստծո լույսին ու ճշմարտությանը: Այն կարող է վերաբերել նաև գովասանքին կամ պատվին և հավերժական կյանքի որոշակի վիճակին կամ Աստծո փառքին:

Սուրբ է Չորաց Տերը. ողջ երկիրը լցված է նրա փառքով՝ **Ես.** 2.3 (2 Նեփի 16.3): Նույն պատկերի նման մենք կերպարանափոխվում ենք փառքից դեպի փառք՝ **Բ Կոր.** Գ.18: Նա կբարձրացնի ինձ՝

ապրելու իր հետ, փառքի մեջ՝ **Ալմա** 36.28: Արդարակեցությանը համապատասխան՝ հարության ժամանակ ստացած փառքերը կտարբերվեն՝ **ՎևոՒ** 76.50–119: Աստծո փառքը բանականություն է՝ **ՎևոՒ** 93.36: Աստծո փառքը մարդու անմահությունը և հավերժական կյանքն իրագործելն է՝ **Մովսես** 1.39: Ես տեսա երկու Անձնավորություն, որոնց պայծառությունն ու փառքն ամեն նկարագրությունից վեր էր՝ **ԶՄ-Պ** 1.17:

ՓԱՌՔԻ ԱՍՏԻՃԱՆՆԵՐ: *Տե՛ս նաև* Թելեստիալ փառք. Թերեստիալ փառք. Մելեստիալ փառք

Տարբեր թագավորություններ երկնքում: Վերջին դատաստանի ժամանակ ամեն մարդու հավերժական բնակավայր կնշանակվի փառքի որոշակի թագավորության մեջ, բացի նրանցից, ովքեր Կորստի որդիներ են:

Հիսուսն ասել է. Իմ Հոր տանը շատ ապարանքներ կան՝ **Հովհ.** ԺԳ.2 (Եթեր 12.32): Ուրիշ է արեգակի փառքը, և ուրիշ է լուսինը, և ուրիշ է աստղերինը՝ **Ա Կոր.** ԺԵ.40–41: Պողոսը հափշտակվել էր մինչև երրորդ երկինքը՝ **Բ Կոր.** ԺԲ.2: Կա մի վայր, որը չունի փառք, և որտեղ հավիտենական պատիժ է՝ **ՎևոՒ** 76.30–38, 43–45: Փառքի երեք աստիճաններ կան՝ **ՎևոՒ** 76.50–113, 88.20–32:

ՓԱՐԱՎՈՆ: *Տե՛ս նաև* Եգիպտոս. Եգիպտոս

Քամի դուստր Եգիպտոսի ավագ որդին (Աբր. 1.25): Նաև տիտղոս, որը տրվում էր եգիպտական թագավորներին (Աբր. 1.27):

ՓԱՐԻՄԵՑԻՆԵՐ: *Տե՛ս նաև* Հրեաներ

Նոր Կտակարանում՝ կրոնական խումբ հրեաների մեջ, որոնց անունը ենթադրում է անջատված կամ առանձնացված լինելը: Փարիսեցիները հպարտանում էին, որ խառորեն հետևում են Մովսեսի օրենքին, և որ գերծ են մնում հեթանոսների հետ հաղորդակցվելուց: Նրանք հավատում էին հանդերձյալ կյանքին, հարությանը և հրեշտակների ու ոգիների գոյությանը: Նրանք հավատում էին, որ չգրված օրենքներն ու ավանդությունները նույնքան կարևոր էին,

որքան գրված օրենքները: Նրանց ուսմունքները սահմանափակում էին կրոնը կանոնների պահպանմամբ և հոգևոր հպարտություն էին ներշնչում: Նրանք շատ հրեաների ստիպում էին կասկածել Քրիստոսի և նրա ավետարանի վրա: Տերը դատապարտել է Փարիսեցիներին և նրանց գործերը Մատթեոս ԻԳ-ում, Մարկոս Է.1–23-ում և Ղուկաս ԺԱ.37–44-ում:

ՓԵՍԱ: *Տե՛ս նաև* Հիսուս Քրիստոս

Հիսուս Քրիստոսը սուրբ գրքերում խորհրդանշվում է որպես Փեսա: Եկեղեցին նրա խորհրդանշական հարսնացուն է:

Տասը կույսերը գնացին Փեսային դիմավորելու՝ **Մատ.** ԻԵ.1–13: Հարսն ունեցողն է Փեսան՝ **Հովհ.** Գ.27–30: Երանելի են Գառի հարսանիքի ընթրիքին կանչվածները՝ **Հայտ.** ԺԺ.5–10: Պատրաստ եղեք Փեսայի գալստի՛ն՝ **ՎևոՒ** 33.17: Պատրաստ եղեք դիմավորելու Փեսային՝ **ՎևոՒ** 65.3:

ՓԻԼԻՄՈՆ: *Տե՛ս նաև* Պողոս

Քրիստոնյա մարդ Նոր Կտակարանում՝ տերը Ոնեսիմոս սարուկի, որը փախել ու միացել էր Պողոսին: Պողոսը Ոնեսիմոսին ետ ուղարկեց Փիլիմոնի մոտ, նրա հետ ուղարկելով մի նամակ, որ Փիլիմոնը ների սարուկին:

ՓԻԼԻՄՈՆ՝ ԹՈՒՂԹ ԱՌ: *Տե՛ս նաև* Պողոս. Պողոսի Թղթերը

Գիրք Նոր Կտակարանում, վերցված մի նամակից, որը գրել էր Պողոսը: Պողոսի նամակը Փիլիմոնին անձնական նամակ է Ոնեսիմոսի մասին, մի սարուկի, որը թանկ էր իր տիրոջը՝ Փիլիմոնին, և փախել էր Հռոմ: Պողոսը նրան ետ ուղարկեց Կողոսե՛ իր տիրոջ մոտ, Տյուքիկոսի ուղեկցությամբ, որը տանում էր Պողոսի նամակը Կողոսացիներին: Պողոսը խնդրեց, որ Ոնեսիմոսը ներվի և ընդունվի՝ որպես Քրիստոնյա ընկեր: Այս նամակը Պողոսը գրեց, երբ առաջին անգամ բանտարկված էր Հռոմում:

ՓԻԼԻՊՊԵՑԻՄ ԹՈՒՂԹ ԱՌ: *Տե՛ս նաև* Պողոս. Պողոսի Թղթերը

Փիլիպպեցի Մրբերին գրված նամակ, որը Պողոսը գրել է առաջին անգամ Հռոմում բանտարկված լինելու ժամանակ:

Այժմ այն Փիլիպպեցիների գիրքն է Նոր Կտակարանում:

Ա գլխում Պողոսի ողջույններն են և հրահանգները՝ միաբանության, խոնարհության և հաստատակամության վերաբերյալ: Բ գլուխը շեշտում է, որ բոլորը պետք է խոնարհվեն Քրիստոսի առաջ, և որ ամեն ոք պետք է գործի իր փրկությունը: Գ գլխում Պողոսը բացատրել է, որ ինքն ամեն բան գոհարբել է Քրիստոսի համար: Դ գլխում Պողոսը շնորհակալություն է հայտնել Փիլիպպեցի Սրբերին՝ նրանց աջակցության համար:

ՓԻԼԻՊՊՈՍ

Նոր Կտակարանում Փիլիպպոսը՝ Բեթսալիդայից, Փրկչի սկզբնական Տասներկու Առաքյալներից մեկն էր (Մատ. Ժ.2-4, Հովհ. Ա.43-45):

Մեկ այլ Փիլիպպոս այն յոթից մեկն էր, որոնք ընտրվել էին՝ օգնելու Տասներկու Առաքյալներին (Գոր. 2.2-6): Նա քարոզել է Սամարիայում և Եթովպացի ներքինիին (Գոր. Ը):

ՓՂՇՏԱՑԻՆՆԵՐ

Հին Կտակարանի մի ցեղ, որը սկզբում եկավ Կափթորից (Ամովս Թ.7) և զբաղեցրեց Հոպպեից մինչև Եգիպտական անապատը ձգվող Միջերկրական ծովափի հարուստ հարթավայրերը, նախքան Աբրահամի օրերը (Ծն. ԻԱ.32): Շատ տարիներ շարունակ Փղշտացիների և Իսրայելացիների միջև ռազմական պայքար է եղել: Վերջ ի վերջո, Պաղեստինը՝ Փղշտացիների տարածքի անունը, դարձավ ամբողջ Սուրբ Երկրի ընդունված անունը:

Իսրայելը քառասուն տարի Փղշտացիների գերության տակ էր՝ **Դատ. ԺԳ.1**: Սամփոնը կռվեց Փղշտացիների դեմ՝ **Դատ. ԺԳ-ԺԶ**: Գողիաթը Փղշտացի էր Գեթից՝ **Ա Թագ. ԺԷ**: Դավիթը հաղթեց Փղշտացիներին՝ **Ա Թագ. ԺԹ.8**:

ՓՇՐՎԱԾ ՄԻՐՏ: *Տե՛ս* Կոտրված սիրտ

ՓՈՆԱԿԵՐՊՎԱԾ ԷԱԿՆԵՐ

Անճինք, որոնք այնպիսի փոփոխության են ենթարկվում, որ չտանեն ցավ կամ

մահ, մինչև որ հարություն առնեն դեպի անմահություն.

Ենովքը քայլեց Աստծո հետ. և նա չէր գտնվում. որովհետև Աստված վերցրեց նրան՝ **Ծն. Ե.24** (Եբր. ԺԱ.5, ՎևոՒ 107.48-49): Ոչ ոք չիմացավ Մովսեսի գերեզմանը մինչև այսօր՝ **Բ Օր. ԼԳ.5-6** (Ալմա 45.19): Եղիան մրրիկով վեր ելավ երկինք՝ **Դ Թագ. Բ.11**: Եթե ես կամենում եմ, որ նա մնա մինչև ես գամ, քե՞զ ինչ՝ **Հովհ. ԻԱ.22-23** (ՎևոՒ 7.1-3): Դուք երբեք մահ չեք ճաշակի՝ **3 Նեփի 28.7**: Որպեսզի նրանք մահ չճաշակեն, մի փոփոխություն էր կատարվել նրանց մարմնի հետ՝ **3 Նեփի 28.38** (4 Նեփի 1.14, Մորմ. 8.10-11): Հովհաննեսը Սիրեցյալը, ապրելու է մինչև Տիրոջ գալուստը՝ **ՎևոՒ 7**: Ես նա եմ, որ իմ ծոցն եմ վերցրել Ենովքի Սիոնը՝ **ՎևոՒ 38.4** (Մովսես 7.21, 31, 69): Ենովքը և նրա եղբայրները մի քաղաք են, որը պահպանվելու է մինչև արդարության օրը՝ **ՎևոՒ 45.12**: Եղիան առանց մահ ճաշակելու երկինք էր վերցվել՝ **ՎևոՒ 110.13**: Սուրբ Հոգին իջավ շատերի վրա, և նրանք հափշտակվեցին Սիոն՝ **Մովսես 7.27**:

ՓՈՆԱՐԻՆՈՂ: *Տե՛ս*

Արարողություններ – Փոխարինող արարողություն. Փրկություն մահացածների համար

ՓՈՂ: *Տե՛ս նաև* Աշխարհիկություն.

Հարստություններ. Ողորմություններ, Ողորմություններ տալը. Տասնորդ, Տասանորդել

Մետաղադրամներ, բրդադրամ, վկայականներ կամ այլ բաներ, որոնք մարդիկ օգտագործում են ապրանքների և ծառայությունների դիմաց վճարման համար: Երբեմն այն նյութապաշտության խորհրդրանիշ է:

Դուք անցեք փողի պիտի փրկագնվեք՝ **Ես. ԾԲ.3**: Տասներկուսին պատվիրվեց ոչինչ չվերցնել ճանապարհի համար՝ ոչ պարկ, ոչ հաց, ոչ փող՝ **Մար. 2.8**: Պետրոսը Սիմոն մոզին ասաց, որ նրա փողը նրա հետ կկորչի՝ **Գոր. Ը.20**: Արծաթափրությունն ամեն չարիքների արմատն է՝ **Ա Տիմ. 2.10**: Փող մի ծախսեք այն բանի համար, ինչն արժեք չունի՝ **2 Նեփի**

9.50–51 (Ես. ԾԵ.1–2, 2 ՆԵՓԻ 26.25–27): Եթե նրանք աշխատում են փողի համար, նրանք կկորչեն՝ **2 ՆԵՓԻ** 26.31: Նախքան հարստություն որոնելը, որոնք Աստծո արքայությունը՝ **Հակոբ** 2.18–19: Եկեղեցիները կասեն, որ ձեր փողով ձեզ կներվեն ձեր մեղքերը՝ **Մորմ.** 8.32, 37: Ով որ դրամ է տալիս Սիոնի գործի համար, ոչ մի դեպքում չի կորցնի իր վարձքը՝ **ՎԼՈՒ** 84.89–90:

ՓՐԿԱԳԼԵԼ, ՓՐԿԱԳԼՎԱԾ,

ՓՐԿԱԳԼՆՈՒՄ: *St'u Gsul*, Ադամի և Եվայի անկումը. Հիսուս Քրիստոս. Մահ հոգևոր. Փրկություն. Զավել, Զավություն

Ազատել, գնել կամ փրկագին տալ՝ վճարելով ազատել մարդուն գերությունից: *Փրկագնումը* վերաբերում է Հիսուս Քրիստոսի քավությանը և մեղքից ազատելուն: Հիսուսի քավությունը բոլոր մարդկանց փրկագնում է ֆիզիկական մահից: Նրա քավության միջոցով բոլորը, ովքեր հավատք ունեն առ նա, և ովքեր ապաշխարում են, փրկագնվում են նաև հոգևոր մահից:

Ես փրկագնել եմ քեզ՝ **Ես.** ԽԳ.22: Մահվան ձեռքից կփրկագնեն նրանց՝ **Ովսե** ԺԳ.14 (Սաղ. ԽԺ.15): Մենք փրկագնվել ենք Քրիստոսի արյունով՝ **Եփես.** Ա.7, 14 (Եբր. Թ.11–15, Ա Պետ. Ա.18–19, Ալմա 5.21, Հել. 5.9–12): Տերն իմ հոգին փրկագնել է դժոխքից՝ **2 ՆԵՓԻ** 1.15: Փրկագնումը Սուրբ Մեսիայի մեջ է և նրա միջոցով՝ **2 ՆԵՓԻ** 2.6–7, 26 (Մոսիա 15.26–27, 26.26): Նրանք գովերգում էին փրկագնող սերը՝ **Ալմա** 5.9 (Ալմա 5.26, 26.13): Ամբարիշտները մնում են, կարծես ոչ մի փրկագնում չի արվել՝ **Ալմա** 11.40–41 (Ալմա 34.16, 42.13, Հել. 14.16–18): Հիսուս Քրիստոսն իրականացրել է աշխարհի փրկագնումը՝ **Մորմ.** 7.5–7: Փրկագնման գորությունը գործում է բոլորի վրա, ովքեր չունեն օրենք՝ **Մորմ.** 8.22 (ՎԼՈՒ 45.54): Նրանք, ովքեր չեն հավատում, չեն կարող փրկագնվել իրենց հոգևոր անկումից՝ **ՎԼՈՒ** 29.44: Փոքր երեխաները փրկագնված են աշխարհի հիմնադրումից ի վեր՝ **ՎԼՈՒ** 29.46: Տերը փրկագնել է իր ժողովրդին՝ **ՎԼՈՒ** 84.99: Ջոզեֆ Ֆ. Սմիթը տեսիլքում տեսավ մահացածների

փրկագնումը՝ **ՎԼՈՒ** 138: Ադամը և Եվան ցնձում էին իրենց փրկագնումով՝ **Մովսես** 5.9–11:

ՓՐԿԱԳԼՄԱՆ ԾՐԱԳԻՐ: *St'u Gsul*

Ադամի և Եվայի անկումը. Ավետարան. Հիսուս Քրիստոս. Փրկություն. Զավել, Զավություն

Հիսուս Քրիստոսի ավետարանի լրիվությունը, որը նախատեսված է իրագործելու մարդու անմահությունը և հավերժական կյանքը: Այն ներառում է Ստեղծումը, Անկումը և Զավությունը, ինչպես նաև Աստծուց արված բոլոր օրենքները, արարողությունները և վարդապետությունները: Այդ ծրագիրը հնարավոր է դարձնում բոլոր մարդկանց վեհացումն ու հավերժ ապրելն Աստծո հետ (2 ՆԵՓԻ 2, 9): Սուրբ գրքերում այս ծրագիրն ակնարկվում է նաև, որպես փրկության ծրագիր, երջանկության ծրագիր և ողորմության ծրագիր:

Նա մեր օրինազանցությունների համար վիրավորվեց՝ **Ես.** ԾԳ.5 (Մոսիա 14.5): Չկա ուրիշ ոչ մի անուն երկնքի տակ, որով մարդ կարողանա փրկվել՝ **Գոր.** Գ.12: Ինչպես Ադամով բոլորը մեռնում են, այնպես էլ Քրիստոսով բոլորը կենդանանում են՝ **Ա Կոր.** ԺԵ.22: Շնորհով եք փրկված՝ հավատքի միջոցով՝ **Եփես.** Բ.8 (2 ՆԵՓԻ 25.23): Աստված հավերժական կյանք խոստացավ աշխարհի սկզբից առաջ՝ **Տիրտու** Ա.2: Հիսուսն է հավերժական փրկության հեղինակը՝ **Եբր.** Ե.8–9: Փրկագնման ծրագիրը հասցվեց մահացածներին՝ **Ա Պետ.** Գ.18–20, Գ.6 (ՎԼՈՒ 138): Մահն իրագործում է մեծ Ստեղծողի ողորմած ծրագիրը՝ **2 ՆԵՓԻ** 9.6: Ի՞նչ փառասեղ է մեր Աստծո ծրագիրը՝ **2 ՆԵՓԻ** 9.13: Փրկագնման ծրագիրն իրագործում է հարությունը և մեղքերի թողությունը՝ **Ալմա** 12.25–34: Ահարոնն ուսուցանեց փրկագնման ծրագիրը Լամոնիի հորը՝ **Ալմա** 22.12–14: Ամուղելը բացատրեց փրկության ծրագիրը՝ **Ալմա** 34.8–16: Ալման բացատրեց փրկության ծրագիրը՝ **Ալմա** 42.5–26, 31: Ստեղծման, անկման, քավության և մկրտության վարդապետությունները հաստատվել են ժամանակակից հայտնություններում՝ **ՎԼՈՒ** 20.17–29: Ծրագիրը կարգվել էր աշխարհից առաջ՝

ՎևոՒ 128.22: Իմ գործը և իմ փառքն է՝ իրականացնել մարդու անմահությունը և հավերժական կյանքը՝ **Մովսես** 1.39: Սա է բոլոր մարդկանց փրկության ծրագիրը՝ **Մովսես** 6.52–62: Սրանով մենք կփորձենք նրանց՝ **Աբր.** 3.22–26:

ՓՐԿԻԶ: *Տե՛ս նաև* Հիսուս Քրիստոս

Նա, ով փրկում է: Հիսուս Քրիստոսը, իր քավության միջոցով փրկագնում և փրկություն մատուցեց ողջ մարդկությանը: «Փրկիչ»-ը Հիսուս Քրիստոսի անունը և տիտղոսն է:

Տերն իմ լույսն է և իմ փրկությունը՝ **Մադ. Իէ.** 1 (Ել. ԺԵ.1–2, Բ Թագ. ԻԲ.2–3): Ես եմ Տերը. ինձանից բացի փրկիչ չկա՝ **Ես. ԽԳ.11** (ՎևոՒՒ 76.1): Նրա անունը Հիսուս կոչես. որովհետև նա իր ժողովրդին կփրկի իրենց մեղքերից՝ **Մատ. Ա.21**: Այսօր ձեզ Փրկիչ ծնվեց Դավթի քաղաքում, որը Քրիստոս Տերն է՝ **Ղուկ. Բ.11**: Աստված այնպես սիրեց աշխարհը, որ Միածին Որդին եկավ մարդկանց փրկելու՝ **Հովհ. Գ.16–17**: Չկա ուրիշ անուն, բացի Քրիստոսից, որով մարդիկ կկարողանան փրկվել՝ **Գոր. Գ.10–12** (2 Նեփի 25.20, Մոսիա 3.17, 5.8, ՎևոՒՒ 18.23, Մովսես 6.52): Երկնքից սպասում ենք Փրկչին՝ Տեր Հիսուս Քրիստոսին՝ **Փիլ. Գ.20**: Հայրն իր որդուն ուղարկեց՝ աշխարհի Փրկիչը լինելու՝ **Ա Հովհ. Գ.14**: Տերը բարձրացրեց մի Մեսիա՝ աշխարհի Փրկիչ՝ **1 Նեփի 10.4**: Աստծո Գառն աշխարհի Փրկիչն է՝ **1 Նեփի 13.40**: Փրկչի մասին գիտելիքը պիտի տարածվի ամեն ազգի, ցեղի, լեզվի և ժողովրդի մեջ՝ **Մոսիա 3.20**: Քրիստոսը պետք է մահանար, որպեսզի գար փրկությունը՝ **Հել. 14.15–16**: Փրկչի միջոցով արդարացումը և սրբագործումն արդար է և ճշմարիտ՝ **ՎևոՒՒ 20.30–31**: Ես Հիսուս Քրիստոսն եմ՝ աշխարհի Փրկիչը՝ **ՎևոՒՒ 43.34**: Իմ միածինն է Փրկիչը՝ **Մովսես 1.6**: Բոլոր նրանք, ովքեր հավատում են Որդուն և ապաշխարում իրենց մեղքերից, կփրկվեն՝ **Մովսես 5.15**:

ՓՐԿՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ: *Տե՛ս* Փրկագնման ծրագիր

ՓՐԿՈՒԹՅՈՒՆ: *Տե՛ս նաև* Հիսուս Քրիստոս. Մահ հոգևոր. Մահ ֆիզիկական. Ընդհ. Վեհացում.

Փրկագնել, Փրկագնված, Փրկագնում. Փրկագնման ծրագիր. Զավել, Զավություն

Թե՛ ֆիզիկական, թե՛ հոգևոր մահից փրկվելը: Աստծո շնորհով՝ Հիսուս Քրիստոսի մահվան և հարության միջոցով, բոլոր մարդիկ կփրկվեն ֆիզիկական մահից: Աստծո շնորհով ամեն մի անհատ կարող է փրկվել նաև հոգևոր մահից՝ հավատքով առ Հիսուս Քրիստոս: Այդ հավատքը դրսևորվում է ավետարանի օրենքներին ու արարողություններին հնազանդ ապրելով և Քրիստոսին ծառայելով:

Տերն է իմ լույսը և իմ փրկությունը՝ **Մադ. Իէ.** 1: Նա է միայն իմ վեճը և իմ փրկությունը՝ **Մադ. ԿԲ.2**: Ավետարանն Աստծո գործունե է փրկության համար՝ **Հոովմ. Ա.16** (ՎևոՒՒ 68.4): Ահով գործեք ձեր անձերի փրկությունը՝ **Փիլ. Բ.12**: Աստված ձեզ ընտրել է, որ փրկվեք սրբագործմամբ՝ **Բ Թես. Բ.12**: Փրկությունն անհատույց է՝ **2 Նեփի 2.4**: Չկա ավելի մեծ պարգև, քան փրկության պարգևը՝ **ՎևոՒՒ 6.13**: Հիսուս Քրիստոսը միակ անունն է, որով փրկությունը պիտի գա՝ **Մովսես 6.52** (Գոր. Գ.10–12): Մենք հավատում ենք, որ Քրիստոսի քավության միջոցով ողջ մարդկությունը կարող է փրկվել՝ **ՀՀ 1.3**:

Երեխաների փրկությունը. Եթե չդառնաք երեխաների մման, չեք ստնի երկնքի արքայությունը՝ **Մատ. ԺԸ.3**: Փոքր երեխաները նույնպես ունեն հավերժական կյանք՝ **Մոսիա 15.25**: Մանուկների մկրտությունը պղծություն է, և Զավության շնորհիվ փոքր երեխաները կենդանի են Քրիստոսում՝ **Մոր. 8.8–24**: Փոքր երեխաները փրկագնված են Միածին միջոցով. Սատանան չի կարող այայտակղել նրանց՝ **ՎևոՒՒ 29.46–47**: Երեխաներին պետք է ուսուցանել ավետարանը և մկրտել, երբ նրանք ութ տարեկան են՝ **ՎևոՒՒ 68.25–28**: Փոքր երեխաները սրբագործված են Հիսուս Քրիստոսի միջոցով՝ **ՎևոՒՒ 74.7**: Մարդիկ կրկին անմեղ դարձան իրենց մանկության մեջ՝ **ՎևոՒՒ 93.38**: Բոլոր երեխաները, ովքեր մահանում են նախքան պատասխանատվության տարիքին հասնելը, փրկվում են սելեստիալ արքայությունում՝ **ՎևոՒՒ 137.10**: Երեխաներն անմեղ են աշխարհի հիմնադրումից ի վեր՝ **Մովսես 6.54**:

ՓՐԿՈՒԹՅՈՒՆ ՄԱՀԱՅԱՇՆԵՐԻ

ՀԱՄԱՐ: *Տէ՛ս նաև* Հիշատակի

Գիրք. Տոհմաբանություն.

Փրկագնանան ծրագիր. Փրկություն

Հնարավորություն՝ նրանց համար, ովքեր մահացել են, չստանալով ավետարանի փրկարար արարողությունները, որ այդ արարողությունները նրանց համար կատարվեն տաճարներում՝ Եկեղեցու ապրող, արժանավոր անդամների կողմից: Հոգիների աշխարհում մահացածներին ուսուցանվում է ավետարանը, և նրանք կարող են ընդունել այն արարողությունները, որոնք մահկանացու կյանքում կատարվում են նրանց համար:

Եկեղեցու հավատարիմ անդամները, նախնիների անուններն ու ծննդյան քվերը որոշելու համար, հետագոտում և կազմում են ընտանեկան պատմություններ, որ հնարավոր լինի փրկարար արարողություններ կատարել նրանց համար:

Ասա կապվածներին. Դուրս եկեք՝ **Ես. ԽԹ.9** (Ես. ԻԴ.22, 1 Նեփի 21.9): Գերիներին ազատություն հրատարակելու՝ **Ես. ԿԱ.1** (Դուկ. Դ.19): Նա հայրերի սրտերը զավակներին պիտի դարձնի՝ **Մաղ. Գ.5-6** (3 Նեփի 25.5-6, ՎևոՒ 110.13-16): Մեռելները կլեն Աստծո Որդու ձայնը՝ **Հովհ. Ե.25**: Ապա ինչո՞ւ են նրանք մկրտվում մեռելների համար՝ **Ա Կռք. ԺԵ.29**: Քրիստոսը քարոզեց բանտում եղած հոգիներին՝ **Ա Պետ. Գ.18-20**: Այս պատճառով ավետարանը քարոզեց մեռելներին՝ **Ա Պետ. Դ.6**: Որդին այցելեց բանտում եղած հոգիներին՝ **ՎևոՒ 76.73**: Ապա գալիս է նրանց փրկագնույնը, ովքեր ստացան իրենց բաժինն այդ բանտում՝ **ՎևոՒ 88.99**: Մկրտության ավագան չկա երկրի վրա, որ իմ Սրբերը կարողանան մկրտել նրանց համար, ովքեր մահացել են՝ **ՎևոՒ 124.29**: Բոլորը մահացածները, ովքեր ընդունած կլինեն ավետարանը, կլինեն սելեստիալ արքայության ժառանգները՝ **ՎևոՒ 137.7-10**: Աստծո Որդին հայտնվեց՝ ազատություն հայտարարելով գերիներին, ովքեր հավատարիմ էին եղել՝ **ՎևոՒ 138.18**: Բոլոր այն ոգիները, որոնք բանտում էին, առաջ եկան՝ **Մովսես 75.7**:

ՔԱՀԱՆԱՆ ԱՀԱՐՈՆՅԱՆ

ՔԱՀԱՆԱՅՈՒԹՅՈՒՆ: *Տէ՛ս նաև*

Ահարոն՝ Մովսեսի եղբայր.

Ահարոնյան Քահանայություն.

Քահանայապետ

Ահարոնյան Քահանայության պաշտոն: Հնում, Ղևտական Քահանայության բարձրագույն պաշտոնը կրում էր միայն Ահարոնը և նրա հետնորդները: Երբ Քրիստոսը կատարեց Մովսեսի օրենքը, այդ սահմանափակմանը վերջ դրվեց:

Բացառվում են քահանայի պարտականությունները վերականգնված Եկեղեցում՝ **ՎևոՒ 20.46-52**:

ՔԱՀԱՆԱ՝ ՄԵԼՔԻՍԵՂԵԿՅԱՆ

ՔԱՀԱՆԱՅՈՒԹՅՈՒՆ: *Տէ՛ս նաև*

Մելքիսեղեկյան Քահանայություն.

Քահանայապետ

Այն անձնավորությունը, որն Աստծուն ուղղված կրոնական ծեսեր է կատարում ուրիշների համար: Շատ հաճախ, սուրբ գրքերում, քահանաներն իրականում քահանայապետեր են ըստ Մելքիսեղեկի կարգի (Ամնա 13.2): Նրանք, ովքեր ստանում են Աստծո փառքի լիությունը, հարությունից հետո դառնում են քահանաներ և քազավորներ սելեստիալ աշխարհում:

Մելքիսեղեկը բարձրյալ Աստծո քահանա էր՝ **ԾՃ. ԺԴ.18**: Դու քահանա ես հավիտյան Մելքիսեղեկի կարգի պես՝ **Մաղ. ՃԺ.4** (Եբր. Ե.6, Է.17, 21): Քրիստոսը մեզ քազավորներ և քահանաներ է դարձրել Աստծո և իր Հոր համար՝ **Հայտ. Ա.6** (Հայտ. Ե.10, Ի.6): Հիչեք, որ Տեր Աստված քահանաներ կարգեց՝ ըստ իր սուրբ կարգի՝ **Ամնա 13.1-20**: Նրանք, ովքեր առաջ են գալիս արդարների հարության ժամանակ, քահանաներ են ու քազավորներ՝ **ՎևոՒ 76.50, 55-60**:

ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏ: *Տէ՛ս նաև*

Ահարոնյան Քահանայություն.

Մելքիսեղեկյան Քահանայություն

Քահանայության պաշտոն. Սուրբ գրքերում «քահանայապետի» մասին խոսվում է երկու իմաստով. (1) Մելքիսեղեկյան Քահանայության պաշտոն. և (2) Մովսեսի օրենքի ներքո՝ Ահարոնյան Քահանայության նախագահող պաշտոնյա.

Առաջինը վերաբերում է Հիսուս Քրիստոսին՝ որպես մեծ Քահանայապետ: Ադամը և բոլոր նահապետները նույնպես քահանայապետ են եղել: Այսօր երեք նախագահող քահանայապետ կազմում են Եկեղեցու Նախագահությունը և նախագահում են բոլոր մյուս քահանայությունները կողմերի և Եկեղեցու անդամների վրա: Այսօր Եկեղեցում, անհրաժեշտության դեպքում, լրացուցիչ արժանի մարդիկ են կարգվում քահանայապետներ: Քահանայապետներ կարող են կանչվել, ի սպաս դրվել և կարգվել, որպես եպիսկոպոսներ (ՎևՈՒ 68.19, 107.69–71):

Երկրորդ իմաստով՝ Մովսեսի օրենքի ներքո, Ահարոնյան Քահանայության նախագահող պաշտոնյային կոչում էին քահանայապետ: Այդ պաշտոնը ժառանգական էր և զալիս էր Ահարոնի ընտանիքի անդամներին միջոցով, ինքը՝ Ահարոնը, լինելով Ահարոնյան կարգի առաջին քահանայապետը (Ել. ԻԸ, ԻԹ, Գև. Ը, ՎևՈՒ 84.18):

Մեքիսդեղեկը բարձրյալ Աստծո քահանա էր՝ Ծճ. ԺԳ.18 (Ալմա 13.14): Քահանայապետները կանչվել և նախապարտադրվել էին աշխարհի հիմնադրումից ի վեր՝ Ալմա 13.1–10: Քահանայապետները դեկավարում են հոգևոր գործերը՝ ՎևՈՒ 107.10, 12, 17:

ՔԱՀԱՆԱՅՈՒԹՅԱՆ

ԲԱՆԱԼԻՆԵՐԸ: Տե՛ս նաև

Առաջին Նախագահություն.
Տնտեսություն. Քահանայություն

Բանալիները նախագահելու իրավունքներն են, կամ գորությունը, որն Աստծուց տրված է մարդուն՝ Աստծո քահանայությունը երկրի վրա ղեկավարելու, հսկելու և կառավարելու համար: Քահանայություն կրողները, որոնք կանչվում են նախագահի կոչման, բանալիները ստանում են իշխանության գծով իրենցից բարձր անձանցից: Քահանայություն կրողները քահանայությունն օգտագործում են միայն այն սահմաններում, որոնք նշվում են բանալիները կրողների կողմից: Եկեղեցու Նախագահը կրում է քահանայության բոլոր բանալիները (ՎևՈՒ 107.65–67, 91–92, 132.7):

Պետրոսը ստացավ արքայության բանա-

լիները՝ Մատ. ԺԶ.19: Հիսուս Քրիստոսի ղեկավարության ներքո Միքայելը (Ադամը) ստացավ փրկության բանալիները՝ ՎևՈՒ 78.16: Արքայության բանալիները միշտ պատկանում են Առաջին Նախագահությանը՝ ՎևՈՒ 81.2: Մեքիսդեղեկյան Քահանայությունը կրում է Աստծո գիտության խորհուրդների բանալիները՝ ՎևՈՒ 84.19: Ջոզեֆ Սմիթը և Օլիվեր Քաուդերին ստացան Իսրայելի հավաքման, Աբրահամի ավետարանի և կնքող գորությունների բանալիները՝ ՎևՈՒ 110.11–16: Տասներկու Առաքյալները կրում են հատուկ բանալիներ՝ ՎևՈՒ 112.16: Առաջին Նախագահությունն ու Տասներկուսը կրում են ժամանակների լրության տնտեսության բանալիները՝ ՎևՈՒ 112.30–34: Քահանայության պաշտոնյաները կրում են բանալիներ՝ ՎևՈՒ 124.123: Նա, ով բանալի ունի, կարող է գիտելիք ձեռք բերել՝ ՎևՈՒ 128.11: Ահարոնյան Քահանայությունը կրում է հրեշտակների սպասավորության, ապաշխարության ավետարանի և մկրտության բանալիները՝ ԶՍ–Պ 1.69 (ՎևՈՒ 13):

ՔԱՀԱՆԱՅՈՒԹՅԱՆ ԵՐԴՈՒՄԸ

ԵՎ ՈՒՆՏԸ: Տե՛ս նաև Երդում.

Ուխտ. Քահանայություն

Երդումը երաշխավորող հավաստում է՝ ճշմարիտ և հավատարիմ լինել տրված խոստումներից: Ուխտը հանդիսավոր խոստում է երկու կողմերի միջև: Ահարոնյան Քահանայությունն ընդունվում է միայն ուխտով: Մեքիսդեղեկյան Քահանայություն կրողները քահանայությունը ստանում են անբարբառ երդումով, ինչպես նաև ուխտով: Երբ քահանայություն կրողները հավատարիմ են մնում և մեծարում են իրենց կոչումը, ինչպես Աստված պատվիրում է, նա օրհնում է նրանց: Նրանք, ովքեր հավատարիմ են մնում մինչև վերջ և անում են այն ամենը, ինչ նա խնդրում է իրենց, կստանան բոլոր բաները, որոնք Հայրն ունի (ՎևՈՒ 84.33–39):

Տերն ուխտ դրեց Աբրահամի հետ, և Աբրահամը հնազանդվեց՝ Ծճ. ԺԵ.18, ԺԷ.1, ԻԲ.16–18: Եզեկիելի ժամանակներում քահանաները չէին արածեցնում հոտը՝ Եզեկ. ԼԳ.2–3: Մադաքիայի ժամանակի քահանաներն ապականել էին ուխտը՝ Մադ. Ա–Բ:

ՔԱՀԱՆԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԵԼ:

Տես Կարգել, Կարգում

ՔԱՀԱՆԱՅՈՒԹՅՈՒՆ: *Տես* *նաև*

Ահարոնյան Քահանայություն.

Չորություն. Իշխանություն.

Կարգել, Կարգում. Մեքիսեդեկյան

Քահանայություն. Քահանայության

բանալիները. Քահանայության

երդումը և ուխտը

Իշխանություն և գորություն, որ Աստված տալիս է մարդուն, որպեսզի նա բոլոր բաներում գործի մարդու փրկության համար (ՎՆՈՒ 50.26–27): Եկեղեցու այն տղամարդիկ, որոնք քահանայություն են կրում և կազմակերպված են քվորումներով ու լիագործված են կատարելու արարողություններ և որոշակի վարչական գործունեություններ Եկեղեցում:

Նրանց օծումն անկասկած հավիտենական քահանայություն կլինի՝ **Ել.** Խ.15 (Թվ. ԻԵ.13): Ես ձեզ կարգեցի՝ **Հովհ.** ԺԵ.16: Դուք էլ շինվեցեք հոգևոր տաճար, սուրբ քահանայություն՝ **Ա Պետ.** Բ.5: Դուք ընտիր ազգ եք, թագավորական քահանայություն՝ **Ա Պետ.** Բ.9 (Ել. ԺԹ.6): Մարդիկ կանչվում են քահանայապետեր իրենց մեծ հավատքի և բարի գործերի շնորհիվ՝ **Ալմա** 13.1–12: Ես մկրտելու գորություն են տալիս ձեզ՝ **3 Նեփի** 11.21: Դուք գորություն կունենաք պարզել Սուրբ Հոգին՝ **Սոր.** 2.2: Ես կիայտնեմ ձեզ քահանայությունը Տոլիա մարգարեի ձեռքով՝ **ՎՆՈՒ** 2.1 (ՋՄ–Պ 1.38): Տերը քահանայությունը հաստատեց նաև Ահարոնի և նրա հետնորդների վրա՝ **ՎՆՈՒ** 84.18: Այս մեծագույն քահանայությունը սպասավորում է ավետարանը՝ **ՎՆՈՒ** 84.19: Նա վերցրեց նրանց միջից Մովսեսին և Սուրբ Քահանայությունը՝ **ՎՆՈՒ** 84.25: Բացատրվում է քահանայության երդումը և ուխտը՝ **ՎՆՈՒ** 84.33–42: Քահանայությունը շարունակվել է ձեր հայրերի ազգատոհմի միջոցով՝ **ՎՆՈՒ** 86.8: Եկեղեցում կա երկու քահանայություն՝ **ՎՆՈՒ** 107.1: Առաջին քահանայությունը Սուրբ Քահանայությունն է՝ ըստ Աստծո Որդու կարգի՝ **ՎՆՈՒ** 107.2–4: Քահանայության իրավունքներն անբաժանորեն կապված են երկնքի գորությունների հետ՝ **ՎՆՈՒ** 121.36: Ոչ մի գորություն կամ ազդեցություն չի կարող և չպետք է պահպանվի,

բացի քահանայության առափնությանը՝ **ՎՆՈՒ** 121.41: Եկեղեցու ամեն մի հավատարիմ, արժանի տղամարդ կարող է ստանալ քահանայություն՝ **ՎՆՈՒ** ՊՀ–2: Մենք հավատում ենք, որ մարդ պետք է կանչվի Աստծո կողմից՝ **ՀՀ** 1.5:

ՔԱՀԱՆԱՅՈՒԹՅՈՒՆ

ԱՀԱՐՈՆՅԱՆ: *Տես* Ահարոնյան

Քահանայություն

ՔԱՀԱՆԱՅՈՒԹՅՈՒՆ

ՄԵԼՔԻՍԵԳԵԿՅԱՆ: *Տես*

Մեքիսեդեկյան Քահանայություն

ՔԱՀԱՆԱՆԵՆԳՈՒԹՅՈՒՆ

Երբ մարդիկ քարոզում են և իրենց բարձր են դնում՝ իբրև մի լույս աշխարհի համար, որպեսզի կարողանան ստանալ շահ և գովասանք աշխարհի. նրանք չեն որոնում Սիոնի բարօրությունը (2 Նեփի 26.29):

Արածեցրեք Աստծո հոտը, ոչ թե պիղծ շահասիրությունով՝ **Ա Պետ.** Ե.2: Եկեղեցիները, որոնք կառուցվել են շահ ստանալու համար, պետք է ցածրացվեն՝ **1 Նեփի** 22.23 (Մորմ. 8.32–41): Քահանանեցություն և անօրինությունների պատճառով Հիսուսը կխաչվի՝ **2 Նեփի** 10.5: Տրեք քահանանեցություն գործադրվեք այս ժողովրդի մեջ, այն լիակատար կործանան կհասցնեք նրանց՝ **Ալմա** 1.12: Հերթանուները լցված կլինեն ամեն տեսակի քահանանեցությամբ՝ **3 Նեփի** 16.10:

ՔԱՂԵԲ

Այն մարդկանցից մեկը, որին Մովսեսն ուղարկել էր՝ հետախուզելու Քանան երկիրը Ելիցին հաջորդող երկրորդ տարում: Միայն նա և Հեսուն տվեցին երկրի մասին ճիշտ նկարագիրը (Թվ. ԺԳ.6, 30, ԺԳ.6–38): Եզիպտոսից դուրս եկած ժողովրդից միայն նրանք 40 տարի կենդանի մնացին անապատում (Թվ. ԻՉ.65, ԼԲ.12, Բ Օր. Ա.36) և մտան Քանան (Հես. ԺԳ.6–14, ԺԵ.13–19):

ՔԱՄ: *Տես* *նաև* Նոյ՝ աստվածաշնչյան հայրապետ

Հին Կտակարանում՝ Նոյի երրորդ որդին (Ծն. Ե.32, Զ.10, Մովսես 8.12, 27):

Նոյը, նրա որդիներն ու նրանց ընտանիքները տապալան մտան՝ **Ծն.** Է.13: Քանա-

նը՝ Քամի որդին, անիծվեց՝ **ԾՃ. Թ.18-25**: Քամի կառավարության ձևը հայրապետական էր, և այն օրհնվեց երկրի օրհնություններով և իմաստությամբ, բայց ոչ քահանայությանը՝ **Աբբ. 1.21-27**: Քամի կինը՝ Եգիպտուսը, Կայենի հետնորդն էր. նրանց դասեր՝ Եգիպտոսի որդիները բնակվեցին Եգիպտոսում՝ **Աբբ. 1.23, 25** (Մաղ. ճԵ.23, ճՁ.21-22):

ՔԱՅԼԵԼ, ՔԱՅԼԵԼ ԱՍՏԾՈ ՀԵՏ:

St'u նաև Արդար, Արդարություն.
Հնազանդություն, Հնազանդ,
Հնազանդվել. Ճանապարհ

Ներդաշնակ լինել Աստծո ուսմունքներին և ապրել ինչպես Աստված կկամենար, որ իր ժողովուրդն ապրի. ընկալունակ և հնազանդ լինել Սուրբ Հոգու հուշումներին:

Որ փորձեն նրանց, թե իմ օրենքի համեմատ կբայլեն, թե ոչ՝ **Ել. ԺՁ.4**: Ոչ մի բարիք չի խնայվի ուղիղ քայլողներից՝ **Մաղ. ԶԳ.11**: Նրանք, ովքեր կբայլեն իմ օրենքներում, և կպահեն իմ իրավունքները, կլինեն իմ ժողովուրդը՝ **Եզեկ. ԺԱ.20-21** (Բ Օր. Ը.6): Տերն ի՞նչ է ուզում քեզանից, բացի միայն Աստծո հետ խոնարհությանը քայլելը՝ **Միքիա Զ.8** (ՎևոՒ 11.12): Լույսի մեջ քայլենք, ինչպես Աստված է լույսի մեջ՝ **Ա Հովհ. 1.7** (Բ Հովհ. 1.6, 4 Նեփի 1.12, Գ Հովհ. 1.4): Քայլեք անձուկ արահետով, որը տանում է դեպի կյանք՝ **2 Նեփի 33.9**: Բենիամին թագավորը քայլում էր մաքուր խղճմտանքով Աստծո առաջ՝ **Մոսիա 2.27**: Չեր պարտականությունն է՝ անարատ քայլել Աստծո սուրբ կարգի համեմատ՝ **Ալմա 7.22**: Եկեղեցու անդամներն աստվածային քայլեր ու վարք պիտի դրսևորեն՝ **ՎևոՒ 20.69**: Ուշք դարձրու մարգարեի խոսքերին և ողջ սրբությանը քայլի Տիրոջ առաջ՝ **ՎևոՒ 21.4**: Երեխաներին ուսուցանեք աղոթել և ուղիղ քայլել Տիրոջ առաջ՝ **ՎևոՒ 68.28**: Մնա ինձ հետ, և ես՝ քեզ հետ. հետևաբար, քայլիր ինձ հետ՝ **Մովսես 6.34**:

ՔԱՆԱՆ, ՔԱՆԱՆԱՅԻ

Հին Կտակարանի ժամանակներում՝ Քամի չորրորդ որդին (ԾՃ. Թ.22, Ժ.1, 6) և Նոյի թողը: Քանանացի անվանում են այն մարդուն, որն այն հողից է, որտեղ սկզբնապես ապրում էր Քանանը, և նաև նրա հետնորդ-

ներին: Քանանացիներ անվանում էին նաև այն ժողովուրդին, որն ապրում էր Պաղեստինի՝ Միջերկրական ծոցի երկայնքով տարածվող հարթավայրում: Այս անունը երբեմն օգտագործվում էր բոլոր ոչ Իսրայելացիների համար, որոնք ապրում էին Հորդանանի արևմտյան մասում, որոնց հույներն անվանում էին Փյունիկեցիներ:

ՔԱՆՔԱՐ

Հնագույն կշռի միավոր կամ դրամի չափ, որը մեծ արժեք ուներ: Այն ծառայում է նաև որպես թանկարժեք մի բանի խորհրդանիշ, ինչպիսին է, օրինակ՝ Հիսուս Քրիստոսի ավետարանը (Մատ. ԻԵ.14-29, Եթեր 12.35, ՎևոՒ 60.2, 13):

ՔԱՉՈՒԹՅՈՒՆ, ՔԱՉԱՐԻ: *St'u*

նաև Հավատք. Վախ

Չվախենալը, հատկապես ճիշտը գործելուց չվախենալը:

Ուժովացեք և քաջ եղեք՝ **Բ Օր. ԼԱ.6** (Հև. Ա.6-7): Շատ քաջ եղեք, որ պահեք և հանեք բոլորը, ինչ որ գրված է՝ **Հև. ԻԳ.6**: Աստված մեզ չի սպել երկչոտության հոգի՝ **Բ Տիմ. Ա.7**: Նրա սիրտը քաջությանը լցվեց, երբ նա լսեց՝ **Ալմա 15.4** (Ալմա 62.1): Հելամանի որդիներն անահաման անվեհեր էին խիզախության մեջ՝ **Ալմա 53.20-21**: Ես երբեք չեի տեսել այդպիսի մեծ արիություն՝ **Ալմա 56.45**: Քաջություն, եղբայրներ. և առաջ, առաջ դեպի հաղթանակ՝ **ՎևոՒ 128.22**:

ՔԱՎԵԼ, ՔԱՎՈՒԹՅՈՒՆ: *St'u նաև*

Աղամի և Եվայի անկումը. Ապաշխարել, Ապաշխարություն. Անմահ, Անմահություն. Աստծո որդիներն ու դուստրերը. Արդարացում, Արդարացնել. Արյուն. Գեթսեմանի. Չոհաբերություն. Խաչ. Խաչելություն. Հարություն. Հաղորդություն. Հիսուս Քրիստոս. Մեղքերի թողություն. Ներել. Շնորհ. Ողորմած, Ողորմություն. Սրբագործում. Փրկագնել, Փրկագնված, Փրկագնում. Փրկագնման ծրագիր. Փրկություն. Քրիստոսի զավակները

Հաշտեցնել մարդուն Աստծո հետ.
Ինչպես օգտագործված է սուրբ գրքերում, քավել նշանակում է կրել գործած

մեղքի պատիժը՝ ապաշխարող մեղսավորից հեռացնելով մեղքի արդյունքը և թույլ տալով, որ նա հաշտություն ունենա Աստծո հետ: Հիսուս Քրիստոսը միակ անճն էր, որն ընդունակ էր կատարյալ քավություն անել ողջ մարդկության համար: Նա կարողացավ դա անել, նախքան աշխարհի ձևավորվելը երած Մեծ Խորհրդում ընտրված և նախակարգված լինելու (Եբեթ 3.14, Մովսես 4.1-2, Աբր. 3.27), իր աստվածային Որդի լինելու և իր անմեղ կյանքի շնորհիվ: Նրա քավությունն ընդգրկում է մարդկության մեղքերի համար նրա տառապանքները Գեթսեմանի այգում, նրա արյուն թափելը, և նրա մահն ու հետագա հարությունը գերեզմանից (Ես. ԾԳ.3-12, Մոսիա 3.5-11, Ալմա 7.10-13): Քավության շնորհիվ, բոլոր մարդիկ մահից կբարձրանան անմահ մարմիններով (Ա Կոր. ԺԵ.22): Քավությունը նաև ուղի է հարթում մեզ համար, որ ներվենք մեր մեղքերից և հավերժ ապրենք Աստծո հետ: Սակայն մարդը, որը հասել է պատասխանատվության տարիքին և ստացել է օրենքը, այս օրհնությունները կարող է ստանալ միայն երբ նա ունի հավատք առ Հիսուս Քրիստոս, ապաշխարում է իր մեղքերից, ստանում է փրկության արարողությունները և հնազանդվում է Աստծո պատվիրաններին: Նրանք, ովքեր չեն հասել պատասխանատվության տարիքին, և նրանք, ովքեր չեն ստացել օրենքը, Քավության շնորհիվ փրկագնվում են: (Մոսիա 15.24-25, Մոր. 8.22): Մուրբ գրքերը պարզորոշ ուսուցանում են, որ եթե Քրիստոսը չքավեր մեր մեղքերը, ոչ մի օրենք, արարողություն կամ գոհաբերություն չէր քավարարի արդարադատության պահանջները, և մարդը երբեք չէր կարող վերադառնալ Աստծո ներկայությունը (2 Նեփի 2, 9):

Սա է իմ արյունը, որ թափվում է շատերի համար՝ ի թողություն մեղքերի՝ **Մատ.** ԻՉ.28: Նրա քրտինքն ինչպես արյան կաթիլներ էր՝ **Ղուկ.** ԻԲ.39-44: Ես կտամ իմ մարմինն աշխարհի կյանքի համար՝ **Հովհ.** Զ.51-52: Ես եմ հարությունը և կյանքը **Հովհ.** ԺԱ.25: Քրիստոսը բոլոր իրեն հնազանդվողների համար հավերժական փրկության պատճառ եղավ՝ **Եբթ.** Ե.9: Մենք սրբագործվում ենք Քրիստոսի թափած արյունով **Եբթ.** Թ, Ժ.1-10: Քրիս-

տոսն էլ մեկ անգամ չարչարվեց մեղքերի համար՝ **Ա Պետ.** Գ.18: Հիսուս Քրիստոսի արյունը մեզ մաքրում է բոլոր մեղքերից՝ **Ա Հովհ.** Ա.7: Նա բարձրացվեց խաչի վրա և սպանվեց մեղքերի համար՝ **1 Նեփի** 11.32-33: Փրկագնումը գալիս է նրանց համար, ովքեր ունեն կոտորված սիրտ և փշրված հոգի՝ **2 Նեփի.** 2.3-10, 25-27: Նա իրեն զոհ մատուցեց մեղքի համար՝ **2 Նեփի** 2.7: Քավությունը մարդուն ազատագրում է Անկումից և փրկում է մահից ու դժոխքից՝ **2 Նեփի** 9.5-24: Անպայման պետք է լինի մի անսահման քավություն՝ **2 Նեփի** 9.7: Հաշվովեք Աստծո հետ՝ Քրիստոսի քավությանը՝ **Հակոբ** 4.11: Նրա արյունը քավություն է բոլոր նրանց մեղքերի համար, ովքեր անգիտակցորեն մեղք են գործել՝ **Մոսիա** 3.11-18: Մարդը փրկություն է ստանում քավության միջոցով՝ **Մոսիա** 4.6-8: Եթե չլինեք Քավությունը, նրանք անխուսափելիորեն կոչնչանային՝ **Մոսիա** 13.27-32: Նա պիտի քավի աշխարհի մեղքերը՝ **Ալմա** 34.8-16: Աստված ինքն է քավում աշխարհի մեղքերը, որպեսզի իրականացնի ողորմության ծրագիրը՝ **Ալմա** 42.11-30: Ես եմ ամբողջ երկրագնդի Աստվածը, որ սպանվել եմ աշխարհի մեղքերի համար՝ **3 Նեփի** 11.14: Ես՝ Աստվածս, տառապել եմ այս բաները բոլորի համար՝ **Վևևի** 19.16: Փոքր երեխաները փրկագնված են իմ Միածնի միջոցով՝ **Վևևի** 29.46-47: Տես ստառապանքներն ու մահը նրա, ով չմեղանչեց՝ **Վևևի** 45.3-5: Դա նմանությունն է Հոր կողմից Միածնի գոհաբերությանը՝ **Մովսես** 5.7: Քրիստոսի Քավության շնորհիվ ողջ մարդկությունը կարող է փրկվել՝ **ՀՀ** 1.3:

ՔԱՎԻՉ: *Տես նաև* Հիսուս Քրիստոս.

Փրկիչ

Հիսուս Քրիստոսը մարդկության Քավիչն է, որովհետև, իր քավությամբ, նա վճարել է մարդկության մեղքերի գինը և հնարավոր է դարձրել բոլոր մարդկանց հարությունը:

Գ.իտեմ, որ քավիչս կենդանի է՝ **Հոբ** ԺԹ.25: Ես քեզ օգնելու եմ, ասում է քեզ փրկագնողը՝ Իսրայելի Սուրբը՝ **Ես.** ԽԱ.14 (Ես. ԽԳ.14, ԽԸ.17, ԾԳ.5, ԾԹ.20): Ես՝ Տերս եմ քո Փրկիչը և քո Քավիչը՝ **Ես.** ԽԹ.26 (Ես. Կ.16): Նրա անունը Հիսուս կղնես. որովհետև նա իր ժողովրդին

կիրկի իրենց մեղքերից՝ **Մատ.** Ա.21: Մարդու Որդին եկավ, որ իր կյանքը շատերի համար փրկանք տա՝ **Մատ.** Ի.28 (Ա Տիմ. Բ.5–6): Իսրայելի Տեր Աստվածն այցելեց և փրկագնեց իր ժողովրդին՝ **Ղուկ.** Ա.68: Աստծո հետ հաշտվեցինք նրա Որդու մահով՝ **Հռովմ.** Ե.10: Հիսուս Քրիստոսն իր անձը մեր համար տվեց, որ մեզ փրկագնի ամեն անօրինությունից՝ **Տիտոս** Բ.13–14: Հիսուս Քրիստոսն իր արյունով լվաց մեզ մեր մեղքերից՝ **Հայտ.** Ա.5: Փրկագնունը Սուրբ Մեսիայի մեջ է և նրա միջոցով՝ **2 Նեփի** 2.6–7, 26: Որդին իր վրա վերցրեց մարդկանց անօրինություններն ու օրինազանցությունները, փրկագնեց նրանց և բավարարեց արդարադատության պահանջները՝ **Մոսիս** 15.6–9, 18–27: Քրիստոսը եկավ փրկագնելու նրանց, ովքեր կմկրտվեն ապաշխարության համար՝ **Ալմա** 9.26–27: Նա աշխարհ եկավ, որ փրկագնի իր ժողովրդին՝ **Ալմա** 11.40–41: Փրկագնունը գալիս է ապաշխարության միջոցով՝ **Ալմա** 42.13–26: Հիսուս Քրիստոսը եկավ, որ փրկագնի աշխարհը՝ **Հեյ.** 5.9–12: Քրիստոսը փրկագնեց մարդկությանը ֆիզիկական և հոգևոր մահից՝ **Հեյ.** 14.12–17: Փրկագնունը գալիս է Քրիստոսի միջոցով՝ **3 Նեփի** 9.17: Ես նա եմ, ով աշխարհի հիմնադրումից ի վեր պատրաստվել էր, որ փրկագնի իմ ժողովրդին՝ **Եթեր** 3.14: Տերը՝ ըն Բավիլոն, մարմնի մեջ մահ տարավ՝ **ՎևոՒ** 18.11: Քրիստոսը տառապել է բոլորի համար, եթե նրանք ապաշխարեն՝ **ՎևոՒ** 19.1, 16–20: Փոքր երեխաները փրկագնված են Միածնի միջոցով՝ **ՎևոՒ** 29.46: Ես ուղարկել եմ աշխարհ իմ Միածին Որդուն՝ աշխարհի փրկագնման համար՝ **ՎևոՒ** 49.5: Քրիստոսը լույսն է և Բավիլոն աշխարհի՝ **ՎևոՒ** 93.8–9: Ջոզեֆ Ֆ. Սմիթը տեսիլք ունեցավ մահացածների փրկագնման վերաբերյալ՝ **ՎևոՒ** 138: Մենք հավատում ենք, որ Քրիստոսի քավության միջոցով ողջ մարդկությունը կարող է փրկվել՝ **ՀՀ** 1.3:

ՔԱՐԹԵՋԻ ԲԱՆՏ (ԱՄՆ): *St'u lmal*

Սմիթ Հայրուս. Սմիթ Ջոզեֆ կրտսեր

Ջոզեֆ և Հայրուս Սմիթները սպանվեցին ամբոխի կողմից՝ 1844թ. հունիսի 27-ին, Քարթեջի բանտում, Իլլինոյս

մահանգ, Ամերիկայի Միացյալ Նահանգներ (ՎևոՒ 135):

ՔԱՐՈՋԵԼ: *St'u lmal* Ավետարան.

Միսիոներական աշխատանք

Ուղերձ հաղորդել, որն ավելի լավ հասկացողություն է տալիս ավետարանի սկզբունքներին և վարդապետությունների վերաբերյալ:

Տերն ինձ օժն է, որ հեզերին ավետիք քարոզեմ՝ **Ես.** ԿԱ.1 (Ղուկ. Գ.16–21): Վեր կաց, գնա Նիսվե քաղաքը և քարոզիր՝ **Հովմ.** Գ.2–10: Այն ժամանակից Հիսուսը սկսեց քարոզել՝ **Մատ.** Գ.17: Գնացեք բոլոր աշխարհը և ավետարանը քարոզեք ամեն արարածի՝ **Մար.** ԺՁ.15: Մենք քարոզում ենք խաչված Քրիստոսին՝ **Ա Կոր.** Ա.22–24: Նա գնաց և քարոզեց բանտում եղած հոգիներին՝ **Ա Պետ.** Գ.19: Ոչինչ չկար, բացի քարոզելուց և նրանց շարունակ սրափեցնելուց՝ Տիրոջ երկյուղի մեջ նրանց պահելու համար՝ **Եմովս** 1.23: Նա պատվիրեց նրանց, որ չքարոզեն ոչինչ, բացի ապաշխարությունից և հավատքից առ Տերը՝ **Մոսիս** 18.20: Խոսքի քարոզելն ուներ մեծ միտում՝ առաջնորդել ժողովրդին անելու այն, ինչն արդար է՝ **Ալմա** 31.5: Դու կարիք չունես ենթադրելու, որ կանչված ես քարոզելու, մինչև որ չկանչվես՝ **ՎևոՒ** 11.15: Ոչ ոքի չպետք է տրվի առաջ գնալ՝ քարոզելու, մինչև որ նա չկարգվի՝ **ՎևոՒ** 42.11: Այս ավետարանը պիտի քարոզվի ամեն ազգի՝ **ՎևոՒ** 133.37: Սկզբից ի վեր Ավետարանը սկսեց քարոզվել՝ **Մովսես** 5.58:

ՔԱՌԻԳԵՐԻ ՕԼԻՎԵՐ

Վերականգնված Եկեղեցու երկրորդ երեցը և Մորմոնի Գրքի աստվածային ծագման և ճշմարտության երեք Վկաներից մեկը: Մորմոնի Գիրքը ոսկե թիթեղներից քարգնամելիս, նա գործում էր որպես Ջոզեֆ Սմիթի դպիր (ՋՍՊ-Պ 1.66–68):

Վկայություն ստացավ Մորմոնի Գրքի քարգնամության ճշմարտության վերաբերյալ՝ **ՎևոՒ** 6.17, 22–24: Կարգվեց Հովհաննես Մկրտչի կողմից՝ **ՎևոՒ** 13 (ՎևոՒ 27.8, ՋՍՊ-Պ 1.68–73, տես 71-րդ հատվածին վերաբերող ծանոթագրությունը): Հետո, երբ դուր հավատք ձեռք բերեք և տեսնեք դրանք ձեր չափերով,

դուք պիտի վկայեք, որ տեսել եք դրանք՝ **ՎՆՈՒ** 17.3, 5: Իմ Հոգով ես քեզ ցույց եմ տվել, որ բաները, որոնք դու գրել ես, ճշմարիտ են՝ **ՎՆՈՒ** 18.2: Նշանակվեց և կարգվեց՝ հայտնությունների տնտեսներից մեկը լինելու՝ **ՎՆՈՒ** 70.3: Ջոզեֆ Սմիթի հետ ստացավ քահանայության բանալիները՝ **ՎՆՈՒ** 110:

ՔԵԲՐՈՆ

Հուդայի հնագույն քաղաք, որը գտնվում էր Երուսաղեմից երեսուներկու կիլոմետր դեպի հարավ: Այնտեղ թաղվել էին Աբրահամը և նրա ընտանիքը (Ծն. ԽԹ.29–32): Այն Դավթի մայրաքաղաքն էր նրա թագավորության վաղ շրջանում (Բ Թագ. Ե.3–5):

ՔԵՐՈՎՔԵՆՆԵՐ

Երկնային էակներին ներկայացնող մարմիններ, որոնց ճշգրիտ տեսքը հայտնի չէ: Քերովքները կոչվում են՝ լինելու սրբազան վայրերի պաշտպան:

Տերը քերովքներն որեց՝ կյանքի ծառի ճանապարհը պահելու համար՝ **ԾՆ. Գ.24** (Ալմա 12.21–29, 42.2–3, Մովսես 4.31): Քավություն կոչվող կափարիչի վրա դրվել էին քերովքների խորհրդանշական պատկերներ՝ **Ել. ԻԵ.18, 22** (Գ Թագ. 2.23–28, Եբր. Թ.5): Քերովքների մասին նշվում է Եգիպտի տեսիլքներում՝ **Եգեկ. Ժ, ԺԱ.22**:

ՔԻՄԲԱԼ, ՄՓՆՍԵՐ Վ.: *Տե՛ս նաև*
Պաշտոնական
հայտարարություն–2

Եկեղեցու տասներկուերորդ Նախագահը նրա հիմնադրումից՝ 1830 թվականից հետո: Սփեյսեր Վ. Քիմբալը Նախագահ է ծառայել 1973թ. դեկտեմբերից մինչև 1985թ. նոյեմբերը: Նա ծնվել էր 1895թ. և մահացավ 1985թ., իննսուն տարեկան հասակում:

1978թ. հունիսին, Առաջին Նախագահությունը հայտարարեց, որ Նախագահ Քիմբալը հայտնություն է ստացել, որը քահանայության և տաճարային օրհնությունները հաստ է դարձնում բոլոր արժանի տղամարդ անդամների՝ **ՎՆՈՒ** ՊՂ–2:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ: *Տե՛ս*

Ընդհանուր համաձայնություն

ՔՎՈՐՈՒՄ: *Տե՛ս նաև* Քահանայություն

Քվորում բառը կարող է օգտագործվել երկու իմաստով՝ (1) Քահանայության միևնույն պաշտոնը կրող տղամարդկանց հատուկ խումբ. (2) Քահանայության խմբի անդամների մեծամասնությունը կամ նվազագույն թիվը, որոնք պետք է ներկա լինեն ժողովին, որպեսզի վարեն Եկեղեցու գործերը (**ՎՆՈՒ** 107.28):

Նկարագրվում են Առաջին Նախագահության, Տասներկուսի և Յոթամասունի քվորումները և նրանց փոխհարաբերությունները միմյանց հետ՝ **ՎՆՈՒ** 107.22–26, 33–34 (**ՎՆՈՒ** 124.126–128): Այդ քվորումների որոշումները պետք է ընդունվեն միաձայն՝ **ՎՆՈՒ** 107.27: Քվորումների որոշումները պետք է կայացվեն ամենայն արդարությամբ՝ **ՎՆՈՒ** 107.30–32: Նկարագրվում են քահանայության քվորումների նախագահների պարտականությունները՝ **ՎՆՈՒ** 107.85–96: Երեցների քվորումը հաստատվել է տեղի ծառայողների համար՝ **ՎՆՈՒ** 124.137:

ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐ: *Տե՛ս նաև*
Աշակերտ. Սուրբ

Անուն, որը տրվել է Հիսուս Քրիստոսին հավատացողներին: Չնայած աշխարհով մեկ այս տերմինի ընդունված կիրառմանը, Տերը Քրիստոսի ճշմարիտ հետևորդներին անվանել է Սրբեր (Գոր. Թ.13, 32, 41. Ա Կոր. Ա.2, ՎՆՈՒ 115.4):

Աշակերտներին կոչեցին Քրիստոնյաներ՝ **Գոր. ԺԱ.26**: Տրե մեկն ինչպես Քրիստոնյա չարչարվի, թող չամաչի՝ **Ա Պետ. Գ.16**: Ուխտի շնորհիվ, որ դուք արել եք, դուք կըզվեք Քրիստոսի զավակներ՝ **Մոսիա 5.7**: Եկեղեցու ոչ անդամները ճշմարիտ հավատացյալներին անվանում էին Քրիստոնյաներ՝ **Ալմա 46.13–16**:

ՔՐԻՍՏՈՍ: *Տե՛ս* Հիսուս Քրիստոս

ՔՐԻՍՏՈՍԻ ՉԱՎԱԿՆԵՐԸ: *Տե՛ս նաև* Աստծո որդիներն ու դուստրերը. Ծնված. Հիսուս Քրիստոս. Վերստին ծնված, Աստծուց ծնված

Նրանք, ովքեր ընդունել են Հիսուս Քրիստոսի ավետարանը.

Ով որ իր անձն այս երեխայի նման խոնարհեցնի, նա է ամենամեծը՝ **Մատ. ԺԸ.1–4**: Հավատացեք լույսին, որ լույսի

որոյիք լինե՛ք՝ **Հովհ.** ԺԲ.36: Հանեք բնական մարդուն և դարձե՛ք ինչպես երեխա՝ **Մոսիա** 3.19, 27.25–26: Ուխտի շնորհիվ, որ դուք արել եք, դուք կկոչվեք Քրիստոսի զավակներ՝ **Մոսիա** 5.7: Եթե դուք որդեգրեք այն ամենը, ինչ բարի է, դուք, անշուշտ, կլինե՛ք Քրիստոսի զավակը՝ **Մոր.** 7.19: Բոլոր նրանց, ովքեր ընդունեցին ինձ, ես գործություն տվեցի՝ դառնալու իմ որդիները՝ **ՎևոՒԹ** 39.4: Մի վախեցե՛ք, փոքր երեխաներ, քանզի դուք իմն եք՝ **ՎևոՒԹ** 50.40–41: Ահա, դու մեկ ես ինձանում՝ Աստծո որդի՝ **Մովսես** 6.68:

ՔՐԻՍՏՈՍԻ ՎԱՐԳԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ: *Տե՛ս նաև* Ավետարան. Փրկագման ծրագիր

Հիսուս Քրիստոսի ավետարանի և ուսմունքների սկզբունքները:

Անձրևի պես պիտի կաթի իմ վարդապետությունը՝ **Բ Օր.** 1.Բ.2: Տրտնջացողները կտվորեն վարդապետությունը՝ **Ես.** ԻԹ.24: Ժողովուրդները զարմանում էին նրա վարդապետության վրա՝ **Մատ.** Է.28: Իմ վարդապետությունն ինը չէ, այլ ինձ ուղարկողինն է՝ **Հովհ.** Է.16: Ամեն սուրբ գիրք օգտակար է վարդապետության համար՝ **Բ Տիմ.** Գ.16: Սա է Քրիստոսի վարդապետությունը, և միակ ճշմարիտ վարդապետությունը Հոր՝ **2 Նեփի** 31.21 (2 Նեփի 32.6): Չեր մեջ չպետք է լինեն վիճաբանություններ իմ վարդապետության կետերի վերաբերյալ՝ **3 Նեփի** 11.28, 32, 35, 39–40: Սատանան մարդկանց սրտերը հակառակության է դրդում իմ վարդապետության կետերի վերաբերյալ՝ **ՎևոՒԹ** 10.62–63, 67: Երեխաներին ուսուցանեք ապաշխարության, հավատքի՝ առ Քրիստոսը, մկրտության և Սուրբ Հոգու պարզևի վարդապետությունը՝ **ՎևոՒԹ** 68.25: Միմյանց ուսուցանեք արքայության վարդապետությունը՝ **ՎևոՒԹ** 88.77–78: Քահանայության վարդապետությունը կիջնի քո հոգու վրա՝ **ՎևոՒԹ** 121.45:

ՔՈՒՅՐ: *Տե՛ս նաև* Եղբայրներ, Եղբայր. Մարդ, Մարդիկ

Որպես մեր Երկնային Հոր զավակներ՝ բոլոր տղամարդիկ և կանայք եղբայրներ և քույրեր են: Եկեղեցու կին անդամներին ու ընկերներին Եկեղեցուն հաճախ դիմում են որպես քույրեր:

Ով որ կատարում է իմ Հոր կամքը, նա իմ եղբայրն է և քույրը՝ **Մատ.** ԺԲ.50 (Մար. Գ.35): Ներկայացվում են այն օրենքները, որոնք ղեկավարում են Եկեղեցու եղբայրների և քույրերի միջև մեղքերի խստովանությունը՝ **ՎևոՒԹ** 42.88–93:

ՔՈՒՆ

Հանգստի վիճակ, որի ժամանակ մարդ անգործունյա է և անգիտակից: Տերը խորհուրդ է տվել իր Սրբերին չքնել ավելի շատ, քան անիրաժեշտ է (ՎևոՒԹ 88.124): Քունը կարող է խորհրդանշել նաև հոգևոր մահը (Ա Կոր. ԺԱ.30, 2 Նեփի 1.13) կամ ֆիզիկական մահը (Մորմ. 9.13):

ՕԺՏՈՒՄ: *Տե՛ս նաև* Տաճար՝ Տիրոջ տուն

Ընդհանուր իմաստով՝ Աստծուց ստացած գործքյան պարզև: Եկեղեցու արժանի անդամները տաճարային արարողությունների միջոցով կարող են գործքյան պարզև ստանալ, որը նրանց կտա Սուրբ Քահանայության ուխտերը և հրահանգները, որոնք անիրաժեշտ են վեհացման հասնելու համար: Օժտումը հրահանգներ է ներառում փրկության ծրագրի վերաբերյալ:

Այնտեղ դուք գործքյանք կօժտվեք բարձրից՝ **ՎևոՒԹ** 38.32, 38 (Ղուկ. ԻԳ.49, ՎևոՒԹ 43.16): Տուն կառուցե՛ք, մի տուն, որտեղ ես նախատեսել եմ ի վերուստ գործքյանք օժտել նրանց, որոնց ընտրել են՝ **ՎևոՒԹ** 95.8: Ես մեծ օժտում և օրհնություն եմ պատրաստել՝ **ՎևոՒԹ** 105.12, 18, 33: Շատերը կցնձան այն օժտման հետևանքով, որով իմ ծառաներն օժտվել են՝ **ՎևոՒԹ** 110.9: Փառք, պատիվ և օժտում է տրվում իմ սուրբ տան արարողությանը՝ **ՎևոՒԹ** 124.39: Նրանք, ովքեր կանչվում են Հոր կողմից, ինչպես Ահարոնը, օժտվում են քահանայության բանալիներով՝ **ՎևոՒԹ** 132.59:

ՕԾԵԼ: *Տե՛ս նաև* Հիվանդների սպասավորում. Յուղ

Հին ժամանակներում Տիրոջ մարգարեները յուղով օծում էին նրանց, ովքեր պետք է հատուկ պարտականություններ կրեին, ինչպես Ահարոնը կամ քահանաները կամ թագավորները, որոնք պիտի կառավարեին Իսրայելի վրա: Այսօր՝ Եկեղեցուն, օծել նշանակում է մեկ-երկու կաթիլ

նվիրագործված յուղ կաթեցնել մարդու գլխին՝ որպես հատուկ օրհնության մաս: Սա կարող է արվել միայն Մելքիսեդեկյան Քահանայության իշխանությամբ և գորությանը: Օծելուց հետո, այդ նույն քահանայության իշխանությամբ գործող անձը կարող է կնքել օծումը և օծված անձին տալ հատուկ օրհնություններ:

Օծիր նրանց և նվիրաբերիր նրանց, որպեսզի ծառայեն ինձ՝ **Ել.** ԻԸ.41 (Ղև. Ը.6–12, 30): Նրան իշխան օծիր իմ ժողովուրդ Իսրայելի վրա՝ **Ա.Թագ.** Թ.16, Ժ.1: Երեցները պետք է օծեն և օրհնեն հիվանդներին՝ **Հակ.** Ե.14–15 (ՎևոՒ 42.44):

ՕԾՅԱԼԸ: *Տե՛ս նաև* Հիսուս Քրիստոս. Մեսիա

Հիսուսին անվանում են Քրիստոս (հունարեն բառ) կամ Մեսիա (արամեական բառ): Երկու բառերն էլ նշանակում են «օծյալ»: Նա Հոր միակ օծյալն է, որ լինի Հոր անձնական ներկայացուցիչը բոլոր բաներում, որոնք վերաբերում են մարդկության փրկությանը:

Տերն օծել է ինձ՝ **Ես.** ԿԱ.1–3: Նա օծել է մեկի, որ քարոզի ավետարանը՝ **Ղուկ.** Գ.16–22: Հիսուսն օծվել էր Հայր Աստծո կողմից **Գոր.** Գ.27: Աստված օծեց Նազովրեցի Հիսուսին՝ **Գոր.** Ժ.38:

ՕՄԵԳԱ: *Տե՛ս* Ալֆա և Օմեգա. Հիսուս Քրիստոս

ՕՄՆԵՐ: *Տե՛ս նաև* Մոսիա՝ Բենիամինի որդի. Մոսիայի որդիները

Մորմոնի Գրքում՝ Մոսիա թագավորի որդին: Օմներն իր եղբայրների հետ գնաց Լամանացիներին քարոզելու (Մոսիա 27.8–11, 34–37, 28.1–9):

ՕՄՆԻ

Նեփիացի հիշատակարան վարող Մորմոնի Գրքում, որը գրել է Ք.ծ.ա. 361 թվականին (Հարոմ 1.15, Օմնի 1.1–3):

Օմնիի գիրքը. Նեփիի փոքր թիբեղներից թարգմանված գիրք Մորմոնի Գրքում: Գիրքն ունի միայն մի գլուխ, որն արձանագրում է Նեփիացիների և Լամանացիների միջև պատերազմը: Օմնին գրել է միայն գրքի առաջին երեք հատվածները: Այա թիբեղները հերքով փոխանցվել են

Ամարոնին, Քենիսին, Աբինադոմին և, ի վերջո, Ամաղեկիին: Ամաղեկին թիբեղները հանձնեց թագավոր Բենիամինին՝ Չարահեմլայի թագավորին:

ՕՐԵՆՔ: *Տե՛ս նաև* Հնազանդություն, Հնազանդ, Հնազանդվել. Մովսեսի Օրենք. Պատվիրաններն Աստծո Օրհնել, Օրհնված, Օրհնություն

Աստծո պատվիրաններն ու կանոնները, որոնց վրա են հիմնված բոլոր օրհնություններն ու պատիժները երկնքում և երկրի վրա: Նրանք, ովքեր հնազանդվում են Աստծո օրենքներին, ստանում են խոստացված օրհնությունները: Մարգարե Ջոզեֆ Սմիթն ուսուցանել է, որ մարդիկ պետք է նաև հնազանդվեն, պատվեն և աջակցեն պետության օրենքներին (ՀՀ 1.12):

Մովսեսի օրենքը նախապատրաստական օրենք էր՝ տղամարդկանց և կանանց Քրիստոսի մոտ բերելու համար: Այն սահմանափակումների, հրամանների և արարողությունների օրենք էր: Այսօր Քրիստոսի օրենքը, որը լրացրեց Մովսեսի օրենքը, ավետարանի լրիվությունն է, կամ «պատության կատարյալ օրենքը» (Հակ. Ա.25):

Աստված պատվիրաններ տվեց Ադամին՝ **ԾՆ.** Ա.28, Բ.16–17: Աստված օրենքներ տվեց Նոյին՝ **ԾՆ.** Թ.1: Տիրոջ օրենքը կատարյալ է՝ հոգին հանգստացնող՝ **Մաղ.** ԺԹ.7: Տերը մեր օրենսդիրն է՝ **Ես.** Լ.Գ.22: Կա մեկ օրենսդիր՝ **Հակ.** Գ.12: Որտեղ չկա օրենք, չկա և պատիժ՝ **2 Նեփի.** 9.25: Օրենք կա տրված՝ **Ալմա** 42.17–22: Մարդիկ կդատվեն ըստ օրենքի՝ **Ալմա** 42.23: Քրիստոսն է օրենքը՝ **3 Նեփի.** 15.9: Բոլոր օրենքները հոգևոր են՝ **ՎևոՒ** 29.34: Ջոզեֆ Սմիթը ստացավ Եկեղեցու օրենքը հայտնությամբ՝ **ՎևոՒ** 42: Նա, ով պահում է Աստծո օրենքը, պետք չէ, որ խախտի երկրի օրենքը՝ **ՎևոՒ** 58.21: Քրիստոսի լույսն այն օրենքն է, որով կառավարվում են բոլոր բաները՝ **ՎևոՒ** 88.7–13: Նա օրենք է տվել բոլոր բաների համար՝ **ՎևոՒ** 88.42–43: Ժողովուրդը պետք է հետևի երկրի օրենքներին՝ **ՎևոՒ** 98.4–5: Երբ մենք օրհնություն ենք ստանում Աստծուց, դա օրենքին հնազանդվելու շնորհիվ է՝ **ՎևոՒ** 130.20–21: Եկեղեցին հայտարարել է իր դավանանքը քաղաքացիական օրենքների վերաբերյալ՝

ՎԼՈՒՒ 134: Մարդկությունը փրկվում է՝ հնազանդվելով ավետարանի օրենքներին և արարողություններին՝ **ՀՀ** 1.3:

ՕՐԸ ՏԻՐՈՋ: *Տես* u Հանգստության օր

ՕՐԻՆԱԿ

Նմուշ, որին մարդ կարող է հետևել՝ որոշակի արդյունքի հասնելու համար: Մուրբ գրքերում *օրինակը*, սովորաբար, նշանակում է նախատիպ՝ կամ որոշակի ձևով ապրելու համար, կամ ինչ-որ բան կառուցելու համար:

Տերն Իսրայելին պատվիրել է խորան կառուցել՝ Մովսեսին ցույց տրված օրինակի համաձայն՝ **Ել**. ԻԵ: Գավիթը Մոդոնոնուն տվեց այն օրինակը, ըստ որի պետք է կառուցվեր տաճարը՝ **Ա ՄՃ**. ԻԸ.11–13: Ինձամով Հիսուս Քրիստոսը կարողանա օրինակ ցույց տալ նրանց, ովքեր պետք է հավատան նրան՝ **Ա Տիմ**. Ա.16: Ես ձեզ օրինակ ցույց կտամ բոլոր բաներում, որպեսզի դուք չխաբվեք՝ **ՎԼՈՒՒ** 52.14:

ՕՐԻՆԱԿԵԼԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐ: *Տես* u Կանոնական գրքեր

ՕՐՀՆԵԼ, ՕՐՀՆՎԱԾ,

ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ: *Տես* u նաև

Հայրապետական օրհնություններ.

Հիվանդների սպասավորում.

Շնորհ. Շնորհակալ,

Շնորհակալություն,

Գոհաբանություն. Օրենք

Աստվածային շնորհ պարգևել ինչ-որ մեկին: Ամեն բան, ինչը նպաստում է ճշմարիտ երջանկությանը, բարեկեցությանը կամ բարգավաճմանը, օրհնություն է:

Բոլոր օրհնությունները հիմնված են հավերժական օրենքների վրա (**ՎԼՈՒՒ** 130.20–21): Քանի որ Աստված ցանկանում է, որ իր զավակներն ուրախություն գտնեն կյանքում (2 Նեփի 2.25), նա օրհնություններ է պարգևում նրանց՝ որպես իր պատվիրաններին հնազանդվելու արդյունք (**ՎԼՈՒՒ** 82.10), որպես քահանայության արարողության աղոթքի պատասխան (**ՎԼՈՒՒ** 19.38, 107.65–67) կամ որպես իր շնորհ (2 Նեփի 25.23):

Օրհնված լինելու մասին սահմանումների քաջ հայտնի թվարկումներ են Երանությունները: (Մատ. Ե.1–12, 3 Նեփի 12.1–12):

Ընդհանուր. Եվ ես քեզ մեծ ազգ պիտի շինեմ, և քեզ օրհնեմ՝ **ԾՖ**. ԺԲ.2–3 (1 Նեփի 15.18, Աբր. 2.9–11): Օրհնություններ կան արդարի գլխին՝ **Առակ**. Ժ.6: Հավատարիմ մարդու օրհնությունները շատ են՝ **Առակ**. ԻԸ.20: Տերը ձեզ համար կրացի երկնքի պատուհանները և օրհնություններ կրպփի՝ **Մաղ**. Գ.10 (3 Նեփի 24.10): Երանություններն օրհնություններ են խոստանում՝ **Մատ**. Ե.1–12 (3 Նեփի 12.1–12): Երանելի են Գառի հարսանիքի ընթրիքին կանչվածները՝ **Հայտ**. ԺԺ.9: Նա, ով արդար է, օրհնվում է Աստծուն՝ **1 Նեփի** 17.35 (Մոսիա 10.13): Եթե դուք կամենաք ականջ դնել, ես ձեզ թողնում եմ օրհնություն՝ **2 Նեփի** 1.28: Ես թողնում եմ ձեզ նույն օրհնությունը՝ **2 Նեփի** 4.9: Նա անմիջապես օրհնում է ձեզ՝ **Մոսիա** 2.24: Տերն օրհնում և բարգավաճություն է տալիս նրանց, ովքեր իրենց վստահությունը դնում են նրա վրա՝ **Հել**. 12.1: Օգնիր առաջ տանել իմ գործը, և դու պիտի օրհնվես՝ **ՎԼՈՒՒ** 6.9: Անդադար աղոթիր, և մեծ կլինի քո օրհնությունը՝ **ՎԼՈՒՒ** 19.38: Մկրտվիր, և դու կստանաս իմ Հոգին, և այնպիսի մեծ օրհնություն, ինչպիսին երբեք չես իմացել՝ **ՎԼՈՒՒ** 39.10: Շատ նեղությունից հետո գալիս են օրհնությունները՝ **ՎԼՈՒՒ** 58.4: Մարդիկ չեն հնազանդվում. ես չեղյալ եմ համարում, և նրանք չեն ստանում օրհնությունը՝ **ՎԼՈՒՒ** 58.32: Դուք չեք հասկացել, թե որքան մեծ օրհնություններ ունի Հայրը ձեզ համար պատրաստած՝ **ՎԼՈՒՒ** 78.17: Բարձրագույն քահանայությունից է գալիս արարողությունների սպասավորումը և օրհնությունները եկեղեցու վրա՝ **ՎԼՈՒՒ** 107.65–67: Կա օրենք, որի վրա հիմնված են բոլոր օրհնությունները՝ **ՎԼՈՒՒ** 130.20: Ովքեր կամենում են օրհնություն ունենալ իմ ձեռքից, պիտի մնան օրենքի մեջ՝ **ՎԼՈՒՒ** 132.5: Օրհնություններ են պահպանվել նրանց համար, ովքեր սիրում են Տիրոջը՝ **ՎԼՈՒՒ** 138.52: Աբրահամը փնտրեց հայրերի օրհնությունները և դրանք սպասավորելու իրավունքը՝ **Աբր**. 1.2:

Երեխաներին օրհնելը. Նա նրանց առավ գիրկը և օրհնեց նրանց՝ **Մաթ**. Ժ.16: Նա վերցրեց նրանց փոքր երեխաներին, մեկ առ մեկ, և օրհնեց նրանց՝ **3 Նեփի** 17.21: Երեցները պետք է օրհնեն երեխաներին՝ Հիսուս Քրիստոսի անունով՝ **ՎԼՈՒՒ** 20.70:

ՕՐՀՆԵՐԳ: *Տե՛ս նաև* Երաժշտություն.
Երգել

Աստծուն ուղղված գովերգ:

Գեթսեմանիում, նախքան Տիրոջ առանձնանալը, Տասներկու Առաքյալներն օրհներգեցին՝ **Մատ.** ԻՁ.30: Տերը Էմմա Սմիթին կանչեց՝ պատրաստելու սրբազան օրհներգերի մի հավաքածու՝ **ՎևՈՒ** 25.11: Արդարների երգն աղոթք է ինձ համար, և այն կպատասխանվի օրհնությամբ նրանց գլխին՝ **ՎևՈՒ** 25.12: Գովք ասեք Տիրոջը՝ երգելով և երաժշտությամբ՝ **ՎևՈՒ** 136.28:

ՖԱՅԵԹ, ՆՅՈՒՒ ՅՈՐՔ (ԱՄՆ)

Պիտեր Ուիթմեր ավագի անձնական ազարակի տեղը, որտեղ շատ հայտնություններ են տրվել Մարգարե Ջոզեֆ Սմիթ կրտսերին: Այստեղ, 1830թ. ապրիլի 6-ին կազմավորվեց Եկեղեցին և լավեց Տիրոջ ձայնը (ՎևՈՒ 128.20):

ՖԵԼՓՍ ՎԻԼՅԱՄ Վ.

Եկեղեցու վաղ անդամ և ղեկավար 1830թ. նրա վերականգնումից հետո: Տերը Վիլյամ Ֆելվսին կանչեց որպես Եկեղեցու տպագրիչ (ՎևՈՒ 57.11, 58.40, 70.1):

ԱՍՏՎԱԾԱՆՉԻ ՋՈՋԵՖ ՍՄԻԹԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱՆԻ

Հետևյալն ընտիր հատվածներ են Աստվածաշնչի՝ Հակոբ Թագավորի Տարբերակի Ջոզեֆ Սմիթի Թարգմանությունից (ՋՍԹ): Տերը ոգեշնչեց Մարգարե Ջոզեֆ Սմիթին, որ վերականգնի Աստվածաշնչյան ձեռագրի ճշմարտությունները, որոնք կորել կամ փոփոխվել էին բնագիր ձեռագրերը գրելուց հետո: Այդ վերականգնված ճշմարտությունները պարզեցնում են վարդապետությունը, և զարգացնում սուրբ գրքերի ըմբռնումը: Հատվածները, որոնք ընտրվել են Ուղեցույցի համար, կօգնեն ձեզ զարգացնել սուրբ գրքերի ըմբռնումը, անկախ այն բանից, թե որ լեզվով է թարգմանված:

Քանի որ Տերը Ջոզեֆին հայտնել է որոշակի ճշմարտություններ, որոնք մի ժամանակ գրել էին բնագրի հեղինակները, Ջոզեֆ Սմիթի Թարգմանությունը նման չէ աշխարհում գոյություն ունեցող Աստվածաշնչյան որևէ այլ թարգմանության: Այդ իմաստով, *թարգմանություն* բառն օգտագործվում է սովորականից ավելի լայն և տարբեր իմաստով, քանզի Ջոզեֆի թարգմանությունն ավելի շատ հայտնություն էր, քան բառացի թարգմանություն մի լեզվից մյուսը: ՋՍԹ-ի մասին լրացուցիչ տեղեկությունների համար, տես «Ջոզեֆ Սմիթի Թարգմանություն (ՋՍԹ)» բառահոդվածը՝ ուղեցույցի այբբենական կարգով թվարկված թեմաներում:

Հետևյալ լուսաբանումը ցույց է տալիս ՋՍԹ-ի ընտրանիի մի օրինակ.

Թավ տառերով այս հղումը Հակոբ Թագավորի Աստվածաշնչի Ջոզեֆ Սմիթի թարգմանությունից է: Քանի որ նրա թարգմանությունն Աստվածաշնչի տեքստում բառեր է վերականգնել, հատվածների թվերը կարող են տարբերվել այն հրատարակությունից, որը դուք օգտագործում եք:

ՋՍԹ, Մատթեոս 4.1, 5–6, 8–9

(համեմատիր Մատթեոս Դ.1, 5–6, 8–9. նմանատիպ փոփոխություններ են կատարվել Դուկաս Դ.2, 5–11-ում)

(Հիսուսը տարվեց Հոգու կողմից, այլ ոչ Սատանայի):

1 Այն ժամանակ Հիսուսը Հոգու կողմից տարվեց անապատ, որ Աստծո հետ լինի:

5 Այն ժամանակ Հիսուսը տարվեց սուրբ քաղաք, և Հոգին կանգնեցրեց նրան տաճարի աշտարակի վրա:

6 Ապա դևը եկավ նրա մոտ և ասաց. Եթե դու Աստծո Որդին ես, ցած գցիր քեզ. որովհետև գրված է՝ Իր հրեշտակներին կհրամայի քեզ համար. և իրենց ձեռքերի վրա կբարձրացնեն քեզ, որ չլինի թե երբևէ ոտքդ քարին դիպչի:

8 Եվ դարձյալ, Հիսուսը Հոգում էր, և այն բարձրացրեց նրան շատ բարձր մի սար, և նրան ցույց տվեց աշխարհի բոլոր թագավորություններն ու դրանց փառքը:

9 Եվ դևը կրկին եկավ նրա մոտ և ասաց. Այս բոլորը ես կտամ քեզ, եթե ընկնես ու երկրպագես ինձ:

Փակագծերում ձեռ Աստվածաշնչի հղումն է, որի հետ դուք պետք է համեմատեք Ջոզեֆ Սմիթի թարգմանությունը:

Այս հաղորդագրությունը բացատրում է, թե ինչ վարդապետություն է պարզաբանել Ջոզեֆ Սմիթը իր թարգմանությանը:

Սա տեսան է, ինչպես որ Ջոզեֆ Սմիթը թարգմանել է այն:

ՋԱԹ, ԾՆՆՂՈՑ 9.10-15 (համեմատի՛ր ԾՆՆՂՈՑ Թ.3-9)

(Մարդը պատասխան կտա սպանության և նաև անասունի կյանքն անտեղի վերցնելու համար):

10 Բայց արյունն ամեն մարմնի, որը ձեզ տվել են կերակրի համար, պիտի թափվի գետնի վրա, որը տանում է նրա կյանքը, և արյունը դուք չպետք է ուտեք:

11 Եվ, անկասկած, արյուն չպետք է թափվի, միայն դա լինի մաի համար, որ ձեր կյանքը փրկեք, և ամեն կենդանու արյունը ես ձեր ձեռքից կպահանջեմ:

12 Եվ ով որ մարդու արյուն թափի, մարդով նրա արյունը պիտի թափվի. քանզի մարդը չպետք է մարդու արյուն թափի:

13 Քանզի ես պատվիրան են տալիս, որ ամեն մարդու եղբայր պետք է պահպանի մարդու կյանքը, որովհետև իմ պատկերով են ստեղծել մարդուն:

14 Եվ ես պատվիրան են տալիս ձեզ. Պտղաբեր եղեք և բազմացեք. շատացեք երկրի վրա և բազմացեք նրանում:

15 Եվ Աստված խոսեց Նոյի հետ և նրա որդիների հետ, որ նրա հետ էին՝ ասելով. Եվ ես, ասա ես իմ ուխտը կհաստատեն ձեզ հետ, որը ես արեցի ձեր հայր Ենովքի հետ՝ ձեզանից հետո ձեր սերնդի վերաբերյալ:

ՋԱԹ, ԾՆՆՂՈՑ 9.21-25 (համեմատի՛ր ԾՆՆՂՈՑ Թ.16-17)

[Ծիածանը կապվել էր երկնքում, որպես Ենովքի և Նոյի հետ Աստծո ուխտի հիշեցում: Վերջին օրերին Անդրանիկի եկեղեցու ընդհանուր ժողովը (Ենովքի ժամանակների Տիրոջ Միոնը. տե՛ս Մովսես 7) կմիանա արդարներին երկրի վրա]:

21 Եվ աղեղն ամպի մեջ կլինի. Եվ ես կնայեմ դրան, որպեսզի հիշեմ այն հավիտենական ուխտը, որը ես արել եմ քո հայր Ենովքի հետ. որպեսզի, երբ մարդիկ պահեն բոլոր պատվիրանները, Միոնը կրկին գա երկիր, Ենովքի քաղաքը, որը ես հափշտակել եմ իմ մոտ:

22 Եվ սա է իմ հավիտենական ուխտը, որ երբ քո ժառանգներն ընդունեն ճշմարտությունը և նայեն վերև, այն ժամանակ Միոնը կնայի ներքև և բոլոր երկինքները կցնցվեն ուրախությունից, և երկիրը կողողա ուրախությունից.

23 Եվ անդրանիկի եկեղեցու ընդհանուր ժողովը կիջնի երկնքից, և կտիրի երկրին, և տեղ կունենա, մինչև որ վերջը գա: Եվ սա է այն հավիտենական ուխտը, որը ես արել եմ քո հայր Ենովքի հետ:

24 Եվ աղեղն ամպի մեջ կլինի, և ես կհաստատեմ իմ ուխտը քեզ հետ, որը ես արել եմ իմ և քո միջև, ամեն մարմնի՝ կենդանի արարածի համար, որը կլինի երկրի վրա:

25 Եվ Աստված ասաց Նոյին. Սա է այն ուխտի նշանը, որը ես հաստատեցի իմ և քո միջև. ամեն մարմնի համար, որը կլինի երկրի վրա:

ՋԱԹ, ԾՆՆՂՈՑ 14.25-40

(համեմատի՛ր ԾՆՆՂՈՑ ԺԴ-)

(Նշվում է Մեքիսեդեկի մեծ ծառայությունը. Նկարագրվում է Մեքիսեդեկյան Քահանայության գործությունն ու օրհնությունները):

25 Եվ Մեքիսեդեկը բարձրացրեց իր ձայնը և օրհնեց Աբրամին:

26 Արդ, Մեքիսեդեկը հավատքի մարդ էր, որն արդարություն էր գործում. և երեխա ժամանակ նա վախենում էր Աստծուց և փակում էր առյուծների բերանը, և զսպում էր կրակի կատաղությունը:

27 Եվ այդպես, հաստատված լինելով Աստծո կողմից, նա քահանայապետ էր կարգվել՝ ըստ այն ուխտի կարգի, որն Աստված կապել էր Ենովքի հետ,

28 Այն լինելով ըստ Աստծո Որդու սուրբ կարգի. կարգ, որը չէր եկել մարդու կողմից, ոչ էլ մարդու կամքով. ո՛չ հորից, ո՛չ էլ մորից. ո՛չ օրերի սկզբից, ո՛չ էլ տարիների վերջից. այլ Աստծուց.

29 Եվ այն համձնվել էր մարդկանց՝ իր իսկ ձայնի կանչով, իր իսկ կամքի համաձայն, բոլոր նրանց, ովքեր հավատացան նրա անվանը:

30 Քանզի Աստված, երդում անելով Ենովքին և նրա սերնդին, իրենով երդվելով. որ ամեն ոք, ով կարգվում է այս կարգին ու կոչմանը, գործություն կունենա, հավատքով, սարերը փշրելու, ծովերը բաժանելու, ջրերը ցամաքեցնելու, դրանց հոսանքը փոխելու.

31 Ազգերի բանակներին դեմ կանգնելու, երկիրը բաժանելու, ամեն կապ արձակելու, Աստծո ներկայության մեջ կանգնելու. ամեն ինչ անելու՝ համաձայն նրա կամքի, համաձայն նրա հրամանի,

իշխանություններն ու գորությունները հնազանդեցնելու. և դա՛ Աստծո Որդու կամքով, որը կար աշխարհի հիմնադրումից առաջ:

32 Եվ մարդիկ, ունենալով այդ հավատքը, հասնելով Աստծո այդ կարգին, փոխակերպվում էին և վերցվում երկինք:

33 Արդ, Մելքիսեդեկն այս կարգի քահանա էր. ուստի, նա խաղաղություն գտավ Սաղեմում և կոչվեց խաղաղության Իշխան:

34 Եվ նրա ժողովուրդն արդարություն գործեց, և հասավ երկինք, և փնտրեց Ենովքի քաղաքը, որն Աստված վերցրել էր մինչ այդ, այն առանձնացնելով երկրից, պահպանելով վերջին օրերի, կամ աշխարհի վերջի համար.

35 Եվ ասել է, և երդումով երդվել, որ երկինքներն ու երկիրը պիտի միանան, և Աստծո որդիները պիտի փորձվեն այնպես, ինչպես թե կրակով:

36 Եվ այս Մելքիսեդեկը, այսպես արդարություն հաստատելով, իր ժողովրդի կողմից կոչվել էր երկնքի թագավոր, կամ, այլ խոսքով, խաղաղության Թագավոր:

37 Եվ նա բարձրացրեց իր ձայնը և օրհնեց Աբրամին՝ լինելով քահանայապետը և Աստծո շտեմարանի պահապանը.

38 Նա, ում Աստված նշանակել էր, որ տասանորդներ ստանա աղքատների համար:

39 Ուստի, Աբրամը նրան տասանորդ վճարեց այն ամենից, ինչ ուներ, բոլոր հարստություններից, որ նա տնօրինում էր, որից Աստված տվել էր ավելի շատ, քան նա կարիք ուներ:

40 Եվ եղավ այնպես, որ Աստված օրհնեց Աբրամին, և տվեց նրան հարբստություններ և պատիվ և հողեր՝ հավիտենական տիրապետության համար. այն ուխտի համաձայն, որը նա արել էր, և այն օրհնության համաձայն, որով Մելքիսեդեկը նրան օրհնել էր:

ՉՄԹ, ԾՆՆՈՒՄ 15.9–12 (համեմատի՛ր ԾՆՆՈՒՄ ԺԵ.1–6)

(Աբրահամը տեսիլքում տեսավ Աստծո Որդուն և ինձացավ հարություն մասին):

9 Եվ Աբրամն ասաց. Տեր Աստված, դու

ի՞նչպես կտաս ինձ այդ երկիրը՝ որպես հավերժական ժառանգություն:

10 Եվ Տերն ասաց. Թեև մեռած լինելիք, մի՞թե ես չէի կարող տալ այն քեզ:

11 Եվ եթե մեռնես, դու կտիրես նրան, քանզի օրը գալիս է, որ Մարդու Որդին կապրի. բայց ի՞նչպես նա կապրի, եթե չմեռնի. առաջին հերթին նա պիտի կենդանացվի:

12 Եվ եղավ այնպես, որ Աբրամն առաջ նայեց և տեսավ Մարդու Որդու օրերը և ուրախացավ, և նրա հոգին հանգստություն գտավ, և նա հավատաց Տիրոջը. և Տերը դա արդարություն համարեց նրա համար:

ՉՄԹ, ԾՆՆՈՒՄ 17.3–7, 11–12 (համեմատի՛ր ԾՆՆՈՒՄ ԺԵ.3–12)

(Աստված Աբրահամի հետ հաստատում է թրվփատության ուխտը: Աբրահամին հայտնի է դարձվել մկրտության արարողությունը և այն տարիքը, որում երեխաները դառնում են պատասխանատու):

3 Եվ եղավ այնպես, որ Աբրամն իր երեսի վրա ընկավ և կանչեց Տիրոջ անունը:

4 Եվ Աստված խոսեց նրա հետ՝ ասելով. Իմ ժողովուրդը շեղվել է իմ ցուցումներից և չի պահում իմ արարողությունները, որոնք տվեցի նրանց հայրերին.

5 Եվ չի հետևում իմ օծությանը և թղմանը, կամ մկրտությանը, որը ես պատվիրել եմ նրան.

6 Այլ շեղվել է պատվիրանից և իր վրա է վերցրել երեխաների լվացումը և արյուն ցողելը.

7 Եվ ասում է, թե արդար Աբելի արյունը հեղվել է մեղքերի համար. և չի հասկացել, թե ինչով է պատասխանատու իմ առաջ:

11 Եվ ես կհաստատեմ թլփատության ուխտը քեզ հետ, և դա կլինի իմ ուխտն իմ ու քո միջև, և քեզանից հետո քո սերնդի միջև, նրանց սերունդների ընթացքում. որ դու ընդմիջտ իմանաս, որ երեխաները պատասխանատու չեն իմ առաջ, մինչև ութ տարեկանը:

12 Եվ դու պիտի հետևես, որ պահես բոլոր իմ ուխտերը, որով ուխտել եմ քո հայրերի հետ. և պիտի պահես պատվիրանները, որոնք տվել եմ քեզ իմ բերանով, և ես Աստված՝ կլինեմ քեզ համար և քեզանից հետո՝ քո սերնդի համար:

ՋՄԹ, ԾՆՆՂՈՑ 17.23 (համեմատի՛ր ԾՆՆՂՈՑ ԺԷ.17)

(Արրահամն ուրախացավ, երբ կանխագուշակվեց Իսահակի ծնունդը):

23 Այն ժամանակ Արրահամն իր երեսի վրա ընկավ և ուրախացավ, և իր սրտում ասաց. Երեխա պիտի ծնվի նրան, ով հարյուր տարեկան է, և Սարրան, որ իննը-սուն տարեկան է, պիտի ծննդաբերի:

ՋՄԹ, ԾՆՆՂՈՑ 19.9–15 (համեմատի՛ր ԾՆՆՂՈՑ ԺԹ.5–10)

(Ղովոը դիմակայեց Սողոմի ամբարշտությանը):

9 Եվ նրանք ասացին. Դեմ գնա: Եվ բարկացած էին նրա վրա:

10 Եվ նրանք իրար մեջ ասացին. Սա պանդխտության է եկել մեր մեջ, և հիմա ուզում է իրեն դատավոր դարձնել. հիմա մենք սրա հետ նրանցից ավելի վատ կվարվենք:

11 Ուստի, ասացին նրան. Մենք կվերցնենք այդ մարդկանց, և նաև քո աղջիկներին. և կվարվենք նրանց հետ, ինչպես հաճո է մեզ:

12 Արդ, Սա Սողոմի ամբարշտությունից հետո եր:

13 Եվ Ղովոն ասաց. Ահա ես երկու աղջիկ ունեմ, որոնք այր չեն գիտեցել. թողեք, խնդրում եմ, աղաչո՛ւմ եմ ձեզ, իմ եղբայրնե՛ր, որ նրանց դուրս չբերեմ ձեր մոտ. և դուք չանեք նրանց հետ ձեր աչքին հաճո եղածը.

14 Քանզի Աստված չի արդարացնի իր ծառային այս բանում. ուստի, թողե՛ք, աղաչո՛ւմ եմ ձեզ, իմ եղբայրնե՛ր, այս մեկ անգամ միայն, որ այս մարդկանց հետ ոչինչ չամեք, որ նրանք խաղաղություն գտնեն իմ տանը. քանզի դրա համար եմ նրանք մտել իմ հարկի շուքի տակ:

15 Եվ նրանք զայրացան Ղովոի վրա և մոտեցան, որ դուռը կոտրեն, սակայն Տիրոջ հրեշտակները, որոնք սուրբ մարդիկ էին, իրենց ձեռքը մեկնեցին և ներս քաշեցին Ղովոին տուն՝ իրենց մոտ, և ծածկեցին դուռը:

ՋՄԹ, ԾՆՆՂՈՑ 48.5–11 (համեմատի՛ր ԾՆՆՂՈՑ ԽԸ.5–6)

(Հովսեփի սերունդները կղեկավարեն Իսրայելի հավաքումը վերջին օրերին):

5 Եվ հիմա քո երկու որդիների մասին, Եփրեմի և Մանասեի, որոնք ծնվեցին քեզ համար Եգիպտոսի երկրում, իմ Եգիպտոս գալուց առաջ. ահա, նրանք իմն են, և մեր հայրերի Աստվածը կօրհնի նրանց. ճիշտ ինչպես Ռուբենը և Շամվոնը, նրանք կօրհնվեն, քանզի նրանք իմն են. ուստի նրանք կկոչվեն իմ անունով: (Դրա համար նրանք կոչվեցին Իսրայել):

6 Եվ քո մնացած որդիները, որոնց կծնես նրանցից հետո, քոնը կլինեն, և իրենց ժառանգության մեջ իրենց եղբայրների անունով կկոչվեն՝ ցեղերով. դրա համար նրանք կոչվեցին Մանասեի և Եփրեմի ցեղեր:

7 Եվ Հակոբն ասաց Հովսեփին. Երբ իմ հայրերի Աստվածը երևաց ինձ Լուզում՝ Քանանի երկրում. նա երդվեց ինձ, որ ինձ և իմ սերնդին կտա մի երկիր՝ որպես հավիտենական տիրապետություն:

8 Ուստի, օ՞ որդիս, նա ինձ օրհնել է, որ քեզ մեծացնեմ՝ ծառա լինելու ինձ համար՝ մահից փրկելով իմ տունը.

9 Ազատելով իմ ժողովրդին՝ քո եղբայրներին, երկրում եղած սաստիկ սովից. ուստի քո եղբայրների Աստվածը կօրհնի քեզ և քո երանքի պտուղը, որպեսզի նրանց օրհնվեն քո եղբայրներից առավել, և քո հոր տնից առավել.

10 Քանզի դու հաղթել ես, և քո հոր տունը խոնարհվել է քո առաջ, ճիշտ ինչպես ցույց էր տրվել քեզ, քո եղբայրների ձեռքով Եգիպտոս վաճառվելուց առաջ. ուստի քո եղբայրները սերնդե-սերունդ կխոնարհվեն քո առաջ՝ քո երանքի պտղի առաջ հավիտյան.

11 Քանզի դու լույս կլինես իմ ժողովրդի համար, որ նրանց գերության օրերին նրանց ծառայությունից ազատես. և նրանց փրկություն բերես, երբ նրանք բոլորը մեղքի տակ կռացած կլինեն:

ՋՄԹ, ԾՆՆՂՈՑ 50.24–38

(համեմատի՛ր ԾՆՆՂՈՑ Ծ.24–26. տես նաև 2 Նեփի 3)

(Մովսեսը, Ահարոնը և Ջոզեֆ Սմիթը, – բոլորը հիշատակվել են Հովսեփի մարգարեության մեջ, որը Եգիպտոսում էր: Նաև Հովսեփը մարգարեացել էր, որ Մորմոնի Գիլբըն ընկերակից կդառնա Հուդայի հիշատակարանին):

24 Եվ Հովսեփն ասաց իր եղբայրներին.

ես մահանում եմ և գնում իմ հայրերի մոտ. և ես գերեզման եմ գնում ուրախությամբ: Իմ հայր Հակոբի Աստվածը թող լինի ձեզ հետ, որ ձեր գերության օրերին ձեզ ազատի չարչարանքից. քանզի Տերն այցելել է ինձ, և ես ստացել եմ Տիրոջ խոստովը, որ իմ երանքի պտղից Տեր Աստված մի արդարակյաց ճյուղ կբարձրացնի. և ձեզ համար, ում իմ հայր Հակոբը կոչեց Իսրայել, մի մարգարե. (ոչ Մեսիային, ում անունը Մելոլ է.) և այդ մարգարեն իմ ժողովրդին կազատի Եգիպտոսից՝ քո գերության օրերին:

25 Եվ կլինի այնպես, որ նրանք կրկին կցրվեն. և մի ճյուղ կկտրվի և կտարվի մի հեռու երկիր. այնուամենայնիվ, նրանք կհիշվեն Տիրոջ ուխտերում, երբ Մեսիան գա. քանզի, վերջին օրերին նա իրեն հայտնի կդարձնի նրանց՝ գործրայան Հոգով. և նրանց դուրս կբերի խազարից դեպի լույս. ծածուկ խավարից և գերությունից դուրս՝ դեպի ազատություն:

26 Տերը՝ իմ Աստվածը, մի տեսանող կբարձրացնի, որը կլինի մի ընտրյալ տեսանող իմ երանքի պտղի համար:

27 Այսպես է ասում ինձ իմ հայրերի Տեր Աստվածը. Մի ընտրյալ տեսանող ես կբարձրացնեմ քո երանքի պտղից. և նա բարձր կգնահատվի քո երանքի պտղի մեջ. և նրան ես պատվիրան կտամ, որ նա մի գործ անի քո երանքի պտղի՝ իր եղբայրների համար:

28 Եվ նա նրանց կբերի այն ուխտերի իմացությանը, որոնք կապել եմ քո հայրերի հետ. և նա կանի ամեն գործ, ինչ կպատվիրեմ նրան:

29 Եվ ես նրան մեծ կդարձնեմ իմ աչքում, քանզի նա կկատարի իմ գործը. և նա կլինի մեծ, ինչպես նա, ում ես ասել եմ, որ կբարձրացնեմ ձեզ համար, որպեսզի ազատեմ իմ ժողովրդին Եգիպտոսի երկրից, ո՛վ Բարայելի տուն. քանզի ես մի տեսանող կբարձրացնեմ, որ ազատի իմ ժողովրդին Եգիպտոսի երկրից. և նրա անունը կլինի Մովսես: Եվ այս անունով նա կիմանա, որ նա քո տնից է. քանզի նա կնեծացվի թագավորի դստեր կողմից և կկոչվի նրա որդին:

30 Եվ բացի այդ, մի տեսանող կբարձրացնեմ ես քո երանքի պտղից, և նրան կտամ գործություն՝ առաջ բերելու իմ խոսքը քո երանքի սերնդի համար. և ոչ միայն

իմ խոսքն առաջ բերելու, ասում է Տերը, այլ համոզելու նրանց իմ խոսքի վերաբերյալ, որն արդեն առաջ գնացած կլինի նրանց մեջ վերջին օրերին.

31 Ուստի, քո երանքի պտուղը կգրի, և Հուդայի երանքի պտուղը կգրի. և այն, ինչը կգրվի քո երանքի պտղի կողմից, և նա և այն, ինչը կգրվի Հուդայի երանքի պտղի կողմից, միասին կսերտաճեն՝ ի հերքումն կեղծ վարդապետությունների, դադարեցնելով հակառակությունները, և խաղաղություն հաստատելով քո երանքի պտղի միջև, և բերելով նրանց իրենց հայրերի իմացությանը վերջին օրերին. և նաև իմ ուխտերի իմացությանը, ասում է Տերը:

32 Եվ տկարությունից նա կդարձվի ուժեղ այն օրը, երբ իմ գործն առաջ կգնա իմ ողջ ժողովրդի մեջ, որը կվերականգնի նրանց, ովքեր Իսրայելի տնից են, վերջին օրերին:

33 Եվ այդ տեսանողին ես կօրհնեմ, և նրանք, ովքեր փնտրում են կործանել նրան, կկործանվեն. քանզի, ես տալիս եմ ձեզ այդ խոստումը. քանզի ես կհիշեմ ձեզ սերնդե-սերունդ. և նրա անունը կկոչվի Հովսեփ, և դա կլինի նրա հոր անվամբը. և նա կլինի քեզ մեծ. քանզի այն բանը, որը Տերն առաջ կբերի նրա ձեռքով, փրկության կբերի իմ ժողովրդին:

34 Եվ Տերը երդում արեց Հովսեփին, որ նրա սերունդը հավիտյան կպահպանի՝ ասելով. Ես կբարձրացնեմ Մովսեսին, և մի գավազան կլինի նրա ձեռքին, և նա կհավաքի իմ ժողովրդին և կառաջնորդի նրանց, ինչպես հոտը, և իր գավազանով կզարկի Կարմիր ծովի ջրերին:

35 Եվ նա դատողություն կունենա, և կգրի Տիրոջ խոսքը: Եվ նա չի խոսի շատ խոսքեր, քանզի ես կգրեմ իմ օրենքը նրա համար իմ ձեռքի մատով: Եվ ես մի խոսնակ կպատրաստեմ նրա համար, և նրա անունը կլինի Ահարոն:

36 Եվ վերջին օրերին քեզ հետ նույնպես կկատարվի այնպես, ինչպես ես երդում եմ արել: Դրա համար Հովսեփն ասաց իր եղբայրներին, Աստված անպատճառ կայցելի ձեզ, և այս երկրից կհանի ձեզ դեպի այն երկիրը, որի համար նա երդում արեց Աբրահամին և Իսահակին և Հակոբին:

37 Եվ Հովսեփն ուրիշ շատ բաներ

հաստատեց իր եղբայրներին, Իսրայելի զավակներին երդում անել տվեց, ասելով նրանց. Աստված անպատճառ կայցելի ձեզ, և դուք պիտի հանեք իմ ոսկորներն այստեղից:

38 Այդպես, Հովսեփը մահացավ, երբ հարյուր և տասը տարեկան էր. և նրան զմրսեցին և դրեցին մի տապանի մեջ Եգիպտոսում. և Իսրայելի զավակները պահեցին նրան և չթաղեցին, որպեսզի նա տարվի և դրվի գերեզմանը՝ իր հոր մոտ: Եվ այդպես, նրանք հիշում էին այն երդումը, որով երդվել էին նրան:

ՋՍԹ, Ելից 4.21 (համեմատի՛ր Ելից Գ.21, Է.3, 13, Թ.12, Ժ.1, 20, 27, ԺԱ.10, ԺԳ.4, 8, 17, Երկրորդ Օրինաց Բ.30)

(Տերը պատասխանատու չէր Փարավոնի կարծրասրտության համար):

21 Եվ Տերն ասաց Մովսեսին. Երբ որ ետ դառնաս գնաս Եգիպտոս, տես որ Փարավոնի առաջ անես բոլոր այն հրաշագործությունները, որոնք դրել եմ քո ձեռքում, և ես հաջողություն կտամ քեզ. բայց Փարավոնը կկարծրացնի իր սիրտը և ժողովրդին չի թողնի, որ հեռանան:

ՋՍԹ, Ելից 18.1 (համեմատի՛ր Ելից ԺԸ.1)

(Հորորը եղել է քահանայապետ):

1 Երբ Մադիամի քահանայապետ Հոթորը՝ Մովսեսի աները, լսեց այն ամենի մասին, ինչ Աստված արել էր Մովսեսի համար և Իսրայելի՝ իր ժողովրդի համար, և որ Տերն Իսրայելին դուրս էր բերել Եգիպտոսից.

ՋՍԹ, Ելից 22.18 (համեմատի՛ր Ելից ԻԲ.18)

(Մարդասպանները չպետք է ապրեն):

18 Մարդասպանին չթողնես, որ ապրի:

ՋՍԹ, Ելից 33.20, 23 (համեմատի՛ր Ելից ԼԳ.20, 23)

(Ոչ մի մեղսավոր մարդ չի կարող տեսնել Աստծո երեսը և ապրել):

20 Եվ նա ասաց Մովսեսին. Դու չես կարող տեսնել իմ երեսն այժմ, որ չլինի թե իմ բարկությունը բռնկվի նաև քո դեմ և ես կործանեմ քեզ և քո ժողովրդին. քան-

զի նրանցից ոչ ոք չպետք է ինձ տեսնի այժմ և ապրի, որովհետև նրանք չափազանց մեղսավոր են: Եվ ոչ մի մեղսավոր մարդ ոչ մի անգամ չի տեսել, ոչ էլ երբևէ կլինի, որ որևէ մեղսավոր մարդ տեսնի իմ երեսը և ապրի:

23 Եվ ես վեր կառնեմ իմ ձեռքը, և դու կտեսնես ինձ ետևից, բայց այնպես, ինչպես նախկինում, իմ երեսը չես տեսնի. քանզի ես բարկացած եմ իմ ժողովրդի՝ Իսրայելի վրա:

ՋՍԹ, Ելից 34.1–2, 14 (համեմատի՛ր Ելից ԼԳ.1–2, 14, Վարդապետություն և Ուխտեր 84.21–26)

(Մովսեսին տրված երկրորդ տախտակները պարունակում էին ավելի ցածր օրենք, քան առաջինը):

1 Եվ Տերն ասաց Մովսեսին. Քեզ համար երկու ուրիշ քարե տախտակներ կտփիր, առաջինների պես, և ես նրանց վրա ևս կգրեմ օրենքի խոսքերը, ինչպես որ դրանք գրվել էին սկզբում, այն տախտակների վրա, որոնք դու կտարասեցիր. սակայն դա չի լինի առաջինի համապատասխան, քանզի ես կհեռացնեմ քահանայությունը նրանց միջից. հետևաբար, իմ սուրբ կարգը և դրա արարողությունները չեն գնա նրանց առաջից. քանզի իմ ներկայությունը չի լինի նրանց մեջ, չլինի թե ես կործանեմ նրանց:

2 Բայց ես կտամ նրանց օրենք, ինչպես որ սկզբում, սակայն դա կլինի ըստ մարմնավոր պատվիրանների օրենքի. քանզի ես երդվել եմ իմ ցասման մեջ, որ նրանք չեն մտնի իմ ներկայությունը՝ իմ հանգիստը, իրենց պանդխտության օրերին: Հետևաբար, վարվիր, ինչպես պատվիրել եմ քեզ, և առավոտյան պատրաստ եղիր, և առավոտյան բարձրացիր Սինայ սարը և այնտեղ՝ սարի գլխին, իմ առաջ կանգնիր:

(Եհովան մի անուն էր, որով Հին Կտակարանի ժողովուրդը գիտեր Տեր Հիսուս Քրիստոսին):

14 Քանզի ուրիշ աստծո դու չպիտի երկրպագես. որովհետև Տերը, ում անունը Եհովա է, նախանձոտ Աստված է:

ՋՍԹ, Երկրորդ Օրինաց 10.2 (համեմատի՛ր Երկրորդ Օրինաց Ժ.2)

(Առաջին քարե տախտակների վրա

Աստված հայտնել էր սուրբ քահանայության հավիտենական ուխտը):

2 Եվ տախտակների վրա ես կգրեմ խոսքերը, որոնք այն առաջին տախտակների վրա էին, որոնք դու կտրատեցիր, բացի սուրբ քահանայության հավիտենական ուխտի խոսքերից, և դրանք դու պիտի դնես տապանակի մեջ:

ՉՍԹ, Ա Թագավորաց 16.14–16, 23

(համեմատի՛ր Ա Թագավորաց ԺՁ.14–16, 23. նմանատիպ փոփոխություններ են կատարվել Ա Թագավորաց ԺԸ.10-ում և ԺԹ.9-ում)

(Չար ոգին, որը համակում էր Սավուղին, Տիրոջից չէր):

14 Բայց Տիրոջ Հոգին հեռացավ Սավուղից, և մի չար ոգի, որը Տիրոջից չէր, նեղում էր նրան:

15 Եվ Սավուղի ծառաները նրան ասացին. Ահա, մի չար ոգի, որն Աստծուց չէ, նեղում է քեզ:

16 Թող մեր տերն այժմ հրամայի իր առաջ գտնվող ծառաներին, որ մի մարդ փնտրեն, որը լավ քնարահար է. և կլինի այնպես որ, երբ այն չար ոգին, որն Աստծուց չէ, քեզ վրա գա, նա կնվազի իր ձեռքով, և դու լավ կզգաս քեզ:

23 Եվ եղավ այնպես, երբ այն չար ոգին, որն Աստծուց չէր, գալիս էր Սավուղի վրա, Դավիթը վերցնում էր քնարը և նվագում էր իր ձեռքով. և Սավուղը հանգստանում և լավանում էր, և չար ոգին հեռանում էր նրանից:

ՉՍԹ, Բ Թագավորաց 12.13 (համեմատի՛ր Բ Թագավորաց ԺԲ.13)

(Դավթի ծանր մեղքը մի կողմ չէր դրվել Աստծո կողմից):

13 Եվ Դավիթն ասաց Նաթանին. Ես մեղանջել եմ Տիրոջ առաջ: Եվ Նաթանն ասաց Դավթին. Տերն էլ մի կողմ չի դրել քո մեղքը, որ դու չմեռնես:

ՉՍԹ, Բ Մնացորդաց 18.22 (համեմատի՛ր Բ Մնացորդաց ԺԸ.22)

(Տերը սուտ ոգի չի դնում մարգարեների բերանում):

22 Եվ արդ, ահա, Տերը սուտ ոգի է գտել քո այս մարգարեների բերանում, և Տերը չարիք է խոսել ընդդեմ քեզ:

ՉՍԹ, Սաղմոս 14.1–7 (համեմատի՛ր Սաղմոս ԺԴ.1–7)

(Սաղմոսերգուն ցնձացել է վերականգնման օրվա համար):

1 Հիմարն ասում է իր սրտում. Ոչ ոք չի տեսել Աստծուն: Քանի որ նա իրեն ցույց չի տալիս մեզ, ուստի Աստված չկա: Ահա, նրանք ապականվել են. նրանք գարշելի գործեր են անում, և նրանցից ոչ ոք բարիք չի գործում:

2 Քանզի Տերը երկնքից նայեց մարդկանց զավակների վրա, և իր ձայնով ասաց իր ծառային. Փնտրի՛ր մարդկանց զավակների մեջ, որ տեսնես, քե արդյոք կան մարդիկ, ովքեր հասկանում են Աստծուն: Եվ նա բաց արեց բերանը Տիրոջ համար, և ասաց. Ահա, բոլոր նրանք, ովքեր ասում են, որ բռնն են:

3 Տերը պատասխանեց և ասաց. Նրանք բոլորը խոտորվել են, բոլորը միասին դարձել են կեղտոտ, ոչ ոքի չես տեսնի, որ բարիք գործի, ո՛չ, չկա ոչ մեկը:

4 Նրանց ունեցած բոլոր ուսուցիչներն անօրինություններ գործողներ են, և զիտելիք չկա նրանց մեջ: Այդ նրանք են, որ ուտում են իմ ժողովրդին: Նրանք հաց են ուտում և չեն կանչում առ Տերը:

5 Նրանք մեծապես վախենում են, քանզի Աստված արդարների սերնդի մեջ է բնակվում: Նա խորհուրդ է աղքատների համար, որովհետև նրանք ամաչում են ամբարիշտներից, և Տիրոջ մոտ են փախչում ապաստանի համար:

6 Նրանք ամաչում են աղքատի խորհրդից, որովհետև Տերն է նրա ապաստանը:

7 Երանի՛՜ քե Բարայելի փրկությունը՝ Սիոնը հաստատվեր երկնքից: Ո՛վ Տեր, ե՞րբ պիտի հաստատես Սիոնը: Երբ որ Տերը ետ բերի իր ժողովրդին գերությունից, չակոբը կցնծա, Իսրայելն ուրախ կլինի:

ՉՍԹ, Սաղմոս 24.7–10

(համեմատի՛ր Սաղմոս ԻԴ)

(Այս սաղմոսը նշում է Քրիստոսի երկրորդ գալուստը):

7 Բարձրացրեք ձեր զուլխները, ո՛վ Հակոբի սերունդներ. և ինքներդ բարձրացե՛ք. և Տերն ուժեղ է ու գորեղ. Տերը պատերազմում գորեղը, նա ով փառաց բազավորն է, պիտի հաստատի ձեզ հավիտյան:

8 Եվ նա գալարելու է երկինքները. և իջնելու է, որ փրկագնի իր ժողովրդին. որ հավիտենական անուն տա ձեզ. որ հաստատի ձեզ իր հավիտենական վեմի վրա:

9 Բարձրացրեք ձեր գլուխները, ո՛վ Հակոբի սերունդներ. բարձրացրեք ձեր գլուխները, ո՛վ հավիտենական սերունդներ, և գորաց Տերը՝ թագավորների թագավորը.

10 Այսինքն՝ փառաց թագավորը, կգա ձեզ մոտ. և կփրկագնի իր ժողովրդին, և նրանց կհաստատի արդարության մեջ: Սեյա:

ՋԱԹ, Մաղմուս 109.4 (համեմատի՛ր Մաղմուս ԸԹ.4)

(Մենք պետք է աղոթենք մեր հակառակորդների համար):

4 Եվ չնայած իմ սիրուն, նրանք իմ հակառակորդն են. այնուամենայնիվ, ես կշարունակեմ աղոթել նրանց համար:

ՋԱԹ, Եսայիա 42.19–23
(համեմատի՛ր Եսայիա ԽԲ.19–22)

(Տերն իր ծառային կողարկի նրանց մոտ, ովքեր կույր են):

19 Քանզի ես իմ ծառային կուղարկեմ ձեզ մոտ, որ կույր եք. այո՛, մի սուրհանդակ, որ բացի կույրերի աչքերը, և արձակի խուլերի ականջները.

20 Եվ նրանց կատարյալ կղարձնեմ, չնայած նրանց կուրությանը, եթե ականջ դնեն այն սուրհանդակին՝ Տիրոջ ծառային:

21 Դուք ժողովուրդ եք, որ շատ բաներ եք տեսնում, բայց չեք պահում. բացելով ականջները, որ լսեք, բայց չեք լսում:

22 Տերը չի հավանում այդպիսի մարդկանց, բայց հանուն իր արդարության, նա կմեծարի օրեքը և պատվական կղարձնի այն:

23 Դուք կողոպտված ու թալանված ժողովուրդ եք. ձեր թշնամիները՝ բոլորը ձեր համար որոգայթ են դրել փոսերում և ձեզ թաքցրել են կալանքի տներում. նրանք վերցրել են ձեզ որպես որս, և ոչ ոք չի ազատում. որպես թալան, և ասող չկա՝ Վերականգնի՛ր:

ՋԱԹ, Երեմիա 26.13 (համեմատի՛ր Երեմիա ԻԶ.13)

(Տերը չի ապաշխարում. մարդիկ են ապաշխարում):

13 Ուստի հիմա, ուղղեք ձեր ճանապարհները և ձեր գործերը, և հնազանդվեք Տիրոջ՝ ձեր Աստծո ձայնին ու ապաշխարեք, և Տերը կհեռացնի այն չարիքը, որը հայտարարել է ընդդեմ ձեզ:

ՋԱԹ, Ամովս 7.3 (համեմատի՛ր Ամովս Է.3)

(Տերը չի ապաշխարում. մարդիկ են ապաշխարում):

3 Եվ Տերն ասաց Հակոբի վերաբերյալ. Հակոբը պետք է ապաշխարի այս բանի համար, հետևաբար, ես լիովին չեմ կործանի նրան, ասում է Տերը:

ՋԱԹ, Մատթեոս 3.24–26
(համեմատի՛ր Մատթեոս Բ.23)

(Նկարագրվում է Հիսուսի երիտասարդությունն ու մանկությունը):

24 Եվ եղավ այնպես, որ Հիսուսը մեծանում էր իր եղբայրների հետ, և ամբանում, և սպասում էր Տիրոջ կողմից իր ծառայության ժամանակի գալուց:

25 Եվ նա գործում էր իր հոր ղեկավարությամբ և չէր խոսում ուրիշ մարդկանց պես, ոչ էլ նրան հնարավոր էր ուսուցանել. քանզի նա կարիք չուներ, որ որևէ մարդ ուսուցաներ իրեն:

26 Եվ շատ տարիներ անց, նրա ծառայության ժամը մոտեցավ:

ՋԱԹ, Մատթեոս 3.43–46
(համեմատի՛ր Մատթեոս Գ.15–17)

(Հիսուսը մկրտվել էր Հովհաննեսի կողմից՝ ընկրմամբ):

43 Եվ Հիսուսը պատասխանելով՝ ասաց նրան. Թույլ տուր, որ ես քո կողմից մկրտվեմ, քանզի այսպես է վայելում մեզ, որ ամեն արդարություն կատարենք: Այն ժամանակ, թույլ տվեց նրան:

44 Եվ Հովհաննեսը մտավ ջրի մեջ և մկրտեց նրան:

45 Եվ մկրտվելուց հետո, Հիսուսը շուտով դուրս եկավ ջրից. և Հովհաննեսը տեսավ, և ահա, երկինքները բացվեցին նրա համար, և նա տեսավ Աստծո Հոգին, որ վայր էր իջնում աղավճու պես և գալիս Հիսուսի վրա:

46 Եվ ահա, նա երկնքից մի ձայն լսեց, որն ասում էր. Սա է իմ սիրելի որդին, որին ես հավանեցի: Լսեք նրան:

ՀԱԹ, Մատթեոս 4.1, 5-6, 8-9

(համեմատիր Մատթեոս Դ.1, 5-6, 8-9. նմանատիպ փոփոխություններ են կատարվել Ղուկաս Դ.2, 5-11-ում)

(Հիտուր տարվեց Սուրբ Հոգու կողմից, ոչ թե Սատանայի):

1 Այն ժամանակ Հիտուր Հոգու կողմից տարվեց անապատ, որ լինի Աստծո հետ:

5 Այն ժամանակ Հիտուր տարվեց սուրբ քաղաք, և Հոգին կանգնեցրեց նրան տաճարի աշտարակի վրա:

6 Ապա դևը եկավ նրա մոտ և ասաց. Եթե դու Աստծո Որդին ես, ապա ցած գցիր քեզ. որովհետև գրված է՝ Իր հրեշտակներին կիրամայի քեզ համար. և իրենց ձեռքերի վրա կբարձրացնեն քեզ, որ չլինի քե նաքո քարին դիպչի:

8 Եվ դարձյալ, Հիտուր Հոգում էր, և այն բարձրացրեց նրան չափազանց բարձր մի սար, և նրան ցույց տվեց աշխարհի բոլոր թագավորություններն ու դրանց փառքը:

9 Եվ դևը կրկին եկավ նրա մոտ և ասաց. Այս բոլորը ես կտամ քեզ, եթե ընկնես ու երկրպագես ինձ:

ՀԱԹ, Մատթեոս 4.11 (համեմատիր Մատթեոս Դ.11)

(Հիտուր հրեշտակներ ուղարկեց, որ ծառայեն Հովհաննես Մկրտչին):

11 Եվ արդ, Հիտուր գիտեր, որ Հովհաննեսը բանտ էր գցվել, և նա հրեշտակներ ուղարկեց, և ահա, նրանք եկան և ծառայում էին նրան:

ՀԱԹ, Մատթեոս 4.18 (համեմատիր Մատթեոս Դ.19)

(Հին Կտակարանի մարգարեները խոսել են Հիտուսի մասին):

18 Եվ ասաց նրանց. Ես նա եմ, ում մասին գրվել է մարգարեների կողմից. հետևեք ինձ, և ես ձեզ մարդկանց որսորդներ կդարձնեմ:

ՀԱԹ, Մատթեոս 4.22 (համեմատիր Մատթեոս Դ.23)

(Հիտուր բժշկություններ էր անում նրանց մեջ, ովքեր նրա անվանը հավատում էին):

22 Եվ Հիտուր ման էր գալիս ամբողջ Գալիլեայով, ուսուցանելով նրանց ժողովարաններում և քարոզելով արքայության ավետարանը. և բժշկելով ամեն հիվանդություն, և ամեն տկարություն՝ այն մարդկանց մեջ, որոնք հավատում էին նրա անվանը:

ՀԱԹ, Մատթեոս 6.14 (համեմատիր Մատթեոս Զ.13. նմանատիպ փոփոխություն է արվել՝ Ղուկաս ԺԱ.4-ում)

(Տերը մեզ չի տանում փորձության):

14 Եվ մի թող որ տարվենք փորձության, այլ ազատիր մեզ չարից:

ՀԱԹ, Մատթեոս 6.22 (համեմատիր Մատթեոս Զ.22)

(Եթե մեր աչքը պարզ լինի՝ ուղղված Աստծո փառքին, մեր ողջ մարմինը լցված կլինի լույսով):

22 Մարմնի լույսն աչքն է. հետևաբար, եթե քո աչքը պարզ լինի՝ ուղղված Աստծո փառքին, քո ամբողջ մարմինը լցված կլինի լույսով:

ՀԱԹ, Մատթեոս 6.38 (համեմատիր Մատթեոս Զ.33)

(Մենք նախ պետք է փնտրենք կառուցել Աստծո արքայությունը):

38 Ուստի, մի փնտրեք աշխարհի բաները, այլ փնտրեք նախ կառուցել Աստծո արքայությունը և հաստատել նրա արդարությունը, և մնացած բոլոր բաները կավելացվեն ձեզ համար:

ՀԱԹ, Մատթեոս 7.1-2

(համեմատիր Մատթեոս Է.1-2)

(Մի դատեք անարդար ձևով):

1 Արդ, սրանք են խոսքերը, որոնք Հիտուսն ուսուցանեց իր աշակերտներին, որ ասեն ժողովրդին:

2 Մի դատեք անարդար ձևով, որպեսզի չդատվեք. այլ արդար դատաստանով դատեք:

ՋՄԹ, Մատթեոս 7.9-11

(համեմատի՛ր Մատթեոս Է.6)

(Արքայության խորհուրդներով մի կիսվեք աշխարհի հետ):

9 Գնացեք աշխարհ, ասելով բոլորին. Ապաշխարեք, քանզի երկնքի արքայությունը մոտեցել է ձեզ:

10 Եվ արքայության խորհուրդները պահեք ձեր մեջ. քանզի սուրբ բանը շնորհին տալը լավ չէ, ոչ էլ ձեր մարգարիտները գցեք խոզերի առաջ, որ չլինի թե նրանք կոյտ տան իրենց ուտե՛րի տակ:

11 Քանզի աշխարհը չի կարող ընդունել այն, ինչ դուք ինքներդ չեք կարողանում տանել. ուստի, ձեր մարգարիտները մի տվեք նրանց, որ չլինի թե նրանք ետ դառնան ու պատառտեն ձեզ:

ՋՄԹ, Մատթեոս 9.18-21 (Սա

Մարգարե Ջոզեֆ Սմիթի կողմից վերականգնած տեքստն է, որը մտցվել է Մատթեոս Թ.15-ի և Թ.16-ի միջև)

(Հիտուր մերժեց Փարիսեցիների մկրտությունը. նա է տվել Մովսեսի օրենքը):

18 Ապա Փարիսեցիներն ասացին նրան. Ինչո՞ւ չես ընդունում մեզ, մեր մկրտությունով հանդերձ, տեսնելով, որ մենք պահում ենք ողջ օրենքը:

19 Բայց Հիսուսն ասաց նրանց. Դուք չեք պահում օրենքը: Եթե դուք պահեիք օրենքը, դուք կընդունեիք ինձ, քանզի ես նա եմ, ով տվել է օրենքը:

20 Ես ձեզ չեմ ընդունում, ձեր մկրտությունով հանդերձ, որովհետև այն ձեզ ոչնչով չի օգնում:

21 Քանզի երբ նորը գալիս է, հինը պատրաստ է մի կողմ դրվելու:

ՋՄԹ, Մատթեոս 16.25-26

(համեմատի՛ր Մատթեոս ԺՁ.24)

(«Հիտուսի խաչը վերցնել» արտահայտության իմաստն անաստվածությունից հրաժարվելն է):

25 Այն ժամանակ Հիսուսն իր աշակերտներին ասաց. Եթե մեկը կամենում է իմ ետևից գալ, թող իր անձն ուրանա և իր խաչը վերցնի ու հետևի ինձ:

26 Եվ արդ, մարդու համար իր խաչը

վերցնելը՝ ամեն անաստվածությունից և ամեն աշխարհիկ ցանկությունից հրաժարվելն է և իմ պատվիրանները պահելը:

ՋՄԹ, Մատթեոս 17.10-14

(համեմատի՛ր Մատթեոս ԺԷ.11-13)

(Երկու Եղիասներ պիտի գալին, մեկը՝ որ նախապատրաստի, իսկ մյուսը՝ որ վերականգնի):

10 Եվ Հիսուսը պատասխանեց ու ասաց նրանց. Իրավ որ առաջ Եղիասը պիտի գա և ամեն բան վերականգնի, ինչպես որ մարգարեները գրել են:

11 Եվ բացի այդ, ես ասում եմ ձեզ, որ Եղիասն արդեն եկել է, որի մասին գրված է. Ահա, ես իմ սուրհանդակը կուղարկեմ, և նա ճանապարհ կպատրաստի իմ առաջ. և նրան չճանաչեցին, և ինչ որ ուզեցին՝ նրան արեցին:

12 Այդպես էլ Մարդու Որդին է չարչարվելու նրանց կողմից:

13 Բայց ես ասում եմ ձեզ. Ո՞վ է Եղիասը: Ահա, նա է Եղիասը, որին ես ուղարկեցի, որ ճանապարհ պատրաստի իմ առաջ:

14 Այն ժամանակ աշակերտները հասկացան, թե Հովիանեն Սկրտչի համար էր ասում նրանց, և մաև մեկ ուրիշի, որը պիտի գար և վերականգներ բոլոր բաները, ինչպես որ գրվել է մարգարեների կողմից:

ՋՄԹ, Մատթեոս 18.11

(համեմատի՛ր Մատթեոս ԺԸ.11. տես նաև Մորոնի 8)

(Փոքր երեխաներն ապաշխարության կարիք չունեն):

11 Քանզի Մարդու Որդին եկել է կորածը փրկելու և մեղավորներին ապաշխարության կանչելու. բայց այս փոքրներն ապաշխարության կարիք չունեն, և ես փրկելու եմ նրանց:

ՋՄԹ, Մատթեոս 19.13

(համեմատի՛ր Մատթեոս ԺԹ.13)

(Փոքր երեխաները փրկվելու են):

13 Այն ժամանակ փոքր երեխաներ բերվեցին նրա մոտ, որպեսզի ձեռնադրի նրանց և աղոթի: Եվ աշակերտները հան-

դիմանում էին նրանց՝ ասելով. Կարիք չկա, քանզի Հիսուսն ասել է, որ նրանք փրկվելու են:

ՋՍԹ, Մատթեոս 21.33 (համեմատի՛ր Մատթեոս ԻԱ.32–33)

(Նախքան Քրիստոսին հավատալը, մարդ պետք է ապաշխարի):

33 Քանզի նա, ով չհավատաց Հովհաննեսին իմ վերաբերյալ, չի կարող ինձ հավատալ, մինչև որ նախ չապաշխարի:

ՋՍԹ, Մատթեոս 21.47–56 (համեմատի՛ր Մատթեոս ԻԱ.45–46)

(Հիսուսը հայտարարեց, որ նա է անկյունի գլխի քարը: Ավետարանն առաջարկվել է հրեաներին և դրանից հետո՝ հեթանոսներին: Ամբարիշտները պիտի կործանվեն, երբ Հիսուսը վերադառնա):

47 Եվ երբ քահանայապետերը և Փարիսեցիները նրա առակները լսեցին, նրանք հասկացան, որ իրենց մասին է ասում:

48 Եվ նրանք ասում էին իրենց մեջ. Մի՞թե այս մարդը մտածում է, թե ինքը մե՞նակ կարող է կործանել այս մեծ քա՜ղվորությունը: Եվ նրանք բարկացած էին նրա վրա:

49 Բայց երբ ուզեցին ձեռք դնել նրա վրա, նրանք վախեցան բազմությունից, որովհետև հասկացան, որ բազմությունը նրան ընդունում է՝ որպես մարգարե:

50 Եվ արդ, նրա աշակերտները եկան նրա մոտ, և Հիսուսը նրանց ասաց. Չարմանո՞ւմ եք այն առակների խոսքերից, որոնք ասացի նրանց:

51 Ճշմարիտ ասում եմ ձեզ. Ես եմ այն քարը, և այդ ամբարիշտները մերժում են ինձ:

52 Ես անկյունի գլուխն եմ: Այս հրեաներն ընկնելու են իմ վրա և կտրվեն:

53 Եվ Աստծո արքայությունը նրանցից կվերցվի և մեկ ուրիշ ազգի կտրվի, որը նրան պտուղներ կբերի (նկատի ունի հեթանոսներին)։

54 Ուստի, ում վրա որ այս քարն ընկնի, կփշրի՝ փոշի կդարձնի նրան:

55 Եվ երբ այգու Տերը գա, նա կկործանի այն քվառ, ամբարիշտ մարդկանց, և վերջին օրերին իր այգին կրկին կտա ուրիշ մշակների, այո՛, որոնք նրան պտուղ կտան իրենց ժամանակին:

56 Եվ այն ժամանակ նրանք հասկացան այն առակը, որը նա խոսեց նրանց հետ, որ հեթանոսները նույնպես պիտի կործանվեն, երբ որ Տերն իջնի երկնքից՝ իր այգում քազավորելու, որը երկիրն է և նրա բնակիչները:

ՋՍԹ, Մատթեոս 23.6 (համեմատի՛ր Մատթեոս ԻԳ.9)

(Նա, ով երկնքում է, մեր ստեղծողն է):

6 Եվ երկրի վրա ոչ ոքի մի կոչեք ձեզ ստեղծող, կամ ձեր երկնային Հայր. քանզի մեկ է ձեր ստեղծողը և երկնային Հայրը, այսինքն՝ նա, որ երկնքում է:

ՋՍԹ, Մատթեոս 26.22, 24–25 (համեմատի՛ր Մատթեոս ԻԶ.26–29. ՋՍԹ, Մարկոս 14.20–25)

(Հիսուսը հաստատեց հաղորդությունը):

22 Եվ մինչ նրանք ուտում էին, Հիսուսը վերցրեց հացը և կտրեց այն, և օրհնեց, և տվեց իր աշակերտներին ու ասաց. Վերցրե՛ք, կերեք. սա հիշատակ է իմ մարմնի, որը ես փրկագահն եմ տալիս ձեզ համար:

24 Որովհետև սա հիշատակ է նոր կտակարանի իմ արյան, որը թափվում է բոլոր նրանց համար, ովքեր կհավատան իմ անվանը՝ իրենց մեղքերի թողության համար:

25 Եվ ես պատվիրան եմ տալիս ձեզ, որ դուք պետք է հետևեք, որ անեք այն բաները, որոնք ինձ տեսաք անելիս, և իմ մասին վկայեք, նույնիսկ մինչև վերջ:

ՋՍԹ, Մատթեոս 27.3–6 (համեմատի՛ր Մատթեոս ԻԷ.3–5. Գործք Ա.18)

(Նկարագրվում է Հուդայի մահը):

3 Այն ժամանակ Հուդան՝ նրա մատնիչը, երբ տեսավ, որ նրան դատապարտում են, զոջաց իր մեջ, և այն երեսուն արծաթը ետ դարձրեց քահանայապետերին ու երեցներին,

4 Ասելով. Ես մեղք գործեցի՝ անմեղ արյուն մատնելով:

5 Եվ նրանք ասացին նրան. Մե՞զ ինչ. դու տես. քո մեղքը քեզ վրա լինի:

6 Եվ նա արծաթը գցեց տաճարի մեջ ու հեռացավ, և գնաց ու մի ծառից ինքն

իրեն կախեց: Եվ անմիջապես վայր ընկավ և նրա փորձուհիքը դուրս բափվեց ու նա մեռավ:

ՋՄԹ, Մարկոս 9.3 (համեմատիր՝ Մարկոս Թ.4)

(Հովհաննես Մկրտիչը Կերպարանափոխման Մարի վրա էր):

3 Եվ երևացին նրանց Եղիաքը՝ Մովսեսի հետ, կամ այլ խոսքով, Հովհաննես Մկրտիչը և Մովսեսը, և նրանք խոսում էին Հիսուսի հետ:

ՋՄԹ, Մարկոս 9.40–48 (համեմատիր՝ Մարկոս Թ.44–47)

(Գալթակղող ձեռքը կամ ոտքը կտրելը համեմատվում է այն փոխհարաբերությունների վերացման հետ, որոնք կարող են մարդուն մոլորության տանել):

40 Հետևաբար, եթե քո ձեռքը քեզ գալթակղի, կտրիր այն. կամ, եթե եղբայրդ քեզ գալթակղի և չխոստովանի ու չթողնի, նա պիտի կտրվի: Ավելի լավ է քեզ, որ խեղձված մտնես կյանք, քան երկու ձեռք ունենաս և գնաս դժոխք:

41 Քանզի ավելի լավ է քեզ, որ առանց եղբայր մտնես կյանք, քան քո եղբոր հետ զգվես դժոխք. այն երբեք չհանգչող կրակի մեջ, որտեղ նրանց որդը չի մեռնում, և կրակը չի հանգչում:

42 Եվ բացի այդ, եթե քո ոտքը քեզ գալթակղի, կտրիր այն. քանզի նա, որ քո չափանիշն է, որով դու քայլում ես, եթե նա դառնում է օրինազանց, պետք է կտրվի:

43 Ավելի լավ է քեզ, որ կաղ մտնես կյանք, քան ունենալով երկու ոտք՝ դժոխքը զգվես. կրակի մեջ, որը երբեք չի հանգչելու:

44 Հետևաբար, թող ամեն մարդ կանգնի կամ վայր ընկնի իրենով, և ոչ թե ուրիշի համար, կամ չվատահելով ուրիշի:

45 Փնտրիր իմ Հորը, և հենց այդ պահին քեզ համար կարվի այն, ինչ կխնդրես, եթե հավատքով խնդրես, հավատալով, որ կստանաս:

46 Եվ եթե քո աչքը, որը տեսնում է քեզ համար, նա, ով նշանակված է պահապան լինելու քեզ, լույս ցույց տալու քեզ, դառնում է օրինազանց և գալթակղում է քեզ, համիր նրան:

47 Ավելի լավ է քեզ մեկ աչքով մտնել Աստծո արքայությունը, քան երկու աչք ունենալով՝ զգվել դժոխքի կրակը:

48 Քանզի ավելի լավ է, որ դու փրկվես, քան դժոխքը զգվես քո եղբոր հետ, որտեղ նրանց որդը չի մեռնում, և որտեղ կրակը չի հանգչում:

ՋՄԹ, Մարկոս 12.32 (համեմատիր՝ Մարկոս ԺԲ.27)

(Աստված մեռելների Աստվածը չէ, որովհետև նա մեռելներին բարձրացնում է իրենց գերեզմաններից):

32 Հետևաբար, նա մեռելների Աստվածը չէ, այլ կենդանիների Աստվածն է. քանզի նա բարձրացնում է նրանց իրենց գերեզմաններից: Ուրեմն դուք մեծապես սխալվում եք:

ՋՄԹ, Մարկոս 14.20–25

(համեմատիր՝ Մարկոս ԺԳ.22–25. ՋՄԹ, Մատթեոս 26.22, 24–25)

(Հիսուսը հաստատեց հաղորդությունը):

20 Եվ մինչ նրանք ուտում էին, Հիսուսը հացը վերցրեց և օրհնեց, և կտրեց այն, և տվեց նրանց ու ասաց. Վերցրեք և կերեք.

21 Ահա, սա դուք պետք է անեք ի հիշատակ իմ մարմնի. քանզի որքան հաճախ որ դուք անեք այս, դուք կհիշեք այս ժամը, որ ես ձեզ հետ եյի:

22 Եվ նա վերցրեց բաժակը, և գոհություն հայտնելուց հետո, տվեց նրանց. և նրանք բոլորը խմեցին դրանից:

23 Եվ նա ասաց նրանց. Սա ի հիշատակ իմ արյան է, որը թափվում է շատերի համար, և նոր կապարանը, որը տալիս եմ ձեզ. քանզի իմ մասին դուք պիտի վկայեք ողջ աշխարհին:

24 Եվ որքան հաճախ որ դուք անեք այս արարողությունը, դուք կհիշեք այս ժամը, երբ ես ձեզ հետ էի և ձեզ հետ խմեցի այս բաժակից, երբնիսկ վերջին անգամ իմ ծառայության մեջ:

25 Շշմարիտ ասում եմ ձեզ, որ սրա մասին դուք պետք է վկայեք. քանզի ես այլևս ձեզ հետ չեմ խմի որթի այս բերքից, մինչև այն օրը, երբ նրա նորը կխմեն Աստծո արքայության մեջ:

ՉՍԹ, Մարկոս 14.36–38

(համեմատի՛ր Մարկոս ԺԴ.32–34)

(Գեթսեմանիում, նույնիսկ Տասներկուսից մի քանիսը լիովին չըմբռնեցին Հիսուսի դեբր, որպես Մեսիա):

36 Եվ եկան մի տեղ, որը կոչվում էր Գեթսեմանի, որը մի պարտեզ էր. և աշակերտները սկսեցին շատ զարմանալ ու անհանգստանալ, և իրենց սրտերում զանգատվել, ցանկանալով իմանալ, թե արդո՞ք սա Մեսիան է:

37 Եվ Հիսուսն իմանալով նրանց սրտերը, ասաց իր աշակերտներին. Այստեղ նստեք, մինչև ես աղոթք անեմ:

38 Եվ Պետրոսին, Հակոբոսին ու Հովհաննեսին վերցրեց իր հետ, և հանդիմանեց նրանց ու ասաց նրանց. Հոգիս խիստ սրտմած է՝ մահի չափ. այստեղ մնացեք և արթուն կացեք:

ՉՍԹ, Մարկոս 16.3–6 (համեմատի՛ր

Մարկոս ԺԶ.4–7. նմանատիպ փոփոխություններ են կատարվել Մատթեոս ԻԸ.2–8-ում. համեմատի՛ր Ղուկաս ԻԴ.2–4)

(Փրկչի գերեզմանի մոտ երկու հրեշտակներ ողորմեցին կանանց):

3 Բայց երբ նայեցին, նրանք տեսան, որ քարը մի կողմ էր գլորած (քանզի այն շատ մեծ էր), և երկու հրեշտակներ էին նստած նրա վրա, երկար հանդերձներ հագած. և նրանք վախեցան:

4 Բայց հրեշտակներն ասացին նրանց. Մի՛ վախեցեք. դուք Նազովրեցի Հիսուսին եք փնտրում, որը խաչվել էր. նա հարություն է առել. նա այստեղ չէ. ահա այն տեղը, ուր նրան դրին.

5 Եվ գնացեք, աշակերտներին ու Պետրոսին ասացեք, որ նա ձեզանից առաջ գնում է Գալիլեա. այնտեղ կոտեսնեք նրան, ինչպես նա ձեզ ասաց:

6 Եվ նրանք, մտնելով գերեզման, տեսան այն տեղը, որտեղ դրել էին Հիսուսին:

ՉՍԹ, Ղուկաս 1.8 (համեմատի՛ր

Ղուկաս Ա.8)

(Զաքարիան Հովհաննես Մկրտչի հայրը, քահանայության պարտականություններ էր կատարում):

8 Եվ մինչև նա քահանայի իր պաշտոնն

էր կատարում Աստծո առաջ, քահանայության իր կարգում,

ՉՍԹ, Ղուկաս 2.46 (համեմատի՛ր

Ղուկաս Բ.46)

(Տաճարում վարդապետները լսում էին Հիսուսին և հարցեր էին տալիս նրան):

46 Եվ երեք օրից հետո եղավ, որ նրան տաճարում գտան, վարդապետների մեջ նստած, և նրանք լսում էին նրան, և հարցեր էին տալիս նրան:

ՉՍԹ, Ղուկաս 3.4–11 (համեմատի՛ր

Ղուկաս Գ.4–6)

(Քրիստոսը պիտի գա, որ իրականացնի մարգարեությունները, վերցնի մեղքերը, փրկության բերի և լույս լինի, և նա պիտի գա զորության և ժամանակների լրության օրը):

4 Ինչպես որ Եսայիա մարգարեի գրքում է գրված, և սրանք են խոսքերը, որ ասում են. Անապատում կանչողի ձայնը. Պատրաստ արեք Տիրոջ ճանապարհը, և ուղիղ արեք նրա շավիղները:

5 Քանզի ահա, տե՛ս, նա պիտի գա, ինչպես գրված է մարգարեների գրքում, որ վերցնի աշխարհի մեղքերը և փրկություն բերի հեթանոս ազգերին, հավաքի կորածներին, ովքեր Իսրայելի փարախից են.

6 Այո՛, նույնիսկ ցրվածներին ու տառապալներին. և նաև ճանապարհ պատրաստի, և ավետարանը հեթանոսներին քարոզելը հնարավոր դարձնի.

7 Եվ լույս լինի նրանց բոլորի համար, ովքեր նստած են խավարում, մինչև երկրի ծայրամասերը. որպեսզի իրագործի մեռելների հարությունը, և համբարձվի վեր, որ բնակվի Հնո արջ կողմում,

8 Մինչև ժամանակների լրությունը. և օրենքն ու վկայությունը պիտի կնքվեն, և արքայության բանալիները կրկին պիտի հանձնվեն Հոբր.

9 Որպեսզի արդարադատություն գործի բոլորի համար. որ դատաստանով իջնի բոլորի վրա, և բոլոր անաստվածներին հանոզի իրենց անաստվածային գործերում, որոնք կատարել են նրանք. և այդ բոլորը՝ այն օրը, որը պիտի գա.

10 Քանզի դա զորության օր է. այո՛, ամեն հովիտ կլցվի, և ամեն սար ու բլուր կցածրացվի. ծոված քաները կուղղվեն,

և խորհուրդորդ ճանապարհները կհարթեցվեն:

11 Եվ ամեն մարմին Աստծո փրկությունը կտեսնի:

ՋՍԹ, Ղուկաս 11.53 (համենատի՛ր Ղուկաս ԺԱ.52)

(Սուրբ գրքերի լրիվությունն է գիտության բանալին):

53 Վա՛յ ձեզ, օրինականներ՛. Քանզի դուք վերցրել եք գիտության բանալին՝ սուրբ գրքերի լրիվությունը. դուք ինքներդ չեք մտնում արքայություն, և մտնողներին էլ արգելում եք:

ՋՍԹ, Ղուկաս 12.9–12 (համենատի՛ր Ղուկաս ԺԲ.9–10)

(Սուրբ Հոգու դեմ հայիոյանքը չի ներվի):

9 Բայց ով որ ինձ ուրանա մարդկանց առաջ, նա պիտի ուրացվի Աստծո հրեշտակների առաջ:

10 Արդ նրա աշակերտները գիտեին, որ սա ասաց, որովհետև մարդկանց առաջ չար էին խոսել նրա դեմ. քանզի մարդկանց առաջ վախենում էին դավանել նրան:

11 Եվ նրանք տրամաբանում էին միմյանց հետ՝ ասելով. Նա գիտի մեր սրտերը և խոսում է ի դատապարտություն մեզ և մեզ ներում չի լինի: Բայց նա պատասխանեց նրանց և ասաց.

12 Ամեն ով որ Մարդու Որդու դեմ բան ասի և ապաշխարի, նրան կներվի. բայց ով որ Սուրբ Հոգու դեմ հայիոյի, նրան չի ներվի:

ՋՍԹ, Ղուկաս 12.41–57 (համենատի՛ր Ղուկաս ԺԲ.38–48)

(Մենք պետք է միշտ պատրաստ լինենք Տիրոջ գալստին):

41 Քանզի, ահա, նա գալիս է գիշերվա առաջին պահին, և նա պիտի գա նաև երկրորդ պահին, և դարձյալ, նա պիտի գա երրորդ պահին:

42 Եվ ճշմարիտ ասում եմ ձեզ. Նա արդեն եկել է, ինչպես որ գրվել է նրա մասին. և բացի այդ, երբ որ նա գա երկրորդ պահին կամ երրորդ պահին, օրհնված են այն ծառաները, երբ նա գա, որոնց նա կգտնի այդպես անելիս:

43 Քանզի այդ ծառաների Տերը գտնի մեջքը կկապի և նրանց սեղան կնստեցնի և առաջ կգա ու կծառայի նրանց:

44 Եվ արդ, ճշմարիտ ասում եմ ձեզ այս բաները, որ դուք իմանաք սա, որ Տիրոջ գալուտը գիշերվա գողի պես կլինի:

45 Եվ դա մնան է մի տանուտեր մարդու, որը, եթե չի պահպանում իր ունեցվածքը, ապա գողը գալիս է մի ժամի, որ ինքը չգիտի, և տանում է նրա ունեցվածքը և բաժանում իր ընկերների մեջ:

46 Եվ նրանք ասացին իրենց մեջ. Եթե լավ տանուտերն իմանար, թե որ ժամին էր գալու գողը, նա արթուն կմնար, և չէր թողնի, որ իր տունը մտնեին և իր ունեցվածքը կորեր:

47 Եվ նա ասաց նրանց. Ճշմարիտ ասում եմ ձեզ. Դուք էլ ուրեմն պատրաստ եղեք. քանզի Մարդու Որդին գալիս է մի ժամի, երբ չեք սպասում:

48 Այն ժամանակ Պետրոսն ասաց նրան. Տեր, այդ առակը մե՞զ ես ասում, թե՞ բոլորին:

49 Եվ Տերն ասաց. Ես ասում եմ բոլոր նրանց, որոնց Տերը կառավարիչ կնշանակի իր գերդաստանի վրա, որպեսզի իր զավակներին իրենց բաժին կերակուրը ժամանակին տա:

50 Եվ նրանք ասացին. Ուրեմն ո՞վ է այն հավատարիմ և իմաստուն ծառան:

51 Եվ Տերն ասաց նրան. Դա այն ծառան է, որը հետևում է, որ իր բաժին կերակուրը ժամանակին տա:

52 Օրհնված է այն ծառան, ում Տերը, երբ գա, կգտնի նրան այդպես անելիս:

53 Ճշմարիտ ասում եմ ձեզ, որ նրան կառավարիչ կդարձնի իր ողջ ունեցվածքի վրա:

54 Բայց չար ծառան նա է, ով արթուն չի լինի: Եվ եթե այդ ծառան արթուն չգտնվի, նա կասի իր սրտում. Իմ Տերն ուշացնում է իր գալը. և կսկսի ծառաներին ու աղախիմներին ծեծել, ուտել ու խմել և հարբել:

55 Այդ ծառայի Տերը կգա մի օր, որին նա չի սպասում, և մի ժամի, որ նա չգիտի, և կկտրի նրան ու նրա բաժինը կնշանակի անհավատների հետ:

56 Եվ այդ ծառան, որը գիտեր իր Տիրոջ կամքը, և պատրաստ չէր իր Տիրոջ գալուն, ոչ էլ գործում էր ըստ նրա կամքի, շատ հարվածներով պիտի ծեծվի:

57 Բայց նա, ով չգիտեր իր Տիրոջ կամքը, և ծեծի արժանի բաներ էր արել, քիչ կծեծվի: Քանզի ում որ շատ արված է, նրանից շատ էլ կպահանջվի. և ում որ Տերը շատ է հանձնել, նրանից էլ մարդիկ շատ կպահանջեն:

ՉՍԹ, Ղուկաս 16.16–23
(համեմատի՛ր Ղուկաս ԺԶ.16–18)

(Հարուստի և Ղազարոսի առակի համար Հիսուսը համատեքստ էր նախատեսել):

16 Եվ նրանք ասացին նրան. Մենք ունենք օրենքը և մարգարեներին. բայց ինչ վերաբերում է այս մարդուն, մենք չենք ընդունի նրան որպես մեր դեկավար. քանզի նա իրեն դատավոր է դարձնում մեր վրա:

17 Այն ժամանակ Հիսուսն ասաց նրանց. Օրենքը և մարգարեները վկայում են իմ մասին. այո՛, և բոլոր մարգարեները, որոնք գրել են, այսինքն՝ մինչև Հովիաննեսը, նախապես ասել են այս օրերի մասին:

18 Նրանից հետո Աստծո արքայությունն է քարոզվում, և ճշմարտություն փնտրող ամեն մարդ ջանում է մտնել նրա մեջ:

19 Եվ ավելի հեշտ է, որ երկինքն ու երկիրն անցնեն, քան օրենքի մի նշագիր վայր ընկնի:

20 Եվ ինչո՞ւ էք դուք ուսուցանում օրենքը և ուրանում այն, ինչ գրված է. և դատապարտում եք նրան, ում որ Հայրն ուղարկել է՝ կատարելու օրենքը, որպեսզի դուք բոլորդ փրկվագնվեք:

21 Ո՛վ հիմարներ. քանզի դուք ասում եք ձեր սրտում. Աստված չկա: Եվ դուք խեղաթյուրում եք ճիշտ ճանապարհը. և երկնքի արքայությունը բռնադատվում է ձեր կողմից. և դուք հալածում եք հեզերին. և ձեր բռնի ուժով դուք փնտրում եք կործանել արքայությունը. և ուժով բռնում եք արքայության զավակներին: Վա՛յ ձեզ, շնացողներ:

22 Եվ նրանք կրկին հայիոյեցին նրան, բարկանալով, որ իրենց շնացողներ անվանեց:

23 Բայց նա շարունակեց՝ ասելով. Ով որ արձակում է իր կնոջը և ուրիշի առնում, շնություն է անում. և ով որ մարդից արձակված կին է առնում, շնություն է անում: Դժմարիտ ասում եմ ձեզ, ես ձեզ կմանեցնեմ հարուստ մարդու հետ:

ՉՍԹ, Ղուկաս 17.21 (համեմատի՛ր Ղուկաս ԺԷ.20–21)

(Աստծո արքայությունն արդեն եկել է):

21 Ոչ էլ կասեն. Ահա՛ այստեղ է, ահա՛ այնտեղ է: Որովհետև ահա, Աստծո արքայությունն արդեն ձեզ մոտ է:

ՉՍԹ, Ղուկաս 17.36–40
(համեմատի՛ր Ղուկաս ԺԷ.37)

(Հիսուսը բացատրեց արդարների հավաքմանը վերաբերող առակը):

36 Եվ պատասխանեցին ու ասացին նրան. Տեր, ո՞րտեղ պիտի առնվեն նրանք:

37 Նա էլ ասաց նրանց. Որտեղ որ մարմինն է հավաքված. կամ, այլ խոսքով, որտեղ որ սրբերն են հավաքված, այնտեղ էլ արծիվները կհավաքվեն. կամ, այնտեղ էլ մնացածները կհավաքվեն:

38 Սա ասաց, նշելով իր սրբերի հավաքումը. և իրեշտակների իջնելն ու մնացածներին նրանց մոտ հավաքելը. մեկին մահճից, մյուսին աղալուց, մեկ ուրիշին էլ արտից, որտեղից որ կամենա:

39 Քանզի իրավ պիտի լինեն նոր երկինքներ և նոր երկիր, որոնցում արդարություն է բնակվում:

40 Եվ չի լինի ոչ մի անմաքուր բան. քանզի երկիրը կհնանա, ճիշտ ինչպես մի հանդերձ, աճելով ապակամության մեջ, ուստի այն կանհետանա, և պատվանդանը կմնա սրբագործված՝ ամեն մեղքից մաքրված:

ՉՍԹ, Ղուկաս 18.27 (համեմատի՛ր Ղուկաս ԺԸ.27)

(Հարստությանն ապավինելը մարդուն կանխում է մտնել Աստծո արքայությունը):

27 Նա էլ ասաց. Նրանց համար, ովքեր ապավինում են հարստությանը, անհնարին է մտնել Աստծո արքայությունը. բայց նա, ով թողնում է այս աշխարհի բաները, Աստծո մոտ հնարավոր է, որ նա ներս մտնի:

ՉՍԹ, Ղուկաս 21.24–26
(համեմատի՛ր Ղուկաս ԻԱ.24–26)

(Հիսուսը բացատրեց իր գալստյան նշանները):

24 Արդ, այս բաները նա ասաց նրանց Երուսաղեմի կործանման վերաբերյալ:

Եվ ապա աշակերտները հարցրեցին նրան՝
ասելով. Վարդապետ, ասա՞ մեզ քո
գալստյան վերաբերյալ:

25 Եվ նա պատասխան տվեց ու -
ասաց. Այն սերնդի ժամանակ, երբ հե-
թանոսների ժամանակը լրանա, նշաններ
կլինեն արեգակում և լուսնում և աստղե-
րում. և երկրի վրա ազգերը վշտի շփոթ-
մունքից կտագնապեն, ինչպես ծովի և
ալիքների մոնչյունը: Երկիրը նույնպես
պիտի անհամազստանա, և մեծ անդունդի
ջրերը ևս.

26 Մարդկանց սրտերը կնվաղեն վա-
խից և այն բաներին հետևելուց, որոնք
կատարվում են երկրի վրա: Քանզի երկրն-
քի գորությունները կցնցվեն:

ՁՄԹ, Ղուկաս 21.32 (համեմատի՛ր
Ղուկաս ԻԱ.32)

*(Ամեն բան կկատարվի, երբ որ հեթանոս-
ների ժամանակները լրանան):*

32 Ե՛վ ճշմարիտ ասում եմ ձեզ. Այս սերուն-
դը՝ սերունդ, որի ժամանակ հեթանոսների
ժամանակները կլրանան, չի անցնի մինչև
որ բոլոր բաները չկատարվեն:

ՁՄԹ, Ղուկաս 23.35 (համեմատի՛ր
Ղուկաս ԻԳ.34)

*(Հիտար ներում խնդրեց Հռոմեական զին-
վորների համար, որոնք խաչեցին իրեն):*

35 Այն ժամանակ Հիսուսն ասաց.
Ճա՛րք, ներիր նրանց. որովհետև չգիտեն,
թե ինչ են անում: (Նկատի ունենալով
զինվորներին, որոնք խաչում էին իրեն),
և նրանք բաժանեցին նրա հանդերձները
և վիճակ գեցին:

ՁՄԹ, Հովհաննես 1.1-34
(համեմատի՛ր Հովհաննես Ա.1-34)

*[Հիսուս Քրիստոսի ավետարանը քարոզվել
է ի սկզբանե: Մի Եղիաթը (Հովհաննես
Մկրտիչը) պետք է ճանապարհ պատրաս-
տեր Քրիստոսի համար, իսկ մյուս Եղիաթը
(Քրիստոսը) պետք է վերականգներ բոլոր
բաները]:*

1 Սկզբում ավետարանը քարոզվեց
Որդու միջոցով: Եվ ավետարանը բանն
էր, և բանը Որդու մոտ էր, և Որդին Հոր
մոտ էր, և Որդին Աստծուց էր:

2 Նա ի սկզբանե Աստծո մոտ էր:

3 Բոլոր բաները նրանով արարվեցին.
և առանց նրա ոչինչ չարարվեց, ինչ-որ
արարվեց:

4 Նրանում էր ավետարանը, և ավե-
տարանը կյանք էր, և կյանքը մարդկանց
լույսն էր.

5 Եվ լույսը շողում է աշխարհում, և
աշխարհը չի ըմբռնում այն:

6 Մի մարդ եղավ՝ Աստծուց ուղարկ-
ված, որի անունը Հովհաննես էր:

7 Սա վկայության համար եկավ աշ-
խարհի, որ լույսի համար վկայի, որ
ավետարանի մասին վկայի բոլորին, Որ-
դու միջոցով, որպեսզի նրանով մարդիկ
հավատան:

8 Նա չէր լույսը, բայց եկավ վկայելու
այն լույսի մասին,

9 Որը ճշմարիտ լույսն էր, որը լուսա-
վորում է ամեն մարդու, որ գալիս է
աշխարհի.

10 Այսինքն՝ Աստծո Որդին՝ Նա, ով
աշխարհում էր, և աշխարհը նրանով
արարվեց, և աշխարհը չճանաչեց նրան:

11 Նա եկավ յուրայինների մոտ, և
յուրայինները չընդունեցին նրան:

12 Բայց որոնք որ ընդունեցին նրան,
նա գործություն տվեց նրանց՝ դառնալու
Աստծո որդիները. միայն նրանց, ովքեր
հավատում են նրա անվանը:

13 Նա ծնվեց ոչ արյունից, ոչ մարմնի
կամքից, ոչ մարդու կամքից, այլ Աստծուց:

14 Եվ նույն բանը մարմին դարձավ և
բնակեց մեր մեջ, և մենք տեսանք նրա
փառքը, ինչպես փառքը Հոր Միածնի՝
շնորհով և ճշմարտությունով լի:

15 Հովհաննեսը վկայեց նրա մասին, և
աղաղակեց՝ ասելով. Սա էր, որի մասին
ասում էի. Ինձանից հետո եկողն ինձա-
նից առավել է. որովհետև նա ինձանից
առաջ էր:

16 Քանզի սկզբում էր Բանը, այսինքն՝
Որդին, որին մարմին է տրվել և ուղարկ-
վել է մեզ մոտ Հոր կամքով: Եվ բոլոր
նրանք, ովքեր հավատում են նրա անվա-
նը, կտանան նրա լիությունից: Եվ նրա
լիությունից մենք բոլորս ստացել ենք,
նրա շնորհով, նույնիսկ անմահություն և
հավերժական կյանք:

17 Քանզի օրենքը տրվեց Մովսեսի մի-
ջոցով, բայց կյանքը և ճշմարտությունը
Հիսուս Քրիստոսի միջոցով եղան:

18 Քանզի օրենքը մարմնավոր պատ-

վիրանի պես էր, որը մահ էր բերում. բայց ավետարանն անվերջ կյանքի զորության պես է, Հիսուս Քրիստոսի՝ Միածին Որդու միջոցով, որը Հոր ծնունդ է:

19 Եվ ոչ ոք երբևէ չի տեսել Աստծուն, բացառությամբ Որդու մասին վկայելիս. քանզի ոչ ոք չի կարող փրկվել, եթե չլինի նրա միջոցով:

20 Եվ սա է Հովհաննեսի վկայությունը, երբ որ հրեաները Երուսաղեմից քահանաներ ու Ղևտացիներ ուղարկեցին նրա մոտ, որ հարցնեն նրան. Դու ո՞վ ես:

21 Եվ նա խոստովանեց և չժխտեց, որ ինքը Եղիասն է. բայց խոստովանեց՝ ասելով. Ես Քրիստոսը չեմ:

22 Եվ նրան հարցրեցին՝ ասելով. Ապա ի՞նչպես ես դու Եղիասը: Եվ նա ասաց. Ես այն Եղիասը չեմ, որը պետք է վերականգնի բոլոր բաները: Եվ նրանք հարցրեցին նրան՝ ասելով. Դու այն մարգարե՞ն ես: Եվ նա պատասխանեց՝ ո՛չ:

23 Այն ժամանակ նրան ասացին. Ո՞վ ես, որ պատասխան տանք մեզ ուղարկողներին: Ի՞նչ ես ասում քեզ համար:

24 Նա ասաց. Ես եմ անապատում կանչողի ձայնը. Ուղիղ արեք Տիրոջ ճանապարհը, ինչպես Եսայիա մարգարեն է ասում:

25 Եվ ուղարկվածները Փարիսեցիներից էին:

26 Եվ նրան հարցրեցին և ասացին. Ապա ինչո՞ւ ես մկրտում, եթե դու ո՛չ Քրիստոսն ես, ո՛չ Եղիասը, որը պիտի վերականգներ բոլոր բաները, ո՛չ էլ այն մարգարեն:

27 Հովհաննեսը պատասխանեց նրանց՝ ասելով. Ես ջրով եմ մկրտում, բայց ձեր մեջ կա մեկը, որին դուք չգիտեք.

28 Այդ նա է, ում մասին ես վկայում եմ: Նա այն մարգարեն է, այսինքն՝ Եղիասը, որն ինձանից հետո գալով, ինձանից առավել է, որի կոշիկների կապը ես արժանի չեմ արձակելու, կամ որի տեղը ես չեմ կարող լրացնել. քանզի նա պիտի մկրտի ոչ միայն ջրով, այլ կրակով և Մուրբ Հոգով:

29 Հաջորդ օրը Հովհաննեսը տեսավ Հիսուսին իր մոտ գալիս, և ասաց. Ահա Աստծո Գառը, որը վեր է առնում աշխարհի մեղքը:

30 Եվ Հովհաննեսը վկայեց նրա մասին ժողովրդին՝ ասելով. Սա է, որի

համար ասում էի. Ինձանից հետո մի մարդ է գալիս, որն ինձանից առավել է. քանզի ինձանից առաջ էր, և ես գիտեի նրան, և որ նա հայտնի պիտի դառնար Իսրայելին. դրա համար ես եկա ջրով մկրտելու:

31 Եվ Հովհաննեսը վկայեց՝ ասելով. Երբ նա մկրտվեց իմ կողմից, ես տեսա Հոգին, որն իջնում էր երկնքից աղավաճու պես և նրա վրա մնում:

32 Եվ ես ճանաչեցի նրան. քանզի նա, ով ինձ ուղարկեց ջրով մկրտելու, ասաց ինձ. Ում վրա որ տեսնես Հոգին վայր է գալիս և մնում, նա է Մուրբ Հոգով մկրտողը:

33 Եվ ես տեսա և վկայեցի, որ սա է Աստծո Որդին:

34 Այս բաները տեղի ունեցան Բեթաբարայում, մի փոքր հեռու Հորդանանից, որտեղ Հովհաննեսը մկրտում էր:

ՉՄԹ, Հովհաննես 1.42

(համեմատի՛ր Հովհաննես Ա.42)

(Կեփաս նշանակում է «տեսանող» կամ «վեմ»):

42 Եվ նրան բերեց Հիսուսի մոտ: Եվ երբ Հիսուսը տեսավ նրան, ասաց. Դու Միմոնն ես՝ Հովհանի որդին, դու պիտի կոչվես Կեփաս, որը թարգմանաբար, տեսանող է, կամ վեմ: Եվ նրանք ձկնորս էին: Եվ նրանք անմիջապես թողեցին ամեն ինչ և հետևեցին Հիսուսին:

ՉՄԹ, Հովհաննես 4.1–4

(համեմատի՛ր Հովհաննես Գ.1–2)

(Հիսուսը մկրտություն էր կատարում):

1 Երբ որ Փարիսեցիները լսեցին, որ Հիսուսն ավելի շատ է աշակերտներ աճում ու մկրտում, քան Հովհաննեսը,

2 Նրանք ավելի մեծ ջանքերով սկսեցին միջոցներ փնտրել, որպեսզի մահվան ենթարկեն նրան. քանզի շատերը Հովհաննեսին ընդունում էին որպես մարգարե, բայց Հիսուսին չէին հավատում:

3 Արդ, Տերը գիտեր դա, չնայած ինքն անձամբ այդքան չէր մկրտում, որքան իր աշակերտները.

4 Որովհետև նրանց ցույց էր տալիս միմյանց մախապատվություն տալու օրինակ:

ՁՍԹ, Հովհաննես 4.26

(համեմատի՛ր Հովհաննես Դ.24)

(Աստված իր Հոգին խոստացել է ճշմարիտ հավատացյալներին):

26 Քանզի այդպիսիններին Աստված խոստացել է իր Հոգին: Եվ նրան երկրբայագողները պետք է հոգով և ճշմարտությամբ երկրպագեն:

ՁՍԹ, Հովհաննես 13.8-10

(համեմատի՛ր Հովհաննես ԺԳ.8-10)

(Հիսուսը լվաց Առաքյալների ոտքերը):

8 Պետրոսը նրան ասաց. Դու չպետք է իմ ոտքերը լվանաս: Հիսուսը պատասխանեց նրան. Եթե քեզ չլվանամ, ինձ հետ բաժին չունես:

9 Սիմոն Պետրոսն ասաց նրան. Տեր, ոչ թե ոտքերս միայն, այլ ձեռքերս ու գլուխս էլ:

10 Հիսուսը նրան ասաց. Իր ձեռքերն ու գլուխը լվացածի՞ն բան պետք չէ, բացի ոտքերը լվանալուց, այլ բոլորովին մաքուր է. և դուք մաքուր եք, բայց ոչ բոլորդ: Արդ, սա հրեաների սովորույթն էր՝ ըստ իրենց օրենքի. ուստի, Հիսուսն արեց դա, որպեսզի օրենքը կատարվի:

ՁՍԹ, Հովհաննես 14.30

(համեմատի՛ր Հովհաննես ԺԴ.30)

(Խալկարի իշխանը, կամ Սատանան, այս աշխարհից է):

30 Այսուհետև շատ չեմ խոսի ձեզ հետ. քանզի խավարի իշխանը, որն այս աշխարհից է, գալիս է, բայց նա գործություն չունի ինձ վրա, բայց գործություն ունի ձեր վրա:

ՁՍԹ, Գործք 9.7 (համեմատի՛ր

Գործք Թ.7, Գործք ԻԲ.9)

(Պողոսի հետ եղողները, իր դարձի ժամանակ, լույսը տեսան, բայց ձայնը չսեցին, ոչ էլ Տիրոջը տեսան):

7 Եվ այն մարդիկ, ովքեր նրա հետ գնում էին, լույսն իսկապես տեսնում էին և վախեցած էին. բայց նրա հետ խոսողի ձայնը չէին լսում:

ՁՍԹ, Հռովմայեցիս 4.16

(համեմատի՛ր Հռովմայեցիս Դ.16)

(Ե՛վ հավատքը, և՛ գործերը, շնորհի միջոցով, անհրաժեշտ են փրկության համար):

16 Ուստի դուք արդարացվում եք հավատքով և գործերով, շնորհի միջոցով, որպեսզի խոստումը հաստատ լինի ամեն զավակի համար. ոչ միայն օրենքից լինողի համար, այլ նաև նրա համար, ով Աբրահամի հավատքից է. որը բոլորիս հայրն է,

ՁՍԹ, Հռովմայեցիս 7.5-27

(համեմատի՛ր Հռովմայեցիս Է.5-25)

(Քրիստոսն ի գորու է փոխելու մարդկանց հոգին):

5 Որովհետև երբ մարմնով էինք, մեղքի կրքերը, որ հակառակ էին օրենքին, գործում էին մեր անդամներում, որ պտուղ բերեն մահին:

6 Բայց այժմ մենք ազատված ենք օրենքից, որով բռնված էինք, մահացած լինելով օրենքի համար, որպեսզի հոգու նորությունով ծառայենք, և ոչ թե գրի հնությունով:

7 Արդ ի՞նչ ասենք ուրեմն: Օրենքը մե՞ղք է: Աստված ոչ անի: Ո՛չ, ես մեղքը չէի իմանա, եթե ոչ օրենքով. քանզի ցանկությունը չէի ճանաչի, եթե օրենքը չասեր՝ Մի՛ ցանկանա:

8 Բայց մեղքը, առիթ առնելով պատվիրանով, ինձանում ամեն ձևի ցանկություն գործեց: Որովհետև առանց օրենքի մեղքը մեռած էր:

9 Քանզի ես, առանց օրենքը զանց առնելու, մի ժամանակ կենդանի էի, բայց երբ Քրիստոսի պատվիրանը եկավ, մեղքը կենդանացավ, և ես մեռա:

10 Եվ երբ ես չհավատացի Քրիստոսի բերած պատվիրանին, որը կյանքի համար էր սահմանված, ես տեսա, որ այն դատապարտեց ինձ մահվան:

11 Քանզի մեղքը, առիթից օգտվելով, մերժեց պատվիրանը և խաբեց ինձ. և դրանով ինձ սպանեց:

12 Այնուամենայնիվ, ես տեսնում եմ, որ օրենքը սուրբ է, և պատվիրանն էլ սուրբ և արդար և բարի է:

13 Ուրեմն այն, ինչ բարի է, ինձ մա՞հ պատճառեց: Աստված ոչ անի: Այլ մեղքը, որպեսզի մեղքը երևա, բարիով մահ գործեց իմ մեջ. որպեսզի մեղքը, պատվիրանի միջոցով, առավել ևս մեղավոր դառնա:

14 Քանզի գիտենք, որ պատվիրանը հոգևոր է. բայց երբ ես օրենքի տակ

էի, դեռևս մարմնավոր էի՝ մեղքի տակ ծախված:

15 Բայց այժմ հոգևոր եմ. քանզի այն, ինչ պատվիրված է անել, անում եմ. իսկ այն, ինչ պատվիրված է թույլ չտալ, թույլ չեմ տալիս:

16 Որովհետև այն, ինչ գիտեմ, որ ճիշտ չէ, ես չեմ անի. որովհետև այն, ինչը մեղք է, ես ասում եմ:

17 Իսկ եթե չեմ անում այն, ինչ ես թույլ չէի տա, ապա օրենքի հետ համաձայնվում եմ, որ այն բարի է. և ես չեմ դատապարտվում:

18 Արդ ուրեմն, այլևս ես չէ, որ մեղք եմ գործում. այլ ես փորձում եմ ճնշել մեղքը, որ բնակվում է ինձանում:

19 Որովհետև գիտեմ, որ ինձանում, այսինքն՝ իմ մարմնում, բարի բան չի բնակվում. որովհետև կամեցալը հետս է, բայց բարին գործելը չեմ գտնում, բացի միայն Քրիստոսով:

20 Որովհետև բարին, որը կաննի օրենքի տակ, բարի չեմ համարում. ուստի, այն չեմ անում:

21 Բայց չարը, որն օրենքի տակ չէի անի, բարի եմ համարում. այդ բանն անում եմ:

22 Արդ, եթե Քրիստոսի օգնությամբ անում եմ այն, ինչը չէի անում օրենքի տակ, ուրեմն օրենքի տակ չեմ. և այլևս ոչ թե փնտրում եմ սխալ անել, այլ ճնշել մեղքը, որը բնակվում է ինձանում:

23 Ուրեմն գտնում եմ, որ օրենքի տակ, երբ կամեցում էի բարին գործել, չարն ինձ մտտ էր. որովհետև ներքին մարդով ես հիանում եմ Աստծո օրենքով:

24 Բայց այժմ տեսնում եմ մեկ ուրիշ օրենք, այսինքն՝ Քրիստոսի պատվիրանը, և այն դրոշմված է իմ մտքում:

25 Բայց իմ անդամները պատերազմում են մտքիս օրենքի դեմ, և ինձ գերության եմ տանում մեղքի օրենքին, որն իմ անդամներում է:

26 Եվ եթե ես չճնշեմ մեղքը, որն իմ մեջ է, այլ մարմնով ծառայեմ մեղքի օրենքին. ի՞նչ խեղճ մարդ եմ ես. ո՞վ կազատի ինձ այս մահվան մարմնից:

27 Ուրեմն շնորհակալ եմ Աստծուց, մեր Տեր Հիսուս Քրիստոսի միջոցով, որ այդպես, մտքով ես ինքս ծառայում եմ Աստծո օրենքին:

ՉՄԹ, Հռովմայեցիս 8.8

(համեմատի՛ր Հռովմայեցիս Ը.8)

(Նրանք, ովքեր հետևում են մարմնի ուղիներին, չեն կարող Աստծուն հաճո լինել):

8 Ուրեմն նրանք, որ ըստ մարմնի են, չեն կարող Աստծուն հաճո լինել:

ՉՄԹ, 1 Կորնթացիս 7.1–2, 5, 26, 29–33 (համեմատի՛ր Ա Կորնթացիս Է.1–2, 5, 26, 29–33)

(Պողոսը պատասխանեց ամուսնությանը վերաբերող հարցերին նրանց համար, ովքեր առաքելության են կանչված):

1 Արդ այն բաների համար, որոնց մասին ինձ գրել էիք՝ ասելով. Տղամարդու համար լավ է, որ կնկա չունենա:

2 Այնուամենայնիվ, ես ասում եմ, որ պոռնկությունից խուսափելու համար, ամեն մարդ թող իր կինն ունենա, և ամեն կին թող իր ամուսինն ունենա:

5 Իրարից մի հեռացեք, բացի միայն համաձայնությամբ, որոշ ժամանակով՝ ծոմին ու աղոթքին տրվելու համար. և դարձյալ միացեք իրար, որպեսզի Մատանան չզայթակղի ձեզ՝ ձեր ամուսնկալության պատճառով:

26 Ուստի ես համարում եմ, որ ներկա նեղության պատճառով, լավ է տղամարդու համար որ այսպես մնա, որպեսզի ավելի մեծ բարիք գործի:

29 Բայց ես ձեզ եմ ասում, որ կանչված եք ծառայության: Քանզի սա եմ ձեզ ասում, եղբայրներ, որ կարճ ժամանակ է մնացել, որ դուք ուղարկվեք ծառայության: Նույնիսկ կին ունեցողները չունեցողների պես կլինեն. քանզի դուք կանչված և ընտրված եք Տիրոջ գործն անելու:

30 Եվ լացողների հետ այնպես կլինի, որ կարծես չեն լացել. և ուրախացողները՝ կարծես չեն ուրախացել, և ծախու առնողները՝ կարծես չեն ունեցել:

31 Եվ այս աշխարհը գործածողները՝ կարծես չեն գործածել. որովհետև այս աշխարհի կերպարանքն անցնում է:

32 Բայց կամեցում եմ, եղբայրներ, որ դուք մեծարեք ձեր կոչումը: Կամեցում եմ, որ առանց հոգաի լինեք: Որովհետև մա, ով ամուսնացած չէ, Տիրոջ բաների համար է հոգ անում, թե ինչպես հաճո լինի Տիրոջը. ուստի, մա հաղթում է:

33 Բայց ամուսնացածն աշխարհի բաների համար է հոգս անում, թե ինչպես հաճո լինի իր կնոջը. հետևաբար, տարբերություն կա, քանզի դա նրան խանգարում է:

ՋՍԹ, 1 Կորնթացիս 15.40 (համեմատի՛ր Ա Կորնթացիս ԺԵ.40)

(Հարություն մեջ փառքի երեք աստիճաններ կան):

40 Ինչպես և սելեստիալ մարմինները և թերեստրիալ մարմինները և թելեստիալ մարմինները. բայց ուրիշ է սելեստիալի փառքը. ուրիշ է թերեստրիալինը. և ուրիշ է թելեստիալինը:

ՋՍԹ, 2 Կորնթացիս 5.16 (համեմատի՛ր Բ Կորնթացիս Ե.16)

(Պողոսը Սրբերին խորհուրդ տվեց չսպրել ըստ մարմնականի):

16 Ուրեմն, այսուհետև մենք այլևս չենք սպրում ըստ մարմնի. այո՛, չնայած մի ժամանակ մենք սպրում էինք ըստ մարմնի, սակայն քանի որ ճանաչել ենք Քրիստոսին, ուրեմն այսուհետև չենք սպրում ըստ մարմնի:

ՋՍԹ, Գաղատացիս 3.19–20 (համեմատի՛ր Գաղատացիս Գ.19–20)

[Քրիստոսը նոր ուխտի միջնորդն է: Համեմատվում են Մովսեսի օրենքը (հին ուխտը) և հավիտենական ավետարանը (նոր ուխտը)]:

19 Արդ, ուրեմն օրենքը տրվել էր օրինագանցությունների պատճառով, մինչև որ գա սերունդը, որին տրվել էր խոստումը՝ Մովսեսի օրենքում, որը հրեշտակների ձեռքով կարգված էր՝ միջնորդ լինելու այս առաջին ուխտի (օրենքի) համար:

20 Արդ այդ միջնորդը միջնորդ չէր նոր ուխտի համար. այլ կա մեկ այլ միջնորդ նոր ուխտի համար, որը Քրիստոսն է, ինչպես գրված է օրենքում՝ Աբրահամի և նրա սերնդին արված խոստումի մասին: Արդ, Քրիստոսն է կյանքի միջնորդը. որովհետև սա է այն խոստումը, որն Աստված տվեց Աբրահամին:

ՋՍԹ, Եփեսացիս 4.26 (համեմատի՛ր Եփեսացիս Գ.26)

(Անարդար բարկությունը մեղք է):

26 Կարո՞ղ եք բարկանալ և չմեղանչել. մի թողեք, որ արեգակը մայր մտնի ձեր ցասման վրա:

ՋՍԹ, 1 Թեսաղոնիկեցիս 4.15 (համեմատի՛ր Ա Թեսաղոնիկեցիս Գ.14)

(Արդար մարդիկ, որոնք կենդանի կլինեն Տիրոջ գալստի ժամանակ, առավելություն չեն ունենա արդար մեռելների նկատմամբ):

15 Որովհետև սա ենք ասում ձեզ Տիրոջ խոսքով, որ նրանք, ովքեր կենդանի կլինեն Տիրոջ գալստի ժամանակ, առաջ չեն ընկնի նրանցից, ովքեր մնացել են Տիրոջ գալստի համար, որոնք մնջում են:

ՋՍԹ, 2 Թեսաղոնիկեցիս 2.2–3, 7–9 (համեմատի՛ր Բ Թեսաղոնիկեցիս Բ.2–9)

(Պողոսն ուրացություն է մարգարեացել նախքան Տիրոջ վերադարձը):

2 Որ դուք շուտով չշարժվեք մտքով, ոչ էլ անհանգստանաք նամակով, եթե մեզանից չէ գրված. ոչ էլ հոգով կամ խոսքով, իբրև թե Քրիստոսի օրը հասնելու վրա է:

3 Թող ոչ ոք չխաբի ձեզ ինչ-որ կերպ. որովհետև նախ պիտի գա անկումը և պիտի հայտնվի անօրինության մարդը՝ կորստի որդին:

7 Որովհետև անօրինության խորհուրդն արդեն գործում է, և նա է հիմա, որ գործում է, և Քրիստոսը թույլ է տալիս, որ նա գործի, մինչև որ լրանա ժամանակը, որ նա պիտի վերցվի ճանապարհից:

8 Եվ այն ժամանակ կհայտնվի այն ամբարիշտը, որին Տերը կկլանի իր բերանի ոգով, և կկործանի իր գալստյան պայծառությամբ:

9 Այո, Տերը՝ նույն Հիսուսը, որի գալուստը չի լինի, մինչև որ նախ չգա անկումը, Սատանայի ներգործությամբ, ողջ գործությամբ և նշաններով և սուտ հրաշագործություններով:

ՋՍԹ, 1 Տիմոթեոս 2.4 (համեմատի՛ր Ա Տիմոթեոս Բ.4)

(Քրիստոսը Միածին Որդին է և Միջնորդը):

4 Ով կամենում է, որ բոլոր մարդիկ փրկվեն, և զան ճշմարտության գիտությանը, որը Քրիստոս Հիսուսում է, որն Աստծո Միածին Որդին է, և կարգվել է

Միջնորդ լինելու Աստծո և մարդու միջև. որը մեկ Աստված է, և գորություն ունի բոլոր մարդկանց վրա:

ՉՄԹ, 1 Տիմոթեոս 6.15–16 (համեմատի՛ր Ա Տիմոթեոս 2.15–16)

(Նրանք, ում մեջ բնակվում է անմահության լույսը, կարող են տեսնել Հիսուսին):

15 Որն իր ժամանակին ցույց կտա, ով է երանելիւն և միակ Տիրակալը՝ քազավորների Թագավորը և տերերի Տերը, որինն է պատիվը և գորությունը հավիտյան.

16 Որին ոչ ոք չի տեսել, ոչ էլ կտեսնի, որին ոչ ոք չի հասնի, բացի նրանից, ում մեջ բնակվում է անմահության լույսը և հույսը:

ՉՄԹ, Եբրայեցիս 1.6–7

(համեմատի՛ր Եբրայեցիս Ա.6–7)

(Հրեշտակները սպասավոր ոգիներ են):

6 Եվ բացի այդ, երբ անդրանիկին աշխարհ է մտցնում, նա ասում է. Եվ թող Աստծո բոլոր հրեշտակները երկրպագեն նրան, ով իր պաշտոնյաներին դարձնում է կրակի բոցի պես:

7 Եվ հրեշտակների մասին նա ասում է. Հրեշտակները սպասավոր ոգիներ են:

ՉՄԹ, Եբրայեցիս 4.3 (համեմատի՛ր Եբրայեցիս Գ.3)

(Աստծո գործերը պատրաստվել էին աշխարհի հիմնադրումից ի վեր):

3 Որովհետև մենք, որ հավատացել ենք, մտնում ենք այն հանգստի մեջ, ինչպես որ նա ասել է. Ինչպես իմ ցասման մեջ երդում արեցի, որ եթե կարծրացնեմ իրենց սրտերը, պիտի չմտնեն իմ հանգստի մեջ. նաև ես երդում եմ արել, որ եթե չկարծրացնեմ իրենց սրտերը, պիտի մտնեն իմ հանգստի մեջ. թեև Աստծո գործերը պատրաստվել էին (կամ կատարվել էին) աշխարհի հիմնադրումից:

ՉՄԹ, Եբրայեցիս 5.7–8

(ՉՄԹ ձեռագրի նշումը հաղորդում է, որ 7-րդ և 8-րդ հատվածներն ակնարկում են Մելքիսեդեկին, ոչ թե Քրիստոսին: Այլ կերպ, ՀԹՏ-ն (Հակոբ Թագավորի Տարբերակը) և ՉՄԹ-ն նույնն են):

ՉՄԹ, Եբրայեցիս 6.1, 3

(համեմատի՛ր Եբրայեցիս 2.1, 3)

(Քրիստոսի սկզբունքները տանում են կատարելության):

1 Ուստի, չթողնելով Քրիստոսի վարդապետության սկզբունքները, եկեք դեպի կատարյալը գնանք. նոր հիմք չդնելով մեռած գործերից ապաշխարության և Աստծուն հավատալու համար.

3 Եվ մենք կգնանք դեպի կատարելություն, եթե Աստված թույլ տա:

ՉՄԹ, Եբրայեցիս 7.3 (համեմատի՛ր Եբրայեցիս Է.3)

(Սուրբ քահանայությունը՝ ըստ Աստծո Որդու կարգի, առանց հոր և մոր է, և չունի ոչ օրերի սկիզբ, ոչ վերջ):

3 Որովհետև այս Մելքիսեդեկը քահանա էր կարգվել՝ ըստ Աստծո Որդու կարգի, կարգ, որն անհայր և անմայր էր, առանց ազգահամարի, չունենալով ոչ օրերի սկիզբ, ոչ էլ կյանքի վերջ: Եվ բոլոր նրանք, ովքեր կարգվում են այս քահանայությանը, դառնում են Աստծո Որդու նման՝ շարունակ մնալով քահանա:

ՉՄԹ, Եբրայեցիս 7.25–26

(համեմատի՛ր Եբրայեցիս Է.26–27)

(Բացատրվում է Քրիստոսի դերը, որպես Միջնորդ):

25 Որովհետև այսպիսի քահանայապետ էր վայելում մեզ, որը սուրբ է, անմեղ, անարատ, մեղավորներից անջատված և երկինքները կառավարող դարձված.

26 Եվ ոչ թե այն քահանայապետերի նման, որոնք ամեն օր գոհ էին մատուցում առաջ իրենց մեղքերի համար, և հետո ժողովրդի մեղքերի համար. որովհետև նա կարիք չունի իր մեղքերի համար գոհ մատուցելու, որովհետև նա մեղքից զուրկ էր. այլ ժողովրդի մեղքերի համար: Եվ դա կատարեց մեկ անգամ, երբ իր անձը մատուցանեց:

ՉՄԹ, Եբրայեցիս 11.1 (համեմատի՛ր Եբրայեցիս ԺԱ.1)

(Հավատքը համոզվածություն է հուսացած քաների համար):

1 Հավատքն էլ համոզվածություն է

հուսացած բաների համար՝ չերևացող բաների ապացույցը:

ՋՍԹ, Երբայեցիս 11.35
(համեմատի՛ր Երբայեցիս ԺԱ.35)

(Հավատարիմները, որոնք հալածվել են Քրիստոսի համար, ձեռք են բերում առաջին հարությունը):

35 Կանայք իրենց մեղքերին ընդունեցին՝ կրկին կյանքի բարձրացված. ուրիշներն էլ հալածվեցին՝ ազատությունը չընդունելով. որպեսզի առաջին հարությանը հասնեն.

ՋՍԹ, Հակոբոս 1.2 (համեմատի՛ր Հակոբոս Ա.2)

(Նեղություններն են, որ օգնում են մեզ սրբագործվել, այլ ոչ թե գայթակղությունները):

2 Եղբայրներ յա, բոլորովին ուրախություն համարեք, երբ շատ նեղություններին մեջ եք ընկնում.

ՋՍԹ, Հակոբոս 2.1 (համեմատի՛ր Հակոբոս Բ.1)

(Անդամները չպետք է մեկ անձի ավելի շատ հարգեն մյուսից):

1 Եղբայրներ յա, դուք չեք կարող մեր Տեր Հիսուս Քրիստոսի՝ փառքի Տիրոջ հավատքն ունենալ, և սակայն աչառու լինել անձերի հանդեպ:

ՋՍԹ, 1 Պետրոս 3.20 (համեմատի՛ր Ա Պետրոս Գ.20)

(Բանտի հոգիներից ոմանք անհրավ են եղել Նոյի օրերին):

20 Որոնցից ոմանք անհնազանդ էին Նոյի օրերին, երբ Աստծո երկայնամտությունը համբերում էր, մինչ տապանը պատրաստվում էր, որի մեջ մի քանիսը, այսինքն՝ ութ հոգի, ջրով փրկվեցին:

ՋՍԹ, 1 Պետրոս 4.6 (համեմատի՛ր Ա Պետրոս Գ.6)

(Ավետարանը քարոզվում է նրանց, ովքեր մահացած են):

6 Սրա համար, ավետարանը նրանց էլ քարոզվեց, որ մեռած են, որպեսզի նրանք դատվեն մարմնի մեջ գտնվող մարդկանց պես, բայց հոգով ապրեն՝ Աստծո կամքի համաձայն:

ՋՍԹ, 1 Պետրոս 4.8 (համեմատի՛ր Ա Պետրոս Գ.8)

(Գթությունը մեզ կանխում է մեղք գործելուց):

8 Եվ բոլոր բաներից առավել, գթություն ունեցեք ձեր մեջ. քանզի գթությունը բազում մեղքեր է կանխում:

ՋՍԹ, 1 Հովհաննես 2.1
(համեմատի՛ր Ա Հովհաննես Բ.1)

(Քրիստոսը մեր բարեխոսը կլինի Հոր մոտ, եթե ապաշխարենք):

1 Որդյակներս, այս բաները ես գրում եմ ձեզ, որ չմեղանչեք: Բայց եթե մեկը մեղանչի և ապաշխարի, ապա բարեխոս ունենք Հոր մոտ՝ Հիսուս Քրիստոս արդարին.

ՋՍԹ, 1 Հովհաննես 3.9
(համեմատի՛ր Ա Հովհաննես Գ.9)

(Ամեն ոք, ով ծնվում է Աստծուց, չի շարունակում մեղքի մեջ):

9 Ամեն ոք, ով ծնվում է Աստծուց, չի շարունակում մեղքի մեջ. որովհետև Աստծո Հոգին մնում է նրա մեջ. և նա չի կարող շարունակել մեղքի մեջ, որովհետև ծնվել է Աստծուց՝ ստանալով խոստումի սուրբ Հոգին:

ՋՍԹ, 1 Հովհաննես 4.12
(համեմատի՛ր Ա Հովհաննես Գ.12)

(Միայն Աստծուն հավատացող մարդիկ կարող են նրան տեսնել):

12 Ոչ ոք երբեք չի տեսել Աստծուն, բացի նրանցից, ովքեր հավատում են: Եթե սիրում ենք միմյանց, Աստված բնակվում է մեր մեջ, և նրա սերը կատարելագործվում է մեզանում:

ՋՍԹ, Հայտնություն 1.1-4
(համեմատի՛ր Հայտնություն Ա.1-4)

(Հովհաննեսը հայտնություն ստացավ Հիսուս Քրիստոսից և այն առաքեց Ասիայի յոթ եկեղեցիների ղեկավարներին):

1 Հովհաննեսի՝ Աստծո ծառայի հայտնությունը, որը նրան տրվել էր Հիսուս Քրիստոսից, ցույց տալու համար իր ծառաներին այն բաները, որոնք շուտով պիտի լինեն, որը նա ուղարկեց և իմացրեց իր հրեշտակի միջոցով իր ծառա Հովհաննեսին,

2 Որը վկայեց Աստծո խոսքի և Հիսուս

Քրիստոսի վկայության մասին, և բոլոր բաների մասին, որ նա տեսավ:

3 Երանելի են այս մարգարեության խոսքերը կարդացողները և լսողները և հասկացողները, և սրանում գրվածները պահողները, քանզի Տիրոջ գալստի ժամը մոտենում է:

4 Արդ, սա Հովհաննեսի վկայությունն է յոթ ծառաներին, որոնք Ասիայի յոթ եկեղեցիների վրա են: Ծնորի լինի ձեզ և խաղաղություն նրանից, որ է, և որ էր, և որ գալու է. որն ուղարկել է իր հրեշտակին իր գահի առաջից, որ վկայի նրանց, որ յոթ ծառաներ են յոթ եկեղեցիների վրա:

ՉՄԹ, Հայտնություն 2.22

(համեմատի՛ր Հայտնություն Բ.22)

(Ամբարիշտները պիտի գզվեն դժոխքը):

22 Ահա ես նրան դժոխքը կզցեմ, և նրա հետ շնացողներին՝ մեծ նեղության մեջ, էթե նրանք չապաշխարեն իրենց գործերից:

ՉՄԹ, Հայտնություն 5.6

(համեմատի՛ր Հայտնություն Ե.6)

(Աստծո տասներկու ծառաներն ուղարկվել են բոլոր երկիրը):

6 Եվ ես տեսա, և ահա, այն գահի մեջ և չորս կենդանիների մեջ, և երեցների մեջ մի Գառ էր կանգնած, որ կարծես մորթված էր եղել, որը տասներկու եղջյուր ուներ և տասներկու աչք, որոնք Աստծո տասներկու ծառաներն են, որ ուղարկվել են բոլոր երկիրը:

ՉՄԹ, Հայտնություն 12.1–17

(համեմատի՛ր Հայտնություն

ԺԲ.1–17. Վարդապետություն և

Ուխտեր 77)

[Կլինը (Եկեղեցին), երեսան (Աստծո արքայությունը), երկաթե ձողը (Աստծո խոսքը), վիշապը (Սատանան) և Միքայելը, բոլորը բացատրվում է: Երկնքի պատերազմը շարունակվում է երկրի վրա]:

1 Եվ մի մեծ նշան երևաց երկնքում, երկրի վրայի բաների մնամությունը. մի կին՝ արեգակն իր վրա հագած, և լուսինը նրա ոտքերի տակ, և նրա գլխի վրա տասներկու աստղերի պսակ:

2 Եվ կինը հղի լինելով՝ աղաղակում էր, երկունք քաշելով, և ցավ քաշելով, որ ազատվի:

3 Եվ նա մի արու գավակ բերեց, որը պիտի կառավարեր բոլոր ազգերի վրա երկաթե ձողով. և նրա որդին հափշտակվեց Աստծո մոտ և նրա գահի մոտ:

4 Եվ մի ուրիշ նշան երևաց երկնքում. և ահա, մի մեծ կարմիր վիշապ, որը յոթը գլուխ և տասը եղջյուր ուներ, և նրա գլուխների վրա յոթը թագ: Եվ նրա ազին քաշում էր երկնքի աստղերի երրորդ մասը, և նրանց գցեց երկրի վրա: Եվ վիշապը կանգնեց կնոջ առաջ, որն ազատվել էր, պատրաստ, որ կուլ տա նրա գավակին՝ ծնվելուց հետո:

5 Եվ կինը փախավ անապատ, որտեղ Աստծո կողմից պատրաստված տեղ ուներ, որ նրան այնտեղ կերակրեին հազար երկու հարյուր և վաթսուն տարի:

6 Եվ պատերազմ եղավ երկնքում. Միքայելը և իր հրեշտակները պատերազմեցին վիշապի դեմ. և վիշապը և նրա հրեշտակները պատերազմեցին Միքայելի դեմ.

7 Եվ վիշապը չհաղթեց ո՛չ Միքայելին, ո՛չ երեսխային, ո՛չ էլ այն կնոջը, որն Աստծո եկեղեցին էր, որն ազատվել էր իր ցավերից և ծնել էր մեր Աստծո և նրա Քրիստոսի արքայությունը:

8 Ոչ էլ տեղ գտնվեց մեծ վիշապի համար, որը դուրս գցվեց. այն հին օձը՝ դև կոչվածը, և նաև Մատանա կոչվածը, որը մոլորեցնում է ողջ աշխարհը. նա դուրս գցվեց երկրի վրա. և նրա հրեշտակները դուրս գցվեցին նրա հետ:

9 Եվ մի մեծ ձայն լսեցի, որ ասում էր երկնքում. Հինա եկել է մեր Աստծո փրկությունը և գորությունը և բազավորությունը, և նրա Քրիստոսի իշխանությունը.

10 Որովհետև մեր եղբայրներից մեղադրողը վայր է գցվել, որն օր ու գիշեր նրանց մեղադրում էր մեր Աստծո առաջ:

11 Որովհետև նրանք հաղթել են նրան Գառի արյունով և իրենց վկայության խոսքով. որովհետև նրանք չսիրեցին իրենց կյանքը, քայց պահպանեցին վկայությունը, մինչև իսկ ի մահ: Դրա համար ուրախացե՛ք, ո՛վ երկինքներ, և դո՛ւք, որ բնակվում էք նրանցում:

12 Եվ սրանից հետո ես լսեցի մեկ ուրիշ ձայն, որ ասում էր. Վա՛յ երկրի բնակիչներին, այո՛ նրանց, որ բնակվում են ծովի կղզիներում. քանզի դևը վայր է իջել ձեզ մոտ մեծ ցատումով, որովհետև գիտի, որ քիչ ժամանակ ունի:

13 Որովհետև, երբ վիշապը տեսավ, որ գցվեց երկրի վրա, նա ընկավ այն կնոջ հետևից, որն արու զավակ էր բերել:

14 Դրա համար, այն կնկան երկու մեծ արծվի թևեր տրվեցին, որպեսզի նա փախչի անապատ՝ օձի երեսից, դեպի իր տեղը, որտեղ նա կերակրվում է մի ժամանակ և ժամանակներ և կես ժամանակ:

15 Եվ օձն իր բերանից հեղեղի պես ջուր է թափում այն կնկա ետևից, որ այնպես անի, որ նա տարվի հեղեղով:

16 Եվ երկիրն օգնում է կնոջը, և երկիրը բացում է իր բերանը և կուլ է տալիս հեղեղը, որը վիշապը դուրս է թափում իր բերանից:

17 Դրա համար վիշապը բարկացավ

կնոջ վրա, և զնաց պատերազմելու նրա մնացած սերունդների հետ, որոնք պահում են Աստծո պատվիրանները և ունեն Հիսուս Քրիստոսի վկայությունը:

ՋՍԹ, Հայտնություն 19.15, 21

(համեմատի՛ր Հայտնություն ԺԹ.15, 21)

(Ազգերին զարկելու համար, Աստված օգտագործում է Քրիստոսի խոսքը):

15 Եվ նրա բերանից դուրս է գալիս Աստծո խոսքը, և դրանով նա կզարկի ազգերին. և նա կկառավարի նրանց իր բերանի խոսքով. և Ամենակարող Աստծո կատաղությամբ ու ցասմամբ նա կոխ է տալիս հնձանը:

21 Եվ մնացածը սպանվեցին նրա խոսքով, ով նստած էր ձիու վրա, խոսք, որը դուրս էր գալիս նրա բերանից. և բոլոր թշուրմները կշտացան նրանց մարմիններից:

ԵԿԵՂԵՅՈՒ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ,
ՔԱՐՏԵԶՆԵՐ
ԵՎ
ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ

1805թ. դեկտեմբերի 23

Ջոզեֆ Սմիթը (1805–1844) ծնվեց Ջոզեֆ Սմիթ ավագի և Լյուսի Մակ Սմիթի ընտանիքում, Շերմոնում, Վերմոնտ նահանգ (տե՛ս ՋՄ–Պ 1.3):

1820թ. վաղ գարուն

Մարգարե Ջոզեֆ Սմիթը տեսավ Առաջին Տեսիլքը ծառերի պուրակում, Նյու Յորք նահանգի Պալմիրա և Մանչեստր շրջանում, իր տան մոտ (տե՛ս ՋՄ–Պ 1.15–17):

1823թ. սեպտեմբերի 21–22

Ջոզեֆ Սմիթին այցելեց Մորոնի հրեշտակը և տեղեկացրեց Մորոնի Գրքի հիշատակարանի վերաբերյալ: Ջոզեֆը տեսավ մտակա բլրի (Կումորայի) վրա թաղված ոսկե թիթեղները (տե՛ս ՋՄ–Պ 1.27–54):

1827թ. սեպտեմբերի 22

Կումորա բլրի վրա Ջոզեֆ Սմիթը ստացավ ոսկե թիթեղները Մորոնիից (տե՛ս ՋՄ–Պ 1.59):

1829թ. մայիսի 15

Հովհաննես Մկրտիչը Հարմոնիում, Պենսիլվանիա, Ահարոնյան Քահանայություն շնորհեց Ջոզեֆ Սմիթին և Օլիվեր Քատլերիին, (տե՛ս ՎևՈՒ 13, ՋՄ–Պ 1.71–72):

1829թ. մայիս

Մասքուեհանա գետի մոտ՝ Պենսիլվանիա նահանգի Հարմոնիի և Նյու Յորք նահանգի Քոլսվիլի միջև, Ջոզեֆ Սմիթը և Օլիվեր Քատլերին Մեքսիսեդեկյան Քահանայություն ստացան Պետրոսից, Հակոբոսից և Հովհաննեսից (տե՛ս ՎևՈՒ 128.20):

1829թ. հունիս

Մորոնի Գրքի թարգմանությունն ավարտվեց: Երեք

Վկաներին և Ութ Վկաներին ցույց տրվեց ոսկե թիթեղները (տե՛ս 2 Նեփի 11.3, 27.12–13, ՎևՈՒ 17):

1830թ. մարտի 26

Նյու Յորքի Պալմիրայում մատչելի դարձան Մորոնի Գրքի առաջին օրինակները:

1830թ. ապրիլի 6

Եկեղեցին կազմակերպվեց Նյու Յորք նահանգի Ֆայեթ շրջանում:

1830թ. սեպտեմբեր – հոկտեմբեր

Առաջին միսիոներները կանչվեցին՝ քարոզելու Լամանազիներին (բնիկ Ամերիկացիներին) (տե՛ս ՎևՈՒ 28, 30, 32):

1830թ. դեկտեմբեր – 1831թ. հունվար

Սրբերին պատվիրվեց հավաքվել Օհայոյում (տե՛ս ՎևՈՒ 37, 38.31–32):

1831թ. հուլիսի 20

Մարգարե Ջոզեֆ Սմիթին հայտնի է դառնում Սիոն քաղաքի (Նոր Երուսաղեմի) վայրը, որն Ինդիանեդենսում էր, Միսսուրի (տե՛ս ՎևՈՒ 57, ՀՀ 1.10):

1833թ. մարտի 18

Սիդնի Ռիզդոնը և Ֆրեդերիկ Գ. Վիլյամսն ի սպաս են դրվում որպես Եկեղեցու Նախագահության խորհրդրդականներ (տե՛ս ՎևՈՒ 81 նախադրություն) և նրանց տրվում են այս վերջին արքայության բանալիները (տե՛ս ՎևՈՒ 90 նախադրություն և 6-րդ հատված):

1833թ. նոյեմբերի 7

Սրբերը սկսեցին փախչել Միսսուրիի Ջեկսոն գավառի ամբիսներին՝ Միսսուրի գետի վրայով դեպի Քլեյ գավառ:

1834թ. մայիսի 5

Օհայոյի Կիրթլենդից Նախագահ Ջոզեֆ Սմիթը՝ որպես Սիոնի ճամբարի ղեկավար, մեկնեց Միսսուրի, որպեսզի սփոփի Ջեկսոն գավառից վտարված Սրբերին:

1835թ. փետրվարի 14

Կիրթլենդում, Օհայո, կազմավորվեց Տասներկու Առաքյալների Բվորումը (տե՛ս ՎևՈՒ 107.23–24):

1835թ. փետրվարի 28

Կիրթլենդում, Օհայո, սկսվեց կազմավորվել Յոթնասունի Առաջին Բվորումը:

1835թ. օգոստոսի 17

Կիրթլենդում, Օհայո, Վարդապետություն և Ուխտեր գիրքն ընդունվեց որպես Եկեղեցու օրինակելի աշխատություն:

1836թ. մարտի 27

Նվիրագործվեց Կիրթլենդի տաճարը (տե՛ս ՎևՈՒ 109):

1836թ. ապրիլի 3

Կիրթլենդի տաճարում Հիսուս Քրիստոսը հայտնվեց Ջոզեֆ Սմիթին և Օլիվեր Քատլերիին: Հայտնվեցին Մովսեսը, Եղիաթը և Եղիան և համձնեցին քահանայության բանալիները (տե՛ս ՎևՈՒ 110):

1837թ. հուլիսի 19

Հեբեր Չ. Քիմբալը և Լս վեց հոգի ժամանեցին Լիվերպուլ, Անգլիա՝ սկսելով Եկեղեցու առաջին առաքելությունը օվկիանոսի այդ կողմում:

1838թ. ապրիլի 26

Հայտնությամբ նշվեց Եկեղեցու անունը (տե՛ս ՎևՈՒ 115.4):

1838թ. դեկտեմբերի 1

Մարգարե Ջոզեֆ Սմիթը և ուրիշներ բանտարկվեցին Լիբերթիի բանտում, Լիբերթի, Միսսուրիի Քլեյ

<p>գավառ (տե՛ս ՎևոՒ 121–123):</p> <p>1840թ. օգոստոսի 15 Մարգարե Ջոզեֆ Սմիթը հրապարակավ հայտարարեց մահացածների համար մկրտության վերաբերյալ:</p> <p>1841թ. հոկտեմբերի 24 Երեց Օրսոն Հայդը նվիրագործեց Սուրբ Երկիրը՝ Աբրահամի գավակների վերադարձի համար (տե՛ս ՎևոՒ 68.1–3, 124.128–129):</p> <p>1842թ. մարտի 17 Նավուում, Իլինոյս, կազմավորվեց կանանց Սփոփող Միությունը:</p> <p>1842թ. մայիսի 4 Կատարվեցին տաճարային առաջին լիարժեք օժտումները:</p> <p>1844թ. հունիսի 27 Ջոզեֆ Սմիթը և Հայրում Սմիթը նահատակվեցին Քարթեջի Բանտում (տե՛ս ՎևոՒ 135):</p> <p>1846թ. փետրվարի 4 Նավուի Սրբերը սկսեցին անցնել Միսսիսիպի գետը, որպեսզի գնան արևմուտք: Արևելքի Սրբերից ոմանք <i>Բրուկլին</i> նավով Նյու Յորքից նավարկեցին դեպի Կալիֆորնիա:</p> <p>1846թ. հուլիսի 16 Մորմոնական Գումարտակը զորակոչվեց ԱՄՆ-ի բանակ Այովայում:</p> <p>1847թ. ապրիլ Նախագահ Բրիգամ Յանգի ռաիվիրաների խումբը դուրս եկավ Վինթեր Քոտրբերսից՝ ճանապարհվելով դեպի արևմուտք (տե՛ս ՎևոՒ 136):</p> <p>1847թ. հուլիսի 24 Նախագահ Բրիգամ Յանգը հասավ Սուրբ Լեյքի հովիտ:</p>	<p>1847թ. դեկտեմբերի 27 Եկեղեցու համաժողովը հաստատեց Նախագահ Բրիգամ Յանգին, Երեց Հեբեր Չ. Քինբալին և Երեց Վիլլարդ Ռիչարդսին՝ որպես Առաջին Նախագահություն:</p> <p>1848թ. մայիս – հունիս Սուրբ Լեյքի հովիտում մորեխները ավերեցին հացահատիկը: Դաշտերը լիակատար կործանումից փրկվեցին, երբ ծովորորների երամները ոչնչացրեցին մորեխներին:</p> <p>1849թ. դեկտեմբերի 9 Ռիչարդ Բալանտայնի օգնությամբ կազմավորվեց Կիրակնօրյա Դպրոցը:</p> <p>1850թ. հունիսի 15 Սուրբ Լեյք Միթիում սկսվեց հրատարակվել <i>Deseret News</i> («Գեզուրեթ Նյուզ») օրաթերթը:</p> <p>1856թ. հոկտեմբեր Վիլլի և Մարտին ձեռնասայերի խումբը վաղ ձյան փոթորիկների պատճառով մնացել էր ճանապարհին: Նրանց հայտնաբերեց Սուրբ Լեյքի հովտի փրկարար խումբը:</p> <p>1867թ. դեկտեմբերի 8 Նախագահ Բրիգամ Յանգի ղեկավարությամբ վերակազմավորվեց Սփոփող Միությունը:</p> <p>1869թ. նոյեմբերի 28 Կազմավորվեց Երիտասարդ Կանանց ծրագրին նախորդող ծրագիրը՝ Երիտասարդ Օրիորդների Ժուժկալություն Ընկերությունը:</p> <p>1875թ. հունիսի 10 Կազմավորվեց Երիտասարդ Տղամարդկանց ծրագրի նախորդող ծրագիրը՝ Երիտասարդ Տղամարդկանց Ընդհանուր Կատարելագործման Միությունը:</p>	<p>1877թ. ապրիլի 6 Նվիրագործվեց Սենտ Ջորջի տաճարը: Նախագահ Բրիգամ Յանգը հայտնություն ստացավ կարգավորելու քահանայության կազմակերպությունը և Միոնի ցեղը:</p> <p>1878թ. օգոստոսի 25 Ֆարմինգտոնում, Յուտա, Աուրելիա Սփենսեր Ռոջերսն անցկացրեց Երեխաների առաջին ժողովը:</p> <p>1880թ. հոկտեմբերի 10 Ջոն Թեյլորը հաստատվեց որպես Եկեղեցու Նախագահ: Թանկագին Մարգարիտ գիրքն ընդունվեց որպես օրինակելի աշխատություն:</p> <p>1883թ. ապրիլի 14 Նախագահ Ջոն Թեյլորին հայտնություն տրվեց Յոթանասունականների կազմակերպման վերաբերյալ:</p> <p>1889թ. ապրիլի 7 Վիլֆորդ Վուդրուֆը հաստատվեց որպես Եկեղեցու Նախագահ:</p> <p>1890թ. հոկտեմբերի 6 Գերագույն համաժողովում հաստատվեց «Հռչակագիրը»՝ հայտարարվելով բազմակնության կիրառման ավարտը (տե՛ս Պ՛Հ–1):</p> <p>1893թ. ապրիլի 6 Նախագահ Վիլֆորդ Վուդրուֆը նվիրագործեց Սուրբ Լեյքի Տաճարը, որը 40 տարի կառուցվում էր:</p> <p>1898թ. սեպտեմբերի 13 Լորենցո Սնոուն դարձավ Եկեղեցու Նախագահ:</p> <p>1899թ. մայիսի 17 Սենտ Ջորջում Նախագահ Լորենցո Սնոուն հայտնություն ստացավ տասանորդը կարևորելու վերաբերյալ (տե՛ս ՎևոՒ 119):</p>
--	--	---

1901թ. հոկտեմբերի 17
Ջոզեֆ Ֆ. Սմիթը դարձավ
Եկեղեցու Նախագահ:

1918թ. հոկտեմբերի 3
Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթը
ստացավ մահացածների
փրկագնման վերաբերյալ
տեսիլը (տես՝ ՎևոՒ 138):

1918թ. նոյեմբերի 23
Հեբեր Ջ. Գրանտը դարձավ
Եկեղեցու Նախագահ:

1936թ. ապրիլ
Եկեղեցու Ապահովության
Ծրագիրը, որը հաստատվել
էր Մեծ Ճգնաժամի ժամա-
նակ աղքատներին օգնելու
համար, դարձավ Եկեղեցու
բարօրության ծրագիր: Այդ
ծրագիրը սկիզբ էր առել
նախկինում՝ Նախագահ
Հեբեր Ջ. Գրանտի կողմից
ստացած հայտնությունից:

1941թ. ապրիլի 6
Առաջին անգամ կանչվեցին
Տասներկուսի օգնականներ:

1945թ. մայիսի 21
Ջորջ Ալբերտ Սմիթը դար-
ձավ Եկեղեցու Նախագահ:

1951թ. ապրիլի 9
Դեյվիդ Օ. Մակքեյը հաս-
տատվեց որպես Եկեղեցու
Նախագահ:

1961թ. սեպտեմբերի 30
Առաջին Նախագահության
ղեկավարության ներքո
Երեց Հարոլդ Բ. Լին հայ-
տարարեց, որ Եկեղեցու
բոլոր ծրագրերը քահանա-
յության միջոցով պետք է
համագործակցեն՝ ընտա-
նիքները և անհատներին
ամրապնդելու համար:

1964թ. հոկտեմբեր
Կրկին շեշտվեց ընտանեկան
երեկոների անցկացման
կարևորությունը:

1970թ. հունվարի 23
Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթը դար-
ձավ Եկեղեցու Նախագահ:

1971թ. հունվար
Սկսվեցին հրատարակվել
Եկեղեցական նոր ամսագ-
րերը՝ «Ensign» (Էնսայն),
«New Era» (Նյու Էրա) և
«Friend» (Ընկեր):

1972թ. հուլիսի 7
Հարոլդ Բ. Լին դարձավ
Եկեղեցու Նախագահ:

1973թ. դեկտեմբերի 30
Սփենսեր Վ. Քիմբալը դար-
ձավ Եկեղեցու Նախագահ:

1975թ. հոկտեմբերի 3
Նախագահ Սփենսեր Վ.
Քիմբալը հայտարարեց
Յոթնամսունի առաջին քվո-
րումի վերականգնվողունը:

1976թ. ապրիլի 3
Երկու հայտնություններ
ավելացվեցին Թանկագին
Մարգարիտ գրքին: 1981թ.
դրանք տեղափոխվեցին և
դարձան ՎևոՒ 137 և 138
բաժինները:

1978թ. սեպտեմբերի 30
Հայտնություն, որը հաս-
տատվեց Եկեղեցու կողմից,
ըստ որի Եկեղեցու յուրա-
քանչյուր արժանի տղա-
մարդ, անկախ ռասայից և
մշակի գույնից, կարող էր
ստանալ քահանայություն
(տես՝ ՊՀ-2):

1979թ. օգոստոս
Լույս ընծայվեց Հակոբ
Թագավորի Աստվածաշնչի
ՎՕՍ հրատարակություն՝
ուսումնասիրելու օժանդակ
նյութերով:

1981թ. սեպտեմբեր
Անգլերեն լեզվով լույս ընծայ-
վեցին Մորմոնի Գրքի, Վար-
դապետություն և Ուխտերի,
Թանկագին Մարգարիտի
նոր հրատարակություններ:

1984թ. հունիս
Յոթնամսունի անդամներից
պաշտոնապես կազմավոր-
վեցին Տարածքային Նախա-
գահությունները:

1985թ. նոյեմբերի 10
Էդրա Տավթ Բենսոնը դար-
ձավ Եկեղեցու Նախագահ:

1989թ. ապրիլի 1
Վերականգնվողվեց Յոթա-
մասունականների Երկրորդ
Քվորումը:

1994թ. հունիսի 5
Հովարդ Վ. Հանքերը դար-
ձավ Եկեղեցու Նախագահ:

1995թ. մարտի 12
Գորդոն Բ. Հինքլին դարձավ
Եկեղեցու Նախագահ:

1995թ. ապրիլի 1
Լուծարվեց մարգային ներ-
կայացուցչի պաշտոնը: Հայ-
տարարվեց նոր ղեկավար
պաշտոնի մասին, որը պետք
է կոչվեր Տարածքային
Իշխանավոր:

1995թ. սեպտեմբերի 23
Առաջին Նախագահության
և Տասներկու Առաքյալների
Խորհրդի կողմից հրատա-
րակվեց «Ընտանիք. Հայ-
տարություն աշխարհին»
հռչակագիրը:

1997թ. ապրիլի 5
Տարածքային Իշխանավոր-
ները պետք է կարգվեին
որպես Յոթնամսունական-
ներ: Հայտարարվեց Յոթա-
մասունականների Երրորդ,
Չորրորդ և Հինգերորդ Քվո-
րումների կազմավորման
մասին:

1997թ. հոկտեմբերի 4
Նախագահ Հինքլին հայ-
տարարեց փոքր տաճար-
ներ կառուցելու մասին:

1997թ. նոյեմբեր
Եկեղեցու անդամների թիվը
հասավ 10 միլիոնի:

1998թ. ապրիլ
Նախագահ Հինքլին հայ-
տարարեց 2000 թվականին
100 գործող տաճարներ
ունենալու նպատակի
մասին:

Եկեղեցու կարևոր պատմական վայրերի այս լուսանկարները պատկերում են այն վայրերը, որտեղով քայլել են Վերջին Օրերի առաջին Սրբերը, որտեղ ապրել և ուսուցանել են ժամանակակից մարգարեները, և որտեղ տեղի են ունեցել սուրբ գրքերի շատ իրադարձություններ: Ձեր ուսումնասիրությունների մեջ լուսանկարների օգտագործումն ավելի մատչելի դարձնելու համար, յուրաքանչյուր լուսանկարի համար տրված է հակիրճ նկարագրություն: Նկարագրության թիվն ու վերնագիրը համապատասխանում են լուսանկարների թվին ու վեր-

նագրին: Նկարագրության վերնագրին հետևող առաջին պարբերությունը բացատրական տեղեկություններ է տալիս լուսանկարի վերաբերյալ, ուշադրություն հրավիրելով կարևոր բաների վրա, և հաճախ նշում է, թե ինչ դիրքով է կանգնած եղել լուսանկարիչը: Այնուհետև, սուրբ գրքերի նշանակալից իրադարձություններ են թվարկվում, որոնք տեղի են ունեցել այդ տարածքում, նշելով սուրբ գրքերի հղումները, որպեսզի դուք իմանաք, թե որտեղ կարող եք ավելի շատ կարդալ այդ իրադարձությունների վերաբերյալ:

1. Սրբազան պուրակը

Սրբազան Պուրակը գտնվում է Նյու Յորք նահանգի Պալմիրա և Մանչեստր շրջանում: Ծառերի այս պուրակը գտնվում է այն տեղանքի արևմտյան մասում, որտեղ 1820թ. գտնվում էր Սմիթների ընտանիքի գերանե փոքր տնակը:

Նշանակալից իրադարձություն. Այս պուրակում է, որ Հայր Աստվածը և նրա Որդին՝ Հիսուս Քրիստոսը, հայտնվեցին Մարգարե Ջոզեֆ Սմիթին (ՋՄ-Պ 1.14–20):

2. Կումորա բլուրը և Մանչեստր-Պալմիրայի տարածքը

Նայելով դեպի հյուսիս՝ այս լուսանկարը ցույց է տալիս Կումորա բլուրը, Նյու Յորք նահանգի Մանչեստրում: Բլուրը գետեղված է լուսանկարի ներքևի աջ անկյունում և ձգվում է դեպի վեր՝ մի փոքր անցնելով լուսանկարի կեսից: Սպիտակ հուշարձանը, որը կարելի է տեսնել բլրի հյուսիսային մասում, կանգնած է ի պատիվ հրեշտակ Մորմոնի և Մորմոնի Գրքի առաջ գալու: Կումորա բլուրը գտնվում է Սրբազան Պուրակից մոտ հինգ կիլոմետր դեպի հարավ-արևելք: Լուսանկարի վերևի մասին մոտ Պալմիրան է, վեց և կես կիլոմետր հեռավորության վրա: Սմիթների ազարակը և Սրբազան Պուրակը գտնվում են լուսանկարի վերևի ձախ կողմում:

Նշանակալից իրադարձություններ. Առաջին Տեսիլքի ժամանակ Մարգարե Ջոզեֆ Սմիթի ընտանիքն ապրում էր այս տարածքում (ՋՄ-Պ 1.3): Ք.ժ.հ. 421 թվականին Մորմոնի Կումորա բլրում բաղեց ոսկե թիթեղների մի հավաքածու, որը պարունակում էր իր ժողովրդի սրբազան պատմությունը (ՄԽ 1.1–11, Մորմ. 6.6, Մոր. 10.1–2): Այդ նույն Մորմոնի Ջոզեֆ Սմիթին ասաց, թե որտեղ են գտնվում թիթեղները՝ բլրի հյուսիսային ծայրամասում՝ գագաթի արևմտյան կողմում: 1827-ին Մորմոնին դրանք հանձնեց նրան (ՎևՈՒ 27.5, 128.20, ՋՄ-Պ 1.33–35, 51–54, 59):

3. Ջոզեֆ Սմիթ ավագի գերանե տնակը

Ջոզեֆ Սմիթ ավագի տան կրկնօրինակը, որը կառուցվել է Նյու Յորք նահանգի Պալմիրայի մոտ, սկզբնական գերանե տան տեղում: Իսկական տունը, մեկուկես հարկանի, տաշած գերաններից, Սմիթների ընտանիքը կառուցեց Պալմիրա գալուց մի փոքր անց:

Նշանակալից իրադարձություններ. Այս տանը Մարգարե Ջոզեֆ Սմիթն ուսումնասիրում էր Աստվածաշունչը, երբ փորձում էր իմանալ, թե որ եկեղեցին է ճշմարիտ (ՋՄ-Պ 1.11–13): Մորմոնի հայտնվեց Ջոզեֆին և ասաց նրան Մորմոնի Գրքի թիթեղների մասին (ՋՄ-Պ 1.30–47):

4. Գրանդիլինի տպագրահաստոցը և տպարանը

Պատմական Էգբերտ Բ. Գրանդիլինի շինության վերականգնված տպարանը, որտեղ 1830 թվականին հրատարակվեցին Մորմոնի Գրքի առաջին օրինակները: Մարտին Հարրիսը գրավ դրեց իր ազարակը և վաճառեց նրա մի մասը, որպեսզի վճարի Մորմոնի Գրքի 5000 օրինակների տպագրության ծախսերը: Գրաշարունը սկսվեց 1829-ի օգոստոսին և ավարտված օրինակները կարելի էր ձեռք բերել 1830թ. մարտի 26-ին:

Նշանակալից իրադարձություն. Մարտին Հարրիսին պատվիրվեց առատորեն բաժին հանել իր ունեցվածքից՝ Մորմոնի Գրքի տպագրման պարտքերը վճարելու համար (ՎևՈՒ 19.26–35):

5. Մասքոտեհանա գետը

Այս լուսանկարում պատկերված է Մասքոտեհանա գետը՝ Պենսիլվանիայի Հարմոնի շրջանում:

Նշանակալից իրադարձություններ. Ջոզեֆ Սմիթ կրտսերը 1825-ին եկավ Հարմոնի՝ աշխատանք գտնելու: Նա և նրա հայրը կանգ առան այստեղ՝ Իսահակ Հելլի տանը, որտեղ Ջոզեֆն առաջին անգամ հանդիպեց Էմմա Հելլիին՝ իր ապագա կնոջը (ՋՄ-Պ 1.56–57): Ջոզեֆը և Էմման ամուս-

մացան 1827-ի հունվարի 18-ին: Մարգարեն ստացավ ոսկե թիթեղները 1827-ի սեպտեմբերի 22-ին, Մանչեստրում, Նյու Յորք նահանգ, և դրանից ոչ շատ անց Էմմայի հետ տեղափոխվեց Հարմոնի, որտեղ նա սկսեց թարգմանել թիթեղները գետի մոտ գտնվող իրենց փոքրիկ տանը: Մորմոնի Գրքի թարգմանության ժամանակ Ջոզեֆը և Օլիվեր Քաուդերին ցանկանում էին ավելի շատ իմանալ մկրտության մասին և քայլեցին դեպի գետը, որպեսզի աղոթեն Տիրոջն այդ հարցի վերաբերյալ: Արոթքի պատասխանը եղավ Հովհաննես Մկրտչի հայտնվելը 1829-ի մայիսի 15-ին (ՋՄ-Պ 1.66-74, ՎԼՈՒ 13): Նա Ահարոնյան Քահանայություն շնորհեց Ջոզեֆին և Օլիվերին: Այնուհետև նրանք գնացին այս գետը և մեկնելու մկրտեցին՝ մեղքերի թողության համար: Այնուհետև Հովհաննես Մկրտիչը Ջոզեֆին և Օլիվերին պատվիրեց մեկնելու կարգել Ահարոնյան Քահանայության: Դրանից ոչ շատ անց, Պետրոսը, Հակոբոսը և Հովհաննեսը հայտնը-վեցին այս գետի ափին և Ջոզեֆին ու Օլիվերին շնորհեցին Մելքիսեդեկյան Քահանայություն (ՎԼՈՒ 27.12-13, 128.20):

6. Պիտեր Ուիթմեր ավագի գերանն տունը

Պիտեր Ուիթմեր ավագի վերակառուցված գերանն տունը, որը կառուցվել է Ֆայեթում՝ Նյու Յորք նահանգ, իսկական տան տեղանքի վրա:

Նշանակալից իրադարձություններ. Այստեղ՝ 1829 թվականի հունիսի վերջին, Ջոզեֆ Սմիթը ավարտեց Մորմոնի Գրքի թարգմանությունը: Այս տան մոտակա անտառում Երեք Վկաները տեսան Մորմոնի հրեշտակին և ոսկե թիթեղները: Նրանց վկայություններն այժմ տպագրվում են Մորմոնի Գրքի բոլոր օրինակների վրա: 1830թ. ապրիլի 6-ին, մոտ 60 մարդ հավաքվել էր Պիտեր Ուիթմերի տանը, որպեսզի ակամատես լինեն Հիսուս Քրիստոսի Եկեղեցու պաշտոնակալ կազմավորմանը: Երիտասարդ Եկեղեցու առաջին ժողովներն ու համաժողովներն այստեղ են անցկացվել: Վարդապետություն և Ուիտերի հայտնություններից քսանը ստացվել են Պիտեր Ուիթմերի տանը:

7. «Նյուել Ք. Ուիթմերի և Ընկերություն» վաճառատունը

Կիրթլենդի այս վաճառատունը մեծ դեր է խաղացել Եկեղեցու պատմության մեջ: Ջոզեֆ և Էմմա Սմիթները կարճ ժամանակ ապրել են այստեղ: 1832 թվականին այն դարձավ Եկեղեցու կենտրոնական գրասենյակը: Մի քանի կարևոր հայտնություններ ստացվել են այստեղ: 1833թ. հունվարի

24-ից մինչև 1833-ի ապրիլ այս վաճառատանն էր հավաքվում Մարգարեների Դպրոցը:

Նշանակալից իրադարձություններ. Մարգարե Ջոզեֆը ստացավ Իմաստության Խոսքի վերաբերյալ հայտնությունը (ՎԼՈՒ 89): Աստվածաշնչի թարգմանության աշխատանքների մեծ մասը նա կատարեց այստեղ:

8. Ջոն Ջոնսոնի տունը

Ջոն և Ալիսա Ջոնսոնների տունը գտնվել է Հայրամում, Օհայո: Այս սենյակը երկրորդ հարկում է:

Նշանակալից իրադարձություններ. Մարգարե Ջոզեֆ Սմիթը և նրա կինը՝ Էմման, ապրել են այս տանը: 1832թ. փետրվարի 16-ին Ջոզեֆը և Միդնի Ռիզոլոնը, մի քանի այլ մարդկանց ներկայությամբ, ստացան փառքի աստիճաններին վերաբերող սքանչելի տեսիլքը (ՎԼՈՒ 76): Այս տանը Մարգարե Ջոզեֆն աշխատել է նաև Աստվածաշնչի Ջոզեֆ Սմիթի թարգմանության (ՋՄԹ) վրա: 1832թ. մարտի 24-ին, մինչև Ջոզեֆն ու Էմման ապրում էին այստեղ, ուրացյալների և հակամորմոնների մի ամբողջ դաժանորեն ծեծեց Ջոզեֆին ու Միդնիին և ձմութով ու փետուրներով պատեց նրանց մարմինները:

9. Կիրթլենդի Տաճարը

Կիրթլենդի տաճարը գտնվում է Կիրթլենդում, Օհայո նահանգ:

Նշանակալից իրադարձություններ. Կիրթլենդի տաճարն արդի տնտեսության ժամանակ կառուցված առաջին տաճարն էր (ՎԼՈՒ 88.119, 95): Այս տաճարում Ջոզեֆ Սմիթը տեսավ սելեստիալ արքայություն տեսիլքը (ՎԼՈՒ 137): Այն մկիրագործվել է 1836-ի մարտի 27-ին (ՎԼՈՒ 109): 1836-ի ապրիլի 3-ին, Փրկիչը հայտնվեց և ընդունեց այս տաճարը՝ որպես մի վայր, որտեղ նա իր խոսքը հայտնի կդարձնի իր ժողովրդին (ՎԼՈՒ 110.1-10): Այս հայտնությունից հետո Ջոզեֆ Սմիթին և Օլիվեր Քաուդերիին այցելեցին Մովսեսը, Եղիաբը և Եղիան, որոնցից յուրաքանչյուրը քահանայության որոշակի բանալիներ և կարևոր տեղեկություններ տվեցին նրանց (ՎԼՈՒ 110.11-16): Այս տաճարը մոտ երկու տարի ծառայեց Սրբերին, մինչև որ հալածանքների պատճառով նրանք ստիպված եղան հեռանալ Կիրթլենդից:

10. Ադամ-օնդի-Ահման հովիտը

Տեսարանն արևելքի ուղղությամբ է, Ադամ-օնդի-Ահման հովտի երկայնքով խաղաղ, գեղեցիկ հովիտ, որը գտնվում է Միսսուրիի հյուսիս-արևմուտքում՝ Գալատին համայնքի հարևանությամբ:

Նշանակալից իրադարձություններ. Իր մահից երեք տարի առաջ, Ադամն իր արդար ժառանգներին կանչեց այս հովիտը և այնտեղ ի վերջին օրհնությունը տվեց նրանց (ՎՆՈՒ 107.53–56): 1838-ին Ադամ-օնդի-Սեմանը մոտ 500–1000 Վերջին Օրերի Սրբերի բնակավայրն էր: Սրբերը լքեցին այս բնակավայրը, երբ տեղահանվում էին Միսսուրիից: Նախքան իր փառքով Քրիստոսի Երկրորդ Գալուստը, Ադամը և նրա արդար ժառանգները, որոնք բովում են բոլոր տնտեսությունների Սրբերը, կրկին կհավաքվեն այս հովտում, որպեսզի հանդիպեն Փրկչին (Դ-ան. Է.9–10, 13–14, ՎՆՈՒ 27, 107.53–57, 116.1):

11. Ֆար Վեստի Տաճարի հողակտորը

Միսսուրիի Ֆար Վեստ բնակավայրը դարձավ 3000–5000 Սրբերի տունը, որոնք Ջեկսոն և Քլեյ գավառների հալածանքներից ապաստան էին փնտրում: 1838թ. հոկտեմբերի 31-ին Մարգարե Ջոզեֆ Սմիթը և Եկեղեցու այլ ղեկավարներ ձերբակալվեցին և Ռ-իշմոնդի դատարանի որոշմամբ բանտարկվեցին Լիբերթիի բանտում: 1838–1839թթ. ձմռան ընթացքում Վերջին Օրերի Սրբերը վտարվեցին Ֆար Վեստից և Միսսուրիի այլ բնակավայրերից և բնակություն հաստատեցին Իլլինոյսում:

Նշանակալից իրադարձություններ. Տաճարի հողակտորը նվիրագործվել էր և անկյունաքարերը դրվել էին: Վարդապետություն և Ուխտերում հրատարակված յոթ հայտնություններ (բաժիններ 113–115, 117–120) ստացվել էին այստեղ: Ջոզեֆ Ֆ. Սմիթը՝ Եկեղեցու վեցերորդ նախագահը, ծնվել է Ֆար Վեստում, 1838-ի նոյեմբերի 13-ին: Մարգարե Ջոզեֆ Սմիթի ժամանակ Ֆար Վեստը կարճ ժամանակ ծառայեց որպես Եկեղեցու վարչական կենտրոն:

12. Լիբերթիի Բանտը

Փոքր բանտ, որը գտնվում է Լիբերթիում, Միսսուրի նահանգ: 1838-ի դեկտեմբերի 1-ից մինչև 1839-ի ապրիլի 6-ը Ջոզեֆ Սմիթը և ևս հինգ եղբայրներ՝ որպես բանտարկյալներ, պահվել էին նրա 1.2 մետրանոց հաստ պատերի մեջ: (Միդնի Ռ-իզոնն ազատվեց փետրվարի վերջին): Շենքի տերքնահարկում փակված՝ նրանք ընում էին ձողուով ծածկված սառը բարերի վրա, չնչին լուսավորվածությամբ և ցուրտ ձմռանից խղճով ձևով պաշտպանված սենյակում:

Նշանակալից իրադարձություն. Մարգարե Ջոզեֆը, աղաչելով Միսսուրիից տեղահանված հազարավոր Սրբերի համար, պատասխան ստացավ իր աղոթքին, որը նա նամակագրեց տարագրյալ Սրբերին (ՎՆՈՒ 121–123):

13. Նավուի Մեռն Տունը

1843թ. օգոստոսին Ջոզեֆ Սմիթ կրտսերը և նրա ընտանիքը տեղափոխվեցին Նավուի Մեռն Տուն: Հետագայում, հիմնական կառույցի արևելյան մասում, մի թև ավելացվեց շուրջ 22 սենյակների համար: Սկսած 1844-ի հունվարից, Էբենեզեր Ռոբինսոնը տունը սկսեց կառավարել որպես հյուրանոց, և Մարգարեն սենյակներից 6-ը պահպանեց իր ընտանիքի համար: Տունը Նավուի հասարակության համար մասամբ ծառայում էր որպես հասարակական կենտրոն: Այստեղ Մարգարեն ընդունել է կարևոր բարձրաստիճան պաշտոնյաների:

Նշանակալից իրադարձություններ. 1844թ. հունիսի 27-ին, Քարթեջում, Իլլինոյս, Մարգարե Ջոզեֆը և նրա եղբայր Հայրունը գնդակահարվեցին և սպանվեցին ամբոխի կողմից, և նրանց մարմինները բերվեցին և դրվեցին այս տանը՝ թաղումից առաջ հասարակության դիտման համար: Նրանք թաղվեցին փոքրիկ ընտանեկան գերեզմանոցում, Մեյն փողոցի դիմաց, այն ինչ գերանն տան արևմտյան մասում, որտեղ ապրում էր Ջոզեֆը, երբ նոր եկել էր Նավու: Էմմա Սմիթն ապրեց Մեռն Տանը մինչև 1871 թվականը: Դրանից հետո նա տեղափոխվեց Նավուի Տուն, որտեղ էլ մահացավ 1879-ին:

14. Մարգարե Ջոզեֆ Սմիթի կարմիր աղյուսե վաճառատունը

Ջոզեֆ Սմիթի այս վերակառուցված վաճառատունը և գրասենյակը գտնվում է Նավուում, Իլլինոյս: Նավուում գտնվում ժամանակ այն Եկեղեցու ամենակարևոր շենքերից մեկն էր: Այն ծառայում էր ոչ միայն որպես սովորական վաճառատուն, այլ դարձել էր նաև հասարակական, տնտեսական և կրոնական գործունեության կենտրոն: Երկրորդ հարկում Ջոզեֆ Սմիթը գրասենյակ ուներ:

Նշանակալից իրադարձություններ. Մինչև տաճարի կառուցման ավարտը, վաճառատան վերնահարկն օգտագործվում էր որպես արարողությունների սենյակ, որտեղ տրվեցին առաջին ամբողջական օժտումները: 1842-ի մարտի 17-ին Մարգարե Ջոզեֆը կազմավորեց Եկեղեցու կանանց Սփյուռ Միությունը:

15. Նավուի Տաճարը

Նավուի Տաճարի այս մասշտաբային բնօրինակը գտնվում է սկզբնական տաճարի տեղում: Տաճարը կառուցվել էր տեղի գորշասպիտակ կրաքարից: Կառույցի երկարությունը 39 մետր էր, իսկ լայնությունը՝ 27 մետր: Աշտարակի գագաթը հողի մակերևույթից 48 մետր բարձր էր: Սկսելով աշխատանքը 1841-ին՝ Եկեղեցու անդամները մեծ զոհաբե-

րություններ էին անում այս գեղեցիկ տաճարը կառուցելու համար: Ոմանք ամիսներով աշխատում էին կառույցի վրա. մյուսները գոհաբերում էին իրենց գումարը: Թեև տաճարի կառուցումն ամբողջովին չէր ավարտվել, սակայն այն լցված էր անդամներով, որոնք Արևմուտք հեռանալուց առաջ ամիսներ շարունակ գալիս էին արարողություններ կատարելու: Մինչ Սրբերից շատերն, ամբոխների բնութայուններից ահաբեկված, 1846-ի վաղ գարնանը հեռացան Նավուից, հատուկ մի խումբ մնաց տեղում, որպեսզի ավարտի տաճարի կառուցումը: 1846թ. ապրիլի 30-ին Օրսուն Հայդ և Վիլֆորդ Վուդրուֆ Երեցները, և ուրիշ մոտ 20 անձինք, նվիրագործեցին Տիրոջ այս տունը: Տաճարը լքվեց սեպտեմբերին, երբ Եկեղեցու մնացած անդամները տեղահանվեցին Նավուից. դրանից հետո ամբոխները սրբապղծեցին և ապակահանքի սրբազան կառույցը: 1848-ի հոկտեմբերին բռնկված հրդեհը կործանեց կառույցը:

Նշանակալից իրադարձություններ. 1845 թվականի հոկտեմբերի 5-ին տաճարի ժողովների սենյակում գերագույն համաժողով անցկացվեց: Օժտման աշխատանքները սկսվեցին 1845թ. դեկտեմբերի 10-ին և շարունակվեցին մինչև 1846-ի փետրվարի 7-ը: 5500-ից ավելի Վերջին Օրերի Սրբեր ստացան իրենց օժտումը և շատ մկրտություններ ու կնքումներ կատարվեցին մահացածների համար:

16. Քարթեջի բանտը

Իլինոյսի Քարթեջ քաղաքի բանտի շենքը:

Նշանակալից իրադարձություններ. Ջոզեֆ Սմիթը և նրա եղբայր Հայրունը 1844-ի հունիսի 24-ին ժամանեցին Քարթեջ: Հունիսի 25-ին դավաճանության կեղծ մեղադրանքներով նրանք այս բանտը զգվեցին: Հունիսի 27-ին սև ներկած երեսներով ամբոխը հարձակվեց բանտի վրա: Ջոզեֆը և Հայրունը սպանվեցին, իսկ Ջոն Թեյլորը մի քանի տեղից վիրավորվեց: Անհավատալիորեն՝ Վիլյարդ Ռիչարդսը չվիրավորվեց: Հետագայում Ջոն Թեյլորը գրեց մի ոգեշնչված հուշագիր, որը ներկայիս Վարդապետություն և Ուխտերի 135-րդ բաժինն է:

17. Ելից դեպի արևմուտք

Իլինոյսի Նավուից էվակուացիայի սկիզբը ծրագրավորված էր մարտ-ապրիլ ամիսներին, սակայն ամբոխների վտանգից ելնելով, Նախագահ Բրիգամ Յանգը պատվիրեց, որ Սրբերի մասսայական ելքը Միսսիսիպի գետի վրայով սկսվի 1846 թվականի փետրվարի 4-ին: Նախագահ Յանգը մնաց տեղում, որպեսզի սպասավորի Սրբերի օժտումները և չհեռացավ Նավուից մինչև փետրվարի կեսերը:

Նշանակալից իրադարձություններ. Նախքան մահը Մարգարե Ջոզեֆ Սմիթը մարգարեացել էր. «Չեզանից ոմանք կապրեն, որպեսզի գնան և օգնեն բնակավայրեր հիմնել ու քաղաքներ կառուցել, և կտեսնեն, թե Սրբերը ինչպես են հզոր ժողովուրդ դարձել Ժայռապատ Լեռների մեջ»: 1846թ. փետրվարից մինչև սեպտեմբեր մոտ 12000 Սրբեր հեռացան Նավուից: Վիճեր Թուրքբերսից և հետագա տեղանքներից հեռանալիս, Սրբերը կազմակերպվեցին տասնյակներով, հիսուններով, հարյուրներով, խմբակազմների ներքո (ՎԼՈՒՄ 136.3): 1846-ի սեպտեմբերին մոտ 800 տղամարդուց բաղկացած մի ամբոխ, վեց հրանոթներով զինված, պաշարեց Նավուն: Մի քանի օրվա պայքարից հետո մնացած Սրբերը ստիպված եղան հանձնվել, որպեսզի փրկեն իրենց կյանքը և գետն անցնելու հնարավորություն ստանան: Հինգից վեց հարյուր տղամարդիկ, կանայք և երեխաներ անցան գետը և ճամբար դրեցին գետի ափին: Նախագահ Բրիգամ Յանգը փրկարար խմբեր ուղարկեց պաշարներով, որպեսզի էվակուացնի այդ «խեղճ Սրբերին»:

18. Սուլք Լեյքի Տաճարը

Երբ Վերջին Օրերի Սրբերի ռաիվիրաների առաջին խումբը մտավ Սուլք Լեյքի հովիտ, մի քանի օր անց Նախագահ Բրիգամ Յանգն իր ձեռնափայտով հարվածեց գետնին և հայտարարեց. «Այստեղ մենք տաճար կկառուցենք մեր Աստծո համար»: Հողաբացման արարողությունը եղավ 1853թ. փետրվարի 14-ին: 1853-ի ապրիլի 6-ին դրվեցին անկյունաքարերը: Տաճարն ավարտվեց և նվիրագործվեց 40 տարի անց, 1893 թվականի ապրիլի 6-ին: Առաջին Նախագահությունը և Տասներկու Առաքյալների Քվորումն ամեն շաբաթ հավաքվում են այստեղ, որպեսզի խորհրդածեն և ղեկավարություն խնդրեն Տիրոջից Աստծո արքայության կառուցումը ղեկավարելիս:

Նշանակալից իրադարձություններ. Այստեղ Տերը Եկեղեցու Նախագահներին և այլ Գերագույն Իշխանավորներին շալյուրեն օրհնել է հայտնության հոգով, որոնցից մեկը Պաշտոնական Հայտարարություն-2-ն է: Ոչ շատ վաղուց, Առաջին Նախագահությունը և Տասներկու Առաքյալների Խորհուրդը միաձայն հավանություն տվեցին և հրատարակեցին «Ընտանիք. հայտարարություն և աշխարհին» հռչակագիրը: Ապրողների և մահացածների համար կատարվող Տաճարային արարողություններն օրհնել են միլիոնավոր մարդկանց կյանքը:

Ադամ-օնդի-Ահման, Միսսուրի՝ 5.Դ3	Դաբադանոց, Կիրթլենդ՝ 4.Բ2	Պալմիրայի տարածք՝ 2.Գ3	Հոլ ամրոց՝ 6.Բ1
Ալբանի, Նյու Յորք՝ 1.Գ3	Դե Վիթ, Միսսուրի՝ 5.Ե3	Կանադական գետ՝ 6.Դ3	Հուդսոն գետ, Նյու Յորք՝ 1.Գ3
Ալվին Սմիթի գերեզ- մանատեղը, Պալմիրա՝ 2.Գ2	Դիլովեյր գետ՝ 1.Բ4	Կենտրոնական Ամերիկա՝ 7.Բ2	Հուրոն լիճ՝ 3.Գ1
Ալրադաց, Կիրթլենդ՝ 4.Բ2	Դայրոց, Կիրթլենդ՝ 4.Բ3	Կիրթլենդ, Օհայո՝ 3.Գ3, 6.Ձ2	Մակեդոն շրջան, Պալմիրայի տարածք՝ 2.Ա1
Ադյուսարան, Կիրթլենդ՝ 4.Ա2	Եվրոպա՝ 7.Ե1	Կիրթլենդի Տաճար՝ 4.Բ4	Մակիլվեյնի ոլորան, Միսսուրի՝ 5.Ե3
Ամբարտակ, Կիրթլենդ՝ 4.Բ2	Էրի ջրանցք, Նյու Յորք՝ 2.Բ2, 3.Ձ1	Կոնեկտիկուտ՝ 1.Գ3	Մանչեստրի շրջան, Նյու Յորք՝ 1.Ա3, 2.Գ3, 3.Ձ2
Ամերիստ, Օհայո՝ 3.Գ4	Էրի լիճ՝ 3.Գ3	Կոնեկտիկուտ գետ՝ 1.Դ1	Մասաչուսետս՝ 1.Գ3
Այովա՝ 5.Ե1, 6.Ե2	Թանբրիջ, Վերմոնտ՝ 1.Գ2	Հաթվեյ վտակը, Պալմիրայի տարածք՝ 2.Բ2, 2.Դ4	Մարկեյի ճանա- պարհ, Կիրթլենդ՝ 4.Ա2
Անտարկտիդա՝ 7.Ե4	Թոմսոն, Օհայո՝ 3.Դ3	Հայրամ, Օհայո՝ 3.Գ4	Մարտին Հարրիսի ազարակը, Պալմիրայի տարածք՝ 2.Բ1
Ասիա՝ 7.Ձ2	Թոմսֆիլդ, Մասաչուսետս՝ 1.Դ3	Հայրամ Սմիթի տունը, Կիրթլենդ՝ 4.Բ4	Մարտին Հարրիսի տունը, Կիրթլենդ՝ 4.Դ4
Ավստրալիա՝ 7.Է3	Ի. Բ. Գրանդիհի տպարան, Պալմիրա՝ 2.Գ2	Հարավային Ամերիկա՝ 7.Գ3	Մեծ Սուրբ Լեյք լիճը՝ 6.Բ2
Ատլանտյան օվկիա- նոս՝ 1.Դ4, 6.Ը2	Իլինոյս՝ 5.Է3, 6.Ձ2	Հարավային Ատլանտյան օվկիանոս՝ 7.Դ4	Մեյն՝ 1.Դ2
Արկանզաս գետ՝ 6.Դ3	Ինդիանա՝ 6.Ձ2	Հարավային Խաղաղ օվկիանոս՝ 7.Ա4	Մենդոն, Նյու Յորք՝ 3.Ձ2
Արմինգտոն դպրոցի ճանապարհ, Պալմիրայի տարածք՝ 2.Դ3	Ինդիպենդենս, Միսսուրի՝ 5.Դ4, 6.Ե2	Հարսոնի, Պենսիլվանիա՝ 1.Բ3, 3.Ը3	Մեքսիկա՝ 6.Բ3
Աֆրիկա՝ 7.Ե2	Իսահակ Մորլիի ազարակը, Կիրթլենդ՝ 4.Դ1	Հարավային Պլատ գետ՝ 6.Գ2	Միսսիսիպի գետ՝ 5.Է3
Բանկ, Կիրթլենդ՝ 4.Բ4	Լարամի ամրոց՝ 6.Գ2	Հաունի ալրադացը, Միսսուրի՝ 5.Դ3	Միսսուրի՝ 5.Ձ3, 6.Ե3
Բույր Կուանդրա, Պալմիրայի տարածք՝ 2.Գ4	Լիբանան, Նյու Համպշիր՝ 1.Դ2	Հյուսիսային Ամերիկա՝ 7.Բ2	Միսսուրի գետ՝ 5.Գ2, 5.Ձ4
Բոստոն, Մասաչուսետս՝ 1.Դ3	Լիբերթի, Միսսուրի՝ 5.Դ4, 6.Ե2	Հյուսիսային Ատլանտյան օվկիանոս՝ 7.Դ2	Մյուտուքյան տեղ, Կիրթլենդ՝ 4.Բ2
Բրիջեր ամրոց՝ 6.Գ2	Լիվենվորթ ամրոց՝ 5.Դ4, 6.Ե2	Հյուսիսային Խաղաղ օվկիանոս՝ 7.Ա2, 7.Ը2	Մոխարանոց, Կիրթլենդ՝ 4.Բ3
Բուֆալո, Նյու Յորք՝ 3.Ե2	Լոս Անջելես՝ 6.Ա3	Հյուսիսային Պլատ գետ՝ 6.Գ2	Մոնտրոս, Այովա՝ 5.Ձ2
Գալատիմ, Միսսուրի՝ 5.Դ3	Խաղաղ օվկիանոս, 6.Ա1, 7.Ա3	Հյուսիսային Պլատ գետ՝ 6.Գ2	Նավու, Իլինոյս՝ 5.Ձ2, 6.Ե2
Գարդեն Գրով, Այովա՝ 5.Դ2	Կալիֆորնիա՝ 6.Ա3	Հնդկական օվկիա- նոս՝ 7.Ձ3	Նյու Համպշիր՝ 1.Դ2
Գերեզմանատուն, Կիրթլենդ՝ 4.Բ3	Կալիֆորնիայի ուղե- գիծը՝ 6.Բ2	Հնդկական օվկիա- նոս՝ 7.Ձ3	Նյու Յորք Սիթի՝ 1.Գ4, 6.Է1
Գիլա գետ՝ 6.Բ4	Կանադա՝ 1.Գ1, 3.Գ3, 3.Դ2, 6.Ձ1	Հնդկացիների տարածքները՝ 5.Բ2, 6.Գ1, 6.Դ3	Նյու Յորք՝ 1.Բ3, 3.Ձ3, 6.Է1
Գիլսամ, Նյու Համպշիր՝ 1.Դ2	Կանադա գետ, Միսսուրի՝ 5.Դ2		Նյու Ջերսի՝ 1.Բ4

Նյուեյ Ք. Ուիթնիի վաճառատունը՝ Կիրթլենդ՝ 4.Բ2	Ջոզեֆ Սմիթ ավագի փայտե տունը, Պալմիրայի տարածք՝ 2.Բ3	Միդնի Ռիզոլոնի տունը, Կիրթլենդ՝ 4.Բ4	Քաուդերի փողոց, Կիրթլենդ՝ 4.Ա3
Նյուեյ Ք. Ուիթնիի տունը, Կիրթլենդ՝ 4.Բ2	Ջոզեֆ Սմիթ կրաստրի խանութը, Կիրթլենդ՝ 4.Բ3	Մոզարան, Կիրթլենդ՝ 4.Բ2	Քաունսիլ Բլաֆա (Քենեալի), Այովա՝ 5.Գ1, 6.Ե2
Նորվիչ, Վերմոնտ՝ 1.Գ2	Ջոզեֆ Սմիթ կրաստրի տունը՝ 3.Ը3, 4.Բ3	Սնեյք գետ՝ 6.Բ1	Քարթեջ, Իլինոյս՝ 5.Է2
Շերոն, Վերմոնտ՝ 1.Գ2	Ջոզեֆի փողոց, Կիրթլենդ՝ 4.Ա4	Սոլթ Լեյք Սիբի՝ 6.Բ2	Քլիվլենդ, Օհայո՝ 3.Գ4
Շոալ գետակ, Միսսուրի՝ 5.Գ3	Ջոզեֆի փողոց, Կիրթլենդ՝ 4.Ա4	Ստաֆորդի ճանապարհ, Պալմիրայի տարածք՝ 2.Բ4	Քոլավիլ, Նյու Յորք՝ 1.Բ3, 3.Ը3
Չագրին գետի արևելյան վտակ, Կիրթլենդ՝ 4.Բ1	Ջոն Ջոնսոնի հյուրանոցը, Կիրթլենդ՝ 4.Բ2	Սրբազան պուրակ, Պալմիրայի տարածք՝ 2.Բ3	Քուինսի, Իլինոյս՝ 5.Ձ2, 6.Ե2
Չերիտոն գետ, Միսսուրի՝ 5.Ե2	Ռեդ գետակ, Պալմիրայի տարածք՝ 2.Գ2	Սփրինգֆիլդ, Իլինոյս՝ 5.Ը2	Օհայո՝ 3.Բ4, 6.Ձ2
Չիլիկոթի ճանապարհ, Կիրթլենդ՝ 4.Բ4	Ռեյնոու, Իլինոյս՝ 5.Է2	Վայթինգհամ, Վերմոնտ՝ 1.Գ3	Օնտարիո գավառ, Նյու Յորք՝ 2.Ա3, 2.Գ3
Պալմիրա գյուղ, Նյու Յորք՝ 2.Գ2	Ռիո Գրանդ գետ՝ 6.Գ4	Վալթերսոն Կ.Շ.՝ 6.Է2	Օնտարիո լիճ՝ 1.Ա2, 3.Ե1
Պալմիրա շրջան, Նյու Յորք՝ 1.Ա3, 2.Գ1, 3.Ձ2	Ռիչմոնդ, Միսսուրի՝ 5.Գ4	Վեյն գավառ, Նյու Յորք՝ 2.Ա3, 2.Գ2	Օրիգոնի տարածք՝ 6.Ա1
Պեկոս գետ՝ 6.Գ4	Ռոդ Այլենդ՝ 1.Գ3	Վիլհելմ Բուրքերս, Հնդկացիների տարածք՝ 5.Բ1, 6.Ե2	Օրինջ, Օհայո՝ 3.Գ4
Պենսիլվանիա՝ 1.Բ3, 3.Ե3, 6.Է2	Ռոչեստեր, Նյու Յորք՝ 3.Ձ1	Վինսոն Նայթի տունը, Կիրթլենդ՝ 4.Ա4	Ֆայեթ, Նյու Յորք՝ 1.Ա3, 3.Է2, 6.Է1
Պլատ գետ՝ 5.Բ1	Սալեն, Մասաչուսեթս՝ 1.Գ3	Սալսոնի Նայթի տունը, Կիրթլենդ՝ 4.Ա4	Ֆար Վեստ, Միսսուրի՝ 5.Գ3, 6.Ե2
Պուերթո՝ 6.Գ3	Սակրամենտո՝ 6.Ա2	Տակսոն՝ 6.Բ4	Ֆարմինգտոն շրջան, Պալմիրայի տարածք՝ 2.Ա4
Ջեկսոն գավառ, Միսսուրի՝ 5.Գ4	Սան Բերնանդինո՝ 6.Բ3	Տարաբոն, Կիրթլենդ՝ 4.Բ4	Ֆիլադելֆիա, Պենսիլվանիա՝ 1.Բ4, 6.Է2
Ջոզեֆ Նայթ ավագի տունը, Քոլավիլ շրջան, Նյու Յորք՝ 3.Ը3	Սան Դիեգո՝ 6.Ա4	Տորոնտո, Կանադա՝ 3.Ե1	Ֆինգեր լճեր, Նյու Յորք՝ 1.Ա3, 3.Է2
Ջոզեֆ Սմիթ ավագի ագարակը, Պալմիրայի տարածք՝ 2.Բ3	Սան Լյուիս Ռեյ Միսիսի՝ 6.Ա4	Ռիթմի փողոց, Կիրթլենդ՝ 4.Ա3	Ֆիլիդգ գետ, Միսսուրի՝ 5.Գ3
Ջոզեֆ Սմիթ ավագի գերանե տունը, Պալմիրայի տարածք՝ 2.Բ3	Սան Ֆրանցիսկո՝ 6.Ա2	Փասգա սարը, Այովա՝ 5.Գ1	Ֆոքսի ճանապարհ, Պալմիրայի տարածք՝ 2.Ա3
	Սանտա Ֆե՝ 6.Գ3	Փարլի Պ. Պրատի տունը, Կիրթլենդ՝ 4.Ա3	Ֆրիդոմ, Նյու Յորք՝ 3.Ձ2
	Սաքրտեհանա գետ, Պենսիլվանիա՝ 1.Ա4, 3.Է3	Փերիսթրոֆ, Նյու Յորք՝ 3.Ե2	
	Սատր Բեյնթրիջ, Նյու Յորք՝ 3.Ը3		
	Սենտ Լյուիս, Միսսուրի՝ 5.Ը4		

Հետևյալ քարտեզները ձեզ կարող են օգնել, որ ավելի լավ հասկանաք Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու վաղ պատմությունը և սուրբ գրքերը, որոնք հայտնվել են Մարգարե Ջոզեֆ Մմիթի և նրան հաջորդողների

միջոցով: Իմանալով սուրբ գրքերում խոսվող տեղանքների աշխարհագրությունը՝ դուք կարող եք ավելի լավ հասկանալ սուրբ գրքերի իրադարձությունները:

- | | |
|---|--|
| <ol style="list-style-type: none"> 1. ՄԻԱՅՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ՀՅՈՒՄ-ՍԻՍ-ԱՐԵՎԵԼԷՔԸ 2. ՊԱԼՄԻՐԱ-ՄԱՆՉԵՍՏՐ՝ 1820–1831 3. ԱՄՆ-Ի ՆՅՈՒ ՅՈՐՔ, ՊԵՆՍԻԼՎԱՆԻԱ ԵՎ ՕՀԱՅՈՒ ՏԱՐԱԾՔՆԵՐԸ 4. ԿԻՐԹԼԵՆԴ, ՕՀԱՅՈՒ՝ 1830–1838 | <ol style="list-style-type: none"> 5. ԱՄՆ-Ի ՄԻՍՍՈՒՐԻ, ԻԼԻՆՈՅՍ ԵՎ ԱՅՈՎԱ ՏԱՐԱԾՔՆԵՐԸ 6. ԵԿԵՂԵՑՈՒ ՇԱՐԺՈՒՄԸ ԴԵՊԻ ԱՐԵՎՄՈՒՏՔԸ 7. ԱՇԽԱՐՀԻ ՔԱՐՏԵԶԸ |
|---|--|

Տեղանունների այբբենական ցուցիչը ձեզ կօգնի քարտեզի վրա որոշակի տեղ գտնելիս: Յուրաքանչյուր տեղանվան դիմաց տրված է քարտեզի թիվը, որին հետևում է կոորդինատների հղումը, որը կազմված է տասնավային կապակցությունից: Օրինակ՝ Հոլ ամրոց տեղանվան դիմաց գրված է 6.Բ1. դա նշանակում է 6-րդ քարտեզ, Բ1 վանդակ: Յուրաքանչյուր քարտեզի վրա դուք կարող եք գտնել որոշակի վանդակ՝ օգտվելով տվյալ քարտեզի վերևում և մի կողմում տրված կոորդինատներից: Անունների այբբենաբանության տարբերակները տրված են փակագրծերի մեջ. օրինակ՝ Քաունսիլ Բլաֆա (Քենեալի):

Ատլանտյան օվկիանոս

Այս շարվածքն օգտագործվել է աշխարհագրական տեղանուններ նշելու համար, ինչպիսիք են օվկիանոսները, ծովերը, լճերը, գետերը, լեռները, անապատները, հովիտները, տափաստանները և կղզիները:

Պալմիրա

Այս շարվածքն օգտագործվել է մեծ և փոքր քաղաքներ նշելու համար:

ՆՅՈՒ ՅՈՐՔ

Այս շարվածքն օգտագործվել է ավելի փոքր քաղաքական բաժանումներ նշելու համար, ինչպիսիք են շրջանները և ԱՄՆ-ի նահանգներն ու տարածքները:

Հետևյալ բացատրությունները բանալի են՝ քարտեզներում օգտագործված պայմանական նշաններն ու գրաշարվածքը հասկանալու համար: Ի լրումն, յուրաքանչյուր քարտեզ կարող է պարունակել տվյալ քարտեզում օգտագործված լրացուցիչ պայմանական նշանների բացատրություններ:


Կ Ա Ն Ա Դ Ա

Այս շարվածքն օգտագործվել է ավելի մեծ քաղաքական բաժանումներ նշելու համար, ինչպիսիք են պետությունները, երկրները և մայրցամաքները:


Կարմիր կետը խորհրդանշում է մեծ կամ փոքր քաղաք: Երբեմն կետից զծիկ է դուրս գալիս՝ ցույց տալով քաղաքի կամ տեղանքի անունը:



- | | |
|---|---|
| <ol style="list-style-type: none"> 1. Թովաֆիլո Ջոզեֆ Սմիթ ավագի ծննդավայրը. ծնվել է 1771թ. հուլիսի 12-ին: 2. Գլխամ Այստեղ ծնվել է Լյուսի Մակը, 1775թ. հուլիսի 8-ին: 3. Թանրիջ Այստեղ 1796թ. հունվարի 24-ին ամուսնացել են Ջոզեֆ Սմիթ ավագը և Լյուսի Մակը: 4. Վայքինգամ Բրիգամ Յանգի ծննդավայրը, ծնվել է 1801թ. հունիսի 1-ին: 5. Հարմոնի Էմմա Հեյլը ծնվել է Հարմոնի շրջանում, 1804թ. հուլիսի 10-ին: | <ol style="list-style-type: none"> 6. Շարոն Ջոզեֆ Սմիթ կրտսերը ծնվել է այստեղ, 1805թ. դեկտեմբերի 23-ին (տե՛ս ՋՄ-Պ 1.3): 7. Լիբանան Սմիթների ընտանիքն ապրել է Լիբանան շրջանում, 1811–1813թթ., որի ընթացքում Ջոզեֆ Սմիթ կրտսերը ոտքի մի քանի վիրահատություն տարավ: 8. Նորվիջ 1814–1816թթ. Սմիթների ընտանիքն ապրել է այստեղ մինչև Պամիրա տեղափոխվելը: 9. Պամիրա 1816-ին Սմիթների ընտանիքը տեղափոխվեց այստեղ (տե՛ս ՋՄ-Պ 1.3): |
|---|---|



- | | |
|---|---|
| <p>1. Ջոզեֆ Սմիթ ավագի գերանե տունը Այս տան վերահարկում, 1823թ. սեպտեմբերի 21–22-ին, Մորոնի հրեշտակը հայտնվեց Ջոզեֆ Սմիթին (տե՛ս ՋՄ–Պ 1.29–47):</p> <p>2. Ջոզեֆ Սմիթ ավագի ագարակը Այս 4.7 հեկտար տարածքով ագարակը ստեղծվել է Սմիթների ընտանիքի կողմից, 1820–1829թթ.:</p> <p>3. Սրբազան պուրակը Ջոզեֆ Սմիթ կրտսերը Առաջին Տեախյբն ունեցավ այս անտառաչառ վայրում, 1820թ. վաղ զարնանը (տե՛ս ՋՄ–Պ 1.11–20):</p> <p>4. Ջոզեֆ Սմիթ ավագի փայտե տունը Այս տան կառուցումը սկսել էր Ալվին Սմիթը 1822-ին և այն զբաղեցվել էր Սմիթների ընտանիքի կողմից 1825–1829թթ.:</p> | <p>5. Կունորա բլուրը Այստեղ, 1827թ. սեպտեմբերի 22-ին, Մորոնի հրեշտակը Մարգարե Ջոզեֆ Սմիթին համձնեց ոսկե բիթերները (տե՛ս ՋՄ–Պ 1.50–54, 59):</p> <p>6. Մարաին Հարրիսի ագարակը Այս ագարակը գրավ էր դրվել և նրա մի մասը վաճառվել էր, որպեսզի վճարվեն Մորոնի Գրքի տպագրության ծախսերը:</p> <p>7. Է. Բ. Գրանդինի տպարանը Այստեղ, 1829–1830թթ., տպագրվել է Մորոնի Գրքի 5000 օրինակ:</p> <p>8. Հաթվել վտակը Այս վտակում եկեղեցու վաղ շրջանում մկրտություններ են կատարվել:</p> |
|---|---|



10. **Մամուս Յն** Ֆիլիպ Կոնե առաջնորդող էր Մարմնական գյուղատանը, երբ այն դարձաւ վաղ արաբական 1846թ. նոյեմբերի 19-ին:
11. **Պոնեբը** Հիվանդանոցի երեք ջրկալա մնաց Պոնեբըտում, որպէսզի ապաքինին, որտեղ նրանք 1846-1847 ձմեռն անցկացրեցին Միասնական Սրբերի հետ: Եւր խմբերը Սուրբ Անգէլի հովիտ մտան 1847-ի հունիսին:
12. **Մամ Դիբեդ** Լյաւոն, 1847-ի հունվարի 29-ին, Մերմուսկան գյուղատանը ակտիւն էր 3200-կիլոմետրանոց երբէ:
13. **Լուս Անգել** Մարմնական գյուղատանը փրկարկեց աշտան, 1847-ի հունիսի 16-ին:
14. **Մայրամբնոտ** Գորամարտակի որոշ փրկարկեաւ անդամներ աշխատեցին արտաւել եւ Սուրբերի ջրարկում, մի փոքր ընթացի արկեց, Լեքիկեան գետի վրա, որտեղ նրանք օգնեցին ոսկի հայտնաբերել:
15. **Սուր Լեյք Սրբի** Բիլիզադ Յանգը հասաւ Սուր Լեյքի հովիտ 1847-ի հունիսի 24-ին:

եր պատկեր: 1838-1839թթ. Սրբերը առիպեաւ էին հետամալ Իլինոյս նահանգ:

6. **Նաւոյ** Երկուտեւ վարչական կենտրոնը 1839-1846թթ.: Մարգարէի ե մրա եղարաւ Հարապի (նահատաւորաւոցի) հետ, Սրբերը տեղափոխեցին արևմտաւ:

7. **Քառանդի Բլաչա** 1846թ. հունիսին ռաիկաւորաւոցը ժառանգեցին պատկեր: Մարմնական Գորամարտակ անդամները ճանապարհ ընկան 1846թ. հունիսի 21-ին Յնյան կենտրոն-գլխավորաւոցի:

8. **Վիբեր Բուրբեր** Երկուտեւ վարչական կենտրոնը 1846-1848 թվականներին: 1847-ի ապրիլին ռաիկաւորանոցի առաջապահ խումբը Նախապահ Բիլիզադ Յանգի ղեկավարաւոցի թլաւը շարժեցին ընթացի արևմտաւ:

9. **Լիլիկեանք անոց** 1846-ին, (այսպէս ընթացի արևմտաւ իրենց երբը տեղեւել, Մարմնական գյուղատանը հանրեղծաւորեալ է այս-տես:

1. **Ֆայեթ** 1831-ի հունվարին Մարգարէ Ջոզեֆ Սմիթը հեռագրով Ֆայեթին գնաւով Կիլբերնը, Օհայո: Յետեւեալ խաղաղաւոր Տիպո գաւաղաւորանը, 1831-ի ապրիլին ե մայիսին Նյու Յորքի երեք գրուրը հեռուեցին նրան (տես ՎԱՌՏ 37, 38):
2. **Կիլբերնը** Երկուտեւ վարչական կենտրոնը 1831թ. փետրվարի 1-ից մինչև 1838-ի հունվարի 12-ը, երբ Մարգարէն տեղափոխեց Վեյ-Ֆայր Վեստ, Միասոնի:
3. **Բոնիֆինդեն** 1831-ի հունիսին Տեղը ճանաչալ է Բոնիֆինդեալ (Միասոնի Ջեկոն գաղաւոց), որպէս Սուրբի կենտրոնական վայր (տես ՎԱՌՏ 57.3): 1833-ի նոյեմբերին անդամները Սրբերին առիպեցին դարա գալ, Ջեկոն գաղաւոցի:
4. **Լիբերթի** Ջեկոն գաղաւոցի Սրբերը խաղաղաւորեցին Բեյ գաղաւոց 1833-1836թթ., հետո երբ կրկին առիպեաւ էին հետամալ: Լյաւոն եւ բաժանաւորեալ Մարգարէ Ջոզեֆ Սմիթը ե ուրիշ անդամներ:
5. **Ֆար Վեստ** 1836-1838թթ. պատկեր ապաստան եր հաստատեալ Սրբերի համար: 1838-ին Երկուտեւ վարչական կենտրոնը գտնուեալ





1. ՄՐՔԱՋԱՆ ՊՈՒՐԱԿԸ Իր տան մոտ գտնվող այս անտառում Մարգարե Ջոզեֆ Սմիթը ստացավ Առաջին Տեսիլքը:



2. ԿՈՒՏՈՐԱ ԲԼՈՒՐԸ ԵՎ ՄԱՆԾԵՍԱՐ-ՊԱՍԽԻՐԱՅԻ ՏԱՐԱՏՔԸ Մորոնի հրեշտակը Ջոզեֆ Սմիթին առաջնորդեց՝ գտնելու ոսկե քիթեղները, որոնք նա թաղել էր այս բլրում: (Բլուրը կենտրոնից աջ է):



3. **Ջոզեֆ Մտիթ Ավագի Գերանե Տնակ** Սա այն տնակի կրկնօրինակն է, որտեղ ժամանակին ապրել է Սմիթների ընտանիքը:



4. **Գրատպանի Տպագրաչստոռե Եվ Տպարան** Մորմոնի Գիրքն առաջին անգամ տպագրվել է այստեղ:



5. ՄԱՏՔՈՒՅՀԱՆԱ ԳԵՏԵ Այս գետի ափին է վերականգնվել Ահարոնյան և Մելքիսեդեկյան Քահանայությունը (տե՛ս ՎևՈՒ 13, 128.20):



6. ՊԻՏԵՐ ՈՒՒԹՄԵՐ ԱՎԱԳԻ ԳԵՐԱՆՑ ՏՈՒՆԸ Այս կրկնօրինակը կառուցվել է այն տեղում, որտեղ 1830-ի ապրիլի 6-ին կազմավորվել է Եկեղեցին:



7. «ՆՅՈՒՆ Զ. ՈՒԻՅՆԻ ԵՎ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՎԱՃԱՌԱՏՈՒՆ Այստեղ է ստացվել որպես Ինձատության խոսք (տե՛ս ՎևՈՒ 89) հայտնի դարձած հայտնությունը, ինչպես նաև այլ հայտնություններ:



8. Ջոն Ջոնսոնի Տոմբը Այս տանն Աստվածաշնչի թարգմանության վրա աշխատելիս Մարգարե Ջոզեֆ Սմիթը և Միդնի Ռիզդոնը ստացան այն հայտնությունը, որն այժմ գրված է Վարդապետություն և Ուխտեր 76-ում, ինչպես նաև այլ հայտնություններ:



9. ԿԻՔԼԵՆԻ ՏԱՃԱՐԸ Արդի տնտեսության ժամանակաշրջանում կառուցված առաջին տաճարը՝ 1836 թվականին: Այս տաճարում Հիսուս Քրիստոսը, Մովսեսը, Եղիաթը և Եղիան հայտնվեցին և վերականգնեցին քահանայության բանալիները (տե՛ս ՎևՈՒ 110):



10. ԱՐԱՄ-ՕՆԴԻ-ԱՋՄԱՆ ՀՈՎԻՏԸ Այստեղ հավաքվել են Ադամը և նրա արդար ժառանգները (տե՛ս ՎևՈՒ 107.53-57): Ադամը, մյուս մարգարեները և բոլոր սերունդների հավատարիմ Սրբերը, այստեղ կհանդիպեն Փրկչին նախքան նրա Երկրորդ Գալուստը:



11. Ֆար ՎԵՍՏԻ ՏԱՃԱՐԻ ՀՈՂԱԿՏՈՐԸ 1838-ին Տերը Սրբերին պատվիրեց տաճար կառուցել այստեղ (տե՛ս ՎևՈՒ 115.7–8): Ամբոխների հետապնդումները մրանց խանգարեցին իրագործել այն:



12. ԼԻԲԵՐԹԻԻ ԲՆՆՏԸ Անարդարացի այստեղ բանտարկված ժամանակ (1838–1839), Մարգարե Ջոզեֆ Սմիթը հայտնություն ստացավ, որն այժմ գրված է Վարդապետություն և Ուխտեր 121–123-ում:



13. ՆԱՎՈՒՆ ՄԵՆԵՆ ՏՈՒՆԸ 1843-ից սկսած՝ Մարգարե Ջոզեֆ Սմիթի ընտանիքի տունը: Եկեղեցու վաղ ժամանակաշրջանում սա հասարակական կյանքի կենտրոն էր Սրբերի համար:



14. ՄԱՐԳԱՐԵ ՋՈԶԵՖ ՍՄԻԹԻ ԿԱՐՄԻՆ ԱՐՅՈՒՍԵ ՎԱՏԱՈՒՍՏՈՒՆԸ 1842-ի մարտի 17-ին այս շենքում կազմավորվել է Սփոփող Միությունը:



15. ՆԱՎՈՒՅ ՏՆՃԱՐԸ Այս նմուշը ցույց է տալիս կառույցի բնական գեղեցկությունը նախքան 1848-ին նրա այրվելը:



16. ՔԱՐԹԵԶԻ ԲԱՆՏԸ 1844թ. հունիսի 27-ին այստեղ նահատակվել են Մարգարե Ջոզեֆ Սմիթը և նրա եղբայր Հայրունը (տես՝ ՎԱՌԻ 135):



17. **ՇԼԻՑ ԳԵՊԻ ԱՐԵՎՄՈՒՏՔ** 1846թ. փետրվարի 4-ին առաջին անվասայլերն անցան Միսսիսիպի գետը՝ սկսելով պատմական երթը դեպի արևմուտք:



18. **ՍՈՒԹ ԼՅՅՔԻ ՏԱՃԱՐԸ** Սուրբ Լեյքի հովտի այս փարոսը կառուցվել է 40 տարվա ընթացքում:

ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ
ՔԱՐՏԵՁՆԵՐ ԵՎ
ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ

Կարևոր պատմական վայրերի այս լուսանկարները պատկերում են այն վայրերը, որտեղով քայլել է Հիսուս Քրիստոսը, որտեղ ապրել և ուսուցանել են աստվածաշնչյան մարգարեները, և որտեղ տեղի են ունեցել սուրբ գրքերի շատ իրադարձություններ: Որպեսզի կարողանաք ավելի լավ օգտագործել լուսանկարները ձեր ուսումնասիրությունների մեջ, յուրաքանչյուր լուսանկարի համար արվում է հակիրճ նկարագրություն: Նկարագրության թիվն ու վերնագիրը համապատասխանում են լուսանկարների թվին ու վերնա-

գրին: Նկարագրության վերնագրին հետևող առաջին պարբերությունը բացատրական տեղեկություններ է տալիս նկարի վերաբերյալ, ուշադրություն հրավիրելով կարևոր բաների վրա, և հաճախ նշում է, թե ինչ դիրքով է կանգնած եղել լուսանկարիչը: Այնուհետև, սուրբ գրքերի նշանակալից իրադարձություններ են թվարկվում, որոնք տեղի են ունեցել այդ տարածքում, նշելով սուրբ գրքերի հղումներ, որպեսզի դուք իմանաք, թե որտեղ կարող եք ավելի շատ կարդալ այդ իրադարձությունների մասին:

1. Նեղոս գետը և Եգիպտոսը

Նեղոս գետի ավերինն աճող բուսականությունը: Ետևում անապատային տարածքներ են, որոնք կազմում են Եգիպտոսի մեծ մասը:

Նշանակալից իրադարձություններ. Այս հողը հայտնաբարել է Եգիպտոսը (Աբր. 1.23–25): Աբրահամը գնաց Եգիպտոս (Ճն. ԺԲ.10–20, Աբր. 2.21–25): Հովսեփը վաճառվեց Եգիպտոս, դարձավ կառավարիչ և տվից փրկեց իր ընտանիքը (Ճն. ԼԷ, ԼԹ–ԽԶ): Հակոբի հետևորդներն ապրում էին Եգիպտոսում (Ճն. ԽԷ, Ել. Ա, ԺԲ.40): Փարավոնի դուստրը գետի մեջ գտավ մանուկ Մովսեսին և մեծացրեց նրան (Ել. Բ.1–10): Մովսեսն Իսրայելացիներին դուրս հանեց Եգիպտոսից (Ել. Գ–ԺԳ): Մարիամը, Հովսեփը և Հիսուսը գնացին Եգիպտոս, որպեսզի փախչեն Հերոդիդեսից (Մատ. Բ.13–15, 19–21): Վերջին օրերին Եգիպտացիները կճանաչեն Տիրոջը, և Տերը կօրհնի Եգիպտոսը (Ես. ԺԹ.20–25): (Տես Սուրբ գրքերի Ուղեցույց՝ «Եգիպտոս»):

2. Սիճայ սարը (Քորեթ) և Սիճայ անապատը

Ալքի ընկնող սարերից են Ջեբել Մուսա (Մովսեսի սար) լեռնազագաթները: Սիճայ սարի մի քանի հնարավոր տեսարաններ կան: Ջեբել Մուսան նախընտրելի տեղանքներից մեկն է:

Նշանակալից իրադարձություններ. Աստված հայտնվեց Մովսեսին և տվեց նրան Տասը Պատվիրանները (Ել. ԺԹ–Ի): Մովսեսը, Ահարոնը, Ահարոնի որդիներից երկուսը և 70 երեցներ տեսան և հաղորդակցվեցին Աստծո հետ (Ել. ԻԳ.9–12): Աստված Մովսեսին հրահանգեց տվեց խորանը կառուցելու համար (Ել. ԻԵ–ԻԸ, Լ–ԼԱ): Իսրայելացիները երկրպագեցին ոսկե հորթին, որը նրանք համոզեցին Ահարոնին, որ շինի (Ել. ԼԲ.1–8): Եղիան փախավ այստեղ Հեզրայելի հովտից, որտեղ ապրում էր Հեզաբել թագուհին (Գ.Թագ. ԺԹ.1–18): Սա նաև այն տեղն է, որտեղ Եղիան խոսեց Աստծո հետ (Գ.Թագ. ԺԹ.8–19):

3. Հրեաստանի անապատը և Մեռյալ ծովը

Տեսարանը Հրեաստանի անապատի վրայով դեպի հարավ-արևելք է: Ետին պլանում երևում է Մեռյալ ծովը:

Նշանակալից իրադարձություններ. Հրեաստանի անապատը կարևոր ապաստան էր վաղ պատմության շատ ժամանակաշրջաններում: Գավիթը թարքվում էր Մավոլի թագավորից (Ա.Թագ. ԻԶ.1–3): Հիսուսը 40 օր և 40 գիշեր ծնոս պահեց (Մատ. Գ.1–11, Մար. Ա.12–13): Բարի Մամարացու առակի տեսարանում Հիսուսն օգտագործեց Հրեաստանի անապատը, որպես Երուսաղեմից Երիթով տանող ճանապարհի, քանի որ միայնակ ճանփորդները հեշտությամբ գոհ էին դառնում այդ տարածքում (Ղուկ. Ժ.25–37): (Տես Սուրբ գրքերի Ուղեցույց՝ «Մեռյալ ծով»):

4. Կաղես Բառնեա

Սա դեպի հյուսիս-արևելք նայող մեծ ամայի հովտի (կղզյում են նաև հեղեղատ) տեսարանն է, որտեղ գտնվում է Կաղես Բառնեան: Գետակը, որը հոսում է այստեղով անձրևոտ եղանակի ժամանակ, այն դարձնում է լավ ոռոգվող և պտղաբեր վայր Յին անապատում:

Նշանակալից իրադարձություններ. Սա այն հավանական տեղն է, որտեղից Մովսեսը 12 տղամարդ ուղարկեց, որպեսզի լրտեսեն Ջանգի երկիրը (Թվ. ԺԳ.17–30): Անապատում մոտ 40 տարի դեգերելու ժամանակ, 38 տարի այն Իսրայելացիների ճամբարի հիմնական վայրն է եղել (Բ.Օր. Բ.14): Մարիամը մահացավ և թաղվեց այստեղ (Թվ. Ի.1): Այստեղ էր Կորխի ապստամբության, ժողովրդի տրտնջալու և Ահարոնի գավազանի ծաղկելու վայրը (Թվ. ԺԶ–ԺԷ): Այստեղ մերձակայքում էր, որ Մովսեսը զարկեց ապստամբին և ջուր դուրս ժայթքեց (Թվ. Ի.7–11):

5. Հայրապետների գերեզմանները

Ողջ Սուրբ Երկրի ամենահայտնի կառույցներից մեկն է: Այն կառուցվել է Քեբրոնում, Հերովդես թագավորի կողմից Մաքվելայի ավանդական

քարայրի վերևում, որը գնել էր Աբրահամը, որպես ընտանեկան գերեզմանավայր (ՃՆ. ԻԳ):

Նշանակալից իրադարձություններ. Սարրայի (ՃՆ. ԻԳ) և Աբրահամի թաղման վայրը (ՃՆ. ԻԵ.9): Իսահակը, Ռեբեկան և Լիան նույնպես թաղվել են այստեղ (ՃՆ. ԽԹ.30-31): Հակոբի մարմինը Եգիպտոսից բերվեց Քանան և թաղվեց այս քարայրում (ՃՆ. Ծ):

6. Հրեաստանի լեռնաղաշտը

Հրեաստանի լեռնաղաշտի երկարությունը 56 կիլոմետր է, իսկ լայնությունը՝ 27 կիլոմետր: Հողը մեծամասամբ քարքարոտ է և դժվար մշակվող: Լեռները բաժանվում են հովիտներով, որտեղ հողը բավական բերրի է: Հնում Իսրայելացիներն ապրել են այս սարերի վրա, օգտագործելով այն որպես պաշտպանություն զավթիչների դեմ: Երուսաղեմը տեղակայված է այս տարածքում:

Նշանակալից իրադարձություններ. Տերը խոստացավ այս երկիրն Աբրահամին ու նրա սերնդին (ՃՆ. ԺԳ.14-18, ԺԷ.8): Սարրան և Աբրահամը թաղվել են Քեբրոնում՝ Մաքվելայի այս քարայրում (ՃՆ. ԻԳ.19, ԻԵ.9): Դավիթը գրավեց Երուսաղեմը Հեռուացիներից (Բ Թագ. Ե.4-9): Հին Կտակարանում այս լեռներում կատարված ավելի շատ իրադարձություններ են արձանագրվել, քան այլ տեղերում:

7. Բեթլեհեմ

Այս լուսանկարը ցույց է տալիս քարքարոտ բլուրները և արոտավայրերը՝ առաջին պլանում և ժամանակակից Բեթլեհեմ քաղաքը՝ ետին պլանում:

Նշանակալից իրադարձություններ. Ռաբելը թաղվել է մերձակա տարածքում (ՃՆ. ԼԵ.16-20): Հռութը և Բոոսն ապրել են այստեղ (Հռութ Ա.19-Բ.4): Այստեղ ծնվել է թագավոր է օծվել Դավիթ թագավորը (Ա Թագ. ԺԶ.1-13): Այստեղ ծնվեց Փրկիչը և հովիվներն ու Իմաստունները երկրպագեցին նրան (Մատ. Բ.1-11, Դուկ. Բ.4-16): (Տե՛ս Սուրբ գրքերի Ուղեցույց, «Բեթլեհեմ»):

8. Երուսաղեմ

Տեսարանը նայում է դեպի հյուսիս: Նկարի կենտրոնում մահմեդական մզկիթ է՝ ոսկեզօծ գմբեթով, որը կոչվում է «Ապառաժյա գմբեթ»: Հնում հրեաները երկրպագել են այս տեղում գտնվող տաճարներում: Ապառաժյա գմբեթի մոտակա որմնապատը հին Երուսաղեմը շրջապատող պարիսպն է: Պարսպի աջ կողմում Կեդրոն հեղեղատն է: Վերևի աջ անկյունում ՉիբեՆյաջ սարն է: Հյուսիսային մասում, Ապառաժյա գմբեթից այն կողմ, Գոդգոթա կամ Գազաթ կոչվող վայրի հավանական տեղն է:

Նշանակալից իրադարձություններ. Երուսաղեմը հնում կոչվում էր Սաղեմ (Սաղ. ՀՁ.2): Աբրահամը տասանորդ վճարեց Մեյքիստեղեկին (ՃՆ. ԺԳ.18-20): Աբրահամը եկավ, որ գոհարերի Իսահակին (ՃՆ. ԻԲ.2-14): Դավիթ թագավորը գրավեց Երուսաղեմը Հեռուացիներից (Բ Թագ. Ե.4-9): Սողոմոն թագավորը տաճար կառուցեց (Գ Թագ. Զ-Է): Լեքին հեռացավ, որպեսզի գնա խոստումի երկիր (1 Նեվիի 1.4, 2): Փրկիչը մտաշայթյուն կատարեց, քավություն արեց մեր մեղքերի համար և հարություն առավ (Մատ. ԻԱ-ԻԸ): Ինչպես մարգարեացել էր Փրկիչը, նրա մահից մի փոքր անց Երուսաղեմը կործանվեց (ԶՄ-Մ 1.3-20): Երուսաղեմը զավթվելու է վերջին օրերին (Եզեկ. ԼԸ-ԼԹ, Հովել Բ-Գ, Հայտ. ԺԱ, ԺԶ): Երկրորդ Ապալտից առաջ Փրկիչը կհայտնվի այստեղ (Զաք. ԺԲ-ԺԴ, ՎևոՒ 45.48-53): (Տե՛ս Սուրբ գրքերի Ուղեցույց, «Երուսաղեմ», «Սաղեմ»):

9. Հերոդիսի տաճարը

Այս լուսանկարը ցույց է տալիս Հերոդիսի տաճարի մասշտաբային նմուշը, ինչպիսին ենթադրվում է, որ այն եղել է Ք.ծ.հ. 67 թվականին: Տաճարային համալիրը շրջափակող որմնապատը շրջապատում է սրբարանը, որտեղ գտնվում է Սրբոյրանց Սրբությունը և սուրբ տեղը և երեք մեծ զավիթները:

Նշանակալից իրադարձություններ. Հովսեփը և Մարիամը մանուկ Հիսուսին ներկայացրին տաճար (Դուկ. Բ.22-38): 12 տարեկանում Հիսուսն ուսուցանում էր տաճարում (Դուկ. Բ.41-46): Փրկիչը դրամափոխներին վտարեց տաճարից (Մատ. ԻԱ.12-13) և մարգարեացավ տաճարի կործանման մասին (Մատ. ԻԲ.1-2): Ապազայի Երուսաղեմում տաճար կկառուցվի (Եզեկ. Խ-ԽԸ, Զաք. Ը.7-9): (Տե՛ս Սուրբ գրքերի Ուղեցույց, «Տաճար՝ Տիրոջ տուն»):

10. Տաճար տանող աստիճանները

Տաճարի տարածքը բաժանված էր զավիթների, և դրսի զավիթը գտնվում էր ցածր հարթության վրա: Երկրպագողներն անցնում էին մի քանի դռով, այդ թվում նաև նրանցով, որոնք այս աստիճաններով տանում էին վեր՝ դեպի դրսի զավիթները, իսկ հետո՝ դեպի ներսի զավիթները: Ժամանակի ընթացքում հազարավոր մարդիկ են բարձրացել այս աստիճաններով, այդ թվում՝ Աստծո Որդին: Երբ Ք.ծ.հ. 70 թվականին Տիրոսի բանակը կործանել էր տաճարը, աստիճանները ծածկվել էին փլատակներով: Դրանք հայտնաբերվել են հին Երուսաղեմ քաղաքի մի մասում պեղումներ կատարելիս:

Նշանակալից իրադարձություն. Եզեկիելը տեսիլքում տեսել էր ապագա տաճարի չափսերը և ձևը

(Եզեկ. Խ): (Տե՛ս Սուրբ գրքերի Ուղեցույց, «Տաճար՝ Տիրոջ տուն»):

11. Չիթենյաց սար, Օրսոն Հայրի այգի

Այս տեսարանը նայում է Չիթենյաց սարի Օրսոն Հայրի այգուց դեպի հարավ-արևմուտք՝ Երուսաղեմի ուղղությամբ: Չիթենյաց սարի արևմտյան լանջին Գեթսեմանի պարտեզն է: 1841-ի հոկտեմբերի 24-ին Երեց Օրսոն Հայրը բարձրացավ Չիթենյաց սարը և նվիրագործման մարգարեական աղոթք ասաց Աբրահամի գավակների վերադարձի և տաճարի կառուցման համար:

Նշանակալից իրադարձություններ. Հռոմը կործանեց Երուսաղեմը Ք.ժ.հ. 70 թվականին, ինչպես կանխատեսել էր Փրկիչը (տե՛ս ՋՄ-Մ 1.23): Նախքան ողջ աշխարհին հայտնվելը, Փրկիչը դեռ կկանգնի Չիթենյաց սարի վրա: (Տե՛ս Ջաբ. ԺԳ.3-5, ՎևՈՒ 45.48-53, 133.19-20, Սուրբ գրքերի ուղեցույց, «Չիթենյաց սար»):

12. Գեթսեմանի պարտեզ

Հնամյա ձիթենիների այս լուսանկարում պատկերված է Գեթսեմանի պարտեզի ավանդական տեսարանը: Իրեն մատնելու գիշերը, վերնատնից հեռանալով, Փրկիչն աղոթեց այս մերձակայքում:

Նշանակալից իրադարձություններ. Այստեղ Հիսուս Քրիստոսը սկսեց տառապել մարդկության մեղքերի համար (Մատ. ԻՋ.36-44, Մար. ԺԳ.32-41, ՎևՈՒ 19.16-19): Իր աղոթքից հետո նա մատնվեց Հուդա Իսկարիոթի և պարտեզում նրան ձեռքակալելուց հետո նրա աշակերտները ժամանակավորապես լքեցին նրան (Մար. ԺԳ.50): (Տե՛ս Սուրբ գրքերի Ուղեցույց, «Գեթսեմանի»):

13. Գողգոթա

Այս ժայռի տեսքը նման է զանգի և Երուսաղեմի Դամասկոսի դռան հենց դրսի մասում է: Սա Հիսուս Քրիստոսի խաչելության հավանական վայրն է:

Նշանակալից իրադարձություն. Հիսուսին մտրակելուց և ծաղրելուց հետո, բերեցին «Գողգոթա ասված տեղ... զանգի տեղ», որտեղ նա խաչվեց (Մատ. ԻԷ.26-35, Հովհ. ԺԺ.17-18): (Տե՛ս Սուրբ գրքերի Ուղեցույց, «Գողգոթա»):

14. Պարտեզի գերեզմանը

Սա Փրկչի թաղման ավանդական վայրն է: Ժամանակակից մի քանի մարգարեներ զգացել են, որ Փրկչի մարմինը դրվել էր այս Պարտեզի գերեզմանում:

Նշանակալից իրադարձություններ. Խաչի վրա Փրկչի մահից հետո նրա մարմինը դրվեց նոր գերեզմանում, որը փորվել էր վեմի մեջ (Մատ. ԻԷ.57-60): Երբորդ օրը մի քանի կին գնացին

գերեզման և հայտնաբերեցին, որ Փրկչի մարմինն այնտեղ չէր (Մատ. ԻԷ.1, Հովհ. Ի.1-2): Պետրոս և Հովհաննես Առաքյալները նույնպես գնացին գերեզման և տեսան, որ Փրկչի մարմինն այնտեղ չէր (Հովհ. Ի.2-9): Հարություն առած Փրկիչը հայտնվեց Մարիամ Մագդաղենացուն (Հովհ. Ի.11-18):

15. Երիբոլ

Այս լուսանկարը պատկերում է ներկայիս Երիբովի բուսականությունը: Հնում այն պարսպաստ քաղաք էր Հորդանան գետի հովտում՝ ծովի մակարդակից 252 մետր ցածր: Այն գյուղատնտեսական հարուստ տարածք է, որտեղ լավ արմավենիներ ու ցիտրուսային ծառեր են աճում: Ետին պլանում ավանդական Գայթակոթյան սարն է (Մատ. Գ.1-11):

Նշանակալից իրադարձություններ. Մերձակա այս տարածքում Հեսուն և Իսրայելի գավակներն առաջին անգամ անցան Հորդանան գետը, մտնելով խոտտոնի երկիր (Հես. Բ.1-3, Գ.14-16): Տերը իրաչքով այնպես արեց, որ պարիսպները քանդվեցին Իսրայելացիների զորքերի առաջ (Հես. Չ, տե՛ս նաև Եբր ԺԱ.30): Հեսուն անեծք դրեց քաղաքի վրա (Հես. Չ.26), որը կատարվեց (Գ.Թագ. ԺՋ.34): Եղիսեն բուժեց Երիբովի ջրերը (Գ.Թագ. Բ.18-22): Աբրեզին անգամ Երուսաղեմ այցելելիս Փրկիչն անցավ այստեղով, թշնակով Բարսիմեոս կույրին՝ մնալով Ջաբեոս մաքսավորի մոտ (Մար. Ժ.46-52, Դուկ. ԺԸ.35-43, ԺԺ.1-10): Բարի Սամարացու առակում պատկերվել է Երուսաղեմից Երիբով տանող ճանապարհը (Դուկ. Ժ.30-37):

16. Մելոլ

Գեպի արևմուտք նայող այս տեսարանում հին քաղաքի ավերակները կենտրոնի ձախ մասում են: Դրանք փոքր շրջանաձև բլրի վրա են, որը շրջապատված է ավելի բարձր բլրիկներով:

Նշանակալից իրադարձություններ. Իսրայելի ցեղերը հավաքվեցին և ստացան իրենց բաժին ընկած տարածքները (Հես. ԺԸ-ԻԲ): Խորանը և ուխտի տապանակը կանգնեցվեցին այստեղ և մնացին դարերի ընթացքում: (Հես. ԺԸ.1): Այստեղ Աննան աղոթեց և իր որդուն՝ Սամուելին նվիրաբերեց Տիրոջ ծառայությանը (Ա.Թագ. Ա): Իսրայելացիները վերցրին տապանակը Մելոլից և պարտվեցին Փղշտացիներին, որոնք գերեցին տապանակը (Ա.Թագ. Գ.1-11):

17. Գարիզին և Գեբաղ սարերը

Տեսարանն արևմուտքի ուղղությամբ է: Ձախ կողմում Գարիզին սարն է, իսկ աջում՝ Գեբաղ սարը: Նկարում ժամանակակից Նաբուլոս քաղաքն է: Հնագույն Սյուբեմ քաղաքը եղել է այս երկու

սարերի միջև՝ ներքևի հովտում (նկարի հենց այ կողմում):

Նշանակալից իրադարձություններ. Աբրահամը վրան խփեց Սյուքեմում (Ծն. ԺԲ.6-7): Հակոբն այստեղ վրան խփեց և արտի կալվածք գնեց (Ծն. ԼԳ.18-20): Գարիգին սարն օրհնությունների սար էր, մինչդեռ Գեբաղ սարն անեծքի սար էր (Բ Օր. ԻԷ-ԻԸ): Գեբաղ սարի վրա Հնաուն հուշատեղան կառուցեց, որի վրա գրեց Մովսեսի օրենքը, և ապա կարդաց օրենքն Իսրայելացիներին (Հես. Ը.30-35): Հովսեփն սուղորները թաղվել են Սյուքեմում (Հես. ԻԿ.32):

18. Մամարիայի Դոթայինը

Սուրբ Երկրի այս տարածքին բնորոշ են լեռնաշղթաներն ու հովիտները: Այն լավ արտավայր է: Երբ Իսրայելացիները բնակեցրին հողը, այս տարածքը տրվեց Մանասեին:

Նշանակալից իրադարձություններ. Դոթային հովտում Հովսեփը վաճառվեց Եգիպտոս (Ծն. ԼԷ.12-28): Աբդիան փրկեց հայրյուր մարգարե՝ թաքցնելով նրանց քարանձավներում, երբ Հեզաբելը փորձում էր սպանել Իսրայելի մարգարեներին (Գ Թագ. ԺԼ.13): Լսորական բանակը շրջապատեց Եղիսեին և նրա ծառային, ում Տերը հրաշքով փրկեց (Գ Թագ. Զ.13-23):

19. Կեսարիան և Սարոնի հարթավայրը դեպի Կարմեղոս

Տեսարան դեպի հյուսիս՝ Կեսարիայի նավահանգստի երկայնքով: Նկարի վերևի մասում երևում է նաև Կարմեղոս լեռնաշղթան:

Նշանակալից իրադարձություններ. Կարմեղոս սարի վրա Նոյան դիմագրավեց Բահաղի կեղծ մարգարեներին (Գ Թագ. ԺԼ): *Via Maris* (Ծովեզերքի ճանապարհ) կարևոր ճանապարհի հին ժամանակներում, որն ընկած է Կեսարիայի արևելքում: Հուպպեի նշանավոր տեսիլքից հետո Պետրոսը սկսեց ծառայությունը հեթանոսների մեջ՝ ուսուցանելով Կոռնելիոս անունով Հռոմեացի հարյուրապետին Կեսարիայում (Գոր. Ժ): Փիլիպպոսը քարոզում և ապրում էր այստեղ և ուներ չորս դուստր, որոնք մարգարեություն էին անում (Գոր. Ը.40, ԻԱ.8-9): Պողոսը երկու տարի բանտարկյալ էր այս քաղաքում (Գոր. ԻԳ-ԻԶ): Նա քարոզեց Փելիսիսին, Փեստոսին և Հերովդես Բ Ազրիպպասին, որն ասաց. «Քիչ է մնում, որ իմ համոզեմ, որ Քրիստոնյա դառնամ» (Գոր. ԻԶ.28):

20. Հուպպե

Տեսարանը նայում է Հուպպե նավահանգստային քաղաքի վրայով դեպի հյուսիս-արևմուտք:

Նշանակալից իրադարձություններ. Հովնանը գնաց Հուպպե և սուտեց Թարսիս գնացող նավը (Հովն. Ա.1-3): Հուպպեն այն նավահանգիստն էր, որով

Սողոմոնը, իսկ հետագայում Չորաբաբելը, գերաններ բերեցին Լիբանանի եղևնիների անտառներից՝ իրենց տաճարները կառուցելու համար (Բ Մն. Բ.16, Եզր. Գ.7): Այստեղ Պետրոսը կենդանացրեց մահացած Տաբիթային, որ Այծենմիկ էր կոչվում (Գոր. Թ.36-43): Պետրոսը տեսավ մաքուր և անմաքուր կենդանիների տեսիլքը, որով նրան հայտնի դարձվեց հեթանոսների մեջ ծառայություն սկսելու անհրաժեշտությունը (Գոր. Ժ): 1841-ին Օրսոն Հայդը ժամանեց այստեղ, որպեսզի նվիրագործի Սուրբ Երկիրը:

21. Հեզրայելի հովիտը

Տեսարանը Թաբոր սարից նայում է դեպի արևմուտք՝ Հեզրայելի հովտի մի մասի ուղղությամբ: Չնայած հաճախ Հեզրայելի հովիտը համարում են մեկ մեծ հովիտ, իրականում այն հովիտների մի շարք է, որը միացնում է Աբրի հարթավայրը Հորդանանի հովտի և Գալիլեայի ծովի շրջանի հետ: Մակեդոնյի հովիտը, օրինակ, այս հովտի արևմտյան մասում է: Հեզրայելի հովիտը հիմնական կապող ճանապարհն է եղել Սուրբ Երկրի լայնքով՝ արևմուտքում Միջերկրական ծովի և արևելքում Հորդանանի հովտի միջև:

Նշանակալից իրադարձություններ. Այս հովտով է անցել Եգիպտոսը Միջագետքին կապող գլխավոր ճանապարհը, և այստեղ տեղի են ունեցել բազում պատերազմներ: (Դ-առ. Ա.22-27, Ե.19, Գ Թագ. ԻԳ.29-30): Մեծ և վերջին հակամարտությունն այս հողի վրա կսկսվի Արմագեդոնի պատերազմով, որն ամմիջապես կնախորդի Փրկչի Երկրորդ Գալստին: Անունը գալիս է «Հար Մեզիդոն», կամ «Մակեդոնի լեռ» արտահայտությունից (Եգեկ. ԼԼ, Հովկել Գ.9-14, Ջաբ. ԺԿ.2-5, Հայտ. ԺԶ.14-16):

22. Թաբոր սարը

Տեսարանը նայում է հյուսիս-արևմտյան ուղղությամբ: Թաբոր սարը շրջապատող դաշտավայրը Հեզրայելի հովիտն է, որը հայտնի է նաև Եզրեյելոնի հովիտ անվանումով. Նազարեթն ընկած է Թաբոր սարից այն կողմ գտնվող բլուրներում:

Նշանակալից իրադարձություններ. Դերբրան և Բարակը միավորեցին Տիրոս բանակը Հասորի Հաբին թափառորի դեմ (Դ-առ. Դ.4-14): Թաբոր սարը Փրկչի Կերպարանափոխման ավանդական վայրերից մեկն է (Մատ. ԺԷ.1-9). նյուսը՝ Հերոնն սարն է: (Տե՛ս Սուրբ գրքերի Ուղեցույց, «Կերպարանափոխում»):

23. Գալիլեայի ծովը և Երանությունների սարը

Տեսարանը նայում է հարավ-արևմուտք՝ Գալիլեայի ծովի քաղցրահամ ջրերի հյուսիս-

արևմտյան անկյան ուղղությամբ: Տիբերեան գտնվում է ծովափի հեռավոր անկյունում և ձգվում է մինչև լուսանկարի հեռավոր ձախ անկյունը: Կենտրոնում երևացող բոլորը, առաջին պլանում, Երանոթյունների սարի ավանդական վայրն է: Կափառնայունը ձախ կողմում է՝ նկարից դուրս:

Նշանակալից իրադարձություններ. Իր մահկանացու ծառայության մեծ մասը Փրկիչն անցկացրել է այս տարածքում: Այստեղ նա կանչել է և կարգել Տասներկու Առաքյալներին (Մատ. Ա.18–22, Ժ.1–4, Մար. Ա.16–20, Բ.13–14, Գ.7, 13–19, Դուկ. Ե.1–11), ուսուցանել է Սարի վրայի Քարոզը (Մատ. Ե–Է), և ուսուցանել է առակներով (Մատ. ԺԳ.1–52, Մար. Գ.1–34): Ահա այստեղ գործած նրա հրաշքներից մի քանիսը՝ նա բուժեց մի բորոտի (Մատ. Ը.1–4), հանդարտեցրեց փոթորիկը (Մատ. Ը.23–27), երիտասարդի միջից դեղերի մի լեգեոն դուրս գցեց, որը մտավ խոզերի մեջ, որոնք վազելով լցվեցին ծովը (Մար. Ե.1–15), կենդանացրեց Հայրոսի մահացած դստերը (Մատ. Թ.18–19, 23–26, Մար. Ե.22–24, 35–43), 5000 մարդ կերակրեց, իսկ հետո՝ 4000 մարդ (Մատ. ԺԳ.14–21, ԺԵ.32–38), իր աշակերտներին պատվիրեց ցանցերը ծովը գցել, որի արդյունքում նրանք շատ ծով բռնեցին (Դուկ. Ե.1–6), բժշկեց շատ մարդկանց (Մատ. ԺԵ.29–31, Մար. Գ.7–12), և հայտնվեց իր Հարությունից հետո, որպեսզի ուսուցանի իր աշակերտներին (Մար. ԺԳ.27–28, ԺՁ.7, Հովհ. ԻԱ.1–23):

24. Կափառնայուն

Կափառնայունը, որը գտնվում էր Գալիլեայի ծովի հյուսիսային ափին, Հիսուսի Գալիլեայի ծառայության կենտրոնն էր (Մատ. Թ.1–2, Մար. Բ.1–5): Կարևոր և զարգացած ձկնորսական և առևտրական կենտրոն լինելով՝ այն հարազատ բնակավայր էր թե՛ հեթանոսների և թե՛ հրեաների համար: Բնակչությունն առաջին դարում, հավանաբար, չի գերազանցել 1000 մարդուց: Կափառնայունը գտնվում էր կարևոր առևտրական ճանապարհների խաչմերուկում և շրջապատված էր բերրի հողերով: Այստեղ Հռոմեական զինվորները կառուցում էին բաղնիքներ և պահեստային շինություններ՝ լավ կառուցված հասարակական կառույցներով մեծ ներդրում անելով կազմակերպված հասարակության կառուցվածքի գործում: Չնայած այստեղ գործված շատ հրաշքներին՝ մարդիկ, հիմնականում, մերժում էին Փրկչի ծառայությունը: Այդ պատճառով Հիսուսն անիծեց այդ քաղաքը (Մատ. ԺԱ.20, 23–24): Ժամանակի ընթացքում, Կափառնայունը վերածվեց ավերակների և ներկայումս բնակեցված չէ:

Նշանակալից իրադարձություններ. Կափառնայունը հայտնի էր, որպես Փրկչի՝ «իր քաղաքը»

(Մատ. Թ.1–2, Մար. Բ.1–5): Այստեղ նա շատ հրաշքներ է գործել: Օրինակ՝ նա բժշկեց շատ մարդկանց (Մար. Ա.32–34), այդ թվում՝ հարյուրպետի ծառային (Դուկ. Է.1–10), Պետրոսի զոքանչին (Մար. Ա.21, 29–31), անդամալուծին, որի մահիճն իջեցրին տանիքի միջով (Մար. Բ.1–12) և չորացած ձեռքով մարդուն (Մատ. ԺԲ.9–13): Այստեղ Հիսուսը նաև բազում չար ոգիներ դուրս գցեց (Մար. Ա.21–28, 32–34), կենդանացրեց Հայրոսի մահացած դստերը (Մար. Ե.22–24, 35–43) և կարողացավ կյանքի հացի քարոզը Կափառնայունի ժողովարանում (Հովհ. Զ.24–59): Փրկիչը Պետրոսին կարգադրեց ձուկ բռնել Գալիլեայի ծովից, բացել առաջինի բերանը և վերցնել մի մետաղադրամ, որով կարող էր հարկ վճարել (Մատ. ԺԷ.23–26):

25. Հորդանան գետը

Սկիզբ առնելով Գալիլեայի ծովի հյուսիսից՝ Հորդանան գետը թափվում է նրա մեջ, և ապա շարունակվում է հարավ՝ դեպի Մեռյալ ծով:

Նշանակալից իրադարձություններ. Դովան իր համար ընտրեց Հորդանանի դաշտերը (Ծն. ԺԳ.10–11): Հեսուն բաժանեց ջրերը՝ Իսրայելացիներին հնարավորություն տալով, որ անցնեն խոտառմի երկիր (Հես. Գ.13–17, Դ.1–9, 20–24): Եղիան և Եղիսեն բաժանեցին ջրերը (Դ. Թագ. Բ.5–8, 12–14): Նեեմանը բուժվեց բորոտությունից (Դ. Թագ. Ե.1–15): Հովհաննես Սիրուիչը մկրտեց շատ մարդկանց, ներառյալ Փրկչին (Մատ. Գ.1–6, 13–16): (Տե՛ս Սուրբ գրքերի Ուղեցույց, «Հորդանան գետ»):

26. Փիլիպպեան Կեսարիա

Այս գետակը գտնվում է Հերմոն սարի ստորոտում: Այն Հորդանան գետի ակունքներից մեկն է: Հերովդես Փիլիպպոսը, որը կառավարում էր այս տարածքում, այստեղ մի քաղաք կառուցեց՝ Կեսարի (իր միսպատի) և իր պատվին. նախկինում քաղաքը կոչվել է Պանեսաս, իսկ այսօր կոչվում է Բանեսաս կամ Փիլիպպեան Կեսարիա:

Նշանակալից իրադարձություն. Փրկիչը հանդիպեց իր աշակերտների հետ Փիլիպպեան Կեսարիայում: Այստեղ Պետրոսը հայտարարեց, որ Փրկիչը «Քրիստոսն է՝ կենդանի Աստծո Որդին»: Դրանից հետո Փրկիչը նրան խոստացավ «երկրյա արքայության բանալիները» (Մատ. ԺՁ.13–20):

27. Նազաբեթ

Ժամանակակից Նազաբեթ քաղաքի այս տեսարանը նայում է դեպի հարավ: Աստվածաշնչյան ժամանակաշրջանում Նազաբեթը փոքր գյուղ էր:

Նշանակալից իրադարձություններ. Նեփին տեսիլքում տեսավ Փրկչի մորը Նազաբեթում (1 Նեփի 11.13–22): Գաբրիել հրեշտակը տեղեկացրեց

Մարիամին, որ նա կծնի Փրկչին (Ղուկ. Ա.26–35): Գաբրիելը Հովսեփին պատվիրեց, որ Մարիամին կամոթյան վերցնի և նրա որդուն անվանի Հիսուս (Մատ. Ա.18–25): Հիսուսը մեծացել է Նազարեթում (Մատ. Բ.19–23, Ղուկ. Բ.4–40, Գ.16): Նա քարոզեց ժողովարանում և հայտարարեց, որ ինքը Մեսիան է (Ղուկ. Գ.16–21), սակայն Նազարեթի ժողովուրդը մերժեց նրան (Մատ. Ժ.Գ.54–58, Ղուկ. Գ.22–30):

28. Դան

Այս հնագույն քաղաքը կոչվել է Լեսեմ (Հես. ԺԺ.47) կամ Լայիա (Դատ. ԺԸ.7, 14) մինչև այն ժամանակ, երբ Իսրայելացիները նվաճեցին երկիրը: Այս տեղանքի, ինչպես նաև Փիլիպպեան Կեսարիայի աղբյուրները Հորդանան գետի հիմնական պնունքներն են:

Նշանակալից իրադարձություններ. Աբրահամն ազատեց Ղովտին (Ճն. ԺԳ.13–16): Դանի ցեղը գրավեց տարածքը և այն կոչեց Դան (Հես. ԺԺ.47–48): Հերոզովամը ոսկե հորթ շինեց, որը հյուսիսային 10 ցեղերի անկման պատճառը դարձավ (Գ. Թագ. ԺԲ.26–33): Դանը Իսրայելի ամենահյուսիսային քաղաքն էր, այստեղից է, որ սուրբ գրքերն Իսրայելի երկրին ասում են «Բերասբեից մինչև Դան» (Բ Մն. Լ.5 Բերասբեն ամենահարավային քաղաքն էր): (Տե՛ս Սուրբ գրքերի Ուղեցույց, «Դան»):

29. Աբենք

Այս լուսանկարում պատկերված են Աբենքի Պարբենոնի ավերակները: Աբենքը հնագույն հունական Ատտիկեի մայրաքաղաքն էր, իսկ Նոր Կտակարանի ժամանակներում, գտնվում էր Հռոմեական Աքայիա գավառում: Այն անվանվել է ի պատիվ հունական Աբենաս հեթանոսական աստվածուհու: Նոր Կտակարանի ժամանակներում Աբենքը կորցրել էր իր նախկին մեծությունն ու փառքը, սակայն դեռևս պարունակում էր շատ աստվածների ու աստվածուհիների նվիրված արձաններ ու կոթողներ, այդ թվում նաև «անծանոթ աստծուն» (Գոր. ԺԷ.23):

Նշանակալից իրադարձություններ. Պողոս Առաքյալն այցելեց քաղաքը և քարոզեց Մարսի բլրի վրա՝ Պարբենոնի մոտ (Գոր. ԺԷ.15–34): Աբենքից միսիոներներ ուղարկվեցին Հունաստանի այլ շրջաններ (Ա Թես. Գ.1–2):

30. Կորնթոս

Հռոմեական Աքայիա գավառի գլխավոր քաղաքը: Այն գտնվում էր Պեղոպոնեսը մայր ցամաքին՝ Հունաստանին միացնող պարանոցի վրա և նավահանգիստ ուներ՝ թե՛ արևելյան, թե՛ արևմը-

տյան կողմից: Այն հարուստ և ազդեցիկ նավահանգստային քաղաք էր:

Նշանակալից իրադարձություններ. Մեկ տարի և վեց ամիս Պողոսն արքեպ Վորնթոսում և այնտեղ հաստատեց Եկեղեցին (Գոր. ԺԸ.1–18): Պողոսը մի քանի նամակ է գրել Կորնթոսի տարածքի Եկեղեցու անդամներին, որոնցից երկուսն այժմ Նոր Կտակարանում են (Ա և Բ Կորնթացիս):

31. Եփեսոս

Մա Եփեսոսում գտնվող հունական թատրոնի ավերակներն են, որտեղ քարոզել է Պողոս Առաքյալը: Նոր Կտակարանի ժամանակների հանրաճանաչ աշխարհում Եփեսոսը հայտնի էր իր վեհաշուք տաճարով, որը կառուցվել էր ի պատիվ Հռոմեական Դիանա հեթանոսական աստվածուհու: Այժմ լինելով ավերակ՝ Եփեսոսը մի ժամանակ Հռոմեական Ասիա գավառի կենտրոնն ու մեծ առևտրական քաղաք էր: Քաղաքի արծաթագործները բարգավաճող առևտուր էին ծավալել՝ վաճառելով Դիանայի սրբապատկերները:

Նշանակալից իրադարձություններ. Պողոս Առաքյալն իր երկրորդ միսիոներական ճամփորդության վերջում այցելեց Եփեսոս (Գոր. ԺԸ.18–19): Իր երրորդ ճամփորդության ժամանակ նա երկու տարի մնաց այս քաղաքում: Նա ստիպված եղավ հեռանալ քաղաքից, այն աղմուկի պատճառով, որը բարձրացրել էին արծաթագործները, որոնք կորցնում էին իրենց աշխատանքը, քանի որ Պողոսը քարոզում էր կեղծ աստվածուհի Դիանային երկրպագելու դեմ (Գոր. ԺԺ.1, 10, 23–41, Ի.1): Եփեսոսի թատրոնն ամենամեծն էր, որը երբևէ կառուցվել է Հույների կողմից և այն տեղն է, որտեղ Պողոսի գործընկերները հանդիպեցին ամբոխի (Գոր. ԺԺ.29–31): Հռոմում իր գերության ժամանակ Պողոսը գրեց իր թուղթը Եփեսոսի Եկեղեցու անդամներին: Ասիայում Եկեղեցու յոթ ճյուղերից մեկը, որին ուղղված է Հայտնության գիրքը, գտնվում էր Եփեսոսում (Հայտ. Ա.10–11, Բ.1):

32. Պատմոս կղզին

Կղզի Էգեյան ծովում, ուր աքսորվել էր Հովհաննեսը (Հայտ. Ա.9): Համաձայն ավանդության՝ նա այնտեղ աշխատում էր մարմարի քարահանքերում:

Նշանակալից իրադարձություն. Հովհաննեսը տեսավ մեծ տեսիլքը, որը հայտնի է Ապոկալիպսիս (Հայտնության գիրք) անունով: Տե՛րը նրան պատվիրեց ուղարկել այն Ասիայի յոթ եկեղեցիներին (Հայտ. Ա.11):

Հետևյալ քարտեզները ձեզ կարող են օգնել, որպեսզի ավելի լավ հասկանաք սուրբ գրքերը: Իմանալով սուրբ գրքերում նշվող հողերի աշխարհագ-

րությունը՝ դուք կարող եք ավելի լավ հասկանալ սուրբ գրքերի իրադարձությունները:

- | | |
|--|---|
| <ol style="list-style-type: none"> 1. ՍՈՒՐԲ ԵՐԿԻՐԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՔԱՐՏԵԶԸ 2. ԻՄՐԱՅԵԼԻ ԵԼՔԸ ԵԳԻՊՏՈՍԻՑ ԵՎ ՄՈՒՏՔԸ ՔԱՆՆԱՆ 3. 12 ՑԵՂԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ 4. ԴԱՎԹԻ ԵՎ ՍՈՂՈՄՈՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ 5. ԱՍՈՐԵՍԱՆԻ ԿԱՅՐՈՒԹՅՈՒՆԸ 6. ՆՈՐ ԲԱԲԵԼՈՆՅԱՆ (Նաբոզոբդնոսի) ԿԱՅՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԵԳԻՊՏՈՍԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ 7. ՊԱՐՄԱԿԱՆ ԿԱՅՐՈՒԹՅՈՒՆԸ | <ol style="list-style-type: none"> 8. ՀՈՍՏԵԿԱՆ ԿԱՅՐՈՒԹՅՈՒՆԸ 9. ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ ԱՇԽԱՐԿԸ 10. ՔԱՆԱՆԸ ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՄ 11. ՍՈՒՐԲ ԵՐԿԻՐԸ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ԺԱՄԱՆԱԿ 12. ԵՐՈՒՍԱԳԵՄԸ ՀԻՍՈՒՍԻ ԺԱՄԱՆԱԿ 13. ՊՈՂՈՍ ԱՌԱՔՅԱԼԻ ՄԻՍՈՆԵՐԱԿԱՆ ՃԱՄՓՈՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 14. ՍՈՒՐԲ ԵՐԿԻՐ ՏԵՂԱՆՔԻ ՄԱԿԱՐԴԱԿԸ ԱՍՏՎԱԾԱՆՆԻ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՄ |
|--|---|

Տեղանունների այբբենական ցուցիչը ձեզ կօգնի քարտեզի վրա որոշակի վայր գտնելիս: Յուրաքանչյուր տեղանվան դիմաց տրված է քարտեզի քիվը, որին հետևում է կոորդինատների հղումը, որը կազմված է տառաբլային կապակցությունից: Օրինակ՝ Ռաբբա (Ամման) տեղանվան դիմաց առաջին քարտեզում գրված է 1.Դ5. դա նշանակում է 1-ին քարտեզ, Դ5 վանդակ: Յուրաքանչյուր քարտեզի վրա դուք կարող եք գտնել որոշակի վանդակները՝ օգտվելով տվյալ քարտեզի վերևում և մի կողմում տրված կոորդինատներից: Անունների այբբենաբլային տարբերակները տրված են փակագծերի մեջ. օրինակ՝ Ռաբբա (Ամման): Անվանը հետևող հարցական նշանը, փակագծերում, ցույց է տալիս, որ քարտեզի վրա ցույց տրված տեղանքը հավանական կամ մոտավոր է, բայց ոչ հաստատ:

Հետևյալ բացատրությունները բանալի են՝ քարտեզներում օգտագործված պայմանական նշաններն ու գրաշարվածքը հասկանալու համար: Ի լրումն, յուրաքանչյուր քարտեզ կարող է պարունակել տվյալ քարտեզում օգտագործված լրացուցիչ պայմանական նշանների բացատրություններ:

● Կարմիր կլոր կետը խորհրդանշում է մեծ կամ փոքր քաղաք: Կետի և քաղաքի կամ տեղանքի անվան միջև երբեմն գիծ կա, որը դրանք միացնում է միմյանց:

▲
Սեղյալ ծով

Երուսաղեմ

ՄՈՎԱԲ

ՀՐԵԱՍՏԱՆ


Փոքր սև եռանկյունին լեռան խորհրդանշան է:

Այս շարվածքն օգտագործվել է աշխարհագրական տեղանուններ նշելու համար, ինչպիսիք են օվկիանոսները, ծովերը, լճերը, գետերը, լեռները, անապատները, հովիտները, տափաստանները և կղզիները:

Այս շարվածքն օգտագործվել է մեծ և փոքր քաղաքներ նշելու համար (և Երուսաղեմ քաղաքի քարտեզի փոքր տեղանքների համար):

Այս շարվածքն օգտագործվել է համեմատաբար փոքր քաղաքական բաժանումներ նշելու համար, ինչպիսիք են շրջանները, ժողովուրդները, ցեղերը:

Այս շարվածքն օգտագործվել է ավելի մեծ քաղաքական բաժանումներ նշելու համար, ինչպիսիք են ազգերը, երկրները և մայրցամաքները:




<p>Աբանա գետ՝ 1.Դ1 Աբելինացիների տարածք՝ 11.Դ1 Ագաբայի ծոց՝ 2.Դ4 Աղրիա (Աղրիատիկ) ծով՝ 8.Բ2 Ազովտոս՝ 11.Ա6 Աբենք՝ 6.Ա2, 7.Ա2, 8.Գ2, 13.Գ2 Ալեքսանդրիա՝ 8.Գ3, 13.Զ4 Ալկարոն՝ 1.Բ6, 10.Ա6 Ակբով (Աքր, Պտողեմայիս)՝ 1.Բ3, 3.Ա3, 4.Գ3, 10.Բ2, 11.Բ3 Աղի ծով (Մեռյալ ծով)՝ 1.Գ6, 2.Դ1, 3.Բ5, 4.Դ5, 9.Դ4 Անադելի տարածք՝ 4.Գ6 Ամման (Ռաքքա), 1.Դ5, 10.Դ5, 14.Դ2 Ամմոնի տարածք՝ 1.Դ6, 3.Բ5, 4.Դ4, 10.Դ6 Այեմոն՝ 11.Գ4 Այեղոն՝ 1.Բ5, 10.Բ5, 11.Բ5 Անապատի ճամբարները՝ 2.Գ4 Անտիոք՝ Պիսիդիայում՝ 13.Զ2 Անտիոք՝ Ասորիքում՝ 8.Գ3, 13.Ը2 Անտոնիա ամրոցը՝ Երուսաղեմում, 12.Գ3 Աշտարակի ավազանը՝ Երուսաղեմում՝ 12.Բ5 Ապիլոսի հրապարակ՝ 13.Բ1 Առնոն գետ՝ 1.Գ7, 2.Դ1, 3.Բ5, 4.Դ5, 10.Գ7, 11.Գ7 Ասեղովք (Ազովտոս)՝ 1.Ա6, 3.Ա5, 4.Գ5, 10.Ա6 Ասերի ցեղ՝ 3.Ա3 Ասիա՝ Հռոմեական գավառ՝ 8.Գ2, 13.Զ2 Ասկաղոն (Ասկաղոն)՝ 1.Ա6, 3.Ա5, 4.Գ5, 10.Ա6, 11.Ա6 Ասկալոն (Ասկաղոն)՝ 11.Ա6 Ասորիքի տարածք՝ 6.Բ3, 8.Գ3, 9.Դ3, 11.Գ2, 13.Ը3 Ատրեստանի կայսրություն՝ 5.Գ3 Ատրեստան՝ 9.Զ2</p>	<p>Ասոր՝ 5.Գ3, 9.Զ2 Արաբա (Ռիֆտ հովիտ)՝ 1.Բ8, 2.Դ2, 4.Գ7, 10.Գ8 Արաբական ծով՝ 6.Դ4 Արաբական անապատ՝ 9.Զ3 Արաբիա՝ 5.Գ3, 8.Դ4 Արադ՝ 2.Դ1, 3.Ա5, 4.Գ5 Արայյան ծով՝ 5.Դ1, 6.Դ1, 7.Գ2 Արամ-Դամասկոսի տարածք՝ 4.Դ2 Արարատ լեռ՝ 9.Զ1 Արգովրի տարածք՝ 4.Դ3 Արեգ (Ովն)՝ 2.Ա3 Արիմաբիա՝ 11.Բ5 Արևելյան անապատ՝ 2.Գ3 Արևելյան (Ներքին) ծով՝ 5.Գ4, 6.Գ4 Աքադի (Աքքադ) տարածք՝ 9.Է2 Աքայիա՝ Հռոմեական գավառ՝ 8.Գ2, 13.Դ2 Աքքադի (Աքադ) տարածք՝ 9.Է2 Բաբելոն՝ 5.Գ3, 6.Գ3, 7.Բ3, 9.Զ3 Բաբելոն (Սեմաար)՝ 9.Է3 Բաբելոնի տարածքը՝ 9.Զ3 Բաբելոնյան նոր կայսրությունը՝ 6.Գ3 Բասսանի տարածք՝ 1.Գ3, 10.Գ2 Բեզեթա՝ 12.Բ2 Բեթարարա՝ 11.Գ6 Բեթանիա՝ 11.Բ6 Բեթանիայի ճանապարհը՝ 12.Դ5 Բեթել (Լուզ)՝ 3.Ա5, 4.Գ5, 10.Բ5, 11.Բ6 Բեթլեհեմ՝ 1.Բ6, 3.Ա5, 4.Գ5, 10.Բ6, 11.Բ6 Բեթլեհեմի ճանապարհը՝ 12.Ա7 Բեթլեհեմի ավազանը՝ Երուսաղեմում՝ 12.Գ3 Բեթսայիդա՝ 11.Գ3 Բեթսան՝ 3.Բ4, 4.Դ4, 10.Գ4 Բեթփազե՝ 11.Բ6 Բենիամինի ցեղը՝ 3.Ա5</p>	<p>Բերսաբե՝ 1.Բ7, 2.Գ1, 3.Ա5, 4.Գ6, 9.Դ4, 10.Բ7, 11.Բ8 Բերիա՝ 13.Դ1 Բյուրբանիայի տարածք՝ 13.Զ1 Բոտր գետ՝ 1.Ա7, 10.Ա7, 11.Ա8 Բոսրա՝ 3.Բ6, 4.Դ6 Բրիտանիայի տարածք՝ 8.Ա1 Գաբաա՝ 4.Գ5 Գաբալոն՝ 10.Բ5 Գադարա՝ 11.Գ4 Գադի ցեղը՝ 3.Բ4 Գազա՝ 1.Ա6, 2.Գ1, 3.Ա5, 4.Գ5, 10.Ա7, 11.Ա7, 13.Ը4 Գազեր՝ 4.Գ5 Գալիլեայի (Գեննեսարեթի) ծովը՝ 1.Գ3, 3.Բ3, 4.Դ3, 9.Դ3 Գալիլեայի տարածք՝ 11.Գ2 Գադաադի Հաբիս՝ 3.Բ4 Գադաադի տարածք՝ 1.Գ4, 10.Գ4 Գադաադիայի տարածք՝ 13.Է1 Գադգաղա՝ 1.Գ5, 2.Դ1, 4.Դ5 Գայի՝ 2.Դ1, 10.Բ5 Գասիոն-գաբեր՝ 2.Դ3, 3.Ա8, 4.Գ8, 9.Դ4 Գարիզին սար՝ 1.Բ5, 3.Ա4, 4.Գ4, 10.Բ5, 11.Բ5, 14.Բ6 10.Գ3, 11.Գ3, 14.Բ7 Գաուլի տարածք՝ 8.Ա1 Գեբադ սարը՝ 1.Բ4, 3.Ա4, 4.Գ4, 10.Բ4, 11.Բ5, 14.Բ6 Գեթ՝ 3.Ա5, 4.Գ5, 10.Ա6 Գեթսեմանի պարտեզը՝ Երուսաղեմում՝ 12.Դ4 Գեթթոփեր՝ 10.Բ3 Գեեռոնի աղբյուրը՝ Երուսաղեմում՝ 12.Դ6 Գեղբուն սար՝ 1.Գ4, 3.Բ4, 10.Գ4, 11.Գ4, 14.Գ6 Գեղեցիկ նավահանգիստ՝ 13.Ե3 Գեղեցիկ դուռ՝ 12.Գ4 Գեսեմի տարածք՝ 2.Ա2, 9.Գ4 Գեսուրի տարածք՝ 4.Դ3 Գերարա՝ 10.Ա7</p>
---	---	--

<p>Գերարա գետ՝ 1.Ա7, 10.Ա7, 11.Ա7</p> <p>Գերմանիայի տարածք՝ 8.Բ1</p> <p>Գոմորի և Մողոմի տարածք՝ 10.Գ8</p> <p>Գամասկոս՝ 1.Գ1, 3.Բ2, 4.Դ2, 9.Գ3, 10.Դ1, 11.Դ1, 13.Ը3</p> <p>Գան (Լայիս)՝ 1.Գ2, 3.Բ3, 4.Դ3, 10.Գ2</p> <p>Գանի ցեղը՝ 3.Բ3, 3.Ա5</p> <p>Գացիայի տարածք՝ 8.Գ2</p> <p>Գափկա՝ 2.Գ4</p> <p>Գեբոն՝ 2.Գ1</p> <p>Գեկպալոլիսի տարածք՝ 11.Գ4</p> <p>Գերբե՝ 13.Է2</p> <p>Դոբայիս՝ 10.Բ4</p> <p>Դուր՝ 3.Ա4, 4.Գ4</p> <p>Դուրայի հարթավայր՝ 9.Ձ2</p> <p>Եգիպտոս գետը՝ 2.Գ2</p> <p>Եգիպտոսի թագավորությունը՝ 6.Ա3</p> <p>Եգիպտոսի տարածքը՝ 2.Ա3, 5.Բ4, 7.Ա4, 8.Գ4, 9.Գ4, 13.Ձ4</p> <p>Եգրբեղոնի հովիտ՝ 1.Բ3, 10.Բ3</p> <p>Եգեկիայի ջրանցքը Երուսաղեմում՝ 12.Գ6</p> <p>Եղովմենայի տարածք՝ 1.Բ7, 10.Բ7, 11.Բ7</p> <p>Եղովմի տարածքը՝ 1.Գ8, 2.Դ2, 3.Բ6, 4.Դ7, 10.Գ8</p> <p>Եղամի տարածքը՝ 5.Գ3, 6.Գ3, 7.Գ3, 9.Ը3</p> <p>Եղիմ՝ 2.Գ3</p> <p>Ենգադրի՝ 4.Դ5, 10.Գ7</p> <p>Ենդովր՝ 10.Գ3</p> <p>Ենովմի ձորը Երուսաղեմում՝ 12.Բ7</p> <p>Եսեբոն՝ 4.Դ5</p> <p>Ետ-Հորդանանյան արևելյան հարթություններ՝ 14.Գ2</p> <p>Երեք իջևաններ՝ 13.Բ1</p> <p>Երիքով՝ 1.Գ5, 2.Գ1, 3.Բ5, 4.Դ5, 10.Գ5, 11.Գ6, 14.Ա7, 14.Գ3</p>	<p>Երիքովի ճանապարհը՝ 12.Դ5</p> <p>Երմակ գետը՝ 1.Գ3, 10.Գ3, 11.Գ3</p> <p>Երուսաղեմ՝ ներքևի քաղաքը՝ 12.Գ6</p> <p>Երուսաղեմ (Մաղեմ)՝ 1.Բ6, 2.Դ1, 3.Ա5, 4.Գ5, 5.Բ3, 6.Բ3, 7.Ա3, 8.Գ3, 9.Գ3, 10.Բ6, 11.Բ6, 13.Ը3, 14.Բ2, 14.Բ6</p> <p>Երուսաղեմ՝ վերևի քաղաքը՝ 12.Բ6</p> <p>Երուսաղեմի Գողգոթան՝ 12.Բ3</p> <p>Երուսաղեմի Տաճար տանող աստիճանները՝ 12.Գ5</p> <p>Երուսաղեմի Տաճարը՝ 12.Գ4</p> <p>Երուսաղեմի տաճարի աշտարակը՝ 12.Գ5</p> <p>Եփրատ գետ՝ 5.Բ3, 6.Գ3, 8.Դ3, 9.Ե2</p> <p>Եփրեմի ցեղը՝ 3.Ա4</p> <p>Եփեսոս՝ 8.Գ2, 13.Ե2</p> <p>Ջաբուդոնի ցեղը՝ 3.Ա3</p> <p>Ջարեղ գետ՝ 1.Գ8, 2.Դ2, 3.Բ6, 4.Դ6, 10.Գ8, 11.Գ8</p> <p>Ջմյոռնիա՝ 13.Ե2</p> <p>Էլա՝ 1.Ա6, 10.Բ6, 11.Բ6</p> <p>Էմմաուս՝ 11.Բ6</p> <p>Էմմաուսի ճանապարհը՝ 12.Ա4</p> <p>Թանիս (Ռամեսես)՝ 2.Բ2</p> <p>Թաբոր սար՝ 1.Գ3, 3.Բ4, 4.Դ4, 10.Գ3, 11.Գ3, 14.Գ6</p> <p>Թագավորական սրահը Երուսաղեմում՝ 12.Գ5</p> <p>Թեբե՝ 5.Բ4, 6.Բ4, 7.Ա4, 8.Գ4</p> <p>Թեկուե՝ 10.Բ6</p> <p>Թեսաղոնիկե՝ 8.Գ2, 13.Գ1</p> <p>Իկոնիոն՝ 13.Է2</p> <p>Ինդոս գետ՝ 7.Դ4</p> <p>Իսաքարի ցեղը՝ 3.Բ4</p> <p>Իսրայելի տարածքը՝ 4.Գ4</p> <p>Իսրայելի ավազանը Երուսաղեմում՝ 12.Գ4</p> <p>Իսպանիայի տարածք՝ 8.Ա2</p>	<p>Իտալիա. Հռոմեական գավառ՝ 8.Բ2, 13.Ա1</p> <p>Լայիս (Գան)՝ 10.Գ2</p> <p>Լավոդիկես՝ 13.Ձ2</p> <p>Լաքիս՝ 1.Ա6, 3.Ա5, 4.Գ5, 10.Ա6</p> <p>Լիբիական անապատ՝ 9.Բ4</p> <p>Լիդանի գետ՝ 1.Գ1, 10.Գ1, 11.Գ2</p> <p>Լիբիա՝ 8.Բ3, 13.Գ4</p> <p>Լիբանոսի սարերը՝ 1.Գ1, 10.Գ1, 11.Գ1</p> <p>Լիկիայի տարածք՝ 13.Ձ2</p> <p>Լյուստրա՝ 13.Է2</p> <p>Լյուդիա տարածք՝ 13.Ե2</p> <p>Լուզ (Բեթել)՝ 10.Բ5</p> <p>Խառան (Փաղան-արամ)՝ 9.Ե2</p> <p>Խևացիներ՝ 3.Բ2</p> <p>Կադես Բառնես՝ 2.Գ2, 3.Ա6, 4.Գ6</p> <p>Կալիափայի տունը Երուսաղեմում՝ 12.Բ6</p> <p>Կանա՝ 11.Գ3</p> <p>Կապադոկիայի տարածք՝ 13.Ը2</p> <p>Կասայից ծով՝ 5.Գ1, 6.Գ1, 7.Բ2, 8.Դ2, 9.Է1</p> <p>Կարմեղոս սար՝ 1.Բ3, 3.Ա3, 4.Գ3, 10.Բ3, 11.Բ3</p> <p>Կարմիր ծով՝ 2.Դ4, 5.Բ4, 6.Բ4, 7.Բ4, 8.Գ4, 9.Դ4</p> <p>Կափառնայում՝ 11.Գ3</p> <p>Կափթոր (Կրեսես) կղզի՝ 9.Ա3</p> <p>Կեղոռն հեղեղատը Երուսաղեմում՝ 12.Դ6</p> <p>Կեսարիա՝ 11.Բ4, 13.Ը3</p> <p>Կիլիկիայի տարածք՝ 13.Է2</p> <p>Կիպրոս (Կիտացի) կղզի՝ 8.Գ3, 9.Գ3, 13.Է3</p> <p>Կիսոն գետ՝ 1.Բ3, 10.Բ3, 11.Բ3</p> <p>Կիտացի (Կիպրոս) կղզի՝ 9.Գ3</p> <p>Կիր-հարեսեթ՝ 10.Գ7</p> <p>Կյուրենե՝ 13.Դ3</p> <p>Կնիդ կղզի՝ 13.Ե2</p>
--	--	---

Կովկասյան լեռներ՝ 5.Գ1, 8.Գ2, 9.Զ1	Մաղիամի տարածք՝ 2.Դ4, 9.Դ4	Մովսիսի տարածք՝ 1.Գ7, 2.Դ1, 3.Բ6, 4.Դ6, 10.Գ7
Կորնթոս՝ 13.Դ2	Մալղա կղզի՝ 13.Բ3	Մորեի բլուրը՝ 1.Գ3, 10.Բ3
Կրետե (Կափոր) կղզի՝ 8.Գ3, 9.Ա3, 13.Գ3	Մակեդոնիա՝ 1.Բ3, 3.Ա4, 4.Գ4, 6.Բ3, 9.Դ3, 10.Բ3	Մորիա սարը՝ 14.Բ6
Հարոկ գետ՝ 1.Գ5, 3.Բ4, 4.Դ4, 10.Գ5, 11.Գ5	Մակեդոնիայի տարածք՝ 7.Ա2, 8.Գ2, 13.Դ1	Նաբաթիայի տարածք՝ 11.Գ8
Հասմոնեան պալատը Երուսաղեմում՝ 12.Գ5	Մանայիմ՝ 10.Գ4	Նաբավ սար՝ 1.Գ6, 2.Դ1, 3.Բ5, 4.Դ5, 10.Գ6, 11.Գ6
Հասոր՝ 3.Բ3, 4.Դ3, 10.Գ2	Մանասեի ցեղը՝ 3.Ա4, 3.Բ3	Նազարեթ՝ 1.Բ3, 11.Բ3
Հեզրայել՝ 4.Դ4, 10.Բ4	Մառոնի ջրեր (Հուլեհի լիճ)՝ 10.Գ2	Նայիմ՝ 11.Գ4
Հեզրայելի (Եզրեյունի) հովիտ՝ 1.Բ3, 10.Բ3	Մարաց կայսրություն՝ 6.Դ3	Նեգովի շրջան՝ 1.Ա8, 10.Ա8
Հերմոն սար՝ 1.Գ1, 3.Բ2, 4.Դ2, 10.Գ1, 11.Դ1, 14.Դ5	Մարե Ինտերնում (Մեծ, Միջերկրական, Վերին ծով)՝ 8.Բ3	Նեղոս գետ՝ 2.Ա3, 5.Բ4, 6.Բ4, 7.Ա4, 8.Գ4, 9.Գ4
Հերովդեի պալատը Երուսաղեմում՝ 12.Բ5	Մարաթոս՝ 11.Գ7	Նեղոսի գետաբերան՝ 2.Ա2, 9.Գ4
Հուպպե՝ 1.Ա5, 3.Ա4, 4.Գ4, 10.Ա5, 11.Ա5, 13.Ը3	Մեդեբա՝ 4.Դ5	Ներքին Գալիլեայի տարածք՝ 1.Գ3
Հովր սարը՝ 2.Դ2	Մելիտե (Մալղա) կղզի՝ 13.Բ3	Ներքին ծով (Արևելյան ծով, Պարսկական ծոց)՝ 5.Գ4, 6.Գ4, 7.Բ4, 8.Դ3, 9.Ը3
Հորդանան գետ՝ 1.Գ5, 2.Դ1, 3.Բ4, 4.Դ4, 10.Գ5, 11.Գ5	Մեծ (Միջերկրական, Վերին) ծով՝ 1.Ա4, 2.Բ1, 3.Ա4, 4.Գ4, 5.Ա3, 6.Ա3, 7.Ա3, 9.Բ3, 10.Ա5, 11.Ա6, 13.Դ3, 14.Ա2, 14.Ա6	Նեփթալիմի ցեղ՝ 3.Բ3
Հորմա՝ 2.Դ1, 4.Գ6	Մեմփիս (Նոփ)՝ 2.Ա3, 5.Բ3, 6.Բ3, 7.Ա3, 8.Գ3	Նիմվե՝ 5.Գ2, 9.Զ2
Հոեզիմո՝ 13.Բ2	Մեռա՝ 2.Բ3	Նոփ (Մեմփիս)՝ 2.Ա3
Հոդոս կղզի՝ 9.Բ3, 13.Ե3	Մեռյալ ծով (Ադի ծով)՝ 1.Գ6, 2.Դ1, 3.Բ5, 4.Դ5, 9.Դ4, 10.Գ6, 11.Գ7, 14.Ա7, 14.Գ3	Շամպոնի ցեղը՝ 3.Ա6
Հոռմ՝ 8.Բ2, 13.Ա1	Մեռյալ ծովի հատակը՝ 14.Գ3	Շոշ դուռը Երուսաղեմում՝ 12.Դ4
Հրեաստանի անապատ՝ 1.Բ7, 11.Բ7	Մեռյալ ծովի ճանապարհը՝ 12.Գ8	Շոշ (Շուշան)՝ 6.Գ3, 7.Բ3, 9.Է3
Հրեաստանի լեռնադաշտ՝ 14.Բ2	Մեռյալ ծովի մակարդակը՝ 14.Ա7, 14.Գ3	Շուշան (Շոշ)՝ 6.Գ3, 7.Բ3, 9.Է3
Հրեաստանի տարածք՝ 1.Բ6, 11.Բ7	Մեսիմի՝ 5.Ա2	Ռթոմի անապատ՝ 2.Բ3
Հուդայի տարածք՝ 5.Բ3, 10.Բ7	Միլետոս՝ 13.Ե2	Ուլիսարների դուռը Երուսաղեմում՝ 12.Գ4
Հուդայի ցեղը՝ 3.Ա5	Միջագետք՝ 8.Դ3, 9.Ե2	Ուլմ (Արեգ)՝ 2.Ա3, 9.Գ4
Հուլեհի հովիտ՝ 1.Գ2, 11.Գ2	Միջերկրական ծովի մակարդակը՝ 14.Ա2, 14.Ա6	Պամփոլիայի տարածք՝ 13.Զ2
Հուլեհի (Մառոնի ջրեր) լիճ՝ 10.Գ2, 14.Գ6	Միջերկրական (Մեծ, Վերին) ծով՝ 1.Ա5, 2.Բ1, 3.Ա4, 4.Գ4, 5.Ա3, 6.Ա3, 7.Ա3, 8.Բ3, 9.Բ3, 10.Ա5, 11.Ա6, 13.Դ3, 14.Ա2, 14.Ա6	Պատմոս կղզի՝ 13.Ե2
Հունաստան՝ 7.Ա2	Միռա՝ 13.Զ2	Պատիոդոս՝ 13.Բ1
Չիբենյաց սար՝ 1.Բ6, 10.Բ6, 11.Բ6, 12.Դ4, 14.Բ6	Մյուսիայի տարածք՝ 13.Ե2	Պարթևական կայսրություն՝ 8.Դ3
Չկան դուռը Երուսաղեմում՝ 12.Բ3	Մովսիսի դաշտեր՝ 1.Գ6, 11.Գ6	Պարսից ծոց (Ներքին ծով)՝ 9.Ը3
Շանապարի դեպի Հուպպե՝ 12.Ա4		Պարսկաստան՝ 5.Դ4, 6.Դ4
Մագդաղե՝ 11.Գ3		Պարտեզի գերեզմանը Երուսաղեմում՝ 12.Բ3
		Պափոս՝ 13.Է3
		Պերգամոն՝ 13.Ե2
		Պերգե՝ 13.Զ2
		Պիսիդիայի տարածք՝ 13.Զ2

<p>Պոնտոսի տարածք՝ 13.Է1</p> <p>Պտողեմայիս (Աբր, Ալբրով)՝ 1.Բ3, 11.Բ3, 13.Ը3</p> <p>Ջրի դուռը Երուսաղեմում՝ 12.Գ7</p> <p>Ռաբբա (Ամման)՝ 1.Դ5, 3.Բ5, 10.Դ5, 14.Դ2</p> <p>Ռ-ամսես (Թանիս)՝ 2.Բ2</p> <p>Ռ-ամովթ-գաղաաղ՝ 3.Բ4, 4.Դ4</p> <p>Ռավիդիմ՝ 2.Գ4</p> <p>Ռովգեղի աղբյուրը՝ 12.Գ7</p> <p>Ռուբենի ցեղը՝ 3.Բ5</p> <p>Սաղամինա՝ 13.Է3</p> <p>Սաղեմ (Երուսաղեմ)՝ 9.Գ3</p> <p>Սաղիմ՝ 11.Գ4</p> <p>Սամարիա՝ 1.Բ4, 5.Բ3, 10.Բ4, 11.Բ5, 13.Ը3</p> <p>Սամարիայի ճանապարհը՝ 12.Բ1</p> <p>Սամարիայի տարածքը՝ 1.Բ4, 10.Բ4, 11.Բ4</p> <p>Սամորթաքե կղզի՝ 13.Ե1</p> <p>Սարեփթա՝ 11.Բ1</p> <p>Սարմաթիայի տարածք՝ 8.Գ1</p> <p>Սարոնի հարթավայր՝ 1.Բ4, 10.Բ4, 11.Բ5</p> <p>Սելով՝ 3.Ա4, 4.Դ4, 10.Բ5</p> <p>Սենաար (Բաբելոն)՝ 9.Է3</p> <p>Սեփեյա՝ 1.Բ6, 10.Բ6, 14.Բ2</p> <p>Սյուփար՝ 11.Բ5</p> <p>Սյուփեմ՝ 3.Ա4, 4.Գ4, 10.Բ4</p> <p>Սիդոն՝ 1.Գ1, 3.Ա2, 4.Գ2, 9.Գ3, 10.Գ1, 11.Գ1, 13.Ը3</p> <p>Սիլովամի ավազանը Երուսաղեմում՝ 12.Գ7</p> <p>Սիկելակ՝ 4.Գ5</p> <p>Սին անապատ՝ 2.Գ4</p>	<p>Սինայ անապատ՝ 2.Գ4</p> <p>Սինայ թերակղզի՝ 2.Գ3</p> <p>Սինայ սար (Քորեթ)՝ 2.Գ4, 9.Դ4</p> <p>Սիրակուսա՝ 13.Բ2</p> <p>Սիոն սար՝ 14.Բ6</p> <p>Սողոմի և Գոմորի տարածք՝ 10.Գ8</p> <p>Սոկրովթ՝ Եգիպտոսում՝ 2.Բ2</p> <p>Սոկրովթ՝ Իսրայելում՝ 3.Բ4, 4.Դ4</p> <p>Սողոմոնի սրահը Երուսաղեմում՝ 12.Դ4</p> <p>Սովրեկ գետ՝ 1.Բ6, 10.Բ6, 11.Բ6</p> <p>Սպարտա՝ 6.Ա2, 7.Ա2</p> <p>Սուեզի ջրանցք՝ 2.Բ3</p> <p>Սուրի անապատ՝ 2.Բ2</p> <p>Սև ծով՝ 5.Բ1, 6.Բ1, 7.Ա2, 8.Գ2, 9.Բ1, 13.Ձ1</p> <p>Վերին Գալիլեայի տարածք՝ 1.Գ2</p> <p>Վերին (Մեծ, Միջերկրական) ծով՝ 7.Ա3, 9.Բ3</p> <p>Վերնատունը Երուսաղեմում՝ 12.Բ6</p> <p>Տարսոն՝ 13.Է2</p> <p>Տիբերեա՝ 11.Գ3</p> <p>Տիզրիս գետը՝ 5.Գ2, 6.Գ2, 8.Գ3, 9.Է3</p> <p>Տյուրոս՝ 1.Բ2, 3.Ա3, 4.Գ3, 9.Գ3, 10.Բ1, 11.Բ2, 13.Ը3</p> <p>Տրոյա՝ 9.Բ2</p> <p>Տրովադա՝ 6.Ա2, 7.Ա2, 13.Ե2</p> <p>Ցին անապատ՝ 2.Գ2</p> <p>Ուր՝ 5.Գ3, 9.Ե2, 9.Է3</p> <p>Ուրարտուի տարածք՝ 9.Ե1</p> <p>Փաղան-արամ (Խառան)՝ 9.Ե2</p>	<p>Փանոել՝ 10.Գ4</p> <p>Փառանի անապատ՝ 2.Գ3</p> <p>Փարփար գետ՝ 1.Գ1, 10.Դ1, 11.Գ2</p> <p>Փերեա՝ 11.Գ5</p> <p>Փիայրոթ՝ 2.Բ3</p> <p>Փիթոմ՝ 2.Բ2</p> <p>Փիլադելփիա՝ 11.Գ6</p> <p>Փիլիպպե՝ 13.Դ1</p> <p>Փիլիպպեան Կեսարիա՝ 11.Գ2</p> <p>Փղշտացիներ՝ 2.Գ2</p> <p>Փղշտացիների հարթավայր՝ 1.Ա6, 10.Ա6</p> <p>Փղշտացիների տարածք՝ 4.Գ5</p> <p>Փյունիկեի տարածք՝ 1.Գ1, 4.Դ2, 9.Գ3, 10.Բ1, 11.Բ2, 13.Ը3</p> <p>Փոյուզիայի տարածք՝ 13.Ձ2</p> <p>Քանանի տարածք՝ 2.Գ1, 9.Գ3</p> <p>Քարթեջ՝ 8.Բ3</p> <p>Քարթամիս՝ 5.Բ2, 6.Բ2, 9.Գ2</p> <p>Քերթոն՝ 1.Բ6, 2.Դ1, 3.Ա5, 4.Գ5, 10.Բ7, 11.Բ7</p> <p>Քեբրոնի ճանապարհը՝ 12.Ա7</p> <p>Քեներեթի ծով՝ 1.Գ3, 3.Բ3, 4.Դ3, 9.Գ3, 10.Գ3, 11.Գ3</p> <p>Քեստացիներ՝ 9.Դ2</p> <p>Քիոս՝ 13.Ե2</p> <p>Քոռեցիներ՝ 9.Ե2</p> <p>Քորազին՝ 11.Գ3</p> <p>Քորեթ (Սինայ սար)՝ 2.Գ4, 9.Դ4</p> <p>Օծի ավազանը Երուսաղեմում՝ 12.Ա6</p>
---	--	--




ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ
ՔԱՐՏԵԶՆԵՐ

Հետևյալ քարտեզները տրված են, որպես
օգնություն՝ սուրբ գրքերն ուսումնասիրե-
լիս, և նախատեսված են Եկեղեցու դասըն-
թացներում ընդգրկված թեմաները լրացնելու
համար:

Վերը նշված քարտեզի ուրվագծերը ցույց են
տալիս ստորև թվարկված քարտեզների
աշխարհագրական սահմանները: Այդ քար-
տեզներում զետեղված են ինչպես մեծ
տարածքներ, այնպես էլ շատ նեղ աշխար-
հագրական շրջաններ:


- ՔԱՐՏԵԶ 1** ՍՈՒՐԲ ԵՐԿԻՐԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՔԱՐՏԵԶԸ
- ՔԱՐՏԵԶ 2** ԻՄՐԱՅԵԼԻ ԵԼՔԸ ԵԳԻՊՏՈՍԻՑ ԵՎ ՄՈՒՏՔԸ ՔԱՆԱՆ
- ՔԱՐՏԵԶ 3** 12 ՑԵՂԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ
- ՔԱՐՏԵԶ 4** ԴԱՎԹԻ ԵՎ ՍՈՂՈՄՈՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ
- ՔԱՐՏԵԶ 5** ԱՍՈՐԵՍԱՆԻ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆ


- ՔԱՐՏԵԶ 6** ՆՈՐ ԲԱԲԵԼՈՆՅԱՆ (Նաբուգոդոնոսորի) ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԵԳԻՊՏՈՍԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ
- ՔԱՐՏԵԶ 7** ՊԱՐՍՎԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ
- ՔԱՐՏԵԶ 8** ՀՈՈՄԵԱԿԱՆ ԿԱՅՐՈՒԹՅՈՒՆԸ
- ՔԱՐՏԵԶ 9** ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ ԱՇԽԱՐՀԸ
- ՔԱՐՏԵԶ 10** ՔԱՆԱՆԸ ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՄ
- ՔԱՐՏԵԶ 11** ՍՈՒՐԲ ԵՐԿԻՐԸ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ԺԱՄԱՆԱԿ
- ՔԱՐՏԵԶ 12** ԵՐՈՒՍԱԿԵՄԸ ՀԻՍՈՒՍԻ ԺԱՄԱՆԱԿ
- ՔԱՐՏԵԶ 13** ՊՈՂՈՍ ԱՌԱՔՅԱԼԻ ՄԻՍԻՈՆԵՐԱԿԱՆ ՃԱՄՓՈՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
- ՔԱՐՏԵԶ 14** ՍՈՒՐԲ ԵՐԿԻՐԻ ՏԵՂԱՆՔԻ ՄԱԿԱՐԴԱԿԸ ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՄ




1. **Ռամսես** Իսրայելը դուրս հանվեց Եգիպտոսից (Ել. ԺԲ, ԹՎ. ԼԳ.5):
2. **Մոկրովք** Այս առաջին իջևանից հեռանալուց հետո, Տերն այցելում էր Եբրայեցիներին. ցեղերը՝ ամպի սյունով, իսկ գիշերը՝ կրակի սյունով (Ել. ԺԳ.20–22):
3. **Փիայրոթ** Իսրայելն անցավ Կարմիր ծովի միջով (Ել. ԺԴ, ԹՎ. ԼԳ.8):
4. **Մեռա** Տերը բռնեց Մեռայի ջրերը (Ել. ԺԵ.23–26):
5. **Եղիմ** Իսրայելը ճամբար դրեց 12 ջրի աղբյուրների մոտ (Ել. ԺԵ.27):
6. **Սին անապատ** Տերը մանանա և լորեր ուղարկեց, որպեսզի կերակրի Իսրայելին (Ել. ԺԶ):
7. **Ռափիդիմ** Իսրայելը կռվեց Ամադեկի դեմ (Ել. ԺԷ.8–16):
8. **Սինայ սարը (Քորեթ կամ Ջեբել Մուսա սարը)** Տերը հայտնեց Տասը Պատվիրանները (Ել. ԺԹ–Ի):
9. **Սինայ անապատը** Իսրայելը խորան կառուցեց (Ել. ԻԵ–Լ):
10. **Անապատի ճամբարներ** Յոթանասուն երեցներ կանչեցին, որպեսզի օգնեն Մովսեսին ժողովրդին դեկավարելիս (ԹՎ. ԺԱ.16–17):
11. **Գասիոն-գաբեր** Իսրայելը խաղաղությամբ անցավ Եսավի և Ամոնի երկիրը (Բ Օր. Բ):


12. **Կաղես Բառնես** Մովսեսը լրեսաներ ուղարկեց խոստումի երկիր: Իսրայելն ապստամբեց և չմտավ երկիր: Երկար տարիներ Կաղեսը ծառայում էր որպես հիմնական ճամբար Իսրայելի համար (ԹՎ. ԺԳ.1–3, 17–33, ԺԴ, ԻԲ.8, Բ Օր. Բ.14):
13. **Արևելյան անապատ** Իսրայելը խոստափեց Եղովմի և Մովսարի հակամարտությունից (ԹՎ. Ի.14–21, 22–24):
14. **Առոն գետ** Իսրայելը բնաջնջեց Ամորիացիներին, որոնք կռվում էին նրա դեմ (Բ Օր. Բ.24–37):
15. **Նաբավ սար** Մովսեսը տեսավ խոստացված երկիրը (Բ Օր. ԼԴ.1–4): Մովսեսը կարողաց իր վերջին երեք քարոզը (Բ Օր. Ա–ԼԳ):
16. **Մովսարի դաշտերը** Տերը պատվիրեց Իսրայելին բաժանել երկիրը և թշել բնակիչներին (ԹՎ. ԼԳ.50–56):
17. **Հորդանան գետը** Իսրայելն անցավ Հորդանան գետը ցամաքով: Գաղգաղայի մոտ, Հորդանան գետի հատակից քարեր են դրվել, որպես Հորդանանի ջրերը բաժանվելու հուշարձան (Հես. Գ–Ե.1):
18. **Երիբով** Իսրայելի գավակները գրավեցին և կործանեցին քաղաքը (Հես. 2):





ՆՈՐ ԲԱԲԵԼՈՆՅԱՆ (ՆԱԲՈՒԳՈՂՈՆՈՍՈՐԻ) ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԵԳԻՊՏՈՍԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ





1. Արքայա տ լեռ Ավանդական վայրը, որտեղ կանգ է առել Նոյի տապանը (Ճճ. Ը.4): Ճշգրիտ տեղը հայտնի չէ:

2. Ուր Արքահանի առաջին բնակավայրը, որտեղ նրան թիչ մնաց սպանված, որպես գոն կոթարքի համար. նա տեսավ Ենոկայի նրբշնչումը և առաջավ Ուրիան ու թռչանդ (Ճճ. ԺԱ.28-ԺԲ.1, Աբր. 1, 3.1): (Ճանապարհք նաև «Ուր»-ի հաջորդ հեմարավոր տեղանքին հյուսիսային Միջագետքում):

3. Բաբելոն (Մեծաքար) Առաջինը բնակեցվել է Բաբելոնի որդու, և Ներոսկի կողմից: Հարեդացիների ծննդավայրը Մեծաքարի դաշտերում: Բաբելոնի Աշտարակի ժամանակ: Հետագայում Բաբելոնի գավառային կենտրոնը և Բաբելոնյան թագավորների նստավայրը, մերայայ Նաբոպոլոնոստորի, որը Նրոտառանի կործանումից հետո (Ք.ձ.ա. 587թ.) թագավոր հրեաների գերություն տարավ այս քաղաք: Հրեաները Բաբելոնյան գերություն տակ մնացին 70 տարի, մինչև կյուրայի թագավորության ժամանակաշրջանը, որը թողյ տվեց, որ հրեաները վերադառնան Նրոտառան, որպեսզի վերաբաղանցնեն տաճարը: Դամիել մարգարեն նույնպես ասելի է այտուղ՝ Նաբոպոլոնոստորի, Բաբելոնայի և Դարեևի Ա-ի պարտ (Ճճ. Ժ.10, ԺԱ.1-9, Դ.Թագ, ԻԳ-ԻԵ, Երեմ. ԲԷ.1-ԻԹ.10, Եզեկ. Ա.1, Դան. Ա-ԺԲ, Օմնի 1.22, Եթր 1.33-43):

4. Շուշան (Շուշա) Պարսկական Կայսրության գլխավոր քաղաքը Դարեևի Ա (Դարեևի Մեծ), Քնեքսոս (Աստուրոս) և Արտաշես թագավորների ժամանակ: Եսթրի թագուհու բնակավայրը, որի թաղանթում ու հավատար փրկեց հրեաներին: Դամիելը, իսկ ավելի ուշ, Նեմիան ծառայել են այտուղ (Ուեմ. Ա.1, Բ.1, Եսթ. Ա.1, Դան. Ը.2):

5. Դուրոտի հարթավայր Մեդոսից, Միտաթին և Արեմազոլին գեցիկն կրակի հեռքը, երբ նրանք մերժեցին երկրպագել ոսկե արձանին, որը շինել էր Նաբուգոդոնոսորը: Աստու Ուրուին պահպանեց նրանց, և նրանք անվնաս դուրս եկան հեռուց (Դան. Գ):

6. Ասորեստան Ասորը Նիմեկից հետո Ասորեստանի առաջին մայրաքաղաքն էր. Ք.ձ.ա. 721-ին Ասորեստանի Ասորեմուտա Ե և Արադոս Բ թագավորները նվաճեցին Իսրայելի Հուդայային թագավորությունը և գերություն տարան 10 ցեղերին (Դ.Թագ, ԺԳ.-ԺԵ, ԺԷ-ԺԹ): Ասորեստանը ապամուտվեք էր Հուդայի համար մինչև Ք.ձ.ա. 612 թվականը, երբ Բաբելոնը տիրեց Ասորեստանին:

7. Նիմեկ Ասորեստանի մայրաքաղաքը: Ասորեստանը հարավակցեց Հուդայի վրա Եզեկիան թագավորի թաղանթում և Եռային մարգարեի ծառայության ժամանակ: Նրոտառեն Հուդայի գլխավոր քաղաքը, հրաշքով փրկվեց, երբ հրեշտակը գալիս 185000 Ասորեստանցի զինվորների (Դ.Թագ, ԺԹ.32-37): Տեղը Հովնան մարգարեի գլխավորեց, որ այս քաղաքին ապաշխարելու կոչ ամի (Հովն. Ա.2, Գ.1-4):

8. Խառան Աբրահամը Քանան գնալուց առաջ մի փոքր ժամանակ բնակվեց այտուղ: Աբրահամի հայրը և եղբայր մնացին այտուղ: Ռեբեկան (Իսահանի կինը) և Ռաբլը, Լիան, Բաղդան և Ջեդիվան (Հակոբի կնայրը) այտուղից էին (Ճճ. ԺԱ.31-32, ԻԿ.10, ԻԹ.4-6, Աբր. Բ.4-5):

9. Քաղաքաձին Ներսիսով Փարսկան այտուղ տապակեց Նաբոպոլոնոստորի կողմից, որը Քանանում վերջ դրեց Եզեկաական իշխանությունը (ԲՄ. Ա.Ե.20-Ա.26):

10. Միդեց Այս քաղաքը հիմնադրվել է Քանի թառան Միդի կողմից, և Քանանի անմեղսության վայրաբն է (Ճճ. Ժ.15-20): Այն եղել է Հեզարի ծննդավայրը, որը սկսեց Բաառի երկրպագությունը Իսրայելում (Գ.Թագ. ԺՉ.30-33):

11. Տյուրոս Մա կարևոր առևտրական և ծովային քաղաք էր Ասորից: Տյուրոսի Քիթրան թագավորը եղևնախալ, ոսկի և արևեստակալները ուղարկեց, որպեսզի ծծանրակի Ստրոնոնի տանալը կառուցելիս (Գ.Թագ. Ե.1-10, 18, Թ.11):

12. Դաանապոս Աբրահամը Դովդին ազատեց այտուղ՝

նուտակարան: Ասորիքի գլխավոր քաղաքը: Դավիթը թագավորի թագավորության ժամանակ Իսրայելացիները գրավեցին քաղաքը: Երկիան Ագալեից օժեց որպես Դաանապոս թագավոր (Ճճ. ԺԿ. 14-15, Ի.Թագ. Ը.5-6, Գ.Թագ, ԺԹ.15):

13. Քանան Այս հողը տրվել է Աբրահամին և նրա զավակներին: որպես հավանական առաջգետը (Ճճ. ԺԷ.8):

14. Սիբոն առը (Քորեթք) Տեղը վառուղր թիփի միջից խոսեց Մովսիսի հետ (Ել. Գ.1-2): Մովսիսը առաջավ Օրնդը և Տաար Պատմիկամբները (Ել. ԺԹ-ԻԹ): Տեղը խոսեց Երկայի հետ մերձ ու քարակ ճանով (Գ.Թագ. ԺԹ.8-12):

15. Գաաիտ-գաբրե Գաաիտ-գաբրեում Ստրոնոն թագավորը նախը կառուցեց (Գ.Թագ. Թ.26): Արաբայի թագուհին, լեւուլ Ստրոնոնի համբավի մասին, հավանաբար, այս նախախնայություն էր իջել, որպեսզի տեսնի նրան (Գ.Թագ. Ժ.1-13):

16. Եզիկաոս Աբրահամը եկավ այտուղ Ուրում մեծ տոկ լինելու պատճառով (Աբր. 2.1, 2.1): Տեղը պատվիրեց Աբրահամին Եզիկաոսցիներին ուսուցանել այն, ինչ, նա հայտնի էր նրան (Աբր. 3.15): Հուդեների նրբաքանդողը նրան վաճառեցին ստրկության (Ճճ. Ա.Է.28): Այտուղ Հովսեփն իշխան դարձավ Պետադիեթի պալատում: Նրան բանտ գեցին: Նա մեկնարանեց Փարսկայի երազը և նրան իշխանություն տրվեց Եզիկաոսում: Հուդեները և նրա եղբայրները հավաքվեցին մեկտեղ: Հակոբը իր բնառակով տեղափոխեց այտուղ (Ճճ. Ա.Թ-ԽԶ): Եզիկաոսում իրենց պանդխտության տարիներին Իսրայելի զավակներն ապրում էին Գ-եսնում (Ճճ. ԽԷ.6):

Իսրայելացիները շատացան և «Իսխտ գորսացան», դարձնեց հեռու Եզիկաոսցիները ծառայեցնում էին նրանց (Ել. Ա.7-14): Մի շարք զմբակներումներինց հետո Փարսկանը թույլ տվեց, որ Իսրայելը հեռանա Եզիկաոսից (Ել. ԺԲ.31-41): Երեմիայան տարան Եզիկաոս (Երեմ. ԽԳ.4-7):

17. Կափոթը (Կրեստ) Մյնովկացիների հնագույն երկիրը:

1. **Գան (Լայխ)** Հերոքովանը ոսկե հորք շինեց, որպեսզի Հյուսիսային Թագավորությունը երկրպագի նրան (Գ Թագ. ԺԲ.26–33): Գանը հնագույն Իսրայելի հյուսիսային սահմանն էր:
2. **Կարմնեղս սար** Եղիան մարտակոչ արեց Բահաղի մարզերենքին և բացեց երկինքները, որ անձրև գա (Գ Թագ. ԺԸ.17–46):
3. **Մակեդոզվ** Բազում պատերազմների վայր (Գաւտ. Գ.13–16, Ե.19, Գ Թագ. ԻԳ.29, Բ Մն. ԼԵ.20–23): Սողոմոնը մարդահարկ հավաքեց Մակեդոզվը կառուցելու համար (Գ Թագ. Թ.15): Հուդայի Հովսիա քաղաքը ոսկե սպանվեց Եգիպտոսի Նբեթակով Փարավոնի հետ մենամարտում (Գ Թագ. ԻԳ.29–30): Տիրոջ երկրորդ գալտի ժամանակ մեծ և վերջին ընդհարումը տեղի կունենա Հեզրայելի հովտում, որպես Արմազեղոնի պատերազմի մի մաս (Հովել Գ.14, Հայտ. ԺՂ.16, ԺԺ.11–21): *Արմազեղոն* անունը երբայերևն Հար Մեգիդոն, կամ Մակեդոզվի լեռ արտահայտության գրադարձությունն է:
4. **Հեզրայել** Այն քաղաքի անունը, որը գտնվում է Իսրայելի ամենամեծ և ամենաբարեբեր համայնու հովտի վրա: Այստեղ Հյուսիսային Թագավորության քաղաքները պալատ էին կառուցել (Բ Թագ. Բ.8–9, Գ Թագ. ԻԱ.1–2): Ամբարիշտ Հեզրայել քաղաքին ապրել և մահացել է այստեղ (Գ Թագ. ԻԱ, Գ Թագ. Թ.30):
5. **Բեթսամ** Այստեղ Իսրայելացիներն ընդհարվեցին Քանանացիների հետ (Հեւ. ԺԷ.12–16): Մավոդի մարտինը կախեցին այս պարսպի պատերից (Ա Թագ. ԼԱ.10–13):
6. **Գոթային** Հովսեփը ստրկության վաճառվեց իր եղբայրների կողմից (Ճն. ԼԷ.17, 28, ԽԵ.4): Եղիսեն տեսավ հրեղեն ձիերով ու կառքերով լիքը սարի տեսիլը (Գ Թագ. Զ.12–17):
7. **Սամարիա** Հյուսիսային քաղաքության մայրաքաղաքը (Գ Թագ. ԺՁ.24–29): Արաք քաղաքը ուսանար կառուցեց Բահաղի համար (Գ Թագ. ԺՁ.32–33): Եղիան և Եղիսեն ծառայեցին այստեղ (Գ Թագ. ԺԸ.2, Գ Թագ. Զ.19–20): Ք.ծ.ա. 721 թվականին Ասրեստանցիները նվաճեցին այն՝ ավարտելով 10 ցեղերի գերությունը (Գ Թագ. ԺԸ.9–10):
8. **Մյուրեմ** Աբրահամը գոհասեղան կառուցեց (Ճն. ԺԲ.6–7): Հակոբն ապրել է այստեղ մոտակայքում: Ծնավորը և Գևին կտորեցին այս քաղաքի բոլոր տղամարդկանց (Ճն. ԼԳ.25): Հետի քաջգեղարձը՝ «ընտրեցեք այսօր...» Աստծուն ծառայելը, Մյուրեմում էր (Հեւ. ԻԳ.15): Այստեղ Հերոքովանը հիմնեց Հյուսիսային Թագավորության առաջին մայրաքաղաքը (Գ Թագ. ԺԲ):
9. **Գարիզին և Գեբաղ սարերը** Հետուն այս երկու սարերի վրա բաժանեց Իսրայելը՝ Գարիզին սարի վրայից օրհնություններ հռչակվեցին, մինչդեռ Գեբաղ սարի վրայից անձրեքներ եկան (Հեւ. Ը.33): Ավելի ուշ Սամարացիները Գարիզինի վրա տաճար կառուցեցին (Գ Թագ. ԺԷ.32–33):
10. **Փանոել** Այստեղ Հակոբը ողջ գիշեր գոտենարեց Տիրոջ սուրհանդակի հետ (Ճն. ԼԲ.24–32): Գեղեղնը կործանեց Մաղիանացիների ամրոցը (Գաւտ. Ը.5, 8–9):
11. **Հոպպե** Հովմանն այստեղ նավ մտեց դեպի Թարսիս, որպեսզի փախչի Նինվեի իր առաքելությունից (Հովկ. Ա.1–3):
12. **Սեղվ** Գաւտարներին ժամանակ Իսրայելի մայրաքաղաքը և խորանը գտնվում էին այստեղ (Ա Թագ. Գ.3–4):
13. **Բեթել (Լուզ)** Այստեղ Աբրահամը բաժանվեց Դովոյից (Ճն. ԺԳ.1–11) և տեսիլք տեսավ (Ճն. ԺԳ, Աբր. 2.19–20): Հակոբը տեսիլքում սանդուղք տեսավ, որը հասնում էր երկնքին (Ճն. ԻԸ.10–22): Որոշ ժամանակ Խորանը գտնվում էր այստեղ (Գաւտ. Ի.26–28): Հերոքովանը ոսկե հորք շինեց, որպեսզի Հյուսիսային Թագավորությունը երկրպագի նրան (Գ Թագ. ԺԲ.26–33):
14. **Գաբալոն** Խնացիները՝ այստեղի ժողովուրդը, խարտիչարք դաշինք արին Հետուի հետ (Հեւ. Թ): Արեգակը կանգնեց մինչև Հետուի հաղթանակեց պատերազմում (Հեւ. Ժ.2–13): Այս տեղը նաև խորանի ժամանակավոր տեղն էր (Ա Մն. ԺՁ.39):
15. **Գագա, Ասեղոլթ, Ասկաղոն, Ակկարոն, Գեթ (Փոշտացիների հինգ քաղաքները)** Այս քաղաքների Փոշտացիները հաճախ պատերազմում էին Իսրայելի դեմ:
16. **Բեթլեհեմ** Ռաբելը քաղվել է այստեղ մերձակայքում (Ճն. ԼԵ.19): Հոտթը և Բոռն ապրել են այստեղ (Հոտթ Ա.1–2, Բ.1, 4): Այն կոչվել է Դավիթի քաղաք (Դուկ. Բ.4):
17. **Քեբրոն** Աբրահամը (Ճն. ԺԳ.18), Իսահակը, Հակոբը (Ճն. ԼԵ.27), Դավիթը (Բ Թագ. Բ.1–4) և Աբիսողոմը (Բ Թագ. ԺԵ.10) ապրել են այստեղ: Դավիթ քաղաքի օրոք այն Հուդայի առաջին մայրաքաղաքն էր (Բ Թագ. Բ.11): Հավատանք կա, որ Աբրահամը, Մարթան, Իսահակը, Ռեբեկան, Հակոբը և Լիան քաղվել են այստեղ՝ Մարքիելայի քարայրում (Ճն. ԻԳ.17–20, ԽԹ.31, 33):
18. **Ենգաղդի** Դավիթը քարձկեց Մավոդից և խնայեց Մավոդի կյանքը (Ա Թագ. ԻԳ.1–23):
19. **Գեբաղա** Աբրահամը և Իսահակը որոշ ժամանակ ապրել են այստեղ (Ճն. Ի–ԻԲ, ԻԶ):
20. **Բեբաթա** Աբրահամն այստեղ մի ցրիոր էր փորել և ուխտ արեց Աբիմեղեի հետ (Ճն. ԻԱ.31): Իսահակը տեսավ Տիրոջը (Ճն. ԻԶ.17, 23–24), և Հակոբն ապրում էր այստեղ (Ճն. ԼԵ.10, ԽԶ.1):
21. **Սողոմ և Գոմոր** Դովոն ընտրեց ապրել Սողոմում (Ճն. ԺԳ.11–12, ԺԳ.12): Ամբարշտության պատճառով՝ Աստված կործանեց Սողոմը և Գոմորը (Ճն. ԺԺ.24–26): Հետագայում Հիսուսն օգտագործեց այս քաղաքները որպես ամբարշտության խորհրդանիշ (Մատ. Ժ.15):


1. **Տյուրոս** և **Սիդոն** Հիսուսը Քորազիմը և Բերսայիդան համեմատեց Տյուրոսի և Սիդոնի հետ (Մատ. ԺԱ.20-22): Նա բժշկեց հերանոս կնոջ աղչկան (Մատ. ԺԵ.21-28):
2. **Կերպարանափոխման սար** Հիսուսը կերպարանափոխվեց Պետրոսի, Հակոբոսի և Հովհաննեսի առաջ, և նրանք ստացան արքայության բանալիները (Մատ. ԺԷ.1-13): (Ըմանք հավատում են, որ Կերպարանափոխման սարը Հերոնն է. մյուսները՝ որ Թաբթո սարն է):
3. **Փիլիպեան Կեսարիա** Պետրոսը վկայեց, որ Հիսուսը Քրիստոսն է և Փրկիչը նրան խոստացավ արքայության բանալիները (Մատ. ԺԶ.13-20): Հիսուսը նախապես հայտնեց իր մահվան և Հարության մասին (Մատ. ԺԶ.21-28):
4. **Գալիլեայի տարածք** Իր կյանքի և ծառայության մեծ մասը Հիսուսն անցկացրեց Գալիլեայում (Մատ. Գ.23-25): Այստեղ նա կարդաց Մարի վրայի Քարոզը (Մատ. Ե-Է). բժշկեց բորոտին (Մատ. Ը.1-4). և ընարեց, կարգեց և առաջ ուղարկեց Տասներկու Առաքյալներին, որոնցից, ըստ էության, միայն Իսկարիոթացի Հուդան չէր Գալիլեացի (Մար. Գ.13-19): Գալիլեայում հարություն առած Քրիստոսը հայտնվեց Առաքյալներին (Մատ. ԻԸ.16-20):
5. **Գալիլեայի ծովը, որը հետագայում կոչվել է Տիբերեայի ծովակ** Հիսուսն ուսուցանում էր Պետրոսի նավակի միջից (Ղուկ. Ե.1-3) և կանչեց Պետրոսին, Անդրեասին, Հակոբոսին և Հովհաննեսին՝ լինելու մարդկանց որսորդներ (Մատ. Գ.18-22, Ղուկ. Ե.1-11): Նա նաև հանդարտեց փոքրիկը (Ղուկ. Ը.22-25), նավակից առակներ ուսուցանեց (Մատ. ԺԳ), քայլեց ծովի վրայով (Մատ. ԺԳ.22-32) և իր Հարությունից հետո հայտնվեց իր աշակերտներին (Հովհ. ԻԱ):
6. **Բեթսայիդա** Պետրոսը, Անդրեասը և Փիլիպպոսը ծնվել էին Բեթսայիդայում (Հովհ. Ա.44): Հիսուսն Առաքյալներին հետ առանձնացավ Բեթսայիդայի մոտ: Ժողովրդի մեծ բազմություն հետևեց նրան, և նա կերակրեց 5000 հոգու (Ղուկ. Թ.10-17, Հովհ. Զ.1-14): Այստեղ Հիսուսը բժշկեց մի կույր մարդու (Մար. Ը.22-26):
7. **Կափառնայում** Պետրոսի տունն այստեղ էր (Մատ. Ը.5, 14): Կափառնայում, որն ըստ Մատթեոսի՝ Հիսուսի «իր քաղաքն» էր, Հիսուսը բժշկեց մի անդամալույծի (Մատ. Թ.1-7, Մար. Բ.1-12) և հարյուրապետի ծառային, բուժեց Պետրոսի կնոջ մորը (Մատ. Ը.5-15), կանչեց Մատթեոսին, որ լինի իր Առաքյալներից մեկը (Մատ. Թ.9), բացեց կույր աչքերը, դևեր դուրս գցեց (Մատ. Թ.27-33), Հանգստության օրը բուժեց մի մարդու չորացած ձեռքը (Մատ. ԺԲ.9-13), կարդաց կյանքի հացի քարոզը (Հովհ. Զ.22-65), և

- համաձայնվեց հարկ վճարել՝ Պետրոսին բեյադրելով փողը վերցնել ձկան բերանից (Մատ. ԺԷ.23-26):
8. **Մագդաղե** Սա Մարիամ Մագդաղենացու ծննդավայրն էր (Մար. ԺԶ.9): Հիսուսը եկավ այստեղ՝ 4000 մարդ կերակրելուց հետո (Մատ. ԺԵ.32-39), և Փարիսեցիներն ու Սարուլեցիները պահանջեցին, որ նա նշան ցույց տա երկնքից (Մատ. ԺԶ.1-4):
 9. **Կանա** Հիսուսը ջուրը գինի դարձրեց (Հովհ. Բ.1-11) և բուժեց ազնվականի որդուն, որը Կափառնայում էր (Հովհ. Գ.46-54): Կանան նաև Նաբանայելի ծննդավայրն էր (Հովհ. ԻԱ.2):
 10. **Նագարեթ** Մարիամի և Հովսեփի ավետիք ստանալը եղել է Նագարեթում (Մատ. Ա.18-25, Ղուկ. Ա.26-38, Բ.4-5): Վերադառնալով Եփեսոսից՝ Հիսուսն այստեղ անցկացրեց իր մանկությունն ու պատանեկությունը (Մատ. Բ.19-23, Ղուկ. Բ.51-52), հայտարարեց, որ ինքը Մեսիան է, և մերժվեց յուրայինների կողմից (Ղուկ. Գ.14-32):
 11. **Երիբով** Հիսուսը վերականգնեց կույրի տեսողությունը (Ղուկ. ԺԸ.35-43): Նա նաև ճաշեց Ջաբեոսի՝ «մաքսապետի» տանը (Ղուկ. ԺԹ.1-10):
 12. **Բեթարա** Հովհաննես Սկրտիչը վկայում էր, որ նա էր «անապատում կանչողի ձայնը» (Հովհ. Ա.19-28): Հովհաննեսը Հորդանան գետում մկրտեց Հիսուսին, և վկայեց, որ Հիսուսն Աստծո Գառն է (Ղուկ. Ա.28-34):
 13. **Հրեաստանի անապատը** Հովհաննես Սկրտիչը քարոզում էր այս անապատում (Մատ. Գ.1-4), որտեղ Հիսուսը ծոմ պահեց 40 օր և փորձվեց (Մատ. Գ.1-11):
 14. **Էմմաուս** Հարություն առած Քրիստոսն Էմմաուսի ճանապարհին քայլեց իր առաքյալներից երկուսի հետ (Ղուկ. ԻԳ.13-32):
 15. **Բեթփագն** Երկու աշակերտներ Հիսուսին մի քույր բերեցին, որի վրա նա սկսեց իր հանդիսավոր մտաբեր Երուսաղեմ (Մատ. ԻԱ.1-11):
 16. **Բեթանիա** Դա Մարիամի, Մարթայի և Ղազարոսի բնակավայրն էր (Հովհ. ԺԱ.1): Մարիամը լսում էր Հիսուսի խոսքերը, և Հիսուսը խոսեց Մարթայի հետ «բարի բաժինը» ընտրելու մասին (Ղուկ. Ժ.38-42): Հիսուսը կենդանացրեց մահացած Ղազարոսին (Հովհ. ԺԱ.1-44): և Մարիամն օժեց Հիսուսի ոտքերը (Մատ. ԻԶ.6-13, Հովհ. ԺԲ.1-8):
 17. **Բեթլեհեմ** Հիսուսը ծնվեց և դրվեց մտորում (Ղուկ. Բ.1-7). հրեշտակները հովիվներին ավետեցին Հիսուսի ծնունդը (Ղուկ. Բ.8-20). մի աստղ ինաստուններին ուղեկցեց Հիսուսի մոտ (Մատ. Բ.1-12). և Հերովդեսը կոտորեց երեխաներին (Մատ. Բ.16-18):


- 1. **Գողգոթա** Հիսուսի խաչելության հավանական վայրը (Մատ. ԻԵ.33-37):
- 2. **Պարտեզի գերեզմանը** Հիսուսը բաղվեց (Հովհ. ԺԹ.38-42): Հարություն առած Քրիստոսը պարտեզում հայտնվեց Մարիամ Մագդաղենացուն (Հովհ. Ի.1-17):
- 3. **Անտոնիա ամրոց** Հիսուսը, հավանաբար, մեղադրվել, դատապարտվել, մղղվել և խարազանվել է այս վայրում (Հովհ. ԺԸ.28-ԺԹ.16): Պողոսը ձերբակալվեց և պատմեց իր դարձի գալու պատմությունը (Գոր. ԻԱ.31-ԻԲ.21):
- 4. **Բեթհեզդայի ավազանը** Հանգստության օրը Հիսուսը բուժեց մի անդամալույծի (Հովհ. Ե.2-9):
- 5. **Տաճար** Գաբրիելը Ձաքարիային խոստացել էր, որ Եղիաբերեք որդի կունենա (Դուկ. Ա.5-25): Փրկչի մահվան պահին տաճարի վարագույրը պատռվեց (Մատ. ԻԵ.51):
- 6. **Սողոմոնի սրահ** Հիսուսը հռչակեց, որ ինքն Աստուծո Որդին է: Հրեաները փորձեցին քարկոծել նրան (Հովհ. Ժ.22-39): Մի կաղ մարդու բժշկելուց հետո Պետրոսն ապաշխարություն քարոզեց (Գոր. Գ.11-26):
- 7. **Գեղեցիկ դուռ** Պետրոսը և Հովհաննեսը բժշկեցին մի կաղ մարդու (Գոր. Գ.1-10):
- 8. **Տաճարի աշտարակ** Հիսուսը փորձվեց Սատանայի կողմից (Մատ. Գ.5-7): (Այս իրադարձության համար երկու ավանդական տեղ կա):
- 9. **Սուրբ սար** (տեղանքն անորոշ է)
 - ա. Ըստ ավանդության Աբրահամը գոհասեղան կառուցեց այստեղ, որպեսզի գոհաբերի Իսահակին (Ճն. ԻԲ.9-14):
 - բ. Սողոմոնը կառուցեց տաճարը (Գ. Թագ. Զ.1-10, Բ Մն. Գ.1):
 - գ. Բարբերացիներն ավերեցին տաճարը մոտ 587 թվականին Ք.ժ.ա. (Գ. Թագ. ԻԵ.8-9):
 - դ. Ջորաբաբելը կրկին կառուցեց տաճարը մոտ 515 թվականին Ք.ժ.ա. (Եգր. Գ.8-10, Ե.2, Զ.14-16):
 - ե. Հերովդեսը մեծացրեց տաճարի հրապարակը և վերակառուցեց տաճարը՝ սկսելով 17 թվականին Ք.ժ.ա.: Մանուկ Հիսուսին բերեցին տաճար (Դուկ. Բ.22-39):
 - զ. 12 տարեկանում Հիսուսն ուսուցանում էր տաճարում (Դուկ. Բ.41-50):
 - է. Հիսուսը մաքրեց տաճարը (Մատ. ԻԱ.12-16, Հովհ. Բ.13-17):
 - ը. Տարբեր առիթներով Հիսուսն ուսուցանեց տաճարում (Մատ. ԻԱ.23-ԻԳ.39, Հովհ. Է.14-Ը.59):
 - թ. Ք.ժ.հ. 70 թվականին Հռոմեացիները, Տիտոսի ղեկավարությամբ, ավերեցին տաճարը:
- 10. **Գեթսեմանի պարտեզ** Հիսուսը տառապեց, նրան դավաճանեցին և ձերբակալեցին (Մատ. ԻԶ.36-46, Դուկ. ԻԲ.39-54):
- 11. **Չիբենյաց սար**
 - ա. Հիսուսը նախապես սասց Երուսաղեմի և տաճարի կործանման մասին: Նա խոսեց նաև Երկրորդ Գալստի մասին (Մատ. ԻԳ.3-ԻԵ.46, տե՛ս նաև ԶԱ-Մ):

- բ. Այստեղից Հիսուսը համբարձվեց երկինք (Գոր. Ա.9-12):
- գ. 1841 թվականի հոկտեմբերի 24-ին Երեց Օրսոն Հայրը մկրտագործեց Սուրբ Երկիրը՝ Աբրահամի զավակների վերադարձի համար:
- 12. **Գեթսեմի աղբյուր** Սողոմոնը քաղավոր օձվեց (Գ. Թագ. Ա.38-39): Եզեկիան մի ջրանցք փորեց, որպեսզի այդ աղբյուրից ջուր բերի քաղաք (Բ Մն. ԼԲ.30):
- 13. **Ջրի դուռ** Եզրասը կարողաց և ժողովրդի համար մենկաբանեց Մովսեսի օրենքը (Նեեմ. Ը.1-8):
- 14. **Ենովմի ձորը** Սողոմոնի կեղծ աստծուն էին երկրպագում, որը ներառում էր երեխաներին գոհաբերելը (Գ. Թագ. ԻԳ.10, Բ Մն. ԻԸ.3):
- 15. **Կայիափայի տունը** Հիսուսին տարան Կայիափայի մոտ (Մատ. ԻԶ.57-68): Պետրոսը մերժեց, որ ինքը ճանաչում է Հիսուսին (Մատ. ԻԶ.69-75):
- 16. **Վերնատուն** Ավանդական վայրը, որտեղ Հիսուսը կերավ Ջատկի ընթրիքը և հաստատեց հաղորդությունը (Մատ. ԻԶ.20-30): Նա լվաց Տասներկուսի ոտքերը (Հովհ. ԺԳ.4-17) և ուսուցանեց նրանց (Հովհ. ԺԳ.18-ԺԷ.26):
- 17. **Հերովդեսի պալատը** Քրիստոսը Հերովդեսի տանը էր տարվել, հավանաբար, այս վայրում (Դուկ. ԻԳ.7-11):
- 18. **Երուսաղեմ** (տեղանքն անորոշ է)
 - ա. Մելքիսեղեկը քաղավորեց որպես Սաղեմի քաղավոր (Ճն. ԺԲ.18):
 - բ. Դավիթ քաղավորը գրավեց քաղաքը Հեթտացիներից (Բ Թագ. Ե.7, Ա Մն. ԺԲ.4-7):
 - գ. Քաղաքն ավերվեց Բաբելոնացիների կողմից մոտ 587 թվականին Ք.ժ.ա. (Գ. Թագ. ԻԵ.1-11):
 - դ. Պենտեկոստի օրը շատերը լցվեցին Սուրբ Հոգով (Գոր. Բ.1-4):
 - ե. Պետրոսին և Հովհաննեսին ձերբակալեցին և բերեցին առյանի առաջ (Գոր. Գ.1-23):
 - զ. Անանիան և Սափիրան ստեցին Տիրոջը և մահացան (Գոր. Ե.1-10):
 - է. Պետրոսին և Հովհաննեսին ձերբակալեցին, սակայն հրեշտակն ազատեց նրանց բանտից (Գոր. Ե.17-20):
 - ը. Առաքյալները յոթ մարդ ընտրեցին, որպես իրենց օգնական (Գոր. Զ.1-6):
 - թ. Հրեաները մերժեցին Ստեփանոսի վկայությունը և քարկոծելով սպանեցին նրան (Գոր. Ժ.8-Ժ.60):
 - ժ. Հակոբոսը սպանվեց (Գոր. ԺԲ.1-2):
 - ի. Հրեշտակը բանտից ազատեց Պետրոսին (Գոր. ԺԲ.5-11):
 - լ. Առաքյալները որոշեցին բլվատության հարցը (Գոր. ԺԵ.5-29):
 - իւ. Ք.ժ.հ. 70 թվականին Հռոմեացիները, Տիտոսի գլխավորությամբ, ավերեցին քաղաքը:

ԳԻՐՔԸ ՀԱՐԱՎԻՅ ԴԵՊԻ ՀՅՈՒՄԻՍ*



ԳԻՐՔԸ ԱՐԵՎԵԼՔԻՅ ԴԵՊԻ ԱՐԵՎՄՈՒՏՔ*



*Տեղագրական ռեյինֆը մեծացվել է, մակարդակի տարբերությունները ավելի հստակ ցուցադրելու համար



1. ՆՆՐԱՍ ԳԵՏԵ ԵՎ ԵԳԻՊՏՈՍԸ Այսպիսի մի վայրում Մովսեսի մայրը թաքցրեց իր մանուկ որդուն: Փարավոնի դուստրը գտավ նրան և մեծացրեց Եգիպտոսի թագավորական արքունիքում:



2. ՄՐԵԱՅ (ՋՈՐԵՑ) ՍԱՐԸ ԵՎ ՄՐԵԱՅ ԱՆՆՊԱՏԸ Համաձայն պատվիրանի՝ Մովսեսն Իսրայելացիներին բերեց այս սարը, որպեսզի նրանք ստանան Աստծո օրենքը: Այս լուսանկարը պատկերում է Սինայ սարի ավանդական տեսքը:



3. ՀՐԵԱՍՏԱՆԻ ԱՆՊՈՒՍԵ ԵՎ ՄԵՌՅԱԼ ԾՈՎԷ Փրկիչը գնաց անապատ, որպեսզի հաղորդակցվի իր Հոր հետ:



4. ԿՈՂԵՍ ԲԱՌՆԵԱ Այս տարածքը, որը հայտնի է, որպես Կաղես Բառնես, այն հավանական վայրն է, որտեղ Իսրայելացիները ճամբար էին դրել անապատում գտնվելու 40 տարվա մեծ մասի ընթացքում:



5. ՀԱՅՐԱՊԵՏՆԵՐԻ ԳԵՐԵՋՄԱՆՆԵՐԸ Ասում են, որ Քերթոնի այս գերեզմանատունը կառուցվել է այն տեղում, որտեղ թաղվել են Աբրահամը, Իսահակը և Հակոբը:



6. ՀՐԵԱՏԱՆԻ ԼՈՒՆԱՐԱՇՏԸ Նման խորդուբորդ տեսարանը բնորոշ է Սուրբ Երկրի մեծ մասին՝ Երուսաղեմից դեպի հարավ և դեպի արևելք:



7. ԲԵԹԼԵՆՍ Այս քաղաքում ծնվել է Տեր Հիսուս Քրիստոսը:



8. ԵՐՐՈՍԱՂԵՍ Այս քաղաքը սուրբ է համարվում երեք կրոնների՝ Քրիստոնեության, Հուդայիզմի և Իսլամի համար:



9. ՀԵՐՈՎՈՍԻ ՏԱՃԱՐԸ Այս նմուշը համարվում է հին տաճարի մասշտաբային ճշգրիտ կրկնօրինակը:



10. ՏԱՃԱՐ ՏԱՆՈՂ ԱՄՏԻՃԱՆՆԵՐԸ Այս աստիճանները, որոնք տանում են դեպի Հերովդեսի տաճար, գտնվել են հնագետների կողմից:



11. ՉԻԹՆՅԱՅ ՄԱՐ, ՕՐՍՈՆ ՀԱՅՐԻ ԱՅՊԻ Այս տեղանքի մոտակայքում 1841 թվականին Երեց Օրսոն Հայրը նվիրագործեց Սուրբ Երկիրը՝ Աբրահամի զավակների վերադարձի համար:



12. ԳԵԹՍԵՄԱՆԻ ԱՅՊԻ Հին ձիթենիները հնարավոր է աճած լինեն պարտեզի այն ձիթենիներից, որտեղ Փրկիչն աղոթեց և արյան կաթիլների քրտինք թափեց, երբ սկսեց Քավոյությունը:



13. ԳՈՂԳՈԹԱ Ըստ հայտնի ավանդության՝ Տեր Հիսուս Քրիստոսը խաչվել է մերձակա տարածքում:



14. ՊԱՐՏԵՅԻ ԳԵՐԵՁՄԱՐԸ Ժամանակակից մի քանի մարգարեներ արտահայտել են իրենց զգացումները, որ սա է Արիմաթիացի Հովսեփի գերեզմանը՝ այն տեղը, որտեղ խաչելությունից հետո դրվել էր Փրկչի մարմինը:



15. ԵՐԻՔՈՎ Սա առաջին քաղաքն էր, որ գրավել էր Հետուն (տե՛ս Հես. 9.2–20): Երիքովն ամենահին քաղաքներից մեկն է երկրի վրա:



16. ՄԵԼՈՎ Խորանը և ուխտի տապանակը կանգնեցվել էին այս տարածքում և այստեղ էին մնացել դարերի ընթացքում:



17. **ԳԱՐԻՋԻՆ ԵՎ ԳԵՅՐԱ ՍԱՐԵՐԸ** Այս երկու սարերը բարձրից նայում են հնագույն Սյուրբնձ քաղաքին, որտեղ քաղվել էին Հովսեփի ոսկորները (տե՛ս Հն. ԻԳ.32):



18. **ՍԱՄԱՐԻԱՅԻ ԴՈՑԱՅԻՍԸ** Հովսեփի եղբայրները եկել էին այս հարուստ արտադայրը՝ հոտերը խնամելու, երբ վաճառեցին իրենց եղբորը Միդիանացի և Իսմայելացի վաճառականներին:



19. ԿԵՏԱՐԻԱՆ ԵՎ ՍԱՐՈՆԻ ՀԱՐԹԱՎԱՅԹԸ ԳԵՌԻ ԿԱՐՄԵՂՈՄ Այս քաղաքում Պողոսը քարոզեց Ազրիպպաս թագավորին (տե՛ս Գոր. ԻԶ):



20. ՀՈՊՊԵ Այստեղ Պետրոսը տեսիլք տեսավ, որով նրան պատվիրվում էր ավետարանը քարոզել հեթանոսներին (տե՛ս Գոր. Ժ):



21. ՀԵՁԱՅԵԼԻ ՀՈՎԻՏԸ Բոլոր ազգերը կիսվաքվեն այստեղ Արմազեդոնի պատերազմի ժամանակ (տե՛ս Չաք. ԺԱ–ԺԴ, Հայտ. ԺԶ.14–21):



22. ԹԱՅՈՐ ՄԱՐԸ Գագաթին գտնվող այս նշանավոր ուղենիշի մոտ է գտնվում Պետրոս, Հակոբոս և Հովհաննես Առաքյալների առաջ Քրիստոսի Կերպարանավոյության ավանդական վայրը (տե՛ս Մատ. ԺԷ.1–9):



23. ԳԱԼԻՆԵՅՈՒ ԾՈՎԸ ԵՎ ԵՐԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՐԸ Այս սարավանջը Սարի վրայի Փրկչի Քարոզի ավանդական վայրն է (տե՛ս Մատ. Ե-է):



24. ԿՍՓԱՆՆԱԾՈՒՄ Միայն մի քանի ավերակներ են մնացել այն քաղաքից, որտեղ Փրկիչը կատարել է իր հրաշքներից շատերը:



25. ՀՈՐՂԱՆԱՆ ԳԵՏԵ Այս լուսանկարը նկարահանվել է Գալիլեայի ծովից դուրս եկող գետի ակունքի մոտ:



26. ՓԻԼԻՊՊԵԱՆ ԿԵՄԱՐԻԱ Հիտուն Քրիստոսը Պետրոսին խոստացավ արքայության քանալիները, հավանաբար, այս տեղանքի մոտ (տես Մատ. ԺՁ.19):



27. ՆԱԶԱՐԵԹ Մինչև հասունության տարիքը Հիսուսն այս քաղաքում է մեծացել:



28. ԳԵՆ Հին Կտակարանի այն քաղաքը, որը մի ժամանակ եղել է այս տարածքում, համարվում էր Իսրայելի հյուսիսային սահմանը:



29. Աթենք Պարթենոնը, որը պատկերված է այստեղ, Մարսի բլրի մոտ է, որտեղ Պողոսը քարոզեց «անձանոթ աստծո» մասին իր քարոզը (տե՛ս Գոր. ԺԷ.15–34):



30. ԿՈՐԹՈՍ Առ Հովմայեցիս իր թուղթը Պողոսը գրել է այս քաղաքից:



31. ՇՓԵՍՈՍ Այստեղ Պողոսը քարոզել է կռապաշտության դեմ և բարկացրել արծաթագործներին, որոնք իրենց ապրուստը վաստակում էին Դիանա աստվածուհու սրբապատկերների վաճառելով (տե՛ս Գոր. ԺԹ.24–41):



32. ՊԵՏՐՈՍ ԿՐԶԵՆ Այս ողջ տարածությունը Միջերկրական ծովում գտնվող այն կղզու մասն է, ուր արքայիվել էր Հովհաննես Հայտնողը (տե՛ս Հայտ. Ա.9):